

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ընդհանուր խմբագրությամբ՝

Գ. Նարոությունյանի - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՆՏ սահմանադրական դատարանի նախագահ,

Ա. Վաղարշյանի - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՏ պետության եւ իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ

Ն 247 **Նայաստանի Նանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ** / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Նարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, 1086 էջ:

ՆՏ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուն պատրաստվել է Նայաստանում իրավագիտության ոլորտում, օրինաստեղծ գործունեության մեջ եւ իրավակիրառական պրակտիկայում նշանակալի ավանդ ունեցող 68 մասնագետների կողմից: Այն նման կոլեկտիվ աշխատանքի հաջողված առաջին փորձն է եւ չափազանց կարեւոր՝ երկրում իրավական մշակույթին ու իրավամտության գարգացմանը նոր խթան հաղորդելու տեսանկյունից:

Մեկնաբանությունները բացահայտում են ՆՏ Սահմանադրության հիմնարար արժեքների, նպատակների ու սկզբունքների սահմանադրաիրավական բնույթն ու բովանդակությունը, հասարակական հարաբերությունների սահմանադրորեն կանոնակարգման էությունն ու իրավագիտական նշանակությունը: Նեղինակները սահմանադրական դրույթների դոկտրինալ մեկնաբանությունները ներկայացնում են դրանց էվոլյուցիոն զարգացման, օրենսդրորեն իրացման ու պրակտիկ դրսևորման հիմնահարցերի համալիր վերլուծությամբ՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես ապրող իրողություն, բացահայտելով երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատման հիմնական միտումները:

Մեկնաբանություններն ամբողջականացնում են հայկական սահմանադրագիտության արդի ձեռքբերումները, սահմանադրական հիմնարար արժեքները, սկզբունքներն ու նորմերը մատչելի լեզվով դարձնում լայն հանրության սեփականությունը:

Գիրքն օգտակար կարող է լինել պետական բարձրաստիճան պաշտոնյաների, պատգամավորների, քաղձառայողների, դատական իշխանության, իրավաստեղծ ու իրավակիրառ բոլոր մարմինների աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբան դասախոսների, ուսանողների, ինչպես նաեւ լայն հասարակայնության համար, բոլոր նրանց համար, ովքեր պարտավոր են Նայաստանի Նանրապետությունում երաշխավորել, ապահովել ու պաշտպանել իրավունքի գերակայությունը, ովքեր ցանկանում են դառնալ իրավական պետության քաղաքացի, քաղաքացիական հասարակության անդամ, մասնակցություն բերել մեր երկրում անկախ պետականության կայացմանն ու զորացմանը:

**ՆՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 15-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Նրափարակմանն աջակցել են ԵԱՏԿ երեւանյան գրասենյակը եւ գերմանական GTZ կազմակերպությունը, որի համար խմբագրական խորհուրդը շնորհակալություն է հայտնում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Նարոյթյունյան - ՆՏ ՍԴ նախ., ի.գ.դ., պրոֆեսոր - **ընդհանուր գիտ. խմբագիր**
Ա. Վաղարշյան - ԵՊՏ ամբ. վարիչ, ի.գ.թ., դոցենտ - **խմբագիր**

Խորհրդի անդամներ՝

- Գ. Դանիելյան** - ՆՏ արդարադատ. նախ., ի.գ.դ., պրոֆեսոր
- Ա. Նարոյթյունյան** - ՆՏ ՄԻՊ, ի.գ.դ., պրոֆեսոր
- Դ. Նարոյթյունյան** - ՆՏ ԱԺ հանձն. նախագահ
- Գ. Ղազինյան** - ի.գ.դ., պրոֆեսոր, ՆՏ ԳԱԱ թղթ. անդամ
- Վ. Սյրեփանյան** - ի.գ.դ., պրոֆեսոր
- Ռ. Ավագյան** - ի.գ.դ., պրոֆեսոր
- Թ. Բաղասյան** - հրատարակչության պատասխանատու

ՆԵՂԻՆԱԿՆԵՐ

- Վ. Ավագյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 23 (մասեր 1-4), 26, 41, 43 (մաս 1)
- Ս. Առաքելյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 15
- Դ. Ավերիսյան** - ՆՏ վճռաբեկ դատ. պալ. նախ., ի.գ.թ., դոցենտ - 20 (մաս 4), 92
- Գ. Բաղիրյան** - ֆրանս. համ., ի.գ.դ. - 38
- Տ. Բարսեղյան** - ԵՊՏ ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր - 8.1, 31 (մասեր 1, 5)
- Ա. Բաղդասարյան** - ՆՏ ազգ. անվտ. խոր. քարտ., ի.գ.դ., պրոֆեսոր - 8.2, 11.3, 55 (կեր 6)
- Գ. Բալայան** - Վ. Բոյուսովի անվան համ. պրոռ., ի.գ.թ. - 39 (մասեր 1, 2, 3, 4, 6)
- Կ. Բալայան** - ՆՏ ՍԴ անդամ - 46, 96
- Ա. Գաբրուզյան** - ԵՊՏ ամբ. վարիչ, ի.գ.դ. - 22 (մասեր 3-7)
- Կ. Գետրոզյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 9, 55 (կեր 7-8)
- Ա. Գյուլումյան** - ՄԻԵԴ անդամ - նախաբան
- Գ. Դանիելյան** - ՆՏ արդարադատ. նախ., ի.գ.դ., պրոֆեսոր - 15, 16, 29, 30.1, 44, 83.5, 97, 98, 111
- Ն. Դանիելյան** - ՆՏ ՄԻԿ խորհրդի նախ., ՆՏ ՍԴ անդամ - 61, 94, 109
- Տ. Դավթյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 36
- Ա. Դիլանյան** - ՆՏ ՍԴ բաժնի վարիչ, ի.գ.թ. - 55 (կերեր 5, 7, 16)
- Ս. Դիլբանդյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 20 (մաս 5)
- Ռ. Եղյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 85, 86, 87, 88, 88.1, 89
- Ն. Ենգոյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 17, 55 (կերեր 2, 4, 9, 10, 11, 11.1, 15), 71, 72
- Ա. Երիցյան** - ի.գ.դ., պրոֆեսոր - 11.1, 24, 25
- Ա. Թաթոյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 19, 23 (մաս 5)
- Ա. Թամազյան** - ՆՏ գլխ. դատ. տեղ., ի.գ.թ. - 21
- Ֆ. Թոխյան** - ՆՏ ՍԴ անդամ, ի.գ.թ., պրոֆեսոր - 37, 111, 112, 113
- Ն. Թովմասյան** - GTZ, ի.գ.թ. - 4, 30, 50-53, 53.1, 63, 64, 68, 107 (մաս 1), 108
- Մ. Թովուզյան** - ՆՏ ՍԴ անդամ - 115, 116, 117
- Ա. Իսկոյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 10, 31 (մասեր 1, 4), 33.2, 48 (կեր 10)
- Ա. Խաչատրյան** - ՆՏ զին. դատախազ, ի.գ.թ. - 81
- Ա. Խաչատրյան** - ՆՏ ԱԺ, ի.գ.դ., պրոֆեսոր - 45, 48, 70, 79, 80, 83.4
- Դ. Խաչատրյան** - ի.գ.թ. - 55 (մասեր 12, 13, 14, 17)

- Ն. Խաչիկյան** - ԵՊՏ, ի.գ.դ. - 22 (մասեր 3-6)
- Ս. Ծաղիկյան** - Սլ. համ. ամբ. վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր - 75, 108.1, 110
- Ե. Կիրակոսյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 43 (մաս 2)
- Գ. Կոստանյան** - ՏՆ Նախագահի օգնական, ի.գ.թ., դոցենտ - 18, 114
- Լ. Նակոբյան** - ՏՆ ՍԴ վարչ. պետ - 42, 47, 58, 60
- Ն. Նակոբյան** - ՏՆ սփ. նախարար, ի.գ.դ., պրոֆեսոր - 62, 65, 66, 67, 69, 73
- Զ. Նակոբյան** - ՏՆ Նախագահի աշխատակազմ, ի.գ.թ. - 83.3
- Ռ. Նակոբյան** - ԳՊՏ ռեկտոր, ի.գ.թ., դոցենտ - 31.1, 34
- Ա. Նարոթյունյան** - ՏՆ ՄԻՊ, ի.գ.դ., պրոֆեսոր - 3, 5, 14, 26, 27, 49, 83.1, 104
- Գ. Նարոթյունյան** - ՏՆ ՍԴ նախագահ, ի.գ.դ., պրոֆեսոր - առաջաբան, 1, 2, 3, 5, 8, 93, 99, 100
- Ա. Նովսեփյան** - ՏՆ գլխ. դատախազ, ի.գ.դ. - 103
- Գ. Ղազինյան** - ի.գ.դ., պրոֆեսոր, ՏՆ ԳԱԱ թղթ. անդամ - 19, 22 (մասեր 1-2), 91, 95 (մաս 5)
- Ա. Ղամբարյան** - ի.գ.թ., դոցենտ - 21
- Գ. Ղարախանյան** - ԵՊՏ, ի.գ.դ., պրոֆեսոր - 35, 48 (կեր 1)
- Ն. Ղուկասյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 20 (մասեր 1-2)
- Ա. Մարգարյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 17
- Ռ. Մելիքյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 19, 20 (մաս 3), 22 (մաս 7), 92
- Դ. Մելքոնյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 19, 22 (մասեր 1-2)
- Ս. Մեղրյան** - ԵՊՏ ամբ. վարիչ, ի.գ.թ., դոցենտ - 31 (մաս 2)
- Ա. Մկրտումյան** - ՏՆ վճռաբ. դատ. նախագահ, ի.գ.թ. - 92
- Գ. Մուրադյան** - ՏՆ ՍԴ խորհրդական - 6 (մասեր 1-3), 14, 83.5, 100
- Ս. Մուրադյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 13, 59, 76, 90
- Ն. Նազարյան** - ՏՆ ՍԴ անդամ, ի.գ.թ. - 5, 30.2, 93, 101, 102
- Է. Շաթիրյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 77, 106
- Ա. Պեպրոսյան** - ՏՆ ԱԺ նախ. տեղակալ, ի.գ.թ., դոցենտ - 83.2
- Գ. Պեպրոսյան** - ԵՊՏ, ի.գ.թ., դոցենտ - 32, 33
- Ռ. Պեպրոսյան** - ՏՆ ԱԺ պարզամավոր, ի.գ.դ., պրոֆեսոր - 18, 40, 91, 94.1, 95
- Վ. Պողոսյան** - ՏՆ ՍԴ անդամ, փիլ. գիտ. թեկնածու - 14.1, 27.1
- Վ. Պողոսյան** - GTZ- առաջաբան, 49, 55 (կերեր 1, 3, 4), 56, 74, 74.1, 84
- Ժ. Զհանգիրյան** - «Գլաձոր» համ. ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր - 54, 56.1, 57, 82, 83
- Վ. Ռաֆայելյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 11.2, 104, 104.1, 105, 105.1, 107 (մասեր 2-4)
- Գ. Սաֆարյան** - ի.գ.դ., պրոֆեսոր - 11, 12
- Դ. Սերոբյան** - ԵՊՏ, ի.գ.թ. - 31 (մաս 3), 31.1, 33.1
- Վ. Ստեփանյան** - ի.գ.դ., պրոֆեսոր - 1, 2, 7, 28
- Ա. Վաղարշյան** - ԵՊՏ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ - 1, 2, 5, 8.2, 31 (մաս 3), 39 (մաս 5), 42.1
- Վ. Վարդանյան** - ՏՆ ՍԴ բաժնի վարիչ, ի.գ.թ. - 6 (մաս 4), 81 (1-ին մասի կեր 2)
- Վ. Քոչարյան** - ԵՊՏ ամբ. վարիչ, ի.գ.թ., դոցենտ - 6 (մաս 4), 41, 42 (մաս 1), 43 (մաս 2), 81 (1-ին մասի կեր 2)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՌԱՋԱԲԱՆ	8	Նոդված 27	303
		Նոդված 27.1	313
ՆԱԽԱԲԱՆ	35	Նոդված 28	317
		Նոդված 29	322
ԳԼՈՒԽ 1. ՍԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆԻՄՈՒՆՔՆԵՐԸ		Նոդված 30	327
Նոդված 1	39	Նոդված 30.1	337
Նոդված 2	55	Նոդված 30.2	346
Նոդված 3	63	Նոդված 31	359
Նոդված 4	71	Նոդված 31.1	380
Նոդված 5	83	Նոդված 32	388
Նոդված 6	99	Նոդված 33	402
Նոդված 7	109	Նոդված 33.1	406
Նոդված 8	116	Նոդված 33.2	417
Նոդված 8.1	123	Նոդված 34	422
Նոդված 8.2	130	Նոդված 35	430
Նոդված 9	133	Նոդված 36	438
Նոդված 10	135	Նոդված 37	452
Նոդված 11	138	Նոդված 38	454
Նոդված 11.1	141	Նոդված 39	464
Նոդված 11.2	142	Նոդված 40	475
Նոդված 11.3	150	Նոդված 41	483
Նոդված 12	152	Նոդված 42	491
Նոդված 13	154	Նոդված 42.1	503
		Նոդված 43	508
		Նոդված 44	518
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱ- ՅՈՒ ՆԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		Նոդված 45	526
Նոդված 14	163	Նոդված 46	534
Նոդված 14.1	170	Նոդված 47	538
Նոդված 15	179	Նոդված 48	542
Նոդված 16	186		
Նոդված 17	197	ԳԼՈՒԽ 3. ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՆԸ	
Նոդված 18	206	Նոդված 49	562
Նոդված 19	221	Նոդված 50	573
Նոդված 20	237	Նոդված 51	577
Նոդված 21	253	Նոդված 52	586
Նոդված 22	259	Նոդված 53	591
Նոդված 23	276	Նոդված 53.1	592
Նոդված 24	286	Նոդված 54	596
Նոդված 25	291	Նոդված 55	601
Նոդված 26	296	Նոդված 56	654
		Նոդված 56.1	660

Նոդված 57.....	664	ԳԼՈՒԽ 6. ԴԱՏԱԿԱՆ	
Նոդված 58.....	669	ԻՇԽԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ	
Նոդված 59.....	671	Նոդված 91.....	896
Նոդված 60.....	673	Նոդված 92.....	905
Նոդված 61.....	675	Նոդված 93.....	914
		Նոդված 94.....	925
ԳԼՈՒԽ 4. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ		Նոդված 94.1.....	933
Նոդված 62.....	679	Նոդված 95.....	939
Նոդված 63.....	685	Նոդված 96.....	951
Նոդված 64.....	690	Նոդված 97.....	954
Նոդված 65.....	691	Նոդված 98.....	960
Նոդված 66.....	697	Նոդված 99.....	965
Նոդված 67.....	703	Նոդված 100.....	968
Նոդված 68.....	706	Նոդված 101.....	974
Նոդված 69.....	711	Նոդված 102.....	987
Նոդված 70.....	715	Նոդված 103.....	998
Նոդված 71.....	720		
Նոդված 72.....	722	ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԱԿԱՆ	
Նոդված 73.....	725	ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	
Նոդված 74.....	732	Նոդված 104.....	1009
Նոդված 74.1.....	736	Նոդված 104.1.....	1013
Նոդված 75.....	741	Նոդված 105.....	1014
Նոդված 76.....	748	Նոդված 105.1.....	1017
Նոդված 77.....	751	Նոդված 106.....	1018
Նոդված 78 (հանված է)		Նոդված 107.....	1029
Նոդված 79.....	761	Նոդված 108.....	1042
Նոդված 80.....	765	Նոդված 108.1.....	1044
Նոդված 81.....	770	Նոդված 109.....	1048
Նոդված 82.....	779	Նոդված 110.....	1051
Նոդված 83.....	782		
Նոդված 83.1.....	785	ԳԼՈՒԽ 8. ՍԱՆՏԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ	
Նոդված 83.2.....	789	ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ	
Նոդված 83.3.....	795	ԵՎ ՆԱՆՐԱԶՎԵՆ	
Նոդված 83.4.....	800	Նոդված 111.....	1055
Նոդված 83.5.....	811	Նոդված 112.....	1062
Նոդված 84.....	819	Նոդված 113.....	1065
		Նոդված 114.....	1066
ԳԼՈՒԽ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ		ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ	
Նոդված 85.....	829	ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	
Նոդված 86.....	850	Նոդված 115.....	1069
Նոդված 87.....	859	Նոդված 116.....	1072
Նոդված 88.....	865	Նոդված 117.....	1075
Նոդված 88.1.....	871		
Նոդված 89.....	877	Նապալուսների ցանկ	1083
Նոդված 90.....	891		

ԱՌԱՋԱԲԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՐԱՆԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՆԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Սահմանադրության նորմերի մեկնաբանման համար ելակետային նշանակություն ունի դրանց հիմքում ընկած իրավական փիլիսոփայության բացահայտումը: Դա ենթադրում է Նիմնական օրենքի արժեքանական, մեթոդաբանական ու կառուցվածքային հիմնական բնութագրիչների համակարգային վերլուծություն, «սահմանադրություն», «սահմանադրականություն», «սահմանադրական մշակույթ» հասկացությունների իմացաբանական բնույթի ու համակարգային փոխառնչությունների համակողմանի գնահատում:

Վերջին հարյուրամյակների ընթացքում հասարակության համակարգային կայունության երաշխավորի դերը գերազանցապես վերապահվեց պետության Նիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը, որը, ամրագրելով կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: Դա հնարավոր է դառնում քաղաքակրթության եւ հասարակական գիտակցության որոշակի մակարդակում: Մարդկային հանրությունը՝ որպես սոցիալական արժեվորում ունեցող համակարգ, գոյություն ունի շուրջ 10 հազար տարի, իսկ ժամանակակից հասկացությամբ սահմանադրորեն կանոնակարգված նրա պետական գոյը շուրջ երկու հարյուր տարվա պարունություն ունի: Այսուհանդերձ, «սահմանադրություն» երեւոյթի արմատները ձգվում են պարունության խորքերը՝ ձեւավորելով որոշակի սահմանադրական մշակույթ:

«Սահմանադրություն» հասկացությունը լարիներենում (constitutio) նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» սահմանադրում կամ սահմանադրություն չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության Նիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու եւ քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառնությունները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման եւ անհատի քաղաքական, փնտրեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

«Սահմանադրություն» հասկացությունը հայերենում նույնպես առաջին հերթին ենթադրում է սահմանել: Ինչպես նշում է պրոֆ. Խ. Սամուելյանը՝ միջնադարում հայ ազ-

գային եկեղեցական ժողովները՝ իրենց վերապահելով «օրենսդիր գործոնի նշանակություն», օգտագործել են «սահմանք» եզրույթը, որը «...հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստը. այսպեղից էլ կանոնական որոշումներում հաճախ են պարահում **սահմանել, սահմանադրել** բայերը՝ օրինադրել, կանոնադրել առումով»¹: Միաժամանակ, «սահմանադրություն» հասկացությունն ստուգաբանվել է նաև «սահման դնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու եւ «...անճողոպրելի որոգայթ» ստեղծելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից²:

Նոր հայկազյան բառարանը (հրատարակված 1837թ. Վեներիկում) «սահմանադրություն» հասկացության չափազանց ուշագրավ մեկնաբանություն է ներկայացնում³: Նախ բերվում են փարպեզու հոմանիշներ, ինչպես, օրինակ՝ Determinatio, constitutio, statutum, dispositio. Այնուհետև փրվում է բացառիկ հեփաքթիքի ու արժեքավոր մի բնորոշում՝ «**որոշումն սահմանաց եւ Տեսչություն վերին**»: Բերվում են առանձին օրինակներ «սահմանադրություն» հասկացության պարմական վկայություններից: Մասնավորապես, աղբյուրագիտական հղումներում հիշատակվում է Մովսես Խորենացու արքահայտությունն Աշտիշարի ժողովի առնչությամբ՝ «կանոնական սահմանադրությամբ հաստատեց զողորմածություն», կամ՝ Արիստակես Լաստիվերպու արքահայտությունը՝ «Քաղկեդոնական սահմանադրություն»: Այնհայտ է, որ այս բառարանում «սահմանադրություն» հասկացությունը լուրջ բովանդակային ընդգրկում ունի, որի հիմքում ընկած են մի շարք կարեւոր բնութագրիչներ.

1. դա որոշում է, վճիռ է, «օրինադրություն» է,

2. այն ունի սահմանային նշանակություն, իրենից այն կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող,

3. «**Տեսչություն վերին**» արքահայտությունը փոխարացնելով նման «որոշման» սահմանային ու գերակա բնույթը՝ հարուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ փրված» արժեքների առկայությունը⁴:

Մեր պարմական մատենագրությունն իր գրաբարյան փարբերակներում հեփաքթոդական է եղել «սահմանադրություն» հասկացության իմաստավորման հարցում, ինչը չի պահպանվել աշխարհաբար թարգմանություններում: Տիպական օրինակ է Խորենացու «Նայոց պարմությունից» բերված միփքը, որում անառարկելիորեն խոսվում է սահմանադրություն երեւոյթի մասին: Ներագա թարգմանություններում «սահմանադրությամբ»-ը դարձել է «սահմաններով»՝ ամբողջությամբ իմաստազրկելով հասկացությունը⁵:

Նոր հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության հիմքում դնում է «սահմանադրել» հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես սահման դնել, որոշել, կարգավորել, կարգել, օրինադրել, սահմանել: Այս բոլորն ակնհայտորեն իրենց հիմքում կանոնակարգման, իրավակարգավորման իմաստ են պարունակում: Ներեաբար, «սահմանադրություն» հասկացության թվարկված բնութագրիչներին, ըստ հիշյալ բառարանի, պետք է ավելացնել նաև ներկայիս բնորոշմամբ՝ նորմարիվ բնույթը:

¹ Խ. Մամուռյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 46:

² Որոգայթ փառաց (Հակոբ եւ Շահամիր Շահամիրյաններ), Երևան, 2002, էջ 15:

³ Տե՛ս Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վեներիկ, 1837, էջ 688:

⁴ Այդ մասին տես նաև «Բնական օրենք. գրաական, տոհմային եւ ազգային իրավունք», աշխատասիրեալ ԻՀ. Եփրեմայ վարդապետ՝ Սէթ, Վեներիկ, 1851:

⁵ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Երևան, 1997, էջ 225:

Ըստ Տր. Աճառյանի՝ «սահմանադրություն» հասկացությունը կազմված է «սահման» (որոշեալ չափ, ծայր, վերջ, կանոն, օրենք)⁶ եւ «դիր»⁷ հասկացություններից: Էդ. Աղայանը փալիս է սահմանադրության հետեւյալ բնորոշումը. «1. Պետության հիմնական օրենք, որ սահմանում է նրա հասարակական ու պետական կառուցվածքը, ընտրական սիստեմը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: 2. Սահմանված կարգ: 3. Սահմաններ դնելը՝ որոշելը»⁸:

Նայ մարենագրության մեջ եւ լեզվահամեմատական վերլուծություններում «սահմանադրություն» հասկացությունը հստակ բնութագրում է իրերի ու երեւոյթների որոշակի կարգ, կանոն, օրինաչափություն սահմանելու, ընդունելու հանգամանքը՝ ընդգծելով վերջինիս որոշակի, առանձնահատուկ բնույթը:

Սահմանադրական իրավունքի հանրագիտարանային բառարաններում «սահմանադրություն» հասկացությունը դիփվում է որպէս բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, մարդու իրավունքներին ու ազատություններին, պետության հիմքերին, կառավարման ձեւին ու փարածքային կազմակերպմանը, իշխանության մարմինների ձեւավորմանն առնչվող կարեւորագույն հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի համակարգ: Ի դեպ, այն կարող է հանդես գալ մեկ միասնական կամ մի քանի իրավական ակտերի փոխարէն: Սահմանադրությունը գրնվում է իրավական ակտերի հիերարխիայի գագաթին, եւ մնացած բոլոր ակտերը պետք է համապատասխանեն դրան:

Սահմանադրության հիմնական բնութագրիչների մեջ առանձնացվում են չորս կարեւոր որակներ, համաձայն որոնց Սահմանադրությունը.

1. իրավական ակտ է,
2. ունի գերակա բնույթ, բարձրագույն իրավաբանական ուժ,
3. հիմք է հանդիսանում ընթացիկ օրենսդրության համար, պայմանավորում դրա բնույթը,
4. ունի ընդունման ու փոփոխման հատուկ կարգ⁹:

Նանրագիտարանային բառարաններում արվում է նաեւ այն կարեւոր շեշտադրումը, որ Սահմանադրությունը հանդես է գալիս որպէս սահմանադրական նպատակների, սկզբունքների եւ գերակա բնույթ ունեցող իրավակարգավորիչ նորմերի մի օրգանական ամբողջություն, որոնք կանոնակարգում են հիմնարար հասարակական հարաբերությունները դիմամիկ հավասարակշռության մեջ¹⁰:

Բերված հիմնական բնութագրիչներն **անհրաժեշտ ու բավարար են** սահմանադրական իրողությունը հաստատելու, այս կամ այն իրավական ակտը սահմանադրական կարգին դասելու կամ չդասելու համար: Այս չափանիշները կարող են օգտակար լինել նաեւ պատմական իրողություններին անդրադառնալիս եւ սահմանադրական ավանդույթների ձեւավորման գոյաբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Բովանդակային առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ փարբեր հեղինակներ «սահմանադրություն» հասկացությունը մեկնաբանելիս հատկապէս կարեւոր

⁶ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երեւան, 1979, էջ 162:

⁷ Նույն տեղում, հ. I, էջ 676:

⁸ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Գ-Ֆ, Երեւան, 1976, էջ 1271:

⁹ Конституционное право. Энциклопедический словарь /Отв. ред. д.ю.н., проф. С. А. Авакьян. М., 2000, էջեր 313-315:

¹⁰ Տե՛ս **Արутյոնյան Գ. Գ., Բաղայի Մ. Յ.** Конституционное право. Энциклопедический словарь. М., НОРМА, 2006, էջեր 228-231:

րում են, որ այն բնորոշում է փվյալ երկրի պետական ու հասարակական կարգը, ընտրական համակարգը, իշխանության մարմինների կազմավորման ու գործունեության սկզբունքները, մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ «սահմանադրություն» հասկացության հանրագիտարանային բնորոշումներում հանդիպում ենք այնպիսի ձեւակերպումների, համաձայն որոնց այն նաեւ ներկայացվում է **որպես սահմանադրական սովորույթների ամբողջություն**¹¹: Այս իրողությունը միջազգային պրակտիկայում ընդունված է կոչել նաեւ **չգրված Սահմանադրություն**: Տվյալ պարագայում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ սոցիալական հանրությունը կարողացել է իր գոյի որոշ հիմնական կանոնների շուրջ գալ ընդհանուր համաձայնության, եւ այդ կանոնները հարգվում, պաշտպանվում են, էական դերակատարություն ունեն փվյալ հասարակության բնականոն կյանքն ու զարգացումը երաշխավորելու գործում: Օրինակ, դեռեւս XVII դարից սկսած անգլիական քաղաքական միպրը «սահմանադրություն» հասկացությունը գերազանցապես ներկայացնում էր ոչ որպես հասարակության, պետության ու անհատի կենսագոյի հիմքը կազմող իրավաբաղաքական միասնական ակտ, այլ որպես պետության ու հասարակության հիմնային հարաբերությունների սկզբունքների ու մտքեցումների մի ամբողջություն, **որոնք ապահովում են մարդկանց ազատությունը, իրավունքի գերակայությունը, իշխանության սահմանափակումը**¹²:

Ամերիկյան հանրագիտարանային բառարաններում Սահմանադրությունը ներկայացվում է որպես պետական համակարգում սրեղծված օրգանական օրենք՝ իրավունքի հիմնարար եւ առանձնահատուկ սկզբունքների ամբողջություն, որի միջոցով եւ որի հիման վրա կերտվում է պետական իշխանությունը: Այն ներկայացնում է պետական իշխանության փարբեր ճյուղերը, ժողովրդի սուվերեն իշխանությունը: Ամերիկյան իրավունքում «սահմանադրություն» հասկացությունը նշանակում է գրավոր փաստաթուղթ, որը հիմնական աղբյուր է պետական իշխանության իրականացման համար¹³:

Սահմանադրությունը դիտվում է նաեւ որպես ազգի կամ պետության հիմնական օրենք՝ **գրված կամ չգրված**, որով սահմանվում են պետության կառավարման բնույթն ու հայեցակարգը, եւ որը հիմնված է բազային այնպիսի սկզբունքների վրա, որոնց միջոցով կառուցվում է փվյալ ազգի կամ պետության ներքին կյանքը, իրականացվում է պետության սուվերեն իշխանությունը, սահմանափակվում է իշխանությունների գործունեությունը¹⁴:

Բերված օրինակները վկայում են, որ փվյալ պարագաներում հիմնական շեշտը դրվում է պետական իշխանության սահմանադրորեն կազմակերպման հիմունքների վրա:

Միանգամայն իրավացի է պրոֆեսոր Բ. Էրգենը՝ շեշտելով, որ սոցիալական պրակտիկայի եւ իրավական մտքի աստիճանական զարգացումը հարստացրին «սահմանադրություն» հասկացությունը՝ այն դիտարկելով որպես արժեհամակարգային երեւույթ, որպես ոչ միայն պետության, այլեւ հասարակության հիմնական օրենք¹⁵:

¹¹ Տե՛ս Վ. Վ. Պոդոյան, Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան / խմբ. Գ. Հարությունյան, Երևան, 2001, էջեր 208-209:

¹² Այդ մասին տես նաեւ՝ Невинский В. В. Конституция Российской Федерации: испытание мировым опытом // Журнал российского права, 2003, N 11, էջ 65:

¹³ Steven H. Gifis. Law Dictionary. New York, 1984, էջ 92:

¹⁴ Henry Campbell Black, Black's Law Dictionary, WESY Publishing CO. 1968, էջ 384:

¹⁵ Эбзеев Б. Прямое действие и непосредственное применение Конституции Российской Федерации - гарантия прав и свобод человека и гражданина // Право и управление: XXI век. N1 (1), 2005. С. 72.

Եթե անդրադարձ կատարենք Սահմանադրության իրավաբաղաբական բնույթին, ապա այն, **որպես կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն**, առաջին հերթին իրականացնում է **հիմնադիր գործառույթ**: Դրա ընդունումը ենթադրում է հասարակության իրավաբաղաբական նոր կարգավիճակ՝ ելնելով որոշակի քաղաքակրթական արժեքներից, նպատակներից ու սկզբունքներից: Սահմանադրությունը հասարակական համաձայնությամբ ամրագրում է սոցիալական հանրության պատմական փոփոխ փուլին բնորոշ համարել գոյի արդյունքները, առաջընթացի նպատակներն ու ուղղությունները, երաշխավորում է համակարգի կայունությունն ու դիմամիկ զարգացումը: «Հիմնադիր» իրավական փաստաթղթեր ընդունվել են դեռևս Հին Տոնում, որոնք դիպվել են որպես փոխհամաձայնություն միապետական իշխանության եւ հողատերերի ու առանձին քաղաքների միջև:

Պատմականորեն մշտապես կարելուով է ու ներկայումս առանձնահատուկ դեր ունի Սահմանադրության **իրավական գործառույթը**, համաձայն որի՝ Սահմանադրությունը ոչ միայն իրավական համակարգի ձեւավորման հիմքն է, կամ դրա նորմերը գործում են անմիջականորեն, այլև պայմանավորում է օրենսդրության զարգացման ուղղվածությունն ու բնույթը: Իսկ սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը պայմանավորում է նաև իրավակիրառական պրակտիկայի բնույթն ու իրավական կողմնորոշումը (փրեն, մասնավորապես, 1-ին, 3-րդ եւ 6-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Սահմանադրությունը կոչված է նաև իրականացնելու լուրջ **կազմակերպական գործառույթ**, համաձայն որի՝ ոչ միայն ամբողջականացվում է ձեռք բերածը, այլև հասարակության առջև նոր խնդիրներ է դրվում՝ վերակազմակերպելու հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան, գրնելու դրան համապատասխան կառուցակարգային լուծումներ, ձեւավորելու սահմանադրականության երաշխավորման իրավաբաղաբական նախադրյալներ:

Սահմանադրությունը, բովանդակելով աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են հասարակական որոշակի արժեքների համակարգ ու դրանց ձգտելու միջոցներն ու մոտեցումները, հստակեցնում է նաև համակարգի **գաղափարախոսական ուղղվածությունը**:

Սահմանադրությունն ունի որոշակի **արտաքին քաղաքական ուղղվածություն**՝ ոչ միայն հաշվի առնելով միջազգային սահմանադրաիրավական զարգացումների միփրումները, այլև սահմանելով պետության արտաքին քաղաքականության իրականացման իրավական սկզբունքներն ու կարգը:

Միջազգային սահմանադրական զարգացումների պատմությունը վկայում է, որ եթե մինչև XVIII դարն իրավաբաղաբական մրքի զարգացումը հանգեցրեց սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է:

Հասարակական հարաբերությունների «սահմանադրումը», **ընդհանուր համաձայնությամբ համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը**՝ ելնելով դրա բնույթից, ձեւից, ընդգրկման շրջանակներից, կիրառման վիճակից, արժեհամակարգային կողմնորոշիչներից, սոցիալական իրականության իմաստավորման ու օբյեկտիվ օրենքների ճանաչման մակարդակից, ձեւավորում է համապատասխան ու համարժեք սահմանադրական մշակույթ: Այն ոչ միայն ենթադրում է հասարակական համաձայնության ու մարդու սոցիալական արժեւորման որոշակի մակարդակ, բանականորեն իմաստավոր-

ված արժեքների ու սկզբունքների հիման վրա հասարակական գոյի կանոնակարգված զարգացումը երաշխավորելու հնարավորություն, այլև այդ հնարավորությունն իրականություն դարձնելու կարողունակություն:

Սահմանադրական մշակույթն առավել ամբողջական դրսևորվում է քաղաքակրթության որոշակի աստիճանում, երբ գիտակցված պահանջ է առաջանում հասարակական համաձայնությամբ սահմանել վարքագծի հիմնական սկզբունքներ ու կանոններ՝ որպես համապարփադիր իրավական նորմեր, ու հետեւել դրանց: Իրավական առումով այդ պահանջը հանգեցրեց սահմանադրությունների ի հայտ գալուն ու հանրային կյանքը սահմանադրորեն կանոնակարգելուն: Սակայն Սահմանադրության լոկ գոյությունը, ինչպես նշեցինք, բավարար չէ երկիրը կամ պետությունը սահմանադրական համարելու համար: **Անհրաժեշտ է նաև, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսևորվի հասարակական կայուն վերաբերմունք՝ ձեռավորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով ազգային մշակույթի օրգանական բաղադրապարրը:**

Այս փուլում արդեն սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, **ուր Սահմանադրության հեղ մեկտեղ առկա է սահմանադրականությունը**, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձեռավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն եւ կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ **քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է**, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով: Նման պարագայում խոսքը «**ժողովրդավարական սահմանադրական մշակույթ**» հասկացության մասին է, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, ուր ներդաշնակված են նաև ազգային ու համամարդկային մշակույթի որակները: Ընդ որում, Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիրարկվել միայն նեղ իրավական առումով, պրագմատիկ իրավահարաբերությունների կամ վերացական հասկացությունների համարեքստում: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը խոր մշակույթային երեւոյթներ են, ունեն արժեհամակարգային փոխպայմանավորված ամուր արմատներ, դրանց իմաստավորման, ընկալման ու ճանաչողության քաղաքակրթական հստակ կողմնորոշիչներ ու մակարդակ: Այդ փոխլրացման շրջանակներում է, որ սահմանադրական մշակույթն իր հերթին պայմանավորում է սահմանադրական ժողովրդավարության մոդելի, դրա ռազմավարության ընտրությունը:

Սահմանադրական մշակույթի մակարդակը, սահմանադրականության դրսևորումները պայմանավորված են նաև սահմանադրական լուծումների մակարդակով, սահմանադրական սկզբունքների հստակությամբ ու առաջադիմական բնույթով, դրանց իրացման ներսահմանադրական լուծումներով, այսպես կոչված, սահմանադրական «հատուկությամբ» ու «ճաշակով»:

Վերջին հարյուրամյակների ընթացքում շատ է խոսվել իրավական, ժողովրդավարական պետության «կարարյալ» սահմանադրության մոդելի մասին: Դեռևս 1928թ. հրատարակած «Սահմանադրության մասին ուսմունք» մենագրության մեջ Կ. Շմիթը խոսում էր «քաղաքացիական իրավական պետության սահմանադրության իդեալական հասկացության» մասին¹⁶: Իսկ ահա 2004թ. Սանտյագոյում հրավիրված Սահմանադ-

¹⁶ Carl Schmitt, Verfassungslehre, Berlin 1993, S. 37-40.

րական իրավունքի միջազգային ընկերակցության գազաթնամոռոկում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Արված կարեւոր հետեւություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական Սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաեւ միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մտերցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռեւս գրնվում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձեւախեղումներից խուսափելն է, այն բանի գիտակցումը, որ **սահմանադրական պետությունը ձեւավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով:** Էական է եւ այն, որ սահմանադրական մշակույթն ավելի կայուն է, քան սահմանադրական համակարգերը, սակայն **դրանց գոյաբանական ներքին կապն անխզելի է:**

Քաղաքակրթության ներկա ձեռքբերումների հողովույթում սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչն այն է, որ **երկրի Տիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունն ու վերարտադրումը:** Այդ արժեքները, իրենց հերթին, ձեւավորվում են դարերի ընթացքում. յուրաքանչյուր սերունդ վերաիմաստավորում է դրանք ու իր հավելումով երաշխավորում զարգացման շարունակականությունը: Նաջողությունն ուղեկցում է այն ազգերին ու ժողովուրդներին, որոնց մոտ այս շղթան չի ընդհարվում կամ լրջորեն խտրվում:

Պատմական իրողությունն այն է, որ յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ սահմանադրական մշակույթի ձեւավորման ու սահմանադրական իրողության հաստատման իր ինքնուրույն ճանապարհն է անցել՝ ավելի կամ պակաս փոխառելով այլոց փորձը, կատարելով իր արժեքային համակարգից բխող հավելումներն ու ամբողջականացումը: Տիմնականը, էականն այն է, որ **սահմանադրական մշակույթը եւ բուն Սահմանադրությունը չեն կարող դառնալ ներմուծվող կամ արտահանվող ապրանք:** Դրանք արվյալ հասարակության, սոցիալական կոնկրետ հանրության արժեքային համակարգի վրա ձեւավորված իրողություններ են: **Սահմանադրական մշակույթը չի կարող ապազգային լինել:** Առաջին հերթին Սահմանադրությունն է կոչված ապահովելու վերազգայինի ու ազգայինի ներդաշնակությունը, համամարդկային արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ համարեղումը: Սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն ընկած է Սահմանադրության արժեքանության հիմքում, դրսևորվում է սոցիալական հանրության կենսագոյի բոլոր ոլորտներում, արտահայտվում է դարերով մշակված, փորձարկված, ապրված արժեքների ու պարկերացումների միջոցով:

Յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեվորված ներկայությունը ժամանակի մեջ: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները պայմանավորված են նրա սոցիալ-մշակութային դիմագծով եւ թելադրում են կոնկրետ սահմանադրական լուծումների առանձնահատկությունները:

Ամփոփելով՝ կարող ենք ընդհանրացնել, որ իրավական պետությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է բանաձեւվել որպես **պատմականորեն ձեւավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած հանգումների, պարկերացումների, իրավընկալման, իրավագիտակ-**

ցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար հասարակական համաձայնությամբ սահմանելու եւ երաշխավորելու իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները:

Տվյալ բանաձեւման շրջանակներում «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպես ապրող իրողության գոյությունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում:

«Սահմանադրականությունը» սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձեւավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման:

Երկրում սահմանադրական մշակույթի դրսեւորման կարեւոր բնութագրիչներից է **սահմանադրական պատշաճ մակարդակի իրավագիտակցությունը**: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պարտասրակամտություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց փարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների: Նասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջուկ է համարվում սոցիալական անհամաձայնությունների ու կարակալիզմների պատճառ կարող է հանդիսանալ: Քաղաքացիական հասարակության հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավորումն է եւ իրավունքով իշխանության սահմանափակումը: Պետական իշխանության կարեւորագույն առաքելություններից է սահմանադրաիրավական հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտի մոտ սահմանադրական այնպիսի իրավագիտակցության ձեւավորումը, որի հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների խոր, իմաստավորված ու միասնական ընկալումը, դրանց հեղուղական իրացումը:

Բնականաբար, քաղաքացին, պետական իշխանության փարբեր մարմինները, սահմանադրաիրավական հարաբերությունների փարբեր սուբյեկտներն օժտված են **սահմանադրական փարբեր իրավունակությամբ**: Վերջինս պայմանավորված է նրանց սահմանադրական գործառույթի բնույթով, իրավասությունների ծավալով, իրավունքներով ու պարտականություններով: Սահմանադրական մշակույթի կարեւոր բնութագրիչներից է և այն, թե սահմանադրական իրավահարաբերությունների փարբեր սուբյեկտների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները որքանով են ներդաշնակված ու հակակշռված, որչափով է երաշխավորված այդ հավասարակշռության պահպանումը դինամիկայում:

Անառարկելի է նաեւ, որ Սահմանադրությունն իրավաքաղաքական փաստաթուղթ է: Դրա բովանդակությունը պայմանավորված է երկրի քաղաքական կողմնորոշումներով, քաղաքական ուժերի իրական հարաբերակցությամբ, սահմանադրական հիմ-

նարար սկզբունքների վերաբերյալ հանրության իրազեկվածության աստիճանով, քաղաքական ու իրավական մշակույթի ընդհանուր մակարդակով էլ այլն: Սահմանադրական դոկտրինայի ընտրությունը պայմանավորված է առաջին հերթին այն ընթացիկ ու փեռական իրական խնդիրների լուծման հրամայականներով, որոնք ծառայում են փոխադրելի ու նրա քաղաքական ուժերի առջև: Ներքին, Սահմանադրությունը չի կարող քաղաքական ենթարեքստ չունենալ: Սակայն դա չպետք է շփոթ առաջացնի, որի արդյունքում սահմանադրական նորմերը մեկնաբանվեն որպես քաղաքական դրույթներ: Որքանով էլ այդ նորմերն իրենց հիմքում քաղաքական ենթարեքստ ունենան կամ քաղաքական փոխհամաձայնության արդյունք լինեն, միեւնույն է, համապարտադիր վարքագծի կանոն դառնալուց հետո դրանք միայն ու միայն իրավական նորմեր են, ունեն գերակա, սահմանային նշանակություն էլ պայմանավորում են ողջ իրավական համակարգի բնույթն ու բովանդակությունը:

Սահմանադրական նորմերի էական առանձնահատկությունն այն է, որ դրանք չպետք է միմյանց լինեն ընթացիկ քաղաքական կողմնորոշումներին, հիմքում ունենան ընթացիկ քաղաքական շահերը, այլ միմյանց լինելով սոցիալական հանրության հեռանկարային կողմնորոշումներին՝ ապահովեն հասարակության կայուն և դինամիկ առաջընթացը: Դրանից ելնելով էլ ընտրվում Սահմանադրության ընդունման և սահմանադրական փոփոխությունների կարգը:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնական դժվարություններից մեկը, սակայն, այն է, որ առաջանում է որոշակի հակամարտություն ընթացիկ և մնայուն քաղաքական շահերի ու կողմնորոշումների միջև: Որպես դրա հետևանք՝ փարակերպ են ընկալվում, մեկնաբանվում և իրացվում հիմնարար սահմանադրական արժեքները: Հարկապես, այսպես կոչված, մոդելային սահմանադրական դոկտրինաների պայմաններում¹⁷, սահմանադրական դրույթների մեկնաբանումը գլխավորապես ընթացիկ քաղաքական առաջնահերթությունների հարթությունում հանգեցնում է նրան, որ անջրպետ է առաջանում սահմանադրական արժեքանության և հանրային կյանքում դրա իրական դրսևորման միջև:

Ներքինությունն այն է, որ քաղաքականության և սահմանադրականության հիմնահարցը պետք է քննարկման առարկա դառնա ոչ թե այդ երկու երևույթների մեկուսի, մեխանիկական համադրման հարթությունում, այլ հստակ պարզաբանաբանության կապի մեջ: Իրավական, ժողովրդավարական պետությունում քաղաքականությունն ինքը պետք է լինի սահմանադրական, բիսի կենսագոյի այն հիմնարար արժեքներից ու սկզբունքներից, որոնք հասարակական համաձայնությամբ դարձել են վարքագծի հիմնարար կանոն: Քաղաքականությունը միջոց ու հնարավորություն է հանրությանը կողմնորոշելու արժեհամակարգային ընտրություն կատարելու հարցում: Այդ ընտրությունը կատարելուց հետո քաղաքականությունն ստանում է իր բնական սահմանափակման սահմանները՝ դրսևորվելու միայն ու միայն սահմանադրական ժողովրդավարության շրջագծում:

Պարտության դասերը վկայում են, որ սահմանադրությունների ծնունդը, որպես կանոն, թելադրված է հասարակության առջև ծառայում է բարդագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Իրականում, 1787թ. ԱՄՆ Սահմանադրության ընդունումն ազդարարեց աշխարհում նոր փիլիսոփայության սրբեղծման մասին: 1774թ. սեպտեմբերին անգլիական գաղութները Ֆիլադելֆիայում հրավիրեցին առաջին մայրցամաքային կոնգրեսը, որը բողոքի ձայն բարձրացրեց գաղութների իրավունքների ուրանահարման վե-

¹⁷ Այդ ճանապարհն ընտրեցին հատկապես տարբեր մայրցամաքների նոր ժողովրդավարության երկրները վերջին տասնամյակներում, երբ սահմանադրական զարգացումների հիմքում դրեցին արեւմտաեվրոպական կամ ամերիկյան սահմանադրականության արժեքանական մոդելները:

րաբերյալ: Արդեն 1775թ. սկսվում է անկախության համար ուղղակի պայքարը: 1776թ. հունիսին հրավիրված երկրորդ մայրցամաքային կոնգրեսն առաջ է քաշում անկախության հռչակագրի ընդունման անհրաժեշտության հարցը: Այն ընդունվում է 1776թ. հունիսի 4-ին: Ամերիկյան նահանգների հեղափոխության սերտ գործակցության եւ միասնական պետականության հաստատման ու ամրապնդման համար առանցքային նշանակություն ունեցավ 1787թ. Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության մշակումը եւ ընդունումը, որը հեղափոխում վավերացվեց նահանգների կողմից: Սահմանադրությունը դարձավ ամերիկյան պետականության գոյության ու զարգացման գլխավոր երաշխիքը:

Սահմանադրաիրավական մտքի զարգացումը հայկական իրականության մեջ հազարամյակների ընդգրկում ունի¹⁸: Այսուհանդերձ, սահմանադրական օրենսդրության ձևավորման նորագույն պայմանությունը Նայաստանում վերսկսվում է 20-րդ դարի սկզբին՝ հայոց պետականության վերածնունդով, եւ շարունակվում է մինչեւ մեր օրերը: Այն անցել է երեք պարամական փուլ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է սահմանադրական իրավունքի իր փուլը¹⁹:

Սահմանադրաիրավական կարգավորումը Նայաստանի առաջին Նանրապետությունում (1918-1920թթ.) արտացոլում է շուրջ 600 փարի անկախությունը կորցրած հայ ժողովրդի պետականության վերածնունդը՝ պառլամենտական հանրապետության ձևով:

1918թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը: 1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Նայոց ազգային խորհուրդը հռչակեց Նայաստանի անկախությունը՝ հրապարակելով անկախության հռչակագիր: Այդ հռչակագիրը սահմանադրական իրավական ակտ էր, որում ասված էր. «Նայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանություն... Ազգային խորհուրդը ժամանակավորապես սրանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական եւ վարչական դեկլարելու համար»²⁰:

Ծանր արտաքին քաղաքական, փնտրելիս եւ սոցիալական իրադրությունում էր գործի անցնում Նայոց ազգային խորհուրդը: Իրավիճակը բարդանում էր նաեւ նրանով, որ այդ մարմինը կոչված էր իրականացնելու պետական կառավարում նորանկախ մի պետությունում, որը չունէր նախորդող, պարասպի պետական ապարատ: Այս բացառիկ պայմաններն էլ կանխորոշում էին կառավարության գլխավոր խնդիրը. «կասեցնել քայքայման գործընթացը, հանել երկիրն անիշխանության վիճակից ու պայմաններ ստեղծել պետական շինարարության համար ... Անձեւ քառսի եւ ավերակների կույրից նա պետք է ստեղծի կենսունակ եւ աշխարհող մի մարմին»²¹: Մի խոսքով, ոչնչից պետք է ստեղծվեր պետություն:

1918թ. օգոստոսի 3-ին Նանրապետության կառավարությունը Նայաստանի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր հռչակագիրը, որի դրույթների մեծագույն մասը վերաբերում էր առօրյա հիմնախնդիրներին՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, պաշտպանության, արտաքին գործերի ոլորտներում: Նեոանկարային ծրագրեր այն չունէր: Այսինքն՝ այն սահմանադիր բնույթի ակտ չէր, բացի նրանից, որ նա-

¹⁸ Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները: Երևան, 2006:

¹⁹ Պատմական համառոտ այս անդրադարձը կատարվել է Ա. Վաղարշյանի մասնակցությամբ:

²⁰ Տե՛ս **Ս. Վրացյան**, Նայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջեր 131-132:

²¹ Տե՛ս «Չանգ» թերթ, 1918թ., օգոստոս, թիվ 43, Հ. Քաջագունու կառավարության հայտարարությունը 1918թ. օգոստոսի 3-ին:

խաբեում էր Նայասպանի Սահմանադիր ժողովի գումարումը²², որն էլ պետք է մշակեր ու ընդուներ Նայասպանի Սահմանադրությունը: Սահմանադրության հարցում եւ հանրապետության քաղաքական ղեկավարության, եւ օրենսդիր մարմնի, եւ ընդդիմադիր քաղաքական որոշ ուժերի դիրքորոշումը եղել է հետեւյալը. «ՆՆ Սահմանադրությունը կընդունվի ապագայում խաղաղություն հաստատվելուց եւ ՆՆ փարաժքային սահմանների հարցի վերջնական լուծումից հետո՝ Սահմանադիր ժողովի կողմից»:

Նայասպանի առաջին Հանրապետությունն այդպես էլ չհասցրեց ունենալ Սահմանադրություն: Սակայն ՆՆ արդարադատության նախարարությունում 1920թ. սկզբներին՝ նախարար Ա. Չիլինգարյանի պաշտոնավարության օրոք, աշխատանքներ են փարվել նաեւ ՆՆ Սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ:

Մայիսյան իրադարձությունները եւ հանրապետության քաղաքական կյանքի հետագա դեպքերն ընդհատեցին այս ուղղությամբ աշխատանքների շարունակումը²³:

Այսպիսով՝ Նայասպանի առաջին Հանրապետության իրավական համակարգը, որը գոյատևեց ընդամենը երկու եւ կես փարի, չհասցրեց ունենալ իր Սահմանադրությունը: Սակայն հանրապետությունում ընդունվել է գործել են նորմատիվ իրավական ակտեր, որոնք կրում էին հիմնադիր, սահմանադիր բնույթ, որովհետեւ դրանք ունեին սահմանադրական-իրավական բովանդակություն, այսինքն՝ կարգավորում էին պետության եւ անհատի փոխհարաբերությունները, պետական իշխանության կառույցների ստեղծման եւ գործունեության հարաբերությունները: Այդպիսի բնույթ ունեցող ակտերից էին հանրապետության կառավարության հայտարարագրերը (հռչակագրերը) եւ փարբեր ժամանակներում ընդունված օրենքները՝ Նայասպանի խորհրդի հրահանգը (1918թ. օգոստոս), որը ժամանակակից նորմատիվ կարգավորման համակարգում համապատասխանում է խորհրդարանի կանոնակարգին, Նայասպանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը (1919թ. ապրիլ), Նպաստության (քաղաքացիության) մասին օրենքը (1920թ. մայիս): Բացի սրանից, գործել են բազմաթիվ այլ օրենքներ, ընդունված օրենսդրի եւ օրենսդիր լիազորություններով օժտված կառավարության կողմից, որոնք կարգավորում էին կառավարության եւ պառլամենտի փոխհարաբերությունները, պետական իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության հարաբերությունները²⁴:

Առաջին Հանրապետության իրավական համակարգի մյուս առանձնահատկությունը հանգում էր նրան, որ սահմանադրական հարաբերությունների մի մասը կարգա-

²² Տե՛ս նույն տեղում:

²³ ՀՀ Սահմանադրության մշակման խնդիրներով զբաղվել է նաև «Հայաստանի իրավաբանական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1919թ. ապրիլի 26-ին: Նույն թվականի մայիսի 7-ին Շրջանային դատարանը հաստատել է ցուցակագրել է Հայաստանի իրավաբանական ընկերության կանոնադրությունը: Այնուհետև, ընկերությունն անցնելով գործի՝ հիմնել էր դատավարության եւ դատարանակազմության, մյուսական իրավունքի, հայկական իրավունքի, մուսուլմանական իրավունքի, Հայաստանի Սահմանադրության հարցերն ուսումնասիրելու եւ մշակելու հանձնաժողովներ:

²⁴ Առաջին Հանրապետության պետական շինարարության եւ իրավական համակարգի առանձնահատկություններից մյուսն այն էր, որ Հայաստանի խորհուրդը 1918թ. դեկտեմբերի 6-ին օրենսդիր հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել էր «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով: Այդ քայլը, որ հետագայում խորհրդահայ իրավագիտությունը որակում էր հետադիմական, ստիպողական եւ ժամանակավոր միջոցառում էր, որովհետեւ իրավական համակարգը միանգամից ստեղծել հնարավոր չէր: Մյուս կողմից՝ ռուսական օրենսդրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո կրած փոփոխությունների շնորհիվ գրեթե կորցրել էր իր հակաժողովրդավարական բնույթը:

վորվում էր քաղաքական ուժերի բանակցությունների միջոցով կնքված համաձայնագրերի ու պայմանավորվածությունների հիման վրա, ինչպես, օրինակ, Նայասպրանի խորհրդի կազմավորման կարգը եւ այլ հարաբերություններ: Երբեմն էլ որոշակի իրավական ինստիտուտներ, առանց նորմադրվել իրավական ամրագրման, ուղղակիորեն ռեցեպցիայի էին ենթարկվում եւ կիրառվում իբրեւ իրավական սովորույթներ: Օրինակ՝ կառավարությանն անվստահության քվե հայտնելու եւ դրա հետեւանքով կառավարության հրաժարականի ինստիտուտը, չունենալով իրավական-օրենսդրական ամրագրում, կիրառվում էր գործնականում: Առանձին կուսակցությունների քաղաքական պայմանավորվածությունների միջոցով սահմանադրական հարաբերությունների կարգավորման օրինակ էր 1918 թ. նոյեմբերին Նայ հեղափոխական դաշնակցության եւ Նայ ժողովրդական կուսակցության կնքած արձանագրությունը կոալիցիոն կառավարություն կազմելու կարգի, դրա կառուցվածքի եւ նախարարական պորտֆելների բաշխման կարգի մասին:

Նայասպրանի երկրորդ Նանրապետության կամ ՆՍՄՍ սահմանադրական զարգացման փուլն (1920-1990թթ.) արտացոլում է ամբողջատիրական սահմանադրաիրավական կարգավորման հաստատումը եւ դրա գոյությունը փարբեր դրսեւորումներով, մինչեւ Երրորդ Նանրապետության հռչակումը:

Նայասպրանի առաջին Նանրապետության գոյության դժվարին պայմաններում նոր ձեւավորված հանրապետական կարգերը, պառլամենտարիզմը չունեցան իրենց բնականոն պարմական զարգացումը, որովհետեւ ընդհարվեցին ամբողջատիրության սահմանադրաիրավական կարգավորման հաստատմամբ: Այս շրջանում բուն Նայասպրանում սահմանադրական-իրավական կարգավորման մասին կարող է խոսք գնալ միայն մինչեւ ՆՍՄՍ-ի՝ ԽՍՄՄ կազմի մեջ մտնելը: Դրանից հետո Նայասպրանը փաստորեն կառավարվում էր Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետեւ՝ ԽՍՄ Միության մարմինների եւ օրենքների միջոցով, իսկ ՆՍՄՍ սահմանադրությունները ԽՍՄՄ սահմանադրությունների իրավական բովանդակության կրկնօրինակումներն էին Նայասպրանի համար:

Նորանկախ Նայասպրանի Նանրապետությունն իր առաջին քայլերն սկսեց ազգային-պետական իրավական համակարգն ամուր ու որակապես նոր հիմքերի վրա դնելու փորձով: Առաջին նման փաստաթուղթը 1990 թ. օգոստոսի 23-ին ՆՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ Նայասպրանի անկախության մասին հռչակագիրն էր: Հռչակագրի նախապարտաբանումն ու փարբեր նախագծերի համադրման համար սրեղծվեց հարուկ խորհրդարանական հանձնաժողով: Վերջինիս աշխատանքի բնույթը, ներկայացված փարբեր նախագծերի քննարկման ընթացքը շար ընդհանրություններ ունեին հայկական իրականության մեջ հրավիրված սահմանադիր ժողովների հետ՝ առաջին հերթին հասարակական համաձայնության մթնոլորտի ապահովման առումով²⁵: Պարտական չէր, որ Հռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Բովանդակային առումով Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պարմության մեջ որակապես նոր էջ բացեց: **Այն հիմնարար, հետեւողականորեն համակարգված, պարմապրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր փրամաբանությունից ելնող նորների ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է,** որը երբեք չի կորցնի իր թե՛ պարմական եւ թե՛ գործնական իրավական նշանակությունը:

²⁵ Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները, Երեւան, 2006, էջեր 50-64:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Նոչակագրի մի շարք կոնկրետ դրույթների: Այն առաջին հերթին հանդես եկավ որպես «Նայաստանի ժողովրդի միասնական կամքի» արտահայտություն: Անկախ պետականության հիմքում դնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, խնդիր ունենալով «ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը»՝ հռչակվեց, որ «Նայոց պետականության կրողը Նայաստանի Նանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ ՏՏ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա»:

Սահմանադրաիրավական առումով բացառիկ կարեւորվում են քաղաքացիության կարգավիճակի, անխտրականության սկզբունքի, խոսքի, մամուլի, խղճի ազատության, քաղաքական ազատությունների, երկրի ինքնիշխանության, միջազգային իրավասուրյակության, սուվերենության, սոցիալական, մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքների եւ մի շարք այլ հիմնարար արժեքների վերաբերյալ հռչակագրային մոտեցումները: Դրանք սահմանադրական նոր զարգացումների համար սկզբունքային կողմնորոշիչներ դարձան: Նոչակագրով պարտավորվելով Նայաստանի Նանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների փառանջատում», հիմք դրվեց որակապես նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային նպատակների իրականացման երաշխիքը:

Անկախության հռչակագրին բնորոշ են ոչ միայն հավաքարմությունն ազգային ակունքներին, այլեւ սկզբունքների ու նորմերի ներքին կուռ ամբողջականությունն ու փոխլրացումը, ներդաշնակությունն առաջադիմական իրավական լուծումներին ու սահմանադրական զարգացումների միջազգային միություններին:

Անկախության հռչակագրից բխող ՆՏՄՄ 1978 թ. Սահմանադրության ընթացիկ մասնակի նորացումները չէին վերացնում նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը: Գերթեւ ամեն մի նոր օրենք ընդունելիս անհրաժեշտություն էր առաջանում փոփոխություններ եւ լրացումներ մտցնել Սահմանադրության մեջ: Նման պայմաններում **1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց «Սահմանադրական օրենք «Նայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին»**, որի համաձայն «Մինչեւ ՏՏ Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Նայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՏՏ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»: Փաստորեն, այդ օրենքի ընդունմամբ ընկրվեց գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ չմտցնելու ուղին: Նման «լողացող» իրավաբանական ձեւակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետեւ սրացվում էր, որ Նայաստանի Նանրապետությունը եւ՛ ուներ Սահմանադրություն, եւ՛ չուներ:

Նոչակագրի նորմերը, մինչեւ ՏՏ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գրան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՏՏ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրեց ՏՏ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա): Այս օրենքը կարեւոր հանգրվան էր սահմանադրական բարենորոգման ճանապարհին, որովհետեւ իր բնույթով նպատակային, ծրագրային, համալիր ակտ էր, որն ամրագրում էր հետագա սահմանադրական զարգացման համար կարեւորագույն նշանակություն ունեցող մի շարք դրույթներ:

Սույն սահմանադրական օրենքով, ամրագրելով ՏՏ սահմանադրական կարգը՝

որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների փարանջափման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաև սահմանադրական այն կարևոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միայն օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի հողված 5-ն ամրագրեց, որ «Նայասարանի Նանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Նայասարանի Նանրապետության նախագահն է, որը գլխավորում է Նայասարանի Նանրապետության գործադիր իշխանությունը և ներկայացնում է Նայասարանի Նանրապետությունը երկրի ներսում և միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման հիմքը դրեց և իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին **Գերագույն** խորհուրդն էր, ու փարանջափելու օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները:

Թե՛ Նայասարանի և թե՛ նորանկախ շաք երկրների համար հեղափոխական փոփոխությունները, մինչև նոր սահմանադրությունների ընդունումը, դարձան հարվածական վերափոխումների և իրադրության որոշ կայունացման փոփոխություններ: Զգալի չափով ամրապնդվեց վերափոխվող հասարակական հարաբերությունների օրենսդրական բազան, հիմնականում կազմավորվեցին պետական կառավարման ինստիտուտները, նոր որակ ստացավ փոփոխական անկախությունը՝ հարկապես սեփական դրամանիշի և ֆինանսաբանկային ինքնուրույն հարաբերությունների արմատավորման շնորհիվ, ձեւավորվեցին միջազգային գործուն կապեր, որոնք կողմնորոշեցին նաև փոփոխական բարեփոխումների բնույթը:

Այս փուլն ուներ նաև ներքին վերանվազումներ ու խոյթեր: Նայասարանի համար դա պայմանավորված էր միայն դարաբաղյան պատերազմի աճանցյալ հետեւանքներով: Օրենսդրական բացերը, կառույցների անկարարությունը, կառավարման որոշ սխալներն ու մի շարք հարցերի անձեռնհաս լուծումները հասարակության մեջ պարարտ հող սրբեցնեցին բացասական բազմաթիվ դրսեւորումների ու արժեհամակարգային ձեւախեղումների ի հայտ գալու և խորանալու համար, որոնք շաք կարճ ժամանակամիջոցում խոր արմատներ ձգեցին:

1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Նայասարանի Նանրապետության Սահմանադրությունը: Դրան նախորդել էին շուրջ չորս փուլի փոփոխումներ, որոնք վերաբերում էին թե՛ պետության կառավարման ձեւին, թե՛ իշխանությունների փարանջափմանն ու դրանց լիազորություններին և թե՛ սահմանադրական կարգի հիմունքներին ու մարդու իրավունքներին առնչվող մի շարք սկզբունքային հարցերի: Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչպիսին Անկախության հռչակագրի պարագայում էր, ինչպես նաև հաղթահարել կամասահման իրավամտաբանության խորհրդային իներցիան, այսուհանդերձ, կյանքը ցույց տվեց, որ ՆՆ Սահմանադրությունը վճռական դեր կատարեց երկրի հեղափոխական կայուն զարգացումն ապահովելու և մի շարք ճգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցերում:

Ժողովրդավարացման նոր ալիքը 90-ականների սկզբից նորանկախ երկրների առջև դրեց չափազանց բարդ մի խնդիր՝ սահմանադրական զարգացումները երաշխավորել ոչ թե էկոլոյցիոն զարգացման արդյունք հանդիսացող սահմանադրությունների, այլ, այսպես կոչված, արեւմտեվրոպական և ամերիկյան սահմանադրական արժեքաբանու-

թյան վրա խարսխված մոդելային սահմանադրությունների հիման վրա: Սա, վերջին հաշվով, սահմանադրական հիմնարար արժեքների փրանսպարանցիա էր ենթադրում: Նայկական իրականության հիմնական առանձնահատկությունը, սակայն, այն էր, որ այդ արժեքները մեր սահմանադրական մշակույթի պատմության մեջ խոր արմատներ ունեին:

Սահմանադրական մշակույթի համակարգային ամբողջականության փեսանկյունից այնքան էլ կարելու չէ, թե պետությունը կառավարման ինչ ձեւ է ընտրել՝ նախագահական, կիսանախագահական, թե՛ խորհրդարանական: Դա առաջին հերթին քաղաքական ընտրություն է: Սակայն չափազանց կարելու է, որպեսզի ցանկացած ձեւի պարագայում հետետողականորեն իրացվեն սահմանադրական հիմնարար սկզբունքները, բացառվեն ներսահմանադրական հակասություններն ու փակուղային վիճակները, Սահմանադրությունը հանդես գա որպես դինամիկ օրգանական ամբողջականություն:

Նորանկախ Նայաստանի Նանրապետությունում սահմանադրական զարգացումները կարող են դառնալ առանձին ու հանգամանալի ուսումնասիրության առարկա: Այսուհանդերձ, լուրջ դասեր է անհրաժեշտ քաղել այն իրողությունից, որ թե՛ մեզանում եւ թե՛ մի շարք այլ երկրների անցումային հասարակական համակարգերում փեղ գրան սահմանադրաիրավական որոշ ձեւախեղումներ, որոնք պայմանավորվեցին երեք հիմնական խումբ գործոններով.

1. իրավամրածողության եւ իրավակիրառական պրակտիկայի իներցիա,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ կամ թերացումներ,
3. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պատճենավորում՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների սրբեղծման եւ ազգային սահմանադրական մշակույթի հաշվառման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների փարաբնույթ ձեւախեղումների կամ գրնված լուծումները կորվում են իրական կյանքից ու օժրված չեն լինում բավարար կենսունակությամբ:

Սահմանադրական մեկնաբանությունների մեթոդաբանության ընտրության փեսանկյունից կարելու է շեշտել, որ սահմանադրական ճարտարապետությունն ունի իր փրամաբանությունը, սկզբունքներն ու սահմանները: Սահմանադրությունների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու **հիմնական խնդիրն** իրավունքի գերակայության երաշխավորումն է: Իր հերթին, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման սահմանադրական հստակ երաշխիքների առկայությունն է Սահմանադրության կենսունակության գնահատման թիվ մեկ չափանիշը: Այս չափանիշը ելակետային է ու մնայուն: Յուրաքանչյուր քայլ, որն ուղղված է սահմանադրական փոփոխությունների ճանապարհով ինչ-ինչ քաղաքական խնդիրների լուծմանը, սակայն չի բխում իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքից, չի կարող սահմանադրական լինել եւ կհակասի իրավական ժողովրդավարության արժեքներին: **Ժամանակակից սահմանադրական իրավունքի կարեւորագույն սկզբունքներից է այն, որ անթույլատրելի է սահմանադրական ցանկացած փոփոխություն, որը թուլացնում է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքները:** Առաջադիմության ճանապարհն ընտրողի դրոշին պետք է գրված լինի՝ **իրավունքի գերակայություն եւ ժողովրդավարություն:**

Սահմանադրական մեթոդաբանության **երկրորդ կարելու խնդիրն** իշխանությունների գործունակության ու արդյունավետ աշխատանքի երաշխավորումն է: Դա

հնարավոր է բացառապես իշխանությունների փարանջապարման սկզբունքի հեղուկական իրացման, դրանց լիազորությունների հավասարակշռման, հակակշիռների ու գուպումների գործուն համակարգի արմատավորման ճանապարհով միայն: Այս ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր զարգացում պետք է փա հեղուկալ հարցերի հստակ պատասխանը:

- Ի՞նչ փոփոխություններ են կատարվում իշխանության թելերի գործառնական լիազորություններում եւ դրանք որքանո՞վ կարող են խախտել դինամիկ հավասարակշռությունն ու վնասել իշխանության այս կամ այն թելի գործառնական անկախությանը:

- Ինչպե՞ս ապահովել **գործառույթ - ինստիտուտ - լիազորություն** շղթայի համակարգային ներդաշնակությունը:

- Որքանո՞վ են գործառնական լիազորությունների փոփոխությունները հավասարակշռված հակակշռող լիազորություններով:

- Որքանո՞վ են զսպող լիազորություններն ամբողջական եւ հուսալի՝ գործառնական ու հակակշռող լիազորությունների նոր հաշվեկշռի պայմաններում:

Այս պատասխաններով են որոշվում իշխանության համակարգի բարեփոխումներին ուղղված սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմնավորվածությունն ու արդյունավետությունը: Իշխանությունների փարանջապարման սահմանադրական սկզբունքի բուն էությունը դրանց գուպումն ու սահմանափակումն է՝ հոգուր իրավունքի: Ներառաբար, նշված հարցերի պատասխանով է որոշվում նաեւ, թե որքանով է երաշխավորվում իրավունքի գերակայությունը: Իր հերթին, առանց սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի պաշտպանության սահմանադրական կարգը գրկված կլինի ներքին ինքնապաշտպանության հուսալի համակարգից:

Սահմանադրական բարեփոխումների **երրորդ կարեւոր խնդիրն** այն է, որ երաշխավորվի հասարակական հնարավոր լայն համաձայնություն սահմանադրական լուծումների շուրջ, միաժամանակ նվազագույնի հասցվեն ու բացառվեն ներսահմանադրական բացերն ու անհամապատասխանությունները, հաղթահարվեն փակուղային վիճակները, ամրապնդվի ներսահմանադրական կայունությունը, սրտեղծվեն Սահմանադրության գերակայության երաշխավորման ու սահմանադրական ժողովրդավարության հաստատման հիմնարար նախադրյալներ: Մասնագետների կողմից հաճախ է վկայակոչվում ամերիկյան սահմանադրականության հիմնական առանձնահատկությունը, համաձայն որի՝ դրան բնորոշ են կայունությունը՝ սկզբունքային հիմունքների առումով, եւ ճկունությունը՝ դրանց գործնական դրսեւորումների մեջ ու ժամանակի պահանջներին համապատասխան²⁶: Մա ոչ միայն բնորոշ է ամերիկյան սահմանադրական պրակտիկային, այլեւ համարվում է սահմանադրական մշակույթի կարեւորագույն որակ միջազգային առումով: Ուստի սահմանադրական փոփոխությունները պետք է ներսահմանադրական կայունության այնպիսի երաշխիքներ սրտեղծեն, երբ **սահմանադրական հիմնական սկզբունքների կայուն ու անշեղ պահպանումը գուցորդվում է սահմանադրական ժողովրդավարության դինամիկ զարգացման ու Սահմանադրության գերակայության շարունակական ապահովման հետ**: Այս որակներն արդի սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են եւ անկյունաքարային նշանակություն ունեն իրավական պետության համար:

Այդ որակների ապահովմանն ուղղված մտքեցումներով են գնահատվում նաեւ երկրում սահմանադրական մշակույթի իմաստավորված ընկալման բնույթն ու աստիճանը, սահմանադրականության հաստատման գործում դրսեւորվող սկզբունքայնությունը,

²⁶ Մասնավորապես տե՛ս **Алебастрова И. А.** Основы американского конституционализма. М., 2001, էջ 4:

հասարակական համաձայնության միջավայրի կարեւորումը, պետության ու ժողովրդի ապագայի հանդեպ ունեցած պարասխանավորությունը:

Սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմքում հստակ հայեցակարգ պետք է դրված լինի: Առաջին հերթին պարճառաբանված պետք է լինի փոփոխությունը՝ ինչու, դրանով ի՞նչ խնդիր է լուծվում: Պարասխան պետք է տրվի այն հարցին, թե որո՞նք են արժեհամակարգային մտքեցումները, որքանո՞վ է փոփոխությունը երաշխավորում Սահմանադրության հիմնարար սկզբունքների առավել ամբողջական ու հեղուկական իրացումը: Ամեն մի լրացում ու փոփոխություն կարարելուց առաջ պետք է պարզել, թե րվյալ խնդիրն ինչպե՞ս է լուծվել միջազգային սահմանադրական պրակտիկայում, ինչպիսի՞ն են միջազգային իրավական մտքեցումները, ինչպիսի՞ն է միջազգային արդարադատական նախադեպը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը: Ամեն մի կոնկրետ փոփոխություն, որն առնչվում է իշխանության մարմինների լիազորություններին ու դրանց գործառնական դինամիկ հավասարակշռմանը, պետք է գնահատվի հնարավոր հետեւանքների տեսանկյունից, պարզվեն սահմանադրական երեք կարեւոր սկզբունքների՝ իրավունքի գերակայության, ժողովրդաիշխանության եւ իշխանությունների փարանջապման հետեւողական իրացումն ապահովելու նոր հնարավորությունները:

Սահմանադրությունը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունը²⁷: Սահմանադրական փոփոխությունները պետք է լինեն դժվարին ու խստիվ հիմնավորված: Սահմանադրական կայունությունը երկրի կայունության գլխավոր երաշխիքն է: Մյուս կողմից, Սահմանադրությունը չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին՝ դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Միջազգային պրակտիկան այս խնդրի արդյունավետ լուծումների մեծ զինանոց է առաջադրել: Դրանց շարքում, հստակապես անցյալ դարի ընթացքում, առավել կարեւորվեց սահմանադրական մեկնաբանության ինստիտուտը: Նայեցական եւ գիտական (դոկտրինայ) մեկնաբանությունների կողքին առավել կարեւորվում է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ինստիտուտը: Վերջինս հնարավորություն է տալիս Նիմնական օրենքին հաղորդել առավել մեծ ճկունություն, հասարակական դինամիզմ, էապես նվազեցնել դրանում փոփոխություններ կատարելու գայթակղությունը: ԱՄՆ սահմանադրագետների կարծիքով՝ այս երկրի Սահմանադրության կենսունակությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Գերագույն դատարանը մոտ 215 տարիների ընթացքում շուրջ 540 հարյուր կազմող իր որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումների ու մեկնաբանությունների միջոցով շարունակաբար թարմ լիցք է հաղորդել Նիմնական օրենքին: Ներաբրքրական է պրոֆ. Դիկ Նովարդի եզրահանգումն այն մասին, որ «Տարբեր մեթոդներ են կիրառվել, որպեսզի ապահովվի սահմանադրական դրույթների կատարումը: Դրանց թվում են թե՛ ժողովրդի կամքը, թե՛ իշխանությունների փարանջապումը, թե՛ օրենսդրությունը: Սակայն ներկա աշխարհում սահմանադրություններն ավելի շատ են անդրադառնում դատական հսկողությանը՝ որպես սահմանադրական նորմերի պաշտպանության բացառիկ միջոցի: Գաղափարները՝ շարադրված ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի կողմից «Տերբերին ընդդեմ Մեդիսոնի» դատական գործի առնչությամբ, դարձան սահմանադրականության փարբեր աշ-

²⁷ Տեղին է հիշատակել **Վ. Ա. Չեսլերնի**ի այն շեշտադրումը, որ «... հարաբերությունների համակարգը, որը բնորոշվում է «քաղաքացիական հասարակություն», ենթադրում է պատմականորեն զարգացած պետաիրավական այնպիսի իրավիճակ, որում ընդունվում է մարդու իրավունքների գերակայությունը» (Կենսաֆենոմենոլոգիա Գոսուդարստվո. ՏՅոբնիկ ստատեյ. Վըպ. 2. Մ., 2003, էջ 20):

խարհի փարբեր մասերում: **Լիովին կարելի է հաստատել, որ դա հանդիսացավ ամերիկյան ամենամեծ ներդրումը սահմանադրականության մեջ»**²⁸ (ընդգծումը մերն է - Գ. Ն., Վ. Պ.):

Վերոշարադրյալի փեսանկյունից գնահատելով վերջին փարիների սահմանադրական զարգացումների հիմնական միտումները մեր երկրում, կարող ենք անել այն հետևությունը, որ Նայաստարանում 2005թ. սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված էր հետևյալ հիմնահարցերի առկայությամբ.

1. Անկախ պետականության կայացման եւ անցումային իրավիճակի հաղթահարման կարևոր նախապայման է պետական կարգի հիմունքների համակարգային հստակեցումը՝ հասարակական պրակտիկայի խորքային օրինաչափությունների համակողմանի գնահատման, միջազգային փորձի ուսումնասիրման եւ ազգային-պետական հիմնախնդիրների առաջնահերթությունները զարգացման յուրաքանչյուր փուլի համար բազմագործոն վերլուծությամբ ճշգրտելու ճանապարհով: Նայաստարանի երրորդ Նանրապետությունն իր անկախության առաջին քայլերը կատարեց համակարգային փլուզման, պատերազմական, հասարակական-փնտեսական ծայրահեղ դժվարին պայմաններում, ի գործու գրնվեց լուծելու ազգային-պետական բարդագույն խնդիրներ, կուրակելով նաեւ պետականության կայացմանը խոչընդոտող բազում հիմնահարցեր, որոնց լուծումը հնարավոր էր միայն որոշակի համակարգային բարեփոխումների պայմաններում:

2. Նայաստարանի միջազգային ինտեգրման ներկա գործընթացները վկայում են, որ անհրաժեշտ էր առավել խորությամբ հաշվի առնել թե՛ պատմական իրողությունները եւ թե՛ այն հիմնարար արժեքները, որոնք, հարկապես ժողովրդավարական զարգացումների եւ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում, ներկայումս դրվում են եվրոպական երկրների ներպետական, միջպետական ու վերպետական իրավահարաբերությունների հիմքում, եւ որոնք հաշվի առնելով՝ դասական ժողովրդավարության ու նաեւ Արեւելյան Եվրոպայի շարք երկրներ նույնպես վերջին փարիներին զգալի փոփոխություններ են կատարել իրենց սահմանադրություններում:

3. ՆՄ Սահմանադրության (1995թ.) մեջ բացակայում էր մեթոդաբանական նշանակություն ունեցող հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես անմիջական գործող իրավունք ճանաչելու եւ երաշխավորելու նկատմամբ: Սահմանադրական բարեփոխումների գլխավոր ուղղություններից մեկը մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումն է, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ միջազգային իրավունքի, մասնավորապես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից ու սահմանադրականության զարգացման միջազգային միտումներից ելնելով:

4. ՆՄ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների փարանջատման սկզբունքը, թերի էր ապահովված փարանջատ, միմյանց հակակշիռ եւ հավասարակշռված օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների գոյությունը: Անհրաժեշտ էր, վերոնշյալ սկզբունքներից ելնելով՝ հստակեցնել իշխանության փարբեր ինստիտուտների գործառնական լիազորությունները, ամրապնդել հակակշիռների ու գուպումների հաշվեկշիռը:

²⁸ Дик Ховард, К конституционной демократии во всем мире: американский взгляд. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, N1, 2004г, <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>, // Конституционное правосудие, 2004, N3, էջեր 27-28:

5. Թերի էին ՏՏ Ազգային ժողովի օրինասարեղծ գործունեության արդյունավետության եւ գործուն վերահսկիչ դերի ապահովման սահմանադրական երաշխիքները: Անհրաժեշտ էր Ազգային ժողովին վերապահել առավել մեծ ինքնուրույնություն ստանձնած քաղաքական պատասխանատվությունն իրականացնելու գործում ամրապնդելով նրա օրինասարեղծ դերը, ստեղծելով երկրում պառլամենտարիզմի հաստատման իրական նախադրյալներ:

6. Նոր սկզբունքային մոտեցումներ էին պահանջում դատական իշխանության անկախության եւ համակարգային ամբողջականության սահմանադրական երաշխիքներ ապահովելու հիմնահարցերը: Սահմանադրորեն պետք էր երաշխավորվեր դատական իշխանության իրական անկախությունը, լուծվեր վարչական արդարադատության արմատավորման հիմնահարցը, գործառնական հստակ փոխհարաբերություններ ապահովվեին դատական իշխանություն իրականացնող ինստիտուտների միջև: Պետք էր առավել գործուն ու արդյունավետ դարձնել սահմանադրական արդարադատության համակարգը:

7. Սկզբունքորեն պետք էր վերանայել Սահմանադրության «Տարածքային կառավարում եւ տեղական ինքնակառավարում» բաժնի մեթոդաբանական մոտեցումները՝ հաղթահարելու համար շփոթը, եւ տեղական ինքնակառավարումը դիտարկել որպես հասարակության ժողովրդավարական ինքնուրույն ինստիտուցիոնալ համակարգ՝ ամրագրելով տեղական ինքնակառավարման ինքնուրույնության ապահովման անհրաժեշտ ու բավարար սահմանադրական երաշխիքներ:

8. Առաջացել էր նաեւ առանձին ներքին հակասությունների հաղթահարման, ներսահմանադրական կայունության երաշխիքների ապահովման անհրաժեշտություն:

9. Սահմանադրությունն ապրող իրողություն դարձնելու, սահմանադրականության, սահմանադրական ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ էր հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացում, «քաղաքացի-Սահմանադրություն» շղթան բաժանող բոլոր արգելանքների վերացում, ժողովրդաիշխանության իրական նախադրյալների ստեղծում:

10. Պետք էր սահմանադրորեն երաշխավորել անմիջական ժողովրդավարության ամբողջական, ժողովրդի կամքով պայմանավորված, առանց արգելափակման ու լիարժեք իրականացումը:

Նշված հիմնահարցերն իրենց որոշակի լուծումը գտան սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ միաժամանակ առաջադրելով հետագա համակարգային բարեփոխումների նոր խնդիրներ²⁹:

ՏՏ գործող Սահմանադրությունն իր մեթոդաբանությամբ, արժեքանական առանձնահատկություններով, կառուցվածքով եւ կոնկրետ սահմանադրաիրավական լուծումներով հիմնականում ներդաշնակ է արդի եվրոպական մոտեցումներին: Նստակ է ու կուռ սահմանադրական կարգի հիմունքների մասին առաջին գլուխը, որտեղ, պետության սահմանադրական հիմնական բնութագրիչների հետ մեկտեղ, ամրագրված են այնպիսի նորմ-սկզբունքներ, որոնք երաշխավորում են ժողովրդաիշխանությունը, իրավունքի գերակայությունը, իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային կյանքի հիմունքները:

Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների հենքի վրա է կառուցված նաեւ Սահմանադրության երկրորդ գլուխը: Սահմանադրական վերջին գարգացումների հիմնական ձեռքբերումն այս ոլորտում այն էր, որ առավել հստակեցվեցին իրավունքներ

²⁹ Հայաստանում սահմանադրական զարգացումների հիմնական միտումները ներկայացվում են նաեւ առանձին հոդվածների մեկնաբանություններում:

րի սահմանափակման եւ ազատությունների դրսեւորման չափորոշիչները, որոշակիացվեցին պետության պարտավորությունները մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների երաշխավորման, ապահովման, պահպանման ու պաշտպանության հարցերում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Սահմանադրության 3-5-րդ գլուխները, որոնք նվիրված են Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովին եւ կառավարությանը: Այս մարմինների փոխհարաբերությունների բնույթով էլ պայմանավորված են Հայաստանի Հանրապետության պետական իշխանության կառուցվածքը եւ կառավարման ձեւը: Պետական իշխանության կազմակերպման եւ իրականացման համար ելակետային հիմնարար սկզբունքը իշխանությունների փարանջատումն է (հոդված 5, մաս 1), որն իր կոնկրետ արտահայտությունն է գրել Սահմանադրության 3-5-րդ գլուխներում սահմանված կառավարման ձեւում: «Կառավարման ձեւ» եզրույթն այսպէս օգտագործվում է որպէս Հանրապետության Նախագահի ինստիտուտի, Ազգային ժողովի եւ կառավարության (այսինքն՝ օրենսդիր եւ գործադիր իշխանության սահմանադրական մարմինների) կազմակերպման, իրավական կարգավիճակի եւ փոխհարաբերությունների համակարգ:

Սահմանադրությունը, ինչպէս ներկայացվեց, փարբեր նորմերի ամբողջություն է, որոնք գրնվում են իրար հետ օրգանական կապի մեջ: Ուստի Սահմանադրության որեւէ հոդված չպէտք է դիտարկվի մյուսներից առանձնացված: Շար հաճախ Սահմանադրության այս կամ այն դրույթի բովանդակությունն անմիջականորեն հստակ չէ, եւ այն պարզելու համար անհրաժեշտ է դրա համադրումն այլ նորմերի հետ: Տվյալ պարագայում միայն այդ ճանապարհով է հնարավոր պարզել դիտարկվող նորմի բուն բովանդակությունը: Նման մտրեցումը հատկապէս կարեւոր է պետական իշխանության մարմինների համակարգին վերաբերող գլուխների մեկնաբանման ժամանակ, քանի որ յուրաքանչյուր կառավարման ձեւ ենթադրում է պետական իշխանության փարբեր մարմիններին վերապահված լիազորությունների՝ իրեն ներհատուկ մեկնաբանում: Միեւնույն պետական մարմին վերաբերող սահմանադրական դրույթները կարող են միանգամայն փարբեր նշանակություն ունենալ՝ կախված այն բանից, թե ինչ կառավարման ձեւ է սահմանված րվյալ Սահմանադրությամբ:

Սահմանադրությունը միշտ նկատի ունի, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, կառավարման ձեւի մի որոշակի րիպ, որի սկզբունքները յուսաբանում են րվյալ կոնկրետ նորմի մեկնաբանումը: Խորհրդարանական րիպի կառավարման ձեւում Նախագահին վերապահված լիազորությունները խորհրդանշական են եւ, որպէս կանոն, դրանք իրականացվում են ոչ թե Նախագահի կամ միապետի, այլ վարչապետի կողմից: Դրանք իրական են միայն այն ժամանակ, երբ Սահմանադրությունն ինքն է դա սահմանում՝ շեղվելով ընդհանուր կանոնից: Օրինակ, այն դրույթը, ըստ որի կառավարությունը նշանակվում է Նախագահի կողմից, խորհրդարանական երկրներում, որպէս կանոն, որեւէ ռեալ նշանակություն չունի: Խորհրդարանական երկրներում Նախագահը կամ միապետը պարտավոր է վարչապետ նշանակել այն անձին, որը վայելում է խորհրդարանի մեծամասնության աջակցությունը: Քանի որ կիսանախագահական կառավարման ձեւում ուղղակի ընրության շնորհիվ Նախագահը ձեռք է բերում լեգիտիմության նույն աստիճանը, ինչ խորհրդարանը, ապա Նախագահը չի կարող դիտարկվել որպէս սովորական խորհրդարանական պետության գլուխ, որը գահակալում է, բայց չի կառավարում: Ուստի Նախագահի լիազորությունները չեն կարող մեկնաբանվել խորհրդարանական համակարգի սկզբունքներից ելնելով, եւ անհրաժեշտ է Սահմանադրությունը նոր ձեւով մեկնաբանել:

Այսպեղ Նախագահին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները պետք է դիտարկել որպես իրական եւ ոչ թե ձեւական լիազորություններ: Իհարկէ, դա չի նշանակում, որ Նախագահի ուղղակի ընտրությունը բավարար է, որպեսզի փվյալ կառավարման ձեւը դիտարկվի որպես կիսանախագահական. դա այդ կառավարման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է:

Ասվածից հետեւում է, որ կառավարման ձեւի պարզումը չունի միայն զուտ փեսական բնույթ, այլ կարեւոր միջոց է Սահմանադրության համապարասխան նորմերի մեկնաբանման համար ոչ միայն սահմանադրական դոկտրինայի, այլ նաեւ սահմանադրական դատարանի կողմից³⁰:

ՏՍահմանադրությունը սահմանում է կառավարման կիսանախագահական ձեւ: Յուրաքանչյուր սահմանադիր պետական իշխանության բարձրագույն մարմիններին վերաբերող գլուխներն սրեղծելիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն նկատի է առնվում որոշակի, արդեն իսկ աշխարհում գոյություն ունեցող կառավարման ձեւ, որը նրա համար ելակետ է հանդիսանում իր սեփական կառավարման ձեւն ընտրելիս: Որպես կանոն, Սահմանադրությունն ինքն ուղղակիորեն չի ամրագրում, թե ինչ կառավարման ձեւ է այն սահմանում: Դա առաջին հերթին սահմանադրական դոկտրինայի խնդիրն է, որը Սահմանադրության համապարասխան դրոյթների համակարգային մեկնաբանման միջոցով պարզում է, թե կառավարման որ ձեւն է ընտրված եւ ինչ յուրահատկություններ այն ունի: Նայաստանի Նանրապետության Սահմանադրության վերլուծությունը բերում է այն եզրահանգմանը, որ սահմանադիրը, հրաժարվելով կառավարման երկու դասական ձեւերից, ընտրել է կառավարման կիսանախագահական ձեւը:

Կիսանախագահական կառավարման ձեւի հայեցակարգը համեմատաբար նոր է: Սովորաբար սահմանադրական դոկտրինան սահմանափակվում է կառավարման երկու դասական ձեւերով՝ նախագահական եւ խորհրդարանական: Նման սահմանափակումը, սակայն, չի ընդգրկում կառավարման ձեւերի բազմազանությունը ոչ իրավական եւ ոչ էլ, առավել եւս, սահմանադրաբաղաբական (քաղաքական պրակտիկայի) փեսակերից: Սահմանադրաիրավական փեսակերից գերիշխող դոկտրինան որպես կառավարման ձեւերի դասակարգման չափանիշ նշում է խորհրդարանի կողմից կառավարությանն անվարահոյություն հայտնելու իրավունքը: Ըստ այդ չափանիշի առկայության էլ կառավարման ձեւերը բաժանվում են նախագահականի եւ խորհրդարանականի: Կառավարման այլ ձեւերի գոյությունը ժխտող հեղափոխողների հիմնական փաստարկն այն է, որ կառավարության հեղկանչի՝ խորհրդարանի իրավունքը որոշիչ ազդեցություն ունի խորհրդարանի գործառնությունների, կուսակցական համակարգի եւ խմբակցությունների կարգապահության վրա: Եթե կառավարությունը չի կարող գոյատեւել առանց խորհրդարանական մեծամասնության աջակցության, ապա այն պարտավոր է հաշվի նստել վերջինիս հետ ինչպես իր հեղազա պաշտոնավարման, այնպես էլ արդյունավետ կառավարում ապահովելու համար³¹: Նման դիխտրոմիական դասակարգման թերությունն

³⁰ Այսպես, Լիտվայի սահմանադրական դատարանի 1998 թ. հունվարի 10 - ի որոշման համաձայն՝ Լիտվան ըստ իր կառավարման ձեւի խորհրդարանական հանրապետություն է, բայց ունի նաեւ խառը (կիսանախագահական) ձեւին բնորոշ որոշ գծեր: Ըստ այդմ էլ վեճի առարկա հանդիսացող լիազորությունները լուծվեցին խորհրդարանական կառավարման ձեւի լույսի ներքո: Vainiute, Milda: Die Verfassungsentwicklung der Republik Litauen unter besonderer Berücksichtigung der Verfassungsgerichtsbarkeit. Gießen 2001, էջեր 274-276: Սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ (1998 թ. ապրիլի 21) ընդգծեց, որ պետական մարմնին վերապահված լիազորության կոնկրետ բովանդակությունը կախված է կառավարման ձեւից: Տե՛ս նույն տեղում, էջ 269:

³¹ Որպես մնան մտնեցման տիպիկ օրինակ տե՛ս Steffani, Winfried: Parlamentarische und präsidentielle Demokratie - Strukturelle Aspekte westlicher Demokratien, Köln und Opladen 1979, 38-39, W. Steffani, Parlamen-

այն է, որ.

ա) դասակարգման հիմքում դրվում են միայն խորհրդարան-կառավարություն հարաբերությունները՝ առանց հաշվի առնելու խորհրդարան-կառավարություն-Նախագահ եռանկյունու երրորդ գործոնը՝ Նախագահի առկայությունը,

բ) հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ, բացի խորհրդարանից, ուղղակի լեգիտիմությամբ կարող են օժտված լինել նաև Նախագահը կամ կառավարությունը,

գ) երկու ուղղակի լեգիտիմություն ունեցող մարմինների պարագայում հաշվի չի առնվում նրանց՝ միմյանց վրա փոխադարձաբար ազդելու հնարավորությունը, ընդհուպ մինչև լիազորությունների դադարումը:

Ինչպես հայտնի է, այս գործոնները, ոչ պակաս, քան կառավարության պարասխանաբարությունը խորհրդարանի առջև, ի վիճակի են սպեղծել այնպիսի խթաններ, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ կառավարման համակարգի գործունեության վրա³²:

Գիսանախագահական կառավարման ձևի առաջին համակարգված տեսությունը մշակել է Ֆրանսիացի ակադեմիկոս քաղաքագետ և սահմանադրագետ Մորիս Դյուվերթեն 1970-ական թվականներին: Գիսանախագահական կառավարման ձևի հասկացությունը կարելի է սահմանել երեք չափանիշների օգնությամբ. Նախագահի ընտրություն ժողովրդի կողմից, խորհրդարանի առջև կառավարության պարասխանաբարություն և գործադիր իշխանության դուալիզմ:

Գիսանախագահական կառավարման ձևի առաջին երկու չափանիշները վկայում են այն մասին, որ այն կառավարման խառը ձև է, քանի որ ներառում է նախագահական և խորհրդարանական ձևերին բնորոշ երկու կարեորագույն գծերը՝ Նախագահի ընտրությունը ժողովրդի կողմից՝ ինչպես նախագահական ձևում, և խորհրդարանի առջև կառավարության պարասխանաբարությունը՝ ինչպես խորհրդարանական ձևում: Ինչ վերաբերում է «գործադիր իշխանության դուալիզմ» երրորդ չափանիշին, ապա հարկ է նկատել, որ Դյուվերթեն փարբեր ժամանակներում այն անվանել է «Նախագահի որոշակի լիազորություններ, որոնք գերազանցում են նորմալ խորհրդարանական երկրների պետության գլուխների լիազորությունները»³³, կամ «Նախագահի ինքնուրույն»³⁴ կամ «նշանակալի»³⁵ լիազորություններ: Իր դասագրքի վերջին հրատարակությունում Դյուվերթեն այդ չափանիշը ձևակերպում է նաև հետևյալ կերպ՝ «Նախագահն ունի սեփական լիազորություններ, որոնք նրան թույլ են տալիս գործել անկախ կառավարությունից»³⁶: Այս չափանիշի անորոշության հետեւանքով շարք հետազոտողներ, որոնք ընդունում են «կիսանախագահական կառավարման ձև» հասկացությունը, միակարծիք չեն այն հարցում, թե որ երկրներն են պատկանում կառավարման կիսանախագահական ձև

tarisch-präsidentielle „Mischsysteme“? in: Luchterhandt, Otto (Hrsg.): Neue Regierungssysteme in Osteuropa und der GUS. Probleme der Ausbildung stabiler Machtinstitutionen, 2. Akt. Auflage, Berlin 2002, 49-51.

³² Մանրամասն տե՛ս՝ **Wartan Pogosjan**, Die verfassungspolitische Entwicklung in der Republik Armenien (1990 - 1995), unveröf. Magisterarbeit, Bonn 1995, 146 - 151, **W. Pogosjan**, Für ein neues Regierungssystem in Armenien, in: Armenien. Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld, Frankfurt am Main 1998, 255 - 258, Friedbert Rüb, Schach dem Parlament! Regierungssysteme und Staatspräsidenten in den Demokratisierungsprozessen Osteuropas, Wiesbaden 2001, 98-103.

³³ **Maurice Duverger**, Institutions politiques et droit constitutionnel, 11. édition, 1970, 277.

³⁴ **M. Duverger**, Echec au roi, 17, M. Duverger, Le concept de régime semi-présidentiel in Les régimes semi-présidentiels (Actes du Colloque des 20 - 21 janvier 1983), Paris 1986, 7.

³⁵ **M. Duverger**, A new political system model: semi-presidential government, 187.

³⁶ **M. Duverger**, Le système politique français. Droit constitutionnel et Science politique, 21. édition, 1996, 187-188, 465-587.

ունեցող երկրների թվին: Ուստի ճիշտ կլինի «Նախագահի ինքնուրույն կամ նշանակալի լիազորություններ» չափանիշը փոխարինել «գործադիր իշխանության դուալիզմ» չափանիշով, քանի որ դրանով ընդգծվում է այս կառավարման ձևի ամենահարկանշական բնութագիրը՝ գործադիր իշխանությունը որոշակի համամասնություններով բաժանված է Նախագահի եւ վարչապետի միջեւ: Ի դեպ, Դյուվերթեն ինքն է իր աշխատություններում ընդգծում գործադիր իշխանության դուալիզմը որպես կառավարման այս ձևի բնութագրիչ հատկանիշ, սակայն այն չի դարձրել «կիսանախագահական կառավարման ձև» հասկացության չափանիշ:

Եթե գործադիր իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է Նախագահի ձեռքում, թեկուզ գոյություն ունի խորհրդարանի առջեւ պատասխանատու վարչապետի պաշտոն, ապա կառավարման նման ձևը պետք է բնութագրվի որպես նախագահական³⁷: Մյուս կողմից, եթե գործադիր իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած է կառավարության ձեռքում, թեկուզ գոյություն ունի ժողովրդի կողմից ընտրված Նախագահ, ապա նման կառավարման ձևը պետք է բնութագրվի որպես խորհրդարանական³⁸:

Ընդգծելով կիսանախագահական ռեժիմի խառը բնույթը՝ Դյուվերթեն միաժամանակ այն անվանում է կիսանախագահական, այլ ոչ թե կիսախորհրդարանական, քանի որ այն ավելի մոտ է նախագահականին՝ ժողովրդական ինքնիշխանության արտահայտման դուալիստական բնույթով (ժողովրդի կողմից եւ՝ խորհրդարանի, եւ՝ Նախագահի ընտրության միջոցով), մինչդեռ խորհրդարանական կառավարման ձևի բնութագրիչ հատկանիշը մոնիզմն է, որտեղ ժողովրդական ինքնիշխանությունն արտահայտվում է միայն խորհրդարանի միջոցով³⁹: Բացի դրանից, կիսանախագահական կառավարման ձևում դուալիզմն ավելի ցայտուն է, քան ամերիկյան համակարգում, քանի որ այստեղ այն առկա է հենց գործադիր իշխանության ներսում: Ի տարբերություն նախագահական կառավարման ձև ունեցող երկրի Նախագահի, կիսանախագահական կառավարման ձևում Նախագահն ունի ԱՄՆ Նախագահի լիազորություններին բնորոշ լիազորությունների միայն մի մասը: Վերջինիս նման ընտրված լինելով ընդհանուր ընտրության հիման վրա՝ նա չունի ամբողջ գործադիր իշխանությունը, ինչպես ԱՄՆ-ի Նախագահը: Գործադիր իշխանության զգալի մասը մնում է վարչապետի եւ նրա թիմի ձեռքում⁴⁰:

Ինչպես արդեն նշվեց, կիսանախագահական կառավարման ձևի տեսությունը չունի համընդհանուր ճանաչում, ինչի հիմնական պատճառներից մեկը նրա տեսության թերըմբռնումն է: Շատ հաճախ այդ տեսության դեմ բերվում է այն փաստարկը, որ «**կիսանախագահական** վարչակարգ» անվանումը շփոթեցուցիչ է, քանի որ Ֆրանսիայի Նախագահն ավելի ուժեղ է, քան ամերիկյանը, ֆրանսիական համակարգն ավելի շատ **գերնախագահական** է, քան **կիսանախագահական**: Սակայն «կիսանախագահական» եզրույթը որեւէ դեպքում չպետք է հասկանալ որպես թուլացված նախագահական համակարգ, այլ միայն այն հանգամանքի արտացոլում, որ ժողովրդի իշխանությունը նախագահական համակարգի նման արտահայտվում է ինչպես խորհրդարանի, այնպես էլ Նախագահի ընտրությամբ, եւ որ, ի տարբերություն նախագահական համակարգի, Նախագահը կիսանախագահական կառավարման ձևում ամբողջությամբ չի փրկապետում գործադիր իշխանությունը:

³⁷ Օրինակ՝ Շրի Լանկա, Պերու, Արգենտինա եւ այլն: St' u նաեւ՝ Juan Linz, Presidential or Parliamentary Democracy, 1994, 60.

³⁸ Օրինակ՝ Բուլղարիա, Մակեդոնիա, Սլովենիա եւ այլն:

³⁹ M. Duverger, Le système politique français, 20. édition, 1990, 188.

⁴⁰ M. Duverger, Echec au roi Paris 1978, 30.

Տիմնական հակափաստարկը, որը բերվում է կիսանախագահական կառավարման ձեռի փեսության դեմ, այն է, որ խորհրդարանական եւ նախագահական կառավարման ձեռերի դիֆերենցիալական դասակարգումը լիովին բավարար է քաղաքական վարչակարգերի դասակարգման համար: Այս փաստարկը, իր բոլոր թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, պարունակում է որոշակի ռացիոնալ հարկի: Կիսանախագահական կառավարման ձեռը պրակտիկայում հիմնականում գործում է կամ խորհրդարանական, կամ նախագահական ձեռերին բնորոշ սրամաքանությանը, այսինքն՝ գործադիր իշխանությունը կամ հենվում է խորհրդարան-կառավարություն առանցքի, կամ Նախագահի վրա: Սրանով, սակայն, կիսանախագահական ձեռը չի դառնում մի դեպքում խորհրդարանական, իսկ մյուս դեպքում՝ նախագահական:

Գախված այն կարեւորագույն հանգամանքից, թե ինչ համամասնություններով է Նախագահի եւ կառավարության միջեւ բաշխված գործադիր իշխանությունը, կիսանախագահական ձեռը կարելի է ենթադասակարգել երկու մոդելի՝ «խորհրդարանական-նախագահականի» եւ «նախագահական-խորհրդարանականի»: Նման ենթադասակարգման համար լավ հիմք կարող է դառնալ կառավարության երկակի պարասխանարկության չափանիշը⁴¹: Կառավարության պարասխանարկությունը Նախագահի առջեւ ինքնին դեռեւս չի վերացնում գործադիր իշխանության դուալիզմը, այլ այն զգալիորեն սահմանափակում է Նախագահի օգտին: Եթե սահմանադրությունը գործադիր իշխանության բնագավառում նախատեսում է Նախագահի այնպիսի լիազորություններ, որոնք պարբեր են դարձնում կառավարության ինքնուրույնությունը, ապա նման վարչակարգը ճիշտ կլինի դասակարգել որպէս նախագահական խորհրդարանականի որոշակի փարբերով⁴²:

Նայաստանում կառավարման համակարգի կիսանախագահական մոդելի ընդունումը 1995թ. պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: 1991թ. օգոստոսի 1-ի՝ «Նայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքի հիման վրա արդեն գոյություն ուներ ուղղակիորեն ընտրվող Հանրապետության Նախագահի պաշտոն, եւ երկրում սրբեղծված ճգնաժամային կառավարման իրավիճակից էր բխում այդ պաշտոնի պահպանումը եւ ուժեղացումը:

Կիսանախագահական մոդելի օգտին էր խոսում նաեւ այն, որ Հանրապետության Նախագահն այլեւս գործադիր իշխանության ուղղակի ղեկավարը չէր եւ կարող էր ստանձնել վերկուսակցական հաշտարարի դեր⁴³:

Սակայն մինչեւ 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեն, Նայաստանում գործող կառավարման ձեռը փաստացի վերացնում էր փոխադարձ զսպումների եւ հակակշիռների մեխանիզմները եւ հարցականի փակ դնում իշխանությունների բաժանման սկզբունքը: Իշխանությունների բաժանման սկզբունքի էությունն իշխանությունների գործառնական եւ կառուցակարգային բաժանումն է: Բայց գործադիր իշխանության իրականացումը վերապահելով կառավարությանը՝ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին փայլա էր այնպիսի լիազորություններ (վարչապետի ազատում, կառավարության

⁴¹ Այն առաջարկվել է ամերիկյան հետազոտողներ Մ. Շուգարթի եւ Ջ. Քերիի կողմից՝ **Shugart, Matthew Soberg, and John M. Carey**, *Presidents and Assemblies. Constitutional Design and Electoral Dynamics*, Cambridge 1992, 24.

⁴² Ուստի, մեր կարծիքով, Շուգարթի եւ Քերիի կողմից առաջարկվող մոտեցումը, ըստ որի կիսանախագահական կառավարման ձեռը կատեգորիան վերանում է եւ այն բաժանվում է երկու ինքնուրույն կատեգորիա մերի՝ «պրեմիեր-նախագահականի» եւ «նախագահ-խորհրդարանականի», տեղին չէ: Նույն տեղում, էջեր 23 - 25:

⁴³ Տե՛ս հոդված 49-ի մեկնաբանությունները:

նիստերի նախագահում, կառավարության որոշումների վավերացում, կառավարության կառուցվածքի եւ գործունեության կարգի որոշում եւ այլն), որոնք նրան հնարավորություն էին տալիս դառնալ կառավարության դե ֆակտո ղեկավար: Եթե նման իրավիճակ գործադիր իշխանության ներսում սկզբունքորեն հնարավոր է նախագահական կառավարման ձեւ ունեցող ժողովրդավարական երկրներում, ապա նախագահ-խորհրդարան հարաբերություններում փոխադարձ զսպումների եւ հակակշիռների լիարժեք մեխանիզմների բացակայությունը 1995թ. Սահմանադրությունում հանգեցնում էր Հանրապետության Նախագահի բացարձակ գերակա դիրքին՝ օրենսդիր եւ գործադիր իշխանությունների նկատմամբ: Եթե Հանրապետության Նախագահը կարող էր միանձնյա որոշում ընդունել Ազգային ժողովի լուծարման վերաբերյալ (Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված խորհրդակցություններն Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ Հանրապետության Նախագահին որեւէ բան չէին պարտադրում, իսկ Ազգային ժողովը չէր կարող արձակվել միայն խորհրդարանի ընտրությունից հետո մեկ փարվա ընթացքում, ռազմական դրության եւ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, ինչպես նաեւ Հանրապետության Նախագահի պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում), ապա Ազգային ժողովը որեւէ կերպ չէր կարող քաղաքական պարասխանարվության ենթարկել Հանրապետության Նախագահին (ինպիչմենտի ընթացակարգը վերաբերում է միայն պետական դավաճանության եւ կամ այլ ծանր հանցագործության դեպքերին (հոդված 57, մաս 1)): Կառավարության պարասխանարվությունն Ազգային ժողովի առջեւ նույնպես բարդացված էր, քանի որ կառավարությանն անվտանգություն հայտնելու դեպքում Հանրապետության Նախագահը կարող էր արձակել խորհրդարանը կամ կառավարության հրաժարականն ընդունելուց հետո նորից նշանակել նույն վարչապետին՝ սպառնալով խորհրդարանի լուծարմամբ:

Նման մոդելն առավել վրանգավոր էր մի երկրի համար, որը չուներ արմատավորված ժողովրդավարական ավանդույթներ, ուժեղ քաղաքացիական հասարակություն, չգրված արգելքներ ու սկզբունքներ, որոնք զարգացած ժողովրդավարական երկրներում, ստենք՝ Ֆրանսիայում, մեղմում են Նախագահի մեծ իշխանությունը:

2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների միջոցով Հայաստանը սկզբունքորեն անցում կատարեց կիսանախագահական կառավարման ձեւի նախագահական-խորհրդարանական մոդելից դեպի խորհրդարանական-նախագահական մոդել, թեւեւ ընդունված լուծումները միշտ չէ, որ հետետողական են⁴⁴: Խորհրդարանական-նախագահական մոդելն ամենից հետետողական կերպով է արտահայտում կառավարման կիսանախագահական ձեւի էությունը, դուալիստական գործադիր իշխանությունում գործադիր իշխանության փաստացի ղեկավարը նա է, ով ունի խորհրդարանի աջակցությունը:

Յանկացած կառավարման ձեւում կա որոշակի փոփոխություն Սահմանադրության եւ քաղաքական պրակտիկայի միջեւ: Այդ փոփոխություններն առավել ցայտուն են արտահայտվում կառավարման կիսանախագահական ձեւում: Իրավունքի եւ պրակտիկայի միջև հնարավոր շփոթությունները կանխելու նպատակով ստորեւ կառավարման

⁴⁴ Հարկ է նշել, որ Սահմանադրության 3-րդ գլուխը (հոդված 55) սպառիչ կերպով չի սահմանում Հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունները: Հանրապետության Նախագահի այլ լիազորություններ, հիմնականում իրավահարաբերությունների միասնական կարգավորման տեսանկյունից, ամրագրված են Սահմանադրության 4-րդ (հոդված 68, մաս 3, հոդվածներ 70, 81, 83.2, հոդված 84, մաս 2), 5-րդ (հոդվածներ 85, 86, 88.1), 6-րդ (հոդվածներ 95, 97, հոդված 101, կետ 1, հոդված 103), 8-րդ (հոդված 111) եւ 9-րդ (հոդված 117, կետեր 4, 5, 6, 11) գլուխներում:

ձեռի փակ հասկացվում են գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների միջև միայն սահմանադրաիրավական փոխհարաբերությունների փոխադրումը, իսկ կառավարման համակարգի փակ միայն փոխադրումը երկրի քաղաքական պրակտիկան: Նրանց տարբերակումը հիմք է հանդիսանում այն բանի համար, որպեսզի հեղափոխական հեղափոխությունների միջոցով հնարավոր լինի պարզել, թե ինչու են իրար համեմատաբար նման սահմանադրական կառույցներն իրականում առաջացնում տարբեր քաղաքական պրակտիկաներ: Կառավարման ձեռք միակ անփոփոխ մեծությունը չէ, որով բացառվում է երկրի քաղաքական պրակտիկան: Մ. Դյուվերժեն նշում է, որ կառուցակարգված կուսակցական համակարգը եւ կայուն մեծամասնությունները խորհրդարանում հսկայական ազդեցություն են թողնում կառավարման համակարգի գործունեության վրա: Կարեւոր գործոն են նաև քաղաքական մշակույթն ու ավանդույթները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում Նախագահի իմիջի վրա: Մյուս կողմից, քաղաքական հաստատություններն ինքնին որոշակի պարտադրանքներ են դնում քաղաքական դերակատարների վրա⁴⁵: Այսպիսով, քաղաքական հաստատությունները կարող են դիտարկվել ինչպես անկախ, այնպես էլ կախյալ մեծություններ: Կառավարման, ընտրական և կուսակցական համակարգերը պետք է քննարկվեն միասին՝ համապատասխան քաղաքական մշակույթի ենթաբեքստում: «Կիսանախագահական ռեժիմն անքակտելի է այն երեք ենթահամակարգերից, որոնք նրան շրջապատում են. քաղաքական մշակույթից, կուսակցական եւ ընտրական համակարգերից: Այս ձեռով հասկանալի է դառնում, թե ինչու իրավաբանական հաստատություններով սահմանված միեւնոյն ռեժիմը կարող է գործել տարբեր քաղաքական համակարգերի շրջանակներում»⁴⁶:

Կիսանախագահական կառավարման ձեռք շար փոփոխական ռեժիմ է, բանի որ ինքնին չի հաստատում հստակորեն սահմանված մեկ քաղաքական համակարգ: Այն սահմանում է խաղի որոշակի կանոններ, որի շրջանակներում հնարավոր են խաղի տարբեր դրսևորումներ: Կախված առաջին հերթին այն բանից, թե ինչպիսին է ուժերի հարաբերակցությունը խորհրդարանում եւ ինչ դիրք ունի Նախագահն այդ ուժերի նկատմամբ, հնարավոր են քաղաքական պրակտիկայի երկու հիմնական ձեռքեր.

ա) Նախագահը խորհրդարանում հենվում է մեծամասնության վրա եւ հանդիսանում է նրա առաջնորդը (Նախագահն ունի գերիշխող դիրք),

բ) Նախագահն ընդդիմության մեջ է գտնվում խորհրդարանական մեծամասնության նկատմամբ, որի առաջնորդը վարչապետն է (համակեցություն):

Կիսանախագահական կառավարման համակարգի ամենաընդհանուր տրամաբանությունն այն է, որ թույլ է տալիս կառավարության փաստացի ղեկավարման անցում Նախագահից դեպի վարչապետ կամ ընդհակառակը, կախված այն բանից, թե ով կարող է հենվել խորհրդարանական մեծամասնության վրա: Եթե Նախագահն է խորհրդարանական մեծամասնության ղեկավարը, ապա նա իր ձեռքում սովորաբար կենտրոնացնում է հսկայական իշխանություն՝ իր սեփական, Սահմանադրությամբ ամրագրված լիազորություններին ավելացնելով նաև այն լիազորությունները, որոնք Սահմանադրությամբ վերապահված են կառավարությանը: Վարչապետն այս դեպքում դառնում է Նախագահին լիովին ենթակա եւ, փաստորեն, վերածվում է Նախագահի կողմից որոշվող քաղաքականության կենսագործողի: Բոլորովին այլ է իրադրությունը, երբ վարչապետն է վայելում խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Այսպետև արդեն

⁴⁵ Ինչպես, օրինակ, երկփուլ մեծամասնական ընտրական համակարգը եւ Նախագահի ուղղակի ընտրությունը Ֆրանսիայում, որոնք մեծապես նպաստեցին խորհրդարանական մեծամասնության առաջացմանը:

⁴⁶ Նույն տեղում, էջ 903:

վարչապետը հնարավորություն է ստանում նաև գործնականորեն իրականացնելու իր սահմանադրական իրավասությունը, իսկ Նախագահը ստիպված է բավարարվել միայն այնքանով, որքան նախատեսում է Սահմանադրությունը:

Այսպիսով, կիսանախագահական ձևի հայեցակարգը, բացի նրանից, որ ծառայում է Սահմանադրության դրույթների ճիշտ մեկնաբանմանը, կարող է օգտակար լինել նաև երկրի գործող կամ ապագայում հնարավոր քաղաքական պրակտիկական հեղափոխություն եւ կանխատեսելու համար:

ՆՆ Սահմանադրության 6-րդ գլուխը, որը վերնագրված է «Դատական իշխանությունը», էական փոքրերվում է նախորդ գլուխներից նրանով, որ փոխվել է մեթոդաբանությունը եւ կառուցակարգային կառուցվածքից անցում է կատարվել գործառնական կառուցվածքի: Սա, թերեւս, հեղափոխ շրջան կարիք ունեցող խնդիր է, սակայն գլխավորն այն է, որ այս գլխում հատուկ կարեւորվել է անկախ դատական իշխանություն ունենալու հրամայականը:

Սահմանադրության փեղական ինքնակառավարմանը նվիրված 7-րդ գլխի դրույթների մեկնաբանություններում հատուկ շեշտադրվում է փեղական մակարդակում ժողովրդավարության զարգացման սահմանադրական նախադրյալների կարեւորությունն ու գործունակությունը:

ՆՆ Սահմանադրության մեկնաբանությունների սույն ժողովածուն իր փեսակի մեջ առաջինը լինելով հանդերձ, ունի այն կարեւոր առանձնահատկությունը, որ կոլեկտիվ մտքի արգասիք է: Եզակի իրողություն է, երբ Նայասարանի Նանրապետության շուրջ վեց փասնյակ իրավագետներ փեղական ժամանակ ու բարեխղճորեն ձեռնամուխ եղան այս շնորհակալ գործին: Կատարվել է մնայուն ու օգտակար աշխատանք, իսկ թերիները, համոզված ենք, շտկելի են, եւ դրանց ներողամտորեն կանդրադառնան մեր իսկ սաներն ու գործընկերները:

Գ. Նարությունյան

Ընդհանուր գիտական խմբագիր, պրոֆեսոր

Վ. Պողոսյան

Նեղինակային կոլեկտիվի անդամ, սահմանադրագետ

ՆԱԽԱԲԱՆ

Նայ ժողովուրդը, հիմք ընդունելով Նայասարանի անկախության մասին հռչակագրում հաստատարված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պարգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, սպառնալիցիոս համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավասարելով հավասարությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Նայասարանի Նանրապետության Սահմանադրությունը:

Սահմանադրությունը յուրաքանչյուր պետության համար ոչ միայն հիմնական օրենք է, այլև յուրօրինակ պետական խորհրդանիշ, որն իր մեջ ամփոփում է այն ընդունող ժողովրդի ինքնությանը բնորոշ արժեհամակարգերն ու իղձերը: Սահմանադրության արժեքանական որակները դրսևորվում են նրանում ամրագրված նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների և կոնկրետ ու հիմնարար իրավահարաբերություններ կանոնակարգող դրոյթների միջոցով:

Նայասարանի Նանրապետության 1995թ. Սահմանադրությունը հայ ժողովրդի անկախ պետականության իրականություն դարձած դարավոր երազանքն արտահայտող առաջին Սահմանադրությունն է: Այդ փաստն արտացոլված է Սահմանադրության նախաբանում, որն արձանագրում է, որ հայ ժողովուրդը Սահմանադրություն է ընդունում «իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պարգամը»: Պետականության դարավոր կորստից հետո ժողովրդավարական ճանապարհով իր ապագայի համար սահմանադրական երաշխիքների ստեղծումը բացառիկ իրողություն դարձավ հայ ժողովրդի պայմանական ճակատագրում: Դրանով էր պայմանավորված, որ Սահմանադրության նախաբանն արձանագրեց, որ այն ընդունում է հայ ժողովուրդը, առանց որեւէ մեկի կողմից թելադրանքի, իր հավաքական կամարտահայտման ճանապարհով:

Այս ամենը, իհարկե, չի նշանակում, որ Սահմանադրության նախաբանը զուտ փաստեր է արձանագրում: Այն հանդիսանալով Սահմանադրության բաղկացուցիչ մասը՝ ցույց է տալիս, որ գիտակցելով փաստը, ընտրվել են որոշակի արժեքներ՝ սկզբունքներ և նպատակներ, որոնց պետք է ծառայի բուն Սահմանադրությունը: Սկզբունքի և նպատակի միջև այս դեպքում հստակ սահմանագիծ անցկացնելը դժվար խնդիր է և դրանով է պայմանավորված սահմանադրագիտության տեսության մեջ դրանք բարձրագույն սկզբունքներ, սահմանադրական արժեքներ կամ հասկացություններ կոչելը: Այնուամենայնիվ, հայրենիքի հզորացումը և բարգավաճումը, սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունը, որոնք նշված են Նայասարանի Նանրապետության Սահմանադրության նախաբանում, կարելի է համարել զուտ նպատակներ: Այդ նպատակներին են կոչված ծառայելու բուն Սահմանադրության բոլոր մնացած դրոյթները: Սկզբունքներ կարող են համարվել՝ հավաքարմությունը համամարդկային արժեքներին, մարդու իրավունքներին, ժողովրդավարությունը, իշխանությունների փարանջապումը, խտրականության արգելումը, որոնք այնուհետև իրենց արտահայտությունն են գտնում Սահմանադրության հաջորդ դրոյթներում:

ՆՏ Սահմանադրության նախաբանի բնորոշ գծերից է և այն, որ ոչ միայն կարևորվում են համազգային իղձերը, նպատակները, ինքնիշխան պետության վերականգնման դարավոր երազանքի իրականացման բախտորոշ նշանակությունը, այլև հավասարվում է հավաքարմությունը համամարդկային արժեքներին՝ արժեքանական հստակ վերաբերմունք

արտահայտելով սահմանադրական լուծումների նկատմամբ:

Նայրնի է, որ Սահմանադրությունը կայունության որոշակի երաշխիքներ ունեցող քաղաքական, իրավական փաստաթուղթ է, որը հռչակում է պետության և հասարակության հիմնական արժեքները, սահմանում պետության և անձի փոխհարաբերությունների բնույթը, որոշում իշխանության սահմանները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը, դրանց կազմավորման կարգն ու լիազորությունները:

Միաժամանակ, յուրաքանչյուր ազգային Սահմանադրություն ընդունվում է փոփոխվում է որոշակի կարգով, որն անպայման փորձերով է սովորական օրենսդրության ընդունման, փոփոխման կարգից: Սահմանադրության կայունության այս երաշխիքն անհրաժեշտ է ժողովրդի անփոփոխ կամքի առավել պաշտպանվածությունն ապահովելու համար:

Պետք է նշել, որ ժողովրդի անփոփոխ կամքն իր արտահայտությունն է գտնում նաև այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են երկրի անկախության կամ մարդու իրավունքների մասին Նոյակագրերը, որոնք հաճախ ներառվում են հետագայում ընդունվող սահմանադրություններում, որպես կանոն, դրանց մասին հղում կատարելով Սահմանադրության նախաբանում: Այսպես, Մարդու և քաղաքացու իրավունքների 1798 թվականի հռչակագրին հղում է կատարված Ֆրանսիայի 1946 և 1958 թվականների Սահմանադրություններում: Մակայն 1946 թվականի Սահմանադրության 92-րդ հոդվածով սահմանվում էր, որ Սահմանադրական կոմիտեն (այդպես էր կոչվում Սահմանադրական խորհուրդը) իրավասու չէ քննության առնել օրենքի համապատասխանությունը Սահմանադրության նախաբանին, հետևաբար՝ և Նոյակագրին, որով այդ փաստաթղթի իրավական արժեքն ստորադասվում էր բուն Սահմանադրությանը: 1958 թվականի Սահմանադրությունը վերացրեց այդ արգելքը:

Լատվիայի Սահմանադրությունն ընդունվել է ավելի վաղ, քան Անկախության վերականգնման մասին հռչակագիրը է, հետևաբար, հղում չունի այդ ակտին: Լատվիայի սահմանադրական դատարանն իր 2007թ. նոյեմբերի 29-ին ընդունած որոշմամբ գրել է, որ Անկախության հռչակագիրն ունի սահմանադրական կարգավիճակ, Սահմանադրության ընդունումից հետո Անկախության հռչակագիրը պահպանել է իր վավերությունը, սահմանադրական դատարանն իրավասու է Սահմանադրական դատարանի մասին օրենքի 16(1) հոդվածի հիման վրա քննության առնել օրենքների՝ Անկախության հռչակագրին համապատասխանության հարցը, Անկախության հռչակագրի նախաբանն այդ փաստաթղթի բաղկացուցիչ մասն է, և սահմանադրական դատարանը կարող է վիճարկվող նորմարիվ ակտը գնահատել նաև այդ փաստաթղթի նախաբանին համապատասխանության տեսանկյունից: Դատարանը փաստել է, որ Անկախության հռչակագիրը կարգավորում է սահմանադրական իրավունքի առավել էական, հիմնարար խնդիրները, ուստի դրա նորմերը պետք է ճանաչվեն որպես սահմանադրական իրավունքի նորմեր, որոնք ունեն պարտադիր իրավաբանական ուժ՝ չնայած նրան, որ այդ ակտը չի ընդունվել գործող Սահմանադրությամբ սահմանված կարգով:

Նայաստրանի Նանրապետության Սահմանադրության նախաբանում հղում է կատարվում Նայաստրանի անկախության մասին հռչակագրին: Շիմք ընդունելով առավելապես քաղաքական այդ փաստաթղթում հաստատագրված պետականության սկզբունքները՝ դրանով իսկ Նոյակագրին տրվել է սահմանադրական կարգավիճակ: Անկախության մասին հռչակագրի սահմանադրական կարգավիճակի մասին հստակ իրավական դիրքորոշում արտահայտեց Նայաստրանի Նանրապետության սահմանադրական դատարանն իր «2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված» «Նայաստրանի Նանրապետության և Թուրքիայի Նանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Նայաստրանի Նանրապետության և Թուրքիայի Նանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Նայաստրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» 2010թ. հունվարի 12-ի որոշման 5-րդ կետում՝ գրնելով, որ «Նա-

յասարանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Նայասարանի Հանրապետության օրի նապեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաեւ միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին եւ Նայասարանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին:

Բարձրագույն իրավունքի շարք սկզբունքներ հաճախ րեղ են գրնում հենց Սահմանադրության նախաբանում, որն ըստ էության յուրաքանչյուր Սահմանադրության «ոգին» է, որին պետք է համապատասխանի «տառը», այսինքն՝ մնացած դրույթները: Սակայն այդ սկզբունքների, ինչպես նաեւ Սահմանադրության նախաբանի իրավաբանական հստակ նշանակությունը լուրջ բանավեճի առարկա է: Ոմանք գրնում են, որ Սահմանադրության նախաբանն ունի միայն քաղաքական նշանակություն, եւ, հետեաբար, այդ մասում րեղ գրամ հասկացությունները միայն բացարրում են Սահմանադրության էությունը: Կարծիք կա, որ ընդհանրապես սահմանադրական սկզբունքներն ավելին չեն, քան Սահմանադրության մեկնաբանման միջոց, եւ որ «...դրանց իրավաբանական նշանակությունը կրում է ընդհանուր, պոպենցիալ բնույթ եւ կախված է սահմանադրական կամ գերագույն դատարանների կողմից Սահմանադրության մեկնաբանման համար դրանք օգտագործելու ցանկությունից»¹:

Սահմանադրագրների մեկ այլ խումբ իրավացիորեն գրնում է, որ դրանք լինելով սահմանադրական արժեքներ՝ գերակայություն ունեն ցանկացած այլ իրավական նորմի նկատմամբ, եւ որ «...սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցները Սահմանադրության նախաբանով կաշկանդված են ոչ պակաս, քան մյուս դրույթներով»: Ավելին, «Սահմանադրության հաջորդ դրույթները պետք է մեկնաբանվեն եւ կիրառվեն հաշվի առնելով Սահմանադրության նախաբանը»²:

«Ցանկանալով պաշտպանել ժողովրդի անփոփոխ կամքն առավել՝ քան ժամանակավոր քմահաճույքը, ժամանակակից շարք պետություններ բարձրագույն իրավունքի սկզբունքները վերահաստատեցին գրված սահմանադրությունների միջոցով: Դրանք համակցում են երեք առանձին գաղափարներ. որոշակի բարձրագույն սկզբունքների գերակայություն, նույնիսկ բարձրագույն օրենքին գրված ձեւ րալու անհրաժեշտություն, եւ դատարանի որպես միջոց ծառայելը՝ Սահմանադրությունն ընդդեմ սովորական օրենսդրության կիրառելու համար»³:

Սահմանադրության րարբեր նորմերի իրավական նշանակության եւ, մասնավորապես, նախաբանի իրավական բնույթի հարցում րարբերվում են ոչ միայն րեսաբանների կարծիքները, այլեւ րարբեր երկրների բարձրագույն դատարանների իրավական դիրքորոշումները: Այսպես, Ամերիկայի Միացյալ Նահանգների դատարանները սովորաբար Սահմանադրության նախաբանը վկայակոչում են այն դեպքերում, երբ անհրաժեշտ է բացահայտել Սահմանադրության իմաստը: Ամերիկյան դատարանները Սահմանադրության նախաբանը վկայակոչում են նաեւ, երբ անհրաժեշտ է բացահայտել սահմանադիր հայրերի մրադրությունը: Սակայն որեւէ դատարան երբեւէ Սահմանադրության նախաբանը չի օգտագործել որպես որեւէ կոնկրետ վեճի լուծման վճռորոշ գործոն:

«Սահմանադրության նախաբանը կազմում է Սահմանադրության մաս, թե՛ ոչ» հարցին Նդկասարանի Գերագույն դատարանն անդրադարձել է իր երկու նախադեպային նշանակության որոշումներում (Berubari case (1960), Kesavananda Bhati case (1973)): Առաջին դեպքում դատարանը գրել է, որ նախաբանը «սահմանադիր հայրերի մրադրությունը

¹ Гарлицки Л. "Конституционные ценности" и Страсбургский суд, Сборник докладов М. 2009, с.221-233.

² Комментарий к Конституции Российской Федерации, М., 2009, с. 37-44.

³ М. Cappelletti, W. Cohen Comparative Constitutional Law, Cases and Materials, The Bobbs-Merrill company, INC, p.11.

պարզելու բանալին է», որը կարող է մաքրանշել այն ընդհանուր նպատակները, որոնց համար ընդունվել են Սահմանադրության առանձին դրույթներ, սակայն Սահմանադրության մաս չի կազմում: Նաջորդ գործով դադարանը հրաժարվել է այդ մտերցումից եւ ընդունելով, որ նախաբանը կազմում է Սահմանադրության մաս, միաժամանակ գրել է, որ նախաբանը կարելի էր կարարում ինչպես օրենքների, այնպես էլ Սահմանադրության դրույթների մեկնաբանության հարցում:

Առանձին երկրների սահմանադրական դադարանների (մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ֆրանսիայի, Նուե-գարիայի, Մյուլենիայի) որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ սահմանադրական դադարաններն ինչպես սահմանադրական դրույթների, այնպես էլ վիճարկվող օրինադրույթների բովանդակությունը մեկնաբանելիս Սահմանադրության կոնկրետ հոդվածներին զուգահեռ վկայակոչում են Սահմանադրության նախաբանը՝ այդպիսով ըստ էության փարբերակում չկատարելով Սահմանադրության նախաբանի եւ Սահմանադրության կոնկրետ հոդվածների իրավական կարգավիճակների միջեւ եւ նախաբանը դիտելով որպես սահմանադրական եւ օրենսդրական նորմերի մեկնաբանության աղբյուր:

Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական դադարանը գրել է, որ «Իր հիմնադրումից ի վեր Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պարասխանաբար է ողջ Գերմանիայի համար՝ Հիմնական օրենքի նախաբանի իմաստով: Այնուամենայնիվ, նրա պետական իշխանությունը ոչ միայն փաստացիորեն, այլ նաեւ սահմանադրական իրավունքով սահմանափակված էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ այդ ժամանակ գոյություն ունեցող փարածքի շրջանակներում: Ուստի Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պարասխանաբար չէր օրարերկրյա ուժերի կողմից խորհրդային օկուպացիայի գոյում ձեռնարկված անօրինական եւ հակասահմանադրական միջոցառումների համար»⁴:

Նուեգարիայի սահմանադրական դադարանը սեփականության հետ կապված հարաբերությունների կարգավորումը սահմանադրական խնդիր է համարել, «...քանզի Սահմանադրության նախաբանը որպես նպատակ է հռչակում սոցիալական շուկայական փրբեսությունը հասնելը»:

Նայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանի դոկտրինալ մտերցումը Սահմանադրության նախաբանի առնչությամբ, ինչպես նշվեց, էապես չի փարբերվում այս հարցում եվրոպական փարբեր երկրների սահմանադրական դադարանների իրավական դիրքորոշումներից:

Անհրաժեշտ է նաեւ փաստել, որ թե՛ մասնագիտական գրականության մեջ եւ թե՛ դատական պրակտիկայում Սահմանադրության նախաբանի արժեքանական նշանակությունն ու իրավական կարեւորությունը որեւէ ձեռով կասկածի փակ չի դրվում:

⁴ Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական դատարանի 2004թ. հոկտեմբերի 26-ի 2 BvR 955/00, 1038/01 որոշում:

Գ Լ ՈՒ Խ 1

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՆՈՒՎԱԾ 1

Նայասարանի Նանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Ժամանակակից աշխարհում սահմանադրական ժողովրդավարության հիմնական հենասյուներն են համարվում մարդու իրավունքները, քաղաքացիական հասարակությունը, սոցիալական, իրավական պետությունը: Մեր Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական սկզբունքների, ինստիտուտների, նորմերի հասցեատերերն են մարդը, հասարակությունը եւ պետությունը: Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է Նայասարանի Նանրապետության՝ որպես պետության, հիմնական բնութագրիչները: Ժողովրդավարությունն իրական դարձնելու համար Սահմանադրությունն ամրագրում է ինչպես իրավական պետության ու ժողովրդավարական հասարակության որոշակի մոդել, որը բնութագրվում է որպես քաղաքացիական հասարակություն, այնպես էլ մարդու (քաղաքացու) արժանապատվությունը, բնական եւ անօտարելի իրավունքներն ու ազատությունները՝ ճանաչելով դրանք բարձրագույն արժեք, որպես անմիջականորեն գործող իրավունք, իսկ դրանց երաշխավորումը, ապահովումը, պահպանությունը, պաշտպանումը՝ պետության պարտականություն (տե՛ս Սահմ. 3-րդ հոդված):

Որպես հասարակական երեւոյթ՝ պետությունն իրենից ներկայացնում է համամարդկային արժեք: **Պետությունը փարածքային, լեզաւ, իրավասութեւլ, ինքնիշխան, համընդհանուր եւ համափարած քաղաքական կազմակերպություն է, որն իրականացնում է հասարակության պետական կառավարման նպատակամղված գործառույթներ:**

Ժողովրդավարության համարեքսպում կարելի է խոսել մարդուն (քաղաքացուն) եւ պետությանը (իշխանության համակարգին) կապող առաջնային իրավունքների ու պարտականությունների մասին: Մարդը պարտավոր է ենթարկվել պետական իշխանությանը, լինել օրինահպարակ: Նամապարասխանաբար պետությունն ունի իրավունք՝ մարդուն հարկադրել ենթարկվելու պետության կողմից սահմանված համապարտադիր վարքագծի կանոններին: Բայց, միեւնոյն ժամանակ, մարդը (քաղաքացին) ի ծնե օժտված է անօտարելի իրավունքներով: Այդ իրավունքները մարդու համար երաշխավորում են ազատության սահմանները՝ հասարակության մեջ եւ պետության հետ հարաբերություններում: Մարդու բնական իրավունքներին համապարասխանում է պետության պարտականությունը՝ երաշխավորել, ապահովել, պահպանել, պաշտպանել դրանք: Սա ազատության այն չափն է, որից այն կողմ իշխանությունն արդեն ոչ թե պետական է, այլ բռնապետական:

Որպես ժողովրդավարության բարձրագույն իրավաբանական հիմք՝ Սահմանադրությունն ամրագրում է ժողովրդաիշխանության սկզբունքը՝ հաստատելով իշխանության պարտականությունը ժողովրդին եւ նրան ճանաչելով իշխանության աղբյուր: Միաժամանակ Սահմանադրությունը սահմանում է, որ ժողովուրդն իրեն պարկանող իշխա-

նությունն իրականացնում է ոչ միայն անմիջապես, այլ նաև ներկայացուցչական ժողովրդավարությամբ, այն է՝ հանրապետության միջոցով (տե՛ս նաև 2-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Սահմանադրության 1-ին հոդվածը հռչակում է, որ հայ ժողովուրդը հիմնադրելով հայոց պետականությունը՝ նրա հիմնարար ու անփոփոխելի սահմանադրական բնութագրեր է համարել **հանրապետությունը, ինքնիշխանությունը, ժողովրդավարական, սոցիալական եւ իրավական** պետությունը: Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունքներ՝ դրանք առավել ընդհանուր ու ելակերային են, որոշում են պետության կազմակերպման ու գործունեության մյուս սկզբունքները (ընդհանուր, ճյուղային, կոնկրետ), ինչպես նաև պետության սոցիալական էությունը եւ առաքելությունը, պետության կազմակերպման եւ գործունեության ելակերային, հիմնական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները եւ այլն):

Տայաստանի Տանրապետությունը ինքնիշխան պետություն է: «Ինքնիշխանություն» եզրույթը (Փրանսերեն - souveraineté, անգլերեն - sovereignty, ռուսերեն - суверенитет) պետության նկատմամբ առաջին անգամ օգտագործել է Փրանսիացի մտածող ժան Բոդենը: Բառացիորեն այն նշանակում է գերագույն իշխանություն:

Պետության ինքնիշխանությունը նրա քաղաքական-իրավական հատկությունն է, որն արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ եւ արտաքին հարաբերություններում՝ անկախությամբ: **Պետության ներքին ինքնիշխանությունն** արտահայտվում է պետության գերակայությամբ եւ լիիշխանությամբ քաղաքական համակարգի այլ կազմակերպությունների նկատմամբ: Պետության մենաշնորհային իրավունքն է իրականացնել օրենսդիր, գործադիր եւ դատական գործառույթներ երկրի ներսում:

Պետության արտաքին ինքնիշխանությունն արտահայտում է այլ պետությունների հետ հարաբերություններում պետության անկախությունը եւ իրավահավասարությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, անթույլարբեղիությունը՝ դրսից միջամտել պետության ներքին գործերին, իրավահավասար անդամությունը միջազգային կազմակերպություններին:

Տեսականորեն ընդունված է առանձնացնել պետական ինքնիշխանության հետևյալ հատկանիշները. **գերակայություն, ինքնուրույնություն, լիիշխանություն, անբաժանելիություն, անկախություն, իրավահավասարություն, անօտարելիություն:**

Ինքնիշխանությամբ օժտված է ցանկացած պետություն՝ անկախ պետության փարածքի չափից, բնակչության թվից, կառավարման եւ կառուցվածքի ձևերից: Պետության ինքնիշխանությունը դրսևորվում է նրա ինքնիշխան իրավունքներում, որոնք իրականացվում են պետության մարմինների ու ինստիտուտների կողմից: Այդ իրավունքներն են՝ օրենքներ հրապարակելու իրավունքը, պետական մարմիններ ձեւավորելու իրավունքը, իր խորհրդանիշերը (գինանշան, օրհներգ, դրոշ) որոշելու իրավունքը, պետական դրամական միավոր ունենալու իրավունքը, հարկեր սահմանելու իրավունքը, պատերազմի եւ խաղաղության իրավունքը, այլ պետություններում եւ միջազգային կազմակերպություններում իր ներկայացուցիչներին նշանակելու իրավունքը, միջպետական միությունների մեջ միավորվելու իրավունքը եւ այլն:

Պետությունների ինքնիշխանության ծավալը միաբնակ է՝ փարբեր պարճառներով: Շար պետությունների ինքնիշխանությունը ձեւական է կամ սահմանափակված: Արդի դարաշրջանում պետական իշխանության ներքին գերակայությունը եւ արտաքին անկախությունն ավելի ու ավելի են սահմանափակվում միջազգային իրավունքով: Բա-

ցի դրանից, ակնհայտ է, որ գերպերությունների սուվերեն իրավունքներն առավել իրական են, քան գաճաճ պերությունների: Պերության ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել հարկադրաբար կամ կամավոր կերպով: **Տարկադիր սահմանափակումը** հնարավոր է, օրինակ, պատերազմում հաղթող պերության կողմից՝ հաղթված պերության նկատմամբ: Ինքնիշխանության **կամավոր սահմանափակումը** կատարվում է դաշնության կամ միջպերական միությունների մեջ մտնելով եւ դաշնությանը կամ վերպերական կազմավորմանն իր ինքնիշխան իրավունքները կամ դրանց որոշակի մասը փոխանցելով:

20-րդ դարում մարդու իրավունքների միջազգայնացումը եւ համընդհանրացումը էականորեն սահմանափակեցին պերության ներքին գործերին չմիջամտելու եւ ինքնիշխան հավասարության անխախտելիության սկզբունքների շրջանակները: ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված սահմաններում կարող են զինված ուժեր կիրառվել այն պերությունների նկատմամբ, որոնք թույլ են փախի կամ կատարում են մարդու իրավունքների խախտումներ (մարդասիրական ինտերվենցիա):

Տայասրանի Տանրասպերությունը Ժողովրդավարական պերություն

Է: Յուրաքանչյուր պարմական դարաշրջան իր ներդրումն է կատարել ժողովրդավարության հասկացության մեջ եւ շեշտադրել դրա որեւէ կողմը: Ժողովրդավարություն բառն օգտագործվում է փարբեր նշանակությամբ՝ որպես պերության ձեւ, որպես պերաքաղաքական կամ պերաիրավական ռեժիմ, որպես պերական մարմինների եւ հասարակական կազմակերպության կազմակերպման եւ գործունեության սկզբունք: Երբ խոսք է գնում պերության մասին, այսինքն, որ այն ժողովրդավարական է, ապա նկատի են առնվում բոլոր այդ իմաստները: Ժողովրդավարությունը ոչ մի փրեղ եւ երբեք գոյություն չի ունեցել առանց պերության, այսինքն՝ ժողովրդավարությունը պերական ռեժիմի փարապետակ է: Օբյեկտիվորեն ժողովուրդը չի կարող ինքն իրականացնել իրեն պարկանող իշխանությունն ամբողջ ծավալով, ուստի իր լիազորությունների մի մասը պարվիրակում է պերական մարմիններին: Սակայն նա շարունակում է մասնակցել հասարակության եւ պերության գործերի կառավարմանը՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ներկայացուցչական մարմինների միջոցով: **Տերեաբար՝ ժողովրդավարական պերությունը ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպությունն է, որն ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պերական եւ հասարակական գործերի կառավարմանը, պերության հիմնական մարմինների ընտրովիությունը եւ հասարակության քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտների գործողության օրինականությունը, մարդու եւ քաղաքացու, փոքրամասնությունների իրավունքների կենսագործումը, պահպանությունը եւ պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապարասխան:**

Ժողովրդավարական պերության՝ որպես հասարակական-քաղաքական երեւույթի հիմնական արժանիքները եւ նշանակությունը երեքն են. ա) *հասարակական*՝ ծառայել անհարի, հասարակության շահերին եւ նպարակներին, թույլ չգրալ, որ պերությունը բռնանա ժողովրդի եւ անհարի վրա, բ) *գործառույթային*, այն է՝ ծառայել մարդուն եւ ժողովրդին՝ հասարակական եւ պերական գործերը լուծելու համար, գ) *մարդկային-անհարական*՝ ճանաչում, ամրագրում, երաշխավորում, պահպանում, ապահովում եւ պաշտպանում է մարդու իրավունքները:

Ժողովրդավարական պերության հիմնարար սկզբունքներն են՝ ա) մարդկանց ազարությունը եւ իրավահավասարությունը, բ) իրավունքով սահմանափակված, իրավական պերությունը, գ) պերության ներկայացուցչական մարմինների ընտրովիությունն

ու նրանց մշտական կապը բնակչության հետ, դ) որոշումների ընդունումը մեծամասնության կամքով՝ փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ, ե) հրապարակայնությունը եւ թափանցիկությունը, գ) իրավական օրինականությունը եւ այլն:

Ժողովրդավարությունը՝ որպես իդեալ, եւ ժողովրդավարությունը որպես իրականություն՝ չեն համընկնում: Ժողովրդավարությունն իդեալ է, որին ձգտում են քաղաքակիրթ հասարակությունները եւ պետությունները: Սակայն կարարյալ, ավարտուն ժողովրդավարություն երբեք գոյություն չի ունեցել: Ժողովրդավարությունը համամարդկային արժեք է: Սակայն գործնականում չկա ժողովրդավարության վերջնական այնպիսի փուլ, որը կհամապատասխանի ժողովրդավարության իդեալներին: Դա պայմանավորված է նաեւ մարդու բնույթով, որի ձգտումներն անընդհատ փոփոխվում են արդարության մասին իր պատկերացումներին համապատասխան:

Ժողովրդավարության շարք հիմնախնդիրների, երկընտրանքների լուծումը ոչ թե վե րադարձն է հակաժողովրդավարական կառավարմանը, այլ ժողովրդավարության անընդհատ խորացումը, ընդլայնումը, խթանումը՝ որպես հիմնական որակ դարձնելը: Քաղաքակրթությունների զարգացման ընդհանուր տրամաբանության մեջ «ժողովրդավարություն, թե՛ դիկտատուրա» երկընտրանքը միշտ լուծվում է հոգուր ժողովրդավարության: Ընտրությունը հիմնված է ոչ թե ժողովրդավարության առաքինությունների վրա, որոնք կարող են լինել նաեւ կասկածելի, այլ դիկտատուրայի թերությունների վրա, որոնք երբեք կասկածելի չեն:

Ժողովրդավարությունը նպաստում է առաջադիմությանը եւ մարդկային զարգացմանը: Պարմությունը վկայում է, որ քաղաքակրթության առաջադիմությունը գնում է ժողովրդավարության զարգացման ճանապարհով, եւ այն այլընտրանք չունի: Ժողովրդավարությունն ամեն մի երկրի բարեկեցության եւ բարգավաճման անհրաժեշտ պայմանն է: Ժողովրդավարությունը երաշխավորում է քաղաքական եւ քաղաքացիական ազատությունները, ստեղծում է լավագույն պայմաններ տնտեսական եւ սոցիալական զարգացման համար:

Երկրում սահմանադրական ժողովրդավարության իրական վիճակը բնութագրվում է մի շարք հիմնարար չափանիշներով: Եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումները վկայում են, որ այդ չափանիշների մեջ առանձնապես կարեւորվում են՝ ընտրական համակարգի կենսունակությունը, իրավունքի գերակայության երաշխավորումը, իշխանությունների իրական բաժանումն ու հավասարակշռումը եւ դատական իշխանության անկախության աստիճանը, մասուլի ու խոսքի ազատությունը եւ այլն:

Ժողովրդավարական կարող է համարվել այն սահմանադրական կարգը, ուր հասարակությունը կառուցված է կամ կառուցվում է իրավական օրենքներով կարգավորված փոխհարաբերությունների վրա, որտեղ երաշխավորված են անհատի բնականոն ինքնաարտահայտման ու ինքնավարության շրջանակները եւ, առանց որեւէ ընտրանքի, յուրաքանչյուր անհատ՝ որպես սոցիալական սուբյեկտ, հասարակական արժեք է, ուր մարդկանց, նրանց խմբերի եւ ողջ հասարակության պետականորեն ներդաշնակված շահերն են ընկած հասարակական առաջընթացի հիմքում: Տվյալ հասարակության մեջ մարդու իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակման միայն այնպեղ ու այն չափով, որտեղ եւ որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար:

Նման հասարակական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի իրավական, եւ ժողովրդավարական արժեքներն իրավական պաշտպանվածության երաշխիքներ պետք է ունենան:

Տայասրանի Տանրապետությունը իրավական պետություն է: Իրավական պետության էությունը բացահայտելու համար նախ պետք է հաշվի առնել, որ այն օժտված է ցանկացած պետությանը յուրահատուկ բոլոր հատկանիշներով. ա) բնակչություն, բ) փարածք, ներառյալ՝ վարչապարամքային բաժանումը, գ) հրապարակային իշխանություն, ներառյալ՝ հարկադրման ապարարը, դ) հարկեր, փուրքեր և այլ պարարդիք վճարներ, ե) պետության խորհրդանիշներ՝ օրհներգ, դրոշ, զինանշան: Ավելին, պետական իշխանության կազմակերպման և իրականացման տեսանկյունից իրավական պետությունը նույնական է այլ, իրենց իրավական չհռչակած, ժողովրդավարական պետությունների քաղաքական ռեժիմի հետ: Բանն այն է, որ թեև իրավական պետության հայեցակարգը վերջնականորեն ձևավորվել է բուրժուական հեղափոխությունների նախօրեին, իսկ «իրավական պետություն» բուն բառակապակցությունը ծագել է փարածվել է 19-րդ դարի առաջին կեսի գերմանական իրավաբանական գրականության մեջ, սակայն այդ հայեցակարգի առանձին բաղադրարարներ առաջադրվել են հազարամյակների ընթացքում և նոր դարաշրջանում ամրագրվել պաշտոնական փաստաթղթերում՝ սահմանադրություններում, հռչակագրերում և այլն:

Այսպես, դեռևս անփիկ մրաժողները (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Յիցերոն և այլք) կարեւորում էին օրենքի դերը պետական իշխանության իրականացման գործընթացում: Նրանք պետության փարքեր ձեւերը բաժանում էին երկու խմբի՝ ճշմարիտ և ոչ ճշմարիտ: Ընդ որում, նրանք ոչ ճշմարիտ էին համարում այն պետությունները, որոնցում իշխանությունը չի հենվում օրենքի վրա և ծառայում է սուկ կառավարողների շահերին: Նիմվելով նման մտրեցման վրա՝ Պլատոնն առանձնացնում էր պետության երեք ճշմարիտ ու, համապարասխանաբար, երեք ոչ ճշմարիտ ձեւ՝ օրինական միապետությունը՝ մեկ անձի կառավարումն օրենքների հիման վրա, և դրան հակառակ՝ բռնապետությունը՝ մեկի անօրինական իշխանությունը, ազնվականությունը՝ քսերի օրինական իշխանությունը, և օլիգարխիան՝ քսերի անօրինական իշխանությունը, օրինական ժողովրդավարությունը՝ ժողովրդի իշխանությունն օրենքի հիման վրա, և հակառակը՝ անօրինական ժողովրդավարությունը՝ օրենքների վրա չհիմնված դեմոսի իշխանությունը:

Իշխանությունների փարանջարման հայեցակարգը բազմակողմանիորեն մշակվել է Զոն Լոքի և Շարլ Լուի դը Մոնտեսքյոյի կողմից և իր ամրագրումն է սրացել դեռևս ԱՄՆ Սահմանադրության մեջ: Մարդու և քաղաքացու իրավունքների փարանջարման հայեցակետը, ինչպես նաև իրավական օրենքի գերակայության գաղափարն ամրագրվել են արդեն ֆրանսիական՝ Մարդու և քաղաքացու իրավունքների մասին 1789թ. հռչակագրում:

Բնական իրավունքի հայեցակետի նախադրյալները կարելի է գտնել կանյայան կարեգորիկ իմպերալիզմում, որն իրավական ոլորտում հանդես է գալիս հետերյալ բովանդակությամբ համընդհանուր օրենքի տեսքով. «Արարքնապես վարվիր այնպես, որ քո կամայականության ազատ դրսետրումը համարեղելի լինի համընդհանուր օրենքին համապարասխանող յուրաքանչյուրի ազատության հետ»:

Այդպիսով, իրավական պետության բաղադրարարները կազմող հայեցակարգերն ու սկզբունքները ձեւավորվել և սահմանադրական մակարդակով ամրագրվել են դեռևս մինչև երրորդ սերնդի սահմանադրություններում իրավական պետությունը որպես պետության բնութագրիչ ամրագրելը: Այս առումով կարելի է համաձայնել Վ. Ներսեսյանցի այն կարծիքի հետ, որ ցանկացած պետություն, բացի բռնապետությունից, իրավական պետություն է:

Ուստի իրավական պետության կարեւորագույն հատկանիշն այն է, որ հենց սահ-

մանադրական մակարդակով պետությունը հավասարում է իր հավաքարմությունն այդ փեսությանը, ճանաչում եւ ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Ներքաբար, իրավական պետության բովանդակության բացահայտման համար կարեւոր է պարզել «իրավունք» հասկացությունը:

Գոյություն ունի իրավաբնական երկու հիմնական ուղղություն՝ լեգիսպական եւ բնական-իրավական, որը, թերեւս, ավելի ճիշտ կլինի անվանել ոչ լեգիսպական: Առաջին մտքեցման կողմնակիցներն իրավունքը դիվարկում են պետության հետ անխզելի կապի մեջ եւ արձանագրում, որ հենց պետությունն է ստեղծում իրավունքը, եւ առանց պետության իրավունք չի կարող գոյություն ունենալ: Բնական իրավունքի համաձայն՝ իրավունքը գոյություն ունի մինչեւ պետությունը եւ անկախ պետությունից:

Երկու ուղղություններն էլ ներկայացված են փարբեր դպրոցներով, որոնք փալիս են իրավունքի որոշակիորեն փարբերակվող բնորոշումներ: Այսպես, լեգիսպական ուղղության նորմափիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներն իրավունքը բնորոշում են որպես լոկ պետության կողմից սահմանված վարքագծի կանոնների համակարգ, կանոններ, որոնց իրականացումը, անհրաժեշտության դեպքում, ապահովվում է պետական հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Ըստ պոզիտիվիստների՝ իրավունքը ոչ միայն իրավական նորմերն են, այլեւ դրանց իրացման արդյունքում ձեւավորված իրավահարաբերությունների համակարգը: Իսկ, ասենք, ամերիկյան ռեալիստական (իրաքեսական) դպրոցի ներկայացուցիչների կարծիքով իրավունքը ոչ թե իրավական նորմերի համակարգն է, այլ միայն դրանց իրագործման արդյունքում ձեւավորված իրավահարաբերությունների համակարգը, այսինքն՝ իրավակարգը: Ոչ լեգիսպական փարբեր դպրոցների ներկայացուցիչները գտնում են, որ իրավունքն սկզբունքների (արդարություն, ազատություն, իրավահավասարություն) եւ կոնկրետ դրույթների (մարդու արժանապավության հարգում, անօտարելի իրավունքներ կյանքի անձեռնմխելիություն, ազատ քեղաշարժվելու իրավունք եւ այլն) համակարգ է, որի բովանդակությունը բխում է հասարակության էությունից կամ մարդու էությունից (բնական իրավական փեսություններ), փարբեր կրոնների Սուրբ գրքերի դրույթներից (աստվածաբանական փեսություններ) կամ՝ նույն կանոնային կարեգորիկ իմպերատիվից:

Ոչ լեգիսպական ուղղության դիրքերից պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքը եւ իր օրենսդրության մեջ ամրագրել համապատասխան դրույթները: Ասենք, համաձայն մոսուլմանական իրավունքի հիմնարար սկզբունքի՝ իմամաթը (պետությունը) իսլամի հենասյունն է, որը պարտավոր է ապահովել Շարիաթի կանոնների կենսագործումը հասարակական կյանքում:

Բնական իրավունքի փեսության ներկայացուցիչները ճշմարտացիորեն ընդգծում են, որ իրավունքի որպես պետության կողմից սահմանված վարքագծի կանոնների համակարգի բնորոշման դեպքում անհետանում է իրավունքի բովանդակային գնահատման չափանիշը, եւ պետական իշխանության հնարավոր ցանկացած կամայականություն, որին փրված է իրավունքի արտաքին փեսք, ճանաչվում է որպես իրավունք: Պոզիտիվ իրավունքի կողմնակիցները, իրենց հերթին, արձանագրում են, որ պետաիրավական պրակտիկայում կիրառվում են ոչ թե բնական իրավունքի փեսության վերը նշված գաղափարներն ու նորմերը, այլ հենց պետության կողմից սահմանված վարքագծի կանոնները: Ներքաբար, իրավունքը կարող է արդյունավետ գործել միայն այն դեպքում, եթե իրավական դրույթներն ամրագրված են պետության կողմից սահմանված պոզիտիվ իրավունքի համակարգում: Դրա վառ օրինակն է ԱՄՆ սահմանադրական փորձը: ԱՄՆ

1787 թվականի Սահմանադրության մեջ բացակայում էր մարդու իրավունքները եւ ազատություններն ամրագրող բաժինը, քանի որ «հայր-հիմնադիրների» կարծիքով դրանց իրականացումը եւ պաշտպանությունը երաշխավորվում էր Սահմանադրության մեջ մարդու բնական իրավունքների ճանաչման մասին դրույթի եւ «կարելի է անել այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով» սկզբունքի ամրագրմամբ: Սակայն ընդամենը երկու փարվա ընթացքում պարզվեց այդ իրավունքների պոզիտիվ ամրագրման անհրաժեշտությունը, եւ 1789 թվականին ԱՄՆ առաջին կոնգրեսն ընդունեց Ջեյմս Մեդիսոնի կողմից առաջարկված «Իրավունքների մասին բիլը»՝ ԱՄՆ Սահմանադրության առաջին 10 փոփոխությունները, որոնցով ամրագրվեց մարդու իրավունքների համակարգը:

Այդպիսի փոխադարձ եւ ճշմարտացի քննադատության արդյունքում ձեւավորվեց «իրավական օրենք» հասկացությունը: Դա պետության կողմից սահմանված պոզիտիվ օրենքն է, որի բովանդակությունը համապատասխանում է բնական իրավունքի պահանջներին:

«Իրավական օրենք» հասկացությունն ունի հարուստ բովանդակություն: Այս հասկացությունից բխում է երկու սկզբունք՝ իրավունքի գերակայության սկզբունքը եւ օրենքի գերակայության սկզբունքը: Գրականության մեջ այդ սկզբունքները, որպես կանոն, հակադրվում են միմյանց կամ հաճախ նույնացվում են միմյանց հետ: Մինչդեռ դրանք փարբեր բովանդակային ընդգրկում ունեցող սկզբունքներ են եւ փարբեր հարթությունների վրա են գտնվում ու միանգամայն սխալ է դրանց մեխանիկական համադրումը: Երկու սկզբունքներն էլ, իրենց իրավական բովանդակության շրջանակներում, կարեւոր նշանակություն ունեն իրավական պետության ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության համար: Իրավաստեղծ գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ պոզիտիվ իրավունքում պետք է իրենց արտացոլումը գտնեն միայն բնական իրավունքի պահանջներին համապատասխանող նորմեր: Իրավունքի գերակայության սկզբունքի գործնական նշանակությունը պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեության ընթացքում առավել ցայտուն արտահայտվում է այն դեպքերում, երբ պոզիտիվ իրավունքի համակարգում տեղ են գտնում բացեր, հակասություններ եւ անորոշ դրույթներ: Այդ բացերը հաղթահարելու, հակասությունները լուծելու եւ անորոշ դրույթները մեկնաբանելու ընթացքում պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք պետք է դեկավարվեն բնական իրավունքի հիմնադրույթներով:

Օրենքի գերակայության սկզբունքն առավելապես կառուցակարգային բնույթ ունի եւ ենթադրում է, որ հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտների անհրաժեշտ, առաջնային իրավական կարգավորումը պետք է իրականացվի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի կողմից ընդունվող եւ նորմատիվ իրավական ակտերի համակարգում առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտով՝ օրենքով: Այդ գաղափարն ամրագրված էր դեռեւս Փրանսիական՝ Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին հռչակագրով եւ հիմնավորվում էր նրանով, որ խորհրդարանը ձեւավորվում է համընդհանուր ընտրությունների միջոցով, հետեւաբար, ունակ է առավել ճշգրիտ արտացոլել ժողովրդի կամքը: Իրավակիրառ ոլորտում այդ սկզբունքը ենթադրում է, որ պետությունը, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պետք է ենթարկվեն ինչպես բնական իրավունքին, այնպես էլ հենց իրենց կողմից սահմանված պոզիտիվ իրավունքին:

Իրավական պետությունն ու քաղաքացիական հասարակությունը սերտորեն փոխկապված են: Իրավական պետությունը կարող է զարգանալ եւ արդյունավետ իրա-

կանացնել իր գործառույթները միայն քաղաքացիական հասարակության առկայության պայմաններում: Միեւնոյն ժամանակ, միայն իրավական պետությունն է անհրաժեշտ պայմաններ ստեղծում քաղաքացիական հասարակության ձեւավորման համար: Քաղաքացիական հասարակությունն առաջին հերթին կառուցակարգված հասարակություն է, որը համապարասխան կառույցների միջոցով ունակ է ոչ միայն ինքնակառավարվելու, այլ նաեւ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու այն ոլորտներում, որոնք մնում են պետության գործառույթների շրջանակներում: Դրա արդյունքում ինքնասահմանափակվում է պետության գործառույթների շրջանակը եւ, միեւնոյն ժամանակ, քաղաքացիական հասարակության վերահսկողության շնորհիվ մյուս ոլորտներում բարձրանում է պետական գործառույթների իրականացման արդյունավետությունը:

Ներխորհրդային ազգաբնակչության բարեփոխումների թերություններից մեկը հենց այն էր, որ պետությունը սահմանափակում էր հասարակական կյանքին իր միջամտության շրջանակներն այն պայմաններում, երբ հասարակությունը դեռեւս ի վիճակի չէր ինքնակառավարվել «բաց» մնացած ոլորտներում:

Ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել, որ իրավական է բնորոշվում այն պետությունը, որի ամբողջ գործունեությունը խարսխված է իրավունքի վրա, եւ որի գլխավոր նպատակը մարդու եւ քաղաքացու իրավունքների ապահովումն ու երաշխավորված պաշտպանությունն է: Իրավական պետությունն ամենից առաջ ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն եւ դրանց գործադրման համակարգերի հուսալի ու անխափան աշխատանք: Միայն այդ պարագայում իրավունքի սուբյեկտները կարող են լինել ազատ: Միայն օբյեկտիվ հասարակական հարաբերությունների ճանաչումը, իրավական կարգավորումը եւ դրա իմացությունն է մարդուն ազատ գործելու հնարավորություն ու նախադրյալներ ընձեռնում: **Իրավական պետության հիմնական սկզբունքն էլ հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց պետականորեն իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է՝ մարդկանց ազատությունների ու իշխանության սահմանների հստակեցումը:**

Իրավական պետության համար որպէս պարտադիր բնութագրիչներ են՝ իշխանությունների փարանջատումը, կառավարման օրինականությունն ու իրավունքի գերակայությունը, դատարանի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը, սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ գործուն համակարգի առկայությունը եւ այլն:

Սահմանադրորեն իրավական պետության հռչակումն ամենից առաջ պետության բնույթի եւ հասարակական հարաբերությունների յուրահարկության վկայությունն է, դա պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է, հաստատումն այն բանի, որ փվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում դրվում են օրենքն ու իրավունքը: Նման պետության համար խնդիր է առաջադրվում՝ այդ սկզբունքին ծառայեցնել պետության ու հասարակության սոցիալական վարքագիծը, անհատի համար հստակեցնել քաղաքացիական հասարակության վարքի կանոններն ու իր ազատության շրջանակները, երաշխավորել այդ ազատությունը:

Անվիճելի է, որ ցանկացած երկրի Սահմանադրություն ամենից առաջ դիտվում է որպէս համակեցության հիմնարար կանոնների շուրջ ձեռք բերված հասարակական համաձայնություն: Սահմանադրությունը յուրաքանչյուր երկրի համար դառնում է օրինաբար եղծման աղբյուր, դրանում ամրագրված սկզբունքները սոսկ փաստի արձանագրում չեն, այլ գործելակերպի հիմնական կանոններ: Այդ կանոնները վերաբերում են ոչ միայն իշխանություններին, այլ նաեւ պետությունը ներկայացնող յուրաքանչյուր իրավասուբյեկ-

փի՝ կլինի անհատ, քաղաքացի, թե դրանց փարաբնույթ համակցություն, դառնալով նրանց հասարակական դիմագիծը, ինքնաարտահայտման կերպն ու բովանդակությունը:

Իրավական պետության մեջ սոցիալական հանրությունն սպանում է որոշակի կանոնակարգված դիմագիծ, որը բնորոշվում է որպես հասարակական կարգ, իսկ անհատը դառնում է իրավունքի սուբյեկտ, նրա հարաբերությունները հասարակության մյուս անդամների հետ որոշակիորեն կարգավորված իրավահարաբերությունների բնույթ են սպանում: Նման հասարակությունն անխուսափելիորեն պետք է ունենա նաև սահմանադրորեն կարգավորված իրավահարաբերությունների վերահսկման անընդհատությունն ապահովող սահմանադրական համակարգ, որը հասարակական օրգանիզմի յուրաքանչյուր ինունտհամակարգի դեր է կատարում, երաշխավորում է իրավունքով իշխանության սահմանափակման գործունակությունը:

Տայասրանի Տանրապետությունը սոցիալական պետություն է: Անկախության հռչակման գործընթացը զուգորդվեց անցումով դեպի ազատ շուկայական փոփոխական համակարգ: Ազատականացված քաղաքական եւ փոփոխական համակարգերին անցումը զուգորդվեց շուկայական փոփոխության ձեւավորման դժվարություններով: Պետության կարեւոր հոգսերից մեկը դարձավ նպատակային սոցիալական ծրագրերի մշակման միջոցով հարկադրված քայլեր ձեռնարկելն աղքատության դեմ պայքարի ուղղությամբ:

Սոցիալական պետության սկզբունքի իրացման գրավականը դրա իրավական ամրագրումն է: Մարդու սոցիալական, փոփոխական եւ մշակութային իրավունքներն արտացոլված են կարեւորագույն միջազգային իրավական ակտերում: Միաժամանակ, անհրաժեշտ է, որ այդ սկզբունքն ամրագրվի նաև ներպետական օրենսդրության մեջ, մասնավորապես՝ Սահմանադրության: Այսպիսով, սոցիալական պետության հայեցակարգի կենսագործման երաշխիքը պարզաձև սահմանադրական կարգավորումն է:

Շուկայական փոփոխության պայմաններում պետության եւ մարդու փոխհարաբերության հարցը եղել է մնում է փոփոխական, քաղաքական-իրավական մրցի կենտրոնական հարցերից, որովհետեւ այն շոշափում է ինդուստրիալ եւ հետինդուստրիալ հասարակության կարեւորագույն սկզբունքները ազատությունը եւ սոցիալական հավասարությունը: Իրավական պետության ձեւավորումը կարելի է համարել մարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից մեկը, որովհետեւ այն լուծեց մարդու «իրավունքների առաջին սերնդի» հիմնախնդիրը եւ ապահովեց մարդու ազատությունն ու ձեւական (իրավական) հավասարությունը: Սակայն ինդուստրիալ հասարակությունն իր զարգացման ընթացքում չկարողացավ լուծել մարդկանց սոցիալական (փաստական) հավասարության խնդիրը եւ առաջացավ հակասություն այդ երկու սկզբունքների միջև: Անհատական ազատության սկզբունքի կենսագործումը պետության հիմնական պարտականությունը համարելով ցանկացած միջամտությունից այդ ազատության պահպանությունը՝ ապաճորպացրեց մարդկանց նախաձեռնությունը եւ ինքնագործունեությունը, նպաստեց մասնավոր ձեռնարկարիտության եւ շուկայական փոփոխության զարգացմանը: Սակայն XIX դարի վերջերից, զարգացմանը եւ հարստության կուրակմանը զուգընթաց փրկի էր ունենում ինդուստրիալ հասարակության գույքային շերտավորում, նրա բեռնացում, որը հղի էր սոցիալական պայթյունով:

Հասարակությանը ներված էր մարտահրավեր՝ շարունակել՝ անհատական ազատության լիբերալիստական սկզբունքի կիրառումը, թե գերապարտությունը փախ սոցիալական հավասարության սկզբունքին, որը պետությունից պահանջելու էր «գիշերային

պահակի» դերից անցնել քաղաքացիական հասարակության ինքնավար ոլորտներին (սոցիալական, փնտրական, մշակութային, բնական ռեսուրսներ) միջամտելու քաղաքականությանը: Իհարկե, փաստական հավասարության հաստատումն անիրականանալի խնդիր է: Մակայն դա չի նշանակում հավասարության գաղափարի մերժում. այդ գաղափարը պարունակում է հսկայական բարոյական ներուժ, քանի որ մարդկանց ձգտումը դեպի հավասարություն՝ նշանակալիորեն ուժեղ է նրանց՝ դեպի ազատության ձգտումից, ինչի հետ մարդկությունը չի կարող հաշվի չնստել: Այդ մարտահրավերի պատասխաններից էին սոցիալիստական գաղափարախոսությունը՝ իր փարատեսակներով, եւ իրական սոցիալիզմի պրակտիկան:

Շուկայական փնտրության կողմնակիցների պատասխանն այդ մարտահրավերին՝ սոցիալական պետության գաղափարն էր: Այդ գաղափարը մերժելով անհարական ազատության նշանակությունը՝ փորձում էր այն զուգակցել հավասարության հետ, իսկ դա նշանակում էր, որ մարդու ազատության «բացասական» հասկացողությունը (ազատություն պետության միջամտությունից) գումարվում էր նաեւ ազատության «դրական» հասկացողությունը՝ որպես մարդու իրավունք ակնկալել որոշակի գործողություններ պետությունից՝ ուղղված սոցիալական հավասարության, աղքատության, ի վերջո մարդկային զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

Սոցիալական է կոչվում այն պետությունը, որը ձգտում է իր բնակչության համար ապահովել արժանապատիվ եւ անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, բարենպաստ կենսական միջավայր, բոլորի համար համեմատաբար մատչելի կենսական հնարավորություններ: Սոցիալական պետությունը գույքային եւ այլ սոցիալական փարբերությունները հարթեցնում է ազգային եկամտի մի մասը հոգուր անապահովների վերաբաշխելու միջոցով, սպեղծում է սոցիալական ապահովագրության եւ բոլորի համար մատչելի կրթական, առողջապահական համակարգեր, իրականացնում է մշակույթի զարգացման, զբաղվածության ապահովման, աշխատավորների իրավունքների պահպանության ծրագրեր, սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, մայրությանը, մանկությանը, փարիքավորներին, երիտասարդությանը եւ այլ խոցելի հասարակական շերտերին:

Սոցիալական պետության իրական ծագման պահը կարելի է համարել XX դարի երկրորդ կեսը: Սոցիալական պետությունը ձեւավորվեց առանձին մասնակի քայլերի միջոցով՝ աշխատավարձի նվազագույն չափի, գործազրկության եւ այլ նպաստների սահմանում, եւ, ի վերջո, դրանք վերափոխվեցին պետության պարտականության՝ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել կյանքի արժանապատիվ մակարդակ: Կախված երկրների մշակութային, քաղաքական փարբերություններից, հոգեմտակերպի ու պատմական յուրահատկություններից՝ յուրաքանչյուրում փարբեր կերպ է լուծվել սոցիալական արդարության եւ ազատության հիմնահարցը: Արդյունքում ձեւավորվել են սոցիալական պետության ազատական, պահպանողական եւ սոցիալ-ժողովրդավարական փարատեսակները: Չնայած մոդելների փարբերությանը, սոցիալական պետությունը բոլոր դեպքերում ձգտում է երաշխավորել իր քաղաքացիների բավարար կենսամակարդակը, հուսալի սոցիալական պաշտպանությունը եւ ապահովությունը, պայմաններ է սպեղծում անհարի սպեղծագործական ներուժի ինքնաիրացման համար: Բոլոր մոդելների համար ընդհանուր նախադրյալ է սոցիալ-շուկայական փնտրությունը, քաղաքացիական հասարակությունը, ժողովրդավարական պետաիրավական ռեժիմը:

Կայացած քաղաքացիական հասարակությունում սոցիալ-իրավական պետությունը երաշխավորում է ոչ միայն քաղաքական եւ քաղաքացիական իրավունքները, այլև

ապահովում է սոցիալական համերաշխություն, նպաստում է երկրի փնտրեսական աճին, սպրեղծում է իրական սոցիալական, փնտրեսական եւ այլ երաշխիքներ կենսամակարդակի, զբաղվածության, կրթության եւ առողջապահության ոլորտներում: Արդյունքում, հասարակության մեծամասնությունն ինքնուրույն նախաձեռնության միջոցով հասնում է բարեկեցության, եւ նվաճվում են մարդկային զարգացման նպատակները: Այդպիսի դիրքորոշման շնորհիվ պետությունը եւ հասարակությունն իրավաբանորեն ճանաչում, ապահովում եւ պաշտպանում են մարդու սոցիալական, փնտրեսական եւ մշակութային իրավունքները:

Երրորդ սերնդի իրավունքներն աչքի են ընկնում իրենց բնույթով, որը պայմանավորված է դրանց նկատմամբ պետության դիրքորոշմամբ: Պետություններն այս իրավունքների դեպքում պետք է ոչ թե ձեռնպահ մնան, այլ պարտավոր են գործել, եւ այդ պարտավորությունը վերաճվում է իրավաբանական պարտականության, օրինակ՝ ապա զուգակց կրթությունը եւ այլն: Պետության խնդիրն է սոցիալ-փնտրեսական ծրագրերի, կազմակերպական եւ փնտրեսական գործունեության, իրավական կարգավորման միջոցով իրական դարձնել երրորդ սերնդի իրավունքները: Սակայն երրորդ սերնդի իրավունքների իրացման հիմնախնդիրը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր պետությունները կարող են իրականություն դարձնել սոցիալական, փնտրեսական եւ մշակութային իրավունքները: Դա պայմանավորված է այն փաստով, որ այս իրավունքների իրացմանը կարելի է հասնել ազգային եկամտի վերաբաշխման հաշվին: Իսկ եթե երկրի փնտրեսությունը չունի հնարավորություններ, ուրեմն եւ վերաբաշխումն է դառնում անհնարին: Ահա այսպեղ է, որ առաջանում է լուրջ հիմնախնդիր՝ ինչպե՞ս իրականացնել սոցիալական ծառայությունների մատուցումը, որպեսզի պահպանվեն շուկայական հարաբերությունները, ազատ ձեռներեցությունը եւ միաժամանակ ապահովվեն սոցիալական իրավունքները:

Սոցիալական պետության լիարժեք գոյության հիմքը փնտրեսական զարգացման մակարդակն է, որը թույլ է տալիս պահպանելով մրցակցությունը՝ ճկուն հարկային քաղաքականության միջոցով նպաստել փնտրեսության զարգացմանը, կառուցվածքային փոփոխություններին, ֆինանսավորել սոցիալական ծրագրերը: Սակայն փնտրեսակետը, որ մարդու իրավունքների անբավարար ապահովումն ունի միայն փնտրեսական պարճառներ, մոլորություն է: Ոչ զարգացման մակարդակը, ոչ աճի տեմպերը, ոչ բնակչության մեկ շնչին հասնող եկամտի մեծությունը չեն պայմանավորում նվաճումները մարդու իրավունքների ոլորտում: Տարբեր երկրներում այդ ցուցանիշների հավասար պայմաններում հնարավոր են իրավունքների իրականացման տարբեր աստիճաններ: Իհարկե, ճիշտ է՝ լինի անտեսել փնտրեսական ռեսուրսների դերն իրավունքների իրականացման գործում: Տնտեսական աճը, անշուշտ, անհրաժեշտ է, բայց ինքնին՝ ոչ բավարար: Տնտեսական աճը եւ իրավունքները փոխպայմանավորելու համար անհրաժեշտ է մշակել ռազմավարություն. ռեսուրսների բաշխումը եւ փնտրեսական աճի կառուցվածքը պետք է կողմնորոշել դեպի չունեւորների շահերը, մարդկային ներուժի զարգացմանը եւ իրավունքների իրականացմանը:

Այն հանգամանքը, որ մարդու սոցիալական, փնտրեսական եւ մշակութային իրավունքները հավասարաբարժեք են առաջին սերնդի իրավունքների հետ, որ դրանք նույնքան «բնական եւ անօտարելի են», որքան եւ քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, ուղղակիորեն ամրագրված են Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախաբանում, որում ասված է, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, վախից ու կարիքից ձերբա-

զարված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականացվել, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր փոքրագույն, սոցիալական եւ մշակութային իրավունքներից, այնպես էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից: Վախից ու կարիքից ազատ մարդկանց հասարակությունն առկա է միայն այն դեպքում, երբ կայացած սոցիալ-իրավական պետությունն առաջին սերնդի իրավունքների հետ համահավասար երաշխավորում է նաև երկրորդ սերնդի իրավունքները:

Հասարակական հումանիզմի դրսևորման եւ քաղաքակրթության առաջընթացի մեծագույն ձեռքբերում է սոցիալական պետության կազմավորումը, ուր հասարակության անդամները, սահմանադրական համաձայնության հիման վրա, որոշում են իրենց առաջընթացի նպատակը, հստակեցնում **նպատակ - նախադրյալ - միջոց** հարաբերակցությունը: Մա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է: Սոցիալական կարող է լինել այն պետությունը, ուր մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամբողջական եւ գործուն համակարգ է ստեղծվել, ուր պետության կառավարման ամբողջ համակարգը խարսխված է հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:

Սոցիալական պետությունն անհատի եւ հասարակության, անհատի եւ պետության փոխհարաբերությունների ներդաշնակման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Այն պետք է ճանաչվի, ընկալվի ու պաշտպանվի հասարակության յուրաքանչյուր բջջի կողմից, վարքագծի պարտադիր կանոն պետք է դառնա, որ այն ամենը, ինչն անօրինական է արդար չէ ու անհարիր է սոցիալական պետությանը:

Մահմանադրական րվյալ սկզբունքը ենթադրում է ոչ թե սոցիալիստական համահարթեցում, այլ հասարակության արտադրական հարաբերությունների սոցիալական կողմնորոշվածություն, ոչ թե «արտադրություն՝ հանուն արտադրության», այլ «արտադրություն՝ հանուն հասարակական բարեկեցության» սկզբունքի արմատավորում: Դա ենթադրում է նաև, որ շուկայական փոքրագույն հարաբերությունները ոչ թե նպատակ են, այլ միջոց՝ արդյունավետ փոքրագույն արտադրություն եւ ցանկալի սոցիալական հետեւանքներ երաշխավորելու համար: Ուստի պարահական չէ, որ Եվրոպական միության հիմնարար նպատակների շարքում Լիսաբոնյան համաձայնագրում շեշտվում է, որ Միությունը պետք է հիմնվի Եվրոպայի հավասարակշռված փոքրագույն աճի, կայուն զարգացման, **սոցիալական շուկայական փոքրագույնության վրա: Սոցիալական շուկայական փոքրագույնության է սոցիալական պետության հիմքը: Մա է Եվրոպական զարգացումների ներկայիս ընդհանրացումը:**

Իրավամբ, քաղաքացիական է համարվում այն հասարակությունը, որտեղ անհատն իր շահերով ոչ թե հակադրվում է հասարակությանը, այլ ինքնադրսևորման առավելագույն հնարավորություն է ստանում՝ անհատի ու հասարակության շահերի ներդաշնակման պարագայում:

Հաճախ պետության սոցիալական ֆունկցիան հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման ֆունկցիային, որն արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաև հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից փոքրվում է հենց նրանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրավունքին, եւ քաղաքացիական հասարակությունն իր անդամների ազատ ինքնադրսևորման ներդաշ-

նակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Դա իր հերթին նշանակում է, որ հասարակության մեջ անհարը չի կարող իրեն մեկուսացված տեսնել, նրա գոյության բնականոն վիճակը փոխկապվածությունն է, փոխգործակցությունը ու նաե՛ պարասխանարվությունը հասարակության ներկայի ու ապագայի հանդեպ:

Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներից անհրաժեշտ է առանձնացնել՝

ա) մարդկանց սոցիալական պաշտպանվածության եւ բարեկեցության բարձրացման օրենսդրական երաշխիքների ապահովումը,

բ) սոցիալական պաշտպանվածության պետական եւ ոչ պետական անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումն ու դրանց հստակ աշխատանքի ապահովումը (մասնավորապես՝ նկատի է առնվում նաեւ սոցիալական ապահովության համակարգը, որն առաջին հերթին առնչվում է խեղված ճակատագրերին՝ հաշմանդամություն, հիվանդություն, կերակրողի կորուստ, գործազրկություն, անապահով ծերություն եւ այլն, ինչպես նաեւ սոցիալական ապահովագրության գործուն համակարգի առկայությունը, որը կարգավորում է սոցիալական ռիսկը),

գ) կենսանվագագույնի երաշխավորումը,

դ) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման, ինչպես նաեւ բանական ինքնադրսեւորման երաշխիքների ապահովումը,

ե) այդ սկզբունքի իրականացման անշոջելիության երաշխավորումը,

զ) մարդու իրավունքների եւ ազատությունների արդարադատական ապահովումը,

է) շուկայական տնտեսական հարաբերությունների սոցիալական բնույթի երաշխավորումը եւ այլն:

Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներին անդրադառնալիս անհրաժեշտ է, թերեւս, առանձնացնել նաեւ սոցիալական հավասարության բնութագրիչը, որը վերջին երկու դարերի հեղափոխական պայքարի առանցքն է հանդիսացել: Այս որակն ընկալվել ու մեկնաբանվել է տրամագծորեն տարբեր դիրքերից: Տաճախ սոցիալական հավասարության սկզբունքի պարզունակ ընկալումը եւ այն որպես սոցիալական արդարության գերագույն չափանիշ ներկայացնելը հանգեցնում է հասարակական հարաբերությունների բնույթի եւ զարգացման օրինաչափությունների տարաբնույթ աղճատված մեկնաբանությունների: Անառարկելի ճշմարտություն կա այն բանում, որ սոցիալական հավասարություն ապահովելու համար սոցիալիստական պետությունը պայքարում է հարստության դեմ, սոցիալական պետությունը՝ աղքատության: Սոցիալական պետությունը չի կարող բացառել իր անդամների հավասարության սկզբունքը, սակայն այն ոչ թե պետք է բացարձականացվի, այլ դիտվի որպես հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք, որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է: Այս սկզբունքը ենթադրում է նաեւ, որ պետության պարտքն է երաշխավորել, որպեսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժանանան: Փաստորեն, սոցիալական պետությունը, մի կողմից, ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, դնելով, այսպես կոչված, ներքին չափաձողը, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր պետք է ստեղծի, որպեսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ

իր բանական կարողություններին ու օրինական հնարավորություններին համապատասխան ինքնադրսետորման դաշտ ստանա: Նենց դա է ապահովում ազատության եւ հավասարության ներդաշնակումը:

Պետության սոցիալական բնույթի ընդունումը միաժամանակ հանդես է գալիս թե՛ որպես սկզբունք, թե՛ որպես նպատակ եւ թե՛ որպես կոնկրետ հարաբերություններին վերաբերող համապարտադիր վարքագծի կանոն: Այն դառնում է հարավիտիոյս հասարակական հարաբերությունների էության բնութագրիչ եւ դինամիկ հարաբերություններում հասարակական սուբյեկտների վարքագծի կողմնորոշիչ:

Սոցիալական պետության կայացումն անընդհար եւ մշտական գործընթաց է, պահանջում է համարժեք մտքեցում յուրաքանչյուր նոր ու փոփոխվող իրավիճակում: Միայն է այն մտքեցումը, թե պետությունը կարող է սոցիալական համարվել միայն այն դեպքում, երբ արդեն ստեղծել է հզոր փնտրեսական նախադրյալներ եւ կարող է ժամանակ գրնել մրաժելու մարդկանց սոցիալական կարիքների մասին: Մարդկանց պահանջ-մունքների եւ դրանց բավարարման հնարավորությունների արդարացի ներդաշնակման խնդիրը գոյություն ունի յուրաքանչյուր պահ, եւ այն դինամիկ երեւոյթ է: Այլ բան է, որ րարբեր հնարավորությունների պարագայում սոցիալական բավարարման րարբեր խնդիրներ կարող են լուծվել: Բայց դա չի նշանակում, որ ժամանակի ու րարաժոյթան մեջ միջոցը կարող է կրրվել նպարակից, առավել եւս՝ հակադրվել դրան:

Ինչ վերաբերում է անցման շրջանին, հարկապես՝ ճգնաժամային կառավարման իրավիճակներին, ապա սոցիալական պաշտպանվաժոյթան խնդիրը պետոյթան համար սրանում է հարուկ առաջնահերթոյթոն: Ավելին, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ պետոյթան սոցիալական ֆունկցիան հարկապես ընդգծվեց եւ սահմանադրորեն ամրագրվեց համակարգային վերափոխումների ընթացքում, քանզի նման վերափոխումների գերագոյն նպարակը մարդն է, նրա կարիքների բավարարումն ու, ինչպես պարկերավոր նշվում է՝ «...հասարակոյթան մարդկայնացումը»: Ներեւարար, անցման շրջանում պետոյթան հիմնական խնդիրն է **շուկայական հարաբերոյթոններին անցնելու թափը հավասարակշռել սոցիալական պաշտպանվաժոյթան հուսալի համակարգով:**

Աշխարհի դեռ ոչ մի պետոյթոն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով գնում են կամ չեն գնում, պերականորեն այդպիսի գորժառոյթ սրանձնում են կամ չեն սրանձնում: Եթե սրանձնում են, ապա պետոյթան խնդիրն է դառնում պերականորեն ապահովել, մի կողմից, սոցիալական պաշտպանվաժոյթան երաշխավորվաժ համակարգի ստեղծումը, մյոս կողմից՝ բանական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսետորման միջավայրի ստեղծումը: Բնականաբար, դա պահանջում է յուրահարուկ մտքեցում թե՛ արրարրական եւ թե՛ բաշխման հարաբերոյթոնների նկարմամբ:

Եթե պետոյթոնն իրեն չի համարում սոցիալական, ապա նշվաժ խնդիրները հասարակոյթոնը փորձում է լուծել այլ ձեերով ու ճանապարհներով: Նիմնականում դրանք դառնում են ինքնակարգավորվող հարաբերոյթոնների հերեւաք:

Այլ կերպ, հիմնականը, գլխավորն այն է, որ հասարակական հարաբերոյթոնների բնույթի որոշարկումը որպես սահմանադրական նորմ, ամենից առաջ բնութագրում է այդ հարաբերոյթոնների որակական առանձնահարկոյթոնները, բացահարում դրանց էութոնը, գարգացման ներքին րրամաբանոյթոնը: Եվ, գլխավորը՝ իրեն սոցիալական համարող պետոյթոնը չի կարող ժրագրավորվաժ մտքեցում չցուցաբերել հասարակական գարգացմանը, չի կարող ինքնակառավարվող հարաբերոյթոնների հե-

տեսանքները գրանցողի պասիվ դերն ստանձնել՝ ամեն ինչ թողնելով ամենագոր շուկայի փնտրիչությանը¹:

Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաև խելամիտ սպասելիքների ու պահանջումների խնդրի առաջադրում: Նասարակության անդամների սպասելիքների իմացությունը, ռացիոնալ սպասելիքների ձեւավորումը, դրան համապատասխան համակեցության նոր արժեհամակարգերի անհրաժեշտությունը ոչ միայն համակարգված ու ծրագրավորված փնտրեսական, այլև քաղաքական ու, առավել եւս՝ բարոյական նոր մոտեցումներ են պահանջում: Բանն այն է, որ անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են խաթարված վերարտադրական համակարգը, արմատական վերակազմակերպման անհրաժեշտություն ունեցող եւ սեփական կառուցվածքային հիմք չունեցող փնտրությունը, անորոշության գործոնը, աղճարված հասարակական գիտակցությունը, փլուզված արժեհամակարգերը եւ այլն, թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների ակտիվ ու համակարգված ձեւավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել ծայրահեղ բեւեռացումն ու անհանդուրժողական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, ապահովել ներդաշնակ զարգացում:

Եռամիասնության մեջ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունն ամբողջական ձեւով ներդաշնակում է անհատի կենսագոյի հիմնական սկզբունքները ազատությունն ու հավասարությունը: Այս որակներից յուրաքանչյուրի առանձնացումը եւ միակողմանի բացարձականացումը կամ հակադրումը մեթոդաբանական կոպիտ սխալ է եւ կարող է հանգեցնել ծայրահեղ, աղճարված եւ, որպես կանոն, ոչ ճիշտ եզրահանգումներին:

Պետության ժողովրդավարական, իրավական, սոցիալական բնորոշիչներն առանձին-առանձին հասարակական հարաբերությունների բնույթի որոշակի որակական գծերն արտահայտելուց զատ, իրենց միասնության մեջ փախ են նաև նոր որակ: Այն ենթադրում է, որ փվյալ պետության համար փիպական է.

1. իրավունքի գերակայության եւ ժողովրդաիշխանության երաշխավորումը,
 2. վերարտադրական համակարգի գործողությունը շուկայական օրենքներով, որտեղ ապահովված է ազատ գործարարություն ու մրցակցություն, հաղթահարված է մենաշնորհային ցանկացած թելադրանք եւ որի երաշխավորը պետությունն է,
 3. բաշխման հարաբերությունների վրա պետության կարգավորված օրինական ներազդեցությունը,
 4. երկրի մասշտաբով փնտրեսական լուծումների արդյունավետության գուգորդումը սոցիալական հետեսանքների հետ (առաջնորդվելով հասարակական արտադրության սոցիալ-փնտրեսական արդյունավետության չափանիշներով),
 5. փնտրեսական, վարչական, քաղաքական ուժի օպտիմալ ապակենտրոնացման խնդրի առաջադրումը, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման երաշխավորումը,
 6. Մահմանադրության գերակայության եւ կայունության երաշխավորումը եւ այլն:
- Նման հասարակության մեջ սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են դառնում.

¹ Հարկ է նշել, որ ազատական տնտեսական հարաբերություններ ունեցող գրեթե ոչ մի երկրում այս պարագան այնքան չի բացարձականացվել, որքան նորանկախ որոշ երկրներում: ԱՄՆ-ում, դեռևս Նախագահ Ջեֆերսոնի ժամանակներից, այդ թվում՝ նաև հետպատերազմյան շրջանի տնտեսագիտական միտքը, ոչ թե մերժել, այլ որոշակի կարգավորված չափի մեջ է տեսել պետության միջամտությունը տնտեսական հարաբերություններին:

- մարդու փրկումն ու դերը հասարակական հարաբերություններում, նրա արժանապատվության ճանաչումն ու հարգումը, իրավունքների և ազատությունների երաշխավորումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք,
- իրավունքով իշխանության սահմանափակումը,
- իշխանությունների փարանջատումն ու հավասարակշռումը,
- ժողովրդաիշխանության հաստատումը, իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,
- քաղաքական, փրկական ու վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը, ազատ փնտեսական մրցակցության երաշխավորումը,
- գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությամբ օժտված դատական համակարգի առկայությունը,
- ազգային իրավական համակարգի ներդաշնակությունը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,
- պետական իշխանության սահմանադրական համակարգում գործառույթ-ինսփիրտ-իրավասություն շղթայի դիմամիկ ներդաշնակության երաշխավորումը,
- Մահմանադրության գերակայության ու կայունության ապահովման աստիճանը:

Ընդհանրացնելով ասվածը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ Նայասրանի Նանրապետության Մահմանադրության մեջ ամրագրելով, որ «Նայասրանի Նանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», կարարվել է առաջին վճռական ու ճիշտ բնորոշումն այն հասարակական հարաբերությունների, որի նախադրյալները ցանկանում ենք սրբեղծել, եւ որը մեր ազգային ու պետական առաջընթացի երաշխիքն է լինելու: Այս մտքեցումը մեր սահմանադրական մշակույթի լավագույն դրսևորումներից է: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր գործնական քայլ արվի այդ ուղղությամբ, բխի այդ հասկացությունների էությունից, ապահովի այդ ուղղությամբ հասարակության զարգացումը: Դրան պետք է ուղղված լինեն օրենսդրական աշխարհանքը, համակարգային կառուցվածքային ու կազմակերպական վերափոխումները, գործնական մեխանիզմներն ու դրանց գործադրման եղանակները, ամբողջ հասարակության եւ յուրաքանչյուր առանձին իրավասուբյեկտի վարքագիծը: Այս հենքի վրա պետք է գծագրվի նաեւ սահմանադրական զարգացումների փիլիսոփայությունը:

Պետության թե՛ ժողովրդավարական, թե՛ իրավական եւ թե՛ սոցիալական գործառույթի բնութագրումը չի կարող պարփակվել որեւէ նորմի շրջանակներում կամ դիտարկվել որպես ինքնուրույն, անջատ ձեւով արտահայտվող որակ: Այդ որակները, որպես հիմնարար ու սկզբունքային, պետք է ներծծված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման յուրաքանչյուր բջջի մեջ, արտացոլվեն պետության կողմից ձեռնարկված ամեն մի քայլում, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի ապրելակերպի անքակտելի բաղադրիչը: Դա պետք է դառնա ազգային-պետական մրաձեւակերպ ու գործելակերպ: Այլ կերպ դրանք իրենց արտացոլումը պետք է գրկեն նաեւ Մահմանադրության յուրաքանչյուր նորմի եւ դրա գործադրման մեխանիզմների մեջ:

Նայոց պետականության կառավարման ձեւը հանրապետությունն է:

Մահմանադրության 1-ին հոդվածն ամրագրում է պետական կառավարման ձեւը: Պետական կառավարման ձեւը ցույց է տալիս գերագույն պետական իշխանության կազմակերպման եղանակը, պետական մարմինների ձեւավորման կարգը, դրանց փոխգործակցությունը միմյանց միջեւ, բնակչության մասնակցության աստիճանը պետական մարմինների ձեւավորմանը:

Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևի հատկանիշներն են. 1) պետության բարձրագույն մարմինների սրբեղծման ընտրովի եղանակը, 2) պետական իշխանության մարմինների կազմավորման կարգը՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքով, 3) իրավասության բաշխումը կենտրոնական պետական մարմինների միջև (տե՛ս նաև 5-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Այս հատկանիշների սահմանադրական բովանդակությունը հաստատում է, որ Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևը հանրապետությունն է, որում բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է որոշակի ժամկետով ժողովրդի կողմից ընտրված մարմիններին, որոնք պարասխանաբար են ընտրողների առջև:

Հանրապետական կառավարման այդ ձևում համադրված են եւ՛ նախագահական, եւ՛ խորհրդարանական կառավարման ձևերին բնորոշ գծերը, ինչի արդյունքում գործադիր իշխանությունն այսպեղ հաշվեբար եւ պարասխանաբար է եւ՛ Նախագահի, եւ՛ խորհրդարանի առջև: ՆՍ Սահմանադրությունն ամրագրում է, որ Նախագահի կողմից կազմավորվող կառավարությունը հաշվեբար եւ պարասխանաբար է նաև Ազգային ժողովի առջև: Վերջինս իրավասու է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվարահություն հայտնել կառավարությանը: Կառավարության անվարահություն հայտնելու մասին որոշման ընդունման դեպքում կառավարությունը հրաժարական է փայխ: Ներկաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարման ձևն իրենում պարունակում է թե՛ նախագահական եւ թե՛ խորհրդարանական ձևին բնորոշ գծեր: ՆՍ կառավարման ձևը խորհրդարանական է այնքանով, որքանով Նախագահն ինքնուրույն չի նշանակում վարչապետին, այլ Ազգային ժողովում պարզամավորական տեղերի բաշխման եւ պարզամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պարզամավորների մեծամասնության վարահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պարզամավորների վարահությունը վայելող անձին (տե՛ս նաև 55-րդ հոդվածի 4-րդ կետի, 74 եւ 74.1-րդ հոդվածների մեկնաբանությունները):

ՆՈԴՎԱԾ 2

1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

2. Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնապար անձանց միջոցով:

3. Իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

1. Մեկնաբանվող հոդվածը կարևոր նշանակություն ունի սահմանադրական կարգի հիմունքների շարքում: Հաջորդելով 1-ին հոդվածին, որն ամրագրում է Սահմանադրությամբ հիմնադրված պետականության բնութագրերը, կազմակերպման եւ գործունեության հիմնարար սկզբունքները, այն փաստում է շար կարևոր հիմնադրույթ. պետական իշխանության համակարգը, նրա ինքնիշխանությունն ածանցված են ժողովրդից, նրա ինք-

նիշխանությունից, ժողովուրդը հասարակական համակարգում ունի հիմնադիրի կարգավիճակ:

«Ժողովուրդ» հասկացությունն ամենալայն քաղաքական-իրավական իմաստով ենթադրում է մեկ պետության մեջ միավորված քաղաքացիներին: Նման ընդգրկմամբ այն հոմանիշ է «ազգ» հասկացությանը՝ քաղաքական իմաստով: ՏՄ Մահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասը ժողովրդի հիմնադիր իշխանությունը ճանաչում է որպես բոլոր իշխանությունների աղբյուրը: Պետական իշխանությունն ամանցված է ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: Ժողովրդի կամքով ձեւավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ եւ ժողովրդին հաշվեկրո: Պետությունն իշխանությունն սրանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի: Այսպիսով՝ ժողովրդավարությունը ենթադրում է, որ ոչ թե պետությունն է գերիշխում հասարակության (ժողովրդի) վրա, այլ, ընդհակառակը, հասարակությունն է գերիշխում պետության վրա:

Ժողովրդաիշխանությունը ողջ իշխանության պարկանելությունն է ժողովրդին, ինչպես նաեւ ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումը՝ իր ինքնիշխան կամքին եւ շահերին լրիվ համապատասխան, որովհետեւ ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը եւ փերը:

Ժողովրդի ինքնիշխանությունից բխում է, որ Նայաստանում իշխանության գերագույն կրողը ժողովուրդն է: Այսինքն՝ ժողովուրդը ոչ մեկի հետ չի կիսում իր իշխանությունը, իրականացնում է այն ինքնուրույն, անկախ այլ սոցիալական ուժերից, եւ օգտագործում է միայն իր սեփական շահերից ելնելով: Ժողովրդական ինքնիշխանությունն անբաժանելի է եւ ունի միայն մեկ սուբյեկտ՝ ժողովուրդը: Ոչ ոք, բացի ժողովրդից կամ առանց ժողովրդի համաձայնության, չի կարող հավակնել իշխանության Նայաստանի Նանրապետությունում: Չկա իշխանություն, որ չի բխում ժողովրդից:

Ժողովրդաիշխանության պայմաններում իշխանության իրականացումը հիմնագրվում, օրինականացվում (լեգիտիմացվում) եւ վերահսկվում է ժողովրդի կողմից, այսինքն՝ պետության քաղաքացիների: Ժողովրդաիշխանությունը հանդես է գալիս ժողովրդի ինքնորոշման եւ ինքնակառավարման ձեւերով, որին հավասար հիմքերով կարող են մասնակցել բոլոր քաղաքացիները: Ժողովրդաիշխանության սուբյեկտը ողջ ժողովուրդն է: Սակայն կախված ժողովրդաիշխանության իրականացման ձեւի յուրահատկություններից՝ «ժողովուրդ» հասկացության փակ նկարի է առնվում նաեւ ընտրողների (քաղաքացիների) զանգվածը:

Ժողովրդաիշխանությունը նշանակում է ժողովրդի գերակայություն որպես իշխանության աղբյուր եւ կրող, նրա իրավունքը՝ ինքնուրույն որոշել իր ճակատագիրը, հիմնադրել պետական իշխանության համակարգ, մասնակցել իր պետության քաղաքականության ձեւավորմանը, պետական մարմինների կազմավորմանը, վերահսկել պետության գործունեությունը: Ժողովրդի ինքնիշխանությունից կամ ժողովրդաիշխանությունից բխում են ժողովրդի հետեյալ հիմնական իրավունքները. 1) լինել գերագույն իշխանության աղբյուր եւ կրող պետության մեջ, 2) ձեւավորել իշխանության ներկայացուցչական մարմինները, 3) պարվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ Մահմանադրությամբ ամրագրված կարգավիճակ, 5) մասնակցել օրենսդրական գործունեությանը, պետության կառավարմանը եւ այլն:

2. Ժողովրդաիշխանությունն արտահայտվում, իր դերը եւ նշանակությունը կարարում է որոշակի ձեւերի եւ ինստիտուտների միջոցով, որոնք կազմում են ժողովրդա-

իշխանության համակարգը: Ժողովուրդը հասարակական և պետական գործերի լուծմանը մասնակցում է բազմազան ձևերով: Կախված ժողովրդի կամքի արտահայտման ձևից՝ արտբերվում են անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ձևերը:

Անմիջական կամ ուղղակի ժողովրդաիշխանության դեպքում ժողովուրդն իրեն պարկանող իշխանությունն իրականացնում է անմիջապես ինքը՝ ուղղակիորեն իր կամքն արտահայտելով: Այս դեպքում քաղաքական որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը (քաղաքացիները)՝ ըստ ձայների մեծամասնության:

Ժողովրդաիշխանության անմիջական ձևը ենթադրում է ժողովրդի ուղղակի կառավարում. ժողովուրդն ուղղակիորեն արտահայտում է իր կամքը պետական կամ հասարակական կյանքի այս կամ այն հարցի վերաբերյալ: Եթե ներկայացուցչական ժողովրդաիշխանության դեպքում որոշումներն ընդունում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, ապա ուղղակի ժողովրդաիշխանության ձևերի դեպքում որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը: Ժողովրդի կամքը՝ արտահայտված համապարասխան ձևերով, համարվում է հիմք պետության գործունեության համար: Ժողովրդաիշխանության այս ձևի սուբյեկտները քաղաքացիներն են, որոնք որոշումներն ընդունում են համապարասխան ինստիտուտների միջոցով:

Անմիջական ժողովրդաիշխանության նշանակությունն այն է, որ այն ժողովրդին հնարավորություն է տալիս համապարասխան լծակների միջոցով իր ձեռքում պահել իշխանության ղեկը, ուղղորդել և վերահսկել պետության գործունեությունը: Անմիջական ժողովրդաիշխանությունն իրականացվում է համապարասխան ձևերով, որոնք պետք է լինեն իրավականորեն ձեռակերպված, օրինականացված: Իրավական ամրագրումը ժողովրդաիշխանության երաշխիք է: Ժողովրդաիշխանության անմիջական ձևերն իրենց հերթին ժողովրդի իշխանության, նրա գերակայության ամենակարեւոր երաշխիքներն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունը կմնա ուրուպիս:

Անմիջական ժողովրդաիշխանության ձևերն են՝ հանրաքվեն, ընտրությունները, ժողովրդական նախաձեռնությունը, ընտրված ներկայացուցիչներին հետ կանչելը, ժողովրդական հարցումը, ժողովրդական քննարկումը, անհնազանդության իրավունքը: Սահմանադրությունը դրանցից ուղղակիորեն վկայակոչում է հանրաքվեն և ընտրությունները: Սակայն դա չի նշանակում, որ մնացած ձևերի իրավունքը ժողովուրդն ինքն իրեն չի վերապահել: Ժողովուրդն իրավագոր է կարարելու այն ամենը, ինչն ուղղակիորեն չի արգելված Սահմանադրությամբ: Ներելաբար, ժողովրդաիշխանության մնացած ձևերի ամրագրումն օրենքի խնդիրն է:

Հանրաքվեն ժողովրդաիշխանության բարձրագույն ձևն է: Հանրաքվեն պետական և հասարակական գործերի ժողովրդավարական կառավարման բարձրագույն, հիմնարար ձևն է, որի դեպքում քաղաքացիները, ուղղակիորեն արտահայտելով իրենց կամքը, քվեարկության միջոցով ընդունում են որոշումներ պետական, հասարակական և տեղական նշանակության կարեւոր հարցերով:

Հանրաքվեներն անցկացվում են քաղաքացիների կողմից այս կամ այն ակտի ընդունելու (չընդունելու) կամ պետական կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններին հավանություն տալու (չտալու) նպատակով: Համաժողովրդական հանրաքվեները կարող են իրականացվել էական նշանակություն ունեցող հարցերով, օրինակ՝ պետության արտաքին քաղաքականության որոշման, երկրի ներքին կյանքի և կառավարման կարարելագործման հարցերով: Հանրաքվեի դրվող հարցերի ձեռակերպումը չպետք է կրի կողմնորոշիչ բնույթ և սովորաբար

նախապեսում է հաստատվող («այո») կամ մերժող («ոչ») պատասխան:

Նանրաքվեները, ինչպես եւ ընտրությունները, անցկացվում են համընդհանուր, հավասար, ուղղակի եւ ազատ սկզբունքներով, գաղտնի քվեարկությամբ: Նանրաքվեի անցկացման նախաձեռնությունը կարող է ելնել ոչ միայն պետական մարմիններից (խորհրդարան, Նախագահ), այլ նաեւ ժողովրդից՝ քաղաքացիներից: Քանի որ հանրաքվեն ժողովրդաիշխանության բարձրագույն ձեւն է, ապա ինքը՝ ժողովուրդը պետք է ունենա իրավունք նախաձեռնել հանրաքվեի անցկացում:

Նանրաքվեներն ըստ առարկայի, այսինքն՝ համաժողովրդական քվեարկության դրված հարցերի, լինում են սահմանադրական (քվեարկվում են Սահմանադրության կամ սահմանադրական փոփոխությունների նախագծերը), օրենսդրական (քվեարկվում է օրինագիծ կամ գործող օրենքի փոփոխության նախագիծ), արտաքին կամ ներքին քաղաքական (քվեարկվում են արտաքին կամ ներքին քաղաքականության կարեւորագույն հարցերը):

Ըստ իրավական հետեւանքների՝ հանրաքվեները լինում են իմպերատիվ (արդյունքներն օժտված են բարձրագույն իրավական ուժով, չունեն հաստատման կարիք, պարտադիր են պետական մարմինների ու այլ իրավասուբյեկտների համար, նրանց գործունեության իրավական հիմքն են), խորհրդարկական (անցկացվում են պետական կյանքի սկզբունքային հարցերով հասարակական կարծիքի վերհանման նպատակով: Արդյունքները պարտադիր չեն, ունեն կողմնորոշիչ նշանակություն, հաշվի են առնվում պետության կողմից որոշումներ ընդունելիս):

Ըստ անցկացման փարածքի՝ հանրաքվեները լինում են համազգային (անցկացվում են ամբողջ երկրի մասշտաբով) եւ տեղական (անցկացվում են պետության որոշակի տարածքում, վարչական միավորման կամ բնակավայրի շրջանակում):

Ըստ անցկացման պարտադիրության՝ հանրաքվեները լինում են պարտադիր (Նայաստանում պարտադիր է, օրինակ, սահմանադրական հանրաքվեն, առանց դրա չի կարող ընդունվել կամ փոփոխվել Սահմանադրությունը), ոչ պարտադիր (անցկացումը հայեցողական է):

Ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունն անմիջական ժողովրդաիշխանության այն ձեւն է, որը որոշակի թվով ընտրողների ընձեռում է իրավունք ներկայացուցչական մարմնի (օրինակ՝ խորհրդարանի) քննարկմանը դնել օրենքի կամ այլ նորմատիվ ակտի նախագիծը: Ժողովրդաիշխանության այս ձեւն իրականացնելու համար նախ մշակվում է նախագիծը, հետո հավաքվում են ընտրողների սահմանված թվով ստորագրությունները, այնուհետեւ դրանք ներկայացվում են ներկայացուցչական մարմիններին: Դրանից հետո նախագիծը համապատասխան մարմնում անցնում է օրենքով սահմանված ընթացակարգը: Ժողովրդաիշխանության այս ձեւը չի նախատեսված ՏՏ օրենսդրությամբ:

Ժողովրդական հարցումը հանրաքվեի փարատեսակներից է, որն անվանում են խորհրդարկական: Այսինքն՝ անցկացվում է քաղաքացիների խորհրդարկական հարցում, որի նպատակն է վեր հանել հասարակական կարծիքը պետական եւ հասարակական կյանքի սկզբունքային հարցերի վերաբերյալ: Նարցման արդյունքները պարտադիր չեն համապատասխան մարմինների համար, ունեն խորհրդարկական նշանակություն: Օրինակ, համաձայն Սահմանադրության 110-րդ հոդվածի՝ մինչեւ համայնքների միացման կամ առանձնացման օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Նամայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեներ:

րի արդյունքից:

2008թ. դեկտեմբերին «Նանրաքվեի մասին» ՆՏ օրենքում կատարված փոփոխության արդյունքում օրենքի 1-ին հոդվածը լրացվեց նոր դրույթով, համաձայն որի՝ հանրաքվեն ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է նաև պետական կյանքի կարեւորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակով:

Այդպիսով՝ նման հանրաքվեի արդյունքներն ունեն ոչ թե իմպերատիվ, այլ խորհրդարարական նշանակություն: Դրանք քննարկվում եւ հաշվի են առնվում համապատասխան պետական մարմինների կողմից որոշումներ ընդունելիս:

Նամաժողովրդական քննարկումը բնակչության կարծիքների, տեսակետների, առաջարկությունների վերհանման եղանակ է: Անցկացվում է քարաբնույթ հարցերի շուրջ, այդ թվում՝ որեւէ օրենքի նախագծի կապակցությամբ: Որպես կանոն, մինչեւ նախագծի (հարկապես այն Սահմանադրության, որը չի ընդունվում հանրաքվեի միջոցով) ընդունումն այն հրապարակվում է համաժողովրդական քննարկման համար: Քննարկման կարգը մանրագնին չի կարգավորված: Սովորաբար անցկացվում է ԶԼՄ-ներում, քաղաքացիների եւ հասարակական կազմակերպությունների ժողովներում: Քննարկման արդյունքները, առաջարկություններն ուղարկվում են համապատասխան մարմիններին: Դրանք ունեն խորհրդարարական բնույթ, պարտադիր չեն պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար:

Ընտրված անձին հետ կանչելը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտրողների կողմից ընտրված անձինք՝ խորհրդարանի պատգամավորները, տեղական ինքնակառավարման մարմինների անդամները, չեն արդարացնում իրենց ընտրողների վարահայտությունը, չեն կատարում նրանց պարտավորանքները, դրսևտորում են անբարոյական արարքներ: Այս դեպքերի համար մի շարք երկրների օրենքներ սահմանում են ընտրողների հնարավորությունը՝ վաղաժամկետ հետ կանչելու ընտրվածներին, եթե նրանք ընտրվել են մեծամասնական համակարգով, որեւէ ընտրափարածքից²:

Ընտրությունները ժողովրդի իշխանության արտահայտման այն անմիջական բարձրագույն ձեւն են, որի միջոցով ժողովուրդն ուղղակիորեն մասնակցում է պետության կառավարմանը՝ ձեւավորելով Ազգային ժողովը, ընտրելով Նանրապետության Նախագահին եւ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության կազմավորման գործում շար կարեւոր է ընտրությունների միջոցով արտահայտված ժողովրդի կամքը: Այդ պարճառով ընտրությունները համարվում են պետական եւ հասարակական կյան-

² Արդի եվրոպական իրավական զարգացումները մերժում են հրամայական մանդատի ինստիտուտը եւ նախապատվությունը տալիս են ազատ մանդատի ինստիտուտին: Վերլուծելով հիմնահարցի վերաբերյալ միջազգային սահմանադրական պրակտիկան եւ եվրոպական սահմանադրական զարգացումների հիմնական միտումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30 հունիսի 2009թ. ՍԴՈ- 810 որոշման մեջ արձանագրում է, որ հրամայական մանդատն անհարիր է ժողովրդավարական իրավական համակարգերին: Այն խորթ լինելով եվրոպական ժողովրդավարություններին՝ արգելվում է մի շարք երկրների սահմանադրական նորմերով (Անդորրա, հոդվ. 53, Բուլղարիա, հոդվ. 67, Գերմանիա, հոդվ. 38, Իսպանիա, հոդվ. 67, Իտալիա, հոդվ. 67, Լիտվա, հոդվ. 59, Խորվաթիա, հոդվ. 74, Հայաստան, հոդվ. 66, Մոլդովա, հոդվ. 68, Չեխիա, հոդվ. 26, Ռումինիա, հոդվ. 66 եւ այլն):

Ներկայացուցչական ազատ մանդատի անհրաժեշտության գաղափարն ազատական ժողովրդավարական իրավական համակարգերում արմատավորվեց աստիճանաբար եւ դարձավ կարեւոր երաշխիք երկրում սահմանադրական ժողովրդավարություն հաստատելու համար, որտեղ իշխանության լեգիտիմության աղբյուրը ժողովուրդն է: Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրազանգվածի կամքի նկատմամբ:

քի ժողովրդավարականության արտահայտությունը: Ազատ եւ արդար ընտրություններն իրական ժողովրդավարության պարտադիր հատկությունն են եւ ապահովում են քաղաքացիների մշտական ու ակտիվ մասնակցությունը հասարակության կարեւորագույն հարցերի լուծմանը:

Ընտրություններն ունեն մեծ քաղաքական եւ իրավական նշանակություն: Ընտրությունները սահմանադրական կարգերի հիմնարար ինստիտուտներից են: Իրավական իմաստով ընտրությունները ժողովրդի (ընտրողների) կողմից իրեն պատկանող իշխանությունն իրականացնելու իրավունքն իր ներկայացուցիչներին՝ Նախագահին, պարզամտավորներին, փեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու ձեւ է: Ընտրությունները ներկայացուցչական մարմինների ձեւավորման ժողովրդավարական ձեւ են եւ թույլ են տալիս քաղաքակիրթ կերպով, առանց ցնցումների եւ հեղափոխության պայքարել իշխանության համար, օրինական ճանապարհով փոխել կառավարողներին, բարենորոգել իշխանությունը:

Արդի աշխարհում ընտրությունները կարգավորվում, կազմակերպվում եւ անցկացվում են համընդհանուր ճանաչում գրած սկզբունքներին համապատասխան: Դրանցից Մասնանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասը շեշտադրել է ընտրությունների ազատության սկզբունքը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող ազատ է կատարել ինքնուրույն ընտրություն ելնելով թեկնածուների անձից, իր համակրանքից կամ հակակրանքից, իր քաղաքական եւ փնտեսական շահերից: Ողջ ընտրական կառուցակարգն ուղղված է ընտրությունների ազատության ապահովմանը: Մասնակցությունն ընտրություններին կամավոր է: Ոչ ոք իրավունք չունի ընտրողին պարտադրելու կամ արգելելու մասնակցել ընտրություններին: Ինքը՝ ընտրողն է ընդունում այդ որոշումը՝ որպես իր քաղաքացիական դիրքորոշման արտահայտություն: Ընտրություններին չմասնակցելը եւս քաղաքական դիրքորոշում է: Պետությունը խթանում է, որպեսզի բոլոր փեսակի ընտրություններն անցկացվեն մրցակցության եւ այլընտրանքի սկզբունքներով: Առանց մրցակցության ազատ ընտրություններն իմաստազրկվում են:

Ընտրությունները պարտադիր են ու պարբերական: Մասնանադրությամբ սահմանված բոլոր փեսակի ընտրությունները պարտադիր են եւ պետք է անցկացվեն համապատասխան պարբերականությամբ: Դա իշխանության օրինականության երաշխիք է եւ միաժամանակ արգելք իշխանության յուրացման համար: Ընտրությունների պարբերականությունը ներկայացուցչական մարմինների պարբերական նորացման միջոց է, ժողովրդի փրամադրությունների եւ փեսակետների հաշվառման երաշխիք:

Ճնշմանը եւ բռնապետությանը դիմադրելը ժողովրդին պատկանող իրավունքն է, որ կարող է արտահայտվել իշխանությունների ապօրինի ակտերին եւ գործողություններին դիմադրելով: Դիմադրության արդի եւ նպատակահարմար ձեւը քաղաքացիական անհնազանդությունն է:

Քաղաքացիական անհնազանդությունը դիմադրության ոչ բռնի, խաղաղ եղանակն է, երբ ժողովուրդը դեմ է արտահայտվում իշխանությունների քաղաքականությանը հանրային հավաքների, ճանապարհների շրջափակման, քարոզչական թերթիկների փարածման, գործադուլների անցկացման, իշխանությունների հետ համագործակցելուց հրաժարվելու միջոցով:

Իշխանության կողմը՝ ժողովուրդը, չի կարող բոլոր հասարակական հիմնախնդիրները քննարկել եւ լուծել ինքն անմիջապես, քանի որ դա արդի պայմաններում օբյեկտիվորեն անհնարին է: Այդ իսկ պատճառով առաջ է գալիս ներկայացուցչական ժողովրդաիշխանության անհրաժեշտությունը: Եթե անմիջականի դեպքում իշխանության կողմն

ինքն է իրականացնում իր իշխանությունը, ապա ներկայացուցչականի դեպքում ժողովուրդն ընդամենն իշխանության աղբյուրն է: Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը ժողովրդի իշխանության իրականացումն է Սահմանադրությամբ նախատեսված պետական կառավարման (խորհրդարանի) և փեդական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանի և ղեկավար), պաշտոնապար անձանց (ընտրովի Նախագահ) միջոցով:

Ժողովուրդն այս դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմիններն արտահայտում են ժողովրդի կամքը և շահերը:

Ներկայացուցչական մարմինների, պաշտոնապար անձանց ու ժողովրդի միջև հարաբերությունները կառուցվում են լիազորությունների և վստահության վրա և սահմանվում են Սահմանադրությամբ: Սահմանադրությունն ամրագրում է այն լիազորությունների շրջանակը, որոնք ժողովուրդը հանձնում է իր ընտրյալներին և որոշում է պարասխանաբարության չափը նրանց կողմից կայացված որոշումների համար:

Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը պարասխանաբար և ձեռնահաս կառավարում է: Մի կողմից՝ կառավարմամբ զբաղվում են հարուկ պարասարված մարդիկ, իսկ, մյուս կողմից՝ նրանց գործունեությունն արդյունավետ է այնքանով, որքանով որ այն հենվում է ժողովրդի մեծամասնության վրա: Այդպիսով՝ ժողովուրդը որպես ընտրող, որոշում է նպատակը, իսկ նրա կողմից ընտրված արհեստավարժ ներկայացուցչական մարմինը կամ պաշտոնապար անձը որոշում է նպատակին հասնելու ամենից հարմար միջոցները, կենսագործում նպատակը: Ներկայացուցչական կառավարման կարեւորագույն գիծը ընտրովիությունն ու ժամկետայնությունն են: Այսինքն՝ պետական կառավարման և փեդական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են, ընդ որում, ոչ թե ցմահ, այլ որոշակի ժամկետով:

Ներկայացուցչական մարմինները հաշվետու են ժողովրդի, ընտրողների առջև: Ամենից առաջ դա դրսևտրվում է այն բանում, որ ընտրությունները պարբերական են. դա նշանակում է, որ ընտրովիները պարբերաբար հաշվետու են իրենց ընտրողների առջև:

Ներկայացուցչական մարմինների առջև պարասխանաբար են գործադիր մարմիններն ու պաշտոնապար անձինք: Ներկայացուցչական ժողովրդավարությունը ժողովրդի իշխանության իրականացումն է ընտրովի մարմինների միջոցով (խորհրդարան, Նախագահ, փեդական ինքնակառավարման մարմիններ): Ընտրովի մարմինները, որպես կանոն, ունենում են կենսական կարեւոր նշանակության խնդիրների լուծման իրավունք: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնապար անձինք ածանցված են ներկայացուցչական մարմիններից: Ներկայացուցչական մարմինների գործառնությունների մեջ կարեւոր փեդ է զբաղեցնում վերահսկողությունը գործադիր իշխանության մարմինների նկատմամբ: Օրինակ՝ Նայասարանում և՛ Ազգային ժողովը, և՛ Նանրապետության Նախագահն ունեն ազդեցության լուրջ լծակներ, որոնցով ազդում են գործադիր իշխանության մարմինների՝ կառավարության վրա:

Ժողովրդի կամքով ձեւավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ, ժողովրդին հաշվետու, նրա առաջ պարասխանաբար: Այդպիսով ժողովրդաիշխանության սահմանադրական սկզբունքից բխում է հասարակության և անհարի առաջ պետության պարասխանաբարության սկզբունքը: Այդ սկզբունքի ուժով պետական իշխանության մարմինները, նրանց պաշտոնապար անձինք, լինելով հանրային իշխանության կողմեր, հանրային պարասխանաբարություն են կրում ժողովրդի, բնակչության,

կոնկրետ անհարի առջև: Ուստի, բացի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների սահմանումից, օրենսդրությունը պետք է հստակ սահմանի նաև հանրային մարմինների և պաշտոնատար անձանց պարասխանաբարությունն իրենց լիազորությունների չկատարման համար: Այդպիսի պարասխանաբարությունը հանրային-իրավական պարասխանաբարություն է, որը ներառում է սահմանադրական, քրեական, վարչական, քաղաքացիական, նյութական պարասխանաբարության տեսակները:

Ըստ պարասխանաբարության հիմքերի՝ հանրային-իրավական պարասխանաբարության միջոցները կարելի է բաժանել երկու խմբի. պարասխանաբարության միջոցներ օրենսդրության խախտման համար և պարասխանաբարության միջոցներ, որոնք վրա են հասնում իշխանության սուբյեկտի կողմից իր վրա դրված գործառնությունը պարզաձև չկատարելու համար: Օրինակ՝ սահմանադրական պարասխանաբարությունը վրա է հասնում սահմանադրական նորմերի կամ սահմանադրական իրավունքի այլ աղբյուրների խախտման համար, ի դեմս այն անբարենպաստ հետեւանքների, որոնք ամրագրված են Մահմանադրությամբ և այլ օրենքներով, եթե Մահմանադրությունը վկայակոչում է դրանք: Այսպես կառավարությունը պարասխանաբարություն է կրում Նանրապետության Նախագահի առջև, օրինակ՝ նոր ընտրված Նախագահի առջև կառավարությունը վայր է դնում իր լիազորությունները և այլն:

3. Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհարի կողմից հանցագործություն է: Իշխանությունը պարկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջապես, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Իշխանության գալու միակ օրինական և հնարավոր ձևն ազատ և արդար ընտրություններն են՝ որպես ժողովրդի կամքի իսկական և միակ դրսևորում: Այլ կերպ իշխանության նվաճումը և յուրացումը որևէ կազմակերպության կամ անհարի կողմից համարվում է հանցագործություն: Ժողովուրդն իրավունք ունի ցուցաբերել քաղաքացիական անհնազանդություն բռնապիրական, ոչ օրինական իշխանության դեմ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ամփոփել, որ ժողովրդաիշխանությունը ենթադրում է, որ գործ ունենք իշխանության միակ փիրոջ, այդ իշխանության աղբյուրի ու ամբողջությամբ կրողի հետ: Մահմանադրական դասական ձեւակերպումը չի սահմանափակվում միայն նշելով, որ «իշխանությունը պարկանում է ժողովրդին ու դրա յուրացումը որևէ կազմակերպության կամ անհարի կողմից հանցագործություն է»: Բազմաթիվ ժողովրդավարական երկրների սահմանադրություններում հարկապես շեշտվում է, որ «իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է», «ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է հանրաքվեների, անմիջական ժողովրդավարության այլ ձևերի ու իր ներկայացուցիչների միջոցով»: Նամենարական սահմանադրական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական նորմ-սկզբունքների մակարդակում ժողովրդաիշխանությունն

- ամենից առաջ ենթադրում է, որ.
- ժողովրդին է պարկանում ամբողջ իշխանությունը,
- իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է,
- ժողովրդի ինքնիշխանությունն անօտարելի է,
- ժողովուրդը կարող է իր իշխանությունն իրականացնել ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր ներկայացուցիչների միջոցով,
- ոչ ոք ժողովրդից նրա իշխանությունը իսկ կամ այն սահմանափակել չի կարող, դա համարվում է ծանրագույն հանցագործություն,

• պեղական իշխանությունը ժողովրդաիշխանության դրսևտրման ձևերից մեկն է, որը նույնպես ժողովուրդն իրականացնում է անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով:

Սահմանադրություններում հսրակ սահմանազարելով «ժողովրդի իշխանությունը» «պեղական իշխանությունից»՝ հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պեղական իշխանությունն անցվում է ժողովրդաիշխանությունից եւ այն իրականացվում է իշխանությունների րարանջարման սկզբունքի հիման վրա: Ժողովրդի իշխանությունը պեղական իշխանությամբ չի կարող սահմանափակվել: Պեղական իշխանությունը նույնպես պարվիրակվում է ժողովրդի կողմից եւ իրացվում է հասարակական համաձայնության առարկա հանդիսացող սահմանադրական սկզբունքների ու նորմերի հիման վրա: Իր հերթին, անմիջական ժողովրդավարության հիմնական ձևեր են դիրարկվում հանրաքվեն եւ ընրությունները: Միաժամանակ, սահմանադրական արդարադարության միջազգային պրակրիկան վկայում է, որ հանրաքվեն եւ ընրություններն անմիջական ժողովրդավարության երկու րարբեր ձևեր են ու չեն կարող միմյանց հակադրվել: Դրանցից մեկը չի կարող խոչընդորել մյուսին: Ժողովուրդն է այդ ձևերի միջեւ ընրություն կարարում: Սակայն, եթե այդ ընրության արդյունքում խորացող անվարահությունն է գերակայում, այդ ձևերը միմյանց փոխրացման ու հիմնավորման հնարավորություն են ընձեռում՝ հարկապես հասարակական հարցումների ու Փակուրարիվ հանրաքվենների միջոցով:

ՀՈԳՎԱԾ 3

1. Մարդը, նրա արժանապարվությունը, հիմնական իրավունքները եւ ազարությունները բարձրագույն արժեքներ են:

2. Պեղությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազարությունների պաշրպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապարասիան:

3. Պեղությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազարություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

1. Սահմանադրության այս հողվածն առանցքային նշանակություն ունի սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության եւ մեթողաբանության րեսանկյունից: Հարյուրամյակներ պահանջվեց, որպեսզի մարդկությունը հանգի այն ճշմարտությանը, որ հանրային կյանքում բացի իրավական ձևից՝ չկա եւ սկզբունքորեն չի կարող լինել հավասարության, ազարության ու արդարության արահայրության եւ կեցության որեւէ այլ ձև: Բակ վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք եւ պոզիիվ իրավունքի հիմք:

Ինչպես դիպուկ բանաձևված է Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին 1789թ. Փրանսիական հոչակագրի հողված 2-ում՝ «Յուրաքանչյուր քաղաքական միության նպարակը մարդու բնական ու անօրարելի իրավունքների պաշրպանությունն է»:
Վերջինս ցանկացած Սահմանադրության հիմնական բովանդակությունն ու պեղական

համակարգի գերխնդիրն է: Գործնական կյանքում դրա ապահովման համար անհրաժեշտ է, ամենից առաջ, մեթոդաբանական հստակ մտքեցում «իրավունք» հասկացության, ինչպես նաև մարդու բնական իրավունքների առաջնայնության ըմբռնման հարցերում:

Մինչև 2005թ. բարեփոխումները ՀՀ Սահմանադրությունը կառուցված էր մեթոդաբանական այլ մտքեցման վրա, համաձայն որի՝ իրավակարգավորման հիմքում դրվում էր օրենքի գերակայության սկզբունքը (տե՛ս նաև 1-ին հոդվածի մեկնաբանությունները):

Հայաստանի միջազգային ինտերգրման գործընթացները վկայեցին, որ անհրաժեշտ է հրաժարվել խորհրդային ձեռախեղված լեգիսպրապոզիտիվիստական իրավամտաբանությունից և առավել խորությամբ հաշվի առնել այն հիմնարար արժեքները, որոնք, հստակապես մարդու իրավունքների բնագավառում, ներկայումս դրվում են ժողովրդավարական երկրների ներպետական ու միջպետական իրավահարաբերությունների հիմքում:

ՀՀ Սահմանադրության մեջ անհրաժեշտ էր հստակ վերաբերմունք մարդու արժանապատվության, նրա իրավունքների՝ որպես բարձրագույն արժեք ճանաչելու նկատմամբ:

Պետությունը՝ իր երեք իշխանություններով հանդերձ, ինչպես նաև պեղական ինքնակառավարումը հանդես են գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների իրականացման մեխանիզմ: Ուստի սահմանադրական բարեփոխումների գլխավոր ուղղությունը դիվիդեո մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ միջազգային իրավունքի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից ելնելով:

Երկերային համարվեց այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ մարդու բնական և անօտարելի իրավունքները և ազատությունները պետության կողմից պետք է ճանաչվեն որպես բարձրագույն արժեք, երաշխավորված ձեռով պաշտպանվեն, նախանշեն պետության ու ժողովրդի կողմից իշխանության իրականացման բնույթն ու սահմանները՝ իրենց հիմքում ունենալով մարդու արժանապատվության սահմանադրական երաշխիքների ամրագրման անհրաժեշտությունը (տե՛ս նաև 14-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հռչակեն մարդու սահմանադրական իրավունքը, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համարժեք, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով:

Հոդված 3-ում ձեռակերպված սկզբունքներն իրենց ապահովումն են գտնում մի շարք սահմանադրական դրույթներում, օրինակ՝ Սահմանադրության անմիջականորեն գործելու մասին, իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության մասին, քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումների դեպքերում օրենքների սահմանադրականության ստուգման մասին:

Ինչպիսի իրավափոխությունների փոփոխական բնույթագրում էլ փանք «իրավունք» հասկացու-

թայնը, այն, իրապես, **սոցիալական երեւոյթ է,³ ունի բնական հիմք եւ բանական էակի սոցիալական էութեան ինքնադրսեւորման պայմանն ու միջոցն է:** Մարդը, որպէս սոցիալ-մշակութային էակ, հասարակական հարաբերությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով: Ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք սահմանափակում է միայն ու միայն այն չափով, որչափով դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար: Այդ իրավունքները համընդհանուր են, ունեն պաշտպանության ոչ միայն ներպետական, այլև միջազգային երաշխիքներ:

Սահմանադրությունն ամրագրելով մեթոդաբանական որոշակի դիրքորոշում մարդու իրավունքների ճանաչման ու պաշտպանության նկատմամբ, կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութականացման բնույթը, կառուցակարգային ապահովումը եւ համակարգային երաշխավորումը: Սահմանադրությունն ինքը չպետք է իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական ու լիարժեք գործադրման արգելակ դառնա: Իսկ օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության եւ սեփականության պաշտպանը, նրա իրավունքների իրացման երաշխավորն այն դեպքում, երբ իրավական է, իր հիմքում ունի իրավունքի գերակայության սկզբունքը:

Սահմանադրական հիմնական պահանջը մարդու բնական ու անօտարելի իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի ճանաչումն ու ամրագրումն է: Եթե չկա այդ ճանաչումը, ապա անխուսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ Սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կղնի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ մարդկանց ազատությունների վրա՝ դրանով իսկ ամրագրելով բռնապետության սկզբունքներ:

Նման պարագայում պետությունը նույնպես ակամայից հանդես կգա ոչ թե որպէս հասարակության ընդհանրական պահանջներից թելադրված կարգավորիչ միջոց, այլ որպէս վերացական ինքնավերարտադրվող անհրաժեշտություն, որն սկսում է գործել ինքնապահպանության ու ազդեցության անկաշկանդ ուժեղացման փրամաբանությամբ⁴: Դա կհանգեցնի նրան, որ օրենքը պարզապէս կդառնա իրավունքի բռնադատման գործիք: Իսկ ժողովրդավարական հասարակությունում օրենքը պետք է ազատության երաշխավորը լինի, այլ ոչ թե դրա սահմանափակման ու բռնադատման:

Այս հարցն ավելի հրապարակ ու սուր է դրված մայրցամաքային իրավական համակարգերում: Անգլո-սաքսոնական նախադեպային համակարգերում արդարադատական նախադեպն է ընկած իրավունքի նյութականացման հիմքում, մայրցամաքային համակարգերում՝ քաղաքական փոխհամաձայնությամբ ամրագրված պոզիտիվ իրավունքը: Նման պարագայում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հստակությունը, ամբողջականությունը, ներքին համակարգվածությունը ձեռք են բերում բացառիկ կարևոր նշանակություն:

Նարյուրից ավելի երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում կամ սահմանադրական նորմերի բնույթ ունեցող՝ մարդու իրավունքների հռչակագրերում ամրագրվում է հայեցակարգային հստակ մոտեցում մարդու իրավունքների նկատմամբ, իսկ 65-ից ավելի երկրների սահմանադրություններում որոշակիացված է նաև մոտեցումն անձի արժա-

³ Алексеев С. С. Философия права. М., 1999. С. 2.

⁴ Պետությունը չի կարող ստեղծվել մի քանի անհատի երջանիկ դարձնելու համար: Նրա նպատակը հասարակությանը երջանիկ դարձնելն է (Платон. Государство. Собр. соч. т. 3. М., 1994, с. 189):

նապատվության սահմանադրական սկզբունքի նկատմամբ: Վերջինիս նվիրված է մեկ կամ ավելի հոդված, շեշտվում է անձի արժանապատվության անձեռնմխելիությունը՝ որպես անբակտերի իրավունք, անօտարելիությունը, հարգման եւ պաշտպանման՝ պետության պարտավորությունը, ինչպես նաեւ առնչությունները մարդու իրավունքների ու ազատությունների հետ: Օրինակ, Գերմանիայի Դաշնության Մասնանադրության առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու անձեռնմխելի ու անօտարելի իրավունքները՝ որպես ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մոտեցումը՝ ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Նման մոտեցումը, թերեւս, դասական, ամբողջական, հետետղական ու օրինակելի մոտեցում է: Նմանօրինակ մոտեցում է արտացոլված նաեւ Ռուսաստանի Դաշնության Մասնանադրության 2, 18 եւ 21-րդ, Իսպանիայի՝ 10-րդ, Չեխիայի՝ 1-3-րդ, Վրաստանի՝ 7-րդ, Ուկրաինայի՝ 8-րդ, Լեհաստանի՝ 30-րդ, Ռումինիայի՝ 1-ին, Սլովենիայի՝ 15-րդ, Պորտուգալիայի՝ 1-ին, 18-րդ հոդվածներում:

ՆՏ սահմանադրական բարեփոխումների արդյունքում հարկ է առանձնացնել մեթոդաբանական նշանակության հետեյալ շեշտադրումները.

- երկիրը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները,
- այն ընդունում է որպես բարձրագույն ու անօտարելի արժեք,
- այդ իրավունքներն ու ազատությունները պետության համար իշխանության իրականացման սահմանափակիչներն են:

Այնհայտ է, որ **ոչ թե իշխանությամբ իրավունքն է սահմանափակվում, այլ իրավունքով իշխանությունը**: Առաջին հերթին հենց սա է իրավունքի գերակայության երաշխավորման իմաստը: Այն սահմանադրությունները, որոնք նման որոշակիությամբ մեթոդաբանական այս մոտեցումը չեն որդեգրել, թերի են ու էապես անկատար:

2. Մասնանադրական բարեփոխումների ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց այն հանգամանքին, որ ՆՏ Մասնանադրության մեջ ամեն մի առանձին իրավունքի սահմանափակման խնդրին կոնկրետ մոտեցում չի դրսևորվում, եւ այդ հիմնահարցը համակարգված լուծում է ստանում 43 եւ 44-րդ հոդվածներում: Նաշվի առնելով այս հանգամանքը եւ նպատակ ունենալով սահմանադրական երաշխիքներ ստեղծել մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության բնագավառում ՆՏ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման համար, սահմանվեց, որ պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ նորմերն ու սկզբունքներն ամրագրված են փարբեր միջազգային փաստաթղթերում, որոնք Նայաստանի Նանրապետության կողմից վավերացվելով՝ նաեւ ՆՏ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ասվում է. «...մարդկային ընդհանրի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը եւ հավասար ու անօտարելի իրավունքները ազատության, արդարության ու աշխարհի խաղաղության հիմքն են»: Ավելացվում է նաեւ՝ «...անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները»: Նույն Հռչակագրի մասնավորապես 1, 6, 8, 29-րդ հոդվածները

ոչ միայն հստակ ամրագրում են մարդու բնական իրավունքների անօտարելիության, նրա ազատության ու իրավահավասարության սկզբունքները, այլև՝ հասարակության հանդեպ ունեցած պարտականությունները եւ իրավասուբյեկտի կարգավիճակը: Իսկ հոդված 8-ը միանշանակ սահմանում է մարդու արդարադատության իրավունքը՝ լիազոր դատարանների միջոցով վերականգնելու Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված՝ իր խախտված իրավունքները:

Մեթոդաբանական նույն մոտեցումն արտացոլված է նաեւ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, որի նախաբանում նույնպես փաստվում է հավասարամոթյունը մարդու հիմնական իրավունքների, նրա արժանապատվության հանդեպ: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (16.12.1966թ.) նույնպես ամրագրված է, որ մարդու արժանապատվության ու հավասար եւ անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքն է, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին բնորոշ արժանապատվությունից: Նույն Դաշնագրի հոդված 16-ը սահմանում է մարդու իրավասուբյեկտության սկզբունքը: Դաշնագիրը, ելնելով այն հիմնադրույթից, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական եւ քաղաքական ազատությունից օգտվող ու վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, այնպես էլ փոքրամասնական, սոցիալական ու մշակութային իրավունքներից», նախատեսում է նաեւ օրենքով այդ իրավունքների հնարավոր սահմանափակման թույլատրելի սահմանները:

Նայաստարանն անդամակցելով Եվրախորհրդին՝ միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»:

Անհրաժեշտ է հստակ առանձնացնել նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (4.11.1950թ.), որի նախաբանում ոչ միայն ամրագրված են վերոհիշյալ դրույթները, այլև շեշտադրված են այնպիսի հասկացություններ ու ձեւակերպումներ, ինչպիսիք են՝ «մարդու իրավունքների համընդհանուր եւ արդյունավետ ճանաչում», «մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավորապես պայմանավորված է... համակարգի իրական ժողովրդավարական բնույթով», «ազատությունների հարգում եւ իրավունքի գերակայություն»⁵ եւ այլն: Նարկապես ուշադրության է արժանի վերջին ձեւակերպումը: Այն օգտագործվում է Կոնվենցիայի նախաբանում՝ որպես եվրոպական երկրների քաղաքական ավանդույթների ու իդեալների, միասնական արժեքակալման արտահայտություն: Այս Կոնվենցիան առանձնահատուկ է նաեւ նրանով, որ վերջինիս նորմերն ուղղակի գործողության նորմեր են եւ պաշտպանվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ Կոնվենցիան սահմանում է նաեւ դրանց սահմանափակման եւ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղման թույլատրելի սահմանները: Ընդ որում, այդ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով, լինեն համաչափ, չափավոր եւ իրավունքի էությունը: Կոնվենցիայի պահանջն

⁵ Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., 1998. С. 34.

է նաեւ՝ սահմանազարել հիմնական իրավունքները սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքներից՝ յուրաքանչյուրի նկատմամբ դրսևորելով միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով սահմանված համապատասխան մոտեցում: Կոնվենցիան ու դրան կից արձանագրությունները բովանդակում են մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ այնպիսի նորմեր, որոնց ուղղակի գործողությունը պետք է երաշխավորված լինի Եվրախորհրդի անդամ յուրաքանչյուր երկրում: Ներելաբար, այդ նորմերը պետք է լիարժեք խորությամբ ու հստակությամբ սահմանադրական ամրագրում ու պաշտպանվածություն ունենան:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև Փարիզի խարտիան նոր Եվրոպայի համար (21.11.1990թ.): Աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական նոր գործընթացներն անհրաժեշտություն դարձրին Փարիզի խարտիայում միջազգային իրավանորմերի մակարդակով ամրագրել, որ «...Մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները ի ծնե պատկանում են բոլոր մարդկանց, դրանք անօտարելի են եւ երաշխավորվում են օրենքով», «Դրանք պաշտպանելը եւ դրանց աջակցումը կառավարությունների առաջնային պարտականությունն է», «Դրանց հարգումը էական երաշխիք է՝ ի հակակշիռ մեծ իշխանություն ունեցող պետության», «Դրանց պահպանումը եւ լրիվությամբ իրականացումը ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է»:

Ավելացնենք նաև, որ Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին 1789թ. ֆրանսիական հռչակագրում շար դիպուկ է բնորոշված՝ «...մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների եւ կառավարությունների այլասերման»⁶:

Բերված բոլոր օրինակները եւ միջազգային սահմանադրական պրակտիկան միարժեք վկայում են, որ Սահմանադրության գերակայության ապահովման հիմնահարցը, վերջին հաշվով, հանգում է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությանը՝ քաղաքացու պարանջարված իշխանությունների ներդաշնակ գործակցության ապահովման ճանապարհով: Եվ քանի որ այդ իրավունքները «... անմիջականորեն գործող իրավունքներ» են, դրանց պաշտպանության գլխավոր երաշխիքներն են սահմանադրորեն մեթոդաբանական ճիշտ մոտեցմամբ ամրագրումը եւ կենսունակ արդարադատական համակարգը: Մասնավորապես, եվրոպական երկրների վերջին տասնամյակների փորձն անառարկելիորեն վկայում է, որ մարդու իրավունքների պաշտպանությունն առավելապես երաշխավորված է, եթե մարդն իր խախտված իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունք ունի: Այսինքն՝ արդարադատության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքն է դառնում⁷: Սակայն նման ձեւակերպումն անկարար ու թերի է, եթե խարսխվում է մարդու իրավունքների հայեցական ըմբռնման վրա: Բանն այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքները, եթե նույնիսկ դրանք ամբողջական արտացոլում չեն գրել Սահմանադրության մեջ, չեն կարող նրանից օտարվելով՝ դառնալ պետական կառավարման գործառույթ: Եթե այդ իրավունքները ճանաչվում եւ ամրագրվում են Սահմանադրության մեջ, եթե Սահմանադրությամբ են որոշարկվում դրանց սահմանափակման շրջանակները, եւ եթե այդ իրավունքները կարող են նաև ուրանահարվել ոչ միայն քաղաքացու գործողությունների ու անգործության, այլև «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող» օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով, ապա այդ իրավունքների պաշտպանումը:

⁶ Միջազգային բոլոր փաստաթղթերն ուսումնասիրվել են համակարգչային «Որոնում» ծրագրի օգնությամբ:

⁷ Արդարադատությունը՝ իրավունքն է գործողության մեջ, իրականացման գործընթացում — Алексеев С. С. Право: азбука-теория- философия: Опыт комплексного исследования. М., 1999. С. 50.

պանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ մարդն օժտված է նաև սահմանադրական արդարադատության իրավունքով:

Ընդհանրացնելով, կարող ենք արձանագրել, որ եվրոպական ժողովրդավարական գործընթացները դեռևս XX դարասկզբին նախադրյալներ ստեղծեցին ազատական փոփոխության հարաբերությունների ծավալման հետ մեկտեղ որդեգրելու իրավահասկացողության ազատական-իրավաբանական փուլը⁸: Վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք եւ պոզիտիվ իրավունքի հիմք⁹: Ժողովրդավարական զարգացումների անխուսափելի փրամաբանությունն էր, որ եվրոպական իրավական համակարգում իրավունքի գերակայության երաշխավորումը դարձավ անկյունաքարային արժեք: Նման մոտեցումը նոր որակ հաղորդեց նաև միջազգային հարաբերությունների հետագա ծավալմանը՝ դրանց հիմքում դնելով արժեքային հստակ կողմնորոշիչ: Իր հերթին, սահմանադրական մշակույթի արժեհամակարգային հենքը դարձան մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը, արժեքներ, որոնք բնորոշ են անխտրականության, բազմակարծության, հանդուրժողականության, արդարադատության եւ համերաշխության սկզբունքների վրա կառուցված հասարակությանը, եւ որոնք դրվեցին եվրոպական սահմանադրական զարգացումների հիմքում¹⁰:

3. Եվրոպական սահմանադրական զարգացումների նոր որակ արձանագրվեց անցած դարի կեսերին, երբ սահմանադրորեն ամրագրվեց ոչ միայն մարդու բնական իրավունքների ճանաչումը որպես բարձրագույն արժեք, այլև այդ իրավունքները համարվեցին անմիջական գործող իրավունքներ: Ինչպես նշվեց, Գերմանիայի Դաշնության Նիմնական օրենքն առաջինն էր, որ 1949թ. 1-ին հոդվածում սահմանեց. «... ներկայացվող հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝ **որպես անմիջականորեն գործող իրավունք**»: Այս դրույթի հետագա զարգացումն ընթացավ այն ուղղությամբ, որ մի շարք երկրների սահմանադրություններում ամրագրվեց, որ «Ժողովուրդը եւ իշխանությունը» կամ «պետությունը» սահմանափակված են այդ իրավունքներով՝ որպես անմիջական գործող իրավունք: Նման բանաձևումն իրավական պետության սահմանադրական հիմքերի արձանագրում է ենթադրում, վկայությունն է այն բանի, որ **սահմանադրաիրավական համակարգը խարսխված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա:**

Սահմանադրական իրավունքների եւ ազատությունների անմիջական գործողությունը եւ դրանց անմիջական իրագործումն ու իրականացումը նույնական չեն: Ավելին, իրավունքները եւ ազատություններն ինքնին չեն կարող գործել կամ չգործել. գործում են կամ չեն գործում իրավական նորմերը, որոնցում այդ իրավունքները եւ ազատություններն ամրագրված են:

Այդ առումով, **իրավունքների եւ ազատությունների անմիջական գործողությունը ենթադրում է անձի, հասարակությանեւպետության միջեւ որոշակի կա-**

⁸ Ի դեպ, XX դարում ձևավորված իրավաբանական հայեցակարգերի ուշագրավ դասակարգում է առաջադրում **Լ. Վ. Գոլոսկոկովը**՝ հիմնական շեշտը դնելով բնական իրավունքի տեսության եւ իրավական պոզիտիվիզմի տարբեր դրսևորումների վրա (տե՛ս **Голоскоков Л. В.** Правовые доктрины: от Древнего мира до информационной эпохи. М., 2003, էջեր 79-82:

⁹ Այդ մասին տե՛ս **Վ. Ս. Ներսեսյանց**, Իրավունքի եւ պետության տեսություն, Երևան, 2001, էջեր 30-47:

¹⁰ Տե՛ս G. Harutyunyan, Constitutional culture: the lessons of history and the challenges of time, Yerevan, 2009, էջեր 90-97:

պերի առկայություն, որը երաշխավորում է անհատի ինքնաիրացման իրավաբանական անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ: Ոչ «ինքնին» եւ ոչ «որպէս այդպիսին», այլ հենց Տիմնական օրենքի սահմանումներում մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները՝ որպէս իրավակարգավորիչ իրավաբանական պահանջներ, որոնք իրենցում մարմնավորում են բնական-իրավական եւ պոզիտիվ սկզբունքներ, **ուղղորդում են պերաիշխանական գործառույթների իրականացումը:**

Մեկնաբանվող հոդվածի երրորդ մասի համարեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ դրույթի մի քանի հայեցակետերին, որոնք էական նշանակություն ունեն պերության՝ նշված սահմանադրական պարտականության մասին համապատասխան պարկերացում կազմելու համար: Տարկ է ընդգծել հարկապես պերության պարտականությունների կապը Մահմանադրությամբ պաշտպանվող արժեքների ողջ համակարգի հետ, որոնց աստիճանակարգությունում հենց մարդը, նրա արժանապարտությունը, նրա իրավունքներն ու ազատություններն են գերիշխող դիրք զբաղեցնում:

Ընդ որում, հարաբերությունների այդ համակարգում անձը եւ պերությունը հանդես են գալիս ոչ թե որպէս համապարտադաս սուբյեկտներ, այլ որպէս յուրաքանչեւ հասարակական պայմանագրի՝ սահմանադրաիրավական հարաբերությունների կողմեր, որը պերության վրա դնում է իրավաբանական պարտավորություն՝ ճանաչել մարդու բնական իրավունքները, պահպանել դրանք եւ պաշտպանել ցանկացած հանցափորձից, ում կողմից էլ որ կարարվի, եւ պերաիշխանական գործառույթներն իրականացնելիս սահմանափակվել այդ իրավունքներով: Այդպիսով, միաժամանակ ընդգծվում է, որ մարդու իրավունքները՝ պերության շնորհ կամ նրա կողմից մարդուն ցուցաբերվող բարեգործություն չեն, այլ մարդու եւ քաղաքացու անկապտելի հարկանիշները, մյուս կողմից՝ այդ իրավունքները կանխորոշում են պերաիշխանական լիազորությունների իրականացման թուլաբերելի շրջանակները:

Այսպէս յիշ անխուսափելիորեն բխում է մարդու եւ քաղաքացու իրավունքը՝ Մահմանադրությամբ եւ դրա հիման վրա ընդունված օրենքներում սահմանված ձեւերով ու համապատասխան միջոցներով վերահսկել պերության կողմից այդ պարտականության կարարումը, իսկ պերությունը, իր հերթին, պարարավոր է նախարեսել իրավապաշտպան կառուցակարգեր (մեխանիզմներ), որոնք կերաշխավորեն մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների լիարժեք իրացումը: Այդպիսով, նշված սահմանադրական դրույթն ունի նաեւ որոշակի ծրագրային նշանակություն, քանզի ծրագրավորում է օրենսդրի, գործադիր մարմնի եւ արդարադարության գործունեության ուղղվածությունը:

Տարկ է նշել, որ օրենսդիրը չի կարող ընդունել հիմնական իրավունքներին չհամապատասխանող օրենքներ. ճիշտ նույն կերպ գործադիր իշխանությունը, ինչպէս նաեւ քերական ինքնակառավարումը, օրենքների կարարման առումով իր գործունեությամբ «կաշկանդված» է մարդու եւ քաղաքացու իրավունքներով ու ազատություններով: Դարական իշխանությունն իր հերթին հանդիսանում է մարդու եւ քաղաքացու իրավունքների գլխավոր պաշտպանն ու ապահովողը, այդ թվում՝ օրենսդիր եւ գործադիր իշխանությունների կողմից հիմնական իրավունքների նկարմամբ հնարավոր «տրնձգությունից»:

Ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ իրավունքի գերակայության սկզբունքի էությունը հանգում է նրան, որ պերությունը ճանաչում է մարդու բնական իրավունքներն ու ազատությունները որպէս բարձրագույն արժեք, եւ որ իշխանությունն իրականացնելիս պերությունը եւ ժողովուրդը սահմանափակված են այդ իրավունքները:

րով՝ որպես անմիջական գործող իրավունքներ, որոնցով է պայմանավորված օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների գործունեության բնույթն ու բովանդակությունը:

ՆՈՂՎԱԾ 4

Տանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի, Կեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Ժողովրդաիշխանության համակարգում ընտրություններն ունեն մեծ քաղաքական եւ իրավական նշանակություն: Լինելով ժողովրդաիշխանության ուղղակի ձեւ, ժողովրդի կամքի բարձրագույն անմիջական արտահայտություն՝ ընտրություններն ապահովում են ժողովրդի մասնակցությունը պետության գործերի կառավարմանը: Ընտրությունները սահմանադրական կարգերի հիմնարար ինստիտուտներից են, որովհետեւ դրանք հանրային իշխանության լեգիտիմացման հիմնական միջոցն են: Ներեւաբար, ընտրությունները պետք է լինեն ազատ, պարբերական, այլընտրանքային (մրցակցային), հավասար, արդար, ազնիվ: Ընտրությունների դերը եւ նշանակությունը նկատի ունենալով՝ Սահմանադրությունն ամրագրում է ընտրական իրավունքի հիմունքները, իսկ ընտրական օրենսգիրքը դրանց հիման վրա սահմանում է ընտրական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգը: Այդ կարգավորումը երաշխիք է ազատ, արդար եւ թափանցիկ ընտրությունների կայացման համար: Այսպիսով, Սահմանադրության այս հոդվածը սերտ համակարգային կապերի մեջ է գտնվում 1-ին եւ 2-րդ հոդվածների, ինչպես նաև Սահմանադրության հեղափոխական գլուխներում ամրագրված եւ ընտրական իրավունքին վերաբերող հոդվածների հետ: Սահմանադրության 2-րդ հոդվածն ընտրությունները ճանաչելով անմիջական ժողովրդաիշխանության ձեւ՝ շեշտադրել է ընտրությունների ազատության սկզբունքը: Մեկնաբանվող հոդվածն ընտրությունների դերը եւ նշանակությունը նկատի ունենալով՝ սահմանում է.

ա) Հայաստանում Սահմանադրությամբ ամրագրված կարգով ընտրվի են Հանրապետության Նախագահը, Ազգային Ժողովը, Կեղական ինքնակառավարման մարմինները.

բ) Հանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի, Կեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների օրենսդրական կարգավորման, կազմակերպման եւ անցկացման հիմքում դրվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքները.

գ) ընտրական գործընթացի փուլերից մեկի՝ քվեարկության ձեւը գաղտնի քվեարկությունն է:

Տանրապետության Նախագահի ընտրությունը, Ազգային Ժողովի, Կեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորումն ընտրությունների միջոցով սահմանադրական իմպերատիվ է, որից շեղվել չի կարելի: Հանրային իշխանության մնացած մարմինների, որոնց ձեւավորման կարգը չունի սահմանադրական ամրագրում, կազմավորման ձեւի որոշումը թողնված է օրենսդրի հայեցողությանը: Այսինքն՝ Սահմանադրության 4-րդ հոդվածը չպետք է մեկնաբանել այն իմաստով, որ հանրային իշխանության այլ մար-

միները չեն կարող լինել ընտրովի: Այս հարցում ելակետային նշանակություն ունի Սահմանադրության 2-րդ հոդվածը, որն իշխանության փեր է համարում ժողովրդին: Սահմանադրության 4-րդ հոդվածն ուղղակի սահմանադրական իմպերատիվ է ճանաչում միայն Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, փեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

Սահմանադրությամբ սահմանված ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների օրենսդրական կարգավորման, կազմակերպման եւ անցկացման սկզբունքներն են **ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքը**: Այդ սկզբունքները մի կողմից հանդիսանում են ճանաչման հիմնական մեթոդը, իսկ մյուս կողմից՝ սահմանում են իրավական կարգավորման էական բովանդակային բնութագրիչները: Չնայած այն հանգամանքին, որ վերջին ժամանակներում ընտրական իրավունքի հիմնական սկզբունքներն անվերապահորեն ընդունվում են ժամանակակից հանրապետությունների կողմից եւ դրանց մեծ մասը ոչ միայն սահմանադրական ամրագրում է սրացել, այլև զեպրեղված է մի շարք միջազգային փաստաթղթերում, այնուամենայնիվ, ընտրական իրավունքի սկզբունքների հիմնահարցն այնքան պարզ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Տարբերություն գոյություն ունի ինչպես ընտրական իրավունքի սկզբունքների թվի, այնպես էլ վերջիններիս բովանդակային ծավալի վերաբերյալ:

Ընտրական իրավունքի սկզբունքներն ուրվագծում են այն ելակետային բնութագրիչները, որոնց շրջանակներում ձեւավորվում են ընտրական հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, միաժամանակ վերջիններս հանդես են գալիս որպես ընտրական իրավունքի զարգացման յուրօրինակ ուղղորդիչ: Սահմանադրական մակարդակում ընտրական իրավունքի սկզբունքների սահմանումն ունի ոչ միայն փեսական, այլ նաև մեծ գործնական նշանակություն, քանզի առանց ելակետային հիմքերի հաշվառման, որի վրա ձեւավորվում է ընտրական հարաբերությունների կարգավորումը, ծայրահեղ բարդանում է ընտրական իրավունքի նորմերի համարժեք ամբողջական ընկալումը, դրանց բովանդակության գնահատումը, դրանց նշանակության պարզաբանումը, մեկնաբանումը, ընտրական հարաբերություններում առկա բացերի լրացումը, ընտրական օրենսդրության մեջ կոլիզիաների, բախումների վերացումը:

Մեկնաբանվող հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքների հիման վրա քաղաքացիների կամաարտահայտության ժողովրդավարական ու լեգիտիմ ընթացքը Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, փեդական ինքնակառավարման մարմինների եւ հանրաքվեների ժամանակ՝ երաշխիք է միասնական հավասարակշռված, ներքին հակասություններից զերծ ընտրական համակարգի ձեւավորումը իթանելու համար, որը կերաշխավորի ընտրովի մարմինների գործունեության կայունությունն ու հաջողականությունը: Ակնհայտ է, որ ընտրական իրավունքի սկզբունքների ներքո, որպես օբյեկտիվ իրավական երեույթ, պերք է հասկանալ հիմնարար սկիզբը (գաղափար), որն արտացոլում է ընտրությունների ժողովրդավարական էությունը՝ որպես ժողովրդավարության սահմանադրական հիմք եւ ընտրությունների կազմակերպման իրավական հիմք:

Խոսելով ընտրական իրավունքի սկզբունքների մասին՝ հարկ է նկատել, որ ընտրական իրավունքի սկզբունքները բաժանվում են երկու խմբի՝ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման սկզբունքներ եւ ընտրություններին քաղաքացիների մասնակցության սկզբունքներ: Թեպետ մեկնաբանվող հոդվածում ամրագրված են միայն քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու սկզբունքները, այնուամենայնիվ, այն չի նշանակում, թե ընտրությունների կազմակերպման սկզբունքները բացակայում են ՀՀ-

ում: Վերջիններս թեպետ ամրագրված չեն մեկնաբանվող հոդվածում, սակայն համակարգային կապի մեջ են գտնվում մեկնաբանվող հոդվածում ամրագրված սկզբունքների հետ, փոխկապակցված, փոխլրացնող են, պայմանավորված են միմյանցով:

Ընտրությունների կազմակերպման այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են պարբերական եւ պարբերաբար ընտրությունները, թափանցիկ եւ հրապարակային ընտրությունները, ազատ ընտրությունները, իրական ընտրությունները, արդար ընտրությունները, ժողովրդավարական պետության գլխավոր բնութագրիչներից են եւ առանց վերջիններիս քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու սկզբունքներն ի գործ չեն լիարժեք ապահովելու, երաշխավորելու ընտրությունների առջեւ դրված խնդիրների եւ ընտրությունների գործառնությունների լիարժեք իրականացումը, ուստի այս երկու խումբ սկզբունքները պետք է դիտարկել փոխկապակցվածության մեջ: Թվարկված սկզբունքներն ուղղակիորեն բխում են ՏՏ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքից եւ 2-րդ հոդվածում ամրագրված իշխանությունը ժողովրդին պարկանելու սկզբունքից:

Նարկ է նկատել, որ մեկնաբանվող հոդվածում ամրագրված՝ քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու սկզբունքները վաղուց են դադարել ներպետական օրենսդրության կարգավորման առարկա լինելուց եւ այսօր ամրագրված են մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի 21-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. «3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այն պետք է արտահայտվի պարբերական եւ իրական ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն **ընդհանուր** եւ հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաբար ընթացակարգերի միջոցով»¹¹: Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2 հոդվածում հիշարակվող որեւէ խտրականության եւ առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք եւ հնարավորություն ունենա.

ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ) քվեարկել եւ ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում **ընդհանուր** եւ հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ եւ ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը...»¹²:

2002 թվականի հոկտեմբերի 7-ին Զիչնետում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների եւ ազատությունների չափանիշների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «2. Կողմերն ընդունում են, որ ժողովրդավարական ընտրությունների չափանիշներն են՝ պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում քաղաքացու ընտրելու եւ ընտրվելու իրավունքը, ընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ...»:

Ընդհանուր ընտրական իրավունքը՝ որպես ընտրական իրավունքի եւ հանրաքվեի անցկացման սկզբունք, որոշ միջազգային իրավական փաստաթղթերում կրում է «համընդհանուր ընտրական իրավունք» անվանումը, իսկ մեկնաբանվող հոդվածում

¹¹ ՀՀԱԳՆՊՏ 2004/4 (12). 20.12. 2004թ.:

¹² ՀՀՊՏ 1997/29, 25.12. 1997թ.:

խոսք է գնում «ընդհանուր ընտրական իրավունքի» մասին: Նարկ է նկատել, որ այս երկու հասկացությունները բովանդակային փարբերություն չունեն, թեպետ միջազգային պրակտիկայում ավելի հաճախ հանդիպում է «հանընդհանուր» եզրույթը:

Ընտրական իրավունքն իր գոյության բավականին երկար ժամանակահատվածում դիտվել է սոսկ որպես հասարակության ընտրյալների իրավունք (մինչև 20-րդ դարը), իսկ որոշ երկրներում՝ մինչև 20-րդ դարի կեսերը, այն եղել է բացարձակապես փոխանորդական իրավունք: Նման պայմաններում ընդհանուր ընտրական իրավունքի մասին խոսելն անհիմաստ էր: Ընդհանուր ընտրական իրավունքի ակունքները հասնում են Նին Նունասարան: Պերիկլեսն անդրադառնալով պետության կառավարմանը՝ ասում է. «Պետության կառավարումը մի խումբ մարդկանց գործը չէ եւ պարկանում է հասարակության բոլոր անդամներին՝ առանց բացառության»: Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքն առաջին անգամ օրենսդրական ամրագրում է սրացել Ֆրանսիայում՝ 1848 թվականի հեղափոխությունից հետո¹³: Կանայք ընտրական իրավունք առաջին անգամ սրացել են 1893 թվականին Նոր Զելանդիայում, իսկ Շվեյցարիայում այս իրավունքը կանանց տրվել է միայն 1970 թվականին¹⁴:

Անհրաժեշտ է նշել, որ Նայասարանի Նանրապետությունում ընդհանուր ընտրական իրավունքի ամրագրման եւ կիրառման պայմաններն ավելի հին է, քան ժամանակակից շաք եվրոպական երկրներինը: Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը ՆՆ օրենսդրության մեջ իր ամրագրումն ավելի վաղ է սրացել, քան այսօր ժողովրդավարական ավանդույթներ ունեցող շաք պետություններում: Այն ամրագրված է եղել դեռես 1919 թվականին ՆՆ կառավարության կողմից հասարակված՝ «Պառլամենտի ընտրության մասին օրենքում»: Օրենքի 1-ին հոդվածում ասվում էր. «ՆՆ Պառլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչությունն առանց սեռի խտրության՝ **ընդհանուր** եւ հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության եւ գաղտնի քվեարկության միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուցչական սկզբունքը»¹⁵:

Պետք է նշել, որ ընդհանուր ընտրական իրավունքը գրեթե բոլոր ժամանակներում ունեցել է նաեւ իր ընդդիմախոսները: «Ռոլդ սրբիպ ջորնել» թերթը 60-ական թվականներին գրում էր. «Քվեարկության իրավունքն արտոնություն է, դրան պետք է արժանանալ: Ամբոխից ընտրյալներին անջարելու համար հասարակությունը պետք է քվեարկության իրավունքի վրա որոշակի սահմանափակում դնի»¹⁶: Ֆրանսիացի իրավաբան Միշել Ամելերն իր «Պառլամենտներ» աշխարհության մեջ գրում է. «Չի կարելի ընտրական իրավունք փայ բոլորին, առանց բացառության: Օրենսդիր մարմնի անդամների ընտրությունը չափազանց կարեւոր գործ է, եւ այն նույնիսկ մասնակիորեն չի կարելի վստահել անպարասխանարու փարբերին»¹⁷:

Չնայած այն հանգամանքին, որ մեր օրերում աշխարհի գրեթե բոլոր երկրների սահմանադրություններով կամ օրենքներով ամրագրված է ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը, այն փարբեր երկրներում թե՛ իմաստային եւ թե՛ ծավալային առումով փարբեր նշանակություն ունի: Ֆրանսիացի հայտնի քաղաքագետ, իրավագետ Ժ. Բյուրոյի կարծիքով՝ «Ընդհանուր պետք է համարել այն ընտրական իրավունքը, որը չի սահ-

¹³ Граф Г., Зайлер Г. Выборы и избирательное право в классовой борьбе. М., 1974, Изд. "Прогрес". С. 7.

¹⁴ Տես՝ Արտունյան Գ. Գ., Բագլայ Թ. Բ. Конституционное право /Энциклопедический словарь/, изд. НОРМА, М., 2006. С. 76.

¹⁵ Տես՝ Հայաստանի պետական արխիվային վարչություն, Պատմության արխիվ, ֆոնդ 218, էջ 18:

¹⁶ Տես՝ Буржуазные конституции в период общего кризиса капитализма. М., 1966. С. 166.

¹⁷ Амелер М. Парламенты, „Прогрес“, М., 1967. С. 48.

մանափակվում գույքային, սոցիալական, ռասայական կամ ժառանգական չափանիշներով»¹⁸։ Դժվար չէ տեսնել, որ այս պայմաններում փարիքային կամ նստակեցության ամենաբարձր ցենզերն անգամ հիմք չէին ընտրական իրավունքն ընդհանուր չհամարելու համար։

Մեր օրերում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը պայմանավորում է հետեյալ հանգամանքների առկայությունը կամ ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետեյալը.

- սահմանադրությամբ, օրենքներով սահմանված փարիքը լրացած յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրավունք ունենա ընտրել եւ ընտրվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում,

- պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրովի պաշտոններում քաղաքացու ընտրելու եւ ընտրվելու իրավունքն իրականացվում է անկախ սեռային, լեզվական, դավանանքի կամ կրոնական հատկանիշներից, առանց քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության կամ էթնիկական խմբին պատկանելու, գույքային կամ այլ նմանատիպ հանգամանքների որեւէ խտրական բնույթի սահմանափակումների,

- համապետական ընտրությունների ժամանակ իր պետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա իր պետության մյուս քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքներ,

- յուրաքանչյուր ընտրողի պետք է երաշխավորվի ընտրողների ցուցակում իրեն ընդգրկելու մասին տեղեկություն ստանալու, դրա ամբողջականությունը եւ իսկությունն ապահովելու նպատակով՝ այդ տեղեկությունը ճշտելու, ընտրողների ցուցակում ընդգրկելու մերժումն օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրավունք։

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքն իր լիարժեք դրսևորման մեջ հանգեցնում է նրան, որ ընտրական իրավունքը կամ թեկուզ միայն ակտիվ ընտրական իրավունքը ճանաչվում է փոխյալ պետության բոլոր չափահաս եւ հոգեպես առողջ քաղաքացիների համար։ Սակայն սա այն ողջամիտի եւ հնարավորինի առավելագույնն է, որին գործնականում եւ ոչ մի երկրում հնարավոր չէ հասնել։ Գրեթե բոլոր երկրներում փաստացի ընտրական զանգվածը եւ պետության չափահաս ու գործունակ քաղաքացիների շրջանակը նույնական չեն։ Բոլոր դեպքերում փաստացի ընտրական զանգվածն ավելի փոքր է, քան պետության չափահաս եւ գործունակ անձանց շրջանակը։ Եվ դա պայմանավորված է թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ ընտրական իրավունքի համար որոշակի ցենզերի սահմանումով։

Ընդհանրապես ցենզային ընտրական իրավունքը որոշ առումով հակասում կամ անգամ բացառում է ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը, սակայն ժողովրդավարական ընտրական իրավունքի միջազգային չափորոշիչները չեն բացառում առանձին ցենզերի առկայությունը եւ որոշակի սահմաններում վերջիններիս առկայությունը չեն դիտարկում որպես ընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակում։

Ակնհայտ է, որ համընդհանրության սկզբունքը չի հանդիսանում բացարձակ, այն չի ենթադրում ընտրական իրավունքի 100 տոկոսանոց համընդհանրություն։ Այս սկզբունքը որոշակիորեն սահմանափակ բնույթ ունի, եւ անվանումն իդեալականացված է։ Այս առումով պետք է համաձայնել ռուս գիտնական Վ. Վ. Մակլակովի հետ, որը բնութագրում է ընդհանուր ընտրական իրավունքը որպես հնարավորինի եւ ողջամիտի առավելագույնը, որին գործնականում ոչ մի տեղ հնարավոր չի լինում հասնել։ Ընդհանուր

¹⁸ Տե՛ս Burdeau G. Droit constitutionnel et institutions politiques> Paris 1974. Page 458.

ընտրական իրավունքը հանդուրժում է սահմանափակումներ, որոնք որոշակի պայմաններ են, որոնց համապատասխանելու պարագայում է միայն անձը ստանում ընտրական իրավունք: Ընդհանուր ընտրական իրավունքի համար անթույլատրելի են ընտրական ցենզերի սահմանումն ընտրական կամ այլ օրենքներով, եթե վերջիններս նախատեսված չեն Սահմանադրությամբ:

Ընդհանուր ընտրական իրավունքը բացառում է խորականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հարկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, փարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ընդհանուր ընտրական իրավունքը սահմանափակող ցենզերից են նախկեցության ցենզը, քաղաքացիության ցենզը, սեռային ցենզը, անընտրվելիության ցենզը և այլն (տե՛ս 30-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Նայաստանի Նանրապետությունում, ինչպես և ցանկացած պետությունում, ընդհանուր ընտրական իրավունքի առկայությունը պայմանավորված չէ միայն օրենսդրությամբ այդ սկզբունքի ամրագրմամբ, այն բացառող ցենզերի բացակայությամբ, նման մոտեցման պարագայում այս սկզբունքի բովանդակության մեկնաբանությունը միակողմանի բնույթ կկրի: Ընտրական իրավունքի ընդհանուր լինելը գնահատելիս անհրաժեշտ է պարզել ինչպես այս սկզբունքից բխող համապատասխան իրավունքների ամրագրման հանգամանքը, այնպես էլ այդ իրավունքների իրականացման հնարավորությունները: Ընդհանուր կարելի է համարել միայն այն երկրի ընտրական իրավունքը, որտեղ ընդհանուր ընտրական իրավունքի շրջանակներում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն իրական հնարավորություն ունեն իրականացնելու իրենց սուբյեկտիվ ընտրելու իրավունքը: Բոլոր դեպքերում, երբ ընտրությունների կազմակերպման և անցկացման մեխանիզմներն անկատար են, լիարժեք չեն ապահովում այս իրավունքի իրականացումը և, որպես հետևանք՝ այդ հիմքով արսենտրեիզմը մեծ տոկոս է կազմում, ապա ընդհանուր ընտրական իրավունքը դառնում է ոչ իրական: Ուստի ընդհանուր ընտրական իրավունքի համար ոչ պակաս նշանակություն ունեն այս իրավունքի իրականացման մեխանիզմները:

Ընդհանուր ընտրական իրավունքի ապահովմանն են կոչված ՆՆ ընտրական օրենսդրությամբ ամրագրված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են մինչև 2000 ընտրող ընդգրկող ընտրական տեղամասեր կազմավորելը, քվեարկության համար 12 ժամ նախատեսելը, տեղամասային կենտրոնը տեղամաս ընդգրկող տներին, շենքերին մոտ կազմավորելը և այլն: Միջազգային պրակտիկայում հայտնի են այս սկզբունքի ապահովմանն ուղղված այնպիսի ինստիտուտներ, մեխանիզմներ, ինչպիսիք են լիազորագրով քվեարկելը, նախօրոք քվեարկելը, փոստով քվեարկելը, ինտերնետով քվեարկելը, արտասահմանում տվյալ երկրի դիվանագիտական ներկայացուցչություններում ընտրական տեղամասեր կազմավորելը և այլն:

Անդրադառնալով Նայաստանի Նանրապետությունում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի բովանդակությանն ու պահպանմանը, հարկ է նկատել, որ սուբյեկտիվ ընտրական իրավունքի սահմանափակումների առումով այն տեղավորվում է ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի միջազգայնորեն թույլատրելի սահմանափակումների շրջանակում (մանրամասն տե՛ս 30-րդ հոդվածի մեկնաբանությունում), սակայն ինչ վերաբերում է ընտրական իրավունքի իրականացման մեխանիզմներին՝ որպես

այս սկզբունքի ապահովման նախապայման, ապա որոշ անհարթություններ, շեղում համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքից, կարծում ենք, այս պարագայում գոյություն ունեն:

Անհարթությունները մասնավորապես վերաբերում են քվեարկության կազմակերպմանը: Ընտրական իրավունքի իրականացումն այլ իրավունքների իրականացումից ունի որոշակի առանձնահատկություններ, մասնավորապես այն կարող է իրականացվել օրենսդրությամբ որոշված հստակ ժամանակահատվածում: Այդ ժամանակահատվածից դուրս այս իրավունքի գոյությունը փաստացի ոչինչ չի փախի այդ իրավունքը կորոզին: Եթե այլ իրավունքների իրականացման մեխանիզմները նախատեսում են ժամանակի որոշակի փութակալ հատված, ապա ակտիվ ընտրական իրավունքի իրականացման համար սահմանված ժամանակը հաշվարկվում է ժամերով, որպես կանոն՝ 12 ժամ: Ակտիվ ընտրական իրավունքի իրականացումը ենթադրում է ընտրողի քվեարկություն կատարելը: ՄՍ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քվեարկությունն անցկացվում է փողամասային կենտրոններում՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն»: Սա նշանակում է, որ ընտրողն իր ակտիվ ընտրական իրավունքը կարող է իրականացնել բացառապես քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն՝ համապատասխան ընտրական փողամաս ներկայանալով եւ քվեարկելով: Նման կարգավորումը քվեարկություն կատարելու առումով բավականին ոչ բարենպաստ պայմաններ է ստեղծում բոլոր այն անձանց համար, ովքեր ունենալով ընտրական իրավունք՝ հիվանդության, գործուղման մեջ գտնվելու կամ հարգելի այլ պարճառով քվեարկության օրը բացակայում են իրենց հաշվառման վայրից: 2006 թվականի դեկտեմբերի 22-ի՝ ՄՍ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները վերը նշված ոչ բարենպաստ պայմանները որոշակիորեն մեղմեցին: Մասնավորապես ՄՍ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում համապետական ընտրությունների ժամանակ սրացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում սրացիոնար բուժման մեջ գտնվող՝ քվեարկության օրը փողամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քաղաքացիներին իրավունք տրվեց քվեարկելու սրացիոնար բժշկական հաստատությունում¹⁹:

Համապետական ընտրությունների ժամանակ քիչ չէին այն դեպքերը, երբ քվեարկության օրը քաղաքացին իր հաշվառման վայրից բացակայելու պարճառով գործնականում զրկվում էր նաեւ քվեարկությանը մասնակցելու իրավունքից: Փոփոխությունների արդյունքում այս խումբը քաղաքացիներին տրվեց ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու եւ քվեարկության օրը իր գտնվելու վայրի ընտրական փողամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու իրավունք: Վերը նշված երկու ինստիտուտներն էլ, անշուշտ, միաված են ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահպանմանը, սակայն նույն գնահատականը չի կարող տրվել ՄՍ ընտրական օրենսգրքի 2007թ. փետրվարի 26-ի փոփոխություններին, որոնցով վերացվեց արտասահմանում ՄՍ դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրական փողամասեր կազմավորելու եւ այդ հաստատություններում հաշվառված անձանց քվեարկությունը կազմակերպելու ինստիտուտը²⁰: Գործնականում նախօրոք քվեարկության, լիազորված քվեարկության, ինտերնետով, փոստով քվեարկության ինստիտուտների բացակայության պարագայում, քվեարկության օրը արտասահմանում գտնվող, ընտրական իրավունք ունեցող անձինք զրկված են իրենց ընտրական իրավուն-

¹⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2007/4 (528), 17.01.2007թ.:

²⁰ Տե՛ս ՀՀՊՏ 2007/15 (539), 14.03.2007թ.:

քի իրականացման հնարավորությունից: Անկախ այն հանգամանքից, թե ժամանակի կոնկրետ հարվածում քանի ընտրող է գրավում այդ կարգավիճակում, նման իրավիճակը, կարծում ենք, գործնականում շեղում է ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքից:

Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի փորձագետները վերլուծելով ՆՏ ընտրական օրենսգրքի 2007թ. փետրվարի 26-ի փոփոխությունները՝ հանձնաժողովի 2007թ. մայիսի 31-ի 71-րդ լիազումար նիստում կարծիք են ներկայացրել (CDL-EL(2007)014 եւ CDL-EL(2007)015), ինչն ստացել է հանձնաժողովի հավանությունը, համաձայն որի՝ նման պրակտիկա առկա է փարբեր երկրներում ու համապարասխան պետության կողմից երկրի ներսում ընտրություններ կազմակերպելու ինստիտուտի ընդունումը կամ դրա մերժումն ազգային օրենսդիր մարմինների խնդիրն է:

Ուշադրություն պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ Եվրոպայի խորհրդի այն անդամ երկրները, որոնք իրենց դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչություններում չունեն քվեարկություն կազմակերպելու ինստիտուտ, բացարձակ փոքրամասնություն են կազմում, եւ երկրորդ՝ այս երկրներում գործում են նաեւ քվեարկության այլընտրանքային եղանակները, որոնք, անշուշտ, մեղմում կամ նույնիսկ վերացնում են ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի խախտումը:

Արտասահմանում գրավող քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման ապահովումը որպես ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի բաղադրիչ դիտարկելն ուղակիորեն բխում է 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնեւ քաղաքում ստորագրված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների եւ ազատությունների չափանիշների մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի գ) կետից (Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2005 թվականի փետրվարի 28-ին): Նոդվածը վերնագրված է «Ընդհանուր ընտրական իրավունք», եւ այս իրավունքը բնութագրող այլ դրույթների հետ մեկտեղ, նշված կետում սահմանվում է. «Նամապետական ընտրությունների ժամանակ արտասահմանում գրավող կամ բնակվող յուրաքանչյուր քաղաքացի ունի իր պետության այլ քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքներ: Դիվանագիտական ներկայացուցչությունները եւ հյուպատոսական հաստատությունները, նրանց պաշտոնատար անձինք օժանդակում են քաղաքացիներին իրենց ընտրական իրավունքների եւ ազատությունների իրականացման հարցում»: Սակայն Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովն իր՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ի N Ն-035-4 որոշմամբ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների եւ ազատությունների չափանիշների մասին կոնվենցիայի վերաբերյալ կարարել է հետեւյալ վերապահումները՝ «Նայաստանի Նանրապետությունն իրեն իրավունք է վերապահում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետի դրույթը կիրառել՝ նշված դրույթներից բխող Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ համապարասխան հնարավորություններ նախատեսված լինելու դեպքում»: Գործնականում բացառվել է այդ ինստիտուտը:

Նավասարության սկզբունքն ընտրական իրավունքի եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմքերից մեկն է: Ժողովրդավարության հրամայական պահանջներից մեկը բոլոր քաղաքացիների քաղաքական հավասարությունն է՝ «մեկ մարդ՝ մեկ ձայն» սկզբունքով: Դա նշանակում է, որ բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, եւ յուրաքանչյուր ընտրողի ձայնն ունի նույն կշիռը: Այս սկզբունքը բխում է հիմնարար միջազգային իրավական փաստաթղթերից եւ ուղակիոր

րեն փոխկապակցված է ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված հավասարության սկզբունքի հետ:

Ընտրական եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի հավասարության սկզբունքը բովանդակում է առնվազն հետևյալ նախապայմանները.

- յուրաքանչյուր ընտրող պետք է ունենա մյուս ընտրողների հետ հավասար ձայն (ձայներ),

- նրա ձայնը (ձայները) պետք է ունենա նույն ազդեցությունը, ինչպես եւ մյուս ընտրողների ձայները,

- միամանդապ եւ (կամ) բազմամանդապ ընտրական համակարգով քվեարկության անցկացման ժամանակ այդ ընտրափարածքները կազմավորվում են հավասար հիմունքով՝ այնպես, որ քվեարկության արդյունքները հնարավորինս ճիշտ եւ լրիվ արտահայտեն ընտրողի կամքը,

- հավասարության սկզբունքի չափանիշներ կարող են լինել ընտրողների թվի մոտավոր հավասարությունը միամանդապ ընտրափարածքում կամ ընտրողների թվի մոտավոր հավասարությունը մեկ պարզամավորական մանդատին՝ բազմամանդապ ընտրափարածքում,

- ներկայացուցչության միջին նորմայից շեղման համար հիմքեր կարող են հանդիսանալ փարածքի դժվար հասանելիությունը եւ հեռավորությունը, փոքրաթիվ բնիկ ազգությունների կամ այլ ազգային փոքրամասնությունների եւ էթնիկական խմբերի կենտրոնացված բնակությունը,

- ընտրական բոլոր փուլերում ընտրական եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացման համար ընտրական հարաբերությունների սուբյեկտների համար պետք է սահմանված լինեն հավասար պայմաններ:

Ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի խախտում է քվեարկության ցանկացած եղանակ, որն առանձին խումբ ընտրողների միեւնույն ընտրության ժամանակ հնարավորություն կտա ունենալ (օգտագործել) ավելի թվով ձայներ (քան այլ ընտրողներ) կամ միեւնույն ընտրության ժամանակ ընդգրկված լինել մի քանի ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակում, կամ նույն ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում մի քանի անգամ եւ համապարասխանաբար քվեարկել այդ ընտրական տեղամասերից յուրաքանչյուրում կամ նույն ընտրական տեղամասում մի քանի անգամ:

Ընտրական իրավունքի եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի հավասարության սկզբունքն արտահայտվում է հանրաքվեին եւ ընտրություններին հավասար հիմունքներով մասնակցելու հասկացության մեջ:

Այս սկզբունքը պարզավորեցնում է ապահովել հավասարությունն ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում՝ թե՛ պասիվ եւ թե՛ ակտիվ ընտրական իրավունքի համար:

Նավասար թվով ձայնի պայմանը նշանակում է, որ, նախեւառաջ, նույն ընտրական համակարգով նույն ընտրությունների ժամանակ քվեարկող բոլոր ընտրողները, հանրաքվեին մասնակցողները պետք է ունենան հավասար թվով ձայն:

Գործնականում յուրաքանչյուր ընտրող սրանում է որոշակի թվով քվեաթերթիկ՝ կախված այն հանգամանքից, թե՛ ինչպիսի ընտրական համակարգ է գործում այս կամ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությունների ժամանակ կամ թե՛ քանի հարց է դրված հանրաքվեի: Եթե ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրական համակարգով միամանդապ ընտրափարածքում, ապա յուրաքանչյուր ընտրող իրավունք է սրանում քվեարկելու թեկնածուներից որեւէ մեկի օգ-

սին կամ մեկ թեկնածու գրանցված լինելու դեպքում՝ նրան կողմ կամ դեմ: Եթե քվայալ մարմնի ընտրություններն անցկացվում են խառը (երբ ձեւավորվող մարմնի մի մասը ընտրվում է համամասնական ընտրական համակարգով, իսկ մյուսը՝ մեծամասնական ընտրական համակարգով), ապա յուրաքանչյուր ընտրող ունենում է երկու ձայն, որոնցից մեկը վերջինս կարող է քվալ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ գրանցված թեկնածուներից մեկի օգտին, իսկ մյուսը՝ համամասնականի: Այս պայմաններով է ընտրվում ՄԱԿԿ-ի ժողովը: ՄԱԿԿ-ի ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք՝ բազմամանդատ ընտրարարածքում եւ մեկ ձայնի իրավունք՝ միամանդատ ընտրարարածքում:

Ինչ վերաբերում է հանրաքվեին, ապա այս դեպքում եւս հանրաքվեի մասնակիցը կարող է կամ կողմ քվեարկել հանրաքվեի դրված հարցին, կամ՝ դեմ. եթե հանրաքվեի են դրված մի քանի հարցեր, ապա հանրաքվեի մասնակիցը կունենա հանրաքվեի դրված հարցերի թվին հավասար թվով ձայն:

Ընտրական գործընթացում ձայնի հավասար կշիռ ունենալու պայմանը ապահովվում է մի շարք իրավական մեխանիզմների միջոցով, մասնավորապես՝ մոտավոր հավասար թվով ընտրողներ ընդգրկող ընտրարարածքներ կազմավորելով: Միջազգային պրակտիկայում թույլատրվում է ընտրարարածքներում ընդգրկված ընտրողների թվի մինչեւ 10-15 փոփոխ փոփոխում: ՄԱԿԿ-ի ընտրական օրենսգրքի 17.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր ընտրարարածքի սահմանները որոշվում են այնպես, որ կազմավորված բոլոր ընտրարարածքներում ընդգրկված լինեն մոտավորապես նույն թվով ընտրողներ՝ հաշվի առնելով քաղաքի աշխարհագրական, տեղագրական եւ ֆիզիկական առանձնահատկությունները, հաղորդակցության միջոցների առկայությունը, գոյություն ունեցող սոցիալական եւ վարչական գործոնները, ընդ որում՝ վերը թվարկված գործոններով պայմանավորված շեղումը յուրաքանչյուր ընտրարարածքի համար չպետք է գերազանցի ընտրելու իրավունք ունեցող ընտրողների ընդհանուր թվի եւ ընտրարարածքների թվի հարաբերության 10 փոփոխը, իսկ բացառիկ դեպքերում՝ 15 փոփոխը ...»²¹:

Ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի ապահովմանն է ուղղված նաեւ ՄԱԿԿ-ի ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի ընտրողների միայն մեկ ցուցակում ընդգրկելու իմպերատիվ պահանջը՝ «Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում եւ միայն մեկ անգամ»²²:

Պատիվ ընտրական իրավունքի պարագայում հավասարության սկզբունքի ապահովմանն է ուղղված բոլոր թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դաշինքներին հավասար իրավունքներ փալու եւ վերջիններիս վրա հավասար պարտականություններ դնելու պահանջը: Պատիվ ընտրական իրավունքի համար օրենքով սահմանված կարգով պաշտոններ զբաղեցնող թեկնածուների համար սահմանափակումներ նախատեսվել չպետք է դիտարկվի որպես իրավահավասարության սկզբունքի խախտում եւ ընտրողների առջեւ պարտականությունների չկատարում: Ընդհակառակը՝ նման սահմանափակումը միտված է փոքր թեկնածուների միջեւ հավասարության ապահովմանը: Թեկնածուն իրավունք չունի օգտագործել իր ծառայողական կամ պաշտոնական դիրքը՝ մյուս թեկնածուների նկատմամբ առավելություն ստանալու նպատակով:

Կուսակցությունների կամ թեկնածուների միջեւ հավասարության ապահովումը ենթադրում է իշխանությունների կողմից հավասար պայմանների ապահովում թեկնածու-

²¹ ՀՀՊՏ 1992/2 (68) 18.02, 1999թ.:

²² Նույն տեղում :

ների գրանցման, նախընտրական քարոզչության, լրատվամիջոցների մարչելիության, քվեարկության, քվեարկության եւ ընտրությունների արդյունքների ամփոփման եւ ընտրական գործընթացի այլ փուլերում:

Թեկնածուների տարբեր ֆինանսական հնարավորություններով պայմանավորված անհավասար դրությունը բացառելու եւ ֆինանսական տարբեր հնարավորություններ ունեցող թեկնածուների համար ընտրական հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով ՏՏ ընտրական օրենսգիրքը սահմանել է պարզամավորության թեկնածուի նախընտրական հիմնադրամի առավելագույն չափ:

Թեկնածուների համար հնարավորությունների հավասարությունը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձեւավորմանը եւ ենթադրում է պետական մարմինների չեզոքություն ընտրական գործընթացի, մասնավորապես, նախընտրական քարոզչության, զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումների հանդեպ:

Ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքը ենթադրում է, որ ընտրությունների ժամանակ քաղաքացիները քվեարկում են անմիջականորեն՝ թեկնածուին եւ (կամ) թեկնածուների ցուցակներին կողմ կամ թեկնածուին, թեկնածուներին եւ (կամ) թեկնածուների ցուցակներին դեմ:

Այս սկզբունքի ամրագրումը հնարավորություն է տալիս առավել սպույզ, ճիշտ, լիարժեք եւ ժողովրդավարական եղանակով արտահայտել ժողովրդի կամքն ընտրությունների, հանրաքվեի ժամանակ, ինչպես նաեւ սահմանել ուղղակի կապ ընտրողների եւ նրանց շահերը ներկայացուցչական մարմիններում ներկայացնողների հետ:

Ուղղակի ընտրությունների կարեւոր առավելությունն այն է, որ բոլոր ընտրվող մարմինները՝ թե՛ պետական եւ թե՛ տեղական ինքնակառավարման, դառնում են ժողովրդի անմիջական ներկայացուցչական մարմինները: Դրանով իսկ սրելով ընտրված մարման կապ այս մարմինների եւ ընտրողների միջև, ինչպես նաեւ ապահովվում է բնակչության մշտական հսկողություն այս մարմինների գործունեության նկատմամբ:

Միջազգային պրակտիկայում հայտնի են նաեւ անուղղակի ընտրություններ, որի ժամանակ ձեւավորվում է միայն այն միջանկյալ մարմինը, որը դեռ պետք է ձեւավորի համապատասխան ներկայացուցչական մարմինը: Այդ իսկ պարզառով ուղղակի ընտրական իրավունքը չի մարմնավորում ժողովրդավարական ընտրական իրավունքի միջազգային չափորոշիչների մեջ: Աշխարհի շար ու շար ժողովրդավարական երկրներում էլ այսօր հանրապետության նախագահը եւ պառլամենտի վերին պալատի անդամներն ընտրվում են անուղղակի ընտրությունների միջոցով:

ՏՏ-ում անուղղակի ընտրությունների միջոցով մինչեւ 1996 թվականն ընտրվել են համայնքի ղեկավարները: ՏՏ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ անուղղակի ընտրությունների միջոցով կարող է ընտրվել Երեսնի քաղաքապետը (տե՛ս 108-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Ընտրական գործընթացը եւ հանրաքվեն կազմված են օրենքով ամրագրված, փոխկապված, հերթական փուլերից: Քվեարկությունն ընտրական գործընթացի (նաեւ հանրաքվեի) փուլերից մեկն է, որը, որպես կանոն, հաջորդում է նախընտրական քարոզչությանը եւ նախորդում է ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփմանը: Քվեարկության ձեւը կարող է լինել բաց, հրապարակային, գաղտնի: Պարմության մեջ եղել է նաեւ վիճակահանության միջոցով ընտրությունների անցկացում: Սահմանադրությունը սահմանում է, որ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, ինչպես նաեւ հանրաքվեների ժամանակ քվեարկության ձեւը գաղտնի քվեարկությունն է: Դա նշանակում է, որ

քվեարկությունը պետք է կազմակերպել այնպես, որ ընտրողների կամքը մնա գաղտնի, որ նրանք առանց որեւէ մեկի փեղյակության եւ վերահսկողության կարարեն իրենց ընտրությունը: Քվեարկողի ազատ կամքի նկատմամբ վերահսկողությունը պետք է հետպահանջի օրենքով: Գաղտնի քվեարկությունն ընտրությունների ազատության եւ արդարության կարեւորագույն երաշխիքներից է: Այս կարեւորությունից ելնելով՝ Մահմանադրությունը պարտավորեցնում է քվեարկության ողջ կառուցակարգն այնպես կազմակերպել, որ այն ապահովի գաղտնիությունը՝ որպես ընտրությունների ազատության գրավական:

Գաղտնի քվեարկության սկզբունքը ենթադրում է.

- բացառվում է ընտրողների կամքի արտահայտման նկատմամբ ցանկացած փեսակի հսկողություն,
- քաղաքացիների քվեարկելու գաղտնիության իրավունքը ոչ մի կերպ եւ ոչնչով չի կարող սահմանափակվել,
- ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկության ընթացակարգերի կիրառմամբ,
- ընտրական մարմիններն ապահովում են Մահմանադրությամբ, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված պայմանների պահպանումը, որոնք բացառում են գաղտնի քվեարկության վայրում ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելու նկատմամբ որեւէ հսկողության կամ դիտարկման, որեւէ մեկի կողմից ընտրողի կամաարտահայտման գաղտնիությունը խախտող գործողության իրականացման հնարավորությունը:

Այս սկզբունքի իրականացումը պահանջում է մի շարք կազմակերպչական եւ այլ միջոցներ, որոնք պետք է բացառեն ցանկացած վերահսկողություն քվեարկության գործընթացի նկատմամբ եւ ապահովեն անձի ազատ կամաարտահայտությունն ընտրությունների եւ հանրաքվեների ժամանակ: Այդ միջոցներն ու ընթացակարգերը սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքում եւ «Նանրաքվեի մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ ընտրական օրենսդրությունը քվեարկության գաղտնիության ապահովումը դիտարկում է որպես ընտրական հանձնաժողովների գլխավոր պարտականություններից մեկը: Քվեարկության գաղտնիության խախտման համար նախատեսվում է պատասխանատվություն: ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ «Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը սրուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաեւ քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝ պատժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով»²³:

Դրա հետ մեկտեղ, պետք է նկատել, որ այս սկզբունքի խախտման համար ՀՀ օրենսդրությունը չի սահմանափակվում ավանդական պարասխանատվության եղանակներով: Չպետք է մոռանալ ընտրական օրենսդրության սեփական սանկցիաների մասին, որոնց համաձայն նաեւ այս սկզբունքի խախտումը կարող է հանգեցնել ինչպես քվեարկության, այնպես էլ ընտրությունների արդյունքների անվավերության:

²³ ՀՀ ՊՏ 2003/25 (260) 02.05, 2003թ.:

ՆՈՂ-ՎԱԾ 5

1. Պեպրական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա:

2. Պեպրական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնադատ անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

1. Իշխանությունների փարանջափումը յուրաքանչյուր երկրի սահմանադրական լուծումների համար, անփարակույս, ունի հիմնաքարային նշանակություն²⁴: Սահմանադրորեն այս սկզբունքի առաջին ամրագրումից անցել է 220 փարուց ավելի, սակայն կյանքը վկայում է, որ, անկախ փարաբնույթ մեկնաբանություններից, իշխանությունների փարանջափումն իրավական պետության համար եղել ու շարունակում է մնալ որպես անկյունաքարային արժեք, ձեռք է բերում նոր իմաստ ու նշանակություն: Խորհրդային իրավունքը 20-25 փարի առաջ իշխանությունների փարանջափումը դիփարկում էր որպես «բուրժուական սկզբունք»՝ բնորոշ արքայասահմանյան սահմանադրական մոդելներին: Մա է անցյալի իրավամտաբանության ժառանգությունը, որի հաղթահարումը դյուրին գործ չէ: Մինչդեռ, ինչպես իրավագիտորեն նշում է Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Ա. Բլանկենագելը, իշխանությունների փարանջափումը նոր ու նորագույն ժամանակներում սահմանադրական պետության զարգացման հիմնական ձեռքբերումներից է²⁵: Այդ սկզբունքի էությունը, վերջին հաշվով, այն է, որ առաջադրվում է պետական իշխանության սահմանափակման գաղափարը՝ դրա փարանջափված ճյուղերի փոխադարձ զսպման ու հակակշռման միջոցով²⁶: **Դրա շնորհիվ հաղթահարվում է իշխանության կենտրոնացման վրանգը եւ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների երաշխավորման ու պաշտպանության համար:** Սահմանադրական այդ սկզբունքի կիրառման համար ելակետայինն այն է, որ իշխանության միակ աղբյուրն ու կրողը ժողովուրդն է (տե՛ս 2-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Սահմանադրության 5-րդ հոդվածի առաջին մասն իրենում պարունակում է հետեւյալ իրավական հիմնադրույթները, որոնց՝ որպես սահմանադրական կարգի

²⁴ Տեսական գրականության մեջ եւ սահմանադրական տեքստերում օգտագործվում է ինչպես իշխանությունների «տարանջատում», այնպես էլ՝ «բաժանում» հասկացությունները: Միաժամանակ, վերջինիս պարագայում շեշտվում է նաեւ «հավասարակշռման» հանգամանքը: Մենք այս ելույթի շրջանակներում չենք քննարկի այդ հասկացությունների ընդհանրության ու տարբերությունների հարցը, սակայն ցանկանում ենք ընդգծել, որ ներկայացվող մեկնաբանության համատեքստում «տարանջատում» եւ «բաժանում» ու հավասարակշռում» եզրույթներն արտահայտում են նույն իրավական բովանդակությունը: Իշխանությունների բաժանումն իմաստավորվում է, եթե վերջիններս հավասարակշռում են միմյանց, եւ իրական գործոն է դառնում հակակշիռների եւ զսպումների համակարգը: Եթե բաժանման արդյունքում չի ապահովվում հավասարակշռությունը, ապա առկա է որեւէ ուժի ձեռքին իշխանության կենտրոնացման պարագան: Նույնը վերաբերում է նաեւ տարանջատմանը, որն իրականացվում է միասնական իշխանության շրջանակներում:

²⁵ Տե՛ս Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 5:

²⁶ Նույնը, էջ 256:

հիմունքների, կենսագործումը Մահմանադրության այլ գլուխների և ընդհանրապես սահմանադրական օրենսդրության խնդիրն է: Այդ հիմնադրություններն են.

1) պեքական իշխանությունն իրականացվում է Մահմանադրությանը և օրենքներին համապատասխան.

2) պեքական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների եռաթե բաժանման հիման վրա.

3) իշխանությունների բաժանման սահմանադրական համակարգը պեք է ապահովի իշխանության ճյուղերի հավասարակշռումը:

1) Պեքական իշխանությունն իրականացվում է Մահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Մահմանադրական այս դրույթի կիրառման համար ելակետայինն այն է, որ իշխանության միակ աղբյուրն ու կրողը ժողովուրդն է: Պեքական իշխանությունն ամանցված է ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջունքներով: Պեքությունը իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի: Թե որչափ իշխանություն և ինչ լիազորություններ է ստացել պեքությունը ժողովրդից՝ սահմանված են Մահմանադրությամբ և օրենքներով: Մահմանադրական այս դրույթը՝ որպես պահանջ, ուղղված է ամբողջ հասարակությանը, քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտներին և ամենից առաջ բոլոր պեքական մարմիններին՝ հիմնադրվել և գործել սահմանադրական նորմերի պահանջների խիստ և անշեղ կատարմամբ: Պեքության յուրաքանչյուր մարմին, յուրաքանչյուր պաշտոնատար անձ պեք է ունենա այնքան լիազորություն, որքան անհրաժեշտ է, որպեսզի ստեղծվեն պայմաններ մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման, իրականացման, պահպանության և պաշտպանության համար:

2) Պեքական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների եռաթե բաժանման հիման վրա: Բաժանումը պեք է դրսևորվի երեք առումներով՝ գործառույթային, կառուցակարգային, հասցեական:

Ազգաբնակչության ապահովման համար իշխանությունների բաժանումը ենթադրում է երեք առանձնացված գործառույթներ՝ օրենսդրական, գործադիր և դատական (արդարադատության): **Օրենսդիր իշխանության կրողը** ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմինն է, որը կղզված է որոշելու հասարակության և պեքության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելու ճանապարհով: Օրենսդիր իշխանության սահմանած օրենսդրական իրավական նորմերը որոշում են հասարակության և պեքության մեջ մարդու ազգաբնակչության չափը: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է հասարակության և անհատի ազգաբնակչության, անվտանգության, սեփականության ապահովման համար անհրաժեշտ և թույլատրելի հարկադրական ուժի կիրառման կանոնները: **Գործադիր իշխանության գործառույթն** օրենքների կենսագործումն է, ընթացիկ կառավարումը: Գործադիր իշխանությունը պեքության հարկադիր-կատարողական ուժն է, որն ընդունակ է կիրառել հարկադրանք: Այդ լիազորությունը պեք է լինի իրավագործ, այսինքն՝ օրենքով սահմանված: **Դատական իշխանությունը**՝ սահմանադրության և օրենքների հիման վրա իրականացնում է արդարադատություն: Օրենսդիրը, որ սահմանում է հարկադրանքը, չունի հարկադրանք կիրառելու իրավունք: Նույնը նաև դատական իշխանությունը. ինքը չի կիրառում, այլ թույլատրում կամ թելադրում է հարկադրանքի կիրառումը: Ստացվում է, որ կիրառողը մնում է գործադիրը՝ կառավարությունը, որն ինքը չունի օրենսդրման և արդարադատության գործառույթ, այլ ընդամենը գործում է օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների ու դատարանների որոշումների:

Իշխանությունների բաժանման կառուցակարգային մոտեցումը պահանջում է, որ պետական միասնական իշխանության երեք թեւերից յուրաքանչյուրն իրականացվի պետական ապարատի առանձին օղակների, առանձին մարմինների միջոցով, որոնք միմյանցից գրնվում են հարաբերականորեն անկախ եւ ինքնուրույն վիճակում: Դրա նպատակն այն է, որ այդ իշխանությունները չկենտրոնացվեն մեկ մարմնի ձեռքում կամ մեկը մյուսի նկատմամբ չունենա առավելություն, որը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման: Օրենսդրող մարմինն առանձնացված է գործադրողից, օրենքը սահմանողը չի զբաղվում դրա կիրառմամբ, իսկ գործադրողն էլ չի զբաղվում օրենսդրմամբ, այլ զբաղվում է միայն օրենքների կիրառմամբ: Այսպեղից հետեւում է, որ գործադիր իշխանության մարմինները չպետք է զբաղվեն օրենսդրմամբ կամ օրենքի ուժ ունեցող ակտերի ընդունմամբ:

Իշխանությունների կառուցակարգային բաժանումը պահանջում է նաեւ, որ օրենսդիրը եւս իրավունք չունենա միջամտել գործադիր իշխանության գործունեությանը՝ ընդունելու ակտեր, որոնք Սահմանադրությամբ վերապահված են միայն գործադիր իշխանության իրավասությանը: Օրենսդիրը գործադիրի նկատմամբ ունի միայն վերահսկողության իրավունք՝ Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ձեւերով: Դատական իշխանության՝ օրենսդրի կամ գործադիրի հետ միացման անթույլատրելիությունն ակնհայտ է: Իշխանությունների բաժանումը կանխում է օրենսդրի անուղղակի ներխուժումն արդարադատության իրականացման ոլորտ, նույնիսկ՝ օրենսդրման ձեւով: Այդ պահանջի կենսագործման երաշխիքներ են մի շարք իրավական սկզբունքներ, օրինակ՝ «պարասխանաբարձություն սահմանող կամ պարասխանաբարձությունը խստացնող օրենքները չունեն հետադարձ ուժ», «իրավաբանական պարասխանաբարձությունը վրա է հասնում միայն այն արարքների համար, որոնք ճանաչված են որպես իրավասխանաբարձ սանկցիայի կիրառման պահին»: Այդ պարճառով մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Իշխանությունների բաժանման հասցեական առումը՝ որպես իրավական պահանջ, եւս շար կարեւոր է իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործման համար: Ի կատարումն այս պահանջի, օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կազմում չեն կարող մտնել գործադիր իշխանության եւ դատական համակարգում պաշտոնավարող անձինք: Պարզամտորոշ չի կարող զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկարկարական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից:²⁷ Համապարասխանաբար, դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն՝ առեւտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկարկարական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից:

Այսպիսով, համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական իշխանությունը միասնական է, բայց դրա գործառնությունները՝ հասարակական հարաբերությունների օրենսդրորեն կանոնակարգում, կառավարում եւ արդարադատություն, իրականացնում են տարբեր մարմիններ՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով օժտվելով համարժեք լիազորությամբ: Իշխանությունների բաժանումը նշանակում է պետական գոր-

²⁷ Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունն այլ պաշտոններ զբաղեցնելու հետ բնորոշ է արդի պետությունների բացարձակ մեծամասնությամբ: Բացառություն են կազմում խորհրդարանական հանրապետության եւ խորհրդարանական միապետության գծեր ունեցող երկրների խորհրդարանները, որոնցում խորհրդարանի անդամները միաժամանակ կարող են դառնալ կառավարության անդամ:

ծառայությունների սահմանազատում, որոնց իրագործումը չի կապվում մեկ անձի կամ մարմնի հետ. ընդհակառակն, այդ գործառույթներն իրականացվում են միանգամայն ինքնուրույն մարմինների կողմից, որոնք գործում են օրենքի պարզ իրաններին համապատասխան, այլ ոչ թե անձնական հայեցողությամբ կամ կամայականությամբ, եւ կաշկանդված են անհարմարի նկատմամբ իրավաբանական պարտավորություններով՝ որպես մարդու եւ քաղաքացու անօտարելի իրավունքներ:

3) Իշխանությունների բաժանման սահմանադրական համակարգը պետք է ապահովի իշխանության ճյուղերի հավասարակշռումը: Իշխանության երեք թևերի մարմիններն ինքնուրույն են իրենց իրավասության շրջանակներում եւ չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը: Սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները մեկուսացված են: Ի վերջո, դրանք պետական միասնական իշխանության երեք ճյուղավորումներ են, որոնք սերտորեն համագործակցում են եւ մեկն առանց մյուսի անիմաստ է: Նամաշխարհային փորձը վկայում է, որ հնարավոր է նաեւ իշխանությունների ներթափանցում: Խնդիրն այս դեպքում լիազորությունների հարակ սահմանազատումն է, որպեսզի այն չհանգեցնի սահմանադրական ճգնաժամի:

Բացի դրանից, իշխանությունների փոխհարաբերությունները դրսևորվում են «հակակշիռների եւ զապիչների» միջոցով, որոնք թույլ չեն տալիս իշխանությունների ճյուղերից որեւէ մեկին դուրս գալ իր իրավասության շրջանակներից եւ, ընդհակառակը, հնարավորություն են տալիս իշխանության մի ճյուղին՝ պահել մյուսներին իրենց իրավասության շրջանակներում: Դրա իմաստն այն է, որ պետական իշխանության երեք ճյուղերի մարմիններից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու եւ ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարեւորագույն հարցերը վճռելիս:

Իշխանության փարանջատումը ցանկացած իշխանության (քաղաքական եւ ոչ քաղաքական) գործադրման սկզբունքային պայմաններից մեկն է:

Իշխանության կազմակերպման «լավագույն ձեւի փնտրությունը» ունի դարավոր պատմություն: Իրենց աշխատություններում այդ խնդրին են անդրադարձել Նին աշխարհի մեծանուն փիլիսոփաներ Արիստոտելը (Ք.ա. 384-322 թթ.), Էպիկուրը (Ք.ա. 341-270 թթ.), Պոլիբիանոսը (Ք.ա. 201-120 թթ.): Սակայն րեսական ընդհանրացման եւ զարգացման րեսանկյունից իշխանությունների փարանջատման քաղաքական րեսության հեղինակները փիլիսոփաներ՝ անգլիացի Զոն Լոքն (1632-1704թթ.) ու Փրանսիացի Ծարլ Մոնտեսքյոն (1689-1755) են:

ԱՄՆ-ի Մասնանադրության հայրերի մեծագույն ներդրումներից է համարվում այն, որ նրանք իշխանությունների փարանջատման քաղաքական րեսությունը լրացրին «հակակշիռների ու զապումների համակարգի» դոկտրինայով, որը 1787թ. Մասնանադրության համար դարձավ անկյունաքարային արժեք²⁸: Կարարելագործելով իշխանությունների փարանջատման րեսությունը՝ ամերիկյան Մասնանադրության հայրերն առաջ քաշեցին իշխանության ոչ միայն «հորիզոնական», այլեւ «ուղղահայաց» բաժանման սկզբունքը, քանի որ պետական իշխանության որեւէ ճյուղ ինքնին չի կարող ժողովրդի հավաքական կամքի արտահայտիչը լինել: Ամերիկյան պարմագիտական աղբյուրներն ուշագրավ րեղեկություններ են պարունակում իշխանությունների փարանջատման եւ հակակշռման սկզբունքի սահմանադրաիրավական ամրագրման վերաբերյալ ԱՄՆ Մասնանադրության հայրերի մտքեցումների մասին, եւ պետք է նշել, որ Ֆիլադելֆիայում 1787թ. հրավիրված Մասնանադիր ժողովի քննարկումներն ամերիկյան իրավագի-

²⁸ Տե՛ս *Алебастрова И. А.* Основы американского конституционализма, М., 2001, էջ 9:

ությունն իրավամբ դիտարկում է որպես սահմանադրության մեկնաբանման կարևոր աղբյուր, եւ այդ հիմքի վրա է զարգացել նաեւ այդ երկրի սահմանադրական իրավունքի գիտությունը: Նիմքում ունենալով Ջ. Լոքի եւ Շ. Մոնտեսքյոյի ազարական գաղափարախոսությունը՝ նրանք համոզված էին, որ պետական իշխանությունը երեք ճյուղի (օրենսդիր, գործադիր եւ դատական) փարանջատելը եւ որպես սահմանադրական սկզբունք այն ամրագրելն առավելագույնս կձառայի ժողովրդավարության գաղափարի կենսագործմանը, որի մասին այդքան երազել էր նաեւ Արիստոտելն իր «Քաղաքականություն եւ բարոյագիտություն» աշխատությունում գրված ավելի քան երկու հազարամյակ առաջ: Արդիական էին Շարլ Լուի Մոնտեսքյոյի 1748թ. գրած «Օրենքների ոգու շուրջը» աշխատությունում առաջ քաշված այն մտրեցումները, ըստ որոնց՝ ազարություն լինել չի կարող, քանի դեռ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունները փարանջատված չեն, եւ որ օրենսդիր իշխանությամբ օժտված դատավորը կարող է վերածվել բռնապետի, իսկ գործադիր իշխանության դեպքում՝ նաեւ կեղեքչի²⁹: Ջոն Ջեյը Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի առաջին նախագահը (պաշտոնավարել է 1789-1795թթ.) առավել քան համոզված էր, որ պետական իշխանության երեք ճյուղերը պետք է առհավեր փարանջատված լինեն եւ վերահսկեն միմյանց³⁰: Առաջ քաշվեց իշխանությունների փարանջատման սկզբունքի գործադրման «զպումների եւ հակակշիռների» մեխանիզմ, որի գործադրման արդյունքում նախատեսվում էր ապահովել իշխանության երեք ճյուղերի բնականոն գործունեությունը: Այդ գաղափարի սկզբունքային կարևորությունը նրանում էր, որ «հակակշիռների ու զպումների համակարգի» միջոցով իշխանությունների «սպարիկ» փարանջատմանը «դիմամիկ» բնույթ հաղորդվեց: Ինչպես ժամանակին իր մտախոհությունն է արտահայտել Նեգելը, եթե հաշվի չի առնվում իշխանությունների «կենդանի միասնությունը», ապա դրանց սպարիկ հավասարակշռումը միշտ վրանգված կլինի: Իր հերթին, պրոֆեսոր Օ. Վ. Մարտիշին իրավագիտրեն գրնում է, որ «հակակշիռների ու զպումների համակարգի» ոչ արդյունավեր գործադրումն ու փարանջատված իշխանությունների միայն սպարիկ հավասարակշռության հաստատումն անխուսափելիորեն բերելու են իշխանության կաթվածահարման ու ճգնաժամի³¹:

Իշխանությունների փարանջատումը եւ քաղաքական, վարչական, րնրեսական ուժի օպրիմալ ապակենրորնացումն օրգանապես կապված են եւ ներկայացնում են նույն երեւույթի փարբեր դրսերորումները: Ընդ որում, ինդրին ձեւական մտրեցում դրսերորելու դեպքում եւ րնրեսական, քաղաքական ու վարչական ուժի սերրաճման պայմաններում անխուսափելի են անհանդորժողականությունը, կոռուպցիան, կլանայնությունը, կրիմինալ անձնիշխանությունը մի կողմից, մյուս կողմից՝ ուրնահարված մարդկային իրավունքներն ու արժանապարվությունը, սոցիալական բացասական էներգիայի գերկուրակումներն ու պայթյունի վրանգները:

Անկախ բազմաբնույթ դրսերորումներից, իշխանությունների փարանջատումն առկա է միայն այնրեղ, ուր.

- առկա է ժողովրդավարական պետություն եւ շուկայական րնրեսություն (այ-

²⁹ Տե՛ս **Монтескье III**. Избранные произведения. М., 1995. С. 215, տե՛ս նաեւ՝ **Paul Merrill Spurlin**, The French Enlightenment in America, Essays on the times of the Founding Fathers, The University of Georgia Press, 1984, pp. 86-98.

³⁰ Տե՛ս **Elder Witt**, Guide to the U.S. Supreme Court, Washington D.C., 1990, 26-30, ինչպես նաեւ՝ **Fred J. Maroon**, The Supreme Court of the United States, 1990, The French Enlightenment in America, The University of Georgia Press, 1984.

³¹ Տե՛ս **Мартышин О. В.** Конституция Российской Федерации 1993 г. как памятник эпохи // Государство и право, 2004, N 4, էջեր 13-16:

սինքն՝ սրեղծված են բավարար պայմաններ արտադրողական ուժերի եւ արտադրական հարաբերությունների ազատ զարգացման համար), հասարակության քաղաքական գիտակցության բարձր մակարդակ,

- օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ ընդունվում է օրենսդրի (ներկայացուցչական մարմնի) կողմից,

- օրենսդիր ու գործադիր իշխանության թեւերի միջեւ ապահովված է լիազորությունների հաշվեկշիռ,

- դատական մարմիններն անկախ են եւ իրենց իրավասությունների շրջանակում ինքնուրույն,

- նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր թեւերի փոխադարձ հակակշռման համար:

Իշխանությունների փարանջարման եւ հակակշռման խնդիրն առաջին հերթին բնորոշում է երկրում սահմանադրական ժողովրդավարության եւ պառլամենտարիզմի զարգացման աստիճանը: Ներպառլամենտական հարաբերություններում այդ սկզբունքն ստանում է յուրահատուկ դրսեւորում: Խնդիրն այն է, որ լայն իմաստով իշխանությունների հավասարակշռման համար գործառնական որոշակի դեր է վերապահվում նաեւ խորհրդարանական փոքրամասնությանը: Վերջինս պետք է կարողունակ լինի ու հնարավորություն ունենա քաղաքական մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում՝ հակակշռելով նրա օրինաստեղծ գործունեությանը, հանդես գալ որպէս իրավական ակտերի սահմանադրականության հարցը նաեւ դատական քննության առարկա դարձնող լիիրավ սուբյեկտ: Նախառակ պարագայում գործ կունենանք «դե ֆակտո» միակուսակցական խորհրդարանի հետ՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ իշխանությունների փարանջարման խնդիրն առավել դժվար է լուծել կառավարման, այսպէս կոչված, կիսանախագահական համակարգերում, ուր սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերն առավել հաճախ ու սուր են դրսեւորվում: Կիսանախագահական համակարգը գործնականում դուալիստական բնույթ ունի, այն խորհրդարանական համակարգ է երկու գործադիրով՝ Նախագահ եւ կառավարություն (Ֆրանսիա, Իռլանդիա, Լեհաստան, Լիբիա, Ռուսաստան, Ուկրաինա, Նայաստան եւ այլն): Այս համակարգի հիմնական բնութագրիչն այն է, որ կառավարության եւ խորհրդարանի միջեւ սկզբունքային վեճի դեպքում ոչ միայն խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, այլեւ Նախագահը կարող է լուծարել խորհրդարանը: Որպէս կանոն, կիսանախագահական համակարգերում Նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից, ունի հիմնականում հակակշռող լիազորություններ, ինչպէս նաեւ որոշ գործառնական լիազորություններ գործադիր իշխանության ոլորտում:

Միջազգային սահմանադրական զարգացումների փորձը վկայում է նաեւ, որ նման համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպէս գրնվել են արդյունավետ ու հասարակական պրակտիկայի քննությունը բռնած լուծումներ: Սակայն դրա համար ելակետայինն այն է, որ նախ լուծվի **գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համակարգի ներդաշնակության** խնդիրը: Երկրորդ՝ **ճշգրտվեն ու ներդաշնակվեն իշխանության յուրաքանչյուր թեւի գործառնական, հակակշռող եւ զսպող լիազորությունների շրջանակներն** այն հաշվով, որպէսզի, մի կողմից, ապահովվի իշխանության յուրաքանչյուր թեւի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը՝ չխաթարելով գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համակարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար հակակշռների ու զսպումների

շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում:

Անկախ կառավարման ձեւից ու իշխանությունների փարանջափման սկզբունքի ընկալման մակարդակից, **ժողովրդավարական կարգերի ու իրավական պետության համար անխուսափելի անհրաժեշտություն է ոչ միայն փարանջափման, այլև իշխանությունների հավասարակշռման պարագան:** Ինչպես արդարացիորեն նշում է Լիբվալի սահմանադրական դատարանի նախկին նախագահ Էգիդիոս Կուրիսը՝ «Իշխանությունների փարանջափումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը, հասկանալի է, չի կարող լինել այնպիսի իշխանությունների միջուկ, որոնք փարբեր կշիռ ունեն»³²:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական իրավունքի փեսության մեջ ներկայումս առավել ընդունելի են համարվում իշխանությունների փարանջափման՝ մեր կողմից ձեւակերպված հետեւյալ հիմնական չափանիշները³³. ա) **իշխանության թեւերի հարաբերական անկախությունը**, բ) **անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների առկայությունը**, դրանց **լիազորությունների ամբողջականությունն ու համարժեքությունը գործառույթներին**, գ) **պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը**, որն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացահայտել, գնահատել ու վերականգնել գործառնական խախտված հավասարակշռությունը: Միայն այս պարագայում է հնարավոր ապահովել դինամիկ ու ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական ու հասարակական «պայթյունային» լուծումներից:

Իշխանությունների փարանջափման եւ հակակշռման խնդրում, որպես նաեւ՝ սահմանադրական այդ սկզբունքի իրական գործադրման գնահատման չափանիշ, սկզբունքային նշանակություն ունի դատական իշխանության արդյունավետ կազմակերպման հիմնահարցը, որը պայմանավորված է ոչ միայն այդ բնագավառում ինստիտուցիոնալ խնդիրների հստակեցմամբ, այլև՝ այդ դատական մարմինների կողմից դրանք լուծելու սահմանադրաիրավական անհրաժեշտ եւ երաշխավորված պայմանների առկայությամբ՝ հաշվի առնելով նաեւ պետական իշխանության օրենսդիր եւ գործադիր մարմինների կողմից դատական համակարգի նկատմամբ օբյեկտիվորեն ունեցած հնարավոր ներազդեցության պոտենցիալ հնարավորությունը ցանկացած պետության պայմաններում:

Պետական իշխանության մյուս ճյուղերից դատական իշխանության փարանջափման եւ դրա սահմանադրաիրավական փաստագրման անհրաժեշտությունը, իշխանությունների փարանջափման սկզբունքը որդեգրած ժամանակակից ժողովրդավարական համակարգերում, կազմում է սահմանադրական իրավունքի գիտության առանցքային հիմնախնդիրներից մեկը, որի լուծման անհրաժեշտությունը կասկածի փակ չի դրվում ինչպես իրավունքի եվրոպական, այնպես էլ ամերիկյան իրավահամակարգի փեսաբանների կողմից: Դատական իշխանության փարանջափման եւ անկախության սահմանադրաիրավական հիմունքների ամրագրման իրենց հիմնավորումներում այդ փեսաբաններն առանձնացնում են մի շարք օբյեկտիվ չափանիշներ, որոնց կարեւորության չգիտակցումը կամ անփեսումն ինչպես սահմանադրաիրավական պրակտիկայում, այնպես էլ տվյալ պետության եւ հասարակության բնականոն զարգացմանը միտված գործընթացներում

³² Эгидиус Курис, Доктрина разделения властей в практике Конституционного Суда Литвы. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 106:

³³ Տե՛ս G. Harutyunyan, A. Mavčič The Constitutional review and its development in the modern world (a comparative constitutional analysis), Yerevan Ljubljana, 1999, էջ 382:

անխուսափելիորեն կհանգեցնի բախումային իրավիճակների, եւ արդյունքում կխախտվի փոխյալ համակարգի ժողովրդավարացման (եթե պետությունը զարգացման անցումային փուլում է) կամ ժողովրդավարական հեղափոխական զարգացումների պարամական ընդհանուր օրինաչափությունը³⁴: Որպես այդպիսիք կարեւորվում են.

- դատական իշխանության անկախության եւ պետական իշխանության մյուս ճյուղերից դրա փարանջարման սահմանադրաիրավական ամրագրումը որպես մարդու իրավունքների պաշտպանության ապահովման կարեւորագույն երաշխիք,

- դատավորների, որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտների, սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրումը, արտակարգ դատարանների գոյության մերժումը,

- դատական համակարգի կառուցման եւ գործունեության (արդարադատության իրականացման) ընդհանուր սկզբունքների հաստատագրումը:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված դատական իշխանության գործունեության պայմանների հարկապես սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտությունը: **Նախ**՝ դատական իշխանությունը փարանջարելու եւ պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում այդ իշխանության անկախ եւ անկողմնակալ գործադրման երաշխավորվածությունը՝ փոխյալ պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական սկզբով, ապահովելու նպատակով, **երկրորդ**՝ պետական իշխանության ողջ համակարգի (այդ թվում՝ դատական) ինստիտուցիոնալ գործունեությունը միասնական սահմանադրական օրինականության, սկզբունքով կառուցելու անհրաժեշտությամբ, **երրորդ**՝ պետական իշխանության միասնական համակարգում դատական իշխանության, որպես պետության սոցիալական կարեւորագույն գործառնություն իրականացնող ինստիտուտի, կայուն շարունակականությունը, ինչպես նաեւ արդարադատության անդառնալիությունն, ապահովելու նպատակով, **չորրորդ**՝ «զսպումների եւ հակակշիռների» համակարգի գործադրման անխախտելիությունը երաշխավորելու նպատակով:

Նայաստանի Հանրապետությունում իշխանությունների փարանջարման սկզբունքը դարձավ Անկախության հռչակագրի առանցքային սկզբունքներից մեկը: Հռչակագրով պարտավորվելով Նայաստանի Հանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների փարանջարում»՝ հիմք դրվեց որակապես նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային նպատակների իրականացման երաշխիքը:

Հռչակագրային նորմերը, մինչեւ ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հեղափոխական որոշակիացումը գրան «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա): Սույն սահմանադրական օրենքով ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիրավական, իշխանությունների փարանջարման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճա-

³⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Herman Schwartz**, Packing the courts, The conservative campaign to rewrite the Constitution, New York, 1988; **Henry J. Abraham**, The judicial process, Oxford University Press, 1993; **John B. Gates**, **Charles A. Johnson**, The American Courts, A Critical Assessment, Washington D.C., 1991; King, Minimum Standards of Judicial Independence, 1984; **Russell R. Wheeler** and Cynthia Harrison« Creating the Federal Judicial System, 1994; **M. V. Tushnet**, Constitutional Law, New York U.-Press, -1992; **William Burnham**, Introduction to the Law and Legal system of the United States, St. Poul, Minn., 1999; **Williams J. S.**, Constitutional Analysis, St. Paul, 1979; **Митюков М. А.**, **Барнашов А. М.** **Очерки** Конституционного правосудия, Томск 1999, Сравнительное конституционное право, М. 1996.

նաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաև սահմանադրական այն կարեւոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միայն օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի հոդված 5-ը ամրագրեց, որ «Նայասփանի Նանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Նայասփանի Նանրապետության Նախագահն է, որը գլխավորում է ՏՏ գործադիր իշխանությունը եւ ներկայացնում է Նայասփանի Նանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման հիմքը դրեց եւ իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին **Գերագույն** խորհուրդն էր, եւ փարանջապետ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները:

ՏՏ 1995թ. Սահմանադրությունը քննարկվող հիմնախնդրի լուծման առումով ուներ, այսպես կոչված, **երեք հիմնական «թույլ օղակ»**, որոնք զգալի չափով հաղթահարվեցին սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Նախ՝ բավարար հստակեցված չէր նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները՝ բերված բոլոր չափանիշների տեսանկյունից, անհրաժեշտ գործառնական անկախություն ու դիմամիկ հավասարակշռված վիճակ չունեին, երրորդ՝ խախտված հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման կառուցակարգերն անկարար էին:

Իշխանությունների փարանջապետան սկզբունքը պետք է մեկնաբանել որպես պետական իշխանության իրական գործոնների սահմանափակում, հավասարակշռում, դրանց համագործակցություն եւ փոխկապվածություն: Պատահական չէ, որ երկրների մեծ մասը Սահմանադրությամբ ոչ թե շեշտադրումը կատարում է սկզբունքի, այլ իշխանությունների իրական փարանջապետան ու գործակցությունն ապահովելու եւ այդ հայեցակարգային մտքեցումը Նիմնական օրենքում ամրագրելու վրա: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 10-ում սահմանված է. «Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունն իրականացվում է այն օրենսդրի, գործադիրի եւ դատականի փարանջապետու հիման վրա: Օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների մարմիններն ինքնուրույն են»: Ավելին, շար երկրների սահմանադրություններում շեշտադրումը կատարվում է նաև իշխանությունների փոխկախվածության (Պորտուգալիա - հոդվ. 111), փոխգործակցության (Մոլդովա - 6), համագործակցության (Ղրղզստան - 3), հավասարակշռության (Լեհաստան - 10), հաշվեկշռվածության (Էստոնիա - 4) վրա եւ այլն: Տարաբնույթ նման մտքեցումները պայմանավորված են նաև իշխանությունների փարանջապետան չափանիշների եւ սահմանադրական այդ կարեւոր սկզբունքի տեսական մեկնաբանման ու գործնական իրացման փարբեր հայեցակարգերով: Առանձնահատուկ կարեւորվում է սահմանադրական հակակշիռների ու զսպումների հստակ սահմանումը եւ իշխանությունների սահմանադրական գործառնական, հակակշռող եւ զսպող լիազորությունների դիմամիկ հաշվեկշռի երաշխավորումը: **Սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական բնույթի լիազորություն է՝ կոչված դիմամիկայում պահպանելու իշխանությունների փարանջապետան սահմանադրական հաշվեկշիռը:** Իր հերթին, սահմանադրական զսպումը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական եւ ոչ հակակշռային բնույթի լիազորություն է՝ կոչված կանխելու իշխանությունների փարանջապետան սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չափահովելու

դեպքում: Սահմանադրական ճարտարապետության առանցքային խնդիրն էլ հենց այն է, որպեսզի երաշխավորվի իշխանության թեւերի գործառնական հավասարակշռությունը դինամիկայում: Դրա համար սահմանադրական ամեն մի գործառնական լիազորություն պետք է հակակշռված ու զսպված լինի իշխանության այլ թեւերի համապատասխան լիազորություններով:

ՆՏ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված դրույթների նորմատիվ բովանդակությունն առաջին հերթին ելնում է Նայաստանում պետական իշխանության միասնությունից. դիտարկվող նորմը հաստատագրում է իշխանության փարբեր մարմինների միջեւ իշխանական լիազորությունների սահմանազատումը, սահմանում է այդ մարմինների ինքնուրույնությունն իրենց լիազորությունների իրականացման գործում եւ նրանց՝ մեկը մյուսի իրավասության ոլորտ ներխուժելու անթույլատրելիությունը:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի շար փեսաբանների (մասնավորապես՝ գերմանացի պետականագետ Կ. Նեսսեի) կողմից իշխանությունների փարանջարման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համարեղ գործունեության կարգավորումը եւ կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի սահմանումը, դրանց իրավազորության որոշումը եւ սահմանափակումը, ընդհանուր աշխարհային կարգավորումը, պետական մարմինների իրավազորության հավասարակշռումը եւ, արդյունքում, սահմանափակ պետական իշխանության միասնականությունը³⁵: Բանն այն է, որ չի բացարձակացվում իշխանությունների փարանջարման պարագան: Տվյալ սկզբունքը ենթադրում է նաեւ գործառնական հստակեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միասնական իշխանության փարբեր թեւերի փոխգործակցություն ու հավասարակշռվածություն: Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, սրբեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների «պարպադրված» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը եւ այլն): Իր հերթին, իշխանության հավասարակշռվածության պահպանման կարեւորագույն պայման է սահմանադրական ընդդադրության եղանակով պետական իշխանությունների սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու վերականգնման գործուն համակարգի առկայությունը: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսեւորումը³⁶:

Առավել վրանգավորն իշխանության երեք թեւերից դուրս իշխանության նոր ճյուղի, այսպես կոչված, փնտրությունն են, որոնք հիմնականում արդյունք են իշխանության գործառնական կամ կառուցակարգային բաժանման շփոթի եւ քաղաքական, վարչական եւ փնտրական ուժի կենտրոնացման միջոցով կորպորատիվ կառավարման համակարգի համար կանաչ ճանապարհ են բացում³⁷: Մման մտրեցումների հիմքը գլխավորապես կառուցակարգային, այլ ոչ թե գործառնական մտրեցումն է իշխանությունների փարան-

³⁵ Տե՛ս Xecce K. Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 237:

³⁶ Մասնավորապես տե՛ս Լեհաստանի սահմանադրական տրիբունալի 1994թ. նոյեմբերի 21-ի՝ Խ 6/94 գործով որոշումը:

³⁷ Որոշ հեղինակներ նախագահական իշխանությունը խառը կառավարման ձեւի հանրապետություններում դիտարկում են որպես առանձին իշխանության ճյուղ՝ նախագահական իշխանություն: Սակայն նման

ջաբմանը: Այդ ճանապարհը չափազանց վտանգավոր է եւ ընդհանուր ոչինչ չունի իրավական ժողովրդավարության հաստատման սկզբունքների ու քաղաքացիական հասարակության արժեհամակարգային մոտեցումների հետ: Իշխանությունների տարանջաբման սկզբունքի տեսափոխության ընդհանրացումները խարսխվում են ոչ թե առանձին մտածողների (այդ թվում Ջ. Լոքի, Շ. Մոնտեսքյոյի եւ այլոց) սուբյեկտիվ ընկալումների, այլ հասարակական հարաբերությունների հիմքում ընկած օբյեկտիվ օրենքների վրա: Եթե կասկածից վեր է, օրինակ, Օհմի այն ընդհանրացումը, որ նյութի տարանջաբների ու դիմադրության միջոց գոյություն ունի որոշակի կախվածություն, ապա նույնքան կասկածից վեր է նաեւ հասարակական գիտությունների կողմից բացահայտված, մշտապես ու անհրաժեշտաբար գործող այն օրինաչափությունը, որ առանց իշխանությունների իրական գործառնության տարանջաբման ու հավասարակշռման անհնարին է իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացումը:

Մեկ այլ մոտեցմամբ (օրինակ, ըստ անգլիացի քաղաքագետ Մ. Վայլի)³⁸ խնդիրը չի սահմանափակվում օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների փոխհարաբերությունների ձեւական-իրավաբանական հեղափոխությամբ, այլ այն դիտարկվում է նաեւ իրավական, սոցիալական եւ քաղաքական ողջ համակարգի փոխգործակցության, պետության եւ հասարակության միջոց «հավասարակշռության» հաստատման առումով³⁸:

Ամենաընդհանուր գծերով կարելի է փաստել, որ միջազգային սահմանադրական պրակտիկայում ներկայումս ձեւավորվել է դիտարկվող սկզբունքի կիրառման երկու մոդել. իշխանությունների «ճկուն» եւ «կոշտ» տարանջաբում՝ կախված պետական իշխանության համակարգի բնույթից: Դրանցից առաջինը հիմնվում է օրենսդիր իշխանության գերակայությամբ իշխանությունների գործակցության վերաբերյալ Ջոն Լոքի գաղափարների վրա, իսկ երկրորդը՝ սկիզբ է առնում իշխանությունների հավասարակշռության եւ առավել հստակ տարանջաբման մասին Շ. Լ. Մոնտեսքյոյի մեկնություններից: Եվրոպական սահմանադրական եւ քաղաքական պրակտիկան հենվում է թե՛ մեկ, թե՛ մյուս մոդելի վրա, իսկ երկրորդ մոդելի առավել դասական օրինակը կարելի է տեսնել ԱՄՆ-ում:

Նշված մոդելներից յուրաքանչյուրը գործում է որոշակի պայմաններում: Այդ պայմաններն են հասարակության քաղաքական մշակույթը, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճանը, իրավական ավանդույթներն ու մտածելակերպը, հոգեբանությունը, իրավագիտության մակարդակը եւ իշխանության տարբեր ճյուղերի զարգացման միջավայրը, դրանց գործառնային եւ կառուցվածքային զարգացումների դիալեկտիկան եւ այլն:

Առանձին երկրներում վերջին տասնամյակների նկատելի միտումներից է գործադիր իշխանության հարաբերական ուժեղացումը: Այդ գործընթացը Բրիտանիայում

մոտեցմանը համաձայնել է կարելի: Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Պետության գլխի կարգավիճակն իշխանության նոր ճյուղի առկայությունն է նշանակում: Այնտեղ, որտեղ կա իշխանությունների բաժանում, այնտեղ չի կարող լինել նախագահական իշխանություն, որը չի հանրակրթում գործադիր իշխանության հետ: Հետեւաբար, Նախագահը դուրս չի մնում իշխանությունների եռաճյուղ բաժանումից, այլ տեղավորվում է այդ համակարգում: Իշխանությունների եռաթեւ բաժանման համակարգում Նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին, որն իր կողմից ձեւավորված կառավարության հետ մեկտեղ իրականացնում է գործադիր իշխանություն: Նախագահը հանդիսանում է հանրապետության գլուխը, որն իրականացնում է հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը: Նա սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում պետության ինքնիշխանության, անկախության եւ տարածքային ամբողջականության պահպանման ուղղությամբ, ապահովում է պետական իշխանության մարմինների համաձայնեցված կենսագործունեությունն ու դրանց փոխհամագործակցությունը:

³⁸ Տե՛ս **Vile M. G.** Constitutionalism and Separation of Powers. Oxford, 1967, էջեր 1-10:

բնույթագրվում է որպես անցում «կաբինետի կառավարման համակարգից» դեպի «վարչապետի կառավարման համակարգ», մի հանգամանք, որը հարկապես բնորոշ է ժամանակակից Մեծ Բրիտանիայի համար³⁹:

Մեծ Բրիտանիայում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջև հավասարակշռության խախտումը նշվում է շար ուսումնասիրություններում⁴⁰: Միաժամանակ, խորհրդարանի նկատմամբ կառավարության գերակշիռ դերակատարությունը չի վկայում պառլամենտարիզմից հրաժարվելու մասին: Խորհրդարանը պահպանում է կառավարության քաղաքականությունը վերահսկելու, ճշգրտելու եւ վավերացնելու գործառնությունները: Պահպանվում է կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև:

Գործադիր ուղղահայացի ուժեղացման նմանօրինակ գործընթացներ նկատելի են նաեւ ոչ խորհրդարանական կամ միապետական երկրների սահմանադրական պրակտիկայում: ԱՄՆ-ում նախագահական լիազորությունների բնույթի եւ ծավալի աստիճանական ընդարձակումը, հարկապես միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համարեքստում, ամերիկյան սահմանադրական իրավունքի եւ քաղաքական գիտության կողմից դիտվում է որպես ամերիկյան սահմանադրական պրակտիկայի ու բուն Մասնանադրության հիմնական բնորոշիչներից մեկը, երբ առանց սահմանադրական փոփոխությունների կենսագործվում է Նախագահի լիազորությունների ընդլայնման գործընթաց: Մի շարք ամերիկյան գիտնականներ հավաստում են, որ այդ իշխանության ընդարձակումը կարող է վրանգել ազատությունն ու ժողովրդավարությունը⁴¹: ԱՄՆ իրավունքի փեսաբաններից շարքերը լուրջ քննարկման առարկա են համարում իշխանությունների փարանջափման հարցում իրավական ու քաղաքական մոտեցումների փոխառնությունների խնդիրը՝ հաճախ ընդհուպ Գերագույն դատարանը համարելով քաղաքական ինստիտուտ⁴²: Խնդիրն այսպեղ հանգում է նրան, թե իշխանության թեւերի գործառնական դերին առնչվող հարցերը բնության առարկա դարձնելիս որքանով են փոխհամաձայնեցվում քաղաքական նպատակահարմարությունն ու սահմանադրական սկզբունքը:

Կան առանձնահարկություններ կառավարման, այսպես կոչված, կիսանախագահական ձեւ ունեցող պետություններում: Ֆրանսիական պետության համաձայն իշխանությունների փարանջափումն ամենեւին էլ չի նշանակում դրանց բաժանում (մասնատում) եւ արդյունքում պետաիշխանական գործառնության թուլացում, այլ դա միավաճ է պետական իշխանության թեւերի միջև ներդաշնակ փոխգործակցության արմատավորմանն ու դինամիկ զարգացմանը, որը երաշխիք է պետության կարողությունները հասարակության եւ անհարի շահերին ծառայեցնելու խնդրում: Ժամանակակից Ֆրանսիայում Նախագահն օժտված լինելով ընդարձակ լիազորություններով եւ որոշակիորեն հանդիսանալով նաեւ գործադիր իշխանության կրող՝ պատասխանատու չէ պառլամենտի (Ֆրանսիայի Ազգային ժողովի) առջև: Միաժամանակ, կառավարությունը Նախագահի հետ կիսելով գործադիր իշխանությունը՝ հիմնվում է պառլամենտական մեծամասնության

³⁹ St'u **Rush M.** Parliamentary government in Britain. N. Y., 1981. Политическая система Великобритании, էջեր 111, 147-153:

⁴⁰ St'u **Beloff M., Peel G.** The Government of the United Kingdom. Political authority in a changing society. L., 1980, 1981; **Сэммпсон А.** Новая анатомия Британии. М., 1975.

⁴¹ St'u Cass Sunstein. Changing Constitutional Powers of the American President. EECR, Vd 2, N4. Fall 1993, Vol 3. N1 Winter, 1994, էջ 99:

⁴² Մասնավորապես տե՛ս **Zoller E.** Splendeurs et misères du constitutionnalisme. Les enseignements de l'expérience américain // Revue du droit public. 1994. P. 177; **Peretti T. J.** In Defense of a Political Court. Princeton, N.J.: Princeton University Press, 1997. P. 73.

վրա, իսկ պառլամենտի կողմից կառավարությանն անվարձաբերություն հայտնելու դեպքում, որոշ բացառություններով, կարող է կիրառվել Ազգային ժողովն արձակելու ինստիտուտը: Բոլոր դեպքերում, եթե առկա է պետական իշխանությունների միջև լիազորությունների սահմանազատման վերաբերյալ վեճ, ապա այն լուծվում է սահմանադրական վերահսկողության կարգով այդ պետության Սահմանադրական խորհրդի կողմից:

Ուշագրավ են նաև այլ միպուսներ արեւմտաեվրոպական երկրներում: Օրինակ, Ֆինլանդիան 1992-1995 թվականների սահմանադրական բարեփոխումների արդյունքում կիսանախագահական համակարգից անցավ հանրապետական կառավարման խորհրդարանական ձևին: Միեւնույն ժամանակ Իրալիայում երեսան են եկել լուրջ մոտեցումներ հակառակ գործընթացի նկատմամբ՝ խորհրդարանականից անցում կիսանախագահական հանրապետության: Նույնաբնույթ փոփոխություն կատարվեց Սլովակիայում 2000 թվականին: Իսկ Վրաստանը 2004 թվականին գերապարտություն փոխեց կիսանախագահական կառավարման համակարգին՝ ի հակակշիռ նախագահականի:

Ակնհայտ է, որ նման միպուսները պայմանավորված են ոչ միայն իշխանությունների փոխանցարման սկզբունքի փոխաբնույթ մեկնաբանությամբ, այլև, ու առավել էս, փոխյալ երկրի պետական իշխանության համակարգի առջև ծառայած խնդիրներով: Սակայն, անկախ նրանից, թե պետական համակարգի ինչ մոդել է ընտրվել՝ նախագահական, կիսանախագահական, պառլամենտական կամ մեկ այլ ձև, միեւնույն է՝ ընդհանուր հիմնադրույթն այն է, որ իշխանությունների փոխանցարումը եւ դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի անհրաժեշտություն են, եւ, ինչպես նշվեց, այն պետք է իրականացվի **«գործառույթ - ինստիտուտ - լիազորություն»** եռամիասնության համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար **գործառնական, հակակշռող եւ զսպող** լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով՝ դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավորված պաշտպանման, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահորեն պահպանման ու սահմանադրորեն ապահովման շրջանակներում: Իրենց հերթին, իշխանությունների սահմանադրորեն հստակ փոխանցարումը, դինամիկ հավասարակշռումը եւ վերջինիս երաշխավորված պաշտպանությունը ժողովրդավարության զարգացման ու խորացման կարևորագույն նախադրյալ են: Յուրաքանչյուր երկրի համար այս լուծումներն անկյունաքարային նշանակություն ունեն նաև սահմանադրական օրինականության հաստատման, սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերի լուծման ժամանակ:

Բնականաբար, փոխյալ հարցում հայեցակարգային մոտեցումները ճշտելու համար չափազանց կարևորվում է նաև փոքրեր երկրների սահմանադրական փոփոխությունների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը: Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմանիայի, Դանիայի, Իսպանիայի, Իրալիայի, Նուսաստանի, Պորտուգալիայի Ֆրանսիայի, Ֆինլանդիայի եւ մի շարք այլ երկրների վերջին շուրջ 20 փոփոխությունների սահմանադրական փոփոխությունների, սահմանադրական օրենքների, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի ու Նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների (Լեհաստան, Սլովենիա, Չեխիա, Սլովակիա, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Արդգստան եւ այլն) նոր սահմանադրությունների ուսումնասիրությունից հետևում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ առկա են մի շարք կայուն միպուսներ.

1. նկատելի է համընդհանուր ձգտումը իշխանության ասփիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, փոփոխական) ցրման եւ ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում,

2. առավել հստակացվում են իշխանության թեւերի գործառնական լիազորությունները, դրանք ներդաշնակվում են իշխանության փոխյալ ճյուղի գործառնություններին ու ամրապնդվում են այդ լիազորությունների ինքնուրույն փնտրիման երաշխիքները,

3. խորացվում են պետաիշխանական գործառնությունների ներհամակարգային փարանջարման եւ հակակշռման միպումները (գործադիր եւ դատական իշխանությունների համակարգում),

4. հստակացվում եւ ուժեղացվում են հակակշռող ու զսպող լիազորությունները,

5. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները,

6. իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խարսխվում համագործակցության սկզբունքի եւ դիմամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա,

7. ամրապնդվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական համակարգը,

8. ակնհայտ է իշխանության թեւերի նորմափիվ-իրավարար գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա գործակցության ակփիվացումը:

Նշված ընդհանուր միպումների կողքին մեծապես կարեւորվում են նաեւ իշխանության թեւերի ինսփիպումների զարգացման, դրանց գործառնական դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը:

Նաշվի առնելով նաեւ անցումային հասարակարգերում կայուն իշխանության բացառիկ կարեւոր դերը, կարելի է միարժեք ընդունել, որ նշված այս ընդհանուր միպումները չափազանց այժմեական են մեր երկրի սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոփեցումների առումով, եւ նոր լուծումները հեփազայում նույնպես կարող են որոնվել այս համափեքսփում:

Ժողովրդավարական զարգացման ուղի բռնած ցանկացած երկրում մերժելին եւ առավել վրանգավորն այն է, երբ իշխանության փարանջարված թեւերը դիփարկվում են ոչ թե որպես իրենց գործառնական լիազորություններն անկախաբար իրականացնող իշխանություն կողո ինսփիպումներ, այլ որպես «գործիքներ» իշխանության «իրական» կողոի ձեռքին, որպիսին, որպես կանոն, ներկայացվում է պետության գլուխը: Տարածված է նաեւ այն թյուրըմբռնումը, թե իրական իշխանությունն իրականացնում է գործադիր բուրգը, իսկ պետական մյուս մարմիններն անհրաժեշտ են որպես միջոց: Անփարակույս է, որ մարդկային հասարակության մեջ նման մոդելներ նույնպես գոյություն են ունեցել եւ ունեն: Սակայն իրավունքի փեսությունը նման քաղաքական ռեժիմները վաղուց բնութագրել է որպես ոչ իրավական: Որքան էլ ժողովրդավարացման ցանկությունը մեծ լինի, միեւնույն է, այնփեղ, ուր երաշխավորված չէ իշխանությունների իրական փարանջարում, դրանց լիազորությունների իրականացման անկախության երաշխավորում եւ հակակշռների ու զսպումների օգնությամբ հավասարակշռում, անխուսափելի են անձնիշխանության փարաբնույթ դրսեւորումները՝ իրենց բացասական լուրջ հեփեւանքներով:

2. Վերոնշյալ հեփեւանքներից խուսափելու համար է, որ Սահմանադրության մեկնաբանվող հողվածի երկրորդ մասը սահմանում է իշխանության մարմինների ու պաշտոնավար անձանց իրավասությունների իրացման շրջանակը՝ բացառելու համար իշխանության չարաշահումը կամ իշխանազանցությունը: Եթե Ֆիզիկական անձինք իրավունք ունեն անելու այն ամենը, ինչն օրենքով արգելված չէ, ապա մեկնաբանվող հողվա-

ծի սուբյեկտները (պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք) կարող են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Դա պայմանավորված է առաջին հերթին իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքով: Սահմանադրության 3-րդ հոդվածի մեկնաբանության մեջ շեշտվում է, որ իրավունքի գերակայության սկզբունքի էությունը հանգում է նրան, որ պետությունը ճանաչում է մարդու բնական իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք, եւ որ իշխանությունն իրականացնելիս պետությունը եւ ժողովուրդը սահմանափակված են այդ իրավունքներով որպես անմիջական գործող իրավունքներ, որոնցով պայմանավորված է օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների գործունեության բնույթն ու բովանդակությունը: Իր հերթին իրավունքների սահմանափակման տեսության անկյունաքարային սկզբունքներից է այն, որ մարդու իրավունքների սահմանափակումը, որը բացառապես օրենքի կարգավորման առարկա է, միայն պետք է բխի այլոց իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից: Դրանից հետեւում է, որ գործնականում մարդիկ ազատ են անելու այն ամենը, ինչն օրենքով արգելված չէ:

Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործելու սահմանադրաիրավական պահանջն առանցքային նշանակություն ունի սահմանադրական օրինականության ապահովման խնդրում, առանց որի անհնարին է ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության եւ քաղաքացիական հասարակության բնականոն զարգացումը: Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», իր ելակետային բովանդակությամբ բացահայտում է ինչպես իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի, այնպես էլ իշխանության թույլատրելի շրջանակները: Դրա հիմնական բովանդակությունը հետեւյալն է.

- պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները որոշվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով (կամ դրանց հիման վրա),

- այդ լիազորությունները (գործառնությունները, իրավունքներն ու պարտականությունները) կամայական չեն եւ չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին եւ դրանց հիման վրա ընդունված օրենսդրության այլ ակտերին,

- պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն Սահմանադրությամբ, օրենքներով եւ դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ եւ ձեռնպահ մնալ այդ ակտերով չնախատեսված կամ դրանց պահանջներին հակասող որեւէ գործողությունից,

- պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց օրինական գործողություններից բխող պահանջները պարտադիր են կատարման այն սուբյեկտների համար, որոնց հասցեագրված են:

Իշխանությունների բաժանման (տարանջատման) եւ հավասարակշռման հասկացության սահմանադրաիրավական բովանդակության մեկնաբանմանը ՎՎ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր ՍԴՌ-766 որոշմամբ, նշելով, որ «... պեղական իշխանությունը հանդես է գալիս որպես պեղականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձեւ, որն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքնե-

րին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձեւավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ համապատասխան մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով եւ իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Իշխանությունների փարանջարում» հասկացությանն անդրադարձել է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում: Այսպես, գնահատելով դատարանի անկախությունը՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով, Եվրոպական դատարանը նշում է. «... Ինչ վերաբերում է գործադիր եւ դատական իշխանությունների փարանջարմանը, սպա ոչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ոչ էլ որեւէ այլ դրույթ չի պահանջում պետություններից համապատասխանեցնել իշխանությունների փոխազդեցության թույլատրելի սահմանների հետ կապված որեւէ տեսական սահմանադրական հայեցակարգ» (Klein and others v. the Netherlands, Judgment of 06 May 2003, 193): Մեկ այլ գործով Դատարանն արձանագրում է, որ կառավարության եւ դատական իշխանության միջեւ իշխանությունների փարանջարման հասկացությունը նախադեպային իրավունքում ձեռք է բերել մեծ կարեւորություն» (Stanford v. the United Kingdom, Judgment of 28 May 2002, 78): Փաստորեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատագրել է եվրոպական իրավահամակարգային բազմազանության պայմաններում պետական իշխանության փարանջարման սկզբունքի գործադրման առանձնահատուկ դրսեւորումների օրինաչափ լինելը՝ այդ սկզբունքի բուն էության անխախտելիության շրջանակներում:

Ամփոփելով՝ կարող ենք ընդհանրացնել սահմանադրորեն ամրագրելով, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, մի կողմից՝ երաշխավորվում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի իրացումը, մյուս կողմից՝ երաշխիք է ստեղծվում Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված ելակետային այն դրույթի իրականացման համար, համաձայն որի՝ պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք (տե՛ս 3-րդ հոդվածի մեկնաբանությունը):

ՆՈՂՎԱԾ 6

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն:

2. Օրենքները պեպք է համապարասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պեպք է համապարասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին:

3. Օրենքներն ուժի մեջ են մտնում «Նայասրանի Նանրապեպրության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմարիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

4. Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Նայասրանի Նանրապեպրության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախարեւում են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

5. Նորմարիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով:

1. Սահմանադրության 6-րդ հոդվածը՝ գործող խմբագրությամբ, որոշակիորեն փարբերվում է 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության փեքսփից: Մասնավորապես, առաջին մասից հանվել է օրենքի գերակայության մասին դրույթը, օրենքների եւ այլ իրավական ակտերի՝ գերակայող իրավունքին (օրենքների դեպքում՝ Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերի դեպքում՝ Սահմանադրությանը եւ օրենքներին) չհակասելու պահանջը փոխակերպվել է դրան համապարասխանելու դրական պահանջով, ճշգրտվել է օրենքների ուժի մեջ մտնելու կարգը: Նսփակեցվել են միջազգային պայմանագրերի իրավական բնույթը եւ դրանց կիրառման ռեժիմը, իսկ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերի վավերացման հնարավորությունը՝ Սահմանադրությունը փոփոխելու պայմանով, հանվել է: Դրա փոխարեն ամրագրվել է սահմանադրական իրավունքի ամբողջականության ապահովմանն ուղղված դրույթ, որի համաձայն Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Ի փարբերություն նախորդ խմբագրության, ներկայումս ոչ միայն վավերացված, այլեւ հաստատված միջազգային պայմանագրերը ՆՆ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, սակայն օրենքների համեմատ կիրառման նախապարվություն ունեն, ինչպես եւ նախկինում, միայն ԱՄ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը:

Մեկնաբանվող հոդվածը հավելվել է լրացուցիչ դրույթով, որն ուղղված է ՆՆ իրավակարգում ենթաօրենսդրական նորմարիվ ակտերի բնույթի պարզաբանմանը:

Վերը հիշարակված փոփոխությունները մասամբ ունեցել են սոսկ խմբագրական բնույթ եւ մասամբ՝ որոշակի բովանդակային:

Այսպես՝ օրենքի գերակայության երաշխավորման մասին հիշատակումը պարզապես ավելորդ կրկնություն էր Մահմանադրության (նաև ներկայիս խմբագրությամբ) 5-րդ հոդվածի համադրությամբ, որում եւ ամրագրված է օրինականության սկզբունքը՝ իր երկու բաղադրիչներով՝ օրենքի գերակայությամբ (մաս 1-ին) եւ օրենքի վերապահմամբ (մաս 2-րդ): Բացի դրանից, օրենքի գերակայության սկզբունքը գործադիր եւ դատական իշխանությունների գործունեությունում (բացառությամբ սահմանադրական դատարանի, որը կաշկանդված է բացառապես Մահմանադրությամբ) իրավական պետության (հոդված 1-ին) առանցքային ենթասկզբունքներից մեկն է: Այն նաև անուղղակի արտացոլված է(ր) նույն 6-րդ հոդվածում՝ այլ իրավական ակտերի՝ Մահմանադրությանը եւ օրենքներին չհակասելու պահանջի տեսքով:

Օրենքի գերակայության մասին հիշատակումը նույնիսկ իր տեղում չէր՝ նախորդելով Մահմանադրության գերակայության մասին դրույթին, որը եւ ընդհանուր առմամբ իր մեջ ամփոփում է իրավունքի գերակայության հիմնարար գաղափարը:

Ըստ էության, խմբագրական բնույթ ունի նաև նախորդ խմբագրության՝ Մահմանադրությանը չհակասելու անուղղակի պահանջը Մահմանադրությանը համապատասխանելու պահանջով փոխարինելը: Եթե նախորդ խմբագրությամբ շեշտվում էր դատավարական հանգամանքը՝ Մահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչվելու իրավական հետեւանքների տեսանկյունից (գերակայող իրավունքին հակասող ճանաչված ակտերն իրավաբանական ուժ չունեն), ապա ներկայումս նյութական պահանջ է սահմանվում օրենքների՝ Մահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերի՝ Մահմանադրությանը եւ օրենքներին **համապատասխանելու** վերաբերյալ: Այս ձեւակերպումն ավելի հստակ է արտահայտում ամբողջ իրավակարգի՝ Մահմանադրությանը համահունչ լինելու՝ իրավական պետության անքակտելի սկզբունքը:

Կարելի է շարունակել միջազգային պայմանագրերին վերաբերող դրույթներում. նախ, ոչ մի նորմատիվ բովանդակություն չունեցող դրույթը՝ Մահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը միայն Մահմանադրության փոփոխման դեպքում վավերացնելու վերաբերյալ, հանվել է: 2005թ. սահմանադիրը կարելի է այն, որ Մահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Ինքնին ենթադրվում է, որ Մահմանադրության հեղափոխությունը, որը, սակայն, անհրաժեշտաբար չպետք է պայմանավորված լինի դրան հակասող միջազգային պայմանագրերը վավերացնելու մտադրությամբ, կարող է հնարավոր դարձնել նաև նման պայմանագրերի վավերացումը: Սակայն դա չէ, որ ներկայումս ցանկանում է շեշտադրել սահմանադիրը:

Կարելի է նշանակություն ունի այն հստակեցումը, որ ոչ միայն **վավերացված**, այլև **հաստատված** միջազգային պայմանագրերը ՚՚ իրավակարգի բաղկացուցիչ մասն են: Մեկնաբանվող հոդվածի նախորդ խմբագրությամբ առանց որևէ տրամաբանության ՚՚ իրավակարգի մասն էին հռչակվում միայն վավերացված միջազգային պայմանագրերը, եւ այդ տրամաբանությունն անհասկանալի էր, քանզի պայմանավորված էր միջազգային պայմանագրի պարտադիրությունը ՚՚ համար հավաստող միայն մեկ եղանակի նախապատվություն տալով, այնինչ միջազգային իրավունքի տեսանկյունից միջազգային պայմանագրի պարտադիրությունը ՚՚ համար կարող էր հավաստվել նաև մի շարք այլ եղանակներով, այլ ոչ միայն վավերացմամբ: Ներկայումս սահմանադիրն այդ եղանակների համար ընտրել է ներպետական միայն երկու ձեւ՝ վավերացում եւ հաստատում:

Սահմանադրությունը՝ գործող խմբագրությամբ հստակ սահմանել է իրավական ակտերի աստիճանակարգությունը, առանձնահատուկ ընդգծելով, որ (օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող) նորմատիվ իրավական ակտերը (ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը) ոչ միայն պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին (2-րդ մաս), այլև ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց կիրառումն ապահովելու նպատակով (5-րդ մաս): Ներուսպես, սահմանադիրը հնարավոր չի գտնում, որպեսզի օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող որեւէ այլ նորմատիվ ակտ ընդունվի առանց Սահմանադրության կամ օրենքի համապատասխան վերապահման, ինչպես նաև հերապսիտի այլ նպատակ, քան Սահմանադրության կամ օրենքի կենսագործումն է:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասն ամրագրում է Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության հիմնարար սկզբունքները: Բառացիորեն խոսքը Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի եւ նրա նորմերի անմիջական գործողության մասին է:

Սահմանադրության գերակայությունն իրավական պետության այն առանցքն է, որը պայմանավորում է ամբողջ իրավակարգի կառուցվածքը եւ ներքին փրամաբանությունը: Սահմանադրությունն այն հիմնական օրենքն է, «օրենքների օրենքը», որը կառուցակարգում է ամբողջ պետությունը եւ դուրս է հանրային իշխանությունների (օրենսդիր, գործադիր եւ դատական) իրավագործությունից: Սահմանադրությունը պետության համար ունի հիմնադիր գործառույթ, այն այդ չափով վերապետական եւ մինչպետական (խոսքը նախապետական հասարակարգերի մասին չէ) ակտ է: Սահմանադրությունն եւ պետությունն փոխհարաբերություններում պետությունն ունի երկրորդային բնույթ: Ավաճող պետք չէ շփոթել իրավունքի եւ պետության ծագման փրաբեր ժամանակագրության հետ: Անգամ արդեն կայացած պետությունը, որն ուներ Սահմանադրություն, վերակազմակերպվում եւ վերահիմնադրվում է սահմանադիր իշխանության կողմից կամքով, երբ ընդունվում է նոր Սահմանադրություն կամ գործող Սահմանադրությունն էսպես փոփոխվում է:

Սահմանադրության լեգիտիմությունը պայմանավորված չէ, սակայն, միայն հանրային իշխանությունից այն ընդունող սուբյեկտի փրաբերությամբ (ընթացիկ), այլ խարսխվում է հստակապես դրա հիմնարար արժեքների նկատմամբ հնարավորինս լայն հասարակական համաձայնության վրա⁴³:

Այսպիսով, Սահմանադրության առկայությունը պայմանավորված է սահմանադիր իշխանության (pouvoir constituant) գործունեությամբ, որի ակտն է այն: Իսկ սահմանադիր իշխանությունը պետք է ունենա իր կողմը: Սահմանադիր իշխանության գործունեության արդյունքում առաջացող սահմանադրական իրավունքն արդեն իսկ իր ծագումնաբանության շնորհիվ էսպես փրաբերվում է ընթացիկ օրենսդրի կամքով ի հայտ եկող նորմերից: Դրանց առաջնայնությունը պայմանավորված է հենց հիմնադիր (սահմանադիր)-հիմնադրված (սահմանադրված) շրթայի առկայությամբ (pouvoir constituant-pouvoir constitué)⁴⁴: Սահմանադիր (հիմնադիր) իշխանությունն իր էության գերակայությունն ունի իր կողմից հիմնադրված պետության եւ դրանում հանրային իշխանության հանդեպ: Նիմադրված հանրային իշխանությունն ածանցվում է սահմանադիր իշխանությունից:

⁴³ Համեմատ.՝ Klaus Stern, Das Staatsrecht der Bundesrepublik Deutschland, Band I, München, 1984, S. 149:

⁴⁴ Սահմանադիր իշխանության (pouvoir constituant) տեսության հեղինակ է պրոֆեսոր Սիեյսը (abbé Sieyès): Նա այն տարանջատում էր սահմանադրված իշխանությունից (pouvoir constitué): Տես՝ նույն տեղում, S. 146:

Սահմանադիր իշխանությունը սահմանում է այն իրավական շրջանակները, որոնցում գործում է հանրային իշխանությունը: Սահմանադիր իշխանության գերխնդիրը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում մարդու ազատության կառուցակարգումն է արդարության պահանջներին համապատասխան: Այս շրջանակներում է, որ սահմանադիր իշխանության գործունեության արդյունքն ինքնին լեգիտիմ է: Նեպոեապես, մարդաբանական գաղափարներ եւ անազատություն ամրագրող «սահմանադրությունները» անգամ փեսականորեն չեն կարող լինել Սահմանադրություն՝ ժամանակակից ընկալմամբ:

Սահմանադիր իշխանության կրողը ժողովուրդն է՝ ինչպես իր մինչպեսական, այնպես էլ պետականության շրջանակներում կազմակերպված որակով:

Այսպիսով, Սահմանադրությունը՝ որպես սահմանադիր իշխանության կամքի արտահայտություն, ունի հետևյալ հիմնական գծերը.

ա) պետությունը կառուցակարգող ակտ է եւ պետության իրավական հիմքը.

բ) գերակա (հիմնական) օրենքն է իրավական համակարգում.

գ) քաղաքական գործընթացի (հանրային իշխանության իրականացման) համար պարտադիր արժեհամակարգ է,

դ) հանրային իշխանության լեգիտիմության հենքն է:

Սովորական իրավունքը պետք է ճանաչի Սահմանադրությունը որպես սեփական գոյության հիմք եւ ապահովի դրա կենսագործումը: Նանրային իշխանության որեւէ ակտ ինքնաբավ չէ, այն պետք է բխի Սահմանադրությունից: Այդ առումով իրավակարգը ոչ այլ ինչ է, քան ընթացիկ իրավական նորմերով Սահմանադրությամբ երաշխավորված ազատությունն իրացնելու ասփիճանակարգային համակարգ:

Բացի դրանից, ընթացիկ իշխանության ակտերը ոչ միայն պետք է բխեն Սահմանադրությունից, այլեւ պետք է համահունչ լինեն վերջինիս նորմերի բովանդակությանը: Միայն այդ դեպքում է, որ օրինական համարվող ակտերը կարող են լինել նաեւ լեգիտիմ: Եթե Սահմանադրության լեգիտիմությունը խարսխվում է, ինչպես արդեն նշվեց, դրա հիմնարար արժեքների նկատմամբ առաջացող լայն հասարակական համաձայնության վրա, ապա հանրային իշխանության լեգիտիմությունը կախված է Սահմանադրությունից: Այսպեղից է առաջանում իրավական (Սահմանադրությանը համահունչ) օրենքի հասկացությունը:

Վերը բերվածից ակնհայտ է դառնում, թե ինչով է հիմնականում պայմանավորված Սահմանադրության գերակայությունն իրավակարգում:

Սահմանադրության գերակայությունը ենթադրում է իրավանորմերի մակարդակների միջեւ փարբերակում եւ դրանով պայմանավորված՝ ասփիճանակարգություն: Սահմանադրությունը ոչ միայն նյութաիրավական առումով առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմաստեղծ ակտն է, այլեւ դատավարական առումով հանգեցնում է իր հետ հակասության մեջ մտնող իրավական ակտերի վերացվելության: Սահմանադրության գերակայությունը երաշխավորվում է հենց նույն Սահմանադրությամբ եւ ապահովվում սահմանադրական արդարադատությամբ՝ անկախ կոնկրետ երկրում ընտրված մոդելից: ՆՆ Սահմանադրության մեջ այս երկու փարբերի միասնությունն սրացել է հիմնարար սահմանադրական սկզբունքի որակ:

Սահմանադրության գերակայությունը նշանակում է ոչ միայն օրենսդրության ածանցվածություն Սահմանադրությունից, այլեւ դրա երկրորդայնություն եւ ենթակայություն Սահմանադրության դրույթներին: Նեպոեապես, Սահմանադրության գերակայու-

թյունը պահանջում է նաև օրենսդիր իշխանության (լայն իմաստով՝ նաև ցանկացած նորմատիվ իշխանության) ստորադասում պարմականորեն ձեռավորված սահմանադիր իշխանությանը: Օրինատեղծ գործընթացը գործառնական կախվածության մեջ է գտնվում նաև այն մարմնից, որի վերջնական ակտերով պարտադիր կերպով մեկնաբանվում է Սահմանադրությունը: Դա է սահմանադրական վերահսկողության էությունը: Սահմանադրությունն իրավաբանական չափագիծ (մասշտաբ) է սահմանադրական արդարադատության համար: Սահմանադրական իրավունքն արդիականացվում է եւ ձեռք է բերում կենսագործման ունակություն հենց սահմանադրական արդարադատության միջոցով:

Այսպիսով, իր կենսագործման գործիքները Սահմանադրությունն իր մեջ է պարփակում:

Սահմանադրության նորմերի անմիջական գործողության պահանջը Սահմանադրության գերակայության ուղղակի հետեւանքն է: Սահմանադրության գործողությունը չի կարող պայմանավորված լինել այն կիրառելու (իրականացնելու) վերաբերյալ որեւէ այլ իրավական ակտի առկայությամբ: Տեսականորեն Սահմանադրությունը պետք է գործի նույնիսկ այն ժամանակ, եթե այն կիրառելու վերաբերյալ որեւէ այլ իրավական ակտ գոյություն էլ չունենա: Մակայն իրականում խոսքը Սահմանադրության այն նորմերի մասին է, որոնք կարող են կատարվել առանց դրանք միջնորդավորող իրավական ակտերի: Այն, մասնավորապես, վերաբերում է սահմանադրական հիմնարար սկզբունքներին՝ Ժողովրդավարություն, իրավական եւ սոցիալական պետություն եւ այլն, ինչպես նաև մարդու այնպիսի իրավունքներին, որոնց իրականացումը չի կարող պայմանավորվել որեւէ օրենքի առկայությամբ, օրինակ՝ արժանապատվության իրավունքը (Սահմ. 14-րդ հոդվ.), ընդհանուր ազատության իրավունքը (42-րդ հոդվ. 2-րդ մաս), խոշորագումներից զերծ մնալու իրավունքը (17-րդ հոդվ.), մորթի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը (26-րդ հոդվ. 1-ին մաս) եւ այլն:

Մակայն պարզ է, որ բազում դեպքերում առանց Սահմանադրությունը կենսագործող իրավական ակտերի Սահմանադրությամբ ամրագրված դրույթների գործողությունն անհնարին է: Այսպես, Նայաստանի Նանրապետությունում օրինական հիմունքներով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Նայաստանի Նանրապետության փարածքում ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունք (Սահմ. 25-րդ հոդվածի 1-ին մաս): Օրենքն է սահմանում Նայաստանի Նանրապետության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարման կարգը (30.1-րդ հոդվ. 1-ին մաս): Այսպիսով, պարզ է, որ եթե Սահմանադրության գերակայության սկզբունքը ենթակա է անվերապահ կատարման, ապա անմիջական գործողության վերաբերյալ դրույթն ունի ավելի հարաբերական բնույթ եւ պետք է իրականացվի Սահմանադրության ավելի հատուկ դրույթների հաշվառմամբ: Բնականաբար, բացառություններն այս կանոնից որպես հատուկ դրույթներ, գերակայում են դրանկատարմամբ:

2. Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասն ամրագրում է նյութական պահանջ առ այն, որ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը եւ օրենքներին: Այս դրույթը, նախ. կոնկրետացնում է Սահմանադրության գերակայության սկզբունքը՝ անվանական մարմանը չելով այն իրավական ակտերը, որոնց հանդեպ գերակայում է Սահմանադրությունը, իսկ դրանք բոլոր մյուս իրավական ակտերն են՝ օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր-

րը, անհատական ակտերը, այդ թվում՝ վարչական եւ դատական: Միաժամանակ, սահմանադիրը սահմանում է ՏՏ իրավական համակարգում իրավական ակտերի աստիճանակարգությունը: Ընդ որում, նա կրկին սահմանափակվելով Մահմանադրության 5-րդ հոդվածով, շեշտում է օրենք չհանդիսացող իրավական ակտերի՝ օրենքներին համապատասխանելու պահանջը:

Այս սկզբունքից Մահմանադրությունը հաջորդ պարբերությունում որոշակի բացառություն է նախատեսում՝ ամրագրելով օրենքներին հակասելու դեպքում **կիրառման նախապատվություն** վավերացված միջազգային պայմանագրերի համար: Հաճախ վերջին դրույթը շփոթվում է միջազգային իրավունքի գերակայության **վերացական պահանջի** հետ: Մակայն կոնկրետ դեպքերում իրավակիրառողի կողմից՝ վավերացված միջազգային պայմանագրի նորմերի կիրառումը դրան հակասող ՏՏ օրենքի նորմի փոխարեն՝ չի ենթադրում միջազգային պայմանագրերի գերակայություն օրենքների նկատմամբ: Ի փարբերություն Մահմանադրության գերակայության, որն առկա է անկախ կոնկրետ իրավակիրառողի կողմից այն հաստատելու փաստից եւ առիթից, ու ապահովվում է հակասահմանադրական իրավական ակտերն **իրավաբանական ուժից զրկելու** միջոցով, միջազգային պայմանագրերի եւ օրենքների միջեւ հակասություն կարող է առաջանալ միայն կոնկրետ փաստական հանգամանքների հանդեպ իրավական հետեւանք կիրառելիս, իսկ այդ բախումը երբեւէ չի կարող հանգեցնել օրենքների անվավերության:

Այսպիսով, մեկնաբանվող դրույթը սահմանում է Մահմանադրության գերակայությունն օրենքների եւ այլ իրավական ակտերի նկատմամբ, եւ օրենքների գերակայությունը՝ այլ նորմադրիվ եւ անհատական ակտերի նկատմամբ: Մահմանադիրը չի անդրադառնում, այսպես կոչված, ենթաօրենսդրական իրավական ակտերի միջեւ ներքին աստիճանակարգությանը՝ այն թողնելով օրենսդրի հայեցողությանը: Մակայն մասամբ նա կանոնակարգում է նաեւ այս հարցը Մահմանադրության մեկ այլ, հարուկ դրույթում: Մահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կառավարության որոշումներն ընդունվում են Մահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմադրիվ ակտերի հիման վրա եւ դրանց կատարումն ապահովելու նպատակով: Մահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 85-րդ հոդվածի համակարգային մեկնաբանությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ.

ա) իրավական ակտերի աստիճանակարգության մեջ ՏՏ վավերացված միջազգային պայմանագրերը հավասարազոր են օրենքներին՝ պայմանագրերի կիրառման նախապատվության վերապահմամբ,

բ) ենթաօրենսդրական նորմադրիվ ակտերի աստիճանակարգությունում բարձրագույն ուժ ունեն Հանրապետության Նախագահի նորմադրիվ ակտերը, որոնք գերակայում են ոչ միայն կառավարության որոշումների, այլեւ, բնականաբար, ավելի ստորադաս նորմադրիվ իրավական ակտերի նկատմամբ,

գ) կառավարության որոշումները գերակայում են գերատեսչական նորմադրիվ ակտերի նկատմամբ:

Ավելի ցածր մակարդակում իրավական ակտերի աստիճանակարգություն սահմանելն օրենսդրի իրավասությունն է, որն իրացվել է «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքում:

3. Մահմանադրության 6-րդ հոդվածի 3-ր մասն ամրագրում է իրավական պետության կարեւորագույն սկզբունքներից եւս մեկը՝ իրավական հստակությունը: Այս դրույ-

թը պահանջում է օրենքների հրապարակում «Նայաստրանի Նանրապետության պաշտոնական տեղեկագրում»՝ դիտարկելով այն որպես դրանց ուժի մեջ մտնելու պարտադիր նախապայման: Բացի դրանից, որպես այլ նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու նախապայման՝ սահմանադիրն անհրաժեշտ է համարում դրանց հրապարակումն օրենքով սահմանված կարգով:

Իրավական պետությունում էական նշանակություն ունի հանրային իշխանության ակտերի ի հայր գալու՝ դրանց առկայության (գոյության) վերաբերյալ հստակությունը: Իրավական ակտերը պետք է ընդունված լինեն, իսկ հանրությունը պետք է իրագեկվի դրանց գոյության մասին՝ պարզաճ ընթացակարգով, որպեսզի հնարավոր լինի առանց խոչընդոտների, հուսալի կերպով հաղորդակից դառնալ դրանց բովանդակությանը (իրավական հստակություն): Ինչ վերաբերում է իրավական ակտերի բուն բովանդակությանը, ապա դրանք պետք է համապատասխանեն **որոշակիության** պահանջներին, մասնավորապես, ընկալելի լինեն հասցեատերերի համար, զերծ լինեն համակարգային հակասություններից, ջրողարկեն իրենց իրավական կարգավորումը, հնարավորություն ընձեռեն կատարել դրանք:

Այսպիսով, իրավական հստակությունը պետական առումով նախորդում է իրավական որոշակիությանը:

Սահմանադիրը ՆՆ պաշտոնական տեղեկագրի անվանման ուղղակի վկայակոչմամբ նաեւ սահմանել է այս պարբերականի պարտադիր լույս տեսնելու պահանջ:

4. Մեկնաբանվող հոդվածի մաս 4-ի դրույթները սահմանում են ՆՆ միջազգային պայմանագրերի կարգավիճակը ՆՆ իրավական համակարգում: Ինչպես նշվեց, համաձայն նշված դրույթների՝ ՆՆ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: ՆՆ Սահմանադրության հոդված 81-ի կերպ 2-ի համաձայն՝ ՆՆ միջազգային պայմանագրերը Նանրապետության Նախագահի առաջարկությամբ վավերացվում են ՆՆ Ազգային ժողովի կողմից, որի իրավասության մեջ է մտնում նաեւ դրանց կասեցումը կամ չեղյալ հայտարարելը՝ ՆՆ Սահմանադրության հոդված 81-ի կերպ 2-ի համաձայն: ՆՆ Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրերի ցանկը սահմանված է Սահմանադրությամբ եւ «ՆՆ միջազգային պայմանագրերի մասին» ՆՆ օրենքով: Վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը, ՆՆ Սահմանադրության հոդված 55-ի կերպ 7-ի համաձայն, հաստատում է, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում ՆՆ Նախագահը: Մեկնաբանվող սահմանադրական դրույթն ipso facto բացառում է մինչեւ համապատասխան ներպետական ընթացակարգերն անցնելը ՆՆ կողմից որեւէ միջազգային պայմանագրի ժամանակավոր կիրառման հնարավորությունը: Այս դրույթով է պայմանավորված նաեւ ՆՆ սահմանադրական դատարանի լիազորությունը՝ մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՆՆ Սահմանադրությանը որոշելու առնչությամբ: Մեկնաբանվող հոդվածը չի փախս պատասխան այն հարցին, թե ինչ տեղ են զբաղեցնում ՆՆ իրավական համակարգում այն միջազգային պայմանագրերը, որոնք a priori չեն կարող վավերացվել կամ հաստատվել: Խոսքը մասնավորապես վերաբերում է պայմանագիր կազմող փաստաթղթերի փոխանակման միջոցով կնքված միջազգային պայմանագրերին:

Պետք է նշել, որ մեկնաբանվող հոդվածի նշված մասում գործածվող «վավերացնել» եւ «հաստատել» եզրույթներն ունեն փոքր-ինչ այլ բովանդակություն, քան այն բո-

վանդակությունը, որը փոխադրվել է երրորդական փոստից և միջազգային իրավունքում է, մասնավորապես, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայում: Տվյալ երրորդական կոնվենցիան կոչվում է միջազգային պայմանագրերով ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային պայմանագրերով ՀՀ պարտավորված լինելու մասին համաձայնության արտահայտման ներպետական միջոցները: Մասնավորապես փոխադրվել է երրորդական փոստից և միջազգային համաձայնագրերին միանալու ինստիտուցիան, որը միջազգային իրավունքում դիտարկվում է որպես միջազգային պայմանագրերով պարտավորված լինելու համաձայնության արտահայտման ինքնուրույն եղանակներից մեկը⁴⁵: Ուստի վավերացում երրորդական մեկնաբանվող դրույթի իմաստով պետք է ներառի ոչ միայն բուն վավերացման, այլ նաև միանալու ինստիտուցիաները: Հակառակ դեպքում ստիպված ենք լինելու արձանագրել, որ ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են համարվում միայն ՀՀ կողմից ստորագրված և վավերացված պայմանագրերը, իսկ այն բոլոր պայմանագրերը, որոնց մշակման, ընդունման կամ ստորագրման գործընթացին ՀՀ-ն չի մասնակցել՝ դուրս կմնան ՀՀ իրավական համակարգի շրջանակներից:

Մեկնաբանվող հոդվածը հստակորեն սահմանում է, որ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Տվյալ համարվածում «միջազգային պայմանագիր» արտահայտությունը հստակեցման կարիք ունի: Խոսքը ոչ թե ցանկացած վերացական միջազգային պայմանագրի, այլ Հայաստանի Հանրապետության կողմից արդեն իսկ վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերի մասին է: Ընդ որում, որտեղ նշանակություն չունի, թե փոխադրված միջազգային պայմանագրերը կնքված է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կառավարության, թե Հայաստանի Հանրապետության որտեղ գերատեսչության անունից: Բոլոր նշված պայմանագրերով պարտավորություններ է ստանձնում Հայաստանի Հանրապետությունը, հետևաբար՝ դրանք պետք է դիտարկվեն որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Պետք է նշել, որ մեկնաբանվող հոդվածում խոսքը բացառապես միջազգային համաձայնագրերի է ոչ թե միջազգային իրավական այլ ակտերի, մասնավորապես, միջազգային կազմակերպությունների կամ դրանց մարմինների փաստաթղթերի՝ բանաձևերի, հռչակագրերի, հանձնարարականների, միջազգային դատական արշավների ակտերի, ինչպես նաև միջազգային քաղաքական (ոչ իրավական) փաստաթղթերի մասին է: Շատ դեպքերում հայրենական իրավական համակարգում միջազգային իրավական փաստաթղթերը, հարկապես հռչակագրերը էլ հանձնարարականները նույնացվում են միջազգային պայմանագրերի հետ: Նման միջազգային իրավական փաստաթղթերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս չեն կազմում: Մարդու իրավունքների միջազգային իրավական փաստաթղթերը, որոնք պարունակում են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմեր էլ սկզբունքներ, դիտարկվում են որպես ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս ոչ թե մեկնաբանվող հոդվածի նշված մասի, այլ Սահմանադրության հոդված 3-ի մաս 2-ի ուժով:

Լինելով ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս՝ ՀՀ միջազգային պայմանագրերը ենթակա են կիրառման ՀՀ բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց

⁴⁵ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի հոդված 11-ի համաձայն՝ «Պայմանագրով պարտավորված լինելու պետության համաձայնությունը կարող է արտահայտվել պայմանագրի ստորագրմամբ, պայմանագիր կազմող փաստաթղթերի փոխանակմամբ, պայմանագրի վավերացմամբ, դրա ընդունմամբ, հաստատմամբ, դրան միանալով կամ ցանկացած այլ եղանակով, որի մասին պայմանավորվել են»:

կողմից: ՏՏ դատարանները պարտավոր են կիրառել ՏՏ միջազգային պայմանագրերը ՏՏ օրենսդրության հետ մեկտեղ: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ միջազգային պայմանագրերը, ի տարբերություն ընդհանուր միջազգային իրավունքով ստանձնվող erga omnes պարտավորությունների, առաջացնում են inter partes բնույթի պարտավորություններ եւ պարտադիր են միայն փոխալ պայմանագրի մասնակիցների միջև հարաբերություններում: Ներառյալ, հարկապես բազմակողմ միջազգային պայմանագրերի կիրառման պարագայում, մշտապես անհրաժեշտ է հստակեցնել այն պետությունների շրջանակը, որոնց համար այն ունի պարտադիր ուժ: Ուրույն փոքր են այս հարցում զբաղեցնում մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերը, որոնք նպատակ են հետապնդում առավելապես սահմանել մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչները, որոնցից պետությունը չպետք է շեղվի, բացառությամբ միջազգային իրավունքի շրջանակներում ընդունելի դեպքերի եւ պայմանների, եւ որոնց կիրառումը, որպես կանոն, փոխադարձություն չի ենթադրում:

Նոդվածը սահմանում է նաեւ, որ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Իրավական ուժի եւ ներպետական իրավական ակտերի հիերարխիայում զբաղեցրած դիրքի փոփոխման հետ ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի նշված մասը տարբերակված մտքեցում է դրսևորում՝ ներպետական իրավական ակտերի նկատմամբ՝ հակասության պարագայում առաջնայնությամբ օժտելով Նայաստանի Նանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին: Անհրաժեշտ է նշել, որ ներպետական իրավունքի նկատմամբ վավերացված միջազգային պայմանագրերի առաջնայնության վերաբերյալ դրույթը չպետք է մեխանիկորեն կիրառվի բոլոր դեպքերում: Նման նորմերը կիրառելիս, հարկապես մարդու իրավունքների ոլորտում, ՏՏ պետական մարմինները պետք է հաշվի առնեն առավելագույն պաշտպանության վերաբերյալ դրույթի հայեցակարգը, եւ այն պարագայում, երբ ներպետական իրավունքը նախատեսում է պաշտպանության առավել բարենպաստ ռեժիմ, քան միջազգային պայմանագրով նախատեսվածը, ապա առավելություն պետք է փոխի հենց ներպետական իրավունքին:

Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Նոդվածի սույն դրույթը միանշանակ եւ իմպերատիվ եղանակով արգելում է վավերացնել ՏՏ սահմանադրական դատարանի օրինական ուժի մեջ մտնող որոշմամբ ՏՏ Սահմանադրությանը հակասող ճանաչված միջազգային պայմանագրերը⁴⁶: Նշվածը որեւէ կերպ չի կարող խոչընդոտել այն պայմանագրերի վավերացմանը, որոնցում ամրագրված են ՏՏ Սահմանադրությանը հակասող պարտավորություններ, բայց որոնց կապակցությամբ հնարավոր եւ թույլատրելի է վերապահում կատարելը՝ բացառելով վերջինիս կիրառելիությունը Նայաստանի Նանրապետության նկատմամբ եւ կանխելով հնարավոր հակասահմանադրական իրավիճակի առաջացումը: Այսպես, օրինակ, 2003թ. նոյեմբերի 18-ին ՏՏ սահմանադրական դատարանը քննության է առել Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին 1946թ.

⁴⁶ Այսպես, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչել մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջև՝ հանցագործություն կատարած անձանց հանձնման մասին 1996թ. հունիսի 4-ի պայմանագրի կամ Միջազգային քրեական դատարանի 1998թ. հուլիսի 17-ի կանոնադրության (կից հայտարարությամբ) եւ այլն, որոշ դրույթներ (ՄԳՌ-40 եւ ՄԳՌ-502 համապատասխանաբար):

կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը: Թեև նշված կոնվենցիայի 18-րդ բաժնի «գ» կետը պարունակում էր դրույթներ, որոնք կարող էին հակասության մեջ մտնել ՏՏ Սահմանադրության հետ, այդուհանդերձ, ՏՏ սահմանադրական դատարանը փոխադրված կոնվենցիան հակասահմանադրական չճանաչեց, քանի որ նշված կետի դրույթների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը նախապեստում էր հանդես գալ վերապահմամբ, ըստ որի՝ այդ դրույթները չպետք է փոխադրվեին ՏՏ քաղաքացիների նկատմամբ⁴⁷:

Մեկնաբանվող սահմանադրական դրույթը, սակայն, չի բացառում ՏՏ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրի վավերացումը՝ վավերացման խոչընդոտները վերացնող համապատասխան սահմանադրական փոփոխությունների ե/կամ լրացումների կատարման պարագայում:

5. Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված դրույթը համապարզային առումով շաղկապված է նույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի հետ: Համաձայն այս դրույթի՝ նորմարիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով: Այս դրույթն ունի առանցքային նշանակություն սահմանադրական կարգի շրջանակներում, քանզի դրանով, նախ՝ օրենքը գործառնական առումով առանձնացվում է այլ նորմարիվ ակտերից, եւ երկրորդ՝ ուրվագծվում է վերջիններիս գործառնական դերն իրավակարգում: Եթե օրենքը ոչ միայն կոչված է կենսագործելու Սահմանադրության պարտիքները, այլ նաեւ, եւ հատկապես, ազատորեն ձեւավորելու եւ ուղղորդելու հասարակական ու պետական կյանքը, ապա այլ նորմարիվ իրավական ակտերի նշանակությունն ավելի սահմանափակ է՝ դրանք պետք է ընդունվեն միայն Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ նպատակ հետապնդեն ապահովելու դրանց իրականացումը:

Օրենքների պարագայում սահմանադիրն առաջնորդվել է օրենսդրի ժողովրդավարական լեգիտիմության հանգամանքով: Նրան դնելով Սահմանադրության ընդհանուր սահմանափակումների մեջ, օրինակ՝ կամայականության արգելք, օրենքների որոշակիություն եւ այլն, պահպանել է նրա ազատությունն ակտիվորեն մասնակցելու քաղաքական գործընթացին⁴⁸: Հակառակ դրան, այլ նորմաստեղծ մարմինները՝ Հանրապետության Նախագահը, կառավարությունը, նախարարությունները, Կենտրոնական ինքնակառավարման մարմինները եւ այլն, պետք է գործեն ավելի նեղ շրջանակներում, եւ նորմաստեղծ գործունեությունն իրենց համար ինքնանպատակ չէ, այլ պետք է ուղղված լինի սահմանադրի եւ օրենսդրի կամքի կենսագործմանը: Ավանդան ամենեւեւ չի շոշափում այդ մարմինների որոշ դեպքերում լայն հայեցողությունը՝ անհատական (ոչ նորմաստեղծ) իրավական ակտեր ընդունելիս, որը, իհարկե, պետք է վերապահված լինի Սահմանադրությամբ կամ օրենքներով:

⁴⁷ Տե՛ս 1946 թվականի փետրվարի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2003թ. նոյեմբերի 18-ի ՍԳՈ-456 որոշումը:

⁴⁸ Համեմատ.՝ **Michael Sachs (Herausg.)**, Grundgesetz-Kommentar, 2. Aufl., München 2009, S. 774-775, Rn. 99.

ՆՈՂ-ՎԱԾ 7

1. Նպաստարանի Նանրապետությունում նանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը:

2. Կուսակցությունները կազմավորվում են ազարտրեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:

3. Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:

1. ՏՏ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված՝ հանրապետության սահմանադրական կարգի այդ երկու սկզբունքները՝ գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը, սերտորեն շաղկապված են: Այդ կապն ակնհայտ է դառնում, եթե հաշվի առնենք «գաղափարախոսություն» հասկացության բովանդակությունը:

Գրականության մեջ գաղափարախոսությունը բնորոշվում է որպես հայացքների, գաղափարների, հայեցակարգերի համակարգ, որն արտացոլում է մարդկանց մեծ խմբերի՝ ժողովուրդների, փարբեր սոցիալական խավերի ու շերտերի արմատական շահերը: Արժեքների, նորմատիվ պահանջների, ծրագրերի պոտենցիալ արտահայտելով այդ խմբերի որոշակի սոցիալական շահեր՝ գաղափարախոսությունը նպաստում է ավելի սոցիալական սուբյեկտի ներկայացուցիչների համախմբմանը, նրանց միավորման խթան է հանդիսանում և ծառայում որպես քաղաքական ծրագրերի գաղափարական հիմք⁴⁹: Ուստի հենց կուսակցություններն են քաղաքացիական հասարակության այն կառուցվածքային բաղադրարարները, որոնք արտահայտում են ամբողջ ժողովրդի, ինչպես նաև հասարակության փարբեր շերտերի յուրահատուկ շահերը, և այդ շահերին համապատասխան ձևավորում ու պաշտպանում են փարբեր գաղափարախոսություններ: Միեւնույն ժամանակ, իրական բազմակուսակցություն կարող է լինել միայն այն դեպքում, երբ երկրում գործող կուսակցությունները հանդիսանում են միմյանցից փարբերվող գաղափարախոսական ուղղությունների կրողներ: Ժամանակին մի շարք սոցիալիստական երկրներում (օրինակ՝ Գերմանիայի Դեմոկրատական Նանրապետություն, Նույնգարական Ժողովրդական Նանրապետություն) ձեւակնորեն գոյություն ունեին մի քանի կուսակցություններ: Սակայն դրանք բոլորն էլ միեւնույն սոցիալիստական գաղափարախոսության կրողներն էին և ընտրությունների ժամանակ հանդես էին գալիս միասնական կոալիցիայով: Այդ պայմաններում բազմակուսակցական համակարգը, ըստ էության, կրում էր ձեւական, ֆիկտիվ բնույթ:

Նարկանշական է, որ քննարկվող հոդվածում գաղափարախոսական բազմակարծության մասին դրույթն ամրագրվեց միայն 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

⁴⁹ См. в Российской социологической энциклопедия. М., 1998, стр. 143; Политология. Энциклопедический словарь. М., 1993, стр. 113-114; Новая философская энциклопедия. М., 2001, стр. 81-83; **Cris Barker**. Kultural Studies: Theory and Praktike. 3-rd edition. SAGE publications LTD. 2008, p. 73:

2. Մահմանադրության 7-րդ հոդվածի 2-րդ մասը 1-ին մասի հետ համակարգային մեկնաբանման ենթարկելիս դրանում կարելի է փարանջափել հետեւյալ իրավական դրույթները.

1) Նայասրանի քաղաքական համակարգը մրցակցային բազմակուսակցական համակարգ է, որի սուբյեկտներից են կուսակցությունները.

2) Մահմանադրությունը երաշխավորում է, որ Նայասրանում կուսակցությունները կազմավորվում են ազատորեն.

3) կուսակցությունների՝ Մահմանադրությամբ ճանաչված հիմնական գործառույթն է նպաստել ժողովրդի կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը.

4) կուսակցությունների գործունեությունը չի կարող հակասել Մահմանադրությանը եւ օրենքներին.

5) կուսակցությունների գործելակերպը չի կարող հակասել ժողովրդավարության սկզբունքներին:

Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում եւ պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար: Քաղաքական համակարգի սուբյեկտներ են համարվում պետությունը եւ քաղաքական կազմակերպությունները (կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ եւ շարժումներ): Մահմանադրությունը քաղաքական կազմակերպությունների տեսակներից Նայասրանի քաղաքական համակարգի սուբյեկտ է ճանաչում կուսակցություններին: Անձը քաղաքական համակարգում հանդես է գալիս որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացի (օրինակ՝ ընտրող, որեւէ կուսակցության անդամ, պարզամտություն թեկնածու, պարզամտոր, պետական պաշտոնյա եւ այլն): Քաղաքական համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը, որովհետեւ այն իր բնույթով հանրային իշխանություն է՝ օժտված ինքնիշխանությամբ: Ոչ մի այլ քաղաքական կազմակերպություն նման հատկություններով օժտված չէ:

Այսպիսով, կուսակցությունների՝ որպես քաղաքական համակարգի սուբյեկտի, բնորոշ գիծն ուղղակի կապն է քաղաքականության հետ, իսկ սրբեղծման եւ գործունեության անմիջական խնդիրը որոշակի քաղաքական նպատակների հասնելն է: Ներեւաբար, կուսակցություններն ընդհանուր շահերի, գաղափարների եւ նպատակների հիման վրա ձեւավորված ակտիվ ու կազմակերպված հասարակական միավորումներ են, որոնք ձգտում են իրավունքի (օրենքի) շրջանակներում փիրանալ պետական իշխանությանը կամ վճռական կերպով ազդել վերջինիս վրա՝ իրենց ծրագրերն իրագործելու նպատակով:

«Կուսակցություն» (լատիներեն *partis* բառից) հասկացությունը գոյություն է ունեցել դեռեւս Նին Նունասրանում եւ Նին Նոնում: Սակայն Նին աշխարհում կուսակցություն էին կոչվում արտոնյալ խավերի ներկայացուցիչների առանձին խմբեր (ժամանակակից իմաստով՝ «ճնշման խմբեր»), որոնք փորձում էին բարձրագույն իշխանության առջեւ ներկայացնել եւ պաշտպանել համապարասխան խմբերի նեղ հետաքրքրություններն ու շահերը: Ժամանակակից իմաստով կուսակցություններն առաջացել են բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանում: Այս առումով լիովին հիմնավոր է Ֆրանսիացի քաղաքագետ Մորիս Դյուվերժեի կարծիքն այն մասին, որ դեռեւս 1850 թվականին աշխարհի ոչ մի երկրում, բացառությամբ ԱՄՆ-ի, գործնականում քաղաքական կուսակցություններ գոյություն չեն ունեցել⁵⁰:

⁵⁰ Дюверже М., Политические партии. М., 2000, с. 21:

ՏՏ-ում կուսակցությունների լեգալ գործունեությունն սկսվեց 1991 թվականի մայիսից, երբ գործողության մեջ մտավ «Նասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՏՏ օրենքը: Մինչև 1991 թվականի ավարտն արդեն գրանցվեցին 20 կուսակցությունների կանոնադրություններ: Դա մեկ տարվա ընթացքում գրանցված կուսակցությունների ամենամեծ քանակն է: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ օրենքի ընդունման պահին Ղայաստանի Նանրապետությունում արդեն փաստացի ձեւավորվել էր գործում էին մի շարք կուսակցություններ, եւ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանց գործունեությունն ստացավ օրինական բնույթ:

Ժամանակակից պայմաններում աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում կուսակցությունները կարեւորագույն քաղաքական ինստիտուտ են հանդիսանում: Քաղաքական գործընթացներում կուսակցությունների կարեւոր դերը բացառվում է նրանով, որ քաղաքական իշխանությունը ձեւավորվում է միջկուսակցական պայքարի արդյունքում: Սակայն դա, իհարկե, չի նշանակում, որ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակցում են միայն իշխանության ղեկի մոտ կանգնած կուսակցությունները: Ժողովրդավարության պայմաններում ընդդիմադիր կուսակցությունները նույնպես ակտիվորեն մասնակցում են քաղաքականության մշակմանն ու իրականացման գործընթացին:

Ժամանակակից աշխարհում առկա կուսակցական համակարգերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ միակուսակցական (ոչ մրցակցային), երկկուսակցական եւ բազմակուսակցական:

Միակուսակցական համակարգում այդ կուսակցությունը պետության մեջ ունի մշտական դեկավար դեր՝ նա իրականացնում է բազմաթիվ, ըստ էության, պետական գործառնություններ, մասնավորապես՝ ընտրության եւ պետական ապարատի տարբեր օղակներում կադրերի տեղաբաշխում, պետական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն եւ այլն: Միակուսակցական համակարգերի օրինակներ են Ֆաշիստական եւ կոմունիստական քաղաքական ռեժիմները: Այդպիսի համակարգեր շարունակում են գոյատևել Աֆրիկայի, Ասիայի եւ Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում (Կուբա, Նյուսիսային Կորեա, Կամերուն, Գաբոն, Զայիր եւ այլն): Ժողովրդավարական երկրներում սովորաբար գոյություն ունեն բազմաթիվ կուսակցություններ: Սակայն, հաշվի առնելով կուսակցությունների քաղաքական կշիռը եւ քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը մասնակցելու հնարավորությունները՝ ժամանակակից կուսակցական համակարգերը կարելի է բաժանել երկկուսակցական համակարգերի (օրինակ՝ Անգլիա, ԱՄՆ), բազմակուսակցական համակարգերի՝ մի քանի խոշոր կուսակցությունների գերակշռմամբ (օրինակ՝ ԳԴՏ) եւ բազմակուսակցական համակարգերի՝ բաղկացած խոշոր եւ փոքր կուսակցություններից (օրինակ՝ Ֆրանսիա, Իտալիա): Սակայն մեզանում ձեւավորված կուսակցական համակարգը հնարավոր չէ դասել քաղաքակիրթ երկրներում գոյություն ունեցող որեւէ համակարգի, քանի որ մեզ մոտ դեռես չեն ձեւավորվել կազմակերպված, հստակ գաղափարներով եւ ծրագրերով զինված խոշոր կուսակցություններ, որոնք կարող էին երկկուսակցական կամ հստակ բազմակուսակցական համակարգի հիմք դառնալ:

Կուսակցությունների կազմավորման ազատության սկզբունքը ժողովրդավարության երաշխիք է: Քաղաքացիական հասարակությանը բնորոշ է մրցակցային քաղաքական համակարգը: Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգի կազմակերպման եւ գործունեության հիմնական հատկանիշներից է քաղաքական բազմազանությունը, այսինքն՝ բազմակուսակցական քաղաքական համակարգը: Ժո-

ղովորավարական հասարակություններում պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն իշխանության ձգտող փարբեր քաղաքական կազմակերպությունների անարգել մրցակցության համար: Նման հիմքերով կազմակերպված քաղաքական համակարգը, ի փարբերություն միակուսակցական քաղաքական համակարգի, անվանում են «ժողովրդավարության մրցակցային համակարգ»: Որպես ժողովրդավարության մրցակցային համակարգի կայացման երաշխիք Մահմանադրությունն ամրագրում է կուսակցությունների կազմավորման ազատության սկզբունքը:

Նայաստանի Հանրապետությունում կուսակցությունները կազմավորվում են ազատորեն՝ իրենց անդամների հիմնադիր ժողովների կամ համագումարների որոշմամբ: Հիմնադիր ժողովում (համագումարում) որոշումներ են ընդունվում կուսակցության հիմնադրման, նրա ծրագրի ընդունման, կանոնադրության հաստատման, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին: Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից:

Կուսակցությունների՝ Մահմանադրությամբ ճանաչված հիմնական գործառույթն է նպաստել ժողովրդի կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը: Ընդհանուր առմամբ, կուսակցություններն իրականացնում են մի շարք գործառույթներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ մրավոր, իմացական և գործնական-կազմակերպչական: Կուսակցությունների գործնական-կազմակերպչական գործառույթներից կարելու է հարկապես միավորիչ գործառույթը, այսինքն՝ կուսակցությունները կոչված են նպաստելու առանձին քաղաքացիների, հասարակական խմբերի մասնավոր շահերը հավաքական քաղաքական շահերի մեջ միավորելուն և արտահայտել այդ շահերը՝ վերածելով դրանք կոնկրետ պահանջների, քաղաքական ծրագրերի և գործողությունների: Այդպիսով, կուսակցություններին բնորոշ բոլոր գործառույթներից Մահմանադրությունը կարելու է հենց ժողովրդի կամքի ձեւավորման և արտահայտման գործառույթը: Այնուհայտ է, որ այդ գործառույթներն առավել արդյունավետ կարող են իրականացնել միայն խոշոր, համապարասխան կադրեր ունեցող և հասարակության մեջ հեղինակություն վայելող կուսակցությունները: Ուստի՝ կուսակցական համակարգն առավել արդյունավետ է գործում միայն այն դեպքում, երբ ձեւավորված են խոշոր, հեղինակավոր կուսակցություններ:

Թերեւս դա էր պատճառը, որ «Կուսակցությունների մասին» ՏՏ գործող օրենքում ԿԻՄ էին գրել որոշ վիճահարույց դրույթներ: Մասնավորապես, օրենքի 31-րդ հոդվածով սահմանվեց, որ. «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե՝

- ՏՏ Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրություններին չի մասնակցել.

- Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններից յուրաքանչյուրում ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ փրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ փոկոսից պակաս ձայն.

- չի մասնակցել Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով մեկ ընտրության, իսկ դրան նախորդող կամ հաջորդող ընտրության ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ փրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեկ փոկոսից պակաս ձայն»:

Պետք է նկատել, որ գործնականում այդ դրույթները կարող էին նպաստել ոչ այնքան հզոր և հասարակության մեջ վարահություն և հեղինակություն վայելող կուսակցու-

թյունների ձեւավորմանը, որքան՝ փոքր եւ միջին կուսակցությունների վերացմանը: Մինչդեռ ժամանակակից ժողովրդավարական երկրներում արդյունավետ գործում են նաեւ բազմակուսակցական համակարգեր՝ փոքր եւ միջին կուսակցությունների մասնակցությամբ: Նաշվի առնելով, որ փոքր եւ միջին կուսակցությունների վերացումը չի կարող ինքնաբերաբար ապահովել դրանց անդամների ընդգրկումը մնացած կուսակցություններում, կարծում ենք, որ արդյունավետ կուսակցական համակարգի ձեւավորումը հնարավոր չէ միայն օրենսդրական կարգավորման ոլորտում համապատասխան փոփոխություններ կատարելով:

Նգոր կուսակցություններ կարող են ձեւավորվել միայն րվյալ երկրում ազաբ եւ արդար ընտրությունների անցկացման ապահովման դեպքում: Միայն այդպիսի ընտրությունների դեպքում կվերանա Ֆինանսական եւ վարչական ռեսուրսների օգտագործման միջոցով ձայների հավաքագրումը, եւ կուսակցությունները, սրիպված, կձեւակերպեն հանրային ու պետական քաղաքականության իրենց քարքերակները, կորոշեն իրենց ընտրագանգվածը եւ կկատարեն ամենօրյա ակտիվ աշխատանքներ:

Օրենքի քննարկվող դրույթներով, միեւնոյն ժամանակ, էականորեն սահմանափակվում էր քաղաքացիների միավորման իրավունքը: Նենց դա էր պատճառը, որ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի առիթով քննելով գործը՝ ՏՏ սահմանադրական դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՄԴՈ-669 որոշմամբ⁵¹ ՏՏ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին եւ 43-րդ հոդվածին հակասող ու անվավեր ճանաչեց «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքի վերը նշված դրույթները: Միաժամանակ, Սահմանադրության 31-րդ հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչվեց նույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Նայատանի Նանրապետությանը»:

Սահմանադրական դատարանը գրավ նաեւ, որ «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքի բերված դրույթների շրջանակներում օրենսդրի կողմից ոչ միայն հետետողականություն չի դրսետրվել սահմանադրական դրույթների օրենսդրական երաշխավորումն ապահովելու ուղղությամբ, այլեւ օրենքում տեղ են գտել նորմեր, որոնք շեղվում են սահմանադրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես, գործող օրենքով առավել հեշտացվել են կուսակցությունների գործունետության արգելման ընթացակարգերը՝ շրջանցելով սահմանադրական դատարանը: Փաստորեն, Սահմանադրությամբ նախատեսված՝ միավորումների (կուսակցությունների) ազատության սահմանափակումները «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքում դառնում են լուծարման ճանապարհով այդ ազատության արգելափակման միջոց: Դա առավել ներգործում է դառնում, երբ օրենքի նորմերը, դրանց հնարավոր փոփոխությունները գործադրվում են, այսպես կոչված, վերագրանցման ինստիտուտի պարագայում (իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքի գործողության մեջ մտնելու պահից րվյալ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ընդհանուր իրավատության դատարանների վճիռներով լուծարվել է 49 կուսակցություն): Բացի դրանից, տարբերություն չի դրվում կուսակցության գրանցման եւ դրա գոյությունը որպես իրավաբանական սուբյեկտի, դադարեցնելու միջեւ: Միջազգային պրակտիկան վկայում է, որ եթե կուսակցությունը, որպես այդպիսին, պետական համապատասխան գրանցամատյանում չի ներառվել, ապա այն շարունակում է իր գործունետությունը որպես ընդհանուր միավորում, ինչպես նաեւ նա պետք է պահպանի իր սեփականությունը»:

⁵¹ ՀՀՊՏ 17.01.07./4(528), հմդ. 32:

Այսպիսով, Մահմանադրությունը ժողովրդի կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելը կուսակցությունների հիմնական գործառնությունն է՝ փորձում է խելամիտ հավասարակշռություն հաստատել քաղաքական համակարգում, քանի որ բազում կուսակցությունների առկայությունը կարող է ոչ թե նպաստել ժողովրդի կամքի ձեւավորմանը եւ արտահայտմանը, այլեւ, ընդհակառակն՝ դրա փոշիացմանը: Ներառալ օրենսդրական կարգավորումը պետք է փորձի գտնել նժարների այնպիսի հավասարակշռություն, որպեսզի, մի կողմից, թույլ չտա կուսակցությունների ստեղծման ազատության սահմանադրական սկզբունքի խախտում եւ դրանով իսկ՝ բազմակուսակցական, մրցակցային քաղաքական համակարգի խաթարում, իսկ մյուս կողմից՝ պետք է կանխի բազում կուսակցությունների ստեղծման միջոցով ժողովրդի կամքի փոշիացումը եւ սոցիալա կան մանիպուլյացիան:

Կուսակցությունների գործունեությունը չի կարող հակասել Մահմանադրությանը եւ օրենքներին: Շար երկրներում չկան կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների մասին օրենքներ: Միեւնույն ժամանակ, արդի քաղաքական համակարգերում կուսակցությունների դերի բարձրացումը հանգեցրել է նրան, որ մի շարք այլ պետություններում սահմանադրությամբ եւ օրենքներով մանրամասն կարգավորվում են կուսակցությունների ձեւավորման եւ գործունեության ընթացքում ձեւավորվող հասարակական հարաբերությունները: Ն-ում կուսակցությունների ձեւավորման եւ գործունեության ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները մանրամասնորեն կարգավորված են Ն Մահմանադրությամբ եւ ընթացիկ օրենսդրությամբ: Մահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված դրույթներն ավելի ընդարձակ ու մանրամասն կարգավորում են ստացել «Կուսակցությունների մասին» Ն օրենքում⁵², որի բովանդակությունից հետեւում է, որ դրանում ամրագրվում են կուսակցությունների ստեղծման պայմաններն ու կարգը, դրանց կառուցվածքը, իրավունքներն ու պարտականությունները, դրանց վերակազմակերպման, լուծարման եւ գործունեության արգելման կարգը եւ այլն:

Եթե կուսակցությունները խախտում են օրենքները, ապա Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը կարող է որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Կասեցնել կուսակցության գործունեությունը՝ նշանակում է նրան արգելել իրականացնել օրենքներով նախատեսված իր իրավունքները որոշակի ժամկետով: Կուսակցության գործունեությունը կասեցնելուց հետո այդ կուսակցությունը պարտավոր է վերացնել օրենքի խախտումները: Արգելել կուսակցության գործունեությունը՝ նշանակում է ընդհանրապես չթույլատրել նրա գործունեությունը:

Կուսակցությունների գործելակերպը չի կարող հակասել ժողովրդավարության սկզբունքներին: Մահմանադրական այս դրույթն ամրագրում է կուսակցությունների գործունեության եղանակի, կերպի, ձեւի ժողովրդավարականության պահանջը, որն ուղղված է եւ՝ օրենսդրին, եւ՝ կուսակցություններին: Այս դրույթի ուժով Մահմանադրության բովանդակային մասի են վերաձվում ժողովրդավարության համընդհանուր ճանաչում գրած սկզբունքները, այն է՝ ազատություն (անձնական, քաղաքական, փոքրամասնական), իրավահավասարություն, սահմանափակ, սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետություն, պետության հիմնական մարմինների ընտրովիություն եւ նրանց հաշվեքվությունն ու պարասխանաբարություն, որոշումների ընդունում մեծամասնության կամքով՝ փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ՝ հրապարակայնություն եւ թափանցիկություն, իրավական օրինականություն, փոքրամասնական, քաղաքական, գաղափարական բազմազանություն եւ մրցակցություն եւ այլն:

⁵² ՀՀՊՏ 2002/34 (209)

3. Կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնության պահանջը սահմանադրական մակարդակ բարձրացնելը նպատակ է հետապնդում ապահովելու հասարակության կարեւորագույն այդ քաղաքական ինստիտուտների լիիրավ, ազատ ու անկաշկանդ գործունեությունը: «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Կուսակցությունը անհատական անդամության հիման վրա սրբեղծված հասարակական միավորում է, որի գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է»: Կուսակցությունը չի կարող լինել որեւէ մարմնի կցորդը կամ կամակապարը: Այն ժողովրդավարական սկզբունքների հիման վրա գործող քաղաքական մարմին է, որը պետաիրավական լուրջ գործառույթ ունի, եւ ոչ միայն ցանկություն, այլեւ անհրաժեշտ կարողունակություն պետք է ունենա քաղաքական իշխանություն ստանձնելու եւ այն կրելու համար: Իսկ դա հնարավոր է միայն հստակ գաղափարախոսության շուրջ միավորված մարդկանց համարել ջանքերով ու միջկուսակցական առողջ մրցակցության պայմաններում: Վերջինս ենթադրում է բոլոր կուսակցությունների համար գործունեության միասնական իրավական դաշտ ու նյութական ապահովման օրինականություն ու թափանցիկություն:

Նիշյալ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ կուսակցության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, նվիրաբվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից եւ օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Ընդ որում, կուսակցության կողմից ստացված, ինչպես նաեւ նրա սեփական միջոցների հաշվին սրբեղծված եւ (կամ) ձեռք բերված գույքի սեփականատերը կուսակցությունն է: Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի կամ դրա մասի նկատմամբ եւ պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար: Կուսակցությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ կուսակցության դրամական միջոցները ձեւավորվում են՝

1) անդամակցության վճարներից, եթե դրանք նախատեսված են կուսակցության կանոնադրությամբ.

2) նվիրաբվություններից.

3) օրենքով նախատեսված կարգով բյուջեփայլի ֆինանսավորումից.

4) քաղաքացիական իրավական գործարքներից եւ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից:

Ընդ որում, չի թույլատրվում նվիրաբվություններ (հոդվ. 25)՝

1) բարեգործական եւ կրոնական կազմակերպություններից, ինչպես նաեւ նրանց հիմնադրած կազմակերպություններից.

2) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ այդ մարմինների կողմից սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

3) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներից ու կազմակերպություններից, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հիմնադրված կազմակերպություններից.

4) պետական կառավարչական հիմնարկներից.

5) պետական ոչ առեւտրային կազմակերպություններից.

6) նվիրարվության կարարման օրվանից մինչև վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձանցից.

7) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնեմասերը, փայլը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայտհավաք) կապիտալում 25 տոկոսից ավելի է.

8) միջազգային կազմակերպություններից եւ միջազգային հասարակական շարժումներից.

9) անանուն անձանցից:

Կուսակցությունների պետական ֆինանսավորումը կարարվում է Նայաստանի Նանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Պետական բյուջեից միջոցներ հարկացվում են այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի առնվազն 3 տոկոսը:

Պետական բյուջեից կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հարկացվող միջոցները կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում են Ազգային ժողովի վերջին ընտրություններում համամասնական ընտրակարգով նրանց ստացած ձայներին համամասնորեն:

Այս ամենի օրենսդրական հստակ կանոնակարգումը նպատակ ունի նաև ընտրական գործընթացներում երաշխավորել հավասար ընտրական իրավունքի սկզբունքը:

ՆՈՒՎԱԾ 8

1. Նայաստանի Նանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը:

2. Նայաստանի Նանրապետությունում երաշխավորվում են փոփոխական գործունեության ազատությունն ու ազատ փոփոխական մրցակցությունը:

1. ՏՏ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների բաժնում ամրագրված սույն հոդվածը ելակերպային նշանակություն ունի փոփոխական հարաբերությունների սահմանադրաիրավական կանոնակարգման համար: Սեփականության իրավունքի ճանաչումը, պետության պարտավորվածությունն այդ իրավունքը պաշտպանելու, ինչպես նաև փոփոխական գործունեության ազատությունն ու ազատ փոփոխական մրցակցությունը երաշխավորելու հարցերում պայմանավորում են արտադրահարաբերությունների բնույթը, փոփոխական ոլորտին առնչվող իրավակարգավորումների ընդհանուր փորձաքննությունն ու ուղղվածությունը:

Տնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքում ընկած են երկրի ինքնիշխանության, սեփականության ձեւի, փոփոխական գործունեության ազատության եւ ազատ փոփոխական մրցակցության, շրջակա միջավայրի պաշտպանության, մարդու աշխատանքի իրավունքի եւ սոցիալական պաշտպանվածության սահմանադրական սկզբունքները:

Տնտեսական հարաբերություններն ունեն **օբյեկտիվ բնույթ**, կախված չեն մարդկանց կամքից ու սուբյեկտիվ ցանկություններից, առաջանում են դրսևորվում են անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայության դեպքում: Նասարակությունը եւ պեպությունը անտեսական հարաբերությունների բնույթի վրա կարող են ազդել միայն անտեսական օբյեկտիվ օրենքները ճանաչելով եւ դրանք պայմանավորող նախադրյալների վրա խելամիտ ներգործելով: Օրինակ, չի կարող շուկայական մրցակցության օրենք գործել առանց մասնավոր սեփականության առկայության եւ սեփականության բազմաձեւության, ինչպես նաեւ՝ առանց շուկայական անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայության:

Ժողովուրդների պարմության ընթացքում միշտ էլ օրակարգի հարց է եղել, թե պեպությունն ի՞նչ ազդեցություն ունի եւ կարող է ունենալ անտեսական հարաբերությունների վրա: Նամայնավարական անտեսական հարաբերությունների պայմաններում (ԽՍՀՄ եւ սոցիալիստական այլ երկրներ) արտադրության միջոցների՝ գլխավորապես պեպական սեփականության հիմքի վրա ձեւավորվեցին պեպության կողմից կենտրոնացված կառավարվող անտեսական հարաբերություններ, որոնք պարմական կարճ ժամանակահատվածում դրսևորեցին իրենց ոչ կենսունակ լինելը եւ համակարգային փլուզումների պարճառ դարձան: Պարմության դասերը վկայում են, որ սեփականության բազմաձեւության հիմքի վրա խարսխված ազատ շուկայական անտեսական հարաբերություններն այլընտրանք չունեն: Դրանք հասարակության ակտիվ ու ներդաշնակ գարգացման գլխավոր նախապայմանն են:

Սակայն դա չի նշանակում, թե հասարակությունը եւ պեպությունը պասիվ դիրքորդի դերում են հանդես գալիս: Պեպությունը կարող է եւ ունի բազմաթիվ անտեսական լծակներ հասարակական հարաբերությունների այս ոլորտի վրա ներազդելու համար: Սակայն այդ ազդեցությունը պեպք է լինի օբյեկտիվ անտեսական օրենքների պահանջների գիրակցմամբ եւ խելամիտ անտեսական մրցակցություն երաշխավորելու անհրաժեշտությունից ելնելով: Այն երբեմիցե չպեպք է փոխարինվի վարչարարության եւ պեպական իշխանության թելադրանքի, որի պայմաններում անտեսական հարաբերություններում ի հայտ են գալիս բազմաբնույթ անհամամասնություններ, եւ իջնում է հասարակական արտադրության արդյունավետությունը:

Նասարակության անտեսական հարաբերությունների հիմքը **սեփականության ձեւն** է: Սեփականության իրավունքը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր անտեսական ու քաղաքական համակարգի էության, անձի իրական ազատությունների երաշխավորման հիմնական բնութագրիչ: Սեփականությունն ինքնին հարաբերություն է, բնութագրում է արտադրության միջոցի, կոնկրետ գույքի անօրինման, փիրապեպման ու օգտագործման նկատմամբ անձի կամ անձանց խմբի իրավունքն ու պարտականությունը: Ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող բոլոր երկրներում սեփականությունը հանդես է գալիս հիմնականում **մասնավոր եւ հանրային սեփականության** ձեւով: Մնացած բոլոր ձեւերը (կոլեկտիվ, նահանգային, համայնքային եւ այլն) դրանց արտապեսակ դրսևորումներն են:

Հանրային սեփականության իրավունքի սուբյեկտներ կարող են լինել, օրինակ, պեպությունը՝ ամբողջապես, նրա ինքնավար սուբյեկտները, րեդական ինքնակառավարման մարմինները:

Մասնավոր սեփականության իրավասուբյեկտ կարող է լինել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Սեփականության այս ձեւը կարող է հանդես գալ ինչպես մասնավոր, այնպես էլ կոլեկտիվ, խառը եւ այլ ենթաձեւերով:

Նասարակական պրակտիկայում հնարավոր է նաև սեփականության այս ձևերի վերափոխում՝ հանրայինից՝ մասնավորի (սեփականաշնորհում) եւ մասնավորից՝ հանրայինի (ազգայնացում):

Նասարակության կայուն եւ ներդաշնակ զարգացման համար բացառիկ կարևոր է, որպեսզի թե՛ փնտրեսական հարաբերությունների բնույթը եւ թե՛ **սեփականության ձևերի վերափոխման նախադրյալներն ու կարգը սահմանադրական լուծում ստանան, ճանաչվեն որպես հասարակական համաձայնությամբ ամրագրված կյանքի հիմնական կանոն** ու այդ սկզբունքային լուծումների հիման վրա դառնան օրենսդրական կարգավորման առարկա:

Նայաստանը 1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակագրում ամրագրեց. «Նայաստանի Նանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր փնտրեսավարման սկզբունքները եւ կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային եւ մաքսային ծառայություններ»: Ակնհայտ է, որ նման ձեւակերպումը ներառում է ինչպես փնտրեսական հարաբերությունների արմատական վերափոխման, այնպես էլ պետության ինքնիշխանության ամրապնդման նախադրյալներ (ինքնուրույն փնտրեսավարման սկզբունքների ու կարգի որոշում, սեփական դրամ եւ այլն):

Նայաստանի համար բացառիկ կարևոր դեր ունեցավ 1990թ. հոկտեմբերի 31-ի՝ «Նայաստանի Նանրապետությունում սեփականության մասին» օրենքը (որն ուժը կորցրեց միայն 01.01.1999թ.՝ ՏՔ քաղաքացիական նոր օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո), որի նպատակն էր, մինչեւ հանրապետության քաղաքացիական օրենսդրության համակարգումը, ապահովել շուկայական հարաբերությունների ձեւավորման ու զարգացման իրավական հիմքերի ստեղծումը, փնտրեսական համակարգի եւ սեփականարիական հարաբերությունների ամրապնդումն ու փարբեր ձեւերի զարգացումը:

Նասարակության փնտրեսական հարաբերությունների բնույթը, դրանց դրսևորման սահմանադրական սկզբունքները հեղափոխում ամրագրվեցին 1995թ. ընդունված Նայաստանի Նանրապետության Մահմանադրության մեջ, որի «Մահմանադրական կարգի հիմունքները» գլխի (1) 8-րդ հոդվածում սահմանվեց. «Նայաստանի Նանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սեփականարերը իր հայեցողությամբ փրապետում, օգրագործում եւ փնտրինում է իրեն պարկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պարճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անճանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը: Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազար զարգացումը եւ հավասար իրավական պաշտպանությունը, փնտրեսական գործունեության ազարությունը, ազար փնտրեսական մրցակցությունը»:

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում այդ նորը Մահմանադրության մեջ ներկայացվեց վերոնշյալ խմբագրությամբ: Իսկ Մահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում ամրագրեց, որ՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փրապետելու, օգրագործելու, փնտրինելու եւ կրակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պարճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անճանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը»:

Նման փոփոխության հիմնական նպատակն այն էր, որպեսզի փարանջարվեր Մահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրվող նորմ-սկզբունքը մարդու կոնկրետ իրավունքներից: Այսուհանդերճ, Մահմանադրությունը մեկ մի-

ասնական օրգանական ամբողջականություն է, եւ առկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից պարզորոշ ուրվագծվում են հանրապետությունում ձեւավորվող նոր ւնրտեսական հարաբերությունների հիմնական սկզբունքները.

առաջին՝ պետությունը ճանաչում է սեփականության իրավունքը՝ առանց որեւէ խտրականություն դնելու դրա ձեւերի միջեւ,

երկրորդ՝ պետությունը սահմանադրորեն երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով կայուն ւնրտեսական համակարգի ձեւավորման, երկարաժամկետ ներդրումների եւ արդյունավետ ւնրտեսական մրցակցության համար,

երրորդ՝ սեփականատերն օժտված է իրեն պարկանող գույքի փրապետման, օգտագործման եւ ւնրօրինման ամբողջական իրավունքով եւ ազատությամբ,

չորրորդ՝ հստակեցված են սեփականության իրավունքի՝ քաղաքացիական հասարակությանը բնորոշ ազատ դրսետրման շրջանակները,

հինգերորդ՝ պետությունը սահմանադրական երաշխիքներ է ապահովում սեփականության բոլոր ձեւերի ազատ զարգացման եւ հավասար իրավական պաշտպանության, ւնրտեսական գործունեության ազատության, ազատ ւնրտեսական մրցակցության համար, որոնք շուկայական ւնրտեսական հարաբերությունների հիմնաքարն են:

Տնրտեսական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը ոչ միայն կանոնակարգվում են հանրապետության Տիմնական օրենքի «Սահմանադրական կարգի հիմունքները» բաժնում, այլեւ՝ որպես մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների դրսետրման կարեւոր ոլորտ, ամրագրվում են նաեւ Սահմանադրության՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» բաժնում: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի վերը հիշարակված՝ ՏՏ Սահմանադրության 2-րդ գլխի 31-րդ հոդվածը, որում, մասնավորապես, սահմանված է նաեւ, որ.

«Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախարեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կարարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհարուցմամբ:

Տողի սեփականության իրավունքից չեն օգրվում օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախարեսված դեպքերի:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»:

Դժվար չէ նկարել, որ սահմանադրական այս նորմը կայուն նախադրյալներ է ստեղծում հանրապետությունում ձեւավորվող նոր ւնրտեսական հարաբերությունների արմարավորման համար, այդ թվում.

առաջին՝ նախարեսված է սեփականության իրավունքի պաշտպանության ամուր սահմանադրական երաշխիք, համաձայն որի՝ սեփականությունից կարող է գրկել միայն դատարանը՝ օրենքով նախարեսված դեպքերում,

երկրորդ՝ առանձնահատուկ մոտեցում է դրսետրվել պետության կողմից սեփականության իրավունքի նկարմամբ հնարավոր ոտնձգությունների կանխման եւ, մասնավորապես, մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ստեղծելու հիմնահարցի առնչությամբ՝ ամրագրելով, որ սեփականության օտարումը՝ հասարակության եւ պետության կարիքների համար, կարող է կարարվել միայն. ա) բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, բ) օրենքով սահմանված կարգով, գ) նախնական համարժեք փոխհարուցմամբ,

Երրորդ՝ առանձնահատուկ վերաբերմունք է որդեգրվել հողի՝ որպես կարևորագույն արտադրության միջոցի, սեփականության իրավունքի հարցում. այդ իրավունքից չեն կարող օգրվել օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

չորրորդ՝ մերավոր սեփականության պաշտպանության խնդիրը բարձրացվել է սահմանադրական մակարդակի (առավել մանրամասն տե՛ս Սահմանադրության 31-րդ հոդվածի մեկնաբանություններում):

Տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմունքները ներառում են նաեւ այն մեխանիզմներն ու ինստիտուտներն համակարգը, որոնք լիազորված են ապահովել այդ հարաբերությունների վերարտադրությունն ու զարգացումը: Մասնավորապես, դա վերաբերում է Հանրապետության Նախագահին, որն իրականացնում է ՀՀ Սահմանադրության պահպանումը եւ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովումը (հոդվ. 49), ՀՀ Ազգային ժողովին՝ որպես օրենսդիր իշխանության կրողի, ՀՀ կառավարությանը, որն իրականացնում է գործադիր իշխանությունը: Վերջինիս է, մասնավորապես, վերապահված Հայաստանի Հանրապետությունում պետական սեփականության կառավարման, ֆինանսարտերեսական, վարկային եւ հարկային միասնական պետական քաղաքականության իրականացման իրավասությունը (հոդվ. 89):

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. մարտի 18-ի ՍԴՌ-741 որոշման մեջ (կետ 6) արձանագրել է, որ, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի առաջին մասի՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը» դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44-րդ հոդվածներ, 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր, 89-րդ հոդվածի 3-րդ կետ, 105 եւ 105.1-րդ հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

Սահմանադրությունը հասարակության ժողովրդավարական ինքնուրույն համակարգ է ճանաչում **տեղական ինքնակառավարումը**, որն ամենից առաջ ենթադրում է սահմանադրական հստակ վերաբերմունք համայնքային սեփականության եւ դրա իրավունքի իրացման կարգի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 105-րդ հոդվածում ամրագրված է. «Համայնքի սեփականությունը կառավարելու եւ տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու եւ համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ...»: Այստեղ ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն համայնքային սեփականության սահմանադրորեն ճանաչմանը, այլեւ այն բանին, որ տեղական ինքնակառավարման ինստիտուտների ձեւավորման նպատակը հենց պայմանավորվում է այդ սեփականության տնօրինման եւ համայնքային նշանակության հարցեր լուծելու խնդրով: Սահմանադրությունը հատուկ կարևորում է տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ բնույթը համայնքային մակարդակում՝ որպես տեղական ինքնակառավարման սկզբունքի հստակ իրականացման կարևոր երաշխիք:

2. Տողվածի 2-րդ մասում ամրագրված են փնտրական կյանքի երկու հիմնարար սկզբունքները՝ փնտրական գործունեության ազատությունը և ազատ փնտրական մրցակցությունը, որոնք պետք է երաշխավորվեն Նայասփանի Նանրապետությունում: Սեփականության իրավունքի հետ մեկտեղ, այդ սկզբունքները նախադրյալ և պայման են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, մարդու ազատության փնտրական հիմքն են:

Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական փնտրության հիմնարար սկզբունքն է, որը, 8-րդ հոդվածում ամրագրված այլ դրույթների հետ մեկտեղ, հանդես է գալիս որպես ազատական փնտրական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալ: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված փնտրական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկափրակական գործունեություն:

Ձեռնարկափրակական գործունեությունը հանդես է գալիս որպես ձեռնարկափրակ գրանցված անձի ինքնուրույն, իր շիսկով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, սպրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Ձեռնարկափրակական գործունեությունը կարող է արտահայտվել ձեռնարկություններ ստեղծելով, վերակազմակերպելով, քաղաքացիական-իրավական պայմանագրեր կնքելով, ստացած արդյունքն ազատորեն փնտրիներով, շահույթ ստանալով: Իր բնույթով այդ գործունեությունը կարող է լինել արտադրություն, առևտուր, բանկային գործունեություն, բորսա, ծառայության մատուցում, սպասարկում և այլն:

Տնտեսական ազատության սկզբունքը պետության վրա դնում է որոշակի պարտականություններ՝ ուղղված դրա երաշխավորմանը: Շուկայական փնտրությունում սպրանքների և ծառայությունների գները որոշվում են ազատ՝ արտադրողների առաջարկի և սպառողների պահանջարկի հիման վրա: Տնտեսական օրինաչափությունները պահանջում են, որ սեփականատերերը լինեն ազատ և ինքնուրույն, առանց պետական միջամտության որոշեն, թե ինչ են արտադրելու, ինչ քանակով և ինչ գներով են իրացնելու շուկայում: Սակայն շուկայական փնտրությունը երբեմն կարող է վերածվել քառսի: Այսպես արդեն կարեւորվում է պետության դերը, որը, պահպանելով շուկայական փնտրության հիմունքները, ստանձնում է փնտրության կարգավորման գործառնությունը: Պետությունը սահմանում է փնտրական կյանքը կարգավորող իրավական նորմերը՝ մի կողմից ամրագրելով և երաշխավորելով շուկայական փնտրության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից որոշելով «խաղի կանոնները» փնտրատարող առանձին սուբյեկտների համար: Ինչպես նշվեց, պետության կարևոր պարտականությունն է նաև նախադրյալներ ստեղծել, ձեռնարկել անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ շուկայական փնտրական հարաբերությունները պայմանավորող օբյեկտիվ փնտրական օրենքների գործողությունը երաշխավորելու համար:

Միաժամանակ, ազատ փնտրական գործունեության իրավունքը բացարձակ չէ, քանի որ դրա չարաշահումը լի է սոցիալական պայթյունով: Պետությունը պետք է ոչ միայն երաշխավորի այդ ազատությունը, այլև կարգավորի դրա իրացումը՝ փնտրությանը փակելով կայուն զարգացման կողմնորոշում: Ձեռնարկափրակ ազատությունը չպետք է ծնի կամայականություն: Ուստի պետությունը պետք է պաշտպանի սպառողների շահ

հերը, ընդունի օրենքներ, որոնք կոչված են կանխելու հնարավոր չարաշահումները ձեռներեցների կողմից, իր ձեռքում պահի անհրաժեշտ կարգավորիչ փոփոխական լծակներ: Պետությունը նաև պարտավոր է պաշտպանել շրջակա միջավայրը ձեռներեցների գործունեությունից: Այդ տեսանկյունից ժամանակակից քաղաքացիական հասարակության փոփոխությունը բնորոշվում է որպես սոցիալական-շուկայական փոփոխություն, որի պայմաններում կարող են սահմանափակվել ձեռնարկավորական գործունեություն իրականացնող սուբյեկտների ազատությունները՝ պայմանավորված այդ գործունեության սոցիալական հետևանքներով: Այդ սահմանափակումը կարող է բխել փոփոխական աղետների, սոցիալական բախումների (սեփականատերերի եւ վարձու աշխատողների միջև) կանխման, սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Այդ նպատակով պետությունը կարող է վերահսկել աշխատավարձերի չափերը, արտադրանքի որակը, պայքարել շուկայում հնարավոր մենաշնորհների, փոփոխության «սրվերացման» ու քրեականացման դեմ:

Պետության այդ պարտականություններին «թղթակցում» է փոփոխավորողների իրավունքը՝ պահանջելու պետությունից պաշտպանել իրենց չափից դուրս հարկումից, պետական պաշտոնյաների կոռուպցիայից, կազմակերպված հանցագործությունից: Որքան իրական եւ ամուր են այդ երաշխիքներն այս ոլորտում, այնքան բարձր են փոփոխական զարգացման արդյունքները, հետևաբար՝ եւ ժողովրդի կենսամակարդակը:

Ինչպես խորհրդային հասարակության պարմությունը, այնպես էլ համաշխարհային փորձը վկայում են, որ երկրի փոփոխական բարգավաճման համար լավագույն պայմաններ ու հնարավորություններ ստեղծում է ազատ փոփոխական մրցակցությունը: Պետությունը պետք է ապահովի ազատ մրցակցություն, թույլ չտա որեւէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման մենաշնորհ: Մրցակցության միջոցով արդյունավետորեն ներդաշնակվում է ձեռնարկավորների անհարակալ գործունեությունը՝ առանց հարկադրանքի եւ իշխանությունների միջամտության:

Թվարկված սկզբունքների հետեւողական իրացումն անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ կարող է ապահովել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ զարգացող փոփոխական համակարգ ձեւավորելու համար: Միաժամանակ, շատ երկրներում, հարկապես անցումային փուլում գրնվող, փոփոխական հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման հարույլ խնդիր է համարվում, ինչպես նշվեց, պետության կողմից **հակամենաշնորհային քաղաքականության** իրականացումը, խելամիտ մրցակցության ապահովումը, դրանց համար անհրաժեշտ օրենսդրական եւ ենթակառուցվածքային նախադրյալների ստեղծումը: Շուկայական փոփոխական հարաբերությունները ենթադրում են դրանց իրավական կարգավորման հստակ ու հուսալի համակարգ, այն ապահովելու հարցում պետական իշխանության ինստիտուտների գործառնությունների ու լիազորությունների ամբողջական ներդաշնակում, այդ հարաբերություններում **պետության դերի** օրենսդրական մանրակրկիտ կանոնակարգում: Մասնավորապես, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000թ. նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ օրենքի նպատակն է պաշտպանել եւ խրախուսել փոփոխական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկավորության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանադրականության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ փոփոխական հարաբերությունները կարգավորող սահմանադրական հիմնարար սկզբունքներն իրագործելի են միայն երկրում ժողովրդավարական ազատությունների եւ

դրանց հուսալի իրավական պաշտպանվածության պարագայում, ինչպես նաև՝ փնտրե-
սական գործունեության արդյունավետությունն այդ իսկ գործունեության սոցիալական
հետևանքների հետ խելամիտ գուգորդելու պայմաններում:

ՆՈԴՎԱԾ 8.1

**1. Նայասարանի Նանրապետությունում եկեղեցին անջապ է պետություն-
նից:**

**2. Նայասարանի Նանրապետությունը ճանաչում է Նայասարանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքել-
ությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զար-
գացման և ազգային ինքնության պահպանման գործում:**

**3. Նայասարանի Նանրապետությունում երաշխավորվում է օրենքով
սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների
գործունեության ազատությունը:**

**4. Նայասարանի Նանրապետության և Նայասարանյայց առաքելական
սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:**

1. Սահմանադրությամբ ամրագրված՝ եկեղեցու պետությունից անջապ լինելու սկզբունքը նշանակում է, որ Նայասարանի Նանրապետությունն աշխարհիկ պետություն է: Աշխարհիկ պետությունում պետության և եկեղեցու գործունեության ոլորտները սահմանազատված են, ոչ մի դավանանք պարտադիր չի համարվում, պաշտոնական, պետական կրոն գոյություն չունի: Նման պետությունում կրոնական կազմակերպությունները ապաքաղաքական վերկուսակցական կազմակերպություններ են, պետական գործառույթներ չեն կատարում, բաղաքականությամբ չեն զբաղվում: Աշխարհիկ պետությունում գործող կրոնական միավորումները, եկեղեցական կանոնները և նորմերը չեն կարող ազդել պետական կարգի, պետական մարմինների և նրանց պաշտոնապար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի և պետության գործունեության այլ ոլորտների վրա⁵³: Իր հերթին, պետությունը չի խառնվում կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը, կրոնական կազմակերպություններն սբեղծվում և գործում են իրենց սեփական աստիճանադաս (հիերարխիկ) կառուցվածքին համապատասխան, սեփական կանոններով սահմանված կարգով ընկրում, նշանակում և փոփոխում են եկեղեցական պաշտոնապար անձանց և սպասավորներին: Կրոնական կազմակերպությունները կազմակերպական կառուցվածքի հատուկ սկզբունքներ, որոշումների ընդունման և գույքի կառավարման ուրույն կարգ ունեցող մասնավոր՝ ոչ առևտրային հասարակական կազմակերպության յուրահատուկ տեսակ են⁵⁴: Դրանք գործում են եկեղեցական կանոններով՝ պահպանելով ՄՍ Սահմանադրության, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՄՍ օրենքի և այլ օրենքների պահանջները: ՄՍ-ում կրոնական կազմակերպություն և ճանաչվում եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կր-

⁵³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: - Երևանի պետ. համալս.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 123:

⁵⁴ Տե՛ս **Кудрявцева Г. А.** Гражданско-правовой статус общественных объединений /Государство и право) 2005, № 3, էջ 32:

թական ու հրապարակչական հասարակությունները եւ այլ կրոնական-եկեղեցական հիմնարկները (օրենքի 4-րդ հոդվ.):

Եկեղեցու անջափվածությունը պետությունից կրոնի եւ եկեղեցական կազմակերպությունների դերի անփետում չի նշանակում: Ժողովրդավարական պետությունը կրոնական կազմակերպությունների հետ համագործակցելու քաղաքականությունից հրաժարվել չի կարող: Եկեղեցու եւ պետության միջեւ խիստ անջրպետ անցկացնելու, եկեղեցուն հասարակական կյանքից մեկուսացնելու միտումը կարող է առաջացնել կրոնի անփետում, ապա նաեւ բացահայտ ժխտում⁵⁵, հավաքացյալների շրջանում Փանափիզմի եւ արմատականության ամրապնդում: Եկեղեցու անջափվածությունը պետությունից նշանակում է հասարակական կյանքը ուղղորդել դեպի աշխարհիկ արժեքները՝ չանփեսելով հավաքացյալների իրավունքներն ու շահերը⁵⁶: Դրա հետ մեկտեղ պետությունն ապահովում եւ պաշտպանում է կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությունը, պատմամշակութային օբյեկտների վերականգնման, պահպանության իրականացման գործում նրանց ցույց է փալիս ֆինանսական, նյութական եւ այլ կարգի օժանդակություն:

Ման մտքեցումն արդյունք է այն բանի, որ հայ ժողովուրդը միշտ էլ բարձր է գնահատել եկեղեցու եւ քրիստոնեական հավաքի դերն ու նշանակությունը, կրոնի նկատմամբ ցուցաբերել է առանձնահատուկ վերաբերմունք: Այդ վերաբերմունքն իր հետագա զարգացումն ապրեց, կրոնական արժեքների նշանակությունն զգալիորեն բարձրացավ, երբ Նայասարանի Նանրապետությունում արմատական սոցիալ-փոփոխական բարեփոխումների հետեւանքով ձեւավորվեցին պետանկեղեցական նոր հարաբերություններ: Կրոնի նկատմամբ նոր վերաբերմունքի հիմքը դրվեց «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» 1991թ. ՀՀ օրենքով: Իր էությամբ ժողովրդավարական այդ ակտը սահմանեց բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության հավասար պայմաններ, վերացրեց կրոնական կազմակերպությունների պաշտամունքային, սոցիալական, արտադրարտնական, բարեգործական եւ այլ ոչ պաշտամունքային գործունեության իրականացմանը խոչընդոտող բոլոր չարդարացված արգելքները, պարզեցրեց այդ կազմակերպություններին քաղաքացիական իրավունքի սուբյեկտ (իրավաբանական անձ) ճանաչելու կարգը, ճանաչեց կրոնական կազմակերպությունների սեփականության իրավունքը, կրոնի սպասավորների նկատմամբ փարածեց աշխարհաբային, սոցիալական ապահովության եւ սոցիալական ապահովագրության նորմերը: Այդ օրենքը, ուղեցույց ունենալով միջազգային պայմանագրերի հիմնադրությունները, ապահովեց բոլոր կրոնների եւ դավանանքների հավասարությունը, խղճի եւ կրոնական դավանանքի ազատությունը: Օրենքը, որպես հիմնական սկզբունք, ամրագրեց, որ յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համարեղ կատարելու կրոնական ծեսեր (հոդվ.1):

2. Կրոնի ազատության եւ կրոնական կազմակերպությունների գործունեության իրավական հիմքերն իրենց հետագա ամրապնդումն ստացան Նայասարանի Նանրապետության 1995թ. ընդունված Մահմանադրությունում: Մահմանադրությունը, ամրագրելով մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները, առանձնահատուկ ընդգծեց, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրա-

⁵⁵ Տե՛ս Կ. Կոլ. Դյւրեմ. Перспективы религиозной свободы. М., 1999, էջ 26:

⁵⁶ Տե՛ս **Миронов А. В.**, Бабинов И. К. Основы религиоведения. Государственно-церковные отношения. http://www.tarazinfo.kz/egi-bin/book_egi?mode=22&idbook=50926

վունք: Պետության և եկեղեցու փոխհարաբերությունների իրավական կարգավորման հայեցակարգային փոփոխություն րեղի ունեցավ 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված սահմանադրական փոփոխություններով: Նայաստանի Նանրապետության փոփոխված Սահմանադրությունը, վերահաստատելով կրոնի նկատմամբ ժողովրդավարական պետությանը հարույլ իրավական այնպիսի հիմքեր, ինչպիսիք են պետության աշխարհիկությունը՝ անկախ կրոնական պարկանելությունից քաղաքացիների իրավահավասարությունը, դավանանքի ազատությունը, նոր մոտեցում ցուցաբերեց կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների իրավական կարգավորման, դրանց ոչ դավանաբանական գործունեության, ինչպես նաև երկրում փրոդ կրոնական իրավիճակի նկատմամբ: Պետաեկեղեցական նոր հարաբերությունների համար բնութագրական է այն, որ պետությունը, արժեվորելով կրոնական դաստիարակության նշանակությունը բարոյահոգեբանական դաստիարակության ոլորտում առաջացող խնդիրները համարեց առանձնահարույլ կարգավորման առարկա և ընդգծեց, որ պետաեկեղեցական հարաբերություններում ինքն է բոլոր քաղաքացիների (հավաքացյալ և ոչ հավաքացյալ) շահերի իրականացումն ապահովող առաջադար ուժը:

Դրա վկայությունն է այն փաստը, որ Նայաստանի Նանրապետությունը (սահմանադրորեն) ճանաչում է Նայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Այսինքն՝ պետությունը՝ գնահատելով հայ ժողովրդի հոգեւոր կյանքում Նայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բացառիկ առաքելությունը, նրա դերն ու նշանակությունը հայապահպանության, աշխարհասփյուռ հայերի միավորման, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում, սահմանադրորեն Նայ առաքելական եկեղեցու հետ հարաբերություններին վերապահեց նախապատվություն և նրա հետ հաստատեց առանձնահարույլ հարաբերություններ: Նման հարաբերությունների հաստատումը չի նշանակում, որ Նայ առաքելական եկեղեցուն վերապահվեց հանրային-իրավական կարգավիճակ, այն դարձավ պետական, գաղափարական, սոցիալական ոլորտներում լիիրավ մասնակից: Ինչպես Նայ առաքելական եկեղեցու, այնպես էլ այլ կրոնական կազմակերպությունների մասնավոր-իրավական կարգավիճակը սահմանելիս պետությունը կրոնին և եկեղեցուն վերապահել է ոչ թե պետաքաղաքական, այլ սոցիալ-մշակութային գործառույթ⁵⁷:

Նայ առաքելական սուրբ եկեղեցու ազգային կարգավիճակն ընդգծելը բնավ չի հակասում օրենքի առջև կրոնների և կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքին, չի նսեմացնում այլ եկեղեցական կազմակերպությունների դերն ու նշանակությունը, քանի որ ըստ Սահմանադրության և գործող օրենսդրության՝ բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն հասարակության բարոյահոգեբանական ներուժի պահպանությանը և զարգացմանը մասնակցելու հավասար հնարավորություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նայ առաքելական եկեղեցու հետ առանձնահարույլ հարաբերությունների հաստատումն ամենեւին չի ազդում պետության և այլ կրոնական կազմակերպությունների հարաբերությունների վրա: Դրանում դժվար չէ համոզվել, եթե համեմատենք «Արեւելքի Ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Նայաստանի ասորական կրոնական կազմակերպության կանոնադրու- թյունը ցանկացած այլ կրոնական կազմակերպության կանոնադրության կամ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Նայաստանի

⁵⁷ Տե՛ս Шершнева-Цитуйская И. А. Правовой статус религиозного объединения: Понятия и виды //Государство и право. М., 2005, 3, էջ 112:

Նանրապետության եւ Նայասարանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՆՇ օրենքների հեյր:

Ման մոտեցումը կոչված է ապահովելու խղճի ազատության իրականացման կարեւորագոյն՝ կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքը: Բայց դա չի նշանակում, որ հավասար իրավական հնարավորությունների ապահովման պայմաններում սուբյեկտներն իրականում գրնվում են հավասար վիճակում: Նայ առաքելական եկեղեցին, ունենալով առավել մեծ թվով ծխականներ եւ համակիրներ, անհամեմատ շար ֆինանսական, նյութական միջոցներ եւ հասարակական մեծ աջակցություն ունի սոցիալական ծառայություն իրականացնելու, օրենսդրությամբ վերապահված իրավունքներն առավել ակրիվորեն օգտագործելու հնարավորություն:

Նայ առաքելական եկեղեցին այն կազմակերպությունն է, որի հասարակական կշիռը, ժողովրդի վրա ունեցած ազդեցությունը, իրական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են մյուս կրոնական կազմակերպությունների հնարավորությունները: Ներեւաբար, այդ եկեղեցու հեյր առանձնահատուկ հարաբերություններ հաստատելն օրինաչափ է եւ արդարացված: Այդ պարճառով էլ պետությունը, հաշվի առնելով պարմական ավանդույթները եւ ժամանակակից իրողությունները, պետությունների եւ կրոնական կազմակերպությունների հարաբերությունների համաշխարհային փորճը, Նայ առաքելական եկեղեցուն համարում է գորճընկեր սոցիալական, մշակութալուսավորչական հարաբերությունների բնագավառում եւ վերապահում է դրան համապարասխանող կարգավիճակ: Նարկ է նկատել, որ կրոնական կազմակերպությունների նկատմամբ նման վերաբերմունք ցուցաբերում են նաեւ եվրոպական պետությունները: Եվրոպական երկրների (Անգլիա, Գերմանիա, Դանիա, Իռլանդիա, Իսպանիա, Նունասարան, Շվեդիա եւ այլն) օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետակեղեցական հարաբերությունները բացարճակ հավասարության սկզբունքով չեն կառուցված: Անգամ այն երկրներում, որոնցում հռչակված է բոլոր կրոնների հավասարություն, ավանդական դավանանքներից մեկը, որպես կանոն, օգտվում է որոշակի առավելություններից⁵⁸: Եվրոպական երկրները հարգալից են վերաբերվում կրոնին, գիտակցում են ավանդական դավանանքների դրական դերը, աջակցում եւ խրախուսում են նրանց հոգեւոր-լուսավորչական առաքելությունը⁵⁹: Միաժամանակ, այդ երկրներն օրենսդրական հուսալի պարվար են ստեղծում բոլոր հնարավոր տոտալիտար եւ կազմալուծող խմբերի ճեւավորման, զանազան ճայրահեղական աղանդների գորճունեությունը կանխելու համար: Նայ առաքելական եկեղեցու ազգային կարգավիճակն ընդգճելը բնավ չի խախտում նաեւ օրենքի առջեւ կրոնների եւ կրոնական կազմակերպությունների հավասարության սկզբունքը, չի նսեմացնում այլ եկեղեցական կազմակերպությունների դերն ու նշանակությունը:

3. Մահմանադրության 8.1. հոդվաճի 3-րդ մասը պարունակում է երկու կարեւոր դրույթ.

Առաջին, ՆՇ-ում կարող են գորճել ոչ բոլոր տեսակի դավանանքները եւ նրանց կազմակերպությունները, այլ միայն նրանք, որոնց գորճունեությունը թույլատրված է օրենքով սահմանված կարգով: Օրենսդրական կարգավորումը՝ խարսխված սահմանադրական նորմերի վրա, հուսալի պարվար է ստեղծում բոլոր հնարավոր ամբողջարիրական, կազմալուծող խմբերի ճեւավորման, զանազան ճայրահեղական աղանդների գորճունեությունը կանխելու համար:

⁵⁸ Стѹ Комментарий к Конституции Российской Федерации — М.: Экемо, 2009, էջ 156:

⁵⁹ Стѹ **Мудров С.** Государственно — церковные отношения: чему учит нас европейский опыт//диалог. Культурно — религиозный католический журнал. № 1(100), 2003:

Երկրորդ, ՏՏ-ում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ստեղծված եւ գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Ըստ գործող օրենսդրության բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն մասնավոր-իրավական կարգավիճակ, հասարակության բարոյահոգեբանական ներուժի պաշտպանությանը եւ զարգացմանը մասնակցելու հավասար հնարավորություններ: Նայաստանի Նանրապետությունը հասարակական բարօրության, մշակույթի միասնության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների (այդ թվում՝ կրոնական) ապահովման նպատակով կյանքի փարբեր բնագավառներում, սկսած բարեգործությունից մինչեւ սոցիալական եւ քաղաքական փարաձայնությունների լուծումը, «փոխադարձ լոյալության» սկզբունքով, հավասարապես համագործակցում է բոլոր կրոնական կազմակերպությունների հետ: Այդ հարաբերություններն իրավագեղները (ինչպես արքայազանի, այնպես էլ հայրենական) համարում են հատուկ փոխ-գործընկերություն՝ նկատի ունենալով, որ շատ դեպքերում իրենց փոխհարաբերություններում եկեղեցին եւ պետությունը՝ որպես հավասարազոր գործընկերներ, համագործակցում են հանուն ընդհանուր բարօրության:

Կրոնի նկատմամբ ՏՏ-ի նման քաղաքականությունն արդյունք է այն բանի, որ կրոնական կազմակերպությունները ճանաչում են պետության ինքնիշխանությունը, սոցիալ-քաղաքական իրողությունները, կառուցողական դիրքորոշում ունեն իշխանության մարմինների հետ ծագած խնդիրները լուծելիս, իսկ կառավարման մարմիններն ապահովում են հավաքի ազատության պաշտպանությունը, ստեղծում են հավաքացյալների պահանջմունքների բավարարման պայմաններ, պաշտպանում են կրոնական կազմակերպությունների խաղաղասիրական, հայրենասիրական եւ բարեգործական ակցիաները⁶⁰:

Թերեւս այդ է պարզապես, որ պետությունը կրոնի, կրոնական կազմակերպությունների եւ հավաքացյալների նկատմամբ ցուցաբերում է յուրապեսակ մոտեցում, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. պետությունը եւ նրա մարմինները կրոնի նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքը չեն վերահսկում եւ այդ հատկանիշով քաղաքացիների հաշվառում չեն վարում,
2. պետությունն իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը,

3. պետությունը չի միջամտում եկեղեցու եւ կրոնական կազմակերպությունների ներքին կյանքին եւ օրենքին համապատասխանող գործունեությանը, արգելում է եկեղեցիների եւ կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որեւէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեությունը,

4. պետությունը եկեղեցուն նյութական, ֆինանսական կամ այլ օժանդակություն ցույց չի տալիս:

Ներուրաբար, պետությունը չի կարող անտեսել եկեղեցական կազմակերպությունների կարգավիճակի եւ գործունեության կարգավորման, օրինական գործունեության ապահովման, պետաեկեղեցական հարաբերություններում որոշակի հավասարակշռություն ապահովելու հարցերը:

Նայաստանի Նանրապետությունում կրոնական կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորումն իրականացվում է ինչպես իշխանության եւ կառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ ակտերով, այնպես էլ կրոնական

⁶⁰ Տե՛ս **Лупарев Г. С.**, Светское государство: теоретико- методологические основы, понятия, признаки // Десять лет на пути свободы совести. М., 2002 , էջ 134:

կազմակերպությունների կողմից ընդունվող լոկալ իրավական ակտերով: Այդպիսի կարգավորումը պետությանը թույլ է տալիս հավասարակշռել պետության, կրոնական կազմակերպությունների և հավաքացյալների շահերը, սոցիալական հարցեր լուծելիս կրոնական կազմակերպությունների հետ համագործակցել՝

- մարդկանց, ժողովուրդների, պետությունների փոխըմբռնմանը և համագործակցությանը օժանդակելու,
- ընտանիքի ամրապնդման, մոր և մանկան իրավունքների պաշտպանության,
- Նայասրանի Նանրապետության ժողովրդագրական վիճակի բարելավման,
- երիտասարդների բարոյահոգեբանական, հայրենասիրական, իրավական դաստիարակության,
- կրթության, այդ թվում՝ կրոնական,
- մշակութային ժառանգության պահպանության և վերականգնման,
- իրավախախտումների նախականիման, ազատագրկման վայրերում գտնվող և պապիժ կրող անձանց նկատմամբ խնամարարության,
- առողջապահության և սոցիալական սպասարկման, զանգվածային տեղեկատվության, բարեգործության բնագավառներում:

Նայասրանի Նանրապետության գործող օրենքները և այլ նորմատիվ ակտերը, ընդհանուր առմամբ, ապահովում են կրոնական կազմակերպությունների ստեղծման ու գործունեության, քաղաքացիների դավանանքի ընտրության ազատությունը, սակայն իրավակիրառ գործունեությունում տեղ գրած թերությունները, իրավական ակտերում առկա բացթողումներն ու անճշտություններն անհրաժեշտ են դարձնում կրոնական կազմակերպությունների գործունեության և պետության ու այդ կազմակերպությունների փոխհարաբերությունների հետագա իրավական կարգավորումը: Մենք կխոսմ ենք այն հեղինակների կարծիքը, որոնք գտնում են, որ պետակեղեցական հարաբերությունների հետագա զարգացումը պետք է ընթանա կրոնական կազմակերպությունների հատուկ կարգավիճակը կանոնակարգող օրենսդրության շրջանակներում⁶¹:

Կրոնական կազմակերպություններն ստեղծվում են ոչ թե իրենց անդամների մտավոր կամ գեղագիտական պահանջմունքների, այլ դավանաբանական պահանջմունքների բավարարման համար և իրենց բնույթով, անդամների կազմով ու գործելակերպով էապես տարբերվում են հասարակական այլ միավորումներից: Այդ կազմակերպություններում չեն գործում անդամության այն սկզբունքները, որոնք կիրառվում են այլ հասարակական կազմակերպություններում: Այդ կազմակերպությունների անդամների մի մասը հասարակության առանձնահատուկ դասի ներկայացուցիչներ՝ եկեղեցականներ են: Մյուս մասն աշխարհիկ քաղաքացիներ են, որոնք կազմակերպության անդամ (ծխական) կարող են դառնալ տասնութ տարին լրանալուց և ապաշխարելուց (Նայ առաքելական եկեղեցում՝ ջրի մկրտությամբ) հետո: Ծխականներից բացի, դրանց ծառայություններից կարող է օգտվել ցանկացած քաղաքացի: Ներառվում են հոգեւոր-կրոնական և սոցիալ-մշակութային նպատակներ: Մարդու դավանաբանական ցանկությունների, հակումների և հետաքրքրությունների բավարարման ուղղված նույն դավանանքով ղեկավարվող կազմակերպությունները, որպես կանոն, մտնում են միավորման կազմի մեջ և ունենում են իրենց գործունեությունը ղեկավարող և համակարգող կենտրոն, որի հետ փոխհարաբերությունները կառուցվում են **ժողովրդավարական կենտրոնամետրո-թյան** սկզբունքով:

Կրոնական կազմակերպությունները հոգեւոր-կրոնական գործունեություն իրականացնող կազմակերպություններ են: Այսինքն՝ եկեղեցական կազմակերպություններն

⁶¹ Տե՛ս **Ե. Մ. Միրոշնիկովա**, նշված հոդվածը, էջեր 46-57:

օգտվում են հատուկ իրավասուբյեկտությունից: Այդ կազմակերպությունները կարող են ձեռք բերել այնպիսի իրավունքներ եւ սրանձնել այնպիսի պարտականություններ, որոնք ծառայում են միայն դավանաբանության, հոգեուր դաստիարակության, բարեգործության շահերին⁶²:

Ներեւաբար, ՏՏ քաղաքացիական օրենսգրքում (առավել եւս՝ սահմանադրական փոփոխություններից հետո) անհրաժեշտ է նախատեսել կրոնական կազմակերպությունների կարգավիճակը կանոնակարգող հոդվածներ, որոնցում, հինք ունենալով այդ կազմակերպությունների գործունեության բնույթը եւ առանձնահատկությունները, անհրաժեշտ է սահմանել կրոնական կազմակերպության հասկացությունը, դրանց ստեղծման, վերակազմակերպման եւ լուծարման առանձնահատուկ կարգը, առանձնացնել կրոնական կազմակերպությունների տեսակները եւ նախատեսել կազմակերպության՝ որպէս իրավաբանական անձի հատուկ կարգավիճակը:

4. Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը նախատեսում է, որ *Նայաստանի Նանրապետության եւ Նայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով*:

Սահմանադրությունը, նկատի ունենալով ազգային եկեղեցու դերն ու նշանակությունը, նպատակահարմար է համարում այդ եկեղեցու հետ պետության առանձնահատուկ հարաբերությունները կանոնակարգել հատուկ օրենքով: Ի կարարումն սահմանադրական այդ պահանջի՝ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 22-ին ընդունեց օրենք «Նայաստանի Նանրապետության եւ Նայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին»: Ըստ այդ օրենքի՝ Նայաստանի Նանրապետության եւ Նայ առաքելական եկեղեցու հարաբերությունների կարգավորման սկզբունքները սահմանվում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ, ընդհանուր հարաբերությունները՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ միջազգային պայմանագրերով, իսկ առանձնահատուկ հարաբերությունները՝ որպէս պետության եւ նրա կողմից ազգային ճանաչված եկեղեցու հարաբերություններ, սույն օրենքով» (հոդվ. 4): Այդ օրենքով ազգային եկեղեցուն վերապահվում է որոշակի դերակատարություն ունենալ կրթական ոլորտում, կանոնական ծեսով իրականացնել ամուսնություններ եւ հոջակել ամուսնալուծություններ, ունենալ մշտական հոգեուր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկապարտերում, զառամյալների եւ հաշմանդամների փնտրում, զորամասերում, ազատագրկման վայրերում՝ ներառյալ քննչական մեկուսարաններում:

Նարկոմից ազատվում են Նայ առաքելական եկեղեցու հասարակական դրամահավաքներով պարացած եկամուտները, նվիրատվություններն ու ընծաները, ինչպէս նաեւ ծիսական նշանակության առարկաների արտադրությունը եւ իրացումը:

Պետությունը պարտավորվում է մասնակցել պետական հուշարձանների կարգավիճակ ունեցող եկեղեցիների եւ պաշտամունքային այլ շինությունների պահպանությանը, փվյալ փարվա պետական բյուջեով սահմանել Նայ առաքելական եկեղեցու սեփականություն եւ ազգային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս հանդիսացող մշակութային հաստատությունների, հավաքածուների, թանգարանների, գրադարանների, արխիվների պահպանության եւ հարստացման համար պետական աջակցության նպատակն ու ծավալը:

⁶² Տե՛ս **Бабаян Лев**, Религиозные организации как юридические лица / Իրավագիտության հարցեր, N 4, 2001, էջ 49:

ՆՈՂ-ՎԱԾ 8.2

Նայասարանի Նանրապետության զինված ուժերն ապահովում են Նայասարանի Նանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը եւ փարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն եւ գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Երկրի պաշտպանությունը ցանկացած պետության կարեւորագույն արտաքին գործառույթներից է: Այն քաղաքական, դիվանագիտական, փնտրեսական, ռազմական, սոցիալական, իրավական եւ այլ միջոցների համակարգ է ուղղված երկիրը ռազմական պաշտպանությանը նախապատրաստելուն, ինչպես նաեւ պետության, նրա փարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության զինված պաշտպանությանը (ներառյալ բուն պատերազմական գործողությունները): Այս համակարգի կառուցման ու կայացման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ողջ համակարգը: Մակայն այդ համակարգում գլխավոր դերակատարը զինված ուժերն են: Բազմաթիվ կայուն ժողովրդավարական երկրներում, որպես կանոն, զինված ուժերի իրավական կարգավիճակի հիմունքները չեն ամրագրվում սահմանադրական մակարդակով: Դա արվում է, որպես կանոն, համապատասխան օրենքներով: Սակայն կան մի շարք երկրներ, ուր Մահմանադրությամբ է ամրագրված զինված ուժերի սահմանադրաիրավական կարգավիճակը (Գերմանիա, Պորտուգալիա, Չինաստան, Իտալիա, Իսպանիա, Ճապոնիա, Լեհաստան եւ այլն):

Մահմանադրության 8.2-րդ հոդվածը սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրված նորմ է, որը, կարեւորությունից ելնելով, րեղ է գրել «Մահմանադրական կարգի հիմունքները» առաջին գլխում: Մահմանադրական նորմերի համակարգում նման հոդվածի առկայությունը հիմնավորված է՝ հաշվի առնելով հանրապետության բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, երկրի անվտանգության եւ պաշտպանության շահերը: Մյուս կողմից, «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» վիճակում հայտնված Նայասարանի Նանրապետությունում օբյեկտիվորեն զինված ուժերն սրացել են հսկայական դերակատարություն:

Մահմանադրության մեկնաբանվող հոդվածը պարունակում է երեք առանձին հիմնադրույթներ.

- ա) զինված ուժերի սահմանադրական գործառույթները (առաքելությունը),
- բ) զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը,
- գ) զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

Մինչեւ այս հիմնադրույթների մեկնաբանումը անհրաժեշտ է բացահայտել «զինված ուժեր» հասկացության իմաստը: Պետք է փարբերել պետության «ռազմական կազմակերպությունը» «զինված ուժերից»: Զինված ուժերը երկրի ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց է: Արդի միջազգային իրավունքի րեսակերից զինված ուժերի կառուցվածքում ընդգրկվում են պետության կանոնավոր (ցամաքային, ռազմածովային, ռազմաօդային եւ այլն) եւ ոչ կանոնավոր զինված կազմավորումները (աշխարհագոր, պարտիզաններ, զինված բնակչություն):

Կանոնավոր զինված ուժերը կազմակերպորեն բաղկացած են ղեկավարման կենտրոնական մարմնից, գորամիավորումներից, միավորումներից, զորափեսականներից և կենտրոնական ենթակայության զորամասերից, իսկ պարերազմական պայմաններում՝ նաև այլ զորքերից (ոստիկանության զորքերը, ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը, այլ զինված ստորաբաժանումները, որոնց ղեկավարման և կառավարման գործառույթները խաղաղ ժամանակ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են համապատասխան գերափեսայությունները): Պարերազմական ժամանակ այլ զորքերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո:

ՆՃ ռազմական դոկտրինայի համաձայն, որը հաստատվել է Հանրապետության Նախագահի հրամանագրով (ընդունված՝ 07.02.2007թ.), Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը պետության կարելորագույն գործառույթներից է և ներառում է սպառնալիքների ու վտանգների ժամանակին բացահայտումն ու գնահատումը, դրանց հատուցման կանխարեսումը, կանխումը, կասեցումն ու չեզոքացումը: Հայաստանի Հանրապետությունն իր ռազմական անվտանգությունն ապահովում է իր բոլոր ուժերի, միջոցների ու ռեսուրսների համընդհանուր և ամբողջական կիրառմամբ: Ընդ որում, ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու փարաժքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ Զինված ուժերն են:

Զինված ուժերի սահմանադրական գործառույթներն են՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության և փարաժքային ամբողջականության, նրա սահմանների անձեռնմխելիության ապահովումը: Սահմանադրական այս դրույթի նշանակությունն այն է, որ զինված ուժերն այլ նպատակով օգտագործվել չեն կարող: Սահմանադրական մակարդակով զինված ուժերի սահմանադրական գործառույթների ամրագրումը, որոնց շրջանակներից նրանք չեն կարող դուրս գալ, քաղաքական կայունության, ժողովրդավարական զարգացման կարելոր նախապայմաններից է:

Որպես սահմանադրական այս հիմնադրույթի երաշխիք՝ ՆՃ ռազմական դոկտրինայի 40-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի օգտագործման հիմք են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը և օրենքները: Այսպիսով, սահմանադրական մի շարք նորմեր կարգավորում են զինված ուժերի կառավարման և օգտագործման հարաբերությունները, որպեսզի երաշխավորեն Սահմանադրության 8.2-րդ հոդվածի առաջին հիմնադրույթը:

Սահմանադրությունն ամրագրում է զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը՝ պահանջելով քաղաքական հարցերում պահպանել չեզոքություն: Սահմանադրական այս սկզբունքը զինված ուժերի վրա դնում է պարտականություն՝ չմասնակցել քաղաքականությանը և քաղաքական պայքարին, չմիջամտել քաղաքական գործընթացներին: Նմանապես, պետական համապատասխան մարմինները և քաղաքական համակարգի տուրյեկրները պարտավոր են զինված ուժերին չներքաշել քաղաքական գործընթացների մեջ:

Զինված ուժերի չեզոքության սկզբունքի երաշխիքը նրա ապաքաղաքականացումն է: Ապաքաղաքականացումը գործընթաց է և նվաճված արդյունք, որի նպատակն է զինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվ ներգործության շրջանակից

եւ, ամենից առաջ՝ այս կամ այն կուսակցության քաղաքական ազդեցությունից: Զինված ուժերի եւ այլ զինված հաստատությունների (ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն եւ այլն) ապաքաղաքականացման սկզբունքը երաշխավորվում է բազմաթիվ օրենքներով եւ նորմատիվ-իրավական ակտերով, որոնք սահմանում են նրանց գործառույթներն ու իրավասությունները: Մասնավորապես, զինծառայողները սահմանափակված են իրենց որոշ սահմանադրական իրավունքները իրականացնելիս (մեծապես քաղաքական ոլորտի՝ ընտրական, հավաքներ անցկացնելու, կուսակցություններ ստեղծելու եւ այլն): Բացի դրանից, զինված ուժերում պետք է արգելվի քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, վերջիններիս կառույցների ստեղծումը: Զինված ուժերում եւ այլ զինված հաստատություններում պետք է արգելվի ցանկացած քաղաքական քարոզչություն, այդ թվում՝ նաեւ ընտրական:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը շար կարեւոր նշանակություն ունի ժողովրդավարության կայացման համար: Զինված ուժերն իրենցից ներկայացնում են փակ, ստորակարգությամբ կազմակերպված պետական ծառայողների ամբողջություն, որը զինված է: Պարմական փորձը վկայում է, որ զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ այն որպես զենք կարող է օգտագործվել իշխանությունը նվաճելու կամ քաղաքական ուժերին օժանդակելու նպատակով: Արդի աշխարհում գործում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազարական մոդելը, որը խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների եւ զինված ուժերի լիազորությունների կոշտ սահմանազարման վրա: Նասարակության մեջ հաստատված է փոխհամաձայնություն, ըստ որի՝ քաղաքականությունը զինվորականների զբաղմունքը չէ:

Մահմանադրությամբ զինված ուժերի զերագույն գլխավոր հրամանատար է հանդիսանում քաղաքացիական անձը՝ Նանրապետության Նախագահը, որը համակարգում է բոլոր պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում եւ ազարում է զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարելու մասին, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ եւ այլն:

Զինված ուժերի իրավական կարգավիճակը սահմանվում է համապարասխան օրենքներով, որոնք ընդունում է երկրի քաղաքական օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը: Վերջինս իրականացնում է նաեւ խորհրդարանական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ:

Երկրում գործում է անկախ մարմին՝ ՏՏ վերահսկիչ պալատը, որը վերահսկողություն է իրականացնում բյուջեպային միջոցների եւ պետական սեփականության օգտագործման նկատմամբ, այդ թվում այն գործադիր իշխանության լիազորված մարմիններում, որոնք ղեկավարում են անմիջականորեն ՏՏ զինված ուժերը եւ այլ զինված հաստատություններ (ՏՏ պաշտպանության նախարարություն, ՏՏ կառավարությանն առընթեր ՏՏ ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն եւ այլն):

Երկրի կառավարությունը՝ որպես գործադիր իշխանության կենտրոնական մարմին, որը Մահմանադրությամբ իրավասու է մշակել եւ իրականացնել ՏՏ ներքին քաղաքականությունը, ինչպես նաեւ արտաքին քաղաքականությունը, ՏՏ Նախագահի հետ միասին, պարտավոր է ապահովել հանրապետության պաշտպանության իրականացումը:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է ոչ

միայն զինված ուժերի առօրյա գործունեության վերահսկում քաղաքացիական փարաբնույթ կառուցակարգերի միջոցով, այլև քաղաքացիական մասնակցություն նրանց կառավարմանը, զինված ուժերի կառավարմանը քաղաքացիական անձանց առավել լայն մասնակցության ապահովումը: Զինված ուժերի գործունեության նկատմամբ վերակսկողության ուժեղացման գործընթացի շրջանակներում զինված ուժերում սրբեղծվել է քաղաքացիական ծառայություն:⁶³

ՆՆ-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում ՆՆ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սրբեղծվել է ռազմական եւ զինվորական հարցերով խորհրդականի հաստիք, որով պետք է ապահովվի զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության եւ զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերում հարուկ մոտեցումը:

Զինված ուժերի բոլոր զինծառայողների ընդունած իրավական ակտերը, գործողությունները եւ անգործությունը ենթակա են վերահսկողության երկրի դատական իշխանության համապատասխան մարմինների կողմից:

ՆՈՂՎԱԾ 9

Նայաստանի Նանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարեկրթացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Պետության արտաքին քաղաքականությունը նրա գործունեությունն է միջազգային ոլորտում, այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ նրա հարաբերությունների ամբողջությունը, որ կարող է ծավալվել երկրի պաշտպանության, դիվանագիտական (քաղաքական), միջազգային անվտանգության եւ խաղաղության ապահովման, միջպետական փոփոխական եւ առեւտրաֆինանսական համագործակցության, միջպետական մշակութային, գիտափոխանակական եւ փրեղեկարկական համագործակցության, միջպետական էկոլոգիական համագործակցության, համաշխարհային իրավակարգի պաշտպանության ոլորտներում:

Ժամանակակից աշխարհում դժվար է գտնել մի որեւէ պետություն, որը կարող է մեկուսացված գոյություն ունենալ: Միջազգային շփումների ներկայիս մակարդակը պետությունների առջև մշտական սերտ համագործակցության պահանջ է դնում, ինչը միավորված է նրանց իրավունքների ու շահերի ապահովմանը: Պետությունը չի կարող զարգանալ առանց արտաքին կապերի, միջազգային կյանքի ամենաարբեր ոլորտներում այլ պետությունների հետ արաբեբնույթ հարաբերություններ հաստատելու եւ իրականացնելու: Ուստի պատահական չէ, որ ցանկացած ինքնիշխան պետություն սկզբից եւեթ ձգտում է որոշել արտաքին աշխարհի հետ իր հարաբերությունների բնույթը, ինչպես նաեւ միջազգային հաղորդակցության իր մասնակցության ձեւերն ու եղանակները: Այս առումով բացառություն չէ նաեւ Նայաստանի Նանրապետությունը:

Մեկնաբանվող հոդվածն ամրագրում է ՆՆ արտաքին քաղաքականության նպատակը եւ սկզբունքները, իսկ Սահմանադրության այլ հոդվածները՝ պետական իշխանու-

⁶³ Տես «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՕ-286-Վ ՀՀ օրենքը, հոդ. 1339, ՀՀ ՊՏ, 2007, հմ. 66 /590/:

թյան մարմինների լիազորություններն այդ ոլորտում: Նոդվածի ներառումը սահմանադրական կարգի հիմունքների շարքում ունի կարևոր նշանակություն, քանի որ այն իրենից ներկայացնում է ներքին սկզբունքների ներդաշնակ փրանսֆորմացիան, շարունակությունն արտաքին ոլորտում:

Նայ ժողովրդի անկախության առաջին քայլերը եղան 1990թ., երբ Կրեմլի ունեցան Նայասարանի Գերագույն խորհրդի ժողովրդական պարզամտությունների ընտրությունները, որոնք ավարտվեցին ժողովրդավարական ուժերի հաղթանակով և հանրապետության ինքնիշխանության ու անկախության հռչակմամբ: 1990թ. օգոստոսի 23-ին Նանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց Նայասարանի անկախության մասին հռչակագիրը: Հռչակագրով Նայասարանի Նանրապետությունը հռչակվում էր պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ և լիիրավությամբ օժտված ինքնիշխան պետություն: Այդ փաստաթղթում նաև ընդգծվում էր, որ Նայասարանի Նանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, իրականացնում է անկախ արտաքին քաղաքականություն, ուղղակի հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

Իր անկախ գոյության առաջին իսկ օրերից Նայասարանի Նանրապետությունը միջազգային հարաբերություններում հանդես եկավ որպես միջազգային հանրության լիիրավ անդամ և միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ՝ իր արտաքին քաղաքական դիրքորոշմամբ հաստատելով ամբողջ միջազգային հանրության ու նրա առանձին անդամների շահերը հարգելու պարաստականությունը:

Մասնանադրության 9-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս բխեցնելու հետևյալ իրավադրությունները.

1) ՆԱ արտաքին քաղաքականության նպատակներից է բարիդրացիականությունը, այսինքն՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչն ընդգծում է հանրապետության արտաքին քաղաքականության խաղաղ բնույթը:

2) ՆԱ արտաքին քաղաքականության նպատակներից է փոխշահավետությունը, այսինքն՝ բոլոր պետությունների հետ փոխադարձորեն շահավետ հարաբերությունների հաստատումը:

3) ՆԱ արտաքին քաղաքականության կառուցման և իրականացման ելակետային հիմնադրություններն են միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը: Մասնանադրության հեղինակներն, օգտագործելով «միջազգային իրավունքի սկզբունքներ» արտահայտությունը՝ նկատի են ունեցել միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները: Տեսության մեջ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներ ասելով՝ ընդունված է հասկանալ միջազգային իրավունքի հիմնարար, իմպերատիվ բնույթի նորմեր, որոնք ընդունվում և ճանաչվում են ամբողջ միջազգային հանրության կողմից և որոնցից ցանկացած շեղում անթույլատրելի է: Ժամանակակից միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները թվարկված են ՄԱԿ-ի կանոնադրության, ինչպես նաև ԵԱՆԽ 1975թ. Նեպոլիտի եզրափակիչ ակտում: Դրանց նորմատիվ բովանդակությունը բացահայտվում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1970թ. բանաձեռի տեսքով ընդունված՝ Պետությունների բարիդրացիական հարաբերությունների և նրանց միջև համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում:

Ինչպես երևում է այս սահմանումից՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզ-

բունքները նույնպես նորմեր են, սակայն, ի փարբերություն միջազգային իրավունքի այլ նորմերի, ունեն ավելի ընդհանրական, հիմնարար, իմպերատիվ, համընդհանուր եւ համապարարտիչ բնույթ: Այլ կերպ ասած, բոլոր միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները նորմեր են, սակայն ոչ բոլոր նորմերն են սկզբունքներ: Այդ սկզբունքները հիմք են հանդիսանում միջազգային իրավունքի մյուս, ավելի կոնկրետ նորմերի ձեւավորման համար:

Ասվածից բխում է, որ Նայաստրանի Նանրապետությունն իր արտաքին քաղաքական գործունեության մեջ պարտավորվում է ղեկավարվել միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով եւ անշեղորեն կատարել այլ նորմերով իր ստանձնած պարտավորությունները:

4) ՀՀ արտաքին քաղաքականության նպատակները (բարիդրացիականություն ու փոխշահավետություն) եւ ելակետային հիմնադրույթները (միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը) ունեն երկակի արտաքին քաղաքական-իրավական նշանակություն: Առաջին՝ դրանք ազդարարում են, թե միջազգային իրավական ինչ սկզբունքներ ու նորմեր է ճանաչում Նայաստրանի Նանրապետությունը, հետեւաբար՝ ինչ պարտավորություններ է ստանձնում: Երկրորդ՝ դրանք ուղեցույց են արտաքին քաղաքական գործունեություն իրականացնող պետական մարմինների համար:

5) ՀՀ արտաքին քաղաքականության նպատակները (բարիդրացիականություն ու փոխշահավետություն) եւ ելակետային հիմնադրույթները (միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը) ունեն ոչ միայն արտաքին քաղաքական, այլեւ ներպետական իրավական-արժեքաբանական նշանակություն՝ արժեւորելու պետության արտաքին քաղաքական գործունեությունը, ինչպես նաեւ կնքած միջազգային եւ միջկառավարական պայմանագրերը:

ՀՈԴՎԱԾ 10

Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերարականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Արդի դարաշրջանում սոցիալ-իրավական պետությունն իրականացնում է որոշակի ընդհանուր եւ հանրորեն անհրաժեշտ գործառույթներ ներքին եւ արտաքին ոլորտում: Այդպիսի գործառույթներց մեկն էլ էկոլոգիական /բնապահպանական/ գործառույթն է՝ որպես պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Սահմանադրության 10-րդ հոդվածի ուժով այդ գործառույթն ստանում է սահմանադրական-իրավական կարգավորում, ինչի արդյունքում գործառույթի իրականացումը դառնում է Նայաստրանի Նանրապետության պարտականություն: Այդպիսով, եթե որոշ այլ գործառույթների իրականացման հարցում պետությունն ունի գործունեության որոշակիորեն հայեցողական ազդեցություն, ապա էկոլոգիական գործառույթի իրականացումը Սահմանադրության ուժով նրան ազար հայեցողության փեղ չի թողել:

Սահմանադրությամբ ամրագրված այդ գործառույթի ներգործության օբյեկտներն են շրջակա միջավայրը եւ բնական պաշարները: Նասարակության առջեւ կանգնած խնդիրն է ապահովել մարդու կյանքի համար բնական, էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրի պայմաններ: Դրա համար պետությունը պարտավոր է իրականացնել գործունեություն՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանությանը, վերականգնմանը եւ բա-

րելավմանը, ապահովել բնական ռեսուրսների պահպանությունը և ռացիոնալ օգտագործումը: Այդպիսով, Սահմանադրության մեկնաբանվող հոդվածում արտացոլված են պետության երեք պոզիտիվ պարտականություններ, այն է՝

- 1/ պետությունը պարտավոր է ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը,
- 2/ պետությունը պարտավոր է ապահովել վնասված շրջակա միջավայրի վերականգնումը,
- 3/ պետությունը պարտավոր է ապահովել բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Իր առջև դրված այդ պարտականությունները պետությունը պետք է իրականացնի որոշակի ձևերի և մեթոդների կիրառմամբ: Այդ ձևերն են՝ իրավականը /իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, մեկնաբանողական-իրավական, հիմնադիր և հսկիչ-վերահսկողական/ և կազմակերպականը /կազմակերպական-կանոնակարգող, կազմակերպական-փնտրասական, կազմակերպական-գաղափարախոսական ձևերը/:

Մեկնաբանվող հոդվածի ուժով պետությունը պարտավորվում է այս ոլորտի սահմանադրական նորմերն իրագործել պլանավորման և նորմավորման, էկոլոգիապես վրանգավոր գործունեության կանխման, շրջակա միջավայրի առողջացման, վթարների, փարերային աղետների հետեւանքների կանխման և վերացման, ինչպես նաեւ շրջակա միջավայրի որակի նկատմամբ պետական վերահսկողության և էկոլոգիական օրենսդրության պահպանման ճանապարհով⁶⁴: Պետության նշված գործառնությունն առաջին անգամ ամրագրվել է 1977թ. ԽՍՀՄ Միության Սահմանադրության և 1978թ. ՀԽՍՀ Սահմանադրության մեջ: 1991թ. անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետության առջև ծառայալ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ազգային օրենսդրության մշակման խնդիրը և ընդունվեց «Բնության պահպանման օրենսդրության հիմունքները», որը հանդիսացավ ոլորտը կարգավորող մյուս օրենսդրական ակտերի ձեւավորման ելակետ: Ըստ էության, նշված օրենքը և հետագայում Սահմանադրության 10-րդ հոդվածում այս մտքեցման ամրագրումը բնապահպանության և բնօգտագործման ոլորտում ընդգծում էր պետական քաղաքականության ռազմավարական նպատակը: Շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել էկոհամակարգային մտքեցում, որը ենթադրում է հասարակության կայուն զարգացման համար բնության համակարգի ամբողջականության և կենսական գործառնությունների ապահովում: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ ամբողջ աշխարհում բնապահպանության և բնօգտագործման հիմնական նպատակն է դրա իրավական համարեքստում պահպանել և բարելավել շրջակա բնական միջավայրը, մարդու համար բարենպաստ որակական հարկանիշները կյանքի որակի բարձրացման և, վերջին հաշվով, էկոլոգիական անվտանգության նկատառումներով:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածում ամրագրված բնական պաշարների բանական օգտագործումը՝ որպես պետության սահմանադրական խնդիր, իր դրսեւորումն է ստանում համապատասխան օրենսդրության ոլորտում բնական պաշարների կայուն, արդյունավետ օգտագործման պահանջի ամրագրմամբ: Այս առումով Հայաստանի Հանրապետությունում, սկսած 1991 թվականից և հատկապես 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո (2005 թվականի փոփոխություններով) կարարելագործվեց ոլորտի օրենսդրությունը: 2002 թվականից հետո ընկած ժամանակահատվածը նշանակալից էր նրանով, որ ընդունվեցին նոր բնառեսուրսային օրենքներ, ինչի անհրա-

⁶⁴ Տե՛ս Գ. Մ. **Хачатрян**. Первая Конституция Республика Армения. Ереван-2001. Изд. "Нжар", էջ 39:

ժեշտությունը պայմանավորված էր նախորդ փասնամյակի ընթացքում ընդունված իրավական ակտերի կիրառման պրակտիկայի վերլուծության արդյունքներով:

Շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը պետությունն ապահովում է համապատասխան ոլորտներում քաղաքականություն մշակելու և իրականացնելու միջոցով: Այս շրջանակներում զարգանում է համապատասխան ազգային օրենսդրությունը: Դա էկոլոգիական օրենսդրությունն է կամ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրությունը, որի համակարգում առանցքային նշանակություն ունեն բնապահպանական և բնառեսուրսային օրենքները: Բնապահպանական օրենքներն են՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք⁶⁵ և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք⁶⁶: Բնառեսուրսային օրենքներն են՝ Նայաստանի Նանրապետության հողային օրենսգիրքը⁶⁷, Նայաստանի Նանրապետության ջրային օրենսգիրքը⁶⁸, Նայաստանի Նանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը⁶⁹, Նայաստանի Նանրապետության անտառային օրենսգիրքը⁷⁰, «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենք⁷¹, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք⁷², «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք⁷³, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք⁷⁴, «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենք⁷⁵, «Թափոնների մասին» ՀՀ օրենք⁷⁶, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք⁷⁷, «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք⁷⁸, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար պրամադրելու (կոնցենսիայի) մասին» ՀՀ օրենք⁷⁹ և «Գյուղատնտեսական հողերի մեկտրացիայի մասին» ՀՀ օրենք⁸⁰: Օրենսդրությամբ սահմանված են նորմ-երաշխիքներ: Դրանք քաղաքացիական, քրեական, աշխատանքային, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի համապատասխան դրույթներն են: Նշված օրենսգրքերը պատասխանատվություն են նախատեսում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավախախտումների համար: ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ևս պատասխանատվություն է սահմանում որոշակի իրավախախտումների համար: Օրենսդրությամբ սահ-

⁶⁵ ՀՀՊՏ 2006.12.25/66(521):

⁶⁶ ՀՀԱԺՏ 1995/9:

⁶⁷ ՀՀՊՏ 2001.06.15/17(149):

⁶⁸ ՀՀՊՏ 2002.07.10/24(199):

⁶⁹ ՀՀՊՏ 2002.12.11/54(229):

⁷⁰ ՀՀՊՏ 2005.12.07/75(447):

⁷¹ ՀՀՊՏ 2001.07.04/19(151):

⁷² ՀՊՏ 2000.05.12/9(107):

⁷³ ՀՀՊՏ 1999.12.27/31(97):

⁷⁴ ՀՀԳԽՏ 1994/21:

⁷⁵ ՀՀՊՏ 2006.12.25/66(521):

⁷⁶ ՀՀՊՏ 2004.12.28/72(371):

⁷⁷ ՀՊՏ 2005.06.15/37(409):

⁷⁸ ՀՀՊՏ 2006.12.25/66(521):

⁷⁹ ՀՀՊՏ 2002.11.29/52(227):

⁸⁰ ՀՊՏ 2005.06.24/40(412):

մանված են նաև նորմ-մեխանիզմներ: Օրինակ՝ «Բնօգտագործման եւ բնապահպանության վճարների մասին» ՏՏ օրենքը: Ելնելով նշված օրենքների պահանջներից՝ ՏՏ կառավարությունը, «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքին համապատասխան, ընդունում է նորմատիվ իրավական ակտեր:

ՆՈՂ-ՎԱԾ 11

1. Պապմության եւ մշակույթի հուշարձանները, մշակութային եւ այլ արժեքները գրնվում են պետության հոգածության եւ պաշտպանության ներքո:

2. Նայասպանի Նանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գրնվող հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը:

1. Սահմանադրական կարգի հիմունքների նշված հոդվածն ազդարարում է, որ Նայասպանի դարավոր պատմամշակութային հուշարձանները, ինչպես նաև մշակութային արժեքները գրնվում են պետության հոգածության, խնամքի, պահպանության եւ պաշտպանության ներքո: Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան վկայում է, որ նման նորմը միայն հոգևոր-մշակութային արժեքները կորստից փրկելու նպատակ չի հետապնդում: Առավել կարեւորն այդ արժեքներին սերունդների շարունակական հաղորդակցման ապահովումն է, դրանց բանական իմաստավորումն ու սրելծագործական ներշնչանքի աղբյուր դարձնելը:

Սահմանադրության սույն հոդվածի դրույթներն իրենց առավել կոնկրետացումն են ստացել հետեւյալ իրավական ակտերում՝ «Պապմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» (11 նոյեմբերի 1998թ.), «Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» (6 դեկտեմբերի 2004թ.), «Նայասպանի ազգային արխիվային ֆոնդի մասին» (17 նոյեմբերի 1997թ.), «Նայասպանի Նանրապետության պետական սեփականություն համարվող եւ օտարման ոչ ենթակա պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների մասին» (11 ապրիլի 2003թ.) ՏՏ օրենքներում եւ մի շարք այլ օրենսդրական ու ենթօրենսդրական ակտերում, որոնցում այս կամ այն չափով կարգավորվում են պատմամշակութային արժեքներին վերաբերող հարցերը: Օրակարգում են «Ննագիտական ժառանգության ուսումնասիրության եւ պեղումների մասին», «Ոչ նյութական մշակույթի պահպանության մասին», «Թանգարանների մասին», «Գրադարանների մասին» օրենքները:

«Պապմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, թե որոնք են համարվում պատմամշակութային անշարժ հուշարձաններ. «Պապմության եւ մշակութային անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված փարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի փարբերն ու բե-

կորները՝ անկախ պահպանվածության ասփիճանից: Նայաստանի Նանրապետության փարաձքում գրվվող հուշարձանները գրվվում են պետության պահպանության ներքո»:

«Պարմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պարմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՆՏ օրենքը սահմանադրական նորմերին համահունչ օրենսդրական կարգավորման հիմնական խնդիրներ է ճանաչում՝

ա) հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը.

բ) հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքների սահմանումը.

գ) հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական կառավարման, փեդական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավասությունների սահմանումը.

դ) հուշարձանների՝ որպես անշարժ գույքի հատուկ փեսակի նկատմամբ սեփականատիրության, փնօրինման եւ օգտագործման առանձնահատկությունների սահմանումը:

Վերոնշյալ օրենքը հանգամանորեն կարգավորում է նաեւ պարմամշակութային հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի օբյեկտներին, սուբյեկտներին առնչվող հարցերը, այդ բնագավառում պետական կառավարման ու փեդական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, հուշարձանների պետական հաշվառման կարգը, պահպանության ապահովման հարցերը, հուշարձանների հետախուզման եւ հնագիտական պեդումներ իրականացնելու կարգը, դրանց ամրակայման, նորոգման եւ վերականգնման հետ կապված հարցերը, հուշարձանների նկատմամբ սեփականության հարաբերությունների կարգավորման խնդիրները, հուշարձանների օգտագործման հիմնական նպատակները, դրանց պահպանության եւ օգտագործման բնագավառի ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաեւ հուշարձանների պահպանության եւ օգտագործման մասին օրենսդրությունը խախտելու համար պարասխանավորության հարցերը:

Պարմամշակութային հիմնարար արժեքներից է նաեւ ազգային արխիվային ֆոնդը, որը նույնպես գրվվում է պետության հոգածության եւ պաշտպանության ներքո: «Նայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» ՆՏ օրենքի համաձայն՝ Նայաստանի ազգային արխիվային ֆոնդը հայ ժողովրդի հոգետոր, հասարակական, քաղաքական, սոցիալական, փնքեսական նշանակության եւ գիտապարմական արժեք ունեցող փաստաթղթերի ամբողջությունն է՝ անկախ դրանց ծագման եղանակից, ժամանակից, վայրից եւ սեփականության ձեերից: Նայաստանի ազգային արխիվային ֆոնդը հայ ժողովրդի հոգետոր ժառանգության մասն է, պարմության եւ մշակույթի հուշարձան, որը պաշտպանվում է օրենքով (հոդվ. 1):

Օրենքը հանգամանորեն կարգավորում է նաեւ ազգային արխիվային ֆոնդի կազմի եւ փաստաթղթերի սեփականության ձեերի հետ կապված հարցերը, արխիվային գործի կառավարման, արխիվների պետական գրանցման եւ արտոնագրման, արխիվային ֆոնդի փաստաթղթերի պահպանության ապահովման, արխիվային ֆոնդի փաստաթղթերի օգտագործման հարցերը:

Պարմամշակութային արժեքների պահպանության ու պաշտպանության կարետոր ոլորտներից է մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման հետ կապված հարցերի իրավական կարգավորումը: Այս նպատակով 2004 թվականի դեկտեմբերի 6-

ին ընդունված՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքը հանգամանորեն կարգավորում է մշակութային արժեքների արտահանման և ներմուծման ընթացքում ծագող հարաբերությունները, ներառյալ՝ մշակութային արժեքների ապօրինի արտահանման կամ ներմուծման կանխումը և այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության պահպանման, միջազգային մշակութային համագործակցության, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցման խնդիրները, սահմանում է այդ ոլորտում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև՝ պետական մարմինների լիազորությունները:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը պարունակում է շար կարեւոր դրույթներ, որոնց առկայությունը Մահմանադրության մեջ կարելի է պայմանավորել հայ ժողովրդի ու նրա պարմական ճակատագրի առանձնահատկություններով: Այդ առանձնահատկություններից են հատկապես պարմական Հայաստանի և ներկայիս ՀՀ-ի փարածքային փարբերությունները, ինչի արդյունքում հայկական պարմական և մշակութային արժեքների մեծ մասը գրնվում է այլ պետությունների փարածքում: Մյուսը հայ ժողովրդի աշխարհասփյուռ կացությունն է: Այս առանձնահատկությունները պայմանավորել են 11-րդ հոդվածի երկրորդ մասի դրույթների սահմանադրական ամրագրումը: Մահմանադրական մեկնաբանվող դրույթների հիման վրա հարուկ իմաստ են ձեռք բերում ՀՀ պետական կառուցակարգի արտաքին գործառույթները: Խոսքը հարկապես վերաբերում է միջպետական մշակութային, գիտարեխնիկական և տեղեկարվական համագործակցության գործառույթին, որի ընդհանուր բովանդակային բաղադրարբերից են՝ այլ պետությունների հետ մշակութային, գիտական կապերի հաստատումը և զարգացումը. մասնակցությունը համաշխարհային տեղեկարվական փարածությանը, ընդհանրապես մշակութային արժեքների պահպանության համարտեղ միջոցառումների իրականացումը: Սակայն վերը նշված առանձնահատկություններով պայմանավորված և սահմանադրական յուրահարուկ դրույթների ամրագրման հետեւանքով ՀՀ մարմանշված արտաքին գործառույթի բովանդակային փարբեր են հանդիսանում նաև այլ պետություններում գրնվող հայկական պարմամշակութային արժեքների պահպանությանը նպաստելը, հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդումը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը նպաստելը:

Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասը պարտավորեցնում է պետությանը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում, երկկողմ ու բազմակողմ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի համաձայն, որոնք հաստատվել կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից, գործնական միջոցներ ձեռնարկել՝

- ա) նպաստելու այլ պետություններում գրնվող հայկական պարմական և մշակութային արժեքների պահպանմանը,
- բ) աջակցելու սփյուռքում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

ՆՈՂՎԱԾ 11.1

Նայաստրանի Նանրապետության վարչապարաձքային միավորներն են մարզերը եւ համայնքները:

Նայաստրանի Նանրապետության փարաձքը հողագնդի այն հափվաձն է, որի վրա փարաձվում է նրա իշխանությունը:

Պետության փարաձքը ներառում է՝ 1) ցամաքային փարաձությունը, 2) ջրային փարաձությունը՝ ներքին ջրերը՝ պետական սահմանների ներսում եւ փարաձքային ջրերը՝ 12 ծովային մղոնի սահմաններում, 3) օդային փարաձքը պետական սահմաններով մինչեւ 35 կմ բարձրության վրա, 4) ընդերքը, 5) լողացող ապարափները բաց ծովում, 6) թռչող ապարափները պետության սահմաններից դուրս, 7) փիեգերական օբյեկտները պետության դրոշի եւ զինանշանի ներքո, 8) խողովակաշարերը, 9) սփորջրյա մալուխները (կարելները) եւ նավթահան ջրային աշարաակները, 10) արփասահմանում գտնվող դիվանագիփական ներկայացուցությունները եւ հյուպափոսությունները:

Շափ երկրների սահմանադրությունների պես Նայաստրանի Նանրապետության Մահմանադրությունը պարունակում է ցամաքային փարաձքի վարչափարաձքային բաժանման վերաբերյալ կարգավորում, որն արփահայփում է պետության փարաձքային կառուցվաձքի սահմանադրափրավական ինսփիփուփի բովանդակությունը:

Մահմանադրական իրավունքի գիփության մեջ համընդհանուր ճանաչում է սփացել քննարկվող ինսփիփուփի այն սահմանումը, համաձայն որի՝ **պետության փարաձքային կառուցվաձքը կամ հանրային իշխանության փարաձքային կազմակերփումը պետության կենփրոնական իշխանության եւ փարաձքային բաղկացուցիչ մասերի փոխհարաբերությունների համակարգն է:**

Կենփրոնական իշխանության եւ փարաձքային բաղկացուցիչ մասերի միջեւ փոխհարաբերությունների բնույթով պայմանավորվաձ կամ ըսփ պետության կառուցվաձքի՝ Նայաստրանի Նանրապետությունը հանդիսանում է **պարզ (ունիփար)** պետություն:

Որպես ունիփար պետություն՝ Նայաստրանը բաժանվաձ է վարչական միավորների, որոնց իրավասությունը սահմանվաձ է կենփրոնական իշխանության ընթացիկ ակփերով: Նման բաժանման նպափակը փեղերում պետական իշխանության արդյունավետ կազմակերփումն է, որոնց (վարչական միավորներին) համապափասխան ձեւավորվում են պետական կառավարման եւ փեղական ինքնակառավարման մարմիններ:

Մեկնաբանվող հողվաձն ամրագրում է վարչափարաձքային բաժանման երկասփիճան համակարգ՝ **մարզեր եւ համայնքներ:** Մահմանադրական նորմն իր կոնկրետփացումն ու զարգացումն է գտել 1995 թվականի նոյեմբերի 7-ին ՆՆ Ազգային ժողովի ընդունաձ՝ «Նայաստրանի Նանրապետության վարչափարաձքային բաժանման մասին» ՆՆ օրենքում, համաձայն որի՝ հանրապետության փարաձքը բաժանվել է փասը մարզի: Մարզերը եւ դրանց վարչական կենփրոններն են՝ Արագաձոփն (Աշարակ), Արարափ (Արաշափ), Արմավիր (Արմավիր), Գեղարքունիք (Գավառ), Լոռի (Վանաձոր), Կոփայք (Նրագդան), Շիրակ (Գյումրի), Մյունիք (Կապան), Վայոց ձոր (Եղեգնաձոր), Տավուզ (Իջեւան):

Օրենքի համաձայն՝ մարզի փարաձքը կազմվաձ է դրա մեջ ընդգրկվաձ համայնքների փարաձքներից եւ պետական սեփականություն հանդիսացող հողային եւ ջրային

այլ փարածքներից: Համայնքն ընդգրկում է մեկ կամ մի քանի բնակավայր: Բնակավայր են համարվում մշտական բնակչություն ունեցող, կառուցապատված, փարածքային ամբողջականություն կազմող եւ այլ բնակավայրերից փարածքային, փոփոխական կամ պարամական առումով փարանջատված փարածքային միավորները:

Հայաստանի Հանրապետության բնակավայրերի եւ համայնքների ցանկը, դրանց դասակարգումը՝ գյուղ կամ քաղաք, փրված է վերոհիշյալ օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածում:

Համայնքներն ինքնակառավարվող վարչափարածքային միավորներ են, ընդ որում՝ քաղաքի դասակարգում ունեցող բնակավայր ընդգրկող համայնքները կոչվում են քաղաքային համայնքներ, իսկ միայն գյուղի դասակարգում ունեցող բնակավայրեր ընդգրկող համայնքները՝ գյուղական համայնքներ:

Հայաստանի Հանրապետությունում ամենախոշոր համայնքը Երեւան քաղաքն է, որի սահմանները որոշված են «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով:

Վերոհիշյալ օրենքի համաձայն՝ Երեւանում արդյունավետ տեղական ինքնակառավարում եւ փարածքային կառավարում իրականացնելու, Երեւանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչությանն առավել մատչելի դարձնելու նպատակով Երեւան քաղաքը բաժանվել է 12 վարչական շրջանների (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն):

Հայաստանի Հանրապետության փարածքային կազմակերպման հարցերից են վարչափարածքային միավորների կազմավորման, վերակազմավորման, դրանց փարածքների սահմանների փոփոխության հարցերը, որոնք իրենց լուծումներն են ստացել «Հայաստանի Հանրապետության վարչափարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի վարչական կենտրոնների, համայնքների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման փոփոխումը, ինչպես նաեւ մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ վերոհիշյալ օրենքում համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելու միջոցով:

Օրենքի հատուկ վերապահմամբ՝ բնակավայրերի վերանվանումները կարող են կատարվել միայն պարամական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ եւ կրկնվող անվանումները վերացնելու նպատակով՝ հաշվի առնելով բնակավայրի բնակչության կարծիքը:

ՀՈԴՎԱԾ 11.2

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը:

Մեկնաբանվող հոդվածը 1995թ. հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոքրամասնամիայն ընդունված 2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո: Դրա

զերեղումը ՏՏ Սահմանադրության առաջին գլխում հիմք է տալիս ճանաչելու այն որպես սահմանադրական կարգի հիմունք, ինչն ինքնին վկայում է տեղական ինքնակառավարման բացառիկ կարեւորության մասին:

Նոդվածի բովանդակությունը չափազանց հակիրճ է եւ, ի տարբերություն շարքի երկրների (Ռուսաստան, Իսպանիա) համանման սահմանադրական դրույթների, բավարար տեղեկավորություն չի պարունակում դրա հասկացության առավել ամբողջական ընկալման համար: Մասնավորապես, քննարկվող նորմի շարադրանքից պարզվում է միայն, որ տեղական ինքնակառավարման երաշխավորումը պետության պարտականությունն է, իսկ դրա տեղադրությունից կարող ենք եզրակացնել, որ տեղական ինքնակառավարումը սահմանադրական կարգի հիմնարար ինստիտուտներից մեկն է:

Կառավարման եւ իշխանության աշխարունակ կառուցակարգի սրեղծման, դրանք մարդուն մոտեցնելու եղանակներից է հանրային կառավարման ապակենտրոնացումը, տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը: Ժամանակակից ժողովրդավարական երկրներում տեղական կառավարումը կազմակերպվում է տարբեր հիմունքներով՝ կենտրոնացված եւ ապակենտրոնացված: Վերջին դեպքում տեղական կառավարման մարմիններն ինքնուրույն են եւ կենտրոնական իշխանությունից անկախ: Դրանք ընտրվում են վարչական փարածքի բնակչության կողմից եւ կոչվում են տեղական ինքնակառավարման մարմիններ: Տեղական ինքնակառավարումը ժողովրդի իշխանության իրականացման ձեւերից մեկն է, այլ ոչ թե պետության իշխանության շարունակությունը: Տեղական կառավարումը Նայաստանում իրականացվում է տեղական պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի գույքորդման սկզբունքով: Մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Տեղական ինքնակառավարումը, պետական ուղղահայաց կառավարման համեմատ, օժտված է մի շարք առավելություններով: Այդ առավելությունները պայմանավորված են տեղական ինքնակառավարման կազմակերպական-իրավական առանձնահատկություններով:

Տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության, ժողովրդի կողմից՝ իրեն պատկանող իշխանության իրականացման ձեւերից մեկն է: Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածը տեղական ինքնակառավարումը բնորոշում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային գործերի մի կարեւոր մաս օրենքի շրջանակներում եւ սեփական պատասխանավորությամբ կարգավորելու եւ կառավարելու իրավունք եւ իրական ունակություն՝ ելնելով տեղական բնակչության շահերից:

Տեղական ինքնակառավարման համակարգը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն եւ պատասխանատու գործունեության իրավունքը, առաջին հերթին մարմնանշում է բնակչության կողմից ընտրված տեղական մարմինների դերը տեղական ինքնակառավարման իրականացման գործում: Սակայն, դրա հետ մեկտեղ, տեղական ինքնակառավարումը ենթադրում է տեղական ինքնակառավարման գործառույթների իրականացմանը քաղաքացիների ուղղակի մասնակցության մի շարք ձեւեր: Պետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու եւ դրանցում ընտրվելու, տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայելու հավասար հնարավորության, տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու քաղաքացիների իրավունքները:

Ճանաչելով բնակչության տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքը՝ պետությունը ճանաչում եւ երաշխավորում է տեղական ինքնակառավարման

ինքնուրույնությունը՝ նրա լիազորության սահմաններում, եւ պարականություն է ստանձնում անհրաժեշտ պայմաններ ստեղծել վոլյալ իրավունքի իրականացման համար:

Նայաստանում տեղական ինքնակառավարումը, որը ճանաչված եւ երաշխավորված է ՆՆ Սահմանադրությամբ, բնակչության ինքնուրույն եւ պարասխանաբար գործունեությունն է, որը նպատակաուղղված է անմիջականորեն կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական նշանակության հարցերի լուծմանը՝ ելնելով բնակչության շահերից, նրա պատմական եւ տեղական առանձնահատկություններից: Ժողովրդաիշխանության համակարգում տեղական ինքնակառավարման տեղը բնութագրող հիմնական հարկանիշներն են.

1) Նայաստանում տեղական ինքնակառավարման սուբյեկտը գյուղական, քաղաքային եւ Երեւան քաղաքի բնակչությունն է:

2) Տեղական ինքնակառավարումն առանձնահատուկ տեղ է գրավում հասարակության եւ պետության կառավարման ժողովրդավարական կառուցակարգում: Տեղական ինքնակառավարումը, նրա մարմինները չեն համարվում կառավարման պետական կառուցակարգի բաղկացուցիչ մասը: Դրա հետ մեկտեղ, տեղական ինքնակառավարումը եւ պետական իշխանությունը սերտորեն փոխկապակցված են, ունեն միասնական աղբյուր՝ ժողովրդի իշխանությունը:

3) Տեղական ինքնակառավարումն ունի կառավարման հատուկ օբյեկտ՝ տեղական նշանակության հարցերը: Տեղական ինքնակառավարման համակարգը ենթադրում է տեղական նշանակության հարցերի հատուկ ոլորտի առանձնացում, որի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն եւ պարասխանաբար են առաջին հերթին համայնքի բնակչության առջեւ: ՆՆ Սահմանադրությունը սպառնիչ չի թվարկում տեղական ինքնակառավարման փոփոխման հարցերի շրջանակը: Նիմնվելով Սահմանադրության դրույթների վրա՝ ՆՆ համապատասխան օրենքները սահմանում են տեղական ինքնակառավարման փոփոխման հարցերը, ինչպես նաեւ սահմանազատում տեղական ինքնակառավարման ու պետական իշխանության մարմինների լիազորությունները:

4) Տեղական ինքնակառավարման՝ որպես ժողովրդի իշխանության կազմակերպման եւ իրականացման ձեւի էությունը բնութագրող առանցքային հասկացություններից է ինքնուրույնությունը, որը երաշխավորվում է պետության կողմից (ՆՆ Սահմանադրության 110-րդ հոդված): Տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունն ունի մի քանի կողմեր: **Առաջին՝** հասարակական համակարգում պետական կառավարումը եւ տեղական ինքնակառավարումը ու նրանց մարմինները կազմակերպականորեն առանձնացված են: Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության մարմինների համակարգում: Ի փոքրություն փարածքային կառավարման մարմինների, նրանք չեն կարող դիպվել կառավարման պետական համակարգի կառույցի ստորաբաժանումներ: Պետական մարմինները նրանց վերադաս ապրանք չեն, ինչպես նախկինում, երբ կենտրոնական մարմիններն ամբողջովին ղեկավարում էին տեղական մարմինների գործունեությունը, լսում էին նրանց հաշվետվությունները եւ օժտված էին այդ մարմինների որոշումները վերացնելու իրավունքով: **Երկրորդ՝** տեղական ինքնակառավարման ինքնուրույնության կարեւոր կողմը եւ, դրա հետ մեկտեղ, երաշխիքը ֆինանսատնտեսական ռեսուրսների օգտագործման (փոփոխման) նկատմամբ պետության կողմից ճանաչված իրավունքն է, այն ռեսուրսների, որ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման գործառույթների իրականացման համար: **Երրորդ՝** պետությունը, սեփականության այլ ձեւերի հետ մեկտեղ, ճանաչում եւ պաշտպանում է նաեւ համայն-

քային սեփականությունը՝ բնակչության կողմից տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքի կենսագործման փնտրանքի հիմքը: **Չորրորդ**՝ պետությունը ճանաչում է բնակչության իրավունքը ինքնուրույն որոշելու տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը: **Վինգերորդ**՝ տեղական ինքնակառավարման իրականացման փորձաքային սահմանների փոփոխությունը թույլատրվում է համապատասխան վարչական միավորների բնակչության կարծիքը հաշվի առնելով:

5) Տեղական ինքնակառավարման յուրահատկությունն արտացոլող կարեւորագույն հատկանիշը համայնքների պատասխանատվությունն է:

ՆՆ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ (1, 2, 4, 5, 23, 27.1., 30, 85, 100, 101, 104-110) տեղական ինքնակառավարմանն առնչվող մի շարք նորմեր են պարունակում, որոնցով սահմանվում են տեղական ինքնակառավարման տեղը ժողովրդաիշխանության համակարգում, տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության իրավունքն ու ձեւերը, տեղական ինքնակառավարման եւ համայնքի հասկացությունները, դրա մարմինների տեսակները, լիազորությունները, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները պետական մարմինների հետ, տեղական ինքնակառավարման երաշխիքների համակարգը եւ այլն: Բացի դրանից, ՆՆ Սահմանադրության 65, 88 եւ 98-րդ հոդվածներով սահմանվում են համապատասխանաբար օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունը ներկայացնող պաշտոնատար անձանց պաշտոնների անհամատեղելիությունը տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնների հետ՝ դրանով իսկ կազմակերպորեն առանձնացնելով տեղական ինքնակառավարումը պետական իշխանությունից:

ՆՆ Սահմանադրության վերոնշյալ հոդվածները կոնկրետացնում եւ մանրամասնում են 11.2.-րդ հոդվածը:

Այսպիսով, ակնհայտ է, որ քննարկվող դրույթը փորձաքայնորեն կապված է Նախապահի Նախապետությունում ժողովրդավարական եւ իրավական պետության կառուցման սահմանադրական նպատակի (ՆՆ Սահմանադրության 1-ին հոդված) հետ, որի «անկյունաքարը» մարդն է՝ իր արժանապատվությամբ, հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես բարձրագույն արժեք (ՆՆ Սահմանադրության 3-րդ հոդված):

Այն վկայում է տեղական ինքնակառավարման սոցիալական արժեքավորության մասին, քանի որ դրա միջոցով է ապահովվում ժողովրդի կողմից իր իշխանության իրականացումը (ՆՆ Սահմանադրության 2-րդ հոդված), քաղաքացիների՝ հանրային գործերի կառավարմանը մասնակցելու (ՆՆ Սահմանադրության 30-րդ հոդված) եւ մի շարք այլ հիմնարար իրավունքների իրականացումը (ՆՆ Սահմանադրության 23-րդ հոդվածի 3-րդ մաս, 27.1., 30.2., 33.2., 34, 37, 38-րդ հոդվածներ եւ այլն):

Տեղական ինքնակառավարման երաշխավորումը նաեւ թույլ է տալիս համայնքներին, որպես մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրություն, ձեւավորել եւ բազմացնել համայնքային սեփականությունը, փնտրիներ եւ կառավարել այն՝ համայնքային նշանակության հարցեր լուծելու եւ համայնքի պահանջմունքները բավարարելու նպատակով (ՆՆ Սահմանադրության 104.1 եւ 105-րդ հոդվածներ):

ՆՆ տեղական կառավարման գործող համակարգը ձեւավորվել է 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՆՆ Սահմանադրությամբ: 21.09.91թ. անկախության հանրաքվեից հետո մինչեւ Սահմանադրության ընդունումը հանրապետությունում գործում էր տեղական խորհուրդների խորհրդային համակարգը (*տե՛ս նաեւ առաջին քարտեզիտումը տեղական իշխանության իրականացման համակարգում*՝ «Մեկից ավելի բնակավայրեր ընդգրկող պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների փարանչար-

ման կարգի մասին» ՀՀ ԳԽ նախագահության 07.02.91թ. թիվ Ն -117 որոշումը: Դրանով մեկից ավելի բնակավայրեր ընդգրկող եւ 200-ից ավելի բնակիչ ունեցող ավանային եւ գյուղական բնակավայրերում պարզամավորների տեղական խորհուրդները փարան- ջարվեցին):

Ընդհանուր առմամբ տեղական կառավարման խորհրդային համակարգը գործեց մինչեւ ՀՀ Մահմանադրության հիման վրա ՀՀ փարածքային պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման իրավական եւ ինստիտուցիոնալ համակարգի սրեղ- ծումը: Այսպես, 1995-96թթ. ընդունվեցին «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» (14.05.96թ. թիվ ՀՕ-62, սկզբնաղբյուր՝ ՀՀ ԱԺՏ 11.06.96/110 առաջին ընտրություններն անցկացվեցին նույն՝ 1996թ. նոյեմբերի 10-ին), «Տեղական ինքնակառավարման մասին» (30.06.96թ. թիվ ՀՕ-75, սկզբնաղբյուր՝ ՀՀ ԱԺՏ 24.07.96/85), «Տեղական ինքնակառավարման, փարածքային կառավարման եւ տեղա- կան ինքնակառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման մասին ան- ցումային դրույթներ» (14.12.95թ. թիվ ՀՕ-23, սկզբնաղբյուր՝ ՀՀ ԱԺՏ 28.12.95/317), «ՀՀ վարչափարածքային բաժանման մասին» (07.11.95թ. թիվ ՀՕ-18, սկզբնաղբյուր՝ ՀՀ ԱԺՏ 05.12.95/300) ՀՀ օրենքները, ինչպես նաեւ «Երեւան քաղաքում պետական կառա- վարման մասին», «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրերը (06.05.97թ. թիվ ՆՀ-727 եւ ՆՀ-728, սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 1997/11 առա- ջին մարզպետները նշանակվեցին 19.02.96թ.): Նշված ժամանակահատվածն (1995- 1997թթ.) ընդգրկում է փարածքային պետական կառավարման եւ տեղական ինքնակա- ռավարման իրավական եւ ինստիտուցիոնալ համակարգի կայացման փուլը:

Երկրորդ փուլը (ընդգրկում է 1997թ.-ից մինչ օրս) նշանավորվում է փարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի զարգացման ու կա- րարելագործման շրջանով: Ըստ բարեփոխումների նշանակալիության՝ այս փուլը կա- րելի է բաժանել եւս երկու ենթափուլերի՝

1) *Տեղական ինքնակառավարման համակարգի համապարասխանեցու- մը եվրոպական չափանիշներին*: Եվրոպայի խորհրդին անդամակցության կապակ- ցությամբ Հայաստանի Հանրապետությունը, որպես պարտադիր պայման, միացավ 1985թ. Ստրասբուրգի «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային» (ՀՀ Ազգային ժողովի 04.12.2001թ. թիվ Ն-236-2 որոշում, սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2001/41(173): Տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության՝ Եվրոպական խարտիային հա- մապարասխանեցման նպատակով մշակվեց եւ ընդունվեց «Տեղական ինքնակառավար- ման մասին» ՀՀ նոր օրենք (21.06.02թ. թիվ ՀՕ-337, սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2002/21(196): Օրենքում առավել էական բարեփոխումներ իրականացվել են «Տեղական ինքնակառա- վարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (20.05.2005թ. թիվ ՀՕ-135-Ն, սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2005/42(414): Օրենքում ավելացվեց նոր՝ 7.1-րդ գլուխ, որով սահմանվեցին տեղական ինքնակառավարման մար- մինների նկատմամբ պետական վերահսկողության հիմքերն ու կարգը:

2) *Տեղական ինքնակառավարման համակարգի վերջին բարեփոխում- ները* պայմանավորված էին ՀՀ Մահմանադրության բարեփոխումներով (ընդունվել է 27.11.2005թ. հանրաքվեով): Մասնավորապես, ՀՀ Մահմանադրության 108-րդ հոդվա- ծի համաձայն՝ «Երեւանը համայնք է: Երեւան քաղաքում տեղական ինքնակառավար- ման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման առանձնահատ- կությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երեւանի քաղա- քապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն», իսկ 88.1-րդ հոդվածով նախատես-

վում է Երեւանում փարածքային կառավարման առանձնահատկությունների սահմանումն օրենքով:

Այսպիսով, Սահմանադրությունը «Նայասփանի Նանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը» դրույթով վերջնական լուծում է փվել տեղական ինքնակառավարման լինել-չլինելու հարցին: Տեղական ինքնակառավարումը համայնքներում հանրային իշխանության կազմակերպման պարտադիր անհրաժեշտություն է համարվում: Իրավաբանական առումով սա նաև նշանակում է, որ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու քաղաքացու իրավունքը ծագում է ՆՏ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա, այլ ոչ թե համայնքի բնակչության հայեցողական կամահայտության արդյունքում: Այլ կերպ ասած՝ թեև «Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը» (ՆՏ Սահմանադրության 104-րդ հոդված), սակայն ոչ համայնքի բնակչությունը եւ ոչ էլ անգամ ժողովուրդը չեն կարող հրաժարվել տեղական ինքնակառավարման իրավունքից կամ փոխել այն տեղական իշխանության կազմակերպման այլ եղանակով: Ինչպես հայտնի է, տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրացման ինքնուրույն ձեւ է (ՆՏ Սահմանադրության 2-րդ հոդված) եւ որպես այդպիսին փոփոխման կամ, առավել եւս՝ վերացման ենթակա չէ (ՆՏ Սահմանադրության 114-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն):

Նայասփանի Նանրապետությունում տեղական ինքնակառավարման ճանաչումը համապատասխանում է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» չափանիշներին:

Նայասփանի Նանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը: Սա նշանակում է, որ պետությունն իր վրա է վերցնում տեղական ինքնակառավարման զարգացմանը նպաստելու, այն չխոչընդոտելու եւ պաշտպանելու սահմանադրական պարտականությունը: ՆՏ Սահմանադրության մի շարք նորմերով սահմանվում են տեղական ինքնակառավարման կազմակերպման ու գործունեության հիմնական փարածքային (11.1, 82 եւ 110-րդ հոդվածներ), կազմակերպական (2, 107 եւ 109-րդ հոդվածներ), ֆինանսատնտեսական (105, 105.1 եւ 106-րդ հոդվածներ) եւ իրավական (5, 83.5, 85, 100, 101 եւ 104-րդ հոդվածներ) երաշխիքները:

Դրանք առավել մանրամասն կարգավորվում են «ՆՏ վարչափարածքային բաժանման մասին» (07.11.1995թ.), «Տեղական հանրաքվեի մասին» (06.02.2002թ.), «Տեղական ինքնակառավարման մասին» (07.05.2002թ.), «Նամայնքային ծառայության մասին» (14.12.2004թ.), «Տեղական փորքերի եւ վճարների մասին» (26.12.1997թ.), «ՆՏ բյուջեփային համակարգի մասին» (24.06.1997թ.), «Ֆինանսական համահարթեցման մասին» (24.11.1998թ.) եւ ՆՏ մի շարք այլ օրենքներով:

Տարածքային երաշխիքներ. Տեղական ինքնակառավարումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք եւ ժողովրդաիշխանության ձեւ, իրականացվում է ՆՏ ողջ փարածքում: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում (տե՛ս նաև 104-րդ հոդվածի մեկնաբանությունը): Ընդ որում, համայնքը ՆՏ Սահմանադրությամբ ներկայացվում է երկակի կարգավիճակով՝ որպես վարչափարածքային միավոր (ՆՏ Սահմանադրության 11.1-րդ հոդված) եւ որպես մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրություն (ՆՏ Սահմանադրության 104.1-րդ հոդված): Ներկաբար, ի փարբերություն այլ տեսակի վարչափարածքային միավորների, համայնքների փարած-

քային սահմանները չեն կարող որոշվել միայն նպատակահարմարության, անհրաժեշտության, կամայականության կամ այլ գործոններով: Ելնելով այս իրողությունից՝ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանվում է, որ միայն ՏՏ օրենքներով կարող են սահմանվել ՏՏ վարչապարաձքային միավորները եւ դրանց սահմանները: Ընդ որում, այդպիսի օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի միայն կառավարությունը (ՏՏ Սահմանադրության 82-րդ հոդված), այն էլ՝ ՏՏ Սահմանադրության 110-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ:

Կազմակերպական երաշխիքներ. Տեղական ինքնակառավարման հիմնական կազմակերպական երաշխիքը համայնքի բնակչության կողմից ինքն իրեն կառավարելու մեջ է: Տեղական ինքնակառավարման էությունը հենց համայնքի ինքնակազմակերպման, սեփական գործերն ինքնուրույն կառավարելու մեջ է: Մինչդեռ կառավարման այլ ձեւերում ու մակարդակներում ակնհայտ է «վերեից» նշանակված կառավարչի արտաքին ներգործությունը: Համայնքի բնակչությունը րեղական ինքնակառավարման իր իրավունքը կարող է իրականացնել ինչպես անմիջականորեն (րեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, րեղական հանրաքվե), այնպես էլ րեղական ինքնակառավարման մարմինների միջոցով (ավելի մանրամասն րե՛ս 107-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Եվ վերջապես, ՏՏ Սահմանադրության 2-րդ, 11.2-րդ եւ 104.1-րդ հոդվածների համադրությունը վկայում է այն մասին, որ՝

ա) պետությունը րեղական ինքնակառավարումը ճանաչում է որպես սահմանադրական իրավունքի ինքնուրույն սուբյեկտ անգամ ժողովրդի հետ հարաբերություններում, քանի որ վերջինս իրեն պատկանող իշխանությունն իրավասու է իրականացնել նաեւ րեղական ինքնակառավարման մարմինների միջոցով (րե՛ս ՏՏ Սահմանադրության 2-րդ հոդվածի մեկնաբանությունը): Սա, ինչպես նշվել է, պետության ներքին բովանդակային հարկությունն է, քանի որ վերջինս բնութագրվում է իբրեւ ժողովրդավարական եւ իրավական (րե՛ս ՏՏ Սահմանադրության 1-ին հոդվածի մեկնաբանությունը),

բ) րեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչվում է իբրեւ միջազգային-իրավական հարաբերությունների սուբյեկտ, քանի որ դա արտիայի պահանջն է (10-րդ հոդվածի 2-րդ կետ), որն ամրագրվել է նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքում (16-րդ հոդվածի 22-րդ կետ),

գ) րեղական ինքնակառավարումը պետք է ճանաչվի քաղաքական համակարգի մյուս բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ պետության կողմից իբրեւ հանրային իշխանության ինքնուրույն սուբյեկտ, ինչպես նաեւ բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից՝ իբրեւ ինքնուրույն իրավաբանական անձ:

Ֆինանսարևոեսական երաշխիքներ. րեղական ինքնակառավարումը, ինչպես վերոգրյալից պարզվեց, հանրային իշխանության իրացման եւ համայնքային սեփականության կառավարման ու րնօրինման ինքնուրույն ձեւ է, որոնցով էլ պայմանավորված են րեղական ինքնակառավարման ֆինանսական եւ րնրեսական երաշխիքները:

Նախ, իբրեւ հանրային իշխանության ինքնուրույն սուբյեկտ բոլոր համայնքները, իրենց րարաձքից, բնակչության թվից, նյութական պաշարներից եւ այլ առանձնահատկություններից անկախ, ունեն սեփական բյուջե՝ եկամտի սեփական, երաշխավորված աղբյուրներով: Համայնքներն օրենքով սահմանված չափով եւ կարգով սահմանում են րեղական հարկեր եւ րուրքեր:

Երկրորդ, իբրեւ իրավաբանական անձ՝ համայնքներն ունեն իրենց սեփական համայնքային րնրեսությունը, որի նյութական հիմքն են կազմում հողամասերը, այդ թվում

եւ՝ պետության կողմից համայնքներին անհատույց փրամադրված, ինչպես նաեւ քաղաքացիական շրջանառությունից չհանված ցանկացած այլ շարժական եւ անշարժ գույք: Նամայնքներն ունեն նաեւ այլ գույքային իրավունքներ:

Բացի դրանից, փեղական նշանակության մի շարք հարցերի լուծման նպատակով համայնքը կարող է ծառայություններ մատուցել եւ դրանց դիմաց սահմանել եւ գանձել վճարներ:

Քիմք ընդունելով Խարտիայի պահանջները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքով (օրենքի 67 եւ 71-րդ հոդվածներ) պետությանն արգելվում է իր ընդունած օրենքներով ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման (*ավելի մանրամասն փե՛ն՝ ՆՃ Սահմանադրության 106-րդ հոդվածի մեկնաբանությունը*):

Իրավական երաշխիքները. Տեղական ինքնակառավարման կազմակերպման եւ գործունեության ապահովման իրավական միջոցներն են, ինչպես նաեւ դրանք սահմանող եւ ամրագրող իրավական ակտերը: Տեղական ինքնակառավարման իրավական երաշխիքներ են սահմանվում ՆՃ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ի թիվս այլ իրավաբանական անձանց, փրամադրվում են նաեւ համայնքի վրա, այնքանով, որքանով որ դրանք կիրառելի են դրանց նկատմամբ (փե՛ն՝ ՆՃ Սահմանադրության 42-րդ հոդվածի մեկնաբանությունը): Սահմանադրական այս ելակետային սկզբունքը թույլ է փայլիս համայնքի վրա փրամադրված մարդու համար սահմանված բոլոր սահմանադրական իրավական երաշխիքները:

Միեւնույն ժամանակ, ելնելով այն իրողությունից, որ փեղական ինքնակառավարումը նաեւ ժողովրդապիշխանության իրացման ինքնուրույն ձեւ է, որը կազմակերպորեն առանձնացված է պետությունից, ՆՃ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանվում են այլ լրացուցիչ իրավական երաշխիքներ: Այսպես.

ա) փեղական ինքնակառավարման մարմինները պետական մարմինների մասը չեն կազմում,

բ) փեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սպառիչ չեն եւ կարող են ընդգրկել փեղական նշանակության ցանկացած հարց, եթե դա ուղղակիորեն վերապահված չէ պետական մարմիններին կամ պաշտոնապար անձանց,

գ) փեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը պետական մարմինների կամ պաշտոնապար անձանց կողմից արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ եւ օրենքով,

դ) փեղական ինքնակառավարման մարմինները դատական պաշտպանության իրավունք ունեն, այդ թվում՝ փեղական ինքնակառավարման մարմինները կարող են դատարանում բողոքարկել համայնքի իրավունքները խախտող պետական մարմինների ու պաշտոնապար անձանց որոշումներն ու գործողությունները, ինչպես նաեւ կարող են դիմել ՆՃ սահմանադրական դատարան՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների ընդունած նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով,

ե) փեղական ինքնակառավարման մարմինները պետական մարմիններին եւ պաշտոնապար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք ունեն (փե՛ն նաեւ ՆՃ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի մեկնաբանությունը),

զ) րեղական ինքնակառավարման մարմինները կարող են ընդունել սեփական իրավական ակտեր: Դրանք ենթակա են պարտադիր կապարման կոնկրետ համայնքի փարածքում, եւ դրանց կապարումն ապահովվում է պեղական հարկադրանքի ուժով (րեն նաեւ 107-րդ հոդվածի մեկնաբանությունը),

է) րեղական ինքնակառավարման միասնականությունն ու միաբեակությունը հանրապեղության ողջ փարածքում երաշխավորված է:

Այսպիսով, րեղական ինքնակառավարման ճանաչումն ու երաշխավորումը որպեւ սահմանադրական կարգի հիմունք՝ Ղայասրանի Ղանրապեղությունում իշխանության կազմակերպման եւ իրացման անհրաժեշտ քաղաքիչներից է, իսկ դրա փարածքային, կազմակերպական, ֆինանսափնրեսական եւ իրավական երաշխիքների ամրագրումը՝ մեր երկրում րեղական ինքնակառավարման գարգացման կարեւորագույն նախադրյալը:

ՂՈԴՎԱԾ 11.3

1. Ղայասրանի Ղանրապեղության քաղաքացիները Ղայասրանի Ղանրապեղության փարածքում եւ նրա սահմաններից դուրս գրնվում են Ղայասրանի Ղանրապեղության պաշտպանության ներքո:

2. Ազգությանմք հայերը Ղայասրանի Ղանրապեղության քաղաքացիություն եւ ձեռք բերում պարզեցված կարգով:

1. Մեկնաբանվող հոդվածը ՂՂ Սահմանադրության նոր հոդվածներից է, որի համաճայն Ղայասրանի Ղանրապեղությունը պարտավորվում է պաշտպանել իր քաղաքացիներին ինչպեւ Ղայասրանի Ղանրապեղության ողջ փարածքում, այնպեւ էլ իր փարածքից դուրս: Ընդ որում, Ղայասրանի Ղանրապեղությունը երաշխավորում է պեղական պաշտպանություն իր բոլոր քաղաքացիներին, որոնք մշտապեւ են բնակվում ՂՂ փարածքից դուրս կամ ժամանակավոր են գրնվում արտասահմանում (գրոսաշրջիչներին, բուժվողներին, ժառանգական գործերով մեկնածներին եւ այլն):

ՂՂ Սահմանադրությամք ամրագրված այս դրույթն ունի առանձնահարուկ կարեւոր նշանակություն, քանզի առնչվում է օրարերկրյա պեղություններում եւ առաջին հերթին նախկին Խորհրդային Միության հանրապեղություններում բնակվող Ղայասրանի հագարավոր քաղաքացիների իրավական կարգավիճակի բավականին սուր հիմնախնդիրներին:

ՂՂ քաղաքացիներին Սահմանադրությամք երաշխավորված պաշտպանությունը պարտավոր են ցույց րալ բոլոր պեղական մարմինները, պաշտոնափար անձինք եւ առաջին հերթին արտասահմանյան պեղություններում գործող ՂՂ դիվանագիտական ներկայացուցչությունները եւ հյուպարոսական հասփարությունները:

Բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները եւ հյուպարոսական հասփարությունները են նրանց պաշտոնափար անձինք պարտավոր են աշակցել ՂՂ քաղաքացիներին, որպեւզի արտասահմանյան պեղությունում հնարավորություն րրվի նրանց լիարժեք օգրվելու ՂՂ միջագգային պայմանագրերով նախաբեակված կամ րվյալ պեղության օրենսդրությամք ամրագրված իրավունքներից եւ ազափություններից՝ ողջ ծավալով:

Նրանք պարտավոր են նաեւ ակրիվ միջոցներ ձեռնարկել ՂՂ քաղաքացիների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, ինչպեւ նաեւ խախտված իրա-

վունքների վերականգնման ուղղությամբ: Այդ նպատակով դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների պաշտոնատար անձինք իրավասու և պարտավոր են օգտագործել ինչպես տվյալ պետության ներքին օրենսդրությամբ թույլատրվող, այնպես էլ միջազգային իրավունքով ստանալով պաշտպանության բոլոր հնարավոր միջոցները և եղանակները:

ՏՏ դիվանագիտական ներկայացուցչությունների գործառնությունները և դրանց իրականացման նպատակով ամրագրված իրավասությունները հստակ սահմանված են 1961թ. Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայով, իսկ հյուպատոսական հաստատությունների գործառնությունները և համապատասխան իրավասություններն ամրագրված են 1963թ. Նյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայում: ՏՏ-ում գործում է նաև Նյուպատոսական կանոնադրությունը, կնքված են բազմաթիվ պետությունների հետ երկկողմ հյուպատոսական պայմանագրեր և կոնվենցիաներ (ԱՄՆ, Ֆրանսիա, ՌԴ և այլ պետություններ):

Մասնավորապես, օտարերկրյա պետություններում գործող ՏՏ դեսպանությունները պարտավոր են ՏՏ քաղաքացիներին իրավական խորհրդատվություններ ստանալու և նրանց մոտ ծագած հարցերով, քաղաքացիների շահերի պաշտպանությանն ուղղված հարցումներ կատարել, բողոքներ ներկայացնել տեղի իշխանություններին:

Նյուպատոս իր հերթին պարտավոր է վարել իր փարածքում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող ՏՏ քաղաքացիների հաշվառումը, հետեւել, որպեսզի հանցագործության մեջ կասկածվող, ձերբակալված կամ կալանավորված, կամ ազատագրված ՏՏ քաղաքացիների նկատմամբ պահպանվեն տվյալ պետության օրենքների, ինչպես նաև տվյալ պետության հետ կնքված ՏՏ միջազգային պայմանագրերի նորմերը: Մասնավորապես, ՏՏ հյուպատոսը պարտավոր է այցելել ազատագրված վայրերում գտնվող ՏՏ քաղաքացիներին, կարող է ներկայացնել ՏՏ քաղաքացու շահերը տվյալ պետության դատարաններում և այլ մարմիններում, տրամադրում է ՏՏ քաղաքացիներին անհրաժեշտ համապատասխան փաստաթղթեր, տեղեկանքներ և այլն:

2. Սահմանադրության 11.3-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է օրենսդրին ուղղված սահմանադրական պահանջ, ըստ որի՝ ազգությամբ հայերը ՏՏ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով: Պետք է նշել, որ այս դրույթը տրամաբանական կլիներ ամրագրել ոչ թե Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերաբերությամբ առաջին գլխում, այլ 30.1-րդ հոդվածում, որում ամրագրված են քաղաքացիության ինստիտուտի վերաբերող հիմնական սահմանադրական նորմերը:

ՏՏ քաղաքացիության ինստիտուտը սահմանադրական փոփոխությունների արդյունքում մեծապես փոփոխվել է: Մասնավորապես, հանվել է երկքաղաքացիության սահմանադրական արգելքը, սահմանվել են նոր, կարեւոր դրույթներ: Դրանցից մեկն էլ Սահմանադրության 11.3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն է, որն էապես կոյուրացնի ազգությամբ հայերի ՏՏ քաղաքացիության ձեռքբերման ընթացակարգը: Նայաստանի Նանրապետությունը շահագրգռված է, որպեսզի աշխարհով մեկ սփռված հայերը, ովքեր ցանկություն կհայտնեն ձեռք բերել ՏՏ քաղաքացիություն, կարողանան այն կատարել արագ, առանց ավելորդ բյուրոկրատական քաջբռնությունների, առանց նախնական պարտադիր պահանջների, որոնք, որպես կանոն, սահմանվում են քաղաքացիության ձեռքբերման ընդհանուր կարգով (նստակեցության որոշակի 3-5 տարվա ցենզ, պետական լեզվի, Սահմանադրության իմացություն, որոշակի գույքի, դրամական միջոցների առկայություն և այլն):

ՆՈՂ-ՎԱԾ 12

Նայասպրանի Նանրապետության պետական լեզուն հայերենն է:

Մահմանադրական մակարդակով հայերենը պետական լեզու ճանաչելն ունի ազգային, քաղաքական և սոցիալական նշանակություն: Նայերենը հայ ժողովրդի ազգային կենսակերպի, մրաժողության, հոգեբանության և, ընդհանրապես, ազգային մշակույթի աղբյուրն է, հիմնական զարկերակը և կենսագրության նախապայմանը:

Նանդիսանալով աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ դարերի ընթացքում այն հարստացել և բյուրեղացված ձևով հասել է մեր ժամանակները, հասել է փեղեկավարական և հաղորդակցական (կոմունիկացիոն) դարաշրջան, որպես դժվար է գերազնահարել լեզվի դերն ու նշանակությունը՝ հասարակական հարաբերությունների կանոնակարգման (օրենսդրության միջոցով) և մարդկային համակեցության բնականոն գործառնության համար:

Պետական լեզվի վերաբերյալ դրույթներ ամրագրված են եղել նաև Նայկական ԽՍՀ 1937թ. և 1978թ. սահմանադրություններում: Ընդ որում, Նայկական ԽՍՀ 1978թ. Մահմանադրության փոքրամասն դրանք հայտնվել են միայն քաղաքական բնույթի լուրջ հուզումների արդյունքում, քանի որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին առընթեր հանձնաժողովի կողմից փորձ էր արվել հանել 72-րդ հոդվածում ամրագրված պետական լեզվի վերաբերյալ դրույթը:

Մեկնաբանվող հոդվածը շար ընդհանուր է: Դրանում չկա «պետական լեզու» հասկացության սահմանումը, չեն հստակեցված պետության պարավորությունները պետական լեզվի հիմնահարցում: Նոդվածի իմաստից բխում է, որ պետությունն իր վրա վերցնում է պարավորություն՝ իրականացնել պետական հոգաբարություն հայոց լեզվի ըստ ամենայնի զարգացման նկատմամբ և ապահովել դրա գործածությունը պետական ու հասարակական մարմիններում, մշակութային, կրթադաստիարակչական և այլ կազմակերպություններում ու հիմնարկներում:

Մահմանադրական նորմի հստակեցումը կարարվում է «Լեզվի մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքում (17 ապրիլի 1993թ.): Նշված օրենքը հանգամանորեն կարգավորում է Նայասպրանի Նանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կանոնակարգում է պետական իշխանության և կառավարման մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը պետական լեզվի կիրառման ոլորտում:

Մասնավորապես, օրենքի 1-ին հոդվածը սահմանում է պետության լեզվական քաղաքականության հիմնական ուղղությունները.

«Նայասպրանի Նանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Նայասպրանի Նանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Նայասպրանի Նանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու փարածմանը:

Նայասպրանի Նանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Նայասպրանի Նանրապետությունն իր փարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»:

Ինչպես տեսնում ենք, պեղական լեզվական քաղաքականության հիմնական ուղղություններից է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածության ապահովումը և դրանց հեղափոխական գարգացման նպաստումն ու խրախուսումը, որը ժողովրդավարական պետության կարևոր հարկանիշներից է:

Օրենքը նաև սահմանում է, որ Նայասրանի Նանրապետության փարածքում գրնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

Ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պեղական ծրագրով և հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Պաշտոնապար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Նայասրանի Նանրապետության քաղաքացիները պարտավոր են փրապետել հայերենին:

Նայասրանի Նանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային արյանում ընդունված կարգին:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է Նայասրանի Նանրապետության փարածքում գրնվող հասարակությունների լեզվական իրավունքներն ու պարտականությունները:

Նայասրանի Նանրապետության փարածքում գրնվող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպություններն այլ երկրների պեղական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Նայասրանի Նանրապետության պեղական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են՝

ա) գործավարությունը կատարել հայերեն,

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային արենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը,

գ) ցուցանակները, ձեւաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձեւավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Նայասրանի Նանրապետության փարածքում գրնվող արտասահմանյան պեղական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են պեղական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով:

Նայասրանի Նանրապետության փարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձեւաթղթերը, կնիքները ձեւավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

Պեղական լեզվաքաղաքականությունն իրականացնում են՝ ՆՆ կառավարությունը, Լեզվի պեղական տեսչությունը, տեղական ինքնակառավարման մարմինները: Պեղական լեզվաքաղաքականության իրականացման խնդրում ներգրավված են նաև պեղական իշխանության բոլոր մարմինները՝ ճյուղային կառավարման մարմինները, փարածքային կառավարման տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքական և հասարակական կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական ան-

ծինք: Ներելաբար, բոլորը պարասխանարու են մեր դարավոր լեզվի պահպանության եւ զարգացման համար՝ իրենց վերապահված ոլորտներում եւ իրենց իրավասության շրջանակներում:

ՆՈՂ-ՎԱԾ 13

1. Նայասարանի Նանրապեղության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:

2. Նայասարանի Նանրապեղության զինանշանն է. կենտրոնում՝ վահանի վրա, պարկերված են Արարար լեռը՝ Նոյյան տապանով, եւ պարմական Նայասարանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը եւ առյուծը, իսկ վահանից ներքեւ պարկերված են սուր, ձյուղ, հասկերի խուրձ, շղթա եւ ժապավեն:

3. Դրոշի եւ զինանշանի մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով:

4. Նայասարանի Նանրապեղության օրհներգը սահմանվում է օրենքով:

5. Նայասարանի Նանրապեղության մայրաքաղաքը Երևանն է:

Սահմանադրության 13-րդ հոդվածը նվիրված է պետության որոշակի խորհրդանիշերի սահմանադրական կարգավորմանը: Ընդհանրապես **խորհրդանիշը** սոցիալ-մշակութային ձեւ է, որը մարնանշում է որոշակի իմաստ, արժեք, նորմեր: Վերջիններս խորհրդանիշերում կարող են բավականին ակնհայտությամբ չներկայանալ, սակայն ենթադրվում են որոշակի հասարակական փոխհամաձայնության ուժով: Խորհրդանիշերը իրենց բնույթով եւ նշանակությամբ լինում են հաղորդակցային, գիտական, գեղարվեստական, պեղաբաղաբական: Պեղաբաղաբական խորհրդանիշերը սպասարկում են պետության գործունեությունը՝ կարարելով կազմակերպական, կառավարչական, գաղափարական, ներկայացուցչական խնդիրներ:

Պարմականորեն ցանկացած իշխանություն միշտ կարելուք նշանակություն է տվել իր արբերանշաններին՝ դրանց մշակմանը, կիրառմանը: Այդ գործընթացն ունի եւ իրավական իմաստ՝ օրենսդրական ամրագրում, եւ սոցիալ-հոգեբանական հաշվարկ:

Դրոշը, զինանշանը, օրհներգը՝ իբրեւ պետության խորհրդանշաններ, պեղականագիտության մեջ դիրարկվում են որպես պեղական արբերանշաններ: Պեղական արբերանշանները յուրաքանչյուր ինքնիշխան պետության անօրարելի պաշտոնական խորհրդանշաններն են: Պեղական խորհրդանշանների շարքում հարուկ տեղ է գրաղեցնում մայրաքաղաքը:

Պեղության բոլոր հնարավոր խորհրդանշաններից Սահմանադրության 13-րդ հոդվածն իրավական կարգավորման է ենթարկել դրոշը, զինանշանը, օրհներգը, մայրաքաղաքը:

1. Պեղական դրոշը պետության ինքնիշխանությունն արարահայտող պաշտոնական արբերանշան է: Նայասարանի Նանրապեղության դրոշը եռագույն է՝ վերելից ներքեւ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Կարմիր գույնը խորհրդանշում է Նայակական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարարելման, քրիստոնեական հավարքի, Նայասարանի անկախության եւ ազա-

ություն համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական փառանդը եւ աշխարասիրությունը: Դրոշի լայնության եւ երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2-ի: Դրոշի լայնության եւ երկարության վերը նշված հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել փոքր կամ մեծ չափի դրոշ:

Նայաստանում դրոշի օգտագործման վերաբերյալ ամենավաղ տեղեկությունը կապված է Նայկ Նահապետի ավանդության հետ: Նայկը գալով Բզունյաց ծովի (Վանա լիճ) շրջանը՝ իր դրոշը պարզեց մի ժայռի վրա, որը հետագայում կոչվեց Նայկաբերդ:

Հին հայկական թագավորական տները (Արտաշեսյան, Արշակունի, Բագրատունի) ունեցել են իրենց պետական դրոշները: Արտաշեսյանների ու Արշակունիների ծիրանագույն դրոշի վրա եղել է երկու արծիվ, մեջտեղում՝ արեւի նշան, Բագրատունիների պետական դրոշի վրա մեկ արծիվ:

Գիլիկիայի հայկական թագավորության պետական դրոշի վրա ծիրանագույն հիմնապատկերով (Փոնի) վրա պատկերվել է արքայական գավազանով առյուծ:⁸¹ Ինչպես տեսնում ենք, որպես դրոշի գույն գերակշռել է ծիրանագույնը:

Ներաբրբիր է, որ 1773-ին լույս տեսած Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատության մեջ Նայաստանի ապագա պետական դրոշը նկարագրված է կարմիր, կապույտ, դեղին: Այս գույները շատ նման են ներկայիս դրոշի գույներին:

Պետական դրոշն ունի **կիրառական նշանակություն**: Նայաստանի Հանրապետության դրոշը **մշտապես բարձրացվում է** Նայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, սահմանադրական դատարանի, այլ դատարանների, դատախազության մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի, կենտրոնական բանկի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների), Նայաստանի Հանրապետության փարաժբային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երեւանի քաղաքապետարանի) շենքերի վրա:

Մ դրոշը պետք է նաեւ մշտապես բարձրացվի օտարերկրյա պետությունների փարածքում գտնվող՝ Նայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) եւ Նայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա՝ միջազգային իրավունքի նորմերին, դիվանագիտական արարողակարգի կանոններին եւ ընդունող պետությունների սովորույթներին համապատասխան: Պետական դրոշը բարձրացվում է մարզական պաշտոնական առաջնությունների բացման եւ իջեցվում է փակման արարողությունների ժամանակ:

Նայաստանի Հանրապետության դրոշը **մշտապես տեղադրվում է** պաշտոնական, աշխատանքային եւ հանդիսավոր արարողությունների համար նախատեսված՝ Նայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, դատարանների դատական նիստերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերի դահլիճներում:

Նայաստանի Հանրապետության դրոշը տեղադրվում է Նայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի եւ Ազգային ժողովի այլ մարմինների, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, Նայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, կառավարության աշխա-

⁸¹ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Երեւան, 1977, հ. 3, էջ 455:

փակագմի դեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի դեկավարի, կենտրոնական բանկի նախագահի, վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների դեկավարների, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) դեկավարների, դատավորների եւ դատախազների, փորձաքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների դեկավարների (այդ թվում՝ Երեւանի քաղաքապետի), օտարերկրյա պետությունների փորձաքային գրնվող՝ Նայաստանի Նանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) դեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում:

Արդեն նշված դեպքերից բացի, Նայաստանի Նանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա:

Նայաստանի Նանրապետության դրոշը կարող է ամրացվել՝ Նայաստանի Նանրապետության Նախագահի փոխադրամիջոցների վրա, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, արտաքին գործերի նախարարի փոխադրամիջոցների վրա՝ միայն արտասահմանյան պատվիրակությունների այցերի ժամանակ՝ Նայաստանի Նանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան, ինչպես նաև Նայաստանի Նանրապետության պաշտոնական պատվիրակությունների դեկավարների, դիվանագիտական եւ մշտական ներկայացուցչությունների դեկավարների փոխադրամիջոցների վրա՝ ընդունող պետությունների արարողակարգին համապատասխան:

Նայաստանի Նանրապետության սահմանադրական պաշտոններում նշանակվող անձանց կամ օրենքով սահմանված այլ անձանց երդման արարողությունն իրականացվում է Նայաստանի Նանրապետության դրոշի ներքո:

Օրենքով նախատեսված դեպքերից բացի, Նայաստանի Նանրապետության դրոշի եւ դրա պատկերի գործածման կարգը սահմանում է կառավարությունը: Այն նաև սահմանում է դրոշի բարձրացման, իջեցման, փոխանցման արարողակարգը:

Նայաստանի Նանրապետության դրոշն իջեցվում է պաշտոնապես հայտարարված սգո օրերին կամ սգո արարողությունների ժամանակ՝ մինչև դրոշաձողի մեջտեղ: Դրոշի վերեւի մասում ամրացվում է սեւ ժապավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

Նայաստանի Նանրապետության մահացած (զոհված) քաղաքացու զինվորական հարգանքի փորձ մատուցելու նպատակով կազմակերպված սգո արարողությունների ժամանակ Նայաստանի Նանրապետության կառավարության սահմանած դեպքերում մահացածի դին եւ դագաղը ծածկվում են Նայաստանի Նանրապետության դրոշով: Աճյունը հողին հանձնելուց առաջ Նայաստանի Նանրապետության դրոշը հանձնվում է մահացածի (զոհվածի) հարազատներին:

Նայաստանի Նանրապետության փորձաքային Նայաստանի Նանրապետության դրոշն օտարերկրյա պետության դրոշի հետ միաժամանակ բարձրացնելու անհրաժեշտության դեպքում Նայաստանի Նանրապետության դրոշը պետք է բարձրացվի փոքր շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ բարձրացվում են կենդանի թվով մի քանի դրոշներ, ապա Նայաստանի Նանրապետության դրոշը պետք է բարձրացվի դրանց մեջտեղում: Եթե բարձրացվում են գույգ թվով (2-ից ավելի) դրոշներ, ապա Նայաստանի Նանրապետության դրոշը պետք է բարձրացվի կենտրոնից ձախ:

Նայաստանի Նանրապետության դրոշն այլ պետությունների դրոշների հետ միա-
ժամանակ բարձրացվելու դեպքում այլ պետությունների դրոշների չափերը չեն կարող
գերազանցել Նայաստանի Նանրապետության դրոշի չափերը:

Բարձրացված Նայաստանի Նանրապետության դրոշը պետք է լինի ամբողջա-
կան, մաքուր եւ չգունաթափված, ընդ որում, դրոշի ներքեւի մասը պետք է գտնվի գետնից
2,5 մետրից ոչ պակաս բարձրության վրա:

Դրոշի երկարության հարաբերությունը դրոշածողի երկարության նկատմամբ կա-
րող է լինել 1:1,7-ից ոչ պակաս:

Նայաստանի Նանրապետության դրոշն ուղղահայաց դիրքով կախելու դեպքում
պետք է ժամացույցի սլաքի ուղղության հակառակ 90 աստիճանով շրջել այնպես, որ
դեմքով դեպի դրոշը կանգնելիս կարմիր, կապույտ, նարնջագույն գույների հերթականու-
թյունը ձախից աջ չխախտվի:

Օրենքով սահմանված կարգով մշտապես բարձրացված Նայաստանի Նանրա-
պետության դրոշը գիշերային ժամերին պետք է լուսավորվի:

Նայաստանի Նանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների եւ
կազմակերպությունների դրոշները պետք է տարբերվեն Նայաստանի Նանրապետու-
թյան դրոշից:

Նայաստանի Նանրապետության դրոշը բարձրացվում է Նայաստանի Նանրապե-
տության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, գորամասե-
րի, զինված ուժերի եւ այլ գործերի առանձին ստորաբաժանումների, ինչպես նաեւ այլ
գործերի մշտական տեղակայման վայրերում՝ հանդիսությունների եւ պաշտոնական
արարողությունների ժամանակ (գորահանդես, շարային սրուգապես, զինվորական եր-
դում, տոնական միջոցառումներ եւ այլ հատուկ դեպքեր):

Նայաստանի Նանրապետության զինված ուժերի կանոնադրություններով նախա-
տեսված դեպքերում գորամասի մարտական դրոշը դուրս բերելիս դուրս է բերվում նաեւ
Նայաստանի Նանրապետության դրոշը: Նայաստանի Նանրապետության դրոշը գորա-
մասի մարտական դրոշի հետ միաժամանակ դուրս բերելու եւ տեղադրելու կարգը սահ-
մանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը:

2. Զինանշանը (գերբ) այն կրողի պատմական ավանդույթներն արտահայտող
պատկերների եւ առարկաների համադրությամբ խորհրդանշանային ժառանգական
տարբերանշան է: Այն յուրահատուկ է պետություններին, ազնվական կամ իշխանական
տներին, պետության կազմի մեջ մտնող վարչարարածքային միավորներին եւ այլն:

Պետական զինանշանը պետության պաշտոնական տարբերանշանն է: Դրա
բովանդակությունը դրսեւորվում է երկու առումով. ա) որպես պետության ինքնիշխանու-
թյան խորհրդանիշ, բ) կիրառական նշանակությամբ:

Զինանշանը դիրքով պետության **ինքնիշխանության խորհրդանիշ**, այնուա-
մենայնիվ, այն կերտողները զինանշանի մեջ տեսնում են որոշակի իմաստ, խորհուրդ,
բովանդակություն: Խնդիրն այն է, որ պատմությանը հայտնի շար զինանշաններ, որոնք
հանդիսացել են կոնկրետ պետության կամ իշխող դինաստիայի զինանշանը, այդ պե-
տության կամ դինաստիայի պատմական ասպարեզից հեռանալուց հետո այլես չեն օգ-
տագործվել ուրիշների կողմից: Այսպես, Նին Նունաստանի զինանշանը եղել է բուն, Նին
Նռոմինը՝ արծիվը, Կորինֆ քաղաքինը՝ թռչող ձին եւ այլն: Միջնադարում նույնպես
ստեղծվեցին այնպիսի զինանշաններ, որոնք կիրառվել են միայն տվյալ պետություննե-
րի կողմից: Օրինակ, Ֆլորենցիայի պետական զինանշանի վրա պատկերված էր կարմիր

կակաչ, Վենետիկինը՝ թեաւվոր առյուծ, Սամարղանդինը՝ երեք օղակներ, Մոսկվայինը՝ ձիու վրա զինվոր, Վլադիմիրինը՝ առյուծ, Կազանինը՝ թեաւվոր օձ եւ այլն:

Պարմոյթյան ընթացքում հայկական պետությունների եւ թագավորական դինաստիաների փոփոխության հետք մեկտեղ փոխվել են նաեւ զինանշանները: Այսպէս, **Ուրարական թագավորական զինանշանը յոթգլխանի վիշապ էր**, որը խորհրդանշում էր Ուրարտուի յոթ մարզերը: Այդ նույն զինանշանը պահպանվել է նաեւ **Երվանդունիների թագավորական դինաստիայի կողմից: Արտաշեսյան դինաստիայի** (մ.թ.ա.189 - մ.թ.1թ.) օրոք **զինանշանի կենտրոնում արդեն պարկերված էր արծիվ**, որը պահպանվեց նաեւ **Արշակունիների օրոք** (1-5-րդ դարերը): **Կիլիկիայի հայկական թագավորության զինանշանը Ռուբինյան դինաստիայի օրոք պարկերում էր առյուծ:**⁸²

Նայաստանի Նանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պարմական Նայաստանի թագավորություններինը՝ վերելից ձախ՝ կարմիր, վերելից աջ՝ կապույտ, ներքեւից ձախ՝ կապույտ, ներքեւից աջ՝ կարմիր եւ կենտրոնում՝ վահանի վրա պարկերված Արարապ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Նայաստանի Նանրապետության դրոշի գույները:

Նայաստանի Նանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների զինանշանները, կազմակերպությունների խորհրդանիշերը, ինչպէս նաեւ այլ խորհրդանիշերն ու զինանշանները պետք է փարբերվեն Նայաստանի Նանրապետության զինանշանից:

Զինանշանն ունի կիրառական նշանակություն: Այն պարկերվում է կառավարական շենքերի ճակատային մասերում, մերադադրամների, թոթադրամների, ձեւաթղթերի (բլանկ), կնիքների վրա եւ այլուր: Պետական զինանշանը (դրա գունավոր փարբերակը) պարկերվում է Նայաստանի Նանրապետության **օրենքների**, Նանրապետության Նախագահի **հրամանագրերի եւ կարգադրությունների**, **կառավարության որոշումների**, **դատարանների կողմից ընդունված ակտերի եւ այլ իրավական ակտերի վրա:**

Նայաստանի Նանրապետության զինանշանի միագույն պարկերը գործածվում է Նայաստանի Նանրապետության քաղաքացիների **անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի**, Նայաստանի Նանրապետության պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման այն մարմինների **կնիքների եւ ձեւաթղթերի վրա**, որոնց՝ Նայաստանի Նանրապետության զինանշանի պարկերը գործածելու իրավունքը վերապահված է Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ:

Պետական զինանշանն ունի նաեւ իր **տեղադրման** վայրերը: Դրա պարկերը մշտապէս տեղադրվում է՝ Նայաստանի Նանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, Նայաստանի Նանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, կառավարության աշխատակազմի ղեկավարի, կենտրոնական բանկի նախագահի, վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, օրենքով սրբեցված մշտապէս գործող մարմինների (ժառանգությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, դատավորների եւ դատախազների, փարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երեսանի քաղաքապետի) աշխատասենյակներում,

⁸² Տե՛ս «Հայրենիքի ձայն», Երեսան, 14 փետրվարի 1968թ.:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության դատարանների դատական նիստերի դահլիճներում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների հանդիսությունների սրահներում եւ շենքերի վրա, Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, սահմանադրական դատարանի, դատախազության մարմինների, կենտրոնական բանկի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, փարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երեսնի քաղաքապետարանի), նուրբարական գրասենյակների շենքերի վրա, դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների), օտարերկրյա պետությունների փարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա եւ դրանց ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը տեղադրվում է նաեւ հիմնական սահմանային նշանների վրա, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցագրային կետերում:

Վերը նշված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության փարածքում Հայաստանի Հանրապետության զինանշանն օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում այլ պետությունների պետական զինանշանների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության զինանշանի չափերը:

Հայաստանի Հանրապետության զինանշանն օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը չի կարող տեղադրվել ավելի ցածր, քան օտարերկրյա պետության զինանշանը:

Հայաստանի Հանրապետության զինանշանն օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրվելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի ավելի շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ տեղադրվում է կենտրոնում մի քանի զինանշան, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում: Եթե տեղադրվում են զույգ թվով (2-ից ավելի) զինանշաններ, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է տեղադրվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի դրոշների վրա, ոստիկանության գործերի, արդարադատության նախարարության քրեակադրատորական ծառայողների, զինծառայողների եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության շարքային ու ղեկավար կազմի փարբերանշանների վրա:

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է պատկերվել Հայաստանի Հանրապետության դրամական միավորների, շքանշանների ու մեդալների վրա:

3. Մեկնաբանվող նորմը հստակ դրույթ է պարունակում, ըստ որի՝ դրոշի եւ զինանշանի մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով: Դրա անհրաժեշտությունը թելադրված է այդ խորհրդանիշերի հստակ պեղական կարեւորությամբ, ինչպես նաեւ դրանց հնարավոր աղավաղումների վրանգով: Պակաս կարեւոր չէ նաեւ այն հանգամանքը, որ այդ խորհրդանիշերը դժվար փոփոխելի լինեն, որպեսզի ձեւավորեն կայուն պեղական ավանդույթներ, պեղական խորհրդանիշերի նկարմամբ սերնդե-սերունդ փոխանցվող հարգալից վերաբերմունք: Դրոշի եւ զինանշանի մանրամասն նկարագրությունը եւ գործածման կարգը սահմանված են «Նայասրանի Նանրապեղության դրոշի մասին» եւ «Նայասրանի Նանրապեղության զինանշանի մասին» ՏՏ օրենքներով, որոնք ընդունվել են 2006թ. հոկտեմբերի 15-ին:

4. «Օրհներգ» (հիմն) հասկացությունն ունի հունական ծագում, որը թարգմանաբար նշանակում է հանդիսավոր երգ: Այն գրվում է ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով: Օրհներգերը լինում են պեղական, հեղափոխական, զինվորական, կրոնական, որեւէ անձի կամ դեպքի պատվին եւ այլն: Նին Նունասրանում օրհներգերը նվիրվել են աստվածներին: Քրիստոնեության հաստատումից հետո եկեղեցական օրհներգերը կազմել են ժամերգության եւ աղոթքի մասը: Օրհներգերի ազգային փարապեղական եւ **հայկական շարականները:**

Ներագայում օրհներգերն սկսեցին հնչեցվել զինվորական միջոցառումների ժամանակ: Ուշ միջնադարի եւ նոր դարաշրջանի ազգայական հեղափոխությունների օրհներգը «Մարսեյոգն» էր, իսկ հեղափոխական պրոլեթարիատինը՝ «Ինտերնացիոնալը»: Ժամանակակից բոլոր պեղություններն ունեն իրենց պեղական օրհներգը, որը պեղական դրոշի եւ զինանշանի հետ մեկտեղ, հանդիսանում է րվյալ պեղության պեղական պաշտոնական խորհրդանիշը:

Նայասրանի Նանրապեղության օրհներգը Նայասրանի Նանրապեղության պեղական խորհրդանիշերից է: Այն սահմանվել է «Նայասրանի Նանրապեղության օրհներգի մասին» ՏՏ օրենքով, որն ընդունվել է 2006թ. հոկտեմբերի 15-ին: **Նայասրանի Նանրապեղության օրհներգը** հանդիսավոր երաժշտական սրբազատություն է, որը կատարվում է հիշատակված օրենքով սահմանված կարգով՝ վոկալ, գործիքային, նվագախմբային, երգչախմբային, նվագախմբային-երգչախմբային փարբերակներով: Նայասրանի Նանրապեղության օրհներգը պետք է կատարվի նշված օրենքի հավելվածով հաստատված երաժշտական խմբագրությամբ եւ փեքստի համապատասխանությամբ:

Այդ օրենքի դրույթներից ելնելով անցկացվեց պեղական համապատասխան մարմինների կողմից սահմանված կարգով մրցույթ, որը պետք է որոշեր ՏՏ օրհներգի երաժշտությունը եւ խոսքերը: Մրցույթի արդյունքում, որպես օրհներգի երաժշտություն ընտրվեց Արամ Խաչատրյանի երաժշտությունը, որը հանդիսանում էր Նայասրանի երկրորդ Նանրապեղության⁸³ օրհներգի երաժշտությունը: Իսկ ինչ վերաբերում է օրհներգի խոսքերին՝ այն մրցույթի արդյունքում չընտրվեց: Ներագայում անցկացվելիք մրցույթի արդյունքում կընտրվի նաեւ ըստ էության նոր օրհներգի խոսքերը: Սակայն մինչեւ նոր օրհներգի վերջնական ընդունումը պետք է գործի նախկին օրհներգը՝ «Մեր Նայրենիքը», որի փեքստը

⁸³ Չնայած որոշ պատմաբաններ, քաղաքական գործիչներ Խորհրդային Հայաստանը չեն համարում երկրորդ հանրապետություն, քանի որ այն գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում, սակայն պետք է նշել, որ այն իր անկախությամբ գրեթե չէր տարբերվում Պարսկաստանի շրթորդ դարից ենթակա Արշակունյաց թագավորությունից :

վերցրած է Մ. Նալբանդյանի «Իրավացի աղջկա երգը» բանաստեղծությունից:

Նայաստրանի Տանրապետության օրհներգը պարտադիր կատարվում է՝

ա) Նայաստրանի Տանրապետության Նախագահի երդման արարողության ժամանակ՝ Նայաստրանի Տանրապետության Նախագահի պաշտոնը ստանձնելիս.

բ) Նայաստրանի Տանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի մասնակցությամբ պաշտոնական եւ հանդիսավոր արարողությունների ժամանակ.

գ) Նայաստրանի Տանրապետության նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին, ինչպես նաեւ հերթական նստաշրջանների բացման եւ փակման ժամանակ.

դ) Նայաստրանի Տանրապետության փարածքում անցկացվող պաշտոնական արարողությունների ժամանակ Նայաստրանի Տանրապետության դրոշը բարձրացնելիս.

ե) օտարերկրյա պետությունների նախագահների, օրենսդիր մարմինների ղեկավարների, վարչապետների, պաշտոնական ներկայացուցիչների, միջպետական եւ միջկառավարական կազմակերպությունների ղեկավարների՝ Նայաստրանի Տանրապետության պետական եւ պաշտոնական այցերի ժամանակ՝ Նայաստրանի Տանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան.

զ) Նայաստրանի Տանրապետության փարածքում անցկացվող գորահանդեսների ժամանակ, Նայաստրանի Տանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի գործառնում առավուրյան՝ Նայաստրանի Տանրապետության դրոշի բարձրացման, եւ երեկոյան՝ դրոշի իջեցման ժամանակ, ինչպես նաեւ զինվորական կանոնագրքերով եւ կանոնադրություններով նախատեսված այլ դեպքերում.

է) Նայաստրանի Տանրապետության փարածքում գործող բարձրագույն կրթական հաստատություններում անկախ սեփականության ձեւից, ուսումնական փարվա սկիզբն ու ավարտն ազդարարելիս.

ը) Նայաստրանի Տանրապետության փարածքում գործող բոլոր հանրակրթական դպրոցներում՝ անկախ սեփականության ձեւից, ամեն երկուշաբթի դասերն սկսելուց առաջ:

Նայաստրանի Տանրապետության օրհներգը կարող է կատարվել՝

ա) Նայաստրանի Տանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ ոչ պետական կազմակերպությունների եւ այլ անձանց կողմից անցկացվող հանդիսավոր արարողությունների եւ միջոցառումների ժամանակ.

բ) պետական տոների, պատմական իրողություններին նվիրված հանդիսավոր նիստերի, ժողովների ժամանակ.

գ) հուշարձանների, հուշաքանդակների եւ հուշապախտակների բացման հանդիսավոր արարողությունների ժամանակ:

Վերը նշված դեպքերում օրհներգի կատարման կարգը սահմանում է Նայաստրանի Տանրապետության կառավարությունը:

Նայաստրանի Տանրապետության օրհներգը հեռարձակվում է Նայաստրանի Տանրապետության փարածքում գործող բոլոր հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների կողմից՝ անկախ սեփականության ձեւից, ամեն օր՝ ա) հեռարձակման սկզբին եւ ավարտին. բ) ժամը 6.00-ին եւ 24.00-ին՝ շուրջօրյա հեռարձակման դեպքում. գ) Ամանորի գիշերը՝ Երեւան քաղաքի Տանրապետության հրապարակի ժամացույցի զարկերից հետո:

Նայաստանի Նանրապետության օրենսդրության կարգի կարող են օգտագործվել ձայնագրությամբ, տեսագրությամբ հեռուստառադիոհեռարձակման միջոցով:

Նայաստանի Նանրապետության օրենսդրության կարգով է Նայաստանի Նանրապետության տարածքում անցկացվող միջազգային պաշտոնական մրցումների ու մրցաշարերի, համապետական մարզական պաշտոնական միջոցառումների բացման և փակման ժամանակ, իսկ Նայաստանի Նանրապետության տարածքից դուրս՝ տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան:

Օրենքով նախատեսված դեպքերից բացի, Նայաստանի Նանրապետության օրենսդրության երաժշտության օգտագործման դեպքերը սահմանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը:

Նայաստանի Նանրապետության պետական կամ այլ պաշտոնական պարվիզիայի մասնակցությամբ օտարերկրյա պետությունների տարածքում անցկացվող պաշտոնական ու հանդիսավոր արարողությունների և միջոցառումների ժամանակ Նայաստանի Նանրապետության օրենսդրության հնչում է Նայաստանի Նանրապետության պետական արարողակարգի հիմնադրություններին և տվյալ օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան:

Նայաստանի Նանրապետության օրենսդրության կարգի կարգման ժամանակ բոլորը հոտնակայս են (դրոշի առկայության դեպքում՝ դեմքով շրջված դեպի դրոշը, իսկ պաշտոնական արարողությունների ժամանակ՝ Նայաստանի Նանրապետության պետական արարողակարգի հիմնադրություններին համապատասխան), տղամարդիկ՝ առանց գլխարկի:

Նայաստանի Նանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինվորական ծառայողներին Նայաստանի Նանրապետության օրենսդրության կարգի կարգման ժամանակ ներկայացվող պահանջները սահմանվում են զինվորական կանոնագրքերով ու կանոնադրություններով:

Նայաստանի Նանրապետության օրենսդրության նկատմամբ խորին հարգանքը յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է:

5. Պետական խորհրդանիշերից է նաև մայրաքաղաքը: Այն պետության գլխավոր քաղաքն է, վարչաքաղաքական, հաճախ նաև երկրի տնտեսական կենտրոնը: Որպես կանոն, մայրաքաղաքը ինքնուրույն վարչական կենտրոն է՝ կառավարման հատուկ ռեժիմով: Նասարակական-քաղաքական անբարենպաստ պայմանների պարճառով Նայաստանն ունեցել է բազմաթիվ մայրաքաղաքներ (Արմավիր, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Կարս, Անի և այլն): Նայաստանի Նանրապետության մայրաքաղաքը Երևանն է: Այն մայրաքաղաք է դարձել Առաջին հանրապետության օրոք: Մինչև 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով կարգավորված սահմանադրական փոփոխությունները մայրաքաղաքն ուներ մարզի կարգավիճակ, իսկ ներկա սահմանադրական կարգավորումը նրան տվել է համայնքի կարգավիճակ:

Գ Լ ՈՒ Խ 2

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՒՎԱԾ 14

Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում է և պաշտպանվում է պետության կողմից:

Մեկնաբանվող հոդվածը պարունակում է հետևյալ իրավադրույթները.
ա/ մարդու իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմքը նրա արժանապատվությունն է.

բ/ պետությունը պարտավոր է հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը:

Սահմանադրական կարգի այլ հիմունքների և սահմանադրական սկզբունքների շարքում մարդու արժանապատվության՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմքի մասին դրույթներն օժտված են առաջնայնությամբ, գերակայությամբ:

Մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Նայաստանի Նանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագիրը:

Մարդու իրավունքները բխեցվում են բացառապես մարդկային անհատի արժեքից: Անձի բարձր արժանապատվություն՝ ահա մարդու իրավունքների հիմքը: Այդ բացարժեհությունը և՛ անցյալում, և՛ ներկայումս գերիշխող դիրք է գրավում փիլիսոփաների ու իրավաբանների ստեղծագործություններում:

Մարդու արժեքի, նրա իրավունքների ու ազատությունների առաջնայնության սկզբունքը ներառում է բառացիորեն Սահմանադրության ողջ բովանդակությունը: Դա սահմանադրական իրողություն է, որը պետք է կանխորոշի իրավաստեղծ և իրավակիրառական պրակտիկան: Մնացած բոլոր սահմանադրական սկզբունքները՝ պետական ինքնիշխանության և անվտանգության, պետական ամբողջականության և տարածքային միասնության, ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման և այլն, կարող են դիտվել որպես միադասական, բայց մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքին ստորադաս, որոնց անբաժանելի հիմքն է հանդիսանում մարդու արժանապատվությունը:

Մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքից բխում են պետության մի շարք պարտականություններ՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, դրանց ապահովումը, երաշխավորումը, պահպանումն ու պաշտպանությունը:

Անձի արժանապատվության ճանաչումը միաժամանակ ներառում է նաև պետության գործունեությանը ներկայացվող սկզբունքային պահանջները՝ առաջին, ճանաչ-

վում է յուրաքանչյուր անձի արժանապատվությունը, երկրորդ, պետությանը պատվիրվում է պաշտպանել անձի արժանապատվությունը, ինչը նշանակում է Սահմանադրությամբ պետության՝ հանձին նրա մարմինների ողջ համակարգի եւ պաշտոնարար անձանց վրա դրվող հանրային պարտավորության ճանաչումը՝ պաշտպանել մարդուն ցանկացած ձեռով նվաստացումից՝ ում կողմից էլ որ այն լինի (ներառյալ ինքը՝ պետությունը), երաշխավորել, որ անձը՝ պետության հետ իր փոխհարաբերություններում հանդես է գալիս ոչ թե որպես պետական գործունեության օբյեկտ, այլ որպես իրավահավասար սուբյեկտ:

«Արժանապատվություն» հասկացությունը որպես սոցիալական կարեգորհա նախասահմանում է «անձի արժանապատվություն» սահմանադրական կարեգորհայի բովանդակության համապարփակությունը եւ, միաժամանակ՝ բազմիմաստությունը: Որպես սահմանադրական նախադրյալ (իրողություն)՝ անձի արժանապատվությունը հանդես է գալիս մարդու՝ իբրեւ կենսահոգեբանատոցիալական էության, անհրաժեշտ եւ անբակտեի որոշիչ հատկանիշ՝ կարգելով նրան որպես սոցիալական կենսագործունեության լիիրավ եւ իրավահավասար սուբյեկտ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ եւ իրավունքներով: Այլ կերպ ասած, անձը յուրաքանչյուր ոքն է, որն օժտված է անբակտեի, այսինքն՝ անվերապահորեն ճանաչված եւ ճանաչելի արժանապատվությամբ: Նաշվի առնելով նման պատկերացումը՝ պետությունը պարտավոր է, կազմակերպաքաղաքական իմաստով, ոչ միայն բացառել անձնական ինքնավարության ոլորտին կամայական միջամտությունը, այլեւ յուրաքանչյուր մարդու համար ապահովել բազմակողմանի զարգացման հնարավորություններ, քանզի յուրաքանչյուր ոք արժանի է դրան:

Իրավաբանական իմաստով անձի արժանապատվությունը /իրավունքի սուբյեկտ անձի արժեքը/ ապահովվում է նրան ամրագրված համալիր սուբյեկտիվ իրավունքներով ու ազատություններով, որոնք կազմում են նրա իրավական կարգավիճակը: Դա նշանակում է, որ անձը միաժամանակ եւ իրավունքի, եւ արժանապատվության սուբյեկտ է: Ուստի անձի արժանապատվությունն իրավաբանական տեսանկյունից դառնում է միջճյուղային բարդ, համալիր իրավական ինստիտուտ, որի ենթաինստիտուտները կոչված են ապահովելու արժանապատվության զանազան կողմերը: Ամբողջապես այդ իրավական ինստիտուտի առաքելությունն է՝ իրականության հարաբերություններում կենսագործել մարդու արժանիքները եւ արժանապատվությունը: Այսպիսով, իրավունքը եւ պետությունը վերաձվում են մարդու արժանապատվությունն արտահայտող հասարակական հարաբերությունների ամբողջական համալիրը կարգավորող արդյունավետ միջոցների, հասարակական կյանքի փարբեր ոլորտներում մարդու արժանապատիվ գոյության պայմանների պահպանի եւ երաշխավորի: Այդ նպատակը հավասարապես ընդհանուր է եւ՝ պոզիտիվ իրավունքի, եւ՝ պետության համար:

Արժանապատվության ճանաչման եւ պաշտպանության պահանջը սերտորեն առնչակցում է սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխիքների որոշակիացման հետ (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածին համապատասխան): Անձի արժանապատվության փաստացի ամբողջականության յուրօրինակ հիմնավորում է հանդես գալիս անհարի սոցիալական պահանջախնդրության նվազագույն ծավալի կարեգորհան, որը պետությունը պետք է նրա համար ապահովի բնական անկապտելի պահանջումների բավարարման նպատակով: Իրավապահանջախնդրության փոխյալ ծավալը նվազագույն ճանաչելը, մի կողմից, նշանակում է սոցիալական

իրավունքների երաշխիքների համապատասխան ծավալի փոքրացում (արժանապատվության նեգատիվ մասը), մյուս կողմից՝ անձի համար ենթադրվում է հնարավորություն՝ պահանջել երաշխիքների փվյալ ծավալի ապահովում (արժանապատվության պոզիտիվ մասը): Ցանկացած դեպքում սահմանադրական արժանապատվությունն անգույնի հավակնությունների կամ ձեւված-պատերնալիստական (խնամակալական) ձգտումների առարկա չէ:

Այսպիսով՝ սոցիալ-երաշխիքային տեսակետից անձի արժանապատվության պոզիտիվ մասը բնութագրում է արժանապատիվ կյանք երաշխավորող պայմանների սրեղծումը, հանդես է գալիս մարդու եւ քաղաքացու իրավունքներից եւ ազատություններից օգտվելու հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման սահմանադրաիրավական չափանիշ: Ընդ որում, «արժանապատիվ կյանք» հասկացության ծավալի մեջ առավել հետեւողականորեն շեշտադրվում է նյութական գործոնը՝ սպառման որոշակի մակարդակը, միջոցներով, մարտչելի սոցիալական բարիքներով համապատասխան ապահովվածությունը: Ըստ որում, այս պարագայում եւս երբեմն նկատվում է այդ բարիքի առանձնահատուկ, նյութական տարրերին չհանգող հորինվածքային (կոմպոզիցիոն) ամբողջականությունը, որը ներառում է նաեւ բարոյագիտական ապագոյաբանական մասը:

Սակայն չպետք է սահմանափակվել նյութական կողմով: Անձի արժանապատվության լուրջ բաղկացուցիչ մաս է անձի ներքին արժեքների հոգեւոր հիմքը: Պետությունը պարտավոր է իր մշակութային եւ կրթական քաղաքականությամբ անձին փոքր տարիքից ներարկել արժանապատվության գգացում, որպեսզի այն դառնա նրա ներքին արժեքային ըմբռնման անբակտերի տարրը:

Անձի արժանապատվության նեգատիվ մասը ենթադրում է անձի իրավական կարգավիճակին հանրային իշխանության կամայական միջամտության, անձի՝ իր համար ճանաչված իրավունքների անհիմն սահմանափակման կամ նրան դրանցից զրկելու անթույլատրելիություն: Ուստի արժանապատվության անթույլատրելի նսեմացում պետք է համարել, օրինակ, որոշակի կարեգործիայի անձանց կարգավիճակ ունեցողների համար պետության կողմից նախկինում ճանաչված սոցիալական երաշխիքների ծավալի կամայական նվազեցումը:

Անձի արժանապատվությունը ոչ միայն պաշտպանվում է պետության կողմից, այլ նաեւ կարող է պաշտպանվել յուրաքանչյուր մարդու եւ քաղաքացու կողմից՝ բոլոր չարգելված միջոցներով:

Մարդկային արժանապատվությունը, ինչպես որ կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարեւորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից եւ այլն: «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ եւ հավասար՝ իրենց արժանապատվությամբ»՝ հռչակված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում: Որեւէ հանգամանք, այդ թվում հանրաճանաչ ըմբռնողությամբ անձի բացասական գնահատականը, հոգեկան հիվանդությունը, արտակարգ իրավիճակը, պատերազմը եւ այլն, չեն կարող արժանապատվության նսեմացման հիմք հանդիսանալ:

Անձի արժանապատվության նսեմացման ներքո հասկացվում է ինչ-որ մեկի այնպիսի գործողությունը, վարքագիծը, ինչը պատվազրկում է նրան, անվայելուչ ձեւով մարդուն ներկայացնում է նվազ կարեւոր, վնասում է անձի վարկը՝ այդպիսով նրան պարճառելով բարոյական փառապանքներ: Առավել բնորոշ օրինակներ են վիրավորանքը, զրպարտությունը, քամահրական վերաբերմունքը մարդու նկատմամբ, նրան արտապարտող տեղեկությունների տարածումը եւ այլն:

Արժանապատվության մասին խոսք կարող է գնալ այն ժամանակ, երբ խոսվում է մարդու մարդկային որակների մասին, քանզի արժանապատվությունը բացառապես մարդկային հատկանիշ է և բնորոշ չէ այլ էակների, ինչպես նաև բնությանը, հասարակությանը կամ պետությանը: «Մարդու արժանապատվություն» եզրույթն այդ իմաստով ներքին հակասություն ունի, քանի որ արժանապատվություն ունենալու միակ անհրաժեշտ է բավարար նախադրյալը **մարդ լինելն է**, իսկ մարդը որպես այդպիսին, քարանձավում է բնությունից ի սկզբանե իր հենց այդ որակով: Այսպիսով, բավարար է պարզապես խոսել արժանապատվության մասին, որպեսզի հասկանալի լինի, որ խոսքը մարդու արժանապատվության մասին է, այլ կերպ ասած՝ **մարդ լինելու** մասին:

Արժանապատվության հիմնահարցը սկզբնապես կապված է մարդուն նրան շրջապատող միջավայրից՝ արտաքին աշխարհից քարանձավելու հետ: Սակայն չափազանց կարևոր է գիտակցել, որ արժանապատվությունը մարդու փեսակային որակ չէ. այն մարդու **անհատական որակ է**: Արժանապատվության բուն էությունը հարիր չէ խմբային բնորոշիչ լինելը, քանզի արժանապատվությունը մարդու բնորոշիչ է միայն իր **անհատականացված** արտահայտությամբ: Ներելապես, արժանապատվությունը **մարդկային չէ**, այլ **կոնկրետ անունով մարդունն է**: Բիարկե, այն բնորոշ է նաև իրենց անհատականությունը դեռևս չգիտակցող կամ այն (այլևս) հարատև չգիտակցող անձանց, քանզի պահպանվում է այն գիտակցելու պոտենցիալ հնարավորությունը: Խոսքը մանկահասակ երեխաների, անգործունակության հանգեցնող հոգեկան հիվանդություններով տառապող անձանց մասին է:

Մարդուն ի ծնե բնորոշ **բանականությունը**՝ նրա ինքնագիտակցման փուլով, մարդու **կամքի ազատությունը** և այն արտահայտելու բնական ունակությունը հնարավոր են դարձնում նրա **ազատ ինքնորոշումը** բնության, ընտանիքի, հասարակության, պետության և համաշխարհային հանրության շրջանակներում:

Մարդու արժանապատվությունը ժամանակի և տարածության մեջ նրա ազատ ինքնորոշման պոտենցիալ (բնական) ունակության մեջ է, այլ կերպ՝ նրա իրավասուբյեկտության հիմքն է, որը **նախաիրավական** բնույթ ունի: Այն մարդու ներքին ինքնարժեքությունն է և միաժամանակ արտաքին աշխարհում նրա արժեվորման բնական հիմքը, այլ կերպ՝ յուրաքանչյուր մարդ իր **անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ է**, այլ ոչ թե արտաքին ներգործության օբյեկտ, միջոց կամ գործիք: Մարդը սուբյեկտ է, այլ ոչ թե օբյեկտ: Նրա սուբյեկտ լինելը պայմանավորված է հենց նրա արժանապատվությամբ¹: Մարդու ցանկացած «գործիքավորում», նրա օգտագործումը որպես «թնդանոթի միս», որպես փորձանմուշ հարիր չեն նրա արժանապատվությանը:

Մարդու արժանապատվությունն արտաքին աշխարհում նրան փոխակերպում է որպես **անհատ**, իրավական ոլորտում որպես իրավունքի կրող՝ **անձ**: Այն արտացոլում է մարդու անհատականության առանցքային որակները, որոնցով մարդն ինքն իրեն **նույնականացնում է** իր հետ: Ներելապես, մարդու արժանապատվության ծավալը կախված է նրա **ինքնանույնականացման** բովանդակությունից և փարբեր է փարբեր մարդկանց մոտ: Սա է մարդու արժանապատվության իրավաբանական իմաստավորման հիմնական դժվարությունը. եթե մարդու այլ իրավունքների պարագայում բոլոր մարդկանց բնորոշ ընդհանուր չափորոշիչներ գտնելը հնարավոր է, ապա արժանապատվությանը

¹ Ներկայումս հանրաճանաչ դարձած այս մոտեցման ծագումնաբանական ակունքները տառուց են դեպի Ի. Կանտի կատեգորիկ իրամայակամի ձեռնարկումները, ըստ որոնց՝ մարդուն երբեք չի կարելի դիտարկել որպես սուկ օբյեկտ. նա պետք է մշտապես գնահատվի որպես ինքնանպատակ, և յուրաքանչյուր մարդու մեջ պետք է հարգել մարդկությանը՝ որպես այդպիսին: **I. Kant**, Grundlegung der Metaphysik der Sitten, Akademieausgabe, Bd. IV, S. 434 f., 439 f., ինչպես նաև: **I. Kant**, Metaphysische Anfangsgründe der Tugendlehre, Akademieausgabe, Bd. VI, S. 434 f., 462 f.

վության՝ պարագայում խոսքը կոնկրետ մարդու՝ անհատի մասին է: Այդ իմաստով մարդու արժանապատվությունն ավելի շուրջ միջնորդավորված կարող է արտահայտվել իրավունքում, քան ուղղակիորեն՝ այն միջնորդավորվում է իր արժեքաբանական էությանը՝ բացարձակ բնույթ ստանալով իրավունքում և ինքնաբերաբար ձեռք բերելով բարձրագույն իրավական՝ սահմանադրական արժեքի կարգ: Մարդու արժանապատվությունը միակ նախաիրավական արժեքն է, որն ամբողջությամբ և արսիմատիկ կերպով փոխառվում է իրավունքի կողմից՝ իր ողջ էությանը: Մարդու ցանկացած այլ իրավունքների պարագայում իրավունքը զրիչ, սահմանագծող, ուրվագծող դերակատարություն ունի: Վառ օրինակ է մարդու ընդհանուր ազատության իրավունքը: Այն նույնպես խարսխվում է մարդու բնական ազատության վրա, սակայն միայն այդ ազատության համար սահման դնելու միջոցով է հնարավոր դառնում դրա ամրագրումը որպես իրավաբանական ազատություն, որպես սուբյեկտիվ իրավունք:

Մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների և ազատությունների **հիմքն է**: Դա նշանակում է, որ մարդու արժանապատվությունը որպես նախաիրավական երեւոյթ հնարավոր է դարձնում մարդու իրավունքների և ազատությունների՝ **որպես այդպիսիք**, առկայությունը և դրանց իրավաբանական ամրագրումը: Ներուսայես, մարդու արժանապատվությունը՝ **նրա ինքնանույնականացումը հնարավոր դարձնող ազատ ինքնորոշման ունակությունն է**, այլ խոսքով՝ մարդու զգալու, մտածելու և գործելու կամային ունակությունն ազատության մեջ: Եթե բնաշխարհում այն մարդու որակ է, նրան արտաքին աշխարհից փարանջարելու միջոց, ապա իրավաբանական փեսանկյունից այն իմաստավորվում է իրավունքի սուբյեկտ լինելու ունակության մեջ: Արժանապատվություն չունեցող կենդանի արարածները իրավունքի սուբյեկտ չեն:

Մարդու արժանապատվությունն իրավական արժեքների աստիճանակարգության մեջ զբաղեցնում է բարձրագույն աստիճանը: Այն մարդկային հասարակությունն ու պետությունը կառուցակարգող հիմքերից մեկն է, դրանց լեգիտիմացման առանցքը: Մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության հրամայականն անխուսափելիորեն հանգեցնում է մարդու ընդհանուր ազատության և առանձին իրավունքների իրացման հնարավորության սրելծմանը, որի արդյունքում **իրենց հերթին** կազմավորվում են քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարական ու իրավական պետությունը: Այդ պարճառով ամբողջարհրական պետություններն անխուսափելիորեն հակադրության մեջ են մտնում մարդու արժանապատվության իրավունքի հետ և զրկվում լեգիտիմ իշխանություն ունենալու հնարավորությունից, հանգեղով մարդարյաց գաղափարախոսության և պրակտիկայի: Այսպիսով, մարդու արժանապատվության ճանաչումը, հարգումը և պաշտպանությունն իրավական պետության եղակերային հարկանիշներից են, իրավական և ժողովրդավարական պետության հենքը:

ՆՏ Սահմանադրության փեսանկյունից այն ոչ միայն բարձրագույն արժեք է (Սահմ. 3-րդ հոդվածի 1-ին մաս) և իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, այլև Նայասարանի Նանրապետության որպես իրավական պետության (Սահմ. 1-ին հոդված) անքակտելի բաղադրիչ, որի հետեւանքով պաշտպանված է նաև Սահմանադրության 114-րդ հոդվածով որպես անփոփոխելի դրույթ: Սահմանադրության արժեհամակարգում այն բարձրագույն արժեք է, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հարկությունը: Պարահական չէ, որ ՆՏ Սահմանադրությունում մարդու արժանապատվությունը նախորդում է անգամ կյանքի իրավունքին, չնայած առաջին հայացքից կարող է թվալ, թե դա համակարգային սխալ է, քանզի ի՞նչ արժանապատվու-

թյուն առանց կյանքի իրավունքի: Սակայն հենց դրանում է արժանապատվությունն իրավաբանորեն իմաստավորելու առանցքային դժվարությունը, քանզի այն փարածվում է նաև մինչև ծնունդը որոշակիորեն կազմավորված մարդկային սաղմի վրա, եթե անգամ հղիությունն արհեստականորեն ընդհատվել է, ինչպես նաև գործում է մարդու մահից հետո: Այլ խոսքերով՝ մարդու արժանապատվությունը նրա կյանքից և մահից անդին է, որի հետեւանքով էլ առաջ է գալիս դրա իրավագիտական բնորոշման էական դժվարությունը՝ առանց փիլիսոփայական, արժեքաբանական կամ նույնիսկ աստվածաբանական հավելյալ հնարքների գործադրման:

Մարդու արժանապատվության իրավաբանական բնորոշման ցանկացած փորձ զուգորդվում է «մարդու արժանապատվություն» և «մարդ» կամ «մարդ լինել» արտահայտությունների նույնացման, ինչպես նաև ներքին հակասության մեջ ընկնելու վրանգներով: Ինչպես արդեն նշել ենք, իր **նախաիրավական** ուրույն, լիովին ինքնաբավ էության պատճառով արժանապատվության իմաստավորումն ավելի դյուրին է փիլիսոփայության կամ արժեքաբանության բնագավառներում, քան իրավագիտության: Սակայն պարզ է, որ մարդու արժանապատվության նախաիրավական բնույթն ամենեւին էլ չի ազատում պետությանը, հանրությանը կամ առանձին մարդկանց այն հարգելու պարտականությունից, այլ, հակառակը՝ հենց դա է պահանջում: Տվյալ պարագայում իրավագիտության հիմնարար մեթոդը՝ բնական ազատությունն արդարացի սահմանների մեջ դնելու միջոցով իրավունքով պաշտպանվող շրջանակների սահմանագծումը, դատարարական է ձախողման, քանզի արժանապատվությունը սահմաններ չունի, այն բացարձակ է, սահմանափակման ենթակա չէ ոչ մի հիմքով, իսկ դրա բովանդակային ծավալը **սոսկ անհատական է** և պայմանավորված է կոնկրետ անհատի ֆիզիկական և հոգեւոր ինքնանույնականացմամբ: Եվ քանզի ինքնանույնականացումը հետեւանք է ազատության մեջ անհատի մշտական ինքնագարգացման, այն տեսում է մինչև անձի կյանքի վերջը, և նրա արժանապատվության բովանդակային ծավալը վերափոխվում է անընդմեջ՝ անձի «ես»-ի առանցքը կազմող ներքին որակների փարաբնույթ փոփոխություններին զուգահեռ:

Մյուս կողմից, մարդու արժանապատվության բնորոշումը շար ավելի հեշտ է թվում արտաքին աշխարհի տեսանկյունից, սակայն այս դեպքում շար մեծ է արժանապատվությունը և պարհիլը նույնացնելու կամ դրանք սոսկ փարբեր բառերի գործածմամբ առանձնացնելու վրանգը: Նման փորձերը բնորոշ են հատկապես խորհրդային և ռուսական իրավաբանական գրականությանը²: Սակայն արժանապատվությունը բնորոշ է **յուրաքանչյուրին**, անկախ նրա որակներից, մարտուցած ծառայություններից կամ սոցիալական կարգավիճակից՝ այն չի կարող օտարվել որեւէ մեկից և չի կորսվում անգամ ոչ արժանավայել վարքագծի պարճառով³:

Արդեն նշել ենք, որ արժանապատվությունը խմբային որակ չէ, ինչպես, օրինակ, ազատությունը, որը փարբեր դրսեւորումներով բնորոշ է նաև մարկանց խմբերին (օրինակ, միավորումների ազատությունը, հավաքների ազատությունը և այլն) և անգամ ժողովուրդներին (անկախություն, ինքնորոշման իրավունք, պետությունների ինքնիշխանություն):

² Стé, մասնավորապես. Комментарий к Конституции Российской Федерации / Отв. ред. Л. А. Окуньков. Изд. 2-е. М., 1996 г., с.79 որում անձի արժանապատվությունը պայմանավորվում է ոչ միայն նրա ինքնագնահատմամբ, այլև «մարդու այնպիսի օբյեկտիվ որակների ամբողջությամբ, որոնք բնութագրում են նրա, հեղինակությունը հասարակությունում...» (“репутацию в обществе”):

³ Стé Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները (BVerfGE 87, 209 [228]; 96, 375 [399])

Արժանապատվության, այսպես կոչված, բացասական բնորոշման առավելությունը նրանում է, որ արժանապատվության հետ անհամապետելի երեւոյթները միավորելն ավելի դյուրին է, քան արժանապատվության «անորսալի» բովանդակության դրական բացաբրությունը: Արժանապատվության բացասական բնորոշումը, այսպես կոչված, «օբյեկտային ձեւակերպումն է» մարդը պեբական գործունեության օբյեկտ չէ, այլ սուբյեկտ է: Այս ձեւակերպման թերի կողմն այն է, որ այն գործում է այն դեպքում, երբ մարդն ինքն իրեն որպես սուբյեկտ է գիբակցում: Ննարավոր չէ, սակայն, ժխտել մարդկային արժանապատվության անվերապահ պատկանելությունը նաեւ հոգեկան ծանր հիվանդ անձանց, ինչպես նաեւ մանկահասակ երեխաներին: Բացի դրանից, այն իր մեջ պարունակում է նաեւ դժվար բնորոշելի այնպիսի եզրույթ, ինչպիսին «օբյեկտն» է: Եվ մի՞թե իր համաձայնութամբ գիբական փորձերի ենթարկվող չափահաս անձը փաստացի այդ փորձերի օբյեկտը չէ: Չէ՞ որ այս դեպքը որեւէ մեկը չի գնահատում որպես արժանապատվության իրավունքի խախտում, քանզի համաձայնությունն առկա է: Իսկ անձի գործելու կամավորությունը բացառում է մարդու արժանապատվության խախտումը, քանզի հենց անձի ինքնավարությունն է կազմավորում նրա արժանապատվությունը⁴:

Արժանապատվության դրական բնորոշման փորձերն իրավագիբություն շրջանակներում սկզբունքորեն դատապարտված են ձախողման: Արժանապատվության հասկացությունը կարելի է նկարագրել միայն դրա ներգործության հիմնական ուղղությունների բացահայտման միջոցով.

ա) արժանապատվության իրավունքը ենթադրում է մարդու ընդհանուր ազատություն եւ արգելում է ստրկացումը եւ ստրկությունը, մարդկանց առեւտուրը եւ մարդու ազատության նմանաբիպ այլ ոտնահարումները,

բ) արժանապատվությունը ենթադրում է մարդու ֆիզիկական եւ հոգեւոր նույնականության անձեռնմխելիություն, որը ներառում է խոշտանգումների, դատան կամ այլ անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի արգելքը, առանց համաձայնության գիբական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկվելու արգելքը եւ այլն,

գ) մարդկանց իրավահավասարության հիմքը նույնպես արժանապատվությունն է. ցանկացած խտրականություն՝ կախված մարդու ռասայից, ազգությունից, դավանանքից, գույքային դրությունից եւ նման որեւէ այլ հատկանիշից, ոչ միայն իրավահավասարության խախտում է, այլեւ անհարիբ է մարդու արժանապատվությանը,

դ) իրավական պեբության առանցքային ընթացակարգային (դատավարական) երաշխիքները, հատկապես՝ լավելու իրավունքը, անմեղության կանխավարկածը, սեփական անձի դեմ ցուցմունք չբալու իրավունքը եւ այլն, նույնպես պայմանավորված են մարդու արժանապատվության հարգման եւ պաշտպանության հրամայականով,

ե) մարդու սպրոստի միջոցները պեբք է առնվազն բավարար լինեն նրա արժանապատիվ կյանքի ապահովման համար, այլ կերպ՝ մարդու համար պեբությունը պարավոր է իրականում երաշխավորել մարդուն վայել նվազագույն կենսամակարդակ:

ՆՆ Սահմանադրությունը երկու արբեր հիմնադրույթներով է ամրագրում մարդու արժանապատվությունը՝ սահմանադրական կարգի հիմունքներին վերաբերող դրույթում այն հռչակում է որպես բարձրագույն արժեք (Սահմ. 3-րդ հոդվածի 1-ին մաս), մեկ այլ դրույթում այն ամրագրում է որպես հիմնական իրավունք (Սահմ. 14-րդ հոդված): Դրանում արտահայտվում է արժանապատվության երկակի սահմանադրաիրավական բնույթը՝ որպես սուբյեկտիվ հանրային իրավունք եւ որպես հիմնարար օբյեկտիվ սահմանադրական պատիբրանի: Այս հանգամանքն իր որոշակի արտացոլումն է գրել Սահմա-

⁴ D. Umbach/T. Clemens (Herausgeber), Grundgesetz. Mitarbeiterkommentar und Handbuch, Band I, Heidelberg, 2002, S. 105, Rn. 22.

նադրության 14-րդ հոդվածի ձեւակերպման մեջ, ըստ որի՝ արժանապատվությունը **հարգվում** եւ **պաշտպանվում է** պետության կողմից:

Մարդու արժանապատվությունը **հարգելու** պետության պարտականությունը ենթադրում է արժանապատվության (սուբյեկտիվ) իրավունքին որեւէ միջամտության, (ներառյալ ցանկացած սահմանափակում) բացառում: Եթե այլ հիմնական իրավունքների դեպքում պետությունը՝ որոշակի նախադրյալների առկայությամբ, կարող է միջամտել դրանց, նաեւ սահմանափակումներ նախատեսել եւ իրականացնել, ապա արժանապատվության իրավունքի պարագայում պետության որեւէ միջամտություն արդարացված չէ եւ ոչ մի դեպքում չի կարող համարվել սահմանադրական: Սահմանադրությունն արժանապատվության իրավունքի սահմանափակում չի թույլատրում անգամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Այն, որ Սահմանադրությունն իրավունքների ընդհանուր սահմանափակումներին վերաբերող 43-44-րդ հոդվածներում որեւէ կերպ չի հիշատակում արժանապատվության իրավունքը, խոսում է ինքն իր մասին: Այս փեսանկյունից, Նայասարանի Նանրապետությունում դեռեւս լուրջ խնդիրներ կան արժանապատվության անթույլատրելի ուրմահարումները կանխելու եւ դրանց դեմ ակտիվորեն պայքարելու հարցում, հատկապէս՝ իրավապահ մարմիններում, բանակում եւ ուղղիչ-պարժողական հաստատություններում:

Մարդու արժանապատվությունը, ինչպէս նշվեց, ոչ միայն սուբյեկտիվ իրավունք է, այլեւ սահմանադրական հիմնարար պարտիիրան, որի ապահովումը պետության պարտականությունն է՝ անկախ այդ իրավունքի կրողների պահանջներից: Պետությունն այդ առումով պարտավոր է **պաշտպանել** անձի արժանապատվությունն այլ մասնավոր անձանց փարաբնույթ ուրնձգություններից, անհրաժեշտության դեպքում՝ անգամ քրեական իրավունքին բնորոշ ներգործության միջոցներով: Արժանապատվության պաշտպանությունն այս առումով պարտավորեցնում է իշխանության բոլոր երեք ճյուղերին: Բացի դրանից, արժանապատվության պաշտպանությունը ենթադրում է պետության «դրական» պարտականությունը՝ ապահովելու փյվյալ սոցիալական միջավայրում մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ:

ՆՈՂՎԱԾ 14.1

- 1. Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ:**
- 2. Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, Էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:**

1. Օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական դրույթը ՆՏ Սահմանադրության հիմնարար սկզբունքներից մեկն է, որի հիման վրա է կառուցված մարդու սահմանադրական կարգավիճակի ամբողջ հայեցակարգը եւ անմիջականորեն աղերսվում է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության կառուցման, պետության ու հասարակության բնականոն փոխհարաբերությունների հաստատման հետ: Այդ դրույթն ունի համընդհանուր նշանակություն, վերաբերում է իրավա-

կան կարգավորման ամբողջ համակարգին եւ փարածվում է ինչպես ՏՏ քաղաքացիների, այնպես էլ ՏՏ-ում բնակվող օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց վրա:

14.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում առկա «մարդ» հասկացությունը, ինչպես սահմանադրության փեսությունում եւ սահմանադրական իրավունքում, օգտագործվում է իր վերացական, առհասարակ մարդկային սեռին պատկանելության առումով, այսինքն՝ բոլոր մարդկանց հատուկ ընդհանրական հատկանիշներով, այլ ոչ թե կոնկրետ այս կամ այն անհատին մյուսներից առանձնացնող հատկանիշներով: Միաժամանակ, «մարդ», «անհատ» եւ «անձ» հասկացություններն իրավունքում օգտագործվում են որպես հոմանիշներ եւ ունեն հավաքական ընդհանրական բնույթ եւ բովանդակությամբ ու ծավալով համընկնում են: Այս փեսակերպից Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում արտահայտված «մարդ», «անձ», «յուրաքանչյուր ոք», «ոչ ոք», «բոլորը», «սպառողներ», «աշխատողներ», ինչպես նաեւ «քաղաքացիներ», «յուրաքանչյուր քաղաքացի» եւ բազմաթիվ այլ լեզվական արտահայտությունները միեւնույն կարգավիճակով փոխարին պատկանող բոլոր անհատների համար ունեն նույն իրավական բովանդակությունը եւ առաջացնում են միեւնույն իրավական հետեւանքները: Արդեն «մարդ» հասկացության այս առումով օգտագործումը նշանակում է, որ որեւէ անհատի՝ այս կամ այն հիմքով փարբերակումը կարող է առաջացնել որոշակի բնույթի անհավասարություն, որն էլ իր հերթին կարող է, ի վերջո, առաջ բերել համապատասխան կարգի խտրականություն՝ որեւէ կոնկրետ հիմքով, որոնք թվարկված են 14.1-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում:

14.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում փոխ գրած «հավասար են» հասկացությունը նշանակում է ոչ թե հավասարություն առհասարակ, ցանկացած առումով, այլ միայն օրենքի առջեւ հավասարությունը: Այլ կերպ ասած՝ այս դեպքում ակնհայտ է, որ գործ ունենք ձեւական կամ իրավական առումով հավասարության կամ որ նույնն է՝ իրավահավասարության դրսեւորման հետ: Ընդ որում, մարդկանց ձեւական (իրավական) հավասարություն նշանակում է, որ մարդիկ հավասար են միայն իբրեւ ազատ անձնավորություններ, երբ նրանք հավասար են առհասարակ իրենց ունեցած իրավունքներով ու ազատություններով:

14.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում արտահայտված դրույթը, ընդհանուր առմամբ, իրավական ու ժողովրդավարական ցանկացած պետության կառուցման, զարգացման ու գործունեության հիմքն է եւ կարեւորագույն պայմանը:

Տարբեր անհատների իրավահավասարությունը, սահմանադրական իրավունքների ու ազատությունների հավասարությունը նրանց համար նշանակում է իրենց հավասար իրավունքների ու ազատությունների իրացման փաստացի փարբեր հնարավորություններ:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ 14.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում օգտագործված «օրենք» հասկացությունն անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն բուն իմաստով օրենքը, այլեւ համապարտադիր նշանակություն ունեցող ցանկացած իրավական ակտ, այդ թվում ՏՏ Սահմանադրությունը՝ որպես հիմնական օրենք, պետական ու փոխկանխնական կարգավորման մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները (ՏՏ Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ՏՏ Ազգային ժողովի որոշումները եւ այլն):

Օրենքի առջեւ հավասարության, ինչպես նաեւ 14.1-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում խտրականության արգելման վերաբերյալ այսպիսի սահմանադրական ըմբռումը համահունչ է միջազգային իրավական չափանիշներին, որոնք արտացոլվել են Մար-

դու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվածներ 2, 7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվածներ 2, 26), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդված 14) և բազմաթիվ այլ փաստաթղթերում:

Օրենքի առջև հավասարության սկզբունքը վերաբերում է ոչ միայն մարդկանց իրավունքներին ու ազատություններին, այլև նրանց պարտականություններին: Այսպես, ՏՏ Սահմանադրությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է «օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, փոյրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ» (հոդված 45) և «պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը» (հոդված 47):

Նույնը վերաբերում է նաև իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը, ինչը նախատեսված է ՏՏ Սահմանադրության 43 և 44-րդ հոդվածներում: Այսինքն՝ իրավունքներն ու ազատություններն իրացնելիս, պարտականությունները կատարելիս, ինչպես և իրավունքների սահմանափակման դեպքերում բոլորը հավասար են օրենքի առջև:

ՏՏ Սահմանադրությունը, միջազգային-իրավական չափանիշներին համապատասխան, փարբերակում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ծավալը և սահմանում է ՏՏ քաղաքացիների և ոչ քաղաքացիների (օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց) իրավական փարբեր կարգավիճակներ, այս առումով հաստատում է ոչ իրավահավասար կարգավիճակներ մարդու և քաղաքացու համար: ՏՏ քաղաքացին համարվում է այնպիսի ֆիզիկական անձ, որն ունի Նայաստանի Նանրապետությունում Սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքներն ու ազատությունները, այսինքն օժտված է ինչպես յուրաքանչյուր մարդու, այնպես էլ ՏՏ քաղաքացիներին վերապահված իրավունքներով:

ՏՏ քաղաքացիություն չունեցող անձինք ՏՏ-ում ունեն բոլոր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված են բոլոր անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ՏՏ քաղաքացիություն չունեցող անձանց համար սահմանափակված են մի շարք իրավունքներից օգտվելը (քաղաքական իրավունքներ ու ազատություններ, հողի սեփականության իրավունքը, անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը և այլն):

Ի դեպ, ոչ քաղաքացիների քաղաքական իրավունքներից ու ազատություններից օգտվելու որոշակի սահմանափակումը համահունչ է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրոյթներին: Այդ կոնվենցիայի 16-րդ հոդվածը՝ «Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակումը», սահմանում է, որ պետությունները կարող են մի շարք դեպքերում սահմանափակումներ նախատեսել օտարերկրացիների քաղաքական գործունեության համար: ՏՏ Սահմանադրությամբ միայն ՏՏ քաղաքացիներն ունեն «կուսակցություններ սրբեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք» (հոդված 28, մաս 2): Ինչ վերաբերում է ընտրական իրավունքին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքին, ապա անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրությամբ, եթե համապետական ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը վերապահված է միայն ՏՏ քաղաքացիներին (հոդված 30, մաս 1), ապա փեդական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և փեդական հանրաքվեներին մասնակցության իրավունք կարող է, օրենքով սահմանված կարգով, նախատեսվել նաև ՏՏ քաղաքացիություն չունեցող անձանց համար (հոդված 30, մաս 2): Ի դեպ, ՏՏ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի

1999թ. ՄԴՌ-179 որոշմամբ արձանագրվել է, որ ՏՏ Սահմանադրությունը «չի բացառում որոշակի կարգավիճակ ունեցող, Նայաստանում օրինական կերպով մշտապես բնակվող, ՏՏ քաղաքացի չհանդիսացող անձանց (փախստականներին կամ բռնագաղթվածներին) փեղական ինքնակառավարման մակարդակում ընտրական իրավունքով օժտելու հնարավորությունը», միաժամանակ շեշտելով, որ Սահմանադրության պահանջների լիարժեք իրացումը ենթադրում է Նայաստանի Նանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականներին օրենսդրական նման իրավունքի վերապահում:

Այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ ընդգծվում է նաև, որ Սահմանադրության ընդհանուր պահանջից բխում է, որ ընտրության կարգն իրականացվի ՏՏ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, եւ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու ընտրական իրավունքի իրացման կարգն ու պայմանները՝ մասնավորապես հստակեցնելով մոտեցումը բնակության ցենզի վերաբերյալ: 2005թ. սահմանադրական փոփոխություններն այս հարցում ամրագրել են այնպիսի մոտեցում, որ սահմանադրաիրավական փեսանկյունից համահունչ է սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին: ՏՏ սահմանադրական դատարանի՝ 8 մայիսի 2009թ. ՄԴՌ-803 որոշմամբ նույնպես արձանագրվել է, որ փեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող եւ փաստացի բնակվող, սակայն ՏՏ քաղաքացիություն չունեցող անձինք:

Սահմանափակումներ են նախատեսված նաև հողի սեփականության իրավունքի պարագայում: ՏՏ Սահմանադրությամբ հստակ սահմանված է, որ այդ իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք, սակայն միաժամանակ նշվում է, որ որոշակի դեպքերում օրենքով կարող են սահմանվել բացառություններ (հոդված 31):

Օրենքի առջև հավասարության սկզբունքը, ըստ էության, վերաբերում է ամբողջ իրավական համակարգին, իրավունքի բոլոր ճյուղերին՝ առանց բացառության, եւ, հետևաբար, ենթադրում է իրավունքի կոնկրետ ճյուղի առանձնահատկություններին համապատասխան մշակել սահմանադրական այս պահանջի իրականացման անհրաժեշտ կառուցակարգեր (մեխանիզմներ): Այս սկզբունքի հիման վրա է կառուցված մարդու եւ քաղաքացու սահմանադրական կարգավիճակի ամբողջ հայեցակարգը եւ, փաստորեն, ՏՏ Սահմանադրության երկրորդ գլխում նախատեսված մարդու եւ քաղաքացու բոլոր իրավունքներն ու ազատությունները սահմանված են այդ սկզբունքին համապատասխան: Այս հանգամանքը վկայում է, որ սահմանադրական այս պահանջը վերաձվում է ինչպես կոնկրետ իրավունքների, այնպես էլ ողջ համակարգի օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշի եւ դրանով իսկ՝ նաև հասարակական հարաբերությունների փարբեր ոլորտները կարգավորող իրավական ակտերի սահմանադրականությունը գնահատելու միջոցի:

2. Հոդված 14.1-ի 1-ին պարբերությունը երաշխավորելով բոլորի, այսինքն՝ եւ քաղաքացիների, եւ ոչ քաղաքացիների՝ օրենքի առջև հավասարությունը, նույն հոդվածի 2-րդ պարբերությունն արգելում է խտրականության ցանկացած ձև, ցանկացած դրսևորում, ինչպիսիք էլ որ դրանք լինեն:

Հոդված 14.1-ի 1-ին պարբերությունը մեկնաբանելու համար կարևոր նշանակություն ունի «խտրականություն» հասկացության բացահայտումը: **Խտրականությունը**

որոշակի անձանց, կազմակերպությունների կամ պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասայական, ազգային, սեռային, պետական պարկանելությունը, ինչպես նաև գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլն: Խտրականության փարածված ձևերից է ռասայական խտրականությունը՝ մարդու իրավունքների սահմանափակումը կամ դրանցից զրկելը ռասայական պարկանելության հիմքով, ազգային խտրականությունը, հակասեմիփիզմը (հակահրեականություն) և այլն:

Սահմանադրությունն արգելելով խտրականությունն ըստ փարբեր հարկանիշների (որոնք մանրամասն թվարկված են)՝ դրանով իսկ երաշխավորում է հավասարությունը՝ փարբերություն չդնելով քաղաքացիների և ոչ քաղաքացիների միջև:

Ընդհանուր առմամբ օրենքի առջեւ հավասարության սկզբունքին հակասում է խտրականության ցանկացած դրսերում, ինչը փաստացիորեն դառնում է որոշ մարդկանց այլ մարդկանցից փարբերելու հիմք: Մարդկանց այսպիսի փարբերակումն ըստ էության նրանց համար նշանակում է սրեղծել իրավունքների ու ազատությունների իրացման փարբեր հնարավորություններ, այսինքն՝ ի վերջո խախտվում է օրենքի առջեւ հավասարության սկզբունքը: Այս սկզբունքը կիրառելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բացառվում է խտրականության որեւէ դրսերում ցանկացած իրավական ակտում, հակառակ դեպքում այդ ակտը դառնում է Սահմանադրությանը չհամապատասխանող: Եվ այս առումով հավասարության սկզբունքն ունի խտրականությունը բացառող նշանակություն, միաժամանակ դա նաև պահանջ է, որից էլ միարժեքորեն բխում է, որ անթույլատրելի է համարվում խտրական բնույթի որեւէ դրսերում հնարավորությունն անգամ, և դրանք անխուսափելիորեն դառնում են Սահմանադրությանը չհամապատասխանող: Ներտաբար, օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը դառնում է ամեն տեսակի խտրականության վերացման պահանջ, ինչը ենթադրում է, որ օրենքում չեն կարող լինել որեւէ փարբերության, բացառության կամ նախապատվության հնարավորություններ, որոնք հիմնված են սեռային, ռասայական, էթնիկական կամ այլ հարկանիշի վրա, որովհետեւ այդպիսի մտքեցումը հանգեցնում է մարդու և քաղաքացու իրավական հնարավորությունների հավասարության վերացմանը կամ խախտմանը:

Խտրականության ցանկացած միջոցից պաշտպանություն երաշխավորող հավասարության ապահովումը միաժամանակ ենթադրում է, որ արգելվում է միեւնոյն կարեգորիային պարկանող ցանկացած անձանց իրավունքների նկատմամբ կիրառել այնպիսի փարբերություններ, որոնք ունեն օբյեկտիվ և բանական արդարացում: Ընդհանուր առմամբ պետք է գործի՝ «հավասար պայմանների առկայության դեպքում մարդիկ պետք է գտնվեն հավասար վիճակում» սկզբունքը:

Օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական մտքեցումն ունի համընդգրկուն բնույթ և ըստ էության ներառում է յուրաքանչյուր կոնկրետ անհարի՝ իր կոնկրետ առանձնահարկություններով ու հարկանիշներով: Չնայած այդ հանգամանքին՝ հողված 14.1-ի երկրորդ փարբերությունն ընդգծում է մարդու ըստ փարբեր հարկանիշների չփարբերակելու և խտրականություն չդնելու անհրաժեշտությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ, պատմականորեն, հասարակական, սոցիալական, քաղաքական կյանքում մարդկանց միջեւ նման փարբերակումներ կատարվել են, և արդի դարաշրջանում էլ այդպիսի փարբերակումների առանձին դրսերումներ շարունակում են տեղ գտնել ինչպես առանձին անհարների, այնպես էլ հասարակական գիտակցության մեջ: Եվ պարահական չէ, որ խտրականության փարբեր դրսերումների դեմ պայքարում սրեղծվել են միջազգային բազմաթիվ փաստաթղթեր, որոնցում

մաքանանշված են խտրականության դեմ դրույթներ: Ի փարբերություն միջազգային հանրահայտ փաստաթղթերի, 14.1-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում նշված հարկանիշներն ամենաընդգրկունն են եւ, չնայած այդպիսի ընդգրկմանը, վերջում նշվում է «այլ հանգամանքներ» եւս, ինչը նշանակում է, որ թվարկված հարկանիշները սպառիչ չեն եւ չնշված որեւէ այլ հարկանիշով խտրականությունը նույնպէս անթույլատրելի է:

Դրա հետ մեկտեղ, երկրորդ պարբերությունը կոնկրետացնում եւ լրացնում է օրենքի առջեւ բոլորի հավասարության մասին դրույթը, որը, փաստորեն, ուղղված է ինչպէս նորմաստեղծ, այնպէս էլ իրավակիրառ մարմիններին ու պաշտոնապար անձանց՝ բոլոր նրանց, ովքեր առնչվում են մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների հետ կապված խնդիրների լուծմանը:

Օրենքի առջեւ հավասարության սահմանադրական սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իբրեւ զուտ ձեւական հավասարություն, այլեւ իբրեւ իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ եւ, այս առումով, չպետք է բացառել այդ սկզբունքի կիրառման փարբեր դրսեւորումների հնարավորություն, երբ ձեւական հավասարության հաստատումը կարող է հանգեցնել նյութական անհավասարության: Մասնավորապէս, փնտեսական եւ սոցիալական իրավունքների ու ազատությունների ձեւական հավասարության դեպքում որոշակի կարեգործիայի սուբյեկտներ կարող են հայտնվել անհավասար կարգավիճակում: Ներառաբար, այդպիսի սուբյեկտների համար օրենսդիրը կարող է եւ պարտավոր է սահմանել որոշակի առավելություններ եւ արտոնություններ՝ նպատակ ունենալով հնարավորինս նպաստել օբյեկտիվորեն գոյություն ունեցող անհավասարությունների հաղթահարմանը:

Այս առումով օրենքի առջեւ հավասարության սահմանադրական պահանջից շեղում չի կարելի համարել, երբ գործադրվում է դրական (պոզիտիվ) խտրականության սկզբունքը, որի նպատակն է մարդկանց որոշակի խմբերի եւ կարեգործիայի անձանց համար սահմանել առանձին արտոնություններ եւ առավելություններ, առավել եւս, որ դրանք բխում են սոցիալական պետության սահմանադրական դրույթից եւ համահունչ են Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական եւ փնտեսական իրավունքների ու ազատությունների իրականացման պահանջներին:

Օրենքի առջեւ հավասարության սկզբունքը ՏՏ Սահմանադրությունում արտահայտվում է ոչ միայն մարդկանց ու քաղաքացիների, այլեւ նրանց փարբեր կարգի միավորումների նկատմամբ, ինչը համահունչ է Սահմանադրության 28-րդ հոդվածին, ինչպէս նաեւ 42.1-ին: Այսինքն՝ բոլոր կարգի միավորումները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, քաղաքական կուսակցություններ եւ այլն) ձեւավորվում, կազմակերպվում եւ գործունեություն են ծավալում, ինչպէս նաեւ դրանք լուծարվում, գործունեությունը կասեցվում կամ արգելվում են իրավական միեւնոյն հիմքերով:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց, ապա նրանց նկատմամբ կիրառելի են այն նույն սահմանադրական մոտեցումներն ու սկզբունքները (այդ թվում օրենքի առջեւ հավասարության սկզբունքը), որոնք Սահմանադրությամբ վերագրված են մարդկանց ու քաղաքացիներին:

Նույնը վերաբերում է նաեւ փնտեսավարող սուբյեկտներին, որոնք ունեն միեւնոյն իրավունքներն ու պարտականությունները, եւ ՏՏ Սահմանադրությանը համապատասխան (հոդվածներ 8, 31) ՏՏ-ում երաշխավորվում են դրանց փնտեսական գործունեության ազատությունն ու ազատ փնտեսական մրցակցությունը՝ անկախ սեփականության

ձեռից: Ի դեպ, եթե նկատի ունենանք, որ փնտրեսավարող սուբյեկտները, որպես կանոն, ունեն նաև իրավաբանական անձի կարգավիճակ, ապա դրանց նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի դրույթները:

Օրենքի առջև հավասարության սկզբունքին համապատասխան են ձեռակերպված նաև գաղափարախոսական բազմակարծության և քաղաքական բազմակարծության սկզբունքները: Ըստ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի՝ այս երկու սկզբունքները՝ գաղափարախոսական բազմակարծությունն ու բազմակուսակցությունը (բազմակուսակցականությունը) ճանաչվում են ՀՀ-ում (այդ մասին փեն ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Օրենքի առջև բոլորի հավասարությունն ունի նաև դրական (պոզիտիվ) նշանակության իմաստ, այսինքն՝ հավասարությունն այս դեպքում նշանակում է նաև բոլորի հավասար պաշտպանություն օրենքով, այսինքն՝ օրենքը որպեսզի լինի իրավական (իրավունքին համապատասխան կամ որ նույնն է՝ ապահովվի իրավունքի գերակայության սկզբունքը), անհրաժեշտ է, որպեսզի փվյալ օրենքն ինչպես բոլոր մարդկանց ու քաղաքացիների, այնպես էլ մարդկանց միավորումների, փնտրեսավարող սուբյեկտների և այլնի իրավունքներն ու ազատություններն ապահովի նույն կերպ՝ առանց որեւէ խտրականության: Ինչպես նշված է ՀՀ սահմանադրական դատարանի 29.01.2008թ. ՄԴՈ-731 որոշման մեջ՝ «պետության պոզիտիվ սահմանադրական պարավորությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները»:

Այսպիսի ըմբռումից միաժամանակ հետևում է պարթի անխուսափելիության սկզբունքի հետեողական իրականացման անհրաժեշտությունը, հակառակ պարագայում նույն իրավախախտման դեպքում մարդիկ կհայրնվեն իրավական անհավասար պայմաններում, ինչպես նաև նույնարիպ իրավախախտումների հետեւանքով փոժածները պաշտպանված կլինեն ոչ հավասարաչափ կերպով:

Օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական պահանջից բխում են ոչ միայն օրենքով բոլորի համար սահմանված արգելքների հավասարության և պարասխանարվության միասնական պայմաններ, այլև բոլորի համար օրենքի կիրառման արդյունքում առաջացած իրավական նույնակարգ հետեւանքներ և ձեռականորեն հավասար սուբյեկտների նկատմամբ օրենքի կիրառման միեւնույն մոտեցումներ: Սա նշանակում է, որ բոլորը պետք է ստանան օրենքով սահմանված իրավունքների ու ազատությունների միեւնույն ծավալը, ունենան այդ իրավունքների ու ազատությունների իրացման նույն հնարավորությունները, դրանց պաշտպանության և խախտման դեպքում դրանց վերականգնման նույն միջոցները, ինչպես նաև հավասար իրավական պարականություններ:

Մյուս քաղաքացիների համեմար՝ ՀՀ Սահմանադրությամբ որոշակի սուբյեկտների՝ Հանրապետության Նախագահի, պարգամավորների, դատավորների, սահմանադրական դատարանի անդամների համար նախարեսված են անձեռնմխելիության (իմունիտետի) այլ չափանիշներ: Այսպիսի փարբերության (անհավասարության) նպարակն է ոչ թե այդ պաշտոնները կրող քաղաքացիներին արտոնություններ փալը, այլ այդ պաշտոնարար անձանց պարականությունների կարարման ապահովումը, այն է՝ իրենց իրավասությունների շրջանակներում ապահովել մարդկանց ու քաղաքացիների սահմա-

նադրական իրավունքների ու ազատությունների, օրենքի առջև բոլորի հավասարության հաստատումը: Մասնավորապես, դատավորի անձեռնմխելիության նպատակն է հանրային շահերի եւ, առաջին հերթին, արդարադատության շահերի պաշտպանությունը: Ընդ որում, այդ սուբյեկտները, որպես կանոն, իրենց կարգավիճակի հետ չկապված անօրինական գործողությունների համար կարող են ենթարկվել պատասխանատվության:

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին եւ պահանջում է ցանկացած օրենքում նշված մարդկանց իրավունքների ու ազատությունների, պարտականությունների ու պատասխանատվության հետ կապված խնդիրները լուծելիս ցուցաբերել միաբնույթ մտքերը եւ միաժամանակ ցույց է փայլիս, որ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրենքները պետք է համապատասխանեն օրենքի առջև հավասարության սկզբունքի բովանդակությանն ու իմաստին:

Օրենքի առջև հավասարության սկզբունքը, բնույթով լինելով համընդգրկուն, ներառում է նաեւ դատարանի առջև հավասարության սկզբունքը. եթե ավելի ընդհանուր սկզբունքը բնութագրում է մարդու եւ քաղաքացու կարգավիճակը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ապա մյուս սկզբունքը վերաբերում է միայն արդարադատության բնագավառին: Դատարանի առջև հավասարության սկզբունքը միաժամանակ անմիջականորեն առնչվում է «իրավական պաշտպանության» սահմանադրական դրույթներին, որոնք ամրագրված են Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներում: Մասնավորապես, հոդված 19-ում նշվում է, որ յուրաքանչյուրը կարող է իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով՝ հավասարության պայմաններում դատարանում պաշտպանել իր իրավունքները:

Այլ կերպ ասած՝ դատարանի առջև հավասարությունը ենթադրում է դատավարական եւ ընթացակարգային իրավահավասարություն դատաքննության բոլոր մասնակիցների համար, ինչը կարգավորվում է քաղաքացիական, քրեական, վարչական համապատասխան դատավարական օրենսգրքերով, իսկ սահմանադրական արդարադատությունն իրականացվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում մտրանանշված դատավարական նորմերով: Դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը դրսևորվում է նյութական եւ դատավարական մտքերումների այնպիսի զուգակցմամբ, որպեսզի ապահովվի դատարանի հետ առնչություն ունեցող բոլոր մասնակիցների իրավահավասարությունը: Հենց այսպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը՝ ելնելով դատավարության մասնակիցների համար օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքից: Իր որոշման (08.10.2008թ. ՍԴՈ-765) մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ «հավասարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաեւ հավասարությունը դատավարության մասնակիցների միջև»: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ ինստիտուտը «սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլև սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մտքերի իրական, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար»: Ընդհանուր առմամբ այդ սկզբունքի իրագործումը ենթադրում է, որ պետք է բոլորի համար գործի միաբնույթ դատական համակարգ, այսինքն՝ անկախ որեւէ հանգամանքից, առանց որեւէ խտրականության, յուրաքանչյուրի համար ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ (հոդվածներ 18,19) երաշխավորված արդար եւ իրապարակային դատաքննություն՝ կողմերի միանգամայն հա-

վասար դարավարական իրավունքների առկայության պայմաններում:

Առանձին դեպքերում ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներ, «շեղվելով» օրենքի առջև հավասարության սկզբունքից, ըստ էության հեղափոխում են խախտված ու ոտնահարված իրավունքների ու ազատությունների վերականգնման և հավասարության հաստատման հնարավորություն և նպատակ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 11.3-րդ հոդվածի երկրորդ մասը նախատեսում է շեղում օրենքի առջև բոլորի հավասարության դրույթից (էթնիկական հարկանիշի հիմքով խտրականության արգելումը)՝ «Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»: Հայերի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ փարբեր ժամանակներում բռնազաղթերի և հարկապես ցեղասպանության հետեւանքով մեծ թվով հայեր իրենց կամքից անկախ հայտնվել են հայրենիքից հեռու, ուստի պետականության հաստատումից հետո անհրաժեշտություն առաջացավ պայմաններ ստեղծել նրանց վերադարձի համար՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով գոնե մասնակիորեն նպաստել նրանց և նրանց ժառանգների ոտնահարված իրավունքների վերականգնմանը:

Օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական պահանջը լուրջ խնդիրներ է առաջադրում օրենքների (իրավական ակտերի) նորմատիվ բովանդակության պարզաձև ձևակերպման առումով՝ ապահովելու համար դրանց իրավական որոշակիությունը, որի բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ նույն ակտը (կամ դրա դրույթը) իրավակիրառական պրակտիկայում ստանում է փարբեր մեկնաբանություններ և փարբեր սուբյեկտներ օրենքի առջև հայտնվում են անհավասար պայմաններում: Այս պարզաձև իրավական որոշակիության սկզբունքը դառնում է իրավական ակտերի սահմանադրականության որոշման չափանիշ և, հետեւաբար, իրավական ակտերի անորոշությունը հանգեցնում է օրենքի առջև հավասարության մերժմանը:

Դրա հետ մեկտեղ, իրավական որոշակիության բացակայությունն իրավակիրառական պրակտիկայում ստեղծում է որոշակի անորոշություն և, հետեւաբար, կամայականության դրսևորման հնարավորություն. իրավասուբյեկտը չի կարող օբյեկտիվորեն գնահատել իր գործողությունների (անգործության) իրավական հետեւանքները: Իրավակիրառական պրակտիկայում նույն նորմին փարբեր մեկնաբանություններ փալու հնարավորությունը կանխելու համար անհրաժեշտ է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, որը Սահմանադրությամբ վերապահված է ՀՀ վճռաբեկ դատարանին (հոդված 92):

Իրավական որոշակիության պահանջից շեղմանը նպաստում է ոչ միայն կոնկրետ որեւէ օրենքի ոչ հստակ, երկիմաստ ձևակերպումը, այլև պարզաձև ձևակերպված փարբեր օրենքների հակասականությունը, ինչը պայմաններ է ստեղծում դրանց կամայական մեկնաբանություններ փալու և ծնում է հակասական իրավակիրառական պրակտիկա:

Իրավական որոշակիության պահանջի իրականացման խնդիրն բազմիցս իր մի շարք որոշումներով անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18.04.2006թ. ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտվել է այն դիրքորոշումը, որ «փվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ փա քաղաքացու դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: ՀՀ սահմանադրական դատարանի՝

13.05.2008թ. ՄԴՈ-759 որոշմամբ ընդգծվում է, որ «նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձեռակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կրա իրավաբանական եւ Փիզիկական անձանց դրան համապարասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող է առաջացնել Կրկյալ գործողությունը»:

ՆՈՂՎԱԾ 15

***Յուրաքանչյուր որ ունի կյանքի իրավունք: Ոչ որ չի կարող դա-
րասպարտվել կամ ենթարկվել մահապարժի:***

Մարդու իրավունքների եւ ազատությունների համակարգում կյանքի իրավունքը միանշանակ ունի հիմնարար արժեք, այն հանդիսանում է բնական եւ անօտարելի: Յուրաքանչյուր իրավական փաստաթղթում հենց դրանով է սկսվում մարդու իրավունքների եւ ազատությունների ամրագրումը: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր որ ունի կյանքի, ազատության եւ սեփական անձի անձեռնմխելիության իրավունք: Բնորոշ է նաեւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի առաջին կետում ամրագրված դրույթը. «Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապարելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ որի չի կարելի քմահանձնով գրկել կյանքից»:

Կյանքի իրավունքի նույնաբնույթ բնորոշում է ամրագրված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածում. «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»:

Նիշյալ իրավունքի սահմանման եւ պաշտպանության առնչությամբ ընդունվել են փասնյակ միջազգային իրավական ակտեր: Ընդ որում, դրանց մի գերակշիռ մասը վերջին շրջանում առավելապես կոչեր է պարունակում՝ ուղղված այն պետություններին, որոնք դեռ չեն հրաժարվել մահապարժի ինստիտուտից (օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի Մարդու իրավունքների հանձնաժողովի 2005թ. ապրիլի 20-ի թիվ 2005/59 եւ 2008թ. փետրվարի 26-ի թիվ 62/149 բանաձեւերը եւ այլն):

Սահմանադրության հոդված 15-ի հիմնական նպատակը նույնպես յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքի պաշտպանության երաշխավորումն է եւ, համապարասխանաբար, մարդուն կյանքից գրկելու բացառումը:

Կյանքի իրավունքն ամրագրված է եղել նաեւ Սահմանադրության նախկին խմբագրությամբ 17-րդ հոդվածով: Մակայն, ի փարբերություն գործող կանոնակարգման, նշված հոդվածով ամրագրված է եղել մահապարժի կիրառման որոշ վերապահում. «Մահապարժը՝ մինչեւ դրա վերացումը, որպես բացառիկ պարտամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար»: Գործնականում, Սահմանադրության նախկին խմբագրությամբ գործելու ողջ ժամանակահատվածում երբեւէ մահապարժ չի կիրառվել: Ավելին, արդեն 2003թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված քրեական օրենսգրքով մահապարժը հանվել էր, թեպետ Սահմանադրության հիշյալ դրույթը փոխվեց միայն մոտ երկու փարի անց:

Մեկնաբանվող հոդվածից բխում են հետեւյալ իրավադրույթները.

ա/ յուրաքանչյուր որ ունի կյանքի իրավունք, որին թղթակցում է բոլորի

պարտականությունը՝ ձեռնպահ մնալ մարդուն կյանքից զրկելուն ուղղված քմահաճ ոտնձգություններից կամ որեւէ կերպ վրանգել այլոց կյանքի իրավունքը.

բ/ պետությունը պարտավոր է բոլոր միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու կյանքի իրավունքը.

գ/ կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով և ոչ ոքի չի կարելի քմահաճ ձեռով զրկել կյանքից.

դ/ արգելվում է օրենսդրությամբ մահապատժի որեւէ հիմքի սահմանում և կիրառում:

Թեպետ Սահմանադրության 15-րդ հոդվածում ընդգծված է մահապատժի դատապարտվելու կամ ենթարկվելու արգելքը, այնուամենայնիվ, կյանքի իրավունքը բովանդակային առումով անհամեմատ լայն է ու ընդգրկուն: Նիշյալ իրավունքը պետությանը պարտավորեցնում է ստանձնելու և կյանքի կոչելու բազմաձևալու ու խիստ պարասխանաբար իրավական-կազմակերպական այնպիսի միջոցներ, որոնք լիարժեք երաշխիքներ են ստեղծում հասարակությունում կյանքի անվտանգության համար: Տվյալ դեպքում պետությունը ոչ միայն պարտավոր է իրավասու իրավապահ մարմինների միջոցով նպատակասլաց պայքար փանել հանցավորության դեմ, այլև ապահովել բժշկական պարշաճ սպասարկում, անվտանգ կենսապայմաններ:

Սահմանադրական մի շարք այլ իրավունքներ ևս կոչված են երաշխավորելու կյանքի իրավունքը: Մասնավորապես, Սահմանադրության 17-րդ հոդվածով ամրագրված՝ խոշորագումների ենթարկելու, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարժի, ինչպես նաև առանց մարդու համաձայնության գիտական, բժշկական և այլ փորձերի ենթարկելու արգելքը ևս միտված է կյանքի իրավունքի ապահովմանը: Նույն խնդրի լուծմանն են նպաստում նաև Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 33.2-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, 34-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը և այլն:

Կյանքի իրավունքի խախտման ինքնուրույն տեսակ է զենոցիդը՝ ցեղասպանությունը, բնակչության առանձին խմբերի կազմակերպված և կանխամտադրված ոչնչացումը՝ պայմանավորված ազգային, ռասայական, կրոնական և այլ հատկանիշներով: Յեղասպանության բնորոշումն ամրագրվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1984թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Յեղասպանության կանխարգելման և պարժի մասին» դաշնագրով: Յեղասպանության բնորոշ օրինակ է Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը՝ Նայոց եղեռնը: Ներագայում հարկ եղավ այդ հանցագործության կանխմանն ու դատապարտմանն ուղղված նաև այլ միջազգային փաստաթղթեր ընդունել, որոնցից, թերևս, կարելի է առանձնացնել ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1968թ. նոյեմբերի 26-ին ընդունված «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» դաշնագիրը և այլն:

Կյանքի իրավունքը մարդուն վերապահվում է ծննդյան պահից մինչև մահը, սակայն գործնականում չափազանց բարդ է ամրագրել՝ կյանքի կենսական և ժամանակային սահմանները: Այդ խնդրի առնչությամբ գիտական տեսությունները միյանցից խիստ փարբերվում են: Թերևս, հայրենական օրենսդրությունում, ի դեմս «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» Նայասարանի Նանրապետության

օրենքի, «մահ» եզրույթի բնորոշման համար կարելի է հիմք ընդունել հետևյալ դրույթները: Նախ, այդ օրենքի 1-ին հոդվածում փրված է «ուղեղի մահ» եզրույթի բնորոշումը՝ «գլխուղեղի կենսագործունեության լրիվ կամ մասնակի եւ անդառնալի դադարում, որը գրանցվում է սրտի եւ թոքերի արհեստական օդափոխության պայմաններում: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան»: Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն. «Փոխպարվաստման նպատակով դիակից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ կարող են վերցվել մարդու ուղեղային մահվան փաստը հաստատելուց հետո: Ուղեղային մահվան փաստը հաստատվում է բժշկական հանձնաժողովը»:

Այն, որ մասնագիտական հետազոտությունները դեռեւս հնարավորություն չեն փվել վերը նշված հարցում միասնական մոտեցումներ ամրագրել, վկայում է նաեւ Ռուսաստանի Դաշնության փորձը, որի նույնանուն օրենքի 9-րդ հոդվածում փրված է «ուղեղի մահվան» հետևյալ բնորոշումը. «Գլխուղեղի կենսագործունեության լրիվ (ընդգծումը մերն է) անդառնալի դադարում»:

Նույն կերպ, դեռեւս միասնական մոտեցումներ չեն ձեւավորվել մարդու կյանքի սկզբի առումով: Իրավակիրառական րեսանկյունից առավել հիմնավորված կլիներ օրենսդրորեն սահմանել նաեւ մարդու կյանքի սկզբնական պահը, ինչը հնարավորություն կտար ժամանակագրական առումով հստակեցնելու կյանքի սկիզբը եւ վերջը: Բնական է, որ այդ ճշգրտումը խիստ անհրաժեշտ է կյանքի իրավունքի պաշտպանության րեսանկյունից:

Բոլոր դեպքերում, օրենսդրությունը բովանդակում է որոշ ելակետային դրույթներ: Նախ, «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 9-րդ հոդվածից բխում է, որ մարդու կյանքը սկսվում է ոչ թե ծննդյան պահից, այլ սաղմնային զարգացման որոշակի փուլից: Իսկ Նայաստանի Նանրապետության կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Նոյնության արհեստական ընդհարման կարգը եւ պայմանները հաստատելու մասին» թիվ 1116-Ն որոշման համաձայն՝ հղիության արհեստական ընդհարում թույլատրվում է կատարել մինչեւ 12 շաբաթական հղիության ժամկետում, եւ միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում ավելի ուշ ժամկետում, մասնավորապես մինչեւ 22 շաբաթական հղիության արհեստական ընդհարում:

Ընդ որում, հիշյալ որոշմամբ սահմանված են ինչպես բժշկական բնույթի հակացուցումներ (օրինակ, ինֆեկցիոն հիվանդություններ), այնպես էլ սոցիալական կարգավիճակի հետ կապված հիմքեր (օրինակ՝ հղիության ընթացքում ամուսնու մահը, կնոջ կամ ամուսնու ազատագրկման վայրում գտնվելը, մայրական իրավունքից զրկվելը հղիության ժամանակ, հղիությունը բռնաբարությունից հետո): Կարծում ենք, որ ի տարբերություն բժշկական բնույթի հակացուցումների, որոնք իրական վրանգ են ինչպես հղի կնոջ, այնպես էլ պտղի համար, իրավաչափ չեն սոցիալական հիմքերը, որոնք ամրագրված են հիշյալ որոշման 4-րդ հավելվածով: Բացի դրանից, հիշյալ որոշումը, կարծում ենք, հակասում է Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներին, որոնց համաձայն ֆիզիկական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմաններն ու կարգը, իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները կարող են սահմանվել միայն օրենքով:

Կյանքի իրավունքը բնավ չի ենթադրում մարդու մահանալու իրավական նորմով ամրագրված իրավունքը: Կյանքից ինքնակամ հեռանալու երեւոյթը հավասարապես անընդունելի է ինչպես հասարակության, այնպես էլ՝ պետության կողմից: Թերեւս, այդ դրույթն իր ամրագրումն սրացել է նաեւ գործող օրենսդրությունում. համաձայն «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Նայաստանի Նանրապետու-

թյան օրենքի 23-րդ հոդվածի, «Նայասարանի Նանրապետությունում արգելվում է էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որեւէ գործողությամբ եւ միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Նայասարանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Թեպետ կյանքի իրավունքն ակնհայտ բազմիմաստ է, այնուամենայնիվ, վերջինիս սահմանները ճշգրիտ ընդգծելու փեսանկյունից առանցքային նշանակություն ունի մահապարժի եւ իրավաչափ հարկադրանքի ինստիտուտների առնչությունն այդ իրավունքի հետ: Թերեւս հենց այդ նկատառումով է Սահմանադրության 15-րդ հոդվածը, ամրագրելով կյանքի իրավունքը, բավարարվել միայն հետելյալ դրույթով. «Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապարժի»: Սահմանադրությամբ անդրադարձ չկա իրավաչափ հարկադրանքի ինստիտուտին, սակայն դա չի հակասում Սահմանադրությանը, ինչին առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Վերոհիշյալը հիմք է փալիս եզրահանգելու, որ ըստ Սահմանադրության 15-րդ հոդվածի՝ մարդու կյանքի իրավունքը բացարձակ իրավունք է եւ չի ուղեկցվում որեւէ վերապահմամբ: Այս մտերցումն ամրագրված է նաեւ միջազգային մի շարք փաստաթղթերում:

Ընդ որում, մահապարժի վերացման առնչությամբ միջազգային իրավական ակտերում եւս առկա է մահապարժի կիրառման շրջանակների սահմանափակման անթաքույց միտում: Այսպես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, «Ոչ մեկին չի կարելի զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պարիժը»: Ներագայում՝ 1983թ. ապրիլի 28-ին ընդունված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 6 արձանագրության 1-ին հոդվածով ամրագրվեց հետելյալ դրույթը. «Մահապարիժը վերացվում է: Ոչ մեկին չի կարելի մահապարժի դատապարտել կամ մահապարժի ենթարկել»: Միաժամանակ, նույն արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրվեց որոշ վերապահում. «Պետությունը կարող է իր օրենսդրության մեջ մահապարիժ նախատեսել պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի պառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար. նման պարիժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում եւ դրա դրույթներին համապատասխան: Պետությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հաղորդում է այդ օրենսդրության համապատասխան դրույթները»:

Ի փարբերություն հիշյալ Կոնվենցիայի, Սահմանադրությամբ բացառվում է օրենսդրությամբ մահապարժի կիրառման որեւէ հիմքի ամրագրում: Մասնավորապես, Սահմանադրության 43-րդ հոդվածում սպառիչ նշված են այն հոդվածները, որոնցով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են օրենքով սահմանափակվել. դրանց ցանկում 15-րդ հոդվածը չկա: Իսկ այն, որ նույն 15-րդ հոդվածը ներառված է Սահմանադրության 44-րդ հոդվածում, սոսկ նշանակում է, որ այդ իրավունքը չի կարող ժամանակավորապես սահմանափակվել անգամ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Մահապարժի վերացման հարցում էլ ավելի միանշանակ իրավական դիրքորոշում ամրագրվեց Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապարժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությամբ: Այս առնչությամբ բնորոշ է հատկապես Նայասարանի Նանրա-

պետության սահմանադրական դափարանի 2007թ. ապրիլի 17-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի»՝ «Բոլոր հանգամանքներում մահապարժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-694 որոշումը, որում հստակ ամրագրվեց այն գաղափարը, ըստ որի՝ «Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխդրացնող գործոն՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածի ամբողջական իրացման համար»:

Ներկայումս միջազգային հանրությունը միանգամայն արդարացի առավելապես հակված է մահապարժի վերացմանը, շուրջ 100 պետության ներպետական օրենսդրությամբ եւս մահապարժը վերացված է:

Կյանքի իրավունքի երաշխավորմանը նվիրված սահմանադրական դրույթն իր արտացոլումն է ստացել նաեւ ՏՏ օրենքներում եւ նորմատիվ այլ ակտերում:

ՏՏ քրեական օրենսգիրքը, պաշտպանելով կյանքի իրավունքը, քրեական պատասխանարվություն է նախատեսում մեկ ուրիշին ինչպես դիտավորությամբ (սպանություն՝ հոդվածներ 104-108), այնպես էլ անզգուշությամբ (հոդված 109) մահ պատճառելու, ինքնասպանության հասցնելու (հոդված 110), ինքնասպանության հակելու (հոդված 111), պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության (հոդված 305), օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի սպանության (հոդված 388-ի 2-րդ մաս) համար:

ՏՏ քրեական օրենսդրությամբ պատասխանարվություն է նախատեսված նաեւ մարդու (մարդկանց) կյանքի համար վրանգ ստեղծող այնպիսի արարքների համար, ինչպիսիք են՝ մարդու ինուսային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը (հոդված 123), մարմնի մասեր կամ հյուսվածքներ փալուն հարկադրելը (հոդված 126), վրանգի մեջ թողնելը (հոդված 128), հիվանդին օգնություն ցույց չբերելը (հոդված 129), ահաբեկչությունը (հոդված 217), պատանդ վերցնելը (հոդված 218), արտմային էներգետիկայի օբյեկտներում անվտանգության կանոնները խախտելը (հոդված 227), սպորտի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (հոդված 235), սանիտարահակահամաճարակային կանոնները խախտելը (հոդված 277), մարդկանց կյանքի կամ առողջության համար վրանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը (հոդված 278), շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված որոշ հանցագործությունները եւ այլն:

ՏՏ քրեական օրենսգիրքը համապատասխան դրույթ է պարունակում նաեւ կյանքի իրավունքին առնչվող՝ հանցանք կատարողներին հանձնելու խնդրի վերաբերյալ: Այսպես, օրենսգրքի հոդված 16-ի («Նանցանք կատարած անձանց հանձնելը») 4-րդ մասի համաձայն, եթե նշված անձանց հանձնելը պահանջող երկրի օրենսդրությամբ փվյալ հանցագործության համար մահապարժ է նախատեսված, սպա հանցանք կատարած անձանց հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջող կողմը բավարար երաշխիքներ չներկայացնի, որ մահվան դատավճիռն ի կատար չի ածվի⁵:

ՏՏ քրեական օրենսգիրքը (հոդված 46) կարգավորում է նաեւ հիմնավորված ռիսկի, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի, հարցը: Այդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ ռիսկը հիմնավորված չէ եւ քրեական պատասխանարվություն

⁵ Թերեւս, կյանքի իրավունքի ապահովման իմաստով ավելի նպատակահարմար կլիներ նման դեպքերում ընդհանրապես բացառել հանցանք կատարած անձանց հանձնելու հնարավորությունը:

է առաջացնում, եթե այն ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց գոհվելու, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 11-ի («Անձի անձեռնմխելիությունը») 9-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում արգելվում է մարդու կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին վրանգ ներկայացնող միջոցներ կիրառելը»:

Բնական մահվան դեպքում հետաքննություն չի սկսվում: Եթե հայտնաբերվում է դիակ՝ բռնության հետքերով կամ առանց դրանց, բայց մահվան պարճառները հայտնի չեն, քրեական գործ է հարուցվում: Իսկ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսվում է, որ նման դեպքերում մահվան պարճառների բացահայտման նպատակով դատաբժշկական փորձաքննության նշանակումը պարտադիր է:

Տուժողի մահվան դեպքում նրա իրավահաջորդները, ՏՏ գործող օրենսդրության համաձայն, իրավունք ունեն փոխհատուցում ստանալ մահվամբ պարճառված վնասի չափով՝ քաղաքացիական պարասխանարվության կարգով (ՏՏ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 1081-1087):

ՏՏ-ում ընդունվել և գործում են մի շարք այլ իրավական ակտեր, որոնք այս կամ այն կերպ առնչվում են կյանքի իրավունքին: Մասնավորապես, «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՏՏ օրենքը սահմանում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, փնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վրանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՏՏ օրենքը սահմանում է, որ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վրանգի, ինչպես նաև շրջապարի համար վրանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում (հոդված 16): Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվողները պարասխանարվություն են կրում ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնավորապես, բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը քրեական պարասխանարվություն է առաջացնում ՏՏ քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածով: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ բժիշկն առանց հարգելի պարճառների չի կատարում հիվանդին բժշկական օգնություն ցույց տալու իր պարտականությունները:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՏՏ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է Նայաստանի Նանրապետությունում էվթանազիայի արգելումը: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, պարասխանարվություն են կրում ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսպես, էվթանազիայի դեպքերն ընկնում են ՏՏ քրեական օրենսգրքով սպանության համար պարասխանարվություն նախատեսող նորմերի գործողության տակ: Քրեական օրենսգրքը նախատեսում է նաև էվթանազիայի հիմնախնդրի հետ առնչվող մեկ այլ դրույթ (հոդված 62-ի 1-ին մասի 5-րդ կետ), որի համաձայն՝ հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը համարվում է պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք:

Այս առումով Եվրոպական դատարանի պրակտիկայում առաջացել է շարունակում են առաջանալ լուծում պահանջող մի շարք խնդիրներ: Մասնավորապես, շարունակում են «բաց» մնալ հերեյալ հարցերը. արդյո՞ք կյանքի իրավունքը պետք է դիտել որպես ապրելու՝ մարդու պարտականություն, եւ հնարավոր՞ է, արդյոք, այդ իրավունքից նրա կամավոր հրաժարումը: Էվթանազիայի հիմնախնդրի լույսի ներքո կյանքի իրավունքը ձեռք է բերում լրիվ այլ՝ դրա ավանդական ընկալմանը հակադիր բնույթ: Խոսքն ապրելու եւ մեռնելու իրավունքների հարաբերակցության մասին է:

Մարդու կյանքի համար վրանգ ներկայացնող հիվանդությունների կանխարգելմանն է ուղղված «Մարդու իմունային անբավարարության վիրուսի հիվանդության կանխարգելման մասին» ՎՍ օրենքը: Ընդ որում, ՎՍ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածով պատասխանավորություն է սահմանված այլ անձին ՄԻԱՎ-ի հարուցիչով վարակելու ակնհայտ վրանգի ենթարկելու, ինչպես նաեւ դրանով վարակելու համար: Նշված հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ այն անձինք, ովքեր գիտեին իրենց մոտ այդ հիվանդության առկայության մասին եւ անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել ուրիշին վարակելը կանխելու համար: Նշված հանցագործության համար պատասխանավորության կարող են ենթարկվել նաեւ այն բուժաշխարհագրողները, ովքեր վիրահատության, արյան փոխներարկման, սրսկման եւ նման այլ դեպքերում նախագրուշական համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել եւ ուրիշներին ենթարկել են ՄԻԱՎ-ով վարակելու վրանգի:

Կյանքի իրավունքի պաշտպանությանն է առնչվում նաեւ «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՎՍ օրենքը, որի հոդված 3-ի համաձայն՝ կենդանի դոնորից փոխպարվաստման նպատակով կարող է վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենդ օրգանի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վրանգ ներկայացնող փոփոխություններ:

Ըստ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ կյանքի իրավունքի խախտում չի համարվում իրավազափ ուժի գործադրման հերետանքով կյանքից զրկելը: Այսպես, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հերետանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

Այս հիմքերն ամբողջությամբ չէ, որ արտացոլված են ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, «Աստիկանության մասին» Տայաստանի Տանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, որը նվիրված է հրազենի կիրառման հիմքերին, խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով զենքի կիրառման հիմք նախատեսված չէ: Տվյալ դեպքում, բնական է, որ հրազենի կիրառումը չի բացառում մարդուն կյանքից զրկելը:

Միաժամանակ, նույն այդ հոդվածում որոշ դրույթներ համահունչ չեն հիշյալ Կոնվենցիայի պահանջներին: Այսպես, նշված 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն կարող է հրազեն կիրառվել նաեւ «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար հերտախուզվողի փախուստը խափանելիս»: Այս դրույթն իրավազափ կլիներ, եթե ամրագրվեր հրազենի կիրառում՝ ծանր կամ առանձնապես

ծանր հանցագործություն կատարելու հիմքով անձին ձերբակալելիս փախուստը կանխելու նպատակով: Մասամբ նույն դիտողությունը վերաբերում է նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին: Առավել նպատակահարմար կլիներ այդ կետերի դրույթները խմբագրել եւ ամրագրել մեկ կետում:

Կյանքի իրավունքի խախտում չէ նաեւ անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում անձին կյանքից զրկելը: Այդ ինստիտուտները նախատեսված են Նայասարանի Նանրապետության քրեական օրենսգրքի համապատասխանաբար 42 եւ 44-րդ հոդվածներով: Մասնավորապես, 42-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է. «Անձի կյանքի համար վրանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ուրնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»:

Մահանադրությանը ամրագրված իմաստով կյանքից զրկել չի համարվում նաեւ պատերազմի ժամանակ՝ հակառակորդ բանակի «մարտնչող կազմի դեմ» ուղղված գործողությունների արդյունքում մահ պարճառելը: Այսպես, Ժնևյան 1949թ. օգոստոսի 12-ի դաշնագրերը բնորոշում են պատերազմական գործողությունների ժամանակ «հովանավորվող անձանց» հասկացությունը. նրանք են՝ գործող բանակներում վիրավորներն ու հիվանդները, ծովում զինված ուժերի վիրավորները, հիվանդները եւ նավաբեկյալները, ռազմագերիները, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչությունը, որոնց կյանքից զրկելը համարվում է քրեական հանցագործություն:

ՆՈՂՎԱԾ 16

1. Յուրաքանչյուր որ ունի անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

5) անչտախառն հասարակական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.

6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վրանգը կանխելու նպատակով.

7) Նայասարանի Նանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհատապաշտ պրեզենտացվում է պարճառների, իսկ քրեական մեղադրանք

ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

3. Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

4. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պարճառված վնասի հատուցման: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատարանի արդյունքում:

5. Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պարճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորություններ:

6. Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը կյանքի և ազատության բնական իրավունքներից ամենցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորություններն են: Մարդու բնական ազատությունն ամենից առաջ վերաբերում է նրա անձին: Ազատության այդ կողմն անվանում են անձնական ազատություն: Մարդն ի ծնե ազատ է, ազատ սրբությունից, ճորտությունից, խարականությունից, ունի ներքին հոգեւոր ինքնավարություն: Քանի որ մարդը միաժամանակ է կենսաբանական (ֆիզիկական), և հոգեւոր էակ է, ապա անձնական ազատությունը ենթադրում է մարդու արտաքին ֆիզիկական և ներքին հոգեւոր ազատությունն ու ինքնավարությունը: Սահմանադրության 16-րդ հոդվածի կարգավորման կոնկրետ առարկան մարդու անձնական իրավունքների ֆիզիկական առումը, կողմն է: Անձնական անձեռնմխելիության մնացած առումները երաշխավորված են Սահմանադրության այլ հոդվածներով: Ընդ որում, սահմանադրական դրույթները որպես ելակետ են ընդունել մարդու իրավունքների միջազգային հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը⁶:

Նիշյալ իրավունքի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական հիմքերի վերլուծությունը վկայում է դրա առանցքային նշանակության մասին: Կյանքի իրավունքի նման այն ևս սկզբունքային նշանակություն ունի մարդու իրավական վիճակի համակարգում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում լակոնիկ, բայց և խորաթափանց ու փարողունակ բովանդակությամբ է ներկայացված նշված իրավունքը. «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապարտությամբ և իրավունքներով»: Մեկ այլ միջազգային փաստաթղթում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում, մարդու ազատության ու անձեռնմխելիության իրավունքը ներկայացված է հետևյալ բնորոշմամբ. «Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմ-

⁶ Սույն հոդվածի մեկնաբանության հիմքում ընկած է նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության խնդրանքով պատրաստված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կարծիքը՝ «Ներպետական մակարդակում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության 5(1)(ե)-ի հոդվածի կիրառման վերաբերյալ» (www.legislation.org):

խելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կերպով ձերբակալման կամ կալանքի փակ պահվելու: Ոչ ոք չպետք է գրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»: Սահմանադրության 16-րդ հոդվածի համար հատկապես սկզբնաղբյուր է հանդիսացել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի «Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք» վերաբառությամբ 5-րդ հոդվածը:

Ազատության սահմաններին նվիրված միջազգային փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է այդ սահմանների անթաքույց ընդլայնման միտում: Ընդ որում, այն ընդգրկում է ինչպես կենսաբանական (ազատ րեղաշարժի իրավունք, գործողությունների ազատություն և այլն), այնպես էլ սոցիալական ոլորտներ (սպեղծագործության ազատություն, խոսքի ազատություն և այլն): Սակայն, բովանդակային առումով, ազատության նման լայն բնորոշումը բնավ չի բացառում ազատության փարաբնույթ դրսևորումները ևս իրավունքի ինքնուրույն փաստակամրագրելը: Այս մտրեցումը բնորոշ է նաև առանձին երկրների սահմանադրություններին:

Վերը նշած գործոններով պայմանավորված՝ Սահմանադրությունում առկա են մի շարք դրույթներ, որոնք ոչ միայն համահունչ են Սահմանադրության այլ հոդվածների դրույթներին, այլև, ըստ էության, գրեթե կրկնում են դրանց և երաշխիք հանդիսանում բազմաթիվ այլ սահմանադրական իրավունքների համար: Այդ կերպ ևս ընդգծվում է նշված դրույթների առանձնակի կարեւորությունը:

Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է եղել Սահմանադրության նախկին խմբագրության 18-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»: Նշված ձեւակերպումից բխում է, որ Սահմանադրության նախկին խմբագրությամբ նպատակահարմար չէր համարվել հստակեցնել այդ իրավունքի հիմքերն ու շրջանակը՝ թողնելով այդ հարաբերությունների կարգավորումը օրենքին: Բնական է, որ առանցքային նշանակություն ունեցող այդ իրավունքի հիմքերի և սահմանների սպառիչ սահմանումը հենց Սահմանադրությամբ՝ առավել երաշխավորված է դարձնում անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

1. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասն ամրագրում է անձնական ազատության կարեւորագույն երեք երաշխիքներ.

ա/ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Անձնական ազատության իրավունքը մարդու անձի ֆիզիկական ազատությունն է, որը մարդու էությանն է, ծննդյան պահից ունեցած բնական իրավունքը: Դա նշանակում է ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման, ազատության այլ սահմանափակման:

Ազատության իրավունքի հետ սերտորեն կապված է անձի անձեռնմխելիության իրավունքը, որը բացառում է որեւէ արտաքին միջամտություն մարդու անհատական կենսագործունեությանը, ասպառվում է ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիություն: Լայն իմաստով՝ **անձնական անձեռնմխելիությունը** մարդու ֆիզիկական (կյանք, առողջություն) և բարոյահոգեւոր (այսինքն՝ պատիվ, արժանապատվություն) անձեռնմխելիությունն է, ինչի արդյունքում բոլորը պարտավոր են չմիջամտել մարդու անհատա-

կան կենսագործունեությանը: Սակայն մեկնաբանվող հոդվածում խոսքը վերաբերում է մարդու՝ անձի ֆիզիկական անձեռնմխելիությանը:

Անձի ազատության եւ անձեռնմխելիության իրավունքին առանձնահատուկ նշանակություն տալը բնական է, քանի որ այդ իրավունքի սահմանափակումը, ըստ էության, հանգեցնում է Սահմանադրությամբ վերապահված մի շարք այլ իրավունքների (ազատ Կրեղ աշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունք եւ այլն) սահմանափակմանը: Ընդ որում, հիշյալ իրավունքների մի մասն ընդհանրապես կասեցվում է, իսկ մյուս մասից էլ անձը փաստացի ի վիճակի չի լինում լիարժեք օգտվել: Ազատության իրավունքի հիմնական տարրերը եւ սահմաններն ամրագրված են Սահմանադրության 42-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ազատ է կարգաբերելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:

Մարդու անձնական ազատության իրավունքի սահմաններն իրավական նշանակություն ունեն նաեւ պետության գործառնությունների բովանդակությունն ու շրջանակը կանխորոշելու նկատառումով: Պետությունը պարտավոր է ոչ միայն հարգել անձնական ազատության իրավունքը, ձեռնպահ մնալ այն որեւէ կերպ խախտելուց, այլեւ ըստ ամենայնի պաշտպանել այն եւ պարտախանարու լինել դրա համար: Թերեւս, այս նկատառումով է Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված, որ պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

բ/ մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով: Անհատի ազատությունը բացարձակ չէ, սակայն դրա սահմանափակման հիմքերը փոխկապակցված են դարձյալ անհատի, Կրվյալ դեպքում՝ այլոց իրավունքների ու ազատությունների հետ: Բացարձակ ազատությունն անխուսափելիորեն կհանգեցնի այլոց իրավունքների եւ ազատությունների անիրավաչափ սահմանափակմանը, քանզի բացարձակ ազատության դեպքում չեն կարող բացառվել բռնությունները եւ նմանաբնույթ այլ երեւոյթները: Այսպիսով, Սահմանադրությունը հնարավոր է համարում մարդուն ազատությունից զրկումը, սակայն այն դեպքերը, որոնց հիման վրա կարելի է դա անել, պետք է սահմանվեն **օրենքով եւ իրականացվեն օրենքով ամրագրված ընթացակարգով:** Ուրեմն պետությունն իրավունք չունի օրենքից բացի այլ ակտով սահմանել մարդուն անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքից զրկելու այլ դեպքեր եւ իրականացման ընթացակարգ: Սահմանադրական այս դրույթը երաշխիք է, որ ազատությունից զրկելու դեպքերի շրջանակը չի կարող ընդլայնվել ենթաօրենսդրական ակտերով: Մեկ այլ երաշխիք է Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը, որ ֆիզիկական անձանց իրավունքների եւ ազատությունների **սահմանափակումը** կարող է սահմանվել բացառապես օրենքներով:

Այսպիսով, Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասը եւ 83.5-րդ հոդվածի 2-րդ մասը պետությանը պարտավորեցնում են, որ մարդուն եւ՝ անձնական ազատության ու անձեռնմխելիության իրավունքից զրկելը, եւ՝ այդ իրավունքը սահմանափակելը կատարվի օրենքով սահմանված հիմքերով:

Միաժամանակ, Սահմանադրության 16-րդ հոդվածի 6-րդ մասը եւս ամրագրում է մարդուն միայն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով խուզարկելու անհրաժեշտությունը: Նույնը վերաբերում է նաեւ ազատությունից ապօրինի զրկելու կամ ապօրինի խուզարկության դեպքում պարճառված վնասի հատուցման իրավունք վերապահելուն եւ այլն:

Այսպիսով, որևէ ենթաօրենսդրական ակտով, ինչ նկատարառնով էլ այն պայմանավորված լինի, չի կարելի ամրագրել ազատության սահմանափակման լրացուցիչ իրավական հիմքեր: Ընդ որում, Սահմանադրությունը բացառություն է նախատեսում միայն արտակարգ եւ ռազմական դրության ժամանակ (44-րդ հոդված), սակայն սահմանափակումները րվյալ դեպքում կարող են իրականացվել բացառապես օրենքով սահմանված կարգով:

Մարդու անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը չի կարող սահմանափակվել նաեւ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված հիմքերով (ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պապվի եւ բարի համբավի պաշտպանության համար), քանի որ Սահմանադրության 16-րդ հոդվածը ներառված չէ այն հոդվածների ցանկում, որոնցով նախատեսված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել:

գ/ օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն Սահմանադրությամբ նախատեսված կոնկրետ դեպքերում: Մարդու անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքի կարեւորագույն երաշխիքը Սահմանադրությունը համարում է օրենքը, որով պետք է սահմանվեն եւ որին համապատասխան պետք է իրականացվեն մարդուն ազատությունից զրկելու դեպքերը եւ ընթացակարգը: Սակայն պատմական փորձը ցույց է տվել, որ օրենքը եւս կարող է լինել իրավախախտ, այսինքն՝ օրենքով կարող են անհիմն ընդարձակվել ազատությունից զրկելու դեպքերը: Որպեսզի կանխի նման ոչ իրավական օրենքի ընդունումը եւ կիրառումը՝ Սահմանադրությունը փակ շրջանակով թվարկում է այն դեպքերը, որոնց հիման վրա օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում: Հիմքերի սպառիչ շրջանակը եւ հստակ իրավական ձեւակերպումները բացառում են դրանց փարածական մեկնաբանությունը:

Մարդուն ազատությունից զրկելու սահմանադրական հիմքերի վերլուծությունը եւս վկայում է այն մասին, որ ազատության սահմանափակման հիմքում բացարձակապես դրված են այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության խնդիրները:

Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն Սահմանադրությամբ նախատեսված յոթ կոնկրետ դեպքերում.

1) *անձի դատապարտումն իրավասու դատարանի կողմից՝ հանցագործություն կատարելու համար:* Այս հիմքը ներառում է մի շարք նախապայմաններ՝ անձը կարող է ազատազրկման դատապարտվել բացառապես հանցագործության համար, դատապարտել կարող է միայն իրավասու դատարանը: Տվյալ դեպքում «իրավասու» հասկացությունը չի սահմանափակվում միայն Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրված դատարանների ցանկով: «Իրավասու» կարող է լինել միայն Սահմանադրությամբ եւ օրենքով րվյալ քրեական գործը քննելու դատազորություն ունեցող պապշած դատարանը: Պաշտանության պահանջը վերաբերում է նաեւ դատավարական ընթացակարգին, որով անձը դատապարտվում է ազատազրկման: Հանցագործության համար անձին դատապարտելու ընթացակարգերը հանգամանորեն կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով եւ մի շարք այլ օրենսդրական ակտերով:

2) *Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը չկատարելու:* Դատարանի օրինական կարգադրությունները կարող են վերաբերել որպես վկա

դադարան ներկայանալուն, դադարավարական այլ գործողություններին մասնակցելուց խուսափելուն եւ այլն: Բոլոր դեպքերում հարկ է նկատել, որ խոսքը բացառապես վերաբերում է ազատությունից զրկելու այնպիսի եղանակներին, որոնք որեւէ առնչություն չունեն պարտախանութիւնի ենթարկելու հետ: Դրանք սոսկ դադարավարական հարկադրանքի միջոցներ են, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու դադարանի՝ օրինական ուժի մեջ մտնելու կարգադրությունները⁷:

3) *Անձը կարող է ազատագրկվել օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով*: Նշված հիմքի առնչությամբ կարեւոր է նկատել ունենալ, որ խոսքը վերաբերում է բացառապես «որոշակի», այսինքն՝ կոնկրետ պարտականությանը: Յուրաքանչյուր դեպքում հստակ պետք է արձանագրվի, թե կոնկրետ որ պարտականության կատարումն ապահովելու համար է անձն ազատագրվում: Այս դեպքում հարկ է նկատել ունենալ, որ խոսքը չի վերաբերում քաղաքացիաիրավական պարտավորություններին: Ընդ որում, հենց 16-րդ հոդվածում է այդ միտքը հստակ ամրագրված. «Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները»:

Որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով ազատությունից զրկելու լիազորությամբ, որպես կանոն, օժտված են սահմանափակ թվով պետական մարմիններ: Որպես կանոն, այդպիսի լիազորությամբ օժտված են այն իրավապահ մարմինները, որոնք իրավասու են իրականացնելու հետաքննություն եւ նախաքննություն, ունեն, օրինակ, անձին բերման ենթարկելու ձևով ազատությունից զրկելու եւ սահմանված սահմանափակ ժամկետում նրան մեկուսացնելու անհրաժեշտ պայմաններ եւ այլն:

Նարկ է նկատել, որ քննարկվող դեպքում ազատությունից զրկելը ոչ միշտ է ուղեկցվում անձին ազատությունից զրկելու մասին որոշում կայացնելով: Մարդու իրավունքների եվրոպական դադարանի նախադեպային դադարական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ազատությունից զրկել է համարվում նաեւ այն իրավիճակը, երբ հարցաքննության կանչված վկան պահվում է ողջամիտ ժամկետի գերազանցմամբ: Մասնավորապես, երեք ժամից ավելի վկային հարցաքննելիս հարկ է նկատել ունենալ, որ վկան՝ այդ ժամկետի ավարտից հետո հարցաքննությունը շարունակելու հիմքով պահվելու դեպքում համարվում է ազատությունից զրկված:

Քիչլալ դիրքորոշումը թելադրված է միջազգային իրավունքի այն հանրաճանաչ սկզբունքներով, որոնք անհամարեղելի են համարում օրենքով սահմանված պարտականությունների պարտավակով անձին անհարկի տեսակով ժամանակով մեկուսացնելը,

⁷ Դատաիրավական բարեփոխումների ընթացքում՝ դեռեւս Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի մշակման փուլում, այդ օրինագծի հեղինակները եւս փորձում էին ազատությունից զրկելու հիշյալ տեսակը նույնացնել, այսպես կոչված, դատական սանկցիայի հետ: Դա, անտարակույս, անհիմն ու տեսական որեւէ հիմքից զուրկ մոտեցում էր, որին անհարկի հետեւելու էին միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից մի շարք ամխոսափելի կոպիտ շեղումներ: Բնական է, որ դատական սանկցիայի տեսքով ազատագրկում կիրառելիս անհրաժեշտ կլիներ այն ապահովել արդար դատաքննության սկզբունքների լիարժեք կիրառմամբ, ինչը, ցավոք, եւս անտեսվել էր: Այդ նորմը պահպանելու դեպքում ստացվելու էր, որ, օրինակ, սոսկ դատական միտքի ընթացքում դատավորի օրինական պահանջը չկատարելը հանգեցնելու էր 15 օրվա կալանքի: Ընդ որում, այդ դատական սանկցիան կիրառելու էր նույն միտքը վարող դատավորը, որը պարտավորված չէր լինելու անգամ պարզել, թե տվյալ դեպքում արդյո՞ք գործ չունենք անմեղսունակ անձի հետ: Նախագծի հետագա քննարկումների ընթացքում, ցավոք, անհարկի դժվարությամբ, այնուամենայնիվ, հնարավոր եղավ վերանայել այդ նորմը: Սակայն բերված օրինակը, թերեւս, վկայում է այն մասին, որ նույնիսկ մասնագիտական հարթության վրա դեռեւս ոչ միշտ են համարժեք ընկալվում միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը:

նրա՝ ազատ փեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը: Վերջին հաշվով, դրանով փորձ է արվել խափանելու անձի նկատմամբ պետական մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից հնարավոր կամայականությունները:

4) Ազատագրկման ինքնուրույն հիմք է *հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը կամ երբ ազատագրկումն անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով*: Տվյալ դեպքում «հիմնավոր կասկած» արտահայտությունը չի նույնացվում հանցագործությունը կատարած լինելու փաստն ապացուցված համարելու հետ, բայց եւ պարտադիր է համարվում, որպեսզի բավարար հիմքեր առկա լինեն ենթադրելու, որ ազատագրկման համար հիմք հանդիսացած արարքը կատարվել է փյույալ անձի կողմից եւ համընկնում է օրենքով նախատեսված որեւէ հանցագործության հատկանիշների հետ: Այսպիսով, հիմնավոր կասկածը չի փոխկապակցվում դատապարտումը կամ նույնիսկ մեղադրանքի առաջադրումը հիմնավորելու համար բավարար ապացույցներ ունենալու հետ: Մյուս կողմից, հիմնավոր կասկածը պետք է հիմնված լինի կոնկրետ փաստարկների վրա եւ չբխի նախապաշարմունքներից եւ նմանաբնույթ այլ անհիմն զգացմունքներից:

Քիչյալ հիմքով թույլ է փրվում անձին ազատությունից զրկել նաեւ մինչեւ հանցագործություն կատարելը, մասնավորապես, երբ դա անհրաժեշտ է հանցագործության կատարումը կանխելու նպատակով: Ինչ վերաբերում է հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով ազատությունից զրկելուն, ապա հարկ է նկատի ունենալ, որ այս դեպքում պետք է առկա լինեն բավարար հիմքեր, որոնք կվկայեն անձի կողմից փախուստի դիմելու մտադրության մասին: Տավելենք նաեւ, որ, ի տարբերություն Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի, Սահմանադրության հիշյալ դրույթն ազատագրկումը փոխկապակցում է ոչ թե իրավախախտման, այլ բացառապես հանցագործության հետ:

5) *Անչափահասին ազատությունից զրկելը նրան դատախարակական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմնին ներկայացնելու նպատակով*: Ըստ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի եւ ներպետական օրենսդրության՝ «անչափահաս» է համարվում 18 տարին չբացած անձը:

Այս հիմքի առաջին մասի առնչությամբ հարկ է նկատել, որ դատախարակական հսկողություն իրականացնող հիմնարկը պետք է լիովին բավարարի նմանաբնույթ հիմնարկներին ներկայացվող պահանջները, մասնավորապես պետք է լինեն համապատասխան պայմաններ, իսկ հսկողություն իրականացնող անձինք պետք է ունենան պարզաճ դատախարակական պատրաստություն: Նշված հիմքի երկրորդ մասն առնչվում է իրավասու մարմին ներկայացնելու նպատակի հետ: Տվյալ դեպքում «իրավասու մարմին» են համարվում ոչ միայն դատարանները, այլեւ այն մարմինները (օրինակ՝ խնամակալության եւ հոգաբարձության), որոնք իրավասու են որոշ դեպքերում իրականացնելու անչափահասին դատախարակական հսկողության հանձնելու հարցի քննարկման մինչդարական վարույթ:

6) *Վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով ազատությունից զրկելը*: Որպեսզի նշված դեպքում ազատությունից զրկելը համարվի օրինական, հարկ է, որ օրենսդրությամբ հստակ ամրագրվեն ինչպես նյութական, այնպես էլ վարույթային

այն նորմերը, որոնք առնչվում են հիշյալ հիմքով անձանց ազատագրելու հետ: Այս հիմքը բովանդակային առումով բավականին լայն է եւ ընդգրկում է մի քանի մասնավոր դեպքեր: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հոգեկան հիվանդության դեպքում առնվազն պետք է պահպանվեն հետևյալ նախապայմանները՝

- հոգեկան հիվանդության փաստը պետք է հաստատվի անաչառ բժշկական փորձաքննությամբ,

- ազատությունից զրկելու համար հիմք հանդիսացած հոգեկան խանգարման բնույթը եւ աստիճանը պետք է ծայրահեղ լինեն, այսինքն՝ դրանք պետք է բավարար հիմք հանդիսանան հավաստիանալու, որ գոյություն ունի հիվանդի կողմից իրեն կամ կամ այլ մարդկանց վնաս հասցնելու հավանականություն,

- ազատագրվումը պետք է տեսի այնքան, որքան պահանջում են հոգեկան խանգարման աստիճանն ու բնույթը,

- ազատագրվման ժամկետները նախապես որոշված չլինելու դեպքում լիազորված հանձնաժողովը պարբերաբար պետք է ուսումնասիրի հիվանդի վիճակը եւ ներկայացնի համապատասխան եզրակացություն,

- անձը պետք է անհապաղ տեղափոխվի հոգեկան հիվանդներին բուժելու համար նախատեսված համապատասխան բժշկական հաստատություն:

Գինեմոլության եւ թմրամոլության հիմքով անձին ազատությունից զրկելու պայմանները եւ պահանջները նույնական են հոգեկան հիվանդության հիմքով անձին ազատությունից զրկելու պայմաններին եւ պահանջներին:

Նմանաբնույթ պահանջներ են ներկայացվում նաեւ վարակիչ հիվանդությունը կանխելու դեպքում ազատությունից զրկելու ընթացակարգերին: Մասնավորապես, որպեսզի ազատությունից զրկելը համարվի օրինական, պետք է հիմնավորվի, որ փվյալ վարակիչ հիվանդությունը լուրջ վրանգ է ներկայացնում հանրության առողջությանը, իսկ ազատությունից զրկելը վերջին ծայրահեղ միջոցն է:

Բոլոր դեպքերում, օրենքով պետք է հարգվի հիվանդի՝ բուժումից հրաժարվելու իրավունքը. ազատությունից զրկելը չի կարող մեկնաբանվել որպես հիվանդին բուժում պարտադրելու թույլտվություն: Կամքին հակառակ հոսալիտալացումը չպետք է շփոթել կամքին հակառակ բուժման հետ: Այս կանոնը կարող է խախտվել միայն բացառիկ դեպքերում, երբ, օրինակ, հիվանդին⁸ կամ այլոց անմիջական վրանգ է սպառնում եւ անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել այդ վրանգը կանխելու համար:

Վերջին շրջանում ԵԱՏԿ-ի ողջ փորձքում նկատվում է թափառաշրջիկությանն առնչվող դրույթների մեղմացման միտում՝ փվյալ իրավախախտումը մանր զանցանք, բայց ոչ հանցանք դիտելու, իսկ հետագայում՝ դրա համար պատասխանատվությունն իսպառ բացառելու եղանակով: Բոլոր դեպքերում, եթե պետությունն անհրաժեշտ է գտնում այդ հիմքով կիրառել ազատությունից զրկելու հարկադրանք, ապա պետք է հաշվի առնի, որ այն կարող է կիրառվել միայն այն թափառաշրջիկների նկատմամբ, որոնք ագրեսիվ են եւ իրենց գործողություններով վրանգ են սպառնում հանրությանը, օրինակ՝ ագրեսիվ մուրացկանությունը կամ անսթափ վիճակում հասարակական վայրերում գտնվելը. այսինքն՝ պետք է պարտվի ոչ թե աղքատությունը, այլ հիրավի հակահասարակական արարքը:

⁸ Անձամբ հիվանդին անմիջական վտանգ սպառնալու հիմքով ազատագրելու եւ հարկադիր բուժելու դիրքորոշումն ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000թ. մարտի «Վիտտոլի Լիստվան ընդդեմ Լեհաստանի» թիվ 26629/95 գործով կայացված վճռում:

Որպեսզի հիվանդության հիմքով անձին ազատությունից զրկելն անկասկած համարվի «հանրության առողջության կամ անվտանգության համար վտանգավոր», հարկ է օրենսդրությամբ սահմանել այդ հիվանդությունների սպառիչ ցանկը: Մասնավորապես, այս դիրքորոշմամբ են ընդունվել Հստոնիայի «Վարակիչ հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկողության մասին» օրենքը, Մեծ Բրիտանիայի եւ Նյուսիսային Իռլանդիայի, Շոտլանդիայի «Նոգեկան առողջության մասին» օրենքը, Կանադայի «Անվտանգ փողոցների մասին» օրենքը, Ուկրաինայի «Նոգեբուժական օգնության մասին» օրենքը եւ այլն:

7) *Նայաստրանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետություն հանձնելու նպատակով ազատությունից զրկումը*: Տվյալ դեպքում խոսքը բացառապես վարչական ձեռքարկման մասին է, ինչը կանոնակարգված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նայաստրանի Հանրապետության օրենսգրքի 262-րդ հոդվածով: Անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու հիմքով վարչական ձեռքարկման իրավական մասնակի հիմք է (պետական սահմանը խախտելու մասով) նախատեսված նաեւ «Պետական սահմանի մասին» Նայաստրանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով:

Անձին արտաքսելու հիմքով նրան ձեռքարկելու սահմանադրաիրավական հիմքը կանոնակարգված է «Օտարերկրացիների մասին» Նայաստրանի Հանրապետության օրենքով, որի 34-րդ հոդվածի երկրորդ մասով, մասնավորապես, ամրագրված է. «Արտաքսման մասին դատարանի որոշման մեջ նշվում են օտարերկրացու արտաքսման օրը, երթուղին, պետական սահմանի անցման կետը, արտաքսման ծախսերը հոգալու, մինչեւ Նայաստրանի Հանրապետության փարածքից հեռանալը նրա բնակվելու վայրի, որոշակի պարբերականությամբ ոսրիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտավորության, ինչպես նաեւ առանց թույլտվության բնակության վայրը թողնելու արգելքի մասին, սույն օրենքի 6-րդ գլխով նախատեսված դեպքերում ձեռքարկված լինելու դեպքում մինչեւ արտաքսումը ձեռքարկված մեջ պահելու կամ ազատ արձակելու մասին»:

Ընդհանրապես այս հիմքով ձեռքարկված իրավական հիմքերն օրենքներով բավարար չափով կանոնակարգված չեն, իսկ որոշ օրենսդրական դրույթներ հակասում են ինչպես Սահմանադրությանը, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին: Մասնավորապես, մեր կարծիքով, Սահմանադրությանը հակասում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նայաստրանի Հանրապետության օրենսգրքի 262-րդ հոդվածի այն դրույթները, որոնք վերաբերում են վարչական ձեռքարկման ժամկետներին եւ վարչական ձեռքարկված ժամկետը երկարացնելու լիազորություն ունեցող իրավունքի սուբյեկտների ցանկին:

2. Ազատությունից զրկելը կարող է իրականացվել միայն հրապարակայնության սկզբունքի լիարժեք պահպանմամբ: Նրապարակայնությունը փյալ դեպքում երաշխավորվում է հետելյալ իրավական ընթացակարգերով՝ ա) ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաեւ մեղադրանքի մասին, բ) իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

Հիշյալ ընթացակարգերը նպատակ ունեն նաեւ ապահովելու ազատությունից

գրկված անձի դարական կամ արտադարական անհրաժեշտ պաշտպանությունը: Ուստի Սահմանադրության վերոհիշյալ պահանջները կարող են կատարված համարվել միայն այն դեպքում, երբ պարճառների կամ մեղադրանքի մասին տեղեկությունը լիարժեք հասկանալի է լինում ազգայությունից գրկված անձին: Այլ կերպ ասած, «հասկանալի լեզվով» արտահայտությունը չի վերաբերում սոսկ այն լեզվին, որին փրկապետում է ազգայությունից գրկված անձը: Տրված պարզաբանումը պետք է լինի մարջեղի, սպառիչ եւ անվերապահորեն հասկանալի: Սա նշանակում է, որ պարզաբանումներ փայլա հարկ է համարժեքորեն հաշվի առնել անձի մտավոր ունակությունները, եւ տեղեկավորությունը փոխանցելիս վստահ լինել, որ ներկայացված նյութն իր ծավալով ու բովանդակությամբ ընկալելի է վերջինիս համար:

Ազգագրկման պարճառների մասին իրազեկումը պետք է կատարվի ոչ միայն քրեական դատավարության փուլում, այլև ազգագրկման ցանկացած փեսակի դեպքում: Ուստի ազգագրկում նախատեսող օրենքները պետք է բովանդակեն նաեւ առանձին դրույթներ, որոնք կպարտավորեցնեն ազգագրկում իրականացնող մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց անհասպաղ իրազեկելու ազգագրկման պարճառների մասին:

3. Արտադարական ընթացակարգով ազգայությունից գրկելը ոչ միայն իրականացվում է Սահմանադրությամբ ամրագրված բացառիկ դեպքերում, այլև ուղեկցվում է խիստ սահմանափակ ժամկետով: Ըստ Սահմանադրության 16-րդ հոդվածի՝ ձերբակալված անձը ենթակա է ազատման, եթե ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում:

Ինչպես արդեն նշվեց, հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը հիմք է անձին ազգայությունից գրկելու համար: Սակայն նշված հիմքով ազգագրկումը կարող է միայն նախապես արդարացվել, այն բավարար հիմք չէ անձին հետազայում կալանքի փակ պահելու համար:

Կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելիս դատարանն արդեն պարտավոր է հաշվի առնել լրացուցիչ այլ փաստական հանգամանքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դարական ակտերի ուսումնասիրությունը ցույց է փայլա, որ դատարանը կարող է փյլյալ անձի կողմից իրավախախտում կատարելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում կալանք կիրառել միայն, երբ առկա է՝ ա) վրանգ, որ անձը կարող է թաքնվել քննությունից, բ) քննությանը ապօրինի միջամտելու վրանգ, գ) նոր հանցագործություններ կատարելու կանխման անհրաժեշտություն և դ) հասարակական կարգի պահպանման անհրաժեշտություն: Նշված հիմքերից թեկուզ մեկի առկայությունը բավարար է անձին կալանավորելու համար:

Դատարանին միջոցորդություն ներկայացնելիս անհրաժեշտ է հստակ եւ կոնկրետ հիմնավորել, որ առկա է այս կամ այն հիմքը: Օրինակ, քննությունից թաքնվելու վրանգը հիմնավորելու համար հարկ է բերել այնպիսի փաստարկներ, որ կվկայեն իրավասու պաշտոնատար անձի պահանջով քննությանը ներկայանալուց խուսափելու, հանցագործություն կատարելուց հետո փախուստի մեջ գտնվելու կամ փախուստի փորձի մասին եւ այլն:

Ինչ վերաբերում է հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությանը, ապա այն պայմանավորված է ինչպես հանցագործության ծանրությամբ, այնպես էլ հասարակության հնարավոր հակազդեցությամբ: Օրինակ, սպանություն կատարած անձի ազգայության մեջ մնալը, եթե անգամ որեւէ փաստարկ չկա վերջինիս կողմից քննությունից խուսափելու, քննությանն ապօրինի միջամտելու կամ նոր հանցագործություն

կատարելու առումով, կարող է վրանգել հասարակական կարգը, եթե առկա լինեն վրեժ-խնդրության հնարավորության մասին վկայող փաստարկներ:

4. Սահմանադրությամբ շեշտված է նաև անձին ազատությունից և անձեռնմխելիության իրավունքից ապօրինի զրկելու դեպքում պարճառված վնասի հատուցման անհրաժեշտությունը: Բնականաբար, անձի յուրաքանչյուր իրավունքի խախտմամբ պարճառված վնասը ենթակա է հատուցման, այս դեպքում պարզապես Սահմանադրությամբ ընդգծվում է այդ իրավունքի առավել պաշտպանված ու երաշխավորված լինելու անհրաժեշտությունը:

Օրենսդրությամբ, առանձին դեպքերում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է դատավորի կողմից կայացված ապօրինի դատական ակտի հետեւանքով պարճառված վնասին, կարող են պարճառված վնասի հատուցումից ազատվել դատավորներին, սակայն դա բնավ չի նշանակում, որ ընդհանրապես բացառվում է պարճառված վնասի հատուցումը: Պարզապես այդպիսի դեպքերում պարճառված վնասի հատուցումը պետք է իրականացվի պետական բյուջեի հաշվին:

Նիշյալ հարցի պարզաբանումները հանգամանորեն փրված են Սահմանադրության 97-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված մեկնաբանություններում, պարզապես նկատելնք, որ պարճառված վնասի հատուցման իրավական հիմքերը, մասնավորապես, ամրագրված են Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ «Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պարճառված վնասի համար» վերաբառությամբ 1064-րդ հոդվածով:

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական քննության ենթարկելու հետեւանքով պարճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Նայասարանի Նանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պարճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետեւանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063 հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

3. Արդարադատություն իրականացնելիս պարճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտնող դատավճռով»:

Սույն օրենսգրքի 1074-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների կամ դատարանի պաշտոնատար անձի պարճառած վնասը հատուցելու դեպքում Նայասարանի Նանրապետությունը հետադարձ պահանջի իրավունք ունի այդ անձից, եթե վերջինիս մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտնող դատավճռով:

5. Թեև Սահմանադրությամբ սպառիչ ու հստակ ամրագրված են ազատությունից զրկելու դեպքերը, այնուամենայնիվ, առանձին մասով ընդգծվում է, որ չի կարելի միայն քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու հիմքով մարդուն զրկել ազատությունից:

Վերետում արդեն նշվեց օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու համար ազատությունից զրկելու հիմքը: Պարտականություններից առանձնացնելով քաղաքացիաիրավական պարտավորությունները՝ Սահմանադրությունն ընդգծում է, որ անկախ նրանից, թե քաղաքացիաիրավական պարտավորության ծագման հիմքը պայմանագիրն է, թե՝ օրենքը, միեւնույն է, այն չկատարելը հիմք չէ անձին ազատագրելու համար:

Տիշյալ բացառությունը, ի դեպ, վերաբերում է բացառապես ազատագրկմանը, ինչից բխում է, որ քաղաքացիաիրավական պարտավորությունը չկատարելու համար կարող են սահմանվել ազատագրկման հետ չկապված պարասխանավորության միջոցներ:

6. Մարդուն խուզարկելը Սահմանադրությամբ դիտվում է որպես անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման էական նշանակություն ունեցող հիմք, ուստի հարույլ ընդգծվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով դրա իրականացման հնարավորությունը: Որեւէ նշանակություն չի տրվում այն հանգամանքին, թե անձի խուզարկությունն ինչ իրավական հիմքերով է կատարվում՝ քրեական դատավարության, թե ցանկացած այլ վարույթի շրջանակներում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրավակիրառ գործունեությունը պետք է ուղեկցվի ժամանակակից տեխնիկական այնպիսի հագեցվածությամբ, որպեսզի հնարավորինս նեղանա խուզարկություն կիրառելու անհրաժեշտությունը: Այսպես, անվտանգության տեսանկյունից խուզարկություն իրականացնելու անհրաժեշտությունը հարկապես հաճախ է ծագում, օրինակ, օդանավակայաններում: Նախկինում սովորական է համարվել համարարած խուզարկությունները, մինչդեռ տեխնիկական հագեցվածությունը հնարավորություն է տվել անզամ հիմնավոր կասկածի դեպքում բավարարվել տեխնիկական սարքավորումների միջոցով իրականացվող զննությամբ:

Նարկ է նշել նաեւ, որ զննությունը որպես դատավարական կամ վարչական վարույթի տարր էապես փարբերվում է խուզարկությունից: Չննության դեպքում իրերի բնական դիրքը չի խախտվում, այն ուղեկցվում է միայն արտաքին, այդ թվում՝ տեխնիկական սարքավորումների միջոցով իրականացվող, դիտարկմամբ: Ի փարբերություն խուզարկության, զննությունը միշտ չէ, որ առնչություն ունի անձի կողմից իրավախախտում կատարելու փաստի կամ այդպիսի արարք կատարելու հիմնավոր կասկածի հետ: Այսպես, նույն օդանավակայաններում տեխնիկական սարքավորումների միջով անցնելու եղանակով զննության են ենթարկվում բոլոր ուղեւորները եւ նրանց ուղեբեռը, բայց ակնհայտ է, որ դա իրականացվում է ոչ այն հիմքով, որ բոլոր ուղեւորների նկատմամբ գործում է հիմնավոր կասկածի առկայության սկզբունքը:

ՆՈՂՎԱԾ 17

1. Ոչ որ չպետք է ենթարկվի խոշորանգումների, ինչպես նաեւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձեռքբախված, կալանավորված եւ ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի եւ արժանապատվության հարգման իրավունք:

2. Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական եւ այլ փորձերի:

1. ՏՏ Սահմանադրության 17-րդ հոդվածի 1-ին մասով արգելվում է անձին ենթարկել խոշտանգումների, ինչպես նաեւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Սահմանադրական այս նորմը դիրվում է որպես մարդու արժանապատվության եւ անձեռնմխելիության իրավունքների ապահովման կարեւորագույն երաշխիք: Այն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է եւ ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում, ինչպես նաեւ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընդունած՝ Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրում (1975թ.) ու Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ կոնվենցիայում (1984թ.):

Վերոհիշյալ միջազգային փաստաթղթերի համաձայն՝ **խոշտանգում** է որակվում ցանկացած արարք (ինչպես գործողություն, այնպես էլ անգործություն), որով որեւէ անձի դիրավորությամբ պարճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ փառապանք՝ նրանից կամ երրորդ անձից րեղեկություններ կամ խտարովանություն կորզելու, այն արարքի համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ որեւէ արարքի հարկադրելու նպատակով, ինչպես նաեւ հիմնված ցանկացած փեսակի խտրականության վրա՝ պայմանով, որ նման ցավը կամ փառապանքը պարճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոմամբ կամ համաձայնությամբ:

Ինչպես նշում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, որպես կանոն, ենթադրում է 2 փարբերի պարտադիր առկայություն՝ **արարքների կրկնելիություն եւ պաշտոնական հանդուրժողականություն:**

Արարքների կրկնելիությունը, որպես կանոն, բնորոշվում է որպես խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի բազմաթիվ դեպքերի (էպիզոդների) առկայություն, որը որոշակի ընդհանուր իրավիճակի արտացոլում է, այսինքն՝ այդ արարքները պարբերականորեն կիրառվում են նույն կատբգորիայի անձանց նկատմամբ պետական նույն մարմինների աշխատողների կողմից եւ այլն:

Պաշտոնական հանդուրժողականությունը նշանակում է, որ թեւէ անձի նկատմամբ կիրառվող արարքներն անօրինական են, սակայն պետական մարմինները ցուցաբերում են հանդուրժողականություն դրանց հանդեպ: Օրինակ, ղեկավարությունն իմանալով իր աշխատողների կողմից բռնություններ կիրառելու մասին՝ դրսեւորում է անգործություն՝ չի նշանակում քննություն, միջոցներ չի ձեռնարկում իր ենթակաների հանցավոր վարքագիծը դադարեցնելու համար⁹:

Եվրոպական դատարանը մշակել է այն հիմնական չափանիշները, որոնք հնարավորություն են փախ փարանջարել «խոշտանգում», «անմարդկային վերաբերմունք» եւ «նվաստացնող վերաբերմունք» հասկացությունները: Այս առումով նախադեպ է դարձել

⁹ Տե՛ս Гомьен Д., Харрис Д., Зваак А. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. "Московский независимый институт международного права" ?., 1998, էջեր 134-135:

1978 թվականի ապրիլի 13-ին «*Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*» գործով Եվրոպական դատարանի կայացրած որոշումը:

Նշյալ որոշմամբ Եվրոպական դատարանը հստակ բնորոշեց «խոշտանգում», «անմարդկային վերաբերմունք» եւ «նվաստացնող վերաբերմունք» հասկացությունները: Այսպես, խոշտանգումը որակվեց որպես դիտարկարժան անմարդկային վերաբերմունք, որն առաջացնում է ֆիզիկական կամ հոգեկան ծանր հետեւանքներ, պարճառում ծանր փանջանքներ: Որպես անմարդկային վերաբերմունք որակվեց ֆիզիկական կամ հոգեկան փանջանքներ պատճառելը, իսկ նվաստացնող վերաբերմունք՝ այնպիսի բացասական վերաբերմունքը, որի միջոցով փորձում են զոհի մեջ առաջացնել վախի, ցավի կամ անլիարժեքության զգացում, կամ կոտրել նրա ֆիզիկական կամ հոգեկան դիմադրությունը:

Եվրոպական դատարանի կայացրած որոշումների ուսումնասիրությունը ցույց է փայլիս, որ արարքը որպես խոշտանգում որակելու համար պարպադիր է հետեւյալ 3 փարբերի առկայությունը.

- ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան փանջանք պատճառելը.
- դիտարկարժան ցավ պատճառելը.
- կոնկրետ նպատակ հետապնդելը:

Պրակտիկայում երբեմն դժվար է փարբերել խոշտանգումն անմարդկային վերաբերմունքից: Դրանք փարբերակելու համար հիմնվում են, առաջին հերթին, արարքի **ինքենսիվության եւ նպատակաուղղվածության վրա**: Օրինակ, «*Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*» գործով հարցաքննության ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված այնպիսի գործողություններ, ինչպիսիք են անհարմար դիրքով պատին հենված կանգնեցնելը, գլխին պոլիէթիլենային փոպրակ հագցնելը, քնից, սննդից եւ ջրից զրկելը, Եվրոպական դատարանը չորակեց որպես խոշտանգում: Եվրոպական դատարանը նշեց, որ նշված գործողությունները զոհերին պատճառել են ֆիզիկական եւ հոգեկան փանջանք, նրանց մեջ առաջացրել վախ, ոտնահարել նրանց արժանապատվությունը, սակայն այդ գործողությունները չի կարելի որակել որպես խոշտանգում, քանզի դրանք չեն հասել ինքենսիվության եւ դաժանության այն մակարդակին, որն առկա է խոշտանգման դեպքում: Յուրաքանչյուր դեպքում խոշտանգման առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի հանգամանքները, անձի վրա ներագդման տեսությունը, բնույթը (ֆիզիկական կամ հոգեկան), փոժողի սոցիալ-ժողովրդագրական որոշ հատկանիշներ (տարիք, սեռ, առողջական վիճակ եւ այլն): Որոշ դեպքերում նույնիսկ խոշտանգման սպառնալիքը կարող է դիտարկվել որպես անմարդկային վերաբերմունք: Օրինակ՝ «*Թադետույանն ընդդեմ Նայաստրանի*» գործով հաշվի էին առնվել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք էին՝ խցային պայմանները (10 քառակուսի մետր փարածությամբ խցում ինն անձանց առկայությունը, անկողնային պարագաների բացակայությունը, խցի վատ լուսավորվածությունը), կալանավորվածներին տրվող սննդի, ջրի քանակը եւ որակը, բնական կարիքները հոգալու հնարավորության սահմանափակումը, ոստիկանության նախկին աշխատակից հանդիսացող Թադետույանին ոստիկանության նախկին աշխատակիցներ չհանդիսացող հանցանք կատարած անձանց հետ պահելը եւ այլն:

Խոշտանգման դեպքում կարեւոր է նաեւ **դիտարկության** առկայությունը: Օրինակ, «*Իկլենենն ընդդեմ Թուրքիայի*» գործով Եվրոպական դատարանը որոշեց, որ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներն իրենց պարտականություններն իրականացնելիս դիտարկարժան են խոշտանգել զոհին: Ավելին, խոշտանգման

հավասարման համար պարտադիր է նաև նպատակաուղղվածության առկայությունը, այսինքն՝ խոշորանգամը պետք է հերասանողի կոնկրետ նպատակ՝ րեդեկավրություն ստանալ, վախեցնել կամ պարծել: Օրինակ, վերոնշյալ «Դիկնենն ընդդեմ Թուրքիայի» կամ «Այդինն ընդդեմ Թուրքիայի» գործերով Եվրոպական դատարանը պարզեց, որ դաժան վերաբերմունքի նպատակը զոհից ցուցմունք կորզելն էր:

Դաժան վերաբերմունքը, որն ինքնենսիվության և նպատակաուղղվածության աստիճանով զիջում է խոշորանգամը, որակվում է որպես անմարդկային վերաբերմունք: Դա այն վերաբերմունքն է, որն առաջացնում է ֆիզիկական կամ բարոյական փառապանքներ, որոնք իրենց հերթին կարող են հանգեցնել սուր հոգեկան խանգարման:

Արարքը կարող է համարվել անմարդկային վերաբերմունք, եթե այն կատարվել է նվազագույն դաժանությամբ: Սակայն այդ «նվազագույն» գնահատականը հարաբերական է, քանի որ ամեն ինչ կախված է գործի հանգամանքների համակցությունից, մասնավորապես՝ հակաիրավական վերաբերմունքի րեռոյությունից և անձի առողջության համար ունեցած հետևանքներից, ինչպես նաև րուժողի սեռից, րարիքից և առողջական վիճակից:

Օրինակ, «Կրեները և Մելլերն ընդդեմ Շվեյցարիայի» գործով զոհերին ազատագրկման վայրի բանախցում զրկել էին բնական լույսից, արգելել էին շփվել արարքին աշխարհի հետ, ռադիո լսել, թերթ կարդալ և այլն: Եվրոպական դատարանը նշված գործողությունները չորակեց որպես անմարդկային վերաբերմունք, քանզի գրավ, որ գործողությունների րեռոյությունը կարճ էր (մեկուսացումը արարքին աշխարհից րեւել էր մեկ ամիս), իսկ բանարկյալները վրանզավոր էին: Ինչ վերաբերում է արարքին աշխարհից նրանց մեկուսացնելուն, ապա ազատագրկվածներն իրենք էին հրաժարվել որոշ այցելուների հետ րեսակցությունից:

Սակայն մեկ այլ *Ուրդարդոյի գործով* (1994թ.), երբ բանարկյալին սրիպել էին հազնել ձերբակալվելիս կեղրորված շորերը, ձերբակալման պահին կորրել էին նրա ողը և բժշկական օգնություն ցույց րովել միայն 6 օր հետո, Եվրոպական դատարանը կատարված գործողությունները որակեց որպես անմարդկային վերաբերմունք:

Այսպիսով, որպեսզի արարքը համարվի անմարդկային վերաբերմունք, պետք է կատարված լինի նվազագույն դաժանությամբ, սակայն հարկ է նշել, որ նմանարիպ գործեր քննելիս Եվրոպական դատարանին դժվար է լինում որոշել դաժանության աստիճանը, քանի որ րարքեր երկրներում այն րարքեր կերպ է ընկալվում: Օրինակ, որոշ երկրներում հասարակությունը հանդուրժում է իրավապահ մարմինների կողմից կիրառվող խոշորանգամները և դաժան վերաբերմունքը: Այդ պարճառով, ինչպես նշում է Եվրոպական դատարանը, հնարավոր չէ մշակել դաժանության աստիճանի որոշման ընդհանուր չափանիշներ, քանզի րարքեր հասարակություններում հանդուրժողակաության աստիճանը րարքեր է¹⁰:

Արճանապարվությունը նվաստացնող է այն վերաբերմունքը, որը նման վերաբերմունքի ենթարկվող անհարի մեջ առաջացնում է վախի, րագնապի կամ անլիարժեքության զգացում և ունակ է սրորացնելու նրան, հասցնելու մինչև կենդանական վիճակի՝ արդյունքում կորրելով նրա ֆիզիկական կամ հոգեկան դիմադրությունը:

Նվաստացնող վերաբերմունքը որակելիս պետք է հաշվի առնել, թե դրա նպատակն անհարին նվաստացնելը, թե՛ վախի զգացում առաջացնելն է, և արդյոք անմարդկային վերաբերմունքն այնպիսի ներգործություն ունեցել է անհարի վրա, որն արգելված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով: Ըստ Եվրոպական դատարանի՝ ան-

¹⁰ Տե՛ս www.coe.int/echr.

թույլատրելի է անհարմար կամ անբարեհաճ վերաբերմունքը որպես նվաստացնող վերաբերմունք որակելը: Օրինակ, երբ հորը գրկում են երեխաների հետ շփվելու իրավունքից, դա չի կարող նվաստացնող վերաբերմունք դիտվել:

Արարքը որպես նվաստացնող վերաբերմունք որակելը շարք դժվար է, քանզի Կրթական հեղինակությունը մենք գործ ունենք «արժանապատվություն» կարեգործի հետ, որը սուբյեկտիվ է և փարբեր սուբյեկտների կողմից ընկալվում է փարբեր կերպ: Իրավաբանական գրականության մեջ արժանապատվությունը որակվում է որպես մարդկային հարկանիշ, որը հավասարազոր է հարգվելու իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականությանը: Արժանապատվություն ասելով հասկացվում է նաև մարդու որոշակի բարոյական և մարավոր կարողությունների ընդունումն ու ճանաչումը նրան շրջապատողների կողմից:

Այս պարագայում, ըստ Եվրոպական դատարանի՝ բավարար է, որ գոհն ինքն իրեն նվաստացած զգա, և պարտադիր չէ, որ նվաստացած զգա հասարակության առջև¹¹:

Նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը նվաստացնող վերաբերմունք է համարել հանրակրթական դպրոցներում ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ մարմնական պարփոժ կիրառելը (օրինակ, քանոնով կամ ցուցափայտով հարվածելը):

Նվաստացնող վերաբերմունք է դիտվում նաև ռասայական խտրականության օրինականացումը: Մասնավորապես, եթե ինչ-որ խումբ անձանց վերապահված է հարուկ ռեժիմ կախված նրանց ռասայական պարկանելությունից, դա որոշ հանգամանքներում կարող է դառնալ մարդկային արժանապատվության դեմ ուրնագության հարուկ ձև: Այսպես, «Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» գործով 2001թ. մայիսի 10-ի որոշմամբ Եվրոպական դատարանը փաստեց, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման մասին կարելի է խոսել ոչ միայն այն ժամանակ, երբ այն առնչվում է կոնկրետ անձին, այլ նաև այն դեպքում, երբ առկա է իշխանությունների գործողություն անձանց լայն շրջանակի նկատմամբ¹²: Բազմաթիվ փաստերի հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրեց, որ «քննարկվող ժամանակահատվածում խտրականությունը հասել է այն մակարդակին, որ վերաճել է բնակչության այդ մասի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, և, հետևաբար, թուրքական իշխանությունների կողմից թույլ են տրվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումներ»:

Խոշտանգում չեն դիտվում այն ցավն ու փառապանքը, որոնք բխում են օրինական պարժամիջոցներից կամ հարուկ են դրանց: Օրինակ, անձին ձերբակալելը, կալանավորելը կամ պարժելը, այդ թվում՝ ազատագրկման դատապարտելը նրան կարող են որոշակի հոգեկան փառապանքներ պարժառել, իրենց բնույթով անձի նվաստացման որոշակի փարբեր պարունակել, սակայն դրանք չեն դիտվում որպես հիշյալ դրույթի խախտման դրսեորումներ, քանի որ կոնկրետ մեկ անձի նկատմամբ պարփոժ նշանակելը, նրան «նվաստացնելը» ուղղված է այլ մարդկանց իրավունքների, սահմանադրական

¹¹ Տե՛ս **Разумов С., Берестнев Ю.** Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 3: запрещение пыток. "Российская академия правосудия" հրատ., Մ., 2002, էջեր 8-9:

¹² Տվյալ դեպքում մնա՛ն վերաբերմունք էր դրսեորվել հույն-կիպրացիների նկատմամբ, որոնք հայտնվել էին Թուրքիայի կողմից զինված ներխուժման արդյունքում ձեռավորված Հյուսիսային Կիպրոսի Հանրապետության տարածքում:

արժեքների պաշտպանությանը¹³: Եվրոպական դատարանի չափանիշներից ելնելով՝ դաժան է համարվում այն պատիժը, որը ոչ միայն քառապանք է պարճառում, այլև ենթադրում է որոշակի ֆիզիկական բռնության գործադրում (օրինակ՝ մարմնական վնասվածքի պարճառում): Արժանապատվությունը նվաստացնող է համարվում այն պատիժը, որն իր բովանդակությամբ կամ կիրառման մեխանիզմով առանձնանում է մյուս պարճատեսակներից՝ իր նվաստացման աստիճանով:

Հիշյալ դրույթին սերտորեն առնչվում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ինստիտուտը: ՎՎ-ում հիմնարար կարգավորման է ենթարկվել քրեախրավական կարգով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հարցը. թե քրեական, թե քրեակատարողական օրենսգրքերը մանրամասն կարգավորում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հարցը:

Ելնելով այն գաղափարից, որ յուրաքանչյուր պետության խնդիրներից մեկն է խոշտանգումների կիրառման անթույլատրելիությունը, ՎՎ-ն իր օրենսդրության մեջ, այդ թվում՝ քրեական օրենսգրքում, քրեական պատասխանատվություն է սահմանում խոշտանգման համար, այն բնորոշելով որպես ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտարկյալ կերպով անձին պարճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան քառապանք, եթե դրա հետևանքով անձի առողջությանը չի պարճառվել ծանր կամ նվազ ծանր վնաս (ՎՎ քրեական օրենսգրքի հոդված 119): Վարկ է նշել, սակայն, որ ՎՎ քրեական օրենսգրքում տեղ գրած ձեռակերպումը չի համապատասխանում միջազգային փաստաթղթերում ամրագրում ստացած խոշտանգում հասկացությանը, որի պարտադիր տարրերից մեկը պաշտոնավար անձի կողմից հանդուրժողականության դրսևորումն է կամ նրա անմիջական մասնակցությունը խոշտանգմանը: Այդ առումով, թերևս, խոշտանգման էությունն ավելի շուրջ բացառապես հայտնվում է ՎՎ քրեական օրենսգրքի հոդվածներ 341-ում, 390-ում: Մասնավորապես, հոդված 341-ը պատասխանատվություն է սահմանում դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ քրոժողին ցուցմունք կամ փորձագեպին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար: Որպես հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտարկվում նույն արարքի կատարումը ծաղրոծանակով, խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ: Հոդված 390-ը պատասխանատվություն է սահմանում զինված ընդհարումների ժամանակ մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող այնպիսի արարքների համար, ինչպիսիք են՝ սպանությունը, խոշտանգումները, անմարդկային վերաբերմունքը, ներառյալ՝ կենսաբանական, բժշկական, գիտական փորձերը եւ այլն: Մակայն նույնիսկ այս ձեռակերպումների առկայության դեպքում պատասխանատվության շրջանակներից դուրս են մնում այն դեպքերը, երբ խոշտանգումը դրսևորվում է անգործությամբ:

Անձի արճանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի անթույլատրելիության պահանջը պետք է հաշվի առնվի ցանկացած հրապարակային գործողության ժամանակ, օրինակ՝ զանգվածային անկարգությունները խափանող միջոցառումների, պատանդներին ազատելու եւ այլ գործողությունների կատարման ժամանակ:

Պատշաճ վերաբերմունքի իրավունք ունեն ոչ միայն ազատ մարդիկ, այլ նաև ձերբակալվածները, քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորված-

¹³ Հիշյալ դրույթին սերտորեն առնչվում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ինստիտուտը: ՀՀ-ում այն հիմնարար կարգավորման է ենթարկվել թե՛ քրեական, թե՛ քրեակատարողական օրենսգրքերով:

ներն ու դատապարտվածները: Ըստ Նայասարանի Նանրապետությունում գործող քրեակարարողական օրենսդրության նորմերի՝ պարիժը մեր երկրում ունի դատախարակ-չական նշանակություն եւ չպետք է պարճառի ֆիզիկական փանջանք, ուղեկցվի անձի արժանապատվության նսեմացմամբ: Նշված հանգամանքների գիտակցմամբ ՏՏ քրեական դատարարության օրենսգիրքը նույնպես հռչակում է, որ քրեական դատարարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի սպորացուցիչ պայմաններում: Ավելին, արգելվում է անձին հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատարարական գործողությունների (հոդվ. 9):

Միաժամանակ, ՏՏ քրեական դատարարության օրենսգրքի հոդված 11-ի 7-րդ եւ 8-րդ կետերը սահմանում են, որ քրեական դատարարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու կամ այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, փուժողից, վկայից եւ դատարարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման կամ այլ անօրինական գործողությունների միջոցով:

Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական փանջանքներ պարճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վրանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատարարական այլ գործողություններ կատարելուն:

Եվրոպական դատարանի պրակտիկական ցույց է փայլաւ, որ ազատագրկման վայրում անձինք առավել խոցելի են եւ անպաշտպան իրավապահ մարմինների ոտնճգություններից, եւ հենց այդ վայրերում են արձանագրվում խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ավելի շատ փաստեր:

Անազատության մեջ գտնվող մարդու պարվի եւ արժանապատվության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության նպատակով 2002 թ. փետրվարի 6-ին ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքը: Մասնավորապես, ըստ այդ օրենքի 13 հոդվածի՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրելը, ինչպես նաեւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ կատարելը: Այդ օրենքի համաձայն՝ ձերբակալված եւ կալանավորված անձինք իրավունք ունեն մայրենի լեզվով փեղեկություններ ստանալ իրենց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ, արժանանալ բարեկիրթ վերաբերմունքի, անձամբ, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական եւ իրավաբանական օգնություն եւ այլն:

Պետք է նշել, որ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավորությունը չի սահմանափակվում միայն ուղղիչ հիմնարկների աշխատակիցների կողմից բռնությունների, սպառնալիքների, վիրավորանքների ուղղակի կիրառմամբ, այլ կախված է նաեւ նախաքննության ժամանակ դատական գործընթացին սպասելիս կալանքի փակ գտնվող, պարիժը կրելիս ազատագրկված անձանց պահելու պայմաններից: Եվրոպական դատարանը Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի լույսի ներքո բազ-

միջոց անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող է ճանաչել անձանց արգելանքի փակ պահելու այնպիսի պայմանները, որոնք չեն համապատասխանում փարբակյան սանիտարահիգիենիկ պահանջներին և վրանգավոր են նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջության համար: Այլ կերպ ասած՝ օրենսդրոսն ամրագրված են ազատագրված վայրերին ներկայացվող որոշակի պահանջներ, օրինակ՝ խցի չափերը, հիգիենայի կանոնների պահպանումը, զբոսանքը և այլն, ուստի Եվրոպական դատարանը գործերը քննելիս ուսումնասիրում է այդ պայմանների պահպանումը: Օրինակ, «Պիրսն ընդդեմ Նունաստրանի» գործով դիմողը 2 ամիս շարունակ օրվա մեծ մասը գրնվել է խցում, որտեղ չի եղել բնական լույս, պարուհան, օդափոխության համակարգ, և ժամանակ առ ժամանակ խցում անբանելի փոթ է եղել, բացի դրանից, բանտարկյալը սփիպված է եղել իր բնական կարիքները հոգալ այլ բանտարկյալի ներկայությամբ: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը վճռել է, որ սոբնահարվել է անձի արժանապատվությունը՝ նրա մեջ առաջացնելով անլիարժեքության զգացում, և այն որակել է որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Մեկ այլ՝ «Դուգոզն ընդդեմ Նունաստրանի» գործով, խցի գերբնակվածությունը, մաքուր օդի և բնական լույսի, փաթ ջրի բացակայությունը, հակասանիտարական պայմանները Եվրոպական դատարանը որակել է որպես նվաստացնող վերաբերմունք:

Պեպք է նշել, որ վերոհիշյալ օրինակները վերաբերում էին ազատագրված վայրերի ընդհանուր պայմաններին, սակայն Եվրոպական դատարանը պետություններից պահանջում է որոշակի կարեգործիայի անձանց համար ազատագրված վայրում ստեղծել նաև հատուկ պայմաններ: Խոսքը վերաբերում է ծանր հիվանդություններով փառապող անձանց, հաշմանդամներին, քանզի առանց համապատասխան հարմարությունների ազատագրված վայրերում պահելը նրանց պարճառում է լրացուցիչ փառապանքներ: Օրինակ, Պրայսի գործով դիմողը դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար ենթարկվել է 7-օրյա ազատագրված: Սակայն Պրայսը եղել է ի ծնն հաշմանդամ, թերզարգացած ուրբերով և ձեռքերով, երկկամի խնդիրներով, և ներպետական դատարանը նրան ազատությունից գրկելիս միջոցներ չի ձեռնարկել ազատագրված վայրում նրա առողջական վիճակին համապատասխանող պայմաններ ստեղծելու համար: Եվրոպական դատարանը պարզեց, որ Պրայսը բնականոն պայմաններում չի անցկացրել այդ 7 օրը, չի կարողացել ինքնուրույն վեր կենալ անկողնուց, հոգալ իր բնական կարիքները, ուստի հաշմանդամ Պրայսի հանդեպ վերոհիշյալ վերաբերմունքը որակվեց որպես նվաստացնող վերաբերմունք:

Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի արգելումը սերտորեն փոխկապակցված է հանձնման ինսպիտուրի հետ: Մասնավորապես, հանձնումը կամ արտաքսումն արգելվում է, եթե կան հիմնավոր փաստեր, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ հանձնվող կամ արտաքսվող անձը կենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի:

Պեպք է նշել, որ Մահմանադրության հիշյալ հոդվածի կիրառման առումով երաշխիքներ են անհրաժեշտ երեխաների և այլ խոցելի խմբերի պաշտպանության առումով: Նման պարագայում, հարկապես երեխաների հետ կապված, պեպք է բացառվի ինչպես ծնողների և այլ մասնավոր անձանց վար վերաբերմունքը նրանց նկատմամբ, այլև այն պետական մարմինների փետական անտարբերությունը, անգործությունը, որոնք պարտավոր էին հետետել երեխաների բնականոն զարգացմանը: Խոսքը վերաբերում է, օրինակ, խնամակալության և հոգաբարձության մարմիններին, մանկապնների վարչակազմին և այլն:

Տարուկ ուշադրության կարիք ունեն նաև հոգեկան հիվանդները, հաշմանդամները, զինծառայողները, որոնք, իրենց կարգավիճակից ելնելով, գրկված են իրենց իրավունքները լիովին պաշտպանելու հնարավորությունից:

2. ՏՏ Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասն արգելում է մարդուն առանց իր համաձայնության ենթարկել՝ գիտական, բժշկական եւ այլ փորձերի:

Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է մեկնաբանել 1-ին մասի հետ սերտ համակարգային կապի մեջ: Խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանրապես փորձերի արգելմանը, այլ այնպիսի փորձերին, որոնք կարող են կրել անմարդկային բնույթ, վնասել մարդու առողջությանը կամ պարունակել այդպիսի վրանգ, նվաստացնել նրա պատիվն ու արժանապատվությունը: Եթե գիտական, բժշկական եւ այլ փորձերն իրենցում չեն պարունակում այդպիսի հետեւանքների առաջացման վրանգներ, ապա դրանք կարող են կիրառվել նաև առանց մարդու համաձայնության: Սահմանադրությունն ընդհանրապես չի արգելում փորձերի կիրառումը, այլ միայն սույն հոդվածի 1-ին մասի իմաստով հասկացված փորձերի կիրառումը: Այսպիսով, ինչպես ՏՏ Սահմանադրությունը, այնպես էլ միջազգային իրավական ակտերը մարդուն առանց իր համաձայնության գիտական, բժշկական եւ այլ փորձերի ենթարկելը որակում են որպես խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասնավոր դեպք: Նմանապիսի վերաբերմունքից մարդուն զերծ պահելու համար ՏՏ օրենսդրությունում մշակվել են համապատասխան իրավական երաշխիքներ:

Սասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՏՏ օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է, որ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրագելել լինել իր հիվանդության մասին եւ համաձայնել բժշկական միջամտությանը: Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման եւ բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր արբերակների, հետեւանքների եւ բուժման արդյունքների մասին»: Իսկ օրենքի 21-րդ հոդվածն ուղղակի պահանջում է, որ մարդկանց բուժման նպատակով նոր դեղերի, մեթոդների, ձեւերի, միջոցների կիրառումը, ցանկացած կենսաբժշկական հետազոտություն իրականացվի միայն նրանց իրագելված գրավոր համաձայնության դեպքում: Նամաձայնությունը պետք է լինի կոնկրետացված եւ հստակ ձեւակերպված: Միեւնույն ժամանակ, սահմանվում է, որ մարդն իրավունք ունի հրաժարվել հետազոտությանը մասնակցելուց դրա ցանկացած փուլում: Ընդ որում, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելիս նոր դեղերի, մեթոդների, ձեւերի, միջոցների կիրառումն ու կենսաբժշկական հետազոտությունների անցկացումը թույլատրվում է միայն Նայաստանի Նանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Բժշկական փորձը կարող է վերաբերել դեռևս կիրառություն չստացած, սակայն թույլատրման ենթակա ախտորոշման, բուժման կամ դեղորայքային ներգործությանը:

Գիտափորձերը նույնպես կարող են կիրառվել գիտափորձին մասնակցող անձանց լիովին իրագելվածության եւ գրավոր հստակ ձեւակերպված համաձայնության պարագայում: Արգելվում է գիտափորձերին ներգրավել կալանավորվածներին, ձերբակալվածներին, ազատագրված նախապարտվածներին: ՏՏ քրեակարարական օրենսդրությունը սահմանում է, որ դատապարտյալները, անկախ իրենց համաձայնությունից, չեն

կարող ենթարկվել գիրափորձերի, որոնք վրանգի են ենթարկում նրանց կյանքը կամ առողջությունը: Բժշկական միջոցների և մեթոդների կիրառման փորձերին չի թույլատրվում ներգրավել նաև հոգեկան խանգարումներով փառապող անձանց:

Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասի «այլ փորձ» հասկացության ներքո պետք է հասկանալ բոլոր տեսակի փորձերը՝ տնտեսական, իրավական, սոցիալական և այլն, որոնք կարող են կրել անմարդկային բնույթ, վնասել մարդու առողջությանը կամ պարունակել այդպիսի վրանգ, նվաստացնել նրա պատիվը ու արժանապատվությունը:

Որպես ՏՏ Սահմանադրության հոդված 17-ի 2-րդ մասում տեղ գրած դրույթների երաշխիք՝ ՏՏ քրեական օրենսգիրքը՝ ի դեմս հոդված 127-ի, պարասխանաարվություն է սահմանում անձին՝ առանց իր ազատ կամասարտահայտության և իրազեկված ու պարզաձև ձեռակերպված համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար: Առավել խիստ պարասխանաարվություն է սահմանվում, եթե այդ արարքը կատարվել է անօգնական վիճակում գտնվող անձի, հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի, անչափահասի նկատմամբ:

ՆՈՂՎԱԾ 18

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով սրանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

4. Յուրաքանչյուր ոք, Նախապահի Նանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

1. ՏՏ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող սահմանադրական նման դրույթը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի պահանջներից, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն:

Իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության փարանջարման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք:

ՏՏ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներին համապատասխան մարդը, նրա արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբակտեղի հիմք, մարդու հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են, հարգվում եւ պաշտպանվում են պետության կողմից: Այդ պահանջը հավասարապես վերաբերում է նաեւ իրավաբանական անձանց այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ: Ըստ որում, պետությունն այդ պաշտպանությունն ապահովում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (Սահմանադրության 3, 14, 42.1-րդ հոդվածներ): Դրա համար պետությունը, անշուշտ, պետք է փրկապետի նյութական, քաղաքական եւ իրավական միջոցների, այլ կերպ ասած՝ սրբեղծի ընկերային-տնտեսական, քաղաքական, իրավական եւ փաստական պայմաններ, անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների եւ ազատությունների արդյունավետ իրացման համար: Եվ քանի որ Սահմանադրությունն ուղղակի գործողության իրավական ակտ է, նրա նորմերը գործում են անմիջականորեն (հոդվ. 6, մաս 1), ուստի շատ հաճախ սահմանադրական իրավունքներ կամ ազատություններ սահմանող նորմերում միաժամանակ բովանդակվում են դրանց ապահովման երաշխիքները:

Նման ձեւակերպումներն առավել քան հեշտացնում են իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը, սակայն սահմանադրական շատ իրավունքներ ու ազատություններ սոսկ հռչակվում են դրանում, իսկ իրավական ապահովման երաշխիքներ սահմանելը թողնվում է Սահմանադրության հիման վրա եւ դրան համապատասխան ընդունվող իրավական ակտերին: Այդպիսիք են, օրինակ, մտքի, խղճի եւ կրոնի ազատության, իր կարծիքն ազատ արտահայտելու, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, ընտրելու եւ հանրահավաքներին մասնակցելու, հանրային ծառայության ընդունվելու, աշխատանքի ընտրության, հանգստի, սոցիալական ապահովության, կրթության եւ այլ իրավունքները:

Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել եւ պաշտպանել իրավունքները եւ ազատությունները, այլեւ սրբեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձեւով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած, այդ թվում՝ պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից կատարվող խախտումները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրավական հիմունքները (կառուցակարգերը) հիմնականում երկուսն են՝ ա) մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության պետական ձեւեր, բ) մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ոչ պետական ձեւեր: Այս բաժանումը խիստ պայմանական է, որովհետեւ իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն իրականացնող մարմինների ու կազմակերպությունների (օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, արբիտրաժային փոխուսույթ, հասարակական միավորումներ եւ այլն) գործունեության իրավական հիմքերը նույնպես սահմանում, նրանց իրավապաշտպան գործունեության իրականացմանն օժանդակում է պետությունը, այդ թվում՝ տնտեսական օգնություն փրամադրելով: Այդ մարմիններն ու կազմակերպություններն իրենց նպատակներն իրականացնելու համար շատ հաճախ դիմում են պետական համապատասխան ինստիտուտներին, նաեւ՝ դատական իշխանության մարմիններին:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն արձանագրում է, որ՝ «Յուրաքանչյուր ոք, Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար իրա-

վունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու արյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք» (հոդվ. 8): Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, ելնելով մի շարք օբյեկտիվ հանգամանքներից (տե՛ս 91-րդ հոդվ. մեկնաբանությունները), իրավունքների և ազատությունների ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում գլխավորը և առաջնայինն իրավացիորեն համարում է դատական պաշտպանությունը և դրանից հետո միայն նշում պետական այլ մարմիններին վերապահվող պաշտպանության միջոցների մասին: Դատական պաշտպանության և արդար դատաբանության (տե՛ս Սահմանադրության 19-րդ հոդվ. մեկնաբանությունները) իրավունքներն էական տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների շարքում: Վերջիններիս գոյության գլխավոր նախապայմանն ամենից առաջ պետության՝ յուրաքանչյուր խախտված իրավունք որոշակի ընթացակարգի միջոցով վերականգնելու պարտականությունն է: Եթե բացակայում է իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգը, ապա օրենսդրությամբ ամրագրված ցանկացած այլ իրավունք ընդամենը հռչակագրային դրույթ է: Պատահական չէ, որ բոլոր իրավունքներից դատական պաշտպանության և արդար դատաբանության իրավունքների խախտումն ավելի հաճախ է դառնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննության առարկա: ՆՏ-ի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելուց հետո մինչ օրս Եվրոպական դատարանի կողմից ՆՏ դեմ ներկայացված գանգաբերով կայացված մի շարք վճիռներով փաստվել է մեր երկրի կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաբանության իրավունքի խախտում: ՆՏ սահմանադրական դատարանը ևս դատական պաշտպանության և արդար դատաբանության իրավունքը բնութագրում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունքներ, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք, նաև՝ որպես օրենքով սահմանված ժամկետներում և կարգով վճռաբեկ դատարան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (տե՛ս 2008թ. մայիսի 27-ի ՍԴՌ-754 և նույն թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՌ-765 որոշումները): Օրենսդրության մեջ այդ երաշխիքն անտեսելու պարճառով ՆՏ սահմանադրական դատարանը 2008թ. հոկտեմբերի 21-ի ՍԴՌ-767 որոշմամբ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր է ճանաչել ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 426¹ հոդվածը և 426⁸ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով դրանք վերաբերում էին նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին արյանի դատարաններին վերապահելուն և նշված գործերով չէին նախատեսում այդ ակտերը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ բողոքարկելու իրավունք, այսինքն՝ հանդիսանում էին դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող օրենսդրական դրույթներ: ՆՏ ԱԺ-ն 2008թ. դեկտեմբերի 26-ին ՆՏ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում կատարեց համապատասխան փոփոխություններ և լրացումներ, վերականգնեց բոլոր քաղաքացիների՝ օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքը, այլ խոսքով՝ դատական լիարժեք պաշտպանության իրավունքը:

Իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության և արդար դատաբանության իրավունքով օժտված են ՆՏ քաղաքացիները և իրավաբանական անձինք, Նայաստանի Հանրապետությունը (պետությունը), օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր իրենց խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրենց ներկայացված

մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ է անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իրենց գործի հրապարակային քննության իրավունք ունեն (Սահմանադրության 18, 19, 93-րդ հոդվածներ, 101-րդ հոդվածի 6-րդ կետ) և ոչ մի պարագայում չեն կարող զրկվել այդ իրավունքից: Մասնա իրավունք ունեն դատական պաշտպանություն իրականացնելու ինչպես իրենց ներկայացուցիչների կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ (Դատական օր.-ի 7-րդ հոդվ.):

Դատական պաշտպանության դիմելու իրավունքի մասին Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներն իրենց օրենսդրական ամրապնդումն են ստացել, օրինակ, ՏՃ քաղ. դատ. օր.-ի 2 և 242-րդ, ՎԴՕ-ի 3 և 8-րդ հոդվածներում, որոնք սահմանում են դատական գործերի ընդհանուր զանգվածում շուրջ 75 փոկոս կազմող քաղաքացիական (Քաղ. դատ. օր.-ի 15, 16, 150, 163¹, 164, 165, 168, 173¹, 174, 178, 183, 189, 194, 202 և 204¹-րդ հոդվածների համաձայն քաղաքացիական գործերի թվին դասվում են նաև աշխատանքային, ընտանեկան, ժառանգական, հողային, հարկային և բազմաթիվ այլ իրավահարաբերություններից ծագող, ինչպես նաև հատուկ վարույթի գործերը) և վարչական գործերի ընդդատությունն ու հարուցման կարգն ընդհանուր իրավասության առաջին արյանի և վարչական դատարաններում: Սահմանադրական արդարադատության իրականացման խնդրով, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՃ օրենքի համաձայն, այդ դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածում նախատեսված սուբյեկտները:

Վերը նշվածները վկայում են, որ շահագրգիռ անձինք իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար կարող են դիմել ոչ թե ցանկացած, այլ միայն ՏՃ դատական միասնական համակարգի մեջ մտնող դատարաններ և այն էլ՝ օրենքով սահմանված ենթակայության և ընդդատության կանոնների պահպանմամբ (տե՛ս 92-րդ հոդվ. մեկնաբանությունները):

Դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է ՏՃ-ում սահմանված դատական համակարգի մեջ մտնող սահմանադրական դատարանի, ընդհանուր իրավասության առաջին արյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների և մասնագիտացված վարչական դատարանի պարականությունը՝ սահմանադրական դատավարության, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների կարգով իրացնելու փոխյալ սուբյեկտիվ իրավունքները: Ըստ որում, դատավարության երեք ճյուղերից յուրաքանչյուրում գործերի հարուցումը, նախապատրաստումը, քննությունը, գործի լուծման փուլերի հաջորդականությունը, վերջիններս կարգավորող դատավարական նորմերի առանձնահատկությունները պետք է հստակորեն կարգավորված լինեն դատավարության յուրաքանչյուր տեսակին վերաբերող օրենսգրքերում (սահմանադրական դատավարությանը՝ օրենքում): Դատավարության մի կարգով դատավարության մյուս տեսակի ամբողջական ինստիտուտի (ինստիտուտների) վրա հենվելն անթույլատրելի է, որովհետև դրանք երբեք իրար չեն կրկնում, փոքրերվում են սուբյեկտային կազմով, կայացված վճիռների բողոքարկման կարգով և այլն: Ելնելով նշվածներից և դատավարության փոքրեր տեսակներում ինքնուրույն կարգավորման առանձնահատկություններից՝ ՏՃ սահմանադրական դատարանը 2008թ. նոյեմբերի 25-ի ՍԴՌ-780 որոշմամբ անիրավաչափ է համարել ՎԴՕ-ի 20-րդ գլխում (Վարչական գործերի վարույթը վճռաբեկ դատարանում) վճռաբեկ վարույթի իրականացման հարցում քաղաքացիական դատավարության սահմանած կարգի վրա հենվելու հանգամանքը և հորդորել է օրենսդրին այդ գլխում սահմանել վարչական վճռաբեկության ինքնուրույն

կանոններ: Քաղ. դատ. օր.-ում, որի վրա մինչ այդ հենվում էր օրենսդիրը վարչական դատարանի վճռաբեկ քննության կարգի հարցում, վարչական վճռաբեկ դատավարության առանձնահատկություններն անտեսված էին: Դրա հիման վրա օրենսդիրը 2009 թ. ապրիլի 7-ի օրենքով կատարեց ՎԴՕ 20-րդ գլխի նոր բովանդակային փոփոխություններ: Այսպիսով, ՏՏ սահմանադրական դատարանի որոշումները հաճախ ուղղվում են դատական ընթացակարգերի, այսինքն՝ իրավունքների դատական պաշտպանության կատարելագործման հարցերին, որն իր դրական ազդեցությունն է գործում իրավակիրառական պրակտիկայի վրա:

Դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները ՏՏ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՌ-652 (կետ 6), 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՌ-665 (կետ 5), 2007թ. հունվարի 16-ի ՍԴՌ-673 (կետեր 8-9), 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՌ-719 որոշումներում:

2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՌ-665 որոշման մեջ ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՏՏ քաղ. դատ. օր.-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության բովանդակության նման ձեւակերպումը, ինչպես նաեւ դրա կիրառման վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանների առկա դիրքորոշումը չեն երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց են առաջացրել իրավական ակտերի դատական վերահսկողության առումով եւ վերանգում են ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված՝ անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը:

Դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից վերջինը, որի կարեւորությունը բխում է նաեւ Եվրոպական դատարանի պրակտիկայից, դատական ակտերի հարկադիր կատարումն է, առանց որի դատական ամբողջ գործունեությունը կարող էր հավասարվել ոչնչի: Կատարման փուլում ԴԱՏԿ մասին օրենքի պահանջների պահպանումն էական երաշխիք է կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության, կատարման ընթացքում օրինականության ապահովման համար: Նենց դրա համար էլ դատական ակտերի կատարման հետ կապված հարկադիր-կատարողի ցանկացած գործողություն կարող է բողոքարկվել դատարան եւ քննվել ՎԴՕ-ով սահմանված ընդհանուր հայցային վարույթի կարգով:

Դատական պաշտպանության (արդարադատության իրականացման) իրավունքին յուրահատուկ եւ վերը նկարագրված հատկանիշները համապատասխանում են 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7, 8, 10-րդ, 1950թ. նոյեմբերի 4-ի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6 եւ 13-րդ, 1966թ. դեկտեմբերի 16-ի՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 14-րդ հոդվածներին, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1985թ. դեկտեմբերի 13-ի թիվ 40/146 բանաձեւով հավանության արժանացած «Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքներին», ճանաչվել եւ հաստատվել են ՏՏ Սահմանադրությամբ (տես Սահմանադրության 3-րդ հոդվ. 2-րդ եւ 3-րդ մասերի, 6-րդ հոդվ. 4-րդ մասի մեկնաբանությունները):

Կոնվենցիայի 13-րդ եւ Դաշնագրի 2-րդ հոդվածներին համապատասխան՝ Սահ-

մանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում, իրավունքների և ազատությունների դափարական պաշտպանությունից զատ, նշվում է նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի մասին, եթե նույնիսկ խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք: Սրան համապատասխան պետական-իրավական կառուցակարգի բոլոր մարմինները կոչված են ոչ միայն կանխելու մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության բնագավառում թույլ տրվող խախտումները, այլև խախտումների դեպքում վերականգնել այդ իրավունքներն ու ազատությունները: Ըստ որում, «պետական այլ մարմիններ» կապակցությունը լայն առումով ներառում է ազգային իշխանության ոչ միայն օրենսդիր, գործադիր (վարչական) կամ դատական մարմիններին, լինեն դրանք միանձնյա, թե՛ կոլեգիալ, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին, իրավունքների պաշտպանության միջպետական մարմիններին, արբիտրաժային արբիբուսալին և մի շարք այլ կառույցների, որոնք ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրականացնում են ոչ պետական ձևերով ու եղանակներով:

Կոնվենցիայի 13-րդ և Դաշնագրի 2-րդ հոդվածների կիրառման՝ Եվրոպական դատարանի պրակտիկայի վերլուծության հիման վրա «Պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք»-ի կապակցությամբ նշվում է, որ «ողջամիտ ժամկետում» դատաքննության իրավունքը կլինի նվազ արդյունավետ, եթե մինչև Եվրոպական դատարանին դիմելու կառուցակարգի օգտագործումը չլինի Կոնվենցիայի առումով բողոքը նախ և առաջ ներպետական իշխանությանը ներկայացնելու հնարավորություն: Նշվում է նաև, որ եթե անձն իրեն համարում է Կոնվենցիայի խախտում հանդիսացող միջոցից փոժած (զոհ), ապա նա պետական մարմնի առաջ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց պետք է ունենա, որպեսզի կարողանա հասնել ինչպես իր բողոքի վերաբերյալ որոշման ընդունման, այնպես էլ անհրաժեշտության դեպքում՝ վնասի հատուցման, անկախ նրանից, թե ազգային իրավական համակարգում իրավունքներն ու ազատություններն ինչպիսի իրավական ձևով են ապահովվում¹⁴:

Պետական մարմինների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ՏՏ Նախագահը, ով, որպես պետության գլուխ, Սահմանադրության 49-րդ հոդվածին համապատասխան հետեւում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, ՏՏ անվտանգության երաշխավորն է և 54-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնն ստանձնելիս երդվում է անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Իր այդ գործառնություն իրականացնելիս ՏՏ Նախագահը հենվում է ՏՏ կառավարության, նախարարությունների, դատախազության, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության և պետական ու ոչ պետական այլ մարմինների գործունեության վրա: Նա իրավասու է պաշտոնանկ անել օրենքին հակասող գործողություն կամ անգործություն ցուցաբերող պաշտոնավար անձանց, օրինակ՝ նախարարներին, վեպո իրականացնել մարդու իրավունքներին հակասող

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մախաղեպային իրավունքը: Մեկնաբանության հեղինակներ Վ. Հովհաննիսյան, Զ. Գուկասյան, Լ. Օ. Հակոբյան, Լ. Մ. Հակոբյան: Գիտ. խմբ. պրոֆ. Գ. Հարությունյան: Երևան, Տիգրան Մեծ, 2005, էջեր 394-415: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ժողովածու: Պատ. խմբ. Լ. Մելիքյան: Գիրք հիմնվերող, Երևան, ԱՆՏԱՐԵՍ, 2008, էջեր 232-264, 302-333:

օրենքների նկատմամբ և պահանջել վերանայելու դրանք (Սահմանադրության 55-րդ հոդվ. 2-րդ և 4-րդ կետեր) և այլն: Մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնող մարմինների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում Սահմանադրության 55-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան Նախագահի կողմից կազմավորված Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱ), որը Նախագահին իրազեկում է քննարկվող բնագավառում գործերի ընթացքը և խորհրդարվություն է փայլա երկրում իրավական անվտանգության ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների անհրաժեշտության մասին (տե՛ս ՏՏ Նախագահի 2008թ. օգոստոսի 25-ի ՆԿ-139-Ն կարգադրությամբ հաստատված Կանոնադրությունը): ՏՏ Նախագահի իրավապաշտպան գործունեությանը և երկրում քաղաքացիական հասարակության ամրապնդմանն զգալիորեն նպաստելու է նաև 2008թ. հունիսի 13-ի նրա ՆՏ-157-Ն հրամանագրով ստեղծված Նախաին խորհուրդը, որը ներառում է պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտների գծով 12 հանձնաժողովներ:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում իր ուրույն տեղն ու դերն ունի օրենսդիր մարմինը՝ ՏՏ ԱԺ-ն, հատկապես՝ նրա Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի հանձնաժողովը, որն այդ ուղղությամբ մշակում է օրինագծեր կամ եզրակացություններ է փայլա կառավարության մշակած օրինագծերի վերաբերյալ: ԱԺ-ն ընդունում է մարդու իրավունքներ և ազատություններ սահմանող օրենքներ՝ մեծ չափով նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության կապակցությամբ միջազգային պայմանագրերով ՏՏ ստանձնած պարտավորությունների կենսագործմանը: ԱԺ պարզամտորենը գրավոր և բանավոր հարցերով, իսկ խմբակցությունները և խմբերը՝ հարցապնդումներով դիմում են կառավարությանը, և այս կերպ կարող են միջնորդավորված ձևով նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը (տե՛ս Սահմանադրության 62, 73 և 80-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Երկրում իրավունքների պաշտպանության կարարողական բոլոր միջոցների իրականացումը դրված է ՏՏ կառավարության վրա, որն էլ պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ (Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մաս, 85-րդ հոդվածի 6-րդ մաս, 89-րդ հոդվածի 7-րդ կետ): Նախկանալի է, որ իր այդ գործառույթը կառավարությունն իրականացնում է իր հսկողությանը ենթակա նախարարությունների, իրեն առընթեր գերատեսչությունների և ծառայությունների, այն է՝ գործադիր իշխանության մարմինների միջոցով: ՏՏ կառավարության գործունեության կարգը հստակորեն սահմանված է ՏՏ Նախագահի 2002թ. մարտի 16-ի ՆՏ-52-Ն հրամանագրով:

Իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության պարտավորության կարարման գործում մեծ ներդրում ունեն կազմակերպական առումով պետական իշխանությունից դուրս գրվող տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք առավել մոտ են կանգնած բնակչությանը և պետական մարմինների հետ սերտ համագործակցությամբ, պետության ֆինանսական օժանդակությամբ կամ հենց պետական մարմինների (ասենք՝ կառավարության) պատվերով անմիջականորեն լուծում են նրա կենսական խնդիրները (տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի 32-45-րդ, «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ի ՏՏ օրենքի 52, 54-64, 66-68-րդ հոդվածները):

Մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպա-

նության կարելու երաշխիք է համարվում Սահմանադրության 27.1-րդ հոդվածը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատմամբ իրավասու պետական և քաղաքական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք», որի խախտման հետևանքներ կարող են լինել դատական պաշտպանության դիմելը, ինչպես նաև մեղավոր անձանց՝ ՏՃ օրենսդրությամբ նախատեսված կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը:

Պետական այլ մարմինների առջև իրավունքների և ազատությունների ոչ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառման համար գործադիր իշխանության համակարգում, ելնելով վեճերի լուծման բարդությունից և մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությունից, այդ վեճերի որակյալ լուծման նպատակով, հասարակական կամ խառն սկզբունքներով երբեմն ստեղծվում են հատուկ մարմիններ: Այսպես՝ «Գյուլբերի, օգրակար մողելների և արդյունաբերական նմուշների մասին» 2008թ. հունիսի 10-ի ՏՃ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության հետ կապված վիճելի հարցերը լուծում է պետական լիազոր մարմնի (ՏՃ էկոնոմիկայի նախարարության ստորաբաժանում հանդիսացող Մրավոր սեփականության գործակալության) բողոքարկման խորհուրդը, կամ, օրինակ, կոլեկտիվ աշխատանքային վեճերը մի քանի փուլերով քննում և լուծում են արհեստակցական միության և գործատուի հավասար թվով ներկայացուցիչներից կազմված հաշտեցման հանձնաժողովները, իսկ այդպիսի համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դրանք լուծվում են միջնորդի մասնակցությամբ (Աշխ. օր.-ի 64-72-րդ հոդվածներ):

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանություն իրականացնող «պետական այլ մարմինների» ցանկում առանձնահատուկ տեղ է գրավում նաև ՏՃ դատախազությունը, որը ՏՃ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող միասնական համակարգ է և գործում է Սահմանադրությամբ իրեն տրված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա (Սահմանադրության 103-րդ հոդվ.): «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՏՃ օրենքը դատախազությանը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանություն իրականացնող գործադիր, ներկայացուցչական (օրենսդիր), քաղաքական ինքնակառավարման, զինվորական, վերահսկողական մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց, առեւտրային և ոչ առեւտրային կազմակերպությունների գործունեության վրա համապարփակ (այսպես կոչված՝ ընդհանուր) հսկողության գործառույթ չի վերապահել, հետևաբար՝ դատախազությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարող է պաշտպանել միայն քրեական հետապնդում հարուցելու, քրեական գործերով դատարանում մեղադրանքը պաշտպանելու, հետաքննության ու նախաքննության, պարիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև դատական ակտերը բողոքարկելու ճանապարհով: Նման հսկողության մեթոդներն ու միջոցները սահմանված են դատախազության մասին հիշյալ օրենքի 3-րդ գլխում:

Իրավունքների պետական պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում էական նշանակություն ունի նաև իրավական վեճերի քննության և լուծման արտադատական՝ վարչական կարգը, երբ քաղաքացիներն ու կազմակերպությունները հանրային իրավահարաբերություններից ծագող իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

պանության խնդրով դիմում են խախտողի վերադաս մարմին կամ պաշտոնաբար անձին: Օրինակ՝ ընտրական հանձնաժողովների կամ նրանց պաշտոնաբար անձանց գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վերադաս ընտրական հանձնաժողովին (Ընտր. օր.-ի 40-րդ հոդվ.), կամ, օրինակ, ապահովադիր քաղաքացիների և պետական ապահովագրության մարմինների միջև ծագած վեճերը քաղաքացիների հայեցողությամբ կարող են լուծվել նաև պետական ապահովագրական վարչության կողմից: Որոշ վեճերի լուծման վարչական կարգ են սահմանում նաև ՏՏ քաղ. օր.-ը, հարկային և մաքսային օրենսդրությունները և այլն: Այսպես՝ Քաղ. օր.-ի 106, 115-րդ և այլ հոդվածներ բաժնետոմսեր թողարկելու, բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը փոփոխելու և այլ որոշումներ ընդունելու բացառիկ իրավունքը վերապահում են Կազմակերպության ընդհանուր ժողովին: Նման գույք վարչական կարգ է սահմանված նաև փնտեսական ընկերությունների և ընկերակցությունների, կոոպերատիվների և առևտրային այլ կազմակերպությունների ընդհանուր ժողովների և այլ մարմինների գործունեության հետ կապված իրավական այլ հարցերի լուծման համար: Վերադաս մարմիններին կամ պաշտոնաբար անձանց այդ որոշումները վարչական կարգով բողոքարկելիս քաղաքացիներն ու կազմակերպությունները ոչ միայն իրականացնում են պետական պաշտպանության, անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնաբար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու, այլև ողջամիտ ժամկետում պարասխան սրբանայու իրենց իրավունքը (Սահմանադրության 27.1-րդ հոդվ.): Իհարկե, դա քաղաքացիներին չի զրկում իրավական հարցի լուծման խնդրով հետազայում դատարան դիմելու իրավունքից:

Վարչական իրավախախտումների գործերով վարույթը, քրեական հետապնդման վարույթի նման, իրավունքների և ազատությունների պաշտպանության պետական պարտականության իրացման մի ձև է, երբ դրանք դառնում են ուրնագության օբյեկտ: Իհարկե, այդ վարույթն ունի իրեն յուրահատուկ սուբյեկտիվ կազմ և լուծման ընթացակարգային առանձնահատկություններ:

ՏՏ-ում բազմաթիվ են նաև այն հասարակական միավորումները, սրեղծագործական, երիտասարդական և այլ միությունները, որոնք իրենց մասին օրենքներին համապատասխան լուծում են իրենց անդամ հանդիսացող կամ չհանդիսացող (օրինակ՝ արհեստակցական միությունները) քաղաքացիների սահմանադրական, քաղաքացիական, հեղինակային, աշխատանքային և այլ իրավունքների ու ազատությունների պաշտպանության շար հարցեր: Այդպիսի ոչ դատական մարմին է, ասենք, արբիտրաժային փրիբունալը, որի գործունեությունը կարգավորված է «Առևտրային արբիտրաժի մասին» 2006թ. դեկտեմբերի 25-ի ՏՏ օրենքով: Այն սրեղծվել է՝ հաշվի առնելով նոր (շուկայական) փնտեսաձևի պայմաններում ձեռնարկատիրական գործունեության հետ կապված առևտրային բնույթի հարաբերություններից ծագող վեճերի առավել որակյալ լուծման, դրանց քննության ժամկետների կրճատման, առևտրային գաղտնիքի պահպանումն ապահովելու անհրաժեշտությունը:

Անվիճելի իրավունքների պաշտպանության բնագավառում մեծ դեր է կատարում նաև նոտարիատը, որի գործունեությունը կարգավորված է «Նոտարիատի մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ի ՏՏ օրենքով:

Թվարկված բոլոր պետական (վարչական), տեղական ինքնակառավարման, այդ թվում՝ վեճեր լուծող, մարմիններն ու կազմակերպությունները, հասարակական միավորումները թեկուզե ունեն հարկադրանք կիրառելու իրավասություն, այնուամենայնիվ,

գտնվում են դափնակալական վերահսկողության ներքո եւ պարտավոր են պահպանել պա-
 րասխանաբարության ենթարկվող անձանց իրավունքներն ու ազատությունները: Նրանց
 գործունեությունն արդարադատություն չի համարվում: Եվ հենց դրա համար է, որ
 Սահմանադրության՝ մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում առաջնահերթ շեշտադրում է
 արված ամենաարդյունավետ միջոցի՝ դափնակալական պաշտպանության վրա: Նասարա-
 կական միավորումները, կազմակերպություններն ու մարմինները սոսկ օժանդակ դեր են
 կատարում մարդու իրավունքների պաշտպանության պեղական կառուցակարգերի
 համակարգում:

Այսպիսով, դափնակալ եւ պեղական այլ մարմինների առջեւ իրավական պաշտ-
 պանության իրավունքն այսօր լայն, իրապես ժողովրդավարական, սահմանադրական
 իրավունք է, որն իրացվում է դափնարանի եւ բազմաթիվ այլ «յուրիսդիկցիոն»¹⁵ մարմին-
 ների միջոցով:

2. Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է իրավունքի
 պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձեւերին (միջոցներին): Վերջիններս առկա են այն
 դեպքում, երբ իրավունքի սուբյեկտներն օրենսդրի թույլտվությամբ իրենց խախտված
 իրավունքները վերականգնելու կամ խախտման սպառնալիքը վերացնելու հարցը լուծում
 են այլ եղանակով՝ առանց պեղական կամ հասարակական մարմիններ կամ կազմա-
 կերպություններ դիմելու: Դրա համար էլ իրավունքի պետության մեջ եւ իրավակիրառա-
 կան պրակտիկայում միաժամանակ օգտագործվում են եւ՝ «պաշտպանության ձեւ»
 (ձեւեր), եւ՝ «պաշտպանության եղանակ» (եղանակներ) հասկացությունները:

ՆՏ Սահմանադրության եւ նյութական իրավունքի փարբեր ճյուղերի նորմերին
 համապատասխան իրավունքների պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձեւերին
 կարող են դասվել՝

1) իրավապաշտպան բազմաթիվ կազմակերպությունների (օրինակ՝ Նայաստանի
 Նելսինկյան կոմիտեի, Իրավունքի եւ ազատության կենտրոնի, «Արդարություն» կազմա-
 կերպության եւ այլն) եւ շարժումների գործունեությունը,

2) քաղաքացիների ժողովները, հանրահավաքները, երթերը (շքերթները), ցույցերը
 եւ պիկետավորումը՝ պահախումբ, դիտախումբ դնելը, նստացույցը, պեղիցիան (լափի-
 ներեն petico՞ խնդրանք բառից), բոյկոտը (վերջինների մասին ՆՏ օրենսդրության մեջ չի
 խոսվում),

3) հասարակության կամ ՉԼՄ-ների, սրբեղծագործական կամ այլ միությունների
 օգնությամբ հրապարակայնորեն դիմելը եւ այլն,

4) ինքնապաշտպանությունն՝ իր փարբեր դրսեւորումներով:

Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի երաշխավորած՝ մարդու իրա-
 վունքների ու ազատությունների պաշտպանության միջոցները պեղաիրավական բնույթ
 ունեցող եւ օրենքներով կարգավորված ընթացակարգեր են: Սակայն դրանց առկայու-
 թյունը չի բացառում յուրաքանչյուրի իրավունքը՝ պաշտպանել իր իրավունքները եւ
 ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Սա մարդու բնական
 իրավունքներից է, որն արտացոլված է Սահմանադրության մեջ որպես ինքնապաշտ-
 պանության իրավունք, այսինքն՝ իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն

¹⁵ Իրավունքի տեսության եւ պրակտիկ իրավագիտության մեջ «յուրիսդիկցիոն» եզրույթն օգտագործ-
 վում է որպես դատական, վարչական, հասարակական կամ խառնակազմ այս կամ այն մարմնին (այդ թվում՝
 արբիտրաժային տրիբունալին) կամ կազմակերպությանը տրված իրավագործություն, որն ուղղված է նրա
 կողմից իրավահարաբերությունների որոշակի բնագավառում տվյալ մարմնին կամ կազմակերպությանը յու-
 րահատուկ մեթոդով (մեթոդներով) իրավապաշտպան գործունեություն իրականացնելուն:

ինքնապաշտպանության միջոցների կիրառմամբ: **Ինքնապաշտպանության միջոցներն** այն եղանակներն ու ձեւերն են, որոնց կարող են դիմել մարդիկ իրենց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, արդարությունը վերականգնելու համար: Դրանք հատկապես արդյունավետ են այն ժամանակ, երբ պաշտպանության պետական կամ «յուրիսդիկցիոն» ձեւերը չեն աշխատում:

Ինքնապաշտպանության միջոցների առանձնահատկություններն են՝ ա/ չպետք է լինեն օրենքով արգելված, բ/ չպետք է կրեն բռնության բնույթ, գ/ չպետք է խախտեն այլոց իրավունքները, դ/ պետք է համաչափ լինեն իրավունքի խախտմանը և դուրս չգան այն խախտանելու համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից:

Իրավապաշտպան գործունեության կոնկրետ եղանակը (եղանակները) սահմանված է (են) կամ հենց Սահմանադրությամբ (20-րդ հոդվ. 4-րդ մաս, 27.1, 38, 48, 101-րդ հոդվածներ և այլն), կամ էլ քաղաքացիների այս կամ այն միավորման, այս կամ այն «ոչ յուրիսդիկցիոն» մարմնի կամ կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքներով, կանոնադրություններով, կանոնագրքերով և այլն: Այսպես՝ սահմանադրական իրավունքների պաշտպանության եղանակը շահագրգիռ անձի կողմից սահմանադրական դատարան դիմելն է՝ իր գործով կիրառված օրենքի սահմանադրականությունը պարզելու խնդրանքով: Կամ՝ հրապարակային միջոցառումների (հավաքների) իրականացման եղանակը (հավաքի ձեւը) կարգավորված է Սահմանադրությամբ (29-րդ հոդվ.), «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» 2004թ. ապրիլի 28-ի ՆՇ օրենքով (2008թ. հունիսի 11-ի խմբագրությամբ):

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության հնարավոր եղանակները գրեթե սպառիչ կերպով հստակորեն սահմանված են ՆՇ քաղ. օր.-ի 14-րդ հոդվածով (իրավունքի ճանաչում, մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի անվավեր ճանաչում, իրավունքի ինքնապաշտպանություն և այլն): Բնարկե այսպես էլ կոնկրետ եղանակի կամ եղանակների ընտրությունը թողնված է շահագրգռված անձին, բայց վերջինս իրավասու չէ կատարելու այնպիսի գործողություններ կամ պահանջել կիրառելու այնպիսի եղանակներ, որոնց հետեւանքով կխախտվեն այլոց իրավունքներն ու շահերը (Սահմանադրության 16-րդ հոդվ. 5-րդ մաս, 31-րդ հոդվ. 1-ին մաս, 42-րդ հոդվ. 2-րդ մաս, 47-րդ հոդվ.):

Նյութական իրավունքի բազմաթիվ ճյուղերում սահմանված են նաեւ իրավունքների պաշտպանության որոշ եղանակների կիրառման արգելքներ և այդ արգելքներին չենթարկվելու, օրենքին հակասող եղանակով դրանք կատարելու դեպքում՝ պատասխանատվության միջոցներ: Դա վերաբերում է եւ՝ հավաքներն օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպելուն ու անցկացնելուն, եւ՝ վարչական իրավախախտումներին, եւ՝ իրավունքի սուբյեկտներին վնաս պատճառող ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական ու քրեական եղանակներին, երբ այդ պաշտպանությունը վերածվում է անօրինակաչ գործողությունների՝ ինքնիրավչության կամ այլ հանցագործության, որոնք քրեորեն պատժելի կամ քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնող արարքներ են: Այսպես՝ քրեական իրավունքի նորմերի համաձայն ինքնապաշտպանությունը, նույնիսկ՝ զենքի գործադրմամբ, օրինակաչ է համարվում միայն անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում և որոշակի պայմանների առկայությամբ (տես Բք. օր.-ի 42 և 44-րդ հոդվածները): Քրեական օրենսդրությունը հանցագործություն է համարում նաեւ ինքնիրավչությունը՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրա-

վունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելը, որն էական վնաս է պարճառել անձանց կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական իրավունքներին կամ շահերին (Քր. օր.-ի 322-րդ հոդվ.): Նույն սկզբունքն է գործում նաև քաղաքացիական իրավահարաբերությունների բնագավառում, որտեղ ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը եւ դուրս չգան իրավունքի խախտումը խափանելու համար օրենքով սահմանված գործողությունների շրջանակներից: Օրինակ՝ պարտավորության ապահովման եղանակ **պահումը** իրավաչափ ինքնապաշտպանություն կարող է համարվել միայն այն դեպքում, երբ պարտավորելը ժամանակին չի կատարում պարտականի մոտ գրավող գույքի համար վճարելու կամ դրա հետ կապված պարտադիր ծախսերը եւ մյուս վնասները հարուցելու պարտականությունը, եւ պահումով պարճառված վնասներն ավելին չեն, քան կանխվող վնասները, այլ կերպ ասած՝ ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը եւ դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից (տե՛ս Քաղ. օր.-ի 16 եւ 373-րդ հոդվածները):

Ինքնապաշտպանության հարույլ միջոցներ են՝ անհրաժեշտ պաշտպանությունը եւ ծայրահեղ անհրաժեշտությունը: Որոշակի իրավունքներ եւ ազատություններ որոշակի իրավիճակներում դրանց կրողները կարող են պաշտպանել յուրահարույլ միջոցների դիմելով: Դրանք են անհրաժեշտ պաշտպանությունը եւ ծայրահեղ անհրաժեշտությունը: Այս միջոցների առանձնահատկությունն այն է, որ դրանց դիմելու դեպքում վնաս է պարճառվում կամ մարդու իրավունքը խախտողին, կամ մեկ այլ անձի օրենքով պաշտպանվող շահերին: Որպես կանոն, երբ որեւէ մեկին վնաս է պարճառվում, ապա դա իրավախախտում է, որն առաջացնում է իրավական պարտասխանարվություն: Սակայն անհրաժեշտ պաշտպանության եւ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում պաշտպանության դիմած «տույլեկերը» ազատվում է պարտասխանարվությունից:

3. Մարդու իրավունքների պաշտպանի կամ, ինչպես ընդունված է ասել, օմբուդսմենի (այսուհետ՝ Պաշտպան) պաշտոնն իրավունքների եւ ազատությունների պետական պաշտպանության համակարգում գործող լրացուցիչ երաշխիքների մեջ համեմատաբար նոր, ժողովրդավարական, ինքնուրույն եւ անկախ խորհրդարանական ինստիտուտ է, որին, Սահմանադրության 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, իրավունք ունի դիմելու յուրաքանչյուր ոք՝ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով աջակցություն ստանալու համար: Պաշտպանը, ՆՍ Սահմանադրության եւ օրենքների, ՆՏ միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունը («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» (այսուհետ՝ ՄԻՊ-ի մասին) 2003թ. հոկտեմբերի 21-ի ՆՏ օրենքի 2-րդ հոդվ.): Օրենքը թույլ է տալիս նույն նպատակով ՆՏ մարզերում ստեղծել Պաշտպանի ներկայացուցչություններ, որոնք, սակայն, մինչ օրս ստեղծված չեն: 2007թ. նշանակվել է միայն Պաշտպանի խորհրդական՝ զինժառանգողների իրավունքների պաշտպանության հարցում ՆՏ պաշտպանության նախարարին օժանդակելու համար:

Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունն իրավունքի խախտման վերաբերյալ բողոքի քննարկումն է եւ որոշումների ընդունումը (ՄԻՊ-ի մասին օրենքի 7, 11, 15-րդ հոդվածներ): Նա կարող է ընդունել հետեւյալ որոշումներից մեկնումները. 1)

առաջարկել իրավունքի խախտում թույլ տված մարմնին կամ պաշտոնատար անձին՝ վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով անհրաժեշտ եւ կարարման ենթակա միջոցառումները, 2) Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության կամ որ նույնն է՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման հարցերով դիմել ՏՏ սահմանադրական դատարան, 3) հայց ներկայացնել վարչական դատարան՝ իրավախախտի՝ օրենքին եւ այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին, եթե իրավախախտն ինքը սահմանված ժամկետում անվավեր չի ճանաչում այն, 4) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական փոյժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն անձին, ում որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, եւ (կամ) ով խախտել է ՄԻԳ-ի մասին օրենքը:

Պաշտպանի կողմից վեճի լուծման խնդրանքով դատարան դիմելու, այդ թվում՝ իրավաբանական հարկադրանք կիրառելու համար, իրավասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական մարմինների թվում միայն դատարանն իրավունք ունի պաշտպանություն իրականացնել:

Պաշտպանի՝ դատարան դիմելու եւ վերջինիս կողմից իրավախախտի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու խնդրանքի իրավասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միայն դատարանը վերջնական որոշում կայացնելու, այսինքն՝ արդարադատություն իրականացնելու իրավունք ունի:

Պաշտպանը ոչ միայն նպաստում է խախտված իրավունքների վերականգնմանը, այլեւ մարդու եւ քաղաքացու իրավունքներին վերաբերող օրենսդրությունը կարարելագործելուն եւ այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, մարդու իրավունքների բնագավառում միջազգային գործակցությանը, դրանց պաշտպանության ձեւերը եւ մեթոդները զարգացնելուն: Պաշտպանն իր գործունեության արդյունքում կազմում եւ ՏՏ Նախագահին, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմիններին, ԶԼՄ-ներին եւ հասարակական կազմակերպություններին է ներկայացնում նախորդ փորձաքննում իր գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց: Այսպես՝ ՏՏ ՄԻԳ-ի 2008թ. փարեկան զեկույցը (փեն «Բավիդ» ՍՊԸ, Երեւան, 2009) 4 բաժիններով մանրամասն վերլուծություններ է պարունակում Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունների, մարդու իրավունքների խախտումների օրենսդրական պատճառների, ըստ հանրային մարմինների այդ խախտումների բնույթի եւ հատուկ ու խոցելի խմբերի իրավունքները ուրնահարելու վերաբերյալ: ՄԻԳ-ի մասին օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը Պաշտպանին օժտել է նաեւ արտահերթ հրապարակային զեկույցով հանդես գալու իրավունքով՝ հասարակական հնչելություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաեւ խախտումները զանգվածաբար չվերացվելու դեպքերում, որը եւ նա արեց 2008թ. մարտիմեկյան հայրնի դեպքերից հետո: Սակայն Պաշտպանը, մեր կարծիքով, երբեք չպետք է մոռանա, որ ինքը նաեւ պետական պաշտոնյա է, իրավունքների պետական պաշտպանության լրացուցիչ երաշխիք եւ օրենսդիր մարմնի կողմից նշանակված է նաեւ պետության (ամբողջ հասարակության) շահերի պաշտպանություն իրականացնելու համար, եւ չպետք է սոսկ միակողմանի գործունեություն ծավալի:

4. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ակտերը,

որոնք ընդունվել են միջազգային կազմակերպությունների կողմից, պարտադիր են այդ ակտերին միացած պետությունների, մասնավորապես՝ եվրոպական հանրության, նրա բոլոր կառույցների հետ միասնացման ձգտող Հայաստանի Հանրապետության համար: Իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով ՀՀ քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև հենց իր՝ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կազմակերպություններին դիմելու հնարավորությունը՝ ա) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետության շահերի ապահովման միջազգային երաշխիք է, պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ այն դեպքերում, երբ քաղաքացիները սպառում են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները կամ ՀՀ-ն ցանկանում է միջազգային կառույցներում քննարկման առարկա դարձնել մեկ այլ պետության կողմից իր իրավունքները խախտելու վերաբերյալ հարցերը, բ) բարձրացնում է ՀՀ պետական մարմինների և պաշտոնատար անձանց, հարկապես՝ դատարանների պարասխանավորությունը քաղաքացիական, քրեական և վարչական գործերի քննության և լուծման հարցում, որպեսզի դրանցում տեղ չզգնեն միջազգային իրավական ակտերի դրույթների խախտումներ, գ) նպաստում է ներպետական օրենսդրության կարգավորմանը, եթե միջազգային կազմակերպությունների վճիռներն ու որոշումներն ընդունվել են ՀՀ նկատմամբ, դ) թույլ է տալիս ՀՀ-ի համար նախադեպեր ստեղծել միջազգային փոխյալ կազմակերպության, ասենք՝ Եվրոպական դատարանի կողմից այլ մասնակից պետությունների նկատմամբ նույնանման հարցերով կայացված ակտերով:

Համաշխարհային հանրության կողմից ստեղծված՝ մարդու իրավունքների պաշտպանության իրականացման միջպետական կարեւորագույն կազմակերպություններ կամ մարմիններ են Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), վերջինիս կողմից ստեղծված Տնտեսական ու սոցիալական խորհուրդը և դրա կողմից հիմնված Մարդու իրավունքների հանձնաժողովը՝ իր ենթահանձնաժողովներով, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից 4 փարի ժամկետով նշանակված Մարդու իրավունքների գերագույն հանձնակարարը, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգում գործող Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱԿ) և նրա իրավապաշտպան համակարգը՝ Եվրոպայի խորհուրդը (ԵԽ), վերջինիս մարմին Նախարարների կոմիտեն, Մարդու իրավունքների հանձնաժողովը և Եվրոպական դատարանը, Ժողովրդավարական հասարակությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՏՄԻԳ), ինչպես նաև նախկին խորհրդային երկրների՝ ներկայիս Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՏ) և վերջինիս կողմից ստեղծված Մարդու իրավունքների հանձնաժողովը, որն իր՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայով մանրամասնորեն սահմանում է ԱՊՏ անդամ երկրների քաղաքացիների անձնական, քաղաքական, ընկերային-տնտեսական և մշակութային իրավունքներն ու դրանց իրականացման կապակցությամբ ծագած խնդիրները: ԱՊՏ Մարդու իրավունքների հանձնաժողովը, սակայն, այդպես էլ գործուն կազմակերպություն չդարձավ:

Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային (միջպետական) մարմիններից ՀՀ քաղաքացիների համար առավել կարեւորագույնը ՀՀ-ի կողմից վավերացված և Հայաստանի համար 2002թ. ապրիլի 26-ից ուժի մեջ մտած՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է (այսուհետը՝ Դատարան):

Դատարանը կարող է գանգապներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք, ըստ իրենց, դարձել են Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իրավունքների խախտման գոհ (Կոնվենցիայի 34-րդ հոդվ.): Ուրեմն՝ բողոքի առարկա չեն կարող դառնալ Կոնվենցիայի մասնակից պետությունների ներպետական իրավունքի կիրառման և մեկնաբանման հետ կապված հարցերը, եթե այդպիսի պետության կողմից թույլ տրված փաստական և իրավական սխալները չեն հանդիսանում Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների դրույթների խախտումներ: Դատարանը չի ընդունում նաև անհատական գանգապները, եթե դրանք անանուն են, կամ Դատարանն արդեն քննել է, և նոր գանգապը փաստորեն իրավունքի չարաշահում է: Այսպիսով, Եվրոպական դատարանը ՆՇ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է (Սահմանադրության 6-րդ հոդվ. 3-րդ մաս), գործում է մշտական հիմունքներով և սուբսիդիար (օժանդակման) սկզբունքով, այսինքն՝ միայն այն դեպքերում, երբ սպառվել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, և դիմումը տրվել է վերջնական որոշման կայացման օրվանից վեց ամսվա ընթացքում (Կոնվենցիայի 35-րդ հոդվ.):

Կոնվենցիայի (կից 11-րդ արձանագրությամբ) վավերացմամբ Նայասարանի Տանրապետությունն անվերապահորեն ընդունել է մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու ազատությունները հարգելու պարտավորություն, որ նախատեսված են Կոնվենցիայի 1-ին բաժնում: Դրանք են՝ կյանքի իրավունքը, խոշորանցումների արգելումը, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելումը, ազատության և անձեռնմխելիության, արդար դատաքննության (տե՛ս 19-րդ հոդվ. մեկնաբանությունները), բացառապես օրենքի հիման վրա պարտվելու իրավունքները, մասնավոր և ընդհանրական կյանքը հարգելու իրավունքը, մտքի, խղճի, կրոնի և արարահայրվելու ազատության իրավունքները, հավաքների և միավորման ազատությունը, իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ ստանալու և այլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքները:

Նայասարանի Տանրապետությունը պարտավորվել է կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում ինքը կողմ է: Նա պարտավոր է ձեռնարկել մասնավոր միջոցներ, այդ թվում՝ օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, մարդու իրավունքների խախտումները վերացնելու և դրանց կրկնություն թույլ չտալու համար: Առանց ՆՇ մասնակցության Դատարանի կայացրած որոշումները պարտադիր չեն Նայասարանի Տանրապետության համար, սակայն դրանք դատական նախադեպ են հանդիսանում նույնատիպ հարցերով Նայասարանում քննվող գործերի համար, ուստի ՆՇ դատարաններն իրենց դատական ակտերում կարող են հենվել նաև այդ նախադեպերի վրա:

Եվրոպական դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է ԵԽ-ի Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ, և պարտավոր պետության կողմից դա չկատարելու (ասենք՝ րուժողին արդարացի փոխհատուցում չվճարելու) դեպքում, Դատարանի կանոնադրության 8-րդ հոդվածին համապատասխան, Նախարարների կոմիտեն իրեն իրավունք է վերապահում կիրառել քաղաքական միջոցառումներ՝ ընդհուպ մինչև մասնակից պետության անդամության դադարեցումը: Ահա այս կերպ է խթանվում ՆՇ օրենսդրության միասնականացումը եվրոպական օրենսդրությանը:

Տեղին է հիշատակել, որ Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասը միջազգային կազմակերպություններ դիմելու իրավունքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի նման, չի պայմանավորում իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցների

սպառմամբ: Ըստ ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ դարական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը սոսկ պայման է հանդիսանում ՏՏ սահմանադրական դատարան դիմելու համար: Ներելաբար, ՏՏ քաղաքացիները եւ կազմակերպությունները, մարդկանց առանձին խմբերը կարող են Եվրոպական դատարան դիմել ընդհանուր իրավասության դատարանների համապատասխան օղակում վերջնական որոշումներ կայացվելուց հետո՝ առանց Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրականացման:

Նայաստանի Նանրապետությունն անվերապահորեն ճանաչում է նաեւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի իրավագործությունը: Այդ կոմիտեն սրբեցվել է 1976 թվականին՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրին համապատասխան եւ գրեթե նույն սկզբունքներով ու նույն կարգով, ինչ որ Եվրոպական դատարանը, քննարկում է այն անձանց անհատական գանձաբանները, ովքեր պնդում են, որ խախտվել են հիշյալ պայմանագրով երաշխավորված իրենց իրավունքները: Կոմիտեն պարտադիր որոշումներ չի ընդունում, բայց համապատասխան պետությանը կամ պաշտոնավար անձին իրագեղում է տվյալ հարցով իր կարծիքի մասին: Կոմիտեի՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովին ուղղված ամենամյա զեկույցում համառոտ հաշվետվություն է պարունակվում պետություններից ստացված գանձաբանների մասին, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ այս կամ այն պետության վարկանիշի վրա:

Որպես ընդհանրացում պետք է ընդգծել, որ մարդու եւ քաղաքացու՝ միջազգային ակտերում եւ ներպետական օրենսդրության մեջ սահմանված եւ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելու գործում էական նշանակություն ունեն ոչ միայն վերը շարադրված հատուկ իրավական միջոցները, այլ նաեւ սահմանադրական կարգի ողջ հիմունքները, որ Նայաստանն ընդունել է իրավական եւ սոցիալական հռչակված պետությունում ու հետետղականորեն ձգտում է իրացնել դրանք:

ՆՈՂ-ՎԱԾ 19

1. Յուրաքանչյուր որ ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

2. Նանրության բարձրի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրացվող միջոցների եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել:

1. Սահմանադրական այս իրավանորմով ամրագրված եւ երաշխավորված մարդու հիմնարար իրավունքն ամենից կիրառականն է: Այսպես, մեկնաբանվող սահմանադրական հոդվածին համարժեք ՄԻԵԿ-ի 6 (1) հոդվածով ՄԻԵԴ-ի կայացրած վճիռների թիվը, 2010թ. ապրիլի 1-ի դրությամբ, կազմում է ՄԻԵԴ-ի կայացրած վճիռների ընդհա-

նուր թվի մոտ կեսը (12631-ից 6112-ը)¹⁶: ՆՏ սահմանադրական դատարանը եւս ամենամեծ թվով գործերով՝ 15 գործով, օրենքի նորմերն անվավեր է ճանաչել ՆՏ սահմանադրության 19-րդ հոդվածին չհամապատասխանելու հիմքով¹⁷:

Չնայած սույն իրավունքի կարեւորությանը՝ դրա անվանման, սահմանման, կառուցվածքի եւ փարբերի հարաբերակցության հարցում միասնական մտրեցում չի ձեւավորվել: **Գողղերի** գործով ՄԻԵԴ-ը մարնանշել է, որ «6-րդ հոդվածով ամրագրված են առանձին իրավունքներ, որոնք, սակայն, բխում են նույն հիմնարար գաղափարից եւ համակցության մեջ վերցրած՝ կազմում են մեկ միասնական իրավունք, որն առանձին եզրույթով հստակ սահմանված չէ» (կետ 28): ՄԻԵԴ-ի գործունեության սկզբնական շրջանում այս իրավունքն ընդունված էր անվանել «արդարադատության պարշաճ իրականացման իրավունք» («Right to a good administration of justice»), սակայն ներկայում առավել ընդունված է «արդար դատաքննության իրավունք» արտահայտությունը: ՆՏ սահմանադրական դատարանը եւս սույն հոդվածով արտահայտված իրավունքը փարբեր կերպ է անվանում՝ «արդար դատաքննության իրավունք», «դատական պաշտպանության իրավունք» եւ այլն:

Ամեն դեպքում, ցանկացած անվանում պերբ է պայմանական համարել, քանի որ այս իրավունքն իրենից բարդ երեւոյթ է ներկայացնում, որն ընդգրկում է թե՛ արդարադատության մարմնի կազմակերպմանը եւ թե՛ արդարադատության իրականացման ընթացակարգին վերաբերող բազմաթիվ փոխկապակցված փարբեր: Այդ փարբերը մարդու իրավունքների փարբեր հիմնարար փաստաթղթերում կարող են փարբեր ձեւակերպումներ եւ բաշխում ունենալ: Օրինակ՝ թե՛ ՄԻԵԿ-ում եւ թե՛ ԶԶԻՄԴ-ում այս իրավունքի բոլոր փարբերը սահմանված են մեկ միասնական հոդվածով՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, ԶԶԻՄԴ-ի 14-րդ հոդվածով, մինչդեռ ՆՏ Սահմանադրությամբ արդար դատաքննության իրավունքի փարբերը բաշխված են 18-22-րդ հոդվածներում: Ընդ որում, 18, 20 եւ 22-րդ հոդվածները՝ արդար դատաքննության իրավունքի (լայն իմաստով) փարբերի հերբ մեկերը պարունակում են նաեւ այդ իրավունքի փարբ չհանդիսացող երաշխիքներ: Օրինակ, ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ներման կամ նշանակված պարիժը մեղմացնելու խնդրանքի՝ յուրաքանչյուր դատապարտյալի իրավունքը:

Այսպիսով, ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի իրավական արժեքը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է այն վերլուծել ՆՏ Սահմանադրության մյուս դրույթների հերբ համակարգային փոխկապակցւծության մեջ: Բացի մարնանշված սահմանադրական իրավանորմերից՝ 19-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցւծ է ՆՏ Սահմանադրության 14.1 եւ 94-րդ հոդվածների հերբ:

Նարկապես սերբ է ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների փոխադարձ կապը, որի մասին վկայում է այն, որ ՆՏ սահմանադրական դատարանը հաճախ այս հոդվածները վկայակոչում է որպես իրենից մեկ միասնական իրավական երեւոյթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է արդարադատության մարջելիւծության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի փարբի, որի սահմանադրական ամրագրումը դիարարկվում է 18 եւ 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ եւ միասնաբար՝ չկոնկրերացնելով դրա սահմանադրական-երբստային հիմքը:

Այնուհանդերձ, 19-րդ հոդվածի իրավակարգավորումը կազմում է արդար դատաքննության իրավունքի էուծան առանցքը, քանի որ, առաջին՝ այն ամրագրում է այդ

¹⁶ Տվյալները՝ ըստ ՄԻԵԴ-ի ակտերի HUDOC ինտերնետային որոնողական համակարգի:

¹⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-664, ՄԴՈ-665, ՄԴՈ-690, ՄԴՈ-691, ՄԴՈ-773, ՄԴՈ-751, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-767, ՄԴՈ-780, ՄԴՈ-787, ՄԴՈ-818, ՄԴՈ-833, ՄԴՈ-851, ՄԴՈ-873 որոշումները:

իրավունքի կիրառության շրջանակը, եւ երկրորդ՝ այն սահմանում է այդ իրավունքի առավել ընդհանրական երաշխիքները:

Արդար դատաբանության իրավունքի կիրառության շրջանակն են կազմում հետեւյալ երկու ոլորտները՝ խախտված իրավունքների վերականգնումը եւ անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզումը: Այդ հասկացություններն ինքնավար սահմանադրաիրավական իմաստ ունեն, ուստի դրանց բացահայտման համար անհրաժեշտ է ելնել ոչ միայն եւ ոչ այնքան ներպետական օրենսդրությունից, որքան մարդու իրավունքների առնչությամբ միջազգային իրավունքում ձեւավորված չափանիշներից:

Այսպես, «*անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու*» հասկացությունն արտահայտում է քրեական ոլորտը, որի սահմանադրաիրավական ծավալը կարող է ավելի լայն լինել, քան ճյուղային-իրավականը: Դա բխում է *Էնգելի* գործով որոշմամբ ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումից, որի համաձայն՝ արարքին ներպետական իրավունքում փրկված դատապարտումը (որակումը) միակ չափանիշը չէ, որով բնորոշվում է քրեական ոլորտը. անհրաժեշտ է հիմք ընդունել նաեւ՝ (ա) արարքի բնույթը եւ (բ) սանկցիայի ծանրության աստիճանը¹⁸: Այլ կերպ՝ եթե արարքը պարզելի է ոչ թե ՆՃ քրեական օրենսգրքով, այլ ուրիշ օրենքով (ոչ թե հանցագործություն է, այլ վարչական կամ կարգապահական իրավախախտում), սակայն՝ (ա) այն իր բնույթով համարժեք է ՆՃ քրեական օրենսգրքով նախատեսված որեւէ հանցանքի եւ/կամ (բ) դրա համար սահմանված է քրեական պարժին համարժեք պատասխանավորության միջոց, ապա ՆՄ Սահմանադրության իմաստով այդ արարքով վարույթը պետք է ներառվի «*ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզում*» հասկացության շրջանակ:

Եթե քրեական ոլորտն արտահայտող ձեւակերպման ընկերության հարցում ՆՄ Սահմանադրությունը հետեւել է ԲԶԻՄԴ-ի 14-րդ եւ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածների եզրաբանությանը, ապա նույնը չի կարելի ասել 19-րդ հոդվածի կիրառելիությունը սահմանող երկրորդ հասկացության՝ «*խախտված իրավունքների վերականգնման*» պարագայում: ԲԶԻՄԴ-ում կիրառված համարժեք արտահայտությունն է «իրավական հայցով անձի իրավունքների եւ պարտականությունների որոշումը», իսկ ՄԻԵԿ-ում՝ «քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների որոշումը»: Այդուհանդերձ, «*խախտված իրավունքների վերականգնում*» սահմանադրական հասկացության բովանդակությունը պարզաբանելիս նույնպես անհրաժեշտ է ելնել ՄԻԵԴ-ի մշակած համապատասխան իրավական չափորոշիչներից եւ տրամաբանությունից:

Մասնավորապես, «*խախտված իրավունք*» հասկացությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ 19-րդ հոդվածի կիրառության համար իրավունքի խախտման փաստի արձանագրումը լինի նախապայման, այլ ոչ թե հնարավոր վերջնադրյունը, քանի որ այդ դեպքում արդար դատաբանության իրավունքը կդառնա երեսութական: Բացի դրանից, 19-րդ հոդվածի երաշխիքները պետք է հավասարապես վերաբերեն թե՛ դատարանի առջև ենթադրաբար խախտված իրավունք պաշտպանող անձին, թե՛ նրա դատավարական հակառակորդին, որը չի ներկայացնում խախտված իրավունքների վերականգնման պահանջ, այլ առարկում է իրեն ներկայացված նման պահանջի դեմ:

19-րդ հոդվածի առարկայական կիրառելիության խնդրին ՆՄ սահմանադրական դատարանն անդրադարձել է 2008թ. փետրվարի 5-ի թիվ 733 որոշմամբ. «Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազա-

¹⁸ Տե՛ս Էնգելը եւ այլոք ընդդեմ Նիդերլանդների (Engel and Others v. The Netherlands) գործով ՄԻԵԴ-ի 1976թ. հունիսի 8-ի վճռի 80-82-րդ կետերը:

տելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին խախտելով դատարանի մարզելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դատարանի մարզելիության իրավունքին: ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածը երաշխավորում է դատարանի մարզելիության իրավունքը, երբ առկա է կամ **խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու** անհրաժեշտություն: Մինչդեռ պարժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ո՛չ խախտված իրավունքների վերականգնմանը, ո՛չ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաեւ պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով» (9-րդ կետ, 2-րդ պարբերություն):

Չնայած նշված իրավական դիրքորոշմամբ Սահմանադրական դատարանը չի համաձայնել 19-րդ հոդվածի չափազանց լայն կիրառելիության վերաբերյալ մտրեցմանը, այնուհանդերձ, գրել է, որ 19-րդ հոդվածը որոշակի դեպքերում կարող է կիրառվել նաեւ քրեակարարողական իրավունքի ոլորտում, երբ առկա է «օրենքով նախատեսված կարգի խախտում», ինչպես նաեւ «պայմանական վաղաժամկետ ազատման հարցում ... որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման» խնդիր:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի մեկնաբանմամբ՝ «խախտված իրավունքների վերականգնումը» կարող է ավելի ընդարձակ ծավալ ընդգրկել, քան արդար դատաբանության իրավունքի կիրառության համար ավանդաբար մտրանաշվող մասնավոր-իրավական եւ վարչաիրավական վեճերից բխող վարույթները:

19-րդ հոդվածի կիրառելիության խնդիրը վերաբերում է ոչ միայն հորիզոնական, այլեւ ուղղահայաց հարթությանը՝ վերադաս դատական աստիճաններին: ՏՏ սահմանադրական դատարանն այս հարցում ուղղակիորեն հենվում է ՄԻԵԴ-ի իրավաբանության վրա եւ կիրառում է այդ դատարանի մշակած իրավական չափորոշիչները: Այսպես, 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ 765 որոշմամբ ՏՏ սահմանադրական դատարանը հայտնել է հետեւյալ իրավական դիրքորոշումը.

«[ՄԻԵԴ-ի] հսրակ ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն [ՄԻԵԴ-ը] Պայմանավորվող պետություններին չի պարտադրում սրեղծել վերաբնիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե սրեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաբանության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաեւ քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների կապակցությամբ դատարանի մարզելիությունը:

Այն հանգամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաբնիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տե՛ս Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռը):

[ՏՏ Սահմանադրության 92, 18 եւ 19 հոդվածներում ամրագրված] դրույթների համադրված մեկնաբանությունը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույ-

սի ներքո, թույլ է փախի արձանագրել, որ ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ արտաքին մարտնչության իրավունքը, որը պետք է ապահովվի հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները» (12-րդ կետ):

Այսպիսով, ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի կիրառության շրջանակն առնվազն վերաբերում է քրեական, քաղաքացիական, վարչական, քրեակարարողական բնույթի գործերով առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում վարույթներին:

Ինչ վերաբերում է 19-րդ հոդվածում ամրագրված հիմնարար սահմանադրական երաշխիքներին (ա/ դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ/ անկախ և անկողմնակալ դատարան, գ/ դատական քննության ողջամիտ ժամկետ և դ/ հրապարակայնություն), ապա հաշվի առնելով սույն իրավադրույթի առանձնահատկությունները՝ դրանք ստորեւ կներկայացվեն առանձին մեկնաբանությունների ձևով:

1) Անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքը:

Ժամանակակից իրավական պետության պայմաններում, երբ հասարակական կյանքը կառուցված է մարդու իրավունքների գերակայության գաղափարական հենքի վրա (տե՛ս ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի մեկնաբանությունը), իրավական պաշտպանության կառուցակարգերի շարքում առավել գործուն օրենքի հիման վրա ստեղծված անկախ, անկողմնակալ հանրային ինստիտուտի առկայությունն ու գործառնությունն է, որն ունակ է վերականգնելու մարդու խախտված իրավունքները:

Նման մարմինը, լինելով մարդու իրավունքների կառուցակարգային երաշխիք, միաժամանակ վերաձվում է արդար դատավարության հիմնարար իրավունքի բաղադրարարի: Այլ կերպ՝ իրավական հիմունքով ձեւավորված, անկախ ու անկողմնակալ գործող պայանը՝ դատարանը, կոչված է ապահովելու մարդու այլ հիմնարար իրավունքների կենսագործումը, և դրանով իսկ այդ ինստիտուտի գոյությունն ու գործունեությունը դառնում է պարտադիր՝ որպես մարդու ինքնուրույն իրավունք:

Դատարանի *անկախությունը և անկողմնակալությունը* սերտորեն փոխկապակցված, բայց և հարաբերականորեն ինքնուրույն իրավական բնութագրիչներ են: Անկախությունն առավելապես համակարգային, ընդհանրական, կառուցակարգային կարեգորիա է, մինչդեռ անկողմնակալությունը՝ առավելապես կոնկրետ կարեգորիա:

Դատարանի անկախությունը գործառական և անձնային բաղադրիչների համակցություն է:

Դատարանի անկախության գործառական բաղադրիչներն են սահմանադրական և փաստական անկախությունը: Սահմանադրական անկախությունը ենթադրում է իշխանությունների բաժանում և արդարադատության գործառույթի առանձնացում օրենսդիր ու գործադիր գործառույթներից: Այլ կերպ՝ սահմանադրական անկախությունը նշանակում է, որ դատարանը չպետք է ենթակա լինի որեւէ պետական մարմնի կարգադրությունների: Փաստական անկախությունը վերաբերում է դատարանի փոխհարաբերությանը մյուս բոլոր հանրային ինստիտուտների հետ (դատախազություն, փաստաբանություն, կուսակցություններ, հասարակական, կրոնական կազմակերպություններ, սպորտական կառույցներ, ազդեցության խմբեր և այլն): Այն ներառում է նաև ներհամակարգային (ներքին) անկախությունը՝ դատավորների անկախությունը դատական մարմինների ներսում:

Դատարանի անկախության *անձնային* բաղադրիչը վերաբերում է դատավորների նշանակման, ծառայական առաջխաղացման, լիազորությունների ժամկետի, անվտանգության, անձեռնմխելիության, լիազորությունների դադարեցման հիմքերի, գործուղումների ու փոխարեղումների, վճարման ու նյութական-սոցիալական այլ պայմանների, կարգապահական պարասխանարվության հարցերին: Այս բաղադրիչը ենթադրում է նշված հարցերի այնպիսի կանոնակարգում ու կարգավորումների այնպիսի կենսագործում, որ դատարանն ու դատավորը ողջամտորեն ապահովագրված լինեն ներհամակարգային եւ արտահամակարգային կառուցակարգային ազդեցություններից: Դատարանի անկախության անձնային բաղադրիչի բովանդակությունը կազմող հարցերն սրացել են ինչպես սահմանադրական (տե՛ս ՆՏ Սահմանադրության 96 եւ 97-րդ հոդվածները եւ դրանց մեկնաբանությունները), այնպես էլ օրենսդրական կարգավորում (ՆՏ դատական օրենսգիրք, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենք, «ՆՏ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՆՏ օրենք):

Դատարանի անկախության այս բաղադրիչին է վերաբերում ՆՏ սահմանադրական դատարանի ՄԴՌ-782 որոշումը (2008թ. դեկտեմբերի 2): Գործը վերաբերում է մասնագիտացված քրեական դատարաններ ընդհանուր իրավասության դատարաններից դատավորների գործուղման սահմանադրականությանը. այդ գործուղումները 2008թ. դատական համակարգում համապարած բնույթ էին կրում եւ կարարվում էին ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ: Բացահայտելով խնդրի օրենսդրական պարզառոտները՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ դրանց արդյունքում «... ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձեւավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին արշանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընկրության արդյունքում: ... Նման իրավիճակում խոսք անգամ լինել չի կարող անկախ ու անկողմնակալ դատարանի մասին» (տե՛ս նշված որոշման 8-րդ կետը):

Դատարանի անկախությունը ենթադրում է նշված բաղադրիչների ու հարկանիշների ոչ միայն ըստ էության գոյություն, այլև երեւութական դրսևորում (appearance): Վարուկ իրավաբանական կրթություն չունեցող անձի համար դատարանը պետք է ընկալելի լինի որպես անկախ դատական մարմին: Ավելին, հաճախ դատարանի անկախության ըստ էության հարկանիշների մասին կարելի է պարկերացում կազմել դրանց դրսևորման ձեւերի հիման վրա:

Դատարանի անկողմնակալությունը կոնկրետ գործով դատավորի մոտ նախաբանադրվածության, կանխակալ կամ աչառու վերաբերմունքի բացակայությունն է: Քանի որ անկողմնակալությունը կոնկրետ եւ սուբյեկտիվ կարեգորիա է, այն առավել բարդ է բացահայտել, քան անկախությունը: Ամեն դեպքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում մշակվել է անկողմնակալություն երկու չափանիշ.

ա) սուբյեկտիվ մոտեցում. փվյալ դատավորը նախապես չի ունեցել գործի առարկայի վերաբերյալ անձնական համոզմունք,

բ) օբյեկտիվ մոտեցում. առկա են այդ հարցում ողջամիտ կասկածները բացառող բավարար երաշխիքներ¹⁹:

¹⁹ Sten Incal v. Turkey գործով ՄԵԲ-ի 1998թ. հունիսի 9-ի վճռի 65-րդ կետը; Gautrin AND OTHERS v. FRANCE գործով ՄԵԲ-ի 1998թ. մայիսի 20-ի վճռի 58-րդ կետը, Hauschildt v. DENMARK գործով ՄԵԲ-ի 1989թ. մայիսի 24-ի վճռի 46-րդ կետը եւ այլն:

Դատավորի սուբյեկտիվ անկողմնակալությունը հանդես է գալիս որպես կանխավարկած. քանի դեռ հակառակն ապացուցված չէ, դատավորը համարվում է սուբյեկտիվորեն անկողմնակալ: Նակառակ դրան՝ օբյեկտիվ անկողմնակալությունը կարող է կախված լինել անգամ արտաքին գործոններից: Ընդ որում, այս հարցում դատավորի վարքագիծը երկրորդական նշանակություն է ստանում²⁰:

Օբյեկտիվ անկողմնակալությունը կարող է կասկածի տակ դրվել՝ պայմանավորված բազմազան հանգամանքներով, օրինակ՝ դատավորի մերձավոր ազգականի ֆինանսական կապը կողմի հետ, դատավորի եւ կողմի միջև նախկինում եղած ենթակայության հարաբերությունը, քրեական գործն ըստ էության քննող դատավորի ներգրավվածությունը րվելու գործով մինչդարական վարույթին:

Դատարանի անկողմնակալությունը կարող է վրանգվել նաեւ պայմանավորված դատարանի ունեցած գործառույթների ծավալով: Նման իրավական դիրքորոշում է արտահայտել ՆՏ սահմանադրական դատարանը 2007 թվականի հուլիսի 24-ի ՄԴՌ-710 որոշման մեջ, որով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու քրեադատավարական ինստիտուտը ճանաչվել է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը չհամապատասխանող եւ անվավեր: Այդ որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դատարանի կողմից: ՆՏ քր. դատ. օր-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամադրելի գործողություններ» (մաս 7):

Դատարանի անկողմնակալության ապահովման կարեւոր երաշխիք է դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը: Այն դատավորին հնարավորություն է տալիս ցանկացած պահի հրաժարվելու գործով վարույթ իրականացնելուց, եթե նա գտնում է, որ որեւէ պարճառով չի կարող անկողմնակալ լինել:

2) Նախասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմանը գործի քննության իրավունքը:

Գործի քննության արդարացիությունն արդար դատաքննության իրավունքի առավել ընդհանուր տարրն է: Այն հստակորեն սահմանված չէ ո՛չ Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի որոշումներում, ո՛չ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում եւ ո՛չ էլ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից: Այնուհանդերձ, արդար դատաքննության այս տարրի առանձին դրսեւորումներ եւ չափորոշիչներ բավականաչափ կոնկրետացված են:

Մասնավորապես, արդարացիության առանցքային բնութագրիչը կողմերի հավասարությունն է («զենքերի հավասարությունը»՝ Եվրոպական դատարանի մոտեցումներում, «մրցակցությունը»՝ Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի դիրքորոշումներում): Առանձին ամրագրված լինելով 19-րդ հոդվածի տեքստում՝ այն միաժամանակ հանդիսանում է «արդարության բոլոր պահանջներից» առաջնայինը:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի՝ կողմերի հավասարությունն արդարացի դատական քննության առավել լայն հասկացության բաղկացուցիչ տարրերից է. այն պահանջում է, որպեսզի կողմերից յուրաքանչյուրն ունենա իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, երբ կողմե-

²⁰ Sten castillo algar v. SPAIN գործով ՄԻԵԴ-ի 1998թ. հոկտեմբերի 28-ի վճռի 45-րդ կետը:

րից որեւէ մեկը հակառակ կողմի նկատմամբ (visavis) ակնհայտ առավելություն չունի (Կրեւսն ընդդէմ Տրանսիսիայի, 07.06.2001թ., կէտր 72, Դե Նայեսը և Գիժսեսլսն ընդդէմ Բելգիայի, 24.02.1997թ., կէտր 53, Բոնիշն ընդդէմ Ավստրիայի, 02.06.1986թ., կէտր 32):

Մրցակցության և կողմերի հավասարության վերաբերյալ սահմանադրական և կոնվենցիոն դրույթներն իրենց հերազա կարգավորումն են ստացել Նայաստանի Նանրապետության համապարասխան ճյուղային օրենսդրության մեջ:

Այսպես, ըստ Նայաստանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի՝ «Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն»: Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է. «1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: 2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը փարանջարված են. դրանք իրականացնում են փարբեր մարմիններ և անձինք: 3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը: ... 5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետագուման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»: Նավասարության պայմաններում դատավարության իրականացման հիմնարար սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում, ինչպես նաև Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքի 7-րդ հոդվածում:

Կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքի բովանդակությունը որոշակիացվել է Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի կողմից, որը, հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա, 2007թ. հուլիսի 24-ի ՄԴՈ-710 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Չնայած նրան, որ դատաքննության հավասարության և մրցակցության սկզբունքները հսրակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, [ՄԻԵԴ] կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լուծումներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձեւավորվել է հսրակ նախադեպ, համաձայն որի՝ լուծումների արդարացիության փարբերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետետողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պարշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ» (10-րդ կէտր):

Նավասար պայմանների սկզբունքը ենթադրում է նաև *մրցակցող կողմերի լուվելու իրավունքը* (հայտնի է Ֆրանսերեն անվանմամբ՝ «le principe du contradictoire»), այդ թվում՝ վարույթի ընթացքում կարարվող գործողությունների վերաբերյալ հայտարարություններ կարարելու և հակառակ կողմի հայտարարությունների վերաբերյալ

առարկություն կամ կարծիք հայտնելու իրավունքները (*Գամասինսկին ընդդեմ Ավստրիայի, 19.12.1989թ., կետ 102*):

«Ձենքերի հավասարություն» անհրաժեշտ է ընկալել ոչ միայն դատավարական միջոցների օգտագործման հարցում հավասարության, այլև դրանցից օգտվելու պայմանների ապահովման առումով: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն վարույթի արդարացիության պահանջ է համարել այն, որ գործի հրապարակային դատաքննության ընթացքում մեղադրյալը չպետք է հանրության կողմից ենթարկվի թշնամանքի՝ դատարանի դրսևորած հանդուրժողականության պայմաններում (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն թիվ 32, ընդունվել է 2007թ. օգոստոսի 23-ին):

Մրցակցության սկզբունքի լայն ընկալում է դրսևորված նաև ՆՏ սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 14-ի ՄԴՈ-851 որոշմամբ, որով արդար դատաքննության իրավունքի մրցակցության ու հավասարության չափանիշի խախտում է արձանագրված այն պարագայում, երբ ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը դիտվել է հանցագործություն պաշտպանի համար, իսկ մեղադրողի համար՝ ոչ:

Արդարացիության կարևոր բաղադրարար է նաև **դատական որոշումների պարճառաբանումը**, թեև այն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բննարկվող հոդվածում ուղղակի ամրագրում չի ստացել:

Որոշումների պարճառաբանված լինելու վերաբերյալ իրավական պահանջներ են քննարկվում Հայաստանի Հանրապետության քրեական, քաղաքացիական, ինչպես նաև վարչական դատավարության օրենսգրքերում:

Այս հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշման մեջ: Դրանում, մասնավորապես, նշված է. «...վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հեղապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պարճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության եւ իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մարտնչությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար»:

Նույնպիսի մոտեցում ՆՏ սահմանադրական դատարանի կողմից արտահայտվել է նաև 2007 թվականի ապրիլի 11-ի ՄԴՈ-691 որոշման մեջ:

Որոշումների պարճառաբանման պահանջն արվացողվել է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներում: Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանները պետք է բավարար հսկայությամբ հիշարակեն այն փաստարկները, որոնք ընկած են իրենց որոշումների հիմքում (*Նաջիանասարասիուն ընդդեմ Հունաստանի, 16.12.1992թ., կետ 33, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի, 21.01.1999թ., կետ 26*):

Դրա հետ մեկտեղ, Եվրոպական դատարանն ընդգծում է, որ որոշումների պարճառաբանման պահանջը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Այն չի նշանակում, որ դատարանը պետք է մանրամասն անդրադառնա կողմերի բոլոր փաստարկներին: Այդ պարտականության ծավալը կարող է փոփոխվել՝ կախված որոշման բնույթից... Այդ

պարճառով դարարանի կողմից որոշումների պարճառարանման՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածից բխող պահանջի խախտման հարցը կարող է որոշվել՝ միայն ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (*Ռուիզ Տորիջան ընդդեմ Իսպանիայի*, 09.12.1994թ., կետ 29, *Տիրո Բարանին ընդդեմ Իսպանիայի*, 09.12.1994թ., կետ 27, *Նելլեն ընդդեմ Ֆինլանդիայի*, 19.12.1997թ., կետ 55):

Այդուհանդերձ, նշվածը չի նշանակում, որ դարարաններն իրենց որոշումներում չպետք է պարզաճ անդրադարճ կարարեն այն փաստարկներին, որոնցով դարավարության մասնակիցները հիմնավորում են իրենց դիրքորոշումը:

Գործի քննության արդարացիության ապահովման համար կարետոր նշանակություն ունի նաեւ գործի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերումն օրենքով նախատեսված կանոնների խախտվ պահպանմամբ: Այս իմաստով քննարկվող հոդվածը սերտորեն առնչվում է Նայաստանի Նանրապետության Մամանադրության 22-րդ հոդվածին, որն արգելում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (առավել մանրամասն տես 22-րդ հոդվածի մեկնաբանությունը):

3) Ողջամիտ Ժամկետում գործի քննության իրավունքը:

Ողջամիտ Ժամկետում գործի քննության պահանջը Նայաստանի Նանրապետության Մահմանադրությունում ամրագրվել է 2005 թվականի նոյեմբերի 27-ին դրանում կարարված փոփոխությունների արդյունքում: Ողջամիտ Ժամկետում յուրաքանչյուրի դարաքննության իրավունքը երաշխավորված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում:

Ողջամիտ Ժամկետում գործի քննության վերաբերյալ սահմանադրական եւ կոնվենցիոն դրույթներն իրենց հետագա կարգավորումն են ստացել Նայաստանի Նանրապետության համապարասխան ճյուղային օրենսդրության մեջ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այնպիսի իրավական ակտերի, ինչպիսիք են Նայաստանի Նանրապետության դարական օրենսգիրքը, Նայաստանի Նանրապետության քրեական դարավարության օրենսգիրքը, Նայաստանի Նանրապետության վարչական դարավարության օրենսգիրքը, ՆՆ քաղաքացիական դարավարության օրենսգիրքը:

Դարական պրակտիկայում ողջամիտ Ժամկետի պահպանման վերաբերյալ կարետոր պարգաբանումներ է պարունակում նաեւ Նայաստանի Նանրապետության դարարանների նախագահների խորհրդի «Գործի քննության ողջամիտ Ժամկետի պահպանման մասին» 2006 թվականի հունիսի 13-ի որոշումը:

Քրեական գործի քննության ընթացքում ողջամիտ Ժամկետի խախտման անթույլարբելիության վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաեւ Նայաստանի Նանրապետության սահմանադրական դարարանը 2007 թվականի հուլիսի 24-ի ՄԴՈ-710 որոշման մեջ, որով Նայաստանի Նանրապետության քրեական դարավարության օրենսգրքում ամրագրված՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը ճանաչվել է Նայաստանի Նանրապետության Մահմանադրությանը հակասող: Այդ որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «...Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի ... կիրառումը պարունակում է նաեւ արդար դարաքննության տարրերից մեկի՝ դարաքննությունը ողջամիտ Ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վրանգ:

Քրեական գործի լուծման ձգճգումն ընդհանրապես բացասաբար է անդրադառնում մեղադրյալի, ինչպես նաեւ տուճողի վրա: Մակայն մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի վրանգավոր է գործի քննության ողջամիտ Ժամկետի խախտումն այն դեպքում, երբ մեղադրյալի նկարմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: ՆՆ քր. դար. օր.-ի 138-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական գոր-

ծով մինչդարակական վարույթում մեղադրյալին կալանքի փակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին: Նույն հոդվածն ամրագրում է նաև, որ քրեական գործով մինչդարակական վարույթում կալանքի փակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան: Այսինքն՝ գործը դատարանում գտնվելու ժամանակամիջոցում անձի՝ կալանքի փակ գտնվելու ժամկետը չի հաշվվում մինչդարակական վարույթում օրենքով սահմանված առավելագույն ժամկետի՝ մեկ տարվա մեջ: Ստացվում է, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետևանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ տարուց շար ավելի երկար ժամանակ» (կեր 7):

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը: Նշվածով հանդերձ, քննարկվող երաշխիքի նշանակությունն այն է, որ պետք է ապահովվի ողջամիտ ժամկետում համապատասխան դատավարական ակտի կայացումը՝ դրանով իսկ վերջ դնելով այն անորոշ վիճակին, որում գտնվում է անձը՝ կապված քաղաքացիաիրավական բնույթի իր վիճակի կամ իր նկատմամբ առաջադրված մեղադրանքի հետ, ինչը կարելի է ինչպես շահագրգիռ անձի համար, այնպես էլ «իրավական որոշակիության» ապահովման փասանկյունից²¹:

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքն առավել ամբողջական բացահայտում է ստացել ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներում:

Մասնավորապես, քաղաքացիական գործերով ողջամիտ ժամկետի հաշվարկն սկսվում է գործի հարուցման պահից, իսկ քրեական գործերով՝ մեղադրանքի առաջադրման պահից: Ընդ որում, քրեական գործերով դա կարող է փոփոխվել ունենալ ավելի շուրջ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին կալանավորելու կամ ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ փլյալ անձը պաշտոնապես փեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունն սկսելու պահից (*Էլյեն ընդդեմ Գերմանիայի*, 15.07.1982թ., կեր 73, *Կորիզ-լիանոն ընդդեմ Իտալիայի*, 10.12.1982թ., կեր 34, *Դեյեերն ընդդեմ Բելգիայի*, 27.02.1980թ., կեր 42):

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր արյանի դատարանում, այն է՝ երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր փետողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների փետողությունը վերաքննիչ եւ վճռաբեկ արյաններում²²: Նմանափայ իրավադրույթներ են բովանդակում ինչպես ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի 2-րդ մասը, այնպես էլ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ողջամիտ ժամկետի առնչությամբ կարելի է այն, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքները, ուստի որեւէ հստակ ժամանակային սահման նշել հնարավոր չէ:

Սակայն Եվրոպական դատարանը մշակել է չափանիշներ, որոնք հաշվի առնե-

²¹ St'u Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No. 3. Directorate General of Human Rights Council of Europe. 2006, էջ 26:

²² Այս մասին տե՛ս Consultative Council of European Judges (CCJE). Opinion no 6 (2004) of the Consultative Council of European Judges (CCJE) to the attention of the Committee of Ministers on fair trial within a reasonable time and judge's role in trials taking into account alternative means of dispute settlement as adopted by the CCJE at its 5th meeting (Strasbourg, 22-24 November 2004), կետ 98:

լով՝ որոշվում է ողջամիտ ժամկետի խախտման հարցը. **գործի բարդությունը, դիմողի վարքագիծը, դատական ու վարչական մարմինների վարքագիծը և դիմելի աստիճանը** դիմողի համար:

Գործի բարդությունը: Գործի բարդության աստիճանը որոշելիս կարևոր են դրա հետ կապված բոլոր հարցերը: Բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական հարցերի հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս այնպիսի օգործունեքին, ինչպիսիք են հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, փյալ գործի միացումն այլ գործերին, ինչպես նաեւ նոր անձանց ներգրավումը դատավարությանը:

Դիմողի վարքագիծը: Եթե գործի քննության ձգձգումը փեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է: Այնուամենայնիվ, չի կարելի դիմողին մեղադրել այն բանում, որ նա ամբողջությամբ օգտագործել է ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցները: Չի կարելի դիմողից պահանջել ակտիվ համագործակցություն դատական մարմինների հետ, եթե դա կարող է հանգեցնել նրա դատապարտման: Այն դեպքում, երբ դիմողը ձգարում է արագացնել դատավարության ընթացքը, ապա դա կդիտարկվի հօգուտ վերջինիս, սակայն նրա մտք դատավարության ընթացքն արագացնելու ցանկության բացակայությունը չի կարող որոշիչ նշանակություն ունենալ:

Նշվածի կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ դիմողը պետք է միայն «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պարաստականություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաեւ դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները» (*Յունիս Ալիմենարախա Սանդերս ՍԱ-ն ընդդեմ Բուպանիայի, 07.07.1989թ., կետ 35*):

Դատական և վարչական մարմինների վարքագիծը: Ողջամիտ ժամկետի խախտման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի նաեւ գործի քննությունը պետական մարմինների կողմից ձգձգելու հարցը: Դրանով իսկ պետությունը պարաստականաբարություն է կրում ոչ միայն դատական, այլ նաեւ վարչական մարմինների կողմից ողջամիտ ժամկետի երաշխիքների չպահպանման համար:

Գործի քննության ողջամիտ փետողության հարցը քննարկելիս առաջնահերթ նշանակություն ունի արդարադատության պարշաճ իրականացման ապահովումը, որը կարող է իրացվել քննությունն իրականացնող մարմինների կողմից գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և ժամանակին ուսումնասիրությամբ: Ստրասբուրգյան չափանիշների համաձայն՝ դատարանները կրում են առանձնահատուկ պարպականություն՝ ապահովել, որպեսզի գործի քննության ընթացքում որեւէ դեր ունեցող բոլոր մասնակիցները կարարեն իրենցից կախված ամեն ինչ՝ գործի քննության ցանկացած չարդարացված ձգձգումից խուսափելու նպատակով:

Այս կապակցությամբ պետությունները պարպավոր են իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որպեսզի դատարանները հնարավորություն ունենան գործելու Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հողվածի 1-ին մասի դրույթներին, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքին համապարասխան: Վակառակ, ասենք՝ դատական համակարգի գերձանրաբեռնված գործելու դեպքում կարող է արձանագրվել հիշյալ հողվածի խախտում, քանի որ պետությունը համարժեք միջոցներ չի ձեռնարկել այդ իրավիճակը շրկելու համար: Վամարժեք միջոցները կարող են ներառել լրացուցիչ դատավորների և վարչական ձառայողների նշանակումը, սակայն խախտում չի արձանագրվի, եթե նման ձգձգումը լինի ժամանակավոր ու բացառիկ, և եթե պետու-

թյունը ժամանակին ձեռնարկի դրա վերցմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ (*Զիւն-մերոնսնը եւ Շոթայնէրն ընդդէմ Շվեյցարիայի, 13.07.1983թ., կետ 29*):

Ռիսկի աստիճանը դիմողի համար: Այս պահանջը կիրառելի է ինչպէս քրեական, այնպէս էլ քաղաքացիական գործերի նկատմամբ: Խոսքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ գործի քննությունը որոշիչ նշանակություն ունի դիմողի համար, ունի առանձնահատուկ բնույթ կամ առանձնանում է որոշակի ակտի բեկանման անհնարինությունամբ: Օրինակ, Եվրոպական դատարանը Նոկլանենի գործով նշել է, որ «...էական է այն, որ խնամակալությանը վերաբերող գործերը պետք է քննվեն արագացված կարգով» (*Նոկլանեննը ընդդէմ Ֆինլանդիայի, 23.09.1994թ., կետ 72*):

Վերոգրյալը հասարակում է, որ քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառները: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձ լինելը, դատական կամ ընդհանրապէս իրավական համակարգի անկախությունը, մեղադրյալի եւ նրա պաշտպանի, ինչպէս նաեւ դատավարության մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննության ձգձգման օբյեկտիվ պատճառներ դիտվել չեն կարող:

4) Գործի հրապարակային քննության իրավունք:

Դատական իշխանության նկատմամբ համարժեք հասարակական վերաբերմունք կարող է ձեւավորվել միայն այն դեպքում, երբ դատարանն իրականացնի «թափանցիկ» արդարադատություն՝ մի կողմից հասարակությանն ընձեռելով իր գործունեությունը վերահսկելու հնարավորություն, մյուս կողմից՝ ապահովելով հաշվետու լինելը նույն հասարակության առաջ: Սա է պատճառը, որ դատական քննության հրապարակայնությունը բարձրացվել է արդարադատության սահմանադրական սկզբունքի մակարդակի եւ իր արտացոլումն է գրել դատական համակարգի անկախությունն ու մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրող միջազգային իրավական փաստաթղթերում:

ՄԻԵԿ-ը կարեւորելով հրապարակայնությունն իբրեւ արդարադատության իրականացման կարեւոր եւ պարտադիր պայման՝ այն դիտել է որպէս արդարացի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապէս նվիրված է հրապարակայնության սկզբունքին, քանի որ Կոնվենցիան հրապարակայնությունը դիտում է որպէս արդարացի դատաքննության իրավունքի բաղկացուցիչ եւ դրա ապահովման կարեւորագույն երաշխիք²³:

Կոնվենցիայի 6(1) հոդվածը սահմանում է դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիք՝ դռնբաց դատական քննություն եւ դատավճռի հրապարակում²⁴:

Դռնբաց դատական քննության ապահովումն ինքնին բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից դատավարությունը հրապարակային բնութագրելու համար: Նաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրավիճակի բազմազանությունը՝ Դատարանն ընտրել է պրագմատիկ մոտեցում՝ նշելով հրապարակային դատական քննության ապահովման ձեւական երաշխիքների երկրորդական նշանակությունը: Դատական քննության հրապարակայնության գնահատման տեսանկյունից Դատարանը կարեւորել է դատավարության փաստական իրողությունների գնահատումը²⁵:

²³ St'u Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, Series A no 72; Pretto v. Italy, 8 December 1983, Series A no 71; Sutter v. Switzerland, 22 February 1984, Series A no 74.

²⁴ St'u The European System for the Protection of Human Rights. Edited by R. St. J. Macdonald, F. Matscher, H Petzold. Martinus Nijhoff Publishers, Dordrecht, Boston, London. էջ 393:

²⁵ St'u Pretto, para. 22; Axen, para. 26; Sutter, para. 27; Campbell and Fell, par. 91:

Սա է պարճառը, որ, մի կողմից, Դատարանն ընդլայնում է հրապարակայնության սահմանները՝ ներառելով այնպիսի բաղադրիչներ, որոնք հայրենի քրեական դատավարությունը երբեմն չի դիմել որպես հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ, մյուս կողմից՝ Դատարանը չի բացարձականացնում այս սկզբունքը և այն դիմարկում է արդարացի դատաքննության բոլոր փարբերի հետ համակցությամբ:

Տրապարակային դատական քննությունը նախ և առաջ կոչված է ապահովելու դռնբաց դատական քննությունն առաջին արյանի դատարանում: Սակայն փեխնիկական պարճառներից ելնելով հրապարակային քննությունը երբեմն կարող է պարբադիր չհամարվել²⁶: Եթե առաջին արյանի դատարանում հրապարակային դատական քննություն չի անցկացվում, ապա դա կարող է փոխհարուցվել ավելի բարճար արյանի դատարանում հրապարակային քննություն անցկացնելով: Սակայն այն պարբացյալում, եթե վերադաս դատարանը չի անդրադառնում կամ իրավասու չէ անդրադառնալու գորճի փաստական կողմին, առկա է 6-րդ հողվաճի խախտում²⁷: Միեւնոյն ժամանակ, եթե վերադաս դատական արյանը հրապարակայնության բացակայության պայմաններում բեկանում է ստորադաս դատարանի կողմից հրապարակային քննության արդյունքում կայացրաճ արդարացման դատավճիռը, ապա առկա է 6-րդ հողվաճի խախտում²⁸: Նշենք, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքն այս առումով դատական քննության հրապարակայնության առավել խիստ և հստակ երաշխիքներ է նախատեսում: Մասնավորապես, հրապարակայնության սկզբունքն ամբողջությամբ կիրառվում է դատական քննության բոլոր փուլերում: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հողվաճում դատական քննության հասկացությունն օգտագորճվում է լայն իմաստով, և այս հարցում օրենքը որեւէ սահմանափակում չի նախատեսում: Անգամ արագացվաճ դատական քննության կարգի կիրառման դեպքում դատաքննությունը պետք է դռնբաց լինի: Մինչդեռ Եվրոպական դատարանը պարզեցվաճ ընթացակարգով դատական քննությանը հրապարակայնության պահանջ չի ներկայացնում²⁹:

Դատական քննության հրապարակայնության սկզբունքն իր բովանդակության մեջ ներառում է նաեւ դատական քննության բանավորության պահանջը³⁰: Աքսենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Նանրապետության գորճով կայացրաճ վճում Դատարանը նշել է, որ քրեական գորճերով բանավորությունը պարբադիր չէ, եթե վերաքննիչ դատարանը մերճում է բողբը միայն իրավունքի հիմքով³¹: Սակայն, եթե վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա ե՛ր փաստին, ե՛ր իրավունքին, մեղավորության կամ անմեղության, կամ պարճի վերանայման հարցերին՝ բանավորությունն անհրաճեշտ է³²:

2. ՏՏ Սահմանադրության 19-րդ հողվաճի 2-րդ մասը սահմանում է դռնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերը, որի համաճայն՝ հանրության բարբերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անճնական կյանքի կամ արդարության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դա-

²⁶ St'u Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No.3, 2006, էջ 20:

²⁷ St'u Nuala Mole and Catharina Harby, նույն աշխատությունը, էջ 21:

²⁸ St'u Igual Coll v. Spain, բողբ N37496/04, 10.03.2009, par. 36,37:

²⁹ St'u Hermi, par. 81:

³⁰ St'u Fischer v. Austria, 26 April 1995, para.44:

³¹ St'u Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, par. 28:

³² St'u Ekbatani v. Sweden, 26 May 1988, and Cooke v. Austria, 8 February 2000:

տական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել: Այս դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ զանգվածային լրատվության միջոցներն ազատ են մասնակցելու դատական նիստերին, եթե դատարանն իր պատճառաբանված որոշմամբ նրանց մասնակցությունը չի արգելում: Ընդ որում, դատարանն իրավասու է առանց դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշման սահմանափակել զանգվածային լրատվության միջոցների մասնակցությունը դատական քննությանը, եթե դա է պահանջում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարության շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, ՋԼՄ-ների մասնակցությունը կարող է սահմանափակվել, եթե վերջիններիս մասնակցությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, օրինակ՝ անչափահասների կամ վկաների վրա ՋԼՄ-ների հնարավոր ճնշումը կանխելու, դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով³³:

Դատարանն իրավասու է կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշում կայացնել, եթե գործն առնչվում է անձնական կյանքի գաղտնիքի հրապարակմանը: Սակայն, եթե դատավարության մասնակիցը դռնփակ քննություն անցկացնելու միջնորդություն չի ներկայացնում, դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ դռնփակ քննություն անցկացնել, եթե գործի հրապարակային քննությունը կիսաթափ հասարակության բարոյական հիմքերը, արմատացած բարոյական սկզբունքներն ու արժեքները, կհանգեցնի հասարակական անկարգությունների կամ բռնությունների:

ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դռնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերը: ՆՏ քր. դատ. օր.-ի 16-րդ հոդվածի 2-րդ մասը մասնավորեցնում է կոնվենցիոն հիմքերը եւ հստակ սահմանում, թե կոնկրետ ինչ հանգամանքների առկայության պարագայում, ինչպիսի շահեր պաշտպանելու նպատակով եւ ում նախաձեռնությամբ կարող է դռնփակ դատական քննություն անցկացվել:

ՆՏ քր. դատ. օր.-ի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ առնչվող հանցագործությունների գործերով:

Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաեւ՝

- անձնական եւ ընտանեկան կյանքին, անձի պարվի ռու արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով.
- անձի սեռական ազատության եւ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
- քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Դատարանը դռնփակ դատական քննություն կարող է անցկացնել նաեւ ազգային անվտանգության եւ հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Այսպիսով, ՆՏ քր. դատ. օր.-ը մանրամասնում է հրապարակայնության սահմանափակման սահմանադրական հիմքերը եւ սահմանում, որ նույնիսկ նշված հիմքերի առկայության պարագայում հրապարակայնությունը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, երբ դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի

³³ Stu, Ramishvili and kokhreizde v. Georgia, 1704/06, 27.01.2009, կետ 130:

հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանավակման:

Թեև ընդհանուր կանոնի համաձայն դատական քննությունը դռնբաց է եւ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել միայն դատարանի որոշմամբ, այնուամենայնիվ, նույնիսկ դռնբաց դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանը պետք է զգուշություն ցուցաբերի, քանի որ որոշ ապացույցների հրապարակային հետազոտումը կարող է հանգեցնել կոնվենցիոն մեկ այլ՝ անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման³⁴:

Նրապարակայնության սկզբունքն անհրաժեշտ է փարածել նաեւ մինչդատական վարությամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունների քննարկման նկատմամբ: ՆՏ քր. դատ. օր.-ի համաձայն՝ միջնորդությունը քննում է դատավորը՝ միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնավար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ (ՆՏ քր. դատ. օր., հոդված 283, մաս առաջին): Այս միջնորդությունների քննության նկատմամբ հրապարակայնության սկզբունքի փարածումն անհրաժեշտ է՝ կանխելու համար կալանքի անհիմն եւ անհարկի կիրառման դեպքերը, քանի որ առկա կարգավորման պարագայում, երբ միջնորդությունների քննությունն իրականացվում է փակ, հասարակական հսկողությունից դուրս, մեծանում է դատարանի կողմից կամայական որոշումներ կայացնելու հավանականությունը: Այս մտրեցման հակառակորդները՝ որպես իրենց դիրքորոշման հիմնավորում, կարող են նշել նախաքննության գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն, կարծում ենք, որ ճկուն մտրեցում դրսևորելու պարագայում նման խնդիր չի առաջանա: Ավելին, կվերանա այն արտավոր պրակտիկան, երբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելիս վարույթն իրականացնող մարմինը բավարարվում է միայն համապարասխան հիմքերի առկայությունը նշելով, առանց դրա հիմքում կոնկրետ ապացույցներ դնելու: Եթե նույնիսկ համապարասխան հիմքերի առկայությունը հիմնավորվում է կոնկրետ ապացույցներով, դրանք, որպես կանոն, նախաքննության ընթացքի վրա էական ազդեցություն ունենալ չեն կարող: Սակայն, ամեն դեպքում, դատարանին պետք է իրավունք վերապահել, երբ առկա է նախաքննության գաղտնիքը հրապարակելու վտանգ, որոշում կայացնել դռնփակ քննություն անցկացնելու մասին: Նման ընթացակարգն ինքնին դատավորի զգոնությունն ու պարասխանավորությունը բարձրացնող կարեւոր երաշխիք է, եւ եթե անգամ դատարանը որոշում է կայացնում դռնփակ քննություն անցկացնելու մասին՝ պարտավոր է հիմնավորել իր այդ որոշումը: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը, ամեն դեպքում, պետք է հրապարակվի դռնբաց դատական նիստում, քանի որ այն չի բովանդակում այնպիսի տվյալներ, որոնք կարող են խախտել նախաքննության գաղտնիությունը:

Նույնիսկ դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատավճիռները եւ դատարանի այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներառական կամ եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար: Պետք է նշել, սակայն, որ Կոնվենցիան դռնբաց դատական նիստում դատավճիռը հրապարակելու պահանջ չի ներկայացնում³⁵:

³⁴ St'u Panteleyenko v. Ukraine . Գանգառ N11901/02, 29.06.2006, par. 61, 62:

³⁵ St'u Sutter v. Switzerland. Գանգառ N8209/78, 22.02.1984, par. 31, 34:

ՆՈՂ-ՎԱԾ 20

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընդունման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընկերությանը պաշտպան ունենալու իրավունք:

3. Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:

4. Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պարիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:

5. Տուժողին պարանոտված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

1. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ժողովրդավարական հասարակությունում անձին վերապահված հիմնարար իրավունքներից մեկն է և դասվում է մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող նորմերի շարքը: Քննարկվող դրույթը նպատակ ունի բոլոր մարդկանց համար հասանելի դարձնել իրավաբանական ծառայությունները, որոնք պետք է փրամադրվեն անկախ խորագիրակ իրավաբանների կողմից: Ժամանակակից իրավական պետությանը բնորոշ են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման բարձր մակարդակն ու բազմազանությունը: Նման պայմաններում հասարակության անդամների մեծ մասն օբյեկտիվորեն չի փրապետում գիտելիքների այն համակարգին, որը հնարավորություն է տալիս արդյունավետ պաշտպանել իրենց իրավունքներն ու օրինական շահերը, կանխել դրանց խախտումներն ու չարաշահումներն այլոց կողմից: Իրավական ակտերի բովանդակության և դրանց կիրառման կարգի իմացության օբյեկտիվ պահանջը սփռվում է մարդուն որոշակի իրավիճակներում իրավաբանական օգնություն հայցել:

Քննարկվող նորմի բովանդակությունից հետևում է, որ անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը որևէ կերպ սահմանափակված չէ: Իրավաբանական օգնություն կարող է ստանալ ցանկացած անձ, ցանկացած հարցի կապակցությամբ՝ անկախ նրա կարգավիճակից, գործունեության ոլորտից, իրավահարաբերության բնույթից, պետական գործունեության փեսակից, ընթացակարգի առանձնահատկություններից և այլն: Պետությունը պարտավոր է ապահովել արդյունավետ ընթացակարգեր և ճկուն կառուցակարգեր, որոնք յուրաքանչյուրի համար կապահովեն իրավաբանական օգնության արդյունավետ և հավասար հասանելիությունը՝ անկախ որևէ հանգամանքից:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխիք է հանդիսանում Մասնադրությամբ ամրագրված այլ իրավունքների, մասնավորապես, իրավունքների և ազատությունների դաբական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի (հոդված 18, մաս 1), իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու:

պանելու իրավունքի (հոդված 18, մաս 2), խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի (հոդված 19, մաս 1) իրականացման համար և սերտորեն կապված է դրանց հետ: Այս իրավունքը չի կարող սահմանափակվել ոչ մի պարագայում (հոդվածներ 43 և 44):

Օրենքով չարգելված միջոցների շարքին դասվում է նաև սեփական իրավունքները և ազատություններն իրավաբանական օգնություն ստանալու եղանակով պաշտպանելը: Անձի կողմից իր իրավունքների և ազատությունների պաշտպանություն հայցելիս իրավաբանական օգնությունից չօգտվելը դժվար է պարկերացնել, իսկ դրանց դատական պաշտպանության դեպքում, որը ժողովրդավարական և իրավական պետությունում իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձրագույն և առավել արդյունավետ եղանակն է հանդիսանում, դա գրեթե անհնարին է: Ինչ վերաբերում է խախտված իրավունքների վերականգնմանը, ինչպես նաև մեղադրյալի կարգավիճակում գտնվող անձի կողմից իր իրավունքների պաշտպանությանը, ապա նշված դեպքերում առանց որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավոր չէ ապահովել ոչ անձի իրավունքների պաշտպանությունը, ոչ էլ արդարադատության իրականացումը:

Իր բովանդակությամբ իրավաբանական օգնությունը բավականին փարդունակ է և ներառում է գործողությունների լայն շրջանակ. խորհրդավորություն իրավական հարցերի կապակցությամբ, անհրաժեշտ նորմատիվ ակտի որոնում և հայտնաբերում, դրա բովանդակության բացահայտում և առանձին դրույթների մեկնաբանություն, օրենսդրական առանձին հարցերի վերաբերյալ փեդեկանքների պարրաստում, իրավական բնույթի փաստաթղթերի կազմում, այն մարմնի որոշում, որը կարող է առավել արդյունավետ լուծել առկա իրավական խնդիրը, համապատասխան փաստաթղթերի կամ նյութերի հավաքում, ներկայացուցչություն դատարանում, պետական իշխանության և փեդեկան ինքնակառավարման, ինչպես նաև ոչ պետական մարմիններում ու կազմակերպություններում, պաշտպանության իրականացում քրեական գործերով և այլն: Սահմանադրական այս իրավունքն իրեն բնորոշ իրավական կարգավորում է ստացել արդարադատության իրականացման ամեն մի ոլորտում (սահմանադրական, վարչական, քաղաքացիական, քրեական):

Միաժամանակ, անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու օբյեկտիվ պահանջն անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն նշված իրավունքի ամրագրումը, այլև և դրա իրականացման երաշխիքների սահմանումը: Սահմանադրությամբ երաշխավորվող այս իրավունքի էությունից և բնույթից բխում է, որ այն պետք է բավարարի համընդհանուր ճանաչում ստացած չափանիշները, քանզի պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս): Դա նշանակում է, որ երաշխավորվող իրավաբանական օգնությունը պետք է լինի որակյալ, այսինքն՝ փրամադրվի բարձր որակավորում ունեցող մասնագետի կողմից և ապահովի անձի իրավունքների և օրինական շահերի պարզաճ պաշտպանությունը կամ խախտված իրավունքների վերականգնումը համապատասխան ոլորտում: Իրավաբանական օգնության որակյալ լինելն ընդգծում է պետության կողմից երաշխավորվող իրավունքի նշանակությունը: Անձին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալը կարևորվում է այն հանգամանքով, որ մարդու և

քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը ու դրանց իրական պաշտպանությունն ամբողջ ծավալով հնարավոր է միայն այն դեպքում, երբ արվում է օրենքների հստակ իմացությամբ և դրանց պահանջներին համապատասխան:

Ներեաբար, այս իրավունքը չի կարող իրականացվել ամեն մի անձի կողմից: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքները և իրավական այլ ակտերը կարդալու ունակություն, այլև դրանք ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու հմտություն: Որոշակի հարցի լուծման համար անհրաժեշտ իրավական ակտի արագ հայտնաբերումը, դրա կիրառման ոլորտը որոշելը, իրավապահ և այլ մարմիններում գործեր վարելը պահանջում են իրավական կարգավորման հարցերում կողմնորոշվելու հատուկ գիտելիքների առկայություն: Այլ կերպ ասած՝ դրա համար անհրաժեշտ է, որ իրավաբանական օգնությունը ցույց տրվի ձեռնհաս անձի՝ մասնագետի կողմից: Որպես այդպիսին Նայասրանի Նանրապետությունում հանդես են գալիս այդ նպատակով հատուկ ստեղծված կառույցի (փաստաբանության) ներկայացուցիչները՝ փաստաբանները:

Փաստաբանների կողմից իրավաբանական օգնության փրամադրման կարգը սահմանված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված՝ «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքով, որով նախատեսվում են նաև փաստաբաններին ներկայացվող պահանջները, փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու կարգը, փաստաբանի կարգավիճակը, նրա իրավունքներն ու պարտականությունները, փաստաբանի գործունեության երաշխիքները և այլն: Փաստաբանությունը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Իհարկե, դա չի նշանակում, որ փաստաբաններից բացի այլ անձինք չեն կարող իրավաբանական օգնություն ցույց տալ: Սակայն, քանի որ պետությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և պատասխանատու է դրա պատշաճ որակի համար, ապա պարտավոր է ապահովել որակյալ, անհրաժեշտ մասնագիտական հմտություններ ունեցող իրավաբանների պատրաստման պայմանները, ինչպես նաև սահմանել փաստաբաններին ներկայացվող մասնագիտական և բարոյական պահանջներն ու չափանիշները: Նման կառուցակարգերի միջոցով պետությունն իրացնում է ոչ միայն մարդու իրավունքների իրականացումն ապահովող երաշխիքների ամրագրման իր առաջնակարգ գործառնությունը, այլև ընդգծում է համապատասխան նպատակի նվաճման գործում իր պատասխանատվությունը:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի անհրաժեշտ քաղաքացիաբարրերից է հանդիսանում որոշակի դեպքերում դրա անհատուցելիությունը: Սահմանադրությունը երաշխավորում է, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Նշված դրույթի ուժով պետությունն իրավական և սոցիալական պատասխանատվություն է ստանձնում բավարար ֆինանսական և այլ միջոցներ փրամադրել այն անձանց իրավաբանական ծառայություններ մատուցելու համար, ովքեր գրավում են սոցիալական անբարենպաստ վիճակում: Վերջիններս պետք է գրկված չլինեն իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար փաստաբանին դիմելու հնարավորությունից:

Պետական միջոցների հաշվին փրամադրվող փաստաբանը պետք է ունենա այնպիսի փորձ և ձեռնհասություն, որն անհրաժեշտ է նմանատիպ իրավիճակում հայտնված ցանկացած այլ անձի իրավունքների պաշտպանության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

ՏՏ օրենսդրության համաձայն՝ պետական միջոցների հաշվին իրավաբանական

օգնության փրամադրույնը երաշխավորվում է միայն քրեական և մասնակիորեն՝ քաղաքացիական գործերով: Ըստ «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով.

2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Պետական միջոցների հաշվին փրամադրվող իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը՝ իր կազմում գործող ստորաբաժանման՝ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 41 և 42-րդ հոդվածներով սահմանված կարգով: Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաև փաստաբանի նախաձեռնությամբ:

ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանել քրեական գործերով անվճար իրավաբանական օգնություն փրամադրելու հստակ կարգ և դեպքեր: Նամաձայն ՏՏ քր. դատ. օր.-ի 10-րդ հոդվածի 5-րդ մասի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն փրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից: Ինչպես տեսնում ենք, քրեական գործերով անվճար իրավաբանական օգնության փրամադրույնը քրեական վարույթն իրականացնող մարմնի համար իրավունք է, այլ ոչ թե պարտականություն, և թողնված է նրա հայեցողությանը: Օրենսդրական նման կարգավորումն ուղղակի հակասության մեջ է մտնում սահմանադրորեն ամրագրված պետության պարտականության հետ, որն անվերապահ է: Բացի դրանից, ոչ ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը, ոչ «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքը և ոչ էլ որեւէ այլ իրավական ակտ չեն սահմանում կասկածյալի կամ մեղադրյալի գույքային դրությունը որոշելու չափանիշները: Այդ պարագայում սահմանադրական երաշխիքը մնում է չիրացված:

Ինչ վերաբերում է «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 6-րդ հոդվածում նշված քաղաքացիական գործերով փրամադրվող անվճար իրավաբանական օգնությանը, ապա այն սահմանում է ոչ թե սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող անձանց որոշակի կարեգործիաներ, այլ ընդամենը թվարկում է երկու խումբ գործեր, ինչը չի կարող ապահովել օբյեկտիվորեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու կարիք ունեցող անձանց իրավունքների իրական պաշտպանությունը:

Վարչական կամ սահմանադրական արդարադատության ոլորտում, ինչպես նաև այլ բնագավառներում պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության մասին ՏՏ օրենսդրությունն ընդհանրապես լռում է, թեև պետության ստանձնած պարտավորության էությունից հետևում է, որ պետական միջոցների հաշվին փրամադրվող իրավաբանական օգնության իրավունքը պետք է լինի ոչ թե անորոշ և երեսակայական, այլ հստակ և իրական:

Նաշվի առնելով իրավաբանական օգնության իրավունքի բացառիկ կարեւորությունը և հստակապես դրա ապահովման գործում պետական միջոցների հաշվին երաշխավորվող իրավաբանական օգնության դերն ու նշանակությունը, անհրաժեշտ է նշել, որ վերջինս պետք է փրամադրվի այն դեպքում, երբ այդ է պահանջում արդարադատության շահը: Օրենսդրական թերի կարգավորման պայմաններում իրավակիրառող

սուբյեկտները, եւ հասկապես դատարանները, ելնելով յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից՝ պետք է իրենք որոշեն, թե արդյո՞ք արդարադատության շահը պահանջում է, որ համապատասխան անձին փրամադրվի անվճար իրավաբանական օգնություն այն դեպքում, երբ նա չունի բավարար միջոցներ փաստաբանին վճարելու համար:

2. Պաշտպան ունենալու իրավունքը հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող (քրեական հետապնդման մեջ գտնվող) անձին օրենքով վերապահված կարեւորագույն իրավունքներից մեկն է: Թեեւ այն հաճախ նույնացվում է քրեական գործերով արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից մեկի՝ կասկածյալի եւ մեղադրյալի պաշտպանության իրավունքի եւ դրա ապահովման հետ, սակայն իրականում հանդիսանում է դրա մի փարքը: Անձի համար պաշտպան ունենալու իրավունքը մեղադրանքը վիճարկելու, իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու հնարավորություններից մեկն է: Միաժամանակ, այն իրական երաշխիք է կասկածյալին եւ մեղադրյալին փրված մնացած իրավունքների (ցուցմունքներ փալու, նյութեր ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, բողոքներ ներկայացնելու, գործի նյութերին ծանոթանալու եւ այլնի) իրականացման համար, քանի որ մեղադրանքից պաշտպանվելու ընթացքում անձն իր պաշտպանից ստանում է նաեւ իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Օրենքի ուղղակի կարգավորման ուժով (ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մաս) քրեական գործով որպես պաշտպան կարող է հանդես գալ միայն փաստաբանը, այսինքն՝ այն անձը, ով օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է եւ երդում է փվել («Փաստաբանության մասին» ՏՃ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս): Դա նշանակում է, որ պետությունը երաշխավորում է որպես պաշտպան ընդգրկված յուրաքանչյուր փաստաբանի ձեռնհասությունը (տե՛ս սույն հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը): Պաշտպանի դատավարական գործունեության նպատակն է պարզել մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պարփոճել եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, պաշտպանել կասկածյալի եւ մեղադրյալի օրինական շահերն ու իրավաբանական օգնություն ցույց փալ նրանց: Նշված առաքելությունն իրականացնելու համար պաշտպանն օժտված է իրավունքների լայն շրջանակով՝ ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, առանձին, խորհրդապահական կարգով, անարգել փեսակցել իր պաշտպանյալի հետ, մասնակցել իր միջնորդությամբ կամ իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու եւ հետագոյնի համար, նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, հարուցել միջնորդություններ, ներկայացնել բացարկներ եւ բողոքներ, մասնակցել բոլոր ափյանների դատարանների նիստերին եւ այլն (ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մաս): Միաժամանակ, պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որեւէ գործողություն, հրապարակել այն փեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց փալու ընթացքում, ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները, ինչպես նաեւ կատարել օրենքով արգելված մի շարք այլ գործողություններ (ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-4-րդ մասեր):

Ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու անձի իրավունքի իրականացումն ապահովվում է նաև պետական իշխանության լիազոր մարմինների կամ պաշտոնատար անձանց վրա դրված մի շարք պարտականություններով: Այսպես, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացառապես նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել իրավիքելու որևէ պաշտպանի: Բացի դրանից, կասկածյալի կամ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա և նրա համար առաջացնել որևէ անբարենպաստ հետեւանք:

Մեկնաբանվող դրույթի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ երկրի հիմնական օրենքը հստակ նախանշում է այն պահը, որից սկսած անձը կարող է իրացնել սահմանադրական իր իրավունքը: Պաշտպանի մասնակցության սկզբնական պահը պայմանավորվում է ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման հետ, որով էլ քրեական դատավարությունում հենց որոշվում է անձի դատավարական կարգավիճակը՝ կասկածյալ կամ մեղադրյալ: Այսինքն՝ օրենսդրական մակարդակով անձի պաշտպան ունենալու իրավունքը ծագում է նրա նկատմամբ իրավասու մարմինների կողմից քրեական հետապնդում հարուցելու պահից: Մակայն պրակտիկայում այս իրավունքի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ելնել ոչ թե դրա ծագման պահի ձեռնարկից, այլ քրեական հետապնդման կամ մեղադրանքի բովանդակության էությունից, քանի որ գործնականում օրենքի ձեռնարկից ապահանջները միշտ չէ, որ համընկնում են իրական իրավիճակների հետ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ քրեական ընթացակարգի շրջանակներում իրավաբանորեն կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող անձը փաստացի և օբյեկտիվորեն փաստաբանի կողմից տրամադրվելիք իրավաբանական օգնության կարիք է զգում (օրինակ, բացառություն տալու համար իրավապահ մարմիններ իրավիքելու կամ բերման ենթարկվելու դեպքերում):

Պաշտպանության իրավունքի ծագման պահը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հիմք է ընդունում, այսպես կոչված, ինքնավար հասկացությունները՝ առաջարկելով տեսնել, թե ինչ է թաքնված գործի արտաքին տեսքից այն կողմ և ուսումնասիրել քննարկվող ընթացակարգի բուն էությունը: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ենթարեքստում Եվրոպական դատարանը հանդես է գալիս «մեղադրանք» հասկացության բովանդակային, այլ ոչ թե ձեռնարկի ընկալման օգտին: Ներկայումս, Եվրոպական դատարանը 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների համար «մեղադրանքը» ոչ միայն սահմանել է որպես «լիազորված պետական մարմնի կողմից անհատին տրված պաշտոնական ծանուցում այն մասին, որ նա քրեական հանցանք է գործել»³⁶, այլև նշել է, որ «որոշ արյաններում այն կարող է այլ միջոցների ձեռնարկով, որոնք կրում են վերոհիշյալ մեղադրանքի ենթադրությունը, և որոնք դրանց նման էականորեն ազդում են կասկածյալի վիճակի վրա»³⁷:

Այսպիսով, ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է դիտարկել դրա 1-ին մասի հետ անբաժանելի և փոխմասնական կապի մեջ ու հասկանալ այն

³⁶ Էքլեն ընդդեմ Գերմանիայի, 1982:

³⁷ Ֆոթին ընդդեմ Իտալիայի, 1982:

իմաստով, որ քրեական ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուրին երաշխավորվում է փաստաբանի կողմից իրավաբանական օգնության փրամադրումը՝ անկախ նրա ձևական (Փորմալ) դատավարական կարգավիճակից, այդ թվում՝ անկախ կասկածյալ կամ մեղադրյալ ճանաչելու հանգամանքից, եթե պետական իշխանության իրավասու մարմիններն անձի նկարմամբ կիրառել են նրա ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը, ներառյալ՝ ազատ փեղաշարժվելու իրավունքը իրապես սահմանափակող միջոցներ (օրինակ՝ իշխանության ներկայացուցչի կողմից անձին պահելը, քրեական վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար բերելը, առանց որևէ հաղորդակցման մեկուսացնելը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն էապես կսահմանափակի անձի ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը):

Նշված սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անձի ձեռական դատավարական կարգավիճակը, այլև նրա փաստացի վիճակը: Անձի նկարմամբ փաստացի իրականացվող քրեական հետապնդումը կարող է դրսևորվել մեղադրական գործունեության փարբեր պարունակող հետևյալ գործողություններում՝ կոնկրետ անձի դեմ քրեական գործ հարուցելով, նրա նկարմամբ բննչական գործողություններ կատարելով (խուզարկություն, ճանաչման ներկայացնել, հարցաքննություն) կամ այլ միջոցառումներ իրականացնելով, որոնք ուղղված են հանցանքի կատարման մեջ նրա մերկացմանը կամ վկայում են նրա նկարմամբ կասկածանքի առկայության մասին: Քանի որ նշված գործողություններն ուղղված են անձին մեղսագրվող փաստերի եւ հանգամանքների բացահայտմանը, իսկ որոշ դեպքերում՝ նաև նրա մեղքը հաստատող ապացույցների հավաքմանը, ապա նրան պետք է անհպաղ հնարավորություն ընձեռվի դիմելու փաստաբանի (պաշտպանի) օգնությանը: Դրանով իսկ կատեղծվեն անհրաժեշտ պայմաններ, որոնք հնարավորություն կտան անձին պարզաձ պարկերացում կազմել իր իրավունքների եւ պարտականությունների, իրեն ներկայացված կասկածանքի կամ մեղադրանքի մասին, հետևաբար՝ արդյունավետ պաշտպանվել, ինչպես նաև կերաշխավորեն հետագայում օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման անհնարիությունը:

Այս համարեքստում հարկ է անդրադառնալ քրեական վարույթն իրականացնող մարմին փաստաբանի հետ ներկայանալու՝ վկայի իրավունքին (ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետ): Թեև փաստաբանն իրավունք ունի ներկա գրնվելու հարցաքննությանը եւ վկային՝ օրենքով նախատեսված իրավունքները խախտող հարցեր փալու կամ գործողություններ կատարելու դեպքերում անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում, սակայն իրավասու չէ հարցեր փալու վկային (ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 6-րդ մաս): Ելնելով անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու գերակա գաղափարից, անարդար է ժխտել վկայի հարցաքննության ընթացքում փաստաբանի կողմից իր վստահորդին խորհրդավորություն փրամադրելու հնարավորությունը, ինչը կարող է արտահայտվել նաև հարցեր փալու միջոցով եւ լիովին բխում է այդ գործողությանը փաստաբանի մասնակցության նպատակից, այն է՝ վկային ցույց փալ իրավաբանական օգնություն: Ուստի հարցաքննության ժամանակ փաստաբանի կողմից վկային հարցեր փալու իրավունքը հանդիսանում է իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող երաշխիքներից մեկը:

Մեկնաբանվող դրույթի բնութագրական հատկանիշներից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր ոք ունի **իր ընտրությանը** պաշտպան ունենալու իրավունք: Չարգաց-

ներով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետում (քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով) պաշտպանի անհատական հրավիրման սկզբունքը՝ ՏՏ Սահմանադրությունը եւս նախապատվությունը փախուստ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպան ընտրելու իրավունքին: Դա առաջին հերթին նշանակում է, որ պաշտպանի թեկնածության եւ վարույթին նրա վերջնական մասնակցության հարցը կախված է կասկածյալի կամ մեղադրյալի կամաարտահայտությունից:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաեւ կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով: Նշված անձանց կողմից պաշտպանի հրավիրումը հիմք է հանդիսանում նրա կողմից պաշտպանությունն ստանձնելու համար, եւ իրավաբանական առումով, ըստ էության, փարբերություն չի դրվում, թե ում կողմից է հրավիրվում պաշտպանը: Սակայն բոլոր դեպքերում պաշտպանը կարող է քրեական գործով շարունակել իր դատավարական գործունեությունը միայն կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնության դեպքում: Այդ պատճառով իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ եւ փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաեւ որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը (ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդված):

Այդուհանդերձ, պաշտպան ընտրելու իրավունքը բացարձակ չէ եւ ելնելով որոշակի հանգամանքներից՝ կարող է սահմանափակվել: Մասնավորապես, անձը կարող է իրացնել պաշտպան ընտրելու իր իրավունքը, այսինքն՝ պաշտպանվել իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով միայն այն դեպքում, երբ բավարար միջոցներ ունի փաստաբանին վճարելու համար: Նման միջոցների բացակայության դեպքում անձին իրավաբանական օգնություն կտրամադրվի պետական միջոցների հաշվին, եթե «արդարադատության շահերը» իրավաբանական ներկայացուցչություն կպահանջեն: Կասկածյալը կամ մեղադրյալը, որին իրավաբանական օգնություն է տրամադրվել ՏՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջոցների հաշվին, չի կարող օգտվել պաշտպան ընտրելու նախապատվության իրավունքից եւ իրավունք չունի իր հայեցողությամբ պաշտպան ընտրել:

Իրավաբանական օգնության դիմաց վճարելու համար անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում եւս պաշտպանի ընտրության իրավունքը բացարձակ չէ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական գործերով օրենքը պաշտպանին ներկայացնում է մասնագիտական որոշակի պահանջներ (փաստաբանական գործունեության արտոնագրի առկայություն), եւ նույնիսկ անձի ցանկությունն ու նյութական հնարավորությունները բավարար չեն քրեական վարույթին փաստաբանից բացի այլ անձի որպես պաշտպան ներգրավելու համար:

Պաշտպան ունենալու իրավունքը սուբյեկտիվ է եւ իրացվում է անձի կամաարտահայտության դեպքում: Ընդամին, անձը ցանկացած պահի կարող է հրաժարվել արդեն իսկ ընտրած պաշտպանից, ինչը նշանակում է, որ նա նախընտրում է պաշտպանվել ինքնուրույն: Այդուհանդերձ, իրեն անձամբ պաշտպանելու անձի իրավունքը եւս բացար-

ձակ չէ: Օրենքով նախատեսված դեպքերում ինքնուրույն պաշտպանվելու անձի իրավունքը կարող է մերժվել, քանի որ որոշակի իրավիճակներում անհրաժեշտ է, որ կասկածյալը կամ մեղադրյալը ներկայացված լինի: Մասնավորապես, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ Ֆիզիկական կամ հոգեկան արարների հետեւանքով, կասկածյալը կամ մեղադրյալը չի փրկապետում կամ ոչ բավարար չափով է փրկապետում քրեական դատավարության լեզվին, հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է, քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղատունակության վիճակում, դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում, ինչպես նաեւ երբ դատարանն ամբաստանյալի նկատմամբ որպես դատական սանկցիա կիրառել է նիստերի դահլիճից հեռացնելը:

Վերոշարադրյալ դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի, իսկ վերջին պարագայում՝ պարտավոր է չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը եւ նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները: Փաստորեն, օրենքը նախատեսում է սուբյեկտիվ իրավունքի հարկադրական իրականացում, քանի որ նման իրավիճակներում առանց պաշտպանի օգնության կասկածյալը կամ մեղադրյալն օբյեկտիվորեն չի կարող ինքնուրույն պաշտպանվել կամ լիարժեք իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Այսպիսի իրավական կարգավորումը բխում է ոչ միայն կասկածյալի եւ մեղադրյալի, այլեւ արդարադատության շահերից:

3. Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է դատական վերանայման իրավունքը՝ որպես հանցագործության համար մեղադրվող անձանց ցրամադրվող լրացուցիչ դատավարական երաշխիք: Այն սերտորեն փոխկապակցված է արդար դատաքննության սահմանադրական երաշխիքի հետ (տես Սահմանադրության 19-րդ հոդվածի մեկնաբանությունը), ինչպես նաեւ Սահմանադրության 92-րդ հոդվածի հետ, որն ամրագրում է ՏՏ դատական համակարգի կառուցվածքը՝ որպես դատավճռի վերանայման իրավունքի կառուցակարգային հիմք:

Դատավճռի մերձեցման վերանայման իրավունքը սահմանված է մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով:

ՏՏ Սահմանադրության սկզբնական տեքստում դատավճռի վերանայման իրավունքն ամրագրված էր 40-րդ հոդվածի 3-րդ մասում, եւ որպես այս իրավունքի սուբյեկտ դիտվում էր «դատապարտյալը»: ՏՏ Սահմանադրության 2005թ. խմբագրությունն ընդլայնեց այս սահմանադրական երաշխիքի գործողության շրջանակը՝ «դատապարտյալ» եզրը փոխարինելով «յուրաքանչյուր ոք» եզրով: Դրա հիման վրա՝ այս սահմանադրական երաշխիքը տարածվում է նաեւ այն անձանց նկատմամբ, ովքեր դատավարության արդյունքում չեն դատապարտվել, սակայն ցանկանում են վիճարկել իրենց նկատմամբ կայացված եզրափակիչ դատական ակտեր: Սա ունի կարեւոր գործնական նշանակություն, քանի որ այն անձինք, ում նկատմամբ քրեական գործով վարույթը կարճվում է (օրինակ՝ հանցագործության համար սահմանված վաղեմության ժամկետն անցնելու կամ համաներման ակտ ընդունելու հետեւանքով), եւ անգամ այն անձինք, ովքեր դատա-

րանի դատարանում արդարացվում են (օրինակ՝ ապացույցների անբավարարության հիմքով), ողջամտորեն կարող են շահագրգիռ լինել, որպեսզի փոխվի իրենց նկատմամբ կայացված դատական ակտի տեսակը կամ հիմքը (օրինակ՝ վարույթը կարճելու մասին որոշման փոխարեն ընդունվի արդարացման դատավճիռ կամ արդարացման դատավճիռը կայացվի ոչ թե ապացույցների անբավարարության, այլ հանցադեպի բացակայության հիմքով):

Քննարկվող դրույթն ամրագրող սահմանադրական տեքստում օգտագործվող «դատավճիռ» եզրն ունի ինքնավար իմաստ, եւ այն չի նույնանում քրեադատարարական իրավունքում սահմանվող համանուն հասկացությանը: Մասնավորապես, ՏՏ քրեական դատարարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ կետը դատավճիռը սահմանում է որպես «դատական նիստում կայացված առաջին արյանի եւ վերաքննիչ դատարանի որոշումները ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու եւ այլ հարցերով»: Մինչդեռ մեղադրյալի նկատմամբ դատական վարույթի ավարտը կարող է ձեւակերպվել նաեւ «որոշում» անվանվող դատական ակտով (օրինակ՝ քրեական գործը կարճելու մասին, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումներ), եւ այդ բոլոր դատական ակտերը՝ անկախ անվանումից, սահմանադրաիրավական իմաստով «դատավճիռ» են եւ գտնվում են քննարկվող իրավունքի տիրույթում:

Ավելին, այս երաշխիքը պետք է տրամադրվի ոչ միայն այն անձանց, ովքեր մեղադրվել են քրեական օրենսգրքով նախատեսված հանցանք կատարելու համար եւ դատվել քրեական դատարարության օրենսգրքով սահմանված կարգով, այլ նաեւ այն անձանց, ովքեր դատվել եւ դատապարտվել են այնպիսի արարքի համար, որը թեեւ արգելված է ոչ թե քրեական օրենսգրքով, այլ ուրիշ օրենքով (օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով), սակայն իր բնույթով քրեական է: Այս մեկնաբանությունը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից³⁸:

Քննարկվող սահմանադրական իրավունքի բովանդակային տարրերը հետևյալներն են.

1) այն դատական օղակը, որն օժտված է տվյալ դատական ակտի վերանայման իրավասությամբ, պետք է ակտի կայացրած դատական մարմնի հետ ուղղահայաց եւ ոչ թե հորիզոնական կապի մեջ լինի: Օրինակ՝ առաջին արյանի դատարանի դատական ակտը մեկ այլ առաջին արյանի դատարանի կողմից վերանայելու մասին դրույթը կհակասեր քննարկվող սահմանադրական երաշխիքին:

2) Դատական վերանայման վարույթը, ներառյալ բողոքին ներկայացվող պահանջները, բողոքարկման հիմքերն ու ժամկետները, վերանայող դատարանում դատական քննության ընթացակարգը, վերանայող դատարանի լիազորությունները, պետք է կարգավորվեն օրենքով: Ընդ որում, այդ կարգավորումը պետք է համապատասխանի որոշակիության եւ ողջամտության պահանջներին: Օրինակ՝ չպետք է նախատեսվի բողոքարկման այնպիսի կարճ ժամկետ, որ անձը չունենա պարզաճ բողոք ձեւակերպելու եւ ներկայացնելու համար ողջամտորեն անհրաժեշտ ժամանակ:

3) Օրենքով ներկայացվող ձեւական պահանջները բավարարող բողոք բերելու պարագայում վերանայող դատարանը պարտավոր է քննության առնել այն եւ կայացնել

³⁸ Տե՛ս Gurepka v. Ukraine գործով վճռի (2005թ. սեպտեմբերի 6, գանգատ թիվ 61406/00) 55-րդ կետը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված հետեւյալ վճիռները. Galstyan v. Armenia, 2007թ. նոյեմբերի 15, գանգատ թիվ 26986/03, կետ 120, Ashughyan v. Armenia, 2008թ. հուլիսի 17, գանգատ թիվ 33268/03, կետ 104:

ըստ էության որոշում: Բողոքը վարույթ ընդունելու հարցում վերանայող դատական արյանը չպետք է օժտված լինի հայեցողական լիազորություններով:

4) Այս իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձի նկարմամբ կայացվում է դատավճիռ: Դատական վերանայման անգամ մեկ կառուցակարգից օգտվելու հնարավորության պարագայում այս իրավունքը համարվում է կենսագործված:

5) Քննարկվող իրավանորմը դատական վերանայման ծավալին որևէ պահանջ չի ներկայացնում: Ուստի, եթե դատավճռի վերանայման հնարավորությունը սահմանափակվի միայն իրավունքի հարցերով եւ չներառի նաեւ փաստի հարցերը, ապա դա չի խախտի քննարկվող սահմանադրական պահանջը: Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է համանման իրավական դիրքորոշում³⁹:

Թեև Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ մասը մասնակից պետություններին հնարավորություն է տալիս ազգային օրենսդրությամբ նախատեսել դատավճռի վերանայման իրավունքի առանձին սահմանափակումներ⁴⁰, քննարկվող իրավունքը ՆՏ Սահմանադրությամբ ձեւակերպված է որպես սահմանափակման ոչ ենթակա իրավունք: Ներառված մեր երկրում Կոնվենցիայով նախատեսված սահմանափակումները չեն գործում, եւ օրենսդրությամբ կամ իրավակիրառական պրակտիկայում այս իրավունքը որևէ սահմանափակման ենթակա չէ:

4. Սահմանադրության 20-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է լրիվ կամ մասնակի ներման խնդրանքով դիմելու՝ յուրաքանչյուր դատապարտյալի իրավունքը: Այս իրավունքը փոխկապված է ներում շնորհելու՝ Նանրապետության Նախագահի բացառիկ լիազորության հետ (տե՛ս Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետի մեկնաբանությունը)՝ հանդիսանալով հանցագործության համար դատապարտված անձանց ներման խնդրագրերը քննարկելու սահմանադրական երաշխիք: Ներում հայցելու սահմանադրական իրավունքը փոխկապված է նաեւ Սահմանադրության 95-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված այն իրավանորմի հետ, համաձայն որի՝ ՆՏ արդարադատության խորհուրդը լիազորված է օրենքով սահմանված կարգով Նանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք հայտնել ներման հարցերի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը մերժել է 20-րդ հոդվածի 4-րդ մասի լայն մեկնաբանությունը, որով այն դիմում էր սահմանադրական հիմք ոչ միայն ներման խնդրանքի, այլ ընդհանրապես պարտից ազատելու կամ պարտի մեղմացման քրեաիրավական ընթացակարգերի համար (տե՛ս 2008թ. փետրվարի 5-ի ՍԳՌ-733 որոշումը):

Սահմանադրական դատարանի մեկնաբանմամբ՝ ներման ինստիտուտը հանցանք կատարած անձի նկարմամբ մարդու արժանապարտությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսևորում է (տե՛ս ՍԳՌ-733 որոշումը):

Ներման խնդրանքով Նանրապետության Նախագահին դիմելու իրավունքը վերապահված է յուրաքանչյուր դատապարտյալի՝ անկախ կատարած հանցանքի ծանրությունից եւ կիրառված պարտից: Դատապարտյալներն այս սահմանադրական իրավունքից կարող են օգտվել պարտի լրելու ընթացքում, ինչպես նաեւ դրանից հետո՝ քանի

³⁹ Sten v. Krombach v. France գործով վճռի (2001թ. փետրվարի 13, զանգատ թիվ 29731/96) 96-րդ կետը:

⁴⁰ Մասնավորապես, Կոնվենցիան սահմանում է, որ դատավճռի վերանայման իրավունքը կարող է սահմանափակվել, երբ (1) հանցագործությունն անմշան է, (2) անձը դատվել է բարձրագույն դատական մարմնի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան եւ (3) անձը դատապարտվել է իր արդարացման դեմ բերված բողոքի քննության արդյունքում:

դեռ նրանց դատվածությունը մարված կամ հանված չէ: Միեւնույն ժամանակ, Նանրապետության Նախագահը լիազորված է կիրառել ներման փարաբնույթ կառուցակարգեր՝ լրիվ կամ մասնակիորեն ազատել հիմնական կամ լրացուցիչ պարժից, պարժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պարժարեսակով, վերացնել դատվածությունը (ՏՏ քրեական օրենսգիրք, 83-րդ հոդված):

Ավելին, 20-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը Սահմանադրության 43-րդ հոդվածի հիմքերով սահմանափակման ենթակա չէ: Այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (Սահմանադրության 44-րդ հոդված):

ՄԴՈ-733 որոշմամբ ՏՏ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «...ներում շնորհելու համար որեւէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՏՏ Նախագահի հայեցողությանը. Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պարժարեսակներով ու պարժազափերով»:

ՄԴՈ-502 որոշմամբ (2004թ. օգոստոսի 13) եւս ՏՏ սահմանադրական դատարանն ընդգծել է Նանրապետության Նախագահին վերապահված ներման սահմանադրական լիազորության եւ, համապարասխանաբար, դատապարտյալների՝ ներում հայցելու իրավունքի բացարձակ բնույթը: Նշված որոշմամբ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (Նոտի 1998թ. կանոնադրություն) ճանաչվել է ՏՏ Սահմանադրությանը չհամապարասխանող՝ *inter alia*, այն հիմքով, որ «[Միջազգային քրեական] Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավագործության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՏՏ ընդհանուր իրավագործության ներքո գրվող անձինք Կանոնադրության [...] պահանջներին համապարասխան գրվում են ՏՏ Սահմանադրության[մբ] նախատեսված ներման իրավունքից» (տե՛ս նշված որոշման 17-րդ կետը):

Ի փարբերություն 20-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 5-րդ մասերի՝ 4-րդ մասը չի պարունակում համապարասխան իրավունքի իրացման ընթացակարգի օրենսդրական կանոնակարգման պահանջ: Ըստ այդմ, ներում հայցելու՝ դատապարտյալների իրավունքն այն եզակի սահմանադրական իրավունքներից է, որը մանրամասն կարգավորված է ենթաօրենսդրական մակարդակով⁴¹ Նանրապետության Նախագահի «Ներման խնդրագրերի կարգը հաստատելու մասին» 2003թ. նոյեմբերի 19-ի հրամանագրով, որով հաստատվել է Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու կարգը:

Համաձայն նշված Կարգի՝ Նանրապետության Նախագահը ներման խնդրագրերը բավարարելու կամ մերժելու մասին հրապարակում է հրամանագրեր: Իսկ դիմողները փեղեկացվում են իրենց խնդրագրերի քննարկման արդյունքների մասին (11-րդ կետ):

Ներման խնդրագրերը, նախքան Նանրապետության Նախագահի քննարկմանը ներկայացնելը, նախապես քննարկվում են նրա կողմից կազմավորվող Նանրապետության Նախագահին առընթեր ներման հարցերի հանձնաժողովում (8-րդ եւ 9-րդ կետեր):

Ներման խնդրագրերը քննարկելիս հաշվի են առնվում կատարված հանցագոր-

⁴¹ Այնուհանդերձ, Սահմանադրության 95-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա՝ ներման խնդրագրի քննարկման ընթացակարգին վերաբերող առանձին հարցեր կանոնակարգվում են օրենքով՝ ՀՀ դատական օրենսգրքով: Համաձայն նշված օրենսգրքի 171-րդ հոդվածի՝ Հանրապետության Նախագահի հարցմամբ Արդարադատության խորհուրդը կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ: Արդարադատության նախարարը եւ գլխավոր դատախազը հրավիրվում են ներման հարցերի վերաբերյալ Արդարադատության խորհրդի նիստին եւ մինչեւ խորհրդի որոշման կայացումն իրավունք ունեն կարծիք հայտնելու ներման հարցերի կապակցությամբ:

ծության բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, դատապարտության անձը, պատիժը կրելու վայրում նրա վարքը, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը, պատժի կրած ժամկետը, առողջական վիճակը, ընտանիքի սոցիալական վիճակը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ (Կարգի 3-րդ կետ): Այն անձանց, որոնց նախկինում ներում է շնորհվել կամ որոնց նկատմամբ նախկինում կիրառվել է համաներում կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով, եթե նրանք մինչև դատվածության մարումը կամ վերացումը նորից դիտարկյալ հանցագործություն են կատարել, կարող է ներում շնորհվել միայն բացառիկ դեպքերում (Կարգի 4-րդ կետ):

Առանձին խմբերի պարկանող դատապարտյալների համար սահմանվում է ներման խնդրագրերի քննարկման հատուկ կարգ: Այսպես, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերն ուղարկվում են ՏՎՃՊԵԿ դատարանի նախագահին և ՏՏ արդարադատության նախարարին: Վերջիններս ոչ ուշ, քան դրանք ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, Հանրապետության Նախագահին են ներկայացնում եզրակացություններ՝ նշելով հանցագործության կատարման հանգամանքները, դրա առաջացրած հետևանքները, դատապարտյալի անձի մասին տվյալները և իրենց առաջարկությունները յուրաքանչյուր խնդրագրի վերաբերյալ (Կարգի 6-րդ կետ):

Կարգը սահմանում է խնդրագրերի կրկնակի ներկայացման փարբերակված ժամկետներ: Այսպես, ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե ուշադրության արժանի նոր հանգամանքներ չկան, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված ներման նոր խնդրագրերը Հանրապետության Նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից մեկ տարի անց, իսկ այլ հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված նոր խնդրագրերը՝ վեց ամիս անց (Կարգի 12-րդ կետ):

5. ՏՏ Սահմանադրության մեջ փոփոխված պարճառված վնասի հատուցման իրավունքի ամրագրումը կարևոր առաջընթաց քայլ է, որովհետև փոփոխված անձանց իրավունքների պաշտպանությունն առաջին անգամ բարձրացվեց սահմանադրական մակարդակի և ճանաչվեց սահմանադրաիրավական ինստիտուտ:

Հանրաճանաչ է այն գաղափարը, որ քրեական գործերով արդարադատության իրականացման սկզբունքները պետք է կիրառվեն ինչպես մեղադրյալների և իրավախախտների, այնպես էլ հանցագործության զոհերի համար: Դրանով պայմանավորված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1985 թվականի նոյեմբերի 29-ին 40/34 բանաձեռով ընդունեց «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը»: Այս փաստաթղթում առաջին անգամ ՄԱԿ-ի կողմից սահմանվեց հանցագործությունից փոփոխված անձանց բնորոշումը, նրանց շրջանակը և իրավունքները: Հռչակագիրը ՄԱԿ-ի անդամ երկրներին կոչ է անում հանցագործությունից փոփոխված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Քանի որ շար երկրների օրենսդրության մեջ «փոփոխ» հասկացությունն սրացել է օրենսդրական փարբեր ձեակերպում, հետևաբար, առավել նպատակահարմար է եղել Հռչակագրում օգտագործել «զոհ» եզրույթը: Հռչակագրում տրված է զոհի հասկացությունը, ինչը միջազգային իրավական առումով հեշտացնում է ներպետական օրենսդրության

րության մեջ այդ հասկացության բնորոշումը: Նամաձայն Նոչակագրի «Ա» բաժնի 2-րդ կետի՝ հանցագործության գոհ են համարվում այն անձը կամ անձինք, ում հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները: Նոչակագրի համաձայն՝ «գոհ» հասկացության մեջ մտնում են՝

- հանցագործությունից անմիջական վնաս կրած անձը,
- փուժողի մերձավոր ազգականը և խնամարկյալը,
- անձինք, որոնց վնաս է հասցվել աղետի վիճակում գտնվող փուժողին օգնություն ցույց տալու ընթացքում կամ վիկտիմիզացիան կանխելիս:

«Զոհ» հասկացության մեկնաբանությունը ցույց է տալիս, որ այն համարժեք է ՆՇ քրեական դատարանության օրենսգրքում օգտագործվող «փուժող» հասկացությանը, բայց առավել ընդարձակ բովանդակությամբ: Եթե Նոչակագրում «գոհ» հասկացությունն առավելապես օգտագործվում է նյութաիրավական իմաստով, ապա քրեական դատարանությունում փուժողը կիրառվում է որպես դատարանության սուբյեկտ:

Նոչակագրից հետևում է, որ գոհը պետք է հասկանալ լայն իմաստով, որովհետև խոսքը վերաբերում է ոչ միայն հանցագործությունից, այլև հանրային իշխանության չարաշահումներից փուժած անձանց պաշտպանությանը: Նոչակագրում փեղ գրած կարգավորումն արդարացված է, որովհետև անձը կարող է փարբեր իրավախախտումների գոհ դառնալ:

Նոչակագրի այս տրամաբանությունն իր ամրագրումն է ստացել նաև ՆՇ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում, որում նշված է. «Տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով»: Ինչպես տեսնում ենք, ՆՇ Սահմանադրությունում «փուժող» հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով, այսինքն՝ դրա փակ պետք է հասկանալ քրեական, քրեադատարական, վարչական, քաղաքացիաիրավական և այլ հարաբերություններից փուժած՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Նոչակագրում հանցագործության գոհ դարձած անձանց շահերի պաշտպանության համար ամրագրված են այն նվազագույն չափանիշները, որոնք իրենց ամրագրումը պետք է ստանան ազգային օրենսդրության մեջ: Մասնավորապես, հանցագործությունից և իշխանության չարաշահումներից փուժած անձանց համար պետք է ապահովել՝

1. արդարադատության մատչելիություն և արդարացի վերաբերմունք, որը ենթադրում է՝

ա) գոհերին տեղեկությունների տրամադրում դատական քննության ժամկետների և ընթացքի, նրանց գործերի քննության արդյունքների մասին, հատկապես այն դեպքերում, երբ նրանց կողմից պահանջվել են այդպիսի տեղեկություններ,

բ) դատական քննության փուլերում գոհերի կարծիքների ու ցանկությունների ներկայացման և քննարկման հնարավորության ապահովում ազգային քրեական արդարադատության համակարգին համապատասխան այն դեպքում, երբ շոշափվում են նրանց անձնական շահերը, իհարկե՝ առանց մեղադրյալի շահերի վնասման,

գ) դատական քննության ողջ ընթացքում գոհերին ցույց տալ պարզաճ օգնություն,

դ) գոհերի համար անհարմարությունները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցների ձեռնարկում, ինչպես փուժողների, այնպես էլ նրանց ընտանիքների և նրանց կողմի վկաների անվտանգության ապահովում, սպառնալիքներից և վրեժխնդրությունից

նրանց պաշտպանում,

ե) գործի քննության ժամկետների չարդարացված ձգձգումների կանխում եւ զոհերին հասցված վնասի հատուցման վերաբերյալ որոշման կայացում.

2. ինչպես հանցագործություն կատարած անձի, այնպես էլ պետության կողմից վնասի փախհատուցում, երբ կատարվել է արարք, որը հանգեցրել է վիկտիմիզացման.

3. փոխհատուցում.

4. սոցիալական օգնություն⁴²:

Պետք է նշել, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում րոտոդների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ առանձին դրույթ նախատեսված չէ: Սակայն Եվրոպական կոնվենցիան բովանդակում է դրույթներ հանցագործությամբ եւ իշխանության չարաշահմամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ: Մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանքի փակ գտնվելու զոհ է դարձել՝ ի խախտումն սույն հոդվածի դրույթների, վնասի հատուցման իրավունք ունի, կամ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով նախատեսված իրավունքները եւ ազատությունները խախտված են, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, եթե նույնիսկ նման խախտումը կատարվել է ի պաշտոն գործող անձանց կողմից:

Հանցագործությունից րոտոժամ անձանց իրավունքների եւ օրինական շահերի անմիջական պաշտպանությանն է ուղղված 1983 թվականի նոյեմբերի 24-ին Եվրոպայի խորհրդի ընդունած՝ Բռնությամբ հանցագործությունների զոհերին վնասի հատուցման մասին կոնվենցիան⁴³: Նշված կոնվենցիան նպատակ է հետապնդում անդամ երկրներին պարտավորեցնել մշակելու եւ ներդնելու հանցագործությունից րոտոժամ անձանց վնասի՝ պետության կողմից հատուցման համակարգ հասկապես այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը հայրնի չէ կամ չունի միջոցներ: Այս կոնվենցիան 2001 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից, բայց չի վավերացվել: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունը մինչև կոնվենցիան վավերացնելը պետք է քննարկի եւ հստակ հաշվարկ կատարի հանցագործությամբ պատճառված վնասն իր կողմից հատուցելու հնարավորության մասին:

Ճիշտ է, այսօր պետությունը դժվար թե կարողանա ամբողջությամբ հատուցել հանցագործությամբ պատճառված վնասը, բայց որոշ հանցագործությունների վերաբերյալ, կարծում ենք, համապատասխան վերապահումներով այն պետք է կիրառել (օրինակ՝ քաղաքական բռնություններից, րետորիզմից (ահաբեկչությունից) կամ բնապահպանական աղետներից զոհ դարձած անձանց համար):

Այն հիմնական միջազգային իրավական ակտը, որն անմիջականորեն կարգավորում է րոտոժողի իրավական վիճակը քրեական իրավունքում եւ քրեական դատավարությունում, 1985 թվականի հունիսի 28-ի՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի N R (85) 11 հանձնարարականն է՝ «Քրեական իրավունքի եւ քրեական դատավարության շրջանակներում րոտոժողի կարգավիճակի մասին»: Նշված հանձնարարականի ներածական մասում ուղղակի սահմանված է, որ այս փաստաթուղթը մշակվել է այն րրամաբանությամբ, որ ավանդաբար քրեական արդարադատության համակարգն ուղղված է

⁴² Международные акты о правах человека: Собрание документов. М., Изд. НОРМА, էջեր 165-167:

⁴³ Ст'u Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., СПАР, 1998, էջեր 81-85:

եղել պետության և իրավախախտի միջև հարաբերությունների կարգավորմանը, իսկ այդպիսի մոտեցումը հաճախ հանգեցրել է ոչ թե հանցագործությունից փոժած անձանց մոտ առաջացած խնդիրների լուծման, այլ դրանց ավելացման: Հանձնարարականում նշվում է, որ արդարադատության հիմնական գործառույթը պետք է հանդիսանա փոժողների շահերի պաշտպանությունը, անհրաժեշտ է փոժողի միջնորդությունները հաշվի առնել քրեական դատավարության բոլոր փուլերում, պետք է բարձրացնել փոժողի վարահույությունը քրեական արդարադատության նկատմամբ և խրախուսել նրա համագործակցությունը հարկապես որպես վկա, արդարադատության համակարգում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փոժողին հասցված ֆիզիկական, հոգեկան, նյութական և սոցիալական վնասին և քննարկել, թե ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկել այդ կապակցությամբ նրա պահանջների բավարարման համար:

ՆՏ Սահմանադրությունը բավականին ընդհանուր գծերով է ներկայացնում փոժողի իրավունքների պաշտպանությունը: Պետք է նշել, որ փոժողի իրավունքների պաշտպանության ապահովման հետ կապված՝ ՆՏ Սահմանադրության մեջ փոժողի արդարադատության մատչելիության իրավունքը սահմանադրական մակարդակով պարզաճ չկարգավորվեց: Սահմանադրության մեջ շեշտադրումը կատարվում է սահմանադրաիրավական այս ինստիտուտի միայն մի սկզբունքի, այն է՝ օրենքով սահմանված կարգով փոժողին հասցված վնասի հատուցման վրա: Դրանում իրենց ամրագրումը չստացան միջազգային իրավական այն զարգացումները, որոնք վերաբերում են՝ ա) արդարադատության մատչելիությանը, բ) վնասի հատուցմանը, գ) փոխհատուցմանը, դ) սոցիալական օգնությանը: Դա հիմք է տալիս նշելու, որ փոժողների սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, նրանց դատավարության մեջ ներգրավելու հետևողական մեխանիզմների նախատեսումը պետք է դառնա ՆՏ սահմանադրական դատարանի գործունեության առաջնային ուղղություններից մեկը: Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության միջոցով կարող է ապահովել միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ փոժողների այն հիմնական իրավունքների պաշտպանությունը, որոնք ՆՏ օրենսդրության մեջ իրենց ամրագրումը դեռևս չեն ստացել:

Ճիշտ է, ՆՏ օրենսդրության մեջ «փոժող» հասկացությունը տրված է միայն ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 58), բայց ՆՏ Սահմանադրության մեջ այն չի օգտագործվում միայն քրեադատավարական իմաստով: Սահմանադրական բնորոշումից հետևում է, որ «փոժող» հասկացությունը պետք է հասկանալ ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական առումով: ՆՏ Սահմանադրությամբ՝ փոժողը հանցագործությունից, իրավախախտումներից կամ իշխանության չարաշահումներից վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձն է: Տվյալ դեպքում փոժողի իրավական կարգավիճակը որոշվում է նրա փաստական դրությամբ, անկախ այն բանից՝ դատավարության սուբյեկտ ճանաչվել է, թե՛ ոչ: Դա նշանակում է, որ փոժողի իրավունք ունի իր շահերի արդյունավետ պաշտպանության կամ իրեն պարճառված վնասի հատուցման համար դիմելու դատարան կամ ներպետական իրավասու մարմիններին:

Տուժողը դատավարության մեջ ներգրավվելուց հետո ձեռք է բերում դատավարության մասնակցի կարգավիճակ, այսինքն՝ կարող է հանդես գալ որպես փոժող, քաղաքացիական հայցվոր և այլն: Դատավարությունում անձին փոժող ճանաչելու նպատակը ոչ թե նրան վնաս հասցնելու փաստի ամրագրումն է, այլ դատավարությանը ներգրավելը, դատավարական իրավունքներով ու պարտականություններով օժտելը և դրանց իրականացումն ապահովելը, ինչը հանգեցնում է նրա խախտված իրավունքների պաշտպանության:

պանությանը եւ հասցված վնասի հատուցմանը:

Քրեական դատավարությունում փուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրվող արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաեւ այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը (ՆՃ քր. դատ. օր-ի հոդված 58): Քրեադատավարական օրենսդրությունը փուժողին համարում է դատավարության ինքնուրույն սուբյեկտ եւ վերապահում է դատավարական լայն իրավունքներ: Քրեական դատավարության բոլոր փուլերում փուժողի մասնակցության ապահովման հետ կապված խնդիրներ հիմնականում չկան:

Քրեաիրավական հարաբերությունների հանրային բնույթից ելնելով՝ քրեական հետապնդում իրականացնելու իրավունքը վերապահված է պետությանը՝ հանձին նրա քրեական հետապնդման մարմինների, այսինքն՝ փուժողը հանրային մեղադրանքի գործերով չի կարող կանխորոշել գործի քննության ընթացքը կամ անձին պատասխանատվության ենթարկելու սահմանները: Սակայն փուժողն իրավունք ունի իր մտքեցումն արտահայտել այդ հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ դատական կարգով բողոքարկել քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշումները: Բոլոր դեպքերում, քրեական դատավարությունում փուժողի շահերը չեն կարող հանգեցվել միայն հանցագործությանը նրան հասցված նյութական վնասի հատուցման, դրանք մեծապես կապված են նաեւ մեղադրանքի ապացուցվածության, դրա ծավալի, քրեական օրենքի կիրառման եւ պարժի նշանակման հարցերի քննարկման հետ, որովհետեւ շար դեպքերում վնասի հատուցման հնարավորությունը եւ դրա չափերի որոշումը կախված է այդ հարցերի ճիշտ լուծումից:

ՆՈՂՎԱԾ 21

1. *Վանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

2. *Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Զիարտարված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:*

1. Անմեղության կանխավարկածը համարվում է այն ժողովրդավարական հիմնարար իրավական սկզբունքներից, որն օգտագործվում է իշխանության հնարավոր չարաշահումների սահմանափակման՝ անձին անհիմն մեղադրանքներից պաշտպանելու համար: Անմեղության կանխավարկածը՝ որպես արդարադատության սահմանադրական սկզբունք, ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ըստ օրենքի, հրապարակային դատաքննությամբ: Նմանափայ նորմ նախատեսված է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասում: Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպա-

կան կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

ՆՏ Սահմանադրության 21-րդ հոդվածի 1-ին մասը ենթադրում է երկու առանձին իրավադրույթներ.

ա/ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով: Այս դրույթը սերտորեն կապված է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի հետ, քանի որ մեղադրվողի համար ապահովում է մեղավորության ապացուցման պարզաձև իրավական ընթացակարգ՝ սահմանված օրենքով.

բ/ հանցագործության համար մեղադրվողի մեղքը համարվում է հաստատված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռով: Միայն դատարանն իրավունք ունի հանցանքի կատարման մեջ անձին մեղավոր ճանաչել, որի իրավական ձեւն օրինական ուժի մեջ մտնող դատավճիռն է:

Մեկնաբանվող նորմում օգտագործվում է «հանցագործության համար մեղադրվող» հասկացությունը, սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ անմեղության կանխավարկածի գործողությունը սահմանափակվում է միայն քրեական արդարադատության շրջանակներում: Սահմանադրության մեջ «հանցագործության համար մեղադրվող» հասկացությունը պետք է մեկնաբանել ինքնավար ձեւով. այն տարածվում է ոչ միայն քրեական, այլև վարչական եւ կարգապահական իրավախախտումների համար մեղադրելու դեպքերի վրա: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «քրեական մեղադրանք» հասկացությունը նույնպես կիրառում է ինքնավար կերպով՝ այն կապելով ոչ թե նրա հետ, թե ազգային օրենսդրության որ ճյուղին է վերաբերում մեղսագրվող արարքը՝ քրեական, վարչական, թե՛ կարգապահական, այլ՝ թե հասարակական ինչպիսի վրանգավորություն է այն ներկայացնում եւ ինչպիսի պարտիժ է կիրառվում այդ իրավախախտման համար, եւ այլն: Ավաճից բխում է, որ անմեղության կանխավարկածի պահանջների պահպանման պարտականությունը տարածվում է ոչ միայն հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի, այլեւ անձանց հանրային իրավական պարտասխանարկության ենթարկելու իրավասություն ունեցող այլ սուբյեկտների վրա:

Սահմանադրությունում տեղ գրած՝ «համարվում է անմեղ» հասկացությունից բխում է, որ անձն անմեղ է եւ նրա մեղավորության վերաբերյալ ոչ մի հետեւություն մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը իրավաբանական նշանակություն չունի: Անմեղության կանխավարկածը մեղադրյալի օբյեկտիվ կարգավիճակն է, ինչը նշանակում է՝

- անձն անմեղ է համարվում պետության կողմից, չնայած առկա են նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածներ կամ նրան մեղադրանք է առաջադրվել,

- մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անձին անմեղ համարելու պարտականությունը կախված չէ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կարծիքից կամ ներքին համոզումներից,

- դատավորն իր պարտականությունները կատարելիս չպետք է ելնի այն համոզումներից, որ մեղադրյալը կատարել է հանցագործություն,

- հանցագործության համար մեղադրվելու կապակցությամբ անձի իրավունքների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին: Նման սահմանափակումները չեն կարող համարժեք լինել քրեական պարտին:

ՆՏ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված է, որ կասկածյալի եւ

մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պարօժի փարրեր: Անմեղության կանխավարկածի սահմանադրական բովանդակությունից բխող այս դրույթի արժեքաբանական ներուժը դրսևորվում է ոչ այնքան իրավակիրառ ոլորտում, որքան իրավաստեղծ գործընթացում: Այսպես, անմեղության կանխավարկածից բխող՝ «քրեադատարական հարկադրանքի միջոցները չպետք է պարունակեն պարօժի փարրեր» դրույթը պահանջում է.

- նախնական կալանքի փակ պահելու պայմանները եւ իրավասահմանափակումների բնույթը չպետք է լինեն այնպիսին, որ վարույթն իրականացնող մարմնի համար ծառայեն որպես ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու միջոց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաճախ նշում է, որ նախնական կալանքը չպետք է օգտագործվի որպես նախնական պարիժ (Լեւրելի գործով 26.07.1991թ. որոշում, Տոմազի գործով 27.08.1992թ. վճիռ):

- Նախնական կալանքի ռեժիմը, իրավասահմանափակումների բնույթը եւ ծավալը օրենքով պետք է կարգավորվեն այնպես, որ մի կողմից, չխաթարվի ընտրված խափանման միջոցի նպատակների իրականացումը, մյուս կողմից՝ այդ սահմանափակումները չլինեն անհարկի, հետեւաբար՝ պարունակեն պարօժի փարրեր եւ հավասարեցվեն պարօժի կատարման պայմաններին:

Անմեղության կանխավարկածը՝ որպես մեղադրյալի օբյեկտիվ կարգավիճակ, չի նշանակում, որ ՀՀ Սահմանադրությունը բացառում է մեղադրյալի մեղավորությունը: Լինելով օբյեկտիվ կարեգորիա՝ անմեղության կանխավարկածը կարող է հերքվել քրեական հետապնդման մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցներով:

Ընդունված է այն մտրեցումը, որ անմեղության կանխավարկածը գործում է մինչև մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Սակայն կոնկրետ հանցագործության դեպքում անմեղության կանխավարկածի սոցիալ-փիլիսոփայական ներուժը սահմանափակվում է մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև դատավաժության մարելը կամ հանելը: Այս ժամանակահատվածում անձը կրում է ոչ միայն հանցագործության կատարման հետեւանքով ծագած քրեաիրավական բացասական հետեւանքները, այլ կարող են սահմանափակվել նաեւ նրա այլ իրավունքներ: Կոնկրետ հանցագործության համար պարիժը կրելուց եւ դատավաժությունը մարելուց կամ հանելուց հետո անձը, նախկինում կատարած հանցագործության առումով, կրկին ձեռք է բերում անմեղության կանխավարկածի իրավունք, ինչը նշանակում է, որ անթույլատրելի է նախկինում հանցագործության համար դատապարտված լինելու փաստով սահմանափակել նրա ընդհանուր իրավական կարգավիճակը: Այսպես, եթե անձը դատապարտվել է որեւէ հանցագործության համար, սակայն հետագայում դատավաժությունը մարել կամ հանվել է, ապա անմեղության կանխավարկածի ուժով անձը չի կարող զրկվել աշխատանքային, պետական ծառայության անցնելու եւ այլ սահմանադրական իրավունքներից:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է խոսքի ազատության իրավունքը, որի պայմաններում անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե արդյո՞ք մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելն անձի մեղավորության վերաբերյալ հայտարարությունները խախտում են անմեղության կանխավարկածի իրավունքը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ քրեական գործերով դատաքննության վերաբերյալ լրավամիջոցների կողմից փեդեկոյություն հաղորդելու մասին թիվ (2003) 13 հանձնարարականի հավելվածի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անմեղության կանխավար-

կաճը հանդիսանում է արդար դադարաւանդութեան իրավունքի անբաժանելի մասը: Նեպոտաբար, ընթացող դադարաւանդութեան վերաբերյալ ՁԼՄ-ով կարծիքներ կամ տեղեկություններ կարող են հաղորդվել այն դեպքում, եթե դա չի վնասում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղութեան կանխավարկածին:

Նանրային պաշտոնատար անձինք մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը անձի մեղավորութեան վերաբերյալ հայտարարություններում պէտք է դրսևորեն հապուկ զսպվածութիւն: Այսպէս, դատական իշխանութեան մարմինների կողմից անմեղութեան կանխավարկածի սկզբունքի խախտում է համարվում, երբ մեղադրյալը դեռեւս օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել մեղավոր, իսկ նրա նկատմամբ կայացված դատական որոշումն արտացոլում է նրա մեղավորութեան վերաբերյալ կարծիք: Անմեղութեան կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատական իշխանութեան, այլեւ հանրային իշխանութեան այլ մարմինների կողմից անձի մեղավորութեան վերաբերյալ արված հայտարարություններով: Այսպէս, Եվրոպական դատարանն *Այեն Դե Ռիբենոնն ընդդէմ Ֆրանսիայի* (10.02.95թ.) գործով արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Անմեղութեան կանխավարկածը խախտվում է, եթե դատարանը մեղադրյալին մեղավոր է համարում, մինչդեռ նրա մեղավորությունը նախապէս ապացուցված չէ: Սակայն 6-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման ոլորտը չի սահմանափակվում դատական իշխանութեամբ /կեդ 35/: Բացի այդ, Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիան պէտք է մեկնաբանվի այնպէս, որ երաշխավորի կոնկրետ եւ իրական իրավունքները, եւ ոչ թե վերացական ու տեսական իրավունքները: Դատարանը գտնում է, որ անմեղութեան կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլ նաեւ հանրային իշխանութեան այլ մարմինների կողմից»:

Անձի մեղավորութեան վերաբերյալ հայտարարություններ անելու հարցում հարաբերական ազատութեամբ են օժտված դատախազները: *Բուրկյալիչուսն ընդդէմ Լիւվալյի գործով* (26.03.2002) դատախազը դիմումատուին պարզամտութեամբ անձեռնմխելիութեանից զրկելու միջոցառութեամբ դիմել է պաշտամենտին, որում թույլ է տրվել դիմումատուի մեղավորութեան վերաբերյալ ձեւակերպումներ: Եվրոպական դատարանն այս կապակցութեամբ նշել է. «Թեւեւ դատախազի հայտարարությունները որոշակի անհանգստութեան տրեղիք են տալիս, սակայն այն կարելի է մեկնաբանել որպէս պարզ պնդում այն մասին, որ առկա են բավարար ապացույցներ, որով կարելի է հիմնավորել դիմումատուի մեղավորությունը եւ դրանով իսկ պարճառաբանել պաշտամենտին ուղղված միջոցառությունը՝ դիմումատուի դէմ քրեական գործ հարուցելու համաձայնութիւն ստանալու համար»: Նույն գործով Եվրոպական դատարանը Լիւվալյի օրենսդիր մարմնի նախագահի՝ դիմումատուի մեղավորութեան վերաբերյալ հայտարարությունը գնահատել է որպէս անմեղութեան կանխավարկածի խախտում:

Սահմանադրական իրավունքի եւ քրեական դատավարութեան իրավունքի գիտութեան մեջ մշտապէս քննարկվել է այն հարցը, թե նախնական քննութեան ընթացքում չարդարացնող հիմքերով քրեական գործով վարույթի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումն արդյո՞ք հակասում է անմեղութեան կանխավարկածի սահմանադրական սկզբունքին: Նախնական քննութեան ընթացքում չարդարացնող հիմքերով քրեական գործով վարույթի կարճումը չի հակասում անմեղութեան կանխավարկածին, եթե այդ որոշմամբ մեղադրյալը չի ենթարկվում պարժի կամ դրան հավասարագոր այլ պարժամիջոցի, եթե՝ մեղադրյալը հնարավորություն ունի բողոքարկելու կարճման մասին որոշումը, մեղադրյալն իրավունք ունի առարկելու կարճման որոշման դէմ եւ պահանջելու, որպէսզի դատավարությունը շարունակվի ընդհանուր դիմումներով:

Այս հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այսպես, *Մինեյին ընդդեմ Շվեյցարիայի* գործով դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետները մարելու հիմքով: Ներպետական դատական մարմինները, միևնույն ժամանակ, կարգադրել են մեղադրյալին՝ վճարել դատական ծախսերի մի մասն ու փոխհատուցել մեղադրողների վճարումները, պատճառաբանելով, որ եթե չլինեք ժամանակային գործոնը, ապա դիմողն ամենայն հավանականությամբ կդատապարտվեր: Եվրոպական դատարանն այս գործով գրել է, որ «տեղի է ունեցել անմեղության կանխավարկածի խախտում»⁴⁴: Եվրոպական դատարանը Լուրցի գործով գրել է, որ անմեղության կանխավարկածի խախտում չկա: Եվրոպական դատարանը Լուրցի գործով կայացված որոշման 63-րդ կետում ցույց է տվել այս երկու գործերի փարբերությունը. «Մինեյի գործով շվեյցարական դատարանները մեղադրյալի վրա են դրել դատական ծախսերի մի մասը, եւ, ավելին, պարտավորեցրել են փոխհատուցել մասնավոր մեղադրողի ծախսերը, ինչը միանգամայն կարող է գնահատվել որպես պարտիժ: Ի փարբերություն դրա, պրն Լուրցի ծախսերի եւ ծախսերի վճարման մերժումը չի մերձենում պարտիժ կամ պարտի հավասարագոր պարտամիջոցի: Առավել եւս, որ պրն Լուրցն ստիպված չի եղել կրելու բուն իմաստով դատական ծախսեր. խոսքը նրա անձնական ծախսերի եւ ծախսերի մասին է»: Եվրոպական դատարանը նշել է, որ ո՛չ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, ո՛չ էլ որեւէ այլ դրույթ «քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող» անձին իր ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունք չի տալիս այն դեպքում, եթե նրա գործը կարճվել է»⁴⁵:

2. Անմեղության կանխավարկածի, որպես մեղադրյալի օբյեկտիվ կարգավիճակի, պահանջներից է նաև այն, որ մեղադրողն է պարտավոր ապացուցել մեղադրյալի մեղավորությունը: Սահմանադրական այս նորմից բխում է՝

- անթույլատրելի է մեղադրյալին հարկադրել ցուցմունքներ տալ ոչ միայն իր կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, այլև իր պաշտպանության օգտին: Թեև ՏՃ օրենսդրությամբ մեղադրյալի կողմից սուր ցուցմունք տալու համար պարասխանավության մասին դրույթ նախատեսված չէ, սակայն մեղադրյալի սուր ցուցմունք տալու հնարավորությունը որեւէ կերպ պայմանավորված չէ անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքով,

- մեղադրյալի՝ ապացուցման գործընթացին չմասնակցելը, ընդհանուր առմամբ, չի կարող օգտագործվել մեղադրյալի դեմ, իսկ մեղադրյալի կողմից մեղքի ընդունումը քրեական հետապնդման մարմնին չի ազատում մեղավորության ապացուցման պարտականությունից,

- քրեական հետապնդման մարմինը, եթե չի կարողանում ապացուցել անձի մեղավորությունը, կամ մեղադրողը դատարանում հրաժարվում է մեղադրանքից, ապա մեղադրյալը ենթակա է արդարացման: ՏՃ սահմանադրական դատարանի՝ 24 հուլիսի 2007թ. ՄԴՈ-710 որոշմամբ ՏՃ Սահմանադրությանը հակասող է ճանաչվել դատարանում գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու ինստիտուտը՝ այն պատճառաբանությամբ, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մե-

⁴⁴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գլխից երրորդ: Եր.: Անտառենս, 2004, էջեր 266-267:

⁴⁵ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի: Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Լ. Հակոբյան. - Եր.: Տիգրան Մեծ, 2002, էջեր 535-537:

ղաղրանքը»: Եթե գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում:

Անձի մեղավորության ապացուցման պարտականությունը չի բացառում առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը: Ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելիս հաշվի է առնվում, թե արդյո՞ք կողմն իր նյութական և կազմակերպական հնարավորություններով փաստացի ավելի ուժեղ է, քան նրա հակառակ կողմը, և արդյո՞ք ապացուցման ենթակա հանգամանքն օբյեկտիվորեն հասանելի է տվյալ կողմին: Անմեղության կանխավարկածի ուժով անձի մեղավորության ապացուցման պարտականությունը դրված է մեղադրողի վրա, քանի որ պաշտպանության կողմը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան հանրային քրեական հետապնդման կողմը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական միջոցները: Սակայն իրավիճակն արմատապես փոխվում է հատուկ դեպքերում, երբ պաշտպանության կողմն օբյեկտիվորեն գրնվում է անհամեմատ ավելի բարենպաստ վիճակում, քան մեղադրանքի կողմը: Մովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ մեղադրողը ստիպված է հերքելու, այսպես կոչված, բացասական փաստերը (ինչ-որ մի փաստի բացակայությունը), որոնց վրա հենվում է պաշտպանության կողմը, հատկապես, եթե բացասական փաստերը միաժամանակ համարվում են գործով գլխավոր փաստեր:

Առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու վերաբերյալ դրույթներ պարունակում են նաև մի շարք միջազգային կոնվենցիաներ: ՄԱԿ-ի՝ Անդրազգային հանցավորության դեմ կոնվենցիայի 12-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջը պարզելու հնարավորությունը, որ անձը, որը հանցագործություն է կատարել, ապացուցի հանցագործությունից սրացված ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումը՝ այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ բնույթի բնույթին:

ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ 2003թ. կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն, իր Սահմանադրության և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով, քննության է առնում այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ (ինչպիսիք որ պահանջվեն) ձեռք առնելու հնարավորությունը՝ այն հաշվով, որպեսզի իբրև քրեորեն պարժելի արարք ճանաչվի, դիտարկությանը կարարվելու դեպքում, անօրինական հարստացումը, այսինքն՝ հանրային պաշտոնատար անձի ակտիվների՝ նրա օրինական եկամուտները գերազանցող նշանակալի մեծացումը, որը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել:

Անմեղության կանխավարկածից բխում է այն կանոնը, ըստ որի՝ չփարսված կասկածները մեկնաբանվում են հօգուր մեղադրյալի: Սա նշանակում է, որ մեղադրյալի մեղավորության վերաբերյալ կասկածների առկայությունը հանգեցնում է մեղադրյալի արդարացմանը, եթե սպառված են լրացուցիչ ապացույցներ հավաքելու բոլոր հնարավոր միջոցները:

Կասկածները կարող են վերաբերել ոչ միայն մեղադրանքի ողջ ծավալին, այլ նաև մեղադրանքի առանձին դրվագներին, մեղքի ձեռին, հանցագործությանը մասնակցության աստիճանին և բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, առանձին վերցրած ապացույցներին: Սա նշանակում է, որ՝ 1/ մեղադրանքը հիմնավորող փաստերի վերաբերյալ չփարսված կասկածների առկայության դեպքում,

այդ փաստերը պետք է հանվեն ապացույցների համակարգից, եւ դրանով իսկ չփարապված կասկածները մեկնաբանվում են հոգուր մեղադրյալի, 2/ մեղադրանքը հերքող փաստերի վերաբերյալ չփարապված կասկածների առկայության դեպքում, այդ փաստերը շարունակում են մնալ ապացույցների համակարգում, քանի դեռ դրանք չեն հերքվել, եւ դրանով իսկ չփարապված կասկածները մեկնաբանվում են հոգուր մեղադրյալի:

Նանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետեւությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար համակցությամբ:

«Չփարապված կասկածները մեկնաբանվում են հոգուր մեղադրյալի» սահմանադրական պահանջը չի վերաբերում միայն մեղադրանքի իրավաբանական եւ փաստական կողմին: Այս կանոնը գործում է նաեւ այն ժամանակ, երբ կասկածներ են ծագում իրավական նորմերի ընտրության եւ կիրառության հարցում: Նորմերի կիրառման կասկածները կարող են պայմանավորված լինել իրավական նորմերի հակասություններով, նորմերի ոչ հարակ ձեւակերպմամբ կամ օրենսդրական այլ սխալներով: Նման դեպքերում իրավական նորմը մեկնաբանվում եւ կիրառվում է այն տարբերակով, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար: Նման պահանջ ամրագրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասում, որի համաձայն հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջեւ հակասության դեպքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:

ՆՈՂՎԱԾ 22

1. Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

2. Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

3. Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:

4. Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

5. Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

6. Պատասխանատվություն սահմանող կամ պարտասխանատվությունը խախտող օրենքը հետադարձ ուժ չունի:

7. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

1. Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքն անձի իրավունքների պաշտպանության

գործուն երաշխիքներից է: Այն ունի բավականին լուրջ և խոր բարոյական նախադրյալներ: Բացի դրանից Սահմանադրությունը ելնում է հանրային և մասնավոր շահերի միասնական, փոխալայմանավորված հարաբերակցությունից: Նանրային շահը պահանջում է, որ մարդը պարտավոր է աջակցել իրավապահպան և դատական իշխանության մարմիններին իրավախախտումները բացահայտելու և զսպելու գործում՝ ցուցմունք փայլով: Նեպուաբար, Սահմանադրության հողվածի իմաստից բխում է, որ ցուցմունք փայլը յուրաքանչյուրի պարտականությունն է: Սակայն այդ աջակցությունը չպետք է ապահովվի առավելապես հարկադրաբար՝ անձանց պարճառելով անընդունելի բարոյական գրկանքներ: Մասնավոր անձինք և պաշտոնապար անձինք հավասարապես պարտավոր չեն գործել հոգուր հանրային շահերի՝ իրավախախտումների բացահատման անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Սահմանելով ցուցմունք փայլու պարտականությունից ազատ լինելու իրավունքը՝ կոնկրետ դեպքերում, Սահմանադրությունը վերացնում է ցուցմունք փայլու հարցում հանրային և մասնավոր շահերի միջև հակասության դրսեւորումներից մեկը՝ նախապարվություն փայլով անձնական շահերին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում մեղադրյալի լռության և իր դեմ ցուցմունք չբալու իրավունքը դիտվում է որպես արդարացի դատական քննության իրավունքի և անմեղության կանխավարկածի բաղադրիչ (6-րդ հողվածի 1-ին և 2-րդ մասեր): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ թեև լռության և իր դեմ ցուցմունք չբալու իրավունքները Կոնվենցիայի 6-րդ հողվածում ուղղակիորեն նախատեսված չեն, այնուամենայնիվ, դիտվում են որպես 6-րդ հողվածով երաշխավորված արդար դատաքննության հասկացության հիմքում ընկած համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափորոշիչներ: Դրանց նշանակությունը, *inter alia*, մեղադրյալի պաշտպանությունն է պետական իշխանության անհիմն հարկադրանքից, ինչը կօգնի խուսափել դատական սխալներից և կնպաստի Կոնվենցիայի 6-րդ հողվածով նախանշված նպատակների իրագործմանը: Իր դեմ ցուցմունք չբալու իրավունքը, մասնավորապես, ենթադրում է, որ քրեական հետապնդման մարմինները չպետք է օգտագործեն մեղադրյալի նկարմամբ հարկադրանքի կիրառման կամ ճնշման արդյունքում ձեռք բերված ապացույցները: Այս առումով նշված իրավունքը սերտորեն կապված է Կոնվենցիայի 6-րդ հողվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավարկածի հետ⁴⁶: Որպես կանոն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից, ցուցմունք փայլու հարկադրանք է դիտվում քրեական սանկցիաների կիրառումը կամ կիրառման սպառնալիքն այն անձի նկարմամբ, ով հրաժարվում է վարույթն իրականացնող մարմին տեղեկություններ հաղորդել այն հանցագործության կապակցությամբ, որի կատարման մեջ վերջինս կասկածվում կամ մեղադրվում է⁴⁷: Ընդ որում, սանկցիայի բնույթը կարող է փարբեր լինել՝ փուզանք⁴⁸, ազատագրկում⁴⁹: Ցուցմունք սրանալու նպատակով ուղղակի ֆիզիկական կամ հոգեբանական ներազդեցու-

⁴⁶ Տե՛ս Eur. Court H. R. John Murrey v. the United Kingdom, Judgment of 8 February 1996. Reports. 1996-I. Para. 45; Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 68; Serves v. France, Judgement of 20 October 1997. Reports. 1997-VI. Para 46; Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000. Para. 40; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000. Para 40.

⁴⁷ Տե՛ս Eur. Court H. R. Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000. Para. 49; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000. Para 49.

⁴⁸ Տե՛ս Eur. Court H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A; Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 68;

⁴⁹ Տե՛ս Eur. Court H. R. Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI; Serves v. France, Judgement of 20 October 1997. Reports. 1997-VI; Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000.

թյունը որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է դիտվել որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (Խոշտանգումների արգելում):

1995թ. խմբագրությամբ ՆՆ Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում էր, որ մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու, մերձավոր ազգականների դեմ: 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում փոփոխության ենթարկվեց նաև այս դրույթը՝ ավելի համահունչ դառնալով Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցմանը: Մասնավորապես, ներկայումս Սահմանադրության 22-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իրավունք: Սահմանադրական նման կարգավորման պայմաններում միանշանակորեն ապահովվում է Կոնվենցիայով երաշխավորված լռության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում անձը ձեռք է բերում իրեն վերաբերող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ չհայտնելու իրավունք, *անկախ նրանից՝ այդ տեղեկությունները հեղափոխում կօգտագործվեն ոգուրտ, թե՛ ի վնաս իրեն*: Նման կարգավորումը որոշ չափով վերջ կդնի նաև իրավակիրառ պրակտիկայում արմատացած այն գործելաձևին, երբ քրեական գործի շրջանակներում անձը հարցաքննվում էր որպես վկա, ցուցմունք էր տալիս իրեն առնչվող հանգամանքների վերաբերյալ, առանց կասկածելու, որ նույն ցուցմունքի հիման վրա իր նկատմամբ կարող է քրեական հետապնդում իրականացվել:

Սահմանադրական ամրագրում սրացած այս մոտեցումը համապատասխանում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմանը: Մասնավորապես, նույն *Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանը նշել է, որ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի կարող ողջամտորեն սահմանափակվել միայն իրավախախտման կատարումն ընդունելու վերաբերյալ կամ մեղադրական ցուցմունքներով: Նարկադրանքի արդյունքում սրացված ցուցմունքները, որոնք առաջին հայացքից չեն դիտարկվում որպես մեղադրական ապացույցներ կամ պարզապես հանդիսանում են դիտողություններ կամ փաստերի մասին փյալյակներ, քրեական դատավարության ընթացքում կարող են օգտագործվել մեղադրական նպատակներով, օրինակ՝ մեղադրյալի այլ հայտարարություններին հակադրելու, դատարանում նրա փյալյակ ցուցմունքը կասկածի տակ դնելու կամ այլ եղանակով վերջինիս նկատմամբ վստահությունը խաթարելու նպատակով: Ուստի, դատարանի կարծիքով, այս համատեքստում էականը դատական քննության ընթացքում հարկադրական եղանակով սրացված ապացույցների օգտագործման անթույլատրելիությունն է⁵⁰: Պետք է նշել, սակայն, որ Դատարանն առանձին վճիռներում որոշակիորեն շեղվում է իր իսկ կողմից որդեգրած մոտեցումից: Մասնավորապես, *Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով* վճռում Դատարանը խոսում է «լռելու կամ ի հաստատումն իր մեղքի ցուցմունքներ չտալու իրավունքի խախտման» մասին⁵¹:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը, որպես ինքնուրույն քրեադատավարական սկզբունք, իր արտացոլումն է սրացել նաև ՆՆ քր. դատ. օր.-ում (հոդված 20): Սակայն նշված սկզբունքի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր բովանդակությամբ շատ ավելի լայն է, քան բացառապես ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը, եւ արդարացիորեն *ներառում է նաև իր վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու՝ անձի*

⁵⁰ St'u Saunders v. the United Kingdom, Judgment of 17 December 1996. Reports. 1996-VI. Para. 71.

⁵¹ St'u Eur. Court. H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A. Para. 44, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.)-Եր.: Տիգրան Մեծ, 2002, էջ 467:

իրավունքը: Այս մտքեցումն արտացոլվել է նաև Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում⁵²:

Այս իրավունքի սահմանափակման որեւէ հնարավորություն չի նախատեսվում: Անձը պահպանում է լռելու իրավունքը՝ անկախ իրեն վերագրվող հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից: Այս մտքեցումն է ընկած նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիմքում: Մասնավորապես Դափարանը նշել է, որ 6-րդ հոդվածում առկա՝ արդարացիության պահանջները, ներառյալ՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, կիրառվում են քրեական դատավարության ժամանակ քրեորեն պատժելի բոլոր արարքների դեպքում՝ առանց ամենահասարակների և ամենաբարդերի միջև որեւէ փարբերության⁵³:

Լռելու իրավունքն անհրաժեշտ է դիտարկել այդ իրավունքի իրականացումն ապահովող այնպիսի երաշխիքի հետ համակցության մեջ, ինչպիսին *այս իրավունքից օգտվելն ի վնաս մեղադրյալի մեկնաբանելու և դա որպես նրա մեղավորության ապացույց մեկնաբանելու անթույլատրելիությունն է:* Մ. քր. դատ. օր.-ն ուղղակիորեն սահմանում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը (այդ թվում՝ լռելու իրավունքից) կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրանց և վերջիններիս համար առաջացնի անբարենպաստ հետևանք (Մ. քր. դատ. օր., հոդվածներ 63, 65): Սակայն որոշակի պայմաններում ցուցմունք տալուց հրաժարվելն ամեն դեպքում ապացույցները գնահատելիս դատարանի մոտ կարող է որոշակի դիրքորոշում ձևավորել: Չի կարելի բացառել, որ լռելու իրավունքից օգտվելն այն պայմաններում, երբ ակնհայտ էր կասկածյալի կամ մեղադրյալի բացառության անհրաժեշտությունը, կարող է դատարանի կողմից հաշվի առնվել մեղադրանքի կողմի ապացույցները գնահատելիս: Այս հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով⁵⁴:

Մ. Սահմանադրության 22-րդ հոդվածի հիման վրա օրենքը կարող է նախատեսել նաև այլ անձանց ցուցմունք տալու պարտականությունից ազատելու դեպքեր, օրինակ՝ պապը, փարը, թոռները, ամուսնու ծնողները: Այդպիսի անձանց շրջանակի որոշումը օրենսդրի իրավունքն է:

2. Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման անթույլատրելիության պահանջը կամ ապացույցների թույլատրելիության կանոնների պահպանումը դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների ապահովման, գործի օրինական ու արդարացի լուծման կարեւորագույն երաշխիք է:

Թեև ապացույցների թույլատրելիության ինստիտուտը գործում է դատավարության բոլոր փուլերում (ձեւերում), սակայն դրա բովանդակությունն առավել ամբողջական բացահայտվում է քրեական դատավարությունում:

Քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիությունը փաստական փյուռների սփռման և դատավարական ամրագրման՝ օրենքով նախատեսված

⁵² Տե՛ս Eur. Court. H. R. Funke v. France, Judgement of 25 February 1993. Series A. No. 256-A. Para. 44.

⁵³ Տե՛ս Սամուդերսոն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը (1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռը, պարբ. 74): Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.)-Եր.: Տիգրան Մեծ, 2002, էջ 343:

⁵⁴ Տե՛ս Eur. Court H.R. John Murrey v. the United Kingdom, Judgment of 8 February 1996. Reports. 1996-I. Para. 47; Condon v. the United Kingdom, Judgment of 2 May 2000. Para. 56.

պահանջների բնութագրումն է, որը հնարավորություն է տալիս հավաքված ապացույցները ներմուծել քրեադատարարական համակարգ եւ օգտագործել անձի մեղավորության կամ անմեղության, ինչպես նաեւ քրեական գործի այլ փաստական հանգամանքների հաստատման համար:

Թեեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ապացույցների թույլատրելիության վերաբերյալ որեւէ կոնկրետ դրույթ չի նախատեսում, սակայն Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է նաեւ ապացույցների թույլատրելիության խնդրին⁵⁵:

Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում չի համարվում: Անթույլատրելի ապացույցների օգտագործումը կհամարվի 6-րդ հոդվածի խախտում, եթե դատարանի վճիռը հիմնվի բացառապես այդ ապացույցների վրա:

Ապացույցների թույլատրելիության հասկացության հետ սերտորեն կապված է թույլատրելիության պայմանների հարցը: Ապացույցների թույլատրելիության պայմանների հստակ սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, ապացույցների թույլատրելիության կանոններին վերաբերող նորմեր պարունակում են բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, եւ չկա որեւէ կոնկրետ իրավական ակտ, որը համակարգային ձևով կներկայացնի ապացույցների թույլատրելիության պայմանները: Ներխառնված, ապացույցների թույլատրելիության պայմանների հստակ սահմանումը հնարավորություն կտա նախանշել դրանցից յուրաքանչյուրին ներկայավոր պահանջները: Բացի դրանից, ապացույցների թույլատրելիության պայմաններն ընդհանուր առմամբ քրեական դատավարությունում օրինականության եւ օրենքի առջ քողի հավասարության սկզբունքների կենսագործման կարևոր նախապայման է:

Ապացույցների թույլատրելիության պայմանների վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումների եւ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել թույլատրելիության հետևյալ պայմանները.

- ապացույցի բովանդակությունը կազմող փաստական փյուռիկների պարզաձև աղբյուրի առկայություն,
- պարզաձև սուբյեկտի առկայություն, որն իրավասու է կատարել ապացույցների հավաքմանն ուղղված դատավարական գործողություններ,
- ապացույցների հավաքմանն ուղղված պարզաձև դատավարական գործողության իրականացում,
- ապացույցների հավաքմանն ուղղված դատավարական գործողության (դատական կամ քննչական) կատարման օրենքով սահմանված կարգի պահպանում:

Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք դրսևորվելով մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների կամ սույն օրենսգրքի որեւէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որեւէ այլ

⁵⁵ Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի 1988թ. հուլիսի 12-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 527, Վան Մեյխելենը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների գործով Դատարանի 1997թ. ապրիլի 23-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 278; Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանի 1993թ. փետրվարի 25-ի վճիռը (քաղվածք), Մարդու իրավունքների եվրոպական դատարան, վճիռների ընտրանի (1997-2000թթ.), Երևան, 2002, էջ 469, Ireland v. United Kingdom, Judgement of 18 Jan. 1978, Series A., No 25., para.167, Цит. по: Дженис М., Кэй Р., Брэдли Э. Европейское право в области прав человека. Практика и комментарии. М., 1997, էջ 140:

կերպ՝ ազդել են կամ կարող էին ազդել սրացված փաստական փյույվների հավաստիության վրա:

Քրեական և քաղաքացիական դատավարություններում ապացույցների թույլատրելիության ինստիտուտի համեմատական հետազոտության հիման վրա որոշ հեղինակներ նշում են, որ քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիությունը սահմանափակվում է միայն քրեադատավարական նորմերով⁵⁶: Այս տրամաբանությունն ընկած է նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 104-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքում, որի համաձայն. «քրեական դատավարության ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական փյույվները, որոնք ձեռք են բերվել **սույն օրենսգրքով** սահմանված պահանջների պահպանմամբ»: Այս հոդվածի վերլուծությունը ցույց է փայլիս, որ անթույլատրելի են ճանաչվում բացառապես քրեական դատավարության օրենսգրքի պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Մինչդեռ քրեական դատավարությունում անթույլատրելի են համարվում նաև այլ օրենքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Նախ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածն արգելում է **ցանկացած օրենքի** խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Բացի դրանից, ինչպես նշեցինք, ապացույցների թույլատրելիության վերաբերյալ նորմեր նախատեսված են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում և նման կարգավորման պայմաններում դրանք ուղղակի անտեսվում են, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ի և միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում գործում են վերջինները (ՀՀ Սահմանադրության հոդված 6):

Օրենքով սահմանված կարգի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հետևանքների հետ կապված է նաև թույլատրելիության ասիմետրիայի (անհամաչափության) հարցը, որի համաձայն մեղադրանքի կողմի թույլ փյույվ դատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Դրա էությունն այն է, որ ապացույցների սրացման ընթացքում թույլ փյույվ դատավարական խախտումները պետք է մեղադրանքի և պաշտպանության համար առաջ բերեն փարբեր հետևանքներ, այսինքն՝ բարձրացվում է պաշտպանության կողմից օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման խնդիրը:

Քանի որ ապացույցների թույլատրելիության ինստիտուտի սահմանադրական ամրագրման նպատակը նախ և առաջ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, ապացույցների թույլատրելիության սահմանադրական ձեակերպման շրջանակներում տեղավորվում է մեղադրանքի կողմի թույլ փյույվ դատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութի պաշտպանության նպատակներով օգտագործման հնարավորությունը: Նաշվի առնելով, որ պաշտպանության կողմը մինչդարական վարություն գրկված է մեղադրանքի կողմի հետ հավասար ապացույց հավաքելու իրավունքից, ապացույց հավաքելու ընթացքում թույլ փյույվ խախտումների համար նրա նկատմամբ սանկցիաների կիրառումը չի կարելի իրավաչափ համարել: Եթե իր բնույթով արդարացնող ապացույցը սրացվել է մեղադրյալի այս կամ այն դատավարական իրավունքի խախտմամբ, այն կարող է թույլատրելի համարվել պաշտպանության կողմի միջնորդությամբ, քանի որ, վերջին հաշվով, այդ խախտումները չեն հասել իրենց նպատակին: Ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրանքի կողմի վրա: Պաշտպանության կողմն

⁵⁶ Տե՛ս **Треушников М. К.** Судебные доказательства. М., Городец, 2004, էջ 125:

իրավունք ունի ապացուցել ինչպես մեղադրյալի անմեղությունը, այնպես էլ կասկածի փակ դնել մեղադրող ապացույցները: Վերջին դեպքում նա իրավունք ունի օգտագործել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը, որն անթույլատրելի է մեղադրանքի կողմի ձեռքում:

Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի հարցում համաշխարհային պրակտիկայում չկա միասնական մոտեցում, ինչպես նաև կան դեռևս միանշանակ չուծված և բաց հիմնահարցեր: Այս առումով երկար ժամանակ վիճելի էր ապօրինի կերպով ձեռք բերված բոլոր ապացույցների օգտագործման պրակտիկան /կոչվում է թունավոր ծառի պտղի դոկտրինա՝ «fruit of the poisonous tree»/: Տվյալ հիմնախնդրի առնչությամբ ՏՏ վճռաբեկ դատարանը 2009թ. սեպտեմբերի 16-ի ԵԶԲԴ /0295/01/08 իր որոշմամբ հստակ իրավական դիրքորոշում արտահայտեց, նշելով, որ անթույլատրելի են այն ապացույցները, որոնց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության փյուռի վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

3. Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է համընդհանուր ճանաչում ստացած սկզբունք՝ nullum poena sine lege (չկա պարիժ առանց այդ մասին օրենքում նշված լինելու):

Նշված սկզբունքն իր ամրագրումն է ստացել մի շարք միջազգային իրավական ակտերում: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 11-ի երկրորդ մասն ամրագրում է. «Ոչ ոք չի կարող որեւէ գործողության կամ անգործության համար հանցագործության մեջ մեղավոր ճանաչվել, եթե դրանք կատարվելու պահին գործող ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չեն համարվել: **Չի կարող նաև ավելի ծանր պարիժ նշանակվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ**»:

Նույն բովանդակությունն ունի նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդված 7-ի առաջին մասը, որի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող որեւէ գործողության կամ անգործության հետևանքով մեղավոր ճանաչվել որեւէ հանցագործության մեջ, որը, կատարման պահին գործող ներքին կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չէ»: Թեև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդված 7-ն ուղղակիորեն ոչինչ չի ասում հանցագործության պարժելիության մասին, սակայն հոդվածի ընդհանուր փրամաբանությունից բխում է, որ այն ամրագրում է նաև nullum poena sine lege (չկա պարիժ առանց այդ մասին օրենքում նշված լինելու) սկզբունքը: Այդ մասին է վկայում նաև Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ եվրոպական դատական պրակտիկան⁵⁷:

Քննարկվող սկզբունքի էությունն այն է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է նշանակվել միայն այնպիսի պարիժ, որը նախատեսված է եղել նրա կողմից հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով (Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքով): Խնդիրը կարող է ծագել այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է մի քրեական օրենքի գործողության ժամանակ, իսկ դատավճիռը կայացնելու ժամանակ գործողության մեջ է եղել մեկ այլ քրեական օրենք, այսինքն՝

⁵⁷ Տե՛ս Ուելչն ընդդեմ Միացյալ Սեղագործության գործը, Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Վճիռների ընտրանի, Երեսան, 2002, էջեր 364-370:

հանցանքը կատարելուց հետո քրեական օրենքը փոխվել է: Եթե դատավճիռը կայացնելու պահին գործող քրեական օրենքն ավելի խիստ պարիժ է նախատեսում, քան հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքը, ապա պարիժ է նշանակվում հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքին համապատասխան: Օրինակ՝ հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով տվյալ հանցագործության համար նախատեսված էր պարիժ՝ երեքից մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկում: Քրեական գործի քննության ընթացքում քրեական օրենքը փոփոխության է ենթարկվում և դատավճիռը կայացնելու պահին գործող քրեական օրենքով տվյալ հանցագործության համար նախատեսվում է պարիժ, օրինակ՝ երեքից մինչև վեց տարի ժամկետով ազատազրկում: Նման դեպքերում դատարանը պարիժ պետք է նշանակի երեքից մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկման սահմաններում:

Քննարկվող սահմանադրական նորմն իր արտացոլումն է սրացել նաև Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքի հոդված 12-ի առաջին մասում, համաձայն որի՝ «Արարքի հանցավորությունը և **պարժելիությունը** որոշվում են հանցագործության պահին գործող քրեական օրենքով», ինչպես նաև հոդված 13-ի երրորդ մասում, համաձայն որի՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, **պարիժը խստացնող** կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքը հեղադարձ ուժ չունի»:

4. Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է հանընդհանուր ճանաչում սրացած հաջորդ սկզբունքը՝ nullum crimen sine lege (չկա հանցագործություն առանց այդ մասին օրենքում նշված լինելու): Նշված սկզբունքը նույնպես իր արտացոլումն է գտել ՄՄ քրեական օրենսգրքում, որի հոդված 12-ի առաջին մասի համաձայն՝ «Արարքի **հանցավորությունը** և պարժելիությունը որոշվում են հանցագործության պահին գործող քրեական օրենքով»: ՄՄ Սահմանադրության և ՄՄ քրեական օրենսգրքի քննարկվող նորմերը նույնությամբ արտացոլում են մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող հիմնարար միջազգային իրավական ակտերում ամրագրված դրույթները: Ինչպես արդեն նշել ենք, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդված 7-ի առաջին մասն ամրագրում է, որ ոչ ոք չի կարող որևէ գործողության կամ անգործության հետևանքով մեղավոր ճանաչվել որևէ հանցագործության մեջ, որը, կատարման պահին գործող ներքին կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չէ:

Քննարկվող սկզբունքը նշանակում է, որ արարքը կարող է հանցագործություն համարվել միայն այն դեպքում, եթե կատարելու պահին գործող քրեական օրենքով նախատեսված է եղել որպես հանցագործություն: Եթե կատարելու պահին գործող քրեական օրենքով արարքը նախատեսված չի եղել որպես հանցագործություն, ապա այն կատարող անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել: Եթե նույնիսկ հետագայում օրենքի փոփոխության հետևանքով այդ արարքը նախատեսվի որպես հանցագործություն, ապա, միեւնույն է, անձը, ով արարքը կատարել է մինչև փոփոխված օրենքը ուժի մեջ մտնելը, չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, որովհետև իր կողմից տվյալ արարքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Պետք է նշել, որ ՄՄ Սահմանադրության հոդված 22-ի երրորդ և չորրորդ մասերով ամրագրված նորմերը, արտացոլելով nullum poena sine lege (չկա պարիժ առանց այդ մասին օրենքում նշված լինելու) և nullum crimen sine lege (չկա հանցագործություն

առանց այդ մասին օրենքում նշված լինելու) սկզբունքները, փաստորեն արգելում են քրեական օրենքն անալոգիայով կիրառելը⁵⁸ եւ օրենսդրի առջեւ պահանջ են դնում օրենքում հստակ նախատեսելու հանցավոր արարքը եւ դրա համար կոնկրետ պատիժը: Խոսքը իրավական որոշակիության սկզբունքի մասին է: Նանցավոր համարվող արարքը, դրա հարկանիշները պետք է այնքան հստակ ձեւակերպվեն օրենքում, որ բացառվի իրարամերժ մեկնաբանությունների ու փարակարծությունների հնարավորությունը⁵⁹:

Այնուամենայնիվ, օրենքի մեկնաբանությունն անխուսափելի է, եւ հանցագործության փարբերն ու հարկանիշները միշտ էլ ճշգրտման կարիք ունեն: Սակայն, ինչպես նշել է Մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եվրոպական հանձնաժողովը, դրանց մեկնաբանությունը չպետք է դուրս գա օրենքի բանական մեկնաբանության սահմաններից⁶⁰: Մասնավորապես, Նանձնաժողովը նշել է, որ օրենքի փարածական մեկնաբանությունը կարող է հանգեցնել նշված սկզբունքների խախտումների: Ոստի օրենքի փարածական մեկնաբանությունն արգելվում է: Բացի դրանից, արգելվում է օրենքը մեկնաբանելիս փոխառնել հանցագործության հարկանիշներ համարել այն փաստական հանգամանքները, որոնք նախկինում այդպիսին չեն համարվել: Դա նշանակում է, որ հանցագործության բաղկացուցիչ փարբերը, օրինակ մեղքի ձեւը, պարճառած վնասի չափը եւ այլն, չեն կարող դարձնվել պարակարծական պրակտիկայում էականորեն փոխվել, համենայնդեպս՝ ի վնաս մեղադրյալի⁶¹:

5-6.⁶² Սահմանադրության հոդված 22-ի երրորդ եւ չորրորդ մասերով նախատեսված դրույթները խարսխված են կարեւորագույն միջազգային փաստաթղթերում ամրագրված իրավական դրույթների վրա: «Ոչ ոք չի կարող դարձապարտվել հանցանքի մեջ ինչ-որ արարք կատարելու կամ անգործության համար, որոնք կատարման պահին հանցանք չեն համարվել ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով: Չի կարող նաեւ ավելի ծանր պատիժ նշանակվել, քան այն, ինչը կարող էր կիրառվել այդ հանցագործության կատարման պահին» /Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդվ. 11, 2-րդ մաս/: Այս հարաբերությունների կարգավորմանը անդրադարձել է նաեւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը. «1. Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որեւէ քրեական հանցագործության կատարման մեջ ինչ-որ գործողություն կատարելու կամ բացթողման պարճառով, որն այն իրագործելու պահին գործող ներպետական օրենսդրությանը կամ միջազգային իրավունքին համաձայն քրեական հանցագործություն չի համարվում: Նույն կերպ չի կարող ավելի

⁵⁸ Օրենքի անալոգիան օրենքի բացը լրացնելն է, որն իրավունքի մի շարք ճյուղերում թույլատրելի է (օրինակ՝ քաղաքացիական իրավունքում), սակայն քրեական իրավունքում արգելվում է: ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված է հանցագործությունների սպառիչ ցանկ: Դա նշանակում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում չնախատեսված արարքը չի կարող հանցագործություն համարվել: Անալոգիայի արգելումը քրեական իրավունքում՝ նշանակում է, որ կատարված արարքը կարող է հանցագործություն համարվել միայն այն դեպքում, եթե դրա տարրերը եւ հատկանիշները լիովին համընկնում են քրեական օրենքում որպես հանցագործություն նախատեսված արարքի տարրերին ու հատկանիշներին: Եթե կատարված արարքի տարրերն ու հատկանիշները չեն համընկնում քրեական օրենքում որպես հանցագործություն նախատեսված արարքի տարրերին ու հատկանիշներին, ապա որքան էլ դրանք մնան լինեն միմյանց, կատարված արարքը չի կարող հանցագործություն համարվել:

⁵⁹ Պետք է նշել, որ այս տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգիրքը խիստ թերի է եւ լուրջ կատարելագործման կարիք ունի:

⁶⁰ Տե՛ս Գանգատ թիվ 8710/79: Հանձնաժողովի որոշում՝ 07.05.82:

⁶¹ Տե՛ս Գանգատ թիվ 8490/70: Հանձնաժողովի որոշում՝ 12.03.81:

⁶² Սահմանադրության հոդված 22-ի 5-րդ եւ 6-րդ մասերով նախատեսված նորմերը փոխկապակցված են, ուստի նպատակահարմար է դրանք միասին քննարկել:

ծանր պարիժ սահմանվել, քան այն, որը կիրառվում է քրեական հանցագործություն կատարելու պահին: Եթե հանցագործություն կատարելուց հետո օրենքով սահմանվում է առավել մեղմ պարիժ, ապա այդ օրենքը պետք է փարածվի այդ հանցագործի վրա:

Այս հոդվածում ոչինչ չի խոչընդոտում դատի փախուցումը և պարտի ենթարկել ցանկացած անձի ցանկացած արարքի կամ բացթողման համար, որոնք կատարման պահին քրեական հանցագործություն են համարվել միջազգային ընկերակցության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքերին համաձայն»:

Միջազգային իրավական այս նորմերի բովանդակությունից երևում է, որ միջազգային իրավունքը ժամանակի ընթացքում նորմալիզացվելով իրավական ակտերի գործողությունը կարգավորում է շար ընդհանուր, միայն քրեաիրավական ոլորտի համար և սկզբունքային հարցերում՝ շեշտադրելով մարդու իրավունքների պաշտպանությունը: Ներկայացված քննարկվող հարաբերությունների կարգավորման ողջ ծանրությունն ընկնում է ներպետական օրենսդրության վրա (տես Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի մեկնաբանությունը):

Սահմանադրության հոդված 22-ի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դրույթները, նորմերն իրենց արտացոլումն են գտել ՆՏ քրեական օրենսգրքում, որի հոդված 12-ի առաջին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են հանցագործության պահին գործող քրեական օրենքով»: Սա ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության հիմնական կանոնն է: Սահմանադրության հոդված 22-ի հինգերորդ մասով ամրագրված դրույթը բացառություն է այս կանոնից: Այն նաև կոնկրետացնում է Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված իրավական սկզբունքները, որոնք կարգավորում են իրավական ակտերի հետադարձ ուժի հիմնախնդիրը: Նորմալիզացված իրավական ակտի հետադարձ ուժը նշանակում է դրա գործողության, այսինքն՝ իրավական հետևանքների փարածում այն հասարակական հարաբերությունների վրա, որոնք առաջացել են մինչև այդ ակտի գործողության մեջ մտնելը: Այս հարցում գործող առաջին և ընդհանուր կանոնի համաձայն նորմալիզացված իրավական ակտը չի փարածում իր ուժն այն փաստերի և իրավաբանական հետևանքների վրա, որոնք առաջացել են մինչև դրա ուժի մեջ մտնելը: Այս կանոնը որոշակի երաշխիք է իրավակարգի կայունության համար և արգելք՝ հասարակական հարաբերությունների կամայական կարգավորման համար: Այսպիսով, չի կարելի, օրինակ, վաղվանից մրցնել նոր հարկաբեկիչ և հարկ վճարողներին ստիպել մուծել այն մինչև այդ պահն ընկած որոշակի ժամանակամիջոցի համար: Այսպիսով, Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը կարգավորում են ընդհանրապես իրավական ակտերի հետադարձ ուժի հարաբերությունները: Իսկ Սահմանադրության հոդված 22-ի երրորդ և չորրորդ մասերը կոնկրետացնում են այդ հարաբերությունների կարգավորումը սահմանադրական մակարդակով՝ քրեաիրավական ոլորտում:

Խոսքն այն մասին է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքին Սահմանադրության ուժով է հետադարձ ուժ փրվում: Սահմանադրական այս դրույթն ավելի կոնկրետացված ձևակերպվել է ՆՏ քր. օր.-ի հոդված 13-ի առաջին մասում, համաձայն որի՝ «Արարքի հանցավորությունը վերացնող⁶³, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող⁶⁴ օրենքը հե-

⁶³ Սահմանադրության հոդված 22-ի 5-րդ մասում օգտագործված «պատժելիությունը վերացնող» և «ՀՀ քր. օր.-ի հոդված 13-ի առաջին մասում օգտագործված «արարքի հանցավորությունը վերացնող» հասկացությունները նույն բովանդակությունն ունեն:

⁶⁴ ՀՀ քր. օր.-ը մի քայլ առաջ է անցել Սահմանադրությունից և հետադարձ ուժ է նախատեսել նաև հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի համար:

փաղարձ ուժ ունի, այսինքն՝ փարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

Պետք է նշել, որ այս նորմը չի հակասում nullum poena sine lege (չկա պարիժ առանց այդ մասին օրենքում նշված լինելու) եւ nullum crimen sine lege (չկա հանցագործություն առանց այդ մասին օրենքում նշված լինելու) սկզբունքներին: Այս նորմի նշանակությունն այն է, որ ապահովվի հանցագործության հանրային վրանգավորության եւ դրա համար պատասխանատվության համամասնությունն այն դեպքերում, երբ օրենսդիրը փոխում է փոխարարքի նկատմամբ իր վերաբերմունքը, փոխարարքի գնահատականը:

Միեւնույն ժամանակ, Սահմանադրության հոդված 22-ի վեցերորդ մասն ամրագրում է, որ պատասխանատվությունը սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի: ՏՏ քր. օր.-ի հոդված 13-ի երկրորդ մասում այս նորմն առավել մանրամասն ու հստակ ձեւակերպում է ստացել, համաձայն որի՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Սա նշանակում է, որ արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքը չի կարող կիրառվել այն հանցագործությունների կապակցությամբ, որոնք կատարվել են մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը⁶⁵:

Քննարկվող նորմերի հետ կապված պետք է պարզաբանել, թե որն է համարվում արարքի հանցավորությունը վերացնող (պարժելիությունը վերացնող), պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

Նոր քրեական օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե այդ օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որը նախկին օրենքով հանցագործություն էր (ընդ ապաքրեականացում):

Բացի դրանից, նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող մասնակի ապաքրեականացման ժամանակ, երբ արարքը չի դադարում հանցագործություն լինելուց եւ չի վերացվում, սակայն հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է:

Նոր քրեական օրենքը համարվում է պարիժը մեղմացնող, եթե՝ ա) սանկցիայում

⁶⁵ Սահմանադրության հոդված 22-ի 6-րդ մասում խոսվում է պատասխանատվությունը սահմանող կամ խստացնող օրենքի մասին: «Պատասխանատվությունը սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենք» հասկացությունը կարող է վերաբերել ոչ միայն քրեական, այլև այլ օրենսդրությանը, օրինակ՝ վարչական, քաղաքացիական, հարկային եւ այլն: Այնուամենայնիվ, նշված հասկացության քրեաիրավական մեկնաբանությունը բավարար է իրավունքի այլ ճյուղերում դրա դրսևորումների էությունն ընկալելու համար: Բացի դրանից, կարծում ենք, որ Սահմանադրության հոդված 22-ի 6-րդ մասում նախատեսված դրույթն իր տեղում չէ: Հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերում նախատեսված նորմերը վերաբերում են քրեական իրավունքի ոլորտին: Մասնավորապես, 5-րդ մասում խոսվում է արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքի մասին, որպիսին կարող է լինել միայն քրեական օրենքը: Միեւնույն ժամանակ, Սահմանադրության հոդված 42-ի 3-րդ մասում ամրագրված է, որ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Փաստորեն, Սահմանադրությունը տարբերում է պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքը պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերից (օրենքներից): Այս պարագայում ճիշտ կլիներ, որ հոդված 22-ի 6-րդ մասում՝ պահպանելով հոդվածի եւ Սահմանադրության տրամաբանությունը, խոսվեր արարքի պատժելիությունը սահմանող կամ խստացնող օրենքի մասին, իսկ հոդված 42-ի երկրորդ մասում, որում ամրագրված է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների կամ այլ իրավական ակտերին հետադարձ ուժ չստալու վերաբերյալ դրույթը, խոսվեր նաև պատասխանատվությունը սահմանող կամ խստացնող օրենքին հետադարձ ուժ չստալու մասին:

նախարեսված պարժի նվազագույն և առավելագույն չափերը միաժամանակ իջեցվում են, բ) նվազագույն չափը մնում է նույնը, առավելագույնն իջեցվում է, գ) առավելագույնը թողնվում է նույնը, նվազագույնն իջեցվում է, դ) սանկցիայում նախարեսված պարժարեսակը փոխարինվում է ավելի մեղմ պարժարեսակով, ե) սանկցիայում նախարեսված պարժարադիր լրացուցիչ պարժարեսակը վերացվում է կամ վեր է ածվում Ֆակուլտատիվի, զ) նոր օրենքով նախարեսվում է երկրնորրելի առավել մեղմ պարժարեսակ:

Որոշակի բարդություն է ներկայացնում այն իրավիճակը, երբ քրեական նոր օրենքով սանկցիայում նախարեսված պարժի նվազագույն չափը բարձրացվում է, իսկ առավելագույնը՝ իջեցվում, կամ, հակառակը՝ նվազագույնն իջեցվում է, առավելագույնը՝ բարձրացվում: ՏՏ քր. օր.-ի հոդված 13-ի երրորդ մասի համաձայն՝ «Պարասխանարվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պարասխանարվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հերադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պարասխանարվությունը»:

Նանցանք կարարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն այն օրենքն է, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պարիժը, սակայն քրեական պարասխանարվության և պարժի նշանակման, քրեական պարասխանարվությունից կամ պարժից ազատելու կարգի ու պայմանների հեր կապված առավել նպաստավոր պայմաններ է սրեղծում հանցանք կարարած անձի համար: Նման իրավիճակները կարող են ամենաբազմազան լինել և վերաբերել քրեական իրավունքի Ընդհանուր մասի րարքեր ինտիքուրներին, մասնավորապես՝ քրեական պարժի կրման կարգին, պարժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելուն, վաղեմության ժամկետներին և այլն: Օրինակ, եթե նոր օրենքը քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ավելի կարճ ժամկետ է նախարեսում, ապա այդ օրենքը պերք է համարել հանցանք կարարած անձի վիճակը բարելավող և դրան հերադարձ ուժ րալ:

Քրեական օրենքի հերադարձ ուժի հեր կապված կարետոր հարց է, այսպես կոչված, միջանկյալ քրեական օրենքի հարցը: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ հանցանքը կարարվում է մի օրենքի գործողության ժամանակ, գործը քննվում է մեկ այլ օրենքի գործողության ժամանակ, իսկ դարավճիժը կայացնելու պահին գործում է մի երրորդ օրենք: Նման դեպքերում գործի քննության ժամանակ գործող օրենքը միջանկյալ օրենք է: Քրեական իրավունքի րեսության մեջ կարծիք է արահայրվել, որ միջանկյալ օրենքը չի կարող կիրառվել, որովհերե այն ըստ էության գոյություն չունեցող օրենք է (այն գոյություն չի ունեցել ոչ հանցանքը կարարելու ժամանակ, ոչ էլ դարավճիժը կայացնելու պահին): Կարծում ենք, որ եթե միջանկյալ օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը, մեղմացնում է պարիժը կամ այլ կերպ բարելավում է անձի վիճակը, ապա դրան պերք է հերադարձ ուժ րովի: Նման դիրքորոշում է արահայրվել նաե ՏՏ վճռաբեկ դարարանը⁶⁶:

Ինչ վերաբերում է արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խստացնող կամ հանցանք կարարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքներին, ապա դրանք հարուկ քննարկելու կարիք չկա, որովհերե այն, ինչ սավեց արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կարարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքների մասին բավարար է նշված օրենքների բովանդակությունը հասկանալու համար:

Քրեական օրենքի հերադարձ ուժի հեր կապված որոշակի խնդիրներ կարող են առաջացնել քրեական օրենքում կիրառվող, այսպես կոչված, «արժեքավորվող» հասկացությունները: Այդպիսի հասկացությունները քրեական օրենքում բավականաչափ

⁶⁶ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13 հուլիսի 2007թ. որոշումը, գործ ՎԲ-136/07:

շար են՝ «Էական վնաս», «խոշոր վնաս», «ծանր հետեւանքներ» եւ այլն, որոնք մեկնաբանման կարիք ունեն: Ընդ որում, նշված հասկացությունների բովանդակությունն ու իմաստը շար դեպքերում բացահայտվում են դարական պրակտիկայի ամփոփման հիման վրա, որը ժամանակի ընթացքում փոփոխությունների է ենթարկվում: Խնդիրը կարող է լուծվել երկու ճանապարհով: Նախ՝ պետք է հարուկ սահմանել, որ եթե արժեքավորվող հասկացությունների իմաստը ժամանակի ընթացքում փոխվում է խստացման առումով, ապա դրան չի կարելի հետադարձ ուժ փոխել, եւ՝ հակառակը: Օրինակ, եթե որպես էական գույքային վնաս որոշակի ժամանակահատվածում մեկնաբանվել է, ասենք, 100 հազար դրամի չափով վնասը, իսկ հետագայում՝ 50 հազար դրամի չափով վնասը, ապա էական վնաս պարճառելու հարկանիշով չի կարող որակվել այն անձի արարքը, ով 50 հազար դրամի չափով վնաս է պարճառել մինչեւ էական վնասի նման մեկնաբանությունը: Երկրորդ՝ անհրաժեշտ է քրեական օրենսգրքում որքան հնարավոր է բացահայտել արժեքավորվող հասկացությունների իմաստը, կամ էլ որքան հնարավոր է խուսափել նման հասկացություններ օգտագործելուց:

Քրեական օրենքի հետադարձ ուժի հետ կապված է նաեւ բլանկետային դիսպոզիցիաների խնդիրը: Բլանկետային դիսպոզիցիաներով⁶⁷ նկարագրվում են այն հանցագործությունները, որոնք իրենցից հասարակական կյանքի եւ գործունեության փարբեր ոլորտներում (տրանսպորտ, ավտոմային էներգետիկա, առողջապահություն եւ այլն) սահմանված անվտանգության եւ այլ կանոնների խախտման հետեւանքով վնասի պարճառում են ներկայացնում: Բլանկետային դիսպոզիցիայի միջոցով հանցագործությունը նկարագրելու դեպքում հանցագործության հարկանիշները բացահայտելու համար անհրաժեշտություն է առաջանում պարզել այդ կանոնների բովանդակությունը, ճշտել, թե արդյո՞ք վնասն առաջացել է դրանց խախտման հետեւանքով: Նշված կանոնները հաստատվում են օրենքով, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ ենթաօրենսդրական ակտերով: Փաստորեն, բլանկետային դիսպոզիցիայի դեպքում հանցագործության հարկանիշների մի մասը նկարագրված է ոչ թե քրեական օրենսգրքում, այլ ուրիշ օրենքներում կամ ենթաօրենսդրական ակտերում: Վերջին դեպքում բլանկետային դիսպոզիցիայի առկայությունը որոշակիորեն հակասում է «nullum crimen sine lege» սկզբունքին: Բայց խուսափել բլանկետային դիսպոզիցիաների կիրառումից՝ հնարավոր չէ: Դրանց կիրառումը օրենսդրական տեխնիկայի հնարքներից է, որը թույլ է փախա օրենսդրին ձեռնպահ մնալ այլ օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված անվտանգության կանոնները քրեական օրենսգրքում նույնությամբ կրկնելուց եւ քրեական օրենսգրքն անհարկի ծանրաբեռնելուց: Բայց, որպեսզի բլանկետային դիսպոզիցիաների առկայությունը չհակասի Սահմանադրության եւ միջազգային իրավական ակտերի դրույթներին, անհրաժեշտ են որոշակի երաշխիքներ: Նախ՝ անհրաժեշտ է հարակ սահմանել, որ եթե օրենքներում կամ ենթաօրենսդրական ակտերում կատարվող փոփոխություններն ընդլայնում են հանցագործության փաստական հարկանիշների, ուստի՝ հանցավոր համարվող արարքների շրջանակը, ապա դրանց չպետք է հետադարձ ուժ փոխել: Բացի դրանից, քրեական օրենսգրքում բլանկետային դիսպոզիցիաների միջոցով նկարագրված հանցակազմերի համար պետք է ապահովվեն լրացուցիչ հարուկ հարկանիշներ, որոնք թույլ կտան հանցագործությունը սահմանազատել վարչական կամ կարգապահական իրավախախտումներից (օրինակ՝ հանցակազմի հարկանիշ նախատեսել խոշոր չափերի վնասի պարճառումը, մարդու առողջությանը վնաս պարճառելը, մարդուն կյանքից զրկելը եւ այլն):

⁶⁷ Դիսպոզիցիան քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի այն մասն է, որտեղ նկարագրվում է հանցավոր համարվող արարքը:

Քրեական օրենքի հեղադարձ ուժի հետ կապված կարելու է նշել, որ արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող օրենքի կիրառման առումով դատարանը կամ օրենքը կիրառող մյուս մարմիններն օժտված չեն դիսկրեցիոն (հայեցողական) լիազորություններով, այսինքն բացառվում է նման օրենքին հեղադարձ ուժ չտալը, եթե նույնիսկ անձը, ում իրավական վիճակը պետք է բարելավվի, չի դիմում այդպիսի խնդրանքով:

7. Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է հանրահայր non bis in idem (non bis idem) իրավական սկզբունքը: Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը սահմանված է մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով:

ՆՏ Սահմանադրության սկզբնական տեքստում կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքն ամրագրված չէր, մինչդեռ այն սահմանված էր ճյուղային օրենսգրքերում (ՆՏ 1998թ. քրեական դատավարության օրենսգրքի հոդված 21, ՆՏ 2003թ. քրեական օրենսգրքի հոդված 10): Այսպիսով, 2005 թվականի սահմանադրական բարեփոխումից առաջ non bis in idem-ը կարող էր համարվել միջճյուղային իրավական սկզբունք:

ՆՏ Սահմանադրության 22-րդ հոդվածը, որը հիմնականում վերարտադրում է նախկին խմբագրության 41-րդ հոդվածի բովանդակությունը, լրացվեց մեկ հավելյալ մասով, որը հռչակում էր non bis in idem իրավական պահանջը: Այսպիսով, քննարկվող սահմանադրական իրավադրույթը հանդիսանում է ՆՏ Սահմանադրության 19-22-րդ հոդվածներում ամրագրված քրեաիրավական և դատավարաիրավական երաշխիքային կազմի օրգանական բաղկացուցիչը:

Non bis in idem սկզբունքն իրենից ներկայացնում է պետության ջորս նեգատիվ պարտականությունների համակարգ, որի փարրերը սերտորեն փոխապայմանավորված են, և դրանց ինքնուրույնությունը սուսկ հարաբերական է: Այդ երաշխիքներն են նույն արարքի համար անձին կրկին անգամ (ա) պատժելու, (բ) դատապարտելու, (գ) դատելու, (դ) քրեական հետապնդման ենթարկելու արգելքները:

Սահմանադրական այս նորմն ունի մի քանի երաշխիքային նշանակություն ու իմաստ:

Նախ՝ այս նորմի հիմքում ընկած է այն գաղափարը, որ եթե անձը դատավճռով պետության անունից ենթարկվել է բարոյական պարսավանքի ու կրել է դատավճռով նշանակված իրավասահմանափակումները, ապա կատարել է քրեաիրավական հարաբերության բովանդակությունը կազմող՝ իր վրա դրված պարտականությունը, ուստի անկախ քրեական պարասխանավորության արդյունավետությունից՝ կարող է պահանջել, որ պետությունն իրեն համարի մեղքը քված ու նույն արարքի համար կրկին չդատապարտի կամ չպատժի:

Այսպիսով, քրեաիրավական իմաստով non bis in idem-ն արտահայտում է մեղքը քված լինելու կանխադրույթը, որի շնորհիվ հանցանք կատարած անձը հնարավորություն է ստանում դատավճռով նախատեսված զրկանքները կրելու եղանակով վերջնականապես մարել պետության և հասարակության առջև ունեցած իրավական ու բարոյական պարտքը: Պատահական չէ, որ ՆՏ քրեական օրենսգրքում կրկին անգամ դատապարտվելու անթույլատրելիության հիմնադրույթը սահմանված է որպես արդա-

րության եւ պատասխանատվության անհատականացման սկզբունքի դրսևորում (ՏՏ քր. օր., հոդված 10):

Non bis in idem քրեաիրավական սկզբունքի ողջ իմաստը չի սահմանափակվում վերը նշվածով: Այս սկզբունքը նաեւ բացառում է միեւնոյն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպէս ընդհանուր եւ հատուկ նորմեր, կամ որպէս նորմ-ամբողջ եւ նորմ-մաս: Քննարկվող սկզբունքն արգելում է նաեւ միեւնոյն հանգամանքը հաշվի առնել ինչպէս հանցանքը որակելիս, այնպէս էլ պարժի տեսակն ու չափն ընտրելիս⁶⁸:

Նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն պարիժ է կրել, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ: Այս տեսակէտից ՏՏ քր. օր.-ում դատվածության հետ կապված կրկնակիությունը որպէս որոշ հանցակազմերի ծանրացնող հանգամանք դիտելը, մեր կարծիքով, հակասում է non bis in idem սկզբունքին⁶⁹:

Non bis in idem-ը չի վերաբերում բացառապէս ՏՏ տարածքում կատարված հանցագործություններին: ՏՏ քր. օր.-ի 15-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է՝ «Նայաստանի Նանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Նայաստանի Նանրապետության քաղաքացիները, ինչպէս նաեւ Նայաստանի Նանրապետությունում մշտապէս բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ եւ եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում»: Դա նշանակում է, որ եթե ՏՏ քաղաքացին կամ ՏՏ-ում մշտապէս բնակվող քաղաքացիություն չունեցող անձն արտասահմանում արդեն դատապարտվել է այնտեղ կատարած հանցանքի համար եւ կրել համապատասխան պարիժ, ապա այդ նույն արարքի համար ՏՏ դատարանների կողմից նա չի կարող կրկին ենթարկվել քրեական պատասխանատվության⁷⁰:

Եթե non bis in idem-ի քրեաիրավական ընկալման հիմքում ընկած են քաղության եւ արդարության գաղափարները, ապա այս սկզբունքի քրեադատարարական իմաստը

⁶⁸ Այսպէս, ՀՀ քր. օր.-ի 63-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ որպէս պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք, նախատեսված է հանցանքն այլ հանցագործությունը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարելը, իսկ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով՝ որպէս սպանության ծանրացնող հանգամանք, նախատեսված է սպանության կատարումն այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով: Եթե անձի արարքը որակվում է 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, ապա պատիժ նշանակելիս դատարանը չի կարող որպէս ծանրացնող հանգամանք հաշվի առնել քր. օր.-ի 63-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հանգամանքը:

⁶⁹ Դատվածության հետ կապված կրկնակիությունը որպէս հանցակազմի ծանրացնող հանգամանք դիտելու էությունը բացահայտենք օրինակով. ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում կրկին անգամ գողության համար՝ որպէս գողության ծանրացնող հանգամանք, եւ դրա համար նախատեսում ավելի խիստ պատիժ, ընդ որում, արարքը որպէս կրկին անգամ գողություն է որակվում նաեւ այն դեպքում, երբ նախկին գողության համար անձն արդեն իսկ դատապարտվել է, բայց դատվածությունը դեռեւս չի մարվել կամ հանվել: Ստացվում է, որ նման դեպքերում անձը նորից պատիժ է կրում իր կատարած նախկին հանցանքի համար, թեւ դրա համար արդեն դատապարտվել էր:

⁷⁰ ՀՀ նախկին քր. օր.-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասից բխում էր հակառակը: Այստեղ մասնավորապէս ասվում էր. «Եթե հիշյալ անձինք իրենց կատարած հանցագործությունների համար պատիժ են կրել արտասահմանում, դատարանը կարող է նրանց նկատմամբ նշանակված պատիժը համապատասխանորեն մեղմացնել կամ հանցավորին իսպառ ազատել պատիժ կրելուց»: Այս նորմի կիրառումը փաստորեն հակասում էր նույն հանցագործության համար կրկին անգամ դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքին:

խարսխված է քրեական հետապնդման սպառնալիքի վերջավորության գաղափարի վրա: Այս իմաստով non bis in idem-ը երաշխավորում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդումը կամ դատական վարույթը վերջնականապես ավարտված է (օրինակ՝ քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական գործը կարճվել է), ապա նույն արարքի համար անձի նկատմամբ վարույթը չի կարող վերսկսվել: Այսպես, համաձայն ՎՎ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը՝ մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վարթարացում: Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վարթարացման:

Ի փարբերություն քրեաիրավական non bis in idem-ի, քրեադատավարական սկզբունքը ենթադրում է իրավաչափ սահմանափակման հնարավորություն: Նախկանշական է, որ ՎՎ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված արգելքն իմպերատիվ է, իսկ ՎՎ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում սահմանվածը թույլատրում է բացառություններ, որոնք բխում են Եվրոպական կոնվենցիայի Յոթերորդ լրացուցիչ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված չափանիշներից: Մասնավորապես, վերջինս սահմանում է, որ non bis in idem սկզբունքը չի «խոչընդոտում գործի վերանայմանը փվյալ պետության օրենքին եւ քրեական դատավարությանը [penal procedure] համապարասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ Կրեդ են գրել էական թերություններ [fundamental defect], որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշված հիմքերը համարում է «բացառիկ» եւ գրնում է, որ դրանց կիրառմամբ վարույթի վերսկսումը չի նշանակում նույն արարքի կապակցությամբ երկրորդ վարույթի իրականացում (*Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի [Nikitin v. Russia] գործով* 2004թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգապ թիվ 50178/99):

Նիմք ընդունելով մեջբերված եվրոպական չափանիշները՝ ՎՎ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 21, բաժին 12.1) սահմանված են non bis in idem սկզբունքից շեղվելու հետեյալ իրավաչափ հիմքերը. (ա) նոր հանգամանքները, (բ) նոր ի հայտ եկած հանգամանքները, (գ) այն բացառիկ դեպքերը, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են փրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշված հիմքերի «բացառիկ» բնույթը բխում է դրանց օրենսդրական ձեւակերպումներից: Մասնավորապես, ՎՎ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ *նոր հանգամանքներ* են ՎՎ սահմանադրական դատարանի կողմից քրեական գործով կիրառված օրենքը հակասահմանադրական ճանաչելը, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով ՎՎ դատարանի կողմից կոնվենցիոնալ իրավունքների խախտում ճանաչելը:

Նոր երեւան եկած հանգամանքներ են փվյալ գործով վարույթի ընթացքում հանցավոր արարքներ կատարելու փաստը հաստատված ճանաչելը (սուր ցուցմունք փալը, սխալ թարգմանություն կատարելը, կեղծ փորձագիտական եզրակացություն փա-

լը, իրեղեն ապացույցները, փաստաթղթերը կեղծելը, դատավորի կամ վարույթն իրականացնող այլ անձի կողմից հանցավոր գործողություններ կատարելը): Ընդ որում, այդ փաստերը պետք է ճանաչվեն դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատավճռով եւ ազդած լինեն գործի ելքի վրա: *Նոր երեսան եկած հսկազանսնքներ* են նաեւ դատարանի կամ մինչեւ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաեւ ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

Ինչ վերաբերում է *նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումներին*, ապա դրանց բնորոշումը քրեադատավարական օրենսդրությամբ փորձված չէ: Այնուհանդերձ, պարզ է, որ դրանք ենթադրում են խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը (ՏՏ քր. դատ. օր., հոդված 397) եւ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՏՏ քր. դատ. օր., հոդված 398):

Non bis in idem սահմանադրական երաշխիքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այն փարսավի քրեական գործն ըստ էության լուծող դատավարական ակտերի բողոքարկման սովորական կառուցակարգերի վրա (վերաքննություն, վճռաբեկություն, հսկող դատախազի կողմից քրեական գործի կարճման վերաբերյալ քննիչի որոշման վերացում), կամ սահմանափակի քրեական հետապնդման ենթարկվող (ենթարկված) անձի՝ վարույթի վերսկսման հնարավորությունը:

Քննարկվող սահմանադրական երաշխիքը նաեւ չի վերաբերում «իդեալական հանցակազմի» դեպքերին, երբ անձի կատարած մեկ արարքն իրենից⁷¹ ներկայացնում է երկու ինքնուրույն (մեկը մյուսին չկլանող) հանցագործություն:

Դրա հետ մեկտեղ, «նույն արարքի համար» սահմանադրական ձեւակերպումը պետք է հասկանալ ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով⁷²: Այս առումով, քննարկվող սահմանադրական երաշխիքը փարսավում է ոչ միայն հանցագործությունների (քրեական օրենսգրքով արգելված արարքների), այլ նաեւ վարչական իրավախախտումների վրա: Եթե նույն արարքը համապատասխանում է թե՛ հանցագործության եւ թե՛ վարչական իրավախախտման կազմերին, եւ անձը վերջնական որոշմամբ ենթարկվել է պարասխանարկության վարչական իրավախախտման համար, ապա հանցագործության մեղադրանքով նրա նկատմամբ չի կարող վարույթ սկսվել:

⁷¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1998թ. հուլիսի 30-ի վճիռը՝ Օլիվեիրան ընդդեմ Շվեյցարիայի գործով [Oliveira v. Switzerland], 26-27-րդ կետեր, գանգատ թիվ 25711/94):

⁷² Այն մոտեցումը, որ non bis in idem երաշխիքի առարկան արարքի փաստական բնութագրիչն է, այլ ոչ թե իրավաբանական բնորոշումը, ընկած է Գրադինգերն ընդդեմ Ավստրիայի գործով ՄԻԵԴ-ի վճռի հիմքում: Տե՛ս Gradinger v. Austria, 1995թ. հոկտեմբերի 23, գանգատ թիվ 15963/90, 54-55-րդ կետեր:

ՆՈՂՎԱԾ 23

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարզվի իր անձնական և ընտանեկան կյանքը:

2. Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ փրարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու փրարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

3. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

4. Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավասարի տեղեկությունների շրկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

5. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

1. Մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմը, որին մարդը, իր ազատության շնորհիվ, չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Տվյալ դեպքում, այդ գաղտնիությունն ամենեւին էլ չի թաքցնում ինչ-որ հակահասարակական գործունեություն: Այն արտացոլում է ամեն մի մարդու բնական ձգտումը՝ ունենալու իր ինքիմ և գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը հեռու լինի ուրիշների միջամտությունից: Այն առավելապես կարգավորվում է բարոյական նորմերի հանձնարարականներով և համարվում է հասարակության զարգացման կարևոր խթան:

Մարդը հասարակության անդամ է, բնականաբար, նաեւ հասարակական կյանքի սուբյեկտ: Նրա կյանքի հիմնական մասն անցնում է ընտանիքում: Մակայն յուրաքանչյուր մարդ ունի իր անձնական, անհատական կյանքը: Նասարակական կյանքն անհատի, որպես հասարակության անդամի, քաղաքացու հանրային, գործարար կամ մասնագիտական գործունեությունն է: Մինչդեռ մասնավոր կյանքը կապված է ամենից առաջ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման հետ (հանգիստ, զվարճանք, ժամանց և այլն): Մարդու մասնավոր կյանքի ոլորտի մեջ կարելի է ներառել նաեւ առողջությունը, նրա սոցիալական, քաղաքական, կրոնական և այլ հայացքները, մասնագիտական հետաքրքրությունները, նյութական վիճակը:

«Անձնական», «մասնավոր» և «ընտանեկան» հասկացությունները, չնայած իրենց բովանդակությամբ մոտ հասկացություններ են, այդուհանդերձ, չեն համընկնում:

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կարծիքով՝ մարդու մասնավոր և անձնական կյանքի իրավունքը ոչ միայն հասարակայնությունից փակ լինելու իրավունքն է, այլև այլ անձանց հետ որոշակի աստիճանի զգացմունքային (եմոցիոնալ) կապեր հաստատելու իրավունքը: Այսպեղ խոսքը վերաբերում է սեռական կյանքին: Մա-

կայն Նանձնաժողովի կարծիքով՝ եթե զգացմունքային հարաբերությունները ծավալվում են երկու-երեք անձանց միջև, ապա րվյալ դեպքում մասնավոր կյանքը դուրս է գալիս ըն-
փրանեկան կյանքի շրջանակներից:

Մարդու *անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհարդի արտա-
հայրման և անհատականության պաշտպանության իրավունքն է*: Ենթադրվում է, որ այդ արտահայտումը չպետք է հակասի հասարակության բարոյականության նոր-
մերին և ուրնահարի այլոց իրավունքները: Այդ պայմանները պահպանող ոչ մի մարդու
անձնական կամ ընտանեկան կյանքը չի կարող ենթարկվել անօրինական և կամայա-
կան միջամտության: Նականարությունն առաջանում է այն ժամանակ, երբ հասարա-
կության որոշ անդամների ընտանեկան կամ անձնական կյանքը չի համաձայնեցվում
րվյալ հասարակության սոցիալական և բարոյական նորմերին, և վերջիններիս կողմից
նսեմացվում են այդ նորմերը:

Մասնավոր կյանքի մասին արված դատողությունները, այնուամենայնիվ, ի գո-
րու չեն համակողմանիորեն որոշելու մարդու մասնավոր կյանքի շրջանակները: Խնդիրն
այն է, որ այդ երևույթն ունի խիստ սուբյեկտիվ բնույթ և մեծապես կախված է րվյալ
հասարակության մեջ արմատավորված սովորություններից: Այդուհանդերձ, ընդհանուր
գծերով կարելի է ներկայացնել մարդու մասնավոր կյանքի ոլորտը, որն առաջին հերթին
ներառում է.

ա) *մարդու ոչ պաշտոնական շփումների շրջանակը*: Տվյալ դեպքում մարդն
ինքնուրույն է որոշում, թե ում հետ հաղորդակից լինի կամ ում հետ խզի իր կապերը,

բ) *հարկադրված կապեր*: Այդ կապերն արտահայտվում են նրանում, որ կյան-
քի որոշակի հանգամանքներում մարդը չի կարող չջվել արտաքին սուբյեկտների հետ՝
կապված իր ներքնաշխարհի որոշ րարրերի բացահայտման հետ: Այս դեպքում կողմ-
նակի անձի հետ շփումը և վերջինիս կողմից րված րեղեկարկությունը մտնում է ան-
ձի մասնավոր կյանքի ոլորտը: Այդպիսի րեղեկություններ են հանդիսանում, օրինակ,
բժշկական, փաստաբանական, նոտարական գաղտնիքը և այլն,

գ) *մարդու սեփական ներաշխարհը*: Դրա մեջ մտնում են անձնական ապ-
րումները, կարծիքները, համոզմունքները, կենցաղը, ձեռքբերումները, նախասիրությունը
(հոբբին), սովորությունները, բնավորությունը, համակրանքները, հակակրանքները և
այլն: Նշված առանձնահատկություններն էլ հենց որոշում են մարդու անհատականու-
թյունը: Բնականաբար կյանքի այս կողմերի վերաբերյալ հրապարակումները կարող են
մարդու մոտ առաջացնել անհարմարություն, որի արդյունքում մարդը բարոյական վնաս
է կրում,

դ) *ընտանեկան կապերը*: Այս ոլորտի մեջ կարելի է ներառել ինքիմ կապերը, ե-
րեխաների պլանավորումը, երեխաների դաստիարակության մեթոդները, ընտանեկան
հարաբերությունները, որդեգրումը և այլն,

ե) *կրոնական համոզմունքը և հավատքը*: Նկատի է առնվում ընտրության
ազատությունը՝ քրիստոնեություն, բուդայականություն, մահմեդականություն, աթեիս-
րական համոզմունքներ և այլն:

Մակայն քաղաքացիական հասարակությունը, որտեղ ապրում է մարդը, գիտակ-
ցում է, որ անձնական կյանքի գաղտնիությունը կարող է չարաշահվել առանձին անհատ-
ների կողմից: Այն կարող է արտահայտվել հանցագործներին թաքցնելու, հակահա-
սարակական արարքներ կազմակերպելու ձեով և այլն: Բնականաբար, կարող է ծագել
անձի մասնավոր կյանքին միջամտության անհրաժեշտություն:

Նման դեպքերում հասարակությունը ելնում է այն բանից, որ հանցագործությունը

բացահայտելու նպատակով քաղաքացու մասնավոր կյանքին միջամտությունը պետք է կատարվի միայն օրենքի հիման վրա: Իսկ օրենքը սահմանում է, որ նման միջամտության համար անհրաժեշտ է, որպեսզի անձի մեղքը հիմնավորված լինի և այդ առթիվ հարուցված լինի քրեական գործ: Մյուս բոլոր դեպքերում մարդու անձնական կյանքն անձեռնմխելի է:

Մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ամենից առաջ, ամրագրվում է միջազգային իրավական փաստաթղթերում, որոնց դրույթներն արտացոլվում են պետությունների ազգային օրենսդրության մեջ: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, և չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

2. Նենվելով միջազգային փաստաթղթերի վրա՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը բովանդակում է մի շարք նորմեր մարդու մասնավոր կյանքի ապահովման վերաբերյալ: Այսպես, ըստ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ մասի՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ փարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու փարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Դա նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի առանց անձի համաձայնության որևէ մեկից տեղեկություններ պահանջել ընտանիքի անդամների կամ նրանց ազգականների ծագման մասին: Բանն այն է, որ ընտանիքում կարող են լինել որդեգրվածներ, փոքր երեխաներից սերված երեխաներ, միայնակ մորից ծնված երեխաներ և այլն, որոնց վերաբերյալ տվյալները հրապարակման ենթակա չեն: Արգելվում է նաև տվյալների հավաքումը ընտանիքի գործարար ակտիվության, ֆինանսական աղբյուրների, ինքիմ կապերի և այլնի վերաբերյալ: Իսկ եթե խախտվում են սահմանադրական այդ նորմի պահանջները, և անձի ու նրա ընտանիքի պատիվը և բարի համբավը ենթարկվում է նսեմացման ու վիրավորանքի, ապա նա իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու, որպեսզի մեղավորը ենթարկվի պատասխանատվության:

Սահմանադրական այս նորմի ձեռակերպումից բխում են *«ընտանեկան գաղտնիք»* և *«անձնական գաղտնիք»* հասկացությունները: Ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով, այնպես էլ ազգային օրենսդրությամբ պատշաճ ձեռակերպված չէ *«ընտանիք»* հասկացությունը: Սոցիոլոգիայի գիտության մեջ ընտանիքը բնութագրվում է որպես ամուսինների, ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների պատմական կոնկրետ համակարգ, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ծնողական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական

անհրաժեշտությունը պայմանավորված է բնակչության ֆիզիկական և հոգեւոր վերար-
 քադրության հասարակական պահանջարկով⁷³:

Ընդհանիքը չի սահմանափակվում ամուսինների և գավակների կապով: Այն կա-
 րող է ունենալ ավելի ընդարձակ կազմ: Օրինակ, *Մարքսն ընդդեմ Բեյզիայի գործու-
 ծով* Մարդու իրավունքների եվրոպական դափարանը գրել է, որ ընդհանրական կյանքը
 ներառում է «...առնվազն մոտ ազգականների միջև հարաբերությունները, ինչպես, օրի-
 նակ, պապիկների, քրոջների և թոռների, քանի որ նման կարգի հարաբերություննե-
 րը կարող են էական դերակատարություն ունենալ ընդհանրական կյանքում»⁷⁴: Կամ՝
*Օլտոնն ընդդեմ Շվեդիայի գործու-
 ծով* ընդգծվում է, որ հարազար եղբայրներն ու քույ-
 րերը կարող են պահանջել ընդհանրական կյանքը հարգելու իրենց իրավունքը⁷⁵: Միեւնույն
 ժամանակ, Եվրոպական դափարանն ընդհանիքը, որպես պաշտպանության օբյեկտ, դի-
 փարակում է ոչ թե գույր իրավաբանական, այլ ձեռնարկական տեսանկյունից, այսինքն՝ ընդհա-
 նական կապերն առաջանում են անկախ այն հանգամանքից՝ ամուսնությունը գրանցված
 է, թե՛ ոչ:

ՆՇ գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանիքը՝ որպես
 ինքնուրույն միավոր, օժտված չէ իրավասուբյեկտությամբ: Իրավունքների և պարտակա-
 նությունների կրող հանդես է գալիս ոչ թե «ընդհանիք» միավորը, այլ նրա առանձին
 անդամը: Ընդհանիքը՝ որպես սուբյեկտ, չի կարող դառնալ քաղաքացիաիրավական հա-
 րաբերությունների սուբյեկտ, հայցով դիմել դափարան կամ ենթարկվել կոլեկտիվ պա-
 րասխանավորության: Իրավական ակտերի փրամաբանությունից բխում է, որ ընդհա-
 նիքը որպես պաշտպանության օբյեկտ, առավելապես դիփարակվում է որպես ոչ նյութա-
 կան բարիք, այլ որպես պետության կողմից ճանաչվող սոցիալական երեւոյթ:

Այստեղից էլ բխում են ընդհանրական գաղտնիքներին վերաբերող հիմնահարցերը:
 Ընդհանրի բոլոր անդամներն ունեն ինչպես *ընդհանրական գաղտնիքի* իրավունք,
 այնպես էլ միաժամանակ պարտավոր են պահպանել ընդհանրական գաղտնիքը: Օրինակ,
 ամուսինները որոշակի ժամանակահատված ապրել են համարել կյանքով միմյանց
 վստահելով ամենափայլուն անձնական գաղտնիքներ: Ներագա կյանքը կարող է չհա-
 ջողվել, որի արդյունքը լինում է ամուսնալուծությունը: Ամուսիններից մեկն սկսում է փա-
 րածել փայլուն փայլուններ իրենց ամուսնական կյանքի ինքնին կողմերի առանձ-
 նահարկությունների վերաբերյալ, որի արդյունքում ամուսիններից մեկին կարող է պար-
 ճառվել բարոյական լուրջ վնաս: Բնականաբար, հարց է ծագում, թե ինչպե՞ս պաշտ-
 պանել փուժողի իրավունքները: Կարող է, արդյոք, փուժող կողմը պահանջել վնասի հա-
 փուցում կամ հայցով դիմել դափարան՝ առգրավելու հրապարակված նյութերի փայ-
 քանակը կամ արգելելու հուշերի հրապարակումը: Նմանափայլ իրավիճակներ առավել
 հաճախ հանդիպում են, օրինակ, ԱՄՆ-ում՝ հոլիվուդյան աստղերի կյանքում: Եվ որքան
 սկանդալային է ամուսնալուծությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ ամուսին-
 ներից մեկը մամուլ ասուլիս կիրավիրի՝ հրապարակելու համարել կյանքի ինքնին կողմե-
 րի մանրամասնությունները: Այստեղից կարելի է գալ այն եզրահանգմանը, որ որեւէ հուշ
 չի կարող հրապարակվել առանց շահագրգիռ կողմի համաձայնության: Արդյունքում,
 հայտնվում են բավականին բարդ իրադրությունում, քանի որ բախվում են երկու փար-
 բեր շահեր՝ *խոսքի ազատությունը և անձնական կամ ընդհանրական կյանքի ան-
 ձեռնմխելիությունը*:

⁷³ Մանրամասն տես **Голод С. И.** Семья и брак, историко-социологический анализ, СПб., 1998, էջեր 90-91:

⁷⁴ Տես *Европейский суд по правам человека, Избранные решения*, в 2 т., т. 1, էջ 240:

⁷⁵ Նույնը, էջ 549:

Կարծում ենք, նմանապիպ հակադրությունների կարգավորումն առավելապես պետք է իրականացվի ոչ այնքան իրավական, որքան բարոյական նորմերով:

Բոլոր դեպքերում, իրավաբանական գրականության մեջ փորձեր են արվել առանձնացնել անձնական և ընտանեկան գաղտնիքը: «Անձնական գաղտնիքի փակ հասկացվում է անհատի իրավունքը որոշելու իր վարքագիծը հասարակության մեջ, ինքնուրույն կարգավորելու տեղեկատվության ռեժիմը, և այլ անձանցից պահանջելու պահպանել այդ իրավունքները: Իսկ ընտանեկան գաղտնիքի փակ՝ ոչ թե լոկ մի քանի, այլ արյունակցական կապերով կապված անձանց՝ ընտանիքի անդամների, վարքագիծը որոշող փաստերի գաղտնիության իրավունքն է նկատի առնվում»⁷⁶:

Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում կարող է արձանագրվել նաև մարդու վերաբերյալ իրական տեղեկատվության հրապարակման դեպքում, որի հրապարակմամբ վերջինս շահագրգռված չէ, բայց այն որևէ առնչություն կարող է չունենալ հասարակական գործունեության հետ: Այսինքն՝ տեղեկությունների (անգամ ճշմարիտ) հրապարակումը չի կարող արդարացվել հասարակական շահով: Այս դեպքում առկա է արդեն ուրնագություն մարդու պարվի և բարի համբավի դեմ: Երկու դեպքերն էլ քաղաքացու կողմից ինքնուրույն ձեռավորված սուբյեկտիվ գնահատականներ են: Դրա ձեռավորումը կախված է այն նպատակից, որն իր առջև դնում է քաղաքացին: Արդյունքը կարող է լինել բարոյական դատարարումը, ընկերական համակրանքների, ընտանեկան կապերի խզումը, փոխադարձ պարտավորությունների խախտումը և այլն:

Սահմանադրական արգելքը, սակայն, միայն չի սահմանափակվում անձնական և ընտանեկան գաղտնիքի պահպանմամբ: Խնդիրն այն է, որ մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն անմիջականորեն կապված է տեղեկատվության իրավական ռեժիմի հետ: Մարդու մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունները կարող են ամբարվել տվյալների բազմաթիվ տեղեկատվական բազաներում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը տալիս է «տեղեկություն» եզրույթի հասկացությունը. այն իրենից ներկայացնում է անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով սրացված և ձեռավորված տվյալներ՝ անկախ դրանց փնտրման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսամատյակներ, գծագրեր, սխեմաներ, նութաներ, քարտեզներ): Նշված սահմանումը վկայում է այն մասին, որ ամենեւին էլ պարտադիր չէ, որպեսզի տեղեկությունը փաստաթղթավորվի, որպեսզի դրա տարածումն ընկնի սահմանադրական արգելքի փակ: Ուստի տեղեկությունը կարող է ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Մեր օրերում տեղեկությունների օգտագործման ամենահարապ խնդիրը համարվում է դրանց գրվելը էլեկտրոնային տվյալների բազայում: Սահմանադրական արգելքի ապահովումը առավել բարդանում է հատկապես այն պարագայում, երբ գիտության և տեխնիկայի զարգացմանը համընթաց երկրում ավելանում են համակարգիչները և ձեռավորվում է միասնական համակարգչային տեղեկատվական ցանց: Դրա առկայության պարագայում բավականին բարդանում են մարդու մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և պահելու խնդրի իրավական տեսակետները: Դիցուք, քաղաքացին ցանկանում է տեղավորվել աշխատանքի, դիմում է զբաղվածության ծառայ-

⁷⁶ Տե՛ս **Лещенко Г. В.** Право на личную и семейную тайны// Право граждан на информацию и защита неприкосновенности частной жизни: Сборник научных трудов. Часть II, Н. Новгород, 1999, էջ 206:

յություններին, լրացնում է բավականին մեծ քանակությամբ հարցաթերթեր (անկեղբայրներ), որոնք մուտքագրվում են համակարգիչ: Քաղաքացին դիմում է բժշկի, որը նրա բուժման ամբողջ տեղեկավորությունը մուտքագրում է համակարգիչ: Քաղաքացին բանկի իր հաշվի համարից հանում է գումարներ, բանկային քարտի միջոցով խանութներից կատարում է գնումներ, ապահովագրում է ունեցվածքը: Ամենուրեք նրա վերաբերյալ այս կամ այն տեղեկավորությունը գրանցվում է էլեկտրոնային փայլերի բազայում: Այս երեւոյթի անհրաժեշտությունը ոչ թե պայմանավորված է պետության հանդեպ այդ կազմակերպությունների ունեցած պարտականություններով, այլ հարմարավետությամբ եւ փնտրեալ սահմանափակումներով: Արդյունքում, քաղաքացու մասնավոր կյանքի վերաբերյալ մի սրվար տեղեկավորություն, իրենից անկախ, հայտնվում է ինչ-որ կազմակերպության փայլերի բազայում: Տե՛ս այս պարագայում է, որ սահմանադրական արգելքներն ու օրենքները չեն կարողանում երաշխավորել մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Տի՛մնախնդիրը գլոբալ է եւ բնորոշ է զարգացած տեխնոլոգիաներ ունեցող երկրներին:

3. ՏՏ Սահմանադրության 23-րդ հոդվածն ամրագրում է նաեւ, որ յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու, ինչպէս նաեւ իր մասին ոչ հավասարի տեղեկությունների շտկման եւ ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք (մաս 4):

Սահմանադրության նշված դրույթն ունի ընդհանուր բնույթ եւ իրենից ներկայացնում է որպէս հանրային իշխանության ներկայացուցիչների թղթակցային պարտականություն: Նշված պարտականության իրականացման մեխանիզմն ինչպէս իրավական հիմքերի առկայության, այնպէս էլ պաշտոնատար անձանց կողմից իրենց սահմանադրական պարտականությունների կատարման տեսակետից դեռեւս թույլ է զարգացած: Քաղաքացու կողմից նշված իրավունքի իրականացման հանրահայտ ձեւեր են հանրամատչելի ռեսուրսների, արխիվների, հիմնադրամների միջոցով կամ էլ հանրային իշխանություններին ուղղված պաշտոնական հարցման (դիմում) հիման վրա անհրաժեշտ փաստաթղթերին ծանոթանալը:

ՏՏ Ազգային ժողովի կողմից 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունվել է «Տեղեկավորության ազատության մասին» ՏՏ օրենքը, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական հիմնարկներին, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններին, ինչպէս նաեւ հանրային նշանակության կազմակերպություններին եւ դրանց պաշտոնատար անձանց ու ստանալու այդ տեղեկությունը: Բացի դրանից, օրենքը տեղեկավորություն փնտրող վերոհիշյալ կազմակերպություններին պարտավորեցնում է անհապաղ հրապարակել կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնել իրենց փնտրության փակ գրնվող այն տեղեկությանը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին ու ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը (հոդվ.7):

Օրենսդրությամբ, միաժամանակ, սահմանվում են տեղեկավորության իրավունքի սահմանափակումներ, եթե այն պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնի

նիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության փուլեր, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող փուլեր (բժշկական, փաստաբանական, նոտարական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները:

Սահմանադրությունը մարդու՝ իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքի իրականացման համար որպես պարտականություն կրող սուբյեկտներ փաստորեն ճանաչում է բացառապես պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին: Մինչդեռ պարտականություն կրող սուբյեկտների շրջանակից դուրս են մնում առեփարային կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները, հասարակական և կրոնական միավորումները և իրավահարաբերությունների մի շարք այլ սուբյեկտներ: Նույն պրասմաբանությամբ էլ շարադրված է Սահմանադրության 27.1-րդ հոդվածը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պարզաճ պատասխան ստանալու իրավունք:

Ինչպես արդեն նշվել է, քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն կարող են ունենալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև մասնավոր կազմակերպությունները: Սահմանադրական այս նորմը նպաստում է, որպեսզի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը գրավի հանրության վերահսկողության ներքո, սակայն արդյունքում մասնավոր կառույցները հայտնվում են ինչպես պետության, այնպես էլ հասարակության վերահսկողությունից դուրս, ինչի հետևանքով կարող են ուրնահարվել քաղաքացիների իրավունքները:

4. Տեղեկատվության փարսածման իրավունքը սերտորեն կապված է ճշմարիտ յուրաքանչյուր ընթերցողի և ունկնդրի հանդեպ հարգանքով վերաբերող տեղեկատվության իրավունքի հետ: Խնդիրն այն է, որ ապատեղեկատվությունը ոչ միայն կարող է ուրնահարել մարդու արժանապատվությունը, այլև լուրջ սպառնալիք դառնալ ոչ միայն պետության ազգային անվտանգության, այլև միջազգային խաղաղության համար: Այս հանգամանքի գիտակցմամբ 1952թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովն ընդունեց Ուղղման միջազգային իրավունքի մասին կոնվենցիան: Մասնավորապես դրանում ասվում է, որ ոչ ճիշտ գեկույցները, հաղորդագրություններն ու տեղեկատվությունը խոչընդոտում են ազգերի միջև փոխըմբռնման առաջխաղացմանը: Տեղեկատվական գործակալությունները և թղթակիցները պարասխանատվություն են կրում փաստերն առանց շեղումների հաղորդելու համար: Եթե ներկայացված տեղեկատվության մեջ պարունակվում է սուտ և անճշտություն, ապա անհրաժեշտ է այդ մասին մարդկանց անհապաղ հայտնել հենց նույն գործակալությունների և ալիքների միջոցով: Պետությունը, որի գործակալություններով և ալիքներով փարսածվել է սուտը, պետք է ներկայացնի տեղի ունեցածի սեփական վարկածը՝ շարադրելով միայն փաստերն առանց մեկնաբանությունների (հոդվ. 2): Նինգ օրից ոչ ավելի ժամանակահատվածում պետության այդ վարկածը պետք է փարսածվի հենց այն ալիքների ու գործակալությունների միջոցով, որոնցով փարսածվել է ապատեղեկատվությունը: Այն փոխանցվում է նաև այն գործակալությունների բյուրոներին, որոնց լրագրողները կարարել են տեղեկատվության խեղաթյուրում:

Նայաստանի Նանրապետությունում զանգվածային լրարվության միջոցներն ազատ են եւ գրաքննության չեն ենթարկվում: Նանրապետության քաղաքացիներն ունեն զանգվածային լրարվության միջոցներով իրենց տեսակետները, կարծիքներն արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատարակելու, հավասարի լրարվություն ստանալու իրավունք: Քաղաքացիներն իրենց տեսակետներն ու կարծիքները կարող են փոխանցել, արտահայտել եւ տարածել ցանկացած օրինական միջոցով: Դա նշանակում է, որ քաղաքացին այդ տեղեկարվությունը կարող է դարձնել հասարակության ձեռքբերումը դրա իրական եւ ճշմարիտ լինելու կապակցությամբ կրելով անձնական պատասխանատվություն: Վերոհիշյալ իրավունքի իրականացման համար քաղաքացին կարող է հիմնել իր սեփական թերթը, օգտագործել հեռուստատեսության պետական կամ մասնավոր ալիքը, հանդես գալ հրատարակային դասախոսություններով եւ այլն:

Տեղեկարվության ազատության չարաշահումներից խուսափելու համար պետության կողմից մանրամասնորեն սահմանվում են զանգվածային լրարվության միջոցների հիմնադրման պայմանները, լրագրողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ տեղեկարվության ազատության չարաշահման համար պատասխանատվությունը:

Զանգվածային լրարվության ազատության չարաշահումը կարող է էական վնաս հասցնել հասարակությանը եւ պետությանը: Այն կարող է հանգեցնել հասարակական հարաբերությունների ապակայունացման եւ խախտել հասարակության համերաշխությունն ու ներդաշնակությունը: Այդ է պարճառը, որ զանգվածային լրարվության միջոցների մասին օրենքով արգելվում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկարվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Բացի դրանից, արգելվում է նաեւ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկարվության տարածումը, եթե դա ստացվել է առանց տեսաձայնագրման մասին անձին զգուշացնելու:

«Տեղեկարվության ազատության մասին» ՏՏ օրենքը, ՏՏ Սահմանադրության 23-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից ելնելով, սահմանում է, որ «Ոչ հավասարի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն (հոդվ. 10, 4-րդ մաս): Սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված է նաեւ, որ ոչ հավասարի տեղեկություն տրամադրելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

5. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքն ընդգրկում է անհարների միջեւ տեղի ունեցող հաղորդակցության տեխնիկապես միջնորդավորված բոլոր տեսակները: Այն ենթադրում է մարդու իրավունքն առանց որեւէ միջամտության կամ գրաքննության ազատ հաղորդակցություն (կապ) հաստատել այլ անձանց հետ: Դրա վերահսկումը լուրջ միջամտություն է մարդու անձնական կյանքին:

Այս իրավունքի հիմնական երաշխիքներից է ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածով մարդու հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելը, ինչպես նաեւ պետության պարտականությունը՝ ապահովել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային

իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապարասխան:

Այն սահմանված է մի շարք միջազգային իրավական ակտերով, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ապահովումը՝ որպես սկզբունք, ամրագրված է ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում, որն արգելում է անձին նշված իրավունքներից ապօրինի գրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը: Նշված հարցերը որոշակի կարգավորում են ստացել նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՏՏ օրենքով:

ՏՏ Սահմանադրության 43-րդ հոդվածը թույլ է տալիս նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության և բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարփվի և բարի համբավի պաշտպանության համար:

Ըստ ՏՏ Սահմանադրության 44-րդ հոդվածի՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարավորությունների շրջանակներում:

Թեև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը լուրջ միջամտություն է մարդու անձնական կյանքին, որոշ դեպքերում, սակայն, այդ միջամտությունը հանցագործությունների դեմ պայքարում, օրենքով հստակ նախատեսված դեպքերում և կարգով կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, վերը թվարկված ներպետական իրավական ակտերով քննարկվող իրավունքի սահմանափակում նախատեսող գործողությունների նկատմամբ փարածվում է նախնական դատական վերահսկողության ինստիտուտը՝ որպես այդ իրավունքի ապահովման գործուն երաշխիք: Դրա իրականացման լրացուցիչ երաշխիք է նաև դատախազական հսկողությունը նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման օրինականության նկատմամբ՝ օրենքով դատախազին վերապահված լիազորությունների սահմաններում:

Ներկայացվող սահմանադրական իրավունքի անարգել իրականացման հարցում կարևոր նշանակություն ունի «Փոստային կապի մասին» ՏՏ օրենքը, որով սահմանվում են Նայաստանի Նանրապետության փարածքում փոստային կապի բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, փոստային կապի գործունեության կարգավորմանն ուղղված պետական կառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև փոստային կապի գործունեությանը մասնակցող կամ փոստային կապի ծառայություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարավարությունները:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ապահովման կարևոր երաշխիք է նաև այն, որ ՏՏ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածը պարասխանարվություն է նախատեսում քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելու համար:

Ինչպես ՏՏ գործող օրենսդրությամբ, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում Կրվում են քննարկվող իրավունքի առնչությամբ օգրագործվող հասկացությունների որոշակի մեկնաբանություններ:

Այսպես, ըստ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նամակագրությանը (նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ), որի վրա կարող է կալանք դրվել, մասնավորապես, վերաբերում են հետեյալ օբյեկտները՝ նամակները, հեռագրերը, ռադիոգրերը, փոստաձանրոցները (բանդերուները), ծանրոցները, փոստային բեռնամփոփները (կոնտեյներները), փոխանցումները, Փաքսով և էլեկտրոնային փոստով հաղորդումները:

Ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՏՏ օրենքի 25-րդ հոդվածի՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապարճների (Փաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգրագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգրագործմամբ:

Ինչ վերաբերում է հեռախոսային խոսակցությունների վերահսկմանը, ապա «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՏՏ օրենքի 26-րդ հոդվածն այդպիսին համարում է հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգրագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «նամակագրություն» հասկացության մեջ, բացի գրավոր հաղորդակցվելու ավանդական ձևերից, ինչպիսիք են փոստը, հեռագիրը, հեռախոսագրույցը, ներառվում են նաև կապի ժամանակակից մյուս ձևերը՝ Փաքսը և էլեկտրոնային փոստը: Նեռախոսային խոսակցությունների հետ կապված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ թեև հեռախոսագրույցները կոնկրետ նշված չեն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետում, դատարանը գտնում է, որ նման գրույցները ներառվում են այդ հոդվածներում բովանդակվող «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ⁷⁷:

⁷⁷ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը/ Վ. Հ. Հովհաննիսյան, Չ. Գ. Գուկասյան, Լ. Մ. Հակոբյան. Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 266.

ՆՈՂՎԱԾ 24

1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

1. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված սուբյեկտիվ իրավունք է, որն ապահովում է մարդու անվտանգ, լիահարմար բնակությունը, նախատեսում նրա կամքի ազատության իրավագործությունն իր բնակարան ուրիշի մուտք գործելը թույլատրելու վերաբերյալ որոշում կայացնելիս: Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության դրսեւորումներից է և պաշտպանում է բնակարանը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց, անհատների ոլորնագություններից:

Սահմանադրության 24-րդ հոդվածում ամրագրված իրավունքը պաշտպանված է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի 1-ին մասով. «Յուրաքանչյուր մարդ ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք»: Կոնվենցիայի 8-րդ հոդվածով հռչակված «բնակարանի նկատմամբ հարգանքի իրավունքը» ՆՍ Սահմանադրության 24-րդ հոդվածում ամրագրված է երեք առանձին դրույթների տեսքով.

1/ յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Բնակարան կարելի է մուտք գործել բնակարանատիրոջ համաձայնությամբ.

2/ ոչ ոք առանց բնակարանի օրինական փրապետողի և օգտագործողի համաձայնության իրավունք չունի մուտք գործել նրա բնակարան: Մարդու կամքին հակառակ նրա բնակարան կարելի է մուտք գործել օրենքով նախատեսված դեպքերում.

3/ բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը դասվում է մարդու քաղաքացիական (անձնական) իրավունքների շարքին, որոնք կոչված են ապահովելու մարդու, որպես անհատի, կյանքի, արժանապատվության, ազատության և նրա մասնավոր կյանքի հետ կապված այլ իրավունքների պահպանությունը: Ոչ ոք իրավունք չունի առանց օրինական հիմքերի մտնել ուրիշի բնակարան կամ այնտեղ մնալ բնակվող անձի կամքին հակառակ: **Բնակարանի անձեռնմխելիությունն** այնպիսի հատուկ վիճակ է, որը երաշխավորում է փվյալ փակ փարածքում (բնակարանում) մարդու լիահարմար, կողմնակի միջամտությունից անկախ բնակությունը, բնական-անհրաժեշտ գործողությունների իրականացումը (ազատ հանգիստ, մտորումներ, ինքիմ դրսեւորումներ և այլն), մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկատվության (գաղտնիքի) ամբողջականությունն ու պաշտպանվածությունը, ինչպես և զերծ է պահում մասնավոր և ընտանեկան գաղտնիք կազմող փվյալների ապօրինի որոնումից, հավաքումից և փարածումից:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի նորմատիվ բովանդակությունը, հետևապես՝ նրա սոցիալական արժեքայնությունը, պայմանավորված է այն հանգա-

մանքով, թե ինչպես եւ ինչ ծավալով պետք է մեկնաբանվի «բնակարան» սահմանադրական-իրավական հասկացությունը:

Սահմանադրական այս նորմից բխող դատարարական երաշխիքներն ամրագրված են Նայաստանի Նանրապետության քրեական դատարարության օրենսգրքում: Ընդ որում, օրենսգիրքը փվել է այն հարցի պատասխանը, թե քրեադատարարական իրավահարաբերություններում ինչպես պետք է ընկալվի «բնակարան» հասկացությունը: Այսպես, 6-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն՝ «բնակարան» հասկացությունն ընդգրկում է շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալված բնակարանը, այգեփնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար՝ նրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման փարածքը, ինչպես եւ դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես եւ որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը եւ ձեղնահարկը: Բնակարան է համարվում նաեւ մասնավոր ավտոմեքենան, գեղային կամ ծովային նավը, ինչպես եւ ծառայողական անձնական աշխատասենյակը եւ ավտոմեքենան, արվեստանոցը:

Քրեական դատարարության օրենսգիրքը միակն է Նայաստանի Նանրապետության օրենսդրության համակարգում, որը հնարավորինս սպառիչ սահմանում է «բնակարան» հասկացության փարբերը: Օրենսգրքում փրված սահմանումը համապատասխանում է նաեւ միջազգային իրավունքին հայտնի «բնակարան» հասկացությանը՝ դրա սահմանադրաիրավական նշանակությամբ: Մասնավորապես՝ իր որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, բացի բնակելի փնից, բնակարան է համարում փաստաբանական գրասենյակը՝ ելնելով այն դիրքորոշումից, որ պրոֆեսիոնալ կամ գործարար գործունեությամբ հաջողությամբ կարելի է զբաղվել նաեւ սեփական բնակարանում: Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ պրոֆեսիոնալ բնագավառին չառնչվող գործունեությամբ կարելի է զբաղվել գրասենյակում կամ առեւտրային ծառայողական շենքում, հետեւաբար՝ դրանք եւս մտնում են «բնակարան» հասկացության մեջ: Եվրոպական դատարանը բնակարան է համարում ոչ միայն ծառայողական աշխատասենյակը, այլեւ՝ քաղաքացիներին պատկանող փրանսպորտային միջոցները, կազմակերպությունների շենքերը, այդ թվում առեւտրային շինությունները, շրաբ-բնակարանները, րեղական ներկայացուցչությունների շենքերը եւ այլն: Նողամասը, որպեղ նախաբեսվում է իրականացնել բնակելի փրան շինարարություն, Եվրոպական դատարանը բնակարան չի համարում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը փրարաբեսակ շինությունները «բնակարան» հասկացության փրակ առբերելու հարցում միասնական չափորոշիչներ չի սահմանել, սակայն, այսպես թե այնպես, «բնակարան» հասկացությունը կապում է մարդու՝ փրվյալ փրարածքը անձնական կյանքի, բնակության համար օգտագործելու մփրադրության հետ:

Շենքը կամ շինությունը բնակարան համարելու հիմնական «պայմանը»՝ մշտապես կամ ժամանակավորապես **բնակության** համար օգտագործելու հանգամանքը, եւ իր դրսետրումն է սփացել վերոհիշյալ դատարարական նորմում: «Բնակություն» հասկացության մեկնաբանման համար կարելուր են փրվյալ փրարածքը քնի եւ հանգստի համար օգտագործելու, հետեւաբար՝ փրարածքում անկողնու առկայության հանգամանքները: Ննարավոր է նաեւ «բնակության» այլ՝ մարդու ողջ կենսագործունեությունը

(քունը, հանգիստը, սննդի պարասպումը, աշխատանքը) ընդգրկող մեկնաբանություն, որի դեպքում առաջնային դեր է ստանում մարդու մեկուսանալու կամ առանձնանալու հնարավորությունը: Նման մեկնաբանության դեպքում սահմանադրական նորմը ոչ միայն պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց, այլև մասնավոր անձանց է պարտավորեցնում ձեռնպահ մնալ բնակարանի անձեռնմխելիության խախտումներից:

Ոչ ոք առանց բնակարանի օրինական փրկապետողի և օգրագործողի համաձայնության իրավունք չունի մուտք գործել նրա բնակարան: Բնակարանի անձեռնմխելիությունը Սահմանադրության 24-րդ հոդվածի իմաստով ենթադրում է նախ և առաջ «Ֆիզիկական» անձեռնմխելիություն, այսինքն՝ առանց օրինական հիմքերի՝ «բնակարան» կոչվող փակ տարածք ֆիզիկապես մուտք գործելու անթույլատրելիություն: Բնակարանի «Ֆիզիկական» անձեռնմխելիությունը պետք է փաթեթել օրինական փրկապետողի շենքի, շինության և այլ անշարժ գույքի «Ֆիզիկական» անձեռնմխելիությունից: Տվյալ դեպքում գործ ունենք սեփականության անձեռնմխելիության հետ (Սահմանադրության 31-րդ, քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածներ), որի իրացման իրավական երաշխիքներից մի քանիսն իրենց դրսևորումն են գրել քաղաքացիական օրենսգրքի 203-րդ հոդվածում՝ ներխուժումն արգելելու, կանխելու կամ վերացնելու, ինչպես նաև այդ նպատակով ոստիկանությանը լիազորելու իրավագործությունները սահմանելով: Այլ կերպ ասած՝ վկայակոչված իրավանորմերն ապահովում են սեփականատիրոջ իրավական փրկողսի կայունությունն ու անխախտելիությունը և ոչ թե բնակարանի անձեռնմխելիությունը:

Նամաձայն Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մարդու կամքին հակառակ նրա բնակարան կարելի է մուտք գործել օրենքով նախատեսված դեպքերում: Այդպիսով, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակվող իրավունք է: Կյանքում առաջանում են իրադրություններ, երբ անհրաժեշտ է լինում մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան: Սահմանադրությունը սահմանում է, որ այդ դեպքերը պետք է նախատեսվեն օրենքով: Այդպիսին կարող են համարվել արտակարգ իրավիճակները (օրինակ՝ հրդեհ, վթարներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև իրավապահպան գործունեության իրականացումը (օրինակ՝ դատարանի վճիռների կատարման անհրաժեշտությունը, հանցագործությունների բացահայտումը):

Բնակարան մուտք գործելը հնարավոր է նաև առանց «Ֆիզիկական» ներթափանցման: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է «ներքին դիպու» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որն իրենից ներկայացնում է բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետեւելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումը, ինչպես և դիպման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչներին միջոցով կամ առանց դրանց (օրենքի 22-րդ հոդված):

Ժամանակակից օպերատիվ-հետախուզական տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս փակ տարածքներում դրանք տեղադրելով կամ տարածքին մոտ օգրագործելով՝ վերահսկել ու ամրագրել տարածքի ներսում տեղի ունեցող բոլոր դեպքերն ու իրադարձությունները: Նարկանշական է այն հանգամանքը, որ օրենքում ամրագրված հատուկ վերապահմամբ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում «բնակարան» հասկացությունն օգրագործվում է Հայաստանի Նախապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Ըստ մարդու իրավունքների ոլորտ միջամտության աստիճանի՝ քննարկվող

օպերափիլ-հեփախուզական միջոցառումը դասվում է, այսպես կոչված՝ «երրորդ կարեգորիայի» հեփախուզական միջոցառումների շարքին, որի իրականացման հիմքերը, կարգը, պայմանները Սահմանադրության ուժով սահմանված են օրենքով: Մասնավորապես՝ ներքին դիփոմը կարող է իրականացվել միայն այն դեպքերում, երբ՝

ա) անձը, ում նկատմամբ դրանք պետք է անցկացվեն, կասկածվում է **ծանր** եւ **առանձնապես ծանր** հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերափիլ-հեփախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ փողեկավարության ձեռքբերումն անհնարին է.

բ) ներքին դիփոմը թույլատրված է դատարանի որոշմամբ:

«Օպերափիլ-հեփախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը բնակարանում իրականացվող միջոցառումների օրինականությունը պայմանավորում է դատարանի որոշման առկայությամբ: Բացի ներքին դիփոման դեպքերից, «կաշառք սրանալու կամ կաշառք փայլու նմանակում» օպերափիլ-հեփախուզական միջոցառումը բնակարանում իրականացնելիս՝ միջոցառման արդյունքների փեսանկարահանումն ու ձայնագրումը եւս կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ (օրենքի 30-րդ հոդված):

Սահմանադրությունը բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավական հիմքերի հարցում առանձնահատուկ մոտեցում չի ցուցաբերել՝ թողնելով դրանք ընթացիկ օրենքների կարգավորմանը՝ Սահմանադրության 43-րդ հոդվածի սահմաններում:

1/ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված են բնակարանի անձեռնմխելիության իրավունքը շոշափող մի քանի իրավադրույթներ: Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ոստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս եւ բացահայտելիս իրավունք ունի հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հեփապնդելիս, հանցագործություն կատարվելու կամ կատարված լինելու, ինչպես նաեւ դժբախտ պատահարի մասին բավարար փյալների առկայության դեպքում, վթարների, համաճարակների, զանգվածային անկարգությունների ժամանակ քաղաքացիների եւ հասարակական անվտանգության ապահովման անհրաժեշտության, ինչպես նաեւ հեփաձգում չհանդուրժող այլ դեպքերում մուտք գործելու բնակարաններ, շինություններ, փարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով:

Բնակարան, շինություն, փարածք կամ հողամաս մուտք գործելուց, խուզարկություն իրականացնելուց հեփո կազմվում է արձանագրություն, որում հստակ նշվում են դրա գտնվելու վայրը, անհրաժեշտ գործողությունների ավարտի օրը, ժամը, փարածքում կատարված բոլոր գործողությունները, այդ գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, բնակության վայրերը:

Արձանագրության մեկ օրինակը փրվում կամ ուղարկվում է բնակարանի, շինության, փարածքի կամ հողամասի սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին: Եթե ոստիկանությունը բնակարան, շինություն, փարածք կամ հողամաս մուտք է գործել դրա սեփականատիրոջ կամ նրա լիազորած անձի բացակայությամբ, ապա անհրաժեշտ գործողությունները կատարելուց հեփո բնակարան, շինություն, փարածք կամ հողամաս մուտք գործած անձանց կողմից պետք է ապահովվի դրա հեփագա անվտանգությունը:

Եթե վերը նշված գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ, ապա ոստիկանությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում ծանուցում է դատախազին:

Գործող իրավական ակտերը բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավազաւիությունն ստուգելու լիազորությունը վերապահում են կամ դադարանին, կամ դադարախազին: Սակայն, մի կողմից, մարդու ազատության, մյուս կողմից՝ իշխանական միջամտության հավասարակշռման հարցում վճռորոշ դերակաւարարում ունեն դադարանները:

2/ Քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածը փարբերում է մարդու կամքին հակառակ նրա բնակարան մուտք գործելու երկու կարգ՝ ա/ բնակարանի զննումը, այնտեղ դադարակարկան այլ գործողություններ կատարելը, ինչպես նաեւ փեխնիկական միջոցների գործադրմամբ բնակարան մուտք գործելը այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ, բ/ բնակարանի խուզարկությունը /տե՛ս սույն հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը/:

Բնակարանի զննումը, այնտեղ դադարակարկան այլ գործողություններ կատարելը, ինչպես նաեւ փեխնիկական միջոցների գործադրմամբ բնակարան մուտք գործելը այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ՝ քրեական դադարակարության ընթացքում կարող են կատարվել հեփաքննության մարմնի, քննիչի, դադարախազի որոշմամբ (քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մաս):

2. Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասը, կոնկրետացնելով 1-ին մասը, սահմանում է բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման հատուկ դեպք՝ խուզարկությունը: **Խուզարկությունն** իրենից ներկայացնում է գործի համար նշանակություն ունեցող առարկաների ու փաստաթղթերի որոնման (գրնելու) եւ վերցնելու գործողություն (քր. դատ. օր.-ի հոդվ. 225): Ըստ խուզարկության օբյեկտի՝ խուզարկության փեսակներից մեկն էլ բնակարանի խուզարկությունն է:

ուզարկությունն էականորեն սահմանափակում է անձի, նրա գույքի եւ բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը, ուստի այդ իրավունքի երաշխիքներ Սահմանադրությունը նախատեսում է.

- ա/ բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում.
- բ/ բնակարանի խուզարկությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով:
- Քրեադադարակարկան օրենքը կարգավորում է նաեւ խուզարկության կատարման հիմքերը, դադարակարկան կարգը, խուզարկության արձանագրությանը ներկայացվող պահանջները.

գ/ բնակարանի խուզարկության իրականացման թույլտվությունը փալիս է դադարանը՝ իր կողմից կայացված որոշմամբ:

ՆՇ քր. դատ. օր.-ը կանոնակարգում է անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակող քննչական եւ այլ դադարակարկան գործողությունների իրականացման հիմքերը եւ կարգը: Բնակարանի խուզարկության կատարման ընդհանուր պայմաններն են. ա/ քրեական գործի հարուցման փաստը, բ/ գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվող բավարար հիմքերը, գ/ քննիչի (հեփաքննության մարմնի) եւ դադարանի որոշման առկայությունը:

Քրեական դադարակարկությունում մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակման թույլտվություն սփանալու հեփ կապված քրեական հեփապնդման մարմինների միջոտրողությունների քննությունն իրականացվում է առանց արդարադատության ժողովրդակարկան մի շարք հիմնարար սկզբունքների պահպանման (հրապարակայնություն, կողմերի իրավահավասարություն եւ մրցակցություն եւ այլն), ավելին՝ օպերատիվ-հեփախուզական միջոցառումների պարագայում խստորեն պահպանվում է կոնսպիրացիայի (գաղտնագործուենության) սկզբունքը,

առանց որի հնարավոր չէ հասնել «Օպերատիվ-հեղափոխական գործունեության մասին» օրենքով նախատեսված նպատակներին: Նման դեպքերում դատարանի կողմից ընդունվող որոշումը պետք է բավարարի դատավարական որոշմանն օրենքով առաջադրվող պահանջները, այսինքն՝ լինի օրինական, հիմնավոր եւ պարճառաբանված:

ՆՈՂ-ՎԱԾ 25

1. Նայասարանի Նանրապետությունում օրինական հիմքերով գրավող յուրաքանչյուր ոք ունի Նայասարանի Նանրապետության փարածքում ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Նայասարանի Նանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի եւ Նայասարանի Նանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Նայասարանի Նանրապետություն վերադառնալու իրավունք:

1. Ժամանակակից մարդու կյանքի պայմաններն այնպիսին են, որ նա աշխատանքային, ընտանեկան, մասնագիտական, ուսումնառության եւ այլ խնդիրներ լուծելու համար ստիպված է հաճախ փեղաշարժվել, փոխադրվել փեղից փեղ: Նա անհրաժեշտություն է զգում փեղաշարժվել ոչ միայն իր պետության փարածքում, այլև նրա սահմաններից դուրս: Ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունքը մարդկության նախնական շրջանում պայմանավորված է եղել բնական հանգամանքներով՝ կյանքի առաջացման առանձնահատկություններով, էվոլյուցիոն գործընթացներով, պարմական, աշխարհագրական, կրոնամշակութային եւ այլ իրողություններով:

Ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունքը դասվել է դատվում է մարդու հիմնական քաղաքացիական (անձնական) իրավունքների եւ ազատությունների շարքին: Նայասարանի Նանրապետությունց դուրս գալու եւ Նայասարանի Նանրապետություն վերադառնելու սահմանադրական իրավունքների հետ մեկտեղ այն մարդուն հնարավորություն է տալիս սեփական կամքին համապատասխան փեղաշարժվել փարածության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանվել իր նկատմամբ կատարվող ոտնձգություններից:

Ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու իրավունքը հռչակված է մարդու իրավունքների մասին գրեթե բոլոր հիմնական միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ 1966 թվականի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածում:

Չնայած փարածաշրջանային եւ համաշխարհային մակարդակի միջազգային իրավական ակտերում առկա որոշակի բովանդակային փարբերություններին՝ մեկնաբանվող իրավունքի ընդհանրական վերլուծությունը հնարավորություն է տալիս ստելու, որ լայն իմաստով **ազատ փեղաշարժվելու եւ բնակավայր ընտրելու սահմանադրական իրավունքը մարդու բնականորեն ծագած, անօտարելի, օրենսդրորեն անբազրված եւ երաշխավորված իրավագորությունն է՝ օգրվելու այն երկրի փարածքում անարգել փեղաշարժվելու, ինչպես եւ իր կողմից**

որոշվող վայրում ժամանակավորապես կամ մշտապես բնակվելու հնարավորություններից, որի փարածքում նա օրինական հիմքերով գտնվում է:

Սահմանադրական իմաստով «բնակավայր» հասկացությունը որևէ օրենքով չի սահմանվել, ինչի հետևանքով իրավակիրառական պրակտիկայում ծագում են բազմաթիվ խնդիրներ: Այսպես, Նայասրանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ **առավելապես** ապրում է: Ինչպես տեսնում ենք՝ «մշտապես» կամ «առավելապես» հասկացություններն օրենսգրքում եւս փրված չեն, ինչը հնարավորություն չի տալիս միափոխել ընկալել և կիրառել այդ իրավանորմը:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն փարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում է հայտարարում է որպես իր կացարան: Այս դեպքում օրենսդիրը ներմուծել է նոր հասկացություն՝ **մշտական** բնակության վայր՝ կապելով այն փոխյալ բնակարանում բնակվելու իրավաբանական իրավունքի և սեփական հայեցողությամբ կացարանը մշտական բնակության վայր հայտարարելու հանգամանքների հետ: Այսպես կոչված՝ ոչ մշտական կամ փաստացի բնակության վայրի հասկացությունների վերաբերյալ օրենքները լռում են:

Արտասահմանյան երկրների սահմանադրաիրավական ակտերի վերլուծությունը վկայում է, որ բնակության վայրի մշտական և փաստացի բնույթը պայմանավորված չէ ոչ բնակելի փարածության (կացարանի) տեսակով կամ նշանակությամբ, ոչ էլ դրանում բնակվելու ժամանակահատվածով: Կարելի է մարդու մտադրությունն է՝ որոշակի հասցեում իրավաբանորեն ձեւակերպելու իր գտնվելու վայրը, որտեղից իրացնելու է սեփական սուբյեկտիվ իրավունքներն (օրինակ՝ ընտրվելու և ընտրելու) ու իրավաբանական պարտականությունները (օրինակ՝ հարկեր վճարելու, զինվորական հաշվառման կանգնելու): Պարզաձև ձեւակերպում սրացած այն վայրը, որի հետ մարդն ունի սեփական քաղաքացիական դրությունը որոշող մշտական իրավաբանական կապ, նրա բնակության վայրն է (domicile): Դրանով բնակության վայրը փարբերվում է փաստացի գտնվելու վայրերից (residence), որտեղ անձը կարող է բնակվել ժամանակավորապես կամ մշտապես, սակայն առանց իրավաբանորեն ձեւակերպված բնակարան (կացարան) ունենալու և իրավունքներ ու պարտականություններ իրացնելու մտադրության:

Այսպիսով, մարդն ինքն է որոշում, թե իր օրինական գբաղեցրած փարածքներից որն է ամրագրվելու որպես բնակության վայր (domicile), իսկ պետությունն իրավասու չպետք է լինի փոխյալ հասցեում մարդու բնակվելու սահմանափակ ժամանակահատվածով պայմանավորված՝ բնակության վայրը չհամարել որպես այդպիսին:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը որոշակի կոնկրետացում ու զարգացում է սրացել Նայասրանի Նանրապետության ընթացիկ օրենսդրության մեջ: Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանվող իրավունքի կենսագործման պայման է նախատեսել պետության փարածքում օրինական հիմքերով գտնվելու պարագան:

Նորմով սահմանված պայմանն օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերմամբ իր արտացոլումն է գտել «Օտարերկրացիների մասին» ՏՏ օրենքով: Օրենքի համաձայն՝ հիշյալ անձինք իրավունք ունեն Նանրապետության փարածքում գտնվել մուտքի վիզայի ժամկետով, իսկ Նանրապետությունում օրինական բնակվելու համար օտարերկրացին պետք է սահմանված կարգով ձեռք բերի

կացության կարգավիճակ, որը լինում է ժամանակավոր, մշտական եւ հատուկ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն հայաստանի հանրապետության փարածքում մեկ փարի եւ ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներից որևէ մեկը:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- ա) ուսումը,
- բ) աշխատանքի թույլտվության առկայությունը,
- գ) հայաստանի հանրապետության քաղաքացու կամ հայաստանի հանրապետությունում օրինական կարգով բնակվող օտարերկրացու հետ ամուսնությունը,
- դ) հայաստանի հանրապետության քաղաքացու կամ հայաստանի հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականը (ծնող, եղբայր, քույր, ամուսին, զավակ, փայր, պապ, թոռ) լինելը
- ե) ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվելը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 փարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 փարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

- ա) ապացուցում է հայաստանի հանրապետությունում մերձավոր ազգականների (ծնող, ամուսին, եղբայր, քույր, զավակ, փայր, պապ, թոռ) առկայությունը
- բ) հայաստանի հանրապետությունում ապահովված է բնակարանով եւ գոյության միջոցներով

գ) մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք փարի բնակվել է հայաստանի հանրապետությունում:

Մշտական կացության կարգավիճակ կարող է տրվել նաեւ հայաստանի հանրապետությունում ձեռնարկափրակյան գործունեություն իրականացնող օտարերկրացուն:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 փարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ծագումով հայ օտարերկրացիներին: Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաեւ հայաստանի հանրապետությունում փնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների:

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է փաստ փարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» հայաստանի հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասն օրենքի նպատակ է սահմանում բնակչի ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու եւ բնակչի՝ ըստ բնակության վայրի հաշվառվելու իրավունքի իրացումը: Ռեգիստրը բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անհատական հաշվառման փյունների տեղեկատվական համակարգ է, որն ստեղծվում է հայաստանի հանրապետությունում բնակվող անձանց (անկախ քաղաքացիությունից), ինչպես եւ օտարերկրյա պետություններում բնակվող հայաստանի հանրապետության քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառման նպատակով: Ի փարբերություն բնակչության գրանցման խորհրդային թույլատրական վարչական ռեժիմի, երբ իրավասու մարմիններն օժտված էին անձանց տեղաշարժը կամ գրանցումից դուրս գալը եւ գրանցելն արգելող անսահմանափակ հայեցողական լիազորությամբ, բնակիչների

հաշվառման գործող ընթացակարգին բնորոշ է հաշվառման իրազեկման ռեժիմը, որն ընդամենն արվացույցում է բնակչի՝ իր բնակության վայրում գրնվելու փաստը: Ռեգիստրը վարող մարմինը լիազորված է միայն հավաստելու բնակչի ազատ կամաարտահայտությունը բնակության վայր ընտրելիս: Վերոհիշյալ օրենքի համաձայն՝ ռեգիստրում ընդգրկվելու համար Նայաստանի Նանրապետության բնակիչը պարտավոր է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անհատական տվյալներ:

Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գրնվում է նրա նոր կացարանը: Ընդ որում՝ բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում:

Օրենքի համաձայն՝ Նայաստանի Նանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Նայաստանի Նանրապետության քաղաքացին պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Նայաստանի Նանրապետության համապատասխան հյուպատոսական ծառայությանը կամ դիվանագիտական ներկայացուցչությանը, որը յոթնօրյա ժամկետում այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է ռեգիստր վարող մարմնին:

Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունքը կարող է ենթարկվել օրենքով սահմանափակման, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարվի և բարի համբավի պաշտպանության համար (Սահմանադրության 43-րդ հոդված): Սահմանափակումներ կարող են մտցվել, օրինակ, պետական սահմանային գոտում, այն տարածքում, որտեղ հայտարարվել է արտակարգ կամ ռազմական դրություն: Նանցագործությունների բացահայտման և քննության նկատառումներով հաճախ սահմանափակվում է հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց իրավունքը՝ ձերբակալման, չեռանալու մասին ստորագրության կամ կալանավորումը խափանման միջոց ընտրելու եղանակներով:

Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունքը ոչ միայն սահմանադրական սուբյեկտիվ իրավունք է, այլև մարդու այլ սահմանադրական և ճյուղային իրավունքների հիմքում ընկած սոցիալական բարիքներից օգտվելու պայման, երբեմն էլ՝ դրանց պաշտպանության միջոց: Ինչպես արդեն վերը նշվել է՝ մեկնաբանվող իրավունքը քաղաքացիական (անձնական) իրավունք է և սերտորեն կապված լինելով այլ իրավունքների հետ՝ ապահովում է դրանց իրացումը:

Տեղաշարժը, տեղից տեղ տեղափոխվելը ռազմական գործողությունների, բնապահպանական աղետների, ազգամիջյան բախումների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ երբեմն դառնում է մարդկանց կյանքի, առողջության, գույքի փրկության միակ միջոցը: Մշտական բնակության վայրի առկայությունը կամ բացակայությունը կարող է որոշիչ լինել հանցանք կատարելու մեջ կասկածվող անձի նկատմամբ ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս: Բացի դրանից, տեղաշարժվելու և բնակության վայրի ընտրությամբ կարող է պայմանավորված լինել ընտրական, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, արտոնություններից օգտվելու իրավունքների իրացումը:

2. Նայաստանի Նանրապետություն մուտքը եւ Նայաստանի Նանրապետությունից ելքը կարգավորող հարուկ օրենք Նայաստանի Նանրապետությունում գոյություն չունի, ուստի ելքի հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտը Սահմանադրությունն է, իսկ օտարերկրացիների մասով՝ նաեւ «Օտարերկրացիների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը: Նշված օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրացիները Նայաստանի Նանրապետությունից կարող են դուրս գալ վավերական անձնագրի եւ մինչեւ դուրս գալու պահը Նայաստանի Նանրապետության փարածքում նրա օրինական գրնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

Նայաստանի Նանրապետությունից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով՝

ա) նրա նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ մինչեւ գործի վարույթի ավարտը կամ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը.

բ) նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պարիժ, որի կրումը հնարավոր է միայն Նայաստանի Նանրապետությունում մինչեւ պարիժը կրելու ժամկետի ավարտը կամ պարիժը կրելուց օրենքով սահմանված կարգով ազատվելը:

3. Քաղաքացու եւ Նայաստանի Նանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող անձանց Նայաստանի Նանրապետություն վերադառնալու իրավունքը պրամաբանորեն կապված է եւ բխում է ազատ տեղաշարժվելու իրավունքից, սակայն որպես սահմանադրական ինքնուրույն իրավունք ունի առանձնահատուկ նշանակություն:

Քաղաքացու եւ Նայաստանում բնակության իրավունք ունեցող անձի վերադառնալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով՝ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

Նայաստանի Նանրապետության քաղաքացու վերադառնալու իրավունքը սահմանափակող հիմքերը որեւէ հարուկ օրենքով կոնկրետացված չեն. այլ է իրավիճակը օտարերկրացիների պարագայում: «Օտարերկրացիների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 8-րդ հոդվածը հստակ սահմանում է Նայաստանի Նանրապետություն օտարերկրացու մուտքն արգելելու հիմքերը: Այսպես՝ օտարերկրացուն մուտքի վիզայի պրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, պրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Նայաստանի Նանրապետություն արգելվում է, եթե՝

ա) նա արտաքսվել է Նայաստանի Նանրապետության փարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, եւ արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք փարի.

բ) նա սույն օրենքը խախտելու դեպքում ենթարկվել է վարչական պարասխանարվության, եւ այդ մասին որոշման ընդունման պահից չի անցել 1 փարի.

գ) գոյություն ունեն հավասարի փվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝

- վնաս պատճառել Նայաստանի Նանրապետության պետական անվտանգությանը, փապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,
- իրականացնել ահաբեկչական գործունեություն,

• սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) փեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր

• իրականացնել մարդկանց առեւտուր (թրաֆիքինգ) և (կամ) անօրինական սահմանահատումներ.

դ) նա փառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Նայաստանի Նանրապետություն՝ նման հիվանդությունը բուժելու նպատակով: Այդ վարակիչ հիվանդությունների ցանկը սահմանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը.

ե) նա մուտքի թույլտվություն հայցելիս կեղծ փեղեկություններ է ներկայացրել իր մասին կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն փվյալներ այն մասին, որ նրա մուտքը կամ գտնվելը Նայաստանի Նանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.

զ) գոյություն ունեն նրա կողմից Նայաստանի Նանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին այլ լուրջ և հիմնավոր սպառնալիքներ:

Օտարերկրացուն մուտքի վիզայի փրամադրումը (ժամկետի երկարաձգումը) կարող է մերժվել, փրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչվել կամ մուտքը Նայաստանի Նանրապետություն արգելվել, եթե նա դադարապարտվել է Նայաստանի Նանրապետությունում Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դադարվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել: Նշված սահմանափակումը չի փրամաձվում այն օտարերկրացիների նկատմամբ, ովքեր Նայաստանի Նանրապետությունում ունեն մերձավոր ազգականներ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ թույր, եղբայր, փայր, պսպ):

ՆՈՒՎԱԾ 26

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համապեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

1. 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը երաշխավորում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը, ինչը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, և ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համապեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը (հոդվ. 18), ինչպես նաև այդ ազատությանը զուգընթաց մի շարք իրավունքներ, այդ թվում Նռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներից և ազատություններից օգտվելու յուրա-

քանցյուր մարդու իրավունքը՝ առանց որեւէ փարբերակման: Դրանց թվին են դասվում, մասնավորապես (կրոնի, քաղաքական և այլ համոզմունքի առումով)՝ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը՝ առանց կրոնի հարկանիշով որեւէ սահմանափակման (հոդվ. 16), կարծիք ունենալու և այն ազատորեն արտահայտելու իրավունքը (հոդվ. 19), կրթության իրավունքը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիրը 18-րդ հոդվածում հաստատում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համարելու և հրապարակավ, կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը (մաս 1): Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը (մաս 2): Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների (մաս 3): ...Պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան (մաս 4)»:

Դաշնագրի 19-րդ հոդվածում հռչակվում է «...առանց միջամտության սեփական կարծիք ունենալու» իրավունքը, ինչը ներառում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած քրեակի քննչականություն և գաղափարներ փնտրելու, սրանալու և փարածելու ազատությունը՝ լինեն դրանք բանավոր, գրավոր կամ իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, ինչը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համարելու և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

ՆՏ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքի քաղադրարարն են հանդիսանում.

1/ յուրաքանչյուր ոք ունի մտքի ազատության իրավունք.

2/ յուրաքանչյուր ոք ունի խղճի ազատության իրավունք.

3/ յուրաքանչյուր ոք ունի կրոնի ազատության իրավունք, որը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համարելու քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ձևակարարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասն ամենից առաջ երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի ազատության իրավունք: **Միտքը** մարդու մտածողության արդյունքն է, որ փորձում է ճանաչել շրջակա աշխարհը և իրեն այդ աշխարհում, արտահայտվում է պարկերացումներում, հայացքներում, կարծիքներում, համոզմունքներում: Մտածելը մարդու բնական հատկությունն է, նրա հոգեուր կյանքի հիմքը: Մտքի

ազատության իրավունքը սեփական գիտակցության և ենթագիտակցության աշխարհանքն է՝ առանց հասարակության, պետության և այլ անձանց կողմից արտաքին վերահսկողության:

Մտքի ազատությունը բնութագրում է մարդու հոգեւոր ազատությունը, նրա ներաշխարհը, ուստի այն ինքնին չի կարող լինել իրավունքի կարգավորման առարկա: Մտքի ազատությունը ենթադրում է ազատամտության, այլախոհության և ազատախոհության հնարավորություն և դրանով իսկ երաշխավորում է բարոյականության, իրավունքի, կրոնի հանրաճանաչ նորմերը քննադատելու մարդու իրավունքը:

Մտքի հետ մեկտեղ, քննարկվող դրույթով պաշտպանվող՝ հոգեւոր անկախությանը վերաբերող ազատությունը, որից իրավունք ունի օգտվելու յուրաքանչյուր ոք, հավաքացյալների և նրանց կենսաբնական համակարգի նյունականության հիմնական փարբերից մեկն է, քանզի անմիջականորեն վերաբերում է *կրոնի ոլորտին*: Այդ իրավունքն իրենից մեծ արժեք է ներկայացնում նաև աթեիստների (աստվածամերժների) համար, ընդգծում է իրավագիտությունը, ազնուսիրտների, սկեպտիկների (թերահավատների) համար, կրոնի հանդեպ անփառքերների համար:

Մտածողությունը և միտքը՝ որպես դրա արդյունք, արգասիք է, մարդու բնական և անկապտելի հատկանիշ՝ կապված գործնական և տեսական հարցադրումների և դրանց լուծման գործընթացի հետ: Միտքը չի կարող լինել անազատ: Մտքի ազատության սահմանադրական ամրագրումն էլ յուրաքանչյուրին երաշխավորում է սեփական կարծիքի ու համոզմունքի ձեռավորման ազատություն՝ առանց պետության միջամտության, անձի նկատմամբ ցանկացած գաղափարախոսական բռնության:

Եթե միտքը կարող է լինել ուրիշներից թաքնված, չարտահայտված բանավոր կամ փպագիր եղանակով, և մնում է միայն իր իսկ՝ մարդու սեփականությունը, ապա Սահմանադրությամբ երաշխավորված խոսքի ազատությունը հնարավորություն է ընձեռում անարգել արտահայտել սեփական մտքերը, դրանք հաղորդել այլ անձանց: Մտքի և խոսքի ազատությունները կարող են իրագործվել միայն ժողովրդավարական կարգի պայմաններում, որը շահագրգիռ է հասարակության և պետության կենսագործունեության փարբերույթ հարցերի վերաբերյալ կարծիքների բազմազանության դրսևորման հարցում: Ամբողջարիտական վարչակարգերը փարբեր միջոցներով, չբացառելով նաև զանգվածային բռնաճնշումները, փորձում են հասնել համընդհանուր համախոհության: Սակայն դա անիրականանալի խնդիր է՝ կարելի է սոսկ սահմանափակել կամ արգելել խոսքի ազատությունը, կարծիքների արտահայտման ազատությունը: Ուստի Սահմանադրությունում 26-րդ հոդվածին անմիջապես հաջորդում է խոսքի ազատությունը, սեփական կարծիքն արտահայտելու ազատությունն ապահովող 27-րդ հոդվածը:

Խղճի ազատության պարմական հարցը ծագել է որպես խղճի և այս կամ այն կրոնի դավանությունների միջև մարդու բարոյական և իրավական ընտրության հիմնախնդիր, որի հիման վրա ձեռավորվել են հասարակության և պետության աշխարհայացքային, բարոյաբանական ու իրավական սկզբունքները և նորմերը: Սկզբում խղճի ազատությունը նշանակել է հանդուրժողականություն և կրոնի ուսմունքի դրույթների մեկնաբանման ազատություն: Նենց այդպես է այն ընկալվել 1598թ. Ֆրանսիայում ընդունված Նանրի էդիկտում (հրովարտական), որը կաթոլիկներին և բողոքականներին շնորհեց լիակատար իրավահավասարություն, և 1689թ. Մեծ Բրիտանիայում ընդունված՝ «Կրոնի հանդուրժողականության մասին ակտում», որով ամրագրվեց, որ անզլիական փիրապետող եկեղեցուն չպարկանող անձն ունի կրոնական պաշտամունքների արտահայտման իրավունք:

Կրոնի ազատության սկզբունքն աստիճանաբար սրացավ էլ ավելի լայն մեկնաբանություն: Այսպես, 1791թ. Իրավունքների մասին բիլլում (օրինագծում)՝ 1787թ. ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին փոփոխությունում, նշվում էր, որ «Կոնգրեսը չպետք է հրապարակի որևէ կրոնի հաստատմանը վերաբերող կամ դրա ազատ քարոզումն արգելող օրենքներ»: Այդ սահմանադրական նորմը մինչ օրս մնում է անփոփոխ: Ավելի ուշ խղճի ազատության հասկացությանը հավելվեց նաև որևէ կրոն չդավանելու իրավունքը, այսինքն՝ աթեիստ լինելը, ինչպես նաև կրոնի հատկանիշով խտրականության արգելումը: 1789թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Մարդու իրավունքների հռչակագրի 10-րդ հոդվածում հռչակվել է, որ «ոչ ոք չպետք է հալածանքներ կրի իր կարծիքը, նույնիսկ՝ կրոնական, արտահայտելու համար»:

Խիղճը բարոյական կարեգործիա է: Այն բնութագրում է անձի ունակությունն իրականացնելու բարոյական ինքնավերահսկողություն, ինքնուրույնաբար իր համար բանաձեռել բարոյական պարականություններ, իրենից պահանջել դրանց կատարումը եւ կատարել գործած արարքների ինքնագնահատում: Սահմանադրական իրավունքում խղճի ազատությունն ընկալվում է որպես մարդու առնչությունը կրոնին, որպես նրա ինքնորոշումը: Խղճի ազատություն՝ նշանակում է Աստծո հանդեպ համոզմունքի ազատություն: Սակայն խղճի ազատությունը, հակառակ փարածված պատկերացումների, չի կարելի հասկանալ միայն որպես կրոնի եւ աթեիզմի միջուկ ընտրության ազատություն: Իրավական, ժողովրդավարական, աշխարհիկ պետությունը, ինչպես այն հռչակված է Սահմանադրության մեջ, չի կարող իր քաղաքացիներին կանգնեցնել հավատի եւ հավատամեծության միջուկ ընտրության առջև: Քաղաքացիական հասարակության մեջ չի կարող չլինել համոզմունքների բազմազանություն ու կրոնական եւ այլ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության եւ խտրականության դրսևորումներից պաշտպանվելու պարտաճ իրավական երաշխիքներ:

Իրավունքի պետության մեջ եւ այլ պետությունների իրավական համակարգերում խղճի ազատությունը եւ կրոնի ազատությունը կարող են դիվրվել եւ դիվրվում են որպես ինքնուրույն հասկացություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի յուրօրինակ իրավաբանական լիցք: «ՏՍահմանադրությունն ընտրել է այլ փարբերակ: Ինչպես հետեւում է Տիմնական օրենքի 26-րդ հոդվածից՝ այստեղ այդ երկու եզրույթները («խղճի ազատություն» եւ «կրոնի ազատություն») դիվրվում են իբրև միասնական ամբողջություն՝ հագեցված մեկ բովանդակությամբ, որը ներառում է «կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համարեղ քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը»:

Այդպիսով, ի փարբերություն խղճի կարեգործիայի՝ որպես բարոյական հասկացություն, խղճի ազատությունը սահմանադրական կարեգործիա է: Տենց այդ հարցը՝ խղճի ազատության մասին, մարդու իրավունքների համար պայքարում առաջինը դրվեց: Խոսքը վերաբերում է հենց ազատությանը, այսինքն՝ համապատասխան իրավունքի օբյեկտիվ շրջանակների սահմանմանը (միավորումների սրեղծման արգելումը, որոնց նպատակը կամ գործողություններն ուղղված են կրոնական արելության եւ թշնամանքի հրահրմանը, կրոնական գերակայության դրողղ քարոզչության կամ իրագեկման (ագի-փացիայի) արգելումը, աշխարհիկ պետության սկզբունքից բխող արգելքները), ըստ որում, դրա իրագործման միջոցների ու ձեւերի ընտրությունը կախված է ինքնին մարդու՝ որպես համապատասխան իրավունքի սուբյեկտ, հայեցողությունից:

Մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը եւ դրանց սահմանադրաիրավական մեկ-

նաբանությունները հարաբերակցվում են որպես ամբողջություն և մաս, որպես մարդու և քաղաքացու սուբյեկտիվ սահմանադրական իրավունք: Այդ իրավունքը ներառում է նաև պետության և մարդու միջև ձեռավորված հարաբերությունների կարգը սահմանող մի շարք այլ իրավասություններ՝ կրոնի հետ մարդու հարաբերակցության կապակցությամբ և առիթով՝

- կրոնի տեսակի ազատ ընտրության իրավունքը և կրոնը փոխելու ազատությունը,
- կրոնական արարողությունների ազատորեն կատարման իրավունքը և դրանց կատարելուն չհարկադրվելու իրավունքը,
- որեւէ կրոն չդավանելու և աթեիստ լինելու իրավունքը,
- ոչ միայն կրոնական և այլ համոզմունքներ ընտրելու և ունենալու, այլև դրանց համապատասխան գործելու իրավունքը, ներառյալ կրոնական կամ հավատամերժության (աթեիստական) քարոզչություն փնտրելու իրավունքը,
- կրոնական կազմակերպությունների անդամ լինելու իրավունքը,
- բոլոր իրավունքների ու ազատությունների իրականացման իրավունքը՝ անկախ կրոնի հետ առնչություններից: Մասնավորապես, այս կամ այն դավանանքի հետետորդները, այդ թվում՝ հոգեւորականները, այլ քաղաքացիների հետ համահավասար մասնակցում են ժողովրդական կամաարարահայտությանը, նրանք հավասար չափով օժտված են ընտրության ու իրենց քաղաքական համոզմունքները և քաղաքական շահերն արտահայտելու, որոշումներ կայացնելու և համապատասխան գործունեություն իրականացնելու ազատությամբ, բայց ոչ որպես կրոնական միավորումների անդամներ կամ այս կամ այն դավանանքի հետետորդներ, այլ ուղղակիորեն որպես քաղաքացիներ: Դավանանքի ազատությունը նշանակում է, որ ոչ ոք չի կարող հարկադրված լինել կրոնի ընտրության, կրոնը փոխելու հարցում:

Կրոնի բովանդակությունը ներառում է պաշտամունքի ծիսակատարությունները, հասարակության մեջ սեփական համոզմունքի արտահայտումն անմիջականորեն կամ զանգվածային լրատվության միջոցներով, առաքելական գործունեության, զթասարության և բարեգործության գործերի, կրոնի ուսուցման կամ կրոնական դաստիարակության, անձնվիրական գործունեության (վանական միաբանություններ, մենաստաններ և այլն), ուխտագնացության և այլ գործունեության միջոցով՝ սահմանված համապատասխան դավանաբանություններով և նախատեսված փյույվ միավորման կանոնադրությամբ (կանոնակարգով):

Նամաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ որեւէ կրոնի քարոզման ազատություն իրականացվում է ոչ միայն այլոց հետ համարեղ, «հրապարակավ» և միեւնույն համոզմունքն ունեցող անձանց խմբում, այլ նաև կարող է իրականացվել «միանձնյա» և «մասնավոր կարգով», ավելին, ընդհանուր առմամբ այն ներառում է այլ անձանց համոզելու, օրինակ, «ուսուցման» միջոցով, փորձ կատարելու իրավունքը: Բացի դրանից, Կոնվենցիայի 9-րդ հոդվածում ամրագրված այդ իրավունքի չպահպանումը, այսինքն՝ «կրոնը կամ համոզմունքը (որեւէ մեկի) փոխելու ազատության», այդ դրույթը դարձնում է մեռած նորմ:

Կրոնի ազատության մեկ այլ կարևոր տեսակետը վերաբերում է արտաքին դրսետորմների կարգին, այսինքն՝ սեփական կրոնական համոզմունքի բացահայտ ցուցադրման հնարավորությանն՝ այն դեպքում, երբ մի երկրի փարածքում գործում են մի քանի կրոնական համայնքներ: Եվրոպական երկրներում դավանվող կրոնական հավատների բազմաթիվությունը հանդիսանում է զաղթային (միգրացիոն) հոսքի հե-

փետանքներից մեկը, ինչը փարածաշրջանից հեռացնում է նրա մշակույթը եւ ավանդույթները, այդ թվում՝ նաեւ կրոնական, կրողներին, եւ նրանց փեղավորում փարահանվածների մշտական երկրի փարածքում պարմականորեն գոյություն ունեցողից բոլորովին փարբերվող, իսկ երբեմն նույնիսկ հակադիր ավանդույթների ու սովորույթների միջավայրում: Այդ բազմազանության կապակցությամբ իր վերաբերմունքն է արտահայտել Մարասբուրգի դափարանը: Նա ելել է այն դրույթից, որ ժողովրդավարական հասարակության մեջ, որում գոյություն ունի մի քանի կրոն, կարող է անհրաժեշտ համարվել իր կրոնական համոզմունքը բացահայտորեն ցուցադրելու ազատության սահմանափակումը՝ փարբեր խմբերի շահերի հաշվեցման եւ նրանցից յուրաքանչյուրի համոզմունքի հարգումն ապահովելու համար:

Նման պայմաններում առանձնահատուկ կարեւորություն ունի հանդուրժողակաւության սկզբունքը, ինչը հանգեցնում է նրան, որ հարկ է լսել այն անձանց կշիռն ու քանակը, ովքեր չեն քարոզում նույն հայացքները եւ համոզմունքները:

1981թ. նոյեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ Կրոնի կամ համոզմունքի հիմքով անհանդուրժողականության եւ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագրում նշվել է, որ «կրոնի կամ համոզմունքի հիմքով մարդկանց միջև խտրականությունը հանդիսանում է մարդկային անհատի արժանապատվության վիրավորում եւ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության սկզբունքների ժխտում եւ դափարաբերվում է որպես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված եւ Մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերում մանրամասնորեն շարադրված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում եւ պետությունների միջև բարեկամական ու խաղաղ հարաբերությունների համար որպես խոչընդոտ (հոդված 3)»:

1950թ. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպաւության մասին կոնվենցիայում պարունակվող՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության հասկացությունն իր որոշակիացումն է գտել Մարդու իրավունքների եվրոպական դափարանի վճիռներում: Դափարանն այն սահմանում է որպես «ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը»՝ Կոնվենցիայով ընդունված նշանակությամբ: Նենց դրա այդ կրոնական պարամետրն է հանդիսանում առավել կարեւոր փարբերից մեկը, որոնցից ձեւավորվում է հավաքացյալների անձը եւ նրանց աշխարհայացքը, բայցեւ դա էլ հանդիսանում է նաեւ արժեքավոր սեփականություն աթեիստների, ազնոստիկների, սկեպտիկների եւ անփարբերների համար: Ժողովրդավարական հասարակությունից անբաժանելի բազմակարծությունը, ինչը թանկ գնով է նվաճվել դարերի ընթացքում, հիմնվում է նրա վրա: Դափարանը նշել է, որ կրոնի ազատությունը ենթադրում է, առաջին հերթին, խղճի ազատություն, բայց նաեւ կրոնը (որեւէ) քարոզելու ազատություն, քանի որ կրոնական ազատությունն ամենից առաջ առնչվում է «հոգու խորքին», սակայն ենթադրում է նաեւ իր կրոնը քարոզելու եւ փարածելու իրավունք, կրոնին հարելու կամ չհարելու ազատություն եւ կրոնի բոլոր կարգերը կարարելու կամ չկարարելու ազատություն:

Նայասարանի Նանրապետությունն աշխարհիկ պետություն է: Երկրում կրոնական միավորումներն անջատ են պետությունից: Պետությունը, նրա մարմինները եւ պաշտոնարար անձինք չեն միջամտում քաղաքացիների կողմից կրոնին իրենց առնչակցության որոշման հարցերին, կրոնական միավորումների օրինական գործունեությանը եւ նրանց չեն հանձնարարում որեւէ պետական գործառույթի կարարում: Կրոնական միավորումները նույնպես չեն կարող միջամտել պետության գործերին, չեն մասնակցում պետական իշխանության մարմինների ընտրություններին եւ քաղաքական կուսակցություն-

ների գործունեությանը. կրոնական միավորումների անդամները, մյուս քաղաքացիների հետ համահավասար, ունեն քաղաքական կյանքին անձնական մասնակցության իրավունք:

Խղճի և կրոնի ազատության իրավունքի երաշխիքներն են՝
ա/ քաղաքացիական հասարակությունը՝ հիմնված գաղափարական բազմազանության սկզբունքի վրա.

բ/ մարդկանց իրավահավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ վերաբերմունքից, կրոնական խտրականության արգելքը.

գ/ դպրոցի բաժանումը եկեղեցուց և պետական կրթական համակարգի աշխարհիկ բնույթը.

դ/ կրոնական և աթեիստական կազմակերպությունների բաժանումը պետությունից, պետության աշխարհիկ բնույթը.

ե/ կրոնների և կրոնական կազմակերպությունների իրավահավասարությունը և ազատ գործունեությունը և այլն:

2. Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավունքի բացառումը 43-րդ հոդվածի կարգով սահմանափակվող իրավունքների շարքից, չի նշանակում, որ այդ իրավունքը չսահմանափակվող իրավունք է: 26-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է 1-ին մասում ամրագրված իրավունքի սահմանափակման կարգը /միայն օրենքով/ և սահմանափակման հիմքերը: *Այդ սահմանափակումը համահունչ է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետին:* Մեկնաբանվող իրավունքների սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով, եթե դրանք անհրաժեշտ են հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Պետությունն իրավասու է օրենքով սահմանելու որոշակի արգելքներ՝ այն հաշվով, որպեսզի կրոնական կազմակերպությունների կարգավիճակն ինքնաբերաբար չտրամադրվի, թույլ չտրվի մարդու իրավունքները խախտող և անօրինական ու հանցավոր գործողություններ կատարող աղանդների օրինականացում, ինչպես նաև արգելվի առաքելական գործունեությունը (այդ թվում՝ կապված հոգեորոշության հիմնախնդրի հետ), եթե այն անհամարեղելի է այլոց մրքի, խղճի և կրոնի ազատության և սահմանադրական այլ իրավունքների ու ազատությունների հարգման հետ, և հատկապես գուցակցվում է նյութական ու սոցիալական օգուտների առաջարկությամբ՝ եկեղեցի նոր անդամների հավաքագրման նպատակով, կարիքի մեջ կամ աղքատ վիճակում գտնվող մարդկանց վրա ոչ օրինաչափ ներգործությամբ, հոգեբանական ճնշմամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով և այլն: Պետք է նաև հաշվի առնել, որ կրոնահանդուրժողականության ոգին չի կարող անսահման լինել, հատկապես, եթե նկատվում են կրոնահանդուրժողականության չարաշահման դեպքեր: Դա պետի է ունենում առանձնապես վիրավորական վերաբերմունքի դեպքերում, ինչը դիպչում է բնակչության մի մասի կրոնական զգացմունքին: Նման իրավիճակում պետությունն օգտվում է լայն լիազորություններից՝ ոչ միայն այդ կրոնական զգացմունքի պաշտպանության համար, այլ նաև հասարակական կարգի պահպանության համար:

ՏՈՂ-ՎԱԾ 27

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

2. Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ րեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, սրանալու, փարսածելու ազատությունը, րեղեկարվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

3. Լրացվամիջոցների եւ րեղեկարվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

4. Պետությունը երաշխավորում է րեղեկարվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:

1. Սահմանադրության 27-րդ հոդվածում խտրացվել են երեք ինքնուրույն, սակայն սերտ կապված, միմյանց լրացնող եւ երաշխավորող իրավունքներ. ա/ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. բ/ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք. գ/ յուրաքանչյուր ոք ունի րեղեկարվության ազատության իրավունք: Միեւնույն ժամանակ, հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում ամրագրված են վերը բերված իրավունքների որոշ երաշխիքներ:

Նասարակության բնականոն կյանքն անհնարին է առանց մտքի եւ խոսքի ազատության, քանզի այն ընկած է այլ կարեւորագույն ազատությունների հիմքում, ինչպիսիք են մամուլի ազատությունը, սրեղծագործության ազատությունը, ընտրելու եւ ընտրվելու ազատությունը: Դրա վրա է նաեւ ուշադրություն հրավիրում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ինչպես բազմիցս ընդգծվել է նրա վճիռներում կարծիք արտահայտելու ազատությունը, խոսքի ազատությունը, ինչպես այն երաշխավորված է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետում, ներկայացնում է ժողովրդավարական հասարակության հենասյուներից մեկը եւ հանդիսանում է դրա առաջընթացին ու յուրաքանչյուր անհատի ինքնաիրացմանը ծառայող հիմնարար պայմանը: «Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պարագայում (անհրաժեշտ սահմանափակումների վերաբերյալ), խոսքի ազատությունն ընդգրկում է ոչ միայն «րեղեկարվությունը» կամ «գաղափարները», որոնք լինում են նպաստավոր կամ դիտվում են անվնաս, կամ էլ՝ չեզոք, այլ նաեւ այնպիսիք, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն պարճառում պետությանը կամ բնակչության մի մասին: Այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության եւ ազարականության պահանջները, առանց որոնց գոյություն չունի ժողովրդավարական հասարակություն» (1979թ. ապրիլի 26-ի, 1986թ. հուլիսի 8-ի վճիռներ. Լինգեսն ընդդեմ Ավստրիայի, 1996թ.):

Խոսքի, կարծիքի եւ րեղեկարվության ազատությունը դասվում է քաղաքակրթության համեմատաբար նոր ձեռքբերումներին: Մարդկության պատմության մեծ մասն ընթացել է այդպիսի ազատության ժխտման եւ այն կարծիքի ու խոսքի սահմանա-

փակման պայմաններում, որոնք բնակչության մեծամասնության կամ իշխող դասակարգերի կողմից համարվում էին վնասակար, վրանգավոր կամ կեղծ: Խոսքի ազատության սկիզբը դրեց անգլիական 1689թ. Իրավունքների մասին բիլլը: Այնուհետև այն արտացոլվեց 1787թ. ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին փոփոխության մեջ և աստիճանաբար՝ XX դարի սկզբին եվրոպական երկրների մեծ մասն իր սահմանադրական ակտերում երաշխավորեց այդ ազատությունը:

Մեկնաբանվող հոդվածն ամրագրում է միմյանց հեպ փոխկապվածության և համակարգային միասնության մեջ գտնվող իրավունքները և ազատությունները՝ ուղղված յուրաքանչյուր մարդու հավասար հնարավորությունների զարգացմանը՝ գաղափարների ու կարծիքների մրցակցության հիման վրա ինքնաարտահայտման և մարդկանց միջև հաղորդակցման համար: Այս հոդվածում թվարկված բոլոր ազատությունները՝ խոսքի, քարոզչության, իրազեկման, կարծիքի, համոզմունքի, տեղեկատվության, զանգվածային տեղեկատվության, գրաքննությունից ազատությունը հավասարապես ունեն մեծ նշանակություն և չեն կարող կիրառվել առանց հաշվի առնելու դրանց միջև համակարգային կապը:

Նոդված 27-ում երաշխավորվում է խոսքի և կարծիքի ազատությունը, ինչը Սահմանադրությունը դիպում է որպես միասնական ազատություն, խոսքով իր մտքերն ազատորեն արտահայտելու միասնական և անբակտի իրավունք՝ չվախենալով դրա համար ինչ-որ մեկի և, առաջին հերթին պետության կողմից հետապնդումներից:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Մարդու մտքի արդյունքը նրա կարծիքն է շրջակա աշխարհի և այլ մարդկանց նկատմամբ: Միտքը չի կարող լինել ազատ, եթե հնարավոր չէ այն ազատ արտահայտել:

Մարդու կարծիքը և համոզմունքը կազմում են նրա ներաշխարհը, որոշում են նրա անհատականությունը: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կարծիքը և համոզմունքն արտահայտելու անարգել, և ո՛չ պետությունը, ո՛չ պաշտոնատար անձինք, ոչ հասարակական կազմակերպությունները, ո՛չ հանրության անդամները և որևէ մեկը, ով էլ որ լինի, չեն կարող մարդուն հարկադրել արտահայտելու իր կարծիքը և համոզմունքը կամ հրաժարվելու դրանցից:

2. Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք: Դա հնարավորություն է արտահայտել (կամ չարտահայտել) իր միտքը, բացառել իր վերաբերմունքը կոնկրետ դեպքերի նկատմամբ, ունենալ և պնդել իր տեսակետը: Միաժամանակ, 27-րդ հոդվածի 1-ին մասը կոնկրետացնում է խոսքի ազատության իրավունքի դրսևորումներից մեկը՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, սրանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Մեկնաբանվող իրավունքի հիմնական նպատակն է նախևառաջ հասարակական-քաղաքական կարծիքի, խոսքի, տեղեկատվության և գաղափարների պաշտպանությունը, թեև այս հոդվածում նշված ազատություններն անուղղակիորեն պաշտպանում են նաև կրոնական, գիտական, գեղարվեստական միտքը, առևտրային տեղեկատվությունը, այդ թվում՝ գովազդը, և մտավոր սեփականության իրավունքը:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ մեկնաբանվող հոդվածը հատուկ է նշում որպես խոսքի ազատությունը երաշխավորող ազատություններ «տեղեկություններ

եւ գաղափարներ փնտրելու, սրանալու, փարածելու ազատությունը, րեղեկաբվության ցանկացած միջոցով՝ անկախ պերական սահմաններից»։ Այս ամենը պարտադրում է պերությանը չխոչընդոտել այդ ազատությունների իրականացմանը։

Սահմանադրությամբ երաշխավորվող՝ կարծիքի եւ խոսքի օբյեկտիվ սահմանների նորմատիվ բովանդակության նույնական մեկնաբանման համար ոչ պակաս նշանակություն ունի դրա սահմանադրորեն ամրագրման ձեւը։ Խոսքը վերաբերում է հենց ազատությանը, այսինքն՝ անձի անհատական ինքնիշխանությանը՝ նրա կենսագործունեության դրսեւորման որոշ կենսականորեն կարեւոր ոլորտներում։ Իսկ ինչ վերաբերում է պերությանը, այն իրավասու չէ խոչընդոտելու փվյալ ոլորտում եւ հենց Սահմանադրությամբ սահմանված՝ անձի ազատ գործունեության իրականացմանը։

Այնքանով, որքանով հասարակության մեջ բացակայում են բարու եւ չարի, ճշմարտության եւ սրի, վնասի եւ բարիքի հանրաճանաչ չափանիշները, նրան անհրաժեշտ է խոսքի ազատություն, ինչը, ծնելով մտքերի, կարծիքների, համոզմունքների, վեճերի ու բանավեճերի մրցակցություն, ավելի շատ օգուտ է բերում, քան ինչ-որ գաղափարախոսական կամ քաղաքական շրջանակներ, անկախ նրանից՝ դրանք սահմանվում են բռնապերի (դիկտատորի), թե ժողովրդավարորեն ընտրված խորհրդարանի կողմից։ Դրա հետ մեկտեղ, այնչափով, որչափով հասարակության մեջ գոյություն ունի համաձայնություն հիմնական համամարդկային արժեքների առնչությամբ, խոսքի բացարձակ ազատությունը չի կարելի դիտել հասարակության կյանքում որպես բացառապես դրական երեւոյթ։ Ուստի Սահմանադրության 27-րդ հոդվածով, ինչպես նաեւ արտահայտվելու ազատության մասին համապատասխան միջազգային իրավական նորմերով պաշտպանության ենթակա չէ կանխահայտորեն կեղծ րեղեկաբվությունը։

Ոչ մի ազատ ժողովրդավարական հասարակության մեջ մտքի, խոսքի, կարծիքի եւ րեղեկաբվության ազատությունը չի պաշտպանում անվայելուց, անպարկեշտ արտահայտությունները, ոչ նորմատիվային բառապաշարը եւ զոհի նկատմամբ բացահայտ անպարկառ՝ մարդկային հասարակությունում ընդունված բարոյական եւ բարոյախոսական նորմերին, մարդկանց միջեւ վարքագծի րարրական կանոններին խորապես հակասող վերաբերմունքը եւ նրա մարդկային արժանապարվությունը նսեմացնող այլ ձեւերը։

Խոսքի ազատության իրավունքի րեսական մեկնաբանությունների մեջ մեծ րեղ են զբաղեցնում անվանարկման սահմանադրական պաշտպանության հարցերը, ինչպես նաեւ դրանց հետ կապված՝ անձի արժանապարվության եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքների՝ խոսքի եւ րեղեկաբվության ազատության սկզբունքի հետ հարաբերակցությունը։

Անվանարկումը՝ որպես կանոն, ՉԼՄ-ներում անձին արտավորող րեղեկությունների րարաժումն է։ Գրականության մեջ րարբերակվում է անվանարկման երեք րեսակ. 1) կանխամրաժված ոչ հավասարի անվանարկում. 2) չկանխամրաժված ոչ հավասարի անվանարկում. 3) հավասարի անվանարկում, այսինքն՝ արտավորող ճմարիտ րեղեկությունների րարաժում։ Այդ երեք րեսակներից միայն առաջինը չի կարող դրվել խոսքի եւ րեղեկաբվության ազատության պաշտպանության ներքո։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ելնում է նրանից, որ չկանխամրաժված ոչ հավասարի եւ հավասարի անվանարկումները, հատկապես քաղաքական եւ վարչական ոլորտում, որպես կանոն, պաշտպանվում են խոսքի ազատությամբ, իսկ այդ արարքների համար պարտախանաբվության վերաբերյալ օրենսդրությունը հանդիսանում է խոսքի ազատության իրականացմանը պերության միջամտություն։

Եվրոպական և ամերիկյան սահմանադրաիրավական դոկտրինայում ձեւավորվել է ընդհանուր կանոն, որին համապատասխան՝ քաղաքական, պետական և հասարակական գործիչները պետք է ավելի մեծ հանդուրժողականությամբ, քան մյուս քաղաքացիները, օրինակ՝ լրագրողները, վերաբերվեն քննադատությանը՝ հարկապես կապված իրենց հասարակական գործունեության հետ: Անկասկած է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը թույլատրում է պաշտպանել յուրաքանչյուր անձի հեղինակությունը, այսինքն՝ փարածվում է քաղաքականությամբ զբաղվող անձանց վրա, երբ նրանք հանդես են գալիս ոչ անձնապես. այդպիսի դեպքերում նման պաշտպանության հակակշիռ է հանդես գալիս քաղաքական հարցերով բաց բանավեճի նկատմամբ հանրության շահագրգռությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մատնացույց է արել փաստերի և գնահատիչ դատողությունների միջև ճշգրտակապար փոքրերություն դնելու անհրաժեշտությունը, քանզի փաստերի գոյությունը կարող է ապացուցվել, այն դեպքում, երբ գնահատիչ դատողությունների ճշմարտացիությունը ոչ միշտ է ապացուցման ենթարկվում: Այդ կապակցությամբ, այդպիսի դատողությունների առնչությամբ անհնարին է կատարել սեփական պնդումների ճշմարտացիության ապացուցման վերաբերյալ պահանջները, և այն խախտում է հենց կարծիքի արտահայտման ազատությունը, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնական մասը:

Այսպետից հետևում է, որ խոսքի ազատությունը չի կարող բացարձականացվել: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում ասվում է, որ կարծիքի ազատությունից օգտվելը դնում է առանձնահատուկ պարտականություններ և պարտասխանարվություն, ուստի կապված է որոշ սահմանափակումների հետ: Դրանք վերաբերում են այլոց իրավունքներին, նրանց հեղինակությանը, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության ու բարոյականության պահպանմանը:

Նե՛նց այդ չափանիշներն են պայմանավորում համապատասխան ազատության օբյեկտիվ իրավական սահմանները:

Մեկնաբանվող հոդվածում շեշտադրումը կատարվել է կարծիքի և խոսքի ազատության ոչ թե դրական (պոզիտիվ), այլ բացասական (նեգատիվ) բովանդակության վրա: Խոսքի ազատությունը ենթադրում է, որ մարդն իր մտքերն արտահայտում է իր իսկ կամքով: Այն նաև ներառում է երաշխիք՝ անհատից հարկադրաբար իր կարծիքի արտահայտում կորզելու նպատակով նրա վրա ճնշում գործադրելու դեմ: Միեւնույն ժամանակ, հարկադրանքի այդ արգելքը վերաբերում է միայն մտքի և խոսքի որոշ ձևերի, և հենց՝ կարծիքին և համոզմունքին: Ուսուցիչը չի կարող հրաժարվել դատը վարելուց, բժիշկը՝ հիվանդի հարցերին պարասխանելուց՝ խոսքի ազատության պարզվակով: Անհնարին է պարկերացնել դատավարություն, որում վկաները պարասխանարվություն չեն կրում սուր ցուցմունքներ (կեղծ փրեդեկատություն) փախու կամ ցուցմունք փախուց հրաժարվելու համար, երդվյալ արեւնակալները հրաժարվեն պարասխանել մեղադրյալի մեղավորության մասին իրենց կարծիքի վերաբերյալ դատարանի հարցերին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածում հստակեցվում է, որ ազատությունը ենթադրում է «...սպանալ և փարածել փրեդեկտություններ և գաղափարներ՝ առանց հանրային իշխա-

նությունների կողմից միջամտության եւ անկախ պեղական սահմաններից»:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասը խոսքի ազատության իրավունքի բովանդակային բաղադրաբար է դիտարկում տեղեկատվության ազատության իրավունքը: Այդ իրավունքի սահմանադրական բովանդակությունից բխում է, որը Մարդը կարող է ազատորեն *փնտրել, սրահանալ, տարածել տեղեկություններ, գաղափարներ՝* տեղեկատվության ցանկացած միջոցով (տպագիր, ցուցահանդես, ժողով, հանրահավաք եւ այլն)՝ անկախ պեղական սահմաններից:

Տեղեկույթը մշտապես փոփոխվող տեսական գիտելիք է եւ տարաբնույթ տեղեկություններ, այդ թվում՝ մարդկանց գործնական հմտությունները: Տեղեկույթն առաջադիմության գրավականն է: Քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը եւ պեղությունը, որը փնտրիմում է ամենից որակով տեղեկույթին, մեծ ծավալով եւ արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար: Տեղեկույթը եւ տեղեկացվածությունը մեծ դեր են խաղում մարդու իրավունքների իրականացման գործում: Օրինակ սեփականության իրավունքը չի կարող լիարժեք իրականացվել անորոշության, անհրաժեշտ իմացության բացակայության պայմաններում: Սպառողների իրավունքները եւս չեն կարող կենսագործվել կյանքում առանց որակյալ եւ անորակ ապրանքների մասին բավարար եւ հավաստի տեղեկությունների, առանց գովազդի եւ հակագովազդի, առանց ճշմարիտ տեղեկության համեմատական թեստավորման մասին եւ այլն: Քաղաքական իրավունքները եւս ուղղակիորեն կախված են տեղեկույթից: Տեղեկատվական թափանցիկությունը, բացախսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարեւորագույն բաղադրաբարերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձեւերը:

Քաղաքացիական հասարակությունը բաց հասարակություն է: Նրանում հոչակված եւ պեղության կողմից երաշխավորված են խոսքի եւ քննադատության ազատությունը, հրապարակայնությունը: Այդպիսի հասարակության անդամը կարողանում է բավարարել տեղեկատվություն սրահանալու իր իրավունքը: Այդ իրավունքն իրականացվում է քաղաքացիական հասարակության անդամների անմիջական հաղորդակցությամբ, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) օգնությամբ: Այս ոլորտում առաջացող հարաբերությունները կազմում են քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը, որի բաղադրաբարերն են մարդու տեղեկատվական իրավունքները, պեղությունից անկախ գործող հասարակական, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաեւ ԶԼՄ-ները: Տեղեկատվական համակարգի իրավական կարգավորման գործուն միջոցը Սահմանադրությունն է եւ օրենքը, որոնք, ամրագրելով տեղեկատվական հասարակության ժողովրդավարական սկզբունքները եւ դրանց երաշխիքները, զսպում են կամայականությունն ինչպես պեղության, այնպես էլ տեղեկատվական միջոցների կողմից: Տեղեկատվության ազատության իրավունքը շարքարդ իրավունք է եւ բաղկացած է մի քանի իրավական հնարավորություններից՝ փնտրել, սրահանալ, փոխանցել, սրեղծել /արտադրել/, տարածել տեղեկույթը:

Փնտրումը կատարվում է անհրաժեշտ տեղեկույթի սրացմանն ուղղված գործողությունների կատարմամբ, եթե հայտնի չէ դրա գրնվելու վայրը:

Սրահանալը տեղեկույթի փոխանցման գործընթացն է, որի արդյունքում սուբյեկտն օժտվում է այն օգտագործելու հնարավորությամբ:

Փոխանցումը տեղեկույթի տեղափոխումն է, որի արդյունքում փոխվում է տեղեկույթի օգտագործման հնարավորություն ունեցող սուբյեկտը կամ այդպիսի սուբյեկտներ:

րի թվաքանակը:

Սրեղծումը գործընթաց է, որի արդյունքում սրեղծվում են նոր տեղեկատվական միավորներ:

Տարածումը գործունեություն է՝ ուղղված տեղեկություն ստացողների քանակի ավելացմանը:

Տեղեկատվության ազատության իրավունքը պետության վրա դնում է ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտականություններ: Պետական կառույցները ներագրում են տեղեկության վրա, նրա հրապարակայնության, մատչելիության, տարածման և սպառողին փոխանցման գործընթացի վրա: Տեղեկության մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Բոլոր ժամանակներում իշխանության կարետորագույն սոցիալական գործառույթն է եղել տեղեկության չափավորումը, դրա հոգեբանական փաթեթավորումը: Դրա հիման վրա է կառուցված հասարակական կարծիքի մանիպուլյացիայի կառուցակարգը: Ամենահայտնի և հասարակ ձևը, որով իշխանությունը վերահսկում է տեղեկատվական հոսքերը, համարվում է գրաքննությունը (ցենզուրա): Այս դեպքում պետությունը պարասխանաբար չինովինիկների օգնությամբ կառավարում է տեղեկատվական նյութի բովանդակությունը: Տեղեկության պետական մենաշնորհը և գրաքննությունը բումերանգի պես խփում են հենց պետությանը՝ քանակապես և որակապես, քաղաքական և իրավական փակուղի: Չէ՞ որ տեղեկությունը ժողովուրդ-պետություն ուղղակի կապի միջոցն է: Ուղղակի կապի կամայական չափաբաժնավորումը միայն առաջին հայացքից է շահավետ կառավարման սուբյեկտի համար: Ի վերջո, այն հանգեցնում է հեղափոխական տեղեկության վնասակարությանը, զրկվածությանը, կողմնակալությանը: Իսկ դա անխուսափելիորեն կառավարման կարետորագույն՝ որոշումների ընդունման փուլում հանգեցնում է սխալների:

Տեղեկատվությունը՝ տեղեկություններ (հաղորդումներ, տվյալներ) են՝ անկախ դրանց ներկայացման ձևից: Ի տարբերություն անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության, որի հավաքումը, օգտագործումը և տարածումը՝ առանց նրա համաձայնության, Սահմանադրությանը համապատասխան չեն թույլատրվում, հանրային կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, պետք է լինի բաց և հանրամատչելի:

Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Անձը, ով ցանկանում է անարգել ստանալ այդպիսի տեղեկատվություն, պարտավոր չէ հիմնավորել դրա ստանալը: Բացառություն է կազմում սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվությունը: Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պետական տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև տնտեսության, բնապահպանության և հասարակական կյանքի մյուս ոլորտների վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման հիմք է հանդիսանում:

Սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվության թվին է դասվում, ամենից առաջ, *սեփական գաղտնիքը*: Պետական գաղտնիք համարվող տեղեկությունների շրջանակը սահմանվում է օրենքով և վերաբերում է երկրի պաշտպանությանը, անվտանգությանը, արտաքին քաղաքականությանը, հեղափոխական և հակահեղափոխական գործունեությանը, օրենքով սահմանված այլ ոլորտներին:

3. Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրելով լրաբավամիջոցների եւ փողեկավարական այլ միջոցների ազատությունը՝ երաշխավորում է մտքի եւ խոսքի ազատության իրավունքների իրագործումը: Որպեսզի լրաբավության միջոցները ճիշտ ծառայեն իրենց նպատակին, դրանք պետք է լինեն անկախ, ազատ եւ չենթարկվեն գրաքննության: Անկախ է համարվում այն մամուլը, որը չի ենթարկվում ոչ կառավարությանը, ոչ էլ գրաքննության:

Տեղեկավարության երաշխավորվող ազատությունն իրագործվում է փարբեր եղանակներով՝ բանավոր, գրավոր, զանգվածային լրաբավության միջոցներով եւ այլ օրինական եղանակներով՝ ըստ սեփական ընտրության: Տեղեկավարություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, փոխանցելու, ստեղծելու եւ փարածելու առավել փարածված ձևը զանգվածային լրաբավության միջոցներն են, որի ներքո հասկացվում են պարբերական հրատարակությունները, ռադիոհեռուստատեսածրագրերը, կինոփաստագրական ծրագրերը, զանգվածային լրաբավության պարբերական փարածման այլ ձեւերը: Քաղաքացիներն իրավունք ունեն զանգվածային լրաբավության միջոցներով օպերատիվ կարգով հավաստի փողեկություններ եւ գաղափարներ ստանալու պետական մարմինների ու կազմակերպությունների, հասարակական միավորումների, դրանց պաշտոնափար անձանց գործունեության վերաբերյալ:

Զանգվածային փողեկավարության ազատությունը, հավելած փողեկավարության ազատությունը, ոչ միայն յուրաքանչյուր մարդու իրավունք է վերապահում միանձնյա կամ հավաքական եւ պրոֆեսիոնալ կերպով որոնել, ստանալ, ստեղծել ու փարածել փողեկավարություն՝ զանգվածային ընթերցողների, ունկնդիրների, դիտողների հաշվարկով, այլ նաեւ այդ նպատակով որպես մասնավոր սեփականություն ունենալ ՁԼՄ-ներ, փրիսպետեր, փնօրինել դրանք եւ օգրվել դրանցից: Ինչպես նշում են որոշ հեղինակներ՝ «ըստ էության, զանգվածային փողեկավարության ազատությունը մասնավոր զանգվածային լրաբավության միջոցների ազատությունն է հասարակական մտքի վրա իրենց ներգործության հարցում»: Բացի դրանից, այս ազատությունը ներառում է եւս մեկ հայեցակետ՝ այն ծառայում է այն անձանց պաշտպանությանը, որոնց աշխատանքն անմիջականորեն կապված է փողեկավարության հետ, այսինքն՝ լրագրողների:

Քաղաքացիները՝ այլ օգրագործողների (պետական իշխանության մարմինների, փողեկական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների եւ հասարակական միավորումների) հետ մեկտեղ, ունեն պետական փողեկավարական աղբյուրներին անարգել ծանոթանալու հավասար իրավունքներ եւ պարտավոր չեն այդ աղբյուրները փրիսպետողների առջեւ հիմնավորել իրենց կողմից հայցվող փողեկավարությունն ստանալու անհրաժեշտությունը: Տեղեկավարության մարչելիության նման իրավունքը հանդիսանում է պետական իշխանության եւ փողեկական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական եւ այլ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաեւ փնտրության, բնապահպանության եւ հասարակական կյանքի այլ ոլորտների վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման հիմք:

Ինչ վերաբերում է իրենց իսկ՝ քաղաքացիների վերաբերյալ փողեկավարությանը, ապա չի թույլատրվում մասնավոր կյանքի մասին փողեկավարության, այսինքն՝ անձնական գաղտնիքը, ընտանեկան գաղտնիքը, ֆիզիկական անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրային եւ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտող փողեկավարության հավաքում, պահպանում, օգրագործում եւ փարածում առանց նրա համաձայնության, բացառությամբ դատավճի հիման վրա:

Անձնական փոխանակումները կարող են օգտագործվել քաղաքացիներին գույքային և բարոյական վնաս պարճառելու, նրանց իրավունքների ու ազատությունների իրագործումը դժվարացնելու համար: Քաղաքացիների իրավունքների սահմանափակումը նրանց սոցիալական ծագման, ռասայական, ազգային, լեզվական, կրոնական և կուսակցական պարկանելության մասին տեղեկատվության օգտագործման հիմքով՝ արգելվում է և պարտավորվում է օրենսդրությանը համապատասխան:

Քաղաքացիների մերժումը՝ ծանոթանալու պետական մարմինների և նրանց ենթազերարեսական կազմակերպությունների գործունեության հարցերին վերաբերող տեղեկատվական աղբյուրներին, կարող է բողոքարկվել դատարանում:

Օրինական կարգով տեղեկատվության փարածումը ենթադրում է պետական գաղտնիք համարվող տեղեկատվության մատչելիության որոշակի սահմանափակումների պահպանում:

Սահմանադրությամբ հռչակված՝ կարծիքի և խոսքի ազատությունը երաշխավորվում է զանգվածային տեղեկատվության ազատությամբ և գրաքննության արգելքով: Խոսքը վերաբերում է հենց զանգվածային տեղեկատվության ազատությանը, որից ածանցյալ է զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը՝ որպես ինչպես հանրության՝ ընդհանրապես, այնպես էլ անհատի իրազեկման առավել նշանակալից և ազդեցիկ աղբյուր:

Զանգվածային տեղեկատվության երաշխիքը գրաքննության արգելքն է:

Զանգվածային տեղեկատվության ազատության սահմանափակման կամ այդ ազատությունից ոչ բարեխղճորեն օգտվելու, զանգվածային տեղեկատվության ոլորտում իրավահավասարության և քաղաքական բազմակարծության սկզբունքների ապահովման հետ կապված վեճերի, այդ ոլորտում այլ վեճերի ու գործերի քննումը դրված է դատարանների վրա: Նենց նրանց վրա է (օրենսդրից անմիջապես հետո) դրված խոսքի ազատության, ինչպես այն ամրագրվել է Սահմանադրության 27-րդ հոդվածում և որոշակիացվել ՏՏ օրենսդրությամբ, և այլ անձանց իրավունքների ու շահերի, ինչպես նաև հանրային շահերի, ներառյալ պարտի և արժանապատվության պաշտպանությունը, միջև պատշաճ հավասարակշռության ապահովման պարտականությունը՝ երաշխավորելով ընտրական գործընթացի ընթացքում կարծիքի արտահայտման ազատությունը, լուծելով խոսքի և կարծիքի արտահայտման ազատության և ազատ ընտրությունների իրավունքի միջև հնարավոր կոլիզիաները և այլն:

4. Նաշվի առնելով այն փաստը, որ մասնավոր ԶԼՄ-ներն ավելի հաճախ կարող են ներկայացնել հատուկ ուղղվածություն, մեկնաբանվող հոդվածի վերջին պարբերությամբ պետությունը պարտավորվում է ստեղծել հանրային հեռուստատեսություն և ռադիո, որոնք մեծապես կողմնորոշված կլինեն ոչ թե մասնավոր, այլ հանրային շահերի ուղղությամբ: Տեղեկության իրավունքների երաշխիքների շարքում մեծ է հաղորդակցության տեխնիկական միջոցների և համապատասխան կառույցների դերը: Եթե չկան ժողովրդավարական կառույցներ հաղորդակցության ոլորտներում, ապա չկան և երաշխիքներ տեղեկույթ ստանալու և փարածելու իրավունքի իրականացման համար: Ուստի և չկա ժողովրդավարություն:

Նենց այդ նպատակներին է ծառայում այն դրույթը, համաձայն որի՝ «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

ՏՏ սահմանադրական դատարանը 2001 թվականի հունվարի 11-ի ՍԴՌ-278 որոշմամբ հակասահմանադրական ճանաչելով «Նեռուսրաբեսության եւ ռադիոյի մասին» ՏՏ օրենքի մի շարք դրույթներ, կարելու է համարել, թե օրենքում ինչպիսի հեղուղականությամբ է իրականացվում հիմնական գաղափարը՝ լրատվական նոր համակարգի գործառնական անկախության ապահովման տեսակետից: Դատարանը գրել է, որ օրենքի ամբողջական վերլուծությունը վկայում է, որ այս հարցում լուծումները թերի են: Միաժամանակ, սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «...Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դաշնագիրը եւ միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ սրանալու եւ տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարելու էրաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը: Սակայն, դա չի խոչընդոտում այս ոլորտում լիցենզավորման համակարգի կիրառումը, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը:

Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

- ա) հարաբերությունների սահմանման եւ կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր եւ վերացական, քան կոնկրետ հասցեագրված,
- բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ եւ բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից,
- գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վրանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը:

Ներելաբար, հարցը պետք է վերաբերի ոչ թե անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական եւ գործառնական վերահսկողությամբ միջամտելուն, այլ անկախ գործելու օրենսդրական ապահովմանը վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով: Այս սկզբունքը պետք է գերակայող նշանակություն ունենար փյալ օրենքի համար»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի փետրվարի 16-ի ՍԴՌ-678 որոշման մեջ արձանագրել է, որ՝ «Չանգվածային լրատվամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդացանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա իշխանությունների որեւէ ազդեցության բացառում: Այդ նկատառումներից ելնելով էր նաեւ, որ ՏՏ սահմանադրական փոփոխություններով հեռարձակվող լրատվամիջոցների գործունեության կարգավորումը ՏՏ միջազգային պարավորությունների շրջանակներում ճանաչվեց որպես սահմանադրաիրավական գործառույթ եւ Սահմանադրության 83.2 հոդվածով նախատեսվեց. «Նեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին...»:

Ինչպես ՏՏ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Նանրային հեռարձակման անկախության երաշ-

խիբների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը փորձեց ավելի լավ պաշտպանել հանրային հեռարձակման անկախության ապահովման խնդիրների լուծումը փաստաթղթում, մասնավորապես, շեշտելով մամուլի ազատության հիմնարար սկզբունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, առաջարկում է Եվրախորհրդի անդամ երկրներին օրենսդրությամբ երաշխավորել հանրային հեռարձակումների անկախությունը, որը ենթադրում է ծրագրային, խմբագրական ու կառուցակարգային ինքնուրույնություն: Միաժամանակ, Եվրախորհրդի Սախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի բացատրական հուշագրի նախաբանի 3-րդ մասում շեշտվում է, որ հանրային հեռարձակման կազմակերպումը փարբերվում է պետական նախապիպեցից հենց նրանով, որ այն իրականացվում է անկախ և առանց իշխանության մարմինների որևէ միջամտության: Այդ հաղորդումները կազմակերպող մարմինների անկախության երաշխավորումը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք: Շեշտվում է նաև, որ նույնիսկ պետական ֆինանսավորումը չի կարող միջոց դառնալ այդ մարմինների խմբագրական անկախության կամ կառուցակարգային ինքնուրույնության վրա ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու համար (Նանձնարարականի 5-րդ մաս): Նանրային հեռարձակման անկախությունը նշված Նանձնարարականով ճանաչելով որպես հիմնարար սկզբունք, պահանջ է առաջադրվում, որ այն պետք է զերծ լինի փնտեսական, քաղաքական կամ վարչական ներազդեցությունից և ծառայի ողջ հանրությանը:

Տվյալ ոլորտի իրավական կանոնակարգման համար սկզբունքային նշանակություն ունի Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1641 (2004) 1 հանձնարարականում ամրագրված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային լրատվության հեռարձակումը պետք է փարբերել առեւտրային կամ քաղաքական նպատակներ հետապնդող լրատվության հեռարձակումից, քանի որ հանրային լրատվության գլխավոր նպատակը գաղափարներ և փորձերի փոխանցումն է, սպանալու և փարածելու ազատության անկողմնակալ ապահովումն է ողջ հանրության համար, որով և պայմանավորված է նման լրատվության անկախության անհրաժեշտությունը:

Նայաստանի Նանրապետությունը՝ 2000թ. դեկտեմբերին վավերացնելով Եվրախորհրդի կանոնադրությունը, պարտավորվել է առաջնորդվել վերջինիս դրույթներով, հաշվի առնել Սախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել դրանց իրականացման համար»:

ՆՈՂՎԱԾ 27.1

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՆՏ Սահմանադրության հոդված 27.1-ում ամրագրված՝ դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքը կարելի է կատարում մարդու իրավունքների և պետական իշխանության իրականացման համակարգում: Նոդվածը ենթարկելով փարաձական մեկնաբանության՝ կարելի է առանձնացնել դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքի հետևյալ բաղադրարարները.

1/ դիմումների կամ առաջարկությունների շարժառիթները և դրանց նշանակությունը: Դիմումի կամ առաջարկության շարժառիթներ կարող են լինել անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումները: Ներելաբար, Սահմանադրության 27.1-րդ հոդվածում ամրագրված իրավունքն ունի եռակի նշանակություն: *Դիմելը քաղաքական իրավունք է:* Մարդիկ հասարակական շահերը շոշափող և պարտադիր քննարկման ենթակա դիմում-առաջարկների միջոցով ներագրում են իշխանության մարմինների գործունեության վրա, վերահսկում այն, նպաստում քաջքշուկի վերացմանը: *Դիմելն ապահովում է հանրային իշխանությանը տեղեկություն:* Բնակչության դիմումները և առաջարկությունները տեղեկության կարելի է աղբյուր են հուզող խնդիրներն արագ, արդյունավետ լուծելու համար: *Դիմելը երաշխիք է մարդու այլ իրավունքների համար:* Դիմելու միջոցով գործի են դրվում այլ իրավունքները ուրնձգություններից, խախտումներից պաշտպանելու պետական կառուցակարգերը:

2/ Դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքի սուբյեկտները /տե՛ս ստորև/:

3/ Դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքի իրականացման ձևերը: Այդպիսի ձևեր կարող են լինել հետևյալները: *Դիմում-խնդրանքը* - միջոց է մարդու որեւէ այլ իրավունքի իրականացման համար: Օրինակ՝ սոցիալական ապահովության իրավունքը կենսագործելիս անհրաժեշտ է անձի դիմումը՝ իրեն ծերության կենսաթոշակ նշանակելու մասին: *Դիմում-հաղորդումը կամ բողոքն* իրավունքի պաշտպանության ձև է: Դրանով համապատասխան մարմինը տեղեկացվում է մարդու որեւէ իրավունքի խախտման, չարաշահումների, թերությունների մասին: **Առաջարկությամբ** գրավոր ձևով մատնանշվում են հանրային հիմնախնդիրները (հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց, այլ կառույցների գործունեության թերություններ, օրենսդրության կատարելագործում և այլն), դրանց լուծման փարբերակները:

4/ Դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքի երաշխիքները: Ըստ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի փրամաբանության՝ դիմում կամ առաջարկություն ներկայացնողի իրավունքը երաշխավորված է եռակի:

Առաջին, դիմում կամ առաջարկություն ներկայացնողի իրավունքին համապատասխանում է հասցեատեր պետական և փրկական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց պարտականությունը պարասխանել նրան: Ներեաբար՝ այս իրավունքը կարգավորող օրենսդրությունը պետական և փրկական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին, այդ թվում՝ հասարակական, դրանց պաշտոնատար անձանց պետք է պարտավորեցնի ապահովել ամեն մի դիմումի, բողոքի, առաջարկության ժամանակին և համակողմանի *քննարկումը*, այդ առթիվ որոշումների *ընդունումը*, ընդունված որոշումների *կատարումը*:

Երկրորդ, պարասխանը պետք է փրվի *ողջամիտ ժամկետում*: Ողջամիտ է այն ժամկետը, որը որպես պարասխանելու ժամկետ սահմանված է օրենքներով: Եթե օրենսդրությունը չի սահմանում պարասխանելու ժամկետը, ապա ողջամիտ է այն ժամկետը, որը բանական է և սովորաբար անհրաժեշտ բարձրացված հարցի լուծման համար:

Երրորդ, դիմումի կամ առաջարկության հասցեատեր պետական և փրկական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց պարասխանը պետք է լինի *պարզաձև*, այսինքն՝ *օրինական և հիմնավորված*:

ՆՏ Սահմանադրության հոդված 27.1-ում ամրագրված՝ յուրաքանչյուր մարդու ինչպես անձնական, այնպես էլ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով հանրային մարմիններին (պետական և փրկական ինքնակառավարման) դիմումներ և առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետներում պարզաձև պարասխան ստանալու իրավունքը կարելի է դասել մարդու կարեւորագույն իրավունքների շարքը, որքանով այդ իրավունքի իրացումը յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում ոչ միայն հեղափոխել լինել սեփական շահին, այլև մասնակից դառնալ հասարակական կարեւորագույն հիմնախնդիրների լուծմանը:

Մարդու և քաղաքացու այս հիմնական (սահմանադրական) իրավունքն իր ընդհանուր գծերով նման է փարբեր պետություններում լայն կիրառություն ստացած հանրագրի (պետիցիա) իրավունքի ըմբռնմանը, որը սովորաբար հասկացվում է որպես հանրային մարմիններին (հարկապես բարձրագույն մարմիններին) ուղղված անհատական կամ կոլեկտիվ դիմումներ, առաջարկություններ, խնդրագրեր, բողոքներ, պահանջներ, որոնք նպաստում են մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև փրկական ստանալու են հանրային իշխանություններին որեւէ նշանակալի հիմնախնդրի կամ շահերի շուրջ ձեռավորված որոշակի վերաբերմունքի մասին: Նանրագրի իրավունքը թեւէ 27.1-րդ հոդվածում վերապահված է միայն անհատներին (յուրաքանչյուրին), սակայն այդ իրավունքը կարող է ունենալ նաև մարդկանց որեւէ խումբ, որքանով այդ խմբի յուրաքանչյուր անդամ առաջադրված հարցի շրջանակներում ունի համանման մտերցում: Այսպիսի ըմբռնումը, որը փրամաբանական առումով հասկանալի է, կարիք ունի նաև իրավական կարգավորման: Մի շարք դեպքերում, Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան, ինչպես մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, այնպես էլ հանրագրի իրավունքը փարածվում է նաև իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, փրեսավարող սուբյեկտների և այլն) նկատմամբ, սակայն մի այլ դեպքում, եթե մարդկանց որեւէ խումբ (միավորում) իրավաբանական անձի կամ որեւէ այլ կարգավիճակ չունի, սակայն ձեռավորվել է որեւէ կոնկրետ հիմնախնդրի լուծման նպատակով, պարզ չէ, թե ինչպես կարող է իրացնել իր այդ իրավունքը: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրության հոդված 28-ին համապատասխան յուրաքանչ-

յուր ոք այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք ունի, իսկ հողված 42-ին համապարասխան՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու օրենքով չարգելված գործողություններ, հետեւաբար՝ մարդիկ իրավունք ունեն նաեւ ժամանակավորապես միավորվելու որեւէ կոնկրետ հիմնախնդրի լուծման համար եւ համարեղ (կոլեկտիվ) դիմում ներկայացնել հանրային մարմիններին:

Իր այսպիսի ուղղվածության շնորհիվ հանրագրի իրավունքն արտահայտում է հասարակական-քաղաքական կյանքի արդյունավետ կազմակերպման նկատմամբ անհատի եւ նրանց հանրության շահագրգռվածությունը եւ միաժամանակ դառնում է հանրային իշխանությունների եւ անհատի ու հասարակության ներդաշնակ համագործակցության հիմք: Այս առումով հանրագրի իրավունքն ընդգրկվում է քաղաքական իրավունքների ոլորտը եւ որպէս այդպիսին նպաստում եւ ապահովում է ՀՀ Սահմանադրության հողված 30-ի պահանջը՝ պետական կառավարմանը եւ պետական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը: Միաժամանակ, այս իրավունքը հնարավորություն է ընձեռում երաշխավորելու մարդկանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների (ոչ միայն քաղաքական), ինչպէս նաեւ օրինական շահերի պաշտպանությունը: Նասկանալի է նաեւ, որ այս իրավունքն ունի ոչ միայն անձնական, այլեւ հստակ արտահայտված հանրային բնույթ ու ուղղվածություն: Ընդ որում, 27.1-րդ հողվածով սահմանված շրջանակներում քաղաքական այս իրավունքից կարող են օգտվել ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլեւ ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք: Ի դեպ, այս հարցը փարբեր երկրներում լուծվում է փարբեր կերպ: Այսպէս, ԳԴՀ-ում հանրագրի իրավունքը վերապահված է յուրաքանչյուրին, Ռուսաստանի Դաշնությունում՝ միայն Դաշնության քաղաքացիներին, Ֆրանսիայում՝ բողոք-հանրագրի իրավունք տրված է յուրաքանչյուրին, իսկ հանրային մարմիններին կոնկրետ առաջարկություններով դիմելու իրավունքը վերապահված է միայն քաղաքացիներին:

Հողված 27.1-ը վերլուծելիս անհրաժեշտ է նաեւ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ որեւէ անձ (ինչպէս նաեւ կոլեկտիվ) կարող է դիմում կամ առաջարկություն ներկայացնել՝ ելնելով ոչ միայն սեփական կամ խմբային շահից, այլեւ համընդհանուր, հասարակական շահից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձնական շահը եւ հասարակական շահը միմյանցից մեկուսացված չեն եւ, որպէս կանոն, հասարակական շահն իր մեջ ներառում է նաեւ շարքերի անձնական շահն այնպէս, ինչպէս անձնական շահի պաշտպանությունը միաժամանակ նաեւ հասարակական շահի պաշտպանությունն է: Նարկ է նշել նաեւ, որ թեւ 27.1-րդ հողվածում նշված չէ անձնական կամ հասարակական շահի իրավաչափ, օրինական լինելը, սակայն միանգամայն հասկանալի է, որ խոսքը վերաբերում է միայն օրինական շահերին, հակառակ պարագայում՝ անձնական եւ հասարակական շահերը կարող են միմյանց հակադրվել եւ վրանգել ինչպէս հասարակական, այնպէս էլ անձնական շահը: Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ շահերի իրավաչափ եւ օրինական բնույթը կարող է որոշվել սահմանադրական այն չափանիշներով, որոնք տեղ են գտել, մասնավորապէս, ՀՀ Սահմանադրության 26, 31, 43-րդ եւ մի շարք այլ հողվածների դրույթներում: Այսինքն՝ թե՛ անձնական, թե՛ հասարակական շահերի իրացումը չպետք է վրանգի պետական ու հասարակական անվտանգությունը, հանրության առողջությունը, բարոյականությունը, այլոց իրավունքներն ու ազատությունները: Այսպէս, ՀՀ Սահմանադրության հողված 31-ում հստակ ընդգծված է, որ «Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական

շահերը», իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերությունում՝ «Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Այսինքն՝ անգամ չափազանց կարևոր (գերակա) հասարակական շահերի առկայության դեպքում անթույլատրելի է անձանց օրինական շահերի անպետումը:

Ընդհանուր առմամբ, հանրագրի իրավունքն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված է ՏՏ Սահմանադրությամբ ամրագրված կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի հետ (հոդված 27): Այսինքն՝ կարծիք արտահայտելը հանրագրի իրավունքի միջոցով կարող է դառնալ գործուն միջոց այս կամ այն հիմնախնդրի լուծման նպատակով արտահայտված տեսակետը, մտքեցումը դարձնելու հանրային մարմինների քննարկման առարկա:

Հանրագրի իրավունքն առաջին անգամ ամրագրվել է 1791թ. Ֆրանսիայի Սահմանադրությունում: Ներագայում արեւմտյան պետությունների համադրություններում հանրագրի կամ հանրային մարմիններին դիմելու իրավունքն ընդհանուր առմամբ ներկայանում է իբրև պետության և հասարակության գործերում մարդկանց և քաղաքացիների մասնակցությունն իրականացնելու ձեւ, ինչպես նաեւ քաղաքական և իրավական որոշումների ընդունման գործընթացների վրա անհատների կամ մարդկանց խմբերի (կոլեկտիվների) ազդելու եղանակ: Պատահական չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դափարան դիմելու իրավունք վերապահված է ոչ միայն անհատներին, այլև հասարակական կազմակերպություններին ու անձանց խմբերին (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 34): Այսպիսի պատկերացումը միաժամանակ ապահովում է քաղաքացիների կողմից հանրային մարմինների և պաշտոնապար անձանց գործողությունների նկատմամբ հսկողությունը և դառնում է դրանց անհարկի միջամտություններից ձերբազատվելու, իրավունքների ու ազատությունների իրացման, անձնական ու հասարակական շահերի պաշտպանության միջոց:

Հանրագրի իրավունքի նկատմամբ նման մտքեցումն ամրագրված է բազմաթիվ պետությունների սահմանադրություններում և համապատասխան օրենքներում: Մասնավորապես, ԳՂՏ Հիմնական օրենքի հոդված 17-ում ամրագրված է հանրագրի իրավունքը, իսկ հոդված 45c-ում նշվում է, որ Բունդեստագը ձեւավորում է Հանրագրերի կոմիտե, որը համապատասխան օրենքով սահմանված կարգով պարտավոր է ուսումնասիրել խորհրդարանին ուղղված բողոքներն ու առաջարկությունները՝ անհրաժեշտության դեպքում այդ գործընթացում ընդգրկելով մյուս հանրային մարմինները: Բազմաթիվ երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ հանրագրի իրավունքը կարևոր դեր է կատարում հասարակության քաղաքական կամքի ձեւավորման գործընթացում, նպաստում է անհատների և նրանց միավորումների կամաարտահայտմանն ու հասարակական իրավագիտակցության ձեւավորմանը և մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում հանրային մարմիններին ուղղված դիմումների ու առաջարկությունների, ինչպես նաեւ բողոքների քննարկմանը և ընթացք տալուն առնչվող հարցերը կարգավորվում են «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքներով, որոնք ընդունվել են մինչև 2005 թվականին ՏՏ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելը: Հայտնի է, որ մինչև այդ

փոփոխությունների ընդունումը Սահմանադրության մեջ հանրագրի իրավունք նախատեսված չէր: Ներելաբար, սահմանադրական փոփոխություններից հետո անհրաժեշտ է կատարել որոշակի բարեփոխումներ՝ օրենսդրությունը համապատասխանեցնելով ՏՄ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես հաշվի առնելով փարբեր երկրների պրակտիկան՝ հանրագրի իրավունքի գործնական իրականացումն ապահովելու նպատակով: Այս առումով առաջնահերթ նշանակություն ունի օրենսդրորեն նախատեսել հանրագրի իրավունքի իրացման որոշակի (առանձնահատուկ) կարգ, ինչպես նաև սահմանել ողջամիտ ժամկետում հանրային մարմինների կոնկրետ պարտականությունները պարշաճ (պարճառաբանված) պատասխաններ փալու եւ ընդունված որոշումներին ընթացք փալու համար:

ՆՈՂՎԱԾ 28

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու եւ դրանց անդամագրվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ սրեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք:

3. Կուսակցություններ եւ արհեստակցական միություններ սրեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների եւ սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

4. Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որեւէ կուսակցության կամ միավորման:

5. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

Մինչև բուն հոդվածի առանձին մասերի մեկնաբանությանն անցնելը, փորձենք պարզել «հասարակական միավորումներ» հասկացությունը եւ դրա տեսակները, որպեսզի կարողանանք որոշել Սահմանադրության 28-րդ հոդվածի առանձին մասերի տեղը միավորումներ կազմելու իրավունքի սահմանադրական կարգավորման գործում: **Միավորումները** անհատների շահերի ընդհանրության եւ օրենքի հիման վրա, կամավոր սրեղծված հասարակական կառույցներ են, որոնց նպատակն անդամների հոգեւոր կամ ոչ նյութական այլ պահանջումքների բավարարումն է: Նասարակական միավորումները հսկայական դեր ունեն ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության կայացման գործում: Նասարակական միավորումներն իրենց բնույթով բազմազան են: Դրանց հարուկ եւ կարեւոր տեսակներից են կուսակցությունը եւ արհեստակցական միությունը: Այսպիսով, Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասն ամենից ընդհանուր դրույթն է, որն ամրագրում է անհատների միավորումներ կազմելու իրավունքը: Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասը 1-ին մասի՝ որպես ընդհանուր դրույթի հետ հարաբերակցում է որպես հատուկ դրույթ, որը կոնկրետացնում է միավորումների յուրահատուկ տեսակի՝ կուսակցության սրեղծման եւ դրան անդամագրվելու իրավունքը:

1. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի իրավաբանական բովանդակությունը ենթադրում է երկու իրավական հնարավորություն. ա/ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ **միավորումներ կազմելու իրավունք**: Այս իրավունքն անհատական չէ, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ է այլ անձանց հետ համագործակցություն, որի արդյունքը պետք է լինի միավորում կազմելը. բ/ յուրաքանչյուր ոք ունի հասարակական միավորումներին **անդամագրվելու իրավունք**: Այս իրավունքը, ի փարբերություն նախորդի, անհատական է: Անկախ կրոնական, ռասայական, սեռային, լեզվական և այլ հատկանիշներից, յուրաքանչյուրը պետք է ունենա գործող հասարակական միավորումներին միանալու կամ անդամագրվելուց հրաժարվելու, ինչպես նաև՝ դրանցից անարգել դուրս գալու իրավունք:

Միավորում, բացի կուսակցությունից, կազմելու և դրան անդամագրվելու իրավունք ունեն բոլորը:

Միավորման իրավունքը մարդկանց հնարավորություն է փալիս իրականացնել այնպիսի խնդիրներ, իրագործել այնպիսի նպատակներ ու շահեր, որոնք հնարավոր չէ իրականացնել անհատապես: Մարդիկ ստեղծում են հասարակական կազմակերպություններ՝ համապետել ջանքերով իրենց կողմից որոշակի ընդհանուր շահերի իրագործման նպատակով:

Նայաստանի Նանրապետությունում ժողովրդավարական գործընթացները հանգեցրել են իրենց կառուցվածքով և գործունեության նպատակներով բազմաթիվ նման միությունների առաջացմանը: Դրանք ակտիվ գործունեություն են ծավալում հասարակական կյանքի փարբեր ոլորտներում, էական ազդեցություն են ունենում օրենսդիր և գործադիր իշխանության վրա և մեծ դեր ունեն պետական ու հանրային քաղաքականության մշակման և իրականացման ողջ գործընթացում: Սա, իհարկե, դրական երեւոյթ է, քանզի այդ կառույցների գործունեությունը հասարակության փարբեր սոցիալական խավերի ու շերտերի շահերը հաշվի առնելու ավելի մեծ հնարավորություն է փալիս՝ դրանով իսկ առավել նպատակահարմար և արդյունավետ դարձնելով հանրային և պետական քաղաքականությունը:

Նասարակական միավորումների թվին են դասվում՝ արհմիությունները, գործապուների միությունները, փարբեր քեսակի շարժումները, «քաղաքացիական նախաձեռնությունները», սպառողների միությունները, բնապահպան կազմակերպությունները, հայրենակցական, ազգային հատկանիշներով ձեւավորված կազմակերպությունները, կանանց և երիտասարդական միությունները, բարեգործական կազմակերպությունները, փարբեր հիմնադրամները և այլն: Այս միավորումներն ունեն էական ընդհանուր հատկանիշներ, հատկապես՝ նրանք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում:

Ի փարբերություն քաղաքական կուսակցությունների, հասարակական այլ միավորումների հիմնական նպատակը հասարակական կյանքի որոշակի ոլորտներում համապատասխան շահերի հայտնաբերումն ու իրագործումն է, այլ ոչ թե՝ քաղաքականությանը մասնակցելը, չնայած որ նրանք որոշակի պայմաններում ակտիվություն են դրսեւորում նաև քաղաքական դաշտում և երբեմն էական ազդեցություն են գործում պետական քաղաքականության վրա:

Նանդիսանալով հասարակության քաղաքական համակարգի փարբեր՝ արհեստակցական միություններն ու հասարակական կազմակերպությունները կարող են էական ազդեցություն ունենալ պետական իշխանության իրականացման վրա: Սակայն, ի փարբերություն քաղաքական կուսակցությունների, այլ միավորումները պետական

իշխանության իրականացմանը մասնակցում են միջնորդավորված ձևով: Նրանք օգնում են կուսակցությանը /համոզելով իրենց անդամներին նրա օգտին քվեարկել/ խորհրդարանում ստանալ մեծամասնություն կամ հնարավորին չափ շար պատգամավորական մանդատներ, փոխարենը՝ կուսակցությունը պարտավորվում է խորհրդարանական գործունեության ընթացքում նպաստել խորհրդարանի կողմից այդ կազմակերպությանը ձեռնարկ փարբերակով օրինագծի ընդունմանը:

Անձանց միավորման սահմանադրական իրավունքն իրագործվում է միության անդամների իրավահավասարության սկզբունքով: Սակայն միավորումներին անդամակցելը քաղաքացու իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու կամ պետության կողմից նրանց որևէ արտոնություն փրամադրելու հիմք չի տալիս: Միավորումները մեծ կարևորություն են ներկայացնում ոչ միայն քաղաքական, այլ նաև փնտրեսական եւ աշխատանքային հարաբերությունների ոլորտում:

ՆՏ Սահմանադրության 28-րդ հոդվածի առաջին մասով սահմանված է, որ միավորումներ կազմելու եւ դրանց անդամակցելու իրավունքը վերապահված է յուրաքանչյուր անձի: Նարկանշական է, որ սույն հոդվածում հատուկ ընդգծվում է արհեստակցական միություններին միավորվելու անձի իրավունքը: **Արհեստակցական միությունը** մասնագիտական, արտադրական գործունեության ընդհանուր շահեր ունեցող անհատների կամավոր միավորումն է՝ սրբեղծված նրանց ներկայացուցչության, սոցիալ-փնտրեսական իրավունքների պաշտպանության նպատակով: Նասարակական միավորումների խմբից արհեստակցական միությունների առանձնացումը պայմանավորված է այդ միությունների գործունեության, դրանց նպատակների, իրավունքների եւ պարտականությունների կարևորությամբ: Նարկապես կարևորվում է արհեստակցական միության կողմից իր մասնակցի աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական եւ այլ շահերի ու իրավունքների ներկայացումն ու պաշտպանությունը գործադրուի կամ երրորդ անձի մոտ:

«Արհեստակցական միությունների մասին» ՆՏ օրենքով կազմակերպության մասնակիցներ կարող են լինել Նայասարանի Նանրապետության փարածքում կամ Նայասարանի Նանրապետության փարածքից դուրս աշխատողները, այդ թվում՝ օրարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք⁷⁸:

Միավորվելու իրավունքի իրականացումը ոչ միայն հնարավորություն է ընձեռում մարդկանց կողմից իրենց ընդհանուր շահերի իրագործման համար, այլև նպաստում է քաղաքացիական հասարակության ձեւավորմանը, քանզի վերջինս հենց կառուցակարգված հասարակություն է: Քաղաքացիական հասարակության կառույցների միջոցով ընդլայնվում է ինքնակառավարման ոլորտը եւ, միեւնոյն ժամանակ, սահմանափակվում է պետական ապարարի գործունեության շրջանակը: Մյուս կողմից, միավորումների միջոցով հնարավոր է դառնում քաղաքացիական վերահսկողությունը պետական ապարարի գործունեության նկատմամբ: Միայն այդպիսի հասարակության առկայության դեպքում կարող է խոսք գնալ նաև իրավական պետության մասին:

2. Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասը կոնկրետացնում է միավորումների յուրահատուկ տեսակի՝ կուսակցության սրբեղծման եւ դրան անդամագրվելու իրավունքի իրավաբանական բովանդակությունը: Այդպիսի կոնկրետացման անհրաժեշտությունը պայմանավորված է կուսակցությունների՝ որպես հասարակական միավորման հատուկ տեսակի ,առանձնահատկությունով, այն է՝ քաղաքական բնույթով:

Կուսակցությունն ընդհանուր շահերի, գաղափարների եւ նպատակների հիման վրա ձեւավորված ակտիվ ու կազմակերպված հասարակական միավորում է, որը ձգտում

⁷⁸ ՆՏՊՏ 2001.01.15/1:

է իրավունքի (օրենքի) շրջանակներում՝ ընտրությունների միջոցով փրանալ պետական իշխանությանը կամ վճռական կերպով ազդել վերջինիս վրա իր ծրագրերն իրագործելու նպատակով /տե՛ս Սահմանադրության 7-րդ հոդվածի մեկնաբանությունը/: Կուսակցության՝ որպես հասարակական միավորման տեսակի, բնութագրական գիծն ուղղակի կապն է քաղաքականության հետ, իսկ սրեղծման և գործունեության անմիջական խնդիրը որոշակի քաղաքական նպատակների հասնելն է: Այս յուրահատկությամբ պայմանավորված՝ Սահմանադրության 28-րդ հոդվածի երկրորդ մասը կուսակցություն սրեղծելու և դրան անդամագրվելու իրավունքները վերապահում է միայն քաղաքացիներին: Ի տարբերություն հասարակական կազմակերպությունների և արհեստակցական միությունների, որոնցում կարող են միավորվել կամ որոնց կարող են անդամագրվել նաև ոչ քաղաքացիները /հասարակական կազմակերպությանն անդամագրվելու իրավունք ունեն նույնիսկ անչափահասները/՝ կուսակցություններ սրեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը վերապահված է բացառապես ՏՏ քաղաքացիներին: Պարճառն այն է, որ, ի տարբերություն մնացյալ միավորումների, քաղաքական կուսակցությունների բուն նպատակը պետական իշխանության իրականացմանը մասնակցությունն է: Իսկ նման իրավունքը ոչ թե մարդու բնական իրավունք է, այլ պետության կողմից միայն իր քաղաքացիներին վերապահվող՝ քաղաքացիական իրավունք:

Նայաստանի Նանրապետությունում կուսակցությունները կազմավորվում են ազատորեն՝ իրենց անդամների հիմնադիր ժողովների կամ համագումարների որոշմամբ: Նիմնադիր ժողովում (համագումարում) որոշումներ են ընդունվում կուսակցության հիմնադրման, նրա ծրագրի ընդունման, կանոնադրության հաստատման, դեկլարար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին: Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը ծագում է նրա պետական գրանցման պահից:

3. Միավորվելու իրավունքը բացարձակ իրավունք չէ: Այդ իրավունքը ենթակա է սահմանափակման Սահմանադրության 43 և 44-րդ հոդվածներում նախատեսված կարգով և հիմքերով: Միաժամանակ, Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է միավորումների որոշակի տեսակների սրեղծման և դրանց անդամագրվելու լրացուցիչ սահմանափակումների հնարավորությունը:

Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով միավորումներ կազմելու կամ դրանց անդամագրվելու իրավունքների սահմանափակման պայմաններն են.

ա/ սահմանափակումը տարածվում է կուսակցությունների ու արհեստակցական միությունների՝ որպես հատուկ հասարակական միավորումների, վրա.

բ/ սահմանափակումը կարող է տարածվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ.

գ/ սահմանափակման կարգը պետք է սահմանվի օրենքով: Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասն օգտագործում է «կարող են սահմանափակվել օրենքով սահմանված կարգով» արտահայտությունը. ինչը, սակայն, չի նշանակում, որ դա օրենսդրի հայեցողական լիազորությունն է: Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով միավորումներ կազմելու կամ դրանց անդամագրվելու իրավունքների սահմանափակման ոլորտների մեծ մասը սահմանադրական անհրաժեշտություն են, որ բխում են Սահմանադրության 8.2-րդ հոդվածից /զինված ուժերի չեզոքության սկզբունքը/, իշխանությունների տարանջատման սկզբունքի անձնական առումից /տե՛ս Սահմանադրու-

թյան 5-րդ հոդվածի մեկնաբանությունը/, դատախազության և դատական իշխանության անկախության սկզբունքներից եւ այլն:

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կուսակցության անդամ չեն կարող լինել՝ 1/ դատավորները. 2/ դատախազները. 3/ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների աշխատակիցները. 4/ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի ծառայողները»⁷⁹: Այդ սահմանափակումը նպատակ ունի, մի կողմից, այդ մարմիններին երկրի քաղաքական գործընթացների վրա ներազդելու հնարավորություն չտալ, մյուս կողմից՝ այդ կուսակցություններին զրկել պետական մարմինների գործունեությանն անմիջականորեն միջամտելու հնարավորությունից:

Իսկ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանափակվում են զինված ուժերի եւ իրավապահ մարմինների ծառայողների՝ արհեստակցական միություններին միավորվելու /անդամակցելու/ իրավունքները:

4. Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է միավորումներ կազմելու, դրանց անդամագրվելու իրավունքի երաշխիքներից մեկը՝ *սրտեղծման եւ դրանց անդամագրվելու կամավորության սկզբունքը*: Սահմանադրությունն արգելում է մարդուն հարկադրել անդամագրվելու որեւէ կուսակցության կամ միավորման: Ինքը՝ անհարը պետք է ընտրի իր հասարակական-քաղաքական կողմնորոշումը եւ դրան համապատասխան սրտեղծի միավորումներ կամ անդամագրվի դրանց: Անդամագրման կամավորության սկզբունքից բխում է, որ արգելվում է ոչ միայն մարդու՝ որեւէ միավորմանն անդամագրվելուն հարկադրելը, այլեւ արդեն իսկ անդամագրված անձի՝ միությունից դուրս գալուն խոչընդոտելը:

5. Միավորումների գործունեությունն իրականացվում է ազատության եւ ինքնակառավարման հիմունքներով: Միավորումներն են որոշում իրենց նպատակները եւ խնդիրները: Նրանք ունեն ինքնակառավարման իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Արգելվում է ապօրինի միջամտել միավորումների գործունեությանը: Սակայն պետությունը վերահսկում է նրանց գործունեությունը՝ օրենքով սահմանված կարգով: Եթե միավորումները խախտում են օրենքը, ապա *օրենքով նախատեսված դեպքերում եւ դատարանի կարգով* նրանց գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել:

Սահմանադրության 28-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ միավորումների գործունեությունը կասեցվում կամ արգելվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով առավել մանրամասն սահմանված են կուսակցությունների գործունեության արգելման եւ դրանց լուծարման հիմքերն ու կարգը: Այդ հանգամանքը պայմանավորված է երկրի քաղաքական համակարգում նրանց իրականացրած էական գործառույթներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին»: Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 9-րդ կետերի՝ համապատասխան հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը եւ կառավարությունը:

⁷⁹ ՀՀՊՏ 2002.08.15/34(209):

Կուսակցությունների գործունեության արգելման և կուսակցությունների լուծարման հիմքերն ամրագրված են «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 30 և 31-րդ հոդվածներով: Օրենքի 9-րդ հոդվածով ամրագրված կուսակցությունների գործունեության արգելման հիմքերի՝ «կուսակցությունների նպատակները կամ գործունեությունը ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի և Հայաստանի Հանրապետության փարաժքային ամբողջականության բռնի փոփոխությանը, զինված կազմավորումների ստեղծմանը, ազգային, ռասայական, կրոնական արելության բորբոքմանը, բռնություն և պատերազմ քարոզելուն», հիմնավորվածությունն ու նպատակահարմարությունը որևէ կասկած չի հարուցում: Նույնը չի կարելի պնդել օրենքի 31-րդ հոդվածով ամրագրված կուսակցությունների լուծարման հիմքերի մասին: Հոդվածում տեղ են գտել որոշակի վիճարկելի իրավադրույթներ: Նենց դա է պարճառը, որ ինչպես արդեն նշվել է Սահմանադրության 7-րդ հոդվածի մեկնաբանության տեքստում՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի առիթով քննելով գործը՝ ՏՏ սահմանադրական դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-669 որոշմամբ⁸⁰ ՏՏ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածին հակասող ու անվավեր ճանաչեց «Կուսակցությունների մասին» ՏՏ օրենքի վերը նշված դրույթները: Միաժամանակ, Սահմանադրության 31-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչվեց նույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի՝ այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը»:

Ինչ վերաբերում է արհեստակցական միություններին և հասարակական կազմակերպություններին, ապա նրանց գործունեությունը հնարավոր է կասեցնել կամ արգելել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

ՆՈՂՎԱԾ 29

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունք:

2. Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատափորձի և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով:

1. Հավաքների ազատությունը երաշխիք է սահմանադրական և փարաբնույթ այլ իրավունքների պաշտպանության համար: Տիշյալ իրավունքը հնարավորություն է տալիս անձանց անմիջականորեն մասնակցելու պետական կյանքի կարևորագույն հարցերի առնչությամբ հասարակական կարծիքի ձեւավորմանը:

Նշված իրավունքը համահունչ է այդ իրավունքի վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիմնադրույթներին: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների և միությունների ազատության իրավունք»:

⁸⁰ ՀՀՊՏ 17.01.07./4(528), հոդվ. 32:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածով ևս ամրագրված է խաղաղ հավաքների իրավունքը: Ըստ նույն հոդվածի՝ «Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք դրվում են օրենքին համապատասխան և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության ու բարոյականության պահպանման կամ մյուս անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածով նշված իրավունքն ամրագրված է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը»: Տվյալ դեպքում հավաքների ազատության իրավունքը՝ այլոց հետ միավորվելու իրավունքի հետ համարել ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ հիշյալ իրավունքները սերտորեն փոխկապակցված են և հնարավորություն են տալիս անձանց այլոց հետ միավորված կոլեկտիվ եղանակով իրացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը և մասնակցելու ժողովրդաիշխանությանը:

«Նավաք» հասկացությունը բովանդակային առումով ընդգրկում է և ներառում է բոլոր հրապարակային միջոցառումները: Ընդ որում, «հրապարակային միջոցառման» բնորոշումը տրված է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 2-րդ հոդվածով. «հրապարակային միջոցառում՝ ընդհանուր օգտագործման փարածքներում փոքրածախ, սոցիալական, քաղաքական, հոգևոր կամ այլ պահանջների, խնդիրների ու հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու, տեղեկություններ կամ գաղափարներ փոփոխելու, ստանալու կամ փարածելու նպատակով անցկացվող խաղաղ և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովող ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նստացույցեր)»:

Պաշտպանության ենթակա է խաղաղ հավաքը, իսկ հավաքը համարվում է այդպիսին, եթե դրա կազմակերպիչները և մասնակիցները հետապնդում են խաղաղ նպատակներ, այսինքն՝ բացակայում են ակնհայտ ապացույցներ, ըստ որոնց՝ կազմակերպիչները կամ մասնակիցները կոհմեն անմիջական բռնի գործողությունների կամ կանեն բռնության կոչեր: Այսպիսով, եթե հավաքների կազմակերպիչները կամ մասնակիցներն իրենց ելույթներում ներառում են իրենց գաղափարական հակառակորդներին ուղղված անգամ բարոյական չափանիշներով պայմանավորված վիրավորական արտահայտություններ կամ ժամանակավոր խոչընդոտում են երրորդ անձանց իրավաչափ գործողություններին (օրինակ, առանց դիմադրության ճանապարհները ողջամիտ ժամկետով փակելը), միեւնույն է, հավաքը համարվում է խաղաղ: Սակայն իրավասու մարմինների կողմից օրինական պահանջներ ներկայացնելիս դիմադրություն ցույց տալու դեպքում հավաքը դադարում է խաղաղ համարվել:

Բնականաբար, եթե վերը նշված հիմքերով հավաքը շարունակում է համարվել խաղաղ, դա չի նշանակում, որ այդ արտահայտությունների հեղինակները չպետք է ենթարկվեն պարասխանարվության: Պարզապես իրավասու մարմինները պարտավոր են մեկուսացնել այդ անձանց և իրականացնել համապատասխան վարույթ:

«Նավաք» հասկացությունը մեկնաբանվում է որպես առնվազն երկու անձի համա-

տեղ մասնակցություն հրապարակային միջոցառմանը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ մեկ անձ է հանդես գալիս կարծիք հնչեցնելու կամ բողոք հայտնելու հրապարակային եղանակով, պետությունը պարտավոր է վերջինիս համար ընձեռել անհրաժեշտ պայմաններ: Պարզապես այս դեպքում հավաքի անցկացման իրավունքին առնչվող կանոններն ամբողջությամբ չեն գործում:

Խաղաղ հավաքների անցկացման իրավունքի վերաբերյալ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու հետևյալ հիմնադրույթները՝

ա) խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի օրենսդրական կարգավորումը չպետք է սահմանափակի այդ իրավունքը, իսկ կանոնակարգումը չպետք է ներառի այդ իրավունքից օգտվելու թույլտվության համակարգ: Նավաքը կարող է արգելվել միայն Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով: Մեր օրենսդրությամբ նախապատվությունը տրվել է իրազեկման ինստիտուտին. եթե իրազեկման քննարկման արդյունքներով հավաքն արգելվելու մասին որոշում չի կայացվում, ապա հանրահավաքի անցկացումը համարվում է իրավաչափ,

բ) պետությունը պարտավոր է պաշտպանել խաղաղ հավաքները: Պետության հիշյալ պարտավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հավաքների ընթացքում հաճախ են հնչում արտահայտություններ, որոնք վիրավորական բնույթ ունեն և կարող են անհարկի բախումների տեղիք տալ: Ի դեպ, այդպիսի բախումների հնարավորությունը հիմք չէ հավաքներն արգելելու համար:

Նավաքների ընթացքում մասնակիցների և երրորդ անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների համար կազմակերպիչները կարող են ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ ապացուցվում է, որ վերջիններս իրենք են նախաձեռնել կամ մասնակցել այդ իրավախախտումներին:

Նավաքի անվտանգությունը պաշտպանելիս պետությունը չի կարող դրամական փոխհատուցում պահանջել հավաքի կազմակերպիչներից, բոլոր ծախսերը կատարվում են բացառապես պետական միջոցներից:

Նավաքի կազմակերպիչները կարող են օրենքով սահմանված կարգով ևս նշանակել հասարակական կարգի պահպանմանն աջակցող անձանց: Վերջիններս կարող են գործել բացառապես հասարակական հիմունքներով և չեն օգտվում իրավապահ մարմինների պաշտոնյաներին վերապահված լիազորություններից: Նպատակահարմար է, որպեսզի հիշյալ անձինք կրեն որոշակի փարբերանշաններ:

Նշված խնդիրների լուծմանն աջակցում է նաև դիտորդների ինստիտուտը: Դիտորդները չեն կարող հանդիսանալ հավաքի կազմակերպիչներ կամ մասնակիցներ, նրանք սոսկ ներկայացնում են երրորդ կողմը և հետևելով հավաքի ընթացքին՝ իրենց անաչառ գնահատականն են տալիս տեղի ունեցած իրադարձություններին, այդ թվում՝ հավաքի անվտանգությունն ապահովող ծառայողների գործողությունների իրավաչափությանը,

գ) օրենքով ամրագրված բոլոր սահմանափակումները պետք է լինեն հիմնավորված, բխեն Սահմանադրությունից և միջազգային պայմանագրերից: Նավաքներ անցկացնելու սահմանափակումները պետք է ընդհանուր բնույթ ունենան և հավասարապես վերաբերեն ինչպես հավաքներ անցկացնելն արգելելուն, այնպես էլ՝ արդեն իսկ սկսված հավաքները դադարեցնելուն,

դ) յուրաքանչյուր սահմանափակում պետք է լինի համաչափ այն վտանգին, որ

կարող է վրա հասնել հավաք անցկացնելու արդյունքում: Բնականաբար, հավաքի անցկացումն այս կամ այն չափով խոչընդոտում է այլոց իրավունքների իրականացմանը: Սակայն ամեն մի խոչընդոտը չէ, որ կարող է հիմք հանդիսանալ հավաքն արգելելու համար: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ խոսքն այլոց սահմանադրական իրավունքների էական խախտումների մասին է:

Նավաքի կազմակերպիչների կամ առանձին մասնակիցների կողմից այնպիսի իրավախախտումներ թույլ տալու դեպքում, որոնք հիմք են հրապարակային միջոցառումը հարկադիր դադարեցնելու համար, նախ՝ պետական իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցներն այդ իրավախախտումները կանխելու նպատակով: Նավաքի մյուս կազմակերպիչների կամ մասնակիցների կողմից իրավախախտումները կանխելու եւ դրանք կատարած անձանց նկատմամբ օրենքով սահմանված միջոցներ կիրառելու բնականոն ընթացքին խոչընդոտելը հիմք է հրապարակային միջոցառումը հարկադիր դադարեցնելու համար,

ե) պետք է երաշխավորված լինի հավաքների բնականոն ընթացքի համար պատասխանատու պետական մարմինների եւ դրանց պաշտոնաբար անձանց պարտավորվածությունը, վերջիններիս գործողությունները պետք է լինեն ծայրահեղ թափանցիկ: Բնականաբար, ցանկացած գործառույթ իրականացնելիս պահանջվում է համապատասխան ծառայություններից անհրաժեշտ պարտավորվածություն, սակայն փվյալ դեպքում պարտավորվածության վրա առավել մեծ ուշադրություն դարձնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկային մեծ կուրակումների ժամանակ, երբ, որպես կանոն, հնչում են գրգռող, վիրավորական արտահայտություններ, անհամեմատ մեծ է հասարակական կարգի կոպիտ խախտումների, մարդկանց մեծ զանգվածների նկատմամբ բռնություններ գործադրելու հնարավորությունը,

զ) պետք է իսպառ բացակայի խտրականությունը, ինչը ենթադրում է ոչ միայն օրենսդրության դրույթների, այլև դրանց կիրառման միասնականություն: Տվյալ դեպքում հանրային ծառայության որոշ տեսակների համար սահմանափակումներ նախատեսելը չի կարող դիվրվել որպես խտրականության դրսևորում, քանի որ հիշյալ պաշտոնյաները, ըստ էության, իրենք են պարտավոր ապահովելու խաղաղ հավաքների անցկացման բնականոն ընթացքը:

Այս սահմանադրական իրավունքը եւս ամրագրված է եղել Սահմանադրության նախկին խմբագրությամբ. «Քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք» (26-րդ հոդված): Նամեմարական վերլուծությունը ցույց է տալիս, որ փվյալ դեպքում նորամուծությունը նախ այն է, որ ներկա խմբագրությամբ սպառիչ թվարկված չեն հրապարակային միջոցառումների տեսակները. պարզապես օգտագործված է դրանց բոլոր տեսակները ներառող «հավաք» եզրույթը, ինչը միանգամայն արդարացի է, քանի որ հրապարակային միջոցառումների սպառիչ տեսակները նախապես կանխորոշելը գործնականում խոցելի է: Խնդիրն այն է, որ հետագայում կիրառման մեջ դրված հրապարակային միջոցառումների վրա սահմանադրական դրույթները կարող են հանիրավի չտարածվել: Ընդ որում, Սահմանադրության նախկին խմբագրությամբ 26-րդ հոդվածում եւս սպառիչ սահմանված չէին հրապարակային միջոցառման բոլոր տեսակները:

Նաջորդ նորամուծությունը վերաբերում է այդ իրավունքի որոշ սահմանափակումներին, որոնք օրենքով կարող են նախատեսվել զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների համար: Այդ սահմանափակմանն առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Սահմանադրությունը չի սահմանում խաղաղ հավաք անցկացնելու կազմակերպչի համար որեւէ փարիքային ցեւոց: Միաժամանակ, «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 18 փարեկան այն քաղաքացիները, ովքեր օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել լրիվ գործունակ, կարող են հրապարակային միջոցառման կազմակերպիչներ լինել միայն ծնողների կամ օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

Նշված օրենքով ամրագրված սահմանափակումը չի հակասում Սահմանադրությանը, քանի որ փվյալ դեպքում հարկ է նաեւ երաշխավորել հավաքների խաղաղ ընթացքը, որի համար կարող են պատասխանատու լինել միայն որոշակի փարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք:

2. Սահմանադրության 29-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է միայն օրենքով զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաեւ դատավորների եւ սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ նախատեսելու իրավական հնարավորություն: Հավաքներ անցկացնելու իրավունքն իր կանոնակարգումն է սրացել հիմնականում «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում. «Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելու ոստիկանության եւ պետական մարմինների կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»: Ընդ որում, նույն օրենքի մեկ այլ հոդվածի (9-րդ) համաձայն՝ որպես հրապարակային միջոցառման կազմակերպիչներ եւ մասնակիցներ չեն կարող լինել ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների, քրեակադարողական մարմիններում ծառայողները եւ զինծառայողները:

Սահմանադրության 29-րդ հոդվածի եւ նշված օրենքի 1-ին հոդվածի դրույթների համեմատական վերլուծությունը, թերեւս, վկայում է այն մասին, որ օրենքի վերը նշված դրույթները համահունչ չեն Սահմանադրության նշված դրույթներին: Մասնավորապես, Սահմանադրությամբ թույլատրվում է սահմանափակումներ նախատեսել միայն որոշ պետական մարմինների ծառայողների ու պաշտոնատար անձանց համար, մինչդեռ օրենքով այդպիսի սահմանափակման կիրառումն իրավաչափ է համարվում յուրաքանչյուր պետական մարմնի պարագայում: Հավելենք, որ գործող օրենսդրությունում, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմինների ծառայողների համար հիշյալ բնույթի սահմանափակումներ նախատեսված չեն:

Մյուս կողմից, հարկ է նկատել, որ նշված օրենքի դրույթների համար հիմք է ծառայել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածը, որով սահմանափակումներ կիրառելու հնարավորություն է նախատեսված ոչ միայն զինված ուժերի եւ ոստիկանության, այլեւ «պետական վարչակազմի մեջ մտնող անձանց» համար:

Ինչեւէ, Սահմանադրությամբ նախատեսված ծառայությունների մի մասի առնչությամբ արդեն իսկ ընդունվել են օրենքներ, որոնցով ամրագրված են հիշյալ բնույթի սահմանափակումները: Այսպես, օրինակ, «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իրավունք չունի կազմակերպել հավաքներ եւ մասնակցել դրանց: Նույնաբնույթ սահմանափակում է նախատեսված ազգային անվտանգության

ծառայողի համար՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, զին-
ծառայողի համար՝ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Նայաստանի Նան-
րապետության օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով եւ այլն:

Խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը բացառիկ չէ, այն դասվում է սահ-
մանադրական այն իրավունքներին շարքին, որոնք Սահմանադրության 43 եւ 44-րդ հոդ-
վածներով նախատեսված հիմքերով կարող են սահմանափակվել: Մասնավորապես, Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների շրջանակը
կարող է վերաբերել այն տարածքներին, որտեղ արգելվում է հավաքների անցկացումը,
կոչերին, որոնք կարող են հնչել հրապարակային միջոցառումների ընթացքում:

ՆՈՂՎԱԾ 30

**1. Նայաստանի Նանրապետության՝ տասնութե տարին լրացած քաղա-
քացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ
անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությանը ընդդիմ իրենց
ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինք-
նակառավարմանը մասնակցելու իրավունք:**

**2. Օրենքով կարող է սահմանվել Նայաստանի Նանրապետության քա-
ղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մար-
մինների ընտրություններին եւ տեղական հանրաքվեներին մասնակցելու
իրավունքը:**

**3. Ընտրել եւ ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ
ձանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատա-
զրկման դատապարտված եւ պայրիժը կրող քաղաքացիները:**

1. Ժողովրդական կամաարահայտության բարձրագույն անուղղակի եղանակը
պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են, ինչպես
նաեւ քվեարկության միջոցով հանրաքվեի ժամանակ երկրի համար կարելուք նշանա-
կություն ունեցող հարցերը լուծելը: Ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքնե-
րը մեր օրերում դարձել է պետության կառավարմանը մասնակցություն ապահովող հիմ-
նական, ամենամասսայական իրավունքը: Ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու
իրավունքն ուղղակիորեն բխում է ՆՆ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված
ժողովրդավարության եւ 2-րդ հոդվածում ամրագրված իշխանությունը ժողովրդին պար-
կանելու սկզբունքներից: Ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքն ըստ էու-
թյան ժողովրդի ինքնիշխանության արտահայտությունն է եւ իրեն պարկանող իշխա-
նության իրականացման ձեռնարկ: Դժվար եւ գուցե անհնարին է պարկերացնել ժողովրդա-
վարական որեւէ պետություն, ուր քաղաքացիները չունեն ընտրելու եւ հանրաքվեի մաս-
նակցելու իրավունք: Պետության կառավարմանը մասնակցություն ապահովող եւ ոչ մի
իրավունք չի կարող իր ծավալով, սուբյեկտների կազմով համեմարվել ընտրելու եւ հան-
րաքվեին մասնակցելու իրավունքի հետ: Այս իրավունքները պետության կառավարմանը
քաղաքացիների մասնակցությունն ապահովող ամենամասսայական սուբյեկտային
կազմն ունեն:

⁸¹ Հ. Մ. Խաչատրյան, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, ՀՀ ԳԱԱ «Գի-
տություն» հրատարակչություն:

Մեկնաբանվող հոդվածում ամրագրված է ՆՆ քաղաքացիների միայն ընտրելու իրավունքը /ակտիվ ընտրական իրավունքը/, որը սակայն գլխավոր նախապայմաններից մեկն է քաղաքացու պետական կառավարմանն ու փեդական ինքնակառավարմանը մասնակցելու, այդ թվում որպես թեկնածու առաջադրվելու իրավունքի ծագման համար:

Բրազիլացի պրոֆեսոր Ա. դե Մոռաեշն ընտրական իրավունքն անվանել է քաղաքական իրավունքների միջուկ⁸²: Իրավամբ, մեր օրերում ընտրական իրավունքը դարձել է քաղաքական իրավունքի այն առանցքը, որի շուրջ են պտտվում մյուս գրեթե բոլոր քաղաքական իրավունքները, և իրենով իմաստավորում է մյուս քաղաքական իրավունքների գոյությունը:

Ընտրելու իրավունքի էական բնութագրիչն անձի ազատությունն է առաջադրված մի քանի թեկնածուների /թեկնածուների ցուցակների/ միջից փախու այն թեկնածուի, թեկնածուների, թեկնածուների ցուցակի անունը, որին նա վստահում է ներկայացնելու իրեն համապատասխան հանրային իշխանական ներկայացուցչական մարմնում:

Պետության կառավարմանը մասնակցելու և, մասնավորապես, մեկնաբանվող հոդվածում ամրագրված ընտրելու իրավունքը վաղուց է դադարել միայն ներպետական օրենսդրության կարգավորման առարկա լինելուց:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի⁸³ 25-րդ հոդվածը սահմանում է պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը. «Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա.

ա/ մասնակցելու պետական գործերը վարելուն ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ/ քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում հանընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը.

գ/ իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության»:

ՆՆ Սահմանադրության մակարդակում ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը երաշխավորվում է բացառապես ՆՆ քաղաքացիների համար, այսինքն՝ միայն քաղաքացիների ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքն է հանդիսանում հիմնական, սահմանադրական:

Քաղաքացիությունն ինքնուրույն իրավական ինստիտուտ է, որը Նայաստանի Նանրապետությունում կարգավորվում է ՆՆ Սահմանադրությամբ և «ՆՆ քաղաքացիության մասին» ՆՆ օրենքով⁸⁴: Քաղաքացիության ինստիտուտը անձի իրավական կարգավիճակի կարևոր բաղադրիչներից է, այն արտահայտում է պետության և անձի փոխհարաբերության բնույթը, որի հիմքում ընկած է անձի կայուն կապը պետության հետ⁸⁵:

Մարդու իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը վկայում է, որ քաղաքացիությունն այն կարևոր նախապայմանն է, որը հանրային կառավարման ոլորտում անձին օժտում է լիարժեք իրավասույնեկությամբ:

⁸² Տե՛ս՝ Moraes A. de. Op citi. P. 214.

⁸³ Ընդունվել է 16.12.1996, ուժի մեջ է մտել 23.03. 76 ՀՀՊՏ 1997/29. 25.12.97:

⁸⁴ Ընդունվել է 06.11. 1995. ՀՀ ԱԺՏ 1995/8, ուժի մեջ է մտել 28.11.1995:

⁸⁵ Головостикова А. Н., Грудцина Л. Ю. Конституционное право. Учебник, М., 2006., с. 2009.

Քաղաքացիության առանձնահատկությունն այն է, որ Կոլյալ պետության քաղաքացին հանրային իրավունքի բնագավառում պետության հեղի իրավահարաբերություններում հանդես չի գալիս միայն որպես պետության ինքնիշխանության ազդեցության օբյեկտ, այլ դիտվում է նաև որպես պետության ինքնիշխանության մասնակից, որի համար օժտվում է անհրաժեշտ իրավունքներով: Քաղաքացիության արդյունքում անձը, մի կողմից, գտնվում է իր պետության իրավագործության ներքո եւ անվերապահորեն ենթարկվում նրա ինքնիշխանությանը, իսկ մյուս կողմից՝ պետությունը ճանաչում է ապահովում է անձի բոլոր իրավունքները, այդ թվում՝ ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքը:

«Նայաստրանի Նանրապետության քաղաքացիության մասին» ՆՄ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Նայաստրանի Նանրապետության քաղաքացի են սույն օրենքին համապատասխան Նայաստրանի Նանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք», իսկ 4-րդ հոդվածը որպես ՆՄ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր է սահմանել՝ հանրապետության քաղաքացու անձնագիրը, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ նաև ծննդյան վկայականը կամ Նայաստրանի Նանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը:

Օրենքը 9-րդ հոդվածում սահմանում է նաև ՆՄ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը:

Ի տարբերություն որոշ երկրների, որտեղ ոչ ծննդյան փաստով քաղաքացիություն ստացած քաղաքացիներին կամ ընտրելու իրավունք չեն տալիս, կամ տալիս են քաղաքացիություն ստանալուց տարիներ անց, ՆՄ-ում նման նախապայման գոյություն չունի: Անկախ այն հանգամանքից, թե անձն ինչ եղանակով է դարձել ՆՄ քաղաքացի, եթե վերջինս բավարարում է Սահմանադրությամբ սահմանված մյուս պահանջները, ապա ձեռք է բերում ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունք: Այս պնդումը բխում է «ՆՄ քաղաքացիության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթից, համաձայն որի՝ «Նայաստրանի Նանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Նայաստրանի Նանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից...»⁸⁶:

Ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքը քաղաքացու կողմից ձեռք է բերվում որոշակի տարիքի հասնելու եւ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումներ բացակայության պարագայում: Սահմանադրությամբ սահմանված 18 տարին ՆՄ օրենսդրությամբ սահմանված այն տարիքն է, երբ քաղաքացին ինքնուրույն է իրականացնում իր իրավունքների եւ պարտականությունների ողջ ծավալը:

ՆՄ օրենսդրության համաձայն անձի մտք քաղաքացիական գործունակություն ծագում է 18 տարին լրանալու պահից, սակայն ՆՄ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է անձի մտք քաղաքացիական լրիվ գործունակության ծագման այլ հիմքեր եւս, այն է՝ տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ:

Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (եմանսիպացիա) կատարվում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով: Քաղաքացիական լրիվ գործունակություն անձի մտք

⁸⁶ ՀՀ ԱԺՏ 1995/8, ուժի մեջ է մտել 28.11.1995:

կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև 16 տարեկան փոքրիկների դառնալը, ամուսնանալու պահից:

Վերը նշված հիմքերով քաղաքացու մոտ քաղաքացիական գործունակության ծագումն այս պարագայում հիմք չէ քաղաքացուն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք փոխարինելու համար:

Քաղաքացու մոտ այս իրավունքի առկայությունն առաջացնում է պետության պարտականությունը՝ ապահովելու վերջինիս իրականացումն ու պաշտպանությունը:

Ընտրական գործընթացում քաղաքացու դրությունը դրսևորվում է «ընտրողի իրավական կարգավիճակում»: Ընտրողի իրավական կարգավիճակի բովանդակությունը բխում է նրա իրավունքից՝ ընտրելու համապատասխան ընտրությունների ժամանակ և որոշվում է ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողություններ կատարելու իրավունքներով: Այդ իրավունքները կապված են՝ ա/ ընտրական հանձնաժողովների կազմման հետ, բ/ թեկնածուների առաջադրման հետ, գ/ նախընտրական հիմնադրամների հետ, դ/ նախընտրական քարոզչության հետ և այլն: Ընտրողի լիազորությունները կարող են ընդարձակվել կոնկրետ դեպքում վերջինիս կողմից ընտրական գործընթացում կոնկրետ գործառնություն կատարելիս՝ վստահված անձ, հանձնաժողովի անդամ, դիտորդ և այլն, որոնք սահմանված են ՏՏ ընտրական օրենսգրքով:

Մեկնաբանվող հոդվածում սահմանվում է նաև ՏՏ քաղաքացիների անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրած իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը:

Եթե ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքների բովանդակությունը հայրենական ու արտասահմանյան գրականության մեջ վերլուծված է, առկա են վերջինիս ժողովրդավարական լինելու չափորոշիչները, ապա այս իրավունքը լիարժեք վերլուծված չէ:

Անշուշտ, պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը չի սահմանափակվում միայն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքով, այս խմբի մեջ են մտնում հանրագրի իրավունքը, հանրային ծառայության ընդունվելու իրավունքը և այլն (տես 27.1 և 30.2-րդ հոդվածների մեկնաբանությունները):

«ՏՏ սահմանադրական իրավունք» դասագրքում (դասագիրք բուհերի համար) պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը վերլուծելիս որպես այս խումբ իրավունքներ են նշվում. ա) ընտրելու և ընտրվելու իրավունքը, բ) պետական ծառայության հավասար հնարավորության իրավունքը, գ) արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը, դ) պետիցիաների իրավունքը⁸⁷: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, որ վերը նշված իրավունքներն առանձին արդեն իսկ սահմանված են ՏՏ Սահմանադրության մեջ, և սահմանադիրը սահմանելով՝ «ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով **պետական** կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը», բնավ էլ նկատի չի ունեցել վերը նշված իրավունքները, ինչպես նաև նկատի չի ունեցել հանրաքվեին մասնակցելու իրավունքը որպես պետության կառավարման անմիջականորեն մասնակցելու իրավունք: «**Ինչպես նաև**» եզրույթի օգտագործումը նշանակում է մինչ այդ սահմանվածից զատ, ինքնուրույն: «Իրավական

⁸⁷ Տես Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /դասագիրք բուհերի համար/, ԵՊՀ հրատարակչություն, «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երևան, 2008թ., էջեր 265-272:

ակտերի մասին» ՎՍ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 10-րդ պարբերության համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «**ինչպես նաև**» բառերով բաժանված պայմաններով, ապա «**ինչպես նաև**» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ⁸⁸:

Բացի դրանից, Սահմանադրությամբ սահմանված պետության կառավարմանը մասնակցելու հնարավորություն տրվող նշված իրավունքներից շարերն անձն իրականացնում է անձամբ, այլ ոչ թե իր ընտրած ներկայացուցիչների միջոցով, երկրորդ՝ դրանց մի մասը պարկանում է նաև ոչ քաղաքացիներին եւս, եւ երրորդ՝ անիմաստ է Սահմանադրության մի հոդվածում սահմանել մի իրավունք, որն այլ հոդվածներում արդեն իսկ սահմանված է:

Այս իրավունքի ծավալի բովանդակության շուրջ անհամաձայնություններ կան նաև ռուսական իրավաբանական գրականությունում: Որոշ հեղինակներ պնդում են, որ պետության գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը կարող է դրսևտրվել այլ իրավունքների միջոցով, որ այս իրավունքն ինքնին կոնկրետ բովանդակություն չունի, իսկ ոմանք այս իրավունքը դիտարկում են որպես ինքնուրույն իրավունք⁸⁹:

Մեկնաբանվող դրույթի փառացի մեկնաբանության պարագայում պետք է ասել, որ գոյություն ունեն պետության կառավարման անմիջականորեն եւ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իրավունքներ եւ, բացի դրանից, ՎՍ քաղաքացիները պետք է ունենան այլ իրավունքներ եւս: Վակված ենք այն փեսակերին, որ ինքնին ապրիորի պետության կառավարմանը մասնակցելու իրավունք գոյություն չունի: Այն սկզբունք է, որը բխում է ժողովրդի ինքնիշխանության եւ իշխանությունը ժողովրդին պարկանելու սահմանադրական սկզբունքներից: Որպեսզի այս սկզբունքն իրականացվի՝ այն պետք է կոնկրետացվի սուբյեկտիվ իրավունքներում, իսկ վերոշարադրյալից բխում է, որ դրանք այլ, սահմանադրորեն չսահմանված սուբյեկտիվ իրավունքներ են (թեպետ այդ դեպքում առկախ է մնում այն հարցը, թե օրենսդրությամբ սահմանված եւ մեկնաբանվող հոդվածից բխող իրավունքները որքանով են հիմնական, սահմանադրական իրավունք):

ՎՍ ընթացիկ օրենսդրության վերլուծությունը ցույց է փալիս, որ կամքի ազատ արփահայրությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով **պետական** կառավարմանը եւ փեղական ինքնակառավարմանը մասնակցելու որոշ եղանակներ ընթացիկ օրենսդրության մեջ սահմանված են:

«Իրավական ակտերի մասին» ՎՍ օրենքի 27-րդ հոդվածը, որը սահմանում է իրավական ակտերի մշակման հետ կապված հարաբերությունները, 5-րդ մասով իրավունք է վերապահում իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրենց նախաձեռնությամբ մշակել եւ համապարասխան իրավաստեղծ մարմիններին ներկայացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր: Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց մշակված օրենքների ու Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի որոշումների նախագծերը, Նայաստանի Նանրապետության Սահմանադրության համաձայն, ներկայացվում են օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող անձանց կամ մարմիններին:

Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց նախաձեռնությամբ մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակողներն իրավունք ունեն մասնակցելու նախագծերի քննարկումներին:

⁸⁸ ՀՀՊՏ 2002/15 (190), 21.05.2002թ.:

⁸⁹ Տե՛ս օր. Коментарий к Конституции РФ. Под. ред. В. Д. Зорькина, Л. В. Лазарева, М., Издательство ЭКСМО, 2009. С. 300.

Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված իրավական ակտի նախագծի հեղինակները կարող են մասնակցել համապատասխան նախագծերի քննարկմանը Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով:

«ՆՆ Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 28, 32, 58, 110-րդ հոդվածներում սահմանվում է քաղաքացիների Ազգային ժողովի, նրա մարմինների, նրա կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության և անգամ ելույթ ունենալու, մրբերի փոխանակմանը մասնակցելու իրավունք:

2. Թեպետ Սահմանադրությունն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը երաշխավորում է բացառապես ՆՆ քաղաքացիների համար, այնուամենայնիվ, ընտրելու իրավունքի զարգացման ժամանակակից միտումներին համահունչ մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում սահմանադրական հիմք է նախատեսվում Նայաստանի Նանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքն օրենքով սահմանելու համար: Նման մոտեցումը բխում է այն սկզբունքային մոտեցումից, որ համայնքը բնակչության հանրություն է, իսկ տեղական ինքնակառավարումը՝ բնակչության իրավունք:

Մեկնաբանվող դրույթը ՆՆ-ում սահմանադրական ամրագրում է ստացել 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, սակայն ոչ քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք են ստացել դեռևս 1999 թվականին, և այս առումով այս նորմը մեծ բովանդակային ծանրաբեռնվածություն չունի հետևյալ մեկնաբանության պատճառով:

ՆՆ Սահմանադրության 42-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ»: Այս հոդվածից բխում է, որ Սահմանադրությամբ երաշխավորվում և պաշտպանվում են որոշակի խումբ իրավունքներ և ազատություններ, իսկ օրենսդիրն ազատ է օրենքով ընդարձակելու վերջիններս: Մեկնաբանվող հոդվածի մասը բովանդակային առումով ներառված է Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասում:

ՆՆ-ում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ՆՆ քաղաքացի չհանդիսացող անձանց իրավունքը սահմանվել է ՆՆ սահմանադրական դափարանի՝ Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ ՆՆ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի և 122-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 1999 թվականի մարտի 3-ին ընդունված՝ «Փախստականների մասին» ՆՆ օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ընդունած որոշումից հետո⁹⁰:

Այս որոշմամբ ՆՆ սահմանադրական դափարանն արձանագրեց, միջազգային պրակտիկան վկայում է, որ ոչ քաղաքացիների ընտրական իրավունքի հարցում կա այն միտումը, որ տեղական ինքնակառավարման մակարդակում նման իրավունք վերա-

⁹⁰ Տե՛ս ՍԳՈ-179 որոշում, ընդունվել է 16.10.1999թ., ՀՀՊՏ 1999/26 (92), 19.10.1999, ՀՀՍԳՏ 1999/4:

պահվում է զգալի թվով երկրներում: Բնորոշն այն է, որ տեղական ինքնակառավարման ոլորտում ընտրական իրավունքը կապվում է բնակության ցենզի հետ:

Նման մոտեցումն իր արտացոլումն է գտել թե՛ Եվրամիության մասին 1992թ. փետրվարին ստորագրված եւ 1995թ. հունվարից ուժի մեջ մտած համաձայնագրում եւ թե՛ Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին եվրոպական կոնվենցիայում (05.02.1992 թ.): Վերջինիս հոդված 6-ի 1-ին կետով սահմանված է տեղական մարմիններում օտարերկրացիների ակտիվ եւ պասիվ ընտրական իրավունքը՝ պայմանով, որ նրանք ունենան փվյալ երկրում 5 տարվա բնակություն, ինչպես նաեւ ստանձնեն իրավաբանական այն պարտավորությունները, որոնք ունեն քաղաքացիները:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում՝ այս եւ տեղական ինքնակառավարմանը վերաբերող այլ նախաձեռնությունները նպատակ ունեն քայլ առ քայլ օտարերկրյա ռեզիդենտներին, հնարավորության սահմաններում, լիարժեք մասնակից դարձնել տեղական կյանքին եւ տեղերում որոշման կայացման գործընթացին: Այդ նպատակն իրականացնելու միջոցներից մեկն էլ հանդիսանում է տեղական ինքնակառավարման ընտրություններում բնակության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին ընտրելու եւ ընտրվելու իրավունք տրամադրելը:

Իրացնելով ՏՏ սահմանադրական դատարանի վերը նշված որոշման պահանջները՝ ՏՏ Ազգային ժողովը 2000 թվականի ապրիլի 5-ին ընդունեց «Ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՏՏ օրենքը⁹¹, որի համաձայն ընտրական օրենսգրքում կատարված լրացումներով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք վերապահվեց նաեւ Նայաստանի Նանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտրանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի: 2006 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «ՏՏ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքով⁹² ձեւակերպումները որոշակիորեն փոփոխվեցին եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք վերապահվեց ոչ թե՛ Նայաստանի Նանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտրանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի, այլ համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող եւ փաստացի բնակվող անձանց:

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը սահմանափակում է դատական կարգով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող քաղաքացիների ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքը: Վերջիններս այն հիմքերն են, որոնք գրկում են ՏՏ 18 տարին լրացած քաղաքացուն ընտրական իրավունակությունից:

ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետեւանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով **անգործունակ** ճանաչվել՝ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն⁹³:

⁹¹ ՀՀՊՏ 2000/8. (106), 27.04.2000թ.:

⁹² ՀՀՊՏ 2007/4. (518), 27.01.2007թ.:

⁹³ ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.1998թ.:

ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլուխը կանոնակարգում է քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերի վարույթը: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ սահմանափակումը չի վերաբերում սահմանափակ գործունակ ճանաչված անձանց: Նրանք մյուս քաղաքացիների հետ հավասար հիմունքներով օգտվում են ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքից:

Քաղաքացուն **անգործունակ** ճանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական հաստատության փնտրիչության դիմումի հիման վրա, որի մեջ պետք է շարադրվեն այն հանգամանքները, որոնք վկայում են քաղաքացու հոգեկան խանգարման մասին, և որոնց հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

Քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, նշանակում է դատաբժշկական փորձաքննություն:

Ինչպես արդեն նշեցինք, ընտրական իրավունքի այս սահմանափակումը ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով սահմանափակվել է քաղաքացու գործունակությունը, դատարանը վերացնում է նրա գործունակության սահմանափակումը: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված հոգաբարձությունը⁹⁴:

Նշենք, որ եթե անգամ քաղաքացին փառապան է որեւէ հոգեկան հիվանդությամբ, սակայն դատական կարգով անգործունակ չի ճանաչվել, սպա չի կարող զրկվել ընտրական իրավունքից:

ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ **դատավճիռը** դատական նիստում կայացված առաջին արյանի և վերաքննիչ դատարանի որոշումներն են ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պարիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով⁹⁵:

Մեկնաբանվող հոդվածի համաձայն սահմանափակվում է միայն այն անձանց ընտրելու իրավունքը, որոնք համապատասխան դատավճռով դատապարտվել են ազատազրկման և կրում են իրենց պարիժը: Ոչ ազատազրկման ձեռով քրեական պատասխանատվության ենթարկված կամ նման եղանակով պատասխանատվության ենթարկված, սակայն պարիժը չկրող անձինք մյուս քաղաքացիների հետ հավասար հիմունքներով ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

Պետք է նկատել, որ այս դեպքում քաղաքացիներին ընտրելու իրավունքից զրկելը ժամանակավոր բնույթ է կրում և վերականգնվում է ազատազրկման ժամկետը լրանալուց հետո կամ պարիժը ոչ ազատազրկման ձեռով փոխարինելու պահից:

Մեկնաբանվող հոդվածում սահմանված ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքի սահմանափակումները, բնականաբար, չեն տարածվում կալանքի տակ գտնվող անձանց վրա: Նման մոտեցումը բխում է ՆՃ Սահմանադրության 21-րդ հոդվածում անմեղության կանխավարկածն ամրագրող դրույթից:

Մեկնաբանվող հոդվածում ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքի նախատեսված սահմանափակումներից զատ, ՆՃ Սահմանադրությունը տալիս է այս

⁹⁴ ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.1998թ.:

⁹⁵ ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.1998թ.:

իրավունքի այլ սահմանափակումների հնարավորություն եւս: ՆՏ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պարփի եւ բարի համբավի պաշտպանության համար: Մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայաստանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Մեկնաբանվող հոդվածը, ինչպես տեսնում ենք, մտնում է սահմանափակման ենթակա հոդվածների մեջ:

Սակայն Սահմանադրության 43-րդ հոդվածում թվարկված շարք հիմքեր պարզապես կիրառելի չեն ընտրելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի սահմանափակման նկատմամբ: Օրինակ, ի՞նչ վնաս կարող է պարճառել քաղաքացու ընտրելու իրավունքը՝ հանցագործությունների կանխմանը, հանրության առողջությանն ու բարոյականությանը, այլոց սահմանադրական իրավունքներին եւ ազատություններին, պարփի եւ բարի համբավի պաշտպանությանը: Կամ ինչպիսի՞ բացասական հետեւանքների կարող է հանգեցնել քաղաքացու ընտրելու իրավունքը, ասենք, հասարակական կարգի պահպանման, հանրության առողջության ու բարքերի կամ այլոց պարփի եւ բարի համբավի առնչությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ 43-րդ հոդվածում ընդունված տեխնիկական, այն է՝ բոլոր սահմանափակման ենթակա հիմնական իրավունքների համար սահմանել միասնական սահմանափակման հիմքեր, ընդունված է որոշ երկրների սահմանադրություններում (Լեհաստան, ԱՊՏ երկրների մեծամասնություն եւ այլն), այնուամենայնիվ, ավելի ճիշդ կլիներ յուրաքանչյուր սահմանափակման ենթակա հիմնական իրավունքի համար սահմանել միայն այդ իրավունքին ներհատուկ սահմանափակման հիմքեր: Այսպես են վարվել, մասնավորապես, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Էստոնիայի եւ մի շարք այլ երկրների սահմանադիրները: Յուրաքանչյուր իրավունքի սահմանափակման հիմքի նախատեսումը նույն հոդվածում հնարավորություն կտար սահմանափակել օրենսդրի հայեցողությունը եւ հնարավոր կամայականությունները:

ՆՏ օրենսդրությունում այս հոդվածների համակարգային մեկնաբանությունից բխում է, որ ՆՏ օրենսդրությամբ չի կարող սահմանվել ընտրական իրավունքի որեւէ սահմանափակում, որի հիմքը չլինի վերլուծված հոդվածներում:

Մյուս կողմից, օրենսդրությամբ սահմանված մեխանիզմները պետք է պաշտպանեն այդ իրավունքը եւ ապահովեն վերջինիս իրականացումը որպես մարդու հիմնական իրավունք, որը Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված է որպես բարձրագույն արժեք:

ՆՏ ընտրական օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ մեկնաբանվող հոդվածով նախատեսված սահմանափակումներից զարգոյություն ունեն նաեւ այլ սահմանափակումներ: Բնականաբար այդ սահմանափակումների համար հիմքերը պետք է սահմանված լինեին Սահմանադրության 43-րդ հոդվածում:

ՆՏ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ զինժառայության մեջ գրկվող կամ վարժական հավաքներ անցնող զինժառայողներ համարվող քաղա-

քացիները չեն կարող մասնակցել փեղական ինքնակառավարման մարմինների եւ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին⁹⁶:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ զինվորական ծառայությունը զինված ուժերում եւ այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է:

Զինծառայող են համարվում զինված ուժերում եւ այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմատուսումնական հաստատությունների կուրսանքները⁹⁷:

Այլ զորքերի ծառայողներ են համարվում ոստիկանության եւ սահմանապահ զորքերի ծառայողները:

«Զինապարտության մասին» ՏՏ օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է պահեստազորի շարքային կազմի վարժական հավաքներ անցնելու կարգը, իսկ 29-րդ հոդվածը՝ պահեստազորի սպայական եւ ենթասպայական կազմերի վարժական հավաքներ անցնելու կարգը⁹⁸:

Այս հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ ժամանակի պայմանական հատվածում այս խմբում ընդգրկված քաղաքացիների թիվը բավականին մեծ է:

Սահմանադրության 43-րդ հոդվածից բխում է, որ այդ սահմանափակումները թույլատրելի են բացառապես խիստ սահմանափակ դեպքերում: 43-րդ հոդվածում սահմանված հիմքերից այս պարագայում օրենսդիրը կարող էր նկատի ունենալ պետական անվտանգությունը, սակայն եթե օրենսդիրը նկատի է ունեցել, որ ժամանակի կոնկրետ հատվածում զինծառայողները պետք է բացակայեն իրենց փեղակայման վայրից, ինչը կարող է վրանգել երկրի պաշտպանունակությունը, ապա հարկ է նկատել, որ այդ զինծառայողները մասնակցում են համամասնական ընտրակարգով ընտրություններին, եւ հաշվի առնելով, որ բացառությամբ մեծամասնական ընտրակարգով նոր եւ լրացուցիչ ընտրությունների, Ազգային ժողովի համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով ընտրություններն անց են կացվում միաժամանակ, ապա զինվորական ծառայության կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողից մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու համար կպահանջվի ոչ ավելի, քան մի քանի րոպե, ինչը չի կարող որակվել, դիտարկվել որպես պետական անվտանգությանը սպառնացող երեւույթ: Իրավական ոլորտից դուրս երեւակայությամբ միայն կարելի է պատկերացնել, թե ինչպես այս խումբ անձանց իրավունքների սահմանափակումը կարող է ուղղված լինել հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանությանը:

Մեր կարծիքով, նման սահմանափակումները չեն բխում ՏՏ Սահմանադրությունից:

⁹⁶ ՀՀՊՏ 1999/2 (68), 18.02.1999թ.:

⁹⁷ ՀՀՊՏ 2002/26 (201), 19.07.2002թ.:

⁹⁸ ՀՀՊՏ 1998/26 (59), 16.10.1999թ.:

ՏՈՂՎԱԾ 30.1

1. Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիներից ծնված երեխան Նայասարանի Նանրապեղծության քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Նայասարանի Նանրապեղծության քաղաքացի է, ունի Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիության իրավունք: Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարման կարգը սահմանվում է օրենքով:

2. Ոչ ոք չի կարող զրկվել Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

3. Նայասարանի Նանրապեղծության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պեղծությանը, բացառությամբ Նայասարանի Նանրապեղծության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

4. Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով:

1. Մահմանադրության 30.1-րդ հոդվածը հիմնականում համահունչ է Քաղաքացիության մասին 1997թ. դեկտեմբերի 6-ի եվրոպական կոնվենցիայի դրույթներին: Տիշյալ կոնվենցիայի դրույթներն էապես փարբերվում են քաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ նախկինում ձեւավորված մոտեցումներից: Մասնավորապես, հարկ է եղել հաշվի առնել այն իրողությունը, որ 20-րդ դարի վերջերին բազմաթիվ պեղծություններ վերանայել են իրենց դիրքորոշումը բազմաքաղաքացիության, քաղաքացիությունից զրկելու, քաղաքացիներին հանձնելու եւ որոշ այլ սկզբունքային հարցադրումների շուրջ, ինչն իր արտացոլումն է սրացել միջազգային իրավական փաստաթղթերում:

Այսպես, Եվրախորհրդի 1963թ. Բազմաքաղաքացիության դեպքերի կրճատման եւ բազմաքաղաքացիության դեպքում զինվորական պարտականությունների մասին դաշնագրում ամրագրված գաղափարը, ըստ որի՝ յուրաքանչյուր անձ պետք է ունենա մեկ երկրի քաղաքացիություն, իսկ միջազգային հանրությունն ու պեղծությունները պետք է իրենց ջանքերն ուղղեն երկքաղաքացիության ինստիտուտի վերացմանը, քանի որ դրա արդյունքում ծագում են բազմաթիվ կոլիզիոն իրավիճակներ, բնավ չի բխում մարդու իրավունքների պաշտպանության շահերից:

Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայում երկքաղաքացիությունն արդեն չի դիտվում որպես մերժելի պետաիրավական ինստիտուտ, պարզապես առաջադրվում են այնպիսի կանոնակարգումներ, որոնք հնարավորինս մեղմում են այդ ինստիտուտի հնարավոր բացասական ներազդեցությունը:

Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիներից ծնված երեխային անվերապահորեն Նայասարանի Նանրապեղծության քաղաքացի ճանաչելը բխում է «արյան իրավունքի» սկզբունքից: Նույն սկզբունքի ուժով երեխային Նայասարանի Նանրապեղծության քաղաքացիության իրավունք է վերապահվում, եթե նրա ծնողներից մեկը Նայասարանի Նանրապեղծության քաղաքացի է: «Արյան իրավունքի» սկզբունքի պայմաններում նշանակություն չի փրվում, թե որտեղ է ծնվել երեխան՝ Նայասարանի Նանրապեղծության փրածքում, թե՛ մեկ այլ պեղծության փրածքում:

Մինչդեռ «հողի իրավունքի» սկզբունքի դեպքում քաղաքացիություն է շնորհվում այն անձանց, ովքեր ծնվել են Կոլյալ պետության փարածքում՝ անկախ այն հանգամանքից, թե ովքեր են ծնողները: Այս սկզբունքը փարածում ունի հիմնականում Ամերիկյան մայրցամաքի երկրներում՝ ԱՄՆ, Արգենտինա, Բոլիվիա, Գվատեմալա, Մեքսիկա և այլն:

«Տողի իրավունքի» և «արյան իրավունքի» սկզբունքները համարվում են քաղաքացիության ձեռքբերման ընդհանուր սկզբունքներ, որոնցից բացի առանձին երկրներում կիրառվում են զանազան մասնավոր սկզբունքներ՝ պայմանավորված Կոլյալ պետության կառավարման ձևով, քաղաքական ու պետական ռեժիմներով և այլ հանգամանքներով:

Նամենապական վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիության ինստիտուտի և հարկապես քաղաքացիության ձեռքբերման առումով գործող Սահմանադրությունն էապես փարբերվում է Սահմանադրության նախկին խմբագրությունից: Այսպես, Սահմանադրության նախկին խմբագրությամբ այդ իրավունքն ամրագրված էր հետևյալ կերպ. «Նայասպանի Նանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է օրենքով: Ազգությամբ հայերը Նայասպանի Նանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով: Նայասպանի Նանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»:

Տվյալ դեպքում նորույթը ոչ միայն բազմաքաղաքացիության ինստիտուտն է, ինչը կիրառելի է համարվում Սահմանադրության նոր խմբագրությամբ, այլև սահմանվում են Նայասպանի Նանրապետության քաղաքացիության ձեռքբերման մի շարք պարզեցված հիմքեր:

Ըստ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը, ինչպես նաև երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով: «Նայասպանի Նանրապետության քաղաքացիության մասին» Նայասպանի Նանրապետության օրենքն ընդունվել է դեռևս 1995թ. նոյեմբերի 6-ին (այսուհետ՝ օրենք): Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված՝ այն էական փոփոխությունների է ենթարկվել 2007թ. փետրվարի 26-ին ընդունված օրենքով: Նշված օրենքով հաշվի է առնվել նաև Սահմանադրության 11.3-րդ հոդվածով նախատեսված այն դրույթը, որի համաձայն. «Ազգությամբ հայերը Նայասպանի Նանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»:

Նամադրելով Սահմանադրության 11.3 և 30.1-րդ հոդվածները, հարկ է նկատել, որ դրանցից առաջինը հիմնականում առնչվում է քաղաքացիության ինստիտուտին, իսկ երկրորդը՝ քաղաքացիության ձեռքբերման և դադարման, երկքաղաքացիների կարգավիճակի և օտարերկրյա պետությանը Նայասպանի Նանրապետության քաղաքացուն հանձնելուն վերաբերող դրույթների ամրագրմանը:

Օրենքի 9-րդ հոդվածն ամրագրում է քաղաքացիություն ձեռք բերելու հետևյալ հիմքերը՝ ա) քաղաքացիության ճանաչումը, բ) ծնունդը, գ) քաղաքացիություն ստանալը, դ) քաղաքացիությունը վերականգնելը, ե) քաղաքացիության խմբային ձեռքբերումը, զ) Նայասպանի Նանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերը, է) նշված օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Քաղաքացիության ճանաչում: Այս եղանակը, ըստ էության, ժամանակավոր բնույթ ունի և կոչված է լուծելու անցումային փուլին բնորոշ խնդիրներ: Մասնավորապես, նորանկախ պետությունները պետք է քաղաքացիության ձեռքբերման այնպիսի կարգ սահմանեն, որը հնարավորինս պարզեցնի և մարչելի դարձնի նախկին խորհրդային

քաղաքացիների կողմից փյույվ պետության քաղաքացիության ձեռքբերումը: Քաղաքացիության ճանաչման հիմքերը նախատեսված են օրենքի 10-րդ հոդվածով. «1) Նայասարանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՂՄՍՄ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ փարվա ընթացքում. 2) Նայասարանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ՂՄՍՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը դիմում են Նայասարանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար. 3) Նայասարանի Հանրապետությունից դուրս բնակվող ծագումով հայ նախկին ՂՄՍՄ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն»:

Քաղաքացիության ձեռքբերումը ծննդով: Նշված եղանակը որևէ կերպ չի առնչվում անձի կամահայրությանը եւ հանդիսանում է «արյան իրավունքի» եւ «հողի իրավունքի» սկզբունքների որոշակի համադրմամբ քաղաքացիության ձեռքբերման եղանակ: Մասնավորապես, «արյան իրավունքի» սկզբունքին համապատասխան, օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Նայասարանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Նայասարանի Հանրապետության քաղաքացիություն: Երեխան ձեռք է բերում Նայասարանի Հանրապետության քաղաքացիություն նաեւ այն դեպքում, երբ ծնվելու պահին ծնողներից մեկը Նայասարանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայր է կամ քաղաքացիություն չունեցող անձ է: Ծնողների՝ փարբեր երկրների քաղաքացիության պարկանելու դեպքում, եթե մեկը երեխայի ծնվելու պահին Նայասարանի Հանրապետության քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

«Հողի իրավունքը», որպես ծննդյան հիմքով քաղաքացիության ձեռքբերման սկզբունք, ամրագրված է օրենքի 12 եւ 20-րդ հոդվածներով: Այսպես, Նայասարանի Հանրապետությունում ծնված երեխան, որի ծնողները ապաքաղաքացիներ են, կամ Նայասարանի Հանրապետությունում գրնվող երեխան, որի ծնողներն անհայր են, համարվում է Նայասարանի Հանրապետության քաղաքացի:

Քաղաքացիություն սրանալու կարգը միասնական չէ, այն համեմատաբար մարչելի է, օրինակ, այն անձի համար, ով ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, կամ բացառիկ ծառայություններ է մարուցել Նայասարանի Հանրապետությանը եւ այլն: Իսկ ընդհանուր պահանջները հանգում են հետեւյալին՝ ա) օրենքով սահմանված կարգով վերջին երեք փարին պետք է մշտապես բնակված լինի Նայասարանի Հանրապետությունում, բ) կարողանա բացարթվել հայերենով եւ գ) ծանոթ է Նայասարանի Հանրապետության Սահմանադրությանը: Քաղաքացիություն սրանալու դիմումը մերժվում է, եթե փյույվ անձն իր գործունեությամբ վնասում է պետական եւ հասարակական անվրանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանը եւ բարբերին, այլոց իրավունքներին ու ազարություններին, պարվին եւ բարի համբավին:

Քաղաքացիության ձեռքբերման հաջորդ հիմքը քաղաքացիությունը վերականգնելն է: Այս հիմքով քաղաքացիություն կարող է ձեռք բերել Նայասարանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած այն անձը, ով իր գործունեությամբ չի վնասում պետական եւ հասարակական անվրանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը եւ բարբերին, այլոց իրավունքներին ու ազարություններին, պարվին եւ բարի համբավին, ինչպես նաեւ չի գրկվել Նայասարանի Հանրապետության քաղաքացիությունից:

Նայաստանի Նանրապետության քաղաքացիության ձեռքբերման *խմբային* կարգ է սահմանված օրենքի 15-րդ հոդվածով. «Նայաստանի Նանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումն իրականացվում է ներգաղթի և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ Նայաստանի Նանրապետության Նախագահի հրամանագրով»:

Օրենքը նախատեսում է քաղաքացիության ձեռքբերում նաև *միջազգային պայմանագրերով* նախատեսված հիմքերով: Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում քաղաքացիության ձեռքբերման՝ օրենքով նախատեսված կանոնները չեն գործում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված միջազգային պայմանագրերը պարունակում են հղումներ ներպետական օրենսդրությանը:

Օրենքը նախատեսում է նաև քաղաքացիության ձեռքբերման մի շարք այլ հիմքեր: Օրինակ, 16-րդ հոդվածի համաձայն Նայաստանի Նանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Նայաստանի Նանրապետության քաղաքացիություն և այլն:

Քաղաքացիության դադարեցմանն առնչվող հարաբերությունների կարգավորմանն են նվիրված օրենքի 23-25-րդ հոդվածները: Մասնավորապես, քաղաքացիությունը դադարեցվում է՝ ա) Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում, բ) Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունից զրկվելու դեպքում, գ) Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով և դ) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Նայաստանի Նանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված այլ հիմքերին, ապա այդպիսիք են, օրինակ, Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև տասնչորս տարեկան երեխայի՝ Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը կորցնելը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն (17-րդ հոդված) և այլն:

2. Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից զրկելու որեւէ հիմք Սահմանադրությամբ նախատեսված չէ: Մակայն օրենքը նախատեսում է քաղաքացիությունից զրկելու մի շարք հիմքեր՝ ա) Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերվել օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան և, մշտապես բնակվելով արտասահմանում, յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել, բ) Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերվել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա և գ) Նայաստանի Նանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերվել այլ պետության քաղաքացիություն (25-րդ հոդված):

Տվյալ դեպքում օրենքով սահմանափակումներ ամրագրելը բխում է Սահմանադրության 43-րդ հոդվածի դրույթներից: Նկատի ունենանք, որ Սահմանադրության 30.1-րդ հոդվածը դասվում է այն հոդվածների շարքին, որոնցով նախատեսված իրավունքները բացարձակ չեն և կարող են սահմանափակվել՝ 43-րդ հոդվածով սահմանված հիմքերով:

Քաղաքացիությունից զրկելու հիմքեր ամրագրված են նաև Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի 7 եւ 8-րդ հոդվածներով: Այսպես, ըստ այդ միջազգային փաստաթղթի 7-րդ հոդվածի՝ ազգային օրենսդրությամբ կարող են ամրագրվել քաղաքացիությունից զրկելու հետևյալ դեպքերը՝ ա) կամավոր այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը, բ) Կոնվենցիայի այլ անդամ պետության քաղաքացիություն ձեռք բերելը խաբեության, կեղծ փաստաթղթերի միջոցով, գ) օտարերկրյա պետության զինված ուժերում կամավոր ծառայությունը, դ) Կոնվենցիայի անդամ պետությունների կենսական շահերին էական վնաս պատճառելը, ե) պետության հետ իրական կապի փտական բացակայությունը, զ) երեխայի քաղաքացիության ձեռքբերման պայմանները ժամանակին չկատարելը եւ է) օտարերկրյա պետության քաղաքացիություն ունեցող երեխայի որդեգրումը:

3. Նայաստանի Նանրապետության քաղաքացուն օտարերկրյա պետությանը հանձնելու միակ իրավական հիմքը միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերն են: Քաղաքացուն հանձնելու ինստիտուտը թելադրված է միջազգային իրավական համագործակցության անհրաժեշտությամբ: Այն, որ քաղաքացուն հանձնելը կարող է իրականացվել բացառապես միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, վկայում է այն մասին, որ Սահմանադրությամբ քաղաքացուն հանձնելը համարվում է բացառիկ ինստիտուտ:

Նանձնման հարաբերությունների կարգավորման համար կարևոր աղբյուր է հանդիսանում 1957թ. դեկտեմբերի 13-ի Նանձնման մասին եվրոպական կոնվենցիան, որը Նայաստանի Նանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 25-ին:

Նշված կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ հանձնման համար կարող են հիմք հանդիսանալ միայն այն հանցագործությունները, որոնք հայցող կամ հայցվող կողմերի օրենքներով պատժվում են ազատազրկմամբ կամ կալանքով՝ նվազագույնը 1 փարի ժամկետով: Ընդ որում, նշանակվող պատիժը պետք է լինի 4 ամսից ոչ պակաս: Եթե հանձնման վերաբերյալ հարցումը ներառում է մի քանի առանձին հանցագործություններ, որոնցից յուրաքանչյուրը հայցվող ու հայցող կողմերի օրենքներով պատժվի է ազատազրկմամբ կամ կալանքով, բայց որոնցից մի քանիսը չեն համապատասխանում պատժի ժամկետի վերաբերյալ պայմանին, հայցվող կողմն իրավունք կունենա հանձնումն իրականացնել կատարված վերջին հանցագործության համար: Այս դրույթները կարող են կոնվենցիայի մասնակից պետության կողմից ընդունվել որոշ վերապահումներով:

Կոնվենցիայում անդրադարձ կա նաև հանձնումը բացառող հիմքերին: Մասնավորապես, 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Նանձնումը չի իրականացվում, եթե հանցագործությունը, որի համար այն հայցվում է, հայցվող կողմը ճանաչում է որպես քաղաքական հանցագործություն կամ քաղաքական հանցագործության հետ կապ ունեցող»: Նույն հոդվածի 2-րդ կետը բացառում է քաղաքացուն հանձնելը նաև այն դեպքում, երբ հայցվող կողմն ունի բավարար հիմքեր՝ համարելու, որ սովորական քրեական հանցագործության համար հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացված է անձի ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական կարծիքի հետապնդման եւ պատժման նպատակով, կամ՝ որ այդ անձի դիրքին կարող է վնաս հասցվել այդ հանգամանքներից որևէ մեկի հիմքով:

Ի դեպ, վերոհիշյալ կոնվենցիան վերաբերում է անձի հանձնմանը, ինչի առնչությամբ նշված միջազգային իրավական փաստաթղթի 6-րդ հոդվածի համաձայն՝

պայմանավորվող կողմն իրավունք ունի մերժելու իր քաղաքացիների հանձնումը: Ընդ որում, պայմանավորվող կողմը կարող է ստորագրման կամ վավերագրերը կամ միացման փաստաթղթերն ի պահ պալու ժամանակ արված հայտարարության միջոցով սահմանել «քաղաքացիներ» եզրույթի հասկացությունը՝ կոնվենցիայի պահանջներին համապատասխան:

Հանձնումը կարող է մերժվել, եթե Կոնվենցիայի անկարծառի արդեն իսկ հարուցվել է քրեական հետապնդում այն հանցագործության փաստի առթիվ, որը հիմք է հանդիսացել քաղաքացուն պահանջելու համար (կոնվենցիայի 8-րդ հոդված):

Կոնվենցիայով հանձնումը մերժելու հիմք է հանդիսանում նաև Կոնվենցիայի քրեական հետապնդման վաղեմության ժամկետի կամ պարօժանման կետի լրանալը (10-րդ հոդված):

Հանձնումը մերժելու հաջորդ հիմքը նախատեսված է կոնվենցիայի 11-րդ հոդվածով, ըստ որի. «Եթե հանձնման ենթակա հանցագործության համար հայցող կողմի օրենքով նախատեսվում է մահապատիժ, եւ եթե այդ հանցագործության համար հայցվող կողմի օրենքով մահապատիժ նախատեսված չէ կամ չի իրականացվում, ապա հանձնման վերաբերյալ հայցը կարող է մերժվել, մինչև հայցող կողմը չտա այնպիսի երաշխիքներ, որոնք հայցվող կողմը կհամարի բավարար, որ մահապատիժ չի կիրառվի»:

Այսպիսով, կոնվենցիան նախատեսում է հանձնելու ինչպես պարտադիր, այնպես էլ ֆակուլտատիվ պայմաններ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների վերլուծությունը եւս ցույց է տալիս, որ միայն վերը նշված չափանիշների հաշվառմամբ է եզրակացություն փրվում հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրերի առնչությամբ: Այդպիսին է, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2006թ. հոկտեմբերի 3-ի «2006 թվականի հուլիսի 5-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջև հանձնման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՄԴ-Ո-656 որոշումը: Հիշյալ որոշմամբ առանձնացվել է վերլուծվել են համաձայնագրի հարկապես այն դրույթները, որոնք վերաբերում են հանձնման հարցումը մերժելու դեպքերին եւ կողմերի ստանձնած պարտավորություններին:

4. Ըստ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով: Այս դրույթից բխում է, որ առանձին դեպքերում երկքաղաքացիների իրավական վիճակը ամբողջովին չի կարող համընկնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների կարգավիճակին, որոնք միաժամանակ չունեն այլ պետության քաղաքացիություն:

Սահմանադրության հիշյալ դրույթի առնչությամբ օրենքը լրացվեց նոր՝ 13.1-րդ հոդվածով, որով սահմանվեց «երկքաղաքացի» հասկացությունը եւ ամրագրվեցին երկքաղաքացիների կարգավիճակի վերաբերյալ մի շարք ելակետային դրույթներ:

Նշված օրենսդրական նորամուծությամբ ամրագրվեցին հետևյալ դրույթները՝ ա) երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն, բ) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (պետությունների) քաղաքացիություն, գ) Հայաստանի Հանրապետության

երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է *միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի*: Ընդ որում, այդ նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ սրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա, դ) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները եւ կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պարասխանաբարությունը, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի, ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ սրանալու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին. չհայտնելն առաջացնում է օրենքով նախատեսված պարասխանաբարություն:

Անդրադառնալով վերը նշված դրույթների համակողմանի պարզաբանմանը:

Նախ, հարկ է նկատել, որ վերը նշված օրենսդրական ակտով «երկքաղաքացի» հասկացության բնորոշումը համընդհանուր է: Այս դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քաղաքացիության ձեռքբերման եղանակը երկքաղաքացիության բնորոշման համար իրավական նշանակություն չունի: Օրինակ, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի պահանջների խախտմամբ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն, ապա, քանի դեռ սահմանված կարգով չի դադարեցվել վերջինիս քաղաքացիությունը որևէ պետությունում, նա համարվում է երկքաղաքացի:

Կոնկրետ՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (պետությունների) քաղաքացիություն: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված կարգավիճակից օգտվում են ոչ թե երկքաղաքացիները՝ ընդհանրապես, այլ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացիները:

Ինչպես արդեն վերը նշվեց, օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է *միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի*: Ընդ որում, այդ նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ սրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները եւ կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար սահմանված բոլոր պարտականությունները եւ պարասխանաբարությունը: Միաժամանակ, օրենսդրությամբ ամրագրված են որոշ վերապահումներ՝ մասնավորապես բացառություններ կարող են սահմանվել օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդպիսի բացառություններ սահմանված են հիմնականում որոշ պարասխանաբար պաշտոններ զբաղեցնելու առնչությամբ, հատկապես, երբ դրանց գործունեությունն առնչվում է ազգային անվտանգությանը: Այսպես, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում անձը ենթակա է ծառայությունից արձակման:

Նույնպիսի դրույթ է բովանդակում նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Տվյալ դեպքում փարբերությունը միայն այն է, որ այդ սահմանափակումը բացառապես վերաբերում է ոստիկանության բարձրագույն խմբի ծառայողներին:

Որոշ սահմանափակումներ են նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով: Այսպես, նշված օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում»: Նույն սահմանափակումը վերաբերում է նաև Ազգային ժողովի պարզամակրության թեկնածուներին. «Ազգային ժողովի պարզամակրության թեկնածու չեն կարող առաջադրվել և պարզամակրության թեկնածու չեն կարող գրանցվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն» (օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մաս):

Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ սրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացին պարտավոր է մեկամսյա ժամկետում այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմին: Նախ, նկատենք, որ լիազորված մարմինն հայտնելը պայմանավորված է հենց վերը նշված սահմանափակումներով. այդ պետությունն անհրաժեշտ է, որպեսզի լուծվի երկքաղաքացիություն ունեցող անձի պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հարցը: Միաժամանակ, դա կարևոր է այդ պաշտոններում նրանց նշանակումը բացառելու նկատմամբ:

Ինչ վերաբերում է այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու մասին հայտնելու կարգին, ապա այն հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1110-Ն որոշմամբ:

Վերը նշված պահանջը խախտելու համար սահմանված է պարասխանաբարություն: Այսպես, քրեական օրենսգրքի 314.1-րդ հոդվածի համաձայն. «Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ սրանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին չհայտնելը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացու կողմից, որը հավակնում է այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև այն պաշտոնադար անձի կողմից, որը, օրենքի համաձայն, չէր կարող լինել նաև այլ պետության քաղաքացի՝ պարժվում է ազատագրվմամբ՝ երեքից հինգ փարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ փարի ժամկետով կամ առանց դրա»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նայաստանի Հանրապետության օրենսգրքի 195.2-րդ հոդվածի համաձայն. «Նայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում Նայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին չհայտնելը պարժվում է քրուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

Մի շարք օտարերկրյա քաղաքացիներ, որոնք ցանկանում են ձեռք բերել Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն, իրենց երկրների քաղաքացիության օրենսդրության համաձայն կարող են կորցնել այդ երկրի քաղաքացիությունը (օրինակ՝ Վրաստան, Իրան, Լատվիա և այլն): Ուստի նման անձինք պետք է իրավասու մարմինների կողմից իրազեկված լինեն իրենց երկրների քաղաքացիության օրենսդրությանը՝ իրենց իրավունքների պաշտպանության և հեղափոխում որևէ խոչընդոտների այդ երկրներում չհանդիպելու նկատառումով: Կամ հաճախ Նայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներ Նայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու դիմումներ են ներկայացնում այն երկրների քաղաքացիությունն ստանալու նպատակով, որոնք իրենց օրենսդրությամբ չեն արգելում երկքաղաքացիության ինստիտուտը և այլ պետության քաղաքացիությունից դուրս գալու նման պայման օրենսդրորեն չեն նախատեսում (օրինակ՝ Ֆինլանդիա և այլն): Կարծում ենք այս դեպքում ես նման անձինք պետք է իրազեկ լինեն նաև այն պետության քաղաքացիության օրենսդրությանը, որի քաղաքացիությունն ստանալու համար դիմում են ներկայացրել այդ պետության իրավասու մարմիններին:

Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ պետք է ներկայացնի լիազոր մարմին: Դիմումը բավարարվելու դեպքում, Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Նայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալիս անձը երդում է տալիս, որի տեքստը և կարգը նախատեսված են նշված օրենքի 13-րդ հոդվածով:

Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Նայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանված են Նայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշմամբ:

Քաղաքացիության հարցերի քննարկումը հիմնականում իրականացվում է Նայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովում, որի նախագահը, ի պաշտոնե, Նայաստանի Հանրապետության արդարադատության նախարարն է: Նշված հանձնաժողովի կանոնադրությունը հաստատվում է Նայաստանի Հանրապետության Նախագահը:

«Նայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Նայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «Հանրապետության Նախագահն իր հրամանագրով լուծում է Նայաստանի Հանրապետության քաղաքացիություն *ստանալու*, Նայաստանի Հանրապետության քաղաքացիությունը *վերականգնելու*,

Նայաստանի Նանրապետության քաղաքացիության *խմբային ձեռքբերման*, Նայաստանի Նանրապետության քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը»:

Վերը նշված դրույթներից անմիջականորեն բխում է, որ քաղաքացիության ձեռքբերման եղանակներից Նայաստանի Նանրապետության Նախագահի հրամանագիր չի պահանջվում քաղաքացիության ճանաչման, ծննդի հիմքով քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում:

Ինչ վերաբերում է միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերին, ապա այն որոշվում է յուրաքանչյուր պայմանագրով սահմանված կարգով: Տվյալ դեպքում քաղաքացիություն շնորհելու իրավասություն ունեցող անձը կսահմանվի համապատասխան միջազգային պայմանագրով:

ՆՈՂՎԱԾ 30.2

1. Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք:

2. Նանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի իր երկրում առանց որեւէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, **հավասարության ընդհանուր պայմաններով** իրավունք և հնարավորություն ունի մրցելու պետական ծառայության, որը միաժամանակ նշանակում է իր ընդունակություններին և մասնագիտական պարտավորությանը համապատասխան, առանց որեւէ խտրականության պետական ցանկացած պաշտոն զբաղեցնելու՝ քաղաքացու իրավունքը: Պետական ծառայության ընդունելիս չի թույլատրվում տվյալ պաշտոնին հավակնող քաղաքացու նկատմամբ կիրառել ուղղակի կամ անուղղակի որեւէ խտրականություն՝ կախված ռասայից, ազգությունից, լեզվից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից, բնակության վայրից, կրոնից, համոզմունքներից, հասարակական կամ այլ միավորմանը նրա մասնակցությունից և հավասարապես այլ հանգամանքներից: Միաժամանակ, պետական ծառայության ընդունվելու համար օբյեկտիվորեն նախատեսված են որոշ սահմանափակումներ (տարիքային, մասնագիտական, փորձառության և այլն), որոնք բխում են գործունեության այդ տեսակի առանձնահատկությունից և այն իրականացնող քաղաքացիների իրավական առանձնահատուկ կարգավիճակից: Ահա այսպիսի ընդհանուր հիմունքների հիման վրա են կանոնակարգվում ոչ միայն պետական, այլև հանրային ծառայության ընդունվելու հետ կապված իրավահարաբերությունները նաև Նայաստանի Նանրապետությունում:

Սահմանադրության 30.2-րդ հոդվածում ամրագրված հանրային ծառայության ընդունվելու իրավունքը քաղաքական իրավունքներից մեկն է: Հոդվածի մեկնաբանման համար կարելու է նշանակություն ունեն «հանրային ծառայություն» հասկացությունը և դրա տեսակները: Նանրային ծառայությունը Սահմանադրությամբ և օրենքներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն է: Դրա

տեսակներն են՝ պետական ծառայությունը, քաղաքացիական աշխատանքը, ծառայությունը տեղական ինքնակառավարման համակարգում:

1. Մեկնաբանվող հոդվածի առաջին մասը նախատեսում է քաղաքացու՝ հանրային ծառայության ընդունվելու իրավունքի իրացման երեք նախապայման. **ՏՏ քաղաքացիություն, ընդհանուր հիմունքներ եւ **դրանց՝ օրենքով կանոնակարգվածություն:**** Նանրային ծառայության ընդունվելու իրավունքը ՏՏ քաղաքացու սահմանադրական հիմնական իրավունքներից է, որի իրացումն իրավական, ժողովրդավարական պետության պայմաններում ոչ միայն աշխատանքի ազատ ընտրության, այլև ժողովրդաիշխանության իրացման դրսևտորում է: Այդ իրավունքը պաշտպանվում է Սահմանադրության ուժով, որի իրացման կարգն ու պայմաններն ըստ մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի սահմանվում են օրենքով:

Նանրային ծառայությունը **սոցիալ-իրավական ինստիտուտ է**, որն ուղղակիորեն կապված է Սահմանադրությանը եւ օրենքների համապատասխան պետության գործունեության ապահովման հետ: Այն նաեւ պետության (հանրային իշխանության մարմինների) եւ քաղաքացու միջև ծագող հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների (վարչակառավարչական գործընթացների) ամբողջություն է, որը միտված է օրենսդրությամբ նախանշված կարգով ու շրջանակներում պետության (հանրային իշխանության մարմինների) քաղաքականության իրականացմանը:

Նանրային ծառայությունը հասարակական կյանքի նաեւ **հոգեւոր-մշակութային բնագավառի ինստիտուտ է**, քանի որ արտացոլում է հասարակությունում առկա արժեքային համակարգն ու բարոյականության նորմերը (նաեւ՝ սահմանադրական մշակույթը): Միաժամանակ, հանրային ծառայողներն իրենք կոչված են առաջնորդվելով մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների ու ազատությունների՝ որպես սահմանադրորեն ամրագրված բարձրագույն արժեքների, համակողմանի պաշտպանության անհրաժեշտության բարձր գիտակցությամբ, ծառայելու հասարակության սոցիալական ծրագրերի իրագործման նպատակներին:

Վերջապես, հանրային ծառայությունը կարելի է որակել որպես **քաղաքական ինստիտուտ**, քանի որ անմիջականորեն կապված է քաղաքական այնպիսի երևույթի հետ, ինչպիսին պետությունն է, եւ ծառայում է վերջինիս: Պետական (նաեւ՝ քաղաքական) իշխանությունը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է պետաժողովրդական որոշակի համակարգի եւ վերջինիս կողմից՝ կազմակերպական, իրավական եւ գաղափարական միջոցների գործադրմամբ:

Անդրադառնալով **«հանրային ծառայություն» եզրույթի** մեկնաբանման խնդրին, պետք է նշել, որ արեւմտատիպական-իրավական (նաեւ՝ անգլո-սաքսոնական) ընդհանուր բնորոշմամբ այն համարժեք է **civil** («քաղաքացիական»), **public, publique, officiel** («հանրային», «հասարակական») եզրույթների բովանդակությանը եւ արտահայտում է պետության (ի դեմս վերջինիս մարմինների) գործունեության հանրային բնույթը եւ հարաբերակցությունը քաղաքացիական հասարակության ինստիտուտների (հաստատությունների) հետ: Նայաստանի Նանրապետության պարագայում, ելնելով նաեւ Սահմանադրության 2-րդ հոդվածի բովանդակությունից (տե՛ս նաեւ այդ հոդվածի մեկնաբանությունը), հանրային իշխանությունը ներառում է ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման (այսինքն՝ ոչ պետական) մարմինների ինստիտուցիոնալ (պետաիշխանական, հանրային-իշխանական) գործունեությունը, հետեւաբար՝ հանրային ծառայությունը, ինչպես սահմանված է «Քաղաքացիական ծառայության մասին»

ՆՇ օրենքի 1-ին հոդվածում, ընդգրկում է.

• **պեղական և րեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը,**
 • **պեղական ծառայությունը,**
 • **համայնքային ծառայությունը,**
 • պեղական և րեղական ինքնակառավարման մարմիններում **քաղաքացիական աշխատանքը:**

Պեղական ծառայությունը հանրային ծառայության հիմնական րեսակն է, որն իր հերթին լինում է քաղաքացիական ծառայություն, դատական ծառայություն, հատուկ ծառայություններ (զինված ուժեր, ոստիկանություն, մաքսային և այլն), դիվանագիտական ծառայություն և այլն:

Այսպիսով, ՆՇ հանրային ծառայությունը, որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, նկատելիորեն բազմաբովանդակ է և չի կարող նույնացվել «պեղական ծառայություն» գործառույթի ավանդական ընկալման հետ (այսինքն՝ որպես պեղական մարմինների գործառույթների իրականացմանն ուղղված գործունեություն): Այն առավել ընդգրկում է, իսկ պեղական ծառայությունը՝ հանրային ծառայության դրսևորում է: Թերես ընդգրկման ծավալների և դրսևորման ձևերի բազմազանության պայմաններում է, որ ՆՇ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածում նախատեսված են միայն հանրային ծառայության ընդունվելու հիմնական սկզբունքի էությունը և այդ ծառայության իրացման կարգի ու սկզբունքների՝ օրենքով կարգավորման վերաբերյալ նորմատիվ պայմանը:

2. Իրավական, ժողովրդավարական և սոցիալական պեղության զարգացման առաջնային նախադրյալներից մեկն աշխատունակ ու արդյունավետ գործող պեղական ապարարի (հանրային /պեղական/ ծառայողական համակարգի) ու դրա գործունեության համար անհրաժեշտ պայմանների սրեղծումն է, որը միաված է նաև պեղության ընդհանուր գործառույթների կատարման ապահովմանը: Այդպիսի ապարարի (համակարգի) գոյությունը կարող է երաշխավորվել, եթե սահմանադրաիրավական նորմերի հիման վրա օրենսդրոթեն ամրագրված են հանրային (պեղական) ծառայողական հարաբերությունների բովանդակությունը, կարգավորման սկզբունքները՝ ուղղված այնպիսի իրավական, կառուցակարգային և սոցիալական հիմքերի սրեղծմանն ու ամրապնդմանը, որպիսի պայմաններում հանրային-ծառայողական համակարգը լինի ամբողջական և հարաբերական անկախ, դրա կառուցվածքային րարրերի միջև ապահովվի ներդաշնակություն, ինչպես նաև հասարակական-քաղաքական ամեն րեսակի զարգացումների (ներագդեցությունների) նկատմամբ այն լինի դինամիկ կայուն և ունենա համակարգային պաշրպանվածություն: Ահա այս խնդիրների լուծմանն են կոչված Սահմանադրության մեկնաբանվող հոդվածը և հանրային ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրությունը:

Մինչև ՆՇ անկախացումը, նաև՝ դրանից հետո, հանրային (պեղական) ծառայությունը հատուկ կարգավորող օրենսդրություն չի եղել: «Պեղական ծառայություն» եզրույթի ներքո ընկալվել է մարդկանց աշխատանքային գործունեության առանձին րեսակ, ձև, որի առանձնահատկությունը ոչ թե անմիջականորեն նյութական արժեքների սրեղծումն է կամ արտադրարտեսական այս կամ այն ծառայության մատուցումը, այլ վարչական, սոցիալ-մշակութային և դատարարակչական բնույթի գործառույթների իրականացումը: Գործող իրավական համակարգում «հանրային ծառայություն» հասկացության իրավընկալման բացակայության պայմաններում պեղական ծառայության այդպիսի

ընդգրկում հասկացությունը, ըստ էության, ընկալվում էր պետական ցանկացած կազմակերպությունում աշխատանքը, այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք էին պետական մարմինները, հաստատությունները (դպրոցներ, հիվանդանոցներ, բուհեր, մշակութային հաստատություններ եւ այլն), պետական ձեռնարկությունները (ձեռնարկությունների ղեկավարներ, ինժեներապրեխնիկական անձնակազմ եւ այլն): Եւ այս կամ այն աշխատողին պետական ծառայողների շարքին դասելու գլխավոր պայմանը համարվում էր նրա՝ դրամական հարուցում (աշխատավարձ) սրանալու աղբյուրը: Պետական ծառայությունը՝ իր բոլոր դրսևորումներով, ֆինանսավորվում էր պետական բյուջեի միջոցների հաշվին:

Դրան զուգահեռ, պետական ծառայության այդպիսի լայն ընկալման հետ գոյություն ուներ դրա առավել նեղ հասկացությունը, որի համաձայն պետական ծառայություն էր համարվում ոչ թե պետական այս կամ այն կազմակերպությունում ամեն պետական գործառնությունների իրականացումը, այլ որոշակի, կազմակերպությունների ապարատում (աշխատակազմում) աշխատանքը: Այսպիսով, պետական ծառայություն իրենից ներկայացնում էր նաեւ պետական կազմակերպությունների վարչակառավարչական անձնակազմի գործունեություն, այսինքն՝ գործադիր-կարգադրիչ բնույթի գործունեություն: Պետական ծառայությունը նեղ իմաստով նշանակում էր նաեւ պետական ծառայողների գործունեության ղեկավարում: Ընդ որում, եթե պետական ծառայողների գործունեությունը կարգավորվում էր վարչական իրավունքի նորմերով, ապա պետական այլ ծառայողներին՝ գլխավորապես աշխատանքային իրավանորմերով, այսինքն՝ ընդհանուր հիմունքներով: Այդպիսին էր ՏՏ-ում պետական ծառայողի կարգավիճակն ընդհուպ մինչև 1991 թվականը, երբ իրավական առանձին ակտերով փորձ արվեց կարգավորել ՏՏ պետական մարմիններում ծառայության հետ կապված հարաբերությունները, առաջին հերթին՝ «ՏՏ նախագահի մասին» (1991թ. օգոստիսի 1-ի) եւ «ՏՏ Գերագույն խորհրդի մասին» (1991թ. նոյեմբերի 19-ի) ՏՏ օրենքներով, որոնցով կարգավորվում էին նաեւ ՏՏ պետական բարձրագույն պաշտոնատար անձանց (ՏՏ նախագահ, ՏՏ փոխնախագահ, ՏՏ Գերագույն խորհրդի նախագահ, վերջինիս փոխակալներ, պարզամավորներ, կառավարության անդամներ, ՏՏ գերագույն դատարանի անդամներ եւ այլն) պաշտոնում նշանակելու (ընտրելու) եւ պաշտոնից ազատելու հետ կապված հարաբերությունները: Դրան հետեւեց «Պաշտոնեական դիրքի չարաշահումների եւ կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին» ՏՏ նախագահի՝ 1992թ. սեպտեմբերի 1-ի հրամանագիրը, որը նպատակ ուներ, նախ, ամրապնդել պետական ապարատը, բարելավել կադրերի պատրաստման, ընտրության եւ փոխադրման աշխատանքը՝ նախապես ընտրելու եւ սահմանելու պետական ծառայողների որակավորման ստուգում: Արգելվեց պետական ծառայողներին զբաղվել ձեռնարկարարական գործունեությամբ, պաշտոնեական գործունեությամբ չպայմանավորված աշխատանքից սրանալ վարձատրություն կամ դրա հետ կապված ձեռք բերել իրավունքներ եւ արտոնություններ, համարելու պաշտոնն այլ գործունեության հետ եւ այլն: Միաժամանակ, հրամանագրով ՏՏ կառավարությանը հանձնարարական փոխադրվեց նախապատրաստել ՏՏ-ում պետական ծառայության մասին օրենքի նախագիծ: Ու թեեւ նախանշված ժամկետում այդպիսի օրենք չընդունվեց, այնուամենայնիվ, ՏՏ կառավարության մի շարք որոշումներով սահմանվեցին պետական ծառայողի գույքային դրության վերաբերյալ հայտարարագրի եւ դրա վերահսկման կարգը (1992թ. դեկտեմբերի 29-ի թիվ 640 որոշում), ՏՏ պետական ծառայողների՝ ըստ գործադիր իշխանության առանձին մարմինների, ցանկերը (1993թ. հունվարի 27-ի թիվ 22 որոշում), ՏՏ պետական ծառայողների որակավորման ստուգման կարգը (1993թ. ապրիլի 17-ի թիվ

165 որոշում) և այլն:

ՆՆ-ում պետաժառանգողական հարաբերություններն առավել հանգամանալի կարգավորման ենթարկվեցին ՆՆ Սահմանադրության ընդունումից հետո, նախ՝ ՆՆ Ազգային ժողովի կողմից 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Քաղաքացիական ժառանգության մասին» և այնուհետ՝ պետական ժառանգության առանձին օրենսդրության և համայնքային ժառանգության մասին ընդունված օրենքներով: «Պետական ժառանգություն» ինստիտուտը զարգացվեց, ընդգրկվելով հանրային ժառանգության բնագավառը սրանալով սահմանադրաիրավական ամրագրում:

Հանրային ժառանգության ինստիտուտը բնորոշող հիմնական հասկացությունների իրավական բնութագիրը, ելնելով Սահմանադրության մեկնաբանող հոդվածի նորմափիլ պահանջների բովանդակությունից, փրված է «Քաղաքացիական ժառանգության մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածում, համաձայն որի.

1. «**Հանրային ժառանգությունը** պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և փեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ժառանգությունը և համայնքային ժառանգությունը, ինչպես նաև պետական և փեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

2. Պետական և փեղական ինքնակառավարման մարմինները **քաղաքականությունն** իրականացնում են քաղաքական, հայեցողական ու քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց վերապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ և դրանց կատարման համակարգմամբ:

3. «**Պետական ժառանգությունը** մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Պետական ժառանգությունն ընդգրկում է **քաղաքացիական ժառանգությունը, դատական ժառանգությունը, հարուկ ժառանգությունները**՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ժառանգության հանրապետական գործադիր մարմիններում, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև **դիվանագիտական** և օրենքներով նախատեսված **այլ ժառանգությունները**:

4. « **Համայնքային ժառանգությունը** մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով փեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

5. «**Քաղաքացիական աշխատանքը** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ պետական և փեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

Այսպիսով, հանրային ժառանգության և վերջինիս բովանդակությունը կազմող փարբերի՝ օրենսդրական վերոհիշյալ սահմանումներից հետևում է, որ այն պետության առջև դրված խնդիրների լուծմանն ու նպատակների իրագործմանը կղջված գործունեություն է, որն իրականացվում է ինչպես մասնագիտական, այնպես էլ քաղաքական հիմունքներով: Սակայն հասարակական-պետական առավել ընդարձակ բնագավառ է ընդգրկում հարկապես պետական ժառանգությունը: Գործունեության այդ փեսակը միա-

ժամանակ կոնկրետացված է բացառապես **պեղական մարմիններում**, որպես այդպիսին չի համարվում այլ կազմակերպություններում աշխատանքը՝ նույնիսկ այն դեպքերում, երբ այն կապված է կառավարչական կամ կազմակերպական այլ գործառնությունների հետ, պեղական-ժառայողական գործունեությունն իրականացվում է «Քաղաքացիական ժառայության մասին», ինչպես նաև պեղական ժառայության այլ տեսակների մասին ՏՏ գործող օրենքներով («Ոստիկանությունում ժառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ժառայության մասին», «Դիվանագիտական ժառայության մասին», «Դատական ժառայության մասին», «Նարկային ժառայության մասին», «Քաղաքացիական հատուկ ժառայության մասին», «Նայաստանի փրկարար ժառայության մասին» եւ այլն) սահմանված կարգով ու շրջանակներում: «Պեղական ժառայության պաշտոն», «պաշտոնների ցանկ» եւ «պաշտոնի անձնագիր» հասկացությունները նույնպես մարմնանշում են պեղական ժառայության առանձնահատուկ բնույթը:

Պեղական ժառայող է համարվում այն անձը, ով զբաղեցնում է «պեղական պաշտոն»՝ տվյալ պեղական մարմնում սահմանված «պաշտոնների ցանկին» համապատասխան եւ կախված չէ քաղաքական ուժերի հարաբերակցության որեւէ փոփոխությունից: Միաժամանակ, պեղական այս կամ այն մարմնում սահմանված ոչ բոլոր պաշտոններն են համարվում պեղական, այլ, ինչպես հետեւում է վերոհիշյալ օրենքներից պեղական ժառայության այս կամ այն տեսակի պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնը, որն զբաղեցնող ժառայողի՝ օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքները եւ պարտականությունները, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար ժառայողի գիտելիքների ու աշխատանքային ունակությունների նկարագրիչը եւ ժառայության դասային համապատասխան աստիճանը սահմանված են պեղական ժառայության տվյալ պաշտոնի անձնագրում:

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը՝ պետք է նշել, որ պեղական ժառայությունը լինելով մասնագիտական գործունեություն, որն ուղղված է օրենսդրությամբ պեղական մարմիններին վերապահված խնդիրների եւ գործառնությունների իրականացմանը, առանձնահատուկ է իր **կայունությամբ**: Այն առանձնահատուկ պատասխանատու գործունեություն է, որը ֆինանսավորվում է պեղական բյուջեի միջոցների հաշվին, չնայած վերջինս պեղական ժառայության բացառիկ առանձնահատկությունը չէ:

ՏՏ-ում հանրային-ժառայողական հարաբերությունները կարգավորվում են շուրջ երկու փասնյակ օրենքներով: Պեղական ժառայության բնագավառը կարգավորվում է նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերով, ՏՏ քաղաքացիական ժառայության խորհրդի որոշումներով եւ գերատեսչական բազմաթիվ այլ ակտերով:

Միաժամանակ պետք է նշել, որ հանրային ժառայության որոշ այնպիսի պաշտոններ զբաղեցնելը (ընտրության կամ նշանակման սկզբունքով), որպիսիք նախատեսված են ՏՏ Սահմանադրությամբ, ինքնաբերաբար չի ենթադրում պեղական ժառայություն: Այդպիսիք են, մասնավորապես, «Քաղաքացիական ժառայության մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածում թվարկված, այսպես կոչված, **քաղաքական պաշտոնները** (ՏՏ Նախագահի, ՏՏ Ազգային ժողովի պարզամավորների, ՏՏ վարչապետի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների եւ համայնքների ղեկավարների պաշտոնները), որպիսիք զբաղեցնող պաշտոնատար անձինք ՏՏ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում **ընդունում են քաղաքական որոշումներ** եւ համակարգում դրանց կատարումը, ինչպես նաև **փոփոխվում են** քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ պեղական ժառայության

համակարգից դուրս են դիտարկված նաև հանրային ծառայության, այսպես կոչված, **հայեցողական պաշտոնները**, որպիսիք համարվում են ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակովի այն պաշտոնները, որոնք զբաղեցնող պաշտոնատար անձինք ՏՏ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում **ընդունում են որոշումներ** (ոչ քաղաքական բնույթի) և համակարգում դրանց կատարումը, ինչպես նաև **կարող են փոփոխվել** քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում (ՏՏ Նախագահի, ՏՏ Ազգային ժողովի աշխատակազմերի ղեկավարներ, նրանց տեղակալներ, ՏՏ կառավարության աշխատակազմի ղեկավար, ՏՏ Նախագահի, ՏՏ վարչապետի վերահսկողական ծառայությունների ղեկավարներ, ՏՏ նախարարություններին, կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարներ և նրանց տեղակալներ, ՏՏ նախարարների տեղակալներ և այլն):

Որպես պետական ծառայողներ չեն ճանաչվում նաև **տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք** (վարձու աշխատողներ), որոնք, չնայած կարող են պետական մարմնում զբաղեցնել համապատասխան պաշտոն, սակայն կոչված են իրականացնելու քաղաքական, հայեցողական, ինչպես նաև պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում: Սակայն տեխնիկական սպասարկում իրականացնելը որպես **քաղաքացիական աշխատանք** («Քաղաքացիական ծառայության մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդված), ընդգրկված է հանրային ծառայության համակարգում և դիտարկված է որպես այդ ծառայության դրսևորման տեսակ, ընդ որում աշխատանքային հարաբերություններն այդ բնագավառում կարգավորվում են ՏՏ աշխատանքային օրենսդրությամբ:

Նանրային ծառայության ինքնուրույն տեսակ է **համայնքային ծառայությունը**, որը, ըստ «Համայնքային ծառայության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունված ՏՏ օրենքի 3-րդ հոդվածի ձեւակերպման **քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ** մասնագիտական գործունեություն է և կատարվում է համայնքների ղեկավարների աշխատակազմերում:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի նորմատիվ պահանջին համապատասխան հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով: Տվյալ դեպքում «ծառայության սկզբունքներ», «կազմակերպման կարգ» եզրույթների ներքո համապատասխանաբար պետք է հասկանալ.

- այն հիմնական բնորոշիչները, առանձնահատկությունները (օրինաչափությունները), որին համապատասխան իրականացվում է հանրային ծառայությունը,
- կարգը (ընթացակարգը, ծառայության ընդունվելը և ազատվելը, հսկողության (վերահսկողության) և պատասխանատվության միջոցները), ծառայության իրականացման ձևերը, միջոցները (մեթոդները), ժամկետները, գործունեության շրջանակները (իրականացվող լիազորությունների բովանդակությունը, ծավալը) և այլն, որոնց համապատասխան կազմակերպվում է հանրային ծառայությունը:

Նանրային ծառայության բնագավառը կարգավորող օրենքների նորմերի համալիր վերլուծությունը հանգեցնում է այն հետետությանը, որ սոցիալ-իրավական գործունեության այդ տեսակը կազմակերպվում է հետետյալ հիմնական սկզբունքներով.

ա) **ՏՏ Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը**, որը ենթադրում է հանրային ծառայությունը կարգավորող ամեն տեսակ գերատեսչական կամ ենթաօրենսդրական այլ ակտերի, պաշտոնեական իրահանգների դրույթների, ինչպես նաև ծա-

ռայոդական գործունեության անվերապահ համապարասխանություն այդ սկզբունքներին,

բ) **Ծառայության կայունությունը** (պեղական եւ համայնքային ծառայությունների բնագավառում), որը դրսևտրվում է քաղաքական ուժերի հարաբերակցության ամեն փեսակ փոփոխության նկարմամբ (օր., ընտրությունների, հանրաքվեների, հրաժարականների արդյունքում) հանրային-ծառայոդական հարաբերությունների երաշխավորված անկախությամբ եւ ծառայոդների անփոփոխելիությամբ,

գ) ծառայոդներին (պեղական եւ համայնքային) ներկայացվոդ **հիմնական պահանջների միասնականությունը եւ օրենքի առջև նրանց իրավահավասարությունը**, որն իր արտացոլումն է գրել պեղական եւ համայնքային ծառայությունները կարգավորոդ օրենքներում համապարասխան պաշտոններ ստանձնելու, ծառայություն կրելու եւ այն դադարեցնելու, իրավական, սոցիալական միասնական երաշխիքներ, ինչպես նաեւ ծառայության նկարմամբ հսկողության (վերահսկողության) եւ պաշտոնատար անձանց պարասխանավոդության միասնական միջոցներ նախարեսելու միջոցով,

դ) գործունեության **հրապարակայնությունը**, որը դրսևտրվում է հանրային ծառայոդների, ինչպես նաեւ հասարակության համար հանրային ծառայության մասին իրավական ակտերի, հանրային իշխանության մարմինների ընթացիկ գործունեության, ընդունած որոշումների հասանելիության (իրազեկվածության), այդ մարմինների կոդմից հասարակական կարծիքը մշտապես հաշվի առնելու գործընթացներում,

ե) պեղական եւ համայնքային ծառայոդների **քաղաքական գսավածությունը**, համաձայն որի՝ պեղական եւ համայնքային իշխանության մարմիններում արգելված է կուսակցությունների գործունեությունը, եւ այդ մարմինների պաշտոնատար անձինք իրենց գործառոյթների իրականացման (լիազորությունների, իրավունքների ու պարտականությունների կատարման) հարցում իրավունք չունեն առաջնորդվելու կուսակցական որոշումներով, որն իր հերթին ենթադրում է պեղական եւ համայնքային ծառայոդների քաղաքա- կանապես անկողմնակալ (անաչառ), Սահմանադրոյթանը եւ օրենսդրոյթանը համապարասխանոդ գործունեություն,

զ) իրենց մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին համապարասխան **քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մարտեչիությունը**, համաձայն որի՝ պեղական եւ համայնքային ծառայության պաշտոն կարոդ են զբաղեցնել այն քաղաքացիները, որոնք ունեն րվյալ պաշտոնի անձնագրով նախարեսված մասնագիտական համապարասխան գիտելիքներ (մասնագիտություն, մասնագիտական պարրաստրվածություն), ինչպես նաեւ աշխատանքային որոշակի ունակություններ (ֆիզիկական, մտավոր, ինչպես նաեւ փորձառոյթուն եւ այլն): Այդ պահանջները, բացառոյթամբ րարիքային, առոդջական եւ նման այլ սահմանափակումների, անխրարական են եւ առանձնահատուկ՝ հանրային ծառայության յուրաքանչյուր րեսակի դեպքում,

է) ծառայոդների **արհեստավարժությունը, իրավական ու սոցիալական պաշտպանվածությունը, պարասխանավոդությունը**, որպիսիք ենթադրում են պաշտոնեական պարտականությունների կատարման խնդրում մասնագիտական պահանջվոդ մակարդակ եւ պարրաստրվածություն, ծառայության ոդջ ընթացքում մասնագիտական գիտելիքների եւ հմտությունների մշտական կատարելագործում: Բացի դրանից, հանրային ծառայության պաշտոնատար անձանց համար օրենքով նախարեսված են իրավական եւ սոցիալական մի շարք երաշխիքներ՝ ապահովելու համար նրանց անբասիր գործունեությունն ամեն րեսակ անօրինական միջամտությունից, ազդեցությունից,

երաշխավորելով նաև կապարված աշխարանքի դիմաց համապարասխան վարձաբրություն (փոխհատուցում), հանգստի կազմակերպում, բժշկական և այլ սպասարկում, ինչպես նաև արտոնություններ պայմանավորված կապարվող աշխարանքի առանձնահատկությամբ (պարասխանարվությամբ, աշխարաժամանակի տեղոյությամբ և նորմավորմամբ, արտաժամյա ծառայությամբ, ֆիզիկական և մտավոր ծանրաբեռնվածությամբ և այլն): Նանրային ծառայությունը կարգավորող օրենքներով պաշտոնարար անձանց նկարմամբ նախարեսված է կարգապահական պարասխանարվության միջոցների կիրառում՝ ծառայողական պարականությունները չկարարելու, ոչ պարշած կարարելու դեպքերում: Իսկ զանցանքի կամ հանցագործության հատկանիշների առկայության դեպքերում հանրային ծառայողները ենթակա են վարչական կամ քրեական պարասխանարվության,

ը) գործունեության **վերահսկելիությունը, հաշվետու լինելը**, որպիսիք պայմանավորված են, նախ, պետական ծառայության համակարգի առկայությամբ, առանց որի ժամանակակից պետությունում անհնարին է ապահովել միասնական քաղաքականություն և հասարակության առջև դրված որեէ խնդրի արդյունավետ լուծում: Այդ համակարգը կառուցված է «նողահայաց» և «հորիզոնական» (իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման) սկզբունքներով, պետաիշխանական միեևնույն համակարգի շրջանակներում (օր., գործադիր իշխանություն) Սահմանադրությանը և օրենքներին համապարասխան՝ ենթադրելով ստորադաս մարմնի կողմից վերադաս մարմնի որոշումների պարարդի կարարում և վերջինիս առջև՝ հաշվետվություն: Այդ սկզբունքով են կառուցված նաև ծառայողական հարաբերությունները պետական և համայնքային ծառայության ցանկացած մարմնում այն նորմարիվ և գերարեսչական սկտերի պահանջներին համապարասխան, որոնցով նախարեսված են այդ հարաբերությունների կարգավորման կարգն ու սկզբունքները, պաշտոնետական իրավունքների ու պարակաևությունների շրջանակը և այլն:

Նանրային (պետական) ծառայության այս կամ այն բնագավառը կարգավորող օրենքներում կապված տվյալ բնագավառի առանձնահատկությունների հետ, կարող են նախարեսվել այլ սկզբունքներ: Այսպես, օրինակ, «Նայաստանի փրկարար ծառայության մասին» 2005թ. հուլիսի 8-ին ընդունված օրենքի 6-րդ հոդվածում սահմանված են այդ ծառայության իրականացման այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ գործունեությունն արդարացված ռիսկի շրջանակներում, արակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կազմակերպումը կենտրոնացված կառավարման սկզբունքով և այլն, կամ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003թ. ապրիլի 11-ին ընդունված օրենքի 1-ին հոդվածում սահմանված՝ «օրենսդրությամբ չարգելված բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության» սկզբունքը և այլն:

Այսպիսով, հանրային ծառայության կազմակերպման՝ օրենքով սահմանված վերոհիշյալ սկզբունքները, պետական և համայնքային իշխանության մարմինների գործառույթների երաշխավորված իրագործումն ապահովելուն զուգահեռ, նպարակատողված են, առաջին հերթին՝ ծառայելու հասարակության և պետության առջև դրված հիմնախնդիրների անկողմնակալ (քաղաքական չեզոքությամբ) լուծմանը, միաժամանակ, այդ մարմինների գործունեության կանխարեսելիության պայմաններում ապահովելով քաղաքացիների անմիջական (գործուն) մասնակցությունը պետության կառավարման գործընթացներին՝ այնպիսի հիմնական սկզբունքներով, որպիսիք ամրագրված են ՏՏ սահմանադրական կարգի հիմունքներում և մեկնաբանվող 30.2-րդ հոդվածում:

Անդրադառնալով հանրային ծառայության կազմակերպման կարգին՝ պետք է նշել, որ ծառայության առանձին տեսակների մասին օրենքներում մանրամասնված են հանրային ծառայության այս կամ այն պաշտոն զբաղեցնելու իրավունքի իրացման կոնկրետ պայմանները՝ ելնելով տվյալ բնագավառի առանձնահատկություններից, ինչպես նաև ծառայություն կրելու կարգն ու պայմանները, պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Որպես կանոն, քաղաքացին հանրային ծառայության պաշտոն **կարող է զբաղեցնել**, եթե.

- չափահաս է (18 տարեկան) կամ առնվազն ունի տվյալ ծառայության համար սահմանված (պետական եւ համայնքային ծառայության դեպքերում) նվազագույն տարիք եւ չի լրացել սահմանված առավելագույն տարիքը (շուրջ 55-65 տարեկան, իսկ որոշ դեպքերում՝ 70 տարեկան),

- իր մասնագիտական գիտելիքներով եւ աշխատանքային ունակություններով համապատասխանում է տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին (պետական կամ համայնքային ծառայության դեպքում), քաղաքական կամ հայեցողական գնահատման չափանիշներին (քաղաքական եւ հայեցողական պաշտոնների դեպքում),

- տիրապետում է հայերենին կամ նաեւ՝ օտար լեզուների,

- սահմանված կարգով հաղթահարել է տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի պայմանները (պետական եւ համայնքային ծառայության դեպքերում) կամ համապատասխանում է արտամրցութային կարգի պայմաններին եւ այլն:

Հանրային (պետական կամ համայնքային) ծառայության պաշտոն քաղաքացին, որպես կանոն, **չի կարող զբաղեցնել**, եթե.

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

- դատական կարգով զրկվել է պետական, համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու (որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու) իրավունքից,

- Համաձայն ՀՀ կառավարության հաստատված ցանկի՝ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության համապատասխան պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը,

- դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

- խուսափել է ժամկետային զինվորական ծառայությունից եւ այլն:

Վերոթվարկյալներից բացի, հանրային ծառայության առանձին տեսակների վերաբերյալ օրենքներով նախատեսված են այս կամ այն պաշտոնն զբաղեցնելու լրացուցիչ այլ նախապայմաններ: Բոլոր դեպքերում, հանրային ծառայության ինստիտուտի սոցիալ-իրավական բովանդակությամբ, գործունեության այդ տեսակի առանձնահատկությամբ ու ծառայողների կողմից ստանձնվող գործառույթների պատասխանատվության բարձր աստիճանով են պայմանավորված քաղաքացիների նկատմամբ՝ այդ ծառայությանն ընդունվելու իրենց սահմանադրական իրավունքի իրացման օրենքով նախատեսված շրջանակները, որոնցով էլ, Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի բովանդակության տեսանկյունից, **ընդհանուր պայմաններ** են նախատեսվում ՀՀ քաղաքացիների համար:

Պետական եւ համայնքային ծառայության կազմակերպման գործող կարգի մեկ-

նաբանման խնդրում անհրաժեշտ է հասկանալ նաև ծառայողական հարաբերությունների կառուցման և կարգավորման այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են «պետական և համայնքային ծառայության պաշտոնը», «պետական և համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը», «ծառայության պաշտոնների անվանացանկը», «դասային սասփիճանը», «կոչումները, հարուկ կոչումները», որոնք կոչված են իրավաբանորեն սահմանելու (որոշելու) հանրային այս կամ այն ծառայողի տեղն ու դերը հանրային ծառայության համակարգում, նրա լիազորությունների բնույթն ու բովանդակությունը, պատասխանատվության սասփիճանը, աշխատանքային փորձը, ունեցած վաստակը և այլն: Նանրային ծառայողի անհատականացման այդպիսի չափանիշներն ունեն առանձնահատկություններ ինչպես պետական, այնպես էլ համայնքային ծառայության բնագավառներում և մանրամասնված են համապատասխան օրենքներում: Սակայն, ելնելով դրանց բովանդակային ընդհանրություններից՝ կարելի է սահմանել հետևյալ բնորոշումները.

ա) **պետական և համայնքային ծառայության պաշտոնի** ներքո ընդունված է հասկանալ ծառայողական այն տեղը, որով որոշվում է այն զբաղեցնող քաղաքացու իրավական կարգավիճակը, այսինքն՝ պաշտոնական պարտականությունների շրջանակը, նրա իրավունքները և իրավունքների ու պարտականությունների կատարման որակական այն պահանջները, որոնք առաջադրվում են տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար: Այդպիսով, տվյալ պաշտոնով պայմանավորված իրավական կարգավիճակի բովանդակությունը բխում է հանրային իշխանության այն մարմնի առջև դրված սահմանադրական և օրենսդրական խնդիրներից, որտեղ քաղաքացին զբաղեցնում է այն: Միաժամանակ, որպես ծառայության պաշտոն ընկալվում է հանրային ծառայության տվյալ տեսակի **պաշտոնների անվանացանկով** նախատեսված պաշտոնը: Այսպես, օրինակ, «Դիվանագիտական ծառայության մասին» ՏՏ օրենքի (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 24-ին) 17-րդ հոդվածով ոչ թե սահմանվում է դիվանագիտական ծառայության պաշտոնի հասկացությունը, այլ պարզապես թվարկվում են դրանք: Կամ՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՏՏ օրենքի (ընդունվել է 2003թ. ապրիլի 11-ին) 2-րդ հոդվածի իմաստից հետևում է, որ այդ ծառայության պաշտոն է համարվում նույն օրենքի 3-րդ հոդվածում թվարկված ցանկացած պաշտոն,

բ) խոսելով հանրային ծառայության պաշտոնի իրավական բովանդակության մասին, որպես վերջինիս հետ փոխկապակցված ինստիտուտ, անհրաժեշտ է բնութագրել նաև **հանրային ծառայության անձնագրի** հասկացությունը: Այն բնորոշվում է որպես տվյալ պաշտոնն զբաղեցնող ծառայողի համար օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքները և պարտականությունները նկարագրող ու տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար հանրային ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների փիրապետման տեսանկյունից ներկայացնող, ինչպես նաև **դասային համապատասխան սասփիճան** ունենալու պահանջները սահմանող օրենքով նախատեսված կարգով հաստատված **փաստաթուղթ**: Այսպես, օրինակ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՏՏ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների ընդհանուր նկարագրի հիման վրա, ծառայության պաշտոնների անձնագրերը ՏՏ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ հաստատում (փոփոխում) են՝ ՏՏ Նախագահի աշխատակազմում՝ ՏՏ Նախագահը, ՏՏ կառավարության աշխատակազմում՝ ՏՏ վարչապետը, ՏՏ հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմում՝ այդ մարմնի ղեկավարը, ՏՏ մարզպետարանի աշխատակազմում՝ մարզպետը, կամ «Դատական ծառայության մասին» ՏՏ

օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ այդ ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվում է ՏՏ դատարանների նախագահների խորհուրդը՝ ՏՏ դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ,

գ) հանրային ծառայողի **դասային աստիճանը** չնայած արտացոլված է ծառայության պաշտոնի անձնագրում, սակայն ունի ինքնուրույն եւ առանձնահատուկ նշանակություն: Նանրային ծառայության դասային աստիճանը բնորոշվում է որպես տվյալ ծառայողի մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշ: Այսպես, որքան բարձր է դասային աստիճանը, այնքան բարձր է այդ գիտելիքների եւ ունակությունների մակարդակը: Սակայն հանրային ծառայության ոչ բոլոր բնագավառներում է նախատեսված դասային աստիճանի ինստիտուտը (օր., զինված ուժերում, ոստիկանությունում), իսկ պետական ծառայության որոշ այլ տեսակներում դրան փոխարինում է **կոչումների** եւ **հատուկ կոչումների** ինստիտուտը: Եթե «Նայաստիճանի փրկարար ծառայության մասին» ՏՏ օրենքով ծառայողներին շնորհվում են կոչումներ (շարքայինից մինչեւ գեներալ-լեյտենանտ), ապա հարկային եւ մաքսային ծառայության բնագավառներում՝ հատուկ կոչումներ:

Նանրային ծառայության կազմակերպման առանձնահատուկ պայման է ծառայողների իրավական կարգավիճակի օրենքով ամբողջական հստակեցումը, որը Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից բխող նորմատիվ պահանջ է: Այդ կարգավիճակը, բացի վերոթվարկյալ ինստիտուտներից, նաեւ բովանդակում է հանրային ծառայության բնագավառը կարգավորող օրենքներով նախատեսված՝ **ծառայողների իրավունքները, պարտականությունները, ծառայություն կրելու սահմանափակումները, երաշխիքները, խրախուսման միջոցները, աշխատանքի վարձարության համակարգը, կենսաթոշակային ապահովումը եւ պարասխանադրությունը:**

Կարելի է նշել, որ հանրային ծառայողների իրավունքները (լիազորությունները) հասարակական կյանքում չեն կարող բնորոշվել որպես իրավական «արտոնություն»: Դրանք իրենցից **իրավական հնարավորությունների (միջոցների)** ամբողջություն են ներկայացնում, որպիսիք ՏՏ Սահմանադրությամբ եւ օրենսդրության ակտերով ստանդարտված են այդ ծառայողներին՝ հանրային իշխանության այս կամ այն մարմնի առջեւ Սահմանադրությամբ եւ օրենքով դրված խնդիրները լուծելու եւ նպատակներն իրագործելու համար: Այդպիսի կարգավիճակը յուրաքանչյուր դեպքում պետք է բխի ՏՏ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներից, համաձայն որի՝ «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» (այդ մասին փնհն նաեւ Սահմանադրության 5-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Նանրային-ծառայողական հարաբերությունները (ներառյալ քաղաքացիական աշխատանքը) կարգավորվում են նաեւ միջազգային իրավական ակտերով, մասնավորապես՝ «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» 1978թ. հունիսի 27-ին ընդունված) եւ «Աշխատանքի եւ զբաղվածության բնագավառում խորհրդարանային մասին» 1958թ. հունիսի 25-ին ընդունված Ժնևի կոնվենցիաներով, եւ այլ փաստաթղթերով:

Նանրային ծառայության՝ որպես պետականության ամրապնդման ու զարգացման առանձնահատուկ ինստիտուտի դերի եւ դրա կատարելագործման անհրաժեշտության խնդիրները կարելի էրվում են նաեւ եվրոպական իրավական պրակտիկայում: Մասնավոր-

րապես, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն իր՝ «Եվրոպայում հանրային ծառայողների կարգավիճակի վերաբերյալ» թիվ R(2000)6 հանձնարարականում ընդգծել է, որ հանրային իշխանության մարմիններն էական դեր են կատարում ժողովրդավարական հասարակությունում և պետք է ունենան համապատասխան անձնակազմ՝ իրենց առջև դրված խնդիրների իրականացման համար: Ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորումն ու ամրապնդումը պահանջում է այնպիսի հանրային վարչակազմ, որը համահունչ է իրավունքի գերակայությանը, չեզոք է, հավասարիմ ժողովրդավարական ինստիտուտներին և հարգալից այն ժողովրդի հանդեպ, որին ծառայում է: Նաշվի առնելով վերոգրյալը՝ Նախարարների կոմիտեն ընդգծել է, որ հանրային ծառայողները կազմում են հանրային վարչակազմի կարևոր փորձը և պետք է ունենան անհրաժեշտ որակավորում ու համապատասխան իրավական և նյութական պայմաններ՝ իրենց առջև դրված խնդիրները պարզաձև լուծելու համար:

Հանձնարարականում կարևորվում են նաև հանրային ծառայողների կարգավիճակի աստիճանում ներպետական օրենքով կամ կոլեկտիվ համաձայնագրերով, հանրային պաշտոնների հավասար հասանելիությունը՝ հանրային ծառայողների ընտրությունն արդար և բաց մրցույթի ու խտրականության բացառման հիման վրա, հանրային ծառայողների սոցիալական ապահովության երաշխավորումը և մի շարք այլ սկզբունքներ: Այդ հանձնարարականում ընդգծվում է նաև հանրային ծառայողների կողմից իրենց գործառնությունների իրականացումն իրավունքի գերակայության, ժողովրդավարական ինստիտուտներին հավասարմության, չեզոքության, անկողմնակալության, ներհամակարգային ենթակայության և հանրության հանդեպ հարգանքի ու հաշվետու լինելու սկզբունքների հիման վրա:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում (Demir and Baykara v. Turkey, Judgement of 12 November 2008, 106) կարևորել է հանրային ծառայողների՝ ապաքաղաքական (մասնագիտական) միություններին անդամակցելու իրավունքը՝ որպես երաշխիք այդ ծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորելու համար:

Անդրադառնալով հանրային ծառայության կազմակերպման եվրոպական փորձին՝ կարելի է այն փաստել որոշ երկրների օրինակով, որպեսզի այդ ինստիտուտը կայացած է: Այսպես, օրինակ, Ֆրանսիայի Հանրապետությունում հանրային ծառայության ինստիտուցիոնալ բովանդակությունն ամփոփված է գլխավորապես պետական ծառայության բնագավառում: Այդ երկրի օրենսդրության համաձայն պետական ծառայողի կարգավիճակ ունեն ինչպես քաղաքացիական, քաղաքացիական ինքնակառավարման, այնպես էլ զինվորական ծառայության բնագավառներում ընդգրկված քաղաքացիները, ծառայողները՝ պետական առողջապահական հիմնարկներում և ուսումնական հաստատություններում, դատավորները և այլն: Պետական ծառայողները Ֆրանսիայում փառանջարված են երկու ժապարհ խմբի.

- ծառայողներ, որոնք որպես վարձկաններ (աշխատանքային պայմանագրով ժամավճարի հիման վրա) աշխատում են պետական հաստատություններում,
- ծառայողներ, որոնք մշտական հիմունքներով ընդգրկված են պետական մարմինների հաստատություններում՝ դասային համապատասխան աստիճանների հիման վրա զբաղեցնելով որոշակի պաշտոններ:

Պետական ծառայության համակարգի ղեկավար մարմինը Ֆրանսիայում այդ երկրի ֆինանսների նախարարության բյուջեի վարչությունն է, որն իրականացնում է երկու կարևորագույն գործառնություն՝ հաստատության կազմում և աշխատանքի

վարձավարություն:

Ֆրանսիայում գործում է պեղական ծառայողների թեկնածուների ընտրության բարդ համակարգ: Ծառայության անցնելիս գործում են փարիքային, քաղաքացիության եւ մասնագիտական սահմանափակումներ: Որոշ ծառայություններում սահմանափակված է կանանց աշխատանքը, որոնց տեսակարար կշիռը պեղական ծառայության հատկապես ղեկավար պաշտոններում ցածր է:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հանրային ծառայողը բնորոշվում է որպես պեղության հանձնարարությամբ գործունեություն իրականացնող անձ, այդ թվում՝ փնտրեսական եւ գիտափոխնիկական բնույթի: Պեղական ծառայողներն իրենց իրավական կարգավիճակով փարբերվում են վարձու աշխատողներից եւ կարող են արձակվել պաշտոնից միայն օրենքով նախատեսված հիմքերով:

ԳԴՀ-ում պեղական ծառայությունը կազմակերպված է ասփիճանակարգման սկզբունքով՝ ուղղակի ենթակայական հարաբերությունների հիման վրա: Պեղական ծառայության ինստիտուտի իրավական կարգավորման հիմքը Գերմանիայի Սահմանադրության 33-րդ հոդվածն է:

Իտալիայի Սահմանադրությամբ (51,97 եւ 98-րդ հոդվածներ) ամրագրված է երկու սեռերի քաղաքացիների՝ պեղական ծառայության անցնելու, ինչպես նաեւ՝ ընտրովի պաշտոններ զբաղեցնելու հավասար իրավունքը: Նախատեսված է ազգությամբ իտալացի, սակայն այդ պեղության քաղաքացի չհանդիսացող անձանց պեղական ծառայության անցնելու իրավունքը, մրցութային կարգով պեղական ծառայության ընդունվելը: Արգելված է դատական, դիվանագիտական համակարգերում, ոստիկանությունում, զինված ուժերում ծառայությունը քաղաքական գործունեության հետ համատեղելը:

ՀՈԴՎԱԾ 31

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փորապեղելու, օգտագործելու, փնտրիներելու եւ կրակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պեղության իրավունքներն ու օրինական շահերը:

2. Ոչ որի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Սեփականության օտարումը հասարակության եւ պեղության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

4. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանելով, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փորապեղելու, օգտագործելու, փնտրիներելու եւ կրակելու իր սեփականությունը, ամրագրում է

սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող այն իրավագործությունների ամբողջությունը, որոնք օրենքով պարկանում են սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտի իրավունքի կրողի, և ուրվագծում է սեփականության իրավունքի իրականացման սահմանները:

Սահմանադրության փրամաբանությունը շարունակում է ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը՝ սահմանելով, որ սեփականատերն իրավունք ունի իրեն պարկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կարարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, փրապերման և փնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ փնօրինել այլ եղանակով:

Սեփականատիրոջ իրավագործությունների մարնանշված եռամիասնականությունն ունի գիտագործնական կարեւոր նշանակություն⁹⁹: Այն ապահովում է իրի նկատմամբ սեփականատիրոջ լիակարար գերիշխանությունը, նրա և սեփականության ազատությունը¹⁰⁰:

Տրապերումը գույքի գրնվելն է սեփականատիրոջ փնօրեսությունում, նրա փաստացի փնօրեսական իշխանության ներքո: Տրապերման իրավագործությունը գույքն իր փնօրեսական իշխանության ներքո, սեփական փնօրեսությունում պահելու՝ օրենքի վրա հիմնված հնարավորությունն է¹⁰¹:

Որպես կանոն, գույքի փրապերող է հանդիսանում նրա սեփականատերը: Բայց գույքը փրապերել կարող է նաեւ ոչ սեփականատերը՝ ինչպես սեփականատիրոջ կամքով, այնպես էլ հակառակ նրա կամքի՝ օրենքի կամ վարչական ակտի հիման վրա:

Սեփականատիրոջ կողմից իրականացվող փրապերումը կոչվում է սկզբնական: Իսկ երբ փրապերումն իրականացնում է ոչ սեփականատերը, այն կոչվում է աձանցական (աձանցյալ) փրապերում, որովհետեւ այն իրականացվում է ոչ թե ինքնուրույն, այլ սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի կամ վարչական ակտի հիման վրա:

Սեփականատիրոջ փրապերումը համարվում է փրողոսային փրապերում, որովհետեւ այն իրականացվում է օրենքի հիման վրա, օրինական է: Բացի սեփականատիրոջից, փրողոսային փրապերում կարող են իրականացնել նաեւ ոչ սեփականատերերը: Այդպիսի դեպքերում ոչ սեփականատիրոջ փրապերման հիմքում պերք է ընկած լինի օրենքը, վարչական ակտը կամ պայմանագիրը: Օրինակ, եթե գրնված իրը հանձնվել է ոստիկանությանը կամ փրողական ինքնակառավարման մարմնին, ապա այդ մարմնները հանդես են գալիս որպես փրապերողներ, բայց սեփականատեր չեն: Միաժամանակ, նրանց փրապերումը փրողոսային է, որովհետեւ նախարեսված է օրենքով:

Տրապերումը լինում է օրինական և ապօրինի: Օրինական է համարվում այն փրապերումը, որը հիմնված է որեւէ իրավական հիմքի՝ օրենքի, վարչական ակտի կամ պայմանագրի, այսինքն՝ փրապերման իրավական փրողոսի վրա:

Ապօրինի փրապերումն իր հիմքում դրանք ջունի, բայց ապօրինի է համարվում նաեւ այն փրապերումը, որը թեկուզ իր հիմքում ունի պայմանագիր, սակայն այդ պայմանագիրը եւս անօրինական է: Օրինակ, եթե քաղաքացին պայմանագրով ձեռք է բերել

⁹⁹ Տե՛ս **Скловский К. И.** Собственность в гражданском праве. М., 2000, էջ 119:

¹⁰⁰ Նույն տեղում, էջեր 153-154:

¹⁰¹ ՀՀ քաղ. օր.-ի 163-րդ հոդվածում տրապերման իրավունքին տրված բնորոշումն անհաջող է, քանի որ տրապերումը բնութագրվում է ոչինչ չբացատրող, տրապերելու հնարավորությամբ:

այնպիսի գույք, որը ձեռք բերելու իրավունքը չուներ (օր.՝ զինամթերք), ձեռք բերվածի նկատմամբ նրա փրկապետումն անօրինական է:

Ապօրինի փրկապետումը կարող է լինել բարեխիղճ եւ անբարեխիղճ:

Ֆրասպետումը հասնարվում է բարեխիղճ, եթե փրկապետողը չի իմացել եւ չէր կարող իմանալ իր փրկապետման անօրինականության մասին: Իսկ եթե փրկապետողը գիտեր կամ պարտավոր էր իմանալ իր փրկապետման անօրինականության մասին, նրա **փրկապետումը կհասնարվի անբարեխիղճ**:

Գույքի բարեխիղճ եւ անբարեխիղճ փրկապետումը սահմանազարելն անհրաժեշտ է ձեռքբերման վաղեմության ուժով գույքը փրկապետողի սեփականության իրավունքը ճանաչելու համար, ինչպես նաեւ ապօրինի փրկապետողներից գույքը վիճակագրողին հայցով հեղափոխելու, սեփականափոխող եւ ապօրինի ձեռք բերողների միջեւ հաշվարկներ կատարելիս (ՏՏ քաղ. օր.-ի 187, 275, 276-րդ հոդվածներ):

Սեփականափոխող մյուս իրավագործությունն **օգտագործման իրավունքն է**: Օգտագործման իրավունքի էությունն այն է, որ գույքն իր սոցիալ-փնտրեսական նշանակությամբ ծառայեցնելու միջոցով փրկապետողները դրանից ստանում են արտադրական, կենցաղային, մշակութային եւ այլ պահանջմունքների բավարարում, փարբեր փեսակի օգուտներ, պարուղներ եւ եկամուտներ: Ուրեմն, օգտագործման իրավագործությունը՝ գույքն իր փնտրեսական նշանակությամբ ծառայեցնելու միջոցով, դրանից օգտակար հատկություններ, օգուտներ, պարուղներ եւ եկամուտներ ստանալու՝ օրենքի վրա հիմնված հնարավորությունն է:

Գույքից օգտվելը կապված է փրկապետման հետ, որովհետեւ առանց դրա, որպես կանոն, օգտագործման իրավունքը չի կարող իրականացվել:

Այդ իրավունքը, փրկապետման իրավունքի նման, սովորաբար պարկանում է գույքի սեփականափոխողը: Բայց օգտագործման իրավունքը կարող է իրականացնել նաեւ ոչ սեփականատերը: Օրինակ, գույքային վարձակալության պայմանագրով վարձակալը ոչ միայն փրկապետում, այլեւ օգտագործում է ուրիշի գույքը:

Օգտագործման իրավագործությունը սեփականատերն իրականացնում է որեւէ մեկից անկախ: Սեփականատերն օգտագործման ընթացքում կարող է գույքը լրիվ սպառել, օրինակ՝ հումքը, սննդամթերքը: Բայց օգտագործումը կարող է լինել նաեւ փեսական, օրինակ՝ մեքենայի օգտագործումը:

Օգտագործումը կարող է լինել օրինական եւ անօրինական: Օգտագործումն օրինական է, երբ այն հենվում է օրենքի, վարչական ակտի, պայմանագրի վրա:

Տնօրինման իրավագործությունը սեփականափոխող կողմից օրենքով նախատեսված շրջանակներում գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու միջոցով, գույքի իրավական եւ փաստացի ճակատագիրը որոշելու իրավունքն է:

Այս իրավագործությունն է, որ սեփականափոխողը հնարավորություն է փախի իր գույքը վաճառել, նվիրել, գրավ դնել եւ այլն: Եթե սեփականատերը ոչնչացնում կամ դն է նետում իր գույքը, ապա փնտրինման իրավունքն իրականացնում է գույքի փաստացի ճակատագիրն այդ եղանակներով որոշելու միջոցով:

Տնօրինման իրավունքի իրականացում չի կարող համարվել օգտագործման միջոցով գույքի գոյության դադարումը, որովհետեւ գույքը սպառելիս սեփականափոխողը նպատակ է ունենում սեփականության իրավունքը դադարեցնելն է, այլ գույքի օգտակար հատկություններից բավարարում ստանալը:

Տնօրինման իրավագործությունը, որպես կանոն, իրականացնում է միայն սեփա-

կանապերը միայն օրենքով նախատեսված դեպքում է, որ փնտրիման իրավագործությունը կարող է իրականացնել նաև ոչ սեփականապես: Օրինակ, երբ քաղաքացին իր գույքը հանձնում է կոմիսիոն խանութ՝ վաճառելու համար, ապա խանութն ինքն է իրականացնում այդ գույքը փնտրիմելու իրավագործությունը: Կոմիսիոն խանութի այդ իրավունքը բխում է ոչ թե սեփականության իրավունքից, այլ օրենքից և սեփականապիրոջ հետ կնքած պայմանագրից: Քանի որ սեփականապետը շարունակում է մնալ որպես այդպիսին, իրավունք ունի մինչև գույքը կոմիսիոն խանութի կողմից վաճառելն այդ գույքը նրանից հետ վերցնել:

Տնօրինման իրավունքի իրականացումն օտարման միջոցով միաժամանակ նշանակում է սեփականության իրավունքի դադարում փյալ անձի համար և սեփականության իրավունքի առաջացում մեկ ուրիշի համար: Օրինակ, երբ առեւտրական կազմակերպությունը ապրանքներ է վաճառում քաղաքացիներին, ապա այդ ապրանքների նկատմամբ դադարում է կազմակերպության սեփականության իրավունքը, և այդ նույն ապրանքների նկատմամբ սեփականության իրավունք են ձեռք բերում գնորդները:

Կրակելու իրավունքը գույքի փնտրիման եղանակներից մեկն է: Այդ իրավունքը Սահմանադրությունն առանձնակի արժեվորել է այն պարճառով, որ կրակելը հանդիսանում է իրավահաջորդության առավել փարճավճած և քաղաքացու կամքով իրականացվող սեփականության իրավունքի փոխանցման եղանակ:

Տողվածի 1-ին մասը նաև ամրագրում է, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պարճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անճանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Բնական ճեսուրսների ազար փնտրիման, փրապետման և օգրագորճման իրավունքի ամրագրման պարագայում այդ սահմանափակումները հանգում են հետեյալին. 1) արգելվում է վնաս պարճառել շրջակա միջավայրին, 2) արգելվում է վնաս պարճառել այլ անճանց իրավունքներին և օրինական շահերին: Առաջին պահանջը սահմանադրական մակարդակով ամրագրվում է առաջին անգամ, չնայաճ էկոլոգիական օրենսդրության նորմերը նախատեսում էին նման պահանջներ՝ սահմանելով պարասխանարվություն հողմասի օգրագորճման կանոնները խախտելու, հողերի էրոգիայի, բնական ճեսուրսների հետ կապվաճ գորճարքներ կարարելու և այլ իրավախախտումների համար¹⁰²:

Նշվաճ սահմանափակումներն իրենց արարացություն են գրել Տ էկոլոգիական օրենսդրության մի շարք դրույթներում: Տ հողային օրենսգրքի¹⁰³ 44-րդ հողվաճի 1-ին մասի համաճայն՝ «Քաղաքացիների ու իրավաբանական անճանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հողամասերն իրենց հայեցողությամբ փրապետելու, օգրագորճելու և փնտրիմելու իրավունքն է՝ օրենքով նախատեսվաճ սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ»: Նույն օրենսգրքի 49-րդ հողվաճը սահմանում է նաև հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները, որոնց շարքում էկոլոգիական իրավունքի րեսանկյունից կարետրվում են հողամասի նպարակային օգրագորճման փոփոխման արգելքը, բնապահպան պահանջների պահպանման կամ որոշակի աշխարանքներ կարարելու, ներառյալ՝ կենդանական աշխարհը, հողաշերտը, հազվագյուր բույսերը, բնության, պարմության և մշակույթի հուշարճանները, հնէաբանական օբյեկտները պահպանելու, վայրի կենդանիների գոյության, բնական միջավայրի և միգրացիայի ուղիները պահպանելու պահանջը:

Տողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները սահմանվում են

¹⁰² Տե՛ս **Бринчук М. М.** Экологическое право. Москва. ЮРИСТЪ, 2005, էջեր 86-87:

¹⁰³ ՏՏՊՏ 2001.06.15/17(149):

անմիջականորեն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ դատական կարգով:

ՆՆ հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Նողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները դադարում են օրենսդրության խախտմամբ օգտագործվող հողամասը հարկադիր վերցնելու դեպքում»: Իսկ 102-րդ հոդվածը հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր դադարման հիմքերի շարքում նշում է հողամասի օգտագործումը ոչ նպատակային նշանակությամբ կամ օրենքով եւ այլ իրավական ակտերով չթույլատրված եղանակով, գյուղատնտեսական նշանակության հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը՝ հողամասի յուրացման, մեխորարիվ շինարարության, փարերային աղերներից հեքո վերականգնման եւ նման օգտագործումը բացառող այլ հանգամանքների վերացման համար անհրաժեշտ ժամկետի հաշվանցով:

ՆՆ ջրային օրենսգրքի¹⁰⁴ 57-րդ հոդվածի համաձայն՝ «Ջրային համակարգի օգտագործման իրավունքը դադարում է, եթե խախտվել են ջրօգտագործման թույլտվության եւ ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանները»: 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ջրային ռեսուրսներին հարակից հողերի սեփականատերը կամ օգտագործողը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ջրային ռեսուրսի հեքո կապված էկոլոգիական համակարգին սպառնացող վրանգը»: Իսկ 99-րդ հոդվածի 11-րդ ենթակետը ջրային ռեսուրսների պահպանության պահանջների շարքում արգելում է ռադիոակտիվ եւ թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը եւ թաղումը ջրային ռեսուրսում, ինչպես նաեւ պայթեցման աշխատանքների իրականացումը միջուկային եւ այլ տիպի տեխնոլոգիաներով, որոնք ընթանում են ռադիոակտիվ եւ թունավոր նյութերի արտանետմամբ»:

ՆՆ անտառային օրենսգրքի¹⁰⁵ 38-րդ հոդվածի համաձայն՝ «Անտառային հողերում առանց անտառին վնաս պատճառելու կարող են իրականացվել ոչ բնափայտային անտառանյութի՝ պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի եւ դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում, ինչպես նաեւ մեղվանոցների, փեթակների տեղադրում, խոտհոնձ եւ արածեցում՝ անտառօգտագործման պայմանագրի եւ անտառային տոմսի հիման վրա: Անտառային հողերում առանց անտառին վնաս պատճառելու կարող է իրականացվել գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման եւ պտղահատապտուղային, ընկույզների եւ դեղաբույսերի տնկադաշտերի ստեղծման, ինչպես նաեւ խոտհոնձի եւ արածեցման նպատակով անտառային հողերի օգտագործում՝ վարձակալության պայմանագրի հիման վրա»: 46-րդ հոդվածի համաձայն՝ «Պետության եւ համայնքների սեփականություն համարվող անտառների կամ անտառային հողերից փրամադրված կամ այլ հիմքերով ձեռք բերված անտառների կամ անտառային հողերի նկատմամբ օգտագործողների իրավունքները կարող են սահմանափակվել՝

- 1) վարձակալության կամ ենթավարձակալության հանձնելու արգելքով.
- 2) անտառներում եւ անտառային հողերում գտնվող պետական գեոդեզիական ցանցի կետերը պահպանելու պահանջով.
- 3) անտառօգտագործման առանձին տեսակների արգելքով.
- 4) անտառային հողերի նպատակային օգտագործման փոփոխման արգելքով.
- 5) բնապահպանական պահանջների պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ կենդանական աշխարհը, հողաշերտը, հազվագյուտ բույսերը,

¹⁰⁴ 22ՊՏ 2002.07.10/24(199):

¹⁰⁵ 22ՊՏ 2005.12.07/75(447):

բնության, պարմության եւ մշակույթի հուշարձանները, հնէաբանական օբյեկտները պահպանելու պայմանով»:

Անպառաջին օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված դեպքերում անբառների կամ անպառաջին հոդերի օգտագործման իրավունքը դադարում է, երբ՝

ա) լրացել է անպառաջագործման ժամկետը.

բ) անպառաջագործողը հրաժարվում է անպառաջագործման իրավունքից.

գ) առաջանում են անպառաջագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված այն պայմանները, որոնց առկայության դեպքում անպառաջագործման հետագա իրականացումն անհնար է դառնում:

2. Անբառների եւ անպառաջին հոդերի օգտագործման իրավունքը ժամկետից շուրջ կարող է դադարեցնել սեփականաբերը, երբ՝

ա) անպառաջագործման գոյում բնակվող մարդկանց կյանքին կամ առողջությանն անմիջական վրանգ է սպառնում.

բ) անպառաջագործողները խախտում են անպառաջագործման սահմանված կանոնները.

գ) անպառաջագործողը սահմանված ժամկետներում ձեռնամուխ չի եղել անբառների կամ անպառաջին հոդերի օգտագործմանը նախատեսված ծավալների սահմաններում.

դ) անպառաջագործողը պայմանագրով սահմանված ժամկետներում չի մուծել անպառաջագործման վճարը»:

Կողմնակի անպառաջագործման համար հարկացված փարաձքներում արգելվում են ծառերի հատումը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ եւ անհետացման եզրին գտնվող բույսերի հավաքումը (հոդվ. 38, մաս 3):

Սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անպառաջին օրենսդրության խախտման, անպառաջին հոդերը վնասելու, ինքնական զավթելու հետեւանքով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց պարճառած վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով»:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի¹⁰⁶ 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Օգտակար հանածոներ արդյունահանող եւ հանքային հումք վերամշակող օբյեկտների (ձեռնարկությունների), օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների նախագծերում պետք է նախատեսվեն աշխատանքի անվտանգության եւ շրջակա միջավայրի պահպանության սահմանված կանոնների եւ նորմերի ապահովումը»: Իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ ենթակետը սահմանում է ընդերքօգտագործողի պարտականությունն ապահովելու ընդերքի, մթնոլորտի, հողի, անբառների, ջրերի եւ շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաեւ շինությունների եւ այլ կառույցների պահպանությունն ընդերքի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը¹⁰⁷ եւս նախատեսում է մի շարք դրույթներ, որոնք սահմանում են մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների եւ ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի

¹⁰⁶ ՀՀՊՏ 2002.12.11/54(229):

¹⁰⁷ ՀՀԳԽՏ 1994/21:

սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները սահմանելու կարգը, մթնոլորտային օդն աղ փոփոխությունների սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվները, մթնոլորտային օդն աղ փոփոխությունների սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվներին ներկայացվող պահանջները, մթնոլորտային օդն աղ փոփոխությունների արտանետումների սահմանափակումը, ընդհատումը կամ արգելումը, մթնոլորտային օդի վիճակի վրա ազդող փոխադրամիջոցների և կայանքների արտադրության ու շահագործման սահմանափակումը և այլն:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում ամրագրված է սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքներից երկուսը: Առաջին՝ անձն իր սեփականությունից կարող է զրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում (հիմքերով): Երկրորդ՝ սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ:

Սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը նախեստառաջ ենթադրում է, որ անձը սեփականության իրավունքից կարող է զրկվել միայն այնպիսի հիմքերով, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքի մակարդակ ունեցող իրավական ակտով: Օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերով, այդ թվում՝ ՏՏ Նախագահի հրամանագրերով, կառավարության, վարչապետի որոշումներով կամ այլ ենթաօրենսդրական բնույթի իրավական ակտերով սեփականության իրավունքի հարկադիր դադարման հիմքեր նախատեսված լինել չեն կարող, և, առավել եւս, անձի սեփականության իրավունքը չի կարող հարկադրաբար դադարեցվել օրենքով չնախատեսված հիմքերով:

Սահմանադրական փյույ ղրոյթն իր հեղափոխ գարգացումն է գրել ՏՏ քաղաքացիական օրենսգրքի և ՏՏ հողային օրենսգրքի նորմերում, որոնք սահմանում են այն դեպքերի շրջանակը, երբ անձը կարող է զրկվել սեփականությունից (Քաղ. օր., հոդվ. 279, մաս 2, ՏՈՂ. օր., հոդվ. 102 և հոդվ. 105, մաս 6):

Ուշագրավ է, որ թե՛ ՏՏ քաղաքացիական օրենսգրքով, թե՛ ՏՏ հողային օրենսգրքով գույքի, այդ թվում հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման հիմքերը, ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, սահմանվել են սպառիչ կերպով, և նշված ցանկը, նկատի ունենալով նշված օրենսգրքերի իրավաբանական ուժը, որևէ այլ նորմատիվ իրավական ակտով լրացվել չի կարող: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ էության, որպես սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիք, ամրագրվել է իրավական որոշակիության պահանջը (*res judicata*)¹⁰⁸, որն իր արտացոլումն է գրել անձին սեփականությունից զրկելու հիմքերը սահմանող հիշյալ օրենսգրքերում:

«Բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի» արտահայտությունն իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից մեկնաբանելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խնդրո առարկայի հետ կապված եւս մեկ հիմնա-

¹⁰⁸ Իրավական որոշակիության սկզբունքը պահպանելու անհրաժեշտությանն անդրադարձել է մաեւ ՀՀ սահմանադրական դատարանը՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշմանը: Տեւս ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԴՈ-630 որոշումը:

հարցի: ՆՃ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը Սահմանադրության 91-րդ հոդվածի և 97-րդ հոդվածի 1-ին մասի համապետքաբարում դիֆարակելիս ակնհայտ է դառնում, որ սեփականությունից զրկելու վերաբերյալ գործերի քննության ժամանակ դատարանը գործը պետք է քննի և լուծի բացառապես Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, հետևաբար՝ սեփականությունից զրկելու հիմքերին (դեպքերին) վերաբերող օրենքը, սահմանադրական լինելու համար, բավարար աստիճանի հստակությամբ պետք է ձեռակերպի համապատասխան իրավական ընթացակարգերը, «օրենքով նախատեսված դեպքերում» սեփականությունից անձանց զրկելու պետության իրավունքի իրականացման հիմքերը և պայմանները:

ՆՃ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական երկրորդ երաշխիքը դատարանն է: Սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել բացառապես դատական կարգով: Ընդ որում, դատական կարգով սեփականությունից զրկելու սահմանադրական պահանջը ենթադրում է, որ անձի սեփականության իրավունքը հարկադրաբար կարող է դադարեցվել քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ իրավասու դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի (վճռի, դատավճռի, որոշման) հիման վրա:

Սահմանադրական այս պահանջն իր արտացոլումն է գտել ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասում, 67-րդ հոդվածի 2-րդ մասում, 197-րդ հոդվածի 4-րդ մասում, 218, 281, 282, 284, 288-րդ հոդվածներում, ՆՃ հոդային օրենսգրքի 102, 103-րդ հոդվածներում, 105-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում, այլ իրավական ակտերում:

Պետք է նշել, որ «զրկել սեփականությունից» հասկացությունը սահմանադրական իրավունքում ունի փոքր-ինչ այլ իմաստ, քան քաղաքացիական իրավունքում, որում այն ավանդաբար հավասարեցվում է սեփականության իրավունքը հարկադրաբար դադարեցնելու հետ: Սահմանադրական իրավունքում սեփականությունից զրկելուն շար ավելի լայն մեկնաբանություն է տրվում: Այսպես այն ենթադրում է կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի ոչ միայն դադարում, այլ նաև այնպիսի սահմանափակում, որի արդյունքում սեփականատերը զրկվում է իրեն պարկանող օբյեկտի իր հայեցողությամբ փոխապետելու, ըստ նշանակության օգտագործելու և այն փոփոխելու հնարավորությունից: Եվ եթե նույնիսկ այդպիսի սահմանափակումը կատարվում է որևէ ընդհանուր, հանրային նպատակներից ելնելով, դա ևս դիֆարակվում է որպես սեփականությունից զրկում սահմանադրաիրավական առումով¹⁰⁹: Նման դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի իրավական դիրքորոշման համաձայն՝ «զրկել» է համարվում նաև այնպիսի փաստացի խոչընդոտներ ստեղծելը, որոնք սեփականատիրոջ համար անհնարին են դարձնում իր սեփականությունից օգտվելը¹¹⁰: Ներկաբար, Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի անձեռնմխելիության դատական երաշխիքը լիովին կարող է փարածվել նաև էքսպրոպրիացիայի (սեփականագրկման) այնպիսի տեսակների վրա, որոնց պարագայում անձի սեփականության իրավունքը ձեռականոթեն պահպանվում է, սակայն նա զրկվում է այն իրականացնելու հնարավորությունից:

Բացի դրանից, պետք է նշել, որ, ի տարբերություն սեփականության անձեռնմխելիության քաղաքացիաիրավական սկզբունքի, որը կոչված է պաշտպանելու իրային իրա-

¹⁰⁹ Տե՛ս ՌԻՄ Սահմանադրության մեկնաբանություններ, էջեր 347-348:

¹¹⁰ Տե՛ս, օրինակ, Պապամիխայլուսն ընդդեմ Հունաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.06.1993 թ. A260-B վճիռը:

վունքների սուբյեկտներին, սեփականությունից զրկելու անթույլատրելիության սահմանադրական դրույթը լիովին կարող է փարածվել նաև մտավոր սեփականության իրավունքի սուբյեկտների վրա¹¹¹:

Սեփականության իրավունքի անձեռնմխելիության դատական երաշխիքը թերևս չի փարածվում բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքում սեփականությունը հասարակության եւ պետության կարիքների համար օտարելու դեպքերի, այդ թվում՝ նաև փառերային աղեփների, փեխնուղգիական վթարների, համաճարակների դեպքերում եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում ի շահ հասարակության կատարվող ռեկվիզիցիայի դեպքերի վրա, որոնք ենթադրում են սեփականության իրավունքի հարկադիր դադարեցում վարչական կարգով: Նման հնարավորության սահմանադրական հիմքն ամրագրված է ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի՝ սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ¹¹²:

3. Սոցիալական եւ իրավական ազատության բնույթը որոշվում է խոր փնտրասական երեսույթներով, սեփականության հարաբերություններով: Ազատության եւ իրավունքի պայմանական առաջադիմությունը վկայում է այն մասին, որ ազատ, իրավական անհատի ձեւավորումը եւ զարգացումն անհրաժեշտաբար կապված է սեփականության հարաբերությունների համակարգում մարդու վիճակի հետ: Սեփականությունը լինելով ազատության (իրավունքի) եւ մարդու իրավունքների արտահայտման հասարակ ձեւերից մեկը, միաժամանակ անհատի ազատության զարգացման համընդհանուր, համաքաղաքացիական հիմքն է: Այնպեղ, որպեղ չկա սեփականություն, այնպեղ չկան եւ սկզբունքորեն անհնարին են ազատությունը, իրավունքը, պետությունը: Այս առումով սեփականությունն ազատության եւ իրավունքի համաքաղաքակրթական հիմքն է:

Մինչեւ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «սեփականության օտարումը հասարակության ու պետության կարիքների համար» սահմանադրական նորմի բուն մեկնաբանմանն անցնելը, անհրաժեշտ է պարզել այդ նորմի տեղը սեփականության սահմանադրական իրավական ինստիտուտում: ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածը 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ հանդես է գալիս համակարգային սերտ կապով: Սահմանադրության 8-րդ հոդվածն ամրագրում է, որ «ՏՏ-ում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Այս ընդհանուր նորմն ունի հիմնադիր նշանակություն 31-րդ հոդվածի համար:

Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասը վերաբերում է սեփականության սուբյեկտիվ իրավունքի բովանդակությանը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փիրապելու, օգտագործելու, փնտրինելու եւ կրակելու իր սեփականությունը: Այս նորմն ամրագրում է սեփականությունից անարզել օգտվելու հնարավորությունը սեփականատիրոջ հայեցողությամբ:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը գալիս է հաստատելու, որ սեփականության իրավունքն «անսահմանափակ» իրավունք չէ, որ սեփականատիրը չի կարող սեփականության իրավունքն իրականացնել եսասիրաբար: Այդ իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

¹¹¹ Տե՛ս ՌԳ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 34:

¹¹² Այդ մասին մանրամասն տե՛ս սույն հոդվածի 3-րդ մասի մեկնաբանություններում:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն առանձին նորմեր են, որոնք ամրագրում են ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված ընդհանուր նորմի երաշխիքները: Այդպիսով Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքներն են:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Դա նշանակում է, որ սեփականության իրավունքի հարկադիր և անհատույց դադարումը, ինչպես նաև հարկադիր և հատուցանելի դադարումը կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և դատական կարգով: Սահմանադրական նորմի բառացի մեկնաբանությունից բխում է, որ սեփականությունից գրկելն արտադատական կարգով արգելվում է: Այսպիսով, Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասը սեփականությունից գրկելու բոլոր հնարավոր փարբերակները հայտարարում է ապօրինի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում և դատական կարգով իրականացվածների¹¹³:

Այս համարեքստում 31-րդ հոդվածի 3-րդ մասը սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանափակման առանձին հիմք է, որը կոչվում է «սեփականության օտարում հասարակության և պետության կարիքների համար»: Այսպիսով, Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **պետությունը կարող է կատարել սեփականության օտարում հասարակության և պետության կարիքների համար**: Սահմանադրական այս դրույթի իրավական իմաստի և դրանից բխող հետևանքների ճիշտ պարզաբանման համար անհրաժեշտ է դիմել երկու ձեռակերպումների՝ ա) «սեփականության օտարում» հասկացությունն իրավունքի գերակայության և սեփականության անձեռնմխելիության փեսանկյունից, բ) «հասարակության և պետության կարիք» և «պետության կամ համայնքի կարիք» հասկացությունների իրավական բովանդակության և հարաբերակցության մեկնաբանմանը:

«Սեփականության օտարում» հասկացությունը քաղաքացիական իրավունքում օգտագործվում է սեփականության իրավունքի օբյեկտն այլ անձի սեփականությանն անցնելը նշելու համար: «Սեփականության օտարումն» նշանակում է սեփականության իրավունքի դադարում ինչ-որ սուբյեկտի համար և սեփականության իրավունքի առաջացում մեկ այլ սուբյեկտի մոտ: «Սեփականության օտարումը» լինում է **հատուցանելի** (օրինակ՝ առուվաճառք) և **անհատուցանելի** (օրինակ՝ նվիրատվություն): Կամային բաղադրարարի առանձնահատկություններից ելնելով սեփականության օտարումը կարող է լինել **կամավոր և հարկադրական**:

Կամավոր օտարումը համարվում է սեփականատիրոջ՝ իրեն պարկանող գույքի փոփոխման իրավագործության իրականացման եղանակներից մեկը: Լինելով փոփոխման իրավագործության եղանակներից մեկը՝ սեփականության կամավոր օտարումն իրականացվում է սեփականատիրոջ կամքով՝ պայմանագրի կամ այլ գործարքի հիման վրա, որ կնքվում է գույքը ձեռքբերողի՝ նոր սեփականատիրոջ հետ: Սեփականության հարկա-

¹¹³ Այնինչ օրենքները, մասնավորապես Քաղաքացիական օրենսգիրքը, նախատեսում են նաև սեփականությունից գրկում կամ սեփականության իրավունքի դադարում այլ պետական մարմինների որոշմամբ (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 285-րդ հոդված, «ռեկվիզիցիա» (բռնագրավում)): Իհարկե, 285-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սեփականատերը կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը, բայց դա հետագա դատական վերահսկողություն է, այնինչ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ դատական կարգը պետք է լինի նախնական կամ վերջնական միջոցը դատարանի վճիռն է:

դիր օտարումն իրականացվում է օրենքով նախատեսված դեպքերում սեփականատիրոջ կամքին հակառակ, այսինքն՝ հարկադրական կարգով:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասը ենթադրում է եւ՛ կամավոր, եւ՛ հարկադրական օտարում: Վերջինս գործի է դրվում, եթե չի աշխատում հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման կամավոր ընթացակարգը: Այս դեպքում արդեն 31-րդ հոդվածի 3-րդ մասի գործողության փիրոյթում գործում է 2-րդ մասում ամրագրված սեփականության իրավունքի երաշխիքը: Այսինքն՝ 3-րդ մասի իմաստով հարկադիր օտարումը կարելի է կատարել միայն դատական կարգով:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասից բխող սեփականության հարկադիր օտարման՝ պետության հնարավորությունը չի հակասում իրավունքի գերակայության եւ սեփականության իրավունքի անձեռնմխելիության սկզբունքներին: Խորհրդային շրջանում խախտվել էին սեփականության հարաբերությունների զարգացման բնական-պատմական գործընթացը եւ կյանքի կազմակերպման սոցիալական-իրավական ձեւերը: Նանրային եւ մասնավոր շահերի հարաբերակցության անհավասարակշռության հաղթահարումը չպետք է հանգեցնի դրանց զարգացման պատմական նոր խեղաթյուրմանը հակառակ մասնավոր-անհատական ուղղությամբ: Նանրային եւ մասնավոր շահերը պետք է գտնվեն բնական հավասարակշռության մեջ:

Արդի ժամանակաշրջանում գերակա նշանակություն ունի սեփականության ինտեգրումը եւ սոցիալիզացումը: Դա նշանակում է ոչ միայն մասնավոր սեփականության զարգացում, պաշտպանություն, այլև դրան բնորոշ հասարակական օտարացման աստիճանական հաղթահարում, վերադարձ դեպի հասարակություն: Սեփականությունը, այդ թվում՝ մասնավոր, պետք է ծառայի հասարակության սոցիալական խնդիրների լուծմանը՝ համաձայն սոցիալական պետության եւ սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսության պահանջներին: Դա նշանակում է հասարակական (հանրային) հիմքերի ուժեղացում սեփականության հարաբերություններում:

Ամենից վառ այդպիսի մտքեցումը սեփականության հարաբերություններին ներկայումս դրսևորվում է Եվրոպայում: Զեւական-իրավաբանական մակարդակում այն ստացել է ամրագրում նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում եւ զարգացվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված «հասարակության եւ պետության կարիք» հասկացությունը եւ մի շարք օրենսդրական ակտերում օգտագործված «պետության կամ համայնքի կարիք» հասկացությունն ունեն միեւնույն իրավական բովանդակությունը, այսինքն՝ դրանք համարժեք հասկացություններ են: Ընդ որում, ՏՏ քաղաքացիական օրենսգրքի օգտագործած «պետության կամ համայնքի կարիք» ձեւակերպումը Սահմանադրության մեջ օգտագործված ձեւակերպման սահմանափակ մեկնաբանումն է, եւ ավելի ճշգրիտ է, քան Սահմանադրության ձեւակերպումը: Ընդհանուր, հանրային կամ լայն իմաստով հասարակական կարիքը չի կարող ունենալ այլ դրսևորում, այլ ձեւական-իրավական ամրագրում, քան «պետության կամ համայնքի կարիք» հասկացությունը: Ընդհանուր հանրային բոլոր շահերն ու կարիքները, ի վերջո, ունեն

իրավահարաբերությունների մասնակիցներ համարվող կրող սուբյեկտներ: Մեր իրավական համակարգում այդ սուբյեկտները երկուսն են՝ «պետությունը» և «համայնքը»: Բուն Սահմանադրության օգտագործած «հասարակություն» հասկացությունը շար լայն և ամորֆ է, չունի իր ձեւական-իրավաբանական արտահայտությունը, հեղեւաբար՝ և չկա հասարակության ընդհանուր շահը կամ կարիքը կրող կոնկրետ իրավական սուբյեկտներ: Տեսականորեն կարող ենք պնդել, որ դրա կրողը, ի վերջո, քաղաքացիական հասարակությունն է: Բայց ամբողջ քաղաքացիական հասարակությունն իրավունքի սուբյեկտ չէ, չի մասնակցում որեւէ իրավահարաբերության՝ որպէս կողմ:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված են **հասարակության և պետության կարիքների համար** սեփականության օտարման պայմանները, որոնք համապատասխանաբար պետության վրա դնում են չորս փոխկապված պարտականություն.

1) սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում,

2) սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն օրենքով սահմանված կարգով,

3) սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն նախնական փոխհատուցմամբ,

4) սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն համարժեք փոխհատուցմամբ:

1) **Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում:** Նամաձայն ՆՏ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման՝ այս դրույթն ամբողջականանում է Սահմանադրության 31-րդ հոդվածի «այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համարեքստում: Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որեւէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ՝ գերակա հանրային շահի բավարարմանը»:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի ճիշտ գործադրման համար կարևոր նշանակություն ունի «բացառիկ՝ գերակա հանրային շահերի» մեկնաբանման և իրավական կարգավորման հիմնախնդիրը: Իրավական նորմերի մեկնաբանման հիմնական կանոններից մեկի համաձայն իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությամբ:

Ժամանակակից հայոց լեզվի բացարթական բառարանը «բացառիկ» բառը մեկնաբանում է որպէս «արտակարգ, արտասովոր, բացառություն կազմող»: Դա նշանակում է, որ հանրային բացառիկ շահն այլ շահերի հետ համեմատած՝ արտասովոր է, արտակարգ, որի արդյունքում և հնարավոր է բացառություն անել ընդհանուր կանոնից: Սույն բառարանը «գերակա» բառը մեկնաբանում է որպէս ամենից բարձր կանգնած, գերագույն: Իրավունքի տեսության մեջ «գերակայություն» (loadership, supremacy) հասկացությունն օգտագործվում է օրենքի, անձանց, պետական մարմինների նկատմամբ: Զննարկվող դեպքում այն օգտագործված է հանրային շահերը նշելու համար: Դա նշանակում է բոլոր տեսակի շահերը, այդ թվում՝ և հանրային, ընդհանուր շահերը, ՆՏ Սահ-

մանադրությունը դասակարգում է երկու խումբ՝ «գերակա հանրային շահեր» և «ոչ գերակա (սովորական) հանրային շահեր»։ Գերակա հանրային շահն այս դեպքում պետք է մեկնաբանվի որպես անպայման առաջնայնություն ունեցող շահ, որը միշտ էլ բոլոր դեպքերում նախընտրելի է այլ շահերի, այդ թվում ոչ արտակարգ հանրային շահերի հետ բախումներում։ «Հանրային շահը» ՀՀ-ում կարող է դրսևորվել միայն պետական և համայնքային շահերի տեսքով, այլ կերպ՝ հանրային շահը չունի իրավաբանական դրսևորում։ Այսպիսով, «բացառիկ՝ գերակա հանրային շահ» նշանակում է արտակարգ, արտասովոր, բացառություն կազմող, բոլոր տեսակի պետական և համայնքային շահերից վեր կանգնած, դրանց համեմատ անպայման առաջնայնություն ունեցող շահ։

Սեփականության իրավահարաբերությունները բացարձակ և հստակ իրավահարաբերություններ են՝ իրենց մասնակիցների շրջանակով։ Այսպեղ առկա է սեփականատերերը՝ որպես իրավագոր կողմ, և մնացած սուբյեկտները, այդ թվում պետությունն ու համայնքը՝ որպես պարտավոր կողմ։ Այս ընդհանուր իրավահարաբերությունից Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է բացառություն. բացառիկ գերակա շահերի առկայության դեպքերում կարող է կատարվել սեփականության օտարում (նաև հարկադիր) հասարակության և պետության կարիքների համար։ Ձեռական տեսանկյունից նշանակում է, որ պետությունը և համայնքը նշված շահերի առկայության դեպքում կարող են կատարել սեփականության օտարում՝ նախնական համարժեք փոխհատուցում փառվ սեփականատիրոջը։ Սեփականատիրոջ համար դադարում է սեփականության իրավունքը։ Նշանակում է՝ օտարվող գույքը պետք է դառնա մեկ այլ սուբյեկտի սեփականություն։ ՌՎ է այդ սուբյեկտը։ Ակնհայտ է, որ սուբյեկտը, որպես նոր սեփականատեր, պետք է լինի պետությունը կամ համայնքը, այսինքն՝ սեփականության օտարման արդյունքում սեփականատերեր չեն կարող դառնալ մասնավոր անձինք և կազմակերպությունները։

«Բացառիկ գերակա հանրային շահերն» անպայմանորեն օրենսդրական հստակեցման կարիք ունեն¹¹⁴ Նման պայմաններում սեփականության սուբյեկտի իրավունքի սահմանափակման չափանիշ են ծառայում ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված չափանիշները։ Այդ մոտեցումն ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում, ըստ որի՝ «քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար»։

2) Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն օրենքով սահմանված կարգով։ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասն ուղղակիորեն մատնանշում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով։ Դա նշանակում է, որ օրենքները պետք է հստակ սահմանեն օտարման հիմքերը, այսինքն՝ հստակեցնեն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերը, օտարման ընթացակարգը, օտարման մասին որոշում կայացնող

¹¹⁴ ՌԴ գործող Հոդային օրենսգրքը սահմանում է, որ հողերը վերցնելը, այդ թվում հետգնման միջոցով՝ պետական և մունիցիպալ կարիքների համար, կարող է կատարվել՝ 1) միջազգային պարտավորությունների կատարման համար, 2) հողամասում ստորե թվարկված օբյեկտները տեղաբաշխելու համար, եթե բացակայում են այլ տարբերակներ (էներգետիկ և ատոմային էներգիայի օբյեկտներ, տրանսպորտային հաղորդակցության և կապի օբյեկտներ, տիեզերական գործունեությունն ապահովող օբյեկտներ, սահմանի պաշտպանությունն ապահովող օբյեկտներ, խողովակաշարեր, կամուրջներ և այլն)։

մարմինները, թե որ օրենքով կոնկրետ՝ իրավաբանական նշանակություն չունի, եթե, իհարկե, չկա որոշակի օրենսդրական արգելք, որ ինչ-որ օրենքով չի կարելի կարգավորել մարմանը չված հարաբերությունները: ՏՏ սահմանադրական դատարանը «միայն օրենքով սահմանված կարգով» սահմանադրական բանաձեռին համապատասխան արտահայտել է իր հետևյալ դիրքորոշումը. «Պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի սեփականարտիքոջ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերվում սեփականության իր իրավունքին և ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում: Բոլոր դեպքերում, իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի և մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է տեղի ունենում՝ առանց օրենսդրորեն հստակ սահմանելու և գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կլինի անհամամասն միջամտություն սեփականության իրավունքին»¹¹⁵

Սահմանադրական քննարկվող նորմի օրենսդրական կարգավորման աղբյուրի ճյուղային պարկանելության հիմնահարցը լուծելիս պետք է ղեկավարվել «իրավական

¹¹⁵ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18 ապրիլի 2006թ. ՄԴՈ-630 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «ՀՀ Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով մույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, մասնա՝ իրականացվել օրենքով մախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության գրկումից» է ապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

Սահմանադրական դատարանի բնորոշմամբ, եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է տեղի ունենում՝ առանց օրենսդրորեն հստակ սահմանելու և գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կլինի անհամամասն միջամտություն սեփականության իրավունքին: Շեշտադրվում է մաե, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրել է մի կարեւոր նորմ եւս՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43): Այս առնչությամբ ուշադրության արժանի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք մախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի բնոխմուր սկզբունքներով»:

Շեշտությունն այն է, որ «սեփականության օտարում» հասկացությունը, իր հերթին, սահմանադրական տվյալ դրույթի համատեքստից ելնելով, ենթադրում է Սահմանադրությամբ մախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կամ դադարում՝ պայմանով, որ այդ օբյեկտի դիմաց անձին մախապես տրվում է համարժեք այլ գույք կամ փոխատուցում, որն էլ երաշխավորում է սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը: Փաստորեն, Սահմանադրության 31-րդ հոդվածի նշված դրույթն ամբողջականաճում է նույն հոդվածի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որեւէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ մախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ՝ գերակա հանրային շահի բավարարմանը»:

կարգավորման առարկա» եւ «իրավական կարգավորման մեթոդ» հարկանիշներով: Իրավական կարգավորման առարկա չափանիշի փոփոխումից քննարկվող ինստիտուտը գույքային հարաբերություն է: Սակայն իրավական կարգավորման մեթոդի չափանիշի փոփոխումից այն քաղաքացիական իրավական նորմ չէ, որովհետեւ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներն են կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարությունը, կամքի ինքնավարության եւ գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության եւ նման բնույթի այլ սկզբունքները, որոնք հիմք են փալիս պնդելու, որ քաղաքացիական իրավունքին բնորոշ է ավտոնոմիայի (ինքնավարության) մեթոդը:

Քանի որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասը ենթադրում է նաեւ հարկադիր օտարում, հետեւաբար, այն ենթադրում է կարգավորման հրամայական մեթոդ: Միեւնույն ժամանակ, Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի «նախնական համարժեք փոխհարուցում» ձեւակերպումն այդ ինստիտուտում ներմուծում է ավտոնոմիայի մեթոդի փարբեր:

Այսպիսով, քննարկվող սահմանադրական ինստիտուտն ավելի շար հանրային-իրավական փարբեր է պարունակում, քան մասնավոր: Ներեւաբար, միանշանակ չենք կարող պնդել, որ այն պետք է մտնի քաղաքացիական օրենսգրքի կարգավորման առարկայի շրջանակների մեջ կամ այն գուր քաղաքացիական իրավական ինստիտուտ է:

Իրավաստեղծ գործունեության մեթոդաբանական հիմունքների համաձայն սեփականության հարկադիր օտարման մի շարք հիմքեր չպետք է կարգավորվեին քաղաքացիական օրենսգրքով: Դրանք առանձին օրենքի կարգավորման առարկա են, որն ավելի շար վարչական իրավունքի աղբյուր պետք է հանդիսանար:

Սակայն դա չի նշանակում, որ քաղաքացիական օրենսգիրքը չի կարող անդրադառնալ սեփականության հարկադիր օտարման իրավական կարգավորմանը: Պետք է նկատի ունենալ, որ սեփականության ինստիտուտը համալիր, բարդ եւ միջճյուղային բնույթի իրավական ինստիտուտ է, եւ, հետեւաբար, այն կարգավորվում է իրավունքի մի շարք ճյուղերով: Քաղաքացիական օրենսգիրքը որպէս սեփականության իրավունքի համապարփակ կարգավորիչ, կարող է անդրադառնալ սեփականության հարկադիր օտարման հիմքերի իրավական կարգավորմանը՝ որպէս սեփականության իրավունքի դադարման հիմքեր:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ իրավունքի ճյուղը եւ իրավունքի աղբյուր հանդիսացող նորմարիվ իրավական ակտն ուղղակիորեն չհամընկնող երեւոյթներ են: Իրավունքի աղբյուրը օրենսգիրքը կարող է լինել նաեւ ինքեգրացված, այսինքն՝ այն կարող է կարգավորել ոչ միայն իր ճյուղի հասարակական հարաբերությունները, այլ նաեւ այլ ճյուղերի: Իրավաբանական հետեւանքների առումով ոչ մի նշանակություն չունի, թե որ օրենսգրքով է կարգավորված հարաբերությունը: Ավաճը հասարակում են հենք բուն ՎՎ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերը, որոնք ուղղակիորեն չեն արգելում քաղաքացիական օրենսդրության կիրառումը ոչ քաղաքացիական հարաբերությունների նկատմամբ, հատկապէս, որ խոսքը վերաբերում է մարդու սեփականության իրավունքին:

Եթե խոսքը հողի օտարման մասին է, ապա ակնհայտ է, որ կարգավորող ակտը պետք է լինի Նողային օրենսգիրքը: Սակայն դա չի նշանակում, որ Քաղաքացիական օրենսգիրքը չի կարող փալ քննարկվող հարաբերությունների իրավական կարգավորումը, հարկապէս, որ դրանք սեփականության իրավունքի դադարման հիմքեր են: Այսպիսով, հողը սեփականատիրոջից օտարման հիմքերը, կարգը պետք է սահմանվեն

Նողային օրենսգրքով, իսկ գնման կարգը, գնի որոշման կարգը, օտարվող հողի սեփականատիրոջ իրավունքները կարող են սահմանվել Քաղաքացիական օրենսգրքով, հնարավոր է նաև առանձին, հարուկ այդ ինստիտուտի կարգավորմանը նվիրված օրենքի ընդունում:

3) Մեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն նախնական փոխհարուցմամբ: ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասը պետության վրա դնում է պարտականություն՝ իրականացնել «**նախնական փոխհարուցում**»: Այս պահանջը սահմանում է, թե որ պահին պետությունը պետք է կատարի իր փոխհարուցման պարտականությունը՝ այսինքն՝ փոխհարուցումը պետք է լինի նախնական: Դա նշանակում է, որ հարուցումը պետք է կայանա մինչև գույքի օտարման մասին ակտն ընդունելը: Ներեաբար, պետությունը չի կարող սկզբում ընդունել ակտ սեփականության իրավունքի դադարման մասին և հետո վրա գան դրա գույքային հետեւանքները, իսկ դրանից հետո պետության համար առաջանա փոխհարուցման պարտականություն և միայն դրանից հետո վրա հասնի այդ պարտականության կատարման պահը:

ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ մասում «նախնական» եզրույթի օգտագործման իրավական նշանակությունն այն է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար որպես ընթացակարգ բաժանվում է երկու փուլերի.

ա) նախնական համաձայնություն օտարման մասին և նախնական փոխհարուցում,

բ) գույքն օտարելու (վերցնելու) մասին որոշման ընդունում պետական լիազորված մարմնի կողմից:

Նախնական համաձայնության փուլում պարտադիր է գույքի սեփականատիրոջ մասնակցությունը: Ըստ էության դա նախապայմանագրային բանակցություն է սեփականատիրոջ և պետության միջև: Մեփականատերը կարող է համաձայնել առաջարկվող պայմաններին. այս դեպքում օտարումը դառնում է կամավոր: Բայց նա կարող է չհամաձայնել: Այս դեպքում օտարումը ձեռք է բերում հարկադիր բնույթ, և նա իրավունք ունի դիմելու դատարան, որովհետև հարկադիր օտարումը միշտ կատարվում է դատարան կարգով: Դատարան կարող է դիմել նաև պետությունը:

Անդրադառնալով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՆՏ օրենքի մի շարք դրույթների սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ «օրենքի 4 հոդվածի 1-ին մասի ե) կետով, ինչպես նաև 9 հոդվածով նախատեսված հիմքերով դատական վեճի առկայության պայմաններում Սահմանադրության 6 հոդվածի 1-ին մասի, 31 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև 3 հոդվածի 3-րդ մասի պահանջներից ելնելով՝ **դատարանը պարտավոր է** պարասխան փալ հետեյալ հարցերին. **նախ**՝ փյալ սեփականության օտարման առնչությամբ առկա՞ է հասարակության և պետության կարիքը, թե՞ ոչ, **երկրորդ**՝ այդ կարիքը պայմանավորված է միայն բացառիկ՝ գերակա հանրային շահով, թե՞ ոչ: Այդ հարցերի պարասխանների առկայության պայմաններում կարող է հետագա գործընթացն օրենքով նախատեսված շարունակությունն ունենալ... » /լրէս ՄԴՌ-815 (մաս 7), 14 հուլիսի 2009թ./:

Միայն նախնական ընթացակարգերի արդյունքում, այդ թվում և հարկադիր դատական կարգով, իրականացված փոխհարուցումից հետո պետությունը կարող է կայացնել որոշում գույքը վերցնելու, օտարելու մասին:

4) Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կարարվել միայն համարժեք փոխհատուցմամբ: ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասը պետության վրա դնում է նաեւ պարտականություն իրականացնել նախնական **համարժեք փոխհատուցում:** Դա նշանակում է, որ պետությունը պետք է նախ գնահատի գույքը, ինչի համար անհրաժեշտ է կարարել գույքի կազմի պարզում, դրա գույքագրում (ինվենտարիզացիա):

Համարժեք կամ հավասարաբեք փոխհատուցման փեսակները կարող են լինել փարբեր դրամական, այլ համարժեք գույքի փրամադրում եւ այլն: Եթե, օրինակ, խոսքը սեփականատիրոջը պարկանող հողամասի օտարման մասին է, ապա օտարումը կարող է իրականացվել համարժեք հողամաս հարկացնելով կամ հողամասի շուկայական արժեքի հատուցմամբ (եթե նրան անվճար սեփականության իրավունքով չի փրամադրվում այլ հավասարաբեք հողամաս): Երկու դեպքում էլ պետությունը կամ համայնքը պետք է հատուցի հողամասում գրնվող անշարժ գույքի արժեքը, օտարման հետ կապված վնասները, այդ թվում բաց թողնված օգուտները: Հաշվի պետք է առնվեն նաեւ երրորդ անձանց շահերը: Այսպիսով, համարժեք փոխհատուցումը չի ենթադրում միայն դրամական փոխհատուցում: Որպես սեփականատիրոջ իրավունքների երաշխիք փոխհատուցումը պետք է լինի այլընտրանքային (ալտերնատիվ) սեփականատիրոջ ընտրության նախապարվությանբ:

4. Հայաստանի Հանրապետությունում հողի նկարմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը սահմանվեց «Գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ փրետությունների մասին» 1991 թվականի օրենքով, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն առաջին անգամ հնարավորություն սրացան որպես սեփականություն ունենալու հողամաս: Հողամասի նկարմամբ սեփականության իրավունքը, ըստ նշված օրենքի, ծագում էր միայն գյուղափրետսական նշանակության հողերի նկարմամբ (այդ հարաբերությունները մանրամասն կարգավորվեցին նաեւ 1991 թվականի դեկտեմբերի 29-ի Հողային օրենսգրքով):

1995 թվականի ՏՏ Սահմանադրությունը, հաշվի առնելով երկրում շուկայական հարաբերությունների զարգացումը, 31-րդ հոդվածում ամրագրեց սեփականության իրավունք ունենալու եւ սեփական գույքն իր հայեցողությամբ փրրապետելու, օգրագործելու եւ փրօրինելու յուրաքանչյուրի հնարավորությունը: Սակայն նույն հոդվածի 4-րդ մասում ամրագրվեց հողի նկարմամբ սեփականության իրավունքից օգրվելու արգելք օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար: Նշված նորմից բացառությունները նախատեսվում են օրենքով:

Տերիտորիոլային ժամանակաշրջանում բոլոր նախկին միութենական պետություններում սահմանադրական մակարդակով փորձ կարարվեց սահմանել հողի նկարմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների շրջանակը: ՌԴ հողային օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանվեց, որ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք եւ իրավաբանական անձինք չեն կարող ունենալ սահմանամերձ փրարածքում գրնվող հողամասի նկարմամբ սեփականության իրավունք: Այդ փրարածքների ցանկը սահմանվում է ՌԴ Նախագահի կողմից՝ համաձայն պետական սահմանի մասին դաշնային օրենսդրության: Այսպիսով, կարելի է նշել, որ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար հողի սեփականության իրավունքի սահմանափակումը հիմնականում պայմանավորված է եղել ազգային անվտանգության խնդիրներով:

2001 թվականի ՏՏ հոդային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխան՝ Նայասարանի Նանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողի օգտագործողներ:

Բացառություն են կազմում միայն Նայասարանի Նանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք»:

Այս իմաստով ՏՏ հոդային օրենսգրքը որպես բացառություն է համարել կացության հատուկ կարգավիճակը, որը նախատեսված է օրենքով: «Օտարերկրացիների մասին» ՏՏ օրենքը¹¹⁶ Գալիս է կացության հատուկ կարգավիճակի հասկացությունը՝ «Նայասարանի Նանրապետության Նախագահի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է Գալիս բնակվելու Նայասարանի Նանրապետության Գարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում»:

Նշված բացառության արմատները գալիս են 1993 թվականի ՏՏ հոդային օրենսգրքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներում կատարված լրացումներից, որոնց համաձայն՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների ցանկում ավելացվեց «օտարերկրյա պետություններ»՝ բացառապես դիվանագիտական գործունեություն իրականացնելու համար (4-րդ հոդված): Նույն նպատակն ամրագրված էր նաեւ 5-րդ հոդվածում:

1993թ. ՏՏ հոդային օրենսգրքի 4-րդ հոդվածում Գրված՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների կազմը եւ դասակարգումը արտահայտում էին 1990 թ. հոկտեմբերի 31-ի՝ «Սեփականության մասին» ՏՏ օրենքի դրույթները: Այս օրենքում առաջին անգամ Գրվեց սեփականության իրավունքի սուբյեկտների կազմը, որում առաջին Գրեղը զբաղեցնում էին քաղաքացիները, այնուհետեւ՝ քաղաքացիների կոլեկտիվները եւ երրորդը՝ պետությունը: Դրանով իսկ ընդգծվեց քաղաքացիների՝ որպես հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների առաջնայությունը:

Ըստ էության, 1995 թվականի ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 4-րդ մասն արտահայտում է 1993 թվականի ՏՏ հոդային օրենսգրքում կատարված լրացումների բովանդակությունը: Միաժամանակ, Գրամաբանական չէ, որ 2001 թվականի ՏՏ հոդային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում, որը վերաբերում է օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց հողի նկատմամբ սեփականության իրավունքին, չի վերաբարադրվում ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 4-րդ մասի ամբողջական դրույթը: Դրանում բացակայում է «օրենքով նախատեսված բացառություններ» արտահայտությունը եւ ամրագրվել է, որ նշված սուբյեկտները կարող են լինել միայն հողի օգտագործողներ: Իսկ բացառությունը վերաբերում է Նայասարանի Նանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածում սահմանադրական մակարդակում ամրագրված սահմանափակումը բխում է այն ընդհանուր զաղափարախոսությունից, որ սակավահող Նայասարանում հողի նկատմամբ սեփականության հարաբերությունների ձեւավորման այս փուլում շարունակում է առաջնային մնալ պետական անվտանգության հիմնախնդիրը:

5. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածում առանձնահատուկ ընդգծվող «մրավոր սեփականություն» արտահայտության առաջա-

¹¹⁶ շՊՏ 2007.01.24/6(530):

ցունը սովորաբար կապում են XVIII դարի ֆրանսիական օրենսդրության հետ, նկատի ունենալով, որ այդ օրենսդրությունն ամրապնդում էր գրական և արդյունաբերական սեփականության հասկացությունները¹¹⁷: Ներագայում մտավոր սեփականության հասկացությունն ամրագրվեց շատ երկրների քաղաքացիական օրենսդրությամբ, իսկ 1967թ. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն ստեղծելու մասին կոնվենցիան ընդունելուց հետո այն սրացավ միջազգային կիրառություն:

«Մտավոր սեփականություն» հասկացությունն օգտագործելիս նկատի է առնվում ոչ նյութական բնույթի ուժով առանձնահատուկ կարգավորում պահանջող հարուկ տեսակի սեփականություն, քանի որ հեղինակային իրավունքի, արտոնագրի, ապրանքային նշանի օբյեկտ են ոչ մարմնական (ոչ նյութական) իրերը¹¹⁸: Ինչպես նշում է մտավոր սեփականության տեսության հիմնադիրներից մեկը՝ բելգիացի իրավաբան Պիկարդը, գյուտի, արդյունաբերական նմուշի և մոդելի, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման և այլնի նկատմամբ իրավունքները *հատուկ մտավոր* սեփականություն են, և դրանց նկատմամբ իրավունքներն էապես փարբերվում են իրերի նկատմամբ սեփականության իրավունքից¹¹⁹: Սեփականության այդ տեսակը գենետիկորեն կապված է բանականության մարդու մտածողության, շրջապատող աշխարհի ճանաչման և ստեղծագործողի հետ: Սեփականության այդ տեսակն իրերի նկատմամբ սեփականության իրավունքի հետ ընդհանուր ոչինչ չունի¹²⁰:

Կարևոր է մատնանշել, որ «մտավոր սեփականություն» եզրույթը պայմանական է¹²¹: «Մտավոր սեփականություն» եզրույթն օգտագործում է ինչպես Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը, այնպես էլ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը¹²² (140 հոդվ. և բաժին փասնետրոդ): Ըստ ՏՏ քաղ. օր.-ի 1100 հոդվածի՝ մտավոր սեփականության օբյեկտներ են համարվում.

1) գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները.

2) կատարումները, հնչյունագրերը (ֆոնոգրամները) և հեռարձակող կազմակերպությունների հաղորդումները.

3) գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները.

4) սելեկցիոն նվաճումները և այլն:

Վերը շարադրվածը հիմք է փալիս եզրակացնելու, որ *մտավոր սեփականությունը պայմանականորեն օգտագործվող հավաքական հասկացություն է, որն օգտագործվում է ստեղծագործական գործունեության օբյեկտիվ և ևս սրացած արդյունքների ու դրանց հավասարեցված այլ օբյեկտների ստեղծման և օգտագործման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունների միասնական կարգավորման ու դրանց մասնակիցների իրավունքների պահպանման համար*:

Մտավոր գործունեության արդյունքները, ի փարբերություն իրային իրավունքների, ստեղծագործական աշխատանքի արդյունք են ոչ նյութական օբյեկտներ, որոնք ար-

¹¹⁷ Այդ մասին ավելի մանրամասն տես **Сергеев А. П.** Право интеллектуальной собственности в Российской Федерации. Учебник, Изд-во "Проспект". М., 1999, էջեր 10-11:

¹¹⁸ Տես **Розенберг.** Основы патентного права США. М., 1979, էջ 42:

¹¹⁹ Տես **Ա. Պ. Մերգեն,** նշված աշխատությունը, էջ 13:

¹²⁰ Ճիշտ կլիներ «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով» նորմն ամրագրել Սահմանադրության 40-րդ հոդվածի 2-րդ մասում:

¹²¹ Տես **Коммерческое право.** Учебник. Под ред. проф. **В. Ф. Попондопуло, В. Ф. Яковлевой.** С-Пб, 1998, էջ 179:

¹²² Այսուհետև՝ Քաղ. օր.:

փահայրվում են փառերով, թվերով, ձայնային միջոցներով, այլ նշաններով, խորհրդանիշերով և առավել հաճախ ամրագրվում են որոշակի նյութական կրիչների վրա (թուղթ, ժապավեն, կրավ, քար, կավ և այլն), բայց դրանով չեն դադարում ոչ նյութական օբյեկտները: Այդ իսկ պարճառով մտավոր սեփականության օբյեկտների պահպանության և օգտագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները հանդիսանում են քաղաքացիական հարաբերությունների հարուկ փարարեսակ և կարգավորվում են քաղաքացիական իրավունքի ինքնուրույն ենթաճյուղի՝ մտավոր սեփականության նորմերով:

Նշված ենթաճյուղը ներառում է հարաբերականորեն ինքնուրույն չորս ինստիտուտներ՝ հեղինակային և հարակից իրավունքներ, արտոնագրային իրավունք, քաղաքացիական շրջանառության մասնակիցների և նրանց կողմից արտադրվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների (աշխատանքի) անհատականացման միջոցների իրավական պահպանության ինստիտուտ և մտավոր սեփականության ոչ ավանդական (հարուկ) օբյեկտների իրավական պահպանության ինստիտուտ:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է քաղաքացիական, քրեական, վարչական, աշխատանքային և Նայաստանի Նանրապետության իրավական համակարգի մեջ մտնող իրավունքի այլ ճյուղերով:

Այդ ճյուղերի մեջ մտավոր սեփականության պաշտպանության համար գործնականում առավել հաճախ կիրառվում են քաղաքացիական իրավունքով նախատեսված պաշտպանության եղանակները, որովհետև իրավունքի այդ ճյուղը ոչ միայն զուգակցում է սուբյեկտիվ իրավունքների իրականացման, պահպանության և պաշտպանության փոխկապակցված կարգավորումը, այլև նախատեսում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության բազմապիսի եղանակներ: Մասնավորապես, մտավոր սեփականության հարաբերությունները կարգավորող օրենքները նախատեսում են, որ իրավունքների իրավավերերը (հեղինակ, արտոնագրատեր, գործատու և այլն) իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով, դատական կարգով, իրավունքները խախտողից կարող են պահանջել՝

ա) իր իրավունքների ճանաչում.

բ) մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վրանգ պարունակող գործողությունների խափանում (դադարեցում), (կասեցում)¹²³.

գ) նմանակված օրինակների, դրանց պարրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում.

դ) վնասի հատուցում (ներառյալ՝ բաց թողնված օգուտը)՝ օրենքով սահմանվող կարգով.

ե) հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում, որն իրավաբերը կստանար, եթե իրավախախտողը թույլվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը.

զ) դատական վճռի հրապարակում Նայաստանի Նանրապետությունում գործող գանգվածային լրատվության միջոցներով՝ դատարանի կողմից նախատեսված չափով և մասով, իրավախախտողների միջոցների հաշվին.

¹²³ Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը «խափանման» փոխարեն օգտագործում է «կասեցում» եզրույթը: Նշված պարագայում «կասեցում» եզրույթն օգտագործել չէր կարելի, որովհետև կասեցումը ժամանակավոր միջոցառում է, և կասեցումը դադարելուց հետո իրավունքը խախտող գործողությունները կարող են շարունակվել:

է) իր իրավունքների պաշտպանության հետ կապված՝ Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների կիրառում:

Մտավոր սեփականության պաշտպանության մարնանշված միջոցները բացառիկ իրավունքների պաշտպանության համար կիրառվող առավել գործնական հիմնական միջոցներն են: Բացի մարնանշված միջոցներից, իրավաբաններն իրենց իրավունքների պաշտպանության համար կարող են օգտվել նաև Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներից:

Մտավոր սեփականության քաղաքացիաիրավական պաշտպանության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դատարանը պարտավոր է կիրառել իրավունքների պաշտպանության, ինչպես նաև հայցի ապահովման հարուկ միջոցներ: Մասնավորապես, հեղինակային և հարակից իրավունքների խախտումը կամ խախտման վրանգը կանխելու նպատակով դատարանը պարտավոր է կատարել՝

ա) ենթադրյալ նմանակված (կոնֆրաֆակտ) օրինակների պատրաստումը, վաճառքը, արտահանումը և այլ եղանակներով օգտագործումը.

բ) քաղաքացիական շրջանառություն մտցնելու նպատակով նմանակված հայտարարվող օրինակները պահելը, փոխադրելը կամ այլ եղանակով փրապետելը:

Դատարանն իրավասու է նաև կիրառել հայցի ապահովման օրենսդրությամբ նախատեսված հարուկ միջոցներ: «Նեղինակային և հարակից իրավունքների մասին» ՏՏ օրենքի /այսուհետ՝ ՏՏԻՄՕ/ 69-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատարարության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ արգելանք դնել ստեղծագործությունների, տվյալների բազաների, հնչունագրերի կամ տեսագրությունների ենթադրվող նմանակված (կոնֆրաֆակտ) բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա:

Դատարանն իրավունք ունի արգելել նմանակված օրինակների, ներառյալ՝ ներմուծված, օրինակների մուտքն առևտրային ցանց այդ ապրանքների մաքսագերծումից հետո, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել, որ այն օրինակները, որոնք նմանակված են ճանաչվել, հանվեն առևտրային ցանցից իրավախախտողի հաշվին՝ առանց իրավափրոջը վնաս պատճառելու, կամ ոչնչացվեն:

Մտավոր սեփականության իրավունքի այնպիսի խախտման դեպքում, որի համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն, դատարանը ներկայացված կամ հետագայում ներկայացվելիք քաղաքացիական հայցի ապահովման նպատակով իրավունք ունի կալանք դնել ենթադրվող նմանակված (կոնֆրաֆակտ) բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա, անհրաժեշտության դեպքում՝ դրանք առգրավել և ոչնչացնել (ՏՏԻՄՕ, հոդվ. 69):

Բացի վերոհիշյալից, Նայաստանի Նանրապետության օրենսդրությանը համապատասխան հեղինակության յուրացումը, համահեղինակություն պարտադրելը, մինչև հայտ ներկայացնելն առանց հեղինակի համաձայնության հայտի էության հրապարակումը, ինչպես նաև ներկայացված գյուրի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի էությունը մինչև պաշտոնական հրապարակումը պետական արտոնագրային փորձագետի կողմից բացահայտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

ՆՈՒՎԱԾ 31.1

Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Նասարակության անդամներն իրենց կենսագործունեությունն ապահովելու նպատակով հանդես են գալիս գնորդի, հաճախորդի, փարբեր ծառայություններից և աշխատանքների արդյունքներից օգտվողի, այսինքն՝ սպառողի կարգավիճակում: Սպառողների պահանջները վճռորոշ են դառնում շուկայական տնտեսության պայմաններում, քանի որ ձեռավորում են սոցիալական պարզեր, թելադրում առաջարկի բնույթը, խթանում տնտեսական առաջընթացը: Միաժամանակ, շուկայական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց կարելի է սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մասնավորապես՝ ապրանքների և ծառայությունների ազատ ընտրության, դրանց պարզաճ որակի և անվտանգության ապահովման, լիարժեք և հավասարի փոխկապվածության փրամադրման, ճշմարտագիտ օգտագործման, վնասի փոխհատուցման և այլ իրավունքների իրականացման երաշխիքների ստեղծումը, հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը:

Ջարգացած երկրներում նախատեսված են սպառողների սոցիալ-տնտեսական, իրավական պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր, գործում են պետական և հասարակական ինստիտուտներ, ծավալվում սոցիալական շարժումներ: Աշխարհում առավել փարածված է կոնսյումերիզմը («consumer»-«սպառող» բառից), որը որպես սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հասարակական շարժում ձեռավորվել է XX դարի սկզբին Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ շուկայական գների անհարկի բարձրացումը կանխելու նպատակով: Կոնսյումերիզմը մեծ փարածում է գրել Արեւմտյան Եվրոպայում, Ճապոնիայում և այլուր: Արեւմտյան Եվրոպայի երկրներում սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքներ ընդունվել են XX դարի 70-ական թվականներին: Իսկ 1985թ. ապրիլի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհուրդն ընդունել է թիվ 39/248 բանաձեռը, որը բովանդակում է «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքները»: Նկատի ունենալով ողջ աշխարհում և հատկապես զարգացող երկրներում սպառողների շահերն ու կարիքները, ընդունելով, որ սպառողները հաճախ գրնվում են անհավասար վիճակում՝ տնտեսական պայմանների, կրթական մակարդակի, գնողունակության և այլ առումներով, կարելի էր սպառողների՝ անվտանգ ապրանքներ ձեռք բերելու իրավունքը, ինչպես նաև գիտակցելով արդարացի, իրավահավասար և կայուն տնտեսական ու սոցիալական զարգացմանն աջակցելու անհրաժեշտությունը՝ սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքները պարտավորեցնում են ՄԱԿ-ի անդամ երկրներին՝ իրականացնել սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականություն, ընդլայնել միջազգային համագործակցությունն այս ոլորտում: Վերոնշյալ բանաձեռից բացի, ընդունվել է Եվրամիության հրահանգը՝ «Անձին և նրա առողջությանը պարճառված վնասի համար պարտասխանաբարության մասին», որը ներառում է դրույթներ՝ սպառողներին պարճառած վնասի համար արտադրողի և վաճառողի պարտասխանաբարության մասին:

Տնտեսավարող սուբյեկտները, արտադրողները, զանազան ապրանքների բաշխման ուղիների մասնակիցները կարարում են սպառողների, իրենց մրցակիցների շահերը ուրանահարող փարբեր խախտումներ: Դրանք արտահայտվում են բազմաթիվ ձեւերով՝ գների արհեստական ուժնացում, անորակ ապրանքների արտադրություն եւ վաճառք, արտադրության եւ իրացման մենաշնորհ, շուկայի բաժանում, շուկայում մրցունակ ապրանքների մուտքի բացառում կամ սահմանափակում, մրցակիցների գործարար համբավի նկատմամբ ուրնձգություն, ժամկետանց ապրանքների իրացում, կեղծ գովազդ, սպառողներին մոլորության մեջ գցող գործողություններ եւ այլն: Ուստի սպառողների շահերի պաշտպանության նպատակով պետությունն իրականացնում է իրավաստեղծ գործունեություն՝ ուղղված համապատասխան նորմատիվ իրավական ակտերի ընդունմանը եւ անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծմանը, ինչպես նաեւ ձեռնարկում համապատասխան միջոցներ՝ ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների որակի վերահսկողության, անորակ, վնասակար ու ժամկետանց ապրանքատեսակների վաճառքի բացահայտման, սպառողներին լիարժեք տեղեկատվության ապահովման, քաղաքակիրթ առեւտրի ու սպասարկման կանոնների սահմանման ու պահպանման, հնարավոր ռիսկերի կանխատեսման ու դրանց կանխարգելման, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Սպառողներին հեղաբարձում են ապրանքի որակին վերաբերող բոլոր հատկանիշները՝ ապրանքի տեխնիկական բնութագիրը, անվտանգությունը, հուսալիությունը, երկարակեցությունը, շահավետությունը, ստանդարտացման (չափորոշվորման) աստիճանը, գեղագիտական նկարագիրը (արտաքին տեսքը, գույնը, ձեւավորումը), հարմարավետությունը եւ այլն: Ապրանքի որակը բնութագրող կարեւոր ցուցանիշ են չափորոշիչները (ստանդարտները), որոնք նախատեսում են որակին ներկայացվող գրեթե բոլոր պահանջները, հանդես գալիս որպես արտադրվող ապրանքների ու մատուցվող ծառայությունների տեխնիկական մակարդակի բարձրացման, սպառողական հատկությունների բարելավման տնտեսական, իրավական կարեւոր միջոց: Ապրանքի որակի ցուցանիշներ են նաեւ մականշումը, պիտակավորումը, փաթեթավորումը: Սպառողների կյանքի, առողջության եւ գույքի անվտանգությունն ապահովող պահանջները եւ միջոցները ենթակա են պարտադիր հավաստագրման (սերտիֆիկացման): Անհրաժեշտ է նաեւ սահմանված պահանջներին արտադրանքի (ապրանքների), աշխատանքների եւ ծառայությունների որակի համապատասխանության ստուգում եւ գնահատում՝ «Նամապատասխանության գնահատման մասին» ՏՏ օրենքի¹²⁴ համաձայն:

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունն առանձին հոդված չէր բովանդակում սպառողների իրավունքների մասին, իսկ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, ՏՏ Սահմանադրության երկրորդ գլուխը համալրվեց 31.1-րդ հոդվածով, ըստ որի՝ **պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:**

Սահմանադրության 31.1-րդ հոդվածը 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրված լրացուցիչ երաշխիք է սպառողների իրավունքների պաշտպանության համակարգում: Անհատ սպառողները եւ նրանց կազմակերպությունները 31.1-րդ հոդվածի գործողության շրջանակից դուրս, որպես սահմանադրական իրավունքների ու ազատությունների սուբյեկտներ, կարող են օգտագործել Սահմանա-

¹²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 30.06.04 /34 (333):

դրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության և ինքնապաշտպանության ողջ զինանոցը: Այս համարեքստում, մեկնաբանվող հոդվածն իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, երաշխավորման ընդհանուր համակարգը լրացնող սահմանադրական նորմ է, լրացուցիչ երաշխիք՝ նշված կարեգործիայի անձանց իրավունքների պաշտպանության համար, որից բխում են հետևյալ իրավադրությունները. ա/ պետությունը պարտավոր է պաշտպանել սպառողների շահերը, բ/ պետությունը պարտավոր է իրականացնել օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

«Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը» ձեռակերպման մեջ «պաշտպանություն» եզրույթն ունի ավելի լայն իմաստ, քան դրա սովորական իրավաբանական բովանդակությունն է /մինչև այս կամ այն իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակի վերականգնումը/: Այս հարցում պաշտպանությունը նախ և առաջ ենթադրում է պետության պարտականությունը երաշխավորել սպառողների շահերի իրավական ապահովման և պաշտպանության պարզաձև կառուցակարգը, այնուհետև գործի դնել, կենսագործել այդ կառուցակարգը:

Այսպիսով, սպառողների շահերի «պաշտպանության» առաջին բաղադրարարը դրա իրավական կարգավորման կառուցակարգի հիմնադրումն է: Երկրորդ բաղադրարարը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավապահպան և իրավապաշտպան գործունեությունն է՝ ուղղված սպառողների ուրանհարված իրավունքների ու շահերի պաշտպանությանը: Վերջապես, պետությունը պարտավոր է իրականացնել օրինական միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ: Այդ միջոցառումները պետք է նախատեսված լինեն օրենքով:

Այսպիսով, Սահմանադրության 31.1-րդ հոդվածի ուժով պետությունը կրում է պոզիտիվ սահմանադրական պարասխանաբովություն՝

- ընդունել օրենքներ, այլ նորմատիվ իրավական ակտեր՝ սպառողների իրավունքների ու օրինական շահերի, ինչպես նաև ապրանքներ արտադրող, ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող սուբյեկտների պարտականությունների, նրանց կողմից սպառողներին առաջարկվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակին ներկայացվող պահանջների մասին,

- պաշտպանել սպառողների, այսինքն՝ բոլոր նրանց շահերը, ովքեր իրենց կենսական պահանջները բավարարելու, ամենօրյա կարիքները հոգալու համար ձեռք են բերում փարատեսակ ապրանքներ, օգրվում բազմաթիվ ծառայություններից ու աշխատանքներից,

- օրենսդրորեն նախատեսել ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողությանն ուղղված միջոցառումներ, մշակել դրանց կառուցակարգերը և իրականացնել դրանք,

- ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ՝ անորակ կամ ոչ պարզաձև որակի ապրանքներ արտադրող, ծառայություններ մատուցող և աշխատանքներ կատարող, սպառողների իրավունքները խախտող սուբյեկտների նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությամբ՝ «օրենքով նախատեսված» լինելու պահանջն առաջին հերթին ենթադրում է պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված գրավոր և հրապարակված օրենքի առկայություն, որպեսզի փյվյալ միջոցառումները որոշակի հիմք ունենան ներպետական իրավունքում, նախանշ-

ված լինեն օրենքում¹²⁵: Տերտելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին՝ կարող ենք արձանագրել, որ «օրենքով նախատեսված միջոցառումներ» արտահայտությունը, ըստ էության, նշանակում է, որ սպառողներին առաջարկվող ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները պետք է սահմանված լինեն օրենքով եւ նորմալիվ իրավական այլ ակտերով, ինչպես նաեւ պետության կողմից իրականացվեն ներպետական օրենսդրությանը համապատասխան պատշաճ ընթացակարգերով:

Մեր երկրում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները, ՏՏ Սահմանադրության հիման վրա, կարգավորվում են ՏՏ քաղաքացիական օրենսգրքով¹²⁶, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»¹²⁷, «Լիցենզավորման մասին»¹²⁸, «Ստանդարտացման մասին»¹²⁹, «Չափումների միասնականության ապահովման մասին»¹³⁰, «Նամապատասխանության գնահատման մասին»¹³¹, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»¹³¹, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»¹³², «Ջայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին»¹³⁴, «Գովազդի մասին»¹³⁵ ՏՏ օրենքներով, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակին ներկայացվող պարտադիր պահանջները սահմանող տեխնիկական կանոնակարգերով եւ այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով:

Սպառողական կրեդիտավորման ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՏՏ օրենքով¹³⁶: Առևտրի եւ ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգման, ինչպես նաեւ սպառողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակ ունի «Առևտրի եւ ծառայությունների մասին» ՏՏ օրենքը¹³⁷:

Սպառողների շահերին վերաբերող հիմնահարցերը կանոնակարգվում են նաեւ ՏՏ միջազգային պայմանագրերով: Եթե ՏՏ միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սպառողների իրավունքների մասին ՏՏ օրենքներով, ապա կիրառվում են ՏՏ միջազգային պայմանագրերի նորմերը:

¹²⁵ Stin Hasan and Chaush v. Bulgaria, Judgment of 26 October 2000, p. 210 (Հասանը եւ Չաուշն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը, 2000թ. հոկտեմբերի 26, կետ 210), Sunday Times v. the United Kingdom, Judgment of 26 April 1979, p. 47, 49 (Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, 1979 թ. ապրիլի 26, կետեր 47, 49), տե՛ս նաեւ Rotaru v. Romania. Judgment of 4 May 2000, p. 52. (Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, 2000թ. մայիսի 4, կետ 52), Amann v. Switzerland, Judgment of 16 February 2000, p. 50 (Էյմանն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճիռը, 2000թ. փետրվարի 16, կետ 50):

¹²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 05.05.1998:

¹²⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 02.08.01/ 25 (157): Օրենքն ընդունվել է 26.06.2001թ., փոփոխվել՝ 21.12.2002թ., 19.07.2005թ., 23.01.2009թ.:

¹²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 08.08.01 / 26 (158):

¹²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 06.12.99 / 30 (96):

¹³⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 30.06.04 / 34 (333):

¹³¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 30.06.04 / 34 (333):

¹³² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 15.12.00 / 30 (128):

¹³³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 30.11.05 / 74 (446):

¹³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 23.06.00 / 14 (112):

¹³⁵ Տե՛ս Ազգային ժողովի տեղեկագիր, 1996/10, 04.06.1996:

¹³⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 23.07.08 / 47 (637):

¹³⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 28.12.04 / 72 (371):

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք)՝

- կարգավորում է սպառողների և արտադրողների (կապարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ընթացքում ծագող հարաբերությունները,

- սահմանում է սպառողների կողմից պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) և դրանք արտադրողների (կապարողների, վաճառողների) մասին տեղեկատվության ստացման, սպառողների շահերի պետական և հասարակական պաշտպանության իրավունքները, ինչպես նաև նախատեսում այդ իրավունքների իրականացման մեխանիզմը:

Օրենքն ամրագրում է, որ սպառողը բացառապես անձնական, ընտանեկան, փնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է: Սպառողների շրջանակը լայն է: Որպես սպառող կարող է հանդես գալ յուրաքանչյուր ոք, ով իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձանցից կամ անհատ ձեռնարկատերերից սահմանված կարգով ձեռք է բերում անհրաժեշտ ապրանքներ կամ պայմանագրային հիմունքներով օգտվում որոշակի ծառայություններից ու աշխատանքներից: Իր իրավունքները պաշտպանելու համար սպառողը պետք է իրազեկված լինի, անհրաժեշտության դեպքում կարող է դիմել սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և պետական մարմիններին, այդ թվում՝ օգտվի դատական պաշտպանության իրավունքից: Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սպառողների իրազեկման իրավունքն ապահովվում է կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական ու նորմատիվ փաստաթղթերում և հանրակրթական ու մասնագիտական ծրագրերում համապատասխան պահանջներ ընդգրկելով, ինչպես նաև սպառողների իրավունքների և այդ իրավունքների պաշտպանության անհրաժեշտ գործողությունների մասին տեղեկատվական համակարգերի կազմակերպման միջոցով:

Սպառողի իրավունքն է ձեռք բերել իր պահանջները բավարարող, որակյալ ու անվտանգ ապրանքներ, ծառայություններ ու աշխատանքներ: Ապրանքներ արտադրող, փոխադրող և իրացնող սուբյեկտների պարտականությունն է ապահովել ապրանքների անվտանգությունն սպառողի կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար՝ դրանք ձեռք բերելու, փոխադրելու, պահելու, օգտագործելու բոլոր փուլերում, ինչպես նաև ծառայություններ առաջարկող ու աշխատանքներ կատարող սուբյեկտների պարտականությունն է երաշխավորել աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացի անվտանգությունը, փրամադրվող ծառայությունների և աշխատանքների պատշաճ որակը: Ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին ներկայացվող պահանջները նախատեսվում են պայմանագրում: Եթե պայմանագրում որակի վերաբերյալ պայմանները բացակայում են, ապա վաճառողը (կապարողը) պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար նման ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) սովորաբար օգտագործվում է, համապատասխանում է ներկայացվող պահանջներին, չունի թերություն կամ որակի էական խախտում:

Ապրանքի, աշխատանքի կամ ծառայության թերությունը անհամապատասխանությունն է նորմատիվ փաստաթղթերին, պայմանագրի պայմաններին կամ դրանց որա-

կին սովորաբար ներկայացվող պահանջներին, իսկ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտումները չվերացվող, ինչպես նաև այնպիսի խախտումներն են, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, եւ նման բնույթի այլ խախտումներ: Ձեռք բերված ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերություն կամ որակի էական խախտում հայտնաբերելու դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝

ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում,

բ) գնման գնի համաչափ իջեցում,

գ) նմանօրինակ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում,

դ) այլ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով,

ե) առուվաճառքի պայմանագրի լուծում:

Վերջին դեպքում սպառողը պարտավոր է վերադարձնել թերություններով ապրանքը: Սպառողն իրավունք ունի պահանջել ոչ պարզաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքով իրեն պարճառված վնասի լրիվ հատուցում:

Սպառողը պետք է ձեռք բերի պիտանիության ժամկետի մեջ գրնվող ապրանք: Նամաճայն ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 1090-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պարճառված վնասը ենթակա է հատուցման, եթե այն ծագել է ապրանքի (աշխատանքի, ծառայության) պիտանիության ժամկետի ընթացքում, իսկ եթե պիտանիության ժամկետ սահմանված չէ՝ ապրանքը թողարկելու, աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու օրվանից տասը տարվա ընթացքում:

Ելնելով սպառողների շահերից՝ արգելվում է ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը) սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո, ինչպես նաև այն ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը), որի համար պետք է սահմանված լինեն պիտանիության կամ ծառայության ժամկետ, բայց չի սահմանվել:

Արտադրողը (կատարողը) պարտավոր է ծառայության ժամկետ սահմանել երկարատև օգտագործման այն ապրանքի (աշխատանքի) համար, որը սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո կարող է վնաս պարճառել սպառողի կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին: Այդպիսի ապրանքների (աշխատանքների) անվանացանկը հաստատում է ՏՏ կառավարությունը:

Պիտանիության եւ ծառայության ժամկետներից բացի, սահմանվում է նաև երաշխիքային ժամկետ: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ապրանքի (աշխատանքի) թերության հայտնաբերման դեպքում արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է բավարարել սպառողի պահանջները: Այդ պահանջների բավարարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև վաճառողի պատասխանարվությունը սահմանվում են սպառողի եւ վաճառողի միջև կնքված պայմանագրով կամ ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ապրանքի թերությունների վերացման դեպքում երաշխիքային ժամկետը երկարաճվում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում ապրանքը չի օգտագործվել:

Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաճայն՝ եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվրանգ օգտագործման, դրա պահման, փոխադրման, օգտահանման համար անհրաժեշտ է պահպանել հատուկ կանոններ, ապա արտադրողը (կատարողը)

պարտավոր է դրանք նշել ապրանքի (աշխատանքի, ծառայության) պարկանելիք փաստաթղթերում, պիտակի վրա՝ մականշվածքով կամ այլ եղանակով, իսկ վաճառողը (կատարողը) պարտավոր է այդ կանոնների մասին տեղեկացնել սպառողին:

Եթե պարզվել է, որ ապրանքի (աշխատանքի) օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոնները սպառողի կողմից պահպանելու դեպքում ապրանքը (աշխատանքը) վնաս է պատճառում կամ կարող է վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը և գույքին, ապա արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է անհապաղ դադարեցնել դրա արտադրությունը (իրացումը) մինչև վնասի պատճառի վերացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միջոցներ ձեռնարկել այն շրջանառությունից անհապաղ հանելու և սպառողից, նրա համաձայնությամբ, հեղուկացնելու համար: Ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) հեղուկացնելիս սպառողին պատճառված վնասը ենթակա է հատուցման արտադրողի (կատարողի) կողմից՝ լրիվ չափով: Սպառողին պատճառված վնասի փոխհատուցման պահանջները կարող են բավարարվել վաճառողի (արտադրողի, կատարողի) կողմից՝ կամավոր կամ դատարանական կարգով: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ սպառողն իրավունք ունի պահանջել արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է տրամադրել հայերենով: «Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգի»¹³⁸ համաձայն՝ ապրանքների մասին տեղեկատվությունն սպառողի համար պետք է լինի միանշանակ, հասկանալի, ամբողջական և հավասարի:

Սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով ՀՀ կառավարությունը սահմանում է սպառողական ապրանքների շուկաներում առևտրի, մեծածախ և մանրածախ առևտրի, կենցաղային սպասարկման, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում առևտրի կանոնները, գների, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի և անասնաբուժական դեղամիջոցների վաճառքի առանձնահատկությունները, սպառողների էլեկտրատրանսպորտային տրանսպորտի տեխնիկական շահագործման և այլ կանոններ:

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անվտանգության ապահովման նպատակով դրանց որակի նկատմամբ վերահսկողություն են իրականացնում լիազորված պետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված՝ իրենց իրավասության սահմաններում: Այդ մարմիններն են՝

- Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը,
- Հայաստանի Հանրապետության փոքրածախ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը,
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը,
- սանիտարական հսկողություն, սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողություն, անասնաբուժության, բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտում, ջրային համակարգում, բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող և այլ մարմինները:

¹³⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 26.12.02 / 58 (233):

Շուկայի եւ սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը սպանդարագման, չափումների միասնականության ապահովման, համապարասխանության հավաստման եւ առեւտրի բնագավառներում պետական կառավարման լիազորված մարմնի կազմում գործող գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը ՏՏ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սպասարկումների, ծառայությունների եւ արտադրանքի որակի ապահովման բնագավառներում իրականացնում է վերահսկողական գործառնությունը՝ հանդես գալով Նայաստանի Նանրապետության անունից¹³⁹:

Տեսչությունը, ի թիվս այլ գործառնությունների, պետական վերահսկողություն է իրականացնում արտադրանքն արտադրելու, իրացնելու, օգտագործելու (շահագործելու), պահելու, փոխադրելու եւ օգտահանելու փուլերում, ինչպես նաեւ աշխատանքների, ծառայությունների մատուցման ժամանակ արտադրանքի կամ ծառայության նորմափվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջների եւ համապարասխանության պարտադիր հավաստման կանոնների պահպանման նկատմամբ:

ՏՏ փնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, կարգավորելով եւ վերահսկելով փնտեսական մրցակցությունը, նպատարում է ձեռնարկարիտության զարգացմանն ու սպառողների շահերի պաշտպանությունը: Նանձնաժողովն աշխատանքներ է կատարում անբարեխիղճ մրցակցության դրսևտրումները հայտնաբերելու, որոշ փնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվող եւ իրացվող ապրանքների ապրանքային նշանի բառային, գունային եւ պատկերային համադրությունների ապօրինի օգտագործման փաստերը կանխելու ուղղությամբ: Նանձնաժողովը նման արարքները որակում է որպես սպառողներին մոլորեցում եւ նշանակում է փուզանք, կիրառում պարասխանարվության այլ միջոցներ¹⁴⁰:

«Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՏՏ օրենքի¹⁴¹ համաձայն՝ եթե հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սահմանվող սակագները, սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին եւ պայմաններին վերաբերող հարցեր, ապա հանձնաժողովը դրա մասին որոշամիտ ժամկետում իրազեկում է սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ նրանց ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռելով մասնակցելու նիստերին, հանդես գալու ելույթներով եւ առաջարկություններով:

Սպառողների իրավունքների պաշտպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի¹⁴² համաձայն:

Սպառողների իրավունքների պաշտպանությունն սպառողների հասարակական միավորումների կողմից իրականացվում է ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մեր երկրում սպառողների միությունն սրելով է 1994 թվականին, այնուհետեւ ձեւավորվել են այլ կազմակերպություններ, որոնք հետամուտ են սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը, այս ոլորտում իրավախախտումների կանխմանը:

¹³⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 04.06.03 / 31 (266):

¹⁴⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 15.12.00 / 30 (128):

¹⁴¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 04.02.04 / 7 (306):

¹⁴² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/21(196), 21.06.02:

Սպառողների իրավունքները խախտող սուբյեկտները ենթակա են վարչական կամ քրեական պատասխանատվության: ՆՏ քրեական օրենսգրքի¹⁴³ 212-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն ու պարիժ է սահմանում թերաչափելու, թերակշռելու, թերահաշվելու, ապրանքի (ծառայության) սպառողական հարկանիշների կամ որակի վերաբերյալ սպառողներին թյուրիմացության մեջ գցելու կամ այլ ձևով խաբելու, 279-րդ հոդվածը՝ անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելու կամ իրացնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու համար, իսկ 280-րդ հոդվածը բովանդակում է առանց գրանցման կամ հարուկ թույլտվության (լիցենզիայի) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությանը զբաղվելու հանցակազմերը:

Այսպիսով, Նայասրանի Նանրապետությունում սպառողների իրավունքների պաշտպանությունը սահմանադրական պահանջ է, պետության սոցիալ-տնտեսական, իրավական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը, ուստի կարևոր են սպառողների պաշտպանության երաշխիքների գործուն համակարգի ստեղծումը, միջազգային փորձի ուսումնասիրումն ու կիրառումը:

ՆՈՂՎԱԾ 32

- 1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընդրության ազատություն:***
- 2. Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաեւ անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:***
- 3. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը եւ սահմանափակումները սահմանվում են օրենքով:***
- 4. Մինչեւ 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը եւ պայմանները սահմանվում են օրենքով:***
- 5. Նարկոտիկ աշխատանքն արգելվում է:***

1. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության մեջ 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով կարարված համալիր փոփոխություններն ընդգրկեցին նաեւ քաղաքացիների աշխատանքային իրավունքների բնագավառը, ինչը, անշուշտ, պայմանավորված է քննարկվող ոլորտի իրավական կարգավորումը կյանքի արդիական պայմաններից բխեցնելու եւ այն միջազգային իրավական չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Աշխատանքի ազատ ընտրության եւ դրա հետ սերտորեն կապված մյուս աշխատանքային իրավունքները նախատեսված են Նիմնական օրենքի 32 եւ 33-րդ հոդվածներում:

¹⁴³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, Պաշտոնական վերահրատարակություն, Երեւան, 2007:

ՏՏ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն¹⁴⁴: Տիմնական օրենքը ձեռնպահ է մնում «աշխատանքի ընտրության ազատություն» եզրույթը վերծանելուց, հետևաբար՝ դրա մեկնաբանությունները կատարվում են աշխատանքային օրենսգրքի նորմերի բովանդակությունը պարզաբանելու օգնությամբ:

Աշխատանքի ընտրության ազատությունը ներառում է հետևյալ փաստերը.

ա) աշխատելու և չաշխատելու ազատությունը,

բ) մասնագիտություն, զբաղմունքի (գործունեության) փոփոխելու ազատությունը,

գ) քաղաքացու (անձի) կողմից իր աշխատուժը սեփական հայեցողությամբ փոփոխելու ազատությունը:

Մեկնաբանվող սկզբունքի հիմքում ընկած են ամենից առաջ միջազգային իրավական ակտերի դրույթները: ՏՏ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն վավերացված միջազգային պայմանագրերը Նայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Նայաստանի Նանրապետությունը վավերացրել է միջազգային մի շարք համաձայնագրեր (կոնվենցիաներ), որոնց ուժով քաղաքացիները, բացառությամբ որոշ դեպքերի, ազատված են աշխատելու պարտականությունից:

«Աշխատանքի ազատություն» արտահայտությունը լայն հասկացություն է, ուստի անհրաժեշտ է մեկնաբանել՝ ըստ առանձին բաղկացուցիչների:

«Աշխատանքի ազատություն» հասկացությունն ամենից առաջ ներառում է աշխատելու հարցի լուծման ազատությունը կամ որոշակի աշխատանք կատարելուն ազատորեն համաձայնելը: Նանրօգուտ աշխատանքով զբաղվելը բացառապես փվյալ անձի իրավունքն է և չի կարող որևէ մեկի կողմից պարտադրվել նրան: Ոչ ոք պարտավոր չէ հիմնավորել իր կողմից հանրօգուտ աշխատանք չկատարելու շարժառիթներն ու նպատակները: Աշխատելու կամ չաշխատելու հարցը որոշելիս ոչ ոք կաշկանդված չէ իր իրավանախորդների կամ ցանկացած այլ անձի կարծիքով և պարտավոր չէ դրա արդյունքում վերանայել իր որոշումը: Աշխատանք կատարելուն պարտադրելը կամ հարկադիր աշխատանք կիրառելն առաջացնում է դրանում մեղավոր անձանց, այդ թվում՝ պետական մարմինների ներկայացուցիչների պարասխանարվություն՝ ՏՏ օրենսդրությանը համապատասխան: Անձին աշխատելուն պարտադրելը կամ նրա հարկադիր աշխատանքը կիրառելը թույլատրվում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

«Աշխատանքի ազատության» դրսեւորումներից մեկն էլ անձի կողմից մասնագիտություն, զբաղմունքի փոփոխելու և գործունեության վայր ընտրելու ազատությունն է: Մասնագիտության (դրա շրջանակներում՝ մասնագիտացման) և որոշակի փոփոխելու աշխատանքի ընտրությունը բացառապես փվյալ անձի իրավունքն է և չի կարող որևէ մեկի կողմից պարտադրվել նրան: Ոչ ոք պարտավոր չէ հիմնավորել այս կամ այն փոփոխելու աշխատանքի ընտրության շարժառիթներն ու նպատակները: Որոշակի փոփոխելու աշխատանքի

¹⁴⁴ Ի դեպ, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական ակտերում աշխատանքի իրավունքը մախատեսված է այլ ձևակերպմամբ: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի և աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Նույնպիսի ձևակերպում ունի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (1966թ.) 6-րդ հոդվածը, որի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որը ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար:

փանք ընտրելիս ոչ ոք կաշկանդված չէ իր իրավանախորդների կամ ցանկացած այլ անձի կարծիքով և ցանկություններով և պարտավոր չէ վերջիններիս արդյունքում վերանայել իր ընտրությունը:

Քաղաքացիներն ազատ են աշխատանք (գործունեության տեսակ) ընտրել ինչպես իրենց ձեռք բերած մասնագիտության շրջանակներում, այնպես էլ դրանցից դուրս: Քաղաքացիներն ազատ են մեկից ավելի մասնագիտություններ ընտրելու և փոքրեր մասնագիտությունների գծով աշխատանք կատարելու հարցում:

Քաղաքացիներն ազատ են գործունեության վայր ընտրելիս: Նրանք ազատորեն ընտրում են այն գործատուին (իրավաբանական անձին, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին), որի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելով պետք է տնօրինեն իրենց ֆիզիկական և մտավոր կարողությունները:

«Աշխատելու ազատությունը» ներառում է քաղաքացիների կողմից իրենց ֆիզիկական և մտավոր կարողություններն օրենքով չարգելված ցանկացած այլ ձևերով, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովելու, գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու, սրբեղծագործական գործունեությամբ զբաղվելու և այլ եղանակներով տնօրինելու իրավաբանական հնարավորությունը (իրավունքը):

«Աշխատանքի ազատությունը» ներառում է նաև քաղաքացու կողմից իր աշխատուժը սեփական հայեցողությամբ տնօրինելը: Այս դրույթի շնորհիվ դադարում են գործել այն սահմանափակումները, որոնք սոցիալիստական աշխատանքային օրենսդրությունը սահմանում էր աշխատանքը համարելողների և իրենց աշխատուժն այլ կերպ ազատորեն տնօրինելու ցանկություն ունեցող քաղաքացիների համար:

Աշխատանքի ազատության սկզբունքը վերաբերում է աշխատանքային հարաբերություններում աշխատողի կարգավիճակով հանդես եկող բոլոր ֆիզիկական անձանց՝ անկախ նրանց քաղաքացիությունից, սեռից, ռասայից, դավանանքից, ազգային պատկանելությունից, բնակության վայրից, սոցիալական ու գույքային դրությունից, ինչպես նաև անձի գործարար հարկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից: Այս կանոնից բացառությունները սահմանվում են օրենքով:

Պետք է նշել, սակայն, որ աշխատանքի ազատության սկզբունքն առանց վերապահության գործել չի կարող: Ելնելով բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից՝ օրենքը սահմանափակում է մեկնաբանվող սկզբունքը՝ հստակ ընդգծելով դրա առանձին փոքրերի, այդ թվում՝ աշխատելու և չաշխատելու հարցի լուծման, մասնագիտություն, զբաղմունքի տեսակ և գործունեության վայր ընտրելու և քաղաքացու կողմից իր աշխատուժը սեփական հայեցողությամբ տնօրինելու ազատության շրջանակները:

Ինչպես նշվեց, քաղաքացիներն ազատ են աշխատելու և չաշխատելու հարցը որոշելիս: Այս իրավունքն ամրագրված է Նայաստանի Նանրապետության կողմից վավերացված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրում (1966թ. դեկտեմբերի 16), Նարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին Ժնևի 1930թ. հունիսի 28-ի և Նարկադիր աշխատանքի վերացման մասին Ժնևի 1957թ. հունիսի 25-ի կոնվենցիաներում, որոնք միաժամանակ սահմանում են այն աշխատանքների սպառիչ ցանկը, որոնք հարկադիր կամ պարտադիր չեն համարվում: Նիշյալ սկզբների համաձայն՝ «**հարկադիր կամ պարտադիր աշխատանք**» եզրույթի մեջ չեն ընդգրկվում որևէ աշխատանքը կամ ծառայությունը, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող կամ

այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը, ռազմական բնույթի որեւէ ծառայությունը, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է քաղաքական ու կրոնական-էթնիկական շարժառիթներով գինվորական ծառայությունից հրաժարվելը՝ այդ շարժառիթներով գինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ծառայությունը, որեւէ ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին ու առողջությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում, որեւէ աշխատանքը կամ ծառայությունը, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

Քաղաքացիները կարող են օրենքով սահմանված կարգով, առանց իրենց համաձայնության, ներգրավվել վերը թվարկված աշխատանքներում, ինչը հարկադիր աշխատանքի կիրառում կամ աշխատանքի կատարման պարտադրում չի համարվում, ուստի եւ դրանք կազմակերպողների եւ իրականացնողների համար պատասխանատվություն չի առաջացնում:

Աշխատանքի ազատության սկզբունքն անվերապահորեն կիրառվել չի կարող նաեւ զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու հարցում: Առանձին աշխատանքներ կատարելու կամ պաշտոններ զբաղեցնելու, ինչպես նաեւ որոշակի գործունեությամբ զբաղվելու համար գործող օրենսդրությունը սահմանում է մի շարք պայմաններ, այդ թվում՝ քաղաքացիությունը, փարիքը, կրթությունը, աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը եւ այլն, որոնց բացակայությունն իրավաբանորեն բացառում է տվյալ աշխատանքը կատարելու, պաշտոնն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը: Փաստորեն, տվյալ դեպքում աշխատանքի ազատության սկզբունքի կենսագործումը կախված է օրենսդրությամբ նախատեսված պահանջները քաղաքացու կողմից բավարարելուց:

Բացի դրանից, զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու՝ քաղաքացու հնարավորությունը (իրավունքը) կարող է սահմանափակվել քրեական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Մասնավորապես, Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ ՆՏ քր. օր.) մի շարք հանցագործությունների կատարման համար, որոնք հիմնականում կապված են անձի կողմից որոշակի պաշտոններ զբաղեցնելու հետ, իբրեւ ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարիժ (պարժարեսակ) նախատեսում է որոշակի պաշտոններ վարելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (ՆՏ քր. օր., հոդվ. 49, կետ 2, հոդվ. 50, մաս 2): ՆՏ քր. օր.-ի 52-րդ հոդվածի համաձայն որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում (այդ թվում՝ պետական, մասնավոր եւ հասարակական) որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է (1-ին մաս): Նույն հոդվածի համաձայն որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես հիմնական պարիժ սահմանվում է երկուսից յոթ փարի ժամկետով՝ դիտավորյալ հանցագործությունների համար, եւ մեկից հինգ փարի ժամկետով՝ անզույշ հանցագործությունների համար, իսկ որպես լրացուցիչ պարիժ՝ մեկից երեք փարի ժամկետով (2-րդ մաս): Փաստորեն, դատարանի կողմից այդպիսի պարիժի դատապարտվելու դեպքում նույնպես անձը զրկվում է իր հայեցողությամբ զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու իրավաբանական հնարավորությունից: Իհարկե, այս սահմանափակումն ունի ժամանակավոր բնույթ եւ ժամանակի ընթացքում դադարում է աշխատանքի ազատության իրավունքի իրականացման համար խոչընդոտ

հանդիսանալուց:

Որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից քաղաքացին կարող է զրկվել նաև Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով (այսուհետ՝ ՀՀ ՎԻՎՕ) նախատեսված դեպքերում և կարգով: ՀՀ վարչական օրենսգիրքը, որպես վարչական փույժի առանձին տեսակ, սահմանում է հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու, որսորդության) քաղաքացուն զրկելը (հոդվ. 23): Նույն օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ իրավունքից զրկումը կիրառվում է մինչև երեք տարի ժամկետով՝ այդ իրավունքից օգտվելու կարգը կոպիտ կերպով կամ սխալեմադրիկաբար խախտելու համար: Որսորդությանը զբաղվելու իրավունքից զրկում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, ում համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է (ՀՀ ՎԻՎՕ, հոդվ. 29, մաս 4): Փաստորեն, վարչական վարույթն իրականացնող մարմնի կողմից հիշյալ տեսակի վարչական փույժի ենթարկված քաղաքացին իրավունք չունի որոշակի ժամանակահատվածում զբաղվել գործունեության որոշակի տեսակով:

Աշխատանքի ազատության սկզբունքը ենթարկվում է նաև այլ սահմանափակումների, որոնք պայմանավորված են քաղաքացու (նաև այլ անձի) առողջության պահպանման, նրա կրթական ու բարոյական դաստիարակության իրավունքների պահովման անհրաժեշտության հետ, որը սոցիալական և իրավական պետությանը ներկայացվող հիմնական պահանջներից մեկն է: Այս իմաստով ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը որոշակի արգելքներ են սահմանում երեխաների, հաշմանդամների, կանանց (այդ թվում՝ հղի) համար կատարելու որոշակի տեսակի աշխատանքներ:

Աշխատանքի ազատության սկզբունքը՝ քաղաքացու կողմից իր աշխատուժն ազատորեն (սեփական հայեցողությամբ) փոփոխելու իմաստով նույնպես ենթարկվում է որոշակի սահմանափակումների: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացիների իրավունքների սահմանափակումները կարող են սահմանվել միայն օրենքով: Ինչպես ՀՀ հիմնական օրենքը, այնպես էլ մի շարք այլ օրենքներ պարունակում են քաղաքացու կողմից իր աշխատուժն ազատորեն փոփոխելու իրավունքի սահմանափակումներ: Խոսքը վերաբերում է քաղաքացու կողմից մեկից ավելի աշխատանքների կատարմանը (համատեղությանը), ինչի հնարավորությունը սահմանափակված է օրենքով: Այդպիսի սահմանափակումներ սահմանված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ (պարզամտավորների, նախարարների համար), այնպես էլ այլ օրենքներով (դատավորների, դատախազների, ԱԺ աշխատակազմում պետական ծառայություն անցնող անձանց, քաղաքացիական ծառայողների, համայնքային ծառայողների, հատուկ պետական և պետական այլ ծառայողների համար):

2. Բացի աշխատելու հնարավորությունից, մարդու համար շար կարևոր են պայմանները, որոնցում ընթանում է նրա աշխատանքային գործունեությունը: Որպեսզի կանխի աշխատանքային գործունեության նվաստացնող, անարդար, առողջությունը քայքայող պայմանների գոյությունը՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասն աշխատանքի ոլորտում երաշխավորում է հետևյալ իրավունքները.

1/ Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: Աշխատավարձն աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատող-

ղին վճարվող հատուցումն է: Կոնկրետ աշխատողի աշխատավարձը սահմանվում է աշխատանքային պայմանագրով: Արդարացի աշխատավարձի երաշխիքներից է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափը, որից աշխատողի աշխատավարձը չի կարող պակաս լինել:

2/ Յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է երաշխավորվեն պարզաճ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ: Աշխատողի անվտանգությունը եւ առողջությունն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի եւ առողջության պահպանման համակարգ է: Սահմանադրությամբ երաշխավորված այս իրավունքից բխում են հետևյալ իրավադրույթները.

ա/ պետությունը պարտավոր է սահմանել աշխատողի անվտանգության եւ առողջության պահպանման իրավական կանոններ՝ ամրագրելով դրանք օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով: Այդ կանոնների սահմանումը պետք է կատարվի աշխատանքային գործունեության /տնտեսության/ բոլոր ոլորտներում: Աշխատանքի անվտանգության ու հիգիենայի պահանջները պարտավոր է ապահովել գործատուն: Օրենսդրությունը պետք է նախատեսի նաեւ համապատասխան քաղաքացիական, վարչական, նյութական, քրեական սանկցիաներ, որոնք կոչված են կանխելու աշխատողի անվտանգության եւ առողջության պահպանման կանոնների խախտումները:

բ/ պետությունը պարտավոր է իրականացնել աշխատանքի անվտանգության ու հիգիենայի պահանջների ու կանոնների կատարման նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն: Այս պարտականության կատարման համար պետք է սրեղծվի փեսչական համակարգ, որի փնտրիչության փակ պետք է լինեն պետության ողջ փարածքը եւ տնտեսության բոլոր ոլորտները:

Աշխատանքի անվտանգության ու հիգիենայի պահանջների կենսագործման գործընթացին մասնակցում են նաեւ աշխատողները, արհեստակցական միությունները: Եվրոպական փորձին համապատասխան՝ պետությունը պարտավոր է սրեղծել կառավարական մարմինների, գործատուների եւ աշխատողների ու նրանց կազմակերպությունների պարբերական քննարկումների ու խորհրդատվությունների կառուցակարգ անվտանգության ու հիգիենայի պահանջները սոցիալական գործընկերության միջոցով լուծելու համար:

ՆՆ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասում աշխատանքի ոլորտում երաշխավորված այս իրավունքներին թղթակցում է գործազրկությունից պաշտպանվելու իրավունքը /տե՛ս 37-րդ հոդվածի մեկնաբանությունը/:

3. ՆՆ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը եւ սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Գործադուլի օրինականությունը որոշվում է մի շարք չափանիշներով, այդ թվում՝

- գործադուլի միջոցով հետապնդվող նպատակներով,
- գործադուլի հայտարարելու կարգով,
- գործադուլի մասնակիցների կազմով,
- գործադուլի իրականացնելու կարգով,
- գործադուլի իրավունքի սահմանափակումները պահպանելով:

Աշխատակիցների կողմից ներկայացված պահանջները գործադու կազմակերպելու համար հիմք հանդիսանալ չեն կարող, եթե դրանք հակասում են ՏՏ Սահմանադրությամբ սահմանված նպատակներին, այսինքն՝ կատարվում են այլ՝ ոչ սոցիալական, ոչ փնտրասական եւ ոչ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով: Օրինակ՝ գործադուի հիմքում չի կարող դրվել ղեկավար աշխատողին աշխատանքից ազատելու պահանջը¹⁴⁵: Դա հիմնավոր չէ այն պարճառով, որ ՏՏ աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատողը կարող է գործադուի նախաձեռնությամբ աշխատանքից ազատվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում (հոդվ. 113): Աշխատակիցների համար քննադատելի թվացող վարքագիծը, եթե այն չի առաջացնում գործադուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար օրենսդրությամբ նախատեսված հիմքերը, բավարար չէ աշխատողին աշխատանքից ազատելու համար: Աշխատակիցների կողմից ներկայացված մի շարք մեղադրանքներ, այդ թվում՝ «աշխատակիցների աշխատանքի արդյունքի գնահատման երկակի ստանդարտների կիրառումը», «արձակուրդից վերադարձած անձանց անօրինական ճանապարհով կամ խաբեությամբ աշխատանքից ազատելը» եւ այլն, նախ եւ առաջ, պետք է ապացուցվեն օրենքով սահմանված կարգով:

Գործադուի օրինական պարճառ չեն կարող հանդիսանալ նաեւ աշխատակիցների կողմից կազմակերպության կամ դրա առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար(ներ)ի հասցեին ներկայացված այնպիսի մեղադրանքներ (թեկուզեւ դրանք լինեն իրական ու փաստարկված), ինչպիսիք են, օրինակ՝ Ֆինանսական միջոցների անհարկի օգտագործումը, կազմակերպության գումարների փոշիացումը, սեփական կարծիք արտահայտող բանիմաց մասնագետների հեղապնդումը, կազմակերպության Ֆինանսական միջոցների աննպատակ կամ ոչ ճիշտ օգտագործումը եւ այլն: Անգամ իրական լինելու դեպքում այս հանգամանքները կոլեկտիվի աշխատանքային գործունեությանը չեն վերաբերում, չեն խախտում նրանց իրավունքներն ու օրինական շահերը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողները նաեւ կազմակերպության բաժնետոմսերի սեփականատեր են:

Գործադուի օրինական պարճառ չեն կարող համարվել նաեւ սոցիալ-փնտրասական բնույթ չունեցող այլ պահանջների չկատարումը, օրինակ՝ կազմակերպության կադրային սխալ կամ անհաշվենկատ քաղաքականության, կազմակերպության կամ դրա առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների անբավարար արդյունավետության խնդիրները եւ այլն: Որպես սոցիալական գործընկերության սկզբունքի կենսագործում՝ աշխատակիցները կազմակերպությանը կարող են ներկայացնել կազմակերպության գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու վերաբերյալ կոնկրետ գրավոր առաջարկություններ: Դրանք, սակայն, չեն կարող արտահայտվել պահանջի ձեով, պարտադրվել կազմակերպությանը եւ, ջրնդունվելու կամ լրիվ ջրնդունվելու դեպքում, հիմք ընդունվել գործադուի հայտարարելու եւ անցկացնելու համար:

Բացի դրանից, գործադու կարող է կազմակերպվել եւ անցկացվել *միայն աշխատողներ*ի փնտրասական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով, հեղապար, այլ անձանց շահերի պաշտպանության նպատակով աշխատակիցների ներկայացրած պահանջները գործադուի օրինական պարճառ հանդիսանալ չեն կարող:

¹⁴⁵ Այս եւ աշխատանքում վկայակոչվող մյուս օրինակները բերված են իրական դեպքերից, սակայն դրանք չեն կոնկրետացվել՝ ելնելով կազմակերպությունների ներքին հարցերն առանց իրենց համաձայնության չիրապարակելու անհրաժեշտությունից:

Գործադրույի իրականացման կարգը եւ պայմանները սահմանվում են ՏՏ աշխատանքային օրենսգրքով:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործադրույին ներկայացվող պահանջները պետք է լինեն պատճառաբանված: Ներկաբար, չհիմնավորված կամ ողջամիտ պատճառաբանություն չունեցող պահանջների չկատարումը չի կարող համարվել գործադրույի իրականացման բավարար հիմք:

Կազմակերպության արհեստակցական միության (դրա առկայության դեպքում) կողմից կառուցվածքային ստորաբաժանումում գործադրույ հայտարարելու համար պահանջվում է աշխատակիցների՝ գաղտնի քվեարկությամբ հաստատված հավանությունը: Ընդ որում, ՏՏ աշխ. օր.-ի 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ «եթե կազմակերպության ստորաբաժանումում գործադրույ հայտարարելը խոչընդոտում է կազմակերպության մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, ապա գործադրույ հայտարարելու մասին որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից, որը **չի կարող պակաս լինել կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի կեսից**»:

Գործադրույի իրականացման մի շարք սահմանափակումներ սահմանվում են ՏՏ գործող աշխատանքային օրենսգրքով: Մասնավորապես, օրենսգիրքը չի թույլատրում գործադրույ կատարել միայն այն պատճառով, որ գործադրույի գործողություններից դժգոհում են ընկերության մեկից ավելի աշխատողներ: Գործադրույ կատարելը կոլեկտիվ իրավունք է, որը չի կարող իրականացվել ընկերության հետ ունեցած բոլոր տեսակի փարաձայնությունները լուծելիս: ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի նախկին իրավակարգավորման համաձայն՝ «...գործադրույը կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու (ներառյալ՝ կոլեկտիվ բանակցությունները չկայանալու, հաշտեցման հանձնաժողովում հարցի քննարկումից հրաժարվելու) կամ հաշտեցման հանձնաժողովի՝ կոլեկտիվ աշխատանքային վեճը լուծված համարվելու եւ հաշտեցման գործընթացն ավարտվելու մասին աշխատողներին բավարարող որոշումը չկատարելու դեպքում աշխատանքների դադարեցումն է»: Օրենքի փառացի իմաստից բխում է, որ գործադրույ կարող է իրականացվել միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման առթիվ ծագող փարաձայնությունների առկայության դեպքում: Այլ առիթներով ծագած փարաձայնությունները քննվում եւ լուծվում են այլ եղանակներով: Տվյալ դեպքում, կոլեկտիվ պայմանագրի կնքման վերաբերյալ որեւէ փարաձայնություն չի եղել, այսինքն՝ փարաձայնությունը չի վերաբերում կոլեկտիվ պայմանագրի կնքմանը կամ կոլեկտիվ բանակցություններ վարելուց հրաժարվելուն:

ՏՏ սահմանադրական դատարանն իր՝ 7 փետրվարի 2007թ. ՍԴՈ-677 որոշման մեջ արձանագրել է, որ գործադրույի իրավունքը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման միջոց, որպես իրավական ինստիտուտ, ունի հանրային-իրավական բնույթ, քանի որ առնչվում է ոչ միայն «աշխատողներ - գործադրույ» իրավահարաբերություններին, այլեւ «աշխատողներ - երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ - պետական մարմիններ», «գործադրույ - պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Դատարանը նշել է նաեւ, որ, մասնավորապես, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16.12.1966թ.) 8 հոդվածում գործադրույի իրավունքի իրականացումը կապվում է արհեստակցական միությունների կազմավորման ու գործունեության երաշխավորման հետ: Նայաստանի Նանրապետության համար 2004թ. մարտի 1-ից ուժի մեջ մտած՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածը, որը վերնագրված է «Կոլեկտիվ գործարքների կնք-

ման իրավունքը», սահմանում է, որ կողմերը, կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով, շահերի բախման դեպքում ճանաչում են **աշխատողների և գործատուների համապեղ գործողությունների անցկացման իրավունքը՝ ներառյալ գործադուլների իրավունքը**: Միաժամանակ, նույն հոդվածում շեշտվում է, որ այդ իրավունքը ճանաչվում է այնպիսի պայմանով, երբ կողմերը կենթարկվեն նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից բխող պարտավորություններին:

Նայաստանի Նանրապետությունն սրանձնելով նման պարտավորություն է նկատի ունենալով Խարտիայի հավելվածում րվյալ նորմի վերաբերյալ արված պարզաբանումը, հիմք ընդունելով ՆՆ Սահմանադրության 43 հոդվածի 2-րդ մասի պահանջը, գործադուլի իրավունքի ապահովման օրենսդրական կարգավորման ժամանակ հաշվի պետք է առնի, որ.

ա) գործադուլի իրավունքի իրականացումը դիտարկվում է աշխատողների և գործատուների համապեղ գործողությունների անցկացման իրավունքի շրջանակներում և անմիջականորեն առնչվում է կոլեկտիվ աշխատանքային վեճերի առաջացման և դրանք կոլեկտիվ պայմանագրերի միջոցով լուծելու անհնարինության խնդրին,

բ) գործադուլի իրավունքը ճանաչվում է «...այն **պարտավորություններին ենթարկվելու պայմանով**, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»,

գ) բացի «բ» կետում նշված պայմանից և օրենքով նախատեսված այնպիսի սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության և հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանության համար (Խարտիայի 5-րդ մաս, հոդված «Է»), գործադուլի իրավունքի այլ սահմանափակումներ չեն կարող լինել, առավել ևս, եթե դրանք անհնարին են դարձնում նման պայմանի ու սահմանափակումների պայմաններում գործադուլի իրավունքի իրականացումը:

Դատարանը գտել է, որ.

1. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՆՆ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում և 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով և արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաև «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել նաև ՆՆ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված րվյալ ակտի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը:

Գործադուլը պարտադիր կերպով պետք է հաջորդի հաշտարար արարողակարգին: Դա բխում է ՆՆ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի բովանդակությունից, որի 2-րդ մասի համաձայն՝ «գործադուլ հայտարարելիս թույլատրվում է ներկայացնել միայն հաշտեցման ընթացակարգերի ժամանակ չբավարարված պահանջները»: Եթե

ՏՏ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով չի կազմակերպվել հաշվարար արարողակարգը, չկա նաև հաշվեցման հանձնաժողովի կողմից աշխատողների շահերը բավարարող եւ ընկերության կողմից չկատարված որոշում: Դա էլ իր հերթին նշանակում է, որ բացակայում են գործադուլ կատարելու իրավական հիմքերը:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ «եթե կազմակերպության ստորաբաժանումում գործադուլ հայտարարելը խոչընդոտում է կազմակերպության մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, սպա գործադուլ հայտարարելու մասին որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից, որը չի կարող պակաս լինել կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի կեսից»: Ներկաբար, կազմակերպության այն կառուցվածքային ստորաբաժանումում, որի աշխատանքից էլ պետք է կախված է ամբողջ կազմակերպության բնականոն գործունեությունը, գործադուլ կարող է հայտարարվել, եթե դրա օգտին կողմ է քվեարկել կազմակերպության ամբողջ կոլեկտիվի առնվազն կեսը:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի դրույթները հավասարապես փարածվում են ինչպես հիմնական, այնպես էլ նախազգուշական գործադուլի վրա: Մասնավորապես, նախազգուշական գործադուլը նույնպես պետք է իրականացվի քաղաքացիների փոքրամասնական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով (ՏՏ Մահմ., հոդվ. 32) եւ այն կարգին ու սահմանափակումներին համապատասխան, որն ամրագրված է ՏՏ աշխատանքային օրենսգրքով:

Այն, որ նախազգուշական գործադուլի նկատմամբ փարածվում են հիմնական գործադուլը կարգավորող նորմերը, ուղղակիորեն հաստատվում է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությամբ, որը պարունակում է «գործադուլը (ներառյալ՝ նախազգուշական)» արտահայտությունը: Նակառակը պնդելու դեպքում նշանակում է, որ նախազգուշական գործադուլը կարող է իրականացվել կողմին որոշակի պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ նրանից, թե կողմը բավարարելու է առաջադրված պահանջները, թե՛ ոչ: Նույն կարգով, եթե պնդենք, որ գործադուլի վերաբերյալ դրույթները չեն փարածվում նախազգուշական գործադուլի վրա, սպա, օրինակ՝ նախազգուշական գործադուլի իրավունք կունենան ոստիկանության աշխատողները, զինված ուժերի ծառայողները, անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերող ծառայությունների աշխատակիցները: Այս առումով անիմաստ կլինի պնդել, թե ՏՏ աշխ. օր.-ի 75-րդ հոդվածի համաձայն նրանց արգելված է հիմնական եւ ոչ թե նախազգուշական գործադուլը: Եթե հաշվի առնենք այն, որ գործադուլը (ներառյալ՝ նախազգուշական) կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման ծայրահեղ միջոցն է, սպա այն չի կարող նախորդել կոլեկտիվ աշխատանքային վեճերի քննարկման՝ ՏՏ աշխատանքային օրենսգրքով սահմանված արարողակարգին: Այս փաստարկը բխում է կոլեկտիվ փարածայնությունների ծագման, քննարկման եւ լուծման վերաբերյալ ՏՏ աշխատանքային օրենսգրքի նորմերի փրամաբանական հաջորդականությունից, հոդված 65՝ «պահանջների առաջադրումը», հոդված 66՝ «պահանջների քննարկումը», հոդված 67՝ «կիրառվող ընթացակարգերը», հոդված 68՝ «հաշվարար հանձնաժողովի ստեղծումը», հոդված 69՝ «կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը հաշվեցման հանձնաժողովի կողմից», հոդված 70՝ «հաշվեցման հանձնաժողովի որոշումը», հոդված 71՝ «կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը միջնորդի մասնակցությամբ», հոդված 74՝ «գործադուլը հայտարարելը» եւ այլն: Այսպիսով, ստացվում է, որ «փոքրամասնական, սոցիալական, աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով (ՏՏ Մահմ., հոդվ. 32)», «առա-

ջադրված պահանջները մերժվելուց հետո՝ նախնական հաշտարար արարողակարգին հաջորդելու մասին» (ՏՏ աշխ. օր. 65-69-րդ, 71-րդ հոդվածներ), «գործադուրը միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու, ներառյալ՝ կոլեկտիվ բանակցությունները չկայանալու, հաշտեցման հանձնաժողովում հարցի քննարկումից հրաժարվելու կամ հաշտեցման հանձնաժողովի որոշումը չկատարվելու մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 73), «գործադուր հայտարարելու մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 74), «գործադուր անցկացնելու սահմանափակումների մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 75), «գործադուրը ղեկավարող մարմնի մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 76), «գործադուրի ընթացքի մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 77), «գործադուրի օրինականությունը վիճարկելու մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 78), «գործադուրավորների իրավական վիճակի և երաշխիքների մասին» (ՏՏ աշխ. օր., հոդվ. 79) և մյուս բոլոր նորմերը հավասարապես վերաբերում են նաև նախագոյության գործադուրին:

ՏՏ Ազգային ժողովը 2009թ. մայիսի 20-ին ընդունած ՆՕ-130-Ն օրենքով ոչ միայն ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածը վերաշարադրեց նոր խմբագրությամբ, այլև ուժը կորցրած ճանաչեց 75-րդ հոդվածի 3-րդ մասը:

4. Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասը մարդու համար երաշխավորում է աշխատանքի ընտրության ազատություն: Այս դրույթից բխում է, որ ամեն ոք իրավունք ունի ազատորեն փնտրիներու իր աշխատանքային ընդունակությունները, ընտրելու մասնագիտություն և գործունեության տեսակ: Սակայն Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ 1-ին մասով բոլորի համար երաշխավորված իրավունքը սահմանափակված է 4-րդ մասում նախատեսված փարիքային հատկանիշով:

Իրենց ընտրանքին օգնելու, նրա հոգսերը թեթևացնելու, այլ հանգամանքների պարճառով շար անչափահասներ վաղ փարիքից, ուսմանը զուգահեռ կամ էլ ուսումը թողնելով, սկսում են աշխատել: Այս պարագայում չի կարելի երեխաներին ենթարկել փնտրեսական շահագործման: Նամաճայն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի՝ երեխան ունի փնտրեսական շահագործումից պաշտպանված լինելու և աշխատանքի իրավունք: Որպես երեխայի աշխատանքի իրավունքի երաշխիք՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ամրագրում է այդ իրավունքի երաշխիքը, այն է՝ «Յուրաքանչյուր երեխա ունի կրթությունը խոչընդոտող, նրա առողջությանը, ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը վնասող աշխատանք կատարելուց պաշտպանվածության իրավունք»: Միջազգային իրավական այս դրույթներին համապատասխան ներպետական օրենսդրությունը կարգավորում է երեխայի աշխատանքի իրավունքը: Սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները կայանում են հետևյալում.

ա/ մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: ՏՏ աշխ. օր.-ն ընդհանրապես արգելում է մինչև 14 տարեկան երեխային աշխատանքի ընդունելը: Ստացվում է, որ 14-16 տարեկան երեխան կարող է ընդունվել ոչ մշտական /ժամանակավոր/ աշխատանքի: ՏՏ աշխ. օր.-ն այդ իրավունքի կենսագործման պայման է համարում ծնողներից մեկի, որդեգրողի, հոգաբարձուի համաձայնությունը.

բ/ 14-16 տարեկան երեխաների ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները պետք է սահմանվեն օրենքով: Մասամբ այս հարաբերությունները կարգավորում է «Երեխայի իրավունքների մասին» ՏՏ օրենքը.

գ/ 16-18 տարեկան երեխան ունի իր փարիքային հնարավորություններին, առող-

ջական վիճակին եւ ունակություններին համապատասխան, օրենքով չարգելված աշխատանքային մշտական գործունեություն ծավալելու իրավունք:

Մշտական եւ ոչ մշտական աշխատանքային գործունեություն իրականացնող երեխաներն ունեն միջազգային պայմանագրերով, ներպետական իրավունքով երաշխավորված աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, այդ թվում՝

- աշխատանքային օրվա կարճ տևողության.

- չի թույլատրվում երեխային ներգրավել իր փարիքին ոչ համապատասխան, առողջությունը վնասող ու քայքայող աշխատանքներում, ծանր ֆիզիկական, գիշերային, թունավոր եւ ավտոմատացված արտադրամասերում աշխատանքը կարող է վնասել նրանց առողջությանը. ֆիզիկական եւ մտավոր զարգացմանը, խոչընդոտել լիարժեք կրթությանն ու դաստիարակությանը.

- արգելվում է երեխաների միջոցով ակտիվային խմիչքների եւ ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության եւ օգտագործման մեջ նրանց ներգրավումը.

- արգելված է երեխաներին կտրել կրթական գործընթացից եւ մասնակից դարձնել աշխատանքային գործունեությանը:

5. ՏՄ Սահմանադրության 32-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հարկադիր աշխատանքն արգելվում է: Այս հիմնադրույթը բխում է աշխատանքի ազատության սկզբունքից եւ, ըստ էության, վերջինիս բովանդակության անբաժանելի մասն է: Մեկնաբանվող սկզբունքը նույնպես բխում է միջազգային իրավական ակտերի բովանդակությունից: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազապ վիճակում: Հռչակագրի այս դրույթը, անշուշտ, ներառում է նաեւ հարկադիր եւ պարտադիր աշխատանքի արգելքը: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է բռնադատվի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի: Դրա ներքո պետք է հասկանալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքները: Ընդ որում, պարտադիր չէ, որ հարկադիր աշխատանքը կատարվի աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ որպես աշխատանքային պարտականություն: Նարկադիր աշխատանքի կիրառումն առկա է նաեւ այն դեպքում, երբ քաղաքացու կամքին հակառակ նրան հանձնարարվում է կատարել իրավունքի այլ ճյուղերի (ինստիտուտների) կարգավորման առարկան հանդիսացող՝ աշխատանք կատարելու հետ կապված այլ՝ կապալի, հանձնարարության, կոմիսիայի, գործակալման, ծառայությունների վճարովի մատուցման եւ այլ հարակից պայմանագրերի առարկան հանդիսացող պարտականություններ:

Նայաստանի Նանրապետության աշխատանքային օրենսգիրքը որպես աշխատանքային փարիք սահմանում է անձի 16, իսկ առանձին աշխատանքների կատարման համար՝ 14 փարիք լրանալը: Որոշակի փարիքի հասած լինելու՝ օրենքի պահանջն ինքնանպատակ չէ: Բոլոր դեպքերում, անկախ կատարվող աշխատանքի բնույթից եւ այլ հանգամանքներից, 14 փարիք չլրացած անձանց աշխատանքի կիրառումն արգելվում է: Տարիքային այդ սահմանը կանխորոշում է անձի զարգացման ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր ունակությունների որոշակի մակարդակը, որի շնորհիվ նա ի վիճակի է հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք: Այս իմաստով, եթե աշխատանքի է ներգրավվում 14 փարիք չլրացած անձը, ապա, անկախ այդ անձի ֆիզիկական կարողություններից, նրա նախնական համաձայնությունից եւ այլ հանգամանքներից, առկա է հարկադիր աշխատանքի կիրառում՝ դրանից բխող իրավա-

կան հետեւանքներով:

Աշխատանքային իրավունքի մեկնաբանվող սկզբունքի գործողությունը փարսածվում է ոչ միայն այն աշխատանքների վրա, որոնք հանդիսանում են աշխատանքային իրավունքի կարգավորման առարկան, այլև ընդգրկում է ֆիզիկական ուժի եւ մտավոր ունակությունների դրսեւորման մյուս բոլոր դրսեւորումները, ներառյալ՝ գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ րնտեսությունում սեփական կարիքների համար կազմակերպվող աշխատանքային գործունեությունը:

Երեխաներին հարկադիր աշխատանքի ներգրավելու իրավունք չունեն նաեւ նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալներն ու հոգաբարձուները՝ անկախ ՀՀ Սահմանադրությամբ եւ ընտանեկան օրենսդրությամբ երեխաների նկատմամբ իրենց ունեցած մյուս իրավունքներից ու պարտականություններից: Իրենց մանկահասակ երեխայի համար կրթություն ընտրելու նախապատվության՝ ծնողների իրավունքը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 26) չի ներառում երեխաներին որոշակի մասնագիտությամբ ուսումնառություն պարտադրելը կամ նրանց հարկադիր աշխատանքում ներգրավելը:

Մեկնաբանվող սկզբունքի միջազգային իրավական հիմունքները հանդիսացող սկզբերը սահմանում են այն աշխատանքների շրջանակը, որոնք **«հարկադիր կամ պարտադիր»** չեն համարվում: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանք չի համարվում.

1) *այն աշխատանքը, որը պետք է կատարի դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատարանով կալանքի տակ գրնվող կամ կալանքից պայմանականորեն ազատված անձը*: Քրեորեն պարժելի արարքների մեծամասնության համար օրենքը նախատեսում է ազատագրկում կամ այլ այնպիսի պարիժ, որը կրելու ռեժիմի պարտադիր փարրերից մեկը հանրօգուր աշխատանքի կատարումն է պարիժը կրելու կամ այլ վայրում: Որպես ուղղիչ նշանակություն ունեցող վճռական գործոն (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 17) հանրօգուր աշխատանքների կատարումը նախատեսված է իրականացնել գրեթե բոլոր պարժարեսակների ռեժիմում: ՀՀ քրեակատարողական օրենսգրքը (այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ), ուղղիչ աշխատանքների ձեւով պարիժը կրողներից բացի, նախատեսում է հանրային աշխատանքների կատարման, կարգապահական գումարտակում պահվելու, կալանքի, որոշակի ժամկետով ազատագրկման եւ այլ տեսակի պարիժներ կրող անձանց կողմից չվարձարվող աշխատանքների կատարումը (ՀՀ ՔԿՕ, հոդվածներ 33, 42, 49, 57, 88):

2) *զինվորական ծառայությունը կամ դրանից կրոնական կամ այլ շարժառիթով հրաժարված անձի այլընտրանքային ծառայությունը*: Այս բացառությունն ուղղակիորեն բխում է ՀՀ Հիմնական օրենքի պահանջներից: ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիների հիմնական պարտականություններից մեկը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելն է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես իսկական ժամկետային զինվորական ծառայությանը, այնպես էլ զինապարտության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարժական, հատուկ եւ այլ հավաքներին մասնակցությանը («Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29):

Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական պարտականություն է: Օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք եւ փախստականները զինապարտ

չեն, այսինքն՝ ժամկետային զինվորական ծառայության, վարժական եւ այլ հավաքների մասնակցելու պարտականություն չեն կրում: Ներուաբար, նշված անձանց հարկադրաբար ծառայության կամ վարժական հավաքների ուղարկելը կամ այլ գործողություններում իրենց կամքին հակառակ ներգրավելը դիտվում է իբրեւ հարկադիր աշխատանք՝ դրանից բխող իրավական հետեւանքներով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՏՄ աշխատանքային օրենսգիրքը, միջազգային իրավական ակտերին համապատասխան, արգելում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումը՝ անկախ անձի սահմանադրաիրավական կարգավիճակից եւ նրան բնութագրող այլ հարկանիշներից, ներառյալ՝ քաղաքացիությունից, աշխատանքային կենսագրությունից, հասարակական գործունեությունից, դատապարտությունից եւ այլն:

3) *տարերային աղետների ժամանակ բնակչության կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող վտանգի վերացման նպատակով իրականացվող փրկարար եւ այլ աշխատանքները*: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՏՄ օրենքի (ընդունվել է 1998 թվականի դեկտեմբերի 2-ին) 18-րդ հոդվածի համաձայն՝ ՏՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել արտակարգ իրավիճակների հետեւանքներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

ՏՄ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N134-Ն որոշմամբ հաստատված՝ «Արտակարգ իրավիճակների եւ քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Նայաստանի Նանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման եւ բնակչության ուսուցման կարգի» համաձայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն ու աշխատողները կարող են ինչպես աշխատանքից չկտրված, այնպես էլ կտրված ձեով մասնակցից դարձվել ուսումնամեթոդական հավաքներին, շտաբային ուսումնավարժություններին, հրամանադրաշտաբային ուսումնավարժություններին, համալիր, հատուկ փակփակ կազմակերպություններին, օբյեկտային վարժանքներին եւ այլ աշխատանքների: Վերոհիշյալ դեպքերում հանձնարարվող պարտականությունները հարկադիր կամ պարտադիր աշխատանք չեն համարվում, ուստի խոսք չի կարող լինել դրանք կազմակերպողների ու ղեկավարողների իրավական պատասխանատվության մասին:

Օրենքի պահանջն ուղղված է միայն ՏՄ քաղաքացիներին: Այլ կարգերիայի անձինք (քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրացիները) այդպիսի միջոցառումներին մասնակցել կարող են միայն իրենց ցանկությամբ: Ներուաբար, արտակարգ իրավիճակից բխող միջոցառումներին վերջիններիս՝ իրենց կամքին հակառակ ներգրավելը դիտվում է իբրեւ հարկադիր աշխատանքի կիրառում՝ դրանից բխող իրավական հետեւանքներով:

4) *սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ մտնող աշխատանքը*: ՏՄ գործող օրենսդրությունը չի սահմանում «սովորական քաղաքացիական պարտականություններ» արտահայտությունը: Դրա ներքո կարելի է հասկանալ այնպիսի պարտականությունների կատարում, որոնք բխում են բարոյական կամ սովորության նորմերի պահպանման նորմերից կամ հասարակական համակեցության կանոններից: Սովորական քաղաքացիական պարտականություններից պետք է տարբերել այն պարտականությունները, որոնց կատարումը նույնպես բխում է բարոյական նորմերի պահանջներից, սակայն այն տարբերությամբ, որ այդ պարտականությունները սահման-

ված են ՏՏ օրենսդրության ակտերով և դրանց չկատարումն առաջ է բերում իրավական, ներառյալ՝ քրեական, պատասխանատվություն: Խոսքը վերաբերում է Նայասարանի Նանրապետության ընդհանրական օրենսդրությամբ ծնողների՝ իրենց երեխաներին խնամելու և դաստիարակելու պարտականություններին: Դրանք նույնպես հարկադիր աշխատանք չեն համարվում, ուստի կարող են օրենքի ուժով պարտադրվել օրենքով սահմանված շրջանակի մեջ մտնող անձանց: Վերը նշված կատեգորիայի աշխատանքներից դուրս քաղաքացիներին՝ նրանց կամքին հակառակ ցանկացած այլ աշխատանքի կամ ծառայության մեջ ներգրավելը դիտվում է իբրև հարկադիր աշխատանքի կիրառում՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Վերլուծվող իրավադրույթի փառացի մեկնաբանությունը թույլ է փալիս պնդել, որ հարկադիր աշխատանքի կիրառումն արգելվում է նաև՝ *որպես իրավունքի ինքնապաշտպանության միջոց*: Այսինքն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումը չի կարող հիմնավորվել քաղաքացու աշխատանքային կամ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությամբ՝ որպես նրա կողմից չկատարված պարտավորության համար փոխհատուցման կամ հասցրած վնասի հատուցման միջոց: Նարկադիր աշխատանքի վերացման մասին Ժնևի 1957 թվականի հունիսի 25-ի կոնվենցիան վավերացնելու ուժով Նայասարանի Նանրապետությունը պարտավորվել է ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ իր փարածքում լրիվ և արագ վերացնելու հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերը, որոնք կարող են դրսևորվել որպես.

ա) քաղաքական ներգործության կամ դաստիարակության միջոց կամ որպես պատժամիջոց քաղաքական հայացքների կամ դրանց արտահայտման համար կամ քաղաքական, սոցիալական կամ Կրեմսական համակարգի գաղափարախոսությանն ընդդիմադիր հայացքների համար,

բ) աշխատուժի հավաքագրման և օգտագործման մեթոդ՝ Կրեմսական գարգացման նպատակներով,

գ) աշխատանքային կարգապահության միջոց,

դ) պատժամիջոց գործադրույին մասնակցելու համար,

ե) ռասայական, սոցիալական, ազգային կամ կրոնական խտրականության միջոց:

ՆՈՂՎԱԾ 33

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատատեղումներ, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն Կրեմսությունը սահմանվում են օրենքով:

Առանց հանգստի մարդու գործունեությունն ու աշխատանքն անհնարին է: Նանգիսպը որևէ գործունեությամբ զբաղվող և աշխատող մարդու բնական պահանջմունքն է, ուստի Մահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի հանգստի իրավունքը: Մահմանադրության 33-րդ հոդվածի առաջին դրույթում «յուրաքանչյուր ոք» եզրույթի օգտագործումը թույլ է փալիս պնդելու, որ մարդու հանգստի իրավունքն ավելի լայն բովանդակություն ունի, այն ոչ թե աշխատանքային ոլորտի կամ աշխատանքի իրավունքին հարակից իրավունք է, այլ սոցիալական իրավունք, քանի որ սպահովում է հասարակության և նրա անդամների սոցիալ-կենսաբանական, բնական պահանջմունքները: Այդպիսով, մեկնաբանվող հոդվածի առաջին դրույթի սուբյեկտներ են ոչ միայն աշ-

խափանքային պայմանագրով աշխատանքներ կատարող անձինք, ովքեր հանդիսանում են աշխատանքային իրավունքի սուբյեկտներ, այսինքն՝ աշխատող, այլև ֆիզիկական ուժ եւ մտավոր ունակություններ դրսևորող բոլոր անձինք:

Սահմանադրության 33-րդ հոդվածի «Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը եւ ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տեւողությունը սահմանվում են օրենքով» բանաձեւը մարդու հանգստի իրավունքի հատուկ երաշխիք է առանձին ոլորտում՝ աշխատանքային հարաբերություններում, որի կրող սուբյեկտն արդեն այդ հարաբերությունների մասնակից համարվող աշխատողն է, իսկ պարտավոր կողմը՝ գործատուն: Պետությունն այդ հարաբերություններում հանդես է գալիս երաշխավորի ու պաշտպանի դերում: Սահմանադրությունը պետության վրա դնում է ուղղակի պոզիտիվ պարտականություն՝ օրենքով սահմանել՝

ա/ առավելագույն աշխատաժամանակը,

բ/ հանգստյան օրերը,

գ/ ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տեւողությունը:

Հանգստի ժամանակն օրենքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողն օրենքի, այլ իրավական ակտի, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրի հիման վրա ժամանակավորապես ազատված է իր աշխատանքային պարտականությունների կատարումից, եւ պահպանվում է նրա աշխատատեղը, իսկ օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաեւ աշխատավարձը:

ՆՆ աշխատանքային օրենսգրքից (հոդվ. 151) բխում է, որ հանգստի իրավունքը ներառում է՝

ա) հանգստանալու եւ սնվելու համար փրամադրվող ընդմիջումից աշխատողի օգտվելու հնարավորության ապահովումը,

բ) աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում հանգստանալու համար լրացուցիչ եւ հատուկ ընդմիջումներից աշխատողի օգտվելու հնարավորության ապահովումը,

գ) աշխատանքային օրերի (հերթափոխերի) միջեւ ընկած անընդմեջ հանգստից աշխատողի օգտվելու հնարավորության ապահովումը,

դ) ամենշաբաթյա անընդմեջ հանգստից աշխատողի օգտվելու հնարավորության ապահովումը,

ե) ամենամյա հանգստից (արձակուրդից) աշխատողի օգտվելու հնարավորության ապահովումը:

Հանգստի իրավունքի ապահովումը պարտադիր է բոլոր գործատուների (քաղաքացիներ կամ կազմակերպություններ) համար՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական եւ սեփականության ձեւից:

Հանգստի իրավունքից հրաժարվելու մասին համաձայնությունն առջինն է:

Հանգստի իրավունքից օգտվելու՝ օրենքով նախատեսված կարգը եւ պայմանները միասնական են բոլոր աշխատողների համար՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից եւ ընտանեկան դրությունից, փախիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցությունների, արհեստակցական միությունների կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հարկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Առանձին կարեգործայի աշխատողներին լրացուցիչ հանգստի ժամանակ փրա-

մադրելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունը պայմանավորված է աշխատողների ֆիզիկական, ֆիզիոլոգիական և սոցիալական վիճակի առանձնահատկություններով:

Նանգստի իրավունքի իրականացումը չի կարող խոչընդոտվել կամ սահմանափակվել՝ ելնելով աշխատողի աշխատանքային վարքագծից: Մասնավորապես, հանգստի ժամանակի չորամադրման կամ սահմանափակման օրինական պարճառ չեն կարող համարվել աշխատողի կողմից գործատուի ներքին իրավական ակտերի պահանջները խախտելը, անբավարար որակավորումը կամ ցածր արտադրողականությունը և այլն:

Արձակուրդից օգտվելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, աշխատողի իրավունքն է, հետևաբար, այն չի կարող գործատուի կողմից պարտադրվել աշխատողին: Մասնավորապես, չի թույլատրվում աշխատողին պարտադրել ներկայացնել չվճարվող արձակուրդի փրամադրման մասին դիմում: Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները, այդ թվում՝ նաև աշխատողների ներկայացուցչական մարմինները պետք է հետևողականություն հանդես բերեն չվճարվող արձակուրդների փրամադրման օրինականությունն ստուգելու ուղղությամբ: Յուրաքանչյուր դեպքում պետք է ստուգվի այդպիսի արձակուրդ փրամադրելու հիմք հանդիսացող՝ ՏՏ աշխ. օր.-ի 176-րդ հոդվածում նշված փաստերի (հանգամանքների) առկայությունը և դրանք հաստատող փաստաթղթերի իսկությունը:

Եթե պարզվում է, որ աշխատողին չվճարվող արձակուրդի փրամադրումը կատարվել է աշխատանքային օրենսդրության նորմերի պահանջների խախտումով, ապա փրամադրված արձակուրդի ժամանակահատվածը պետք է դիվել որպես ոչ աշխատողի մեղքով հարկադիր պարատուրդի ժամանակահատված, և աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների որոշմամբ գործատուն պետք է պարտավորեցվի աշխատողին վճարել օրենքով նրան հասանելիք գումարները:

Աշխատողների հանգստի իրավունքն ապահովելու պարտականությունը և դրա փրամադրման կարգը պահպանելու համար պարտասխանավորությունը կրում է գործատուն: Գործատուն չի ազարվում օրենքով սահմանված պարտասխանավորությունից նաև այն դեպքում, երբ հանգստի ժամանակի փրամադրման կարգի խախտումը կատարվել է աշխատողի համաձայնությամբ կամ միջնորդությամբ:

Չի թույլատրվում արձակուրդը փոխարինել դրամական հատուցմամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ամենամյա նվազագույն արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում: Եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով աշխատողին չի կարող փրամադրվել ամենամյա արձակուրդ կամ աշխատողը չի ցանկանում դրա փրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում (ՏՏ աշխ. օր., հոդվ. 170, մաս 1):

Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ անկախ դրա գործողության ժամկետից: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար փրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի փրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար (ՏՏ աշխ. օր., հոդվ. 170, մաս 2):

Աշխատանքից ազարվելիս (բացառությամբ աշխատանքային օրենսգրքի 113-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով և 123-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերի) չօգտագործված ամենամյա արձակուրդը աշխատողի ցանկությանը փրամադրվում է ազատման փաթիլին, ամիսը, ամսաթիվը փեղափոխելու միջոցով (ՏՏ աշխ. օր., հոդվ. 168):

Առավելագույն աշխատաժամանակը սահմանվում է ՏՏ աշխատանքային օրենսգրքով: Օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ աշխատաժամանակի առավելագույն փետողությունը՝

1) ներառյալ՝ սույն օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված դեպքերում գործարտի պահանջով արտաժամյա աշխատաժամանակը, շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից.

2) ներառյալ՝ կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատաժամանակը, չի կարող անցնել օրական 12 ժամից (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները):

Առանձին կարեգործի աշխատողների (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող առողջապահական կազմակերպություններ, հոգաբարձության (խնամակալության) կազմակերպություններ, մանկական դաստիարակչական կազմակերպություններ, էներգամարակարարման, գազամարակարարման, ջրամարակարարման մասնագիտացված կազմակերպություններ, կապի և վթարների հետեւանքների վերացման մասնագիտացված ծառայություններ և այլն) աշխատաժամանակի փետողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին փետողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից: Նման աշխատանքների ցանկը սահմանում է Նայասարանի Նանրապետության կառավարությունը (ՏՏ աշխ. օր., հոդվ. 139, մաս 4):

Տարբեր գործարտների կամ նույն գործարտի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի փետողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից (ՏՏ աշխ. օր., հոդվ. 139, մաս 5):

Աշխատաժամանակի, ներառյալ՝ առավելագույն, սահմանման վերաբերյալ ՏՏ աշխատանքային օրենսգրքի պահանջները գործում են միայն այն դեպքում, երբ աշխատանքը կատարողի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

Քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող անձանց աշխատանքային գործունեության ժամանակահատվածը ենթակա չէ կանոնակարգման և որոշվում է կողմերի համաձայնությամբ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ դատական կարգով հաստատվում է, որ գործարտի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբերություններ: Այդ հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները (ՏՏ աշխ. օր., հոդվ. 7, մաս 6):

Աշխատաժամանակի սահմանման և առավելագույն աշխատաժամանակի պահպանման մասին օրենքի պահանջները չեն փարածվում ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովող անձանց կողմից իրենց պատկանող կամ իրենց փրապետմանը հանձնված փարածքում (փրամերձ հողամասում, այգում, առանձնափարանը և այլն) սեփական կարիքների կամ անձնական պահանջումներին փավարարման նպատակով իրականացվող աշխատանքների վրա: Այդ անձինք իրենց աշխատանքային և հանգստ-

յան ռեժիմը որոշում են իրենց հայեցողությամբ՝ առանց ենթարկվելու օրենսդրության նորմերի պահանջներին:

ՆՏ Սահմանադրության վերլուծվող իրավանորմի բովանդակությունից բխում է, որ օրենքով սահմանվում է հանգստի ժամանակի նվազագույն տևողությունը: Դա նշանակում է, որ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրի կողմերը կարող են սահմանել հանգստի ժամանակի այլ՝ ավելի երկար տևողություն և դրանից օգտվելու այլ արարոնյալ պայմաններ:

Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կարող են սահմանվել այլ տեսակի և ավելի երկար տևողությամբ արձակուրդներ, լրացուցիչ արժույթություններ՝ կապված ամենամյա արձակուրդի ընտրության ժամկետի հետ, ավելի մեծ վճարումներ ամենամյա և նպատակային արձակուրդի համար, քան սահմանված են աշխատանքային օրենսգրքով: Այդ արժույթությունները, բացառությամբ ամենամյա արձակուրդի ընտրության ժամկետի, չեն կարող տրամադրվել կոլեկտիվ և աշխատանքային այն պայմանագրերով, որոնց կողմ են հանդիսանում պետական կամ համայնքի բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունները, պետության մասնակցությամբ հիմնադրված հիմնադրամները, Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկը (ՆՏ աշխ. օր., հոդվ. 1):

Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերը չեն կարող բովանդակել այնպիսի պայմաններ, որոնք աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքային պայմանների համեմատ վարթարացնում են աշխատողի դրությունը: Եթե կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով սահմանված պայմանները հակասում են աշխատանքային օրենսգրքին, օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին, ապա այդ պայմաններն իրավաբանական ուժ չունեն (ՆՏ աշխ. օր., հոդվ. 6, մաս 1, պարբ. 2):

Աշխատանքային օրենսգրքի ընդհանուր մասի այս դրույթներից բխում է, որ կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով չի կարող նախատեսվել աշխատաժամանակի՝ օրենքով նախատեսված առավելագույն տևողությունը գերազանցող ժամկետ կամ հանգստի ժամանակի՝ օրենքով սահմանված նվազագույն տևողությունից պակաս ժամանակահատված:

ՆՈՂՎԱԾ 33.1

1. Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք:

2. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

3. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

1. Մեկնաբանվող հոդվածը ՆՏ Սահմանադրության մեջ ներառվեց 2005թ. բարեփոխումների արդյունքում՝ հարուկ կարեւորելով թե՛ ձեռնարկատիրական գործունեության ազատության սահմանադրական մակարդակում երաշխավորումը և թե՛ ազատ

շուկայական փնտրման հարաբերությունների ձեւավորման օբյեկտիվ նախադրյալների ապահովման անհրաժեշտությունը:

Տայասրանի Տանրապետությունում ձեռնարկարիական գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, ՏՃ քաղաքացիական օրենսգրքով¹⁴⁶ եւ բազմաթիվ այլ նորմատիվ իրավական ակտերով: Ձեռնարկարիական գործունեություն¹⁴⁷ իրականացնելու իրավունքը Տայասրանի Տանրապետությունում դասվում է քաղաքացու սահմանադրական իրավունքների թվին, իրենից ներկայացնում է քաղաքացուն իր նպատակներին հասնելու համար վերապահված եւ օրենքով ու այլ նորմատիվ իրավական ակտերով ապահովված հնարավոր վարքագծի ծավալը: «Ծավալ» եզրույթն այս դեպքում ցույց է տալիս իրավագործ անձի թույլատրելի վարքագծի բովանդակությունն ու սահմանները: Այսպիսով, ձեռնարկարիական գործունեություն իրականացնելու իրավունքն իրավագործ անձին անսահման ազատություն չի վերապահում: Այդ վարքագիծը կարող է դրսեւորվել միայն նորմատիվ իրավական ակտերով սահմանված շրջանակներում, որոնք պարունակում են ինչպես վարքագծի պոզիտիվ կանոններ, այնպես էլ այս բնագավառում կիրառվող արգելքներ, այլ կերպ ասած՝ վարքագծի արտաքին սահմանները սահմանվում են օրենքով, որը կիրառում է ընդհանուր թույլտրության մեթոդը, ինչը նշանակում է, որ նորմատիվ իրավական ակտերը սահմանում են «արգելված վարքագծի շրջանակները» եւ ոչ թե մանրամասն կարգավորում թույլատրելի վարքագիծը: Սահմանադրական սկզբունքը՝ «թույլատրելի է ամեն ինչ, ինչ արգելված չէ», փնտրման հարաբերություններում բավականաչափ նույնական արտահայտում է անձի ազատության աստիճանը: Անհրաժեշտ է նաեւ նշել, որ ձեռնարկարիական գործունեություն իրականացնելու իրավունքի տեսանկյունից գործող օրենսդրությունը պարունակում է նորմատիվ կարգավորման երկու մակարդակ: Առաջինի էությունը կայանում է նրանում, որ օրենքը հստակ սահմանում է, թե ինչ է արգելում, օրինակ՝ Սահմանադրության նույն՝ 33.1-րդ հոդվածն արգելում է շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը եւ անբարեխիղճ մրցակցությունը, կամ ՏՃ քրեական օրենսգրքի¹⁴⁸ 188-րդ հոդվածը պարիժներ է նախատեսում ապօրինի ձեռնարկարիությամբ զբաղվելու համար: Ձեռնարկարիական գործունեության նորմատիվ կարգավորման երկրորդ մակարդակը նախատեսում է այդ իրավունքի իրականացման որոշակի ընթացակարգային կանոններ: Ձեռնարկարիական գործունեությունը (գործարարությունը) բարդ կարեգորիա է եւ այն ընկալվում է մի քանի՝ կազմակերպական, իրավական եւ այլ տեսակետներով:

Ձեռնարկարիությունը նախ եւ առաջ մարդկային գործունեության տեսակ է, փնտրման գործունեության տարատեսակ,¹⁴⁹ որը չի հանգում գործողությունների սովորական համակցությանը, այլ իր մեջ ներառում է փոխկապակցված եւ հաջորդաբար կարարվող գործողություններ, որոնք ուղղված են որոշակի նպատակի հասնելուն: Ձեռնարկարիական գործունեության հիմնական նպատակն է արտադրել (ստեղծել) եւ շու-

¹⁴⁶ ՀՀ ՊՏ 1998/17(50) 10.08.98. այսուհետ՝ նաեւ ՀՀ քաղ. օր.:

¹⁴⁷ Իրավաբանական գրականությունում «ձեռնարկարիական գործունեություն» եզրույթը քննադատության է արժանացել, մասնավորապես տե՛ս **Տ. Կ. Քարսեղյան**, «Գործարարական իրավունք», 2009, ԵՊՀ, էջեր 16-17, 39, սակայն նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությունը եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը օգտագործում են այս եզրույթը, հետագա շարադրամբում նույնպես կօգտագործվի այդ եզրույթը:

¹⁴⁸ ՀՀ ՊՏ 2003/25 (260). 02.05.03 հոդվ.407:

¹⁴⁹ Տե՛ս **Белых В. С.** Отношения в сфере предпринимательства как предмет предпринимательского права. Актуальные проблемы науки и практики коммерческого права. Wolters Kluwer. М. Выпуск 5. 2005, էջ 39: Միաժամանակ, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, ՌԴ Սահմանադրության 34 հոդվ. ուղղակիորեն նշում է, որ ձեռնարկարիական գործունեությունը տնտեսական գործունեության տարատեսակ է:

կայում առաջարկել այնպիսի աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցում, որոնք ունեն պահանջարկ և կապահովեն շահույթ¹⁵⁰: Շահույթ ստանալը ձեռնարկատիրական գործունեության կարեւոր, սակայն միակ նպատակը չէ: Ժամանակակից ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար շահույթն ապահովելու հիմնախնդիրը լուծելու հետ մեկտեղ, սկզբունքային նշանակություն է ձեռք բերում սեփական գործ (բիզնես) ստեղծելու հարցը, որի շրջանակներում էլ իրականացվում է ապրանքների արտադրությունը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը:

Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպական կողմը դրսևորվում է հետևյալում. մարդկային ցանկացած գործունեության հիմքում ընկած է նպատակամետ գործողությունը, որն իր հերթին ընկալվում է որպես պարզ, ընթացիկ կամ ամբողջական, համակարգային գործունեության միջանկյալ արդյունքի հասնելու խնդրի լուծմանն ուղղված գործընթաց: Գործողությունների համակցությունը մարդկային վարքագծի ավելի բարձր մակարդակի փարթ է (օրինակ՝ արտադրության կառավարում), իսկ մարդկային գործունեության ընթացքում կատարվող առանձին գործողությունների միջև գործնականում գոյություն ունի սերտ փոխկապակցվածություն ու փոխադարձ պայմանավորվածություն: Միեւնույն գործողությունը որպես առանձին փարթ կարող է հանդես գալ գործողությունների համակցության մեջ որպես բաղկացուցիչ մաս, և, հակառակը՝ գործողությունների համակցությունը կարող է իրագործվել փարթեր գործողությունների շնորհիվ:

Ինչպես նշվեց, Նայաստանի Նանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, ՆՆ քաղաքացիական օրենսգրքով և բազմաթիվ այլ նորմատիվ իրավական ակտերով: Սահմանադրությունը նախատեսում է միայն հիմնարար (ֆունդամենտալ) նորմեր, իսկ հիշատակված հարաբերություններն առավել մանրամասն կարգավորվում են հիմնականում քաղաքացիական օրենսդրությամբ: Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը կարգավորում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները: Այստեղից կարելի է հետևություն անել, որ այդ հարաբերությունները կարգավորվում են բացառապես քաղաքացիական իրավունքի նորմերով, այսինքն՝ ապրանք արտադրողների և վաճառողների, աշխատանքներ կատարողների և ծառայություն մատուցողների, նրանց և սպառողների միջև առաջացող հարաբերությունները կարգավորվում են մասնավոր իրավունքի նորմերով: Սակայն ձեռնարկատիրական գործունեություն սկսելու կամ իրականացնելու համար երբեմն անհրաժեշտություն է առաջանում դիմել պետական իրավասու մարմիններին, մասնավորապես, իրավաբանական անձի գրանցումն իրականացնելու, համապատասխան գործունեությամբ զբաղվելու թույլտվություն (լիցենզիա) ստանալու համար կամ հարկեր վճարելու դեպքում, և այդ հարաբերությունները կարգավորվում են ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավունքի մեթոդներով: Ներելաբար, քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող ձեռնարկատիրական հարաբերությունների համար կիրառվում են նաև իրավունքի այլ ճյուղերի (վարչական, ֆինանսական, էկոլոգիական և այլն) իրավունքի նորմերը:

Ձեռնարկատիրական գործունեության լեզալ բնորոշումը տրված է ՆՆ քաղ. օր.-ի 2-րդ հոդվածում, համաձայն որի՝ «ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագոր-

¹⁵⁰ Стів Бусыгин А. В. Предпринимательство: Основной курс. Учебник для вузов. М., 1997, էջ 18:

ծելուց, սպրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»։ Ձեռնարկատիրական գործունեության նորմատիվ հարկանիշները կարելի է պայմանականորեն բաժանել պարտադիր և ֆակուլտատիվ (կամընտրելի) հարկանիշների¹⁵¹։

Շահույթ ստանալը ձեռնարկատիրական գործունեության պարտադիր հարկանիշ է հանդիսանում, այսպես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՏՏ օրենքի¹⁵² 7-րդ հոդվածի համաձայն՝ բանկերն իրենց գործունեությունը համակարգելու, շահերը ներկայացնելու... նպատակով կարող են ստեղծել շահույթ ստանալու նպատակ չհետապնդող բանկային միություններ», մինչդեռ նույն օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է, որ բանկը կարող է ստեղծվել որպես բաժնետիրական ընկերություն, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՏՏ օրենքը¹⁵³ շահույթի հետ կապված բազում հարցեր լուծելու նպատակով բազմաթիվ նորմեր է պարունակում։

Ձեռնարկատիրական գործունեությունն այն իրականացնող սուբյեկտի կողմից իրականացվում է ինքնուրույն («Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՏՏ օրենքի¹⁵⁴ հոդված 1), որն էլ հաջորդ հարկանիշն է. ձեռնարկատիրոջ ինքնուրույնությունը նախ և առաջ ենթադրում է նրա անկախությունը պետական մարմիններից, հիմնարկներից և մասնավոր անձանցից։ Քաղաքացիները և նրանց միավորումներն իրենք են ձեռնամուխ լինում «սկսել սեփական գործը», ձեռներեցն ինքն է ընտրում գործունեության ոլորտը և իրականացնում այն։ Ինքնուրույնությունը դրսևորվում է նաև գործընկեր ընտրելու, պայմանագրեր կնքելու, ձեռնարկատիրական գործունեության արդյունքում շահույթ ստանալու, վնասներ կրելու և այլ հարցերում։ Ձեռնարկատիրական գործունեությունը պետք է իրականացվի պարբերաբար, և սա դրա հաջորդ հարկանիշն է, հակառակ դեպքում, մեկ անգամ գնման գնից բարձր գնով իր սպրանքը վաճառող քաղաքացին ինքնաբերաբար կդառնա ձեռներեց։ Ցավոք, պարբերականության հարկանիշն իր տեղը չի գտել ձեռներեցի կարգավիճակը սահմանող հիմնական նորմատիվ իրավական այնպիսի ակտերում, ինչպիսիք են ՏՏ քաղ. օր.-ը (հոդվ. 2) և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՏՏ օրենքը (հոդվ. 1), և այդ թերությունն է պարճառը, որ ՏՏ վճարելի դատարանը որոշում կայացնելիս հարկադրված է անդրադառնալ այս հարկանիշին՝ հղում կատարելով այլ օրենքների¹⁵⁵։

Ձեռնարկատիրական գործունեությունը ռիսկային գործունեություն է և իրավաբանական գրականությունում իր «երիտասարդության» պարճառով դեռևս խորապես ուսումնասիրության չի ենթարկվել, այնուամենայնիվ, ռիսկը փոխազդող արտաբնույթ հանգամանքների ներգործության հետևանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հավանականության անորոշությունն է¹⁵⁶։

¹⁵¹ Իրավաբանական գրականության մեջ սա միակ տեսակետը չէ. օրինակ՝ Վ. Ֆ. Պոպոնդուլոյն տարբերում է ընդհանուր և հատուկ, Ի. Վ. Երշովան՝ բովանդակային և ձևական. տե՛ս **Попондопуло В. Ф.** Правовой режим предпринимательства, էջեր 14-15, **Ершова И. В., Иванова Т. М.** Предпринимательское право: Учебник. 1999, էջ 68:

¹⁵² ՀՀ ԱԺՏ 1996/12, հոդվ. 153, ՀՀ 03.07.96/97-80:

¹⁵³ ՀՀ ՊՏ 2001/34 (166), 06.11.01, հոդվ. 831:

¹⁵⁴ Տե՛ս ՀՀ ՊՏ 2001/13 (145) 02.05.01 հոդվ. 309:

¹⁵⁵ Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի՝ թիվ 3-1161 (ՏԴ), 2007թ. քաղաքացիական գործով որոշումը:

¹⁵⁶ Տե՛ս **Տ. Կ. Բարսեղյան**, «Գործարարական իրավունք» 2009, ԵՊՀ, էջ 34: Մեկ այլ տեսաբանի կարծիքի համաձայն՝ ռիսկը ձեռներեցի գործունեության հավանական անբարենպաստ գույքային հետևանքն է, ինչը պայմանավորված չէ նրա կողմից թույլ տրված բացթողումներով. տե՛ս **Попондопуло В. Ф.** Правовой режим предпринимательства, էջ 17:

Պետական գրանցումը ձեռնարկափրակյան գործունեություն իրականացնելու կարևոր նախապայման է: Անձը կարող է ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվել նաև առանց պետական գրանցման, եթե պետությունը չարգելի: Ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվել ցանկացող սուբյեկտը գրանցվում է այն պարճառով, որ ձեռներեցի կարգավիճակ թե՛ Ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք ձեռք են բերում պետական գրանցման պահից: Գրանցումը օրինական կերպով (լեզիվիմ) գործելու հիմնական նախապայմանն է: Գրանցմամբ այդ գործունեությանը տրվում է օրինական կարգավիճակ, և ձեռներեցը հնարավորություն է ստանում իր անունից բացահայտ և ազատորեն զբաղվել ձեռնարկափրակյան գործունեությամբ: Իսկ եթե անձն առանց գրանցման զբաղվում է պարբերաբար շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ, ապա այդպիսի գործունեությունը համարվում է անօրինական՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Միաժամանակ, ՏՏ քաղ. օր.-ի 26-րդ հոդվածի համաձայն՝ առանց գրանցման պահանջի խախտման ձեռնարկափրակյան գործունեություն իրականացնող քաղաքացու կնքած գործարքների նկատմամբ դատարանը կարող է կիրառել ձեռներեցության իրականացման հետ կապված պարտավորությունների մասին կանոնները:

Այժմ անդրադառնանք ձեռնարկափրակյան գործունեություն իրականացնող սուբյեկտներին: Քաղաքացին իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու զբաղվել ձեռնարկափրակյան գործունեությամբ որպես անհատ ձեռներեց գրանցվելու պահից¹⁵⁷: Որպեսզի քաղաքացին գրանցվի որպես անհատ ձեռներեց, նա պետք է լինի գործունակ («Անհատ ձեռնարկափրոջ մասին» ՏՏ օրենքի հոդվ. 1), իսկ գործունակությունը լրիվ ծավալով ծագում է 18 տարեկան դառնալու պահից, սակայն ՏՏ քաղ. օր.-ի 24-րդ հոդվածը նախատեսում է կանոններ, որոնց պահպանման դեպքում 16 տարին լրացած անչափահասը կարող է ճանաչվել լրիվ գործունակ, հետևաբար՝ զբաղվել ձեռնարկափրակյան գործունեությամբ (Էմանսիպացիա): ՏՏ քաղ. օր.-ի 26-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներն առանց պետական գրանցման (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկափրեց գրանցվելու) իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկափրակյան գործունեությամբ, եթե հանդիսանում են արտոնագրային վճար վճարողներ կամ գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համարել գործունեության պայմանագիր: Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները ձեռնարկափրակյան գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն տվյալ համարել գործունեության պայմանագրի սահմաններում:

Ավելի բարդ է իրավիճակը ձեռնարկափրակյան գործունեության այլ սուբյեկտներին՝ իրավաբանական անձանց պարագայում: ՏՏ քաղ. օր.-ի 51-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առելորային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առելորային) կազմակերպություններ: Նամաձայն նույն հոդվածով սահմանված իմպերատիվ կանոնի՝ ոչ առելորային կազմակերպությունները կարող են զբաղվել ձեռնարկափրակյան գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք սրբեղծվել են, և համապատասխանում է այդ նպատակներին: Առելորային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են սրբեղծվել տնտեսական ընկերակցությունների (լիակատար և վարահության վրա հիմնված) և ընկե-

¹⁵⁷ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի հոդվ. 1, ՀՀ ՊՏ 2001/14(146), 18.05.01, հոդվ. 331:

րությունների (բաժնեփրակյան եւ սահմանափակ պարասխանարվությամբ), ինչպես նաեւ կոոպերատիվների¹⁵⁸ ձեով:

ՌԴ սահմանադրական դատարանը 24.02.2004 թիվ 3 Մ որոշմամբ¹⁵⁹ եկել է այն հետեւության, որ չարգելված ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվելու իրավունքը հիմք է ծառայում փնտեսական ընկերությունների մասնակիցների, մասնավորապես բաժնեփրակյան ընկերությունների բաժնեդերերի՝ եւ՝ իրավաբանական, եւ՝ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց սահմանադրաիրավական կարգավիճակը սահմանելու համար, որոնք իրենց իրավունքն իրագործում են պարտավորական իրավունքները հավասարող բաժնեփրակների միջոցով: Միաժամանակ, բաժնեդերերի գործունեությունը չի հանդիսանում ձեռնարկափրակյան, այն օրենքով չարգելված փնտեսական գործունեություն է, որը, ինչ խոսք, պարունակում է որոշակի ռիսկեր, քանի որ ինքը՝ բաժնեփրակյան ընկերությունն իրականացնում է իր բնույթով ռիսկային ձեռնարկափրակյան գործունեություն: Միաժամանակ, բաժնեդերերին կարելի է բաժանել երկու խմբի՝ ընկերությունում զգալի ներդրում ունեցող, հետեւաբար՝ ընկերության ռազմավարությունը կանխորոշելու եւ, երբեմն, ինքնուրույն եւ, միայնակ որոշումներ ընդունելու լեգիտիմ հնարավորություն ունեցող բաժնեդեր եւ այսպես կոչված, «միևնրիփար» բաժնեդեր, որի խնդիրն է բացառապես շահույթ ստանալը: Այս իրավիճակում զգալի ներդրում ունեցող բաժնեդերը փաստացի ձեռք է բերում բաժնեփրակյան ընկերության ամբողջ գույքի լիարժեք սեփականափրոջ կարգավիճակ¹⁶⁰: Այսպետեղ ի հայտ է գալիս սահմանադրաիրավական կարգավորման եւ իրավական իրականության փոխհարաբերության եւս մեկ հարթություն, երբ, ի փարբերություն իրավունքի այլ ճյուղերի, սահմանադրական իրավունքը պետք է հաշվի առնի նաեւ փաստացի ձեռք բերվող իրավագորությունները¹⁶¹:

2. Արդեն իսկ նշվել է, որ ձեռնարկատերը ձեռնարկափրակյան գործունեություն իրականացնելիս անսահման ազատությամբ օժտված չէ. այն միջավայրը, որտեղ նա իրականացնում է այդ գործունեությունը, շուկայում փնտեսական հարաբերություններն են, որոնց պարտադիր պայմաններից է ազատ մրցակցությունը:

Մրցակցությունը լայն իմաստով փարբեր անձանց միջեւ մրցություն է որոշակի նպատակի հասնելու համար, ձեռնարկափրակյան գործունեության մրցակցությունը փնտեսավարող անձանց միջեւ մրցություն է ապրանքների (լայն իմաստով) արտադրության եւ իրացման լավագույն պայմանների ու հնարավորինս առավելագույն շահույթ ստանալու համար: Մրցակցության լեզավ բնորոշումը տրված է տվյալ ոլորտը կանոնակարգող հիմնական նորմատիվ ակտերից մեկում՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի¹⁶² 4-րդ հոդվածում, համաձայն որի՝ **փնտեսական մրցակցություն** կամ մրցակցություն է ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպատավոր պայմանների ապահովմանն ուղղված փնտեսական գործունեությունը, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շր-

¹⁵⁸ Կոոպերատիվների առեւտրային գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը վերանայման խիստ կարիք ունի եւ պատահական չէ, որ այս կազմակերպարավական ձեւը բիզնեսի ոլորտում լայն տարածում չունի:

¹⁵⁹ ՇՅ ՔՓ. 2004, N 9. Տ. 830.

¹⁶⁰ Տե՛ս **Алексеев С. С.** Право собственности. Проблемы теории. М. 2007, էջ 204:

¹⁶¹ Տե՛ս Комментарий к Конституции РФ. Под ред. **В. Д. Зорькина, Л. В. Лазарева.** ЭКСМО, էջ 335:

¹⁶² ՀՀ ՊՏ 2000/30 (128), 15.12.00:

ջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները: Այդ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Պետությունը ձգտում է ապահովել ինչպես մրցակցության գոյությունը, այնպես էլ դրա որակական չափանիշները (բարեխիղճություն, արդարություն, ազնվություն): Այս ամենը կազմում է մրցակցության բնագավառում իրավակարգի հիմքը, որի նկատմամբ ուրնձգություն է կատարում մենաշնորհային գործունեությունը: Այսպիսի մրցակցային իրավակարգը պետք է համարել մենաշնորհային գործունեության օբյեկտ, և իրավախախտման օբյեկտիվ կողմը սովորաբար կազմում է սուբյեկտի հակաիրավական վարքագիծը, վնասակար հետեւանքները և սրանց միջև պարճառական կապը¹⁶³:

Մրցակցության Փենոնենն արտահայտվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների մասնավոր և պետության հանրային շահերի համակցության մեջ: Շուկայում ապրանքների և ծառայությունների արտադրության և իրացման բնագավառում հնարավորինս ձեռնարկատիրական պայմանների, ինչպես նաև սպառողի և վերջինիս պահանջումները բավարարելու համար պայքարում դրսևորվում է մասնավոր շահը, իսկ տնտեսավարողների մենաշնորհային կամ գերիշխող դիրքի սահմանափակումների և զսպման մեխանիզմների կիրառմամբ դրսևորվում է պետության հանրային շահը: Այս մոտեցումն սկզբունքային է և հիմք է ծառայում շուկայում մրցակցության իրավական կարգավորման համար: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածն անբարեխիղճ մրցակցություն է համարում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է այդ օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները: Նույն օրենքը լայն հնարավորություններ է տալիս անբարեխիղճ մրցակցությունից վնաս կրած անձին, այդ թվում՝ սպառողին, անբարեխիղճ մրցակցությունը դատարեցնելու պահանջով դիմելու դատարան, այդ իրավունքը վերապահված է նաև շահագրգիռ անձանց տնտեսական շահերը պաշտպանելու իրավասություն ունեցող կազմակերպություններին:

Ըստ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է **մենաշնորհ դիրք** ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող)¹⁶⁴ չունի մրցակից¹⁶⁵: Նույն հոդվածի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է **գերիշխող դիրք ունեցող**, եթե որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը կամ շուկայում առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը: Նույնպիսի կարգավիճակ

¹⁶³ Ств Предпринимательское право. Под ред. **О. М. Олейника**. Т.1. Москва. Юристь. 2003, էջ 580:

¹⁶⁴ Այս օրենքի իմաստով իրացման և ձեռքբերման միջև օրենսդիրը հավասարության նշան է դրել:

¹⁶⁵ Բնակամբար, ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում հնարավոր չէ խուսափել, օրինակ, այսպես կոչված՝ բնական մենաշնորհներից, ուստի պետությունը սակագնային քաղաքականության միջոցով կարգավորում է համապատասխան ոլորտը:

Է շնորհվում, եթե ապրանքային շուկայում առավել մեծ ծավալներ ունեցող արդեն երեք փնտրեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը փվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք՝ որպես իրացնող, իրացման ծավալներով միասին գրավում են փվյալ շուկայի առնվազն երկու երրորդը: Ինչպես փնտրեսում ենք, Նախափնտրեսի օրենսդիրն ընդօրինակելով համաշխարհային փորձը՝ գերիշխող դիրք ունեցողի կարգավիճակ շնորհելու չափանիշ է համարում շուկայի որոշակի մասը՝ մեկ երրորդը, երկրորդը: Նման կարգավիճակ շնորհելու իրավասությամբ օժտված է ՏՏ փնտրեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը¹⁶⁶, որը վարում է մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող փնտրեսավարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանը (ռեեստրը)¹⁶⁷: Այսպես, օրինակ, Նանձնաժողովը իր 10.03.2006թ. թիվ 29-Ա, որոշմամբ «Ղ-Տելեկոմ» ընկերությանը «Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում համարել է գերիշխող դիրք ունեցող և գրանցել գերիշխող դիրք ունեցող փնտրեսավարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում): Նույն որոշմամբ հանձնաժողովը նույն շուկայում գերիշխող «ԱրմենՏել» ընկերության վարքագիծը..., որը կարող է հանգեցնել փնտրեսական մրցակցության սահմանափակման կամ արգելման՝ իր մրցակցին փվյալ ապրանքային շուկայից դուրս մղելով, որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, որն արտահայտվել է այլ փնտրեսավարող սուբյեկտին շուկայից դուրս մղելով և նշանակել փուզանք¹⁶⁸:

«Տնտրեսական մրցակցության պաշտպանության մասին» ՏՏ օրենքն արգելքներ է պարունակում այնպիսի գործողությունների կատարման նկատմամբ, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, և այդ արգելքները փարածվում են ոչ միայն փնտրեսավարող սուբյեկտների վրա, այլև պետական և փեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն նպատակաուղղված գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել փնտրեսական մրցակցության սահմանափակման, կանխման, արգելման կամ անբարեխիղճ մրցակցության գործողության: Այդ գործողությունները կարող են անհարակալ կամ կողակտիվ բնույթ կրել: Անհարակալի դեպքում փնտրեսավարող սուբյեկտը մրցակցության սահմանափակմանն ուղղված գործողություններ է կատարում, օրինակ՝ հանձնաժողովը հիմք ընդունելով «Տնտրեսական մրցակցության պաշտպանության մասին» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի՝ ձեռնարկարիտական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը փնտրեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցություն, իր 19.10.2005թ. թիվ 122-Ա որոշմամբ «Աերոֆլոտ-ռուսաստանյան ավիատոլիներ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված «Աշուն-2005» ակցիայի ընթացքում գեղջով փոմների վաճառքի վերաբերյալ փեղեկափոխության չիժարակելը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցություն և նշանակել փուզանք¹⁶⁹:

Կողակտիվ գործողությունների դեպքում փնտրեսավարողների կողմից համաձայնեցված գործողություններ են կատարվում, օրինակ՝ հակամրցակցային համաձայնու-

¹⁶⁶ Այսուհետ՝ Հանձնաժողով:

¹⁶⁷ Տե՛ս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 01.08.2007թ. թիվ 65-Ն որոշումը, ՀՀ ԳՆԱՏ 2007/29 (269), 01.11.07, հոդվ. 364:

¹⁶⁸ www.competition.am - ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի վերաբերյալ:

¹⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

թյուններ են համարվում փնտրեսավարող սուբյեկտների միջեւ կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, փնտրեսավարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որեւէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման: Իրավակիրառ պրակտիկայից եւս մեկ օրինակ. հանձնաժողովն իր՝ 19.10.2005թ. թիվ 121-Ա որոշմամբ «Քուլե» եւ «Բագրատուր» ընկերությունների միջեւ 2005 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ 2004 թվականի հուլիսի 1-ի N Q-1 պայմանագրի հավելված 1-ի կնքումը, որն արտահայտվել է շուկայի բաժանմամբ՝ ըստ իրացման ծավալի, ինչպես նաեւ ըստ մատակարարների խմբերի եւ հանգեցրել «Երեւան-Սփրամբուլ-Երեւան» ուղղությամբ ուղեորափոխադրումների (ավիաչվերթների) իրականացում ապրանքային շուկայում փնտրեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը, որակել է որպես հակամրցակցային համաձայնություն եւ ընկերությունների նկատմամբ նշանակել փուզանք՝ 2004 թվականի Երեւան-Սփրամբուլ-Երեւան ուղղությամբ ուղեորափոխադրումների (ավիաչվերթների) ավիափոստների իրացումից սրացված հասույթի մեկ փոկոսի չափով¹⁷⁰:

Միաժամանակ, հիշարակված օրենքը հակամրցակցային համաձայնություն չի համարում այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, եթե այդ համաձայնության մասնակիցների ընդհանուր բաժինը փոխալ ապրանքային շուկայում չի գերազանցում 20 փոկոսը:

3. Բարեխիղճ մրցակցությունն ապրանքային շուկայի գոյության հիմնական պայմաններից մեկն է, սակայն փնտրեսության որոշ ոլորտներում մրցակցությունն անհնարին է եւ միաժամանակ ոչ արդյունավետ: Նման դեպքերում խոսվում է մենաշնորհների մասին: Իրավաբանական գրականությունում մենաշնորհներն ընդունված է բաժանել բնական եւ պերական մենաշնորհների:

Պերական մենաշնորհն առաջանում է օրենքով, որը սահմանում է մենաշնորհային շուկայի սահմանները, մենաշնորհային գործունեության սուբյեկտին եւ նրա գործունեության կարգավորման ձեւերը եւ հսկողություն իրականացնող մարմնի իրավասությունները: Ի փարբերություն բնական մենաշնորհների, որոնց գոյությունը պայմանավորված է օբյեկտիվ պարճառներով, պերական մենաշնորհը սահմանվում է պերության կողմից հանրային շահերն ապահովելու նպատակով: Պերական մենաշնորհը բացառիկ երեւոյթ է եւ իր բովանդակությամբ փնտրեսական (նաեւ ձեռնարկարկական) գործունեության ազատության սկզբունքի օրենքով սահմանված սահմանափակում է. օրինակ՝ «ՏՏ կենտրոնական բանկի մասին» ՏՏ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն Տայասրանի Տանրապերության փարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամ մեքաղադրամ թղթարկելը եւ շրջանառությունից հանելը ՏՏ կենտրոնական բանկի իրավասությունն է¹⁷¹:

Բնական մենաշնորհն ապրանքային շուկայի այնպիսի վիճակ է, երբ պահանջարկի բավարարումն այդ շուկայում՝ արտադրության փոխնուղղակական առանձնահատկություններով պայմանավորված, ավելի արդյունավետ է մրցակցության բացակայության պայմաններում, իսկ բնական մենաշնորհների սուբյեկտների արտադրանքը չի կարող փոխարինվել այլ ապրանքներով եւ այդ ապրանքների պահանջարկը նվազ կախվածու-

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁷¹ ՀՀ ԱԺՏ 1996/12, հոդվ. 154, ՀՀ 02.07.96/127:

թյան մեջ է գտնվում Կրկյալ ապրանքների արժեքի փոփոխություններից, քան այլ ապրանքների պահանջարկը:

Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության առանձնահատկություններով է պայմանավորված պետության առանձնակի ուշադրությունը¹⁷²: Պետության խնդիրն է բնական մենաշնորհների սուբյեկտների և սպառողների շահերի հավասարակշռվածության ապահովումը, որը հնարավոր է իրացվող ապրանքի մարզելիության և բնական մենաշնորհների սուբյեկտների արդյունավետ գործունեության շնորհիվ: Այս խնդիրները լուծելու համար էլ պետության կողմից ընդունվել է հատուկ օրենսդրություն և սպեղծվել հատուկ պետական մարմին¹⁷³:

Իրավաբանական գրականությունում և օրենսդրությամբ բնական մենաշնորհ է ընդունված համարել բնական գազի, նավթամթերքի փոխադրումը, էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի փոխանցումն օգտագործողներին, երկաթուղային փոխադրումները, քրանսպորտային տրանսպորտային, նավահանգիստների և փոստային ծառայությունները¹⁷⁴:

Ձեռնարկատիրական գործունեության որոշակի սահմանափակումներ է նախատեսում լիցենզավորման ինստիտուտը: Լիցենզավորումը գործընթաց է՝ կապված պետական մարմինների կողմից ձեռնարկատիրական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիաների (թույլտվություն) տրաման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձեռնարկման, գործողության կասեցման և դադարեցման հետ, ինչպես նաև ենթադրում է լիցենզավորող մարմինների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու ընթացքում լիցենզային պահանջների և պայմանների նկատմամբ համապատասխան հսկողության իրականացում: Լիցենզավորող մարմինների և ձեռնարկատերերի միջև առաջանում են վարչական իրավահարաբերություններ, հետևաբար, ինչպես և պետական մարմինների ցանկացած գործունեություն, այն ենթակա է մանրակրկիտ կարգավորման, ընդ որում, հիմնահարցի լուծման հիմքում օրենսդիրն ամրագրել է «լիցենզավորման ենթակա է այն, ինչը չլիցենզավորել չի կարելի» կանխավարկածը: Այսպես, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրություն կազմակերպելու լիցենզիան բարդ ընթացակարգով տրախ է ՏՏ կառավարությունը, իսկ բանկային գործունեություն իրականացնելու համար՝ ՏՏ կենտրոնական բանկը¹⁷⁵:

Լիցենզավորման ինստիտուտի նպատակներն են՝

- 1) սպառողների իրավունքների պաշտպանությունը.
- 2) զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը.
- 3) ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը.

4) անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վրանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը.

¹⁷² Տե՛ս **Ершова И. В.** Предпринимательское право. Юриспруденция. Москва.2006, էջ 250:

¹⁷³ Մասնավորապես բնական մենաշնորհային գործունեությունը կանոնակարգող ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հանդիսանում է ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի իրավահաջորդը («Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի հոդվ. 20 (ՀՀ ՊՏ 2004/7(306), 04.02.04, հոդվ.120):

¹⁷⁴ Տե՛ս Предпринимательское право. Под ред. **О. М. Олейника.** Т.1. М., Юристь. էջ 273:

¹⁷⁵ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հոդվ. 43, ՀՀ ՊՏ 2001/26 (158), 08.08.01, հոդվ. 581:

5) միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Նայասպրանի Նանրապետության սրանձնած միջազգային պարտավորությունների կապարտումն ապահովելու նպատակով լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:

ՆՆ սահմանադրական դատարանն իր՝ 1999 թվականի հունվարի 27-ի ՄԴՌ-152 որոշմամբ եկավ այն եզրահանգմանը, որ. ««Նեռահաղորդակցության մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքի 24 հոդվածը չի համապատասխանում Նայասպրանի Նանրապետության Սահմանադրության 5 և 8 հոդվածների պահանջներին այնքանով, որքանով որ պետական լիցենզավորման ենթակա, պետական կամ բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության տեսակների հստակեցումը, այդ ոլորտներում հսկամենաշնորհային քաղաքականության իրականացումը և պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերից, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակներից ելնելով՝ փոփոխական գործունեության ազատության և ազատ փոփոխական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները՝ որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ, նախապես ոչ թե սահմանվել են օրենքով, այլ գործադիր իշխանության կողմից, իսկ օրենսդիրն անցումային դրույթների ձեռով օրենքի ուժ է հաղորդել կոնկրետ հասցեագրված պայմանների, որոնցում նաև տեղ են գրել ՆՆ Սահմանադրությանը չհամապատասխանող ձեռակերպումներ»:

Նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում արտահայտեց այն մասին, որ. «Տնտեսական գործունեության ազատությունը բացարձակ ազատություն չէ և միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան այն կարող է սահմանափակվել: Ընդ որում, սահմանափակման բնույթը հիմնավորում է օրենսդիրը՝ հաշվի առնելով, որ դա հնարավոր է միայն այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտած ճանաչում ու հարգանք ապահովելու, բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29 հոդվածի երկրորդ մաս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12 հոդվածի 3-րդ կետ):

Ազատ փոփոխական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է փոփոխական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական փոփոխության ներսում բոլոր փոփոխավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՆՆ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ փոփոխական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհի հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության տեսակների առկայությունը:

Նման ոլորտների հստակեցումը, փոփոխական գործունեության ազատության և ազատ փոփոխական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները, սակայն, կանոնակարգվում են Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելու համար նաև հսկամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը

երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն և փոփոխական ու սոցիալական առաջընթաց:

Միայն օրենսդիր իշխանությունն է իրավասու որոշել այդ սահմանափակումների շրջանակներն ու բնույթը՝ որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ»:

ՆՈՂՎԱԾ 33.2

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սպրեյու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համարեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

2. Պաշտոնատար անձինք պարտախանապովություն են կրում բնապահպանական փեղեկավորությունը թաքցնելու կամ դրա փրամադրումը մերժելու համար:

1. ՏՏ Սահմանադրության 32.2-րդ հոդվածը նորույթ է և բխում է ՏՏ սպանձնած միջազգային իրավական պարտավորություններից: ՏՏ Սահմանադրությունը, ելնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, մարդուն ճանաչում է որպես բարձրագույն արժեք՝ ընդգծելով անձի իրավունքների և ազատությունների առաջնայնությունը, հիմք ընդունելով անհատի և քաղաքացու իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ կյանքի իրավունքի անօտարելիության և անձեռնմխելիության սկզբունքները: Այս իրավունքն ամրագրվել է դեռևս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948թ.)՝ որպես մարդու կյանքի իրավունք:

Շրջակա միջավայրին առնչվող հարցերով փեղեկավորության մարչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մարչելիության մասին ՄԱԿ-ի ԵՏՏ կոնվենցիան ճանաչում է, որ շրջակա միջավայրի համարժեք պահպանությունն անհրաժեշտ է մարդու հիմնարար իրավունքների իրականացման և բարեկեցության ապահովման համար՝ ներառյալ կյանքի իրավունքը:

Նշված ընդհանուր մոտեցումներն արտահայտված են ինչպես մի շարք միջազգային իրավական ակտերում (1972թ. Սփոկհոլմի կոնֆերանսի Սկզբունքների հռչակագիրը, 1992թ. Ռիոյի Սկզբունքների հռչակագիրը, Շրջակա միջավայրին առնչվող հարցերով փեղեկավորության մարչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մարչելիության մասին ՄԱԿ-ի ԵՏՏ կոնվենցիան), այնպես էլ ազգային օրենսդրության մեջ: Սոցիալական քաղաքականության հիմնական խնդիրը պայմանների սփեղծումն է, որոնք կապահովեն քաղաքացիների արժանապարիվ կյանքը և ազատ զարգացումը: Այս խնդիրը լուծվում է պեության կողմից՝ փոփոխական խնդիրների հետ զուգահեռ: Եթե հասարակության բարեկեցության ապահովումն ընդհանուր առմամբ պեության փոփոխական քաղաքականության նպատակն է, որը կանխորոշում է փոփոխական ռազմավարությունը և մոտեցումները, ապա սոցիալական քաղաքականության համար դա անմիջական խնդիր է՝ պայմանավորված նյութական և հոգեոր հնարավորություններով, կենսակերպով: Պեության սոցիալական քաղաքականության նշված ուղղություններն իրենց արտացոլումը և ազդեցությունն են ունենում շրջակա միջավայրի որակի վրա և որպես արդյունք՝ մարդու և քաղաքացու էկոլոգիական իրավունքների պաշտպանության վրա:

Առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրի իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, քանի որ շոշափում է նրա գոյության բնական պայմանները: Եթե կենսոլորտը բարենպաստ չէ մարդու գոյության և առողջության համար, ապա իմաստագրկվում են նրա բոլոր իրավունքները: Սահմանադրության 33.2-րդ հոդվածի առաջին մասը պարունակում է մարդու երկու իրավունք և մեկ պարտականություն.

1/ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը նպաստող շրջակա միջավայրում: **Շրջակա միջավայրն** այն տարածքն է, որտեղ ապրում և աշխատում է մարդը, ինչը շրջապատում է նրան և ազդում նրա վրա (օրինակ՝ արդյունաբերական աղմուկը): Միջավայրը ներառում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական կամ սոցիալական միջավայրը (շինություններ, ձեռնարկություններ և այլն).

2/ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում: **Բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրը** դրա այնպիսի որակն է, որում հնարավոր են մարդու արժանապատիվ և առողջ կյանքը.

3/ յուրաքանչյուրը պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրի իրավունքը, բացի առողջությանը նպաստող բնությունից, ենթադրում է նաև բարեկեցիկ հասարակական միջավայր, ինչի ապահովումը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունն է: Սակայն Սահմանադրությունը յուրաքանչյուրի վրա եւս դնում է պարտականություն՝ *«անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»*: Այս պարտականությունն ամրա գրված է նաև համապարասխան բնառեսուրսային ճյուղային օրենսդրության մեջ (հողային, ջրային, անտառային և այլն)՝ որպես ռեսուրսներ օգտագործողների պարտականություն:

2. Սահմանադրության 33.2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանելով, որ պաշտոնատար անձինք պարասխանավություն են կրում բնապահպանական տեղեկավորությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար, անուղղակիորեն ճանաչում է յուրաքանչյուրի բնապահպանական տեղեկավորության իրավունքը: Այդ իրավունքից բխում է, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են մարդկանց և հասարակությանը տեղեկացնել բնապահպանական /էկոլոգիական/ իրավիճակի մասին, հատկապես, եթե այն վնասակար է առողջության համար: Բնապահպանական տեղեկույթը մարդկանց հնարավորություն կրա ժամանակին ձեռնարկել իրենց առողջության, գույքի պաշտպանության միջոցառումներ: Որպես 33.2-րդ հոդվածով սահմանված իրավունքի երաշխիք՝ պետության պոզիտիվ պարտականությունն է օրենքներով սահմանել այդպիսի տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումը մերժելու համար պաշտոնատար անձանց պարասխանավություն կրելու հիմքերը, կարգը և այլն:

«Բնապահպանական տեղեկավորություն» եզրույթն ազգային օրենսդրության մեջ բացակայում է: Դրա բնորոշումը տրված է Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկավորության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին ՄԱԿ-ի ԵՏՇ կոնվենցիայում: Շրջակա միջավայրի պահպանության տեղեկավորական ապահովումը կարևոր նախադրյալ է մարդու էկոլոգիական իրավունքների ձեւավորման և կայացման համար: Այս ոլորտում տեղեկավորական ապահովումը դրսևորվում է որպես բնական ռեսուրսներ

րի վերաբերյալ փյույաների հավաքագրում, վերամշակում, պահպանում, նախապատրաստում եւ օգտագործում որոշումների կայացման գործընթացում: Այդ տեղեկատվությունը ներառում է.

ա/ բուն անհրաժեշտ տեղեկատվությունը՝ որպես ապահովման օբյեկտ,

բ/ տեղեկատվության վերլուծություն, վերամշակում՝ հեղափոխում օգտագործելու համար,

գ/ տեղեկատվության փարածում հնարավոր օգտագործողների շրջանում,

դ/ տեղեկատվության օգտագործում:

Այս հոդվածում անհրաժեշտ էր ամրագրել յուրաքանչյուրի իրավունքը՝ ստանալու տեղեկատվություն շրջակա միջավայրի վերաբերյալ (տեղեկատվության մատչելիության իրավունք): Նշենք, որ ազգային օրենսդրության համակարգում չկա հատուկ օրենք բնապահպանական (էկոլոգիական) տեղեկատվության մատչելիության մասին, սակայն Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին ՄԱԿ-ի ԵՏՆ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ մասը փախու է էկոլոգիական տեղեկատվության բնորոշումը, համաձայն որի՝ «էկոլոգիական տեղեկատվությունը ցանկացած տեղեկատվություն է՝ գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչի վրա, հետեյալի մասին.

ա/ շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, ինչպիսիք են օդը, մթնոլորտը, ջրերը, բնահողը, հողը, լանդշաֆտը եւ բնական օբյեկտները, կենսաբազմազանությունը եւ նրա բաղադրիչները, ներառյալ՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները եւ փոխազդեցությունը նշված բաղադրիչների միջեւ,

բ/ այնպիսի գործոնների, ինչպիսիք են՝ նյութերը, էներգիան, աղմուկը եւ ճառագայթումը, ինչպես նաեւ գործունեությունը կամ միջոցները, ներառյալ՝ վարչական միջոցները, շրջակա միջավայրի ոլորտի համաձայնագրերը, քաղաքականությունը, օրենսդրությունը, պլանները եւ ծրագրերը, որոնք ազդում են կամ կարող են ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ա/ ենթակետի իմաստով՝ ծախսեր-արդյունքներ հարաբերակցությունը եւ այլ ստանդարտներ վերլուծություններ ու ենթադրություններ, որոնք հաշվի են առնվում շրջակա միջավայրի առնչությամբ որոշումներ ընդունելիս,

գ/ մարդկանց առողջության եւ անվտանգության, կենսապայմանների, մշակութային օբյեկտների եւ շինությունների մասին՝ այնքանով, որքանով դրանք կրում են կամ կարող են կրել շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի կամ այդ բաղադրիչներով միջնորդավորված ազդակների, գործունեության կամ վերը՝ բ/ ենթակետում հիշատակված միջոցների ազդեցությունը»:

Նշված կոնվենցիան գնահատվում է որպես նոր փուլի միջազգային համաձայնագիր, որն ամրագրում է անդամ պետության պարտականությունը հասարակության առջև:

Օրհուսի կոնվենցիան մեծ առաջընթաց քայլ է ինչպես շրջակա միջավայրի պահպանության, այնպես էլ երկրում ժողովրդավարության զարգացման համար: Այն զարգացնում է հասարակայնության իրավունքը մասնակցելու էկոլոգիական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը եւ կնպաստի շրջակա միջավայրի որակի բարելավմանը՝ ի շահ յուրաքանչյուրի:

Կոնվենցիայի իրականացումը նպաստում է սոցիալական կայունությանը, քանի որ մարդիկ կիմանան, որ պետական իշխանությունը հաշվի է նստում իրենց կարծիքի հետ եւ քննարկում դրա նպատակահարմարությունը:

Կոնվենցիայի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են.

1. բացել Էկոլոգիական տեղեկատվություն պարունակող կառավարական ֆայլերը /տեղք/ (տեղեկացված լինելու իրավունքը),

2. թույլ տալ հասարակությանը մասնակցել կառավարության կողմից ընդունվող որոշումների գործընթացին եւ այդ գործընթացը դարձնել թափանցիկ (մասնակցելու իրավունքը):

Այս մոտեցումը եվրոպական քաղաքացիական հասարակության կառուցման գլխավոր արդյունքն է եւ «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» գործընթացի շրջանակներում ձեւավորված Էկոլոգիական քաղաքականության Էական գործիքը: Միաժամանակ, նշված փաստաթուղթը համաձայնություն է եվրոպական եւ այլ երկրների միջեւ, որի համաձայն կառավարությունները բաց են եւ պատասխանատու իրենց երկրի հասարակության առջեւ շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ,

Ապահովել արդարադատության մատչելիության հնարավորություն. հասարակությանը տրամադրել իրավունք՝ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու պետական մարմիններին կամ մասնավոր ձեռնարկություններին, եթե նրանք ի վիճակի չեն կատարելու իրենց վրա դրված պարտականությունները: Վերոգրյալն ըստ էության կազմում է Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնասյուները:

ՏՏ-ում հիմնականում ձեւավորված է Օրհուսի կոնվենցիայի պահանջների կատարումն ապահովող օրենսդրական բազան: Սակայն օրենսդրական ակտերում բացակայում են դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգերը: Նաճախ բացակայում են ընթացակարգերի լրացուցիչ դրույթները, եւ, վերջին հաշվով, ամեն ինչ հանգում է առկա կամ բացակայող պրակտիկային:

«Տեղեկատվության ազատության մասին» ՏՏ օրենքը¹⁷⁶ կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն փնտրողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները: Նշվածը, որոշ վերապահումներով, վերաբերում է նաեւ բնապահպանական տեղեկատվությանը: Օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Օրհուսի կոնվենցիայի «Տեղեկատվության հավաքումը եւ տարածումը» վերաբերությամբ 5-րդ հոդվածը նախատեսում է այն տեղեկատվության շրջանակը, որը պետական մարմինները, ելնելով իրենց գործառնություններից, պարտավոր են հավաքել, փրկապետել, պարբերաբար թարմացնել եւ տարածել առանց հարցման:

ՏՏ Մահմանադրության 33.2-րդ հոդվածը սահմանում է պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 189⁷ հոդվածը նախատեսում է պաշտոնատար անձանց պատասխանատվությունը տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը չկատարելու համար, որը կարող է դրսևորվել օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելու ձեւով:

¹⁷⁶ ՀՀՊՏ 2003.11.05/55(290):

Նույն օրենսգրքի 97⁵ հոդվածը պարասխանավություն է նախատեսում վթարի փաստը թաքցնելու, վթարի վերաբերյալ տեղեկությունների հաղորդման կարգը խախտելու, ճառագայթային իրավիճակի վերաբերյալ սխալ տեղեկություններ հաղորդելու, իսկ 97⁶ հոդվածը՝ միջուկային եւ ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու կամ աղավաղելու համար:

ՆՆ քրեական օրենսգրքի 10-րդ բաժնի «Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» վերաբերյալ 27-րդ գլխի 282-րդ հոդվածը սահմանում է պարասխանավություն շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու կամ դրանք դիտարկելու աղավաղելու համար, որը կարող է արտահայտվել պաշտոնատար անձի կողմից՝ բնակչությունից մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելու կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտարկությանը ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելու ձեռով:

Օրենսդրությամբ նախատեսված են այն հիմքերը, երբ պետական մարմնի կողմից տեղեկատվության փրամատորումը մերժելը համարվում է իրավաչափ: Նամաձայն Օրհուսի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Շրջակա միջավայրի վերաբերող տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել, եթե այդպիսի տեղեկատվության հրապարակումը բացասաբար կանդրադառնա՝

ա/ պետական մարմինների գործունեության գաղտնիության վրա, եթե այդպիսի գաղտնիություն նախատեսված է ազգային օրենսդրությամբ.

բ/ միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ հանրային անվտանգության վրա.

գ/ արդարադատության իրականացման, անձանց՝ արդար դատական քննության իրավունքի կամ պետական մարմինների՝ քրեական կամ կարգապահական գործերով քննություններ անցկացնելու կարողության վրա.

դ/ առեւտրային եւ արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության վրա՝ այն դեպքերում, եթե նման գաղտնիությունն օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով պահպանվում է օրենքով: Այս շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արտանետումների մասին տեղեկատվությունը ենթակա է բացահայտման.

ե/ մտավոր սեփականության իրավունքի վրա.

զ/ անձնական տվյալների եւ /կամ/ ֆիզիկական անձանց վերաբերող արխիվների գաղտնիության վրա, եթե համապատասխան ֆիզիկական անձը չի տվել համաձայնություն այդպիսի տեղեկատվություն փրամատորել հասարակայնությանը՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից.

է/ հարցվող տեղեկատվությունը ներկայացնող երրորդ կողմի շահերի վրա, եթե այդ կողմը չի կրում նման ձեռով վարվելու իրավական պարտականություն, կամ եթե այդ կողմի վրա չի կարող դրվել այդպիսի պարտականություն, եւ այն դեպքերում, երբ այդ կողմը չի տվել համաձայնություն՝ հրապարակելու համապատասխան տեղեկատվությունը, կամ՝

ը/ շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին»:

Այն դեպքերում, երբ պաշտոնատար անձինք չեն փրամատում այն տեղեկատվությունը, որը պարտավոր են փրամատել՝ ելնելով Օրհուսի կոնվենցիայի 5-րդ հոդվածի պա-

հանջներից, և որն ընդգրկված չէ տրամադրման ոչ ենթակա տեղեկատվության ցանկում, տեղի է ունենում ՆՏ Սահմանադրության 33.2-րդ հոդվածի խախտում:

ՆՈՂՎԱԾ 34

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

Սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված համալիր իրավունքը կարելի է տրոհել երեք առանձին իրավունքների.

ա/ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք.

բ/ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի կենսապայմանների բարելավման իրավունք.

գ/ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բնակարանի իրավունք:

Նոդվածի իմաստը ճիշտ հասկացնելու համար կարևոր նշանակություն ունեն «կենսամակարդակ» և «կենսապայման» հասկացությունները: «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում»: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի այսպիսի բանաձևումից բխում է, որ կենսապայմանների կառուցվածքը ներառում է սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահական ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունները: Կենսապայմանների ապահովումը յուրաքանչյուր մարդու մոտ կարող է ունենալ տարբեր մակարդակներ: Այնպես է, որ հասարակությունն իր զարգացման այս փուլում չի կարող կենսամակարդակի առավելագույն ապահովել: Ուստի Սահմանադրությունը երաշխավորում է միայն նվազագույն կենսամակարդակը, այսինքն՝ իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար նվազագույն կենսապայմանները:

Կենսամակարդակի կառուցվածքում հատուկ տեղ է զբաղեցնում բնակարանը: Բնակարանի իրավունքը մարդու հնարավորությունն է ունենալ բնակարան (սեփականության կամ վարձակալության իրավունքով), բնակարան ձեռք բերելու գործում (քաղաքացիների համար) ստանալ օժանդակություն պետությունից, օրինակ՝ խիստ կարիքավոր խմբի քաղաքացիներին, աղետի գոյու բնակիչներին՝ նպատակային ծրագրերի, հիփոթեկային նպաստավոր վարկավորման միջոցով:

Սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված իրավունքները երաշխավորված են նույն հոդվածում ամրագրված պետության պարտականությամբ, որին համապատասխան պետությունն անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար: Բավարար կենսամակարդակի իրավունքի ամ-

րագրումը չի նշանակում, որ մարդը հասարակությունից ու պետությունից կարող է պահանջել, որ իրեն անհապաղ փրամադրեն վերը թվարկված բարիքները: Պետության խնդիրն է մարդու համար սեփական ուժերով իր կենսամակարդակն ապահովելու պայմաններ ստեղծել, վերացնել արգելքներն ու խոչընդոտները: Պետությունն օգնության է գալիս, երբ մարդն ինքնուրույն չի կարող ապահովել նվազագույն կենսամակարդակը: Պետությունը երաշխավորում է կենսաապահովման նվազագույն զամբյուղը եւ նվազագույն բյուջեն:

Կենսաապահովման կամ սպառողական նվազագույն զամբյուղն առողջ կենսագործունեության համար մեկ մարդուն մեկ ամսվա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքի եւ ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների նվազագույն քանակն է:

Կենսաապահովման նվազագույն բյուջեն այն գումարն է, որն անհրաժեշտ է եւ բավարար նվազագույն զամբյուղի մեջ մտնող բարիքներն ու ծառայությունները ձեռք բերելու համար:

Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ նվազագույն բյուջեի որոշումից է կախված բնակչության կենսամակարդակի վիճակի, այդ թվում՝ աղքատության շեմի գնահատումը, նվազագույն աշխատավարձի, թոշակի, նպաստի, չհարկվող եկամտի չափերի սահմանումը:

Սոցիալական պետության սահմանադրական մոդելը կանխորոշում է պետական քաղաքականության նպատակն ու ուղղվածությունը՝ ապահովելու մարդու արժանապատիվ կյանքի, բավարար կենսամակարդակի համար անհրաժեշտ պայմաններ: Կենսապայմանների շարունակական բարելավման հնարավորությունների ստեղծմամբ գործնական դրսևորում է սրանում մարդու՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ հոգածությունը, նրա արժանապատվության ճանաչումն ու հարգումը: Արժանապատվությունը ենթադրում է կյանքի արժանապատիվ պայմաններ, այդ թվում՝ բնակարանային եւ այլ սոցիալական հիմնախնդիրների պատշաճ լուծում:

Շուկայական փրկեսության պայմաններում բնակչության փարբեր շերտերի դրամական եկամտները խիստ անհամաչափ են, ինչը նպաստում է հասարակության սոցիալական բեռեռացմանը, ազգային համախառն արդյունքի անհավասար բաշխմանը եւ անհրաժեշտություն դարձնում պետության ճիշտ հասցեագրված սոցիալական քաղաքականությունը: Այդ նպատակով ՆՏ պետական բյուջեի ծախսերի զգալի մասը կազմում են հենց սոցիալական ծախսերը: Նման ծախսեր իրականացվում են նաեւ համայնքային բյուջեների եւ փարբեր սոցիալական ուղղվածության ծրագրերի հաշվին՝ ապահովելու համար բավարար կենսամակարդակ, առանց որի անհնարին է անձի կյանքի որակի ապահովումը: Իսկ կյանքի որակը որոշվում է այն հանգամանքով, թե ինչպիսի կենսապայմաններում է ապրում մարդը, ինչպես է լուծում իր սննդի, առողջության, բնակարանի, հանգստի, հագուստի եւ այլ հարցերը, ինչպես է պետությունը նպաստում անձի կենսամակարդակի բարձրացմանը:

Բավարար կենսամակարդակի իրավունքը նախատեսված է 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1966թ. Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում¹⁷⁷, Երեխայի իրավունքների մասին 1989թ. ՄԱԿ-ի կոնվենցիայում¹⁷⁸ եւ այլ ակտերում:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածը, ինչպես նաեւ

¹⁷⁷ Տե՛ս Права человека // Сборник международных договоров ООН, 1989.

¹⁷⁸ Տե՛ս Конвенция о правах ребенка // Резолюция 44/25 Генеральной Ассамблеи ООН, 20.11.1989

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների, կենսապայմանների շարունակական բարելավման իրավունք:

Միջազգային իրավական նորմերի համաձայն՝ **ՆՆ Սահմանադրության 2-րդ գլխի 34-րդ հոդվածը մի կողմից ամրագրում է յուրաքանչյուրի՝ իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը, իսկ մյուս կողմից սահմանում է պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այս իրավունքի իրականացման համար:** Այսպիսով, պետությունը պարտավոր է.

- ՆՆ օրենսդրության մեջ ամրագրել նշված իրավունքի իրականացման նորմատիվ իրավական հիմքերը,
- նախապես այդ իրավունքի իրականացման կառուցակարգերը, սրբեղծել սոցիալական, Կենտրոնական, կազմակերպչական և այլ բնույթի երաշխիքներ,
- անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քաղաքացիների այս իրավունքի պաշտպանության համար, կիրառել պարտասխանավորություն դրա խախտման կամ անհիմն սահմանափակումների դեպքում:

ՆՆ 1995 թվականի Սահմանադրությունը (31-րդ հոդված) նշված իրավունքը նախատեսում էր յուրաքանչյուր քաղաքացու համար: ՆՆ Սահմանադրության 2005թ. փոփոխություններից հետո այն վերապահվեց յուրաքանչյուրին՝ անկախ քաղաքացիությունից կամ այլ հատկանիշից, ինչն առավել ընդունելի է և արդի միջազգային իրավական չափանիշներին համապատասխան: «Յուրաքանչյուր ոք» ցանկացած անձն է, ով օժտված է իրավունքներով և կրում է որոշակի պարտականություններ, ունի սոցիալ-իրավական հնարավորություն՝ բավարարելու իր Կենտրոնական, մշակութային, կենցաղային և այլ պահանջները, օգտվելու նյութական և հոգեւոր բարիքներից, ինչպես նաև նշված իրավունքների խախտման դեպքում ունի պաշտպանության իրավունք:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ **«Յուրաքանչյուր ոք ունի ... իրավունք»**՝ ձեռնարկումը ենթադրում է, որ նախապես նշված իրավունքը փոխադրության փոխարեն երաշխավորվում է բոլոր ֆիզիկական անձանց համար՝ անկախ նրանց քաղաքացիությունից¹⁷⁹: Սակայն Նայաստանի Նանրապետությունում սահմանադրորեն նախատեսվում է պետության կողմից այդ իրավունքների իրականացման իրավական և սոցիալական հնարավորությունների սրբեղծում քաղաքացիների համար՝ սահմանումով, որ՝ **«...Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»:**

Եվրոպական դատարանն իր վճիռներում մեկնաբանել է «անհրաժեշտ» բառի իմաստն ու բովանդակությունը՝ նշելով, որ այն ենթադրում է «անհերքելի հասարակական պահանջմունքի առկայություն»¹⁸⁰: Այսպիսով, կարող ենք փաստել, որ իսկապես անհրաժեշտ, այսինքն՝ անհերքելի և հույժ կարեւոր սոցիալական պահանջ է հասա-

¹⁷⁹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, **Վ. Հ. Հովհաննիսյան, Զ. Գ. Դուկայան, Լ. Օ. Հակոբյան, Լ. Ս. Հակոբյան**, Երեւան, 2005, էջ 289:

¹⁸⁰ Տե՛ս Young, James and Webster v. the United Kingdom, Judgment of 13 July 1981, p. 63. (Յանգը, Ջեյմսը և Վեստերեն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, 1981թ. հուլիսի 13, կետ 63):

րակության անդամների բավարար կենսամակարդակի ապահովման խնդիրը, որի լուծումը պայմանավորված է պետության փնտրեսական, քաղաքական, սոցիալական ապահովության համակարգերի զարգացման ասփիճանով, մարդու իրավունքների պաշտպանության սոցիալ-փնտրեսական, իրավական, նյութական, կազմակերպական եւ այլ երաշխիքների ապահովման մակարդակով: Բավարար կենսամակարդակի իրավունքի իրագործումը հնարավոր է այլ կարեւոր իրավունքների՝ աշխատանքի ազատ ընտրության, բնակարանի, սոցիալական ապահովության, բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու եւ այլ իրավունքների իրականացման գործընթացում:

Եվրոպական դատարանը գտնում է, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետությունները պարտավոր են մարդու կյանքի իրավունքն ապահովել բոլոր միջոցներով, այդ թվում՝ յուրաքանչյուրի բժշկական սպասարկմամբ, առողջապահության համակարգի պարզաճ կազմակերպմամբ, իրենց իրավագործության ներքո գրնվող անձանց կենսաբանական պահաջումների բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ¹⁸¹:

Մարդու օրգանիզմի կենսաբանական պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է որակյալ սնունդ: Նախկանշական է, որ 1974թ. նոյեմբերին ընդունվել է Քաղցի եւ թերսնուցման վերացման համընդհանուր հռչակագիրը, որը հավանության է արժանացել ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից: Նռչակագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր փղամարդ, կին եւ երեխա իրավունք ունի զերծ մնալու քաղցից եւ թերսնուցումից, որպեսզի կարողանա ամբողջությամբ զարգացնել իր ֆիզիկական եւ մտավոր ունակությունները: 1966թ. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համակարգում գործող Մարդու իրավունքների կոմիտեն 1982թ. հուլիսի 27-ի N 378-րդ նիստում ընդունված 6 [16] ընդհանուր մեկնաբանության մեջ նշում է, որ կյանքի իրավունքի պաշտպանությունը պետությունից պահանջում է կյանքի պահպանման վճռական միջոցների ձեռնարկում, ինչպես, օրինակ, երեխաների մահացության նվազեցում եւ թերսնման ու համաճարակների վերացում¹⁸²:

Մարդու՝ բավարար կենսամակարդակ ունենալու սահմանադրական իրավունքի իրականացման նպատակով այդ իրավունքն անհրաժեշտաբար մանրամասնեցվում է ընթացիկ օրենսդրությամբ, ապահովվում թե՛ նորմափիվ իրավական եւ թե՛ անհատական իրավական ակտերի ընդունմամբ, պետության օրենսդրական, իրավակիրառ, իրավապահպան, դատական գործունեությամբ: Այսինքն՝ սահմանադրորեն ամրագրված սոցիալական իրավունքները պետության կողմից երաշխավորվում են, պաշտպանվում եւ կարգավորում են այդ իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները: Դրանք ենթադրում են նաեւ պետական կամ փողկական ինքնակառավարման մարմինների պաշտոնաբար անձանց կողմից մարդու իրավունքների խախտման կամ այդ իրավունքների իրականացման հնարավորությունների ապօրինի սահմանափակման անթույլատրելիություն:

ՆՏ Սահմանադրության 34-րդ հոդվածում նշված են բավարար կենսամակարդակն ապահովող ոչ բոլոր, այլ հիմնական գործոնները, այն է՝ բնակարանի եւ կենսապայմանների բարելավման իրավունքը: Ընդ որում՝ յուրաքանչյուր ոք ունի ոչ միայն իր անձի, այլեւ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, արժանապատիվ կենսա-

¹⁸¹ Տե՛ս Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի եւ դրան կից արձանագրությունների մեկնաբանություն, էջ 25:

¹⁸² Նույն տեղում, էջ 10:

պայմանների իրավունք: Քաղաքացիների բավարար կենսամակարդակի ապահովման նպատակով պետությունը պարտավոր է սրեղծել սոցիալական ապահովության արդյունավետ համակարգ, նպաստել փնտրության զարգացմանը, աշխատատեղերի սրեղծմանը, որպեսզի մարդիկ ունենան եկամտի աղբյուր, սրանան սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ պակաս աշխատավարձ, կենսաթոշակ, կրթաթոշակ, նպաստ կամ սոցիալական այլ օժանդակություն:

Անկախ երկրի սոցիալ-փնտրեական զարգացման աստիճանից՝ միջազգային իրավական պահանջ է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունը՝ առանց որեւէ խտրականության, մարդու արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ հնարավորությունների սրեղծումը, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ սոցիալական աջակցության փրամադրումը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող ունի իր եւ իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության եւ, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապահովության այլ միջոցներով լրացնելու իրավունք»: Իսկ Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի եւ բարենպաստ պայմաններից օգրվելու իրավունքը, եւ որպեսզի աշխատանքի դիմաց չբռվի անարդարացի եւ ոչ համարժեք վարձատրություն, պետությունը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափը, որից ցածր աշխատավարձը չպետք է լինի:

«Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի¹⁸³ համաձայն՝ աշխատանքի վարձատրությունը գործարուների կողմից աշխատողներին նրանց կատարած աշխատանքի դիմաց դրամական կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ձեւերով կատարվող վճարումն է: Աշխատանքի վարձատրության հետ կապված հարաբերությունները ՀՀ Սահմանադրության հիման վրա կարգավորվում են ՀՀ աշխատանքային եւ քաղաքացիական օրենսգրքերով, ՀՀ օրենքներով եւ իրավական այլ ակտերով: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը¹⁸⁴ մեր երկրում որպես ամսական նվազագույն աշխատավարձ է սահմանում 30.000 դրամը: Թեւեւ այսօր նվազագույն աշխատավարձը չի բավարարում անձի եւ նրա ընտանիքի փարրական կենսաապահովման պահանջները, սակայն, կարծում ենք, որ սոցիալական պետության կառուցման նպատակը որդեգրած Հայաստանի Հանրապետությունում այն հետեւողականորեն կբարձրացվի:

Նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաեւ նպաստների եւ սոցիալական այլ վճարների չափերի սահմանման հիմք է համարվում կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծությունը: Նշված վճարների չափերի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծության միջեւ համամասնությունները յուրաքանչյուր փարի արտացոլվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում՝ ելնելով փոխյալ փարվա պետական բյուջեի հնարավորություններից:

«Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը¹⁸⁵ (այսուհետ՝ օրենք) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվա-

¹⁸³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 18.10.2001 / 32(164):

¹⁸⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 30.12.08 / 76 (666):

¹⁸⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 14.04.2004 / 21 (320):

զագույն բյուջեի հաշվարկման ու հաստատման իրավական հիմքերը, ինչպես նաև կարգավորում է պետական սոցիալական քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունները: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է: Իսկ կենսաապահովման նվազագույն բյուջեն միջազգայնորեն ընդունված կենսաապահովման նվազագույն զամբյուղի դրամական արժեքն է: Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի՝

1) գնահատել Նայաստանի Նանրապետության բնակչության կենսամակարդակը,

2) կենսամակարդակի գնահատված ցուցանիշն օգտագործել պետական սոցիալական քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս,

3) հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը,

4) որոշել չհարկվող եկամտի չափը (օրենքի 4-րդ հոդված):

Օրենքը նախատեսում է, որ Նայաստանի Նանրապետության սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի՝ աշխատունակ բնակչության, թոշակառուների, երեխաների և բնակչության մեկ շնչի հաշվով կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը հաշվարկվում են ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ՝ ՆՂ կառավարության սահմանած կարգով մշակվող և կառավարության հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա: Իսկ կենսաապահովման նվազագույն բյուջեի չափը հաշվարկվում է առնվազն տարին մեկ անգամ՝ մինչև հունիսի 30-ը՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմում ներառված պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառողական գների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա, և հրապարակվում է «Նայաստանի Նանրապետության պաշտոնական տեղեկագրում», ինչպես նաև առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Նայաստանի Նանրապետության սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով կենսաապահովման նվազագույն բյուջեի չափը հաստատվում է ՆՂ կառավարությունը:

«Աշխատանքի վարձատրության մասին» ՆՂ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղի մասին ՆՂ կառավարության որոշումը ներառում է՝

ա) կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմում ընդգրկվող ապրանքների և վճարովի ծառայությունների տեսականին,

բ) կենսաապահովման նվազագույն զամբյուղի հաշվարկման նորմատիվները,

գ) կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքը և դրա ինդեքսավորման կարգը,

դ) կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքի ներդրման ժամանակացույցը՝ տարեկան կտրվածքով:

Կենսաապահովման նվազագույն պահանջների բավարարման և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքն ունի համալիր բնույթ, կենսագործվում է

բազմաբնույթ սոցիալ-իրավական միջոցներով ու կառուցակարգերով:

Մեկնաբանվող իրավունքի իրականացումը ենթադրում է սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում, անձին իր և իր ընտանիքի հիմնական պահանջմունքները բավարարելու համար հնարավորությունների ընձեռում: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի¹⁸⁶ համաձայն՝ հիմնական պահանջմունքները ֆիզիկական անձի կեցության համար անհրաժեշտ պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բուժօգնություն, հիմնական ընդհանուր կրթություն, բնակարանային-կոմունալ ծառայություններ) ամբողջությունն է: Բնակարանը, սնունդը, հագուստը, կենցաղային պահանջների բավարարումը կազմում են մարդու կյանքի կարեւորագույն պայմանները:

Բնակարան է համարվում ցանկացած կացարան, որը նախատեսված է մարդու ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր բնակության համար, օրինակ՝ առանձնաբնակարան, բազմաբնակարան շենքում ունեցած բնակարանը, հանրակացարանի սենյակը, հյուրանոցային համարը, ամառանոցը, այգեպնակը և այլն: Բնակարան են համարվում թե՛ սեփական և թե՛ վարձակալված բնակելի փարածքները, այդ թվում՝ բնակարանի նկուղն ու ձեղնահարկը, արհեստանոցը և այլ շինություններ, որոնք համարվում են բնակության վայր և որտեղ չի կարելի մուտք գործել առանց այնտեղ ապրողների համաձայնության: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված՝ բնակարանի նկարմամբ հարգանքի իրավունքի արդյունավետ երաշխավորման համար ազգային իրավակիրառ մարմինների համար փեսական և գործնական նշանակություն ունի այն հարցը, թե Եվրոպական դատարանն ինչպես է մեկնաբանում «բնակարան» բառը: *Նիմիացն ընդդեմ Գերմանիայի գործով* վճռում Եվրոպական դատարանը նշում է, որ «բնակարան» բառն ունի լայն նշանակություն և կարող է փարածվել նաև փաստաբանական բնույթի գործարարական գրասենյակի, ծառայողական շինությունների վրա՝ գրնելով, որ մասնագիտական գործունեությամբ կամ գործարարությամբ անձը նույն հաջողությամբ կարող է զբաղվել նաև իր բնակարանից, և հակառակը՝ կարելի է ոչ մասնագիտական հարցերով զբաղվել աշխատավայրում, գրասենյակում, առևտրային, ծառայողական շինություններում: Դատարանը բնակարան է համարում նաև անձնական աշխատասենյակը, կազմակերպությունների կենտրոնակայաններն ու փեղական ներկայացուցչությունները, քաղաքացիներին պարկանող տրանսպորտային միջոցները, իսկ հողամասը, որտեղ նախատեսվում է բնակելի տան կառուցում, բնակարան չի համարվում¹⁸⁷:

Մարդու բնակարանի սահմանադրական իրավունքը նշանակում է յուրաքանչյուրի օրենսդրորեն երաշխավորված հնարավորություն՝ ապահովվելու մշտական բնակարանով: Բավարար դրամական միջոցներ ունեցող անձինք, այդ թվում՝ քաղաքացի չհանդիսացող, կարող են սահմանված կարգով իրենց հաշվին ձեռք բերել կամ վարձակալել բնակարան, իսկ անապահով քաղաքացիներին կամ որոշակի կարեգործիայի անձանց (բնական կամ փեսանաժին աղետներից տուժածներ, զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամներ և այլն) կարող է բնակարան տրամադրվել պետական կամ համայնքային միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետությունում մեծ ծավալի բնակարանաշինարարական աշխատանքներ կատարվեցին աղետի գոտում՝ ուղղված 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից տուժած անձանց բնակարանային

¹⁸⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 07.12.05 / 75 (447):

¹⁸⁷ Տե՛ս Niemietz v. Germany, Judgment of 16 December 1992, p. 244, 259 (Նիմիացն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, 16 դեկտեմբերի 1992թ., կետեր 244, 259):

խնդրի լուծմանը: Բնակարանի փրամադրման հարցում արտոնություններ ունեն նաև այլ կապիտալիստի քաղաքացիները, օրինակ՝ զինձառայողների ընտանիքները, մասնկապան չափահաս սաները եւ այլք:

Բնակարանի իրավունքը փոխկապված է բնակարանի անձեռնմխելիության, անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության եւ այլ իրավունքների հետ:

ՏՃ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածը քրեական պատասխանավորություն ու պարիժ է նախատեսում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու՝ մարդու կամ քին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար:

Յուրաքանչյուրի՝ իր եւ իր ընտանիքի բավարար կենսամակարդակի իրավունքը բխում է ՏՃ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունից, համաձայն որի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Ինչպես նշված է Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ, «Բարձրագույն արժեք» հասկացությունը վերացական չէ եւ ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որեւէ այլ արժեք, այդ թվում՝ եւ՛ պետական, եւ՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որեւէ համակարգ չի կարող ավելի բարձր դասվել»¹⁸⁸:

Ներքինաբար, պետության խնդիրն է՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարդու կենսապայմանների բարելավման, աղքատության հաղթահարման համար: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի¹⁸⁹ համաձայն՝ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգեւոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է: Մարդու կենսաբանական պահանջմունքներն են սնունդը, անձնական եւ կենցաղային հիգիենայի անհրաժեշտ նվազագույն պահանջների բավարարումը եւ նվազագույն սեզոնային հագուստը, բնակարանի առկայությունը, ջրի, ջերմության եւ էլեկտրաէներգիայի անհրաժեշտ նվազագույն սպառման հնարավորությունը: Որպես սոցիալական պահանջմունք՝ ռազմավարական ծրագրում կարեւորվում են առողջությունը, կրթությունը, աշխատանքը, նվազագույն սոցիալիզացման (ամուսնության, մասնավորության, մահվան հետ առնչվող ծեսեր, դատախազական համակարգի հետ առնչություններ) անհրաժեշտությունը՝ դրանց ուղեկցող նյութական հնարավորություններով հանդերձ, ներընտանեկան հարաբերությունների կայունությունը, նվազագույն փրկելիցվածության անհրաժեշտությունը (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո կամ այլ զանգվածային լրատվության միջոցներ) եւ միմյանց հետ մարդկանց շփվելու (հեռախոս, փրանսպորտ, կապի այլ միջոցներ), ինչպես նաև հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությունները: Մարդը պետք է կարողանա բավարարել նաև իր հոգեւոր-մշակութային պահանջմունքները, այն է՝ ունենա հոգեւոր-մշակութային արժեքներին հասու լինելու նվազագույն հնարավորություն (ոչ թե ըստ սուբյեկտիվ պահանջմունքների ու պարկերացումների, այլ օբյեկտիվորեն սահմանված խմբերի, օրինակ՝ ավանդական դարձած փոնաժիսական կյանքին մասնակցելու, կարդալու, երաժշտություն լսելու, կինոյատրոն, թանգարան, պարկերասրահ հաճախելու հնարավորություն եւ այլն), անհրաժեշտության դեպքում օգրվի պետության սոցիալական պաշտպանությունից: Սոցիալական պաշտպանության քաղաքականության նպատակը պե-

¹⁸⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ «Քաղաքացի Մ. Քոչարյանի եւ քաղաքացի Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» կայացրած որոշումը // www.concourt.am:

¹⁸⁹ Տե՛ս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի վերանայված տարբերակ (ԱՀՌԾ-2), Երևան: ԳԱՍՊԻԻՆՏ, 2008, 216 էջ:

ություն կողմից անհարմարների, ընդհանրիքների բարեկեցությանն սպառնացող սոցիալական ռիսկերի կառավարումն է՝ դրանց նվազեցման նպատակով: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում առանձնացվում են սոցիալական ռիսկի պեղարկված կառավարման երեք հիմնական ոլորտներ՝

1. սոցիալական օժանդակություն, որը պետությանը հնարավորություն է ընձեռում բնակչության խոցելի խմբերի համար կրճարել եկամուտների նվազման կամ կայուն ցածր եկամուտների սոցիալական ռիսկերը եւ նրանց համար ապահովել նվազագույն բարեկեցության մակարդակ,

2. կենսաթոշակներ եւ այլ սոցիալական ապահովագրություն, որոնք հնարավորություն են տալիս կանխարգելել որոշակի սոցիալական ռիսկերը, օրինակ, ծերության կամ հիվանդության հետ կապված ռիսկերը՝ անհրաժեշտ ռեսուրսները տեղաբաշխելով անհարմարի ամբողջ աշխարհային ժամանակաշրջանի վրա,

3. զբաղվածություն եւ աշխատավարձի կարգավորում, որը կառավարում է զբաղվածության եւ աշխատանքային եկամուտների հետ կապված սոցիալական ռիսկերը:

ՏՏ Սահմանադրությամբ մեր երկիրը հռչակվել է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական եւ իրավական պետություն, ուստի Նայասարանի Նանրապետությունն սրանձնել է սահմանադրական պոզիտիվ պարտականություն՝ հարգել եւ պաշտպանել մարդու սոցիալ-տնտեսական իրավունքները, ինչպես նաեւ պայմաններ ստեղծել քաղաքացիների կենսապայմանների շարունակական բարելավման ու բավարար կենսամակարդակի ապահովման համար:

ՆՈՂՎԱԾ 35

1. Ընդհանրիք հասարակության բնական եւ հիմնական բջիջն է:

2. Ամուսնական տարիքի հասած կինը եւ տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընդհանր կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

3. Մայրության հետ կապված պարճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության եւ ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի եւ նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

1. Ընդհանրիքը հասարակության ամենափոքր մասնիկն է, այն բջիջը, որոնց ամբողջությունը կազմում է հասարակությունը: Ընդհանրիքը, ինչպես նաեւ ամուսնությունը հասարակության պարմական զարգացման արդյունք են, քանի որ առաջացել են մարդկային հասարակության զարգացման արշալույսին, եւ, գոյություն ունենալով բոլոր հասարակարգերում, համապարասխան փոփոխություններ են կրել հասարակական-տնտեսական կացութաձեւերի փոփոխման հետ միաժամանակ:

Ընդհանրիքի ձեւավորմանն ու զարգացմանը զուգընթաց կարարելագործվել է ընդհանրիքի առաջացման հիմնական եղանակը՝ ամուսնությունը: Սկզբում ձեւավորված խմբամուսնությունից հետո դրան փոխարինեց գուգամուսնությունը, որից հետո մարդկությունն անցավ ամուսնական հարաբերությունների նոր, քաղաքակիրթ ձեւի՝ մոնոգամիային: Իսկ մոնոգամիային բնորոշ են, նախ՝ մենամուսնությունը, երկրորդը՝ ամուսնաըն-

փանեկան կապերի կայունությունը:

Ըստ էության մոնոգամիայի արդյունքում է, որ մայրիշխանությունն իր դիրքերը զիջում է հայրիշխանությանը:

Այս բոլորից հետևում է, որ ժամանակակից ընտանիքն ամուսնաընտանեկան հարաբերությունների երկարատև պարամական զարգացման արդյունք է: Ընտանիքը հասարակության կարևոր բջիջ է, նրա բաղկացուցիչ մասը, որն իր մեջ պարունակում է բնական ու հասարակական փարրեր: Բնական փարրերը դրսևորվում են ընտանիքում երեխա ծնելու մարդկային ցեղի վերարտադրության ձևով, իսկ հասարակական փարրերը դրսևորվում են նրանով, որ ընտանիքը մնում է որպես հասարակության ամենափոքր օղակը՝ նրա բաղկացուցիչ մասը: Այսպիսով, ընտանիքը լինելով հասարակության բնական ու բաղկացուցիչ մասը՝ միաժամանակ նրա հիմնական բջիջն է: Մրանով իսկ ընտանիքը կարարում է երկու հիմնական ֆունկցիա՝ կենսաբանական եւ սոցիալական:

Ընտանիքի կենսաբանական ֆունկցիան անփոփոխ է մնացել նրա գոյության ողջ ընթացքում, մինչդեռ նրա սոցիալական ֆունկցիան, այսինքն բովանդակությունը, ենթարկվում է փոփոխությունների հասարակական զարգացմանը զուգընթաց:

Ընտանիքի սկզբնավորումն ու հիմքը համարվում է ամուսնությունը, չնայած պարամականորեն ընտանիքը երեսն է եկել ավելի ուշ, քան ամուսնությունը¹⁹⁰: Իսկ ի՞նչ է ամուսնությունը: «Ամուսնություն է համարվում րդամարդու եւ կնոջ ազատ, կամավոր եւ իրավահավասար, որպես կանոն ցմահ կնքված դաշինքը, որը կնքվելով պետության կողմից սահմանված կարգով, ամուսնացողների համար առաջացնում է փոխադարձ իրավունքներ ու պարականություններ եւ սրեղծում է ընտանիք երեխաներ ունենալու եւ դաստիարակելու վեհ նպատակով»¹⁹¹:

Ընտանիքի առաջացման հիմքը միայն ամուսնությունը չէ: Ընտանիք առաջանում է նաեւ ազգակցության, այսինքն՝ մարդկանց արյունակցական կապի հետեւանքով: Ազգակցություն համարվում է անձանց մեկը մյուսից կամ ընդհանուր նախնիից սերված լինելու արյունակցական կապը: Ուրեմն ազգակցությունն անձանց արյունակցական ընդհանրությունն է: Եթե անձանց այդ ընդհանրության հիմքում ընկած է նրանցից մեկը մյուսից սերվելու փաստը, ապա ազգակցությունը համարվում է ուղիղ: Ուղիղ ազգակցության մեջ են գտնվում ծնողներն ու զավակները, պապը (բաբը) եւ թոռները, պապը (բաբը) եւ ծոռները եւ այլն: Իսկ եթե անձանց ընդհանրության հիմքում ընկած է մեկ ընդհանուր նախնիից նրանց սերված լինելու փաստը, ապա ազգակցությունը համարվում է կողային: Կողային ազգակցության մեջ են գտնվում քույրերն ու եղբայրները, նրանց սերունդը, անձը եւ իր քրոջ ու եղբոր սերունդը եւ այլն:

Ընտանիքի առաջացման հիմք է հանդիսանում նաեւ որդեգրումը: «Որդեգրումն իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողներն ու որդեգրվածները ձեռք են բերում ծնողների ու զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներն ու պարականությունները» (ՏՏ ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ Ընտ. օր.) 112-րդ հոդվ.): Երեխա որդեգրելը հետապնդում է որոշակի նպատակ: Նախ՝ որդեգրումը առաջին հերթին պետք է հետապնդի ծնողներ չունեցող կամ ծնողական խնամք ու դաստիարակություն չստացող երեխայի շահերի պաշտպանությունը: Սակայն սրանով չեն անտեսվում որդեգրող անձանց շահերը: Որդեգրողն ու որդեգրվածն ապրում են համապետ, նույն հարկի փակ, ինչպես ծնողն ու հարազատ զավակը: Դրա համար էլ որդեգրու-

¹⁹⁰ Տե՛ս **Ա. Գ. Խարչեւ**, Брак и семья в СССР, III.1964 ք., էջ 28:

¹⁹¹ **Գ. Հ. Ղարախանյան**, Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 117:

մը համարվում է ընդհանրապես առաջացման հիմք:

Վերջապես, ընդհանրապես առաջանում է նաև այն դեպքում, երբ ամուսինները կամ անհար անձինք խնամակալության ու հոգաբարձության մարմինների հետ կնքված պայմանագրի հիման վրա երեխա են վերցնում իրենց խնամքի ներքո, սրտեղծում ընդհանրապես, որն անվանվում է խնամաբար ընդհանրապես (տես Ընդ. օր., հոդվ. 137-140):

Այսպիսով, ընդհանրապես այնպիսի անձանց միություն է, ովքեր իրար հետ կապված են փոխադարձ սիրո ու համաձայնության վրա հենվող ամուսնական կապերով, գրնվում են ազգակցական (արյունակցական) կապերի մեջ կամ այնպիսի հարաբերությունների մեջ, որոնց ընդհանրապես բնույթ է կրում օրենսդրության ուժով (որդեգրում, դաստիարակության նպատակով երեխային ընդհանրապես ընդունելը) և որոնց համար ծագում են օրենսդրությամբ սահմանված իրավունքներ ու պարտականություններ:

2. Նայապարանի Նանրապետության Նիմնական օրենքն ամուսնական փարիքի հասած կնոջն ու փղամարդուն վերապահում է ամուսնանալու և իր ընդհանրապես սրտեղծելու իրավունք: Ամուսնանալու և իր ընդհանրապես սրտեղծելու իրավունքը փղամարդու և կնոջ էական ու կենսական նշանակության իրավունք է: Այդ իրավունքն ամրագրված է ոչ միայն ներպետական օրենքներով, այլև մարդու իրավունքների բնագավառի միջազգային իրավական ակտերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (10 դեկտեմբերի 1948թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (16 դեկտեմբերի 1966թ.), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (16 դեկտեմբերի 1966թ.):

ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածը սահմանում է. «Ամուսնական փարիքի հասած փղամարդիկ և կանայք ունեն ամուսնանալու և ընդհանրապես կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան»: Կոնվենցիայի 12-րդ հոդվածը պարունակում է դրույթ, որը պետությանը թույլատրում է ազգային օրենսդրությամբ սահմանափակել ամուսնության իրավունքը: Սակայն պետության այդ իրավունքը բացարձակ չէ: Այդ հոդվածով նյութական իրավունքների սահմանափակումը պետք է համապատասխանի Կոնվենցիայի նպատակներին: Այս հարցը Կոնվենցիային հարող նախադեպային իրավունքը պարզաբանում է հետևյալ կերպ. «Օրենքները կարող են սահմանել ձեռնարկներ, որ վերաբերում են այնպիսի ընթացակարգերին, ինչպիսիք են փղակցանքները, հրապարակելը, ձեռնարկությունների կատարումը, որոնց օգնությամբ օժիվում է ամուսնական միությունը... նրանք կարող են սահմանել նյութական նորմեր՝ հիմնված հանրային շահերի համընդհանուր ճանաչված դատարարությունների վրա: Օրինակ՝ նորմեր իրավունակության, համաձայնության, ազգակցության արգելված աստիճանների կամ երկամուսնության մասին: Ազգային օրենսդրությունը չի կարող էականորեն միջամտել այդ իրավունքի իրականացմանը»¹⁹²:

Նամադրելով Կոնվենցիայի 12-րդ հոդվածը և դրա մեկնաբանությունները ՆՆ օրենսդրության հետ՝ կարող ենք արձանագրել, որ ՆՆ Սահմանադրության 2-րդ մասի առաջին բանաձևեր ճիշդ չի ձեռնարկված, քանի որ այն չի ենթադրում այդ իրավունքի որևէ սահմանափակում, այնինչ այսպետ փղին կլինեն հետևյալ դրույթը. «Ամուսնական փարիքի հասած կինը և փղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընդհանրապես կազմելու իրավունք, այդ իրավունքի իրականացումը կարգավորող օրենսդրությանը համապատասխան»:

Եվրոպական դատարանի պրակտիկական հաստատում է, որ ազատագրվածները

¹⁹² Հենդերն ընդուն Միացյալ Թագավորության, Comm. Report 13.12.79, para 61, D.R. 24, p. 5(14):

կարող են ամուսնադրվել՝ հաստատել իրավաբանական միություն: Ամուսնացողներն իրենք են որոշում մտնել այդպիսի ամուսնական միության մեջ, երբ իրենք չեն կարող ապրել համապետել¹⁹³: Ներտաբար, պետության գործողությունները, որ արգելում են ամուսնանալու իրավունքի արդյունավետ իրականացումը, խախտում են Կոնվենցիան:

ՆՆ ընտանեկան օրենսգրքով սահմանվել են ինչպես ամուսնության պայմանները, այնպես էլ նշվել են ամուսնությանն արգելք համարվող հանգամանքները:

Սահմանադրության «կինը եւ փղամարդը» ձեւակերպումը եւ Եվրոպական հանձնաժողովի մեկնաբանությունները հաստատում են, որ ՆՆ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքը՝ ամուսնանալ, ավանդաբար վերաբերում է կենսաբանորեն հակառակ սեռերի անձանց: Ներտաբար, օրենքը կարող է ամուսնության ոլորտից բացառել անձանց, որոնց սեքսուալ պարկանելությունն ինքնին ենթադրում է վերաբարադրման Փիզիկական անընդունակություն՝ եւ բացարձակապես (փրանսսեքսուալներ) եւ մյուս ամուսնու սեռական պարկանելության կապակցությամբ (միեւնոյն սեռերի անհարների դեպքում): Այսպես, *Կոստի գործով* Հանձնաժողովը եկել է եզրակացության, որ ամուսնությունը եւ ընտանիքի ստեղծումը համարվում են առանձնահատուկ իրողություններ մարդկանց կյանքում, որոնք դուրս են գալիս մասնավոր եւ ընտանեկան կյանքի իրավունքի պարզ իրականացման շրջանակներից: Դրանք վերաբերում են երկու անձանց, ովքեր կնքում են օրինական եւ սոցիալապես ճանաչված միություն: 12-րդ հոդվածը երաշխավորում է կոնկրետ եւ որոշակի իրավունք, որն ունի անկախ բնույթ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված մասնավոր եւ ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքի հետ համեմատած:

Առաջին հերթին նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում «Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը» (Ընտ. օր., հոդված 1, կետ 2): Մեր երկրում իրավաբանական ուժ չունեն ոչ փաստական, ոչ եկեղեցական, ոչ այլ կերպ կնքված ամուսնությունները: Իսկ ՆՆ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը գործնականում կիրառելու մասին որեւէ նորմատիվ ակտ ներկա դրությամբ գոյություն չունի:

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող փղամարդու եւ կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը եւ նրանց ամուսնական փարիքի հասած լինելը: Իսկ ամուսնական փարիք սահմանված է կանանց համար փասնյութ, փղամարդկանց համար՝ փասնութ փարին (Ընտ. օր., հոդվ. 10): Միաժամանակ արգելվում է ամուսնություն կնքել՝ ա) այն անձանց միջեւ, որոնցից թեկուզ մեկը գրնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ, բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, փարի ու թոռների, ինչպես նաեւ հարազատ եւ համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաբրոջ, հորաբրոջ, հորեղբոր եւ մորեղբոր զավակների) միջեւ, գ) որդեգրողների եւ որդեգրվածների միջեւ, դ) այն անձանց միջեւ, որոնցից թեկուզեւ մեկին դատարանը ճանաչել է անգործունակ (Ընտ. օր., հոդվ. 11):

Ամուսնությունը փղամարդու ու կնոջ փոխադարձ անձնական զգացմունքների վրա հիմնված կամավոր միություն է: Ուստի ամուսնություն կնքելիս ամուսնացողներից յուրաքանչյուրը պետք է դրսեւորի գիտակցված ու մտածված ցանկություն, համաձայնությունը փրված լինի ազատորեն, առանց հարկադրանքի ու բռնության ազդեցության: Այս

¹⁹³ Դրեյպերն ընդդեմ Միացյալ Թագավորության. Comm. Report 10.7.80, para 60. D.R. 24, p. 72 (81):

գործում չպետք է լինի հարկադրանք ոչ ամուսնացողներից մեկի, ոչ էլ երրորդ անձանց կողմից: Ուրեմն ամուսնությունը կամային ակտ է, որ կարող է կատարել միայն իր գործողությունների համար իրեն հաշիվ րվող անհատը: Ամուսնանալու համար րդամարդու եւ կնոջ փոխադարձ համաձայնության մասին է վկայում այն հանգամանքը, որ ամուսնությունը գրանցելու համար րդամարդն ու կինը դիմում են համապեղ, մեկ փաստաթուղթ ներկայացնելու միջոցով: Ամուսնության պետական գրանցումն իր հերթին նպատակ ունի ապահովել նման հարկադրանքից զերձ լինելը:

Եթե խաթարվում է ամուսնացողներից թեկուզ մեկի կամքի ազատ արտահայտումը, ամուսնությունը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր: Բացի դրանից, անձի՝ ամուսնության մեջ մտնելու կամքը պետք է արտահայտվի անձամբ: Չի թույլատրվում ամուսնություն կնքել ներկայացուցչի միջոցով՝ լիազորագրի հիման վրա կամ հեռակա կարգով:

Ամուսնությունը կնքվում է ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսնացողները պետք է հետապնդեն ընտանիք ստեղծելու, երեխաներ ունենալու, նրանց դաստիարակելու նպատակ: Իսկ եթե նրանք նման նպատակ չեն հետապնդում, նշանակում է նրանք կնքել են կեղծ ամուսնություն: Իսկ եթե ամուսինները կամ նրանցից մեկն ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության, այսինքն՝ կնքել են կեղծ ամուսնություն, ապա նման ամուսնությունը դատական կարգով ճանաչվում է անվավեր: Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից (Ընտ. օր., հոդվ. 9):

Եթե ամուսնանալու իրավունքի դեպքում, օրենքով արված բացառություններից բացի, պետության վրա դրված է դրական պարտականություն նպաստել այդ իրավունքների իրականացմանը, ինչպես, օրինակ՝ ազատագրկվածների դեպքում, ապա դա չի վերաբերում ընտանիք կազմելուն: Այս իրավունքի նկատմամբ գործում է չմիջամտելու սկզբունքը: Այսինքն՝ համարել ապրելն ամուսինների գործն է: Ամուսինների իրավունքն է նաեւ երեխաներ ունենալը: Եվրոպական նախադեպային իրավունքը վկայում է, որ պետությունը չի կարող միջամտել ընտանիք կազմելու իրավունքի իրականացմանը հակադիր ամորձարման ճանապարհով կամ ծնելիության նկատմամբ հսկողության այլ միջոցների կիրառմամբ:

Սակայն պետությունը ոչ միշտ է պարտավոր ապահովել ամուսինների վերաբրադրության հնարավորությունը: Այսինքն՝ ազատագրկվածն իրավունք ունի ամուսնանալու, սակայն, չնայած որ ընտանիք կազմելը բացարձակ իրավունք է, անձին ոչ միշտ պետք է րրվի փաստական հնարավորություն ապրել ընտանիքում կամ վերաբրադրվել: Նենց այս հանգամանքից էլ պետք է ելնի օրենսդրությունը:

Որդեգրման միջոցով ընտանիք կազմելու իրավունքը չի կարգավորվում ՏՏ Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասով, քանի որ օրենսդրությունը որոշակի դեպքերում արգելում է որդեգրել երեխային եւ դրանով իսկ խախտում է ընտանիք ստեղծելու՝ այդ հոդվածով ամրագրված իրավունքը: Սակայն այդ արգելքները լիովին համահունչ են նաեւ ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքին: Այսպես՝ գործերից մեկով Նանձնաժողովն արձանագրել է, որ ամուսինների կողմից երեխայի որդեգրումը որոշակի հանգամանքներում կարելի է նմանեցնել ընտանիք ստեղծելուն, սակայն 12-րդ հոդվածը չի րարաձվում այդ դեպքերի վրա: Այն չի երաշխավորում որդեգրման իրավունք այն երե-

խայի համար, որը փվյալ ամուսնական գույգի արքամուսնական երեխան չէ¹⁹⁴: Այսպիսով, ըստ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի իմաստի՝ պետությունը պարտավոր է չմիջամտել ամուսնական գույգերի իրավունքի իրականացմանը՝ սրեղծել ընդհանր վերարքադրության ճանապարհով, սակայն պետության վրա չի դրվում պոզիտիվ պարտականություն ապահովել այլ միջոցներ այդ իրավունքի իրականացման համար: Նախադեպային իրավունքի մյուս կարևոր դրույթներից է այն, որ պետությունը պարտավոր է դրական քայլեր ձեռնարկել ամուսինների եւ ընդհանր անդամների համարեղ ապրելու իրավունքի իրականացման համար: Խոսքը մասնավորապես ընդհանր անդամների՝ երկիր մուտք գործելու իրավունքի սահմանափակման հակաիրավականության մասին է: Այս դեպքերի վրա 12-րդ հոդվածի «ընդհանրական կյանքի» հայեցակարգը փարածվում է:

Ինչպես ազդարարում է ՆՏ Սահմանադրության 35-րդ հոդվածը՝ **դղամարդն ու կինն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգրվում են հավասար իրավունքներից**: Ամուսնանալով՝ դղամարդն ու կինն սրեղծում են ընդհանր: Նրանց ընդհանրական կյանքի երջանկությունը եւ անհաջողությունը շար քանով կախված է իրենցից՝ անձնական փոխհարաբերություններում նրանց փակտից, անձնական հարկանիշներից, նրանց գիտակցության մակարդակից, իրենց ծնողների ընդհանրում նրանց սրացած դաստիարակությունից: ՆՏ Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավահավասարության վերաբերյալ դրույթը խարսխված է ՄԻԵԿ-ի թիվ 7 արձանագրության 5-րդ հոդվածի վրա, որը հռչակում է. «Ամուսինները օժրված են հավասար իրավունքներով եւ մասնավոր իրավական բնույթի հավասար պարասխանարվությամբ միմյանց միջեւ հարաբերություններում եւ իրենց երեխաների հեղ հարաբերություններում ինչպես ամուսնանալիս, այնպես էլ ամուսնության ընթացքում եւ այն լուծելիս: Այս հոդվածը չի արգելում պետություններին ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների շահերի ապահովման համար»:

Ամուսնության հեղեանքով ամուսինները ձեռք են բերում ինչպես անձնական, այնպես էլ գույքային իրավունքներ ու պարտականություններ:

Նախ՝ ամուսնանալիս ամուսիններն ազար են ամուսնական ազգանուն ընրրելու հարցում: Նրանք, ըստ իրենց ցանկության, կարող են իրենցից մեկի ազգանունն ընրրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել իրենց մինչամուսնական ազգանունը: Նրանք նաեւ իրավունք ունեն կրելու իրենց երկուսի գծիկով միացված ազգանունը որպես ընդհանուր ազգանուն:

Ամուսիններից յուրաքանչյուրն ազար է աշխարանք, գրաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընրրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության եւ կրթության, ինչպես նաեւ ընդհանրական կյանքի այլ հարցեր ամուսինները լուծում են համարեղ՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

Ամուսիններն ունեն նաեւ գույքային իրավունքներ: Մինչեւ ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի ունեցած գույքը, ինչպես նաեւ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն սրացած գույքը նրա սեփականությունն է, իսկ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համարեղ սեփականությունն է (ՆՏ քաղաքացիական օրենսգրքի հոդվ. 201): Դրա հեղ միաժամանակ ամուսիններին իրավունք է փրված կնքել ամուսնական պայմանագիր: Ամուսնական պայմանագիրն ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության ընթացքում եւ այն լուծվելու դեպքում (Ընր.օր., հոդվ. 27): Ամուսիններն

¹⁹⁴ N 7229 / 75, Dec. 15.12.77. D.R. 12, p. 32 (34-35).

իրավունք չունեն ամուսնական պայմանագրով նախապես և անձնական փոխհարաբերության կարգավորման նպատակ ունեցող հարցեր:

Ամուսինները պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ փանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար (հոդվ. 24, մաս 3): Իրենց ընտանեկան կյանքի բոլոր հարցերը նրանք պետք է լուծեն միասին, փոխադարձ համաձայնության հիման վրա:

Ամուսիններն իրավահավասար են ինչպես ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծվելիս: Այդ մասին են վկայում ՆՏ ընտանեկան օրենսդրության հետբեյալ կանոնները.

- ամուսնությունը գրանցվում է ամուսնանալ ցանկացող փղամարդու և կնոջ կողմից ներկայացված դիմումի հիման վրա,
- ամուսնացողներն իրենց ցանկությամբ են ընտրում ամուսնական ազգանուն,
- ամուսինները հավասար իրավունքներ ունեն ընտանեկան կյանքի բոլոր հարցերը և առաջին հերթին երեխաների դաստիարակության հարցերը լուծելու գործում,
- ամուսինները փոխադարձ համաձայնությամբ են լուծում երեխաների անվան, ազգանվան, հայրանվան, նրանց բնակության վայրի ընտրության հարցերը, ուսման ու դաստիարակության հարցերը,
- ընտանեկան օրենսդրությունը սահմանել է ապահարգանի ազատություն, որի իրավունքն ունի ինչպես փղամարդը, այնպես էլ կինը:

Այս բոլորից բացի, փղամարդու և կնոջ իրավահավասարությունն ապահովված է նաև ՆՏ Սահմանադրությամբ նրանց համահավասար աշխատանքի, հանգստի, սոցիալական ապահովության, կրթության և այլ իրավունքներ փալով, այսինքն՝ պետությունը ոչ միայն իրավաբանորեն է հավասարեցրել կանանց ու փղամարդկանց, այլև ստեղծել է անհրաժեշտ նյութական նախադրյալներ ապահովելու կանանց փրված իրավունքների իրականացումը:

3. ՆՏ Սահմանադրությունն ամրագրում է, որ մայրության հետ կապված պարճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Նման նորմ ամրագրված է նաև ՆՏ աշխատանքային օրենսգրքի 117-րդ հոդվածում: Ներպետական օրենսդրության մեջ մայրությանը, մանկությանը, հայրությանը, ինչպես նաև ընտանիքին վերաբերող դրույթներ կան իրավունքի փարբեր ճյուղերի նորմերում (սահմանադրական, քաղաքացիական, վարչական, աշխատանքային): Ընտանիքի, մայրության, հայրության, մանկության պաշտպանությունն իրականացվում է նաև հասարակական զանազան միավորումների գործունեությամբ:

Քաղաքացիների առողջության պահպանման մասին ՆՏ օրենսդրությունը սահմանում է, որ կինն ինքն է որոշում մայրության մասին հարցը: Եվ նա կարող է լուծել այդ հարցն իրեն վերապահված հնարավորություններով: ՆՏ օրենսդրությամբ կնոջը վերապահված է անվճար խորհրդատվություն ստանալու իրավունք մասնագիտացված բուժական հաստատություններում, ժառանգական հիվանդությունների կանխման նպատակով բժշկագենետիկական հետազոտություն անցնելու, մասնագիտացված հաստատություններում հղիության արհեստական ընդհատում անելու, ինչպես նաև արհեստական սաղմնավորում, արհեստական բեղմնավորում ստանալու իրավունք:

Իսկ ահա «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՆՏ 2002թ. դեկտեմբերի 11-ի օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվը ու նրանց ծնվելու ժամկետները եւ այդ նպատակով ունենալ պտղաբերության կարգավորման ապահով ու արդյունավետ ծառայություններից օգտվելու հնարավորություն:

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՏՏ 1996թ. մարտի 4-ի օրենքի¹⁹⁵ համաձայն՝ յուրաքանչյուր կին, անկախ ազգությունից, ռասայից, լեզվից, դավանանքից, փարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Նայաստանի հանրապետությունում ունի անվճար բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք (հոդվ. 4): Այդ նույն օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ամուսնական զույգ իրավունք ունի՝ ա) որոշել իր երեխաների թիվը եւ նրանց ծնվելու ժամկետները, բ) անցանկալի հղիությունից եւ հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ եւ անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ փորձնականներ (հոդվ. 9):

Կինն ունի անվտանգ մայրության իրավունք: Օրենքով նշվում են այդ իրավունքի իրականացման երաշխիքներ՝ հղիության ընթացքում առողջության պահպանման, ծննդաբերության եւ հետծննդյան ժամանակաշրջանում իր, պտղի առողջությանը եւ նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք: Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք (հոդվ. 10): Այդ օրենքով 18-35 փարեկան կանանց վերապահված է փոխնակ (սուրբոգապ) մայր լինելու իրավունք:

ՏՏ աշխատանքային օրենսգրքով արտոնություններ են նախատեսված ամուսնացած կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության համար:

Նախ՝ մայրության հետ կապված պարճառներով արգելվում է կնոջն ազատել աշխատանքից: Սահմանված է նաեւ, որ գործատուն չի կարող աշխատանքային պայմանագիրը լուծել հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին փորձեցնելով ներկայացնելու օրվանից մինչեւ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը: Իսկ ընդհանրապես արգելվում է աշխատանքային պայմանագիրը լուծել մինչեւ մեկ փարեկան երեխա խնամող աշխատողների, առաջին հերթին՝ երեխայի մոր հետ:

Նրի կնոջ եւ մինչեւ մեկ փարեկան երեխա խնամող աշխատող կնոջ պահանջով կարող է սահմանվել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ (ՏՏ աշխ. օր., հոդվ. 141), արտաժամյա աշխատանքների չեն կարող ներգրավվել հղի կանայք, եւ մինչեւ մեկ փարեկան երեխա խնամող աշխատողը՝ առանց նրանց համաձայնության (ՏՏ աշխ. օր., հոդվ. 144): Նրանք կարող են գիշերային աշխատանքներում ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ (ՏՏ աշխ. օր., հոդվ. 148, կետ 4):

Իսկ սահա հղի կանայք, մինչեւ մեկ փարեկան երեխա խնամող աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ փոռական եւ հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ (հոդվ. 156, կետ 2, մաս 2): Պատահական չէ, որ հղիության եւ ծննդաբերության արձակուրդը համարվում է նպատակային (ՏՏ աշխ. օր., հոդվ. 171): Հիշեցնենք, որ աշխատող կանանց փրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝

ա) 140 օր (70 օր հղիության, 70 օր՝ ծննդաբերության (ծննդաբերության արձակուրդը նախկինում անվանվում էր հետծննդյան),

¹⁹⁵ Հիշյալ օրենքը տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.)», Գիրք Ա., Եր., 1999թ., էջեր 140-148:

բ) 155 օր (70 օր հղիության, 85 օր՝ բարդ ծննդաբերության) դեպքում,
գ) 180 օր (70 օր հղիության, 110 օր՝ ծննդաբերության՝ միաժամանակ մեկից ավելի երեխա ունենալու դեպքում):

Ավելացնենք նաև, որ ՏՏ ընդհանրական օրենսդրության համաձայն երեխա որդեգրած կինը որդեգրված երեխայի նկատմամբ ձեռք է բերում մայրական իրավունքներ և այն էլ՝ որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Իսկ ահա ՏՏ աշխ. օր.-ի 172-րդ հոդվածի համաձայն՝ նորածին երեխա որդեգրված կամ նորածին երեխային խնամակալ նշանակված աշխատողին փրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70, երկու և ավելի նորածին որդեգրելիս կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական դառնալը:

ՆՈՂՎԱԾ 36

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ ցուանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

3. Զախախտա աշխատունակ անձինք պարտավոր են հոգ ցուանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

1. Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա (ՏՏ ընդհանրական օրենսգիրք¹⁹⁶, հոդված 34): Այսինքն՝ ծնողների և զավակների միջև իրավահարաբերությունների առաջացման հիմքում դրվել է ազգակցության փաստը, որը, սակայն, պետք է հաստատվի օրենքի պահանջներին համապատասխան: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով ներկայումս ամբողջ աշխարհում բժշկական ժամանակակից փորձնորոշման երկրորդ լայնորեն կիրառումը, ծնողական հարաբերությունները ՏՏ օրենսդրությամբ դիտարկվում են արդեն ոչ միայն որպես կենսաբանական, այլ նաև որպես սոցիալական հարաբերություններ, իսկ ծնողական իրավունքների և պարտականությունների առաջացման հիմք համարվում է ոչ միայն երեխայի կենսաբանական սերումը (արյունակցական կապը), այլև սոցիալական կապը որոշակի անձանց հետ:

ՏՏ օրենսդրությամբ ուղղակիորեն չի սահմանվում «ծնող» հասկացությունը¹⁹⁷: Հավարարիմ մնալով ազգակցության սկզբունքին՝ նրանում որոշ դեպքերում իրավականորեն արժեքավորվել են սոցիալական ազգակցության, սոցիալական հայրության և մայրության ինստիտուտները: Արդյունքում, ծնողների և զավակների իրավահարաբերու-

¹⁹⁶ ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այսուհետ՝ Ընտ. օր.:

¹⁹⁷ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 11.12.2002թ.) 3-րդ հոդվածի 11-րդ կետը սահմանում է «կենսաբանական ծնող» հասկացությունը, այն է՝ տղամարդ կամ կին, որի սեռաբջջից է ձեւավորվել սաղմը, և որի գենոտիպի կրողը նրա պազա երեխան է:

թյունների բնույթ են հաղորդվել նախեստաջ որդեգրողի ու որդեգրվածի միջև հարաբերություններին:

Որդեգրված երեխաներն ու նրանց սերունդը՝ որդեգրողների եւ նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները որդեգրված երեխաների ու նրանց սերունդի նկատմամբ իրենց անձնական ոչ գույքային եւ գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին (Ընդ. օր., հոդվ. 126, մաս 1):

ՆՃ օրենսդրությամբ ընդունվում է գրանցված ամուսնությունից ծնված երեխայի մոր ամուսնու հայրության կանխավարկածը, եթե այլ բան չի ապացուցվել (Ընդ. օր., հոդված 35, մաս 2): Դա նշանակում է, որ երեխայի մոր օրինական ամուսինը համարվում է երեխայի հայրը, եթե թեկուզ նա երեխայի կենսաբանական ծնողը չէ (իհարկե, եթե հայրության վիճարկման վերաբերյալ վեճ չկա):

Ծնող կարող է համարվել եւ, բնականաբար, համապատասխան իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել նաեւ ամուսինը, որն օրենքով սահմանված կարգով գրավոր համաձայնություն է փոխել կիրառելու արհեստական սաղմնավորման կամ սաղմի պատվաստման մեթոդները: Ընդ որում, երեխայի ծնունդը գրանցելուց հետո նա իրավունք չունի վիճարկելու այդ ճանապարհով ծնված երեխայի հայրությունը: Նմանապես, ծնողներ կարող են լինել ամուսինները, որոնք համաձայնություն են փոխել կատարելու սաղմի պատվաստում եւ պրոդի հասունացում այլ կնոջ միջոցով: Ծնող կարող է լինել նաեւ կինը, որի միջոցով կատարվել է պրոդի հասունացումը (փոխնակ մայր): Ընդ որում, երեխայի ծնունդը գրանցելուց հետո վերը նշված անձինք իրավունք չունեն հենվելու այդ հանգամանքի վրա (Ընդ. օր., հոդվ. 39, մաս 3):

Ծնող կարող է համարվել նաեւ անձը, ով իրականում կենսաբանական, արյունակցական կապի մեջ չի գտնվում երեխայի հետ, սակայն գիտակցաբար, երեխայի մոր համաձայնությամբ, հայրությունն ընդունելու դիմում է ներկայացնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին եւ գրառվում որպես երեխայի հայր:

ՆՄ օրենսդրությունը որոշակի վերապահումներով եւ կոնկրետ պայմանների առկայության դեպքում ծնողների եւ զավակների իրավահարաբերությունների որակ է հաղորդել նաեւ խորթ ծնողների ու խորթ զավակների հարաբերություններին: Ընդ. օր.-ի 55-րդ հոդվածի համաձայն՝ «խորթ ծնողները պարտավոր են դաստիարակել եւ խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված եւ իրենց հետ համարեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին)»: Ընդ. օր.-ի 85-րդ հոդվածով սահմանվել է՝ «Օգնության կարիք ունեցող անաշխատունակ խորթ հայրը եւ խորթ մայրը, որ դաստիարակել ու պահել են իրենց խորթ զավակներին, իրավունք ունեն դրա համար անհրաժեշտ բավարար միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից դատական կարգով պահանջելու ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից)»: Այսպեղից հետեւում է, որ, մի կողմից, ՆՄ օրենսդիրը սահմանել է միայն խիստ որոշակի դեպքերում խորթ ծնողների՝ խորթ զավակներից ալիմենտ պահանջելու իրավունքը, մյուս կողմից՝ ամրագրել է խորթ երեխաներին խնամելու եւ դաստիարակելու խորթ ծնողների պարտականությունը (Ընդ. օր., հոդվ. 55): Վերջին դրույթն էլ ապահովված չլինելով որեւէ իրավական սանկցիայով՝ դրանում ամրագրված պարտականությունը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում իրենից ներկայացնում է հռչակագրային բնույթի նորմ: Այդ պարտականության ոչ պատշաճ կատարման դեպքում միակ անբարենպաստ հետեւանքը, թերեւս, սահմանված է ՆՄ օր.-ի 85-րդ հոդ-

վածի 2-րդ մասով, որի համաձայն՝ այդպիսի խորթ ծնողները կարող են գրկվել խորթ զավակներից ալիմենար պահանջելու իրավունքից:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԻ մասին կոնվենցիա¹⁹⁸) 1-ին հոդվածը սահմանում է, որ երեխա է համարվում փաստաբար փարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ: ՏՏ ընդհանրական օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ երեխա է համարվում փաստաբար փարին չլրացած անձը: Իսկ չափահասության փարիքը Նայասփանի Նանրապետությունում սահմանված է 18 փարեկանը (ՏՏ քաղաքացիական օրենսգիրք, հոդվ. 24)¹⁹⁹:

Ծնողներն ունեն հավասար իրավունքներ եւ կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ): Նրանք հավասարապես պարտավորված են երեխայի շահերի ապահովման համար: Ծնողական իրավունքների հավասարության սկզբունքը պահպանվում է անկախ ծնողների միասին, թե առանձին ապրելու, անկախ ամուսնության մեջ գտնվելու կամ ամուսնալուծվելու եւ այլ հանգամանքներից: Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից եւ հաշվի առնելով փարսը փարին լրացած երեխայի կարծիքը (Ընդ. օր., հոդվ. 53, մաս 2): Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ (Ընդ. օր., հոդվ. 53, մաս 3): ՏՏ օրենսդրությամբ հավասարապես պաշտպանվում են ինչպես երեխայի հեք ապրող ծնողի, այնպես էլ փարբեր պարճառներով նրանից առանձին ապրող ծնողի իրավունքները: Երեխայից առանձին ապրող ծնողն ունի՝ ա) երեխայի հեք շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն սրանալու հարցերը լուծելու իրավունք, բ) երեխայի մասին փողեկափություն սրանալու իրավունք (Ընդ. օր., հոդվ. 54, մասեր 1, 2 եւ 4): Իսկ ծնողը, որի հեք ապրում է երեխան, չպեքք է խոչընդոքի մյուս ծնողի հեք երեխայի շփվելուն, եթե նման շփումը վնաս չի պարճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Եթե ծնողների միջեւ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման վերաբերյալ համաձայնություն ճեռք չի բերվել, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության եւ հոգաբարճության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը քննում է դափարանը: Միաժամանակ դափարանի վճիռը չարամփորեն չկափարելու դեպքում թույլափրվում է երեխային փալ նրանից առանձին ապրող ծնողին՝ ելնելով երեխայի շահերից եւ հաշվի առնելով փարսը փարին լրացած երեխայի կարծիքը (Ընդ. օր., հոդվ. 54, մաս 3):

¹⁹⁸ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989թ. կոնվենցիա // ՀՀ ՄՊԺ 2004/4 (12), 20.12.04, (ՀՀ-ն միացել է 01.06.1992թ.՝ Գերագույն խորհրդի N Ն-0637-1 որոշմամբ):

¹⁹⁹ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, եք նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ճեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ: Փաստորեն, հիշյալ օրենքը «չափահասություն» հասկացությունը նույնացնում է գործունակության հասկացության հետ, եւ երեխայի կարգավիճակի դադարեցումը պայմանավորում նրա լրիվ գործունակության ճեռքբերման հանգամանքով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածն էլ սահմանում է, որ ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկան լրանալով, ինչպես նաեւ սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով մախատեված կարգով մինչեւ չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ճեռք բերելու դեպքերում:

Ծնողական իրավունքների հավասարության սկզբունքից շեղվելու միակ հիմքը կարող է հանդիսանալ երեխայի լավագույն շահերի ապահովումը²⁰⁰:

Այսպիսով, ծնողներն իրավունք ունեն եւ միաժամանակ պարտավոր են հոգ փունել իրենց երեխաների՝

- ա) դաստիարակության համար,
- բ) առողջության ու ներդաշնակ զարգացման համար,
- գ) կրթության համար:

Նշված իրավունքներն ու պարտականությունները, որոնք ՏՏ օրենսդրությամբ անվանվում են ծնողական իրավունքներ (Ընտ. օր., հոդվ. 49), առավել մանրամասն կարգավորվում են ՏՏ ընտանեկան, քաղաքացիական, քրեական, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, «Կրթության մասին» ՏՏ օրենքով եւ իրավական այլ ակտերով:

Ա/ Երեխայի դաստիարակության իրավունքն ամենափնմնականն է ծնողական իրավունքների մեջ: Իր երեխային դաստիարակելու իրավունքը ծնողի անձնական, անօտարելի իրավունքն է: Ծնողները իրավագոր չեն երեխայի դաստիարակության իրավունքը փոխանցել որեւէ մեկի կամ հրաժարվել այդ իրավունքից: Ծնողները կարող են երեխայի դաստիարակությունը ժամանակավորապես հանձնարարել այլ անձանց (փափ, պապ, դայակ եւ այլն), սակայն նրանք լիարժեք չափով պարտասխանաբար են մնում իրենց երեխայի զարգացման եւ դաստիարակության համար: Երեխային այլ ազգականների, կրթական կամ ուսումնական հաստատություններում դաստիարակության փայլը ծնողներին չի ազատում երեխայի դաստիարակության եւ զարգացման մասին հոգալու պարտականությունից եւ պարտասխանավորությունից: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք (Ընտ. օր., հոդվ. 51, մաս 1): Այս իրավունքի հետ փոխկապակցվում է ծնողների իրավունքը՝ պահանջելու վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման (հոդվ. 57, մաս 1):

ՏՏ օրենսդրությամբ չեն որոշակիացվում ծնողների կողմից երեխաների դաստիարակության խնդիրները, դրանում բացակայում են հոգեբարոյական եւ գաղափարական բնույթի կարգադրությունները, չի բացահայտվում երեխաներին դաստիարակելու՝ ծնողների իրավունքների ու պարտականությունների բովանդակությունը: Դրանում նշվում են միայն երեխաների դաստիարակության հետ կապված ծնողների գործունեության հիմնական ուղղությունները՝ կարեւորելով նրանց կողմից երեխայի առողջության, նրա ֆիզիկական, հոգեկան, հոգեւոր եւ բարոյական զարգացման մասին հոգալը (Ընտ. օր., հոդվ. 51), իսկ թե ինչպե՛ս իրականացնել այդ ամենը, ծնողները որոշում են ինքնուրույն՝ իրենց հայեցողությամբ:

Նշված հանգամանքը, սակայն, ինքնին չի ենթադրում պետության անարբերությունն այդ հարցում: ՏՏ օրենսդրությամբ ընդգծվել են ծնողական իրավունքների իրականացման սահմանները (Ընտ. օր., հոդվ. 53)՝ նշելով, թե ինչ եղանակներ պետք է բացառվեն երեխայի վրա ազդեցության միջոցներից (այն է՝ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք, վիրավորանք կամ երեխաների շահագործում): Բացի դրանից, ամրագրվել է, որ ծնողական դաստիարակությունը չպետք է վնաս պատճառի երեխաների ֆիզիկական եւ հոգեկան առողջու-

²⁰⁰ «Երեխայի լավագույն շահեր» հասկացության բովանդակությունը բացահայտված չէ ՀՀ օրենսդրությամբ եւ յուրաքանչյուր դեպքում որոշվում է գործի հանգամանքներից ելնելով, սակայն որպես ընդհանուր չափանիշ՝ Երեխայի իրավունքների կոմիտեն նշում է ԵԻ մասին կոնվենցիայով նախատեսված երեխայի իրավունքների երաշխավորումը:

թյանը, նրանց բարոյական զարգացմանը: Նակառակ դեպքում, այդ ծնողի (ծնողների) համար կարող են առաջանալ անբարենպաստ իրավական հետեւանքներ, օրինակ՝ մյուս ծնողը կարող է խոչընդոտել այդ ծնողի հետ երեխայի շփմանը (Ընտ. օր.-ի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբ.), դատարանը կարող է մերժել երեխային ծնողներին վերադարձնելը (Ընտ. օր.-ի 57 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբ. համապատասխան), երեխան կարող է հանձնվել խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին (Ընտ. օր., հոդվ. 57, մաս 2), ծնողների իրավունքները կարող են սահմանափակվել (Ընտ. օր.-ի 63-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան), իսկ ծնողական իրավունքները չարաշահելու և երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու դեպքում, որպես ծայրահեղ միջոց՝ ծնողները կարող են գրկվել ծնողական իրավունքներից: Բացի դրանից, որպես օպերատիվ միջոց՝ խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից)՝ ՆՃ ընտ. օր.-ի 58-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով:

Բ/ Երեխայի դաստիարակության՝ ծնողների իրավունքը, որը միաժամանակ նրանց պարտականությունն է, անխզելիորեն կապված է **երեխայի բազմակողմանի (Ֆիզիկական, հոգեկան, հոգեուր և բարոյական) զարգացման** համար հոգալու՝ ծնողների իրավունքի և պարտականության հետ: Ընտ. օր.-ի 51-րդ հոդվածի համաձայն՝ ծնողները պարտասխանավորություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար:

Ե՛հ մասին կոնվենցիայի հոդված 18-ն ընդլայնում է ծնողական պարտասխանավորության հասկացությունը: Նորվաժում մասնակից պետություններից պահանջվում է «օգտագործել իրենց լավագույն ջանքերը» այդ սկզբունքի ճանաչումն ապահովելու նպատակով առ այն, որ երկու ծնողն էլ ունենան ընդհանուր պարտասխանավորություն երեխայի դաստիարակության և զարգացման համար: «Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության և զարգացման համար կրում են հիմնական պարտասխանավորություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական մտահոգության առարկան է»:

Մարդու իրավունքների կոմիտեն նշում է, որ «Երեխային անհրաժեշտ պաշտպանություն երաշխավորելու պարտասխանավորությունը կրում են ընտանիքը, հասարակությունը և պետությունը»: Այդ պարտասխանավորությունը հիմնականում ընկնում է ընտանիքի վրա, ինչը մեկնաբանվում է լայնորեն, որ ներառվեն շահագրգիռ մասնակից պետության հասարակությունը կազմող բոլոր անձինք, սրեղծվեն պայմաններ՝ երեխայի անհարակալության ներդաշնակ զարգացումը խրախուսելու համար» (Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն, 17, 1989, HRI/GEN/1/Rev.5, էջ 133):

Ծնողների՝ վերը նշված պարտականություններին համապատասխանում են երեխայի իրավունքները, այդ թվում՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքը, որը ներառում է՝ իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգաբարձությանն արժանանալու, նրանց հետ համարեղ ապրելու (բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին), ինչպես նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ֆիզիկական, մտավոր, հոգեուր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երեխայի իրավագործությունները: **Ծնողների հոգաբարձությանն արժանանալը** համարվում է երեխայի իրավունքների իրականացման հիմնական պայմանը: Նոգածությունը ներառում է երեխայի օգնության բոլոր տեսակները՝ ինչպես ծնողների կողմից երեխայի կենսականորեն անհրաժեշտ պա-

հանջմունքների բավարարումը (աննդով, հագուստով, բուժսպասարկմամբ, գրենական պիտույքներով ապահովելը եւ այլն), այնպես էլ երեխային հոգեպես աջակցելը, նրա հեղձվելը, ուշադրությունը նրա նկատմամբ, նրա հեղափոխությունները հասկանալը, նրան հուզող խնդիրները լուծելը եւ այլն:

Երեխան ունի նաեւ իր ծնողների կողմից դաստիարակվելու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգվելու իրավունք: Այդ առումով ընտանիքում պետք է ստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները երեխայի ֆիզիկական, հոգեկան եւ բարոյական զարգացման համար: Ընտանեկան մթնոլորտը պետք է նպաստի երեխայի ստեղծագործական ունակությունների բացահայտմանը, նրա՝ որպես լիարժեք անհատ ձեւավորմանը, որ պատրաստ լինի ինքնուրույն հասարակական կյանքին:

Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր եւ հոգեւոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն («Երեխայի իրավունքների մասին»ՏՏ օրենք, հոդված 8):

Ընտանիքում ապրելու եւ դաստիարակվելու իրավունքի հետ անխզելիորեն կապված է ծնողների եւ այլ ազգականների (պապերի, տատերի, եղբայրների, քույրերի եւ այլ ազգականների) հետ շփվելու երեխայի իրավունքը: Շփվելու իրավունքը կարող է արտահայտվել երեխայի՝ իր ծնողների (կամ նրանցից մեկի), ինչպես նաեւ այլ ազգականների հետ մշտապես կամ պարբերաբար շփվելու հնարավորության մեջ: Նույնը վերաբերում է արտակարգ իրադրության մեջ (ձերբակալված, կալանավորված, բժշկական կազմակերպությունում գտնվելու եւ այլ դեպքերում) գտնվող երեխային: Շփման իրավունքի սահմանափակումը կամ դրանից զրկելը տեղի է ունենում ծնողական իրավունքներից զրկվելու, ծնողական իրավունքները սահմանափակվելու, արտակարգ իրադրության, ինչպես նաեւ երեխայի շահերին հակասելու ցանկացած դեպքում: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա:

Երեխան ունի նաեւ առողջության պահպանման եւ ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում («Երեխայի իրավունքների մասին»ՏՏ օրենք, հոդված 7):

ՏՏ օրենսդրությամբ ամրագրվել է երեխայի՝ իր իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության իրավունքը (Ընտ. օր., հոդվ. 43), որը միաժամանակ հանդիսանում է երեխայի մյուս բոլոր իրավունքների իրականացման երաշխիք: Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք: Երեխայի իրավունքների եւ շահերի խախտման դեպքում (ընդ որում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ ծնողական իրավունքները չարաշահելու դեպքերում) երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության եւ հոգաբարձության մարմին:

Այս առումով նույնպես հաշվի են առնվել ԵԻ մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածով անդամ պետությունների վրա դրված պարտավորությունները²⁰¹: Իսկ երեխայի կյանքին և առողջությանն սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների դեպքերի մասին տեղեկացված պաշտոնապար անձանց և այլ քաղաքացիների վրա այդ մասին երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին հայտնելու պարտավորություն է դրվել: Խնամակալության և հոգաբարձության մարմինն էլ իր հերթին նման տեղեկություններ ստանալուն պես պարտավոր է ձեռնարկել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ (Ընդ. օր., հոդվ. 43, մաս 3):

Ծնողներն օրենքի ուժով իրավունք ունեն և պարտավոր են նաև պաշտպանել երեխաների իրավունքներն ու շահերը, քանի որ վերջիններն անգործունակ են կամ չունեն բավարար չափով գործունակություն, հետեւաբար՝ ի վիճակի չեն ինքնուրույն իրականացնել և պաշտպանել իրենց իրավունքները: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և առանց լիազորագրի հանդես են գալիս նրանց իրավունքների և շահերի պաշտպանությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում: Նրանց համար բավարար է ներկայացնել փաստաթղթեր, որոնք հավաստում են երեխայի սերունդ որոշակի ծնողներից, և նրանց մոտ առաջանում է օրենքի ուժով ներկայացուցչություն, որի ծավալը որոշվում է ներկայացուցչության մասին ՏՔ քաղաքացիական օրենսգրքի նորմերով, ինչպես նաև նույն օրենսգրքի 29 և 30-րդ հոդվածներով: Մակայն այդպիսի ներկայացուցչությունն ունի որոշ առանձնահատկություններ: Միաժամանակ, պրակտիկայում ծնողներն օրինական ներկայացուցիչ իրենց լիազորությունները քաղաքացիական և ընտանեկան իրավահարաբերություններից բխող գործերում իրականացնելուց բացի, հաճախ իրականացնում են նաև երեխաների կողմից կատարված քրեական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննվելիս, ուստի ծնողների ներկայացուցչական լիազորությունների բովանդակությունը որոշվում է նաև վարչական և քրեադատարական իրավունքի նորմերով:

Գ/ Երեխայի դատարարական և որպես բազմակողմանի զարգացած անձ ձեւավորվելու գործընթացի անբակտերի մասն է կազմում **կրթությունը**, որը յուրաքանչյուր երեխայի համար հասանելի է դառնում՝ պետության կողմից անվճար և պարտադիր փարրական կրթության ապահովմամբ, միջնակարգ կրթության փարբեր ձեւերի զարգացման խրախուսմամբ, բոլոր երեխաների համար դրանց մարչելիության ապահովմամբ, կանոնավոր դպրոց հաճախելուն նպաստելու և դպրոցը թողած երեխաների թվաքանակի նվազեցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելով (ԵԻ մասին կոնվենցիայի 28-րդ հոդվ.), մյուս կողմից՝ ծնողների վրա երեխայի կրթություն ստանալն ապահովելու պարտականություն դնելով: Նկատի է առնվում, որ իր բովանդակությամբ կրթության իրավունքը դասվում է այն իրավունքների շարքին, որոնք ապահովում են մարդու հոգեւոր զարգացումը և յուրաքանչյուր անհատին օգնում են դառնալ քաղաքական, հոգեւոր, սոցիալական և մշակութային առաջընթացի ակտիվ մասնակից:

Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

ա) երեխայի անհատականության, փաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

²⁰¹ Դրանք են՝ ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը ծնողների, օրինական խնամակալների ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձեւերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

բ) մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

գ) երեխայի ծնողների, իր մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, իր բնակության երկրի ազգային արժեքների, իր ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից փարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,

դ) ազապ հասարակության մեջ փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, փղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով գիտակցական կյանք վարելու համար երեխայի նախապատրաստմանը,

ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Իրականացնելով երեխայի կրթություն ստանալն ապահովելու պարտականությունը՝ ծնողներն իրավունք ունեն ընտրելու կրթական հաստատությունը և երեխաների ուսուցման ձեւը՝ նրանց կարծիքը հաշվի առնելով: Տվյալ իրավունքը հիմնված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի դրույթի վրա, այն է՝ ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության փեսակն ընտրելու առաջնային իրավունք: Նույն միտքն է բովանդակում նաև Տնփեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի 13-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ Դաշնագրին մասնակցող պետությունները պարտավոր են հարգել ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար ոչ միայն պետական իշխանությունների կողմից հիմնադրված դպրոցները, այլև մյուս այն դպրոցներն ընտրելու ազատությունը, որոնք համապատասխանում են կրթության պահանջների այն նվազագույնին, որը կարող է սահմանվել կամ հաստատվել պետության կողմից, և հարգել իրենց երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունն իրենց սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը:

Կրթական հաստատության և կրթության ձեւի ընտրության վրա կարող են ազդել փարբեր հանգամանքներ՝ երեխայի առողջական վիճակը, նրա ընդունակությունները, ընտանեկան ավանդույթները, ծնողների մասնագիտությունը, ուսումնական հաստատության հեղինակությունը, նրա գրնվելու վայրը և այլն: Երեխայի կարծիքը հաշվի առնելը քննարկվող հարցում պարտադիր է՝ անկախ երեխայի փարբիքից: Սակայն, եթե երեխայի ցանկությունը հակասում է նրա շահերին (օրինակ, նա չի կարող սովորել համակարգչային դաստարանում թույլ փեսողության պատճառով) կամ չեն կարող իրականացվել օբյեկտիվ պատճառներով (օրինակ՝ ընտանիքի նյութական պայմանները թույլ չեն փախ, որ երեխան սովորի վճարովի դպրոցում), ծնողները պարբ է գործեն իրենց հայեցողությամբ:

ՆՇ օրենսդրությամբ առաջին անգամ ծնողական իրավունքներ են վերագրվել նաև անչափահաս ծնողներին: Անչափահաս ծնողներն ունեն անչափահասների համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքները: Մի կողմից՝ պարբ է պաշտպանվեն անչափահաս ծնողների իրավունքները, մյուս կողմից՝ երեխայի շահերը պահանջում են, որպեսզի նրա դաստիարակությունն իրականացվի բավարար չափով հասուն անձի կողմից: Այս կապակցությամբ ՆՇ օրենսդրությունը սահմանում է, որ ամուսնության մեջ չգրնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համարել ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ: Միաժամանակ սահմանվել է, որ

մինչև և անչափահաս ծնողների ամուսնության փարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որն անչափահաս ծնողների հետ համարել կիրակա- նացնի այդ երեխայի դաստիարակությունը: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն նաև ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը և մայրությունը (Ընտ. օր., հոդված 50):

ՆՏ օրենսդրությունը ծնողներին պարտավորեցնում է նաև հոգալ իրենց երեխանե- րի ապրուստը: Ընտ. օր.-ի 68 և 73-րդ հոդվածներում սահմանվել է, որ ծնողները պար- տավոր են պահել իրենց երեխաներին, ինչպես նաև ապրուստի միջոցներ փրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին: Միևնույն ժամանակ, ապրուստի միջոցները կամավորապես չփրամադրվելու դեպքում ՆՏ օրենսդ- րությամբ ամրագրվել է ալիմենտի բռնագանձման հնարավորություն՝ ինչպես դատա- կան կարգով, այնպես էլ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա:

Ընդ որում, պետք է փարբերակել «ալիմենտ» և «ապրուստի միջոց» հասկացու- թյունները: «Ապրուստի միջոց» հասկացությունն ավելի լայն է, քան «ալիմենտը», և իրե- նից ներկայացնում է որևէ մեկին կյանքի միջոցներով ապահովելը, իսկ ալիմենտը համարվում է ընդամենը դրա բաղկացուցիչ մասը: Ալիմենտը միայն մասնակի է լրաց- նում երեխայի անհրաժեշտ պահանջմունքները, իսկ ապրուստի միջոցը կարող է դուրս գալ երեխայի պահանջմունքների և անհրաժեշտ օգնության փեսակների սահմաններից (սննդով, հագուստով, ուսումնական պարկանելիքներով, գրենական պիտույքներով և այլնով ապահովելը)²⁰²:

«Ալիմենտ» և «ապրուստի միջոց» հասկացությունների փարբերակումը հարկա- պես կարևոր նշանակություն է ձեռք բերում ալիմենտային պարտավորության ծագման պահի որոշման հարցում: Երեխային պահելու, ապրուստը հոգալու ծնողների պարտա- կանություններն առաջանում են երեխայի ծնվելու պահից: Նշված պարտականություն- ները, որպես կանոն, պարտավոր անձանց կողմից կատարվում են կամավորապես: Օրենքով նախատեսված այդ պարտականությունների կամավոր չկատարման դեպքում է, որ ծագում են ծնողների ալիմենտ վճարելու պարտականությունները, որը կարող է կա- րարվել ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ դատարանի վճռի հի- ման վրա: Ներեւաբար, իրենց երեխաներին պահելու, ապրուստի միջոցներ փրամադ- րելու օրենքով նախատեսված պարտականությունների կամավոր կատարման դեպքում դեռևս ալիմենտային իրավահարաբերություններ չկան: Ալիմենտային պարտավորու- թյունն իրենից ներկայացնում է ծնողական իրավահարաբերության զարգացման որոշա- կի աստիճան, որը փեղի է ունենում որոշակի պայմանների ազդեցության ներքո՝ առան- ձին ապրելը, ապրուստի միջոցներ չփրամադրելը և այլն: Ապրուստի միջոց վճարելու պարտավորությունը գոյություն ունի մինչև ապրուստի միջոցը կամավոր վճարելուց հրա- ժարվելու պահը, իսկ ալիմենտային պարտավորությունը ծագում է այդ պահից հետո:

Անչափահաս զավակներին ապրուստի միջոց չփրամադրող ծնողների ալիմենտ վճարելու պարտականությունը ծագում է երեխայի՝ օրենքով սահմանված կարգով հաս- արարված սերման փաստի հիման վրա, և այլ պայմաններ նման պարտավորության առաջացման համար չեն պահանջվում. այն կախված չէ ծնողների աշխատունակությու- նից, գործունակությունից, նյութական միջոցների առկայությունից կամ բացակայությու- նից, միմյանց հետ համարել, թե առանձին ապրելուց: Ծնողները պարտավոր են

²⁰² Տե՛ս **Нечаева А. М.** Семейное право. Учебник.-3-е изд., перераб. и доп.-М.: Юристь, 2006, էջ 247; **Муратова С. А.** Семейное право. Учебник для юридических вузов. 2-е изд., перераб. - М.: Изд-во ЭКсмо, 2006, էջ 195; **Иоффе О. С.** Советское гражданское право, в трех томах. Т. III, Л., АГУ, 1965, էջ 260:

մասնակցել իրենց երեխայի նյութական և ապահովելուն, եթե նույնիսկ դա կարող է հանգեցնել իրենց իսկ պահանջումներին ոչ լրիվ բավարարմանը: Երեխայի կարիքավորությանը նույնպես նշանակություն չի տրվում: Այսինքն՝ ընդունվում է, որ երեխայի հանդեպ ծնողների պլիմենարային պարտականությունը համարվում է անպայմանական եւ կախվածության մեջ չի դրվում ծնողների փարիքից, նրանց մոտ միջոցների առկայությունից: Ծնողների այդ պարտականությունը պահպանվում է նաեւ անվավեր ճանաչված ամուսնությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչվելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում ծնված երեխաների հանդեպ, քանի որ ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված երեխաների իրավունքների վրա (Ընդ. օր., հոդվ. 23, մաս 4):

Ալիմենարի վճարման հետ մեկտեղ, ծնողները կարող են մասնակից դարձվել երեխաների (զավակների) համար կատարվող լրացուցիչ ծախսերին: Լրացուցիչ ծախսերը չեն մտնում պլիմենարային պարտավորության մեջ: Այդպիսի պարտականություն ծնողների մոտ առաջանում է որեւէ բացառիկ հանգամանքի առկայության՝ ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անապահով զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն եւ այլն: Ընդ որում, դատարանը կարող է պարտավորեցնել ծնողներին մասնակցելու ինչպես փաստացի կատարվող, այնպես էլ ապագայում կատարվելիք անհրաժեշտ լրացուցիչ ծախսերին (Ընդ. օր., հոդված 74):

ՏՃ օրենսդրությունը նախատեսել է պլիմենար վճարելու՝ ծնողների միջև կայացված համաձայնությունը՝ որպես նոր ինստիտուտ (այսուհետ՝ համաձայնություն), եւ այն ճանաչվել է որպես պլիմենարի բռնագանձման նախընտրելի (առաջնային) եղանակ: Նամաձայնության առկայության դեպքում չի թույլատրվում պլիմենարի բռնագանձման հայցով դատարան դիմելը: Այդ պարագայում հնարավոր է դատարան դիմել այն կատարելուն հարկադրելու (չկատարման կամ ոչ պարզաճ կատարման դեպքում) կամ այն լուծելու կամ փոփոխելու պահանջներով (դրա համար բավարար հիմքերի առկայության դեպքում):

ՏՃ օրենսդրությունը նախատեսել է նաեւ պլիմենարի բռնագանձման դատական կարգ: Երեխաների համար դատական կարգով բռնագանձվող պլիմենարի չափը, որը որոշվում է ամենամսյա վճարների տեսքով, սահմանվում է՝ վճարողի վաստակից եւ (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ՝ մեկ երեխայի համար ծնողների վաստակի եւ (կամ) այլ եկամտի մեկ քառորդը, երկու երեխաների համար՝ մեկ երրորդը, երեք եւ ավելի երեխաների համար՝ կեսը (Ընդ. օր., հոդվ. 69) կամ ամենամսյա վճարների տեսքով՝ կայուն դրամական գումարով (Ընդ. օր., հոդվ. 71):

ՏՃ օրենսդրությամբ սահմանվել է վճարողի վաստակից եւ (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ բռնագանձվող պլիմենարի նվազագույն չափը, որը չպետք է պակաս լինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից (Ընդ. օր., հոդվ. 69, մաս 1, պարբ. 2): Բացի դրանից, հարկադիր աշխատանքի սահմանադրական արգելքը պահպանելու եւ միաժամանակ երեխայի շահերն ապահովելու նպատակով նույն հոդվածում ամրագրվել է նաեւ գործազրկության նպաստ ստացող ծնողներից պլիմենար բռնագանձելու հնարավորություն՝ սահմանելով նաեւ դրա նվազագույն չափը, որը չպետք է պակաս լինի գործազրկության նպաստի 20 տոկոսից: Ավելին, սահմանելով պլիմենար վճարելու պարտավոր անձի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու մասին դրույթ՝ ի դեմս ՏՃ ընդ. օր.-ի 101-րդ հոդվածի, օրենսդիրը դրանով իսկ փորձել է շահագրգռել պլիմենար վճարելու պարտավոր անձին աշխատելու:

Անչափահասների համար ալիմենտները կարող են բռնագանձվել նաեւ կայուն դրամական գումարով, որի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը եւ ուշադրության արժանի շահերը (Ընտ. օր., հոդվ. 71, մաս 2): Կայուն դրամական գումարով ալիմենտները կարող են բռնագանձվել, երբ՝ ալիմենտ վճարողն սրանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ եւ (կամ) այլ եկամուտ, վաստակ եւ (կամ) այլ եկամուտ է սրանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով, վաստակ եւ (կամ) այլ եկամուտ չի սրանում կամ չունի, եթե ծնողների վաստակից եւ (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնարին կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է սրացողներից որեւէ մեկի շահերին (օրինակ, երբ ալիմենտ վճարողը թաքցնում է իր եկամուտները, պակաս է ցույց տալիս եւ այլն): Ալիմենտի չափը սահմանվում է կայուն դրամական գումարով նաեւ այն դեպքում, երբ ծնողներից յուրաքանչյուրի մոտ երեխաներ են մնում, եւ ալիմենտներ բռնագանձվում են ծնողներից մեկից՝ ավելի պակաս ապահովված ծնողի մոտ մնացած երեխայի օգտին (Ընտ. օր., հոդվ. 71, մաս 3):

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է երկու հիմնական սկզբունքներ. առաջին՝ երեխաները չպետք է բաժանվեն իրենց ծնողներից, եթե միայն բաժանումն անհրաժեշտ է երեխայի լավագույն շահերի տեսանկյունից, եւ երկրորդ՝ այդ հիմքով երեխաներին իրենց ծնողներից բաժանելու բոլոր ընթացակարգերը պետք է արդար լինեն: Այդ հոդվածը հաստատում է նաեւ հարաբերություններ պահպանելու եւ երկու ծնողի հետ կապ պահպանելու՝ երեխայի իրավունքները, եւ պետությանը պարտավորեցնում է երեխային ու ծնողին տեղեկացնել յուրաքանչյուրի գտնվելու վայրի մասին, եթե այդ բաժանումը կատարվել է պետության կողմից:

Այս հոդվածին առնչվող հիմնական սկզբունքներն ամրագրված են 1959թ. Երեխայի իրավունքների հռչակագրում. «Երեխան իր անհատականության լիարժեք եւ ներդաշնակ զարգացման համար սիրո եւ ընթրման կարիք է զգում: Եթե հնարավոր է՝ նա պետք է մեծանա իր ծնողների խնամքի եւ պարասխանաբարության ներքո...» (հոդված 6):

Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է. «Ընտանիքը հասարակության բնական եւ հիմնական խմբակային միավորն է եւ պետության ու հասարակության կողմից պաշտպանության իրավունք ունի» (հոդված 23 (1), ինչն արտացոլված է Սոցիալական, տնտեսական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածում), եւ «Ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության կամ իր պարվի եւ հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության: Յուրաքանչյուր անձ նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի» հոդված 17 (1) եւ (2):

2. Ծնողները, որոնք իրենց իրավունքներն իրականացնում են երեխայի շահերին հակառակ, չարաշահում են դրանք, կարող են զրկվել ծնողական իրավունքներից կամ նրանց իրավունքները կարող են սահմանափակվել: Նրանք կարող են ենթարկվել նաեւ քրեական եւ վարչական պարասխանաբարության իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պաշտճ կատարելու համար:

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝ ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելու:

լուց, ընդ որում՝ ալիմենսի վճարելուց. բ) առանց հարգելի պարզառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդաբանից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանապիպ այլ կազմակերպություններից. գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա. դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ուրնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը. ե) փառապում են քրոնիկ ալկոհոլաճանդությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ. զ) կախարել են իրենց երեխաների դեմ դիպավորյալ հանցագործություն (Ընդ. օր., հոդված 59):

Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննվում են խնամակալության եւ հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ: Եթե դատարանը ծնողական իրավունքներից զրկելու գործը քննելիս ծնողների կամ նրանցից մեկի գործողություններում հայտնաբերում է քրեորեն պարտելի արարքի հարկանիշներ, ապա այդ մասին պարտավոր է տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին: Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են (ընդ որում՝ նրանցից ապրուստի միջոց ստանալու, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնությունների ու պետական նպաստների իրավունքները): Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխային որդեգրել թույլատրվում է ոչ շուրջ, քան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:

Ծնողական իրավունքները կարող են նաև վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձեռը եւ (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը: Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաև երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը: Տասը տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը:

Դատարանը, հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, եւ որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

Ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել նաև ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու (Ընդ. օր., հոդված 63): Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից

մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ բրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն): Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վրանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չփոխեն իրենց վարքագիծը, խնամակալության և հոգաբարձության մարմինը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո պարտավոր է հայց ներկայացնել ծնողական իրավունքներից զրկելու մասին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել մինչև այդ ժամկետը լրանալը՝ ելնելով երեխայի շահերից: Ծնողները, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կորցնում են երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնություններ ու պետական նպաստներ ստանալու իրավունքը:

Միաժամանակ, ծնողական իրավունքների սահմանափակումը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Ծնողների ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին: Ծնողներին, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: Երեխայի հետ ծնողների շփումը թույլատրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի, խնամաբար ծնողների կամ երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինողի համաձայնությամբ, որտեղ գտնվում է երեխան: Եթե վերացել են այն հանգամանքները, որոնց հիման վրա սահմանափակվել են ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքները, ապա դատարանը ծնողների կամ նրանցից մեկի հայցի հիման վրա կարող է վճիռ կայացնել երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու և նախատեսված սահմանափակումները վերացնելու մասին: Հաշվի առնելով տարբեր պարիստ լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը, եթե երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելը հակասում է նրա շահերին:

3. «Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար»: Մահմանադրության այս դրույթն իր արտացոլումն է գտել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 75-րդ հոդվածում, ըստ որի՝ աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին²⁰³:

Անաշխատունակությունը նշանակում է անձի անընդունակությունը՝ առողջական վիճակից ելնելով իրականացնել աշխատանքային պարտականություններ, զբաղ-

²⁰³ Ընտանեկան օրենսգրքի 75-րդ հոդվածի «Ծնողների ապրուստը հոգալու՝ չափահաս զավակների պարտականությունները» վերնագրից հետևում է, որ մեծանուն պարտականություն կարող է դրվել ցանկացած չափահաս զավակի վրա՝ անկախ նրա աշխատունակությունից, սակայն ինչպես նույն հոդվածի բովանդակությունը, այնպես էլ ՀՀ Մահմանադրության 36-րդ հարվածը վկայում են, որ խոսքն աշխատունակ չափահաս զավակների մասին է:

վել ձեռնարկարկարական եւ այլ շահութաբեր գործունեությամբ²⁰⁴ Անաշխապումնակ անձանց թվին են դասվում առաջին, երկրորդ, երրորդ խմբերի հաշմանդամները (վերջինը՝ մասնակի) եւ կենսաթոշակային փարիքի հասած անձինք:

Օգնության կարիքը (կարիքավորությունը) նշանակում է, որ անաշխապումնակ ծնողը (ծնողները) չունի եկամուտ, գույք կամ այն բավարար չէ նրա պահանջմունքների (սնունդ, հագուստ, բուժում եւ այլն) բավարարման համար, այսինքն՝ նա չունի գոյության միջոցներ: Կարիքավորության առկայությունը որոշվում է դատարանի կողմից՝ ելնելով գործի հանգամանքներից: Ընդ որում, հաշվի են առնվում ինչպես առօրյա պահանջմունքները, այնպես էլ լրացուցիչ սննդի, խնամքի, բուժման պահանջները բավարարելու անհրաժեշտությունը:

Չափահաս զավակները ոչ միայն պարտավոր են պահել իրենց ծնողներին, այլեւ հոգ փանել նրանց մասին: Ծնողների մասին հոգալը զավակների ինքնուրույն պարտականությունն է, որը պայմանավորված չէ ալիմենտային պարտականության առկայությամբ կամ բացակայությամբ: Դա կարող է զավակների վրա դրվել այն դեպքերում, երբ ծնողներն առողջական վիճակից, փարիքից կամ այլ պարճառներից ելնելով կարիք ունեն ոչ գույքային բնույթի օգնության՝ իրենց նկատմամբ հսկողության, խնամելու, փութեսություն վարելուն օգնելու, հիվանդանոց փանելու եւ այլն: Մակայն գործող օրենսդրությամբ իրավական պաշտպանության ենթակա է միայն անաշխապումնակ եւ օգնության կարիք ունեցող ծնողների՝ զավակից ապրուստի միջոցներ պահանջելու իրավունքը՝ ալիմենտ հարկադիր գանձելու միջոցով, մինչդեռ ծնողների մասին հոգ փանելը, ըստ էության, համարվում է զավակների բարոյական պարտքը, քանի որ դատարանը չի կարող պարտավորեցնել հասուն մարդկանց հոգ փանել իրենց ծնողների մասին: Դատարանը միայն կարող է հաշվի առնել ծնողների մասին հոգապարտության դրսետրումը՝ զավակներից ծնողների համար ապրուստի միջոցների պահանջի քննարկման ժամանակ: Ուստի ոչ միայն անաշխապումնակ եւ կարիքավոր ծնողներին պահելը, այլեւ նրանց մասին հոգ փանելը կարող է ունենալ դրամական արտահայտություն՝ նրանց համար դայակ վարձելու, նրանց ձերանոցում, բուժասանափորիայում պահելու կամ այլ կերպ խնամքն իրականացնելու համար զավակներից ալիմենտներ բռնագանձելու միջոցով:

Ընտ. օր.-ի 75-րդ հոդվածը փառացի մեկնաբանելիս ապրուստը հոգալու պարտականությունը դրվում է միայն չափահաս զավակների վրա: Անչափահասները, եթե նույնիսկ գործունակ են դարձել ամուսնության կապակցությամբ կամ էմանսիպացիայի հետեանքով, պարտավոր չեն պահել իրենց ծնողներին: Փաստորեն, մի դեպքում՝ անչափահասի լրիվ գործունակություն ձեռք բերելը դիտվել է որպես երեխայի հանդեպ ծնողների ալիմենտային պարտավորության դադարման հիմք (Ընտ. օր., հոդված 108), մեկ այլ դեպքում նույն հանգամանքը՝ անչափահասի լրիվ գործունակություն ձեռք բերելը, չի համարվել անաշխապումնակ եւ կարիքավոր ծնողների հանդեպ ալիմենտային պարտավորության առաջացման հիմք:

Ընտ. օր.-ի 76-րդ հոդվածի ուժով անաշխապումնակ ծնողների նկատմամբ կարարվող լրացուցիչ ծախսերն էլ (ծնողների ծանր հիվանդության, խեղման եւ այլ դեպքում) պարտավոր են հոգալ միայն չափահաս զավակները: Ընտ. օր.-ի 76-րդ հոդվածի համաձայն՝ չափահաս զավակները կարող են դատարանի կողմից ներգրավվել ծնողների համար կարարվող լրացուցիչ ծախսերը կրելուն, որոնք բխում են բացառիկ հանգամանք-

²⁰⁴ Стів Беспалов Ю. Ф. Реализации семейных прав ребенка: Монография. М.; Рос. акад. правосудия, 2002, т.2 108:

ներից՝ անաշխատունակ ծնողների հանդեպ չափահաս աշխատունակ զավակների կողմից հոգաբարության բացակայության դեպքում: Չափահաս աշխատունակ զավակներից յուրաքանչյուրի կողմից ծնողների համար լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը, որը վճարվում է ամեն ամիս, որոշում է դատարանը՝ կայուն դրամական գումարով՝ հաշվի առնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը: Ընդ որում, դատարանը կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս աշխատունակ բոլոր զավակներին, անկախ նրանից, թե պահանջը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե՛ բոլորի դեմ:

ՆՆ ընտանեկան օրենսդրությունը նախատեսում է չափահաս զավակներին իրենց անաշխատունակ և օգնության կարիքն ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից ազատելու հնարավորություն, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց (Ընտ. օր., հոդված 75, մաս 5): Իսկ ծնողական իրավունքներից զրկված ծնողների դեպքում զավակներն ընդհանրապես ազատվում են նրանց ալիմենտ վճարելու պարտականությունից:

ՆՈՂՎԱԾ 37

Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծախսն ու ձեւերը սահմանվում են օրենքով:

ՆՆ Սահմանադրությամբ Նայասարանը հռչակված է որպես սոցիալական պետություն, և այդ կարեւորագույն սահմանադրական բնութագրից բխում են պետության մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ սոցիալական աջակցություն ցուցաբերել իր քաղաքացիներին, ովքեր դրա կարիքն ունեն:

Սոցիալական պետության հիմնական խնդիրներից է՝ իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, երբ անձն իրենից անկախ պարճառներով անկարող է աշխատել: Այդպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը՝ կյանքի տարբեր իրավիճակներում, երբ որ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը:

Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրված սոցիալական ապահովության իրավունքի փոխկապված բաղադրաբարրային դրույթներն են.

1/ Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ապահովության իրավունք: Մարդուն ապրելու համար անհրաժեշտ են գոյության միջոցներ: Քաղաքացիական հասարակությունում ազատ մարդն իր աշխատանքի կամ սեփականության միջոցով ապահովվում է իր գոյության նյութական միջոցները: Բայց որոշ մարդիկ տարբեր պարճառների ուժով չեն կարող հայթայթել իրենց գոյության միջոցները, ուստի ունեն հասարակու-

թյան եւ պետության խնամքի կարիքը: Այդպիսի խնամքն անվանում են սոցիալական ապահովություն: Սոցիալական ապահովությունը պետության կողմից այն մարդկանց մարտցվող գոյության բավարար միջոցների քանակն է, որոնք լրիվ կամ մասնակի գրկված են աշխարհելու եւ եկամուտ ստանալու հնարավորությունից:

Թեեւ Սահմանադրությամբ երաշխավորվում է սոցիալական ապահովության իրավունք «յուրաքանչյուրին», սակայն պրակտիկայում առայժմ այն անձանց սոցիալական ապահովումը, ովքեր չունեն ՏՏ քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց) եւ բնակվում են ՏՏ փարածքում, իրականացվում է համապատասխան վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա:

2/ Սոցիալական ապահովության իրավունքը Սահմանադրությունը երաշխավորում է ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության դեպքերում:

3/ Օրենքով կարող են սահմանվել սոցիալական ապահովության այլ հիմքեր: Սահմանադրությամբ կոնկրետ նշված են միայն վերոնշյալ 5 կենսական դեպքերը, երբ պետությունը երաշխավորում է սոցիալական ապահովության իրավունքը: Սակայն այդ ցանկն սպառիչ չէ, եւ նույն սահմանադրական նորմերով օրենսդրին հնարավորություն է տրված օրենքով նախատեսել այլ դեպքեր եւս, երբ պետությունը պարտավորվում է սոցիալական աջակցություն ցուցաբերել կարիքավորներին: Մասնավորապես, օրենքով սահմանված են նաեւ որոշակի լրացուցիչ դեպքեր, երբ պետությունը սոցիալական աջակցություն է ցուցաբերում եւ նպաստ է վճարում (հղիություն եւ ծննդաբերություն, հուղարկավորություն եւ այլն):

4/ Սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով: Սահմանադրությամբ ամրագրված է իմպերատիվ պահանջ՝ ուղղված օրենսդրին՝ ընդունել օրենք, որը կամրագրի սոցիալական ապահովության եւ՝ ծավալը, եւ՝ ձեւերը:

Նայաստանում սոցիալական ապահովության հիմնական ձեւերն են՝ կենսաթոշակները, նպաստները, փարբեր սոցիալական ծառայությունները: Մեծապես սոցիալական ապահովումը պետությունը փրամադրում է դրամական ձեւով (կենսաթոշակներ եւ նպաստներ), բայց կարող է այն իրականացնել նաեւ բնամթերային ձեւով (սոցիալական սպասարկում կամ սոցիալական ծառայություն): Վերջին դեպքում պետությունը կազմակերպում է որոշակի սոցիալական ծառայություններ, որոնք կարող են իրականացվել փան պայմաններում կամ հատուկ սրացիոնար (կիսաստացիոնար) հաստատություններում (ինտերնատ-տներ) եւ ներառում են բազմաթիվ սոցիալական ծառայություններ (խնամք, սննդի կազմակերպում, բժշկական, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական օգնություն, աշխատանքի տեղավորում, հանգստի կազմակերպում, բնական տեսքով օգնություն եւ այլն):

Քաղաքացիներն ազատ են ծառայությունների ընտրության հարցում: Օրենքը սահմանում է, որ այդ ծառայությունները կարող են լինել անվճար կամ մասնակի վճարովի:

Սոցիալական ապահովության հիմնական տեսակները պետական կենսաթոշակներն ու սոցիալական նպաստներն են, որոնք ունեն մեծ սոցիալական նշանակություն, քանզի առնչվում են հարյուր հազարավոր քաղաքացիների կենսական շահերին: Մասնավորապես, Նայաստանի Նանրապետությունում կենսաթոշակ է ստանում մոտ 520 հազար քաղաքացի:

Կենսաթոշակային օրենսդրության հիմքն է «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքը (ընդունված՝ 19.11.2002թ., հետագա փոփոխություններով եւ լրացումներով):

րով), իսկ որոշ առանձին կապեզորիաների քաղաքացիների համար (զինձառայողներ, դարավորներ և այլն) գործում են նաև հատուկ օրենքներ: ՆՇ օրենսդրությամբ սահմանված են կենսաթոշակների բազմաթիվ տեսակներ՝ տարիքային, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և այլն: Վճարվում են նաև սոցիալական կենսաթոշակներ անաշխատունակ այն քաղաքացիներին, ովքեր չունեն անհրաժեշտ աշխատանքային սրած և համապատասխան աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

Սոցիալական նպաստների վճարումը կարգավորված չէ մեկ օրենքով, գործում են բազմաթիվ, որոշ դեպքերում՝ իրարամերժ և հակասական նորմատիվ իրավական ակտեր:

ՆՇ գործող սոցիալական ապահովման համակարգն առայժմ շար թույլ է՝ պայմանավորված երկրի սուղ ֆինանսատնտեսական և նյութական հնարավորություններով, ինչն օբյեկտիվորեն չի երաշխավորում ՆՇ քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք և արժանապատիվ իրականացումը:

ՆՈՂՎԱԾ 38

1. Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկն ու մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

1. Նայրնի են առողջության՝ որպես մարդու օրգանիզմի բնական հոգեֆիզիոլոգիական վիճակի փարբեր բնորոշումներ, սակայն դրանց մեջ ընդհանրական է այն, որ առողջություն նշանակում է ոչ միայն մարդու սոսկ գոյությունն առանց հիվանդությունների կամ ֆիզիկական արտաբերի, այլև կենսական էներգիայով լեցուն, հասարակական և սոցիալական կյանքին ակտիվորեն մասնակցելու, մարդու իրավունքներից անկաշկանդ ձեռով օգտվելու և արժանապատիվ կյանքով ապրելու ընդունակությունը:

Առողջության պաշտպանության իրավունքը միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում և շար պետությունների սահմանադրություններում տարածում ստացավ «Առողջության իրավունք» ձեռակերպմամբ: Առաջին կազմակերպությունը, որն իր կանոնադրության /այն անվանվում է նաև սահմանադրություն/ նախաբանում պարզորոշ սահմանեց «Առողջության իրավունքը»՝ Առողջապահական համաշխարհային կազմակերպությունն էր /ԱՆԿ/, որի կանոնադրությունն ստորագրվել է Նյու Յորքում՝ 1946թ. հուլիսի 22-ին և ուժի մեջ է մտել 1948թ. ապրիլի 7-ին²⁰⁵:

Նշված փաստաթղթի նախաբանում ամրագրված են առողջապահական չորս հիմնադրությային իմպերատիվներ, այն է՝

ա/ առողջությունը մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցիկ վիճակն է, այն չի կարող դիտվել միայն որպես հիվանդության կամ ֆիզիկական արտաբերի բացակայություն,

²⁰⁵ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Սահմանադրություն, 04. 05. 1992թ., Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր. ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրեր (N4, Երևան 2004, էջ 875)

բ/ առողջության առավելագույն հասանելի մակարդակի փրկապետումը համարվում է յուրաքանչյուր մարդու հիմնական իրավունքներից մեկը՝ անկախ ռասայական և կրոնական պատկանելությունից, քաղաքական համոզմունքից, փոստական և սոցիալական վիճակից,

գ/ առողջության պաշտպանության բնագավառում ամենաարդիական բարձրագույն նվաճումներից օգտվելը համարվում է յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից մեկը,

դ/ պետությունները պատասխանատվություն են կրում իրենց ժողովուրդների առողջության համար և պարտավոր են այդ ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ սոցիալական, իրավական և բժշկասանիտարական միջոցառումներ:

Առողջության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, հետեւաբար, այն ենթադրում է որոշակի պարտականությունների իրականացում պետության կողմից: Անհրաժեշտ է սակայն նկատի ունենալ, որ առողջության իրավունքը չի կարող ընկալվել բացարձակ կամ շոշափելի իմաստով, քանի որ այն ունի որոշակի պայմանականություն:

Պետությունն ինչպիսի միջոցառումներ էլ որ ձեռնարկի, չի կարող լիովին երաշխավորել հասարակության բոլոր անդամների առողջությունը, քանի որ առանձին հիվանդություններ դեռես համարվում են անբուժելի կամ փրկելի են ունենում բնական աղետներ, դժբախտ պատահարներ, ի հայր են գալիս այլ պարճառներ, որոնք պայմանավորված են լինում անձի ֆիզիոլոգիական կամ ժառանգական առանձնահատկություններով, բնածին արարներով և այլն:

Սա նշանակում է, որ պետությունը չի կարող պատասխանատվություն կրել հասարակության յուրաքանչյուր առանձին անդամի առողջության համար, այլ պարտավոր է ձեռնարկել միջազգային պայմանագրերով սրանձնած և ներքին օրենսդրությամբ սահմանված բոլոր հնարավոր սոցիալ-փոստական և բժշկասանիտարական միջոցառումները, որպեսզի առավելագույն չափով երաշխավորվի յուրաքանչյուր մարդու առողջության իրավունքը:

Մարդու առողջության իրավունքը պաշտպանվում է երաշխավորվում է նաև Նայասպանի Նանրապետությունում: Այն որպես սոցիալական բարձրագույն արժեք ամրագրված է նախ ՆՏ Սահմանադրությունում, մասնավորապես՝ 38-րդ հոդվածում և, ի կարարումն Սահմանադրության նշված հոդվածի պահանջների՝ մեր երկրում ընդունված օրենսդրական և ենթօրենսդրական այլ ակտերում: Նայասպանի Նանրապետությունը վավերացրել է մարդու առողջության իրավունքի վերաբերյալ կարեւոր դրույթներ պարունակող մի շարք հայտնի միջազգային պայմանագրեր, որոնք, ՆՏ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, ՆՏ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են համարվում: Այդ պայմանագրերից են՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը /ՆՏ-ի կողմից վավերացվել է 23.06.1993թ./, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը /ՆՏ-ի կողմից վավերացվել է 13.12.1993 թ./, 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան /ՆՏ-ի կողմից վավերացվել է 13.10.1993թ./, 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան /ՆՏ-ի կողմից վավերացվել է 22.07.1993թ./, 1961թ. Եվրոպական սոցիալական խարտիան /ՆՏ-ի կողմից նշված փաստաթղթի վերանայված փարբերակը վավերացվել է 01.03.2004թ./, 1994թ. ԱՊՏ երկրների քաղաքացիների սոցիալական իրավունքների և երաշխիքների մասին խարտիան և այլն:

ՆՏ Սահմանադրության 38-րդ հոդվածի մեկնաբանման և ընդհանրապես ՆՏ-ում

առողջության իրավունքի իրավական հիմունքների պարզաբանման համար անհրաժեշտ է նախ՝ ելնելով վերը հիշատակված միջազգային իրավական փաստաթղթերում փրված սահմանումներից, որոշել առողջության իրավունքի բովանդակությունը կամ կառուցվածքը, ցույց տալ, թե ինչպիսի փարբերից կամ իրավունքներից է այն բաղկացած:

Ընդունված է այն սահմանումը, որ առողջության իրավունքը բաղկացած է երկու խումբ իրավունքներից կամ փարբերից: Դրանցից մի խումբը վերաբերում է առողջական խնդիրներ ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքին, իսկ մյուս խումբը՝ առողջության համար անհրաժեշտ նախապայմանների ապահովման իրավունքին: Վերջինների շարքում են անվտանգ խմելու ջուրը, սանիտարական պայմանները, բավարար սնունդը, շրջակա միջավայրի մաքրությունը, աշխատանքի հիգիենան և անվտանգության կանոնների ապահովումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը, պայքարը հարբեցողության և թմրամոլության դեմ, առողջ ապրելակերպը և այլն²⁰⁶:

Ինչպես րեսնում ենք, առողջության իրավունքը, բացի բժշկական միջոցառումներից, իրենից ներկայացնում է քաղաքական, փնրեսական, իրավական, սոցիալական, մշակութային, գիտական, սանիտարական, հիգիենիկ, հակահամաճարակային և այլ միջոցառումների ամբողջություն:

Այս պարզաբանումն անհրաժեշտ էր այն առումով, քանի որ ՆՏ Սահմանադրությունն առողջության իրավունքի ամրագրման հարցում հանդես է բերել որոշակի ինքնավարություն: Այսպես՝ Սահմանադրության 38-րդ հոդվածի առաջին մասը ձեւակերպված է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք», իսկ նույն հոդվածի երկրորդ մասում խոսվում է միայն անվճար բուժօգնության մասին:

Ակնհայտ է, որ առողջության իրավունքի շրջանակներն էականորեն նեղացվել են: Այդ հանգամանքն ավելի ակնհայտ կդառնա, եթե, օրինակ, շատ համառոտ քննարկենք թվարկված միջազգային փաստաթղթերից որեւէ մեկը: Այսպես, 20-րդ դարի վերջում ԱՆԿ-ն առաջ քաշեց «21-րդ դարում առողջություն բոլորի համար» գլոբալ ռազմավարական գաղափարը, որի իրականացման շրջանակներում Առողջապահության համաշխարհային ասամբլեան 16.05.98թ. ընդունեց առողջապահության մասին հռչակագիր: «21-րդ դարում առողջություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում ԱՆԿ-ն ձեւակերպեց 10 գլոբալ խնդիրներ և նպատակներ²⁰⁷: Նույն թվականին ԱՆԿ-ի եվրոպական փարածքային բյուրոն վերը նշված փաստաթղթի հիման վրա ընդունեց «Առողջություն-21» ծրագիրը, որը 21-րդ դարի համար սահմանել էր 21 խնդիրներ²⁰⁸:

Նշված երկու փաստաթղթերում նախադեսված խնդիրների գերակշիռ մասը վերաբերում է ոչ թե հիվանդություն ունեցող մարդկանց բժշկական օգնություն ցույց տալուն, այլ հիմնականում առողջ մարդկանց առողջության պաշտպանության և ամրապնդման խնդիրներին, այսինքն՝ առողջության համար անհրաժեշտ նախապայմաններ ապահովելու իրավունքին: Միանալով այդ փաստաթղթերին կամ վավերացնելով դրանք՝ պետություններն ստանձնում են համապատասխան պարտավորություններ: Նարկանդա-

²⁰⁶ Տե՛ս Ասքրյոն Էյդե և մյուսներ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ /դասագիրք երկրորդ, լրամշակված հրատարակություն/, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 248:

²⁰⁷ Տե՛ս **Иваненко В. А., Иваненко В. С.** Социальные права человека и социальные обязанности государства: международные и конституционно-правовые аспекты. СПб., юридический центр пресс, 2003, էջ 130:

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

կան է, որ Եվրոպայում մարդու առողջության իրավունքի արդյունավետ ապահովման եւ երաշխավորման նպատակով մարդու կյանքի միջին տևողությունը հաշվարկելիս հաշվարկվում է նրա **առողջ կյանքի միջին տևողությունը**²⁰⁹, որպիսի հանգամանքը ենթադրում է այն, թե ինչպիսի հսկայածավալ եւ արդյունավետ կանխարգելիչ բնույթի միջոցառումներ են իրականացվում առողջ կյանքի տևողությունը երկարացնելու եւ առհասարակ կյանքի որակը բարելավելու ուղղությամբ, քանզի կյանքի բարեկեցության մակարդակի բարձրացմամբ է հնարավոր արդյունավետ կերպով ապահովել մարդու առողջության իրավունքը:

Առողջության իրավունքը սահմանվում է մեկնաբանվում է նաեւ 1966թ. ընդունված Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին դաշնագրում (հոդվ. 12)²¹⁰, ինչպես նաեւ իրավական մյուս ակտերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում²¹¹: Առողջության իրավունքի լիարժեք եւ ամբողջական ամրագրման համար ճիշտ կլիներ, եթե ՏՄ Սահմանադրության 38-րդ հոդվածը Եվրախորհրդի անդամ պետությունների եւ ԱՊՏ երկրների սահմանադրությունների օրինակով²¹² առողջության պաշտպանության մասին պարունակեր՝ «յուրաքանչյուր ոք ունի առողջության պաշտպանության իրավունք» կամ «պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ մարդու առողջության պաշտպանության ամրապնդման ուղղությամբ», կամ՝ նույնաբովանդակ որեւէ այլ խմբագրությամբ դրույթ:

Անհրաժեշտ է նաեւ նշել, որ ՏՄ Սահմանադրությունը 1995թ. հուլիսի 5-ին ընդունելու ժամանակ իր սկզբնական տեքստում /հոդվ. 34/ պարունակում էր՝ «յուրաքանչյուր ոք ունի առողջության պաշտպանության իրավունք» ձեւակերպմամբ դրույթ: Այդ դրույթը հանվեց 2005թ. ՏՄ Սահմանադրության բարեփոխումների ժամանակ:

Առողջության իրավունքի ամրագրման առումով, ինչպես նշել ենք, ՏՄ Սահմանադրությունն ունի որոշակի առանձնահատկություն: Դա արտահայտվում է նաեւ նրանում, որ Սահմանադրության առանձին հոդվածներում, մասնավորապես տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները սահմանող 48-րդ հոդվածում պարունակվող որոշ դրույթներ ուղղակիորեն վերաբերում են առողջության պաշտպանության եւ ամրապնդման հարցերին (նման դրույթ է պարունակվում նաեւ 33.2-րդ հոդվածում)²¹³:

Սահմանադրության փարբեր հոդվածներում նախատեսված առանձին դրույթներով հնարավոր չէ լիովին սահմանել առողջության պաշտպանության իրավունքը: Նախ՝ այն պարճառով, որ հնարավոր չէ սպառիչ թվարկել այդ իրավունքի բոլոր փարբերը, քանի որ դրանք բազմաթիվ են, ընդ որում՝ անընդհատ փոփոխվող եւ նորացվող, չնայած

²⁰⁹ St' u. The European health report 2002 // Europe /World health organization regional publications, European series N. 97, Copenhagen 2002:

²¹⁰ St' u Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 13.12.1993թ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր. ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրեր (N4, Երևան 2004, էջ 82):

²¹¹ St' u Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 23.06.1993թ., Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր. ՄԱԿ-ի շրջանակներում կնքված պայմանագրեր (N4, Երևան 2004, էջ 40):

²¹² St' u Конституции государств Европейского Союза, М., 1997г., Новые Конституции стран СНГ и Балтии, М. 1998г.:

²¹³ Վերը նշված դրույթները մեկնաբանվելու եւ Սահմանադրության այն դրույթների մեկնաբանման ընթացքում, որոնցում դրանք նախատեսված են:

առանձին փարբեր շար կայուն են, մշտապես պահանջված, օրինակ՝ մաքուր խմելու ջրի և շրջակա միջավայրի, բավարար սննդի և այլ իրավունքներ: Այնուհետև, պետությունը Սահմանադրության մեջ կոնկրետ թվարկելով առողջության պաշտպանությանն ուղղված իր պարտավորությունները՝ կարող է բավարարվել միայն դրանց ապահովմամբ և այլ միջոցառումներ չձեռնարկել, որոնք, թերևս, փարբեր ժամանակներում կարող են ավելի հրապապ լինել:

Ինչպես վերը նշվեց, ՎՍ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանվում է բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունքը: ՎՍ Սահմանադրության այս դրույթն ունի շար փարողունակ և խոր բովանդակություն: Այն մի ընդհանրական իրավունք է, որն իր մեջ պարունակում է նշված բնագավառին առնչվող մարդու բազմաթիվ իրավունքներ:

ՎՍ Սահմանադրության 38-րդ հոդվածից երևում է, որ ՎՍ փարածքում բժշկական օգնություն սրանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, այսինքն՝ ՎՍ քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա քաղաքացիները: Այս առումով ՎՍ օրենսդրությունը կարող է ավելի առաջադեմ համարվել, քան նույնիսկ առանձին գարգացած երկրների օրենքները:

ՎՍ Սահմանադրությունն ամրագրելով մարդու բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունքը, ըստ էության, միաժամանակ սահմանում է նաև այդ բնագավառում պետության պարտավորությունները:

Նշված ոլորտում պետության առավել ընդհանրացված պարտավորությունները հետևյալներն են.

1/ Պերական բյուջեից և այլ աղբյուրներից հարկացնել անհրաժեշտ նյութական միջոցներ: Դրականորեն պերք է հիշարակել այն հայտնի փաստը, որ ՎՍ պերական բյուջեում առողջապահության համար հարկացվող միջոցները յուրաքանչյուր փարի գզալիորեն ավելանում են:

2/ Առողջապահության գործի կզգմակերպման համար պետությունը պարտավոր է ամբողջ երկրի մասշարբով սրեղծել յուրաքանչյուր անձի համար դիմելու առումով մարչելի բժշկական հասարարություններ, հիվանդանոցներ, համարոժարաններ և այլն, վերջիններիս ապահովել համապարասխան շենքերով և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններով: Չնայած ՎՍ-ում առողջապահական հասարարությունները, ըստ էության, բավարար են, սակայն փեղակայման աշխարհագրական առումով շար դեպքերում հեռավոր բնակավայրերի բնակիչների համար դժարամարչելի են, քանի որ գրնվում են հիմնականում քաղաքներում՝ հարկապես մայրաքաղաքում:

3/ Առողջապահական գործի կզգմակերպման համար պետության կարեւորագույն պարտավորություններից է բժշկական որակյալ կադրերի պարրասարումը: Այս առումով կարող ենք նշել, որ ՎՍ-ում կան պերական և մասնավոր բժշկական բուհեր և միջնակարգ մասնագիտական հասարարություններ, որոնք լիովին ապահովում են բժշկական կադրերի պարրասարման գործը:

Բացի դրանից, պետությունն աջակցում է բժիշկներին՝ ապահովելով վերջիններիս վերապարրասարումը Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջնակարգ ուսումնարբժշկական հասարարություններում, որի արդյունքում նրանք փիրապերում են բժշկության ժամանակակից նվաճումներին և ձեռքբերումներին:

4/ Պետության մյուս պարտավորությունն առողջապահության գործի կզգմակերպման և կառավարման խնդիրն է: Իր այս կարեւորագույն պարտավորությունը պե-

տությունն իրականացնում է հատկապես այդ նպատակով ստեղծված մարմնի՝ առողջապահության նախարարության միջոցով:

ՆՏ Սահմանադրության 38-րդ հոդվածի առաջին մասի լիարժեք մեկնաբանման համար անհրաժեշտ է նախ ցույց տալ եւ պարզաբանել, թե ի վերջո ինչ են բժշկական օգնությունը եւ սպասարկումը: Այդ պարզաբանումը տրվել է ընթացիկ օրենսդրությամբ:

ՆՆ Սահմանադրության ընդունումից հետո, ի կատարումն Սահմանադրության նորմերի պահանջի, ընդունվել են մի շարք օրենքներ, որոնց շարքում հատկապես հիշարժան է 1996թ. մարտի 4-ին ընդունված՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՆՆ օրենքը²¹⁴:

Այս օրենքը սահմանում է բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման իրավական, փնտեսական եւ ֆինանսական հիմունքները: Օրենքի 1-ին հոդվածում տրված է «բժշկական օգնություն եւ սպասարկում» հասկացության պարզաբանումը, համաձայն որի՝ դա բնակչությանը կանխարգելիչ բուժական դեղորայքային օգնության ցուցաբերումն է, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննությունների անցկացումը եւ ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցումը:

Նշված օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է բժշկական օգնության եւ սպասարկման 2 տեսակ, այն է՝

ա/ առաջնային բժշկական օգնությունը, որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մարչելի մեթոդների եւ տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության եւ սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից,

բ/ մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման եւ բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության եւ սպասարկման տեսակ:

Օրենքի համաձայն՝ բժշկական օգնության եւ սպասարկման տեսակների ցանկն ու կառուցվածքը սահմանում է ՆՆ կառավարությունը: ՆՆ կառավարությունն այն հաստատել է 2008թ. մարտի 27-ի թիվ 276-N որոշմամբ²¹⁵, որում կոնկրետ սահմանված են, թե որ հիվանդություններն են ներառում առաջնային եւ որոնք մասնագիտացված բժշկական օգնությունները:

Մասնավորապես, օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաեւ բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի.

ա/ ընտրել բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողին,

բ/ ստանալ բժշկական օգնություն եւ սպասարկում հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում,

գ/ պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման եւ բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի ՆՆ օրենսդրությամբ սահմանված դեպքերից,

դ/ իրազեկ լինել իր հիվանդության մասին եւ համաձայնություն տալ բժշկական միջամտության համար,

²¹⁴ Տե՛ս. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 04 մարտի 1996թ. ՀՀ օրենքը (ՀՀԱԺՏ 1996/7-8. ՀՀ 16.05.96/93):

²¹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության եւ սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ ՊՏ 2008/22(612) 09.04.08, հոդվ. 327:

ե/ հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի օրենսդրությամբ սահմանվող դեպքերից,

զ/ արժանանալ հարգալից վերաբերմունքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Օրենքի 19-րդ հոդվածում ամրագրված են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականություններն ու պարասխանավորությունը, որոնք ըստ էության բխում են բժշկական օգնություն և սպասարկում ստացողների իրավունքներից և համահունչ են դրանց:

Օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է մարդու վերարտադրողական իրավունքը: Ելնելով հարցի կարեւորությունից՝ այս կապակցությամբ 2007թ. դեկտեմբերի 11-ին ընդունվեց «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը²¹⁶, որով մարդու վերարտադրողական առողջության և իրավունքի ապահովման հարցերը ենթարկվել են մանրազնին կարգավորման:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է մարդու իրավունքների փեսանկյունից մի քանի կարեւոր դրույթներ եւս: Դրանցից են, մասնավորապես, օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ էվթանազիայի արգելումը և 16-րդ հոդվածով սահմանված՝ առողջապահական հաստատությունների իրավունքը՝ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վրանգի, ինչպես նաև շրջապատի համար վրանգ ներկայացնող հիվանդությունների դեպքում: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վարակիչ հիվանդությունների փարածումը կանխելու նպատակով օրենքով կարող է նախատեսվել նույնիսկ ազատությունից զրկում:

Նշված երկու հարցերի վերաբերյալ առկա են հակասական մոտեցումներ: Էվթանազիան ունի ոչ քիչ թվով կողմնակիցներ, այն առանձին պետություններում թույլատրված է օրենքով և համարվում է մարդասիրական երեւոյթ:

Իսկ համաճարակային հիվանդությամբ վարակված մարդու կամքին հակառակ բժշկական օգնության ցուցաբերումը ոմանք դիտում են որպես մարդու ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակում:

Չնայած պետություններն առողջության իրավունքը պաշտպանելու պարտավորություն ունեն, սակայն չեն կարող նման միջոցներ ձեռնարկել այն աստիճան, որ դրանք ուրնահարեն այլոց իրավունքները, ինչպես, օրինակ, որոշ վարակիչ հիվանդություններով մարդկանց ֆիզիկական անձեռնմխելիության և անձնական կյանքի իրավունքը²¹⁷:

Չնայած գոյություն ունեցող փարակարծություններին, կարելի է նշել, որ երկու դեպքում էլ ՀՀ օրենսդրությունը ճիշտ ուղիով է գնացել, որովհետեւ իսկական մարդասիրությունից բխում է ոչ թե հիվանդ մարդուն կյանքից զրկելը, այլ բուժման միջոցներ կամ գոնե ցավազրկող միջոցներ փնտրելը, իսկ վարակակրի կողմից բուժումից հրաժարվելը օրենքի խախտում է: Այսպիսի անձանց նկատմամբ սահմանափակումներ կամ սանկցիաներ կիրառելը բնականոն երեւոյթ է:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի կարեւորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ օրենքով (հոդված 25) նախա-

²¹⁶ Տե՛ս «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», 11 դեկտեմբերի 2002թ. ՀՀ օրենքը (ՀՀՊՏ 2003/1 (236). 07.01.03):

²¹⁷ Տե՛ս Ասբյորն Էյդե և մյուսներ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, էջ 266:

տեսված են բժշկական օգնության և սպասարկման իրականացման ֆինանսավորման աղբյուրները, այն է՝ ա) հատկացումներ ՐՏ պետական բյուջեից, բ) ապահովագրական հատկացումներ, գ) մարդկանց անմիջական վճարումներ, դ) ՐՏ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

ՐՏ Սահմանադրությամբ ամրագրված մարդկանց բժշկական օգնության և սպասարկման առումով առողջապահական մարմինների կարելուրագույն խնդիրներն են հիվանդությունների կանխարգելումը: Այն կատարվում է վարակակիր հիվանդների հայտնաբերման և բուժման, ինչպես նաև պարվասարումների միջոցով՝ հատկապես երեխաների շրջանում:

ՐՏ առողջապահության զարգացման և հիվանդությունների կանխարգելման համար կարելուր նշանակություն ունեցավ սանիտարահամաճարակային ծառայության կազմակերպումը, որի սկիզբը հանդիսացավ դեռևս ՐՏ Սահմանադրության ընդունումից առաջ՝ 1992թ. նոյեմբերի 16-ին «ՐՏ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՐՏ օրենքի ընդունումը²¹⁸: ՐՏ կառավարությունը 2002թ. օգոստոսի 15-ին ընդունեց թիվ 1316-Ն որոշումը, որով հաստատվեց ՐՏ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասին կանոնադրությունը²¹⁹: Այս ծառայության գործունեությունը կարելուրագույն երաշխիք է հանդիսանում ազգաբնակչության շրջանում սննդային թունավորումների և այլ սուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործում:

Հիվանդությունների կանխարգելման համար կարելուր դրույթ են նախատեսում «Բժշկական օգնության և սպասարկման մասին» ՐՏ օրենքի 20-րդ և «ՐՏ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՐՏ օրենքի 22-րդ հոդվածները, համաձայն որոնց՝ առանձին մասնագիտությունների, ինչպես նաև ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները մարդկանց առողջության պահպանման, վարակիչ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով, նախքան աշխատանքի ընդունվելը և աշխատելու ընթացքում պարտավոր են պարբերաբար ենթարկվել բժշկական հետազոտման ՐՏ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ի կատարումն նշված օրենքի պահանջների՝ ՐՏ կառավարությունը 2003թ. մարտի 27-ին ընդունեց թիվ 347 որոշումը, որով մանրամասն կանոնակարգվեց նշված հարցը:

ՐՏ-ում ընդունվել են բժշկական օգնության և սպասարկման մասին ՐՏ Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված մարդու իրավունքի վերաբերյալ այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր եւս, որոնք բոլորը միասին ապահովում և երաշխավորում են այդ իրավունքի կենսագործումը մարդկանց կյանքում:

2. ՐՏ Սահմանադրության 38-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման իրավունքը լրացնում և զարգացնում է նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը, որը վերաբերում է անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունքին: Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մաս-

²¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» 16 նոյեմբերի 1992թ. (ՀՀԳ Տ 1992/23. ՀՀ 18.12.92/249):

²¹⁹ Տե՛ս «ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը և դրա ենթակայության մարմինները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ ՊՏ 2002/40 (215), 18.09.02, հոդվ. 927:

սից բխում է, որ բժշկական ծառայությունը վճարովի է: Սակայն Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր հիմնական բժշկական ծառայություններն անվճար սրանալու իրավունքը, որին համապատասխան պետությունը պարտավորվում է օրենքով սահմանել անվճար բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Նշված հարցերը կարգավորվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՏՏ օրենքով: Օրենքի համաձայն՝ առաջնային բժշկական օգնությունն անվճար է յուրաքանչյուր մարդու համար /հոդված 2/: Բացի դրանից, օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում սրանալու անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակում, ինչպես նաև բժշկական ապահովագրական հարկացումների, անձնական վճարների և օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

Օրենքը նախատեսում է նաև անվճար բժշկական օգնություն և սպասարկում որոշակի անձանց համար: Այսպես, օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական ծրագրերի շրջանակում իրավունք ունի սրանալու անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Այնուհետև, օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ շրջապատի համար վրանգ ներկայացնող հիվանդությամբ փառապող մարդն իրավունք ունի անվճար սրանալու պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված հաստատություններում:

Օրենքի համաձայն՝ անվճար բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունք ունեն նաև ձերբակալված, կալանավորված և ազատազրկման վայրում պարիժ կրող անձինք, զինծառայողները և զինակոչիկները, արտակարգ իրավիճակներից փրժած մարդիկ:

Անվճար բժշկական օգնության և սպասարկման հարցերի համապատասխան կարգավորման նպատակով և ի կատարումն 1996թ. մարտի 4-ի՝ վերը հիշատակված օրենքի՝ ՏՏ կառավարությունը 2004թ. մարտի 23-ին ընդունեց «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշումը²²⁰:

ՏՏ կառավարությունը նշված որոշմամբ, մասնավորապես, հաստատել է՝
ա/ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին /հատուկ/ խմբերի ցանկը,

բ/ ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ֆինանսավորման կարգը,

գ/ բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգը,

դ/ սրբի վիրահատությունն ամբողջությամբ անվճար իրականացնելու ենթակա անձանց խմբերի ցանկը, այդ անձանց ընտրության կարգը, ինչպես նաև անվճար բժշկական օգնությանը և սպասարկմանը վերաբերող այլ ցանկեր, կանոններ ու կարգեր:

Պետության կողմից մարդկանց անվճար բուժօգնություն և սպասարկում իրակա-

²²⁰ Տե՛ս Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին 4 մարտի 2004 թվականի N 318-Ն որոշումը (ՀՀՊՏ 2004/20 (319). 07.04.04):

նացնելու միջոցառումների շարքում կարեւոր նշանակություն ունի նաեւ նրանց անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացումը:

ՏՏ Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ յուրաքանչյուր որ ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Պետք է ենթադրել, որ «հիմնական» հասկացությունն օգտագործված է քանակական նշանակության առումով, եւ խոսքը վերաբերում է բժշկական անհրաժեշտ ծառայություններին (տարբերակելով թե՛ հիվանդության տեսակը եւ թե՛ մարդկանց սոցիալական խմբերը):

Ընդունելով, որ Սահմանադրության այդ պահանջն իրական կյանքում ինչ-որ չափով ապահովվում է, չի կարելի նաեւ ժխտել այն իրողությունը, որ ներկայումս ազգայնակցության մեջ քիչ չէ նաեւ այնպիսի անձանց թիվը, որոնք չեն մտնում անվճար բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք ունեցող խմբերի եւ ցանկերի մեջ, սակայն ի վիճակի չեն օգտվելու վճարովի բժշկական ծառայություններից, եւ պարզ է, թե ինչպիսի ճակատագիր կարող են ունենալ: Այս առումով ՏՏ օրենսդրությունը, չնայած ունի որոշակի նվաճումներ, ունի նաեւ զգալիորեն կատարելագործման անհրաժեշտություն:

Դեռեւս 1998թ. փետրվարի 18-ի ՄԴՈ-90 որոշման եզրափակիչ մասում ՏՏ սահմանադրական դատարանը գրել է, որ «Նայաստանի Նանրապետության եւ Զարգացման միջազգային ընկերակցության միջեւ 1997 թվականի սեպտեմբերի 2-ին Վաշինգտոնում ստորագրված Զարգացման վարկի համաձայնագրում (Առողջապահության ֆինանսավորման եւ առողջության առաջնային պահպանման զարգացման ծրագիր) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը: **Սակայն, սույն համաձայնագրի վավերացումը եւ իրականացումը նպատակահարմար է ՏՏ Սահմանադրության 34 հոդվածի եւ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՏՏ օրենքի պահանջների հիման վրա մշակված եւ սահմանված կարգով հրապարակված պետական նպատակային ծրագրերի առկայության պայմաններում»:** Նման ծրագրերի անհրաժեշտությունն ամրագրված է նաեւ նոր խմբագրությամբ ՏՏ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ կետում: Սակայն փաստն այն է, որ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը դեռեւս պատշաճ ձեւով չի իրացվել, բնակչության համար գրեթե հասու չէ նման ծրագրերի առկայությունը, իսկ պետական պատվերով հատկացված միջոցները հիմնականում օգտագործվում են հիվանդանոցների փոօրենների քմահաճությամբ:

ՆՈՂՎԱԾ 39

1. *Յուրաքանչյուր որ ունի կրթության իրավունք:*
2. *Կրթական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:*
3. *Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:*
4. *Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով:*
5. *Ուսումնական հաստատությունների սրեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:*
6. *Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն սրահալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:*

1. **Կրթությունն** անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն: **Կրթվելն** անհատի զարգացման գործընթացն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների, սրեղծագործության փիրապետմանը, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձեւավորմանը: Կրթության հիմնական ուղիներն են **ուսուցումը և ինքնակրթությունը**:

Կրթությունն ուսուցման միջոցով մի գործընթաց է, որով հասարակությունը, գիտակցված կերպով, իր կողմից կուտակված գիտելիքները, նվաճումները, հմտությունները և արժեքները մի սերնդից մյուսին փոխանցում է կրթական հաստատությունների միջոցով: Կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթության նպատակն է անձի և քաղաքացու մրավոր, հոգեւոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը: Կրթական մակարդակը կարեւոր է նաեւ ամեն մի մարդու կյանքում, նրա հասարակական դիրքի և նվաճումների համար: Ելնելով այդ կարեւորությունից՝ Սահմանադրությունն ամրագրել է՝ «Յուրաքանչյուր որ ունի կրթության իրավունք»:

Կրթության իրավունքն ամրագրված է նաեւ միջազգային իրավական փաստաթղթերում, որոնք վերաբերում են ինչպես մարդու հիմնական իրավունքներին, այնպես էլ բացառապես կրթության ոլորտին: Մասնավորապես, դրանք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիան (1960), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966), Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիան (1968), Եվրոպական տարածաշրջանում բարձրա-

գույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին կոնվենցիան (1997):

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է մարդու կրթության իրավունքին: Մասնավորապես այդ հոդվածն ամրագրում է փարրական կրթության պարտադիր լինելը, իսկ Կրթության մասին լիարժեք կրթությանը պետք է հավասարապես մատչելի լինի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների: Կրթության իրավունքի վերաբերյալ ընդունված հեղափոխական միջազգային իրավական փաստաթղթերն ավելի մանրամասնեցին այդ իրավունքի իրացման սկզբունքները և երաշխիքները: Ժողովրդավարական արժեքների փոխանակությունից բավական հիշարժան է այն հանգամանքը, որ ուսումնական հաստատություններում արգելվում է քաղաքական գործունեությունը կամ քարոզչությունը:

Կրթության ոլորտը Նայասպանի Հանրապետությունում կարգավորվում է մի քանի օրենքներով, դրանք են. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Բարձրագույն և հեղուկական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» և այլ օրենքները:

Սահմանադրության 39-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կրթության իրավունքի ապահովման համար պետությունը պարտավոր է ստեղծել կրթության համակարգ: **Կրթության համակարգը** պետական կրթական չափորոշիչների (կրթության բովանդակության), հաջորդական կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների, կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է: Կրթության իրավունքի ապահովմանն ուղղված օրենսդրության համաձայն՝ Նայասպանում հիմնադրվել և իրականացվում են հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերը: Հանրակրթական ծրագրերը ներառում են՝ նախադպրոցական, փարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր, հատուկ ընդհանուր կրթությունը: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են՝ նախնական-արհեստագործական, միջին, բարձրագույն, հեղուկական ծրագրերը:

Պետության պարտականությունն է նաև հետևել կրթության որակին: Այդ իր պարտականությունը նա իրագործում է նախ հաստատվելով և հրապարակելով կրթական պետական չափորոշիչները, որոնցով կրթության յուրաքանչյուր աստիճանի համար սահմանվում են անհրաժեշտ գիտելիքների քանակը, կրթական ծրագրերի նվազագույն բովանդակությունը, շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները և այլն: Կրթության յուրաքանչյուր աստիճանն ավարտելը նախատեսում է արեստավորում պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

Նայասպանի Հանրապետության քաղաքականությունը կրթության ոլորտում հիմնվում է կրթության մարդասիրական բնույթի, հայրենասիրության, հանդուրժողականության, սովորողի համակողմանի զարգացման, հնարավորությունների հավասար մատչելիության, կրթության աստիճանների շարունակականության, ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթի, միջազգային կրթական համակարգին ինտեգրման, կրթության միջազգային չափանիշներին համապատասխանության, ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռման և այլ սկզբունքների վրա²²¹:

²²¹ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

2. Նայաստանում հիմնադրվել և իրականացվում են հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերը: Նանրակրթական ծրագրերը ներառում են՝ նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր, հարուկ ընդհանուր կրթությունը: Սահմանադրության մեջ ամրագրված է հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սահմանադրությունը նաև թույլատրում է պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ սահմանել: Ի կարարումն սահմանադրական այդ նորմի, «Կրթության մասին» ՆՏ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է հիմնական կրթության պարտադիր լինելը: Ըստ այդմ, «Նանրակրթության մասին» ՆՏ օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է եռաստիճան 12-ամյա պարտադիր կրթություն:

Օրենսդրությամբ սահմանված է, որ կրթության լեզուն գրական հայերենն է, սակայն թույլատրվում է ազգային փոքրամասնությունների համայնքներում ուսուցումը կազմակերպել իրենց մայրենի լեզվով, բայց հայերենի պարտադիր ուսուցմամբ²²²:

Կրթության հավասար մատչելիության սկզբունքից ելնելով՝ օրենսդրությունը սահմանում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ պետությանը պարտավորեցնելով ստեղծելու համապատասխան պայմաններ²²³: Բացի «Կրթության մասին» ՆՏ օրենքից, այդ ոլորտը կարգավորվում է նաև «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՆՏ օրենքով:

3. Սահմանադրության 39-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանության համար կարևոր նշանակություն ունի «միջնակարգ կրթություն» հասկացության բովանդակության բացահայտումը: **Միջնակարգ կրթությունը** միջնակարգ /ընդհանուր և հարուկ ընդհանուր կրթությունն է, որն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցներում՝ տարրական, միջին դպրոց և ավագ դպրոց հաջորդական աստիճաններով²²⁴: Այսպիսով, Սահմանադրությունը սահմանում է, որ միջնակարգ կրթությունը պետության կողմից հիմնադրված պետական ուսումնական հաստատություններում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում անվճար է:

Պետական ուսումնական հաստատության հիմնադիր է հանդիսանում Նայաստանի Նանրապետության կառավարությունը կամ պետական համապատասխան լիազորված մարմինը: Օրենքը համայնքներին ևս թույլատրում է լինել ուսումնական հաստատության հիմնադիրներ: Օրենսդրությունը սահմանում է հանրակրթական դպրոցների ֆինանսավորման աղբյուրները, որոնք ներառում են պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները, ինչպես նաև կանոնադրությամբ ուղղակիորեն սահմանված ձեռնարկավորական գործունեության իրականացումից ստացված միջոցները:

4. Բոլոնիայի գործընթացի²²⁵ և կրթության բնագավառի միջազգային սկզբունքներից մեկն է բուհերի ինքնավարությունը, որն ամրագրված է բարձրագույն կրթության

²²² «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

²²³ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մաս:

²²⁴ Այս բնորոշումը կառուցված է կրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթների վերլուծության հիման վրա:

²²⁵ Բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքի ստեղծմանն ուղղված գործընթաց, որին Հայաստանը միացել է 2005թ.:

վերաբերյալ մի շարք միջազգային փաստաթղթերում²²⁶։ Ի կապարումն ՄՍՍՍՍ հանձնարարության, «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հեղուկական մասնագիտական կրթության մասին» ՄՍՍՍՍ օրենքներով սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները։ Բուհերն ինքնավարությունն իրականացնում են ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքների հիման վրա։ Ըստ օրենսդրության՝ բուհերն ինքնուրույն են որոշելու ինչպես ուսումնական գործունեությանը, այնպես էլ ֆինանսավարական գործունեությանը վերաբերող հարցերը²²⁷։ Բուհն ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական պեխնությունների և սովորողների ընթացիկ պատասխանատվության ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում։ Բուհն ինքնուրույն է որոշում բոլոր փարակարգերի աշխատողների հասարակացուցակը, իրականացնում աշխատողների ընտրությունը, ինքնուրույն է իր կառուցվածքի ձևավորման հարցում։ Բուհական պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով։ Նրանք իրավունք ունեն մասնակցելու բուհի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին։ Պրոֆեսորադասախոսական կազմը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ազատ է դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության հարցում։

5. Մասնաճանապարհի 39-րդ հոդվածի 5-րդ մասի «Ուսումնական հաստատությունների սրբեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով» դրույթի բառացի մեկնաբանությունը բերում է հետևյալ եզրակացությանը, որ ուսումնական հաստատությունների սրբեղծումը և գործունեությունը պետք է կարգավորվեն օրենքով։ Այս բանաձևի մեջ ինքնին կա միայն մեկ սահմանադրական փրամաբանություն ունեցող դրույթ, այն է՝ առնվազն օրենքով կարգավորվածության երաշխիքը։ Սակայն առանց այդ սահմանադրական պահանջի էլ, դա ինքնին ենթադրվում է, քանի որ քաղաքացիական իրավունքն ավանդաբար արդեն երկուհարյուրամյակ կարգավորում է ցանկացած կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի սրբեղծման և գործունեության կարգը, այսինքն՝ հասարակական շրջանառության մեջ եղած կազմակերպությունների կազմակերպական իրավական ձևը։ Սրացվում է, որ 39-րդ հոդվածի 5-րդ մասը փրամաբանական նույնաբանություն (տրավտոլոգիա) է։ Այդ հաստատվում է նաև նրանով, որ ընթացիկ կրթական օրենսդրությանը դիմելիս մենք չենք գտնում որեւէ առանձնահատուկ կարգավորում։ Այսպես, կրթական ոլորտի օրենքները սահմանում են, որ ուսումնական հաստատությունը կարող է ունենալ օրենքով սահմանված ցանկացած կազմակերպարարական ձև։

Առաջանում է հարց. իսկ ո՞րն է Մասնաճանապարհի պեքստի մեջ այդ դրույթի հայտնվելու դրդապատճառը։ Ենթադրվում է, որ ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևը պետք է ունենար որեւէ առանձնահատուկություն, որի պահպանման անհրաժեշտությունից էլնելով Մասնաճանապարհությունը պետք է փար ավելի կոնկրետ կարգավորում։ Սակայն դա մենք չենք նկատում 39-րդ հոդվածի 5-րդ մասում։

²²⁶ Տե՛ս http://www.magna-charta.org/pdf/BOLOGNA_DECLARATION.pdf

²²⁷ «Բարձրագույն և հեղուկական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված։

Սահմանադրության մեկնաբանվող դրույթից ակնհայտ է, որ կարգավորումը վերաբերում է կրթության համակարգի կրթական կազմակերպությունների կարգավիճակին՝ իրենց կազմակերպական-իրավական ձեւի առումով: Նասարակության ցանկացած ոլորտի խնդիրների լուծման համար կարեւորագույն նշանակություն ունի ոլորտի կազմակերպական կառուցվածքի հիմնահարցը: Կառույցը համակարգի բաղադրարարներից է եւ, հետեւաբար, մեծապէս պայմանավորում է համակարգի առջեւ դրված խնդիրների լուծումը: Համակարգի կազմակերպական կառույցի հասկանիչները նախեստաց պայմանավորված են հասարակական կյանքի Կրթական ոլորտի բնույթով ու առանձնահատկություններով, լուծվող խնդիրներով: Կառույցի բուն ձեւի ընկերությունը սուբյեկտիվ հանգամանք չէ, այլ ունի օբյեկտիվ հիմքեր: Այդպիսով կենսական ոլորտը պայմանավորում է Կրթական ոլորտում գործող համակարգային բաղադրարարների կառուցվածքային առանձնահատկությունները, ձեւը, կարգավիճակը: Վերջինս նախադրյալներից մեկն է, որ ճանապարհ է բացում համակարգի առջեւ դրված խնդիրների արդյունավետ լուծման համար: Եզրակացություն հասարակական կյանքի իրավական կարգավորման ամեն մի ոլորտ ունի իրեն հատուկ փոխտնայությունը եւ իրավական կարգավորման կառուցակարգը: Այդ կառուցակարգի բաղադրարարներից մեկն էլ ամեն մի ոլորտի կազմակերպական կառուցվածքն է, որը, վերջին հաշվով, պայմանավորում է ոլորտի ոգին, արդյունավետությունը, հասարակական խնդիրների լուծումը:

Փորձենք պարզել, թե որն է կրթության համակարգի կազմակերպական ձեւի առանձնահատկությունը, ինչն էլ պէտք է արտացոլվեր Սահմանադրության մեջ: Այդ հարցին պատասխանելու համար անդրադառնանք համաշխարհային կորպորատիվ շինարարության փորձին, որը քննարկվող հիմնահարցում ունի մեթոդաբանական նշանակություն:

Անգլո-սաքսոնական համակարգերում կորպորացիաները (իրավաբանական անձինք) դասակարգվում են հանրային, կիսահանրային, ձեռնարկավարիական (բիզնես) եւ ոչ ձեռնարկավարիական ձեւերի (տեսակների): Այս իրավական համակարգերում կրթության ոլորտի կորպորացիաները (դպրոցներ, քոլեջներ, համալսարաններ եւ այլն) համարվում են ոչ առեւտրային կորպորացիաներ: Այսինքն՝ կրթությունն այսպէղ բիզնես չէ, որովհետեւ կրթական կազմակերպությունները չեն կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակ, իսկ եթե նույնիսկ ունեն շահույթ, սպա այն ամբողջապէս օգտագործվում է կրթական նպատակների իրացման համար եւ ենթակա չէ բաշխման հիմնադիրների (մասնակիցների) միջեւ²²⁸: Նույնպիսին է վիճակը մայրցամաքային համակարգում: Այսպէղ բուհերն ունեն ոչ առեւտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Վճարների հաշվին ստացված շահույթը, ըստ այս երկրների օրենսդրության, բոլոր դեպքերում պէտք է ուղղվի կրթության որակի բարձրացմանը: Ֆրանսիայում ողջ կրթական համակարգը, ներառյալ՝ բուհական, բացառությամբ 1-2 բուհի, պետական է: Գերմանիայում ընդհանրապէս մասնավոր բուհեր չկան: Նույնպիսին է կրթական կազմակերպություններ

²²⁸ Կորպորատիվ իրավունքի հեղինակավոր մասնագետ Ս.Վ. Կաշանինան եւս իր հետազոտություններից մեկում հաստատում է (Корпоративное право. М., 1999, էջ 130), որ. «В англосаксонском праве частные корпорации делятся на две группы: не предпринимательские и предпринимательские. Непредпринимательскими корпорациями считаются религиозные организации, корпорации в области образования (школы, колледжи, университеты и т.п.), благотворительные фонды. Они не преследуют целей получения прибыли, а если имеют прибыль, то обращают ее для достижения цели, которая определялась в качестве основой при создании не предпринимательской корпорации»:

րի կարգավիճակը ՌԴ-ում, որտեղ բուհերը, անկախ սեփականության ձևից, համարվում են «իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հիմնարկներ»²²⁹:

Այսպիսով, ընդհանուր տրամաբանությանը համապատասխան՝ Նայաստանում եւս կրթական կազմակերպությունները պետք է ունենան ոչ առեւտրային կազմակերպական ձեւ: Սահմանադրության 39-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը կանխում է, իհարկե՝ չարգելելով, առեւտրային կազմակերպությունների գոյությունը միջնակարգ կրթության համակարգում: Մնում է բարձրագույն կրթական կազմակերպությունների կազմակերպական-իրավական կարգավիճակի հարցը: Այս հարցում մեկնարկային դրույթունը խորհրդային իրավիճակն էր, որում բուհերը փնտրաշարկային հիմունքներով գործող պետական կազմակերպություններ էին: Սակայն «վերակառուցման» ժամանակաշրջանի խորհրդային բարեփոխումների արդյունքում ընդունված կոոպերատիվների մասին օրենսդրությունը հնարավոր համարեց նաեւ կոոպերատիվ կրթական կազմակերպության գոյությունը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ կոոպերատիվ իրավաբանական անձի հատուկ տեսակ է, որը ենթադրում է կոոպերատիվի անդամություն եւ անդամի աշխատանքային մասնակցություն եւ այլն: Ենթադրվում էր, որ խորհրդային մրավորակաւնությունը կարող էր միավորվել կոոպերատիվ կոչված կազմակերպություն-բուհում եւ իրականացնել վճարովի կրթական ծառայություն: Այդպիսով ներկայիս ոչ պետական կրթական համակարգը աճել է վերակառուցման ժամանակաշրջանի խորհրդային օրենսդրության հիմքի վրա: Իսկ այդ շրջանում իրավական համակարգի զարգացման օրինաչափությունները կամ նրբություններից մեկն էլ հապշտակությունն էր, երբեմն նաեւ՝ չիմաստավորվածությունը: Անշուշտ, խորհրդային իրավագիտությունը վերակառուցման փարիներին միանգամից չէր կարող հասկանալ, թե ինչ է բիզնեսը կամ փնտրեսական գործունեությունը, եւ որոնք են դրա էական փարբերությունները ոչ փնտրեսական գործունեությունից: Նույն պարճառով դա չէր կարող խորապես իմաստավորել նաեւ խորհրդային կորպորատիվ իրավունքը, որն ամորճարված վիճակում էր:

1998թ. ընդունվեց ՏՏ քաղաքացիական օրենսգիրքը: Դրանից հետո կոոպերատիվի ձեւ ունեցող մասնավոր բուհերը վերաճվեցին առեւտրային կազմակերպությունների:

Նոր քաղաքացիական օրենսդրության գործողության պայմաններում 2004թ. փետրվարի 4-ին Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրինագծի 10-րդ հոդվածի առաջին կետն ամրագրեց, որ «բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված շահույթի նպատակ չհետապնդող ցանկացած կազմակերպական-իրավական ձեւ»²³⁰: Սակայն այդ օրենքի ընդունված եւ հրատարակված

²²⁹ Այն, որ հայաստանյան իրավիճակը քննարկվող հիմնահարցում չի համապատասխանում եվրոպական երկրների բուհերի կազմակերպական հայեցակարգին, համամիտ էին նաեւ Եվրամիության համապատասխան կառույցների ներկայացուցիչները, որոնք մասնակցել են Երեւանում «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» օրենքի նախագծերից մեկն քննարկմանը 2002թ. նոյեմբերին:

²³⁰ Բուհը բնորոշելով որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն՝ այս նախագիծն ընդօրինակում էր համաշխարհային կորպորատիվ շինարարության փորճը, սակայն այդ հարցում չէր դրսեւորում հստակ դիրքորոշում: «Բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված շահույթի նպատակ չհետապնդող ցանկացած կազմակերպական-իրավական ձեւ» ձեւակերպումը չէր համապատասխանում ՀՀ քաղ. օրենսգրքի դրույթներին: Շահույթի նպատակ չհետապնդող, այսինքն՝ ոչ առեւտրային կազմակերպությունների՝ քաղ. օր.-ով սահմանված շրջանակը ներառում է «հասարակական միավորումները», «հիմնադրամները», «իրավաբանական անձանց միությունները», «սպառողական կոոպերատիվը»: Այդ շրջանակից բուհի կազմակերպական-իրավական ձեւի համար անընդունելի են «հասարակական միավորումները», «իրավաբանական անձանց միությունները» եւ «սպառողական

վարբերակում ընդհանրապես անվերսվեց ոլորտի բաղադրարարի՝ բուհերի կազմակերպական-իրավական ձևի կարգավորումը: Այդ մասին այս օրենքում ոչ մի բառ չկա: Օրենքի 12-րդ հոդվածը թվարկում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետբուհյալ տեսակները /համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա և այլն/: Իսկ 13-րդ հոդվածը սահմանում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, պատմական զարգացման նման անվրամաբանական գործընթացների արդյունքում կրթության համակարգի այնպիսի բաղադրարարները, ինչպիսիք են բարձրագույն ուսումնական հաստատությունները և համապատասխան հետբուհական ու լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները որպես իրավունքի սուբյեկտ հանդես են գալիս երկու կարգավիճակով կամ կազմակերպական-իրավական ձևերով՝ պետական բուհեր, որոնք ունեն ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, և մասնավոր բուհեր, որոնք ունեն առևտրային իրավաբանական անձի ինչ-որ ձևի կարգավիճակ:

Այսպիսով, հայաստանյան փորձը և օրենսդրական կարգավորումը բուհերի կազմակերպական-իրավական ձևի հարցում պետք է համարել սխալ և համաշխարհային կորպորատիվ շինարարության փորձին հակասող: Նենց դրանով է բացատրվում մասնավոր բուհերի սնկի նման աճը, այլ ոչ թե «ազգային խառնվածքով» կամ կրթության նկատմամբ «ազգային սիրով ու ծարավով»: Եթե արեւմտյան աշխարհում կրթությունը համարվեր բիզնես, ապա նույն Գերմանիայի մոտ 80 միլիոն բնակչության պայմաններում գոյություն կունենային բազմաթիվ առևտրային բուհեր: Այնինչ Գերմանիայում չկան նույնիսկ մասնավոր բուհեր, էլ ուր մնաց՝ առևտրային:

Այժմ փորձենք պարզել բուհերի կազմակերպական կարգավիճակի հիմնահարցը ՆՏ քաղաքացիական օրենսգրքի տեսանկյունից: Նօգուտ այն բանի, որ կրթական, այդ թվում՝ նաև բուհական, կազմակերպությունները չեն կարող ունենալ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ, կարելի է բերել հետբուհյալ փաստարկները.

1/ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասը «հիմնարկ» հասկացությունը բնորոշում է հետբուհյալ կերպ. «*Նիմնարկ է համարվում կառավարչական, տոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի ստեղծած կազմակերպությունը*»: Զաղաքացիական օրենսգրքի՝ որպես շուկայական փոփոխության «սահմանադրության» այս ձևակերպումից բխում է, որ կրթական գործունեությունն առևտրային գործունեության, այսինքն՝ բիզնեսի տեսակ չէ: Ուրեմն կրթությունը, լինելով ոչ առևտրային բնույթի գործունեություն, չի կարող իրականացվել առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող իրավաբանական անձանց կողմից: Ներառալ՝ քաղաքացիական օրենսգրքը բիզնեսմեն կոչվածներին և նրանց հիմնադրած առևտրային կազմակերպություններին առաջարկում է. պարոնայք, եթե դուք ուզում եք կրթական ծառայություն մատուցել մեր հասարակությանը, ապա անմիջապես դուք և այդ կազմակեր-

կողակերտիվը»: Մնաց միայն «հիմնադրամբ»: Այստեղից եզրակացություն, որ նախագծի «Բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված շահույթի նպատակ չհետապնդող ցանկացած կազմակերպական-իրավական ձև» ձևակերպումն իրավաբանորեն ճիշտ չէր, որովհետև քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևերից միայն հիմնադրամբ է, որ համապատասխանում էր բուհի բնույթին:

պական ձեռով չէք կարող դա անել, դիմեք ձեր բիզնեսից առանձնացված կազմակերպական ձեռին՝ հիմնարկին:

2/ Որ կրթությունը չի համարվում առևտրային գործունեություն, այսինքն՝ բիզնես, վկայում են քաղաքացիական օրենսգրքի մի շարք այլ հոդվածներ ես: Մասնավորապես՝ 123-րդ հոդվածի 1-ին մասը բնորոշելով հիմնադրամը որպես ոչ առևտրային կազմակերպություն, մաքրանշում է, որ այն *«հեղապահում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ»*: Ինչպես րեանում ենք, կրթությունն իր բնույթով այս ձեռակերպման մեջ հավասարեցված է բարեգործական գործունեությանը: Ներկայումս, այն չի կարող դիտարկվել որպես բիզնես: Մեր կարծիքով, քաղաքացիական օրենսգրքի այս նորմերը արգելք են հանդիսանում առևտրային իրավաբանական անձի կարգավիճակով բուհերի հիմնադրման համար:

Մարդու կրթության իրավունքը եւ բուհերի կարգավիճակը: Մարդկությունը դեռ շաքավաղուց հասկացել է, որ կրթությունը մասնավոր գործ չէ, այլ հանրային: Կրթությունն ունի սոցիալ-հանրային բնույթ, հանրային սոցիալական գործառույթի նշանակություն, այլ ոչ թե մասնավոր: Դա քաղաքացիական հասարակության զարգացման փորձաքննության հետեւանքն է: Առևտրային իրավաբանական անձի կարգավիճակով ուսումնական հաստատությունների գոյությունը կարելի է համարել մարդու կրթության իրավունքի իրականացման էական խախտում՝ այն իմաստով, որ ոլորտից գոյացած շահույթը գնում է առևտրային իրավաբանական անձի ինչ-որ հիմնադիրների գրպանը: Ինչ փորձաքննությամբ է շահույթի նպատակ հեղապահող կազմակերպությանը պետության կողմից արվելու պետապարկեր: Չէ՛ որ պետության կողմից նման բուհին փորձաքննվող պետական բյուջեի միջոցներն ուղղակի վերածվելու են մասնավոր առևտրային կառույցի հիմնադիրների /մասնակիցների/ շահույթի: Բուհի ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակի դեպքում՝ գործունեությունից ստացված շահույթը չի կարող բաշխվել հիմնադիրների միջեւ, այլ պետք է ուղղվի կրթության ոլորտի հետագա զարգացմանը:

Ավաճը հաստատում է, որ բուհերի իրավական կարգավիճակը դարձել է ազգային անվտանգության սպառնալիք: Վիճակը, անշուշտ, պետք է շրջվի, հակառակ դեպքում, որոշակի րեական ժամանակաշրջան հետո բարձրագույն կրթության համակարգը կկանգնի կրախի առջեւ: Եթե կրթությունը դիտարկվի առևտրային գործունեություն, այսինքն՝ բիզնես, ապա շուկայական րնրեսությանը բնորոշ առաջարկի եւ պահանջարկի օրինաչափության գործողության ուժով առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները հասարակությանը կառաջարկեն միայն շահութաբեր մասնագիտություններով կրթություն, իսկ ոչ շահութաբեր մասնագիտություններով կրթական ծառայությունների մատուցումն իսպառ կվերանա կամ էլ կրնկնի միայն պետական բուհերի ուսերին: Այդպիսի մի րման վրանգն այն է, որ ապագայում շահութաբեր մասնագիտություններով կրթական ծառայության մատուցումը «կրեղաշարժվի» մասնավոր բուհեր, որոնք լինելով առևտրային կազմակերպություններ, ստացված շահույթը կբաշխեն իրենց հիմնադիրների միջեւ, իսկ պետական բուհերում կմնան միայն «շուկայական պահանջարկ չունեցող», ոչ շահութաբեր, բայց հանրորեն անհրաժեշտ մասնագիտությունները: Այդ ձևով պետական բուհերն ապագայում ամբողջովին կվերածվեն բյուջեարային դոտացիաներով ֆինանսավորվող կազմակերպությունների, որոնց մշտապես սպառնալու է լուծարման վրանգը:

Զարգացման նման մի րումը կրանի պետական բուհերի գործունեության առև-

տրայնացման: Այդպիսի գործելակերպ պետական բուհերը որդեգրում են մրցակցությամբ դիմակայելու համար: Այդ միտումն ինքնին հանգեցնելու է որակական կորուստների, քանի որ առայժմ և ապագայում դեռես բավականին երկար ժամանակ, գերիշխելու է քանակական մրցակցությունը, այլ ոչ թե որակականը:

Այդպիսի ռիսկի ենթարկել կրթական համակարգը, նշանակում է վրանգել ազգային անվտանգությունը, որովհետև առևտրային կազմակերպությունները, ըստ էության, ազատ են լուծարվելու կամ չլուծարվելու: Նրանք ավելի խոցելի են փոփոխության շուկայական հարվածներից և նրանց սնանկացման վտանգն շատ ավելի է, քան ոչ առևտրայիններինը: Բացի դրանից, առևտրային կազմակերպությունների գոյությունը պայմանավորված է նրանց հիմնադիրների և նրանց իրավահաջորդների կամքով: Ամեն պահի այդ անձինք կարող են լուծարել կազմակերպությունը, ընդ որում, նկատի ունենանք, նաև հնարավոր է՝ չարամիտ կերպով:

ՆՏ Սահմանադրության 8-րդ հոդվածը և բուհերի կազմակերպական-իրավական վիճակը: Սահմանադրության 8-րդ հոդվածը որտե՛ կապ չունի կրթական կազմակերպությունների կազմակերպական-իրավական կարգավիճակի հետ: 8-րդ հոդվածը վերաբերում է սեփականության իրավունքին և փոփոխական գործունեության ազատությանը և ազատ փոփոխական մրցակցությանը: Նախ, մենք արդեն հիմնավորեցինք, որ կրթական ծառայությունը բիզնես չէ, այլ սոցիալական գործառույթ: Բացի դրանից, հենց Սահմանադրության 8-րդ հոդվածը պահանջում է առևտրային իրավաբանական անձի կարգավիճակով բուհերի վերացում, որովհետև խախտված են հավասար փոփոխական մրցակցության պայմանները պետական և առևտրային բուհերի միջև: Խնդրի լուծումը նրանց միեւնույն դաշտ բերելն է, այսինքն՝ ոչ առևտրային դարձնելը: Վայսափայլան իրականության մեջ կա շփոթ «մասնավոր» և «առևտրային» կամ «բիզնես» հասկացությունների միջև: Պետական կրթական կազմակերպությունների կողքին կարող են և պետք է լինեն նաև ոչ պետական (եթե ուզում եք՝ մասնավոր) կրթական համակարգ և կազմակերպություններ, բայց ոչ բիզնես ձևերով: Մասնավոր կամ ոչ պետական՝ չի նշանակում այնպայման առևտրային գործունեություն և առևտրային կազմակերպություն: Այսպիսով, խնդիրը ոչ թե այն է, որ արգելվի մասնավոր կրթական համակարգը, այլ այն, որ մասնավոր կրթական համակարգի կազմակերպական-իրավական ձևը համապատասխանեցվի ոլորտի բնույթին, նպատակամղվի կրթության զարգացմանը՝ մարզելի դարձնելով կրթությունը բոլորի համար: Իսկ դա հնարավոր է, եթե միայն բուհն ունենա ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ:

Եզրակացություն՝ ընդօրինակելով համաշխարհային կորպորատիվ շինարարության փորձը՝ անհրաժեշտ է ունենալ կրթության իրականացման կազմակերպական-իրավական ձևի ամբողջական հայեցակարգ, որից ելնելով պետք է մշակվեն կրթական կազմակերպությունների՝ որպես կորպորացիաների հասկացությունը, փաստկները և այլ հարցեր ու ամրագրվեն այս օրենքում: Քանի որ քաղաքացիական օրենսգիրքը ոչ առևտրային իրավաբանական անձանց շրջանակը չի սահմանափակում, ուրեմն այս օրենքի նախագծով կրթական կազմակերպության, այդ թվում՝ նաև բուհի, ձևի, հիմնադրման, գրանցման, կառավարման և մի շարք այլ հարցեր պետք է հիմնավոր կարգավորում ստանան: Այսպիսի լուծման դեպքում կրթության ոլորտի բոլոր կազմակերպությունները կունենան միեւնույն փաստի կազմակերպական-իրավական ձև. այն է ոչ առևտրային կազմակերպություն:

ՆՏ գործող քաղաքացիական օրենսդրության պայմաններում բարձրագույն ուսում-

նական հաստատություններն իրավաբանական անձանց բոլոր առկա ձեռքից կարող են ունենալ հիմնադրամի կազմակերպչական ձեռք, պեղական բուհերը՝ նաև պեղական ոչ առևտրային կազմակերպության ձեռք: Բուհերի կազմակերպական իրավական փոքրերակներից մեկն էլ հիմնարկն է, որը, սակայն, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

Քանի որ քաղաքացիական օրենսգիրքը ոչ առևտրային իրավաբանական անձանց շրջանակը չի սահմանափակում, ապա ոլորտի օրենքը կարող է նախատեսել նոր ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպական-իրավական ձեռք, այսինքն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ հենց ինքը որպես ոչ առևտրային իրավաբանական անձ:

6. Սահմանադրության 39-րդ հոդվածը յուրաքանչյուր քաղաքացու համար ամրագրում է մրցության հիմունքներով անվճար կրթությունը պեղական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով: Պեղությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին: Սահմանադրության 48-րդ հոդվածի 8-րդ կետը որպես պեղության հիմնական խնդիր սահմանում է անվճար բարձրագույն կրթությանը և այլ մասնագիտական կրթության զարգացմանը նպաստելը: Ի կարգումն Սահմանադրության նորմերի, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հեղուհական կրթության մասին» ՏՏ օրենքներով սահմանված են այն դրույթները, որոնց հիման վրա անձը և քաղաքացին իրականացնում են իրենց սահմանադրական իրավունքը: Օրենսդրության համաձայն՝ ՏՏ-ում բարձրագույն կրթություն կարելի է սրանալ առկա, հեռակա և հեռավար (դիստանցիոն) կրթական ձեռքերով, կրթության բնագավառում ՏՏ կառավարության լիազորված մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն: Անկախ ուսուցման ձեռքից (առկա, հեռակա, հեռավար և այլն), ուսանողը պեղք է փրապեղի փվյալ մասնագիտության համար չափորոշիչներով նախատեսված գիղելիքներին: ՏՏ-ում գործում են օրենքով սահմանված հեղելյալ փրապի բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ինսփրիտոր, համալսարան, ակադեմիա, կոնսերվատորիա: Պեղական ուսումնական հաստատություններում ընդունելությունը կարարվում է ՏՏ ԿԳՆ կողմից կազմակերպվող ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ անվճար, վճարովի և վճարովի առանց փարկեղման իրավունքի համակարգերում: Անվճար և վճարովի համակարգեր ընդունված ուսանողներն սրանում են սովորելու ժամանակաշրջանում գիղվորական ծառայությունից փարկեղման իրավունք: ՌԴ-ում նման իրավունքից օգրվում են նաև հավարարմագրված ոչ պեղական բուհերի ուսանողները²³¹: Բուհերում ուսուցումը կարարվում է պեղության կողմից հաստատված չափորոշիչներին և մասնագիտությունների ցանկին համապարասխան: Ըստ այղմ, ՏՏ կառավարությունը 30.08.2007թ. թիվ 1038 որոշմամբ հաստատել է բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկը:

Նայասրանի Նանրապեղությունը 2005թ. մայիսին պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին, որը միղված է սրեղծելու Եվրոպական բարձրագույն կրթության փարածք: ՏՏ կառավարությունն իր՝ 22.12.2005թ. թիվ 2307-Ն որոշմամբ սկեց բարձ-

²³¹ Տե՛ս ՌԴ Սահմանադրական դատարանի 21.10.1999թ. թիվ 13-Պ որոշումը:

րագույն կրթության ոլորտում կրեդիտային համակարգի ներդրումը: Այս գործընթացը համահունչ է Բոլոնիայի հռչակագրին միանալու կապակցությամբ ՆՏ սրանձնած պարավորություններին: Մասնավորապես որոշվեց ներդնել մասնագիտական կրթության երկաստիճան համակարգը, որը ներառում է բակալավրիատ (առաջին աստիճան) և մագիստրատուրա (երկրորդ աստիճան):

Այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, բարձրագույն կրթության դիպլոմ, իրավունք ունեն իրենց ուսումը շարունակելու հեպրեուհական ուսումնական ծրագրերով: ՆՏ-ում հեպրեուհական ուսումնական ծրագրեր իրականացնում են բուհերը և գիտական կազմակերպությունները (ասպիրանտուրա, հայցորդություն, դոկտորանտուրա): Ի փարբերություն Նայաստանի, եվրոպական երկրներում հեպրեուհական կրթությունը դիփարկվում է որպես կրթության երրորդ աստիճան: Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց թույլատրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով հավակնել դոկտորի գիտական աստիճանի: Օրենսդրությամբ ամրագրված է երկրորդ մասնագիտություն ստանալու իրավունքը՝ ըստ ՆՏ ԿԳՆ սահմանած կարգի: ՆՏ ԿԳ նախարարի՝ 2006թ. սեպտեմբերի 29-ի N 671-Ն հրամանով հաստատվել է ՆՏ բարձրագույն ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու իրավունքը, ըստ որի՝ երկրորդ բարձրագույն կրթություն կարելի է ստանալ միայն վճարովի հիմունքներով: Օրենսդրությամբ սահմանված են այն մասնագիտական ծրագրերը, որոնք չի թույլատրվում իրականացնել հեռակա ուսուցման եղանակով:

Որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի կարողանա իրացնել մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իր իրավունքը, և պետությունն իրականացնի Սահմանադրության 39-րդ հոդվածի և 48-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված՝ բուհերում սովորողներին օժանդակելու իր պարտականությունը, ՆՏ ԿԳ նախարարությունը հիմնվելով ՆՏ օրենսդրության վրա՝ իր 15.06.2006թ. 21-03-06/337 հրահանգչական նամակով բուհերում ներդրեց անվճար և վճարովի փոխափոխման հնարավորությունն ուսումնական արդյունքներով, ըստ առաջադիմության: Օրենսդրությամբ սահմանված են նաև բուհերում սովորողների ֆինանսական աջակցության այլ եղանակներ, ինչպիսիք են ուսման վարձի փոխհատուցումները, կրթաթոշակները և այլն՝ սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ կառավարության կողմից սահմանված կարգին և փարակարգերին համապատասխան:

ՆՈՂ-ՎԱԾ 40

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և փոխհիշակական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Մեկնաբանվող հոդվածը ներառում է իրար հեփ սերտորեն կապված, սակայն ինքնուրույն բովանդակություն ունեցող, հեփեաբար եւ՝ առանձին մեկնաբանություններ ենթադրող երկու դրույթներ՝ 1) ստեղծագործության ազատության իրավունքը, 2) գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: Քննարկվող հոդվածում ամրագրված այս իրավունքների առանձնահատկությունները կայանում են նրանում, որ՝ ա) դրանց իրացումն ուղղակիորեն կախման մեջ է գրնվում պետության հնարավորություններից, բ) դրանք, ինչպես անձնական իրավունքները, պարկանում են յուրաքանչյուր մարդու՝ անկախ նրա քաղաքացիությունից, գ) ՏՏ Հիմնական օրենքն ստեղծագործության ազատության և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները հիմնում է գաղափարական բազմակարծության սկզբունքի վրա (տեն Սահմանադրության 7-րդ հոդվ. 1-ին մասի մեկնաբանությունները):

«Ստեղծագործության ազատություն» հասկացությունը ներառում է երկու՝ «ստեղծագործություն» և «ազատություն» եզրույթներ: Ըստ որում, «ստեղծագործություն» եզրույթն արդի հայերենում առաջին հերթին բացաբրվում է որպես մարդկային գործունեություն, որն ուղղված է որակապես նորի, նախկինում երբեք չեղածի ստեղծմանը, արարմանը, կերպմանը, սարքելուն, գոյացնելուն: Այն որպես մարդու կողմից մշակութային արժեքների, որակապես նոր արդյունքների ստեղծման գործընթաց, աչքի է ընկնում նորությամբ, անկրկնելիությամբ, յուրօրինակությամբ, հասարակական-պարմական և այլ եզակիությամբ: Սահմանադրության 40-րդ հոդվածում ամրագրված ստեղծագործության ազատության իրավունքը միաժամանակ եւ՝ իրավական, եւ՝ հոգեւոր-մշակութային հասկացություն է, համալիր սուբյեկտիվ իրավունք, որը կազմված է մի շարք իրավասություններից. գրական, գեղարվեստական, գիտական և այլ ստեղծագործություններ ստեղծելու, գյուրարարությամբ, դասավանդմամբ, բեմական և այլ գործունեությամբ զբաղվելու նպարակով իրականացնել ստեղծարար գործունեություն և օգտվել մշակութային նվաճումների արդյունքներից, մշակութային նվաճումները պաշտպանելու պետության պարտականությունից: Ստեղծագործել (ստեղծագործություն) հնարավոր է մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում՝ արվեստի և գրականության (գեղարվեստի), առհասարակ՝ հոգեւոր արժեքների ստեղծման, գիտական, փոխհիշակական և այլ բնագավառներում: «Ազատություն»-ը ժողովրդի, առանձին մարդկանց բնական վիճակն է, որը բնորոշվում է իր հայեցողությամբ գործելու հնարավորությամբ: Իրավաբանական կամ նեղ առումով ազատությունը մարդու և քաղաքացու՝ սահմանադրական իրավունքների և պարտականությունների վրա հիմնված կոնկրետ գործողություններ կարարելու կամ չկարարելու սուբյեկտիվ հնարավորությունն է:

Ստեղծագործության ազատության իրավունքն ամրագրող ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածը, ի փարբերություն այլ երկրների սահմանադրությունների նույնական հոդվածների (օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 44-րդ հոդվ. 1-ին մասի),

սահմանում է միայն սրբեղծագործության որոշ (գրական, գեղարվեստական, գիտական և արվեստիական) տեսակների ազատությունը, դրա մեջ չմտնելով հասարակական կյանքի մյուս բնագավառների, ասենք՝ կրթության, դասավանդման և ուսումնառության (ակադեմիական ազատություն) ոլորտը, որպեսզի հնարավորություն է տրվում ազատորեն իրականացնել ուսումնական գործընթացի բովանդակությունը, մեթոդը և ընթացքը (տե՛ս Մահմանադրության 39-րդ հոդվ. մեկնաբանությունները), դասավանդման գործընթացում ազատորեն արտահայտել գիտելիքները, կարծիքները, համոզմունքները և այլն: Մակայն Մահմանադրության հիման վրա և դրան համապատասխան ընդունված օրենսդրությունն անվիճելիորեն վկայում է, որ Մահմանադրության 40-րդ հոդվածում սահմանված ցանկն ամենեւին էլ սպառիչ չէ, և իրավակիրառական պրակտիկայում այն պետք է ընդարձակ մեկնաբանություն ստանա՝ կապված սրբեղծագործական բոլոր ոլորտների (ենթաօլորտների) հետ: Անվիճելի է նաև, որ կրթությունը հասարակության տնտեսական, սոցիալական և հոգևոր առաջընթացի առաջնակարգ գործոնն է, յուրաքանչյուր մարդու զարգացման, նրա մշակույթի և բարեկեցության անհրաժեշտ նախադրյալը, և շատ գծերով այն համահունչ է սրբեղծագործությանը: Այս կապակցությամբ կրթության իրավունքը մեծ ներգործություն ունի սրբեղծագործության բոլոր տեսակների ազատության իրացման վրա. որպեսզի իրականացվի սրբեղծագործության ազատության իրավունքը, անհրաժեշտ է ստանալ համապատասխան կրթություն: Ուրեմն՝ կրթության ազատությունն ընկած է սրբեղծագործության ազատության հիմքում:

Անկախ իրենց տեսակներից (ոլորտներից)՝ սրբեղծագործական հարաբերություններն ունեն մի շարք առանձնահատկություններ: Դրանք, մի կողմից, ձեռավորվում են հոգևոր արտադրության ոլորտում, որի էությունը կայանում է հոգևոր (ոչ նյութական) բարիքներ՝ արվեստի, գրականության և այլ սրբեղծագործություններ սրբեղծելու մեջ, մյուս կողմից՝ ոչ նյութական բարիքների թվին են դասվում նաև գիտական և արվեստիական սրբեղծագործությունները, այնպիսիք, ինչպիսիք են գյուտերը և օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, մեքենաների և սարքավորումների կառուցվածքները (կոնստրուկցիաները) և այլն, որոնց կիրառումից և օգտագործումից մեծապես կախված է տնտեսության, բժշկության, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտների զարգացումը:

Սրբեղծագործական գործունեության այս կամ այն տեսակի առանձնահատկություններն ըմբռնելու համար անհրաժեշտ է խորանալ դրանց բովանդակությունը կազմող բաղադրիչների և դրանց կապարած դերի մեջ: Ելնելով դրանից, **գեղարվեստական (գեղարվեստի)՝ արվեստի և գրականության ընդհանուր անվանումն է) սրբեղծագործությունը**, որ ներառում է գրականությունը, երաժշտությունը, թատրոնը, գեղանկարչությունը, քանդակագործությունը, զձանկարչությունը (գրաֆիկան), դիզայնը, ճարտարապետությունը, քաղաքաշինությունը, լուսանկարչությունը և սրբեղծարար աշխատանքի ներդրման բազմաթիվ այլ ոլորտներ, որի արդյունք են հանդիսանում հեղինակի կողմից սրբեղծված կերպարների միջոցով հանդիսատեսի կամ դիտողի հետ շփում հաստատող փարբեր տեսակի սրբեղծագործություններ²³², ձգտում է գեղարվեստական ձևի մեջ լուսաբանել մարդկային կեցության բովանդակությունը, կապարել իրականության սրբեղծագործական վերարտադրություն, մարդուն պարճառել գեղագիտական հաճույք, հարստացնել նրա մտածողի գոյնը և ճաշակը, տեսանելի դարձնել անհատական և հասարակական գոյության քիչ թե շատ սովորույթ կողմերը, նորովի մեկնաբանել աշխարհը, ար-

²³² См. Комментарий к Конституции Российской Федерации. Под ред. В. Д. Зорькина, Л. В. Лазарева. М., Э СМО, 2009, էջեր 420-421:

փացուլում է իրականության առավել սուր և ցավոտ կողմերը՝ երբեմն նույնիսկ կասկածի փակ դնելով գոյություն ունեցող քաղաքական, հասարակական և իրավական միջավայրի իրավաչափ և արդարացի լինելը:

Գիտական սրեղծագործությունը բնորոշվում է որպես սրեղծագործական գործունեություն, որն ուղղված է բնության, հասարակության և մրաժողության նոր օրենքների և օրինաչափությունների բացահայտմանը, հիմնարար (կամ կիրառական) փետությունների, հայեցակարգերի, հայեցակետերի, մաթեմատիկական կամ հեփագոփության այլ մեթոդների, այլ գիտական արդյունքների մշակմանը, իրեն յուրահատուկ մեթոդներով իրականացվող հեփագոփությունների արդյունքում սրեղծում է գիտելիքների համակարգ, որի խնդիրն է աշխարհի երեւոյթների ու գործընթացների բացատրումը, դրանց ընթացքի կանխատեսումը գիտական օրենքների ու սկզբունքների միջոցով: Այն, ներթափանցելով հասարակության ինչպես արտադրական, այնպես էլ քաղաքական, վարչական, ռազմական ոլորտները, դառնում է հասարակական-փնտեսական ներուժի կարեւորագոյն գործոն, որոշիչ դեր է կատարում հասարակության նյութատեխնիկական բազայի սրեղծման, արտադրության զարգացման համար:

Տեխնիկական սրեղծագործությունը ներառում է նոր կառուցվածքների, կիրառական բնոյթի փելխնիկական լուծումների, սարքերի, նյութերի և այլնի սրեղծումը, որոնք կարող են օգտագործվել արդյունաբերության, գյուղատրտեսության մեջ, փնտեսության մյուս ճյուղերում կամ հասարակական ոլորտում: Տեխնիկական գործունեոյթունը թեեւ ընթանում է բնական օրենքների համաձայն, բայց դրա գոյոյթան իմաստը և զարգացման օրինաչափոյթունները հասկանալի են դառնում միայն մարդու գործունեոյթան համակարգում. այն հասարակական նպատակներով բնական նյութի վերափոխումն է, գիտոյթունն անմիջական արտադրողական ուժի վերաճելու գործընթացը, կոչված է թեթեւացնելու մարդու գործունեոյթունը, այն դարձնելու ավելի արդյունավետ և սրեղծագործական՝ փնտեսական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Սրեղծագործոյթան ազատոյթան իրավունքը, որպես հոգեւոր-մշակոյթային արժեք, մարդու ներքին հոգեւոր ինքնադրսեւորման, ինքնաիրացման գործընթաց է, որը նպատարում է մարդու ներքին հարստացմանը և անհատականոյթան ձեւավորմանը, նրան պատկանող բացարձակ իրավունք է և որպես այդպիսին չի կարող ենթարկվել որեւէ սահմանափակման: Կոնկրետ իրավունքների իրացման նպատակով սահմանափակվել կարող են միայն այդ իրավունքի արդյունքների արտահայտման արտաքին ձեւերը, օրինակ՝ խոսքի ազատոյթան չարաշահումները, արգելված փեղեկատրոյթուն ստանալու փորձերը և այլն: Մյուս կողմից, քանի որ սրեղծագործոյթունը մարդու ինքնադրսեւորման եղանակներից մեկն է, և այն անխզելիորեն կապված է մտքի, կարծիքների և համոզմունքների, խոսքի և փեղեկատրոյթան ազատոյթան հետ, ուստի սրեղծագործոյթան ազատոյթունը ենթադրում է, որ պետական մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, փեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող միջամտել մարդկանց կամ նրանց միավորումների սրեղծագործական գործունեոյթանը, չեն կարող նրանց ստիպել ընտրելու սրեղծագործոյթան ուղղոյթունը, թեման, նկարագրման ենթակա առարկաները, արտահայտչական (պատկերավորման) միջոցները և գեղարվեստական եղանակները, չեն կարող փալ սրեղծագործոյթան արդյունքների գեղարվեստական, գիտական և այլ գնահատականներ, չեն կարող թելադրել, թե մարդիկ ինչի մասին և ինչպես գրեն, ինչը նկարեն, ինչը՝ ոչ, և այլն: Այս առումով հատկանշական է ձանաչված նկարիչ Մինասի պատասխանն իրեն հարկադրել ցանկացող պաշտոնատար անձանց՝ «Լենինը հո Ապոլոնը չի՞, որ նկարեն»:

Նենվելով սահմանադրական նորմերի վրա՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, իհարկե, կարող են օրենքով միջամտել և կանխել կամ սահմանափակել սրբազանագործողի անօրինական գործողությունները, որոնք ուղղված են ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի, հասարակության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պարվի և բարի համբավի դեմ, պայմանով, որ այդ սահմանափակումները չզերազանցեն ՏՏ միջազգային պարավորություններով սահմանված շրջանակները (Սահմանադրության 43-րդ հոդվ.)։ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն սրբազանագործության ազատության սահմանափակման առումով կարող են միջամտել, օրինակ, երբ այն օգտագործվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական արելություն բորբոքելու, բռնություն կամ պարտազավթարողելու նպատակով (Սահմանադրության 47-րդ հոդվ.)։ Այդ սահմանափակումները կարող է իրականացնել միայն դատարանը և այլն էլ՝ օրենսդրության խախտումը հաստատելու դեպքում։

Սրբազանագործության ազատության իրավունքն անհարի պաշտպանության, կարծիքների և համոզմունքների, մտքի և խոսքի ազատության իրացման գործընթացի մի մասն է։ Ուստի դրա իրավական երաշխիքները հիմնված են պետության կողմից մարդու արժանապատվության պաշտպանության, մտավոր սեփականության պաշտպանության, անբարեխիղճ մրցակցությունից գործարար մարդուն պաշտպանելու, տեղեկատվության, մտքի, խոսքի և կրթության ազատության վերաբերյալ սահմանադրական նորմերի (Սահմանադրության 8, 14, 26, 27, 31, 33.1 և 39-րդ հոդվածներ), ինչպես նաև դրանց վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի ու հանրաճանաչ սկզբունքների վրա։ Այսպես՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի համաձայն դրա մասնակից պետությունները պարավորվում են հարգել գիտական հետազոտությունների և սրբազանագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը (կետ 3)։

Նայաստանի Նանրապետությունը միացել է ամենապարբեր ոլորտներում և դրսևորումներում սրբազանագործական հարաբերությունները կարգավորող կոնվենցիաների և միջազգային իրավական պայմանագրերի, այն է՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին 1967թ. հուլիսի 14-ի (փոփոխվել է 1979թ. հոկտեմբերի 2-ին) Ստոկհոլմի, Արդյունաբերական սեփականության պահպանության մասին 1983թ. մարտի 20-ի Փարիզի, Գրական և գեղարվեստական սրբազանագործությունների պաշտպանության մասին 1986թ. սեպտեմբերի 9-ի Բեռնի, Նկարչության արտադրողներին իրենց հնչյունագրերն անօրինական կրկնօրինակումից պաշտպանելու մասին 1971թ. հոկտեմբերի 29-ի Ժնևի, Եվրասիական արտոնագրային, 1994թ. սեպտեմբերի 9-ի Մոսկվայի կոնվենցիաներին, Նշանների միջազգային գրանցման մասին 1991թ. ապրիլի 14-ի Մադրիդի համաձայնագրին և դրան կից արձանագրությանը, Արտոնագրային համագործակցության մասին 1979թ. հոկտեմբերի 2-ի (փոփոխվել է 1984թ. փետրվարի 3-ին) Վաշինգտոնի պայմանագրին և այլն։

Նաշվի առնելով միջազգային իրավական ակտերի և մեր Սահմանադրության պահանջները՝ Նայաստանը մշակում է գիտական, տեխնիկական, գրական և գեղարվեստական սրբազանագործությունների սրբազան հետ կապված հարաբերությունների կարգավորման պետական քաղաքականությունը և դրանց արդյունքների օգտագործման կանոններն ընդհանրապես։ Նաշվի առնելով սրբազանագործության առանձին տեսակների յուրահարկությունը՝ պետությունը սահմանում է ՏՏ Սահմանադրության դրույթ-

ների և սրելծագործության ազատության երաշխիքների վրա հիմնված նորմադիվ-իրավական համալիր կարգավորում, որպես երկրի օրենսդիր, գործադիր և դատական մարմինները հանդես են գալիս որպես սրելծագործական և մշակութային գործունեության բոլոր սուբյեկտների իրավունքների և ազատությունների երաշխավորներ, պաշտպանում են այդ իրավունքներն ու ազատություններն օրենսդրական և այլ նորմադիվ գործունեությամբ, իրականացնում են մշակութային զարգացման պետական քաղաքականությունը, կանխում են այդ բնագավառում թույլ տրվող խախտումները:

Այսպես՝ «Կրթության մասին» ՆՏ 1999թ. ապրիլի 14-ի ՎՕ-297, «Գիտական և գիտափորձաշարական գործունեության մասին» 2000թ. դեկտեմբերի 5-ի ՎՕ-119, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002թ. նոյեմբերի 20-ի, «Զանգվածային լրատվության մասին» 2003թ. դեկտեմբերի 13-ի ՎՕ-14, «Բարձրագույն և հեղուկական մասնագիտական կրթության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի ՎՕ-62-Ն, «Նեղիմասկային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006թ. հունիսի 15-ի ՎՕ-142-Ն, «Գյուղերի, օգտակար մողզիների և արդյունաբերական նմուշների մասին» 2008թ. հունիսի 10-ի ՎՕ-111, «Նանրակրթության մասին» 2009թ. հուլիսի 10-ի ՎՕ-160-Ն և այլ օրենքներն սրելծագործական գործունեությունը դիտարկում են որպես գրական, գեղարվեստական, մշակութային, գիտական և փորձաշարական արժեքների սրելծման հիմք, սահմանում են սրելծագործական գործունեության մասնագիտական և սիրողական հիմունքները, սրելծագործողների կազմը, նրանց իրավունքների և ազատությունների, նրանց սրելծամ արժեքների պաշտպանության և պահպանության միջոցները, որոնք ենթադրում են նաև նրանց կողմից բարոյական և գեղագիտական արժեքների ազատ ընկալության իրավունքը: Դրանցում ոչ միայն որոշվում են սրելծագործության ազատության պետական քաղաքականության ընդհանուր նպատակներն ու սկզբունքները, այլև սահմանվում են պետական իշխանության մարմինների կոնկրետ պարտականությունները:

Նասարակության փոքրամասնական, գիտափորձաշարական և հոգեւոր-մշակութային առաջընթացը, մարդկանց պահանջմունքների բավարարումը, նրանց կյանքի պայմանների բարելավումը մեծապես պայմանավորված է մարդկային գործունեության սրելծագործական ոլորտում ձեռք բերված նվաճումներով, ուստի, ելնելով կրթության, գիտության, փորձաշարի և մշակույթի, գեղարվեստական սրելծագործության ոլորտում ՄԱԿ-ի հանձնարարականներից՝ ՆՏ Սահմանադրությունն ամրագրում և երաշխավորում է սրելծագործության բոլոր փասակների ազատության իրավունքը, սրանձնում է պարտավորություն սոցիալական, փոքրամասնական և ֆինանսական այնպիսի պայմաններ ապահովել, որոնք կարող են սրելծագործողների, այդ թվում՝ արվեստի բնագավառի բոլոր աշխատողների համար նպաստավոր պայմաններ սրելծել ազատ սրելծագործ աշխատանքի ծավալման համար, նշված բնագավառների զարգացման նպատակով մշակել համապատասխան ծրագրեր, ամենուրեք պաշտպանել և խրախուսել սրելծագործական աշխատանքը (փն Սահմանադրության 3, 11, 14, 26, 27, 31, 39, 40, 48-րդ հոդվածների մեկնաբանությունները): Սակայն որոշ օբյեկտիվ, և ինչու չէ՛ նաև սուբյեկտիվ պարճառներով, իրավականի հավակնող մեր պետության մեջ սրելծագործության ազատության սահմանադրական նորմերը, թեև նման միտում ունեն, բայց դեռևս լիարժեքորեն չեն իրականացվում:

Սրելծագործության ազատության սահմանադրական երաշխիքը, անշուշտ, ենթադրում է նաև սրելծագործության արդյունքների պարզան իրավական պաշտպանություն: Սրելծագործության արդյունքի նկատմամբ նրա հեղինակը ձեռք է բերում

մրավոր սեփականության իրավունք, որը երաշխավորված պաշտպանվում է պետության կողմից: Այդ կապակցությամբ երկրի Հիմնական օրենքն առանձին դրույթ է ամրագրել այն մասին, որ մրավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով (այդ մասին մանրամասն տե՛ս Սահմանադրության 31-րդ հոդվածի 5-րդ մասի մեկնաբանությունը):

Գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ունի երկու՝ հարաբերականորեն իրարից անկախ բաղադրիչներ՝ 1) գիտության նվաճումներից օգտվելու իրավունք, 2) մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Այս իրավունքներն իրականում կազմում են երկմիասնություն, որովհետեւ մշակույթը, ինչպես պարկերացնում են ոմանք, չի վերագրվում միայն հոգեւոր արտադրության ոլորտին, հոգեւոր կյանքին: Այն հավասարապես վերաբերում է եւ՝ արտադրական (նյութական), եւ՝ հասարակական, եւ՝ հոգեւոր կյանքում մարդկային գործունեության նվաճումների ամբողջությանը: Այնպես որ, վերը նշված երկու իրավունքներն իրականում հանդես են գալիս միասնաբար՝ որպես մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Նենց այդ է պատճառը, որ միջազգային-իրավական ակտերը և ՏՏ Սահմանադրությունն այդ երկու իրավունքները դիտարկում են որպես մեկ միասնական իրավունք և դրանց վերաբերյալ նորմերը սահմանում են միարեղ: Այսպես՝ 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ հոդվածի 1-ին կետն ազդարարում է. «Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից օգտվելու, գիտական առաջընթացից և դրա բարիքներից օգտվելու իրավունք»: Նույն կերպ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածն ամրագրում է, որ դրա մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝ ա) մասնակցելու մշակութային կյանքին, բ) օգտվելու գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից, գ) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ: Ըստ նույն հոդվածի 2-րդ կետի՝ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասվում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման և տարածման համար: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների և սրելծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը, ճանաչել գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի և համագործակցության խրախուսման և զարգացման անհրաժեշտությունը:

Նաշվի առնելով միջազգային իրավական կարեւորության ակտերի վերը նշված դրույթները և Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության՝ «ՅՈՒՆԵՍԿՕ», 14-րդ գլխավոր կոնֆերանսում ընդունված՝ Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների մասին հռչակագիրը, 1976թ. նոյեմբերի 26-ին Նայրոբիում մշակվեցին «Մշակութային կյանքին ժողովրդական զանգվածների մասնակցության և ներդրման մասին հանձնարարականներ» (սա ոչ պայմանագրային բնույթի քաղաքական-իրավաբանական փաստաթուղթ է, որի հիմնական դրույթները հավասարապես վերաբերում են նաեւ Նայասպանին), որոնց համաձայն մշակութային կյանքին մասնակցելը և մշակույթի մատչելիությունը բոլորի և յուրաքանչյուրի՝ խմբերի և անհատների համար դիտարկվում է որպես ազատ ինքնադրսեւորման, շփման, գործողության, արարման հնարավորություն՝ սեփական ծաղկումը և հասարակության ներ-

ղաշնակ կյանքն ու մշակութային առաջընթացն ապահովելու նպատակով: Գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված այդ իրավունքը (դրա երկու կերպերը) առաջին հերթին նշանակում է, որ մարդը կարող է մասնակցել դրանց (այդ նվաճումների) ստեղծմանը (տես ստեղծագործության ազատության իրավունքը), երկրորդ՝ կարող է ազատորեն օգտվել մշակութային արժեքներից և նվաճումներից, երրորդ՝ ՆՏ պարտականությունն է յուրաքանչյուրի համար ապահովել ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ ժողովրդի մշակութային հաստատությունների (գրադարաններ, թանգարաններ, արխիվային ֆոնդեր, թատրոններ, համերգասրահներ, պարկերասրահներ, կինոթատրոններ, պարմամշակութային հուշարձաններ, երաժշտական, պարարվեստի, կրկեսային արվեստի կենտրոններ և այլն) մատչելիությունը:

Այսպիսով, մշակույթը և մշակութային կյանքը բազմազան են և բազմաձև: Ուստի և զանազան ձևեր կարող է ունենալ Սահմանադրության 40-րդ հոդվածով երաշխավորված՝ հասարակության մշակութային կյանքին մասնակցությունը: Սահմանադրական այս իրավունքը երաշխավորում է առնվազն երեք հնարավորություն.

1/ յուրաքանչյուր մարդ ունի հնարավորություն հաղորդակցվելու մշակույթին՝ լինելով մշակույթի փարածման կենտրոններում, ստանալու մշակութային ուղղվածության կրթություն, անդամակցելու ժողովրդական համույթին, զբաղվելու ժողովրդական ստեղծագործության բանահավաքությամբ և այլն.

2/ յուրաքանչյուր ոք ունի հնարավորություն հաղորդակցվելու մշակութային արժեքներին՝ հաղորդակցվելով պետական գրադարանային, թանգարանային, արխիվային ֆոնդերին, մշակութային գործունեության բոլոր այլ ոլորտներին (թատրոն, համերգասրահ, կինոթատրոն և այլն).

3/ յուրաքանչյուր ոք ունի մշակութային արժեքներին օրենքով սահմանված կարգով հաղորդակցվելու իրավունք: Մշակութային արժեքները բազմազան են: Օրինակ՝ բարոյաէթիկական իդեալները, լեզուները, բարբառները, ազգային ավանդույթները և սովորույթները, ժողովրդական բանահյուսությունը, գեղարվեստական արհեստները, մշակույթի և արվեստի գործերը, պարմամշակութային արժեք ունեցող շինությունները, առարկաները, փարածքները և այլն:

Մշակութային կյանքին մասնակցելու միջազգային իրավական և սահմանադրական ապահովումն առաջին հերթին ենթադրում է դրա բազմաթիվ տեսանկյուններին վերաբերող իրավահարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրության գոյություն, որը Նայաստանում, դժբախտաբար, գտնվում է իրավական ցածր մակարդակի վրա, իսկ դրա կիրառման պրակտիկա գրեթե գոյություն չունի: Գոյություն ունեցող նորմատիվ ակտերը՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002թ. նոյեմբերի 20-ի և «Մշակույթի պահպանման, փարածման և զարգացման 2004թ. պետական փարեկան ծրագիրը հաստատելու մասին» 2004թ. ապրիլի 28-ի ՆՏ օրենքներն են, որոնցից առաջինը սահմանում է ՆՏ մշակութային օրենսդրության նպատակները և խնդիրները, պետական մշակութային քաղաքականության կազմակերպման ծրագրերը մշակող և հաստատող սուբյեկտների կազմը, այդ քաղաքականության սկզբունքները, օբյեկտները (հարստությունը), մշակույթի ոլորտում մարդու իրավունքներն ու ազատությունները, պետության և ստեղծագործական աշխատողների ու վերջիններիս միությունների փոխհարաբերությունները, մշակույթի ոլորտում պետության լիազոր մարմնի իրավասությունները և գործունեությունը, միջազգային մշակութային համագործակցության կարգը և այլն: Նշված դրույթները կոնկրետացնելու, զարգացնելու և մասնագի-

տական տեսանկյուններից հարաբերությունները մանրամասն կարգավորելու համար անհրաժեշտ է մոտակա ժամանակաշրջանում մեկնաբանվող իրավունքի, այսպես կոչված, ենթակառուցվածքների ստեղծման մեծ աշխատանք ծավալել, առանձին-առանձին օրենքներ ընդունել մշակութային ժառանգության օբյեկտների մանրամասն ցանկի, մշակութային հիմնարկների ծառայություններից օգտվելու կարգի, թանգարանների (թանգարանային ֆոնդի), գրադարանների, թափրոնների, կինոարվեստի, կրկեսային արվեստի և տեսալսողական այլ արվեստների, պատկերասրահների, մշակույթի բնագավառում մարչելի տեղեկատվական բազաների ստեղծման, հատուկ արժեքավոր օբյեկտների մարչելիության ապահովման մասին և այլն, ինչն առաջին հերթին պահանջում է բարձրացնել այդ ոլորտների գիտական կադրերի մակարդակն ու որակը: Վերջինս կարևորվում է հատկապես ինովացիոն տնտեսության անցնելու մասին երկրի ղեկավարության կողմից ներկայացվող մտադրությունների ֆոնի վրա:

Ինչ վերաբերում է 2004թ. մշակութային ծրագիրը հաստատելու մասին օրենքին, ապա պետք է ասել, որ այն, չնայած վերաբերում է սույլ մեկ՝ 2004 թվականին, բայց սկզբունքային դրույթներ է պարունակում քաղաքացիների՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման համար, խնդիր է դնում պահպանել ՏՏ մշակութային ժառանգությունը, ապահովել հայկական մշակույթի ավանդական և ոչ ավանդական ձևերի զարգացումը, յուրաքանչյուր անհատի, անկախ նրա բնակավայրից և սոցիալական խմբին պարկանելուց, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի բոլոր ոլորտներում մշակութային ծառայություններից և բարիքներից օգտվելու մարչելիությունը, ապահովել պատմամշակութային անշարժ հուշարձանների վերականգնումը, մշակութային կյանքին (ստեղծագործելու և օգտվելու) քաղաքացիների մասնակցությունը:

Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքն ապահովող օրենսդրությունը մշակելիս միշտ պետք է աչքի առաջ ունենալ, որ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՏՏ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ մշակութային արժեքներ են համարվում մշակույթի և արվեստի, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործությունները, բարոյագիտական և գեղագիտական գաղափարաբանությունները (իդեալները), վարվեցողության կանոնները և ձևերը, լեզուները, բարբառները և խոսվածքները, ազգային ավանդույթները և սովորույթները, պատմաաշխարհագրական տեղանունները, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքները և մեթոդները, մշակութային ժառանգության առարկաները (օբյեկտները) և մշակութային բարիքները՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից բնակչության մշակութային պահանջմունքների բավարարման նպատակով մատուցվող ծառայությունները և իրացվող մշակութային արտադրանքը (ապրանքները), և որ այդ հիմունքների 7-րդ հոդվածում թվարկված բոլոր ոլորտները պետք է կարգավորվեն դրանց առանձնահատկությունների հաշվառմամբ: Պակաս նշանակություն չունի նաև պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակութային հանրային ծառայությունների ապահովումը հեռուստատեսության, ռադիոյի, զանգվածային լրատվության այլ միջոցների միջոցով, գրադարանների, արխիվային ֆոնդերի մարչելիության ապահովումը, գրադարաններից, թանգարաններից անվճար օգտվելու, տեսլարանային ձեռնարկություններ հաճախելու փոմների մարչելի գներ սահմանելու և այլ միջոցներով:

Գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը եւս, ինչպես որ ստեղծագործության ազատությունը, ենթադրում է պաշտպանության որոշակի երաշխիքների գոյություն: Ինչպես ներպետական

օրենսդրության բացերը լրացնելու, այնպես էլ նման պաշտպանություն ապահովելու նպատակով Հայաստանը միացել է միջազգային իրավական բազմաթիվ ակտերի, որոնք ՄՍ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են դարձել: Դրանք են՝ 1954թ. դեկտեմբերի 19-ի՝ Եվրոպական մշակութային փարիզյան կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 1997թ. ապրիլի 25-ին), Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արքահանումը եւ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու եւ կանխելու միջոցների մասին 1970թ. նոյեմբերի 14-ի փարիզյան կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 5-ին), Մշակութային եւ բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին 1972թ. նոյեմբերի 16-ի փարիզյան կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 5-ին), Կինեմատոգրաֆիական համարելը արքադրության մասին 1992թ. հոկտեմբերի 2-ի Սփրասբուրգի կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 2005թ. ապրիլի 1-ին), Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին 2003թ. հոկտեմբերի 17-ի փարիզյան կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 2006թ. օգոստոսի 18-ին), Մշակութային ինքնարարահայրման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին 2005թ. հոկտեմբերի 20-ի փարիզյան կոնվենցիան (ՄՍ համար ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 27-ին)²³³:

ՆՈՂՎԱԾ 41

1. Յուրաքանչյուր որ ունի իր ազգային եւ էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք:

2. Ազգային փոքրամասնություններին պարկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի եւ մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

1. Մեկնաբանվող հոդվածը նվիրված է ազգային փոքրամասնությունների եւ նրանց պարկանող անձանց իրավունքների ամրագրմանը: Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակի կանոնակարգումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության կարեւոր բաղադրյալ, հանդիսանում է ինչպես ներպետական, այնպես էլ ժամանակակից միջազգային իրավունքի արդիական խնդիրներից մեկը: Այս ոլորտի հիմնահարցերը հարույկ պարասխանարվություն են ենթադրում հարկապես Հայաստանի Հանրապետության համար, քանի որ հայ ժողովրդի զգալի մասն ապրում է սփյուռքում՝ Կարբեր պետություններում հանդիսանալով ազգային փոքրամասնություն: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետությունն առանձնահարույկ նշանակություն է Կրալիս ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը՝ նրանց իրավունքներն ամրագրելով Մահմանադրությամբ եւ մասնակցելով այս ոլորտին վերաբերող միջազգային իրավական պայմանագրերին:

Ազգային փոքրամասնությունների եւ նրանց ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը ենթադրում է իրավական երաշխիքների երկու հիմնական խմբի առ-

²³³ Այդ կոնվենցիաների ու մտավոր սեփականության պաշտպանության մասին ՀՀ քաղաքացիական, վարչական, քրեաիրավական եւ պաշտպանության այլ ձեւերի ու եղանակների մասին տե՛ս Մահմանադրության 31-րդ հոդվածի 5-րդ մասի եւ ստեղծագործության ազատության մասին սույն հոդվածի սկզբնամասում տրված մեկնաբանությունները:

կայություն՝ մարդու հիմնական իրավունքների իրագործման հնարավորություն՝ առանց որևէ խտրականության ազգային, կրոնական ու լեզվական ինքնության պահպանության, և զարգացման հնարավորությունների առկայություն: Ազգային փոքրամասնությանը պարկանելությամբ պայմանավորված խտրականությունն արգելված է ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով, որը դրանից զարհիշարակում է նաեւ ռասան, մաշկի գույնը, էթնիկական կամ սոցիալական ծագումը, գենետիկական հարկանիշները, լեզուն, կրոնը, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները (տե՛ս հոդված 14.1-ի մեկնաբանությունները):

Փոքրամասնությունների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության առաջին փորձերը կատարվել են դեռեւս միջնադարում: Միջազգային իրավունքի անդրանիկ ակտն այդ կապակցությամբ կարելի է համարել Օլիվիական փրակտարը (1660 թ.), որով Լեհաստանը Շվեդիային հանձնեց Պամերանիան և Լիվոնիան, համաձայն որի Շվեդիան պարտավորվում էր ապահովել այդ փրաւածքների բնակչության կրոնական ազատությունները: Ավելի ուշ՝ 1879 թ., Կոստանդնուպոլսում կնքվեց պայմանագիր Ավստրո-Տունգարիայի և Թուրքիայի միջև, 1881-ին՝ Տունաստանի և Թուրքիայի միջև՝ սահմանների մասին և այլն:

Ինչ խոսք, նշված միջազգային իրավական ակտերը ոչ այնքան նպատակ ունեին սահմանելու և պաշտպանելու մարդու կամ փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները, որքան կանխելու առանձին խմբերի, առավել չափով՝ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կիրառումը, և ունեին առավելապես հանդուրժողականություն սերմանելու ուղղվածություն:

Դրությունն էապես փոխվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո, որն առաջ բերեց մեծ ավերածություններ և մարդկային զոհեր, բազմաթիվ ժողովուրդներ արտագաղթեցին իրենց երկրներից և հայտնվեցին ազգային փոքրամասնությունների իրավիճակում: Մարդկությունն ականատեսը եղավ նաեւ Նայոց Մեծ եղեռնի արհավիրքին: Քաղաքակիրթ երկրները բարոյական պարտավորվածություն էին զգում սատար կանգնելու թույլ ու անպաշտպան ազգերին ու ժողովուրդներին: Արդյունքում ծնվեց Ազգերի լիգայի սրեղծման գաղափարը, որը, որպես առաջին միջազգային լուրջ կազմակերպություն, 1919թ. ձեռնամուխ եղավ կնքելու միջպերական պայմանագրեր, որոնք վերաբերում էին առանձին երկրներում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը:

Ազգերի լիգան իր կարգավիճակով, միջպերական հարաբերությունները կարգավորելու փորձով չկարողացավ հասնել պերությունների համար համընդհանուր բնույթի վարքագծի կանոններ սահմանելու մակարդակի: Այդ առաքելության կատարումը պարտականորեն վիճակված էր Միավորված ազգերի կազմակերպությանը, որը 1948 թվականից սկսած ընդունեց մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի շարք կարեւոր իրավական ակտեր²³⁴: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի (ներկայում՝ Մարդու իրավունքների խորհուրդ) կառուցվածքում սրեղծված՝ խտրականության կանխման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերով ենթահանձնաժողովի երկարատեւ աշխատանքի արդյունքը հանդիսացավ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 47/135 բանաձեւով

²³⁴ Այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերը (1966թ.), Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիրը (1992թ.) և այլն:

(1992թ.) ընդունված հռչակագիրը՝ Ազգային կամ էթնիկական, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքների մասին:

Այդ կապակցությամբ զգալի աշխարհանք են կարարում նաեւ միջազգային փրա-րաժաշքջանային կազմակերպությունները՝ ԵԱՏԿ-ն, ԵՊ-ն, ԵԽ-ն, ԱՊՏ-ն եւ այլն, որոնք ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մեջ են տեսնում մեծ չափով խաղաղության հաստատումը երկրի վրա: Այդ միտքը բազմիցս հնչել է ամենա-փարբեր միջազգային համաժողովների ամբիոններից, մասնավորապէս՝ ԵԱՏԿ-ի հա-մաժողովում, որը գումարվեց Փարիզում (1989թ.), Կոպենհագենում (1990թ.) եւ Մոսկ-վայում (1991թ.): Այդ գաղափարի իրականացման արդյունք էր ԱՊՏ երկրների կողմից 1994թ. հոկտեմբերի 21-ին կնքված կոնվենցան՝ Ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքների պահովման մասին:

2. Ի փարբերություն խարկանության արգելքի, որն ուղղված է իրավահավասա-րության պաշտանության եւ մարդու իրավունքների համընդհանուր բնույթի ապահով-մանը, ազգային փոքրամասնությունների եւ նրանց ներկայացուցիչների իրավունքների սահմանադրական ամրագրումը նպարակ է հետապնդում պաշտպանել վերջիններիս՝ որպէս հարուկ հարկանիշներով օժտված առանձին խմբի: Այդ հարուկ հարկանիշնե-րը, որոնցով խումբը, որպէս այդպիսին, եւ նրա անդամները փարբերվում են պետության հիմնական բնակչությունից, եւ որոնք իրավական պաշտպանության կարիքն ունեն, հետեւալն են՝ ավանդույները, կրոնը, լեզուն եւ մշակույթը, ինչն էլ կազմում է ազգային կամ էթնիկական ինքնության առանցքը: Այս արժեքների եւ համապարասխան իրա-վունքների պաշտպանությունը պահանջում է ոչ միայն օրենսդրական եւ փաստացի խո-ջընդարների բացակայություն, այլ նաեւ պետության ներգրավվածություն, որոշակի իրա-վական դաշտի առկայություն, միջոցառումների իրականացում: Այս առումով դրական նշանակություն կարող է ունենալ ազգային փոքրամասնություններին վերաբերող առան-ձին ինքնուրույն օրենքի ընդունումը: Ներկայումս, նման օրենքի բացակայության պայ-մաններում, ազգային փոքրամասնությունների իրավունքները երաշխավորող դրույթները պարունակվում են փարբեր օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերում:

«Ազգային փոքրամասնություն» հասկացության առաջին պաշտոնական սահմա-նումը տրվեց ԱՊՏ երկրների կողմից 1994թ. հոկտեմբերի 21-ին ստորագրված՝ Ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքների ապահովման մասին կոն-վենցիայում, որի առաջին հոդվածի համաձայն՝ *«Ազգային փոքրամասնության պարկանող անձ է համարվում որեւէ պետության փարածքում մշտապէս բնակվող եւ նրա քաղաքացին հանդիսացող անձը, որն իր էթնիկական ծագու-մով, լեզվով, մշակույթով, կրոնով կամ սովորույթներով փարբերվում է տվյալ պետության հիմնական բնակչությունից»:*

Ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքների ապա-հովման մասին կոնվենցիայի բովանդակությունից երեսում է, որ բերված սահմանումը վե-րաբերում է այն փոքրամասնություններին, որոնց համար նախարեսված են փարբեր կազմակերպություններ ստեղծելու (հոդվ. 5), իրենց ազգային պետության (եթն այդպի-սին կա) հետ կապի ստեղծման եւ պահպանման (հոդվ. 6), մայրենի լեզվի պահպանման եւ օգտագործման (հոդվ. 7), իրենց կրոնի եւ ծեսերի ազատության (հոդվ. 8), մայրենի լեզ-վով կրթություն ստանալու (հոդվ. 10) եւ այլ իրավունքներ ու ազատություններ: Նման իրավական վիճակը լիովին համապարասխանում է «ազգային փոքրամասնության» սահմանման մեջ բերված հարկանիշներին, որոնց նախարեսումը, ինչպէս երեսում է կոն-

վեցնցիայի առաջին հոդվածից, պայմանավորված է կոնվենցիայի իրականացման «նպատակներով»:

Ազգային փոքրամասնություններին վերաբերող միասնական օրենսդրության բացակայության պայմաններում մեկնաբանվող հոդվածի նորմատիվային բովանդակության բացահայտման համար առանցքային նշանակություն ունի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան, որին մասնակցում է Նայաստրանի Նանրապետությունը: Թեպետև ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքները ընդհանուր տեսքով ամրագրված են նաև Բաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 27), Եվրոպական շրջանակային կոնվենցիան օժտված է առանձնահատուկ և բացառիկ նշանակությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ այն իրականացնում է ազգային փոքրամասնությունների իրավունքների մանրամասն կանոնակարգումը: Դրանով իսկ Եվրոպական շրջանակային կոնվենցիան կարող է ծառայել ՆՆ Սահմանադրության համապատասխան սեղմ ձեակերպումների էության բացահայտմանը և կոնկրետացմանը: Այսպես, համաձայն կոնվենցիայի՝ ազգային փոքրամասնությունները, նրանց պարկանող անձինք ունեն հետևյալ իրավունքները և պետությունները՝ դրանց համապատասխանող պարտավորությունները՝

- ազգային փոքրամասնության պարկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում,

- ազգային փոքրամասնությունների պարկանող անձանց համար պետք է երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պարկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն: Պետությունը պարտավորվում է անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի փոքրամասնական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցի ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պարկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը,

- պետությունը պարտավորվում է նպաստել ազգային փոքրամասնությունների պարկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական արժեքները՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար,

- պետությունը պետք է խրախուսի հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկի իր տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև՝ անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պարկանելությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես՝ կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում,

- պետությունը պարտավորվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պարկանելության պարճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների գոհ,

- պետությունը պետք է ապահովի ազգային փոքրամասնության պարկանող յու-

րաքանցյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունքների հարգումը,

- պետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանցյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաեւ կրոնական հաստատություններ, կազմակերպություններ եւ ընկերություններ սպեղծելու իրավունքը,

- պետությունը պարտավորվում է ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանցյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու եւ փոքրամասնության լեզվով տեղեկատվություն եւ գաղափարներ ստանալու եւ հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից եւ սահմաններից: Իր իրավական համակարգի շրջանակներում պետությունը պետք է ապահովի, որ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չենթարկվեն խտրականության,

- պետությունը չպետք է արգելի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տրամադրվող մամուլի միջոցների սպեղծումն ու օգտագործումը: Ռադիոյի եւ հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով դա հնարավոր է, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պետք է երաշխավորվի լրատվական սեփական միջոցների սպեղծման եւ օգտագործման հնարավորություն,

- պետությունը պետք է համապատասխան (համարժեք) միջոցներ ձեռնարկի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաեւ հանդուրժողականությունը խրախուսելու եւ մշակութային բազմակարծությունն ապահովելու համար,

- ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանցյուր անձ անձնական կյանքում եւ հասարակական վայրերում իր փոքրամասնության լեզվից բանավոր եւ գրավոր անարգել օգտվելու իրավունք ունի,

- ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, եւ այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, պետությունը, որքանով հնարավոր է, պետք է ձգտի ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց եւ վարչական իշխանությունների միջեւ հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն,

- ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանցյուր անձ ունի իր անունը, ազգանունը եւ հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաեւ դրանց պաշտոնական ճանաչման իրավունք,

- ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանցյուր անձ իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի մասնավոր բնույթի նշումներ, գրություններ եւ այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի,

- ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում պետությունը, հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովի ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաեւ բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա,

- պետությունը անհրաժեշտության դեպքում կրթության եւ գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկի իր ազգային փոքրամասնու-

թյունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրի ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնի շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև,

- պետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում հնարավորությունների սահմաններում և պետության կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորի իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ,

- իր կրթական համակարգերի շրջանակներում պետությունը պետք է ճանաչի, որ ազգային փոքրամասնության պատկանող անձինք իրավունք ունեն սրելովելու և ղեկավարելու իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները: Այս իրավունքի իրագործումը պետության վրա ոչ մի ֆինանսական պարտավորություն չի դնում,

- պետությունը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծի ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակույթային, հասարակական և փնտրական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար,

- պետությունը պետք է ձեռնպահ մնա այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով,

- պետությունը պարտավորվում է չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջ-սահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես, նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակույթային ընդհանուր ժառանգություն,

- ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն մասնակցել ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը,

- համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար պետությունը անհրաժեշտության դեպքում պետք է ջանք գործադրի այլ պետությունների, մասնավորապես, հարեան երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար և միջոցներ ձեռնարկի միջ-սահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

Ինչպես կարելի է նկատել, Մասնաճյուղային 41-րդ հոդվածի սեղմ ձևակերպումներն ազգային և էթնիկական ինքնության պահպանության, ավանդույթների, կրոնի, լեզվի, մշակույթի պահպանության և զարգացման, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների մասին ունեն բավականին հարուստ գործնական բովանդակություն և ենթադրում են պետության անմիջական ներգրավվածությունը դրանց իրագործմանը և երաշխավորմանը:

Ազգային փոքրամասնությունների իրավունքներին անմիջականորեն առնչվում է նաև ազգերի ինքնորոշման իրավունքը: Ինչպես նշված է Քաղաքացիական և քաղաքա-

կան իրավունքների մասին ու Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին (1966թ.) միջազգային դաշնագրերի առաջին հոդվածներում «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը...»: Դա նշանակում է, որ ամեն մի ազգ, ժողովուրդ ունի ինքնուրույն պետություն սրբեղծելու, սեփական կամահայրնությունը այս կամ այն պետության հետ միավորվելու կամ նրանից անջարվելու իրավունք: Այդ իմաստով կարեւորվում է այն հիմնահարցը, թե՞ ազգային փոքրամասնություններից որն ունի նման իրավունք:

Այդ հարցի պատասխանը, որոշ իմաստով, առաջին անգամ իրավաբանորեն ձեւակերպվել է Նամառուսաստանյան և Խորհուրդների 2-րդ համագումարի կողմից 1917թ. նոյեմբերի 3-ին ընդունված «Խաղաղության մասին» դեկրետում: Դրանում ասված է. «Մեծ կամ ուժեղ պետության հետ փոքր կամ թույլ ժողովրդի ամեն մի միավորում, առանց այդ ժողովրդի կողմից պարզորոշ կերպով արտահայտված կամավոր համաձայնության ու ցանկության, անկախ այն բանից, թե՞ այդ ուժեղ պետությանը միացված կամ նրա սահմաններում բռնությամբ պահված ազգը կամ ազգությունը ինչքանով է զարգացած կամ հեղափոխված... Խորհրդային կառավարությունը ելնելով ժողովրդավարական իրավագիտականությանից, դիտում է որպես բռնի նվաճում (անբարիք)»²³⁵:

Դժվար չէ նկատել, որ այս կամ այն փոքրամասնությանը նվաճելը եւ բռնի ուժով փրկապետության փակ պահելը հակասում է ոչ միայն ժողովրդավարական իրավագիտականությանը, այլև միջազգային հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին: Մասնավորապես, 1960թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընդունված՝ Գաղութային երկրների ժողովուրդներին անկախություն փայլո մասին հռչակագրում գաղութափրկության եւ օտարերկրյա փրկապետության ու շահագործման մյուս բոլոր տեսակները որակվեցին որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի եւ մարդու հիմնական իրավունքների կոպիտ խախտում: Ասվածից անառարկելիորեն հետևում է, որ նվաճված կամ այլ պետությունների կազմում բռնությամբ պահվող ազգային փոքրամասնություններն առանց որևէ լրացուցիչ պայմանի ունեն ինքնորոշման իրավունք:

Սակայն դա ամենեւին չի նշանակում, թե՞ կամավոր կերպով այս կամ այն պետությանը միացած փոքրամասնությունն ինքնորոշվել չի կարող: Քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն ժողովրդի համար պարմական զարգացման փարբեր հարվածներում սրբեղծվում են անբարենպաստ պայմաններ, որի սպասվող վնասակար հետեւանքներից խուսափելու համար վերջինս սրիաված միանում է այս կամ այն բարենպաստ վիճակում գրվող պետությանը: Նման իրադրության փոփոխությունից հետո միավորված փոքրամասնությունն իրավունք ունի իր կամահայրնությամբ անջարվել եւ սրբեղծել ինքնուրույն պետական միավոր: Եզրակացությունն այն է, որ կամավոր հիմունքներով միավորված ազգային փոքրամասնությունների համար ինքնորոշման իրավունքից օգտվելը նույնպես պետք է իրականացվի առանց որևէ լրացուցիչ պայմանի:

Այս կամ այն պետության կազմում ապրող ազգային փոքրամասնության համար առաջին կարեւորության խնդիրներից է մայրենի լեզվի պահպանումն ու օգտագործումը: Միջազգային իրավական ակտի այդ նորմի պահանջներն իրենց ուղղակի արտահայտությունն են ստացել «Լեզվի մասին» ՆՇ օրենքում, ուր ասված է. «Տայաստանի Տանրապետությունը իր փարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնություննե-

²³⁵ Стів Образование и развитие СССР как союзного государства. М., 1972, էջ 6:

րի լեզուների ազատ գործածությունը» (հոդվ. 1), որ «Նայաստանի Նանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ» (հոդվ. 2), որ «Նայաստանի Նանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձեռագրերը, կնիքները ձեւավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ»:

Ներկայումս ՆՆ տարածքում գործում են պետական հովանավորությամբ բացված մի շարք հանրակրթական դպրոցներ, որոնցում դասավանդումն ազգային փոքրամասնությունների լեզուներով է: Դրա հետ մեկտեղ, ՆՆ կրթության և գիտության նախարարության գլխավոր տեսչությունը մշակել է «ՆՆ պետական հանրակրթական դպրոցի ընդունելության կարգ», համաձայն որի՝ «Ազգային փոքրամասնության պարկանոդ քաղաքացիների երեխայի ընդունելությունը կատարվում է երեխայի մայրենի լեզվով ուսուցմամբ դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ հայերենով ուսուցմամբ դպրոցում»:

Նայաստանի Նանրապետությունն ազգային փոքրամասնություններին պարկանոդ անձանց համար ապահովում է նաև իրավունք՝ դավանել իրենց կրոնը և կատարել համապատասխան ծիսակատարություններ, ունենալ պաշտամունքի շենքեր, ձեռք բերել և օգտագործել ծիսակատարման համար անհրաժեշտ իրեր, ինչպես նաև մայրենի լեզվով իրականացնել լուսավորչական և կրոնական գործունեություն: Այդ իրավունքն ամրագրված է հանրապետության ինչպես հիմնական օրենքում, այնպես էլ ընթացիկ օրենսդրությամբ: Մասնավորապես, Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք»: Դրան համապատասխան՝ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՆՆ օրենքը սահմանում է կրոնական կազմակերպություններ ստեղծելու, նրանց կողմից սեփականություն ունենալու կարգը, ինչպես նաև դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների սահմանափակման, կրոնական հողի վրա հետապնդումների կամ այդ իրավունքների իրականացմանը խոչընդոտելու, կրոնական թշնամանք հարուցելու համար համարժեք պատասխանատվության միջոցների կիրառում (հոդվ. 2):

Նայաստանի Նանրապետությունը որեւէ ձեւով չի խոչընդոտում իր տարածքում ապրող ազգային փոքրամասնություններին անարգել կերպով կապ պահպանել միմյանց հետ, ինչպես նաև այն պետությունների, կազմակերպությունների ու քաղաքացիների հետ, որոնց հետ ունեն ցեղային ծագման, մշակույթի, լեզվի, կրոնական համոզմունքների և այլ ընդհանրություններ, ինչը նախատեսված է դաշնագրի 6-րդ հոդվածում: Փոքրամասնությունների փոխադարձ կապն ապահովված է նրանց կողմից ստեղծված «Ազգությունների միություն» հանրապետական կազմակերպության միջոցով, որը միջնորդ օղակ է հանրապետության իշխանությունների և ազգային փոքրամասնություններին պարկանոդ անձանց միջև: Ինչ վերաբերում է վերջիններիս կապի ապահովմանն այն պետությունների, կազմակերպությունների ու քաղաքացիների հետ, որոնց հետ առկա են ծագման, մշակույթի, լեզվական, կրոնական համոզմունքների և այլ ընդհանրություններ, ապա այն հիմնականում իրականացվում է Նայաստանի Նանրապետությունում հավատարմագրված համապատասխան երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

ՏՈՂ-ՎԱԾ 42

1. Սահմանադրությանը ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:

2. Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

3. Անձի իրավական վիճակը վարդապետացնող օրենքները և այլ իրավական ակտեր հեղադարձ ուժ չունեն:

4. Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հեղադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

1. Մեկնաբանության առարկա հողվածի 1-ին մասում ամրագրած դրույթը համակարգային փոխկապակցության մեջ է գրնվում Սահմանադրության 3-րդ հողվածի 2-րդ մասում բովանդակվող այն դրույթի հետ, որն ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան ապահովելու պետության պարտականությունը: Սահմանադրության 42-րդ հողվածի 1-ին մասում և 3-րդ հողվածի 2-րդ մասում ամրագրված նորմերը համակարգային առումով կապված են նաև սահմանադրական մեկ այլ նորմի՝ Սահմանադրության 43-րդ հողվածի 2-րդ մասում ամրագրված այն նորմի հետ, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Միմյանց հետ համակարգային փոխկապակցության մեջ գրնվող նշված սահմանադրական նորմերը թույլ են տալիս ՀՀ ամբողջ օրենսդրական համակարգը և միջազգային պայմանագրային պարտավորությունները դիտել որպես մեկ միասնական իրավական համակարգ:

Սահմանադրության 42-րդ հողվածի 1-ին մասում ամրագրված դրույթին համարժեք դրույթ էր բովանդակում նաև ՀՀ Սահմանադրության՝ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ փոփոխված 43-րդ հողվածը, որը սահմանում էր. «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատություններն սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում»: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2002թ. փետրվարի 22-ի ՍԴՈ-350 որոշման մեջ մեկնաբանելով այդ դրույթը՝ ամրագրել է, որ «նշված սահմանադրական դրույթը կարող է մեկնաբանվել, որ ՀՀ քաղաքացին կամ ՀՀ իրավագործության ներքո գրնվող յուրաքանչյուր անձ կարող է ունենալ ոչ միայն Սահմանադրության մեջ չարձանագրված իրավունք կամ ազատություն, այլև այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքների և ազատությունների փրամաբանական շարունակությունը կամ դրանց իրականացումն ապահովող լրացուցիչ երաշխիք»:

Հաշվի առնելով սահմանադրական դատարանի կողմից փոփոխված վերոհիշյալ մեկ-

նաբանությունը՝ կարելի է նշել, որ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի բովանդակությունը մասնավորապես հանգում է հետևյալին.

- Սահմանադրությունում ամրագրված են միայն հիմնական իրավունքներն ու ազատությունները,

- Սահմանադրությունում ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների ցանկն սպառիչ չէ,

- օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքները գտնվում են Սահմանադրության պաշտպանության ներքո այնպես, ինչպես Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու պարտականությունները:

Մի կողմից, Սահմանադրությունում ամրագրված իրավունքների և ազատությունների, մյուս կողմից՝ միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքների ու ազատությունների փոխհարաբերությունների վերաբերյալ իր հայեցակարգային դիրքորոշումները ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 2002թ. փետրվարի 22-ի ՄԴՌ-350 որոշման մեջ: Սահմանադրական դատարանը՝ քննության առնելով 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում և կից արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը, ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքների ու ազատությունների և կոնվենցիոն իրավունքների ու ազատությունների միջև համեմատական վերլուծության արդյունքներով մասնավորապես արձանագրել է, որ կոնվենցիայում և արձանագրություններում ամրագրված առանձին իրավունքներ ՀՀ Սահմանադրությամբ անմիջականորեն նախատեսված չեն, իսկ առանձին իրավունքներ ու ազատություններ, չնայած համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված նման իրավունքներին և ազատություններին, սակայն ՀՀ Սահմանադրությունը դրանց մի մասը պարզապես չի ներկայացրել, որովհետև մարդկանց, այլ միայն քաղաքացիներին: Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծել է, որ առկա փարբերության էությունը կայանում է նրանում, որ կոնվենցիոն և արձանագրային նորմերը մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանում են ավելի լայն ընդգրկումով, քան ՀՀ Սահմանադրության հիշյալ նորմերը: Հաշվի առնելով նշված հանգամանքը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության՝ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ փոփոխության 43-րդ հոդվածի վերոհիշյալ մեկնաբանությունը՝ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության նորմերի և կոնվենցիոն նորմերի միջև առկա այս առերես թվացյալ հակասությունը հաղթահարել է հետևյալ սկզբունքային իրավական դիրքորոշմամբ. Սահմանադրությունը, որն ամրագրում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, չի սահմանափակում անձանց՝ նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներից ու ազատություններից օգտվելու իրավունքը:

Ըստ էության վերոհիշյալ հայեցակարգային մոտեցման վրա է խարսխված նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրասբուրգում ստորագրված մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու մասին» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2003թ. հուլիսի 15-ի ՄԴՌ-437 որոշումը:

Մեկնաբանության առարկա դրույթը պահանջում է ներպետական մակարդակում

ապահովել ՏՏ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով սահմանված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության նույն հնարավորությունները, ինչ ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավունքների պաշտպանության համար: Այդ պահանջն ըստ էության բավարարված է ՏՏ վարչական դատավարության օրենսգրքով, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները:

2. Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին դրույթը խախտված է Շ. Լ. Մոնտեքոյոյի՝ «Ազատությունն իրավունք է՝ անելու այն ամենն, ինչը թույլատրված է օրենքով: Եթե քաղաքացին կարողանար անել այն, ինչն օրենքներով արգելված է, ապա նա չէր ունենա ազատություն, քանի որ նույնը կարող են անել նաեւ մյուս քաղաքացիները» բանաձեռի վրա: Սահմանադրական այս դրույթն ամրագրում է, այսպես կոչված, ազատ լինելու իրավունքը: Այս իրավունքն առաջին անգամ իր ամրագրումն է ստացել 1789թ. Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին Ֆրանսիական հռչակագրի 4-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Ազատությունը յուրաքանչյուրի հնարավորությունն է՝ անելու այն ամենը, ինչը չի վնասում այլոց. այդպիսով յուրաքանչյուրի բնական իրավունքների իրականացումն ունի լոկ այնպիսի սահմաններ, որոնք հասարակության մյուս անդամների համար ապահովում են նույն իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Այս սահմանները կարող են սահմանվել միայն օրենքով»:

Սակայն ՏՏ Սահմանադրության «ազատ լինելու իրավունքը» ավելի հարուստ է իր բովանդակությամբ: Այն մեկնաբանելիս անպայման պետք է նկատի ունենալ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ դրա համակարգային կապը: 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հասարակական կյանքի հանրային-իրավական սուբյեկտների «ազատության» շրջանակները: Իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անհատների վարքագծի իրավական կարգավորման հիմնարար սկզբունքը: Դրանք միաժամանակ իրավական պետության իրավական կարգավորման երկու հիմնական եղանակներն են՝ «արգելող»՝ հանրային-իրավական սուբյեկտների համար, եւ «թույլատրող»՝ անհատների համար: Այսպիսով, ՏՏ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասն ունի խոր հակապոզիտիվիստական, հականորմատիվիստական, հակալեգիստական բովանդակություն: Դրա առաջին դրույթի բովանդակությունից բխում են հետևյալ իրավական բանաձեռերը.

1/ Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով:

Մարդու իրավունքներն սրեղծում են մարդու ազատությունը եւ ինքնավարությունը: Ներքառաք, ազատությունը մարդու հնարավորությունն է փնտրիներ եւ փրկապետել, ինչպես իրեն հարմար է, իր անձը, իր գործողությունները, սեփականությունը, բայց միայն օրենքների շրջանակում: Ազատության սահմանները կարող են որոշվել միայն օրենքով, որն էլ հենց ազատության չափն է: Պետությունն օրենքների միջոցով ամրագրում է մարդու իրավունքներն ու ազատությունները, եւ այդ դեպքում դրանք դառնում են հնարավոր: Սակայն օրենքները կարող են մարդու հնարավորությունների շրջանակները կարգավորել երկակիորեն. առաջին՝ ամեն ոք կարող է կատարել այն, ինչը թույլատրված է օրենքով:

քով, և երկրորդ՝ ամեն ոք կարող է կատարել այն, ինչն արգելված չէ օրենքով: Օրենսդրական կարգավորման առաջին եղանակը սահմանափակում է մարդու ազատությունը, որովհետև սրացվում է, որ անձը կարող է կատարել միայն այն, ինչը թվարկված է օրենքով: Այդպիսի կարգավորումը մարդուն դնում է պետական իշխանությունից կախվածության մեջ: Որպեսզի կանխի մարդու ազատությունը սահմանափակող այդպիսի իրավական կարգավորումը՝ Մահմանադրությունը հռչակում է, որ ազատությունը հնարավորությունն է անել ամեն ինչ, ինչն արգելված չէ օրենքով: Այդ սկզբունքը սահմանափակում է պետական իշխանությունը երկակիորեն, նախ՝ անձը չի կարող կատարել միայն օրենքով արգելված արարքները, երկրորդ՝ անձի համար արգելված արարքների շրջանակը կարող է սահմանվել միայն օրենքով:

2/ Արգելվում է կատարել այն, ինչը խախտում է այլ անձանց իրավունքները և ազատությունները: Արարքը կարող է ուղղակիորեն չլինել արգելված օրենքով: Մակայն դա չի նշանակում, որ անհատն իրավունք ունի կատարելու այն, որովհետև այս դեպքում գործում է մարդու իրավունքների սահմանի «ոսկե կանոնը», որը, ելնելով Ավետարանից, ձեռնարկվել է ուշ միջնադարյան բնական իրավունքի փեսությունը. «Մի արա այն, ինչը չես ուզում, որ քո նկատմամբ անեն ուրիշները»: Մարդու իրավունքների իրականացման այդ ընդհանուր սահմանի սկզբունքը ՆՏ Մահմանադրությունն ամրագրել է նաև 47-րդ հոդվածի 1-ին մասում. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է... հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»: Այսպիսով, օրենքը չի կարող իրականում թվարկել հնարավոր բոլոր արգելվելիք արարքները, սակայն արարքն արգելվում է, եթե այն խախտում է այլ անձանց իրավունքները և ազատությունները:

Բոլոր այն իրավունքները, որ ունեն անձինք, միաժամանակ իրավունքներ են ուրիշների համար, հետևաբար՝ նրանց պարտականությունն է հարգել դրանք, ապահովել ուրիշների իրավունքները, ձեռնպահ մնալ դրանք ուրիշներին գործողությունների կատարումից: Այդպիսով, անձի իրավունքների երաշխիքը ուրիշների պարտականությունն է և, հակառակը՝ նրա պարտականությունը՝ այլոց իրավունքների երաշխիքը: Ուստի անձն ազատ է մինչև այնպեղ, որպեղ սկսվում են ուրիշների իրավունքները:

Մահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին դրույթում ուրվագծված անձի ազատության իրականացման թույլատրելի շրջանակների, «վարքագծի ոսկե կանոնի» իրավաբանական հատկանիշների առնչությամբ պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա/ առաջին հերթին այդ կանոնի ազդեցությունը փարսածվում է ոչ միայն անհատների հարաբերությունների, այլ նաև անհատի ու հասարակության և այլ կոլեկտիվ կազմավորումների միջև հարաբերությունների վրա,

բ/ նշված կանոնի սուբյեկտ են բոլորը՝ ֆիզիկական անձինք, որոնք օգտվում են Մահմանադրությամբ սահմանված իրավունքներից և ազատություններից, ինչպես նաև իրավաբանական անձինք,

գ/ նշված բանաձևը բովանդակում է անձի իրավաչափ վարքագծի չափանիշը, այսինքն՝ այդ վարքագիծն իրավաչափ է, քանի դեռ չի խախտել այլոց իրավունքներն ու ազատությունները:

Գործնականում որոշակի կարեւորություն է ներկայացնում սահմանադրական այս դրույթի իրավաբանական բնույթի հարցը: Ըստ էության այդ դրույթն ունի երկակի իրավաբանական բնույթ: Նախևառաջ՝ դրանում ամրագրված է իրավաստեղծ գործունեության ընդհանուր սկզբունք, որն օրենսդրին պարտավորեցնում է քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն օրենսդրորեն սահմանելիս հաշվի առնել հասարա-

կության եւ պետության շահերը, այլոց իրավունքները: Մյուս կողմից՝ այս դրույթը կոնկրետ նորմ է, որը որոշում է սահմանադրական իրավունքների եւ ազատությունների իրականացման շրջանակները, եւ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի հետ մեկտեղ սահմանում է իրավունքների իրականացման գործընթացում իրավունքների ու ազատությունների փոխհարաբերությունը պարտականությունների հետ: Մեկնաբանվող դրույթում ամրագրված սկզբունքից բխում է անձի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման հնարավորությունն այն դեպքում, երբ նման սահմանափակումը պահանջվում է այլոց իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակով:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ դրույթն ազդարարում է՝ «Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»: Նանդիսանալով հոդվածի 2-րդ մասի առաջին դրույթի փրամաբանական շարունակությունը՝ այն ազդարարում է մարդու իրավունքներն ստեղծում են մարդու ազատությունը, իսկ ազատությունը ենթադրում է իրավական սահմանափակվածություն՝ պարտականություններ եւ պարտախանապվություն:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ դրույթի՝ առաջինի հետ համակարգային մեկնաբանումից բխում են հետեւյալ իրավական հետեւանքները.

1/ Մարդը բացի իրավունքների սուբյեկտից, նաեւ իրավական պարտականությունների սուբյեկտ է: Անհատի հասարակական ազատության իրավական ձեւը մարդու իրավունքներն են: Մարդու իրավունքներն օրենքով երաշխավորված հնարավորություններ են: Դա նշանակում է, որ մարդն իր վարքագծում ունի անձնական հայեցողություն, այսինքն՝ իրավունք-հնարավորություն, որը ցանկության դեպքում կենսագործում է: Մինչդեռ կյանքը, բացի հնարավորություններից, ենթադրում է նաեւ անհրաժեշտություն: Նենց իրենք՝ մարդու իրավունքներն ազատության «չափն» են, քանզի դրանք ենթադրում են հայեցողության սահմանափակում, այսինքն՝ պարտականություն: Պարտականությունները հասարակական անհրաժեշտության արտահայտման իրավական ձեւն են եւ կոչված են մարդու իրավունքների հետ մեկտեղ կյանքում ապահովելու կարգուկանոնը, հավասարակշռությունը, կայունությունը, խաղաղությունը: **Իրավական պարտականությունը** պետության կողմից անձի համար սահմանված իրավական անհրաժեշտությունն է, նրա վարքագծի պարտադիր չափն ու փոսակը: Մարդն այսպեղ չունի ընտրելու հնարավորություն, այլ պարտադիր պետք է դրսեւորի այն վարքագիծը, որը նրանից պահանջում է օրենքը: Չկատարելու դեպքում նրա նկատմամբ կկիրառվի պետական հարկադրանք:

Պարտականությունները եւս ունեն բնական արմատներ: Բնական իրավունքներին համապատասխանում են բնական պարտականությունները. օրինակ՝ կյանքի իրավունքին՝ «մի սպանիր», իսկ սեփականության իրավունքին՝ «մի գողանա» պարտականությունը: Բնական պարտականություններն ամրագրվելով օրենքով՝ վերածվում են իրավական պարտականությունների: Չկա մարդ, որ կրի միայն պարտականություն առանց իրավունքի, եւ կամ միայն իրավունք՝ առանց պարտականության: Ազատությունը միայն այն ժամանակ է իրական, երբ վերածվում է օրենքի վրա հիմնված կարգուկանոնի: Իսկ կարգուկանոնը հենց իրավունքների եւ պարտականությունների միասությունն է:

2/ Իրավական պարտականությունների շրջանակը պետք է սահմանվի օրենքով: Սահմանադրական պահանջը, որ պարտականությունները պետք է սահմանված լինեն օրենքով, գործնականում չպետք է ձեւական բնույթ կրի, ինչը նշանակում է, որ պարտականություններ սահմանող օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատես-

սելի և մարչելի, որպեսզի անձը կարողանա ճիշտ կողմնորոշվել իրենից օրենքով պահանջվող վարքագծի հարցում: Այս կապակցությամբ հարկանշական է ՏՏ սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 13-ի ՄԳՈ-753 որոշումը: Գնահատելով «Նեռուս-փարեսության և ռադիոյի մասին» ՏՏ օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ նորմով սահմանված՝ հեռուստառադիոընկերությունների՝ եթերավճար վճարելու պարտավորության կապակցությամբ առկա ոչ լիարժեք, անհարկ, հակասական իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի պայմաններում, երբ փվյալ փնտրեսավարող սուբյեկտի համար որոշակիացված չեն ոչ եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, ոչ գանձման նպատակը, ոչ գանձող մարմինը, ոչ գանձման ընթացակարգը, ձեւավորվում է իրավական անորոշության և անկանխատեսելիության մի վիճակ, որը կասկածի է ենթարկում եթերավճարի գանձման իրավաչափությունը՝ հիմքեր ստեղծելով օրենքով նախատեսված պարտականությունը չկատարելու համար:

Նաշվի առնելով օրենքի վիճարկվող դրույթի անորոշությունը, այդ անորոշությունից բխող՝ օրենքի դրույթի սխալ մեկնաբանության վրա հիմնված իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենքի վիճարկվող դրույթը փնտրեսավարող սուբյեկտի համար հարակ կանխատեսելի չի դարձնում եթերավճարի գանձման նպատակը, իրավական մեխանիզմները, եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, այդ եթերավճարը վճարելու՝ փնտրեսավարող սուբյեկտի պարտականության իրավաչափությունը:

Ելնելով սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումներից՝ կարելի է ընդհանրացնել, որ պարտականություն սահմանող օրենքը պետք է լինի այնքան հարակ ձեւակերպված և կանխատեսելի, որ կասկած չհարուցի այդ պարտականության իրավաչափության առնչությամբ:

Սահմանադրության այս սկզբունք-նորմն իր կոնկրետացումն է ստացել Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետում, որի համաձայն՝ Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պարասխանավորության փոսակները, չափերը, պարասխանավորության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, փուրքերի և այլ պարտադիր վճարների փոսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես օրենքով:

3. Նոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նորմերն համընդհանուր նորմեր են, որոնք ամրագրում են իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության սկզբունքները: Այդ նորմերն ունեն անմիջական, ուղղակի գործողություն. եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապարասխան նորմ, որը սահմանում է փվյալ օրենսդրության՝ ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմերին հակասող նորմեր, ապա կիրառվում են նշված սահմանադրական նորմերը՝ իրենց անմիջական գործողության ուժով:

Սահմանադրական այս նորմերն ուղղված են ինչպես իրավակիրառողին, այնպես էլ օրենսդրին: Իրավակիրառ բոլոր սուբյեկտները պարտավոր են առաջնորդվել այս դրույթում ամրագրված պահանջով՝ յուրաքանչյուր կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմի ընտրության գործընթացում, օրենսդրի համար այս սահմանադրական դրույթների պահանջը գործում է այն ժամանակ, երբ օրենսդիրը սահմանում է այս կամ այն

օրենքի ուժի մեջ մտնելու վերաբերյալ նորմ:

42-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վարթարացնող իրավական ակտերի հեղադարձության ուժի մերժման սկզբունքը: Սահմանադրական այս դրույթի յուրահավելությունը դրսևտրվում է նրանում, որ, ի փարաբերություն մի շարք միջազգային պայմանագրերում²³⁶ եւ առանձին երկրների սահմանադրություններում ամրագրված համարժեք դրույթների²³⁷, այն օրենքի հեղադարձ ուժի արգելքը փարաժում է ոչ միայն քրեական պարասխանարվություն սահմանող օրենքների վրա, այլ նաեւ իրավական պարասխանարվության այլ ձեւեր՝ քաղաքացիական, վարչական, կարգապահական պարասխանարվություն սահմանող օրենքների վրա: Ավելին, օրենքի հեղադարձ ուժի արգելքը փարաժվում է ոչ միայն պարասխանարվություն սահմանող օրենքների վրա, այլ նաեւ ընդհանրապես որեւէ կերպ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների վրա, ինչը ենթադրում է, որ նշված սահմանադրական դրույթում ամրագրված արգելքը վերաբերում է ոչ միայն նյութական իրավունքի նորմերին, այլ նաեւ վարույթային իրավունքի նորմերին:

Այս դրույթի յուրահավելությունը պայմանավորող կարեւոր հարկանիշներից է նաեւ այն, որ դրանում ամրագրված արգելքը փարաժվում է ոչ միայն օրենքների²³⁸, այլ նաեւ այլ իրավական ակտերի վրա: Նկատենք նաեւ, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդման փեսանկյունից սահմանադրական այս դրույթի ամրագրմամբ առաջընթաց է արձանագրվել նաեւ ՏՏ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված համարժեք դրույթի առնչությամբ: Մասնավորապես, վերջինս օրենքի հեղադարձ ուժի մերժման սկզբունքը փարաժում էր միայն պարասխանարվություն սահմանող կամ պարասխանարվությունը խարացնող օրենքների վրա:

Անձի իրավական վիճակը վարթարացնող իրավական ակտերի հեղադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթն ունի իմպերատիվ բնույթ: Ինչպես Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դարարանը նշել է 20.04.06թ. թիվ 4-կ որոշման պարճառարանական մասի 4.3-րդ կերում. «Սահմանադրության 54-րդ հոդվածում ամրագրված դրույթը դարարանին կամ օրենքը կիրառող որեւէ մարմնի հայեցողական լիազորություն չի վերապահում»:

Տողվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավորապես, բացահայրված է ՏՏ սահմանադրական դարարանի 2008թ. հունվարի 15-ի ՍԴՌ-723 որոշման մեջ: Սահմանադրական դարարանն այդ որոշման մեջ անդրադառնալով ՏՏ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ նշել է. «Վերջինս հանդիսանում է պերական իշխանության նկարմամբ վարահության եւ իրավական պերության սկզբունքների կարեւոր բաղադրարարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարեւոր երաշխիք: Օրենքի հեղադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլարելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»:

²³⁶ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդված, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդված, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդված:

²³⁷ Մասնավորապես, տեւս Էստոնիայի Սահմանադրության 23-րդ հոդվածը, Հունգարիայի Սահմանադրության 57-րդ հոդվածը, Գերմանիայի Դաշնության Սահմանադրության 103-րդ հոդվածը:

²³⁸ Մասնավորապես, տեւս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 54-րդ հոդվածը:

Ըստ սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անձի իրավական վիճակը վարթարացնող նորմերի հեղադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեզիպիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

Մեկնաբանվող նորմերում առանցքային հասկացություններ են հանդիսանում «հեղադարձ ուժ», «անձի իրավական վիճակը վարթարացնող», «անձի իրավական վիճակը բարելավող» հասկացությունները:

Օրենքի հեղադարձ ուժ ասելով հասկանում ենք դրա կիրառումը մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների եւ դրանք ծնող իրադարձությունների, գործողությունների կամ անգործության նկատմամբ:

Անձի իրավական վիճակը վարթարացնող իրավական ակտ ասելով պետք է հասկանալ այն իրավական ակտերը, որոնք անձի համար ունեն որեւէ բացասական ազդեցություն: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը մատնանշում է այն հիմնական դեպքերը, երբ իրավական ակտը վարթարացնում է անձի իրավական վիճակը: Այդ ակտերն են՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խախտող կամ պարասխանարվություն սահմանող կամ պարասխանարվությունը խախտող կամ պարսկանություններ սահմանող կամ պարսկանությունների կատարման կարգ սահմանող կամ խախտող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խախտող իրավական ակտերը: Օրենքն անձի իրավական վիճակը վարթարացնող իրավական ակտերի շրջանակը չի սահմանափակում միայն նշվածներով:

«Վիճակը վարթարացնող» կամ «բարելավող» հասկացությունների օգտագործումը կարող է ունենալ փարբեր բովանդակություն փարբեր ճյուղային օրենսդրություններում: Քրեական օրենսդրության շրջանակներում անձի իրավական վիճակը բարելավող կհամարվի այն քրեական օրենքը, որը վերացնում է առանձին հատկանիշների գնահատումը որպես որակյալ հարկանիշներ, կամ ընդլայնում է մեղմացնող հանգամանքների շրջանակը կամ սահմանափակում ծանրացնող հանգամանքների շրջանակը, նվազեցնում է պարժի նվազագույն եւ առավելագույն սահմանազծերը կամ լրացուցիչ նախարեսում է ավելի մեղմ այլընտրանքային պարժամիջոց, կրճատում է վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ պարժի կրման ժամկետը եւ այլն:

Անձի իրավական վիճակի վարթարացման կամ խախտման ձեւերն օրենքում չեն արտահայտվում: Դրանք ճանաչվում են որպես այդպիսին դատական պրակտիկայում եւ պահանջում են սահմանադրական՝ Սահմանադրության փառին եւ ոգուն համապատասխան մեկնաբանություն:

4. Եթե հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի համաձայն իրավական ակտն ընդունած մարմնին արգելվում է անձի համար որեւէ բացասական ազդեցություն ունեցող իրավական ակտի գործողությունը փարածել անցյալի վրա, ապա 4-րդ մասում ամրագրված դրույթն այդ մարմնին չի պարսկանողնում անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտ ընդունելու դեպքում դրան հեղադարձ ուժ հաղորդել: Նշված դրույթն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պարսխանարվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հեղադարձ ուժ հաղորդելը: Եթե իրավական ակտը չի նախարեսում հեղադարձության վերաբերյալ դրույթ, ապա իրավակիրառողը նոր իրավակարգավո-

րումը կիրառում է միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Այսինքն ըստ մեկնաբանվող դրույթի գործում է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտի հետադարձ ուժի բացակայության կանխավարկածը, եւ այդ կանխավարկածից շեղումները պետք է լինեն բացառություններ: Նման մոտեցումը միաված է այնպիսի նպատակների ապահովմանը, ինչպիսիք են հասարակության կայունացմանը նպաստելը, օրինականության եւ իրավակարգի ամրապնդումը:

Սահմանադրական այս դրույթին համահունչ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածը սահմանում է ժամանակի մեջ քաղաքացիական օրենսդրության եւ այլ իրավական ակտերի գործողության հետեւյալ իրավակարգավորումը. քաղաքացիական օրենսդրության ակտերը եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն ու կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Օրենքի գործողությունը մինչեւ դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում է միայն այն դեպքերում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Ներադարձ ուժ ունեցող իրավական ակտի կիրառման իրավական հետեւանքները կանոնակարգված են «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 78-րդ հոդվածով: Վերջինիս համաձայն՝ հետադարձ ուժ ունեցող իրավական ակտի կիրառմամբ անձն ազատվում է նախկինում կիրառված պատասխանատվության միջոց կամ իրավունքի սահմանափակում նախատեսող անհատական ակտերի կատարման պարտականությունից: Ներադարձ ուժ ունեցող իրավական ակտի ընդունումը հիմք չէ անձի նկատմամբ նախկինում կիրառված պատասխանատվության միջոցի կամ իրավունքի սահմանափակման կատարման շրջադարձի, այսինքն՝ վճարված գումարի վերադարձման, վերացված իրավունքի (լիցենզիայի, մրցույթին մասնակցության եւ այլն) վերականգնման համար, եթե տվյալ ակտով ուղղակիորեն սահմանված չէ հակառակը:

Նարկ է նկատել, որ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթը չի վերաբերում արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող քրեական իրավունքի նորմերին, քանզի ՏՏ Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված դրույթի ուժով այդ նորմերն ունեն հետադարձ ուժ անկախ օրենսդրի հայեցողությունից, անկախ դրանց հետադարձ ուժ տալու՝ օրենսդրի կամքի դրսևորումից:

Անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության սահմանադրական սկզբունքին համահունչ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածով կանոնակարգվել է վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետեւանքներն այն դատական եւ վարչական ակտերի համար, որոնք կայացվել են մինչեւ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունումը: Ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ Սահմանադրական դատարանի որոշումները, որպես ընդհանուր կանոն, չունեն հետադարձ ուժ եւ չեն տարածվում մինչ Սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ փարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական եւ քրեաիրավական հարաբերություններին: Օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառության համաձայն՝ սահմանադրական դատարանի հայեցողությանն է թողնված իր որոշումներին հետադարձ ուժ տալու հարցը: Նույն մասը որոշակի սահմաններ է նախատեսում

Սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար, այն է՝ Սահմանադրական դատարանը կարող է իր այս հայեցողությունից օգտվել այն դեպքում, երբ իր որոշմանը հեղադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետեւանքներ: Ինչպես նաեւ սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք փարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը:

Նույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է Սահմանադրական դատարանի այն որոշումների հեղադարձ ուժին, որոնք Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը: Ինչպես նշել է ՏՏ Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. ապրիլի 15-ի ՄԳՌ-751 որոշման մեջ, այդ բացառությունը հիմնվում է այն փրամաբանության վրա, որ քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետեւանքների առկայությունը և դրանց վերացման իրական հնարավորությունը:

Նարկ է նկատվել նաեւ, որ վերոհիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը՝ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների հեղադարձ ուժի և իրավական հետեւանքների առնչությամբ արտահայտել է նաեւ հետեւյալ սկզբունքային իրավական դիրքորոշումը. նման որոշումները հեղադարձ ուժ ունեն և դրանց հիման վրա վերանայման են ենթակա այն դատական ակտերը, որոնք կայացվել են այն անձի առնչությամբ, ում դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը կայացրել է փոփոխյալ որոշումը, ինչպես նաեւ այն անձանց առնչությամբ, ում վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և փոփոխյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական արդարադատության միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին իրավասու մարմնի կողմից հեղադարձ ուժ հաղորդելը թույլատրվում է բացառիկ դեպքերում, եւ փոփոխյալ ակտն ընդունող մարմնի՝ այդ ակտին հեղադարձ ուժ հաղորդելու որոշումը պետք է հիմնվի հասարակության և պետության համար նման որոշման հնարավոր իրավական հետեւանքների բազմակողմանի վերլուծության և գնահատականի վրա:

Այսպես, այս կապակցությամբ Բելգիայի արբիտրաժային դատարանն իր՝ 06.12.2000թ. որոշմամբ ամրագրել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. այն դեպքում, երբ օրենքի դրույթներին հեղադարձ ուժ հաղորդելն առաջացնում է իրավական անորոշություն, եւ միաժամանակ կարող է ազդել արդեն ընթացքի մեջ գտնվող դատական գործերի ելքի վրա, օրենսդիրը կարող է օրենքին հեղադարձ ուժ տալ միայն նման որոշումն արդարացնող բացառիկ հանգամանքներում: Խորվաթիայի Սահմանադրության 89-րդ հոդվածը թույլատրում է օրենքի առանձին դրույթներին (սակայն ոչ ողջ օրենքին) հեղադարձ ուժ տալ միայն բացառիկ արդարացնող պարագաներով: Նկատենք նաեւ,

որ Խորվաթիայի պաշտամենսրի կանոնակարգով սահմանված է օրենքի դրույթներին հե-
 րադարձ ուժ փալու գործընթացը կանոնակարգող հարուկ ընթացակարգ. այդ ընթացա-
 կարգի համաձայն պետք է կազմվի համապատասխան եզրակացություն, որում կնշվեն
 այն բացառիկ հանգամանքները, որոնք արդարացնում են փվյալ օրինադրույթին հե-
 դարձ ուժ հաղորդելը: Իսպանիայի սահմանադրական դատարանն իր՝ 15.11.2000թ.
 որոշման մեջ ամրագրել է համարժեք իրավական դիրքորոշում. այն է՝ հարկային օրենսդ-
 րության շրջանակներում համապատասխան իրավանորմերին հերադարձ ուժ հաղորդե-
 լը կարող է խախտել իրավական որոշակիության սկզբունքը, եթե այդ նորմերը
 նախատեսում են փոփոխություններ, որոնք ողջամտորեն չէին կարող կանխատեսվել:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում ձեւավոր-
 ված վերոհիշյալ իրավական դիրքորոշումներին համարժեք դիրքորոշումներ են արտա-
 հայտված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային
 իրավունքում:

Այսպես, *Մելնիկն ընդդեմ Ուկրաինայի գործով*²³⁹ Եվրոպական դատարանի
 2006թ. մարտի 28-ի վճռի կետ 30-ում նշված է. «Ներադարձ ուժով գործող քաղաքացի-
 ական օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներով արգելված չէ եւ որոշ հանգամանքնե-
 րում դա արդարացված է: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է պաշտպանության
 արդյունավետ միջոցին, խնդրո առարկա պաշտպանության միջոցը պետք է արդեն գո-
 յություն ունենա որոշակիության որոշակի մակարդակով: Այս կապակցությամբ Դատա-
 րանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության օրենսդրության հերադարձ ու-
 ժով կիրառումը կարող է վրանգել իրավական որոշակիության սկզբունքը եւ հակասել
 իրավունքի գերակայության սկզբունքին, եթե այն անձին գրկում է պաշտպանության փվ-
 յալ միջոցից օգտվելու հնարավորությունից»:

Մեկ այլ՝ *Բուլգակովան ընդդեմ Ռուսաստանի գործով*²⁴⁰ Եվրոպական դա-
 տարանի 2007թ. հունվարի 18-ի վճռի կետ 35-ում նշված է. «Թեև սկզբունքորեն օրենս-
 դիրը հնարավորություն ունի քաղաքացիական իրավունքի հարցերի առնչությամբ
 ընդունելու հերադարձ ուժ ունեցող դրույթներ կարգավորելու համար գոյություն ունեցող
 օրենքների հիման վրա ծագող իրավունքները, այնուամենայնիվ, իրավունքի գերակա-
 յության սկզբունքը եւ 6 հոդվածում ամրագրված արդար դատաքնության հասկացու-
 թյունը բացառում են օրենսդրի կողմից ցանկացած միջամտություն արդարադատության
 իրականացմանը՝ միտված պետության մասնակցությամբ վեճի դատական կարգավոր-
 ման վրա ազդեցություն գործելուն»: Նույն վճռի կետ 42-ում Դատարանը շարունակել է.
 «Պետությունը չի կարող կամայականորեն միջամտել դատական վեճերի լուծման գոր-
 ծընթացին: Ուստի, երբ պետությունը դատարանում որեւէ գործով պարտություն կրելուց
 հետո գործողության մեջ է դնում նոր օրենսդրություն, որին հաղորդում է հերադարձ ուժ
 եւ այդ հիմքով հասնում է դատական ակտի վերանայմանը, ապա կարող է ծագել 6-րդ
 հոդվածի հետ կապված խնդիր»:

Ինչպես Եվրոպական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների, այն-
 պես էլ խնդրո առարկայի վերաբերյալ սահմանադրական արդարադատության միջազ-
 գային պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով կարելի է արձանագրել, որ
 անձի իրավական վիճակը բարելավող օրենքին հերադարձ ուժ հաղորդելիս յուրաքանչ-
 յուր կոնկրետ դեպքում օրենսդիրն իր այդ որոշումը պետք է կայացնի հետեւյալ հարցե-
 րի բազմակողմանի գնահատման արդյունքում.

²³⁹ Melnyk v. Ukraine.

²⁴⁰ Bulgakova v. Russia.

• արդյո՞ք տվյալ ակտի հետադարձ ուժով գործողության դեպքում չեն վերանգվի իրավական որոշակիությունն ու իրավական անվտանգությունը,

• ի՞նչ հետեւանքներ կամ ազդեցություն կունենա տվյալ օրենքին հետադարձ ուժ հաղորդելի ընթացքի մեջ գտնվող դատական գործերի վարույթների եւ դրանց ելքի վրա:

Օրենսդիրը հարկապես հետետողական պետք է գտնվի դատական գործընթացների, ընթացքի մեջ գտնվող դատական գործերի ելքի վրա տվյալ օրենքին հետադարձ ուժ հաղորդելու ազդեցությունը գնահատելու հարցում: Այս հանգամանքի կարևորությունն այն է, որ առանձին դեպքերում օրենսդրի նման վարքագիծը կարող է ընկալվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը: Այսպես, «Անիվ» հիմնադրամը, սահմանադրական դատարանում վիճարկելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածի սահմանադրականությունը, ի թիվս այլ փաստարկների, նշում էր նաեւ, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի կողմից միտում է հետապնդել խոչընդոտել վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշման (3-2475 (ՏԴ) գործով 21.12.2006թ.) դրույթների կիրառման միջոցով արդարադատության իրականացմանը: Դիմողն այդ կապակցությամբ հղում էր կատարում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Դիմումում, մասնավորապես, նշված էր. «...օրենսդրի կողմից որեւէ օրենքի ընդունումը արդարադատության իրականացման գործընթացի վրա ազդելու նպատակով անհամարեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների հետ եւ առաջացնում է պետության պատասխանատվություն այդ հոդվածի շրջանակներում»: Սահմանադրական դատարանը գործի քննության ընթացքում մանրամասն ուսումնասիրության եւ վերլուծության ենթարկելով դիմողի մարտնչած Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, իր՝ 2008թ. փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշման 11-րդ կետում արձանագրեց, որ խնդրո առարկա հարցի կարգավորման առնչությամբ օրենքի ընդունումը Եվրոպական դատարանի կողմից որակվել է որպես արդարադատության իրականացման օրենսդրի միջամտություն հետեւյալ հանգամանքներում.

• օրենսդիրը հետադարձ ուժ է տվել իր սահմանած նորմերին՝ դրանք փարածելով այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ արդեն իսկ գործ է հարուցված դատարաններում, եւ դրանք գտնվում են դատարաններում քննության ընթացքում, այդ թվում՝ նաեւ այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ սպորին արյանի դատարանները կայացրել են դատական ակտեր, սակայն, որոնք դեռեւս վերջնական ուժ չեն ստացել (նման կարգավորման արդյունքում դիմումատուների օգտին կայացված վճիռները նոր օրենսդրական կարգավորման հիման վրա բեկանվել էին վճռաբեկ դատարանի կողմից),

• օրենսդրական նման կարգավորումն իր բնույթով եղել է այնպիսին, որ կանխորոշել է դատարանների կողմից վեճի լուծումը, դատաքննության ելքը,

• տվյալ վեճի մի կողմում հանդես է եկել պետությունը, եւ նման օրենսդրական կարգավորման արդյունքում կողմերի միջեւ հավասարությունը խախտվել է հօգուտ պետության, քանի որ վեճի ելքը կանխորոշել է ի շահ այդ կողմի:

Սահմանադրական դատարանը գրավ, որ տվյալ դեպքում օրենսդրի կողմից վիճարկվող նորմի ընդունումը չի կարող որակվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը, քանզի նոր կարգավորումն իր բնույթով այնպիսին չէ, որ կարողանա կանխորոշել արդարադատության իրականացման արդյունքը, վճռել դատական գործի ելքը:

ՏՈՂՎԱԾ 42.1

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությունը կիրառելի են դրանց նկատմամբ:

Սահմանադրության 42.1-րդ հոդվածի լայն մեկնաբանության դեպքում կարելի է դրանից բխեցնել հետևյալ սահմանադրաիրավական բանաձեռումները.

1/ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածն իր կարգավորման փիրությամբ շոշափում է սոցիալական և իրավական պետության սոցիալական հիմքի՝ քաղաքացիական հասարակության կարգավիճակը՝ իրական սահմանադրաիրավական ներուժով օժտելով դրան:

2/ Ընդհանրացնելով քաղաքացիական հասարակության բոլոր կազմակերպություններին մեկ միավորիչ հատկանիշով, այն է՝ իրավաբանական անձի կարգավիճակով, Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածում է նաև իրավաբանական անձանց վրա:

3/ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածում է իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

1/ Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող, բազմակարծություն երաշխավորող, բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում: Ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքն է: Այդ հասարակությունում անհատի ազատությունը երաշխավորված է ե՛ր րնստական, ե՛ր քաղաքական, ե՛ր անձնական առումներով²⁴¹: Այս տեսանկյունից մտքենալով Սահմանադրության 2-րդ գլխի իրավակարգավորման առարկային, կարող ենք փաստել, որ այն իր դրույթների մեծագույն մասն իր վերաբառությանը համապատասխան նվիրել է քաղաքացիական հասարակության հիմնական բջջի՝ մարդ-անհատի կարգավիճակի կարգավորմանը, նրա ազատությունն իրական դարձնելու համար սահմանադրական երաշխիքներ ստեղծելուն:

Սակայն քաղաքացիական հասարակությունը բարդ համակարգ է, իսկ նրա կառուցվածքն արտահայտում է հասարակության (մարդու) կենսագործունեության համապատասխան ոլորտները, իրենից ներկայացնում է որոշակի բաղադրարարների ու հարաբերությունների ամբողջություն: Եթե փորձենք այսպիսի կառուցվածքային մտքեցում դրսևորել, ապա կարելի է առանձնացնել քաղաքացիական հասարակության սոցիալական, հոգեւոր-մշակութային, տեղեկատվական, քաղաքական և այլ համակարգերը: Բոլոր համակարգերի բջիջը մարդն է՝ համակարգի առանձնահատկությունները բխող կարգավիճակով: Միևնույն ժամանակ, մարդն ամեն մի համակարգում հանդես է

²⁴¹ Տեսական գրականության մեջ քաղաքացիական հասարակության հատկանիշներ են համարվում նաև հետևյալները՝ քաղաքացիական հասարակությունն ունի ինքնակառավարման ներուժ, քաղաքացիական հասարակությունն իրավական, ժողովրդավարական հասարակություն է, քաղաքացիական հասարակությանը բնորոշ է բազմազանությունը՝ պլուրալիզմը, և այլն:

գալիս որոշակի կազմակերպական-իրավական ձեւերում, միավորումներում, ինչը եւս երաշխավորված է Սահմանադրությամբ: Այդպիսով քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր համակարգ իրենից ներկայացնում է համակարգի բաղադրարարների /այդ թվում մասնակից սուբյեկտների/ ու նրանց միջև առաջացող հարաբերությունների ամբողջություն: Օրինակ՝ քաղաքական համակարգի բաղադրարարներն են պետությունը, քաղաքական կազմակերպությունները: Սոցիալական համակարգի սուբյեկտներ են մարդկանց օբյեկտիվորեն գոյություն ունեցող ընդհանրությունները՝ ընդհանրապես և մարդկանց առանձին խմբերը, խավերը, ազգերը և այլն, որոնք կարող են հանդես գալ նաև միավորված, այսինքն՝ կազմակերպությունների ձեւով: Նոգետոր-մշակութային համակարգը ներառում է հոգետոր-մշակութային արժեքների շուրջ համապարասխան հասարակությունների ու մարդկանց միջև առաջացող հարաբերությունները: Այս համակարգի հիմքում եւս ընկած է բազմազանությունը, այլընտրանքը, գաղափարական (աշխարհայացքի) և կրոնական (սղծի ու դավանանքի) ազատությունը, հոգետոր-մշակութային, կրթական և դաստիարակչական ոչ պետական կառույցների առկայությունը: Տեղեկատվական համակարգի մասնակից սուբյեկտներ են պետությունից անկախ գործող հասարակական, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ԶԼՄ-ները:

Քաղաքացիական հասարակության անհատական համակարգի հիմունքներն են՝ անհատական բազմակարգութեանությունը (սեփականության ձեւերի բազմազանությունը), անհատական գործունեության ազատությունը, ազատ անհատական մրցակցությունը: Այս հիմունքները նախադրյալ են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, մարդու ազատության անհատական հիմքն են: Սակայն համակարգում կարևոր դեր են խաղում նաև նրա «խաղացողները» կազմակերպական-իրավական ձեւերը: Անհատ ձեռնարկատիրոջից բացի, ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում առևտրային, առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվող կոլեկտիվ կազմավորումները: Կոլեկտիվ ձեռնարկատիրական գործունեության գործընկերների (մասնակիցների) համագործակցության կազմակերպումը հնարավոր է մի շարք կառույցների շրջանակներում, որոնց ընդունված է անվանել ձեռնարկատիրության ձեւ: Ձեռնարկատիրության ձեւն իրավական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է, նախ՝ ձեռնարկատիրության մասնակիցների (գործընկերների) հարաբերություններն ամբողջ ձեռնարկության (կորպորացիայի) հետ, իսկ այնուհետև՝ այդ ձեռնարկության հարաբերություններն այլ կորպորացիաների և ֆիզիկական անձանց հետ:

Այսպիսով, քաղաքացիական հասարակության անհատներն իրենց շահերն ու պահանջներն են ազատորեն արտահայտելու և դրանք իրականացնելու համար միավորումներ կազմելու իրավունք ունեն: Այդ իրավունքը ժողովրդավարության հենասյուներից մեկն է: Ներեւաբար, այն երաշխավորված է օրենքներով, պահպանվում է պետության կողմից:

Քաղաքացիական հասարակության բնութագրական գծերից մեկն էլ բազմազան կազմակերպությունների համակարգի առկայությունն է: Դրանք հնարավորություն են տալիս մարդկանց միավորվելու ըստ իրենց նախասիրությունների և արտահայտելու իրենց զանազան պահանջներն ու շահերը (քաղաքական, անհատական, հոգետոր-մշակութային և այլն): Ընդ որում, հասարակության փոքրեր համակարգերում դրանք ունեն իրենց բնորոշ կազմակերպական-իրավական ձեւերը, վերջիններիս կարգավորիչ օրենսդրական ակտերը:

Բոլոր այդպիսի կազմակերպություններին բնութագրական է մեկ հատկանիշ՝

դրանք ոչ պետական կազմակերպություններ են, իրենցից ներկայացնում են ինքնակառավարվող քաղաքացիական հասարակության բաղադրարարներ եւ հասարակական հարաբերություններում հանդես են գալիս որպես իրավաբանական անձինք: Այդպիսով, քաղաքացիական հասարակության բոլոր համակարգերին բնորոշ տարաբնույթ կազմակերպություններին հատուկ ընդհանրությունը իրավաբանական անձի կարգավիճակն է՝ կազմակերպական իրավական ձևը:

2/ Ընդհանրացնելով քաղաքացիական հասարակության բոլոր կազմակերպություններին մեկ միավորիչ հատկանիշով, այն է՝ իրավաբանական անձի կարգավիճակով, Սահմանադրությունը մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները փարածում է նաեւ իրավաբանական անձանց վրա:

Մեկնաբանվող հոդվածի իմաստի բացահայտման համար կարեւոր նշանակություն ունի այն հարցը, թե ինչ է իրավաբանական անձը եւ ինչ կարգով է այն իրականացնելու մարդուն եւ քաղաքացուն բնորոշ իրավունքներն ու ազատությունները:

Իրավաբանական անձի հասկացությունն ամրագրված է ՏՏ քաղ. օր.-ի 50-րդ հոդվ. 1-ին կետում. «իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ»: Իրավաբանական անձի այս հասկացության մեջ ընդգրկված են չորս հիմնարար հատկանիշներ, որոնցից «յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին բավարար են, որպեսզի կազմակերպությունը ճանաչվի քաղաքացիական իրավունքի սուբյեկտ»²⁴², այսինքն իրավաբանական անձ: Այդ հատկանիշներն են՝ կազմակերպական միասնությունը, գույքային առանձնացվածությունը, ինքնուրույն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը, քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալը:

Հասարակական հարաբերություններին մասնակցող բոլոր իրավաբանական անձանց, ըստ դրանց գործունեության նպատակի, օրենսդիրը բաժանում է երկու տեսակի՝ ա/ առեւտրային իրավաբանական անձանց, բ) ոչ առեւտրային իրավաբանական անձանց: Ոչ առեւտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել՝ հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, սպառողական կոոպերատիվների, օրենքով նախատեսված այլ ձևերով:

Եթե ոչ առեւտրային կազմակերպությունների՝ քաղաքացիական օրենսգրքով թվարկված շրջանակը սպառիչ չէ (օրենքները կարող են նախատեսել այլ ձևեր), սպա առեւտրային իրավաբանական անձանց օրենքով սահմանված շրջանակն սպառիչ է: Առեւտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել բացառապես քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կազմակերպական ձևերով:

Սահմանադրության 42.1-րդ հոդվածով իրավաբանական անձին վերագրված սահմանադրական իրավասուբյեկտության հիմնահարցը պետք է կարգավորվի նրա ընդհանուր քաղաքացիական իրավասուբյեկտության կանոններին համապատասխան: Իրավաբանական անձի իրավասուբյեկտության հասկացությունը ենթադրում է նրա մոտ իրավունքի սուբյեկտի որակների՝ իրավունակության եւ գործունակության առկայությունը:

²⁴² Стів Гражданское право, часть 1, М., Теїс, 1996, էջ 107:

Իրավաբանական անձի իրավունակությունը նրա հնարավորությունն է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել պարտականություններ: Իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխանող քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ (ՏՏ քաղ. օր., հ. 52, կետ 1):

Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից: Իրավաբանական անձն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից (ՏՏ քաղ. օր., հ. 50, կետ 3): Իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը դադարած՝ իրավաբանական անձի լուծարման մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից (ՔՕ, հ. 69, կետ 1):

Այդպիսով՝ Սահմանադրությամբ վերապահված սահմանադրական իրավասուբյեկտությունն իրավաբանական անձի մոտ կարող է ծագել նրա ստեղծման պահից, իսկ այդ իրավունքի իրականացման դադարը համարվում է նրա լուծարման պահը:

Իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան (ՏՏ քաղ. օր., հոդվ. 57, կետ 1):

Իրավաբանական անձի մարմինը նրա մի մասն է, որը կարող է լինել մեկ անձ (միանձնյա մարմին) կամ անձանց խումբ (կոլեգիալ մարմին), որը և ձեռավորում ու ներկայացնում է իրավաբանական անձի շահերն իրավունքի այլ սուբյեկտների հետ հարաբերություններում՝ առանց դրա համար հատուկ լիազորության¹⁴³: Իրավաբանական անձի մարմնի գործողությունները դիտարկվում են որպես բուն իրավաբանական անձի գործողություններ: **Ներառաբար, Սահմանադրության 42.1-րդ հոդվածով իրավաբանական անձին վերապահված իրավունքներն իրավաբանական անձն իրականացնում է իր համապատասխան մարմինների միջոցով:**

ՔՕ 57-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ իրավաբանական անձը կարող է քաղաքացիական իրավունքներ ձեռք բերել և քաղաքացիական պարտականություններ ստանձնել նաև իրավաբանական անձի մասնակիցների և ներկայացուցիչների միջոցով: Ընդ որում, դա հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում: ՔՕ-ն այդպիսի իրավունք տալիս է միայն փոփոխական ընկերակցությունների՝ լիակատար և վստահության վրա հիմնված կորպորացիաների մասնակիցներին: Երկուսում էլ լիակատար ընկերներն իրավունք ունեն գործելու իրավաբանական անձի անունից: Մնացած փոփոխական իրավաբանական անձանց մասնակիցները նման իրավունք չունեն և այդ իմաստով չեն փոքրերվում այլ անձանցից: Եթե, իհարկե, մասնակիցն ըստ սահմանված կարգի չի ընտրվել իրավաբանական անձի մարմնում:

Այլ անձինք, իրավաբանական անձի անունից հանդես գալու իրավունք չունեցող մասնակիցները կարող են հանդես գալ իրավաբանական անձի անունից միայն որպես ներկայացուցիչ: Իրավաբանական անձի ներկայացուցիչն իրավաբանական անձի մարմինը չէ: Ներկայացուցիչները «իրավաբանական անձի հետ գտնվում են մեկ այլ իրավաբար հարաբերության, օրինակ, աշխատանքային կամ հանձնարարության պայմանագրից բխող իրավահարաբերության մեջ: Այսպես՝ հիմնարկության կամ ձեռնարկության իրավախորհրդատու փոփոխական իրավաբանական անձի հետ գտնվում է աշխատանքային իրա-

¹⁴³ Stú Гражданское право, часть 1, М., изд-во Тейс, 1996, էջ 114:

վահարաբերության մեջ: Նա այդ իրավաբանական անձի աշխատողն է եւ իրավունք ունի հանդես գալու որպէս նրա ներկայացուցիչը: Օրինակ, իրավախորհրդատուն հանդես է գալիս դատարանում որպէս իրավաբանական անձի ներկայացուցիչ եւ պաշտպանում է նրա շահերը: Իրավախորհրդատուն պէտք է ունենա լիազորագիր: Մինչդեռ իրավաբանական անձի մարմինը գործում է առանց լիազորագրի: Օրինակ, եթե դատարան ներկայանա փնտրելու եւ ցույց տա փնտրելի իր վկայականը՝ դա բավական է, որպէսզի նա մասնակցի գործին: Եթե իրավաբանական անձը չունի իրավախորհրդատու, կարող է պայմանագիր կնքել փաստաբանի հետ եւ հանձնարարել պաշտպանելու իր շահերը: Սա նույնպէս ներկայացուցչական է, որովհետեւ փաստաբանը պարտավորվում է պաշտպանել փոխադրված կազմակերպության շահերը, իսկ կազմակերպությունը նրան լիազորագիր է փոխադրող անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելու համար: Բայց այս ներկայացուցչության հիմքում ընկած է ոչ թե աշխատանքային, այլ հանձնարարության պայմանագիրը»²⁴⁴: **Ներքաբար, Սահմանադրության 42.1-րդ հոդվածով իրավաբանական անձին վերապահված իրավունքները իրավաբանական անձանց որոշակի տեսակներ կարող են իրականացնել իրենց մասնակիցների միջոցով, իսկ բոլոր տեսակի իրավաբանական անձինք՝ նաեւ ներկայացուցիչների միջոցով:**

3/ Սահմանադրությունը մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները պահանջում է իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ: Սահմանադրության այս ձեւակերպման իրավական հետեւանքները պարզելու համար անհրաժեշտ է հերթով կանգ առնել Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված առանձին իրավունքների վրա: Ակնհայտ է, որ իրավունքների ու ազատությունների մի մասը միանշանակ չի կարող վերագրվել իրավաբանական անձանց: Իրենց էությանը իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի են Սահմանադրության 2-րդ գլխի հետեւյալ հոդվածներում կամ դրանց մասերում ամրագրված իրավունքները եւ պարտականությունները՝ 14, 14.1, 16 հոդվ. 4-րդ եւ 6-րդ մասեր, 18 հոդվ. /բացառությամբ 3-րդ մասի/, 19 հոդվ., 20 հոդվ. 1-ին եւ 5-րդ մասեր, 22 հոդվ. 2-րդ եւ 6-րդ մասեր, 23 հոդվ., 24 հոդվ., 27 հոդվ., 27.1 հոդվ., 31 հոդվ., 31.1 հոդվ., 33.1 հոդվ., 33.2 հոդվ., 40 հոդվ., 42 հոդվ., 43 հոդվ., 44-րդ հոդվ.:

Ճիշտ է, Սահմանադրությունն ուղղակիորեն չի նշում, սակայն սահմանադրական նորմերի իմաստից բխում է, որ իրավաբանական անձինք համարվում են Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված սահմանադրական պարտականությունների կրող սուբյեկտներ /հոդվ. հոդվ. 45, 46, 47/, ինչպէս նաեւ Սահմանադրությունից բխող այլ պարտականությունների կրող սուբյեկտ: Օրինակ՝ 32-րդ հոդվածում ամրագրված ֆիզիկական անձի իրավունքներից յուրաքանչյուրին թոթակցում են ոչ միայն պետության, այլ նաեւ իրավաբանական անձի պարտականությունները:

²⁴⁴ Տե՛ս **Տ. Կ. Քարսեղյան**, Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, Երևան, 1998, էջեր 36-37:

ՆՈՂՎԱԾ 43

1. Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով սահմանափակված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պարզի եւ բարի համբավի պաշտպանության համար:

2. Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նախարանի Նախապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

1. Սահմանադրության 43-րդ հոդվածի մեկնաբանման համար կարեւոր նշանակություն ունեն երկու հանգամանքներ. ա/ հոդվածի իմաստի ճիշտ մեկնաբանումը մեծապես կախված է «սահմանափակում» հասկացության իրավական բովանդակության բացահայտումից, բ/ մեկնաբանումը պետք է կատարել Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 44-րդ հոդվածի հետ համակարգային կապերից ելնելով:

Տեսական գրականության մեջ չկա միասնական մտքեցում «իրավունքների սահմանափակում» հասկացության բովանդակության վերաբերյալ: Նեղինակների մի մասն այդ հասկացության հետ մեկտեղ օգտագործում է «իրավունքների սահմաններ» ձեւակերպումը²⁴⁵: Որպեսզի կարողանանք բացել «իրավունքների սահմանափակում» հասկացության բովանդակությունը, փորձենք դիմել միջազգային փաստաթղթերի օգնությամբ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը եւ մի շարք այլ փաստաթղթեր օգտագործում են «սահմանափակում» եզրույթը: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն օգտագործում է «պետու-

²⁴⁵ «Իրավունքների սահմաններ» հասկացությունը վերաբերում է մարդու իրավունքների իրավական բովանդակությանը եւ որսնով պայմանավորված՝ մարդու իրավունքների իրականացման սահմաններին: Մարդու իրավունքների գերակայությունը չի նշանակում, որ մարդու իրավունքները բացարձակ եւ անսահման են: Մարդու իրավունքներն անհատի ազատության չափն են: Սակայն ամեն մեկի ազատությունը պետք է ներդաշնակորեն զուգադրվի այլոց ազատության հետ: Մարդու իրավունքները լինելով հնարավոր վարքագծի տարբերակներ՝ ունեն իրականացման սահմաններ: Առանց այդ սահմանի իրավունքը կվերածվի կամայականության, իսկ հասարակական կյանքը՝ «բոլորի պատերազմ ընդդեմ բոլորի»: Մարդու իրավունքների իրականացման սահմանները որոշված են եռակիրեն: **Սահման առաջին.** այս սահմանի ոսկե կանոնը, ելնելով Ավետարանից, ձեւակերպել է ուշ միջնադարյան բնական իրավունքի տեսությունը. «Մի արա այն, ինչը չես ուզում, որ քո նկատմամբ անեն ուրիշները»: Մարդու իրավունքների իրականացման այդ ընդհանուր սահմանի սկզբունքը ՀՀ Սահմանադրությունը ամրագրել է հետեւյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը»: **Սահման երկրորդ.** մարդու յուրաքանչյուր իրավունքի իրավական բովանդակության շրջանակները սահմանված են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Ուստի մարդու ամեն մի իրավունք ունի նաեւ իրականացման կոնկրետ սահմաններ: **Սահման երրորդ.** արգելվում է իրավունքների չարաշահումը: Իրավունքի չարաշահումն իրավունքի օգտագործումն է՝ դրա նշանակությանը բացահայտ հակասելով, այդ իրավունքն ի չար գործադրելով:

թյունների նահանջն իրենց պարտավորություններից» եզրույթը: Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան, Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան օգտագործում են «սահմանափակում» եւ «նահանջն իրենց պարտավորություններից» եզրույթները՝ դիտարկելով դրանք հավասարաբեք հասկացություններ: Այսպիսով, միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակությունից երեւում է, որ «իրավունքների սահմանափակում» հասկացության իրավական բովանդակությունը դիտարկված է նեղ իմաստով, այլ ոչ թե մարդու իրավունքների ոչ բացարձակ եւ ոչ անսահման իմաստով: **Սահմանափակումը Սահմանադրությամբ եւ օրենքով արդեն ամրագրված եւ սահմանադրված կոնկրետ իրավունքի բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարեւոր շահերից ելնելով:** Ձեւական իրավական առումով մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց իրականացման իրավական անհնարիությունը կամ հավասարապես օրենքով սահմանված դրանց ծավալի կրճատումը: Իրավունքների եւ ազատությունների սահմանափակումը իրավունքների եւ ազատությունների ծավալի կրճատման (նվազեցման) իրականացումն է օրենսդրությամբ սահմանված հիմքերով եւ կարգով:

Մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները կարող են իրականացվել հետևյալ եղանակներով՝

ա) արգելքներ, որոնք կարող են լինել հարաբերական (իրավունքի կամ ազատության իրականացման որոշակի փարբերակի արգելում, այսինքն՝ վարքագծի սահմանների որոշում) եւ բացարձակ (իրավունքի կամ ազատության ամբողջ ծավալի իրականացման արգելում, բացարձակ արգելք):

բ) կասեցում՝ մարդու իրավունքների եւ ազատությունների գործողության ժամանակավոր դադար,

գ) իրավասու պետական մարմինների ներխուժում (ակտիվ գործողությունների միջոցով) մարդու իրավունքների եւ ազատությունների ոլորտ.

դ) պարտականություն.

ե) պատասխանատվություն:

Սահմանադրության 43-րդ հոդվածի իրավական բովանդակությունը 44-րդ հոդվածի հետ համակարգային կապերի տեսանկյունից դիտարկումը հնարավորություն է տալիս արտաբերել հետևյալ հիմնադրույթները: Նասարակության զարգացումն անխուսափելիորեն ծնում է իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից հրաժարվել, նահանջել իր ստանձնած պարտավորություններից, այսինքն՝ սահմանափակել մարդու իրավունքները: Խնդիրը, սակայն, հանգում է նրան, թե ինչ հիմքերով, ինչ ժամկետով եւ ինչ շրջանակներում կարելի է եւ պետք է դա արվի: Այս ոլորտում կամայակալությունը եւ չարաշահումներն անթույլատրելի են: Որպեսզի պետությունը չդիմի կամայակալության մարդու իրավունքների սահմանափակման հարցում՝ Սահմանադրությունն ամրագրել է որոշակի իրավական չափանիշներ.

1) մարդու իրավունքներն ու ազատությունները բաժանված են **սահմանափակվող եւ չսահմանափակվող** իրավունքների ու ազատությունների: Այսինքն կան իրավունքներ եւ ազատություններ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որեւէ օրենսդրական սահմանափակման ոչ մի դեպքում: Այդպիսիք են Սահմանադրության 43-րդ հոդվածում չթվարկված իրավունքները եւ ազատությունները, որոնց եւ՝ սահմանները, եւ՝ սահմանափակումը սահմանված են Սահմանադրությամբ: Դրանց օրենքով սահմանափակումն

արգելվում է, եթե, իհարկե, Սահմանադրությունն ինքը չի փալիս այդ հնարավորությունը: Օրինակ՝ Սահմանադրության 26-րդ հոդվածում ամրագրված իրավունքը թվարկված չէ ըստ 43-րդ հոդվածի սահմանափակման ենթակա իրավունքների շարքում: Սակայն բուն 26-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այդ իրավունքի սահմանափակման ինքնուրույն չափանիշները՝ սահմանափակման ձեւը /օրենքով/ և հիմքերը:

2) Սահմանափակման ենթակա իրավունքների համար Սահմանադրությունը նախատեսում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման երկու եղանակ. ա/ Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակվող իրավունքներ, բ/ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվող իրավունքներ:

3) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՆՆ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Այսպիսով, Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակվող իրավունքներին և ազատություններին, այն է՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքներին և ազատություններին: Այդ հոդվածի բովանդակությունը կազմող հիմնադրույթներն են.

1/ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով: Սահմանափակման ձեւը օրենքն է, որը պետք է հստակ սահմանի այդ սահմանափակումների իրավական ձեւակերպումը և ապահովի սահմանափակման անհրաժեշտության պատշաճ հիմնավորումը:

2/ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարզի և բարի համբավի պաշտպանության համար: Սահմանափակման հիմքերը թվարկված անհրաժեշտություններն են: Սրանք այն դեպքերն են, երբ իրավակարգին սպառնացող վտանգները հնարավոր չէ չեզոքացնել այլ կերպ, քան այդ իրավունքների ու ազատությունների սահմանափակմամբ:

Բնական ազատությունը համարվում է ի սկզբանե բացարձակ երեւոյթ, որով մարդն օժտված է ծննդյան պահից, և այն ավարտվում է մահվամբ: Միեւնույն ժամանակ այն ձեռք է բերում սահմանափակ բնույթ այն պարճառով, որ հասարակության մեջ անհարմար և ապրում է իրեն նման էակների միջավայրում, որոնց շահերն ու պահանջումները լինելով միանգամայն փարբեր՝ երբեմն նաեւ մրտում են խոր հակասությունների մեջ: Նման դեպքերում եթե յուրաքանչյուրը փորձի իրացնել միայն իր բացարձակ ազատությունը, ապա անհնարին կլինի հասնել համասոցիալական նպատակների իրագործմանը, առանց որոնց հասարակությունը, բնականաբար՝ նաեւ մարդը, գոյարեւել չեն կարող: Ներուաբար՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ինչպես և իրականացումը, նույնպես բնական վիճակ է:

Մարդու իրավունքներն ու ազատությունները նրա սուբյեկտիվ, այսինքն՝ անհատական իրավունքներն ու ազատություններն են: Սակայն դրանք իրականացվում են հասարակության մեջ, առավելապես համարել կոլեկտիվ հիմունքներով, որը պահանջում

Է մարդկանց համագործակցություն: Այդ իրավունքների իրականացումն ուղեկցվում է մարդու պատասխանատվությամբ, իրավունքների հնարավոր սահմանափակումներով, որոնք որոշվում են ինչպես ազգայության չափով ու սահմաններով, այնպես էլ իրավունքի կողմից սահմանված մարդասիրության, համերաշխության ու բարոյականության սկզբունքներով:

Անհատական ազգայության ցանկացած սահմանադրական սահմանափակում ենթադրում է, որ այն պայմանավորված է պաշտպանության ենթակա հասարակական արժեքների բախման հնարավորությամբ: Ուստիև նման սահմանափակումը ճանաչվում է իրավունքի կողմից: Այս սկզբունքը համապարփակ է: Սահմանափակումն ուղղված է բախվող սահմանադրաիրավական արժեքների միջև համապատասխան ներդաշնակության ապահովմանը:

Իրավունքների և ազգայությունների սահմանափակումներին վերաբերող դրույթն ամենից առաջ ձեւակերպված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29-րդ հոդվածում, ուր ասված է, որ իր իրավունքներն ու ազգայություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթարկվի այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով նախատեսված են բացառապես այլոց իրավունքների և ազգայությունների ապահովման ու պարզաճանաչման նպատակով, ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգն ու ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով:

Իրավունքների և ազգայությունների սահմանափակում նախատեսված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, որը հռչակում է՝ անկախ պետական սահմաններից, բնավոր, գրավոր կամ մամուլի միջոցով մարդու կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը: Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերոհիշյալ իրավունքից օգրվելն առաջացնում է հարուկ պարտականություններ և պատասխանատվություն: Ներեաբար՝ այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ՝

ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման համար:

Բացի դրանից, դաշնագրով արգելվում է պարերազմի ցանկացած քարոզչություն, ազգային, ռասայական, կրոնական արելություն պարունակող որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խորականության, թշնամանքի կամ բռնության սադրանք:

Մարդու իրավունքների և ազգայությունների սահմանափակում նախատեսված է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով՝ միայն այնքանով, որքանով դա համարել էի է նշված իրավունքների բնույթի հետ և բացառապես նպատակ է հետապնդում ժողովրդավարական հասարակության մեջ ապահովել ընդհանուր բարօրությունը (հոդվ. 4):

Մարդու իրավունքների և հիմնարար ազգայությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը հռչակում է, որ իրավունքներն ու ազգայությունները ենթակա են սահմանափակումների միայն օրենքով նախատեսված դեպքում և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազգայությունները պաշտպանելու նպատակով:

Մարդու իրավունքների ու ազգայությունների սահմանափակումների վերաբերյալ

նշված միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներն ուղղակիորեն արտացոլվում են պետությունների ազգային օրենսդրություններում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 55-րդ հոդվածում գրված է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դաշնային օրենքով՝ միայն այն չափով, որքանով որ այն անհրաժեշտ է սահմանադրական կարգի, բարոյականության, այլ անձանց առողջության, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, պետության անվտանգության և երկրի պաշտպանության ապահովման նպատակով: Կամ՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 43-րդ հոդվածը հռչակում է. «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ, հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Ի փարբերություն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, որը հստակ չի սահմանում սահմանափակման ենթակա կոնկրետ իրավունքները՝ դրանք թողնելով օրենսդրի հայեցողությանը, մեր հանրապետության Սահմանադրությունն ուղղակի մարմնացույց է անում, թե հատկապես որ իրավունքներն ու ազատություններն են ենթակա սահմանափակման, և սպառիչ կերպով թվարկում է այն բոլոր հիմքերը, որոնց առկայությամբ կարող են սահմանափակվել դրանք:

Ինչպես մարդու իրավունքների վերաբերյալ համապարփակ և փարածաշրջանային փաստաթղթերը, այնպես էլ մեր երկրի Սահմանադրությունն սպառիչ կերպով միայն ամրագրում են իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը: Սակայն, մեր կարծիքով, Սահմանադրությունը ոչ միայն պետք է ամրագրի իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը, այլև՝ դրանց չափանիշներն ու պահանջները: Այս առումով ուսանելի են Շվեյցարիայի և ԳԴՆ-ի գործող սահմանադրությունները: Այսպես, Շվեյցարիայի Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն՝

1) Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն իրականացվում են օրինական հիմքով: Էական սահմանափակումները պետք է նախատեսված լինեն հենց օրենքում: Բացառություն են կազմում լուրջ, անմիջական վտանգ պարունակող դեպքերը, որոնք չեն կարող կանխվել այլ միջոցներով:

2) Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է արդարացված լինեն հասարակական շահերով կամ երրորդ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ:

3) Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին:

4) Հիմնական իրավունքների և ազատությունների առանցքային բովանդակությունը չի կարող փոփոխվել:

Իսկ ԳԴՆ Հիմնական օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ եթե հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել օրենքով կամ օրենքի հիման վրա, ապա այդ օրենքը պետք է ունենա ընդհանուր բնույթ, այլ ոչ թե գործի միայն փվյալ կոնկրետ դեպքում: Բացի դրանից, օրենքում պետք է ներկայացվի հիմնական իրավունքը կամ ազատությունը՝ հոդվածի վկայակոչմամբ:

Վերոհիշյալ և մի շարք այլ հանգամանքներից ելնելով՝ կարելի է եզրահանգել, որ.

1) մարդու իրավունքների եւ ազատությունների ինչպես սահմանման, այնպես էլ սահմանափակման առումով պետությունների ազգային օրենսդրությունը պետք է համապարասխանի միջազգային իրավունքի նորմերին.

2) չկան բացարձակ իրավունքներ եւ ազատություններ. դրանք կարող են սահմանափակվել միայն օրենքի հիման վրա, միջազգային իրավունքի պահանջներին եւ չափանիշներին համապարասխան, պետությունների սահմանադրություններով նախատեսված շրջանակներում եւ դրանցով հստակ սահմանված նպատակներին համապարասխան:

Տիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակմանն ուղղված միջոցառումները պետք է անհրաժեշտ լինեն օրինական նպատակին հասնելու համար: Եթե այդ նպատակին հասնելու ճանապարհին կան մի քանի միջոցներ, ապա պետք է ընտրել դրանցից այնպիսին, որից կարելի է ակնկալել նվազագույն ազդեցություն պաշտպանվող սահմանադրական բարիքների վրա: Որպես օրինակ կարելի է բերել «*Բանտարկյալի նամակագրության մասին գործը*» (Շվեյցարիայի Գերագույն դատարանի 21 սեպտեմբերի 1981 թ. որոշում): Դիմողը գտնվում էր նախնական կալանքի մեկուսարանում: Նրա նամակագրությունը վերահսկվում էր քննիչի կողմից: Ձերբակալվածը բողոքում էր, որ քննիչի կողմից ստուգվելուց հետո իրեն հասցեագրված նամակն առաքվում էր չկնքված, բաց ծրարով, ինչը հնարավորություն էր տալիս առաքումը կազմակերպող ծառայողներին կարդալու իրեն հասցեագրված նամակները: Դատարանը ճանաչեց, որ ձերբակալվածի նամակագրության վերահսկողությունը անհրաժեշտ էր, որպեսզի քննչական մարմինը հասնի ձերբակալության հետ կապված նպատակի իրագործմանը: Սակայն այս դեպքում որեւէ անհրաժեշտություն չկար հետազայում նամակներն ուղարկել բաց, չկնքված վիճակում, որի արդյունքում լրջորեն կվերանգվեր ձերբակալվածի՝ Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը.

3) հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին, որպեսզի չտրանսհարվեն սահմանադրական արժեքները: Դրա օրինակ կարող է ծառայել «Պահեստագործի սպայի մասին գործը» (Գրիգորիադեսն ընդդեմ Նունաստանի, ՄԻԵԴ 1997թ. նոյեմբերի 25-ի վճիռ): Դիմողը հանդիսանում էր հունական բանակի պահեստագործի լեյտենանտ: Նրա բողոքները կապված զինծառայողների հանդեպ վարվեցողության հետ, հանգեցրին կարգապահական պարասխանափոխության, որի արդյունքում երկարաձգվեց նրա ծառայության ժամկետը: Նա զինվորական ծառայության արձակուրդից հետո չվերադարձավ՝ դրա փոխարեն հրամանատարին ուղարկելով նամակ: Այնպեղ նա քննադատում էր բանակում սրեղծված իրավիճակը եւ գրում, որ զինվորական ծառայությունը մարդուն եւ հասարակությանը թշնամի հաստատություն է: «Ես բացարձակապես համոզված եմ, որ զինվորական ծառայությունը համարվում է հասարակության մեջ հանցավորության եւ ազդեցիկության պարճառ, քանի որ այնպեղ իշխում է բռնության ոգին, որը ճնշում է ցանկացած բարոյական եւ հոգեբանական հակազդեցության փորձ: Բանակը մնում է որպես հանցավոր եւ անհաբեկչական կազմակերպություն»: Զինվորական դատարանը նրան դատապարտեց երեք ամսվա ազատազրկման զինված ուժերին վիրավորելու համար (Նունաստանի ռազմական քրեական դատավարության օրենսգիրք, հոդվ. 74): Դիմողը բողոք ներկայացրեց ՄԻԵԴ՝ գրանելով, որ խախտվել է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը, որը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանմամբ՝ «10-րդ հոդվածը կանգ չի առնում զորանոցի դռների առջև»: Պարիժն ունեցել է բավականաչափ օրինական հիմք եւ օրինական նպատակ է հետապնդել ապա-

հովելու ազգային անվտանգությունը, ինչի համար կարելուք նախադրյալ է զինված ուժերում կարգուկանոնը: Այն դեպքերում, երբ կարգապահությունն իրականում վերանված է, ապա պետությունն իրավասու է սահմանափակել արտահայտվելու ազատությունը: Սակայն նման սահմանափակումները չպետք է բացառեն զինված ուժերի ցանկացած քննադատություն: Քանի որ իր սուր և ծայրահեղ անզուսպ նկատառումները դիմողն արել էր բանակում փրորող իրավիճակի ընդհանուր քննադատության շրջանակներում, եւ, բացի դրանից, ուղարկել էր միայն իր հրամանատարին, Եվրոպական դատարանը դա չդիտարկեց որպես զինվորական կարգապահության դեմ ուղղված էական սպառնալիք: Ուստի եւ որոշեց, որ խախտվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը.

4) եթե Սահմանադրության համապատասխան որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակվում է, ապա այն պետք է սահմանափակվի **բացառապես օրենքով**, որը պետք է ունենա ընդհանուր բնույթ, այլ ոչ թե վերաբերի կոնկրետ դեպքի: Ընդ որում, օրենքում պետք է նշվի, թե որ իրավունքն է սահմանափակվում՝ ժամկետով կամ անժամկետ, հղում կատարվի Սահմանադրության համապատասխան հոդվածին: Նիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս պետք է հաշվի առնվի դրանց էությունն ու իմաստը (ինչպես, օրինակ, Սլովակիայի 1992թ. Սահմանադրության 31-րդ հոդվածում): Այս սկզբունքն իր անմիջական ամրագրումն է ստացել հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածում: Սակայն օրենքով սահմանված նպատակների շրջանակներում իշխանության կրողը փյույակ պետական ինստիտուտում կարող է ունենալ իրավասություն հիմնական իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներ մտցնելու առումով: Այս դեպքում նա կարող է հարցը լուծել առանց օրենքի նորմի մանրամասն նկարագրության վրա հենվելու: Սակայն յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է սահմանել անհրաժեշտության հարակ չափը և այդ սահմանափակումների համաչափությունը: Օրինակ, Շվեյցարիայի դաշնային դատարանը ճանաչեց, որ զինվորների կարճ սանրվածքի հետ կապված հրամանը պայմանավորված չէ բարձր պաշտպանունակության հասնելու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, անվտանգության տեսանկյունից, օրինակ, հրեպանային արկերը լիցքավորելիս կարող է զինվորների մագերին ցանցեր կրելու հրաման արձակվել:

Ինչպես վերը նշվեց, Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ ուղղակի նշվում են սահմանափակման ենթակա իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, Սահմանադրության 43-րդ հոդվածի շարադրանքից հետևում է, որ դրանում նշված հիմքերի առկայության դեպքում կարող են սահմանափակվել մասնավոր կյանքի անձեռնմխելիության, տեղեկատվության ազատության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության (հոդվ. 23), բնակարանի անձեռնմխելիության (հոդվ. 24), ազատ տեղաշարժվելու (հոդվ. 25), խոսքի ազատության, կարծիքը պնդելու (հոդվ. 27), միավորումների մեջ անդամագրվելու (հոդվ. 28), խաղաղ, առանց զենքի ժողովներ և հավաքներ անցկացնելու (հոդվ. 29), անմիջապես կամ ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու (հոդվ. 30), քաղաքացիություն ձեռք բերելու (հոդվ. 30.1) և գործադուլի (հոդվ. 32, 3-րդ մաս) իրավունքները: Բացի նշված իրավունքներից, Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը նախատեսում է նաև մարդու և քաղաքացու առանձին իրավունքների և ազատությունների՝ օրենքով սահմանված կարգով, ժամանակավոր սահմանափակման հնարավորություն, որը կարող է պայմանավորված լինել ռազմական կամ արտակարգ դրության և այլ արտակարգ վիճակների առկայությամբ (հոդվ. 44): Դրա հետ մեկտեղ, սահմանափակման ենթակա չեն Սահմանադրու-

թյան մի շարք հոդվածներում ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Դրանք են՝ կյանքի իրավունքը (հոդվ. 15), խոշորանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պարտից զերծ մնալու եւ անձի արժանապատվության պահպանության իրավունքը (հոդվ. 17), իրավունքների եւ ազատությունների օրենքով չարգելված միջոցներով պաշտպանության, մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու, ներպետական պաշտպանության միջոցներն սպառվելու դեպքում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու (հոդվ. 18), դատական պաշտպանության (հոդվ. 19), իրավաբանական օգնություն ստանալու եւ պաշտպան ունենալու (հոդվ. 20), ազատության (հոդվ. 42) իրավունքները եւ մի շարք դատավարական երաշխիքներ (անմեղության կանխավարկածի, կայացված դատավճռի վերանայման, ներման կամ նշանակված պարիժը մեղմացնելու խնդրանքի, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չբալու իրավունքները, հոդվածներ 21, 22): Այդ իրավունքները որեւէ կերպ չեն կարող խանգարել պետական իշխանության իրականացմանը՝ ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում:

ՆՏ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է իրավունքների սահմանափակումների հիմնախնդրին: Մասնավորապես, 4 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՆ-649 որոշման մեջ (կետ X) արձանագրել է, որ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՆՏ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթների վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաչափ սահմանափակման, այլ սահմանադրորեն սահմանափակման ոչ ենթակա (խոսքը չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: 2006թ. դեկտեմբերի 22-ի ՍԴՆ-669 որոշմամբ (կետ 6) սահմանադրական դատարանը գրել է, որ «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների շրջանակներում օրենսդրի կողմից ոչ միայն հեղեղողականություն չի դրսևորվել սահմանադրական դրույթների օրենսդրական երաշխավորումն ապահովելու ուղղությամբ, այլև օրենքում տեղ են գրել նորմեր, որոնք շեղվում են սահմանադրական կարգավորման փրամաբանությունից: Գործող օրենքով առավել հեշտացվել են կուսակցությունների գործունեության արգելման ընթացակարգերը՝ շրջանցելով սահմանադրական դատարանը: Փաստորեն, Սահմանադրությամբ նախատեսված՝ միավորումների (կուսակցությունների) ազատության սահմանափակումները «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքում դառնում են լուծարման ճանապարհով այդ ազատության արգելափակման միջոց: 2007թ. հունվարի 16-ի ՍԴՆ-673 որոշման մեջ (մաս 9) սահմանադրական դատարանն արձանագրել, որ «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՆՏ օրենքի 12 հոդվածի վիճարկվող նորմի եւ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 14, 15 հոդվածների, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15, 16 հոդվածների նորմերի համադրումից ակնհայտ է անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրարամերժ երաշխավորումը, մասնավորապես՝ պետական մարմնի իրավական ակտի բողոքարկման իրավունքի իրացման մասով: Այսպիսի դեպքերում, իրավական համակարգում առկա միմյանց հակասող նորմերը ոչ միայն չեն ապահովում հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորում, այլև սահմանափակում են ՆՏ Սահմանադրությամբ (18, 19 հոդվածներ) երաշխավորված անձի իրավունքների պաշտպանության իրավական հնարավորությունները, այդ թվում՝ դատական կարգով, արդյունքում չեն բխում ՆՏ միջազգային պարտավորություններից, հեղեղաբարձ՝ նաև ՆՏ Սահմանադրության 43 հոդվածի (2-րդ մաս) պահանջներից: 2007թ. փետրվարի 7-ի ՍԴՆ-677 որոշման մեջ (մաս 5) դատարանն

ընդգծել է, որ Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

Այդ հիմնախնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև 2008թ. ապրիլի 15-ի ՍԴՈ-751 (մաս 9) և 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 (մաս 16) որոշումներում: Իսկ 2008թ. հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշման մեջ (մաս 6) սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ-ինստիտուտ-իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթին իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա փեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ փարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարփադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական: Նման հակաիրավական գործողությունների թվին են դասվում նաև Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանադրական ինստիտուտին վերապահված պետաիշխանական գործառույթին և դրա իրականացման միջոցներին բռնությամբ փրհանալը, իրեն ենթարկելը կամ այլ կերպ՝ զավթելը: ՏՏ Սահմանադրության 47 հոդվածը միանշանակ պահանջ է առաջադրում, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը, ինչպես նաև նույն հոդվածն արգելում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի փապալելու, ազգային, ռասայական, կրոնական արելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս համարներստում սահմանադրական կարգը բռնի փապալելու նպատակով իրավունքների և ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ **իրավունքների չարաշահման արգելք** է նախատեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախատեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն և այլն), անիրագործելի դարձնելուն: Իրավունքների չարաշահման արգելքը նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17 հոդվածով: Պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու և երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

2. Սահմանադրական այս դրույթն ամրագրվեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ նախապես փեղի ունեցած երկարատև քննարկումների շնորհիվ: Բանն այն է, որ ՏՏ Սահմանադրությունը ոչ թե հստակ մտրեցում է դրսեւորում յուրաքանչյուր կոնկրետ

իրավունքի սահմանափակման թուլաբերելի սահմանների հարցին, այլ խնդիրը կանոնա-կարգում է ընդհանրացված՝ Գրանցարկով սահմանափակումների ընդհանուր հիմքերը (հոդվ. 43) և արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում ժամանակավոր սահմանափակման առանձնահատկությունները (հոդվ. 44): Որպեսզի իրավունքների սահմանափակման, այսպես կոչված, թաքնված վրանգներ չբովանդակի Սահմանադրությունը, ամրագրվեց րվյալ նորմը:

Միջազգային իրավունքում սահմանված են նվազագույն սահմաններ մարդու իրավունքների սահմանափակումների համար: Այս տեսանկյունից հիմնական ունիվերսալ փաստաթուղթը, որին հարկ ենք համարում հղում կատարել, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրին է: Նամաձայն դաշնագրի հոդված 4-ի՝ պաշտոնապես հայտարարված հանրային արտակարգ դրության պայմաններում, որը վրանգում է ազգի գոյությունը, մասնակից պետությունները կարող են շեղվել դաշնագրով սրանձնամ պարտավորություններից, սակայն խստորեն պահպանելով այն սահմանները, որոնք անհրաժեշտ են և բխում են կոնրետ իրավիճակից: Նման շեղումները չպետք է հակասեն պետության այլ միջազգային պարտավորություններին և չպետք է ներառեն միայն ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման վրա հիմնված խտրականություն: Սակայն հոդված 4-ը միեւնույն ժամանակ ամրագրում է այն դրույթները, որոնցից պետությունները չեն կարող շեղվել: Դրանք են՝ **կյանքի իրավունքը, խոշորագումներից, անմարդկային և արժանապարտությունը նվաստացնող վերաբերմունքից և պարժից ազատ լինելու իրավունքը, ստրկությունից ազատ լինելու իրավունքը, պայմանագիրը կատարելու անկարողության համար ազատությունից զրկելու արգելքը, վարժարացնող քրեական իրավունքի հերադարձ կիրառման արգելքը, մութի, խղճի և կրոնի ազատությունը, ցանկացած վայրում իրավունքի առջև որպես անձ ճանաչվելու իրավունքը:** Դաշնագրի կամընտիր (Փակուլտատիվ) արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն՝ չի թույլատրվում վերապահում կատարել նաև **մահապատիժն արգելող դրույթի վերաբերյալ:** Նման կերպ այս իրավունքների ընդգծումը խոսում է դրանց չափազանց կարեւորության մասին: Սակայն կան իրավունքներ, որոնց վերաբերյալ վերապահում կատարելու անթույլատրելիությունը պարճառաբանված է լոկ նրանով, որ դրանց սահմանափակումը որեւէ կերպ կապված չէ արտակարգ իրավիճակն արդյունավետ վերահսկելու հետ: Այնուամենայնիվ, սահմանափակումների հիմքում ընկած է այն պարճառաբանությունը, որ հակառակ պարագայում կխախտվի իրավունքի գերակայությունը:

Կարեւոր է ընդգծել, որ այս իրավունքների թվարկումը, որոնց վերաբերյալ վերապահում չի թույլատրվում, պարճառաբանվում է նաև այս կամ այն դրույթի իմպերատիվ (jus cogens) լինելու հանգամանքով: Այսինքն՝ դաշնագրի որոշ դրույթների իմպերատիվությունն անուղղակիորեն հիմնավորվում է դրանց վերաբերյալ վերապահում կատարելու անթույլատրելիության հանգամանքով: Եթե շարունակենք այս տրամաբանությունը, ապա կարող ենք եզրակացնել, որ պետությունները պարտավոր են չշեղվել միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերով սրանձնամ իրենց պարտավորություններից, այլ կերպ ասած՝ պետությունները չեն կարող սահմանափակել միջազգային իրավունքի իմպերատիվ (jus cogens) նորմերից բխող իրավունքները:

Սակայն նման վերապահում կատարելու դեպքում յուրաքանչյուր անդամ պետությունն անմիջապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի միջոցով պետք է այդ մասին տեղյակ պահի այլ անդամ պետություններին այն իրավունքների մասին, որոնց վերաբերյալ վե-

րապահում է կատարում: Պետությունը պարտավորվում է նաեւ նույն կերպ ծանուցել անդամ պետություններին նման վերապահման վերացման մասին: Առավել մանրամասն այս դրույթի մեկնաբանությունները տրված են դաշնագրի թիվ 29 Գլխավոր մեկնաբանությունում: Մանրամասն նկարագրվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են հանրային արտակարգ իրավիճակին: Ըստ Գլխավոր մեկնաբանության՝ ոչ բոլոր արտակարգ իրավիճակներն են, որ կարող են պետություններին հնարավորություն տալ վերապահումներ կատարել իրենց ստանձնած միջազգային պարտավորությունների վերաբերյալ: Դա այնպիսի իրական կամ սպառնացող բացառիկ հանրային վտանգի, ճգնաժամի իրավիճակ է, որն ազդում է երկրի կամ տվյալ վայրի ողջ բնակչության վրա, եւ իրենից ներկայացնում է վտանգ հասարակության կազմակերպված կյանքի համար: Բնականաբար, ինչպես բխում է դաշնագրի դրույթներից, անչափ կարեւոր է պահպանել համաչափությունը, ինչը կախված է կոնկրետ իրավիճակից: Մասնավորապես, համաչափության մասին խոսելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կոնկրետ իրավունքների սահմանափակման տեսողության, աշխարհագրական ընդգրկման վրա:

Չափազանց կարեւոր է հիշատակել այստեղ, որ պետության կողմից կատարվող շեղումը չի կարող հակասել այլ միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով ստանձնած պարտավորություններին: Այս պարագայում խոսքը վերաբերում է ինչպես 1949թ. Ժնևի կոնվենցիաներին եւ դրանց կից Լրացուցիչ արձանագրությունների դրույթներին, այնպես էլ ընդհանուր միջազգային իրավունքի սովորութային նորմերին: Այս պարագայում, խոսքը հարկապես վերաբերում է Ժնևյան իրավունքի կոպիտ խախտումներին, որոնք, ինչպես հայտնի է, հանդիսանում են իմպերատիվ արգելքներ:

Ստանձնած միջազգային պարտավորություններից շեղվելու հնարավորություն է տալիս նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան: Կոնվենցիայի 15-րդ հոդվածն ամրագրում է այն իրավունքները, որոնցից շեղվել չի թույլատրվում, դրանք են՝ **կյանքի իրավունքը, խոշորագույնների արգելումը, ստրկության արգելումը եւ nullum crimen sine lege սկզբունքը, այսինքն՝ չկա հանցանք առանց օրենքի կամ միջազգային իրավունքի**: Սկզբունքորեն, կոնվենցիան նախատեսում է իրավունքների առավել նեղ շրջանակ՝ դաշնագրի համեմատ: Կյանքի իրավունքի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ 6-րդ եւ 13-րդ արձանագրությունների ընդունմամբ արգելվում է մահապատժի կիրառումը թե՛ խաղաղ եւ թե՛ պատերազմական իրադրության ժամանակ:

ՆՈՒՎԱԾ 44

Մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Սահմանադրությամբ ամրագրված մարդու որոշ իրավունքներ եւ ազատություններ բացարձակ չեն եւ կարող են սահմանափակվել: Բայց, որպեսզի այդ սահմանափակումները լինեն իրավաչափ եւ չխաթարեն մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրական հիմունքները, սահմանափակման հիմքերն ամրագրված են հենց Սահմանադրությամբ: Մարդու որոշ իրավունքներ եւ ազատություններ միայն օրենքով սահմանափակելու հիմքերը, ինչպես արդեն նշվել է, ամրագրված են Սահմանադրության 43-րդ հոդվածով:

Սահմանադրության 44-րդ հոդվածի իրավական բովանդակությունը 43-րդ հոդվածի հետ համակարգային կապերի մեջ դիֆարկելով՝ պարզ է դառնում, որ մեկնաբանվող հոդվածը կարգավորում է սահմանափակման ենթակա մարդու իրավունքների եւ ազատությունների ինքնուրույն եղանակ: Այդ եղանակով սահմանափակվող իրավունքները, այսպես կոչված, օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվող իրավունքներն ու ազատություններն են:

Սահմանադրության 44-րդ հոդվածով նախատեսված մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումներն առանձնաձև են հետեւյալ չափանիշներով՝ ա) նշված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն ժամանակավորապես,

բ) նշված իրավունքների ու ազատությունների սահմանափակման կարգը սահմանված է Սահմանադրությամբ եւ օրենքով,

գ) նշված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ,

դ) նշված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ սրանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հավելենք նաեւ, որ Կոնվենցիայի դեպքում սահմանափակման ենթակա իրավունքների եւ ազատությունների շրջանակը միայն մասամբ է համապատասխանում Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին ու ազատություններին: Մասնավորապես, Սահմանադրության 43-րդ հոդվածով ամրագրված են այն հոդվածները, որոնցով նախատեսված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել, մինչդեռ 44-րդ հոդվածով ամրագրված հոդվածները (15, 17-22 եւ 42-րդ հոդվածներ) բացառություն են, դրանցով նախատեսված իրավունքներն ու ազատությունները չեն կարող սահմանափակվել:

Այն, որ Սահմանադրության 44-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել ոչ թե օրենքով, այլ Հանրապետության Նախագահի հրամանագրով, բխում է Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերից:

Սահմանադրական իրավունքների սահմանափակման նշված ինստիտուտը նախատեսված է եղել նաեւ Սահմանադրության նախկին խմբագրությամբ. «Մարդու եւ քաղաքացու առանձին իրավունքներ եւ ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 17, 19, 20, 39, 41-43 հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետով նախատեսված դեպքերում» (45-րդ հոդված): Տվյալ դեպքում գործող նորմերն առավել հստակ ու երաշխավորված են ամրագրում իրավունքների սահմանափակման հիմքերն ու շրջանակները, ինչով շահեկանորեն փարբերվում են Սահմանադրության նախկին խմբագրությամբ ամրագրված նորմերից:

Ինչ վերաբերում է այն հոդվածներին, որոնցով սահմանված իրավունքները և ազատությունները բացարձակ են և չեն կարող սահմանափակվել, ապա դրանք գրեթե նույնական են, պարզապես անձի իրավունքների պաշտպանության իրավունքը Սահմանադրության գործող խմբագրությամբ ամրագրված է 2 հոդվածներով (18 և 19-րդ հոդվածներ), իսկ նախկին խմբագրությամբ այդ իրավունքն ամրագրված էր մեկ հոդվածով՝ 19-րդ:

Առանցքային նշանակություն ունի նաև Սահմանադրության ներկա խմբագրությամբ 44-րդ հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ շեղումներ չի թույլատրվում նաև արտակարգ իրավիճակներում միջազգային սրանձնած պարտավորություններից: Բացի դրանից, սահմանափակումների հիմքերն սպառիչ սահմանված են հենց 44-րդ հոդվածում, մինչդեռ Սահմանադրության նախկին խմբագրության 45-րդ հոդվածում սահմանափակման հիմքերի առումով հղում էր արված Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետին, որում կանոնակարգված էր ռազմական դրություն և արտակարգ դրություն հայտարարելու Նանրապետության Նախագահի լիազորությունը:

Ռազմական դրության և արտակարգ դրության ժամանակ իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել ժամանակավորապես: Մասնավորապես, ռազմական դրության ժամանակ Նանրապետության Նախագահը կարող է, կոնկրետ որևէ միջոցառման կամ սահմանափակման համար հիմք հանդիսացած հանգամանքի վերացման դեպքում, մասնակիորեն դադարեցնել դրանք: Ընդ որում, դադարեցումն իրականացվում է Նանրապետության Նախագահի հրամանագրով, որի մասին բնակչությունն իրազեկվում է ռազմական դրություն հայտարարելու մասին փեդեկացվելու նույն կարգով: Իսկ մյուս միջոցառումներն ու սահմանափակումները համարվում են դադարած՝ ռազմական դրության գործողության դադարեցման հետ միաժամանակ՝ առանց այդ մասին հատուկ իրազեկելու:

Այսպիսով, իրավունքների և ազատությունների սահմանափակման ժամկետը չի կարող գերազանցել այն ժամկետը, որի ընթացքում հայտարարվում է ռազմական դրություն կամ արտակարգ դրություն, սակայն կարող է և այդ ժամկետից էլ պակաս լինել, եթե վերացված են լինում փվյալ իրավունքի կամ ազատության սահմանափակման համար հիմք հանդիսացած հանգամանքները:

Բացի դրանից, որևէ այլ հիմքով Նանրապետության Նախագահը չի կարող սահմանափակել Սահմանադրության 44-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու ազատությունները: Այսինքն՝ Նանրապետության Նախագահը նախ՝ սահմանված կարգով պետք է հայտարարի ռազմական դրություն կամ արտակարգ դրություն և նոր միայն ձեռք բերի հիշյալ իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու լիազորություն:

Այս առումով հարկ է նկատել, որ այդպիսի հիմք չի կարող հանդիսանալ, օրինակ՝ արտակարգ իրավիճակը: Սակայն ասվածից չի բխում, որ արտակարգ իրավիճակների դեպքում չեն կարող սահմանափակվել իրավունքներ և ազատություններ, պարզապես դրա համար իրավական հիմք կհանդիսանա Սահմանադրության ոչ թե 44-րդ, այլ 43-րդ հոդվածը: Այսինքն՝ այն իրավունքները և ազատությունները, որոնք կարող են սահմանափակվել արտակարգ իրավիճակում, նախապես ամրագրված են օրենքով, փվյալ դեպքում՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Նախապահի Նանրապետության օրենքով:

Այսպես, նշված օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված են մի շարք սահմանադրական իրավունքների (սեփականության, ազատ փեղաշարժի և այլն) սահմանափակումներ: Ընդ որում, այդ իրավունքների նկատմամբ սահմանափակումներ կիրառելու համար

հարկ չկա նախապես ընդունել անհատական իրավական ակտ, ինչը բնորոշ է ռազմական դրության կամ արտակարգ դրության պարագայում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ արտակարգ իրավիճակում անհրաժեշտ է լինում հնարավորինս սեղմ ժամկետներում ու նախապես հայրնի ընթացակարգերով իրականացնել որոշակի գործողություններ, որոնք միավորված են մարդկանց կյանքի եւ առողջության անվտանգության ապահովմանը: Բացի դրանից, արտակարգ իրավիճակներում սահմանափակվում են սակավաթիվ սահմանադրական իրավունքներ ու ազատություններ եւ անհամեմատ կարճ ժամկետով: Այդ իսկ նկատառումով, օրենքը սահմանում է նաեւ «արտակարգ իրավիճակ» եզրույթը. «Արտակարգ իրավիճակ՝ որոշակի փարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վրանգավոր բնական երեւոյթի, տեխնածին, փարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղէտի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի եւ գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն փարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), գենքի տեսակների կիրառման հետեւանքով սրեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների եւ մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման»:

Առանձին իրավունքների եւ ազատությունների սահմանափակման կարգը նախապես սահմանադրությամբ եւ օրենքով: Կոնկրետ Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված է, որ այդ սահմանափակումները կարող են իրականացվել օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերի եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգի որոշ փարեր ամրագրված են նաեւ Սահմանադրությամբ: Ասվածից բխում է, որ սահմանափակումների կարգը սահմանելիս օրենքներում պետք է ելակետ ընդունվեն Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ հիմնադրույթները (տե՛ս Սահմանադրության հիշյալ հոդվածների մեկնաբանությունը):

Նարկ է նկատել, որ վերը նշված իրավունքների եւ ազատությունների սահմանափակման իրավական հիմքերին առնչվում են նաեւ այն օրենսդրական ակտերը, որոնք կանոնակարգում են «ռազմական դրության» եւ «արտակարգ դրության» իրավական ռեժիմները: Այսինքն՝ տվյալ դեպքում Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունն ընդգրկում է նաեւ նշված իրավական ռեժիմների վերաբերյալ օրենսդրական ակտերը:

Սահմանադրապես, այդ հիմքերի շարքին է դասվում «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին): Ինչ վերաբերում է արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենսդրական ակտին (այդպիսի օրենք ընդունելու անհրաժեշտությունն ամրագրված է նաեւ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետում), սպա այն դեռեւս նախագծի տեսքով քննարկման փուլում է, սակայն դա իրավական խոչընդոտ չէ Նանրապետության Նախագահի կողմից Սահմանադրության 44-րդ հոդվածով եւ 55-րդ հոդվածի 14-րդ կետով ամրագրված լիազորություններից օգտվելու համար, քանի որ Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «մինչեւ արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում Նանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին»:

Տվյալ դեպքում «իրավիճակից թելադրվող միջոցառումներ» արտահայտությունը

բնավ չի սահմանափակվում Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով առանձին իրավունքներ և ազատություններ սահմանափակելով: Հանրապետության Նախագահը կարող է իր լիազորությունների շրջանակներում ժամանակավորապես կանոնակարգել նաև այլ հարաբերություններ, սահմանել լրացուցիչ պարտականություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար, սահմանել պարտաշին ժամ, սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության սահմանափակում և այլն:

Պարզապես Հանրապետության Նախագահը չի կարող ընտրել այնպիսի սահմանափակումներ և այնպիսի հիմքերով, որոնք նախատեսված չեն Սահմանադրության 44-րդ հոդվածով: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածում սպառիչ ամրագրված են այն միջոցառումներն ու ժամանակավոր սահմանափակումները, որոնք կարող են իրականացվել ռազմական դրության պայմաններում: Դա նշանակում է, որ Հանրապետության Նախագահն ազատ չէ սահմանափակումներ ընտրելու հարցում և կարող է բացառապես կիրառել այն սահմանափակումները, որոնք սահմանված են օրենքով:

«Ռազմական դրության» իրավական ռեժիմի բնորոշումը տրված է վերը նշված օրենքի 1-ին հոդվածով. «Ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում»:

Նշված օրենքով ամրագրված են նաև Հանրապետության Նախագահի լիազորությունները՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման ուղղությամբ: Այսպես, հիշյալ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն.

«Հանրապետության Նախագահը՝

ա) ղեկավարում է ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման կազմակերպման գործընթացը.

բ) սույն օրենքի համաձայն՝ սահմանում է ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի լիազորությունները, ինչպես նաև վերահսկում է ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների ու ժամանակավոր սահմանափակումների իրականացման գործընթացը.

գ) սահմանում է ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման կարգն ու նրանց խնդիրները, ինչպես նաև Հայաստանի փրկարար ծառայության և այլ ոչ պետական փրկարար ուժերի խնդիրները.

դ) կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք.

ե) սահմանում է ռազմական դրության գործողության ժամկետի ընթացքում զինվորական ծառայություն անցնելու կարգը.

զ) ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության

պանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչություն ծավալած կուսակցությունների գործունեությունը կասեցնելու նպատակով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կարող է դիմել սահմանադրական դատարան:

ե) իրականացնում է ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով եւ այլ օրենքներով նախատեսված այլ լիազորություններ»:

Սահմանադրական իրավունքներ եւ ազատություններ սահմանափակելիս հարկ է ղեկավարվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ սահմանված միջազգային պարտավորություններով, քանի որ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակումներ կարող են իրականացվել միայն այդ պարտավորությունների շրջանակներում: Սա նշանակում է, որ, նախ՝ ռազմական կամ արտակարգ դրության իրավական ռեժիմների վերաբերյալ օրենքներում ամրագրված բոլոր հնարավոր սահմանափակումները պետք է բխեն բացառապես արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ սահմանված միջազգային պարտավորություններից, բացի դրանից, հիշյալ օրենքների է միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում, ինչը եւ բխում է նաեւ Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթներից, հարկ է անմիջականորեն ղեկավարվել վավերացված միջազգային պայմանագրերով:

Միջազգային պարտավորությունների շրջանակներում գործելու պահանջից անմիջականորեն բխում է նաեւ այլ կարեւոր հիմնադրույթ. իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս կարող են օրենքով սահմանված սահմանափակումները կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանցից կոնկրետ յուրաքանչյուրի համար առկա են բավարար հիմքեր, հանգամանքներ: Այսինքն՝ տուկ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը բավարար չէ օրենքով նախատեսված սահմանափակումները կիրառելու համար:

Վերջապես, միջազգային պարտավորությունների շրջանակներում սահմանադրական իրավունքներ եւ ազատություններ սահմանափակելու լիազորությունը կարող է համարվել իրավաչափ իրականացված, եթե ռազմական կամ արտակարգ դրություն է հայտարարվում բավարար հիմքերի առկայության դեպքում:

Մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների սահմանափակման հարցերին նվիրված միջազգային պայմանագրերում, բնականաբար, ոչ միշտ են հստակ ամրագրված այն պարտավորությունները կամ հիմքերը, որոնց շրջանակներում կարող են սահմանվել որոշակի սահմանափակումներ: Այսպես, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները եւ ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները պետք է իրականացվեն այն շրջանակներում, որոնք համարժեք են ռազմական դրության հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին: Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն. «Պարերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամարելի չեն միջազգային իրավունքով

սպանձնած նրա մյուս պարտավորությունների հետ»:

Անշուշտ, վերը նշված դրույթները լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն, ուստի այդ նկատառումով անգնահատելի են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերը: Այսպես, օրինակ, Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված անձի անձեռնմխելիության իրավունքը եւս կարող է Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված կարգով սահմանափակվել, սակայն հիշյալ իրավունքի ցանկացած սահմանափակում չի կարող հակասել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերին:

Պատահական չէ, որ անգամ այդ սահմանափակումների կարգավորմանը նվիրված ազգային օրենսդրական ակտերով դրսեւորվում է ակնհայտ զգուշավորություն որոշ իրավունքների սահմանափակման առումով: Դարձյալ անդրադառնալով անձի անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքին՝ նկատենք, որ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «թ» կետով ամրագրված են տուկ հետեյալ սահմանափակումները. «քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի սրուգում, քաղաքացիների անձնական առարկաների, բնակարանի եւ տրանսպորտային միջոցների գնույթյան իրականացում, ինչպես նաեւ *արտակարգ* (տվյալ դեպքում օրենքում թյուրիմացաբար «ռազմական» բառի փոխարեն օգտագործվել է «արտակարգ» բառը, ինչն իրավաչափ կլիներ արտակարգ դրության դեպքում) դրության իրավական ռեժիմը խախտած եւ տվյալ տարածքում ջրնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ նման միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով»:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ սահմանադրական իրավունքների եւ լիազորությունների սահմանափակման ինստիտուտը երբեմն գործնականում անհարկի նեղ մեկնաբանությամբ է ընկալվում: Այս առումով բնորոշ է հարկապես քաղ. Ա.Նարությունյանի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան ներկայացված դիմումը, որով վիճարկվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի եւ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Ըստ դիմողի՝ հիշյալ օրենսդրական նորմերը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին եւ 20-րդ հոդվածի 4-րդ մասին՝ համակցված 43-րդ եւ 44-րդ հոդվածների հետ: Մասնավորապես, դիմողը գրել է, որ Հանրապետության Նախագահն իրավասու չէ իր հրամանագրով սահմանափակելու անձի՝ անմիջականորեն դատարան դիմելու՝ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ 20-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավունքը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի դրույթներին, որոնցով կանոնակարգված է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարիժի չկրած մասն ավելի մեղմ պարտավորեցակցով փոխարինելու ներկայաց-

ման կարգը: Տամաձայն հիշյալ կարգի՝ «Պարիժը կադարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան՝ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատարարված անձին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում» (Տայաստանի Տանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մաս):

Ըստ սահմանադրական դատարանի դիրքորոշման²⁴⁶՝ րվյալ դեպքում Տանրապետության Նախագահը որևէ կերպ չի սահմանափակել անձի սահմանադրական իրավունքները, իսկ ինչ վերաբերում է նշված անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման կարգին, ինչն ամրագրված է եղել Տայաստանի Տանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասով, ապա այն. «... անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Տայաստանի Տանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին եւ 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր»:

Այսպիսով, Տանրապետության Նախագահի կողմից վարչական վարույթի որոշ ընթացակարգեր սահմանելն ընդհանուր ոչինչ չունի սահմանադրական իրավունքների սահմանափակման հետ: Այս առումով բնորոշ է սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ ամրագրված հետևյալ իրավական դիրքորոշումը. «Նշված հարցով անմիջական դատարան դիմելու հնարավորությունը չի առնչվում դատական պաշտպանության իրավունքին: Տայաստանի Տանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքը, երբ առկա է խախտված իրավունքների պաշտպանության խնդիր: Մինչդեռ պարժից պայմանական վաղաժամկետ ազատման քրեաիրավական ինստիտուտի բովանդակությունը կազմում է պետության կողմից հումանիզմի դրսևորում հանդիսացող՝ դատապարտյալին րրվող իրավական հնարավորություն, այլ ոչ թե դատապարտյալի՝ պարժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք»:

Սահմանադրական դատարանն իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար հղում է կատարել հիշյալ ինստիտուտի կիրառման հետ կապված օրենսդրական կարգավորման այն առանձնահատկություններին, որոնց համաձայն դատապարտյալն ինքը կամ նրա ներկայացուցիչը պարժից վաղաժամկետ ազատելու ներկայացման գործընթացի նախաձեռնությանը մասնակցություն չի ունենում. ներկայացման հարցն օրենքի ուժով, համապարասխան ժամկետը լրանալուց հետո, առանց դատապարտյալի խնդրանքի կամ դիմումի (սակայն նրա համաձայնությամբ), պարտադիր կարգով քննության է առնում քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովը:

²⁴⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 5-ի «Քաղաքացի Աշոտ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի եւ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՄԳՈ-733 որոշումը:

Ըստ Սահմանադրական դատարանի՝ իրավունքի խախտման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ խախտվում է պայմանական վաղաժամկետ ազատման՝ օրենքով սահմանված կարգը: Եվ հենց այս հիմքով է Նայաստրանի Նանրապետության քրեակարարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման կարգը ճանաչվել Սահմանադրությանը հակասող: Ի դեպ, ղեկավարվելով Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ՝ Նայաստրանի Նանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Նայաստրանի Նանրապետության Ազգային ժողով ներկայացվեց «Նայաստրանի Նանրապետության քրեակարարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Նայաստրանի Նանրապետության օրենքի նախագիծ, որն ընդունվեց 2009թ. ապրիլի 7-ին:

ՆՈՂՎԱԾ 45

Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, փուրքեր, կապարեկ պարտադիր այլ վճարումներ:

Մեկնաբանվող հոդվածը նվիրված է մարդու (քաղաքացու) կողմից հարկեր ու փուրքեր մուծելու և պարտադիր այլ վճարումներ կատարելու սահմանադրական պարտականության սահմանմանը: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության 2-րդ գլխի վերաբառությունը չի բովանդակում «պարտականություն» հասկացությունը, այնուամենայնիվ, անձի իրավական կարգավիճակը՝ նրա իրավունքների ու ազատությունների հետ մեկտեղ, անհնարին է բնութագրել առանց նրա պարտականությունների սահմանմանը:

Սահմանադրության 47-րդ հոդվածով ամրագրված սահմանադրական պարտականության բովանդակության մեջ ներառվում է մարդու (քաղաքացու) կողմից Սահմանադրությունը և օրենքները պահպանելը, ինչը ենթադրում է, որ անգամ Սահմանադրության մեջ հարկեր ու փուրքեր մուծելու և պարտադիր այլ վճարումներ կատարելու վերաբերյալ պարտականության չամրագրման դեպքում, միեւնույն է, այդպիսի պարտականության սահմանումն օրինական է, քանի որ այն նախատեսված է օրենքով:

Հարկերի և պարտադիր այլ վճարների առնչությամբ ծագած հարաբերությունների սահմանադրական կարգավորումն ինքնին վկայում է հասարակության և պետության համար դրանց կարելությունը և էական նշանակության մասին: Առաջին հերթին, այդ հարցի նշանակությունը պայմանավորված է պետական և համայնքների բյուջեների եկամուտների ձեւավորման անհրաժեշտությամբ, այնուհետք՝ պետության և հասարակության շահերի բավարարման նպատակաուղղվածությամբ, ի վերջո՝ նաեւ փոխադրական հարաբերությունների կարգավորման գործընթացում դրանց դերի ամկայությամբ:

Միաժամանակ, սահմանադրական հիշյալ կարգավորման ընդհանուր նշանակության փեսանկյունից, հարկերը և պարտադիր այլ վճարները համարվում են պետության գոյության անհրաժեշտ միջոց, այնուհետք՝ վերջինիս փոխադրական գործունեության հիմքը, ի վերջո՝ նաեւ հանրային բնույթի ու նշանակության գործառույթների իրականացման պայմանը:

«Հարկ», «փուրք» և «պարտադիր այլ վճար» երեւոյթները յուրահատուկ կապող օղակ են քաղաքական իշխանության ու փոխադրական ազատության միջեւ, ինչպես նաեւ համարվում են միջոց՝ հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռվածության

ապահովման համար:

Նոդվածում ամրագրված դրույթների եւ համակարգային առումով փոխկապակցված սահմանադրական այլ նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ հարկեր ու փոփոխություններ մուծելու եւ պարտադիր այլ վճարումներ կատարելու սահմանադրական պարտականությունը կրում է **համընդհանուր բնույթ**, քանի որ այն փարածվում է բոլոր ֆիզիկական ու իրավաբանական անձանց վրա, որոնց վրա օրենքով սահմանված կարգով դրված է հարկ եւ պարտադիր այլ վճար վճարելու պարտականություն:

Մեկնաբանվող հոդվածում «**յուրաքանչյուր ոք**» հասկացությունը ներառում է համապարասխանաբար հարկ կամ պարտադիր այլ վճար վճարող ճանաչված ֆիզիկական եւ իրավաբանական անձինք: Անձը ճանաչվում է վճարող, եթե օրենքով սահմանվել ու երաշխավորվել են նրա՝ որպես վճարողի իրավական կարգավիճակը բնութագրող հատկանիշները:

Այսպես, օրինակ, «Նարկերի մասին» ՏՃ օրենքը սահմանել է հարկ վճարողների հետեւյալ խմբերը. ֆիզիկական եւ իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները), հիմնարկները, փողակալ ինքնակառավարման մարմինները (հոդված 5): Իսկ «Պետական փոփոխության մասին» ՏՃ օրենքի իմաստով՝ պետական փոփոխություններ են համարվում փոխյալ օրենքով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք (հոդված 3):

Ըստ առանձին հարկատեսակների կամ պարտադիր վճարների մասին օրենքների՝ անձի՝ որպես հարկ կամ պարտադիր այլ վճար վճարողի իրավական կարգավիճակը բնութագրվում է փոփոխ հատկանիշներով: Օրինակ, Նայաստանի Նանրապետությունում եկամտահարկ վճարողներ են համարվում. ա) Նայաստանի Նանրապետության կամ օտարերկրյա պետության այն քաղաքացիները, կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք հարկային փարում (հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող փաստերկրամայա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Նայաստանի Նանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր եւ ավելի, բ) եթե նրանց կենսական շահերը (այսինքն՝ անձի ընտանեկան կամ փոխտեսական շահերը), մասնավորապես փար կամ բնակարանի, անձնական կամ ընտանեկան հիմնական գույքի գտնվելու, ընտանիքի բնակվելու կամ հիմնական փոխտեսական գործունեության իրականացման վայրը, կենտրոնացված են Նայաստանի Նանրապետությունում, գ) եթե նրանք Նայաստանի Նանրապետությունում գտնվում են պետական ծառայության մեջ, սակայն աշխատում են Նայաստանի Նանրապետության փարածքից դուրս («Եկամտահարկի մասին» ՏՃ օրենքի 3-րդ հոդված):

Իսկ շահութահարկ վճարող իրավաբանական անձի հարկային կարգավիճակի սահմանման հիմքում ընկած են հետեւյալ պահանջները. այդ կազմակերպություններն ստեղծվել (այսինքն՝ ստացել են պետական գրանցում) եւ հարկային հաշվառման են կանգնել Նայաստանի Նանրապետությունում, ինչպես նաեւ ոչ ռեզիդենտ համարվող կազմակերպությունները, որոնք ստեղծվել են օտարերկրյա պետություններում, կամ միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Նայաստանի Նանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները («Շահութահարկի մասին» ՏՃ օրենքի 4-րդ հոդված):

Նոդվածում «**յուրաքանչյուր ոք պարտավոր է**» բառակապակցությունից հետեւում է, որ՝ եւ հարկը, եւ փոփոխը, եւ պարտադիր այլ վճարումները կրում են **համապար-**

փառհիք բնույթ: Նամապարփառհիքրոյունը՝ որպէս անմիջական ու անվերապահորեն կարարման ենթակա բացարձակ պահանջ, փարածվում է բոլոր վճարողների վրա՝ անկախ վերջիններին գույքային վիճակից, անձնական հանգամանքներից, սոցիալական կամ որեւէ այլ դրոյթունից:

Նամապարփառհիքրոյուն պահանջն իրականացվում է սեփականափրոջ գույքի (եկամութների) մի մասի՝ հարկի կամ պարփառհիք այլ վճարների փեսքով պեփոյթյան օգփին փոխանցելու միջոցով: Ընդ որում, վճարողը չի կարող իր հայեցողոյթամբ փնօրինել գույքի այն մասը, որը դրամական փեսքով պեփք է գանձվի բյուջե:

Միաժամանակ, վճարողը պարփավոր է այդ գումարները պարբերափար փոխանցել պեփոյթյանը, քանի որ այդ պարփականոյթյան կարարման արդյունքում է պաշտպանվում պեփոյթյան և հասարակոյթյան մյուս անդամների՝ օրենքով պահպանվող շահերը: Վերջապէս, սահմանադրական այդ պարփականոյթյան մեջ է մարմնավորված հասարակոյթյան բոլոր անդամների հանրային շահերը:

Նարկի, փուրքի և պարփառհիք այլ վճարի համապարփառհիք բնույթը բխում է նաև պեփոյթյան փնփեսական իրավիճակից: Ընդ որում, այդ վճարումների ինքնահարկման բացակայոյթունը կամ կամավորոյթյան հենքի վրա մուծումների չկարարումն ինքնին հանգեցնում է պեփոյթյան կողմից դրանց՝ իրավական հարկադրանքի միջոցով գանձմանը:

Այդպիսի ներգործոյթյան միջոցների կիրառման անխուսափելիոյթյան պայմաններում պարփավորեցվում է վճարողներին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում մուծել հարկեր, փուրքեր և կարարել պարփառհիք այլ վճարումներ:

Այնուհետև, հողվածում մարմնանշված **«օրենքով սահմանված կարգով և չափով»** հասկացոյթյան առկայոյթունը բովանդակում է հարկերի, փուրքերի և պարփառհիք այլ վճարների բացառապէս օրենքով սահմանված ու ներդրված լինելու սահմանադրական պահանջ, որի իրականացման հիմքում ընկած է հանրային վճարների օրինականոյթյան սկզբունքը: Այսինքն՝ միմիայն օրենքով կարող են սահմանվել այդպիսի վճարներ, իսկ այն հարկերը կամ պարփառհիք այլ վճարումները, որոնք գանձվում են ոչ օրենքի հիման վրա, դրանք չեն կարող դիփարկվել «օրենքով սահմանված»:

Անհրաժեշտ է նշել, որ հարկերի, փուրքերի և պարփառհիք այլ վճարների բացառապէս օրենքով սահմանված լինելու սահմանադրական այդ պահանջն իրենից ներկայացնում է իրավական պեփոյթյան հիմնարար սկզբունքներից մեկը և այն նպարակ ունի բացառել գործադիր իշխանոյթյան մարմինների կողմից այդպիսի վճարների սահմանման հնարավորոյթունը, ինչպէս նաև երաշխավորել հարկ վճարողների իրավունքները և օրինական շահերն այդ մարմինների կամայականոյթյուններից ու անթույլարբելի միջամրոյթյուններից:

Միաժամանակ, հարկ է նկարել, որ հանրային վճարներն օրենսդրորեն պարփառհիք ձեւակերպելու վերաբերյալ դրոյթը թղթակցում է Մահմանադրոյթյան 42-րդ հողվածի 2-րդ մասում ամրագրված **«ոչ ոք չի կարող կրել պարփականոյթյուններ, որոնք սահմանված չեն օրենքով»** դրոյթի, ինչպէս նաև համակարգային առումով փոխկարակցված Մահմանադրոյթյան 83.5-րդ հողվածի 2-րդ կեփի հեփ, ըստ որի՝ բացառապէս Նայասփանի Նանրապեփոյթյան օրենքներով են սահմանվում՝ Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատոյթյունների սահմանափակումները, **նրանց պարփականոյթյունները**, ինչպէս նաև պարասիսանափովոյթյան փեսակները, չափերը, պարասիսանափովոյթյան ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող

հարկերի, փուրքերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:

Նարկերի, փուրքերի եւ պարտադիր այլ վճարների օրենքով սահմանված լինելը՝ չի նշանակում սահմանել հարկ, փուրք կամ պարտադիր վճար՝ նշելով միայն դրանց անվանումները: «Նարկ» «փուրք» կամ «պարտադիր վճար» հասկացությունները՝ որպես փոփոխական եւ միաժամանակ իրավական համալիր երեսույթներ, ունեն համակարգային բնույթ՝ պայմանավորված դրանց կառուցվածքում իրավական նշանակություն ունեցող փարբերի առկայությամբ ու միասնությամբ: Այսպէս, հարկը, փուրքը կամ պարտադիր այլ վճարը համարվում են սահմանված եւ միաժամանակ ներդրված, **եթե օրենքով սահմանվել ու որոշվել են դրանց բաղկացությունը կազմող էական փարբերը:** Ընդ որում, այդ փարբերի՝ օրենքով պարտադիր ամրագրված լինելը դիտվում է որպես այս կամ այն հարկատեսակի կամ պարտադիր այլ վճարի էական պայման եւ դրանց մասով պարտավորության առաջացման, կատարման հանգամանքների ու առարկաների նախանշման հիմք:

Այսպէս, օրինակ, «Նարկերի մասին» եւ առանձին հարկատեսակների մասին Նախարարի Նախարարության օրենքներում ամրագրված դրույթների վերլուծությունից հետեւում է, որ հարկի կառուցվածքը բաղկացած է՝ հարկաիրավական նորմից (այսինքն՝ հարկման ոլորտում պետության կողմից սահմանված վարքագծի այն կանոնները, որոնց միջոցով կարգավորվում է հարկային պարտավորության ծագումն ու իրացումը), հարկի սուբյեկտից (հարկ վճարողներ) եւ հարկման հետեւյալ էական փարբերից՝ հարկման օբյեկտ, հարկի դրույթաչափ, հարկման միավոր, հարկային ժամանակաշրջան, հարկի հաշվարկման կարգ, հարկի վճարման եղանակներ, ժամկետներ եւ կարգ: Նույնը վերաբերում է փուրքի եւ պարտադիր այլ վճարների փարբերին:

Սակայն հիշյալ արգելքը չի բացառում **կառավարության մասնակցության հնարավորությունը** հարկի առանձին փարբերի սահմանման ժամանակ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային միասնական պետական քաղաքականության իրականացման ընթացքում (Սահմանադրության 89-րդ հոդվածի 4-րդ կետ) կառավարությունը կարող է որոշակիացնել առանձին փարբեր, բայց այսպէս օրենքով սահմանված ոչ էական նշանակություն ունեցող փարբերի մասին կարող է խոսք գնալ:

Անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ **հարկային արտոնությունը՝** որպէս հարկի փարբ, էական չի համարվում, քանի որ այն գործոնային ազդեցություն չի ունենում հարկի սահմանման ու որոշակիության վրա: Այդ հանգամանքով պայմանավորված՝ հարկային արտոնության առկայությունը կամ բացակայությունը չի վկայում հարկ վճարողի սահմանադրական իրավունքների սահմանափակման մասին: Թերեւս, այդպիսի արտոնության փրամադրումը՝ որպէս հարկային պարտավորության ազատման, նվազեցման եւ վճարման ժամկետի հետաձգման օրենքով ընձեռված հնարավորություն, չպէտք է կրի կամայական բնույթ, հակառակ դեպքում կխախտվեն հարկման հիմնարար այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են հարկման արդարության ու համաչափության եւ հարկ վճարողների հավասարության սկզբունքները:

Նարկերի, փուրքերի եւ պարտադիր այլ վճարների միայն օրենքով սահմանված լինելը բովանդակում է որոշակի պահանջներ նաեւ **փվյալ ակտ ընդունող մարմնի, այդ ակտի ձեւի, ընդունման ընթացակարգի եւ դրա գործողության մեջ դնելու կարգի վերաբերյալ:**

Այսպէս, հարկ, փուրք կամ պարտադիր այլ վճար սահմանող օրենքներն Ազգային ժողովի կողմից ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամտորների ձայ-

ների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամտությունների ընդհանուր թվի կեսից ավելին (Սահմանադրության 71-րդ հոդված):

Կամ՝ հարկի, փորձի և պարտադիր այլ վճարի վերացման կամ դրանց դրույթաչափերի նվազեցման վերաբերյալ օրենքի նախագծերն Ազգային ժողովի կողմից քննարկվում և ընդունվում են Կառավարության եզրակացության առկայությամբ՝ պարզամտությունների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 75-րդ հոդված):

Նարկերի, փորձերի և այլ պարտադիր վճարների՝ օրենքով սահմանված լինելը բովանդակում է նաև համընդհանուր իրավական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝ **իրավական նորմերի որոշակիությունը, հստակ և ոչ երկիմաստ ձևակերպված լինելը**, որոնք բխում են իրավական պետության և օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքներից (Սահմանադրության 1-ին և 14.1-րդ հոդվածներ):

Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մայիսի 13-ի ՄԳՈ-753 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կրա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Նապկապես հարկեր և պարտադիր վճարումներ սահմանող օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ տվյալ հարաբերությունները կանոնակարգող փորձեր կարգավորումների միջև հակասությունների, փարաբնույթ մեկնաբանվող և փարընթերցում բովանդակող դրույթների առկայության կամ բացակայության հանգամանքը: Նենց այդպիսի հանգամանքի առկայության պարագայում օրենքը կանխատեսելի չի դարձնում հարկի ու պարտադիր այլ վճարի գանձման նպատակը, դրանց էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև դրանք վճարողի պարտականության իրավաչափությունը:

Միաժամանակ, մեկնաբանվող հոդվածում սահմանադրական հիշարակված դրույթը պահանջում է սահմանել այնպիսի **ողջամիտ ժամկետ**, որի ընթացքում անհրաժեշտ է տվյալ օրենքը գործողության մեջ դնել: Այսպես, խոսքն այն հարկային ժամանակաշրջանի մասին է, որի ավարտման պահից կարող է միայն ծագել հարկային պարտավորությունը:

«Նարկերի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածում ամրագրված դրույթներին համապատասխան՝ հարկի դրույթաչափի փոփոխությունը, հարկի սահմանումը կամ վերացումը կարարվում է միայն ֆինանսական փարվա սկզբից կամ հաշվետու ֆինանսական փարվա պետական բյուջեի հաստատման պահից, կամ «հարկ վճարողի գործելու պայմանները խստացնող դրույթները ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակումից ոչ շուտ, քան 30 օր հետո»:

Բացի դրանից, մեկնաբանվող հոդվածում և համակարգային առումով փոխկապակցված Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների վերլուծությունից բխում է, որ նոր հարկեր կամ պարտադիր այլ վճարներ սահմանող կամ դրանց վճարողների իրավական վիճակը վարդաբարացնող օրենքները հետադարձ ուժ չունեն:

Սահմանադրական այս արգելի խախտման տեղիք կարող է տրվել այդպիսի օրենքների գործողության մեջ դնելու կանոնները չպահպանելու հետևանքով: Այնուամենայնիվ,

նայնիվ, հարկեր կամ պարտադիր այլ վճարներ սահմանած այն օրենքները, որոնք գործողության մեջ են դրվել Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ, այդպիսի հարկերը եւ պարտադիր վճարները չեն կարող դիտարկվել «օրենքով սահմանված»:

Ինչ վերաբերում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ մասով համայնքներին **տեղական հարկեր եւ փոյրքեր սահմանելու** իրավասություն վերապահելուն՝ անհրաժեշտ է նշել, որ մեկնաբանվող հոդվածն արդեն իսկ ամրագրում է միայն օրենքով դրանց սահմանված լինելու սահմանադրական պահանջը:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ըստ էության ոչ թե նոր հարկ կամ փոյրք են սահմանում, այլ՝ ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ բյուջեի ձեւավորման առանձնահատկություններից, սահմանում են օրենքով արդեն իսկ սահմանված տեղական հարկերի ու փոյրքերի առանձին փարքեր (դրույթաչափ, հարկման միավոր եւ այլն), ինչի արդյունքում փվյալ հարկի, փոյրքի կամ պարտադիր այլ վճարի տեսակն այդ համայնքում համարվում է ոչ միայն սահմանված, այլ նաեւ ներդրված:

Միաժամանակ, մեկնաբանվող հոդվածի «մուծել հարկեր, փոյրքեր, կապարել պարտադիր այլ վճարումներ» բառակապացությունում մաքնանշված «այլ» բառի առկայությունից հետեւում է, որ հարկերը եւ փոյրքերը եւս պարտադիր վճարներ են:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշման մեջ արձանագրել է, որ Սահմանադրության 45-րդ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները՝ հարկերից եւ փոյրքերից փարքերվելով հանդերձ, ունեն ընդհանուր հատկանիշներ, որ դրանք՝ ա) կրում են հանրային-իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում եւ վճարվում են հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում, բ) նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար:

Սակայն, դրա հետ մեկտեղ, մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթների շրջանակում կարելու ու էական նշանակություն ունի հարկը՝ փոյրքից եւ պարտադիր այլ վճարից փարքերակելու հանգամանքը: Թերեւս դա այն խնդրահարույց հարցն է, որի վերաբերյալ ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավաբանական հետազոտություններում չկան միասնական մտայնումներ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ պարտադիր այլ վճարների իրավական կառուցվածքի հիմքում ընկած են էական եւ առանձնահատուկ հետեւյալ կողմերը. եթե հարկը պետության հատկանիշ է եւ միաժամանակ նրա (պետության) գոյության անհրաժեշտ պայման, ապա փոյրքը կամ պարտադիր այլ վճարը կարելի է դիտարկել որպես պետության գործառույթների արդյունավետ իրականացման գործիք, ինչպես նաեւ վճարողների իրավունքների իրացման կամ ձեռքբերման նպատակով նրանց վարքագծի վրա ներգործելու միջոց:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հանրային իրավական բնույթով օժտված ցանկացած պարտադիր վճար կապված է պետության հանրային գործառույթների իրականացման եւ հասարակական կարիքների բավարարման հետ: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ բյուջեի միջոցների հաշվին պետությունը ապահովում է ոչ միայն քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու պահպանումը, այլեւ իրականացնում է սոցիալական գործառույթներ: Այդ իմաստով հարկերի եւ պարտադիր այլ վճարների նպատակն է բավարարել հանրային իշխանության սուբյեկտների ֆինանսական պահանջումները:

Այդ նկատարումներից ելնելով՝ պետությունը միաժամանակ իրավասու է և պարտավոր ձեռնարկել միջոցներ հարկային հարաբերությունների կարգավորման միջոցով պաշտպանելու ոչ միայն վճարողի օրինական շահերը, այլև հասարակության մյուս անդամների շահերը: Դրա համար հարկային և պարտադիր այլ վճարների ոլորտի հարաբերությունները կառուցվում են օրենսդրության պահանջներին վճարողների խիստ ենթակայության հենքի վրա, իսկ պետական իրավասու մարմիններն իրականացնում են վերահսկողություն այդ պահանջների կատարման նկատմամբ:

Նանրային-իրավական բնույթի վճարումների համակարգում հարկերը և պարտադիր այլ վճարումները ձեւավորում են բյուջեի հարկային եկամուտների ողջ մասը:

Այսպես, «Նայասրանի Նանրապետության բյուջեի համակարգի մասին» ՏՏ օրենքի է 17-րդ հոդվածի 2-րդ մասը հարկային եկամուտների կազմում, բացի բոլոր հարկատեսակներից, ներառում է նաև օրենքով սահմանված գրեթե բոլոր պարտադիր այլ վճարները (բնապահպանական և բնօգտագործման վճարները, ճանապարհային վճարը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և այլն):

Դրա հետ մեկտեղ, դժվար չէ նկատել, որ հարկերի բյուջե մուտքագրումը չի ենթադրում պետության կողմից հարկ վճարողի օգտին փոխադարձ պարտավորությունների կատարում, ինչը բերում է այն հետետության, որ **հարկն անհատուցելի պարտավորություն է:**

Ինչ վերաբերում է տուրքերին կամ պարտադիր այլ վճարներին, ապա դրանք՝ որպես հանրային իրավական բնույթի վճարատեսակ, դարձյալ գանձվում են բացառապես հանրային հարաբերությունների շրջանակում և ուղղվում պետության հանրային գործառույթների իրականացմանը:

Մեկնաբանվող հոդվածում, եթե «**մուծել**» բառի առկայությունից հետևում է, որ խոսքն անհատուց վճար վճարելու մասին է, ապա «**կատարել վճարում**» հասկացության բովանդակությունից բխում է՝ «վճարել որեւէ բանի կամ ծառայության դիմաց»: Չնայած հիշյալ հանգամանքին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ պետությունը կարող է կատարել վճարովի ծառայություն, սակայն դա հնարավոր է իրականացնել բյուջեի հիմնարկների կամ պետական ոչ առեւտրային կազմակերպությունների միջոցով և բացառապես քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում:

Սակայն, հանրային իրավահարաբերությունների տեսանկյունից, պետությունը փաստացի կատարում է անվճար ծառայություն, և այդ պարագայում տուրքի մուծումը կամ պարտադիր այլ վճարում կատարելն ինքնին դիտարկվում է ոչ թե ծառայության դիմաց կատարած վճարում կամ ծառայությունների ծախսերի փոխհատուցում, այլ համարվում է ընդամենն այդ ծառայության իրացման պայմաններից մեկը:

Այստեղից, պետության և տեղական ինքնակառավարման մարմինների իշխանական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված ծառայությունների դիմաց օրենքով սահմանված որեւէ պարտադիր վճարի՝ որպես փոխհատուցում, գանձելն անթույլատրելի է և չի բխելու Սահմանադրության 45-րդ հոդվածում նշված տուրքի կամ պարտադիր այլ վճարների հանրային-իրավական բովանդակությունից:

Այսպես, օրինակ, պետական տուրքի մուծումը դիտարկելի որպես պետության պարտականության ծագման հիմք դատարանի մատչելիությունն ապահովելու նպատակով, ուղղակի անընդունելի է հենց անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման տեսանկյունից:

Անհրաժեշտ է նշել, որ հանրային գործառնությունների իրականացման ընթացքում պետության ծախսերի ծածկման նպատակով նախատեսված են հարկեր, իսկ պորթերը եւ պարտադիր այլ վճարները՝ ի փարբերություն հարկերի, ֆինանսական խնդիրներ չեն լուծում, այլ հետապնդում են որոշակի նպատակներ (իրավունքի ձեռքբերում կամ իրավունքի իրացում):

Այսպետից, պորթերը եւ պարտադիր այլ վճարները պետք է դիտարկել ոչ թե օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների **համար** պարտադիր վճար («Պետական պորթի մասին» ՏՏ օրենքի 2-րդ հոդված), կամ՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման **դիմաց** պարտադիր գանձույթ, կամ՝ լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների **համար** պարտադիր գանձույթ («Տեղական պորթերի եւ վճարների մասին» ՏՏ օրենքի 2-րդ եւ 3-րդ հոդվածներ), այլ ընդամենը **պայման**՝ բացառապես պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու, այդ թվում որոշակի իրավունքներ կամ թույլտվություններ ստանալու համար:

Նիշյալ առումով, պորթերը եւ պարտադիր այլ վճարներն իրենց հանրային-իրավական բնույթով նույնպես **անհատուցելի պարտավորություններ են եւ հարկերի հետ մեկտեղ կրում են հանրային վճարի ձեւ**:

Բնականաբար, այսպետ խոսք չի կարող գնալ օրենքով սահմանված այն վճարների մասին, որոնք անհատապես հատուցելի են կամ կրում են փոխհատուցման բնույթ:

Ի դեպ՝ եւ հարկերի, եւ պարտադիր այլ վճարների անհատուցելիությունը բնութագրվում է դրանց **անվերադարձելիությամբ** եւ սահմանման **միակողմանիությամբ**: Ընդ որում, եթե անվերադարձելիության ներքո նկատի է առնվում, որ բյուջե վճարված հարկը կամ պարտադիր այլ վճարը վերադարձման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են սահմանված չափից ավելի վճարված գումարի (գերավճարի) առաջացման կամ արտոնություններ սահմանող հանգամանքների հետ, ապա **միակողմանիությունը** նշանակում է, որ պետությունը նախանշում է իր պահանջարկության սահմաններն ու չափերը, այնուհետեւ՝ օրենքի հիման վրա սահմանում է այդ պարտադիր վճարումները, հետագայում՝ որոշում, թե ինչպիսի քանակային մեծությամբ են դրանք արտահայտվում, եւ, վերջում՝ հետեւում դրանց կապակցությամբ ծագած պարտավորությունների պարշաճ կատարմանը:

Այսպիսով, մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթի եւ համակարգային առումով փոխկապակցված սահմանադրական այլ դրույթների վերլուծության արդյունքների շրջանակում կարելի է ձեւակերպել հարկի, պորթի կամ պարտադիր այլ վճարների հետեւյալ սահմանումները.

- **հարկը**՝ պարտադիր եւ անհատույց այն վճարն է, որը հանրային իշխանության գործունեության ֆինանսական ապահովման նպատակներով պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ է մուծվում վճարողների կողմից ինքնահարկման ու կամավորության հիման վրա կամ գանձվում պետական հարկադրանքի միջոցով:

- **Տուրքը կամ պարտադիր այլ վճարը**՝ պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր եւ անհատույց այն վճարն է (գանձույթը), որի վճարումը հանդիսանում է պայմաններից մեկը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու համար:

Նիշյալ հասկացությունների սահմանման բովանդակությունից կարելի է առանձ-

նացնել հարկին և փորձին կամ պարտադիր այլ վճարին բնորոշ հետեյալ ընդհանուր հարկանիշները, որ՝ ա) դրանք կրում են հանրային-իրավական բնույթ, բ) դրանք համարվում են հանրային վճարի ձև, գ) դրանք ունեն պարտադիր բնույթ, դ) դրանք անհատուցելի պարտավորություններ են, ե) դրանց մասով պարտավորությունների կատարումը կապված է վճարողի կողմից կամավորության հիման վրա մուծման հետ, զ) դրանք նախատեսված են պետության և համայնքների գործունեության ֆինանսական ապահովման համար:

ՆՕԴՎԱԾ 46

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Նայասարանի Նանրապետության պաշտպանությանը:

Սույն նորմի բովանդակային մեկնաբանության դեպքում պետք է ընդունենք, որ ինչպես նշված է «Պաշտպանության մասին» 2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված ՏՏ օրենքի 1-ին հոդվածում, «պաշտպանություն» եզրույթը մեկնաբանվում է որպես ռազմական անվտանգության համակարգը, Նայասարանի Նանրապետության փարածքը, հասարակությունն ու փնտրությունը պաշտպանության նախապարտադիր և Նայասարանի Նանրապետության անկախությունը, փարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, փնտրական, փրկելակարգական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ:

Նշված համակարգի յուրաքանչյուր քաղաքացի անփութամբ կարող է հանգեցնել ՏՏ պաշտպանության խաթարմանը: Միջազգային սահմանադրական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է փայլիս, որ «պետության պաշտպանություն» կամ «հայրենիքի պաշտպանություն» հասկացություններն օգտագործվում են որպես հոմանիշներ, և եթե ՏՏ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ծառայել զինված ուժերում, ապա յուրաքանչյուր հայի համար /անկախ բնակության վայրից, սեռից, փարիքից և քաղաքացիությունից/ արժանապատվության խնդիր է իր հայրենիքի պաշտպանությանն օժանդակելը: Ներկայացնելով մեկնաբանվող հոդվածից բխում է, որ զինված ուժերում ծառայելը հանդիսանում է պաշտպանության թեկուզ կարևոր, բայց քաղաքացիներից մեկը: Բարեբախտաբար, հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը /Նայկ Նահապետից մինչև արցախյան ազատամարտ/ վկայում է, որ հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր հայի համար եղել և մնում է սրբազան պարտք:

Սույն հոդվածի բառացի մեկնաբանության դեպքում թվում է, թե սահմանադրական նորմն ուղղակիորեն չի պարտավորեցնում յուրաքանչյուր քաղաքացու ծառայել ՏՏ զինված ուժերում, այլ հարցի լուծումը թողնում է օրենքին: Այսինքն՝ ՏՏ պաշտպանությանը մասնակցելը կարող է լինել փարաբնույթ ձեռնարկ, այդ թվում՝ նաև զինված ուժերում ծառայելով: Եթե համեմատություն անցկացնենք այլ երկրների սահմանադրական նորմերի հետ, ապա կրեանենք, որ փարբեր սահմանադրաիրավական կարգավորումներ գոյություն ունեն: Մի դեպքում՝ Սահմանադրությամբ ուղղակի պարտականություն է սահմանված ծառայել զինված ուժերում, մեկ այլ դեպքում՝ պաշտպանությանը մասնակ-

ցելու կամ այդ երկու պարավորությունների համադրմամբ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 59-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ռուսաստանի Դաշնության քաղաքացու պարտքն ու պարտականությունն է հայրենիքի պաշտպանությանը մասնակցելը:

2. Ռուսաստանի Դաշնության քաղաքացին զինված ուժերում ծառայում է դաշնային օրենքին համապատասխան:

3. Ռուսաստանի Դաշնության այն քաղաքացիները, որոնց համոզմունքներին կամ կրոնական դավանանքին հակասում է զինվորական ծառայություն անցնելն, ինչպես նաև դաշնային օրենքով նախատեսված այլ դեպքերում իրավունք ունեն փոխարինելու այլընտրանքային քաղաքացիական ծառայությամբ»:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ ոչ միայն համադրվել է ամրագրվել են հայրենիքի պաշտպանության եւ զինված ուժերում ծառայելու եզրույթները, այլ նաև սահմանադրական մակարդակի է հասցվել անձի դավանանքից եւ համոզմունքից ելնելով այլընտրանքային քաղաքացիական ծառայություն անցնելու նորմը: «Նայրենիքի պաշտպանություն» բառակապակցության իմաստից կարելի է մի քանի եզրահանգում անել, որոնք առարկայական նշանակություն ունեն համապատասխան սահմանադրական պարտականության բնույթի համարժեք մեկնաբանման, դրա նշանակության, հստակեցման ուղիների եւ իրագործման ձևերի համար: Առաջին հերթին խոսքը վերաբերում է հենց պաշտպանությանը, այսինքն՝ ագրեսայի եւ հայրենիքի շահերի ուրահահարման այլ ձևերի հակադարձմանը: Երկրորդ՝ խոսքը ոչ թե ուղղակի պետության մասին է, ինչպես, ասենք, ինչ-որ միավորման, այլ Նայրենիքի՝ Նախաստանի Նանրապետության՝ մեր պետական կազմավորման մասին, որի շահը գերակա է այնպիսի արժեքների նկատմամբ, ինչպիսիք են քաղաքական հայացքների փարբերությունը, սոցիալական ծագումը, պետության ղեկավարության գործունեության զնահատումը եւ այլն: Երրորդ՝ «Նայրենիքի պաշտպանություն» բառակապակցությունը հոլովվում է այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են «պարտք» եւ «պարտականություն», եւ դա նշանակում է, որ հայրենիքի պաշտպանությունը, մի կողմից, հանդիսանում է իրավաբանորեն ձեւակերպված յուրաքանչյուր քաղաքացու բարոյական պարտականությունը եւ դրանով իսկ՝ սահմանադրական պարտավորությունը, մյուս կողմից՝ այդ պարտականությունը կարող է հստակեցված լինել օրենսդրական ակտերով: Այսպիսով, հայրենիքի պաշտպանությանը քաղաքացու մասնակցությունը կարող է սահմանվել օրենսդրի կողմից (զինվորական ծառայություն), ինչպես նաև ագրեսիայի, օկուպացիայի եւ այլ դեպքերում դրսեւորվել հենց քաղաքացու կողմից (պարտիզանական պայքար, օկուպացիոն իշխանությունների որոշումների սաբոտաժ եւ այլն):

Նայրենիքի պաշտպանությունն իրականացնող անձինք՝ պարտիզանական եւ կամավորական ջոկատների, դիմադրության շարժումների մասնակիցները, զինված ուժերի ներկայացուցիչները, ըստ 1977թ. հունիսի 8-ի՝ Պատերազմի զոհերի պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության՝ ունեն կոմբատանտների կարգավիճակ, այսինքն՝ օրինական կովող են համարվում եւ նրանց վրա փարածվում են պատերազմի օրենքներն ու կանոնները: Չորրորդ՝ փվյալ պարտականությունը, այն մասով որով չի վերաբերում օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական ծառայությանը, հավասար կերպով փարածվում է ՆՏ բոլոր քաղաքացիների վրա՝ անկախ սեռից, փարիքից եւ այլ հանգամանքներից, եւ կարող է արտահայտվել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ձևերով: Մասնավորապես, հայրենիքի պաշտպանության բնույթն ու նորմարիվ բովանդակությունը ենթադրում է անհամարելելիություն օկուպա-

ցիոն իշխանությունների հետ համագործակցության հարցում. դրանց որեւէ կարգի աջակցության ցուցաբերում: Նման համագործակցությունը չի կարող արդարացվել սեռի, փարիքի, համոզմունքների, դավանանքի կամ այլ հանգամանքներով: Տինգերոդը՝ մեկնաբանվող սահմանադրական նորմում առկա պարտականությունը սահմանում է քաղաքացու վարքը ոչ միայն արտաքին սպառնալիքների պարագայում, այլ նաեւ պարտավորեցնում է նրան պետության ինքնիշխանության, անկախության, ՏՏ փարածքային ամբողջականության և սահմանադրական կարգին սպառնացող ցանկացած ներքին վտանգի դիմագրավում՝ անկախ դրանց ծագման աղբյուրից: ՏՏ զինված ուժերում ծառայելու պարտականությունը վերաբերում է ՏՏ քաղաքացիներին, որոնք «Զինապարտության մասին» ՏՏ օրենքի հիման վրա իրականացնում են ժամկետային և պահեստագորային ծառայություն: Ընդ որում, ժամկետային ծառայությունը լինում է պարտադիր և պայմանագրային:

Պարտադիր զինվորական ծառայության են գորակոչվում 18-27 փարեկան արական սեռի քաղաքացիները և մինչեւ 35 փարեկան առաջին խմբի պահեստագորի սպաները, ովքեր առողջական վիճակի պարճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Պայմանագրային զինվորական ծառայության կարող են անցնել կամավոր հիմունքներով, զինծառայության համար պիտանի ճանաչված, արական և իգական սեռի ներկայացուցիչները՝ ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով: ՏՏ քաղաքացիների զինվորական ծառայություն անցնելու կարգը և պայմանները մանրամասն կարգավորվում են Տայաստանի Տանրապետության «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Պաշտպանության մասին», «Այլընտրանքային ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքներով, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով: Մասնավորապես, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՏՏ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է.

« Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

1) շարքային կազմի համար՝ 24 ամիս.

2) առաջին խմբի պահեստագորի սպաների համար՝ 2-3 փարի:

Անհրաժեշտության դեպքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունը կարող է երկարաճգվել մինչեւ երկու ամիս ժամկետով»:

Նույն հոդվածի 5-րդ մասով պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝ սպաների համար՝ 3-5 փարի, ենթասպաների համար՝ 3-5 փարի, ավագների, սերժանտների և շարքայինների համար՝ 2-3 փարի, իսկ առանձնահատուկ դեպքերում՝ 3-6 ամիս՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ: Իսկ ռազմաուսումնական հաստատություններն ավարտած սպաների համար այն նախատեսվում է 20 փարի (ներառյալ ուսման ժամկետը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն): Նախատեսվում է նաեւ, որ առանձին զինծառայողների և նրանց խմբերի (կազմերի) պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունը պետական լիազոր մարմնի ղեկավարը կարող է երկարաճգել մինչեւ մեկ ամիս ժամկետով:

Օրենքի հիշյալ հոդվածը սահմանում է նաեւ (մաս 6) զինծառայողների ժամկետային զինվորական ծառայության և պահեստագորում գտնվելու սահմանային (առավելագույն) փարիքը: Առանձնահատուկ դեպքերում սահմանային փարիքի հասած զինծառայողների ժամկետային զինվորական ծառայության ժամկետներն օրենքով սահմանված կարգով կարող են երկարաճգվել մինչեւ 5, իսկ բարձրագույն սպայական կազ-

մի դասախոսական, լրագրական, գրահրապարակչական, գիտահետազոտական, բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող զինծառայողներինը, ինչպես նաև պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչներինը՝ մինչև 10 փարի ժամկետով:

Օտարերկրյա պետությունների գորամասերում ու ռազմաուսումնական հասարակություններում Ղայասրանի Ղանրապետության քաղաքացիների ծառայությունը եւ ուսումնառությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների քաղաքացիների ծառայությունը եւ ուսումնառությունը Ղայասրանի Ղանրապետության գորամասերում ու ռազմաուսումնական հասարակություններում կարգավորվում են միջպետական պայմանագրերով:

Ղաշվի առնելով զինծառայության կազմակերպման կարեւորությունը եւ բարդությունը՝ օրենսդրությունը ՂՂ Մահմանադրությունից բխող պարտավորություններ է սահմանում պետական մարմինների, կազմակերպությունների համար, մասնավորապես՝ ՂՂ Նախագահի, կառավարության, մարզպետների, համայնքապետի, զինկոմիսարիարների, ոստիկանության, նախաքննության եւ հետաքննության մարմինների, դատարանների, առողջապահական մարմինների եւ այլ մարմինների ու պաշտոնատար անձանց համար:

Ղերեւապես, մեկնաբանվող հոդվածը վերաբերում է քաղաքացիների սահմանադրական պարտականությանը: Մակայն դա չի նշանակում, որ Մայր հայրենիքի պաշտպանությանը չեն կարող մասնակցել օտարերկրացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք: Մերը եւ հարգանքը հայրենիքի նկատմամբ ամենեւին վերապահված չէ միայն ՂՂ քաղաքացիներին, այլ մարդու բարոյական ընտրությունն է եւ որդիական վերաբերմունքը՝ իր աջակցության կարիքն ունեցող հայրենիքի նկատմամբ:

ՂՂ Մահմանադրությունը, ինչպես նաև ժամանակակից շար ժողովրդավարական երկրների հիմնադիր ակտերը չեն նախատեսում շահագործման դեմ պայքարելու իրավունք, որն առաջին անգամ՝ 1776թ., ազդարարվել է ԱՄՆ Անկախության մասին հռչակագրով եւ 1789թ. Մարդու եւ քաղաքացու իրավունքների փարիզյան հռչակագրով: Ներկայումս փարաբնույթ ձեւերով այդպիսի նորմեր են պարունակում մի շարք պետությունների սահմանադրություններ, որոնք վերջերս են թողափել ամբողջափրկության կամ ռազմական դիկտատուրայի լուծը:

Ղայրենիքի պաշտպանությունը չի կարող հանգեցվել լոկ զինված ուժերում ծառայելու կամ արտաքին ագրեսիային դիմագրավելու պարտականության, այսինքն՝ պետության միասնականության եւ ամբողջականության՝ արտաքին ուրնձգություններից պաշտպանելուն: Այն նշանակում է նաև պաշտպանել հայրենիքն իշխանության բռնազավթումից կամ սահմանադրական կարգի նկատմամբ ցանկացած ներքին ուրնձգությունից: Վերջինիս դեպքում այն ուրնձգություն է ժողովրդի հավաքական կամքով /հանրաքվեով/ հիմնադրված ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության նկատմամբ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք ամրագրել, որ մեկնաբանվող հոդվածի բովանդակային մեկնաբանությունը հանգեցնում է ոչ միայն յուրաքանչյուր քաղաքացու՝ զինված ուժերում ծառայելու սահմանադրական պարտականության, այլ նաև յուրաքանչյուր քաղաքացու եւ պաշտոնատար անձի՝ իր գործունեությամբ Ղայասրանի Ղանրապետության քաղաքական, ւրնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական համակարգերի ամրապնդմանն ու հզորացմանը նպաստելու պարտականության:

ՆՈՂՎԱԾ 47

1. Յուրաքանչյուր որ պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապարտությունը:

2. Արգելվում է իրավունքների եւ ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական արելություն բողոքելու, բռնություն կամ պարերսզմ քարոզելու նպատակով:

1. Սահմանադրության 47-րդ հոդվածի մեկնաբանության համար կարեւոր նշանակություն ունի «իրավական պարտականություն» եւ դրան թղթակցող «սուբյեկտիվ իրավունք» հասկացությունների բովանդակությունը, քանի որ հոդվածն ամրագրում է ընդհանուր բնույթի սահմանադրաիրավական պարտականություն: Ընդհանրապես իրավական կարգավորումն իրականացվում է սուբյեկտիվ իրավունքների ու իրավական պարտականությունների սահմանման միջոցով: Նենց դրանով է իրավական կարգավորումը փարբերվում սոցիալական այլ կարգավորիչներից:

Սուբյեկտիվ իրավունքն իրավագոր անձին պարկանող հնարավոր (թույլատրվող) վարքագծի չափն է՝ ուղղված նրա շահերի բավարարմանը, որի բովանդակությունը որոշված է համապարասխան իրավական նորմերով: Սուբյեկտիվ իրավունքն ապահովված է այլ անձանց իրավական պարտականություններով: **Իրավական պարտականությունը** պարտավոր անձին ներկայացված անհրաժեշտ վարքագծի պահանջն է, որին անձը պետք է հետեւի ի շահ իրավագորի, եւ որն ապահովված է պետական հարկադրանքով: Պարտականությունը սահմանվում է ոչ թե կամայականորեն, այլ իրավական նորմերին համապարասխան: Դրա համար էլ այն կոչվում է իրավական: Որպես լրացուցիչ երաշխիք՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Սուբյեկտիվ իրավունքները եւ պարտականությունները փոխկապված են: Այս պարագայից ելնելով՝ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր որ պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապարտությունը: Նասարակության մեջ մարդիկ գտնվում են որոշակի փոխադարձ կապերի մեջ: Մարդու իրավունքներ-հնարավորությունները կարող են իրականացվել միայն այն դեպքում, եթե մյուսները կրում են այլոց հնարավորությունների ապահովման պարտականություն: Նեպետաբար, յուրաքանչյուրն առանձին վերցրած պարտավոր է ապահովել եւ պահպանել ուրիշի իրավունքները: Իրավունքը եւ պարտականությունը միասնական են: Մարդու իրավունքներից բխում են մարդու պարտականությունները: Մարդը միաժամանակ ե՛լ իրավունքի, ե՛լ պարտականության սուբյեկտ է: Ամեն մի իրավունք անխուսափելիորեն ծնում է պարտականություն, իսկ պարտականությունները շարժառիթավորված են իրավունքով: Չէ՛ որ պարտականություններն իրավունքների ապահովման եղանակն են: Իրավունքը ներածված է պարտականությամբ, իսկ պարտականությունը՝ իրավունքով: Դրանց միասնությունն անխզելի է: Չկա իրավունք՝ առանց պարտականության, եւ պարտականություն՝ առանց իրավունքի: Առանց պարտականության իրավունքները դարարկ հնչյուններ են: Պարտականությունների բարեխիղճ կա-

փարունը մարդու իրավունքների բարոյաիրավական նախադրյալն է:

Մարդու իրավունքներն սրելծում են մարդու ազատությունը, իսկ ազատությունը ենթադրում է պարտականություններ եւ պարտասխանաբարվություն: Եթե իրավունքներն արտահայտում են մարդու ինքնավարությունը, ազատությունը, ապա պարտականությունները՝ իրավական սահմանափակվածությունը: Պարտականությունը չկատարելը, խախտելը հանգեցնում է պարտասխանաբարվության: Նասարական կյանքի ներդաշնակության աբսոլյուտն է «Իրավունքներ՝ գումարած պարտականություններ, ազատություն՝ գումարած պարտասխանաբարվություն»: Դա բնական, բանական, արդարացի եւ ժողովրդավարական աբսոլյուտն է, որի խախտումը կրանի հասարակական աղեփի:

Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մյուս ընդհանուր պարտականությունը հռչակում է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները»: Սահմանադրության այս հոդվածում օգտագործված «յուրաքանչյուր ոք» հասկացությունն ունի լայն բովանդակություն եւ ենթադրում է իրավունքի բոլոր հնարավոր սուբյեկտներին: Այսինքն՝ սահմանադրական այս պարտականության հասցեատերեր են հանրային-իրավական սուբյեկտները՝ պետությունը եւ նրա մարմինները, րեղական ինքնակառավարման մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, անհատները, կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները, սոցիալական ընդհանրությունները:

Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պարտականության բովանդակության ճիշտ մեկնաբանման համար կարեւոր նշանակություն ունի նաեւ «պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները» ձեւակերպման իմաստի բացահայտումը: «Պահպանել» հասկացությունն իրավունքի րետության մեջ դիրարկվում է որպես իրավունքի նորմերի կենսագործման ձեւերից մեկը՝ օգտագործման, կատարման եւ կիրառման հետ մեկտեղ: Պահպանումն իրավական նորմի կենսագործման այն ձեւն է, երբ իրավունքի սուբյեկտը ձեռնպահ է մնում իր վրա դրված արգելքի խախտումից: Սակայն սահմանադրական մեկնաբանվող նորմում «պահպանում» հասկացությունն օգտագործված է լայն իմաստով եւ որպես իրավական պարտականություն ենթադրում է ինչպես Սահմանադրությամբ եւ օրենքներով արգելված արարքների կատարումից ձեռնպահ մնալը, այնպես էլ դրանցով պարտադրվող որոշակի ակտիվ գործողությունների կատարումը եւ իրավական պարտասխանաբարվություն կրելու պարտականությունը:

Այսպիսով, Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պարտականությունն իրավական օրինականության սկզբունքի պահանջների վերաձեւակերպումն է սուբյեկտիվ իրավական պարտականության րեսքով: Որպես օբյեկտիվ իրավունքի սկզբունք՝ իրավական օրինականությունը պետությունից եւ նրա մարմիններից առաջին հերթին պահանջում է իրավունքի արտացոլում օրենքում, իսկ այնուհետեւ իրավական օրենքի գերակայությունից եւ համապարտադիրությունից բխող ընդհանուր պահանջ ուղղված յուրաքանչյուրին եւ բոլորին՝ անշեղ կենսագործել /պահպանել, կատարել, կիրառել/ Սահմանադրությունը եւ օրենքները²⁴⁷:

²⁴⁷ Իրավական օրինականությունը՝ որպես իրավունքի սկզբունք, բաղկացած է երկու մասից: Առաջին՝ իրավաօրինականություն, որը պետական ապարատի իրավաստեղծ մարմիններից պահանջում է պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները, պահանջները, սկզբունքները եւ ընդունել միայն իրավական բնույթ ունեցող նորմատիվ ակտեր: Երկրորդ՝ օրինականություն, որը բոլորին ներկայացված պահանջ է՝ բարեխիղճ եւ անշեղ պահպանել եւ կատարել օրենքները եւ ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, գործող պոզիտիվ իրավունքի բոլոր նորմերը, կարգադրագրերը:

2. Նողվածի երկրորդ մասն ամրագրում է իրավունքների չարաշահման արգելման սկզբունքը: Այդ մասում ամրագրված դրույթը որպես իրավունքների չարաշահման ձեւեր առանձնացնում է սահմանադրական կարգի բռնի փապալումը, ազգային, ռասայական, կրոնական արելության բորբոքումը, բռնության կամ պարերազմի քարոզումը:

Սահմանադրության պահպանության եւ, անհրաժեշտության դեպքում, նաեւ իրավասու մարմինների կողմից պաշտպանության օբյեկտ է հանդիսանում սահմանադրական կարգը: Վերջինս բնորոշվում է որպես պետության ձեւի (կառավարման ձեւի, պետական կառուցվածքի եւ քաղաքական ռեժիմի)՝ Սահմանադրությամբ ամրագրված փարերի ամբողջություն: Սահմանադրական կարգը բացահայտում է պետության էությունը, սոցիալական նշանակությունը, խնդիրները եւ գործառնությունները, բնակչության հեք պետության ունեցած փոխհարաբերությունների բնույթը: «Սահմանադրական կարգ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտված է ՏՏ սահմանադրական դապարանի 2008թ. հոկտեմբերի 14-ի ՄԴՈ-766 որոշման մեջ: Վերջինիս 6-րդ կետում, մասնավորապես, նշված է. «Երկրի սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման, անհար-պետություն փոխհարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համակարգը: Վերջինիս հիմքում դրվող արժեքների եւ սկզբունքների ամբողջականությունն առանձնացվում է որպես երկրի սահմանադրական կարգի հիմունքներ: Նասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման եւ անհար-պետություն փոխհարաբերությունների կարգը չի կարող սահմանվել կամ փոփոխության ենթարկվել այլ կերպ ու այլ ձեւերով եւ մեթոդներով, քան նախարեսված է Սահմանադրությամբ»:

Ի պահպանություն սահմանադրական կարգի՝ մեկնաբանվող սահմանադրական դրույթն արգելում է իրավունքների եւ ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի փապալելու նպատակով: Այս դրույթում խոսքը վերաբերում է հենց բռնի փապալմանը: Ներեաբար, Սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված ընթացակարգերին համապատասխան սահմանադրական կարգի փոփոխման՝ ցանկացած կոչ կամ պահանջ է, որ արգելվում է այս դրույթի շրջանակներում: Միաժամանակ, չի կարելի նաեւ ավելորդ լայն մեկնաբանություն րալ «բռնի» հասկացությանը: Խոսքը րվյալ դեպքում վերաբերում է բռնության կիրառմանը: «Սահմանադրական կարգը րապալել» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՏՏ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի դիսպոզիցիայում: Նամաձայն այդ սահմանման՝ սահմանադրական կարգի րապալումը Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախարեսված որեւէ նորը փաստացի վերացնել է, որն արտահայտվում է իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ:

Ինչ վերաբերում է ազգային, ռասայական եւ կրոնական արելության բորբոքում հասկացություններին, ապա այս կապակցությամբ առաջին հերթին հարկ է խուսափել դրանց քրեաիրավական եւ սահմանադրաիրավական դրսետորումները միմյանց հեք շփոթելուց: Սահմանադրական իրավունքը նշված ձեւակերպումը դիտարկում է ավելի լայն սոցիալական կրրվածքով: Արգելելով ազգային արելության բորբոքումը՝ Սահմանադրությունը որպես ազգամիջյան հարաբերությունների հիմք է ամրագրում ազգերի իրավահավասարությունը, ազգերի միջեւ համագործակցությունը, ազգային ինքնիշխանությունը: Արգելելով կրոնական արելության բորբոքումը՝ Սահմանադրությունը որպես կրոնի հանդեպ ունեցած վերաբերմունքի հիմք է ամրագրում կրոնական հանդուրժողականությունը:

«Բորբորում» հասկացությունը, եթե ելնենք դրա էթիմոլոգիայից, ենթադրում է ակտիվ գործունեություն, որն ուղղված է համապատասխան նպատակների հասնելուն: Այդ գործունեությունը կարող է դրսևորվել քարոզչության, զանգվածային միջոցառումների կազմակերպման միջոցով: Նման գործունեության նպատակը հանդիսանում է մի ազգության նկատմամբ անվտանգության կամ անհարգալից վերաբերմունք ձևավորելը, մի ազգության առաջնայնությունը մյուսի նկատմամբ ապացուցելը, մի ազգության սովորույթների, կենցաղի եւ կենսակերպի նկատմամբ անհանդուրժողականություն դաստիարակելը, կրոնական խմբավորումների օրինական շահերի եւ իրավունքների ոտնահարումը:

Իրավունքների չարաշահման սահմանադրական արգելքն իր իրացումն է գրել ՎՎ քրեական օրենսգրքի 300.1 եւ 301-րդ հոդվածներում, որոնք համապատասխանաբար որպես քրեորեն պարժելի արարք են ամրագրում սահմանադրական կարգի փաստալուծումը, իշխանությունը զավթելուն, փարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի փասպալելուն ուղղված հրապարակային կոչերը: ՎՎ սահմանադրական դատարանը, գնահատելով ՎՎ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի սահմանադրականությունը, այդ հոդվածի բովանդակությունը դիտարկել է ՎՎ Սահմանադրության 47-րդ հոդվածի համապետքաբար այդ կապակցությամբ ամրագրելով հետեւյալը. «Այս համապետքաբար սահմանադրական կարգը բռնի փասպալելու նպատակով իրավունքների եւ ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ իրավունքների չարաշահման արգելք է նախատեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախատեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն եւ այլն), անիրագործելի դարձնելուն»:

ՎՎ քրեական օրենսգրքի առանձին հոդվածներ (104, 113, 119, 185, 265-րդ), ՎՎ Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, ազգային, ռասայական կամ կրոնական արելության կամ թշնամանքի շարժառիթն ամրագրում են որպես որակյալ հանցակազմի փայրք:

Իրավունքների չարաշահման արգելման սկզբունքն ամրագրված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածում: Ըստ Եվրոպական դատարանի կողմից այդ սկզբունքին փրված մեկնաբանության՝ «Ոչ ոք չի կարող վկայակոչել կոնվենցիոն դրույթները՝ ժողովրդավարական հասարակության գաղափարներն ու արժեքները թուլացնելու կամ վերացնելու նպատակով: Ներեաբար, ժողովրդավարական հասարակության կայունությունն ու արդյունավետությունը երաշխավորելու համար պետությունից կարող է պահանջվել իրականացնել որոշակի միջոցառումներ այդ արժեքները պաշտպանելու նպատակով: ...Բազմակարծությունը եւ ժողովրդավարությունը հիմնվում են փոխհամաձայնության վրա, ինչը պահանջում է փոքրեր զիջումներ անհատների կողմից, ովքեր պետք է երբեմն պատրաստ լինեն սահմանափակելու իրենց ազատությունները՝ երկրի կայունությունը որպես ամբողջություն երաշխավորելու համար: ...Կոնվենցիայի 17-րդ հոդվածի հիմնական նպատակներից է կանխել փոփոխության կամ ժայրահեղական խմբավորումների կողմից իրենց գործունեությունը Կոնվենցիայի դրույթներով արդարացնելը (Զդանոկան ընդդեմ Լատվիայի գործով 2004թ. հունիսի 17-ի վճիռը²⁴⁸, կետեր 79 եւ 80, 109):

²⁴⁸ Zdanoka v. Latvia, Judgment of June 17, 2004

ՆՈՂ-ՎԱԾ 48

1. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

1) պաշտպանել և հովանավորել բնությանիջը, մայրությունը և մանկությունը.

2) նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը.

3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.

4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մարչելի բժշկական սպասարկման պայմանների սպեղծմանը.

5) նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին.

6) խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.

7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.

8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը.

9) նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը.

10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն.

11) նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը.

12) ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:

2. Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

1. Մեկնաբանվող հոդվածն ամբողջությամբ իր ամրագրումն է սրացել 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում եւ այն թղթակցում է Սահմանադրության 2-րդ գլխի գրեթե բոլոր հոդվածների հետ: Ընդ որում, նշված հոդվածով հռչակելով տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները՝ Սահմանադրությամբ հատուկ կարեւորվեց այդ խնդիրների լուծման անհրաժեշտությունը, արդիականությունը եւ հրապարակությունը:

Ակնհայտ է, որ Սահմանադրության «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» գլխում ամրագրված պետության հիմնական խնդիրներն ինքնին կոչված են երաշխավորելու տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում հենց մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացումը:

Նարկ է նշել, որ մարդու փնտրեսական, սոցիալական և մշակութային ոլորտի իրավունքների հիմնախնդիրը մասնագիտական գրականության մեջ ստացել է, այսպես կոչված, «**երկրորդ սերնդի իրավունքներ**» անվանումը: Այդ իրավունքները ձեռք են բերել փեսական հիմնավորում և իրավական նշանակություն միայն սոցիալիզմի գաղափարների զարգացման ընթացքում աշխարհավորների սոցիալական ու փնտրեսական դրության բարելավման համար պայքարի արդյունքում:

Սակայն կան նաև այլ փեսակետներ առ այն, որ մարդու իրավունքների համար միջազգային պայքարն սկիզբ է դրվել ավելի վաղ, երբ անհատի ինքնուրույնության ու ազատության մասին գաղափարները, այդ թվում՝ պետության անմիջական մասնակցությամբ անհատների հավասարության ապահովման վերաբերյալ, ձևավորվել են XVIII դարից սկսած (Ս.Միլլեր, Շ.Մոնպերյո, Ժ. Ժ. Ռուսո, Բ.Կոնստան, Լ.Սմիթ և ուրիշներ):

Այնուամենայնիվ, փնտրեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում մարդու և քաղաքացու իրավունքները փարբեր երկրների սահմանադրություններով փարբեր իրավակարգավորում են ստացել: Մինչև XX դարի առաջին կեսերը սահմանադրական մակարդակում նման իրավակարգավորման մասին խոսք կարող էր գնալ միայն նախկին սոցիալիստական երկրների՝ ԽՍՀՄ-ի և Մոնղոլիայի սահմանադրություններում: Այդ ժամանակաշրջանում, որպես բացառություն, սահմանադրական նման դրույթներ բովանդակում էին նաև նացիստական Գերմանիայի և Մեքսիկայի հիմնական օրենքները:

Միայն Երկրորդ աշխարհամարտից հետո այս խմբի իրավունքների ու ազատությունների սահմանադրական կարգավորման նկատմամբ ուշադրությունն աճեց: Այսպես, Իտալիայի, Պերուի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Բրազիլիայի և այլ երկրների հիմնական օրենքներում ճանաչվեցին ու ամրագրվեցին փնտրեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքները: Ավելին, Պորտուգալիայի Սահմանադրություն ներմուծվեցին հատուկ գլուխներ, որոնք վերաբերում էին փնտրեսական իրավունքներին ու ազատություններին (հ. 58-62), սոցիալական իրավունքներին ու ազատություններին (հ. 63-72) և մշակութային ոլորտի իրավունքներին ու ազատություններին (հ. 73-79):

Այս խմբի իրավունքների մեծ մասը չի դասվում սուբյեկտիվ իրավունքների շարքին և դրանով պայմանավորված չեն հանդիսանում դատական պաշտպանության ենթակա իրավունքներ: Եվ այդ առումով, եթե այդ իրավունքների սահմանադրական ամրագրումը, մի կողմից, մեծապես կրում է հռչակագրային բնույթ, ապա, մյուս կողմից, այդպիսի ամրագրման արդյունքում մատնանշվում են այն չափորոշիչները, որոնց պետք է ձգտեն պետություններն իրենց կողմից իրականացվող քաղաքականության միջոցով: Իսկ այդ իրավունքների իրացումն ամբողջությամբ կոչված է ապահովելու քաղաքացու ազատությունները հենց փնտրեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում, ինչպես նաև փախ է այն հնարավորությունը, որպեսզի յուրաքանչյուրը բավարարի իր կենսական պահանջմունքները:

Քանի որ հասարակության սրվար զանգվածը չի կարող լուծել իր կենսասպահովման հարցը և, պահպանելով իրենց ազատությունը, նրանք միաժամանակ կախվածության մեջ են գրվելու հասարակության այն անդամներից, որոնց շահերը և հնարավորությունները գրեթե այլ են: Դրա համար՝ հասարակության համընդհանուր շահերով պայմանավորված, անհրաժեշտություն է առաջանում պաշտպանելու մարդու կենսական իրավունքները ոչ միայն փնտրեսական կամայականություններից ու սոցիալական անար-

դարությունից, այլև հնարավորություն է ընձեռվում նրա հոգեւոր զարգացման և ունակությունների դրսեւորման համար:

Այդ առումով պետությունը չի կարող, և պարտադիր չէ, բաժանել քաղաքացիներին նյութական կամ հոգեւոր «բարիքներ» այնքանով, որքանով, օրինակ, շուկայական փոփոխության պայմաններում այդ բարիքների բաշխման ոչ բոլոր մեխանիզմներն են գործում փոխադրական ձեռքում, կամ պետությունը չպետք է միջամտի անձի մասնավոր կյանքին ու սրանձնի մարդու գիտակցության, զգացմունքների և մտքի նկատմամբ վերահսկողության գործառույթը:

Այսինքն՝ փոփոխական, սոցիալական ու մշակութային ոլորտներում իրավունքների իրականացումն ուղղակի կախվածության մեջ է դրվում պետության փոփոխական կամ նյութական հնարավորությունից: Սակայն պետությունը պարտավոր է ապահովել այն հնարավորությունը, որպեսզի քաղաքացիները պաշտպանեն իրենց արժանապատվությունը՝ որպես իրավունքների ու ազատությունների անբակտերի հիմք:

Նենց այդպիսի մոտեցում է որդեգրված հատկապես ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ՄԱԿ-ի 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Եվրոպայի խորհրդի 1996 թվականի Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում, որոնք Նայաստանի Նանրապետության համար ուժի մեջ են մտել համապատասխանաբար՝ 1992 թվականի մարտի 2-ից, 1993 թվականի դեկտեմբերի 13-ին և 2004 թվականի փետրվարի 24-ին: Ընդ որում, հիշյալ փաստաթղթերում զեպտեղված են նորմեր, որոնք պարտավորեցնում են պետություններին, իրենց նյութական պաշարներից ելնելով, ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացմամբ պայմանավորված պարտականությունների առավելագույն կատարումը:

Նիշարակվածից հետեւում է, որ պետություններն իրենց կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում պետք է ձգտեն հասնել այդ իրավունքների արդյունավետ իրականացմանը:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը հռչակում է պետության հիմնական խնդիրները փոփոխական, սոցիալական և մշակութային ոլորտներում: Դա նշանակում է, որ պետությունը՝ ի թիվս այլ խնդիրների, սրանձնում է այնպիսի պարտավորություններ, որոնք ունեն հիմնարար նշանակություն և ուղղված են մարդու ու քաղաքացու փոփոխական, սոցիալական և մշակութային հիմնական իրավունքների լիակատար ու աստիճանական իրականացմանը: Այդ է վկայում նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված դրույթը, ըստ որի՝ «Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է ... առաջադիմորեն հասնելու համար Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը...»:

Չնայած պետության փոխյալ ոլորտի հիմնական խնդիրները սոսկ հռչակվում են Մահմանադրությամբ, սակայն դրանց իրականացման փոփոխական և իրավական ապահովման երաշխիքներ սահմանելը թողնվում է Մահմանադրության հիման վրա և դրան համապատասխան ընդունվող իրավական ակտերին:

Դրա համար պետությունը, անշուշտ, պետք է փիրապետի նյութական, քաղաքական և իրավական միջոցների, այլ կերպ ասած՝ ունենա փոփոխական, քաղաքական, իրավական և փաստական պայմաններ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի ստեղծել անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների արդյունավետ իրացման համար:

1) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հռչակում է, որ պետության հիմ-

նական խնդիրն է **պաշտպանել եւ հովանավորել ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը**: Դա նշանակում է, որ ընտանիքը, մայրությունը, հայրությունը եւ մանկությունը Հայաստանի Հանրապետությունում գտնվում են հասարակության ու պետության հովանավորության եւ պաշտպանության ներքո:

Ընտանիքի՝ որպէս հասարակության բնական ու հիմնական բջիջ, եւ մայրության, հայրության ու մանկության միասնությունն իրենից ներկայացնում է հասարակության վիճակը բնութագրող արժեքային ինքնուրույն համակարգ: Ընդ որում, սոցիալական այդ արժեքներն ունեն համալիր բնույթ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանց պաշտպանությունն իրականացվում է պետության կողմից՝ փոփոխական, իրավական եւ սոցիալական խնդիրների կենսագործման միջոցով:

Հարկանշական է այն հանգամանքը, որ մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթներից թերեւս ընտանիքի, մայրության եւ մանկության պաշտպանության երաշխավորվածությունը ոչ միայն պետության հիմնական խնդիրն է, այլեւ՝ պարտականությունը: Եվ պարտական չէ, որ ՄԱԿ-ի 1966 թվականի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածը երաշխավորում է ընտանիքի պաշտպանված լինելու, այդ թվում՝ ամուսնության, ընտանիքի անդամների ու ամուսինների իրավահավասարության իրավունքները եւ մեծ նշանակություն է փրկում այդ պաշտպանությանն ուղղված պետությունների կողմից օրենսդրական, վարչական եւ այլ բնույթի միջոցների ձեռնարկմանը: Նույնը, բնականաբար, վերաբերում է հիշարակված դաշնագրի 24-րդ հոդվածով եւ ՄԱԿ-ի 1989 թվականի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երեխաների՝ իրենց անչափահաս կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված, իրավունքների հարուկ պաշտպանության երաշխավորվածությանը:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ **ընտանիքի, մայրության, հայրության եւ մանկության պաշտպանությունը**, այսպէս կոչված «պայմանական» այն իրավունքն է, որի արդյունավետ իրացումը պայմանավորված է դարձյալ պետության փոփոխական պայմաններով ու հնարավորություններով: Չնայած հիշյալ միջազգային իրավական ակտերով չեն սահմանվում ընտանիքի, մայրության, հայրության եւ մանկության պաշտպանությանն ուղղված միջոցները, այնուամենայնիվ, դրանցում ամրագրված դրույթների վերլուծությունից բխում է, որ յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է որոշում իր փարածքում ու իր իրավագործության ներքո գտնվող անձանց պաշտպանությունը երաշխավորող իրավունքների իրացման միջոցները, ինչը, բնականաբար, վերաբերում է նաեւ Հայաստանի Հանրապետությանը: «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ 2002թ. դեկտեմբերի 11-ի օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Մայրությունն ու մանկությունը գտնվում են պետության ու հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո եւ աջակցություն ստանալու իրավունք ունեն»: Սակայն ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի նշում, որ մայրությունը, մանկությունը, ինչպէս նաեւ ընտանիքը գտնվում են պետության պաշտպանության ներքո, ինչպէս նշված է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեջ (տե՛ս 38-րդ հոդվածի 1-ին մասը): Դրա փոխարենն Հայաստանի Հանրապետության փարբեր իրավական ակտերում ամրագրված է ամեն մի կնոջ իրավունքը՝ ինքնուրույնաբար որոշելու մայրության մասին հարցը: Մայրությունը՝ իրենից ծնված երեխա ունենալու, նրա նկատմամբ իր ծնողական զգացմունքներն իրացնելու ամենամարդկային այդ զգացումն ունենալն է: Պետությունը հարուկ վերաբերմունք է դրսեւորում մայրության նկատմամբ, մոր նկատմամբ, անկախ նրանից՝

կինն ամուսնացած է, թե՛ ոչ, երեխա է ունեցել օրինական ամուսնության մեջ գտնվելու ընթացքում, թե՛ արքայամուսնական կապերի հետեւանքով: Սահմանված է կանանց հիմնական բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելու հստակ համակարգ:

Ակնհայտ է, որ սոցիալական այդ արժեքների պաշտպանությանը վերաբերող դրույթների հիմքում ընկած է այն գաղափարը, որ ժամանակակից պետությունը պետք է սպանձնի պարավորություններ և ապահովի այնպիսի պայմաններ, որոնց պարագայում ընտանիքը կկարողանա լիակատար իրականացնել իր ներուժը, մայրության սոցիալական, տնտեսական ու իրավական պաշտպանվածությունը կկրի համընդհանուր բնույթ, առանց որեւէ խտրականության ընտանեկան ծագման կամ այլ հատկանիշով՝ երեխաների համար կարեղծվեն խնամքի, դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար պաշտպանության ու օգնության հստակ միջոցներ:

Ինչ վերաբերում է «**հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը**» հասկացության բովանդակությանը, ապա այն ընկալվում է որպես պետության և հասարակության կողմից սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական և բարոյական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կոչված են խթանելու առողջ ընտանիքի և լիարժեք մայրության, հայրության ու մանկության ապահովմանը, ինչպես նաև նպաստելու մայրության ու երեխաների մասին հոգաբարության և նրանց իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետ իրականացմանը: Ի վերջո, այդպիսի հովանավորումն ուղղված է ընտանիքի ամրապնդմանը, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելուն, ընտանիքի անդամների փոխադարձ օգնության և պարասխանաբարության բարձրացմանը, ընտանեկան գործերին որեւէ մեկի կամայական միջամտության բացառմանը, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության ապահովմանը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի իրավունքների անարգել իրականացմանը:

2) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը, այն է՝ **նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքային պայմանների բարելավմանը:**

Բնակչության զբաղվածության ապահովման խնդիրը պետության սոցիալական քաղաքականության կարեւոր բաղադրարարներից է, որն ուղղված է և ծառայում է մարդուն, նպատակաուղղված է նրա արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման համար պայմանների ապահովմանը:

Նախ՝ **բնակչության զբաղվածության** ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ գործունակ անձանց աշխատանքային կամ ձեռնարկարկրական գործունեության որեւէ տեսակով զբաղված համարվելը կամ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունում կամ ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցման գործընթացներում ներգրավված լինելը:

Ակնհայտ է, որ **բնակչության զբաղվածությանը նպաստելու պարավորությունը** պետությունից պահանջում է միջոցներ ձեռնարկել բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար, ինչն իր հերթին կերաշխավորի գործունակ անձանց կենսամիջոցներ ձեռք բերելու հնարավորության իրավունքի պաշտպանությունը: Այդ իմաստով, եթե զբաղվածության պետական քաղաքականության հիմնական խնդիրն աշխատանքի հնարավորության ստեղծումն է, ապա նպատակը՝ լիակատար զբաղվածության հասնելն է:

«Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՆՃ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պեղական այն ծրագրերի իրականացման պահանջը, որոնց կատարումն ինքնին բխում է բնակչության զբաղվածությանը նպաստելու պետության պարտավորությունից: Դրանք են՝ գործազրկությունից պարտադիր սոցիալական ապահովագրության եւ զբաղվածության աջակցության պեղական ծրագրերը:

Նենց հիշատակված ծրագրերի իրականացմամբ է պայմանավորված զբաղվածության պեղական քաղաքականության այնպիսի փարրերի նախատեսումը, ինչպիսիք են՝ գործազրկության նպաստի վճարումը, գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցումը, գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը, աշխատաշուկայի հեղազուրկման եւ կանխատեսման աշխատանքների կազմակերպումը, առանձին խումբ գործազուրկներին փրամադրվող ֆինանսական աջակցությունը, վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպումը եւ այլն:

Մեկնաբանվող դրույթի բովանդակությունից բխում է նաեւ **աշխատանքի պայմանների բարելավմանը նպաստելու պետության պարտավորությունը**: Այն ուղղված է գործատուի կողմից կամայականությունների բացառմանը եւ աշխատանքային արժանավայել պայմանների ապահովմանը:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 1-10-րդ հոդվածներով ամրագրված են դրույթներ, որոնք ուղղված են աշխատանքային պայմանների բարելավման խնդիրների արդյունավետ իրականացմանը: Այդպիսիք են՝ աշխատանքի արդար պայմանների ապահովումը, անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների ստեղծումը, արդարացի վարձատրման ապահովումը, կոլեկտիվ գործարքների կնքման հնարավորությունը, աշխատող կանանց մայրության պաշտպանվածությունը եւ այլն:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի պայմանների բարելավման պահանջը բխում է մեկնաբանվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապված Սահմանադրության 32 եւ 33-րդ հոդվածների բովանդակությունից: Այսպես, արդարացի եւ, պետության կողմից սահմանված, նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների յուրաքանչյուրի իրավունքի իրացումն ի վերջո աշխատանքի պայմանների բարելավման միջոցառումներից է:

3) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ բնակարանային շինարարությունը խթանելու եւ Նայաստանի Նանրապետության յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը նպաստելու վերաբերյալ:

Նիշյալ դրույթի իմաստով, եթե «**խթանել**» հասկացությունն ընկալվում է պետության այն պարտավորությունը, որի կատարումը պետք է հանգեցնի բնակարանային շինարարության խրախուսմանը՝ յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային իրավունքի ամբողջական ու լիակատար իրականացման համար, ապա «**նպաստել**» հասկացության բովանդակությունը ներառում է, նախ՝ պետության կողմից ճանաչվող յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների շարունակական բարելավման իրավունքը, այնուհետեւ, այդ իրավունքի իրացմանն ուղղված այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք առավելագույնս կհամապատասխանեն յուրաքանչյուրի կենսապայմաններին, մշակույթին, կարիքներին ու ցանկություններին:

Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ՆՃ Սահմանադրության 34-րդ

հողվածով երաշխավորված յուրաքանչյուրի և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դա կարող է առնչվել բնակարանային շինարարությանը և բնակարանային պայմանների բարելավմանը: Ընդ որում, մեկնաբանվող դրույթի շրջանակում այդ իրավունքի արդյունավետ իրացումը պետք է պայմանավորված լինի պետության սրանձնած բնակարանային մարզելիության ապահովման պարտավորությամբ:

Բնավ, դա չի նշանակում, որ պետությունը պարտավոր է բնակարաններ կառուցել ամբողջ բնակչության համար կամ դրանք պետք է անվճար տրամադրվեն բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Չնայած այն հանգամանքին, որ Նայաստրասնի Նանրապետությունը հիշյալ հողվածով չի սրանձնել պարտավորություն, սակայն, սկնհայր է, որ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հողվածում ամրագրված դրույթների վերլուծությունը վկայում է, որ այդ իրավունքի արդյունավետ իրացումն ուղղված է որոշակի սոցիալական խմբերի, մասնավորապես՝ անօթեանությունը կանխելուն ու կրճատելուն կամ բնակարանային գներն առավել մարզելի դարձնելուն:

Նայաստրասնի Նանրապետությունում մեկնաբանվող դրույթը կիրառվում է միայն ծնողազուրկ երեխաների, զինծառայողների, այսպես կոչված՝ երիտասարդ «համալսարանականների» և երկրաշարժից տուժած աղետի գոտում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու կամ այդ ընտանիքներին բնակարան տրամադրելու ուղղությամբ («Գյումրի քաղաքի վերականգնման մասին» ՆՏ 2002 թվականի ապրիլի 16-ի ՌՕ-326 օրենքը, ՆՏ կառավարության 2008 թվականի հուլիսի 3-ի 677-Ն որոշումը և այլն):

Այսինքն, ելնելով բնակարանային շինարարությունը խթանելու և Նայաստրասնի Նանրապետության յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանները բարելավելու անհրաժեշտությունից, ինչպես նաև երկրի ֆինանսական ու փնտրասական հնարավորությունից, պետությունը ներկա ժամանակաշրջանում առաջնությունը տալիս է հիշատակված սոցիալական խմբերին, որոնք ունեն բնակարանի բովանդակությանն ու նշանակությանը չհամապատասխանող պայմաններ կամ ընդհանրապես չունեն բնակարաններ:

4) Մեկնաբանվող հողվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը, այն է՝ **իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մարզելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը:**

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ ՆՏ Սահմանադրության 38-րդ հողվածով երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում սրանալու յուրաքանչյուրի իրավունքի իրացումը պայմանավորված է առողջության պահպանման ծրագրերի իրականացմամբ և արդյունավետ ու մարզելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմամբ:

«**Առողջություն**» հասկացությունը մի դեպքում ընկալվում է որպես մարդու և քաղաքացու սոցիալական իրավունք, իսկ մեկ այլ դեպքում՝ որպես անհատի բարեկեցության ու արժանապատվության կարեւոր պայման:

Ինչ վերաբերում է «**առողջության պահպանմանը**», ապա դա ենթադրում է պետության կողմից իրականացվող քաղաքական, փնտրասական, իրավական, սոցիալական, մշակութային, բժշկական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնույթի այն միջոցառումների ամբողջությունը, որոնք ուղղված են բնակչության առողջ ապրելակերպի ապահովմանը: Մասնավորապես՝ վերջինիս բովանդակությունն են կազմում՝

աշխատանքի, կենցաղի ու հանգստի առողջ պայմանների ստեղծումը, ֆիզիկական ու հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, երկարակեցության ու ակտիվ կյանքի խրախուսումը, առողջությունը կորցնելու դեպքում բժշկական պաշտան օգնության ու խնամքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի զարգացումը, պարենային ապրանքների որակի նկատմամբ հսկողության իրականացումը, բնակչության հիգիենիկ եւ հակահամաճարակային անվտանգության ապահովումը, հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, շրջակա միջավայրի ու բնապահպանական իրավիճակի ամրապնդումը:

Սակայն **առողջության պահպանման առաջնայնությունն** առաջին հերթին պետք է վերապահել յուրաքանչյուրին՝ իր առողջության մասին հոգ փանելու եւ ուրիշի առողջության նկատմամբ ուրնձգություն կատարելուց զերծ մնալու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, մեկնաբանվող դրույթի իրացմամբ է պայմանավորված ՏՏ Սահմանադրության 38-րդ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ եւ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների լիակատար ու ամբողջական իրականացումը:

Նայաստանի Նանրապետությունում առողջապահական պետական նպատակային ծրագրերը փարեկան պարբերականությամբ հաստատվում են յուրաքանչյուր փարվա Նայաստանի Նանրապետության պետական բյուջեի շրջանակում, որոնք ընդգրկում են բնակչությանը փրամադրվող պետության կողմից երաշխավորված ոչ միայն անվճար ու արբոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումը, այլեւ՝ բնակչության առողջության առաջնային պահպանման եւ արդյունավետ ու մարչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը²⁴⁹:

Եթե **«բժշկական սպասարկման արդյունավետություն»** հասկացության ներքո նկատի է առնվում մարդու լիակատար առողջություն պահպանելու կամ դրան հասնելու պահանջների ամբողջական ապահովումը, ապա **«բժշկական սպասարկման**

²⁴⁹ ՀՀ սահմանադրական դատարանը դեռեւս 1998թ. փետրվարի 18-ի ՍԴՈ-90 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական պահանջ է պետության կողմից բնակչության առողջության պահպանման ծրագրերի իրականացումը: Օրենքով դրանք բերողվում են որպէս բնակչության առողջության պահպանմանն ուղղված ամենամյա պետական նպատակային ծրագրեր, որոնք, կառավարության կողմից հաստատվելուց հետո, հրատարակվում են լրատվական միջոցներով («Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 1, կետ 3): Ավելին, նույն օրենքով նախատեսված է նաեւ, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում (հոդված 4, մաս 2), ինչպէս նաեւ յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալու անվճար բժշկական օգնություն եւ սպասարկում (հոդված 10):

Չմայած այն բանին, որ հիշյալ օրենքը պաշտոնապէս ուժի մեջ է մտել 1996թ. ապրիլին, սակայն պետական նպատակային ծրագրերի ընդունման առաջին փորձը կատարվել է 1997թ. մայիսին, միաժամանակ ոչ լրիվ արտացոլելով օրենսդրության պահանջները:

Նման վիճակն է նաեւ պատճառը, որ 1997թ. արդյունքներով, հիշյալ ծրագրերի բացակայության պայմաններում, պետական բյուջեով առողջապահությանը հատկացված միջոցների զգալի վերաբաշխում է կատարվել (ՀՀ կառավարության 19.01.1998թ. N 44 որոշում), այն դեպքում, երբ համակարգը գտնվում է անմխիթար վիճակում, իսկ Սահմանադրության առաջին հոդվածով նաեւ սոցիալական պետություն հռչակված Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է անհրաժեշտ ուշադրություն դարձնել բնակչության առողջության պահպանման խնդիրներին»:

Սահմանադրական դատարանի նման իրավական դիրքորոշման առկայության պայմաններում անգամ առողջապահական պետական նպատակային ծրագրերի մշակման եւ իրականացման գործում որակական լուրջ փոփոխություններ տեղի չեն ունեցել (տողատակի հավելումը խմբագրին է - **Գ. Հ.**):

մատչելիություն» նշանակում է առողջապահական ծառայություններից և առողջության համար անհրաժեշտ, այսպես կոչված՝ «նախապայմաններ» համարվող փարքերից (խմելու ջուր, սանիտարական պայմաններ, սնունդ, շրջակա միջավայրի մաքրություն, աշխատանքի հիգիենա) անարգել օգտվելու իրավունքների իրացում:

Առողջության իրավունքի պահպանման պետության պարտավորության շրջանակում ներառվում է արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների սպեկտրումը:

Մեկնաբանվող դրույթի և համակարգային առումով փոխկապակցված սահմանադրական ու միջազգային իրավական այլ նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ այդ պայմանների սահմանման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները, որոնց իրականացումն ինքնին կազմում է պետության պարտավորության բովանդակությունը: Դրանք են՝ 1) բնակչության համար անհրաժեշտ և բավարար թվով առողջապահական ծառայությունների ապահովում, 2) ֆինանսական ու աշխարհագրական առումով առողջապահական ծառայությունների մատչելիություն, 3) որակյալ առողջապահական ծառայությունների մատուցում, 4) առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռում ու հավասարության ապահովում: Իսկ դա նշանակում է, որ Նայաստանի Նանրապետությունում մարդու և քաղաքացու առողջության իրավունքը պաշտպանելու պետության պարտավորությունը համընկնում է մեկնաբանվող դրույթում ամրագրված արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների սպեկտրման պարտավորության հետ:

5) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցությանը նպաստելու վերաբերյալ:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ երիտասարդության հարցերին վերաբերող սահմանադրական այս իրավակարգավորման նշանակությունը պայմանավորված է ոչ միայն քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում սոցիալական այդ խմբի շահերի պաշտպանվածության առանձնահատկությամբ ու անհրաժեշտությամբ, այլև՝ պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական բնույթով օժտվածությամբ:

Նարկ է նկատել, որ ՆՆ կառավարության կողմից 1998 թվականի դեկտեմբերի 14-ին հաստատված «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մասին» թիվ 798 որոշման իմաստով՝ **երիտասարդներ** են համարվում 16-30 տարեկան անձինք:

Երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցությանը նպաստել՝ նշանակում է առանձնահատուկ վերաբերմունքի արժանացնել հիշյալ խմբի անձանց այն առումով, որ իրավական, տնտեսական և կազմակերպական պայմանների ու երաշխիքների սպեկտրում միջոցով նրանք հաղորդակից լինեն ազգային և համամարդկային արժեքներին, պատասխանատվության խոր գիտակցում ունենան հայրենիքի և սեփական ժողովրդի նկատմամբ, ինչն իր հերթին կոչված է նպաստելու երիտասարդ սերնդի համակողմանի զարգացմանը, ինքնահաստատմանն ու ինքնադրսեւորմանը:

Մյուս կողմից, մեկնաբանվող դրույթը բովանդակում է քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում երիտասարդության պաշտպանվածության իրավունքը, որի արդյունավետ կիրառումը պայմանավորված է պետության սրանձնած պարտավորության արդյունավետ կատարմամբ:

Ի դեպ, «**երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երի-**

դասարդության մասնակցություն» հասկացությունն ընկալվում է այնպիսի պայմանների ու երաշխիքների ստեղծում, որոնք կնպաստեն երիտասարդ մարդու սոցիալական կայացմանն ու նրա ստեղծագործ ներուժի՝ ի շահ հասարակության համար առավել լիարժեք օգտագործմանը:

Ինչ վերաբերում է այդ մասնակցությանը նպաստելու պետության պարտավորությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջինս սուբյեկտիվ հասկացություն է և պայմանավորված է որոշակի միջոցառումների իրականացմամբ, որոնք հատուկ են կոնկրետ ժամանակաշրջանին:

Այսպես, օրինակ, ներկա ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի համաձայն՝ այդ քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները հետևյալներն են՝ ա) երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի ստեղծում, բ) երիտասարդության զբաղվածության և աշխատանքի ոլորտում երաշխիքների ապահովում, գ) պետական երիտասարդական կադրային քաղաքականության իրականացում, դ) աջակցություն երիտասարդական ձեռներեցությանը, ե) պետական աջակցություն երիտասարդ ընդհանրությունների, զ) սոցիալական ծառայությունների երաշխավորված մատուցում, է) աջակցություն փառանդավոր երիտասարդությանը, ը) երիտասարդության հոգեւոր ու ֆիզիկական զարգացմանն ու քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությանն ուղղված պայմանների ձեւավորում, թ) աջակցություն երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ժ) աջակցություն միջազգային երիտասարդական համագործակցությանը:

Պետական քաղաքականության իրականացման նշյալ ուղղություններով է պայմանավորված խնդրո առարկա ոլորտում պետության հիմնական խնդրի մատնանշումը:

6) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը խթանելու վերաբերյալ:

Հիշյալ դրույթի իմաստով՝ «**խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը**» հասկացությամբ ընկալվում է պետության այն պարտավորությունը, որի կատարումը պետք է նպաստի ազգային մշակույթի փարատեսակ համարվող ֆիզիկական կուլտուրայի և վերջինիս բաղկացությունը կազմող սպորտի զանգվածայնացմանն ու զարգացմանը, և որը պետք է ուղղված լինի բնակչության առողջության ամրապնդմանը, նրա աշխատունակության բարձրացմանն ու երկարակեցությանը և ֆիզիկապես կոփված սերնդի ձեւավորմանը:

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ 2001 թվականի հունիսի 26-ի ՆՕ-196 օրենքի իմաստով՝ ֆիզիկական կուլտուրան ընկալվում է որպես մարդու առողջ ապրելակերպի և ֆիզիկական կատարելագործման համար հասարակության կողմից ստեղծված ու օգտագործվող հոգեւոր և նյութական արժեքների ամբողջություն, իսկ սպորտը՝ մարդկանց մրցակցական գործունեության և հատուկ մասնագիտական մարզումների գործընթաց:

Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերը փարեկան պարբերականությամբ հաստատվում են յուրաքանչյուր փարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակում, որոնք ընդգրկում են՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու յուրաքանչյուրի հավասար իրավունքների երաշխավորվածությունը, «Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի պարտադիր դասավանդումը, ազգային և միջազ-

գային մրցակցական գործունեությունում Հայաստանի Հանրապետության մասնակցության ֆինանսավորումը, մանկապարանեկան մարզադպրոցների գործունեությանը աջակցումը և այլն:

Հիշյալ նպատակների իրագործման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվում են համապարասխան ֆինանսական միջոցներ, ինչը վկայում է ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը խթանող՝ պետության կողմից ձեռնարկվող միջոցների մասին:

7) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ հաշմանդամության կանխարգելման ու բուժման ծրագրեր իրականացնելու և հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին խթանելու վերաբերյալ:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ հաշմանդամների հարցերին վերաբերող սահմանադրական այս իրավակարգավորման նշանակությունը պայմանավորված է ոչ միայն քաղաքական, սոցիալական և մշակութային բնագավառներում սոցիալական այդ խմբի շահերի պաշտպանվածության առանձնահատկությամբ ու անհրաժեշտությամբ, այլև Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների ու արդյունությունների ստեղծման պետական քաղաքականության կարևորությամբ:

Հիշյալ դրույթի իմաստով, եթե **հաշմանդամ** այն անձն է, որն առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության՝ ինքնասպասարկման ապահովման ունակությունների, կարողությունների և ընդունակությունների սահմանափակումների հետեւանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն, ապա **«հաշմանդամության կանխարգելում ու բուժում»** հասկացության բովանդակությունը ներառում է պետության կողմից իրականացվող այն ծառայությունների ամբողջությունը, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի վիճակը բարելավելուն, հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման վերացմանը, բնակչության առողջ կենսաձեռքի ապահովմանը, բնապահպանական անվտանգության ու աշխարհաքի անվտանգ պայմանների ստեղծմանը, հիվանդների ժամանակին բուժմանը ու հիվանդությունների կանխմանը:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության կանխարգելման ու բուժման բնագավառում հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական նպատակային ծրագիրը փարեկան պարբերականությամբ հաստատվում է յուրաքանչյուր փարվա ՀՀ պետական բյուջեի շրջանակում, որն ընդգրկում է՝ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության կանխարգելման ու հաշմանդամների վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, հաշմանդամների սոցիալական պաշտպանության աշխարհաքների իրականացման ու դրանց ֆինանսավորման գործընթացի վերահսկողության կարգը, հաշմանդամների վերականգնման նվազագույն չափորոշիչները, ուղղություններն ու հեռանկարները, հաշմանդամների համար սահմանված արդյունությունների ծավալները, ձեւերն ու դրանց փրամադրման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, հաշմանդամներին փրվող սոցիալական օգնության ձեւերն ու ծավալները, հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի մարտչելիության ապահովման պայմանների ստեղծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, հաշմանդամների հասարակական կազմակերպություններին ցույց փրվող պետական աջակցության ծավալները և այլն:

Ընդ որում, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 14-

ի օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ փարեկան հիշյալ ծրագրի հետք Նայասարանի Նանրապետության կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում դրա կարարումն ապահովող օրինագծերը:

Նասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել՝ նշանակում է պետության կողմից այնպիսի պայմանների ու երաշխիքների ստեղծում, որոնք ուղղված կլինեն հաշմանդամության կանխարգելմանը, վերականգնմանը, սոցիալական կյանքում եւ զարգացմանը նրանց ոչ միայն լիարժեք ներգրավվածությանը, այլև մարդու իրավունքների ողջ համակազմի իրականացման մասով հավասարության պայմանների առաջադրմանը:

Նարկ է նկատել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1992 թվականին հաստատված՝ Նաշմանդամներին վերաբերող գործողությունների համաշխարհային ծրագրի եւ 1993 թվականին ընդունված՝ Նաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման չափորոշիչ կանոնների համակարգային առումով վերլուծությունից բխում է, որ հաշմանդամների հասարակական կյանքին մասնակցությունը պայմանավորված է այն նպատակների իրագործմամբ, որ այդ խմբի անձինք կարողանան իրացնել նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ մյուսները:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 15-րդ հոդվածը (նշված հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով Նայասարանի Նանրապետությունը պարտավորվել է կապված լինել) սահմանում է հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրման եւ հասարակական կյանքում մասնակցության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովող այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի տեղավորմանը բոլոր միջոցներով նպաստելը, աշխատանքային պայմանները հաշմանդամների կարիքներին հարմարեցնելը, պաշտպանված աշխատանքային պայմանների ստեղծումը, լրիվ սոցիալական ինտեգրման ապահովումը, հաղորդակցության ու շարժունակության արգելքները հաղթահարելուն նպատակաուղղված փոխնիկական օգնության ապահովումը եւ այլն:

Սա նշանակում է, որ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրման եւ հասարակական կյանքում ակտիվ ներգրավվածության ապահովման ուղղությամբ, ինչը բխում է նաեւ Նայասարանի Նանրապետության սրանձնած միաջազգային պարտավորությունների բովանդակությունից:

8) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը, այն է՝ նպաստել անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության զարգացմանը:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ ՏՄ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով երաշխավորված մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթական հաստատություններում Նայասարանի Նանրապետության քաղաքացիների կրթություն ստանալու իրավունքի իրացումը պայմանավորված է կրթության զարգացման պետական ծրագրերի իրականացմամբ եւ արդյունավետ ու մատչելի կրթական պայմանների ստեղծմամբ: Սակայն մեկնաբանվող դրույթի եւ ՏՄ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի հիշատակված դրույթի համակարգային առումով վերլուծությունից հետեւում է, որ պետությունն սրանձնում է պարտավորություն նպաստելու անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության զարգացմանը ոչ միայն պետական համապարասխան կրթական հաստատություններում:

Այնուհետեւ, հարկ է նկատել, որ մեկնաբանվող դրույթում «այլ» հասկացության առկայությունը բովանդակում է անվճար կրթության աստիճանաբար ներմուծման պա-

հանջ ոչ միայն բարձրագույն կրթական հաստատություններում, այլ նաեւ՝ մասնագիտական այն կրթական հաստատություններում, որոնք համարվում են բարձրագույն կրթության բաղկացուցիչ տարր:

Ասվածը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Աշխարհային կազմակերպության 1975 թվականի՝ «Կադրերի զարգացման գործում մասնագիտական ուղղորդման եւ մասնագիտական վերապատրաստման մասին (142) կոնվենցիոն դրույթների իմաստով՝ մասնագիտական կրթությունը կազմում է կրթության բաղկացուցիչ տարրը կրթության բոլոր մակարդակներում:

Ինչ վերաբերում է **«անվճար»** հասկացությանը, ապա ենթադրվում է, որ խոսք կարող է գնալ առանց համապատասխան վճարի կրթություն ստանալու մասին: Մակայն մեկնաբանվող դրույթի շրջանակում դա նշանակում է, որ բարձրագույն կրթությունը պետք է հասանելի ու մատչելի լինի բոլորի համար եւ, առաջին հերթին, այդ կրթությունը չպետք է կախված լինի սովորողի ակնհայտ նյութական կարողություններից ու հնարավորություններից:

Նայաստանի Նանրապետությունում բարձրագույն կրթության զարգացման պետական ծրագիրը տարեկան պարբերականությամբ հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՏՏ պետական բյուջեի շրջանակում, որն ընդգրկում է Նայաստանի Նանրապետության քաղաքացիների համար պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մատչելի ու մրցութային կարգով՝ անվճար բարձրագույն ու հեթրոնիական մասնագիտական կրթության ապահովում՝ պետական կրթական չափորոշիչների սահմաններում, քաղաքացիների՝ բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրացման համար սոցիալական ու փնտեսական համապատասխան պայմանների ստեղծում, բարձրագույն կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացմամբ միասնական կրթական տարածքի պահպանում եւ զարգացում եւ այլն:

Հիշատակված ծրագրի հիմնադրույթների իրականացման շրջանակում՝ **«նպաստել անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության զարգացմանը»** բառակապակցությունը բովանդակում է պետության հետեյալ պարտավորությունները՝ ա) բարձրագույն կրթությունն աստիճանաբար հասանելի դարձնել բոլորի համար (տվյալ դեպքում հասանելիությունը ներառում է սովորողի ինչպես նյութական, այնպես էլ ընդունելիության հնարավորության տարրեր), բ) բոլորի համար բարձրագույն կրթությունը պետք է մատչելի լինի, գ) բարձրագույն կրթությունը պետք է հասանելի ու մատչելի լինի բոլորի համար՝ հավասարապես եւ ըստ սովորողի ընդունակությունների:

Միաժամանակ հարկ է նշել, որ մեկնաբանվող դրույթի իրացմամբ է պայմանավորված ՏՏ Սահմանադրության 39-րդ, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ եւ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 10-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների լիակատար ու ամբողջական իրականացումը:

9) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ գիտության եւ մշակույթի զարգացմանը նպաստելու վերաբերյալ:

Հիշյալ դրույթի իմաստով՝ **«նպաստել գիտության եւ մշակույթի զարգացմանը»** հասկացությունն ընկալվում է պետության այն պարտավորությունը, որի կատարումը պետք է միտված լինի գիտության եւ ազգային մշակույթի ավանդական արժեհամակարգերի պահպանմանը, ներկայացմանը, տարածմանը, հասարակության անդամի մշակութային միջավայրի ձեւավորմանը, գիտելիքի վրա հիմնված փնտեսության ստեղծ-

մանը, պետության ազգային մշակույթի անվտանգության ապահովմանը:

Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ մեկնաբանվող դրույթը համակարգային առումով կանխորոշում է ՏՏ Սահմանադրության 40-րդ և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածներով երաշխավորված գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունները: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ նույն դաշնագրի 2-րդ և 3-րդ կետերի համադրված վերլուծությունից հետևում է, որ պետությունը պարտավոր է գիտության և մշակույթի նվաճումները պահպանել, զարգացնել ու փարածել ստեղծագործողի և հեղափոխողի գործունեության համար անհրաժեշտ ազատության հարգման համարեքսպում:

«Նպաստել գիտության զարգացմանը» հասկացությունը բազմաբովանդակ է, ինչը ենթադրում է ստեղծել գիտության և գիտահեղափոխական գործունեության իրականացման համար այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք կնպաստեն ոչ միայն գիտական առաջընթացի և դրա կիրառման արդյունքում հասարակության կողմից պահանջարկված արժեքների ստեղծմանը, այլև՝ այդ արժեքներից օգտվելու իրավունքի իրացմանը:

Սակայն այդ հասկացության բազմաբովանդակությամբ պայմանավորված՝ մասնավորապես շուկայական տնտեսության պայմաններում «գիտության զարգացումը» թերևս կարող է ընկալվել որպես գիտական արդյունավետ համակարգի ներդրում, որը կնպաստի, օրինակ, գիտական արդյունքի ապրանքայնացմանը, ազգային ներդրումային համակարգի ձևավորմանն ու դրա արդյունավետ գործունեությանը և այլն: Իսկ դա ենթադրում է պետության կողմից գիտական ոլորտի գործընթացների արդյունավետ կառավարում ընդհանրապես:

«Նպաստել մշակույթի զարգացմանը» հասկացությունը «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Նայաստանի Նանրապետության 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՌՕ-465-Ն օրենքի իմաստով նշանակում է՝ հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի ընկալում, մշակութային նոր արժեքների ու գաղափարների որոնման հնարավորության ընձեռում, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման ու զարգացման համար պայմանների ստեղծում և քաղաքացիական հասարակության ձևավորում:

Սակայն հարկ է նշել, որ մշակութային գործունեության իրականացումը, մշակութային ծառայություններից ու բարիքներից օգտվելու իրավունքի իրացման ու մարչեկության ապահովումը, հասարակության մշակութային ներուժի վերարտադրումն ու զարգացումը չեն կարող բավարար արդյունավետ լինել, եթե պետության կողմից չպաշտպանվի անհատի՝ իր նախընտրած մշակութային կողմնորոշումը և այն զարգացնելու ազատությունը:

10) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը՝ ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն իրականացնելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ բնապահպանական անվտանգության ապահովմանն ուղղված պետության քաղաքականությունը պետք է խարսխված լինի այն սկզբունքի վրա, որ մարդու իրավունքները և շրջակա միջավայրի պահպանությունը համակարգային առումով միմյանց հետ փոխկապված են և միաժամանակ անբաժանելի:

Մեկնաբանվող դրույթը թղթակցում է Սահմանադրության 10-րդ հոդվածով ամ-

րագրված շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործումն ապահովելու պետության սահմանադրական պարտականության, ինչպես նաև 33.2-րդ հոդվածով ամրագրված դրույթի հետ, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համապետել պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Ի վերջո, շրջակա միջավայրի պահպանության ու վերականգնման կարևորությամբ է պայմանավորված ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգության ապահովման հիմնահարցերի սահմանադրական կարգավորման անհրաժեշտությունը:

Նայաստանի Նանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՆ-37-Ն հրամանագրով հաստատված՝ Նայաստանի Նանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության 2-րդ կետը սահմանում է, որ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոն ու գործողություն է ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

Չնայած այն հանգամանքին, որ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին բարելավել «շրջակա միջավայրի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերը», սակայն այդ դրույթի բովանդակությունը նեղացված է և չի ներառում շրջակա միջավայրի պահպանությանն ու պաշտպանությանն ուղղված այն միջոցառումները, որոնք իրականացվում են՝ ա) պետության կողմից, բ) պետությունների կողմից՝ միմյանց միջև համագործակցության արդյունքում, գ) հասարակության գրեթե բոլոր խմբերի կողմից:

Այնուամենայնիվ, Նայաստանի Նանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության շրջանակում բնապահպանական անվտանգությունն ապահովող պետական քաղաքականության արդյունավետ իրականացումը ենթադրում է՝ ա) մաքուր շրջակա միջավայրի պահպանություն, բ) բնական պաշարների ու անտառածածկույթի արդյունավետ օգտագործում, վերականգնում և պահպանում, գ) արոմային էներգիայի անվտանգ օգտագործում, դ) վտանգավոր քիմիական և ռադիոակտիվ նյութերի ու թափոնների պահման համապարփակ վերահսկում, ե) բնական և տեխնածին աղերների կանխարեսում ու վաղ ազդարարում, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացում, զ) արտակարգ իրավիճակների բացահայտում և հաղթահարման կառույցների ստեղծում, է) բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովում:

Նայաստանի Նանրապետությունում բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության բնագավառում պետական նպատակային ծրագրերը (օրինակ, Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների մասին, Ռ-ադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների մասին և այլն) տարեկան պարբերականությամբ հաստատվում են յուրաքանչյուր տարվա ՏՏ պետական բյուջեի շրջանակում:

Բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության իրականացումը նախարեսվում է առանձին իրավական ակտերում, ինչպիսին է «Շրջակա միջավայրի ազգային գործողությունների ծրագիրը»: Այս քաղաքականության իրականացումն ապահովող իրավական մեխանիզմների թվին են պատկանում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն թողնող գործողության նախաձեռնության դեպքում

պարտադիր գնահատական (ՇՄԱԳ) իրականացնելու պահանջը: Այս պահանջն ամրագրված էր դեռևս 1991թ. «Բնության պահպանության ՆՇ օրենսդրության հիմունքներում»՝ որպես պետական բնապահպանական փորձաքննություն: Նշված պահանջն առկա է նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՆՇ օրենքում²⁵⁰, որի 4-րդ հոդվածը սահմանում է փորձաքննության ենթակա նախադրեալող գործունեության ցանկը, երբ շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը եւ էկոլոգիական փորձաքննությունը պարտադիր են: Նշված օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը ենթակա նախադրեալող գործունեության իրականացում առանց դրական փորձաքննական եզրակացության»:

Իրավաբանական գրականության մեջ բնապահպանական անվտանգության բովանդակության վերաբերյալ փարբեր կարծիքներ են արտահայտվում: Որոշ հեղինակներ գտնում են, որ բնապահպանական անվտանգությունը պետք է դիտարկել որպես մարդու, հասարակության, շրջակա միջավայրի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ: Բնապահպանական անվտանգությունը պետք է ներառի համապատասխան միջոցառումների համակարգ՝ ուղղված սպառնալիքներից, որոնք կարող են ծագել բնական վնասակար եւ փոխնամի ազդեցությունից, վնասակար բնական երեւոյթներից, փարերային եւ փոխնամի աղբյուրներից, ինչպես նաև էկոլոգիական իրավախախտումներից ծագող սպառնալիքների կանխման եւ այդ երեւոյթների հետեւանքների վերացման միջոցառումների համակարգ²⁵¹:

Բնապահպանական անվտանգության ապահովման համարեքստում առանձնակի կարևորություն ունի «Խնդաղ նպատակներով արոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՆՇ օրենքը²⁵², որը կարգավորում է արոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորման, միջուկային տեղակայանքների, իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության, իոնացնող ճառագայթումից պաշտպանության, ռադիոակտիվ թափոնների կառավարման, արոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանության, միջուկային վնասի, դրա փոխհատուցման եւ արոմային էներգիայի օգտագործման հետ կապված այլ հարաբերություններ՝ անձնակազմի, բնակչության, շրջակա միջավայրի եւ Նայաստանի Նանրապետության անվտանգության շահերի պաշտպանության նպատակով:

Բնապահպանական անվտանգության ապահովման մեխանիզմների մեջ անհրաժեշտ է նշել նաև արդյունավետ պետական բնապահպանական վերահսկողությունը, ինչը սահմանված է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՆՇ օրենքով²⁵³, որը կարգավորում է Նայաստանի Նանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Նայաստանի Նանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու փոխտեսական հիմքերը:

Բնապահպանական անվտանգության ապահովման իրավական մեխանիզմների համակարգում ներառվում է նաև իրավաբանական պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրության խախտման համար: Այդ մե-

²⁵⁰ ՀՀԱԺՏ 1995/9:

²⁵¹ Стів О. А. Дубовик. Экологическое право. Москва-2005. Изд.-во "Проспект", էջ 455:

²⁵² ՀՀՊՏ 1999.03.15/6(72):

²⁵³ ՀՀՊՏ 2005.05.18/28(400):

խանդի մեջ մտնող պատասխանատվությունը սահմանված է ՆՏ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքում, ինչպես նաև ՆՏ քաղաքացիական օրենսգրքում՝ վնասների հատուցման ձևով: Որպես էկոլոգիական անվտանգության ապահովման մեխանիզմ՝ կարելի է դիտարկել նաև Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային համաձայնագրերով սրանձնված պարավորությունների կատարումը. «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.), «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիան (Վիեննա, 1985թ.) և այլն:

11) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը, այն է՝ **նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը:**

Նախ, հիշյալ դրույթի իմաստով՝ «**ազգային և համամարդկային արժեքները**», որպես հավաքական հասկացություն, ընկալվում են բնության և մարդկության կողմից ստեղծված այն օբյեկտները, բարիքները և ժառանգությունը, որոնց պահպանումն ու մասսայականացումը (ժողովրդականացում), իրենց պարմական առանձնահատուկ նշանակությամբ պայմանավորված, յուրաքանչյուր պետության առանցքային գործառույթներից է: Այդ արժեքների բազմաբովանդակ ու բազմաբարբ լինելը ենթադրում է, որ բոլոր արժեքների սպառիչ ցանկի մասին խոսք գնալ չի կարող:

Համամարդկային ու ազգային արժեքային համակարգի բազմազանությունն իր հերթին բերում է այդ արժեքների՝ փոքրեր չափանիշներով պայմանավորված դասակարգմանը: Այսպես, **քաղաքական արժեքները** ներառում են բարձրագույն այն սկզբունքները, որոնք կոչված են հասարակությունում ապահովելու հանդուրժողականություն ու սոցիալական խմբերի միջև համաձայնություն, և դրանք ծառայում են ուղեցույց բաղադրականության իմաստն ու բովանդակությունը սահմանելու համար (այդպիսիք կարող են լինել խաղաղությունը, արդարությունը, ժողովրդավարությունը և այլն), իսկ **իրավական արժեքներ** կարող են հանդիսանալ իրավական պետությունը, օրենքները, իրավակարգը, մարդու իրավունքները և այլն: Ազգային ու համամարդկային արժեքների վերաբերյալ միեւնույն մոտեցումը կարելի է ցուցաբերել բարոյական, հոգեւոր, մշակութային և այլ արժեքների մասով:

Այնուամենայնիվ, այդպիսի արժեքների սպառիչ ցանկի ու նորմատիվային սահմանման բացակայությունը չի ենթադրում, որ պետությունը չի կարող սրանձնել յուրաքանչյուրին վերոհիշյալ արժեքներին հաղորդակցվելու պայմաններ պարավորություն:

Այսպես, ՆՏ Սահմանադրության 40 և 41-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ, մասնավորապես, մշակութային կյանքին մասնակցելու անձի իրավունքն անխզելիորեն կապված է մշակույթի պահպանման ու զարգացման նրա այլ իրավունքի հետ: Սակայն նշված իրավունքի արդյունավետ իրացումը, ի վերջո, պայմանավորված է պետության կողմից մշակութային ոլորտի ազգային կամ համամարդկային արժեքների ազատ հաղորդակցման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության միջազգային իրավական ակտերի համակարգային վերլուծությունից բխում է, որ «**ազգային և համամարդկային արժեքներ**» հասկացությունն ավելի ընդգրկուն է և բովանդակում է դրանց ազատ հաղորդակցման լայն հնարավորություններ:

Այսպես, օրինակ, ՄԱԿ-ի 1966 թվականի Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների հռչակագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետը պարավորեցնում է

պետություններին՝ յուրաքանչյուրի համար ապահովելու գիտելիքների նկատմամբ մատչելիություն եւ բոլոր ժողովուրդների գրականությանը ու արվեստով բավարարվելու հնարավորություն, մասնակցելու գիտության առաջընթացին երկրագնդի բոլոր մասերում՝ օգտվելով դրա բարիքներից, եւ նպաստելու մշակութային կյանքի հարստացմանը:

Կամ, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հոկտեմբերի 7-ի ՆՕ-187-Ն օրենքի 3 եւ 6-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետեւում է, որ պետությունը երաշխավորում է մատչելիություն հաղորդակցվելու ոչ նյութական մշակութային համարվող այնպիսի արժեքներին, ինչպիսիք են՝ ժողովրդական բանահյուսությանը, լեզվին, բարբառներին, փեղանուններին, զինանշանային ու ազգային այլ խորհրդանիշների բովանդակությանը, ավանդական արհեստներին, ազգային սովորույթներին, ավանդույթներին, սովորույթներին, ծեսերին, հասարակական կենցաղին, վարվեցողության ձեւերին եւ կանոններին, ժողովրդական արվեստին, սրբապատկերներին, կենսաապահովման մշակույթին, հավաքախմբներին, պաշտամունքին, գիտական հետազոտությունների արդյունքներին եւ մեթոդներին, ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտներին վերաբերող գիտակրթական հաստատություններում, արխիվներում, գրադարաններում, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց մոտ պահվող փեղակույթները:

Ե՛վ ազգային, ե՛ր համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելն ինքնին վկայում է պետության հիմնական այն խնդրի մասին, որով պարտավորվում է պայմաններ ստեղծելու բոլորին վերոհիշյալ արժեքներին հաղորդակցվելու համար:

12) Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը սահմանում է պետության հաջորդ հիմնական խնդիրը, այն է՝ **ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:**

Դա նշանակում է, որ տարեց մարդիկ Հայաստանի Հանրապետությունում գտնվում են հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո, եւ պետությունը պարտավոր է հոգ տանել նրանց համար արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու համար:

Մեկնաբանվող դրույթի շրջանակում «**տարեց մարդիկ**» հասկացության բովանդակային ծավալում անհրաժեշտ է ներառել կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, ում տարիքը 65 եւ ավելի է, ինչը համընկնում է Եվրոպական միության եւ ՄԱԿ-ի վիճակագրական մասնագիտացված ծառայությունների կողմից հաստատված չափանիշներին: Ինչ վերաբերում է «**ապահովել արժանապատիվ կենսամակարդակ**» հասկացության բովանդակությանը, ապա ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991 թվականի՝ «Ծերացման վերաբերյալ գործողությունների միջազգային ծրագրի իրականացման մասին» 46/91 բանաձեռի իմաստով, դա նշանակում է, որ «տարեց մարդիկ պետք է կարողանան սպրեղ արժանապատիվ եւ ապահով կյանքով եւ չենթարկվեն շահագործման ու ֆիզիկական կամ հոգեկան բռնության, պետք է արժանանան արդար վերաբերմունքի՝ անկախ տարիքից, սեռից, ռասայական կամ ազգային պատկանելությունից, հաշմանդամությունից կամ այլ կարգավիճակից, եւ պետք է արժեվորվեն՝ անկախ իրենց փոփոխական ներդրումից»:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուրի՝ ծերության... եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը, իսկ օրենսդրությամբ մանրամասնվում է այդ իրավունքի իրացման ձևը: Սակայն մեկնաբանվող դրույթի եւ դրան առնչվող սահմանադրական այլ

նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ պետությունն ստանձնում է պարտավորություն ապահովելու փարեց մարդկանց ոչ միայն սոցիալական պաշտպանվածությունը, այլև ընձեռելու այնպիսի հնարավորություններ, որպեսզի նրանք ինքնագրվեն հասարակությունում որպես լիարժեք անդամներ, ազատորեն ընտրեն իրենց կենսակերպը և նրանց համար մարզելի լինեն ծառայությունները:

Պետությունը վերոհիշյալ խնդիրների լուծմամբ պայմանավորված՝ իրականացնում է փարբեր պետական ծրագրեր, ինչպիսիք են՝ «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ», «Տնային պայմաններում միայնակ փարեցների սոցիալական սպասարկում», «ՏՏ մարզերում միայնակ փարեցներին, հաշմանդամներին փնային պայմաններում և փարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» և այլն, որոնք փարեկան պարբերականությամբ հաստատվում են յուրաքանչյուր փարվա ՏՏ պետական բյուջեի շրջանակում:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

Դա նշանակում է, որ փնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում հռչակված հիմնական խնդիրները կարող են իրականացվել այնքանով, որքանով այդ խնդիրների արդյունավետ լուծման համար պետությունը պետք է ունենա համապատասխան միջոցներ:

Այսինքն՝ հիշյալ խնդիրների իրականացումը մի դեպքում ընկալվում է որպես պետության պարտավորություն, իսկ մեկ այլ դեպքում այդպիսի պարտավորության կատարումը պայմանավորվում է հենց պետության հնարավորություններով:

Մեկնաբանվող դրույթում «**պետության կողմից միջոցներ ձեռնարկել**» հասկացության բովանդակության ծավալում ներառվում է անվերապահ կատարման պահանջ, ինչն ինքնին, թվում է այլ հանգամանքներով պայմանավորված կամ սահմանափակված չպետք է լինի:

Սակայն այդ միջոցները ձեռնարկելու պարտավորությունը կատարելու համար պետությունը սահմանափակված է «**իր հնարավորությունների շրջանակով**»: Դա նշանակում է, որ փնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտների խնդիրների իրականացման առումով միակ կարևոր հանգամանքը համապատասխան միջոցների առկայությունն է:

Իսկ այդպիսի միջոցները բազմազան են ու բազմաբովանդակ, ընդ որում, մի կողմից, կարող է խոսք գնալ երկրի համախառն ներքին արդյունքի ծավալների մասին, ինչի դեպքում հարկ է պարզել, թե փվյալ ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար որ մասն է գրնվում պետության փրամադրության փակ, իսկ, մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել, օրինակ, եկամտոյների համաչափ բաշխվածության գործոնի առկայությունը կամ ոլորտի օրենսդրական կարգավորման աստիճանը, կամ սոցիալական խմբերի կազմը և այլն:

Միաժամանակ հարկ է նշել, որ հենց այդպիսի մտքեցում որդեգրված է նաև ՄԱԿ-ի 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով, որի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, փնտեսական և փխնիկական բնագավառներում, առաջա-

դիմորեն հասնելու համար սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր պարզաճ միջոցներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունմամբ:

Տիշարակվածից հետեւում է, որ Տայաստանի Տանրապետությունն իր կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում պետք է ձգտի հասնել փնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում հռչակված հիմնական խնդիրների արդյունավետ իրականացմանը, ինչը, բնականաբար, վկայում է ոչ այնքան իրավական պարտավորությունների, որքան ցանկությունների մասին:

Եվ, վերջապես, պետությունը չի կարող և պարտավոր չէ մարդկանց տրամադրել վերոհիշյալ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ բոլոր նյութական միջոցները կամ ոչ նյութական բարիքները, այլ պարտավոր է նրանց համար ապահովել արժանապարհիվ կյանքի համար համապարասխան հնարավորություն:

Գ Լ ՈՒ Խ 3

ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

ՆՈՂ-ՎԱԾ 49

- 1. Նանրապետության Նախագահը պետության գլուխն է:**
- 2. Նանրապետության Նախագահը հետևելու՞մ է Սահմանադրության պահպանմանը, ապահովու՞մ է օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:**
- 3. Նանրապետության Նախագահը Տայասարանի Նանրապետության անկախության, փարամքային անբողջականության եւ անվտանգության երաշխավորն է:**

1. 1991թ. օգոստոսի 1-ի՝ «Տայասարանի Նանրապետության նախագահի մասին» օրենքի համաձայն Նանրապետության նախագահը գլխավորում էր հանրապետության գործադիր իշխանությունը (օրենքի հոդված 1): 1995թ. Սահմանադրության 49-րդ հոդվածը նման դրույթ չէր պարունակում:

Սահմանադրության 49-րդ հոդվածը 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում էական փոփոխությունների չի ենթարկվել: Բացառություն է կազմում հոդվածի նոր՝ 1-ին մասը, որն ուղղակիորեն սահմանում է Նանրապետության Նախագահի կարգավիճակը որպես «պետության գլուխ», չնայած այն, նաեւ մինչեւ Սահմանադրության փոփոխությունը, սահմանադրական իրավունքում եւ պրակտիկայում անվիճելի էր:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ Նանրապետության Նախագահի մեկ այլ գործառույթ, որն ամրագրված էր ոչ թե Սահմանադրության 49, այլ 94-րդ հոդվածի 1-ին մասում, այն է՝ «դատական մարմինների անկախության երաշխավորի» գործառույթը, 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամբողջությամբ հանվեց:

Այս հոդվածի ոգեշնչման աղբյուրը, ինչպես արելելավորպական բազմաթիվ երկրներում, Ֆրանսիայի Սահմանադրության 5-րդ հոդվածն է:

Սահմանադրության 49-րդ հոդվածի նպատակը Նանրապետության Նախագահի ինստիտուտի էության բացահայտումն է: Մակայն հոդվածի սահմանադրական բովանդակությունը պարզելը բավական բարդ է, քանի որ այն առավելապես որոշակի քաղաքական փեսության մարմնավորումն է Սահմանադրության մեջ եւ այդ պատճառով էլ իրավաբանական առումով այնքան էլ միանշանակ չէ:

49-րդ հոդվածն ընդհանուր ձեւակերպումների միջոցով սահմանում է Նանրապետության Նախագահի կարգավիճակը, նրա հիմնական գործառույթները եւ խնդիրները: Դրա շնորհիվ որոշակի հստակություն է մտնում պետական մարմինների կառուցվածքում Նանրապետության Նախագահի գրաված դիրքի մեջ: Պրակտիկայում մեկնաբանվող հոդվածի դերը մեծ չափով կախված է այն բանից, թե ինչ հարաբերակցության մեջ է գտնվում Նանրապետության Նախագահը խորհրդարանական մեծամասնության նկատմամբ: Եթե նա այդ մեծամասնության ղեկավարն է, ապա 49-րդ հոդվածից բխող

իրավաբանական նրբությունները մեծ դեր չեն կատարում, քանի որ նա դիտարկվում է որպես գործադիր իշխանության բարձրագույն ղեկավար: Սակայն մեկնաբանվող հոդվածի դերն ավելի մեծ կլինի համակեցության պարագայում, քանի որ այդ ժամանակ առավել կարևոր կլինի պարզել, թե Հանրապետության Նախագահը որ լիազորություններն է իրականացնում առաջին հերթին բարենպաստ քաղաքական պայմանների, այլ ոչ թե իր սահմանադրական լիազորությունների շնորհիվ:

Մեկնաբանվող հոդվածի առաջին մասը սահմանում է Հանրապետության Նախագահի պաշտոնի բնույթը, նրա սահմանադրական կարգավիճակը՝ «պետության գլուխ», իսկ 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված են նրա գործառնությունները և խնդիրները: Եթե հոդվածի առաջին մասը հեշտությամբ է փարբերվում մեկնաբանվող հոդվածի մյուս դրույթներից, ապա նույնը չի կարելի ասել հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի սահմանազարման մասին: Եթե օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությանը հետեւելն ավելի շուր նկարագրում է Հանրապետության Նախագահի գործառնությունը, ապա Սահմանադրության պահպանմանը հետեւելը, ինչպես նաեւ անկախության, փարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորումն առավելապես Հանրապետության Նախագահի խնդիրներ են: Պետք է նկատի ունենալ, որ նման բաժանումը չի կարող շար խիստ լինել, քանի որ խնդիրների և գործառնությունների միմյանցից փարբերակման հարցը հստակորեն լուծված չէ ոչ սահմանադրական իրավունքի դոկտրինայում, ոչ էլ սահմանադրական պրակտիկայում:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերից բխում է Հանրապետության Նախագահի ներկայացուցչական (մաս 1) և, այսպես կոչված, «իրավարար» («արբիտրաժային») (մաս 2) գործառնությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հանրապետության Նախագահն ունի մեկ այլ, և, թերեւս, ավելի կարևոր գործառնություն՝ գործադիր իշխանության գործառնությունը: Այդ գործառնության շրջանակներում Հանրապետության Նախագահի կարևորագույն խնդիրներից մեկը մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում ամրագրված պետության կենսական կարևորություն ունեցող արժեքների (երկրի անկախության, փարածքային ամբողջականության և անվտանգության) երաշխավորումն է: Այն իր արտացոլումն է գրել նաեւ Սահմանադրության 54-րդ հոդվածում ամրագրված նրա երդման րեքսում՝ որպես Հանրապետության Նախագահի երկու կարևորագույն առաքելություններից մեկը: Բացի մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու պարպականությունից, Հանրապետության Նախագահը երդվում է «ապահովել անկախությունը, փարածքային ամբողջականությունը և անվտանգությունը»:

Նախագահի պաշտոնի բնույթի, գործառնությունների և խնդիրների ամրագրումը մի քանի նպատակ է հետապնդում: Առաջին, այն ելակետ է հանդիսանում գործադիր իշխանության գործառնություն իրականացնող երկու հիմնական մարմինների՝ Հանրապետության Նախագահի և կառավարության գործառնությունների և լիազորությունների փարանջարման համար: Այդ մարմիններին վերաբերող դրույթների մեկնաբանման համար 49-րդ հոդվածը մի յուրօրինակ ուղենիշ է: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հանրապետության Նախագահին վերաբերող գլխին հաջորդող Ազգային ժողովին (4-րդ գլուխ) և կառավարությանը (5-րդ գլուխ) նվիրված գլուխները նույնպես սկսվում են նրանց գործառնությունն ընդհանուր կերպով բնութագրող դրույթներից:

Երկրորդ, հոդվածը որոշակի ուղենիշ է Հանրապետության Նախագահի լիազորությունների բովանդակության մեկնաբանման համար: Մեկնաբանվող հոդվածը, մարանանշելով Հանրապետության Նախագահի հիմնական գործառնությունները և խնդիրները,

նրա լիազորություններին փալիս է որոշակի ուղղվածություն, որոնք ուղղակիորեն սահմանված չեն նրա լիազորություններում: Նանրապեպրության Նախագահի բազմաթիվ առանձին լիազորությունների իմաստն ու բովանդակությունը հիմնավորվում են նրա սահմանադրական գործառույթների և խնդիրների միջոցով: Նանրապեպրության Նախագահի գործառույթները հիմք են հանդիսանում նրա լիազորությունների ծավալման համար՝ դառնալով դրանց իրականացման հիմնական ուղղությունների և նպատակների ուղեցույց:

Երրորդ, մեկնաբանվող հոդվածն ինքնին բավարար սահմանադրական հիմք է Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, որպեսզի, առանց լրացուցիչ լիազորությունների, Նանրապեպրության Նախագահն իրականացնի բազմաթիվ և բազմապիսի ոչ իշխանական գործողություններ: Խոսքն այնպիսի պաշտոնական գործողությունների մասին է, ինչպիսիք են, օրինակ, նրա ելույթները, ճառերը, հարցազրույցները, հանդիպումները, կոնֆերանսները և այլն: Դրանց անհրաժեշտությունը, նկատի ունենալով Նանրապեպրության Նախագահի բազմաթիվ գործառույթները և խնդիրները, ակնհայտ է:

Նանրապեպրության Նախագահի սահմանադրական դերը, նրա կարգավիճակը, հիմնական գործառույթները և խնդիրները բնութագրող ընդհանուր ձեւակերպումները դեռեւս բավարար սահմանադրական հիմք չեն Նանրապեպրության Նախագահի կողմից իշխանական գործողություններ կատարելու համար: 49-րդ հոդվածի դրույթները շար ընդհանուր են և Նանրապեպրության Նախագահի գործունեության որեւէ կոնկրետ միջոց չեն հիշարակում: Մեկնաբանվող հոդվածի դրույթներն ինքնին հնարավորություն չեն փալիս պարզելու, թե կոնկրետ ինչ միջոցներ պետք է ձեռնարկի Նանրապեպրության Նախագահը, օրինակ, երկրի անվտանգությունը երաշխավորելու կամ Սահմանադրության պահպանմանը հետբետելու համար: Ուստի ակնհայտ է, որ մեկնաբանվող հոդվածը պահանջում է կոնկրետացում Սահմանադրության կամ օրենքներով սահմանված այլ դրույթներում:

Ասվածը, սակայն, չի նշանակում, որ 49-րդ հոդվածն ընդհանրապես նորմալիվ նշանակություն չունի և այն պետք է դիփարկել միայն որպես Նանրապեպրության Նախագահի գործառույթների ու խնդիրների ցանկ և ոչ ավելին: Մնան մեկնությունը կնշանակել հրաժարվել այն համընդհանուր ճանաչում գրած սկզբունքից, ըստ որի՝ իրավական փեքստի բոլոր մասերը նշանակություն ունեն իրավական նորմի վերծանման համար: 49-րդ հոդվածի նման մեկնաբանումը պարզապես հարցականի փակ կոնկրետ Սահմանադրության նորմալիվ բնույթը: Ուստի պետք է պարզել, թե ինչ հարաբերակցության մեջ են գրվում Նանրապեպրության Նախագահի գործառույթները և խնդիրները նրա լիազորությունների հետ:

Իրավական պեպրության (հոդված 1) և օրինականության սկզբունքներից (հոդված 5) բխում է, որ Նանրապեպրության Նախագահի գործառույթները և խնդիրները նույնական չեն նրա լիազորությունների հետ: Լիազորությունը հանրային իշխանության կոնկրետ սուբյեկտին իրավունքով վերապահված գործունեության միջոց է: Իրավական պեպրությունում գործում է այն սկզբունքը, որ պետական մարմինների գործունեության բոլոր ձեւերը պետք է ճշգրիտ սահմանված լինեն, ուստի Նանրապեպրության Նախագահի կողմից իր գործառույթների և խնդիրների իրականացումը պետք է հիմնվի նրա կոնկրետ լիազորությունների վրա:

Նանրային իշխանության մարմնի խնդիրն այն է, ինչը լուծում է պահանջում: Իր առջև դրված խնդիրներն իրագործելու համար իշխանության մարմինը կատարում է ո-

րոշակի գործառնություններ, այսինքն՝ խնդիրների լուծմանը, արդյունքների ապահովմանն ուղղված գործունեություն: Տանրային իշխանության մարմնի առջև դրված խնդիրները եւ գործառնությունները պայմանավորում են դրա իրավասությունը: Իրավասությունը պետական մարմնի փնտրիման առարկայի եւ դրա նկատմամբ օժտված լիազորությունների համակցությունն է: Այդպիսով իշխանական լիազորություններն իրենց արտահայտությունն են գտնում պետական մարմինների իրավասության մեջ:

Տանրային իշխանության մարմնի խնդրի ամրագրումը կանխորոշում է նաեւ համապատասխան լիազորությունից օգտվելու եղանակը՝ նրա կոնկրետ լիազորությունը կարող է իրականացվել միայն խնդրի իրականացման նպատակով:

Վերը շարադրվածից հետեւում է, որ 49-րդ հոդվածը Տանրապետության Տախագահին լրացուցիչ լիազորություններ չի տալիս, այլ առաջին հերթին նշում է այն նպատակները, որոնցով պետք է առաջնորդվի Տանրապետության Տախագահն իր լիազորություններն իրականացնելիս: Ուստի այս հոդվածը չի կարող իրավաբանորեն հիմնավորել Տանրապետության Տախագահի գերակայությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում: Այն չի կարող ի չիք դարձնել սահմանադրորեն ամրագրված իրավասությունների համակարգը եւ, մասնավորապես, 85-րդ հոդվածի առաջին մասը, ըստ որի՝ կառավարությանն է վերապահվում երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը, ըստ որում, միայն վերջինը՝ Տանրապետության Տախագահի հետ համապետ: Ուստի Տանրապետության Տախագահն իր լիազորություններն իրականացնելիս պետք է հաշվի առնի կառավարության եւ խորհրդարանի իրավասությունները:

Ի տարբերություն Տայաստանի Սահմանադրության սկզբնական տեքստի եւ արտասահմանյան բազմաթիվ երկրների սահմանադրությունների, 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ուղղակիորեն ամրագրվեց Տանրապետության Տախագահի կարգավիճակը որպես պետության գլուխ: Դրա արդյունքում «պետության գլուխ» հասկացությունը դադարեց լինել միայն պետական իրավունքի տեսության հասկացություն՝ դառնալով սահմանադրաիրավական:

Պետության գլխի դասական գործառնությունը երկրի ներկայացումն է ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարաբերություններում: Այս գործառնության վերջին բաղադրամասն ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետում:

Որպես պետության գլուխ՝ Տանրապետության Տախագահը պետության բարձրագույն ներկայացուցիչն է: Լայն իմաստով որպես պետության ներկայացուցիչ են հանդես գալիս պետական բոլոր մարմինները, երբ իրականացնում են իրենց իշխանական եւ ոչ իշխանական լիազորությունները: Նման ընկալմամբ ներկայացուցչությունը, սակայն, որեւէ հատուկ նորմատիվ բովանդակություն չունի: Տանրապետության Տախագահը որպես պետության ներկայացուցիչ է ընկալվում նաեւ այն դեպքերում, երբ նա որեւէ գործողություն չի կատարում, այլ ներկայացուցչական գործառնություն իրականացնում է միայն փոխարինում եւ փոխարինում իր ներկայության շնորհիվ: Պետության ներկայացուցչի գործառնությունը նշանակում է, որ Տանրապետության Տախագահը պետության կենդանի խորհրդանիշն է եւ մարմնավորում է նրա միասնությունն ամենաբազմազան իրավիճակներում: Երկրի համար ամենակարեւոր իրավիճակներում պետությունը ներկայացնելու իրավունքը պատկանում է Տանրապետության Տախագահին՝ որպես պետության գլխի: Չնայած ներկայացուցչական գործառնությունը միջազգային հարաբերություններում շար հաճախ դիտարկվում է որպես հիմնականում խորհրդանշական նշանակություն ու-

նեցող, սակայն Տանրապետության Նախագահի պարագայում այն համակցված է արտաքին քաղաքականության բնագավառում Տանրապետության Նախագահի կարևորագույն նյութական լիազորություններով (արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարում Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, արտաքին քաղաքականության մշակում եւ իրականացում 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն), ինչի արդյունքում Տանրապետության Նախագահը ձեռք է բերում է՛լ ավելի մեծ դերակատարում երկրի արտաքին քաղաքականության հարցերում:

Ինքնին «պետության գլուխ» փիլոզոֆ Տանրապետության Նախագահին չի փալիս լրացուցիչ լիազորություններ, իսկ այդ փիլոզոսից բխող գործառույթներն ու խնդիրները պետք է իրականացվեն Սահմանադրությամբ եւ օրենքներով Տանրապետության Նախագահին վերապահված լիազորությունների միջոցով: «Պետության գլուխ» հասկացության սահմանադրաիրավական ամրագրումը միայն որոշակի բովանդակային իմաստ է հաղորդում Տանրապետության Նախագահի այս կամ այն լիազորություններին, լուսաբանում ու բացահայտում է դրանց կոչումն ու բովանդակությունը: Տայաստանի Սահմանադրությունը Տանրապետության Նախագահին օժտել է պետության գլխին բնորոշ բազմաթիվ լիազորություններով՝ դեսպանների ընդունում ու նշանակում (հոդված 55, կետ 8), նշանակումներ պետական պաշտոններում (հոդված 55, կետ 5), դատավորների, զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակում (հոդված 55, կետեր 11 եւ 12), քաղաքացիության եւ քաղաքական ապաստան փախու հետ կապված հարցերի լուծում (հոդված 55, կետ 15), պարգևատրում շքանշաններով եւ մեդալներով, բարձրագույն զինվորական եւ պարվավոր կոչումների, բարձրագույն դիվանագիտական եւ այլ դասային աստիճանների շնորհում (հոդված 55, կետ 16), ներման շնորհում (հոդված 55, կետ 17) եւ այլն:

2. Որպես Տանրապետության Նախագահի կարևորագույն խնդիրներից մեկը՝ մեկնաբանվող հոդվածը սահմանում է Սահմանադրության պահպանմանը հետետելու պարտականությունը: Սահմանադրության պահպանմանը հետետելու այդ առաքելությունը Տանրապետության Նախագահը կարող է իրականացնել միայն այն դեպքում, եթե նա ինքը խստորեն հետետում է Սահմանադրության դրույթներին: Նման կապն իր արտացոլումն է գրել Տանրապետության Նախագահի երդման փեքստում, ըստ որի՝ նա երդվում է «անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները» (հոդված 54):

Մեկնաբանվող դրույթը, ինչպես նաեւ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու գործառույթը հենվում են այն գաղափարի վրա, որ նման առաքելություն առավել արդյունավետ ձեռով ի վիճակի է իրականացնել այն արյանը, որն անաչառ է եւ անմիջականորեն ներքաշված չէ քաղաքական եւ կուսակցական վեճերի մեջ:

Տանրապետության Նախագահը Սահմանադրության պահպանման խնդիրն իրականացնում է իր կոնկրետ լիազորությունների միջոցով: Սահմանադրական դատարանի չորս անդամ նշանակելուց գար (հոդված 55, կետ 10), Տանրապետության Նախագահի կարևորագույն լիազորությունը սահմանադրական դատարան դիմելն է՝ օրենքների, միջազգային պայմանագրերի, կառավարության որոշումների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի իրավասությանը պարկանող գրեթե բոլոր հարցերով (հոդված 101, կետ 1): Սահմանադրության պահպանմանը հետետելու՝ Տանրապետության Նախագահի գործառույթն ի վերջո հանգում է նրան, որ նա վերջնական որոշում կայացնելու համար դիմում է Սահմանա-

դրությամբ սահմանված իրավասու մարմինն՝ սահմանադրական դատարանին: Ընդ որում, սահմանադրական դատարան դիմելու նախապայմանն այն չէ, որ Հանրապետության Նախագահն ինքն օրենքի կամ պայմանագրի սահմանադրականության առնչությամբ կասկածներ ունենա: Հանրապետության Նախագահը կարող է դիմել այդ քայլին, եթե գրնի, որ հասարակական կարծիքում արտահայտված կասկածներն անհրաժեշտ են դարձնում կոնկրետ խնդրի լուծումը սահմանադրական դատարանի կողմից:

Հանրապետության Նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հեղտելու խնդրի իրականացման կարևոր ոլորտ է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների ստորագրումը: Նա ոչ միայն կարող է, այլ պարտավոր է հրաժարվել ստորագրել այն օրենքները, որոնք նրա կարծիքով հակասահմանադրական են (տե՛ս 55-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանությունները):

Վերը նշվածից պարզ է, որ Հանրապետության Նախագահը չունի Սահմանադրության պահպանի գործառույթ, ինչը միայն սահմանադրական դատարանի առաքելությունն է, քանի որ միայն այդ մարմինն է իրավասու բոլորի, այդ թվում Հանրապետության Նախագահի համար պարտադիր կերպով որոշելու իրավական ակտերի սահմանադրականության հարցը: Հանրապետության Նախագահի դերն այն է, որ հեղտելի Սահմանադրության դրույթների պահպանմանը եւ դիմի սահմանադրական դատարան՝ դրանց խախտման դեպքում: Բոլորովին էլ պարտական չէ, որ նա սահմանադրական դատարան դիմող տույնկերների շարքում ունի ամենամեծ լիազորությունները: Սահմանադրական դատարան նա չի կարող դիմել միայն իրեն վերաբերող հարցերով (հոդված 100, կետեր 4-6), ինչպես նաեւ համայնքի ղեկավարի պաշտոնանկության հիմքերի հարցով (հոդված 100, կետ 8), քանի որ այդ հարցում իրավասուն կառավարությունն է:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում ամրագրված է Հանրապետության Նախագահի կողմից իշխանության երեք ճյուղերի բնականոն գործունեության ապահովման գործառույթը, որն օրարերկրյա սահմանադրական իրավունքում, որպես կանոն, անվանվում է իրավարար («արբիտրաժային») գործառույթ: Առաջին անգամ Փրանսիացի լիբերալ մարածող Բ. Կոնստանի կողմից 19-րդ դարի առաջին քառորդում մշակված եւ հիմնավորված «հաշարար», «չափավորեցնող» իշխանության դոկտրինան նպարակ էր հեղտապնդում լրացնել իշխանությունների բաժանման դասական դոկտրինան մի նոր՝ չորրորդ իշխանությամբ եւ դրանով իսկ հիմքեր գրնել Փրանսիայում սասանվող միապետության համար մի նոր դեր գրնելու համար: Ըստ Բ. Կոնստանի՝ այդ իշխանությունը պետք է քրվեր միապետին, որպեսզի նա կարողանար հաշտեցնել երեք իշխանությունների միջեւ հակամարտությունները եւ հավասարակշռեր դրանք: Միապետական դրոշմ կրող այս դոկտրինան հանրապետական Փրանսիայում որպես փոխգիջում նախագահի ավելի մեծ իշխանությանը ձգքող դը Գոլի եւ դեպի դասական պառլամենտական համակարգը հակված պետական նախարարների միջեւ իր արքացությունը գրավ Հինգերորդ Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածում, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը «իր արբիտրաժով ապահովում է հանրային իշխանությունների բնականոն գործունեությունը եւ պետության հաջորդայնությունը»:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահն ապահովում է օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Իշխանության երեք ճյուղերի գործունեությունը բնականոն է այն դեպքում, երբ նրանք գործում են Սահմանադրությանը եւ օրենքներին համապարասխան: Մրանից հեղտում է, որ Հանրապետության Նախագահը կարող է միջամբել միայն այն դեպքերում, երբ խաթարվել կամ խաթարման վրանգի տակ է իշխանության երեք ճյու-

ղերի բնականոն գործունեությունը: Տանրապետության Նախագահի այս գործառնությունը առաջնային նպատակներից մեկն օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև առաջացած կոնֆլիկտների կամ դրանց գործունեության հետ կապված խոչընդոտների վերացմանը նպաստելն է: Դա արական իշխանության պարագայում Տանրապետության Նախագահը պետք է շարքավելի մեծ գոյապահություն և ձեռնպահություն ցուցաբերի, քանի որ արդարադատություն իրականացնելիս դա արական իշխանությունը բացարձակապես անկախ է քաղաքական իշխանություններից: Իրականացնելով իրավարար գործառնությունը՝ Տանրապետության Նախագահը պարտավոր է օգտվել Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իր լիազորություններից, ինչպես նաև իրականացնել իշխանության փաթեթ ճյուղերի բնականոն գործունեությանն ուղղված փաթեթ ոչ իշխանական գործողություններ (առաջարկել, խորհրդակցություններ անցկացնել, բանակցել, հորդորել և այլն): Ոչ իշխանական լիազորություններ իրականացնելիս Տանրապետության Նախագահը կարող է միջամտել ինչպես կոնֆլիկտի առկայության դեպքում, այնպես էլ այն կանխելու նպատակով, երբ նա գտնում է, որ նման ձեռով ավելի արագ կապահովվի փոխյալ պետական մարմնի բնականոն գործունեությունը:

Տայաստանի Սահմանադրությունը և օրենքները Տանրապետության Նախագահին վերապահել են որոշակի լիազորություններ, որոնց միջոցով վերջինս կարող է իրականացնել իրավարար գործառնությունը: Կառավարության բնականոն գործունեության հետ մեծապես կապված են Տանրապետության Նախագահի լիազորություններն ինչպես կառավարության կազմավորման, նրա կազմում փոփոխությունների և հրաժարականի հարցերում (հոդված 55, կետ 4), այնպես էլ կառավարության գործունեության իրականացման ժամանակ, ինչպես, օրինակ, կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի սահմանումը՝ ըստ 85-րդ հոդվածի 6-րդ մասի: Օրենսդիր իշխանության նկատմամբ իրավարար լիազորություններից առաջին հերթին անհրաժեշտ է նշել Տանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովի արձակումը և արտահերթ ընտրության նշանակումը (հոդված 55, կետ 3 և հոդված 74.1), ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությունների նշանակումը (հոդված 68, մաս 3): Եթե Ազգային ժողովի ընտրությունների նշանակումն ինքնին ավելի շարք կազմակերպական ու ընթացակարգային բնույթ ունի, ապա խորհրդարանի լուծարումն իշխանությունների հավասարակշռման փոփոխությունից կարելի է ինստիտուտ է, որի նշանակությունը, սակայն, 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո էականորեն նվազել է (փես 74.1-րդ հոդվածի մեկնաբանությունները): Ինչ վերաբերում է դա արական իշխանության հետ կապված Տանրապետության Նախագահի լիազորություններին, ապա դրանք ավելի համեստ են Ազգային ժողովի և կառավարության նկատմամբ նրա լիազորությունների համեմատությամբ: Դրանք ամրագրված են Սահմանադրության 55-րդ հոդվածի 10, 11 և 11.1-րդ կետերում (դա արավորների և սահմանադրական դատարանի չորս անդամի նշանակում, նրանց լիազորությունների դադարեցում և այլն):

Որպես Տանրապետության Նախագահի կողմից իշխանության մարմինների բնականոն գործունեության ապահովման գործառնություն իրականացում կարելի է դիտել նաև Տանրապետության Նախագահի կողմից պետական պաշտոններում օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարելու իրավունքը (հոդված 55, կետ 5), ինչպես նաև հենց Սահմանադրությամբ սահմանված՝ նրա կողմից փաթեթ պաշտոններում նշանակումներ կատարելու և թեկնածություններ առաջադրելու լիազորությունները (հոդված 55, կետեր 9 և 10, հոդված 83.2, հոդված 83.3, մաս 4, հոդված 83.4, մաս 5):

Տանրապետության Նախագահի կողմից օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու գործառույթը նրան վեր չի դատում այդ իշխանություններից և վերջիններիս վերածույն գործիքների Տանրապետության Նախագահի ձեռքում՝ որպես իշխանության «իրական» կրողի: Այս գործառույթը Տանրապետության Նախագահին չի դնում պետական իշխանության գործադիր բուրգի գագաթին, որտեղ պետական մյուս մարմիններն անհրաժեշտ են միայն որպես Նախագահի կամքն իրականացնող միջոց: Տանրապետության Նախագահի իրավաբար գործառույթը չի կարող նշանակել, որ նա սրանձնում է իշխանության երեք ճյուղերի համակարգողի դերը, «որն ի չիք կդարձնի իշխանությունների փարանջապման ամեն մի սկզբունք»: Արբիտրաժային գործառույթի առկայությունը չի նշանակում, որ այն հիմնավորում է իշխանության նոր, չորրորդ ճյուղի անհրաժեշտություն՝ նախագահական իշխանության տեսքով: Չնայած հիմնականում ռուսական սահմանադրական դոկտրինայում նման փորձերին, արբիտրաժային գործառույթով օժտված նոր՝ նախագահական իշխանության գաղափարն ուղղակի հակասության մեջ է գտնվում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետ՝ հարցականի տակ դնելով վերջինիս ամբողջ փիլիսոփայությունը: Իշխանությունների բաժանման հիմնական իմաստը պետության հիմնական գործառույթների սահմանազատումն է իրարից առանձին իշխանության ճյուղերի տեսքով, ինչպես նաև նրանց միջև համագործակցությունն է, որպեսզի չխաթարվի իշխանության միասնությունը: Յուրաքանչյուր իշխանություն իրականացնում է իր իմանենք հիմնական գործառույթը՝ մնալով մյուս իշխանության ճյուղերից անջատ և համեմատաբար ինքնուրույն: Իշխանությունների բաժանման այս պլյուրալիստիկական հարադրությունն ուղղված է իշխանության կենտրոնացման դեմ: Մյուս կողմից, իշխանությունների բաժանման սկզբունքի իմանենք հատկանիշն է իշխանության փարբեր ճյուղերի, հատկապես օրենսդիր և գործադիր իշխանությունների, միջև համագործակցությունը (ինտեգրարիվ հարադրություն), որն իրականացվում է զսպումների և հակակշիռների մեխանիզմի միջոցով: Այդ մեխանիզմի իրականացման ժամանակ օրենսդիր և գործադիր իշխանությունների գործառնական (ֆունկցիոնալ) բովանդակությունը ենթարկվում է որոշակի ձեւափոխումների՝ լրացվելով այնպիսի լիազորություններով, որոնք բնորոշ են այլ իշխանության ճյուղերին: Զսպումների և հակակշիռների մեխանիզմի նպատակը հավասարակշռված և վերահսկելի իշխանությունն է: Այսպիսով, իշխանությունների բաժանման պլյուրալիստիկական և ինտեգրարիվ հարադրությունների ապահովման մեխանիզմն այդ ճյուղերի միջև փոխազդեցության և փոխգործակցության գործընթացն է: Եթե իշխանության ճյուղերի միջև այդ փոխազդեցության և փոխգործակցության փոխարեն որպես ինտեգրող գործոն հանդես է գալիս դրանց մեջ չգտնվող մեկ այլ, այսպես կոչված՝ չորրորդ իշխանություն, որի հիմնական գործառույթն իշխանության ճյուղերի հավասարակշռության և միասնության ապահովումն է, ապա դա անհրաժեշտաբար ենթադրում է ամբողջ իշխանության կենտրոնացում այդ գործառույթն իրականացնող պետական մարմնի մոտ: Ստացվում է, որ իշխանությունների կենտրոնացման դեմ ուղղված իշխանությունների բաժանման սկզբունքն ապահովելու համար անհրաժեշտ է իշխանության կենտրոնացում մեկ մարմնի ձեռքում: «Պետական իշխանության այնպիսի արխիտեկտոնիկայի պարագայում, երբ իշխանության բաժանված ճյուղերի միասնության ապահովման գործառույթը (համագործակցության և համակարգված գործունեության իմաստով) փաստացի միախմբվում է մեկ կենտրոնում, քանդվում է իշխանական կառույցների կառուցման խիստ իրավական տրամաբանությունը՝ իշխանությունների բաժանման սկզբունքին համապատասխան»:

Չնայած Նանրապետության Նախագահի գործադիր գործառույթն ուղղակիորեն նշված չէ մեկնաբանվող հոդվածում, այն, ինչպես տեսանք, շարք մեծ նշանակություն ունի:

Մինչև 2005թ. Սահմանադրության փոփոխությունները Նանրապետության Նախագահի պարկանելությունն իշխանության երեք հիմնական ճյուղերին՝ խիստ վիճելի էր, քանի որ Սահմանադրությունը 62, 85 եւ 91-րդ հոդվածներում սահմանելով, թե որ մարմիններն են իրականացնում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունները (օրենսդիր իշխանությունը՝ Ազգային ժողովը, գործադիր իշխանությունը՝ կառավարությունը եւ դատական իշխանությունը՝ դատարանները), Նանրապետության Նախագահին այդ մարմինների շարքում չէր հիշարակում: 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում 85-րդ հոդվածում այլևս սահմանված չէ, որ «Նայաստանի Նանրապետության գործադիր իշխանությունը իրականացնում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը»: Դրա փոխարեն նույն հոդվածի առաջին մասն ամրագրում է կառավարության՝ գործադիր իշխանության իրականացման բնագավառում կարելու-րագույն գործառույթը՝ ներքին եւ արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նույն տեղում միաժամանակ նշված է, որ երկրի արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում եւ իրականացնում է Նանրապետության Նախագահի հետ համարելով: 85-րդ հոդվածի առաջին մասից կարելի է հանգել հետևյալ այն եզրակացությանը, որ, առաջին՝ սահմանադիրը կառավարությանը չի դիտարկում է որպես գործադիր իշխանության միակ սահմանադրական մարմին, եւ երկրորդ, որ գործադիր իշխանության մարմին է նաեւ Նանրապետության Նախագահը: Նանրապետության Նախագահի նյութական առումով գործադիր իշխանությանը վերաբերող լիազորությունները մասնավորապես արտացոլված են Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-8-րդ (արտաքին քաղաքականություն), 12-15-րդ կետերում (պաշտպանություն, ներքին եւ արտաքին անվտանգություն): Բացի դրանից, 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակեցվեց Նանրապետության Նախագահի կարգավիճակը որպես «պետության զլուխ», իսկ այն ավանդաբար, ինչպես միջազգային իրավունքում, այնպես էլ օտարերկրյա սահմանադրական իրավունքի դոկտրինայում դասվում է գործադիր իշխանությանը:

2005թ. կարգավորումները հստակեցրեցին Նանրապետության Նախագահի տեղը իշխանությունների բաժանման, պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Ըստ այդմ, Նանրապետության Նախագահի լիազորություններն իրենց իրավաբանական բնույթով, այսինքն գործառնական (ֆունկցիոնալ) իմաստով գործադիր իշխանության մաս են կազմում, իսկ Նանրապետության Նախագահը գործադիր իշխանության մարմին է: Գործադիր իշխանությունը Նայաստանում, որդեգրված կիսանախագահական կառավարման ձեւին համահունչ, դուալիստական է, եւ որոշակի համամասնություններով եւ որոշակի դերակատարումներով բաժանված է կառավարության եւ Նանրապետության Նախագահի միջեւ: Գործադիր իշխանության իրականացման ոլորտում գործում է կառավարության օգրին իրավասության կանխավարկածը, ըստ որի՝ նրա «իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական ... մարմինների», այսինքն՝ նաեւ Նանրապետության Նախագահին: Իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից կառավարության իրավասությունը գործադիր իշխանության բնագավառում կանոն է, իսկ Նանրապետության Նախագահինը՝ բացառություն: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ Նանրապետության Նախագահի գործադիր լիազորությունները երկրորդական են եւ

կառավարությանը՝ ստորադաս: Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին գերակա, թեև ոչ միանձնյա և մենիշխան, դերակատարություն է ընձեռում երկրի արտաքին, պաշտպանության, ներքին և արտաքին անվտանգության քաղաքականության բնագավառներում՝ նրան վերապահելով համապատասխան լիազորություններ, որոնք նա կարող է և պարտավոր է իրականացնել ինչպես այն պարագայում, երբ նա քաղաքական մեծամասնության լիդերն է, այնպես էլ «համակեցության» պարագայում: Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը Հանրապետության Նախագահի այս լիազորությունների խումբը սահմանել է որպես պետության և ժողովրդի կենսական նշանակության գերագույն շահերի «երաշխավորի» խնդիր:

Հանրապետության Նախագահին և կառավարությանը նվիրված Սահմանադրության դրոյթներում աչքի է զարնում այն հանգամանքը, որ կառավարության գործառույթներն ու խնդիրները բնութագրելիս Սահմանադրությունն օգտագործում է «մշակում է», «իրականացնում է», «ղեկավարում է», «կառավարում է», «միջոցներ է ձեռնարկում» ձեակերպումները, իսկ Հանրապետության Նախագահի դեպքում՝ «հետբերում է», «ապահովում է», «երաշխավորն է» ձեակերպումները: Ինչո՞վ են դրանք փարբերվում միմյանցից: Կառավարությանը վերաբերող ձեակերպումներն արտահայտում են նրա ակտիվ դերակատարությունը՝ նա զբաղվում է ընթացիկ հանրային, Կրթական, մշակութային և այլ խնդիրներով, մշակում է դրանց լուծման եղանակները, իրեն ենթակա մարմիններին ցուցումներ է փոխադրում դրանք իրագործելու համար, անհրաժեշտության դեպքում մշակում է օրինագծեր և այլն: Հակառակ դրան, Հանրապետության Նախագահը հետբերում է, թե ինչպես է կառավարությունն իրականացնում այդ աշխատանքները և դրանց ընթացքում որքանով է բավարար ուշադրություն հատկացվում այն արժեքներին, որոնց մասին խոսվում է մեկնաբանվող հոդվածում: Հանրապետության Նախագահի հիմնական դերը, ըստ Սահմանադրության, ոչ թե քաղաքականության մշակման մեջ է (բացառությամբ նշված երեք ոլորտների, որտեղ նա համագործակցում է կառավարության հետ), ինչը փոփոխական, ընթացիկ և պրագմատիկ գործընթաց է, այլ հիմնարար և հարատև արժեքների պահպանության մեջ, որոնք արտահայտում են ժողովրդի և պետության կենսական շահերը: Հանրապետության Նախագահի նման սահմանադրաիրավական պարկերացումն ավելի ցայտուն կերպով է արտահայտված ճգնաժամային իրավիճակներում կամ այդ հիմնարար արժեքներին վրանգ ապառնալու պարագայում նրան վերապահված լիազորություններում:

Հանրապետության Նախագահի գործառույթներն ու խնդիրներն իրենց ամբողջության մեջ հասկանալի են դառնում միայն այն ժամանակ, երբ դրանք համադրում ենք երկու կարեւորագույն հանգամանքների հետ, այն է՝ որ նա ընտրվում է ուղղակի ընտրություններով, և որ նա իր լիազորությունների իրականացման ժամանակ քաղաքական պարասխանավորություն չի կրում ո՛չ խորհրդարանի և ո՛չ էլ ժողովրդի առջեւ: Արդյունքում՝ գործ ունենք մի մարմնի հետ, որն ուժեղ է իր ժողովրդավարական լեգիտիմության աստիճանով, ունի բազմաթիվ և էական նշանակություն ունեցող լիազորություններ, որոնց զգալի մասը գործադիր բնույթ է կրում, բայց որը, սակայն, քաղաքական պարասխանավորություն չի կրում: Քաղաքական իշխանության իրականացման և քաղաքական պարասխանավորության միջեւ նման անհամամասնությունը, ինչը, անկասկած, կհակասեր իշխանությունների բաժանման սկզբունքին, սկզբունքորեն արդարացված է միայն այն պարագայում, երբ նրա հիմնական գործառույթներն ու խնդիրները կայանում են ոչ թե պետության անմիջական կառավարման, այլ որոշակի հիմնարար արժեքների պահպանմանը հետբերելու մեջ: Դերերի նման բաժանումը գործադիր իշխանության ներսում

բնորոշ է կիսանախագահական կառավարման մոդելին, որը, մի կողմից, փորձում է ունենալ ուժեղ ու արդյունավետ գործադիր իշխանություն, որը չափից ավելի կախված չէ օրենսդիր իշխանությունից, իսկ մյուս կողմից՝ խորհրդարանի առջև քաղաքական պարասխանաարվություն կրող գործադիր իշխանություն: 2005թ. սահմանադրական փոփոխությունների հիմքում ընկած է կիսանախագահական կառավարման մոդելի նման պարկերացումը, որը վերացրեց 1995թ. Սահմանադրության սկզբնական խմբագրությունում ամրագրված Նանրապետության Նախագահի գերակա դիրքը պետական իշխանությունների համակարգում: Ուժեղացնելով կառավարության ինստիտուցիոնալ Սահմանադրությունն առաջին հերթին ապահովեց կառավարության ինքնուրույնությունը Նանրապետության Նախագահից, որն էլ իր հերթին ուժեղացնում է խորհրդարանի դիրքերը գործադիր իշխանության նկատմամբ, քանի որ Ազգային ժողովն ունի բոլոր իրավական միջոցները վերահսկողություն իրականացնելու կառավարության նկատմամբ, ընդհուպ մինչև առանց լուծարման սպառնալիքի կառավարությանն անվտանգություն հայտնելը: Նանրապետության Նախագահի՝ քաղաքական առումով պարասխանաարտ չլինելն զգալի չափով փոխհարուցվում է խորհրդարանի առջև կառավարության ամբողջական քաղաքական պարասխանաարվությամբ, ինչը բնորոշ է կիսանախագահական կառավարման մոդելին:

Այսպիսով, Նանրապետության Նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, եւ դրա հետ կապված փարբեր խնդիրները եւ գործառնությունները հիմնականում ներդաշնակ են կիսանախագահական կառավարման մոդելում գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին:

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը Նանրապետության Նախագահի վրա է դնում երկրի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի արժեքների երաշխավորումը, ինչպիսիք են Նայաստանի Նանրապետության անկախությունը, փարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը: Նանրապետության Նախագահին նման խնդրի իրականացում վերապահելը մեծապես պայմանավորված է ժողովրդի կողմից նրա ուղղակի ընտրության փաստով:

Պետության անկախությունը, փարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունն այն հիմնարար արժեքներն են, առանց որոնց Նայաստանի Նանրապետությունը չի կարող գոյություն ունենալ որպես «ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն» (հոդված 1, մաս 1): Պետության անվտանգությունը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգությունը: Այս արժեքների երաշխավորումը Նանրապետության Նախագահի կողմից՝ ենթադրում է իր բնույթով գործադիր իշխանության իրականացում, քանի որ երկրի անկախության, փարածքային ամբողջականության եւ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է սահմանել երկրի քաղաքականությունը պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում եւ իրականացնել դրանք համապարասխան գործադիր իշխանության մարմինների միջոցով: Սահմանադրությունն ակներեւաբար ելնում է այս բնագավառներում Նանրապետության Նախագահի դեկավար դիրքից, քանի որ Նանրապետության Նախագահին է վերապահում պաշտպանության բնագավառում պետական մարմինների գործունեության համակարգումը (հոդված 55, կեր 12), ռազմական դրության, ընդհանուր կամ մասնակի զորահավաքի հայտարարումը եւ զինված ուժերի օգտագործման մասին որոշման ընդունումը (հոդված 55, կեր 13), արտակարգ դրության հայտարարումը (հոդված 55,

կեք 14): Բացի դրանից, Նանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, նշանակում է և ազատում է զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (հոդված 55, կեք 12), իսկ պատերազմի ժամանակ կարող է նշանակել է և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին (հոդված 55, կեք 13): Միևնույն ժամանակ, կառավարության դերը չի սահմանափակվում սոսկ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ պաշտպանության, ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության իրականացման ապահովմամբ, քանի որ նա այդ բնագավառներում Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ երկրի քաղաքականության մշակման եւ իրականացման իրավասություն ունի: Կիսանախագահական համակարգին բնորոշ դուալիստական գործադիր իշխանությունն այս բնագավառներում դրսևորվում է ամենացայտուն կերպով: Իսկ դա, իր հերթին, նշանակում է, որ Սահմանադրության ուժով Նանրապետության Նախագահը եւ կառավարությունը պարտավոր են համագործակցել միմյանց հետ երկրի համար կենսական նշանակություն ունեցող այս ոլորտներում միասնական եւ արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով:

ՆՈՂՎԱԾ 50

- 1. Նանրապետության Նախագահն ընտրվում է Տայասրանի Նանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:**
- 2. Նանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսուներեկ օրս լրացած, վերջին տասը տարում Տայասրանի Նանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Նանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:**
- 3. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Նանրապետության Նախագահի պաշտոնում:**

1. Հոդվածով կարգավորվում են Նանրապետության Նախագահի լիազորությունների ժամկետի, Նանրապետության Նախագահի թեկնածուներին առաջադրվող պահանջների, վերընտրվելիության կարգի հետ կապված հարաբերությունները: Մեկնաբանվող հոդվածի համաձայն Նանրապետության Նախագահն ընտրվում է ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների (ժողովրդի) կողմից, այսինքն՝ Նանրապետության Նախագահն իր մանդատը ստանում է հենց Տայասրանի Նանրապետության ժողովրդից: Նախագահի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

Կառավարման հանրապետական ձեւ ունեցող պետություններում պետության գլուխը սովորաբար ընտրվում է ուղղակի կամ անուղղակի ընտրությունների միջոցով: Ուղղակի ընտրություններն առավելապես բնորոշ են նախագահական (բացառությամբ ԱՄՆ-ի եւ Ինդոնեզիայի) եւ կիսանախագահական կառավարման ձեւ ունեցող պետություններին: Պետության գլուխն անմիջապես բնակչության կողմից է ընտրվում Բրազիլիայում, Մեքսիկայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Թունիսում եւ այլն: Ընտրության այդպիսի կարգը համապատասխանում է այն կենտրոնական տեղին, որը կառավարման նախագահական կամ կիսանախագահական համակարգ ունեցող պետությունների պետական մեխանիզմում զբաղեցնում է Նանրապետության Նախագահը եւ փայլ է նրան յուրօրինակ «ուղղակի մանդատ» ընտրողների կողմից՝ դրանով իսկ ապահովելով այս

ինստիտուտի լեգիտիմության բարձր աստիճան:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19) ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» (ցուցումներ եւ բացատրական զեկույց) 6-րդ կետը սահմանում է. «Ընտրությունները պետք է անցկացվեն պարբերաբար՝ հստակ սահմանված ժամանակահատվածը մեկ, օրենսդիր մարմնի պաշտոնավարման ժամկետը չպետք է գերազանցի հինգ տարին»: Այս կետի բացատրության մեջ ասվում է. թե՛ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրում եւ թե՛ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1952թ. մարտի 20-ի լրացուցիչ արձանագրության մեջ (հոդվ. 3) նշվում է, որ ընտրությունները պետք է անցկացվեն պարբերաբար: Ընդհանուր ընտրությունները սովորաբար կազմակերպվում են 4-5 տարվա ընդմիջումներով, մինչդեռ նախագահական ընտրությունների համար հնարավոր են առավել երկարատև ընդմիջումներ, այնուամենայնիվ, առավելագույնը պետք է լինի 7 տարի:

Ինչպես տեսնում ենք, այս ժամկետը միջազգային չափորոշիչների համաձայն պեղ է գրել ողջամիտ ժամկետների շրջանակում, որը, մի կողմից, այնքան կարճատև չէ, որ բացառի Նանրապետության Նախագահի կողմից հիմնարար բնույթի, պետական ժամանակ պահանջող քայլեր կատարելու հնարավորությունը, մյուս կողմից՝ այնքան երկարատև չէ, որ խզում առաջացնի ժողովրդի եւ իշխանության միջև: Մտապուր ընտրությունների շունչը լճացման գործընթացները կանխարգելող լավագույն միջոցներից է:

Միջազգային պրակտիկան եւս վկայում է, որ պետությունների նախագահներն ընտրվում են 4-7 տարի ժամկետով. Նախագահի լիազորությունների ժամկետը 4 տարի է ԱՄՆ-ում, Նունգարիայում, Մոլդովայում, Ռումինիայում, 5 տարի՝ Գերմանիայում, Նունասարանում, Պորտուգալիայում, Չեխիայում, Ինդոնեզիայում, Եգիպտոսում, Նայասպանում, 6 տարի՝ Ավստրիայում, Լիբիայում, Ֆիլիպիններում, Ռուսաստանի Դաշնությունում, 7 տարի՝ Իսրայիլում, Իռլանդիայում, Թուրքիայում, Գաբոնում:

Նանրապետության Նախագահի լիազորությունների ժամկետը հաշվարկվում է Նանրապետության Նախագահի լիազորությունների պաշտոնական սրանձնման պահից (երդմնակալության օրվանից) եւ ավարտվում է Նանրապետության նորընտրի Նախագահի երդմնակալության օրը (տե՛ս 54-րդ հոդվածի մեկնաբանությունը):

2. Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Նանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ ընտրվելու (պասիվ) ընտրական իրավունքը չի համընկնում Նանրապետության Նախագահ ընտրելու իրավունքի (ակտիվ ընտրական իրավունք) հետ: Նանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ պասիվ ընտրական իրավունքը, ակտիվ ընտրական իրավունք ներառելուց զատ, ներառում է երեք լրացուցիչ նախապայման՝ Նանրապետության Նախագահ կարող է ընտրվել միայն ակտիվ ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին՝

ա/ որի երեսունհինգ տարին լրացել է,

բ/ որը վերջին տասը տարում հանդիսանում է Նայասպանի Նանրապետության քաղաքացի,

գ/ որը վերջին տասը տարում մշտապես բնակվում է Նայասպանի Նանրապետությունում:

Նման պայմանները թելադրվում են Նայասպանի Նանրապետության Նախագա-

հին վերապահված իրավասության բարդությամբ եւ պարասխանարվությամբ:

Տարիքային նվազագույն նման շենը պայմանավորված է նրանով, որ այդ պաշտոնը պահանջում է բավարար կենսավորձ ունեցող անձ: Միջազգային պրակտիկայում հանդիպում են անգամ ավելի բարձր տարիքային նվազագույն ցենզի սահմանման դեպքեր: Այսպես, Նիկարագուայում Նախագահի թեկնածուի նվազագույն տարիքը 25 է, Վենեսուելայում, Դոմինիկյան Հանրապետությունում՝ 30, Ավստրիայում, Հունգարիայում, Մեքսիկայում, Պորտուգալիայում, ԱՄՆ-ում՝ 35, ՊԴՀ-ում, Հունաստանում, Եգիպտոսում, Լատվիայում, Թուրքիայում՝ 40, Չինաստանում, Մոնղոլիայում՝ 45, Իրալիայում՝ 50:

Ի տարբերություն որոշ արտասահմանյան երկրների, ՀՀ Սահմանադրությունն առավելագույն տարիքային ցենզ չի սահմանում:

Հազվադեպ է սահմանվում առավելագույն տարիքը: Այսպես, Մոզամբիկի Սահմանադրության 77-րդ հոդվածը սահմանում է ոչ միայն ստորին (40), այլ նաեւ վերին (65) առավելագույն տարիքը: Ղրղզստանի 1993 թվականի Սահմանադրությունը սահմանում է, որ Նախագահը չպետք է լինի 45 տարեկանից փոքր եւ 65-ից մեծ: Նմանատիպ դրույթ է ամրագրված նաեւ Տաջիկստանի 1994 թվականի Սահմանադրության մեջ, Թունիսի Սահմանադրությամբ Նախագահի համար սահմանված առավելագույն տարիքը 70 է:

Տասը տարվա ՀՀ քաղաքացիություն ունենալու պահանջը եւս բխում է պետական մարմինների համակարգում Հանրապետության Նախագահի ունեցած դիրքից ու նշանակությունից: ՀՀ քաղաքացիություն ունենալու պահանջն արդարացված է նաեւ այն պատճառով, որ հիմնական քաղաքական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ համապետական ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունքը պարզապես է բացառապես ՀՀ քաղաքացիներին: ՀՀ Սահմանադրությունն այս հարցում տարբերակում չի դնում (ի տարբերություն որոշ երկրների, ուր Հանրապետության Նախագահ կարող են ընտրվել միայն ի ծնե քաղաքացիները), թե ինչ եղանակով է անձը ստացել իր քաղաքացիությունը՝ ծննդյան փաստով, թե նախորդակցված քաղաքացի է:

Հանրապետության Նախագահի թեկնածուի համար սահմանված հաջորդ ցենզը վերջին տասը տարում ՀՀ-ում մշտապես բնակվելն է (նախկեցության ցենզ): Պետության գլխի թեկնածուների համար նախկեցության ցենզի սահմանումը եւս նորույթ չէ: Միջազգային պրակտիկայում այն լայնորեն տարածված է, թեպետ ժամկետները տարբեր են՝ 15 տարի՝ Ղազախստանում, Վրաստանում, 14 տարի՝ ԱՄՆ-ում, 10 տարի՝ Ուգանդայում, 5 տարի՝ Բուլղարիայում, Մոնղոլիայում, 3 տարի՝ Լիբիայում: Մշտական բնակության պայմանը նպատակ է հետապնդում բացառելու այնպիսի անձանց ընտրվելը, ում անմիջականորեն մարչելի, հասանելի ու ընկալելի չեն այն խնդիրները, որոնց լուծումը վերապահված է Հանրապետության Նախագահին: Դրանց անձը կարող է լիարժեք իրազեկ լինել, եթե մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում:

«Մշտական բնակությունը» նշանակում է, որ.

ա) անձը պետք է մշտապես 10 տարի, անմիջապես ընտրություններին նախորդող ժամանակահատվածում բնակվի Հայաստանի Հանրապետությունում,

բ) այդ ժամկետը պետք է լինի անընդհար, առանց ընդմիջման, այսինքն՝ ընդհանրապես 10 տարի Հայաստանի Հանրապետությունում բնակվելը բավարար չէ, անձը չի կարող այդ ժամկետը լրացնել մաս-մաս, այն պետք է լինի անընդմեջ:

Մշտական բնակության պահանջը բնավ էլ չի բացառում քաղաք անձի արտասահման գործողումները, այցելությունները՝ հանգստի կամ բուժման նպատակներով:

Անձի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության փաստը հաս-

տարող փաստաթուղթը ՆՃ ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա նրան կամ նրա լիազոր ներկայացուցչին տրամադրում է լիազորված պետական մարմինը՝ դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Մշտական բնակությունը հաստատվում է անձի՝ ՆՃ-ում հաշվառված լինելու հանգամանքով:

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովն իր 76-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 17-18 հոկտեմբեր, 2008թ.) ՆՃ ընտրական օրենսգրքի 2007 թվականի դեկտեմբերի դրությամբ փոփոխված եւ լրացված տարբերակի վերաբերյալ համապետ եզրակացության մեջ նշում է, որ Նախագահի թեկնածու լինելու համար 35 տարեկանի սահմանափակումը բավական բարձր է: Ավելին, փասը տարվա բնակության եւ տասը տարվա քաղաքացիության պահանջները, ըստ երեւոյթին, չափազանց խիստ են: Բացառությամբ շատ կոնկրետ իրավիճակների, դրանք չեն կարող հիմնավորվել ազգային կամ ժողովրդավարական որեւէ շահի պաշտպանության նկատառումներով:

ՆՃ Սահմանադրությունը Նանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ ուղղակիորեն պասիվ ընտրական իրավունքի համար սահմանափակումներ չի նախատեսել: Սակայն ՆՃ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (65-րդ հոդվածը փոփ. 26.02.07 ՆՕ-79-Ն օրենք)՝ Նանրապետության Նախագահի թեկնածու չեն կարող առաջադրվել եւ Նանրապետության Նախագահի թեկնածու չեն կարող գրանցվել Նայաստանի Նանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն:

Վենետիկի հանձնաժողովն իր վերը նշված եզրակացության մեջ անդրադարձել է նաեւ այս սահմանափակմանը: Նշվել է, որ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը որոշել է ակտիվ ընտրական լիարժեք իրավունքներ ընձեռել (կախված Նայաստանի Նանրապետությունում բնակության իրավունք ստանալու հնարավորությունից) լրացուցիչ քաղաքացիություն ունեցող անձանց, սակայն նրանց չի վերապահվել համազգային ընտրություններով ընտրվող պաշտոններում ընտրվելու իրավունք (պասիվ ընտրական իրավունք): Դա հակասում է Բարեխիղճ գործելակերպի կանոնագրքին: Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել է, որ ակտիվ եւ պասիվ ընտրական իրավունքների սահմանափակումները պետք է վերացվեն: Երբ ընդունվել է երկքաղաքացիության իրավունքը, երկքաղաքացիություն ունեցող անձինք չպետք է ավելի պակաս իրավունքներ ունենան, քան այլ քաղաքացիները, նման սահմանափակումները լայն տարածում չունեն:

Միաժամանակ նշվում է, որ բացառություն կարելի է նախատեսել միայն բացառիկ դեպքերի, օրինակ՝ պետության ղեկավարի համար: Նման բացառությունները պետք է նախատեսվեն Սահմանադրությամբ:

Նաշվի առնելով Նանրապետության Նախագահի տեղը պետական մարմինների համակարգում, նման սահմանափակումը պետք է ուղղակիորեն սահմանված լիներ ՆՃ Սահմանադրությամբ: ՆՃ Սահմանադրությունը, այնուամենայնիվ, նման սահմանափակման հնարավորություն տալիս է, սակայն նման եզրահանգման կարելի է գալ մի քանի հոդվածների համադրման ու նպատակային մեկնաբանության պարագայում:

ՆՃ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով: Այս հոդվածը պետք է մեկնաբանվի որպես երկքաղաքացիություն ունեցող անձանց միայն ՆՃ քաղաքացիություն ունեցող անձանց պարկանող իրավունքներից ու ազատություններից սահմանափակ իրավունքներ եւ ազատություններ տալու հիմք,

հակառակ պարագայում նման դրույթը կհմաստատվի: Ուստի ՀՀ Սահմանադրության փեսանկյունից նման սահմանափակումը փեղավորվում է սահմանադրականության շրջանակներում, թեպետ, կարծում ենք, որ այն ուղղակիորեն պետք է սահմանված լիներ հենց 50-րդ հոդվածում, եւ եվրոպական իրավունքի փեսանկյունից Վենետիկի հանձնաժողովի վերը նշված պնդումները հիմնավոր են:

3. Նայաստանի Նանրապետությունում նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Նանրապետության Նախագահի պաշտոնում:

Այս հարցի կարգավորումը միջազգային պրակտիկայում աչքի է ընկնում իր զանազանությամբ: Որոշ երկրներում Նանրապետության Նախագահին թույլատրվում է մասնակցել հաջորդ ընտրություններին՝ առանց որեւէ սահմանափակման (Բուլղարիա, Ֆրանսիա, Ինդոնեզիա, Եգիպտոս):

ԱՄՆ-ում, Լեհաստանում, Խորվաթիայում միեւնույն անձը կարող է ընտրվել միայն 2 անգամ: Որոշ երկրների կարգավորումն էլ համապատասխանում է Նայաստանին՝ Պորտուգալիա, Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Մեքսիկան, Բոլիվիան, Էկվադորը, Նիգերը, Նանրապետության Նախագահի կրկնակի ընտրությունն ընդհանրապես բացառվում է:

Սահմանադրություններով սահմանափակված ռոտացիոն սկզբունքը, անշուշտ, ունի որոշակի ժողովրդավարական ներուժ, քանի որ այն ծառայում է որպես պետության գլխի լայն իշխանության յուրօրինակ հակակշիռ: Սակայն չպետք է բացարձականացնել դրա դրական նշանակությունը: Նման սահմանափակումն անխուսափելիորեն հանգեցնում է լիազորությունների վերջին տարում Նախագահի լիազորությունների արդյունավետության նվազեցմանը: Այդ ժամանակ առավել մեծ ուշադրություն է դարձվում հավանական (պտրենցիալ) թեկնածուների վրա, իսկ այլ պետությունների նախագահները հաճախ հեղաձուլում են առավել կարեւոր բանակցությունների անցկացումը՝ այնքան ժամանակ, քանի դեռ իր լիազորությունները չի ստանձնում նոր Նախագահը: Մյուս կողմից՝ վերընտրվելու անսահմանափակ հնարավորությունը պարունակում է բարենպաստ պայմաններ ուժեղացնելու ավտորիտար միտումները քաղաքական համակարգում, ինչի մասին վկայում է երրորդ աշխարհի մի շարք պետությունների փորձը: Երբեմն նույնիսկ փոփոխելիության (ռոտացիայի) սկզբունքի սահմանումն արգելք չի հանդիսանում փեղակալական դիկտատորների համար: Վերընտրվելը սահմանափակող արգելքն ուղղված է Նախագահի ինքնակալության (ավտորիտարիզմի) դեմ:

ՀՈԳՎԱԾ 51

1. Նանրապետության Նախագահն ընտրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով: Նանրապետության Նախագահի ընտրությունը անցկացվում է նրա լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ:

2. Նանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին:

3. Եթե քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու, եւ նրանցից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկությունից հետո՝ փասնաշարժերի օրը, անցկացվում է Նանրապետության Նախագահի

հի ընտրության երկրորդ փուլ: Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

4. Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

5. Եթե Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքների վերաբերյալ սահմանադրական դատարանը գործ է ընդունում քննության, ապա որոշում պետք է կայացնի դիմումը սրանալուց հետո՝ փաստօրյա ժամկետում, իսկ սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվվում են դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

6. Եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակվելուց հետո՝ քառասուներորդ օրը:

7. Հանրապետության Նախագահն իր պաշտոնն սրանձնում է Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը:

8. Նոր կամ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության Նախագահը պաշտոնն սրանձնում է ընտրությունից հետո՝ քաներորդ օրը:

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանվող հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահի ընտրություն անցկացնելու ժամկետները, ընտրվելու նախապայմանները եւ դրանց հետ առնչվող այլ հարաբերություններ:

Նոդվածում կարգավորվող հարաբերությունները կոնկրետացված են ՀՀ ընտրական օրենսգրքում: Ընտրական գործընթացը դիտելով իբրեւ պարտադիր կարգով միմյանց հաջորդող փուլերի ամբողջություն, կարելու նշանակություն է տրվում ընտրությունների նշանակման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը եւ, հաշվի առնելով Հանրապետության Նախագահի պաշտոնի եւ այդ ինստիտուտի դերը պետական մարմինների համակարգում, կարելու են Հանրապետության Նախագահի ընտրվելու պայմանները: Այս հանգամանքներով է պայմանավորված այդ հարաբերություններին սահմանադրական կարգավորում տալը:

Պետության կողմից երաշխավորվում է Հանրապետության Նախագահի ընտրությունների պարբերական բնույթը: Ընտրությունները ոչ իրավաչափ կերպով անցկացնելու կամ սահմանված ժամկետներում չանցկացնելու ցանկացած դեպք կդիտարկվի որպես ՀՀ քաղաքացիների սահմանադրորեն ամրագրված ընտրելու իրավունքի սահմանափակում:

Մեկնաբանվող հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ: Հանրապետության Նախագահի ընտրության անցկացումը Սահմանադրությամբ նախատեսված ժամկետներում՝ հանդիսանում է ժողովրդաիշխանության հիմնական երաշխիքը, ժողովրդավարական ընտրական գործընթացի կազմակերպման սահմանադրաիրավական սկզբունք, ինչպես նաեւ ընտրելու եւ ընտրվելու իրավունքի իրականացման երաշխիք: Հանրապետության Նախագահի ընտրության անցկացման պարտադիր լինելու սկզբունքի կազմակերպաիրավական դրսեւորումը հանդիսանում է Սահմանադրությամբ սահ-

մանված ժամկետում եւ կարգով Հանրապետության Նախագահի ընտրության նշանակումն ու անցկացումը:

Ի փարբերություն Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ: Ի փարբերություն Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ: Ի փարբերություն Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ:

Մեկնաբանվող հոդվածում «ընտրություն» հասկացությունը կիրառվում է ոչ թե որպես ընտրական գործընթացի բոլոր փուլերի ամբողջություն, այլ որպես քվեարկություն: Սահմանադրությամբ համապատասխան օրը սահմանված լինելը թերեւս բավարար չէ ընտրական գործընթացի մյուս փուլերը սկսելու համար, Ֆորմալ առումով պետք է հայտարարվի, նշվի կոնկրետ օրը, որպեսզի ընտրական եւ մյուս մարմինները հնարավորություն ունենան պարզաճ կերպով կազմակերպել քվեարկությանը նախորդող ընտրական գործընթացի մյուս փուլերը: Այդ իսկ պարճառով ՀՀ ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածում սահմանվում է. «2. Հանրապետության Նախագահի ընտրության օրվա մասին հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրության օրվանից ոչ ուշ, քան 100 օր առաջ»:

Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ: Ի փարբերություն Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ: Ի փարբերություն Ազգային ժողովի եւ Կոնկրետ եւ սահմանված է հենց Սահմանադրությամբ:

Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից որոշակի ողջամիտ ժամկետ առաջ ընտրությունների անցկացման գլխավոր նպատակը լիազորությունների պարզաճ, սահուն փոխանցման ապահովումն է, իշխանական վակուում չստեղծելը: Ընտրական գործընթացները չեն բացառում երկրորդ փուլի հնարավորությունը, նոր ընտրությունների հնարավորությունը, ընտրությունների արդյունքների բողոքարկումը, որոնք ժամանակավար գործընթացներ են, ուստի այդ հարաբերությունները պետք է այնպես կարգավորել, որպեսզի այդ փուլերի առկայության պարագայում անգամ Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտման պահին լինի ընտրված Հանրապետության նոր Նախագահը: Թեպետ ոչ միշտ է, որ դա հաջողվում է, մասնավորապես նոր ընտրությունները դրա հնարավորությունը բացառում են, սակայն կարգավորումներն առավելագույնս պետք է կոչված լինեն ապահովելու, որպեսզի գործող Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտման օրը այդ գործընթացներն ավարտված լինեն: Ներառվող մյուս նպատակը, որը թեպետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, այս ժամանակահատվածում ընտրված, սակայն իր լիազորությունները դեռ չստանձնած Հանրապետության Նախագահին աշխատանքային հունի մեջ գցելը, ընթացիկ աշխատանքներին ծանոթացնելը կարող է լինել:

2. Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասում սահմանվում է Նանրապեպրության Նախագահի ընտրությունների ժամանակ կիրառվող «ընտրական համակարգը» (որպես ընտրությունների արդյունքները որոշելու եղանակ): Սահմանադիրը կարելու է այս հարցը՝ հաշվի առնելով Նանրապեպրության Նախագահի իրավասությունը (Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգը սահմանադրական ամրագրում չունի):

Նանրապեպրության Նախագահի ընտրությունների ժամանակ ընտրական համակարգի մեծ ընտրություն գոյություն չունի: Ընտրությունը սահմանափակված է մեծամասնական ընտրական համակարգի փարապետակներով: Ընդհանրապես մեծամասնական ընտրական համակարգի էությունն այն է, որ ընտրությունների ժամանակ հաղթող է ճանաչվում որոշակի մեծամասնություն սրացած թեկնածուն: Այդ մեծամասնությունը կարող է լինել հարաբերական եւ բացարձակ: Այս երկու համակարգերն էլ ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Հարաբերական մեծամասնությամբ մեծամասնական համակարգի կիրառման ժամանակ ընտրություններում հաղթելու համար անհրաժեշտ է հավաքել ավելի մեծ թվով ձայներ, քան նյութ թեկնածուներից յուրաքանչյուրն առանձին վերցրած: Այս համակարգի առավելությունը վերջինիս արդյունավետությունն է՝ գրեթե միշտ որեւէ թեկնածու ընտրվում է: Սակայն հիմնական թերությունն այս համակարգով ձեւավորվող մարմնի ներկայացուցչական բնույթի, լեգիտիմության պակասն է, իսկ Նանրապեպրության Նախագահի պաշտոնի պարագայում լիազորությունների պարզաձեւ եւ արդյունավետ իրականացման համար նրա լեգիտիմության մեծ աստիճանը վճռորոշ կարող է լինել:

Բացարձակ մեծամասնական ընտրական համակարգի պարագայում հաղթելու համար անհրաժեշտ է հավաքել ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությունը, այսինքն՝ 50 փոկոս գումարած մեկ ձայն: Այս համակարգի թերությունն այն է, որ այն ոչ միշտ է առաջին իսկ փուլում ընտրված թեկնածու ապահովում, իսկ առավելությունը ընտրված պաշտոնապար անձի ներկայացուցչական բնույթի եւ լեգիտիմության առավել մեծ աստիճանի ապահովումն է: Եթե միջազգային պրակտիկայում պառլամենտական ընտրությունների ժամանակ հարաբերական մեծամասնական ընտրական համակարգը դեռուս կիրառվում է, ապա ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվող նախագահների պարագայում այն բացառվում է:

Բացարձակ մեծամասնությունը հաշվարկելու համար մի քանի բազային փոխալներ կարող է օգտագործվել՝ ա) ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը, բ) ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը եւ գ) բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թիվը: Այս բազային սկզբնական թվերը բավականին կարելու են, որովհետեւ դրանցից յուրաքանչյուրի դեպքում ընտրվելու համար կպահանջվի հավաքել ձայների այլ քանակ:

Նանրապեպրության Նախագահի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկում բոլոր թեկնածուներին դեմ փող գոյություն չունի: Ընտրական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նանրապեպրության Նախագահի ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուի (թեկնածուների) ազգանունը՝ այբբենական հերթականությամբ, անունը, հայրանունը եւ առաջադրող կուսակցության անվանումը, իսկ ինքնաառաջադրման կարգով առաջադրվելու դեպքում՝ «ինքնաառաջադրում» բառը: Այնուամենայնիվ, գործնականում գրեթե բոլոր ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցած ընտրողների եւ թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվերը փարբեր են

լինում: Դա պայմանավորված է նրանով, որ քվեաթերթիկների մի մասն անվավեր է ճանաչվում: Այդ պարագայում ընտրություններին մասնակցած ընտրողների թիվն անվավեր ճանաչված քվեաթերթիկների թվաքանակով ավելին կլինի թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվից:

Ընտրվելու համար ձայների նման մեծամասնություն հավաքելու դրույթը, անշուշտ, անհրաժեշտ պայման է Տանրապետության Նախագահի՝ առավել մեծ թվով ընտրողների ներկայացուցիչ լինելու խնդիրը լուծելու համար, սակայն այն, կարծում ենք, բավարար չէ: Այդ պայմաններում անգամ տեսականորեն չի բացառվում, որ արեսներհիգմի մեծ փոկոսի դեպքում Տանրապետության Նախագահ ընտրվի ընտրական կորպուսի բավականին փոքր մասի ձայները հավաքած թեկնածուն: Խնդիրն առավելապես կարելի կլիներ լուծված համարել, եթե Տանրապետության Նախագահի ընտրությունները կայացած ճանաչելու համար սահմանված լիներ ընտրողների՝ ընտրություններին մասնակցելու նվազագույն շեմ:

3. Ինչպես արդեն նշվել է, բացարձակ մեծամասնական ընտրական համակարգի կիրառման պարագայում ոչ միշտ է, որ թեկնածուներից մեկը կարողանում է անմիջապես հավաքել ընտրվելու համար ձայների անհրաժեշտ մեծամասնությունը: Միջազգային պրակտիկայում նման դեպքերում կիրառվում է երկու փարբերակ՝ կամ առաջին իսկ քվեարկության ժամանակ ընտրողին փալիս են հնարավորություն քվեաթերթիկում նշելու նաև իր երկրորդ նախընտրելի թեկնածուին, կամ անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլի արդյունքներով առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները: Մեկնաբանվող հոդվածի համաձայն նման դեպքերում կիրառվում է երկրորդ փարբերակը:

Ընտրության երկրորդ փուլի անցկացման համար սահմանվում է երկու պարտադիր նախապայման՝ նախ, առաջին փուլում երկուսից ավելի թեկնածուների առկայություն, երկրորդ՝ նրանցից ոչ մեկը չպետք է հավաքած լինի ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ, այսինքն՝ բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին: Այս երկու նախապայմանների առկայության պարագայում ԿԸՏ-ն նշանակում է ընտրության երկրորդ փուլ:

Ընտրությունների երկրորդ փուլին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները: Այդ երկու թեկնածուների վերաբերյալ փվյալները պարունակում է ՏՏ ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի համաձայն կազմված արձանագրությունը:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ՏՏ Սահմանադրությունը բացառում է ընտրության երկրորդ փուլին քվեարկության արդյունքներով երրորդ, չորրորդ փուլերն զբաղեցրած թեկնածուների մասնակցությունը: Նման հնարավորություն չի նախատեսում նաև ՏՏ ընտրական օրենսգրքը եւ անգամ բացառում է նման հնարավորությունը: Երկրորդ փուլում կարող է մնալ մեկ թեկնածու՝ մեկ պարագայում, երբ թեկնածուներից մեկը հանել է իր թեկնածությունը: Ընտրական օրենսգրքը թեկնածուին իրավունք է տալիս հանելու իր թեկնածությունը քվեարկությունից մինչև 10 օր առաջ (ԸՕ, հոդված 78, մաս 4): Գործնականում ընտրության երկրորդ փուլին կարող է մասնակցել մեկ թեկնածու միայն այն դեպքում, երբ ԿԸՏ-ն ընտրությունների երկրորդ փուլը նշանակի, այսպես ասած, առաջին փուլի քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 4 օր առաջ, եւ քվեարկությանից մինչև 10 օր առաջ թեկնածուներից մեկը հանի իր թեկնածությունը: Այդ պարագայում հաշվի առնելով, որ առաջին փուլի արդյունքով երրորդ

առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն իրավունք չի ստանում մասնակցելու ընտրության երկրորդ փուլին, երկրորդ փուլին կմասնակցի մեկ թեկնածու: Եթե մինչև քվեարկությունը երկրորդ փուլին մասնակցելու իրավունք ստացած թեկնածուներից մեկը մահանա, ապա կգործեն Սահմանադրության 52-րդ հոդվածի երկրորդ մասի կանոնակարգումները, համաձայն որոնց՝ նման դեպքերում նշանակվում է նոր ընտրություն (տե՛ս 52-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Երկրորդ փուլում այլ են նաև ընտրվելու նախապայմանները: Այս պարագայում ընտրվում է այն թեկնածուն, որն ստացել է առավել թվով ձայներ, բնականաբար, եթե մասնակցում են երկու թեկնածու. սա նույնն է, ինչ թեկնածուների օգտին տրված ձայների կեսից ավելին:

Տեսականորեն, եթե երկրորդ փուլին մասնակցի մեկ թեկնածու, ապա նրա ընտրվելու իրության նախապայմանը կլինի այլ:

Ընտրության երկրորդ փուլը, բացառությամբ որոշակի ժամկետների, անցկացվում է, այսպես ասած, առաջին փուլի անցկացման համար սահմանված կարգով, խոսքը մասնավորապես վերաբերում է նախընտրական քարոզչությանն ու քվեարկության, ընտրության արդյունքների ամփոփմանը: Որոշակի ժամանակային սահմանափակումներ կան նախընտրական քարոզչության համար, գործնականում, եթե ԿԸՏ-ն ընտրության երկրորդ փուլ նշանակելու վերաբերյալ որոշում ընդունի սահմանված ժամկետի վերջին օրը, ապա թեկնածուների նախընտրական քարոզչության համար կմնա հաշվված օրեր, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ քվեարկության նախորդ օրը եւս նախընտրական քարոզչության անցկացումն արգելվում է:

4. Մեր օրերում մրցակցության սկզբունքը՝ հավասար, ուղղակի, գաղտնի քվեարկության սկզբունքների հետ մեկտեղ, յուրաքանչյուր պետությունում այն հիմքն է, որի վրա կառուցվում է ամբողջ ընտրական օրենսդրությունը:

Միջազգային հանրության կողմից ընդունված ժողովրդավարական ընտրությունների կարեւորագույն սկզբունքներից մեկը մրցակցության վրա հիմնված զարգացող ընտրական իրավունքն է: Ցանկացած պայմաններում ընտրությունները ձեւական բնույթ են կրում, եթե ընտրողը հնարավորություն չունի իրական ընտրություն կատարել փարբեր թեկնածուների, փարբեր քաղաքական ուժերի միջև, որոնք փարբեր կերպ են գնահատում պետության առջև ծառայած հիմնահարցերը, դրանց լուծման հնարավոր փարբերակները եւ պետության զարգացման հնարավոր ուղղությունները: Ընտրական իրավունքը միայն այն պայմաններում կարող է կենսունակ ուժ եւ հեղինակություն ստանալ, երբ հասարակության մեջ մրցակցում են փարբեր գաղափարախոսություններ, եւ դրանք կրող քաղաքական ուժերն ընտրապայքարի մեջ են մտնում: Գաղափարական ազատության եւ բազմակարծության առկայությունն իրական ժողովրդավարական ընտրական գործընթացների զարգացման պարտադիր նախապայմաններից է: Ինչպես նշում է ռուս իրավաբան Վ. Վեդենենը՝ ընտրական իրավունքն ամփոփում է քաղաքական ժողովրդավարության երկու կարեւորագույն հայտանիշ՝ ընտրությունների մրցակցային բնույթը եւ իշխանությունների փոփոխելիությունը՝ պարբերաբար իրականացվող ընտրությունների արդյունքում:

«Մրցակցությունը ժողովրդավարական ընտրությունների հայտանիշ է, այն խթանում է հրապարակայնությունը, ընտրական գործընթացներին քաղաքացիների մասնակցությունն ու քաղաքացիների հետաքրքրությունը»:

Թեպետ ՏՏ ընտրական օրենսգիրքը սահմանում է (հոդված 1, կետ 3), որ. «Պե-

տությունը խթանում է, որպեսզի Տանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվեն մրցակցության եւ այլընտրանքի սկզբունքներով», այնուամենայնիվ, չի կարելի բացառել, որ քվեարկվի մեկ թեկնածու: Որոշ դեպքերում նման երեւոյթը կարող է լինել որեւէ թեկնածուի շուրջ ազգային համաձայնություն ձեւավորելու արդյունք:

Մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասը կանոնակարգում է մեկ թեկնածու քվեարկվելու պարագայում նրա ընտրվելու նախապայմանը, որը քվեարկության մասնակիցների կեսից ավելի ձայներն ստանալն է: Ուշադրություն պետք է դարձնել, որ մեկ թեկնածու քվեարկվելու պարագայում էականորեն փոխվում է քվեաթերթիկի կառուցվածքը: Ընտրական օրենսգրքի 49.1-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում քվեաթերթիկում թեկնածուի «ազգանուն, անուն, հայրանուն» տողի ներքեւում գրվում են «կողմ են» եւ «դեմ են» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով: Այս պարագայում թեկնածուի հետ ըստ էության մրցակցում է իրականում գոյություն չունեցող թեկնածուն, որը հանդես է գալիս «դեմ են» տողի ներքո:

Եթե մեկից ավելի թեկնածու քվեարկվելու պարագայում հիմք էր ընդունվում թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը, ապա այս պարագայում հիմք է ընդունվում քվեարկության մասնակիցների թիվը եւ, ինչպես առաջին դեպքում, այսպէս էլ անհրաժեշտ է ձայների բացարձակ մեծամասնություն: Եթե երկուսից ավելի թեկնածուների քվեարկման պարագայում սկզբնական թիվը, որի մեծամասնությունն անհրաժեշտ էր ստանալ, չէր ներառում անվավեր քվեաթերթիկները, ապա այս դեպքում դրանք եւս ներառվում են, քվեարկության մասնակիցների թիվը գործնականում ավելի մեծ է, քան թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը:

Հոդվածի կանոնակարգումները փարսովում են ինչպես ընտրության առաջին, այնպես էլ երկրորդ փուլի վրա:

5. Մեկնաբանվող հոդվածի 5-րդ մասը՝ սահմանելով Տանրապետության Նախագահի ընտրության արդյունքների վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի որոշում կայացնելու ժամկետները եւ ժամկետները հաշվարկելու կարգը, նպատակ է հետապնդում ապահովելու սահմանված ժամկետներում ընտրված Տանրապետության Նախագահ ունենալը եւ նրա կողմից իր լիազորությունների սահուն ստանձնումը, ինչպես նաեւ չստեղծելու բախումնային քաղաքական իրավիճակներ, երբ ընտրությունների փարբեր փուլերում կարող են լինել ընտրված փարբեր թեկնածուներ:

Մի կողմից, հաշվի առնելով գործի բարդությունը, երբ Սահմանադրական դատարանն ի պաշտոնէ գործը քննելով պետք է գնահատի գործում առկա սպացույցները, կարելի է պնդել, որ 10-օրյա ժամկետը կարող է եւ չբավարարել, մյուս կողմից՝ առավել երկար ժամկետները գործնականում կարող են բացառել գործող Տանրապետության Նախագահի լիազորությունների ավարտման պահին ընտրված Տանրապետության Նախագահ ունենալու հնարավորությունը: Հաշվի առնելով երկրորդի կարեւորությունը՝ սահմանադիրը սահմանել է նման սեղմ ժամկետներ:

Սահմանադրական դատարանի կողմից ընտրությունների արդյունքների վերաբերյալ գործ ընդունելու փաստն ունի քվեարկության երկրորդ փուլի եւ նոր ընտրություններ անցկացնելու ժամկետների համար կասեցնող բնույթ: Տրամաբանական չէր լինի, երբ ավարտված չէ քվեարկության որեւէ փուլի հետ կապված դատական վեճը, անցկացնել ընտրության հաջորդ փուլը՝ այն պարագայում, երբ վեճի արդյունքում ընդունված ո-

որոշումը կարող է գրոյացնել, անիմաստ դարձնել հաջորդ փուլերի անցկացումը:

6. Նանրապետության Նախագահ ընտրվելու պայմանները, ինչպես երկու եւ ավելի թեկնածու քվեարկվելու, այնպես էլ մեկ թեկնածու քվեարկվելու պարագայում, սահմանված է մեկնաբանվող հոդվածում: Պայմանները կարելի է խիստ, սակայն հիմնավորված համարել: Տեսականորեն եւ գործնականում ոչ միշտ է, որ թեկնածուներից որեւէ մեկը հավաքում է ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ, եթե գործ ունենք առաջին փուլի հետ, ապա նշանակվում է երկրորդ փուլ, սակայն չի բացառվում, որ քվեարկվող միակ թեկնածուն չստանա ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ: Նման պարագայում երկրորդ փուլը գործնականում անհնարին է անցկացնել, եւ տրամաբանական միակ ճանապարհը նոր ընտրություններ նշանակելն է:

Ընտրության արդյունքներն ամփոփելով՝ ԿԸՆ-ն կարող է ընդունել հնարավոր հետեւյալ 4 որոշումներից որեւէ մեկը՝ Նանրապետության Նախագահ ընտրվելու մասին, քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին, ընտրությունն անվավեր ճանաչելու, եւ Նանրապետության Նախագահի ջրնտրվելու մասին, ընտրությունը չկայացած ճանաչելու եւ Նանրապետության Նախագահ ջրնտրվելու մասին: Բնականաբար, որեւէ թեկնածուի ընտրված ճանաչելու մասին որոշումը փալիս է արդյունք, եւ ընտրական գործընթացը դրանով ավարտվում է (ընտրության երկրորդ փուլ նշանակելու մասին տե՛ս վերեւում): Ընտրություններն անվավեր եւ չկայացած ճանաչելու պարագայում դեռ ընտրված թեկնածու չկա, այսինքն՝ ընտրական գործընթացը չի փակվել իր արդյունքը: Արդյունքի հասնելու համար նշանակվում են նոր ընտրություններ:

Ընտրություններն անվավեր ճանաչելու հիմքերը սահմանված են ընտրական օրենսգրքով: Դրանք ըստ էության ընտրական գործընթացում տեղի ունեցած այնպիսի խախտումների առկայությունն է, որոնք հնարավորություն չեն փալիս պարզելու ընտրությունների իրական արդյունքը: Ինչ վերաբերում է ընտրությունները չկայացած ճանաչելու հիմքերին, ապա դրանք երկուսն են. 1) քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ. 2) ընտրված թեկնածուն մահացել է մինչեւ ընտրության արդյունքներն ամփոփելը:

Միջազգային պրակտիկայում նման հիմք է նաեւ քվեարկությանն անհրաժեշտ թվով ընտրողների չմասնակցելը (Ռուսաստանի Դաշնության Նախագահի ընտրությունների մասին օրենք, հոդված 72, մաս 4, կետ ա):

Նոր ընտրություններ կարող են նշանակվել ինչպես ընտրությունների առաջին, այնպես էլ երկրորդ փուլի արդյունքների ամփոփումից հետո: Վերը շարադրված հիմքերը ենթադրում են ընտրությունների արդյունքներ եւ դրանց հիման վրա նոր ընտրության նշանակում:

Սակայն նոր ընտրություններ նշանակելու հիմքերը միայն վերջիններս չեն (տե՛ս 52-րդ հոդվածի մեկնաբանությունը):

7. Մեկնաբանվող հոդվածի 7-րդ մասը սահմանում է Սահմանադրության եւ օրենքով սահմանված կարգով ընտրված Նանրապետության Նախագահի լիազորությունների ստանձնման ժամկետները:

Մեկնաբանվող մասում սահմանված կարգը, ժամկետները կարելի է պայմանականորեն անվանել սովորական, երբ Նանրապետության Նախագահը լիազորություններն ստանձնում է նախորդ ընտրությունների ժամանակ ընտրված Նանրապետության Նախագահի լիազորությունների ստանձնումից 5 տարի հետո՝ նույն օրը, որը համապա-

փասխանում է Սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանված լիազորությունների ողջ ժամկետի պաշտոնավարմանը:

Նանրապետության Նախագահի լիազորությունների սրանձնման մյուս երկու դեպքերի համար սահմանված ժամկետները կարելի է համարել հափուկ, եւ դրանք էականորեն փարբերվում են սովորական ժամկետից:

Նափուկ ժամկետը սահմանված է նոր եւ արփահերթ ընփրություններով ընփրված նախագահների լիազորությունների սրանձնման համար: Բանն այն է, որ, ի փարբերություն հերթական ընփրությունների, արփահերթ եւ նոր ընփրությունների միջոցով ընփրված Նանրապետության Նախագահի ընփրության պահին Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով ընփրված Նանրապետության Նախագահը չէ, որ պաշտոնավարում է: Արփահերթ ընփրություններ անցկացնելու համար հիմք է հանդիսանում Նանրապետության Նախագահի պաշտոնի թափուր մնալը, որի հիմքերը սահմանված են Սահմանադրության 53-րդ հոդվածում: Արփահերթ ընփրությունների միջոցով ընփրված Նանրապետության Նախագահի ընփրության պահին, Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն, Նանրապետության Նախագահի պարփականությունները կարարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ վարչապետը: Նույնն է նաեւ նոր ընփրությունների ժամանակ, որովհետեւ, եթե ընփրությունները անց են կացվում Նանրապետության Նախագահի լիազորությունների ավարփից 50 օր առաջ, ընփրությունների արդյունքներն ամփոփվում են, որպես կանոն, ոչ շուփ, քան 5 օրվա ընթացքում, իսկ նոր ընփրություններն անցկացվում են նոր ընփրություն նշանակվելուց հետո՝ 40-րդ օրը, ապա այս ժամկետների մեխանիկական համագումարն ավելին է սրացվում, քան 50 օրը:

«Ընփրություն» հասկացությունը Սահմանադրության մեջ օգփագործվում է երկու իմաստով՝ առաջինը՝ որպես միմյանց հաջորդող որոշակի փուլերի ամբողջություն, իսկ երկրորդը՝ երբ նկարի է առնվում որպես որեւէ ժամկետի սահմանում, ապա՝ քվետարկությունը: Մեկնաբանվող հոդվածում այն օգփագործված է երկրորդ իմաստով, այսինքն՝ նոր կամ արփահերթ ընփրությունների միջոցով ընփրված Նանրապետության Նախագահն իր լիազորություններն սրանձնում է քվետարկության օրվանից հետո՝ 20-րդ օրը:

Այն դեպքում, երբ Նանրապետության Նախագահի ընփրությունների արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դափարանը գործ քնության ընդունած լինի, ապա այդ ժամկետները կկասեցվեն եւ կհաշվարկվեն ՄԴ որոշման ուժի մեջ մփնելու պահից սկսած:

Ինչպես արդեն նշվել է, Նանրապետության Նախագահի լիազորությունների հնգամյա ժամկետը հաշվարկվում է օրացուցային ժամկետով, հետեւաբար, լիազորությունների սրանձնմանը հաջորդող հինգերորդ փարվա նույն օրը դադարում են լիազորությունները: Իշխանությունների հաջորդայնության պահպանման սկզբունքից ելնելով՝ նորընփրի Նանրապետության Նախագահն իր լիազորություններն սրանձնում է նախորդի լիազորությունների ավարփման օրը: Այս կանոնակարգումը գործում է նաեւ այն դեպքում, երբ լիազորությունները դադարեցնող Նանրապետության Նախագահը եւ լիազորություններն սրանձնող Նանրապետության Նախագահը նույն անձն է:

ՏՏ Սահմանադրությունը եւ ընփրական օրենսգիրքն ընփրությունների նշանակման, անցկացման, ընփրությունների արդյունքների ամփոփման, Նանրապետության Նախագահի ընփրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի քնման, քվետարկության երկրորդ փուլ անցկացնելու հետ կապված ժամկետներն այնպես է սահմանել, որպեսզի Նանրապետության Նախագահի լիազորությունների ա-

վարման պահին ընտրված լինի Նանրապեղության Նախագահ (տե՛ս 50, 51, 100-րդ հոդվածների մեկնաբանությունները), որը եւ պետք է ստանձնի իր լիազորությունները: Սակայն դա գործնականում անհնարին կլինի, եթե Նանրապեղության Նախագահի ընտրություններն անվավեր ճանաչվեն եւ նշանակված նոր ընտրությունների արդյունքում միայն ընտրվի Նանրապեղության Նախագահ: Այդ դեպքում, հաշվի առնելով, որ Նանրապեղության Նախագահի հերթական ընտրությունն անց է կացվում լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ, իսկ նոր ընտրություններն անցկացվում են նոր ընտրություն նշանակվելուց հետո՝ քառասուներորդ օրը (տե՛ս 52-րդ հոդվածի մեկնաբանությունը), ապա պարզ է դառնում, որ ժամանակային առումով այս դեպքում լիազորությունների դադարման պահին դեռեւս ընտրված Նանրապեղության Նախագահ չի լինի, որն ստանձնի իր լիազորությունները: Այս պարագայում արդեն կգործեն Նանրապեղության Նախագահի լիազորությունների՝ մեկնաբանվող հոդվածի 8-րդ մասի կարգավորումները:

8. Լիազորությունների ստանձնման պահը նոր կամ արտահերթ ընտրությունների միջոցով ընտրված Նախագահի համար փարբերվում են հերթական ընտրությունների միջոցով ընտրված Նանրապեղության Նախագահի լիազորությունների ստանձնման պահից: Տարբերությունը պայմանավորված է արտահերթ եւ նոր ընտրությունների միջոցով ընտրված Նանրապեղության Նախագահի ընտրության պահին Նանրապեղության Նախագահի պաշտոնն այլ պաշտոնատար անձանց՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի կողմից զբաղեցրած լինելու հանգամանքով (տե՛ս 60-րդ հոդվածի մեկնաբանությունը): Նոր կամ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Նանրապեղության Նախագահը պաշտոնն ստանձնում է ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը: 20-օրյա ժամկետն ըստ էության այն ամենափոքր ժամկետն է, որի ընթացքում ընտրությունների արդյունքների բողոքարկումը եւ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի քննությունն ավարտված կլինի:

ՆՈՂՎԱԾ 52

1. *Նանրապեղության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու դեպքում Նանրապեղության Նախագահի ընտրությունը հեղաձգվում է երկշաբաթյա ժամկետով: Անհաղթահարելի ճանաչված խոչընդոտները չվերանալու դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նշված երկշաբաթյա ժամկետը լրանալուց հետո՝ քառասուներորդ օրը:*

2. *Մինչեւ քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակելուց հետո՝ քառասուներորդ օրը:*

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է Նանրապեղության Նախագահի թեկնածուների գրանցումից մինչեւ քվեարկության միջեւ ընկած ժամանակահատվածում Նանրապեղության Նախագահի ընտրությունը հեղաձգելու եւ նոր ընտրություն նշանակելու դեպքերը, հիմքերը, կարգը եւ ժամկետները:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է երկու նման դեպք՝ Նանրապեղության

Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալը եւ մինչեւ քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահանալը:

Այս հարաբերությունները կարող են րեղի ունենալ բացառապես թեկնածուների գրանցումից մինչեւ քվեարկությունն ընկած ժամանակահատվածը (ՏՏ ընտրական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն թեկնածուների գրանցումը կատարվում է ընտրության օրվանից ոչ շուր, քան 50 եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ), որովհետեւ Հանրապետության Նախագահի թեկնածու, իր կարգավիճակից բխող բոլոր իրավունքներով ու պարտականություններով, գոյություն ունի բացառապես այս փուլում, թեպետ Հանրապետության Նախագահի թեկնածուները որոշակի լիազորություններ ունեն հետ քվեարկության փուլում, ինչպես նաեւ ընտրական փուլի ավարտի հանդիսացող ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո (տե՛ս ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 9-րդ կետի մեկնաբանությունը):

Հանրապետության Նախագահի թեկնածուն ընտրական գործընթացում ունի հատուկ իրավական կարգավիճակ, ինչը վերջինիս օժտում է որոշակի՝ ընտրական գործընթացում միայն վերջինիս հատուկ, իրավունքներով: Գրանցման պահից փոխվում է վերջինիս կարգավիճակը, նա ձեռք է բերում իր՝ բացառապես Հանրապետության Նախագահի թեկնածուին բնորոշ գործունեության կազմակերպչական եւ իրավական երաշխիքներ: Հոդվածի մեկնաբանվող մասում ամրագրված է նման երաշխիքներից մեկը:

Անդրադառնալով «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, հարկ է նկատել, որ այն միջազգային պրակտիկայում լայն տարածում չունի եւ որպես Հանրապետության Նախագահի թեկնածուների իրավական կարգավիճակի երաշխիք առանձին չի սահմանվում: Այս ինստիտուտն առկա է սահմանադրաիրավական պրակտիկայում, թեպետ կան էական տարբերություններ, մասնավորապես Ֆրանսիայի պարագայում որպես կոնկրետ իրավահարաբերության սուբյեկտ դիտարկվում են ոչ միայն Հանրապետության Նախագահի թեկնածուները, այլ նաեւ այն անձինք, ովքեր այդ օրվանից առնվազն 30 օր առաջ հրապարակայնորեն հայտարարել են իրենց թեկնածությունն առաջադրելու մասին:

«Անհաղթահարելի խոչընդոտը» մեկնաբանվում է որպես Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընտրական գործընթացին անձամբ նրա հետագա մասնակցության անհնարինություն:

ՏՏ օրենսդրությամբ «անհաղթահարելի խոչընդոտը» որպես ընտրական գործընթացը կասեցնելու հիմք սահմանված է բացառապես Հանրապետության Նախագահի թեկնածուների համար:

Մեկնաբանվող հոդվածում օգտագործված են առանցքային նշանակություն ունեցող երկու հասկացություններ՝ «խոչընդոտ» եւ «անհաղթահարելի»: Կոնկրետ համարվելուց դուրս այս երկու եզրույթներն առանձին-առանձին եւ միասին կնշանակեն, որ առկա է գործունեությունը, աշխատանքը, առաջընթացը, շարունակումը խանգարող հանգամանք, արգելք, դժվարություն, դիմադրություն, խուֆ եւ այլն, եւ որ դա անկասելի, անհաղթահարելի, անդիմադրալի, անզսպելի է եւ այլն:

Եթե վերջինս տեղայնացնենք մեկնաբանվող հոդվածի շրջանակում, ապա կնշանակի, որ Հանրապետության Նախագահի թեկնածուի՝ ընտրական գործընթացի հետագա փուլերին մասնակցության համար առկա են խանգարող հանգամանքներ, արգելքներ, դժվարություններ, դիմադրություն, սակայն միայն վերջիններիս առկայությունը սույն հոդվածով նախատեսված իրավական հետեւանքների վրա հասնելու համար բավարար

չի, անհրաժեշտ է նաև, որ վերջիններս կոնկրետ պարագայում լինեն անկասելի, անհաղթահարելի, անդիմագրավելի, անզսպելի եւ այլն:

Կոնկրետ համարեքստում հարկապես կարևորվում է խոչընդոտների անհաղթահարելիության հարկանիշը:

ՏՏ-ում Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ երբեւէ նման իրավիճակ չի սրբեղծվել:

ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 4-րդ կետը ՏՏ սահմանադրական դափարանին է վերապահել Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած ճանաչելը: Այսինքն՝ Սահմանադրական դափարանն է այն իրավասու մարմինը, որը պետք է գնահատի խոչընդոտի բնույթը, ինչպես նաև վերջինիս հաղթահարելի կամ անհաղթահարելի լինելը:

Սահմանադրության 52 եւ 100-րդ (կետ 4) հոդվածների պահանջներից ելնելով՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանել է. «Սահմանադրական դափարանը կարող է անհաղթահարելի ճանաչել այն խոչընդոտները, որոնք արդեն իսկ առաջացել են եւ փյվյալ թեկնածուից անկախ պարճառներով անհնարին են դարձնում նրա հեփագա մասնակցությունն ընտրական գործընթացներին»:

Այսինքն՝ Սահմանադրական դափարանի մասին օրենքն արդեն իսկ սահմանում, որոշարկում է այն խոչընդոտները, որոնք կարող են անհաղթահարելի ճանաչվել: Այսպետ պետք է առանձնացնել երկու գործոն. առաջին՝ այն պետք է առաջացած լինի թեկնածուից անկախ, եւ երկրորդ՝ այն պետք է անհնարին դարձնի փյվյալ թեկնածուի հեփագա մասնակցությունն ընտրական գործընթացին:

Յանկացած խոչընդոտ, որի սրբեղծմանը մասնակից կլինի փյվյալ թեկնածուն, կամ որը հնարավոր կլինի ՏՏ օրենսդրությամբ սահմանված միջոցներով հաղթահարել եւ ապահովել թեկնածուի հեփագա գործունեությունը որպես Հանրապետության Նախագահի թեկնածու, չի կարող հիմք հանդիսանալ ընտրությունները հեփագեղու կամ նոր ընտրություններ նշանակելու համար:

Թեպետ, ինչպես արդեն ասվեց, Հանրապետության Նախագահի որեւէ ընտրության ժամանակ Սահմանադրական դափարանը երբեւէ որեւէ խոչընդոտ չի ճանաչել անհաղթահարելի, հեփաբար, չի կիրառել մեկնաբանվող հոդվածով սահմանված իրավական հեփաանքները, ասկայն նման հարց քննել է (տես 100-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Նախընտրական քարոզությունը, որի հեփ էլ առավելապես համընկնում է այս ինստիտուտի կիրառելիության ժամկետը, հաշվի առնելով դրա քաղաքական բնույթը, շիկացած կրքերը, աշխարհի եւ ոչ մի երկրում հարթ ու հանգիստ չի անցնում: Ընտրական գործընթացին մասնակից դարձած ու չդարձած փասնյակ սուբյեկտների կողմից, լինեն դրանք հակառակորդ թեկնածուները, նրանց կողմնակիցները, թե պետական ու փետական ինքնակառավարման մարմինները, կարող են խոչընդոտվել, կարող են անհավասար պայմաններ սրբեղծվել եւ այլն: Սակայն նման իրավիճակների առաջացումն ինքնին հիմք չի կարող հանդիսանալ դրանք անհաղթահարելի ճանաչելու համար: ՏՏ օրենսդրությունը մի շարք մեխանիզմներ է նախատեսում դրանք հաղթահարելու համար՝ լինի դա պետական ու փետական ինքնակառավարման մարմիններին դիմելը, դափարան դիմելը կամ էլ առկա խոչընդոտներն ինքնուրույն հաղթահարելու եղանակներ գրնելը (մասնավորապես՝ հոսանքագրկված նախընտրական հանրահավաքը, լոկալ հոսանքի աղբյուրով սնուցելը):

Տաղթահարելի խոչընդոտները կարող են նշանակություն ունենալ կամ անգամ հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքների անվավերության համար, եթե փաստվում է, որ անգամ դրանց հաղթահարման պարագայում դրանք ազդել են ընտրությունների արդյունքների վրա, սակայն ընտրությունների հեղաձգման կամ նոր ընտրությունների նշանակման համար դրանք հիմք հանդիսանալ չեն կարող:

Եթե անհաղթահարելի խոչընդոտն այնպիսի մի երեւոյթ է, որը գրկում է համապարասխան թեկնածուին ընտրական գործընթացին հեղաձգման մասնակցության հնարավորությունից, ապա արդարացված իրավական հեղաձգմանը պետք է լինի այդ խոչընդոտները վերացնելը: Սակայն հաշվի առնելով, որ մենք գործ ունենք ընտրական գործընթացի՝ ժամանակի կոնկրետ հարվածում իրար հաջորդող փուլերի հետ, ապա խոչընդոտների վերացման վրա ծախսված ժամանակի տեսչությունը կարող է եւ անիմաստ դարձնել այդ ջանքերը, եթե դրանք չեն գործադրվել այնպիսի ժամկետներում, որոնք հնարավորություն կտան համապարասխան թեկնածուին, առանց հավասարության էական խախտման, մասնակցելու ընտրական գործընթացի հեղաձգման փուլերին: Այդ իսկ պարագայում, մեկնաբանվող հոդվածի համաձայն, առաջին փուլում որպէս թեկնածուի համար հայտնված անհաղթահարելի խոչընդոտի իրավական հեղաձգմանը է սահմանվում ընտրությունը երկու շաբաթով հեղաձգելը:

Սահմանադրությունը չի պահանջում այս համարեքստում «ընտրություն» հասկացության բովանդակությունը, եւ առկա է մնում հեղաձգվում են հեղաձգման ընտրական գործընթացի բոլոր փուլերը, թե՛ միայն քվեարկությունը, եւ արդյոք Սահմանադրական դատարանի նման որոշումը կասեցնում է ընտրական գործընթացի, ընտրությունների բոլոր ժամկետները:

Այս հարցն իր լուծումը չի ստացել նաեւ ՏՂ ընտրական օրենսգրքում. ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի երկրորդ մասը փառացիորեն կրկնում է մեկնաբանվող հոդվածի դրույթները: Նման չկարգավորվածությունը կարող է հակասահմանադրական իրավիճակ առաջացնել մասնավորապէս սահմանադրորեն ամրագրված ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի ապահովման տեսանկյունից, երբ մեկ թեկնածուն անհաղթահարելի խոչընդոտների պարագայում ի վիճակի չի լինի կոնկրետ պարագայում մասնակցել նախընտրական քարոզչությանը, իսկ մյուսների համար նման արգելքները բացակայում են:

«Անհաղթահարելի խոչընդոտներ» հասկացության վերը քննարկված մեկնաբանությունից բնավ էլ չի բխում, որ դրանք անհաղթահարելի են ընդհանրապէս, չի բացառվում, որ վերջիններս անհաղթահարելի լինեն ժամանակի կոնկրետ հարվածում եւ ենթակա լինեն նաեւ վերացման, որի պարագայում ոչինչ այլեւ չի խանգարի անցնելու ընտրական գործընթացի հեղաձգման փուլերին եւ դրանց համապարասխան թեկնածուի մասնակցությանը:

Եթե Սահմանադրական դատարանի կողմից անհաղթահարելի ճանաչված խոչընդոտների երկշաբաթյա ժամկետում վերանալու դեպքում ընտրական գործընթացը շարունակվում է, ապա չվերանալու պարագայում նշանակվում է նոր ընտրություն (նոր ընտրության վերաբերյալ փետրվարի 51-րդ հոդվածի 8-րդ մասի մեկնաբանությունը), իսկ քվեարկությունը անցկացվում է երկշաբաթյա ժամկետն անցնելուց հետո՝ քառասուներորդ օրը: Ինչպէս եւ հերթական ընտրության քվեարկության օրը, այս օրը եւս կոնկրետ օր է՝ ոչ «լողացող»:

2. Մեր ժամանակներում քիչ թե շատ կայացած քաղաքական համակարգում

դժվար է պարկերացնել Նանրապետության Նախագահի որեւէ թեկնածուի, որը չլինի այս կամ այն կուսակցության կողմից առաջադրված, իսկ ինքնաառաջադրման պարագայում անգամ չվայելի որեւէ կուսակցության աջակցությունը: Այսինքն՝ թեկնածուն լինելով ֆիզիկական անձ, այնուամենայնիվ, ընտրապայքարում ներկայացնում է որեւէ քաղաքական ուժի, հետեւաբար՝ րվյալ քաղաքական ուժն էլ ընտրություններին մասնակցում է այդ թեկնածուի միջոցով:

Ընտրությունները նշանակվելուց մինչեւ ընտրությունների փրամաբանական ավարտն իրար են հաջորդում մի շարք փուլեր, եւ չի բացառվում, որ որեւէ թեկնածու իր կամքից անկախ պարճառներով չհասնի եզրագծին: Դա կարող է լինել Նանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի՝ մինչեւ քվեարկության օրը մահվան դեպքում:

Մեկնաբանվող հոդվածն այս պարագայում նախատեսում է նոր ընտրությունների նշանակում, որը հնարավորություն է փալիս առաջադրել նոր թեկնածուներ, հետեւաբար, հնարավորություն է փալիս քաղաքական ուժերին ընտրություններին մասնակցել նոր թեկնածուով: Նոր ընտրությունների քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություններ նշանակելուց հետո՝ քառասուներորդ օրը:

Բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն թեկնածուն կամուլին է դուրս գալիս ընտրապայքարից, նոր ընտրություններ չեն նշանակվում, եւ ընտրապայքարը շարունակվում է իր բնականոն հունով: Նոր ընտրությունների ինստիտուտը կոչված է որպէս գործիք ընտրական գործընթացը հասցնելու իր փրամաբանական ավարտին, այսինքն՝ ունենալ ընտրված թեկնածու այն պարագայում, երբ նման արդյունք դեռ չի ստացվել, եւ երկրորդ՝ ապահովել ընտրապայքարին այն քաղաքական ուժերի մասնակցությունը, որոնց կողմից առաջադրված թեկնածուն ոչ իր կամքով դուրս է մնացել ընտրապայքարից:

ՆՆ ընտրական օրենսգրքով սահմանված՝ Նանրապետության Նախագահի թեկնածուների գրանցման ժամկետները եւ մեկնաբանվող մատում ամրագրված հիմքով նոր ընտրություններ նշանակելու ինստիտուտը գործնականում կարող են հանգեցնել նրան, որ Նանրապետության Նախագահի հերթական ընտրություններ անցկացվեն ավելի շուր, քան սահմանված է Սահմանադրության 51-րդ հոդվածում՝ Նանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից 50 օր առաջ:

ՆՆ ընտրական օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թեկնածուների գրանցումը կատարվում է ընտրության օրվանից ոչ շուր, քան 50 եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ:

Գործնականում, եթե ընտրության օրվանից 50 օր առաջ գրանցված թեկնածուն գրանցման հաջորդ իսկ օրը մահանա, ապա առկա կարգավորումների համաձայն 40 օր հետո պէտք է անցկացվի նոր ընտրություն, եւ կստացվի, որ նոր ընտրությունն անցկացվում է Նանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից 59 օր առաջ, այնինչ նոր ընտրություններն առավել սեղմ ժամկետներում անցկացնելը միանգամայն այլ նպատակ է հետապնդում: Կարծում ենք, նպատակահարմար չէ թեկնածուների գրանցումը քվեարկությունից այդքան ժամանակ առաջ կատարելը:

ՆՈՂ-ՎԱԾ 53

Տանրապետության Նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների կադարման անհնարինության կամ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված կարգով նրան պաշտոնանկ անելու դեպքերում նշանակվում է Տանրապետության Նախագահի արտահերթ ընկրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է Տանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ քառասուներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է այն դեպքերը, երբ Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարում են մինչև Սահմանադրությամբ սահմանված 5-ամյա ժամկետի՝ պաշտոնավարման լրիվ ժամկետի, ավարտը: Այն կարող է տեղի ունենալ Հանրապետության Նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների կադարման անհնարինության կամ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված կարգով նրան պաշտոնանկ անելու դեպքերում (տրեն 57, 58, 59-րդ հոդվածների մեկնաբանությունները):

Վերը նշված ցանկացած հիմքերով Հանրապետության Նախագահի լիազորությունների դադարման պարագայում Հանրապետության Նախագահի պաշտոնը մնում է թափուր, բնականաբար, առաջանում է այն զբաղեցնելու խնդիրը:

Համաշխարհային սահմանադրական պրակտիկան Հանրապետության Նախագահի թափուր պաշտոնն զբաղեցնելու՝ միմյանցից էականորեն տարբերվող կարգեր է սահմանում:

Պառլամենտական եւ կիսանախագահական կառավարման ձեւ ունեցող հանրապետություններում Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու պարագայում անցկացվում են Հանրապետության Նախագահի արտահերթ ընկրություններ: Նախագահական հանրապետություններում, թափուր մնալու պարագայում, հնարավոր է նրա փոխարինումը փոխնախագահով՝ մինչև հերթական նախագահական ընկրությունները: 1945 թվականին Նախագահ Ռուզվելտի մահվանից անմիջապես հետո երկրի Նախագահ դարձավ փոխնախագահ Տրումենը, 1963 թվականին Նախագահ Քենեդու սպանությունից հետո՝ Ջոնսոնը:

ՀՀ Սահմանադրության՝ մեկնաբանվող եւ 60-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունից բխում է, որ ՀՀ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահի պաշտոնի թափուր մնալու պարագայում նախատեսում է բացառապես այդ լիազորությունների ժամանակավոր կատարում մինչև արտահերթ ընկրությունների արդյունքում ընկրված Հանրապետության Նախագահի կողմից իր լիազորությունների ստանձնումը: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու պարագայում, մինչև նոր ընկրված Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, այդ պարտականությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ վարչապետը:

Ի տարբերություն Հանրապետության Նախագահի հերթական ընկրությունների, որի ժամանակ քվեարկության օրվա մասին հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս կենտրոնական ընկրական հանձնաժողովի նախագահը՝ ընկրության օրվանից ոչ ուշ, քան 100 օր առաջ, իսկ ընկր-

րությունը (քվեարկությունը) անցկացվում է Նանրապեքության Նախագահի լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ (ՏՏ ընտրական օրենսգիրք, հոդված 88), արտա-հերթ ընտրությունների պարագայում այս ժամկետներն էականորեն կրճատված են, եւ ողջ ընտրությունների, ներառյալ՝ քվեարկության համար, սահմանված է 40 օր:

Արտահերթ ընտրությունների անցկացման առանձնահատկություններ, բացառու-թյամբ ընտրական գործընթացի փարբեր փուլերի համար սահմանված ժամկետների, առկա չեն, այսինքն՝ արտահերթ ընտրությունն անցկացվում է հերթական ընտրության համար սահմանված կարգով (ՏՏ ԸՕ, հոդված 92):

Արտահերթ ընտրությունների պարագայում Նանրապեքության Նախագահի ար-տահերթ ընտրության օրվա մասին հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսու-թյամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրության օրվանից ոչ ուշ, քան 39 օր առաջ:

Մեկնաբանվող հոդվածում օգտագործված «նշանակվում է Նանրապեքության Նախագահի արտահերթ ընտրություն» բառակապակցությունում այս պարագայում «նշանակվել» եզրույթը չպետք է հասկանալ որպես որեւէ մարմնի կողմից ընտրություն-ներ նշանակվելու մասին ակտի ընդունում: Արտահերթ ընտրությունները նշանակվում են մեկնաբանվող հոդվածի ուժով:

Ընտրական օրենսգիրքը եւս ԿԸՏ-ին արտահերթ ընտրություն նշանակելու լիազոր-ություն չի վերապահել նաեւ այն պարճառով, որ որոշում կայացնելը ենթադրում է որո-շում կայացնողի հայեցողություն կայացնել այդ որոշումը կամ՝ ոչ, իսկ այս պարագայում նման հայեցողություն չի կարող լինել, ուստի մեկնաբանվող հոդվածի դրույթը՝ նշանակ-վում է արտահերթ ընտրություն, պետք է հասկանալ, որ Սահմանադրության մեկնաբան-վող հոդվածի ուժով է այն նշանակվում, իսկ ընտրական գործընթացի մեկնարկի համար այս պարագայում հիմք է հանդիսանում կենտրոնական ընտրական հանձնաժողովի նա-խագահի՝ Նանրապեքության Նախագահի արտահերթ ընտրության օրվա մասին հան-րային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսությամբ արված հաղորդագրությունը:

Նաշվի առնելով Նանրապեքության Նախագահի արտահերթ ընտրությունների անցկացման համար սահմանված սեղմ՝ 40-օրյա ժամկետը, հերթական ընտրություննե-րի համեմատ սեղմված, կրճատված են ընտրական գործընթացի փարբեր փուլերի հա-մար սահմանված ժամկետները, մասնավորապես Նանրապեքության Նախագահի թեկնածուների առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը կենտրոնական ընտ-րական հանձնաժողով են ներկայացվում ընտրության օրվանից ոչ շուր, քան 36 եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչեւ ժամը 18.00-ն:

Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուր, քան 20 եւ ոչ ուշ, քան 12 օր առաջ: Ընտրական տեղամասերը եւ տեղամասային կենտրոնները կազմավորվում են քվեարկության օրվանից առնվազն 25 օր առաջ եւ այլն:

ՆՈՒՎԱԾ 53.1

Ռազմական եւ արտակարգ դրության ժամանակ Նանրապեքության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Նանրապեքության Նախա-գահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ քառասուններորդ օրը, անցկացվում է Նանրապեքության Նախագահի ընտրություն:

Մեկնաբանվող հոդվածն օրգանական կապի մեջ է ընկնողությունների ազատության սկզբունքի հետ: Ընկնողությունների ազատության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, ինչպես նաև մի շարք հեղինակավոր միջազգային փաստաթղթերում (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում եւ այլն), որոնց փարբեր ժամանակներ միացել է նաև Հայաստանի Նանրապետությունը:

Մեկնաբանվող դրույթները սահմանադրական կարգավորում են սրացել միայն 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մինչ այդ այս հարաբերությունները կարգավորում էր ՀՀ ընթացիկ օրենսդրությունը: Մասնավորապես, «Ռազմական դրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, արգելում էր ընկնողությունների անցկացումը ռազմական դրության պայմաններում:

Ընկնողությունների ազատության սկզբունքը 20-րդ դարի ժողովրդավարության կարևորագույն ձեռքբերումներից է: Ընկնողությունների ազատության սկզբունքն ունի երկու բաղադրիչ, առաջին՝ այն բացառում է ընկնողությունների նախապարտապարման եւ անցկացման ընթացքում ցանկացած հարկադրանք՝ ինչպես ընկնողություններին մասնակցելու առնչությամբ, այնպես էլ քվեարկության ժամանակ, եւ երկրորդ՝ այն ուղղակի կապի մեջ է մարդու ազատության ինստիտուտի հետ, որը որպես յուրաքանչյուր մարդու իրավունք ամրագրված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում եւ ենթադրում է ընկրական իրավունքին հարակից մի շարք իրավունքների առկայություն: Ընկնողությունները երբեք չեն կարող համարվել ազատ, եթե մարդու հանրաձանաչ իրավունքների խախտումը զանգվածային բնույթ է կրում կամ երբ դրանք անցկացվում են ընկրական իրավունքին հարակից, Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների սահմանափակման պայմաններում:

Ընկնողությունների ազատության սկզբունքը եւ դրա չափորոշիչներն ամրագրված են նաև Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վեներիկի հանձնաժողով) փաստաթղթերում, մասնավորապես՝ Ընկրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքում («Յուցումներ եւ բացարակական զեկույց»-ում): Վերոնշյալ փաստաթղթի համաձայն ժողովրդավարական ընկնողությունները հնարավոր չէ պարկերացնել առանց մարդու իրավունքները հարգելու, մասնավորապես՝ արտահայտվելու եւ մամուլի ազատության, երկրի ներսում Կեղաշարժման ազատության, քաղաքական նպատակներով միավորումներ կազմելու եւ միավորվելու ազատության՝ ներառյալ քաղաքական կուսակցությունների սրեղծումը:

Ազատ ընկրական իրավունքը ներառում է երկու փարբեր հայեցակետեր՝ ընկրողի կարծիքի ազատ ձեւավորում եւ այդ կարծիքի ազատ արտահայտում, այսինքն՝ քվեարկության գործընթացի ազատություն եւ արդյունքների ճշգրիտ գնահատում:

Քվեարկողների կարծիք կազմելու ազատությունը Կանոնագիրքը բացարարում է հետեւյալ կերպ.

«ա. Քվեարկողների կարծիք կազմելու ազատությունը մասամբ փոխհատվում է հավասար հնարավորությունների հետ: Այն պահանջում է, որպեսզի պետությունը եւ պետական իշխանությունները՝ առհասարակ, հարգեն արդարություն ցուցաբերելու իրենց պարտականությունը, մասնավորապես լրավամիջոցների օգտագործման, ցուցապատարառների փակցման, հանրահավաքների իրավունքի պաշտպանության, ինչպես նաև կուսակցությունների եւ թեկնածուների ֆինանսավորման Կեսանկյունից»:

Ընկրական իրավունքն օրգանական փոխկապակցվածության մեջ է գտնվում

հատկապես մյուս քաղաքական իրավունքների հետ: Մի կողմից, առանց ընտրական իրավունքի քաղաքական մյուս իրավունքները միայնակ ի գործու չեն լիարժեք կատարել իրենց խնդիրները, մյուս կողմից՝ ինքն իսկ՝ ընտրական իրավունքը կարող է իմաստավորվել, եթե առկա չեն մյուս քաղաքական իրավունքները, կամ դրանք սահմանափակված են:

Ասվածը կարող է հաստատվել այն իրավիճակը, երբ քաղաքացին պետության ներսում գրկված է բոլոր քաղաքական իրավունքներից ու ազատություններից, բացի պետության գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքից: Դժվար չէ փեսնել, որ նման իրավիճակում այդ իրավունքը եւս կդառնա առոչինչ, քանի որ այն կոնկրետ իրավունքները, որոնք կապահովելին այդ իրավունքի իրականացումը, գոյություն չունեն:

Արտակարգ եւ ռազմական դրության ռեժիմն անհրաժեշտ է դիտարկել վերոշարադրյալի համարեքստում: Այս ռեժիմների սահմանման իրավական հիմքն ամրագրված է ՆՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13 եւ 14-րդ կետերում: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՆՏ օրենքի առաջին հոդվածը փայլի է ռազմական դրության սահմանումը, այն է՝ ռազմական դրությունը բացառապես Նայաստանի Նանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ եւ թույլատրում է իրավաբանական անձանց, Նայաստանի Նանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների եւ ազատությունների որոշակի սահմանափակումների եւ նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում:

Սահմանման պարզ դիտարկումից անգամ ակնհայտ է դառնում, որ վերջիններս պետության, հասարակության բնականոն շիջմից, պայմաններից փարբերվող ռեժիմներ են, որոնք պայմանավորված են Նանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու եւ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի առկայության հանգամանքներով:

Մեկնաբանվող հոդվածը եւ դրա հիմնավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ է այն դիտարկել Սահմանադրության 44-րդ հոդվածի հետ օրգանական համակցությամբ:

Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն. «Մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Բացառությունները վերաբերում են կյանքի իրավունքին, խոշտանգումների արգելքին, առանց մարդու համաձայնության գիտական, բժշկական փորձերի ենթարկելուն, իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրավունքին, իրավաբանական օգնություն ստանալուն, իր ընտրությամբ պաշտպան ունենալուն, իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայմանը, ներման կամ նշանակված պարիժը մեղմացնելու խնդրանքին, անմեղության կանխավարկածին, իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չփախու իրավունքին եւ այլն: Իսկ հնարավոր սահմանափակման կարող են ենթարկվել

ընտրական իրավունքը սպասարկող, ընտրական իրավունքին բովանդակություն փոխող հետեյալ իրավունքները. անձնական ազատության եւ անձեռնմխելիության (հոդված 16), բնակարանի անձեռնմխելիության (հոդված 24), ազատ տեղաշարժվելու (հոդված 25), կարծիքն ազատ արտահայտելու (հոդված 27), այլ անձանց հետ միավորումներ կազմելու (հոդված 28), խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու (հոդված 29), ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու (հոդված 30) եւ այլն:

«Ռազմական դրության ռեժիմի մասին» ՏՏ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է ռազմական դրության ժամանակ հնարավոր սահմանափակումները, որոնց մի մասն ուղղակի առնչություն ունի ընտրությունների հետ եւ որոնց սահմանափակմամբ է պայմանավորված ընտրությունների չանցկացումը:

Ընտրական իրավունքին առնչվող սահմանափակումներից կարելի է առանձնացնել.

- ռազմական դրություն հայտարարված փարածքում տեղաշարժման ազատության սահմանափակումը, ինչպես նաեւ նշված փարածք մուտք գործելու եւ փարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանումը, որը ներառում է օդարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց՝ փոխալ փարածք մուտք գործելու եւ այնտեղ գտնվելու սահմանափակումները.

- ժողովներ, հավաքներ, ցույցեր, երթեր եւ այլ զանգվածային միջոցառումներ անցկացնելու արգելումը կամ սահմանափակումը, գործադուլների եւ կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելումը, ռազմական դրության պայմաններում Նայաստանի Նանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչություն եւ այլ գործունեություն ծավալված կուսակցությունների, հասարակական ու կրոնական կազմակերպությունների եւ միավորումների գործունեության կասեցումը՝ օրենքով սահմանված կարգով,

- օրենքով սահմանված կարգով խոսքի ազատության սահմանափակումը, ինչպես նաեւ փակագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացուցիչ տեխնիկական միջոցների, պարճենահանման տեխնիկայի ժամանակավոր առգրավումը կամ կալանքը, լրագրողների հավաքարմագրման հատուկ կարգի, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանումը:

Եթե անգամ այս թվարկումից հանենք ընտրելու իրավունքը, ապա դժվար չէ տեսնել, որ այն առանց վերը շարադրված իրավունքների դառնում է մերկ, կորցնում է իր բովանդակությունը, հետեւաբար՝ մասամբ իմաստագրկվում է: Այդ սահմանափակումների պարագայում անցկացվող ընտրությունը չի կարող կատարել իր դասական գործառնությունները՝ իշխանությունների լեգիտիմացում, քաղաքական հակամարտությունների լուծում, քաղաքական վերնախավի սելեկցիա: Ընտրությունների արդյունքները չեն լինի իրական, քանզի ընտրողի այն իրավունքները, որոնք կոչված են ապահովելու ընտրողի ազատ կամաարտահայտությունը, որոնք կոչված են նաեւ ձեւավորելու այդ կամաարտահայտությունը՝ խոսքի ազատություն, հավաքների ազատություն, միավորումների ազատություն, սահմանափակված լինելու պարճառով չեն կարող իրականացվել:

Սահմանադրական նման արգելքը բխում է անբարենպաստ հանգամանքներում ընտրությունների ազատության վրանգվածության գիտակցումից: Ընտրությունների իրական ազատության պահպանման համար անհրաժեշտ է քաղաքական եւ բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ, որի պայմաններում քաղաքացիներն ազատորեն կարող են փնտրել, հավաքել տեղեկատվություն ընտրապայքարին մասնակցող փարքեր թեկնածուների, քաղաքական ուժերի վերաբերյալ եւ առանց միջամտության կատարել ազատ ընտրություն:

Մեկնաբանվող հոդվածում օգտագործվող «ընտրություն» եզրույթը պետք է հասկանալ լայն իմաստով՝ որպես պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման նպատակով միմյանց հաջորդող փոքրեր փուլերից բաղկացած եւ քվեարկությամբ ավարտվող միջոցառում: Ոստի արգելքը վերաբերում է բոլոր փուլերին՝ ընտրությունների նշանակումից մինչեւ քվեարկության կազմակերպումը:

Այդ իսկ պատճառով այն պարագայում, երբ արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու պահին ընտրությունները գրնվում են որոշակի փուլում, դրանց հետագա ընթացքը դադարեցվում է: Բացառությունը կարող է վերաբերել քվեարկության եւ ընտրության արդյունքների ամփոփմանը, քանզի սահմանափակումները եւ դրանցով հետապնդվող նպատակները չեն կարող խոչընդոտել, սահմանափակել այս փուլը: Սակայն, եթե քվեարկության արդյունքներով պարզվի, որ պետք է անցկացվի նոր ընտրություն կամ ընտրությունների երկրորդ փուլ, ապա վերջիններս վերոշարադրյալի հիման վրա չեն կարող անցկացվել:

Այս տրամաբանությանն է հետեւում նաեւ ՏՏ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածում առկա կանոնակարգումը, համաձայն որի՝ «Ռազմական եւ արտակարգ դրության ժամանակ Նանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Նանրապետության Նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ 40-րդ օրն անցկացվում է Նանրապետության Նախագահի ընտրություն՝ արտահերթ ընտրության համար սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

Անկախ այն հանգամանքից, թե որ փուլում է դադարեցվել ընտրությունների ընթացքը, ռազմական եւ արտակարգ դրության ավարտից հետո ընտրություններն սկսվում են առաջին իսկ փուլի թեկնածուների նոր առաջադրմամբ, գրանցմամբ: Ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման դեպքում ռազմական դրությունը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցվել Նանրապետության Նախագահի հրամանագրով, որի մասին բնակչությունն իրազեկվում է սույն օրենքով սահմանված՝ ռազմական դրություն հայտարարելու մասին տեղեկացվելու կարգով:

Ռազմական դրության գործողությունը դադարեցվում է նաեւ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում:

ՆՈՒՎԱԾ 54

Նանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի հարուկ նիստում, ժողովրդին փրված հեղեկյալ երդմամբ. «Ստանձնելով Նայաստանի Նանրապետության Նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Մահմանադրության պահանջները՝ հարգել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Նանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը՝ ի փառս Նայաստանի Նանրապետության եւ ի բարօրություն Նայաստանի Նանրապետության ժողովրդի»:

Սահմանադրական նորմի բովանդակությունից հետևում է.

ա) Նախագահի երդումը Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքի՝ Սահմանադրության պահանջն է, որ նորընտրված Նախագահը մինչև պաշտոնն ստանձնելը հավաքարմության երդում քա իր ժողովրդին, որ իր նախագահական լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կկատարի Սահմանադրությունը, հավաքարմ կմնա հայրենիքին ու Սահմանադրության պահանջներին եւ կգործի իշխանության միակ աղբյուրը եւ կրողը հանդիսացող ժողովրդի պարզամտներին համապատասխան.

բ) Նախագահի պաշտոնի ստանձնման երդմանը քրվում է հատուկ իրավական նշանակություն, ինչը բխում է դրա՝ երկրի Հիմնական օրենքով սահմանված լինելուց.

գ) Նախագահի պաշտոնի ստանձնման երդումը քրելի է ունենում ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում, որով ես մեկ անգամ ընդգծվում է Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր մարմնի դերը: Ազգային ժողովի նիստերը, համաձայն ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ գումարվում են ԱԺ նստավայրում: Այլ վայրում նիստ կարող է գումարվել միայն Ազգային ժողովի որոշմամբ կամ դրա անհնարինության դեպքում՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածին համապատասխան՝ Նախագահն իր պաշտոնն ստանձնում է Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը: Նույն հոդվածով սահմանված է նաեւ, որ Հանրապետության Նախագահի ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտից 50 օր առաջ:

Սքացվում է, որ նորընտրված Նախագահը երդում է քալիս ընտրվելուց 50 օր հետո: Այս ժամկետը քարբեր պետություններում քարբեր է՝ 1-3 ամիս: Ինչո՞վ է պայմանավորված նման ժամանակահատվածի նախատեսումը: Նախետառաջ, ինչ-որ ժամանակ է անհրաժեշտ կուսակցությունների եւ Նախագահի թեկնածուների միջեւ քաղաքական կրքերը մարելու, ընտրության արդյունքների վիճարկումները քննելու եւ լուծում քալու համար: Այն անհրաժեշտ է նաեւ հին Նախագահին եւ կառավարությանը՝ աշխատանքներն ավարտելու, իսկ նոր Նախագահին կառավարություն կազմելու համար, որպեսզի երդման օրն այն պարտաստ լինի:

Երդման արարողություն քրելի է ունենում պետությունների մեծամասնությունում: Երդվում են ինչպես նախագահները, այնպես էլ թագավորական իշխանության ժառանգաքար փոխանցման դեպքում՝ թագաժառանգները՝ գահը, աթոռը գաղեցնելուց առաջ:

Երդման բովանդակությունը՝ քրեքսրը, որպես կանոն, սահմանվում է երկրի Հիմնական օրենքով: Կան երկրներ, որոնց Սահմանադրությամբ սահմանված չեն (օրինակ՝ Ֆրանսիա, Սլովակիա եւ այլն): Բնականաքար, քարբեր են ինչպես երդման բովանդակությունը, այնպես էլ արարողակարգերը: Այն պետություններում, որքրել երդման արարողությունը դիքում են ոչ թե որպես հանդիսավոր եւ գունագեղ միջոցառում, այլ հասարակական-քաղաքական ակտ՝ գործողություն, որն առաջացնում է լուրջ իրավական հետեւանքներ, երդման արարողակարգը մշակվում է հաշվի առնելով ամեն հանգամանք, օրինակ՝ ԱՄՆ-ում, որքրել ընդգծվում է ոչ միայն նախագահական իշխանության փոխանցելիությունը, այլ նաեւ իշխանության փոխանցման լեգիտիմությունը: Ավելին, այս երկրում անգամ անցկացման վայրի ընտրությունը եւ այն ամբիռը, որքրել կատարվում է Նախագահի երդումը, կառուցվում է ուղղված ԱՄՆ Կոնգրեսի ճակատային կողմին, որով կարծես մեկ միասնության մեջ են միավորվում օրենսդիր, գործադիր,

դարական իշխանությունները: Դրա հիմնավորումն է նաև այն, որ Նախագահի երդումն ընդունում է ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահը: Երդման արարողակարգի նկատմամբ նման պահանջկոտությունը պայմանավորված է այն բանով, որ երդումը հեղափոխում է երկու նպատակների իրականացում, որոնք ունեն բարոյական և իրավական բնույթ:

Երդումն ունի իրավական բնույթ, քանի որ վերջինիս հետ կապվում է որոշակի իրավական հետեւանքների ծագումը:

Երդման արարողությամբ վավերացվում է նորընտրված Նախագահի պաշտոնի ստանձնման և նախորդ Նախագահի սահմանադրական լիազորությունների դադարեցման ժամկետի հաշվարկը: Այլ կերպ ասած, երդումը նորընտրված Նախագահի՝ որպես պետության գլխի լիազորությունների կատարման ժամկետի հաշվարկման սկիզբն է: Այն սկիզբն է նաև այն պարականությունների կատարման, որոնք պետք է ապահովեն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության և օրենքների պաշտպանությունը, երկրի անկախությունը, ժողովրդավարությունը, քաղաքացիների անվտանգությունը, իրավունքների և ազատությունների իրականացումը:

Երդման արարողությունը գործողություն է, որով վավերացվում է ոչ միայն նորընտրված Նախագահի՝ պետության գլխի, Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների ստանձնման, այլ նաև ժողովրդի կողմից ընտրված Նախագահի լեգիտիմությունը: Ասվածը նշանակում է, որ վավերացվում է ոչ միայն Նախագահի՝ օրենքի պահանջներին համապատասխան ընտրվելու փաստը, այլ նաև ժողովրդի կողմից նախագահական իշխանությունն ընդունելու և վերջինիս հանձնարարականները կամավոր կատարելու պարտավորության հանգամանքը: Մասնավորապես պետք է բացատրել երդման արարողակարգի օրենսդրորեն կանոնակարգման անհրաժեշտությունը՝ ընդհանրապես, և Նայաստանի Նանրապետությունում՝ մասնավորապես:

Լեգիտիմության գործոնը նախեստաճ կարևորվում է նրանով, որ վերջինիս առկայությամբ է պայմանավորված ժողովրդավարության առկայությունը, ժողովրդավարական պետության ձևավորումը, քանի որ լեգիտիմությունը կազմում է պառլամենտարիզմի հիմքը: Ունենալ երկրի Նախագահ, որը վայելում է հասարակության վարահությունը, պետության և հասարակության զարգացումն ապահովող ամենակարևոր պայմանն է:

Երդումը Սահմանադրությամբ պարտադրված գործողություն է, որը նորընտրված Նախագահին պարտավորեցնում է ազնիվ ծառայել ժողովրդին, հակառակ դեպքում կարող է պատասխանավորության ենթարկվել, ընդհուպ՝ պաշտոնանկ արվել, ինչն իր ամբողջությամբ է ստացել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 57-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Նանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար»:

Երդումը Նախագահի համար սահմանում է պարականություններ, այլ ոչ թե իրավունքներ: Սահմանադրության այս նորմն ունի իմպերատիվ բնույթ և, ինչպես արդարացիորեն նշում է Բ. Ս. Էբզեյը, ուղղված է պաշտպանելու Սահմանադրության խախտումն առաջին հերթին Նախագահից: Պարահական չէ, որ Սահմանադրության համապատասխան հոդվածներով նախատեսված են պաշտոնավար անձանց, այդ թվում և Նախագահի համար պարականություններ՝ գործելու Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված է, որ. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնավար անձինք իրավասու են կատարելու միայն այն-

պիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով», իսկ 56-րդ հոդվածն արգելում է Նախագահին ընդունել այնպիսի հրամանագրեր, որոնք կհակասեն Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին: Այսպեղից հետեւում է, որ Նախագահն իրավասու չէ ինքնուրույն որոշելու իր լիազորությունների իրականացման ձեւերն ու միջոցները, քանի որ վերջիններս սահմանված են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով:

Նման հարցադրման դեպքում չի կարելի համաձայնել այն տեսակետին, թե Նախագահի երդումն ունի ավելի շար բարոյական, քան իրավական բնույթ: Չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ Սահմանադրությամբ պարասխանաարվություն չի նախատեսվում երդման չկատարման համար, այն ուղղակիորեն բխում է Սահմանադրության համապարասխան նորմերի բովանդակությունից: Ավելին, որոշ պետություններում պահանջվում է, որ պետության գլուխը լինի նախագահ, թե՛ թագավոր, ստորագրի երդման փակ: Այսպես, օրինակ՝ Դանիայի թագավորը մինչեւ գահ բարձրանալը երդում է փալիս եւ ստորագրում այն Պետական խորհրդի առջե՛ն սրանձնելով Սահմանադրությունն անշեղորեն կատարելու պարտականություն: Ստորագրում է երդման նույնանման երկու օրինակ, որոնցից մեկը պահվում է Ֆոլկեփինգի, մյուսը՝ Պետական արխիվում: Եթե թագավորը, մինչեւ գահ բարձրանալը, ինչ-ինչ պարճառով չի կարողանում ստորագրել նշված երդումը, ապա կառավարումն իրականացնում է Պետական խորհուրդը (Դանիայի Սահմանադրության II մաս, կեր 8): Այսպեղից հետեւություն՝ երդումն ունի ոչ միայն բարոյական, այլեւ հիմնականում իրավական բնույթ: Երդման բարոյական բնույթը կայանում է հետեւյալում.

1. մի կողմից ընդգծվում է Նախագահի ինստիտուտը եւ հասարակության հարգանքը նրա նկատմամբ, մյուս կողմից՝ բարձրացվում է Նախագահի պարասխանաարվությունը ժողովրդի առջեւ.

2. երդման հանդիսավորության մեջ, երբ այն կատարվում է օրենսդիր իշխանության ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի նիստում, որին մասնակցում են պարզամավորներ, պետական, հասարակական, մշակութային գործիչներ, արտասահմանյան դիվանագետներ, Սահմանադրական դատարանի անդամներ, բարձրաստիճան հյուրեր փարբեր պետություններից եւ միջազգային կազմակերպություններից, եկեղեցականներ, Ամենայն Հայոց կաթողիկոսը, եւ այդ ամենը ցուցադրվում է հասարակությանը եւ մեկնաբանվում մամուլի բոլոր միջոցներով.

3. երդման արարողությունը նոր իմաստ է ձեռք բերում, երբ նորընփր Նախագահը երդվելիս թիկունքին ունենալով հայկական դրոշը՝ ձեռքը միաժամանակ դնում է երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության մայր օրինակի եւ հավաքի խորհրդանիշ հանդիսացող Վեհամոր Ավետարանի՝ Մուրբ գրքի վրա: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում Նախագահի երդումը կրում է աշխարհիկ բնույթ եւ, հետեւաբար, պետք է կատարվի միայն Սահմանադրության վրա: Ակամա հարց է ծագում, Վեհամոր Ավետարանի վրա երդվելը չի՞ նշանակում, որ երդումը ձեռք է բերում նաեւ հոգեւոր (կրոնական) բնույթ, չնայած այն բանին, որ երդման տեքստում չի օգտագործվում եւ ոչ մի կրոնական արտահայտություն: Կարծում եմ, որ փեղի է ունենում այդ երկուսի միաձուլում, ինչը եւ կարող է ավելի բարձրացնել Նախագահի պարասխանաարվությունը, քանի որ երդվել Վեհամոր Ավետարանով՝ նշանակում է հավատարիմ մնալ Ավետարանով սահմանված համամարդկային արժեքներին, հայ քրիստոնեական եկեղեցուն եւ ակնկալել փրեզերական ուժերի օժանդակությունը, ինչն ուղղակիորեն սահմանված է Լեհաստանի նորընփր Նախագահի երդման բովանդակության մեջ. «Ազգի կամքով սրանձնելով Լե-

հասարակական հարապետության Նախագահի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում են, որ կպահպանեն հավատարմությունը Սահմանադրության դրոյթներին, անսասանորեն կպաշտպանեն Ազգի արժանապատվությունը, պետության անկախությունը և անվտանգությունը, իսկ հայրենիքի բարօրությունը և քաղաքացիների բարեկեցությունն ինձ համար կլինի բարձրագույն պարվիրանը: **Թող օգնի ինձ Աստված»** (Լեհաստանի Սահմանադրության 130-րդ հոդված):

4. Երդման բովանդակությամբ, ինչն իրենից ներկայացնում է արժեքային մի ամբողջ համակարգ, որոնցից յուրաքանչյուրի պահպանումը Նախագահի սրբազան պարականությունն է: Ուշագրավ է այն, որ երդման բովանդակության հիմնական դրոյթներից յուրաքանչյուրն իր սահմանադրական ամրագրումն է ստանում նաև Սահմանադրության այլ հոդվածներում և ստանում մի նոր արժեվորում, որի ապահովումը համարվում է պետության հիմնական պարականությունը: Այսպես, օրինակ՝ համաձայն ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ ինչպես մարդը, նրա արժանապատվությունը, այնպես էլ իրավունքներն ու ազատությունները դիտարկվում են որպես **բարձրագույն արժեքներ**, որոնց ապահովումը պետությունը կատարում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Նանրապետության անկախության, փարածքային ամբողջականության և անվտանգության ապահովումը, համաձայն ՏՏ Սահմանադրության 49-րդ հոդվածի, հանդիսանում է ՏՏ Նախագահի հիմնական պարականություններից մեկը:

Նախագահն իր երդմամբ պարտավորվում է իր լիազորությունները կատարել ի փառս Նայաստանի Նանրապետության և ի բարօրություն Նայաստանի Նանրապետության ժողովրդի:

Դժվար չէ նկատել, որ երդումն իրենից ներկայացնում է Նախագահի լիազորությունների խտացված արտացոլումը:

Կարևորելով Նախագահի պաշտոնն ստանձնելու երդման իրավական և բարոյական բնույթը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՏՏ-ում երդման արարողակարգը կանոնակարգված չէ՝ ի տարբերություն ԱՄՆ-ի: Նման հարցադրումը պայմանավորված է նրանով, որ ՏՏ Սահմանադրության 54-րդ հոդվածով ընդամենը սահմանված է, որ Նախագահը պաշտոնն ստանձնում է ԱԺ-ում հատուկ նիստում երդվելուց հետո, իսկ թե ինչ արարողակարգով՝ պարզ չէ: Չկա իրավական որևէ նորմ, որով սահմանված, կանոնակարգված լինի երդման կազմակերպումը և անցկացումը. մասնավորապես՝ ո՞վ է բերում երդման (ով է երդվեցնողը), ո՞վ է հայտարարում Նախագահի պաշտոնի անցման պահը, ինչո՞ւ են երդվում՝ միաժամանակ ձեռքը դնելով Սուրբ գրքի և Սահմանադրության վրա, ինչո՞ւ է կազմակերպված լինում զինվորական շքերթ և բազում այլ հարցեր: Պարզվում է, որ ՏՏ-ում Նախագահի՝ պաշտոնի ստանձնման երդումը կանոնակարգված չէ, և յուրաքանչյուր անգամ կատարվում է կազմակերպիչների ճաշակին համապատասխան, ինչն իրավաբանորեն անընդունելի է: Կարծում ենք, որ երդման արարողակարգը պետք է կանոնակարգվի հատուկ օրենքով, որի ընդունումը Նայաստանի Նանրապետությունում անհրաժեշտ է, ավելին, իրավաբանորեն ճիշտ կլինի, որ երդման բովանդակությունը պարունակի նաև Նախագահի ինքնապարաստականություն կրելու պարաստանապատվություն իր ստանձնած պարականությունների չկատարման կամ ոչ կատարման կատարման համար, ինչն ուղղակիորեն բխում է ՏՏ Սահմանադրության 54-րդ հոդվածի բովանդակությունից:

ՆՈՂ-ՎԱԾ 55

Տանրապետության Նախագահը՝

1) ուղերձով դիմում է ժողովրդին եւ Ազգային ժողովին.

2) Ազգային ժողովի ընդունած օրենքն սրանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում եւ հրապարակում է այն:

Այդ ժամկետում կարող է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Նվճարյա ժամկետում ստորագրում եւ հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերադրված օրենքը.

3) Սահմանադրության 74.1-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը եւ նշանակում արտահերթ ընտրություն:

4) Ազգային ժողովում պարզամալորական տեղերի բաշխման եւ պարզամալորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պարզամալորների մեծամասնության վարահոռությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պարզամալորների վարահոռությունը վայելող անձին: Տանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ րասնօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում:

Տանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է կառավարության անդամներին:

Տանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Տանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն սրանձնելու, կառավարությանն անվարահոռություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Տանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչեւ նոր կառավարության կազմավորումը.

5) օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ է կատարում պետական պաշտոններում.

6) կազմավորում է ազգային անվրանգության խորհուրդը եւ նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ.

7) ներկայացնում է Տայասրանի Տանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր դեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր եւ ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը.

8) նշանակում եւ հետ է կանչում օրարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններին առընթեր Տայասրանի Տանրապետության

ությունն ղեկավարող անդամների, ընդունում է օգտաբերական պետությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարող անդամների հավասարմագրերը եւ հետկանխագրերը:

9) Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դարասխագի, կենտրոնական բանկի նախագահի եւ վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները: Գլխավոր դարասխագի առաջարկությանը նշանակում եւ ազարում է գլխավոր դարասխագի տեղակալներին:

10) նշանակում է սահմանադրական դարասրանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դարասրանի նախագահ չնշանակելու դեպքում սահմանադրական դարասրանի կազմից սահմանադրական դարասրանի նախագահ:

Սահմանադրական դարասրանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դարասրանի իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պարասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

11) արդարադատության խորհրդի առաջարկությանը նշանակում է վճարելի դարասրանի եւ նրա պալատների նախագահներին եւ դարավորներին, վերաքննիչ, առաջին արյանի եւ մասնագիտացված դարասրանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պարասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությանը նշանակում է վերաքննիչ, առաջին արյանի եւ մասնագիտացված դարասրանների դարավորներին:

11.1) նշանակում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներ:

12) զինված ուժերի զերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում եւ ազարում է զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:

13) Նանրապերության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պարերագմ հայրարարվելու դեպքերում հայրարարում է ռազմական դրություն եւ կարող է հայրարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք եւ որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին:

Պարերագմի ժամանակ Նանրապերության Նախագահը կարող է նշանակել եւ ազարել զինված ուժերի գլխավոր հրամանատարին:

Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայրարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հարուկ նիստ:

Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով:

14) սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի

դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհատադ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով.

15) օրենքով սահմանված կարգով լուծում է Տայասրանի Տանրապետության քաղաքացիության և քաղաքական ասպատան քալու հետ կապված հարցերը.

16) պարզեւարրում է Տայասրանի Տանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն զինվորական և պարվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիրական և այլ դասային աստիճաններ.

17) ներում է շնորհում դատապարտյալներին:

1) Մինչեւ 1995թ. Սահմանադրության ընդունումը Տանրապետության Տախագահը ժողովրդին ուղերձով դիմելու լիազորություն ուներ 1991թ. օգոստոսի 1-ի՝ «Տայասրանի Տանրապետության նախագահի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Մեկնաբանվող կետի կարգավորման առարկան Տանրապետության Տախագահի ուղերձներն են, որոնց հասցեատերը մի դեպքում ժողովուրդն է, իսկ մյուս դեպքում՝ Ազգային ժողովը: Եթե Ազգային ժողովին ուղերձ ուղարկելու պարագայում որեւէ կասկած չկա, որ խոսքը Տանրապետության Տախագահի լիազորության մասին է, ապա խնդիրն ավելի բարդ է ժողովրդին ուղերձով դիմելու դեպքում: Եթե Տանրապետության Տախագահի ուղերձն Ազգային ժողովին առնվազն մեկ իրավական հետեւանք ունի, այն է՝ Ազգային ժողովի պարականությունը՝ լսելու այն Ազգային ժողովի նիստում, ապա Տանրապետության Տախագահի ուղերձը ժողովրդին որեւէ իրավական հետեւանք չի կարող առաջացնել: Նման ուղերձն իր էությանը ոչ իշխանական լիազորություն է, որը Տանրապետության Տախագահն իրավասու է իրականացնել արդեն 126-րդ հոդվածի ուժով:

Ուղերձների այս երկու տեսակների միջեւ որեւէ անջրպետ չկա, քանի որ դրանք, որպես կանոն, ուղղված են պետության կյանքի համար կարեւոր նշանակություն ունեցող հարցերին, և այն, ինչն ուղղված է Ազգային ժողովին, կարող է միաժամանակ ուղղված լինել ժողովրդին՝ համապատասխան հասարակական կարծիք ձեւավորելու նպատակով:

Չնայած մեկնաբանվող կետում օգտագործված սահմանական եղանակին, ուղերձ հղելը (այդ թվում՝ նաեւ Ազգային ժողովին) Տանրապետության Տախագահի հայեցողությունն է, այլ ոչ թե նրա պարականությունը, բացառությամբ 55-րդ հոդվածի 14-րդ կետի, ըստ որի՝ ուղերձով ժողովրդին դիմելը պարտադիր է: Ուղերձով դիմելը բացառապես Տանրապետության Տախագահի անձնական հայեցողության հարցն է՝ ի տարբերություն նրա բազմաթիվ այլ լիազորությունների, որոնք պահանջում են այլ մարմինների առաջարկներ կամ նրանց հետ խորհրդակցություններ:

Ուղերձը կարող է վերաբերել ցանկացած հարցի, որի վրա Տանրապետության Տախագահը ցանկանում է հատուկ ուշադրություն հրավիրել: Այն պրակտիկայում հարկապես հաճախ է օգտագործվում փոնական առիթներով:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը խոչընդոտ չի հանդիսանում օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների միջև պաշտոնական հաղորդակցության համար: Նաղորդակցության ձևերից մեկը խորհրդարանին ուղղված՝ Նանրապետության Նախագահի ուղերձն է, որը գոյություն ունի կառավարման բոլոր ձևերում: Ի վարքերություն իշխանությունների բաժանման խիստ ձեւը որդեգրած նախագահական համակարգի, որպեղ ուղերձը պետության գլխի և խորհրդարանի միջև հաղորդակցության հաճախ միակ ձեւն է, խորհրդարանական և կիսանախագահական կառավարման ձևերում պետության գլխի և խորհրդարանի միջև հաղորդակցության ձևերը շարք ալելի բազմազան են: Նման բազմազանությունը բխում է կառավարման այդ ձևերի էությունից, քանի որ երկրի քաղաքականության կարեւորագույն հարցերի սահմանումը պահանջում է օրենսդրի և գործադրի (կառավարություն, պետության գլուխ) սերք համագործակցությունը:

Նայասրանի Սահմանադրությունը, բացի ուղերձներից, նախատեսում է Ազգային ժողովի հեր նրա հաղորդակցության այլ ձևեր եւս: Այսպես, Նանրապետության Նախագահը Սահմանադրության 70-րդ հոդվածի համաձայն կարող է նախաձեռնել Ազգային ժողովի արքահերթ նսրաշրջան կամ նիսր՝ սահմանելով դրանց օրակարգը և ժամկերը: Նանրապետության Նախագահը կարող է չսրորագրել Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքը և այն վերադարձնել արքահերթ քննարկման (Սահմանադրության հոդված 55, կեր 2 և հոդված 72): Բոլոր այս դեպերում Նանրապետության Նախագահը կարող է անձամբ ներկա գրնվել խորհրդարանի նիսրերին և ելույթ ունենալ քննարկվող հարցերով:

Պերք է հաշվի առնել, որ Ազգային ժողովի կանոնակարգը չի սահմանափակվում Սահմանադրությամբ սահմանված վերոհիշյալ դեպերով և նախատեսում է Նանրապետության Նախագահի բացարձակ իրավունք՝ ներկա գրնվելու Ազգային ժողովի նիսրերին (այդ թվում՝ դռնփակ) և ելույթ ունենալ ցանկացած քննարկվող հարցով: Ընդ որում, նա մրքերի փոխանակման ժամանակ ունի արքահերթ ելույթի իրավունք, որի վերտղությունը չի սահմանափակվում (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդված 58, մաս 2): Բացի դրանից, Նանրապետության Նախագահին բացառիկ իրավունք է վերապահված, հարցը զեկուցողների եզրափակիչ ելույթներից հերո, հանդես գալու արքահերթ ելույթով (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդված 55, մաս 10): Նա Ազգային ժողովի առաջին նսրաշրջանի բացման առթիվ ունի ողջույնի ելույթի իրավունք (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդված 34, մաս 3):

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ Նանրապետության Նախագահն ունի բավական լայն լիազորություններ գործադիր իշխանության իրականացման բնագավառում, կիսանախագահական կառավարման ձեւի րեսանկյունից սկզբունքորեն որեւէ առարկություն չի կարող լինել Նանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև նման լայն շփումների վերաբերյալ: Այդ շփումների արդյունքում Ազգային ժողովը կարող է ավելի լավ րեղեկացված լինել Նանրապետության Նախագահի ձեռնարկած քայլերի մասին: Մյուս կողմից, ի վարքերություն Ազգային ժողով-կառավարություն փոխհարաբերությունների, այսրեղ չի կարող առաջանալ Նանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովի առջև պարասխանարվության հարց: Նաճախակի շփումները կարող են նպասրել նաեւ նրան, որ ավելի բարձրանա խորհրդարանի դերը: Միեւնույն ժամանակ պերք է նկարի ունենալ, որ Նանրապետության Նախագահը, ունենալով Ազգային ժողովի հեր հաղորդակցվելու նման լայն իրավական, ինչպես նաեւ ոչ ֆորմալ հնարավորություններ, կարող է այնքան էլ շահագրգիռ չլինել Ազգային ժողովի հեր ուղերձների

տեսքով շփվելու հարցում:

Քանի որ Հանրապետության Նախագահը որևէ կերպ սահմանափակված չէ իր հայացքները հանրությանը ներկայացնելու ձևերի մեջ, եւ մեկնաբանվող կերպը նրան հնարավորություն է տալիս դիմելու ինչպես անմիջականորեն ժողովրդին, այնպես էլ խորհրդարանին, ուստի ուղերձով Ազգային ժողովին դիմելն առաջին հերթին կարելի է դիտարկել որպես միջոց խթանելու Ազգային ժողովին՝ ձեռնարկելու այս կամ այն քայլերը: Մասնավորապես, քանի որ Հանրապետության Նախագահը չունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, նա կարող է օգտագործել ուղերձը համապատասխան օրենսդրական քայլեր խթանելու նպատակով:

Բովանդակային առումով Հանրապետության Նախագահի ուղերձներն Ազգային ժողովին որևէ սկզբունքային սահմանափակումներ չունեն, սակայն Հանրապետության Նախագահը, բնականաբար, պետք է հաշվի առնի այն սահմանադրական դերը, որը վերապահված է իրեն Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում:

Բնականաբար, Հանրապետության Նախագահի ուղերձներն Ազգային ժողովին չունեն որևէ պարտադրող բնույթ, եւ խորհրդարանն իրավասու է դրանց բովանդակությանը վերաբերվել իր քաղաքական կամքին համապատասխան:

Ազգային ժողովի կանոնակարգը որևէ ընթացակարգ չի նախատեսել Ազգային ժողովին ուղղված Հանրապետության Նախագահի ուղերձների համար: Քանի որ Սահմանադրությունը չի սահմանել ուղերձի որոշակի ձև, ապա այն կարող է իրականացվել թե՛ գրավոր եւ թե՛ բանավոր ձևով: Հանրապետության Նախագահը կարող է իր ուղերձն Ազգային ժողովին ներկայացնել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

Հանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովին ուղերձներ հղելու իրավունքից բխում է Ազգային ժողովի պարտականությունը լսելու այն: Ե՛րբ պետք է այդ հարցը մտնի Ազգային ժողովի օրակարգ: Եթե Հանրապետության Նախագահն անհրաժեշտ է գտնում ուղերձով դիմել Ազգային ժողովին հերթական նստաշրջաններից դուրս ժամանակ կամ երբ այն նիստի չէ, ապա նա կարող է նախաձեռնել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ (հոդված 70), որն անցկացվում է նրա սահմանած օրակարգով եւ ժամկետում, ապա հնարավոր է այն հրավիրել նաեւ ուղերձ հղելու պարտաճառով: Բաց է մնում այն հարցը, թե ե՛րբ պետք է Ազգային ժողովի օրակարգ մտնի ուղերձի հարցը, եթե Հանրապետության Նախագահը ցանկանում է ուղերձով դիմել Ազգային ժողովի նիստերի կամ նստաշրջանի ընթացքում:

Բաց է նաեւ այն հարցը, թե արդյո՞ք կարելի է քննարկել Հանրապետության Նախագահի ուղերձը եւ դրա վերաբերյալ որևէ ակտ ընդունել: Քանի որ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ազգային ժողովը չի կարող ընդունել որոշում Հանրապետության Նախագահի ուղերձի վերաբերյալ, ապա խոսքն այստեղ կարող է վերաբերել միայն Ազգային ժողովի կողմից ուղերձ կամ հայտարարություն ընդունելուն (Սահմանադրության հոդված 62-րդ, մաս 2): Քանի որ, ինչպես արդեն վերը տեսանք, Հանրապետության Նախագահը գրեթե առանց սահմանափակումների կարող է մասնակցել Ազգային ժողովի նիստերին եւ ելույթ ունենալ, ապա, թերեւս, որևէ խոչընդոտ չկա, որպեսզի Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսի ուղերձի քննարկման հնարավորություն: Իհարկե, նման պարագայում բացառված չէ Հանրապետության Նախագահի եւ պարզամտավորների միջեւ ընդդիմաբանության հնարավորությունը:

Համակենցության պարագայում չի բացառվում, որ Հանրապետության Նախագահը դիմի Ազգային ժողովի հետ հաղորդակցման այս եղանակին: Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խորհրդարանին ուղերձով դիմելու ինստիտուտը հաղոր-

ղակցության ժամանակակից միջոցների զարգացման պայմաններում նաև օբյեկտիվորեն է մոլորում հետին պլան, քանի որ Նանրապետության Նախագահը կարող է շարքավերջի օպերատիվ կերպով դիմել հանրությանը եւ Ազգային ժողովին մամուլ ասուլիսների, հարցազրույցների, ռադիոհեռուստատեսությունների եւ այլ ձեւերով:

2) Մեկնաբանվող հոդվածի 2-րդ կետի դրույթները ՏՏ Նախագահի՝ օրենսդիր իշխանության ոլորտում ունեցած հիմնական լիազորություններից են, որոնցով նա, ըստ էության, եզրափակում է օրենքի ընդունման գործընթացը:

Ստորագրելով օրենքը՝ Նանրապետության Նախագահը, փաստորեն, հաստատում է, որ այն ընդունված է սահմանված կարգով, համապատասխանում է ներկայացվող պահանջներին եւ պաշտոնական հրապարակումից հետո ենթակա է պարտադիր կատարման:

Խորհրդարանից ստանալով օրենքը՝ Նախագահը քսանմեկօրյա ժամկետում կարող է ստորագրել կամ չստորագրել այն եւ, օգտագործելով վետոյի (արգելանքի) իր իրավունքը, կասեցնել դրա ուժի մեջ մտնելը եւ վերադարձնել օրենքը նոր քննարկման իր դիպրոդություններով հանդերձ:

Վետոյի իրավունքը Նախագահի կարեւորագույն իրավունքներից մեկն է, որը կիրառվում է օրենքի ստորագրման փուլում, այսինքն այն ժամանակամիջոցում, երբ օրենքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից, սակայն դեռ ուժի մեջ չի մտել: Վերոհիշյալ իրավունքը թույլ է տալիս Նախագահին ակտիվորեն մասնակցել օրենսդրական գործընթացին, իսկ տեսականորեն վետոյի իրավունքը կարելի է համարել զսպումների եւ հակակշիռների համակարգի կարեւորագույն փարբերից մեկը, որը ոչ միայն ապահովում է իշխանությունների բաժանման սկզբունքը, այլ նաև իշխանության թեւերի ակտիվ համագործակցությունը:

ՏՏ Սահմանադրությունը եւ օրենքները չեն սահմանում Նախագահի կողմից վետո դնելու հիմքերը, սակայն խորհրդարանական փորձի վերլուծությունը թույլ է տալիս այդ հիմքերը պայմանականորեն բաժանել երեք խմբի՝ իրավական, տնտեսական եւ քաղաքական: **Իրավական** հիմնավորմամբ օրենքների վրա վետո դնելու պատճառն այդ օրենքների՝ ՏՏ Սահմանադրությանը եւ այլ օրենքներին հակասելն է, օրենսդրական տեխնիկայի պահանջների խախտումները, օրենքների ներքին հակասությունները, սահմանումների անհարակությունները եւ այլն: **Տնտեսական** պատճառներով օրենքների վրա վետո դնելը պայմանավորված է օրենքների ֆինանսատնտեսական ապահովման չհիմնավորվածությամբ, պետական բյուջեի վրա բացասական ազդեցությամբ եւ այլն: Ինչ վերաբերում է **քաղաքական** դրդապատճառներին, ապա այս դեպքում վետոն պայմանավորված է գործադիր իշխանության վարած քաղաքականության հետ օրենքի հակասությամբ: Այս դեպքում, որպես կանոն, քաղաքական դրդապատճառն ուղղակի չի նշվում:

Այսպիսով, ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ՏՏ Նախագահը կարող է քսանմեկօրյա ժամկետում օրենքն իր առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Ըստ ՏՏ Սահմանադրության 72-րդ հոդվածի՝ Նախագահի վերադարձրած օրենքը քննարկվում է արտահերթ: Նանրապետության Նախագահի վետոն հաղթահարվում է Ազգային ժողովի պարզամակրների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը Նանրապետության Նախագահին ստորագրում եւ հրապարակում է հնգօրյա ժամկետում:

Վերոհիշյալը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ՀՀ Նախագահի վերոյի հաղթահարման համար նախատեսվում է ձայների պարզ մեծամասնություն: Իհարկե, տեսաբաններից շարքերը համոզված են, որ Նախագահի վերոն հաղթահարելու համար պետք է սահմանել ավելի բարդ ընթացակարգ, օրինակ՝ որակյալ մեծամասնություն: Սակայն գործնականում Նախագահի վերոյի հաղթահարումը պահանջող ձայների որակյալ մեծամասնության պահանջն այդ վերոն փաստորեն կդարձնի անհաղթահարելի: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, վերոյի իրավունքը չպետք է չարաշահել, սակայն պետք է միշտ պահել պատրաստ վիճակում, քանի որ ավելի արդյունավետ է Նախագահի կողմից վերոյի իրավունքի օգտագործման ապառնալիքը, քան օգտագործումը:

Օրենքն ստորագրելուց հետո ՀՀ Նախագահը հրապարակում է այն: Օրենքների հրապարակումը դրանց կիրառման հիմնական նախապայմանն է: Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Որոշակիացնելով սահմանադրական այս նորմը՝ 2002թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը սահմանեց, որ Հայաստանի Հանրապետության օրենքները դրանք ստանալու օրվան հաջորդող օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», որը լույս է տեսնում յուրաքանչյուր չորեքշաբթի օրը: Օրենքների պաշտոնական հրապարակման օրը համարվում է դրանց ամբողջական տեքստը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» առաջին անգամ հրատարակելու օրը: Օրենքները եւ այլ նորմատիվ ակտերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվան հաջորդող օրը, եթե փյվյալ օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով այլ ժամկետ նախատեսված չէ:

3) Մեկնաբանվող կետը վերաբերում է երկու իրար հետ սերտորեն փոխկապակցված խնդրի՝ Ազգային ժողովի արձակմանը եւ արտահերթ ընտրության նշանակմանը: Ազգային ժողովի արձակման առումով այն բացառապես հղումային նորմ է՝ Ազգային ժողովի լուծարման ինստիտուտը կարգավորված է Սահմանադրության 74.1-րդ հոդվածում (տե՛ս 74.1-րդ հոդվածի մեկնաբանությունները): Քանի որ 55-րդ հոդվածի նպատակը Հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունների սպառիչ ցանկի սահմանումը չէ եւ, ինչպես արդեն նշվել է (տե՛ս մեկնաբանություններ 3-րդ գլխի վերաբերյալ, կետ 3), Հանրապետության Նախագահի բազմաթիվ լիազորություններ ամրագրված են Սահմանադրության այլ գլուխներում ու դրանցից շարքերին 55-րդ հոդվածում հղումներ չկան, ապա իրավաբանական տեսանկյունից մեկնաբանվող կետն ավելորդ կլիներ, եթե դրանում միաժամանակ չնշվեր, որ Հանրապետության Նախագահը «... արձակում է Ազգային ժողովը եւ նշանակում արտահերթ ընտրություն»: Ուստի մեկնաբանվող կետում իմաստային շեշտադրման իմաստն այն է, որ Ազգային ժողովի լուծարման պարագայում Հանրապետության Նախագահը պարտավոր է միաժամանակ նշանակել Ազգային ժողովի արտահերթ ընտրություն:

Մինչեւ 1995թ. Սահմանադրության ընդունումը Հանրապետության Նախագահը խորհրդարանի լուծարման լիազորություն չուներ, քանի որ 1991թ. օգոստոսի 1-ի՝ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը չէր որդեգրել կառավարման նախագահական ձեւը, որին բնորոշ է իշխանությունների բաժանման «կարծր» տարատեսակը՝ օրենսդիրը չի կարող դադարեցնել գործադիր լիազորությունները, իսկ, իր հերթին, գործադիրը չունի խորհրդարանը լուծարելու իրավունք: Խորհրդարանի լուծարման ինս-

փիտուրը Տայաստանում ներդրվեց 1995թ. Սահմանադրությամբ, ընդ որում, այն, ինչպես արդեն նշվել է, վճռորոշ դեր խաղաց կառավարման կիսանախագահական մոդելի ընտրության հարցում (տե՛ս 3-5-րդ գլուխներից առաջ կառավարման ձևի վերաբերյալ մեկնաբանություններ, կե՛ս 4): Տանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունը՝ գրեթե առանց սահմանափակումների արձակելու Ազգային ժողովը, արմատական վերափոխումների ենթարկվեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Սակայն առանց փոփոխության մնաց այն դրույթը, ըստ որի՝ Ազգային ժողովի արձակումը եւ արտահերթ ընտրության նշանակումը միաժամանակյա ակտ է:

Ազգային ժողովի արձակումը նշանակում է, որ ավյալ գումարման խորհրդարանն այլևս չի գործում, քանի որ Ազգային ժողովի արձակման հետ միաժամանակ դադարում են պարզամավորների լիազորությունները (հոդված 67): Արձակման ինստիտուտն այս առումով փարբերվում է խորհրդարանի լիազորությունների ժամկետի կրճատման ինստիտուտից, որի պարագայում արձակված խորհրդարանը շարունակում է գործել մինչև նոր խորհրդարանի կազմավորումը եւ առաջին նիստը (օրինակ, Լեհաստանի Սահմանադրության հոդված 98, մասեր 1, 4 եւ 6):

Քանի որ Ազգային ժողովի արձակումից հետո մինչև նորընտրվող Ազգային ժողովի առաջին նիստն ընկած ժամանակահատվածում խորհրդարանն այլևս չի կարող գործել, ապա առավել կարևոր է, որ խորհրդարանի արձակման հետ միաժամանակ հստակ պարզ լինի, թե երբ է անցկացվելու Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը: Տենց այս փրամաբանությունից է ելնում մեկնաբանվող կետը, երբ Ազգային ժողովի արձակումն ու արտահերթ ընտրության նշանակումը միավորում է մեկ նախադասության մեջ: Նման ձեւակերպումից բխում է այն պահանջը, որ Ազգային ժողովի արձակման վերաբերյալ Տանրապետության Նախագահի հրամանագիրը միաժամանակ պարունակի Ազգային ժողովի արտահերթ ընտրության օրը: Արտահերթ ընտրության օրը նշանակելիս Տանրապետության Նախագահը պարտավոր է առաջնորդվել Սահմանադրության 68-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, ըստ որի՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովն արձակելուց հետո ոչ շուտ, քան երեսուն, եւ ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:

4) Մեկնաբանվող կետը կարգավորում է Տանրապետության Նախագահի լիազորությունները կառավարության կազմավորման (վարչապետի եւ նախարարների նշանակում), կառավարության կազմում փոփոխությունների եւ կառավարության հրաժարականի հարցերում: Միաժամանակ այն կարգավորում է նաև վերոհիշյալ ինստիտուտների կարևորագույն գծերը, որոնք, սակայն, կարգավորման առարկայի տեսակետից, ավելի ճիշտ կլինեն ընդգրկել Սահմանադրության՝ կառավարությանը նվիրված 5-րդ գլխում:

1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը չէր նախատեսում Ազգային ժողովի որևէ մասնակցություն կառավարության կազմավորմանը եւ չէր ապահովում ի սկզբանե խորհրդարանի վստահությունը վայելող կառավարության առկայություն: Տանրապետության Նախագահն իր հայեցողությամբ նշանակում էր վարչապետին, իսկ վերջինին առաջարկությամբ՝ նախարարներին: Կառավարության կազմավորումից հետո Սահմանադրությունը չէր նախատեսում պարտադիր քվեարկություն կառավարության գործունեության ծրագրի վերաբերյալ (տե՛ս Սահմանադրության 74-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանությունները): Ազգային ժողովը կարող էր միայն, ինչպես ցանկացած այլ առիթով, անվստահություն հայտնել կառավարությանը (1995թ. խմբագրությամբ

Սահմանադրության հոդված 74, մաս 2): Սակայն դա չէր կարող բավարար լինել խորհրդարանի կամքին համապատասխանող կառավարություն կազմավորելու համար, քանի որ Հանրապետության Նախագահն ուներ խորհրդարանը լուծարելու հայեցողական իրավունք (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 55, կետ 3): Վարչապետին նշանակելու և ազատելու՝ Հանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունները՝ խորհրդարանի լուծարման նրա գրեթե անսահմանափակ իրավունքի առկայության պարագայում, ապահովում էին նրա սահմանադրաիրավական առումով գերակա դիրքը կառավարության նկատմամբ:

Կառավարության կազմավորումն ինքնին բավարար չէ, որպեսզի կառավարությունը միանգամից ստանձնի Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իր լիազորությունների իրականացումն ամբողջ ծավալով: Դրա անհրաժեշտ նախապայմանը կառավարության գործունեության ծրագրի մշակումն է և դրա վերաբերյալ Ազգային ժողովի հավանությունը (հոդված 74): Եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի փայլիս կառավարության ծրագրին, ապա Հանրապետության Նախագահը պարտավոր է արձակել Ազգային ժողովը (հոդված 74.1): Այսպետից հետևում է, որ կառավարության կազմավորան ընթացքում և՛ Հանրապետության Նախագահը, և՛ Ազգային ժողովը մշտապես պետք է հաշվի առնեն, որ ձեռավորվող կառավարությունը պետք է ստեղծման պահից վայելի խորհրդարանի շարունակական աջակցությունը:

Կառավարության կազմավորումը համապատասխանում է կիսանախագահական կառավարման ձևի պրամբանությանը՝ ուղղակի լեզիվիմությամբ օժտված երկու մարմինները՝ Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը, ուղղակիորեն մասնակցում են երկրի քաղաքականության մշակման և իրականացման համար իրավասու մարմնի՝ կառավարության ձեռավորմանը: Սակայն այդ մասնակցության աստիճանը և կշիռը պետք է դիտարկել փոքրերակված ձևով: Ինչպես վարչապետի, այնպես էլ նախարարների նշանակման լիազորությունն իրավաբանորեն պարկանում է բացառապես Հանրապետության Նախագահին, սակայն նա այդ նշանակումների կատարման ժամանակ կաշկանդված է ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական նախապայմաններով: Վարչապետի նշանակման ժամանակ նա իրավաբանորեն պարտավոր է հաշվի նստել Ազգային ժողովում քաղաքական ուժերի դասավորության հետ և վարչապետ նշանակել խորհրդարանի մեծամասնության վարահությունը վայելող անձին, որի գլխավորած կառավարությունը պետք է ի վիճակի լինի ստանալ և պահպանել խորհրդարանի վարահությունը: Նախարարների նշանակումը Հանրապետության Նախագահը կարող է իրականացնել միայն վարչապետի առաջարկությունների հիման վրա: Կառավարության կազմավորման գործում Հանրապետության Նախագահի դերը բխում է Սահմանադրությամբ ամրագրված նրա ընդհանուր դիրքից և, մասնավորապես, Սահմանադրության 49-րդ հոդվածի 2-րդ մասից, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը և ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների բնականոն գործունեությունը: Քանի որ Սահմանադրության մեկնաբանվող կետի, ինչպես նաև 74 և 84-րդ հոդվածների համաձայն կառավարությունն իր կազմավորման պահից և ամբողջ գործունեության ընթացքում պետք է հենվի Ազգային ժողովի վարահության վրա, ապա Հանրապետության Նախագահը վարչապետի և նախարարների նշանակման իր լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպեսզի հնարավորինս նպաստի խորհրդարանի վարահությունը վայելող կառավարության կազմավորմանը:

2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունն, ապահովելով կառավարության կազմավորման հարցում Նանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի միջեւ որոշակի համագործակցություն եւ հավասարակշռություն՝ միեւնույն ժամանակ կառավարության հեղափոխ ամբողջ կենսագործունեությունը կապում է Ազգային ժողովի մշտական վարահության հետ: Մեկնաբանվող կետում, ինչպես նաեւ հատկապես 74 եւ 84-րդ հոդվածներում ամենացայտուն կերպով արտահայտված են կիսանախագահական համակարգի խորհրդարանական փարքերի գերակայությունը կառավարության կազմավորման եւ գործունեության ընթացքում:

Վերն ասվածը, սակայն, չի նշանակում, որ Սահմանադրությունը միանշանակորեն ամրագրում է խորհրդարանի գերակա դերը կառավարության կազմավորման հարցում: Ինչպես արդեն նշվել է, քաղաքական պրակտիկայում շարք բան կախված է նրանից, թե ինչպիսին է հարաբերությունը Նանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի մեծամասնության միջեւ: Եթե Նանրապետության Նախագահը խորհրդարանական մեծամասնության ճանաչված առաջնորդն է, ապա, ինչպես ցույց է տալիս Ֆրանսիայի պրակտիկան, հենց նա է վճռորոշ դեր կատարում վարչապետի եւ նախարարների ընտրության հարցում:

Վարչապետի նշանակումը Նանրապետության Նախագահի բացառիկ իրավասությունն է: Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը քաղաքական պարասխանավորություն է կրում բացառապես Ազգային ժողովի առջեւ, Սահմանադրությունը չի նախատեսում վարչապետի նշանակում խորհրդարանի կողմից: Վարչապետի նշանակման գործընթացը կարող է սկսվել միայն Նանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո, ընդ որում, վարչապետի նշանակման համար Սահմանադրությունը Նանրապետության Նախագահին հատկացնում է համեմատաբար կարճ ժամանակ փասն օր:

Ինչպես արդեն վերը նշվեց 2005թ սահմանադրական փոփոխություններից հետո Նանրապետության Նախագահն այլեւս չունի ինքնուրույն հայեցողություն վարչապետի ընտրության հարցում, քանի որ մեկնաբանվող կետի առաջին մասի առաջին նախադասությունը որպես վարչապետի նշանակման չափանիշ է սահմանում պարզամավորների մեծամասնության վարահությունը վարչապետի պաշտոնում առաջադրվելիք անձի նկատմամբ: Խոսքն այստեղ, ակներեւաբար, վերաբերում է սկզբում պարզամավորների բացարձակ մեծամասնությանը («պարզամավորների մեծամասնության վարահությունը վայելող անձ»), իսկ եթե նման մեծամասնություն գոյություն չունի՝ հարաբերական մեծամասնությանը («առավել թվով պարզամավորների վարահությունը վայելող անձ»): Վարահությունը րվյալ պարագայում նշանակում է, որ պարզամավորների այս կամ այն մեծամասնությունը քաղաքական աջակցություն է ցուցաբերում րվյալ անձին եւ ցանկանում է նրան տեսնել վարչապետի պաշտոնում:

Որպես վարահությունը որոշելու անհրաժեշտ, բայց ոչ բավարար կողմնորոշիչ Սահմանադրությունը սահմանում է Ազգային ժողովում պարզամավորական տեղերի բաշխումը, իսկ պարզամավորների վարահությունը վայելող անձին որոշելու իրավական մեխանիզմը նախատեսում է, որ Նանրապետության Նախագահը պարտավոր է այդ նպատակով խորհրդակցություններ անցկացնել պարզամավորական խմբակցությունների հետ:

Սահմանելով վարչապետի նշանակման չափանիշը (պարզամավորների կողմից վարահությունը վարչապետի թեկնածուի նկատմամբ) եւ Ազգային ժողովում պարզամավորական տեղերի բաշխումը հաշվի առնելը՝ Սահմանադրությունը, բացառությամբ

Ազգային ժողովի խմբակցությունների հետ խորհրդակցություններ անցկացնելու պահանջից, չի սահմանում որեւէ այլ ընթացակարգ, որի արդյունքում Հանրապետության Նախագահը պետք է որոշի, թե ով է վայելում պարզամավորների մեծամասնության վարահությունը: Քանի որ Սահմանադրությունը չի սահմանում վարչապետի նշանակման մանրամասն մեխանիզմներ, ապա այս հարցի կոնկրետ կարգավորումը կախված կլինի առաջին հերթին քաղաքական պրակտիկայից: Կառավարության կազմավորումն ինքնին առաջին հերթին քաղաքական գործընթաց է եւ, որպէս կանոն, սահմանադրություններն այդ հարցին փալիս են միայն ընդհանուր կարգավորումներ: Մյուս կողմից, սակայն, Սահմանադրությունը չի արգելում, որ կառավարության կազմավորման մանրամասն ընթացակարգերը Սահմանադրությամբ սահմանված շրջանակներում սահմանվեն օրենքով: Նման օրենք կարող է լինել ինչպէս Ազգային ժողովի կանոնակարգը, այնպէս էլ «Կառավարության կազմավորման եւ հրաժարականի մասին» օրենքը:

Ալկնհայր է, որ եթե խորհրդակցությունների արդյունքում այս կամ այն խմբակցությունը կամ խմբակցությունների միավորումը Հանրապետության Նախագահին ներկայացնում է բավարար փաստեր, որ իրենց թեկնածուն ունի պարզամավորների բացարձակ կամ հարաբերական մեծամասնության աջակցությունը, ապա Հանրապետության Նախագահն սկզբունքորէն կաշկանդված է նման առաջարկով: Խնդիրը, սակայն, հենց նրանում է, թե ինչպէս որոշել նման մեծամասնության առկայությունը: Ելնել միայն փյուլ խմբակցության կամ համաձայնությունների եկած խմբակցությունների մեխանիկական մեծությունից՝ բավարար չէ, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ խմբակցության ոչ բոլոր անդամներն են պարասար աջակցել վարչապետի փյուլ թեկնածուին: Նման դեպքեր, որպէս կանոն, կարող են ավելի հաճախ լինել հարկապէս այն պարագայում, երբ կառավարությունը կազմավորվում է Ազգային ժողովի ընտրություններից ոչ թե անմիջապէս հետո, այլ լեզիսարտրայի ընթացքում, երբ խմբակցության քաղաքական միասնությունը եւ կարգապահությունը, որպէս կանոն, ավելի թույլ է: Անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ, որ Ազգային ժողովի ընտրությունների համար Սահմանադրությունը չի սահմանում որեւէ կոնկրետ ընտրակարգ եւ խորհրդարանում կարող են գործել նաեւ մեծամասնական ընտրակարգով ընտրված կամ իրենց խմբակցություններից դուրս եկած պարզամավորներ, որոնք չեն հարում որեւէ խմբակցության:

Սահմանադրության 62-րդ հոդվածի 3-րդ մասի լույսի ներքո, ըստ որի՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, Ազգային ժողովին վերապահված չէ Հանրապետության Նախագահին վարչապետի թեկնածու առաջարկելու իրավունք: Ուստի նման բովանդակությամբ որոշում Ազգային ժողովն իրավասու չէ ընդունելու, իսկ եթե այն, այնուամենայնիվ, ընդունվի, ապա դա որեւէ իրավական հետեւանք առաջացնել չի կարող եւ Հանրապետության Նախագահի համար պարտադիր չի կարող լինել:

Մյուս կողմից, սկզբունքորէն որեւէ խոչընդոտ չկա, որպէսզի խորհրդարանը ուղերձի կամ հայտարարության միջոցով իր դիրքորոշումն արտահայտի վարչապետի թեկնածուության վերաբերյալ: Քանի որ ուղերձը կամ հայտարարությունն ընդունվում է քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, ապա գործնականորէն բացառված չէ, որ ուղերձը կամ հայտարարությունը չարտահայտի պարզամավորների նաեւ հարաբերական մեծամասնության կարծիքը: Եթե Ազգային ժողովի ուղերձը կամ հայտարարությունը չի արտահայտում պարզամավորների առնվազն հարաբերական մեծամասնության կարծիքը, ապա Հանրապետության Նախագահը չի կարող կաշկանդված լինել դրանով: Վիճահարույց դեպքերում, երբ խորհրդա-

րանում քաղաքական ուժերի դասավորությունը միանշանակ չէ, թերեւս առավել վստահելի եղանակն այն կլինի, որ պարզամտավորների մեծամասնությունն իր ստորագրությամբ հավասարի իր աջակցությունն այս կամ այն թեկնածուին:

Ինչպե՞ս պետք է հասկանալ վերոհիշյալի լույսի ներքո Հանրապետության Նախագահի կողմից վարչապետի նշանակման լիազորության խմաստը: Արդյո՞ք այն միայն ձեւակն է եւ պարտավոր է ընդամենն արտացոլել խորհրդարանի մեծամասնության կամքը: Այստեղ, ինչպես եւ Հանրապետության Նախագահի մյուս լիազորությունների մեկնաբանման ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել այն ակտիվ դերը, որը Հանրապետության Նախագահին վերագրում է Սահմանադրության 49-րդ հոդվածը: Եթե Ազգային ժողովում կա հստակ մեծամասնություն վարչապետի թեկնածուի շուրջ, ապա նրա հայեցողությունը խիստ սահմանափակ է: Նման պարագայում Հանրապետության Նախագահն սկզբունքորեն պարտավոր է վարչապետ նշանակել այդ թեկնածուին, եթե չկան իրավական հիմքեր առաջարկված թեկնածությունը մերժելու համար, քանի որ այդ նշանակումը հակասության մեջ կմտնի Սահմանադրության 49-րդ հոդվածով նրա վրա դրված՝ Սահմանադրության պահպանման պարտականության հետ: Նման ակնառու օրինակ կարող է լինել, ասենք, այն դեպքը, երբ առաջարկված վարչապետի թեկնածուն չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ էլ, խախտելով երկրի օրենսդրությունը, ձեռք է բերել նաեւ այլ երկրի քաղաքացիություն: Վարչապետի թեկնածությունը քաղաքական հիմքերով մերժելու իրավունք Հանրապետության Նախագահը չունի, բացառությամբ այն հազվադեպ եւ անհավանական դեպքերի, եթե վարչապետի թեկնածուն իր գործունեությամբ ակնհայտորեն նպաստում է Սահմանադրության հիմնարար արժեքների եւ, մասնավորապես, երկրի անկախության, փրարածքային ամբողջականության եւ անվտանգության խաթիվմանը:

Եթե Ազգային ժողովը փրոհված է եւ չկա հստակ մեծամասնություն, ապա Հանրապետության Նախագահը կարող է օգտագործել իր քաղաքական ազդեցությունը վարչապետի ընտրության հարցում: Նա, ելնելով պետական իշխանության մարմինների բնականոն գործունեության ապահովման իր առաքելությունից, կարող է փորձել նպաստել այն բանին, որպեսզի որոշակի քաղաքական համաձայնություններ ձեռք բերվեն վարչապետի այս կամ այն թեկնածուի շուրջ: Սակայն, եթե Սահմանադրությամբ սահմանված փաստօրյա ժամկետում որեւէ քաղաքական ուժի հաջողվում է ստանալ պարզամտավորների հարաբերական մեծամասնության աջակցությունը որեւէ թեկնածուի օգտին, ապա Հանրապետության Նախագահը պարտավոր է վարչապետ նշանակել այդ անձին: Միակ բացառությունը, այստեղ եւս, վերն արդեն հիշատակված իրավական հիմքերն են: Եթե պարզամտավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների արդյունքում պարզվում է, որ կան երկու կամ ավելի թեկնածուներ, որոնք ունեն հավասար թվով պարզամտավորների աջակցություն, ապա Հանրապետության Նախագահն իրավասու է ինքնուրույն ընտրություն կատարելու այդ թեկնածուների միջև:

Երբ Ազգային ժողովում հստակորեն կա պարզամտավորների մեծամասնության աջակցությունը վայելող թեկնածու, ապա Հանրապետության Նախագահի կողմից այլ թեկնածուի վարչապետ նշանակելը (բացառությամբ արդեն հիշատակված իրավական հիմքերի) կհանդիսանա Սահմանադրության խախտում, իսկ քաղաքական տեսակետից Հանրապետության Նախագահը միայն հարցականի փակ կղնի իր հեղինակությունը: Սահմանադրությունը, այն բանից հետո, երբ Հանրապետության Նախագահն այլեւս չունի վարչապետին ազատելու եւ Ազգային ժողովը լուծարելու հայեցողական լիազորություն, միեւնույն է, նրան հնարավորություն չի տալիս Ազգային ժողովին պարտադրելու

իր կամքը: Ազգային ժողովը կարող է պարզապես հավանություն չտալ նման ձեռով կազմավորված կառավարության ծրագրին, ինչը կնշանակի նման կառավարության առաքելության ավարտը: Ամեն գնով Ազգային ժողովի հետ առճակատման գնացող Տանրապետության Նախագահին չի կարող օգնել նաև Ազգային ժողովի լուծարման սպառնալիքը: Սահմանադրության 74.1-րդ հոդվածում սահմանված դրույթը, ըստ որի՝ երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում Տանրապետության Նախագահը լուծարում է Ազգային ժողովը, չի կարող ապահովել Տանրապետության Նախագահին հաճո է Ազգային ժողովի մեծամասնության կամքին չհամապատասխանող կառավարության գոյությունը, քանի որ Ազգային ժողովը կարող է հեշտությամբ խուսափել լուծարումից: Եթե Ազգային ժողովը նաև երկրորդ անգամ համաձայն չէ կառավարության կազմին կամ նրա ծրագրին, ապա Ազգային ժողովը կարող է լուծարումից խուսափելու համար հավանություն տալ կառավարության ծրագրին, սակայն փոքր-ինչ անց նրան անվտանգություն հայտնել: Քանի որ կառավարության անվտանգություն հայտնելու՝ Ազգային ժողովի իրավունքը բացարձակ է (բացառությամբ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ) և դրա համար խորհրդարանը չի կարող լուծարվել, ապա այդ դեպքում անհրաժեշտ կլինի նորից սկսել կառավարության կազմավորման գործընթացը:

Ի փարբերություն 1995թ. խմբագրության, գործող Սահմանադրությունը նախատեսում է, որ վարչապետը և նախարարները պետք է լինեն Նայաստանի Տանրապետության քաղաքացիներ (հոդված 85, մաս 4): Վարչապետին և նախարարներին ներկայացվող այլ պահանջներ Սահմանադրությունն ուղղակիորեն չի սահմանում:

Վարչապետի նշանակումից հետո սկսվում է կառավարության կազմավորման երկրորդ փուլը, երբ Տանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում է նախարարներին: Սա բխում է մեկնաբանվող կետի առաջին մասի երրորդ նախադասության և մեկնաբանվող կետի երկրորդ մասի համադրումից:

Առաջարկության իրավունքը պարկանում է բացառապես վարչապետին, և նրա փոխարեն այդ բանը չի կարող կատարել որևէ այլ անձ, ներառյալ՝ փոխվարչապետը: Տանրապետության Նախագահն սկզբունքորեն կաշկանդված է վարչապետի առաջարկներով բացառությամբ այն բացառիկ իրավական և քաղաքական հիմքերի, որոնց մասին վերևում նշվեց:

Կառավարության կազմավորման պահի հետ Սահմանադրությունը կապում է մի շարք կարևոր իրավական հետեւանքներ, չնայած ուղղակիորեն չի հստակեցնում, թե որ պահից է կառավարությունը համարվում կազմավորված: Կառավարության կազմավորման պահը կարևոր է պարզել, քանի որ, նախ՝ հրաժարական տված կառավարության լիազորություններն ավարտվում են նոր կառավարության կազմավորման պահից, երկրորդ՝ կառավարության կազմավորման պահը կարևոր է, քանի որ այդ պահից է հաշվվում կառավարության ծրագիրն Ազգային ժողովին ներկայացնելու համար սահմանված քսանօրյա ժամկետը: 2005թ. սահմանադրական փոփոխությունների ժամանակ փորձեր արվեցին ուղղակի պատասխան տալ կառավարության կազմավորման պահի հարցին, սակայն համապատասխան առաջարկներն այդպես էլ տեղ չգտան Սահմանադրության փոփոխում: Կատարված առաջարկությունները համապատասխանում էին «Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» 1998թ. հոկտեմբերի 14-ի օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, ըստ որի՝ «Կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել են կառավարության բոլոր անդամները»: Քանի որ այս օրենքը Սահմանադրության 2005թ. փոփոխություններից հետո շարունակում է գործել, ապա օրենքի

մակարդակով կառավարության կազմավորման չափանիշն առկա է: Սահմանադրության փեսանկյունից նման խիստ չափանիշն արդարացված է, քանի որ միայն ամբողջ կազմով ձեւավորված կառավարությունն է ի վիճակի կազմել նրա գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող կառավարության ծրագիր, որը պետք է ներկայացվի Ազգային ժողովի հավանությանը: Կարելի է նաև հաշվի առնել, որ նախարարներին նշանակելու համար Սահմանադրությամբ սահմանված քանօրյա ժամկետը լիովին բավարար է կառավարության ամբողջական կազմի վերաբերյալ քաղաքական համաձայնությունների գալու համար:

Մեկնաբանվող կետի երկրորդ մասը վերաբերում է ինչպես կառավարության կազմավորման երկրորդ փուլին, այսինքն՝ նախարարների նշանակմանը, այնպես էլ կառավարության կազմում փոփոխություններին, այսինքն՝ որեւէ նախարարի պաշտոնից ազատելուն եւ նրա փոխարեն նոր նախարար նշանակելուն: Սահմանադրությունը չի պահանջում, որ ազատված նախարարի պաշտոնն անմիջապես զբաղեցվի նոր նախարարի նշանակմամբ, ինչը պրակտիկայում հաճախ է պատահում:

Կառավարության կազմը կարող է փոփոխվել միայն վարչապետի առաջարկությամբ: Քանի որ կառավարության ձեւավորման խնդրում առաջնային է վարչապետի եւ նրան սատարող խորհրդարանական մեծամասնության կամքը, սկզբունքորեն պետք է ելնել այն բանից, որ Նանրապետության Նախագահը պարտավոր է հետբեւել այդ առաջարկությանը: Այսպեղ պետք է գործեն այն նույն նկատառումները, որոնք ներկայացվել են վերը՝ վարչապետի եւ նախարարների նշանակման վերաբերյալ:

Մինչեւ 2005թ. սահմանադրական փոփոխությունները կառավարության հրաժարականի հիմքերը Սահմանադրության մակարդակով համապարփակ կերպով կարգավորված չէին: Դա, թերեւս, կապված էր այն հանգամանքի հետ, որ կառավարության ինքնուրույնությունը շար ցածր էր եւ այն մշտական կախվածության մեջ էր գտնվում Նանրապետության Նախագահից, որը կարող էր ցանկացած ժամանակ ազատել վարչապետին: 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունն ամրագրել էր կառավարության հրաժարականի միայն մեկ դեպք՝ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվարահոյություն հայտնելը (հոդված 74, մաս 5 եւ հոդված 55, կեր 4-ի մաս 2): Նանրապետության Նախագահի կողմից վարչապետի ազատումը Սահմանադրության սկզբնական խմբագրությունն ուղղակիորեն չէր դիտարկում որպես կառավարության հրաժարականի հիմք: Այդ հիմքը սովորական օրենքի մակարդակով ամրագրվեց «Կառավարության կազմավորման եւ հրաժարականի մասին» 1998թ. հոկտեմբերի 14-ի օրենքի 2-րդ հոդվածում, որը սահմանեց նաև կառավարության հրաժարականի մեկ այլ հիմք՝ Նանրապետության Նախագահի կողմից վարչապետի հրաժարականի ընդունումը: Օրենքի նման ձեւակերպումից ուղղակի բխում էր, որ Նանրապետության Նախագահն իրավասու էր նաև ջնդունելու վարչապետի հրաժարականը:

Հրաժարականն առօրյա իմաստով նշանակում է «բանավոր կամ գրավոր հայտարարություն՝ պաշտոնից հրաժարվելու մասին»: Կառավարության հրաժարականը Սահմանադրության իմաստով նշանակում է վարչապետի կողմից Նանրապետության Նախագահին ներկայացված դիմում՝ վարչապետին եւ նախարարներին իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու վերաբերյալ: Հրաժարականը եւ պաշտոնից ազատումը հոմանիշներ չեն, այլ առաջինը երկրորդի նախապայմանն է: Հրաժարականի ընդունումը հավասարագոր է վարչապետի կողմից ներկայացված կառավարության հրաժարականի վերաբերյալ դիմումին Նանրապետության Նախագահի կողմից համաձայնություն փալուն, որն էլ, իր հերթին, նշանակում է, որ փվյալ կառավարությունն ավարտել է իր ա-

ռաբելությունը: Տանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո վարչապետը եւ կառավարության մյուս անդամները միայն ժամանակավորապես են շարունակում իրենց պարտականությունների կատարումը մինչեւ նոր կառավարության կազմավորումը:

Հրաժարականի ինստիտուտը պետք է դիտարկել Սահմանադրությամբ նախատեսված կիսանախագահական կառավարման ձևի լույսի ներքո, որի ամենաբնորոշ գծերն են կառավարության պարասխանավությունը Ազգային ժողովի առջև եւ Տանրապետության Նախագահի ակտիվ քաղաքական դերը:

Հրաժարականի ինստիտուտն առաջին հերթին արտացոլում է այն հանգամանքը, որ կառավարությունը կարող է ձեւավորվել եւ իրականացնել իր լիազորությունները միայն այն պարագայում, երբ եւ քանի դեռ վայելում է խորհրդարանի վստահությունը. վստահության հարաբերությունների խզումը նշանակում է փոխյալ կառավարության պաշտոնավարման ավարտ: Ընդ որում, այդ վստահությունը, ի փոքրերություն Սահմանադրության սկզբնական խմբագրության, պետք է լինի պարզորոշ կերպով արտահայտված, այլ ոչ թե գոյություն ունենա միայն կանխավարկածի տեսքով (տե՛ս հոդված 74-ի մեկնաբանությունները): Դա է պարզապես, որ մեկնաբանվող կետում նշված՝ կառավարության հրաժարականի վեց հիմքերից երեքն ուղղակիորեն կապված են Ազգային ժողովի հետ: Կառավարությունը պարտավոր է հրաժարական փալ նորընտրիչ Ազգային ժողովի առջև, քանի որ նոր խորհրդարանի եւ կառավարության միջև դեռ չեն ձեւավորվել վստահության պարզորոշ կերպով արտահայտված հարաբերություններ: Երբ ձեւավորվում է նոր կառավարություն, որի ղեկավարն արդեն նշանակման պահին պետք է վայելի պարզամտվորների վստահությունը (հոդված 55, կետ 4, մաս 1), ապա այն պարտավոր է ստանալ իր ծրագրին Ազգային ժողովի հավանությունը, որպեսզի իրավունք ունենա գործելու: Եթե կառավարությունն ստանում է այդ հավանությունը, ապա նա իր գործունեության ամբողջ ժամկետում պարտավոր է պահպանել վստահության հարաբերություններն Ազգային ժողովի հետ: Ազգային ժողովի կողմից անվստահության քվեով ավարտվում է այդ կառավարության առաքելությունը: Եթե կառավարությանը հաջողվում է պահպանել վստահության հարաբերությունները փոխյալ Ազգային ժողովի հետ, ամեն դեպքում այդ կառավարության առաքելությունն ավարտվում է այդ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտմամբ:

Կառավարությունը պարտավոր է իր հրաժարականը ներկայացնել նաեւ Տանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու հիմքով: Այստեղ ակնհայտ է նմանությունը կառավարության հրաժարականի առաջին հիմքի՝ նորընտրիչ Ազգային ժողովի առաջին նիստի հետ: Սակայն, ի փոքրերություն Ազգային ժողովի, որի հետ կառավարությունը մշտապես պետք է կապված լինի վստահության հարաբերություններով եւ որը կարող է միակողմանիորեն խզվել Ազգային ժողովի կողմից, իրավական նման պահանջ կառավարություն-Տանրապետության Նախագահ հարաբերությունների նկատմամբ Սահմանադրությունն այլևս չի պարունակում: Քանի որ վարչապետին ազատելու իրավունք Տանրապետության Նախագահն այլևս չունի, իսկ վարչապետը նշանակելիս նա կաշկանդված է Ազգային ժողովի մեծամասնության կամքով, ապա հարց է առաջանում, թե ինչով է պայմանավորված կառավարության հրաժարականի այս հիմքը: Ակնհայտ է, որ հրաժարականի այս հիմքն ինքնին չի սահմանում կառավարության քաղաքական պարասխանավություն Տանրապետության Նախագահի առջև, քանի որ վերջինս, ինչպես արդեն վերը նշվել է, վարչապետին ազատելու իրավունք չունի:

Կառավարության հրաժարականի վերջին երկու հիմքերն ուղղակիորեն կապված

են վարչապետի հետ:

Մեկնաբանվող կետն սպառիչ կերպով սահմանում է բոլոր այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում կառավարությունը պարտավոր է հրաժարական փայլ: Կառավարության հրաժարականի այլ, լրացուցիչ հիմքեր չեն կարող սահմանվել: Նման հիմք չի կարող լինել, մասնավորապես, կառավարության կազմում փոփոխությունները, եթե նույնիսկ դրանք վերաբերում են կառավարության անդամների մեծամասնությանը: Նման կառավարությունը, փոփոխված կազմով, շարունակում է պաշտոնավարել այնքան ժամանակ, քանի դեռ չի առաջացել կառավարության հրաժարականի հիմքերից ուրեմն մեկը:

Կառավարության հրաժարականի առաջին հիմքը, ինչպես եւ 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունում, նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստն է: Նման պահանջը պայմանավորված է նրանով, որ խորհրդարանի նոր ընտրության արդյունքում ձեւավորված քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունն իր արտացոլումը պետք է գտնի նոր կառավարությունում:

Եթե տեղի են ունեցել հերթական ընտրություններ, ապա նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի օրը պարզամակրների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրն է, երբ գումարվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը (հոդված 68, մաս 4): Եթե տեղի է ունեցել արտահերթ ընտրություն, ապա նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի օրը պարզամակրների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երկրորդ հինգշաբթի օրն է, երբ գումարվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը (հոդված 68, մաս 5):

Այս հիմքը, որն ավելացվել է 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, հնարավորություն է տալիս նորընտիր Նանրապետության Նախագահին որոշակի ազդեցություն ձեռք բերել կառավարության կազմավորման հարցում, հատկապես այն պարագայում, երբ նախագահական ընտրությունների արդյունքում տեղի են ունեցել քաղաքական ուժերի զգալի վերադասավորումներ: Մյուս կողմից, եթե Ազգային ժողովի մեծամասնությունը հակված չէ գնալու Նանրապետության Նախագահի հետ քաղաքական փոխզիջումների, կարող է վրանգավոր քաղաքական առճակատում առաջանալ, որի հանգուցալուծումը կախված է բացառապես քաղաքական ուժերի շրջահայացությունից (տե՛ս 74.1-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Կառավարության հրաժարականի այս երկու հիմքերը խորհրդարանի առջեւ կառավարության պարասխանարվության սկզբունքի արտացոլումն են: Ի տարբերություն կառավարությանն անվտանգություն հայտնելու հիմքի, կառավարության ծրագրին հավանություն չտալու հիմքն ամրագրվել է 2005թ. սահմանադրական փոփոխությունների ժամանակ՝ որպես կառավարության ծրագրի հաստատման նոր փիլիսոփայության եւ ընթացակարգի արդյունք (տե՛ս 74-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Վարչապետի հրաժարականը՝ որպես կառավարության հրաժարականի հիմք, ընդգծում է նրա ղեկավար դերը կառավարության մեջ: Առանց վարչապետի գործող կառավարությունն այլեւս իրավաբանորեն գոյություն չունի, ի տարբերություն այն դեպքի, երբ հրաժարական են տվել կառավարության բոլոր անդամները՝ բացառությամբ վարչապետի:

Վարչապետի պաշտոնի թափուր մնալու դեպքերը Սահմանադրությունը չի սահմանում: Այնպես է, որ այդ պաշտոնը թափուր է վարչապետի մահվան դեպքում: Ավելի բարդ է այն պարագան, երբ վարչապետը փաստացի ի վիճակի չէ կատարել իր

լիազորությունները որոշակի հանգամանքների, ասենք, երկարատև հիվանդության պատճառով: Նման դեպքում չի կարելի անմիջապես պնդել, որ վարչապետի պաշտոնը թափուր է:

Գործող Սահմանադրությունն այլևս չի սահմանում վարչապետի պարտականություն՝ ներկայացնելու կառավարության հրաժարականի մասին դիմում, ինչպես դա, օրինակ, նախատեսված էր Սահմանադրության 1995թ. խմբագրության 74-րդ հոդվածի 5-րդ մասում, ըստ որի՝ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում վարչապետը Նանրապետության Նախագահին պետք է դիմում ներկայացնե՛ր կառավարության հրաժարականի մասին: Անկախ այս հանգամանքից, Սահմանադրության քերականական մեկնաբանությունը («ընդունում է հրաժարականը») խոսում է այն մասին, որ կառավարության հրաժարականի վերաբերյալ անհրաժեշտ է դիմում, որպեսզի հնարավոր լինի հեղափոխում այն ընդունել: Սահմանադրության նման ըմբռնումից է ելնում նաև Ազգային ժողովի կանոնակարգը, որը կառավարության ծրագրին հավանություն չբաշխելու կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքերում ուղղակիորեն սահմանում է, որ «վարչապետը Նանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին» (հոդված 106, մաս 6, հոդված 107, մաս 6): Այնուհասիվ է, որ նույնը պետք է կիրառվի նաև կառավարության հրաժարականի մյուս հիմքերի պարագայում: Դիմում ներկայացնելու պարտականությունն ընկած է վարչապետի վրա: Հրաժարականի դիմումի վերաբերյալ չկա հստակ սահմանված որևէ ձև: Այն կարելի է ներկայացնել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով:

Մեկնաբանվող կետի 3-րդ մասի առաջին նախադասության ձևակերպումն այնպիսին է («ընդունում է հրաժարականը ... օրը»), որ Նանրապետության Նախագահին անվերապահորեն պարտադրում է ընդունել կառավարության հրաժարականի ընդունումը եւ նրան որևէ հայեցողություն այդ հարցում չի թողնում: Դա վերաբերում է նաև վարչապետի կողմից ինքնակամ հրաժարականին: Ուստի վարչապետի կողմից իր հրաժարականի դիմումը բարդ կլինի օգտագործել որպես հնարավոր քաղաքական ճնշման միջոց Նանրապետության Նախագահի նկատմամբ:

Հրաժարականը պետք է ընդունվի դրա ներկայացման օրը: Նման խիստ կարգավորման իմաստն այն է, որպեսզի հնարավորինս շուրջ հնարավոր լինի սկսել նոր կառավարության կազմավորման գործընթացը: Բացի դրանից, Նանրապետության Նախագահի կողմից հրաժարականի ընդունումն իր էությանը ձեւական ակտ է, որի համար երկար ժամանակ անհրաժեշտ է, քանի որ այդ որոշումը որևէ այլընտրանք չունի:

Պետական մեխանիզմի անխափան գործունեության համար կառավարության գոյությունն անհրաժեշտ նախապայման է: Իր պարտականությունները ժամանակավորապես կարարող կառավարության գործունեության կարգավորմամբ լրացվում է այն բացը, որը գոյություն ունի կառավարության հրաժարականի եւ նոր կառավարության կազմավորման միջև ընկած ժամանակահատվածում: Նման կառավարության լեգիտիմությունը ոչ թե խորհրդարանի վստահությունն է, այլ միայն Սահմանադրությունում ամրագրված պարտականությունը: Նանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումը Սահմանադրության ուժով հանգեցնում է այդ կառավարության անդամների պարտականությանը՝ շարունակելու կատարել իրենց պարտականությունները՝ մինչև նոր կառավարության կազմավորումը: Ուստի սկզբունքորեն անհրաժեշտություն չկա, որ այդ պարտականությունը հատուկ կերպով ամրագրվի կառավարության հրաժարականի ընդունման մասին Նանրապետության Նախագահի հրամանագրում:

Սահմանադրական այդ պարտականությունը վերաբերում է հրաժարական փված կառավարության բոլոր անդամներին:

Տրաժարական փված կառավարության իրավական կարգավիճակը մի քանի առումներով փարբերվում է սովորական պայմաններում գործող կառավարության իրավական կարգավիճակից: Նայաստանի Սահմանադրությունը, ի փարբերություն որոշ երկրների (Դանիա, Ռումինիա), որեւէ ուղղակի սահմանափակում չի նախատեսում հրաժարական փված կառավարության կողմից իրականացվող պարտականությունների ծավալի նկատմամբ:

Չնայած նման կառավարության անհրաժեշտությանը, այն, այնուամենայնիվ, բացառիկ երեւոյթ է, քանի որ Սահմանադրությունում նախատեսված կառավարման ձեւը ենթադրում է խորհրդարանի վստահությունը վայելող կառավարության առկայություն: Ոստի ժամանակավորապէս իր պարտականությունները կատարող կառավարությունը չի կարող դնել վստահության հարց: Նրան չի կարելի նաեւ անվստահություն հայտնել, քանի որ խորհրդարանի եւ կառավարության միջեւ չկան վստահության հարաբերություններ: Ակնհայտ է, որ հենց այդ պատճառով էլ հրաժարական փված կառավարությունը պէտք է իր պարտականությունները կատարելիս որոշակի քաղաքական զսպվածություն ցուցաբերի:

Ժամանակավոր կառավարության գործունեության առավելագույն ժամկէտը 30 օր է, որի ընթացքում Նանրապեղության Նախագահը պարտավոր է նշանակել նոր վարչապետին եւ նախարարներին: Մեկնաբանվող կէտի 3-րդ մասի վերջին նախադասության համաձայն նոր կառավարության կազմավորումից հետո ավարտվում են հրաժարական փված կառավարության բոլոր լիազորությունները:

5) Մեկնաբանվող դրոյթը, չնայած իր հակիրճ ձեւակերպմանը, ՆՆ Նախագահի կողմից իրեն վերապահված գործառնությունների արդյունավետ իրագործման կարեւորագույն երաշխիքներից է: Սահմանադրական այս նորմը երաշխավորում է ՆՆ Նախագահի՝ առանձին պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորության գոյությունը ՆՆ-ում: Այն լիազորող բնոյթի հանձնարարական նորմ է, որն առավելապէս հանդիսանում է ՆՆ Նախագահի լիազորությունները պետական իշխանության մյուս մարմինների լիազորություններով հավասարակշռելու իրավակարգավորիչ մեխանիզմի փարբերից մեկը՝ այդպիսով համալրելով նրանց միջեւ համագործակցության եւ փոխադարձ հակակշիռների համակարգը: Այդ առումով պաշտոններում նշանակելու Նախագահի լիազորությունը կամայական կամ անորոշ բնոյթ չի կրում: Այն հստակեցվում է ՆՆ համապատասխան օրենքներով, ինչպէս նաեւ ներպետական այլ իրավական ակտերով: Միեւնոյն ժամանակ, օրենսդիրը չի կարող օրենքով նախատեսված կոնկրետ պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորությունը կամայականորեն վերապահել Նախագահին կամ այլ մարմնի: Յուրաքանչյուր կոնկրետ դէպքում, երբ Նախագահի սահմանադրական այդ լիազորությունը գործնականում իրացնելու նախադրյալներ առաջանան, ապա օրենսդիրը պետական պաշտոն սահմանելիս, ինչպէս նաեւ այդ պաշտոնում նշանակում կատարելու լիազորության հարցը լուծելիս պարտավոր է առաջնորդվել ՆՆ սահմանադրական հիմունքների առաջնայնություններով, մասնավորապէս, հետամուտ լինել, որպէսզի, մի կողմից, երաշխավորված լինի իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կիրառումը, մյուս կողմից՝ նման լուծումը համահունչ լինի ՆՆ Նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններին եւ նրա լիազորությունների ամբողջոյթանը, ինչպէս

նաեւ նման լուծումը չսահմանափակի՝ իր սահմանադրական լիազորություններն ու պարտականություններն արդյունավետ իրացնելու՝ ՀՀ Նախագահի հնարավորությունները: Այսպեղից հետեւում է, որ օրենսդիրը, նախ՝ օրենքով կարող է նախապեսել որոշակի պաշտոններ, որոնցում նշանակումներ կատարելու է ՀՀ Նախագահը, երկրորդ՝ կաշկանդված է սահմանադրական կարգի հիմունքների իրավադրոյթներով, հատկապես իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի պահանջներով, ինչպես նաեւ Նախագահի սահմանադրական գործառոյթներով եւ պետական մարմինների համակարգում նրա զբաղեցրած տեղով:

Պետական պաշտոններում Նախագահի կողմից նշանակումներ կատարելու դեպքերն օրենքով նախատեսելու վերաբերյալ վերապահումից ուղղակիորեն բխում է, որ տվյալ նորմի գործողոյթյան փակ չեն ընկնում այն դեպքերը, երբ Նախագահը պետական պաշտոններում նշանակումներ է կատարում դրա համար ուղղակիորեն ՀՀ Սահմանադրոյթյամբ լիազորված լինելու պարագայում, օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանի անդամի, արդարադատոյթյան խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամների, զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագոյն հրամանատարական կազմի նշանակումը եւ այլն: Մեկնաբանվող դրոյթը գործնականում կիրառվել է, մասնավորապես, «Շեռուստապետոյթյան եւ ռադիոյի մասին» (09.10.2000 ՆՕ-97), «Քաղաքացիական ծառայոյթյան մասին» (04.12.2001թ., ՆՕ-272), «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների մասին» (23.10.2001թ., ՆՕ-247) ՀՀ օրենքների շրջանակներում:

6) Սահմանադրոյթյան փոփոխոյթոյններով հստակեցվել է Հանրապետոյթյան Նախագահի՝ որպես պետոյթյան գլխի կարգավիճակը: Մինչ այդ, 1995թ. Սահմանադրոյթյամբ Հանրապետոյթյան Նախագահի այդպիսի ամփոփ իրավական կարգավիճակի բնոյթագրումը բացակայում էր:

Որպես պետոյթյան գլուխ՝ Հանրապետոյթյան Նախագահն օժտված է 3 խումբ կարեւոր գործառոյթներով: Մասնավորապես, Սահմանադրոյթյան 49-րդ հոդվածի համաձայն Հանրապետոյթյան Նախագահը պարտավոր է՝

1. հետեւել Սահմանադրոյթյան պահպանմանը,

2. ապահովել օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանոյթոյնների բնականոն գործունեոյթոյնը,

3. երաշխավորել ՀՀ անկախոյթոյնը, տարածքային ամբողջականոյթոյնը եւ **անվտանգոյթոյնը:**

Իր առջև դրված գործառոյթներն արդյունավետ իրականացնելու համար Հանրապետոյթյան Նախագահը դրանցից ամեն մեկում ունի լայն իրավասոյթոյն: Այդ իրավասոյթոյնից բխող լիազորոյթոյններն սպառիչ կերպով ամրագրված են Սահմանադրոյթյան 55-րդ հոդվածում: Դրանցից մեկն էլ ՀՀ Նախագահի բացառիկ լիազորոյթոյնն է պարտադիր կազմավորել եւ նախագահել ազգային անվտանգոյթյան խորհուրդը, իսկ ցանկոյթյան դեպքում՝ «կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ»:

«Ազգային անվտանգոյթոյնը» սահմանադրական հասկացոյթոյն է, որն ունի լայն բովանդակոյթոյն: Այն անվանվում է նաեւ պետական կամ հասարակական անվտանգոյթոյն, որի ներքո հասկացվում է արտաքին եւ ներքին վտանգներից անձի, հասարակոյթյան եւ պետոյթյան կենսական կարեւորագոյն շահերի պաշտպանվածոյթյան վիճակը: Կարելի է ասել, որ ազգային անվտանգոյթոյնն իրավական, քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, տեղեկատվական, բնապահպանական եւ այլ տիպի անվտանգոյթոյնների հանրագումարն է:

Ազգային անվտանգության խորհուրդն ունի բացառիկ կարեւոր նշանակություն՝ իբրև Տանրապետության Նախագահի՝ որպես երկրի անվտանգության երաշխավորի, գործառույթների իրականացմանն աջակցող մարմին:

Նախ՝ ազգային անվտանգության խորհուրդը միակ սահմանադրական, թեև խորհրդակցական, մարմինն է, որը Տանրապետության Նախագահը Սահմանադրության ուժով պարտավոր է կազմավորել: Մյուս բոլոր իրեն առընթեր խորհրդակցական մարմինների կազմավորումը, լուծարումը Տանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունն է, սակայն անվտանգության խորհրդինը՝ ոչ: Այն մշտապես գործող պարտադիր սահմանադրական մարմին է:

Երկրորդ՝ Տանրապետության Նախագահը պարտավոր է անձամբ նախագահել Խորհուրդը, որի կազմում ներկայացված են պետական իշխանության բարձրագույն մարմինների ներկայացուցիչները (օրինակ, ԱԺ նախագահը, վարչապետն ու փոխվարչապետը, Սահմանադրական դատարանի նախագահը, արտաքին գործերի նախարարը, ուժային կառույցների բոլոր ղեկավարները՝ պաշտպանության նախարարը, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության պետերը, որոնք Խորհրդի անդամի պաշտոնում նշանակվում եւ ազատվում են Տանրապետության Նախագահի հրամանագրով):

Երրորդ՝ ՏՄ Ազգային անվտանգության խորհրդի իրավասությունն ու գործունեության կարգն ամրագրված են իր կանոնադրությամբ, որը հաստատվում է Տանրապետության Նախագահի նորմատիվ իրավական ակտով՝ հրամանագրով: Մասնավորապես, Խորհուրդն է մշակում ազգային անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, դրանց իրականացման նպատակով նախապատրաստում համապատասխան պետական ծրագրեր, վերահսկում դրանց կատարումը, վերահսկում ազգային անվտանգության ներքին եւ արտաքին սպառնալիքները, գնահատում դրանք եւ կանխարգելման միջոցներ ձեռնարկում, Տանրապետության Նախագահի համար առաջարկություններ ներկայացնում արտակարգ դրություն հայտարարելու կամ վերացնելու մասին, մշակում ՏՄ ռազմական դոկտրինան, ազգային անվտանգության ապահովման ոլորտում առկա խնդիրները քննարկում եւ ընդունում որոշումներ: Խորհուրդը գործում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ, որոնք դռնփակ են: Խորհրդի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունվում են որոշումներ, որոնք ուժի մեջ են մտնում Խորհրդի նախագահի՝ Տանրապետության Նախագահի կողմից դրանց հաստատման պահից: Խորհրդի բարդ եւ բազմակողմանի ընթացիկ գործունեության կազմակերպական ապահովումն իրականացնում է Խորհրդի քարտուղարը, որին պաշտոնում նշանակվում եւ ազատվում է Տանրապետության Նախագահը, ում եւ անմիջականորեն ենթարկվում է Խորհրդի քարտուղարը:

Խորհրդի բնականոն գործունեության ապահովման համար սրեղծված է Խորհրդի աշխատակազմ, որի կառավարումն իրականացնում է Խորհրդի քարտուղարը՝ աշխատակազմի կանոնադրության համաձայն, որը հաստատվում է Տանրապետության Նախագահը՝ Խորհրդի քարտուղարի առաջարկությամբ:

Ազգային անվտանգության խորհրդի հիմնական ուղղությունները մեծապես պայմանավորված են ՏՄ Ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով:

7) Մեկնաբանվող դրույթի առաջին մասն ամրագրում է Նախագահի՝ որպես պետության գլխի, ներկայացուցչական գործառույթը: Այդ դրույթի իմաստով Նախագահը հանդիսանում է պետության մարմնավորումը միջազգային հարաբերություններում: Պե-

րագրերը:

Ընդհանրապես, միջազգային պայմանագրի կնքումն իրենից ներկայացնում է գործընթաց, որը ներառում է՝ միջազգային պայմանագրի պետքերի նախապարաստման եւ ընդունման, պայմանագրի պետքերի նույնականության (աուտենտիկության) հաստատման եւ պայմանագրի պարտադիրության վերաբերյալ պայմանավորվող կողմերի համաձայնության արտահայտումը, այսինքն՝ այն ամբողջ գործընթացը, որը ներառում է սահմանված կարգով միջազգային պայմանագրի կնքման նախաձեռնությունից մինչև այդ պայմանագրի վավերացման կամ հաստատման հետ կապված եւ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի ամբողջությունը: Այդուհանդերձ, մեկնաբանվող հոդվածի համարտեսությունը «միջազգային պայմանագրերի կնքում» եզրույթը Նախագահի գործառնություններին բնորոշ լիազորությունների համակցություն է, որը ներառում է վերոնշյալ ողջ գործընթացը՝ բացառությամբ միջազգային պայմանագրերի վավերացման, որի բացառիկ մենաշնորհը պարկանում է ՏՏ Ազգային ժողովին: Տվյալ պարագայում սույլ լիազորությունների կրկնությունից խուսափելու առումով՝ հարկ է «միջազգային պայմանագրերի կնքում» եզրույթը դիտարկել նաև առանց միջազգային պայմանագրերի կնքման փուլերից մեկի՝ վավերացված միջազգային պայմանագրերի վավերագրերի ստորագրման վերաբերյալ Նախագահի լիազորության, քանի որ այն արդեն իսկ առանձին կանոնակարգման է ենթարկված նույն դրույթում:

Միջազգային հարաբերություններում, միջազգային իրավական ողջ համակարգում Նայասրանի Նանրապետության անունից հանդես գալու Նախագահի սահմանադրաիրավական հարուկ իրավունքից բխում է, որ Նայասրանի Նանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, հավասարապես նաև դրանց շուրջ բանակցություններ վարելու համար Նախագահը լրացուցիչ լիազորությունների սահմանման անհրաժեշտությունը չունի հանգամանք, որը տվյալ դեպքում ընկալվում է որպես պետության գլխի իրավական առանձնաշնորհ եւ որը հանդիսանում է նրա սահմանադրական եւ միջազգային իրավական կարգավիճակի էական փարթերից մեկը: Առանց հարուկ լիազորությունների՝ բանակցություններին մասնակցելու եւ միջազգային պայմանագրեր կնքելու պետության գլխի իրավունքը ճանաչված է թե՛ միջազգային իրավունքի սովորությանն նորմերով, թե՛ այդ ոլորտի ամենաաեղիմակավոր կողիֆիկացիոն փաստաթղթերով, մասնավորապես, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիայով (հոդված 7, մաս 2), եւ թե՛ «Միջազգային պայմանագրերի մասին» ՏՏ օրենքով (հոդված 16, մաս 1): Այդպիսի իրավունքով օժտված են նաև ՏՏ վարչապետը եւ ՏՏ արտաքին գործերի նախարարը: ՏՏ անունից բանակցություններ վարելու եւ միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունը ենթադրում է Նախագահի՝ անձամբ այն իրացնելու կամ հարուկ լիազորագրությունների փրամադրման միջոցով դրա իրացումն այլ անձի կամ անձանց վերապահելու իրավունքը:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՏՏ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով ընդհուպ սահմանվում է. «Միջազգային պայմանագիրը Նայասրանի Նանրապետության կողմից կարող է նախաստորագրվել միայն այդ պայմանագրի նախագծի մշակման եւ նախաստորագրման համար սույն օրենքի 8-12-րդ եւ 14-15-րդ հոդվածներով, իսկ սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրից բխող միջազգային պայմանագրի կնքման դեպքում՝ սույն օրենքի 11-12-րդ եւ 14-16-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերն ավարտվելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ այդպիսի պայմանագիր կնքելու վերաբերյալ Նայասրանի Նանրապետության Նախագահի... տված հանձնարարականով կամ առաջարկությունով...»: Փաստորեն օրենքը Նա-

խագահի համար նախատեսում է հայեցողական լայն լիազորություններ միջազգային պայմանագրերի նախապարաստման ու կնքման հարցերում:

Մեկնաբանվող կետը նախատեսում է նաև, որ ՀՀ Նախագահն Ազգային ժողովի վավերացման է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը:

Միջազգային պայմանագրերի վավերացումը, ինչպես նաև դրանց վավերագրերի ստորագրումը միջազգային պայմանագրերի կնքման փուլերից են: Միջազգային պայմանագրի վավերացումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով պարտավորված լինելու մասին համաձայնության հաստատումն է պետության լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Համաձայնության հաստատումն արտահայտվում է երկու փարբեր իրավական համակարգերին պարկանող ակտերով. ներպետական՝ վավերացման մասին օրենսդիր մարմնի որոշմամբ, և միջազգային իրավական՝ Նախագահի կողմից ստորագրվող վավերագրով:

Միջազգային իրավունքով սահմանված չեն այն միջազգային պայմանագրերը, որոնք պետք է պարտադիր վավերացման ենթարկվեն, այդ պարճառով յուրաքանչյուր երկիր ինքը կարող է որոշել դրանց ցանկը: Հայաստանի Հանրապետության վավերացման ենթակա պայմանագրերի փեսակները սահմանված են ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետով, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի (22.02.2007թ., ՌՕ-123-Ն) 24-րդ հոդվածով:

Նախքան Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը՝ ՀՀ Նախագահն օրենքով սահմանված կարգով միջազգային պայմանագիրը ներկայացնում է ՀՀ սահմանադրական դատարան՝ պայմանագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու համար: Միջազգային պայմանագիրն Ազգային ժողովի վավերացմանը կարող է ներկայացվել միայն այն պարագայում, երբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ կարճանագրվի, որ դրանում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Ազգային ժողովում փյյալ միջազգային պայմանագիրը ներկայացնում է Նախագահի՝ սահմանված կարգով նշանակված պաշտոնական ներկայացուցիչը: Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագիրը վավերացվում է որոշմամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վավերացված միջազգային պայմանագրի վերաբերյալ արտաքին գործերի նախարարությունը 10-օրյա ժամկետում կազմում է վավերագիր և ներկայացնում ՀՀ Նախագահի ստորագրմանը: Նախագահի ստորագրելուց հետո վավերագիրն ամրագրվում է Հայաստանի Հանրապետության կնիքով և արտաքին գործերի նախարարի ստորագրությամբ, որը նաև կրում է վավերագրի փոխանակման կամ պայմանագրի մյուս կողմին, իսկ բազմակողմ միջազգային պայմանագրի դեպքում՝ ավանդապահին վավերագիրն ի պահ փալու գործառույթի իրականացման պարտականությունը:

Հանրապետության Նախագահը նաև հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

Միջազգային պայմանագրի հաստատումը վավերացում չպահանջող միջազգային պայմանագրով պարտավորված լինելու մասին համաձայնության հաստատման եղանակներից է: Հաստատման են ենթակա ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը ոչ ենթակա բոլոր միջազգային պայմանագրերը, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում նշված միջազգային պայմանագրերը: Նախագահի լիազորությունների մեջ է մտնում նաև այդ նույն կարգավիճակի

պայմանագրերի կասեցման, դադարեցման, այդ թվում՝ նաև չեղյալ հայտարարման իրավունքը: Միջազգային պայմանագրի հաստատման, կասեցման կամ չեղյալ հայտարարման դեպքերը, կարգը եւ պայմանները սահմանված են «Միջազգային պայմանագրերի մասին» ՏՏ օրենքով, ինչպես նաև ՏՏ միջազգային պայմանագրերով: Միջազգային պայմանագրի հաստատման, կասեցման կամ չեղյալ հայտարարման մասին Նախագահը հրապարակում է հրամանագիր:

8) Այս լիազորությունը նույնպես բխում է Նայաստանի Նանրապետության Նախագահի՝ որպես պետության գլխի, սահմանադրաիրավական կարգավիճակից: Այն անմիջականորեն կապված է նախորդ կետում ամրագրված՝ Նայաստանի Նանրապետությունը միջազգային հարաբերություններում ներկայացնելու եւ արտաքին քաղաքականության ընդհանուր դեկլարում իրականացնելու սահմանադրական լիազորությունների իրացման հետ:

Սույն կետի իմաստով օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններին առընթեր Նայաստանի Նանրապետության դիվանագիտական ներկայացուցիչները ՏՏ դիվանագիտական ներկայացուցչությունների դեկլարներն են: Նամաձայն 2001թ. հոկտեմբերի 24-ին ընդունված՝ «Դիվանագիտական ծառայության մասին» ՏՏ օրենքի 12-րդ հոդվածի՝ «Դիվանագիտական ներկայացուցչության դեկլար կարող է լինել Նայաստանի Նանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանը կամ գործերի հավաքարմարարը՝ րվյալ պետության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում Նայաստանի Նանրապետության մշտական ներկայացուցիչը»: Թեև ՏՏ Սահմանադրության մեջ հատուկ դրույթ չկա ՏՏ Նախագահի՝ օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններին առընթեր դիվանագիտական ներկայացուցչություններ սրբեղծելու եւ լուծարելու լիազորության մասին, սակայն այս եւ քննարկվող լիազորությունների միջև փոխադարձ կապն ակնհայտ է: Նենց այդ է վկայում «Դիվանագիտական ծառայության մասին» ՏՏ օրենքի 10-րդ հոդվածը, որում ամրագրված է, որ օտարերկրյա պետությունում Նայաստանի Նանրապետության դեսպանությունը եւ միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցչությունն սրբեղծվում եւ լուծարվում են Նայաստանի Նանրապետության Նախագահի հրամանագրով:

Պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը եւ բնականոն ընթացքը ենթադրում է դիվանագիտական ներկայացուցիչների փոխանակում: Այս գործընթացի վերջին փուլը դիվանագիտական ներկայացուցի կողմից դեսպանընկալ պետության գլխին հավաքարմագրի հանձնումն է: Նավարարմագիրը հավաքարմագրող պետության գլխի կողմից հասցեագրվում է դեսպանընկալ պետության դեկլարին եւ պարունակում է խնդրանք՝ հավաքալու եւ վստահելու դիվանագիտական ներկայացուցչի՝ որպես դեսպանընկալ պետությունում հավաքարմագրող պետության բարձրագույն պաշտոնական ներկայացուցչի, բոլոր գործողություններին եւ հայտարարություններին: Այն փաստորեն պաշտոնապես հաստատում է դիվանագիտական ներկայացուցչի լիազորությունները, նրա առաքելության ներկայացուցչական բնույթը եւ իրավական հիմք է հանդիսանում ամբողջ առաքելության ընթացքում նրա գործունեության համար:

Նավարարմագրի հանձնումն արձանագրում է դիվանագիտական ներկայացուցչի հավաքարմագրման գործընթացի ավարտը եւ հենց այդ պահից էլ, որպես կանոն, սկսվում է նրա դիվանագիտական առաքելությունը րվյալ երկրում:

Նավարարմագրերի հանձնման ընթացակարգը սահմանվում է պերական արարողակարգի կանոններով:

Որպես կանոն, նորանշանակ դիվանագիտական ներկայացուցիչը՝ իր հավարարմագրի հետ մեկտեղ, դեսպանընկալ պետության գլխին է հանձնում նաև իր նախորդի հետկանչագիրը: Ներկանչագրի միջոցով ընդունող պետության ղեկավարը տեղեկացվում է հավարարմագրող պետության՝ նախորդ դիվանագիտական ներկայացուցչի հետկանչի որոշման մասին, ընդհանուր ձևով նշվում է հետկանչի պատճառը եւ հույս է հայտնվում, որ նա իր գործունեությամբ նպաստել է երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը: Երբեմն հետկանչագիրը դեսպանընկալ պետության ղեկավարին հանձնում է մեկնող դիվանագիտական ներկայացուցիչը:

9) Առանձին խումբ են կազմում բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակելու եւ ազատելու վերաբերյալ ՐՐ Նախագահի լիազորությունները: Ընդ որում, ՐՐ Սահմանադրությամբ նախատեսված են պաշտոնատար անձանց նշանակման փարբեր արարողակարգեր՝ ՐՐ Նախագահի կողմից ինքնուրույն կամ այլ պերական մարմինների մասնակցությամբ:

ՐՐ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ՐՐ Նախագահն Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դատախազի, կենտրոնական բանկի նախագահի եւ վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները: Մասնավորապես, գլխավոր դատախազի թեկնածությունն առաջադրելու սույն դրույթի իմաստից բխում է, որ թեկնածուի ընտրությունը կատարում է Տանրապետության Նախագահը: Սակայն դա չի կարելի մեկնաբանել այն իմաստով, որ Տանրապետության Նախագահը կարող է ցանկացած անձի առաջարկել որպես գլխավոր դատախազի թեկնածու: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ դատախազությունը պերական ժառայության հատուկ տեսակ է, որի համար պարտադիր են ինչպես քաղաքացիական ժառայության թեկնածուներին ներկայացվող ընդհանուր պահանջները, այնպես էլ հատուկ՝ այդ ժառայության բնույթից բխող պահանջները, հենց թեկուզ մասնագիտական կրթական ցենզը եւ որոշակի պարրաստվածությունը: Այնպես որ, ՐՐ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնի համար օրենքով ներկայացված պահանջներն անալոգիայի կարգով պետք է կիրառել նաև գլխավոր դատախազի թեկնածուի նկատմամբ: Ավելի ճիշտ կլիներ, իհարկե, օրենքում կոնկրետ սահմանել գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող պահանջները:

ՐՐ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետը սահմանում է նաև, որ ՐՐ Նախագահը ՐՐ գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին, որոնք, համաձայն «Դատախազության մասին» ՐՐ օրենքի 11-րդ հոդվածի՝ համակարգում են գլխավոր դատախազի կողմից իրենց հանձնարարված ոլորտի աշխատանքները եւ այդ ոլորտի սահմաններում իրականացնում են Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված բոլոր լիազորությունները:

Ի փարբերություն ՐՐ գլխավոր դատախազի պաշտոնի՝ օրենքը հատկ նախատեսում է ՐՐ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին ներկայացվող պահանջները: Տամաձայն «Դատախազության մասին» ՐՐ օրենքի 36-րդ հոդվածի՝ ՐՐ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, ով ունի դատավորի, դատախազի, փատաբանի, քննիչի, պերական կամ տեղական ինքնակառավարման մարմնում իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ կամ իրավաբանի մասնագիտությամբ այլ աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ:

ՐՐ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ՐՐ Նախագահը

Ազգային ժողովին է առաջարկում ՏՏ կենտրոնական բանկի նախագահի, ՏՏ վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները: 55-րդ հոդվածի 9-րդ կետի իմաստից բխում է, որ այս դեպքերում նույնպես թեկնածուի ընտրությունը կատարում է Նանրապետության Նախագահը, սակայն հաշվի առնելով առաջին հերթին ՏՏ Սահմանադրությամբ սահմանված պահանջները (ցենզերը)՝ այդ պաշտոնների թեկնածուների համար (տե՛ս ՏՏ Սահմանադրության 83.3 եւ 83.4-րդ հոդվածների մեկնաբանությունը): Նանրապետության Նախագահը պարտավոր է հաշվի առնել նաեւ այդ պաշտոնների թեկնածուներին ներկայացվող օրենքով նախատեսված պահանջները:

10) Նանրապետության Նախագահն օժտված է նաեւ որոշ լիազորություններով դարպական իշխանության ոլորտում: Մասնավորապես, ՏՏ Սահմանադրության համաձայն ՏՏ Նախագահը մասնակցում է ՏՏ սահմանադրական դատարանի ձեւավորմանը: 2006թ. հունիսի 1-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՏՏ սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Նայաստանի Նանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը: ՏՏ Սահմանադրության համաձայն՝ ՏՏ սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամներից, որոնցից հինգին Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը, իսկ չորսին՝ Նանրապետության Նախագահը: «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքը հստակ սահմանում է ՏՏ սահմանադրական դատարանի անդամին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, համաձայն վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածի՝ ՏՏ սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, Նայաստանի Նանրապետության ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին, որը չունի այլ պետության քաղաքացիություն, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական ասպիճան, ինչպես նաեւ իրավունքի ասպարեզում առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ եւ փորձաքաղաքում է հայերենին: Ընդ որում, օրենքը նաեւ պահանջում է, որպեսզի ՏՏ սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Նանրապետության Նախագահը հաշվի առնի թեկնածուի բարոյական հատկանիշները:

Ինչ վերաբերում է ՏՏ սահմանադրական դատարանի նախագահի նշանակմանը, ապա ՏՏ Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը, ՏՏ սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ: Եթե Ազգային ժողովի կողմից վերոհիշյալ ժամկետում ՏՏ սահմանադրական դատարանի նախագահ չի նշանակվում, ապա, ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ ՏՏ Նախագահին իրավունք է վերապահվում ՏՏ սահմանադրական դատարանի կազմից նշանակել սահմանադրական դատարանի նախագահ:

Թե՛ւ ՏՏ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի է եւ պաշտոնավարում է մինչեւ 65 տարին լրանալը, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում է, որ ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները կարող են նաեւ վաղաժամկետ դադարեցվել: Օրենսդրությունը հստակ սահմանում է ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը, դրանք են՝ եթե սահմանադրական դատարանի անդամը մեկ տարվա ընթաց-

քում երեք օր անհարգելի պատճառով չի մասնակցել ՏՏ սահմանադրական դատարանի նիստերին, ժամանակավոր անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները, խախտել է սահմանադրական դատարանի անդամին վերաբերող՝ սույն օրենքով սահմանված անհամարելելիության կանոնները, նախապես կարծիք է հայտնել սահմանադրական դատարանում քննվելիք գործի վերաբերյալ կամ այլ գործողություններով կասկածի փակ է դրել իր անաչառությունը, կամ փնտրելու թյուրություններ է հայտնել դռնփակ խորհրդակցության ընթացքի մասին, կամ, այլ կերպ, դրժել է սահմանադրական դատարանի անդամի իր երդումը, նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական արար կամ հիվանդություն, որի հետեւանքով այլևս ի վիճակի չէ կատարելու ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները:

Վերոհիշյալ հիմքերի առկայության դեպքում ՏՏ Ազգային ժողովը կամ Նանրապետության Նախագահը դիմում է ՏՏ սահմանադրական դատարան՝ սահմանադրական դատարանի իրենց նշանակած անդամի լիազորությունների դադարեցման հարցի մասին եզրակացություն սրանալու համար: Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարեցման հիմքերի առկայության մասին եզրակացությունն ընդունվում է ՏՏ սահմանադրական դատարանի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Վերոհիշյալ եզրակացության հիման վրա Նանրապետության Նախագահն իր հրամանագրով կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները:

Պետք է նշել, որ անգամ դրական եզրակացության պայմաններում ՏՏ Նախագահը պարտավոր չէ դադարեցնել սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները, բանզի վերոհիշյալ սահմանադրական նորմն իմպերատիվ բնույթ չունի: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եզրակացությունն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները չդադարեցվելու դեպքում նույն հիմքով ՏՏ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները չեն կարող դադարեցվել:

Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարելու դեպքերում ՏՏ սահմանադրական դատարանի նախագահը երկօրյա ժամկետում դիմում է Նանրապետության Նախագահին՝ սահմանադրական դատարանի նոր անդամ նշանակելու համար:

ՏՏ Սահմանադրության 97-րդ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 11-րդ հոդվածների համաձայն՝ ՏՏ սահմանադրական դատարանի անդամն անձեռնմխելի է: Սահմանադրական դատարանի անդամը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաեւ նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանարվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց ՏՏ սահմանադրական դատարանի եւ իրեն նշանակող մարմնի՝ Ազգային ժողովի կամ Նանրապետության Նախագահի համաձայնության: Այսպիսով, ՏՏ Նախագահի լիազորությունների մեջ է մտնում իր նշանակած անդամին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանարվության ենթարկելու հարց հարուցելու կապակցությամբ համաձայնություն փալը, ընդ որում, ՏՏ Նախագահն այդ համաձայնությունը փալիս է հրամանագրի ձեռով:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկական փվյալ հարցերում հիմնականում որդեգրել է մեկ այլ մոտեցում, որի հիմքում դրվում է, այսպես

կոչված, իրավական «անշնորհակալության» սկզբունքը: Դա նշանակում է, որ սահմանադրական դատարանի ձեւավորումից հետո պետք է ձեւավորողի հետ հեղադարձ կապը կտրվի՝ որպէս դատարանի անկախության ապահովման կարեւոր գործոն: Իսկ սույն կետում նշված եւ օրենսդիր մարմնին վերապահված համարժեք լիազորությունները վերապահվում են սահմանադրական դատարաններին: Այս մտքեցումը Հայաստանում ներդնելու անհրաժեշտության վրա Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը բազմիցս է ուշադրություն հրավիրել:

11) ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետը նվիրված է ՀՀ Նախագահի՝ դատական իշխանության մարմիններ ձեւավորելու իրավասությանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ ՀՀ դատական օրենսգրքով մանրակրկիտ կարգավորվում է նաեւ հանրապետության դատական իշխանության մարմինների կազմակերպման կարգը: Մասնավորապէս, Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահն արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահներին եւ դատավորներին, վերաքննիչ, առաջին արշայանի եւ մասնագիտացված դատարանների նախագահներին:

ՀՀ դատական օրենսգիրքը հստակ սահմանում է դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հանգամանքները: Մասնավորապէս, համաձայն դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի՝ դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից,

2) որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով,

3) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում,

4) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արար կամ հիվանդություն,

5) որը չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից կամ ունեն փարկետում՝ օրենքով նախատեսված կարգով ու հիմքով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ դատավորների նշանակումները կատարվում են դատավորների թեկնածությունների ցուցակի հիման վրա:

ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու համար կազմակերպվում է որակավորման սրուգում, որին կարող են մասնակցել 22-60 փարեկան այն քաղաքացիները, որոնք Հայաստանի Հանրապետությունում սրացել են բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանարիպ աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, որոնք փիրապետում են հայերենին եւ այլն:

Որակավորման սրուգման հիման վրա նախապարտատրվում են նյութեր՝ ՀՀ արդարադատության խորհուրդ ներկայացնելու համար: Արդարադատության խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է առաջարկված թեկնածությունները եւ իրավիքում նրանց գրույցի: Զվեարկության արդյունքներով կազմվում է առավելագույն ձայներ սրացած 10 անձանց ցուցակ (հավասար ձայների դեպքում ցուցակում ընդգրկվում են նաեւ հավա-

սար ձայներ սրացած մյուս անձինք): Ցուցակը Հանրապետության Նախագահին է ներկայացվում ոչ ուշ, քան մինչև տեղեկատվության 15-ը:

Արդարադատության խորհրդի կազմած ցուցակը Հանրապետության Նախագահը ոչ ուշ, քան մինչև տեղեկատվության 25-ը հաստատում է հրամանագրով:

Վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահների եւ դատավորների, վերաքննիչ, առաջին աստիճանի եւ մասնագիտացված դատարանների նախագահների պաշտոնը թափուր մնալիս ՀՀ արդարադատության խորհուրդն իր նիստում ընդունված որոշմամբ համապատասխան առաջարկություն է ներկայացնում ՀՀ Նախագահին: Եթե Հանրապետության Նախագահն առաջարկությունն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում (վճռաբեկ դատարանի դատավորների համար՝ փաստօրյա ժամկետում) չի նշանակում համապատասխան անձին՝ դատարանի նախագահ (դատավոր), ապա վճռաբեկ դատարանի նախագահի հայտարարության հիման վրա սկսվում են նոր առաջադրումներ:

Ինչ վերաբերում է վերաքննիչ, առաջին աստիճանի եւ մասնագիտացված դատարանների դատավորների նշանակմանը, ապա նրանք նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից՝ ՀՀ արդարադատության խորհրդի եզրակացության հիման վրա: Մասնավորապես, դատավորի թեկնածուի համաձայնության դեպքում վճռաբեկ դատարանի նախագահը նրա թեկնածությունը ներկայացնում է արդարադատության խորհրդին: Արդարադատության խորհուրդը ներկայացրած թեկնածության վերաբերյալ բաց քվեարկությամբ փախ է դրական եզրակացություն, եթե խախտված չեն դատական օրենսգրքով սահմանված ընթացակարգերը: Խորհրդի դրական եզրակացության դեպքում թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահին: Եթե Հանրապետության Նախագահն առաջարկությունն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում չի նշանակում դատավորին, ապա այդ թեկնածությունը համարվում է մերժված: Դատավորի նշանակումը կատարվում է Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրով:

ՀՀ Մահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահը նաեւ դադարեցնում է վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահների եւ դատավորների, վերաքննիչ, առաջին աստիճանի եւ մասնագիտացված դատարանների նախագահների եւ դատավորների լիազորությունները:

ՀՀ դատական օրենսգրքի 17-րդ «Դատավորների կարգապահական պատասխանատվությունը եւ լիազորությունների դադարեցումը» վերաբերյալ քվեարկությամբ գլուխը մանրակրկիտ կերպով կարգավորում է դատավորների լիազորությունների դադարեցման հիմքերը եւ կարգը:

Այսպես, համաձայն դատական օրենսգրքի 165-րդ հոդվածի՝ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից իր պարտականությունները ոչ պարզաձև իրականացնելու դեպքում ՀՀ արդարադատության խորհուրդը, որպես նրա նկատմամբ կարգապահական փոյժ, դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ կարող է դիմել Հանրապետության Նախագահին: Եթե Հանրապետության Նախագահը ՀՀ արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում չի դադարեցնում դատավորի լիազորությունները, ապա միջնորդությունը համարվում է մերժված: Դատավորի պաշտոնավարումը դադարում է Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրով:

Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի՝ դատավորի լիազորու-

թյուններն արդարադատության խորհրդի առաջարկությամբ դադարեցվում են Նանրապետության Նախագահի կողմից, եթե՝

1) ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ ավելի քան 6 ամիս օրացուցային փարվա ընթացքում ի վիճակի չի եղել կատարելու իր պաշտոնական պարտականությունները,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ապացուցված է, որ նա նշանակվել է դատավորի պաշտոնում օրենքի պահանջների խախտմամբ,

3) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով,

4) նա երկու փարի անընդմեջ չի մասնակցել փարեկան վերապարաստման ծրագրերին,

5) նշանակումից հետո նա ձեռք է բերել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն:

ՆՏ Սահմանադրությունը Նանրապետության Նախագահին նաեւ իրավունք է վերապահում համաձայնություն փոխել վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահներին եւ դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների նախագահներին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Այս հարցը մանրակրկիտ կերպով կարգավորվում է ՆՏ դատական օրենսգրքի 18-րդ՝ «Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու համաձայնություն փոխելու մասին առաջարկի եւ ներման հարցերի քննությունն արդարադատության խորհրդում» վերաբերյալ:

Այսպես, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու համաձայնություն փոխելու մասին Նանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցով արդարադատության խորհուրդ է դիմում գլխավոր դատախազը, իսկ փոխյալ դատավորի նկատմամբ գործը դատական քննության փուլում գրնվելու դեպքում նրան կալանավորելու համաձայնություն փոխելու մասին առաջարկ ներկայացնելու հարցով՝ գործը քննող դատարանը: Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու համաձայնություն փոխելու մասին Նանրապետության Նախագահին ներկայացված արդարադատության խորհրդի առաջարկը Նանրապետության Նախագահը քննում եւ որոշում է կայացնում երկօրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն չփոխելու դեպքում դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու մասին արդարադատության խորհրդի առաջարկը համարվում է մերժված:

Պետք է նշել, որ օրենքն արգելում է երկրորդ անգամ նույն հիմքով դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանափութության ենթարկելու մասին առաջարկություն անելը:

Սահմանադրական մեկնաբանվող նորմը գործնականում հակասության մեջ է մտնում Սահմանադրության 95-րդ հոդվածի հետ՝ առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների դատավորների նշանակման, նրանց լիազորությունների դադարեց-

ման եւ նրանց կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատրասխանարկության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ համաձայնություն փախու առումով: Բանն այն է, որ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետում պարզապես Նախագահին նման լիազորություն վերապահված չէ, չնայած այն բանին, որ նույն Սահմանադրության 95-րդ հոդվածով արդարադատության խորհուրդն այդ հարցերով Նախագահին կարող է ներկայացնել առաջարկություններ: Նման վիճակը Սահմանադրության րեքսրի թերություններից է եւ, մեր կարծիքով, հակասության հաղթահարումը պեքք է փնտրել Սահմանադրության ինքնաբավության սկզբունքի շրջանակներում՝ սահմանադրական հիմնարար սկզբունքների ու փարբեր նորմերի համակարգային մեկնաբանման համարեքսրում:

11.1) Մինչեւ սահմանադրական բարեփոխումները ՏՏ արդարադատության խորհուրդը սահմանադրորեն ներկայացվում էր որպես դատական մարմինների անկախության երաշխիքի ապահովման կառուցակարգային հիմնական միջոց: Համաձայն ՏՏ 1995թ. Սահմանադրության դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն էր, որը գլխավորում էր արդարադատության խորհուրդը: ՏՏ գլխավոր դատախազը եւ ՏՏ արդարադատության նախարարն արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին: Խորհրդի կազմի մեջ էին մտնում նաեւ Հանրապետության Նախագահի կողմից հինգ րարի ժամկետով նշանակվող րասնչորս անդամներ, որոնցից երկուսը՝ իրավաբան-գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ:

Սակայն սահմանադրական բարեփոխումներից հետո հիմնովին վերանայվեց արդարադատության խորհրդի կազմավորման կարգը, կառուցվածքը եւ կարգավիճակը: Մասնավորապես, համաձայն դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի՝ արդարադատության խորհուրդը համարվեց անկախ մարմին, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված կարգով:

Բարեփոխված Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ ՏՏ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ, հինգ րարի ժամկետով, օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Իսկ ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11.1-րդ կետը Հանրապետության Նախագահի լիազորությունների շարքում ամրագրում է նաեւ արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամների նշանակելու նրա իրավունքը:

Այսպիսով, Հանրապետության Նախագահին իրավունք վերապահվեց նշանակել արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամի: Մինչեւ վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները «Արդարադատության խորհրդի մասին» ՏՏ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում էր, որ որպես արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամ կարող էր նշանակվել մանկավարժության կամ գիտության ոլորտում աշխարող, իրավաբանական գիտությունների գիտական աստիճան ունեցող իրավաբանը: Սակայն ներկայումս վերոհիշյալ հարցը կարգավորող ՏՏ դատական օրենսգրքի «Արդարադատության խորհուրդ» վերաբառությամբ 3-րդ բաժինը չի պարզաբանում իրավաբան-գիտնականին ներկայացվող չափանիշները, ՏՏ դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը միայն սահմանում է, որ արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամի պաշտոնը պետական պաշտոն է:

Օրենսդրությունը սահմանում է նաև արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը: Մասնավորապես, համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Նախագահը կարող է վաղաժամկետ դադարեցնել իր նշանակված արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամի լիազորությունները, եթե նա պարբերաբար անհարգելի պատճառով չի մասնակցում արդարադատության խորհրդի աշխատանքներին: Այս հիմքով իրավաբան-գիտնական անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունը ՀՀ Նախագահին ներկայացնում է վճռաբեկ դատարանի նախագահը:

12) ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդված 12-րդ կետի լիազորություններն ուղղված են ՀՀ Նախագահի կողմից Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված առաքելության իրացմանը, այն է՝ որպես պետության գլուխ երաշխավորել ՀՀ անկախությունը, փարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը:

Մեկնաբանվող նորմի իրացմանն ուղղված ընթացիկ օրենսդրության մեջ առավել ընդգրկում բնույթ ունի 2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածը (Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները) ամրագրում է Հանրապետության Նախագահի հետևյալ լիազորությունները՝

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում.

2) հաստատում է.

ա. ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարությունը եւ ռազմական դոկտրինը,

բ. զինված ուժերի կառուցվածքը,

գ. զինված ուժերի զարգացման, այլ զորքերի զարգացման, զինված ուժերի կիրառման, զինված ուժերի ծավալման, զինված ուժերի զորահավաքային պլանները, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը,

դ. Հայաստանի Հանրապետության փարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը,

ե. զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների եւ դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.

3) նշանակում եւ ազատում է զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ.

4) պաշտպանության հարցերով Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է միջազգային հարաբերություններում, կնքում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր, ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը.

5) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական

վրանգի առկայության կամ պարերազմ հայտարարվելու դեպքում հայտարարում է ռազմական դրություն, որոշում է ընդունում զինված ուժերի օգրագործման մասին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք.

6) պարերազմի ժամանակ կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանավարին.

7) լուծում է պարերազմ հայտարարելու հարցը՝ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում.

8) հրամանագիր է հրապարակում պարտադիր զինվորական ծառայության գորակոչ անցկացնելու և զորացրում կարարելու մասին.

9) Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ որոշում է ընդունում Նայաստանի Նանրապետության փարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցության մասին.

10) իրականացնում է պաշտպանության բնագավառում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Բացի դրանից, նույն օրենքի 12-րդ հոդվածը (Զինված ուժերի ղեկավարումը և կառավարումը) նախատեսում է զինված ուժերի ղեկավարման երեք մակարդակ՝ ընդհանուր ղեկավարում, անմիջական ղեկավարում և կառավարում, որոնք համապատասխանաբար իրականացվում են՝ ՎՎ Նախագահի՝ որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանավար, պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի կողմից:

Նախագահի լիազորությունների շրջանակը պայմանավորված է նրանով, թե ինչ է իրենից ներկայացնում պաշտպանության բնագավառը, որտեղ պետության գլուխը համակարգում է պետական մարմինների գործունեությունը: Օրենքի 3-րդ հոդվածում նշվում է, թե որոնք են այն ոլորտները, որոնք համարվում են պաշտպանության բնագավառի մեջ մտնող: Այն ներառում է ռազմական անվտանգության համակարգը, Նայաստանի Նանրապետության փարածքը, հասարակությունն ու փնտրությունը պաշտպանության նախապարտադրելու և Նայաստանի Նանրապետության անկախությունը, փարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկարվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգը:

Երկրի պաշտպանությունն իրականացնելու համար ստեղծվում են «զինված ուժեր», որն ըստ նույն հոդվածի իրենից ներկայացնում է «Նայաստանի Նանրապետության ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց, որն ապահովում է Նայաստանի Նանրապետության անկախության, փարածքային ամբողջականության և անվտանգության զինված պաշտպանությունը»: «Այլ գորքեր» հասկացությունը, ըստ նույն հոդվածի, ներառում է՝ ոստիկանության գորքեր, սահմանապահ գորքեր և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումներ:

Երկրի Նախագահի լիազորությունների հետ կապված՝ տվյալ ոլորտում նրան հակաշտող օրենսդրական կարեւոր սահմանափակում է հանդիսանում այն, որ հիշյալ օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է. «նշված զինված ուժերից և այլ գորքերից բացի Նայաստանի Նանրապետությունում զինվորական այլ կազմավորումների ստեղծումն արգելվում է»:

Պաշտպանության բնագավառում ՏՏ Նախագահի լիազորություններն ամրագրված են նաև մեկնաբանվող հոդվածի 13-րդ կետում՝ ռազմական դրություն հայտարարելու հետ կապված, ինչպես նաև այլ հոդվածներում եւ ՏՏ զինապարտության մասին եւ ոլորտը կարգավորող այլ օրենքներում:

13) Ռազմական դրություն հայտարարելու հիմքերի, կարգի, դրա ընթացքում մարդու իրավունքների նկատմամբ միջամտության համաչափության սահմանադրական, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ու Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի պահանջներին համապատասխանության մեկնաբանությունը փրվում է հաջորդ՝ արտակարգ դրություն հայտարարելու Նախագահի լիազորությանը նվիրված կետում, հաշվի առնելով նշված հարցերի սահմանադրական կարգավորման նմանությունը (բայց ոչ նույնականությունը), ինչպես նաև այն հանգամանքը, որ ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածը, որը վերնագրված է «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում», վերաբերում է մարդու իրավունքների սահմանափակմանը «պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ»:

Ինչպես հայտնի է, միջազգային պայմանագրերում օգտագործվող հասկացություններն ունեն ինքնավար բնույթ եւ դրանց բովանդակությունը կախված է նրանից, թե ինչպես են դրանք մեկնաբանվում միջազգայնորեն, առաջին հերթին՝ նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական դափարանի նախադեպային իրավունքը:

ՄԻԵԿ-ը ռազմական դրությունը դիտարկում է որպես արտակարգ դրության ձեւերից մեկը, հետեւաբար, այս հասկացության եւ դրա հետ կապված կարգավորումների միջազգային, մասնավորապես ՄԻԵԿ-ի կողմից փրվող մեկնաբանություններով պետք է առաջնորդվել «արտակարգ դրությունը» ՄԻԵԿ-ի տեսանկյունից դիտարկելիս:

Քանի որ Սպրաթուրգի մարմինները 15-րդ հոդվածում պարունակվող հասկացությունները մեկնաբանում են դրանց իրական եւ սովորական իմաստով (ինչպես պահանջում են պայմանագրերի մեկնաբանման սկզբունքները), իսկ *ԲԻՄԳ*-ի եւ ՄԻԵԿ-ի վերապահումների հետ կապված դրույթները նմանափայ են, եվրոպական մտքեցումներն ու եզրակացությունները հավասարապես կիրառելի են *ԲԻՄԳ*-ի ներքո հարուցվող գործերի նկատմամբ: Բացի դրանից, ինչպես նշվում է հաջորդ կետի մեկնաբանության մեջ, ՄԻԵԿ-ն այս ինքնավար մեկնաբանությունը կիրառում է ոչ միայն այն իմաստով, որ ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածով նախատեսված վերապահումները ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի ներքո ուսումնասիրման ենթակա լինելը մեկնաբանում է անկախ այն բանից, թե ինչպես է անվանվում արտակարգ դրությունն ազգային օրենսդրության համաձայն, այլ նաև վերապահումների կամ այլ կերպ՝ մարդու իրավունքների նկատմամբ միջամտության համաչափության առումով հենց ՄԻԵԿ-ն է որոշում այդ արտակարգ դրության առկայությունը 15-րդ հոդվածի իմաստով (*Բրաննիգանն ու Մաքբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության*. Brannigan and McBride v. United Kingdom, 26 May 1993, A 258-b (1993) at 80 para. 45):

Որոշակի առումով, այս մտքեցումն ընդունվում է նաև ՏՏ Սահմանադրությամբ արտակարգ եւ ռազմական դրություն հայտարարելու հետ կապված խորհրդարանական երաշխիքները՝ ԱՄ նիստի անհապաղ գումարման անհրաժեշտությունը, հայտարարված արտակարգ կամ ռազմական դրությունը չեղյալ հայտարարելու՝ խորհրդարանի իրավունքը, երկու դեպքում էլ իրավական ռեժիմն օրենքով սահմանված լինելու պահանջը՝ այս ամենը խոսում են նրա օգտին, որ ՏՏ հիմնական օրենքը նույնպես որդեգրում է այդ

իրավիճակների «իրական եւ սովորական» իմաստը բացահայտելու դիրքորոշումը: Ի-հարկե, կան փարբերություններ, որոնք կներկայացվեն հաջորդ մեկնաբանվող կետում: Եվ վերջապես, 2006թ. դեկտեմբերի 5-ին ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածը նույնպես ընդունում է նշված դրկրիինալ մոտեցումը եւ նախատեսում.

«Ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները եւ ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխությունները, ինչպես նաեւ իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաեւ պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Նայասարանի Նանրապետության միջազգային պարտավորություններին, բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ **իրավիճակներում**) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից»:

14) Սույն կետի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը պահանջում է առաջին հերթին բնորոշել արտակարգ դրության էությունը՝ մարդու իրավունքների, որպես անմիջականորեն գործող իրավունքի, տեսանկյունից, պարզել դրա դերը պետություն-մարդ-հասարակություն հարաբերության մեջ, քննության առնել Կոնստիտուցիոնալ հասկացությունը «իրավունքի սահմանափակում» եզրույթի համարեքսպում, բացահայտել «նորմի» եւ «շեղման», «կանոնի» եւ «բացառության» փոխառնչությունները:

Արտակարգ դրության հիմքում ընկած է պետության գլխի մրահոգությունն իր կողմից երաշխավորվող սոցիալական կյանքի կազմակերպման ձեւը պահպանելու առնչությամբ: Ընդ որում, Սահմանադրությունը Նախագահին չի լիազորում արտակարգ դրություն հայտարարել այդ սոցիալական կյանքի կազմակերպմանը նպաստող ցանկացած, լայն իմաստով ընկալվող, իրավակարգավորման նկատմամբ վրանգի առկայության դեպքում: Եվ ոչ էլ Նախագահն արտակարգ դրություն է հայտարարում սոցիալական կյանքի կազմակերպման այս կամ այն ձեւին կամ դրա հնարավոր փոփոխությանը իր համաձայն լինելու կամ չլինելու դեպքում: «Սահմանադրական կարգին սպառնացող վրանգ» արտահայտությունը նշանակում է վրանգ, որն ուղղված է հասարակական, հետեւաբար՝ եւ պետական կյանքի հիմքերին, որոնց նկատմամբ վրանգն ընդունակ է անհնարին դարձնել ոչ թե հասարակական կամ պետական կյանքի այս կամ այն կազմակերպական ձեւը, այլ ինքնին որեւէ այդպիսի կազմակերպումն ընդհանրապես: Պարահական չէ, որ Սահմանադրությունը խոսում է ոչ թե պետական, այլ սահմանադրական կարգին սպառնացող վրանգի մասին՝ դրա ներքո նկատի ունենալով սահմանադրական հիմքերը ինչպես պետության ինքնիշխանության, ամբողջականության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում:

Այսպիսով, մեկնաբանվող կետում ամրագրված արտակարգ դրություն հայտարարելու հիմքի առաջին բաղադրիչն այն է, որ վրանգն սպառնում է սոցիալական կյանքի կազմակերպվածությանն ընդհանրապես, ինչը եւ արտահայտվում է բուն կազմակերպվածության առավել սահմանագծային բնորոշմամբ՝ սահմանադրական կարգ, որի մեջ մտնում են թե՛ պետության ինքնիշխանությունը, թե՛ կառավարման ձեւը եւ թե՛ մարդու իրավունքներն ու ազատությունները՝ որպես անմիջականորեն գործող իրա-

վունք (ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդված):

Վրանգի մյուս կարեւոր հատկանիշներն են՝ վրանգի առկայությունը (գոյության ռեալությունը՝ սահմանադրական կարգին սպառնալու ունակության րեսասնկյունից) եւ այդ վրանգի անմիջականությունը, որոնք ներկայացվում են սպորեւ: Մեկնաբանվող հոդվածից բխում է, որ Նախագահն արտակարգ դրություն հայտարարելիս անմիջապես հենվում է Սահմանադրության մեջ նշված հիմքերի վրա: Սահմանադրությունը չի նշում, որ արտակարգ դրությունը հայտարարվում է օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով: Մեկնաբանվող կերպի երկրորդ պարբերությունը խոսում է արդեն իսկ «հայտարարված» արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին:

Նախագահն իրավասու է արտակարգ դրության ռեժիմն ապահովող միջոցառումներ նախատեսել՝ այն հայտարարելու հետ միաժամանակ, քանի որ՝

- արտակարգ դրություն հայտարարելու՝ Նախագահի սահմանադրական լիազորության իրականացումը չի կարող լինել անբովանդակ.

- դա բխում է վերը նշված այն հիմքերից, երբ Նախագահի համապատասխան հրամանագրի բուն ընդունման փաստը կանխավարկածում է նախ նշված հիմքերի առկայությունը եւ պետության գլխի կողմից դրանց արձագանքելը, որը չի կարող չպարունակել արդյունավետ արձագանքման միջոցառումներ.

- բուն արտակարգ դրության առումով «սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի» առկայությունն արդեն իսկ իրենից ներկայացնում է իրավաբանորեն դեռեւս չփաստված արտակարգ դրություն, եւ Նախագահը, ըստ էության, համապատասխան հրամանագիրն ընդունելիս արդեն իսկ գործում է արտակարգ դրության պայմաններում: Այսինքն՝ արտակարգ դրությունը ոչ թե սպեղծվում է Նախագահի հրամանագրից հետո, այլ ամրագրվում է դրանով (սա չափազանց կարեւոր է հաշվի առնել՝ կապված Նախագահի հրամանագրով նախատեսվող սահմանափակումների համաչափ լինելու հանգամանքի հետ):

Սահմանադրությունը Նախագահին փայլի է առկա դրության իրավական փաստման ոչ միայն մենաշնորհը, այլեւ, որն ավելի կարեւոր է՝ առաջնահերթությունը: Նման փաստումը նույնպես, ըստ սահմանման, պետք է պարունակի կարգավորող փարբեր (ինչն ուղղակի ամրագրում է Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ մասը): Այս առումով կարեւոր է վերհանել մեկնաբանվող կերպի հարաբերակցությունը Սահմանադրության անցումային դրույթների 117-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների հետ: Վերջինս նախատեսում է. «մինչեւ արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում Նանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին»:

Այս դրույթից բխում է, որ ընդունվելիք օրենքը վերաբերելու է միայն արտակարգ դրության իրավական ռեժիմին, ճիշտ այնպես, ինչպես ռազմական դրության դեպքում: Սակայն, ինչպես արտակարգ, այնպես էլ ռազմական դրություն *հայտարարելու համար* Նանրապետության Նախագահը *չի կարող սահմանափակված լինել այն հիմքերով եւ կարգով, որոնք սահմանված են/կասահմանվեն այդ օրենքներով*: Օրենսդրական կարգավորման ենթակա է միայն նշված դրության իրավական ռեժիմը: Սահմանադրությունը երկու դեպքում էլ հստակորեն լռում է այն օրենսդրական հիմքի մասին, որի հիման վրա Նախագահը հայտարարում է ռազմական կամ արտակարգ դրություն: Նամենապետության համար՝ ՌԴ Սահմանադրությունը նման լռություն պահպանում

է միայն ռազմական դրության հետ կապված, իսկ արտակարգ դրության դեպքում նշում է, որ ՌԳ Նախագահն արտակարգ դրություն է մտցնում «դաշնային սահմանադրական օրենքով նախատեսված հանգամանքներում եւ կարգով»:

Տարբերությունը նշված երկու իրավակարգավորումների միջեւ հետելայալն է. ռազմական դրության դեպքում նշվում են «իրավիճակից թելադրվող» այն միջոցառումները, որոնք *կարող է* իրականացնել Նախագահը ռազմական դրություն հայտարարելու հրամանագրի հետ մեկտեղ՝ «հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք», ինչպես նաեւ «նշանակել եւ ազարել զինված ուժերի գլխավոր հրամանատարին»:

Մինչդեռ «արտակարգ դրության» դեպքում Սահմանադրության անցումային դրույթը՝ 117-րդ հոդվածի 6-րդ մասը, պարզապես նշում է, որ Նախագահը կարող է համապատասխան հրամանագիր կայացնելու հետ մեկտեղ իրականացնել «իրավիճակից թելադրվող միջոցառումները»: Այսպեղ ամենակարեւոր փարբերությունն այն է, որ անցումային դրույթը, ըստ էության, բացառում է համապատասխան օրենքի ընդունումից հետո Նախագահի կողմից «իրավիճակից թելադրված» որեւէ միջոցառման իրականացումը, եւ ապա՝ այդ միջոցառումների իրականացման որեւէ իմպերատիվ նորմ սահմանադրական, թեկուզեւ անցումային դրույթում, չի նշվում, ինչը բխում է այսպեղ առկա լայն ձեւակերպումից՝ «իրավիճակից թելադրվող միջոցառումները»:

Մյուս փարբերությունն այն է, որ ռազմական դրություն հայտարարելու հիմքերը Սահմանադրության մեջ նշված են կոնկրետ՝ «Տանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պարբերազմ հայտարարվելու դեպքերում», մինչդեռ որպես արտակարգ դրություն նախատեսելու հիմք պարզապես նշված է «սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգը»: Ակնհայտ է, որ ռազմական դրության հիմք ծառայող հանգամանքները նաեւ անմիջական վրանգ են սպեղծում սահմանադրական կարգի համար:

Լայն իմաստով՝ «արտակարգ դրություն» հայտարարելիս ՏՏ Նախագահի լիազորություններն օրենքի շրջանակներում սահմանափակված չեն: Առաջին հերթին, սա կարելու է հաշվի առնել մարդու իրավունքների անխուսափելի սահմանափակումների լեգիտիմության փեսանկյունից: Այսպեղ անհրաժեշտ է անդրադառնալ միջազգային իրավական փաստաթղթերին եւ դրանց մարմինների, առաջին հերթին դարական մարմինների, կողմից քրված մեկնաբանություններին՝ նախադեպային իրավունքին: Տենց վերջիններս են ամրագրում պետության կողմից այս իրավիճակներում իրականացվող փարբեր իրավունքների նկարմամբ միջամտության այն սահմանները, որոնցից այն կողմ այդ միջամտությունն իրավունքը սահմանափակող միջոցառումից վերածվում է իրավունքը խախտող միջոցառման: Բացի դրանից, կան իրավունքներ, որոնք նշված են նաեւ ՏՏ Սահմանադրության փքստում, որոնք ընդհանրապես չեն կարող սահմանափակվել արտակարգ դրության ժամանակ, այսինքն՝ նրանց նկարմամբ ցանկացած միջամտություն արդեն իսկ հանդիսանում է այդ իրավունքի խախտում:

Պետք է նշել, որ հենց այդ պետաիշխանական միջամտության ոչ բացարձակ լեգիտիմությունն է, որ հնարավորություն է փալիս խոսելու արտակարգ դրության հենց «իրավական ռեժիմի» մասին: Այսպեղ կարելու է նախեւառաջ միջամտության օրենքով սահմանված լինելը՝ դրա լայն իմաստով, օրենքի որակը՝ խտրականությունները բացառելու, մարդկանց կողմից արտակարգ դրության պայմաններում իրենց գործողությունների հետեւանքների պետության արձագանքը ողջամիտ ճշգրտությամբ կանխատեսելու հնարավորությունը, դրանից բխող՝ սեփական վարքագիծը նշված պայմաններին բավարարող նորմի պահանջներին համակերպելու հնարավորությունը եւ այլն:

Այս ամենի լույսի ներքո անհրաժեշտ է վերհանել «իրավիճակից թելադրվող միջոցառումների» բնույթն ավելի լայն՝ հայեցակարգային մակարդակով: ՆՏ Սահմանադրությունը չի ընդունում պետության, որպես ազգի գոյության քաղաքական ձեռի, կամ պետական իշխանության առաջնայնությունը, գերակայությունը Սահմանադրության եւ մարդու իրավունքների նկատմամբ: ՆՏ Սահմանադրությունը (3-րդ հոդված) հստակ սահմանում է, որ մարդու իրավունքները հանդիսանում են անմիջականորեն գործող իրավունք, որոնցով սահմանափակված է պետությունը: Ակնհայտ է, որ հենց մարդու իրավունքներն են որպես անմիջականորեն գործող իրավունք, սահմանափակում Նախագահի եւ օրենսդրի հայեցողությունը՝ արտակարգ դրության ռեժիմը սահմանելիս: Մարդու իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի այդ սահմանափակող գործառույթը դրսևորվում է արտակարգ դրության ռեժիմի հետեւյալ փարբերով, որոնք առկա են միշտ, բոլոր դեպքերում՝ անկախ այն կոնկրետ արտակարգ դրությունից, որին արձագանքում են ՆՏ Նախագահը կամ Ազգային ժողովը, եւ անկախ արտակարգ դրության ռեժիմի առանձնահատկություններից.

1) ցանկացած արտակարգ դրության ժամանակավոր բնույթը (Սահմանադրության 44-րդ հոդված եւ ՄԻԵԴ-ի նախադեպերը): «Ըստ սահմանման, արտակարգ դրությունը... վրանգին արձագանքելու ժամանակավոր իրավական միջոց է: Մշտական արտակարգ իրավիճակը ներքին հակասություն պարունակող դատողություն է: Դժբախտաբար, արտակարգ դրությունը երբեմն դառնում է բառի բուն իմաստով մշտական, քանի որ այն հայտարարվում է եւ երբեք չի վերացվում կամ շարունակաբար նորոգվում է, կամ էլ այն պարճառով, որ ընթացիկ օրենքներում ամրագրվում են այնպիսի դրույթներ, որոնք իրենց գոյությունը պահպանում են արտակարգ դրությունը դադարեցվելուց հետո»¹: Այս խնդրի հետ է կապվում խորհրդարանի կողմից արտակարգ դրության հիմքերի առկայության համաչափության պարբերական ստուգումը, որը հանդիսանում է ՆՏ ստանձնած պարտավորություններից մեկը ՄԻԵԿ-ի ներքո,

2) մարդու այնպիսի իրավունքների առկայությունը, որոնք որեւէ կերպ չեն կարող սահմանափակվել ցանկացած արտակարգ դրության պայմաններում (Սահմանադրության 44-րդ հոդված եւ ՄԻԵԴ-ի նախադեպերը),

3) սահմանափակման ենթակա մարդու իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է նախատեսված լինի օրենքով, հետապնդի իրավաչափ նպատակ եւ անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակության մեջ: Նակառակ դեպքում արտակարգ դրության ռեժիմով նախատեսված միջամտությունը դառնում է ոչ համաչափ, եւ հենց դրա հետեւանքով էլ՝ հակասահմանադրական: Եվ այստեղ պետք է նշել, որ այդ երեք փարբերի առկայության գնահատումն իրենից ներկայացնում է դատական գործառույթ, որին դարձյալ դիմում է մարդը՝ որպես իր իրավունքների պաշտպանության մի հասցեատիրոջ, որն օժտված է օրինականության, անկախության, մարջելիության եւ խնդրո առարկային վերաբերող փաստի եւ իրավունքի ցանկացած հարցով պարտադիր որոշում կայացնելու լիազորվածության արբիբուրներով: Եվ հենց սրա շնորհիվ է, որ արդարացի դատաքնության իրավունքը մտնում է այն իրավունքների ցանկի մեջ, որոնք ենթակա չեն որեւէ սահմանափակման արտակարգ դրության ցանկացած ռեժիմի պայմաններում:

Արտակարգ դրության վերաբերյալ հիմնական միջազգային նորմերը պարունակվում են Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ եւ ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածներում:

¹ Amnesty international Fair trials manual; <http://www.amnestyusa.org/fair-trials/manual/311-derogation/page.do?id=1104735>.

Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանող օրենքը պետք է հաշվի առնի այս ոլորտում երկրի ընդունած միջազգային իրավական պարտավորությունները: Միաժամանակ, օրենքը պետք է երաշխավորի իրավական որոշակիությունը եւ կամայականությունից արդյունավետորեն պաշտպանելու կարողությունը: Մեկնաբանվող նորմում առկա այդպիսի երաշխիքներ են հանդիսանում պարտադիր կերպով Ազգային ժողովի նիստի հրավիրելու պահանջը եւ խորհրդարանի՝ հայտարարված արտակարգ դրությունը չեղյալ հայտարարելու իրավասությունը: Միջազգային պրակտիկայում մեծ ուշադրություն է դարձվում խորհրդարանական սպուզման արդյունավետությանը: «Արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների մասին նորմերի Փարիզյան նվազագույն չափորոշիչները (*Paris Minimum Standards of Human Rights Norms in a State of Emergency (ILA, 1984, Vol 79 [1985] AJIL 1072*) նախապեսում են. «Յուրաքանչյուր պետության սահմանադրություն պետք է սահմանի արտակարգ դրություն հայտարարելու կարգը. ցանկացած դեպքում, երբ գործադիր իշխանությունը իրավասու է հայտարարել արտակարգ դրություն՝ այդպիսի պաշտոնական հայտարարումը միշտ պետք է ենթակա լինի հաստատման օրենսդրի կողմից՝ հնարավորինս սեղմ ժամկետներում (կեր 1-ին, (b)):

ՄԻԵԴ-ի նախադեպերից հստակ կարելի է հանգել մի կարեւոր եզրակացության, որ Նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիրը պետք է չսահմանափակի խորհրդարանի կողմից նրա հրամանագրի արդյունավետ խորհրդարանական քննարկման հնարավորությունը: Եվ նման սահմանափակումը բացառող հիմնական մեխանիզմը ՆՄ Սահմանադրությունում արտակարգ դրության պայմաններում խորհրդարանը ցրելու արգելքն է (ՆՄ Սահմանադրության 63-րդ հոդված):

Լոուլեան ընդդեմ Բոլանդիայի գործով (կեր 37) վճռում Եվրոպական դատարանը կարեւորել է այն հանգամանքը, որ արտակարգ դրության ռեժիմի վերաբերյալ օրենքի կիրառմանն ուղղված գործադիր մարմնի՝ արտակարգ դրություն մտցնելու մասին հայտարարությունը ենթակա է եղել սպուզման խորհրդարանի կողմից, որը ցանկացած պահի կարող էր չեղյալ հայտարարել այդ հայտարարությունը²: Ինչպես Կոնստանտինոպոլի, ՆՄ Սահմանադրության մեկնաբանվող կետն այս պահանջը լիովին բավարարում է:

Կամայականությունից պաշտպանվելու երաշխիքների առումով, կարեւոր է նաեւ մեկնաբանվող կետի այն դրույթը, որ Նախագահը, նախքան արտակարգ դրություն հայտարարելը, **խորհրդակցում է Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ:** Ճիշտ է, նրանց կարծիքը կրում է խորհրդատվական բնույթ եւ այնպիսի հզոր հակակշիռ չէ, որքան խորհրդարանի՝ որպես կոլեգիալ մարմնի կողմից արտակարգ դրությունը չեղյալ հայտարարելու լիազորությունը (Սահմանադրության 63-րդ հոդված), այնուամենայնիվ, կարեւոր է, որ Նախագահը՝ 1) իր մտադրության մասին պարտավոր է հայտնել օրենսդիր մարմնի ղեկավարին եւ խորհրդարանում մեծամասնություն կազմող քաղաքական ուժի ներկայացուցիչ հանդիսացող վարչապետին, 2) նշված անձանց պարզապես չի ծանուցում իր այդ մտադրության առկայության մասին, այլ սպանում է նաեւ նրանց կարծիքը, ինչը բխում է «խորհրդակցում է» եզրույթից: «Արտակարգ դրություն» հասկացության ինքնավար բնույթի ուժով, նաեւ հաշվի առնելով հենց «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՆՄ օրենքում որպես ռազմական դրության հոմանիշ՝ ՆՄ սրանձնած միջազգային պարտավորությունների փեսանկյունից փակագծերում օգ-

² Հղումն քստ՝ Response to the Joint Committee on Human Rights: Inquiry into UK Derogations from Convention Rights, DAVID ANDERSON Q. C., JEMIMA STRATFORD, 20 May 2002, կետ 1.4.: www.justice.org.uk/images/pdfs/derogations.pdf:

փագործված «արտակարգ իրավիճակներ» եզրույթը, անհրաժեշտ է փյուռ երաշխիքներն ապահովել նաև ռազմական դրություն հայտարարելու կարգի համար:

Նույնպես երաշխիք է հանդիսանում ժողովրդին ուղերձով դիմելը, որը Սահմանադրությամբ, սակայն, նախատեսված է միայն արտակարգ դրություն հայտարարելու դեպքում: Այնուամենայնիվ, այս փեսակերպից բավարար երաշխիքներ է պարունակում «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՏՏ օրենքի 6-րդ հոդվածի (Ռազմական դրություն հայտարարելու մասին Նանրապետության Նախագահի հրամանագրի բովանդակությունը) 2-րդ մասը, որի համաձայն՝ «Ռազմական դրություն հայտարարելու մասին Նանրապետության Նախագահի հրամանագիրը ենթակա է անհապաղ հրապարակման հետևաբարությամբ, ռադիոյով և մամուլով»: Նաև երաշխիք է այս փեսակերպից հանդիսանում օրենքով հրամանագրի բովանդակության բավականին մանրամասն ամրագրումը, որպիսի մոփեցումը պետք է որդեգրվի նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ընդունվելիք օրենքով:

Ինչպես իրավացիորեն նշել է դատավոր Սպերդուտի՝ Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի գործով (Sperduti, dissenting opinion, Cyprus v. Turkey (No.2) (1976) 4 EHR 482)՝ «անկախ նրանից, թե գործ ունենք օրենքի, թե հայտարարության հետ, այդ ակտերի բուն էությանն է ներհատուկ այն, որ դրանք պետք է հրապարակվեն հրապարակայնության որոշակի ձևերի միջոցով: Այնուհետև՝ չի թվում, որ Եվրոպական կոնվենցիայի ոգուց է բխում, որ այն կարող էր վերապահման իրավունք նախատեսել, որը կիրառվեր առանց այդ պետության քաղաքացիներին... անգամ նախագործացնելու, թե ինչպիսի հանգամանքներում և ինչպիսի պայմանների առկայությամբ նրանք կարող են ենթարկվել այն սահմանափակումներին, արգելքներին կամ սանկցիաներին՝ ի հակասություն այն իրավունքների և ազատությունների, որոնք սովորաբար Կոնվենցիան ապահովում է իրենց համար»:

Երաշխիքների թվում կարելի է դիտել նաև վերապահումների մասին ՄԻԵԿ-ի և ԶԶԻՄԴ-ի ավանդապահին, այն է՝ համապատասխանաբար՝ Եվրոպայի խորհրդի և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարներին դիմելը: Միակ պայմանն այսպեղ «ողջամիտ ժամկետում» փեղյակ պահելն է: Լուուեսի գործով բավարար է համարվել փաստերկու օրը: Ավանդապահներին, մասնավորապես ՄԻԵԿ-ի ավանդապահ ԵԽ Գլխավոր քարտուղարին ողջամիտ ժամկետում փեղյակ չպահելը ՄԻԵԿ-ում ամրագրված իրավունքներից շեղումը վերածում է խախտման՝ եթե անգամ պահպանված են մնացած բոլոր երաշխիքները:

Սմանապես և դատական հետազոտման ենթակա լինելը երաշխիք է ինչպես օրենքի իրավականության, այնպես էլ դրանով նախատեսվող և կիրառվող միջոցառումների համաչափության ապահովման համար: Այս երաշխիքը նույնպես ամրագրված է ՏՏ Սահմանադրությամբ, որի 44-րդ հոդվածը սահմանում է արդարացի դատաքննության իրավունքն արտակարգ դրության պայմաններում սահմանափակելու արգելքը:

Արտակարգ դրություն հայտարարելու հիմքում կարող են ընկած լինել բոլոր հանգամանքները, որոնք նախատեսված են օրենքով, և որոնք հետապնդում են նշված իրավաչափ նպատակները: Սակայն դա դեռ չի նշանակում, որ արտակարգ դրություն հայտարարելու իրավաչափությունը նաև ենթադրում է, որ իրավաչափ են այն միջոցառումները, որոնք նախատեսվում են համապատասխան հայտարարությամբ կամ օրենքով: Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (A. v United Kingdom [2009] ECHR 301 paras. 181 and 190) ՄԻԵԿ-ն ընդունել է, որ պետության կողմից... արձագանքը եղել է լեգիտիմ, սակայն գրել է, որ անհամաչափ են եղել այն միջոցառումները, որոնք պետու-

թյունն իրականացրել է այդ օբյեկտիվորեն առկա արտակարգ դրությանն արձագանքելիս: Նենց այսպեղ է, որ գործի է դրվում միջամտության թեստը: Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի գործով ՄԻԵԴ-ը որոշել է, որ անհրաժեշտ է օրինական ճանաչվելու համար պետք է պարզ լինի, որ անհնարին է մարդու իրավունքների նկատմամբ նվազ ներգործություն ունեցող այլ միջոցներով հասնել խնդրի լուծմանը (Lawless v. Ireland, A 3 (1961)):

Այսպեղ իր հստակ արտացոլումն է գրել ՄԻԵԿ համակարգում առկա «սահմանափակող նորմերի սահմանափակ մեկնաբանման պահանջը»: Սրա էությունն այն է, որ ի փարբերություն ՄԻԵԿ-ում ամրագրված կանոնների, որոնք գործում են բոլոր դեպքերում եւ ենթակա են կիրառման իրենց ինքնավար մեկնաբանությամբ, ինչը միշտ իրենից ներկայացնում է ՄԻԵԿ-ի որեւէ եզրույթի փարածական մեկնաբանում, ամրագրված նորմերից արվող բացառությունները կամ շեղումները պետք է ենթարկվեն սահմանափակ մեկնաբանման, առաջին հերթին, ի փարբերություն նորմի կիրառման, որեւէ բացառություն կիրառելու համար միշտ անհրաժեշտ է հիմնավորել այն, եւ երկրորդ՝ բացառությունը կիրառելիս պետք է հիմնավորել նաեւ մարդու իրավունքների նկատմամբ հնարավոր առկա սահմանափակումներից ավելի նվազ ներգործող միջամտությունը չկիրառելու փաստը: Այս իմաստով, խոսքը վերաբերում է պետության վրա դրված սպացուցման պարտականությանը՝ ցույց տալու, որ ոչ միայն անհրաժեշտ է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի (Անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք), 9-րդ հոդվածի (Մտքի, խղճի եւ կրոնի ազատություն), 10-րդ հոդվածի (Արտահայտվելու ազատություն) եւ 11-րդ հոդվածի (Նավաքների եւ միավորման ազատություն) 2-րդ մասերով նախատեսված սահմանափակումների կիրառումը, այլ որ այդ սահմանափակումներն անհրաժեշտ է կիրառել արտակարգ դրության ռեժիմով, եւ կիրառել այլ սահմանափակումներ՝ դրանցում նշվածից բացի:

Սահմանափակող նորմերի սահմանափակ մեկնաբանման պահանջի իրականացումը նպաստում է նաեւ «Ռ-ազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՆՇ օրենքի 14-րդ հոդվածի այն պահանջին, որ «Ռ-ազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները եւ ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխությունները, ինչպես նաեւ իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների»: Նշված մեթոդի արտահայտությունն է նաեւ ՄԻԵԿ-ի 18-րդ հոդվածը (Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները), որի համաձայն Կոնվենցիայում «նշված իրավունքների եւ ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որեւէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են»:

Նենց վերը նշված միջամտության համաչափության դեպքում մարդու իրավունքների սահմանափակումները չեն համարվի դրանց խախտում: Ինչպես նշվեց, սակայն, կան իրավունքներ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որեւէ սահմանափակման, այսինքն՝ որոնց նկատմամբ ցանկացած միջամտություն, եթե անգամ նախատեսված լինի օրենքով եւ հետապնդի իրավաչափ նպատակ, կհանդիսանա խախտում՝ անկախ կոնկրետ իրավիճակից: ՆՇ Սահմանադրության 44-րդ, ԶԶԻՄԴ-ի 4-րդ եւ ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածները նախատեսում են այն իրավունքները, որոնք որեւէ արտակարգ դրության պայմաններում սահմանափակման ենթակա չեն, ընդ որում, երեք աղբյուրներն այս առումով նույնպես որեւէ կերպ չեն փարբերակում ռազմական դրությունն այլ արտակարգ

դրությունից:

Չանդրադառնալով կոնկրետ այդ իրավունքներին, որոնք պարզաբանված են համապարասխան հոդվածների մեկնաբանություններում, այսպեղ անհրաժեշտ է նշել ՆՏ Սահմանադրության եւ նշված աղբյուրների նորմատիվ հարաբերակցության որոշ սկզբունքների մասին: ՆՏ Սահմանադրության 42-րդ հոդվածը (որը նույնպես ենթակա չէ սահմանափակման արտակարգ դրության ժամանակ) նշում է, որ «Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ»: ՆՏ Սահմանադրության 43-րդ հոդվածն էլ հռչակում է, որ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայասարանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մյուս կողմից, ՄԻԵԿ-ն իր 53-րդ հոդվածում (Մարդու առկա իրավունքների երաշխավորումը) նախատեսում է. «Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների եւ հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որեւէ այլ համաձայնագրով»:

Նույնպիսի նորմ է պարունակում ԲԶԻՄԴ-ի 5-րդ հոդվածի 2-րդ մասը. «Չի թույլատրվում սույն դաշնագրին մասնակցող որեւէ պետության մեջ օրենքի, կոնվենցիաների, կանոնների կամ սովորույթների ուժով ճանաչվող կամ գոյություն ունեցող՝ մարդու որեւէ հիմնական իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն պարբերակով, թե սույն դաշնագրում չի ճանաչվում այդպիսի իրավունք կամ, որ այն դաշնագրում ճանաչվում է նվազ ծավալով»:

Ասվածից հետեւում է, որ եթե նշված աղբյուրներից որեւէ մեկը պարունակում է արտակարգ դրության ընթացքում սահմանափակման ոչ ենթակա իրավունք, ապա այդ նորմը ենթակա է կիրառման որպես միաժամանակ բոլոր աղբյուրների, առաջին հերթին՝ եւ ՆՏ Սահմանադրության, եւ ՄԻԵԿ-ի պահանջ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2006(13) հանձնարարականը՝ «Նախնական կալանքի օգտագործման, այն կիրառելու պայմանների եւ խախտումների դեմ երաշխիքների մասին», նշում է, որ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածում նշված արտակարգ դրության առկայությունը՝

- չպետք է հանգեցնի նրան, որպեսզի արգելանքի վերցնելու պահից մինչեւ նախնական կալանքի փակ պահելու հարցը որոշելու համար դատական մարմնի մոտ փարվելու միջեւ ժամանակահատվածը լինի յոթ օրից ավելի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նիստ անցկացնելը բացարձակապես անհնար է,

- չպետք է ազդի նախնական կալանքի փակ գտնվող կալանավորի՝ իր կալանքի օրինականությունը վիճարկելու իրավունքի վրա,

- որպես կանոն, չպետք է ազդի նախնական կալանքի վերաբերյալ վարույթի հետ կապված պաշտպան ունենալու եւ նրա հետ խորհրդակցելու իրավունքի վրա:

Բացի վերը նշված աղբյուրներից, արտակարգ դրության ժամանակ բացարձակ իրավունքների մասին նորմեր են պարունակում նաեւ մարդու որեւէ կոնկրետ իրավունքին նվիրված միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի՝ Խոշորանգամների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պարտի դեմ կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Կա-

նանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան եւ այլն:

15) Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ որպես պետության գլխի, կարգավիճակը ձեւավորող լիազորությունների թվում առանձնապես կարեւորվում է այն, որ նա օրենքով սահմանված կարգով լուծում է ՀՀ քաղաքացիության եւ քաղաքական ապաստան փախու հետ կապված հարցերը:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ կապված հարցերը: Տարակեցնելով վերոհիշյալ սահմանադրական նորմը՝ 1995թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է, որ Հանրապետության Նախագահը լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը: Նշված բոլոր հարցերի վերաբերյալ Նախագահը հրապարակում է հրամանագրեր:

Քաղաքացիության հարցերով զբաղվող մյուս մարմիններն իրականացնում են միայն նախապարաստական գործողություններ: Այդ մարմիններից համեմատաբար լայն լիազորություններ ունի Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածին համապատասխան այդ հանձնաժողովը կազմավորում է նրա կանոնադրությունը հաստատում է Հանրապետության Նախագահը: Այդ նորմի հիման վրա Հայաստանի Հանրապետության Նախագահը 1999թ. հուլիսի 23-ին ընդունել է երկու հրամանագիր, որոնցով հաստատել է հանձնաժողովի կազմը եւ կանոնադրությունը:

Ինչպես նախատեսված է կանոնադրության մեջ՝ հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, եւ ինչպես նրա նախագահը, այնպես էլ անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական կարգով: Սակայն դա չի խանգարում, որ հանձնաժողովն զբաղվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ գործերով եւ ապահովի պետության միասնական քաղաքականությունը քաղաքացիության ոլորտում: Հանձնաժողովի իրավասության մեջ է մտնում ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու, ՀՀ քաղաքացիության խմբային ձեռքբերման, ՀՀ քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումների նախնական քննարկումը եւ դրանց կապակցությամբ Հանրապետության Նախագահին առաջարկություններ ներկայացնելը (3-րդ կետ):

Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող՝ ՀՀ քաղաքացիության վերաբերյալ նյութերի նախապարաստումն իրականացնում է Հանրապետության Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզեցման եւ կոչումների վարչությունը: Այդ վարչության միջոցով հանձնաժողովն իր քննարկմանը ներկայացված նյութերի վերաբերյալ պետական մարմիններից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Վերոհիշյալ վարչության վրա է դրված նաեւ ՀՀ Նախագահի կողմից ՀՀ քաղաքացիություն փախու կամ դադարեցնելու կապակցությամբ ընդունված հրամանագրի կատարման վերահսկողությունը:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Հանրապետու-

թյան Նախագահը լուծում է նաև քաղաքական ապաստան փախու հարցը:

Քաղաքական ապաստանի փրամադրման միջազգային իրավական ընդհանուր հիմք է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի 14-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի հեղափոխական ապաստան փրամադրելու այլ երկրներում եւ իրեն նրան փրամադրված ապաստանից: Սակայն այդ իրավունքը չի կարող փրվել, եթե անձի հեղափոխական հիմքում ընկած է ոչ քաղաքական բնույթի հանցագործության կամ այնպիսի արարքի կատարումը, որը հակասում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Քաղաքական ապաստանի փրամադրման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 1967թ. դեկտեմբերի 14-ին ընդունել է Տարածքային ապաստանի մասին հռչակագիրը: Նամաձայն այդ հռչակագրի՝ ապաստան փախու իրավունքը պայմանավորված է պետության ինքնիշխանությամբ, որը պետք է հարգվի մյուս պետությունների կողմից: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում անձին քաղաքական ապաստան փրամադրելու կամ չփրամադրելու հարցը: Սակայն պետություններն այս հարցում բացարձակապես ազատ չեն. նրանք պարտավոր են հաշվի առնել այն հանգամանքը, որ մի շարք միջազգային պայմանագրեր, հատկապես միջազգային մարդասիրական իրավունքի բնագավառում գործող դաշնագրերը, արգելում են խաղաղության եւ մարդկության դեմ ուղղված հանցագործություն կամ զինվորական հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառել վաղեմության ժամկետ: Բնական է, որ նման անձանց քաղաքական ապաստան փրամադրելով՝ պետությունը կիսախորհրդային միջազգային փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները: Այդ մասին ուղղակիորեն նշված է Տարածքային ապաստանի մասին հռչակագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում, որի համաձայն անձն ապաստան խնդրելու եւ դրանից օգտվելու իրավունք չունի, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա կատարել է խաղաղության դեմ ուղղված հանցագործություն, ազանական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Նայաստանի Նանրապեղծությունում քաղաքական ապաստանի իրավունք ստանալու հիմքերը, կարգը, այդպիսի իրավունք ստանալու դիմումը մերժելու, փրված իրավունքը դադարեցնելու պայմանները սահմանված են «Քաղաքական ապաստանի մասին» 2001թ. սեպտեմբերի 26-ին ընդունված ՏՏ օրենքով: Նամաձայն այդ օրենքի 3-րդ հոդվածի՝ քաղաքական ապաստանը, սույն օրենքով սահմանված կարգով օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին փրված Նայաստանի Նանրապեղծությունում առանձնահատուկ կացություն է, որը նպատակ ունի այդպիսի կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացուն ՏՏ փրամադրում պաշտպանել այն քաղաքական հեղափոխումներից, որին նա ենթարկվել է իր քաղաքացիության կամ մշտական բնակության երկրում եւ որին նա կենթարկվել այդ երկրում, եթե նրան Նայաստանի Նանրապեղծությունում ապաստան չփրամադրվել: Ընդ որում, քաղաքական հեղափոխում ասելով՝ նկատի է առնվում օտարերկրյա քաղաքացու նկատմամբ այդ երկրի պետական մարմինների կամ վերջիններիս թողությունամբ՝ այդ երկրի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից իրականացվող ֆիզիկական, հոգեբանական կամ որեւէ այլ ճնշումը, որն անհատապես ուղղված է այդ անձի քաղաքական համոզմունքների փոփոխմանը, այդ երկրի կամ այլ պետության պետական մարմինների կամ գործիչների գործողությունների դեմ այդ անձի արտահայտված հրապարակային քննադատական ելույթների կանխմանը, որոնք բացառապես առնչվում են ճնշման ենթարկվող անձի քաղաքական համոզմունքների եւ արտահայտված կարծիքների՝ միջազգային իրավունքի նորմերով հռչակված՝ մարդու իրավունքների եւ ազատությունների

դրսետրմանը:

Օրենսդրությունը հստակ սահմանում է քաղաքական ապաստան ստանալու կարգը: Մասնավորապես, օտարերկրյա պետություններում գտնվող օտարերկրյա քաղաքացիները ՏՏ-ում քաղաքական ապաստանի իրավունք ստանալու համար դիմումը կարող են ներկայացնել այդ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ եւ հյուպատոսական հիմնարկներ, իսկ ՏՏ մուտք գործած օտարերկրյա քաղաքացիները՝ ՏՏ կառավարության լիազորած պետական մարմին փարաժքային կառավարման նախարարություն³:

ՏՏ դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկն օտարերկրյա քաղաքացու դիմումը եւ անհրաժեշտ մյուս փաստաթղթերն ստանալուց հետո՝ փաստօրյա ժամկետում դրանք Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է փարաժքային կառավարման նախարարություն: Համապատասխան փաստաթղթերն ստանալուց հետո փարաժքային կառավարման նախարարությունը մեկամսյա ժամկետում հայցողի դիմումի եւ դրան առնչվող բոլոր փաստաթղթերի հիման վրա կազմում է առաջարկություն եւ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին: Հանրապետության Նախագահը փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում որոշում է ընդունում հայցողին Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունք տալու կամ մերժելու վերաբերյալ: Այն դեպքում, երբ դիմումի քննարկումը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն, որոշման ընդունումը կարող է երկարաձգվել մինչև 3 ամիս:

Քաղաքական ապաստանի իրավունքը տրվում է մեկ փարի ժամկետով, որը փարաժքային կառավարման նախարարության ներկայացմամբ եւ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ մեկ փարի ժամկետով:

Հանրապետության Նախագահը լիազոր պետական մարմնի առաջարկության հիման վրա կարող է դադարեցնել քաղաքական ապաստանի իրավունքը, եթե՝

ա) լրացել է քաղաքական ապաստանի իրավունքի գործողության ժամկետը, եւ անձը չի դիմել դա երկարաձգելու համար, կամ վերացել են այն պայմանները, որոնք քաղաքական ապաստանի իրավունք տալու հիմք են հանդիսացել,

բ) քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,

գ) մշտական բնակության է մեկնել որեւէ այլ պետություն կամ ստացել է որեւէ այլ պետության քաղաքացիություն,

դ) Հայաստանի Հանրապետության օրենքով դատվածի է արձակվել քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձի նկատմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել, կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ քրեական հետապնդման նպատակով հանձնվել է այլ պետության իրավասու մարմիններին, այդ թվում՝ այն պետությանը, որի քաղաքացին է կամ որտեղ մշտական բնակության վայր է ունեցել՝ նախքան քաղաքական ապաստանի իրավունք ստանալը,

ե) լիազոր պետական մարմին չի ներկայացրել իր նկատմամբ քաղաքական հետապնդումը շարունակելու հանգամանքը հաստատող փաստաթղթեր կամ տրեղեկություններ,

³ Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. մարտի 7-ի թիվ 211 որոշման՝ ՀՀ կառավարության լիազորած պետական մարմին ճանաչվեց տարաժքային կառավարման նախարարությունը:

զ) Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք է բերել փախստականի կամ օրենքով նախապետված որևէ կացության կարգավիճակ:

16) Մեկնաբանվող կետով ամրագրված լիազորությունները դասվում են պետության գլխի ավանդական լիազորությունների թվին եւ հատուկ են գրեթե բոլոր պետությունների ղեկավարներին՝ անկախ գոյություն ունեցող կառավարման ձեւից: Նշված լիազորություններին բնորոշ է երկու ընդհանուր հատկանիշ. 1. Նախագահը դրանք իրականացնում է Նայաստանի Նանրապետության անունից, 2. դրանք իրականացվում են քաղաքացիների, այլ ֆիզիկական անձանց (օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձինք եւ այլն) մասնակցությամբ հարաբերություններում:

ՆՆ Նախագահի՝ Նայաստանի Նանրապետության շքանշաններով եւ մեդալներով պարգևատրելու լիազորությունը հիմնականում սահմանափակվում է սոսկ պարգևատրման գործառնությով: Ընդ որում, Կոլյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ խոսքը ոչ թե ընդհանրապես ցանկացած մեդալի կամ շքանշանի (շքանշաններ եւ մեդալներ կարող են հիմնել նաեւ փառքեր գերապետություններ, սպեղծագործական միություններ, հասարակական այլ կազմակերպություններ) մասին է, այլ Նայաստանի Նանրապետության շքանշանների ու մեդալների մասին, որոնք պետական պարգևների փառապետակ են եւ շնորհվում են Նայաստանի Նանրապետությանը մատուցած ակնառու եւ բացառիկ ծառայությունները նշելու համար: Բուն պարգևները՝ շքանշաններն ու մեդալները, հիմնում է ՆՆ Ազգային ժողովը, որը դրանց վերաբերյալ ընդունում է հատուկ օրենքներ: Այդ օրենքներով են սահմանվում շքանշանների ու մեդալների անվանումները, պարգևատրման կարգը, դրանք կրելու կանոնները եւ այլն: Պետական պարգևներով պարգևատրման միջնորդությունը հարուցվում է Նայաստանի Նանրապետության կառավարության, ինչպես նաեւ նախարարությունների ու գերապետությունների կողմից: Պարգևների շնորհումը կատարվում է անձամբ Նախագահի կողմից կամ, նրա հանձնարարությամբ՝ վարչապետի, նախարարների եւ գերապետությունների ղեկավարների կողմից:

Նայաստանի Նանրապետության շքանշաններն ու մեդալները շնորհվում են Նայաստանի Նանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, Նայաստանի Նանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի զորամասերին: Նայաստանի Նանրապետության Նախագահը չի կարող պարգևատրվել Նայաստանի Նանրապետության պարգևներով: Պետական պարգևների արժանացած անձինք ունեն դրանք մշտապես կրելու իրավունք եւ Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են արտոնություններից:

Նայաստանի Նանրապետության շքանշանների ու մեդալների փետակները սահմանված են «Պետական պարգևների մասին» ՆՆ օրենքով (22 ապրիլի 1994 թվականի, ՆՕ-95): Կամաձայն այդ օրենքի՝ Նայաստանի Նանրապետության բարձրագույն կոչումը «Նայաստանի ազգային հերոս» կոչումն է, որին արժանացած անձանց հանձնվում է Նայրենիքի շքանշան: Դրանից բացի, ներկայումս Նայաստանի Նանրապետությունում ընդունվել եւ գործում են՝ «Մարտական Խաչ» շքանշանի մասին» (29.02.1994թ., ՆՕ-97), «Պատվո շքանշանի մասին» (06.07.2002թ., ՆՕ-76), «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի մասին» (06.07.1993թ., ՆՕ-72), «Տիգրան Մեծ» շքանշանի մասին» (20.05.2002թ., ՆՕ-354-Ն), «Վարդան Մամիկոնյան» շքանշանի մասին» (20.05.2002թ., ՆՕ-355-Ն) Նայաստանի Նանրապետության օրենքները, ինչպես նաեւ՝ «Նայրենիքին

մաքուցած ծառայությունների համար» մեղալի մասին» (20.05.2005թ., ՎՕ-111-Ն), «Արիության մեղալի մասին» (23.05.1993թ., ՎՕ-65), «Մարտական ծառայության մեղալի մասին» (23.06.1993թ., ՎՕ-66), «Վասարական կարգի գերազանց պահպանման համար» մեղալի մասին» (20.05.2005թ., ՎՕ-112-Ն), «Մխիթար Գոշի մեղալի մասին» (23.06.1993թ., ՎՕ-67), «Մխիթար Ներացու մեղալի մասին» (23.06.1993թ., ՎՕ-68), «Անահա Շիրակացու մեղալի մասին» (23.06.1993թ., ՎՕ-69), «Մովսես Խորենացու մեղալի մասին» (23.06.1993թ., ՎՕ-70) Նայասրանի Նանրապետության օրենքները:

Բարձրագույն զինվորական՝ գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, գեներալ-գնդապետ, բանակի գեներալ կոչումները շնորհելու՝ Նայասրանի Նանրապետության Նախագահի լիազորությունը, ըստ էության, ՎՍ Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված լիազորությունների պրամաբանական շարունակությունն է: Բարձրագույն զինվորական կոչումներ շնորհվում է հարուկ հրամանագրով (անհատական բնույթի նորմատիվ ակտ): «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՎՍ օրենքում (03 հուլիսի 2002թ., ՎՕ-380-Ն) նույնացված է «բարձրագույն զինվորական կոչում» հասկացությունը «բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչում հասկացության հետ»: Նարկ է նշել, որ ՎՍ Նախագահի լիազորությունները չեն սահմանափակվում միայն բարձրագույն զինվորական կոչումների շնորհմամբ: Նանրապետության Նախագահն է հաստատում բարձրագույն հրամանատարական է բարձրագույն սպայական պաշտոնների ցանկը (օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս), նա կարող է զրկել բարձրագույն զինվորական կոչումից կամ վերականգնել այն, բացի դրանից, բարձրագույն հրամանատարական կազմը զինվորական ծառայությունից արձակվում է նույնպես Նանրապետության Նախագահի հրամանագրով (օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասեր):

Գիտության, կրթության, մշակույթի, գրականության, լրագրության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, տնտեսության բնագավառների ականավոր գործիչներին և կոլեկտիվներին պատվավոր կոչումները շնորհելու կարգը, դրանց տեսակները սահմանված են «Նայասրանի Նանրապետության պատվավոր կոչումների մասին» Նայասրանի Նանրապետության օրենքով (11.06.2004թ., ՎՕ-105-Ն): Նամաձայն այդ օրենքի՝ Նայասրանի Նանրապետությունում սահմանված են հետեյալ պատվավոր կոչումները՝ Նայասրանի Նանրապետության գիտության վաստակավոր գործիչ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր մանկավարժ, Նայասրանի Նանրապետության ժողովրդական արտիստ, Նայասրանի Նանրապետության ժողովրդական նկարիչ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր արտիստ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր նկարիչ, Նայասրանի Նանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Նայասրանի Նանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր ճարտարապետ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր լրագրող, Նայասրանի Նանրապետության վաստակավոր բժիշկ, Նայասրանի Նանրապետության վաստակավոր իրավաբան, Նայասրանի Նանրապետության տնտեսության վաստակավոր աշխատող, Նայասրանի Նանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, վաստակավոր մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող, Նայասրանի Նանրապետության վաստակավոր կոլեկտիվ:

Չնայած այն հանգամանքին, որ պատվավոր կոչումների շնորհման ներկայացնում է Նայասրանի Նանրապետության կառավարությունը՝ Նախագահին ուղղված գրավոր միջնորդագրերի միջոցով, այնուամենայնիվ, Նախագահը կարող է պատվավոր կոչումներ շնորհել նաև անձնական նախաձեռնությամբ:

ՏՏ Նախագահին է սահմանադրորեն վերապահված նաեւ բարձրագույն դիվանագիտական աստիճանների շնորհումը: Նայաստրանի Նանրապետության բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝ Նայաստրանի Նանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի աստիճանը, Նայաստրանի Նանրապետության արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարարի աստիճանը: Նախագահն օժտված է ինչպես բարձրագույն դիվանագիտական աստիճաններ շնորհելու, այնպես էլ դրանցից զրկելու իրավասությամբ: Դիվանագիտական այլ աստիճանները շնորհում եւ դրանցից զրկում է Նայաստրանի Նանրապետության արտաքին գործերի նախարարը:

Մեկնաբանվող կետում «այլ դասային աստիճաններ» արտահայտությունը ենթադրում է՝ ա) որ օրենսդիրը կաշկանդված չէ եւ կարող է սահմանել պետական գործունեության փարբեր ոլորտների եւ ծառայությունների աշխատակիցների համար նախատեսված նոր դասային աստիճաններ եւ բ) որ, այնուամենայնիվ, թե սահմանված եւ թե ապագայում սահմանվելիք բարձրագույն դասային աստիճանները շնորհում է Նայաստրանի Նանրապետության Նախագահը:

Ներկայումս Նայաստրանի Նանրապետության դատավորների, դատախազների, ոստիկանության, հարկային, մաքսային մարմինների եւ պետական ծառայության այլ փեսակների աշխատակիցների բարձրագույն դասային աստիճանները սահմանված են փարբեր իրավական ակտերով: Այսպես՝ «Դատախազության մասին» ՏՏ օրենքի (22.02.2007թ., ՌՕ-126-Ն) համաձայն դատախազության աշխատակիցների բարձրագույն դասային աստիճաններն են՝ արդարադատության պետական խորհրդականի, արդարադատության առաջին դասի պետական խորհրդականի, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները, իսկ դատական ծառայության բարձրագույն դասային աստիճանները՝ Նայաստրանի Նանրապետության դատական ծառայության 1-ին եւ 2-րդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճաններն են («Դատական ծառայության մասին» ՏՏ օրենք (07.07.2006թ., ՌՕ-159-Ն)):

17) Ինչպես երեւում է մեկնաբանվող կետի ձեւակերպումից, սա ՏՏ Նախագահի այն լիազորություններից մեկն է, որը չի պահանջում որեւէ օրենքի կամ այլ իրավական ակտի գոյություն եւ գոյության դեպքում էլ՝ Նախագահը չի կարող սահմանափակված լինել դրանցով: Այս կետը չի նշում, Սահմանադրության այլ դրույթները նույնպես, որ այս լիազորությունն իրականացնելու համար պետք են որեւէ այլ «օրենսդրական հիմքեր եւ կարգ», որոնց հիման վրա Նախագահը կիրականացնէր սահմանադրական իր այս իրավունքը: Այս առումով, ՏՏ Նախագահի 2003թ. նոյեմբերի 19-ի՝ «Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու կարգը հաստատելու մասին» հրամանագիրը չի կարող որեւէ սահմանափակում նախատեսել Նախագահի կողմից իր այս լիազորությունն իրականացնելու համար՝ ինչպես, օրինակ՝ որեւէ հանձնաժողովի դրական եզրակացությունը, պարզամավորների որեւէ խմբի նախաձեռնությունը կամ հենց դատապարտյալի նախաձեռնությունը կամ համաձայնությունը:

Նշվածը միաժամանակ հիմնավորվում է երկու փեսանկյունից. 1) Նախագահի հիշատակված հրամանագիրը, ինչպես նշվեց, չունի սահմանադրական «արմար», 2) զուր նորմերի ուղղահայաց մրցակցության փեսանկյունից Սահմանադրությունը, որը նախատեսում է, որ Նախագահն այդ լիազորությունն իրականացնում է բոլոր դեպքերում՝ միայն թե առկա լինի դատապարտյալի սուբյեկտը, գերակայում է ցանկացած այլ իրավական ակտի նկատմամբ, որը նախատեսում է, որ Նախագահն իրավունք ունի դա

կիրառել ոչ բոլոր դեպքերում: Այսինքն՝ կարող է դա անել բացառապես ոչ սեփական նախաձեռնությամբ կամ, ասենք, միայն միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ, կամ այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր կրել են պարժի կեսը, երկու երրորդը եւ այլն: Այսպես խոսք չի կարող գնալ այն մասին, որ, օրինակ, ստորադաս իրավական ակտն ապահովում է սահմանադրական դրույթի իրացումը եւ պետք է կիրառվի որպես հատուկ նորմ (*lex speciale*): Դա ճիշտ կլիներ, եթե այդ իրավական ակտի լեգիտիմության «արմատը», առաջին հերթին, տրված լիներ հենց սահմանադրական րեքսպում, եւ երկրորդ՝ անգամ նշվելու դեպքում էլ, երբեք սահմանադրական նորմի իրականացումն ապահովող նորմը չի կարող հակասել սահմանադրական նորմին, նախարեսել սահմանադրական նորմի ավելի նեղ (մանավանդ մարդու իրավունքները սահմանափակող) կիրառում, քան նախարեսված է հենց սահմանադրական նորմով:

Կիրառումն ապահովող նորմի րեսանկյունից այսպես առկա է միայն «դատապարտյալներ» եզրույթի սահմանումը տվող քրեադատավարական օրենսգրքի անհրաժեշտությունը, որը բխում է հենց սահմանադրական մեկ այլ նորմից, այն է՝ Սահմանադրության 21-րդ հոդվածից, որի համաձայն միայն օրենքով սահմանված կարգով անձը կարող է դատապարտվել եւ միայն դատարանի կողմից: Այսպես հստակ առկա է սահմանադրական արմատը՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն դատապարտյալ չհամարվող անձը չի կարող այդպիսին դիտվել Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի րեսանկյունից, եւ սա հենց սահմանադրական մեկ այլ նշված նորմի պահանջն է:

Նախագահի լիազորություններին վերաբերող՝ մեկնաբանվող այս կետում նշված է ընդամենը երեք բառ՝ «ներում», «շնորհել», «դատապարտյալներին»: Ներկայացնենք այս եզրույթները համառոտ՝ հաշվի առնելով, դարձյալ, որ դրանք իրենց կիրառելիության րեսանկյունից ինքնաբավ են եւ կարիք չունեն որեւէ նախապայմանի առկայության:

«Ներում» եզրույթը նշանակում է դատապարտյալին պարիժը կրելուց ազատելը՝ մասնակի կամ լրիվ: Այս ներման ծավալների մեջ անհրաժեշտ է պարզել Նախագահի ներման գործառնության իրական էությունը, որը հակասության մեջ չի գտնվի անձին մեղավոր ճանաչելու եւ պարժի ենթարկելու դատարանի բացառիկ իրավասության հետ: Այս րեսակետից պետք է լուծել այն հարցը, թե արդյոք Նախագահն իրավունք ունի նշանակված պարիժը փոխելու ավելի մեղմ պարժով:

Քրեական օրենսգրքի նույն՝ 83-րդ հոդվածը սահմանում է, որ «Վանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարժից, կամ պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Որպես փաստարկ այն դիրքորոշման, որ նման իրավունք ՏՏ Նախագահը չունի, կարելի է բերել այն, որ պարժի փոփոխումը ոչ թե ինքնուրույն գործառնություն է, այլ մեկ պարժի փոխարեն մեկ այլ պարիժ նշանակելու արդյունք, ինչը միանգամայն դատական գործառնություն է, եւ ոչ ոքի չպետք է շփոթեցնի այն, թե արդյոք մեղմ պարիժն է փոխարինվում ավելի ծանրով, թե՛ հակառակը: Սակայն նույնը կարելի է ասել ոչ միայն պարժարեսակի, այլ նաեւ պարժազատի առումով, ինչի արդյունքում, եթե հետեւելու լի ենենք այս փաստարկի րրամաբանությանը, Նախագահն իրավունք չունի նաեւ կրճարելու պարժի չափը: Այս րրամաբանությամբ՝ «Նախագահը ներում է շնորհում դատապարտյալներին» դրույթը կնեղացվեր այն աստիճան, որ կընկալվի. «ՏՏ Նախագահը

ներում է շնորհում» դաբապարտյալներին միայն պարտից լրիվ ազատելու եւ պարտա-
չափի մեղմացման մասով:

Պարտաչափը եւ պարտարեսակը մտնում են պարիժ ընդհանուր հասկացության
մեջ եւ «ՏՏ Նախագահը ներում է շնորհում դաբապարտյալներին» դրույթը ներառում է
այդ երկուսը միասին: Բացի դրանից, եթե պետության գլխի լիազորությունների մեջ
ընդգրկված է պարտից ընդհանրապես ազատելու իրավունքը, ապա ակնհայտ է, որ նա
լիազորված է այդ իրավունքն իրականացնել նաեւ մասամբ, իսկ պարտի մեջ է մտնում
պարտի ինչպես չափը, այնպես էլ տեսակը:

Դատական իշխանության հետ փոխհարաբերությունների տեսակերից սահմա-
նադրականության առումով խնդրահարույց են ՏՏ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի
այն դրույթները, որոնցով ներումը ներառում է նաեւ դատվածությունը վերացնելը: Արդ-
յունքում խախտվում է քաղաքացիների դատարանի եւ օրենքի առջեւ հավասարության
սկզբունքը: Ներման ծավալի մեջ չի կարող մտնել դատվածությունը վերացնելը, քանի
որ դատվածության մարումն ինքնին պարտից դուրս է եւ այն կատարվում է բացառա-
պես օրենքով սահմանված կարգով եւ հիմքերով (տե՛ս քրեական օրենսգրքի 84-րդ հոդ-
վածը): Բացի դրանից, դատվածության մարումը վերացնում է դատվածության փաստը,
այն դարձնում իրավաբանորեն առջին:

Դրանից բացի, քրեաիրավական ներկայիս կարգավորման շրջանակներում, մի
կողմ թողնելով դրա սահմանադրականության եւ միեւնույն արարքի համար մեկ անգա-
մից ավելի դաբապարտվելու արգելքի խնդիրը, դատվածության առկայությունը հան-
դիսանում է ՏՏ քրեական օրենսգրքի հարուկ մասի մի շարք հոդվածների դիսպոզի-
ցիաների որակյալ հարկանիշ: Այս առումով, ՏՏ Նախագահի կողմից դաբապարտյա-
լին ներում շնորհելու իրավունքը երբեք չպետք է հանգեցնի նրան, որ այդ անձի կողմից
կատարվելիք արարքը հետագայում այլ կերպ որակվի, քան մեկ այլ նախկինում դաբա-
պարտված անձի կողմից կատարվող արարքը, որը չի արժանացել ներման նախորդ հան-
ցագործության համար դաբապարտվելուց հետո: Մեկնաբանվող դրույթը հստակ
սահմանում է, որ Նախագահը ներում է շնորհում դաբապարտյալներին, ինչը չի կարող
հանգեցնել նրան, որ այդ անձի հասարակական վրանգավորության, հետեւաբար՝ նրա
կողմից ապագայում կատարվելիք *հանցագործության* հանրային վրանգավորությու-
նը նույնպես իջեցվի Նախագահի կողմից, ընդ որում՝ մի այնպիսի լիազորության իրակա-
նացմամբ, որն ամբողջովին հայեցողական է, չի պահանջում պարճառաբանություն եւ
հիմնավորում: Չուր լեզվաբարամբանական մեկնաբանությամբ էլ, եթե ամրագրվում է,
որ «Նախագահը ներում է շնորհում դաբապարտյալներին», ապա դա երբեք չի կարող
նշանակել, որ ներված անձինք դրա հետեւանքով դադարում են դաբապարտյալ լինե-
լուց: Նախագահի գործառույթը, որն իրականացվում է այսպեղ կոնկրետ մեկ սուբյեկտի
նկատմամբ, կամ կարելի է ասել նաեւ դատվածության փաստ-օբյեկտի նկատմամբ, չի
կարող իրականացվել այնպես, որ դադարեն գոյություն ունենալուց թե՛ այդ սուբյեկտը եւ
թե՛ այդ օբյեկտը, որոնք, ամենից բացի, միակ պարտադիր նախապայմանն են Նախա-
գահի կողմից նշված գործառույթն իրականացնելու՝ թե՛ հիմքի եւ թե՛ շրջանակների առու-
մով:

Այս ինստիտուտի իմաստը հենց նախկին դատվածությունները որպես արարքի ո-
րակյալ հարկանիշ հանդիսանալու մեջ: ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի ուժով անձը չպետք է
երկու անգամ պարտվի՝ դրա ինքնավար իմաստով, միեւնույն արարքի համար, մեկ ան-
գամ՝ դաբապարտվելուց հետո նրա նկատմամբ ավելի ծանր պարիժ նախարեսելով ոչ
թե՛ նոր կատարված արարքի, այլ դրա հետեւանքով պարտի դաբապարտված լինելու

համար: Նույն հանցագործությունը փարբեր անձանց կողմից կատարվելիս չպետք է դիտարկվի ավելի կամ նվազ վրանգավոր, եւ նույն հանցանքի համար փարբեր մարդկանց համար չպետք է օրենքով ի սկզբանէ նախատեսվեն փարբեր պարժաչափեր: Ներեւաբար, քրեական օրենսգրքից դարվածությունները որպէս իրավաբանորէն նշանակալի փաստեր դուրս բերելու պարագայում, անիմաստ կդառնա նաեւ օրենսգրքի 83-րդ հոդվածի՝ դարվածությունը ներմամբ վերացնելու մասին դրույթը, եւ դրա կիրառելիությունն ինչպէս մեկնաբանվող նորմի, այնպէս էլ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի տեսանկյունից, լիովին կհամապարասխանի Սահմանադրության մեկնաբանվող դրույթին:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ համաներման ակտով նույնպէս անձի դարվածությունը չի կարող վերացվել:

Այսպիսով, «ներում» եզրույթը նշանակում է դատարանի ուժի մեջ մտնող դարվածութիւնը նշանակված ցանկացած պարժի կրումից, ինչպէս պարժաչափի, այնպէս էլ պարժաբեռակի մասով, լրիվ կամ մասնակի ազատելը եւ չի նշանակում այդ պարժի առկա փաստն իրավաբանորէն առջինն դարձնել:

«Շնորհելը» իրենից ներկայացնում է պետության գլխի կողմից իրականացվող գործողությունը, որով ամրագրվում է ներման փաստը: Ինքնին այդ գործողությունն իրենից ներկայացնում է այն գործընթացի վերջնական արդյունքը, որն ապահովում է ներման շնորհումը միայն այն դատապարտյալներին, ովքեր արժանի են դրան: Նախագահին կից ստեղծված հանձնաժողովը, Նախագահի աշխատակազմի համապարասխան ստորաբաժանումը մասնակցում են այդ գործընթացին: Սակայն վերջիններիս կողմից փրկված եզրակացությունը, առաջարկությունը Նախագահի համար ունեն միայն կարծիքի կարգավիճակ: Պետության գլխի համար այդ երկու մարմինների կարծիքները հավասարապէս ոչ պարտադիր են:

Սակայն Նախագահի համապարասխան հրամանագրերով ստեղծված նշված մարմինների գործունեությունը հենց Նախագահի կողմից կանխավարկաձևով է որպէս արժեքավոր կարծիք տալուն ընդունակ: Այդ կարծիքները նրան միայն օգնում են իրացնելու իր սահմանադրական հայեցողությունը, չեն հանդիսանում դրա իրացման պարտադիր փուլեր: Նախագահը պարտավոր չէ պարճառաբանել ներման մասին իր որոշումը, ինչում արտահայտվում է նրա՝ որպէս պետության գլխի գործառույթը:

«Դատապարտյալը» այն անձն է, ում նկատմամբ գոյություն ունի ուժի մեջ մտնող մեղադրական դատավճիռ: Սրանից բխում է, որ ներման գործառույթը Նախագահը կարող է իրականացնել անկախ նրանից, թե արդյո՞ք դատապարտյալը սպառել է ուժի մեջ մտնող մեղադրական դատավճիռը բողոքարկելու հնարավորությունը, թե՛ ոչ:

Դատապարտվելու դեպքում անձի անմեղության կանխավարկաձևը բացասվում է օրինական ուժի մեջ մտնող մեղադրական դատավճիռի օրինականության եւ հիմնավորվածության կանխավարկաձևով: Նախագահի կողմից շնորհված ներումը, իր հերթին, չի բացասում այդ կանխավարկաձևը՝ անձը քրեադատարարական օրենքի համաձայն համարվում է դատապարտյալ նաեւ ներվելուց հետո:

Այս առումով անհրաժեշտ է զուգահեռ անցկացնել ներման եւ համաներման միջեւ: Մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անձը դառնում է դատապարտյալ եւ արդեն իսկ Նախագահի մեկնաբանվող լիազորության սուբյեկտ է, ճիշտ այնպէս, ինչպէս համաներման դեպքում: Երկու դեպքում էլ դատապարտյալի կողմից նախաձեռնության առկայությունն անհրաժեշտ չէ: Ընդհակառակը, համաներման դեպքում ոչ միայն անձն իրավունք ունի, որպէսզի նրա նկատմամբ կիրառվի օրենքի համաձայն իր նկատմամբ կիրառելի համաներումը, այլեւ համապարասխան մարմիններն են

պարտավոր դա անել՝ ի պաշտոնե (ex officio):

Անձի համաձայնությունը եւ, հետեւաբար՝ նախաձեռնությունը, իրավաբանորեն նշանակալի փաստեր են ընդհուպ մինչեւ այն պահը, երբ նա դադարում է համարվել անմեղ, այսինքն՝ մինչեւ նրա նկատմամբ մեղադրական դատավճիռն ուժի մեջ մտնելը: Մինչ այդ պահը նա գտնվում է անմեղության կանխավարկածի պաշտպանության ներքո եւ միայն ինքը կարող է համաձայնություն փայ, որպեսզի իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի, իսկ քրեական գործի վարույթը կարճվի այնպիսի որոշմամբ, որի հիմքում ընկած են նրան չարդարացնող հանգամանքները: Այս իրավունքը փարավում է անգամ արդարացնող հիմքերի վրա, ինչը բխում է անմեղ համարվող, այսինքն՝ իրավաբանորեն իրականում անմեղ անձի արդարացի դատաքննության իրավունքից:

Անձի համաձայնությունն ու նախաձեռնությունը, այսպիսով, ունեն միանգամայն սահմանափակ կիրառելիություն: Ընդհուպ մինչեւ դատավճռի կայացման պահն անձը կարող է օգտվել այդ իրավունքից, ինչի հետեւանքով վարույթը ենթակա է կարճման արդեն իսկ ի պաշտոնե՝ քրեական գործով փվյալ պահին վարույթ իրականացնող մարմնի կողմից (փեն ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը):

Վերը նշվածից բխում է՝ քանի որ դատապարտյալի համաձայնությունը պարտադիր չէ ցանկացած դեպքում՝ թե՛ Նախագահի կողմից ներում շնորհելու եւ թե՛ դատարանի կողմից մեղադրական դատավճիռը կայացնելիս համաներման ակտով անձին լրիվ կամ մասնակիորեն պարժից ազատելու դեպքում, ապա թե՛ ներման եւ թե՛ դատարանի կողմից դատավճռի հետ մեկտեղ համաներման ակտի կիրառման դեպքում դատապարտյալը չի կարող համարվել որպես իր անմեղության կանխավարկածից, ինչպես նաեւ դատավճիռը բողոքարկելու հնարավորությունից հրաժարված անձ: Նույն մոտեցումն ունի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը Կոնվենցիայի 3-րդ եւ 13-րդ հոդվածների խախտում էր արձանագրել *Մամնադով (Ջալալօղլուն) ընդդեմ Ադրբեյջանի գործով* (7 դեկտեմբերի 2006թ., Տ-34445/04), ընդ որում դիմողը Եվրոպական դատարանին դիմել էր 2004թ. սեպտեմբերի 17-ին, իսկ 2005թ. մարտին ներում էր ստացել Նախագահից եւ ազատվել պարժի մնացած մասը կրելուց:

Ներեւաբար, ներում ստանալու համար դատապարտյալի համաձայնությունը կամ նախաձեռնությունը չի պահանջվում, իսկ դիմելու կամ համաձայնություն արտահայտելու դեպքում անձը չի կորցնում ներպետական վերադաս դատական ապրանում, ինչպես նաեւ ՏՏ մասնակցությամբ որեւէ միջազգային պայմանագրի մարմին դատարանում բողոք կամ դիմում ներկայացնելու իրավունքը: Վերջապես, այդ իրավունքը պահպանվում է անգամ այն դեպքում, երբ անկախ նախաձեռնող սուբյեկտի ով լինելուց, համաձայնության կամ բացակայության փաստից, ներման գործընթացը դրական է ավարտվում դատապարտյալի համար:

Առանձին հարց է, թե՛ արդյո՞ք ՏՏ Նախագահի նշված լիազորության փիրույթում են գտնվում ՏՏ փարածքում գտնվող բոլոր դատապարտյալները, թե՛ միայն նրանք, ովքեր դատապարտվել են ՏՏ դատարանների կողմից: Այս հարցին ճիշտ լուծում փալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ՏՏ միջազգային այն պարտավորությունները, որոնք ստանձնվել են՝ կապված օտարերկրյա դատարանների կողմից դատապարտված անձանց առնչությամբ:

Մասնավորապես, այդ պայմանագրերն են՝ Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիան (Մտրաբուրգ, 21 մարտի 1983թ., Եվրոպական պայմանագրերի շարք, Տ-112, ՏՏ կողմից վավերացվել է 2001թ. մարտի 21-ին, փեն ՏՏ սահմանադրական դատարանի ՄԴՈ-264 որոշումը) եւ Ազատագրկման դատապարտվածներին հե-

փագա պարփո՞ր կրելու համար հանձնման մասին 1998թ. մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված կոնվենցիան: Առաջինը նախատեսում է, որ պարփո՞ր կրելու համար կարող է հանձնվել միայն այն դարպասարկայլը, որը հանդիսանում է «Կարարող պետության քաղաքացի (3-րդ հոդվածի 1-ին մասի ա) կեր), սակայն նշում, որ «յուրաքանչյուր պետություն ցանկացած պահի կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ սահմանել իրեն վերաբերելի դեպքերում «քաղաքացի» փերմինի բովանդակությունը՝ սույն Կոնվենցիայի համար»: Այդ բովանդակությունը ՄԿ կողմից սահմանված է վկայակոչված երկրորդ՝ ԱՊՄ կոնվենցիային միանալու փաստով, որի «նպատակն է ազատագրված դարպասարկվածների պարփո կրումը կազմակերպել այն պետությունում, որի քաղաքացի կամ նրա փարածքում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձ է հանդիսանում դարպասարկայլը» (փեն ՄՊ 21.12.1999թ. որոշումը նշված կոնվենցիայում ամրագրված պարպավորությունների սահմանադրականության վերաբերյալ գործով):

Փաստորեն, օտարերկրյա դարպասանների կողմից դարպասարկված անձանց շրջանակում ՄԿ-ն նախատեսում է ոչ միայն իր քաղաքացիներին, այլ նաեւ ՄԿ-ում մշտապես բնակվող անձանց: Այս ավելի լայն շրջանակի կիրառելիությունը բխում է նաեւ դարպասարկայլների փոխանցման վերաբերյալ նույն Եվրոպական կոնվենցիայի 22-րդ հոդվածից. «Եթե երկու կամ ավելի Կողմ արդեն իսկ կնքել են դարպասարկայլների փոխանցման մասին համաձայնագիր կամ պայմանագիր կամ որեւէ այլ կերպ են ամրագրել իրենց հարաբերությունները սույն հարցի առնչությամբ, կամ պարպասվում են նշվածը անել ապագայում, ապա նրանք իրավունք ունեն կիրառելու այդ համաձայնագիրը կամ պայմանագիրը կամ համապատասխան կարգավորում փալու այդ հարաբերություններին՝ սույն Կոնվենցիայի փոխարեն»: Ընդ որում, կոնվենցիան չի սահմանափակում Զրեական դարավճիռների միջազգային վավերականության մասին եվրոպական կոնվենցիայի Կողմ պետությունների իրավունքը՝ կնքելու միմյանց միջեւ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր այդ կոնվենցիայով կարգավորվող հարցերի առնչությամբ, այն լրացնելու կամ դրանում ամրագրված սկզբունքների կիրառումը դյուրացնելու նպատակով:

Նայասարանի Վանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված՝ դարպասարկայլի ներման խնդրանքի իրավունքի իրականացման երաշխիք է կոնվենցիայի 15-րդ հոդվածի երկրորդ մասը, որին համապատասխան պարփո՞ր կրելու համար հանձնված դարպասարկայլների նկատմամբ ներման եւ համաներման ակտեր կարող են կիրառել ինչպես դարավճի կայացման, այնպես էլ դարավճի կարարման պետությունները:

Նշված երկու կոնվենցիաներով էլ նախատեսված սահմանափակումները կիրառվում են հանձնման գործընթացի նկատմամբ: Այն պահից ի վեր, երբ անձը փոխանցվել է Նայասարանի Վանրապետություն եւ կրում է պարփո՞ր ՄԿ-ում, նրա վրա փարածվում է Նախագահի մեկնաբանվող լիազորությունը: Ներեաբար, մեկնաբանվող կերում ամրագրված դրոյթում օգտագործված «դարպասարկայլ» եզրույթը ներառում է նաեւ օտարերկրյա դարարանի կողմից դարպասարկված ՄԿ քաղաքացի կամ ՄԿ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող այն անձանց, ովքեր պարփո հերագա կրման համար փոխանցվել են Նայասարանի Վանրապետությանը: Վերջապես, անձի ներման իրավունքը, ինչպես եւ դարական բողոքարկման իրավունքը, Սահմանադրության համաձայն, չեն կարող սահմանափակվել անգամ արտակարգ դրության ժամանակ (հոդված 21):

ՆՈՂ-ՎԱԾ 56

Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր եւ կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին ու ենթակա են կապարման Հանրապետության ամբողջ տարածքում:

Մեկնաբանվող հոդվածի առարկան Հանրապետության Նախագահի իրավական ակտերի փեսակներն են՝ հրամանագրերը եւ կարգադրությունները: Դրանց ներկայացվող պահանջներն ամրագրված են ոչ միայն մեկնաբանվող հոդվածում, այլ նաեւ Սահմանադրության 5 եւ 6-րդ հոդվածներում, ուստի 56-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի այդ հոդվածների հետ համակցված:

2005թ. սահմանադրական փոփոխությունների ժամանակ մեկնաբանվող հոդվածում կատարվեցին միայն խմբագրական բնույթի փոփոխություններ: Նախկին խմբագրության երկու մասերի փոխարեն այժմ այն բաղկացած է միայն մեկ նախադասությունից, ինչպես նաեւ փոփոխված է Հանրապետության Նախագահի իրավական ակտերին ներկայացվող երկու պահանջների հերթականությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել ունենալ, որ Սահմանադրության 5 եւ 6-րդ հոդվածներում կատարված փոփոխությունների արդյունքում մեկնաբանվող հոդվածի բովանդակությունը կարելու էր փոփոխությունների է ենթարկվել:

Սահմանադրությամբ է օրենքներով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության Նախագահն ընդունում է իրավական ակտեր: Մեկնաբանվող հոդվածը, ինչպես նշվեց, սահմանում է այդ իրավական ակտերի երկու հիմնական փեսակներ՝ հրամանագրեր եւ կարգադրություններ: Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները նրա լիազորությունների իրականացման սահմանադրական-իրավական ձեւերն են:

Իրավական ակտի ներքո իրավունքի փեսությունը երբեմն նկատվում է ունենում գործողություններ (իրավաբանական փաստեր), որոնք հիմք են հանդիսանում այս կամ այն իրավական հետեւանքի առաջացման համար, սակայն այն առավելապես դիտարկվում է որպես պաշտոնական գրավոր փաստաթուղթ: Այդ իմաստով իրավական ակտը կարող է լինել նորմատիվ կամ անհատական: Նորմատիվ իրավական ակտը պարունակում է գործող իրավունքի նոր նորմեր եւ նորմատիվ գործընթացի արդյունք է, այն դեպքում, երբ անհատական իրավական ակտն իրավական հետեւանքներ է առաջացնում միայն կոնկրետ սուբյեկտների համար եւ, առաջին հերթին, իրավակիրառ ակտ է:

Սահմանադրությունը չի սահմանում որեւէ չափանիշ, որի շնորհիվ հնարավոր կլինի միմյանցից փարանջարել հրամանագրերը եւ կարգադրությունները որպես Հանրապետության Նախագահի իրավական ակտերի առանձին փեսակներ: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները կարող են լինել ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական: Օրենքի նման մոտեցումը դժվար է արդարացնել մեկնաբանվող հոդվածի փեսանկյունից, քանի որ Սահմանադրության մակարդակով ամրագրված՝ Հանրապետության Նախագահի իրավական ակտերի փարբերակումն արտացոլում չի գրել օրենքի մակարդակով: Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասից հետեւում է

միայն, որ հրամանագիրն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, քան կարգադրությունը, քանի որ կարգադրությունը չի կարող հակասել հրամանագրին: Պրակտիկայում, որպես կանոն, նորմատիվ բնույթ ավելի հաճախ ունենում են Հանրապետության Նախագահի հրամանագրերը, քան կարգադրությունները:

Սահմանելով Հանրապետության Նախագահի լիազորությունները՝ Սահմանադրությունը միայն երկու դեպքում է հստակեցրել, թե իրավական ակտի որ տեսակը պետք է ընդունի Հանրապետության Նախագահն իր լիազորությունն իրականացնելիս, ընդ որում, երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է Հանրապետության Նախագահի հրամանագրերին:

Հանրապետության Նախագահի հրամանագրերը կարող են ունենալ նաև անհատական (ոչ նորմատիվ) բնույթ: Որպես կանոն, անհատական հրամանագրերով են իրականացվում պետական պաշտոններում նշանակումները եւ ազատումները, քաղաքացիության շնորհումը եւ զրկումը, քաղաքական ապաստանի փրամադրումը, Հայաստանի Հանրապետության շքանշաններով եւ մեդալներով պարգևատրումները, բարձրագույն զինվորական եւ պարավոլոր կոչումների, բարձրագույն դիվանագիտական եւ այլ դասային աստիճանների շնորհումը, ներումը եւ այլն:

Հանրապետության Նախագահի կարգադրությունները, որպես կանոն, ունեն իրավակիրառ բնույթ, որոնց միջոցով լուծվում են օպերատիվ, կազմակերպական, կադրային, Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքին եւ գործունեությանը վերաբերող հարցեր:

Ըստ մեկնաբանվող հոդվածի՝ Հանրապետության Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները «չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին»: Սահմանադրության այս պահանջն անմիջականորեն կապված է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում ամրագրված այն դրույթների հետ, ըստ որոնց՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ» (մաս 1) եւ «այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին» (մաս 2): Օրենքի գերակա դերն ամրագրող Սահմանադրության այս դրույթներից բխում է, որ այլ իրավական ակտերը ստորադաս են Սահմանադրությանը եւ օրենքներին, ենթարկվում են դրանց եւ, հետեւաբար, **ենթաօրենսդրական** են: Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների տեղն իրավական նորմերի աստիճանակարգության մեջ պայմանավորված է դրանց ենթաօրենսդրական բնույթով: Հանրապետության Նախագահի իրավական ակտերի ենթաօրենսդրական բնույթը նշանակում է, որ դրանք պետք է ընդունվեն Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ ի կատարումն դրանց, ինչպես նաև չհակասեն դրանց:

Ենթաօրենսդրական ակտերի աստիճանական համակարգում Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների տեղը որոշվում է ենթաօրենսդրական ակտերի զանազան տեսակների փարբեր իրավաբանական ուժի հաշվառմամբ: «Ընդ որում, ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի իրավաբանական ուժը եւ գործողության ոլորտը որոշվում է իշխանության գործադիր ճյուղի ընդհանուր համակարգում համապատասխան պետական մարմնի (կամ պաշտոնատար անձի) օրենսդրորեն սահմանված տեղով եւ իշխանական-գործառնության նշանակությամբ: Ուստի, ստորադաս պետական մարմինների ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն պետական իշխանության վերադաս մարմինների նորմատիվ-իրավական ակտերին»⁴:

⁴ Վ. Մ. Ներսեսյան, Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 159:

Գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունվող նորմատիվ-իրավական ակտերի աստիճանական համակարգը գլխավորում են Նանրապետության Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող հրամանագրերը եւ կարգադրությունները, քանի որ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կառավարությունն իր որոշումներն ընդունում է «Նայաստանի Նանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Նանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա եւ դրանց կարարումն ապահովելու նպատակով»։ Ինչ վերաբերում է երկրի իրավական համակարգում ընդհանրապես Նանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների տեղին, ապա այն սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում: Այդ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Նայաստանի Նանրապետության Նախագահի հրամանագրերը չպետք է հակասեն Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանն ու Նայաստանի Նանրապետության օրենքներին, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին, Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի որոշումներին, Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագրերին»: Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Նանրապետության Նախագահի կարգադրությունները չպետք է հակասեն 2-րդ մասում թվարկված ակտերին, ինչպես նաեւ Նանրապետության Նախագահի հրամանագրերին:

Մեկնաբանվող հոդվածի համադրումը Սահմանադրության 5 եւ 6-րդ հոդվածների հետ՝ բերում է այն եզրահանգմանը, որ Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների նկատմամբ Սահմանադրությունը ներկայացնում է հետեյալ պահանջները.

1) դրանք կարող են ընդունվել, եթե Նանրապետության Նախագահը լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով (հոդված 5, մաս 2),

2) դրանք պետք է ընդունվեն Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան (հոդված 5, մաս 1)⁵,

3) դրանք պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին (հոդված 6, մաս 2),

4) դրանք չպետք է հակասեն Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին (հոդված 56),

5) դրանք, եթե ունեն նորմատիվ բնույթ, պետք է ընդունվեն Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով (հոդված 6, մաս 5)⁶:

Իրենց ամբողջությամբ այս պահանջներն արտացոլում են իրավական պետության առանցքային բաղադրարարների՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման (հոդված 5) եւ օրենքի գերակայության (հոդված 6) սկզբունքները: Որպես գործադիր իշխանության մարմին՝ Նանրապետության Նախագահը պարտավոր է գործադրել երկրի օրենքները, ինչը նա, ի թիվս այլնի, իրականացնում է հրամանագրեր եւ կարգադրություններ ընդունելու միջոցով: Հրամանագրեր եւ կարգադրություններ նա կարող է ընդունել միայն այն դեպքում, եթե *Սահմանադրությունը եւ օրենքները* նրան

⁵ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի սկզբում ամրագրված է, որ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան» (ընդգծումը մերն է՝ Վ. Պ.): Քանի որ հրամանագրեր եւ կարգադրություններ ընդունելու միջոցով Հանրապետության Նախագահն իրականացնում է պետական իշխանություն, ապա ակնհայտ է, որ նրա կողմից հրամանագրեր եւ կարգադրություններ հրապարակելը պետք է համապատասխանի Սահմանադրությանը եւ օրենքներին:

⁶ 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը նման դրույթ չէր պարունակում:

լիազորում են դա անել⁷: 56-րդ հոդվածն ինքնին դեռևս նման լիազորվածության հիմք չէ, քանի որ այն միայն կարգավորում է Հանրապետության Նախագահի լիազորությունների իրականացման եղանակն իրավական ակտերի միջոցով, այլ ոչ թե նրա լիազորությունները: Ճշգրտորեն կոնկրետացնելով Սահմանադրության համապատասխան դրույթները՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Նայաստանի Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր եւ կարգադրություններ Նայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում»: Հրամանագրերի եւ կարգադրությունների ընդունման նպատակը Սահմանադրության եւ օրենքների կատարումն է: Ուստի, եթե բացակայում են Սահմանադրության կամ օրենքի համապատասխան դրույթները, ապա Հանրապետության Նախագահը չի կարող լրացնել օրենսդրությունում գոյություն ունեցող բացերն իր հրամանագրերի կամ կարգադրությունների միջոցով⁸:

Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների ուժի մեջ մտնելու նախապայմանը դրանց հրապարակումն է, ինչը բխում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասից, համաձայն որի՝ «այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո»: Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների հրապարակման եւ ուժի մեջ մտնելու կարգը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով, որն անհրաժեշտ փոքրերակված կարգավորումներ է նախատեսում Հանրապետության Նախագահի նորմատիվ եւ անհատական հրամանագրերի եւ կարգադրությունների համար:

Ուժի մեջ մտնելու հրամանագրերի եւ կարգադրությունների նկատմամբ գործում է դրանց օրինականության կանխավարկածը, ուստի դրանք պարտադիր են կատարման համար բոլոր այն սուբյեկտների կողմից, որոնց դրանք հասցեագրված են: Մեկնաբանվող հոդվածը կարգավորում է Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների գործողության սահմանները փարածության մեջ, ամրագրելով, դրանք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում: Այս դրույթն ինքնուրույն է, քանի որ նորմատիվ իրավական ակտերի գործողությունը, որպես կանոն, փարածվում է այն հրապարակող մարմնին ենթակա փարածքում: Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն միեւնույն գործողության փարածքն են ընդգրկում նաեւ կառավարության որոշումները: Միեւնույն ժամանակ, մեկնաբանվող դրույթը չի նշանակում, որ Հանրապետության Նախագահի հրամանագրերը

⁷ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նման լիազորման հիմք էր հանդիսանում «օրենսդրությունը», ինչը չէր բացառում, որ որպես լիազորման հիմք դիտարկվեին նաև ենթաօրենսդրական ակտերը:

⁸ Մասնագետների կողմից հաճախ առաջ է քաշվում «չպետք է հակասեն» եւ «պետք է համապատասխանեն» եզրույթների բովանդակային հնարավոր ներքին հակասության հանգամանքը: Նկատի ունենալով, որ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանադրական կարգի հիմնարար սկզբունք է, ապա համակարգային մեկնաբանությունը պետք է բխի այն իրողությունից, որ «չպետք է հակասեն» դրույթը չի կարող, այսպես կոչված, «քողարկված օրենսդրի» հնարավորություն ենթադրել՝ հնարավորություն տալով ՀՀ Նախագահին հրամանագրերով կանոնակարգել այն իրավահարաբերությունները, որոնց վերաբերյալ դեռևս օրենք չի ընդունվել: Այստեղ սահմանափակիչ դեր է կատարում նաև 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրված 83.5-րդ հոդվածը, որը հստակեցնում է բացառապես օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակը (**խմբագրական պարզաբանում - Գ.Լ.**):

կամ կարգադրությունները չեն կարող սահմանափակված լինել Նանրապետության որոշակի փարածքով, եթե դա ուղղակիորեն նշված է կոնկրետ ակտում:

Քանի որ ըստ մեկնաբանվող հոդվածի՝ Նանրապետության Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները «չեն կարող հակասել Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին», ապա Սահմանադրության այս պահանջն ապահովելու նպատակով դրանք ենթակա են դատական վերահսկողության:

Սահմանադրական դատարանը ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իրավասու է որոշելու Նանրապետության Նախագահի հրամանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը: 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության՝ Սահմանադրական դատարանը նման իրավասություն ուներ նաեւ Նանրապետության Նախագահի կարգադրությունների նկատմամբ, ինչը, սակայն, առանց որեւէ հստակ իրավական հիմնավորման հանվեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում (տե՛ս նաեւ 100-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Նանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերի եւ կարգադրությունների՝ օրենքին համապատասխանությունն ստուգելու իրավասությունը վերապահված է վարչական դատարանին՝ Վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան: Ինչ վերաբերում է Նանրապետության Նախագահի անհատական բնույթ ունեցող այն հրամանագրերին եւ կարգադրություններին, որոնք վարչական ակտ են հանդիսանում, ապա դրանք կարող են բողոքարկվել վարչական դատարանում՝ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Նանրապետության Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները Նանրապետության Նախագահի կողմից ընդունվող իրավական ակտերի հիմնական տեսակներն են: Սակայն Նանրապետության Նախագահի կողմից ընդունվող իրավաբանական բնույթ ունեցող ակտերը միայն դրանցով չեն սահմանափակվում: Տրամանագրերից եւ կարգադրություններից զատ, Նանրապետության Նախագահը, ի կատարումն Սահմանադրության եւ օրենքների, ընդունում է նաեւ իրավաբանական բնույթ ունեցող այլ ակտեր, որոնք, սակայն, չունեն ընդհանուր անվանում եւ երբեմն չունեն նաեւ գրավոր ձեւ: Բացի դրանից, նա կատարում է իրավական նշանակություն ունեցող այնպիսի գործողություններ, որոնք ինքնին չեն կարող ունենալ գրավոր ձեւ:

Օրինակ, եթե Նանրապետության Նախագահն առարկություններ ունի Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի վերաբերյալ, ապա նա Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն իրավասու է օրենքը վերադարձնել Ազգային ժողով՝ իր առարկություններով եւ առաջարկություններով, պահանջելով նոր քննարկում: Այդ պարագայում Նանրապետության Նախագահը չի ընդունում ոչ հրամանագիր եւ ոչ էլ կարգադրություն, այլ պարզապես գրությամբ դիմում է Ազգային ժողովի նախագահին: Նանրապետության Նախագահը չի ընդունում հատուկ իրավական ակտ, երբ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրերը: Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովին գլխավոր դատախազի, կենտրոնական բանկի նախագահի եւ վերահսկիչ պալատի նախագահի թեկնածություններն առաջարկելիս Նանրապետության Նախագահը համապատասխան գրությամբ դիմում է Ազգային ժողովի նախագահին, սակայն չի ընդունում ոչ հրամանագիր եւ ոչ էլ կարգադրություն: Երբ Նանրապետության Նախագահը Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմում է Սահմանադրական դատարան, ապա նա նույնպես չի արձակում որեւէ

հրամանագիր կամ կարգադրություն: Տրամանագրի կամ կարգադրության ձևը կիրառելի չէ նաեւ այն դեպքերում, երբ Հանրապետության Նախագահը Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան՝ համաձայնություն է փոխիս դատավորներին որպէս մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, կամ եթէ նա Սահմանադրության 58-րդ հոդվածին համապատասխան՝ ներկայացնում է իր հրաժարականը: Ակնհերե է, որ Հանրապետության Նախագահի այս բոլոր գրավոր ակտերն իրավակիրառ ակտեր են եւ ուղղակիորեն ուղղված են որոշակի իրավական հետեւանքներ առաջ բերելուն, սակայն դրանք չունեն հրամանագրի կամ կարգադրության ձև:

Հանրապետության Նախագահը, իրականացնելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իր լիազորությունը, Ազգային ժողովի ընդունած օրենքն ստորագրում է ոչ թե հատուկ գրավոր իրավական ակտ ընդունելու, այլ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի փոքրիկ վրա իր ստորագրությունը դնելու միջոցով: Նույն իրավիճակն է նաեւ այն պարագայում, երբ նա Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն կնքում է միջազգային պայմանագրեր կամ ստորագրում միջազգային պայմանագրերի վավերագրերը: Հանրապետության Նախագահը միայն փաստացի գործողություն է կատարում նաեւ այն դեպքերում, երբ ընդունում է օրարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավաքարմագրերը եւ հետկանչագրերը (հոդված 55, կետ 8): Բոլոր այս պաշտոնական գործողությունները Հանրապետության Նախագահն իրականացնում է ի կատարումն Սահմանադրության պահանջների, եւ դրանք բոլորն ուղղակիորեն միմյանց են առաջացնելու որոշակի իրավական հետեւանքներ: Ոչ իրավունքի փոխությունում եւ ոչ էլ սահմանադրական իրավունքի դոկտրինայում նման փոխի գործողությունների համար չկա ընդհանուր ճանաչում գրած որեւէ անվանում:

Հանրապետության Նախագահի իրավական ակտերից եւ իրավաբանական բնույթ ունեցող այլ ակտերից եւ գործողություններից անհրաժեշտ է փարբերակել նրա պաշտոնական այն գործողությունները, որոնք որեւէ իրավական հետեւանք չեն առաջացնում: Նման դեպքերում Հանրապետության Նախագահը հանդես է գալիս պաշտոնապես, այսինքն՝ ոչ որպէս մասնավոր անձ, սակայն նրա գործողություններն իրավաբանական բնույթ չեն կրում, քանի որ ուղղված չեն որեւէ իրավական հետեւանք առաջացնելուն: Խոսքը, մասնավորապես, Հանրապետության Նախագահի այնպիսի գործողությունների մասին է, ինչպիսիք են նրա ելույթները, հարցազրույցները, մամլո ասուլիսները, հայտարարությունները, ուղերձները, հանդիպումները հասարակության փարբեր խմբերի ներկայացուցիչների հետ, այցելությունները եւ այլն: Դրանք, որպէս կանոն, ուղղակիորեն նախատեսված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով⁹, սակայն կարող են ունենալ մեծ քաղաքական նշանակություն: Չունենալով իրավաբանական բնույթ եւ, հետաքրքիր, չառաջացնելով որեւէ իրավական հետեւանք՝ դրանք միաժամանակ կարող են նպաստել (կամ խոչընդոտել) Հանրապետության Նախագահի կողմից իր գործունեության արդյունավետ իրականացմանը՝ Սահմանադրության փառին եւ ոգուն համապատասխան:

⁹ Բացառություն են կազմում Հանրապետության Նախագահի ուղերձները ժողովրդին, որն ամրագրված է Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին կետում (տե՛ս համապատասխան կետի մեկնաբանությունները):

ՆՈՒՎԱԾ 56.1

- 1. Նանրապերության Նախագահն անձեռնմխելի է:**
- 2. Նանրապերության Նախագահն իր լիազորությունների ժամկետում եւ դրանից հետո չի կարող հեղապահվել եւ պարասխանաարվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:**
- 3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Նանրապերության Նախագահը կարող է պարասխանաարվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո:**

1. Մեկնաբանվող հոդվածով ամրագրված է Նայասպանի Նանրապերության Նախագահի **անձեռնմխելիության սահմանադրաիրավական սկզբունքը**: Այդ սկզբունքի ուժով Նախագահի համար սահմանվում է այնպիսի կարգավիճակ, որը նրան հնարավորություն կտա առանց արգելքների եւ խոչընդոտների իրականացնելու Սահմանադրությամբ իր վրա դրված գործառույթներն ու լիազորությունները: Այլ կերպ՝ Նախագահը, որպես բարձրագույն պաշտոնավար անձ, օժտված է որոշակի պաշտպանվածությամբ՝ **իմունիտետով**:

Իմունիտետը ընդհանուր իրավական հասկացություն է, որը ծագել է լատիներեն *immunitas (immunitatis)* բառից՝ ինչ-որ բանից ազատել:

Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտն իր ամրագրումն է ստացել գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններում, իհարկե՝ որոշ փարբերություններով: Կան պետություններ, որոնք սահմանում են Նախագահի անձի անձեռնմխելիությունը (Նունգարիայի Սահմանադրության § 31 (A.1), Լիբվայի Սահմանադրության 86-րդ հոդվ. եւ այլն), այլ երկրներում շեշտադրվում է Նախագահի անձեռնմխելիությունը (Բուլղարիա, Իտալիա, Նունասպան, Ռուսասպանի Դաշնություն եւ այլն), պետությունների մի մասն էլ չի սահմանում անձեռնմխելիության ինստիտուտը. այն բխում է մյուս նորմերի բովանդակությունից (Լեհասպան, Գերմանիայի Դաշնային Նանրապետություն եւ այլն):

Նարկ է նշել, որ անկախ սահմանման ձեւից, Նախագահն իմաստավորում է երկու հասկացություն՝ պետական մարմին եւ պետության բարձրագույն պաշտոնավար անձ՝ պետության գլուխ:

Նախագահական իմունիտետը՝ անձեռնմխելիությունը, նշանակում է պետության կողմից վերապահված իրավական իրավունք՝ ենթակա չլինելու որոշ ընդհանուր նորմերի, այն է՝ Նախագահը չի կարող ձեռքակալվել, ենթարկվել դատական պարասխանաարվության, որպես վկա հարկադրաբար հրավիրվել դատարան, ենթարկվել վարչական պարասխանաարվության եւ այլն:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետեւում է, որ գործող Նախագահն անձեռնմխելիության իրավունքից օգտվում է ինչպես պաշտոնավարման ժամանակ, այնպես էլ պաշտոնավարումից հետո, այսինքն՝ անձեռնմխելիության իրավունքից օգտվում են նաեւ նախկին նախագահները: Այլ կերպ՝ Նախագահն օգտվում է նաեւ հետադարձ եւ հեռանկարային իմունիտետից՝ անձեռնմխելիությունից, ինչն ուղղակիորեն բխում է հոդվածի բովանդակությունից: Փաստորեն Նախագահի անձեռնմխելիությունը

լիության իրավունքը, ըստ 56.1-րդ հոդվածի, իր պաշտոնավարման ժամանակ սահմանափակված չէ:

Նման եզրակացությունը պայմանավորված է նրանով, որ Սահմանադրության 56.1-րդ հոդվածով ուղղակի ամրագրված է Նախագահին լիազորությունների ժամկետում պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ եւ անձեռնմխելիությունից զրկելու անհնարինությունը՝ ինչպես **իր կարգավիճակից բխող**, այնպես էլ **կարգավիճակի հետ չկապված**¹⁰ գործողությունների համար: Եթե Նախագահի կարգավիճակ ասելով պետք է հասկանալ որպես բարձրագույն պաշտոնատար անձ, պետության գլուխ, որի իրավասությունը, այսինքն՝ իրավունքների եւ պարտականությունների շրջանակը սահմանված է ՏՍ Սահմանադրությամբ, որոնց իրականացման համար ստեղծվում է Նախագահի ինստիտուտը, իսկ կարգավիճակից բխող գործողությունները Սահմանադրությամբ եւ մյուս օրենքներով Նախագահին վերապահված լիազորությունների իրականացումն են, որոնք պետք է համապատասխանեն ՏՍ Սահմանադրության եւ մյուս օրենքների պահանջներին, ինչն իր ամրագրումն է ստացել ՏՍ Սահմանադրության 5 եւ 56-րդ հոդվածներում, ապա կտարացվի, որ Նախագահն իր լիազորությունների կատարման համար, անկախ հետեւանքների բովանդակությունից, պատասխանատվություն չի կրում:

Միաժամանակ, Սահմանադրության նշված հոդվածով պաշտոնավարման ընթացքում Նախագահին պատասխանատվության ենթարկելու որեւէ հիմք, թեկուզեւ՝ բացառության կարգով, նախարեսված չէ:

Այնուամենայնիվ, Նախագահի անձեռնմխելիությունը չի նշանակում նրա քաղաքական սահմանադրական պատասխանատվության բացակայություն:

ՏՍ Սահմանադրության նորմերի վերլուծությունը հնարավորություն է տալիս ասելու, որ նախագահական պատասխանատվության կամ անձեռնմխելիությունից զրկելու հիմք¹¹ են հանդիսանում. պաշտոնավարման ժամանակ պաշտոնանկ անելը պետական դավաճանության եւ այլ ծանր հանցագործությունների կատարման համար (Ս. հ. 57)¹², իսկ պաշտոնավարումից հետո պաշտոնավարման ժամանակ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների կատարման համար պատասխանատվության ենթարկելը:

Ներելաբար, ՏՍ Սահմանադրությամբ սահմանված նախագահական անձեռնմխելիության սկզբունքն արգելք չի հանդիսանում Նախագահի լիազորությունների վա-

¹⁰ Տեղին է նշել, որ Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության մեջ նման հասկացություններ օգտագործված չէին, այնտեղ ուղղակի նշված էր, որ Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործությունների համար (57 հ.):

¹¹ Տարբեր պետություններ տարբեր հիմքեր են նախատեսում Նախագահին պատասխանատվության ենթարկելու, այսինքն՝ անձեռնմխելիությունից վաղաժամ զրկելու համար: Նման հիմքեր են համարվում. Սահմանադրության եւ ցանկացած դաշնային օրենքի դիտավորյալ խախտումը (Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ս. հ. 61), Սահմանադրության լուրջ խախտումը եւ ծանր հանցագործության կատարումը (Այրանիայի Ս. հ. 90), Սահմանադրության խախտումը եւ պետական դավաճանությունը (Բուլղարիայի Ս. հ. 103, Իտալիայի Ս. հ. 90), Սահմանադրության եւ ցանկացած օրենքի խախտումը (Հունգարիայի Ս. § 31 (A. 1), Մակեդոնիայի Ս. հ. 87), Սահմանադրության դիտավորյալ խախտումը եւ պետական դավաճանությունը (Հունաստանի Ս. հ. 49), պետական դավաճանությունը, Սահմանադրության խախտումը կամ այլ հանցագործությունների կատարումը (Վրաստանի Ս. հ. 75), Սահմանադրության, օրենքի խախտումը, հանցագործության կատարումը (Լեհաստանի Ս. հ. 145), միայն պետական դավաճանությունը (Քաղախտանի Ս. հ. 47), Սահմանադրության, երդման կոպիտ խախտումը կամ հանցագործության կատարումը (Լիտվայի Ս. հ. 86): Կիպրոսի Հանրապետությունը նման հիմք է համարում հայրենիքի դավաճանությունը եւ ցանկացած անպատվաբեր կամ բարոյապես ամոթալի վարքագիծը (Կիպրոսի Ս. հ. 45):

¹² Մանրամասն տես՝ 57-րդ հոդվածի մեկնաբանությունում:

ղաժամկետ դադարեցման համար, ինչը բնական է, քանի որ նախագահական անձեռնմխելիության սահմանումը ոչ թե Նախագահի համար սահմանված անձնական արտոնություն է, այլ որպես Նայաստրանի Նանրապետությունն անձնավորող բարձրագույն պաշտոնատար անձի՝ Նախագահի կողմից իր լիազորությունների արդյունավետ իրացման պայման:

Ընդհանուր հերետիկությունն այն է, որ Նախագահի անձեռնմխելիության իրավաբանական բնույթն առաջին հերթին պայմանավորված է այն բանով, որ Նախագահը՝ որպես պետության գլուխ, ներկայացնում է պետությունը միջազգային հարաբերություններում, եւ երկրորդ՝ անձեռնմխելիությունն իրավական երաշխիք է հանդիսանում Նախագահի իրավասության իրականացման համար:

Թերեւս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Նախագահի ներպետական անձեռնմխելիությունը լրացվում է նաեւ միջազգային իրավականով, այսինքն՝ միջպետականով: Այս տեսանկյունից կարելու է նշանակություն ունի Նախագահի անձեռնմխելիության ծավալի պարզաբանումը: Նամաձայն մեկնաբանվող հոդվածի՝ անձեռնմխելի է Նանրապետության Նախագահը, այլ ոչ թե Նախագահի անձը, ինչպես սահմանված է «Նայաստրանի Նանրապետության Նախագահի վարձարության, սպասարկման եւ անվտանգության ապահովման մասին» 1996թ. օրենքի 3-րդ հոդվածում: Դժվար չէ նկատել, որ Սահմանադրությամբ Նախագահի պետաիրավական ինստիտուտը դիֆարկվում է որպես պետական մարմին եւ պետական պաշտոնատար անձ, ինչը նշանակում է, որ անձեռնմխելիությունը նույնպես ձեռք է բերում երկակի իմաստ եւ պետք է փարածվի ինչպես Նախագահի անձի, այնպես էլ պետական մարմնի վրա, մասնավորապես՝ նախագահական շենքերի, փոխադրման միջոցների, աշխատակազմի, ընտանիքի անդամների վրա: Չի կարելի իրականացնել խուզարկություններ, ձեռքարկություններ, բռնագրավումներ, առգրավումներ եւ ընդհանրապես այն, ինչ կարող է խանգարել կամ խոչընդոտել Նախագահի բնականոն գործունեությունը:

ՆՆ Նախագահի անվտանգությունը, համաձայն վերը նշված օրենքի 3-րդ հոդվածի, ապահովում է ՆՆ պետական պաշտպանության ծառայությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նույն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ ՆՆ Նախագահի ընտանիքն օգտվում է ՆՆ Նախագահի համար սահմանված սպասարկման եւ անվտանգության ապահովման պետական ծառայություններից:

Իրավագիտության մեջ առկա է փարակարծություն նախագահական եւ պարզամավորական իմունիտետի՝ անձեռնմխելիության ծավալային հարաբերակցության հարցում: Դրանք եւ՛ նույնացվում են, եւ՛ փարբերվում: Բավական է նշել, որ եթե համաձայն ՆՆ Սահմանադրության 66-րդ հոդվածի՝ պարզամավորին կարելի է ձեռքարկել հանցագործության կատարման պահին, ապա Նախագահին ձեռքարկել հնարավոր չէ քանի դեռ պաշտոնավարում է: Կամ եթե Նայաստրանի Նանրապետության Ազգային ժողովն իր որոշմամբ կարող է դադարեցնել պարզամավորի լիազորությունները, հերետաբար՝ եւ անձեռնմխելիությունը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելիին անհարգելի բացակայելու (Սահմ. հ. 67) եւ այլ դեպքերում, ապա Նախագահին կարելի է պարասխանավորության ենթարկել միայն պաշտոնանկ անելու դեպքում կամ պաշտոնավարման ավարտից հետո, այն էլ այն գործողությունների համար, որոնք կապված չեն նրա կարգավիճակի հետ: Նշվածից հետեւում է, որ Նախագահի անձեռնմխելիության ծավալն ավելի լայն է, քան պարզամավորինը, ինչը բնական է. Նախագահը պետության գլուխն է, որը եւ անձնավորում է պետությունը:

Նախագահի անձեռնմխելիությունը չի նշանակում նրա գործունեության անվերահսկելիություն կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման անհնարինություն:

Սահմանադրությամբ սահմանված է նման վերահսկելիությունը, մասնավորապես՝ ՆՆ Սահմանադրության 5-րդ հոդվածով բոլոր պաշտոնավար անձանցից, այդ թվում էլ Նախագահից պահանջվում է միայն Սահմանադրությամբ եւ այլ օրենքներով լիազորված գործողությունների կատարում, Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան պեղական իշխանության իրականացում: Ավելին, Նախագահի ընդունած հրամանագրերը կարող են Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել հակասահմանադրական, իսկ քաղաքացիները Նախագահի ընդունած հրամանագրերին եւ կարգադրություններին չհամաձայնելու եւ այլ դեպքերում կարող են դիմել դատարան:

Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման սահմանադրական հիմքեր կարող են հանդիսանալ Նախագահի պաշտոնանկությունը (հոդվ. 57), Նախագահի հրաժարականը (հոդվ. 58) եւ Նախագահի ծանր հիվանդության կամ լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայությունը, որոնք փետականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը (հոդվ. 59): Նարկ է նշել, որ եթե պաշտոնանկության դեպքում պաշտոնանկ արված Նախագահը գրկվում է անձեռնմխելիության իրավունքից, ապա վերջին երկու դեպքերում Նախագահի անձեռնմխելիության իրավունքը պահպանվում է:

3. Եթե Սահմանադրությունը կարգավիճակից բխող գործողությունների համար Նախագահին պաշտոնավարման ժամանակ ազատում է պատասխանարվությունից, ապա կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար պատասխանարվությունը թողնում է պաշտոնավարումից հետո, եթե, իհարկե, այդ գործողությունների մեջ առկա են պատասխանարվության ենթարկելու հիմքերը:

Նարց է ծագում՝ ի՞նչ է նշանակում Նախագահի կարգավիճակի հետ չկապված գործողություններ: Կարծում ենք՝ նման հասկացությունն իրավական հստակեցման անհրաժեշտություն ունի, քանի որ ոչ Նախագահի երդման փոքստում եւ ոչ էլ Նախագահի իրավասությունների մեջ նման բառեր օգտագործված չեն, ինչը ճիշտ է, քանի որ Նախագահն անձնավորում է պետությունը, ինչո՞ւ չէ՝ նաեւ ամբողջ ազգը, նրա կատարած յուրաքանչյուր գործողություն վերագրվում է պետությանը եւ կրում է պաշտոնական բնույթ, այլ կերպ ասած՝ բխում է իր կարգավիճակից, եւ պատահական չէ, որ կան պետություններ, որոնք անձեռնմխելիությունից գրկելու հիմք են սահմանում անգամ անպարվարեր եւ բարոյապես ամոթալի արարքների կատարումը (Կիպրոսի Ս. հ. 45):

Նախագահի կարգավիճակի հետ չկապված պատասխանարվության ենթակա գործողությունների ներքո սովորաբար նկատի է առնվում Նախագահի՝ որպես անհատի, քաղաքացու բոլոր հնարավոր իրավախախտումները, որոնք կապված չեն նրա գործառնական դերի, լիազորությունների իրականացման հետ, եւ հիմք չեն հանդիսանում նաեւ պաշտոնանկության հարց բարձրացնելու համար:

ՆՈՂ-ՎԱԾ 57

1. *Նանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:*

2. *Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պարզամալորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:*

3. *Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պարզամալորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:*

4. *Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից:*

1. Սահմանադրական նորմի բովանդակությունից հետևում է.

ա. Նախագահին պաշտոնանկ անելը Սահմանադրությամբ նախատեսված քաղաքական, սահմանադրական պարասխանարվության հատուկ տեսակ է.

բ. Նախագահին պաշտոնանկ անելու համար սահմանված է հատուկ կարգ.

գ. Նախագահին պաշտոնանկ անելը պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության կատարման համար սահմանադրական պարտադիր պահանջ չէ, այլ հնարավորություն, քանի որ չունի իմպերատիվ բնույթ, ինչն ուղղակիորեն բխում է նորմի բովանդակությունից, որում սահմանված է, որ Նախագահը **կարող է** պաշտոնանկ արվել, այլ ոչ թե **արվում է**.

դ. Նախագահին պաշտոնանկ անելու իրավունքը պատկանում է Ազգային ժողովին:

Պաշտոնանկությունը, ինչն իրավագիտության մեջ ընդունված է անվանել «իմպիչմենտ»¹³, Նախագահին *իրավական պարասխանարվության ենթարկելու հատուկ տեսակ է*, որը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ սահմանվեց 1991 թվականին՝ «Նախագահի մասին» ՀՀ օրենքով եւ իր հետագա ամրագրումն ստացավ Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության մեջ: Դրա բովանդակությունը նախագահական լիազորությունների կատարման ժամկետը չըրացած՝ Նախագահին զբաղեցրած պաշտոնից իր կամքին հակառակ ազատելն է, ինչի համար հիմք կարող է հանդիսանալ Նախագահի կողմից պետական դավաճանությունը կամ այլ ծանր հանցագործության կատարումը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի՝ Նախագահին պաշտոնանկ անող միակ մարմինն Ազգային ժողովն է՝ օրենսդիր իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինը, որն իր այս լիազորությունը կյան-

¹³ Հարկ է նշել, որ պաշտոնանկության (իմպիչմենտի) ինստիտուտը ձևավորվել է դեռևս XIV դարում՝ Անգլիայում, երբ Համայնքների պալատն առաջադրում էր մեղադրանք, իսկ Լորդերի պալատն իրականացնում էր դատաքննություն: Նման կարգով դատապարտվածների նկատմամբ Անգլիայի թագավորը ներում շնորհելու իրավունք չուներ: 1986 թ. մաման եղանակով իր լիազորությունների կատարումից զրկվեց կանցլեր Դեյվիդ Պոլը: **Федоров К. Г.**, История государства и права зарубежных стран, Л., 1977, стр. 96.

քի է կոչում այն ժամանակ, երբ րեանում է, որ գործադիր իշխանության՝ հանձին Նախագահի, գործողությունները չեն բխում պետության եւ հասարակության շահերից, չեն համապատասխանում սահմանադրական նորմերի պահանջներին եւ վրանգում են սահմանադրական կարգի հիմքերը: Վերջինիս իրականացումն իշխանությունների փառանջարման սկզբունքի պահանջի իրականացումն է, որի նպատակն է իշխանության թեւերի փոխներգործության միջոցով ապահովել նրանց համաձայնեցված, բնականոն գործունեությունը: Այսպէսից հետեւություն. Ազգային ժողովի կողմից Նախագահին պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար պաշտոնանկ անելը ԱԺ-ի պարտականությունն է, այլ ոչ միայն իրավունքը:

Պաշտոնանկ անելը պարասխանաբովության հատուկ րեսակ է, որը նշանակում է նաեւ գրկել Նախագահին **անձեռնմխելիության իրավունքից, առանց որի իրականացման** հնարավոր չէ Նախագահին ենթարկել պարասխանաբովության որպէս սովորական քաղաքացու: Նախագահի պաշտոնանկ անելն ունի երկակի իմաստ: Այն սահմանադրական իրավական պարասխանաբովության ինքնուրույն րեսակ է եւ հիմք է հանդիսանում պաշտոնանկ արված Նախագահին որպէս սովորական քաղաքացու, քրեաիրավական պարասխանաբովության ենթարկելու, այսինքն՝ նաեւ անձեռնմխելիությունից գրկելու համար:

Նարց է ծագում. ինչպէ՛ս իրականացնել Նախագահի պաշտոնանկությունը, եթե ՆՆ Սահմանադրության 56.1-րդ հոդվածին համապատասխան Նախագահին իր լիազորությունների (պաշտոնավարման) ժամկետում չի կարելի ենթարկել պարասխանաբովության՝ ինչպէս իր կարգավիճակից բխող, այնպէս էլ կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար:

Նարցի պարասխանն իր ամրագրումն է սրացել մեկնաբանվող հոդվածում, որում հստակ սահմանված է, որ Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Բնականաբար, պետք է ենթադրել, որ այս պարագայում նորմը կարարված հանցագործության հանգամանքը չի կապում Նախագահի կարգավիճակի հետ, հակառակ դեպքում (հ. 57) նորմի գոյությունը կկորցնէր իր անհրաժեշտությունը: Ավելին, ինչպէ՛ս պարզել կարարված պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության կարգավիճակից բխելը եւ չբխելը, հարկապէս այն դեպքում, երբ դրանք կարող են լինել ՆՆ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախարեւսված իրավիճակից թելադրվող միջոցառումների արդյունքը:

Պետք է հիշել նաեւ այն հանգամանքը, որ իրավունքների մեծամասնությունը Նախագահի՝ որպէս պետության գլխի համար պարտականություններ են, որոնք իրենց խտրացված արտացոլումն են սրանում նրա երդման բովանդակության րեքստում: Պարտականություններից յուրաքանչյուրի չկարարումը կարող է հիմք հանդիսանալ պարասխանաբովության կիրառման համար: Պարտական չէ, որ որոշ պետություններ իրենց սահմանադրություններում ուղղակի սահմանում են երդման խախտումը որպէս պաշտոնանկության հիմք (Լիբվայի Ս. հ. 86):

Տիմնականում պետությունների մեծ մասի սահմանադրություններում սահմանված է այն դրույթը, համաձայն որի՝ Նախագահը պարասխանաբովություն չի կրում իր «լիազորությունների», «պարտականությունների» կամ «գործառույթների» կարարման ժամանակ, բացառությամբ պետական դավաճանության, *Սահմանադրության կուպիտ խախտման, Սահմանադրության ուրնձգման կամ Սահմանադրության դիտարվորյալ խախտման, հանցագործության կարարման, երդման խախտման համար*: «Կարգավիճակից բխող գործողություններ» հասկացությունը չի կիրառ-

վում, ինչը բնական է, քանի որ Սահմանադրության մեջ չեն կարող կիրառվել անորոշ հասկացություններ, հակառակ դեպքում Նախագահի ցանկացած գործողություն այս պարագայում կարող է դիմել նրա կարգավիճակից բխող:

Մրացվում է, որ մեկնաբանվող հոդվածով սահմանվում է Նախագահի անձեռնմխելիության իրավունքի հաղթահարման հնարավորություն, որի իրականացումը վերապահվում է Ազգային ժողովին, ինչի իրականացման հիմք կարող են հանդիսանալ պետական դավաճանությունը եւ այլ ծանր հանցագործության կատարումը:

Պետական դավաճանության հասկացությունը սրված է ՏՏ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածում, համաձայն որի՝ պետական դավաճանություն է «...թշնամու կողմն անցնելը, լրբեսությունը, օտարերկրյա պետությանը կամ օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է ՏՏ քաղաքացին՝ ի վնաս ՏՏ ինքնիշխանության, փարաձբային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության»:

Եթե առաջնորդվենք հոդվածի բովանդակությամբ, ապա Նախագահի պետական դավաճանությունը պետք է դրսևորվի թշնամու կողմն անցնելու, լրբեսության, օտարերկրյա պետությանը կամ օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիքը հանձնելու կամ էլ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալու ձևերով: Դժվար չէ նկատել, որ օրենսդրի կողմից նույնացվում է պետական դավաճանությունը՝ կատարված սովորական քաղաքացու եւ երկրի Նախագահի կողմից: Պետք է հիշել, որ Նախագահը շարքային քաղաքացի չէ, այլ լայն պետաիշխանական լիազորություններով օժտված պետության գլուխ: Այս տեսակետից ճիշտ են այն հեղինակները, որոնք կարծում են, որ Նախագահի պետական դավաճանության հասկացությունը պետք է սահմանվի որպես ինքնուրույն հանցակազմ, եւ այդ հարցում էական դեր կարող է ունենալ Նախագահի երդումը, այլ կերպ ասած՝ «պետական դավաճանության» եղանակները պետք է փնտրել երդման բովանդակության մեջ¹⁴:

Ներաբրքի է նաեւ այն հարցի պարզաբանումը, թե պետական դավաճանության հանցակազմի առանձնացումը նշանակո՞ւմ է, արդյոք, որ մյուս առավել ծանր հանցագործությունների կատարումը (մասնավորապես՝ «պետական իշխանության յուրացումը», «լրբեսությունը», «դիվերսիան», «վնասարարությունը», «պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը», «կյանքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործությունները» եւ այլն) հիմք չեն հանդիսանում Նախագահին պաշտոնանկ անելու համար: Պարասխանը կարող է դրական լինել, քանի որ նշված բոլոր հանցագործություններն էլ ուղղված են Սահմանադրական կարգի հիմունքների եւ պետական անվտանգության դեմ, որոնց պահպանումը երկրի Նախագահի հիմնական պարտականություններից է:

Ընդհանրապես, երբ խոսվում է Նախագահի կողմից հանցագործություններ կատարելու մասին, պետք է հիշել, որ Նախագահը պետության գլուխն է, որն անձնավորում է հայկական պետականությունը, եւ որ Նախագահի կողմից Սահմանադրության ցանկացած դիմավորյալ խախտում պետք է հիմք հանդիսանա պաշտոնանկ անելու համար: Այսպես է ամրագրված նաեւ շարք պետությունների սահմանադրություններում, օրինակ՝ Իտալիայի Սահմանադրության 90-րդ., Ղունաստանի Սահմանադրության 49-րդ., Բուլղարիայի Սահմանադրության 103-րդ հոդվածներ եւ այլն:

¹⁴ Стів Коментарий к Конституции Российской Федерации. Под ред. В. Д. Зорькина и Л. В. Лазарева, М. 2009. h. 743:

Ծանր հանցագործության բնորոշումը փրված է ՐՏ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Ծանր հանցագործություններ են համարվում դիտարկությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում փաստը փարի ժամկետով ազատազրկումը»: Ստացվում է, որ Նախագահին կարելի է պաշտոնանկ անել ծանր հանցագործությունների համար, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար՝ ոչ, ինչը չի կարող հիմնավոր համարվել: Կարելի է ենթադրել, որ այն օրենսդրական բացթողման արդյունք է¹⁵:

2. Նամաձայն ՐՏ Սահմանադրության 57-րդ հոդվածի՝ ՐՏ Նախագահին պաշտոնանկ անելու գործընթացին մասնակցում են ՐՏ Ազգային ժողովը և ՐՏ սահմանադրական դատարանը, որոնց դերերը, բնականաբար, փարբեր են:

Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պարզամակորների ընդհանուր թվի ձայ-

¹⁵ Սահմանադրության 57-րդ հոդվածի առաջին մասն այն եզակի դեպքերից մեկն է, որ խարսխված է ընթացիկ օրենսդրության դրույթների վրա, որոնք կարծես թե դարձել են օրգանական օրենքներ. Սահմանադրության բովանդակության մաս: Որպես կանոն, բոլոր սահմանադրական դրույթներն առաջնային ու գերակայող, վճռորոշ են ընթացիկ օրենսդրության համար, և Սահմանադրության այդ դրույթների մեկնաբանման ու կիրառման դեպքում նախապատվությունը պետք է տրվի ոչ թե ընթացիկ օրենսդրությանը, այլ սահմանադրական դրույթներին, հասկացություններին, տրամաբանությանը: Այս հոդվածի պարագան, ինչպես նշվեց, այլ է:

ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ.: Այդ պահին Հայաստանի Հանրապետությունում գործում էր 1961թ. քրեական օրենսգրքը: Այդ օրենսգրքում 1972թ. հունիսի 28-ին կատարված փոփոխությանը բոլոր տեսակի հանցագործություններից առանձնացվեցին ծանր հանցագործությունները, որոնց շրջանակն օրենսդիրը որոշում էր կոնկրետ հանցավոր արարքների ուղղակի թվարկմամբ: Ծանր էին համարվում «առավել բարձր հանրային վտանգավորություն» ներկայացնող հանցագործությունները, որոնք ուղղակիորեն՝ մեկ առ մեկ թվարկված էին օրենսգրքում: Այդպիսով ստացվում էր, որ հանցագործությունները դասակարգվում են երկու խմբի՝ սովորական, ոչ ծանր և ծանր:

1995թ. Սահմանադրությունն իր 57-րդ հոդվածի 1-ին մասով խարսխված է այս տրամաբանության վրա, որը, մեր կարծիքով, հիմնավոր էր: Հետագայում, երբ ձեռնարկվեցին երրորդ Հանրապետության քրեական օրենսդրության բարեփոխումները, ապա ներմուծվեց հանցավոր արարքների տեսակների նոր դասակարգում՝ խարսխված պատժաչափերի վրա: 2003թ. ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքն ըստ հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգում է չորս խմբի՝ 1/ ոչ մեծ ծանրության, 2/ միջին ծանրության, 3/ ծանր, 4/ առանձնապես ծանր /հոդված 17/: Այսպիսով, քրեական օրենսդրության բարեփոխիչները հաշվի չառան Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը: 2005թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ անտեսվեցին քրեական օրենսգրքով հանցագործության տեսակների նոր դասակարգումը և դրանով իսկ Սահմանադրության տեքստում մնաց «ծանր հանցագործություն» հասկացությունը: Սակայն ստեղծված իրավիճակը չի ենթադրում, որ Նախագահին կարելի է պաշտոնանկ անել միայն ներկա օրենսդրության իմաստով ծանր հանցագործությունների համար: Նախագահը ենթակա է պաշտոնանկության ինչպես ծանր, այնպես էլ առանձնապես ծանր հանցագործությունների համար, որովհետև, եթե նա ենթակա է պաշտոնանկության ավելի մեղմ իրավախախտման համար, ապա ավելի ծանր իրավախախտման համար՝ առավել ևս: Բացի դրանից, իր գործողությունը շարունակում է մնալ 1961թ. քրեական օրենսգրքի 7.1-րդ հոդվածը, որում թվարկված արարքներն ըստ էության բաժանվել են ծանրի և առանձնապես ծանրի:

Այսպիսով, 57-րդ հոդվածի 1-ին մասը ոչ թե քրեական, այլ սահմանադրաիրավական պատասխանատվություն է: Հենց դրա ուժով այդ պատասխանատվության վրա չեն տարածվում Սահմանադրության 22-րդ հոդվածի մի շարք երաշխիքներ: Ուստի Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասը ենթակա է լայն մեկնաբանության և որպես պատասխանատվության հիմք՝ ներառում է մալ առանձնապես ծանր հանցագործությունները: Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ «ծանր հանցագործություն» և գործող քրեական օրենսդրության հանցագործությունների դասակարգման կոլիզիան վերացնելու համար, թերևս, անհրաժեշտ է քրեական օրենսգրքում ներմուծել նոր դասակարգում՝ երկու տեսակով՝ «ոչ ծանր» և «ծանր»՝ ամեն մեկում առանձնացնելով իր ենթատեսակները, օրինակ՝ նվազ ծանր և առանձնապես ծանր (խնդրական հավելում - Ա.Վ.):

ների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը պարտավոր է դիմումի մուտքագրման օրվանից երեք ամսվա ընթացքում կայացնել համապատասխան եզրակացություն:

Ելնելով հարցի կարեւորությունից, մասնագիտական գիտելիքների և գիտականորեն հիմնավորված օբյեկտիվ որոշման կայացման անհրաժեշտությունից՝ Սահմանադրական դատարանը, մի դեպքում իր նախաձեռնությամբ (ՄԴՕ 76 հ., մաս 9), մեկ այլ դեպքում դիմող կողմի կամ Նանրապետության Նախագահի միջնորդությամբ (ՄԴՕ 76 հ., մաս 10) ձեռավորում է նախաքննության մարմնի՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված հատուկ հանձնախումբ՝ վճռաբեկ դատարանի պալատներից մեկի նախագահի և նույն դատարանի երկու դատավորների ընդգրկմամբ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հ. 76-ի մաս 14-ի համաձայն Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետեւյալ եզրակացություններից մեկը.

1. Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին,

2. Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

Սահմանադրական դատարանի դրական եզրակացության դեպքում դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի համաձայն պետք է նշի Նախագահի այն որոշումները, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են ծանր հանցագործության կամ պետական դավաճանության հատկանիշները և այդ հանցագործության ճշգրիտ որակավորումը, Նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց հետագործման վերաբերյալ: Եզրակացությունն ընդունելուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը այն ուղարկվում է Ազգային ժողով և հայտարարվում Նանրային հեռուստատեսությամբ:

3. Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Նանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դրական եզրակացության հիման վրա քննարկում է Նախագահին պաշտոնանկ անելու որոշման նախագիծը, որի ընդունման համար պահանջվում է պարզամտվորների ընդհանուր թվի ձայների 2/3-ը, այսինքն՝ որակյալ մեծամասնությունը: Որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ: Եթե որոշումը սահմանված կարգով չի ընդունվում, ապա հարցը հանվում է օրակարգից: Դա այն դեպքում, երբ առկա է Սահմանադրական դատարանի՝ ՀՀ Նախագահի կողմից ծանր հանցագործություն կատարելու հիմքերի առկայության մասին դրական եզրակացությունը, որը համաձայն ՀՀ Սահմանադրության 102-րդ և Սահմանադրական դատարանի մասին օրենքի 61-րդ հոդվածների՝ վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Նման վիճակը կարող է լրջորեն թուլացնել իշխանությունների լեգիտիմությունը և քաղաքական ճգնաժամերի տեղիք փայլ:

Նարկ է նշել, որ կան պետություններ, որտեղ Նախագահին պաշտոնանկ անելու վերջնական որոշման կայացման իրավունքը վերապահված է սահմանադրական դատարանին, ինչը, կարծում ենք, իրավաբանորեն ավելի հիմնավորված է: Սահմանադրական դատարանը, երբ հաստատում է Նախագահի կողմից Սահմանադրության կամ մեկ այլ օրենքի խախտման, պետական դավաճանության, երդմնազանցության կամ ծանր հանցագործության, իսկ որոշ պետություններում՝ նաև անբարո կամ անպարվաբեր արարքների կատարման փաստը, որոշում է կայացնում Նախագահի լիազորությունների

դադարեցման՝ պաշտոնանկության մասին: Օրինակ՝ Նունգարիայի Նանրապետության Սահմանադրության § 31 (A.1) հոդվածի համաձայն՝ Նախագահի գործողությունների գնահատման իրավունքը պատկանում է Սահմանադրական դատարանի իրավասությանը: Եթե Սահմանադրական դատարանը հաստատում է օրենքի խախտման փաստը, ապա նա կարող է գրկել Նախագահին պաշտոնից:

Նարգի նման լուծում է սահմանված նաև Մակեդոնիայի (Ս. 87 հ.), Սլովակիայի (Ս. 107 հ.), Սլովենիայի (Ս. 109 հ.), Խորվաթիայի (Ս. 105 հ.), Ալբանիայի (Ս. 90 հ.), Գերմանիայի Դաշնության (Ս. 31 հ.) սահմանադրություններով:

4. Մեկնաբանվող հոդվածը նախատեսել է, որ եթե Սահմանադրական դատարանի եզրակացությամբ Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից: Այս նորմը վկայում է, որ առաջին պլան են մղվում պաշտոնանկության ոչ թե քաղաքական դրդապատճառները, այլ դրա հիմքերի իրավական որակման հարցը, որում վճռական խոսքը պատկանում է Սահմանադրական դատարանին:

ՆՈՂՎԱԾ 58

Նանրապետության Նախագահին իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը ներկայացնելուց հետո՝ փաստօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում Նանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է ընդունված, եւ Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում անցկացվում է արդահերթ ընտրություն:

ՆՍ Սահմանադրությունը նախատեսում է Հայաստանի Նանրապետության Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման հետևյալ հիմքերը. պաշտոնանկություն (հոդված 57), հրաժարական (հոդված 58), առողջական վիճակով կամ լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտներով պայմանավորված՝ լիազորությունների կատարման անհնարինություն (հոդված 59):

Նարկ է նկատել, որ այս հիմքերը չի կարելի սպառիչ համարել: Նախագահի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարել նաև մահվան, քաղաքացիության կորստի կամ փոփոխման, այլ երկիր մշտական բնակության մեկնելու, ընտրվելու իրավունքի կորստի դեպքում, այսինքն՝ այն հարկանիշների կորստի դեպքում, որոնք ՆՍ Սահմանադրության 50-րդ հոդվածը ներկայացնում է ՆՍ Նախագահին:

Մեկնաբանության առարկա սահմանադրական դրույթը կանոնակարգում է ՆՍ Նախագահի լիազորությունների դադարման վերոհիշյալ հիմքերից մեկի՝ հրաժարականի կարգը:

Հրաժարականը Նախագահի պաշտոնից կամավոր հրաժարումն է: Սահմանադրությունը հրաժարական ներկայացրած Նախագահից չի պահանջում ներկայացնել հրաժարականի դրդապատճառները, ինչպես նաև թույլ չի տալիս հրաժարվել Նախագահի պաշտոնից հոգուր այս կամ այն անձի:

ՆՍ Նախագահին իր հրաժարականը ներկայացնում է ՆՍ Ազգային ժողով: Հրաժարականը ներկայացնելուց հետո՝ փաստօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկե-

րում հրաժարականը կրկին չներկայացնելու դեպքում Նանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է առջինը:

Ազգային ժողովի նիստում հրաժարականի ներկայացումը երաշխիք է, որ Նանրապետության Նախագահը չի ենթարկվել հակասահմանադրական, արտաքաղաքական եւ հարկապես ապօրինի ճնշումների: Իսկ հրաժարականի առջնությունը նշանակում է, որ այն անվավեր է՝ անկախ ամեն ինչից, անմիջապես Սահմանադրության ուժով: Այդ իսկ պարճառով ոչ ոք չի կարող այլ կերպ ներկայացնել հրաժարականի առաջին փուլի իրավական հետեւանքները, կասկածի փակ դնել մեկ ամգամ հրաժարական ներկայացրած այն Նախագահի լեգիտիմությունը, ով չի կրկնել հրաժարականի ներկայացումն ըստ Սահմանադրության:

ՆՄ Սահմանադրության 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ փոփոխված 58-րդ հոդվածը սահմանում էր ՆՄ Նախագահի հրաժարականի՝ խնդրո առարկա հոդվածով սահմանված իրավակարգավորումից էականորեն փարբերվող կարգ: Ըստ նախկին իրավակարգավորման՝ Նանրապետության Նախագահի հրաժարականն ընդունվում էր Ազգային ժողովի կողմից՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ ՆՄ Նախագահի հրաժարականն ընդունելու հարցի լուծումը վերապահված էր Ազգային ժողովի հայեցողությանը: Մինչդեռ ներկա իրավակարգավորմամբ Ազգային ժողովին նշված հարցում հայեցողություն դրսեւորելու հնարավորություն ընձեռված չէ: Եթե ՆՄ Նախագահը հրաժարականը ներկայացնելուց հետո՝ փաստօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը ներկայացնում է կրկին, ապա հրաժարականն այդ փաստի ուժով ինքնըստինքյան համարվում է ընդունված: Մեկնաբանության առարկա հոդվածի եւ ՆՄ Սահմանադրության 62-րդ հոդվածի (սպառնիչ կերպով մարմաննշված է այն հարցերի շրջանակը, որոնց կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ է ընդունում) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՆՄ Նախագահի հրաժարականն ընդունելու վերաբերյալ Ազգային ժողովից համապարասխան որոշման ընդունում չի պահանջվում: Ավելին, ցանկացած որոշման ընդունում քվեարկության գործընթացի արդյունք է: Ուստի գործնականում չի բացառվում, որ ՆՄ Նախագահի հրաժարականն ընդունելու հարցի առնչությամբ քվեարկության արդյունքում հրաժարականի ընդունումը մերժվի: Մինչդեռ նման իրավիճակը կհակասի Սահմանադրության 58-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմանն առ այն, որ այդ հոդվածով սահմանված ժամկետում հրաժարականի կրկնումն այն իրավական հիմքն է, որը բավարար է Նախագահի հրաժարականն ընդունված համարելու համար:

Այսպիսով, ըստ ՆՄ Սահմանադրության 58-րդ հոդվածի, ինչպես նաեւ դրան համապարասխան՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՄ օրենքի 94-րդ հոդվածի համաձայն՝ ՆՄ Նախագահի հրաժարականի ընդունման փաստն արձանագրվում է ոչ թե ՆՄ Ազգային ժողովի համապարասխան որոշմամբ, այլ Ազգային ժողովի նախագահի պաշտոնական հաղորդագրությամբ (փեղեկափոխությամբ): Նամաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՄ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ինչպես հրաժարականի ներկայացման, այնպես էլ դրա ընդունման մասին Ազգային ժողովի նախագահը հանդես է գալիս պաշտոնական հաղորդագրությամբ (փեղեկափոխությամբ):

ՆՄ Նախագահի հրաժարականի հիմքով Նանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում անցկացվում է ՆՄ Նախագահի արտահերթ ընտրություն՝ Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում: Ըստ ՆՄ Սահմանադրության 53-րդ հոդվածի՝ քվեարկությունն անցկացվում է ՆՄ Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 40-րդ օրը: ՆՄ Նախագահի հրաժարականի դեպքում Նախագահի

պաշտոնը թափուր մնալու պահ է համարվում հրաժարականը կրկին ներկայացնելու պահը:

ՀՈԴՎԱԾ 59

Նանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կարարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք փեւականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կարարումը, Ազգային ժողովը կառավարության առաջարկով եւ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պարզամասվորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով որոշում է ընդունում Նանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կարարման անհնարինության մասին: Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Նանրապետության Նախագահի լիազորությունների կարարման անհնարինության հիմքերը բացակայում են, ապա կառավարությունը չի կարող նման առաջարկով դիմել Ազգային ժողով:

Սահմանադրության 59-րդ հոդվածում ամրագրված են Նանրապետության Նախագահի լիազորությունների դադարման ինքնուրույն՝ լիազորությունների կարարման անհնարինության հիմքերը եւ կիրառման ընթացակարգը: Այդ հիմքով լիազորությունների դադարումը յուրահատուկ է, քանի որ դրանով սահմանադրորեն նախատեսվում են փաստական նախադրյալներ եւ համապատասխան ընթացակարգ:

Փաստական նախադրյալները երկուսն են՝ ա) Նախագահի ծանր հիվանդության կամ բ) նրա լիազորությունների կարարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայությունը: Երկու նախադրյալների համար պարբաղիբ պայման է համարվում այն հանգամանքը, որ դրանք փեւականորեն անհնարին պետք է դարձնեն նրա լիազորությունների կարարումը: Այսինքն՝ հնարավոր է, որ իսկապես ծանր հիվանդությունն առկա է, սակայն դա չի առաջացրել Նախագահի կողմից իր լիազորությունների կարարման փեւական անհնարինություն:

Ամեն դեպքում, պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ սահմանված պայմաններով ծանր հիվանդության առկայությունը կառավարության վարկածն է, ինչը կարող է նաեւ անհիմն լինել: Սակայն դրա առկայության եւ սահմանադրական պայմանների մասին եզրակացությունը փախի է Սահմանադրական դատարանը՝ օրենքով սահմանված կարգով: Եզրակացությունը հենց կոնկրետ պայմաններից ու հանգամանքներից ելնող, անհատական առանձնահատկությունները հաշվի առնող փաստաթուղթ է, որի կայացման հիմքերի համար մշտական դեղատոմսեր չեն կարող լինել: Ամեն անգամ այդ հանգամանքները որոշում է Սահմանադրական դատարանը, որը համադրելով սահմանադրական չափորոշիչները Նախագահի անհատական եւ որոշակի հանգամանքների հետ, փախի է եզրակացություն: Օրինակ՝ նույն հիվանդությունը կարող է դառնալ նախագահներից մեկի լիազորությունների դադարման հիմք, իսկ մյուսի համար՝ ոչ: Ենթադրենք վերջինին մնացել է լիազորությունների մեկ ամիս, հեփետաբար՝ դեպքը չի կարող որակվել որպես լիազորությունների կարարումը փեւականորեն անհնարին դարձնող:

Ծանր հիվանդության բնորոշման կապակցությամբ Սահմանադրությունը որեւէ արարողակարգ չի նախատեսում, սակայն կարելի է ենթադրել, որ այն պետք է սրուզվի

բժշկական խորհրդակցություն (կոնսիլիումի) անցկացման միջոցով, որը պետք է կարգավորվի համապատասխան օրենքով: Խոսքն այսպեղ ոչ թե կարճատև, այլ պարտականությունների կատարումն անհնարին դարձնող հիվանդության մասին է:

ՆՆ կառավարությունը 2002թ. հունիսի 27-ի թիվ 908-Ն որոշմամբ հաստատեց քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը¹⁶: Կիրառելով անալոգիա՝ վերոհիշյալ որոշմամբ թվարկված հիվանդությունների ցանկից թերևս համապատասխան բժշկական հետազոտությունների առկայության պայմաններում, կարելի է որպես ՆՆ Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված ծանր հիվանդություն համարել՝ ա) բոլոր տեսակի փսիխոփիլ բնույթի հոգեկան խանգարումները, ոչ փսիխոփիլ բնույթի հոգեկան խանգարումները, որոնք ընթանում են հաճախակի սրացումներով, արտահայտված ներտրիկ եւ անձի խանգարումներով, բ) թմրամոլությունը... (այդ թվում՝ ակոհոլիզմը)՝ անձի դեգրադացիայի երևույթներով: Ամեն դեպքում ծանր հիվանդությունն ավելի շարք վերաբերում է Նախագահի մրավոր կարողություններին, հոգեկան վիճակին եւ ավելի սակավ նրա ֆիզիկական վիճակին: Օրինակ, պոլեմեյիթից հաշմանդամ դարձած եւ հաշմանդամի սայլակով փողաշարժող ԱՄՆ պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը չորս անգամ ընտրվեց պրեզիդենտ ու մեծ դեր կատարեց Կոնգրեսի և ՆԱՄՆ-ում հաղթահարելու եւ Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակիցների հաղթելու գործում:

Բացի ծանր հիվանդությունից, Նանրապետության Նախագահի լիազորությունների կատարման համար անհատափաստի խոչընդոտներ կարող են հանդիսանալ մի շարք հանգամանքներ՝

- Եթե Նանրապետության Նախագահը, օրենքով նախատեսված կարգով, դատարանի վճռով ճանաչվել է անհայտ բացակայող կամ մահացած (օրինակ, ենթադրենք Նանրապետության Նախագահին առեւանգել են եւ երկար ժամանակ նրա գտնվելու վայրի մասին որեւէ տեղեկություն չկա, կամ տեղի է ունեցել ավիավթար եւ հավաստի տվյալներ չկան, թե Նախագահն իսկապես մահացել է (չի գտնվել դիակը): Թեեւ շարք հավանական է, որ նա մահացել է, սակայն լիովին չի բացառվում նրա ողջ լինելու հավանականությունը:

- Եթե պատերազմի կամ ապստամբության, խռովության ժամանակ Նախագահը գերի է ընկել հակառակորդի ձեռքը եւ երկարատև ապարդյուն փորձերից հետո անհնարին է համարվում նրա ազատագրումը:

Կարող են լինել նաեւ անհատափաստի այլ խոչընդոտներ: Դրանց սպառիչ թվարկումն անհնարին է: Ընդհանրապես անհատափաստի խոչընդոտն այնպիսի իրավիճակ է, որը իրական արգելք կարող է հանդիսանալ Նանրապետության Նախագահի կողմից իր պարտականությունների լիակատար կատարմանը եւ առկա հնարավոր բոլոր միջոցներով անհնարին է վերականգնել այն: Միակ ելքն այս պարագայում նոր արտահերթ ընտրությունների անցկացումն է:

Խնդրի առանձնահատուկ կարեւորությունից ու բարդությունից ելնելով է, որ Սահմանադրությունը վիճակի համարժեք գնահատումը վերապահում է ոչ միայն Ազգային ժողովին, ընդ որում՝ կառավարության առաջարկի հիման վրա, այլեւ պարտադիր է համարում ՆՆ սահմանադրական դատարանի եզրակացությունը: Վերջինս դրական կարող է լինել, երբ կառավարության ներկայացրած հիմքերը կդիպվեն իրավաչափ ու համոզիչ: Նարկ է նաեւ նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանի բացասական եզրակացության դեպքում հարցը չի կարող Ազգային ժողովում քննության առարկա դառնալ:

¹⁶ Տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2002, թիվ 27, հոդված 637:

ՆՈՂ-ՎԱԾ 60

Տանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտրված Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, Տանրապետության Նախագահի պարտականությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա վարչապետը: Ազգային ժողովի նախագահի կողմից Տանրապետության Նախագահի պարտականությունները կատարելիս Ազգային ժողովի նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահի այն տեղակալը, որը պաշտոնում ընտրվելիս ստացել էր առավել շատ ձայներ: Այդ ընթացքում արգելվում է նշանակել հանրաքվե, նշանակել վարչապետին, նշանակել եւ ազատել զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (բացառությամբ ռազմական դրության ժամանակ), օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարել ոստիկանության եւ ազգային անվտանգության մարմինների պաշտոններում, ինչպես նաև իրականացնել Սահմանադրության 55-րդ հոդվածի 3, 8, 16, 17-րդ կետերում սահմանված լիազորությունները:

Լիազորությունների ավարտով պայմանավորված՝ Նախագահի լիազորությունների դադարման դեպքում Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված են այնպիսի ընթացակարգեր, որոնք ապահովում են Նախագահի պաշտոնի իրավահաջորդության բնականոն ընթացքը՝ բացառելով թափուր պաշտոնի առաջացում: Ներելաբար, ՏՏ Սահմանադրության՝ մեկնաբանության առարկա հողվածում «թափուր մնալ» հասկացությունը ենթադրում է արտակարգ դեպքի առկայություն եւ, հետեւաբար, վերաբերում է Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքերին: Սահմանադրությամբ սահմանված են Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման հետելյալ հիմքերը. հրաժարականը, մահը, լիազորությունների կատարման անհնարինությունը, պաշտոնանկությունը (Սահմանադրության 53-րդ հոդված):

ՏՏ Սահմանադրության՝ մեկնաբանության առարկա հողվածում «մինչև պաշտոնի ստանձնումը» ձեւակերպմամբ սահմանվում է այն ժամկետը, որի ընթացքում հողվածում մտնան իրավասու սուբյեկտները կատարում են ՏՏ Նախագահի պարտականությունները: Ըստ ՏՏ Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերության՝ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Տանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը: Վարկ է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է ընտրությանը, եւ ոչ թե քվեարկությանը: ՏՏ Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերությունում սահմանված՝ «ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը» բառակապակցությունը նշանակում է, որ Նախագահի ընտրության օր է համարվում, եւ ըստ այդմ էլ՝ վերոհիշյալ քսանօրյա ժամկետը հաշվվում է ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան թեկնածուի՝ Տանրապետության Նախագահ ընտրվելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրը: Ընդ որում, եթե Տանրապետության Նախագահի ընտրության արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանը գործ է ընդունում քննության, ապա Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերությամբ սահմանված քսանօրյա ժամկետը հաշվվում է դատարանի որոշումն

ուժի մեջ մտնելու պահից:

Նարկ է նշել նաև, որ Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերությունը դեռևս բավարար չէ որոշելու համար այն ժամկետը, որի ընթացքում 60-րդ հոդվածում մատնանշված իրավասու սուբյեկտները կատարում են ՀՀ Նախագահի պարտականությունները: Սահմանադրության 54-րդ հոդվածի համաձայն՝ Նահապետության Նախագահը պաշտոնն սրանձնում է օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին փրված երդմամբ: Սահմանադիրը, բացի Նախագահի կողմից պաշտոնի սրանձնման համար ժամկետ սահմանելուց, սահմանել է նաև այնպիսի իրադարձության վրա հասնելու անհրաժեշտություն, որով պայմանավորված է այդ ժամկետի սկիզբը: Այդ իրադարձությունը Նախագահի երդմնակալությունն է: Հիմք ընդունելով Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերությամբ սահմանված ժամկետը՝ ենթադրվում է, որ Նախագահի երդմնակալության արարողությունը պետք է փրկի ունենա Սահմանադրության 51-րդ հոդվածի 8-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում, սակայն գործնականում հնարավոր են դեպքեր, երբ փարբեր պատճառներով Նախագահի երդմնակալության արարողությունը փրկի չունենա այդ ժամկետում: Ներքին գործերի, ՀՀ Սահմանադրության՝ մեկնաբանության առարկա հոդվածում «մինչև պաշտոնի սրանձնումը» ձեռակերպմամբ սահմանված ժամկետը, որի ընթացքում հոդվածում մատնանշված իրավասու սուբյեկտները կատարում են ՀՀ Նախագահի պարտականությունները, ավարտվում է նորընտրի Նախագահի երդվելու պահին:

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրության՝ մեկնաբանության առարկա հոդվածում «մինչև պաշտոնի սրանձնումը» ձեռակերպմամբ սահմանվում է այն ժամկետը, որի ընթացքում հոդվածում մատնանշված իրավասու սուբյեկտները կատարում են ՀՀ Նախագահի պարտականությունները: Սակայն հարկ է որոշել նաև այն ժամկետի սկիզբը, երբ հոդվածում մատնանշված իրավասու սուբյեկտներն սկսում են կատարել ՀՀ Նախագահի պարտականությունները: Այդ ժամկետի սկիզբը որոշված է մեկնաբանության առարկա հոդվածում ամրագրված՝ «թափուր մնալ» հասկացությամբ: Ժամկետի սկիզբը որոշելու համար հարկ է որոշել, թե երբ է ՀՀ Նախագահի պաշտոնը թափուր մնում: Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 57, 58, 59-րդ հոդվածները, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 94, 95, 96-րդ հոդվածները.

ա) Նախագահի հրաժարականի դեպքում Նախագահի պաշտոնը թափուր է մնում Նախագահի կողմից իր հրաժարականն Ազգային ժողով ներկայացնելուց հետո՝ նվազագույնը 11-րդ, առավելագույնը՝ 12-րդ օրը՝ հաշվված հրաժարականը ներկայացնելու հաջորդ օրվանից,

բ) լիազորությունների կատարման անհնարինության դեպքում Նախագահի պաշտոնը թափուր է մնում Ազգային ժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո,

գ) պաշտոնանկության դեպքում Նախագահի պաշտոնը թափուր է մնում Ազգային ժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո,

դ) մահվան դեպքում Նախագահի պաշտոնը թափուր է մնում մահվան օրվան հաջորդող օրվանից:

Բոլոր այն դեպքերում, երբ Նախագահն ի վիճակի չէ կատարելու իր պարտականությունները, նրան փոխարինում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ վարչապետը:

Սահմանադրությունը Նախագահի պարտականությունները կատարողի համար սահմանում է հետևյալ սահմանափակումները, այն է՝ վերջինս իրավունք չունի նշանա-

կել հանրաքվե, նշանակել վարչապետին, նշանակել եւ ազատել զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (բացառությամբ ռազմական դրության ժամանակ), օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարել ոստիկանության եւ ազգային անվտանգության մարմինների պաշտոններում, արձակել Ազգային ժողովը եւ նշանակել արտահերթ ընտրություն, նշանակել եւ հեղափոխել օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններին առնչվող Նայասպանի Նանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունել օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը եւ հեղափոխագրերը, պարզեւարել Նայասպանի Նանրապետության շքանշաններով եւ մեդալներով, շնորհել բարձրագույն զինվորական եւ պարավոլոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական եւ այլ դասային աստիճաններ, ներում շնորհել դատապարտյալներին:

Նշված լիազորություններն առնչվում են օրենսդիր եւ ներկայացուցչական մարմնի, ինչպես նաեւ ուժային կառույցների հեղափոխագահի փոխարաբերություններին, կառավարության կազմավորմանը, երկրի արտաքին քաղաքականությանը: Այդ սահմանափակումների ընտրությունն ինքնանպատակ չէ: Սահմանափակված է Նախագահի հարկապես այն լիազորությունների կատարումը, որոնք կարող են աղերսվել սահմանադրական կարգի փոփոխություններին, արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխություններին, իշխանության հնարավոր յուրացմանը: Նշված սահմանափակումների նպատակը երկրի կայունությունն ու անվտանգությունն ապահովելն է:

Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը փոխարինելով Նախագահին՝ չեն կորցնում համապատասխանաբար՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի իրենց կարգավիճակը: Նրանք Նախագահին փոխարինում են ժամանակավորապես, ունեն նրա բոլոր իրավունքները եւ պարտականությունները՝ բացառությամբ վերոհիշյալ սահմանափակումների: Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի կողմից Նախագահին փոխարինելու ժամանակ Նախագահի իրավունքների եւ պարտականությունների սահմանափակ ծավալի սրանձնումը նշանակում է, որ Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը չեն սրանձնում Նախագահի անձնական իրավական կարգավիճակը եւ նրա արարողակարգային իրավունքները. այս առնչությամբ նրանք Նախագահի իրավունքներն իրացնում եւ պարտականությունները կատարում են ոչ թե որպես Նախագահի տեղակալ, այլ որպես համապատասխանաբար՝ Ազգային ժողովի նախագահ եւ վարչապետ: Նրանք, կարելի է ասել, հանդես են գալիս որպես Նախագահի սահմանադրական ինստիտուտի ներկայացուցիչ եւ ոչ թե որպես Նախագահի տեղակալ:

ՆՈՂՎԱԾ 61

Նանրապետության Նախագահը օրենքով սահմանված կարգով ձեւավորում է իր աշխատակազմը: Նանրապետության Նախագահի վարձարության, սպասարկման եւ անվտանգության ապահովման կարգը սահմանվում է օրենքով:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 1-ին նախադասությունը սահմանում է, որ Նանրապետության Նախագահն օրենքով սահմանված կարգով ձեւավորում է իր աշխատակազմը: Ինչպես ցանկացած պետության Նախագահ, ՆՆ Նախագահը նույն-

պես աշխատում է՝ հենվելով օգնականների, խորհրդականների եւ այլ աստիճանավորների վրա: Վերջիններս միավորված են միասնական կառույցում՝ ՏՏ Նախագահի աշխատակազմում:

Պետական ապարատի առաջնային բաղադրարարը պետական մարմինն է, սակայն այն ներառում է նաեւ պետական մարմինների իրավասության իրականացման օժանդակող աշխատանքային կառույցները, այսինքն՝ պետական կառավարչական հիմնարկները, որոնք իշխանական ուժի չեն փիրապետում, սակայն կարեւոր դեր են կատարում պետական որոշումների նախապարաստման եւ կատարման գործում: Այսպիսով, պետական ապարատի առաջնային բաղադրարարը պետական մարմինն է, օրինակ՝ Տանրապետության Նախագահը: Սակայն Նախագահը միանձնյա կերպով, առանց օժանդակության չի կարող արդյունավետ կատարել իր գործառնությունները: Ներուսբար, պետական մարմինների իրավասության իրականացման համար ստեղծվում են օժանդակող աշխատանքային կառույցներ: Պարմականորեն նման հաստատությունները կոչվել են գրասենյակներ, գործերի կառավարչություններ: ՏՏ-ում դրանց կազմակերպական-իրավական ձեւը պետական կառավարչական հիմնարկն է, որը միջնորդավորում եւ կոնկրետ պետական մարմնի գործունեությունը դարձնում է նպատակասլաց:

Նախագահի աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որը, որպես իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, ստեղծվում է Տանրապետության Նախագահին վերապահված լիազորությունների լիարժեք եւ արդյունավետ իրականացման եւ քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցության ապահովման նպատակով:

Պետք է նշել, որ մեկնաբանվող հոդվածի 1-ին դրույթը 1995թ. ՏՏ Սահմանադրության փոփոխության քաղաքացիական օրենսգրքում է. այն ավելացվել է 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Սույն լրացումը ՏՏ Նախագահի աշխատակազմի՝ օրենքով սահմանված կարգով ձեւավորման նպատակ է հետապնդում, միաժամանակ ամրագրում է ՏՏ Նախագահի եւս մի լիազորություն: Սահմանադրության 61-րդ հոդվածի իմաստով՝ «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունը չի նշանակում, որ Ազգային ժողովը պետք է ընդունի Տանրապետության Նախագահի աշխատակազմի մասին օրենք: Այդ արտահայտությունն ընդամենը գալիս է փաստելու, որ Նախագահն ունի որոշակի հայեցողություն իր աշխատակազմի ձեւավորման հարցում, սակայն օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես, դա վերաբերում է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» եւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՏՏ օրենքներին:

Կարծում ենք, որ մեկնաբանվող հոդվածի 1-ին դրույթն ավելի շուրջ վերաբերում է ՏՏ Նախագահի լիազորություններին, ուստի ճիշտ կլիներ այն ներառել ՏՏ Սահմանադրության՝ ՏՏ Նախագահի լիազորություններին վերաբերող հոդված 55-ում: Տարբեր երկրների սահմանադրական պրակտիկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ճանապարհով են ընթացել իրենց սահմանադրություններում նման նորմ ներառած բոլոր երկրները:

ՏՏ Նախագահն իր՝ 17.08.2007թ. «Տայասարանի Տանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրությունը եւ կառուցվածքը հաստատելու մասին» ՆՏ-193-Ն հրամանագրով հաստատել է ՏՏ Նախագահի աշխատակազմի նոր կանոնադրությունը եւ կառուցվածքը, միաժամանակ ուժը կորցրած ճանաչելով ՏՏ Նախագահի 20.08.2002թ. «Տայասարանի Տանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրությունը եւ կառուցվածքը հաստատելու մասին» ՆՏ-1159-Ն հրամանագիրը:

Աշխատակազմի իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում են

ՏՏ Սահմանադրությամբ, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով, ՏՏ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և ՏՏ Նախագահի աշխատակազմի կանոնադրությամբ:

ՏՏ Նախագահի աշխատակազմի կանոնադրությունը կանոնակարգում է աշխատակազմի բոլոր ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց ընդհանուր պաշտոնական պարտականությունները և ենթակայությունը:

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՏՏ օրենքի համաձայն աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք և իր իրավասության սահմաններում Տայաստանի Տանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ըստ 1996թ. փետրվարի 19-ին ընդունված՝ «Տայաստանի Տանրապետության Նախագահի վարձապրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՏՏ օրենքի հոդված 5-ի՝ ՏՏ Նախագահի և նրա աշխատակազմի գործունեության Ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՏՏ Նախագահի աշխատակազմի ծախսերը նախարետող մատով: ՏՏ Նախագահի աշխատակազմի՝ պետական բյուջեով սահմանված ծախսերի կազմում նախարետվում է պահուստային ֆոնդ, որի միջոցները ծախսվում են ՏՏ Նախագահի կողմից սահմանված կարգով:

ՏՏ Նախագահին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով աշխատակազմն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- նախապատրաստում է ՏՏ Սահմանադրության, ՏՏ միջազգային պայմանագրերի, ՏՏ օրենքների, ՏՏ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՏՏ կառավարության որոշումների, ինչպես նաև դրանց նախագծերի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները, նախագծերի փորձաքննությանը և լրամշակմանը մասնակից է դարձնում շահագրգիռ կամ այլ իրավասու պետական մարմինների, պաշտոնատար անձանց և մասնագետների,

- նախապատրաստում է ՏՏ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, հանձնարարականների, ուղերձների և այլ փաստաթղթերի նախագծերը, ապահովում և վերահսկում է ՏՏ օրենքների, ՏՏ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների պաշտոնական հրատարակումը,

- վերահսկում է ՏՏ միջազգային պայմանագրերի, ՏՏ օրենքների, ՏՏ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, հանձնարարականների, ինչպես նաև արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին առնչվող ՏՏ կառավարության որոշումների կատարումը, կազմակերպում է ՏՏ ներքին և արտաքին քաղաքականության հարցերին վերաբերող ծրագրային փաստաթղթերի նախապատրաստումը,

- ապահովում է ՏՏ Նախագահին առընթեր խորհրդակցական մարմինների գործունեությունը, կուսակցությունների, հասարակական միավորումների և զանգվածային լրավորության միջոցների, օտարերկրյա պետական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքական և հասարակական գործիչների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ ՏՏ Նախագահի համագործակցությունը,

- պարբերաբար ուսումնասիրում և վերլուծում է փոփոխության և պետական կառավարման համապատասխան բնագավառներում իրավիճակը, բացահայտում հրատարակ հարցերը և դրանց հիման վրա մշակում և ներկայացնում է համապատասխան

առաջարկություններ,

- իրականացնում է քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և փոփոխական ինքնակառավարման մարմինների, պաշտոնապար անձանց՝ ՀՀ Նախագահին և աշխատակազմին ուղղված դիմումների և առաջարկությունների ուսումնասիրությունը, վերլուծությունը, անհրաժեշտության դեպքում դրանց՝ համապատասխան մարմիններին, պաշտոնապար անձանց վերահասցեագրումը, ամփոփումը և Հանրապետության Նախագահին համապատասխան հաշվեքվություններ ներկայացնելը,

- կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն,

- վերահսկում և փորձում ստուգում է ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, հանձնարարականների, ինչպես նաև արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին առնչվող ՀՀ կառավարության որոշումների կատարումը, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին և ճիշտ կատարելու համար, ՀՀ Նախագահին ներկայացնում է առաջարկություններ կամ զեկույցներ հայտնաբերված թերությունների, խախտումների վերաբերյալ,

- առաջարկություն է ներկայացնում ՀՀ կառավարության որոշման գործողությունը մեկ ամիս ժամկետով կասեցնելու և ՀՀ Սահմանադրությանը դրա համապատասխանության հարցը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ.

- իրականացնում է ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով աշխատակազմին վերապահված այլ գործառնություններ:

Իրեն վերապահված գործառնությունների իրականացումն ապահովելու նպատակով Նախագահի աշխատակազմը նաև համագործակցում է ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատական մարմինների, ՀՀ վերահսկիչ պալատի, ՀՀ դատախազության, ՀՀ կենտրոնական բանկի, գործադիր իշխանության, փարաժբային կառավարման, պետական և փոփոխական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետական մարմինների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, դրանց պաշտոնապար անձանց հետ:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ նախադասությամբ ամրագրված դրույթը նախապետում է, որ Հանրապետության Նախագահի վարձարրության, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում է օրենքով: Նման իրավակարգավորման նպատակն է երաշխավորել պետության գլխի համար սոցիալական պաշտպանվածության ու անվտանգության այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեն նրա անկախ գործունեությունն ու պարտականությունների լիարժեք իրականացումը:

1996թ. փետրվարի 19-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի վարձարրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը և 2008թ. ապրիլի 29-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի վարձարրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը սահմանում են Հանրապետության Նախագահի վարձարրության, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը:

Գ Լ ՈՒ Խ 4

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

ՆՈՂՎԱԾ 62

1. Նայասարանի Նանրապեպրությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք սպորտագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

2. Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ և հայտարարություններ:

3. Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

4. Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

1. ՏՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Նայասարանի Նանրապեպրությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Քննարկվող հոդվածում իր զարգացումն է սրացել սահմանադրական կարգի հիմունքների մաս կազմող այն դրույթը, ըստ որի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (տե՛ս Սահմանադրության 5-րդ հոդվածի մեկնաբանությունը): Այսպիսով, Սահմանադրության 2 և 5-րդ հոդվածների, ինչպես նաև 62-րդ հոդվածի համակարգային մեկնաբանումից բխում են իրավական հետևյալ հետեւանքները.

1) օրենսդիր իշխանությունը պետական իշխանության առանձին գործառույթ է, որի էությունն օրենսդրելն է, այսինքն՝ օրենքներ ընդունելը: Մյուս իշխանությունների նկատմամբ խորհրդարանը հանդես է գալիս որպես օրենսդիր իշխանության ինքնուրույն մարմին, որը, սակայն, իրականացնում է խորհրդարաններին հաստիքային գործառույթներ էս:

2) Օրենսդիր իշխանության իրականացումը՝ որպես մենաշնորհի, վերապահված է Ազգային ժողովին, որը պետական ապարատի առանձին օղակ, առանձին մարմին է: Ազգային ժողովը մարմնավորում է ՏՏ օրենսդիր իշխանությունը, Սահմանադրությանը համապատասխան ընդունում հանրապետության բյուջեն, իրականացնում խորհրդարանական վերահսկողություն: Միաժամանակ, Ազգային ժողովը չպետք է փոխարինի դատական և գործադիր իշխանություններին, դուրս գա իր լիազորությունների

շրջանակներից, որ սահմանված են Սահմանադրությամբ: Ընդունվող օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը եւ օրենքներին: Պետական իշխանության որեւէ այլ մարմին չի կարող յուրացնել Ազգային ժողովի լիազորությունները, փոփոխել կամ վերացնել օրենքները: Միայն ՀՀ սահմանադրական դատարանն ունի օրենքները հակասահմանադրական ճանաչելու լիազորություն:

3) Օրենսդիր իշխանությունը մարմնավորող Ազգային ժողովը ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին է՝ խորհրդարան: Նայելական պառլամենտը կոչվում է Ազգային ժողով: Այն Նայասարանի ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, նրա շահերը, կամքը, ինքնիշխանությունն արտահայտողը եւ կոչված է որոշելու հասարակության եւ պետության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելու ճանապարհով: Որպես խորհրդարան՝ Ազգային ժողովն առանձնացված է գործադրից, որպես օրենսդիր ինքը չի զբաղվում օրենքների կիրառմամբ: Սակայն օրենսդիր իշխանության մարմինը գործադրի նկատմամբ ունի միայն վերահսկողության իրավունք Սահմանադրությամբ սահմանված կառուցակարգային ձեւերով:

4) Խորհրդարանը հարաբերականորեն անկախ եւ ինքնուրույն մարմին է: Ազգային ժողովը որպես օրենսդիր իշխանության մարմնավորող՝ իրավաբանորեն ենթարկված չէ ոչ մի պետական մարմնի: Ազգային ժողովը՝ ընդունելով օրենքներ, որոնք պարտադիր են մյուս իշխանությունների համար, չպետք է խախտի նաեւ դրանց ինքնուրույնությունը, յուրացնի դրանց լիազորությունները: Այդ իշխանությունները չեն գտնվում օրենսդիր մարմնի անմիջական ենթակայության ներքո:

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը պայմանավորված է նրա կազմավորման կարգով¹, որի դեպքում նրա պարզամավորը ժողովրդի ընտրովի ներկայացուցիչն է: Նա իր գործունեության մեջ արտահայտում է համապատասխան փարաձքի, քաղաքական ուժերի, շերտերի եւ խմբերի շահերը, քաղաքական բազմազանությունն ու բազմակարծությունը:

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը դրսևորվում է նաեւ նրա գործունեության ժամանակագրական սահմանափակման մեջ, որի ավարտին կամ նույնիսկ ավելի շուրջ, անցկացվում են նոր ընտրություններ, նորացվում է պարզամավորների կազմը: Դա նպաստում է ժողովրդի նոր պահանջմունքների, կարծիքների, փրամադրվածության ժամանակին հաշվառմանը:

Ազգային ժողովը կոչված է արտահայտելու ժողովրդի՝ որպես ինքնիշխանության կրողի եւ իշխանության հիմնական աղբյուրի կամքը: Օրենսդիր մարմինը ձեւավորվում է ժողովրդի կողմից՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրության արդյունքում, գաղտնի քվեարկությամբ: ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ խորհրդարանական ընտրությունները կատարվում են համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով: Ժողովուրդն իր ներկայացուցիչներին «գործուղում է» Ազգային ժողով: Վերջինիս բուն էությունն այն է, որ ունի ներկայացուցչական բնույթ եւ որպես ներկայացուցչական պետական մարմին պետք է կարողանա արտահայտել հասարակության փարքեր շերտերի, խմբերի, ինչպես նաեւ փարաձքների շահերը, ամրապնդի կապը ժողովրդի հետ: Ազգա-

¹ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունն ամրագրում է, որ Պետական դուման ներկայացուցչական մարմին է, Բելոռուսի (Սահմանադրության 90-րդ հոդված), Հունգարիայի (73-րդ հոդված), Ռումինիայի (58-րդ հոդված), Լիտվայի (4-րդ հոդված) սահմանադրություններում առանձնահատուկ նշված են պառլամենտների ներկայացուցչական բնույթն ու էությունը: Կարծում ենք, ճիշտ կլինի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել, որ Ազգային ժողովը մաս ներկայացուցչական մարմին է՝ դրանով ամրագրելով օրենսդիր մարմնի ներկայացուցչական բնույթը, ընդգծելով նրա նշանակությունը պառլամենտարիզմի ձևավորման գործում:

յին ժողովը միաժամանակ եւ՝ ներկայացուցական, եւ՝ օրենսդիր մարմին է: Ազգային ժողովի ներկայացուցական գործառնության իրականացումն ապահովող սահմանադրական միջոցներից են նրա վերահսկողական, պաշտոնների նշանակման, ՏՏ Նախագահի, կառավարության, այլ պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանադրական պատասխանատվության կիրառման եւ այլ լիազորությունները:

Ներկայացուցական բնույթ կրող պառլամենտի գոյության ու գործունեության արդյունքում է ձեւավորվում պառլամենտարիզմը: Պառլամենտարիզմը սահմանվում է որպես պետական, քաղաքական կառավարման համակարգ՝ իշխանությունների փոփոխման, ժողովրդավարական ռեժիմի պայմաններում: Այն հանդիսանում է ժողովրդի շահերն արտահայտող ժողովրդավարական, իրավական կառուցակարգ, սահմանադրաիրավական նորմերով երաշխավորված բազմակուսակցական քաղաքական համակարգի մաս, որտեղ գործադիր իշխանությունը սահմանադրական եւ քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև, իսկ պառլամենտը ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչների միջոցով վերահսկողություն է իրականացնում կառավարության նկատմամբ, երաշխավորում է ապահովում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը:

Ազգային ժողովը ժողովրդի կողմից իրեն պատվիրակված եւ սահմանադրորեն ամրագրված օրենսդիր իշխանության ուժով ընդունում է օրենքներ, որոշումներ, ուղերձներ, հայտարարություններ:

Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պարկանում է պարզամակրներին եւ կառավարությանը:

Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ դրույթով նախատեսված դեպքերում եւ հիմքերով Ազգային ժողովը ընդունում է որոշումներ: Ի փոքրություն օրենքների, դրանք ստորագրում եւ հրատարակում է Ազգային ժողովի նախագահը:

Ըստ Սահմանադրության՝ Ազգային ժողովն ընդունում է որոշումներ.

ա) Սահմանադրության 55-րդ հոդվածի 13 եւ 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111 եւ 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում,

բ) իր գործունեության կազմակերպման հարցերով:

Այսպիսով, սահմանադրորեն նախատեսվում են Ազգային ժողովի կողմից որոշումների ընդունման հետևյալ դեպքերը.

- ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պարտեզան հայտարարվելու դեպքերում Հանրապետության Նախագահը հայտարարում է ռազմական դրություն, կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք եւ որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Այս դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Ըստ ՏՏ Սահմանադրության 81-րդ հոդվածի վերջին մասի՝ Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին:

- ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, հայտարարում

է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին: Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հարուկ նիստ: ՆՏ Սահմանադրության 81-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին:

- ՆՏ Սահմանադրության 57-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, սահմանված կարգով որոշում է ընդունում Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու և այդպիսով վերջինիս սահմանադրական պարասխանարվության ենթարկելու մասին:

- ՆՏ Սահմանադրության 59-րդ հոդվածի հիման վրա Ազգային ժողովը պարզամավորների ձայների նույն հարաբերակցությամբ որոշում է ընդունում Նանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:

- Ըստ ՆՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ օրենսդիր մարմինը կարող է որոշում կայացնել իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով ուղերձներ և հայտարարություններ ընդունելու մասին:

- Ազգային ժողովը որոշում է ընդունում պարզամավորին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պարասխանարվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ իր համաձայնության (կամ անհամաձայնության) մասին (Սահմանադրության 66-րդ հոդված):

- Ազգային ժողովի որոշմամբ դադարում են պարզամավորի լիազորությունները (Սահմանադրության 67-րդ հոդված):

- Օրենսդիր մարմինը կարող է որոշում ընդունել դռնփակ նիստ գումարելու մասին (Սահմանադրության 69-րդ հոդված):

- Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի որոշմամբ սրեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ (Սահմանադրության 73-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում ՆՏ կառավարության ծրագրին հավանություն փալու մասին (Սահմանադրության 74-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է կայացնում ՆՏ կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ (Սահմանադրության 74.1-րդ հոդված):

- Ազգային ժողովը կարող է ընդունել ՆՏ կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշում, երբ կառավարությունը դրել է իր վստահության հարցը՝ իր կողմից ներկայացված օրենքի ընդունման առնչությամբ (Սահմանադրության 75-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին փարեկան հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ (Սահմանադրության 77-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում ԱԺ նախագահի, ինչպես նաև ԱԺ նախագահի երկու տեղակալի ընտրության մասին (Սահմանադրության 79-րդ հոդված):

- Ազգային ժողովը կարող է որոշում կայացնել հարցապնդումների, այսինքն՝ կառավարության իրավասությանը վերապահված որոշակի հարցերի մասին Ազգային ժողովի խմբակցության կամ պարզամավորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցերի վերաբերյալ (Սահմանադրության 80-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղու-

թյուն հաստատելու մասին (Սահմանադրության 81-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում ՏՏ սահմանադրական դատարանի հինգ անդամ եւ Սահմանադրական դատարանի նախագահ նշանակելու, ինչպես նաեւ իր նշանակած անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկարմամբ դատական կարգով վարչական պարասխանարվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ համաձայնություն փալու մասին (Սահմանադրության 83-րդ հոդված):

- Ազգային ժողովը պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով որոշում է կայացնում մարդու իրավունքների պաշտպան ընտրելու մասին (Սահմանադրության 83.1-րդ հոդված):

- Նեռարձակվող լրացվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ Ազգային ժողովը որոշում է ընդունում անկախ կարգավորող մարմնի անդամների կեսին ընտրելու վերաբերյալ (Սահմանադրության 83.2-րդ հոդված):

- Ազգային ժողովը ՏՏ Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում ՏՏ կենտրոնական բանկի նախագահի նշանակման, ինչպես նաեւ օրենքով սահմանված դեպքերում պաշտոնանկ անելու մասին (Սահմանադրության 83.3-րդ հոդված):

- Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում ՏՏ վերահսկիչ պալատի նախագահի նշանակման մասին (Սահմանադրության 83.4-րդ հոդված):

- Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել կառավարության անվտանգություն հայտնելու մասին, երբ այդպիսի որոշման նախագիծ է ներկայացվել ՏՏ Նախագահի կամ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից (Սահմանադրության 84-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է կայացնում ՏՏ արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական նշանակելու մասին (Սահմանադրության 94.1-րդ հոդված):

- Օրենսդիր մարմինը որոշում է կայացնում Սահմանադրական դատարան դիմելու մասին՝ հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման, Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, Ազգային ժողովի կողմից նշանակված Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաեւ նրա նկարմամբ դատական կարգով վարչական պարասխանարվության ենթարկելու հարց հարուցելու մասին եզրակացություն ստանալու նպատակով, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի կողմից օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու համար:

- Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում ՏՏ գլխավոր դատախազի նշանակման, ինչպես նաեւ օրենքով սահմանված դեպքերում պաշտոնանկ անելու մասին (Սահմանադրության 103-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում ՏՏ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու նպատակով հանրաքվեի անցկացման առաջարկով ՏՏ Նախագահին դիմելու կամ ՏՏ Նախագահի նախաձեռնությանը համաձայնություն փալու մասին (Սահմանադրության 111-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշում է ընդունում օրենքները հանրաքվեի դնելու մասին (Սահմանադրության 112-րդ հոդված):

- Ազգային ժողովը որոշումներ է ընդունում իր գործունեության կազմակերպման

հարցերով (Սահմանադրության 62-րդ հոդված):

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 49-րդ հոդվածի համաձայն՝ իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովը կարող է ընդունել հետևյալ որոշումները.

- ա) հերթական նախաշրջանի, չորսօրյա նիստերի օրակարգերը հաստատելու և նրանցում փոփոխություններ կատարելու մասին,
- բ) արտահերթ նախաշրջանի, նիստի ընթացակարգերը հաստատելու մասին,
- գ) հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին,
- դ) հրավիրված անձանց ելույթ ունենալու թույլտվության մասին,
- ե) Նանրային հեռուստառադիոընկերությամբ Ազգային ժողովի նիստի՝ ուղիղ եթերով կամ տեսագրությամբ (ձայնագրությամբ) հեռարձակելու մասին,
- զ) Ազգային ժողովի նիստի անցկացման վայրը փոխելու մասին,
- է) Ազգային ժողովի դռնփակ նիստ անցկացնելու մասին,
- ը) հարցի քննարկումը մինչև մեկ ժամով ընդմիջելու մասին,
- թ) հերթական նախաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգերի նախագծում հարցի ընդգրկումը հետաձգելու մասին,
- ժ) հարցի քվեարկությունը կրկնելու մասին,
- ժա) օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ,
- ժբ) հարցը երկրորդ, երրորդ ընթերցման ներկայացնելու համար սահմանված ժամկետները փոփոխելու մասին,
- ժգ) հարցի քննարկումն առաջարկությունների ներկայացման փուլ վերադարձնելու մասին,
- ժդ) հարցապնդման վերաբերյալ իրավասու պետական կառավարման մարմինների և պաշտոնապար անձանց առաջարկություններ ներկայացնելու մասին:

2. 2005 թվականին ՆՆ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ՝ «Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ և հայտարարություններ»:

Ուղերձի կամ հայտարարության միջոցով արտահայտվում է Ազգային ժողովի դիրքորոշումը որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ:

ՆՆ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, ուղերձները և հայտարարությունները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բաց քվեարկությամբ: Ինչպես և Ազգային ժողովի որոշումները, ուղերձները և հայտարարությունները ևս ստորագրում և հրատարակում է ԱԺ նախագահը:

3. ՆՆ Հիմնական օրենքի 62-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Սահմանադրության այս դրույթը պետք է մեկնաբանել Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային կապից ելնելով: Նամաձայն 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնապար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այսինքն՝ եթե պետական իշխանության այլ

մարմինների լիազորությունները հնարավոր է նախարեսել օրենքներով, ապա օրենսդիր մարմնի լիազորություններն ունեն միայն սահմանադրական ամրագրում եւ, այդպիսով, վերջնական են: Դա նշանակում է, որ, ՆՏ Սահմանադրությունից բացի, այլ նորմատիվ իրավական ակտերով հնարավոր չէ նախարեսել օրենսդիր մարմնի լիազորություններ կամ սահմանափակել առկա լիազորությունները: Ազգային ժողովին եւս ուղղակիորեն արգելվում է իր համար սահմանել սահմանադրորեն չնախարեսված լիազորություններ:

4. ՆՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման ու գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգով: Սահմանադրական այս դրույթը սահմանում է Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման ու գործունեության կարգի նորմատիվային հիմքերը, աղբյուրները՝ մատնանշելով երկու աղբյուր՝ ՆՏ Սահմանադրությունը եւ Ազգային ժողովի կանոնակարգը: Սահմանադրության 62-րդ հոդվածի 4-րդ մասը երկու աղբյուրների միջեւ /արանքում/ օգտագործելով «եւ» շաղկապը, սահմանադրական նշված նորմի կիրառումը պայմանավորում է «եւ» շաղկապով թվարկված բոլոր պայմանների՝ աղբյուրների առկայության պարտադիրությամբ: Այդպիսով՝ թվարկված հարաբերությունների կարգավորման իրավական աղբյուրները երկուսն են: Ընդ որում, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի առկայությունը սահմանադրական անհրաժեշտություն է: Իրավական կարգավորման այդ երկու աղբյուրների հարաբերակցության մեջ սահմանադրական նորմերը՝ նվիրված Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման ու գործունեության կարգի հիմունքներին, ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, մեթոդաբանական, ղեկավար հիմքեր են ինչպես «կանոնակարգի» սրեղծման, այնպես էլ դրա մեկնաբանության եւ կիրառման համար: Այդպիսով, Ազգային ժողովի կանոնակարգն ընդունվում է ի կարարումն եւ համաձայն Սահմանադրության, եւ կիրառման ընթացքում այն պետք է մեկնաբանվի՝ առաջին հերթին հիմք ընդունելով Սահմանադրության դրույթներն ու սկզբունքները:

ՆՈՂՎԱԾ 63

1. Ազգային ժողովը կազմված է հարյուր երեսունմեկ պարզամասերից:

2. Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Նրա լիազորությունների ժամկետը սկսվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահից: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին:

3. Ազգային ժողովը չի կարող արձակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաեւ, երբ Տանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված:

4. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրությունն չի անցկացվում, իսկ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության

ավարտից հետո նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ, քան հիսուն, եւ ոչ ուշ, քան վաթսուն օրվա ընթացքում անցկացվում է Ազգային ժողովի ընտրություն:

1. Մեկնաբանվող հոդվածի առաջին մասում սահմանված է Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թիվը՝ հարյուր երեսունմեկ: Վերջինս այն բազային թիվն է, որից հաշվարկվում է մեծամասնությունը՝ Ազգային ժողովի փարբեր որոշումներ ընդունելու համար, ինչպես նաեւ կազմավորված համարվելու համար²:

Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը 131 պարզամավորի կազմով սկսել է գործել միայն 1999 թվականի մայիս 30-ի Ազգային ժողովի ընտրություններից սկսած: Մինչ այդ՝ ՏՏ Գերագույն խորհրդի կողմից 27 մարտի 1995թ. ընդունված (Ն.Ն-1141-Ի) Նայաստանի Նանրապետության սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը կազմված էր 190 պարզամավորից³:

Պառլամենտների անդամների այս կամ այն թվի հիմնավորումն իրավական տեսանկյունից բավականին բարդ է: Շարք փոքր կազմ ունենալու պարագայում առկա է վրանգ, որ այն չի կարողանա լիարժեք ապահովել պառլամենտի գործառնությունը, քանզի վերջիններիս լուծման համար անհրաժեշտ է մարդկային որոշակի ներուժ: Մյուս կողմից, պարզամավորների մեծ թիվը կարող է խոչընդոտ հանդիսանալ պառլամենտի արդյունավետ աշխատանքի համար, երբ աշխատաժամանակի զգալի մասը կվարձվի քննարկումների, ելույթների վրա: Միջազգային պրակտիկան եւս վկայում է, որ պարզամավորների թիվը փարսանվում է մի քանի փասնյակից մինչեւ մի քանի հարյուրը, թեպետ Նամաչինական ժողովրդական ժողովի անդամների թիվն այսօր երեք հազար է⁴:

Հարյուր երեսունմեկ թիվը, ըստ էության, գրվում է այն թվերի միջակայքում, որը, մի կողմից, այնքան մեծ չէ, որ փարբեր հարցերի քննարկումների վրա վարձած ժամանակի առումով անարդյունավետ դարձնի Ազգային ժողովի աշխատանքները, մյուս կողմից՝ այնքան փոքր չէ, որ իր ներուժով չկարողանա իրականացնել իր առջեւ դրված խնդիրները:

Մեկնաբանվող հոդվածը սահմանելով Ազգային ժողովի կազմը, այնուամենայնիվ, Ազգային ժողովի գործելու համար նախապայման չի սահմանում վերջինիս 100 փոքրոսով համարված լինելու հանգամանքը: Գործնականում ժամանակի կոնկրետ հարվածում Ազգային ժողովը կարող է գործել նաեւ ոչ լրիվ կազմով:

Դա կարող է տեղի ունենալ երկու պարագայում՝ երբ մեծամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի լիազորությունները դադարել են մինչեւ սահմանված հնգամյա ժամկետի ավարտը եւ դեռ համապարասխան ընտրափարածքում ընտրություններ չեն կազմակերպվել, եւ երբ համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման պարագայում համապարասխան կուսակցության թեկնածուների ցուցակում այլեւս թեկնածուներ չկան:

Սակայն սա չի նշանակում, որ Ազգային ժողովը կարող է գործել հարյուր երեսուն մեկից փոքր ցանկացած թվով պարզամավորների կազմով:

Թե ինչ նվազագույն փաստացի կազմով կարող է գործել Ազգային ժողովը՝ անուղղակի կերպով բխում է Սահմանադրության 68-րդ հոդվածում ամրագրված այն

² Տե՛ս 67, 70-72, 74, 75, 79, 83, 83.1, 83.2, 83.3, 84-րդ հոդվածների մեկնաբանությունները:

³ 27.03.1995, ՀՕ 131 ՀՀԳԽՏ 1995/6:

⁴ Տե՛ս **Чиркин В. Е.** Конституционное право зарубежных стран: Учебник. М.: Юристь, 1997. С 460:

դրույթից, ըստ որի՝ «Նորընտրյալ Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզազամակորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը»: Այսինքն՝ սահմանադիրը նվազագույն թիվն է սահմանել Ազգային ժողովի «գործունակության» համար: Այս թիվը պայմանավորված է նրանով, որ Ազգային ժողովի որոշ որոշումներ⁵ կարող են ընդունվել Ազգային ժողովի ընդհանուր թվի երկու երրորդով:

2. Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասում սահմանված է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը, այն հինգ տարի է: Մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը չորս տարի էր: Ազգային ժողովի առաջին 1995թ., երկրորդ 1999թ., երրորդ 2003թ. գումարման պարզազամակորներն ընտրվել են 4 տարի ժամկետով, եւ միայն 2007 թվականին կազմավորված Ազգային ժողովի չորրորդ գումարման պարզազամակորներն են ընտրվել հինգ տարի ժամկետով:

Ներկայացուցչական մարմնում պարբերական ընտրությունների անցկացումը հանդիսանում է Սահմանադրության 30-րդ հոդվածում ամրագրված՝ քաղաքացիների ընտրելու իրավունքի երաշխիք:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ պառլամենտի լիազորությունների ժամկետը 4-5 տարի է (երկու տարի է ԱՄՆ-ում, երեք՝ Ավստրիայում, Նոր Զելանդիայում եւ այլն): Ազգային ժողովի նման ժամկետով ընտրվելը հնարավորություն է ընձեռում նրա կազմը համարել ըստ ընտրողների կամաարտահայտության: Ընտրությունների ժամանակ ընտրողների կողմից գնահատական է տրվում նախկին պառլամենտում գործող կուսակցություններին, դաշինքներին, առանձին պարզազամակորների:

Ինչպես եւ Հանրապետության Նախագահի լիազորությունների ժամկետի պարագայում, Ազգային ժողովի դեպքում եւս այս ժամկետները տեղավորվում են այն ողջամիտ ժամանակահատվածում, որով, մի կողմից, հնարավորություն է տրվում պառլամենտում ներկայացված կուսակցություններին իրականացնելու հեռանկարային ծրագրեր, մյուս կողմից՝ ապահովվում են ողջամիտ պարբերականություն ու խորհրդարանականների կախվածությունն ընտրական զանգվածից:

Ազգային ժողովի պարզազամակորներն ընտրվելուց հետո անմիջապես չեն անցնում իրենց աշխատանքներին, անմիջապես չի սկսվում նրանց լիազորությունների ժամկետի հաշվարկը: Լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտրյալ Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահից, որն ընտրվելու պահը չէ: Սույն կարգավորման համադրումը Սահմանադրության 68-րդ հոդվածում ամրագրված կարգավորումների հետ՝ վկայում է, որ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը կարող է օրացուցային 5 տարուց փոքր-ինչ ավելի կարճ կամ երկար լինել⁶:

Սահմանադրության 65-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված դրույթից (Պարզազամակորն իր լիազորությունները կատարում է մշտական հիմունքներով) բխում է, որ չպետք է լինեն ընդմիջումներ լիազորությունները դադարեցնող եւ լիազորություններն սրանձնող գումարումների ժամկետների միջև: Այդ իսկ գաղափարի իրացմամբ է, որ մեկնաբանվող հոդվածը գործող գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կապում է նորընտրյալ Ազգային ժողովի առաջին նիստի գումարման

⁵ Տե՛ս 57, 59-րդ հոդվածների մեկնաբանությունները:

⁶ Առաջին նիստի գումարման համար առկա է մախապայման՝ պետք է ընտրված լինի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը, այսինքն՝ առնվազն 88 պատգամավոր: Տե՛ս 68-րդ հոդվածի մեկնաբանությունը:

պահի հետ, որի պարագայում բացառվում է որևէ պահ, որի ընթացքում չի լինի գործող Ազգային ժողով: Բոլոր այն դեպքերում, երբ ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ գումարել նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը, գործող Ազգային ժողովը շարունակում է իր լիազորությունները, անկախ այն հանգամանքից լրացել է նրա լիազորությունների պահանջման պահից օրացուցային 5 փարին, թե՛ ոչ:

3. Կառավարման խորհրդարանական եւ խառը ձեւ ունեցող պետություններում օրենսդիր եւ գործադիր իշխանության միջեւ առաջացող քաղաքական բախումների, վեճերի լուծման եղանակներից մեկը պետության գլխի կողմից խորհրդարանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումն է (խորհրդարանի արձակում)⁷՝ միաժամանակ արտահերթ ընտրություններ նշանակելով, որպեսզի ընտրողն իր քվեարկությամբ լուծի կոնֆլիկտը: Նման ինստիտուտ է նախատեսված Իտալիայում, Գերմանիայում, Նուգարիայում, Չեխիայում եւ այլն⁷:

ՆՆ Սահմանադրությունը եւս այս ինստիտուտը նախատեսում է (տե՛ս 74.1-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Նոդվածի մեկնաբանվող մասը ժամանակային եւ իրավիճակային սահմանափակում է նախատեսում Ազգային ժողովն արձակելու համար⁸: Այսինքն՝ Սահմանադրության 74.1-րդ հոդվածում սահմանված փաստակազմերի առկայության պարագայում եւ անկախ այն հանգամանքից, թե Նանրապետության Նախագահի պարտադիր, թե հայեցողական լիազորություն է Ազգային ժողովի արձակումը, Նանրապետության Նախագահը չի կարող արձակել Ազգային ժողովը: Այդ հիմքերը երկուսն են՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ինչպես նաեւ, երբ Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովն արձակելու արգելքը պայմանավորված է մեկնաբանվող հոդվածի հաջորդ՝ 4-րդ մասում ամրագրված դրույթով, համաձայն որի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում: Ուստի արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում Ազգային ժողովի արձակումը չարգելելու պարագայում պետությունը տեսական ժամանակ, այսինքն՝ առնվազն մինչեւ արտակարգ եւ ռազմական դրության ավարտը, կարող է մնալ առանց Ազգային ժողովի, ինչը կարող է ընդհանրապես խաթարել պետական կառավարման համակարգը, իշխանությունների բաժանման տեսության բաղադրիչ հանդիսացող զսպումների եւ հակակշիռների մեխանիզմը: Ըստ էության, սահմանադիրն Ազգային ժողովի լիազորությունների ավարտման պահին ընտրություններ չանցկացնելու եւ երկիրը որոշակի ժամանակահատվածում առանց Ազգային ժողովի չթողնելու երկրնորանքի միջեւ նախապարտությունը տվել է Ազգային ժողով ունենալուն:

Միջազգային պրակտիկայում կան դեպքեր, երբ անգամ արձակված խորհրդարանը ռազմական եւ արտակարգ դրության պայմաններում հավաքվում է:

Նուգարիայի Սահմանադրության 28-րդ պարագրաֆի համաձայն՝ պատերազմի պայմաններում կամ դրա անմիջական սպառնալիքի կամ հատուկ դրության պայմաններում Նանրապետության Նախագահը կարող է հավաքել պառլամենտը, եթե այն ար-

⁷ Տե՛ս **Чиркин В. Е.** Конституционное государственное право зарубежных стран М., Норма. С. 558-561:

⁸ Հասակարգային առումով, կարծում ենք, այս սահմանափակումներն իրենց տեղում չեն, դրանք որպես Ազգային ժողովի արձակումը բացառող հանգամանքներ պետք է գետեղված լինեին Ազգային ժողովի արձակման հիմքերը սահմանող 74.1-րդ հոդվածում:

ձակվել էր կամ ինքնարձակվել⁹:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովն արձակելու արգելքի երկրորդ հիմքին, այն է՝ երբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված, ապա այն Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի բաղադրիչ՝ զսպումների եւ հակակշիռների համակարգի փայտերից է: Այն մրահոգությունը, որ Ազգային ժողովը կարող է չարաշահել սահմանադրական այս դրույթը եւ Ազգային ժողովն արձակելու հիմքերի առկայության պարագայում իրեն պաշտպանելու նպատակով Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու գործընթաց սկսել, այնքան էլ մեծ չէ հեղեյալ պատճառներով:

ա/ արձակման հիմքերը բավականին կոնկրետ են սահմանված Սահմանադրությանը (հոդված 74.1).

բ/ Հանրապետության Նախագահի պաշտոնանկությունը չի կարող լինել քաղաքական հիմքով:

գ/ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու գործընթացն սկսելու համար անհրաժեշտ է պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն մեծամասնություն¹⁰:

Ժամանակային առումով այս սահմանափակումն սկսվում է Սահմանադրության 57-րդ հոդվածում սահմանված կարգով Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշում ընդունելու պահից եւ ավարտվում է Սահմանադրական դատարանի եզրակացության ընդունման պահին՝ եթե եզրակացությունը բացասական է, կամ էլ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի քվեարկության պահից՝ եթե պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը կողմ չի քվեարկել պաշտոնանկ անելու որոշմանը:

4. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չանցկացնելու վերաբերյալ մեկնաբանությունները մասնավորապես տե՛ս 53.1-րդ հոդվածի մեկնաբանություններում: Այս դեպքում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչեւ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտրվող Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը:

Սահմանադրության մեկնաբանվող դրույթը համադրելով մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի հետ՝ կարելի է պնդել, որ մեկնաբանվող դրույթը մասնավոր դեպք է սահմանում, որի պարագայում Ազգային ժողովի կոնկրետ գումարման լիազորությունների ժամկետը կարող է 5 փարուց ավելի երկար լինել: Կոնկրետ գումարման Ազգային ժողովը, անկախ այն հանգամանքից, թե որ պահին է լրացել լիազորությունների՝ սույն հոդվածի առաջին մասում սահմանված ժամկետը, կշարունակի աշխատել մինչեւ նորընտրվող Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահը: Սա նշանակում է, որ այն կշարունակի իր լիազորությունները նաեւ արտակարգ կամ ռազմական դրության ավարտից հետո, քանի որ այս դեպքում Ազգային ժողովի ընտրությունները կանցկացվեն միայն ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ոչ շուրջ, քան հիսուն, եւ ոչ ուշ, քան վաթսուս օրվա ընթացքում:

Այս ժամկետն այն ողջամիտ ժամկետն է, որի ընթացքում պետությունը պետք է կազմակերպի ընտրությունները՝ ընտրությունների նշանակումից մինչեւ ընտրությունների արդյունքների ամփոփումը:

⁹ Տե՛ս www.constitution.garant.ru/DOC_3864883.htm 18.11.09թ.:

¹⁰ Տե՛ս 57-րդ հոդվածի մեկնաբանությունը:

ՆՈՂ-ՎԱԾ 64

Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Նայաստանի Նանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Նանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրվելու (պասիվ ընտրական իրավունք) իրավունք ունեցող անձանց շրջանակը, այսինքն՝ այն անձանց շրջանակը, որոնց թվից կարող են ընտրվել Ազգային ժողովի պատգամավորները:

Նման անձանց Սահմանադրությամբ առաջադրվող առաջին պահանջը սահմանված տարիքի հասած լինելն է:

Թեպետ Սահմանադրությունն ուղղակի չի պարասխանում այն հարցին, թե որ պահին պետք է լրացած լինի այդ անձի 25 տարին, սակայն Սահմանադրության տեքստից կարելի է հետևություն անել, որ այդ տարիքը պետք է լրացած լինի քվեարկության օրը, քանզի հենց այդ օրն է, որ տվյալ անձն ընտրվում է: Այսինքն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ թեկնածուների համար նախատեսված իրավունքները կարող է իրացնել եւ պարտականությունները կրել նաեւ այն անձը, որի 25 տարին լրանալու է քվեարկության օրը:

Երկրորդ պահանջը վերջին 5 տարում Նայաստանի Նանրապետության քաղաքացի հանդիսանալն է: Օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող դառնալ Ազգային ժողովի պատգամավոր: Մեկնաբանվող հոդվածը չի անդրադարձել Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունից զատ այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ պասիվ ընտրական իրավունք տալու հարցին, սակայն ՏՏ ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել եւ պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Նայաստանի Նանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն»: Վերջինս ըստ էության հերթական պահանջն է, որն ուղղակիորեն սահմանված չէ մեկնաբանվող հոդվածում¹¹:

Ինչպես եւ նվազագույն տարիքի պարագայում, քաղաքացիության պարագայում որպես ժամկետի ավարտ պետք է ընդունել քվեարկության օրը, այսինքն՝ եթե միայն քվեարկության օրը տվյալ անձը կունենա 5 տարվա ՏՏ քաղաքացիություն, ապա վերջինս իրավունք կունենա առաջադրվելու:

Քաղաքացիության անհրաժեշտ ժամանակահատվածը տվյալ անձը պետք է ունենա առանց ընդմիջումների:

Չորրորդ պահանջը 5 տարվա նստակեցության ցենզն է:

Ինչպես եւ Նանրապետության Նախագահի պարագայում, այստեղ եւս «մշտական բնակությունը» նշանակում է, որ.

ա/ անձը պետք է մշտապես 5 տարի, անմիջապես ընտրություններին նախորդող ժամանակահատվածում բնակվի Նայաստանի Նանրապետությունում,

¹¹ Այս սահմանափակման հիմնավորումները տես 50-րդ հոդվածի մեկնաբանությունում:

բ/ այդ ժամկետը պետք է լինի անընդհար, առանց ընդմիջման, այսինքն՝ ընդհանրապես 5 փարի Նայասփանի Նանրապետությունում բնակվելը բավարար չէ, անձը չի կարող այդ ժամկետը լրացնել մաս-մաս, այն պետք է լինի անընդմեջ:

ՆՆ օրենսդրությունը չի սահմանում «մշտապես բնակվող» հասկացությունը, սակայն վերջինիս զուր փառացի մեկնաբանությունը նշանակում է, որ փվյալ անձը վերջին 5 փարում ՆՆ-ում պետք է բնակված լինի միշտ, շարունակ, անդադար, անընդհար, հաստատված, ոչ ժամանակավոր:

Եվ վերջին՝ հինգերորդ պահանջն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ՆՆ Սահմանադրության 30-րդ հոդվածի իմաստով ընտրելու (ակտիվ ընտրական իրավունք) իրավունք ունենալն է¹²:

ՆՈՂ-ՎԱԾ 65

1. Պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առելարային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբազորական աշխատանքից:

2. Պատգամավորն իր լիազորությունները կատարում է մշտական հիմունքներով:

3. Պատգամավորի կարգավիճակը եւ գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով:

1. Նայասփանի Նանրապետության Ազգային ժողովի պատգամավորն ունի պետական իշխանության օրենսդիր, ներկայացուցչական մարմնի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակ, ինչն անհամարելի է գործունեության որոշակի տեսակների հետ:

ՆՆ Սահմանադրության 65-րդ հոդվածն Ազգային ժողովի պատգամավորի համար նախատեսում է գործունեության հստակ սահմանափակումներ: Այսպես, պատգամավորը չի կարող.

- 1) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,
- 2) զբաղեցնել պաշտոն պետական մարմիններում,
- 3) զբաղեցնել պաշտոն տեղական ինքնակառավարման մարմիններում,
- 4) զբաղեցնել պաշտոն առելարային կազմակերպություններում,
- 5) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբազորական աշխատանքից:

1995 թվականին ընդունված ՆՆ Սահմանադրության համաձայն՝ պատգամավորը չէր կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբազորական աշխատանքից: Մասնավորապես, չկար գործարարությամբ զբաղվելու արգելքը: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում պատգամավորի կարգավիճակին անհա-

¹² Տարիքային եւ նստակեցության ցեմգերի հիմնավորումները պաշտոնների տարբերությունների /պետական մարմինների համակարգում ունեցած տեղի/ հաշվառմամբ համընկնում են Հանրապետության Նախագահի թեկնածուների համար սահմանված տարիքային, քաղաքացիության, նստակեցության ցեմգերի հետ. տե՛ս 50-րդ հոդվածի մեկնաբանությունը:

մաքելի է գործունեության ոլորտներն ընդլայնվեցին՝ ներառելով նաև ձեռնարկարի-րական գործունեությունը, պաշտոնը փեղական ինքնակառավարման մարմիններում եւ առևտրային կազմակերպություններում: ՏՏ Սահմանադրությունը, ամրագրելով ձեռնարկարիական գործունեությանը զբաղվելու արգելքը, լուրջ հիմքեր ստեղծեց պաշտամենսը պրոֆեսիոնալ դարձնելու եւ գործարարությանը զբաղվածների մուտքը պաշտամենս սահմանափակելու համար: Նշված պահանջները խախտելու դեպքում պարգամավորի նկատմամբ կիրառվում է սահմանադրական պարասխանարվություն՝ պարգամավորական լիազորությունների դադարեցման ձեռով: Որպես կանոն, պարգամավորների նկատմամբ գործունեության անհամարեղելիության պահանջն ավելի խիստ է, քան մյուս պաշտոնատար անձանց նկատմամբ: Նշված հիմքով պարգամավորը կարող է սահմանադրական պարասխանարվության ենթարկվել ոչ միայն Նայաստանում, այլև Էստոնիայում, Լիտվայում, Լատվիայում, Չեխիայում, Դանիայում, Նեպալում, Լյուքսեմբուրգում եւ այլ պետություններում: Ձեռնարկարիական գործունեությանը զբաղվելու արգելքը հստակ սահմանված է ԱՄՆ-ի Սենատի 37-րդ մշակական կանոնում: Լեհաստանի Սահմանադրությանը եւս պարգամավորը ենթարկվում է սահմանադրական պարասխանարվության՝ փնտեսական գործունեություն իրականացնելու արգելքը խախտելու, ձեռնարկարիությանը զբաղվելու համար: Նուստանի Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ պարգամավորը չի կարող լինել առևտրային կազմակերպության աշխատակից կամ գրասենյակի ծառայող, զբաղվել գործարարությամբ: Նա պարտավոր է ընտրվելուց հետո ութօրյա ժամկետում հայտարարել իր գործունեությունը դադարեցնելու կամ պարգամավորական մանդատից հրաժարվելու մասին: Ռուսաստանի Դաշնությունում Պետական դումայի անդամին արգելվում է լինել պետական կամ համայնքային ծառայող, զբաղվել ձեռնարկարիական գործունեությամբ, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են («ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամի եւ Պետական դումայի պարգամավորի կարգավիճակի մասին» դաշնային օրենքի 4-րդ եւ 6-րդ հոդվածներ)¹³: Սակայն որոշ պետություններում, օրինակ՝ անգլո-սաքսոնական երկրներում, Եգիպտոսում, Ռումինիայում պարգամավորները միաժամանակ կարող են լինել նախարար, այսինքն՝ այն պարգամավորները, ովքեր զբաղեցնում են նախարարական պաշտոններ՝ պաշտամենսում պահպանում են իրենց քվեարկելու իրավունքը:

Իսկ ի՞նչ նպատակներ են հետապնդում նշված սահմանափակումները: Նախ՝ պարգամավորի լիազորություններն այնքան լուրջ ու պարտավորեցնող են, որ նա չպետք է ծանրաբեռնվի այլ խնդիրներով, զբաղվի ձեռնարկարիությամբ: Ձեռնարկարիությունը սեփական ռիսկով իրականացվող ինքնուրույն փնտեսական գործունեություն է՝ ուղղված շահույթի պարբերաբար ստացմանը: Նման գործունեությանը զբաղվելիս անձը կարող է չարաշահել պարգամավորի կարգավիճակը՝ իր փնտեսական գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

Պարգամավորը չպետք է լինի պաշտոնյա այլ պետական մարմնում: Նայաստանի Նանրապետությունում պետական իշխանության համակարգը գործում է իշխանության բաժանման, «գապումների եւ հակակշիռների» կառուցակարգերով: Պետական փարբեր մարմիններ փոխադարձաբար «գապում», հակակշռում եւ հավասարակշռում են միմյանց: Ազգային ժողովը բազմաթիվ օրենքներ է ընդունում, որոնք կարգավորում են հասարակության կենսագործունեության փարբեր ոլորտներ եւ կարող են վերաբերել ինչ-

¹³ St'u Собрание законодательства Российской Федерации, 1999, N 28, С. 3466. В редакции от 19 июня 2004 года, նաև՝ Собрание законодательства Российской Федерации, 2004, N 25, с. 2484.

պես պերական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններին, առեփարային եւ ոչ առեփարային կազմակերպություններին, ուստի զբաղեցնելով պաշտոն պերական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեփարային կազմակերպություններում՝ պարգամավորը կարող է հանդես բերել անձնական կամ կորպորատիվ շահագրգռություն, արտահայտել րվյալ պերական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ առեփարային կառույցի շահերը, բայց ոչ ընտրողների ընդհանուր կամքն ու ցանկությունները: Այսինքն՝ այլ աշխատանք կարարելու դեպքում անձը՝ պարգամավորական լիազորություններից բացի, ծանրաբեռնվում է այլ պարականություններով, միաժամանակ չի բացառվում, որ նա օրենսդիր մարմնում հանդես բերի որոշակի շահագրգռություն, վերազանցի (չարաշահի) իր կարգավիճակը:

Ինչ վերաբերում է գիտական, մանկավարժական եւ սրեղծագործական աշխատանքին, ապա ՄՄ օրենսդրությամբ նման գործունեությամբ զբաղվելու արգելք չի նախատեսվում ոչ միայն ՄՄ Ազգային ժողովի պարգամավորի, այլև ՄՄ կառավարության անդամների, դատավորների, ՄՄ սահմանադրական դատարանի անդամների, այլ պաշտոնատար անձանց համար: Մտավոր, սրեղծագործական աշխատանքը, գիտությամբ, մտաղ սերնդի դաստիարակությամբ զբաղվելը շնորհակալ աշխատանք է, որն անձին ինքնադրստորման հնարավորություն է տալիս եւ վկայում է նրա սրեղծագործական ունակությունների, մտավոր բարձր կարողությունների, հոգեկան հարուստ ներաշխարհի, բարոյական որակների մասին, ուստի նման անձը, լինելով օրենսդիր մարմնում, կարող է զբաղվել կրթության, գիտության հիմնախնդիրներով, միաժամանակ կարարել գիտական, սրեղծագործական աշխատանք:

2. ՄՄ Սահմանադրության 65-րդ հոդվածի երկրորդ մասում սահմանված է, որ «Պարգամավորն իր լիազորությունները կարարում է մշտական հիմունքներով»:

Այսինքն՝ Ազգային ժողովը պոռֆեսիոնալ մարմին է, որը գործում է մշտական հիմունքներով, եւ որի անդամները «մշտական» սահմանադրական, քաղաքական եւ բարոյական պարասխանավորություն են կրում իրենց պարականությունների պարշած կարարման համար: Ի տարբերություն Նայաստանի երրորդ Նանրապետության օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի, Նայաստանի երկրորդ Նանրապետության իշխանության բարձրագույն մարմինը մշտական գործող մարմին չէր: ՆՄՄ Պերագույն խորհրդի նիստերը գումարվում էին տարեկան երկու անգամ, բոլոր պարգամավորներն աշխատում էին ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: 1991թ. նոյեմբերի 19-ին ընդունվեց «Նայաստանի Նանրապետության Պերագույն խորհրդի մասին» ՄՄ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվեց. «Նայաստանի Նանրապետության Պերագույն խորհուրդը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը եւ Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ»¹⁴: 1995 թվականի ՄՄ Սահմանադրության համաձայն՝ օրենսդիր մարմնի՝ ՄՄ Ազգային ժողովի պարգամավորները՝ որպես մշտապես գործող մարմնի անդամներ, իրենց գործառույթներն իրականացնում են մշտական հիմունքներով: Իհարկե, «մշտական» նշանակում է Ազգային ժողովում իրենց լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում:

Ռուսատանի Դաշնության Սահմանադրության 97-րդ հոդվածի երրորդ մասում եւս ամրագրված է, որ Պերական դումայի պարգամավորներն աշխատում են պոռֆեսիոնալ, մշտական հիմունքներով: Նրանք չեն կարող գրնվել պերական ծառայության

¹⁴ Տե՛ս Հայաստանի Նանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Երեւան, 1995, էջ 189:

մեջ, զբաղվել այլ վճարովի գործունեությամբ, բացի մանկավարժական, գիտական եւ այլ սրբեղծագործական աշխատանքից¹⁵:

3. Պարզամավորի կարգավիճակը ներառում է օրենսդիր մարմնի անդամի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, որոնք սահմանված են ՏՏ Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով: Սահմանելով պարզամավորի իրավական կարգավիճակը՝ ՏՏ Սահմանադրությունը պառլամենտի անդամներին օժտում է հարուկ իրավասություններով, սահմանում երաշխիքներ, որպեսզի պարզամավորները կարողանան անկաշկանդ իրականացնել օրենսդրական գործունեություն եւ մասնակցեն պառլամենտի այլ գործառնությունների կենսագործմանը:

Պարզամավորներն ստանում են աշխատավարձ, ունենում աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ՝ աշխատասենյակ, նյութական, տեխնիկական միջոցներ: Անկաշկանդ գործունեություն ծավալելու համար օրենսդիր մարմնի անդամն օժտված է պարզամավորական անձեռնմխելիության իրավունքով, ունի իր իրավունքների պաշտպանության երաշխիքներ վարչաիրավական, քրեաիրավական, քրեադատարարական հարաբերությունների ոլորտում:

Իրավաբանական գրականության մեջ պարզամավորի գործունեության երաշխիքները դասակարգվում են երեք խմբի՝

- պարզամավորի անձեռնմխելիության իրավունք,
- կազմակերպչական երաշխիքներ,
- սոցիալական երաշխիքներ:

Պարզամավորի անձեռնմխելիության ինստիտուտը չի դիտվում որպես անձնական արտոնություն, այլ ունի հանրային-իրավական բնույթ, կոչված է ծառայելու հանրային շահերին՝ ապահովելով պարզամավորի անձի՝ օրենքով նախատեսված պաշտպանությունն իր գործառնություններն իրականացնելիս, կանխելով չհիմնավորված հեղափոխումները, ապահովելով նրա անխոչընդոտ գործունեությունը, պարզամավորներին եւ, վերջին հաշվով, ողջ պառլամենտի անկախությունն ու ինքնուրույնությունը:

Նկատելի է, որ պարզամավորի անձեռնմխելիության իրավունքն օրենքի եւ դատարանի առջև բոլորի հավասարության մասին սկզբունքի խախտում է, ինչը, սակայն, բխում է պարզամավորի հարուկ կարգավիճակից:

Պարզամավորի անձեռնմխելիության ինստիտուտը նախատեսված է Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում եւ այլ պետություններում: Մասնավորապես, ԱՄՆ Սահմանադրությունը (6-րդ բաժնի 1-ին հոդված) հռչակում է, որ «Սենատորները եւ ներկայացուցիչներն իրենց ծառայության դիմաց ստանում են օրենքով սահմանված եւ ԱՄՆ-ի պետական գանձարանից վճարվող վարձատրություն: Ոչ մի դեպքում, բացառությամբ դավաճանության, ծանր քրեական հանցագործության եւ հասարակական կարգի խախտման, նրանք ենթակա չեն կալանավորման՝ համապատասխան պալատի նիստերին մասնակցելու, ինչպես նաեւ պալատ գնալու կամ այնտեղից վերադառնալու ժամանակ»:

Պարզամավորական անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ սոցիալական ու կազմակերպչական երաշխիքները պահպանվում են պարզամավորի լիազորությունների ողջ ժամանակահատվածում: Կազմակերպչական երաշխիքներն օգնում են օրենսդիր մարմնի անդամին առավել դյուրին աշխատել պետական եւ ոչ պետական կառույցների հետ: Պարզամավորի լիազորությունների իրականացմանն օժանդակելու հիմնական պար-

¹⁵ См. Собрание законодательства Российской Федерации, М., 1995, N 50, С. 4869:

փականությունը դրված է ՆՃ Ազգային ժողովի աշխարակազմի վրա, որն ստեղծվում է օրենքով սահմանված կարգով եւ գործում է «Ազգային ժողովի կանոնակարգ», «ՆՃ Ազգային ժողովի աշխարակազմում պետական ծառայության մասին» օրենքների, իր կանոնադրության եւ այլ ակտերի հիման վրա: Կանոնակարգի 111-րդ հոդվածի համաձայն՝ աշխարակազմն ապահովում է Ազգային ժողովի նորմատիվ, փորձագիտական, իրավաբանական, կազմակերպչական, փաստաթղթային, վերլուծական, տեղեկատվական, ֆինանսատնտեսական եւ նյութատեխնիկական գործունեությունը:

Ազգային ժողովի կանոնակարգը սահմանում է պարզամալորի գործունեության երաշխիքները՝ նախատեսելով պարտականություններ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարների, պաշտոնատար անձանց համար: Այսպես. Ազգային ժողովի կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներն ու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) պարզամալորի պահանջով հնարավոր սեղմ ժամկետում ընդունել նրան, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

բ) փասնօրյա ժամկետում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, քննարկել պարզամալորի հարցումը եւ գրավոր պատասխանել նրան,

գ) ոչ ուշ, քան քննարկումից երեք օր առաջ գրավոր տեղեկացնել պարզամալորին իր բարձրագրած հարցի քննարկման մասին:

2. Պարզամալորն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ներկա գտնվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին:

3. Կառավարությունն Ազգային ժողովին նախապես տեղյակ է պահում կառավարության դռնբաց նիստի անցկացման օրվա, ժամի եւ օրակարգի մասին՝ ներկայացնելով օրակարգին առնչվող փաստաթղթերը: Կառավարության նիստերի դափնիճում պարզամալորներին հարկացվում են տեղեր:

Պարզամալորներն ընտրողներին տեղեկացնում են իրենց գործունեության մասին ոչ միայն հանդիպումների միջոցով, այլեւ զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ: Ազգային ժողովի պարզամալորի օրինական պահանջների չկատարման եւ նրա գործունեության խոչընդոտման դեպքերում համապատասխան պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կարելի է նաեւ օրենքով ներկայացուցչական մարմնի անդամների սոցիալական երաշխիքների ամրագրումը, որը սահմանված է մի շարք երկրների օրենսդրություններում: Նամաշխարհային պրակտիկայում ընդունված է, որ պառլամենտի անդամը պետք է սրանա հարուցում, այսպես կոչված՝ «ինդեմնիտետ»: Նարուցումը կամ վարձատրությունը ներառում է ինչպես աշխարավարձը, այնպես էլ նյութական մի շարք այլ հարկացումներ, ինչը պայմանավորված է պարզամալորի գործունեության առանձնահատկություններով: Իր գործառնությունների իրականացման համար պարզամալորը կարիք ունի մեկնելու գործուղումների, հանդիպելու իր ընտրողների հետ, ունենալու փորձառու օգնականներ, սրանալու բժշկական պարշաճ սպասարկում, կյանքի ապահովագրություն եւ այլ երաշխիքներ: Պետությունը կատարում է համապատասխան ծախսեր՝ ելնելով ժողովրդի ընտրյալների կողմից իրենց գործառնությունների արդյունավետ իրականացման նպատակով նյութական բավարար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունից: Պարզամալորի նյութական ապահովության երաշխիքները նույնպես ներառվում են նրա կար-

զավիճակի մեջ: Նախկանական է, որ Ռուսաստանի Դաշնությունում Դաշնային խորհրդի անդամի եւ Պեպական դումայի պարզամավորի կյանքը եւ առողջությունը ենթակա են պարտադիր պեպական ապահովագրության՝ Դաշնային բյուջեի միջոցների հաշվին: Նրանք իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում ազարվում են զինվորական հավաքներին մասնակցելու պարտականությունից: Ռուսաստանի Դաշնության փարածքում պարզամավորն իրավունք ունի անվճար հիմունքներով օգրվելու օդային, երկաթուղային եւ ավտոմոբիլային փրանսպորտից, քաղաքային փրանսպորտի բոլոր փեսակներից, բացառությամբ փաքսիի, ինչպես նաեւ արտահերթ կարգով ձեռք բերելու ուղեւորմներ («Պարզամավորի կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 31 եւ 32-րդ հոդվածներ): Իսկ նույն օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասում նշված է, որ պարզամավորին փրամադրված, ինչպես նաեւ պարզամավորական լիազորությունների իրականացման համար օգրագործվող ու պարզամավորին պարկանող անձնական ավտոփրանսպորտային միջոցներին օրենսդրությամբ սահմանված կարգով հարկացվում են հարուկ գրանցման պեպական համարանիշեր: Բացի դրանից, Ռուսաստանի Դաշնությունում պեպական եւ համայնքային (մունիցիպալ) հյուրանոցների վարչությունները պարտավոր են մեկ ժամվա ընթացքում պարզամավորին ու նրան ուղեկցող անձանց փրամադրել հեռախոսով ապահովված առանձին համարներ (օրենքի 33-րդ հոդված): Պարզամավորի նկարմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը, նրա գործունեությունը հարկադրաբար դադարեցնելը կամ պարզամավորի եւ (կամ) նրա մերձավոր հարազատների նկարմամբ կիրառված գործողությունն ու (կամ) այդպիսի գործողություն կարարելու սպառնալիքն առաջ են բերում օրենքով սահմանված պարասխանավություն (օրենքի 41, 42, 43-րդ հոդվածներ): Պեպությունների մեծ մասում պառլամենտի անդամները պրոֆեսիոնալ պարզամավորներ են եւ իրենց պառլամենտական գործունեության համար պեպական գանձարանից սրանում են փոխհարուցում (Բրազիլիայում՝ փարեկան մոթավորապես 150.000 ԱՄՆ դոլար, ԱՄՆ-ում՝ 133.000 ԱՄՆ դոլար): Խորհրդարանի անդամի աշխարավարձի չափը պարբերաբար փոխվում է: ԱՄՆ Սահմանադրության 27-րդ փոփոխությունը սահմանում է, որ սենատորների եւ ներկայացուցիչների պալարի անդամների փոխհարուցման չափը փոփոխող օրենքն ուժի մեջ չի մրնում մինչեւ ներկայացուցիչների պալարի հաջորդ ընրությունները: Ննդկասարանում պառլամենտի անդամներին վարձարրում են՝ օրապահիկ վճարելով յուրաքանչյուր նիստի համար, եւ նրանց համար կիրառում կենսաթոշակային արրոնություններ: Շարերկրներում պառլամենտականներն անվճար ապահովվում են բնակարանով, բժշկական սպասարկմամբ, փոստային եւ հեռախոսային կապով, անվճար գործուղումներով, ունեն պեպության կողմից աշխարավարձ սրացող քարրուղար եւ օգնականներ, հարկային արրոնություններ: Իսկ, օրինակ, Ֆրանսիայում պարզամավորներն իրենք են վճարում բնակարանի, բժշկական օգնության համար, ամբողջովին մոծում են հարկերը: Նշենք, որ Էստոնիայի Նանրապեպությունում պարզամավորի սոցիալական երաշխիքները սահմանված են Սահմանադրությամբ՝ 75-րդ հոդվածում նախարեսելով նրանց աշխարավարձի չափը, ներկայացուցչական ծախսերի համար 20%-ի չափով րրվող հավելավճարը, ինչպես նաեւ ամրագրելով, որ խորհրդարանի նախագահին եւ պարզամավորներին մարուցվում են փոստային, հեռախոսային, փրանսպորտի, կապի եւ այլ ծառայություններ, րրվում հարկային արրոնություններ:

Պարզամավորի աշխարավարձը Նայաստանում համարվում է բարձր աշխարավարձ: Ն Ազգային ժողովի կանոնակարգով պարզամավորի աշխարանքը չի նորմավորվում, եւ նախարեսվում է, որ նրա աշխարանքն սկսվում է ժամը 9-ից: Դա

նշանակում է, որ պարզամավորն ազատորեն կարող է այցելել Նանրապետության ցանկացած փրարածք, կազմակերպություն, կարարել իր պարզամավորական աշխատանքը: Սոցիալական երաշխիք է նաև այն, որ պարզամավորական գործունեության ժամանակահատվածը համարվում է աշխատանքային սրած եւ հաշվարկվում որպես ընդհանուր եւ մասնագիտական անընդմեջ սրած, եթե, իհարկե, պարզամավորը, դադարելով լինել Ազգային ժողովի անդամ, երեք ամսվա ընթացքում անցնում է աշխատանքի:

Այսինքն՝ նշված եւ այլ երկրներում սահմանադրորեն կամ օրենսդրորեն ապահովվում են պարզամավորի ազատ ու անկաշկանդ գործունեության երաշխիքներ: Նրանց եկամտի աղբյուրը պետականորեն պարզամավորական գործունեության համար նախատեսված ֆինանսական միջոցներն են, ինչպես նաև գիտական, մանկավարժական եւ սրեղծագործական աշխատանքից սրացվող եկամտաբերը: Նյութական ապահովվածությունը հնարավորություն է փալիս ժողովրդի ընտրյալին անկախ լինելու նաև քաղաքական ու ֆինանսական լծակներ ունեցող խմբավորումների ազդեցությունից, լոբբիստական փրարքեր շարժումների ճնշումներից: Պարզամավորի սոցիալապես պաշտպանված լինելը նպաստում է նրա ազատ գործունեությանը, լիազորությունների առավել օբյեկտիվ եւ արդյունավետ իրականացմանը:

ՄԱ գործող օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է փալիս կարարելու եզրահանգումներ առ այն, որ, թերեւս, նպատակահարմար է.

- ՄԱ ընտրական օրենսգրքում ավելացնել պարզամավորի կրթական ցենզի, հոգեկան առողջության, ՄԱ զինված ուժերում ծառայելու մասին պահանջներ եւ թույլ չփրալ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կարարած ու դարվածություն ունեցող, հոգեկան հիվանդություններով փրառապող անձանց հավակնելու ժողովրդի ընտրյալի կոչմանը, ինչպես նաև օրենքով բացառել երկքաղաքացու՝ պարզամավոր ընտրվելու հնարավորությունը,

- ընտրարարածքներում պարզամավորական գրասենյակների սրեղծման նպատակով պետքություն նախատեսել համապատասխան ֆինանսավորում, որովհետեւ այդ գրասենյակների միջոցով կապահովվի պարզամավորի եւ ընտրողների արդյունավետ կապը:

Այսպիսով, ՄԱ Ազգային ժողովի պարզամավորի սահմանադրարիավական կարգավիճակը կազմում են նրա իրավունքները, պարտականությունները, գործունեության երաշխիքները, պարտասխանարվությունը: Յուրաքանչյուր պարզամավոր օրենսդիր մարմնում պետք է պարվով կարարի ժողովրդի ընտրյալ ներկայացուցչի իր լիազորությունները:

ՀՈԴՎԱԾ 66

1. Պարզամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքներով:

2. Պարզամավորն իր պարզամավորական լիազորությունների ժամկետում եւ դրանից հետո չի կարող հետապնդվել եւ պարտասխանարվության ենթարկվել պարզամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայրնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

3. Պարզամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալա-

նավորել կամ նրա նկարմամբ դատարան կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

4. Պարզամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

1. Սահմանադրական իրավունքի պետության մեջ, օրենսդրությամբ եւ պրակտիկայում քարտեղվում են պարզամավորի հրամայական (իմպերատիվ) ու ազատ մանդատները:

Մինչեւ 1995 թվականը Նայաստանի Նանրապետությունում օրենսդիր մարմնի անդամի մանդատը հրամայական էր: Նրամայական մանդատն ընտրողների կողմից պարզամավորին փրված լիազորություններն են այն պայմանով, որ նա պարտավոր է կատարելու իր ընտրողների պարզամները եւ իր գործողությունների համար պատասխանատվություն կրելու նրանց առջեւ: Եթե պարզամավորը չի իրագործում իր խտրումները կամ պառլամենտում աշխատում է ոչ բավարար արդյունավետությամբ, ապա ընտրողներն իրավունք ունեն նրան հետ կանչելու: Ուստի հրամայական մանդատի դեպքում պարզամավորն ազատ չէ իր դիրքորոշումն արտահայտելիս՝ խորհրդարանում հարցերը լուծելիս: Իսկ ազատ մանդատը, ընդհակառակը, ենթադրում է, որ պարզամավորը չպետք է կաշկանդված լինի իր ընտրողների պարվիրաններով, այլ խորհրդարանում պետք է գործի՝ ելնելով իր համոզմունքներից՝ հանուն ողջ ժողովրդի: Ազատ մանդատը հաշվի է առնում ժողովրդի ընդհանուր եւ տեղական շահերը չհամընկնելու հնարավորությունը ու ելնում է ընդհանուր շահերին նախապատվությունը տալու անհրաժեշտությունից: Ազատ մանդատի դեպքում չի գործում պարզամավորի հետկանչի ինստիտուտը: Պարզամավորն իր գործունեության համար պատասխանատվություն է կրում ոչ թե անմիջական ընտրողների, այլ ողջ ժողովրդի առջեւ: Ազատ մանդատն իր քարտեղ դրսևորումներով գործում է շար պետություններում: Իսկ հրամայական մանդատն առավել բնորոշ է բռնապիսակական, ավտորիտար պետություններին, որոնց անհրաժեշտ են «ժողովրդի ղեկավարման» արտաքին միջոցներ, թեև այդպիսի պետություններում հետկանչի իրավունքը գործնականում չի կիրառվում:

Իրավական, ժողովրդավարական պետությունը ելնում է այն կանխադրությից, որ ընտրողների պարզամները եւ ընտրողի առջեւ պարզամավորի ուղղակի հաշվետու լինելն իմաստ ու գործնական կիրառություն ունեն նախ տեղական ինքնակառավարման մակարդակում, իսկ պետական մակարդակում խորհրդարանները լուծում են առավել բարդ, համապետական նշանակություն ունեցող հարցեր՝ ի շահ ողջ ժողովրդի ու պետության, ուստի պարզամավորներն ունեն ավելի լայն լիազորություններ եւ պետք է հանդես գան որպես ժողովրդի ու ոչ թե միայն իրենց ընտրողների ներկայացուցիչներ: Ընտրված անձն Ազգային ժողովում իր ընտրատարածքի բնակչության շահերի արտահայտիչը լինելով՝ միաժամանակ մասնակից է դառնում համապետական խնդիրների լուծմանը:

Նրամայական մանդատի գաղափարը ծնվել է դեռես Տին Նոմում եւ հռոմեական իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմել: Նայ իրավական մտքի պարմության մեջ առաջին անգամ ««Ռոգայթ փառացն» է, որ 14-րդ հոդվածում նախատեսում է պարզամավորի ընտրության կարգը, ըստ որի՝ «Պարզամավորները հնազանդությամբ պարտավոր

են իրագործել այն, ինչ հասարակված է Ավագների խորհրդի կողմից»: Այսինքն՝ «Որոգայթ փառացը» նախարեսում է, որ պարզամտերին անհրաժեշտ է օժտել հրամայական մանդատով:

1936 եւ 1977թթ. ԽՍՀՄ սահմանադրություններում ամրագրվեց հրամայական մանդատի պահանջը, որը նախարեսում էր նաեւ պարզամտերի հետկանչ՝ օրենքով սահմանված կարգով: Բնականաբար, այդ նորմերը րեղ էին գրել նաեւ Նայասրանի երկրորդ Նանրապետության օրենսդրության մեջ եւ գործեցին մինչեւ 1995 թվականը: Նայասրանի երրորդ Նանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ Նայասրանի Նանրապետությունում գործում է ոչ թե հրամայական, այլ ազատ մանդատի սկզբունքը, ըստ որի՝ պարզամտերը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքներով: Պարզամտերի համոզմունքները ձեւավորվում են նրա ընդհանուր աշխարհայացքի, գիտելիքների, իրավական համակարգի իմացության, կենսափորձի, արժեքային կողմնորոշումների հիման վրա: Պառլամենտի անդամն ունի սկզբունքներ, բարոյական չափանիշներ, որոնց համապարասխան իրականացում է իր գործունեությունը՝ չունենալով ընտրողների կողմից հետ կանչվելու մտահոգություն:

Ուսումնասիրելով եվրոպական երկրների փորձը եւ պառլամենտարիզմի զարգացման պարմությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ գործում է այն կանխադրությունը, ըստ որի՝ ընտրված պարզամտերը ցանկացած դեպքում ճիշտ է ներկայացանում իր ընտրողների, պետության շահերը, եւ որեւէ մեկին իրավունք վերապահված չէ հակադրվել նրան կամ խոչընդոտել նրա գործունեությունը: Պառլամենտարիզմի զարգացմանը զուգընթաց շատ երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա) աստիճանաբար հրաժարվեցին հրամայական մանդատից եւ իրենց սահմանադրություններում ամրագրեցին ազատ մանդատի ինստիտուտը, քանի որ պարզամտերական ազատ մանդատն ավելի առաջադիմական է, քան հրամայական մանդատը: Եթե անձն իսկապես ժողովրդի ընտրյալն է, նրա ներկայացուցիչը եւ պարաստ է պարզամտերական գործունեություն իրականացնել, սպա նա պետք է գործի ազատորեն՝ իր խղճի եւ համոզմունքների համաձայն: Նա չպետք է կաշկանդված լինի ընտրողների հրահանգներով, պահանջներով եւ չի կարող հետ կանչվել մինչեւ իր լիազորությունների ավարտը:

Ակնհայտ է, որ ժողովրդի կամքը պետք է առաջնային լինի կուսակցության կամքից: Թեւ գրնում ենք, որ ուժեղ եւ կայացած կուսակցությունների առկայության դեպքում խմբակցությունից հեռացված կամ դուրս եկած պարզամտերը պետք է վայր դնի մանդատը: Ինչպես վերը նշեցինք, ժողովրդավարական երկրներում գործում է ազատ մանդատի ինստիտուտը: Սակայն ազատ մանդատի դեպքում եւս պարզամտերը հաշվի է նստում իր կուսակցական խմբակցության որոշման, իր ընտրարարածքի ընտրողների հետ: Իրավաբանորեն, սակայն, պարզամտերի քվեարկելու իրավունքը՝ այս կամ այն հարցի կապակցությամբ, ոչնչով սահմանափակված չէ: Գիտակցելով, որ իր նախընտրական խոստումները երբեմն հանրահաճո բնույթ էին կրում եւ ոչ միշտ են համընկնում համապետական շահերին՝ պարզամտերը կարող է հրաժարվել այդ խոստումներից:

ՆՏ սահմանադրական դատարանը՝ ՆՏ Ազգային ժողովի պարզամտերների դիմումի հիման վրա քննության առնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայասրանի Նանրապետության օրենքի 12 եւ 14 հոդվածների՝ ՆՏ Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, իր 30 հունիսի 2009թ. ՍԴՈ- 810 որոշման մեջ արձանագրեց, որ.

- Ազատ մանդատի սկզբունքը՝ որպես **ներկայացուցչական ժողովրդավարու-**

թյան հիմքերից մեկը, հնարավոր է դարձնում կարծիքների բախումը խորհրդարանում և ապահովում Ազգային ժողովի՝ փոխհամաձայնության հանգելու ունակությունը: Ներքևապես, ազատ մանդատի շնորհիվ է խորհրդարանում ապահովվում հավասարակշռությունը՝ քարթեր մասնակի (քաղաքական) շահերի միջև, որով պայմանավորված է բարձրագույն սահմանադրական մարմիններից մեկի գործունակությունը՝ ընդունելու օրենքներ, կայացնելու որոշումներ և իրականացնելու իր այլ լիազորությունները:

• Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորների փոքր թափուր մնալու ընթացակարգը և խմբակցությունը լքելուն վերաբերող նորմերը դիֆարկել համակարգային փոխկապակցվածության մեջ: Նամամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորների փոքր թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պարզամավորի թափուր փոքր լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պարկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը, որն սկզբնապես ձևավորվել է ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամարտահայտության, չի կարող փոփոխություն կրել փյույվ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում: **Ներքևաքար, պարզամավորի լիազորությունների դադարեցման խնդր առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպարակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կարացվի, որ քաղաքական կուսակցությունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման միջոց, միանգամայն շինծու երեույթ է, քանի որ հենց ընտրություններից հետո կարող են փոփոխ ունենալ պարզամավորական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընտրությունների արդյունքում ձևավորված օրենսդիր մարմինը չարտահայտի ժողովրդի կամքը: Այսինքն ժողովրդի կամքի արտահայտությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձևավորվի օրենսդիր մարմին, որը չի արտացոլի ընտրությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընտրական համակարգի գլխավոր առաքելություններից մեկն այն է, որ կարողանա ապահովել ընտրվի մարմիններում քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ ընտրողների իրական աջակցությանը համամասնորեն:

• Տարբեր երկրների պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր դեպքերում խորհրդարանական խմբակցությունները լքելու փորձերը գլխավորապես հրահրվում են ընթացիկ քաղաքական նպարակներ հեղապնդելով՝ փոխելով ընտրողների իրական կամարտահայտման պարկերը: ՆՆ սահմանադրական դարարանը գրնում է, որ երկրի քաղաքական կառուցակարգերի ամրապնդման, քաղաքական կուսակցությունների կայացման, քաղաքական հանդուրժողականության մթնոլորտի ապահովման, քաղաքական պարասխանարվության երաշխավորման համար առանձնապես համակարգային վերափոխումների փուլում անհրաժեշտ է «հակադասալքային» դրույթների ամրագրումն օրենսդրության մեջ: **Դա հարկապես վերաբերում է այն երկրներին, որտեղ համամասնական ընտրակարգով ընտրություններում ընտրողներին չի ներկայացվում կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուների ցուցակը, որպեսզի ընտրողները դիրքորոշում արտահայտեն ցուցակում ընդգրկված անձանց վերաբերյալ:** Ընդ որում, միայն այն ընտրական համակարգի դեպքում կարող է

կիրառվել «դասալքության» կանխման իրավական կարգավորումը, երբ պարզամավորն ընկերվել է ոչ թե նրա վերաբերյալ ընտրողի կարծիքը հաշվի առնելու հիման վրա, այլ զուտ կուսակցության ծրագրին հավանություն փալու արդյունքում, այսինքն՝ երբ շեշտադրումը կատարվում է քաղաքական պարասխանարվության եւ դրա ապահովման կառուցակարգերի վրա: ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ **խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխություն, որն ընթացիկ շահեր է հեղապնդում եւ փոխում է ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում, անհամարելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ եւ իրավաչափ համարվել չի կարող:**

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը շրջանցում է պարզամավորի մանդատի բնույթի մասին հարցը, իսկ օրենսդրությունն այն լուծում է ոչ լիարժեք ձեւով: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հրամայական մանդատը չի գործում, քանի որ չկա պարզամավորի հետկանչի իրավունք: Սակայն ազատ մանդատն ունի որոշ ավանդական գծեր. օրինակ՝ պարզամավորի պարտականությունը՝ տեղեկացնելու ընտրողներին իր գործունեության մասին, ապահովելու նրանց իրավունքների իրականացումը, դեկլարավելու նախընտրական ծրագրով: Բայց նշված պարտականությունների չկատարման համար սանկցիաների բացակայությունն ընդհանուր առմամբ թույլ է փախս պարզամավորին գործել ազատորեն, իր համոզմունքների համաձայն: Գործնականում նման կարգավիճակ ունեն նաեւ Դաշնության Խորհրդի անդամները: Թեւեւ նրանք հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներ, սակայն նախատեսված չէ վերջիններիս պարտականությունը՝ այդ մարմինների կազմում կատարելու իրենց ընտրած քաղաքացիների պարտավորանները:

2. ՆՏ Սահմանադրության 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրությունը երաշխավորում է Ազգային ժողովի պարզամավորին, որ նա ոչ միայն իր պարզամավորական լիազորությունների իրականացման ընթացքում, այլեւ դրանից հետո չի կարող հեղապնդվել եւ պարասխանարվության ենթարկվել պարզամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, մասնավորապես՝

- օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու,
- օրինագծերի վերաբերյալ կողմ կամ դեմ արտահայտվելու,
- քննարկվող ցանկացած հարցի վերաբերյալ կարծիք հայտնելու,
- առաջարկություններ անելու,
- քվեարկելու համար:

Պարզամավորի կարգավիճակից բխող գործողության մասնավոր դրսեւորումներից է Ազգային ժողովում հայտնած կարծիքը, որի համար եւս նա չի կարող հեղապնդվել եւ պարասխանարվության ենթարկվել: Չնայած Սահմանադրությունը օգտագործում է «Ազգային ժողովում հայտնած կարծիք» ձեւակերպումը, դա, սակայն, չպետք է հասկանալ բառացիորեն, այլ պետք է մեկնաբանել փարածողական: Այսինքն՝ պարզամավորը չի կարող հեղապնդվել նաեւ Ազգային ժողովից դուրս հայտնած կարծիքների համար: Սակայն Սահմանադրությունը նախատեսում է վերապահում. պարզամավորի կարծիքը չպետք է վիրավորանք կամ զրպարություն պարունակի, քանի որ զրպարությունն ու վիրավորանքը պարտեւի արարքներ են:

ՆՏ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ վիրավորանքն ուրիշի պա-

փիվն ու արժանապարվությունն անպարկեշտ ձեռով ստորացնելն է: Իսկ գրպարությունը ուրիշի պարփիվն ու արժանապարվությունը նվաստացնող կամ բարի համբավն արարավորող ակնհայտ սուր փեղեկություններ փարածելն է (135-րդ հոդված)¹⁶, ուստի պարգամավորը պետք է ձեռնպահ մնա նման գործողություններից:

3-4. Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն իրենցից ներկայացնում են լրացուցիչ երաշխիքներ, որոնք գալիս են լրացնելու պարգամավորի՝ որպես սովորական քաղաքացու, անձնական անձեռնմխելիության իրավունքը և կոչված են ապահովելու նրա ազատ ու անկաշկանդ գործունեությունը՝ որպես խորհրդարանական: Որպես մեղադրյալ ներգրավելը, կալանավորելը և ձերբակալելը քրեադատավարական հասկացություններ և իրավական ինստիտուտներ են: Ներքալար, սահմանադրական այս նորմերի կիրառման համար կարևոր նշանակություն ունի դրանց օրենսդրական կարգավորման բովանդակությունը: Ըստ էության սահմանադրական դրույթներից բխում է, որ այդ քրեադատավարական գործողությունների՝ օրենքով սահմանված կարգը և դատավարական երաշխիքները պարգամավորի համար պահպանվում են և միաժամանակ դրանց ավելանում է նոր երաշխիք, այն է՝ որպես մեղադրյալ ներգրավելը, կալանավորելը, ինչպես նաև ձերբակալելը պետք է կատարել Ազգային ժողովի համաձայնությամբ:

Ձերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելն է, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի փակ կարճաժամկետ պահելու համար¹⁷:

Եթե պարգամավորը հանցագործության կատարման վայրում ձերբակալվել է, ապա այդ մասին անհապաղ փեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը: Պարգամավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանարվության ենթարկելու համար համաձայնություն փախուստի միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, և այդ հարցը քննարկվում է Ազգային ժողովի նիստում: Չի բացառվում, որ պարգամավորը, որի մասին ներկայացվում է միջնորդություն, անհարգելի բացակայի Ազգային ժողովի նիստից: Այս դեպքում հարցը քննարկվում է առանց նրա ներկայության: Պարգամավորին ձերբակալելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանարվության ենթարկելու համաձայնություն փախուստի հարցը լուծվում է գաղտնի քվեարկությամբ, նիստին ներկա պարգամավորների ձայների մեծամասնությամբ, ընդ որում՝ քվեարկությանն անպայման պետք է մասնակցի Ազգային ժողովի պարգամավորների կեսից ավելին:

Նամաշխարհային պրակտիկայում օրենսդիր մարմնի անդամի անձեռնմխելիության իրավունքը կարող է գործել պարգամավորի լիազորությունների ողջ ժամանակահատվածում (Գերմանիա, Իսպանիա, Իրալիա) կամ նստաշրջանների ընթացքում (Ճապոնիա) և նստաշրջան մեկնելու ճանապարհին ու հետ դառնալիս (ԱՄՆ): Այն կարող է փարածվել իրավակարգի խախտման ոչ բոլոր դեպքերի վրա (օրինակ, ԱՄՆ-ում անձեռնմխելիության իրավունքը (կամ՝ իմունիտետը) չի փարածվում ծանր հանցագործությունների, հասարակական կարգի խախտումների վրա): Ընդ որում՝ պարգամավորի աշխատավայրը, բնակարանը, անձնական իրերը, ճամպուրկը խուզարկել չի

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 02.05.03 / 25 (260):

¹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 21.09.98 / 22 (55):

թույլատրվում, այսինքն՝ անձեռնմխելիությունը փարածվում է նաև պարզամավորին պարկանող գույքի վրա: Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 1995 թվականին կարգաված փոփոխության համաձայն՝ անձեռնմխելիության իրավունքը գործում է միայն նստաշրջանների ընթացքում եւ չի փարածվում քրեորեն պարժելի արարքների վրա:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական երկրներում նկատվում է պարզամավորական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման միտում: Պարզամավորի անձեռնմխելիության ինստիտուտի կապակցությամբ կան փարբեր մեկնաբանություններ: Մենք գտնում ենք, որ պարզամավորական մանդատը չպետք է ծառայի անօրինականություններ թույլ տալու, հանցագործություն կատարելու եւ անձեռնմխելիության իրավունքով պաշտպանվելու համար:

Այսպիսով, ՆՄ Ազգային ժողովի անդամը պարզամավորական գործունեություն իրականացնելիս ազատ է եւ՝ Ազգային ժողովում, եւ՝ դրանից դուրս, քանի որ սահմանադրորեն նա ունի ոչ հրամայական՝ ազատ մանդատ, եւ նրան չեն կարող հեղափոխել, պարասխանավորության ենթարկել իր պարզամավորական գործունեությունն իրականացնելիս եւ դրանից հետո:

ՆՈՂՎԱԾ 67

1. Պարզամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու, Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու, Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը կորցնելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազատագրկման դատապարտվելու, անգործունակ ճանաչվելու եւ հրաժարականի դեպքերում:

2. Պարզամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

1. Մեկնաբանվող հոդվածը կարգավորում է Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունների դադարման հիմքերը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց առակայությունը բավարար է դադարեցնելու պարզամավորի լիազորությունները:

Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունների դադարման սահմանադրական հիմքերը նախատեսված են Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 67-րդ հոդվածում: Այդ հիմքերն են.

- Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելը եւ նոր ընտրություններ անցկացնելը,

- Նանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելը,

- Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները (գործունեության անհամարեղելիության մասին պահանջը) խախտելը, այն է՝ պետական կամ փրեդական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը, ձեռնարկարիական գործունեությամբ զբաղվելը, այլ վճարովի աշխատանք կատարելը, բացի գիտական, մանկավարժական եւ սրեղծագործական աշխատանքից,

- Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունը կորցնելը,

- մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելը եւ Կանոնակարգի 99-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի կողմից դրանք անհարգելի ճանաչելը,

- ազապագրկման դապապարվելը եւ դապարվճիռն օրինական ուժի մեջ մքնելը,
- դապարանի կողմից անգործունակ ճանաչվելը,

- պապագամավորի կողմից գրավոր դիմում ներկայացնելը՝ հրաժարական քալը, որը սահմանված կարգով ընդունվել է:

Պապագամավորի լիագորությունների դադարումն օրինաչափ է Ազգային ժողովի լիագորությունների ժամկետի ավարքման հիմքով:

Եթե պապագամավորը ենթարկվում է քրեական պապախանարվության ու պապ-ժի՝ ազապագրկման ճեւով, ապա դադարում են նրա պապագամավորական լիագորությունները: Լիագորությունների դադարման հիմք է պապագամավորի հրաժարականը, այսինքն՝ նրա որոշումը՝ վայր դնելու իր պապագամավորական լիագորությունները: Նրաժարականը պապագամավորի դիրքորոշման արքահայքությունն է, որը կարող է թելադրված լինել քարքեր դրդապապրճառներով, անճնական, ընքանեկան եւ այլ հանգամանքներով: Նման դեպքեր արճանագրվել են Ազգային ժողովի չորրորդ գումարման ժամանակ:

Այնպես, ինչպես անճն Ազգային ժողովի պապագամավորի լիագորություններն սքանճնում է սահմանված կարգով, այնպես էլ որոշակի կարգով դադարում են նրա լիագորությունները:

2. ՏՏ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաճայն՝ Ազգային ժողովի կանոնակարգը սահմանելով Սահմանադրությանք թվարկված ամեն մի հիմքով պապագամավորների լիագորությունների դադարման կարգը՝ սահմանել է նաեւ նրանց լիագորությունների դադարման այնպիսի հիմքեր եւ դրանց իքացման ընթացակարգ, որոնք Սահմանադրությանք սահմանված չեն: Դրանք են՝ մահվան քասաքը, պապագամավորի ընքրության գրանցումը չեղյալ հայքարարելու մասին ՏՏ սահմանադրական դապարանի որոշումը: Նման դեպքերում Ազգային ժողովում կազմվում է պապագամավորի լիագորությունների դադարման մասին արճանագրություն, որն Ազգային ժողովի նախագահի սքորագրությանք հնգօրյա ժամկետում ուղարկվում է ՏՏ կենքրոնական ընքրական հանճնաժողով:

Նայասքանի Նանրապետության օրենսդրությանք այլ կարգ է նախաքեսված հրաժարականի դեպքում: Պապագամավորն այդ մասին գրավոր դիմում է ներկայացնում Ազգային ժողովի նախագահին, որն էլ պարավոր է այն հրապարակել Ազգային ժողովի առաջիկա նիսքում: Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ կետում նշված է, որ «Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ 15 օրվա ընթացքում, պապագամավորը գրավոր դիմումով՝

ա) հեք է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային ժողովի նախագահն առաջիկա նիսքում Ազգային ժողովին քեղեկացնում է այդ մասին.

ք) հեք չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիագորությունների դադարման մասին կազմվում է արճանագրություն, որը սքորագրում է Ազգային ժողովի նախագահը եւ հնգօրյա ժամկետում ուղարկում Կենքրոնական ընքրական հանճնաժողով»:

Այսուհանդերճ, Նայասքանի Նանրապետության օրենսդրությունը պապագամավորի մանդարի ճագման ժամկետի, պահպանման եւ դադարեցման հիմքերի հեք կապ-

ված՝ անկախար է: Մեր կարծիքով՝ սահմանադրական բարեփոխումները պետք է անդրադառնային այս խնդրին եւ հնարավորինս ամբողջացնեն գործող նորմերը: Լուծումներ չեն տրված այնպիսի դեպքերի, ինչպիսիք են՝

1. պարզամավորն անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել, եւ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել,

2. արձակվել է Ազգային ժողովը, սակայն պարզամավորների լիազորություններն այս դեպքում պետք է շարունակվեն (ընտրողի հետ՝ այլ ձևերով) մինչև արտահերթ ընտրություններով ձեւավորված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը,

3. ՏՏ Սահմանադրության բարեփոխված փարբերակում երկքաղաքացիությունն արգելող նորմը հանվել է, ուստի անհրաժեշտ է արգելել երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրությունը որպես Ազգային ժողովի պարզամավոր: ՏՏ Սահմանադրության 64-րդ հոդվածը հռչակում է, որ Ազգային ժողովի պարզամավոր կարող է ընտրվել վերջին հինգ փարտում Նայասարանի Նանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ փարտում Նանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Նկատենք, որ անհարգելի բացակայության պարճառով պարզամավորին մանդատից զրկելու դրույթը չի գործում: Այդ է վկայում փաստը փարիների պրակտիկան, երբ, չնայած բազում նման դեպքերի, որեւէ պարզամավոր չի զրկվել իր մանդատից: Կարծում ենք՝ անհարգելի բացակայության մասին խնդիրը պետք է լայն հնչեղություն ստանա: Յուրաքանչյուր նստաշրջանից հետո կարելի է նիստի վերջում հետապարտեսությամբ հայտարարել այն բոլոր պարզամավորների անունները, ովքեր առանց հարգելի պարճառի բացակայել են նիստերից, մամուլում տպագրել նրանց անունները, ինչպես նաեւ բացակայած օրերի համար զրկել աշխարավարձից: Նմանատիպ միջոցները կարող են հասարակության մեջ համապատասխան վերաբերմունք ձեւավորել փյալ պարզամավորի նկատմամբ, եւ ընտրողն էլ հաջորդ ընտրության ընթացքում կարող է ճիշտ կողմնորոշվել, թե արժե՞ փյալ պարզամավորության թեկնածուին ընտրել բարձրագույն օրենսդիր մարմնի կազմում, թե ոչ: Մյուս կողմից՝ համարժեք կարգավիճակ ունեցող պարզամավորները, ովքեր ընտրվել են ժողովրդի կողմից, չպետք է իրավունք ունենան զրկելու իրենց գործընկերոջը մանդատից՝ անկախ Ազգային ժողովի նիստերին բացակայությունների թվից:

Կան երկրներ, որտեղ պառլամենտականը կարող է զրկվել մանդատից այլ կուսակցության շարքերն անցնելու, իրավախախտումներ կատարելու եւ էթիկայի նորմերը խախտելու հիմքերով: Որպես կանոն, պարզամավորին մանդատից զրկելու մասին որոշումն ընդունվում է պառլամենտի կողմից՝ ձայների որակյալ մեծամասնությամբ (2/3-րդը՝ Արգենտինայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, 5/6-րդը՝ Ֆինլանդիայում): Եթե պարզամավորը խախտում է էթիկայի նորմերը, չի կատարում իր պարտականությունները, ապա նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պարասխանարվության միջոցներ, այդ թվում՝ պարսավանք հայրենյով, արձանագրություն կազմելով: Քերմանիայում, Լեհաստանում կարող են պահումներ կատարվել պարզամավորի աշխարավարձից: Ֆրանսիայում պարզամավորը կարող է զրկվել աշխարավարձի երկրորդ, այսինքն՝ ոչ հիմնական մասից¹⁸: Պարզամավորը ժամանակավորապես կարող է հեռացվել պառլամենտական աշխարանքից կամ պարտականությունների չկատարման, կոպիտ ու պարբերաբար խախտումների հետեւանքով՝ զրկվել իր մանդատից: Շատ երկրներում պառլամենտի կողմից պարզամավորին մանդատից զրկումը կարող է բողոքարկվել Սահմանադրական կամ այլ դատարան: Սա ճիշտ լուծում է, եւ, թերեւս, կարելի է նման

¹⁸ Տե՛ս Конституционное право зарубежных стран, М., 2001, С. 275:

մտքեցում որդեգրել Տայասարանի Տանրապետությունում՝ Սահմանադրության փոփոխությունների ժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգը վերանայելիս, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մասին նոր օրենք ընդունելիս:

Պարզամավորի լիազորությունների դադարման հարցին, ինչպես նշվեց 66-րդ հոդվածի մեկնաբանությունների առիթով, անդրադարձել է նաև ՏՏ սահմանադրական դատարանը, որն իր 2009թ. հունիսի 30-ի ՄԴՌ-810 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Տայասարանի Տանրապետությունում առկա ընտրակարգի շրջանակներում, երբ պարզամավորը մանդատն ստանում է կուսակցությանը պրված ձայների շնորհիվ, նշված չի եղել քվեաթերթիկում եւ նրա վերաբերյալ ընտրողը որեւէ կամաարտահայտություն չի դրսետրել, սակայն ցանկանում է դուրս գալ խորհրդարանական խմբակցությունից, ապա դա կարող է անել մանդատը կամավոր վայր դնելուց հետո միայն, քանի որ հակառակ դեպքում կնպաստի **խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությանը, որը փոխում է ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում եւ չի բխում իրավական պետության եւ ժողովրդաիշխանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից:**

Սահմանադրական դատարանը որոշել է՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը՝ քվեաթերթիկներում որպես ընտրական ցուցակի թեկնածուներ չնշված պարզամավորների առնչությամբ այնքանով, որքանով նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը, ճանաչել ՏՏ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 7-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

ՆՈՂՎԱԾ 68

1. Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուրս, քան քառասուն, եւ ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

2. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովն արձակելուց հետո ոչ շուրս, քան երեսուն, եւ ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:

3. Ազգային ժողովի ընտրությունը նշանակվում է Տանրապետության Նախագահի հրամանագրով:

4. Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը:

5. Արտահերթ ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երկրորդ հինգշաբթի օրը:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է Ազգային ժողովի հերթական եւ արտահերթ ընտրությունների անցկացման ժամկետները, Ազգային ժողովի ընտրություններ

նշանակող սուբյեկտին, Ազգային ժողովի առաջին նստաշրջանի գումարման ժամկետներն ու նախապայմանը:

ՏՏ Սահմանադրությունը սահմանում է, որ Ազգային ժողովն ընտրվում է հինգ փարի ժամկետով: Նամապարասխանաբար Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են հինգ փարին մեկ: Բացի դրանից, Սահմանադրությունը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք կանխորոշում են Ազգային ժողովի ընտրությունների պարպադիր բնույթը: Նախեւառաջ դա Սահմանադրության երկրորդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված դրույթն է, համաձայն որի՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների... միջոցով», ինչպես նաև 5-րդ հոդվածում ամրագրված՝ իշխանության բաժանման սկզբունքը եւ 62-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը:

Ազգային ժողովի լիազորությունները մի գումարման պարզամավորներից հաջորդին սահուն փոխանցելու համար անհրաժեշտ է, որ ընտրությունները նշանակվեն ու անցկացվեն այնպիսի ժամկետներում, որպեսզի ժամանակային խզում չառաջանա, ժամանակի մեջ չլինի մի այնպիսի պահ, երբ նոր Ազգային ժողովը դեռևս կազմավորված չլինի, իսկ գործողի լիազորությունների ժամկետն ավարտված լինի, կամ գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն էականորեն շեղվի սահմանված հնգամյա ժամկետից:

Ներթափանցող ընտրությունները չեն կարող անցկացվել Ազգային ժողովի լիազորությունների ավարտից շար շուր, քանզի նման պարագայում կա վրանգ, որ խորհրդարանն այդ ժամանակահատվածում կարող է կորվել իր բուն աշխատանքից եւ կենտրոնանալ ընտրական գործընթացների վրա եւ, բնականաբար, քաղաքական գործընթացների կենտրոնում կլինեն ոչ թե գործող պարզամավորները, այլ նրանք, որոնք ընտրվել են, սակայն դեռևս չեն ստանձնել իրենց լիազորությունները: Կարճ ժամկետի պարագայում կա վրանգ, որ Ազգային ժողովի լիազորությունների հնգամյա օրացուցային ժամկետի ավարտին դեռևս կազմավորված չի լինի նոր գումարման Ազգային ժողովը¹⁹: Այս գործոնների հաշվառմամբ է մեկնաբանվող հոդվածում սահմանված Ազգային ժողովի հերթական ընտրությունների անցկացման ժամկետը՝ լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուր, քան քառասուն, եւ ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

Ի փարբերություն Նանրապետության Նախագահի ընտրությունների, Ազգային ժողովի ընտրությունների կոնկրետ օրը Սահմանադրությամբ սահմանված չէ: Այն, այսպես կոչված, «լողացող» է, եւ կարող է փարբեր դեպքերում անցկացվել լիազորությունների ավարտին նախորդող երեսունից քառասուն օրվա միջակայքերում:

Հոդվածի մեկնաբանվող մասում ընտրությունների անցկացման համար որպես ելակետային ժամկետ է սահմանվում Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Ազգային ժողովի լիազորությունների ավարտման պահը սահմանված է Սահմանադրության 63-րդ հոդվածի երկրորդ մասում՝ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում է նորընտրված Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին: Մեկնաբանվող հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ նորընտրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը²⁰: Այսինքն՝ հոդվածների հա-

¹⁹ Տե՛ս նաև 50-րդ հոդվածի մեկնաբանությունը:

²⁰ Սահմանադրության 63 եւ 68-րդ հոդվածներում խոսվում է նույն օրվա մասին, սակայն մի դեպքում օգտագործվում է «նիստ» հասկացությունը, մյուս դեպքում՝ «նստաշրջան», այս առումով հասկացությունների միասնականությունն ապահովված չէ:

մադրումից եւ փառացի մեկնաբանությունից սրացվում է, որ լիազորությունների ավարտման օրը միանշանակ հնարավոր չէ որոշել, քանզի այն կախված է այն բանից, թե ինչ ժամկետներում կընտրվի Ազգային ժողովի պարզամավորների երկու երրորդը: Կարծում ենք, հիմք ընդունելով Սահմանադրության 63-րդ հոդվածում ամրագրված՝ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը՝ հինգ փարի, այս պարագայում լիազորությունների ավարտման օրը պետք է հաշվել օրացուցային օրով, եւ հաշվարկն սկսել այդ պահին գործող Ազգային ժողովի լիազորությունների սկսման օրվանից: Այդ օրվան հաջորդող հինգերորդ փարվա նույն օրը՝ մեկնաբանվող հոդվածի իմաստով, Ազգային ժողովի լիազորությունների ավարտն է:

2. Նանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովն արձակելու հնարավորությունն ու կարգը սահմանված են Սահմանադրության 74.1-րդ հոդվածում: Ազգային ժողովի արձակումը ՆՏ Սահմանադրության համաձայն, ի փարբերություն այն երկրների, որտեղ խոսքը վերաբերում է պառլամենտի լիազորությունների ժամկետի կրճատմանը, նշանակում է Նանրապետության Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու վերաբերյալ հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից Ազգային ժողովի պարզամավորների լիազորությունների դադարեցում²¹: Այս պնդումն ուղակիորեն բխում է Սահմանադրության 67-րդ հոդվածում ամրագրված դրույթից, համաձայն որի՝ Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունները դադարում են նաեւ Ազգային ժողովն արձակելու պարագայում: Դա նշանակում է, որ պետությունը մնում է առանց Ազգային ժողովի, ինչի փետական ժամկետ կրելու պարագայում կխախտվեն Սահմանադրության առանցքային նշանակություն ունեցող այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են՝ իշխանությունների բաժանման եւ վերջինից ածանցվող՝ զապումների եւ հակակշիռների մեխանիզմները սահմանող, ինչպես նաեւ Ազգային ժողովի մշտապես գործող մարմին լինելու դրույթները եւ այլն:

Վերը նշված հանգամանքներով է պայմանավորված Ազգային ժողովն արձակելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում Ազգային ժողովի ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությունը:

Ինչպես եւ հերթական ընտրությունների պարագայում, արտահերթ ընտրությունների դեպքում եւս սահմանված են ընտրությունների անցկացման «լողացող» ժամկետներ: Այս ժամկետները հնարավորություն են ընձեռում քվեարկության օրը նշանակել ոչ աշխատանքային օր, քանզի աշխատանքային օրերին քվեարկության անցկացման պարագայում առկա է քվեարկության արդյունքներով արբենտիզմի մեծ փոկոս ունենալու վրանգը:

Մեկնաբանվող հոդվածում «ընտրություն» հասկացությունն օգտագործված է քվեարկության օրվա իմաստով, ինչը նշանակում է, որ դրան պետք է հաջորդի Ազգային ժողովի ձեւավորման համար անհրաժեշտ գործընթաց, որն սկսվում է ընտրությունների նշանակումով եւ ավարտվում քվեարկությամբ, այսինքն՝ Ազգային ժողովն արձակելուց հետո 30-40 օրվա ընթացքում պետք է նշանակվեն ընտրությունները, կազմավորվեն ընտրատարածքները, ընտրական տեղամասերը, տեղամասային կենտրոնները, կազմվեն ընտրողների ցուցակները, առաջադրվեն ու գրանցվեն թեկնածուները, իրականացվեն նախընտրական քարոզչություն, քվեարկություն: Այդ ժամկետները սահմանված են ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածում:

²¹ Տե՛ս նաեւ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 1999 թվականի նոյեմբերի 11-ի N 15-Պ որոշումը, СЗ РФ-Ն 47.- С.5787:

3. Ընտրությունների նշանակումը հանդիսանում է ընտրական գործընթացի պարտադիր փուլը, որը փախի է ընտրությունների կազմակերպման և անցկացման ամբողջ գործունեության մեկնարկը: Ընտրական իրավահարաբերությունների հիմնական սուբյեկտների համար ընտրական գործընթացի սկիզբն ընտրությունների նշանակումն է:

Ընտրական գործընթացում կարևոր նշանակություն ունի ընտրությունների նշանակման հետ կապված հարաբերությունների կարգավորումը, քանզի առանց այս փուլի մյուս փուլերը պարզապես գոյություն ունենալ չեն կարող:

Տաշվի առնելով Ազգային ժողովի փեղն ու դերը պետական մարմինների համակարգում՝ վերջինիս ընտրության նշանակման լիազորությունը վերապահվել է Տանրապետության Նախագահին:

Ուշադրություն պետք է դարձնել, որ հողվածի մեկնաբանվող մասը փարբերակում չի դնում հերթական և արտահերթ ընտրությունների միջև, ուստի խոսքը վերաբերում է ինչպես արտահերթ, այնպես էլ հերթական ընտրություններին: Մեկնաբանվող հողվածը միաժամանակ սահմանում է Տանրապետության Նախագահի այն իրավական ակտը, որով նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունները, այն է՝ հրամանագիրը:

Ընտրական օրենսգրքի 117-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ հերթական ընտրություններ նշանակելու մասին Տանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 100 օր առաջ: 119-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն նույնպես հերթական ընտրություններ նշանակելու մասին Տանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 100 օր առաջ:

Տանրապետության Նախագահի այս հրամանագրերի հրապարակման և ուժի մեջ մտնելու համար ոչ Սահմանադրությունը և ոչ էլ ընթացիկ օրենսդրությունն առանձնահատկություններ չեն սահմանել, դրանք հրապարակվում և ուժի մեջ են մտնում ընդհանուր կարգով:

ՏՏ Սահմանադրությունը թե՛ հերթական և թե՛ արտահերթ ընտրության նշանակումը սահմանել է որպես Տանրապետության Նախագահի պարտադիր լիազորություն, Տանրապետության Նախագահն Ազգային ժողովի ընտրություն նշանակելու կամ չնշանակելու միջև հայեցողություն չունի: Տանրապետության Նախագահի հայեցողությունն ըստ էության սահմանափակված է Սահմանադրությամբ սահմանված 30-40 օրվա միջև ընկած որեւէ օր ընտրելով:

Սահմանադրությունը չի կարգավորել Տանրապետության Նախագահի կողմից ընտրություններ չնշանակելու իրավական հետեւանքները: Ընտրությունների չնշանակման, հետեւաբար՝ չանցկացման պարագայում, հերթական ընտրությունների դեպքում ուղղակիորեն կխախտվի Ազգային ժողովի լիազորությունների՝ Սահմանադրությամբ սահմանված ժամկետը, միլիոնավոր ընտրողների՝ Ազգային ժողով ձեւավորելու իրավունքը, ընտրվելու իրավունքը, ընտրությունների պարբերականությունը և այլն, արտահերթ ընտրությունների պարագայում վերը նշվածներին կավելանա նաև այն, որ պետությունը կմնա առանց Ազգային ժողովի՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ: Կարծում ենք, որ նման պարագայում օրենսդրությունը պետք է իրավունքի ուժով գործող կարգ սահմանի ընտրությունների անցկացման համար (ինչպես դա արված է Տանրապետության Նախագահի ընտրությունների պարագայում) կամ այն նշանակելու լիազորությունը վերապահի մեկ այլ մարմնի: Նման կանոնակարգումները չեն լինի հակասահմանադրական, քանի որ դրանք ուղղված են հենց վերը նշված սահմանադրական նորմերի պաշտպանությանը:

4. Մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասն ընդգծում է Ազգային ժողովի ինքնուրույնությունը նրանով, որ Ազգային ժողովն իր առաջին նստաշրջանը գումարում է ինքնուրույն: Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարելու համար որեւէ այլ մարմնի կողմից որեւէ ակտի ընդունման անհրաժեշտություն գոյություն չունի:

Սակայն առկա է մեկ նախապայման՝ պետք է ընտրված լինի Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի երկու երրորդը:

Սահմանադրությունն Ազգային ժողովի նիստի իրավագործության համար պարզամավորների մասնակցության նվազագույն թիվ չի սահմանում, սակայն այն բխում է Սահմանադրության 71-րդ հոդվածից, որի համաձայն՝ օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Այսինքն՝ այդ թիվն ընդհանուր թվի կեսից ավելին է, սակայն հաշվի է առնվում, որ Ազգային ժողովը մի շարք որոշումներ կարող է ընդունել միայն որակյալ մեծամասնության փաթեթը հարաբերակցությամբ (օրինակ՝ Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը (հոդված 57), ինչպես նաեւ Նանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին որոշումը (հոդված 59) ընդունվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով, մարդու իրավունքների պաշտպանին ընտրելը՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով (հոդված 83.1):

Սահմանադրությունն Ազգային ժողովի լիարժեք գործելու անհրաժեշտությունից ելնելով՝ Ազգային ժողովի առաջին նստաշրջանի գումարման համար որպես նախապայման է սահմանում պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրված լինելը (առնվազն 88 պարզամավոր՝ 131-ից):

Մեկնաբանվող հոդվածում «ընտրությունից հետո» եզրույթը հասկացվում է ոչ թե որպես ընտրությունների արդյունքների հրապարակման կամ պարզամավորներին մանրադարձեր փախու օրը, այլ քվեարկության օրը, եւ երրորդ հինգշաբթի օրը հաշվարկվում է հենց այդ օրվանից:

Գործնականում չի բացառվում, որ այդ ժամանակահատվածում Սահմանադրական դատարանում քննվի պարզամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճ: Սակայն հաշվի առնելով, որ նման վեճը չունի այս ժամկետները կասեցնող բնույթ, այն արգելք չի հանդիսանա Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարելու համար:

5. Արտահերթ ընտրությունների արդյունքում կազմավորված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի գումարման համար նախապայմանը նույնն է. պարզապես հաշվի առնելով, որ այդ պահին չկա գործող Ազգային ժողով, առաջին նստաշրջանը գումարվում է ոչ թե երրորդ հինգշաբթի օրը, ինչպես հերթական ընտրությունների պարագայում է, այլ երկրորդ հինգշաբթի օրը: Առաջին նիստը գումարվում է Ազգային ժողովի շենքում:

Այսպիսով, նորընտրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանը, համապատասխանաբար նաեւ նիստերը, Սահմանադրությամբ սահմանված ժամանակին գումարվում է Սահմանադրության ուժով: Այդ դրույթի իրավական հետեւանքն այն է, որ ոչ ոք չի կարող հետաձգել կամ ավելի շուրջ գումարել նստաշրջան, իսկ նորընտրված պարզամավորները համապատասխան օրը պետք է ներկայանան Ազգային ժողովի նիստին:

ՆՈՂ-ՎԱԾ 69

1. Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով:

2. Ազգային ժողովի նիստերը դնբուց են: Դռնխակ նխար կարող է գումարվել Ազգային ժողովի որոշմամբ:

1. Ինչպես նշված է ՆՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի մեկնաբանության մեջ, Ազգային ժողովը ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով կազմավորված, օրենսդիր, ներկայացուցչական մարմին է, որը սահմանված կարգով իրականացնում է սահմանադրորեն ամրագրված իր գործառնությունները՝ հանդես գալով որպես պառլամենտարիզմի եւ սահմանադրականության ձեւավորման ու հաստատման համար անհրաժեշտ ինստիտուտ: Ազգային ժողովը պրոֆեսիոնալ, մշտապես գործող պետական մարմին է, որի աշխատանքները կազմակերպվում են Ազգային ժողովի նստաշրջանների, նիստերի, մշտական եւ ժամանակավոր հանձնաժողովների, ինչպես նաեւ պարզամավորների գործունեության միջոցով:

Նստաշրջանները՝ որպես Ազգային ժողովի գործունեության հիմնական կազմակերպարավական ձեւ, գումարվում են կոնկրետ ժամկետներում:

Բարեփոխված Սահմանադրությունն անդրադարձել է Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման մի շարք խնդիրների: 1995 թվականի ՆՏ Սահմանադրության 69-րդ հոդվածն ամրագրում էր Ազգային ժողովի աշխանային եւ գարնանային նստաշրջանների անցկացման ժամկետները՝ սահմանելով, որ «Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են րարեկան երկու անգամ՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչեւ դեկտեմբերի երկրորդ չորեքշաբթին եւ *փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչեւ հունիսի երկրորդ չորեքշաբթին*»: Իսկ 2005 թվականի փոփոխություններից հետո Սահմանադրությունն այլես չի սահմանում օրենսդիր մարմնի հերթական նստաշրջանների ժամկետները՝ այդ հարցի լուծումը թողնելով Կանոնակարգին: Այսինքն՝ սահմանադրական բարեփոխումները ճկունություն են հաղորդել Ազգային ժողովի գործունեության կազմակերպմանը՝ սահմանելով, որ **Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով:**

ԱԺ կանոնակարգի 35-րդ հոդվածը սահմանում է, որ «Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են րարեկան երկու անգամ՝ *սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչեւ դեկտեմբերի երկրորդ հինգշաբթին եւ փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչեւ հունիսի երկրորդ հինգշաբթին*: Ներթական նստաշրջանի չորսօրյա նիստերը սկսվում են նստաշրջանի բացման օրը»: Փաստորեն, ԱԺ կանոնակարգում պահպանվել է 1995 թվականի ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված նստաշրջանների եւ նիստերի անցկացման սկզբունքը՝ միայն մեկ րարբերությամբ, այն է՝ «դեկտեմբերի երկրորդ չորեքշաբթին» փոխվել է «դեկտեմբերի երկրորդ հինգշաբթի»-ով, իսկ «հունիսի երկրորդ չորեքշաբթին»՝ «հունիսի երկրորդ հինգշաբթի»-ով: Այս փոփոխությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ Ազգային ժողովի եռօրյա նիստերը փոխարինվել են չորսօրյա նիստերով:

Նաշվի առնելով նստաշրջանում օրենսդրական նախաձեռնությունների թիվը, դրանց քննարկման անհրաժեշտությունը՝ Ազգային ժողովը կարող է սահմանել նստաշրջանների գումարման ինչպես կայուն, այնպես էլ լրացուցիչ ժամկետներ: Ն Ազգային ժողովի կանոնակարգը սահմանում է պառլամենտի գործունեության, նստաշրջանների գումարման կարգն ու պայմանները, աշխատանքի ձեւերը, հրապարակային գործելաոճը եւ այլն:

Կանոնակարգի V գլուխը (34-46-րդ հոդվածներ) վերաբերում է Ազգային ժողովի նստաշրջաններին ու նիստերին եւ, մասնավորապես, սահմանում է.

- առաջին նստաշրջանի, հերթական նստաշրջանների եւ արտահերթ նստաշրջանի գումարման կարգերը,
- հերթական նստաշրջանի եւ չորսօրյա նիստերի օրակարգերի նախագծերը,
- հերթական նստաշրջանի եւ չորսօրյա նիստերի օրակարգերի քննարկման կարգը,
- արտահերթ նստաշրջանում հարցերի քննարկման կարգը,
- հատուկ նիստերի, դռնբաց եւ դռնփակ նիստերի գումարման կարգերը:

Կանոնակարգը նախատեսում է Ազգային ժողովի նիստում պարզամավորների գրանցման, նիստի վարման կարգերը, նիստերի սղագրումը:

Ըստ Կանոնակարգի 34-րդ հոդվածի՝ նորընտրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրության դեպքում՝ երկրորդ հինգշաբթի օրը՝ ժամը 10-ին, որի մասին հայտարարում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Նորընտրված խորհրդարանի առաջին նիստն առանձնահատուկ է եւ կրում է կազմակերպչական բնույթ: Կանոնակարգում ամրագրված են առաջին նստաշրջանի օրակարգը, անցկացման ժամկետը եւ կարգը: Ըստ այդմ, մինչեւ օրակարգի առաջին հինգ հարցերի սպառումը տեղի են ունենում ամենօրյա նիստեր, որոնք անցկացվում են ժամը 10-ից մինչեւ 18-ը՝ մեկուկես ժամ տևողությամբ նիստերով: Յուրաքանչյուր նիստից հետո հայտարարվում է կես ժամ ընդմիջում: Երկրորդ ընդմիջման տևողությունը մեկ ժամ է: Օրակարգի վերջին՝ Ն կառավարության ծրագրին հավանություն փայտ հարցի քննարկմանը նվիրված նիստի օրը հայտարարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե նա չի ընտրվել՝ նիստը վարողը:

Ներթական նստաշրջանները գումարվում են Ազգային ժողովի փոխալ գումարման ժամանակաշրջանում փասն անգամ՝ աշնանային եւ գարնանային նստաշրջանների ձեւով: Ներթական նստաշրջանների ընթացքում չորսօրյա նիստերն անցկացվում են սահմանված օրակարգով, ժամը 12-ից մինչեւ 18-ը՝ մեկուկես ժամ տևողությամբ նիստերով: ԱԺ նախագահը նիստերին նախորդող ուրբաթ օրը հանձնաժողովների նախագահների եւ խմբակցությունների ղեկավարների հետ խորհրդակցելով՝ կազմում է հերթական նստաշրջանի եւ չորսօրյա նիստերի օրակարգը: Ներթական նստաշրջանի օրակարգի նախագծում ընդգրկվում են սահմանված կարգով շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերը կամ նախագծերի փաթեթները, ԱԺ որոշումների նախագծերը եւ օրենքով նախատեսված այլ հարցեր: Ներթական նստաշրջանի օրակարգի, ինչպես նաեւ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը կազմված են երեք մասից.

ա) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է դրական եզրակացություն,

բ) հարցեր, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը դրական եզրակացություն չի ներկայացրել,

զ) պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր:

Կան նաեւ պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր, որոնք առանց հանձնաժողովների եզրակացության կամ առաջարկության անպայման տեղ են գտնում օրակարգում (Կանոնակարգի 36-րդ հոդվածի 3-րդ մաս): Այդ հարցերն են.

ա) Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված քննարկման ժամկետ ունեցող հարցերը,

բ) Հանրապետության Նախագահի հրաժարականի մասին հարցը,

գ) Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին հարցը,

դ) Հանրապետության Նախագահի առարկություններով եւ առաջարկություններով վերադարձված օրենքները քննարկելու մասին հարցերը,

ե) համաներում հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի առաջարկությունը,

զ) Ազգային ժողովի որոշմամբ քննարկման ժամկետ ունեցող հարցերը,

է) նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը,

ը) պարզամավորին ձերբակալելու, որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պարտախանարվության ենթարկելու հարց հարուցելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ հարցը,

թ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու հարցերը,

ժ) Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների եւ մշտական հանձնաժողովների նախագահների թափուր պաշտոններում ընտրությունների անցկացման մասին հարցերը,

ժա) Սահմանադրության համապատասխան (83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 103-րդ) հոդվածներով եւ օրենքով նախատեսված դեպքերում պաշտոններում ընտրությունների, նշանակումների, լիազորությունների դադարեցման (պաշտոնանկ անելու) մասին հարցերը,

ժբ) հարցապնդումների մասին հարցերը:

Որպես կանոն, հերթական նստաշրջանի առաջին նիստը, ինչպես նաեւ չորսօրյա նիստերն սկսվում են նստաշրջանի եւ ընթացիկ չորսօրյա նիստերի օրակարգերը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերի քննարկմամբ, որը զեկուցում է ԱԺ նախագահը կամ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Ներթական նստաշրջանի օրակարգը հաստատելու, դրանում լրացումներ կատարելու եւ չորսօրյա նիստերի օրակարգը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերը քննարկվում են առանձին-առանձին:

Չորսօրյա նիստերի ընթացքում նախատեսված է պարզամավորների հայտարարության ժամը՝ յուրաքանչյուր երեքշաբթի օրը, ժամը 17-ից: Պարզամավորները կարող են հանդես գալ մինչեւ 3 ռուպե տետոնությամբ հայտարարություններով՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային ցանկացած հարցի վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում նիստը վարողը կարող է նիստը երկարաձգել մինչեւ 30 ռուպետով (Կանոնակարգի 35-րդ հոդվածի 3-րդ մաս): Այսինքն՝ չորսօրյա նիստերի ընթացքում ժամուկես հարկացվում է պարզամավորներին՝ հրատարակելու կարելու հայտարարություններ անելու համար: Նիստը տեսագրվում է եւ կարող է ամբողջությամբ կամ հատվածաբար ցուցադրվել Հանրային հեռուստաընկերության եթերաժամերին:

ԱԺ-ի կողմից կառավարությանը վերահսկելու կարելու սկզբունք է ամրագրված

Սահմանադրությամբ, որը մանրամասնվում է Կանոնակարգում, այն է՝ հերթական նստաշրջանի յուրաքանչյուր չորսօրյա նիստերի չորեքշաբթի օրվա երկրորդ նիստում սահմանված կարգով քննարկվում են խմբակցությունների և պարզամավորական խմբերի հարցապնդումները, իսկ դրանց բացակայության կամ քննարկումն ավարտվելու դեպքում քննարկվում են օրակարգային այլ հարցեր: Նարցապնդումների համար ժամկետ սահմանելն էական է, քանի որ դրանով կարելի է հարցապնդումը, և հարկապես ընդդիմության հարցապնդումները չեն կարող արհեստականորեն հետաձգվել՝ օրակարգային այլ հարցեր քննարկելու պատրվակով:

Չորսօրյա նիստերի ընթացքում, բացի օրենքների, որոշումների նախագծեր քննարկելուց, անդրադարձ է կատարվում նաև մի շարք այլ խնդիրների: Նարկանշական է, որ հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում ՆՎ վարչապետը և ՆՎ կառավարության անդամները սահմանված կարգով պարասխանում են պարզամավորների հարցերին: Պաշտամենքում հարցուպարասխանի ինստիտուտը կարելի է, քանի որ այս կերպ եւս իրականացվում է ԱԺ-ի վերահսկողական գործառույթը ՆՎ կառավարության նկատմամբ: Եթե չորսօրյա նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի քննարկումը և քվեարկությունները չորսօրյա նիստերի համար սահմանված ժամկետից շուրջ են ավարտվում, ապա չորսօրյա նիստերն ավարտվում են օրակարգի վերջին հարցի քվեարկության ավարտից հետո: Օրենքով ոչ աշխատանքային՝ փոռական և հիշատակի օրերին հերթական նստաշրջանի նիստեր չեն անցկացվում: Այդ օրերը հանվում են Կանոնակարգով սահմանված ժամկետների հաշվարկից, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի:

2. ՆՎ օրենսդիր մարմինն աշխատում է հրապարակայնության սկզբունքով, գումարում է դռնբաց նիստեր, որոնք փեսագրվում են, ձայնագրվում ու սղագրվում: ՆՎ ԱԺ նիստերը սահմանված կարգով լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցներով: Նման պրակտիկա է ձեռավորվել նաև այլ երկրների պաշտամենքներում:

Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի կանոնակարգի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դռնփակ նիստի բովանդակության մասին պաշտոնական հաղորդագրությունից բացի այլ տեղեկությունների փարածումը հետապնդվում է օրենքով: Ի փարբերություն դռնբաց նիստի, դռնփակ նիստում քվեարկությունն արգելվում է: Դռնփակ նիստի ընթացքում արգելվում է դահլիճ բերել և օգտագործել ֆոտոտեխնիկա, կինոտեխնիկա և տեսափախնիկա, ռադիոկապի և հեռախոսակապի, ինչպես նաև ձայնագրման և տեղեկատվության մշակման միջոցներ, բացառությամբ դահլիճում տեղադրված հեռախոսի: Դռնփակ նիստի սղագրությունը պահվում է զաղտնի փաստաթղթերի պահպանման ռեժիմով: Այդպիսի նիստերում, բացի պարզամավորներից, իրավունք ունեն ներկա գտնվելու Նանրապետության Նախագահը, նրա լիազորած ներկայացուցիչը, ՆՎ վարչապետը, նրա լիազորած ներկայացուցիչը, Սահմանադրական դատարանի նախագահը, ՆՎ կառավարության անդամները, Նայաստանի Նանրապետության գլխավոր դատախազը, Նայաստանի Նանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկի նախագահը, ՆՎ վերահսկիչ պալատի նախագահը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա կողմից սահմանված ցանկով նիստի սպասարկումն ապահովող աշխատակիցները, ինչպես նաև նիստը վարողի հրավիրած անձինք: Իսկ դռնբաց նիստում, բացի նշված անձանցից, կարող են ներկա գտնվել նաև ԱԺ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների խորհրդա-

կաններն ու օգնականները, ԱԺ մշտական հանձնաժողովների, խմբակցությունների և պարզամավորական խմբերի փորձագետները (մասնագետները), Ազգային ժողովում հավաքարմագրված լրագրողները, ԱԺ աշխատակազմի ղեկավարի սահմանած ցանկով նիստի լուսաբանումն ապահովող աշխատակիցները, ինչպես նաև նիստը վարողի և քննարկվող հարցի գլխադասային հանձնաժողովի հրավիրած անձինք:

Նանրապետության Նախագահի, նրա լիազորած ներկայացուցչի, ՏՎ վարչապետի, Սահմանադրական դատարանի նախագահի, ՏՏ կառավարության անդամների, ՏՏ վերահսկիչ պալատի նախագահի և հրավիրված անձանց համար Ազգային ժողովի նիստերի դահլիճում առանձնացվում են հատուկ տեղեր:

Նիստի ժամանակ դահլիճում կարող են բաժանվել միայն օրակարգում ընդգրկված հարցերի նախագծերը և դրանց հետ ներկայացված փաստաթղթերը:

Կանոնակարգի 43-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նիստի ժամանակ դահլիճում արգելվում է բջջային և կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ դահլիճում տեղադրված հեռախոսի:

Այսպիսով, Ազգային ժողովի դռնբաց և դռնփակ նիստերի ընթացքում պետք է ստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները՝ օրենսդիր մարմնի անխոչընդոտ և արդյունավետ աշխատանքի համար:

ՆՈՂՎԱԾ 70

Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Նանրապետության Նախագահի, պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

Մեկնաբանվող հոդվածն Ազգային ժողովի նստաշրջանների գումարման մասով թղթակցում է Սահմանադրության 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի հետ:

Ազգային ժողովի՝ նստաշրջանային կարգով գործունեության կազմակերպումն ունի կարեւոր նշանակություն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց նստաշրջանների հրավիրման գործընթացի առկայությունը՝ ինչպես նստաշրջանների գումարման պարբերականության տեսանկյունից, այնպես էլ դրանց անցկացման ժամկետների հստակ ամրագրման առումով, դիտարկվում է որպես օրենսդիր մարմնի կանոնավոր գործունեության ապահովման կարեւորագույն երաշխիք:

Սահմանադրությունը՝ 69-րդ և 70-րդ հոդվածներում ամրագրված նորմերի պահանջներով պայմանավորված, նախատեսում է արտահերթ նստաշրջաններ գումարելու և արտահերթ նիստեր անցկացնելու հնարավորություն:

Ընդ որում, «արտահերթ նստաշրջան» և «արտահերթ նիստ» հասկացությունների սահմանումն անհրաժեշտ է ուղղակիորեն պայմանավորել հերթական նստաշրջանին և հերթական նիստերին ժամանակային առումով ներկայացվող պայմանների առկայությամբ:

Այսպես, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ հերթական նստաշրջանները գումարվում են փարեկան երկու անգամ՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչև դեկտեմբերի երկրորդ

հինգշաբթին եւ փեքրվարի առաջին երկուշաբթի օրից մինչեւ հունիսի երկրորդ հինգշաբթին, եւ անցկացվում են երեք շաբաթը մեկ գումարվող չորսօրյա նիստերի միջոցով: Իսկ նույն օրենքի 39-րդ հոդվածի մաս 4-ի համաձայն՝ արտահերթ նստաշրջան չի կարող անցկացվել հերթական նստաշրջանի ընթացքում:

Միաժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հերթական նստաշրջաններն անցկացվում են երեք շաբաթը մեկ գումարվող չորսօրյա նիստերի միջոցով, որոնք րեղի են ունենում ժամը 12-ից մինչեւ 18-ը՝ մեկուկես ժամ քրեադրությամբ նիստերով: Իսկ նույն օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արտահերթ նիստն անցկացվում է հերթական նստաշրջանի ընթացքում, եւ չորսօրյա նիստերի օրը արտահերթ նիստ կարող է գումարվել ժամը 18.30-ից մինչեւ 24-ը:

Տիշյալ նորմերի բովանդակությունից հետեւում է, որ **արտահերթ նստաշրջանի** գումարման ժամանակահատվածը համընկնում է հունիսի երկրորդ ուրբաթ օրից մինչեւ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրը եւ դեկտեմբերի երկրորդ ուրբաթ օրից մինչեւ փեքրվարի առաջին երկուշաբթի օրն ընկած ժամանակաշրջանի հետ, իսկ արտահերթ նիստեր գումարվում են հերթական նստաշրջանի ընթացքում՝ չորսօրյա նիստերի հետ չհամընկնող ժամանակահատվածում:

Արտահերթ նստաշրջանը միջնստաշրջանային այն ժամանակահատվածն է, որը գումարվում է ըստ անհրաժեշտության, եւ որի ընթացքում անցկացվող նիստերի միջոցով Ազգային ժողովն իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավասությունը՝ այն նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում:

Ի փարբերություն արտահերթ նստաշրջանի՝ **արտահերթ նիստը** հերթական նստաշրջանի ընթացքում անցկացվող պարզամավորների այն համաժողովն է, որը գումարվում է Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան՝ ըստ անհրաժեշտության, այն նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում, եւ որի ընթացքում քննարկվում ու ընդունվում են որոշումներ Ազգային ժողովին վերապահված հարցերի առնչությամբ:

Ազգային ժողովի՝ որպես մշտական եւ ամենօրյա գործող օրենսդիր իշխանության մարմնի գործունեության նստաշրջանային կարգի իրավակարգավորումն ինչպես սահմանադրական մակարդակում, այնպես էլ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով, պայմանավորված է հետեւյալ առանձնահատկությամբ. եթե ե՛ր Սահմանադրությունը, ե՛ր Ազգային ժողովի կանոնակարգ օրենքն ուղղակիորեն ամրագրում են հերթական նստաշրջանների ու նիստերի գումարման պարբերականությունը եւ հստակ ժամկետները, ապա արտահերթ նստաշրջանների ու արտահերթ նիստերի մասով նախատեսվում է դրանց գումարման ու անցկացման միայն հնարավորությունը, եւ այն էլ՝ ըստ անհրաժեշտության, սակայն պայմանավորելով այն հանգամանքով, թե ով է այն նախաձեռնում:

Մեկնաբանվող հոդվածի առաջին նախադասությունում ամրագրված նորմի բովանդակությունից հետեւում է, որ արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնության իրավունքի տուբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության Նախագահը, պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը եւ կառավարությունը:

ՆՆ Սահմանադրության 56, 70 եւ 86-րդ հոդվածներում ամրագրված նորմերի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 41-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջներին համապատասխան՝ արտահերթ նստաշրջան կամ նիստ նախաձեռնելու իրավունքն իրականացվում է հետեւյալ փուլերով.

նախ՝ **նախաձեռնման փուլում** Հայաստանի Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր, իսկ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշում՝ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնության վերաբերյալ՝ սահմանելով արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգը եւ անցկացման ժամկետը: Պարզամավորների կողմից Ազգային ժողովի աշխարակազմից սրացված եւ սահմանված կարգով՝ առնվազն 44 պարզամավորների ստորագրություններով, նախապարաստվում է արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու վերաբերյալ համապարասխան ձեւաթուղթը, որում նշվում են արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգը եւ անցկացման ժամկետը:

Այնուհետեւ, **նախաձեռնության իրականացման փուլում** Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգն ու անցկացման ժամկետը սահմանող համապարասխան իրավական ակտը եւ օրակարգային հարցերի նախագծերը, Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ ՀՀ կառավարության կողմից ուղարկվում են Ազգային ժողովի նախագահին:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի պարզամավորների նախաձեռնությանը, ապա վերջիններին կողմից Ազգային ժողովի նախագահին են հանձնվում սրացման պահից 24 ժամվա ընթացքում անհրաժեշտ քանակի ստորագրություններով ձեւաթուղթը եւ օրակարգային հարցերի նախագծերը:

Նախաձեռնության իրականացման եզրափակիչ փուլում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի պահանջներին համապարասխան՝ Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշում Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու վերաբերյալ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում:

Սուբյեկտների կողմից արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնության իրավունքի իրացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը, որ Ազգային ժողովի կանոնակարգը՝ մի դեպքում բացառում է հերթական նստաշրջանի ընթացքում արտահերթ նստաշրջան անցկացնելու հնարավորությունը, քանի որ նման պարագայում իմաստագրվելում է հենց նստաշրջանի՝ հերթականի եւ արտահերթի տարբերակման գաղափարը («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ, մյուս կողմից՝ սահմանում է միայն հերթական նստաշրջանի ընթացքում արտահերթ նիստեր անցկացնելու հնարավորությունը, ինչը բխում է արտահերթ նիստերը հերթական նիստերից տարանջատելու տրամաբանությունից («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մաս):

Միաժամանակ, հիշյալ առումով, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը սահմանում է, որ արտահերթ նստաշրջանը համարվում է փակված հերթական նստաշրջանի գումարման օրը (39-րդ հոդվածի 5-րդ մաս), իսկ արտահերթ նիստը փակված է համարվում միայն օրակարգային հարցերի քննարկումն ավարտվելուց հետո (41-րդ հոդվածի 4-րդ մաս): Որպես կանոն, արտահերթ նստաշրջանը փակված է համարվում նաև օրակարգն ապառվելուց հետո կամ այն նախաձեռնողի առաջարկությամբ:

Ինչ վերաբերում է արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգից հեղինակի առաջարկությամբ հարցը հանելուն, ապա Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը նախատեսում է նաև օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի հեղինակի այդ իրավունքի իրացման հնարավորություն, ընդ որում, վերջինս իրավունք ունի այդ առաջարկությունն անելու ցանկացած ժամանակ, որն ընդունվում է առանց քվեարկության (40 եւ 41-րդ հոդվածներ):

Սահմանադրական իրավունքում՝ մեկնաբանվող հոդվածում ամրագրված նորմերի շրջանակում, հարկապես վերջին փաստանյակներում կարելուք նշանակություն է ստացել այն հանգամանքը, թե ում կողմից եւ ինչ կարգով կարող են գումարվել արտա-հերթ նստաշրջաններ կամ նիստեր:

Այսպես, 1995 թվականի հուլիսի 5-ի խմբագրությամբ ՆՏ Սահմանադրության 70-րդ հոդվածը սահմանում էր, որ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարում է Նանրապետության Նախագահը՝ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի մեծամասնության պահանջով արտահերթ նստաշրջանն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում: Արտահերթ նստաշրջանը չի կարող փետլ վեց օրից ավելի: Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ կառավարության կամ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստն անցկացվում է նախա-ձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում:

Նարկ է նշել, որ շար երկրներում դեռես պահպանվում է այն պրակտիկան, երբ խորհրդարանների արտահերթ նստաշրջանների գումարումն իրականացվում է պետու-թյան ղեկավարի կամ կառավարության որոշումների համաձայն: Այսպես, օրինակ, Ճա-պոնիայի Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանի «արտա-կարգ» (այսինքն՝ արտահերթ) նստաշրջանի գումարման մասին որոշումն ընդունում է Նախարարների կաբինետը՝ խորհրդարանի որեւէ պալատի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ բառորդի նախաձեռնությամբ:

Ֆիլիպինյան Սահմանադրության VI հոդվածի 15-րդ բաժնի երկրորդ առաջար-կությանը համապարասխան՝ Կոնգրեսի «հարուկ» (այսինքն՝ արտահերթ) նստաշր-ջաններ գումարվում են միայն երկրի Նախագահի կողմից:

Պետության ղեկավարի կողմից խորհրդարանի արտահերթ նստաշրջաններ են գումարվում նաեւ Ֆրանսիայում՝ երկրի վարչապետի կամ Ազգային ժողովի մեծամաս-նության պահանջով (Սահմանադրության 29 եւ 30-րդ հոդվածներ): Չնայած հիշյալ հան-գամանքին, Ֆրանսիայի Սահմանադրության 16-րդ հոդվածով նախաբեսվում է նաեւ խորհրդարանի կողմից՝ առանց Նախագահի համապարասխան ղեկրետի, նստաշրջա-նի ինքնակամ գումարում՝ միայն երկրի Նախագահի կողմից արտակարգ միջոցառումնե-րի իրականացման ժամանակ:

Այնուամենայնիվ, պետության ղեկավարի կամ կառավարության որոշումների հի-ման վրա խորհրդարանի արտահերթ նստաշրջանների կամ նիստերի գումարման բնա-գավառում միջազգային փորձը վկայում է խորհրդարանների գործունեության ժամանա-կաշրջանը սահմանափակելու՝ գործադիր իշխանության մարմինների ձգտումների մա-սին: Որպես կանոն, այդպիսի սահմանափակումները հնարավորություն են փալիս վեր-ջիններիս որոշակի ժամանակահատվածում խուսափել պառլամենտական վերահսկո-ղությունից կամ ուղղակի ընդլայնել իրենց իրավաստեղծ գործունեության շրջանակնե-րը հարկապես միջնստաշրջանային ժամանակահատվածում:

Ներկա ժամանակաշրջանում առանձին երկրներում իրականացվող սահմանա-դրական բարեփոխումների արդյունքում այդ միտումը շարունակում է թուլանալ, եւ շար խորհրդարաններում, այդ թվում՝ Նայասրանի Նանրապետությունում, արտահերթ նստաշրջաններն արդեն գումարվում են խորհրդարանների նախագահների կողմից:

Սահմանադրաիրավական կարգավորման բնագավառում առանձին պետություն-ների խորհրդարանների գործունեությունում արտահերթ նստաշրջանի ինստիտուտը բա-

ցակայում է կամ այն, որպես կանոն, փոխարինում է արտահերթ նիստերին: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կանոնակարգը սահմանում է, որ արտահերթ նիստ գումարվում է Պետական դումայի խորհրդի կողմից՝ ՌԴ Նախագահի առաջարկությամբ կամ Պետական դումայի պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի նախաձեռնությամբ (14-րդ հոդված), ընդ որում, այդպիսի նիստեր կարող են գումարվել նաև՝ «խորհրդարանական արձակուրդների» ժամանակ, այսինքն՝ Պետական դումայի նախաշրջանների հետ չհամընկնող ժամանակահատվածում:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքներով պայմանավորված՝ շարքերկրների խորհրդարանական պրակտիկայում նախաշրջաններն սկսեցին զբաղեցնել ամբողջ տարին, բացառելով արտահերթ նախաշրջանների գումարման հնարավորությունը, ինչի արդյունքում «նախաշրջան» կամ «արտահերթ նախաշրջան» հասկացություններն ընդհանրապես դուրս են մղվել պառլամենտական իրավունքից՝ դրանով ազդարարելով, որ խորհրդարանն աշխատում է մշտական հիմունքներով, եւ հենց խորհրդարանի նախագահը կարող է խորհրդարանի աշխատանքներում սահմանել ընդմիջումներ, այդ թվում՝ խորհրդարանական արձակուրդներ:

Առանց արտահերթ նախաշրջանների գումարման՝ խորհրդարանի մշտական ու անընդհար գործունեության սահմանադրորեն ամրագրման օրինակ կարող է համարվել Մակեդոնիայի Սահմանադրության 66-րդ հոդվածում սահմանված դրույթն առ այն, որ «Մակեդոնիայի ժողովը գտնվում է մշտական նախաշրջանում»:

Նույնաբովանդակ դրույթ բովանդակում է Սլովակիայի Սահմանադրությունը (82-րդ հոդվածի 1-ին մաս), որը միաժամանակ հռչակում է, որ միայն խորհրդարանն իր որոշմամբ կարող է ընդհատել նախաշրջանի աշխատանքները՝ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 4 ամիս ժամկետով (82-րդ հոդվածի 3-րդ մաս):

Իսպանիայում եւ Պորտուգալիայում խորհրդարաններում սրեղծվում են, այսպես կոչված՝ «Փոքր խորհրդարաններ», որոնք միջնախաշրջանային ժամանակաշրջանում փոխարինելով խորհրդարանին՝ ապահովում են վերջինիս անընդհար աշխատանքը ամբողջ տարվա ընթացքում:

Անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ առանձին երկրներում «նախաշրջան» հասկացության մասին խոսք ընդհանրապես չկա (Ավստրիա, Գերմանիայի Դաշնային Նախապետություն եւ այլն), իսկ խորհրդարանի նախագահը գումարում է նիստեր, այդ թվում՝ արտահերթ նիստեր, ըստ անհրաժեշտության՝ նիստերին քննարկվող հարցերի նախապարտավորվածության աստիճանից ելնելով: Եվ նման դեպքերում «նախաշրջան» հասկացությունը երբեմն նույնացվում է «նիստեր» հասկացության հետ, ինչն արդարացված չէ, քանի որ դրանք, ինչպես արդեն նշվեց, տարբեր բովանդակություն եւ նշանակություն ունեցող հասկացություններ են:

ՆՈՂՎԱԾ 71

Օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

ՆՏ Սահմանադրության 71-րդ հոդվածը սահմանում է Ազգային ժողովի կողմից օրենքների եւ որոշումների ընդունման կարգը²²:

Օրենսդրական գործընթացի փուլերն են՝ ա) օրինագծի նախապարաստման, բ) օրինագծի քննարկման, գ) օրինագծի ընդունման, դ) օրենքի ստորագրման եւ հրապարակման փուլերը:

Օրենսդրական գործընթացի երրորդ փուլն ընդգրկում է օրենքների ընդունման բուն արարողակարգը: Կոլեգիալ ներկայացուցչական այնպիսի մարմնի, ինչպիսին է Ազգային ժողովը, առանձնահատկությունը քվեարկության միջոցով որոշում ընդունելն է: Քվեարկությունը համարվում է կոլեգիալ որոշումների ընդունման առավել ժողովրդավարական եղանակ, քանի որ քվեարկության արդյունքում բացահայտվում է քննարկվող հարցի վերաբերյալ մեծամասնության դիրքորոշումը, իսկ ժողովրդավարության պահանջներից է բխում այն, որ մեծամասնության կարծիքը գերակա է փոքրամասնության կարծիքի նկատմամբ եւ պարտադիր է բոլոր քաղաքացիների համար:

Օրենքների եւ Ազգային ժողովի որոշումների ընդունման ընթացակարգը սահմանված է 2002թ. փետրվարի 20-ին ընդունված՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՃ օրենքով:

Վերոհիշյալ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի քվեարկությանը կարող են դրվել միայն քննարկումից առնվազն մեկ ժամ առաջ պատգամավորներին բաժանված եւ սահմանված կարգով քննարկված նախագծերի տեքստերը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում է քվեարկության 2 եղանակ՝ բաց եւ գաղտնի: Օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, որպես կանոն, ընդունվում են բաց քվեարկությամբ: Սակայն ԱԺ կանոնակարգով նախատեսված դեպքերում գաղտնի քվեարկությամբ են ընդունվում Ազգային ժողովի հետեւյալ որոշումները. Վանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին, Ազգային ժողովի կողմից պաշտոնում ընտրությունը, նշանակումը, ինչպես նաեւ պաշտոնաթար անձի հրաժարականն ընդունելու եւ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (պաշտոնանկ անելու), պատգամավորին ձերբակալելու, որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համաձայնություն փախու մասին որոշումները:

²² Օրենսդրական գործընթացը բաղկացած է հաջորդական փուլերից, որոնք օրենքի ստեղծմանն ուղղված փոխկապակցված առանձին ընթացակարգային գործողությունների համակարգ են: Օրենսդրական գործընթացի փուլերը հարաբերականորեն ավարտուն փուլեր են, որոնցից յուրաքանչյուրի բովանդակությունն այնպես է կանոնակարգված, որ դրա բոլոր բաղադրիչների իրագործումից հետո միայն կարելի է անցնել հաջորդ փուլին: Փաստորեն, օրենսդրական գործընթացի փուլի ավարտը վկայում է այն մասին, որ օրենքի ստեղծման աշխատանքն անցնում է նոր, ինքնուրույն աստիճանի:

Բաց քվեարկությունն իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ, էլեկտրոնային համակարգով՝ 10 վայրկյանի ընթացքում: Նամակարգը չգործելու դեպքում ձայները հաշվում է հաշվիչ հանձնաժողովը: Ինչ վերաբերում է գաղտնի քվեարկությանը, ապա այն կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովը՝ ըստ նիստին ներկա պարզամավորների ցուցակի, որն սրանում է ԱԺ աշխարակազմից: Պարզամավորներին հանձնվում են հաշվիչ հանձնաժողովի սահմանած ձեռով եւ քանակով պարաստված քվեաթերթիկները, որոնք պարզամավորները լրացնում են գաղտնի քվեարկության խցիկում: Քվեարկության ավարտից հետո՝ 30 րոպեի ընթացքում հաշվիչ հանձնաժողովը բացում է գաղտնի քվեարկության փուլը եւ հաշվում ձայները: Գաղտնի քվեարկության արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի անդամները:

Պարզամավորը պարտավոր է քվեարկել անձամբ՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ», կամ կարող է օրենքով նախատեսված կարգով հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց: Պարզամավորին արգելվում է ձայնի իրավունքի փոխանցումն այլ պարզամավորի: Նշենք, որ օրենսդրությունը պարտավորեցնում է պարզամավորին մասնակցել քվեարկությանը, քանզի ՆՏ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ պարզամավորի կողմից մեկ հերթական նախաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելին անհարգելի բացակայելը կարող է հիմք դառնալ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման համար:

Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, որպես կանոն, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Վերոհիշյալ սահմանադրական նորմն ամրագրում է ինչպես օրենքների եւ որոշումների ընդունման համար պահանջվող ձայների նվազագույն քանակը՝ պարզ մեծամասնությունը, անյաես էլ քվորումի ինստիտուտը:

Մեծ թվով պետությունների օրենսդրություններն իշխանության ներկայացուցչական մարմինների կողմից որոշում կայացնելու համար քվեարկության այս կամ այն տեսակը նախատեսելով՝ սահմանում են նաեւ քվորումի ինստիտուտը: Քվորումը իրավաբանորեն սահմանված բարձրագույն ներկայացուցչական մարմնի պարզամավորների այն թվաքանակն է, որի առկայության դեպքում մարմինը կհամարվի իրավասու: Քվորումի հիմնական նշանակությունն այն է, որ գոնե տեսականորեն ապահովվի այնպիսի իրավիճակ, որի պարագայում խորհրդարանի այս կամ այն որոշումն ընդունվի բավարար մեծաքանակ ձայներով²³:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ նախատեսվում է քվորումի երեք տեսակ՝ ա) բարձրագույն եւ օրենսդրական մարմնի նիստի բացման համար քվորում, բ) բարձրագույն օրենսդրական մարմնում նիստ անցկացնելու համար քվորում, գ) բարձրագույն օրենսդրական մարմնի կողմից օրենքներ եւ որոշումներ ընդունելու համար քվորում:

ՆՏ Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի նիստը (համապարասխանաբար՝ եւ քվեարկությունը) համարվում է իրավասու, եթե նիստին ներկա է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Ընդ որում, քվորումի հաշվարկման համար հիմք է ծառայում ԱԺ պարզամավորների՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված թիվը, այլ ոչ թե խորհրդարանի փաստացի թվաքանակը:

²³ Տե՛ս **Ковачев Д. А.** Законодательный процесс в европейских социалистических государствах. "Юридическая литература", М., 1966, էջ 33:

Եթե ակտի ընդունման օրինականության համար առաջին պարտադիր պայմանը քվորումի առկայությունն է, ապա երկրորդ կարևոր հանգամանքը ներկայացված նախագծի օգտին սահմանված ձայների քանակի առկայությունն է: Ինչպես արդեն նշվեց, սովորաբար օրենքները եւ որոշումներն ընդունված են համարվում, եթե դրանց օգտին քվեարկել է պարզամավորների պարզ մեծամասնությունը: Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության նշված նորմը նախատեսում է բացառություններ այդ ընդհանուր կանոնից, երբ Ազգային ժողովի կողմից առանձին հարցերի վերաբերյալ օրենքներ եւ որոշումներ ընդունելու համար պահանջվում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների պարզ կամ որակյալ մեծամասնությունը:

Այսպես, Հանրապետության Նախագահի վերոյի հաղթահարման (հոդվ. 72), կառավարության գործունեության ծրագրին հավանություն փախու կապակցությամբ կառավարության վարահության քվեի հարցի լուծման (հոդվ. 74), պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների ընդունման (հոդվ. 75, մաս 3), Ազգային ժողովի նախագահի ընտրության (հոդվ. 79, մաս 1), Ազգային ժողովի կողմից նշանակված սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարեցման (հոդվ. 83, կեր 3), կառավարությանն անվարահություն հայտնելու (հոդվ. 84) եւ հանրաքվե նշանակելու առաջարկության (հոդվ. 111) ընդունման համար պահանջվում է Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների պարզ (կեսից ավելի) մեծամասնությունը: Մինչդեռ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու (հոդվ. 57) եւ նրա կողմից իր լիազորությունների կարարման անհնարիւնության մասին որոշում ընդունելու (հոդվ. 59) կապակցությամբ պահանջվում է ԱԺ պարզամավորների ընդհանուր թվի ձայների որակյալ (երկու երրորդ) մեծամասնությունը:

ՆՈՂՎԱԾ 72

1. Հանրապետության Նախագահի առարկությունները եւ առաջարկությունները չընդունելու դեպքում Ազգային ժողովը վերադարձված օրենքը վերադին ընդունում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2. Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում է արարահերթ:

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կերի՝ Հանրապետության Նախագահն Ազգային ժողովի ընդունած օրենքն սրանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում եւ հրապարակում է այն: Խորհրդարանից սրանալով օրենքը՝ Նախագահը քսանմեկօրյա ժամկետում կարող է ստորագրել կամ չստորագրել այն եւ, օգտագործելով վերոյի իր իրավունքը, կասեցնել դրա ուժի մեջ մտնելը եւ վերադարձնել օրենքը նոր քննարկման իր դիտողություններով հանդերձ: Ընդ որում, Հանրապետության Նախագահը կարող է առարկել ինչպես օրենքի ողջ տեքստի, այնպես էլ դրա առանձին դրույթների դեմ՝ ներկայացնելով դրանց իր համար ընդունելի փարբերակը կամ ընդհանրապես չհիմնավորված համարել ներկայացված օրենքի ընդունման անհրաժեարությունը:

Օրենքի վավերացումը մերժելուց հետո Հանրապետության Նախագահն այն վերադարձնում է խորհրդարան, վերջինս էլ կարող է կամ ընդունել պետության գլխի ա-

առարկությունները եւ օրենքում կապարել համապատասխան փոփոխություններ, կան մերժել դրանք, որի համար անհրաժեշտ է օրենքի կրկնակի հաստատում:

Կախված Նախագահի վերոյի՝ խորհրդարանի կողմից հաղթահարման գործընթացի բարդությունից՝ խորհրդարանական պրակտիկայում ընդունված է առանձնացնել վերոյի երկու տեսակ՝ «ուժեղ» եւ «թույլ»: Ուժեղ վերոյի դեպքում պահանջվում է պարզամտվորների ձայների որակյալ մեծամասնություն, իսկ «թույլ» վերոյի դեպքում պարզամտվորների ձայների պարզ կամ բացարձակ մեծամասնություն:

ՏՏ-ում Նախագահին տրված է «թույլ» վերոյի իրավունքը, քանզի ՏՏ Սահմանադրության 72-րդ հոդվածը Հանրապետության Նախագահի վերոյի հաղթահարման համար նախատեսում է պարզամտվորների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն:

Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքն Ազգային ժողովում քննարկելու եւ Նախագահի վերոն հաղթահարելու ընթացակարգը սահմանված է 2002թ. փետրվարի 20-ին ընդունված՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքով: Համաձայն Աժ կանոնակարգի 73-րդ հոդվածի՝ Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքն առանց քվեարկության ընդգրկվում է Աժ հերթական նստաշրջանի եւ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում եւ քննարկվում արտահերթ: Ազգային ժողովի նախագահը Հանրապետության Նախագահի առարկություններով կամ առաջարկություններով վերադարձված օրենքը 24 ժամվա ընթացքում ուղարկում է համապատասխան գլխադասային հանձնաժողով՝ դրա վերաբերյալ եզրակացություն ստանալու համար: Գլխադասային հանձնաժողովն իր եզրակացությունն Աժ նախագահին է ներկայացնում հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերի առաջին նիստից առնվազն 2 ժամ առաջ:

Եթե Հանրապետության Նախագահն ամբողջությամբ չի առարկել օրենքի ընդունմանը, ապա նրա առարկություններով եւ (կամ) առաջարկություններով վերադարձված օրենքը քննարկվում է Աժ կանոնակարգի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Վերադարձված օրենքի քննարկման գործընթացն սկսվում է Հանրապետության Նախագահի ներկայացուցչի ելույթով, որը տվյալ հարցով համարվում է հիմնական զեկուցող: Ելույթից հետո նրան տրվում են հարցեր: Այս փուլին հաջորդում է հարակից զեկուցողի՝ գլխադասային հանձնաժողովի ներկայացուցչի ելույթը, որին նույնպես տրվում են հարցեր: Հիմնական զեկուցողի եւ հարակից զեկուցողի ելույթներին հաջորդում է մյքբերի փոխանակության փուլը, որի ընթացքում պարզամտվորներն իրավունք ունեն կարծիք հայտնելու միայն Նախագահի առաջարկությունների վերաբերյալ: Մյքբերի փոխանակությանը հաջորդում են գլխադասային հանձնաժողովի եւ Հանրապետության Նախագահի ներկայացուցիչների եզրափակիչ ելույթները: Եզրափակիչ ելույթում Հանրապետության Նախագահի ներկայացուցիչն Ազգային ժողովին առաջարկում է ընդունել օրենքը՝ Հանրապետության Նախագահի համար ընդունելի տեսքով: Եթե Հանրապետության Նախագահն առարկել է օրենքի ընդունմանը, ապա քվեարկության է դրվում Հանրապետության Նախագահի այդ առարկությունն ընդունելու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներով հնարավոր է երկու տարբերակ: Խորհրդարանն ընդունում է առարկությունը կամ առաջարկությունը: Այս դեպքում անհրաժեշտ է մեկնաբանել-պարզաբանել, թե խորհրդարանը նորից ամբողջապես քվեարկում է օրենքը, թե ոչ:

Հանրապետության Նախագահի առարկություններն ու առաջարկությունները չընդունելու դեպքում Ազգային ժողով վերադարձված օրենքը ենթակա է վերստին ընդունման, այսինքն՝ վերաքվեարկության, որի քվորումը, այսինքն՝ օրենքի ընդունումը պետք է կատարվի պարզամտվորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այլ ոչ թե

71-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենքների, այսպես կոչված, առաջին ընդունման ժամանակ բավարար է նիստին ներկա պատգամավորների ձայների պարզ մեծամասնությունը (եթե դա ֆինանսական բնույթի օրենք չէ), իսկ վերադարձված օրենքի ընդունման համար անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

Կարծում ենք, որ Նայաստրանն ընկրել է վերոյի հաղթահարման առավել արդյունավետ փորձերակ, քանի որ ԱՊՏ շարք երկրների օրինակով չի նախընտրել հաղթահարման համար պահանջվող որակյալ մեծամասնության փորձերակը, որը, ըստ էության, Նախագահի վերոն դարձնում է անհաղթահարելի: Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ նախագահական վերոյի իրավունքը ռազմավարական գեներ է, այլ ոչ մարտավարական: Ինչպես միջազգային փորձն է ցույց տալիս, այն չպետք է չարաշահել, բայց միշտ պետք է պահել «ռազմական պատրաստության» վիճակում: Նախագահի կողմից վերոյի հաճախակի կիրառումը զայրացնում է մյուս կողմին (խորհրդարանին), «ժամացույցի սլաքները» համագործակցության հարթությունից փեղափոխում է հակադարձ ուղղությունների ընդունման դաշտ, ինչն օրենսդրական գործընթացին ոչ մի օգուտ չի բերի: Արդյունքում, արդեն ընդունված օրենքների արգելադրման համար պատասխանաբարությունը կարող է ընկնել Նախագահի վրա: Չէ՞ որ օրենքը չստորագրելու համար ձեռնարկ հիմնավորումներ միշտ էլ կգտնվեն: Իսկ իշխանության բարձրագույն մարմինների միջև սառը պատերազմի իրավիճակը պետական գործերի կառավարման եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացման լավագույն եղանակը չէ²⁴:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը սահմանում է կոնկրետ դրույթ՝ առանձնացնելով ՆՆ Նախագահի առարկություններն Ազգային ժողովում արտահերթ քննարկելու անհրաժեշտությունը: Դա պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունումն արդեն իսկ խթանում է որոշակի հանրային սպասելիքներ եւ փարաբնույթ գործելակերպի խթան է հանդիսանում: Օրենքն ուժի մեջ մտնելու գործընթացի ձգձգումը կամ անորոշությունն անխուսափելի բացասական հետեւանքներ կունենան: Իրավական պետությանը բնորոշ հատկանիշ է, որ օրինաբարեղծ գործունեության մեջ հակակշռող լիազորությունների գործադրումը չպետք է անհարկի ձգձգումների փեղիք փառ իտջընդոտի իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորմանը:

²⁴ Տե՛ս **Окуньков Л. А., Роцин В. А.** “Вето Президента”. “Городец. Формула права” Һршр., Մ., 1999, էջ 101:

ՆՈՂ-ՎԱԾ 73

1. Ազգային ժողովում կարող է սրեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

2. Մշտական հանձնաժողովներն սրեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի նախնական քննարկման եւ դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար:

3. Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված կարգով կարող են սրեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի հարցերի, իրադարձությունների եւ փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

1. Խիստ կարեւոր է մշտական եւ ժամանակավոր հանձնաժողովների՝ որպես Ազգային ժողովի մարմինների, գործունեությունը: 1995 թվականի ՏՏ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում գործում էին վեց մշտական հանձնաժողովներ: Օրենսդիր մարմնի գործունեության փորձը վկայում է, որ վեց մշտական հանձնաժողովները բավարար չէին, քանի որ նորանկախ պետության խորհրդարանում օրենսդրական նախաձեռնությունները մեծաթիվ էին: Յուրաքանչյուր հանձնաժողով ծանրաբեռնված էր բազմաբնույթ հարցերով, ինչը չէր նպաստում հանձնաժողովի գործունեության արդյունավետությանը: Մինչ 1995 թվականի ՏՏ Սահմանադրության ընդունումը Գերագույն խորհրդում գործում էին տասնվեց մշտական հանձնաժողովներ, եւ այն ժամանակ առավել ուղղորդված էին դրանց աշխատանքներն ու որոշակի էր լիազորությունների շրջանակը: «ՏՏ Գերագույն խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նստաշրջանի, նիստերի, նախագահության, մշտական եւ այլ հանձնաժողովների միջոցով»²⁵: Օրենքում հանձնաժողովների թիվն ամրագրված չէր, եւ այդ մասին որոշումը թողնված էր Գերագույն խորհրդին, որն էլ, նպատակահարմարությունից ելնելով, սահմանել էր տասնվեց մշտական հանձնաժողով:

2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո նախատեսվել է մինչեւ տասներկու մշտական հանձնաժողովի սրեղծման հնարավորություն, ինչն ամբողջապես իրականացրել է Ազգային ժողովը:

ՏՏ Ազգային ժողովի հանձնաժողովների կազմավորման, գործունեության, նիստերի անցկացման, որոշումների ընդունման կարգը սահմանված է կանոնակարգի 4-րդ գլխում՝ «Ազգային ժողովի հանձնաժողովները» վերաբառությամբ:

Այժմ ՏՏ Ազգային ժողովում գործում են տասներկու մշտական հանձնաժողովներ եւ դրանց գործունեության ոլորտներն են՝

- **Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողով**՝ առողջապահություն, մայրություն եւ մանկություն,
- **Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով**՝ միջազգային պայմանագրեր, միջազգային հարաբերություններ եւ միջխորհրդարանական կապեր,

²⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 189:

• **Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով**՝ գիտություն, կրթություն, հրապարակչական գործ, մշակույթ, սփյուռքի հետ կապեր, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, երիտասարդություն, սպորտ,

• **Գյուղատնտեսական եւ բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողով**՝ գյուղատնտեսություն, բնական պաշարներ, բնության պահպանություն,

• **Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով**՝ Եվրոպական Միության եւ Եվրախորհրդի հետ կապեր, Նայաստանի Նանրապետության եւ Եվրոպական օրենսդրության ներդաշնակեցում,

• **Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողով**՝ մարդու եւ քաղաքացու իրավունքներ եւ ազատություններ, փաստաբանական եւ նոտարական ծառայություններ, երեխայի իրավունքներ, կուսակցություններ եւ այլ հասարակական միավորումներ, կրոն, գենդերային հարցեր, ազգային փառամասնություններ, տեղեկատվություն,

• **Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողով**՝ պաշտպանություն, անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն, ռազմաարդյունաբերական համալիր, ռազմական ուսումնական հաստատություններ, զինվորական եւ ոստիկանական ծառայություններ,

• **Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով**՝ սահմանադրական փոփոխություններ, ընտրական համակարգ, հանրային ծառայություն, դատարանակազմություն, արդարադատություն, դատախազություն, քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրություն, Ազգային ժողովի կանոնակարգ,

• **Սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով**՝ սոցիալական ապահովության, հաշմանդամության հիմնահարցեր, աշխատանք, զբաղվածություն, բնակարանային պայմաններ, ժողովրդագրություն եւ հայրենադարձություն,

• **Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողով**՝ տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, տարածքային զարգացում, համայնքային ծառայություն, տեղական հարկեր, տուրքեր եւ վճարներ,

• **Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով**՝ հարկեր, տուրքեր, վճարներ, արդյունաբերություն, քաղաքաշինություն, էներգետիկա, տրանսպորտ, կապ եւ հեռահաղորդակցություն, արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առեփուր եւ ծառայություններ, ձեռնարկատիրական գործունեություն, պետական գույքի կառավարում,

• **Ֆինանսավարկային եւ բյուջեարային հարցերի մշտական հանձնաժողով**՝ բյուջեարային օրենսդրություն, պետական բյուջե, փոխառություններ, վարկեր, դրամաշրջանառություն, բանկային համակարգ, ֆինանսավարկային կազմակերպություններ:

Թերեւս, առավել ճիշտ կլիներ, եթե մշտական հանձնաժողովների թիվն ընդհանրապես տեղ չգտներ **ՆՏ** Սահմանադրության մեջ, ինչպես արեւմտյան շատ երկրներում:

Նկատենք, որ **ՆՏ** հիմնական օրենքը չի սահմանում կառավարության կառուցվածքը կամ նախարարությունների քանակը՝ այդ հարցի լուծումը թողնելով օրենքին: Աշխարհում կան այլ մոտեցումներ եւս. օրինակ, Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի հանձնաժողովների անունները եւ թիվը համընկնում են գործող նախարարությունների հետ:

2. ՏՏ Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները ձևավորվում են նորընտրյալ խորհրդարանի առաջին նստաշրջանում և իրականացնում են օրենսդրությամբ իրենց վերապահված գործառնություններ, այն է՝ օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկումներն ու դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելը: Այլ երկրներում խորհրդարանական հանձնաժողովներն ու կոմիտեներն ավելի լայն լիազորություններով են օժտված: Այսպես, Իսրայիլայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի խորհրդարաններում հանձնաժողովներն ունեն օրենսդրական նախաձեռնության իրավունք, ընդունում են օրենքներ, վերջնական որոշումներ²⁶: Ռուսաստանի Դաշնության խորհրդարանում մշտական հանձնաժողովները կարող են հարցում պարբերաբար և դիմել Սահմանադրական դատարան: Բուլղարիայի Ժողովրդական ժողովի մշտական հանձնաժողովները ցանկացած ժամանակ կարող են նախարարներին հրավիրել հանձնաժողովի նիստերին, հարցերի միջոցով պարասխան պահանջել իրենց հեղափոխությունների, իրադարձությունների վերաբերյալ (Սահմանադրության 83-րդ հոդված)²⁷: Կան երկրներ, որտեղ պառլամենտական վերահսկողության կարեւոր մասն է կազմում հանձնաժողովների կողմից վերահսկողությունն օրենքների կատարման նկատմամբ:

ՏՏ օրենսդիր մարմնում յուրաքանչյուր մշտական հանձնաժողով ունի իր կանոնակարգը, որը հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

Նայաստանի Նանրապետության օրենսդիր մարմնում հանձնաժողովների կազմավորման կարգը սահմանվում է Կանոնակարգով: Խմբակցությունը, անկախ դրանում ընդգրկված պարզամավորների թվից, ունի յուրաքանչյուր հանձնաժողովում առնվազն մեկ պարզամավոր ներկայացնելու իրավունք: Այնուհայր է, որ եթե խմբակցության անդամների թիվը պակաս է հանձնաժողովների թվից, իսկ նման խմբակցություններ կան Ազգային ժողովում, ապա խմբակցությունն ինքն է որոշում, թե որ հանձնաժողովներում ներկայացուցիչ ունենա: Կարծում ենք, որ պետք է պարզամավորին հնարավորություն տալ իր ցանկությամբ անդամակցելու առնվազն երկու հանձնաժողովի: Բացի Ազգային ժողովի նախագահից, Կոնստիտուցիայից, մյուս պարզամավորները պարտադիր կարգով ընդգրկվում են որտե՛լ հանձնաժողովի կազմում, քանի որ պառլամենտը պրոֆեսիոնալ է: Բացառություն են կազմում խմբակցությունների (խմբերի) ղեկավարները, որոնք կամավորության սկզբունքով կարող են իրենց որոշմամբ ընդգրկվել հանձնաժողովի կազմում կամ չընդգրկվել:

ՏՏ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներն աշխատում են կազմակերպական փոքր ձևերով: Նիմնականը հանձնաժողովի նիստերն են, որոնք, որպես կանոն, անցկացվում են շաբաթը մեկ անգամ: Ռուսաստանի Դաշնությունում նիստերն անցկացվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Այլ երկրներում փոքր ժամկետներ են նախատեսված՝ երկու շաբաթը մեկ անգամ, շաբաթը մեկ անգամ և այլն: Նանձնաժողովը գումարում է իր նիստը, եթե նրա աշխատանքներին մասնակցում են անդամների կեսից ավելին: Նանձնաժողովի նիստը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ Կոնստիտուցիայի ղեկավարում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: «Նանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց» (կանոնակարգի 29-րդ հոդվածի 4-րդ մաս): Քվեարկությունները կատարվում են միայն փոքր հանձնաժողովի անդամների առաջարկությամբ, քանի որ հանձնաժողովի աշխատանք-

²⁶ Стн Конституции государств Европейского Союза, М., 1999, С. 257:

²⁷ Стн Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997. С. 73:

ներին կարող են մասնակցել այլ պարզամավորներ եւս, որոնք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք: Մշտական հանձնաժողովի նիստերի արդյունքում եզրակացություններ են փրվում օրենքների նախագծերի վերաբերյալ: Այդ եզրակացությունները կարող են լինել դրական կամ ոչ դրական: Դրական եզրակացության դեպքում հարցը մտնում է հերթական նստաշրջանի օրակարգ, ինչպես նաեւ կարող է առաջարկվել՝ ընդգրկելու առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգ: Ոչ դրական եզրակացությունը ենթադրում է այլ ընթացակարգ. այս դեպքում Ազգային ժողովն առանձին քվեարկություն է կատարում փյույկ հարցն օրակարգ մտցնելու մասին: Տանձնաժողովի կարծիքն էականորեն ազդում է քվեարկության ելքի վրա: Սակայն նույնը չի կարելի ասել հարցը քննարկելու եւ առաջին կամ երկրորդ ընթերցմամբ ընդունելու վերաբերյալ: Անկախ այն հանգամանքից, որ հանձնաժողովը դեմ է այս կամ այն սկզբունքին, կամ չի ընդունում որեւէ առաջարկ, միեւնույն է՝ որոշիչ խոսքը պարկանում է նախագծի հեղինակին: Կանոնակարգի 67-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է. «Առաջարկությունները, որոնց վերաբերյալ հեղինակը (հիմնական զեկուցողը) ամփոփաթերթիկում հայտնել է դրական կարծիք, պարտադիր ընդգրկվում են երկրորդ ընթերցման ներկայացված նախագծում կամ նախագծերի փաթեթում»: Մեր կարծիքով, առաջին ընթերցում անցնելուց հետո օրենքի նախագծի հեղինակն արդեն դառնում է ամբողջ Ազգային ժողովը: Փոփոխությունների ընդունման ողջ պարասխանավորությունը պետք է վերապահել համապարասխան հանձնաժողովին՝ հարկապես, եթե հաշվի առնենք, որ հանձնաժողովները ներկայացնում են քաղաքական փարբեր հայացքներ ունեցող պարզամավորների: Նման մտքեցումն առավել ժողովրդավարական կդարձնի օրենքների մշակման եւ ընդունման գործընթացը: Կանոնակարգի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովը կարող է իր կազմից ստեղծել ենթահանձնաժողովներ, ինչպես նաեւ ձեւավորել աշխատանքային խմբեր՝ սահմանելով դրանց խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը եւ ընդգրկելով դրանց ղեկավարներին: Տանձնաժողովի աշխատանքների կայունությանը եւ հանձնաժողովի նախագահի անկախության ապահովմանը նպաստում է այն, որ նա ընտրվում է պառլամենտի անդամների կողմից՝ գաղտնի քվեարկությամբ: Կանոնակարգի 26-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ մասերի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը նախապարաստում է և վարում է հանձնաժողովի նիստերը, գումարում արտահերթ նիստ, հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, համակարգում ենթահանձնաժողովների եւ աշխատանքային խմբերի աշխատանքը, ապահովում հանձնաժողովի որոշումների կատարումը, ընթացք փալիս եւ պարասխանում հանձնաժողովին ուղղված դիմումներին, ղեկավարում հանձնաժողովի փորձագետների (մասնագետների) աշխատանքը, իրականացնում այլ լիազորություններ: Տանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է փոխակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ լիազորված հանձնաժողովի անդամը: Տանձնաժողովի դռնփակ նիստում, պարզամավորներից բացի, կարող են ներկա գրնվել Տանրապետության Նախագահը, նրա լիազորած ներկայացուցիչը, ՏՏ վարչապետը, նրա լիազորած ներկայացուցիչը, հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք: Որպես կանոն, նիստերը դռնբաց են, եւ, վերը նշված անձանցից բացի, կարող են մասնակցել ՏՏ ԱԺ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն ու աշխատակիցները, մասնագետները, պարզամավորների օգնականները, հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված այլ անձինք (Կանոնակարգի 28-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասեր): Ազգային ժողովի հանձնաժողովները ժողովրդավարության զարգացմանը կարող են նպաստել

նաեւ պառլամենտական լսումներ կազմակերպելով: Նանձնաժողովում ընդունվում է համապատասխան որոշում, հաստատվում են քննարկման թեման, լսումների օրը, ժամը, անցկացման վայրը, զեկուցողները, հրավիրվածների ցանկը: Այդ մասին տեղյակ է պահվում Ազգային ժողովի նախագահը, ինչպես նաեւ լսումներից երեք օր առաջ տեղեկատվություն է տարածվում զանգվածային լրատվության միջոցներով: Լսումների ընթացքում հնչած կարծիքները, ընդունված որոշումներն ունեն խորհրդարավական բնույթ, սակայն լսումների առավելությունն այն է, որ որեւէ հրատարակարգի քննարկմանը մասնակցում են ոչ միայն պառլամենտում ներկայացված, այլեւ արտապառլամենտական քաղաքական ուժերը, հասարակական կազմակերպությունները: Առավել կարեւորվում է հանձնաժողովների եզրակացությունը, եթե նրանք Ազգային ժողովի նախագահի կողմից նշանակվում են գլխադասային: Նանձնաժողովի ներկայացուցիչը տվյալ հարցի քննարկման ժամանակ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու նպատակով Ազգային ժողովում հանդես է գալիս հարակից զեկուցումով եւ պատասխանում պարզամալորների հարցերին: Գլխում ենք, որ լրացման կարիք ունի Կանոնակարգի 29-րդ հոդվածը: Խնդիրն այն է, որ հանձնաժողովին անհրաժեշտ է օժտել այնպիսի լիազորությամբ, որ նա հարցը քննարկելուց հետո կարողանա գրավոր դիմել ՏԿ կառավարությանը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին, պահանջել նյութեր, փաստաթղթեր, տվյալներ: Նշված կառույցները եւ պաշտոնատար անձինք պարտավոր են սահմանված կարգով պատասխանել հարցերին, համապատասխան նյութեր տրամադրել հանձնաժողովին: Նման լիազորությունը կնպաստի խորհրդարանական պարզաձ վերահսկողության իրականացմանը եւ գործադիր իշխանության պատասխանատվության բարձրացմանը: Գործնականում այս աշխատանքը կիրառվում է, սակայն Կանոնակարգում այն ամրագրված չէ: Նանձնաժողովների աշխատանքի գնահատման եւ պարզամալորների զգնությունը բարձրացնելու գործուն միջոց կարող է լինել նաեւ Կանոնակարգում այնպիսի նորմի ամրագրումը, որի համաձայն յուրաքանչյուր հանձնաժողով տարին մեկ անգամ պետք է հաշվետվություն-հաղորդումով հանդես գա Ազգային ժողովում: Նանձնաժողովների գործունեության վրա էական ազդեցություն են ունենում քաղաքացիների ընդունելությունները, նրանց դիմում-բողոքները, առաջարկությունները:

3. Մի շարք երկրների խորհրդարաններ հասարակական հնչեղություն ու կարեւորություն ունեցող հիմնահարցերի վերաբերյալ սրեղծում են հարուկ, ժամանակավոր հանձնաժողովներ, որոնք, ուսումնասիրելով խնդիրը, եզրակացություն են ներկայացնում եւ դրանցով եւս ուղղորդում, վերահսկում են գործադիր իշխանությանը:

Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ բացի մշտական հանձնաժողովներից, Ազգային ժողովն անհրաժեշտության դեպքում կարող է սրեղծել ժամանակավոր հանձնաժողովներ՝ առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի հարցերի, իրադարձությունների եւ փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Ժամանակավոր հանձնաժողովները եւս Ազգային ժողովի կարեւորագույն ինստիտուտներից են: Ի տարբերություն մշտական հանձնաժողովների, որոնք գործում են ԱԺ-ի գործունեության ողջ ժամանակահատվածում, ժամանակավոր հանձնաժողովների գործունեության ժամկետները, խնդիրները սահմանում է Ազգային ժողովը: Սահմանված ժամկետում ժամանակավոր հանձնաժողովն ընթացիկ հաղորդում է տալիս կարարած աշխատանքների մասին կամ եզրակացություն, տեղեկանք ներկայացնում հիմնահարցի

վերաբերյալ: Ժամանակավոր հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգված է այնպես, ինչպես Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներինը, սակայն կան մի շարք փարբերություններ.

- Ժամանակավոր հանձնաժողովի նախագահը, փեդակալը, ենթահանձնաժողովների եւ աշխատանքային խմբերի ղեկավարներն ընտրվում են համապատասխան հանձնաժողովի նիստում,

- դրա կազմում կարող են ընդգրկվել Ազգային ժողովի նախագահը, նախագահի փեդակալները, որոնք իրավունք չունեն մշտական հանձնաժողովի անդամ լինելու,

- Ժամանակավոր հանձնաժողովները պարտադիր հաշվեփոխություն են ներկայացնում Ազգային ժողովին, ինչը չի արվում մշտական հանձնաժողովի դեպքում:

Այդ հանձնաժողովները, որպես կանոն, ձեւավորվում են պառլամենտական բոլոր խմբակցությունների եւ պարզամակորական խմբերի անդամներից, այսինքն՝ իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչներն ընդգրկվում են նման հանձնաժողովներում՝ ապահովելով բազմակարծություն, երկխոսություն եւ փոքրամասնության կարծիքի հաշվառում: Ազգային ժողովի աշխատանքային փորձը ցույց է փայլիս, որ Ժամանակավոր հանձնաժողովները հիմնականում սրբեղծվում են վարկերի, դրամաշնորհների, մարդասիրական օգնության օգտագործման, բնակչության ավանդների վերադարձի, երկրում փեդի ունեցած կարեւոր իրադարձության, հասարակության անվտանգության ապահովման հարցերի ուսումնասիրման նպատակով: Պարզամակորները հնարավորություն են ունենում խորությամբ ծանոթանալ հիմնահարցին, պահանջել փարբեր փեդեկություններ, վիճակագրական փվյալներ, լսել պաշտոնյաներին, քննարկել այդ ոլորտում օրենքների կիրառման ընթացքում փեդ գրած սխալները, ապօրինությունները եւ համապատասխան փեդեկանք, եզրակացություն ներկայացնել Ազգային ժողովին: Ժամանակավոր հանձնաժողովի խնդիրն է հնարավորինս կարճ Ժամանակամիջոցում բացահայտել հիմնահարցը, եւ դրանում ընդգրկված պարզամակորները պեդք է առավել սկսիվ եւ հեփեդողական գրնվեն՝ հասարակությանը հուզող հարցերին պատասխան փալու համար:

Կանոնակարգի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ժամանակավոր հանձնաժողովի ներկայացրած եզրակացության, փեդեկանքի հիման վրա պարզամակորը կարող է Ազգային ժողովի նիստում Ժամանակավոր հանձնաժողովի՝ իր գործունեության մասին զեկուցումից հեփրո՝ երկօրյա Ժամկետում ներկայացնել Ազգային ժողովի որոշման նախագիծ: Դա կարող է լինել այն աշխատանքի փրամաբանական ավարտը, որն ամիսներ եւ նույնիսկ փարիներ շարունակ կատարել է հանձնաժողովը, կազմակերպել է սփուգումներ, բացահայտել հիմնահարցի էությունը, իրականացրել վերահսկողություն: Կարծում ենք՝ միայն հաշվեփոխություն լսելը եւ այն ի գիփություն ընդունելը թուլացնում է վերահսկողության ողջ գործառությունը: Այս առումով ուսանելի է Լեհաստանի Սեյմի փորձը: Այս երկրի Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝ Սեյմը կարող է սրեդծել քննչական հանձնաժողովներ՝ հեփաքննելու կոնկրեփ գործ: Այդ հանձնաժողովներն իրավունք ունեն գործին վերաբերող ցանկացած փեդեկություն սրանալ, ինչպես նաեւ հարցաքննել հրավիրված անձանց՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով²⁸: Նման կարգը լուրջ վերահսկողության հնարավորություն է փալիս եւ անհրաժեշտ հեդինակություն ապահովում լեհական պառլամենտին: Բուլղարիայի Սահմանադրությամբ (79-րդ հոդվածի 3-րդ կեփ) ամրագրված է, որ Ժամանակավոր հանձնաժողովներն ընտրվում են հիմնախնդիրներն ուսումնասիրելու եւ հեփաքնություն իրականացնելու նպատակով: Իսկ Գերմանիայի Սահմանադրության 44-րդ հոդվածը հռչակում

²⁸ Տե՛ս <http://clin.iatp.by/constitution/west-europe/poland-htm>:

Է. «Բունդեսթագը իրավունք ունի իր անդամների 1/4 առաջարկությամբ քննչական հանձնաժողով ստեղծել, որը բաց նիստերում անհրաժեշտ փոփոխություններ է հավաքում: Այդպիսի նիստերը կարող են փակ հայտարարվել»²⁹: Իտալիայի (82-րդ հոդված) ու Իսպանիայի (76-րդ հոդված) սահմանադրությունների համաձայն քննչական կոմիտեներն ստեղծվում են հասարակական հեղափոխություն ներկայացնող ցանկացած հարցի լուծման համար³⁰: Իսպանիայում քննչական կոմիտեներն ու հանձնաժողովներն ինքնուրույն որևէ պարտավորություն չեն կիրառում: Դրանց եզրակացություններն ու զեկուցումներն ուղարկվում են իշխանության մարմիններին, որոնք, եթե հարկ համարեն, դրանք ուշադրության կարժանացնեն, որոշակի դեպքերում էլ կարող են զեկուցումներն ուղարկել դատական մարմիններին՝ դատաքննություն իրականացնելու նպատակով³¹:

Վերը նշվեց, որ ժամանակավոր հանձնաժողովների ուսումնասիրման օբյեկտ են դառնում հասարակությանը հուզող կարևորագույն հիմնախնդիրները: ՆՏ Ազգային ժողովի բոլոր գումարումների ժամանակ գործել են մոտ մեկ փասնյակ ժամանակավոր հանձնաժողովներ: Միայն Ազգային ժողովի երրորդ գումարման առաջին նստաշրջանի ժամանակ մշտական հանձնաժողովներից հետո Ազգային ժողովի որոշումներով ստեղծվեցին՝

1. Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերի ժամանակավոր հանձնաժողովը (2003 թ. սեպտեմբերի 9-ին),

2. Նայխնայբանկում ավանդադրված՝ Նայասպանի Նանրապետության քաղաքացիների խնայողական ավանդները վերականգնելու եւ փոխհատուցելու հնարավորություններն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովը (2003թ. սեպտեմբերի 10-ին),

3. Օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների եւ մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովը (2003 թ. սեպտեմբերի 10-ին):

Իսկ չորրորդ գումարման Ազգային ժողովում ստեղծվեց 2008 թվականի մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց պարճառների ուսումնասիրության ժամանակավոր հանձնաժողով:

Այսպիսով, ՆՏ Ազգային ժողովի հանձնաժողովները՝ որպես ներկայացուցչական մարմնի կարևորագույն կառույցներ, իրենց գործունեությամբ ոչ միայն նպաստում են պառլամենտի աշխատանքների կազմակերպմանը եւ համապատասխան եզրակացություններ են ներկայացնում Ազգային ժողովին, այլեւ նպաստում են հասարակության, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, գիտական, մշակութային հասարակությունների եւ օրենսդիր մարմնի միջև կապերի խորացմանն ու արդյունավետ համագործակցությանը:

²⁹ Տե՛ս Конституции государств Европы. В 3-х т., Т. 1, М., 2001. С. 594:

³⁰ Տե՛ս Конституции государств Европейского Союза, М., 1997. С. 388-436:

³¹ Նույն տեղում, էջեր 395-436:

ՆՈՂ-ՎԱԾ 74

Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ եւ քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պարզամակորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Մեկնաբանվող հոդվածի առարկան խորհրդարանի կողմից կառավարության ծրագրին հավանություն տալու հարցն է: Այն սերտորեն կապված է Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերության հետ եւ դրա հետ մեկտեղ կարգավորում է խորհրդարանի եւ կառավարության միջեւ վստահության հարաբերությունների հաստատումը: Եթե Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերությունը պահանջում է Հանրապետության Նախագահի կողմից այնպիսի վարչապետի նշանակում, որը վայելում է պարզամակորների մեծամասնության կամ առավել թվով պարզամակորների վստահությունը, ապա մեկնաբանվող հոդվածը, որպես նոր ձեւավորված կառավարության գործունեության անհրաժեշտ նախապայման, պահանջում է, որ կառավարության ծրագիրն արժանանա Ազգային ժողովի հավանությանը: Խորհրդարանի կողմից կառավարության ծրագրին հավանություն տալու միջոցով կառավարությունը ձեռք է բերում իր հետագա գործունեության համար անհրաժեշտ վստահությունը: Այլապես, եթե խորհրդարանը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա Սահմանադրության 74.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահը պարտավոր է արձակել Ազգային ժողովը (տե՛ս 74.1-րդ հոդվածի մեկնաբանությունները), քանի որ անհնարին է ձեւավորել վստահության հարաբերություններ խորհրդարանի եւ կառավարության միջեւ:

Երբ նախագահական եւ խորհրդարանական մեծամասնությունները համընկնում են եւ Հանրապետության Նախագահն ունի մեծամասնության վստահությունը, ապա կառավարության հեղինակությունը եւ լեգիտիմությունը պրակտիկայում աժանցվում է առաջին հերթին երկրի Նախագահի հեղինակությունից: Անկախ դրանից, մեկնաբանվող հոդվածը պահանջում է, որ նոր ձեւավորված կառավարության ծրագիրը հավանության արժանանա խորհրդարանի կողմից՝ որպես կառավարության հետագա գործունեության անհրաժեշտ պայման:

Կառավարության ծրագրին հավանություն տալու ինստիտուտը Հայաստանում առաջին անգամ կարգավորվել է 1995թ. Սահմանադրությամբ: 2005թ. սահմանադրական բարեփոխումները կարեւոր փոփոխություններ են մտցրել այս հարցում: 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահի կողմից կազմավորված կառավարությունը հաստատման կարիք չունեւ խորհրդարանի կողմից: Նոր նշանակված կառավարությունն իր գործունեության ծրագիրն ընդամենը պարտավոր էր ներկայացնել Ազգային ժողովին, եւ ծրագիրը համարվում էր հավանության արժանացած, եթե խորհրդարանը ծրագրի առնչությամբ կառավարությանն անվստահություն չէր հայտնում (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված

74, մաս 4): Ըստ այդ հոդվածի՝ ոչ թե կառավարությունն էր պարտավոր հայցել խորհրդարանի անդամների մեծամասնության վստահության քվեն, այլ խորհրդարանը պետք է ապացուցեր, որ դեմ է ներկայացված ծրագրին եւ կառավարությանն անվստահություն հայտնելու որոշում ընդունել: Իհարկե, այնքան էլ փրամաբանական չէր կառավարությանն անվստահություն հայտնել, երբ նրան ի սկզբանե խորհրդարանի կողմից վստահություն չի հայտնվել: Բնականաբար, նոր կազմավորված կառավարությունը կարող էր վայելել միայն իրեն նշանակած Տանրապետության Նախագահի վստահությունը, իսկ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում Տանրապետության Նախագահը կարող էր լուծարել խորհրդարանը: Գործող Սահմանադրությունն այժմ կառավարության ծրագրին հավանություն փալու հարցի վերաբերյալ պահանջում է քվեարկություն, իսկ ծրագրին հավանություն փալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Այս փոփոխությունները համադրելով նաեւ կառավարության կազմավորման հարցում Ազգային ժողովի դերի կրրուկ մեծացման եւ այն հանգամանքի հետ, որ կառավարության ծրագրին հավանություն չբալն անմիջականորեն չի կարող հանգեցնել խորհրդարանի լուծարմանը, ակներեւ է, որ գործող Սահմանադրությունն Ազգային ժողովին առաջնային դերակապարում է վերապահել կառավարության կազմավորման, նրա գործունեության ծավալման եւ դադարեցման հարցերում:

Կառավարության ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որն ամրագրում է կառավարության ներքին եւ արտաքին քաղաքականության հիմնական նպատակները, խնդիրները եւ դրանց իրագործման հիմնական միջոցները: Եթե կառավարության ծրագիրը ներկայացվում է նորընտրի Ազգային ժողովի առջեւ, ապա այն ձեւավորված քաղաքական պրակտիկայի համաձայն ներկայացվում է Ազգային ժողովի լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի համար՝ գրավոր տեսքով: Կառավարության ծրագրի գրավոր ձեւը բխում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 106-րդ հոդվածի 2-րդ մասից:

Մեկնաբանվող հոդվածի առաջին դրույթը սահմանում է կառավարության պարտականությունը՝ իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում ներկայացնելու կառավարության ծրագիրը: Սահմանադրությունն ուղղակիորեն չի հստակեցնում, թե ով է պարտավոր Ազգային ժողովին ներկայացնելու ծրագիրը: Սակայն ինչպես Սահմանադրության համակարգային մեկնաբանությունից, այնպես էլ կառավարության ծրագրի ներկայացման կարգին վերաբերող Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 106-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ այդ իրավունքը պատկանում է վարչապետին: Եթե վարչապետը հարգելի պարճառներով ի վիճակի չէ ներկայացնել ծրագիրը, ապա այդ պարտականությունն ընկնում է փոխվարչապետի վրա, որը Սահմանադրության 85-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փոխարինում է վարչապետին՝ վերջինիս բացակայության ժամանակ:

Մեկնաբանվող հոդվածի առաջին նախադասությունում սահմանված քսանօրյա ժամկետի իմաստը, բացի ծրագիրը նախապարաստելուց, այն է, որ սահմանափակվում է այնպիսի կառավարության գործունեությունը, որը դեռեւս ամբողջությամբ ձեռք չի բերել խորհրդարանի վստահությունը: Քսանօրյա ժամկետը սկսում է հաշվարկվել կառավարության կազմավորման օրվանից, այսինքն՝ այն օրվանից, երբ նշանակվել են կառավարության բոլոր անդամները (տես 55-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ մեկնաբանությունները):

Նշված ժամկետը չի գրնվում ոչ կառավարության եւ ոչ էլ խորհրդարանի հայեցողության ներքո, եւ չի կարող փոփոխվել նույնիսկ փոխադարձ համաձայնության դեպքում: Ֆորսմաժորային (անհաղթահարելի) իրավիճակներում, երբ փաստացի անհնարին է կառավարության ծրագրի ներկայացումը եւ քննարկումը, այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ առաջացած խոչընդոտների վերանալը:

Եթե կառավարությունը քսանօրյա ժամկետում չներկայացնի իր ծրագիրը, ապա նման քիչ հավանական դեպքում կառավարության մեղքով կառաջանա հակասահմանադրական իրավիճակ, որի արդյունքում վարչապետը պետք է ներկայացնի կառավարության հրաժարականը: Թեպետ Սահմանադրությունը չի կարգավորում այդ իրավիճակը (ինչը բնական է, քանի որ Սահմանադրությունը չի կարող կարգավորումներ փալ բոլոր հնարավոր իրավիճակների համար), այնուամենայնիվ, վարչապետի նման պարտականությունը բխում է Սահմանադրության համակարգային մեկնաբանությունից³²: Եթե վարչապետը չներկայացնի կառավարության հրաժարականը, ապա ժամկետի ավարտից հետո Հանրապետության Նախագահը, ի կատարումն Սահմանադրության պահպանմանը հեղեղելու եւ օրենսդիր ու գործադիր իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու իր առաքելության (հոդված 49, մաս 2), պետք է ընդունի կառավարության հրաժարականը եւ սկսի նոր կառավարության կազմավորման գործընթացը:

Հրաժարվելով 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված կառավարության վարահության կանխավարկածից՝ մեկնաբանվող հոդվածը նախատեսում է կառավարության ծրագրին հավանություն փալու ընթացակարգ, որը կոնկրետացված է լրացված է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 106-րդ հոդվածում: Ըստ այդ հոդվածի՝ կառավարության ծրագրին հավանություն փալու ընթացակարգն Ազգային ժողովում բաղկացած է երեք փուլից՝ կառավարության ծրագրի ներկայացում վարչապետի կողմից, ծրագրի քննարկում եւ ծրագրին հավանություն փալու հարցի վերաբերյալ Ազգային ժողովի որոշման քվեարկություն:

Ինչպես արդեն նշվեց, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 106-րդ հոդվածի 2-րդ մասը ելնում է կառավարության ծրագրի գրավոր ձեւից: Ազգային ժողովում կառավարության ծրագրի ներկայացման համար անհրաժեշտ է, որպեսզի կառավարության ծրագիրն ուղարկվի Ազգային ժողով, քանի որ ըստ կանոնակարգի 106-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կառավարության ծրագրին հավանություն փալու հարցը քննարկվում է «կառավարության ծրագիրն սրանալուց հետո՝ 48 ժամվա ընթացքում»:

Մեկնաբանվող հոդվածի համաձայն՝ կառավարության ծրագրին հավանություն փալու հարցը Ազգային ժողովը քննարկում է արտահերթ: Կառավարության ծրագիրը ներկայացնելու համար վարչապետին փրվում է մինչեւ մեկ ժամ (կանոնակարգի 106-րդ հոդվածի 3-րդ մաս): Այնուհետեւ, կանոնակարգի 106-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներկայացված ծրագրի վերաբերյալ վարչապետին Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով փրվում են հարցեր, որից հետո կանոնակարգի 58-րդ հոդվածով սահմանված կարգով փրվի է ունենում մրքերի փոխանակություն: Մրքերի փոխանակման կարգը նույնն է, ինչ օրինագծեր քննարկելիս: Հարկ է նկատել, որ մրքերի փոխանակության ընթացքում կանոնակարգի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտահերթ ելույթի իրավունք ունի Հանրապետության Նախագահը, ով անհրաժեշտու-

³² Նույն եզրահանգմանն են գալիս Իտալիայի եւ Լեհաստանի պարագայում հետեւյալ հեղինակները՝ **Mario Galizia**, *Studi sui rapporti fra parlamento e governo*, Milano 1972, էջ 420, **Mario Galizia**, *Fiducia parlamentare*, in: *Enciclopedia del Diritto*, vol. XVII, Milano, 1968, էջ 407, **Wojciech Sokolewicz**, in: *Konstytucja Rzeczypospolitej Polskiej. Komentarz*, t. 1, Art. 154-155, Warszawa 1999, էջ 14:

թյան դեպքում Ազգային ժողովի ամբիոնից հնարավորություն ունի արտահայտել իր դիրքորոշումը կառավարության ծրագրի վերաբերյալ: Մտքերի փոխանակությունից հետո վարչապետը կարող է հանդես գալ մինչև մեկ ժամ տևողությամբ եզրափակիչ ելույթով:

Խորհրդարանի ազդեցությունը կառավարության ծրագրի վրա սահմանափակված է նրան հավանություն տալու կամ չտալու լիազորությամբ եւ չի ներառում դրանում փոփոխություններ կատարելու իրավունք: Իհարկե, մտքերի փոխանակության ժամանակ պարզամավորները կարող են նման առաջարկներ անել, սակայն կառավարությունն ազատ է դրանք ընդունելու կամ մերժելու հարցում: Ընդ որում, համաձայնության դեպքում կառավարության ծրագրում համապատասխան փոփոխությունները կատարվում են կառավարության որոշմամբ:

Մեկնաբանվող հոդվածի հաջորդ դրույթը սահմանում է նաեւ, որ կառավարության ծրագրին հավանություն տալու հարցը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կանոնակարգի 106-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համադրումից եւ քերականական մեկնաբանությունից հետևում է, որ որպես ծրագրի ներկայացման ավարտ կանոնակարգը դիտում է այն պահը, երբ վարչապետը մինչև մեկ ժամվա ընթացքում ավարտում է կառավարության ծրագրի ներկայացումը, ինչից հետո «ներկայացված ծրագրի» վերաբերյալ վարչապետին տրվում են հարցեր եւ տեղի է ունենում մտքերի փոխանակություն:

Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համադրումից բխում է, որ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ:

Մեկնաբանվող հոդվածի նույն դրույթի համաձայն՝ կառավարության ծրագրին հավանություն տալու համար անհրաժեշտ է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, այսինքն՝ նվազագույնը 66 ձայն: Սահմանված քվորումը բացառում է, այսպես կոչված, «փոքրամասնության կառավարության» գոյությունը, երբ կառավարությունը վայելում է խորհրդարանի միայն հարաբերական, այլ ոչ թե բացարձակ մեծամասնության աջակցությունը: Եվրոպական բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ նման փխպի կառավարությունը նույնպես կարող է կենսունակ լինել եւ, թերեւս, նպատակահարմար չէր Սահմանադրության մակարդակով ի սկզբանե բացառել նման հնարավորությունը:

Կառավարության ծրագրին հավանություն չտալու իրավական հետեւանքը կառավարության հրաժարականն է: Կառավարության ծրագրի մերժման դեպքում վարչապետը պարտավոր է դիմում ներկայացնել կառավարության հրաժարականի վերաբերյալ, իսկ Հանրապետության Նախագահը պարտավոր է նույն օրն ընդունել կառավարության հրաժարականը (Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետ եւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 106-րդ հոդվածի 6-րդ մաս):

ՆՈՒՎԱԾ 74.1

1. Նանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին:

2. Նանրապետության Նախագահը Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել Ազգային ժողովը, եթե՝

ա) Ազգային ժողովը հերթական նախաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ.

բ) հերթական նախաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավելի չեն զույմարվում.

գ) հերթական նախաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում:

1. Մեկնաբանվող հոդվածի կարգավորման առարկան Նանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովի արձակման դեպքերն ու կարգն են (տե՛ս նաև 55-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ մեկնաբանությունները):

1995թ. Սահմանադրությունն Ազգային ժողովի լուծարման որևէ կոնկրետ հիմք չէր սահմանում, քանի որ Նանրապետության Նախագահն իրավասու էր իր քաղաքական հայեցողությամբ արձակելու Ազգային ժողովը: Նա չէր կարող լուծարել խորհրդարանը միայն հետևյալ 4 դեպքերում՝

ա) իր պաշտոնավարման վերջին վեց ամսվա ընթացքում (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 55, կետ 3, մաս 2),

բ) Ազգային ժողովի ընտրությունից հետո՝ մեկ տարվա ընթացքում (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 63, մաս 4),

գ) ռազմական դրության ժամանակ կամ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում (1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 63, մաս 5),

դ) երբ Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 63, մաս 5):

2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո պահպանվել են միայն վերջին երկու սահմանափակումները (տե՛ս Սահմանադրության հոդված 63, մաս 3):

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի լուծարման կարգին, ապա 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պահանջում էր, որպեսզի Նանրապետության Նախագահը խորհրդարանի լուծարումից առաջ խորհրդակցեր Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 55, կետ 3, առաջին նախադասություն): Գործող Սահմանադրության 74.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանելով Ազգային ժողովի արձակման կոնկրետ հիմքեր՝ միաժամանակ նախատեսում է, որ Նանրապետության Նախագահը կարող է արձակել խորհրդարանը միայն Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ: Ի տարբերություն 74.1-րդ հոդվածի 2-րդ մասի, նույն հոդվածի առաջին մասը Նանրապետության Նախա-

գահին որևէ հայեցողություն չի փախի եւ պարտադրում է Ազգային ժողովի լուծարումը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի փախի կառավարության ծրագրին: Այս դեպքում, բնականաբար, Տանրապետության Նախագահին որևէ առաջարկության կարիք չկա:

Լուծարման ինստիտուտը պարմականորեն առաջացել է որպես զենք միապետի ձեռքում՝ պառլամենտական մեծամասնության դեմ, սակայն պառլամենտական համակարգի էվոլյուցիայի ընթացքում աստիճանաբար վերածվել է մի օգտակար ինստիտուտի, որի հիմնական նպատակը ճգնաժամային իրավիճակների լուծումն է պառլամենտի եւ կառավարության միջև: Պառլամենտական երկրներում այն ավանդաբար դիտարկվում է որպես խորհրդարանի առջև կառավարության պարասխանաբարկության հակակշիռ: Խորհրդարանի եւ կառավարության միջև կոնֆլիկտի եւ դրա հետեւանքով խորհրդարանի լուծարման դեպքում արբիտրի դերը կատարում է ընտրողը: Պառլամենտական համակարգում, չնայած իրավաբանորեն խորհրդարանի լուծարման իրավունքը հիմնականում պատկանում է Նախագահին, այն իրականում իրականացվում է միայն կառավարության ցանկությամբ: Նախագահի կողմից խորհրդարանի լուծարման լիազորությունն այսպեղ հիմնականում ձեռնարկվում է միայն կառավարության ցանկությամբ: Վերաբերյալ կողմից խորհրդարանի լուծարման լիազորությունն այսպեղ հիմնականում ձեռնարկվում է այլ լինել: Քանի որ այսպեղ, ի տարբերություն խորհրդարանական կառավարման ձեռի, երկրի Նախագահն ինքնուրույն քաղաքական դերակատարում ունի, ապա լուծարման ինստիտուտը կարող է ձեռք բերել ինքնուրույն նշանակություն Տանրապետության Նախագահ-խորհրդարան փոխարաբերություններում: Կիսանախագահական կառավարման ձեռում պառլամենտ-կառավարություն հարաբերություններում ճգնաժամի հանգուցալուծում լինելուց բացի, այն կարող է լինել նաեւ հզոր զենք Տանրապետության Նախագահի ձեռքում՝ նրա եւ պառլամենտի միջև հակասությունների դեպքում: Կառավարման կիսանախագահական ձեռում պառլամենտի լուծարման՝ Նախագահի հայեցողական լիազորությունը նրա ամենահզոր զենքն է պառլամենտի նկատմամբ: Տայաստանի Սահմանադրությունը մինչև 2005թ. փոփոխությունները միակն էր նախկին կոմունիստական բյուրի պարկանող երկրների շարքում, որպեղ Տանրապետության Նախագահին տրված էր խորհրդարանը լուծարելու գրեթե անսահմանափակ միանձնյա իրավունք: Տանրապետության Նախագահի այս իրավունքը ոչ միայն ուժեղացնում էր նրա դիրքերը խորհրդարանի նկատմամբ, այլ նաեւ խիստ թուլացնում էր կառավարության պարասխանաբարկությունը խորհրդարանի առջև: Կառավարությանն անվարախոյուն հայտնելու՝ խորհրդարանի ցանկացած փորձ կարող էր կանխվել Տանրապետության Նախագահի կողմից՝ խորհրդարանի լուծարմամբ կամ դրա սպառնալիքով: Եվրոպայի խորհրդի անդամ երկրներից միայն երկուսում է (Ֆրանսիայում եւ Պորտուգալիայում), որ երկրի Նախագահն ունի պառլամենտի լուծարման հայեցողական իրավունք: Շատ հարկանշական է, որ արեւելաեվրոպական որեւէ երկիր այդ դրույթը չի ընդօրինակել:

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանի լուծարման ինստիտուտը ենթարկվեց արմարական փոփոխության՝ Տանրապետության Նախագահն այլեւ չունի Ազգային ժողովը լուծարելու միանձնյա իրավունք, իսկ լուծարման բոլոր դեպքերն ուղղակիորեն ամրագրված են Սահմանադրության 74.1-րդ հոդվածում: Նման կարգավորման հետեւանքով կտրուկ կերպով ուժեղանում է Ազգային ժողովի դիրքը կառավարության եւ Տանրապետության Նախագահի նկատմամբ նրա փոխարաբերություններում, քանի որ ոչ կառավարություն-Ազգային ժողով եւ ոչ էլ Տանրապետության Նախագահ-Ազգային ժողով հարաբերություններում ճգնաժամային իրավիճակներ

առաջանալու դեպքում խորհրդարանի լուծարման ինստիտուտից օգտվելու հնարավորություններ գործնականորեն գոյություն չունեն: Բացառությամբ 74.1-րդ հոդվածի առաջին մասի, Ազգային ժողովը կարող է լուծարվել միայն այն պարագայում, երբ Ազգային ժողովն ի վիճակի չէ իրականացնել իր բնականոն գործունեությունը ներքին ճգնաժամի պայրճառով:

Մեկնաբանվող հոդվածը կարող կերպով սահմանափակում է Տանրապետության Նախագահի հայեցողությունը խորհրդարանի լուծարման հարցում: 74.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի դեպքում նա չունի որևէ հայեցողություն եւ պարտավոր է արձակել Ազգային ժողովը: 74.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում Տանրապետության Նախագահը կարող է գործել միայն այն դեպքում, երբ Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը նրան համապատասխան առաջարկություն է ներկայացնում: Երբ նման առաջարկություն ներկայացված է Տանրապետության Նախագահին, ապա որոշման ընդունումը կախված է Տանրապետության Նախագահի հայեցողությունից, որը, սակայն, բավական սահմանափակ է: Եթե Ազգային ժողովն իսկապես անգործունակ է, ապա Տանրապետության Նախագահն այլ ընտրություն չունի, քան այն լուծարելը: Նման մեկնաբանման մասին է խոսում նաեւ Սահմանադրության 49-րդ հոդվածի 2-րդ մասով նրա վրա դրված պարտականությունը՝ ապահովել իշխանության երեք ճյուղերի, Կոնստիտուցիոնալ դեպքում՝ օրենսդիր իշխանության, բնականոն գործունեությունը:

74.1-րդ հոդվածի առաջին մասը վերաբերում է Ազգային ժողով-կառավարություն հարաբերություններում ճգնաժամային մի իրավիճակի, երբ Ազգային ժողովը երկու անվաճառ ընթացքում երկու անգամ անընդմեջ հավանություն չի փայլա կառավարության ծրագրին: Նման պարագայում Տանրապետության Նախագահը պարտավոր է արձակել Ազգային ժողովը: Նաշվի առնելով, որ Տանրապետության Նախագահի իրավասությունը վարչապետի ընտրության հարցում կարող սահմանափակված է, եւ նա պարտավոր է վարչապետ առաջարկել խորհրդարանի մեծամասնության վստահությունը վայելող անձի (Կոնստիտուցիոնալ 55-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունները), ապա նման իրավիճակ պրակտիկայում առաջ կգա միայն այն դեպքում, երբ խորհրդարանը ներքին պառակտվածության պայրճառով ի վիճակի չէ աջակցել որևէ կառավարության եւ նրա ծրագրին: Նման պարագայում խորհրդարանի պարտադիր լուծարումը լիովին արդարացված է, քանի որ խորհրդարանում գոյություն չունի գործունակ մեծամասնություն: Անհրաժեշտ է նկատել ունենալ, որ 74.1-րդ հոդվածի առաջին մասը չի կարող հնարավորություն փայլա Տանրապետության Նախագահին՝ խորհրդարանի լուծարման սպառնալիքի ներքո Ազգային ժողովին պարտադրելու միայն իր վստահությունը վայելող կառավարություն: Եթե Տանրապետության Նախագահը, խախտելով Սահմանադրության 49-րդ հոդվածի եւ 55-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, գնա նման կառավարության կազմավորմանը, ապա դա նրան գործնականորեն ոչինչ չի փայլա, քանի որ Ազգային ժողովը կարող է հեշտությամբ խուսափել լուծարումից՝ սկզբում հավանություն փայլալով Տանրապետության Նախագահի վստահությունը վայելող կառավարության ծրագրին եւ այնուհետեւ նրան անմիջապես անվստահություն հայտնելով:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում սահմանված արձակման բոլոր հիմքերը վերաբերում են այնպիսի իրավիճակների, երբ Ազգային ժողովը ներքին պառակտվածության պայրճառով ի վիճակի չէ բնականոն գործել եւ կարարել իր գործառնությունները: Այս փեսանկյունից, մեկնաբանվող հիմքը (74.1-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետը

միայն առաջին հայացքից է թվում որպես Ազգային ժողովի վրա կառավարության կողմից ներգործության միջոց: Այն առավելապես վերաբերում է Ազգային ժողովի ներքին ճգնաժամին, քան կառավարության հետ նրա հարաբերություններին: Եթե Ազգային ժողովը համաձայն չէ կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծին, ապա անհասկանալի կլինի, եթե խորհրդարանը, լինելով գործունակ, երեք ամիս շարունակ որեւէ որոշում չկայացնի դրա վերաբերյալ, հարկապես, եթե նկատի ունենանք, որ նրան, ի փարբերություն 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության, կառավարության օրինագիծը չընդունելու դեպքում որեւէ սանկցիա չի սպառնում: Եթե Ազգային ժողովը գործունակ է եւ համաձայն չէ կառավարության ներկայացրած օրինագծին, ապա նա պարզապես կմերժի այն: Մեկնաբանվող հիմքի կարեւորումը Սահմանադրությունում բարդ է հիմնավորել, քանի որ դրա հետ զուգահեռ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծին վերաբերող դրույթը Սահմանադրությունից ընդհանրապես հանված է: Եթե 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն Ազգային ժողովը քննարկում եւ քվեարկում էր մեկամսյա ժամկետում, ապա այդ ժամկետն Ազգային ժողովի կանոնակարգի համաձայն կազմում է երկու ամիս (Ազգային ժողովի կանոնակարգ, հոդված 51, մաս 6): Եթե Ազգային ժողովը խախտի իր կանոնակարգով սահմանված երկամսյա ժամկետը եւ որեւէ որոշում չկայացնի օրինագծի վերաբերյալ, ապա նրա լուծարման հիմքը կառաջանա մեկ ամիս անց, եթե խորհրդարանն ընդհանրապես քվեարկության չդնի այդ օրինագիծը եւ դրա վերաբերյալ որեւէ որոշում չկայացնի:

Երեք ամսվա ժամկետը վերաբերում է միայն հերթական նստաշրջաններին, որոնք, ի փարբերություն 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 69-րդ հոդվածի առաջին մասի, սահմանվում են միայն Ազգային ժողովի կանոնակարգով³³: Եթե կառավարության կողմից անհետաձգելի համարվող օրինագիծը ներկայացվել է հերթական նստաշրջանի ավարտից երեք ամսից ավելի պակաս ժամկետում, ապա խորհրդարանի լուծարման մեկնաբանվող հիմքն ընդհանրապես չի կարող կիրառվել:

Հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետում ամրագրված հիմքի դեպքում խորհրդարանի արձակումը ինքնըստինքյան հասկանալի է, քանի որ Ազգային ժողովն իր գործառույթներն իրականացնում է առաջին հերթին նիստերի միջոցով, որի արդյունքում էլ ընդունվում են Ազգային ժողովի որոշումները (Սահմանադրության հոդված 62, մաս 1), ուղերձները եւ հայտարարությունները (Սահմանադրության հոդված 62, մաս 2):

Հոդվածի 2-րդ մասի գ) ենթակետով սահմանված հիմքը եւս ուղակիորեն կապված է Ազգային ժողովի գործունակության հետ, սակայն, ի փարբերություն լուծարման նախորդ հիմքի, այսպեղ Ազգային ժողովն ի վիճակի է նիստեր գումարել, սակայն երեք ամսից ավելի ժամանակահատվածում ոչ մի որոշում չի ընդունում: Կարեւոր է պարզել, թե ինչ իմաստով է այսպեղ օգտագործված «որոշում» հասկացությունը՝ լայն, թե՛ նեղ: Նեղ իմաստով՝ որոշման ներքո պետք է հասկանալ միայն Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասում նշված որոշումները: Լայն իմաստով՝ որոշումը ներառում է նաեւ ուղերձները եւ հայտարարությունները (Սահմանադրության հոդված 62, մաս 2): Մեկնաբանվող ենթակետում «որեւէ որոշում» արտահայտության օգտագործումն ավելի շուրջ խոսում է լայն իմաստով որոշման օգտին:

³³ Ազգային ժողովի կանոնակարգի 35-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչեւ դեկտեմբերի երկրորդ հինգշաբթին եւ փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչեւ հունիսի երկրորդ հինգշաբթին:

74.1-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված խորհրդարանի լուծարման բոլոր հիմքերն ունեն մեկ ընդհանուր թերություն՝ դրանք լիովին չեն բացառում անգործունյա խորհրդարանի հեղափոխ գործունեությունը: Ցանկության դեպքում Ազգային ժողովը կարող է հեշտությամբ խուսափել լուծարումից՝ որեւէ որոշում կայացնելով կամ նիստ գումարելով: Օրինակ, բավարար է մերժել կառավարության կողմից ներկայացված որեւէ օրինագիծ եւ դրանով խուսափել լուծարումից:

74.1-րդ հոդվածի նոր կարգավորումներն արմատական փոփոխություններ են ենթադրում ինչպես Հանրապետության Նախագահի, այնպես էլ կառավարության հետ Ազգային ժողովի փոխհարաբերություններում: Ազգային ժողովի դիրքերը լուծարման ինստիտուտի նոր կարգավորման հետեւանքով կտրուկ կերպով ուժեղացել են, քանի որ, ինչպես արդեն վերը տեսանք, Ազգային ժողովի լուծարումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ Ազգային ժողովն ինքն ի վիճակի չէ լիարժեք կատարել իր գործառնությունը: Կորցնելով ներգործության հզոր հնարավորություններն Ազգային ժողովի նկատմամբ այն դեպքերում, երբ դա կարող էր հանգեցնել Հանրապետության Նախագահի գերակայությանը եւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռության սկզբունքի խաթարմանը, Հանրապետության Նախագահը եւ կառավարությունը միաժամանակ զրկվում են մի լծակից, որն սկզբունքորեն կարող էր օգտակար լինել որոշակի ճգնաժամային իրավիճակներում:

Եթե Ազգային ժողովում չկա հստակ մեծամասնություն, ապա չի բացառվում, որ Ազգային ժողովը շարունակաբար մերժի կառավարության քաղաքականությունն ու օրինագծերը եւ դրա հետեւանքով կառավարությունն ի վիճակի չլինի իրագործել իր ծրագրերը: Նման իրավիճակում քաղաքական ճգնաժամի լուծման ձեւ կարող էր լինել կառավարության կողմից վարահության հարցը դնելը եւ խորհրդարանի լուծարումը, եթե վերջինս ի վիճակի չէ ստեղծել նոր մեծամասնություն եւ ձեւավորել նոր կառավարություն: 74.1-րդ հոդվածի նոր կարգավորումները թույլ չեն տալիս նաեւ, որ ավելի թարմ ընդհանուր մասնապարտությունը Հանրապետության Նախագահը լուծարի Ազգային ժողովը եւ փորձի ստեղծել նոր քաղաքական մեծամասնություն³⁴: Քանի որ վերը նշված երկու առաջարկություններն էլ չընդունվեցին 2005թ. սահմանադրական բարեփոխումների ընթացքում³⁵, ապա դա կարելի է դիտարկել որպես սահմանադրի կողմից գիտակցված ընդհանուր լուծարում՝ բարձրացնելու Ազգային ժողովի դերակատարումը կառավարման համակարգում:

³⁴ Ի դեպ, Ֆրանսիայի Նախագահ Միտերանն իր կառավարման տասնչորս տարիների ընթացքում երկու անգամ է լուծարել Ազգային ժողովը (1981 եւ 1988 թվականներին), եւ երկուսն էլ իր ընտրությունից անմիջապես հետո, երբ պառլամենտում մեծամասնություն ունեին իրեն ընդդիմադիր ուժերը:

³⁵ Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, Վ. Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին, 2005, հոդված 96, մաս 1 եւ հոդված 117, կետ 3, էջեր 43, 50:

ՏՈՂՎԱԾ 75

1. Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պարկանում է պարզամավորներին եւ կառավարությանը:

2. Կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը եւ պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով:

3. Կառավարության եզրակացության համաձայն՝ պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերն Ազգային ժողովն ընդունում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Կառավարությունն իր կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վարսահության հարցը: Եթե կառավարության կողմից իր վարսահության հարցը դնելուց հետո՝ քսանչորս ժամվա ընթացքում, Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը չի ներկայացնում կառավարությանն անվարսահություն հայտնելու մասին որոշման նախագիծ կամ նման նախագիծ ներկայացվելու դեպքում Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ 84-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետում որոշում չի ընդունում կառավարությանն անվարսահություն հայտնելու մասին, ապա վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված:

5. Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վարսահության հարցը նույն նախաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:

1. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը սահմանում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների շրջանակը, որի համաձայն՝ ՏՏ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պարկանում է պարզամավորներին եւ կառավարությանը: Նշենք նաեւ, որ որոշ երկրներում օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների շրջանակն ավելի լայն է: Ընդ որում, մի շարք երկրներում, ինչպիսիք են Լիբիան, Լատվիան, Սլովենիան, Լեհաստանը, Ռումինիան, Պորտուգալիան, Իտալիան եւ այլն, նման իրավունք է փրամադրվում նաեւ ընտրելու իրավունք ունեցող որոշակի թվով քաղաքացիների:

Ռուսաստանում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ են նաեւ ՌԴ Նախագահը, իսկ իրենց վերաբերող հարցերի շրջանակներում՝ նաեւ ՌԴ սահմանադրական դատարանը, ՌԴ գերագույն դատարանը եւ ՌԴ գերագույն արբիտրաժային դատարանը³⁶:

Օրենսդրական նախաձեռնությունն օրենքի նախագծի առաջադրում է ՏՏ բարձրագույն օրենսդրական մարմնի քննարկմանը: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը ենթադրում է, որ նրա սուբյեկտների կողմից ներկայացվող օրենքի նախագծերը ՏՏ

³⁶ Տե՛ս ՌԴ Սահմանադրության 104-րդ հոդված:

Ազգային ժողովի կողմից ենթակա են պարտադիր քննարկման, սակայն ոչ պարտադիր ընդունման համար:

Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների առաջադրած օրենքների նախագծերի մշակման, քննարկման ու ընդունման կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ), որն ընդունվել է 2002 թվականի փետրվարի 20-ին:

Կանոնակարգի 47-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացվում է Ազգային ժողովի քննարկմանն օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի առաջադրմամբ: Այսինքն՝ նշված հոդվածի խմատով չի ներառվում օրենքի հայեցակարգի կամ գաղափարի առաջարկությունը:

Դարձյալ անդրադառնալով օրարերկրյա փորձին՝ նշենք, որ որոշ երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում, օրենքի նախագծերը ներկայացվում են միայն կառավարության, մասնավորապես, վարչապետի³⁷ կողմից, իսկ պարզամավորների կողմից ներկայացվող փաստաթղթերը, անկախ դրանց ձեւակերպումից, անվանվում են օրենսդրական առաջարկություններ: Սակայն, կարծում ենք, դրանք պարզապես եզրութաբանական առանձնահատկություններ են:

Կանոնակարգի համաձայն՝ օրենքի նախագծերի փաթեթը ներառում է առաջադրվող օրենքի նախագիծը եւ օրենքի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների նախագծերը:

03.04.2002թ. «Իրավական ակտերի մասին» ՆՇ օրենքի 26-րդ հոդվածին համապատասխան՝ նորմարիվ իրավական ակտերի նախագծերը նախապարաստվում են ընթացիկ ծրագրերի համաձայն, որոնք, որպես կանոն, կազմվում են 1-2 փարի ժամկետով: ՆՇ կառավարությունը հաստատում է նաեւ օրենսդրական նախաձեռնության կարգով ՆՇ Ազգային ժողովի քննարկմանն իր կողմից ներկայացվելիք օրենքներին եւ Ազգային ժողովի որոշումների նախագծերի նախապարաստման ծրագրերը:

Նշված օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ նորմարիվ իրավական ակտի նախագիծն իրավաստեղծ մարմին քննարկման ներկայացնելիս դրան կցվում են իրավական ակտի ընդունման հիմնավորումը, այն իրավական ակտերի ցանկը, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով՝ մշակվել է նորմարիվ իրավական ակտի նախագիծը, նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին տեղեկանքը, իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի եւ եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանք, նախագծի հեղինակների (մշակողների) անունները կամ դրա նախապարաստման աշխատանքներին մասնակցած մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ցանկը, ինչպես նաեւ այն մարմինների ցանկը, ում հետ նախագիծը համաձայնեցվել է: Կանոնակարգի 47-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ օրենքի նախագծին կամ նախագծերի փաթեթին կից, օրենքի ընդունման հիմնավորումից բացի, ներկայացվում է նաեւ օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը: Օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծին կցվում է տեղեկանք, որտեղ ներկայացվում է գործող օրենքի փոփոխվող հոդվածը:

³⁷ Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է վարչապետին եւ պառլամենտի անդամներին:

Օրենքի նախագիծը համարվում է Ազգային ժողովում առաջադրված, եթե այն պաշտոնապես, ինչպես նաև էլեկտրոնային կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստով ներկայացված է Ազգային ժողովի նախագահին:

Կառավարությունն օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ներկայացնում է իր որոշմամբ: Այս դեպքում նախագծին կից, ԱԺ կանոնակարգի 47-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջներից բացի, ներկայացվում են նաև որպես հիմնական զեկուցող հանդես եկող՝ կառավարության լիազոր ներկայացուցչի անուն-ազգանունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին կառավարության եզրակացությունը:

Օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելու կարգը սահմանվում է կանոնակարգի 51-րդ հոդվածով, որի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահն առաջադրված օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը երկօրյա ժամկետում դնում է շրջանառության մեջ, այն ուղարկելով՝

ա) Կառավարություն (եթե հեղինակը պարզամավոր է)՝ վարչապետի անունով, եւ Աշխատակազմ, որոնք 20-օրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահին ներկայացնում են իրենց եզրակացություններն առաջադրված օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ:

բ) հանձնաժողովներ՝ դրանց կազմից նշանակելով գլխադասային, որը 30-օրյա ընթացքում, սակայն ոչ շուրջ, քան Կառավարության եւ Աշխատակազմի եզրակացություններն սրանալը կամ դրանց սրացման ժամկետի սպառվելը, ներկայացնում է իր եզրակացությունը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվող օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունից համապարասխան քաղվածքն ուղարկելով Ազգային ժողովի նախագահին (եթե նշված ենթակետում սահմանված ժամկետը լրանում է մինչև չորսօրյա նիստերի երկուշաբթի օրը, սպա այդ ժամկետը համարվում է սպառված առաջիկա չորսօրյա նիստերի առաջին նիստից 2 ժամ առաջ):

գ) խմբակցություններ եւ պարզամավորների խմբեր:

Աշխատակազմի եզրակացությունում նշվում են օրենքի նախագիծը Կանոնակարգի 47-րդ հոդվածի պահանջներին համապարասխանելու վերաբերյալ փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են այդ նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների եւ Ազգային ժողովի որոշումների նախագծերի ցանկը կամ այդպիսի օրենքների, Ազգային ժողովի որոշումների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք:

Կառավարության եզրակացությունն անհրաժեշտության դեպքում ներառում է պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին իր եզրակացությունը:

Եթե սահմանված ժամկետում ՚՚ կառավարությունը եզրակացություն չի ներկայացնում պարզամավորի առաջադրած օրենքի նախագծի վերաբերյալ, սպա համարվում է, որ այն չի նվազեցնում պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում ծախսերը:

Կառավարության եւ Աշխատակազմի եզրակացությունները սրանալուն պես՝ 24 ժամվա ընթացքում, դրանք ուղարկվում են գլխադասային հանձնաժողով եւ հեղինակին:

Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում եւ քվեարկվում է Ազգային ժողովի նախագահի կազմած ժամանակացույցի համաձայն, որում սահմանվում են դրա վերաբերյալ եզրակացություն-

ների ներկայացման, Ազգային ժողովում դրա քննարկման և հերթական նստաշրջանի երկու ամսվա ընթացքում որոշում կայացնելու ժամկետները:

Չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկվող օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում չորսօրյա նիստերի առաջին նիստից առնվազն 2 ժամ առաջ՝ միաժամանակ որոշելով օրենքի նախագիծն այլընտրանքային համարելու հարցը, հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածքն ուղարկելով Ազգային ժողովի նախագահին:

Շրջանառության մեջ գտնվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը հերթական նստաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգ է ընդգրկվում Կանոնակարգի 54-րդ հոդվածով սահմանված կարգով, որով նախատեսվում են հերթական նստաշրջանի և չորսօրյա նիստերի օրակարգերում նախագծերի ընդգրկման ժամկետները:

Օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը շրջանառությունից, ընդ որում՝ հերթական նստաշրջանի և/կամ նիստերի օրակարգերից կարող է հանվել հեղինակի գրավոր առաջարկությամբ կամ Կանոնակարգով սահմանված այլ դեպքում: Նեղիմանկ իրավունք ունի այդ առաջարկությունն անել Ազգային ժողովի նախագահին կամ նիստը վարողին՝ ցանկացած ժամանակ, որն ընդունվում է անհապաղ:

Օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է երեք ընթերցմամբ, եթե ԱԺ կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

Օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը հեղինակի և գլխադասային հանձնաժողովի առաջարկությամբ, Ազգային ժողովի որոշմամբ, կարող են քննարկվել երկու ընթերցմամբ՝ ապահովելով ԱԺ կանոնակարգի պահանջների կատարումը: Այդ որոշման նախագիծը կարող է ներկայացվել օրենքի նախագծի առաջին ընթերցմամբ քննարկումն սկսելուց առաջ և քվեարկվել արտահերթ:

2. Ուսումնասիրվող հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ԱԺ կանոնակարգի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով:

Որպես կանոն, Ազգային ժողովում օրենքների նախագծերի կամ նախագծերի փաթեթների քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ³⁸,

1. հիմնական զեկուցողի ելույթը³⁹,
2. հարցեր հիմնական զեկուցողին⁴⁰,
3. հարակից զեկուցողի ելույթը,
4. հարցեր հարակից զեկուցողին,
5. մրբերի փոխանակություն,
6. հարակից զեկուցողի եզրափակիչ ելույթը,
7. քվեարկություն:

Որպես հիմնական զեկուցող՝ ելույթ է ունենում տվյալ հարցի հեղինակը, իսկ որպես հարակից զեկուցող՝ գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը:

Ազգային ժողովի բոլոր հանձնաժողովների ներկայացուցիչները կարող են գլխադասային հանձնաժողովի ներկայացուցից հետո, Ազգային ժողովի նախագահի սահ-

³⁸ Տե՛ս ԱԺ կանոնակարգի 55-րդ հոդվածի 4-րդ մաս:

³⁹ Որպես հիմնական զեկուցող ելույթ է ունենում տվյալ նախագծի հեղինակը:

⁴⁰ Որպես հարակից զեկուցող ելույթ է ունենում գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը:

մանած հերթականությամբ, հանդես գալ մինչև 20-ական թույն փետրվարյանը հարակից գեկուցմամբ՝ ներկայացնելով հարցի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը: Եթե օրենքի նախագծի հեղինակը (հիմնական գեկուցողը) պարզամալոր է, ապա վարչապետի լիազորած անձը կարող է հանձնաժողովների ներկայացուցիչներից հետո հանդես գալ հարակից գեկուցմամբ, իսկ նրանց եզրափակիչ ելույթից առաջ՝ եզրափակիչ ելույթով: Որպես կանոն, եզրափակիչ ելույթներից հետո արտահերթ ելույթի իրավունքը պահպանում է միայն Տանրապետության Նախագահը:

Ազգային ժողովի քվեարկությամբ չընդունված հարցը հանվում է շրջանառությունից, ընդ որում՝ չորսօրյա նիստերի, ինչպես նաև հերթական նախաշրջանի, արտահերթ նախաշրջանի կամ արտահերթ նիստի օրակարգերից, եթե Կանոնակարգ օրենքով կամ Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Վարցեր փալու կարգը սահմանվում է Կանոնակարգի 57-րդ հոդվածով, համաձայն որի՝ պարզամալորները հարցեր փալու համար հերթագրվում են էլեկտրոնային համակարգով՝ 10 վայրկյանի ընթացքում: Տամակարգը չգործելու դեպքում հերթագրումն իրականացնում է նիստը վարողը: Էլեկտրոնային համակարգով հերթագրման ընթացքը ցուցադրվում է լուսատախտակին: Վարցերը փրվում են խոսափողից՝ ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ, որում միաժամանակ հիշեցվում է հաջորդ հարց փրվողի անունը, ազգանունը: Դահլիճից բացակայող պարզամալորը գրկվում է հարց փալու իրավունքից: Մարքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն փրվում: Պարզամալորը յուրաքանչյուր գեկուցողի հարցեր է փալիս մեկ անգամ: *Մարքերի փոխանակությունը* փրվի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝

ա) պարզամալորների ելույթներ:

բ) խմբակցությունների և պարզամալորական խմբերի ներկայացուցիչների ելույթներ:

Մարքերի փոխանակության ընթացքում արտահերթ ելույթի իրավունք ունեն Տանրապետության Նախագահը, Ազգային ժողովի նախագահը, նրա փրակալները և վարչապետը, որոնց ելույթների փրությունը չի սահմանափակվում, ինչպես նաև Կառավարության անդամները: Վարցի քննարկմանը հրավիրված անձանց ելույթի իրավունք կարող է փրվել գլխադասային հանձնաժողովի կամ նիստը վարողի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ: Խմբակցության և պարզամալորական խմբի ներկայացուցիչների ելույթների համար հայտերը ներկայացվում են մինչև Կառավարության անդամների և հերթագրված պարզամալորների ելույթների ավարտը: Խմբակցությունների և պարզամալորական խմբերի ելույթների հաջորդականությունը որոշվում է ըստ նրանց թվաքանակի՝ փոքրից մեծ: Մինչև խմբակցությունների և պարզամալորական խմբերի ներկայացուցիչների ելույթները, Կառավարության անդամները՝ վարչապետի ներկայացմամբ, ունեն երեք արտահերթ ելույթի իրավունք: Տեղինակի (հիմնական գեկուցողի) և գլխադասային հանձնաժողովի առաջարկությամբ առանձին հարցի քննարկման համար Ազգային ժողովը կարող է սահմանել *հարուկ ընթացակարգ*: Վարուկ ընթացակարգով չի կարող սահմանափակվել գեկուցողներին հարց փրվողների և ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց փալու համար սույն օրենքով նախատեսված ժամանակը: Տեղինակը (հիմնական գեկուցողը) նշված կարգը ներկայացնում է իր գեկուցման ընթացքում, և Ազգային ժողովն այդ կապակցությամբ որոշում է ընդունում առանց քննարկման: Ինչ վերաբերում է *քվեարկության կարգին*, ապա, որպես կանոն, ՏՏ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, ուղերձները և հայտարարությունները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպ-

քերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բաց քվեարկությամբ:

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կառավարության եզրակացության համաձայն՝ պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերն Ազգային ժողովն ընդունում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Սահմանադրության 75-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է 71-րդ հոդվածի հարուկ նորմը, որը շեղվում է ընդհանուր կանոնից: Եթե ընդհանուր կանոնը սահմանում է, որ օրենքներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, ապա հարուկ նորմը սահմանում է, որ 71-րդ հոդվածում նշված օրինագծերն ընդունվում են պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Նարուկ նորմի նպատակն է ապահովել բյուջեի կայունությունը: Սակայն նորմի կիրառման համար անհրաժեշտ պայման է կառավարության եզրակացությունը, որը պետք է հաստատված լինի կառավարության որոշմամբ: Եզրակացությունը պետք է պարունակի հիմնավորում, որ ընդունվելիք օրինագիծը նվազեցնում է բյուջեի եկամուտները կամ ավելացնում է բյուջեի ծախսերը: Եթե կա այդպիսի եզրակացություն, ապա օրինագծի քվեարկության ռեժիմը կարարվում է 75-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով:

4. Մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագիծը ցանկացած ընթերցման ժամանակ ընդունելու առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Այդ կապակցությամբ վարչապետը կամ կառավարության լիազոր ներկայացուցիչը, քվեարկությունից անմիջապես հետո, կարող է պահանջել ընդմիջում մինչև հաջորդ նիստը՝ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կառավարության վստահության հարցը դնելու կողմնորոշման համար: Եթե ընդմիջումից անմիջապես հետո վարչապետն օրենքի նախագծի ընդունման առնչությամբ դնում է կառավարության վստահության հարցը, կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում կամ այդ որոշումը ներկայացվելուց հետո չի ընդունվում, ապա օրենքի նախագիծը համարվում է համապատասխան ընթերցմամբ կամ որպես օրենք ընդունված:

Ինչ վերաբերում է կառավարությանն անվստահություն հայտնելու հարցին, ապա կառավարության կողմից առաջարկված օրենքների նախագծերի համարեքստում, ԱԺ կանոնակարգի 107-րդ հոդվածի համաձայն, պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ կառավարության վստահության հարցը դրվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ Ազգային ժողով չի կարող ներկայացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Այս պարագայում նշված նախաձեռնությունն իրականացվում է աշխարհակազմից ստացված ձեռաթուղթն ստորագրելու եւ Ազգային ժողովի նախագահին ներկայացնելու միջոցով: Ձեռաթուղթն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո փոփոխման ենթակա չէ: Ձեռաթուղթը ստացման պահից 24 ժամվա ընթացքում Ազգային ժողովի նախագահին չներկայացվելու դեպքում համարվում է մարված: Եթե սահմանված

ժամկետում եւ անհրաժեշտ քանակի ստորագրություններով ձեւաթուղթը հանձնվում է Ազգային ժողովի նախագահին, սպա 24 ժամվա ընթացքում Ազգային ժողովում սկսվում է քննարկվել կառավարության անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծը:

Կառավարության անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քննարկվում է ԱԺ կանոնակարգի 55-րդ հոդվածով եւ 107-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

Կառավարության անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուրջ, քան 48, եւ ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում: Կառավարության անվտանգություն հայտնելու մասին որոշումն ընդունվում է պարզամակորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վերոհիշյալ որոշումն ընդունվելու դեպքում վարչապետը Նախագահության Նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին:

Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը՝ մինչեւ նոր կառավարության կազմավորումը:

ՆՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ փաստօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում: «Կառավարության կազմավորման եւ հրաժարականի մասին» 14 հոկտեմբերի 1998թ. ՆՏ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել են կառավարության բոլոր անդամները:

5. ՆՏ Սահմանադրության 75-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է դրույթ այն մասին, որ կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ վստահության հարցը նույն նստաշրջանում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագիծն առաջին, երկրորդ ընթերցմամբ կամ որպես օրենք (ցանկացած ընթերցման ժամանակ) ընդունելու առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Դա նշանակում է, որ եթե կառավարությունը նույն օրենքի նախագծի ընդունման առնչությամբ առաջին, երկրորդ եւ երրորդ ընթերցումների ընթացքում երկու անգամ դրել է իր վստահության հարցը, մեկ այլ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ նույն նստաշրջանի ընթացքում այլեւս չի կարող դնել իր վստահության հարցը:

Այնուհետեւ, քննարկվող դրույթի բովանդակությունից ակնհայտ է, որ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ վստահության հարցը նույն նստաշրջանում ոչ ավելի, քան երկու անգամ դնելու իրավունքը վերապահված է նախկին կառավարության հրաժարականի ընդունման դեպքում այդ նստաշրջանի ընթացքում կազմավորված նոր կառավարությանը:

ՆՕԴՎԱԾ 76

1. Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Մինչև բյուջեպային տարվա սկիզբը պետական բյուջեն շահաարարվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

2. Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

1. Նման կարգը հարկապես կարելու նշանակություն կարող է ունենալ այն դեպքում, երբ խորհրդարանում քաղաքական ուժերի որոշակի հարաբերակցության պայմաններում անհնարին է լինում ընդունել հաջորդ տարվա պետական բյուջեն:

Պետական և տեղական բյուջեները ՏՏ ֆինանսական համակարգի կենտրոնական մասն են կազմում: Դրանց միջոցով ստեղծվում են պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների դրամական ֆոնդերը, որոնք ապահովում են նրանց կողմից իրենց խնդիրների կատարումը: Բյուջեները պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների իրականացման ֆինանսական հիմքն են կազմում: Պետական և համայնքի բյուջեները՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձեռավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են: ՏՏ բյուջեպային համակարգը բաղկացած է երկու մակարդակից՝ պետական և համայնքների բյուջեներից: Այդ բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա:

Բյուջեի հիմնական հարկանիշն այն է, որ ծառայում է որպես դրամական միջոցների համապետական ֆոնդ, որն ստեղծվում է պետական և համայնքային ծախսերի ծածկման համար: Պետական բյուջեն դրամական կենտրոնացված միջոցների ֆոնդի ստեղծման և օգտագործման ծրագիրն է: Այն նախահաշիվ է՝ պետության եկամուտների և ծախսերի ցանկ: Բյուջեի եկամուտները և ծախսերը, միմյանց հետ համաձայնեցված են ինչպես ըստ իրենց ծավալի, այնպես էլ ըստ ստացման և օգտագործման ժամկետների: Բյուջեի երկրորդ, և, կարելու հարկանիշն այն է, որ դա հիմնական ֆինանսական ծրագիր է, քանի որ դրանից բացի առկա են նաև ֆինանսական այլ ծրագրեր (կազմակերպությունների ֆինանսական ծրագրերը, նախահաշիվները, հաշվեկշիռը): Երրորդ, եթե վերը նշված հարկանիշները բյուջեն բնորոշում են նրա փոփոխական բովանդակության տեսակետից, ապա բյուջեի իրավաբանական բնույթը նշանակում է, որ այն իրավաբանական ձեռակերպում է ստանում օրենքի տեսքով և օրենքով սահմանված կարգով: Չորրորդ, բյուջեն նաև քաղաքական փաստաթուղթ է: Մի շարք դեպքերում այն քաղաքական պայքարի արդյունք է (հարկապես բազմակուսակցական խորհրդարանում, երբ առկա է ուժեղ ընդդիմություն):

2. Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է օրենքով:

2002թ. փետրվարի 20-ի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի համաձայն՝

Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում եւ կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչեւ այդ ժամկետի ավարտը:

Ազգային ժողովի նախագահը, պետական բյուջեի նախագիծն սրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, խորհրդակցելով վարչապետի հետ, ինչպես նաեւ հարցը քննարկելով Ազգային ժողովի աշխատանքային խորհրդակցությունում, կազմում է մշտական հանձնաժողովներում եւ դրանց համարել նիստերում բյուջեի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկությունների ներկայացման եւ Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետների ժամանակացույց, որը ներկայացված բյուջեի նախագծի հետ ուղարկում է պարզամավորներին, խմբակցություններին, պարզամավորական խմբերին, մշտական հանձնաժողովներ եւ Վերահսկիչ պալատ: Ժամանակացույցն ուղարկվում է նաեւ Կառավարություն:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումն Ազգային ժողովի նիստում սկսվում է ոչ ուշ, քան բյուջեփայլին փարվան նախորդող նոյեմբեր ամսվա առաջին չորսօրյա նիստում:

Բյուջեի նախագծի նախնական քննարկումները Կրեմլի եւ ունենում մշտական հանձնաժողովներին եւ դրանց համարել նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաեւ վարչապետի լիազորած անձինք:

Բյուջեի նախագծի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսվող փակ ծրարի նյութերը քննարկվում են պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի ու ֆինանսավարկային եւ բյուջեփայլին հարցերի մշտական հանձնաժողովների համարել դռնփակ նիստում, որին կարող են մասնակցել պարզամավորները, Վերահսկիչ պալատի նախագահը, ինչպես նաեւ վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին իրենց առաջարկությունները պարզամավորները, խմբակցությունները, պարզամավորական խմբերը եւ մշտական հանձնաժողովներն Աշխատակազմի միջոցով ներկայացնում են Կառավարություն՝ նաեւ էլեկտրոնային կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Կառավարությունը մշտական հանձնաժողովներում նախնական քննարկումների արդյունքով կարող է սահմանված ժամկետում փոփոխություններ կատարել բյուջեի նախագծում:

Կառավարությունը խմբագրված բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում՝ կցելով ըստ հոդվածների հաջորդականության խմբավորված առաջարկությունների ամփոփաթերթիկը, որում հետեւյալ հաջորդականությամբ նշվում են՝ ա) առաջարկության հեղինակը, բ) հոդվածի համարը, որին վերաբերում է առաջարկությունը, գ) առաջարկության արժեքը կամ բովանդակությունը, դ) առաջարկության վերաբերյալ Կառավարության եզրակացությունը:

Առաջարկությունները, որոնց վերաբերյալ Կառավարությունն ամփոփաթերթիկում հայտնել է դրական կարծիք, պարտադիր ընդգրկվում են բյուջեի նախագծում:

Ազգային ժողովի նիստում բյուջեի մասին օրենքի նախագծի ներկայացման համար Կառավարությունը կարող է հանդես գալ երեք զեկուցմամբ՝ մինչեւ 90 րոպե ընդհանուր տևողությամբ: Չզեկուցողները ներկայացնում են նաեւ նախնական քննարկումների արդյունքով նախագծում կատարված փոփոխությունները:

Մինչեւ 30-ական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով հանդես են գալիս՝

ա) Կենտրոնական բանկի նախագահը՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Կենտրոնական բանկի եզրակացությունը, բ) Ֆինանսավարկային եւ բյուջեփայլին հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը, գ) պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինականության եւ հիմնավորվածության մասին հանձնաժողովի եզրակացությունը, դ) ըստ ցանկության մյուս մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

Խորհրդարանում մրքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ Ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարի՝ Ֆինանսների նախարարի մինչեւ 30 րոպե տեւողությամբ եզրափակիչ ելույթով, որից հետո արտահերթ ելույթի իրավունքը պահպանում է միայն Հանրապետության Նախագահը:

Մրքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը վարողը հայտարարում է բյուջեի նախագծի քննարկման ընդմիջում առնվազն 4 օրով:

Պարզամավորները, խմբակցությունները եւ պարզամավորական խմբերն իրենց առաջարկությունները, իսկ մշտական հանձնաժողովները՝ իրենց առաջարկություններն ու եզրակացությունները բյուջեի նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, պաշտոնապես, ինչպես նաեւ էլեկտրոնային կրիչի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնում են Աշխատակազմ, որը ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, դրանք ուղարկում է Կառավարություն:

Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվելուց առնվազն 24 ժամ առաջ Կառավարությունը բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական փորձերակը եւ Կանոնակարգի 80-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով կազմված ամփոփաթերթիկը, պարզամավորների թվին համապատասխան, հանձնում է Աշխատակազմ, որն ապահովում է դրանց փրամադրումը պարզամավորներին Ազգային ժողովի նստավայրում:

Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվելուց հետո վարչապետը կամ Ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարը մինչեւ մեկ ժամ տեւողությամբ ելույթում ներկայացնում է նախագծի վերջնական փորձերակը եւ ամփոփաթերթիկում ներառված առաջարկությունները:

Պարզամավորները զեկուցողներին հարցեր են փալիս Կանոնակարգի 57-րդ հոդվածով սահմանված կարգով:

Եթե բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական փորձերակն ընդունելու մասին Կառավարության առաջարկը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա Կառավարությունը կարող է բյուջեի հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը՝ Կանոնակարգի 60-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

Եթե Կանոնակարգի 107-րդ հոդվածով սահմանված կարգով Կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում կամ նման որոշում չի ընդունվում, ապա բյուջեն, Կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

Բյուջեի մասին օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է հատուկ ընթացակարգով:

ՏՈՂ-ՎԱԾ 77

1. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պեպրական բյուջեի կապարման, ինչպես նաև օտարերկրյա պեպրություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման նկատմամբ:

2. Ազգային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում եւ հաստատում է պեպրական բյուջեի կապարման մասին փարեկան հաշվեպիությունը:

1. Պեպրական բյուջեի կապարման⁴¹ նկատմամբ վերահսկողության իրականացումը ժամանակակից պեպրությունների օրենսդիր մարմինների՝ ֆինանսների ոլորտում ունեցած կարեւորագույն գործառնություններից է:

ՏՏ պեպրական բյուջեի կապարման նկատմամբ վերահսկողությունը հանդիսանում է ՏՏ Ազգային ժողովի կողմից ֆինանսների ոլորտում պեպրական իշխանության իրականացման անբակարկելի սահմանադրական ձեւ, ՏՏ ներկայացուցչական եւ օրենսդիր մարմնի անհրաժեշտ լիազորություններից մեկը եւ իրավունքի գերակայության ու իշխանությունների փարանջապարման սկզբունքների վրա հիմնված ժողովրդավարական պեպրության մեջ զսպումների ու հակակշիռների համակարգի էական փարը:

ՏՏ պեպրական բյուջեի կապարման **հսկողությունն** իրականացնում է ՏՏ կառավարությունը⁴²: Տսկողությունը բյուջեով նախարեւած բյուջեփային ծրագրերի կարգադրիչ հանդիսացող, ինչպես նաեւ բյուջեփային եկամուտների հավաքագրման պափասախանափու պեպրական կառավարչական հիմնարկների, դրանց ենթակա պեպրական հիմնարկների՝ օրենքներով եւ այլ իրավական ակտերով բյուջեի կապարման ոլորտում վերապահված լիազորությունների պափաշաճ կապարման ճշփությունը պարզելուն ուղղված գործառնությա է, որի նպափակն է՝

ա) պարզել հիմնարկների՝ բյուջեի եկամուտների (մուտքերի) ձեւավորմանը եւ ձախտերի իրականացմանն ուղղված գործունեության, հիմնարկներում հաշվապահական հաշվառման վարման եւ բյուջեի կապարման մասին հաշվեպիությունների կազմմանն ու ներկայացման համապափասախանությունը ՏՏ օրենսդրության պահանջներին.

բ) ուսումնասիրել բյուջեի կապարումը, հայտնաբերել այն թերությունները, որոնք ձագել են բյուջեի կապարման ընթացքում⁴³:

⁴¹ Բյուջեների կատարումը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների՝ համապատասխանափար պետական եւ համայնքների բյուջեների մուտքերի ձեւավորման եւ ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1997թ. հուլիսի 24-ին) 15-րդ հոդվ. 1-ին մաս): ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, զամձապետարանի միջոցով ապահովում է ՀՀ պետական եւ համայնքների բյուջեների կատարման կազմակերպումը («Գամձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2001թ. հուլիսի 27-ին) 13-րդ հոդվ.), իսկ բյուջեների կատարման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

⁴² «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվ. 1-ին մաս:

⁴³ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշման հավելված:

ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ ՀՀ կառավարության հսկողությունն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմա-

ՏՏ պերական բյուջեի կապարման նկարմամբ վերահսկողությունն իրականացնում է ՏՏ Ազգային ժողովը: Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում «Նախարարի Հանրապետության բյուջեֆային համակարգի մասին» ՏՏ օրենքի եւ րվյալ րարվա պերական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կապարման, օրարերկրյա պերություններից եւ միջազգային կազմակերպություններից սրացված փոխառությունների եւ վարկերի օգրագործման նկարմամբ, ինչպես նաեւ բյուջեֆային պարրավորությունների կապարման, բյուջեֆային միջոցների ծախսման օրինականության եւ հասրիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությանը⁴⁴:

Պերական բյուջեի կապարման նկարմամբ խորհրդարանական վերահսկողությունը ենթադրում է մի շարք վերահսկողական միջոցառումների իրականացում:

Առաջին՝ նախքան պերական բյուջեի ընդունումը, պերական իշխանության օրենսդիր մարմինն իրավասու է կառավարությունից սրանալու անհրաժեշտ ուղեկցող նյութեր, այդ թվում բյուջեի կապարումն ապահովող (օրինակ՝ ՏՏ կառավարության բյուջեֆային ուղերձն անհրաժեշտության դեպքում ներառում է նաեւ պերական բյուջեի կապարումն ապահովող օրենքների նախագծերը, ընդ որում եթե պերական բյուջեի մասին օրենքի նախագծով նախարեսվում է բյուջեի կապարումն ապահովող օրենքների ընդունում, ապա բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հերո):

Երկրորդ՝ ՏՏ Ազգային ժողովն իրավասու է պերական բյուջեի կապարման համար պարասխանարու մարմնից՝ ՏՏ կառավարությունից, պահանջելու եւ սրանալու բյուջեի կապարման վերաբերյալ անհրաժեշտ րեղեկարվություն:

Յուրաքանչյուր եռամսյակի ավարրից հերո՝ 40 օրվա ընթացքում, ՏՏ կառավարությունն Ազգային ժողով րեղեկանք է ներկայացնում պերական բյուջեի կապարման ընթացքի մասին⁴⁵:

Մինչեւ Ազգային ժողովի նիսրում հերթական բյուջեֆային րարվա բյուջեի հասրարումն Ազգային ժողովը քննարկում է ընթացիկ րարվան նախորդող րարվա բյուջեի կապարման մասին հաշվերվությունը⁴⁶, որը ներառում է՝

կերպում եւ անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստուգումների կատարման միջոցով՝ հսկողության տարեկան ծրագրի հիման վրա, որը հաստատում է ՀՀ վարչապետը՝ ՀՀ ֆինանսների նախարարի ներկայացմամբ: Ծրագրով սահմանվում է հսկողության շրջանակներում ծրագրային ստուգումների անցկացման ժամանակացույցը՝ ըստ ստուգման ենթակա հիմնարկների, նպատակի եւ ժամկետների: Ծրագրում նախատեսված ժամկետից շուտ կարող են անցկացվել նաեւ արտահերթ ստուգումներ, ինչպես նաեւ ծրագրում չընդգրկված օբյեկտներում՝ ստուգումներ, որոնց անցկացման համար կարող է հիմք հանդիսանալ ՀՀ վարչապետի հանձնարարականը կամ ՀՀ ֆինանսների նախարարի հրամանը՝ բացառությամբ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմերի եւ նախարարություն հանդիսացող պետական կառավարչական հիմնարկներում անցկացվող ստուգումների:

Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ մեկտեղ, ՀՀ ֆինանսների նախարարը ՀՀ կառավարություն է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում նախարարության կողմից իրականացված հսկողության արդյունքների ու այդ կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության ու այլ պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցների մասին հաշվետվություն, որը պարունակում է տեղեկություններ հաշվետու տարում իրականացված ստուգումների, դրանց արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, թերությունների եւ խախտումների, դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցների, հսկողության ընթացքում հայտնաբերված՝ պետությանը պատճառված վնասների փաստացի չափի, դրանց վերականգնման համար իրականացված միջոցառումների մասին, ինչպես նաեւ առաջարկություններ՝ անհամապատասխանությունների, թերությունների եւ խախտումների հետագա կանխարգելման վերաբերյալ:

⁴⁴ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 24 հոդվ. 3-րդ մաս:

⁴⁵ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի (ընդ. 2002թ. փետրվարի 20-ին) 86-րդ հոդվ. 2-րդ մաս:

⁴⁶ ՀՀ կառավարությունն ապահովում է պետական բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով (ՀՀ Սահմ. 89-րդ հոդվ. 2-րդ կետ):

ա) րեղեկություններ հաշվեքու րարում հարկաբյուջեֆային քաղաքականության եւ համապարասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պեֆական բյուջեի կարարման արդյունքների վրա.

բ) պեֆական բյուջեի եկամուրների, ծախսերի եւ դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմաֆական վերլուծությունը հաշվեքու րարվան նախորդող րարվա ֆաստացի, ինչպես նաեւ հաշվեքու րարվա համար հաստարված եւ ֆաստացի կարարված համապարասխան ցուցանիշների նկարամաբ.

գ) րեղեկություններ հաշվեքու րարում ՐՐ կառավարության պահուստային ֆոնդից կարարված ծախսերի ուղղությունների եւ չաֆերի մասին համապարասխան հիմնավորումներով.

դ) րեղեկություններ հաշվեքու րարում պեֆության արտաքին եւ ներքին պարտքերի եւ դրանց սպասարկման վերաբերյալ.

ե) այլ րեղեկություններ, որոնք ՐՐ կառավարությունն անհրաժեշտ է համարում պեֆական բյուջեի կարարման արդյունքները ներկայացնելու եւ հիմնավորելու համար⁴⁷:

ՐՐ կառավարությունը յուրաքանչյուր րարվա բյուջեի կարարման մասին րարեկան հաշվեֆությունն պաշտոնապես եւ էլեկտրոնային րարբերակով, ինչպես նաեւ դրա վերաբերյալ ՐՐ կենտրոնական բանկի կողմից ՐՐ կառավարություն ներկայացրած ՐՐ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունն⁴⁸ Ազգային ժողով է ներկայացնում մինչեւ հաջորդ րարվա մայիսի 1-ը: Րաշվեֆության պեֆական եւ ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հողվածները, բացված րեսքով, ներկայացվում են Ազգային ժողով առանձին ֆակ ծրարով:

ՐՐ Ազգային ժողովի նախագահը, պեֆական բյուջեի կարարման մասին րարեկան հաշվեֆությունն ստանալուց հեֆո՝ երկօրյա ժամկեֆում, խորհրդակցելով ՐՐ վարչապեֆի հեֆ, ինչպես նաեւ հարցը քննարկելով Ազգային ժողովի աշխատանքային խորհրդակցությունում, կազմում է ԱԺ մշտական հանձնաժողովներում բյուջեի կարարման րարեկան հաշվեֆության նախնական քննարկումների անցկացման ժամանակացույցը եւ ներկայացված հաշվեֆության հեֆ այն ուղարկում պարգամավորներին, խմբակցություններին, պարգամավորական խմբերին⁴⁹, մշտական հանձնաժողովներ, ՐՐ կառավարություն եւ ՐՐ վերահսկիչ պալատ:

ՐՐ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջեֆային հարցերի մշտական հանձնաժողովը՝ իր որոշամաբ, պեֆական բյուջեի կարարման մասին րարեկան հաշվեֆությունը շրջանառության մեջ դրվելուց հեֆո՝ 10-օրյա ժամկեֆում, Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում հաշվեֆության ամֆոֆ նկարագիրը:

Պեֆական բյուջեի կարարման մասին րարեկան հաշվեֆության նախնական քննարկումներն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում եւ քննարկումներն Ազգային ժողովի նիստում րեղի են ունենում գրեթե նույն ընթացակարգով, ինչ պեֆբյուջեի նախագծի քննարկումները:

Երրորդ՝ պեֆական բյուջեի կարարման նկարամաբ խորհրդարանական վերահսկողությունը ենթադրում է նաեւ բյուջեֆային միջոցների օգտագործման նկարամաբ

⁴⁷ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հողվ. 2-րդ մաս:

⁴⁸ ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ կառավարությանը պաշտոնական եզրակացություն է ներկայացնում նաեւ պետական բյուջեի կարարման մասին տարեկան հաշվետուքյան վերաբերյալ, որը հաշվետուքյանը կից ՀՀ կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողովի քննարկմանը («Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1996թ. հունիսի 30-ին) 31-րդ հողվ.):

⁴⁹ Գործող Ազգային ժողովում պատգամավորական խումբ չի ձեւավորվել:

արտաքին պետական վերահսկողություն⁵⁰ իրականացնող մարմնի առկայություն, որի իրավական կարգավիճակն արտասահմանյան պետություններում փարբեր է⁵¹:

Բարձրագույն վերահսկիչ մարմինները կարող են իրենց առջև դրված խնդիրներն օբյեկտիվ էլ արդյունավետ իրականացնել միայն այն դեպքում, երբ դրանք անկախ են վերջիններիս կողմից ստուգվող կազմակերպություններից եւ պաշտպանված կողմնակի ազդեցությունից: Բարձրագույն վերահսկիչ մարմնի հիմնումը եւ անկախության անհրաժեշտ մակարդակը պետք է ամրագրվեն Սահմանադրությամբ, իսկ մանրամասները կարող են սահմանվել համապարասխան օրենքով⁵²:

Ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքների կարեւոր գործառնություններից է պետական բյուջեի կատարման մասին փարբերյալ հաշվետվության վերաբերյալ եզրակացության կազմումը եւ փրամադրումը⁵³: Այս առումով Ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքների հաշվետվությունները (եզրակացությունները) դյուրին են դարձնում օրենսդիրների աշխատանքը եւ հիմք հանդիսանում խորհրդարանական որոշումների կայացման համար: Պետական բյուջեի կատարման մասին Ֆինանսական հաշվետվություններն ստուգելիս Ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքները օրենսդիրներին պետք է ապահովեն արժանահավասար փրբերյալությամբ այն մասին, թե կառավարությունն ինչ չափով եւ ինչ կերպ է իրականացնում խորհրդարանի «հանձնարարականները»⁵⁴:

⁵⁰ Ներքին վերահսկողական ծառայություններն ստեղծվում են առանձին գերատեսչությունների եւ կազմակերպությունների ներսում, այն դեպքում, երբ արտաքին վերահսկողական ծառայությունները չեն հանդիսանում ստուգվող կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի մասը: Բարձրագույն վերահսկիչ մարմինը՝ արտաքին ստուգող մարմինն է: Որպես արտաքին վերահսկողական ծառայություն՝ բարձրագույն վերահսկիչ՝ մարմինը պետք է ստուգի ներքին վերահսկողական ծառայության արդյունավետությունը: Եթե ներքին վերահսկողական ծառայությունը ճանաչվել է արդյունավետ, ապա, չսահմանափակելով բարձրագույն վերահսկիչ մարմնի՝ հանրնորկուն ստուգում իրականացնելու իրավունքը, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ բարձրագույն վերահսկիչ մարմնի եւ ներքին վերահսկողական ծառայության միջեւ խնդիրների անհրաժեշտ բաժանումը եւ նրանց համագործակցությունն ապահովելու համար (վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագրի (ընդունված 1977թ. Ֆինանսական վերահսկողության գերագույն առյանների միջազգային կազմակերպության (INTOSAI) IX համաժողովում) 3-րդ հոդվ. 1-ին եւ 3-րդ մասեր): ՀՀ վերահսկիչ պալատն անդամակցում է կազմակերպությանը 1998 թվականից:

⁵¹ Օրինակ՝ Պորտուգալիայի Սահմանադրության համաձայն՝ երկրի Հաշվիչ պալատը, ունենալով պետական մարմնի կարգավիճակ (հոդվ. 110), անկախ է եւ ենթարկվում է միայն օրենքին (հոդվ. 209): Սահմանադրությամբ Հաշվիչ պալատը նախատեսված է որպես առանձին կատեգորիայի դատարան (203 հոդվ. 1-ին մասի «» կետ): Հաշվիչ պալատը հանդիսանում է պետական ծախսերի օրինակաւության ստուգման եւ նրան ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների դատական քննության հարցերով գերագույն մարմինը (214 հոդվ. 1-ին մաս):

Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ վերահսկիչ պալատը, որը բյուջետային միջոցների եւ պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմին է:

⁵² Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագրի հոդվ. 5:

⁵³ Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում դաշնային բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, նախքան Պետական դումայում դրա քննարկումը, ենթակա է արտաքին ստուգման ՌԴ- Հաշվիչ պալատի կողմից: Հաշվետվության վերաբերյալ ՌԴ- Հաշվիչ պալատը նախապատրաստում է եզրակացություն, որը ոչ ուշ, քան մինչեւ ընթացիկ ֆինանսական տարվա սեպտեմբերի 15-ը ներկայացվում է Պետական դումա, ինչպես նաեւ ուղարկվում ՌԴ- կառավարություն (մանրամասն տե՛ս ՌԴ- բյուջետային օրենսգրքի հոդվ. 264-9): Պորտուգալիայում եւս Հաշվիչ պալատը պետության գլխավոր ֆինանսական հաշվետվության մասին ընդունում է եզրակացություն, որն ստանալով՝ Հանրապետության Ասամբլեան քննարկում եւ հաստատում է հաշվետվությունը (Սահմ. հոդվ. 107, հոդվ. 214, մաս 1 «» կետ):

⁵⁴ Ֆինանսական վերահսկողության գերագույն առյանների եվրոպական կազմակերպության (EUROSAI) 2002 թվականին Մոսկվայում տեղի ունեցած V համաժողովի քննարկման քեման էր «Ֆինանսական վերահսկողության գերագույն առյանները եւ պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը»: Քննարկման արդյունքներով ընդունվեցին համապատասխան հանձնարարականներ:

Պերական միջոցների օգտագործման թափանցիկության պահանջից բացի, խորհրդարանները հաճախ են առաջադրում իրենց հուսալի եւ ստուգված տեղեկատվություն փրամադրելու պահանջ՝ հետելյալ հարցերով.

- որքան միջոց եւ ինչ նպատակների համար է այն պետությունը ծախսում բյուջեն կատարելիս.

- ինչպիսի՞ք են այդ ծախսերի սոցիալ-տնտեսական հետեւանքները եւ դրանց արդյունավետությունը:

Ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքներին առաջարկվում է հաշվի առնել վերը նշված պահանջները պերական բյուջեի կատարման ստուգումն իրականացնելիս: Ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքները վերջնական հաշիվները ստուգելիս կարող են միաժամանակ իրականացնել ինչպես ֆինանսական, այնպես էլ միջոցների օգտագործման արդյունավետության ստուգումներ⁵⁵:

Պերական բյուջեի կատարման մասին կառավարության հաշվետվության ստուգումը խիստ պարասխանատու միջոցառում է յուրաքանչյուր ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքի համար: Վերջնական հաշիվներն ստուգելիս ֆինանսական վերահսկողության գերագույն ապրանքը պետք է իր եզրակացությունը եւ հաշվետվությունը հավասարի արժանահավատ եւ սպառիչ փաստաթղթերով, որոնք վստահություն կհաղորդեն խորհրդարանին որոշումներ կայացնելիս⁵⁶:

2. Ն Ազգային ժողովը պերական բյուջեի կատարման մասին կառավարության փարեկան հաշվետվությունը քննարկում եւ հաստատում է Ն վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ, որը բովանդակում է պերական բյուջեի կատարման փարեկան հաշվետվությամբ արտացոլված թվերի արժանահավատության եւ հաշվետու բյուջեփայլի փարվա պերական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման գնահատականները⁵⁷: Եզրակացությունը Ն վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ փաստ օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան այն Ազգային ժողովում օրենքով սահմանված կարգով քննարկվելուց փաստ օր առաջ, ներկայացվում է Ազգային ժողով⁵⁸:

Ն Ազգային ժողովի նիստում պերական բյուջեի կատարման մասին փարեկան հաշվետվությունը քննարկելիս մինչեւ 30 թույն տետողությամբ հարակից գեկուցմամբ հանդես է գալիս նաեւ Ն վերահսկիչ պալատի նախագահը՝ ներկայացնելով հաշվետվության, ինչպես նաեւ Ն կենտրոնական բանկի փարեկան ֆինանսական հաշվետվության վերաբերյալ Ն վերահսկիչ պալատի եզրակացությունը⁵⁹:

⁵⁵ EUROSAI V համաժողովում ընդունված հանձնարարականների 2-րդ կետի 2.8 ենթակետ (Մոսկվա, 2002թ.):

⁵⁶ Հանձնարարականների 2-րդ կետի 2.10 ենթակետ:

⁵⁷ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվ. 4-րդ մաս:

⁵⁸ «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2006թ. դեկտեմբերի 25-ին) 6-րդ հոդվ. 3-րդ մաս:

⁵⁹ Օրինակ՝ պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության 2007 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացության մեջ արձանագրված է նաեւ, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվելուց հետո էլ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չի կատարվել: Գործող բոլոր ԾԻԳ-երի հաշիվները գտնվել են առետրային բանկերում, ինչի հետեւանքով բյուջեի կատարումը չի իրականացվել միասնական դրամարկի սկզբունքով: Տե՛ս ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2008 թվականի մայիսի 8-ի թիվ 7/1 որոշումը պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության 2007 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ Վերահսկիչ պալատի եզրակացությունը հաստատելու մասին:

Պետական բյուջեի կապարման նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը դրսևորվում է նաև նրանում, որ պետական բյուջեի կապարման մասին փարեկան հաշվետվության քննարկման արդյունքներով օրենսդիր մարմինն իրավասու է հաստատելու կամ չհաստատելու⁶⁰ այդ հաշվետվությունը, ինչպես նաև փալու քաղաքական գնահատական կառավարության գործունեությանը պետական բյուջեի կապարման կապակցությամբ:

Եթե պետական բյուջեի կապարման մասին փարեկան հաշվետվությունը հաստատելու մասին առաջարկությունը Ն Ազգային ժողովի նիստում քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա Ն կառավարությունը կարող է պետական բյուջեի կապարման փարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը:

Եթե Ն կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում կամ նման որոշում չի ընդունվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված⁶¹:

Նապկանշական է, որ եթե Ն կառավարությանն անվստահություն է հայտնվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված: Փաստորեն, օրենսդիրը չի նախարեեսում պետական բյուջեի կապարման փարեկան հաշվետվության չհաստատման հնարավորություն՝ սահմանելով, որ անգամ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման ընդունման պարագայում հաշվետվությունը համարվում է հաստատված⁶²:

Պետական բյուջեի կապարման մասին փարեկան հաշվետվությունն Ազգային ժողովում քննարկվում է հաստատվում է մինչև հաշվետու փարվան հաջորդող փարվա հունիսի երկրորդ չորեքաբթին:

Ն կառավարությունը յուրաքանչյուր փարվա պետական բյուջեի կապարման մասին փարեկան հաշվետվության կազմում ներկայացնում է փրեկայություն՝ պետական պարբթի ե ընթացիկ պարտավորության վերաբերյալ⁶³:

Պետական պարբթի բաղադրիչներն են ներքին պետական պարբթը, արտաքին պետական պարբթը ե պետական երաշխիքները: Մասնավորապես՝ արտաքին պետական պարբթը Նայաստանի Նանրապետության անունից ե Ն կենտրոնական բանկի անունից Ն ոչ ռեզիդենտների ե օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված ե որոշակի պահի դրությամբ առկա պարբթային պարտավորությունների հանրագումարն է: Արտաքին պետական պարբթի աղբյուրներից են օտարերկրյա պետություններից, մի-

⁶⁰ Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում դաշնային բյուջեի կատարման մասին դաշնային օրենքով է հաստատվում հաշվետու ֆինանսական տարվա դաշնային բյուջեի կատարման մասին հաշվետվությունը (ՌԴ բյուջ. օր-ի 264-7, 264-8 հոդվ.): Դաշնային բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման արդյունքներով Պետական դուման ընդունում կամ մերժում է դաշնային բյուջեի կատարման մասին դաշնային օրենքը (264-11 հոդվ.):

⁶¹ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 89-րդ հոդվ. 6-րդ ե 7-րդ մասեր:

⁶² Նույն տեղում, 89-րդ հոդ. 8-րդ մաս:

⁶³ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2008թ. մայիսի 26-ին) 13-րդ հոդվ. 1-ին մաս: Պետական պարտքը Նայաստանի Նանրապետության անունից ե ՀՀ կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ ՀՀ կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված ե որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Մի շարք պետություններում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստանի Նանրապետություն, Բելառուսի Նանրապետություն) պետական պարտքի հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են բյուջետային օրենսգրքերով: Տե՛ս Бюджетный кодекс Российской Федерации от 31. 07. 1998 N 145-ФЗ, րլ. 14, Бюджетный кодекс Республики Казахстан от 4.12.2008 N 95-IV, րազд. 12, Бюджетный кодекс Республики Беларусь от 16. 07. 2008 N 412-3, րл. 9 (Заемствования):

ջազգային կազմակերպություններից, վարկավորող բազմակողմ հասարակություններից փոխառությունները եւ վարկերը⁶⁴:

ՏՏ Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են Նայասարանի Նանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախարեսող միջազգային պայմանագրերը⁶⁵ (81-րդ հոդվ. 2-րդ կետ), որոնցում ամրագրված պարտավորությունների համապարասխանությունը ՏՏ Սահմանադրությանը որոշում է Սահմանադրական դատարանը մինչեւ պայմանագրի վավերացումը (100-րդ հոդվ. 2-րդ կետ): Այս կապակցությամբ՝ ՏՏ սահմանադրական դատարանը, օրինակ, Նայասարանի Նանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 1997 թվականի հուլիսի 17-ին Վաշինգտոնում ստորագրված Զարգացման վարկային համաձայնագրի (նայրուղիների ծրագիր) փոփոխությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՏՏ Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, վերլուծելով 1995 թվականի հոկտեմբերի 2-ին ստորագրված Նամաձայնագրի գործադրման ձեւավորված իրավակիրառ պրակտիկան, միաժամանակ պարզեց, որ վարկային ծրագրի իրականացման փուլում Կոլումբիայի եւ գրեթե թերացումներ եւ բացթողումներ⁶⁶: ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրեց նաեւ, որ վարկային համաձայնագրի վավերացումից հետո ՏՏ կառավարությունը բավարար հետետողակաւնությամբ չի վերահսկել դրա կատարման ընթացքը, իսկ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը 1997 թվականի ընթացքում ծրագրի իրականացման համար հարկացված վարկային միջոցների օգտագործման հարցը բնության առարկա չի դարձրել, եւ, բնականաբար, պարզամտվորներին համապարասխան Կոլումբիայի եւ գրեթե թերացումներ չեն տրամադրվել, ինչը նախարեսված էր օրենքով: Այսպիսով փաստվեց, որ գործնականում վերը նշված համաձայնագրի առնչությամբ դեռեւս ապահովված չէ ՏՏ Սահմանադրության 77-րդ հոդվածով նախարեսված վերահսկողության պարզաւն ու անընդհատ իրականացումը⁶⁷:

ՏՏ սահմանադրական դատարանի կողմից ՏՏ իրավասու պետական մարմիններին՝ իրենց լիազորությունների ոչ լիարժեք իրականացման հետեւանքով վարկային միջոց-

⁶⁴ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվ.: ՀՀ համախառն արտաքին պարտքը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ կենտրոնական բանկի անունից, ինչպես նաեւ ՀՀ ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնված եւ որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է:

⁶⁵ Այդպիսի պայմանագիր է վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալուն կամ տրամադրելուն, միջպետական կամ միջկառավարական հիմնադրամների ձեւավորման նպատակով դրամական միանվագ կամ պարբերական մուծումներ նախատեսում կամ միջկառավարական, միջգերատեսչական (միջբանկային) այնպիսի միջազգային կազմակերպության ստեղծման (հիմնադրման) դրույթներ պարունակող միջազգային պայմանագիրը, որի համար Հայաստանի Հանրապետությունը պարտավորված է լինելու կատարել միանվագ կամ պարբերաբար դրամական մուծումներ կամ նախատեսում է այլ ֆինանսական պարտավորությունների ստանձնում («Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2007թ. փետրվարի 22-ին) 24-րդ հոդվ. 4-րդ մաս): Մույն օրենքով ֆինանսական պարտավորություններ չեն համարվում միջազգային պայմանագրով ստանձնած այն պարտավորությունները, որոնք թեւ հայկական կողմի համար նախատեսում են դրամական մուծումներ կամ հատկացումներ կատարել, սակայն դրանք Հայաստանի Հանրապետության բյուջեի կամ համայնքային բյուջեների եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման չեն հանգեցնում:

⁶⁶ Մասնավորապէս՝ պարզվեց, որ ծրագրի իրականացման մրցույթների կազմակերպումը եւ արդյունքների ամփոփումը կատարվել են սահմանված կարգի խախտումներով, պայմանագրերն ստորագրվել են ոչ իրավասու մարմնի կողմից եւ դրանց ներկայացվող պահանջների խախտումներով, չի գործել միջանկյալ հաշվետվության եւ անընդհատ վերահսկողության ու հետադարձ կապի հստակ համակարգ, իսկ գործող համակարգը եղել է թերի ու ոչ լիարժեք, ապահովված չի եղել վարկային միջոցների օգտագործման անհրաժեշտ ու բավարար հրապարակայնություն, վարկառուի կողմից չի անցկացվել անկախ հաշվեքննություն, իրավասու պետական մարմինները թերացել են ժամանակին ու անհրաժեշտ քայլեր ձեռնարկել վարկային միջոցների օգտագործման նկատմամբ իրենց վերահսկողական լիազորությունները պահանջվող հետետողակաւնությամբ ու մակարդակով կատարելու համար:

⁶⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 1998 թվականի հունվարի 16-ի ՄԳՆ-76 որոշումը:

ների նպատակային եւ արդյունավետ ծախսման բնագավառում մի շարք թերություններ ու բացթողումներ են արձանագրվել նաեւ, օրինակ, Նայասպանի Նանրապետության եւ Գյուղարնութեան գարգացման միջազգային հիմնադրամի միջեւ փոխառության (հյուսիս-արեւմտյան գյուղարնութեան ծառայությունների ծրագիր) համաձայնագրում ամրագրված պարավորությունների՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: Ուշադրության է արժանի սույն գործով ՏՏ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը, որում թեեւ համաձայնագրում ամրագրված պարավորությունները ճանաչվեցին ՏՏ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն միաժամանակ նշվեց, որ **սահմանադրական դատարանը գտնում է՝ վարկային համաձայնագրերում պարունակվող դրույթները կարող են սահմանադրական լինել ոչ միայն այն առումով, որ, պետական իշխանության մարմինների իրավասության շրջանակներում գործադրվելով, նախադրյալներ են ստեղծում սահմանադրական հիմնական սկզբունքների ու նպատակների իրագործման համար, այլև բխում են մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներից ու ազատություններից: Փոշիացնելով եւ անարդյունավետ օգտագործելով վարկային միջոցները՝ ոչ միայն դրանց փոխհատուցման հնարավորություններ չեն ստեղծվում, այլև սերունդների համար չհիմնավորված պարտքեր են կուտակվում՝ ուրնահարելով նրանց իրավունքները:** Ուստի նկատի ունենալով, որ քննության առարկա համաձայնագրով իրականացվելիք ծրագրեր միջոցների փոշիացման եւ ոչ նպատակային օգտագործման ավելի մեծ ռիսկ է պարունակում, ինչպես նաեւ, հաշվի առնելով գյուղարնութեան ոլորտում նախորդ վարկային ծրագրերի իրականացման իրավակիրառ պրակտիկայում տեղ գրած թերությունները, ՏՏ սահմանադրական դատարանը գտավ, որ վերը նշված համաձայնագրի իրականացման արդյունքում հակասահմանադրական իրավիճակ չառաջանալու նպատակով ՏՏ Ազգային ժողովը եւ ՏՏ կառավարությունն իրենց սահմանադրական իրավասությունների շրջանակներում հատուկ վերահսկողություն պետք է իրականացնեն Նյուսիս-արեւմտյան գյուղարնութեան ծառայությունների ծրագրի կատարման նպատակով փոխառյալ միջոցների օգտագործման նկատմամբ⁶⁸:

«Վերահսկիչ պալատի մասին» ՏՏ օրենքի համաձայն՝ ՏՏ վերահսկիչ պալատի գործառնությունների շարքին են դասվում նաեւ պետական պարտքի կառավարման, այդ թվում՝ արտաքին վարկային միջոցների ներգրավման, սպասարկման եւ օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ՏՏ պետական բյուջեի եւ ՏՏ պետական պարտքի սպասարկման մասով ՏՏ կենտրոնական բանկի գործունեության նկատմամբ ֆինանսական, կարարողական եւ համապատասխանության վերահսկողության, ինչպես նաեւ պայմանագրային հիմունքներով պետական բյուջեն եւ պետական պարտքը սպասարկող առեւտրային բանկերի սպասարկման գործունեության նկատմամբ ֆինանսական եւ համապատասխանության վերահսկողության իրականացումը, ՏՏ գանձապետական համակարգի կողմից իրագործվող խնդիրների օրինական եւ արդյունավետ կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ ՏՏ արտաքին պետական պարտքի սպասարկման, օբարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների կողմից Նայասպանի Նանրապետությանը փոխառված ապրանքային վարկերի եւ դրամաշնորհների (գրանտների) դրամայնացման հաշվառման եւ դրա հետ կապված գործառնությունների համակարգման ու հսկման նկատմամբ: Վերահսկիչ պալատի կողմից փարբեր վարկային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկո-

⁶⁸ ՀՀ սահմանադրական դատարանի 1998 թվականի մարտի 3-ի ՍԳՌ-93 որոշումը:

դության արդյունքներով բազմիցս արձանագրվել են ծրագրերի իրականացման ընթացքի ցածր ցուցանիշներ, ծրագրերի կամ որոշ աշխատանքների իրականացման ժամկետների խախտման, ՆՏ կառավարություն ներկայացվող, ինչպես նաև փարբեր բնույթի հաշվետվություններում արտացոլված փվյալների անճշտության կամ ներկայացման ժամկետների խախտման փաստեր, այլ խախտումներ եւ թերություններ⁶⁹: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեև «Վերահսկիչ պալատի մասին» ՆՏ գործող օրենքն այս մարմնին օժտել է վերահսկողական լայն լիազորություններով, այդուհանդերձ, դրանց իրացման արդյունքում ՆՏ վերահսկիչ պալատը պարասխանարվության միջոցներ ինքնուրույն չի կիրառում, հանգամանք, որն էսպես ազդում է այս մարմնի գործունեության արդյունավետության վրա:

Եթե նախկինում «Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՆՏ օրենքի⁷⁰ (ընդ. 29 մայիսի 1996թ.) 7-րդ հոդվածում սահմանված էր, որ անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի նախագահը սահմանված կարգով նյութերն ուղարկում է ՆՏ գլխավոր դատախազություն, ապա ներկայումս ՆՏ վերահսկիչ պալատը վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունները եւ ընթացիկ հաշվետվությունները Վերահսկիչ պալատի խորհրդի որոշմամբ կարող է ուղարկել ՆՏ գլխավոր դատախազություն, եթե դրանցում առկա են կասկածներ քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ⁷¹:

Արտաքին աղբյուրներից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված ՆՏ Ազգային ժողովն իրավասու է նաև սրեղծել ժամանակավոր հանձնաժողով՝ սահմանելով դրա խնդիրները, գործունեության ժամկետը եւ կարգը: 1998 թվականին ձեւավորվեց ԱԺ ժամանակավոր հանձնաժողով՝ միջազգային վարկերի եւ փոխառությունների օգտագործման արդյունավետությունը Վերահսկիչ պալատի օգնությամբ ուսումնասիրելու, վարկերի ստացման թափանցիկությունն ու վերահսկելիությունն ապահովելու նպատակով օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու եւ այդ կապակցությամբ Ազգային ժողով եզրակացություն եւ փեղեկանքներ ներկայացնելու համար⁷²: 2003 թվականին ՆՏ Ազգային ժողովի որոշմամբ սրեղծված ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նպատակն էր օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների եւ մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետության ուսումնասիրումը եւ այդ կապակցությամբ Ազգային ժողով եզրակացություն (փեղեկանք) ներկայացնելը⁷³:

⁶⁹ Տե՛ս, օրինակ, ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2007 թվականի տարեկան հաշվետվությունը, որը «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողով է ներկայացրել ՀՀ վերահսկիչ պալատը:

⁷⁰ Չի գործում:

⁷¹ «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվ. 4-րդ մաս: «Կասկածներ քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ» ձեւակերպումը վերանայման (ճշգրտման) կարիք ունի, քանզի կարող է կամայականության տեղիք տալ, այսինքն՝ հնարավոր է ազդեցիկ դառնա նպատակահարմարության գործոնը:

⁷² ՀՀ Ազգային ժողովի 1998 թվականի հունիսի 10-ի թիվ Ն-268-1 որոշումը՝ Օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի մասին:

⁷³ ՀՀ Ազգային ժողովի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ Ն-014-3 որոշումը՝ Օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների եւ մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին:

Որոշմամբ սահմանվեց, որ հանձնաժողովն իրականացնում է ուսումնասիրություններ (նաև պետական

Նանձնաժողովը՝ իր որոշմամբ, կարող է իր քննարկմանը ներկայացված օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի վերաբերյալ հարցումներով դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնապարանձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին, որոնք պարտավոր են 20-օրյա ժամկետում քննարկել հանձնաժողովի գրավոր հարցումը եւ գրավոր պատասխանել դրան, ինչպես նաեւ ոչ ուշ, քան քննարկումից երեք օր առաջ գրավոր տեղեկացնել հանձնաժողովին իր բարձրացրած հարցի քննարկման մասին⁷⁴:

Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է Ազգային ժողովի նիստում: Ժամանակավոր հանձնաժողովի ներկայացրած եզրակացության, տեղեկանքի հիման վրա պատգամավորը կարող է Ազգային ժողովի նիստում ժամանակավոր հանձնաժողովի՝ իր գործունեության մասին զեկուցումից հետո՝ երկօրյա ժամկետում, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ներկայացնել Ազգային ժողովի որոշման նախագիծ, որը գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ ընդգրկվում է հերթական նախաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին նախագծում եւ առաջիկա քառօրյա նիստերի օրակարգի նախագծում⁷⁵:

Նորանկախ Նայասարանի օրենսդիր մարմնի՝ վերը նշված հանձնաժողովների գործունեության պրակտիկան ցույց է տալիս, որ դրանք իրենց գործունեության ընթացքում շոշափելի արդյունքների չեն հասել: Սա, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովները գործուն վերահսկողական լիազորություններով, ըստ էության, օժտված չեն⁷⁶, հանգամանք, որը կասկածի փակ է դնում վերջիններիս գործունեության արդյունավետությունը: Նարկ է նաեւ փաստել, որ այսպիսի հանձնաժողովները, որպես կանոն, սրեղծվում են՝ ելնելով քաղաքական նպատակահարմարությունից՝ պայմանավորված պետության մեջ առկա քաղաքական իրավիճակով (դրա փոփոխությամբ) եւ իրենց գործունեության ընթացքում լուծում (փորձ կատարում լուծել) առավելապես քաղաքական խնդիրներ:

եւ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների հետ)՝ դրանց վերաբերյալ կազմելով համապատասխան արձանագրություններ: Հանձնաժողովն իրավասու է հարցումներով դիմել համապատասխան մարմիններ (կազմակերպություններ), որոնք հնարավորինս սեղծ ժամկետում պետք է տրամադրեն անհրաժեշտ տեղեկատվություն: Սահմանվեց, որ ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատն աջակցում է հանձնաժողովի գործունեությանը: Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս իրավասու է ներգրավել համապատասխան մասնագետների, փորձագետների, աուդիտորների:

Նախ՝ սահմանվեց, որ հանձնաժողովն իր գործունեության արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցում է մինչեւ 2004 թվականի հոկտեմբերի 1-ը: Մինչ այդ հանձնաժողովն իր նախաձեռնությամբ Ազգային ժողովի նիստում կարող է հանդես գալ հաղորդումներով: Իսկ ՀՀ օրենսդիր մարմնի 2004 թվականի նոյեմբերի 24-ի թիվ Ն-153-3 որոշմամբ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգվեց մինչեւ ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի հիմնգրքող նստաշրջանի ավարտը:

⁷⁴ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 30. 1-րդ հոդվ.:

⁷⁵ Նույն տեղում, 22-րդ հոդվ. 3-րդ եւ 4-րդ մասեր:

⁷⁶ Մի շարք պետություններում (օրինակ՝ Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում) նախատեսված է խորհրդարանական հետաքննությունների անցկացման հնարավորությունը: Օրինակ՝ Իտալիայում խորհրդարանի պալատներն իրավասու են անցկացնելու խորհրդարանական հետաքննություններ, ինչի համար ստեղծվում է ad hoc խորհրդարանական հանձնաժողովը, որը գործնականում օժտված է անսահմանափակ վերահսկողական լիազորություններով: Հետաքրքրական է խորհրդարանական հետաքննությունների անցկացման փորձը ԱՄՆ Կոնգրեսի կողմից, որը ենթադրում է նաեւ բյուջետային հատկացումների կրճատման տեսքով սանկցիայի կիրառում այն գերատեսչության նկատմամբ, որի գործունեության ոլորտում ի հայտ են բերվել խախտումներ:

Իհարկե, խորհրդարանական հետաքննությունը չի կարող փոխարինել քրեական գործերով հետաքննությանը, նախաքննությանը եւ, ընդհանրապես, արդարադատության իրականացմանը:

ՆՈՂ-ՎԱԾ 78 (հանված է)

ՆՈՂ-ՎԱԾ 79

1. Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Ազգային ժողովի նախագահ:

2. Ազգային ժողովի նախագահը վարում է նիստերը, փնտրիկում է Ազգային ժողովի նյութական միջոցները, ապահովում նրա փնականոն գործունեությունը:

3. Ազգային ժողովն ընտրում է Ազգային ժողովի նախագահի երկու փոխակալ:

1. Մեկնաբանվող հոդվածը նվիրված է Ազգային ժողովի գործունեության կազմակերպական հարցերին: Մասնավորապես, 1-ին եւ 3-րդ կետերը սահմանում են Ազգային ժողովի ղեկավար կազմի ձեւավորման կարգը:

Մեկնաբանվող դրույթների բովանդակությունից բխում է, որ ինչպես Ազգային ժողովի նախագահի, այնպես էլ նրա երկու փոխակալների պաշտոններն ընտրվի են: Ընդ որում, նրանց ընտրության ընթացակարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 17-րդ հոդվածով, իսկ այդ պաշտոններում առաջադրված թեկնածուների ընտրության հարցերը քննարկվում են նույն օրենքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով:

Խորհրդարանների նախագահների ընտրովիության սկզբունքը կիրառվում է գրեթե բոլոր երկրների սահմանադրական պրակտիկայում: Բացառություն են կազմում առանձին երկրներ, որտեղ այդ պաշտոնում կատարվում են նշանակումներ: Օրինակ, Կանադայում Սենատի խոսնակին նշանակում է գեներալ-նահանգապետը՝ վարչապետի երաշխավորությամբ: Արգենտինայում եւ ԱՄՆ-ում խորհրդարանի վերին պալատի նախագահի պաշտոնն համարվում է երկրի փոխնախագահը: Մեծ Բրիտանիայում Լորդերի պալատը ղեկավարում է գործադիր իշխանության ներկայացուցիչը՝ Լորդ-կանցլերը: Իսկ Նիդեռլանդներում ստորին պալատի խոսնակին նշանակում է թագավորը՝ նույն պալատի կողմից ներկայացված երեք թեկնածուների կազմից:

Չնայած այն հանգամանքին, որ ՏՏ Սահմանադրությունը չի սահմանում Ազգային ժողովի նախագահի եւ նրա փոխակալների թեկնածուների պատգամավոր հանդիսանալու պարտադիր պահանջ, Ազգային ժողովի կանոնակարգով այդ բացը լրացվել է համապատասխան նորմով, որի բովանդակությունից հետևում է, որ Ազգային ժողովի նախագահի, նրա փոխակալների պաշտոններում թեկնածուներ առաջադրվում են պատգամավորների կազմից (հոդված 17, կետ 1):

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ մեկնաբանվող դրույթների վերլուծությունից չի հետևում, թե խորհրդարանի նախագահն Ազգային ժողովի լիազորությունների ինչպիսի ժամկետով է ընտրվում:

Եթե մինչեւ 2007 թվականի մարտի 24-ի խմբագրությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում էր, որ Ազգային ժողովի

նախագահն ընտրվում է Ազգային ժողովի լիազորությունների ամբողջ ժամկետով, ապա 2007 թվականի մարտի 24-ի խմբագրությամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքից այդ նորմը հանվել է: Ստացվում է, որ եւ Սահմանադրությամբ, եւ Ազգային ժողովի կանոնակարգով Ազգային ժողովի նախագահի լիազորությունների ժամկետը կարգավորող դրույթ նախատեսված չէ:

Տարբեր երկրների սահմանադրական պրակտիկայում՝ ինչպես խորհրդարանների, այնպես էլ նրանց նախագահների լիազորությունների ժամկետները տարբեր են: Օրինակ, Շվեդիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Բելգիայում, Ֆինլանդիայում եւ այլ երկրներում խորհրդարանի նախագահին ընտրում են միայն մեկ նստաշրջանի համար: Իսկ Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կանոնակարգով նույնպես Պետական դումայի նախագահի լիազորությունները չեն սահմանվում Պետական դումայի լիազորությունների ամբողջ ժամկետով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ խորհրդարանների լիազորությունների ժամկետով նախագահների ընտրությունը համարվում է տարածված պրակտիկա:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է պարզամավորներին: Որպես կանոն, բոլոր թեկնածուների ընտրության կապակցությամբ Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով կազմակերպվում են քննարկումներ, որոնց ընթացքում որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս առաջադրված թեկնածուն, որը նաեւ կարող է՝ մինչեւ եզրափակիչ ելույթների ավարտը, ինքնաբացարկ հայտնել:

Անհրաժեշտ է նշել, որ Նայաստանի Նանրապետությունում Ազգային ժողովի երկրորդ (1999 թվական) գումարումից սկսած ձեւավորվեց խորհրդարանական հետեյալ պրակտիկան՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, մշտական հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների պաշտոններում ընտրությունը կատարվում է, այսպես կոչված՝ «փաթեթային համաձայնության» կամ «կոալիցիոն հուշագրի» հիման վրա: Այդպիսի համաձայնություն ձեռք էր բերվում խորհրդարանական ընտրություններում հաղթող ճանաչված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) խմբակցությունների ու կազմավորված պարզամավորական խմբերի կողմից:

Ազգային ժողովի կանոնակարգը սահմանում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների գաղտնի քվեարկությամբ ընտրության կազմակերպում (հոդված 17, 3-րդ եւ 4-րդ կետեր, հոդված 97, 8-րդ կետ):

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի բովանդակությունից բխում է, որ Ազգային ժողովի նախագահ ընտրվում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ պարզամավորների 66 եւ ավելի ձայն ստացած թեկնածուն:

Ազգային ժողովի նախագահի եւ նրա տեղակալների սահմանադրաիրավական կարգավիճակը բնութագրող կարեւոր հարցերից է նրանց լիազորությունների դադարումը:

Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների լիազորությունների դադարման երկու հիմքեր՝ ա) երբ դադարել են նրանց պարզամավորական լիազորությունները, բ) երբ նրանք փվել են հրաժարական (հոդված 20, կետ 1): Ընդ որում, պարզամավորական լիազորությունների դադարման եւ հրաժարականի ներկայացման ընթացակարգերն իրենց կանոնակարգումն են ստացել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ եւ 20-րդ հոդվածներով:

Միաժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում է նաև Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (պաշտոնանկ անելու) հնարավորություն: Նշված պաշտոնատար անձանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (պաշտոնանկ անելու) մասին առաջարկություն ներկայացնում են պարզամավորները: Այդ առաջարկությունը քննարկվում է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված ընթացակարգով, այդ թվում նշված պաշտոնատար անձանց՝ որպես հարակից զեկուցող, հանդես գալու հնարավորությամբ եւ Ազգային ժողովի որոշումները գաղտնի քվեարկությամբ ընդունելու պարտադիր պայմանի առկայությամբ:

Նարկ է նշել, որ Ազգային ժողովի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (պաշտոնանկ անելու) մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ Ազգային ժողովի նախագահի տեղակալների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետեր):

2. ՀՀ Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով Ազգային ժողովի նախագահին վերապահված են լայն լիազորություններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպչական եւ ներկայացուցչական:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահը վարում է նիստերը, փոփոխում է Ազգային ժողովի նյութական միջոցները, ապահովում նրա բնականոն գործունեությունը: Թվարկված գործունեության տեսակները կրում են առավելապես կազմակերպչական բնույթ:

Կազմակերպչական են համարվում նաև՝ արքայադատի և հերթական նստաշրջանների ու նիստերի գումարումը, նիստերի օրակարգի նախագծի ձևավորումը, Ազգային ժողովի որոշումների, ուղերձների եւ հայտարարությունների ստորագրումը եւ հրատարակումը, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության կառավարումը եւ այլն:

Ներկայացուցչական բնույթի լիազորություններն Ազգային ժողովի նախագահին իրավունք են վերապահում ներկայացնել Ազգային ժողովը՝ պետական իշխանության մարմինների, պետական այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական եւ այլ կազմակերպությունների, օտարերկրյա խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների, պետական եւ քաղաքական գործիչների հետ փոխհարաբերություններում:

Անհրաժեշտ է նշել, որ Ազգային ժողովի նախագահի լիազորությունները կարող են դասակարգվել նաև նստաշրջանային եւ արտանստաշրջանային ժամանակահատվածում իրականացվող լիազորությունների:

Ընդ որում, Ազգային ժողովի նախագահը՝ ինչպես հերթական, այնպես էլ արքայադատի **նստաշրջանների ընթացքում** հրավիրում եւ վարում է Ազգային ժողովի նիստերը, Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում նստաշրջանի եւ նիստերի օրակարգերի նախագծերը, հետևում է Ազգային ժողովի կանոնակարգի պահպանմանը, ձայն է փոխա ելույթի իրավունք ունեցող անձանց, անցկացնում է քվեարկություն քննարկվող հարցի կապակցությամբ, հրատարակում է քվեարկության արդյունքները եւ այլն:

Արտանստարշջանային ժամանակահատվածում Ազգային ժողովի նախագահը՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքում սրանձնում է Նանրապետության Նախագահի թափուր պաշտոնը, շրջանառության մեջ է դնում օրենքների եւ Ազգային ժողովի որոշումների նախագծերը, նշանակում է դրանց քննարկման գծով գլխադասային հանձնաժողովին, ներկայացնում է Ազգային ժողովն ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական հարաբերություններում եւ այլն:

Ազգային ժողովի նախագահի հիմնական լիազորությունները սահմանվել են Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով (հոդված 18):

Սահմանադրության մեկնաբանվող դրույթի եւ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՏՏ օրենքի 4 եւ 7-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 18 եւ 111-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը, որն ընկալվում է որպես Ազգային ժողովի՝ նորմատիվ, փորձագիտական, իրավաբանական, կազմակերպչական, փաստաթղթային, վերլուծական, տեղեկատվական, ֆինանսարհական եւ նյութատեխնիկական գործունեությունների համակցություն, ապահովում է Ազգային ժողովի նախագահը՝ Նայաստանի Նանրապետության անունից եւ իր կողմից հիմնադրված՝ Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով:

Ազգային ժողովի նյութական միջոցներն են՝ պետական սեփականություն հանդիսացող նյութական այն արժեքները, դրամական միջոցները, ինչպես նաեւ պետությանը սեփականության իրավունքով պատկանող ցանկացած այլ օբյեկտ, որոնք «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՏՏ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Ազգային ժողովի նախագահի՝ որպես պետական կառավարչական հիմնարկի հիմնադրի կողմից հանձնվում (ամրացվում) է Ազգային ժողովի աշխատակազմին՝ վերջինիս կողմից դրանք փրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու նպատակով:

Մեկնաբանվող հոդվածով ամրագրված՝ «Ազգային ժողովի նախագահը տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները» դրույթից հետեւում է, որ Ազգային ժողովի նախագահն է անմիջականորեն տնօրինում Ազգային ժողովի նյութական միջոցները:

Չնայած այն հանգամանքին, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը դեռեւս ամբողջությամբ չի կանոնակարգում Ազգային ժողովի նախագահի տվյալ լիազորության բովանդակությունից բխող հարաբերությունները՝ սահմանափակվելով միայն սահմանադրական նույնաբովանդակ նորմի սահմանմամբ (հոդված 18, կեր 1, ենթակետ Ժ.1), այնուամենայնիվ, պետական կառավարչական հիմնարկների գործունեության իրավական կարգավորումների ուսումնասիրության ու համադրված վերլուծության արդյունքներով պայմանավորված՝ անհրաժեշտ է նշել, որ Ազգային ժողովի նյութական միջոցների տնօրինումն Ազգային ժողովի նախագահն իրականացնում է իր կողմից հիմնադրված պետական կառավարչական հիմնարկի՝ Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով:

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրում է Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալ: Ընդ որում, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալներն ընտրվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

ՆՈՂ-ՎԱԾ 80

1. Պարզամավորներն իրավունք ունեն գրավոր եւ բանավոր հարցերով, իսկ խմբակցությունները եւ խմբերը նաեւ հարցապնդումներով դիմելու կառավարությանը: Ներթափան նստաշրջանի նիստերի գումարման շաբաթվա մեկ նիստում վարչապետը եւ կառավարության անդամները պատասխանում են պարզամավորների հարցերին: Պարզամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում:

2. Հարցապնդումները ներկայացվում են գրավոր եւ քննարկումից առնվազն տասն օր առաջ: Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու եւ դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

1. Մեկնաբանվող հոդվածը սահմանում է Ազգային ժողովի կողմից կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող խորհրդարանական վերահսկողության որոշակի ձեւեր կամ գործընթացներ՝ կապված կառավարությանը հարցերով (բանավոր կամ գրավոր) դիմելու՝ պարզամավորների իրավունքների իրացման եւ խմբակցությունների կամ խմբերի հարցապնդումներով դիմելու լիազորության իրականացման հետ:

Անհրաժեշտ է նշել, որ պարզամավորների հարցերի եւ խմբակցությունների կամ խմբերի հարցապնդումների իրացմանն են ուղղված նաեւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 5, 105 եւ 105.1-րդ հոդվածները, որոնցով կանոնակարգվում են հարցերով եւ հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու եւ դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացակարգերը:

Չնայած այն հանգամանքին, որ եւ ՏՏ Սահմանադրությունը, եւ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը փարանջափում են «հարց» եւ «հարցապնդում» հասկացությունները, այնուամենայնիվ, այդ հասկացությունների ոչ հստակ սահմանման արդյունքում համապատասխան անդրադարձ չի կատարվում մեկնաբանվող հոդվածում մատնանշված «պարզամավորի հարց» եւ «խմբակցության կամ խմբի հարցապնդում» հասկացությունների բովանդակությանն ու էությանը:

«Պարզամավորի հարց» հասկացությունը կարող է ընկալվել որպես պարզամավորի դիմում կամ խնդրանք կառավարությանը կամ նրա անդամներին՝ որեւէ փաստի, դեպքի կամ իրադարձության վերաբերյալ փեղեկարկական փեղեկանքներ կամ մեկնաբանություններ սպանալու նպատակով:

Միաժամանակ, պարզամավորի իրավունքների իրացմամբ պայմանավորված՝ կարելի է նշել, որ գրավոր եւ բանավոր հարցերով կառավարությանը դիմելը կարող է դիփարկվել նաեւ պարզամավորի գործունեության ձեւ:

Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 105-րդ հոդվածը կանոնակարգելով՝ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի «հերթական նստաշրջանի նիստերի գումարման շաբաթվա մեկ նիստում վարչապետը եւ Կառավարության անդամները պատասխանում են պարզամավորների հարցերին» դրույթի պահանջներից բխող հարցերը, դրա համար հարկացնելով հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստը՝ որպես պարզամավորների եւ կառավարության հարց

ու պարասխանի ինստիտուտի իրականացման ժամանակահատված (3-րդ կետ):

Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ կետի շրջանակում սահմանափակվում է պարզամավորի կողմից կառավարությանը հարցերով դիմելու հնարավորությունը՝ եւ ժամանակային առումով (մեկ ամսվա ընթացքում), եւ հարցերի քանակային առումով (մեկական գրավոր եւ բանավոր հարց): Նամանման մուտեցում դրսևորվում է գրեթե բոլոր երկրների խորհրդարանական պրակտիկայում:

Բացի դրանից, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 105-րդ հոդվածն ամրագրել է պարզամավորների՝ կառավարությանը գրավոր եւ բանավոր հարցերով դիմելու, դրանց պարասխաններ փրվելու արարողակարգի հիմնական կանոնները: Այսպես, հիշյալ հոդվածը սահմանել է հարցի ներկայացման եւ դրա պարասխանի սրացման կարգն ու հաջորդականությունը (4-րդ եւ 5-րդ կետեր), հարցի պարասխանի հնչեցման եւ պարասխանի վերաբերյալ կարծիքի արձագանքման ընթացակարգը (6-րդ կետ) եւ այլն: Միաժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 57-րդ հոդվածով եւ 105-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով պարզամավորները կառավարությանը դիմում են բանավոր հարցերով, եթե գրավոր հարցերին պարասխանելուց հետո նիստի ժամանակը չի սպառվել:

Մեկնաբանվող հոդվածով ամրագրված՝ «պարզամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում» դրույթի առկայությունից բխում է, որ չնայած պարզամավորների բանավոր եւ գրավոր հարցերին կառավարության կողմից փրվում են պարասխաններ, այնուամենայնիվ, այդ հարցերը չեն ներառվում հերթական նստաշրջանի եւ չորսօրյա նիստերի օրակարգ, հետևաբար՝ չեն քննարկվում եւ դրանց վերաբերյալ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում: Նիշյալ դրույթը թղթակցում է նաեւ ՏՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի պահանջների հետ:

Միաժամանակ, մեկնաբանվող հոդվածի շրջանակում անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետի համաձայն՝ պարզամավորն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով **հարցումներով** եւ առաջարկություններով դիմել պետական կառավարման եւ փեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին եւ կազմակերպություններին, մասնակցել իր բարձրացրած հարցերի քննարկմանը:

Նիշարակված դրույթում **«հարցում»** հասկացության առկայությունից բխում է, որ **«գրավոր հարցերով դիմել»** եւ **«հարցումներով դիմել»** հասկացություններն իրենց էությամբ նույնաբովանդակ են, սակայն դրանց բովանդակային ծավալում կարող են ներառվել փարբեր գործողություններ, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում նաեւ փարանջատել այդ հասկացությունները:

Նարկ է նշել, որ օրենսդրորեն դեռեւս հսրակեցված չեն այս երկու հասկացությունների բովանդակային առումով իրացման սահմանները, սակայն «պարզամավորի հարցումը» որպես պարզամավորական գործունեության իրականացման հաջորդ ձեւ, չի սահմանափակվում պարզամավորի կողմից միայն կառավարությանը գրավոր հարցերով դիմելով: Այդ առումով, անհրաժեշտ է նկատել, որ, ի փարբերություն **«պարզամավորի հարցի»**, որն ուղղված է առաջին հերթին լրացուցիչ փեղեկավորության սրացմանը եւ որոշակի հարցի վերաբերյալ կառավարության դիրքորոշման ճշգրտմանը, **«պարզամավորի հարցումը»** նպարակատողված է գլխավորապես այն հանգամանքին, որպեսզի իրավասու մարմինների, այդ թվում կառավարության եւ նրա անդամների ուշադրությունը հրավիրի առկա հիմնախնդիրների, դրանց համալիր եւ համակարգային հեփագորման ու լուծման ուղիների վրա:

Այսինքն, ընթացակարգային առումով՝ եթե **գրավոր եւ բանավոր հարցերով** դիմելու ժամանակ պարզամավորի կողմից խնդիր է դրվում ընդամենը սրանալ որոշակի տեղեկատվություն, ապա **պարզամավորի հարցմամբ** ներկայացվում է պահանջ խնդրի լրացուցիչ հեղազտման եւ դրա վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության փրամադրման համար:

Ինչ վերաբերում է **«հարցապնդմանը»**, ապա անհրաժեշտ է նշել, որ այն ներմուծվել է 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների ժամանակ Սահմանադրության 80-րդ հոդվածը՝ խմբակցությունները եւ խմբերը հարցապնդումներով կառավարությանը դիմելու վերաբերյալ նորմով լրացնելու արդյունքում:

«Նարցապնդում» հասկացությունը համարժեք է անգլերեն «interpellation» բառին, որը թարգմանաբար նշանակում է՝ պահանջ, հայց, կամ՝ լափիներեն «interpellare» բառին, որը թարգմանվում է՝ ընդհարել: Նարցապնդումների գործընթացի եւ դրա սահմանադրաիրավական կարգավորման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունները եւ վերլուծությունները վկայում են հետեւյալի մասին.

ա) գրեթե բոլոր երկրներում այդ գործընթացն ուղղված է կառավարության եւ պետական այլ մարմինների գործունեության նկատմամբ խորհրդարանական ընթացիկ վերահսկողության իրականացմանը,

բ) բացառությամբ առանձին երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Նորվեգիա, Շվեդիա եւ այլն), գրեթե բոլոր եվրոպական եւ հեփխորհրդային երկրների սահմանադրություններում ամրագրված են դրույթներ հարցապնդումների ինստիտուտի վերաբերյալ (Բուլղարիայի Սահմանադրության 90-րդ հոդված, Չեխիայի Նանրապետության Սահմանադրության 53-րդ հոդված, Խորվաթիայի Սահմանադրության 85-րդ հոդված, Ֆինլանդիայի Սահմանադրության 43-րդ հոդված, Ռումինիայի Սահմանադրության 112-րդ հոդված, Սլովակիայի Սահմանադրության 80-րդ հոդված, Էստոնիայի Սահմանադրության 74-րդ հոդված, Լատվիայի Սահմանադրության 27-րդ հոդված, Լիտվայի Սահմանադրության 61-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 115-րդ հոդված, Մակեդոնիայի Սահմանադրության 72-րդ հոդված, Մոլդովայի Սահմանադրության 105-րդ հոդված եւ այլն), ընդ որում, այդ հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու եւ դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է խորհրդարանների կանոնակարգով.

գ) հարցապնդումներ կարող են ներկայացնել ինչպես առանձին պարզամավորներ (Սլովակիա, Նուեգարիա եւ այլն), այնպես էլ պարզամավորական խմբի կողմից (Մակեդոնիայում եւ Լիտվայում՝ առնվազն 5 պարզամավորի նախաձեռնությամբ, Ֆինլանդիայում՝ առնվազն 20 պարզամավորի նախաձեռնությամբ, Ռումինիայում՝ պարզամավորների պալատը կամ սենատը, Լատվիայում՝ առնվազն 10 պարզամավորի նախաձեռնությամբ, Խորվաթիայում՝ խորհրդարանի անդամների առնվազն 1/10-ի նախաձեռնությամբ, Բուլղարիայի խորհրդարանի անդամների առնվազն 1/5-ի նախաձեռնությամբ եւ այլն),

դ) գրեթե բոլոր երկրների խորհրդարաններում հարցապնդումներին ներկայացվում են նույնաբովանդակ պահանջներ՝ այն պետք է լինի գրավոր, հստակ ձեւակերպումներով, շարադրանքում չբովանդակելով մեղադրանքներ, բազմաբովանդակ բացատրություններ եւ այլն,

ե) հարցապնդումները եւ դրանց վերաբերյալ սրացված պարասխանները պարտադիր քննարկվում են խորհրդարանների նիստերում, եթե դրանք ներկայացվել են անհրաժեշտ պահանջների պահպանմամբ,

զ) հարցապնդումների վերաբերյալ կարող են ընդունվել՝ խորհրդարանի դիրքորոշումն արքահայրող որոշումներ (Մոլդովա, Էստոնիա և այլն), կառավարության կամ նրա անդամների նկատմամբ անվստահության ընթացակարգ հարուցելու որոշումներ (Խորվաթիա, Ֆինլանդիա, Սլովակիա, Լատվիա, Լիտվա, Մակեդոնիա և այլն), կառավարության պարասխանն ընդունելու մասին որոշումներ (Բուլղարիա, Նունգարիա և այլն), կառավարության պարասխանը մերժելու և նոր պարասխան նախապարաստելու կամ հանձնաժողով ուղարկելու մասին որոշումներ (Չեխիա, Ֆինլանդիա, Նունգարիա, Լեհաստան և այլն), կամ բավարարվել միայն հարցադրման վերաբերյալ որոշում կայացնելով (Ռումինիա, Իսպանիա և այլն):

2. ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթների համաձայն՝ հարցապնդումներով կառավարությանը դիմելու իրավասություն ունեն պարզամակորական խմբակցությունները և խմբերը, ընդ որում՝ դրանք ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն փասն օր առաջ:

Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով: Մասնավորապես, կանոնակարգի 105.1-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ հարցապնդումը կառավարության իրավասությանը վերապահված որոշակի հարցի վերաբերյալ խմբակցության կամ պարզամակորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցումն է, որը կարող է քննարկվել Ազգային ժողովում, և որի վերաբերյալ Ազգային ժողովը կարող է կայացնել որոշում:

Հիշյալ դրույթի վերլուծությունից բխում է, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը «հարցապնդում» հասկացության բովանդակային ծավալում ներառում է Ազգային ժողովի կողմից հայեցողական այնպիսի գործողությունների կատարում, ինչպիսիք են՝ ա) հարցապնդումը «**կարող է քննարկվել Ազգային ժողովում**», բ) հարցապնդման վերաբերյալ «**Ազգային ժողովը կարող է կայացնել որոշում**»:

Այսինքն՝ հարցապնդման նորմատիվային բովանդակությունից պարզորոշ հետևում է, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքն Ազգային ժողովին չի վերապահում հարցադրումները պարտադիր քննարկելու և դրանց վերաբերյալ պարտադիր որոշում ընդունելու լիազորություն:

Սակայն, եթե հաշվի առնվի ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածում ամրագրված՝ «հարցադրումները ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն փասն օր առաջ» դրույթի առկայության հանգամանքը, ինչպես նաև Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 105.1-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված այն պահանջը, համաձայն որի՝ հարցապնդումները, ըստ դրանց պարասխանների սրացման հաջորդակալության, ընդգրկվում են հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգում, եթե հարցապնդման հեղինակ խմբակցությունը կամ պարզամակորական խումբը չի հրաժարվում իր հարցապնդումները քննարկելուց, ապա հիշյալ դրույթների վերլուծությունից անհրաժեշտ է բխեցնել, որ հարցադրումները հանդիսանում են Ազգային ժողովի պարտադիր քննարկման առարկա:

Ասվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նաև նշել, որ հարցապնդումների պարտադիր քննարկմանն անվերապահորեն կհետևի Ազգային ժողովի կողմից համապարասխան որոշման ընդունումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցապնդման հեղինակ խմբակցությունը կամ պարզամակորական խումբը հրաժարվում է իր հարցապնդումը քննարկելուց կամ առաջարկում է հարցը հանել օրակարգից:

Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 105.1-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հարցապնդման հեղինակ խմբակցության կամ պարզամավորական խմբի ներկայացուցիչն իր եզրափակիչ ելույթում կարող է առաջարկել ընդունել հարցապնդման վերաբերյալ իրավասու պետական կառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց առաջարկություններ ներկայացնելու մասին որոշում, որը քվեարկության է դրվում հարցապնդման քննարկման վերջում:

Տիշյալ նորմի վերլուծությունից հետեւում է, որ հարցապնդման քննարկման արդյունքում ընդունված որոշման մեջ խոսք կարող է գնալ միայն **պետական կառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց ներկայացվող առաջարկությունների** մասին: Ընդ որում՝ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը հարցադրումների վերաբերյալ այլ բնույթի կամ բովանդակության որոշումների ընդունում չի նախատեսում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ՝ ա) բացառապես առաջարկություններ բովանդակող նման որոշումները, ըստ էության, չեն կարող դիտարկվել որպես պարտադիր կարարման ենթակա ակտեր, ք) այդպիսի որոշումները որեւէ ձեւով չեն պարտավորեցնում կառավարությանը կամ պաշտոնատար անձանց, գ) իրավական հետեւանքներ չառաջացնող այդպիսի որոշումների պարագայում իմաստագրվում է հարցապնդումների ինստիտուտի՝ որպես խորհրդարանական վերահսկողության ձեռի, նշանակությունը:

Միաժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի նույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանափակվում է նաեւ խմբակցության կամ պարզամավորական խմբի կողմից կառավարությանը հարցապնդումով դիմելու հնարավորությունը (այն է՝ հերթական նստաշրջանի ընթացքում ոչ ավելի, քան մեկ անգամ): Սակայն անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան, եթե պարզամավորների գրավոր եւ բանավոր հարցերին վարչապետը եւ կառավարության անդամները պատասխանում են **հերթական նստաշրջանի նիստերի** գումարման շաբաթվա մեկ նիստում, ապա հարցապնդումների մասով խմբակցությունների կամ պարզամավորական խմբերի լիազորության սահմանափակման վերաբերյալ դրույթ չի նախատեսվել, հետեւաբար՝ եւ խմբակցությունները, եւ պարզամավորական խմբերը սահմանափակված չեն միայն հերթական նստաշրջանի կամ նիստերի ժամանակահատվածով:

Բացի դրանից, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 105.1-րդ հոդվածն ամրագրել է խմբակցությունների կամ պարզամավորական խմբերի կողմից կառավարությանը հարցապնդումներով դիմելու, դրանց քննարկումը կազմակերպելու ու պատասխաններ փոխելու, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ որոշում կայացնելու արարողակարգի հիմնական կանոնները:

Այսպես, հիշյալ հոդվածը սահմանել է՝ հարցապնդումների պատասխանների փրման ժամկետը, Ազգային ժողովում դրանց՝ ըստ խմբակցությունների եւ պարզամավորական խմբերի թվաքանակի, քննարկման հաջորդականությունը (3-րդ կետ), հարցապնդումների քննարկման ընթացակարգը (4-րդ կետ), Ազգային ժողովի կողմից հարցապնդումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգերը (7-րդ կետ), «Նայաստանի Նանրապետություն» օրաթերթում հարցապնդումների ու դրանց պատասխանների հրատարակումը (8-րդ կետ) եւ այլն:

Այնուամենայնիվ, **եւնելով** հարցապնդումների գործընթացի եւ դրա սահմանադրաիրավական կարգավորումների ուսումնասիրության եւ վերլուծության արդյունքներից, այդ թվում նաեւ հաշվի առնելով միջազգային փորձը, կարելի է ձեւակերպել «**հարցապն-**

դում» հասկացության հերեյալ սահմանումը, որ այն ընկալվում է որպես՝ ա) կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացման արդյունավետ միջոց, բ) կառավարության կողմից պետության քաղաքականության կամ որոշակի հարցերի շրջանակի վերաբերյալ պարզամավորներին բացառություն կամ պարզաբանումներ ներկայացնելու պահանջ, գ) քաղաքական եւ նշանակալի այլ իրադարձությունների ու հիմնախնդիրների վերաբերյալ կառավարությանը ներկայացվող պարզամավորական հարցման փեասակ՝ ներկայացման ու քննարկման հարով ընթացակարգով եւ ընդունված որոշման իրավական հերեյանքներով:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը դեռեւս ամբողջությամբ չի բովանդակում կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության նպատակները եւ իրականացման կառուցակարգերը՝ կապված հարցերով ու հարցապնդումներով կառավարությանը դիմելու՝ պարզամավորների, խմբակցությունների եւ խմբերի լիազորությունների իրականացման հեր:

ՆՈՂՎԱԾ 81

1. Ազգային ժողովը Տանրապերության Նախագահի առաջարկությանը՝

1) հայրարարում է համաներում.

2) վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայրարարում Տայասրանի Տանրապերության միջազգային պայմանագրերը:

Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են այն միջազգային պայմանագրերը՝

ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախարեսում են պերական սահմանի փոփոխություն,

բ) որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազարություններին եւ պարականություններին,

գ) որոնք ֆինանսական պարավորություններ են նախարեսում Տայասրանի Տանրապերության համար,

դ) որոնց կիրառումը նախարեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի բնդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորներ,

ե) որոնցով նախարեսված է վավերացում,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում.

3. որոշում է բնդունում պարերազմ հայրարարելու եւ խաղաղություն հասարակելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պարերազմ հայրարարելու հարցը լուծում է Տանրապերության Նախագահը:

2. Ազգային ժողովը կարող է չեղյալ հայրարարել Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կերերով նախարեսված միջոցառումների իրականացումը:

1. կեր 1) Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը Տայասրանի Տանրապերությունում: Ընարված լինելով անմիջականորեն ժողովրդի կողմից՝

Ազգային ժողովը հանդես է գալիս որպես ժողովրդախիշխանության մարմին, որն օժտված է ոչ միայն օրենսդիր, այլև մեկնաբանվող հողվածում նշված այլ լիազորություններով:

Սույն հողվածում ամրագրված լիազորություններն Ազգային ժողովն իրականացնում է՝ հանդես գալով որպես ժողովրդի կամքի արտահայտիչ: Ընդ որում, նշված լիազորությունները խորհրդարանն իրականացնում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ:

Տողվածի առաջին մասի 1-ին կետով Ազգային ժողովի իրավասության է վերապահված համաներում հայտարարելը: Սա ենթադրում է ոչ միայն համաներմանն առնչվող հարցերի օրենսդրական կարգավորման հնարավորություն, այլև դրա սահմանադրորեն պայմանավորված անհրաժեշտություն:

Համաներումն օրենսդիր մարմնի կողմից հայտարարվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի նկատմամբ: Սահմանադրությունը չի սահմանում համաներման հասկացությունը: ՏՃ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածին համապատասխան՝ համաներման ակտով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալները՝ լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարտից, կամ պարտի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարտաբեռնակով կամ կարող է վերացվել դատվածությունը:

Այսպեղից հետևում է, որ համաներումը ա) մարդասիրական ակտ է եւ հեղափոխում է նույնպիսի նպատակներ, բ) փարածվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի նկատմամբ, գ) բովանդակային առումով դրսեւորվում է հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պարտից ազատելու, պարտի չկրած մասն ավելի մեղմ պարտով փոխարինելու կամ դատվածությունը վերացնելու ձեւով, այլ խոսքով՝ իր գործողությամբ ընդգրկում է ինչպես քրեական դատավարության մինչդատարական փուլը, այնպես էլ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռին հաջորդող ժամանակահատվածը:

Համաներում հայտարարելը, մի կողմից, պետության (որին վերապահված է քրեական հեղափոխման իրականացումը), մյուս կողմից՝ քաղաքացիների (որոնք հանցավոր արարքներ կատարելու դեպքում ենթակա են քրեական պատասխանատվության քրեական օրենքով նախատեսված ձեւերով եւ սահմաններում) միջեւ հարաբերությունների կարգավորման րեսակ է: Համաներում հայտարարելու մասին Ազգային ժողովի սահմանադրական լիազորության իրացումը, որպես մարդասիրության ակտ, ենթադրում է որոշակի կարեգորիայի անձանց լրիվ կամ մասնակի ազատում քրեական պատասխանատվությունից եւ պարտից՝ ելնելով ոչ միայն քաղաքական եւ րնրեսական նպատակահարմարությունից, այլև, առաջին հերթին, բարու եւ արդարության հանդեպ հավատարից, ինչպես նաեւ ժողովրդավարական իրավական պետությունում նման մարդասիրական քայլի սցիալական պայմանավորվածությունից:

Համաներում հայտարարելու լիազորությունն իրականացնելիս Ազգային ժողովը չի կարող դուրս գալ իրեն վերապահված եւ սահմանադրորեն որոշված հայեցողության սահմաններից, որի հիմքում ընկած են ժողովրդավարական հասարակության մեջ գործող իրավունքի ընդհանուր սկզբունքները: Նշված սկզբունքներին համապատասխան՝ համաներման մասին ակտի բնույթին եւ նշանակմանը չէր համապատասխանի, մասնավորապես, այն վիճակը, եթե նշված ակտը պայմաններ սրեղծեր քրեական պատասխանատվությունից ազատելու այնպիսի հանցագործությունների համար, որոնք կատարվել են համաներում հայտարարելուց հետո, քանի որ դա հղի կլիներ նոր հանցագործություն-

ների վրանգով եւ դրանց ենթադրյալ գոհերին կզրկեր պաշտպանությունից: Տամաներունը չի կարող կիրառվել անհատապես որոշված անձանց շրջանակի նկատմամբ, քանի որ դա կնշանակի սահմանադրական այլ մարմիններին, ներառյալ դատարաններին, վերապահված լիազորությունների յուրացում:

Անթույլաբերելի է համաներման ակտի միջոցով քրեական պատասխանաբարությունից ազատելու պայմաններ ստեղծել այն անձանց համար, որոնք մասնակցություն են ունեցել համաներման որոշման նախապատրաստմանը: Իրերի նման վիճակն ակնհայտորեն կհակասի արդարության գաղափարներին: Տամաներման պայմանները չեն կարող ձեւակերպվել այնպես, որ դրանցով թույլ տրվի համաներման ակտի դրույթների կամայական կիրառում: Չեն կարող հրապարակվել այնպիսի ակտեր, որոնք կփոփոխեն հայտարարված համաներման պայմանները՝ համաներման ենթարկված անձանց համար դրանց վարթարացման առումով, քանի որ դա ոչ միայն կհակասի քրեական պատասխանաբարության եւ պատժի կրման բնագավառում քաղաքացու դրությունը նոր ակտի ընդունմամբ վարթարացնելու արգելքին, այլեւ համահունչ չի լինի համաներման որպես գթասարության ակտի, բնույթին եւ պետական իշխանության սահմանադրական պատասխանաբարությանը: Այդ պատասխանաբարությունն է, որ համաներում հայտարարելիս թելադրում է համաներման ենթակա անձանց վերասոցիալիզացիայի խնդիրները հաշվի առնելու եւ ապահովելու անհրաժեշտությունը, քանի որ հակառակ դեպքում վրանգի փակ կողմի ժողովրդավարական հասարակության մեջ կայուն իրավակարգի եւ քաղաքացիների իրավունքների երաշխավորման շահը: Դրան համապատասխան էլ հնարավոր չէ ապահովել համաներման՝ որպես մարդասիրական ակտի, սահմանադրորեն արդարացված բոլոր նպատակներն առանց այդ ակտի ընդունման սահմանված ընթացակարգի պահպանման, որը երաշխավորում է ինչպես համաներումը հայտարարող օրենսդիր մարմնի իրական կամքի օբյեկտիվ արտացոլումը համաներման ակտի նորմատիվ դրույթներում, այնպես էլ այդ կամքի ձեւավորումը բավարար եւ արժանահավասար եղեկաբարության հիման վրա:

Գործնական մեծ նշանակություն ունի համաներման ակտի եւ համաներման կիրառման մասին ակտի փարանջատումը միմյանցից: Տամաներման ակտը սահմանում է այն անձանց իրավական վիճակի փոփոխությունը, որոնց վրա այն փարածվում է: Իրավակիրառ մարմինների ակտերն ընդունվում են համաներման ակտի հիման վրա կոնկրետ անձի նկատմամբ, որը ենթակա է ազատման քրեական պատասխանաբարությունից կամ պատժից: Տամաներման կիրառման ակտով վերացվում են անձի իրավունքների իրացման այն սահմանափակումներն ու խոչընդոտները, որոնք կապված են նրան քրեական պատասխանաբարության ու պատժի ենթարկելու հետ: Այսպիսով, համաներման ակտն ամրագրում է այն իրավաբանական փաստերը, որոնք վերականգնում են քաղաքացու Մահմանադրությամբ ամրագրված իրավական վիճակը: Մրանում դրսևորվում է քաղաքացու իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը, այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանափակվել են դատավճռի կամ անձի նկատմամբ սկսված քրեական հետապնդման ուժով, ճանաչվում են վերականգնման ենթակա արդեն իսկ համաներման ակտի ուժի մեջ մտնելու պահից: Այլ խոսքով՝ իրավակիրառ ակտը, որն ընդունվում է համաներման ակտի հիման վրա եւ դրա ուժով, այն ընդունելու լիազորություն ունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը:

2) Մեկնաբանվող հոդվածի առաջին մասի **2-րդ կետի ուժով** հայաստանի հանրապետության Ազգային ժողովը հանրապետության Նախագահի առաջարկությամբ

վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Ղայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքի հիմնական աղբյուրն է: Այն սեռային հասկացություն է, որն ընդգրկում է բոլոր միջազգային համաձայնագրերը, որոնք կարող են ունենալ ամենաբարձր անվանումներ՝ պայմանագիր, համաձայնագիր, դաշնագիր, պրակտիկա, կոնվենցիա, հռչակագիր, կոմյունիկե, արձանագրություն եւ այլն: Անկախ անվանումից՝ դրանք բոլորն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ (տե՛ս նաեւ Սահմանադրության 6-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Ղայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել այդ պայմանագրով նախատեսված դեպքերում եւ կարգով կամ ցանկացած ժամանակ՝ այդ պայմանագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ, սակայն պայմանագրի կողմ հանդիսացող միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո, ինչպես նաեւ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքին համապատասխան՝ միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել նաեւ, եթե՝

1) պատերազմական կամ ռազմական դրության, փոփոխական կամ այլ շրջափակման կամ երկրաշարժի, բնական այլ աղետի կամ անհաղթահարելի այլ ուժի կամ օբյեկտիվ այլ պատճառների բերումով Ղայաստանի Հանրապետությունը հնարավորություն չունի ժամանակին կամ պատշաճ կերպով կատարելու սրանձնած պարտավորությունները.

2) միջազգային պայմանագրի մյուս կողմն էականորեն խախտում է այդ պայմանագրով սրանձնած պարտավորությունները եւ վրանգում պայմանագրի կատարումը.

3) միջազգային պայմանագրի մյուս կողմը կասեցրել է այդ պայմանագրի գործողությունը:

Միջազգային պայմանագրի չեղյալ հայտարարումը (դենոնսացիան)՝ հրաժարումն է այդ պայմանագրից, այսինքն՝ մեկ պետության կողմից մեկ այլ պետությանը (կամ միջազգային կազմակերպությանը) իրազեկելն է կնքված պայմանագիրը լուծելու մասին՝ մինչեւ դրա գործողության ժամկետի ավարտը: Պայմանագրի չեղյալ հայտարարումը սովորաբար կատարվում է լինում միջազգային իրավիճակի փոփոխության կամ պայմանագրի կողմերից մեկում փոփոխությունների հետ:

Ղայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել այդ պայմանագրով սահմանված կարգով, այն պահից, երբ՝

1) որոշակի ժամկետով կնքված միջազգային պայմանագրի գործողության ժամկետը լրացել է, եւ կողմերը այդ պայմանագրով սահմանված կարգով չեն երկարաձգել այդ ժամկետը կամ թեկուզեւ երկարաձգել են, սակայն Ղայաստանի Հանրապետությունը չի մասնակցել կամ միացել այդ երկարաձգմանը.

2) անորոշ ժամկետով կնքված միջազգային պայմանագիրը դրանով սահմանված կարգով Ղայաստանի Հանրապետությունը չեղյալ է հայտարարել կամ չեղյալ հայտարարելու մասին հայկական կողմին ծանուցել է այդ պայմանագրի մյուս կողմը, եւ համապատասխան ծանուցման պահից հետո պայմանագրով նախատեսված ժամկետը լրացել է.

3) բազմակողմ միջազգային պայմանագրով սահմանված կարգով Ղայաստանի Հանրապետությունը դուրս է եկել այդ պայմանագրից, այդ թվում՝ պայմանագիրը չեղյալ հայտարարելու միջոցով:

«Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՏՏ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են միջազգային պայմանագրերի գործողության դադարեցման մի շարք այլ հիմքեր եւս:

Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են, մասնավորապես, այն միջազգային պայմանագրերը, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն:

Իբրև քաղաքական կամ ռազմական բնույթ ունեցող պայմանագրեր պետք է դիտարկել այն պայմանագրերը, որոնք կարգավորում են բարեկամության եւ համագործակցության, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից փոխադարձաբար հրաժարվելու, խաղաղության կամ հաշտության, միջպետական կազմակերպություններ սրբեղծելու կամ դրանց անդամագրվելու, դիվանագիտական եւ հյուպատոսական հարաբերություններ հաստատելու, պաշտպանության, ՏՏ զինված ուժերն օտարերկրյա պետություններ խաղաղապահ կամ այլ նպատակներով ուղարկելու, հանրապետության փրամաձուլում օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ռազմական բազաներ սրբեղծելու կամ օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների զինված ուժեր Նայաստանի Նանրապետության փրամաձուլում ընդունելու եւ փեղակայելու, զինաթափման, ռազմական պարտավորություններ սրանձնելու, ՏՏ պետական անվտանգության եւ այլ հարցերին առնչվող հարաբերություններ:

Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը Նայաստանի Նանրապետության պետական սահմանի փոփոխություն նախատեսող միջազգային պայմանագրերի համար նախատեսում է պարտադիր վավերացում: Նայաստանի Նանրապետության պետական սահմանն այն գիծն է եւ այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՏՏ փրամաձուլման ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային փրամաձուլության շրջանակները:

«Պետական սահմանի մասին» ՏՏ օրենքը սահմանում է, մասնավորապես, այն սկզբունքները, որոնցով առաջնորդվում է Նայաստանի Նանրապետությունը պետական սահմանը փեղորոշելիս եւ փոփոխելիս: Դրանք են՝

ա) Նայաստանի Նանրապետության փրամաձուլման ամբողջականության պաշտպանությունը,

բ) Նայաստանի Նանրապետության անվտանգության եւ ՏՏ սրանձնած միջազգային պարտավորությունների կարարման ապահովումը,

գ) օտարերկրյա պետությունների հետ բազմակողմանի փոխշահավետ համագործակցությունը,

դ) սահմանային հարցերի խաղաղ լուծումը:

Պետական սահմանի փեղորոշումը եւ փոփոխումը կատարվում է ՏՏ միջազգային պայմանագրերով եւ ՏՏ օրենքով: Պետական սահմանի փոփոխում պարունակող փաստաթղթերը գործողության մեջ են դրվում Նայաստանի Նանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունը պարտադիր վավերացում է նախատեսում նաեւ այն միջազգային պայմանագրերի համար, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին եւ պարտականություններին:

Մարդու իրավունքների բնագավառում հայրենական օրենսդրության նորմերը հանրաճանաչ միջազգային չափորոշիչներին մերձեցնելուն ուղղված կարևոր քայլ էր Նայաստանի անդամակցումը Եվրոպայի խորհրդին եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, ներառ-

յալ խաղաղ ժամանակ մահապարհիժը վերացնելուն վերաբերող թիվ 6 արձանագրության վավերացումը:

Մարդու իրավունքներն ու ազատություններն անօրարելի են եւ պարկանում են նրան ի ծնե: Նայաստրանի Նանրապետությունում մարդու եւ քաղաքացու իրավունքի ու ազատությունները ճանաչվում եւ երաշխավորվում են միջազգային իրավունքների հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին համապատասխան: Այսպեղից էլ միանգամայն քրամաբանական է մարդու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին վերաբերող միջազգային պայմանագրերի պարտադիր վավերացման ենթակա լինելու մասին սահմանադրական պահանջի ամրագրումը:

Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատություններն ամրագրված են ՆՄ Սահմանադրության 2-րդ գլխի համապատասխան հոդվածներում: Սահմանադրությունը չի նախատեսում իրավունքների ու ազատությունների բաժանում առավել կամ պակաս կարեւորների դրանով հաստատելով դրանց հավասարաբարժեք բնույթը:

Նայաստրանի Նանրապետության Սահմանադրությունը քարթերակում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Քաղաքացու իրավունքներն ընդգրկում են անհատի եւ պետության հարաբերությունների ոլորտը, որում անհատն ակնկալում է ոչ միայն իր իրավունքների պաշտպանությունն ապօրինի միջամտությունից, այլեւ պետության ակտիվ օժանդակությունը դրանց իրականացմանը:

Նայաստրանի Նանրապետությունը վավերացրել է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող բոլոր հանրաճանաչ միջազգային պայմանագրերը՝ Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագիրը (ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 A /III/ բանաձեռով), Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Տոմի 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիան, այդ կոնվենցիայի 1952թ. մարտի 20-ի արձանագրությունը, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը՝ կից կամընտրի արձանագրությամբ, եւ այլն:

Վավերացման են ենթակա նաեւ Նայաստրանի Նանրապետության այն միջազգային պայմանագրերը, որոնք Ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Նայաստրանի Նանրապետության համար:

Նայաստրանի Նանրապետության համար Ֆինանսական պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագիր է վարկեր, փոխառություններ, երաշխիքներ ստանալուն կամ քրամադրելուն, միջպետական կամ միջկառավարական հիմնադրամների ձեւավորման նպատակով դրամական միանվագ կամ պարբերական մուծումներ նախատեսող կամ միջկառավարական, միջգերատեսչական (միջբանկային) այնպիսի միջազգային կազմակերպության սրեղծման դրույթներ պարունակող միջազգային պայմանագիրը, որի համար Նայաստրանի Նանրապետությունը պարտավորված է լինելու կատարել միանվագ կամ պարբերական դրամական մուծումներ կամ նախատեսում է այլ Ֆինանսական պարտավորությունների ստանձնում:

Ֆինանսական պարտավորություններ չեն համարվում միջազգային պայմանագրերով ստանձնված այն պարտավորությունները, որոնք թեւեւ հայկական կողմի համար նախատեսում են դրամական մուծումների կամ հարկացումների կատարում, սակայն դրանք ՆՄ բյուջեի կամ համայնքային բյուջեների եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման չեն հանգեցնում: Մասնավորապես, Ֆինանսական պարտավորություններ չեն համարվում հարկային, մաքսային եւ օրենքով սահմանված այլ պարտադիր վճարումների գծով արտոնություններ սահմանող, գործուղումների, օտարերկրյա պետու-

թյունների եւ միջազգային կազմակերպությունների պարվիրակությունների ընդունելության, բնակարանների եւ այլ գույքի վարձակալության հետ կապված պարավորությունները, ինչպես նաեւ այն միջազգային պայմանագրով սրանձնված պարավորությունները, որոնցով Նայաստանի Հանրապետությանը փրամադրվում են մարդասիրական օգնություն, նվիրաբերություն, դրամաշնորհ կամ նախաբերվում է իրականացնել փոխնակարստանական, Ֆինանսական կամ այլ համագործակցություն՝ առանց պայմանագրի մյուս կողմի օգտին հայկական կողմի վրա փոխադարձ Ֆինանսական կամ որեւէ այլ գույքային այնպիսի պարավորություն դնելու, որը նախաբերված չէ հանրապետության փվյալ փարվա պետական բյուջեով:

Վավերացման ենթակա են նաեւ Նայաստանի Հանրապետության այն միջազգային պայմանագրերը, որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր:

ՆՆ Սահմանադրության 6-րդ հոդվածի չորրորդ մասին համապարասխան՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում վավերացվելուց կամ հաստատվելուց հետո, եւ հանդիսանում են ՆՆ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Ներպետական օրենքների նորմերի համեմատությամբ միջազգային պայմանագրերի դրույթներն օժտված են գերակայությամբ. եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախաբերված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Միաժամանակ, ՆՆ Սահմանադրությունն արգելք է նախաբերում այն միջազգային պայմանագրերի վավերացման համար, որոնք հակասում են Սահմանադրությանը: Վերոհիշյալ սահմանադրական նորմերի փրամաբանությամբ էլ այն միջազգային պայմանագրերը, որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն, նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր, ենթակա են պարադիքի վավերացման:

Վավերացման են ենթակա նաեւ Նայաստանի Հանրապետության այն միջազգային պայմանագրերը, որոնցով նախաբերված է վավերացում, այսինքն՝ երբ միջազգային պայմանագրի գործողության համար ի սկզբանե սահմանված է վավերացման պայման: Նշված ենթակետում ամրագրված դրույթը բխում է ընդհանուր միջազգային իրավունքի այն նորմից, որը պահանջում է պայմանագրի պարադիքի վավերացում այն պարագայում, երբ կողմերը փվյալ պայմանագիրը կնքելիս պայմանավորվել են դրա մասին: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի հոդված 14-ը եւս սահմանում է, որ *«Եր համար պայմանագիրը պարադիքի լինելու մասին պետության համաձայնությունն արտահայտվում է վավերացման միջոցով, եթե... պայմանագիրը նախաբերում է, որ նման համաձայնությունն արտահայտվում է վավերացման միջոցով»*: Այլ կերպ ասած՝ անկախ միջազգային պայմանագրի բնույթից, փետակից, դրանով կարգավորվող հարաբերություններից, մասնակիցների քանակից, վավերացման պահանջի առկայության դեպքում պայմանագիրը ենթակա է վավերացման ՆՆ Ազգային ժողովի կողմից: Թեեւ վերջին շրջանի միջազգային պայմանագրերի եզրափակիչ դրույթները հակված չեն մատնանշելու պայմանագրի պարադիքության վերաբերյալ համաձայնության արտահայտման կոնկրետ եղանակը, այդ թվում վավերացումը, նախապարվություն փարվով «անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում»⁷⁷ համընդգրկուն ձեւակերպմանը, այդուհանդերձ, շարք պայմանագրերում դեռեւս ուղղակիորեն մատնանշվում է վավերացումը՝ իբրեւ պայմա-

⁷⁷ Տեւս, օրինակ, 2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնեուս ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների եւ ազատությունների չափանիշների մասին կոնվենցիան:

նագրի պարտադիրության վերաբերյալ համաձայնության արտահայտման կոնկրետ եղանակ:

ՆՏ սահմանադրական փոփոխությունների հեղինակները խոհեմ մոտեցում են դրսևորել՝ մեկնաբանվող սահմանադրական դրույթում չնախատեսելով վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի սպառիչ ցանկ եւ նախատեսելով նշված ենթակետում օրենքին հղում կատարող մի դրույթ: Ինչպես արդեն նշել ենք, վավերացման ենթակա պայմանագրերի ցանկը նախատեսվում է ՆՏ Սահմանադրությամբ եւ «ՆՏ միջազգային պայմանագրերի մասին» ՆՏ օրենքով: Այսպես, օրինակ, օրենքի հոդված 24-ը (Վավերացման ենթակա միջազգային պայմանագիրը) հստակեցնում է ՆՏ Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը՝ սահմանելով, որ վավերացման ենթակա են ստորագրված միջպետական միջազգային պայմանագրերը, բացառությամբ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, ինչպես նաեւ ստորագրված այն միջկառավարական պայմանագրերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին եւ պարտականություններին, Ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Նայաստանի Նանրապետության համար, որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր, որոնք վերաբերում են օրենքով սահմանված կարգով վավերացված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելուն՝ բացառությամբ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, կամ որոնցով նախատեսված է վավերացում: Օրենքի քննարկվող հոդվածի կետ 3-ը վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի շարքին է դասում նաեւ «... ստորագրված այն միջգերատեսչական պայմանագիրը, որով նախատեսվում է ստեղծել կամ հիմնադրել միջգերատեսչական (միջբանկային) կազմակերպություն կամ այդ կազմակերպությանն անդամակցում, եւ եթե այդ պայմանագիրը նախատեսում է պարտադիր վճարումներ կատարել րվյալ կազմակերպությանը, ինչպես նաեւ, եթե րվյալ միջգերատեսչական պայմանագրով նախատեսված է դրա վավերացում»: Թեեւ «ՆՏ միջազգային պայմանագրերի մասին» ՆՏ օրենքի վերոհիշյալ եւ այլ դրույթները բավականին հեռու են կատարյալ լինելուց, այդուհանդերձ, առանց դրանց հիշարական հնարավոր չէր լինի բացահայտել մեկնաբանվող սահմանադրական դրույթի նշված ենթակետի բովանդակությունը:

3) Մեկնաբանվող հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ուժով Ազգային ժողովը Նանրապետության Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու եւ խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Նանրապետության Նախագահը⁷⁸:

⁷⁸ Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինան հաստատվել է ՀՀ Նախագահի 2007թ. դեկտեմբերի 25-ի հրամանագրով: Այն ունի պաշտպանողական բնույթ, ինչը կանխորոշում է դրա դրույթներում խաղաղության հետեւողական պահպանման օրգանական գույրորումն ազգային շահերը պաշտպանելու վճռակամության, հանրապետության ռազմական անվտանգության երաշխավորման, պետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության ապահովման հետ: Դոկտրինան սահմանում է ռազմական անվտանգության ռազմաքաղաքական հիմնախնդիրները, ՀՀ պաշտպանական ռազմավարությունը, ռազմական անվտանգության ապահովման համակարգը եւ համակցում ՀՀ պետական մարմինների՝ պետության ռազմական անվտանգության ապահովմանը նպատակատուղված գործունեությունը: Այն նախանշում է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների ու արդիականացման ուղղությունները հասարակական կյանքի առանձին ոլորտների զարգացմանը համընթաց՝ ձեւավորելով ՀՀ պաշտպանական ռազմավարությունն ու ռազմական շինարարությունը կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարում:

Դեռևս 1907թ. ընդունվել է Նազգայի կոնվենցիան պարերազմական գործողություններ սկսելու մասին, որի համաձայն պետությունների միջև ռազմական գործողությունները չպետք է սկսվեն առանց նախնական նախազգուշացման, որը պետք է ունենա կամ պարերազմ հայտարարելու պարճառաբանված ձև, կամ վերջնագրի ձև՝ պարերազմի պայմանական հայտարարմամբ: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքին համապատասխան՝ ինքնին պարերազմ հայտարարելը չի կարող լինել ագրեսիայի արդարացում կամ դրա բողոքադատում:

Պարերազմի հայտարարումը, անկասկած, հանգեցնում է ռազմական դրության հայտարարման, որի իրավական ռեժիմը սահմանված է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՆՏ օրենքով (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին): Ռազմական դրության հայտարարումն իր հետ բերում է միջազգային իրավական մի շարք հետևանքներ՝ խաղաղ հարաբերությունների ավարտ, դիվանագիտական եւ հյուպատոսական հարաբերությունների խզում, պարերազմող կողմերի միջև միջազգային պայմանագրերի գործողության դադարեցում, եւ սկսվում է պարերազմի օրենքներն ու սովորույթները (Ժնևյան 1949թ. կոնվենցիաներ) կարգավորող համաձայնագրերի կիրառումը:

Նայաստանի Նանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պարերազմ հայտարարվելու դեպքում Նանրապետության Նախագահը հայտարարում է ռազմական դրություն:

Ռազմական դրություն հայտարարելու դեպքում անհապաղ գումարվում է ՆՏ Ազգային ժողովի հատուկ նիստ:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՆՏ օրենքի 4-րդ հոդվածով կարգավորվում են ռազմական դրություն հայտարարելու հիմք ծառայող հանգամանքները: Դրանք են՝

ա) այլ պետության զինված ուժերի ներխուժումը հանրապետության տարածք, նման ներխուժման հետևանքով ցանկացած տարածքի բռնազավթումը,

բ) այլ պետության զինված ուժերի կողմից Նայաստանի Նանրապետության տարածք ներխուժելու անմիջական վրանգի առկայությունը,

գ) այլ պետության զինված ուժերի կողմից Նայաստանի Նանրապետության տարածքի ռմբակարումը,

դ) այլ պետության զինված ուժերի կողմից Նայաստանի Նանրապետության զինված ուժերի կամ այլ գործերի վրա հարձակումը,

ե) այլ պետության գործողությունները, որոնք թույլ են տալիս երրորդ պետությանը իր տարածքն օգտագործել Նայաստանի Նանրապետության նկատմամբ զինված հարձակում իրականացնելու համար,

զ) այլ պետության կողմից ՆՏ տարածք ուղարկված կամ նրա անունից գործող զինված խմբերի, ապակայունացնող ուժերի կամ վարձկանների զինված ուժերի ներմուծումը Նայաստանի Նանրապետության նկատմամբ:

Ռազմական դրություն հայտարարելու հետ միաժամանակ կամ դրանից հետո Նանրապետության Նախագահը կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք, ինչպես նաև որոշում ընդունել հանրապետության զինված ուժերի օգտագործման մասին:

Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պարերազմ հայտարարելու հարցը լուծում է Նանրապետության Նախագահը: Նշված սահմանադրական դրույթն իր օրենսդրական ամրագրումն է ստացել նաև «Պաշտպանության մասին»

ՆՇ օրենքում, որի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետին համապատասխան Նանրապետության Նախագահին է վերապահված պատերազմ հայտարարելու մասին հարցի լուծումն այն դեպքերում, երբ անհնարին է Ազգային ժողովի նիստի գումարումը:

2. Ազգային ժողովին իրավունք է վերապահվում չեղյալ հայտարարել Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը: Խոսքը վերաբերում է հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում ռազմական դրություն, ընդհանուր կամ մասնակի զորահավաք հայտարարելու եւ զինված ուժերի օգտագործման մասին որոշում ընդունելու, զինված ուժերի գլխավոր հրամանատար նշանակելու եւ ազատելու, ինչպես նաեւ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում արտակարգ դրություն հայտարարելու եւ իրավիճակից թելադրվող միջոցառումներ իրականացնելու՝ Նանրապետության Նախագահին վերապահված իրավունքի սահմանափակման հնարավորությամբ: Նանրապետության Նախագահին Սահմանադրությամբ վերապահված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու՝ Ազգային ժողովին վերապահված իրավունքը լրջագույն հակակշիռ է իշխանությունների փարանջատման կառուցակարգում, որը նպատակ ունի համապատասխան միջոցառումներ իրականացնելու Նանրապետության Նախագահի ըստ էության ինքնահայաց իրավունքը հակակշռելու հանրապետության Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի հավաքական կարծիքի եւ իշխող քաղաքական փրամադրությունների հետ (տե՛ս նաեւ 100-րդ հոդվածի մեկնաբանությունները):

ՆՈՂՎԱԾ 82

Ազգային ժողովը կառավարության առաջարկությանը սահմանում է Նանրապետության վարչապարաժային բաժանումը:

Պետության փարաժքը ներառում է՝ 1) ցամաքային փարաժությունը, 2) ջրային փարաժությունը՝ ներքին ջրերը պետական սահմանների ներսում եւ փարաժային ջրերը 12 ծովային մղոնի սահմաններում, 3) օդային փարաժքը պետական սահմաններով մինչեւ 35 կմ բարձրության վրա, 4) ընդերքը, 5) լողացող ապարաքները բաց ծովում, 6) թռչող ապարաքները պետության սահմաններից դուրս, 7) փիեզերական օբյեկտները պետության դրոշի եւ զինանշանի ներքո, 8) խողովակաշարերը, 9) սփորջրյա մալուխները (կաբելները) եւ նավթահան ջրային աշտարակները, 10) արտասահմանում գտնվող դիվանագիտական ներկայացուցչությունները եւ հյուպատոսությունները:

Պետության փարաժքի վրա փարաժվում է փվյալ պետության ինքնիշխանությունը: Այլ կերպ ասած՝ պետության փարաժքը նրա իշխանության ներգործության սահմանն է:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորման առարկան պետության ցամաքային փարաժությունն է, որն անհրաժեշտորեն բաժանվում է մասերի, ինչով եւ բնութագրվում է պետության ներքին կառուցվածքը: Տարաժային միավորների միջեւ ձեւավորվում է հարաբերությունների համակարգ, որի բնույթը պայմանավորված է ինչպես պետության ամբողջական, այնպես էլ յուրաքանչյուր փարաժային միավորի իրավական կարգավիճակով:

Տարածքային կառուցվածքը կամ պետության փարածքային կազմակերպվածությունը փոխհարաբերությունների համակարգ է պետության, որպես ամբողջի, այսինքն՝ կենտրոնական իշխանության և նրա փարածքային միավորների միջև, այլ կերպ՝ այն պետական իշխանության փարածքային կազմավորումն է:

Տարածքային կառուցվածքի սահմանումը բարդ հարց է: Յուրաքանչյուր անգամ անհրաժեշտ է պարզել ոչ միայն սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական բնույթ կրող խնդիրներն ու նպատակները, որոնց լուծմանը պետք է այն միավորված լինի, այլև դրանց իրականացման ձևերն ու մեթոդները, մասնավորապես ղեկավարման ու հսկողության համակարգային բնույթը՝ կենտրոնացված կամ ապակենտրոնացված: Վերջինիս պարզաբանումն անհրաժեշտ է նաև իշխանության միասնության ապահովման համար: Այլ կերպ ասած՝ պետք է ճշտել այն սկզբունքները, որոնք պետք է դրվեն ՏՏ վարչափարածքային կառուցվածքը սահմանելու հիմքում: Այս պարագայում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Նայաստանի Նանրապետությունն ունի փար պետություն է, իսկ ունի փար պետություններում գոյություն ունեն քաղաքական-վարչական կամ վարչական միավորներ: Նայաստանի Նանրապետությունում, համաձայն Սահմանադրության 11.1-րդ հոդվածի, վարչափարածքային միավորներ են **մարզերը** և **համայնքները**, որոնք կառավարության առաջարկությամբ սահմանվում են ՏՏ Ազգային ժողովի կողմից:

Նամաձայն 1995թ. ընդունված՝ «Նայաստանի Նանրապետության վարչափարածքային բաժանման մասին» օրենքի՝ Նայաստանի Նանրապետության փարածքը բաժանվում է 10 մարզի և համայնքի կարգավիճակ ունեցող Երեւան քաղաքի: Մարզերն են՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ:

Յուրաքանչյուր մարզի փարածքը կազմված է նրա մեջ ընդգրկված համայնքների փարածքներից և պետական սեփականություն հանդիսացող հողային և ջրային այլ փարածքներից:

Սահմանադրության ուժով ՏՏ վարչափարածքային բաժանումը մշակում է կառավարությունը, որի ներկայացմամբ Ազգային ժողովը սահմանում (հաստատում) է այդ բաժանումը: Վարչափարածքային բաժանման մշակման և սահմանման հիմքում, որպես կանոն, դրված են մի շարք սկզբունքներ:

Տարածքային ամբողջականության և իշխանության միասնության ապահովման սկզբունքը: Պետության փարածքն ամբողջական է, անօտարելի, բացառիկ և անձեռնմխելի: Պետության ինքնիշխանության ուժով նրա ամբողջ փարածքում գերակայում են ՏՏ Սահմանադրությունը և մյուս օրենքները: Այս սկզբունքից բխում է նաև վարչափարածքային միավորների սահմանների ինքնուրույն փոփոխման անթույլատրելիությունը և տնտեսական փարածքի միասնության երաշխավորումը:

Իրավահավասարության սկզբունքը նշանակում է, որ բոլոր մարզերը և համայնքները պետք է օժտված լինեն հավասար լիազորություններով՝ անկախ փարածքից և բնակչության թվից: Այն իր ամրագրումն է ստացել ՏՏ Սահմանադրության 105-107-րդ հոդվածներում, որտեղ բոլոր համայնքների համար սահմանված են հավասար լիազորություններ:

Սոցիալ-տնտեսական սկզբունքը ենթադրում է, որ վարչափարածքային կառուցվածքի սահմանումը պետք է միավորված լինի պետության և հասարակության զարգացման ապահովմանը, քաղաքացիների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը, ինչն անհնարին է իրականացնել առանց հաշվի առնելու փարածքի աշխար-

հագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, փոփոխական ուղղվածությունը (գյուղափոփոխական, անասնապահական, արդյունաբերական, խառը), բնակչության ազգային կառուցվածքը, սոցիալ-փոփոխական պահանջմունքների բավարարման օպտիմալացման հնարավորությունը եւ այլն:

Բնակչություն-իշխանություն փոխհարաբերության մարտկոցային ապահովման սկզբունքը նշանակում է վարչարարածքային կառուցվածքը պետք է սահմանվի այնպիսի միությունով, որ թե՛ փոփոխական կառավարման (մարզերը) եւ թե՛ տեղական ինքնակառավարման մարմինները մտք գործեն բնակչությանը, ինչը կնպաստի իշխանություն- բնակչություն փոխադարձ կապի ձեւավորմանն ու համագործակցությանը:

Մարզային բաժանման, նրանց սահմանների, համայնքների, բնակավայրերի եւ թաղամասերի փոփոխական վարչական սահմանները որոշելիս բնակչության կարծիքը հաշվի առնելու սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 110-րդ եւ Հայաստանի Հանրապետության վարչարարածքային բաժանման մասին 1995թ. օրենքի 6-րդ հոդվածներում: Վերջինս սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի սահմանների, մարզերի վարչական կենտրոնների, համայնքների, թաղային համայնքների, բնակավայրերի եւ թաղամասերի փոփոխական սահմանների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման փոփոխումը, ինչպես նաեւ մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների եւ թաղային համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Ազգային ժողովի կողմից: Իսկ ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածով ուղղակի սահմանված է, որ համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել՝ Ազգային ժողովի կողմից՝ կառավարության առաջարկով: Մինչեւ օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:

«Կառավարությունն առաջարկում է եւ խորհրդարանը սահմանում է» բանաձեռը կարելի է մեկնաբանել երկակիորեն: Անշուշտ, կառավարությունը՝ որպես սուբյեկտ, ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք: Եթե նա ունի այդ իրավունքը, ապա առաջանում է փոփոխական հարց, իսկ ո՞րն է 82-րդ հոդվածի իրավակարգավորիչ տեղը եւ դերը: Այն ընդհանուր սահմանադրական դրույթի սովորական վերարտադրությունն է, թե՛ հարուկ դրույթ, որը շեղվում է ընդհանուր կանոնից եւ, հետեւաբար՝ ընդհանուր կանոնն այս դեպքում չի գործում:

Այսպեղ առաջնային նշանակություն ունի վերջին դրույթը, որը հստակեցնում է նախորդների մեկնաբանման ուղին կամ բանալի է դառնում դրա համար: Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 11-րդ կետից բխում է, որ՝ ա) Հայաստանի վարչարարածքային բաժանումը սահմանվում է բացառապես օրենքով, բ) դա նշանակում է, որ բացառվում է խորհրդարանի որոշմամբ վարչարարածքային բաժանման հաստատումը, հետեւաբար՝ 82-րդ հոդվածի «Ազգային ժողովը ... սահմանում է» բանաձեռը ենթադրում է միայն օրենսդրական սահմանման կարգ, այլ ոչ թե, այսպես կոչված, «վավերացման ընթացակարգ», գ) Սահմանադրության 75-րդ հոդվածի 1-ին մասը եւ մեկնաբանվող հոդվածը հարաբերակցում են որպես ընդհանուր եւ հարուկ դրույթներ: Ուրեմն, դրանց հարաբերակցության հարցում գործում է «հարուկ կանոնը դուրս է մղում ընդհանուր կանոնը» սկզբունքը: Այդպիսով, ընդհանուր կանոնով սահմանված պարզամալորի օրենսդրական նախաձեռնության իրավունքը հանրապետության վարչարարածքային բաժանման

հարցում բացառվում է: Այդ հարցով օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի միայն կառավարությունը:

ՆՈՂՎԱԾ 83

Ազգային ժողովը՝

1) **Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ.**

2) **սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ.**

3) **սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դատարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն Կրակ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պարտախանարկության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.**

4) **ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների:**

Սահմանադրական նորմում ամրագրված է օրենսդիր իշխանությունն իրականացնող ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի լիազորությունները Սահմանադրական դատարանի եւ Արդարադատության խորհրդի կազմավորման գործում, որին մասնակցում է նաեւ Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Նման մասնակցությունը դրսեւորվում է.

1) Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ:

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 3-րդ կետի՝ յուրաքանչյուր անդամի համար առաջարկվում է մեկ թեկնածու: Թեկնածու առաջադրելիս Ազգային ժողովի նախագահը պետք է հաշվի առնի սահմանադրական դատարանի անդամին ներկայացվող պահանջները, որոնք իրենց ամրագրումն են ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՆՅ օրենքի 3-րդ հոդվածում:

Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը եւ Ազգային ժողովի նախագահը պետք է հաշվի առնեն նաեւ սահմանադրական դատարանի անդամի թեկնածուի բարոյական հատկանիշները: Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս առաջադրված թեկնածուն: Յուրաքանչյուր դատավորի թեկնածությունը քննարկվում է անհավական կարգով՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Սահմանադրական դատարանի անդամը համարվում է նշանակված, եթե ստանում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությունը:

2) Հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը **թափուր մնալուց հետո** (ընդգծումը՝ Ժ. Ջ.)՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից երեսնօրյա

ժամկետում նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:

Նորմի բովանդակությունից հետևում է, որ սահմանադրական դատարանի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի կողմից: «Թափուր մնալուց հետո» հասկացությունն օգտագործվում է այն իմաստով, որ սահմանադրական դատարանի նախագահի՝ որպես սահմանադրական դատարանի անդամի, լիազորությունները կարող է դադարել, դադարեցվել կամ կասեցվել ժամկետից շուրջ:

Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ նման հիմքեր կարող են հանդիսանալ սահմանադրական դատարանի անդամի մահը, 65 տարին լրանալը, Նայաստանի Նանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը կամ այլ պետության քաղաքացիության ձեռքբերումը, իրեն նշանակած պետական մարմնին հրաժարական ներկայացնելը եւ միաժամանակ այդ մասին Սահմանադրական դատարանին փողեկացնելը եւ ոչ ուշ, քան 10 օր հետո իր հրաժարականը կրկնելը, դատարանի օրինական ուժի մեջ մտնելը կամ վճռով նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը, նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, օրենքի խախտումով պաշտոնում նշանակվելու մասին դատարանի վճռի օրենքով ուժի մեջ մտնելը:

Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնի համար Սահմանադրական դատարանի կազմից Ազգային ժողովի նախագահի կողմից, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 3-րդ կետի, առաջարկվում է մեկ թեկնածու: Թեկնածուի առաջադրումը եւ նշանակումն Ազգային ժողովի կողմից պետք է կատարվի 30 օրվա ընթացքում, հակառակ դեպքում այդ լիազորությունը, համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 10-րդ կետի՝ կիրականացվի Նանրապետության Նախագահի կողմից:

Ազգային ժողովի նիստում սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուն հանդես է գալիս զեկույցով: Սահմանադրական դատարանի նախագահը համարվում է նշանակված, եթե թեկնածուն ստանում է Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությունը:

3) Մեկնաբանվող հոդվածի 3-րդ կետից հետևում է, որ Ազգային ժողովը կարող է (այլ ոչ թե պարտավոր է) Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Սահմանադրական դատարանի իր նշանակած անդամների լիազորությունները դադարեցնել, համաձայնություն փոխ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու, դատական կարգով վարչական պարասխանարվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի՝ սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել նրան նշանակած մարմնի կողմից, եթե նա մեկ փարվա ընթացքում երեք օր անհարգելի պարճառով չի մասնակցել Սահմանադրական դատարանի նիստերին, ժամանակավոր անաշխատունակության կամ այլ հարգելի պարճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները, խախտել է սահմանադրական դատարանի անդամին վերաբերող սույն օրենքով սահմանված անհամարելիության կանոնները, նախապես կարծիք է հայտնել Սահմանադրական դատարանում քննվելիք գործի վերաբերյալ կամ այլ գործողություններով կասկածի փակ է դրել իր անաշառությունը կամ փողեկություններ է հայտնել դժնփակ խորհրդակցության ընթացքի մասին կամ այլ կերպ դրճել է սահմանադրական դատարանի անդամի իր երդումը, նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական

արար կամ հիվանդություն, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները:

Նամաձայն նույն հոդվածի 4-րդ կետի՝ սահմանադրական դատարանի՝ Ազգային ժողովի նշանակված անդամի լիազորությունները դադարեցվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայապարանի Նանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նամաձայն այդ կանոնակարգ օրենքի 97-րդ հոդվածի 7-րդ կետի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող են ներկայացնել պաշտոնում թեկնածու առաջադրող մարմինը կամ պաշտոնատար անձը: Այսպետից հետևում է, որ մեկնաբանվող հոդվածի պարագայում Ազգային ժողովի որոշման նախագիծը պետք է կազմվի Ազգային ժողովի նախագահի կողմից, քանի որ ինքն է հանդիսանում սահմանադրական դատարանի անդամների թեկնածությունն առաջադրողը:

Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարան՝ դատարանի անդամի լիազորությունների դադարեցման, որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու եզրակացություն արանալու համար:

Սահմանադրական դատարանը պարտավոր է նշված գործերով եզրակացություն ընդունել ոչ ուշ, քան դիմումի մուտքագրման օրվանից 30 օր հետո: Սահմանադրական դատարանի պարճառաբանված որոշմամբ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 50 օրով:

Գործը դատաքննության նախապարաստելիս Սահմանադրական դատարանը կարող է ձեւավորել նախաքննության մարմնի՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված հատուկ հանձնախումբ, որում ընդգրկում է վճռաբեկ դատարանի պալատներից մեկի նախագահին (որպես հանձնախմբի ղեկավար) եւ վճռաբեկ դատարանի երկու դատավորների: Նախուկ հանձնախմբի ձեւավորումը պարտադիր է, եթե դիմող կողմը միջնորդել է դրա ձեւավորման համար:

Սահմանադրական դատարանի այն անդամը, ում լիազորությունների դադարեցման, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին եզրակացություն է տրվելու, դատավարությանը ներգրավվում է որպես դատավարության մասնակից, ինչի ուժով եւ օգտվում է դատավարության կողմի լիազորություններից:

Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաեւ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը Սահմանադրական դատարանի դրական եզրակացության հետ մեկտեղ քննարկվում է Ազգային ժողովի նիստում: Այն համարվում է ընդունված, եթե վերջինիս օգտին քվեարկում է պարզամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը:

Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարանի անդամին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն տալու դեպքում նրա լիազորությունները կասեցվում են դատավորների լիազորությունների կասեցման համար նախատեսված կարգով:

Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները սույն հոդվածով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում սահմանադրական դատարանի նախա-

գահը երկօրյա ժամկետում դիմում է Ազգային ժողովի նախագահին՝ սահմանադրական դատարանի նոր անդամ նշանակելու մասին պահանջով:

4) Մույն հոդվածը նախատեսում է նաեւ, որ Ազգային ժողովն ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների:

Արդարադատության խորհուրդն անկախ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն իրականացնում է Նայասրանի Նանրապետության դատական օրենսգրքով նախատեսված կարգով: Նամաձայն ՏՏ դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի՝ Արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամի պաշտոնը պետական պաշտոն է: Արդարադատության խորհրդում երկու իրավաբան-գիտնականների թեկնածուների առաջադրման իրավունքը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայասրանի Նանրապետության օրենքի, պատկանում է Ազգային ժողովի խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին:

Ազգային ժողովում որպէս հիմնական զեկուցող հանդես է գալիս թեկնածուն: Թեկնածուն համարվում է ընտրված, եթէ նրա օգտին քվեարկում է պատգամավորների ընդհանուր թվի պարզ մեծամասնությունը:

ՆՈՂՎԱԾ 83.1

1. Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով:

2. Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը, որը համապատասխանում է պատգամավորին ներկայացվող պահանջներին:

3. Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է:

4. Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը:

5. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք համագործակցում են մարդու իրավունքների պաշտպանի հետ:

6. Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ:

7. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:

1. Մարդու իրավունքների եւ օրինական շահերի՝ պետական կառավարման մարմինների կամայականությունից եւ պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահումից պաշտպանության կառուցակարգերի շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում օմբուդսմենի սկանդինավյան ինստիտուտը: XIX հարյուրամյակի սկզբին (1809) առաջինը Շվեդիայում ստեղծված օմբուդսմենի ինստիտուտը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լայն տարածում գտավ եվրոպական երկրներում եւ աշխարհի այլ տարածաշրջաններում: Այդ ինստիտուտի առանձնահատուկ ժողովրդականությունը եւ

հեղինակությունը բացատրվում է նրա կարգավիճակը բնորոշող և նրա գործունեության արդյունավետությունն ապահովող բազմաթիվ ժողովրդավարական հատկանիշներով՝ պետական մարմինների համակարգում անկախ դիրքով, նրան նշանակած խորհրդարանի լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում անփոփոխելիությամբ, իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կարիք ունեցող բոլոր քաղաքացիների համար դմբացությամբ և մարտնչությամբ, բողոքների ու գանգալների քննության ձեւամոլակեր ընթացակարգերի բացակայությամբ, քաղաքացիներին անվճար օգնության ցուցաբերմամբ և այլն: Բոլոր այդ սկզբունքները և ընթացակարգերը նպաստում են պետական ապարատի և պաշտոնատար անձանց կողմից չարաշահումներից և կամայականությունից մարդու իրավունքների ու ազատությունների՝ օմբուդսմենի կողմից պաշտպանության գործառնությունների կատարմանը: Չի կարելի չհամաձայնել ավստրիացի պրոֆեսոր, իրավունքի դոկտոր Վ. Պիկլիի կողմից այդ ինստիտուտին տրված բարձր գնահատականին, համաձայն որի՝ դրա սրբեղծումը և գործունեությունը նոր գլուխ բացեցին պետության ու քաղաքացու միջև, իշխանությամբ օժտված անձանց և կառավարվողների միջև հարաբերություններում:

Որոշ երկրներում օմբուդսմենի վերահսկողական գործառնությունները տարածվում են նաև դատական մարմինների, բանտերի վարչակազմերի, մունիցիպալ մարմինների գործունեության վրա: Բոլոր մակարդակների ապարատի և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ լայն հսկողական գործառնությունները, որոնցով օժտված է օմբուդսմենը, որոշակիացնում են նրա բարձր հեղինակությունը և հանրության կողմից լայն ճանաչումը:

Շարք երկրներում օմբուդսմենի գործունեության կարեւոր և լայնորեն տարածված ձեւն օրենսդրական նախաձեռնության իրավունքն է, ինչը թույլ է տալիս նրան խորհրդարան կամ կառավարություն ներկայացնել առաջարկություն օրենքների և դրանց հիման վրա մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտում ընդունված նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների և կատարելագործման վերաբերյալ: Բացի դրանից, որոշ երկրներում օմբուդսմենն օժտված է Սահմանադրական դատարան գանգալներ կայացնելու իրավունքով (Իսպանիա, Ավստրիա, Պորտուգալիա և այլն):

Այսօր դա շարք տարածված ինստիտուտ է: Այն գործում է ավելի քան 100 երկրներում՝ ընդգրկելով Կանադան, Կենտրոնական և Հարավային Ամերիկան, Աֆրիկան, Ասիան և, անշուշտ, Եվրոպան:

Մարդու իրավունքների պաշտպանն ընտրվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ պարզաամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով՝ 6 տարի ժամկետով:

Այսպիսի ընտրական համակարգը լեգիտիմության բավականին բարձր մակարդակ է տալիս ՄԻՊ-ին, որն ապահովում է նրա գործունեության անկախությունը: Հաշվի առնելով, որ այս ինստիտուտը հանդես է գալիս որպես ընդդիմախոս պետական այլ կառույցներին, սահմանված ընտրական համակարգը ապահովում է նրա գործունեության անկաշկանդ լինելը: Նույն նպատակին է ծառայում այն հանգամանքը, որ ՄԻՊ-ի թեկնածությունն առաջադրվում է ոչ թե Հանրապետության Նախագահի կողմից, այլ պարզաամավորների 1/5-ի կողմից:

2. Սահմանադրության 83.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն պահանջները, որոնք ներկայացվում են մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուին: Ըստ սահմանադրական դրույթի տրամաբանության՝ առաջին ընդհանրական պահանջը «հա-

սարակության մեջ բարձր հեղինակություն վայելելն է»: Ինքնին այդ պահանջն ընդհանուր է հարաբերական է, եւ դժվար մեկնաբանվող, որովհետեւ այն գնահատողական-արժեքային չափանիշների համակցություն է: Օրինակ՝ ինքը հեղինակությունը՝ որպես երեւոյթ, շար փարբերակված պարկերացում կարող է լինել՝ կախված թեկնածուի սոցիալ-ժողովրդագրական խմբային պարկանելությունից կամ էլ այն խմբի պարկերացումներից, ով գնահատում է այդ հեղինակությունը: Այսպիսով, իրական ձեւականացված չափանիշներ, որոնցով կարելի կլինէր գնահատել մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուի հեղինակությունը, շար դժվար է որոշել: Այդ ավելի շար խորհրդարանական բանավեճերի ընթացքում վերհանվող հարկություն է, որով կարող են կոչ արվել ընտրել կամ չընտրել այդ թեկնածուին:

Ներեւաբար, իրավական փեսանկյունից շար ավելի նպարակահարմար է եւ ճիշտ մեկնաբանվող հողվածի 2-րդ մասի այն դրոյթը, որի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուն պէք է համապարասխանի պարգամավորի համար սահմանված պահանջներին: Այդպիսով, ձեւական իրավական փեսակէտից մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուի համար գլխավորը երկրորդ փեսակի պահանջներն են, որոնք անպայման պէք է պահպանվեն: Իսկ առաջին պահանջի առկայությունը կամ բացակայությունը որոշելու է Ազգային ժողովը՝ իր հավաքական վերաբերմունքի միջոցով:

3. ՄԻՊ-ի անփոփոխելիությունը նախ եւ առաջ նշանակում է, որ նա չի կարող նշանակվել (ընտրվել) այլ պաշտոնում եւ ենթակա չէ փոխադրման այլ պաշտոնի՝ առանց իր համաձայնության:

ՄԻՊ-ի անփոփոխելիության սկզբունքն ապահովվում է ՄԻՊ-ի լիազորությունների դադարման կամ կասեցման հարուկ հիմքերի եւ կարգի սահմանմամբ՝ պայմանով, որ այդ հիմքերը եւ պայմաններն ամրագրված են օրենքով, այսինքն սահմանվում է սահմանադրական արգելք, որով ՄԻՊ-ի լիազորությունների կասեցումը կամ դադարումն անթույլատրելի են այլ հիմքերով եւ/կամ այլ կարգով, քան նախատեսված են օրենքով:

4. Մարդու իրավունքների պաշտպանն ինքնուրույն եւ անկախ պաշտոնաբար անձ է, ով ՆՆ Սահմանադրության եւ օրենքների համաձայն, ինչպէս նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապարասխան իրականացում է պերական կառավարման, փեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնաբար անձանց կողմից քաղաքացիների խախտված իրավունքների ու հիմնարար ազարությունների պաշտպանությունը, իսկ պերական պաշտոնաբար անձանց կողմից Պաշտպանի գործունեությանը միջամտությունը, խոչընդոտումը Պաշտպանի կողմից իր լիազորությունների կարարմանը, սպառնալիքները եւ Պաշտպանին վիրավորանք հասցնելն առաջացնում են պարասխանաբարություն՝ օրենքով սահմանված կարգով:

Անկախությամբ օժտելն անհրաժեշտ է նրա խնդիրների արդունավեր իրականացման համար: Անկախության երաշխիքներն ապահովված են ՄԻՊ-ի ընտրական կարգով, բայց գոյություն ունեն կազմակերպչական եւ ֆինանսական երաշխիքներ նույնպէս, որոնք սահմանված են նաեւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 20 դեկտեմբերի 1993թ. 48/134 բանաձեւով ընդունված Փարիզյան սկզբունքներում եւ իրենց արբացողումն են սբացել ՆՆ ՄԻՊ-ի մասին օրենքում: Կազմակերպչական երաշխիքները կայանում են նրանում, որ Պաշտպանն ինքնուրույն եւ միանձնյա է ձեւավորում իր աշխարակազմը,

իսկ ֆինանսական երաշխիքները կայանում են նրանում, որ Պաշտպանը կաշկանդված չէ կառավարության դիրքորոշումով՝ իր կառույցի բյուջեի նախագծի վերաբերյալ, եւ փառաձայնության դեպքում հարցը կարող է քննարկման փեղափոխել Ազգային ժողով:

5. Քննության առնելով գանգապները եւ դիտարկելով մարդու իրավունքների ու ազատությունների խախտումները՝ Պաշտպանն առաջարկում է խախտումը թույլ տրված պետական կամ տեղական մարմնին կամ պաշտոնատար անձին վերացնել թույլ տրված խախտումը: Պաշտպանը նաեւ նշում է խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանն ուղղված՝ անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները: Պաշտպանը լիազորված է առաջարկելու իրավասու պետական մարմիններին վարչական կամ կարգապահական փոյժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության ենթարկել այն պաշտոնատար անձանց, որոնց որոշումները կամ գործողությունները (անգործությունը) առաջ են բերել մարդու իրավունքների ու ազատությունների խախտումներ, ինչպես նաեւ ձեռնարկել օրենքով նախատեսված այլ գործողություններ:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Պաշտպանի առաջարկությունները կրում են սուկ խորհրդարկական բնույթ: Պաշտպանը կարող է գանգվածային լրագրության միջոցներում հրատարակել հարուկ տեղեկատվություն այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի վերաբերյալ, որը չի պատասխանել իր միջնորդությանը կամ չի կատարել, կամ անբավարար է կատարել Պաշտպանի միջնորդության մեջ պարունակվող պահանջը՝ պետական եւ տեղական մարմինների կամ պաշտոնատար անձանց՝ Պաշտպանի միջնորդությունների ու որոշումների վերաբերյալ պատասխանների հետ մեկտեղ, եթե սպառվել են Պաշտպանի՝ պետական մարմիններում հարցի լուծման բոլոր հնարավորությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պաշտպանը, մի կողմից, չի ընդունում վարչական ակտեր, եւ նա ընդամենն առաջարկներ է անում, որոնք պարտադիր բնույթի չեն, մյուս կողմից՝ Պաշտպանը պետք է վերականգնի խախտված իրավունքներն այն պաշտոնյաների եւ պետական կառույցների միջոցով, որոնք հենց այդ իրավունքների խախտողն են հանդիսանում, եւ վրանգ կա, որ վերջիններս կխուսափեն Պաշտպանի հետ համագործակցելուց, Սահմանադրության մակարդակով պետական կառույցները եւ պաշտոնատար անձինք պարտավորեցվում են համագործակցել ՄԻՊ-ի հետ:

Միաժամանակ, կարելու է այն փաստը, որ Պաշտպանին դիմելը չի գրկում իրավունքների պաշտպանության մյուս հնարավորություններից, քանի որ Պաշտպանի գործունեությունը լրացնում է քաղաքացու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության գոյություն ունեցող միջոցները, չի վերացնում եւ չի վերանայում մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունն ու վերականգնումն ապահովող պետական մարմինների լիազորությունները:

Ինչպես երևում է վերոշարադրյալից, նա զբաղվում է միայն հանրային հարվածին վերաբերող գործերով: Մարդու իրավունքների պաշտպանն ունի Սահմանադրական դատարան դիմելու, դատարանների գործունեության մոնիթորինգ իրականացնելու, որոշումների կայացումից հետո վերջիններից գործերի նյութեր պահանջելու եւ այդ առթիվ իր կարծիքը ներկայացնելու իրավունք:

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ ազգային կառուցակարգ է՝ սահմանված Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պարտի դեմ կոնվենցիային կից կամընտրի արձանագրությամբ: Այդ նորմը ներառվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում 2006թ. հունիսի

22-ից հետո, երբ ՏՏ Ազգային ժողովը վավերացրեց Խոշտանագումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պարժի դեմ կոնվենցիային կից կամընդիր արձանագրությունը: Այսպիսով, Նայաստանը դարձավ Կոնվենցիայի արձանագրության մասնակից, որով եւ պարտավորվեց վավերացումից հետո մեկ տարվա ընթացքում սրեղծել կամ հաստատել կառուցակարգ, որն էլ դարձավ Պաշտպանը:

Պաշտպանի գործունեության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը: Առանց համապատասխան խոր եւ համակողմանի իրավական վերլուծության ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաճախ դառնում են օրենսդրության մեջ խնդիրների առաջացման, իսկ երբեմն էլ՝ նաեւ հակասությունների պատճառ: Դա, բնականաբար, հանգեցնում է իրավունքների խախտման, իրավունքների արդյունավետ պաշտպանություն իրականացնելու անհնարինության եւ տարաբնույթ մեկնաբանման, ընդ որում, որպես կանոն, ի վնաս իրավունքի հավակնող անձանց:

Այդ ոլորտում Պաշտպանի դերի բարձրացման համար կարեւոր նշանակություն ուներ ՏՏ Նախագահի՝ 18.07.2007թ. «ՏՏ կառավարության եւ նրա իրավասությանը ենթակա պետական կառավարական այլ մարմինների գործունեության կազմակերպումը սահմանելու մասին» հրամանի 42-րդ կետը, որին համապատասխան՝ մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող նախագծերը մինչեւ կառավարությանը ներկայացնելը պետք է ուղարկվեն ՏՏ մարդու իրավունքների պաշտպանին՝ վերջինիս կողմից իր կարծիքը հայտնելու համար:

6. Իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում Պաշտպանն օժտված է անձեռնմխելիությամբ: Եթե համադրենք Սահմանադրության այս հոդվածի դրույթը եւ 66-րդ հոդվածի 2, 3 եւ 4-րդ մասերը, սպա կտրացվի, որ Սահմանադրությունը մարդու իրավունքների պաշտպանի համար երաշխավորում է պարզամավորական անձեռնմխելիություն՝ իր բոլոր դրսևորումներով: Օրենքը կարող է երաշխավորել սպելին, օրինակ՝ անձեռնմխելիությունը փարածել նաեւ նամակագրության, օգտագործված կապի միջոցների եւ Պաշտպանին պարկանող փաստաթղթերի վրա:

7. Սահմանադրությունը չի կարող սպառիչ նշել գործունեության բոլոր երաշխիքները, եւ որպեսզի հնարավոր լինի օրենքով լրացուցիչ երաշխիքներ սահմանել, որոնք գոյություն ունեն միջազգային պրակտիկայում, մեկնաբանվող հոդվածի վերջին մասում նշվում է, որ ՄԴԳ-ի գործունեության այլ երաշխիքները սահմանված են օրենքով:

ՆՈՂՎԱԾ 83.2

Նառարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով սրեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Տանրասպետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Վերջին փաստանյալների ընթացքում Նայասփանի Նանրապետության պետական իշխանության կառուցակարգում իրականացվեցին արմատական բարեփոխումներ, որոնք ուղեկցվում էին հասարակական կյանքի փոփոխական, սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտներում փոփոխությունների ունեցող բազմակողմանի փոփոխություններով: Մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնելու հնարավորության առկայությունը, այլ պետությունների հետ փոփոխական փոխանակման ընդլայնումը, փոփոխականության փոխանակման ոլորտում թվային փոփոխությունների օգտագործումը և համաշխարհային համացանցի ինտեգրացիոն ներդրումը մեր հասարակությունում էականորեն ընդարձակեցին քաղաքացիների փոփոխական և մշակութային-կոմունիկատիվ հնարավորությունները՝ հանգեցնելով փոփոխականության ստացման, մշակման և փարածման ոլորտում նոր իրավահարաբերությունների ձևավորմանը:

Արեւմտաեվրոպական պետությունների և ԱՄՆ-ի փորձը հիմնված է այդ իրավահարաբերությունների նորմատիվ կարգավորման հասարակական կողմնորոշման վրա, որը բխում է փոփոխականության հասարակական փոփոխության հիմնական դրույթներից: Այդ փորձը ներառում է պետական կարգավորման ձեռք, մեթոդի և ընթացակարգերի պատմական այնպիսի ընթացություն, որը հիմնված է խոսքի ազատության սահմանադրական հիմնարար սկզբունքի վրա՝ ելնելով զանգվածային լրատվամիջոցների բազմաբնույթ գործունեության արդյունավետ իրավական կարգավորման, բազմակարծության ապահովման, քաղաքական և հասարակական փոփոխությունների շահերի ողջամիտ համադրման անհրաժեշտությունից:

Նեոահաղորդակցության բնագավառում անկախ և ինքնուրույն լրատվամիջոցների բազմազանության երաշխավորման համար անհրաժեշտ է ապահովել այս ոլորտի իրավահարաբերությունների համարժեք և համաչափ կարգավորումը, որպեսզի երաշխավորվի զանգվածային լրատվամիջոցների ազատությունը՝ միաժամանակ պահպանելով այդ ազատության և այլ սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Ելնելով պետությունում ժողովրդավարական ինստիտուտների արդյունավետ գործունեության ապահովման համար հեռահաղորդակցության ոլորտի իրավահարաբերությունների արդյունավետ կարգավորման անհրաժեշտությունից՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Նայասփանի Նանրապետության Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 83.2-րդ հոդվածով, որը սահմանադրական մակարդակի է բարձրացնում հեռահաղորդակցության ոլորտի իրավահարաբերությունների կարգավորումը:

Քննարկվող հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորման անհրաժեշտությունը, *inter alia*, պայմանավորված էր նաև ժամանակակից աշխարհում հեռարձակվող լրատվության միջոցների բացառիկ նշանակությամբ, որոնք փոփոխականության փարածման և ստացման ամենազանգվածային միջոցներից են: Նեոարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության երաշխիքների սահմանադրական ամրագրումն էականորեն նպաստում է այս ոլորտի իրավահարաբերությունների կարգավորման գործընթացում ժողովրդավարական մտքեցման ամրապնդմանը, ինչպես նաև խոսքի և փոփոխականության ազատության ապահովման օրենսդրական կառուցակարգերի հետագա բարելավմանը: Բացի դրանից, այս համարաբերությունում առանձնահատուկ կարեւորություն է ստանում այս իրավահարաբերությունների հանրային կարգավորման հիմնադրույթների սահմանադրական ամրագրումը: Այս նպատակների իրագործման համար առանցքային դեր են կատարում հատուկ ձևավոր-

վող հանրային կարգավորող մարմինները, որոնց անդամները պետք է օժտված լինեն համապատասխան մասնագիտական գիտելիքներով և հմտություններով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է անկախ կարգավորող մարմնին սահմանադրական կարգավիճակով օժտելուն և դրա կազմավորման սկզբունքների սահմանմանը:

Նանրահայր է, որ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 2005 թվականի փոփոխությունների արդյունքում արձանագրված կարեւորագույն ձեռքբերումներից է համարվում իշխանությունների փարանջապարման ավելի արդյունավետ կառուցակարգի ամրագրումը, որտեղ զսպումների և հակակշիռների համակարգը մեկ քայլ առաջ է նախկին կարգավորումից՝ այդ իմաստով նպաստելով պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգի գործունեության ժողովրդավարական հիմքերի զարգացմանը: Այս առումով հարկանշական է, որ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածը, *inter alia*, կոնցենտրացված ձեռով արտացոլում է նաև ՏՏ Սահմանադրության 2005 թվականի փոփոխությունների առանցքում դրված՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման առավել արդյունավետ համակարգի գաղափարը: Այսպես, Սահմանադրության 83.2-րդ հոդվածի համաձայն՝ անկախ կարգավորող մարմնի կազմավորման գործընթացում ժողովրդի կողմից անմիջական ընտրությունների միջոցով առաջնային մանդատով օժտված պետական իշխանության երկու բարձրագույն սուբյեկտներ՝ Նայաստանի Նանրապետության Նախագահը և Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը, օժտված են նշված մարմնի կազմավորման հավասար լիազորություններով: Այսպիսի կարգավորումը սահմանադրական երաշխիք է հանդիսանում կարգավորող մարմնի անդամների նշանակման գործընթացի ժողովրդավարական և թափանցիկ բնույթն ու նրանց իրական անկախությունն ապահովելու համար:

ՏՏ Սահմանադրությամբ այս հարաբարությունների կարգավորումն արդեն իսկ կարգավորող մարմնին օժտում է սահմանադրական կարգավիճակով: Ավելին՝ Սահմանադրության 83.2-րդ հոդվածը նախատեսում է, որ անկախ կարգավորող մարմնին ստեղծվում է օրենքով: Այսպիսի կարգավորումը հարակ կանխորոշում է կարգավորող մարմնի իրավական կարգավիճակը՝ երաշխավորելով վերջինիս անկախությունը պետական իշխանության այլ մարմիններից, քաղաքական ուժերից և փոփոխական շահերից: Այս կարգավորումը բխում է նաև Նայաստանի Նանրապետության միջազգային իրավական պարտավորություններից և համապատասխանում է արեւմտաեվրոպական պետությունների առաջադեմ փորձին:

ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի հաջորդ կարեւոր փարթը կարգավորող մարմնի անդամների պաշտոնավարման ժամկետի սահմանադրաիրավական ամրագրումն է: Սա կարեւոր երաշխիք է հանդիսանում նաև Նայաստանի Նանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի կողմից նշանակվող պաշտոնատար անձանց անկախության ապահովման համար: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ԵՄ անդամ որոշ պետություններում կարգավորող մարմնի անդամը կարող է պաշտոնավարել միայն մեկ, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ավելի, քան երկու հաջորդող ժամկետների ընթացքում:

Անհրաժեշտ է նշել, որ ՏՏ Սահմանադրության մակարդակով կարգավորող մարմնի ձեւավորման այդպիսի կարգը պայմանավորված էր թե՛ ներպետական օբյեկտիվ հրամայականով և թե՛ Նայաստանի Նանրապետության սրանձնած միջազգային իրավական պարտավորությունների իմպլեմենտացման իրավաբանական անհրաժեշտությամբ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ՝ «Արտահայրվե-

լու ազգայություն» հողվածին, որի բովանդակությունը մեկնաբանվել է հստակեցվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում: Այս իմաստով կարեւորվում են նաեւ Ինքնաարարահայրման եւ փեղեկարվության ազգայության մասին 1982 թվականի ապրիլի 29-ի հռչակագիրը, ինչպես նաեւ ԵԽ Նախարարների կոմիտեի համապարասխան հանձնարարականները: Այսպես, հեռահաղորդակցության ոլորտում կարգավորող մարմինների անկախության գործառույթների վերաբերյալ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ Rec(2000)23 հանձնարարականի համաձայն՝ անդամ պետություններին առաջարկվում է հեռահաղորդակցության ոլորտում սրբեղծել անկախ կարգավորող մարմիններ, օրենսդրական ամրագրման եղանակով այդ մարմիններին օժտել իրենց գործառույթների արդյունավետ, անկախ եւ թափանցիկ իրականացման համար անհրաժեշտ լիազորություններով, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ այդ մարմինների գործունեությանն անհարկի ցանկացած միջամտության բացառման նպատակով:

ՆՏ Սահմանադրության 83.2-րդ հոդվածի ժողովրդավարական բնույթին է անդրադարձել նաեւ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), որը ՆՏ սահմանադրական բարեփոխման վերաբերյալ վերջնական կարծիքի նախագծում (2005 թվականի սեպտեմբերի 16) ողջունել է Նայասրանի Հանրապետության Սահմանադրության մեջ առաջարկվող լուծումը՝ այն համարելով մեկ քայլ առաջ նախկին կարգավորումից, երբ կարգավորող մարմնի բոլոր անդամները նշանակվում էին Նայասրանի Հանրապետության Նախագահի կողմից:

ՆՏ Սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն՝ 83.2-րդ հոդվածով նախապեսված անկախ մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ «Նեռուսարտեսության եւ ռադիոյի մասին» Նայասրանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր փեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի եւ Հանրապետության Նախագահի կողմից:

ՆՏ Սահմանադրությունը 83.2-րդ հոդվածում ամրագրում է փվյալ ոլորտի իրավահարաբերությունների կարգավորման հիմնադրույթները՝ առավել հանգամանալից եւ մանրամասն կարգավորումը թողնելով ընթացիկ օրենսդրությանը: Ավելին՝ ՆՏ Սահմանադրության 83.2-րդ հոդվածը հարկապես նախատեսում է, որ կարգավորող մարմնի ձեւավորման եւ գործունեության հետ կապված հարաբերությունները պետք է կարգավորվեն Նայասրանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով:

Պետք է նշել, որ հեռահաղորդակցության ոլորտի կառուցակարգային եւ ընթացակարգային բնույթի իրավահարաբերությունները կարգավորող՝ Նայասրանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգն ունի համապարփակ բնույթ, որը հնարավորություն է տալիս ապահովելու այս ոլորտի իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների եւ պարտականությունների հանգամանալից կարգավորումը՝ ՆՏ Սահմանադրության համաձայն եւ հետեւելով Նայասրանի Հանրապետության միջազգային պարտավորություններին: Նեռահաղորդակցության ոլորտը կարգավորող իրավական ակտերի համակարգն ունի համալիր բնույթ՝ ներառելով մի շարք օրենսդրական եւ դատական ակտեր: Այդ համակարգը, բացի Նայասրանի Հանրապետության Սահմանադրությունից, մասնավորապես, ներառում է.

1. «Նեռուսարտեսության եւ ռադիոյի մասին» Նայասրանի Հանրապետության օ-

րենքը.

2. «Նեռուսարարության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Նայասարանի Նանրապետության օրենքը.

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայասարանի Նանրապետության օրենքի համապարասխան հոդվածները.

4. Նայասարանի Նանրապետության սահմանադրական դարարանի 11.01.2001 թվականի որոշումը՝ Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունված «Նեռուսարարության եւ ռադիոյի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի եւ 4-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի, 36-րդ հոդվածի, 40-րդ հոդվածի 1-ին մասի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 59-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով.

5. Նայասարանի Նանրապետության սահմանադրական դարարանի 13.05.2008 թվականի որոշումը՝ «Ռադիո Նայ» ՄՊԸ-ի դիմումի հիման վրա «Նեռուսարարության եւ ռադիոյի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով.

6. Նայասարանի Նանրապետության Նախագահի 28.12.2004 թվականի ՆԿ-326-Ն կարգադրությունը՝ Նանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգի մասին.

7. Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի նախագահի 13.10.2009 թվականի ՆՌ-006-Ն որոշումը՝ Նեռուսարարության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի՝ Ազգային ժողովի կողմից առաջադրվող անդամի թափուր տեղի ընկերության մրցութային հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին:

Վերոնշյալ իրավական ակտերի բովանդակության ժամանակագրական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել հեռահաղորդակցության ոլորտի իրավահարաբերությունների, հատկապես՝ կարգավորող մարմնի ձեւավորման կարգի իրավական կարգավորման դինամիկան: Այնուհայտ է, որ նույնիսկ մինչեւ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումը դրանցում հնարավորինս տեղայնացվել են ԵԽ Նախարարների կոմիտեի վերոնշյալ հանձնարարականի պահանջները: Այնուհանդերձ, ՀՀ Սահմանադրության 83.2-րդ հոդվածի ներմուծմամբ հեռահաղորդակցության ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի հիերարխիկ համակարգը դարձավ ամբողջական, դրա տրամաբանությունը՝ ակնբախ, այն է՝ իրավական կարգավորման հանրային մեթոդի կիրառմամբ ապահովել հեռահաղորդակցության ժողովրդավարական հիմքերը՝ մարդու իրավունքների երաշխավորման, կարգավորող մարմնի անկախության, դրա գործունեության թափանցիկության ապահովման, ինչպես նաեւ հասարակությունում բազմակարծության՝ մի կողմից, եւ, մյուս կողմից՝ այլոց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության խելամիտ զուգակցման միջոցով:

«Նեռուսարարության եւ ռադիոյի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքը՝ ընդունված 2000 թվականի հոկտեմբերի 9-ին, հեռահաղորդակցության ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող առաջնային իրավական ակտն է: Օրենքում ընդունման պահից ի վեր կարարվել են մի շարք փոփոխություններ եւ լրացումներ, ինչպես նաեւ Նայասարանի Նանրապետության սահմանադրական դարարանի կողմից քննության է առնվել օրենքի որոշ հոդվածների սահմանադրականության հարցը: Նշված օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Նեռուսարարության եւ ռադիոյի ազգային հանձնա-

ժողովը կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաեւ հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների, այդ թվում՝ Տանրային հեռուստառադիոընկերության գործունեության վերահսկումը:

Օրենքը թվարկում է նաեւ հանձնաժողովի լիազորությունները, որոնք համահունչ են ԵԽ Նախարարների կոմիտեի վերոնշյալ հանձնարարականի պահանջներին:

Տանձնաժողովի անկախության եւ դրա գործունեության անաչառության ապահովման փաստականից ուշադրության է արժանի քննարկվող օրենքի 38-րդ հոդվածը, որը սահմանում է, որ Տայաստանի Տանրապետության պետական բյուջեի ծախսային մատուցման նախատեսվում են հատկացումներ, որոնք պետք է բավարար լինեն հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար: Վկայակոչելով ԵԽ Նախարարների կոմիտեի մեջբերված հանձնարարականը՝ անհրաժեշտ է նշել, որ դրա՝ «Տեռահաղորդակցության ոլորտի կարգավորող մարմինների անկախությանը եւ գործառնությունների վերաբերյալ դեկավար սկզբունքներ» վերաբառությամբ հավելվածում առանձին տեղ է հատկացվում կարգավորող մարմինների ֆինանսավորման կառուցակարգերին: Այս իմաստով՝ Տայաստանի Տանրապետության օրենսդիրը, ըստ էության, ներպետական օրենսդրության մակարդակում համակողմանիորեն արտացոլել է այդ հավելվածում առկա այն մտպետումը, համաձայն որի՝ կարգավորող մարմինների ֆինանսավորման կառուցակարգը դրանց անկախության ապահովման ելակետային տարր է, որը պետք է ստանա օրենսդրական կարգավորում: Պետական իշխանության մարմինները պետք է ձեռնպահ մնան իրենց լիազորություններն իրականացնելիս այնպիսի որոշումներ ընդունելուց, որոնք կարող են այս կամ այն կերպ խաթարել կարգավորող մարմինների ֆինանսական անկախությունը: ԵԽ անդամ պետությունների ազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի կարգավորող հանձնաժողովների ֆինանսավորման ապահովման երկու մոդել, որոնք կարող են կիրառվել նաեւ համակցությամբ: Ֆինանսավորումը կարող է հիմնականում գոյանալ լիցենզային վճարումներից (պետական տուրքերից), կամ, եթե դա կիրառելի է՝ լիցենզատուների կողմից ապրանքաշրջանառության համար վճարվող հարկերից: Եթե այդ վճարների ծավալները բավարար են եւ արհեստական խոչընդոտներ չեն առաջացնում հեռահաղորդակցություն իրականացնող կազմակերպությունների համար, ապա այս մոդելը, ըստ էության, կարգավորող հանձնաժողովների ֆինանսավորման ամենաարդյունավետ եղանակն է, քանի որ այս դեպքում կարգավորող մարմինը կախվածության մեջ չի գտնվում նույնիսկ պետական բյուջեից: Չի բացառվում, սակայն, կարգավորող մարմինների ֆինանսավորումը պետական բյուջեի միջոցներից, որը համարվում է եվրոպական պետություններում կիրառվող երկրորդ մոդելը: Երկրորդ մոդելի կիրառման դեպքում, սակայն, առաջարկվում է օրենսդրական արգելք սահմանել պետական իշխանության մարմինների եւ նրանց պաշտոնատար անձանց համար, որպեսզի վերջիններս ձեռնպահ մնան իրենց լիազորությունները կարգավորող մարմնի ֆինանսական անկախության խաթարման ուղղությամբ գործադրելուց: Այս մտպետումն էլ հենց որդեգրվել է Տայաստանի Տանրապետության օրենսդրի կողմից:

Տայաստանի Տանրապետության համար մեկնաբանվող նորմի իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքներն առկա են, գլխավոր խնդիրը դրանց արդյունավետ կիրացման ապահովումն է:

ՆՈՂ-ՎԱԾ 83.3

1. Նայասարանի Նանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Նայասարանի Նանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

2. Կենտրոնական բանկը թողարկում է Նայասարանի Նանրապետության արժույթը՝ հայկական դրամը:

3. Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառնություններն իրականացնելիս անկասի է:

4. Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Նանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել կենտրոնական բանկի նախագահ:

5. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պարզամամուլորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Նանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին:

1. 2005թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց նոր հոդված, որը վերաբերում է ՏՏ կենտրոնական բանկի սահմանադրաիրավական կարգավիճակին: Նման հոդվածի առկայությունը վկայում է բանկային համակարգի կարելության ընդգծման եւ երկրի ֆինանսավարկային հարաբերություններում ՏՏ կենտրոնական բանկի դերի էական մեծացման մասին:

Մեկնաբանվող հոդվածը սահմանում է.

ա) ՏՏ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը՝ Նայասարանի Նանրապետությունում գների կայունության ապահովումը,

բ) ՏՏ կենտրոնական բանկի պարտականությունը՝ դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակումը, հաստատումը եւ իրականացումը,

գ) Նայասարանի Նանրապետության արժույթը՝ հայկական դրամը, թողարկելու՝ ՏՏ կենտրոնական բանկի պարտականությունը,

դ) ՏՏ կենտրոնական բանկի անկախության երաշխավորման անհրաժեշտությունը,

ե) ՏՏ կենտրոնական բանկի նախագահի նշանակման ու պաշտոնանկության կարգը:

«ՏՏ կենտրոնական բանկի մասին» ՏՏ օրենքի համաձայն՝ Նայասարանի Նանրապետության կենտրոնական բանկը պետական գործառնությունով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Նայասարանի Նանրապետությունն է: Կենտրոնական բանկը միասնական կենտրոնացված համակարգ է, որը ներառում է բանկի գլխավոր գրասենյակը և փարաձեռքային ստորաբաժանումները: «Նայասարանի Նանրապետության կենտրոնական բանկի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Նայասարանի Նանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Նայասարանի Նանրապետության պարտավորությունների դիմաց:

ՆՆ կենտրոնական բանկի խնդիրներն են՝

ա) ՆՆ ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ ՆՆ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը.

բ) գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը.

գ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.

դ) արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

ե) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Այսուհանդերձ, ՆՆ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է: «ՆՆ կենտրոնական բանկի մասին» ՆՆ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, որը սահմանադրական ամրագրում ունի, կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ: Այդ նպատակով, համաձայն ՆՆ Սահմանադրության հոդված 83.3-ի՝ կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր, որոնք ներառում են գնաճի կանխարեսումները, դրամավարկային քաղաքականության ուղղությունները և այլ դրույթներ: Դրամավարկային քաղաքականության ծրագրերը հաստատվում են ՆՆ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և հրապարակվում եռամսյակային պարբերականությամբ:

Կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, Ազգային ժողով է ուղարկում և «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքով սահմանված կարգով ու ժամկետում Ազգային ժողովի նիստում ներկայացնում է ընթացիկ տարվա առաջին եռամսյակում հաստատված դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի քննարկումն իրականացվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով և ավարտվում է ֆինանսավարկային, բյուջերային և փոփոխական հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցչի և կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթներով: Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության քննարկումն իրականացվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով և ավարտվում է եզրափակիչ ելույթներով:

Գների կայունության խնդրի արդյունավետ իրագործման եւ գնաճի նպատակային թիրախն ապահովելու համար կենտրոնական բանկն իր գործիքակազմում ունի անուղղակի դրամավարկային գործիքներ, որոնք տարանջատվում են հիմնական, ճշգրտող, կառուցվածքային և մշտական հնարավորության գործիքների: Նշված գործիքները կիրառվում են բանկերի միջոցով, այսինքն՝ բանկերի միջոցով փոփոխությանն են փոխանցվում դրամավարկային քաղաքականության հիմնական ազդակները:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածը սահմանում է նաև, որ Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկը թողարկում է ՆՆ արժույթը՝ հայկական դրամը: Այս դրույթն իր դրսևորումն է գտել նաև «ՆՆ կենտրոնական բանկի մասին» ՆՆ օրենքի 5-րդ հոդվածում, որը թվարկում է կենտրոնական բանկի խնդիրները: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ կենտրոնական բանկի խնդիրներից է Նայաստանի Նանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը:

ՆՆ արժույթի թողարկման հետ կապված հարաբերությունների մանրամասն կարգավորումը նախատեսված է «ՆՆ կենտրոնական բանկի մասին» ՆՆ օրենքի 6-րդ գլխում: Կենտրոնական բանկն իր հաշվեկշռում արտացոլում և կառավարում է Նայաստանի Նանրապետության արժույթի պահուստները, կազմում է Նայաստանի Նանրապետության արժույթի թողարկման ծրագիր և ապահովում թղթադրամի եւ մեքաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի) կանոնավոր մատակարարումը՝ ելնելով դրամավարկային քաղաքականության փարեկան ծրագրից և փնտեսության պահանջից:

Կենտրոնական բանկը սահմանում է Նայաստանի Նանրապետության օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամի և մեքաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի) անվանական արժեքը, չափը, կշիռը, պատկերներով ու մակագրություններով էքսիզը, պաշտպանական և վճարունակության հատկանիշները:

Նայաստանի Նանրապետության օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամների վրա պետք է լինեն Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկի նախագահի և կառավարության լիազորած մարմնի ղեկավարի՝ Ֆինանսների նախարարի, ստորագրությունները:

Դրամաշրջանառությունը կանխիկ և անկանխիկ դրամի շրջանառության միասնությունն է: Դրա կարգավորումը նպատակ է հետապնդում կանոնակարգել կանխիկ և անկանխիկ դրամով իրականացվող գործառնությունները՝ նվազեցնելով գործառնությունների ընթացքում հնարավոր ռիսկերը:

Դրամաշրջանառության կարգավորման համար հիմք են հանդիսանում բնակչության դրամական եկամուտների, ծախսերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գների մակարդակները: Հիմք է ընդունվում նաև անկանխիկ վճարամիջոցների փարածվածության և դրանց կիրառման մակարդակը:

Այսպիսով, կանխիկ դրամաշրջանառության կարգավորման նպատակով ՆՆ կենտրոնական բանկը.

- սահմանում է շրջանառության համար անհրաժեշտ թղթադրամների և մեքաղադրամների անվանական արժեքները,

- գնահատում է յուրաքանչյուր անվանական արժեքի պահանջը շրջանառության համար,

- կազմակերպում է շրջանառվող թղթադրամների փոխադրության և մեքաղադրամների հատման գործընթացը,

- յուրաքանչյուր անվանական արժեքի դրամանիշի համար ապահովում է բավարար մակարդակի պահուստներ,

- շրջանառությունից դուրս է բերում հնամաշ, վնասված, կեղծ և անվճարունակ դրամանիշները՝ դրանք փոխարինելով նոր դրամանիշներով,

- սահմանված կարգով ոչնչացնում է շրջանառությունից դուրս բերված հնամաշ, վնասված և անվճարունակ դրամանիշները,

- անհրաժեշտության դեպքում դրամանիշները հետ է կանչում շրջանառությունից.
- իրականացնում է դրամաշրջանառության կարգավորմանը միտված այլ գործառնություններ:

3. ՀՀ Սահմանադրության համաձայն՝ կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառնություններն իրականացնելիս անկախ է: ՀՀ կենտրոնական բանկի անկախության վերաբերյալ դրույթ է պարունակում նաև «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, որի համաձայն՝ կենտրոնական բանկն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկն ու կառավարությունը միմյանց պարապալորությունների համար պարասխասնաբարություն չեն կրում, եթե այդպիսիք չեն ստանձնել:

ՀՀ կենտրոնական բանկին անկախությամբ օժտելն անհրաժեշտ է հենց նրա հիմնական խնդրի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկի անկախության հայեցակարգի և, մասնավորապես՝ նրա կառուցակարգային, գույքային, բյուջետային, ֆինանսական և մյուս բաղադրիչների հիմք է հանդիսանում կենտրոնական բանկի՝ իրավաբանական անձ լինելու հանգամանքը:

Կենտրոնական բանկի անկախությունն արտացոլող գործոն է հանդիսանում նաև օրենսդրությամբ նրա գործունեության նպատակների և խնդիրների որոշումը: Դրանով որոշվում են, նախ՝ կենտրոնական բանկի գործունեության ազատության սահմանները, և երկրորդ՝ օրենսդրոթեն սահմանվում է նրա իրավասությունը:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ներառում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվը՝ օրենքի նախագծի առանձին հավելվածի տեսքով, և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաբանակը, որը կենտրոնական բանկի նյութական անկախության երաշխիք է:

Ընդհանրապես կենտրոնական բանկերի անկախության ապահովման կարևոր գործոններ են հանդիսանում բանկի կառավարման համակարգի առանձնահատկությունները և, մասնավորապես, կառավարման մարմինների ձևավորման կարգը:

4. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18 և 19-րդ հոդվածների համաձայն՝ կենտրոնական բանկի նախագահը կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պարասխասնաբար է օրենքով սահմանված՝ կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: Կենտրոնական բանկի խորհուրդը կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Կենտրոնական բանկի խորհուրդը կազմված է կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից և խորհրդի հինգ անդամներից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակման կարգն ունի որոշակի առանձնահատկություն: Մասնավորապես, կենտրոնական բանկի նախագահի նշանակման համար ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է կենտրոնական բանկի անկախության երաշխիք հանդիսացող դրույթ, որի համաձայն կենտրոնական բանկի նախագահը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակվում է այնպիսի կոլեգիալ մարմնի կողմից, ինչպիսին Ազգային ժողովն է: Անկախության կարևորագույն երաշխիք է նաև կենտրոնական բանկի նախագահի լիազորությունների ժամկետը՝ 6 տարի, այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ

նշանակվել կենտրոնական բանկի նախագահ: Կենտրոնական բանկի նախագահը կարող է պաշտոնից ազատվել կամովին՝ ազատվելու օրվանից երեսուն օր առաջ գրավոր տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին: Տեղեկացնելու օրվան հաջորդող երեսուներորդ օրվանից կենտրոնական բանկի նախագահը համարվում է պաշտոնից ազատված:

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հինգ տարի ժամկետով՝ ռոտացիոն սկզբունքով:

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը, կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամները կարող են պաշտոնից ազատվել կամովին՝ ազատվելու օրվանից մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին: Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ պաշտոնից կարող է ազատել կենտրոնական բանկի նախագահին, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ կենտրոնական բանկի նախագահի տեղակալին, խորհրդի մյուս անդամներին, եթե նրանք՝

ա) դադարել են Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինել:

բ) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար:

գ) թերացել են պաշտոնեական պարտականությունները կատարելիս:

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել են կամ գրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

ե) հիվանդության կամ այլ պարճառով վեց ամսից ավելի չեն կատարել իրենց պաշտոնեական պարտականությունները:

զ) մեկ տարվա ընթացքում ավելի քան հինգ անգամ անհարգելի բացակայել են խորհրդի նիստերից: Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և սրտեղծագործական աշխատանքից:

5. Սահմանադրական մակարդակի է բարձրացված նաև կենտրոնական բանկի նախագահի պաշտոնանկությունը: Կենտրոնական բանկի կառուցակարգային անկախությունը երաշխավորելու նպատակով նախագահի պաշտոնանկությունը կարող է տեղի ունենալ միայն Հանրապետության Նախագահի կողմից նման առաջարկ ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու եւ պարզամավորների կեսից ավելիի քվեի առկայության դեպքում: Նման ընթացակարգը ենթադրում է կայունության մեծ լիցք եւ օրենսդիր մարմնի էական դերակատարություն տվյալ հարցում: Բանն այն է, որ սահմանադրական դրույթը շեշտում է, որ պարզամավորների ձայների մեծամասնությամբ Ազգային ժողովը «կարող է» պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին: Մյուս կողմից՝ առանց Հանրապետության Նախագահի ներկայացման դա անհնարին է: Հակակշիռների այս համակարգը երաշխավորում է կենտրոնական բանկի անկախությունն ու գործառնական կայունությունը:

ՆՈՂՎԱԾ 83.4

1. Նայասպրանի Նանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջեային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

2. Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:

3. Վերահսկիչ պալատը րարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

4. Վերահսկիչ պալատի գործունեության կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով:

5. Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Նանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց րարի ժամկետով: Վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պարզամափորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահ:

1. Մեկնաբանվող հոդվածն ամբողջությամբ իր ամրագրումն է սպացել 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում և այն թղթակցում է նաև Սահմանադրության 77-րդ հոդվածի հետ:

Մինչև Սահմանադրության 2005 թվականի փոփոխությունները, Նայասպրանի Նանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի խմբագրությամբ Սահմանադրության 77-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը սահմանում էր, որ Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին րարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ, իսկ 83-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ, նշանակում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահ:

Նիշարակված սահմանադրական նորմերի վերլուծությունից հետևում էր, որ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը ձեւավորվում էր բացառապես Ազգային ժողովի կողմից և ենթակա էր միայն նրան: Այդ հիմքերի առկայությամբ պայմանավորված՝ պետական մարմինների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության հիմնական գործառույթներն Ազգային ժողովն իրականացնում էր Ազգային ժողովի վերահսկիչ պալատի միջոցով:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, բացի այն հանգամանքից, որ Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 83.4-րդ հոդվածով, Սահմանադրության 77-րդ հոդվածում «Ազգային ժողովի վերահսկիչ պալատ» բառերը փոխարինվեց «Նայասպրանի Նանրապետության վերահսկիչ պալատ» բառերով, դրանով սահմանվեց այդ մարմնի սահմանադրաիրավական նոր կարգավիճակ:

Չնայած այն հանգամանքին, որ վերահսկիչ պալատն այսուհետ Ազգային ժողովի մարմին չի համարվում, բայց դա չի նշանակում, որ նա բացարձակ անկախ մարմին է, այդ թվում՝ խորհրդարանից, և դադարել է խորհրդարանական վերահսկողության սու-

բյեկր դառնալուց: Ամենեւին՝ ոչ, քանի որ դա է վկայում ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների իրավական կարգավիճակի ուսումնասիրության միջազգային փորձը:

Վերահսկողական գործառնություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի, այդ թվում՝ վերահսկիչ պալատի արդյունավետ գործունեության ապահովման երաշխիքն այդ մարմնի անկախությունն է: Այն գրեթե բոլոր երկրների համանման մարմինները բնութագրող անփոփոխ հատկանիշն է:

Գոյություն ունեն անկախության փարբեր ձեւեր, ինչպես նաեւ դրա ապահովման փարբեր մեթոդներ: Նարկ է նշել, որ ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի՝ որպես անկախ մարմնի վերաբերյալ դրույթ, բացի ՆՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածից, պարունակվում է հազվագյուտ երկրների հիմնական օրենքներում (օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Նանրապետության Սահմանադրության 114(2)-րդ հոդվածը, Չեխիայի Նանրապետության Սահմանադրության 97-րդ հոդվածը եւ այլն):

Սակայն առանձին երկրներում այդ մարմինների գործունեությունը կարգավորող հարուկ օրենքներում ընդհանրապես բացակայում են նույնիսկ դրանց անկախության վերաբերյալ դրույթները (օրինակ՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում եւ այլն), ինչը միանշանակ չի վկայում այդ մարմինների ոչ բավարար անկախ գործունեության հանգամանքի մասին:

Այնուամենայնիվ, վերահսկիչ մարմնի՝ որպես իրավական ինստիտուտի, անկախության մասին դրույթների բացակայությունն ինքնին հանգեցնում է պետական այլ մարմինների նկատմամբ այդ մարմնի դերակատարության ու դիրքերի թուլացմանը:

Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագիրը⁷⁹ (այսուհետ՝ Լիմայի հռչակագիր), որն ընդունվել է 1977 Գերագույն վերահսկիչ արյանների միջազգային կազմակերպության (INTOSAI) IX համագումարում, սահմանում է, որ բարձրագույն վերահսկիչ մարմինները կարող են իրենց վրա դրված խնդիրներն օբյեկտիվ եւ արդյունավետ կատարել միայն այն դեպքում, երբ նրանք անկախ են իրենց կողմից ստուգվող կազմակերպություններից եւ պաշտպանված են կողմնակի ազդեցությունից (հոդված 5, կեր 1): Եվ այս նկատառումներից ելնելով՝ հռչակագրի 5-րդ հոդվածի 3-րդ կերտով առաջարկվում է բարձրագույն վերահսկիչ մարմնի հիմնադրումը եւ անհրաժեշտ անկախության մակարդակն ամրագրել Սահմանադրությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Լիմայի հռչակագիրը միջազգային իրավունքի փեսանկյունից ունի երաշխավորային բնույթ, այդուհանդերձ, դրա նշանակությունը կարեւոր է ժողովրդավարական յուրաքանչյուր պետության կողմից ֆինանսական վերահսկողության բնագավառում սահմանադրական եւ օրենսդրական հիմքերի ստեղծման համար:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ փրվում է վերահսկիչ պալատի՝ որպես անկախ մարմնի, սահմանումը: Բնականաբար, այսպեղ խոսք չի կարող գնալ վերահսկիչ պալատի բացարձակ անկախության մասին, որի ապահովումն առանձնապես բարդ խնդիր է կամ գրեթե անհնարին է:

Անդրադառնալով վերահսկիչ մարմնի բացարձակ անկախության խնդրին՝ Լիմայի հռչակագիրն այն մեկնաբանել է հետեւյալ կերպ. պետական մարմինները չեն կարող

⁷⁹ Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագիրը գեներալ է ՀՀ Ազգային ժողովի 2001 թվականի հունիսի 13-ի 188-2 թվակիր որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2000 թվականի տարեկան հաշվետվության մեջ եւ, ըստ էության, կազմել է այդ հաշվետվության բաղկացուցիչ մաս (տե՛ս ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 4 հունիսի 2001 թվականի, N19, հոդված 483):

լինել բացարձակապես անկախ, քանի որ նրանք, ընդհանուր առմամբ, պեպրության մասն են կազմում (հոդված 5, կեր 2):

Սակայն բարձրագույն վերահսկիչ մարմնին վերապահված խնդիրների լուծման համար առանցքային նշանակություն է ստանում կազմակերպագործառնական անկախությունը, որի էությունը կազմում են հետևյալ բաղկացուցիչ փարրերը. 1) ֆինանսական անկախության ապահովում, 2) կազմակերպչական անկախության ապահովում, 3) վերահսկողական գործունեության առարկայի ինքնուրույն սահմանում, 4) վերահսկողական միջոցառումների նպատակների եւ այդ միջոցառումների իրականացման մեթոդների ընտրության անկախության ապահովում, 5) վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվեքվության ձեւի ու բովանդակության սահմանում:

Ֆինանսական անկախության ապահովումը ենթադրում է՝ ա) վերահսկիչ պալատի գործունեության ֆինանսավորում բացառապես պետական բյուջեի միջոցներից, բ) պետական բյուջեում այդ մարմնի պահպանման ծախսերի առանձին փողով ամրագրում, գ) բյուջեփայլի ծախսերի նախահաշվի ինքնուրույն կազմում, դ) այդ ծախսերի պլանավորման նկատմամբ կառավարության վերահսկողության բացառում:

Վերահսկիչ պալատի կազմակերպչական առումով անկախության ապահովումն իրագործվում է այդ մարմնի՝ ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության մարմնից որեւէ եղանակով ենթակայության բացառման միջոցով, ինչը բխում է մեկնաբանվող հոդվածով «Նայաստանի Նանրապետության վերահսկիչ պալատ» անվանման եւ այդ մարմնի իրավասության բովանդակությունից:

Վերահսկողական գործունեության առարկայի ինքնուրույն սահմանումը եւ դրա հիման վրա վերահսկողության ենթակա օբյեկտի որոշումն ու, այնուհետեւ, վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի կազմումը դիտարկվում է այդ մարմնի անկախության ապահովման հաջորդ կարեւոր բաղադրիչը: Ընդ որում, հենց այս նախանշված կառուցակարգին համապատասխան վերահսկիչ պալատին պետք է պատկանի վերահսկողական գործունեության կազմակերպման նախաձեռնությունը:

Վերահսկիչ պալատի վերահսկողական միջոցառումների նպատակների եւ այդ միջոցառումների իրականացման մեթոդների ընտրության ինքնուրույնությունը կոչված է ապահովելու այդ մարմնի գործունեության անկախության ապահովման համար կայուն երաշխիքներ: Նենց այդ մեթոդների ճիշտ ընտրությամբ է նաեւ պայմանավորված վերահսկողական գործունեության ինչպես որակը, այնպես էլ արդյունավետությունը:

Վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվեքվությունն արտացոլում է վերահսկիչ մարմնի գործունեությունը որեւէ ժամանակահատվածի համար: Այդ հաշվեքվության ձեւի, ոճի, բովանդակության ընտրության եւ դրանում պարունակվող ճիշտ ու ստույգ տեղեկատվության արտացոլման հանգամանքներով է պայմանավորված այդ մարմնի գործունեության հրապարակայնության ապահովումն ու հաշվետու լինելը ոչ միայն խորհրդարանի, այլեւ հասարակության առջեւ:

Վերահսկիչ պալատի սահմանադրական կարգավիճակի բաղկացուցիչ մասն են կազմում այդ մարմնի գործառնությունը կամ գործունեության ուղղությունները եւ լիազորությունները սահմանող նորմերը:

Անկնհայտ է, որ ՏՎ վերահսկիչ պալատի գործունեության կարեւոր եւ որոշիչ ուղղությունն են կազմում նրա վերահսկողական գործառնությունները: Այդ առումով անհրաժեշտ է որոշել՝ 1) վերահսկիչ պալատի վերահսկողական գործունեության օբյեկտը, այսինքն՝ այդ մարմնի կողմից իրականացվող վերահսկողական միջոցառումների ոլորտը կամ շրջանակները, 2) վերահսկողական գործառնությունների իրականացման մեթոդները:

րը, այսինքն՝ վերահսկողության իրականացման միջոցները, փեսակները եւ ձեւերը, 3) կոնկրետ վերահսկողական միջոցառումների իրականացման ժամանակ առաջադրված նպատակները եւ խնդիրները, այսինքն՝ վերահսկվող օբյեկտի գործողությունների կամ գործունեության իրավաչափությունը:

Տարբեր երկրների սահմանադրություններով վերահսկիչ մարմինների վերահսկողական գործունեության օբյեկտը փարբեր ձեւակերպում է սրացել: Այսպես, վերահսկիչ մարմնի վերահսկողության շրջանակները ներառում են՝ պետական ծախսերը (Ճապոնիա, Նունասպան), կառավարության ակտերի օրինականության հարցերը (Իտալիա), պետության փոխառության կառավարման գործընթացը եւ հաշիվները, ինչպես նաեւ կառավարությանը վերաբերող ցանկացած հարց, այդ թվում՝ ներքին կանոնակարգի ու անձնակազմի մասով (Իսպանիա), պետության ծախսերի ու եկամուտների հաշիվները եւ ազգային բանկերի գործունեությունը, ինչպես նաեւ պետական մարմինների ու դրանց ծառայողների գործողությունների իրավաչափությունը (Նարավային Կորեա), պետական բյուջեի կապարմանը եւ պետական սեփականության կառավարմանն ու փոխառության վարմանը վերաբերող հարցերը (Չեխիա), պետության գույքային եւ բյուջեփային հաշիվներն ու բյուջեի վարման ընթացակարգային հարցերը (ԳՂՏ), պետական ծախսերն ու եկամուտները եւ ազգային բանկերի գործունեությունը, ինչպես նաեւ պետական մարմինների ու դրանց ծառայողների գործողությունների օրինաչափությունը (ՉԺՏ) եւ այլն:

Տարբեր երկրների սահմանադրական եւ օրենսդրական դույթների վերլուծությունից հետեւում է, որ բարձրագույն վերահսկիչ մարմինների վերահսկողական գործունեության գլխավոր օբյեկտը պետական բյուջեն է՝ ինչպես եկամուտների ու ծախսերի մասով, այնպես էլ դրա կապարման մասով:

Ի դեպ, Լիմայի հռչակագրի 18-րդ հոդվածով սահմանվում է, որ բարձրագույն վերահսկիչ մարմնի վերահսկողական լիազորությունները պետք է որոշվեն Սահմանադրությամբ (կեր 1), իսկ պետական ֆինանսները, անկախ ազգային բյուջեում դրանց արտացոլվածությունից, պետք է հանդիսանան բարձրագույն վերահսկիչ մարմնի վերահսկողության օբյեկտ (կեր 3):

ՆՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի առաջին մասում ամրագրված նորմերի վերլուծությունից հետեւում է, որ ՆՏ վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում՝ ա) պետական բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ, բ) համայնքային բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ, գ) պետական սեփականության օգտագործման նկատմամբ, դ) համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Այսինքն՝ վերահսկիչ պալատի վերահսկողության օբյեկտ են համարվում բյուջեփային միջոցները եւ պետական ու համայնքային սեփականությունը:

«Նայասպանի Նանրապետության բյուջեփային համակարգի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածում ամրագրված դույթների բովանդակությունից բխում է, որ «բյուջեփային միջոցների օգտագործում» հասկացության բովանդակային ծավալը չի սահմանափակվում միայն պետության եւ քաղաքական ինքնակառավարման խնդիրների եւ գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղված բյուջեփային ծախսերի կապարմամբ: Այս հասկացության բովանդակային ծավալում կարող են ներառվել նաեւ բյուջեփային վարկերի ու փոխարկությունների փրամադրումը եւ ներգրավված փոխառու միջոցների մարումները: Իսկ բյուջեփային ծախսերի, փրամադրված բյուջեփային վարկերի ու փոխարկությունների եւ ներգրավված փոխառու միջոցների մարումների ծավալների ամբողջությունը կազմում են բյուջեփային ելքեր:

Ինչ վերաբերում է «պերական սեփականություն» եւ «համայնքային սեփականություն» հասկացություններին, ապա դրանց բովանդակության մեջ ներառվում է Նայաստանի Նանրապետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող նյութական եւ ոչ նյութական գույքը, որի կազմում ներառվում են ֆինանսները, վերարտադրության նյութական արդյունքները, բնական կամ ընդերքի պաշարները, այլ նյութական եւ ոչ նյութական ռեսուրսներն ու բարիքները:

Այսպետից, բյուջեբային միջոցների եւ պերական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողությունն իրենից ներկայացնում է որպես պերական միասնական վերահսկողության փարր, որն իրականացվում է Նայաստանի Նանրապետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող նյութական եւ ոչ նյութական գույքի՝ իրավաչափ, արդյունավետ, նպատակային եւ պարզաճ օգտագործման նկատմամբ:

Ընդ որում, եթե իրավաչափության գնահատման ժամանակ ուշադրություն է դարձվում օրենսդրությամբ ամրագրված դրույթների պահանջներին՝ բյուջեբային միջոցի կամ հանրային սեփականության օգտագործման համարժեքությանը կամ համապատասխանությանը, իսկ արդյունավետությունը ենթադրում է կատարված ծախսերի ու սրացված արդյունքների միջեւ օպտիմալ հարաբերակցության ապահովում, ապա այդ միջոցների նպատակային եւ պարզաճ օգտագործման ժամանակ առաջադրված նպատակների եւ կատարված ծախսերի հարաբերակցության արդյունքում ապահովվում է դրանց համաչափությունը եւ այնուհետեւ նաեւ այդ ծախսերի չափերի նվազեցումը:

Անհրաժեշտ է նկատել, որ վերահսկիչ պալատի վերահսկողական լիազորությունները փարածվում են պերական եւ րեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների եւ կազմակերպությունների վրա, ինչպես նաեւ անկախ սեփականության ձեւից ու րեսակից՝ այն կազմակերպությունների վրա, որոնք օգտագործում են բյուջեբային միջոցներ կամ պերական ու համայնքային սեփականություն կամ կառավարում են այդ սեփականությունը:

Բնականաբար, վերահսկողական լիազորությունների բովանդակությունից բխում է վերահսկիչ պալատի՝ որպես պերական մարմնի, այնպիսի գործառնությունների իրականացման անհրաժեշտություն, ինչպիսիք են՝ վերահսկողական գործունեության արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը, ինչպես նաեւ օրենսդրության կատարելագործման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացումը, բացահայտված իրավախախտումների եւ այլ շեղումների հետեւանքների վերլուծությունը եւ այլն: Չնայած նման գործառնություններ ՆՆ Սահմանադրությամբ ամրագրված չեն, սակայն դրանք կազմում են վերահսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի գործունեության բաղկացուցիչ մասը, որոնք բխում են հիմնական գործառնությունից եւ փոխրացնում են վերջիններին:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վերահսկիչ պալատը փարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

Մեկնաբանվող հոդվածի նորմերի վերլուծությունից կարելի է կատարել հետեւյալ եզրահանգումները՝ ա) վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի հարցերի շրջանակը չի սահմանափակվում միայն վերահսկողական աշխատանքների ընդգրկմամբ, բ)

վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի կազմման և հաստատման համար, բացի փարեկան ծրագրից, Սահմանադրությունը ժամանակագրային առումով չի բացառում նաև այլ ժամանակահատվածների համար ծրագրերի կազմում ու հաստատում, գ) վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի կազմման նախաձեռնությունը պատկանում է միայն վերահսկիչ պալատին, դ) Ազգային ժողովում վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի քննարկման ընթացքում Ազգային ժողովի պարզամտավորների, կառավարության և այլ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման վերաբերյալ վերջնական համաձայնությունը փախ է վերահսկիչ պալատը, ե) եթե Ազգային ժողովի կողմից չի հաստատվում վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը, ապա դա չի հանգեցնում այդ մարմնի վերահսկողական գործունեության դադարմանը:

Անհրաժեշտ է նշել, որ վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի բաղադրիչներ կարող են համարվել ինչպես վերահսկողական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ վերահսկողության ենթակա օբյեկտի, ստուգման բնույթի, նպատակի, ժամանակի և փեսակի մատնանշմամբ, այնպես էլ պետական բյուջեի կատարման մասին փարեկան հաշվետվության (Սահմանադրության 77-րդ հոդված), կառավարության պետական գույքի մասնավորեցման ընթացիկ փարվա ծրագրի կատարման մասին հաշվետվության («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 109-րդ հոդված) և ՀՀ կենտրոնական բանկի փարեկան ֆինանսական հաշվետվության («Տայաստանի Տանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված) վերաբերյալ համապատասխան եզրակացությունների կազմումն ու փրամադրումը և վերահսկիչ պալատի հիմնական գործառույթներից բխող վերլուծական կամ այլ բնույթի աշխատանքների կատարումը:

Այսինքն՝ վերահսկիչ պալատի գործունեության շրջանակներն ավելի ընդգրկուն են, քան վերահսկողական աշխատանքները: Նույնիսկ առանձին երկրներում վերահսկիչ մարմինների կողմից կառավարության ծրագրերին տրված գնահատականները և պետական քաղաքականության վերաբերյալ անցկացված վերլուծությունները դիտարկվում են որպես փոխալ մարմնի հիմնական պարտականություններից: Օրինակ, ԱՄՆ-ի համանման մարմնի վերահսկողական գործառույթների շարքին են դասվում նաև՝ ա) պետական քաղաքականության վերլուծության իրականացումը, որի նպատակն է քաղաքականություն իրականացնող անձանց կողմից որոշումների մշակմանն ու ընդունման համար համապատասխան հենք ստեղծելը, բ) իրավական վերլուծության իրականացումը, որը նպատակ է հետապնդում վարչակազմի գործողությունների իրավաչափության հիմքը սահմանելու համար, գ) օրենքների նախագծերի իրավական վերլուծության իրականացումը, որի նպատակն է օրենսդրի կողմից պատշաճ որոշումներ կայացնելը և այլն:

Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը ներկայացվում է Ազգային ժողով, որտեղ քննարկվում և հաստատվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Նարկ է նկատել, որ վերահսկողության ենթակա օբյեկտի որոշումը և դրա հիման վրա նաև վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի կազմումը դիտարկվում է այդ մարմնի անկախության ապահովման կարեւորագույն երաշխիքներից մեկը: Ընդ որում, հենց այս նախանշված կառուցակարգին համապատասխան վերահսկիչ պալատին պետք է պատկանի վերահսկողական գործունեության կազմակերպման նախաձեռնությունը:

Վերահսկիչ մարմինների աշխատանքների պլանավորման միջազգային փորձը վկայում է այն մասին, որ գրեթե բոլոր երկրներում վերահսկողական ծրագրերը կազմվում

են այդ մարմինների կողմից, եւ այդ միպուովը շարունակում է զարգանալ: Այս հանգամանքը հավասարում է, որ վերահսկիչ մարմինները գործում են անկախության սկզբունքի հիման վրա, ինքնուրույն որոշում են սպուգումների նպատակը եւ սպուգման օբյեկտը՝ զերծ մնալով պերական այլ մարմինների անմիջական միջամտություններից: Այսպես, Չեխիայի բարձրագույն վերահսկիչ ծառայության մասին օրենքի համաձայն՝ վերահսկողական գործունեության ծրագրի կազմումը եւ հաստատումը հանդիսանում են այդ ծառայության ներքին կազմակերպական լիազորություններ (օրենքի §17): Մալազիայի վերահսկիչ պալատի վերահսկողական գործունեության ծրագիրը կազմվում եւ հաստատվում է բացառապես այդ պալատի նախագահի «հայեցողությամբ» (օրենքի § 5(1)), իսկ առանձին խոշոր սպուգումները պլանավորվում են վերահսկիչ պալատի անդամների խորհրդի կողմից (օրենքի §12(1)):

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ վերահսկիչ մարմինների անկախության ապահովումը չի բացառում գործադիր կամ օրենսդիր իշխանության մարմինների կողմից սպուգումների անցկացման վերաբերյալ հարցումների կամ առաջարկությունների ներկայացման հնարավորությունը: Առանձին երկրների օրենսդրությամբ այդպիսի առաջարկությունների կամ հարցումների վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը այնուամենայնիվ, վերապահված է վերահսկիչ մարմիններին (Չեխիա, ԳՂՏ, Նարավային Կորեա եւ այլն):

Անդրադառնալով այս խնդրին՝ Լիմայի հռչակագիրը սահմանում է, որ բարձրագույն վերահսկիչ մարմնի անկախությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ եւ օրենքով, հնարավորություն է ընձեռում նրան աշխարհի սեփական նախաձեռնությամբ եւ բարձր ինքնավարության մակարդակով նույնիսկ այն դեպքում, երբ նա հանդես է գալիս որպես խորհրդարանի ներկայացուցիչ եւ սպուգումներ է կատարում վերջինիս ցուցումներով (հոդված 8):

Ինչ վերաբերում է վերահսկիչ պալատի վերահսկողական գործունեության եւ այլ բնույթի աշխատանքների սահմանների ու դրանց իրականացման շրջանակների էության ու բովանդակության հստակեցմանը, ապա հարկ է նշել, որ վերահսկողությունը՝ որպես րվյալ մարմնի գործունեության ոլորտ, րարբերվում է այդ վերահսկողության իրականացման մեթոդներից ու ձեերից: Ընդ որում, եթե վերահսկողության ձեւն արտահայտում է րվյալ գործընթացի կոնկրետ բովանդակությունը կամ դրա արտաքին դրսետրման առանձին կողմերը (օրինակ, փաստաթղթային ու փաստացի սպուգումը, ընրրանքային ու համարարած սպուգումը, նախնական, ընթացիկ ու հետագա սպուգումը, դիտարկումը, վերլուծությունը եւ այլն), ապա վերահսկողության մեթոդին են վերաբերում այդ գործընթացի իրականացման կոնկրետ միջոցները կամ հնարքները (օրինակ՝ թվաբանական սպուգումը, հանդիպակաց սպուգումը, համեմատումը, գույքագրումը, ուսումնասիրությունը, փորձաքննությունը եւ այլն):

3. Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՏՏ վերահսկիչ պալատը րարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը: Այս հաշվետվությունը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 101-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում, սակայն դրա վերաբերյալ Ազգային ժողովը որոշում չի կայացնում:

Սահմանադրական այս նորմի վերլուծությունից հետեւում է, որ Ազգային ժողովին հաշվետու լինելը չի նշանակում լինել խորհրդարանին ենթակա: Այսպեղ խոսքը Ազգային

ժողովի՝ որպես ներկայացուցչական մարմնի առջև վերահսկիչ պալատի պարասխա-
նավորության մասին է:

Վերահսկողական աշխարանքների հաշվեքվության նախապարտավորումը վե-
րահսկիչ պալատի կարևոր պարտականություններից է: Որպես կանոն, հասարակու-
թյան առջև վերահսկիչ մարմնի հաշվեքու լինելը դիտարկվում է վերահսկողության
անբավարարի մաս կազմող եւ միաժամանակ կարևոր ու որոշիչ բնութագրից: Դրա դերը
մեծ է ժողովրդավարական ցանկացած երկրում: Օրինակ, խորհրդարանի առջև հաշվե-
քու լինելը համարվում է Մեծ Բրիտանիայի վերահսկիչ մարմնի հիմնական խնդիրը, իսկ
ԳԴՆ-ում Դաշնային վերահսկիչ պալատի աշխարանքների հաշվեքվության դերի մա-
սին է վկայում այն հանգամանքը, որ դա խորհրդարանի համար ծառայում է հիմք կառա-
վարության հաշվեքվությունը հաստատելու նպատակով:

Լիմայի հռչակագրի նախաբանում վերահսկիչ մարմինների ստուգումների վերա-
բերյալ հաշվեքվությունների կազմումն ու հրապարակումը դիտարկվում է որպես պե-
տության հեղափոխական գործառնան ու կայունության ամրապնդման միջոց: Միաժամանակ,
նույն հռչակագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ բարձրագույն վերահսկիչ մարմինը Սահ-
մանադրությամբ պետք է լիազորված լինի յուրաքանչյուր քաղաքի անմիջականորեն
խորհրդարան կամ այլ իրավասու պետական մարմիններ ներկայացնել իր կողմից կա-
րաված ստուգումների արդյունքների եւ եզրակացությունների վերաբերյալ հաշվեք-
վությունը, որը պետք է հրապարակվի:

Նիշյալ իմաստով հարկ է նշել այն բացառությունը, որ միայն Չինաստանում եւ
Վիետնամում է վերահսկիչ մարմնի հաշվեքվությունները ներկայացվում ոչ թե օրենս-
դիր մարմնին, այլ գործադիր իշխանության մարմնին:

Այնուամենայնիվ, մեկնաբանվող հոդվածի շրջանակում Սահմանադրությունը չի
բացառում մեկից ավելի անգամ վերահսկողական աշխարանքների արդյունքների հաշ-
վեքվության ներկայացում Ազգային ժողով: Այդ գործընթացի միջոցով լուծվում են հե-
տևյալ խնդիրները՝ ա) հաշվեքվության միջոցով գնահատվում են վերահսկիչ պալատի
աշխարանքները, բ) հաշվեքվություններում հրապարակայնության ապահովումը հաս-
տատվում է այն միջոցով, որ «առանց հասարակության մասնակցության չի կարող լինել ո-
րևէ ձեռի վերահսկողություն», գ) հաշվեքվության միջոցով հասարակությունն իրա-
զեկվում է բյուջեդարյան միջոցների, պետական եւ համայնքային սեփականության օգ-
տագործման վիճակի մասին, դ) հասարակական կարծիքի ձեռավորման ներքո պետա-
կան իշխանության մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք ձեռնարկում են
համապարասխան միջոցներ, ե) ներկայացված հաշվեքվություններն օրենսդիր եւ գոր-
ծադիր իշխանության մարմինների համար կարող են ծառայել որպես փորձագիտական
գնահատականներ եւ եզրակացություններ պետական քաղաքականության հարցերով:

4. Մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերահսկիչ պալատի գործու-
նեության կարգը եւ իրավասությունը սահմանվում են օրենքով: Նիշյալ նորմի կապակցու-
թյամբ հարկ է նշել, որ վերահսկիչ պալատի գործունեությանը վերաբերող փորձեր
հարցեր իրենց կարգավորումն են ստացել «Վերահսկիչ պալատի մասին», «Ազգային ժո-
ղովի կանոնակարգ», «Նայաստանի Նանրապետության կենտրոնական բանկի մասին»,
«Նայաստանի Նանրապետության բյուջեդարյան համակարգի մասին», «Տեղական ինք-
նակառավարման մասին» եւ Նայաստանի Նանրապետության այլ օրենքներով:

Ինչ վերաբերում է վերահսկիչ պալատի իրավասության օրենքով սահմանման
սահմանադրական պահանջին, ապա պետք է նշել, որ ինչպես մեկնաբանվող հոդվածի

1-ին մասում, այնպես էլ ՏՏ Սահմանադրության 77-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթներում արդեն բովանդակվում են այդ մարմնի իրավասությունը կազմող լիազորությունների իրացման կոնկրետ շրջանակները:

Վերահսկիչ պալատի սահմանադրաիրավական նոր կարգավիճակի կարևոր հարցադրումներից է այդ մարմնի կազմավորման սկզբունքների եւ կազմակերպական կառուցվածքի սահմանումը:

5. Հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությունը սահմանում է, որ վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց րարի ժամկետով: Հիշյալ նորմի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 97-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու համար Հանրապետության Նախագահն առաջարկում է մեկ թեկնածու:

Այնուհետեւ, Ազգային ժողովի նիստում այդ պաշտոնում նշանակման հարցը քննարկվում է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված ընթացակարգով, ընդ որում, վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում նշանակումը, ինչպես նաեւ նրա հրաժարականն ընդունելու եւ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (պաշտոնանկ անելու) մասին Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են գաղտնի քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցած պարզամտորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամտորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Վերահսկիչ պալատի գործունեության անկախության ապահովման համար կարևոր նշանակություն ունի վերահսկիչ պալատի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը: Եվ պարահական չէ, որ առանձին երկրներում վերահսկիչ մարմինների անկախության հետ միաժամանակ օրենսդրորեն սահմանվել է այդ մարմնի ղեկավարի «անփոփոխելիության» սկզբունքը, օրինակ՝ Իսպանիայում, Ֆրանսիայում, ԳՎՏ-ում եւ այլն:

Այդ հարցի կարեւորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմիններն ունեն հնարավորություն վերահսկիչ մարմնի ղեկավարին ազարելու զբաղեցրած պաշտոնից, ինչը հնարավոր է առանց համապատասխան հիմքերի, եւ դրանով անմիջական ներգործություն ունենալ վերահսկողության իրականացման գործընթացների վրա: Այդ առումով, ինչպես շատ երկրների օրենսդրությամբ, այնպես էլ «Վերահսկիչ պալատի մասին» ՏՏ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը հստակ սահմանել է վերահսկիչ պալատի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերը: Դրանք են՝ նրա հրաժարականը կամ նրա՝ Նախարանի Հանրապետության քաղաքացիության դադարումը կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելը եւ նրա՝ ազատագրվման դատապարտվելու կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի (վճռի) առկայությունը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վերահսկիչ պալատի նախագահի հրաժարականի, ինչպես նաեւ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (պաշտոնանկ անելու) հարցերն սրացել են րարբեր իրավակարգավորումներ՝ ինչպես «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 97-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերում, այնպես էլ «Վերահսկիչ պալատի մասին» ՏՏ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասում: Այսպես, Ազգային ժողովի կանոնակարգում նախատեսվում է Ազգային ժողովի կողմից պաշտոնում նշա-

նակված պաշտոնավար անձի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (պաշտոնանկ անելու) ընթացակարգ, իսկ «Վերահսկիչ պալատի մասին» ՏՏ օրենքով այդպիսի ընթացակարգ նախատեսված չէ, միաժամանակ, այդ ակտերով սահմանվել են հրաժարականի դիմումի հրապարակմանը վերաբերող փաթեթի ժամկետներ, առաջինի դեպքում՝ 3-օրյա ժամկետ, իսկ երկրորդ դեպքում՝ 15-օրյա ժամկետ:

Բնականաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում նշանակման հարցը ենթակա է բացառապես Ազգային ժողովին, ուստի առկա իրավական այդ հակասություններն անհրաժեշտ է մեկնաբանել ՏՏ Սահմանադրության 62-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սահմանադրական հետեյալ պահանջի պահպանմամբ, այն է՝ Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

Վերահսկիչ մարմինների ղեկավարների նշանակումը կամ ընտրելը գրեթե բոլոր երկրներում նույնպես կատարվում է պետական իշխանության փաթեթի թելեր ներկայացնող մարմինների կողմից:

Այսպես, Չեխիայի Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն վերահսկիչ ծառայության նախագահը նշանակվում է երկրի Նախագահի կողմից՝ Պարզամավորների պալատի առաջարկությամբ: Գրեթե նույն մոտեցումն է ցուցաբերվում Նարավային Կորեայում, որտեղ վերահսկիչ մարմնի նախագահը նշանակվում է երկրի Նախագահի կողմից՝ խորհրդարանի համաձայնությամբ (Սահմանադրության 98(2)-րդ հոդված): ԱՄՆ-ում Գերագույն վերահսկիչը նշանակվում է ԱՄՆ Նախագահի կողմից՝ Սենատում նրա հեղափոխ հաստատմամբ (Պետական ֆինանսական վերահսկողության մասին օրենքի 6-րդ հոդված):

Վերահսկիչ մարմնի ղեկավարի նշանակման այլ կարգ գոյություն ունի առանձին երկրներում: Օրինակ, Գերմանիայում այդ մարմնի ղեկավարն ընտրվում է երկրի խորհրդարանի կողմից, ընդ որում, դա կատարվում է ինչպես Բունդեսթագի և Բունդեսրատի միջև, այնպես էլ երկրի Նախագահի կամ կառավարության միջև առանց նախնական համաձայնության ձեռքբերման: Իսկ Ֆրանսիայում այդ նշանակումը կատարում է կառավարությունը: Նույնատիպում վերահսկիչ մարմնի ղեկավարը նշանակվում է երկրի Նախագահի ղեկընդուրով՝ կառավարության առաջարկությամբ: Իսպանիայում Նաշվիչ փրիբունալի (դատարանի) նախագահը նշանակվում է թագավորի կողմից՝ այդ դատարանի առաջարկությամբ և դատարանի անդամների կազմից:

Ինչ վերաբերում է ՏՏ վերահսկիչ պալատի կազմակերպական կառուցվածքին, ապա անհրաժեշտ է նկատել, որ ՏՏ Սահմանադրությամբ որևէ խոսք դրա մասին չի ասվում:

Այնուամենայնիվ, համանման մարմինների կազմավորման և գործունեության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է փայլիս, որ դրանց կազմակերպական կառուցվածքը փաթեթ է: Եվ այդ առումով մատչելի է նաև երկու հիմնական խմբեր. 1) վերահսկիչ մարմիններ, որոնց ղեկավարումն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով, 2) վերահսկիչ մարմիններ, որոնց ղեկավարումն իրականացվում է միանձնյա, կենտրոնացված ու ստրիկանակարգված ենթակայության սկզբունքով:

Կոլեգիալության կառուցվածք ունեն Եվրոպայի գրեթե բոլոր երկրների վերահսկիչ մարմինները (ԳԳՏ, Ֆրանսիա, Իսպանիա, Իրալիա, Նուսաստան, Չեխիա, Ուկրաինա և այլն), ինչպես նաև Ասիայի առանձին երկրների (Ճապոնիա, Նարավային Կորեա, ՉԺՏ) և այլն:

Այդպիսի կառուցվածք ունի նաեւ ՏՎերահսկիչ պալատը: Այսպէս, «Վերահսկիչ պալատի մասին» ՏՎ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերահսկիչ պալատի ղեկավարումն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով:

Տիշյալ խմբի երկրներում վերահսկիչ մարմինների գործունեության կարելու առանձնահատկությունն ապակենտրոնացված կարգով որոշումների ընդունման կարգի առկայությունն է, այսինքն՝ որոշումներն ընդունվում են այդ մարմիններում առկա մասնագիտացված մարմինների կողմից՝ վերջիններիս անդամների ձայների մեծամասնությամբ:

Միանձնյա, կենտրոնացված ու աստիճանակարգված ենթակայության սկզբունքով ղեկավարվող վերահսկիչ մարմիններ ունեցող երկրներից են՝ Լատվիան, Լիտվան, Մեծ Բրիտանիան, Էստոնիան եւ այլն: Ընդ որում, այդպիսի կառուցվածք ունեցող վերահսկիչ մարմիններին բնորոշ է հետեւյալը՝ ա) Սահմանադրությամբ կամ օրենքներով այդ մարմինների ղեկավարներին է վերապահվում վերահսկիչ մարմնի խնդիրների իրագործումը, բ) միայն այդ մարմինների ղեկավարներն իրավունք ունեն անձնական նախաձեռնությամբ եւ հայեցողությամբ ձեւավորել վերահսկիչ մարմնի աշխատակազմը, գ) միայն վերահսկիչ մարմնի ղեկավարը կարող է միանձնյա որոշումներ կայացնել՝ թե աշխատակազմը ինչպէս է իր պարտականությունները կատարում կամ որպէզ կարող է իրականացնել սպուգումներ:

Այս սկզբունքով ղեկավարվող մարմիններում գրեթե բացակայում են կոլեգիալության սկզբունքով սրբեղծված մարմինները, իսկ դրանց առկայության դեպքում՝ ընդունված որոշումները վերահսկիչ մարմնի ղեկավարի համար կրում են միայն խորհրդարվական բնույթ:

Միաժամանակ, հոդվածի 5-րդ մասում ամրագրված դրույթի բովանդակությունից բխում է, որ վերահսկիչ պալատի նախագահի լիազորությունների ժամկետը վեց տարի է:

Ընդհանուր առմամբ, ինչպէս վկայում է վերահսկիչ մարմինների ղեկավարների լիազորությունների ժամկետների սահմանման միջազգային փորձը, անհրաժեշտ է նշել, որ դրանք տարբեր են՝ ելնելով այդ մարմինների գործունեության անկախության երաշխիքների ապահովման տեսանկյունից: Այսպէս, ԱՄՆ-ում Գլխավոր վերահսկիչի լիազորությունների ժամկետը 15 տարի է, ԳԴՏ-ում եւ Ավստրիայում՝ 12 տարի, Կանադայում՝ 10 տարի, Չեխիայում՝ 9 տարի, Մեքսիկայում՝ 8 տարի եւ 2 անգամ անընդմեջ նշանակվելու հնարավորությամբ, Իսպանիայում՝ 3 տարի եւ բազմաթիվ անգամ վերընտրվելու հնարավորությամբ, եւ այլն:

Ինչպէս Հայաստանի Հանրապետությունում, այնպէս էլ գրեթե բոլոր երկրներում, վերահսկիչ մարմնի ղեկավարի լիազորությունների ժամկետները չեն համընկնում այդ պաշտոնում նշանակող կամ ընտրող մարմինների (խորհրդարանների եւ նախագահների) լիազորությունների ժամկետների հետ, ինչն արդարացված է վերջիններիս կողմից վերահսկիչ մարմինների գործունեության վրա ներգործելու հնարավորությունները բացառելու առումով:

Նոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանվում է, որ վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պարզամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Ընդ որում, խոսքը ՏՎ Սահմանադրության 64-րդ հոդվածով ամրագրված պարզամավոր ընտրվելու իրավունքի իրացման պայմանների մասին է:

Անդրադառնալով սահմանադրական մակարդակով կարգավորված այս պայմաններին՝ «Վերահսկիչ պալատի մասին» ՏՎ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել

է, որ վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում հայաստանի հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում հայաստանում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող անձը:

Նարկ է նշել, որ վերահսկիչ մարմինների ղեկավարներին առանձնահատուկ պահանջներ ներկայացվում է գրեթե բոլոր երկրների օրենսդրությամբ: Այսպես, ԳԴՆ-ում վերահսկիչ մարմնի ղեկավարը պետք է ունենա դատավորի պարտականություններ կատարելու մասնագիտացված պատրաստվածություն, այդ թվում՝ իրավաբանական կրթության եւ պետական երկու քննություններ հանձնելու վկայագիր: Ավստրիայում եւ Լատվիայում՝ վերահսկիչ մարմնի ղեկավարի կարգավիճակը հավասարեցվում է նախարարի կարգավիճակին եւ այլն:

Մեկնաբանվող հոդվածի 5-րդ մասում սահմանված սահմանադրական մյուս սահմանափակումը վերաբերում է վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում նույն անձի ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվելու արգելքին, ինչը նշանակում է վերահսկողության ոլորտում առկա իրական իշխանության սահմանափակում:

Ընդ որում, սահմանափակվելով ժամանակի մեջ, բնականաբար, ինչպես այլ ոլորտներում, այնպես էլ վերահսկողության ոլորտում իշխանությունը չի կարող լինել բացարձակ կամ ամբողջական: Այդ իմաստով պետական մարմիններում իրական իշխանություն կրող անձանց (հանրապետության Նախագահ, գլխավոր դատախազ, վերահսկիչ պալատի նախագահ, մարդու իրավունքների պաշտպան, կենտրոնական բանկի նախագահ) նկատմամբ հենց Սահմանադրության ուժով կիրառվում է սահմանափակում՝ իր բոլոր դրսևորումներով:

Պետական անկախ մարմնի կողմից իրականացվող վերահսկողությունն ինքնին բովանդակում է իշխանական լիազորություններ: Եվ քանի որ վերահսկիչ պալատի նախագահը՝ համարվելով վերահսկողություն իրականացնող մշտական եւ անկախ մարմնի ղեկավար, միանձնյա է իրականացնում այդ իշխանությունը, ուստի այդպիսի սահմանափակումը, այդ թվում սահմանադրական կարգավորման մակարդակում, լիովին արդարացված է:

ՆՈՂՎԱԾ 83.5

Բացառապես հայաստանի հանրապետության օրենքներով են սահմանվում՝

1) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը.

2) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ պարտախանութիության տեսակները, չարիքը, պարտախանութիության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չարիք, վճարման կարգը.

3) իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն

ու վերահսկողություն (այդ թվում՝ սրուզում, ուսումնասիրություն, տեսչական սրուզում) իրականացնելու դեպքերը, պայմանները եւ կարգը.

4) *իրավաբանական անձինք սրեղծելու, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը եւ պայմանները.*

5) *Ֆիզիկական անձանց անձնական եւ ընտանեկան, ինչպես նաեւ իրավաբանական անձանց՝ առեւտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը.*

6) *քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պարասխանարվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պարիժների իրականացման կարգը, դատական եւ վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, փաստաբանների կարգավիճակը եւ լիազորությունները.*

7) *հանրաքվեների, Տանրապետության Նախագահի, Տայասրանի Տանրապետության Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը.*

8) *պետական բյուջեի ձեւավորման եւ դրա ծախսման կարգը.*

9) *Տայասրանի Տանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, չեղյալ համարելու կարգը եւ պայմանները.*

10) *կուսակցությունների եւ այլ հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների իրավական կարգավիճակը.*

11) *Տայասրանի Տանրապետության վարչարարածրային միավորները եւ դրանց սահմանները:*

Բացառապես օրենքներով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը Սահմանադրությամբ ամրագրելը պայմանավորված է իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սահմանադրական սկզբունքի հեղուկական պահպանման անհրաժեշտությամբ, այն հանդիսանում է կարեւոր երաշխիք՝ Ազգային ժողովի կողմից լիարժեք օրենսդիր իշխանություն իրականացնելու համար:

Սակայն Ազգային ժողովը ոչ միայն բարձրագույն սահմանադրական մարմիններից մեկն է, որն իրականացնում է օրենսդիր իշխանություն, այլեւ ներկայացուցչական ժողովրդավարության հենասյուներից մեկը: Օրենսդիր իշխանություն եւ ներկայացուցչական մարմին լինելու նրա կարգավիճակն անհրաժեշտաբար պայմանավորում են Տայասրանի Տանրապետության պետական եւ հասարակական կյանքի **կարեւորագույն հարցերի իրավական կարգավորման վերապահումը բացառապես այդ մարմնի իրավասությանը**: Իհարկե, պետք է նկատել, որ օրենքներ ընդունելու լիազորությամբ Տայասրանում օժտված է նաեւ ժողովուրդն ինքը՝ հանրաքվեի միջոցով (Սահմ. 112-րդ հոդվ.): Այս հանգամանքը եւս մեկ անգամ ընդգծում է ՏՏ իրավակարգում օրենքների գերակայության սկզբունքն այլ նորմարիվ եւ անհատական ակտերի նկատմամբ: Օրենքների գերակայության սկզբունքն իրավական օրինականության սկզբունքի բաղկացուցիչ մաս է, սկզբունք, որն իր արտացոլումն է սրացել Սահմանադրության դեռեւս 1-ին հոդվածում իրավական պետություն լինելու Տայասրանի Տանրապետության սահմանադրաիրավական բնութագրիցում: Ավելի կոնկրետ այն ձեւակերպվում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը եւ օրենքներին, ինչպես նաեւ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ պետական

եւ փեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնապար անձինք իրավասու են կարարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ **օրենքներով**: Ներեւաբար, Սահմանադրությունն իր ամբողջության մեջ ամրագրում է իրավական օրինականության սկզբունքը՝ հռչակելով այն որպէս սահմանադրական կարգի հիմունքներից մեկը: Օրենքը գերակայում է (օրենքի ուժ չունեցող) այլ իրավական ակտերի նկատմամբ (**օրենքի գերակայություն**), եւ միայն օրենքով կարող են սահմանվել հանրային իշխանության մարմինների լիազորությունները (**օրենքի վերապահում**):

Սակայն միայն օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը Սահմանադրությամբ ամրագրելը կոչված է նաեւ այլ առանցքային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Դրանց թվին են դասվում՝ ա) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանվածության, երաշխավորվածության ապահովումը, բ) սահմանադրական կարգի սկզբունքների հետեւողական պաշտպանությունը, գ) գործադիր իշխանության կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ձեռնարկարկրական գործունեությանն անհարկի միջամտության կանխումը, դ) պարասխանաբարության ենթարկելու առավել երաշխավորված ընթացակարգերի սահմանումը, ե) կուսակցությունների ու հասարակական այլ միավորումների, զանգվածային լրագրության միջոցների իրավական երաշխավորված կարգավիճակի սահմանումը եւ գ) վարչապարաձքային միավորների եւ դրանց սահմանների առավել երաշխավորված սահմանումը:

Ընդ որում, հիշյալ խնդիրների շարքում առաջապար դերը պատկանում է մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանը, ինչով էլ եւ բացառվում է այն, որ Սահմանադրության 83.5-րդ հոդվածով ամրագրված հարաբերությունները հիմնականում առնչվում են մարդու իրավունքներին եւ ազատություններին:

Մարդու իրավունքներին վերաբերող գրեթէ բոլոր հարցերի առանձնացումը՝ որպէս օրենքներով կարգավորման ենթակա հարցեր, կանխորոշվում է իրավական պետության այն հիմնարար սկզբունքով, ըստ որի՝ հիմնական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով կամ օրենքով սահմանված կարգով, իսկ մարդու պարտականությունները չեն կարող սահմանվել այլ կերպ, քան օրենքով (Սահմ. 43-44-րդ հոդվածներ եւ 42-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն):

Տիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքներն ամբողջական չէին լինի առանց այդ իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու օրենքներով սահմանվող կարգի:

Օրենքներով սահմանվող պարտականությունները չկարարելը հանգեցնում է իրավաբանական պարասխանաբարության, որը իր փարպտեսակներով հանդերձ, փրամաբանորեն նույնպէս պետք է սահմանվի օրենքներով:

Մարդու իրավունքները փարածելի են նաեւ իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով որ իրենց էությանբ կարող են վերաբերել դրանց (Սահմ. հոդվ. 42.1): Ներեւապէս, իրավաբանական անձանց վերաբերող առանցքային հարցերը նույնպէս ենթակա են կարգավորման միայն օրենքներով:

Վերջապէս, սահմանադիրն առանձնացրել է նաեւ պետության եւ հանրության համար առավել կարեւոր հարաբերություններ, որոնց կարգավորումը նույնպէս վերապահել է բացառապէս օրենքներին: Այսպէս, նա կարեւորել է փաստաբանների կարգավիճակը, ընտրական գործընթացները, պետական բյուջեին առնչվող հարցերը, միջազգային պայմանագրերի՝ ՎՎ համար պարպադիր ուժ ձեռք բերելու ընթացակարգերը, կուսակցություն-

ների եւ այլ հասարակական միավորումների, ինչպէս նաեւ զանգվածային լրատվամիջոցների իրավական կարգավիճակը: Սահմանադիրն այս առումով էական է համարել նաեւ ՏՏ վարչարարածքային կառուցվածքի միավորների եւ դրանց սահմանների կանոնակարգումը:

Այսպիսով, Սահմանադրության 83.5-րդ հոդվածը մի շարք համակարգային կապերով փոխկապակցված է Սահմանադրության այլ դրույթների հետ, որոնք եւ պայմանավորում են այդ հոդվածի առանձին դրույթների բովանդակությունը:

Նարկ է նաեւ ընդգծել, որ բացառապէս օրենքներով կարգավորման ենթակա իրավահարաբերությունների սպառիչ ցանկի մատնանշումը բացառում է իշխանության առավելապէս գործադիր թելի նորմասպեղծ իրավագործությունն այդ ոլորտներում, սակայն չի սահմանափակում օրենսդիր իշխանությանը՝ օրենքներ ընդունելու նաեւ ցանկացած այլ առարկայական բնագավառներում:

Միայն օրենքով կարգավորման ենթակա նման լայն շրջանակներ ընդգրկող հարցերի ցանկ Սահմանադրությամբ ամրագրելն աննախադէպ երեւոյթ է եւ շահեկանորեն առանձնացնում է մեր երկրի Սահմանադրությունը՝ ժողովրդավարության լուրջ ավանդույթներ ունեցող ցանկացած երկրի սահմանադրությունից: Որպէս կանոն, սահմանադրություններում նախապարվությունը սրվում է պարզապէս օրենսդիր մարմնի լիազորությունների սպառիչ ամրագրմանը եւ կոնկրետ այն հարաբերություններին, որոնք կարող են կարգավորվել բացառապէս օրենքով: Նայաստանի Նանրապետության Սահմանադրությունում միաժամանակ ամրագրված են Ազգային ժողովի լիազորությունները, կոնկրետ այն հարաբերությունների շրջանակը, որոնք կարող են կարգավորվել բացառապէս օրենքով եւ, ինչպէս արդեն նշվեց, սպառիչ սահմանված է այն համասեռ հարաբերությունների շրջանակը, որոնց կարգավորման առնչությամբ կարող են միայն օրենքներ ընդունվել:

Նմանաբնույթ հիմնադրույթ, թերեւս, կարելի է հանդիպել Ֆրանսիայի Սահմանադրությունում՝ ի դեմս 34-րդ հոդվածի, որով սպառիչ ամրագրված են օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունները: Սակայն, նախ՝ րվյալ դեպքում ամրագրված է հարցերի անհամեմատ նեղ շրջանակ, որը, ի տարբերություն ՏՏ Սահմանադրության կարգավորման, սպառիչ է: Բացի դրանից, կառավարությանը վերապահված է պառլամենտի դրական եզրակացության դեպքում ժամանակավորապէս կանոնակարգելու այնպիսի հարաբերություններ, որոնց իրավական կարգավորումը, ըստ Սահմանադրության՝ կարող է իրականացվել օրենքներով:

Մեկնաբանվող դրույթը նախատեսված չի եղել Սահմանադրության նախկին խմբագրությամբ:

Միայն օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակն ամրագրելու ինստիտուտը մեր երկրում անցել է որոշակի փորձություն: Նկատի ունենք այն, որ դեռեւս 1995թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության առնվազն 45 հոդվածներով ամրագրված էին այն կոնկրետ հարաբերությունները, որոնք կարող էին կարգավորվել բացառապէս օրենքով:

Սակայն դեռեւս 2002թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 3-րդ մասով, նախ՝ ամրագրվեց դրույթ, ըստ որի՝ օրենքով կարող է կարգավորվել ցանկացած հարաբերություն, իսկ 4-րդ մասով կատարվեց աննախադէպ առաջընթաց քայլ. սահմանվեց բացառապէս օրենքով կարգավորվող հարցերի շրջանակը: Տվյալ դեպքում էական տարբերությունն այն է, որ օրենքով ոչ թե նշված են կոնկրետ հարաբերություններ, այլ՝ լայն իմաստով պետական կառա-

վարման ոլորտներ: Այսպես, երբ խոսվում է խուզարկության դեպքերի եւ կարգի մասին (Սահմանադրության 16-րդ հոդված), ապա դա կոնկրետ հարաբերություն է, իսկ երբ կարգավորման առարկա է համարվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումն ընդհանրապես, ապա գործ ունենք համասեռ հարաբերությունների ամբողջություն կազմող մի ամբողջ ինստիտուտի հետ:

Նարկ է նկատել նաեւ, որ բացառապես օրենքով կարգավորվող հարաբերությունների շրջանակը հենց Սահմանադրությամբ ամրագրելն առավել համահունչ է Սահմանադրության այն դրույթին, ըստ որի. «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ» (Սահմանադրության 62-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջին հաշվով, միայն օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը սահմանելը եւս Ազգային ժողովի համար ուղղակի լիազորություն ամրագրելու եղանակ է, ինչը չի բխում Սահմանադրության վերը նշված դրույթի պահանջներից:

Սահմանադրության 83.5-րդ հոդվածի եւ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Նանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խմբագրական առումով միմյանց կրկնում են⁸⁰: Միաժամանակ, հիշյալ օրենքի 1.4-րդ մասով սահմանված է հետեյալ դրույթը. «Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր կամ րեխնիկական նորմեր (քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային, հաշվապահական հաշվառման, սրանդարպացման եւ այլն) օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ»: Կարելի է նշել, որ այս դրույթը մինչեւ Սահմանադրությունը 83.5-րդ հոդվածով լրացնելը չի եղել, այն հիշյալ օրենքում րեղ է գրել միայն 2006թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Նանրապետության օրենքով:

Նշված ժամանակագրությունը եւ կոնկրետ այդ օրենքում լրացում կատարելու մասին օրինագծին կից հիմնավորման վերլուծությունը վկայում են այն մասին, որ համակողմանիորեն քննարկվել է օրենքի այդ դրույթի եւ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի դրույթների, մասնավորապես այդ հոդվածի 1-ին կետի դրույթների միջեւ համապատասխանության հարցը: Ըստ այդմ էլ այն եզրահանգումն է արված, որ րվյալ դեպքում առկա է Սահմանադրությանը համապատասխանող օրենքի դրույթ: Մենք նույնպես այն կարծիքին ենք, որ րվյալ դեպքում առկա է Սահմանադրությանը համապատասխանող դրույթ: Թերեւս, հիմնական փաստարկները հետեյալն են՝ ա) այդ կանոնները կարող են իրավական այլ ակտերով ընդունվել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում եւ սահմաններում եւ ր) դրանք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը ներկայումս հիմնականում ամրագրված են օրենքներով: Դրանք րարաբնույթ նյութական, վարույթային ու դատարարական նորմեր պարունակող օրենքներ են: Ինչպես արդեն նշվեց, այդ իրավունքների կամ

⁸⁰ Այդ ճշգրիտ համապատասխանությունն ապահովվել է 2006թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Նանրապետության օրենքով: Մինչ այդ, նշված օրենքի 9-րդ հոդվածը որոշ առումով տարբերվել է Սահմանադրության 83.5-րդ հոդվածի խմբագրությունից:

պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, հսկակ սահմանված վերապահումներով, կարող են սահմանվել նաև այլ իրավական ակտերով: Ընդ որում, միայն այդ հարցի առնչությամբ է «Իրավական ակտերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքն ամրագրում որոշակի ընթացակարգ, մինչդեռ, Սահմանադրության 83.5-րդ հոդվածի մյուս կետերի առնչությամբ օրենսդրությամբ որևէ այլ վերապահում չի նախատեսվում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումների, նրանց պարտականությունների, ինչպես նաև պարասխանաբարության տեսակների, չափերի, պարասխանաբարության ենթարկելու կարգի, հարկադրանքի միջոցների ու դրանք կիրառելու կարգի, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, փոփոխությունների և այլ պարտադիր վճարների տեսակների, չափի, վճարման կարգի առնչությամբ հարկ է նկատել, որ այդ հարաբերությունները ներկայումս կանոնակարգված են բացառապես օրենքներով: Առանձին դեպքերում կարելի է հանդիպել այլ իրավական ակտերի, որոնք ներառում են հիշյալ հարաբերություններին առնչվող որոշ փոփոխություններ, սակայն փոխյալ դեպքում դրանք չեն համարվում Սահմանադրությանը հակասող, քանզի այդ նորմերը բացառապես կանոնակարգում են նշված ոլորտներում իրավասու պետական մարմինների գործունեությունը՝ առանց առնչվելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներին ու ազատություններին, այսինքն՝ դրանք որևէ կերպ չեն սահմանափակվում:

Օրինակ, Նայաստանի Նանրապետության կառավարությունը կարող է իր որոշումներով կանոնակարգել փոփոխությունների գանձման որոշ այնպիսի ընթացակարգեր, որոնք որևէ կերպ չեն առնչվում փոփոխությունների վճարելիս ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունքներին:

Վերը նշված մոտեցումները հավասարապես վերաբերում են իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքեր, պայմաններ և կարգ սահմանելուն: Սահմանադրությունը փոխյալ դեպքում ղեկավարվում է հսկողության և վերահսկողության ոլորտում իրավաբանական անձանց ու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց և պետության իրավասու մարմինների միջև հարաբերությունների կարգավորման ոլորտում այլ իրավական ակտերով ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները չսահմանափակվելու հիմնադրությամբ: Իսկ եթե պետական իրավասու մարմիններն իրենց իրավական ակտերով կանոնակարգում են իրենց ենթակայությամբ գործող պետական մարմինների և պաշտոնատար անձանց ներգերաբեռնական գործունեությանն առնչվող հարաբերությունները, ապա դրա արդյունքում ընդունված իրավական ակտերը չեն կարող ինքնուրուիքյան Սահմանադրությանը հակասող ճանաչվել:

Այսպես, օրինակ, Նայաստանի Նանրապետության կառավարությունը կարող է կանոնակարգել, թե ստուգումների ընթացքում կազմվող փաստաթղթերն ինչ ընթացակարգով պետք է գեկուցվեն, գրանցվեն, հաշվառվեն և այլն:

Իրավաբանական անձինք սրբեղծելու, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը և պայմաններն օրենքով ամրագրելու սահմանադրական պահանջը թելադրված է իրավաբանական անձ սրբեղծելուն և ընդհանրապես դրանց գործունեության շրջանակները որևէ կերպ սահմանափակելուն առնչվող հարաբերությունների խիստ մեծ նշանակությամբ: Խոսքը փոխյալ դեպքում վերաբերում է մի շարք

սահմանադրական դրույթների ու իրավունքների իրավական երաշխավորվածությանը, ինչը չէր կարող վերապահվել գործադիր իշխանության հայեցողությանը: Մասնավորապես, այդպիսի դրույթներից ու իրավունքներից են հանդիսանում «վրտեսական գործունեության ազատության ու ազատ վրտեսական մրցակցությունը» երաշխավորելու պետության պարտականությունը (8-րդ հոդվածի 2-րդ մաս), օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը (Սահմանադրության 33.1-րդ հոդված) և այլն:

Վերը նշված հարաբերությունների կանոնակարգման է նվիրված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը: Իրավաբանական անձանց սրեղծման, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու բազմաթիվ դրույթներ են ամրագրված նաեւ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Մասնկության մասին» և այլ օրենքներով: Ներկայումս Նայաստանի Նանրապետության կառավարությունն սպանձնել է իրավաբանական անձանց սրեղծման ոլորտում ընթացակարգերի հնարավորինս պարզեցման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման քաղաքականություն: Թերեւս, այդ մասին է վկայում օրենսդրական նախաձեռնության կարգով Ազգային ժողովում քննարկված և 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը, որով, մասնավորապես՝ ա) հանվել է պետական ռեգիստրի մարմինների կողմից ներկայացվող կանոնադրության, ինչպես նաեւ կանոնադրության փոփոխությունների կամ լրացումների օրինականության ստուգման լիազորությունը, բ) վերացվել է անհար ձեռներեց գրանցվելու համար մի շարք տեղեկանքներ ներկայացնելու պահանջը, գ) հանվել է ընկերության կանոնադրական կապիտալի չափի վերաբերյալ պահանջը և այլն:

Ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաեւ իրավաբանական անձանց՝ առեւտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկն օրենքով սահմանելը ևս հետապնդում է ֆիզիկական և իրավաբանական անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանվածությունը երաշխավորելու խնդիր:

Օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների շարքին են դասվում նաեւ քրեական, վարչական, վրտեսական (գույքային), կարգապահական պարասխանարվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները: Այս հարաբերությունները ներկայումս կարգավորված են Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, Նայաստանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքով, «Քաղաքացիական ծառայության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով, պետական հարուկ ծառայությունների կանոնակարգմանը նվիրված օրենքներով, «Փաստաբանության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով և այլն:

Ընդ որում, ի տարբերություն պարասխանարվության մյուս տեսակների, քրեական պարասխանարվության պարագայում քրեական հանցագործություն նախատեսող նորմերը բացառապես զերեղված են մեկ օրենքում՝ Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգրքում: Թերեւս, նույն սկզբունքով մշակվել և ներկայումս պաշտոնական շրջանառության մեջ է դրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նայաստանի Նանրապետության օրենսգրքի նախագիծը:

Սահմանադրության 83.5-րդ հոդվածը և պարասխանարվությանն առնչվող հա-

րաբերությունների կանոնակարգմանը նվիրված մյուս հոդվածներն ուղղակիորեն չեն նախատեսում իրավաբանական անձանց պարասխանավությունը, սակայն՝ չեն էլ բացառում: Ինչէն է, մեր իրավական համակարգում իրավաբանական անձանց քաղաքացիական պարասխանավությունն ի սկզբանե ենթադրվում է: Սահմանված է նաև իրավաբանական անձանց վարչական պարասխանավությունը, որն իր իրավական հետեւանքներով համարժեք է առանձին երկրներում ընդունված իրավաբանական անձանց քրեական պարասխանավության իրավական հետեւանքներին:

Օրենքով կարգավորման ենթակա հաջորդ հարաբերություններն առնչվում են հանրաքվեներին, Նանրապետության Նախագահի, Ազգային ժողովի եւ փեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգին: Այս հարաբերությունները բացառապես օրենքով կարգավորելու վերաբերյալ սահմանադրական դրույթը, ըստ էության, նորույթ չէ, քանի որ այդ հարաբերությունները միայն օրենքով կարգավորելու վերաբերյալ դրույթներ՝ այլ խմբագրությամբ, զեպեղված են եղել նաև նախկին խմբագրությամբ Սահմանադրության մեջ: Տվյալ դեպքում ընդգծվում է ժողովրդաիշխանության երաշխավորվածության անհրաժեշտությունը. ինչպես հանրաքվեն, այնպես էլ ընտրությունները Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն հանդիսանում են ժողովրդի կողմից իշխանության իրականացման իրավական միջոցներ:

Պետական բյուջեի ձեւավորման եւ դրա ծախսման կարգը եւս դասվում է բացառապես օրենքով կարգավորվող հարաբերությունների շարքին: Այս դրույթը, Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի լիազորությունը սահմանելու կարվածքով, իր ամրագրումն է սրացել նաև Սահմանադրության 76-րդ հոդվածով: Այս հիմնադրույթը հիմնականում թելադրված է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի՝ պետական բյուջեն հաստատելու եւ պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու սահմանադրական լիազորությամբ:

Օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների հաջորդ խումբը վերաբերում է միջազգային պայմանագրերի կնքմանը, չեղյալ համարելու կարգին եւ պայմաններին: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է առանց որեւէ բացառության բոլոր միջազգային պայմանագրերին, այդ թվում՝ վավերացման ոչ ենթակա միջազգային պայմանագրերին: Այդ նկատառումով էլ, հիշյալ հարաբերությունների կարգավորմանը նվիրված դրույթներն սպառիչ իրենց արտացոլումն են սրացել 2007թ. փետրվարի 22-ին ընդունված՝ «Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով:

Կուսակցությունների եւ այլ հասարակական միավորումների, զանգվածային լրավության միջոցների իրավական կարգավիճակը եւս ամրագրվում է բացառապես օրենքներով: Այս մոտեցումը պայմանավորված է անձանց մի շարք սահմանադրական իրավունքների իրավական երաշխավորվածության ամրապնդման պահանջով: Խոսքը փյալ դեպքում վերաբերում է այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու եւ դրանց անդամագրվելու իրավունքին (Սահմանադրության 28-րդ հոդված), խոսքի ազատության իրավունքին (Սահմանադրության 27-րդ հոդված) եւ այլն: Տվյալ դեպքում դարձյալ այն գաղափարական հենքն է դրված իրավական կարգավորման ոլորտում, ըստ որի՝ օրինաստեղծ մարմինը՝ ի դեմս իր սահմանադրական կարգավիճակի, առավել ունակ է ապահովելու իրավական ակտի անհրաժեշտ ուժ:

Վերջապես, բացառապես օրենքով կարգավորման ենթակա հարաբերություններն են դասվում Նայաստանի Նանրապետության վարչապարածքային միավորները եւ

դրանց սահմանները: Այս մտքեցումը պայմանավորված է նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի պահանջներով, մասնավորապես, 1985թ. հոկտեմբերի 15-ին ընդունված՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 2 և 4-րդ հոդվածներով:

ՆՈՂ-ՎԱԾ 84

1. Ազգային ժողովրդ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը:

2. Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ նման որոշման նախագիծ չի կարող ներկայացվել:

3. Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուրջ, քան քառասունուրեք, եւ ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում:

1. Մեկնաբանվող հոդվածի կարգավորման առարկան խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու ինստիտուտն է, ինչը բնորոշ է կառավարման խորհրդարանական եւ կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրներին: Անվստահության քվեն խորհրդարանի եւ կառավարության միջեւ առաջացած վստահության ճգնաժամի հաղթահարման ամենակարեւոր ձևերից մեկն է: Կառավարությանն անվստահություն հայտնելու նախաձեռնությամբ առանց որեւէ ժամանակային սահմանափակումների, բացառությամբ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, կարող են հանդես գալ Հանրապետության Նախագահը եւ պարզամավորների ընդհանուր թվի մեկ երրորդը (մեկնաբանվող հոդվածի մաս 2): Սակայն Սահմանադրությունը նախատեսում է, որ անվստահության քվեն կարող է կիրառվել նաեւ այն դեպքերում, երբ հենց ինքը՝ կառավարությունն է դնում իր վստահության հարցն օրենքի նախագծի ընդունման կամ բյուջեի հաստատման առնչությամբ (հոդվածներ 75 եւ 90): Ըստ այդ հոդվածների՝ օրենքի նախագծի ընդունման կամ բյուջեի հաստատման առնչությամբ կառավարության վստահության հարցի մերժումն իրականացվում է անվստահության քվեի միջոցով: Մեկնաբանվող հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերում ամրագրված դրույթները կառավարությանն անվստահություն հայտնելու քվորումի եւ այդ որոշման նախագիծը քվեարկության դնելու ժամկետի վերաբերյալ փարածվում են նաեւ այն դեպքերի վրա, երբ կառավարությունն ինքն է դրդում իր վստահության հարցի արժարծումը: Նման դեպքերում կառավարությանն անվստահություն հայտնելու որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքը պարկանում է միայն պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին (հոդված 75, մաս 4 եւ հոդված 90, մաս 1): Այսպիսով, Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը կարող է լինել ինչպես Հանրապետության Նախագահի եւ պարզամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի նախաձեռնության արդյունք, այնպես էլ կառավարության կողմից:

Քանի որ մինչեւ 1995թ. Սահմանադրության ընդունումը Հայաստանը որդեգրել էր կառավարման նախագահական ձև, որպեսզի երկրի գործադիր իշխանությունը 1991թ.

օգոստոսի 1-ի՝ «Նայասարանի Նանրապետության նախագահի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն գլխավորում էր Նայասարանի Նանրապետության Նախագահը, այլ ոչ թե կառավարությունը, սակայն խորհրդարանի առջև կառավարության պարասխանաարվության ինստիտուտն իր դասական իմաստով գոյություն չուներ: Ճիշդ է, այդ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն Գերագույն խորհուրդն իրավունք ուներ Նայասարանի Նանրապետության Նախագահին առաջարկել «վերանայելու կառավարության, նրա նախագահի կամ որեւէ անդամի նշանակման հարցը» եւ պարտադրել այդ անձանց ազատումն զբաղեցրած պաշտոնից՝ պարզամտությունների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով, սակայն դա գործադիր իշխանության քաղաքական պարասխանաարվության միջոց չէր հանդիսանում, քանի որ գործադիր իշխանության ղեկավարը՝ Նայասարանի Նանրապետության Նախագահը, քաղաքական պարասխանաարվություն Գերագույն խորհրդի առջև չէր կրում:

Խորհրդարանի կողմից կառավարությանն անվարապետություն հայտնելու ինստիտուտը որոշիչ նշանակություն ունի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների համար: Այդ հարաբերությունների հիմքում ընկած է իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքը (հոդված 5), որը, մի կողմից, կազմակերպական եւ գործառնական առումներով միմյանցից առանձնացնում է օրենսդիր եւ գործադիր իշխանության մարմիններին, մյուս կողմից՝ նախարեսում է նրանց միջև զսպումների եւ հակակշիռների մի համակարգ, որի առանձնահատկություններն արտացոլվում են տվյալ կառավարման ձեռում: Նույնիսկ նախագահական կառավարման ձեռը, որն ամենից խիստ կերպով է իրականացնում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների փոխհարաբերումը, այն իրականացնող մարմիններին չի զրկում միմյանց վրա փոխադարձաբար ներգործելու հնարավորություններից, սակայն նրանց հնարավորություն չի տալիս քաղաքական պարզառնակելով վաղաժամկետ դադարեցնել միմյանց պաշտոնավարման ժամանակը՝ ինչպես խորհրդարանական եւ կիսանախագահական համակարգերում:

Կառավարման կիսանախագահական ձեռը, ինչպես արդեն նշվել է, խառը կառավարման ձեռ է, եւ ունի ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական ձեռերին բնորոշ հատկանիշներ: Կիսանախագահական կառավարման ձեռի «խորհրդարանական» բնութագրիչը կառավարության պարասխանաարվությունն է խորհրդարանի առջև, ինչը նշանակում է, որ կառավարությունը մշտական կախվածության մեջ է Ազգային ժողովի վարապետությունից: Խորհրդարանի առջև կառավարության պարասխանաարվությունն ինչպես խորհրդարանական, այնպես էլ կիսանախագահական կառավարման ձեռերի անբակտելի տարրն է, առանց որի այդ կառավարման ձեռերը չեն կարող գոյություն ունենալ⁸¹:

Կառավարության պարասխանաարվությունը խորհրդարանի առջև՝ նշանակում է, որ Ազգային ժողովը կարող է սրիպել կառավարությանը վայր դնելու իր լիազորությունները՝ նրան անվարապետության քվե հայտնելու միջոցով: Անվարապետության քվեն խորհրդարանական վերահսկողության ծայրահեղ միջոցն է եւ դրա արդյունավետության երաշխիքը: Ակնհայտ է, որ խորհրդարանական վերահսկողությունն առավել ազդեցիկ է այն դեպքում, երբ վերահսկողության արդյունքում վերահսկողը (Ազգային ժողովը) իրավասու է վերահսկվողի (կառավարության) նկատմամբ կիրառել խորհրդարանական վերահսկողության ծայրահեղ եւ ամենաազդու միջոցը՝ կառավարության լիազորությունների դադարեցումը: Կառավարությանն անվարապետություն հայտնելը խորհրդարանա-

⁸¹ Հենց այս պատճառով է, որ խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքն ընկած է կառավարման տարբեր ձեռերի դասակարգման հիմքում:

կան վերահսկողության գերագույն ձեւն է, որը խթանում է կառավարությանը մշտապես հաշվի նստելու խորհրդարանի մեծամասնության կամքի հետ:

Կառավարության նկատմամբ խորհրդարանի վերահսկողության գործառույթը ժողովրդավարության սկզբունքի էական դրսեւորումներից մեկն է եւ բնորոշ է ցանկացած ժողովրդավարական կառավարման ձեւի (այդ թվում՝ նաեւ նախագահականի, որպէս, սակայն, օրենսդիրը չի կարող կիրառել քաղաքական պարասխանաւարվության վերոնշյալ ծայրահեղ եւ ամենաազդու միջոցը՝ կառավարության լիազորությունների դադարեցումը): Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությունը «վերահսկողություն իրականացնել» հասկացությունն ուղղակիորեն հիշատակում է միայն 79-րդ հոդվածում (վերահսկողություն պետական բյուջեի կառավարման, փոխառությունների եւ վարկերի օգտագործման նկատմամբ), Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանական վերահսկողության կոնկրետ այլ ձեւեր եւս՝ ժամանակավոր հանձնաժողովներ (հոդված 73, մաս 3), գրավոր եւ բանավոր հարցեր, հարցապնդումներ (հոդված 80): Կառավարությանն անվարահոյություն հայտնելու ինստիտուտն այդ վերահսկողության գագաթնակետն է, կառավարության քաղաքական պարասխանաւարվության սանկցիան:

Կառավարության քաղաքական պարասխանաւարվությունը Սահմանադրությունը սահմանափակում է միայն խորհրդարանական պարասխանաւարվությամբ:

Ըստ Սահմանադրության՝ կառավարությունը կարող է կազմավորվել եւ անցնել իր պարականությունների կառավարմանը միայն այն ժամանակ, երբ Ազգային ժողովում կա հստակ մեծամասնություն այդ կառավարության կազմի եւ ծրագրի օգտին (հոդված 55, կետ 4 եւ հոդված 74): Նման պարագայում առավել քան հետեւողական է, որ Սահմանադրությունը կառավարության գործունեության ավարտն առաջին հերթին (բայց ոչ բացառապես, րեն 55-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունները) կապում է խորհրդարանի շարունակական վարահոյության հետ: Նման վարահոյության բացակայությունն արտահայտելու կարեւորագույն միջոցն Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվարահոյություն հայտնելու լիազորությունն է, որն ամրագրված է մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում:

Խորհրդարանի առջեւ կառավարության պարասխանաւարվությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ազգային ժողովն ուղղակի լեգիտիմությամբ օժտված միակ ներկայացուցչական մարմինն է⁸²: Գործադիր իշխանության քաղաքական պարասխանաւարվությունը ժողովրդի կամ նրա ներկայացուցիչների առջեւ՝ ժամանակակից սահմանադրականության կարեւորագույն ձեռքբերումներից մեկն է, որն արտահայտվում է գործադիր իշխանության մարմինների լիազորությունները դադարեցնելու մեջ, եթե նրանք այլեւս չեն վայելում ժողովրդի կամ խորհրդարանի վարահոյությունը: Նայաստարանի Սահմանադրությունը նախատեսել է նման քաղաքական պարասխանաւարվության միայն մեկ ձեւ՝ կառավարության պարասխանաւարվությունը խորհրդարանի առջեւ (խորհրդարանական պարասխանաւարվություն):

Կառավարության պարասխանաւարվությունն Ազգային ժողովի առջեւ՝ բնավ չի նշանակում, որ խորհրդարանը կարող է սրանձնել կառավարության գործառույթների իրականացումը եւ կառավարությունը ստորադասել իրեն: Կառավարությունն ինքնուրույն սահմանադրական մարմին է եւ Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթ-

⁸² Հանրապետության Նախագահը, չնայած ժողովրդի կողմից ուղղակի ընտրությանը, ներկայացուցչական մարմին չէ, քանի որ նա, մի կողմից, կոլեգիալ մարմին չէ, իսկ, մյուս կողմից, ի տարբերություն խորհրդարանի, չի արտացոլում ժողովրդի քաղաքական կամքի ամբողջ բազմազանությունը. նա ընտրվում է ընտրազանգվածի միայն մի մասի կողմից:

ների իրականացման ոլորտում օժտված է սեփական քաղաքական հայեցողությամբ: Այդ ոլորտում կառավարությունը կաշկանդված չէ խորհրդարանի որոշումներով, եւ ոչ էլ խորհրդարանն իրավասու է իր որոշումներով փոխարինել նրան: Սակայն հենց այդ ոլորտում է, որ կառավարությունը ենթակա է խորհրդարանի վերահսկողությանը եւ պարասխանաբար է նրան: Պարասխանաբարություն կարող է կրել միայն նա, ով ունի ինքնուրույն որոշումներ ընդունելու իրավասություն, քանի որ պարասխան կարելի է փայ միայն այն բանի համար, ինչը սեփական որոշման արդյունքն է⁸³: Պարասխանաբարությունը բացառում է ստորադասության ցանկացած դրսևորում եւ իմանենք ձեռով ներառում է պարասխանաբարություն կրողի ինքնուրույնությունը⁸⁴: Ուստի կառավարության պարասխանաբարության նախապայմանը նրա ինքնուրույնությունն է իրեն վերապահված քաղաքականության բնագավառներում: Մյուս կողմից՝ կառավարության խորհրդարանական պարասխանաբարությունը կարելի է բնորոշել որպես կառավարության ինքնուրույն գործունեության հակադիր կողմ⁸⁵:

2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո կառավարությունը պարասխանաբար է միայն Ազգային ժողովի, այլ ոչ թե նաեւ Հանրապետության Նախագահի առջեւ: Հանրապետության Նախագահն այլեւս իրավունք չունի սեփական հայեցողությամբ ազատելու վարչապետին, իսկ Հանրապետության Նախագահի ազդեցությունը կառավարության գործունեության վրա՝ զգալիորեն սահմանափակվել է: Կառավարության քաղաքական պարասխանաբարությունը Սահմանադրությամբ սահմանափակված է միայն խորհրդարանական պարասխանաբարությամբ: Դա, սակայն, չի նշանակում, որ քաղաքական պրակտիկայում չի կարող գոյություն ունենալ կառավարության պարասխանաբարություն Հանրապետության Նախագահի առջեւ: Այն պարագայում, երբ Հանրապետության Նախագահը խորհրդարանում հենվում է մեծամասնության վրա եւ հանդիսանում է նրա առաջնորդը, ապա նա փաստացի գերիշխող դիրք է ձեռք բերում կառավարության նկատմամբ:

Խորհրդարանական պարասխանաբարության առարկան կառավարության քաղաքականությունն է՝ լայն իմաստով, որն իրականացվում է ոչ միայն նրա, այլ նաեւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեությամբ: Խորհրդարանը լիովին ազատ է կառավարության քաղաքականության գնահատման հարցում, դրա համար գոյություն չունի Ազգային ժողովի համար պարտադիր որեւէ տեսակի չափանիշ, իսկ կառավարության գործունեության ծրագիրը խորհրդարանի համար կարող է միայն կողմնորոշիչ նշանակություն ունենալ: Չնայած քաղաքական գնահատականն իր մեջ պարունակում է ինչպես իրավաչափության, այնպես էլ նպարակահարմարության չա-

⁸³ Օրենսդրի եւ գործադրի միջեւ մեծան հարաբերակցության դասական հիմնավորումը տվել է **Ջոն Միլլը** դեռեւս 1861թ. «Ներկայացուցչական ժողովի իսկական խնդիրը ոչ թե կառավարման մեջ է, ինչին նա բոլորովին պիտանի չէ, այլ կառավարությանը հետևելու եւ վերահսկելու, նրա գործողությունների վրա հանրության լույսը սփռելու, դրանցից այն ամենը, ինչ կասկած է հարուցում, բացատրելու եւ արդարացնելու պահանջի մեջ է, դրանք պարսավելու մեջ է, եթե դրանք արժանի են դրան, եւ եթե կառավարության գործիչները չարաշահում են իրենց պաշտոնը կամ իրականացնում են դրանք մի այնպիսի ձեռով, որը հակասության մեջ է մտնում ժողովրդի պարզորոշ արտահայտված կամքի հետ, ապա նրանց պաշտոնից հեռացնելու եւ նրանց հաջորդողներին ուղղակիորեն կամ փաստացի նշանակելու մեջ է»: **John Stuart Mill**, *Considerations on representative government*, 1862, էջեր 115-116:

⁸⁴ Ասվածից ակնհայտ է, որ անվստահության քվեի ինստիտուտը որեւէ իմաստ չունի իշխանությունների բաժանման սկզբունքը բացառող ավտորիտար եւ տոտալիտար համակարգերում, քանի որ դրանց հիմքում ընկած է իշխանության միասնության սկզբունքը, որտեղ կա միայն մեկ բարձրագույն իշխանություն ունեցող անձ կամ մարմին, իսկ մնացածները գտնվում են նրանից ուղղակի կախվածության մեջ:

⁸⁵ **Badura, Peter**, Die parlamentarische Verantwortlichkeit der Minister, in: *Zeitschrift für Parlamentsfragen*, 11 (1980), էջ 574:

փանիշներ, ակնհայտ է, որ հենց վերջինս է վճռորոշ դեր կատարում խորհրդարանի կողմից կառավարության նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտելիս: Կառավարության խորհրդարանական պատասխանատվությունը ըստ էության, հանգում է այն բանին, թե որքանով է նրա քաղաքականությունը համապատասխանում խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքին, արդյոք տվյալ կառավարությունն ի վիճակի է իրականացնել քաղաքական այն գիծը, որը ցանկանում է խորհրդարանական մեծամասնությունը:

Քանի որ կառավարությունը եւ խորհրդարանական մեծամասնությունը, որպես կանոն, մարմնավորում են միեւնույն քաղաքական ուժը կամ ուժերը, ապա նրանք սկզբունքորեն շահագրգիռ են, որ կառավարությունը կարողանա իրականացնել իր այն քաղաքականությունը, որը համահունչ է խորհրդարանական մեծամասնության կամքին: Խորհրդարանական եւ կիսանախագահական կառավարման ձեւերի բնութագրական գիծը քաղաքական պրակտիկայում կառավարության եւ պառլամենտական մեծամասնության փոխադարձ համերաշխությունն է:

Ուստի քաղաքական պրակտիկայում «կառավարության քաղաքական պատասխանատվության նպատակն առաջին հերթին կառավարության քաղաքականության եւ խորհրդարանական մեծամասնության քաղաքականության միջուկ համաձայնության պահպանումն է»: Այն գործադրվում է, երբ նրանց միջուկ անհամաձայնություն է առաջ գալիս: Այդ անհամաձայնությունը, սակայն, մեղքի, սխալի արդյունք չէ, ինչի տպավորությունն սրեղծում է «պատասխանատվություն» բառը: Կառավարության առաջին պարտականությունն իր ծրագրին հավատարիմ մնալն է, եւ այն որքան մեղք կամ սխալ չի գործում, եթե փորձում է խորհրդարանին համոզել այն ընդունելու մեջ⁸⁶: «Վստահություն» հասկացությունը եւ դրա հակահիշը՝ «անվստահությունը» թեեւ սահմանադրաիրավական տեսանկյունից վերաբերում են խորհրդարան-կառավարություն հարաբերություններին՝ որպես առանձին ինստիտուտներ, սակայն քաղաքական պրակտիկայում դրանք կառավարության եւ նրան սատարող խորհրդարանական մեծամասնության համերաշխության հետեւանքով առաջին հերթին խորհրդարանական մեծամասնության աջակցությունն ունենալու կամ չունենալու նշանակություն ունեն:

Կառավարության համարեղ պատասխանատվությունն ուժեղացնելու եւ ընդգծելու նպատակով Մահմանադրությունը չի նախատեսում կառավարության անդամների անհատական պատասխանատվություն Ազգային ժողովի առջեւ: Անվստահությունը կարող է հայտնվել միայն ամբողջ կառավարությանը, այլ ոչ թե միայն վարչապետին կամ առանձին նախարարներին:

2. Մեկնաբանվող հողվածը կառավարությանն անվստահություն հայտնելու համար սահմանում է հատուկ կարգ՝ կառավարությանն անվստահություն հայտնելու ընթացակարգ, որից դուրս խորհրդարանի բացասական վերաբերմունքը կամ քվեարկությունը կառավարության նկատմամբ չի հանգեցնում որեւէ պարտադիր իրավական հետեւանքի:

Միաժամանակ, մեկնաբանվող հողվածը կառավարության կայունությունն ապահովելու նպատակով նախատեսում է կառավարությանն անվստահություն հայտնելու բարդացված ընթացակարգ: Խորհրդարանին լիարժեք հնարավորություն տալով արտահայտելու նրա մեծամասնության կամքը՝ անվստահություն հայտնելու ընթացակարգը,

⁸⁶ René Capitant, Le régime parlementaire, in Régimes parlementaires, Mélanges R. Carré De Malberg: Մեջբերումն ըստ René Capitant, Ecrits constitutionnels, Paris 1982, էջ 241:

միեւնույն ժամանակ սահմանում է մի քանի նախապայմաններ, որոնց պահպանումը նպարակ է հեղափոխում բացառել նման քաղաքական մեծ կարեւորություն ունեցող որոշման ընդունումը պարահական գործոնների հեղեւանքով: Կառավարության անվարահություն հայրնելու ընթացակարգը չպետք է լինի շար դյուրին եւ դրդի քաղաքական մեծ կարեւորություն ունեցող այդ ակտն առանց խիստ ծանրակշիռ հիմքերի կարարելուն: Նման մոպեցումը, որը որդեգրվել է դեռես Առաջին համաշխարհային պարերակմից հետո ընդունված բազմաթիվ եվրոպական սահմանադրություններում եւ դարձել «ռազիոնալացված պառլամենտարիզմի» կարեւորագոյն արրերից մեկը, բնորոշ է ժամանակակից եվրոպական շար երկրների սահմանադրությունների: Ժամանակակից պառլամենտարիզմը պահանջում է, որ, մի կողմից, կառավարությունը պարասխանարու լինի խորհրդարանի առջեւ, իսկ մյուս կողմից՝ այդ պարասխանարությունը կյանքի կոչելու կառուցակարգերը չարաշահվեն եւ օգրագործվեն ողջամիտ կերպով:

Մեկնաբանվող հողվածը նախարեսում է կառավարության անվարահություն հայրնելու հեղեւյալ հարուկ ընթացակարգային պահանջները.

- որոշման նախագիծ ներկայացնելու համար պարգամավորների բարձր քվորում (մեկնաբանվող հողվածի մաս 2),

- որոշման նախագիծը ներկայացնելու եւ այն քվեարկության դնելու միջեւ որոշակի ընդմիջում (մեկնաբանվող հողվածի մաս 3),

- որոշումն ընդունելու համար ձայների բարձր քվորում (մեկնաբանվող հողվածի մաս 1):

Միեւնույն ժամանակ, Ղայարանի Սահմանադրությունը չի նախարեսում եվրոպական որոշ երկրներում արարածված այնպիսի պահանջ, ինչպիսին է կառավարության անվարահություն հայրնելու հաճախականության սահմանափակումը⁸⁷: Նկարի ունենալով մեկնաբանվող հողվածի 2-րդ մասում սահմանված որոշման նախագիծ ներկայացնելու համար բարձր քվորումը՝ պարգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդը, նման պահանջից ձեռնպահ մնալը կարելի է դրական համարել⁸⁸: Մյուս կողմից, նմանարիպ սահմանափակում Սահմանադրությունը նախարեսում է կառավարության նկարամաք օրենքի նախագծի առնչությամք վարահության հարցը դնելիս: Ըար Սահմանադրության 75-րդ հողվածի 5-րդ մասի՝ նույն նարաշրջանի ընթացքում կառավարություն այդ հարցը կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:

Քանի որ Սահմանադրությունն ամբողջությամք չի կարգավորում կառավարության անվարահություն հայրնելու ամբողջ ընթացակարգը, ապա, ի լրումն մեկնաբանվող հողվածի դրոյթների՝ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 107-րդ հողվածի 2-րդ եւ 3-րդ մասերը սահմանում են կառավարության անվարահություն հայրնելու մասին որոշման նախագծի ներկայացման եւ քննարկման կարգը: Կանոնակարգի այդ հողվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերը որեւէ ինքնուրույն նշանակություն չունեն եւ կրկնում կամ վերաշարադրում են Սահմանադրության 84-րդ հողվածի դրոյթները: Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 107-րդ հողվածի վերջին 6-րդ մասը վերաբերում է կառավարության

⁸⁷ Օրինակ, Ֆրանսիայում պատգամավորն իրավունք չունի միեւնույն հերթական նստաշրջանի ընթացքում ստորագրելու երեքից ավելի անվստահության որոշման նախագիծ, իսկ արտահերթ նստաշրջանների ժամանակ՝ մեկից ավելի (Ֆրանսիայի Սահմանադրության հողված 49, մաս 2):

⁸⁸ Լեհաստանում, որտեղ կառավարությանն անվստահության նախագիծ ներկայացնելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ տասներորդը, Սահմանադրության 158-րդ հողվածի 2-րդ մասն արգելում է պատգամավորներին անվստահության քվեի որոշման նախագիծ ներկայացնել նախորդ նախագծի ներկայացումից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Սակայն եթե այդ նախագիծը ներկայացվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի կողմից, ապա այդ սահմանափակումը չի գործում:

անվտանգություն հայտնելու իրավական հետեւանքին:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ կառավարությանն անվտանգություն հայտնելու նախաձեռնության իրավունքը պարկանում է Հանրապետության Նախագահին եւ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին: Այս դրույթները ներառվել են Սահմանադրությունում 2005 թ. փոփոխությունների արդյունքում: Մինչ այդ նման նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ուներ առանձին պարզամավորը:

Հանրապետության Նախագահին նախաձեռնության իրավունք փրամադրելը պայմանավորված է սահմանադրական մարմինների համակարգում նրա զբաղեցրած դիրքով: Քանի որ գործադիր իշխանության գործառույթները բաժանված են կառավարության եւ Հանրապետության Նախագահի միջեւ եւ այդ իշխանությունն իրականացնելիս Հանրապետության Նախագահը եւ կառավարությունը գտնվում են մշտական շփման եւ փոխգործակցության մեջ, որի ընթացքում հնարավոր են նաեւ հակասություններ եւ առճակատում, ապա մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը Հանրապետության Նախագահին հնարավորություն է ընձեռում բարձրացնել կառավարության քաղաքական պարասխանարվության հարցն Ազգային ժողովում:

Քանի որ կառավարությանն անվտանգություն հայտնելու հարցի վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պարկանում է Ազգային ժողովին, ապա բնական է, որ այդ հարցը կարող է բարձրացվել նաեւ, եւ, առաջին հերթին՝ պարզամավորների կողմից: Մեկնաբանվող հոդվածն այդ պարագայում պահանջում է եվրոպական պառլամենտարիզմին ոչ բնորոշ շարք մեծ քվորում՝ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը⁸⁹: Քվորումի նպարակն է բարդացնել այնպիսի որոշման նախագծերի ներկայացումը, որոնք ակնհայտորեն ձախողման են դարպարված եւ հերպալնդում են միայն քարոզչական, հոգեբանական ճնշման եւ նման այլ նպարակներ:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթն արգելում է կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագծի ներկայացումը ռազմական կամ արարակարգ դրույթան ժամանակ: Այս դրույթը պայմանավորված է արարակարգ իրավիճակներում սահմանադրական մարմինների անխափան գործունեության անհրաժեշտությամբ, որոնց առաջնային նպարակը պետք է լինի սրեղծված իրավիճակի հաղթահարումը եւ երկիրը շուրպափույթ դեպի բնականոն զարգացման հուն վերադարձնելը:

3. Պարզամավորների կողմից որոշման նախագիծը ներկայացնելու կարգը սահմանված է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ մասում: Ըստ դրա՝ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից «նախաձեռնությունն իրականացվում է Ազգային ժողովի աշխարակազմից սրացված ձեւաթուղթն սրորագրելու եւ Ազգային ժողովի նախագահին ներկայացնելու միջոցով»: Այս կարգը փարածվում է ինչպես կառավարության կողմից վստահության հարցը դրվելու (հոդվածներ 75 եւ 90), այնպես էլ պարզամավորների նախաձեռնությամբ կառավարությանն անվտանգություն հայտնելու (հոդված 84, մաս 2) դեպքերի վրա, սակայն հաշվի չի առնում այդ երկու փարքեր իրավիճակների առանձնահարկությունները:

⁸⁹ Օրինակ, Ֆրանսիայում եւ Իտալիայում քվորումը հավասար է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/10-ին: Գերմանիան եւ Պորտուգալիան սահմանում են ավելի մեծ քվորում՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/4-ը, սակայն միաժամանակ թույլ են տալիս, որ կառավարությանն անվտանգություն հայտնելու նախագիծ ներկայացվի նաեւ պատգամավորական խմբակցությունների կողմից: Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3 քվորում է նախատեսված Բելոռուսում:

Ստորագրման պահանջի նպատակից հետևում է, որ ստորագրությունը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն քա պարզել ձեռագրության ստորագրած պատգամավորի ինքնությունը: Ազգային ժողովի նախագահին ձեռագրությունը ներկայացվելուց հետո այլևս հնարավոր չէ ստորագրությունը հետ վերցնել, քանի որ «ձեռագրություն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո փոփոխման ենթակա չէ» (նույն մասի երկրորդ նախադասություն): Կանոնակարգը սահմանում է նաև, որ «ձեռագրություն ստացման պահից 24 ժամվա ընթացքում Ազգային ժողովի նախագահին չներկայացվելու դեպքում համարվում է մարված»: Կանոնակարգի այս վերջին դրույթը, թերևս, խնդրահարույց է: Եթե խոսքը վերաբերում է կառավարության կողմից իր վստահության հարցը դնելու դեպքին, ապա նման պահանջն արդարացված է, քանի որ վստահության հարցը բարձրացվելուց հետո պարզամտություններն ունեն միայն 24 ժամ՝ կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու համար: Սակայն, եթե պարզամտություն են ցանկանում առանց կառավարության մարտահրավերի բարձրացնել կառավարության անվստահության հարցը, ապա 24 ժամվա ընթացքում պարզամտությունների ընդհանուր թվի մեկ երրորդի ստորագրությունները հավաքելու կանոնակարգային պահանջը կարող է դիտվել որպես պարզամտությունների սահմանադրական իրավունքների սահմանափակում: Մեկնաբանվող հոդվածում ամրագրված ընթացակարգային պահանջները պետք է դիտարկվեն որպես սպառնիչ, ինչը բացառում է, որպեսզի օրենքի մակարդակով ամրագրվեն այլ էական նշանակություն ունեցող պահանջներ⁹⁰:

Ազգային ժողովի կանոնակարգը որևէ ընթացակարգ չի նախատեսում այն դեպքի համար, երբ կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնությամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը: Այս պարագայում, թերևս, բավարար է Հանրապետության Նախագահի գրավոր նամակը Ազգային ժողովի նախագահին, որպեսզի Հանրապետության Նախագահի առաջարկը դիտարկվի որպես ներկայացված:

Կանոնակարգը չի անդրադառնում այն կարևոր հարցին, թե որ պահից է կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը դիտվում որպես ներկայացված: Քանի որ Սահմանադրությունը նախագծի ներկայացման պահի հետ կապում է կոնկրետ իրավական հետեւանքներ, ապա կանոնակարգը պետք է հստակեցնի, թե արդյոք խոսքը վերաբերում է նախագիծն Ազգային ժողովի նախագահին հանձնելուն, թե՞ այդ մասին պարզամտություններին տեղեկացնելու պահին:

Թեպետ գործնականորեն քիչ է հավանական, սակայն տեսականորեն հնարավոր են դեպքեր, որ միաժամանակ ներկայացվեն միանգամից մի քանի նախագծեր: Այդ դեպքում նախագծի քննարկումը եւ քվեարկությունը պետք է անցկացվի ըստ ներկայացված նախագծերի հաջորդականության:

Եթե սահմանված ժամկետում եւ անհրաժեշտ քանակի ստորագրություններով ձեռագրությունը հանձնվում է Ազգային ժողովի նախագահին, ապա ԱԾ կանոնակարգի 2-րդ մասի չորրորդ նախադասության ա) ենթակետի համաձայն Ազգային ժողովում 24 ժամվա ընթացքում սկսվում է քննարկվել կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը, եթե պարզամտությունները որոշման նախագիծ են ներկայացրել ի պատասխան կառավարության կողմից իր վստահության հարցը դնելուն: Պարզամտությունների սեփական նախաձեռնությամբ ընթացակարգի պարագայում նույն

⁹⁰ Հարկ է նկատել, որ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի նախորդ խմբագրությունում ձեռագրությունը 24 ժամվա ընթացքում լրացնելու պահանջը վերաբերում էր միայն Սահմանադրության 75-րդ եւ 90-րդ հոդվածներին, ինչը բնական էր, քանի որ Սահմանադրությունն ինքն է նման ժամկետ սահմանում:

նախադասության բ) ենթակետը սահմանում է, որ «կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծն առանց քվեարկության ընդգրկվում է հերթական նստաշրջանի եւ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում եւ քննարկվում է արտահերթ»։ Կանոնակարգի այս դրույթը գրեթե չի համապատասխանեցված 2005թ. սահմանադրական փոփոխությունների պահանջներին։ Քանի որ Սահմանադրության 84-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության դնելու միասնական ժամկետ՝ եւ՝ 84-րդ հոդվածի 2-րդ մասով, եւ՝ 75 եւ 90-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ապա պարզամավորների նախաձեռնությամբ որոշման նախագծի քննարկումը եւս պետք է սկսվեր այդ նախագիծն Ազգային ժողովի նախագահին հանձնվելուց հետո հնարավորինս կարճ ժամկետում, որպեսզի հնարավոր լիներ պահպանել Սահմանադրությամբ սահմանված քվեարկության ժամկետը։ Մինչդեռ ԱՄ Կանոնակարգի 84-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգի դեպքում նախագիծը «առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում» ընդգրկելու պարագայում սահմանադրական ժամկետը կարող է խախտվել։ Կանոնակարգը պարասխան չի փայլիս նաեւ այն հարցին, թե ինչպես վարվել այն պարագայում, երբ Ազգային ժողովի հերթական նստաշրջանն ավարտվում կամ արդեն ավարտվել է։ Քանի որ Սահմանադրության 84-րդ հոդվածը՝ բացի ռազմական կամ արտակարգ դրության պարագայից, կառավարությանն անվտանգություն հայտնելու Ազգային ժողովի լիազորությունը որեւէ այլ ժամանակային սահմանափակման չի ենթարկել, ապա Ազգային ժողովի կանոնակարգը պետք է կանոնակարգեր այս դեպքը։ Կանոնակարգը չի կարգավորում նաեւ, թե երբ պետք է հրավիրվի Ազգային ժողովի նիստը, եթե կառավարությանն անվտանգություն հայտնելու որոշման նախագիծ է ներկայացնում Նանրապետության Նախագահը։

Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քննարկվում է օրենքների նախագծերի քննարկման համար սահմանված սովորական կարգով, հետեւյալ փարբերությամբ՝ «ա) մինչեւ 30 րոպե տեսողությամբ զեկուցումով հանդես է գալիս Նանրապետության Նախագահը կամ հարցը նախաձեռնող պարզամավորների ներկայացուցիչը, որից հետո նույն տեսողությամբ հարակից զեկուցումով հանդես է գալիս վարչապետը. բ) մինչեւ 30 րոպե տեսողությամբ եզրափակիչ ելույթով հանդես են գալիս Նանրապետության Նախագահը կամ հարցը նախաձեռնող պարզամավորների ներկայացուցիչը եւ վարչապետը, որից հետո արտահերթ ելույթի իրավունքը պահպանում է միայն Նանրապետության Նախագահը»։

Եթե կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը ներկայացվել է Սահմանադրության եւ Ազգային ժողովի կանոնակարգի պահանջների պահպանմամբ, ապա հարցը պետք է դրվի Ազգային ժողովի քննարկմանը նույնիսկ այն դեպքում, երբ նախագիծն ստորագրած պարզամավորները որեւէ պարզառով հրաժարվում են կառավարությանն անվտանգություն հայտնելու մտադրությունից։

Կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագծի քննարկման ընթացակարգի ավարտական փուլը նախագծի քվեարկությունն է։ Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախագիծը կարող է քվեարկության դրվել այն ներկայացվելուց ոչ շուրջ, քան քառասունուրթ, եւ ոչ ուշ, քան յոթանասուններկու ժամկա ընթացքում։ Այս դրույթի իմաստը ինքնին հասկանալի է։ Այն կարող է թե՛ քննարկումներից հետո թույլ փակ հանդարտեցնել կրթերը, խուսափել հապճեպ, հանպարաստի որո-

շումներից: Մյուս կողմից, կառավարությունն այդ ժամանակը կարող է օգտագործել բանակցությունների համար: Այդ ընթացքում հնարավոր է, որ հաջողվի կառավարության աջակցության օգտին նոր մեծամասնություն ձևավորել, կամ համոզել փափանկորդ պարզամտավորներին՝ չքվեարկել նախագծի օգտին⁹¹:

Այսպիսով, քվեարկության ժամկետի ամրագրումը սահմանադրական մակարդակում ելնում է կառավարության կայունությունն ապահովելու փրամաբանությունից: Քանի որ, ինչպես արդեն նշվել է, Ազգային ժողովի կանոնակարգը հարակ պարասխան չի փախա այն հարցին, թե որ պահից է որոշման նախագիծը դիտվում որպես ներկայացված, ապա հարակություն չկա, թե որ պահից է սկսում հաշվարկվել որոշման նախագիծը քվեարկության դնելու ժամկետը:

Սահմանադրությունը չի սահմանում, թե քվեարկության ինչ կարգով է ընդունվում կառավարությանն անվարահություն հայտնելու մասին որոշման նախագիծը՝ բաց, թե՛ գաղտնի: Միջազգային սահմանադրական պրակտիկայում այդ հարցը լուծվում է փարբեր ձևերով⁹²: Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերից բխում է, որ կառավարությանն անվարահություն հայտնելու մասին որոշման նախագիծն ընդունվում է բաց քվեարկությամբ⁹³:

Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարությանն անվարահություն հայտնելու մասին որոշումն ընդունվում է պարզամտավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ 66 ձայնով:

Կառավարությանն անվարահություն հայտնելու մասին որոշման նախագծի մերժումը որեւէ իրավական հետեւանքներ չի առաջացնում: Նախագծի ընդունման պարագայում վարչապետը պարտավոր է դիմում ներկայացնել կառավարության հրաժարականի վերաբերյալ, իսկ Հանրապետության Նախագահը պարտավոր է նույն օրն ընդունել կառավարության հրաժարականը (յրես Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունները):

⁹¹ Ֆրանսիական Սահմանադրության մեկնաբանություններում Ժ.-Կ. Կոլիարը նշում է, որ Ֆրանսիայի Սահմանադրության մշակման ժամանակ կառավարության պաշտոնական հիմնավորումը քվեարկությունը հետաձգելու օգտին շատ պարզ էր՝ խուսափել վորովված վիճակում քվեարկություն կատարելուց եւ պատգամավորներին ժամանակ տալ գիտակցելու իրենց պատասխանատվության աստիճանը, եւ միաժամանակ նկատում. «Դժվար է զսպել այն միտքը, որ այդ հետաձգումը կարող է նաեւ օգտագործվել նախարարների եւ մեծամասնության օգտին տրամադրված խմբակցությունների ղեկավարների կողմից բռուն հավաքել իրենց զորքերը եւ համոզել տատանվողներին՝ անհրաժեշտության դեպքում դրական կամ բացասական խոստումների միջոցով...»: Jean-Claude Colliard, Articles 49, 50, 51 in: François Luchaire et Gérard Conac (sous la direction), La Constitution de la République française, 2. Edition, Paris 1987, էջ 975:

⁹² Օրինակ, Գերմանիայում նախատեսված է գաղտնի քվեարկություն, իսկ Ֆրանսիայում՝ բաց:

⁹³ Ըստ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Օրենքները, Ազգային ժողովի որոշումները, ուղերձները եւ հայտարարությունները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությամբ մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բաց քվեարկությամբ»: Նույն հոդվածի 2-րդ մասը Ազգային ժողովի կանոնակարգ օրենքին իրավունք է վերապահում նախատեսել Ազգային ժողովի որոշումների ընդունում՝ գաղտնի քվեարկությամբ: Կառավարությանն անվարահություն հայտնելու մասին որոշման նախագծի ընդունման համար Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը գաղտնի քվեարկություն չի նախատեսում:

Գ Լ ՈՒ Խ 5

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՕԴՎԱԾ 85

1. Կառավարությունը մշակում և իրականացնում է Տայասրանի Տանրապետության ներքին քաղաքականությունը: Տայասրանի Տանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Տանրապետության Նախագահի հետ համապետ: Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների:

2. Տայասրանի Տանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Տանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Տանրապետության ամբողջ տարածքում:

3. Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Տանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ:

4. Վարչապետը և նախարարները պետք է լինեն Տայասրանի Տանրապետության քաղաքացի:

5. Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

6. Կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման հարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Տանրապետության Նախագահի հրամանագրով:

1. Սահմանադրության փոփոխություններով որոշակիորեն ուժեղացել է կառավարության՝ որպես գործադիր իշխանության ինքնուրույն պետական մարմնի, դերն ու նշանակությունը: Այս պարագան վերաբերում է նաև Տանրապետության ներքին և արտաքին քաղաքականությանը: Մասնավորապես, Սահմանադրությանը համապատասխան՝ կառավարությունը մշակում և իրականացնում է Տանրապետության ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը, ինչպես և նախագահական ու կիսանախագահական բազմաթիվ պետություններում, ՏՆ Նախագահի հետ մեկտեղ: Նման դեպքերում կառավարության արտաքին հարաբերություններում, որպես կանոն, վերապահվում է ընդհանուր նպատակների որոշումը, դրանց կենսագործման միջոցները և համապատասխան դիվանագիտական մարմիններին ցուցումներ տալը:

Կառավարության հետ համապետ մշակված և իրականացվող ՏՆ արտաքին քա-

ղաքականությունը Հանրապետության Նախագահին իրականացնում է անմիջականորեն, իսկ, անհրաժեշտության դեպքում, ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով: Ընդ որում, Սահմանադրությամբ ամրագրված արտաքին քաղաքականության իրականացումն ապահովում է կառավարությունը (89-րդ հոդվածի 6-րդ կետ): Միաժամանակ, որպես պետության գլուխ՝ Հանրապետության Նախագահին իրականացնում է կառավարության հետ համապետել ղեկավարումը (55-րդ հոդվածի 7-րդ կետ): Ի դեպ, այդ գործառույթն իրականացնելիս Հանրապետության Նախագահը կաշկանդված չէ կառավարության դիրքորոշումով և կարող է, իր իրավասության շրջանակներում, ունենալ ինքնուրույն նախաձեռնություններ: Այս համապետություն միահյուսվում են Հանրապետության Նախագահի, կառավարության և հանրապետական համապարասխան գործադիր մարմինների լիազորություններն արտաքին քաղաքականության մշակման ու իրականացման ասպարեզում: Նշված փոխհարաբերությունները հիմք են փալիս եզրահանգելու, որ Հանրապետության Նախագահի կարգավիճակն զգալիորեն պայմանավորված է նաև գործադիր իշխանության մարմինների հետ ունեցած կազմակերպական-փոխհամագործակցության բնույթով:

Սահմանադրության մեկնաբանվող դրույթով սահմանված ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության առնչությամբ կառավարության լիազորությունները որոշակի իմաստով ամանցվում են 89-րդ հոդվածով ամրագրված գործառույթներից, որոնց համաձայն կառավարությունն իրականացնում է Ֆինանսարդեսական, վարկային ու հարկային և փարածքային զարգացման, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականություն: Դրա հետ մեկտեղ, կառավարությունն ապահովում է հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը, հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման ուղղությամբ:

Կառավարության կողմից արտաքին քաղաքականության իրականացման ապահովումն ընդգրկում է նաև երկրի արտաքին փոխտեսական ուղղության կենսագործման նպատակով կիրառվող միջոցները, որոնք միտված են համաշխարհային փոփոխությանը Հանրապետության փոփոխության արդյունավետ ինտեգրման պայմանների ստեղծմանը (Եվրամիություն, Անկախ պետությունների համագործակցություն և այլն):

Ներքին և արտաքին քաղաքականությունն իրականացնելու նպատակով կառավարությունն իր իրավասության շրջանակներում հաստատում է բազմազան նպատակային ծրագրեր, գործունեության պլաններ, իսկ արտաքին քաղաքականության ասպարեզում՝ բազմաթիվ ու բազմաբովանդակ միջկառավարական միջազգային պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք վերաբերում են հանրապետության կենսագործունեության կարևոր խնդիրներին: Ի դեպ, արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապարասխան (Սահմանադրության 9-րդ հոդված):

Հանրապետության վարչապետը՝ գլխավորելով գործադիր իշխանության բարձրագույն մարմինը, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ՀՀ կառավարության կազմում, ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Հանրապետության արտաքին հարաբերությունների ասպարեզում, օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով, ստորագրում է ՀՀ միջազգային պայմանագրերը և փալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագրելու լիազորությունները:

րություն ու հանձնարարականներ, ինչպես նաև կառավարության կամ վարչապետի անունից հանդես գալու լիազորություն: Բացի դրանից, վարչապետը ներկայացնում է կառավարությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում, նշանակում է միջազգային և միջկառավարական մարմիններում կառավարության ներկայացուցիչներ (18.07.07 հրամանագրի 121-րդ կետի 4, 8, 10 և 11-րդ ենթակետեր):

ՏՏ նախարարները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նաև ՏՏ միջազգային պայմանագրերով և պատասխանաբար են լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, հեռանկարային զարգացման ապահովման համար, առանց լիազորագրի հանդես են գալիս Նանրապետության կամ հանրապետական գործադիր մարմնի անունից, ինչպես նաև փալիս են Նանրապետության կամ հանրապետական գործադիր մարմնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր, իրականացնում են ՏՏ միջազգային պայմանագրերով նախատեսված այլ լիազորություններ (18.07.07թ. հրամանագրի 133, 134-րդ կետեր և 136-րդ կետի 13 և 15-րդ ենթակետեր):

ՏՏ կառավարության՝ որպես ընդհանուր իրավասության կոլեգիալ պետական մարմնի, իրավասության սահմանները բավականին լայն են, քանզի իրականացնելով գործադիր ու կարգադրիչ գործունեություն՝ կոչված է գործնականում ապահովելու օրենքների, ՏՏ միջազգային պայմանագրերի, Նանրապետության Նախագահի հրամանագրերի ու կարգադրությունների և այլ իրավական ակտերի կատարման կազմակերպումը: Բացի դրանից, կառավարությունն ինչպես անմիջականորեն, այնպես էլ գործադիր իշխանության միասնական համակարգի մարմինների միջոցով (նախարարություններ, գերատեսչություններ, փարածքային պետական կառավարման մարմիններ) ղեկավարում է ՏՏ տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական բնագավառները կամ դրանց մեծ մասը: Բնականաբար, այս համապետությունը հանդես է գալիս որպես գործադիր իշխանության բարձրագույն և հիմնական մարմին: Նշված մարմիններն իրենց կարգավիճակով և գործունեության բնույթով, գործադիր իշխանության մարմինների համակարգում՝ ՏՏ կառավարությունից հետո, որպես պետական կառավարման կենտրոնական մարմիններ, զբաղեցնում են յուրահատուկ տեղ՝ ղեկավարելով իրենց վերապահված ճյուղերը կամ կառավարման ոլորտները: Կառավարության իրավասությունն իրականացվում է իր կողմից ընդունվող որոշումների և դրանց գործողությունների միջոցով՝ պայմանավորված պետության խնդիրներով ու գործառնություններով: Այս առումով էլ կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների:

Կառավարության կարգավիճակի կարևոր բաղադրամասն են կազմում նրա լիազորությունները: Կառավարությանը՝ իր կարգավիճակին համապատասխան, վերապահված է առանձնահատուկ բնույթի ու ծավալի իրավասություն՝ պետական ու հասարակական կյանքի փարբեր ոլորտներում:

Գործադիր իշխանության մարմինները՝ գործնականում ապահովելով օրենքների և այլ իրավական ակտերի կատարման կազմակերպումը՝ Մասնատրությանը, օրենքներին և վերադաս մարմինների ակտերին համապատասխան և ի կատարումն դրանց, իրենց իրավասության սահմաններում ընդունում են իրավական ակտեր: Կառավարությունն ուղղություն է փալիս հանրապետական գործադիր մարմինների և փարածքային

կառավարման մարմինների գործունեությանը եւ վերահսկողություն իրականացնում դրանց գործունեության նկատմամբ: Նշված մարմինները ենթակա են կառավարությանը ու պարասխանատու նրա առջեւ:

Կառավարությունը գործադիր ու կարգադրիչ գործունեությունն իրականացնում է հանրապետության ամբողջ տարածքում՝ ապահովելով այդ համակարգի մարմինների փոխհամաձայնեցված գործունեությունը: Կառավարության քաղաքականությունն առանձին ոլորտներում մշակում եւ իրականացնում են ՏՏ նախարարություններն ու կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները (18.07.07թ. հրամանագրի 7 եւ 8-րդ կետեր):

Տնտեսական, սոցիալ-մշակութային ու վարչաքաղաքական բնագավառներում կառավարությանը վերապահված բազմապիսի լայն լիազորություններից Սահմանադրության 89-րդ հոդվածում սովորական թվարկմամբ ամրագրված են ընդհանուր սոցիալ-տնտեսական առանձին ոլորտների եւ պետական ու հասարակական կենսագործունեության առանձին բնագավառների վերաբերյալ լիազորություններ:

Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված՝ կառավարության գործառնությունների եւ լիազորությունների իրականացումը պայմանավորված է պետության խնդիրներով ու գործառնություններով: Այս առնչությամբ կառավարությունը հանդես է գալիս պետության անունից եւ նրա հանձնարարությամբ:

Ի դեպ, բացի լիազորություններից, Սահմանադրությունը եւ մյուս իրավական ակտերը նախատեսում են նաեւ պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության կարգը: Իր խնդիրներն ու գործառնություններն իրականացնելու նպատակով կառավարությունն օգտագործում է գործունեության ամենաարարքեր կազմակերպական ձեւեր (նիստերի գումարում, որոշումների ընդունում, հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների հաշվետվությունների քննարկում եւ այլն):

2. Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից հետեւում է, որ, ի կատարումն օրենսդրական ակտերի, կառավարության իրավաստեղծ գործունեությունը կազմում է նրա գործունեության անբաժանելի մասը՝ իր իրավասության սահմաններում արտահայտելով պետական կամքը եւ պարզվիրանները: Դա պայմանավորված է նրանով, որ այն իրավական ակտերը, որոնց հիման վրա կառավարությունն ընդունում է որոշումներ, որպես կանոն, կրում են ընդհանուր բնույթ եւ պահանջում են հետագա մանրամասնում եւ հսկակետում:

Միաժամանակ, Սահմանադրության մեկնաբանվող դրույթը ցույց է տալիս կառավարության որոշումների ուղղակի կապը եւ համապարասխանությունը թվարկված իրավական ակտերի հետ, ինչպես նաեւ այդ որոշումների բնույթը՝ ենթաօրենսդրականությունը, բազմաոլորտայնությունն ու միջճյուղայնությունը, պետական կառավարման համակարգում դրանց բարձր նորմատիվությունը եւ համապարագիրությունը:

Անհրաժեշտ է փաստել նաեւ, որ ՏՏ իրավական ակտերի համակարգում կառավարության եւ վարչապետի որոշումները՝ Սահմանադրության, օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների հետ մեկտեղ (ՏՏ օրենսդրական ակտեր), զբաղեցնում են առաջին հորիզոնականը եւ կազմում են ՏՏ պետական եւ ոչ պետական բոլոր մարմինների կողմից հրապարակվող իրավական ակտերի բուրգի գագաթը: Վերջիններս իրենց իրավական ակտերն ընդունում են թվարկված օրենսդրական ակտերին համապարասխան եւ չեն կարող հակասել դրանց: Միաժամանակ, կառավարության որոշումները հանրապետության գործադիր

իշխանության մյուս մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի համակարգում բարձրագույն տեղ են գրավում եւ վերջիններիս ակտերը հրապարակվում, զարգանում ու կատարելագործվում են ինչպես կառավարության, այնպես էլ վարչապետի որոշումներին համապատասխան:

Իրավ, կառավարության որոշումներով կարգավորվում են լայն շրջանակի հարցեր՝ օրենքով չկարգավորված ցանկացած հարաբերություն, եթե վերջինս Սահմանադրությամբ եւ օրենքով կամ ՏՏ Նախագահի հրամանագրով ու կարգադրությամբ չպետք է կարգավորվի իրավաբանական այլ ակտերով¹:

Այսպիսով, կառավարությունն իրավաստեղծ եւ իրավակիրառական բնույթի որոշումներում արտահայտում է իրեն վերապահված բազմաբովանդակ լիազորությունների լայն շրջանակը եւ բնույթը, որոնց ընդունման միջոցով իրականացնում է ինչպես պետական կառավարում, այնպես էլ կարգավորում է պետական, փոփոխական, սոցիալ-մշակութային եւ վարչաքաղաքական ոլորտների հիմնահարցերը: Ի կատարումն օրենքների, ընդունելով իրավական ակտեր՝ կառավարությունը դրանով իսկ գործադիր իշխանության խնդիրները լուծելու նպատակով իրականացնում է կարգադրիչ գործունեություն: Նենց կառավարության կողմից ընդունված որոշումների էությունը, տեղն ու դերը հանրապետության միասնական իրավունքի համակարգում՝ կանխորոշում է այդ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը:

Մեկնաբանվող հոդվածի դրույթը միաժամանակ սահմանադրորեն ամրագրում է ոչ միայն կառավարության իրավական ակտերի ենթաօրենսդրական բնույթը, այլեւ դրանց իրավական ձեւը, որին համապատասխան կառավարության ինչպես նորմատիվ, այնպես էլ օպերատիվ եւ ընթացիկ այլ հարցերի վերաբերյալ ակտերն ընդունվում են որոշման ձեւով: Կառավարությունը կարող է ընդունել միայն նորմատիվ կամ անհատական բնույթի որոշումներ²: Վերջինները կարգավորիչ կարեւոր դերակատարություն ունեն պետական եւ հասարակական կյանքի փոքր բնագավառներում: Ի դեպ, կառավարությունը չի կարող իր իրավաստեղծ լիազորությունները փոխանցել այլ մարմինների³:

Նշված հիմնադրույթներից միաժամանակ հետեւում է, որ թվարկված իրավական ակտերի կատարման ապահովումը համարվում է ոչ միայն կառավարության բացառիկ լիազորությունների բնագավառը, այլեւ գործադիր ու կարգադրիչ գործունեության իրականացման ոլորտը: Վերը հիշարկված հիմնադրույթների արդյունավետ իրականացման նպատակով Սահմանադրությունն ամրագրում է կառավարության որոշումների կատարման համապարտադիր լինելը հանրապետության ամբողջ տարածքում: Դրանք պարտադիր են կատարման բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների եւ քաղաքացիների կողմից:

¹ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի երրորդ մասը (ՀՀ ՊՏ N15 (190) 21.05.02):

² Կառավարության եւ վարչապետի նորմատիվ որոշումն օրենքով նախատեսված՝ կառավարության եւ վարչապետի՝ Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունված պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

Կառավարության եւ վարչապետի անհատական որոշումը՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունված իրավական այն ակտն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ եւ սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ համայնքային հիմնարկների համար (տե՛ս նույն տեղում, երկրորդ, երրորդ եւ հինգերորդ մասեր, 14-րդ հոդվածի չորրորդ մաս եւ 15-րդ հոդվածի երրորդ մաս):

³ Տե՛ս նույն տեղում, 25-րդ հոդված:

ՏՏ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն Հանրապետության Նախագահը 18.07.07թ. հրամանագրով սահմանել է կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը: Սույն կարգով սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքները, կառավարության գործունեության կազմակերպման, նիստերի նախապարաստման և հրավիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման ապահովման հարցերը (1-ին կետ): Ընդ որում, հրամանագրով հստակ սահմանվում է, որ կառավարության քննարկմանը ներկայացվում են միայն Սահմանադրությամբ և օրենքներով նրա իրավասությանը վերապահված հարցեր, որոնք բխում են վերջինիս կողմից հաստատված՝ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրից և գերակա խնդիրներից (28-րդ կետ): Նույնպիսի պահանջ է ներկայացվում նաև կառավարության քննարկմանը ներկայացված օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի նկատմամբ, որոնք չպետք է հակասեն ոչ միայն Սահմանադրությանը և օրենքներին, այլև սահմանադրական դատարանի որոշումներին (35-րդ կետ):

Վերը նշված հարցերից բացի, կառավարության քննարկմանը ներկայացվող մյուս հարցերը պետք է բխեն Սահմանադրությունից և օրենքներից, Ազգային ժողովի որոշումներից, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և կառավարության իրավական ակտերից, եթե դրանք վերջիններիս իրավական ակտերի փոփոխություններ, լրացումներ կամ դրանցով կարգավորվող հարցերի նոր լուծումներ չեն նախատեսում (37-րդ կետ):

Միաժամանակ, կառավարության իրավաստեղծ գործունեության նկատմամբ ինչպես Սահմանադրությունը, այնպես էլ առանձին նորմատիվ իրավական ակտեր սահմանում են մի շարք պահանջներ, որոնց պահպանումն ապահովում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին հետևելը: Առաջին հերթին կառավարությունը պետք է պահպանի որոշումներ ընդունելու իր իրավասության շրջանակները:

Այս առումով կառավարությունն իր որոշումները պետք է ընդունի միայն ՏՏ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների սահմաններում և չեն կարող հակասել դրանց, ինչպես նաև սահմանադրական դատարանի և Ազգային ժողովի որոշումներին, ՏՏ Նախագահի իրավական ակտերին, Ազգային ժողովի վավերացրած կամ Հանրապետության Նախագահի հաստատած ՏՏ միջազգային պայմանագրերին: Կառավարության որոշումները չեն կարող հակասել նաև օրենքով ուղղակի նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված ՏՏ կենտրոնական բանկի խորհրդի և կարգավորող հանձնաժողովների (ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողով, Էներգետիկայի հանձնաժողով, Վիճակագրական պետական խորհուրդ, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, Նեոստրառադիոյի ազգային հանձնաժողով, Զաղաքացիական ծառայության խորհուրդ)⁴ որոշումներին:

Միաժամանակ, ՏՏ կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև կարգավորող հանձնաժողովների որոշումները չպետք է հակասեն կառավարության և վարչապետի որոշումներին⁵:

ՏՏ կառավարության լիազորությունների իրականացման համար հիմք են հանդիսանում նաև Հանրապետության Նախագահի նորմատիվ այլ հրամանագրերն այնպի-

⁴ Տե՛ս նույն տեղում, 14-րդ հոդվածի երկրորդ մաս և 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետ:

⁵ Նույն տեղում, 16-րդ հոդվածի երրորդ մաս, 17 և 18-րդ հոդվածների երկրորդ մասերը:

սի հարցերի առնչությամբ, որոնք նա լիազորված է ընդունել Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում, մասնավորապես, ՏՏ անկախության, փարածքային ամբողջականության եւ անվտանգության (49-րդ հոդված), պաշտպանության բնագավառում պետական մարմինների գործունեության համակարգման, ռազմական եւ արտակարգ դրության հայտարարման (55-րդ հոդվածի 12-14-րդ կետեր), հանրաքվե նշանակելու կապակցությամբ եւ այլ հարցերով:

«Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքին համապատասխան՝ առաջին արյանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը (որոշումներ, վճիռներ, դատավճիռներ, վճարման կարգադրություններ) չպետք է հակասեն կառավարության կամ վարչապետի որոշումների պահանջներին, իսկ կառավարության եւ վարչապետի որոշումները չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտնող թվարկված դատարանների դատական ակտերին (22-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասեր): Կառավարության եւ վարչապետի որոշումների պահանջներին չպետք է հակասեն նաեւ ՏՏ դատարանների նախագահների խորհրդի եւ ՏՏ վճռաբեկ դատարանի նախագահի որոշումները (22.1-րդ հոդվածի երկրորդ մաս):

Կառավարության լիազորությունների իրավական հիմքերի շրջանակը բավականին լայն է եւ ընդգրկում է հանրապետության փոփոխական, սոցիալ-մշակութային եւ վարչաքաղաքական բազմաթիվ հարցեր: Իր գործունեության ոլորտում կառավարությունը՝ որպես երկրի գործադիր իշխանության բարձրագույն մարմին, սահմանադրորեն օժտված է առաջնային լիազորություններով. մշակում եւ իրականացնում է հանրապետության ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում եւ իրականացնում է ՏՏ Նախագահի հետ մեկտեղ: Հանրապետության պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ենթակա են կառավարության իրավասությանը (85-րդ հոդվածի առաջին մաս):

Կառավարությունը՝ որպես ընդհանուր իրավասության գործադիր իշխանության հանրապետական մարմին, Սահմանադրության, օրենքների եւ ՏՏ Նախագահի իրավական ակտերի հիման վրա լուծում է կառավարման կարեւորագույն խնդիրները՝ պետական սեփականության, ֆինանսափոփոխական, վարկային եւ հարկային, ինչպես նաեւ փարածքային զարգացման, գիտության, կրթության, սոցիալական եւ բնապահպանության պետական քաղաքականության, հանրապետության պաշտպանության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման ոլորտում (89-րդ հոդված), ղեկավարում եւ ուղղություն է տալիս պետական կառավարման մյուս բնագավառների գործունեությանը: վերահսկողություն է իրականացնում հանրապետական գործադիր իշխանության, փարածքային կառավարման եւ գործադիր գործառնություններ իրականացնող մյուս մարմինների գործունեության նկատմամբ: ՏՏ հիմնական օրենքին համապատասխան իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ գործառնություններ ու լիազորություններ:

Բացի դրանից, կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնք մանրամասնում, կոնկրետացնում են օրենսդրական ակտերը, չեն կարող հակասել վերը նշված իրավական ակտերին: Նշված պահանջը փարածվում է նաեւ այն նորմաթիվ իրավական ակտերի վրա, որոնցով ՏՏ օրենսդիր մարմինը պարտավորվում է կառավարությանն առանձին այլ լիազորություններ: Հանրապետության Նախագահի հրամանագրով⁶ սահ-

⁶ Տե՛ս «ՀՀ կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 2007թ. հուլիսի 18-ի հրամանագիրը (ՀՀ ՊՏ 2007 N 37 (561), 25.07.07թ.):

մանվել է այն պաշտոնաբար անձանց եւ մարմինների ցանկը, ովքեր իրավասու են կառավարության քննարկմանը որոշումների նախագծեր ներկայացնել՝ ՏՏ Նախագահը (արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերով), վարչապետը եւ նախարարները: Նախարարի բացակայության (ժամանակավոր անաշխատունակության, գործուղման, արձակուրդի, պաշտոնը թափուր մնալու) դեպքում դրանք կարող է ներկայացնել նախարարի համապատասխան տեղակալը (հրամանագրի 29-րդ կետ), իսկ նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, նախարարությունների կազմում գործող գործակալություններն ու տեսչությունները՝ տվյալ բնագավառի գործունեությունը համակարգող նախարարի միջոցով (հրամանագրի 30-րդ կետ):

ՏՏ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, օրենքով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովները (խորհուրդները, ծառայությունները), ՏՏ վճարելի դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, կենտրոնական բանկի նախագահը եւ տեղական ինքնակառավարման մարմինները կառավարության քննարկմանը որոշումների նախագծեր ներկայացնում են վարչապետի միջոցով (հրամանագրի 30-րդ կետ):

Կառավարության քննարկմանն առաջարկվող որոշումների նախագծերին նույնպես ներկայացվում են մի շարք պահանջներ: Մասնավորապես, դրանք պետք է լինեն հիմնավորված, արժանահավասար, հստակ եւ ամբողջական, որոնց համար պատասխանաբար է նախագիծը ներկայացնողը, իսկ օրենքների եւ Ազգային ժողովի որոշումների նախագծերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանն ու օրենքներին եւ չհակասեն սահմանադրական դատարանի որոշումներին: Կառավարության քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի նախագծերի փաթեթը պետք է ընդգրկի առաջադրվող նախագիծը, դրա ընդունման հիմնավորումը, այդ առնչությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջի անհրաժեշտությունը, ինչպես նաեւ ՏՏ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը, տվյալ նախագծի կապակցությամբ այլ իրավական ակտերի նախագծեր ընդունելու կամ չընդունելու անհրաժեշտության մասին տեղեկանքը:

ՏՏ կառավարության որոշումների նախագծերը ներկայացնողի կողմից դրանք համաձայնեցվում են ՏՏ արդարադատության եւ շահագրգիռ նախարարների ու մարմինների հետ: Դրա հետ մեկտեղ, կառավարության եւ վարչապետի որոշումների նախագծերի քննարկման ներկայացվող վերջնական տարբերակները փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով ուղարկվում են պետական իրավական փորձաքննության՝ ՏՏ արդարադատության նախարարություն («Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մաս):

ՏՏ դատախազության, դատական համակարգի, ինչպես նաեւ կենտրոնական բանկի գործունեությանը վերաբերող նախագծերը ներկայացվում են դրանց ղեկավարներին՝ կարծիքի:

Կառավարության որոշումներն ընդունվում են նիստի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի քննարկման ավարտից հետո՝ նախքան հաջորդ հարցի քննարկմանն անցնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցի քննարկումը հետաձգվում է: Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցող՝ կառավարության անդամների կեսից ավելին: Ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը վճռորոշ է: Ի դեպ, քվեարկությանը մասնակցում են միայն ՏՏ կառավարության անդամները՝ վարչապետը եւ նախարարները:

Կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով օրենքների, Ազգային ժողովի որոշումների նախագծերի, ինչպես նաև կառավարության կարծիքին ներկայացված՝ Ազգային ժողովի պարզամավորների օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կառավարությունն ընդունում է արձանագրային որոշումներ, բացառությամբ կառավարության որոշումների նախագծերի: Իրավամբ, կառավարության իրավաստեղծ գործունեությունը հնարավոր չէ պարկերացնել առանց օրենսդրական գործունեությանը նրա մասնակցության, որն ընդգրկում է կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքն Ազգային ժողովում:

Կառավարության ընդունած որոշումները գրանցվում են կառավարության որոշումների գրանցամատյանում և դրանց տրվում են հերթական համարներ՝ նշելով ընդունման ժամանակաթիվը (ամսաթիվը, ամիսը և փարեթիվը): Որոշումների համարակալումն սկսվում է հունվարի առաջին նիստի առաջին որոշումից և ավարտվում փոխալ տարվա վերջին որոշմամբ: Դրանք պահվում են կառավարության աշխատակազմում:

Կառավարության որոշման ընդունման օր է համարվում դրա՝ կառավարության կողմից վերջնական խմբագրմամբ ընդունվելու օրը, իսկ վարչապետի որոշմանը՝ վարչապետի կողմից դրա ստորագրվելու օրը:

Կառավարության և վարչապետի նորմատիվ որոշումները ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման և ուժի մեջ են մտնում դրանցում նշված ժամկետներում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Կառավարության նորմատիվ որոշումները հրապարակվում են վարչապետի կողմից՝ ընդունմանը հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Կառավարության անհատական որոշումները վարչապետի կողմից կարող են հրապարակվել՝ ընդունվելուց, իսկ Նանրապետության Նախագահի կողմից վավերացման ենթակաները՝ դրանք վավերացվելուց հետո՝ սահմանված ժամկետներում ու կարգով: Վերջիններիս համապատասխան վարչապետի անհատական որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով կամ փոխալ անհատական որոշմամբ: Կառավարության նույնանուն որոշումն ուժի մեջ է մտնում վարչապետի կողմից ստորագրվելու օրվան, իսկ Նանրապետության Նախագահի վավերացմանը ենթակա կառավարության անհատական որոշումը՝ դրա վավերացմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ նշված օրենքով, այլ օրենքներով կամ փոխալ անհատական որոշմամբ: Ընդ որում, եթե կառավարության և վարչապետի հիշատակված անհատական որոշումներով նախատեսված է պարտականություն (այդ թվում՝ հանձնարարություններ) սահմանող կամ պետական մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ անձանց կարգավիճակը վարթարացնող դրույթ, ապա նշված անհատական որոշումն ուժի մեջ է մտնում այդ ակտը համապատասխան մարմիններում կամ կազմակերպություններում մուտքագրվելու կամ պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին հանձնվելու կամ նրանց տրամադրած (նշած) գրավելու կամ բնակության վայր ուղարկելու կամ պարտաճ այլ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ ակտի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտով կամ այդ անհատական որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ (60-րդ հոդված):

Եթե նշված անհատական որոշումը պարտականատրվություն է սահմանում, ապա ուժի մեջ է մտնում այն համապատասխան մարմիններում կամ կազմակերպություններում մուտքագրվելու կամ պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին հանձնելու կամ նրանց կողմից նշված գրավելու կամ բնակվելու վայրը ուղարկելու կամ պարտաճ այլ

կարգով նրանց հանձնելու պահից՝ օրենքով կամ իրավական ավելի բարձր ուժ ունեցող ակտով կամ փոխյալ անհատական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Կառավարության հիշյալ անհատական որոշումները վարչապետի կողմից ստորագրվելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում, իսկ Նախարարության Նախագահի վավերացմանը ենթակա կառավարության անհատական որոշումները՝ վավերացվելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ուղարկվում են այն մարմիններ, անձանց կամ քաղաքացիներին, որոնց վրա դրանք փարածվում են:

Տրապարակման չուղարկված՝ կառավարության անհատական որոշումները կարող է հրապարակել իրավական ակտերը հրապարակող մարմինը:

Կառավարության եւ վարչապետի որոշումներն սրբանալու օրվան հաջորդող փասն օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են «Նայասփանի Նախարարության պաշտոնական քեղեկագրում», որի հրապարակումն իրականացնում է ՆՏ արդարադատության նախարարությունը: Ի դեպ, պաշտոնական հրապարակման օրը համարվում է դրանց ամբողջական քեքսփրը պաշտոնական քեղեկագրում առաջին անգամ հրապարակման (ույսընծայման) օրը:

Եթե կառավարության եւ վարչապետի նորմաքիվ որոշումը չի հրապարակվել դրանում նշված՝ որոշումն ուժի մեջ մքնելու օրվա դրությամք, ապա ուժի մեջ մքնելու օր է համարվում դրա հրապարակման հաջորդ օրը, եթե «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքով այլ բան նախատեսված չէ:

Տրապարակման ենթակա չեն կառավարության եւ վարչապետի այն որոշումները կամ դրանց առանձին այն մասերը, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղքնիք: Սակայն դրանք ուժի մեջ են մքնում դրանց ընդունման հաջորդ օրվանից, իսկ ստորագրման կամ վավերացման կամ պետական գրանցման ենթակա որոշումները՝ դրանց ստորագրմանը կամ վավերացմանը կամ գրանցմանը հաջորդող օրվանից: Այս կարգի որոշումները պարտադիր են կատարման Ֆիզիկական, իրավաբանական եւ պաշտոնատար անձանց համար՝ սահմանված կարգով այդ որոշումներին նրանց իրազեկելու կամ ծանոթանալու պահից, եթե այլ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Նույն օրենքին համապատասխան՝ Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող, խստացնող, նրանց իրավական վիճակն այլ կերպ վարթարացնող նորմաքիվ իրավական ակտերն ուժի մեջ են մքնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող փասներող օրը, եթե փոխյալ ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ, կամ եթե նշված օրենքով ուղղակի այլ բան չի նախատեսված չէ (46-րդ հողված): Այդ ակտերը կիրառող պետական կառավարման եւ քեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են այդ մասին իրազեկել շահագրգիռ Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ կառավարության սահմանած կարգով (69-րդ հողված): Եթե փոխյալ նորմաքիվ իրավական ակտում ուժի մեջ մքնելու ժամկետ նախատեսված չէ, ապա ուժի մեջ է մքնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող փասներող օրը: Սահմանված կարգով չիրապարակված կամ ուժի մեջ չմքնած այդ բնույթի որոշումներն իրավաբանական ուժ չունեն եւ ենթակա չեն կատարման կամ կիրառման:

Կառավարության եւ վարչապետի որոշումներն ընդունվելու, ստորագրվելու կամ վավերացվելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում թղթի վրա եւ էլեկտրոնային կրիչով կամ էլեկտրոնային փոստով ուղարկվում են ՆՏ արդարադատության նախարարություն՝ պետական հաշվառման եւ համակարգման նպատակով:

Կառավարության և վարչապետի իրավական ակտերի մշակման, քննարկման ու ընդունման, հասարակության իրազեկման, դրանց հրապարակման, գործողությունը դադարեցնելու, ուժը կորցրած ճանաչելու, վերացնելու, անվավեր և չեղյալ ճանաչելու, գործողության կասեցման, մեկնաբանման ու պարզաբանման հարցերը կարգավորվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և Հանրապետության Նախագահի 18.07.07 հրամանագրով:

3. ՀՀ կառավարությունը՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմին, կազմված է վարչապետից և նախարարներից:

Կառավարությունը, ի փարբերություն ՀՀ գործադիր իշխանության մյուս մարմինների, առանձնանում է կազմավորման յուրահատուկ կարգով (Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետ): Կառավարության անհատական կազմի ձևավորումն սկսվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում: Կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել են նրա բոլոր անդամները:

Ինչպես որոշ երկրներում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նույնպես ՀՀ կառավարության կազմում չի նախատեսում փոխվարչապետի առանձին հաստիքային պաշտոն: Մինչև Սահմանադրության 2005թ. փոփոխությունները վարչապետին փոխարինող անձի հարցը կարգավորվում էր ՀՀ կառավարության գործունեության կարգի վերաբերյալ Հանրապետության Նախագահի հրամանագրերով,⁷ որի նշանակման և պարտականությունների բովանդակությունն այլ բնույթ ուներ: Մասնավորապես, վարչապետի բացակայության դեպքում վերջինիս որոշումներին առջվող հարցերի շրջանակներում նրա պարտականությունները կատարում էր կառավարության անդամներից մեկը՝ վարչապետի որոշման հիման վրա սահմանելով փոխանցվող լիազորությունների շրջանակը (71-րդ կետ):

Սահմանադրության փոփոխություններով նախատեսվեց նաև փոխվարչապետի պաշտոն՝ սահմանելով նրա նշանակման առանձնահատկությունը, իսկ լիազորությունների շրջանակը նախատեսվեց ՀՀ Նախագահի 18.07.07թ. հրամանագրով⁸: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ վարչապետի առաջարկությամբ նախարարներից մեկը կարող է Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության դեպքում⁹: Սույն դրույթից հետևում է, որ, նախ՝ ՀՀ կառավարության անհատական կազմում նախատեսված չէ փոխվարչապետի առանձին հաստիքային պաշտոն, երկրորդ՝ այդ պաշտոնում կարող է նշանակվել միայն ՀՀ նախարարի կարգավիճակ ունեցող անձը, երրորդ՝ նշված պաշտոնը սահմանվում է վարչապետին՝ վերջինիս բացակայության դեպքում սուս կփոխարինելու նպատակով, չորրորդ՝ Սահմանադրության նշված դրույթը հրամայական բնույթ չունի և գործնականում հնարավոր է, որ վարչապետի կողմից փոխվարչապետ նշանակելու վերաբերյալ առաջարկություն չներկայացվի Հանրապետության Նախագահին:

Ինչպես Սահմանադրությունը, այնպես էլ Հանրապետության Նախագահի նշված հրամանագրի 6-րդ կետը չեն պարզաբանում վարչապետի բացակայության այն դեպքերը և ժամկետները, երբ փոխվարչապետը կարող է փոխարինել նրան: Ենթադրվում է, որ դա կարող է լինել վարչապետի արձակուրդի, գործուղման, հիվանդության, պաշտոնը թափուր մնալու՝ մինչև վարչապետի նշանակումը, դեպքերում: Ի դեպ, Հանրապետության Նախագահի նշված հրամանագրով բացահայտվում է նախարարի բացա-

⁷ Տե՛ս 16.03.02թ. և 08.04.04թ. հրամանագրերը (ՀՀՊՏ N 9¹, 20.03.02 և N 22 (321), 16.04.04թ.):

⁸ Տե՛ս ՀՀՊՏ 2007 N 37 (561), 25.07.07թ.:

⁹ Տե՛ս նաև Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 6-րդ կետը՝ նույն տեղում:

կայության այն դեպքերը (ժամանակավոր անաշխատունակություն, գործուղում, արձակուրդ, պաշտոնը թափուր մնալը), երբ նախարարի համապատասխան տեղակալը կարող է հարցեր ներկայացնել կառավարության քննարկմանը եւ կարարել նախարարի մյուս պարտականությունները (29, 137 եւ 138-րդ կետեր):

Նանրապետության Նախագահի վերը հիշատակված հրամանագիրը սահմանում է նաեւ փոխվարչապետի պարտականությունները՝ կառավարությունում քննարկվող իրավական ակտերի նախագծերի կամ այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու հանձնարարականները վարչապետի հանձնարարությամբ կարող է փոխանցել փոխվարչապետը (54-րդ կետ):

Կառավարության հրաժարականից հետո՝ մինչեւ վարչապետի նշանակումը, փոխվարչապետը նախատեսված կարգով կարող է անցկացնել կառավարության նիստեր եւ ընդունել որոշումներ (99-րդ կետ): Կառավարության նիստեր է հրավիրում եւ վարում վարչապետի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ մինչեւ վարչապետի նշանակումը (100-րդ կետ), ստորագրում է վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո կառավարության դեռեւս չստորագրված առկա որոշումները փոխվարչապետը, իսկ վարչապետ նշանակելուց հետո՝ վարչապետը (103-րդ կետ):

ՆՆ կառավարության գործունեության պրակտիկան ցույց է տալիս, որ նախարարների վրա, իրենց գործառնություններից բացի, դրվել են նաեւ այլ պարտականություններ: Այսպես, վարչապետի առաջարկությամբ Նանրապետության Նախագահի 27.04.05թ. հրամանագրով ՆՆ տարածքային կառավարման նախարարին վերապահվել է նաեւ համակարգող նախարարի գործառնությունը¹⁰: Այդ գործառնությունը սահմանվել են Նանրապետության Նախագահի 25.01.05թ. հրամանագրով¹¹: Ներկայումս առանձին երկրների կառավարություններում կա համակարգող նախարարի պաշտոն: Վերջինս վերահսկողություն է իրականացնում մի խումբ համասեռ նախարարությունների աշխատանքի նկատմամբ¹²:

Փաստենք նաեւ, որ ՆՆ կառավարության կազմում հաճախակի նշանակվել են ոչ միայն «անպորտֆել» նախարարներ, այսինքն՝ այնպիսի անձինք, ովքեր չեն ղեկավարել նախարարություն, այլեւ այնպիսիք, ովքեր եղել են գերատեսչության (վարչության, տեսչության) պետ, սակայն նրանց վերապահվել է նախարարի կարգավիճակ եւ կառավարության նիստերում օգտվել են վճռական ձայնի իրավունքից: Նշված նախարարները կարարել են վարչապետի հանձնարարությունները, համակարգել որոշակի բնագավառի աշխատանքներ¹³:

¹⁰ Տե՛ս ՀՀՊՏ, N 26 (398), 04.05.05թ.:

¹¹ Համակարգող նախարարը վարչապետի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում եւ կարգով իրականացրել է որոշակի բնագավառների քաղաքականության իրագործում, այդ ոլորտների հանրապետական գործադիր մարմինների, մարզպետների եւ Երեսմի քաղաքապետի գործունեության համակարգում, ինչպես նաեւ վարչապետի հանձնարարությամբ հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին տվել է հանձնարարականներ եւ դրանց կատարման նկատմամբ իրականացրել վերահսկողություն:

¹² Տե՛ս Административное право зарубежных стран: Учебник / Под ред. А. Н. Козырина и М. А. Шатиной. – М.: Спарк, 2003, էջ 51:

¹³ Օրինակ, 1995թ. կառավարության կազմում ընդգրկվել են 4 «անպորտֆել» նախարարներ՝ Ազգային ժողովի հետ կապերի, ԱՊՀ, Եվրամիության եւ միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապերի, Տարածքային կառավարման գծով, Կառավարության քարտուղար (տես ՀՀ Նախագահի 1995թ. հունիսի 25-ի հրամանագիրը), իսկ հաջորդ օրվա մեկ այլ հրամանագրով՝ 2 վարչության եւ 1 տեսչության պետերի նույնպես վերապահվել է նախարարի կարգավիճակ. 1997թ. հունիսի 10-ի հրամանագրով կառավարության կազմում ընդգրկվել են 3 «անպորտֆել» նախարարներ (կառավարության աշխատակազմի ղեկավար-նա-

Ներկայում ՏՏ գործող կառավարության անհատական կազմում ընդգրկված չէ «անպորտֆել» նախարարի պաշտոն (տե՛ս ՏՏ կառավարության կառուցվածքի վերաբերյալ 21.06.08թ. օրենքը): Սակայն, ինչպես 1995թ. խմբագրմամբ (85-րդ հոդվածի երկրորդ մաս), այնպես էլ 2005թ. փոփոխված Սահմանադրության ձեւակերպումը չի բացառում կառավարության կազմում ընդգրկել այնպիսի պաշտոնավար անձանց, ովքեր նախարարություն չեն ղեկավարում, բայց ունեն նախարարի կարգավիճակ: Մինչդեռ այլ երկրների փորձը ցույց է փայլիս, որ գործադիր իշխանության լիազորությունների ու լորպնների ընդլայնումն այդ կարգի նախարարներին ավելի հաճախ են վերապահում ոչ թե ժամանակավոր, այլ մշտական ոլորտների պատասխանատվություն: Նրանք կարող են ենթարկվել ճյուղային նախարարներին, իրականացնել փարբեր նախարարությունների գործունեության համակարգման գործառույթներ եւ այլն¹⁴:

Իրեն ենթակա հարցերը լուծելու կարգին համապատասխան՝ կառավարությունը կոլեգիալ մարմին է, այսինքն՝ վերջինս կազմակերպորեն եւ իրավաբանորեն միավորված անձանց խումբ է, որին է միայն բացառիկ իրավունք վերապահված որոշումներ ընդունել կառավարության իրավասությանը ենթակա բոլոր հարցերով: Կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի որոշումներում, զուգակցվում է կառավարության անդամների անհատական պատասխանատվությունը ինչպես դրանց ընդունման եւ կատարման, այնպես էլ իրենց հանձնարարված բնագավառի աշխատանքի ղեկավարման համար: Կառավարության գործունեության կոլեգիալ բնույթն իրականում անհրաժեշտ է ՏՏ միանձնյա ղեկավարման գործադիր մարմինների կազմակերպման եւ գործունեության համար:

Նշենք նաեւ, որ նախարարն իրեն հանձնարարված ոլորտի գործունեությունը ղեկավարում է մենավարության սկզբունքով, իսկ կառավարության նիստերում՝ կոլեգիալության սկզբունքով: Միաժամանակ, որպես կառավարության անդամ՝ նա օժտված է քաղաքական իշխանությամբ, իսկ որպես նախարար՝ վարչական բնույթի լիազորություններով: Այսպիսով, նախարարն իրականացնում է ինչպես քաղաքական, այնպես էլ վարչական բնույթի գործառույթներ:

Կոլեգիալությունը հնարավորություն է ընձեռում առավել ճիշտ լուծել կառավարման բարդ ու մեծ հարցերը՝ կառավարման բազմազան ոլորտները ղեկավարող կառավարության անդամների միջոցով: Կոլեգիալության սկզբունքը պայմաններ է ստեղծում օգտագործել նրանց մասնագիտական գիտելիքները, անհատական ունակություններն ու աշխատանքային փորձը: Կոլեգիալությունը միաժամանակ օժանդակում է կառավարության նիստերում հարցերի բազմակողմանի եւ որակյալ քննարկմանը: Վերջապես, նշված սկզբունքը ժողովրդավարության անկապտելի հարկանիջներից է եւ հնարավորություն է ընձեռում, ինչպես արդեն նշվեց, միավորել փարբեր մարդկանց գիտելիքները, փորձը եւ շահերը՝ պետության եւ հասարակության խնդիրները լավագույնս լուծելու համար:

Լսելով կառավարության անդամների, ինչպես նաեւ նիստին հրավիրված՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցող փարբեր անձանց կարծիքները քննարկվող որոշման նախագծի վերաբերյալ՝ կառավարությունը փոխհամաձայնության

խարարը, օպերատիվ հարցերի նախարարը, տարածքային կառավարման նախարարը) եւ 2 վարչության (արտակարգ իրավիճակների, ինչպես նաեւ վիճակագրության, պետական ռեգիստրի եւ վերլուծության) պետերի տրվել է նախարարի կարգավիճակ: 1999թ. հունիսի 15-ի հրամանագրով կառավարության կազմում ընդգրկվել են 4 «անպորտֆել» նախարարներ, որոնց թիվը հետագայում կազմավորված կառավարություններում եղել է 1-2-ը (տե՛ս 2000թ. փետրվարի 28-ի, մայիսի 20-ի, 2001թ. հունվարի 8-ի, 2002թ. մարտի 16-ի եւ հետագա հրամանագրերը):

¹⁴ Տե՛ս Административное право зарубежных стран դասագիրքը, էջ 51:

արդյունքում ընդունում է այնպիսի իրավական ակտ, որն ամբողջությամբ վերցրած արտահայտում է հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմնի եւ, մասնավորապես, դրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անդամի՝ որպես անհատի, կամաարտահայտությունը: Կառավարության գործունեության նշված աշխարհեղանակը նրա կազմակերպական-իրավական գործունեության յուրահատուկ ձեւն է:

Կոլեգիալության իրավաբանական էությունը միաժամանակ ենթադրում է այն հարցերի հստակ շրջանակը, որոնք ենթակա են կառավարության նիստերի քննարկմանն ու լուծմանը: Հանրապետության Նախագահի վերոհիշյալ 18.07.07 հրամանագրին համապատասխան կառավարության լուծմանն են ներկայացվում Սահմանադրությամբ եւ օրենքներով նրա իրավասությանը վերապահված այնպիսի հարցեր, որոնք բխում են կառավարության հաստատված իր գործունեության միջոցառումների ծրագրից եւ գերակա խնդիրներից: Նրա քննարկմանը կարող են ներկայացվել նաեւ հրապարակ լուծում պահանջող հարցեր, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ վարչապետը, նպատակահարմարությունից ելնելով, իր իրավասության առանձին հարցերի քննարկումը կարող է կազմակերպել կառավարության նիստում (28-րդ կետ): Ընդ որում, քննարկման պետք է ներկայացվեն միայն հիմնավորված, միմյանց չկրկնող եւ արդեն լուծում ստացած հարցերին սկզբունքորեն նոր լուծում պալու կամ նոր ընդունված օրենսդրության պահանջներին դրանք համապատասխանեցնելու նպատակ հետապնդող հարցեր: Անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ, որ կառավարության քննարկմանը հարցեր են ներկայացնում միայն Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 86-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հարցերով, մյուս բոլոր հարցերը՝ վարչապետը եւ նախարարները՝ անմիջականորեն, իսկ հանրապետության մյուս մարմինները՝ պլյալ բնագավառի գործունեությունը համակարգող նախարարի, ինչպես նաեւ վարչապետի միջոցով (29 եւ 39-րդ կետեր):

Կառավարության որոշումների նախագծերը քննարկելիս փոքրեր փոքրեր են արտահայտվում, որոնք համաձայնեցվում են ինչպես նախագծի նախապարաստման փուլում՝ շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների հետ, այնպես էլ կառավարության նիստում՝ համարելով քննարկման ընթացքում:

Կառավարության նիստում՝ որպես կոլեկտիվ մտքի արդյունք ընդունված որոշումների մեջ արտահայտվում է կառավարության անդամների կոլեկտիվ պատասխանատվությունն այդ մարմնի վարած ներքին եւ արտաքին քաղաքականության, երկրի փոքրերական, սոցիալ-մշակութային վիճակի ընդհանուր զարգացման, պաշտպանունակության, օրինականության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման համար:

Մինչեւ ՀՀ 1995թ. Սահմանադրության ընդունումը, «Նայաստանի Հանրապետության կառավարության կազմի եւ կառուցվածքի մասին» 04.12.91թ. օրենքին համապատասխան, կառավարության անհատական կազմի մեջ, բացի վարչապետից (կառավարության նախագահից) եւ նախարարներից, մտնել են նաեւ փոխվարչապետը (կառավարության նախագահի տեղակալը), ՀՀ պետական նախարարները, պետական վարչությունների եւ պետական տեսչության պետերը¹⁵: Ընդ որում, «Նայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» 19.11.91թ. օրենքի (10-րդ հոդվածի 22-րդ կետ) համաձայն Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Գերագույն խորհրդի առաջարկությամբ, վերանայում էր ինչպես ամբողջ կառավարության, այնպես էլ նրա նախագահի կամ որեւէ անդամի նշանակման հարցը: ՀՀ Նախագահը, «Հանրապետության Նախա-

¹⁵ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995թ., էջեր 194-195:

գահի մասին» 01.08.91թ. օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով¹⁶ սահմանված ժամկետում իրագել էր պահում արված առաջարկությունն ընդունելու կամ իր որոշումը կրկին պաշտպանելու մասին: Վերջինիս դեպքում Գերագույն խորհուրդը կարող էր ձայների երկու երրորդով դադարեցնել նշված անձանց լիազորությունները, իսկ Նահապետության Նախագահը պարտավոր էր այդ պաշտոնապար անձանց ազատել զբաղեցրած պաշտոնից:

Առանձին երկրներում կառավարություն՝ որպես կոլեգիալ մարմին, գոյություն չունի, եւ նախարարներից յուրաքանչյուրն առանձին ենթակա է երկրի Նախագահին (ԱՄՆ, Բրազիլիա, Մեքսիկա): Որոշ սահմանադրություններ ամրագրում են, թե որ հարցերը կառավարությունում պետք է լուծվեն կոլեգիալ կարգով (Սլովենիա): Սահմանադրությունները, որպես կանոն, չեն սահմանում կառավարության անդամների թվաքանակը՝ ամեն անգամ կառավարություն կազմավորելիս: Սակայն առանձին երկրների հիմնական օրենքներն ամրագրում են կառավարության կազմի նվազագույն կամ առավելագույն, ինչպես նաեւ եւ նվազագույն, եւ առավելագույն թվաքանակը (օրինակ՝ մինչեւ 7 նախարար՝ Նորվեգիա, 14 անդամից ոչ ավելի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, 15-ից ոչ ավելի՝ Բելգիա, 7-15՝ Իռլանդիա եւ այլն): Արտասահմանյան երկրների փորձը ցույց է փայլիս, որ կառավարության անհատական կազմի մեջ, բացի դրա գլխից, որպես կանոն, մտնում են պետական նախարարները, նախարարները, «անպորտֆել» նախարարները, պետական քարտուղարները, կրթւեր նախարարները եւ խորհրդարանական քարտուղարները: Ի դեպ, թվարկվածները փարբեր երկրներում փարբեր կարգավիճակ ունեն:

4. Սահմանադրության մեկնաբանվող դրույթը սահմանում է ընդհանուր պահանջ՝ ՏՏ քաղաքացիության առկայություն այն անձանց համար, ովքեր կարող են նշանակվել ՏՏ կառավարության անդամներ՝ ՏՏ վարչապետ եւ նախարարներ: Այս սկզբունքը համընդհանուր բնույթ ունի եւ օրենսդրորեն նախատեսված է պետությունների ճնշող մեծամասնությունում: Ընդ որում, քաղաքացիությունը սահմանադրական առաջին պահանջն է, որ ներկայացվում է կառավարության անդամներին: Դա պայմանավորված է, նախ՝ Սահմանադրության այն դրույթով, որին համապատասխան անմիջականորեն պետական կառավարմանը մասնակցելու իրավունք ունեն միայն ՏՏ քաղաքացիները (30-րդ հոդված): Իրոք, քաղաքական իրավունքների մեջ առանցքային նշանակություն ունի քաղաքացու անմիջական մասնակցությունը պետական գործերի կառավարմանը՝ պետական որոշումների ընդունմանն ու իրականացմանը, ինչպես նաեւ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելը եւ պաշտոններ զբաղեցնելը: Նշված քաղաքական իրավունքները հիմնարար սկզբունքներ են պետության եւ նրա քաղաքացիների փոխհարաբերության ամրապնդման եւ ժողովրդավարության զարգացման համար: Երկրորդ՝ վարչապետի եւ նախարարի պաշտոն զբաղեցնելը քաղաքական կարեւոր իրավունքների իրականացման ձեւերից է, որը վերապահվում է միայն ՏՏ քաղաքացիներին: Երրորդ՝ կառավարությունն իր սահմանադրաիրավական կարգավիճակով՝ գլխավորելով ՏՏ գործադիր իշխանության միասնական համակարգը, միաժամանակ համարվում է բարձրագույն քաղաքական մարմին եւ իրականացնում է համազգային, համապետական կառավարում: Չորրորդ՝ ինչպես վարչապետը, այնպես էլ նախարարն օժտված են քաղաքական իշխանությամբ, համարվում են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք եւ պետական ծառայության համակարգի ծառայողների փարապետակ: Իրենց լիազորությունների շրջանակում ընդունում են քաղաքական որոշումներ եւ համակարգում

¹⁶ Նույն տեղում, էջ 160:

դրանց կարարումը: Կարող են փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում: Նշված պաշտոնավար անձանց միջոցով պետությունն իրականացնում է իր քաղաքականությունը: Վարչապետը և նախարարները միջազգային հարաբերություններում և կազմակերպություններում, սահմանված դեպքերում և կարգով, հանդես են գալիս հանրապետության և իրենց ղեկավարած գործադիր մարմնի անունից (ՏՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 120-րդ կետի 4, 8 և 10-րդ ենթակետեր, 136-րդ կետի 13-րդ ենթակետ): ՏՏ քաղաքացիության ամկայության սահմանադրական նորմը կոնկրետացվում է հանրային ծառայությունների վերաբերյալ հանրապետությունում գործող օրենքներում¹⁷:

ՏՏ քաղաքացիություն ունենալու պահանջը՝ որպես անձի և պետության միջև կայուն իրավական կապ, հնարավորություն է ընձեռում քաղաքացուն, որպեսզի, բացի Սահմանադրությամբ ամրագրված իր բնական իրավունքներից, ձեռք բերի նաև քաղաքական իրավունքներ և ազատություններ:

Փաստենք, որ ՏՏ քաղաքացիության պահանջը վարչապետի և նախարարների նկատմամբ՝ որպես սահմանադրական նորամուծություն, ամրագրվել է Սահմանադրության 2005թ. փոփոխություններով ու լրացումներով: Ինչպես 1995թ. խմբագրմամբ Սահմանադրությունը, այնպես էլ օրենսդրությունը նշված անձանց նկատմամբ այդպիսի պահանջ չէին նախատեսում: Գուցե դա պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի կադրային քաղաքականությամբ, որը հիմք հանդիսացավ կառավարության կազմում ընդգրկելու նաև ՏՏ քաղաքացիություն չունեցող մեր հայրենակիցներին: Այսպես, անկախության առաջին տարիներին Նանրապետության կառավարության անհատական կազմում նշանակվել են, օրինակ, ԱՄՆ-ի, ՌԴ-ի և Ֆրանսիայի քաղաքացիներ (օրինակ՝ ՏՏ արտաքին գործերի, գյուղատնտեսության, էներգետիկայի և վառելիքի նախարարները):

Այսպիսով, հանրապետության վարչապետի և նախարարների համար Սահմանադրությամբ ամրագրված ՏՏ քաղաքացիության պարտադրականությունը բացառում է այդ պաշտոնում նշանակել արտասահմանյան երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև ՏՏ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց: Ենթադրվում է, որ ՏՏ վարչապետ և նախարար չի կարող նշանակվել ՏՏ այն քաղաքացին, որն ունի այլ պետության քաղաքացիության մշտապես բնակվելու իրավունքը հաստատող բնակության վկայական կամ այլ փաստաթուղթ:

Բնականաբար, վարչապետը կամ նախարարն այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ ՏՏ քաղաքացիությունը կորցնելու դեպքում սահմանված կարգով պետք է ազատվի զբաղեցրած պաշտոնից:

ՏՏ Սահմանադրությունը (11.3-րդ և 30.1-րդ հոդվածներ) ու օրենքները հստակ չեն սահմանում ՏՏ երկքաղաքացի համարվող անձանց իրավական կարգավիճակը: ՏՏ քաղաքացիության վերաբերյալ 23.10.95թ. ՏՏ օրենքը (26.02.07թ. ՏՏ օրենքով կարարված լրացումներով) մարտնչում է միայն, որ ՏՏ երկքաղաքացին ունի ՏՏ քաղաքացու համար սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ ՏՏ միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի (13.1-րդ հոդված):

Եթե ՏՏ ընտրական օրենսգիրքն օրենսդրորեն լուծել է ՏՏ երկքաղաքացիների պասիվ ընտրական իրավունքի հարցը՝ սահմանելով, որ Նանրապետության Նախագա-

¹⁷ Տե՛ս, օրինակ, «Քաղաքացիական ծառայության մասին» 04.12.01թ. ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 3-րդ հոդվածի 2-րդ կետը և 11-րդ հոդվածը:

հի եւ Ազգային ժողովի պարզամակրության թեկնածուներ չեն կարող առաջադրվել ու զբանջվել ՏՏ այն քաղաքացիները, ովքեր միաժամանակ ունեն այլ պետության քաղաքացիություն (65 եւ 97-րդ հոդվածներ), ապա ՏՏ կառավարության անդամների վերաբերյալ ՏՏ օրենքով այդպիսի արգելք չի ամրագրվել:

Կարծում ենք, հաշվի առնելով օրենսդրության այդ բացը, ինչպես նաեւ նշված անձանց իրավական կարգավիճակը, անհրաժեշտ է համապարասխան իրավական ակտով ամրագրել այդպիսի պահանջի պահպանումը ոչ միայն ՏՏ վարչապետի եւ նախարարների, այլեւ կառավարությանն առընթեր հանրապետական պետական կառավարման մարմինների ղեկավարների ու մարզպետների նկատմամբ: Դա պայմանավորված է նաեւ նրանով, որ թվարկված պաշտոնատար անձինք զբաղեցնելով քաղաքական կամ հայեցողական պաշտոններ եւ, ելնելով իրենց հանրային-իրավական կարգավիճակից՝ անմիջականորեն առնչվում են նաեւ պետական եւ ազգային անվտանգության փարաբնույթ հիմնահարցերին:

Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացիության պահանջը շրջանառվում է սովորաբար պետությունների մեծամասնությունում՝ անհատի քաղաքական իրավունքները սերտորեն կապելով փվյալ պետության քաղաքացիությանը պատկանելության հետ: Այդ սկզբունքով ավելի կոշտ են ղեկավարվում ինչպես հետխորհրդային, այնպես էլ արեւմտաեվրոպական պետությունները՝ հատկապես կառավարական հիմնարկներում, իսկ ԱՄՆ-ում պետական դեպարտամենտներում առանձին պաշտոններ զբաղեցնում են հատկապես արտերկրների քաղաքացիները¹⁸:

5. Սահմանադրության մեկնաբանվող դրույթին համապարասխան՝ ՏՏ կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Նշված հիմնադրույթի համար նախադրյալ է համարվում Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքներում ներառված այն սկզբունքը, որի համաձայն հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապարասխան, իսկ պետական ու փրեդական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքով (5-րդ հոդված): Վերջիններս իրավական հիմք են հանդիսանում, որպեսզի նշված օրենսդրական ակտերին համապարասխան եւ ի կատարումն դրանց կազմավորվի եւ գործի կառավարությունը: Միաժամանակ, կառավարության բոլոր որոշումների ընդունումը եւ կազմակերպական գործողությունները պետք է իրականացվեն Սահմանադրության եւ օրենքների համաձայն:

Այդ հիմնախնդիրները լուծելու համար կառավարությանը վերապահվում են պետական-իշխանական լիազորություններ, որոնց շրջանակներում էլ նա գործում է: Այս առնչությամբ կառավարությունն իրավասու է ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են կատարման հանրապետության ամբողջ տարածքում (85-րդ հոդվածի երկրորդ մաս) եւ իր լիազորությունների ուժով ապահովելու դրանց կատարումը՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պետական հարկադրանքի նախատեսված միջոցներ:

Կառավարության լիազորություններն արտահայտվում են նրա իրավասության մեջ, որն ընդգրկում է ինչպես կառավարության գործողությունները (գործունեության հիմնական ոլորտներն ու ուղղությունները), այնպես էլ իրավունքներն ու պարտականությունները (լիազորությունները)՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն հանձնարարված

¹⁸ Стен Административное право зарубежных стран, էջ 111:

ուղորդներում: Ի դեպ, պետք է նկատի ունենալ, որ կառավարությունն ունի լիազորությունների սահմանված շրջանակ էլ կարող է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, ինչպես նաև ի կատարումն վերջինների հրատարակված Նանրապետության Նախագահի նորմատիվ հրամանագրերով: Ի փարբերություն պետական իշխանության մյուս թեւերի, կառավարությունը գործադիր իշխանությունն իրականացնում է անընդմեջ, նաև Նանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ մինչև նոր կառավարության կազմավորումը (Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետ):

Բնականաբար, Սահմանադրությամբ էլ օրենքներով ամրագրված կառավարության լիազորությունները մանրամասնվում են Նանրապետության Նախագահի, կառավարության էլ այլ իրավական ակտերով, որոնք փոխկապակցվածության էլ ենթակարգության սկզբունքներով գործող նորմատիվ իրավական ակտերի խումբ են կազմում:

Որպես պետական էլ հասարակական կյանքի փարբեր ուղորդներում յուրահատուկ բնույթի էլ ծավալի իրավասությամբ օժտված գործադիր իշխանության մարմին՝ կառավարության լիազորությունները կազմում են վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակի կարեւոր էլ անբաժանելի մասը:

Սակայն կառավարության հիմնարար լիազորություններն ամրագրված են Սահմանադրությամբ, էլ դրան են նվիրված վերջինիս բազմաթիվ հոդվածներ ու դրույթներ, որոնք օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով էլ գործում են անմիջականորեն: Մասնավորապես, կառավարությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել տնտեսական, սոցիալական էլ մշակութային ուղորդներում պետության հիմնական խնդիրների իրականացման համար (48-րդ հոդված), ՆՆ Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհատընտանիքի խոչընդոտների առկայության դեպքում կառավարության առաջարկով սահմանված կարգով որոշում է ընդունվում ՆՆ Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին (59-րդ հոդված), կառավարության նախաձեռնությամբ գումարվում է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ, որն անցկացվում է կառավարության սահմանած օրակարգով էլ ժամկետում (70-րդ հոդված), իր կազմավորումից հետո Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում իր ծրագիրը (74-րդ հոդված): Միաժամանակ, կառավարությունն Ազգային ժողովում ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, ընդ որում՝ սահմանել իր ներկայացրած օրինագծերի քննարկման հաջորդականությունը էլ պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Իր ներկայացրած օրինագծերի ընդունման էլ բյուջեի հաստատման առնչությամբ կարող է դնել իր վարահության հարցը (75 էլ 90-րդ հոդվածներ): Կառավարությունն իրավասու է Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնել պետական բյուջեն (76-րդ հոդված), առաջարկել հանրաքվեի դնել ՆՆ օրենքների նախագծերը (112-րդ հոդված) էլ այլն:

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում կառավարությունն իր լիազորություններն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով դրանք կարող է պարվիրակել տեղական ինքնակառավարման մարմիններին (105-րդ հոդված): Նախատեսված դեպքում կարող է դիմել Սահմանադրական դատարան (101-րդ հոդվածի 4-րդ կետ), իսկ Սահմանադրական դատարանի եզրակացությամբ կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին (109-րդ հոդված): Ազգային ժողով կարող է առաջարկություն ներկայացնել համայնքները միացնելու կամ առանձնացնելու մասին, էլ այդ կապակցությամբ համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ

(110-րդ հոդված):

Կառավարությանը վերապահված մյուս լիազորություններն ավելի կոնկրետ ձևով ամրագրված են Սահմանադրության՝ կառավարության վերաբերյալ 5-րդ գլխում (85-90-րդ հոդվածներ):

Անհրաժեշտ է հիշատակել նաև, որ մինչև Սահմանադրության 2005թ. փոփոխությունները ՏՏ կառավարությունը՝ իր գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով, կարող էր սահմանված կարգով ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք ստորագրվում էին Հանրապետության Նախագահի կողմից (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 78-րդ հոդված):

6. Հանրապետության գործող Սահմանադրությունը, ի փարբերություն 1995թ. խմբագրության, համեմատաբար հանգամանորեն է կարգավորում կառավարության ձևավորման կարգը եւ կազմը (55-րդ հոդվածի չորրորդ մաս, 85-րդ հոդվածի երրորդ մաս): Մինչդեռ կառավարության ստույգ կառուցվածքը, ինչպես նաև թվական կազմը, ինչպես բազմաթիվ արտասահմանյան երկրներում, Հանրապետության Սահմանադրությունը, կարծում ենք, իրավացիորեն չի սահմանել: Սոսկ ամրագրել է, որ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով, եւ կառավարությունը կազմված է վարչապետից եւ նախարարներից (85-րդ հոդվածի երրորդ եւ վեցերորդ մասեր): Ենթադրվում է, որ դա պետք է պայմանավորել նրանով, որ արդի ժամանակաշրջանում գործադիր իշխանության մարմինների առջև դրված բարդ ու բազմազան խնդիրների լուծումը պահանջում է նաև պետական կառավարման նոր մարմինների սրելծում, ինչպես նաև որոշ մարմինների վերակազմակերպում կամ էլ լուծարում: Հաճախ կառավարությանն առընթեր գերատեսչությունները վերակազմվում են նախարարությունների, իսկ վերջիններս՝ գերատեսչությունների: Փաստենք նաև, որ Նախարարների Հանրապետության անկախացումից հետո կազմավորված կառավարությունները միշտ էլ փարբերվել են իրարից թե՛ կառուցվածքով եւ թե՛ թվականով: Բացի դրանից, վերջին փարիներին նկատվում է նոր նախարարությունների եւ գերատեսչությունների թվի ավելացման միտում:

Վերը հիշատակված գործընթացների նկատմամբ որոշակի ազդեցություն ունեն ազգային ավանդույթները եւ սովորույթները, փյալ ժողովրդի պարմությունը (օրինակ, Մփյուռքի նախարարության սրելծումը ՏՏ-ում), խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև վերջիններիս միջև փոխհամաձայնությունները եւ այլ հանգամանքներ: Առանձին երկրներում հաշվի են առնվում էթնոփարածքային եւ էթնոազգային խմբերի ներկայացուցիչների ապահովումը կառավարության կազմում: Եղել են դեպքեր, երբ կառավարության կազմում փելերի բաշխումը հաստատագրվել է պաշտոնական սկրով: Այդ ձևով է Լիբանանում հիմնական քաղաքական-կրոնական համայնքների միջև 1946թ. կնքված Ազգային դաշնագրով բաշխվել փելերը կառավարությունում: Արոշ պետություններում, օրինակ՝ Ղնդկաստանում, կառավարության կազմում ընդգրկվում են խոշորագույն նահանգների ներկայացուցիչները, Քենիայում՝ այն ցելերի ներկայացուցիչները, որոնք կազմում են երկրի բնակչության ոչ պակաս, քան երեք փոկոսը: ԱՄՆ-ում եւ Շվեյցարիայում, մասնավորապես, օրենսդրորեն հստակ սահմանվել է նախարարությունների թիվը: ԱՄՆ-ում ավելի քան 200 փարվա ընթացքում նախարարությունների թիվը 3-ից դարձել է 13:

Ի մի բերելով վերը շարադրված հանգամանքները, կարծում ենք, կառավարության կառուցվածքը նպատակահարմար է ստույգ սահմանել օրենքով, այն էլ՝ նոր կառավար-

րություն կազմելու կամ այն վերակազմելու ժամանակ:

Անհրաժեշտ է նշել, որ կառավարության անհատական կազմի ձեւավորման հարցը սերտորեն կապված է կառավարության կառուցվածքի հետ, որն ունի գործնական կարեւորություն կառավարության արդյունավետ գործունեության համար:

Մինչև Սահմանադրության փոփոխությունները կառավարության կառուցվածքը վարչապետի ներկայացմամբ սահմանվում էր Հանրապետության Նախագահի հրամանագրով (1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 85-րդ հոդվածի երրորդ մաս): Ներկայում կառավարությունն իր կառուցվածքի վերաբերյալ միայն առաջարկություն է ներկայացնում Ազգային ժողով, որի լուծումը վերջինիս բացառիկ իրավասությունն է: Ազգային ժողովն օրենքով սահմանելով կառավարության կառուցվածքը՝ դրանով իսկ լուծում է նաև կառավարության անդամների թվական կազմի հարցը: Ուստի կառավարության անդամներին նշանակելիս (55-րդ հոդվածի չորրորդ մաս) Հանրապետության Նախագահն ու վարչապետն անկաշկանդ չեն ինչպես նախկինում՝ նրանք պարտավոր են գործել օրենքով սահմանված՝ կառավարության կառուցվածքի շրջանակում: Դա մինչև 2005թ. փոփոխությունները պայմանավորված էր Սահմանադրության 1995թ. խմբագրությամբ, երբ Հանրապետության Նախագահը եւ վարչապետն անկաշկանդ էին նշված հարցերը լուծելիս, քանի որ եւ՝ կառավարության կառուցվածքը (85-րդ հոդվածի երրորդ մաս), եւ՝ կառավարության անդամների նշանակումը (55-րդ հոդվածի 4-րդ կետ) վարչապետի առաջարկությամբ լուծվում էր Հանրապետության Նախագահի կողմից:

Բնականաբար, երկու փարբերակով էլ նախարարները՝ ի պաշտոնե, որպես հանրապետական գործադիր իշխանության մարմինների րեսակներից մեկի ղեկավարներ, ընդգրկվում են կառավարության անհատական կազմի մեջ:

Հանրապետության Սահմանադրության 2005թ. փոփոխություններով կառավարության կառուցվածքը բաղադրամասային րեսանկյունով որեւէ փոփոխության չի ենթարկվել: Սակայն փոփոխություններին համապատասխան փոխվել է այդ կառուցվածքն ամրագրող իրավական հիմքը: Եթե փոփոխություններով ամրագրվել է, որ կառավարության կառուցվածքը վերջինիս առաջարկությամբ սահմանվում է օրենքով (85-րդ հոդվածի վեցերորդ մաս), ապա Սահմանադրության 1995թ. րեքսրով կառավարության կառուցվածքը վարչապետի ներկայացմամբ սահմանվում էր Հանրապետության Նախագահի հրամանագրով (85-րդ հոդվածի երրորդ մաս): Այսպիսով, փոփոխությունը եղել է ոչ միայն բովանդակային-իրավական առումով, այլև նեղացրել է Հանրապետության Նախագահի լիազորությունների շրջանակը՝ վերջինիս եւ կառավարության փոխգործողությունների ոլորտում: Փոփոխությամբ որոշակի հիմքեր են սրեղծվել կառավարության կառուցվածքի կայունության բնագավառում:

Մինչ Սահմանադրության փոփոխությունները, Հանրապետության Նախագահի հրամանագրերով հաճախակի էր փոփոխության ենթարկվում կառավարության կառուցվածքը, երբեմն էլ՝ առանց պատշաճ հիմնավորումների: Օրինակ, ՀՀ Նախագահի 2000թ. փետրվարի 28-ի հրամանագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը եւ ՀՀ բնապահպանության նախարարությունը վերակազմվել են ՀՀ գյուղատնտեսության եւ բնօգտագործման նախարարության, իսկ ընդամենը երկուսուկես ամիս հետո, այսինքն՝ նույն թվականի մայիսի 20-ի հրամանագրով առանձնացվել են: 16.03.02թ. հրամանագրով ձեւավորված կառավարության կառուցվածքից նույն թվականի նոյեմբերի 13-ին, դեկտեմբերի 14-ին եւ հաջորդ րարվա ապրիլի 15-ին չորս նախարարություններ վերակազմավորվել են կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների:

«Հայաստանի Հանրապետության կառավարության կազմի եւ կառուցվածքի մա-

սին» 1991թ. դեկտեմբերի 4-ի օրենքով կառավարության կառուցվածքի մեջ էին մտնում 22 նախարարություններ, 7 պետական վարչություններ եւ 1 րեսուրսիոն: Սույն օրենքին համապատասխան՝ կառավարության անհարական կազմի մեջ էին մտնում ՏՎ վարչապետը (կառավարության նախագահ), փոխվարչապետը (կառավարության նախագահի տեղակալ), պետական նախարարները¹⁹, նախարարները, պետական վարչությունների եւ պետական րեսուրսիոն պետերը²⁰: Այսպիսով, նշված օրենքի համաձայն անհարական կազմով ձեւավորվեց ՏՎ ամենամեծ կառավարությունը՝ 38 մարդ՝ վարչապետը, փոխվարչապետը, 6 պետական նախարարներ, 22 նախարարներ, 7 պետական վարչությունների եւ 1 պետական րեսուրսիոն պետեր, իսկ Գերագույն խորհրդի 1990թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ կառավարությունը կազմված է եղել 33 անդամից: Թվով ամենափոքր կառավարությունը (վարչապետ եւ 16 նախարար, որից 2-ը՝ «անպորտֆել» նախարարներ) ձեւավորվել է Հանրապետության Նախագահի 2002թ. մարտի 16-ի հրամանագրով՝ նույն թվականի նոյեմբերի 13-ի, դեկտեմբերի 17-ի եւ 2003թ. ապրիլի 15-ի հրամանագրերով կապարված փոփոխություններով:

Հանրապետության Գերագույն խորհրդի վերաբերյալ 1991թ. նոյեմբերի 19-ի օրենքի 10-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն ՏՎ Նախագահի առաջարկությամբ Գերագույն խորհուրդը հաստատում է վերանայում էր կառավարության կառուցվածքը²¹:

Հանրապետության կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի, կարգավիճակը շարադրված է Սահմանադրությամբ: Միաժամանակ, վերջինիս 85-րդ հոդվածի վեցերորդ մասը, որը նորովի է շարադրվել նաեւ Սահմանադրության փոփոխություններով, ամրագրում է ոչ միայն կառավարության, այլեւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը: Նշված փոփոխություններով փոխվել է նաեւ կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը՝ պետական իշխանության բաժանման սկզբունքին համապատասխան, գործադիր իշխանության իրականացման, դրա մարմինների կազմավորման եւ գործունեության ձեւերի ու մեթոդների կրթվածքով: Սահմանադրության նախորդ խմբագրությամբ սահմանվում էր միայն կառավարության գործունեության կարգը: Ընդ որում, ինչպես նախկինում (85-րդ հոդվածի երրորդ մաս), այնպես էլ ներկայում (85-րդ հոդվածի վեցերորդ մաս) այդ կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրով²², որով մանրամասնվում է զարգացվում են Սահմանադրության եւ օրենքների դրույթները: Հրամանագիրը նախատեսում է կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական հիմունքներ, նրա գործունեության կազմակերպման, նիստերի նախապարաստման եւ հրավիրման, որոշումների ընդունման եւ դրանց կատարման ապահովման կարգը: Մինչ սույն հրամանագիրը, կառավարության կառուցվածքի եւ գործունեության կարգի հարցերը ՏՎ Նախա-

¹⁹ Պետական նախարարները ՀՀ կառավարության անհատական կազմում համակարգել են որոշակի խումբ նախարարությունների գործունեությունը: Առանձին երկրներում պետական նախարարի պաշտոնն այլ բովանդակություն ունի՝ սովորական նախարարից ավելի բարձր կարգի նախարար (Ֆրանսիա, Պորտուգալիա), առավել ցածր մյուս նախարարների համեմատ (Մեծ Բրիտանիա), այդպես են կոչվում կառավարության բոլոր անդամները (Ճապոնիա), ինչպես նաեւ նվազ կարեւորության նախարարության ղեկավար, որ չի ընդգրկվում նախարարների կաբինետի մեջ (Հնդկաստան):

²⁰ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), էջեր 194-195:

²¹ Նույն տեղում, էջ 191:

²² Տե՛ս ՀՀ ՊՏ 2007 N 37 (561), 25.07.07թ.:

գահի կողմից կարգավորվել են 25.07.95թ., 16.03.02թ. և 08.04.04թ. հրամանագրերով; Ընդ որում, կառավարության կառուցվածքը, ինչպես նաև գործունեության կարգը սահմանվել են առանձին հրամանագրերով: Անհրաժեշտ է նշել, որ ՆՏ կառավարության կառուցվածքի վերաբերյալ թվարկված հրամանագրերում միաժամանակ սահմանվել են կառավարությանն առընթեր պեղական կառավարման մարմինների ցանկերը, որոնք, ըստ դրանց, գործելու են մինչև պեղական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի ավարտը՝ ձեւակերպումով, որոնց թիվը հաճախակի փոփոխության է ենթարկվել: Միաժամանակ փաստենք, որ սահմանադրորեն նախատեսված չեն գերապետությունների՝ որպես գործադիր իշխանության մարմինների, կազմակերպման կարգն ու կարգավիճակը: Մինչդեռ, ինչպես նախարարությունները, այնպես էլ գերապետություններն սրեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Վանրապետության Նախագահի հրամանագրով, մշակում են իրականացնում են կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում, հանդիսանում են հանրապետական գործադիր մարմիններ և այլն (տե՛ս ՆՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 7-11-րդ կետեր):

ՆՈՂՎԱԾ 86

- 1. Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:**
- 2. Արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Վանրապետության Նախագահը:**
- 3. Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը:**
- 4. Վանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար:**

1. Կառավարության նիստերը՝ որպես գործադիր իշխանության մարմնի կազմակերպական-իրավական ձեւ, բնութագրվում են իբրև ընդհանուր օրակարգով սահմանված նիստերի շարք, որոնց գումարման դեպքերը և կարգը սահմանում է Վանրապետության Նախագահը: Նիստերի միջոցով կառավարությունն իրականացնում է իր գործունեության կազմակերպումը:

Գործող Սահմանադրության 86-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի, նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: Այս իրավունքից վարչապետն օգտվում է նաև այն դեպքերում, երբ կառավարության հրաժարականից հետո դեռևս վարչապետ չի նշանակվել, իսկ հրաժարական տրված կառավարության անդամները շարունակում են կարգապահ իրենց պարտականությունները: Ի դեպ, մեկնաբանվող հոդվածը բովանդակային-իրավական իմաստով ամբողջովին փարբերվում է 1995թ. Սահմանադրության նույն հոդվածի նույն մասի խմբագրումից: Եթե վերջինս սահմանում էր, որ կառավարության նիստերը հրավիրում և վարում է Վանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը, ապա ներկա խմբագրմամբ՝ Վանրապետության Նախագահը կարող է կառավարության նիստեր հրավիրել և վարել միայն երեք՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազ-

գային անվտանգության հարցերով: Միակ դեպքը նախկինում, որ վարչապետը իրավունք ուներ առանց Հանրապետության Նախագահի հանձնարարության հրավիրել կառավարության նիստ էի նախագահել այն՝ կառավարության անդամների մեծամասնության պահանջով՝ երկրի Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կտրամարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում ՀՀ Նախագահի լիազորությունների կտրամարման անհնարինության վերաբերյալ Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու հարցն էր:

Փաստենք, որ վարչապետից եւ սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահից բացի, ներկայում կառավարության նիստեր կարող է հրավիրել ու վարել փոխվարչապետը՝ կառավարության հրաժարականից հետո՝ մինչև վարչապետի նշանակումը եւ վարչապետի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ մինչև վարչապետի նշանակումը (ՀՀ նախագահի 18.07.07թ. հրամանագրի 99-100-րդ կետեր):

Կառավարության նիստերն անցկացվում են կառավարության նախավայրում: Հերթական նիստերը, որպես կանոն, հրավիրվում են հինգշաբթի օրերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այլ, այդ թվում ոչ աշխատանքային օրերի: Հանրապետության Նախագահի կամ վարչապետի նախաձեռնությամբ կամ կառավարության որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, հրավիրվում են նաեւ կառավարության արտահերթ նիստեր: Նիստերը կարող են անցկացվել նաեւ արտագնա՝ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ՝ Սահմանադրության 86-րդ հոդվածի երկրորդ մասով իրեն վերապահված հարցերով կամ վարչապետի նախաձեռնությամբ (օրինակ, այդպիսի նիստեր են անցկացվել աղետի գոյում, Դիլիջանում եւ այլուր):

Կառավարության աշխատակազմի ներկայացմամբ կառավարության նիստերի ժամանակացույցը եւ օրակարգը հաստատում է վարչապետը: Օրակարգում կարող են փոփոխություններ կատարել Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված հարցերով, վարչապետը, ինչպես նաեւ կառավարության անդամները՝ նիստը վարողի համաձայնությամբ: Նիստի օրակարգի հարցերն ընդունվում են առանց քվեարկության՝ նիստը վարողի հրապարակմամբ: Վերջինս սահմանում է նաեւ օրակարգի հարցերի քննարկման հերթականությունը:

Կառավարության անդամները, հրավիրվողները, նաեւ այլ անձինք կառավարության նիստի եւ քննարկվելիք հարցերի մասին տեղյակ են պահվում երեք օր առաջ: ՀՀ Նախագահին, կառավարության անդամներին եւ հրավիրվող պատասխանատու անձանց նշված ժամկետում տրամադրվում են նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերը եւ առնչվող այլ նյութեր:

Չնայած կառավարության նիստերը դռնբաց են, սակայն չի ենթադրվում, որ յուրաքանչյուր ոք կարող է ներկա լինել դրանց: Հրամանագիրը որոշակիորեն սահմանում է կառավարության նիստերին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցանկը: Մասնավորապես, նիստերին (այդ թվում դռնփակ) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Հանրապետության Նախագահի եւ կառավարության աշխատակազմերի ղեկավարները: Նույն կարգավիճակով նիստին կարող են մասնակցել նաեւ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհուրդների) ղեկավարները, ՀՀ գլխավոր դատախազը, կենտրոնական բանկի նախագահը, ԳԱԱ պրեզիդենտը եւ օրենսդրությամբ նախատեսված այլ անձինք: Նիստերին կարող են հրավիրվել վարչապետի խորհրդակցանները, կառավարության աշխատակազմի աշխատողներ, ինչպես նաեւ այլ անձինք:

Կառավարությունը կարող է անցկացնել նաեւ դռնփակ նիստեր, եթե քննարկվում

են պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկություններին առնչվող հարցեր²³, ինչպես նաև Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ Սահմանադրական դատարան կամ Ազգային ժողով դիմելու հարց²⁴:

Կառավարության նիստերն ավարտվում են նույն օրը, իսկ պետական քննարկում պահանջող հարցերի քննարկումները կարող են հետաձգվել մինչև հաջորդ օրը, լրացուցիչ փաստաթղթեր կամ ուսումնասիրություններ պահանջող հարցերը՝ հաջորդ հերթական կամ արտահերթ նիստի օրը:

Կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի, նիստերին մասնակցելը կառավարության անդամների գործունեության կարևոր ձևերից է, ուստի նրանց մասնակցությունը նիստերին պարտադիր է, եւ վերջիններս իրավագոր են, եթե դրանց մասնակցում է կառավարության անդամների առնվազն կեսից ավելին: Կառավարության անդամը կարող է չմասնակցել նիստերին հարգելի պարճառով (վերը նշված հրամանագրի 29-րդ հոդված), իսկ այլ դեպքերում՝ վարչապետի համաձայնությամբ:

Կառավարության որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, եթե դրա օգտին քվեարկել է նիստին մասնակցող՝ կառավարության անդամների կեսից ավելին: Չայնների հավասարության դեպքում վարչապետի ձայնը վճռորոշ է: Քվեարկությանը մասնակցում են միայն վարչապետը եւ նախարարները:

Որպես կանոն, կառավարության նիստերի քննարկմանը ներկայացվում են նախապարտադրված եւ փոխհամաձայնեցված հարցեր: Անհրաժեշտության դեպքում կառավարության առանձին իրավական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի նախապարտադրման եւ քննարկման համար առաջարկություններ եւ եզրակացություններ ներկայացնելու համար կարող են ստեղծվել հանձնաժողովներ: Երբեմն էլ քննարկման ժամանակ առաջանում է որոշման նախագծի լրամշակման անհրաժեշտություն եւ այն ներկայացնողին եւ պարասխանարուներին տրվում է կարարման ժամկետ, իսկ նախագծի ընդունումը մերժելու դեպքում այդ առնչությամբ կազմված արձանագրությունն ուղարկվում է նախագիծը ներկայացնողին:

Արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ, օրինակ, Մեծ Բրիտանիայում կառավարությունն իր հիմնական կազմով երբեւէ չի հավաքվում նիստերի եւ որոշումներ չի ընդունում: Այդ կազմից առանձնացվում է բավականին նեղ կաբինետ (18-20 մարդ)՝ առաջապար նախարարներից, որը ոչ հաճախ հավաքվում է նիստերի եւ ընդունում որոշումներ: Կաբինետի անունից որոշումներ է ընդունում «ներքին կաբինետը»՝ վարչապետին ավելի վստահելի մի քանի անձինք: Քանի որ Ֆրանսիայում գործադիր իշխանությունն իրականացնում են երկրի Նախագահը եւ կառավարությունը (նախարարների խորհուրդ), ուստի վերջինիս նիստերը գումարվում են երկրի Նախագահի նախագահությամբ, իսկ որպես կաբինետ՝ վարչապետի նախագահությամբ: Ճապոնիայի

²³ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 03.12.96թ. օրենքին համապատասխան պետական գաղտնիքը՝ ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը վերը շարադրված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է այլ վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը (ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), Գիրք Ա, Եր., 1999, էջեր 489-490):

²⁴ Տե՛ս Սահմանադրության 59-րդ հոդվածի մեկնաբանությունը:

կառավարության նիստերը ղոնփակ են եւ որոշումներն ընդունվում են միաձայն կամ փոխհամաձայնության հիման վրա, իսկ Նոդկաստանում՝ առանց քվեարկության՝ ընդհանուր համաձայնությամբ²⁵:

2. Սահմանադրության 1995թ. խմբագրությամբ կառավարության նիստեր հրավիրելու եւ վարելու իրավունքը, որպես կանոն, վերապահվում էր Նանրապետության Նախագահին՝ կառավարության իրավասությանը ենթակա հարցերով (86-րդ հոդվածի առաջին մաս): Այս հիմնահարցին էր առնչվում նաեւ Նանրապետության Նախագահի իրավունքը՝ վավերացնել կառավարության նիստերում ընդունված բոլոր որոշումները (86-րդ հոդվածի երկրորդ մաս): Սակայն փոփոխված Սահմանադրությամբ նշված դրույթների շրջանակը կտրուկ սահմանափակվել է:

Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասին համապարասխան՝ ներկայում Նանրապետության Նախագահը կառավարության նիստ կարող է հրավիրել եւ վարել միայն հարուկ դեպքերում՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերով: Նույն դրույթն ամրագրված է նաեւ Նանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 67-րդ կետում: Այսպիսով, եթե մինչեւ Սահմանադրության փոփոխությունները Նանրապետության Նախագահը վերը նշված լիազորություններով փաստորեն հանդես էր գալիս որպես գործադիր իշխանության ղեկավար, ապա փոփոխություններով այդ լիազորությունների խիստ նեղացումը բնութագրում է նրան որպես պետության գլուխ:

Կառավարության գործունեության կազմակերպման գործընթացին մասնակցելու՝ Նանրապետության Նախագահի սահմանադրորեն ամրագրված այդ լիազորությունը պայմանավորված է նրանով, որ երկրի Նախագահը՝ որպես պետության գլուխ, կարելի էր ազդեցություն ունի արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ ազգային անվտանգության ասպարեզներում:

Չնայած Նանրապետության Նախագահը եւ կառավարությունը պետական իշխանության համակարգում ունեն Սահմանադրությամբ ամրագրված փարբեր նշանակություն եւ կարգավիճակ, սակայն վերը նշված հարցերում ղեկավարման առավելությունը վերապահվում է երկրի Նախագահին՝ ելնելով փյլյալ հարցում վերջինիս եւ կառավարության լիազորությունների փարբեր բովանդակությունից: Սահմանադրությանը համապարասխան՝ Նանրապետության Նախագահը ներկայացնում է Նայաստանը միջազգային հարաբերություններում, իրականացնում արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է եւ ազգային անվտանգության խորհրդի նախագահը, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում եւ ազարում է զինված ուժերի եւ այլ գորբերի բարձրագույն հրամանատարական կազմը եւ այլն (55-րդ հոդվածի 6, 7-րդ, 12-14-րդ կետեր), իսկ կառավարությունն ապահովում է պաշտպանության, ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության իրականացումը (89-րդ հոդվածի 6-րդ կետ): Երկրի Նախագահը Նանրապետության անկախության, փարածքային ամբողջականության եւ անվտանգության երաշխավորն է (49-րդ հոդվածի երրորդ մաս):

Բացի դրանից, հանրապետության առանձին գործադիր մարմինների կարգավիճակի առանձնահատկությունն այն է, որ դրանց անմիջականորեն ղեկավարում է Նանրապետության Նախագահը, թեպետ օրենսդրորեն այդպիսի մարմինների ցանկ սահ-

²⁵ **Чиркин В. Е.** Конституционное право зарубежных стран.- М.: Юристь, 1997, էջեր 365, 389, 465-466, 489-490:

մանված չէ: Դա վերաբերում է հարկապես պաշտպանության, արտաքին գործերի, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների գործունեությանը, ինչպես նաև դրանց ղեկավարների և տեղակալների պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման կարգի առանձնահատկություններին (տե՛ս 18.07.07թ. հրամանագրի 124-125-րդ կետերը): Միաժամանակ, պետական կառավարման նշված ոլորտները չեն կարող հանվել կառավարության իրավասությունից, քանի որ վերջինս այդ բնագավառների գործառնություններն ու խնդիրներն իրականացնում է հենց նշված գործադիր մարմինների միջոցով: Փաստորեն նշված մարմինները երկակի ենթակայության են և գրնվում են կառավարության իրավասության տակ, բացառությամբ ՀՀ Նախագահի կողմից իր սահմանադրական լիազորությունների ապահովման դեպքերի:

Ի դեպ, տեսակետ կա նաև, որ երկրի Նախագահին պետք է անմիջականորեն ենթակա լինեն 3-5 գործադիր մարմիններ, որոնք պետությունը կներկայացնեն որպես քաղաքական կազմակերպություն, կապահովեն սահմանադրական կարգի հիմունքների, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը: Անտարակույս, դրանք են՝ արտաքին գործերի, պաշտպանության, ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության մարմինները²⁶:

Հանրապետության Նախագահը կառավարության նիստեր կարող է հրավիրել կառավարության հերթական նիստերի օրը կամ այլ օրերի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր՝ կառավարության նստավայրում կամ արտագնա (18.07.07թ. հրամանագրի 68 և 75-րդ հոդվածներ):

Եթե կառավարության նիստերը, որպես կանոն, հրավիրվում են յուրաքանչյուր շաբաթ, ապա գործնականում Հանրապետության Նախագահի կողմից կառավարության նիստերը հրավիրվում են հազվադեպ՝ ըստ անհրաժեշտության: Սակայն դրանցում քննարկվում են ոչ սովորական հարցեր, որոնք հասարակական-քաղաքական հնչեղություն ունեն:

Միաժամանակ, Հանրապետության Նախագահի կողմից կառավարության նիստեր հրավիրելու և վարելու էպիզոդիկ բնույթից չի ենթադրվում, որ նա որեւէ առնչություն չունի կառավարության այն նիստերում քննարկվող հարցերի հետ, որոնք հրավիրում և վարում է վարչապետը: Մասնավորապես, արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծերը մինչ կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հանրապետության Նախագահի աշխատակազմ՝ կարծիքի: Բացի դրանից, նշված հարցերով կառավարության նիստի օրակարգում կարող է փոփոխություններ կատարել ՀՀ Նախագահը: Կառավարության նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերը և դրանց առնչվող նյութերը նիստից երեք օր առաջ տրամադրվում են Հանրապետության Նախագահին: Վերջինիս աշխատակազմի ղեկավարը մասնակցում է կառավարության դռնբաց և դռնփակ նիստերին: Կառավարության որոշումները սահմանված կարգով ուղարկվում են ՀՀ Նախագահի աշխատակազմ (18.07.07թ. հրամանագրի 41, 71, 73, 77-րդ և 107-րդ կետեր):

Հանրապետության Նախագահի հրավիրած կառավարության նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ ընդունված իրավական ակտերը ձեւակերպվում են որպես կառավարության որոշումներ և Սահմանադրության համաձայն ստորագրվում վարչապետի կողմից:

Ի դեպ, կառավարության նիստեր հրավիրելու և վարելու երկրի Նախագահի ի-

²⁶ Տեսության մեջ այդ մարմիններն անվանում են ուժային նախարարություններ և գերատեսչություններ:

րավունքը յուրահատուկ է բոլոր փիլիկ նախագահական հանրապետություններին (օրինակ, ԱՄՆ, Բրազիլիա), իսկ կիսանախագահական հանրապետություններում՝ էությանը փարբերվում է (օրինակ, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Տայաստան):

3. Տանրապետության գործող Սահմանադրությանը համապատասխան՝ կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, դրանով իսկ կառավարության ընդունած իրավական ակտերն օժտվում են իրավաբանական ուժով:

Բովանդակային-իրավական առումով սահմանադրաիրավական այս դրույթը հրամայական բնույթ ունի եւ ենթադրում է, որ կառավարության ընդունած նորմատիվ եւ ոչ նորմատիվ ենթաօրենսդրական ակտերը, որոնք համապարտադիր բնույթ ունեն, առանց վարչապետի ստորագրության անվավեր են: Սակայն Սահմանադրության 88.1-րդ հոդվածով սահմանվում է այն միակ դեպքը, երբ վարչապետի ստորագրած որոշումը պետք է վավերացվի Տանրապետության Նախագահի կողմից, այլապես այն չի կարող իրավաբանական ուժ ունենալ: Նշված սկզբունքը վերաբերում է մարզպետներ նշանակելու եւ ազատելու մասին կառավարության որոշումներին:

1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը նույնպես ամրագրում էր, որ կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, սակայն դրանք պետք է անպայման վավերացվեին Տանրապետության Նախագահի կողմից (86-րդ հոդվածի երկրորդ մաս): Այս դրույթը ենթադրում էր, որ կառավարության ընդունած որոշումների համար անկախ նրանից, թե ով է վարել կառավարության նիստը, պարասխանատու էին ինչպես ՏՆ Նախագահը, այնպես էլ վարչապետը: Կառավարության որոշումների հավելվածներն ստորագրում է կառավարության աշխատակազմի ղեկավարը, իսկ կառավարության նիստի արձանագրությունները՝ նիստը վարողը: Ընդ որում, հավելվածներն առանց համապատասխան որոշման իրավաբանական ուժ չունեն:

Տանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրով սահմանվում է նաեւ, որ հրաժարական փված վարչապետը՝ մինչեւ նոր վարչապետի նշանակումը, ոչ միայն կարող է նախատեսված կարգով անցկացնել կառավարության նիստեր, այլեւ ստորագրել ընդունած որոշումները (99-րդ կետ):

Վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո կառավարության դեռեւս չստորագրված որոշումների առկայության դեպքում մինչեւ վարչապետի նշանակումը՝ դրանք ստորագրում է փոխվարչապետը, իսկ վարչապետ նշանակելուց հետո՝ վերջինս: Ընդունված որոշումը (բացի նորմատիվ որոշումից) վարչապետի՝ ստորագրելուց հրաժարվելու դեպքում հարցը ներկայացվում է կառավարության քննարկմանը (103-րդ կետ): Կառավարության անդամների վճռական ձայնի իրավունքը բնորոշում է այդ մարմնի գործունեության կոլեգիալ բնույթը: Այս առումով վարչապետը չի կարող անտեսել այդ պարագան եւ չստորագրել կառավարության այն որոշումը, որին ինքը համաձայն չէ:

Սահմանադրական պրակտիկական ցույց է փալիս, որ երկրի խորհրդարանի կողմից ընդունված օրենքները, որպես կանոն, ստորագրում է պետության գլուխը: Կան երկրներ, որտեղ այդ ակտերն ստորագրում է նաեւ կառավարության ղեկավարը: Օրինակ, Սլովակիայում խորհրդարանի ընդունած օրենքները ստորագրում են ինչպես երկրի նախագահը եւ խորհրդարանի նախագահը, այնպես էլ կառավարության նախագահը²⁷: Ենթադրվում է, որ այդ ստորագրությամբ կառավարությունը համաձայն է եւ հավասարապես պարասխանատու օրենքի ընդունման համար:

²⁷ **Арановский К. В.** Государственное право зарубежных стран. М.: Изд-во Инфра-Форум, 1999, էջ 356:

4. Նանրապետության Նախագահը, Սահմանադրության 49-րդ հոդվածին համապատասխան, իրականացնելով սահմանադրական վերահսկողական լիազորություններ կառավարության գործունեության նկատմամբ, կարող է կառավարության որոշումների սահմանադրականության հարցը պարզելու նպատակով կասեցնել դրանց գործողությունը մեկ ամիս ժամկետով եւ դիմել Սահմանադրական դատարան (86-րդ հոդվածի չորրորդ մաս): Սահմանադրաիրավական այս ինստիտուտը նորամուծություն է, չնայած Նանրապետության Նախագահի կողմից փարբեր ձեւերով ու մեթոդներով այդպիսի վերահսկողություն մշտապես իրականացվել է: Դեռեւս «Նայասարանի Նանրապետության Նախագահի մասին» 1991թ. օգոստոսի 1-ի օրենքով՝ որպես Նանրապետության բարձրագույն պաշտոնատար եւ գործադիր իշխանությունը գլխավորող անձ, դրա 8-րդ հոդվածի համաձայն Նանրապետության Նախագահն իրավասու էր վերացնել կառավարության եւ մյուս գերապետությունների ընդունած այն որոշումները, որոնք հակասում էին Սահմանադրությանը, օրենքներին, Գերագույն խորհրդի որոշումներին եւ իր հրամանագրերին²⁸: Նանրապետության 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրվեց, որ կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում Նանրապետության Նախագահը (86-րդ հոդվածի երկրորդ մաս): Վավերացնելով կառավարության իրավական ակտերը՝ Նանրապետության Նախագահն այդ եղանակով որոշում էր դրանց՝ օրենսդրությանը համապատասխանության հարցը:

Նանրապետության կառավարության որոշումների գործողության կասեցումն իրավական ակտերի գործողության դադարեցման ձեւերից է: Ընդ որում, իրավական ակտերի գործողությունը կարող է կասեցվել իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորությամբ օժտված վերադաս մարմնի որոշմամբ:

Ալկհայր է, որ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասով իրավական ակտի գործողության կասեցման վերաբերյալ կոնկրետ ժամկետ չի սահմանվել այն մարմինների համար, որոնք օժտված են այդպիսի լիազորությամբ: Սակայն կոնկրետ ժամկետ՝ մեկ ամիս, է նախատեսվել Նանրապետության Նախագահի կողմից կառավարության որոշումների գործողության կասեցման համար²⁹:

Կառավարության որոշման գործողությունը կարող է կասեցվել ամբողջությամբ կամ մասամբ: Նանրապետության Նախագահի հարամանագրով դա պետք է նշվի հստակ, ինչպես նաեւ այն հարաբերությունների շրջանակը, որի մասով կասեցվում է կառավարության իրավական ակտի գործողությունը: ՏՏ իրավական ակտերի ստորադասության սկզբունքին համապատասխան՝ կառավարության որոշման գործողության դադարեցման հետ միաժամանակ համապատասխանաբար գործողությունը դադարեցված են ճանաչվում նաեւ փոխյալ որոշման համաձայն կամ ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական նորմերը, եթե Նանրապետության Նախագահի հրամանագրով այլ բան նախատեսված չէ: Միաժամանակ, կառավարության որոշման գործողությունը դադարած ճանաչելու վերաբերյալ հիմքերը կառավարությանը չեն ազարում իր որոշման՝ օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով գործողությունը դադարեցված ճանաչելու պարտականությունից:

Գործողությունը դադարեցված կառավարության որոշման գործողությունը կարող է վերականգնվել միայն Նանրապետության Նախագահի հրամանագրով՝ գործողություն-

²⁸ Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Եր., էջ 161:

²⁹ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետը եւ 76-րդ հոդվածի առաջին մասը (ՀՀ ՊՏ № 15 (190), 21.05.02թ.):

նը դադարեցված իրավական ակտի գործողության վերականգնման վերաբերյալ ուղղակի դրույթի առկայության դեպքում:

Իրավական ակտի գործողության դադարեցումը կառավարությունը կարարում է նույն փեսակի իրավական ակտով՝ որոշմամբ:

Եթե Սահմանադրությանը համապատասխան (86-րդ հոդված) Հանրապետության Նախագահի սահմանադրական վերահսկողական լիազորությունը կառավարության որոշումների նկատմամբ ուղղակիորեն ամրագրված է, ապա վարչապետի որոշումների նկատմամբ այդպիսի դրույթ սահմանված չէ: Սակայն դրանից չի հետևում, որ Հանրապետության Նախագահն այդպիսի իրավազորություն չունի: Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նա իրավունք ունի դիմելու Սահմանադրական դատարան ոչ միայն կառավարության, այլև վարչապետի որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով: Այդպիսի լիազորությամբ է օժտված նաև ՀՀ կառավարությունը վարչապետի կողմից ընդունված որոշումների նկատմամբ (101-րդ հոդվածի 4-րդ կետ): Անհրաժեշտ է նկատվում են նաև, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով կարող են վիճարկվել եւ՝ նորմատիվ, եւ՝ անհատական բնույթի որոշումները, բացառությամբ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացնելու դեպքերի: Ընդ որում, ինչպես Հանրապետության Նախագահը, այնպես էլ կառավարությունը Սահմանադրական դատարան դիմելիս պետք է ներկայացնեն վիճարկվող որոշման պաշտոնական փաստաթուղթը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետ):

Ի դեպ, ՀՀ կառավարության որոշման գործողության կասեցման վերաբերյալ Հանրապետության Նախագահի հրամանագրով պետք է սահմանվեն փոխյալ որոշման գործողության կասեցման պարճառը կամ նպատակը, ինչպես նաև ժամկետը եւ մինչև դրա գործողության կասեցումը եւ գործողության վերականգնումից հետո ծագած իրավահարաբերությունների կարգավորման կարգը եւ պայմանները: Եթե Հանրապետության Նախագահի՝ կառավարության որոշման գործողությունը կասեցնող իրավական ակտը չի բովանդակում նշված դրույթները, ապա այն իրավաբանական ուժ չունի³⁰:

Հանրապետության Նախագահը կառավարության որոշման սահմանադրականությունը վիճարկելու մասին գործով մինչ Սահմանադրական դատարան դիմելը պետք է կասեցնի այդ որոշման գործողությունը մեկ ամիս ժամկետով: Իրավական ակտի գործողությունը կասեցնելու դեպքում դադարում է դրա գործողությունը³¹: Նա կարող է այդ հարցով Սահմանադրական դատարան դիմել կառավարության որոշման կասեցման վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրը: Սահմանադրական դատարանը նշված գործի վերաբերյալ ոչ ուշ, քան դիմումը մուտքագրելուց մեկ ամիս հետո, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ ա) վիճարկվող իրավական ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, բ) այդ ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող կամ անվավեր ճանաչելու մասին:

Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին, ապա այն իրավաբանական ուժը կորցնում է Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդված): Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կարարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանա-

³⁰ Տե՛ս նույն տեղում, 76-րդ հոդվածի երկրորդ մաս:

³¹ Տե՛ս նույն տեղում, 71-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետ:

կան ուժը՝ վիճարկվող որոշման ուժը կորցնելու հետ միաժամանակ: Օրինակ, ՏՏ սահմանադրական դատարանը ՏՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումով 18.04.06 ՄԴՈ-630 որոշմամբ սահմանել է, որ կառավարության 01.08.02, թիվ 1151 որոշումը՝ «Երևանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապարման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», ենթաօրենսդրական կարգավորման առումով չի համապատասխանում Սահմանադրության մի շարք հոդվածների պահանջներին³²:

ՏՏ կառավարությունը, հիմք ընդունելով ՏՏ սահմանադրական դատարանի նշված որոշումը եւ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 74-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջները, իր՝ 17.05.07թ. № 611-Ն որոշմամբ անվավեր է ճանաչել ՏՏ կառավարության 01.08.02թ. որոշումը: Որոշումն ուժի մեջ է մտել հրապարակմանը հաջորդող օրվանից եւ փարսածվել է 2006թ. հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա³³:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքը հիմնարար եւ իրավակիրառական առումով արդարացված դրույթ է ամրագրել՝ իրավունք վերապահելով Սահմանադրական դատարանին վաղեմության որոշակի ժամկետից հետո անդրադառնալու Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված որևէ գործով ընդունված ըստ էության որոշումներին, բացառությամբ Սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) վերաբերյալ դիմումների: Սահմանադրական դատարանն իր որոշումից առնվազն 7 փարի հետո սահմանված կարգով ներկայացված դիմումի հիման վրա կարող է վերանայել փոխյալ որոշումը՝ հետեյալ դեպքերում, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ փոխյալ գործով կիրառված դրույթը կամ առաջ է եկել փոխյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցով կարող է ընդունվել դատարանի այլ որոշում, եւ եթե փոխյալ հարցն սկզբունքային սահմանադրական նշանակություն ունի: Տիշյալ գործերի քննության կարգը սահմանվում է նշված օրենքի 68-րդ հոդվածի փասնաչորսերորդ մասով:

Հանրապետության կառավարության եւ վարչապետի որոշումները կարող են անվավեր ճանաչվել, եթե դրանք հակասում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Եթե իր սահմանադրական կարգավիճակին համապատասխան Հանրապետության Նախագահը լիազորված է վիճարկել կառավարության որոշումների սահմանադրականությունը եւ այդ առնչությամբ կասեցնել դրանց գործողությունը, ապա դա չի բացառում կառավարության հնարավորությունը վիճարկելու Հանրապետության Նախագահի՝ Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող հրամանագրերը եւ կարգադրությունները՝ ինչպես Սահմանադրական դատարան (Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետ եւ 101-րդ հոդվածի 4-րդ կետ), այնպես էլ վարչական դատարան (ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված): Ինչպես սահմանադրական վերահսկողության, այնպես էլ դատավարության ժամանակ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս դատարանները գնահատում են կառավարության որոշումների օրինականությունը:

Վարչական դատարանին ընդդարյա են Հանրապետության Նախագահի նորմափիլ ակտերի, կառավարության եւ վարչապետի նորմափիլ որոշումների՝ դրանց համե-

³² Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2006, № 3, էջեր 75-93:

³³ ՀՀ ՊՏ № 31 (555), 20.06.07թ.:

մաքսիմալ թվերով իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի ՆՏ Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: Դատարանը վերջիններիս վերաբերյալ դատական ակտ կայացնելիս իրավասու է պնդելու նաև փվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ակտի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, դա վերապահված չէ Սահմանադրական դատարանի իրավասությանը: Ի դեպ, պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունն ակտի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին՝ դատարանն այն անվավեր է ճանաչում այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից (139-րդ հոդված):

Կառավարության եւ վարչապետի որոշումներն անվավեր են ճանաչվում նաև ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե դրանք հակասող են ճանաչվում ակտի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին կամ «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքով նախատեսված այլ հիմքերով մյուս իրավական ակտերին: Նշված դեպքերում կառավարության եւ վարչապետի որոշումն անվավեր կամ իրավաբանական ուժ չունեցող է ճանաչվում ընդունման պահից, իսկ դրան հաջորդող մեկամսյա ժամկետում անվավեր ճանաչված որոշումն ընդունած համապատասխանաբար՝ կառավարությունը կամ վարչապետը պարտավոր է ընդունել իր որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում: Դատարանի կողմից անվավեր ճանաչված՝ կառավարության կամ վարչապետի որոշման կատարումն ապահովված այլ իրավական ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ: Եթե օրենքով այդ իրավական ակտն անվավեր ճանաչելու համար պարտադիր դատական կարգ նախատեսված չէ, ապա այն կարող է անվավեր ճանաչվել իրավաստեղծ մարմնի կամ դրա իրավահաջորդի կամ դրա վերադաս մարմնի որոշմամբ (74-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետ, 2.1-րդ, 2.2-րդ եւ 3-րդ մասեր):

Նանրապետության կառավարության եւ վարչապետի որոշումների սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև Ազգային ժողովի պարզամակորների մեկ հինգերորդը, ինչպես նաև դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարչություն գրնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, եւ մարդու իրավունքների պաշտպանը (Սահմանադրության 101-րդ հոդված):

ՆՈՂՎԱԾ 87

1. Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը եւ համակարգում նախարարների աշխատանքը:

2. Վարչապետն ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով:

1. Մեկնաբանվող դրույթի բովանդակությունից հետեւում է, որ Նանրապետության վարչապետն առանձնահատուկ քաղաքական պաշտոն է զբաղեցնում երկրի գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ կառավարության անհատական կազմում: Այն Նանրապետության բարձրագույն եւ առանցքային պաշտոններից է:

Տեսականորեն վարչապետի պաշտոնը կառավարության կազմում համարվում է հավասարների մեջ առաջինը: Վարչապետն իր գործունեության ոլորտում ներկայանում

Է երկակի դերով. նախ՝ կառավարության՝ համապատասխան լիազորություններով օժտված կոլեգիալ մարմնի ղեկավար, երկրորդ՝ որպես անհատ՝ այդ լիազորություններն իրականացնելու պարտասխանատվությամբ:

Որպես ընդհանուր իրավասության գործադիր իշխանության համապետական մարմնի ղեկավար վարչապետն օժտված է լայն ու ինքնուրույն պետական-իշխանական լիազորություններով՝ կառավարության գործունեության կազմակերպման ու ղեկավարման եւ նախարարների աշխատանքը համակարգելու բնագավառում:

Կառավարության գործունեության հիմնական ուղղությունները սահմանված են Նախարարության Տիմնական օրենքի 85-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով, 87-րդ, 89-90-րդ եւ այլ հոդվածներով, օրենքներով եւ մանրամասնված «Նայաստանի Նախարարության կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կարգը սահմանելու մասին» Նախարարության Նախագահի 18.07.07թ. հրամանագրով, կառավարության որոշումներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով: Ընդ որում, հրամանագրին համապատասխան՝ վարչապետը համակարգում է ոչ միայն նախարարների (ինչպես ամբողջով է Սահմանադրության մեկնաբանվող հաղվածում), այլեւ կառավարությանը ենթակա պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների աշխատանքը (5-րդ կետ):

Վարչապետը կառավարության գործունեությունը կազմակերպում է ՏՏ Սահմանադրությանը, ՏՏ միջազգային պայմանագրերին, օրենքներին, Ազգային ժողովի եւ Սահմանադրական դատարանի որոշումներին, Նախարարության Նախագահի իրավական ակտերին, կառավարության որոշումներին, ինչպես նաեւ վերը նշված հրամանագրին համապատասխան:

Վերոհիշյալ իրավական ակտերին համապատասխան՝ վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը, համակարգում, միավորում եւ վերահսկում է հանրապետական գործադիր իշխանության մարմինների ղեկավարների աշխատանքը, միջոցներ է ձեռնարկում դրանց գործունեության կազմակերպման, ինչպես նաեւ աշխատանքի ձեռքի ու մեթոդների կատարելագործման ուղղությամբ:

Վարչապետը կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելու նպատակով իրավական ակտերի նախագծերի եւ այլ փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու հանձնարարականներ է փոխա կառավարության անդամներին եւ շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց: Բացի դրանից, կառավարության գործունեությանն առնչվող խնդիրների լուծման, իրավական ակտերի նախագծերի, կառավարություն ներկայացված այլ հարցերի նախապատրաստման եւ քննարկման վերաբերյալ առաջարկություններ, եզրակացություններ եւ փորձեկանքներ ներկայացնելու համար կարող է ստեղծել հանձնաժողովներ: Կառավարություն ներկայացված փաստաթղթերը նրա քննարկմանն են ներկայացվում միայն վարչապետի մակարդակով:

Որպես կառավարության ղեկավար իրականացնելով իր սահմանադրական լիազորությունները՝ վարչապետը հրավիրում է կառավարության նիստեր եւ դրանք վարում վճռական ձայնի իրավունքով, ստորագրում է դրանցում ընդունված կառավարության որոշումները (Սահմանադրության 86-րդ հոդվածի երրորդ մաս) եւ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում ներկայացնում Նախարարության Նախագահի վավերացմանը (88.1-րդ հոդվածի առաջին մաս):

Նախարարության Նախագահը վարչապետի ներկայացմամբ սահմանում է կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեու-

թյան կազմակերպման կարգը (85-րդ հոդվածի վեցերորդ մաս), իսկ նրա առաջարկությամբ՝ նշանակում է ազափում է կառավարության անդամներին (55-րդ հոդվածի 4-րդ կետ) և փոխվարչապետին (85-րդ հոդվածի երրորդ մաս), սրեղծում, վերակազմակերպում է լուծարում է նախարարություններն ու գերատեսչությունները (ՏՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 7-րդ կետ):

Գործադիր իշխանության մարմինների կազմավորման ենթակարգությունը ենթադրում է, որ գործադիր իշխանության հանրապետական և ստորադաս մարմինները գործում են կառավարության իրավական ակտերով, ինչը բխում է հանրապետությունում գործադիր իշխանության միասնական համակարգից: Նշված ակտերի բովանդակությունը որոշվում է կառավարության լիազորությունների ծավալով և բնույթով, որոնց օգնությամբ կարգավորվում են պետական, տնտեսական և սացիալ-մշակութային հիմնական ոլորտները, սահմանվում են ընդհանուր իրավանորմեր նշված համակարգի համար, հիմք են հանդիսանում համակարգում մյուս իրավական ակտերի ընդունման համար, և սահմանվում է ընդհանուր իրավական ռեժիմ:

Վարչապետի հատուկ պաշտոնը, ինչպես նաև նախարարների կաբինետն սրեղծվում են հիմնականում նախագահական և կիսանախագահական հանրապետություններում (օրինակ՝ Եգիպտոս, Ուկրաինա, Տայաստան, Պերու), և չեն սրեղծվում ավանդական նախագահական հանրապետություններում (ԱՄՆ, Բրազիլիա, Մեքսիկա և այլն): Վարչապետի պաշտոնն առանձնացվում է երկրի Նախագահի պաշտոնից և իրավաբանորեն գործադիր իշխանության բազմաթիվ գործառնություններ վերցվում են Նախագահի իրավասությունից և վերապահվում վարչապետին: Տեխնոքրոպային որոշ հանրապետություններում երկրի Նախագահն անմիջականորեն ղեկավարում է առանցքային գործադիր իշխանության հանրապետական մարմինները, որոնք չեն ենթարկվում վարչապետին կամ գրնվում են երկակի ենթակայության տակ՝ ենթարկվելով վարչապետին և երկրի Նախագահին:

Հանրապետության վարչապետն իր լիազորությունների սահմաններում վերահսկողություն է իրականացնում և պատասխանատու է, ելնելով ՏՏ սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, առանձին տարածքների զարգացման անհրաժեշտությունից, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջադրած պահանջներից, Հանրապետության գործադիր մարմինների մասնակցությամբ մշակված և հաստատված կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման համար: Այս առնչությամբ վարչապետը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը պարբերաբար քննության են առնում հանրապետական գործադիր իշխանության մարմինների կողմից Հանրապետության Նախագահի, կառավարության և վարչապետի իրավական ակտերի, հանձնարարականների կատարման արդյունքներն ու ձեռնարկում են միջոցներ առկա թերությունները վերացնելու համար: Միաժամանակ, վարչապետը լսում է նախարարների, գերատեսչությունների ղեկավարների հաշվետվությունները կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ընթացքի և դրանց կատարման ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին (ՏՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 129-130-րդ կետեր): Ընդ որում, հանրապետական գործադիր իշխանության մարմնի ղեկավարը հաշվետու է ինչպես Հանրապետության Նախագահին, այնպես էլ կառավարությանը և վարչապետին: Իրենց պաշտոնական պարտականությունները ոչ պարզաճ կատարելու դեպքում հանրապետական գործադիր իշխանության մարմինների ղեկավարների կամ նրանց տեղակալների նկատմամբ կարող են կիրառվել

կարգապահական փուլի միջոցներ՝ ընդհուպ պաշտոնից ազատում, ինչպես նաև խրախուսանքի միջոցներ: Նշված միջոցները կիրառում են ինչպես Հանրապետության Նախագահը, այնպես էլ վարչապետը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով (ՏՏ Նախագահի հրամանագրի 121, 140-142-րդ կետեր): Օրենքով սահմանված դեպքերում վարչապետը կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գերադասական նորմարիվ իրավական ակտերը (հրամանագրի 121-րդ կետ):

Ամեն դեպքում, վարչապետը պարասխանաբարվություն է կրում կառավարության կողմից քաղաքական, փնտրական, սոցիալ-մշակութային եւ վարչաքաղաքական, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության, օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման պարտականությունները չկատարելու կամ ոչ պարզաճ կատարելու համար:

Հանրապետական գործադիր իշխանության մարմինները մշակում եւ իրականացնում են կառավարության քաղաքականությունը լիազորված բնագավառներում եւ պարասխանաբար եւ դրա կատարման, փիրող իրավիճակի գնահատման եւ վերլուծության, հեռանկարային զարգացման ապահովման համար:

Օրենսդրությունը եւ կառավարության գործունեության պրակտիկան ցույց են փայլիս, որ վերջինիս աշխատանքի կազմակերպման բնագավառում վարչապետի լիազորությունների իրականացմանը մասնակցում են ինչպես հանրապետական, այնպես էլ փարածքային պետական կառավարման մարմինները, մասնագետները, իսկ ավելի շար՝ կառավարության աշխատակազմը: Վերջինս ապահովում է կառավարությանը եւ վարչապետին վերապահված լիազորությունների լիարժեք եւ արդյունավետ իրականացումը եւ կառավարության բնականոն գործունեությունը: Այս առնչությամբ աշխատակազմը գործադիր իշխանության մարմիններից պահանջում է անհրաժեշտ փաստաթղթեր, հիմնավորումներ, ինչպես նաև փայլիս է հանձնարարականներ՝ փաստաթղթեր, վերլուծական ու փրդեկարվական նյութեր, եզրակացություններ նախապարարատելու համար, իրականացնում է կառավարության քննարկմանը ներկայացված հարցերի նախապարարատումը, ապահովում է կառավարության եւ վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն, վերլուծում եւ ամփոփում է դրանց կատարման ընթացքն ու արդյունքների մասին պարբերաբար փրդեկարվություն ներկայացնում վարչապետին:

2. Ինչպես կառավարության, այնպես էլ վարչապետի որոշումները Սահմանադրության, օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների հետ մեկտրդ՝ որպես ՏՏ օրենսդրության մաս կազմող ակտեր, հանրապետության իրավական ակտերի համակարգում առաջին փրդն են զբաղեցնում: Մյուս մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը չեն կարող հակասել նշված իրավական ակտերին:

Կառավարության գործունեության կազմակերպման վերաբերյալ որոշումների ընդունումը վարչապետի բացառիկ լիազորությունն է եւ դրա փոխանցումն այլ մարմինների՝ արգելվում է: Միաժամանակ, վարչապետի կողմից հրապարակված որոշումների նկատմամբ ներկայացվում են որոշակի պահանջներ. նա կարող է ընդունել միայն նորմարիվ կամ անհարական որոշումներ, ընդ որում, նորմարիվ որոշումներ կարող է ընդունել միայն Սահմանադրությամբ եւ օրենքներով ուղղակի իրեն վերապահված լիազորությունների շրջանակում: Վարչապետի որոշումները պետք է համապարասխանեն նաև իրավական ակտերին ներկայացվող ընդհանուր պահանջներին («Իրավական ակտերի

մասին» օրենքի 3, 15 եւ 25-րդ հոդվածներ):

Բացի վերը թվարկվածներից, կարեւորագույն պահանջներից է նաեւ այն, որ վարչապետի որոշումները չպետք է հակասեն Սահմանադրությանը, օրենքներին, Սահմանադրական դատարանի եւ Ազգային ժողովի որոշումներին, Հանրապետության Նախագահի հրամանագրերին ու կարգադրություններին, կառավարության որոշումներին, Ազգային ժողովի վավերացրած կամ Հանրապետության Նախագահի հաստատած ՀՀ միջազգային պայմանագրերին, ինչպես նաեւ օրենքով ուղղակի նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում ընդունած ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի եւ ՀՀ կարգավորող հանձնաժողովների որոշումներին:

Կառավարության գործունեության պրակտիկական ցույց է փախիս, որ կառավարությունն ընդհանուր առմամբ չի կարող ընդգրկել օրենսդրությամբ իրեն վերապահված իրավաստեղծ գործունեության բոլոր ոլորտները: Ենթադրվում է նաեւ, որ դրանով պայմանավորված Սահմանադրությամբ վարչապետին վերապահված իրավունքը՝ իր որոշումներով կանոնակարգելու կառավարության գործունեության կազմակերպմանը վերաբերող հարցերը: Վարչապետին վերապահված այդ լիազորությանն անդրադարձ է կատարվել նաեւ «Իրավական ակտերի մասին» 03.04.02թ. ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասում:

Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագիրը՝ մանրամասնելով Սահմանադրության եւ նշված օրենքի այդ դրույթը, սահմանել է, որ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի վերաբերյալ վարչապետը որոշումներն ընդունում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, ինչպես նաեւ սույն հրամանագրով նախատեսված դեպքերում (5-րդ կետ):

Եթե Սահմանադրության փոփոխություններում, ընդհանուր առմամբ, առանց փոփոխության զեպտելվել է 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի առաջին մասը, ապա երկրորդ մասը հիմնովին գրվել է նոր խմբագրությամբ: Հոդվածի նախկին երկրորդ մասին համապատասխան՝ «Վարչապետն ընդունում է որոշումներ: Կառավարության գործունեության կարգով սահմանված դեպքերում վարչապետի որոշումներն ստորագրում են նաեւ դրանք իրագործող նախարարները»: Մեջբերման առաջին նախադասությունն անորոշ շարադրանք է ունեցել, քանի որ վարչապետի՝ որպես կառավարության ղեկավարի, լիազորությունների շրջանակն ամրագրված է Սահմանադրությամբ, օրենքներով եւ Հանրապետության Նախագահի ու կառավարության իրավական ակտերով, ուստի նա չէր կարող որոշում ընդունել ամեն մի հարցով: Սահմանադրության նոր խմբագրությամբ այդ դրույթը հստակեցվել է. վարչապետն իր որոշումներն ընդունում է միայն կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով: Մեջբերման երկրորդ նախադասության բովանդակությունը գործնական կիրառում չգտավ, չնայած լայն իմաստով շարադրվեց նաեւ ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին Հանրապետության Նախագահի 16.03.02թ. եւ 08.04.04թ. հրամանագրերում: Վերջիններիս համապատասխան՝ վարչապետի որոշումներն ստորագրում էր վարչապետը, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ դրանք իրագործող նախարարները, եթե այն ուղղակիորեն բխում է օրենսդրության պահանջներից, կամ վարչապետն անհրաժեշտ էր համարում, որպեսզի իր կողմից ընդունվող որոշումն ստորագրվի նաեւ համապատասխան նախարարի (նախարարների) կողմից (68-րդ կետ): Ներկայում Սահմանադրության եւ Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրի համաձայն վարչապետի որոշումներն ստորագրում է վարչապետը (126-րդ կետ):

Սահմանադրությունը եւ Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանա-

գիրը վարչապետին վերապահում են լայն լիազորություններ, որոնց իրականացումն ար-
 քահայտվում է նրա կողմից հրապարակված որոշումներում: Վերջիններս ընդունվում են
 Սահմանադրությամբ, օրենքներով, ՏՏ Նախագահի իրավական ակտերով եւ կառավար-
 ության որոշումներով վարչապետին վերապահված լիազորությունների շրջանակնե-
 րում՝ վարչապետի նախաձեռնությամբ, ինչպես նաեւ կառավարության անդամների
 առաջարկությամբ: Ընդ որում, նպատակահարմարությունից ելնելով՝ վարչապետը կար-
 ող է իր իրավասության շրջանակի առանձին հարցերի քննարկումը կազմակերպել կա-
 ռավարության նիստերում:

Նանրապետության Նախագահի կողմից արտաքին քաղաքականության ընդհա-
 նուր ղեկավարման գործառնությունը որոշակի խնդիրներ է առաջադրում վարչապետին՝ կա-
 ռավարության գործունեության հիմնական ուղղությունների ընկերության ասպարեզում:
 Դրան համապատասխան՝ վարչապետը ներկայացնում է կառավարությունը երկրի ներ-
 սում, օտարերկրյա պետություններում եւ միջազգային կազմակերպություններում, նշա-
 նակում է կառավարության ներկայացուցիչներ միջազգային եւ միջկառավարական
 մարմիններում, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում եւ կարգով ստորագրում է
 ՏՏ միջազգային պայմանագրեր, փալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագ-
 րելու լիազորություն եւ հանձնարարականներ, ինչպես նաեւ կառավարության կամ վար-
 չապետի անունից հանդես գալու լիազորագրեր:

Կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով՝ վե-
 րահսկում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը, սահմանում է կա-
 ռավարության եւ վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման
 նկատմամբ վերահսկողության կարգը, ընթացիկ հարցերի լուծման նպատակով սրեղ-
 ծում է աշխատանքային խմբեր եւ հանձնաժողովներ: Սահմանում է նախարարություն-
 ների, գերատեսչությունների եւ փարածքային կառավարման մարմինների աշխատող-
 ների առավելագույն թվաքանակը՝ բացառությամբ ՏՏ պաշտպանության, արտաքին
 գործերի նախարարությունների, ազգային անվտանգության եւ ոստիկանության աշխա-
 րողների թվաքանակի, որը սահմանվում է կառավարության որոշմամբ:

Իր որոշումներով պաշտոնի է նշանակում եւ պաշտոնից ազատում կառավարու-
 թյանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներին, վերջիններիս
 եւ նախարարների փեղակալներին՝ խորհրդակցելով այդ մարմինների ղեկավարների
 հետ՝ բացառությամբ կառավարությանն առընթեր ՏՏ ազգային անվտանգության ծա-
 ռայության փնտրենի, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի եւ պետական ե-
 կամուսների կոմիտեի ղեկավարների, ոստիկանության պետի, որոնց պաշտոնի է
 նշանակում եւ պաշտոնից ազատում Նանրապետության Նախագահը՝ վարչապետի ա-
 ռաջարկությամբ: Նանրապետության Նախագահն անմիջականորեն պաշտոնի է նշա-
 նակում եւ պաշտոնից ազատում ՏՏ պաշտպանության նախարարի եւ ազգային
 անվտանգության ծառայության փնտրենի փեղակալներին, իսկ ՏՏ արտաքին գործերի
 նախարարի փեղակալներին՝ վարչապետի առաջարկությամբ, եւ ՏՏ ոստիկանության
 պետի փեղակալներին՝ պետի առաջարկությամբ:

Վերը շարադրված դրույթներից հետեւում է, որ հանրապետական գործադիր իշ-
 խանության մարմիններից կարեւորները (այսպես կոչված՝ ուժային կառույցները)
 գրվում են կամ երկակի ենթակայության փակ՝ հանձին Նանրապետության Նախագա-
 հի եւ վարչապետի, կամ էլ անմիջականորեն ենթարկվում են Նանրապետության Նա-
 խագահին:

Վարչապետը պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է կառավարության

աշխատակազմի, քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակվող անձանց եւ իր աշխատակազմի աշխատողներին: Կառավարության աշխատակազմի ղեկավարին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է Տանրապետության Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ:

Վարչապետն իրականացնում է նաեւ Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով եւ ՏՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրով նախատեսված այլ լիազորություններ՝ կառավարության գործունեության կազմակերպման վերաբերյալ հարցերով:

Վարչապետի որոշումների գրանցման, պահպանման, հրատարակման եւ ուժի մեջ մտնելու կարգը սահմանված է Տանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 127-րդ կետով եւ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 53 եւ 60-րդ հոդվածներով:

Վարչապետի որոշումների վերաբերյալ որոշ մանրամասներ շարադրված են նաեւ 85-րդ հոդվածի երկրորդ մասի եւ սույն հոդվածի առաջին մասի մեկնաբանություններում:

ՆՈՂՎԱԾ 88

Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկարկրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չհասկացված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կապարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից:

ՏՏ կառավարության անդամի պաշտոնի հետ անհամապետելի գործունեության եւ զբաղմունքի վերաբերյալ արգելքներն ու սահմանափակումները 1995թ. խմբագրությամբ ՏՏ Սահմանադրություն ամբողջական չէր ամրագրում: Վերջինիս 88-րդ հոդվածը սահմանում էր միայն. «Կառավարության անդամը չի կարող լինել որեւէ ներկայացուցչական մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք»:

Փոփոխված Սահմանադրության նույն հոդվածն ավելի ծավալուն եւ հստակ է արձանագրել նշված արգելքներն ու սահմանափակումները:

Նավելենք, որ քաղաքացիական ծառայողի՝ որպես պետական ծառայողի տարատեսակի, նկատմամբ 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՏՏ օրենքի 24-րդ հոդվածը³⁴ նախատեսում է համանման որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, նա իրավունք չունի կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից, անձամբ զբաղվել ձեռնարկարկրական գործունեությամբ եւ այլն: Միաժամանակ, նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը ՏՏ վարչապետի եւ նախարարի պաշտոնները դասում է քաղաքական պաշտոնների³⁵ շարքին: Բացի դրանից, նշված օրենքով պետա-

³⁴ Տե՛ս ՀՀ ՊՏ № 1 (176), 09.01.02թ.:

³⁵ Նույն օրենքի իմաստով՝ ՀՀ վարչապետի եւ նախարարների պաշտոններից բացի, քաղաքական պաշտոններ են համարվում նաեւ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի եւ համայնքների ղեկավարների պաշտոնները:

կան ծառայողների նկատմամբ նախադատված արգելքների ու սահմանափակումների մի մասն ամրագրվել է կառավարության անդամի համար Սահմանադրությամբ նախադատված իրավական սահմանափակումների մեջ:

Չնայած կառավարության անդամի կարգավիճակը, ի փարբերություն պետական ծառայողների իրավական վիճակի, ունի էական առանձնահատկություններ՝ պայմանավորված նրա կողմից իրականացվող խնդիրներով ու գործառնություններով, սակայն, դրա հետ մեկտեղ, ունի պետական ծառայողին առանձնահատուկ կարգավիճակ: Վերոհիշյալը թույլ է տալիս եզրահանգելու նաև, որ կառավարության անդամը, լինելով քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, իրավաբանական գրականության մեջ, անտարապետաբար, համարվում է պետական ծառայող:

Կառավարության անհատական կազմում ընդգրկվելու առնչությամբ Սահմանադրությամբ նախատեսված իրավասահմանափակումներ ասելով պետք է ենթադրել, որ կառավարության անդամին պաշտոնավարության ողջ ժամանակահատվածում դնում է իրավաբանական որոշակի շրջանակների մեջ, եւ դրանցից դուրս գալն արգելվում է Տիմնական օրենքով: Ներուաբար, նշանակվելով կառավարության անդամի պաշտոնում՝ իրավունքների ու պարտականությունների հետ մեկտեղ կառավարության անդամն ստանձնում է բազմապետակ սահմանափակումներ, որոնք նույնպես մտնում են նրա պարտականությունների մեջ: Ի դեպ, կառավարության անդամի իրավական սահմանափակումները եւ արգելքները պայմանավորված են նրա կողմից իրականացվող պետական գործառնությունների ու խնդիրների պաշտոնական լիազորությունների յուրահատուկ բնույթով:

Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումները նպատակ ունեն ապահովել կառավարության անդամների արդյունավետ գործունեությունը, սահմանել իրավական խոչընդոտներ նրանց կողմից պաշտոնական դիրքի հնարավոր չարաշահումների դեմ, ինչպես նաև պայմաններ ստեղծել պաշտոնական լիազորությունների անկաշկանդ իրականացման եւ երաշխիքներ՝ կառավարության անդամների կողմից իրենց համաքաղաքացիական իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածն ամրագրում է, որ կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

«Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը սահմանված է ՏՏ քաղ. օր.-ի 2-րդ հոդվածով: Դրան համապատասխան՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող այն գործողությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Ընդ որում, արգելքը տարածվում է ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների վրա: Մասնավորաբար, կառավարության անդամն իրավունք չունի՝

- ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել փնտեսական ընկերակցություններ եւ ընկերություններ, առևտրային կոոպերատիվներ կամ լինել դրանց մասնակիցը.

- փիրապետել, օգտագործել եւ փնտրիներ այնպիսի գույք, որը նյութական հիմք է հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության համար՝ շինություններ, սարքավորումներ, հողամասեր եւ այլն, որոնք օգտագործվում են արտադրության եւ առևտրային գործունեության մեջ.

- ձեռք բերել գույքային իրավունքներ առևտրային նշանակություն ունեցող ոչ նյու-

թական օբյեկտների նկարմամբ (արտադրական նմուշներ, ապրանքանիշեր, ֆիրմային անվանումներ և այլն)։

• մասնակցել Կոնվենտի Կազմակերպության կառավարմանը (լինել այդ կազմակերպության կառավարման որեւէ մարմնի անդամ, եթե դա կարող է կատարվել նույնիսկ անհատույց)՝ անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից, բացառությամբ այն դեպքերի, եթե կառավարության անդամին վերադաս պետական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հանձնարարվել է մասնակցել այդ կազմակերպության կառավարմանը։

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կառավարության անդամի նկարմամբ սահմանված արգելքն անմիջականորեն կապված է նրա գույքի ու եկամուտների վերաբերյալ յուրաքանչյուր փարի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունների հետ։ Մասնավորաբար, «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» 2006թ. հուլիսի 7-ի օրենքի³⁶ համաձայն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել հայտարարագիր ինչպես իրենց, այնպես էլ իրենց խնամարկյալին սեփականության (այդ թվում՝ ընդհանուր համարել կամ ընդհանուր բաժնային) իրավունքով պարտավորող գույքի և եկամուտների մասին։ Սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացնելն առաջացնում է բուզանքի նշանակում։

Կառավարության անդամների նկարմամբ սահմանափակումներ են նախատեսված նաև ՏՏ այլ իրավական ակտերով։ Այսպես, «Պաշտոնի բերումով ստացած նվերները պետությանը հանձնելու կարգի մասին» ՏՏ կառավարության 1993թ. փետրվարի 17-ի թիվ 48 որոշմանը համապատասխան՝ պաշտոնատար անձի ստացած բոլոր նվերները, այդ թվում արտասահմանյան գործուղումների ժամանակ և արտասահմանյան պարտավորություններից և նրանց առանձին անդամներից ստացած բոլոր նվերները (բացառությամբ նշված որոշմամբ նախատեսված դեպքերի), եթե դրանց արժեքը հինգ անգամ գերազանցում է պաշտոնատար անձի ամսական աշխատավարձը, ապա սահմանված ժամկետում դրանք հանձնվում են ՏՏ կառավարության որոշմամբ նախատեսված մարմին։ Նշված սահմանափակումը կառավարության անդամին արգելում է պաշտոնական դիրքի կամ ծառայողական պարտականությունների կատարման առնչությամբ նվերներ ստանալը (ՏՏ քաղ. օր.-ի 598-րդ հոդված)։ Նվիրատվությամբ անհատույց ի սեփականություն է հանձնվում գույք կամ գույքային իրավունքներ (ՏՏ քաղ. օր.-ի 594-րդ հոդված)։ Սակայն, ցանկության դեպքում, նա կարող է նվերը չհանձնել՝ վճարելով իր հինգ ամսվա աշխատավարձի չափի և նվերի փաստացի արժեքի տարբերությունը։

Եթե նվերն ստացվել է նախարարության անունով (անկախ դրա արժեքից), ապա պաշտոնատար անձը պարտավոր է այն փոխանցել փոխարկայ մարմնի հաշվեկշռին։

Նշված նվերները նախատեսված կարգով չհանձնելու դեպքում կառավարության անդամը ենթարկվում է վարչական պարտասխանարվության³⁷։

«Քաղաքացիական ծառայության մասին» ՏՏ օրենքն ամրագրում է, որ քաղաքացիական ծառայողը՝ լինելով պետական ծառայողի տարատեսակ, պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առելուրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի փոկոս բաժնեմաս ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավար-

³⁶ Տե՛ս ՀՀ ՊՏ 2006, № 43 (498), 09.08.06թ.։

³⁷ Տե՛ս ՀՀ վարչ. օր.-ի 166՝ հոդվածը։

ման (24-րդ հոդված): Կարծում ենք, պետական ծառայողների նկատմամբ սահմանված այս սահմանափակումը փարածվում է նաև կառավարության անդամների վրա: Ընդ որում, գույքի հավաքարձագրային կառավարման պայմանագրի կնքման կարգը, ինչպես նաև օբյեկտների ցանկը սահմանված են ՏՏ քաղ. օր.-ի 954-955-րդ հոդվածներով:

Կառավարության անդամը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում:

Սահմանադրության նշված սահմանափակումից ենթադրվում է, որ կառավարության անդամի պաշտոնը նրա աշխատանքային գործունեության միակ տեսակն է, աշխատում է պրոֆեսիոնալ հիմունքներով և դրան զուգահեռ նա չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված այլ պաշտոն:

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելու՝ կառավարության անդամի նկատմամբ նախատեսված արգելքը բխում է իշխանությունների բաժանման սկզբունքից և սահմանադրական այն դրույթից, որի համաձայն նշված մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով (5-րդ հոդված), ինչպես նաև մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից, ըստ որի կառավարության անդամը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք:

«Պաշտոն» հասկացությունը մասնագետների կարծիքով նշանակում է անձի համար իրավաբանորեն սահմանված գործառնությունների ու իրավասությունների այն ծավալը, որի շրջանակներում նա պետք է մասնակցի համապատասխան մարմնի լիազորությունների իրականացմանը: «Պաշտոն» իրավական ինստիտուտն ըստ մեկնաբանվող հոդվածի բովանդակության՝ ընդգրկում է այն բոլոր պաշտոնները, որոնք նախատեսվում են ոչ միայն պետական իշխանության, այլև տեղական ինքնակառավարման մարմիններում և առևտրային կազմակերպություններում, այդ թվում՝ նաև նշված մարմինների ապարարներում, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում որևէ պաշտոն, որն օժտված չէ իշխանական լիազորություններով:

Պետական մարմին ասելով պետք է նկատի ունենալ այն մարմինը, որը կազմավորվում է պետական գործունեության որոշակի տեսակի համար և օժտված է պետական-իշխանական լիազորություններով:

«Տեղական ինքնակառավարման մարմին» եզրույթը մեկնաբանվում է որպես Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» 2002թ. մայիսի 7-ի ՏՏ օրենքով³⁸, ՏՏ ընտրական օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընտրված մարմին (ավագանի, համայնքի ղեկավար):

Առևտրային են համարվում իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպությունները, այդ թվում տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները (ՏՏ քաղ. օր.-ի 51-րդ և 72-76-րդ հոդվածներ):

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կառավարության անդամի պարտականությունների հետ չկապված (անհամատեղելի) պաշտոն է համարվում նաև, առաջին հերթին, Ազգային ժողովի պարզամարտի լիները, ինչը հակասում է նաև իշխանությունների բաժանման սկզբունքին, կամ համայնքի ավագանու անդամ, կամ էլ համայնքի ղեկավար լինելը: Վակառակ դեպքում նա պետք է դադարեցնի կառավարության անդամի լիազորությունները, որը ձեռակերպվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

³⁸ Տե՛ս ՀՀ ՊՏ № 21 (196), 21.06.02թ.

ՆՆ ընտրական օրենսգիրքը նույնպես որոշակի սահմանափակումներ է նախատեսում կառավարության անդամ՝ թեկնածուների նախընտրական քարոզչության իրականացման ժամանակ. արգելվում է դրա իրականացումը պաշտոնական պարականոնությունները կատարելիս կամ պաշտոնական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով (22.1-րդ հոդված) և այլն: Կառավարության անդամները չեն կարող լինել նաև ընտրական հանձնաժողովի անդամ (34-րդ հոդվածի 4-րդ կետ):

Վերոհիշյալ սահմանափակումները պարավորեցնում են կառավարության անդամին իր ծառայության ժամանակը հարկացնել պետական-ծառայողական պարականությունների կատարմանը:

Մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից միաժամանակ բխում է, որ կառավարության անդամը կարող է իր պարականությունների հետ կապված պաշտոն զբաղեցնել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություններում: Սույն դրույթը կարող է իրականացվել միայն Մահմանադրությամբ և օրենքներով հարկապես նախատեսված դեպքերում: Մասնավորապես, կառավարության անդամը (նախարարը) կարող է նշանակվել փոխվարչապետ (Մահմանադրության 85-րդ հոդվածի երրորդ մաս) կամ իրականացնել համակարգող նախարարի գործառնություններ³⁹ կամ սահմանված կարգով կառավարության անդամին հանձնարարվում է որպես կառավարության ներկայացուցիչ Ազգային ժողովում ներկայացնել կառավարության շահերը, կամ էլ մասնակցել առեւտրային կազմակերպության կառավարմանը: Նշված օրինակները կառավարության անդամի կառավարման բնագավառի պարականությունների հետ կապված պաշտոններ են: Այս կարգի նշանակումները կատարվում են Նախարարության Նախագահի հրամանագրերով:

Կառավարության անդամների նկատմամբ սահմանադրորեն ամրագրված սահմանափակումների ցանկը եզրափակվում է այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքով, բացի գիտական, մանկավարժական և սրբեղծագործական աշխատանքից:

Այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքը սերտորեն առնչվում է նաև մեկնաբանվող հոդվածում ամրագրված ձեռնարկատիրական գործունեության և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու սահմանափակմանը: Դրա հետ մեկտեղ, կառավարության անդամը չի կարող այլ վճարովի աշխատանք կատարել ինչպես պետական, համայնքային, ձեռնարկատիրական կազմակերպություններում, այնպես էլ ոչ առեւտրային կազմակերպություններում, հասարակական միավորումներում, հիմնադրամներում, իրավաբանական անձանց միություններում և այլն:

Միաժամանակ, այլ վճարովի աշխատանքի վերաբերյալ արգելքը չի բացառում անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պարականություններ դնել կառավարության անդամի վրա՝ ժամանակավորապես բացակայող վարչապետին սահմանված կարգով փոխարինելու կապակցությամբ⁴⁰, հարկապես, որ այս դեպքում կառավարության անդամը ժամանակավորապես զբաղեցնում է իր պարականությունների հետ կապված՝ Մահմանադրությամբ չարգելված պաշտոն: Մյուս բացառությունը, որով թույլատրվում է կառավարության անդամին կատարել այլ վճարովի գործունեություն՝ գիտական, մանկավարժական և սրբեղծագործական աշխատանքն է: Մեկնաբանվող հոդվածի այս

³⁹ Տե՛ս «ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 08.04.04թ. հրամանագրի 3-րդ կետը՝ 25.01.05թ. խմբագրմամբ:

⁴⁰ Այդպիսի դրույթ սահմանված է եղել «ՀՀ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 16.03.02թ. և 08.04.04 հրամանագրերի 71-րդ կետերով:

դրույթը բխում է Սահմանադրության 40-րդ հոդվածից, որին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:

Գիտական գործունեությունը ձեռք բերած գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքներ ստանալուն ու կիրառելուն նպատակաուղղված մրավոր ստեղծագործական գործունեությունն է, որը ներառում է ինչպես հիմնարար գիտական հետազոտությունները, այնպես էլ կիրառական գիտական հետազոտությունները:

Գիտական գործունեության ազատության երաշխիքները (Սահմանադրության 40-րդ հոդված) հնարավորություն են ընձեռում կառավարության անդամներին ցանկացած ձևով զբաղվել գիտական գործունեությամբ՝ անկախ գիտական ասփիճանից և կոչումից: Այդ գործունեությունը կարող է կատարվել նաև հատուցմամբ:

Կրթությունը՝ անձի, հասարակության ու պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որն ուղղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն:

Կառավարության անդամը վճարովի մանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար համագործակցում է ուսումնական հաստատության հետ, իսկ գիտական գործունեությամբ զբաղվելու դեպքում նա իրավունք ունի համագործակցել ցանկացած կազմակերպության հետ: Ընդ որում, ի տարբերություն կրթական գործունեության բնագավառի, կազմակերպությունների գիտական գործունեությունը չի լիցենզավորվում⁴¹: Ներուսաբար, կառավարության անդամը վճարովի մանկավարժական գործունեությամբ կարող է զբաղվել միայն լիցենզավորված կրթական համակարգում: Չլիցենզավորված անհատական մանկավարժական գործունեությունը դիվանդ է որպես ձեռնարկատիրական գործունեություն, որը մեկնաբանվող հոդվածով կառավարության անդամին արգելվում է:

Օրենսդրորեն «ստեղծագործական աշխատանք» եզրույթի հասկացությունը և պետականները չեն սահմանվում: Փիլիսոփայական բառարանն այն բնորոշում է որպես մարդկային գործունեության գործընթաց, որն ստեղծում է որակապես նոր նյութական և հոգեուր արժեքներ, որոնք որոշվում են արարման գործունեության բնույթով⁴²: Այս առումով «ստեղծագործական աշխատանք» հասկացությունը բավականին ընդգրկում է և, ըստ Սահմանադրության 40-րդ հոդվածի, ներառում է ինչպես գրական և գեղարվեստական, այնպես էլ գիտական ու տեխնիկական ստեղծագործությունները:

Քաղաքացիական օրենսդրությունն ավելի լայն մեկնաբանություն է տալիս «ստեղծագործական աշխատանք» եզրույթին: Ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1100-րդ հոդվածի՝ ստեղծագործական աշխատանքի օբյեկտներ են համարվում գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունները, գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները և այլ արդյունքները՝ անկախ դրանց նշանակությունից, արժեքներից և արտահայտման եղանակներից: Ընդ որում, կառավարության անդամը վճարովի ստեղծագործական աշխատանք կարող է կատարել անկախ նրանից՝ պաշտոնապես ունի ստեղծագործական աշխատողի կարգավիճակ, թե՛ ոչ: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ անկախ նշված կարգավիճակից, պահպանվում են կառավարության անդամի ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված երաշխիքները:

⁴¹ Տե՛ս «Լիցենզավորման մասին» 2001թ. մայիսի 3-ի ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը (ՀՀ ՊՏ № 26 (158), 27.06.01թ.):

⁴² Տե՛ս Философский словарь. Под ред. М. М. Розенталя. Изд. третье. М.: 1975, էջեր 405-406:

ՏՏ քաղ. օր.-ի 1128-րդ հոդվածին համապատասխան՝ գործնականում կան նաև ծառայողական սրեղծագործություններ, որոնք սրեղծվում են ծառայողական առաջադրանքի կարգով: Դրանց նկատմամբ հեղինակային իրավունքը պարկանում է սրեղծագործության հեղինակին, սակայն այն օգտագործելու իրավունքն առաջադրանքի նպատակով պայմանավորված եղանակով ու դրանից բխող սահմաններում պարկանում է առաջադրանքը փոխ անձին: Տեղիականի հետ կնքված գործարարի պայմանագիրը կարող է նախատեսել ծառայողական սրեղծագործությունն օգտագործելու համար հեղինակին վարձարություն փայլու եւ օգտագործելու այլ պայմաններ: Ի դեպ, ծառայողական սրեղծագործությունը ներկայացնելու պահից փաստ փարի անց կամ սահմանված կարգով ավելի վաղ, անկախ գործարարի հետ կնքած պայմանագրից, հեղինակը ձեռք է բերում փոխալ սրեղծագործությունն ամբողջ ծավալով օգտագործելու եւ հեղինակային վարձարություն սփանալու իրավունք: Ծառայողական սրեղծագործությունն օգտագործելու հեղինակի իրավունքը չի սահմանափակվում, եթե առաջադրանքի նպատակով այն չի պայմանավորվել:

Կառավարության անդամները կարող են վճարովի գիտական, մանկավարժական եւ սրեղծագործական աշխատանք կատարել ծառայողական աշխատաժամանակից դուրս՝ հաշվի առնելով նրանց աշխատաժամանակի փետոյության առանձնահատկությունները եւ ներքին ծառայողական կարգապահության կանոնները:

Եթե նշված աշխատանքները կատարվում են համատեղության կարգով, սակայն վնասում են կառավարության անդամի հիմնական ծառայողական գործունեությանը, ապա Նանրապետության Նախագահը, վարչապետը կարող են արգելել նրա հատիքային համատեղությունը:

ՆՈՂՎԱԾ 88.1

1. Մարգպետները նշանակվում եւ ազարվում են կառավարության որոշմամբ: Կառավարության այդ որոշումները վավերացվում են Նանրապետության Նախագահի կողմից:

2. Մարգպետներն իրագործում են կառավարության փարածքային քաղաքականությունը, համակարգում եւ գործադիր մարմինների փարածքային ծառայությունների գործունեությունը, քացառությանը օրենքով նախատեսված դեպքերի:

3. Երեւան քաղաքում փարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

1. ՏՏ փարածքային կառավարման պետական մարմինները, ինչպես նաև Երեւան քաղաքում փարածքային կառավարման մարմիններն իրենց կազմավորման, գործունեության եւ իրավական կարգավիճակով որոշակիորեն փարբերվում են Նանրապետության գործադիր իշխանության միասնական համակարգի մյուս մարմիններից:

1995թ. խմբագրմամբ ՏՏ Սահմանադրությունն ամրագրում էր, որ մարգպետները պաշտոնի են նշանակվում եւ պաշտոնից ազարվում կառավարության կողմից (107-րդ հոդվածի երկրորդ մաս), իսկ մարգի կարգավիճակ ունեցող Երեւանի քաղաքապետի վարչապետի ներկայացմամբ՝ Նանրապետության Նախագահը (108-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասեր):

Սահմանադրական փոփոխություններով փոխվեց Երեւանի կարգավիճակը, իսկ քաղաքապետը դարձավ ընտրովի պաշտոն (108-րդ հոդված): Բացի դրանից, մարզպետների նշանակման եւ ազատման, նրանց գործունեության վերաբերյալ դրույթները՝ մեկ հոդվածի շարադրանքով (88.1-րդ հոդված), «Տարածքային կառավարումը եւ տեղական ինքնակառավարումը» 7-րդ գլխից տեղափոխվեց ՏՏ կառավարության վերաբերյալ 5-րդ գլուխ, նկատի ունենալով մարզպետին որպես հանրապետության միասնական գործադիր համակարգի մարմինների անբաժանելի բաղադրամաս:

Սակայն Սահմանադրության փոփոխություններով ըստ էության չփոխվեց մարզպետին պաշտոնի նշանակելու եւ պաշտոնից ազատելու վերաբերյալ 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված կարգը: Միաժամանակ, Սահմանադրության եզրափակիչ եւ անցումային դրույթների համաձայն մարզպետներին նշանակելու եւ ազատելու սահմանված կարգը, Տիմնական օրենքի մյուս հոդվածների հետ մեկտեղ, ուժի մեջ չմտնում (115-րդ հոդված) եւ նախատեսվեց, որ այն ուժի մեջ է մտնելու Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից՝ 2007 թվականից (116-րդ հոդվածի առաջին մաս), այսինքն՝ 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրված փարաձքային պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգային փոփոխությունների ավարտից հետո:

Բնականաբար, մարզպետների նշանակման եւ ազատման վերաբերյալ 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ (107-րդ հոդվածի երկրորդ մաս) չէր սահմանվում, ինչպես 2005թ. փոփոխված տեքստում, որ ՏՏ կառավարության իրավական ակտը (որոշումը) վավերացնում է Հանրապետության Նախագահը: Դա պայմանավորված էր նրանով, որ Հանրապետության Նախագահը, վարչապետի ստորագրելուց հետո, վավերացնում էր կառավարության ընդունած բոլոր որոշումները (86-րդ հոդվածի 2-րդ մաս): Ներկայումս մարզպետներ նշանակելու եւ ազատելու վերաբերյալ որոշումը կառավարության միակ որոշումն է, որ Հանրապետության Նախագահը վավերացնում է, առանց որի վարչապետի կողմից ստորագրված կառավարության այդ որոշումն իրավաբանական ուժ չունի: Ներկաբար, այդ պարագան պետք է սահմանադրորեն անպայման ամրագրվեր:

Մարզպետներ նշանակելու եւ ազատելու վերաբերյալ կառավարության որոշումներն ընդունվում են Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրով սահմանված ընդհանուր հիմունքներով (90 եւ 91-րդ կետեր): Նշված հարցով կառավարության ընդունած որոշումները վարչապետի կողմից ստորագրվում եւ ներկայացվում են Հանրապետության Նախագահի վավերացմանը (95-րդ կետ): Վերջինիս կողմից վավերացված որոշումները սահմանված կարգով պահվում են կառավարության աշխատակազմում: Կառավարության աշխատակազմը վավերացված որոշումները, ինչպես եւ այլ որոշումները, սրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, սահմանված կարգով առաքում է ՏՏ Նախագահի, Ազգային ժողովի, հանրապետական գործադիր եւ փարաձքային կառավարման մարմինների աշխատակազմերին:

Այլ երկրներում գործադիր իշխանությունը տեղերում իրականացնում են խորհրդարանի կողմից կազմավորված տեղական կառավարությունները, մարզերում ընտրված կամ նշանակված մարզպետները, պրեֆեկտները, կոմիսարները, շրջանների պետերը, երկրի Նախագահի կամ կառավարության ներկայացուցիչները եւ այլն:

2. Հանրապետության կառավարության փարաձքային քաղաքականությունը մարզերում իրականացնում են մարզպետները: Այդ նպատակով վերջիններս համակար-

գում են հանրապետական գործադիր իշխանության մարմինների՝ ՏՆ նախարարությունների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների փարաձքային ծառայությունների գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մարզպետների լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են ՏՆ Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված Հանրապետության Նախագահի իրավական ակտերով, կառավարության և վարչապետի որոշումներով: Մարզպետը գործում է նաև կառավարության կողմից հաստատված մարզի կանոնադրությամբ:

Մարզերում պետական կառավարման իրականացման հարցերը մանրամասնվում են «Նայասփանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» Հանրապետության Նախագահի 06.05.97թ. հրամանագրով՝ կատարված փոփոխություններով ու լրացումներով:

Մարզպետը մարզպետարանի միջոցով իրականացնում է պետական կառավարում, որն ապահովվում է մարզպետի կողմից կառավարության փարաձքային քաղաքականության իրագործման և հանրապետական գործադիր մարմինների փարաձքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Այս առնչությամբ մարզպետը կազմակերպում է փարաձքային ծառայությունների, մարզպետարանի աշխատակազմի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ ու փոխհամաձայնեցված գործունեությունը, փարաձքային ծառայություններից վարչապետի կողմից սահմանված կարգով ստանում է տեղեկատվություն և իրականացնում այլ լիազորություններ:

Պետական կառավարումը մարզերում իրականացվում է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, մարզպետների ու հանրապետական գործադիր մարմինների և վերջիններիս փարաձքային ծառայությունների համագործակցության ու գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա (06.05.97թ. հրամանագրի 1.4-րդ կետ):

Մարզպետարանի գործունեությունն իրականացվում է մարզպետի առաջարկությամբ՝ վարչապետի կողմից նշանակված մարզպետի տեղակալի, ինչպես նաև մարզպետի կողմից նշանակված իր խորհրդականների, օգնականների և մամուլի քարտուղարի, մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով: Մարզպետարանի կառուցվածքը հաստատվում է կառավարության, իսկ աշխատողների թվաքանակը՝ վարչապետի կողմից:

ՏՆ Սահմանադրության համաձայն՝ փարաձքային զարգացման պետական քաղաքականությունը հանրապետությունում իրականացնում է կառավարությունը (89-րդ հոդվածի 4.1-րդ կետ): Այդ քաղաքականությունը մարզպետն իրեն վերապահված իրավասության շրջանակներում իրականացնում է ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային ու կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության ու հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության ու մշակույթի, բնության ու շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտներում (ՏՆ Նախագահի 06.05.97թ. հրամանագրի 1.2-րդ կետ): Նշված խնդիրները լուծելու նպատակով մարզպետն ապահովում է օրենքների, ՏՆ Նախագահի, կառավարության ու վարչապետի իրավական ակտերի կատարումը մարզի փարաձքում և փոխհամագործակցում է ՏՆ կառավարության ու գործադիր իշխանության հանրապետական մյուս մարմինների հետ:

Կառավարության փարածքային քաղաքականությունն իրականացնելու կապակցությամբ մարզպետը համակարգում է պաշտպանության, էներգետիկայի, արտակարգ իրավիճակների, կապի, ինչպես նաև ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, հարկային, քաղաքացիական պաշտպանության և այլ բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների փարածքային ծառայությունների գործունեությունը: Իրավասու է հանձնարարականներ փոխել կարգադրություններ անել ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության փարածքային ղեկավարներին՝ մարզի փարածքում հասարակական կարգի պահպանման ու ամրապնդման նպատակով, իսկ պարտադիր կատարման համար կարգադրություններ անել կապի և էներգետիկայի փարածքային ծառայությունների ղեկավարներին: Թվարկված խնդիրները լուծելու համար մարզպետը օժանդակում է փարածքային ծառայությունների ղեկավարներին և ապահովում նրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ:

Ելնելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, առանձին փարածքների զարգացման անհրաժեշտությունից, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջադրած պահանջներից, կառավարությունը՝ հանրապետական գործադիր մարմինների և մարզպետների (Երևանի քաղաքապետի) առաջարկությունների հիման վրա, մշակում և հաստատում է կառավարության փոխառյուծ փարավա գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների: Մարզպետը իրավասու է կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնել միջոցառված ձևով՝ ՀՀ փարածքային կառավարման նախարարի և վարչապետի միջոցով (18.07.07թ. հրամանագրի 22, 24 և 30-րդ կետեր), խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն: Նա մշակում և կառավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հարվածի, ինչպես նաև մարզի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների վերաբերյալ, տնօրինում է պետական բյուջեով մարզին հատկացված միջոցները և վերահսկում այդ միջոցների նպատակային օգտագործումը: Կառավարության հաստատմանն է ներկայացնում մարզի բնակավայրերի գլխավոր հատկագծերը, ինչպես նաև համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ առաջարկություններ (06.05.97թ. հրամանագրի 1.12 և 1.13-րդ կետեր): Մարզպետը իր գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ընդհանուր ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարությանը և ընթացիկ հաշվետվություններ՝ վարչապետին: Ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան մարզում և անհրաժեշտության դեպքում օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում կառավարություն:

Մարզպետը հանրապետական գործադիր մարմինների քննարկմանն է ներկայացնում դրանց իրավասությանը ենթակա մարզին առնչվող հարցեր, քննության է առնում նշված մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային սպորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի մասին առաջարկությունները և սահմանված ժամկետում տեղեկացնում ձեռնարկված միջոցների մասին: Բացի դրանից, մարզպետը նախատեսված կարգով տեղեկություններ է փոխառի իշխյալ մարմիններին՝ իր կողմից համապատասխան բնագավառում ՀՀ կառավարության փարածքային քաղաքականության իրականացման մասին:

Նանրապետական համապատասխան գործադիր մարմնի ղեկավարը կարող է գրավոր, փաստարկված առաջարկություն ներկայացնել մարզպետին՝ մարզպետարանի աշխատակազմի փոխյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը բարելավելու վերաբերյալ: Մարզպետը պարտադիր կարգով քննության առնելով այդ առաջարկությունը՝ մեկամսյա ժամկետում փեղեկացնում է նրան արդյունքների մասին: Եթե նշված մարմնի ղեկավարը մարզպետի կողմից ձեռնարկված միջոցներն անբավարար է համարում, ապա հարցը կարող է ներկայացնել վարչապետի քննարկմանը՝ վերջնական լուծման համար (06.05.97թ. հրամանագրի 1.9-րդ կետ):

Մարզպետը, համագործակցելով ՏՄ նախարարությունների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների հետ, վերջիններիս քննարկմանն է ներկայացնում դրանց իրավասությանը ենթակա հարցեր:

Նանրապետական գործադիր իշխանության մարմինների և մարզպետի միջև վերը հիշատակված հարցերով ծագած փարսաձայնությունները լուծվում են վարչապետի կողմից:

Մարզպետին կից ստեղծված խորհրդակցական մարմնի՝ մարզի խորհրդի նիստերին, որի կազմի մեջ են մտնում մարզպետը և համայնքների ղեկավարները, մարզպետի հրավերով կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների փարսաձային ժառայությունների ղեկավարները: Մարզպետը խորհրդի նիստում մասնակիցներին ծանոթացնում է օրենքներին, ՏՄ Նախագահի, կառավարության և վարչապետի և իր իրավական ակտերին և դրանցից բխող համապատասխան մարմինների խնդիրներին:

Մարզպետը, օրենսդրությամբ նախատեսված կարգով, վերահսկում է համայնքներին պատվիրակված լիազորությունների, ինչպես նաև պարտադիր լիազորությունների կատարումը, վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը: Եթե մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները հակասում են օրենսդրությանը, ապա ուժը կորցրած են ճանաչվում վարչապետի կամ դատարանի որոշմամբ:

Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ կառավարության աշխատակազմի ղեկավարը պարբերաբար քննության են առնում մարզպետարանի կողմից ՏՄ կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման արդյունքները և համապատասխան միջոցներ ձեռնարկում եղած թերությունները վերացնելու ուղղությամբ: Բացի դրանից, վարչապետը պարբերաբար լսում է մարզպետի հաշվետվությունները կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման և դրանց կենսագործման ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին (28.07.07թ. հրամանագրի 129 և 130-րդ կետեր):

Մարզպետի աշխատանքը ենթակա է գնահատման՝ կառավարության որոշմամբ սահմանված գնահատման կարգին համապատասխան:

Պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում մարզպետի և նրա փեղակալի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական փոյժեր, այդ թվում՝ պաշտոնից ազատում, իսկ իրենց պարտականությունները բարեխիղճ և օրինակելի կատարելու համար՝ խրախուսանքի միջոցներ: Կարգապահական և խրախուսանքի միջոցները կիրառում են Նանրապետության Նախագահը, վարչապետը և փարսաձային կառավարման նախարարը, իսկ զբաղեցրած պաշտոնից ազատման վերաբերյալ կարգապահական փոյժը՝ համապատասխանաբար կառավարությունը և վարչապետը:

3. Սահմանադրությամբ (88.1-րդ հոդվածի 3-րդ մաս) եւ Հանրապետության Նախագահի 18.07.07թ. հրամանագրով (20-րդ կետ) ամրագրվում են, որ Երեւան քաղաքում փարածքային կառավարման առանձնահատկությունները նախատեսված են «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 26.12.08 ՏՏ օրենքով: Վերջինս հպանցիկ ամրագրում է, որ Երեւանում փարածքային կառավարումն իրականացնում է ՏՏ փարածքային կառավարման նախարարությունը: Ընդ որում, նախարարությունն այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է այնքանով, որքանով դրանք չեն հակասում վերոհիշյալ 26.12.08թ. օրենքին: Միաժամանակ, ելնելով Երեւան քաղաքում փարածքային կառավարման առանձնահատկություններից, փարածքային կառավարման որոշ գործառնություններ ՏՏ կառավարության որոշմամբ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների (9-րդ հոդված):

Մայրաքաղաքում արդյունավետ տեղական ինքնակառավարում եւ փարածքային կառավարում իրականացնելու նպատակով Երեւանը բաժանվել է 12 վարչական շրջանների, որոնց ղեկավարները պաշտոնի են նշանակվում եւ պաշտոնից ազատվում Երեւանի քաղաքապետի կողմից, գործում են նրա անունից եւ քաղաքապետը պատասխանատու է վարչական շրջանի ղեկավարի գործունեության համար (86, 89 եւ 91-րդ հոդվածներ):

Տարածքային կառավարման հիմնախնդիրները լուծելու նպատակով քաղաքապետը համապատասխան հարաբերությունների մեջ է մտնում նախարարությունների, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների եւ դրանց՝ Երեւանի փարածքային ծառայությունների հետ: Այդ կապակցությամբ քաղաքապետն առաջարկություններ է ներկայացնում դրանց իրավասությանը վերաբերող՝ Երեւանին առնչվող հարցերի մասին, փարածքային ծառայության մարմինների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպում է Երեւանին առնչվող խնդիրների վերաբերյալ խորհրդակցություններ եւ նրանց ուշադրությունը հրավիրում դրանց վրա: Հարկապես սերտ է համագործակցությունը քաղաքապետի եւ ոստիկանության հետ: Մասնավորաբար, քաղաքում կազմակերպվող փարբեր միջոցառումների (ներառյալ՝ ժողովներ, հանրահավաքներ, ցույցեր, երթեր եւ այլ զանգվածային միջոցառումներ) ժամանակ հասարակական կարգը պահպանելու, ինչպես նաեւ քաղաքի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար քաղաքապետը ոստիկանությանը տեղեկացնում է այդ մասին: Բացի դրանից, քաղաքապետն իրավագործ է նախարարություններ, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ գրավոր, փաստարկված առաջարկություն ներկայացնել վերջինների փարածքային ծառայությունների գործունեության մասին:

Օրենքով կամ կառավարության սահմանած կարգով, Երեւանի քաղաքապետը կազմակերպում եւ ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին (52-րդ հոդված), ավագանու ընդունած Երեւանի գլխավոր հատակագծի նախագիծը ներկայացնում է կառավարության հաստատմանը (55-րդ հոդված):

Հանրապետական գործադիր իշխանության մարմինների ղեկավարների, մարզպետների եւ Երեւանի քաղաքապետի առաջարկությունների հիման վրա էլ կառավարության աշխատակազմն իրականացնում է կառավարության փարեկան գործունեության միջոցառումների ծրագրի եւ գերակա խնդիրների նախագծի մշակումը (ՏՏ Նախագահի 18.07.07թ. հրամանագրի 24-րդ կետ):

Երեւանի բյուջեի նախագծի մշակման առնչությամբ պեւրական լիազորված մարմինը ոչ միայն մեթոդական եւ խորհրդարարական օգնություն է ցույց տալիս դրա մշակման նախապարաստման ընթացքում, այլեւ օրենքով սահմանված կարգով վերահսկում է բյուջեփայլին գործընթացը (71-րդ հոդված): Բացի դրանից, քաղաքի բյուջեի ձեւավորման նպատակով քաղաքապետը կարող է թողարկել պարտավորումներ, որոնց թողարկման եւ տեղաբաշխման կարգը սահմանում է ՏՏ կառավարությունը: Բյուջեի ֆոնդային մաս ուղղված միջոցներն ավագանին կարող է ուղղել ՏՏ կառավարության հետ համաձայնեցված ծրագրերի ֆինանսավորմանը՝ կառավարության սահմանած կարգով (73-րդ հոդված):

Երեւանի ավագանու որոշման համաձայն քաղաքի բյուջեի ծախսերը կատարելու նպատակով քաղաքապետը պեւրական ֆինանսների կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ կարող է ստանալ բյուջեփայլին վարկեր եւ փոխարկություններ, իսկ սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար կարող է վարկ ստանալու պայմանագիր կնքել կամ սահմանված կարգով թողարկել համայնքային արժեթղթեր: Ընդ որում, վարկային պայմանագրի գրավ կարող են լինել միայն քաղաքի բյուջեի եկամուտները եւ ՏՏ կառավարության երաշխիքները (84-րդ հոդված):

Երեւանի բյուջեի կատարման նկատմամբ պեւրությունը վերահսկողություն է իրականացնում ՏՏ վերահսկիչ պալատի եւ կառավարության միջոցով՝ օրենքով վերջիններիս վերապահված լիազորությունների շրջանակներում (81-րդ հոդված):

ՏՏ փարածքային կառավարման նախարարությունը՝ որպես իրավական հսկողության բարձրագույն մարմին, իրավական հսկողություն է իրականացնում քաղաքապետի եւ ավագանու լիազորությունների նկատմամբ, իսկ վերջիններիս նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը ՏՏ արդարադատության նախարարությունն է: Մասնագիտական հսկողության համապատասխան բարձրագույն մարմինը քաղաքապետին պարվիրակված յուրաքանչյուր լիազորության նկատմամբ մասնագիտական հսկողություն կարող է իրականացնել բացառիկ դեպքերում՝ ՏՏ փարածքային կառավարման նախարարության համաձայնությամբ (105-րդ հոդված):

ՆՈՂՎԱԾ 89

Կառավարությունը՝

1) Սահմանադրության 74-րդ հոդվածով նախատեսված կարգով Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը.

2) Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պեւրական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով.

3) կառավարում է պեւրական սեփականությունը.

4) իրականացնում է ֆինանսարևեսական, վարկային եւ հարկային միասնական պեւրական քաղաքականությունը.

4.1) իրականացնում է փարածքային զարգացման պեւրական քաղաքականությունը.

5) իրականացնում է պեւրական քաղաքականությունը գիտության,

կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության եւ բնության պահպանության բնագավառներում.

6) ապահովում է Նանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության իրականացումը.

7) ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման ուղղությամբ.

8) իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ գործառույթներ եւ լիազորություններ:

1) Նանրապետության կառավարությունն իր սահմանադրական կարգավիճակով, լիազորությունների շրջանակով ու բովանդակությամբ յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն պետական իշխանության, այլև գործադիր մարմինների համակարգում: Միաժամանակ, լինելով բարձրագույն քաղաքական կոլեգիալ մարմին, գլխավորում է հանրապետության գործադիր իշխանության միասնական համակարգը եւ իրականացնում համապետական կառավարում:

Սահմանադրությունը, օժտվելով կառավարությանն իրավասու եւ ինքնուրույն լայն լիազորություններով, դրանով իսկ որոշակիացրել եւ սահմանազատել է լիազորությունները պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև, որը նպատակատուղված է, ամբողջությամբ վերցրած, պետության բնականոն գործունեության բարելավմանն ու կատարելագործմանը: Դրա հետ մեկտեղ, ինչպես Նանրապետության Սահմանադրության, այնպես էլ օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն պետական իշխանության մյուս մարմինների, սահմանադրորեն հնարավոր չէ ընդգրկել այն բոլոր լիազորությունները, որոնք ներհատուկ են կառավարությանը՝ որպես գործադիր ու կարգադրիչ մարմնի: Այդ առնչությամբ էլ կառավարության լայնածավալ լիազորություններն ընդհանուր ձեռով պարզապես թվարկվում են մեկնաբանվող հոդվածում: Եթե դրանք համեմատենք հանրապետության պետական իշխանության մյուս մարմինների (օրինակ, Նանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի) լիազորությունների հետ, ապա ակնհայտ է, որ վերջիններս ավելի սպառիչ են սահմանված (55, 81, 83-րդ հոդվածներ): Ի դեպ, պարահական չէ, որ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածը թվարկելով կառավարության լիազորությունները՝ վերջին՝ 8-րդ կետում ամրագրել է, որ կառավարությունը «իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ գործառույթներ եւ լիազորություններ: Անհրաժեշտ է նշել, որ այս պարագան ներհատուկ է նաև մյուս երկրներին (օրինակ՝ ԱՄՆ, Ֆրանսիա եւ այլն):

Իրականում, կառավարության՝ որպես պետական իշխանության ընդհանուր իրավասության բարձրագույն մարմնի, լիազորություններն ու գործառույթները, որոնք ընդգրկում են հանրապետության փնտրության, սոցիալ-մշակութային ու վարչաքաղաքական բոլոր բնագավառները, հնարավոր չէ սպառիչ շարադրել Սահմանադրությամբ:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 1-ին կետին եւ 74-րդ հոդվածին համապատասխան՝ կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը: Ի դեպ, նորընտրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի օրակարգում ներառվում է նաև կառավարության ծրագրի եւ կառավարության վստահության հարցը: Նաշվի առնելով հարցի կարևորությունը՝ դրա քննարկման նիստի օրը հայտարարում է Ազգային ժողովի նիստը վարո-

դը⁴³:

Կառավարության ծրագրին հավանություն փալու հարցն Ազգային ժողովը քննարկում է արտահերթ, եւ քվեարկության է դրվում այն ներկայացնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Ծրագրին հավանություն փալու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է պարզամակորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (փե՛ն 74-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Այսպիսով, Ազգային ժողովի լիազորությունն արտահայտվում է նրանում, որ քվեարկության միջոցով հավանություն է փալիս կամ չի փալիս կառավարության ծրագրին: Սակայն Ազգային ժողովը չի կարող փարբեր պարճառնեղով անընդմեջ հավանություն չրալ կառավարության կողմից ներկայացված ծրագրին՝ նկալի ունենալով Սահմանադրության 74.1-րդ հոդվածի առաջին մասով նախալրեսված դեպքերում Ազգային ժողովն արճակելու եւ արտահերթ ընլրություն նշանակելու Նանրալելության Նախագահի բացաղիկ իրալունքը (55-րդ հոդվածի 3-րդ կելր):

Անհրաճեղլ է նեղ, որ Նանրալելության Նախագահը կառավարության հրաճարականն ընդունում է կառավարության ծրագրին հավանություն չրալու օրը: Ամեն դեպքում կառավարության հրաճարականն ընդունելուց հետո կառավարության հրաճարական րված անղամները շարունակում են իրենց պարլականությունների կալարումը՝ մինչեւ նոր կառավարության կազմալորումը (55-րդ հոդվածի 4-րդ կելր):

Ընդհանուր առմամբ, նախագահական-խորհրղարանական հանրալելություններում կառավարության ծրագրի հավանության հարցը, որալես կանոն, կախված է խորհրղարանում քաղաքական ուճերի հարաբերակցությունից: Այս առնչղլամբ երկրի Նախագահը կառավարություն կազմալորելիս եւ քաղաքականղլություն իրականացնելիս ալելրբ է նկալի ունենա խորհրղարանի մեճամասնղլության կարճիլը:

Գորճնականում կյանքը ցույց է փալիս, որ կառավարության ծրագրին փարբեր պարճառնեղով հավանղլություն չրալը եւ դրանով իսկ կառավարղլության կազմալորման ճզճզումն ու մեկուսացումը բացասալար են անղրաղառնում ինչալես կառավարղլության, ալնալես էլ, ամբողջղլամբ վերցրած, ալելրղլության բնականոն ու արղլունալելր գորճունեղլության նկալրմամբ: Անհրաճեղլ է նկալի ունենալ նաեւ, որ Նանրալելության կառավարղլությունն իր գորճունեղլությունը կազմակերպում է կառավարղլության ծրագրին համաալարալիսան (18.07.07թ. հրամանագրի 21-րդ կելր):

Կառավարղլության կողմից ներկայացված ծրագրի քննարկումն Ազգային ժողովում սկսվում է ալն սլրանալուց հետո՝ 48 ճամվա ընթացքում: Ընղ որում, ծրագրիը նրկայացնելու եւ կառավարղլության վսլրահղլության հարցը դնելու համար վարչաալելրին րրվում է մեկ ճամ, ալնուհերեւ նիսլրն ընդհարվում է եւ վերսկսվում կառավարղլության վսլրահղլության հարցը դնելուց 24 ճամ հետո: Եթե սահմանված կարգով կառավարղլությանն անվսլրահղլություն հալրնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիճ չի ներկայացվում կամ ներկայացման դեպքում ալն չի ընդունվում, աալ կառավարղլության ծրագրիը համարվում է հավանղլության արճանացաճ⁴⁴:

2) Պերական բլուջեի հասլարման կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» 20.02.02թ. ՆՆ օրենքով (ալսուհելր՝ Կանոնակարգ): Սահմանադրղլանը եւ Կանոնակարգին համաալարալիսան Ազգային ժողովը կառավարղլության ներկայաց-

⁴³ «Ազգային ժողովի կանոնակարգ» 20.02.02թ. ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կես (ՀՀ ՊՏ N 12 (187),12.04.02թ.):

⁴⁴ Տե՛ս նույն տեղում,106-րդ հոդված:

մամբ հաստատվում է պետական բյուջեն, իսկ մինչև բյուջեդրային փարվա սկիզբն այն չհաստատվելու պարագայում ծախսերը կատարվում են նախորդ փարվա պետական բյուջեի համամասնություններով՝ մինչև բյուջեի հաստատումը⁴⁵:

Պետական բյուջեի վերաբերյալ օրենքի նախագծի կապակցությամբ քննարկումները սահմանված կարգով ավարտելուց հետո, ՏՏ վարչապետը կամ ֆինանսական ոլորտի լիազորված մարմնի ղեկավարը եզրափակիչ ելույթում կարող է առաջարկել օրինագծի վերջնական փաթեթակն ընդունել որպես օրենք կամ դրա հաստատման առնչությամբ դնել կառավարության վստահության հարցը:

Եթե նախագծի վերջնական փաթեթակն ընդունելու վերաբերյալ կառավարության առաջարկությունն անհրաժեշտ թվով ձայներ չի ստանում, ապա կառավարությունը կարող է բյուջեի հաստատման կապակցությամբ դնել իր վստահության հարցը: Այս առնչությամբ վարչապետը կամ կառավարության լիազոր ներկայացուցիչը քվեարկությունից անմիջապես հետո կարող է պահանջել ընդմիջում մինչև Ազգային ժողովի հաջորդ նիստը՝ բյուջեի վերաբերյալ օրինագծի ընդունման կապակցությամբ կառավարության վստահության հարցը դնելու կողմնորոշման համար: Եթե վարչապետն ընդմիջումից անմիջապես հետո նախագծի ընդունման առնչությամբ դնում է կառավարության վստահության հարցը եւ կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծ է ներկայացվել պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից՝ կառավարության վստահության հարցը դրվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, կամ առանձին պարզամավորների կողմից, ապա այդ նախագծերը քննարկվում են Կանոնակարգի 107-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված կարգով:

Եթե սահմանված կարգով կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծ չի ներկայացվել կամ նման որոշում չի ընդունվում, ապա պետական բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված: Ընդ որում, բյուջեի վերաբերյալ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է հատուկ ընթացակարգով (Կանոնակարգի 84-րդ հոդված):

Բյուջեի հաստատման կապակցությամբ կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում Սահմանադրության 90-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՏՏ կառավարությունը՝ որպես բարձրագույն գործադիր մարմին, Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված կարգով ապահովում է պետական բյուջեի կատարումը: Ընդ որում, պետական բյուջեի կատարմանը մասնակցում են իշխանության մյուս մարմինները եւ կազմակերպությունները: Այս առնչությամբ կառավարությունը յուրաքանչյուր փարվա բյուջեի կատարման կրթվածքով փարեկան հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով՝ մինչև հաջորդ փարվա մայիսի 1-ը: Ներկայացված հաշվետվության նախնական քննարկումները, սահմանված կարգով, տեղի են ունենում մշտական հանձնաժողովներում, որոնց մասնակցում են նաեւ կառավարության անդամները եւ վարչապետի լիազորած անձինք: Այնուհետեւ Ազգային ժողովը կառավարության զեկուցմամբ լսում է հաշվետվությունը: Նարակից զեկուցումներով հաշվետվության վերաբերյալ իրենց եզրակացությունն են ներկայացնում ՏՏ կենտրոնական բանկի նախագահը, վերահսկիչ պալատի նախագահը, ֆինանսավարկային, բյուջեդրային եւ տնտեսական հարցերի, ինչպես նաեւ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին

⁴⁵ Տե՛ս Սահմանադրության 76-րդ հոդվածը եւ Կանոնակարգի 79-րդ հոդվածի 1-ին կետը:

գործերի մշտական հանձնաժողովների եւ, ըստ ցանկության՝ մյուս մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները: Նարցի քննարկմանը մասնակցում են նաեւ խմբակցությունները եւ պարզամավորական խմբերը, կառավարության անդամները, մարզպետները՝ իրենց ելույթներով:

Մտքերի փոխանակությունից հետո իր եզրափակիչ ելույթում վարչապետը կամ Ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարը կարող է քվեարկության ներկայացնել բյուջեի կապարման փարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, ինչպես նաեւ դնել այն հաստատելու առնչությամբ կառավարության վարահության հարցը: Եթե առաջին առաջարկությունը քվեարկության արդյունքում չի սպացել անհրաժեշտ թվով ձայներ, ապա կառավարությունը, սահմանված կարգով, կարող է հաշվետվության հաստատման առնչությամբ դնել իր վարահության հարցը: Ընդ որում, անվարահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ չներկայացնելու դեպքում ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ անվարահություն հայտնելու պարագայում՝ կառավարության հաշվետվությունը համարվում է հաստատված (կանոնակարգի 89-րդ հոդված):

Վերոհիշյալ դեպքերում կառավարությանն անվարահություն հայտնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշում ընդունվելու դեպքում վարչապետը կառավարության հրաժարականի մասին դիմում է ներկայացնում Նանրապետության Նախագահին (Կանոնակարգի 107-րդ հոդվածի 5 եւ 6-րդ կետեր):

3) ՆՇ քաղ. օր.-ի դրույթներին համապատասխան՝ սեփականության կառավարումը ենթադրում է սուբյեկտի՝ օրենքով եւ իրավական ակտերով ճանաչված եւ պահպանվող իրավունքը՝ իր հայեցողությամբ փիրապետելու, օգտագործելու եւ փնօրինելու իրեն պատկանող գույքը կամ հանձնելու հավաքարմագրային կառավարման (163-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետեր):

Նանրապետության Սահմանադրությունը կարեւոր նշանակություն է փալիս սեփականության իրավունքի ճանաչմանն ու պաշտպանությանը եւ այդ առնչությամբ էլ նշված ինստիտուտն ամրագրվել է «Սահմանադրական կարգի հիմունքները» 1-ին գլխում (8-րդ հոդված):

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական ինստիտուտի փեղն ու դերը հիմնարար է հանրապետության քաղաքական, փնփեսական եւ սոցիալական բնագավառներում: Վերջիններով է պայմանավորված ոչ միայն հանրապետությունում փնփեսական գործունեության ազատության եւ ազատ փնփեսական մրցակցության երաշխավորումը, այլեւ իրավական հիմք է ստեղծվում մարդու եւ քաղաքացու իրավահավասարության, քաղաքացիական հարաբերություններում անհատի ու պետության միափեսակ իրավական վիճակի համար: Այս առնչությամբ ՆՇ քաղ. օր.-ի 128-րդ հոդվածն ամրագրում է, որ Նայասարանի Նանրապետությունը քաղաքացիական օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում մյուս մասնակիցների՝ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ մասնակցում է հավասար հիմունքներով: Բոլոր սեփականատերերի իրավունքները պաշտպանվում են հավասարապես:

Պետությունը՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանելով սեփականության իրավունքի հիմնարար սկզբունքներ, նպատակ ունի ոչ թե սպառիչ կարգավորել ու ամբողջությամբ կառավարել փնփեսական գործունեությունը հանրապետությունում, այլ ե-

րաշխավորել րնտեսական գործունեության ազատությունը, ազատ րնտեսական մրցակցությունը եւ օրենքով չարգելված ձեռնարկափրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Սահմանադրական նշված սկզբունքներից բխում է, որ պետության գործունեությունը միավրած է ոչ թե անհարկի կառավարչական միջամտությանը, այլ կայուն երաշխիքների սրելծմանը: Եթե նախկինում պետությունը հանդիսանում էր սեփականության նկարմամբ կառավարող սուբյեկտ, ապա ներկայում դարձել է րնտեսական հարաբերությունները կարգավորող օղակ եւ վերջիններիս դեպքում ունի եւ՛ իրավունքներ, եւ՛ պարավորություններ, իսկ քաղաքացիական իրավահարաբերություններում՝ մյուս մասնակիցների հետ հավասար կարգավիճակ: Միաժամանակ, կառավարությունը չի կարող ձեռնպահ մնալ սեփականության կառավարման հարցերից: Նանրապետության օրենքներով սահմանվում են գույքի այն տեսակները, որոնք կարող են գրվել միայն պետության սեփականության ներքո: Նանրապետությանը սեփականության իրավունքով պարկանող գույքը պետական սեփականությունն է: Նանրապետության սեփականությունն են պետական բյուջեի միջոցները, ինչպես նաեւ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպարկանող հողը եւ բնական այլ պաշարները: Պետության սեփականությունը համարվող հողի եւ այլ բնական պաշարների նկարմամբ բռնագանձում տարածելը թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում: Նանրապետությունն իր պարավորությունների համար պարասխանատու է սեփական գույքով:

Նայաստանի Նանրապետության անունից որպես պետական սեփականության իրավունքի սուբյեկտ հանդես է գալիս կառավարությունը, որը կանոնակարգում է պետական սեփականության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման ծրագրերը եւ այդ առնչությամբ հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնությամբ: Կառավարությունը պետական սեփականությունը կառավարում է պետական մարմինների, մասնավորապես, գործադիր մարմինների միջոցով: ՆՕ օրենքներով, Նանրապետության Նախագահի հրամանագրերով, կառավարության որոշումներով եւ համայնքային մարմինների իրավական ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով նրանց հատուկ հանձնարարությամբ ու անունից կարող են հանդես գալ ինչպես իրավաբանական անձինք, այնպես էլ քաղաքացիները (129-րդ հոդվածի 3-րդ կետ): Քաղ. օր.-ի նույն հոդվածի համաձայն՝ պետական մարմինները Նանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ ու պարականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաեւ դատարանում հանդես գալ իրենց իրավասության սահմաններում: Նշված իրավունքներն ու պարականությունները համայնքների անունից իրենց գործողություններով կարող են ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Պետության կամ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի օգտագործման իրավունքը տրվում է քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց՝ հողամասերն օգտագործման տրամադրելու լիազորված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով (ՆՕ քաղ. օր.-ի 205-րդ հոդված):

Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու գինը հատուցում է Նայաստանի Նանրապետությունը կամ համայնքը:

Պետության կամ համայնքի կարիքների համար հողամաս վերցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պետական մարմինը: Նշված որոշման նախապատրաստման եւ

ընդունման կարգը սահմանվում է օրենքով: Որոշումը գրանցում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմինը:

ՆՆ կառավարությունը պետական գույքի մասնավորեցման ընթացիկ փուլի ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով՝ մինչև հաջորդ փուլի մայիսի 1-ը, որն ուղարկվում է մշտական հանձնաժողովներ և ՆՆ վերահսկիչ պալատ:

Ազգային ժողովի նիստերում հաշվետվությունը ներկայացնում է կառավարության ներկայացուցիչը, իսկ հարակից զեկուցումներով հանդես են գալիս՝ ՆՆ վերահսկիչ պալատի նախագահը և Ֆինանսավարկային, բյուջեփային և փոխտնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հաշվետվության վերաբերյալ ներկայացնելով իրենց եզրակացությունը: Հաշվետվությունը քննարկվում է Կանոնակարգով սահմանված կարգով (109-րդ հոդված):

4) Ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը ՆՆ կառավարությունն իրականացնում է օրենքներին, Հանրապետության Նախագահի հրամանագրերին և այլ իրավական ակտերի հիման վրա մշակված ծրագրային, հայեցակարգային և այլ փաստաթղթերին համապատասխան:

Կառավարությունն ապահովում է հանրապետության տնտեսական զարգացումը՝ կառավարման ճյուղային և փարածքային սկզբունքները նկատի ունենալով, կառավարման կենտրոնացումը զուգակցելով պետական կազմակերպությունների տնտեսական ինքնուրույնության և նախաձեռնության հետ, իրականացնում է փարածքային զարգացման պետական քաղաքականությունը, անհրաժեշտության դեպքում աջակցում է ոչ պետական տնտեսական կազմակերպությունների գործունեությանը, օրենսդրությամբ սահմանված դեպքերում իր իրավասության շրջանակներում վերահսկողություն է իրականացնում դրանց գործունեության նկատմամբ, մշակում և իրականացնում է սոցիալ-տնտեսական հանրապետական համալիր ծրագրերը, միջոցներ է ձեռնարկում տնտեսության ճյուղերի զարգացման, արտադրության արդյունավետության և արտադրանքի որակի բարելավման ուղղությամբ:

Արտաքին տնտեսական կապերի և համագործակցության ոլորտում կառավարությունն իրականացնում է ընդհանուր ղեկավարություն: Այդ կապերի զարգացման ու արդյունավետության բարձրացման և պետական կարգապահության ամրապնդման, տնտեսական ինքնիշխանության ու անվտանգության, ինչպես նաև ներքին շուկայի պաշտպանվածության ուղղությամբ մշակում է համապատասխան միջոցառումներ:

Ֆինանսատնտեսական քաղաքականության բնագավառում կառավարությունը միջոցներ է ձեռնարկում դրամական և վարկային համակարգի ամրապնդման ուղղությամբ, ղեկավարում է արտարժույթային և վարկային հարաբերությունները հանրապետությունում և վերջինիս ու արտերկրների միջև, կանոնակարգում է արժեթղթերի շուկան:

Կառավարությունը հարկային քաղաքականության ասպարեզում միջոցներ է ձեռնարկում այդ քաղաքականությունն ակտիվացնելու և վերահսկողության ու հսկողության լիազորություններն ուժեղացնելու ուղղությամբ: Սահմանում է հարկ վճարողների հաշվառման, հաշվարկման ու վճարման կարգը:

Որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ կառավարությունն ընդհանուր ղեկավարություն է իրականացնում հանրապետության մաքսային քաղաքականության ասպարեզում: Անհրաժեշտության դեպքում ի պատասխան Հայաստանի

Նանրապետության նկատմամբ օտարերկրյա պետությունների կամ դրանց միությունների խտրական գործողությունների՝ կառավարությունը Նայաստանի փնտեսական շահերը պաշտպանելու և փնտեսական գործունեությունը խրախուսելու նպատակով կիրառում է հակազդման մաքսային միջոցառումներ:

Վերոհիշյալ հարցերը լուծելու առնչությամբ կառավարությունն օգտվում է նաև իրեն վերապահված օրենսդրական նախաձեռնության իրավունքից:

4.1) Սահմանադրությանը համապատասխան՝ հանրապետության փարածքային զարգացման պետական քաղաքականությունն իրականացնում է ՆՆ կառավարությունը: Վերջինս յուրաքանչյուր փարի՝ հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների և մարզպետների (Երեսանի քաղաքապետի) առաջարկությունների հիման վրա, մշակում և հաստատում է իր գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների, ելնելով ՆՆ սոցիալ-փնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջադրած պահանջներից: Ընդ որում, այդ փաստաթղթում նշվում են դրանց պատասխանատուները՝ ըստ ժամկետների և Ֆինանսավորման աղբյուրների, իսկ կատարման ապահովման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կառավարության աշխատակազմը (18.07.07թ. հրամանագրի 22-25-րդ կետեր):

Տարածքային զարգացման պետական քաղաքականության իրականացումը հիմնականում ներառում է մարզի, համայնքի սոցիալ-փնտեսական համալիր զարգացման ապահովումը, սեփականության և Ֆինանսական միջոցների կառավարումը, բնակչության կենսականորեն անհրաժեշտ պահանջների բավարարումը: Այն ընդգրկում է նաև սոցիալ-մշակութային, աշխատանքային, տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, էկոլոգիական խնդիրների լուծման, ինչպես նաև քաղաքացիների կյանքի և հանգստի համար պայմանների ստեղծման ապահովումը և տեղական նշանակության այլ խնդիրների լուծումը:

Տարածքային զարգացման պետական քաղաքականությունն իրականացնելու նպատակահարմարությունից ելնելով՝ կառավարության ներկայացմամբ Ազգային ժողովը կարող է փոփոխել ՆՆ մարզային բաժանման և մարզերի սահմանները, համայնքների փարածքային սահմանները, ինչպես նաև ստեղծել նոր համայնքներ, փոփոխել բնակավայրերի դասակարգումը և այլն⁴⁶: Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են միացվել կամ առանձնացվել նույն կարգով: Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել նաև միջհամայնքային միավորումներ: Այս առնչությամբ մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ առաջարկությունները կառավարության քննարկմանն է ներկայացնում մարզպետը:

Վերոհիշյալ սկզբունքների իրականացումը նպաստում է մարզերի և համայնքների փնտեսության ուղղությունների զարգացմանը, աշխատատեղի մասնագիտացման կողմնորոշմանը և զբաղվածության հարցերի լուծմանը, ինչպես նաև հաղորդակցության ճանապարհների ու միջոցների վիճակի բարելավմանը: Բնականաբար, այս ամենի արդյունավետ իրականացումն զգալիորեն կնպաստի ինչպես հանրապետության առաջընթացի ապահովմանը, այնպես էլ սոցիալ-փնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Վերջիններիս լուծումն զգալիորեն կախված է նրանից, թե որքանով են փարածքա-

⁴⁶ Տե՛ս «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» 07.11.95թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը (ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.), գիրք-Ա, Եր., 1999, էջ 73):

յին եւ փեղական ինքնակառավարման մարմինները մոփեցված բնակչությանը եւ որքանով են սարարվում նրանց կողմից:

Միաժամանակ պէտք է նշել, որ փեղական ինքնակառավարումն օժանդակում է համայնքային եւ համապետական շահերի արդյունավետ զարգացմանը, համայնքի սոցիալ-տնտեսական ներուժի նպաստակային օգտագործմանը: Տեղական ինքնակառավարումը՝ լինելով հասարակության եւ պետական կառավարման համակարգի բաղադրամաս, փեղական խնդիրները լուծելու միջոցով լուծում է նաեւ, ամբողջությամբ վերցրած, քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության հարցերը:

Վարչապարաձեքային միավորները կազմավորելիս նկատի է առնվում նաեւ այն, որպէսզի հնարավորության սահմաններում դրանք ընդգրկեն մեծաքանակ (կոմպակտ) բնակվող ազգային փոքրամասնությունների: Այս հարցի լուծումը կնպաստի նրանց սոցիալ-մշակութային զարգացմանը, ազգային, կրոնական, լեզվական, սովորութային եւ այլ առանձնահատկությունների հաշվառմանը, ինչպէս նաեւ ազգամիջյան խաղաղությանը, համագործակցության ոլորտներում առաջընթացի ապահովմանը:

Պետական կառավարումը մարզերում ապահովվում է մարզպետի կողմից կառավարության փարաձեքային քաղաքականության իրականացման եւ հանրապետական գործադիր մարմինների փարաձեքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Տարաձեքային զարգացման պետական քաղաքականությունը մարզպետին իր իրավասության շրջանակներում իրականացնում է Ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային եւ կոմունալ տնտեսության, տրանսպորտի եւ ճանապարհաշինության, գյուղատնտեսության եւ հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի, բնության եւ շրջակա միջավայրի պահպանության եւ այլ բնագավառներում:

Վերոհիշյալ խնդիրները լուծելու նպատակով մարզպետը՝ մարզի փարաձեքում ապահովում է օրենքների, ՀՀ Նախագահի ակտերի, կառավարության եւ վարչապետի որոշումների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը. ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան. անհրաժեշտության դեպքում օրենսդրության կատարելագործման մասին առաջարկություններ է ներկայացնում կառավարություն. մասնակցում է պետական բյուջեի նախագծի եւ կառավարության փարաձեքային քաղաքականության մշակման աշխատանքներին. իր գործունեության եւ մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին ընդհանուր հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն եւ ընթացիկ հաշվետվություններ՝ վարչապետին. խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին:

Իր գործունեության ընթացքում մարզպետը համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ՝ սահմանված կարգով փեղեկություններ է տալիս դրանց՝ տվյալ ոլորտում կառավարության փարաձեքային քաղաքականության իրականացման մասին, քննարկման է ներկայացնում այդ մարմինների իրավասությանը ենթակա՝ մարզին առնչվող հարցեր:

Կառավարության փարաձեքային քաղաքականությունն իրականացնելիս մարզպետը համակարգում է հանրապետական գործադիր մարմինների փարաձեքային ծառայությունների գործունեությունը, վերահսկում է պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորության կատարման վիճակը եւ պարտադիր լիազորությունների կատարումը:

Մարզի խորհուրդը, որի կազմի մեջ են մտնում մարզպետը եւ համայնքների ղեկավարները, քննարկում է կառավարությանը եւ վարչապետին ներկայացվող մարզպե-

տի հաշվետվությունները՝ սոցիալ-տնտեսական վիճակի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան երկարաժամկետ ծրագրերի կատարման վերաբերյալ առաջարկություններ:

Վարչապետը, վերջինիս հանձնարարությամբ՝ կառավարության աշխատակազմի ղեկավարը պարբերաբար քննության են առնում տարածքային կառավարման մարմինների կողմից կառավարության եւ վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման վիճակը եւ միջոցներ ձեռնարկում թերությունները վերացնելու ուղղությամբ:

5) ՆՏ կառավարությունը Սահմանադրության, օրենքների եւ այլ իրավական ակտերի համաձայն գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության եւ բնության պահպանության ոլորտներում իրականացնում է պետական քաղաքականությունը:

Տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝ իրականացնել բնակչության առողջապահության ծրագրեր, նպաստել արդյունավետ եւ մարչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը, նպաստել անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության, ինչպես նաև գիտության եւ մշակույթի զարգացմանը (Սահմանադրության 48-րդ հոդված):

Գիտությունը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի եւ հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո:

Նանրապետության գիտական բարձրագույն կենտրոնը ՆՏ գիտությունների ազգային ակադեմիան է (այսուհետ՝ ԳԱԱ), որը միավորում է իր համակարգի գիտական կազմակերպությունները եւ համակարգում հանրապետությունում իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունները:

Գիտական քաղաքականության մշակման, իրականացման եւ գիտական կառավարման բնագավառում ԳԱԱ-ն պետության հետ հարաբերություններում անմիջականորեն առնչություն ունի վարչապետի հետ: ԳԱԱ նախագահը մասնակցում է կառավարության նիստերին: Կառավարությունը եւ պետական կառավարման մարմինները պարտադիր կարգով քննարկում են ԳԱԱ առաջարկությունները:

«Գիտական եւ գիտաբեխնիկական գործունեության մասին» 05.12.00թ. ՆՏ օրենքին համապատասխան՝ գիտական եւ գիտաբեխնիկական պետական քաղաքականության ձեւավորման եւ իրականացման ոլորտում կառավարությունն իրականացնում է միասնական քաղաքականություն, որոշում է զարգացման գերակայությունները, ապահովում է պետական եւ նպատակային ծրագրերի իրականացումը, հաստատում է գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերը, ֆինանսավորում է պետական բյուջեի համաձայն գիտական եւ գիտաբեխնիկական գործունեությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում, վերակազմակերպում եւ լուծարում է գիտական պետական կազմակերպությունները, հաստատում է գիտական աստիճանների եւ կոչումների շնորհման կարգը եւ չափորոշիչները, սահմանում է գիտական բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինները եւ դրանց խնդիրները: Գիտական, գիտաբեխնիկական պետական եւ նպատակային ծրագրերը կառավարությունը պետական բյուջեի նախագծի հետ ներկայացնում է ՆՏ Ազգային ժողով:

Կրթության հիմնահարցերը կարգավորվում են Սահմանադրության 39-րդ հոդվածով: Օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով պետությունը ֆինանսական եւ այլ

աջակցություն է ցույց տալիս բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին եւ դրանցում սովորողներին:

«Կրթության մասին» 14.04.99թ. ՏՏ օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները եւ այդ համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսավարչական հիմքերը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականությունն է՝ հռչակել եւ երաշխավորել կրթության ոլորտի զարգացումը որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Դրա հիմնական նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող եւ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության եւ մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձեւավորումն է: Այդ համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային եւ համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը (օրենքի 4-րդ հոդված):

Կրթության ասպարեզում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Վերջինս կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը:

Նանրապետության կառավարությունը կրթության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնելու նպատակով սպահովում է դրա իրականացումը, հաստատում է պետական կրթական չափորոշիչները եւ դրանց ձեւավորման կարգը, ուսուցանվող մասնագիտությունների ցանկը, հանրակրթական, միջին մասնագիտական եւ բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, ինչպես նաեւ պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները, պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձեւերը եւ իրականացնում է այլ լիազորություններ:

Մշակույթի բնագավառում պետական քաղաքականության իրականացումն ապահովում է կառավարությունը: Վերջինս միջոցներ է ձեռնարկում մշակութային ցանցի ընդլայնման, զարգացման եւ կարարելագործման, այդ արժեքների օգտագործմանն ու պահպանմանն ուղղությամբ: Աջակցում է արվեստի եւ ժողովրդական գեղարվեստական սրբեղծագործության զարգացմանը, միջոցներ է ձեռնարկում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ավանդույթների պահպանման, մշակույթի զարգացմանն ուղղությամբ եւ այլն: «Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» 06.12.04թ. ՏՏ օրենքը կարգավորում է մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման ընթացքում առաջացող հարաբերությունները: Սույն օրենքով կառավարությունը սահմանում է հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկը, որոնց հանրապետությունից արտահանումն արգելվում է, ինչպես նաեւ մշակութային արժեքների պահպանական ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները կամավոր սկզբունքներով գրանցելու կարգը եւ չափորոշիչները⁴⁷, հաստատում է սույն օրենքով սահմանված փորձաքննության անցկացման կարգը եւ չափորոշիչները⁴⁸, սահմանում է բռնագրավված մշակութային արժեքների փնտրման կարգը եւ իրականացնում է այլ լիազորություններ:

Սահմանադրական կարգի հիմունքներն ամրագրում են, որ պատմության եւ մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածու-

⁴⁷ Տե՛ս ՀՀ կառավարության 12.05.05թ. N 630 որոշումը (ՀՀ ՊՏ N 38 (410) 17.07.05թ.):

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, ՀՀ կառավարության 19.05.05թ. N631 որոշումը:

թյան եւ պաշտպանության ներքո: ՆՃ կառավարությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, նպաստում է սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետությունների փարածքում գրնվող հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը (11-րդ հոդված):

ՆՃ սոցիալ-փնտրեական զարգացումը նախատեսում է նաեւ սոցիալական ծրագրերի կենսագործում: Այդ համակարգում առաջնային տեղ է գրավում բնակչության առողջության պահպանումն ու ամրապնդումը: Առողջապահության հիմնարար դրույթներն արտացոլվել են Սահմանադրության մի շարք հոդվածներում:

Նանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածին համապատասխան՝ յուրաքանչյուրն ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնության եւ սպասարկում ստանալու իրավունք, ինչպես նաեւ անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք, որոնց ցանկը եւ մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

Նանրապետության կառավարությունն ընդհանուր ղեկավարություն է իրականացնում առողջապահության պահպանման նկատմամբ, միջոցներ է ձեռնարկում առողջապահության համակարգի, դրա կազմակերպչիրավական, նյութաբեխնիկական բազային զարգացման, բնակչության առողջապահության պահպանման ու ամրապնդման ուղղությամբ, իրականացնում է բնակչության առողջության պահպանման ծրագրեր, որոշում է դրա զարգացման եւ կատարելագործման հիմնական ուղղությունները, ղեկավարում է առողջապահության մարմիններն ու հիմնարկները, որոշում դրանց գործառնությունները եւ խնդիրները, ծրագրում է բժշկական կրթության, գիտահետազոտական աշխատանքների զարգացումը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով ՆՃ կառավարությունն իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականություն: Մշակում է հիվանդությունների կանխարգելման, փարերային աղտոտների, վթարների հետեւանքների, բնակչության զանգվածային հիվանդությունների վերացման, կանխարգելման ոլորտում գիտաբեխնիկական նվաճումների ներդրմանն ուղղված պետական ծրագրեր: Կազմակերպական միջոցներ է ձեռնարկում բնակչության շրջանում հիգիենիկ դաստիարակության եւ ուսուցման ուղղությամբ:

Կառավարությունը հոգ է փանում դեղամիջոցների պատրաստման, դրանց բացթողման եւ օգտագործման մասին, սահմանում է հանրապետությունում գործող դեղերի եւ դեղանյութերի արտահանման եւ ներմուծման միասնական կարգ, սահմանում, հաստատում է թմրադեղերի, հոգեմեդիկամենտների գանկը:

Սոցիալական ապահովության բնագավառում կառավարությունը միջոցներ է ձեռնարկում պետության կողմից նախատեսված պահանջները բավարարող աշխատանքային պայմանների պահպանման, ինչպես նաեւ ընտանիքի, մայրության եւ մանկության հովանավորության ու պաշտպանության եւ սոցիալական ապահովության այլ իրավունքների իրականացման համար: Մշակում եւ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում կենսաթոշակների համար անհրաժեշտ գործունեության տեսակների ցանկը: Պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ ապահովում է բնակչության առանձին խմբերի սոցիալական արտոնությունների իրականացումը: Կառավարությունը կանոնակարգում է աշխատողների զանգվածային ազատումների չափանիշները, գործազրկության նպաստների չափերը եւ այլն: Պետական բյուջեով նախատեսված հատ-

կացումներով՝ նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացնում է բժշկական օգնության և սպասարկման երաշխավորված ֆինանսավորում՝ անկախ դրանց կազմակերպահրավական տեսակից և սեփականության ձևից:

Բնապահպանության ասպարեզում կառավարությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը, վերարտադրությունը և բարելավումը, բնական պաշարների արդյունավետ օգտագործումը: Մշակում և իրականացնում է բնապահպանական միջոցառումներ, միջոցներ է ձեռնարկում փարերային աղեղները, խոշոր վթարները կանխելու և դրանց հետեւանքները վերացնելու ուղղությամբ: Մթնոլորտային օդի պաշտպանության նպատակով մշակում է համալիր միջոցառումների ծրագրեր, սահմանում է այդ օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի նորմատիվները, արտանետումների պեղական հաշվառման կարգը: Կառավարությունը սահմանում է ընդերքի պեղական միասնական ֆոնդի ստեղծումն ու պահպանումը, դրա պահպանության ծրագրերը, պեղական վերահսկողություն է իրականացնում ընդերքի օգտագործման և պահպանման նկատմամբ:

Կառավարության լիազորությունները փարածվում են նաեւ բուսական և կենդանական աշխարհի պահպանության, ջրային հարաբերությունների կարգավորման, հողային ֆոնդի օգտագործման և պահպանման նկատմամբ:

6) Հանրապետության կառավարության կարեւոր լիազորություններից է ՏՄ պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումը:

Սահմանադրական նշված դրույթի իրականացման նպատակով կառավարությունը լիազորված է ապահովել հանրապետության պաշտպանության քաղաքականության իրականացումը: Այդ առնչությամբ այն հաստատում է զինված ուժերի զինձառայողների ու աշխատողների հաստիքային և այլ գորբերի թվաքանակը, զինվորական հաշվառման, նախագորակոչային պարտաստության կարգերը, ինչպես նաեւ զինհաշվառման մասնագիտությունների ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը, պաշտպանության բնագավառում պեղական լիազոր մարմնի (պաշտպանության նախարարություն) և ՏՄ զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքները:

Կառավարությունը մշակում և հաստատում է պեղական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքը ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրելու պլանը, կարգն ու պայմանները, պեղական ու զորահավաքային պահուստի նյութական արժեքների կուտակման, ապամարագրման, թարմացման և փոխարինման ծրագրերը:

Իր լիազորությունների շրջանակներում կառավարությունը մասնակցում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինաների մշակման աշխատանքներին, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի մշակման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը, ինչպես նաեւ պաշտպանության նպատակով ՏՄ փարածքի օպերատիվ սարքավորման պլանի ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պեղական ծրագրերի մշակման աշխատանքներին և ապահովում դրանց կատարումը:

Կառավարությունը որոշում է ընդունում պարտադիր զինձառայության զորակոչ կազմակերպելու, ընդհանուր կամ մասնակի զորահավաք անցկացնելու վերաբերյալ,

կազմակերպում եւ համակարգում է պետական մարմինների գործունեությունը՝ զինված ուժերի եւ այլ զորքերի ֆինանսավորման, սպառազինման, բնակավորման, էներգետիկ եւ այլ ապահովման, ինչպես նաեւ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների, զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովման բնագավառներում:

Պաշտպանության բնագավառում կառավարությունը ծրագրում եւ ապահովում է ռազմական գիտության զարգացումը, սրեղծում, վերակազմակերպում եւ լուծարում է պաշտպանության ոլորտի կազմակերպությունները, ռազմաուսումնական եւ ռազմագիտական հաստատությունները ու դրանց կառուցվածքային ստորաբաժանումները:

Կառավարությունը կնքում է պաշտպանության ոլորտի միջկառավարական պայմանագրեր, որոշում է ռազմական սպառնալիքների նվազեցման եւ ՏՏ ու այլ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների միջեւ վստահության ամրապնդման ուղղությունները, կազմակերպում է զենքի եւ ռազմական տեխնիկայի, ռազմավարական նշանակության ապրանքների եւ տեխնոլոգիաների արտահանումն ու ներմուծումը, իրականացնում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Կառավարությանն՝ ազգային անվտանգության եւ արդարքին քաղաքականության լիազորությունների վերաբերյալ տե՛ս Սահմանադրության 85-րդ հոդվածի առաջին մասի, 86-րդ հոդվածի երկրորդ մասի մեկնաբանություններում:

7) Հանրապետության կառավարությունն ապահովում է նաեւ հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների ապահովման ուղղությամբ:

Նշված խնդիրների իրականացումն ապահովելու համար կառավարությունը միջոցառումներ է իրականացնում հասարակական կարգի պահպանման, իրավախախտումների դեմ պայքարի ապահովման ուղղությամբ, մասնակցում է օրինականության պահպանման ու ամրապնդման պետական քաղաքականության մշակմանը եւ իրականացմանը, կազմակերպաիրավական միջոցներ է ձեռնարկում իրավակարգի ամրապնդման եւ օրինականության ապահովման կապակցությամբ օրենսդրության կարարելագործման ու զարգացման ուղղությամբ: Իրականացնում է միջոցառումներ քաղաքացիների իրավունքների, օրինական շահերի եւ անվտանգության ապահովման բնագավառում: Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան՝ կառավարությունը լիազորված է պաշտպանելու արտասահմանյան երկրներում գրնվող ՏՏ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, վերականգնելու նրանց խախտված իրավունքները՝ հաշվի առնելով այդ երկրների օրենսդրության եւ ՏՏ միջազգային պայմանագրերի պահանջները:

Մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների ապահովման ասպարեզում կարեւոր նշանակություն ունի քաղաքացու ինքնապաշտպանության իրական երաշխիքների հետ կապված հարաբերությունների կարգավորումը: Այս նպատակով կառավարությունը սահմանել է նաեւ քաղաքացու կողմից գենք ձեռք բերելու կարգը:

Սահմանվում է նաեւ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ծրագրերի իրականացման կարգը: Նման դեպքերում բնակչությանը պարճառված վնասը գնահատվում եւ հատուցվում է: Համարժեք փոխհատուցում է իրականացվում նաեւ այդ իրավիճակներում հասարակության եւ պետության կարիքների համար քաղաքացիների սեփականության փրկապետման եւ ժամանակավոր օգտագործման համար:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման համար կարևոր նշանակություն ունի նրանց ընդունելությունը, որի նկատմամբ կառավարությունն իրականացնում է մշտական հսկողություն:

8) Կառավարությունն իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ գործառույթներ եւ լիազորություններ:

ՆՃ հիմնական օրենքի 89-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Սահմանադրության այս դրույթը պետք է մեկնարանել Նիմնական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային կապից ելնելով: Նամաձայն 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Պերական եւ րերղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնաարար անձինք իրավասու են կարարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Սակայն, եթե Ազգային ժողովի լիազորություններն ունեն միայն սահմանադրական ամրագրում եւ, այդպիսով, փակ են ու վերջնական, ապա կառավարության սահմանադրական լիազորություններով չի ավարվում կառավարության լիազորությունների շրջանակը: Դա նշանակում է, որ ՆՃ Սահմանադրությունից բացի, այլ օրենքներով հնարավոր է նախարեսել կառավարության նոր լիազորություններ կամ սահմանափակել առկա ոչ սահմանադրական լիազորությունները:

ՆՈՂՎԱԾ 90

1. Կառավարությունը պերական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջերային րարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ եւ կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչեւ այդ ժամկերի ավարտը: Բյուջեի հասարարման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վարահույթյան հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 75-րդ հոդվածով նախարեսված կարգով կառավարությանն անվարահույթյուն չի հայրնում, ապա պերական բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հասարարված:

2. Բյուջեի հասարարման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվարահույթյուն հայրնելու դեպրում նոր կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը հայրանության արժանանալուց հերոտ րասար օրվա ընթացքում, որը քննարկվում եւ հասարարվում է սույն հոդվածով նախարեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում:

1. Սահմանադրական փոփոխություններով սահմանվել է բյուջեի նախագիծը խորհրդարան ներկայացնելու ավելի վաղ ժամկեր՝ նախկին 60 օրվա փոխարեն 90 օր: Դա հնարավորություն կընձեռի, որպեսզի Ազգային ժողովի պարգամավորներն ավելի հանգամանալից կերպով ձանոթանան պերական բյուջեի նախագիծին եւ քննարկման ժամանակ կարարեն էական առաջարկություններ հանրապերության կարետրագուն ֆինանսական ծրագրի առնչությամբ:

ՆՃ Ազգային ժողովի նախագահը, պերական բյուջեի նախագիծն սրանալուց հե-

ստ երկօրյա ժամկետում, խորհրդակցելով ՏՏ վարչապետի հետ, ինչպես նաև հարցը քննարկելով Ազգային ժողովի աշխարհանքային խորհրդակցությունում՝ կազմում է ԱԺ մշտական հանձնաժողովներում եւ դրանց համարելով նիստերում պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկությունների ներկայացման եւ ՏՏ կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետների ժամանակացույց, որը ներկայացված պետական բյուջեի նախագծի հետ ուղարկում է պարզամակորներին, խմբակցություններին, պարզամակորական խմբերին, մշտական հանձնաժողովներ եւ ՏՏ վերահսկիչ պալատ: Ժամանակացույցն ուղարկվում է նաև ՏՏ կառավարություն:

ՏՏ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջեարային հարցերի մշտական հանձնաժողովը՝ իր որոշմամբ, պետական բյուջեի նախագիծը շրջանառության մեջ դրվելուց հետո 10-օրյա ժամկետում Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում նախագծի ամփոփ նկարագիրը:

Նախքան Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի նախագծի քննարկումներ սկսելը, նախագծի նախնական քննարկումներ են փոխադրվում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին եւ դրանց համարելով նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև ՏՏ վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսվող փակ ծրարի նյութերը քննարկվում են ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի ու ֆինանսավարկային եւ բյուջեարային հարցերի մշտական հանձնաժողովների համարելով դռնփակ նիստում, որին կարող են մասնակցել պարզամակորները, ՏՏ վերահսկիչ պալատի նախագահը, ինչպես նաև ՏՏ վարչապետի լիազորած անձինք: Պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին իրենց առաջարկությունները պարզամակորները, խմբակցությունները, պարզամակորական խմբերը եւ մշտական հանձնաժողովներն ԱԺ աշխարհակազմի միջոցով ներկայացնում են ՏՏ կառավարություն՝ նաև էլեկտրոնային կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Իր հերթին, ՏՏ կառավարությունը ԱԺ մշտական հանձնաժողովներում նախնական քննարկումների արդյունքով կարող է սահմանված ժամկետում փոփոխություններ կատարել բյուջեի նախագծում:

ՏՏ կառավարությունը խմբագրված բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում կցելով ըստ հոդվածների հաջորդականության խմբավորված առաջարկությունների ամփոփաթերթիկը, որում նշվում են առաջարկության հեղինակը, հոդվածի համարը, որին վերաբերում է առաջարկությունը, առաջարկության փոքստը կամ բովանդակությունը, ինչպես նաև առաջարկության վերաբերյալ ՏՏ կառավարության եզրակացությունը: Առաջարկությունները, որոնց վերաբերյալ ՏՏ կառավարությունն ամփոփաթերթիկում հայտնել է դրական կարծիք, պարտադիր ընդգրկվում են պետական բյուջեի նախագծում:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումն Ազգային ժողովի նիստում սկսվում է ոչ ուշ, քան բյուջեարային փարվան նախորդող նույնքեր ամսվա առաջին քառօրյա նիստում: Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ներկայացման համար ՏՏ կառավարությունը կարող է հանդես գալ երեք զեկուցմամբ՝ մինչև 90 րոպե ընդհանուր տևողությամբ: Զեկուցողները ներկայացնում են նաև նախնական քննարկումների արդյունքներով նախագծում կատարված փոփոխությունները:

Մինչև 30-ական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով հանդես են գալիս՝

1/ ՆՏ կենտրոնական բանկի նախագահը՝ ներկայացնելով պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Կենտրոնական բանկի եզրակացությունը.

2/ ԱԺ Ֆինանսավարկային և բյուջեփայլի հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

3/ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինականության և հիմնավորվածության մասին հանձնաժողովի եզրակացությունը.

4/ ըստ ցանկության ԱԺ մյուս մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

ԱԺ պարզամավորները հարցեր են փայլա զեկուցողներին, ինչից հետո փեղի է ունենում մարբերի փոխանակություն, որի ավարտից հետո ԱԺ նիստը վարողը հայտարարում է պետական բյուջեի նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 4 օրով: ԱԺ պարզամավորները, խմբակցություններն ու պարզամավորական խմբերն իրենց առաջարկությունները, իսկ մշտական հանձնաժողովները՝ իրենց առաջարկություններն ու եզրակացությունները պետական բյուջեի նախագծի քննարկման ընդմիջելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, պաշտոնապես, ինչպես նաև էլեկտրոնային կրիչի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնում են ԱԺ աշխատակազմ, որը ներկայացման ժամկետը լրանալուց հետո մեկ ժամվա ընթացքում, դրանք ուղարկում է ՆՏ կառավարություն:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվելուց առնվազն 24 ժամ առաջ ՆՏ կառավարությունը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական փորբերակը և սահմանված կարգով կազմված ամփոփաթերթիկը, ԱԺ պարզամավորների թվին համապատասխան, հանձնում է ԱԺ աշխատակազմ, որն ապահովում է դրանց փրամադրումը պարզամավորներին Ազգային ժողովի նստավայրում:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվելուց հետո ՆՏ վարչապետը կամ Ֆինանսների նախարարը մինչև մեկ ժամ փետողությամբ ելույթում ներկայացնում է նախագծի վերջնական փորբերակը և ամփոփաթերթիկում ներառված առաջարկությունները: Այնուհետև զեկուցողներին հարցեր են փայլա պարզամավորները: Նայտ ներկայացնելու դեպքում մինչև 10-ական րոպե փետողությամբ մեկական ելույթի իրավունք ունեն խմբակցությունների և պարզամավորական խմբերի, մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները, Ազգային ժողովի նախագահը և նրա փեղակալները: Ելույթներից հետո մինչև 30 րոպե փետողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս ՆՏ վարչապետը կամ Ֆինանսների նախարարը, որը կարող է առաջարկել պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական փորբերակն ընդունել որպես օրենք կամ բյուջեի հաստատման առնչությամբ դնել ՆՏ կառավարության վստահության հարցը: Ընդ որում՝ եթե պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովի նիստում քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո:

Կառավարությունն Ազգային ժողովի կանոնակարգի 60-րդ հոդվածի համաձայն իր ներկայացրած օրենքի նախագիծն առաջին, երկրորդ ընթերցումներով կամ որպես օրենք (ցանկացած ընթերցման ժամանակ) ընդունելու առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Սակայն Սահմանադրության 75-րդ հոդվածին համապատաս-

խան՝ կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի առնչությամբ վստահության հարցը նույն նստաշրջանում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ: Սա վերաբերում է նաև բյուջեի նախագծին: Այն յուրահավույթ օրենքի նախագիծ է, որը գործում է բյուջեարային մեկ փարվա ընթացքում:

Եթե պետական բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական փարբերակն ընդունելու մասին ՏՏ կառավարության առաջարկը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա կառավարությունը կարող է բյուջեի հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը: Սահմանադրական այս դրույթը կարևոր նշանակություն ունի կառավարության բնականոն գործունեության իրականացման համար, քանի որ վերջինս է պատասխանատվություն կրում բյուջեի կատարման համար: Ցավոք, ՏՏ Սահմանադրությունը չի նախատեսում կառավարության քաղաքական պատասխանատվությունը բյուջեն չկատարելու համար: Իսկ դա կառավարության խորհրդարանի առջև ունեցած պատասխանատվության կարևոր գրավականն է: Եթե ՏՏ կառավարության կողմից իր վստահության հարցը դնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացնում կամ նման նախագիծ ներկայացվելու դեպքում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ՏՏ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում չի ընդունվում, ապա պետական բյուջեն, ՏՏ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված: Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուրջ, քան 48, եւ ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում:

Բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը հավանության արժանանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, որը քննարկվում է հաստատվում է 30 օրվա ընթացքում:

Մինչև բյուջեարային փարվա սկիզբը ՏՏ պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ փարվա բյուջեի համամասնություններով: Նշված դեպքում մինչև պետական բյուջեի հաստատումը բյուջեից շարունակվում է օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների եւ նպաստների ֆինանսավորումը՝ ամբողջ ծավալով:

Կառավարության վստահության հարցի կապակցությամբ վարչապետը կամ կառավարության լիազոր ներկայացուցիչը, քվեարկությունից անմիջապես հետո, կարող է պահանջել ընդմիջում մինչև հաջորդ նիստը՝ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կառավարության վստահության հարցը դնելու կողմնորոշման համար: Եթե ընդմիջումից անմիջապես հետո վարչապետն օրենքի նախագծի ընդունման առնչությամբ դնում է կառավարության վստահության հարցը, սակայն Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 107-րդ հոդվածով սահմանված կարգով կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում, կամ այդ որոշումը ներկայացվելուց հետո չի ընդունվում, ապա օրենքի նախագիծը համարվում է համապատասխան ընթերցմամբ կամ որպես օրենք ընդունված: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված կարգով կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

2. Սահմանադրության 90-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական կարգավորման առարկան այն դեպքն է, երբ բյուջեի հաստատման առնչությամբ խորհրդարանը կառավարությանը հայտնում է անվստահության քվե: 90-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանման մեթոդաբանական հիմքը 1-ին մասն է: Եթե 1-ին մասով նախատեսված կարգով բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովը կառավարությանն անվստահություն է հայտնում, ապա նոր ձևավորված կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը հավանության արժանանալուց հետո՝ փաստ օրվա ընթացքում: Դրանից հետո բյուջեի նախագիծը քննարկվում է հաստատվում է 90-րդ հոդվածով նախատեսված կարգով է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված ընթացակարգին համապատասխան: Քննարկման է հաստատման գործընթացը պետք է իրականացվի երեսուն օրվա ընթացքում: Ժամկետը հաշվվում է բյուջեի նախագիծն Ազգային ժողով ներկայացնելու պահից, իսկ երեսուներորդ օրն այն պետք է ընդունված լինի:

Գ Լ ՈՒ Խ 6

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՂՎԱԾ 91

1. Տայասարանի Տանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Տայասարանի Տանրապետության անունից:

1. Տայասարանի Տանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (Սահմանադրության 5-րդ հոդվ. 1-ին մաս): Մեկնաբանվող հոդվածը Սահմանադրության 5-րդ հոդվածի այս դրույթի է «Դատական իշխանությունը» վերաբառությամբ 6-րդ գլխի կոնկրետացումն է արդարադատության իրականացման գործառույթի վերաբերյալ:

Ներկայումս, մինչև է բուն հոդվածի իրավական բովանդակության բացահայտումը, անհրաժեշտ է հստակեցնել Սահմանադրության 5-րդ և մեկնաբանվող հոդվածում օգտագործված «դատական իշխանություն», «դատարան», «արդարադատություն» հասկացությունների հարաբերակցությունը:

Դատական իշխանության, արդարադատության և դատավարության հարաբերակցության հիմնախնդիրն իրավաբանական գրականության մեջ միանշանակորեն չհասկացված հարցերից մեկն է¹:

«Դատական իշխանություն» հասկացությունը մասնանշան է լիազորությունները, գործառույթները, բայց ոչ դրանք իրականացնողին: Դատական իշխանության կրող սուբյեկտը հարույժ կարգավիճակ ունեցող պետական մարմիններն են՝ դատարանները:

Իշխանության յուրաքանչյուր ճյուղ իր գործառույթներն իրականացնում է որոշակի մարմինների միջոցով՝ համապատասխան ծառայողներով ու պաշտոնյաներով: «Դատական իշխանություն» եզրույթը ենթադրում է գործառույթ, լիազորություն, որը պետք է ունենա կրող, մարմնավորող սուբյեկտ: Այդ դերում հանդես են գալիս դատարանները: «Դատարան» եզրույթն իրավաբանական իմաստով բարդ և բազմակողմանի նշանա-

¹ Նշված հասկացությունների հարաբերակցությունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, երբեմն էլ՝ իրար հակասող դիրքորոշումներից: Դիրքորոշումների բազմազանությունը պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքով: Առաջին՝ հետխորհրդային իրավագիտության մեջ առայժմ չկա միասնական, միակերպ հասկացվող հայեցակարգ դատական իշխանության հասկացության, դատական իշխանության գործառույթների և իրականացման ձևերի վերաբերյալ: Երկրորդ՝ հիմնախնդրի պարզաբանման մեջ որոշակի խոչընդոտ են առաջացնում գործող դատարանակազմական և դատավարական օրենքները, որոնք դատարանների գործունեությունը նշելու համար օգտագործում են զանազան եզրույթներ՝ «դատական իշխանություն», «արդարադատություն», «դատարանի կողմից գործի քննում և լուծում», «դատավարություն» և այլն: Չխորանալով զանազան մոտեցումների և տեսակետների առանձնահատկությունների քննարկման մեջ՝ ասենք, որ, մեր կարծիքով, նշված հիմնախնդրի տեսամեթոդաբանական առումով ճիշտ մեկնաբանությունը պետք է կառուցել իշխանությունների տարանջատման տեսությամբ համապատասխանող դատական իշխանության ամբողջական հայեցակարգի վրա:

կություն ունեցող հասկացություն է: Տայասարանի Տանրապետության օրենսդրության մեջ այն օգտագործվում է մի քանի իմաստներով:

1) Դատարանն ընկալվում է որպես պետության մարմինների համակարգում հատուկ տեղ զբաղեցնող եւ հատուկ կարգավիճակ ունեցող *պետական մարմին*, որն անկախ եւ ինքնուրույն է պետական իշխանության այլ ճյուղերի մարմիններից եւ Սահմանադրությամբ ու օրենքներով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, այդ թվում՝ արդարադատություն: Դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, կազմված է օրենքով սահմանված կարգով նշանակված (ընտրված) դատավորներից, ովքեր գործում են պրոֆեսիոնալիզմի հիման վրա:

2) «Դատարան» հասկացությունն ընդգրկում է նաեւ դատական համակարգի կառուցվածքային միավորները՝ *արշանները եւ օղակները*, որոնցից յուրաքանչյուրը նշելու համար օգտագործվում է «դատարան» եզրույթը, ինչը ցույց է տալիս դրա տեղը եւ կարգավիճակը դատական համակարգում:

3) «Դատարան» հասկացության իրավաբանական իմաստներից մեկն էլ բացահայտում է *դատական կազմը* (միանձնյա կամ կոլեգիալ), որն օրենքի համաձայն իրավասու է քննելու եւ լուծելու կոնկրետ գործը:

Դատական իշխանությունը պետության հատուկ մարմինների՝ դատարանների բացառիկ իրավագործությունն է, որի հիմնական բովանդակությունն իրավաբանորեն միջնորդավորված սոցիալական կոնֆլիկտների քննությունն ու լուծումն է՝ հատուկ դատավարական ձեւերով: Այդպիսով՝ **դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն եւ անկախ ճյուղ է, որը պարկանում է բացառապես պետական հատուկ մարմիններին՝ դատարաններին, կոչված է հատուկ դատավարական կարգով լուծելու իրավական բնույթ ունեցող սոցիալական կոնֆլիկտները, այսինքն՝ իրականացնել արդարադատություն:**

Սակայն դատական իշխանության խնդիրը (գործառույթը) ոչ միայն սոցիալական կոնֆլիկտների լուծումն է, այլեւ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի եւ կացությունների հաստատումն է՝ քաղաքացիական ոլորտում, եւ դատական վերահսկողությունը՝ քրեական դատավարության ոլորտում: Սակայն, ի վերջո, դատական իշխանության գլխավոր խնդիրն *արդարադատության* իրականացումն է, որովհետեւ մնացած ամեն ինչ իր բնույթով երկրորդական նշանակություն ունի դատարանների գործունեության մեջ կամ էլ նպատակաուղղված է կամ հնարավոր կոնֆլիկտների կանխմանը, կամ «գլխավոր» կոնֆլիկտի արդյունավետ եւ արդարացի լուծմանը:

Արդարադատությունը Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարարադիր որոշումների օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խտրազույն պահպանմամբ՝ համապարասխան դատավարական ձեւերով, եւ ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն եւ լուծելուն: Այսպիսով, արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման եղանակը, միջոցը:

Այսպես՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի եւ մեկնաբանվող հոդվածի 1-ին մասի համակարգային մեկնաբանումից բխում են հետեւյալ իրավական դրույթները.

1/ արդարադատությունը դատական իշխանության իրականացման եղանակներից մեկն է:

2/ Արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ որպես

պետության հարուկ մարմիններ:**3/ Դարարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:**

Արդարադատությունը դարական իշխանության իրականացման եղանակներից մեկն է: Դարական իշխանության՝ որպես միասնական պետական իշխանության մեկ թեւի, հիմնական խնդիրները քաղաքացիների եւ նրանց կոլեկտիվների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի ապահովումն է, դրանք հնարավոր բոլոր խախտումներից պաշտպանելը, ծագող վեճերի եւ այլ իրավական հարցերի լուծումը, իշխանության մարմինների եւ դրանց պաշտոնապար անձանց նորմափիլ իրավական ակտերի նկատմամբ հսկողությունը, իրավախախտումների դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելը, այլ կերպ ասած՝ արդարադատության իրականացումը: Ներելաբար, արդարադատությունը պետության հանրային իշխանական գործունեության տեսակ (ձեւ) է, որի էությունը իրավունքի մասին վեճի լուծման մեջ է: Այլ կերպ ասած՝ այն դարարանի կողմից սահմանադրական սկզբունքների վրա հիմնված դարավարական ձեւի շրջանակներում իրականացվող պետական գործունեություն է՝ ուղղված սոցիալ-իրավական վեճերի օրինական եւ հիմնավոր լուծմանը: Պետական գործունեության այդ հարուկ տեսակում դարարաններն իրացնում են դարական իշխանությունը քաղաքացիական, քրեական, վարչական գործերը, ինչպես նաեւ սահմանադրաիրավական վեճերը՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված կարգով քննելու միջոցով: Դարարանն այսպեղ մեկնաբանում եւ գործով պարզված հանգամանքների նկատմամբ կիրառում է իրավունքի նորմը (նորմերը):

Իշխանության յուրաքանչյուր թեւ ինքնուրույն է եւ անկախ դրա մյուս թեւերից: Դրանցից յուրաքանչյուրը, Սահմանադրությանը, օրենքներին եւ ՏՏ վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան (ՏՏ դարական օր.-ի 1-ին եւ 8-րդ հոդվածներ), իրենց յուրահարուկ մեթոդներով ու ընթացակարգով իրականացնում է իր գործառնությունները, սակայն իշխանության բաժանման համակարգում փոխկապակցված է իշխանության մյուս թեւերի հետ: Այսպես՝ օրենսդիր իշխանությունն է որոշում պետության դարական համակարգը, դարարանների լիազորությունները եւ դարավարության կարգը, դարավորների իրավական կարգավիճակը: Գործադիր իշխանությունն է ապահովում դարարանների գործունեության նյութական բազան, իրականացնում դարական կադրերի պատրաստումը եւ այլն: Դարական իշխանությունն օժտված է գործադիր մարմինների կողմից հրատարակվող նորմափիլ ակտերի ստուգման, պետական մարմինների միջեւ վեճերի լուծման, քաղաքացիների կողմից պետական մարմինների եւ դրանց պաշտոնապար անձանց գործողությունների (անգործության) դեմ տրվող բողոքների քննության եւ լուծման լիազորություններով: Նենց այս հանգամանքներն են, որ ապահովում են օրենսդիր, գործադիր եւ դարական իշխանությունների փոխադարձ վերահսկողությունը եւ հակակշռելիությունը (տե՛ս Սահմանադրության 5-րդ հոդվ. 1-ին մասի մեկնաբանությունները):

Չնայած իշխանության տարբեր ճյուղերի փոխհամագործակցության եւ հավասարակշռման սահմանադրական պահանջին եւ այն դրույթին, ըստ որի՝ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնապար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ եւ օրենքներով, պետական գործունեության պրակտիկայում հաճախ տարածայնություններ ու հակասություններ են առաջանում նրանց միջեւ, իշխանության օրենսդիր եւ գործադիր ճյուղերը երբեմն-երբեմն փորձեր են կատարում գերադասել ի-

րենց կամ միջամտել մյուս ճյուղերի գործունեությանը: Դա, մասնավորապես, վերաբերում է գործադիր իշխանությանը, որն ավանդաբար, հատկապես՝ իրավական ժխտողականության (նիհիլիզմի) խորհրդային փարիների ընթացքում ճնշել է դատական իշխանությանը և ներկայումս մեծ դժվարությամբ է ընդլայնում դատարանի և արդարադատության լիարժեք անկախության, սահմանադրական կարգի, ժողովրդավարության, օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում դատարանների (դատական իշխանության) առաջադարձ դիրքի հետ: Միայն անկախ Նայասրանի Սահմանադրությունը և դրանում կատարված փոփոխությունները հնարավորություն են ընձեռեցին Սահմանադրության մեջ ընդարձակ կերպով ամրագրել դատական իշխանությանը վերաբերող հիմնահարցերը, այդ թվում՝ արդարադատության սկզբունքները (գլուխ 6), իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի մրցակցության և կողմերի հավասարության ու դատավարական իրավահավասարության սկզբունքներով գործող դատարաններում վիճարկել իշխանությունների անիրավաչափ իրավական ակտերն ու գործողությունները (Սահմանադրության 14.1, 18, 19-րդ, ՏՏ դատական օր.-ի 9, 15, 17-րդ, ՏՏ քաղ. դատ. օր.-ի 5, 6-րդ, ՏՏ քր. դատ. օր.-ի 8, 23-րդ, ՎԴՕ-ի 5-րդ, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 5-րդ հոդվածներ):

Դատական իշխանության ընդհանուր գործառնությունը կոնկրետաբանում է այդ իշխանության դրսեւորման մի շարք եղանակներում և իրականացվում է դատավարության օրենսդրությամբ սահմանված ձևով: Արդարադատություն իրականացնելուց զատ, դատական մարմիններն իրականացնում են նաև մի շարք այլ գործառնություններ, մասնավորապես՝ սպորտադաս դատարանների նկատմամբ վճռաբեկ դատարանի կողմից վերահսկողություն և նրանց համար դատական նախադեպերի սահմանում, իրավական նորմերի պաշտոնական նորմատիվ մեկնաբանում, իրավաբանական փաստերի հաստատում, հաշվառման կազմակերպում, պետական այլ մարմինների հետ շփումներ և այլն: Ահա թե ինչու ՏՏ դատական օրենսգրքի 1-ին հոդվածը, ի փարբերություն Սահմանադրության 91-րդ հոդվածի 1-ին մասի «... արդարադատությունն իրականացնում են ...» բառակապակցության փոխարեն օգտագործում է «Դատական իշխանությունն իրականացնում են ...» առավել ընդհանրական ձեւակերպումը, որը, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ օգտագործել նաև Սահմանադրության 91-րդ հոդվածում:

Դատական իշխանությունը պետական իշխանության փարապետակ (ճյուղ) է, որը ՏՏ Սահմանադրությանը և դատական օրենսգրքին համապատասխան հիմնադրված դատարաններն իրականացնում են ինքնուրույն, անկախ ու առանձնացված ձևով: Դրա էությունը կայանում է պետության հատուկ գործառնությի՝ արդարադատության իրականացման մեջ: Վերջինս դատարանների մենաշնորհն է և չի կարող դրվել որեւէ այլ մարմնի վրա, իրականացվում է միայն դատավարության (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, վարչական) օրենքով սահմանված կարգով և դատավարական որոշակի ձեւերով: Արդարադատության իրականացման ձեւը դատական նիստն է, որին մասնակցում են գործի ելքով շահագրգիռ անձինք և նրանց ներկայացուցիչները:

Արդարադատության իրավական բնորոշումը և բովանդակությունը, այլ կերպ ասած՝ դատարանների գործունեության բովանդակությունը, Սահմանադրության մեջ փրված չէ: Սակայն սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության օրենսդրության վերլուծությունը ցույց է փայլիս, որ այն իրականացվում է՝ ա) Սահմանադրության 100-րդ հոդվածում նշված գործերը սահմանադրական դատարանի, բ) մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, պետության և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը

շոշափող քաղաքացիական (բառիս լայն առումով) և վարչական գործերն ընդհանուր իրավասության և վարչական դափարանների, գ) հանցագործությունների վերաբերյալ գործերը՝ դարձյալ ընդհանուր իրավասության դափարանների դափարական նիստերում քննելու և լուծելու միջոցով (նշվածները ոչ սպառիչ, բայց սահմանված էին 1998թ. հուլիսի 18-ի «Դափարանակազմության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, սակայն, ցավոք, տեղ չգտան Դափարանակազմության մասին, Դափարակորի կարգավիճակի մասին և Արդարադատության խորհրդի մասին օրենքները միավորող Դափարական օրենսգրքում, ըստ ենթակայության բաժանվեցին «Սահմանադրական դափարանի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դափարության օրենսգրքերում): Թերևս, կարելի է առանձնացնել Սահմանադրության 93-րդ հոդվածը, որում միանշանակ սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դափարանը (տե՛ս 93-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Միայն դափարանների կողմից և Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան արդարադատությունն իրականացվելու սահմանադրական դրույթն իր մանրամասն կարգավորումն է սրացել, օրինակ, ՀՀ քր. դատ. օր.-ում, որի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով արդարադատությունն իրականացնում են միայն դափարանները: Արդարադատության ներքին ստրուկտուրայի մասին արգելվում է»: Իսկ սա նշանակում է, որ ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, ինչպես նաև ենթարկվել քրեական պատժի այլ կերպ, քան դափարանի դափարվճող և օրենքին համապատասխան (ՀՀ քր. դատ. օր.-ի 24-րդ հոդվ. 2-րդ մաս)²: Ըստ որում, դափարության (սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական) օրենսդրությունն արդարադատության իրականացումն ապահովում է համապատասխան երաշխիքներով, ոչ միայն հռչակում է դափարանների անկախությունը և պարասխանարվություն սահմանում նրանց գործունեությանը միջամտելու համար, այլև մանրակրկիտ կերպով սահմանում է դափարական գործողությունների հաջորդականությունը, դափարության մասնակիցների իրավունքներն ու պարականությունները, ապացույցների հերազոտման, դափարական ակտերի կայացման, դրանց բողոքարկման կարգը և այլն:

Հարց է առաջանում. իսկ ինչու՞ է օրենսդիրն արդարադատության իրականացումը վերապահել միայն դափարանին: Սահմանադրության և դրա հիման վրա ու դրան համապատասխան ընդունված օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դափարական մարմինները, իրենց կազմակերպման յուրահատկության և գործունեության դափարավարական ձևի ուժով, դրված են հատուկ պայմանների մեջ, որոնք հնարավորություն են տալիս նրանց ըմբռնել քաղաքացիական և վարչական գործերով իրավախախտման, քրեական գործերով՝ հանցագործության բարդ հանգամանքները, պարզել գործով ճշմարտությունը, ճիշտ մեկնաբանել և կիրառել նյութական և դափարության օրենք-

² Քաղ. դատ. օր.-ը և ՎԴՕ-ն քաղաքացիական և վարչական գործերով արդարադատություն իրականացնելու դատարանի իրավունքը չեն կոնկրետացրել Սահմանադրության 91-րդ հոդվածին համապատասխան, որի պատճառով էլ այդ օրենսգրքերում չի ձևակերպվել քաղաքացիական կամ վարչական դատավարության համար անհրաժեշտ այն դրույթները, ըստ որոնց՝ քաղաքացիական կամ վարչական գործերով արդարադատությունն իրականացվում է քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսդրությամբ սահմանված կանոններով (տե՛ս, օրինակ, ՌԴ քաղ. դատ. օր.-ի 5-րդ հոդվ. 1-ին մասը): Դրանք բավարարվել են ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի այն դրույթով, որ դատարաններն արդարադատություն իրականացնում են Սահմանադրությանը, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան, բայց դա չի խանգարել նշված օրենսգրքերում դատավարության մանրամասն կարգ սահմանելուն:

ները, կայացնել օրինական, հիմնավորված եւ պարճառաբանված (արդարացի) դատարկան ակտեր: Եվ քանի որ պետությունը Մահմանադրության ուժով արդարադատության իրականացումը վերապահել է միայն դատարանին, այն դիտարկում է որպես նրա մենաշնորհ, ուստի եւ մնացած բոլոր մարմիններին ու հասարակական միավորումներին հրամայական ձեւով արգելել է զբաղվել դատական գործունեությամբ եւ իրավախախտների նկատմամբ արդարադատության ձեւով պետական հարկադրանք իրականացնել: Ահա թե ինչու Մահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է» ընդհանրական դրույթը հավասարապես վերաբերում է նաեւ դատական իշխանության, արդարադատության իրականացման իրավունքի յուրացմանը (ՏՏ քր. օր.-ի 317-րդ հոդվ., քր. դատ. օր.-ի 24-րդ հոդվ. 3-րդ մաս):

Արդարադատության իրականացումը միայն դատարանին հանձնելը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով: Դատարանների կողմից իրացվող դատական իշխանությունը՝ ա) միասնական պետական իշխանության իրականացման բնագավառում լիարժեք ինքնուրույն եւ անկախ է իշխանության օրենսդիր (իրավաստեղծ) եւ գործադիր (իրավակիրառ, իրավապահպան) ճյուղերից, ենթարկվում է միայն Մահմանադրությանը եւ օրենքներին, բ) միայն դատական իշխանությանն է վերապահված քաղաքացիական, քրեական, վարչական գործերով, ինչպես նաեւ սահմանադրաիրավական վեճերով արդարադատություն իրականացնելու պետական գործառույթը, դատական կարգով հաստատելու անձի մեղավորությունը կամ անմեղությունը, մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ օրենքով սահմանված պարիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու եւ արդարացնելու իրավունքը, պետության անունից լուծելու վեճերը, կիրառելու հարկադրանքի միջոցներ, քաղաքացուն կամ իրավաբանական անձին գրկելու գույքային, անձնական կամ այլ իրավունքներից, օրինակ՝ սեփականությունից (Մահմանադրության 31-րդ հոդվ.), գ) ՏՏ-ում արդարադատությունը հենվում է Մահմանադրության եւ օրենսդրության մեջ ամրագրված ժողովրդավարական սկզբունքների վրա, այն է՝ 1) դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին, 2) արդարադատություն իրականացնելիս արգելվում են ամեն տեսակի սահմանափակումները՝ կախված քաղաքացիների սեռից, ռասայից, մաշկի գույնից, այլ հանգամանքներից, 3) յուրաքանչյուրին երաշխավորվում է իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանություն, 4) գործերի քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է, անցկացվում է շահագրգիռ անձանց ներկայությամբ, կողմերի մրցակցության եւ իրավահավասարության պայմաններում. դ) իրավական պետությանը ներհատուկ համակարգում, որպես իշխանության այլ ճյուղերի լիազորությունների հակակշիռ, դատական իշխանությանն է վերապահված նաեւ դրանց որոշումների, գործողությունների (անգործության) նկատմամբ դրված դատական վերահսկողության իրականացումը, որպեսզի բացառվի իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից (Մահմանադրության 2-րդ հոդվ. 3-րդ մաս), ե) դատարանների կողմից կայացված որոշումները հոժարական չկատարվելու դեպքում դրանց կատարումն ապահովվում է պետական հարկադրական ուժով՝ ԴԱՏԿ մասին ՏՏ օրենքով հստակորեն սահմանված կարգով, եւ, ամենակարեւորը՝ զ) իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությամբ ցանկացած իրավական հարցով դատարան դիմելու իրավունքը մատչելի է բոլորի եւ յուրաքանչյուրի համար (Մահմանադրության 14.1, 18, 19, 20, 31, 91, 97 եւ 101-րդ հոդվածներ): Արդարադատության իրականացման միասնական սկզբունքների անշեղ կիրառմանը նպաստում են ոչ միայն Մահմանադրության 6-րդ գլխի հիմնարար

նորմերը, այլ նաև ՏՏ դարական օրենսգրքում, «Դարախազության մասին» ՏՏ օրենքում, ՏՏ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում, ԴԱՏԿ մասին ՏՏ օրենքում ամրագրված դրույթները: Այդ դրույթները համընդհանուր բնույթ ունեն, արդարադատության հիմնարար սկզբունքներ են և ՏՏ ներպետական օրենսդրության մեջ միջազգային իրավական ակտերի միասնացման (ինտեգրման) արդյունք են (տե՛ս Սահմանադրության 18-րդ հոդվ. 1-ին մասի մեկնաբանությունները):

Դարական իշխանության սահմանադրական հիմունքները, այսինքն՝ դրա սահմանադրական կարգավորումն ապահովող նորմերն ամրագրված են ոչ միայն Սահմանադրության 6-րդ գլխում: Սահմանադրությունը նշանակալից ուշադրություն է դարձնում դարական իշխանության հետ անհարի փոխհարաբերության կարգավիճակին, Սահմանադրության 2-րդ գլխում ճանաչում և ամրագրում է արդարադատության բնագավառում իրացվող նրա հետեյալ իրավունքները. յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու (օրենքով նախատեսված դեպքերում պետական միջոցների հաշվին) իրավունք, հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատավճռով (անմեղության կանխավարկած): Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը, յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման, ինչպես նաև ներման կամ նշանակված պարիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք, անձը չի կարող կրկին անգամ դատվել միևնույն արարքի համար, բուժողին պարճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով (տե՛ս Սահմանադրության 20, 21, 22-րդ հոդվածների մեկնաբանությունները): Նշվածները եւս սահմանադրական դատավարական սկզբունքներ են, անբաժան են դարական իշխանությունից ու արդարադատությունից և պարտադիր կարգով կիրառվում են արդարադատության իրականացման ժամանակ, առանց որի այն արդյունավետ լինել չի կարող:

Դատարաններից բացի, որեւէ այլ մարմնի կամ հասարակական միավորման կողմից արդարադատության իրականացումը ոչ միայն կհակասեր իշխանությունների բաժանմանը և Սահմանադրության 91-րդ հոդվածին, այլ նաև կսահմանափակեր արդարադատության մատչելիությունը և դարական պաշտպանությունը (Սահմանադրության 14.1, 18, 43-րդ հոդվածներ): Մյուս կողմից, դատարանների վրա չեն կարող դրվել արդարադատության իրականացման և իշխանությունների բաժանման հետ կապ չունեցող գործառույթներ:

Վերը նշվածներից, իրենց հերթին, բխում են գործնական բնույթի մի շարք եզրակացություններ՝

ա) այլ պետական և հասարակական մարմիններն ու կազմակերպությունները չպետք է խախտեն դատարանի գործառույթները և փորձեն լուծել դատարանի բացառիկ իրավասության օրենքով հանձնված գործերը,

բ) այլ մարմինների և կազմակերպությունների կողմից իրենց իրավասության սահմաններում իրավական հարցերի լուծումը, ասենք՝ դատախազական կամ վարչական մարմինների, արբիտրաժային փոխբունալի, կոլեկտիվ աշխատանքային վեճեր քննող հաշտեցման հանձնաժողովների, նոտարիատի գործունեությունը, արդարադատության իրականացում չի համարվում,

գ) երբ իրավական հարցը (վեճը) օրենքով քննարկվում է մի քանի մարմինների,

այդ թվում՝ դադարանի կողմից, ապա վերջնական է համարվում կայացված դադարական ակտը,

դ) արբիտրաժային փրիբունալի վճռի կատարման համար կատարողական թերթ փալիս է դադարանը, որի ընթացքում նա ստուգում է այդ վճռի օրինականությունը (Առեւտրային արբիտրաժի մասին» ՏՏ օրենքի 36-րդ հոդվ.),

ե) վարչական կարգով կայացված որոշումները կարող են բողոքարկվել դադարանում (ՏՏ քաղ. օր.-ի 13-րդ, ՎԴՕ-ի 8-րդ հոդվածներ):

Վերը նշված հարցերի ճիշտ էլ արագ լուծման համար, իհարկե, կարևորվում է նաև ՏՏ-ում գործող դադարական համակարգը, դադարանակազմական հաշվենկար սկզբունքների կիրառումը, ինչպես նաև «Սահմանադրական դադարանի մասին» ՏՏ օրենքով, ՏՏ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված գործերի ենթակայության և ընդդատության կանոնների պահպանումը, նկատի ունենալով, որ ոչ ոք չի կարող գրկվել իր գործն այն դադարանում և այն դադարվորի կողմից քննվելու իրավունքից, որի ընդդատությանն է այն հանձնված օրենքով (դատական համակարգի բարելավումների անհրաժեշտության մասին մանրամասն տես ՏՏ սահմանադրական դադարանի 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՌ-758 և 2008 թ. դեկտեմբերի 2-ի ՄԴՌ-782 որոշումները և վերջիններիս հիման վրա 2009թ. փետրվարի 5-ին ընդունված՝ «Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 2009թ. ապրիլի 7-ի՝ «Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՏՏ օրենքներն ու Սահմանադրության 92-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Արդարադատությունը դադարական իշխանության իրականացման եղանակ (միջոց) է այդ իշխանության լուծմանը հանձնված ցանկացած հարցով անկախ դրանց իրավական բնույթից: Եվ որովհետև օրենսդիրը դատարանների իրավասությանն է հանձնել և՛ սահմանադրական, և՛ քաղաքացիական, և՛ քրեական, և՛ վարչական իրավահարաբերություններից ծագող գործերի քննումն ու լուծումը, ուստի դատական իշխանությունն իրականացվում է վարույթների հենց այդ տեսակների՝ սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների միջոցով:

«Դատավարություն» հասկացությունը, որ փաստորեն գործի վարույթն է դադարանում, սերտորեն կապված է «արդարադատություն» եզրույթի հետ, որն իրականացվում է գործի ելքով շահագրգիռ անձանց մասնակցությամբ դատական նիստերում: Դատավարության այս կամ այն տեսակը, մի կողմից, արտացոլում է գործերի այս կամ այն տեսակներով արդարադատություն իրականացնող դատարանի գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ այդ գործերի քննության հետ կապված ընթացակարգերի ամբողջությունը: Դատավարության տեսակներն իրարից տարբերվում են քննվող գործերի մասնակիցների կազմով, նրանց միջուկ եղած վեճի և իրավահարաբերությունների բնույթով, դրանց հարուցման, քննության և լուծման, նույնիսկ դրանցով կայացված ակտերի կատարման, մի խոսքով՝ դատավարության մասնակիցների դատավարական գործունեության առանձնահատկություններով:

Այդ է պատճառը, որ գործող օրենսդրությունը տարբերակում է դատավարության վերը նշված չորս տեսակները (մեր կարծիքով, ճիշտ կլիներ դրանք տարբերակել սահմանադրական նորմով՝ հենց 91-րդ հոդվածում), դրանցից յուրաքանչյուրի մասնակիցների, այդ թվում՝ դատարանի իրավունքներն ու պարտականությունները, գործունեության կարգը: Սահմանադրական դատավարության համար այդ կարգը սահմանված է «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով, քաղաքացիական դատավարության

համար՝ ՏՃ քաղ. դար. օր.-ով, վարչական դարավարության համար՝ ՎԴՕ-ով, քրեական դարավարության համար՝ ՏՃ քր. դար. օր.-ով: ՎԴՕ-ի առանձին գոյությունը հնարավորություն է տալիս վարչական դարավարությունը մեզանում լիովին առանձնացնել քաղաքացիական դարավարությունից եւ վարչական դարարանը դարձնել մասնագիտացված դարարան, չնայած որ քաղաքացիական դարավարության հետ վարչական դարավարության շար եւ շար ընդհանրությունների պատճառով ՎԴՕ-ն երբեմն-երբեմն պարունակում է նաեւ ՏՃ քաղ. դար. օր.-ի վրա հենվող նորմեր: ՏՃ սահմանադրական դարարանն իրավացիորեն գտնում է, որ քաղաքացիական եւ վարչական դարավարությունների մասնակիցների յուրահատուկ կազմի, նրանց իրավունքների ու պարտականությունների, գործերի քննության եւ կայացվող դարական ակտերի ու դրանց կատարման առանձնահատկությունների պատճառով նման հղումներն անթույլատրելի են: Այսպես՝ Սահմանադրական դարարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի ՍԴՌ-780 որոշման հիման վրա 2009թ. ապրիլի 7-ին ընդունվեց օրենք «Նայաստանի Նանրապետության վարչական դարավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», որով ՎԴՕ-ն լրացվեց վճռաբեկ վարույթը կարգավորող 118.1-118.6-րդ հոդվածներով, քանի որ այդ վարույթի կարգի մասին ՎԴՕ-ի 118-րդ հոդվածը մինչ այդ հղում էր կատարում ՏՃ քաղ. դար. օր.-ին:

2. Վերադարձվելով ՏՃ Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ դարարանի վերջնական ակտերը Նայաստանի Նանրապետության անունից ընդունելու մասին, ՏՃ քաղ. դար. օր.-ի 130-րդ հոդվածի 2-րդ մասը եւ ՏՃ քր. դար. օր.-ի 357-րդ հոդվածը համապատասխանաբար սահմանում են, որ դարարանները վճիռները եւ դարավճիռները կայացնում են հանուն Նայաստանի Նանրապետության: ՎԴՕ-ն այդ կապակցությամբ սահմանում է, որ վարչական դարարանի՝ գործն ըստ էության լուծող դարական ակտի նկատմամբ փարաձվում են ՏՃ քաղ. դար. օր.-ի համապատասխան նորմերը, այսինքն՝ դրանք եւս կայացվում են հանուն Նայաստանի Նանրապետության: Ինչ վերաբերում է ՏՃ սահմանադրական դարարանի կողմից ընդունվող ակտերին՝ որոշումներին (Սահմանադրության 100-րդ հոդվ. 1-4-րդ եւ 9-րդ կետեր) եւ եզրակացություններին (Սահմանադրության 100-րդ հոդվ. 5-8-րդ կետեր), ապա դրանք վերջնական ակտեր են («Սահմանադրական դարարանի մասին» ՏՃ օրենքի 61-րդ հոդվ. 4-րդ մաս), հետեւաբար, դրանք եւս կայացվում են հանուն Նայաստանի Նանրապետության: Սահմանադրական դարարանի ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից («Սահմանադրական դարարանի մասին» ՏՃ օրենքի 61-րդ հոդվ. 4-րդ մաս):

Դարարանի վերջնական ակտերը Նայաստանի Նանրապետության անունից կայացվելու մասին սահմանադրական նորմն ունի ստորեւ նշված հետեւյալ հիմնավորումները՝

Քաղաքացիական եւ վարչական գործերով դարարանի կայացրած վերջնական ակտերը՝ վճիռները, ինչպես նաեւ վերաքննիչ եւ վճռաբեկ դարարանների որոշումները գործը լուծում են ըստ էության եւ որոշում են կողմերի նյութական իրավունքներն ու պարտականությունները: Դրանք հաստատում են նյութական (քաղաքացիական՝ բառի լայն առումով, եւ վարչական) իրավունքի սուբյեկտների առկայությունը (իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը) եւ դարավարության իրավունքի իրացումը, այլ իրավական հանգամանքներ, վերացնում են դրանց վիճելիությունը, կոնկրետացնում են վիճելի իրավահարաբերությունների անորոշ բովանդակությունը, իրավական հնարավորություններ են ստեղծում իրավունքի կամ օրինական շահի անխտընդոտ ի-

րացման համար: Դատարանների վճիռներն իրավական հիմք են կադարողական վարույթներ հարուցելու համար:

Քրեական գործով դատարանի կայացրած դատավճիռը լուծում է ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության եւ նրա նկատմամբ պարիժ նշանակելու կամ նրան պարիժից ազատելու հարցը: Նանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ: օրենքով սահմանված կարգով, այն է՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռով (Սահմանադրության 21-րդ հոդվ. 1-ին մաս):

Դատարանների՝ քաղաքացիական կամ վարչական գործերով կայացրած վճիռը կամ քրեական գործերով կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ են մտնում դրանց բողոքարկման համար օրենքով (ՆՃ քաղ. դատ. օր.-ի 140-րդ, ՎԴՕ-ի 115-րդ, ՆՃ քր. դատ. օր.-ի 379-րդ հոդվածներով) սահմանված ժամկետն անցնելուց հետո. եթե դրանք չեն բողոքարկվել, կամ, օրենքում (ՆՃ քաղ. դատ. օր.-ի 221.1, 241.2-րդ, ՎԴՕ-ի 118-րդ, քր. դատ. օր.-ի 402, 424-րդ հոդվածներ) նշված դեպքերում՝ հրապարակման պահից:

Օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը ձեռք են բերում մի շարք իրավական, այդ թվում՝ պարտադիրության եւ կարարելիության հատկանիշներ, որոնց ուժով բոլոր պետական մարմինները, քաղաքացիական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, պաշտոնատար անձինք եւ քաղաքացիները պարտավոր են ամբողջ երկրի տարածքում անվերապահորեն կատարել դրանց պահանջները, իսկ հոժարական չկատարելու դեպքում իրավասու (ԴԱՄԿ) մարմինները դրանք կատարում են անձի կամ-քին հակառակ՝ հարկադրաբար:

Այսպիսով, Նայաստանի Նանրապետության անունից դատարանի վերջնական ակտերի ընդունման սահմանադրական պահանջն արտացոլում է արդարադատության պետական բնույթը եւ նշանակությունը: Դրանով իսկ ցույց է փրվում, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտը պետության եւ հասարակության փաստանկյունից օրենքի ուժ ունի եւ վերը շարադրված խնդիրների իրականացման նպատակով պարտադիր է բոլորի եւ յուրաքանչյուրի համար:

ՆՈՂ-ՎԱԾ 92

1. Նայաստանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին աստիճանի, վերաբնիչ դատարանները եւ վճռարեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

2. Նայաստանի Նանրապետության բարձրագույն դատական աստիճանի, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռարեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռարեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով:

3. Արտակարգ դատարանների սրեղծումն արգելվում է:

1. Սահմանադրության 92 եւ 93-րդ հոդվածներն ամրագրում են Նայաստանի Նանրապետության դատական համակարգի կառուցվածքին, կազմակերպմանը եւ գործառնություններին վերաբերող ընդհանուր հիմունքները: Դատական համակարգը բնութագրվում

է որպես փոխյալ իրավական համակարգում գործող դարարանների ամբողջություն: Ընդ որում, «դարական համակարգը» նշանակում է ոչ թե գործող դարարանների պարզ հանրագումար, այլ կազմակերպական եւ գործառնական առումով միմյանց հետ փոխկապակցված դարական ապրանքների ամբողջություն:

Սահմանադրության 92 եւ 93-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրությունը դարական համակարգի իրավական կարգավորման ենթակա հարաբերությունների ոլորտից այս հոդվածներում առանձնացրել է հատկապես դարական համակարգի կառուցվածքը /զուտ դարարանակազմությունը/, դարական համակարգի ենթահամակարգերի գործառույթային փարանջատումը, ինչպես նաեւ ամեն մի ենթահամակարգի ներսում գործառույթային փարանջատումը: Այսպիսի մեթոդաբանական մոտեցման հիման վրա դարական համակարգի դարարանակազմական հիմունքներն ամրագրող սահմանադրական դրույթներ կարելի է համարել հետեւյալները.

1) Հայաստանի Հանրապետության դարական համակարգն իր դարարանակազմական կառուցվածքով բաղկացած է երեք ենթահամակարգերից՝ ՀՀ սահմանադրական դարարան, ընդհանուր իրավասության դարարաններ, մասնագիտացված դարարաններ: Աշխարհի այլ երկրների դարական համակարգերի հետ համեմատելիս ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության դարական համակարգը ռումանագերմանական մոդելի համակարգ է:

2) Յուրաքանչյուր ենթահամակարգ ունի Սահմանադրությամբ սահմանված իր գործառույթը եւ, միեւնույն ժամանակ՝ ներենթահամակարգային գործառույթային բաժանումը: Խոսքը հատկապես ընդհանուր իրավասության դարարանների մասին է, որը, ըստ Սահմանադրության, ունի եռաստիճան կառուցվածք եւ որում սահմանված է գործառույթային հստակ փարանջատում՝ ըստ էության քննություն, վերաքննություն, վճռաբեկություն:

Հայաստանի Հանրապետության դարական համակարգը Սահմանադրության ընդունումից ի վեր սահմանվել է որպես եռաստիճան: Հայաստանի Հանրապետությունում գործում են ինչպես ընդհանուր իրավասության դարարաններ, այնպես էլ օրենքով նախատեսված դեպքերում՝ մասնագիտացված դարարաններ: Դարարանի իրավասություն ասելով հասկացվում է որոշակի վեճեր, իրավական հարցեր լուծելու դարարանի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր իրավասության դարարաններն են.

- 1) առաջին ապրանքի դարարանները,
- 2) վերաքննիչ դարարանները,
- 3) վճռաբեկ դարարանը:

Ընդհանուր իրավասության առաջին ապրանքի դարարանները գործը քննող հիմնական դարարաններն են: Ընդհանուր իրավասության առաջին ապրանքի դարարանին ընդդարյա են բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դարարաններին ընդդարյա գործերի: Ընդհանուր իրավասության առաջին ապրանքի դարարաններում գործերը քննվում են դարավորի կողմից միանձնյա: Առաջին ապրանքի դարարանում է գործը քննվում ըստ էության: Այս փուլում է, որ դարարանն արդարության բոլոր պահանջների պահպանմամբ ընդունում եւ ուսումնասիրում է կողմերի ներկայացրած ապացույցներն իրենց համակցության մեջ եւ գործին փալիս է ըստ էության լուծում: Մնացած դարարանները գործն ըստ էության չեն քննում, այլ ստուգում են ընդհանուր իրավասության առաջին ապրանքի դարարանների կայացրած ակտերի օրինականությունը եւ հիմնավոր-

վաճությունը:

Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Օրենքով կարող է նախատեսվել այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ:

Նամաշխարհային պրակտիկայում ընդունված է առանձնացնել ընդդատության փարաձեռնային, առարկայական եւ անհատական չափանիշները: Նայաստանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին արյանի 16 դատարաններ, որոնք փեղաբաշխված են փարաձեռնային ընդդատության սկզբունքով: Տարածքային ընդդատությունը նշանակում է, որ երկրի ամբողջ փարաձեռն բաժանվում է դատական փարաձեռնների, շրջանների: Տարածքային ընդդատության սկզբունքով դատարանների բաշխումը գործում է երկրների բացարձակ մեծամասնությունում: Նայաստանի Նանրապետությունում դատական փարաձեռնները համընկնում են Նայաստանի Նանրապետության վարչատարածքային բաժանման հետ: Դատարաններից 9-ը մարզային դատարաններն են: Նայաստանի Նանրապետության մարզային դատարանները բաշխված են յուրաքանչյուր մարզում մեկ դատարան սկզբունքով: Բացառություն են կազմում միայն Արարատի եւ Վայոց ձորի մարզերը. այս երկու մարզերում գործում է մեկ ընդհանուր իրավասության դատարան:

Երեւան քաղաքում գործում են 7 ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարաններ՝ հիմքում կրկին ունենալով Երեւան քաղաքի վարչատարածքային բաժանումը:

Առաջին արյանի դատարանները գործն ըստ էության քննելու արդյունքում կայացնում են վճիռներ, դատավճիռներ եւ որոշումներ: Վճիռներ կայացվում են քաղաքացիական եւ վարչական գործերով, դատավճիռներ՝ քրեական գործերով: Որոշման ձեռով կայացվում են դատարանի այն ակտերը, որոնք գործը չեն լուծում ըստ էության: Դրանք կարող են լինել միջանկյալ դատական ակտերը եւ այն վերջնական դատական ակտերը, որոնք չեն կայացվում գործն ըստ էության քննելու արդյունքում:

Բացի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարաններից, ՎՎ-ում գործում են նաեւ վերադատ դատարաններ՝ վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը: Ընդ որում, դատական համակարգի հետ կապված «վերադատ» եզրույթն օգտագործվում է որոշակի վերապահումով, քանի որ դատարանների մեջ չկա կառուցակարգային ենթակայություն, «ստորադատություն» եւ «վերադատություն» եզրույթներն օգտագործվում են բացառապես դատավարական իմաստով եւ չեն ենթադրում, ավելին՝ բացառում են ենթակայության հարաբերությունները:

Վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարաններ չեն: Այս դատարանները գործը քննում են համապատասխան բողոքի առկայության դեպքում եւ սահմանափակված են բողոքում ներառված հարցերով: Այսինքն՝ վերաքննիչ դատարանները քննում են բողոքը եւ ոչ թե գործը՝ ըստ էության: Սա է պարզապես, որ նրանք կայացնում են որոշում, եւ ոչ թե վճիռ կամ դատավճիռ: Պետք է նշել, որ վերաքննիչ դատարանը մինչեւ 2008 թվականը գործն ըստ էության քննելու իրավագործությամբ էր օժտված, որի արդյունքում կայացնում էր վճիռ կամ դատավճիռ: 2008 թվականի հունվարի 1-ից վերաքննիչ դատարանը քննելով բողոքը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացնում է որոշում:

Նայաստանի Նանրապետությունում գործում են 2 վերաքննիչ դատարաններ՝ քրեական վերաքննիչ դատարանը եւ քաղաքացիական վերաքննիչ դատարանը: Վերաքննիչ դատարանում բողոքը քննվում է երեք դատավորի կազմով:

Վճռաբեկ դատարանն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների համակարգում բարձրագույն դատական արջանն է, որի կարգավիճակը եւ սահմանադրական հիմնական գործառույթը սահմանված է Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասով:

Տարածքային ընդդատության կանոնները սովորաբար լրացվում են առարկայական ընդդատության կանոններով, այսինքն՝ առանձնացվում են որոշակի դատարաններ, որոնց իրավագործությունները սահմանվում են՝ ելնելով իրավահարաբերությունների բնույթից:

Տարբեր երկրների դատական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մեծ մասում գործում են հարուկ դատարաններ, որոնց ընդդատյա են առանձին կարեգործիայի գործեր: Այդ գործերը հանված են ընդհանուր իրավասության դատարանների ընդդատությունից: Իրավական գրականությունում մասնագիտացված դատարանների ի հայտ գալը համարվում է ներկայիս դատարանակազմության բնութագրիչ հարկանիշներից մեկը: Եվ այդ դեպքում ամենակարեւոր խնդիրներից է մասնագիտացված դատարանների եւ ընդհանուր իրավասության դատարանների իրավագործությունների փարանջատումը: Քանի որ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի սպառիչ ցանկը սահմանել հնարավոր չէ, պետությունների օրենսդրությունները ելնում են բացառման սկզբունքից. այն, ինչ ընդդատյա չէ մասնագիտացված դատարանին, ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին:

Մասնագիտացված դատարաններ գործում են նաեւ Հայաստանի Հանրապետությունում: Եթե մինչեւ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները Սահմանադրությունը նախատեսում էր մասնագիտացված դատարանների որոշակի փեսակներ՝ փնտեսական, զինվորական, ապա սահմանադրական փոփոխություններից հետո մասնագիտացված դատարանների հնարավոր փեսակները որոշելու հայեցողությունը թողնված է օրենսդրի կամքին՝ ելնելով Կոնստիտուցիոնալ ժամանակահատվածում հասարակական հարաբերությունների զարգացումներից եւ պահանջներից: Նման փոփոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ չնայած նրան, որ Սահմանադրությամբ նախատեսված էր զինվորական դատարանների սրեղծումը, դրանց սրեղծումը նպատակահարմար չհամարվեց, դրանք այդպես էլ չսրեղծվեցին: Այս օրինակը ցույց տվեց, որ առավել ընդունելի է մասնագիտացված դատարանների փեսակների ընտրությունն օրենսդրին պարվիրակելը:

Տարբեր երկրների դատական համակարգերի համեմատումը ցույց է տալիս, որ մասնագիտացված դատարանների փեսակների եւ իրավագործությունների առումով միասնական մոտեցում չկա: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել մասնագիտացված դատարանների գոյության մի քանի պարճառ.

- առանձին դատարանների սրեղծումը՝ անձնական հարկանիշներից ելնելով (օրինակ՝ անչափահասների գործերով դատարանները Ֆրանսիայում),
- դատական համակարգում մարմինների ընդգրկումը, որոնք նախկինում դատարաններ չեն հանդիսացել (օրինակ՝ վարչական դատարանները Ֆրանսիայում, հաշտարար դատարանները Ռուսաստանում),
- որոշակի փեսակի գործերի առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը (օրինակ՝ քրանսպորտային դատարանները ԱՄՆ-ում):

Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում սրեղծվել են փնտեսական, քրեական, քաղաքացիական մասնագիտացված դատարաններ, սակայն այսօր որպես մասնագիտացված դատարան գործում է միայն վարչական դատարանը, որի սպասարկման

փարածքը Տայասփրանի Տանրապետության փարածքն է: Վարչական դափարանը քննում է հանրային իրավահարաբերություններից բխող այն վեճերը, որոնք ենթակա չեն սահմանադրական դափարանի դափարազրությանը: Վարչական դափարանի իրավասությունը ներառում է ինչպես պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց եւ ֆիզիկական, իրավաբանական անձանց միջեւ առաջացող վեճերը՝ վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության կապակցությամբ, այնպես էլ վարչական մարմինների միջեւ այն վեճերը, որոնք ենթակա չեն քննության վերադատության կարգով:

2. Այս սահմանադրական իրավանորմը լրացվել է 2005թ. սահմանադրական փոփոխություններով: Այն նպատակ է հետապնդում հատուկ սահմանադրական կանոնակարգման ենթարկել ՏՏ ընդհանուր իրավասության երրորդ օղակի դափարանի՝ վճռաբեկ դափարանի իրավական վիճակը:

Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ՏՏ վճռաբեկ դափարանի սահմանադրական կարգավիճակը՝ որպես բարձրագույն դատական արյանի (սահմանադրական արդարադատության հարցերից բացի՝ բոլոր հարցերով), սահմանում է վճռաբեկ դափարանի իրավասության շրջանակը, այդ սահմանադրական մարմնի սահմանադրական հիմնական գործառնությունը (օրենքի միապետակ կիրառության ապահովումը), ինչպես նաեւ նախատեսում է սահմանադրական պահանջ այն մասին, որ ՏՏ վճռաբեկ դափարանի լիազորությունները պետք է սահմանվեն Սահմանադրությամբ եւ օրենքով, իսկ այլ իրավական ակտերով սահմանվել չեն կարող:

Ընդհանուր իրավասության հարցերով բարձրագույն դատական արյանի կարգավիճակը ենթադրում է, որ.

ա) վճռաբեկ դափարանը՝ իրականացնելով դատական վերանայում, կոչված է ուղղելու դատական սխալները.

բ) վճռաբեկ դափարանի դատական ակտերը ենթակա չեն սովորական կարգով բողոքարկման.

գ) որեւէ այլ դատական մարմին, բացի վճռաբեկ դափարանից, չի կարող բեկանել կամ փոփոխել վճռաբեկ դափարանի դատական ակտերը.

դ) վճռաբեկ դափարանը պետք է անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով ուղղահայաց գործառնական կապերի մեջ լինի ՏՏ ընդհանուր իրավասության բոլոր դափարանների, ինչպես նաեւ մասնագիտացված դափարան[ներ]ի հետ:

Վճռաբեկ դափարանի սահմանադրական կարգավիճակը ներառում է նաեւ այդ դատական մարմնի առանձնահատուկ գործառնությունը՝ օրենքի միապետակ կիրառության ապահովումը: Ընդ որում, դա վճռաբեկ դափարանի միակ գործառնությունը համարվել չի կարող, քանի որ որպես դափարան՝ այն առաջին հերթին կոչված է իրականացնելու արդարադատություն (տե՛ս ՏՏ Սահմանադրության 91-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Դատավարական գործառնությունների եռափարք (հիմնարար-հիմնական-լրացուցիչ) դասակարգման՝ րեսականորեն մշակված մոդելը վճռաբեկ դափարանի սահմանադրական կարգավիճակի վրա տեղայնացնելով՝ օրենքի միապետակ կիրառության ապահովումը կարող է դիտվել որպես վճռաբեկ դափարանի հիմնական դատավարական գործառնություն, որն առկա է արդարադատության հիմնարար գործառնության հետ մեկտեղ:

ՏՏ գործող օրենսդրությամբ օրենքի միապետակ կիրառության ապահովումը վճռաբեկ դափարանի միակ գործառնությունը չէ: Այսպես, ՏՏ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ վճռաբեկ դափարանը բողոքն ընդունում

է քննության նաեւ այն դեպքում, եթէ վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ ստորադաս դատարանի կողմից թույլ է փրված առերեսույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետեւանքներ: Վճռաբեկ բողոքի ընդունելիության այս պայմանը որեւէ առնչություն չունի օրենքի միապետակ կիրառության ապահովման հետք, այլ ենթադրում է վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության իրականացում՝ իրավական վեճի լուծում:

ՆՏ վճռաբեկ դատարանին վերապահված՝ օրենքի միապետակ կիրառության գործառնությունը չպեղծ է օրենսդրորեն կանոնակարգվի եւ իրավակիրառական պրակտիկայում իրականացվի այնպես, որ այդ դատական մարմինը դադարի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց լինելուց: Այս հարցին մի շարք որոշումներում անդրադարձել է ՆՏ սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ վճռաբեկ բողոքարկման թույլտվական կարգն ինքնին չի ճանաչվել ՆՏ Սահմանադրությանը հակասող, սակայն սահմանվել է, որ վճռաբեկ դատարանը պեղծ է պարտադրանքի վճռաբեկ բողոքը վերադարձնելու (վարույթ չընդունելու) մասին որոշումները (տես ՆՏ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 որոշումը, 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՌ-691 որոշումը, 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՌ-765 որոշումը, 2009թ. հուլիսի 28-ի ՍԴՌ-818 որոշումը):

Բացի դրանից, ՆՏ սահմանադրական դատարանը ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր է ճանաչել վճռաբեկ բողոքը հավաքարմագրված փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական պահանջը: Այս իրավական դիրքորոշումը բանաձեւելիս ՆՏ սահմանադրական դատարանը հաշվի է առել, «որ հավաքարմագրված փաստաբանների եւ մյուս փաստաբանների միջեւ մասնագիտական պարտավորվածության եւ փորձառության հարցում չկա որեւէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգրվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավաքարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում», ինչպես նաեւ նկատել է ունեցել «հավաքարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկարիական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը»: Նշված գործոնների հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգել է, «... որ արդարացի հավասարակշռությունը ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի եւ դրանով հետապնդվող նպատակի միջեւ, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքի էությունը», եւ որ «Վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքի ... սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն եւ անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը» (տես ՆՏ սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՌ-765 որոշման 16-րդ կետը):

Օրենքի միապետակ կիրառությունն ապահովելու՝ վճռաբեկ դատարանի գործառնության կենսագործման օրենսդրական երաշխիքներից առանձնանում է ՆՏ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթն այն մասին, որ «Ռոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝

օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դադարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մարնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն փյվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս իրավադրոյթն ըստ էության սահմանում է անգլո-սաքսոնական իրավունքին բնորոշ *stare decisis* կանոնը, թեև այն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառոյթի կենսագործման անհրաժեշտ էր պարտադիր պայման չէ: Այդ մասին է վկայում, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական իրավունքը. ԳԴՏ 1949թ. Սահմանադրության («Նիմնական օրենքի») 95-րդ հոդվածի 3-րդ մասը նույնպես ամրագրում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառոյթը՝ այն պարտադրակելով ընդհանուր իրավասության, ֆինանսական, վարչական, աշխարանքային, սոցիալական ոլորտներում հինգ բարձրագոյն դատարանական ապյանների կազմերից ձեւավորված Սենատին: Մինչդեռ Սենատի որոշումները *stare decisis* կարգով պարտադրոյթամբ օժտված չեն:

Մեկնաբանելով «նույնանման փաստական հանգամանքներով գործ» հասկացոյթունը՝ ՄԻԵԴ-ի դատական ակտի կիրառելիոյթան մասով, ՏՏ վճռաբեկ դատարանը Ս. Այվազյանի վերաբերյալ գործով 2008թ. մայիսի 23-ին կայացված որոշման 26-րդ կէտում նշել է.

«... ՏՏ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ... հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա էր քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերոյթունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցոյթամբ եզակի է, ուստի դատարանը պէտք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա էր քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերոյթունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՏՏ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ... ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիոյթան հարցը լուծելիս դատարանը պէտք է հաշվի առնի նաեւ այն, թե փյվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակոյթունը կազմող ինչպիսի դրոյթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրոյթն իր բնոյթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրոյթուն: Եվ ընդհակառակը՝ եթե դրոյթն իր բնոյթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրոյթուն»:

Նշված չափանիշներն ըստ էության կիրառելի են նաեւ վճռաբեկ դատարանի որոշումների նախադեպային կիրառման ժամանակ:

Օրենքի միատեսակ կիրառոյթան սահմանադրական գործառոյթի կենսագործումն առաջին հերթին պայմանավորված է վճռաբեկ դատարանի լիագորոյթուններով: Համաձայն ՏՏ դատական օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը.

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պարճառաբանված, սխալ պարճառաբանված կամ չպարճառաբանված է, ապա վճռաբեկ դատարանը

պարճառաբանում է անփոփոխ թողնված դարական ակտը,

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապարասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դարական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապարասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դարական ակտը մնում է օրինական ուժի մեջ,

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դարական ակտը եւ հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը,

4) մասնակիորեն բեկանում եւ փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դարական ակտը եւ կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը,

6) վերաքննիչ դատարանի կողմից դարական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դարական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ապյանի դատարանի դարական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պարճառաբանում է առաջին ապյանի դատարանի դարական ակտը, եթե այն թերի է պարճառաբանված, սխալ է պարճառաբանված կամ պարճառաբանված չէ,

7) նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերով փոփոխում է վարչական դատարանի դարական ակտը կամ մերժում վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ դատարանում դարական վերանայման առարկայի մեջ են մտնում գործն ըստ էության չլուծող դարական ակտերը եւս: Դա նույնպես բխում է օրենքի միապետակ կիրառության սահմանադրական գործառնության, քանի որ վճռաբեկ դատարանին հնարավորություն է տրվում վարույթ իրականացնել առավել լայն շրջանակի գործերով:

Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պահանջը վերաբերում է վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանող իրավական ակտերին: Վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունները կարող են լրացվել միայն օրենքներով: Այլ իրավական ակտերով (այդ թվում՝ դարական ակտերով, ՏՏ դատարանների նախագահների խորհրդի որոշումներով եւ այլն) վճռաբեկ դատարանը չի կարող ստանալ նոր՝ Սահմանադրությամբ եւ օրենքով չնախատեսված լիազորություններ:

ՏՏ վճռաբեկ դատարանի լիազորություններից՝ ստորադաս դատարանի ակտը մասնակիորեն բեկանելու եւ փոփոխելու լիազորությունը «Մաթի» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա դարձել է սահմանադրական վերահսկողության առարկա: Սահմանադրական դատարանը 22.09.2009թ. որոշմամբ վճռաբեկ դատարանի նման լիազորությունը համարելով սահմանադրական, իր որոշման մեջ նշել է, որ ՏՏ վճռաբեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու այն դարական շրջապարույթը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դարական շրջապարույթի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաեւ ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Միաժամանակ, ՎՃ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը մասնակիորեն բեկանելու եւ փոփոխելու իր լիազորությունն իրականացնելու համար ՎՃ սահմանադրական դատարանն առանձնացրել է որոշակի պայմաններ: ՎՃ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է փեղի ունենալ բացառապես հետեւյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանք են.

ա/ ՎՃ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որեւէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ/ ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները պետք է հնարավորություն փան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից փարբերվող ակտ,

գ/ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ/ այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

3. Արտակարգ դատարանների ստեղծման արգելքը սերտորեն փոխկապակցված է ՎՃ Սահմանադրության 14.1, 18 եւ 19-րդ հոդվածներով ամրագրված մարդու իրավունքներին: Արտակարգ դատարանները, ինչպես ցույց է տալիս պարմությունը, մեծամասամբ ստեղծվել են քրեական գործերով: Արտակարգ դատարանները, որպես կանոն, ստեղծվում են ավտորիտար ռեժիմների պայմաններում, սովորաբար՝ ընթացիկ քաղաքական խնդիրները լուծելու նպատակով, որոնք ինչ-ինչ պատճառներով պետության դատական մարմիններն օգտագործելու միջոցով հնարավոր չի լինում լուծել: Արտակարգ դատարանների գործունեությունն իրականացվում է իշխանությունների բաժանման սկզբունքի խախտմամբ եւ ուղեկցվում է մարդու իրավունքների, արդարադատության հիմնական սկզբունքների, մասնավորապես, դատարանի անկախության, հրապարակայնության, մրցակցության, ամբաստանյալի պաշտպանության իրավունքի, օրինակաւնության խախտումներով:

ՎՃ Սահմանադրությամբ ամրագրված արտակարգ դատարաններ ստեղծելու արգելքը հաստատագրում է ՎՃ-ում արդարադատություն իրականացնող մարմինների կազմակերպման եւ գործունեության կանոնավոր բնույթը: Այն պետք է հասկանալ հետեւյալ իմաստներով.

ա) դատարանները պետք է ստեղծվեն օրենքի հիման վրա,

բ) դատարաններում վարույթը եւ դատարանների լիազորությունները պետք է կանոնակարգված լինեն օրենքով,

գ) դատարանների կազմակերպումը եւ գործունեությունը սահմանող օրենքները պետք է բխեն Սահմանադրությունից, համապատասխանեն որոշակիության, կանխաբեկության եւ հասանելիության չափանիշներին,

դ) կոնկրետ անձանց համար կամ կոնկրետ գործերով ad hoc դատարաններ (անկախ անվանումից) չպետք է ստեղծվեն,

ե) կոնկրետ անձանց համար կամ կոնկրետ գործերով դատավարական երաշխիքները (այդ թվում՝ դատական ակտի վերանայման իրավունքը) չեն կարող վերացվել կամ

սահմանափակվել:

Արտակարգ դատարանների սրեղծման արգելքը չի բացառում դատավարության փարբերակված կարգի կիրառումը կամ որոշակի խումբ անձանց (օրինակ՝ անչափահասներին, հայերենին չփիրապեպող անձանց) դատարանի առջև արտոնությունների եւ լրացուցիչ իրավունքների քրամադրումը, եթե այդպիսի փարբերակումը, արտոնությունները եւ լրացուցիչ իրավունքները ողջամտորեն արդարացված են:

ՆՈՂՎԱԾ 93

Նայասարանի Նանրապեպությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

Սահմանադրական արդարադատությունը Նայասարանի Նանրապեպությունում, որպես ինքնուրույն եւ ամբողջական համակարգ, գործում է 1996թ. փեպրվարից՝ ՆՍ սահմանադրական դատարանի կազմավորումից հեպո: Նայասարանի Նանրապեպության Սահմանադրության 1-ին հողվածող ամրագրված՝ իրավական պեպության գլխավոր բնութագրիչներից մեկը պեպք է դառնա երկրի Նիմնական օրենքի գերակայության ապահողումը՝ մարդկանց բնական իրավունքների ու ազատությունների երաշխավորման, ժողովրդավարության, արդարության ու քաղաքացիական համերաշխության սկզբունքների հիման վրա: Դա միաժամանակ ենթադրում է, որ պեպական իշխանության բողր մարմինների գործողությունները պեպք է համապարասխանեն սահմանադրական նորմերին ու սկզբունքներին, որոնք գործում են անմիջականորեն: Այդ է պահանջում Նայասարանի Նանրապեպության Սահմանադրության 6-րդ հողվածող, որում ամրագրված է.

«Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պեպք է համապարասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պեպք է համապարասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»:

Սահմանադրության գերակայության ապահողման սկզբունքի հեպետողական կենսագործումը ենթադրում է, *նախ*՝ բուն Սահմանադրության մեջ ամրագրել ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որոնք կապահողեն սահմանադրական նպարակների, սկզբունքների ու նորմերի ներդաշնակություն ու ամբողջականություն, պեպական իշխանության հսպակ ու հավասարակշռված քարանջաքում, հակակշիռների ու գսպումների արդյունավեպ համակարգ: *Երկրորդ*՝ ձեւավողրել սահմանադրական վերահսկողության գործուն համակարգ, որում հսպակեցված կլինեն սահմանադրական վերահսկողություն եւ հսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի կոնկրեպ լիագորությունները:

Սահմանադրական վերահսկողության համակարգի գլխավոր առաքելությունն է՝ ապահողել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, երաշխավողրել իշխանությունների քարանջաքման սահմանադրական հաշվեկշռի պահպանումը եւ մարող ու քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անմիջական գործողությունը: **Դատական սահմանադրական վերահսկողության կարող նման գործառույթի իրականացումը կազմում է սահմանադրական արդարադատության բողանդակությունը:** ՆՍ Սահմանադրության 93-րդ հողվածն ամրագրել է, որ Նայասարանի Նանրապեպությունում սահմանա-

դրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Իսկ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը»:

Մեկնաբանվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման փնտանկյունից անհրաժեշտ է առանձնացնել երկու սկզբունքային հարցադրում: *Առաջին*. սահմանադրական վերահսկողությունը չի սահմանափակվում միայն սահմանադրական արդարադատության շրջանակներում: Այսպեղ նկատի պետք է ունենալ նաեւ օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործառնական դերը, բարոյական, ազգային ու հոգեւոր արժեքների պահպանման ավանդույթն ու կարգը: Սահմանադրական վերահսկողություն իրականացնող պետական մարմինների թվում են **երկրի Նախագահը, օրենսդիր մարմինը, կառավարությունը, դատարանները**³:

Երկրորդ՝ սահմանադրական վերահսկողությունը՝ որպես փառքեր իրավասություն ունեցող մարմինների գործառույթների բարդ ու միաժամանակ ներդաշնակություն պահանջող համակարգ, կարող է գոյություն ունենալ եւ արդյունավետ գործել միայն որոշ նախապայմանների առկայության դեպքում: Դրանցից առավել կարեւորներն են՝ հասարակական հարաբերությունների սահմանադրական համակարգվածությունը, հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների արմատավորումը, վերահսկողության անկախությունը, համընդգրկուն բնույթը, հասարակության անդամներին դրա մատչելիությունը, սահմանադրական վերահսկողության հրապարակայնությունը եւ այլն:

Ներքերընդհանուրն այն է, որ ցանկացած հասարակություն, այդ թվում՝ նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաեւ դրանց պահպանության ամբողջական համակարգ: Դրա կարեւոր բաղադրիչներն են եղել հավաքը (եկեղեցին), բարոյական վարքագծի նորմերը, ավանդույթները (հասարակական, ընտանեկան), իրավական նորմերը եւ այլն:

Այս բոլորի հետ մեկտեղ, պետության Հիմնական օրենքի ընդունումը թելադրում է մոտեցման նոր կերպ, նոր եղանակ: Վերջինիս էությունը հանգում է նրան, որ սահմանադրական վերահսկողության գործառնական խնդիրներին համապատասխան ձեւավորվում են այն իրականացնող սահմանադրական ինստիտուտներ, ինչպես նաեւ կազմակերպական հարուկ կառուցվածք: Միայն այս դեպքում է հնարավոր համակողմանիորեն հաշվի առնել փյալ հասարակական համակարգի հիմնական բնորոշիչները եւ արմատավորել դրանց պահպանության գործուն համակարգ:

Սահմանադրական վերահսկողության մարմինները նման դեր իրականացնում են ամենից առաջ նրանով, որ իրենց լիազորությունների շրջանակներում ապահովում են Սահմանադրության գերակայությունը, լուծում են պետական իշխանության համակարգում լիազորությունների հարցով առաջացած վեճերը եւ, որ խիստ կարեւոր է, հասարակության ներսում առաջացած քաղաքական փարաձայնությունների իրավական կար-

³ Պետական իշխանության առանձին մարմիններ ոչ թե սահմանադրական վերահսկողության, այլ հսկողության գործառույթ են իրականացնում: Վերահսկողության դեպքում՝ վերահսկող սուբյեկտն իրավասու է ուժը կորցրած ճանաչել վերահսկվող ակտը: Հսկողությունը պասիվ բնույթ ունի: Այն նպատակ ունի ուշադրություն հրավիրել կամ առաջարկ անել հակասահմանադրական ակտի կամ դրա առանձին դրույթի (դրույթների) գործողության դադարեցման վերաբերյալ, իսկ ակտի գործողության կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելն այդ ակտն ընդունողի կամ դրա համար հատուկ լիազորված պետական մեկ այլ մարմնի իրավասության հարցն է:

գավորման երաշխիքներ են ստեղծում: Այլ կերպ՝ **սահմանադրական վերահսկողությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որն ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջորդայնությունն ու հարընթաց բնույթը:**

Սահմանադրական վերահսկողությունը նաև խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կապարելագործելու և հարափոփոխ հասարակական հարաբերությունների բնույթին ներդաշնակելու համար: Այն ձեւավորում է նաև պետական մտածողության ճաշակ ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն, ունի լուրջ կանխարգելիչ դեր, երբ հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մղում է իրավական, սահմանադրական գործելակերպի:

Նշված խնդիրների լուծման գործում վերջին երկու հարյուրամյակների ընթացքում բացառիկ կարևոր դեր վերապահվեց **դատական սահմանադրական վերահսկողությանը**, որի շնորհիվ Սահմանադրության գերակայության ապահովման կարևոր երաշխիք է դառնում **սահմանադրական արդարադատությունը**: Վերջինիս էությունը հանգում է նրան, որ **արդարադատության առարկա են դառնում նորմատիվ իրավական ակտերն ու պետական իշխանության մարմինների գործողությունները, գնահատվում է դրանց համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին և ապահովվում է այդ ակտերի ու գործողությունների սահմանադրականությունը**: Սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական նորմերի այն համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողությամբ պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները և սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում: Այլ կերպ՝ **սահմանադրական արդարադատությունն իրականացվում է դատական սահմանադրական վերահսկողության միջոցով՝ հիմք ունենալով սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարության իրավանորմերի համակարգը⁴:**

Սահմանադրական արդարադատության առջև դրվում է երեք հիմնական նպատակ.

ա) իրավական ակտերի սահմանադրականության ապահովում և դրա միջոցով իշխանության փարանջարված թեւերի սահմանադրորեն ամրագրված գործառնական հավասարակշռության պահպանում,

բ) լիազորությունների հարցով իշխանության փարբեր մարմինների միջև առաջացած վեճերի լուծում,

գ) յուրաքանչյուր անձի սահմանադրական իրավունքների ապահովման ու պաշտպանության համակարգի գործունակության երաշխավորում՝ մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման միջոցով:

Այդ նպատակների իրականացման համար սահմանադրական դատարաններն օժտվում են այնպիսի լիազորություններով, ինչպիսիք են.

- օրենքների ու նորմատիվ այլ ակտերի սահմանադրականության հարցի որոշումը,

- միջազգային պայմանագրերի սահմանադրականության գնահատումը,

- Սահմանադրության և նորմատիվ այլ ակտերի պաշտոնական մեկնաբանումը,

- պետական իշխանության փարբեր մարմինների միջև սահմանադրական լիազորությունների շուրջ ծագած վեճերի լուծումը,

⁴ Մանրամասն տես **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005:

- կենտրոնական ու փեղական իշխանությունների միջև լիազորությունների շուրջ ծագած վեճերի լուծումը,
- մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,
- ժողովրդավարության պաշտպանությունը, մասնավորապես՝ ընտրությունների, հանրաքվեների, կուսակցությունների գործունեության սահմանադրականության ապահովումը,
- առանձնահատուկ դեպքերում, եզրակացության միջոցով փաստական հանգամանքներին սահմանադրաիրավական գնահատական փայլը (ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 5, 6, 7 եւ 8-րդ կետերում նախատեսված հիմքերով, փե՛ս նաեւ այդ հոդվածի մեկնաբանությունը):

Սահմանադրական արդարադատության հիմնական գործառնություններից մեկը **Սահմանադրության պաշտպանական մեկնաբանումն է**: Սահմանադրական դատարանն այդ գործառնության իրականացում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Սահմանադրության պաշտպանական մեկնաբանումը, որպես սահմանադրական արդարադատական գործառնություն, ճանաչված է ինչպես արեւելյան, այնպես էլ արեւմտաեվրոպական պրակտիկայում: Անգլո-սաքսոնական իրավահամակարգում սահմանադրության մեկնաբանությունները դիտարկվում են ոչ որպես սահմանադրաիրավական նորմերի պարզաբանումներ, այլ՝ սահմանադրության բովանդակային մասն են եւ իրավունքի կարեւոր աղբյուր են հանդիսանում: Սահմանադրության մեկնաբանումը բացառիկ պետաիշխանական (սահմանադրական-արդարադատական) գործառնություն է, կոչված է բացահայտելու Սահմանադրության նորմերի իրավական բովանդակությունը, դրանց միարեսակ ըմբռնումն ու կիրառումը:

Սահմանադրական արդարադատությունը (կամ դատական սահմանադրական վերահսկողությունը) սահմանադրական վերահսկողության հիմնական ձեւն է, եւ աշխարհի հարյուրից ավելի երկրներում նշված խնդիրների լուծումն իրականացվում է հատուկ մասնագիտացված դատարանների միջոցով: Պետական իշխանության այս գործառնությունը էլ պայմանավորված է սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը:

Դատական սահմանադրական վերահսկողության առանցքային եւ, թերեւս, ամենակարեւոր հարցերից են **վերահսկման օբյեկտների հստակեցման եւ սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտների որոշման հարցերը** (փե՛ս 100 եւ 101-րդ հոդվածների մեկնաբանությունները): Կախված այն բանից, թե ինչ օբյեկտների նկատմամբ է իրականացվում վերահսկողությունը, պարզ է դառնում, թե ինչ խնդիրներ են դրված սահմանադրական դատարանի առջև: Ճշգրտվ այն հարցի պատասխանը, թե ովքեր են իրավասու դիմելու սահմանադրական դատարան, կարելի է ամբողջական պատկերացում կազմել փյույս դատարանի կենսունակության մասին:

Մասնագիտացված ինստիտուտների կողմից դատական սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է փարբեր կերպ: Տարբեր են նաեւ վերահսկողության բնույթը, կարգը, առանձին ձեւերի ներդաշնակումն ու գործադրման առանձնահատկությունները⁵:

Հայաստանի Հանրապետությունում դատական սահմանադրական վերահսկողության համակարգի հիմքում դրված է սահմանադրական արդարադատության եվրոպական մոդելը, եւ կառուցված չէ «բուրգային» սկզբունքով: Օրենքների եւ ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածում նախատեսված նորմարիվ այլ ակտերի սահմանադրակա-

⁵ Տե՛ս Գ. Հարությունյան, Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2008, էջեր 51-71:

նությունը ՏՏ սահմանադրական դատարանը հիմնականում որոշում է, այսպես կոչված, հեփազա վերահսկողության սկզբունքով (համակարգով), համաձայն որի՝ դատարանը որոշում է ուժի մեջ մտնող, կիրառվող նորմատիվ ակտերի՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Այն հնարավորություն է ընձեռում դիմող սուբյեկտներին (ՏՏ Սահմ. հոդված 101) վիճարկելու, իսկ ՏՏ սահմանադրական դատարանին որոշելու արդեն իսկ կիրառված, նույնիսկ դատական կարգով մեկնաբանված, այսինքն՝ իրավաբանական բովանդակությունը բացահայտած ակտերի (դրանցում պարունակվող նորմերի) սահմանադրականությունը: Մյուս կողմից, թեև հեփազա վերահսկողության արդյունքում երաշխավորվում է անձանց խախտված իրավունքների վերականգնումը, սակայն Սահմանադրությանը հակասող ճանաչված ակտի միառժամանակ գործողությունը, այնուամենայնիվ, բացասական հետեւանքներ է ունենում իրավահամակարգում:

Սահմանադրական արդարադատությունը ՏՏ սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է (տե՛ս նաև ՏՏ Սահմ. 92-րդ հոդվածի մեկնաբանությունը), որից միանշանակ բխում է, որ ՏՏ-ում այլ դատարան կամ պետական այլ մարմին իրավասու չէ իրականացնել ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածով սահմանադրական դատարանին վերապահված որեւէ լիազորություն, այսինքն՝ իրականացնել սահմանադրական արդարադատություն: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա չեն պետական որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից հաստատման կամ վերանայման (տե՛ս նաև ՏՏ Սահմ. 102-րդ հոդվածի մեկնաբանությունը), այդ որոշումը ենթակա է անվերապահ կատարման, իսկ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմը դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից (կամ սահմանադրական դատարանի որոշմամբ այլ ժամկետի ավարտից) ենթակա չէ կիրառման եւ չի կարող իրավահամակարգի մաս կազմել:

Սահմանադրական արդարադատությունն առանձնահատուկ է այն իրականացնող մարմնի լիազորությունների Սահմանադրությամբ նախատեսված լինելու փաստով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդված), ինչպես նաև, սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացումը կանոնակարգելու իրավասությամբ («Սահմ. դատ.-ի մասին» ՏՏ օրենքի 29, 38, 69-րդ հոդվածներ):

Խոսելով պետաիշխանական համակարգում սահմանադրական արդարադատության տեղի եւ բովանդակության մասին, անհրաժեշտ է նաև պարզաբանել այդ գործառույթի եւ քաղաքականության (քաղաքական գործընթացների) փոխառնչությունների խնդիրը: Վերջինս ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական խիստ կարեւոր նշանակություն:

Ժողովրդավարական, իրավական պետության պայմաններում սահմանադրական արդարադատությունը, ինչպես եւ արդարադատությունը՝ ընդհանրապես, անհամարեղելի են քաղաքական գործունեության հետ: Դա սահմանադրական պահանջ է (տե՛ս ՏՏ Սահմ. 98-րդ հոդվածի մեկնաբանությունը) եւ բխում է նաև իշխանությունների տարանջատման եւ հակակշռման սկզբունքից: Ըստ նպատակների եւ խնդիրների լինելով բացառիկ պետաիշխանական գործառույթ՝ սահմանադրական արդարադատությունը (ինչպես եւ արդարադատությունը՝ ընդհանրապես) ապաքաղաքականացված է, այսինքն՝ այդ գործառույթի շրջանակներում լուծվում են բացառապես իրավունքի հարցեր՝ ելնելով Սահմանադրության, իրավունքի, մարդու իրավունքների գերակայության եւ ոչ թե քաղաքական նպատակահարմարության սկզբունքից: Քաղաքական ներազդեցությունից զերծ լինելն արդարադատության, այդ թվում եւ՝ սահմանադրական, իրականացման անկախության ու արդյունավետության գնահատման կարեւոր չափանիշ է:

Միաժամանակ, ինչպես պետական իշխանության ցանկացած ճյուղի, այնպես էլ դարական իշխանության դեպքում, այդ իշխանությունը կրող սուբյեկտների, այդ թվում սահմանադրական դատարանի գործառնական լիազորություններն օբյեկտիվորեն ունեն քաղաքական հենք՝ պայմանավորված նախ եւ առաջ պետական (հանրային) իշխանության քաղաքական բովանդակությամբ (տե՛ս ՆՏ Սահմ. 5-րդ հոդվածի մեկնաբանությունը): Ներելաբար, սահմանադրական արդարադատությունը որպես առանձնահատուկ պետաիշխանական գործառույթ, նույնպես չի կարող «օտարված» լինել քաղաքական գործընթացներից, ավելին, այն նպատակները եւ խնդիրները, որոնք Սահմանադրությամբ կանխորոշված շրջանակներում առաջադրված են հատկապես դարական սահմանադրական վերահսկողության բնագավառում, անխուսափելիորեն բխում են այդ գործընթացներից եւ կոչված են լուծելու դրանցով պայմանավորված խնդիրներ (իրավական վեճեր): Սահմանադրական արդարադատության եւ քաղաքականության փոխառնչությունները՝ սահմանադրական-դարական կայացած համակարգերի պայմաններում, օբյեկտիվորեն մեկնաբանելի են «իրավունք եւ քաղաքականություն» հարաբերությունների շրջանակներում:

Սահմանադրական արդարադատության եւ քաղաքականության (քաղաքական գործընթացների) միջեւ փոխառնչություններն իրենց օբյեկտիվ-իրավական բնույթով կրում են (կամ կարող են կրել) հետեւյալ դրսևորումները.

- սահմանադրական դատարանը կազմավորվում է քաղաքական իշխանություն կրող ինստիտուտների անմիջական մասնակցությամբ (ՆՏ Նախագահ, ՆՏ Ազգային ժողով),

- Սահմանադրության 100-րդ հոդվածում նախատեսված լիազորությունների շրջանակներում սահմանադրական դատարանը կոչված է լուծելու հանրային-իրավական, հերելաբար նաե՛ւ քաղաքական ներազդեցության արդյունքում ծագած իրավական վեճեր՝ պայմանավորված այն իրողությամբ, որ նորմատիվ (օրինաստեղծ) գործունեությունը ժամանակակից իրավական, ժողովրդավարական գործընթացներում, որպես կանոն, քաղաքական համաձայնության արդյունք է (ՆՏ Ազգային ժողովում, կառավարությունում եւ այլն),

- սահմանադրական դատարանի որոշումներն ունեն ինչպես հանրային-իրավական, այնպես էլ քաղաքական հետեւանքներ (օրենսդրական նախաձեռնության իրականացում, քաղաքական քննարկումներ, ընտրական գործընթացներ, քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություն, կուսակցության գործունեության կասեցում կամ արգելում եւ այլն),

- լուծվում են պետական իշխանության տարբեր թեւերի (ճյուղերի), ինստիտուտների միջեւ ծագած, այդ թվում՝ քաղաքական գործընթացներով պայմանավորված, իրավական վեճեր (ՆՏ Նախագահի, ՆՏ Ազգային ժողովի, պարզամավորների, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների կամ դրանց դաշինքների դիմումներով),

- սահմանադրաիրավական վեճի հանրային հնչեղությունը (նաե՛ւ քաղաքական իրավիճակով պայմանավորված) սահմանադրական դատարանի որոշմամբ կարող է առանձնահատուկ բնույթ հաղորդել դարական քննության ընթացակարգին,

- սահմանադրական դատարանի որոշումները կանխորոշիչ ազդակ են օրենսդիր իշխանության կողմից օրենսդրական (իրավական) քաղաքականության իրականացման խնդրում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանում գործի քննությունը չի կարող

ուղեկցվել քաղաքական գործունեության որեւէ դրսեւորումով, մասնավորապէս, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով (հոդված 51) կողմերին արգելված է դատարանության ընթացքում իրենց ելույթներն օգտագործել քաղաքական հայտարարությունների համար:

ՀՀ-ում սահմանադրական արդարադատության բնագավառում քաղաքական «զսպվածություն» ապահովելու սահմանադրական կարեւոր երաշխիք է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման գործընթաց նախաձեռնելու եւ արդյունքում քաղաքական անխուսափելի ներազդեցությունների ենթարկվելու անհնարինությունը (տես ՀՀ Սահմ.101-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Այսպիսով, սահմանադրական արդարադատությունը պետաիշխանական այն բացառիկ գործառույթն է, որի միջոցով քաղաքականությունը «ենթարկվում է» իրավունքին (Սահմանադրությանը), քաղաքական վեճի լուծումը պետափոխվում է իրավական հարթություն: Սա իրավական պետության կարեւորագույն սկզբունքներից մեկն է: Անթույլաբերելի հակառակն է, երբ փորձ է արվում իրավական վեճերի լուծումը պետափոխել քաղաքական հարթություն:

Սահմանադրական արդարադատության գործառույթի բովանդակությունը բացահայտելի է ոչ միայն այն իրականացնող պետական մարմնի լիազորությունների շրջանակով, այլեւ գործունեության սկզբունքներով՝ այդ գործառույթների իրականացման ձեւերով եւ եղանակներով:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացվում է արդարադատության սահմանադրական հիմնական սկզբունքներով, որպիսիք նախատեսված են ինչպէս Սահմանադրությամբ, այնպէս էլ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով (ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդված, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 5, 19, 20, 21, 22, 23, 24 եւ 38-րդ հոդվածներ): Այդպիսիք են. անկախությունը, գործի հանգամանքների ի պաշտոնէ պարզումը, կոլեգիալությունը, գործերի բանավոր եւ գրավոր քննության սկզբունքները, մրցակցությունը եւ իրավահավասարությունը, հրապարակայնությունը, անընդհատությունը:

Որպէս առանձնահատկություն, սահմանադրական դատական պրակտիկայում գործերի քննության բանավորության սկզբունքին զուգահեռ 1997 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում իր կիրառումն է ստացել գրավոր քննության սկզբունքը: Այն վաղուց ներդրված է ինչպէս եվրոպական, այնպէս էլ միջազգային դատարանների արդարադատական պրակտիկայում: Կարեւոր է ընդգծել, որ որպէս արդարադատություն իրականացնելու դատավարական սկզբունք, եղանակ՝ գրավոր քննության ընթացակարգը նաեւ լուրջ երաշխիք է ողջամիտ ժամկետում արդարացի դատարանություն իրականացնելու համար, քանի որ դատավարության կողմերն իրենց դիրքորոշումները, սպագույցները եւ այլ փաստաթղթեր դատարան են ներկայացնում գրավոր ձեւով՝ առանց հրապարակային ելույթների:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ դատարանության գրավոր սկզբունքը բոլոր դեպքերում կիրառվում է, եթե.

- ակնհայտ է (կամ կասկած չի հարուցում), որ անձի սահմանադրական իրավունքը չի խախտվել,

- պարասխանող կողմը (ներկայացուցիչը) առարկություն չունի դիմումում բարձրացված հարցի վերաբերյալ, այսինքն՝ ըստ էության բացակայում է իրավական վեճը, եւ, միաժամանակ, ակնհայտ է վիճարկվող իրավական ակտի (ակտի նորմերի) հակասահ-

մանադրական լինելը,

- վիճարկվող իրավական ակտով (ակտում պարունակվող նորմերով) կարգավորվում են նույնպիսի հասարակական հարաբերություններ, որպիսիք՝ ՆՏ սահմանադրական դատարանի նախկին որոշմամբ հակասահմանադրական ճանաչված իրավական ակտով (ակտի նորմերով):

Առանձին լիազորություններ իրականացնելիս օրենքը նախատեսել է բացառապես գրավոր կամ միայն բանավոր ընթացակարգով գործի քննություն (տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 71, 73, 75, 76, 77, 78, 79, 80-րդ հոդվածներ):

Սահմանադրական արդարադատության դատավարական այլ ընթացակարգերին ու առանձնահատկություններին է նվիրված «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 10-րդ գլուխը: Այն ներառում է՝ սահմանադրական դատարանի դիմելու, վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու առանձնահատկությունները, գործերի նախապարաստման եւ քննության ժամանակային սահմանափակումները, փաբբեր գործերով սահմանադրական դատարանի որոշումների ընդունման եւ դրանց ուժի մեջ մտնելու կարգը, նյութերի հեղափոխման կարգը, անհատական դիմումներով գործը քննության ընդունելու եւ քննության կազմակերպման առանձնահատկությունները եւ այլն: Մասնավորապես, օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաեւ այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված փոխյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Նավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված փոխյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ այդ դրույթները: Իսկ համաձայն նույն հոդվածի 12-րդ մասի իր որոշումը սահմանադրական դատարանն իրավասու է փարածելու նաեւ այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ: Տվյալ պարագայում Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաեւ այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք փաբիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է այն առանձնահատկությունը, որ քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից: Այդ դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական եւ վարչական ակտերն օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

Սահմանադրական դատարանում գործի քննության առանձնահատկությունները դրսեւորվում են նաեւ կողմերի իրավունքների եւ պարտականությունների բովանդակությամբ ու դրանց իրացման միջոցներով ու եղանակներով: Սահմանադրական դատավարության կողմերն իրավունք ունեն՝ ծանոթանալ գործի նյութերին, անել քաղվածքներ, ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, գործի առն-

չությամբ ներկայացնել իրենց դիրքորոշումը, հարցեր փալ մյուս կողմին, նրա ներկայացուցչին, մասնագետին, վկային, միջնորդություններ հարուցել, առաջարկություններ անել եւ այլն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված են նաեւ դատարկության կողմերի պարտականությունները: Մասնավորապես, նրանք պարտավոր են ներկայանալ սահմանադրական դատարանի հրավերով, բացարժեքություններ փալ եւ պարասխանել հարցերին, սահմանադրական դատարանի պահանջով ներկայացնել գործին առնչվող նյութեր, ինչպես նաեւ ենթարկվել սահմանադրական դատարանում գործերի քննության կանոններին:

Սահմանադրական դատարկությանը բնորոշ առանձնահատկություններից է նաեւ այն, որ դատարկության օբյեկտը ոչ թե անձն է կամ իրավասխասխման հանգամանքները, փաստերը, այլ նորմատիվ սկզբը, օրենքի կամ նորմատիվ այլ սկզբի դրույթները (պաշտոնատար անձի գործողությունը կամ անգործությունը), որոնց սահմանադրականության բացահայտման խնդիր է դրված:

Սահմանադրական արդարադատության համակարգը կարող է արդյունավետ եւ անկախ գործել որոշակի անհրաժեշտ եւ բավարար նախադրյալների առկայության դեպքում: Դրանց թվին կարելի է դասել.

- դատական սահմանադրական վերահսկողության գործառնական, ինստիտուցիոնալ, կազմակերպական, նյութական եւ սոցիալական անկախությունը,
 - հեղեղականությունն իշխանությունների փարանջատման սկզբունքի սահմանադրական իրագործման ընթացքում,
 - հիմնարար սահմանադրական սկզբունքների եւ պետական իշխանության իրականացման համապատասխան սահմանադրական մեխանիզմների համարժեքությունը եւ համարդրելիությունը,
 - սահմանադրական վերահսկողության օբյեկտների ճիշտ եւ հիմնավորված ընտրությունը,
 - սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների օպտիմալ շրջանակի որոշումը,
 - համակարգային մոտեցումը դատական իշխանության գործառնական լիարժեքության ապահովման ընթացքում,
 - հստակ օրենսդրական քաղաքականության առկայությունը եւ իրականացումը երկրում,
 - ժողովրդավարական արժեքների ընկալման մակարդակը հասարակության մեջ:
- Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկական վկայում է, որ Սահմանադրության գերակայության հուսալի երաշխավորման համար անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրական դատարանն օժտված լինի իրավասությամբ.

ա) որոշելու սահմանադրականությունը՝

- սահմանադրական փոփոխությունների,
- միջազգային պայմանագրերի,
- օրենքների,
- այլ նորմատիվ սկզբերի.

բ) իրականացնելու կոնկրետ վերահսկողություն՝

- անհատական դիմումների հիման վրա,
- դատարանների դիմումների հիման վրա.

գ) պաշտոնատես մեկնաբանելու՝

- Սահմանադրությունը,
- օրենքները.

դ) լուծելու իրավական վեճերը՝

- իշխանության կենտրոնական մարմինների միջև,
- կենտրոնական եւ փարածաշրջանային ինստիտուցիաների միջև,
- փարածաշրջանային ինստիտուցիաների միջև,
- դատարանների ու այլ մարմինների միջև.

ե) ապահովելու ժողովրդավարական գործընթացների սահմանադրականությունը՝

- կուսակցությունների գործունեության սահմանադրականության վերահսկում,
- հանրաքվեների սահմանադրականության վերահսկում,
- ընտրությունների սահմանադրականության եւ օրինականության վերահսկում,
- պաշտոնանկության սահմանադրականության որոշում (Նախագահ, այլ պաշտոնավար անձինք),
- դատարանների, Կրեմլական ինքնակառավարման մարմինների անկախության երաշխիքների ապահովում:

Եվրոպական երկրներից շատերում սահմանադրական դատարանները ոչ միայն օժտված են նման լիազորություններով, այլև միտումն այն է, որ լիազորությունների ամբողջականացումը հեղեղական բնույթ ունի եւ համահունչ է երկրի ժողովրդավարացման ուղղվածությանն ու աստիճանին (Կրեմլ նաեւ 100-րդ հոդվածի մեկնաբանությունները):

Սահմանադրական արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությանը փարբեր գործերի քննության ժամանակ անդրադարձել է նաեւ ՏՏ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, դատարանն իր՝ 18 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՌ-652 որոշման մեջ (կետ 5) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածը պարզավորեցնում է սահմանադրական դատարանին՝ ապահովել ՏՏ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ինչպես նաեւ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Սահմանադրական արդարադատության բովանդակության ու առանձնահատկությունների միակերպ ընկալումը պահանջում է սահմանադրական-արդարադատական եւ ընդհանուր-արդարադատական մարմինների (դատարանների) միջև գործառնությունների ճշգրիտ եւ այդ մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին համապա-

տասխան բաշխում, որը կարելու է, նախ՝ արդարադատության արդյունավետ իրականացումը, հետեւաբար՝ նաեւ սահմանադրական օրինականությունն ապահովելու տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական եւ ընդհանուր (մասնագիտական) արդարադատական գործառույթների ինստիտուցիոնալ հստակ տարանջատման խնդիր ծագեց վարչաարդարադատական համակարգի ներդրման արդյունքում կապված սահմանադրական-դատական վերահսկողությունից դուրս (ՀՀ Սահմ. 100-րդ հոդված) իրավական ակտերի սահմանադրականության որոշման՝ ՀՀ վարչական դատարանի լիազորության հետ: Անդրադառնալով այդ խնդրին՝ 2008թ. 25 նոյեմբերի ՍԳՌ-780 (կետ 17) որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «...ՀՀ Սահմանադրությունը փարբերակում է սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթները՝ սահմանադրական արդարադատության գործառույթը 93-րդ հոդվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դատարանին: Սահմանադրությամբ նախանշված նման տարանջատումը սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթների միջեւ ապահովում է արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը: Ընդ որում, սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Իր հերթին, վարչական արդարադատության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2, 9, 19, 118, 119, 122, 123, 125, 128, 141 եւ 156-րդ հոդվածների փոխկապակցված համադրումից, ինչպես նաեւ իրավակարգավորման առարկայի առնչությամբ 1-ին, 128 եւ 135-րդ հոդվածների համադրումից ակնհայտ է դառնում, որ ոչ միայն խնդիրներ են առաջացել վարչական արդարադատության վերահսկելի եւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդյունավետ ընթացակարգ սահմանելու առումով, այլեւ, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետով վարչական արդարադատության ոլորտ է ներառվել սահմանադրական արդարադատության առարկան»:

Սահմանադրական դատարանը գրել է, որ «...վարչական եւ սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է սրել-ծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վրանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար»:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումից հետեւում է նորմատիվ ակտերի, մի կողմից՝ սահմանադրականությունը, մյուս կողմից՝ օրինականությունը (իրավական լինելը) որոշելու գործառնությունների օրենքով հստակ տարանջատման անհրաժեշտությունը, որն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի

խմաստից:

Այսպիսով, իրավական, ժողովրդավարական պետության ներդաշնակ զարգացման եւ ընդհանրապես սահմանադրական օրինականության կայուն հաստատման եւ պաշտպանության խնդրում խիստ կարեւոր է սահմանադրական արդարադատության, որպես պետաիշխանական առանձնահատուկ գործառույթի, դերի եւ դրա առջեւ դրված նպատակների ու խնդիրների ճշգրիտ ընկալումը, այն իրականացնելու սահմանադրական երաշխիքների հետեւողական զարգացումը: Դրանով պայմանավորված՝ առավել նպաստավոր հիմքեր կստեղծվեն սահմանադրական արդարադատության նաեւ քրեական-ճանաչողական, իրավականխաբեսման եւ դատախարակչական գործառույթների արդյունավետ իրականացման համար:

ՆՈՂՎԱԾ 94

1. Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ եւ օրենքներով:

2. Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով:

3. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով:

1. Մեկնաբանվող հոդվածը 1995թ. ՏՏ Սահմանադրության քրեատարած բաղկացած էր հինգ մասից, այն է՝

«Դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն է: Նա գլխավորում է արդարադատության խորհուրդը:

Արդարադատության նախարարը եւ գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն են:

Խորհրդի կազմի մեջ են մտնում նաեւ Հանրապետության Նախագահի կողմից հինգ փարի ժամկետով նշանակվող քրեագիտական, որոնցից երկուսը՝ իրավաբան-գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ:

Խորհրդի երեքական անդամ նշանակվում են առաջին աստիճանի դատարանների, վերաքննիչ դատարանների եւ վճռաբեկ դատարանի դատավորներից: Դատավորների ընդհանուր ժողովները յուրաքանչյուր փուլի համար գաղտնի քվեարկությամբ առաջադրում են երեքական թեկնածու:

Խորհրդի դատախազ անդամների թեկնածությունները առաջադրում է գլխավոր դատախազը»:

2005թ. սահմանադրական փոփոխությունների հետեւանքով մեկնաբանվող հոդվածն ամբողջությամբ փոփոխվել է: Հոդվածի 1995թ. քրեատարած 1-ին եւ 2-րդ մասերը հանվել են, քանզի արդարադատության խորհրդի (որն առաջին հերթին պետք է ապահովի դատավորների անկախությունը) կազմը քրեատարածական չէր. նրա բոլոր անդամներին նշանակում էր Հանրապետության Նախագահը: Վերջինս նաեւ գլխավորում էր արդարադատության խորհուրդը, իսկ արդարադատության նախարարը եւ գլխավոր դատախազը հանդիսանում էին խորհրդի փոխնախագահներ:

Մեկնաբանվող հոդվածի 1995թ. տեքստի 3-րդ և 4-րդ մասերը փոփոխված տեսքով տեղ են գտել ՆՆ Սահմանադրության 94.1-րդ հոդվածում, իսկ 5-րդ մասն ընդհանրապես հանվել է:

Դարական իշխանության անկախության ապահովումն իրավական պետության կարևորագույն խնդիրներից է: Ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ իշխանությունների բաժանման արդյունավետությունը, ի վերջո, պայմանավորված են անկախ երրորդ իշխանության գոյությամբ: Վենետիկի հանձնաժողովը 2004թ. դեկտեմբերի 6-ի եզրակացության մեջ ընդգծում է, որ «անկախ և անկողմնակալ դարական իշխանության հաստատման և գործունեության սահմանադրական երաշխիքների ամրագրումը ճանաչվել է Նայաստանի սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից մեկը»:

Աշխարհի գրեթե բոլոր երկրների դարարանները գործում են այնպիսի կարևոր սահմանադրական սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են՝ դարարանի ինքնուրույնությունը, դարավորների անփոփոխելիությունը, դարավորների անկախությունն ու անձեռնմխելիությունը, գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումը, դարավորների ապաքաղաքականացվածությունը և այլն:

ՆՆ Սահմանադրությունում այս կարևորագույն սկզբունքները, մեկնաբանվող հոդվածին զուգընթաց, ամրագրված են նաև 96-98-րդ հոդվածներում՝ մնացածը թողնելով ընթացիկ օրենսդրությանը (ՆՆ դարական օրենսգիրք, «Սահմանադրական դարարանի մասին» ՆՆ օրենք, ՆՆ քաղաքացիական և քրեական դարավարության օրենսգրքեր): Այս կարևորագույն սկզբունքները համընդհանուր բնույթ ունեն և համապարասխանում են միջազգային իրավական ակտերում ու այլ միջազգային փաստաթղթերում (առաջին հերթին՝ Դարական մարմինների անկախությանը վերաբերող Տիմնարար սկզբունքներում՝ ընդունված ՄԱԿ-ի VII կոնգրեսի կողմից 28.08-06.09.1985թ. և հավանության արժանացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 13.12.1985թ., N 40/146, Դարական մարմինների անկախությանը վերաբերող Տիմնարար սկզբունքների իրականացման Արդյունավետ ընթացակարգերում՝ ընդունված 1990թ., Դարավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում՝ ընդունված 08-10.08.1998թ. Ստրասբուրգում, և դրան կից Բացարարական հուշագրում, Մասնակից պետությունների Նախարարների կոմիտեի կողմից 1994թ. ընդունված N R(94) հանձնարարականում՝ Դարարանների անկախության, արդյունավետության և դերի մասին) ամրագրված դրույթներին:

Ինչպես նշվեց, այս կարևորագույն սկզբունքները ՆՆ Սահմանադրությունում ամրագրված են 96-98-րդ հոդվածներում: Ըստ Սահմանադրության 96-րդ հոդվածի՝ դարավորը և սահմանադրական դարարանի անդամն անփոփոխելի են, նրանք պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը: Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դարավորը և սահմանադրական դարարանի անդամն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին: Դարարանի ինքնուրույնության սկզբունքը սերտորեն առնչվում է դարավորի անկախությանը և կոչված է ապահովելու սահմանադրական հիշյալ սկզբունքի երաշխավորվածությունը: Ընդ որում, կարգավորման այդպիսի եղանակը բխում է Սահմանադրության 97-րդ հոդվածի 2-րդ մասից. «Դարավորի և սահմանադրական դարարանի անդամի գործունեության երաշխիքները և պարասխանավորության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»: Սահմանադրության 98-րդ հոդվածում ամրագրված են դարավորների՝ գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակման և նրանց ապաքաղաքականացվածության սկզբունքները:

րը: Այս սկզբունքներն ունեն երկակի նշանակություն. դրանք, մի կողմից, ապահովում են դատավորի անկախությունը հնարավոր փնտրության և քաղաքական ներգործությունից ու միջամտությունից, մյուս կողմից՝ նպաստում են պետաիրավական կարեւոր ինստիտուտներում քաղաքացիների հավասարության սկզբունքի ամրապնդմանը:

Շարք կարեւոր է նաեւ Սահմանադրության 95-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ դատավորների նշանակման, նրանց կարգապահական պարասխանավության հարցերում գլխավոր դերը վերապահված է արդարադատության խորհրդին, որը բացառում է գործադիր իշխանության ներազդեցության ամեն մի հնարավորություն:

Միջազգային սահմանադրական պրակտիկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ իրենց սահմանադրություններում նմանօրինակ նորմ, փոքր-ինչ այլ ձեւակերպմամբ (այն է՝ դատավորը կամ դատարանն անկախ են եւ ենթարկվում են միայն Սահմանադրությանը կամ օրենքին), ամրագրել են բազմաթիվ երկրներ: Այդպիսի կարգավորում է տրված, օրինակ, ՌԴ Սահմանադրության 120-րդ հոդվածում, որի 1-ին կետը սահմանում է, որ դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն ՌԴ Սահմանադրությանը կամ դաշնային օրենքին, Ալբանիայի Սահմանադրության 145-րդ հոդվածում, որը սահմանում է, որ դատարաններն անկախ են եւ ենթարկվում են միայն Սահմանադրությանը եւ օրենքներին, Ադրբեջանի Սահմանադրության 127-րդ հոդվածում, որի 1-ին կետը սահմանում է, որ դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն Սահմանադրությանը եւ օրենքներին, Բուլղարիայի Սահմանադրության 117-րդ հոդվածում, որի 2-րդ կետը սահմանում է, որ դատական իշխանությունն անկախ է, Խորվաթիայի Սահմանադրության 115-րդ հոդվածում, որը սահմանում է, որ դատական իշխանությունն անկախ է ինքնուրույն է, Չեխիայի Սահմանադրության 82-րդ հոդվածում, որը սահմանում է, որ դատավորներն իրենց գործառնությունների կարարման ժամանակ անկախ են, Էստոնիայի Սահմանադրության 146-րդ հոդվածում, որը սահմանում է, որ դատարանն անկախ է իր գործունեության մեջ եւ իրականացնում է արդարադատություն՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան, Ֆրանսիայի Սահմանադրության 64-րդ հոդվածում, որը սահմանում է, որ դատական իշխանության անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն է, Վրաստանի Սահմանադրության 82-րդ հոդվածում, որի 3-րդ կետը սահմանում է, որ դատական իշխանությունն անկախ է, Գերմանիայի Սահմանադրության 97-րդ հոդվածում, որի 1-ին կետը սահմանում է, որ դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքներին եւ այլն:

ՆՆ ընթացիկ օրենսդրությունում նույնպես առանձնահատուկ տեղ է տրվել դատարանների անկախության սկզբունքին: Դատարանի ինքնուրույնությունը, դատավորների անփոփոխելիությունը, անկախությունն ու անձեռնմխելիությունը, նրանց իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները, նշանակումն ու լիազորությունների դադարեցումը, գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումը եւ ապաքաղաքականացվածությունը սահմանված են նաեւ ՆՆ դատական օրենսգրքում, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքում, ՆՆ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերում: Այսպես, ՆՆ դատական օրենսգրքի «Դատավորի կարգավիճակը» վերաբերյալ 2-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է վերը նշված հարցադրումներին՝ դատավորի աշխատավարձին, արձակուրդին, վարքագծի կանոններին, ոչ դատական գործունեությանը, ձեռնարկափրական գործունեությամբ զբաղվելու արգելքին, նրա այլ սոցիալական եւ նյութական երաշխիքներին: ՆՆ դատական օրենսգրքի 84-րդ հոդվածը վերաբերում է դատավորի ու նրա ընտանիքի անդամներին:

րի պաշտպանությանը, բնակարանի անձեռնմխելիությանը:

Առանձնահատուկ նշանակություն ունեն դատավորի վարքագծի կանոնները, որոնք սահմանված են նշված օրենսգրքի 12-րդ գլխում: Ընդ որում, օրենսգրքի այդ գլխում սահմանված դատավորի վարքագծի կանոններն սպառիչ չեն, քանզի այդպիսիք կարող է սահմանել նաև Դատավորների ընդհանուր ժողովը: Նարկ է նկատել, որ դատավորի վարքագծի կանոններին տրված է իրավական բնույթ (153-րդ հոդվ. 2-րդ մասի, 4-րդ կետ), որի համաձայն՝ դատավորի կարգապահական պարասխասնարվության հիմք է նաև «դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտում թույլ տալը»:

Դատավորի անկախության սկզբունքն ամրագրված է ՆՏ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածում, ըստ որի՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է եւ հաշվետու չէ որեւէ մեկին, նրա գործունեությանն օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է: Դատավորի ապաքաղաքականացվածության սկզբունքի մասին անդրադարձ է կատարվել օրենսգրքի 10-րդ հոդվածում, իսկ 12-րդ հոդվածը կանոնակարգում է գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումը: Սոցիալական եւ իրավական մեծ նշանակություն ունի դատավորի անփոփոխելիության սկզբունքը, որն ամրագրված է օրենսգրքի 14-րդ հոդվածում, իսկ դատավորի բնականոն գործունեության կարեւոր երաշխիքներից անձեռնմխելիությունը, որը հնարավորություն է տալիս նրան գործելու առավել անկաշկանդ, սահմանված է օրենսգրքի 13-րդ հոդվածում: Նարկադրանքի որոշ տեսակներ ընդհանրապես չեն կարող կիրառվել դատավորի նկատմամբ: Այսպես, դատավորին չի կարելի բերման ենթարկել, իսկ առանց փաստաթղթերի բերման ենթարկված դատավորի ինքնությունը պարզելուց հետո իրավասու պետական մարմինը պետք է անմիջապես ազատ արձակի նրան: Դատավորի անձեռնմխելիության սկզբունքը որոշակի դրսևորումներ ունի նաև քաղաքացիաիրավական ոլորտում: Այսպես, դատավորը չի կարող ենթարկվել քաղաքացիաիրավական պարասխասնարվության իր ծառայողական պարտականությունները ոչ պարզաձև կատարելու հետեւանքով պարտաճանաչված վնասի համար: Սակայն այդ սկզբունքը չի ենթադրում դատավորի բացարձակ անձեռնմխելիություն. նա, վերոհիշյալ սահմանափակումներով հանդերձ, կրում է քրեական, վարչական եւ քաղաքացիաիրավական պարասխասնարվություն:

ՆՏ սահմանադրական դատարանի մասին օրենքում նույնպես տեղ է տրվել դատարանների անկախության սկզբունքին: Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է եւ ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Օրենքի «Սահմանադրական դատարանի անդամը» վերաբառությամբ 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է դատարանի անդամի անկախությանը (հոդված 9), անփոփոխելիությանը (հոդված 10) եւ անձեռնմխելիությանը (հոդված 11):

Դատավորի անկախության սկզբունքն ամրագրված է նաև ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածում՝ «Արդարադատություն իրականացնելիս՝ դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին» եւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածում՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին»:

ՆՏ օրենսդրության եւ միջազգային իրավական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ «դատարանի անկախություն» հասկացությունը միաժամանակ ենթադրում է դատարանի գործառնական, կառուցակարգային, նյութական եւ սոցիալական անկա-

խության երաշխավորում: Այդ երաշխիքները պետք է լինեն հստակ, կայուն, հակակշռված ու պաշտպանված որևէ ներազդեցությունից: Այդ նկատառումով է, որ նման երաշխիքներն ամրագրվում են բացառապես Սահմանադրությամբ եւ օրենքներով:

2. Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով:

ՆՏ Սահմանադրությունը հիմնարար դրույթներ է բովանդակում դատարանների լիազորությունների, կազմավորման ու գործունեության կարգի վերաբերյալ (91-95-րդ հոդվ.), ինչը բացառում է ընթացիկ օրենսդրական ակտերում այնպիսի դրույթների ամրագրումը, որոնք այս կամ այն կերպ խոցելի կդարձնեն դատական իշխանությունը:

ՆՏ դատական իշխանության մարմինները կազմում են հանրապետության դատական համակարգը, ինչն ամրագրված է Սահմանադրության 92-րդ հոդվածում: Նույն հոդվածում հստակ ամրագրված է արտակարգ դատարաններն արգելելու մասին դրույթ, ինչը բխում է Սահմանադրության 91 եւ 93-րդ հոդվածներում ամրագրված՝ «...արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները» եւ «...սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը» դրույթներից:

Սահմանադրությամբ մանրամասն կարգավորվում է նաեւ ՆՏ դատական իշխանության մարմինների կազմակերպման կարգը: Բնորոշ է հստակապես այն, որ ըստ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ դատավորների նշանակման եւ նրանց կարգապահական պարասխանարվության հարցերում գլխավոր դերը վերապահված է արդարադատության խորհրդին, որը բացառում է գործադիր իշխանության ներազդեցության ամեն մի հնարավորություն: Միաժամանակ, Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Տանրապետության Նախագահը արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահներին ու դատավորներին, վերաքննիչ, առաջին աստիճանի եւ մասնագիտացված դատարանների նախագահներին:

Այլ երկրների սահմանադրական պրակտիկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ իրենց սահմանադրություններում նմանօրինակ նորմ ամրագրել են նաեւ այլ երկրներ: Այդպիսի կարգավորում է փրված, օրինակ, ՌԴ Սահմանադրության 118-րդ հոդվածում, որի 3-րդ կետը սահմանում է, որ դատական համակարգը սահմանվում է ՌԴ Սահմանադրությամբ եւ օրենքներով: Ալբանիայի Սահմանադրության 135-136-րդ հոդվածներում սահմանված են դատարանների լիազորությունները եւ կազմավորման կարգը, Արգենտինայի Սահմանադրության 100-րդ հոդվածում՝ դատարանների լիազորությունները, Խորվաթիայի Սահմանադրության 116-րդ հոդվածում ամրագրված է, որ դատարանների լիազորությունները եւ կազմավորումը, կազմը եւ դատավարությունը կարգավորվում են օրենքով, Էստոնիայի Սահմանադրության 148-րդ հոդվածը սահմանում է դատարանների լիազորությունները, Ֆինլանդիայի Սահմանադրության 102-րդ հոդվածը նախատեսում է, որ դատավորներին նշանակում է Տանրապետության Նախագահը՝ օրենքին համապատասխան, իսկ Վրաստանի Սահմանադրության 82-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ դատարանների համակարգը եւ դատավարական կարգը սահմանվում են օրենքով:

ՆՏ հիմնական օրենքի 94-րդ հոդվածի երկրորդ մասը 1-ին մասի հատուկ դրույթներից ու երաշխիքներից է, քանզի դատարանների լիազորությունները, կազմավորման եւ գործունեության կարգն էական նշանակություն ունեն դատարանների անկախության ե-

րաշխավորման համար:

Միաժամանակ, Սահմանադրության այս դրույթը պետք է մեկնաբանել Տիմնական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային կապից ելնելով: Նամաձայն 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետական եւ փեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Եթե 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հանրային մարմինների ու պաշտոնատար անձանց միայն լիազորությունների սահմանադրական եւ օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը, ապա 94-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես հատուկ դրույթ, նման պահանջ է ներկայացնում նաեւ դատարանների կազմավորման ու գործունեության կարգին: Ներկայացրա՞ր՝ Սահմանադրության մեկնաբանվող նորմի իրավական հետեւանքն անվերապահ արգելքն է այլ ակտերով, բացի Սահմանադրությունից ու օրենքներից, սահմանել դատարանների լիազորությունները, կազմավորման եւ գործունեության կարգը:

ՆՆ Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ ամրագրելով դատարանների լիազորությունների, կազմավորման ու գործունեության կարգի նորմատիվային աղբյուրները, մարմաննում է երկու աղբյուր՝ ՆՆ Սահմանադրությունը եւ օրենքը: Ընդ որում, դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը կարգավորող օրենքների առկայությունը սահմանադրական անհրաժեշտություն է: Սակայն նշված հարաբերությունների կարգավորմանը նվիրված սահմանադրական հիմունքները եւ նորմերն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, մեթոդաբանական, հիմքեր են ինչպես օրինաստեղծ մարմնի համար՝ համապատասխան օրենքներն ընդունելիս, այնպես էլ իրավակիրառ եւ իրավապահ մարմինների համար՝ դրանց մեկնաբանության եւ կիրառման գործընթացում: Այդպիսով, դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանող օրենքներն ընդունվում են ի կատարումն եւ համաձայն Սահմանադրության, եւ կիրառման ընթացքում դրանք պետք է մեկնաբանվեն առաջին հերթին հիմք ընդունելով Սահմանադրության դրույթներն ու սկզբունքները: Սահմանադրական կարգավորման նման կառուցակարգը, ի վերջո, նպատակաուղղված է դատարանների անկախության ապահովմանը: Այսպիսով՝ դատական իշխանության եւ դատարանի կողմից հատուկ գործառնությունների կատարումը պահանջում է, որպեսզի դրանք կազմակերպվեն եւ գործեն հատուկ կանոնների պահպանմամբ, կանոններ, որոնք ուղղված են նրանց անկախության եւ անկողմնակալության ապահովմանը: Այդ ոլորտի էական նշանակությունը հասարակության եւ պետության համար, դրա հատուկ սոցիալական կոչումն իրավական պետության կայացման գործընթացում՝ նախորդում են այդ հարաբերությունները Սահմանադրությամբ կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Նայաստանի Նանրապետության բարեփոխված Սահմանադրությունը՝

1) սահմանում է դատական համակարգի կազմակերպակառուցվածքային համակարգը, այն է՝ նախորդում է սահմանադրական դատարանի ստեղծումը եւ գործունեությունը, սահմանում է ընդհանուր իրավասության դատարանների (առաջին արյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ, վճռաբեկ դատարան) կառուցման եւ գործունեության ընդհանուր հիմունքները, օրենսդրին վերապահում է մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն (92-93-րդ հոդվածներ),

2) սահմանում է Նանրապետության Նախագահի, Ազգային ժողովի եւ պետական այլ մարմինների լիազորությունները դատական մարմինների կազմավորման ու գործունեության ոլորտում,

3) ամրագրում է դափավորների իրավական կարգավիճակի հիմունքները (անկախությունը եւ ենթարկվելը միայն օրենքին, անփոփոխելիությունը, արգելքը՝ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական գործունեությունից, արգելքը՝ լինել որեւէ քաղաքական կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ),

4) ամրագրում է արդարադատության /դափավարության/ որոշ ձեւերի հիմունքները: Այդ հիմունքները Սահմանադրության մեջ արտացոլված են փարբեր գլուխներում՝ կամ որպես սահմանադրական կարգի հիմունքներ, կամ որպես մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներ եւ ազատություններ, կամ որպես հիմնական իրավունքների եւ ազատությունների իրականացման երաշխիքներ (Սահմանադրության 2-րդ գլուխ), կամ որպես դափական մարմինների կազմակերպման եւ գործունեության հիմունքներ՝ Սահմանադրության «Դափական իշխանությունը» գլխում:

ՆՃ օրենքներով նույնպես առանձնահատուկ տեղ է փրվել դափարանների լիազորություններին, կազմավորման ու գործունեության կարգին:

ՆՃ վճռաբեկ դափարանի կարգավիճակին, կազմին եւ տեղաբաշխմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են ՆՃ դափական օրենսգրքի 8-րդ գլխում (50-52-րդ եւ 57-62-րդ հոդվ.): Վճռաբեկ դափարանի դափական փարածքը Նայասարանի Նանրապետության փարածքն է:

Նամաձայն օրենսգրքի 52-րդ հոդվածի՝ վճռաբեկ դափարանը կազմված է վճռաբեկ դափարանի նախագահից եւ 2 պալատներից՝ 1) քրեական պալատ (կազմված պալատի նախագահից եւ հինգ դափավորից), 2) քաղաքացիական եւ վարչական պալատ (կազմված պալատի նախագահից եւ ինը դափավորից):

ՆՃ Սահմանադրության 92-րդ հոդվածով (2-րդ մաս) եւ դափական օրենսգրքի 50-րդ հոդվածով (1-ին մաս) վճռաբեկ դափարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դափարանը բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ եւ վարչական դափարանների դափական ակտերը (հոդվ. 50, մաս 2):

Դափական իշխանությունն ունի նաեւ ինքնակառավարման մարմիններ՝ ՆՃ դափավորների ընդհանուր ժողովը եւ դափարանների նախագահների խորհուրդը: Դափավորների ընդհանուր ժողովը դափական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է Նայասարանի Նանրապետության բոլոր դափավորներից: Վերջինիս որոշումները գերակա են դափարանների նախագահների խորհրդի որոշումների նկատմամբ: Դափավորների ընդհանուր ժողովը՝ 1) քննարկում է դափական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց, այդ թվում՝ ՆՃ դափարանների նախագահների խորհրդի իրավասությանը վերապահված, 2) ընտրում է ՆՃ արդարադատության խորհրդի դափավոր անդամներին:

3. Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական դափարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դափարանի մասին օրենքով: Մեկնաբանվող դրույթը համարվում է սահմանադրական հատուկ նորմ՝ 94-րդ հոդվածի 2-րդ մասի համեմատ, որովհետեւ կոնկրետացնում է սահմանադրական դափարանի լիազորությունների, կազմավորման կարգի, գործունեության կարգի կարգավորման իրավական աղբյուրները: Սահմանադրության 94-րդ հոդվածի 3-րդ մասն իր հերթին կարելի է փրոհել երկու առանձին մասե-

րի, որոնցից ամեն մեկն ունի իր կարգավորման առարկան:

Առաջին դրույթը սահմանում է սահմանադրական դափարանի լիազորությունների ու կազմավորման կարգի իրավական կարգավորման հիմքերը՝ սահմանափակելով այդպիսի կարգավորումը բացառապես Սահմանադրությամբ: Նման կարգավորումը կարելի է երաշխիք է, քանզի սահմանադրական դափարանի կազմավորման կարգը, լիազորությունները, էական նշանակություն ունեն դափարանի անկախության ապահովման համար: Առաջին դրույթից բխող իրավական հետեւանքը սահմանադրական արգելքն է՝ այլ ակտերով, բացի Սահմանադրությունից, սահմանել սահմանադրական դափարանի լիազորությունները, կազմավորման կարգը:

ՆՏ Սահմանադրությունը հիմնարար դրույթներ է բովանդակում սահմանադրական դափարանի կազմավորման կարգի, լիազորությունների վերաբերյալ (55-րդ հոդվ. 10-րդ կետ, 83-րդ հոդվ. 1-ին և 2-րդ կետեր, 93-րդ հոդվ., 99-100-րդ հոդվ.), ինչը բացառում է ընթացիկ օրենսդրական ակտերում այնպիսի դրույթների ամրագրումը, որոնք այս կամ այն կերպ խոցելի կդարձնեն դափարական այդ մարմինը:

Երկրորդ դրույթի կարգավորման առարկան սահմանադրական դափարանի գործունեության կարգի սահմանման իրավական աղբյուրներն են: Կարգն ընդհանրապես /order, порядок/ պետականագիտության մեջ հասկացվում է գործերի ճիշտ, դասավորված կացություն, ինչ-որ բանի կարարման կանոններ, վարչաձեւ /ռեժիմ/: «Գործունեության կարգ» հասկացությունը ենթադրում է բոլոր դափարանների գործունեության բոլոր կողմերը, այդ թվում՝ նաեւ վարույթային: Ներուաբար, գործունեության կարգը չի ենթադրում դափարանների, այդ թվում՝ սահմանադրական դափարանի գործունեության միայն վարույթային կարգը, այլ դափարանի պատշաճ կենսագործունեության բոլոր կողմերը, որոնք անհրաժեշտ են եւ բավարար այդ մարմնի առջեւ դրված խնդիրները եւ գործառույթները կենսագործելու համար: Նեղ իմաստով՝ գործունեության կարգն ինչ-որ հարցի, գործի քննության, վարման սահմանված կարգն է, մարմնի գործունեության ընթացակարգը, նրա լիազորությունների իրականացման կարգը:

Սահմանադրության 94-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված «գործունեության կարգ» հասկացությունը ենթադրվում է նեղ իմաստով, այսինքն՝ միայն վարույթի, լիազորությունների իրականացման ընթացակարգը: Այդ իմաստով կարգ սահմանող նորմափիլ աղբյուրները, ըստ Սահմանադրության, երկուսն են՝ ՆՏ Սահմանադրությունը եւ սահմանադրական դափարանի մասին օրենքը: Ընդ որում, սահմանադրական դափարանի մասին օրենքը որպես կանոն օրգանական օրենք է, որի առկայությունը սահմանադրական անհրաժեշտություն է: Սահմանադրական հիմունքները եւ նորմերը՝ նվիրված նշված հարաբերությունների կարգավորմանը, ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, մեթոդաբանական, ղեկավար հիմքեր են ինչպես օրինաստեղծ մարմնի համար՝ սահմանադրական դափարանի մասին օրենքն ընդունելիս, այնպես էլ դափարանի եւ այլ սուբյեկտների համար:

ՆՈՂ-ՎԱԾ 94.1

1. Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով ձեւավորվում եւ գործում է արդարադատության խորհուրդը:

2. Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Տայասրանի Տանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից զադրնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Տանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուսական իրավաբան-գիրնականներ:

3. Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճարեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

1. ՏՏ-ում դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում կարետրվեցին առաջավոր (ժողովրդավարական) իրավական համակարգ ունեցող երկրների փորձի ընդօրինակման հիման վրա օրենսդիր եւ գործադիր իշխանություններից անկախ, հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչներից կազմված, ինքնակառավարման սկզբունքներով գործառող դատական համակարգի կազմավորման մի մարմին ստեղծելու, այդ մարմնի կազմում, դատական իշխանության ներկայացուցիչներից բացի, իշխանության մյուս ճյուղերի ներկայացուցիչներին մասնակից դարձնելու եւ այդ մարմնի լիազորությունները հստակորեն սահմանելու, այն է՝ դատավորների ընտրության, նրանց նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց գործունեությունը դադարեցնելու, դատավորների տեղափոխման, վերապարտարման, դատական փորբեր արյաններում նրանց թվաքանակը որոշելու եւ արդարադատության իրականացմանն առնչվող մի շարք այլ հարցեր: Այդ հարցերը լուծելու համար արտասահմանյան երկրների (Ֆրանսիայի, Ռումինիայի եւ Ղուսաստանի մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդների, Ղամալեհական արդարադատության խորհրդի, Իտալիայի մագիստրատուրայի, Բուլղարիայի բարձրագույն դատական խորհրդի, Իսպանիայի դատական իշխանության գերագույն խորհրդի եւ այլնի) օրինակով Ղայաստանում ստեղծվեց արդարադատության համակարգի մի նոր ինստիտուտ՝ դատավորական հանրության բարձրագույն մարմին՝ ՏՏ արդարադատության խորհուրդը (այսուհետ՝ ԱԽ) եւ ամրագրվեցին նրա լիազորությունները (տե՛ս Սահմանադրության 1995թ. հուլիսի 5-ի տեքստի 94 եւ 95-րդ հոդվածները): Սակայն սկզբնական շրջանում թույլ տրվեցին մի շարք սխալներ. նախ՝ այդ խորհրդի կազմում ընդգրկվեցին նաեւ ՏՏ գլխավոր դատախազը՝ որպես ԱԽ փոխնախագահ եւ նրա առաջադրմամբ՝ երեք դատախազներ, երկրորդ՝ խորհրդի կազմավորմանը մասնակից չդարձվեց օրենսդիր մարմինը՝ ՏՏ ԱԺ-ն, երրորդ՝ դատական մարմինների անկախության երաշխավոր հռչակված Տանրապետության Նախագահը գլխավորեց ԱԽ-ն:

Վերը հիշատակված թերությունների եւ բացթողումների կապակցությամբ պետք է նշել, որ՝ ա) դատախազությունը Սահմանադրության 103-րդ հոդվածին համապատասխան օժտված էր, եւ է, պետական գործունեության ինքնուրույն տեսակով, այսինքն՝ արդարադատության հետ կապ չունեցող իրավասություններով (քրեական հետապնդում, մեղադրանքի պաշտպանություն եւ այլն), եւ նրա ներկայացուցիչները կարող էին այդ խորհրդում հանդես գալ դատախազությանն «անհնազանդ» դատավորների ճնշմամբ,

բ) իշխանության մյուս ճյուղը՝ օրենսդիրը գերծ պահվեց դատական իշխանության ձեւավորման եւ նրա աշխատանքում մասնակցություն ունենալու, հետեւաբար եւ՝ իշխանության գործադիր թեւին ԱԽ-ում հակակշռելու հնարավորությունից, մինչդեռ արդարադատության նախարարը (գործադիր իշխանության ներկայացուցիչը) ԱԽ-ի փոխնախագահն էր, գ) ՏՏ Նախագահի կողմից ԱԽ-ն գլխավորելը նույնպես իրավաչափ չէր, քանի որ նա, սահմանադրական իր բազմաթիվ լիազորություններին համապատասխան, այն ժամանակ, փաստորեն, գործադիր իշխանության ղեկավարն էր, ի տարբերություն այլ երկրների նախագահների, հրավիրում եւ վարում էր կառավարության նիստերը, վավերացնում էր կառավարության որոշումները եւ այլն (Սահմանադրության 86-րդ հոդվ.), իր ղեկավարած ԱԽ-ի առաջադրմամբ ինքն էլ նշանակում էր բոլոր աբյանների դատավորներին (Սահմանադրության 55-րդ հոդվ. 11-րդ կետ) եւ փաստորեն դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանում էր նրա ձեռքում, որը չէր կարող նպաստել զսպումների եւ հակակշիռների (իշխանությունների հավասարակշռման) սկզբունքի իրացմանը: Բացի դրանից, դատարանների անկախության երաշխավորն իրականում ոչ թե ՏՏ Նախագահը պետք է լիներ, այլ Սահմանադրությունը եւ օրենքները: Ինչ վերաբերում է ԱԽ անդամների անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, ապա նման էական երաշխիք կարող է դառնալ միայն ԱԽ անդամության ողջ ընթացքում նրա դատավոր անդամի լիազորությունների կասեցումը:

Պետք է նշել, որ ՏՏ Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով վերացվեցին նախկինում թույլ տրված էական սխալներն ու անճշտությունները:

ՏՏ Սահմանադրությամբ ամրագրված դատական համակարգի նոր ինստիտուտների (արդարադատության խորհրդի, սահմանադրական դատարանի, վերաքննիչ դատարանների) ձեւավորումը, դատական մարմինների գործունեության ժամանակակից սկզբունքների (կողմերի մրցակցության, իսկ քաղաքացիական հարաբերություններում՝ նաեւ դիսպոզիտիվության - փոփոխականության) արմատավորումը, դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմնի՝ դատարանների ընդհանուր ժողովի եւ դատարանների նախագահների խորհրդի կազմավորման ընթացակարգերը, որոնցում պետք է բացառվեր գործադիր իշխանության ներկայացուցչությունը, ամփոփվեցին 2007թ. փետրվարի 22-ի ՏՏ դատական օրենսգրքի ընդունմամբ: Վերջինս հստակեցրեց արդարադատության խորհրդի ձեւավորման եւ գործունեության կարգը, լիազորությունների շրջանակը, նախատեսեց դատական կարգադրիչների ծառայության ստեղծումը, կարգավորեց դատական մարմինների կադրային քաղաքականության հարցերը, ամրագրեց դատավորի վարքագծի հիմնական կանոնները, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը եւ այլն:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածն սկզբում ամրագրում է, որ ԱԽ-ն ձեւավորվում (կազմավորվում) եւ գործում է Սահմանադրությամբ եւ օրենքով (ՏՏ դատական օրենսգրքով) սահմանված կարգով: Դրա կարգավիճակը որոշված է ՏՏ Սահմանադրությամբ եւ ՏՏ դատական օրենսգրքով. այն անկախ, կոլեգիալ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն իրականացնում է ՏՏ Դատական օրենսգրքով (հոդվ. 97) նախատեսված կարգով, ստեղծված է բարձրորակ դատավորական կազմի ձեւավորման համար, որն էլ ընդունակ է որակյալ, բարեխիղճ եւ անկաշառ ձեւով, մասնագիտական (պրոֆեսիոնալ) հմտություններով իրականացնել արդարադատություն, ինչպես նաեւ դատավորի պաշտոնին անհարիր արարքներ թույլ տալու դեպքում որոշումներ կայացնել նրան կարգապահական պատասխանատվության

ենթարկելու մասին: ՏՏ արդարադատության խորհրդի, ինչպես որ արտասահմանյան շաբ երկրների բարձրագույն դատական խորհուրդների, ինքնավարության աստիճանը բավականաչափ բարձր է, որը պայմանավորված է ՏՏ Սահմանադրության՝ «երկրորդ սերնդի» սահմանադրությունների թվին պատկանելու հանգամանքով, որովհետև այդ սահմանադրություններն են հստակեցնում գործադիր իշխանության (արդարադատության նախարարության) դերը դատավորական կորպուսի ձեւավորման եւ պահպանման, այն է՝ արդարադատության կառավարման հարցում:

2. Արդարադատության խորհրդի ձեւավորման եւ գործունեության մասին ՏՏ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանուր դրույթն իր կոնկրետացումն է ստացել նույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում, ինչպես նաեւ ՏՏ դատական օրենսգրքի «Դատական իշխանությունը» վերբառությամբ 1-ին մասի «Արդարադատության խորհուրդը» անվանմամբ 3-րդ բաժնի 13 եւ 14-րդ գլուխներում, որոնք սահմանում են արդարադատության խորհրդի կազմավորման կարգը, լիազորությունները, խորհրդի անդամների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, լիազորությունների ժամկետը եւ խորհրդի գործունեության կազմակերպման հարցերը:

Արդարադատության խորհրդի կազմում, ինչպես որ բոլոր երկրներում է, խորհրդի անդամներ նշանակվում կամ ընտրվում են միայն այն դատավորները, իրավունքի պրոֆեսորները, որոնք ունեն աշխատանքի մեծ փորձ եւ մասնագիտական խոր գիտելիքներ:

Արդարադատության խորհուրդը կազմված է 14 անդամներից: Նրանցից մեկը՝ վճռաբեկ դատարանի նախագահը, միայն վարում է խորհրդի նիստերը: Խորհրդի կազմի մեջ մտնում են Տայաստանի Տանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրված ինը դատավորներ, ինչպես նաեւ Տանրապետության Տախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Ընդհանուր ժողովն իրավագոր է համարվում, եթե դրան մասնակցում են դատավորների ընդհանուր թվի 1/2-ից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդհանուր ժողովը հրավիրում եւ նախագահում է վճռաբեկ դատարանի նախագահը կամ նրա լիազորություններն իրականացնող փոխարինողը: Դատավորները երեք օղակների դատարաններից, ըստ առանձին խմբերի կազմված ցուցակների, ընտրվում են հետեւյալ համամասնությամբ. հինգը՝ առաջին արյանի դատարաններից (2-ը՝ Երեւանի ընդհանուր իրավասության, 2-ը՝ մարզերի ընդհանուր իրավասության, 1-ը՝ վարչական դատարանի դատավորներից), երկուսը՝ վերաքննիչ (քաղաքացիական՝ 1, քրեական՝ 1) դատարանների դատավորներից, երկուսը՝ վճռաբեկ դատարանի դատավորներից: Ախ դատավոր անդամների թեկնածությունների թիվը սահմանափակված չէ: Թեկնածու կարող են լինել առնվազն 5 տարի դատավորի պաշտոնում աշխատած եւ վերջին հինգ տարիների ընթացքում կարգապահական պարասխասնարվության չենթարկված դատավորները: Դատարանի նախագահը եւ վճռաբեկ դատարանի պալատի նախագահը չեն կարող լինել խորհրդի անդամ: Ախ անդամ դառնալու այլ պահանջներ, մասնավորապես՝ տարիքային, հայոց լեզվի իմացության, ՏՏ-ում բնակության ժամկետի եւ այլն, օրենսդրությունը չի դնում:

Արդարադատության խորհրդի դատավոր անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով, նրանց լիազորությունները դադարում են նրանց ընտրելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգերորդ տարին լրանալու հաջորդ օրը: Դատական

օրենսգրքով սահմանված են նաև Հանրապետության Նախագահի կողմից ԱԽ դատավոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը (ՀՀ դատական օր.-ի 167-րդ հոդվ.):

Արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական երկու անդամներ է նշանակում ՀՀ Նախագահը, եւ երկու անդամ ընտրում (Սահմանադրության 83-րդ հոդվ. 4-րդ կետ) եւ նշանակում է ՀՀ Ազգային ժողովը: ԱԽ իրավաբան-գիտնական անդամի պաշտոնը պետական պաշտոն է: Օրենքը չի սահմանում, թե որ բնագավառում աշխատող իրավաբան-գիտնականները կարող են նշանակվել խորհրդի անդամ, հետեւաբար, խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ոչ միայն մանկավարժության կամ գիտության ոլորտում աշխատողները, այլ նաև պրակտիկ իրավաբան-գիտնականները, ասենք՝ գիտական ասպիճան ունեցող ԱԺ պարզամավորները, փաստաբանները, իրավախորհրդատուները եւ այլն: ՀՀ Նախագահի կողմից նշանակված իրավաբան-գիտնականների լիազորությունները դադարում են ՀՀ Նախագահի լիազորությունները դադարելու, իսկ Ազգային ժողովի կողմից նշանակվածներինը՝ ԱԺ լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ ԱԺ արձակման դեպքերում: Դատական օրենսգրքը սահմանում է նաև իրավաբան-գիտնական անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը (հոդվ. 102):

Արդարադատության խորհրդին Սահմանադրությամբ եւ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը պաշտոն կերպով մասնակցելու համար նրա անդամներն օգտվում են որոշակի իրավունքներից եւ կրում են պարտականություններ: ԱԽ անդամն իրավունք ունի ծանոթանալու նիստում քննարկվող հարցերին առնչվող նյութերին, ելույթ ունենալու խորհրդում քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ, հարցեր փայտ, առաջարկություններ անելու: Նրա հիմնական պարտականություններն են՝ մասնակցել ԱԽ նիստերին եւ կողմ կամ դեմ քվեարկել քննարկվող յուրաքանչյուր հարցի շուրջ, մասնակցել թերթիկներով քվեարկություններին (մյուս քվեարկություններին կարող է նաև չմասնակցել կամ ձեռնպահ քվեարկել), կարարել ԱԽ որոշմամբ իրեն փրկված հանձնարարությունները: ԱԽ դատավոր անդամը չի մասնակցում այն որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են նրա՝ որպես դատավորի լիազորությունները դադարեցնելուն, նրան կալանավորելուն, որպես մեղադրյալ ներգրավելուն կամ դատական կարգով վարչական պարասխանավորության ենթարկելու համաձայնություն փայտ մասին Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելուն, նրան կարգապահական պարասխանավորության ենթարկելուն, որպես դատարանի նախագահ՝ վճռաբեկ դատարանի դատավոր առաջարկելու նպատակով իր թեկնածության քննարկմանը, իր՝ որպես այլ դատարանի դատավորի թեկնածության, ինչպես նաև այլ դատավորի հետ պաշտոնների փոխանակման վերաբերյալ եզրակացություն կամ առաջարկություն փայտն: ԱԽ անդամը չի մասնակցում դատավորին կարգապահական պարասխանավորության ենթարկելու մասին որոշման կայացմանը, եթե նա հանդիսանում է այն կարգապահական հանձնաժողովի անդամ, որի կողմից հարուցված կարգապահական վարույթի հիման վրա է խորհուրդը քննարկում հարցը: ԱԽ իրավաբան-գիտնական անդամը չի մասնակցում այն որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են իրեն դատավորի թեկնածուների կամ առաջխաղացման ցուցակում ներառելուն, իրեն դատավոր նշանակելու վերաբերյալ եզրակացություն կամ առաջարկություն փայտն:

Դատական օրենսգրքը կարգավորում է նաև ԱԽ գործունեության կազմակերպմանը վերաբերող, այն է՝ ԱԽ կարգապահական հանձնաժողովի ձեւավորմանը եւ լիազորություններին, ԱԽ նիստերին, դրանց արձանագրմանը, արձանագրության բովանդա-

կությանը, հարցերի քննության կարգին, ԱԽ աշխատակազմի (ՏՏ դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանման) գործառույթներին վերաբերող հարցերը (106-112-րդ հոդվածներ):

Մեկ փարի ժամկետով ձեւավորված ԱԽ կարգապահական հանձնաժողովի կազմի մեջ ռոպացիոն (փոխարեդության) կարգով մտնում են խորհրդի անդամ երկու դատավոր եւ մեկ իրավաբան-գիտնական: Այս հանձնաժողովն իրավունք ունի՝ ա) կարգապահական վարույթ հարուցելու առաջին աստիճանի եւ վերաքննիչ դատարանների դատավորի ու դատարանի նախագահի նկատմամբ եւ համապատասխան միջնորդությանը դիմելու ԱԽ, բ) ՏՏ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի դիմումի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու վճռաբեկ դատարանի դատավորի, ինչպես նաեւ վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ եւ համապատասխան միջնորդությանը դիմելու ԱԽ:

Երբ ԱԽ-ն գործում է որպես դատարան, գործին մասնակցող անձանց օրենքով նախատեսված կարգով ուղարկվում է ծանուցում: Արդարադատության խորհրդի նիստի իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի առնվազն յոթ դատավոր անդամ:

3. Արդարադատության խորհրդի նիստերը վարելու մասին մեկնաբանվող հոդվածի երրորդ մասի դրույթը վերաբարդված է ՏՏ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասում, սակայն ավելի համառոտ, քան սահմանադրական տեքստն է: Այսպես բացակայում է «առանց քվեարկության իրավունքի» դարձվածը: Ըստ երեւոյթին, հաշվի է առնվել այն հանգամանքը, որ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի երրորդ մասն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ այդ նորմը գործում է անմիջականորեն:

Արդարադատության խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստը հրավիրում է ԱԽ (վճռաբեկ դատարանի) նախագահը երկշաբաթյա ժամկետում՝ սկսած այն պահից, երբ ծագել է խորհրդի որոշում պահանջող հարց: Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանավորության ենթարկելու համաձայնություն տալու մասին Տանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցով գլխավոր դատախազի կամ գործը քննող դատարանի առաջարկության դեպքում նիստերը գումարվում են հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան խորհրդին դիմելու հաջորդ օրը: ԱԽ նախագահը պարտավոր է ստուգել, թե ՏՏ դատական դեպարտամենտն ապահովել է, արդյոք, խորհրդի նիստի օրակարգի ժամանակի եւ վայրի մասին ողջամիտ ժամկետում ԱԽ անդամներին, գործին մասնակցող անձանց, արդարադատության նախարարին ծանուցումը:

Նիստը վարողը բացում է ԱԽ նիստը՝ հայտարարելով, թե ինչ հարց է ենթակա քննության, ինչպես նաեւ խորհրդի անդամների համաձայնությամբ սահմանում է նիստի օրակարգում ընդգրկվող հարցերի քննության կարգը, ղեկավարում է նիստի ընթացքը: Նիստերը դռնփակ են, բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանավորության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, երբ դատավորը, ում նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի հրապարակային քննություն:

Վճռաբեկ դատարանի նախագահը ԱԽ նիստերը, այդ թվում՝ խորհրդակցական սենյակում համապատասխան ակտեր՝ եզրակացություններ կամ որոշումներ ընդունելիս, վարում է, սակայն չի մասնակցում ԱԽ-ի՝ նիստերի դահլիճում եւ խորհրդակցական սենյակում որոշումներ կայացնելու քվեարկություններին: Այս կանոնը, անշուշտ, նպա-

րակ ունի կանխել վճռաբեկ դատարանի նախագահի ազդեցությունը խորհրդի դատավոր անդամների վրա, սակայն այդ նպատակն իրագործվել չի կարող ստորև բերվող հետևյալ պարճառաբանությամբ. խորհրդի դատավոր անդամները, որոնք խորհրդում քվեարկողների մեծամասնությունն են (13-ից 9-ը) իրենց գործունեության ընթացքում չեն ազատվում դատավորի պարտականություններ կատարելուց: Դրան զուգահեռ, վճռաբեկ դատարանի նախագահը, օրենքում նախատեսված դեպքերում եւ կարգով, կարգապահական վարույթ է հարուցում պալատի դատավորի նկատմամբ, կարող է իրականացնել պալատի նախագահի եւ վճռաբեկ դատարանի դատավորի բոլոր լիազորությունները (ՏՏ դատական օր. 61-րդ հոդվ.): Այս հանգամանքը կարող է խոչընդոտել ԱԽ դատավոր անդամների օբյեկտիվ (անաչառ) գործունեությանը (նրանց քննած գործերը եւս բողոքարկվում են վճռաբեկ դատարանում), ուստի անհրաժեշտ ենք համարում դատարավական բարեփոխումների հաջորդ փուլերում լուծել խորհրդի դատավոր անդամների գործունեության ընթացքում նրանց դատավորական լիազորությունները կասեցնելու եւ նրանց՝ վճռաբեկ դատարանի նախագահից լիովին անկախացնելու հարցը: Նաեւ այս նկատի ունի ՏՏ Նախագահի 2009թ. ապրիլի 21-ի ՆԿ-59-Ն «Դատարարավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը», որի 5-րդ բաժնի հենց 1-ին կետը վերաբերում է ԱԽ կազմակերպման եւ գործունեության կատարելագործման անհրաժեշտությանը (տես ՏՏ ՊՏ, 2009, թիվ 21)

Վճռաբեկ դատարանի նախագահին դատական օրենսգրքով վերապահվել են նաեւ կազմակերպական բնույթի լիազորություններ, իսկ ԱԽ աշխատակազմի լիազորությունները դրվել են դատական ղեկարարամենտի վրա (ՏՏ դատ. օր., հոդվ. 112), որը նույնպես լուրջ կախվածության մեջ է դնում արդարադատության խորհուրդը վճռաբեկ դատարանի նախագահից եւ աղավաղում սահմանադրական նորմի բովանդակությունը:

Եթե Սահմանադրությամբ նախատեսված է, որ արդարադատության խորհրդի նիստերը *վարում է* վճռաբեկ դատարանի նախագահը, ապա ՏՏ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածը սահմանել է նաեւ, որ արդարադատության խորհրդի նիստերը *հրավիրում է* վճռաբեկ դատարանի նախագահը: Բացի դրանից, նույն հոդվածով սահմանված է, որ վճռաբեկ դատարանի նախագահն արդարադատության խորհրդի նիստ գումարում է երկշաբաթյա ժամկետում՝ սկսած այն պահից, երբ ծագել է խորհրդի որոշում պահանջող հարց: Օրենսգիրքն ընդհուպ դրույթ է բովանդակում, որ, օրինակ, վճռաբեկ դատարանի նախագահն *հանդես է գալիս արդարադատության խորհրդի անունից* (հոդվ. 122): Ընդհանրապես, ՏՏ դատական օրենսգրքի 102, 107, 120, 122, 123, 125-րդ եւ մի շարք այլ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի նախագահը դե ֆակտո դառնում է արդարադատության խորհրդի նախագահ՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով հանդերձ:

Արդարադատության խորհրդի աշխատանքի բարեփոխմանն էականորեն կարող էր նպաստել նաեւ դրա կազմում երկու փաստաբանների ընտրությունը, որը նախատեսված է նման խորհուրդ ունեցող գրեթե բոլոր երկրներում:

ՆՈՂ-ՎԱԾ 95

Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1) կազմում է և Տանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.

2) եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ,

3) առաջարկում է վճարել դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին արյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.

4) Տանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ.

5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Տանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կայանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

Դատական համակարգի կազմակերպումը (դատարանակազմությունը) ներառում է՝ ա) գործող դատարանների ցանկը (տե՛ս Սահմանադրության 92 և 93-րդ հոդվածների մեկնաբանությունները), բ) դատարանների հիմնադրման ընթացակարգը, գ) դատարանների ներքին կառուցվածքը: Ըստ որում, արդարադատությունը միայն դատարանների կողմից իրականացվելու և օրենսդիր ու գործադիր իշխանություններից դատական իշխանության անկախության երաշխիքների մեջ առաջնահերթ նշանակություն ունի այն հարցը, թե ինչպես են կազմավորվում դատարանները, ով և ինչպես է նշանակում դատավորներին:

Արդարադատության խորհրդի իրավասության մեջ առաջին հերթին մտնում են հենց դատավորների նշանակման, տեղափոխման և ազատման, դատավորների կարգապահական զանցանքների քննարկումները և նրանց վարչական կարգավիճակի մյուս հարցերը, դատավորական հանրության շահերի ներկայացումը և պաշտպանությունը, խորհրդավորական գործառույթները, հարկապես՝ դատական կազմակերպման և դատավորների կարգավիճակի հարցերով, դատական աշխատողների պատրաստման կազմակերպումը:

Մեկնաբանվող հոդվածն իր 5 կետերով սահմանում է արդարադատության խորհրդի լիազորությունները, որոնք ոչ միայն վերարտադրվում, այլև մանրամասնվում են ՏՏ դատական օրենսգրքում՝ կանոնակարգելով այդ լիազորությունների իրականացման կարգը և ԱԽ կողմից ընդունվող ակտերի տեսակներն ու դրանց բովանդակությունները:

1) **Դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելը և հաստատման ներկայացնելը:** ԱԽ-ն թեկնածուների որակավորման ստուգման հիման վրա կազմում է դատա-

վորների թեկնածությունների ցուցակը եւ նրանց ծառայողական առաջխաղացման ցուցակները, կամ այդ ցուցակներում լրացումներ եւ փոփոխություններ է կատարում ու Նանրապետության Նախագահի հաստատման է ներկայացվում ՏՏ դարական օրենսգրքով սահմանված կարգով⁶:

Դարական օրենսգիրքը սահմանում է նաեւ դարավորների թեկնածությունների ցուցակից հանելու, ընդհանուր իրավասության դարարանի դարավորի թափուր Կրեղ առաջանալու, այդ Կրեղի համար թեկնածու առաջարկելու հիմքերը, ընդհանուր իրավասության Կրեղներ դարարանների դարավորների պաշտոնների փոխարեղման կարգը (120, 122, 123, 127, 128, 129 եւ 134-րդ հոդվածներ): Դարավորների առաջխաղացման ցուցակները կազմվում եւ դրանցում լրացումներ ու փոփոխություններ կատարվում են միեւնույն կարգով, ըստ որում, այս ցուցակները բաղկացած են՝ 1. առաջին արյանի մասնագիտացված դարարանի դարավորների, 2. վերաքննիչ դարարանների դարավորների ծառայողական առաջխաղացման ցուցակներից: Այդ ցուցակներում կարող են ներգրավվել այն անձինք, ովքեր աշխատում են դարավորի պաշտոնում, այդ թվում՝ կրճարված եւ պահեստային (ռեզերվային) դարավորները, եթե անգամ նշանակվել են սպորադաս դարարանի դարավորի պաշտոնում, ինչպես նաեւ իրավագիտության դոկտորի գիտական ասպիճան ունեցող եւ վերջին 5 տարիների ընթացքում բուհերում մշտապես իրավունք դասավանդող կամ գիտական հաստատություններում աշխատող ՏՏ քաղաքացիները, որոնք կարող են ընդգրկվել միայն վերաքննիչ արյանի դարարանների դարավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում: Թեկնածուներին օրենսդիրը ներկայացնում է որոշակի պահանջներ, օրինակ՝ առաջին արյանի դարարանների դարավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում կարող է ընդգրկվել առաջին արյանի դարարանի դարավորի պաշտոնում առնվազն 3 տարի աշխատած անձը, ով չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձեռով, վերջին 8 տարում առնվազն 5 տարի դարախազ, փաստաբան կամ քննիչ աշխատած անձը, վերջին 8 տարվա ընթացքում առնվազն 5 տարի դարավոր աշխատած նախկին դարավորը, իսկ վերաքննիչ դարարանների դարավորների ծառայողական առաջխաղացման ցուցակներում՝ վերաքննիչ դարարանի դարավորի պաշտոնում առնվազն 5 տարի աշխատած անձը, եթե նա չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ

⁶ Մինչեւ ՀՀ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելը կազմված դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը ոչ ուշ, քան մինչեւ սեպտեմբերի 10-ը հրապարակում է հայտարարություն Դատական դպրոցն ավարտած անձանց որակավորման ստուգումներ անցկացնելու մասին: Որակավորման ստուգումը կատարվում է մրցութային կարգով՝ գրավոր քննությունների արդյունքներով: Որակավորման քննության անցկացման հետ կապված կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Դատական դպրոցի տնօրենը, որի կողմից հայտի ընդունման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Բողոքարկման ժամկետի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան մինչեւ նոյեմբերի 20-ը Դատական դպրոցի կառավարման խորհուրդը որակավորման ստուգման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած հավակնորդների արդյունքները ներկայացնում է ԱԽ՝ դատավորների թեկնածուների ցուցակում ներառելու նպատակով: ԱԽ-ն իր նիստում ուսումնասիրում է առաջարկված թեկնածությունները եւ իրավիքում թեկնածուներին գրույցի, այնուհետեւ անցկացնում է քվեաբեռքիկներով գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքներով կազմվում է առավելագույն ձայներ ստացած 10 անձանց ցուցակ եւ այն Հանրապետության Նախագահին է ներկայացվում ոչ ուշ, քան մինչեւ դեկտեմբերի 15-ը: Ցուցակի կազմման ժամանակ հաշվի է առնվում սեռային (գեներային) հավասարակշռությունը: Որևէ սեռի դատավորների թիվը չպետք է պակաս լինի դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից: Նախկին դատավորները և վերջին 3 տարվա ընթացքում առնվազն 2 տարի դատախազ, փաստաբան կամ քննիչ աշխատած և դիմումը ներկայացնելու պահին դատախազ, փաստաբան կամ քննիչ աշխատող անձինք նույնպես կարող են ընդգրկվել դատավորների թեկնածությունների (նաև՝ առաջխաղացման) ցուցակներում: Հանրապետության Նախագահը ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 25-ը հրամանագրով հաստատում է ԱԽ կազմած ցանկը՝ իր համար ընդունելի թեկնածություններով (ՀՀ դատ. օր.-ի 114-118-րդ հոդվածներ):

խիստ նկատողության ձեռով, վերջին 15 փարվա ընթացքում առնվազն 10 փարի դափախագ, փաստաբան կամ քննիչ աշխատած անձը, վերջին 15 փարվա ընթացքում առնվազն 10 փարի դափավոր աշխատած նախկին դափավորը: ՏՏ վճռաբեկ դափարանի նախագահը ՏՏ դափական իշխանության պաշտոնական համացանցի կայքի միջոցով դափավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի՝ համապարասխան մասնագիտացման գծով ցուցակի կազմման մասին հայտարարություն է հրատարակում միայն այն դեպքում, եթե նոյեմբերի 1-ի դրությամբ որեւէ մասնագիտացման գծով առաջխաղացման ցուցակի բաժնում առկա է ոչ ավելի, քան 5 դափավոր: Դիմումներ ընդունելու սահմանված ժամկետի ավարտից հետո՝ փասնօրյա ժամկետում, ԱԽ-ն իր նիստում ուսումնասիրում է հավակնողների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց գրույցի: Տեղի է ունենում քվեաթերթիկներով գաղտնի քվեարկություն: Նանրապետության Նախագահն ԱԽ-ի ներկայացրած ցուցակից թողնում է իր համար ընդունելի թեկնածությունները եւ ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում հրամանագրով լրացնում է դափավորների ծառայողական առաջխաղացման ցուցակը (ՏՏ դափ. օր.-ի 136-139-րդ հոդվածներ):

Օրենքն ԱԽ անդամներին կողմնորոշում է նաեւ դափավորների առաջխաղացման ցուցակները կազմելու, դափավորների եւ դափարանների նախագահների նշանակման կապակցությամբ գաղտնի քվեարկությունների ժամանակ թեկնածուների՝ ուշադրության արժանի հատկանիշները հաշվի առնելու հարցում: Նման հատկանիշներ են դափավորի մասնագիտական գիտելիքները, գիտական գործունեությունը, մասնագիտական եւ հետբուհական կրթությունը, հեղինակությունը, աշխատանքային ունակությունները, դափավորի կայացրած ակտերի որակը եւ այլն (ՏՏ դափ. օր.-ի 135-րդ հոդվ.):

Դափական օրենսգրքում մանրամասնորեն կարգավորված են նաեւ դափավորների ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակներից դուրս թողնելու, վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանների դափավորի թափուր փեղ առաջանալու հիմքերը, վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանների դափավորի թափուր փեղի համար թեկնածու առաջարկելու եւ այդ առաջարկն ընդունելու կարգերը (140-142, 146-148-րդ հոդվածներ):

2) ԱԽ-ն օրենքով սահմանված կարգով եզրակացություն է փախի ներկայացված դափավորների թեկնածությունների վերաբերյալ: Առաջին արյանի ընդհանուր իրավասության դափարանի, մասնագիտացված դափարանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանների դափավորի պաշտոնի թափուր փեղ (փեղեր) առաջանալիս Նանրապետության Նախագահին թեկնածություն առաջարկելու նպատակով **ԱԽ անունից** (նման իրավակարգավորումն առնվազն վիճարկելի է) վճռաբեկ դափարանի նախագահը, պահպանելով ՏՏ դափական օրենսգրքի 122, 129, 142 եւ 147-րդ հոդվածներում սահմանված հերթականությունները, գրավոր առաջարկում է դափավորին (դափավորներին): Թեկնածուն (թեկնածուները) ծանուցումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում պարտավոր է **վճռաբեկ դափարանի նախագահի նստավայր** (խնդրահարույց օրենսդրական ձեռակերպում է) ներկայացնել իր գրավոր համաձայնությունը կամ հայրենի անհամաձայնությունը նշանակման վերաբերյալ: Սահմանված ժամկետում համաձայնություն չբերող դիմում է որպես անհամաձայնություն, որը թեկնածուի համար որեւէ բացասական հետեւանք չի առաջացնում: Թեկնածուի համաձայնության դեպքում վճռաբեկ դափարանի նախագահը նրա թեկնածությունը ներկայացնում է ԱԽ: ԱԽ-ն ներկայացված թեկնածության վերաբերյալ բաց քվեարկությամբ փախի է դրական եզրակացություն, եթե խախտված չեն ՏՏ դափական օրենսգրքով սահմանված ընթացակարգերը: Թեկնածությունը խորհրդի դրական եզրակացության դեպքում ներկայացվում

Է ՏՏ Նախագահին: Եթե Տանրապետության Նախագահն ԱԽ եզրակացությունն սրանալուց հետո երկշաբաթյա ժամկետում չի նշանակում ընդհանուր իրավասության դատարանի դատավորին, ապա այդ թեկնածությունը համարվում է մերժված, անձը հանվում է դատավորների թեկնածությունների ցուցակից, իսկ թափուր փեղի համար առաջադրումն սկսվում է նորից: ԱԽ դրական եզրակացության դեպքում առաջին արյանի մասնագիտացված, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատավորներին Տանրապետության Նախագահը նշանակում է փաստօրյա ժամկետում: Ըստ որում, առաջին դեպքում, եթե եզրակացությունը բացասական է, ապա թեկնածուն հանվում է ցուցակից, եւ թափուր փեղի համար առաջադրումն սկսվում է նորից, իսկ երկրորդ եւ երրորդ դեպքերում թեկնածուն չի հանվում ցուցակից, բայց թափուր փեղի համար առաջադրումն սկսվում է նորից (ՏՏ դատ. օր.-ի 123, 130, 143 եւ 148-րդ հոդվածներ):

Եզրակացություն փալու նպատակով ԱԽ-ն իր նիստում ուսումնասիրում է ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների դատավորների թափուր փեղի համար հայր ներկայացրած անձանց գործերը, իսկ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատավորի (դատավորների) թեկնածությունների կապակցությամբ՝ ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում է նրանց գրույցի եւ, հաշվի առնելով թեկնածուների վերը նշված հատկանիշները, անցկացնում է քվեաթերթիկներով գաղտնի քվեարկություն: Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատավորին (դատավորներին) նշանակելու կամ նրա (նրանց) նշանակումը մերժելու դեպքերում Տանրապետության Նախագահը նրան (նրանց) հանում է առաջխաղացման ցուցակից (ՏՏ դատ. օր.-ի 131, 144 եւ 149-րդ հոդվածներ):

3) Օրենսդիրը մանրամասն կերպով կարգավորում է նաեւ ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների նախագահների, վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածությունների կապակցությամբ հայրով ԱԽ դիմելու, թեկնածուների անձնական գործերն ուսումնասիրելու, ԱԽ-ում գաղտնի քվեարկություններ անցկացնելու, Տանրապետության Նախագահին թեկնածուներին ներկայացնելու (առաջարկելու) եւ նրանց նշանակելու կարգը: Թվարկված պաշտոններում նշանակումները կատարվում են՝ ընդհանուր իրավասության դատարանի նախագահի նշանակման համար ՏՏ դատական օրենսգրքով սահմանված կարգով, այն է՝ դատարանի նախագահի պաշտոնում թափուր փեղ առաջանալու դեպքում վճռաբեկ դատարանի նախագահը ՏՏ դատական իշխանության պաշտոնական համացանցի կայքի միջոցով հայտարարում է այդ փեղի համար առաջադրումներ սկսվելու մասին: Տայարարության մեջ նշվում են թափուր պաշտոնին հավակնողների կողմից դիմումների եւ փաստաթղթերի ներկայացման ժամկետները եւ վայրը: Տայարարությունից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համապատասխան պաշտոնին հավակնող դատավորները, դատարանների նախագահները, վճռաբեկ դատարանի պալատների նախագահները եւ դատավորի պաշտոնում պաշտոնավարելու մտադրությամբ առաջին արյանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների պալատի նախագահի պաշտոնից հրաժարվելու դեպքում՝ միայն նույն դատարանի դատավորները կարող են հայրով դիմել ԱԽ: ԱԽ-ն իր նիստում ուսումնասիրում է հավակնողների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում նրանց հրավիրում է գրույցի: ԱԽ-ն, հաշվի առնելով հավակնողների հատկանիշները, անցկացնում է քվեաթերթիկներով գաղտնի քվեարկություն, որի արդյունքներով Տանրապետության Նախագահին առաջարկվում է առավել կողմ ձայներ սրացած անձը: Եթե դիմել է մեկ թեկնածու, ապա նա համարվում է քվեար-

կությունն անցած, եթե սրացել է ԱԽ-ի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների կեսից ավելին: Սահմանված քանակի ձայներ չստանալու դեպքում վճռաբեկ դատարանի նախագահի հայտարարության հիման վրա սկսվում են նոր առաջադրումներ:

Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնը թափուր լինելու դեպքում, եթե վճռաբեկ դատարանի նախագահը ցանկություն է հայտնում պաշտոնավարել այդ պաշտոնում, ապա ԱԽ-ն բաց քվեարկությամբ նրա թեկնածությունը ներկայացնում է Նանրապետության Նախագահին, եւ եթե խախտված չեն Դատական օրենսգրքով նախատեսված ընթացակարգերը, ապա Նանրապետության Նախագահը վճռաբեկ դատարանի նախագահին նշանակում է պալատի նախագահ: Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել վերաքննիչ դատարանի ծառայողական առաջխաղացման ցուցակում գրկվող անձը կամ վճռաբեկ դատարանի պալատի դատավորը, իսկ դատավորի պաշտոնում պաշտոնավարելու մտադրությամբ դատարանի նախագահի պաշտոնից հրաժարվելու դեպքում՝ միայն նույն պալատի դատավորները:

Վճռաբեկ դատարանի նախագահի նշանակման հարցը քննարկող ԱԽ նիստը վարում է վճռաբեկ դատարանի նախագահի լիազորություններն իրականացնող անձը: Եթե Նանրապետության Նախագահն ԱԽ առաջարկությունն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում չի նշանակում համապատասխան անձին դատարանի նախագահ, ապա ԱԽ-ին հայտով դիմելու գործընթացը (առաջադրումները) նորից են սկսվում (ՏՏ դատ. օր.-ի 125, 132, 135, 145, 150, 151 եւ 152-րդ հոդվածներ):

4) ԱԽ-ն Նանրապետության Նախագահի հարցման դեպքում կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ: ՏՏ Նախագահի աշխատակազմի հիշյալ վարչությունը ՏՏ Նախագահի 1997թ. «Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու կարգը հաստատելու մասին» հրամանագրին համապատասխան, ներման խնդրագրերով նախապարաստում է ներման կամ այն մերժելու մասին որոշումներ: Այդ որոշումները նախապարաստելուց առաջ ներման վարչությունը, անհրաժեշտության դեպքում, ՏՏ Նախագահի անունից կարող է դիմել ԱԽ-ին՝ ներման հարցերի վերաբերյալ կարծիք հայտնելու համար: ՏՏ պրակտիկայում Նանրապետության Նախագահը մեծավ մասամբ ներման հարցերը լուծում է առանց ԱԽ կարծիքի, սուկ իր աշխատակազմի վարչության կողմից կազմված որոշման նախագիծ ստանալուց հետո: Բայց եթե հարցն ուղարկվում է ԱԽ, ապա դրա նիստին հրավիրվում են ՏՏ արդարադատության նախարարը եւ ՏՏ գլխավոր դատախազը, ովքեր մինչեւ խորհրդի որոշման կայացումն իրավունք ունեն կարծիք հայտնելու ներման հարցերի կապակցությամբ:

5) Մեկնաբանվող հոդվածի 5-րդ կետի իմաստի ու բովանդակության բացահայտումն անհրաժեշտ է կատարել Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի հետ համակարգային կապի մեջ, ինչը հնարավորություն կտա չեզոքացնել 95-րդ հոդվածի 5-րդ կետի եւ 55-րդ հոդվածի 5-րդ կետի միջեւ առկա եզրութաբանական փոքրբերություններից բխող թվացյալ անհամապատասխանությունը: Իսկ դա, իր հերթին, այն բանալին է լինելու, որով հնարավոր կլինի հաղթահարել 95 եւ 97-րդ հոդվածների հակասությունը:

Որպեսզի կարողանանք բացահայտել Սահմանադրության նշված դրույթների՝ սահմանադրի իրական կամքն արտահայտող բովանդակությունը, նախ փորձենք վեր հանել սահմանադրական այս նորմով նախատեսված իրավահարաբերության մասնակիցների կազմը, իսկ այնուհետեւ՝ դրանցից յուրաքանչյուրի լիազորությունները կամ լիազորությունների բնույթը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 5-րդ կետում եւ 95-րդ հոդվածի 5-րդ կետում մոդելավորված իրավահարաբերությունների սուբյեկտներ են Նանրապետության Նախագահը, արդարադատության խորհուրդը, դատավորը, ով

հայրնվել է Սահմանադրության 55-րդ հոդվածի 5-րդ կետում եւ 95-րդ հոդվածի 5-րդ կետում թվարկված իրավիճակներում, ինչպես նաեւ այդ իրավիճակների մի մասին մասնակից «չերեւացող» սուբյեկտները, օրինակ՝ դատավորին կալանավորողը, որպես մեղադրյալ ներգրավողը, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցողը:

Նանրապետության Նախագահը դատավորների անձեռնմխելիության յուրօրինակ երաշխավորն է: Նրա լիազորությունն այս հարաբերություններում համաձայնությունն փայլն է, որ համապատասխան սուբյեկտները՝ հանրային մարմինները եւ պաշտոնատար անձինք կարողանան գործի դնել ենթադրվող իրավախախտ դատավորի կալանավորման սահմանադրական ընթացակարգը, որպես մեղադրյալ ներգրավելու քրեադատավարական ընթացակարգը, վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը: Այդպիսով, դատավորը որպես քաղաքացի ունի իր անձի անձեռնմխելիության ընդհանուր սահմանադրական երաշխիքների ու ընթացակարգերի իրավունք: Ներեւաբար՝ Նանրապետության Նախագահի սոսկ համաձայնությունը չի նշանակում, որ քրեական հետապնդման մարմինը կարող է համաձայնությունն ստանալուց հետո միանգամից ձերբակալել դատավորին: Եթե իրերի դրությունն այդպիսին լիներ, ապա դատավորն անձնական անձեռնմխելիության եւ դեղիկությունակության տեսակետից շար ավելի անպաշտպան կլիներ, քան սովորական քաղաքացին: Այստեղից հետեւում է, որ Սահմանադրության 55-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «հարց հարուցելու վերաբերյալ» ձեւակերպումը հենց նշանակում է, որ Նանրապետության Նախագահի համաձայնությունը նախադրյալ է ընդհանուր ընթացակարգերի գործողության հիման վրա, դրանց համապատասխան, դրանցով նախատեսված կարգով դատավորին կալանավորելու իրավունքի, նրան որպես մեղադրյալ ներգրավելու իրավունքի, նրա նկատմամբ վարչական պատասխանատվության ընթացակարգ հարուցելու իրավունքի իրականացման համար: Այս համարեքստում արդարադատության խորհուրդը որպես դատավորների անկախության եւ անձեռնմխելիության Սահմանադրությամբ հիմնադրված լրացուցիչ «երաշխավոր», ըստ 95-րդ հոդվածի 5-րդ մասի՝ կարող է, նախապես ստուգելով դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, Նանրապետության Նախագահին առաջարկել՝ փայ համաձայնություն՝ դադարեցնել դատավորի լիազորությունները, դատավորին կալանավորել, նրան որպես մեղադրյալ ներգրավել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվություն կիրառել: Այսպիսով, 95 հոդվածի 5-րդ կետի առաջին դրոթից հետո ամրագրված «առաջարկ է ներկայացնում» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն դատավորի լիազորությունները դադարեցնելուն, այլեւ դրանից հետո ամրագրված գործողություններին:

Ասվածի հիման վրա Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետից կարելի է բխեցնել հետեւյալ իրավադրոթյոթները. Արդարադատության խորհուրդն իրավագոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1/ դատավորներին ենթարկել կարգապահական պատասխանատվության,
- 2/ առաջարկ ներկայացնել Նանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու համաձայնություն փայլու մասին,
- 3/ առաջարկ ներկայացնել Նանրապետության Նախագահին դատավորին կալանավորելու համաձայնություն փայլու մասին,
- 4/ առաջարկ ներկայացնել Նանրապետության Նախագահին դատավորին որպես

մեղադրյալ ներգրավելու համաձայնություն փախու մասին,

5/ առաջարկ ներկայացնել Հանրապետության Նախագահին դատավորի նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն փախու մասին:

Սահմանադրության 97-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթն այն մասին, որ դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց արդարադատության խորհրդի համաձայնության բանաձևերը չպետք է դիտարկել որպես հակասություն Սահմանադրության 55 եւ 95-րդ հոդվածների 5-րդ կետերի դրույթների հետ: Դա ընդամենը լրացուցիչ երաշխիք է դատավորի անձեռնմխելիության համար եւ, միաժամանակ, այդ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի առաջին փուլը: Եթե, ի վերջո, եւ 55 եւ 95-րդ հոդվածներին համապատասխան գործողությունների կատարման կամ կատարման հարուցման համաձայնությունը փախու է Հանրապետության Նախագահը, ապա այդ լիազորությունը կասկածի ենթարկել չի կարելի՝ հստակապես, որ ինքը՝ Նախագահն է նշանակում դատավորին, եւ փրամաբանական է, որ նա էլ պետք է փա այդ համաձայնությունը: Կասկածի ենթակա չէ նաև Հանրապետության Նախագահի համաձայնությունն սրանալու համար արդարադատության խորհրդի «առաջարկը» որպես լիազորություն, որովհետեւ երկու հոդվածներն էլ հստակ ամրագրում են, որ Հանրապետության Նախագահն այդ համաձայնությունը փախու է արդարադատության խորհրդի առաջարկով: Կասկածելի կամ հավանական սխալի կարգավիճակում մնաց 97-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը: Սակայն դա թվացյալ հակասություն է հիմնված պարզունակ փառացի մեկնաբանման եղանակի վրա՝ առանց այդ նորմը համակարգային, ձևական-փրամաբանական, պարմաբաղաբական վերլուծության ենթարկելու:

Վերը նշեցինք, որ քննարկվող իրավահարաբերության մասնակիցներից են, այսպես կոչված, չերեւացող սուբյեկտները: Ենթադրենք դրանցից մեկն ունի հիմքեր դատավորին կալանավորելու համար: Ինչ, նա պետք է դիմի Հանրապետության Նախագահին՝ եւ վերջինս փա իր համաձայնությունը: Անշուշտ ոչ, Սահմանադրությունն այս հարցում դրել է հստակ փրամաբանություն՝ քրեական հետապնդման մարմինը պետք է դիմի արդարադատության խորհրդին: Վերջինս մանրագնին եւ կոլեգիալ կարգով քննարկելով հարցը՝ կարող է համաձայնել հետապնդման մարմնի միջնորդությանը, եւ կարող է չհամաձայնել: Այդպիսով, Սահմանադրության 97-րդ հոդվածը վավերացնում է հենց այդ ընթացակարգի փարբերակներից մեկի անհրաժեշտությունը, այն է՝ առանց արդարադատության խորհրդի համաձայնության, որ կան դատավորի կալանավորման բավարար հիմքեր, հնարավոր չէ նրան կալանավորել եւ այլն: Եթե արդարադատության խորհուրդը համաձայնի այդ փեսակերին, ապա ինքն էլ, իր հերթին, պետք է դիմի Հանրապետության Նախագահին՝ առաջարկելով դատավորին կալանավորելու համաձայնություն փա: Նախագահը եւս, իր հերթին, կարող է համաձայնել կամ չհամաձայնել: Եթե Հանրապետության Նախագահը համաձայնեց, ապա քրեական հետապնդման մարմինը գործի է դնում հետագա համապատասխան ընթացակարգերը, որոնցում եւս կան դրանց համապատասխան ընդհանուր երաշխիքները:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս ԱԽ-ն գործում է որպես դատարան, ուստի այն խորհրդակցական սենյակում նախ քվեարկության է դնում արարքի կատարման մեջ դատավորի մեղավորության, ապա՝ կարգապահական փուլի փեսակի վերաբերյալ հարցը:

Օրենսդիրը կարգապահական պարասխանաբարվությունը՝ կախված կարգավորման աղբյուրից, բաժանում է երկու՝ ընդհանուր և հատուկ տեսակների: Ընդհանուր կարգապահական պարասխանաբարվությունը կարգավորվում է ՏՏ աշխատանքային օրենսգրքով և ներքին կարգացանկի կանոններով, որը փարամվում է բոլոր աշխատողների վրա, բացի նրանցից, ում համար նախատեսված է հատուկ կարգապահական պարասխանաբարվություն և ավյալ դեպքում դուրս է մեր ուսումնասիրության թեմայից: Դատավորներին վարչական պարասխանաբարվության ենթարկելու կարգը վերացվել է «Դատավորի կարգավիճակի մասին» 1998թ. հունիսի 17-ի ՏՏ հատուկ օրենքով: Դատական օրենսգրքին համապարասխան ներկայումս նրանք կարող են ենթարկվել միմիայն կարգապահական պարասխանաբարվության: Դա կարարվել է՝ հաշվի առնելով Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հոկտեմբերի 13-ի թիվ R(94)12-ի՝ «Խորհրդի անդամ երկրների դատավորների անկախության, նրանց աշխատանքի արդյունավետության և դերի մասին հանձնարարականի» VI սկզբունքի (պարականությունների չկարարումը և կարգապահական խախտումները) համաձայն, ըստ որի՝ այն դեպքերում, երբ դատավորներն իրենց պարականությունները կարարում են ոչ արդյունավետ կամ ոչ պարշած կերպով, կամ երբ տեղ են գտնում կարգապահական խախտումներ, ելնելով յուրաքանչյուր երկրի սահմանադրական սկզբունքներից, իրավաբանական դրույթներից ու ավանդույթներից, պարասխանաբարվության միջոցները պետք է բովանդակեն՝ ա) գործը դատավորից հետ վերցնելու, բ) դատավորին ավյալ դատարանում այլ աշխատանքի փոխադրելու, գ) նյութական սանկցիաներ, օրինակ՝ աշխատավարձի ժամանակավոր նվազեցման, դ) պաշտոնից ժամանակավորապես մեկուսացնելու, այսինքն՝ դատական մարմինների անկախությանը չվնասող միջոցներ: Դատավորների կարգապահական պարասխանաբարվության բովանդակային և ընթացակարգային հարցերը նախատեսված են ՏՏ դատական օրենսգրքի 17 և 18-րդ գլուխների նորմերով (153-170-րդ հոդվածներ): Սահմանադրական դատարանի անդամները կարգապահական պարասխանաբարվության են ենթարկվում «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածում նշված հիմքերով և կարգով (*տես Սահմանադրության 94, 96 և 97-րդ հոդվածների մեկնաբանությունները*):

Դատավորների կարգապահական պարասխանաբարվության վերաբերյալ նորմերը ընդհանուր պարասխանաբարվության նորմերից փարբերվում են՝ 1. դրանց գործողության տակ ընկնող անձանց շրջանակով, 2. կարգապահական տույժի միջոցներով, 3. տույժերի կիրառման իրավունքով օժտված պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակով, 4. տույժերի կիրառման և դրանց բողոքարկման կարգերով: Չնայած այս առանձնահատկություններին, դատավորների կարգապահական պարասխանաբարվության հիմքը ևս, ինչպես որ վարչական պարասխանաբարվության հիմքը, կարգապահական խախտումն է, այսինքն՝ նրանց վրա դրված գործառույթային պարականություններն իրենց մեղքով չկարարելը կամ ոչ պարշած կարարելը: Այդպիսի խախտման օբյեկտը դատական օրենսգիրքն է, դրա նորմերը, որոնք խախտվում են, օբյեկտիվ կողմը՝ դատավորի կողմից այնպիսի հակաիրավական գործողությունների կարարումը, որոնք հանգեցրել են վնասակար հետետանքների, սուբյեկտը դատավորն է, որը խախտել է աշխատանքային կարգապահությունը, իսկ սուբյեկտիվ կողմը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կարարված մեղավոր գործողությունների նկարմամբ:

Դատավորի կարգապահական պարասխանաբարվության հիմքերն են՝

1. արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարության օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որով դատավորին կարգապահական պարասխանաբարվություն է հարկում:

փաստախանութի վարույթը կարող է հարուցվել փոխյալ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ փարվա ժամկետում,

2. աշխատանքային կարգապահությունը պարբերաբար կամ կոպիտ խախտելը՝ պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց վեց ամիս հետո,

3. դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտում թույլ փարվա՝ պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ փարի հետո,

4. դատավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առեւտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը, այլ վճարովի աշխատանք, բացի գիտամանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից, կատարելը, դատարանների նախագահների խորհրդում կամ ԱԽ-ում իր պարտականությունները չկատարելը, իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած անձին գրավոր բացատրություններ չներկայացնելը, իր նկատմամբ հարուցված վարույթը ԱԽ-ում քննելիս բացատրություններ չտալը, բժշկական գնություն անցնելուց խուսափելը, փորձաշրջանի ընթացքում իր ղեկավարած ունկնդրի՝ ծրագրին համապատասխան փորձաշրջանը չանցկացնելու կամ այն ավարտվելուց հետո ունկնդրի գործնական եւ բարոյական հատկանիշների բնութագրմամբ նրան դրական կամ բացասական գնահատական չտալը, վերապատրաստման դասընթացներին չմասնակցելը՝ խախտումը կատարելուց հետո մեկամսյա ժամկետում,

5. արդարադատության եւ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը՝ խախտումը հայտնաբերելուց հետո եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումից մեկ փարի հետո:

Դատավորին քրեական, վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, եւ՝ հակառակը, սակայն դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն (ՏՏ դատ. օր.-ի 12, 72, 105, 153, 156, 159, 167, 191, 193-րդ հոդվածներ):

Առաջին արյանի եւ վերաքննիչ դատարանների դատավորի եւ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝ 1. արդարադատության նախարարը, 2. ԱԽ կարգապահական հանձնաժողովը: Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի եւ պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝ 1. վճռաբեկ դատարանի նախագահը, 2. ԱԽ կարգապահական հանձնաժողովը՝ Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ: Վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ այդ իրավունքը դարձյալ վերապահված է ԱԽ կարգապահական հանձնաժողովին՝ նույն էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ: Ըստ որում, եթե արդարադատության նախարարը կամ վճռաբեկ դատարանի նախագահը հարուցել են կարգապահական վարույթ, ապա, նշելով ենթադրյալ խախտումը, նրանք այդ մասին փեղեկացնում են ԱԽ կարգապահական հանձնաժողովին, իսկ առաջին արյանի եւ վերաքննիչ դատարանների դատավորի կամ դատարանի նախագահի նկատմամբ նման վարույթ հարուցելու դեպքում նշելով ենթադրյալ խախտումը՝ ԱԽ կարգապահական հանձնաժողովն այդ մասին փե-

ղեկացնում է արդարադատության նախարարին: Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի կամ պալատի նախագահի նկատմամբ նման վարույթ հարուցելու դեպքում այդ մասին փեղեկացվում է վճռաբեկ դատարանի նախագահը: Նույն խախտման կապակցությամբ կարող է հարուցվել միայն մեկ կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթ հարուցելու առիթները, աշխատանքային կարգապահության կամ դատավորի վարքագծի կանոնների մասին հաղորդում ստացած էթիկայի հանձնաժողովում հարցի քննարկման եւ որոշում ընդունելու կարգը, կարգապահական վարույթի ընթացքը, վարույթ հարուցող անձի իրավունքները, այն դատավորի իրավունքները, որի նկատմամբ վարույթ է հարուցվել, ԱՄ կողմից ընդունվող որոշումների փասակները, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկի քննության ժամկետներն ու կարգը, ԱՄ որոշմանը ներկայացվող պահանջները նախատեսված են ՏՏ դատական օրենսգրքի 154-156, 158-163-րդ հոդվածներով: Վարույթի փետողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել: Այն կարող է երկարաձգվել միայն դատավորի բացակայության ժամանակահատվածով:

Եթե վարույթ հարուցող անձը որոշում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ դիմել ԱՄ, ապա նա պետք է կազմի կարգապահական խախտման մասին եզրակացություն, որտեղ պետք է նկարագրվի դատավորի կողմից կատարված կարգապահական խախտում հանդիսացող յուրաքանչյուր արարք, ներկայացվեն այդ արարքի կատարված լինելը հիմնավորող ապացույցներ, ինչպես նաև արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումներ, այդ թվում՝ կատարված արարքում դատավորի մեղքի առկայությունը եւ դրա փասակը (դիտարկություն կամ անզգուշություն): Մինչև վարույթի նյութերն ԱՄ ուղարկելը դատավորն իրավունք ունի ծանոթանալու դրանց հետ, ներկայացնելու լրացուցիչ բացատրություններ կամ հարուցելու միջնորդություն՝ լրացուցիչ ստուգումներ կատարելու մասին: Վարույթ հարուցած անձն իրավունք ունի փոխելու իր եզրակացությունը, եթե դա չի վարաբարացնում դատավորի վիճակը: Վարույթն ԱՄ ուղարկելու պահից վարույթ հարուցած անձը չի կարող հետ կանչել նյութերը, եւ դրանք ենթակա են ԱՄ-ում ըստ էության քննության: Այստեղ նույնպես դատավորն իրավունք ունի ներկայացնելու իր անմեղությունը հիմնավորող ապացույցներ: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի ապացուցման պարտականությունը կրում է վարույթը հարուցած անձը: Չփարսարված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգրին: ԱՄ-ն կարող է, ՏՏ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածում նշված հիմքերի առկայությամբ, կարճել կարգապահական վարույթը կամ բավարարվել հարցի քննարկմամբ: ԱՄ-ն իրավունք ունի նաև վերանայելու իր որոշումը նոր երեւան եկած հանգամանքներով:

Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում ԱՄ-ն կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական փույժերի հետևյալ փասակներից մեկը. նախագգուշացում, նկատողություն՝ դատավորին 6 ամիս ժամկետով զրկելով աշխատավարձի 25 փոկոսից, խիստ նկատողություն՝ դատավորին մեկ փարի ժամկետով զրկելով աշխատավարձի 25 փոկոսից, եւ, վերջապես՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ դիմել Նախագահին: Վերջինս կիրառվում է միայն այն դեպքում, երբ դատավորի կողմից թույլ փրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետեւանքով արատավորվել է դատավորի պատիվը եւ արժանապատվությունը, եւ նրա արարքն այլևս անհամարեղելի է դարձրել դատավորի պաշտոնում նրա գրնվելը: Խախտման «կոպիտ» կամ «ոչ կոպիտ» լինելը որոշում է ինքը՝ ԱՄ-ն՝ պահպանելով կատարված արարքի եւ կիրառվող

կարգապահական փուլի համաչափության պահանջը: Կարգապահական փուլ չկիրառելիս եւ հարկապես դադարի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ Նանրապետության Նախագահին դիմելիս ԱԽ-ն հաշվի է առնում նաեւ խախտման հետեւանքները, դադարի անձը, մեղքի աստիճանը, առկա փուլերը, դադարի բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, օրինակ՝ մասնագիտական կամ բարոյական հարկանիշները:

Եթե Նանրապետության Նախագահն ԱԽ-ի՝ դադարի լիազորությունների դադարեցման միջնորդությունն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում չի դադարեցնում դադարի լիազորությունները, ապա միջնորդությունը համարվում է մերժված: Այդ դեպքում դադարը օրենքի ուժով համարվում է կարգապահական փուլի (խիստ նկատարողության) ենթարկված (ՏՏ դատ. օր.-ի 166-րդ հոդվ.): Եթե Նանրապետության Նախագահն ԱԽ միջնորդության հիման վրա դադարեցնում է դադարի լիազորությունները, ապա՝ ԱԽ որոշումը նոր երեսն եկած հանգամանքներով ուժը կորցրած ճանաչելու դեպքում, խորհուրդը որոշում է կայացնում դադարի նախկին պաշտոնում վերականգնելու միջնորդությամբ Նանրապետության Նախագահին դիմելու մասին: Նանրապետության Նախագահն այդ որոշումն ստանալու պահից՝ փաստորյա ժամկետում դադարի վերականգնում է իր նախկին պաշտոնում, եւ այս դեպքում դադարը ձեռք է բերում կրճատված դադարի կարգավիճակ (ՏՏ դատ. օր.-ի 14-րդ հոդվ. 6-րդ մաս, 164-րդ հոդվ. 6 եւ 7-րդ մասեր):

ՏՏ պրակտիկան վկայում է, որ դադարներին կարգապահական պարասխանաարվության ենթարկելու դեպքերը հազվագյուտ են: Եթե 2007թ. ՏՏ 216 դադարներից կարգապահական պարասխանաարվության են ենթարկվել 10 դադարներ, որոնցից լիազորությունները դադարեցվել են 2-ի նկատմամբ, ապա 2008թ. նախագումարային ձեռք փուլ է ստացել միայն 1 դադար:

Դադարին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դադարական կարգով վարչական պարասխանաարվության ենթարկելու համաձայնություն փախու լիազորությունների իրականացման կարգը հանգամանորեն սահմանված է ՏՏ դադարական օրենսգրքի 18-րդ գլխում (168-170-րդ հոդվածներ), որը միաժամանակ դադարների անձեռնմխելիության սկզբունքի (ՏՏ դատ. օր.-ի 13-րդ հոդվ.) իրականացման երաշխիք է: Ըստ որում, նշված հիմքերով դադարների անձեռնմխելիությունն օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքից կարարված որոշակի բացառություն է, գիտակցաբար բարդացված մի գործընթաց, որն իր բովանդակությամբ դուրս է գալիս անձնական անձեռնմխելիության սկզբունքի սահմաններից (տես Մահմանադրության 14.1 եւ 16-րդ հոդվածների մեկնաբանությունները): Դա բացարկվում է նրանով, որ պետությունն ու հասարակությունը՝ ի դեմս օրենսդրի, դադարին եւ նրա մասնագիտական գործունեությանը ներկայացնելով բարձր պահանջներ, նաեւ իրավասու եւ պարտավոր է նրան ապահովել արդարադատության ճիշտ իրականացման լրացուցիչ երաշխիքներով, դադարական իշխանության ինքնուրույնությամբ եւ անկախությամբ, բացառել անհիմն ձեռք նրան կալանավորելու կամ նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրան դադարական կարգով վարչական պարասխանաարվության ենթարկելու դեպքերը (ՏՏ դատ. օր.-ի 13-րդ հոդվ.): Իհարկե, վերը նշված բարդացված գործընթացը դադարին հանցագործություն կատարելու դեպքերում պարասխանաարվությունից ազատելու նպատակ չի հետապնդում, դադարի անձեռնմխելիության շահարկումը կհակասեր արդարադատության իմաստին եւ նշանակությանը:

Դադարին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դադարական

կարգով վարչական պարասխանաարվության ենթարկելու համաձայնություն փալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու հարցով ԱԽ է դիմում ՏՏ գլխավոր դատախազը (մինչդարական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը նա է իրականացնում), իսկ փվյալ դատավորի նկատմամբ գործը դատական քննության փուլում գրնվելու դեպքում նրան կալանավորելու համաձայնություն փալու մասին՝ գործը քննող դատարանը, կցելով առաջարկի հիմք հանդիսացող նյութերը: ԱԽ առաջարկը Հանրապետության Նախագահը քննում է և դրա վերաբերյալ որոշում է կայացնում երկօրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն չփալու դեպքում ԱԽ առաջարկը համարվում է մերժված:

ԱԽ առաջարկը է հանրապետության Նախագահի համաձայնությունն ինքնին չեն նշանակում, որ դատավորին պարասխանաարվության ենթարկելու հիմքերն առկա են, է դրանք չեն կաշկանդում իրավասու դատարանին համապարասխան հարցը լուծել օրենքով սահմանված կարգով: Եթե ԱԽ համաձայնությունն սրանալուց հետո մեղադրանքի ծավալի այնպիսի փոփոխության անհրաժեշտություն է առաջանում, որը վարթարացնում է կամ կարող է վարթարացնել դատավորի վիճակը, ապա դա կարող է իրականացվել վերը նկարագրված ընթացակարգի պահպանմամբ:

ԱԽ առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի կողմից դատավորին որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն փալու դեպքում դատավորի լիազորությունները համարվում են կասեցված՝ նախաքննության է դատաքննության ժամկետով, է նրա վարույթում գրնվող գործերը փոխանցվում են փվյալ դատարանի մեկ այլ դատավորի: Վերը նշված հարցերից ԱԽ-ում քննության առնելիս կիրառվում են դատավորի իրավունքները սահմանող դատական օրենսգրքի այն հոդվածների պահանջները, որոնց համաձայն նա կարող է մասնակցել նիստին, ծանոթանալ հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, սրանալ դրանց պարճենները, քաղվածքներ անել, հարցեր փալ էլույթ ունեցողներին, առարկություններ ներկայացնել, բացարրություններ փալ է միջնորդություններ անել, օգրվել Սահմանադրության 19-րդ հոդվածով նախապետված երաշխիքներից, բայց է պարտավոր է անճամբ կամ փաստաբանի միջոցով մասնակցել նիստին, բացարրություններ փալ է այլն: Նշված հարցերի քննության ժամանակ գլխավոր դատախազը պարտավոր է ներկա գրնվել ԱԽ նիստին է անճամբ ներկայացնել իր դիրքորոշումը:

Իր սահմանադրական լիազորություններն իրականացնելիս ԱԽ-ն ընդունում է *որոշումներ, եզրակացություններ*: Ընդ որում, որոշումներն ընդունվում են երեք դեպքերում՝ ա) դատավորին կարգապահական պարասխանաարվության ենթարկելու, բ) դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պարասխանաարվության ենթարկելու, գ) ներման կապակցությամբ կարծիք հայտնելու հարցերով: Սահմանադրության 95-րդ հոդվածով նախապետված մյուս լիազորություններն իրականացնելիս ԱԽ-ն ընդունում է եզրակացություններ, որոնք ունեն սոսկ խորհրդարավական բնույթ է կարող են նա է ջնդունվել Հանրապետության Նախագահի կողմից:

ՆՈՂՎԱԾ 96

Դատրավորը եւ սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: Դատրավորը եւ սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչեւ 65 տարին լրանալը: Նրանց լիազորությունները դատրեցվում են միայն Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Մեկնաբանվող հոդվածի երկու դրույթներն էլ նվիրված են ՏՏ սահմանադրական դատարանի անդամի եւ դատրավորի անփոփոխելիությանը, ինչը նրանց, ինչպես նաեւ ամբողջ դատրական համակարգի անկախության եւ կայունության կարեւորագույն երաշխիքներից է եւ որպես հիմնարար սկզբունք առաջին անգամ 1701թ. կիրառվել է Անգլիայում, այնուհետեւ այն ներառվել է եվրոպական մի շարք երկրների օրենսդրության մեջ:

Դատրավորի անփոփոխելիությունը նշանակում է, որ իր լիազորությունների ժամկետում դատրավորը ենթակա չէ աշխատանքից ազատման կամ իր կամքին հակառակ այլ աշխատանքի փոխափոխման: ՏՏ օրենսդրության համաձայն դատրավորն ու սահմանադրական դատարանի անդամն իրենց պաշտոնն զբաղեցնում են մինչեւ որոշակի տարիքի հասնելը՝ 65 տարին լրանալը: Սահմանադրական այս նորմը փոփոխության է ենթարկվել 2005 թվականին: Մինչ այդ սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում էր մինչեւ 70 տարին լրանալը: Դա է պատճառը, որ Սահմանադրության 117-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական դատարանի գործող անդամները պաշտոնավարում են մինչեւ 70 տարին լրանալը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 10-րդ եւ ՏՏ դատրական օրենսգրքի 14-րդ հոդվածները համապատասխանաբար ամրագրում են սահմանադրական դատարանի անդամի եւ դատրավորի անփոփոխելիության սահմանադրական նորմի պահանջը եւ օրենսդրական երաշխիքներ են սահմանում դրա իրականացման համար:

Դատրավորի անփոփոխելիությունն իշխանությունների տարանջատման սկզբունքի կարեւորագույն երաշխիքներից է եւ դատրավորի անկախության ապահովման կարեւոր նախադրյալներից մեկը: Դատրավորի անփոփոխելիությունն առաջին հերթին նշանակում է, որ նա չի կարող իր կամքին հակառակ նշանակվել (ընտրվել) այլ պաշտոնի կամ այլ դատարանի կազմում, կամ էլ փոխափոխվել այլ պաշտոնի կամ այլ դատարան՝ նույնիսկ պաշտոնի բարձրացման դեպքում: Վամաշխարհային դատրական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատրավորի պաշտոնավարության ժամկետները տարբեր են՝ ցմահից մինչեւ որոշակի ժամկետներ, սակայն բոլոր կայացած ժողովրդավարական երկրներում մեկ հիմնական նպատակ է հետապնդվել՝ այնպիսի լիազորություններ եւ տարիքային ժամկետներ սահմանել, որոնք թույլ կտան արդյունավետությամբ իրականացնել արդարադատություն, ապահովել դատրավորի անկախության եւ անփոփոխելիության սահմանադրական նորմ-սկզբունքների իրագործումը, ինչպես նաեւ պատշաճ նյութական (սոցիալական) պայմաններ ապահովել դատրավորի թոշակի անցնելու ժամանակ:

Այս նորմ-սկզբունքների կարեւորությունից ելնելով է, որ միջազգային իրավական ակտերում նույնպես արտացոլվեցին դատրավորի անփոփոխելիության հարցերը: Մասնավորապես. 1985թ. Միլանում գումարված՝ Վանցագործությունների կանխարգելման

եւ իրավախախտների նկարմամբ վերաբերմունքի վերաբերյալ ՄԱԿ-ի VII-րդ կոնգրեսը որոշում ընդունեց դարական իշխանության անկախության հիմնական սկզբունքների մասին, ինչը հավանության արժանացավ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 40-րդ նստաշրջանի համապարասխան բանաձեռով (13.12.1985թ. թիվ 40/146 բանաձեռ): Վերջինիս 12-րդ կետի համաձայն՝ ինչպես նշանակվող, այնպես էլ ընտրվող դարավորները պետք է պաշտոնավարման երաշխավորված ժամկետ ունենան մինչեւ թոշակի անցնելու փարիքին հասնելը կամ մինչեւ լիազորությունների ժամկետի ավարտը, եթե նման բան սահմանված է օրենքով: Իսկ 18-րդ կետը սահմանում է, որ դարավորի լիազորությունները կարող են կասեցվել կամ դադարեցվել միմիայն Ֆիզիկական անկարողության կամ վարքագծի պարճառներով, որոնք անհնարին են դարձնում նրա կողմից իր պարականությունների կատարումը:

Դարավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի 3.4-րդ կետը սահմանում է. «Դարարանում իր լիազորություններն իրականացնող դարավորն առանց իր համաձայնության սկզբունքորեն չի կարող դառնալ նոր նշանակման կամ այլ դարարան գործուղվելու օբյեկտ՝ անգամ խրախուսման կարգով: Այս սկզբունքից բացառություն է արվում միայն այն դեպքում, եթե փեդագոգիկությունը կատարվել է կարգապահական սանկցիայի կարգով, եւ այդ մասին կայացվել է որոշում, դարական կառուցվածքի օրինական կարգով իրականացված փոփոխության դեպքում եւ հարեւան դարարանի ուժեղացման համար կատարված ժամանակավոր նշանակման դեպքում, ընդ որում այդ նշանակման առավելագույն ժամկետը հստակ սահմանափակված է կարգավիճակով՝ առանց 1.4 կետի դրույթների կիրառմանը վնասելու»:

Նայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո սկսվեց դարական իշխանության բարեփոխման գործընթացը, որի ընթացքում կարեւոր փեդագոգիկ հարկացվեց դարական իշխանությանը, ինչպես նաեւ դարավորի անկախությանն ու անփոփոխելիությանը՝ որպես արդարադատության իրականացման կարեւոր նախադրյալներից մեկի: Եվ եթե մինչեւ անկախության հռչակումը դարավորը քաղաքական երաշխավորությամբ «ընտրվում» եւ պաշտոնավարում էր 10 փարի, ապա դարական բարեփոխումներից հետո ամրագրվեց նրա նշանակման եւ պաշտոնավարման ժողովրդավարական ընթացակարգ ու ավելի երկար ժամկետ, ինչը դարավորի անփոփոխելիության հուսալի երաշխիք է: Պետք է նշել, որ, ի փարբերություն հեթոքորհրդային շար երկրների, որոնք սահմանադրական դարարանի անդամի եւ դարավորի պաշտոնավարության համար սահմանեցին կարճ ժամկետներ (6-ից մինչեւ 18 փարի), Նայաստանն անմիջապես որդեգրեց դարավորի անփոփոխելիության ավելի կայուն երաշխիք՝ մինչեւ օրենքով սահմանված պաշտոնավարման փարիքի հասնելը: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միտում կա այդ ժամկետները հասցնելու թոշակային փարիքի: Այդպիսի օրինակ է նաեւ Ռուսաստանի Դաշնությունը, որն սկզբնական շրջանում դարավորների պաշտոնավարման փորձաշրջանային ժամկետներ էր սահմանում, իսկ սահմանադրական դարարանի համար սկզբնապես սահմանվեց 12 փարի (առանց վերընտրման իրավունքի), այնուհետեւ՝ 15 փարի եւ, ի վերջո, մինչեւ 70 փարեկանը լրանալը:

ՆՏ Սահմանադրության ընդունումից (1995թ.) հետո դարավորի անփոփոխելիության սկզբունքն ամրագրվեց ու երաշխավորվեց սահմանադրական մակարդակում: Այդուամենայնիվ օրենսդրական մշակույթի զարգացման ներկա փուլում դեռեւս չենք կարող պնդել, որ երաշխավորված է դարավորի անփոփոխելիության սկզբունքի լիարժեք կիրառումը: Սակայն կասկածից վեր է, որ այս ինստիտուտը զարգացում է սպրում: Դրան

նպաստում են նաև ՏՏ սահմանադրական դատարանի որոշումները: Մասնավորապես, ՏՏ սահմանադրական դատարանը 2008թ. դեկտեմբերի 2-ին քննելով ՏՏ դատական օրենսգրքի «Դատավորի անփոփոխելիությունը» վերաբառությամբ 14-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի սահմանադրականության հարցը, իր ՄԴՈ-782 որոշմամբ Սահմանադրությանը հակասող էլ անվավեր ճանաչեց ՏՏ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, իսկ ՄԴՈ-786 որոշմամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչեց օրենսգրքի նույն հոդվածի 4-րդ մասը՝ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանի անդամի և դատավորի անփոփոխելիության սկզբունքների իրացմանը նպաստում են Սահմանադրությամբ և այլ օրենքներով ամրագրված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ անկախությունը, անձեռնմխելիությունը, նյութական ապահովությունը, նշանակման և պարասխանարվության ենթարկելու կարգը, գործուղման և տեղափոխման օրենսդրական հիմքերը և այլ իրավական երաշխիքներ: Եթե համադրենք սահմանադրական դատարանի անդամի և դատավորի անփոփոխելիության իրավունքի ամբողջական երաշխիքները, ապա դրանք հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի. ա) դատավորի իրավունքը՝ զբաղեցնելու իր պաշտոնն ընդուպ մինչև օրենքով սահմանված տարիքը լրանալը, բ) այդ պաշտոնից չհեռացվելու իրավունքը՝ այլ կերպ, քան Սահմանադրությամբ և օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Սահմանադրության 96-րդ հոդվածի երրորդ դրույթի կարգավորման առարկան դատավորի և սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարման իրավական հիմունքների հիմնահարցն է: Ըստ այդ դրույթի՝ նրանց լիազորությունները դադարում են Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Ճիշտ է, Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում դատավորի և սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարման դեպքերը, սակայն, այնուամենայնիվ, որոշ իրավակարգավորումներ այդ հարցում Սահմանադրությունը տալիս է: Օրինակ՝ 32.2-րդ հոդվածում հանրային ծառայության իրավունքի նախադրյալը քաղաքացիությունն է: Դատական ծառայությունը հանրային ծառայության տարատեսակ է, հետևաբար՝ եթե դատավորը կորցրել է ՏՏ քաղաքացիությունը, ապա դա իրավական հիմք է նրա լիազորությունները դադարեցնելու հանար: Այսպիսով, Սահմանադրության մանրագնին հետազոտությունը հնարավորություն է տալիս, այնուամենայնիվ, վեր հանելու նշված սուբյեկտների լիազորությունների դադարման որոշ դեպքեր: Այդ դեպքերի սպառիչ և մանրագնին թվարկումն օրենսդրական կարգավորման խնդիր է: Օրենսդրական կարգավորումը պետք է խարսխվի Սահմանադրությամբ դատավորի լիազորությունների դադարման ամրագրված բոլոր ուղղակի և անուղղակի դեպքերի վրա, ինչպես նաև դատական իշխանության կազմակերպման և գործունեության, դատարանի ու դատավորների անկախությունն ապահովող սահմանադրական սկզբունքների վրա, որպեսզի բացառի գործադիր և այլ իշխանությունների անտեղի ու կամայական միջամտությամբ «անհնազանդ» դատավորների լիազորությունների դադարումը: Վերջինիս երաշխիքը առաջին հերթին Սահմանադրությունն է, իսկ այնուհետև՝ դրա հիման վրա ընդունված օրենքներով նախատեսված համապատասխան կարգը:

ՆՈՂՎԱԾ 97

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը եւ օրենքին:

2. Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները եւ պարասխանաբարվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով:

3. Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կայանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաեւ նրանց նկարմամբ չի կարող դատական կարգով վարչական պարասխանաբարվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապարասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը եւ համապարասխանաբար վճարելի դատարանի նախագահը կամ սահմանադրական դատարանի նախագահը:

1. Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի անկախությունը՝ ածանցված լինելով դատական իշխանության անկախությունից /*տե՛ս Սահմ. 5 եւ 94-րդ հոդվածների մեկնաբանությունները*/, միաժամանակ պայմանավորված է արդարադատության իրականացման շահերով: Թերեւս, այդ տեսանկյունով է հարկապես շեշտվում, որ դատավորներն անկախ են «արդարադատություն իրականացնելիս»: Ընդ որում, «ենթարկվում են միայն Սահմանադրությանը եւ օրենքին» արտահայտությունը երկակի նշանակություն ունի. մի դեպքում այն դարձյալ ապահովում է դատավորների անկախությունը, քանի որ միայն Սահմանադրությանը եւ օրենքին ենթարկվելու պահանջը երաշխիք է, որ որեւէ այլ ինստիտուտ ու մարմին չի կարող հավակնել իր ենթակայության փակ պահելու դատավորներին, մյուս կողմից՝ այն օրինականության ապահովման երաշխիք է, քանի որ արդարադատություն իրականացնելիս դատավորներին գրկում է կամայականություն դրսեւորելու հնարավորությունից, ինչը չափազանց անիրաժեշտ է վերջիններիս անկախության պարագայում:

Դատավորի անկախության եւ անձեռնմխելիության հիմնադրույթներն ամրագրված են մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, որոնց մանրամասն անդրադարձ կա հաջորդ՝ 98-րդ հոդվածի մեկնաբանությունում:

Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի անկախությունը հանդիսանում է իրավական սկզբունք եւ կանխորոշում է նրանց ողջ իրավական կարգավիճակը («Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդված եւ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 11-րդ հոդված): Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում առանձնահատուկ տեղ է փրվել դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակին: Դատավորների եւ

սահմանադրական դատարանի անդամի իրավական վիճակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, նշանակումն ու լիազորությունների դադարեցումը սահմանված են Նայաստրանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստրանի Հանրապետության օրենքով, Նայաստրանի Հանրապետության դատական օրենսգրքով, Նայաստրանի Հանրապետության քաղաքացիական դատավարության, Նայաստրանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերով եւ այլ օրենքներով:

Սահմանադրական, Նայաստրանի Հանրապետության դատական օրենսգրքի «Դատավորի կարգավիճակը» վերաբերությամբ 2-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է վերը նշված հարաբերությունների կարգավորմանը՝ անձեռնմխելիության ինստիտուտին, դատավորի աշխատավարձին, դրա նկատմամբ սահմանվող հավելավճարներին, դատավորի արձակուրդին, կրթական ծրագրերին մասնակցելու իրավունքին, վարքագծի կանոններին, ոչ դատական գործունեությանը, ձեռնարկափրակային գործունեությամբ զբաղվելու արգելքին, նրա այլ սոցիալական եւ նյութական երաշխիքներին:

Հիշյալ սկզբունքը Նայաստրանի Հանրապետության դատական օրենսգրքով իրավամբ ամրագրված է որպես «դատավորի անկախության եւ դատարանի ինքնուրույնության սկզբունք»: Տվյալ դեպքում ինքնուրույնության փարբը լրացուցիչ ամրագրելը հեղապնդում է անկախության սահմանադրական սկզբունքն առավել երաշխավորված դարձնելու նպատակ: Նշված լրացուցիչ փարբով միաժամանակ ընդգծվում է նաեւ անկախության սկզբունքից բխող անթաքույց պահանջ՝ ուղղված հենց դատավորներին: Թերեւս, այդ նկատառումով է նշված օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հետեւյալ դրույթը. «Արդարադատության եւ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որեւէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որեւէ բացառություն փայլ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Ավելին, որպեսզի հնարավորինս բացառվեն գործնականում հանդիպող ապօրինի միջամտությունները, նույն հոդվածի 4-րդ մասում ամրագրված է մեկ այլ պահանջ. «Արդարադատության եւ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության մասին դատավորը պարտավոր է անմիջապես հայտնել Նայաստրանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Եթե էթիկայի հանձնաժողովը համարի, որ փեղի է ունեցել օրենքով չնախատեսված միջամտություն դատավորի գործունեությանը, ապա նա պարտավոր է դիմել համապարասխան մարմիններին մեղավոր անձանց պատասխանավորության ենթարկելու միջնորդությամբ»:

Դատավորի լրացուցիչ երաշխիք է նաեւ այն, որ պաշտոնավարման ընթացքում եւ լիազորությունները դադարեցվելուց հետո դատավորը չի կարող հարցաքննվել որպես վկա իր քննած գործի վերաբերյալ (Նայաստրանի Հանրապետության դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 5-րդ մաս):

«Սահմանադրական դատարանի մասին» Նայաստրանի Հանրապետության օրենքում եւս ամրագրված են մի շարք դրույթներ, որոնք առավել երաշխավորված են դարձրել սահմանադրական դատարանի անդամի անկախությունը: Այսպես, նշված օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սահմանադրական դատարանի անդամն իրավունք չունի իր գործունեության կապակցությամբ հայցելու կամ սրանալու որեւէ ցուցում»: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ սահմանադրական դատարանի անդամի գործունեության կապակցությամբ նրա նկատմամբ որեւէ ներգործություն անթույլատրելի է եւ հեղապնդվում է օրենքով:

Նշված օրենքը եւս պարավորեցնում է սահմանադրական դատարանի անդամին հերքողական լինելու անկախության սկզբունքը պահպանելու հարցում: Այսպես, հիշյալ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է. «Սահմանադրական դատարանի անդամի գործունեությանը միջամտության կամ նրա նկատմամբ այլ ներգործության յուրաքանչյուր փաստի մասին սահմանադրական դատարանի անդամն անհապաղ իրազեկում է սահմանադրական դատարանին, որն իր որոշմամբ կարող է իրավասու մարմիններից պահանջել անհապաղ պատասխանատվության ենթարկել միջամտություն թույլ տված եւ (կամ) այն կազմակերպած անձին»:

2. Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները եւ պատասխանատվության կարգն ու հիմքերը սահմանված են Սահմանադրությամբ եւ օրենքներով. որեւէ այլ իրավական ակտով հիշյալ դրույթները սահմանելը չի կարող իրավազափ համարվել: Նշված դրույթները բացառապես Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանելու վերաբերյալ սահմանադրական դրույթը եւս հանդիսանում է անկախության սկզբունքով պայմանավորված՝ դատավորների գործունեության ու պատասխանատվության երաշխիք: Այլ իրավական ակտերով դատավորի կամ սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքներ սահմանելը կարող է որոշակի իմաստով հանգեցնել դատավորների եւ սահմանադրական դատարանի անդամի անկախության սկզբունքի խաթարմանը:

Գործունեության երաշխիքներ են հանդիսանում ինչպես դատարանների ֆինանսավորման եւ նյութապահանջի կազմակերպման առանձնահատուկ կարգերը, այնպես էլ սոցիալ-քաղաքական բնույթի մի շարք հիմնադրույթներ: Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի անկախության վերաբերյալ սահմանադրական դրույթներին համապատասխան գործունեության երաշխիքներ են ամրագրվել հարկապես երկու օրենքներով՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եւ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով: Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Սահմանադրական դատարանի գործունեության երաշխիքները» վերաբերյալ 6-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանի բյուջեն պետական բյուջեի մաս է, ընդ որում, կառավարությունը պարավոր է ներկայացված բյուջեի հայտնի ընդունելու դեպքում այն ամբողջությամբ ընդգրկել պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում՝ առանց որեւէ փոփոխության ներկայացնել Ազգային ժողով:

Հիշյալ կարգը գրեթե նույնությամբ գործում է նաեւ դատարանների պարագայում: Այսպես, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների բյուջեի հայտնի ներկայացվում է դատական դեպարտամենտի միջոցով, որի քննարկման ընթացակարգերը նույնական են Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված հայտի քննարկման ընթացակարգերի հետ: Կառավարության կողմից առարկություններ լինելու դեպքում դրանք ներկայացվում են Ազգային ժողով եւ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ:

Սահմանադրական դատարանի համար նախատեսված է չկանխարեսված ծախսերի ֆինանսավորման համար Սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին բողոքով: Այդ ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Սահմանադրական դատարանի համար նախատեսված բյուջեի երկու տոկոսին: Ըստ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի՝ դատարանների բնականոն գործունեության ա-

պահովման համար դատարանների պահուստային ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում կառավարությունը պակասը լրացնում է կառավարության պահուստային ֆոնդից:

Սահմանադրական դատարանն ինքնուրույն է ձեւավորում իր աշխատակազմը եւ փնտրինում իր միջոցները: Կառավարությունը պարտավոր է Սահմանադրական դատարանին հատկացնել առանձին շենք եւ անհրաժեշտ գույք՝ վերջինիս բնականոն գործունեության համար:

Օրենքով ամրագրված են նաեւ անվտանգության լրացուցիչ երաշխիքներ, մասնավորապես նույն 6-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Սահմանադրական դատարանի անդամի, նրա ընտանիքի անդամների, նրա զբաղեցրած բնակելի եւ ծառայողական փարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության կամ ներգործության սպառնալիքի դեպքում սահմանադրական դատարանի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները սահմանադրական դատարանի անդամի, նրա ընտանիքի անդամների եւ նրա զբաղեցրած բնակելի եւ ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ»: Իսկ 10-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի անդամներից ու աշխատակազմի աշխատակիցներից բացի, այլ անձինք Սահմանադրական դատարանի շենք կարող են մուտք գործել ՆՏ սահմանադրական դատարանի կանոնակարգով սահմանված կարգով:

Գործունեության երաշխիքներ են նաեւ պետական խորհրդանիշների օգտագործումը նախապայմանաբար եւ դատավորների աշխատասենյակներում, յուրաքանչյուր դատավորի Նայաստանի Տանրապետության զինանշանի պատկերով, դատարանի անվամբ եւ դատավորի անվամբ կնիքի հատկացումը, պաշտոնական կայքերի ապահովումը, դատական ակտերի հրատարակումը եւ այլն (Նայաստանի Տանրապետության դատական օրենսգրքի 65-68-րդ հոդվածներ):

Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի պատասխանատվության կարգի ու հիմքերի առնչությամբ հարկ է նկատել, որ դրանք բխում են անկախության սկզբունքից եւ սերտորեն առնչվում են նրանց անձեռնմխելիության ինստիտուտին: Այն, որ Սահմանադրությամբ էական նշանակություն է տրվում դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի անձեռնմխելիության ինստիտուտին, վկայում է, որ հիշյալ ինստիտուտը վերապահված է միայն Տանրապետության Նախագահին, Ազգային ժողովի պատգամավորներին, ՆՏ մարդու իրավունքների պաշտպանին:

3. Դատավորի եւ սահմանադրական դատարանի անդամի անձեռնմխելիությունն ունի երկու դրսեւորումներ. առաջինը վերաբերում է նրանց կալանավորմանը, որպես մեղադրյալ ներգրավմանը, ինչպես նաեւ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի հարուցմանը, իսկ երկրորդը՝ ձերբակալմանը:

Այսպես, Սահմանադրության 97-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ ամրագրված է, որ դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաեւ նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության:

«Կալանավորվել» արտահայտությունը տրվալ դեպքում նույնացված է կալանքը՝

որպես խափանման միջոց կիրառելու հետ: Կոնկրետ դարավորի կամ սահմանադրական դարարանի անդամի նկարմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննարկելիս դարարան պետք է ներկայացնել նաև համապարասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դարարանի համաձայնությունը:

«Մեղադրյալ ներգրավելու» լիազորությունը գործող օրենսդրությամբ վերապահված է քննիչին, ինչը դարափրավական բարեփոխումների ներկա փուլում լայն քննարկման ու փարաձայնությունների առարկա է դարձել: Ինչևէ, անկախ այն հանգամանքից, թե քրեական դարավարության փուլում ո՞ր պաշտոնյան իրավասու կլինի կայացնելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, վերջինս ես պարտավոր է նախապես հայցել համապարասխանաբար արդարադատության խորհրդի կամ Սահմանադրական դարարանի համաձայնությունը:

Ինչ վերաբերում է դարական կարգով վարչական պարասխանաարվության ենթարկելու հարց հարուցելուն, ապա սա վերաբերում է այն դեպքերին, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նայասարանի Նանրապետության օրենսգրքի որոշ հոդվածներով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու լիազորությունը վերապահված է դարարաններին: Տվյալ դեպքում քննության հիշյալ ընթացակարգը որևէ առնչություն չունի փուլի փետակների կամ չափերի հետ, պարզապես հիշյալ օրենսգրքում զեպեղված որոշ հոդվածներով զանցանքների կարարման վերաբերյալ գործերի քննությունը վերապահված է դարարանի իրավատությանը: Այս դեպքում, հարց հարուցելու լիազորություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է մինչև դարարան միջնորդություն ներկայացնելը, դիմել ես սրանալ համապարասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դարարանի համաձայնությունը:

Դարավորի ես սահմանադրական դարարանի անդամի անձեռնմխելիության ինսփիտուրը որոշ չափով փարածվում է նաև ձերբակալման՝ որպես դարավարական հարկադրանքի կիրառման վրա: Մասնավորապես, ըստ Սահմանադրության 97-րդ հոդվածի՝ դարավորը ես սահմանադրական դարարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կարարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես փեղեկացվում են Նանրապետության Նախագահը ես համապարասխանաբար վճռաբեկ դարարանի նախագահը կամ սահմանադրական դարարանի նախագահը:

Անձեռնմխելիությունը փվյալ դեպքում արփահայփվում է նախ նրանում, որ դարավորին կամ սահմանադրական դարարանի անդամին կարելի է ձերբակալել միայն բացառիկ դեպքերում, այն է՝ երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կարարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Բայց անգամ այս բացառիկ դեպքերում ձերբակալման մասին՝ սահմանադրական դարարանի նախագահի դեպքում անմիջապես պետք է փեղեկացվի Նանրապետության Նախագահը, իսկ դարավորի դեպքում՝ վճռաբեկ դարարանի նախագահը:

Քննարկվող դեպքում «անմիջապես» եզրույթը համարժեք է «անհապաղ» եզրույթին, այսինքն՝ ձերբակալում իրականացնող մարմինը ոչ միայն պարտավոր է այդ մասին պարզապես անմիջապես փեղեկացնել Նանրապետության Նախագահին կամ վճռաբեկ դարարանի նախագահին, այլև պարտավոր է դա անել անհապաղ:

Բոլոր այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինը հանցագործությունը կարարելուց հետո միայն որոշ ժամանակ անց է ձեռք բերում բավարար

հիմքեր դարավորի կամ սահմանադրական դարարանի անդամի նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու հիմքեր, պետք է համապատասխան միջնորդությամբ դիմի դարարան, եթե այդ առնչությամբ առկա կլինի Սահմանադրության 97-րդ հոդվածով նախատեսված կարգով համապատասխանաբար սահմանադրական դարարանի կամ արդարադատության խորհրդի համաձայնությունը: Այսինքն՝ այս դեպքում արդեն քրեական հետապնդում իրականացնող մարմինն իրավասու չէ ձերբակալելու դարավորին կամ սահմանադրական դարարանի անդամին:

Դարավորի անկախության սահմանադրական սկզբունքի անվերապահ պաշտպանության անհրաժեշտությունն իր արտացոլումն է ստացել նաև Տայասրանի Հանրապետության սահմանադրական դարարանի պրակտիկայում: Այդ առումով բնորոշ է հարկապես Տայասրանի Հանրապետության սահմանադրական դարարանի 2005թ. մայիսի 6-ի՝ «Ազգային ժողովի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Տայասրանի Հանրապետության օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Տայասրանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՄԴՈ-563 որոշումը: Թեպետ այդ որոշումը կայացվել է մինչև Սահմանադրության նոր խմբագրությամբ ընդունելը, սակայն այն խիստ արդիական է, մանավանդ որ դրանում ամրագրված դրույթները վերաբերում են այնպիսի սահմանադրական հիմնադրույթների, որոնք սահմանված են նաև Սահմանադրության 97-րդ հոդվածի ներկա խմբագրությամբ:

Այս որոշումն առանձնահատուկ նշանակություն ունի նաև այն նկատառումով, որ խոսքը բովանդակում վերաբերում է չափազանց նուրբ ու բարդ հարցադրմանը, քանզի այն շոշափում է դարձյալ անկախության սկզբունքով գործող մեկ այլ ինստիտուտի՝ մարդու իրավունքների պաշտպանի և դարարանի փոխհարաբերության խնդրին:

ՆՏ սահմանադրական դարարանի որոշումը լրացուցիչ մեկնաբանության կարիք չունի, քանզի դրանով հստակ ու սպառիչ լուծում է տրված հիշյալ օրենսդրական դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցադրմանը.

«1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Տայասրանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը նման խմբագրությամբ՝ Պաշտպանի՝ դարարաններից տեղեկություններ պահանջելու և դարարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով, պայմանավորված չէ անկախ և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ, սրեղծում է ներօրենսդրական հակասություն, հաշվի առնելով նաև իրավակիրառական պրակտիկան՝ միջամտություն է դարական իշխանության գործառնություններին և չի համապատասխանում Տայասրանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվածին և 97 հոդվածի 1-ին մասի դրույթներին:

2. Մարդու իրավունքների պաշտպանի՝ դարարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դարական վարույթին՝ չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դարարանի վարույթում գրավող գործի քննության նյութական և դարավարական բնույթի հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ դարարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի

5-րդ ենթակետի, 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, հակասական իրավակիրառական պրակտիկա չառաջացնելու համար անհրաժեշտ է հստակորեն ամրագրել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Նայաստրանի Նան-րապետության օրենքում»:

Այսպիսով, դատավորի անկախության սկզբունքը նաև Սահմանադրական դատարանի դիրքորոշման համաձայն չի կարող ուղեկցվել որոշակի վերապահումներով: Դատավորի կողմից արդարադատության իրականացմանը որևէ պաշտոնապար անձ, անկախ վերջինիս կարգավիճակից եւ գործառույթների բնույթից ու հետապնդվող նպատակներից, չի կարող որևէ հիմքով միջամտել:

ՆՈՂՎԱԾ 98

1. Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկափրկության գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չհասկացած պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից:

2. Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

1. Դատավորի սահմանադրական կարգավիճակի եւ, մասնավորապես, դատավորի անկախության իրավական երաշխավորվածության ամրապնդմանն ուղղված կարևոր փորձեր են ամրագրված Սահմանադրության 98-րդ հոդվածում: Իր իրավաբանական հասկանիշներով նշված նորմը սահմանադրական կարգավիճակ սահմանավակող է, այն, ըստ էության, արգելող նորմ է, սակայն բուն արգելքի համալիր վերլուծությունը ցույց է փայլա, որ այն միավորված է ոչ միայն արդարադատության շահերի բնականոն պաշտպանությանը, այլև դատավորի անկախության ապահովմանը:

Բնականաբար, հիշյալ արգելքի բացակայության դեպքում դատավորն իր հայեցողությամբ պետք է օգտվեր ձեռնարկափրկությամբ զբաղվելու կամ որևէ այլ պաշտոն կամ վճարովի աշխատանք ընտրելու, ինչպես նաև կուսակցական գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Սակայն այդ իրավունքից օգտվելու յուրաքանչյուր դեպքում անխուսափելիորեն սրբեղծվում է շահերի բախման իրավիճակ, ինչն անհամարելելի է դատավորի կարգավիճակի հետ: Բացի դրանից, գործնականում չի կարող բացառվել, որ դատավորը հարկադրված լինի դրսևորել որոշակի քաղաքական գործունեության ուղղվածություն, ինչն արդեն խոցելի է դարձնում արդարադատության շահերը:

Սահմանադրական հիշյալ դրույթն ամրագրված է եղել նաև Սահմանադրության նախկին խմբագրությամբ. «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից: Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ» (98-րդ հոդված): Ըստ էության, ներկա խմբագրությունը կարելի է համարել առավել հստակ, քանի որ դրանում սպառիչ են

թվարկված այն պաշտոնները, որոնք դադարվորը չի կարող զբաղեցնել: Ընդ որում, վերանայվել են անհարկի սահմանափակումները՝ պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ զբաղեցնելու առումով: Այսպես, նախկին խմբագրությամբ՝ դադարվորը կամ սահմանադրական դադարանի անդամն ընդհանրապես չէր կարող զբաղեցնել պեղական այլ պաշտոն, մինչդեռ ներկա խմբագրությամբ հատուկ շեշտվում է հեղինակ վերապահումը՝ դադարվորը չի կարող զբաղեցնել պաշտոն պեղական կամ փեղական ինքնակառավարման մարմիններում, առեւտրային կազմակերպություններում, կադարել այլ վճարովի աշխատանք, եթե դրանք *կապված չեն իր պարտականությունների հետ*:

Գործնականում վերոհիշյալ իրավական նորույթը դեռեւս կիրառական անհրաժեշտ նշանակություն ձեռք չի բերել, ինչը, թերեւս, պայմանավորված է դարձյալ ձեւավորված այն ավանդական մտածելակերպով, ըստ որի՝ դադարվորն ընդհանրապես չի կարող զբաղեցնել պեղական այլ պաշտոն: Ընդ որում, Սահմանադրության նախկին խմբագրությունը եւս բովանդակել է ներքին հակասություն. մի կողմից՝ միանշանակ արգելվել է պեղական այլ պաշտոն զբաղեցնելը, մյուս կողմից՝ նախատեսվել է արդարադատության կազմում նրանց անդամակցությունը:

Միաժամանակ, փոփոխված դրույթը՝ անհարկի փարբերակելով առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունները, նոր խնդիրներ է առաջացրել, ինչին կանդադանք ստորեւ:

Նշված հոդվածում օգտագործված են բազմաթիվ եզրույթներ, որոնց մի մասի իրավական նշանակությունը սահմանված է առանձին օրենսդրական ակտերում: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով փրված է նաեւ «առեւտրային կազմակերպություն» հասկացության բնորոշումը: Մասնավորապես, ըստ այդ օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ առեւտրային կազմակերպություն կարող է համարվել միայն իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձը:

Քննարկվող հոդվածի դիսպոզիցիայից բխում է, որ դադարվորը եւ սահմանադրական դադարանի անդամը կարող են պաշտոն զբաղեցնել ոչ առեւտրային կազմակերպություններում: Ընդ որում, «ոչ առեւտրային կազմակերպության» բնորոշումը եւս փրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ այդպիսիք կարող են համարվել այն իրավաբանական անձինք, որոնք չեն հետապնդում շահույթ ստանալու նպատակ եւ ստացված շահույթը չեն բաշխում մասնակիցների միջեւ:

Նշված հոդվածում կիրառվող մի շարք այլ հասկացություններ լրացուցիչ մեկնաբանման կարիք չունեն, քանզի դրանք իրենց իրավակիրառական նշանակությամբ արդեն իսկ ավանդաբար ձեռք են բերել հանրահայտ հասկացության նշանակություն: Մասնավորապես, այդպիսիք են «պարտականություն», «պաշտոն», «վճարովի աշխատանք» եւ մյուս հասկացությունները:

Տվյալ դեպքում պարզաբանման կարիք ունի «իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն» արտահայտությունը: Հստակեցման կարիք ունեն հարկապես հե-

տեսյալ հարցադրումները. ա) կոնկրետ *ո՞ր* պարտականությունների հետ *չ*պետք է կապված լինի ակնկալվող պաշտոնը, բ) *ո՞ր* դեպքերում է պաշտոնը համարվում դատավորի կամ սահմանադրական դատարանի անդամի պարտականությունների հետ *չ*կապված եւ գ) կոնկրետ որո՞նք են համարվում գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքներ:

Նախ՝ նկատենք, որ դատավորի պարտականությունների առումով Սահմանադրության 98-րդ հոդվածով որեւէ վերապահում ամրագրված չէ, հետեւաբար՝ տվյալ դեպքում խոսքը դատավորի բոլոր պարտականությունների մասին է: Այսինքն՝ խոսքը ոչ միայն դատավորի՝ որպես արդարադատություն իրականացնող պաշտոնյայի, այլեւ արդարադատության խորհրդի, դատական իշխանության ինքնակառավարման համակարգում նրան վերապահված պարտականությունների մասին է: Այսպես, Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական իշխանության ինքնակառավարման մարմիններն են Նայաստանի Նանրապետության դատավորների ընդհանուր ժողովը եւ դատարանների նախագահների խորհուրդը: Նույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների նախագահների խորհրդի հանձնաժողովներն են՝ էթիկայի հարցերով, ուսումնական հարցերով հանձնաժողովները: Ընդ որում, դատարանների նախագահների խորհուրդը, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն, կարող է սրբեղծել նաեւ այլ հանձնաժողովներ: Ահա այս մարմիններում ներգրավված դատավորն ունի հստակ պարտականություններ, որոնք *չ*պետք է կապված լինեն այլ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առեւտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու հետ:

Դատավորի կամ սահմանադրական դատարանի անդամի պարտականությունների հետ կապված կարող է համարվել այն պաշտոնը, որը որեւէ կերպ առնչվում է նրանց կողմից վերը նշված պարտականությունների կատարմանը եւ կարող է խոչընդոտ հանդիսանալ այդ պարտականությունների բնականոն կատարման գործընթացին (օրինակ, խաթարել դատավորի անաչառությունը, որեւէ կերպ կաշկանդել նրան եւ այլն):

Գիտական, սրբեղծագործական եւ մանկավարժական աշխատանքների հստակ ցանկ օրենսդրությամբ սահմանված չէ. տվյալ դեպքում դարձյալ պետք է հիմք ընդունել այդ հասկացությունների որոշ տարրերի վերաբերյալ օրենսդրական բնորոշումները, ինչպես նաեւ իրավակիրառական ավանդույթները: Այս հարցի առնչությամբ տարակարծություն, որպես կանոն, ծագում է այն դեպքում, երբ գիտական, սրբեղծագործական կամ մանկավարժական աշխատանքն ուղեկցվում է որոշակի, օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ամբիոնի վարիչի, պրոռեկտորի պաշտոններ զբաղեցնելով: Կոնկրետ հարց է ծագում՝ այդ պաշտոնները համարվում են վճարովի ինքնուրույն աշխատանք, թե կարող են միաժամանակ համարվել նաեւ, օրինակ՝ մանկավարժական:

Այս տարակարծության ծագման պատճառն այն է, որ որեւէ իրավական ակտով հստակեցված չէ այն, թե կոնկրետ ինչն է համարվում պաշտոն՝ առեւտրային կազմակերպությունում: Բացի դրանից, հասկանալի չէ, թե ինչ նկատառումով է Սահմանադրությամբ առանձնացվել առեւտրային կազմակերպությունում պաշտոն ստանձնելու հանգամանքը. *չ*պետք է անտեսել, որ հատկապես գիտական, սրբեղծագործական եւ մանկավարժական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաեւ այդպիսի աշխատանքներ իրականացնելու հետ կապված պաշտոնների կարգավիճակի տեսանկյունից որեւէ նշանակություն չունի կազմակերպության կազմակերպարարական տեսակը: Վերջին հաշվով, ամբիոնի վարիչն ինչպես առեւտրային, այնպես էլ ոչ առեւտրային կազմակերպություններում օժտված է նույն կարգավիճակով: Բացի դրանից, ոչ առեւտրային

կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելիս դատավորն իրեն էլ ավելի է վրանգում գործադիր իշխանությունից կաշկանդվելու հնարավորությամբ: Ուստի այս կտրվածքով Սահմանադրության նախկին խմբագրությունը կարելի էր առավել հաջողված համարել:

Կարծում ենք, որ Կոնստիտուցիոնալ դատարանի կազմակերպության մասին որ վճռորոշն այն է, թե ինչ հիմքով է վճարումը կատարվում՝ պաշտոն զբաղեցնելու, թե համապատասխանաբար գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանք կատարելու համար: Ի դեպ, այս մտրեցումը հավասարապես կիրառելի է ոչ առեւտրային կազմակերպությունում վճարովի պաշտոն զբաղեցնելու դեպքում, քանի որ Սահմանադրության 98-րդ հոդվածի դիսպոզիցիայից միանշանակ բխում է, որ վճարովի ցանկացած աշխատանք չի կարելի կատարել: Ոչ առեւտրային կազմակերպությունում դատավորը կամ սահմանադրական դատարանի անդամը չի կարող զբաղեցնել պրոֆեսիոնալ պաշտոն, քանի որ դա պարզապես վճարովի աշխատանք է եւ կապ ունի մանկավարժական աշխատանքի կազմակերպման հետ: Այսպիսով, ոչ առեւտրային կազմակերպությունում դատավորը կամ սահմանադրական դատարանի անդամը կարող է զբաղեցնել միայն այնպիսի վճարովի պաշտոն, որը համարժեք է գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանքի կատարելուն: Նույն ոչ առեւտրային կազմակերպությունում դատավորը կամ սահմանադրական դատարանի անդամը կարող է զբաղեցնել ցանկացած այլ ոչ վճարովի պաշտոն, ինչն առեւտրային կազմակերպությունների պարագայում անթույլատրելի է, եթե դա ինքնին գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանք չէ:

Դատավորի կարգավիճակի, ինչպես նաեւ նրա անկախությունն ապահովող սահմանադրական դրույթների հիմքում ընկած են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր: Մասնավորապես, առանցքային նշանակություն ունեն ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/32 եւ դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձեւերով հաստատված՝ Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները եւ դրանց հավելվածը՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձեւով հաստատված Դատավորների վարքագծի բանադրության սկզբունքները, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի պարագրամման հուշագիրը, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հոկտեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարագիրը եւ այլն:

Նիշյալ փաստաթղթերի համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու դատավորների կարգավիճակի առնչությամբ հետևյալ հիմնադրույթները՝

ա) դատավորների կարգավիճակը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիարժեք երաշխավորվի նրանց իրավասությունը, անկախությունը եւ անաչառությունը, նպաստի նրանց նկատմամբ հանրության վստահության ձեւավորմանը,

բ) դատավորի կարգավիճակին առնչվող դրույթները պետք է ամրագրված լինեն Կոնստիտուցիոնալ դատարանի կողմից սահմանադրությամբ կամ նվազագույնը՝ օրենքներով,

գ) դատավորների կարգավիճակի, նրանց նշանակման կամ լիազորությունների դադարման հարցեր քննարկող ցանկացած մարմին պետք է օժտված լինի անհրաժեշտ անկախությամբ, իսկ դրա կազմում պետք է ապահովված լինի դատավորների առնվազն

50 փոկոս մասնակցություն,

դ) յուրաքանչյուր դատավոր, որը գտնույմ է, որ խախտվել են լիազորություններն իրականացնելիս իր իրավունքները, պետք է ունենա այդպիսի անկախ մարմնի դիմելու հնարավորություն,

ե) պետությունը պետք է դատավորին հարկացնի բավարար միջոցներ՝ իր պարտականություններն անհրաժեշտ մակարդակով կատարելու համար,

զ) դատավորները պետք է հնարավորություն ունենան ստեղծելու եւ ազատ անդամագրվելու իշխանության այլ ճյուղերի եւ դրանց մարմինների կողմից իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնող հասարակական միավորումների,

է) դատավորի պատասխանատվության համար համաձայնություն փոխ կառույցներում պետք է ապահովվի կազմի առնվազն 50 փոկոս մրցութային հիմունքներով ընտրված դատավորների մասնակցություն,

ը) անօրինական դատական ակտի կամ դատավորի վարքագծի հետեւանքով պատճառված վնասը պետք է հատուցվի պետության կողմից: Միաժամանակ, պետությունը կարող է պահանջել, որպեսզի դատավորը ողջամիտ ժամկետում վերադարձնի վնասի հատուցման դիմաց պետության կողմից վճարված գումարը, եթե վնասը պատճառվել է դատավորի կոպիտ խախտման կամ նրա կողմից արդարադատության իրականացմանն առնչվող իրավական նորմերի անթույլատրելի անիրազեկվածության պատճառով եւ այլն:

Այս հիմնադրություններից բխում է, որ քաղաքական զսպվածության սկզբունքը եւս ամրագրված չէ որպես դատավորի կարգավիճակի հիմնարար սկզբունք: Սակայն հիշյալ ինստիտուտի կիրառումը եւս հակացուցված չէ, քանի որ յուրաքանչյուր դեպքում փոխալ երկրի օրենսդրությամբ են կանխորոշվում դատավորի անկախության եւ անաչառության սկզբունքի ապահովման առավել արդյունավետ լծակները:

Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին, ապա փոխալ դեպքում միջազգային իրավական չափանիշներով առավել մեծ նշանակություն է փոխում ոչ թե գործունեության այս կամ այն տեսակին, այլ շահերի բախման երեւոյթի բացառմանը: Մասնավորապես, փորձատիրոջ է այն տեսակետը, որ գիտական, ստեղծագործական եւ մանկավարժական գործունեությամբ զբաղվելը բնավ դատավորի՝ անաչառ վարքագիծ դրսևորելու երաշխիք չէ: Վերջին հաշվով, անկախ այն հանգամանքից, թե դատավորը կամ սահմանադրական դատարանի անդամը աշխատանքային գործունեության ինչ տեսակով է կապված այս կամ այն կազմակերպության կամ մարմնի հետ, այն առաջացնում է անաչառությունը կասկածի փակ դնող օբյեկտիվ հիմքեր:

Կարծում ենք, հետագայում հարկ կլինի այս հարցում ապահովելու անհրաժեշտ հետադարձակնություն ու հարցադրումների ընդգրկման իրատեսական խորություն, ինչի արդյունքում կսահմանվեն այնպիսի սահմանափակումներ, որոնք անմիջականորեն միտված կլինեն շահերի բախման երեւոյթի բացառմանը եւ, ըստ այդմ էլ՝ դատավորների անաչառության երաշխավորվածությանը:

2. Արդարադատության անաչառությունը եւ արդյունավետությունը երաշխավորող կարևորագույն պայման է, որ դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Սահմանադրական այս համընդհանուր դրույթն առաջին հերթին բխում է իշխանությունների փարանջատման սկզբունքի էությունից: Դատարանը կարող է քաղաքական իշխանության նկատմամբ իր վերահսկողության սահմանադրական ա-

ռաբելությունն իրականացնել միայն այն դեպքում, երբ այդ իշխանության գործառույթային դաշտից դուրս է գրվում:

Եթե մեկնաբանվող դրույթում ակնհայտ է կուսակցության անդամ չլինելու պարագան, ապա փարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է փախ «զբաղվել քաղաքական գործունեությամբ» եզրույթը: Վերջինս չի կարող բացարձականացվել այն աստիճանի, որ անձի հանրային ցանկացած ինքնադրսեւորում դիտվի որպես քաղաքական գործունեություն: Չնայած փվյալ դրույթը մեկնաբանման ենթակա դրույթ է, սակայն այն առաջին հերթին ենթադրում է դատավորի ու սահմանադրական դատարանի անդամի համար արգելանք՝ մասնակցելու ընտրական գործընթացներին պասիվ ընտրական իրավունքի իրացման եւ այլոց համար քարոզչություն իրականացնելու առումով: Այն նաեւ ենթադրում է լռյալություն քաղաքական քննարկումների, քաղաքական հարցերի վերաբերյալ հրապարակային կարծիք հայտնելու, քաղաքական նախապատվություններ արտահայտելու հարցերում:

Բազմաթիվ երկրներում փարածված է այն տեսակետը, որ դատավորները եւ դատախազները, լինելով բարձրակարգ իրավաբաններ, առավել պիտանի կարող են լինել քաղաքականությունում եւ նպաստել քաղաքական կյանքի կատարելագործմանը: Ըստ այդ տեսակետի՝ պարզապես այդ իրավունքը պետք է ուղեկցվի արդարադատություն իրականացնելիս բացառապես Սահմանադրությանը եւ օրենքներին ենթարկվելու պահանջով, ինչը կբացառի քաղաքական նկատառումներով ղեկավարվելու երեւույթը: Գործնականում սակավաթիվ են այն դեպքերը, երբ այդ երկրներում անգամ իրավունքի տեսաբանները լուրջ քննադատություն հնչեցնեն դատավորների քաղաքականացվածության հիմքով արդարադատության սկզբունքների խոցելիության մասով: Կարելի է կարծել, թե անգամ գործնական կյանքում է այդ մտերցումն իրեն արդարացրել, ուստի այն կարող է դիտվել որպես համընդհանուր ընդունելի չափանիշ:

Տվյալ դեպքում, սակայն, չափանիշների փարբերությունը թելադրված է ոչ այնքան միեւնույն խնդրի լուծման առնչությամբ փարբեր մտերցումներով, որքան այդ խնդրի լուծման համար նաեւ այնպիսի առանցքային նշանակություն ունեցող գործոնների հաշվառմամբ, որոնք էապես փոխում են պատկերացումները: Խոսքը ձեւավորված ժողովրդավարության եւ իրավաքաղաքական կյանքի ավանդույթների մասին է: Ինքնին քաղաքականությամբ զբաղվելու փաստը չի կարող խոչընդոտ հանդիսանալ արդարադատության սկզբունքները հետետողականորեն պահպանելու տեսանկյունից, սակայն, որպեսզի առկա լինի բավարար երաշխիք, հարկ է, որ դրանք ուղեկցված լինեն նաեւ սոցիալ-հոգեբանական գործոններով:

ՆՈՂ-ՎԱԾ 99

Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից:

ՏՏ սահմանադրական դատարանի անդամների թվի եւ կազմավորման կարգի սահմանադրորեն ամրագրումը նպատակ ունի երաշխավորել դատարանի կառուցակարգային անկախությունը:

Ըստ նախատեսված կարգի՝ դատարանի 9 անդամներից հինգին նշանակում է Ազգային ժողովը (Սահմ. հոդվ. 83, կետ 1), չորսին՝ Հանրապետության Նախագահը (հոդվ. 55, կետ 10) (*տե՛ս նշված հոդվածների մեկնաբանությունը*):

Սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգում դարական մարմինների կազմավորման առանձնահատկություններն իրենց հիմքում ունեն նաև այն ընդհանուր նպատակը, որ յուրաքանչյուր երկրի հասարակական հարաբերությունների բնույթից ու զարգացման խնդիրներից ելնելով, նպատակ է դրվում սրտեղծել անկախ, քաղաքական ներազդեցություններից զերծ, բարձր բարոյական սկզբունքներով առաջնորդվող մի մարմին, որն ի գորու լինի ապահովել երկրի Տիմնական օրենքի ու իրավունքի գերակայությունը, նպաստել հասարակության կայուն ու դինամիկ զարգացմանը:

Մեկնաբանվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման արեսանկյունից հարկ է առանձնացնել հետևյալ հիմնական հարցադրումները.

ա) ինչպիսի՞ն է դարարանի անդամների ընտրության կարգը,

բ) քանի՞ անդամից է կազմված դարարանը եւ ի՞նչ կառուցվածք ունի,

գ) քանի՞ րարով են ընտրվում դարարանի անդամները,

դ) ի՞նչ պահանջներ են ներկայացվում դարարանի անդամներին:

Նշված հարցերի պատասխաններով է մեծապես պայմանավորված սահմանադրական դարարանի գործունակությունը, կառուցակարգային անկախությունը, սահմանադրական արդարադատության արդյունավետությունը:

Դարական սահմանադրական վերահսկողության մարմնի անդամները հիմնականում նշանակվում (կամ ընտրվում) են իշխանության րարբեր թետերի կողմից: Միջազգային պրակտիկայում հանդիպում են րարարեսակ բազմաթիվ մոտեցումներ: Օրինակ, Տունգարիայում, Լեհաստանում, Պերուում, Սլովակիայում, Գերմանիայում, Լատվիայում, Բելառուսում սահմանադրական վերահսկողության մարմնի բոլոր անդամները նշանակվում են պառլամենտի կողմից. Ավստրիայում, Ալբանիայում, Տայաստանում, Փրանսիայում, Լիբվայում, Բենինում, Դրղաստանում, Ռումինիայում, Ռուսաստանում նշանակվում են Նախագահի եւ պառլամենտի կողմից. Բուլղարիայում, Գաբոնում, Իրալիայում, Իսպանիայում, Լիբվայում, Կրաստանում, Մադագասկարում, Մոլդովայում, Ուկրաինայում, Մոնղոլիայում, Թուրքիայում, Կորեայում նշանակվում են Նախագահի, պառլամենտի եւ դարական իշխանության ինստիտուտների կողմից (այսինքն ապահովվում է երեք իշխանությունների մասնակցությունը):

Ի րարբերություն ընդհանուր իրավասության դարարանների, սահմանադրական դարարանի անդամ կարող են լինել ոչ միայն փորձառու դարավորներ, այլեւ իրավունքի գծով դասախոսներ, պետական ծառայողներ, քաղաքական գործիչներ, այդ թվում՝ ոչ իրավաբաններ: Կան երկրներ, որտեղ ոչ իրավաբանների թիվն օրենքով սահմանվում է (Գաբոնում եւ Մալիում 9-ից 2-ը, Շվեդիայում՝ դարավորների ընդհանուր թվի 1/3-ը): Բելգիայում սահմանադրական դարարանի անդամ կարող են դառնալ ոչ միայն դարավորներն ու իրավունքի պրոֆեսորները, այլեւ այն անձինք, ովքեր եղել են պարզամավոր: Փրանսիայի սահմանադրական խորհրդի անդամների համար մասնագիտական որել սահմանափակում չի դրվում: Իսկ, օրինակ, Ուգրեկստանի սահմանադրական դարարանի մասին օրենքի 12 հոդվածով նախատեսված է, որ սահմանադրական դարարանի անդամ կարող է ընտրվել Ուգրեկստանի քաղաքացին՝ իրավունքի եւ քաղաքականության ոլորտի մասնագետներից, որն ունի բարձր բարոյական հատկանիշներ եւ անհրաժեշտ որակավորում:

Կան նաև ընդհանուր իրավասության դարարանների միջոցով սահմանադրական վերահսկողություն իրականացնող երկրներ, որտեղ այս լիազորությունը կարող են իրականացնել բոլոր նրանք, ովքեր համապատասխանում են պարզամավորին առաջադրվող պահանջներին (օրինակ՝ Շվեյցարիան: Այս երկրում Դաշնային դարարանի

անդամ կարող են դառնալ Շվեյցարիայի այն քաղաքացիները, ովքեր իրավունք ունեն ընտրվելու Ազգային խորհրդում):

Որոշ տեսաբանների կարծիքով՝ սահմանադրական վերահսկողության հարուկ մարմնի կազմում այլ մասնագետների (հարկապես քաղաքագիտության, փիլիսոփայության եւ հասարակագիտական այլ ոլորտների), ինչպես նաեւ պետական կառավարման ոլորտում աշխատած բարձրաստիճան ու փորձառու մարդկանց ընդգրկումը կարող է ունենալ մեծ առավելություն եւ օգտակարություն⁷: Նման անհրաժեշտությունը յուրովի է մեկնաբանել ԱՄՆ Գերագույն դատարանի անդամ Նյուգո Բլեքը (նշանակվել է 1937թ.՝ Փրանկլին Ռուզվելտի կողմից, պաշտոնավարել է 34 տարի, մահացել է 1971թ.): Նա գտնում էր, որ ոչ իրավաբանի նշանակումը Գերագույն դատարանի անդամ նրան հաղորդում է անկախության ավելի մեծ լիցք, քանի որ հաղթահարվում է նաեւ հիերարխիկ կարիերայի տրամաբանությամբ թելադրված կախվածության հոգեբանությունը:

Կարելի է նաեւ այն փաստարկը, որ փյույակ պարագայում գործ ունենք ոչ այնքան օրենքի կամ այլ իրավական ակտի կիրառման կարգի, որքան հասարակական հարաբերությունների կանոնակարգման ու կառավարման փիլիսոփայության հետ, եւ օրինաստեղծման հանգամանքն ու դրան փիրապետելու կարողությունը դառնում է առաջնահերթ խնդիր:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ը, մասնավորապես, նախատեսում է, որ. «1. Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին, որը չունի այլ պետության քաղաքացիություն, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան, ինչպես նաեւ իրավունքի ասպարեզում առնվազն տասը տարվա աշխատանքային սպաժ եւ փիրապետում է հայերենին:

2. Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը եւ Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաեւ սահմանադրական դատարանի անդամի թեկնածուի բարոյական հատկանիշները»:

Սահմանադրական **դատարանի անդամների թվի հարցը** նույնպես էական նշանակություն ունի: Միջազգային պրակտիկայում այն տարանվում է 7-ից մինչեւ 19 անդամ: Սովորաբար անդամների մեծ թիվ ունեն այն դատարանները, որոնք երկպալար կառուցվածք ունեն: Սահմանադրական դատարանը գործում է կոլեգիալության սկզբունքով, եւ դատարանի առանձին անդամը դատարանի գործառույթ իրականացնել չի կարող: Դա պայմանավորված է ոչ միայն սահմանադրական արդարադատության առանձնահատուկ կարեւորությամբ, այլեւ այն հանգամանքով, որ դատարանի որոշումները վերջնական են, բացակայում է հնարավոր սխալի շրկման արդարադատական այլ փուլ, եւ կոլեգիալության սկզբունքով բազմակարծության միջավայրում մեծամասնության կողմից որոշման ընդունումն ու առանձին դատավորների հարուկ կարծիքի ինստիտուտի առկայությունը հնարավոր սխալից խուսափելու հիմնական երաշխիքներն են:

Առանձին վերլուծության խնդիր է սահմանադրական դատարանների անդամների **նշանակման ժամկետի եւ թարմացման կարգի խնդիրը**: Գործնականում կան տարաբեւեռ լուծումներ: Նախ. կան երկրներ, որոնք գտնում են, որ սահմանադրական վերահսկողության անկախությունն ապահովելու նպատակով այն իրականացնող մարմնի անդամները պետք է ընտրվեն անփոփոխելիության սկզբունքով (ԱՄՆ, Ավստրիա, Բելգիա, Ռուսաստանի Դաշնություն, Հայաստան եւ այլն):

⁷ Մասնավորապես տես **Боботов С. В.** Конституционная юстиция. М., 1994, էջ 64:

Երկրների մյուս խումբը գտնվում է, որ նշանակման կամ ընտրության ժամկետը պետք է լինի սահմանափակ (սովորաբար այն տարածվում է 7-15 տարվա միջակայքում): Այս երկրների թվին կարելի է դասել Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Թուրքիան և այլն: Երկրների մի մասում նախատեսվում է նաև դատարանի ասփիճանական թարմացման մեխանիզմ (սովորաբար՝ երեք տարին մեկ):

Տարբերություններից զար, գրեթե բոլոր երկրներում կան նաև սահմանադրական դատարանի ձեռավորման նույնական լուծումներ: Ամենից առաջ դա վերաբերում է **դատարանի անդամներին ներկայացվող որոշ պահանջներին:**

Ինչպես նշվեց, դատարանի անդամների թիվը պայմանավորված է նաև դրա կառուցվածքով: Երկպալատ դատարանները հիմնականում բնորոշ են դաշնային կառուցվածք ունեցող երկրներին: Երկպալատ դատարանների պարագայում օրենքը կարգավորում է պալատների ձեռավորման, դրանց նիստերում հարցերի քննարկման և լուծման կարգը, սահմանում է հարցերի այն շրջանակը, որոնց լուծման բացառիկ իրավունքը վերապահված է դատարանի ամբողջ կազմին՝ լիազույժար նիստին:

Սակայն այս բաժանումն ունի նաև գործառնական բնույթ և հնարավորություն է տալիս առանձին հարցեր քննության առնել և դրանց լուծումներ տալ դատարանի անդամների մի մասի կազմով: Այս խնդիրը հարկապես առաջանում է այն դեպքում, երբ դատական սահմանադրական վերահսկողության մարմնին վերապահված է ընդհանուր իրավասության դատարաններին բնորոշ ինչ-ինչ իրավասություն և այն դրված է ժամանակային սահմանափակման մեջ: Մեր հանրապետությունում այս խնդիրը մինչև 2005թ. սահմանադրական փոփոխությունները թերի էր լուծված և կարող էր առաջ բերել լուրջ փակուղային վիճակ: Բանն այն է, որ, մի կողմից, սահմանադրական դատարանը պարտավոր էր 30-օրյա ժամկետում որոշում կայացնել, մյուս կողմից՝ ամբողջ կազմով լուծել պարզամալորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը (հոդված 100, կետ 3), որոնց միաժամանակյա թիվը կարող էր մի քանի հարյուրի հասնել: Նման հնարավոր փակուղային վիճակները սովորաբար լուծվում են կամ ժամանակային սահմանափակումները մեղմելու, կամ, նույնիսկ միապալատ դատարանների դեպքում, դատավորների որոշ թվով (սովորաբար՝ 3 կամ 5 դատավորի կազմով) գործեր քննելու և որոշում կայացնելու իրավունք վերապահելով: Մեր պարագայում՝ սահմանադրական փոփոխությունների և «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքի ընդունման ժամանակ արմատապես փոխվեց գործող կարգը, և հստակ սահմանվեցին տարբեր գործերի քննության ժամանակ կոնկրետ ժամկետներ, ինչը բացառում է փակուղային վիճակներ առաջանալու հնարավորությունը:

ՆՈՂՎԱԾ 100

Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է Տանրապետության Նախագահի եւ պարզամաձորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Տանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

5) եզրակացություն է փայխա Տանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է փայխա Տանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է փայխա սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանաւորելու, որպէս մեղադրյալ ներգրավելու, ինչպէս նաեւ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատւության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է փայխա համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Սահմանադրական դատարանների հիմնական գործառնայթը **Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովումն է**: Դա նշանակում է, որ սահմանադրական դատարանները թեեւ դատարան են արդարադատություն իրականացնելու առումով, այդուհանդերձ, դրանք կենտրոնացված դատական սահմանադրական վերահսկողության համակարգ ունեցող երկրներում առանձնահատուկ պեպական մարմիններ են: Միայն սահմանադրական դատարաններին է վերապահվում իրավաստեղծ գործընթացը վերահսկելու իրավագորոթյուն: Այսպիսով, նրանք դուրս են դրվում Սահմանադրությունից զատ նաեւ օրենքին ենթարկվելու պարտադիր պահանջից («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված), որն անվերապահ գործում է թե գործադիր իշխանության եւ թե դատական իշխանության մյուս բոլոր մարմինների համար: Արող երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, սահմանադրական դատարանները վերահսկում են իշխանության բոլոր երեք ճյուղերի կողմից ընդունված ակտերի սահմանադրականությունը՝ դրանով գործառնական առումով առանձնանալով անգամ դատական իշխանությունից, միաժամանակ լինելով դրա կառուցակարգային բաղադրարարը:

Սահմանադրական դատարանների մասնակցությունը բարձրագույն իշխանությանը՝ րեղի է ունենում հանրային իշխանության կազմակերպման եւ գործունեության բոլոր բնագավառներում իրավակարգի առանցքը կազմող Հիմնական օրենքի պարվիրանների կենսագործումն ապահովելու եղանակով: Սահմանադրական դատարանները՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը, դրանով իսկ ապահովում են նաեւ **հանրային իշխանության ենթակայությունն իրավունքին**, դրա ձեւավորման եւ գործունեության համապարասխանությունն իրավունքի հիմնարար սկզբունքներին: Սահմանադրական դատարանների լիազորությունները պեպք է ապահովեն այս հիմնական գործառնայթի իրացումը: Դրանք պեպք է միմյանց հետ փոխկապակցված լինեն այնպիսի համակարգում, որը թույլ կտա զսպել եւ հակակշռել հանրային իշխանության

ցանկացած կրողի՝ Սահմանադրության գերակայությունն ապահովելու նպատակով: Այս հարցում համակարգային բացերը կարող են հանգեցնել երկրի սահմանադրական կարգի ձեւախեղումների:

Սահմանադրական դատարանների լիազորությունները, որպես կանոն, սահմանվում են Սահմանադրությամբ՝ դատարանի գործառնական անկախությունը երաշխավորելու համար: Բոլոր լիազորությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. ա) հիմնական կամ բնորոշ լիազորություններ, բ) լրացուցիչ կամ ածանցյալ լիազորություններ:

Հիմնական լիազորությունների կարգին կարելի է դասել նորմատիվ ակտերի սահմանադրականության որոշումը, Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանումը, լիազորությունների հարցով իշխանության փոքր մարմինների միջեւ ծագած վեճերի լուծումը, մարդու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը:

Ածանցյալ լիազորությունների թվին են դասվում ընտրությունների արդյունքում կայացված որոշումների նկատմամբ վերահսկողությունը, փոքր հարցերի առնչությամբ եզրակացություններ փալը, կուսակցությունների գործունեության առնչությամբ հարցերի քննությունը եւ այլն:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան եւ եվրոպական զարգացումների հիմնական միտումները վկայում են, որ Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը երաշխավորելու համար սահմանադրական դատարանները պետք է օժտված լինեն անհրաժեշտ ու բավարար լիազորություններով: Վերջիններիս համակարգային ամբողջականությունն ապահովելու համար սահմանադրական դատարանը պետք է լիազորված լինի գնահատելու սահմանադրական յուրաքանչյուր ինստիտուտի կողմից ընդունված իրավական ակտի սահմանադրականությունը, լուծի սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերը, ապահովի ու պաշտպանի մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքները՝ որպես անմիջական գործող իրավունք: Նման լիազորությունների բացակայությունը սահմանադրական արդարադատության համակարգը դարձնում է թերի, իսկ Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ խոցելի ու ոչ լիարժեք:

Նայաստանի Նախագահության սահմանադրական դատարանի լիազորությունները ամբողջությամբ ամրագրված են Սահմանադրության 100-րդ հոդվածում: 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս հոդվածում կատարվեցին մասնակի վերանայումներ:

Նախ. 1-ին կետում հանվել են Նախագահի կարգադրությունները եւ ավելացվել վարչապետի որոշումները: Այս փոփոխությունը, թերեւս, քաղաքական նպատակահարմարությամբ է թելադրված, քանի որ իրավական որեւէ հիմնավորում չունի:

Երկրորդ՝ նույն 1-ին կետում ընդգրկվել են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները: Եթե նկատի ունենանք, որ տեղական ինքնակառավարման մարմինները դարձել են նաեւ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ, ապա այս լրացումը չափազանց կարեւոր է տեղական ինքնակառավարման մակարդակում իրավական գործընթացների սահմանադրականությունը երաշխավորելու եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման պեսանկյունից:

Երրորդ՝ հոդվածի 3-րդ կետից առանձնացվել է ընտրական վեճերի լուծման լիազորությունը եւ այն 3.1-րդ կետով շարադրվել է նոր իմաստավորմամբ: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Սահմանադրական դատարանը լիազորվում է ոչ թե քննության առնելու ընտրությունների արդյունքների հետ կապված ցանկացած վեճ, այլ միայն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

Չորրորդ՝ նախկին խմբագրությամբ րեքսփրից հանվել է Սահմանադրական դատարանի լիազորությունը, որով եզրակացություն էր փրվում Սահմանադրության 55-րդ հոդվածի 13 եւ 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների մասին: Նման փոփոխության իրավական հիմնավորումը շարժուշտ է, եւ դա կարող է հանգեցնել ընդհուպ քաղաքական ճգնաժամերի: Բանն այն է, որ խնդիրն առնչվում է իրավունքների սահմանափակման համաչափության գնահատմանը, որն Ազգային ժողովը կարող է իրականացնել ոչ միայն իրավական հիմնավորվածության, այլեւ քաղաքական նպատակահարմարության քննարկումներից: Սահմանադրական դատարանի գործուն այսօրեղ զսպող կարեւոր երաշխիք էր, որը, մեր կարծիքով, պատշաճ ձեւով չկարեւորվեց սահմանադրական փոփոխությունների ընթացքում:

Հինգերորդ՝ Սահմանադրության 100-րդ հոդվածը լրացվեց Սահմանադրական դատարանի նոր լիազորությամբ (կետ 8), համաձայն որի՝ դատարանը եզրակացություն է փալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին: Այս լիազորությամբ չափազանց կարեւոր երաշխիքներ են սրեղծվում րեղական ինքնակառավարման համակարգային կայացման ու անկախության երաշխավորման համար:

Ներկայացված փոփոխություններով հանդերձ, Սահմանադրական դատարանի լիազորություններն ամբողջական չեն եւ չեն երաշխավորում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման գործառույթի լիարժեք իրացումը, ինչպես նաեւ Սահմանադրության ինքնաբավությունը: Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ դրան կարելի է հասնել, եթե Սահմանադրական դատարանը լիազորվում է համապատասխան իրավասու սուբյեկտի դիմումի առկայության դեպքում գնահատել սահմանադրական բոլոր ինստիտուտների կողմից ընդունվող ակտերի սահմանադրականությունը, լուծել լիազորությունների հարցերով սահմանադրական վեճերը, նման վեճերի առկայության դեպքում փալ սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանություն, ինչպես նաեւ անհատական դիմումների հիման վրա ապահովել ու պաշտպանել յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքը՝ ներդնելով կոնկրետ վերահսկողության ամբողջական ու լիարժեք համակարգ:

Այդուհանդերձ, ՆՆ սահմանադրական դատարանն ունի որոշակի լայն լիազորություններ՝ օրենսդիր եւ գործադիր իշխանությունների իրավասուրեղծ գործունեության սահմանադրականությունը վերահսկելու ուղղությամբ:

Նրա լիազորություններն ամրագրելիս սահմանադիրը հիմնվել է, այսպես կոչված, էնումերացիոն (անվանական թվարկման) սկզբունքի վրա: Ըստ այդմ, սահմանադրական դատարանին վերապահվում է ոչ թե վերացականորեն սահմանադրաիրավական բոլոր հարցերի (վեճերի) լուծումը, այլ կոնկրետ լիազորություններ, որոնք, ինչպես նշվեց, սպառիչ թվարկվում են Սահմանադրության մեջ:

Այդ լիազորությունները վերաբերում են իրավանորմերի վերահսկողությանը, համապետական ընտրությունների արդյունքներով կայացված որոշումների վերահսկողությանը եւ Սահմանադրության պաշտպանության հատուկ ընթացակարգերին (եզրակացություններ առանձին պաշտոնափար անձանց լիազորությունների դադարեցման փարբեր հիմքերի առկայության վերաբերյալ, կուսակցությունների գործունեության կասեցում կամ արգելում):

Իրավանորմերի վերահսկողության վարույթները հինգն են եւ միմյանցից փարանջափում են թե՛ վերահսկողության առարկայի, ժամանակի եւ ծավալի, թե՛ դիմող սուբյեկտների ու դատավարական առանձին յուրահատկությունների առումով: Վերացական վերահսկողության վարույթը (Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին կետ՝ համակցված 101-րդ հոդվածի 1-ին, 3, 4 եւ 8-րդ կետերի հետ) առավել մոտ է սահմանադրական մարմինների միջեւ վեճերի լուծման լիազորությանը, որն ամրագրված չէ Սահմանադրությունում:

Այն վերաբերում է օրենքների եւ այլ նորմադրվ իրավական ակտերի վիճարկմանը պետական մարմինների դիմումներով՝ անկախ կոնկրետ առիթից, իրավունքների խախտումից (վերացականորեն): Վերացական բնույթ ունի նաեւ միջազգային պայմանագրերում մինչեւ դրանց վավերացումը, ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վարույթը (Սահմ. 100-րդ հոդվածի 2-րդ կետ՝ համակցված 101-րդ հոդվածի 1-ին կետի հետ): Այս վարույթում, ի բացառություն իրավանորմերի վերահսկողության բոլոր մյուս վարույթների, իրականացվում է ոչ թե հետազա, այլ նախնական սահմանադրական վերահսկողություն: Ի հակադրումն վերացական վերահսկողության վարույթների, իրավանորմերի վերահսկողության մյուս երեք վարույթներն իրականացվում են անմիջականորեն դիմողի համար նշանակություն ունեցող կոնկրետ առիթով՝ փեղական ինքնակառավարման մարմինների դիմումներ (Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին կետ՝ համակցված 101-րդ հոդվածի 5-րդ կետի հետ), անհատական դիմումներ (Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին կետ՝ համակցված 101-րդ հոդվածի 6-րդ կետի հետ), կոնկրետ վերահսկողություն (Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին կետ՝ համակցված 101-րդ հոդվածի 7-րդ կետի հետ): Բոլոր այս վարույթները կազմում են սահմանադրական դատավարության առանցքը, դրանց միջոցով է, որ ՏՏ սահմանադրական դատարանն ապահովում է Սահմանադրության պաշտպանության իր հիմնարար գործառույթը:

Առանձին լիազորություններ իրականացնելիս Սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի գործի քննության կոնկրետ առանձնահատկությունները, ինչպես նաեւ օրենքով սահմանված ընդհանուր պահանջները: Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, փեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննելիս Սահմանադրական դատարանը դիմումում առաջադրված հարցի առնչությամբ պարզում է դրանում նշված իրավական ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, հիմք ընդունելով.

«1) իրավական ակտի պահանջվող փետակը.

2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու եւ քաղաքացու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը.

5) պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Այս պահանջներն էական նշանակություն ունեն նաեւ Սահմանադրական դատարանի այլ լիազորություններ իրականացնելիս:

Ընդհանրապես փարբեր լիազորությունների իրականացման դատավարության առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 10-րդ գլխում (68-80-րդ հոդվածներ): Այսպեղ առանձնացված են իրավական նորմերի սահմանադրականության վերացական եւ կոնկրետ վերահսկողության, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնահատման, ինչպես նաեւ դատարանի այլ լիազորությունների իրացման հետ

կապված առանձնահատկությունները:

Պրակտիկայում հարկապես փարբեր կերպ է ընկալվում եւ մեկնաբանվում Սահմանադրական դատարանի՝ ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված լիազորությունը: Այս առնչությամբ ՏՏ սահմանադրական դատարանն իր 11 փետրվարի 2008թ. ՄԴՈ-734 որոշման մեջ փվել է հստակ իրավական դիրքորոշում: Դատարանն արձանագրել է, որ «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու» դրույթն ամրագրված է ՏՏ Սահմանադրության 52-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հանրապետության Նախագահի ընտրությունը հեղափոխում է նոր ընտրություն նշանակելու երկու հնարավոր դեպք է նախատեսված: Նախ՝ խոչընդոտի բնույթի գնահատման արդյունքում, երբ Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ են առաջացել ու դրանք չեն վերացել, երկրորդ՝ իրավունքի ուժով՝ մինչև քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում: Ընդ որում, ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ՏՏ Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած խոչընդոտի բնույթի գնահատումը՝ դրա անհաղթահարելի ճանաչման կամ չճանաչման առումով, վերապահված է Սահմանադրական դատարանի իրավասությանը:

Անդրադառնալով «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ դրույթի իրավական նախադեպն սկզբնավորվել է ֆրանսիական սահմանադրաիրավական պրակտիկայում, համաձայն որի՝ «անհաղթահարելի խոչընդոտը» մեկնաբանվում է որպես Նախագահի թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընտրական գործընթացին անձամբ նրա հեղափոխական մասնակցության անհնարինություն:

Այս ինտրիկետը կիրառվում է բացառապես Նախագահի թեկնածուների նկատմամբ՝ նկատի ունենալով, որ նախագահական նոր ընտրությունների անհրաժեշտությունը պայմանավորվում է ոչ թե ընտրապայքարի վիճահարույց խնդիրներով, այլ վիճակի անհաղթահարելիությամբ՝ թեկնածուի այնպիսի վիճակով, որի պարճառով վերջինս անկարող է մասնակցել ընտրական հեղափոխական գործընթացներին:

Սահմանադրական դատարանը գրել է, որ ընտրական գործընթացում փեղ գրած հնարավոր օրինախախտումների ու դրանցով պայմանավորված վիճահարույց խնդիրների լուծման համար օրենքով նախատեսվում են վերջիններիս բացահայտման, գնահատման ու վերացման կոնկրետ ընթացակարգեր՝ հստակեցնելով ժամկետները եւ փարբեր իրավասուբյեկտների լիազորությունները: ՏՏ Սահմանադրության 52-րդ հոդվածի, 100-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 75-րդ հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում «Նախագահի թեկնածուի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է այլ բանի: Այն ենթադրում է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու պահից մինչև Հանրապետության Նախագահի ընտրության օրվան նախորդող ութերորդ օրը փեռող ժամանակահատվածում Հանրապետության Նախագահի թեկնածուի կամքից անկախ նրա հեղ քապված այնպիսի վիճակ է առաջացել, որն այդ ժամանակահատվածում օբյեկտիվորեն անհնարին է հաղթահարել, եւ որը գործնականում նրան զրկել է ընտրական գործընթացին հեղափոխական մասնակցության հնարավորությունից:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքը կարեւորել է նաեւ ըստ վերահսկողության ձեւերի Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման դատավարական առանձնահատկությունների հստակ կանոնակարգումը: Մասնավորապես, հստակ ուշադրություն է դարձվել կոնկրետ վերահսկողության ընթացակար-

գով իրավական ակտերի սահմանադրականության որոշմանը: Օրենքի 68 եւ 69-րդ հոդվածները, ի թիվս այլ հարցերի, կանոնակարգում են նաեւ Սահմանադրական դատարանի որոշման իրավաբանական հետեւանքներին առնչվող խնդիրները: Եզակի դեպքերից է, երբ քաղաքացիների դիմումի հիման վրա Կոնստիտուցիոնալ դատարանը հանձնարում է առաջացել եւ Սահմանադրական դատարանում քննության առարկա է դարձել հենց «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Սահմանադրական դատարանն իր՝ 15 ապրիլի 2008 թվականի ՄԴՈ-751 որոշմամբ հանգել է այն հետեւությանը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը: Միաժամանակ, օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչվել են Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր՝ այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ Կոնստիտուցիոնալ դատարանի կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Օրենքը սահմանում է նաեւ (հոդվ. 5), որ Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման հիմքում դրվում են դատարանի անկախության, գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման, կողմերի իրավահավասարության ու մրցակցության, կոլեգիալության եւ հրապարակայնության սկզբունքները:

Սահմանադրական դատարանի լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է դատարան դիմող իրավասու սուբյեկտների շրջանակով (*տե՛ս 101-րդ հոդվածի մեկնաբանությունը*):

ՆՈՂՎԱԾ 101

1. Սահմանադրությանը եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել

1) **Նանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.**

2) **Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.**

3) **պատրզամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.**

4) **կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.**

5) **տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմարիվ ակ-**

րերի Սահմանադրությանը համապարասխանության հարցով,

6) *յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական սկիզբ, ապառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ սկիզբով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությանը.*

7) *դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գրնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ սկիզբերի դրույթների սահմանադրականության հարցերով.*

8) *մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ սկիզբերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապարասխանության հարցերով.*

9) *Տանրապետության Նախագահի եւ պարզաձայնվորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:*

2. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապարասխան դիմումի առկայության դեպքում:

1. Սահմանադրական դատարան դիմելը Սահմանադրությամբ երաշխավորված անձի սուբյեկտիվ իրավունք է, որը նախեստառաջ, բխում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության իրավունքից: Սակայն, ունենալով իրացման նպատակային ընդհանուր նշանակություն, այն է՝ անձի իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն ամեն պեսակի ոտնձգություններից, այդ իրավունքի իրացման շրջանակներն ու ընթացակարգը սահմանադրական արդարադատության բնագավառում ունեն օբյեկտիվ առանձնահատկություններ՝ պայմանավորված, նախեստառաջ, սահմանադրաիրավական հարաբերությունների բնույթով (բովանդակությամբ), դրանց սուբյեկտների կազմով (պերաիշխանական լիազորություններով օտրված սուբյեկտի պարադիք մասնակցություն), հերեսաբար՝ նաեւ անձի իրավունքների ու ազատությունների խախտմամբ պայմանավորված իրավական վեճի հանրային բնույթով:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացումը Սահմանադրությամբ նախատեսված մի շարք դեպքերում պայմանավորված է նաեւ պերաիշխանական լիազորություններով օտրված սուբյեկտների (պերական մարմիններ, պաշտոնատար անձինք) կողմից իրենց պարականությունների կատարմամբ, պայմանավորված պերական իշխանության անընդատության, սահմանադրական կարգի հիմունքների (սահմանադրական օրինականության, ժողովրդավարական հանընդհանուր արժեքների) անխախտելիության եւ այլ անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման անհրաժեշտությամբ, հերեսաբար, այդ առումով՝ Սահմանադրական դատարան դիմելը նաեւ պարականություն է:

ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում (2005թ.) էակամորեն ընդլայնվեց Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, որն էապես նպաստեց ՀՀ-ում սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես, ներդրվեց անհատական դիմումի ինստիտուտը (Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեպքերում), ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված գործերով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող՝ ՀՀ Ազգային ժողովի պարզաձայն-

վորների նվազագույն թվաքանակը հասցվեց մեկ հինգերորդի, Սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտներ ճանաչվեցին ՆՏ Ազգային ժողովը, Կրեդական ինքնակառավարման մարմինները, դատարանները, գլխավոր դատախազը եւ մարդու իրավունքների պաշտպանը:

ՆՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի համարեքսպում «անձ» եզրույթը ներառում է ինչպես Ֆիզիկական այնպես էլ՝ իրավաբանական անձանց՝ նկատի ունենալով նաեւ Սահմանադրության 42.1 հոդվածի նորմատիվ դրույթը՝ իրավաբանական անձանց վրա մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների կիրառելիության վերաբերյալ:

Ֆիզիկական անձանց դեպքում՝ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք, այսինքն՝ ՆՏ քաղաքացիները (երկքաղաքացիները), օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, փախստականները (ինչպես անհատ, այնպես էլ՝ կոլեկտիվ անձինք): Բացի դրանից, Ֆիզիկական անձանց թվում հարկանշվում են ՆՏ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով իրավական հատուկ կարգավիճակ ունեցող անձինք, ինչպիսիք են Նանրապետության Նախագահը եւ պարզամավորության թեկնածուները:

Իրավաբանական անձանց դեպքում՝ սահմանադրական դատարան կարող են դիմել ՆՏ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձի նկարագիր ու կարգավիճակ ունեցող սուբյեկտները կամ դրանց միավորումները (իրավաբանական անձանց միավորումներ):

Սահմանադրական դատարան դիմելու իրավասու հանրային իշխանության մարմինների կազմն ըստ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի՝ հետելւյալն է. Նանրապետության Նախագահը, ՆՏ Ազգային ժողովը կամ պարզամավորների առնվազն մեկ հինգերորդը, ՆՏ կառավարությունը, գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը, դատարանները, Կրեդական ինքնակառավարման մարմինները: «Դատարան» եզրույթի ներքո՝ ՆՏ Սահմանադրության 92-րդ եւ ՆՏ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածների համարեքսպում, նկատի են առնվում ՆՏ-ում գործող առաջին արյանի ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները, վերաբնիչ ՆՏ քրեական եւ քաղաքացիական վերաբնիչ դատարանները, ինչպես նաեւ բարձրագույն ՆՏ վճարելի դատարանը: «Տեղական ինքնակառավարման մարմիններ» եզրույթի ներքո՝ ՆՏ Սահմանադրության 107-րդ հոդվածի եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքի համապատասխան նորմերի համարեքսպում, պետք է նկատի ունենալ համայնքի ավագանուն եւ համայնքի ղեկավարին:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, դրա իրացման կարգն ու պայմանները սահմանված են ինչպես ՆՏ Սահմանադրությամբ, այնպես էլ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով: Ընդ որում, սահմանադրական դատարան դիմելը բացառապես սահմանադրական իրավունք է (նաեւ՝ պարտականություն), որի իրացման հիմքերը (դեպքերը) նախատեսված են Սահմանադրությամբ, իսկ իրացման կարգը (ընթացակարգը)՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով: Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը՝ դրա ընթացակարգային որոշ առանձնահատկությունների կարգավորման առումով, նախատեսված է նաեւ ՆՏ օրենսդրության այլ ակտերով, ինչպես, օրինակ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքով, ՆՏ ընտրական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Դատախազության մասին» ՆՏ օրենքներով, դատավարական օրենսգրքերով եւ այլն: Սակայն սահմանադրական դատարան դիմելու հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական առաջնային

կարգավորման նախապարվությունը (իրավաբանական ուժի փասանկյունից), ըստ ՀՀ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի իմաստի՝ վերապահված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին, հետևաբար, այլ օրենքները չեն կարող պարունակել այդ բնագավառի իրավակարգավորիչ այնպիսի նորմեր, որոնք հակասեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին:

Հանրային իշխանության մարմինները ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել հետևյալ հիմքերով (ղեպքերում).

ա) Հանրապետության Նախագահը՝

- օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, փոխվարչի ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության որոշման հարցերով,

- մինչև ՀՀ միջազգային պայմանագրերի սահմանված կարգով վավերացումը՝ դրանցում ամրագրված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների սահմանադրականության որոշման հարցով,

- հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման հարցով,

- Սահմանադրական դատարանի՝ իր կողմից նշանակված անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկարմամբ դատական կարգով վարչական պարասխանաբարվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի եզրակացությունն սպանալու հարցով,

- կուսակցության գործունեությունը օրենքով սահմանված ղեպքերում կասեցնելու կամ արգելելու մասին հարցով.

բ) ՀՀ Ազգային ժողովը՝

- հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման հարցով,

- Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին հարցով,

- Սահմանադրական դատարանի՝ իր կողմից նշանակված անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկարմամբ դատական կարգով վարչական պարասխանաբարվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի եզրակացությունն սպանալու հարցով,

- կուսակցության գործունեությունն օրենքով նախապեսված ղեպքերում կասեցնելու կամ արգելելու մասին հարցով.

գ) ՀՀ Ազգային ժողովի պարզամարմինների առնվազն մեկ հինգերորդը՝

- օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, փոխվարչի ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության որոշման հարցերով,

- հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման հարցով.

դ) ՀՀ կառավարությունը՝

- օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, փոխվարչի ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության որոշման հարցերով,

- Հանրապետության Նախագահի իր լիազորությունների կատարման անհնարինության մասին հարցով,

- համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին Սահմանադրական

դատարանի եզրակացությունն սպանալու հարցով,

- կուսակցության գործունեությունն օրենքով նախատեսված դեպքերում կասեցնելու կամ արգելելու մասին հարցով.

ե) տեղական ինքնակառավարման մարմինները՝

- իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

զ) դատարանները եւ գլխավոր դատախազը՝

- իրենց վարչություն գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցով.

է) մարդու իրավունքների պաշտպանը՝

- օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

Վերոհիշյալ հիմքերով հանրային իշխանության մարմինների կողմից Սահմանադրական դատարան դիմելու եւ դիմումն ընդունելու հիմնական կարգն ու պայմանները նախատեսված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, սահմանված են դատարան հասցեագրված դիմումին ներկայացվող ընդհանուր հետեյալ պահանջները. այն պետք է լինի գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված, դիմումին պետք է կցվեն դիմողի ներկայացուցչությունը վկայող լիազորագիր կամ այն հաստատող այլ փաստաթուղթ (եթե դիմողը Սահմանադրական դատարանում հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով), օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, իսկ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված հարցերով դիմելիս՝ նաեւ վիճարկվող ակտի (միջազգային պայմանագրի) պաշտոնական տեքստը:

Գարեուր է ելել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումներին առաջադրվող օրենսդրական պահանջները (այդ թվում՝ ձեւական) իրենց իրավական իմաստով ուղղակիորեն բխում են ՀՀ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի առաջին պարբերության բովանդակությունից եւ կոչված են ապահովելու վերջինիս նորմատիվ դրույթները:

Կապված Սահմանադրական դատարանում քննվող գործերի առանձնահատկությունների հետ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգով նախատեսված են դիմումների ներկայացման, դրանց առարկայական բովանդակության եւ ընդունելիության հարցի քննարկման ու Սահմանադրական դատարանի կողմից դիմումի ընդունմամբ պայմանավորված գործողությունների առանձին մանրամասներ՝ ժամկետների, առանձին փաստաթղթեր ներկայացնելու եւ Սահմանադրական դատարանի կողմից դիմումը քննության ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելու առնչությամբ: Այսպես, օրինակ, Հանրապետության Նախագահը կառավարության որոշումների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան դիմելուց առաջ կասեցնում է տվյալ որոշման գործողությունը՝ մեկ ամիս ժամկետով, եւ դիմում Սահմանադրական դատարան կասեցման վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրը («Սահմ. դատ. մասին» ՀՀ օրենքի հոդված 68): Կամ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով դիմումները տեղական ինքնակառավարման մարմինները Սահմանադրական դատարան կարող են ներկայացնել

այն պահից սկսած, երբ վերջիններիս հայտնի է դարձել իրենց սահմանադրական իրավունքների խախտման փաստը, կամ պարտավոր էին իմանալ այդ իրավունքների խախտման իրական հնարավորության մասին, բայց ոչ ուշ, քան համապարասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց մեկ փարի հետո: Ընդ որում, փեղական ինքնակառավարման մարմնի դիմումը պետք է հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, եւ Սահմանադրության այն դրույթներին, որոնց, դիմողի գնահատմամբ, հակասում են փվյալ օրենքի դրույթները, ինչպես նաեւ պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դատարաններին եւ գլխավոր դատախազի դիմումներով կարող է վիճարկվել Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված որեւէ իրավական ակտ, որն ունի նորմատիվ բնույթ եւ ենթակա է կիրառման համապարասխանաբար՝ դատարանների, գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործով: Դատարանները Սահմանադրական դատարան դիմելուց առաջ պարտավոր են, իսկ ՏՏ գլխավոր դատախազը՝ կարող է կասեցնել կոնկրետ գործի վարույթը մինչեւ գործով Սահմանադրական դատարանի ընդունված որոշումն ուժի մեջ մտնելը, իսկ դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել գործով վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Սահմանադրական դատարան դիմելը նույնպես ենթակա է ձեւակերպման համապարասխան դատարանի կամ գլխավոր դատախազի որոշմամբ («Սահմ. դատ. մասին» ՏՏ օրենքի 71-րդ հոդված):

Նանրային իշխանության մարմինների կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու՝ օրենքով ժամկետային եւ իրավաբանական պարտադիր նշանակություն ունեցող առանձին այլ նախապայմաններ են նախատեսված նաեւ հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդվածի 3-րդ կետ), Նանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության եւ նրա՝ իր լիազորությունների կատարման անհնարինության վերաբերյալ գործերով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդվածի 5 եւ 6-րդ կետեր), որոնք պայմանավորված են փվյալ գործի քննության առանձնահատկություններով եւ միաժամանակ հանդիսանում են դատարանի կողմից հիմնավոր որոշում կամ եզրակացություն ընդունելու իրավական անհրաժեշտ երաշխիքներ:

Իրավական հարուկ կարգավիճակ ունեցող անձինք ՏՏ սահմանադրական դատարան կարող են դիմել հետեւյալ հիմքերով (դեպքերում).

ա) ՏՏ Նախագահի թեկնածուները՝

• Նանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման հարցով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդվածի 3.1-րդ կետ),

• Նանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած ճանաչելու վերաբերյալ հարցով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդվածի 4-րդ կետ).

բ) պարզամավորության թեկնածուները՝

• Ազգային ժողովի պարզամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման հարցով (ՏՏ Սահմ. 100-րդ հոդվածի 3.1-րդ կետ):

Վերոհիշյալ հիմքերով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը, ինչպես եւ վերը հիշարկված նախորդ բոլոր դեպքերում պետք է համապարասխանի «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի եւ ՏՏ սահմանադրական դատա-

րանի կանոնակարգի ընդհանուր պահանջներին: Բացի դրանից, ընտրությունների (ՏՏ Նախագահի, պարզամավորների) արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում: Ելնելով ՏՏ ընտրական համակարգի առանձնահատկություններից, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 74-րդ հոդվածում նախատեսված են պարզամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան դիմելու սուբյեկտիվ իրավունքի իրացման որոշ հավելյալ պայմաններ, համաձայն որոնց՝ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պարզամավորության թեկնածուները, իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները: Նման իրավակարգավորման հիմքում դրված է ՏՏ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի դրույթը՝ իրավաբանական անձանց նկատմամբ ֆիզիկական անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների կիրառելիության հնարավորության վերաբերյալ:

Խոսելով ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի հիմքերով սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կազմի մասին՝ անհրաժեշտ է հիմնավորել, թե արդյո՞ք բավարար հիմքեր կան՝

- այդ սուբյեկտների կազմը (շրջանակը) սպառիչ համարել ՏՏ-ում արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար,
- հանրային-իրավական վեճերը սահմանադրական-դատական կարգով լուծելու առավել ամբողջական համակարգ ձեւավորելու ու զարգացնելու նպատակով այդ գործընթացում քաղաքական համակարգի սուբյեկտների ընդգրկումն առավել ընդլայնելու համար:

Պետք է նկատել, որ սահմանադրական արդարադատության արդյունավետությունը պայմանավորված չէ գլխավորապես դիմող սուբյեկտների ծավալով կամ թվակազմով (կազմի բազմազանությամբ), եւ այդ սուբյեկտների շրջանակի մեխանիկական ընդլայնումը չէ, որ կարող է սահմանադրական վեճերի արդյունավետ լուծման միակ կամ գլխավոր գրավականը լինել: Սահմանադրական արդարադատության արդյունավետությունն այս ենթադրեքստում պայմանավորված է սահմանադրական-արդարադատական գործառույթի միջազգային պրակտիկայում ձեւավորված ինստիտուցիոնալ բովանդակությանը համարժեք լիազորությունների եւ դրանց գործադրումը նախաձեռնելու սուբյեկտիվ հնարավորությունների ամբողջական համակարգի առկայությամբ: Ելնելով սահմանադրաիրավական հարաբերությունների առանձնահատուկ բովանդակությունից եւ դրանով պայմանավորված՝ սահմանադրաիրավական վեճերի հանրային-իրավական բնույթից, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին դիմելու նախաձեռնություն, որպես կանոն, իրավասու է դրսևորելու քաղաքական համակարգի սուբյեկտների գերակշիռ մասը: Հայաստանի Հանրապետության պարագայում, ինչպես փաստվել է, այդպիսիք են. պետության գլուխը (ՏՏ Նախագահը), օրենսդիր (ՏՏ Ազգային ժողովը, պարզամավորների առնվազն մեկ հինգերորդը) եւ գործադիր (ՏՏ կառավարությունը) մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, դատավորները, գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը եւ անձինք (ֆիզիկական եւ իրավաբանական), այսինքն՝ սահմանադրական վեճի լուծման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ ինչպես հանրային իշխանությունը ներկայացնող հիմնական սուբյեկտները, այնպես էլ անձինք: Խնդրին այս տեսանկյունից մոտեցման

ղեպքում կարելի է փաստել, որ ՏՏ-ում սահմանադրական արդարադատության գործառույթն իր սահմանադրաիրավական ներկա բովանդակությամբ, ընդհանուր առմամբ, համապատասխանում է եվրոպական չափանիշներին (*դե'ս նսե'ն Սահմ. 100-րդ հոդվածի մեկնաբանությունը*), թեև սահմանադրաիրավական հարաբերությունների ոչ բոլոր սուբյեկտներն են անմիջականորեն ընդգրկված այդպիսի վեճերի լուծման գործող համակարգում: Մասնավորապես խոսքը վերաբերում է սահմանադրական կարգավիճակ ունեցող մարմինների առավել լիարժեք ընդգրկվածությանը (ՏՏ վարչապետ, ՏՏ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ, ՏՏ վերահսկիչ պալատ, ՏՏ կենտրոնական բանկ), ինչպես նաև պետական իշխանության բնագավառում անկախ կարգավիճակ ունեցող հանձնաժողովներին (կարգավորող հանձնաժողովներ): Իրավական կարգավիճակի առանձնահատկությամբ է պայմանավորված Սահմանադրական դատարանում հանրային-իրավական վեճերի լուծման նախաձեռնությամբ այդ մարմինների հանդես գալու իրավական հնարավորության անհրաժեշտությունը, որոնց անմիջական մասնակցությունն այդ գործընթացին կնպաստի ՏՏ-ում սահմանադրական օրինականության հետագա ամրապնդմանը:

ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի կիրառման փեսանկյունից փեսական եւ գործնական կարեւորություն են ներկայացնում հանրային իշխանության մարմինների դիմումների վերաբերյալ (բացառությամբ անհատական դիմումների) Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների բնույթը եւ բովանդակությունը (դրանցով լուծվող իրավունքի նյութական եւ ընթացակարգային հարցերը): Սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ վերոհիշյալ դիմումներով որոշումներ ընդունվում են աշխատակարգային նիստերում, որոնցով հիմնականում լուծվում են.

- դիմումի ընդունելիության հարցը (ընդունումը կամ մերժումը),

դիմումի ընդունման դեպքում՝

- «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով սահմանված կարգով պատասխանող, հարակից պատասխանող կամ երրորդ անձ ճանաչելու հարցը,

- որոշվում է գործով զեկուցող նշանակելու հարցը,

- անհրաժեշտության դեպքում, գործը քննության նախապատրաստելու շրջանակներում, որոշվում են Սահմանադրական դատարանի՝ գործով զեկուցող անդամի (անդամների) կողմից ձեռնարկվելիք գործողությունները (միջոցները)՝ կապված գործով փաստաթղթեր, այլ նյութեր ձեռք բերելու, փորձաքննություն նշանակելու եւ այլ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու հետ,

- որոշվում է դատաքննության ընթացակարգի ձեւի (բանավոր կամ գրավոր) հարցը,

- որոշվում է դատաքննության օրը:

Հաճախ, աշխատակարգային նիստում դիմումի ընդունելիության հարցի հետ անհրաժեշտաբար լուծվում են նաև դիմողների միջնորդությունների (եթե այդպիսիք ներկայացված են դիմումներում) բավարարման կամ մերժման հարցեր:

Դիմումի ընդունումը մերժելիս Սահմանադրական դատարանի որոշումը պարտադիր ենթակա է պարճառաբանման: Մերժման հիմքերը նախատեսված են «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 32-րդ հոդվածում:

Սահմանադրական դատարանի դիմելու իրավունքի իրացման առանձնահատուկ միջոցն անհատական դիմումի ինստիտուտն է: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում այդ ինստիտուտը ներդրվել է 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ որպես անձի խախտված հիմնական իրավունքների ու

ազատությունների դարական պաշտպանության՝ ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքի արդյունավետ իրացման եւ, միաժամանակ՝ ՆՏ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունն արդյունավետ ապահովելու եւ սահմանադրական օրինականություն հաստատելու կարեւոր երաշխիք:

Նախկին խմբագրությամբ ՆՏ Սահմանադրության (1995թ.) 38-րդ հոդվածի երկրորդ մասը (ներկա խմբագրությամբ 18-րդ հոդված) անձին լիազորում էր իր իրավունքների եւ ազատությունների դարական պաշտպանության իրավունքով՝ վերջինիս դրսևորման ամենալայն իմաստով, թեւեւ Սահմանադրության 101-րդ հոդվածով եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով անձը ձեւակաւորեն որպէս սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտ դիտարկված չէր: Սակայն ՆՏ-ում գործող իրավահամակարգի պայմաններում, երբ դարական նախադէպը որպէս իրավունքի աղբյուր դեռեւս չունի այն դերն ու նշանակությունը, ինչպէս անգլոսաքսոնական իրավահամակարգում, ՆՏ-ում սահմանադրական դատարանն անկարող էր հիմք ընդունելով վերոհիշյալ սահմանադրական նորմը (ՆՏ Սահմ. նախկին խմբ. 38-րդ հոդված)՝ առաջնորդել Սահմանադրության նորմերի անմիջականորեն գործելու սկզբունքով (6-րդ հոդված)՝ անհատի դիմումի հիման վրա իրականացնել նրա իրավունքների սահմանադրական-դարական պաշտպանություն, այսինքն՝ մեկնաբանելով Սահմանադրության վերոհիշյալ նորմը, անմիջականորեն կիրառելով այն՝ սպեղծել դարական նախադէպ, որն իր նշանակությամբ, թեքեւս, հավասարազոր կլինէր ԱՄՆ Գերագույն դատարանի 1803 թվականի՝ «Մարբրին ընդդէմ Մեդիսոնի» հանրահայտ որոշմանը:

Անհատական դիմումի ինստիտուտն իր սահմանադրաիրավական ամրագրումն ստացել է Սահմանադրության մեկնաբանվող 101-րդ հոդվածի 6-րդ կետում, որի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դարական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկվում է այդ ակտով անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Այդ նորմն իր ընթացակարգային բովանդակությամբ զարգացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքում (հոդված 69), ինչպէս նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի կանոնակարգում:

Անհատական դիմումի կամ սահմանադրական գանգառի ինստիտուտի ներկա իրավակարգավորման առանձնահատկությունների խնդրում կարեւոր է նախ կենտրոնանալ հետեւյալ հիմնահարցերի շուրջ.

- անհատական դիմումը քննության ընդունելու թույլատրելիության շրջանակները,
- դիմումի քննության շրջանակները եւ արդյունքները,
- անհատական դիմումի ինստիտուտի զարգացման հեռանկարները Նայաստանի Նանրապետությունում:

Անձի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունքի իրացման, ժամկետների, դիմումին ներկայացվող ձեւական ու բովանդակային պահանջների եւ դիմումի նախնական քննարկման նորմատիվ պայմանները, այսինքն՝ անհատական դիմումը քննության ընդունելու թույլատրելիության շրջանակները, սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածում, իսկ ընթացակարգային առանձնահատկությունները՝ ՆՏ սահմանադրական դատարանի կանոնակարգի 5-րդ գլխում:

Որպես իրավասու սուբյեկտներ, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող են դիմել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ ըստ դիմողի՝ րվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են իրավասու սուբյեկտների (այդ թվում՝ վերը քննարկված հանրային իշխանության մարմինների) կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ (ինչպես, օրինակ՝ գրավոր ձեւը, դիմումին կցվող նյութերը, վիճարկվող ակտի պաշտոնական փեքսպը եւ այլն), որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի վերոհիշյալ 27-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է պետական փութքի վճարման պարտականություն, իսկ 69-րդ հոդվածը սահմանում է, որ.

- դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ,

- անձը կարող է դիմել Սահմանադրական դատարան, երբ իր նկատմամբ գործը լուծող դատական վերջնական ակտով կիրառվել է օրենք կամ վերջինիս որեւէ դրույթ, դատական ակտի վիճարկման (կամ դատական պաշտպանության) հնարավորություններն սպառվել են, եթե այդ պահից չի լրացել վեցամսյա ժամկետը:

Այսպիսով, Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման հարցում օրենսդիրն անձին, ի թիվս ձեւական պահանջների, առաջադրել է նաեւ իրավավերլուծական բնույթի բովանդակային հիմնավորումներ ներկայացնելու պարտականություն, այսինքն՝ դիմումի հիմքում պետք է դրվեն սահմանադրականության վերաբերյալ անձի փաստարկները հիմնավորող իրավական բնույթի հանգամանքներ, իրավագիտական (պետական կամ իրավակիրառական նշանակության) եզրահանգումներ:

ՏՏ սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ հիմնավոր է ճանաչվել անձի այն դիմումը, որում փաստված է անձի իրավունքները խախտող օրենքի կամ դրա առանձին դրույթի կիրառումը՝ օրինական ուժի մեջ մտնող գործը լուծող վերջնական դատական ակտով, ինչպես նաեւ արտահայտված է անձի հիմնավոր (ձեւական առումով՝ իրավաբանորեն հիմնավորված) կասկածն իր նկատմամբ կիրառված օրենքի եւ դրա կիրառման պրակտիկայի սահմանադրականության վերաբերյալ:

Ինչ պետք է նկատի ունենալ «գործը լուծող վերջնական դատական ակտ» կամ «կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտ», «դատական պաշտպանության բոլոր միջոցներ», «կիրառված օրենք (կամ դրա առանձին դրույթ)» եզրույթների ներքո:

ՏՏ սահմանադրական դատարանի պրակտիկան «դատական պաշտպանության բոլոր միջոցներ»-ի ներքո դասել է դատավարական օրենսդրության համապարասխան նորմերով նախատեսված ընթացակարգային բոլոր ուղիները, որոնց միջոցով անձի համար իրացնելի (հասանելի) է վերադատության կարգով դատական ակտերի բողոքարկումը (վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններում):

Ինչ վերաբերում է անձի նկատմամբ «կիրառված օրենք» եզրույթին եւ դրա միակերպ ընկալմանը, ապա Սահմանադրական դատարանի միանշանակ կողմնորոշումն է եղել այն, որ անձի նկատմամբ դատական ակտով օրենքի կամ դրա առանձին դրույթի կիրառմանը (ընդ որում՝ մեկնաբանմամբ կիրառմանը) պարտադիր պետք է հաջորդեն ի-

րավական հերքեանքներ, եւ դատական ակտում այս կամ այն օրենքի կամ դրա առանձին դրույթների պարզ հիշատակումն ինքնին չի կարող որպէս օրենքի կիրառում գնահատուկել:

Անհատական դիմումների քննության պրակտիկայում տեսական եւ գործնական առումով կարելի է նաեւ «գործը լուծող վերջնական դատական ակտ» եզրույթի միասնական ըմբռնման անհրաժեշտությունը, հասկապէս, երբ առկա են դրա հնարավոր փարբմբռնման հիմքեր: Այսպէս, ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում օգտագործվում է «դատարանի վերջնական ակտ» եզրույթը, մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը վկայակոչում է «գործը լուծող վերջնական դատական ակտ» եզրույթը: Սահմանադրական նորմի ձեւակերպման ներքո կարելի է հասկանալ դատական ցանկացած, այդ թվում՝ նաեւ միջանկյալ ակտ, որն առարկայորեն ուղղակի կապված չէ գործը (քրեական, քաղաքացիական կամ վարչական) ըստ էության լուծող (կամ իրավական վեճը լուծող) ակտի հետ, որով իրավանորմի կիրառման արդյունքում խախտվել են անձի սահմանադրական իրավունքներ եւ ազատություններ: Այսպիսի դեպքերում միանգամայն հիմնավոր է եւ մեկնաբանվող սահմանադրաիրավական նորմի իմաստից է բխում սահմանադրական դատարան դիմելը: Սահմանադրության գերակայության սկզբունքից է բխում այդպիսի դիմումների ընդունումը եւ դատական միջանկյալ ակտով կիրառված իրավանորմի սահմանադրականության որոշումը: Նման դիրքորոշմամբ է ՏՏ սահմանադրական դատարանն առաջնորդվել, օրինակ, 2009թ. հոկտեմբերի 13-ի ՍԴՌ-833 որոշումը կայացնելիս:

Ինչ վերաբերում է անձանց դիմումներում վիճարկվող օրենքի (կամ դրա առանձին դրույթի)՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումների վերաբերյալ օրենսդրական պահանջին, ապա պետք է նշել, որ այն անհրաժեշտ է, նախ՝ րվյալ գործով դատաքննության հնարավոր շրջանակներն ուրվագծելու (պարզելու ենթակա հարցերը որոշելու), անձի նկատմամբ կիրառված օրենքով նրա իրավունքներն ու ազատությունները խախտվելու իրողությունը (փաստը) բացահայտելու, վերջապէս՝ դատաքննության արդյունքում դրանց արդյունավետ պաշտպանությունը (խախտված իրավունքի վերականգնումը) ապահովելու առումով: Ներքինաբար, անձը Սահմանադրական դատարան դիմելիս պետք է, նախ՝ հստակ պարկերացնի իր կողմից վիճարկվող օրենքի նորմի դիսպոզիտիվ բովանդակությունը եւ հետո՝ փորձի իրավաբանորեն փաստարկված հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն ու ազատություններն են խախտվել՝ հստակեցնելով դատարանի առջեւ բարձրացված իր խնդրանքի էությունը: Դրանով է պայմանավորված օրենսդրի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 46-րդ հոդվածում փաստաբանին կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց որպէս դիմողի ներկայացուցիչ նախատեսելու վերաբերյալ նորմը: Այսինքն իրացնելով ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին պարբերության դրույթը եւ նկատի ունենալով սահմանադրական արդարադատության առանձնահատկությունները՝ օրենսդրի կողմից կարելուով է դիմող անձի ներկայացուցիչ՝ իրավաբանական մասնագիտական հմտություններ (պատրաստվածություն) ունենալու հանգամանքը, որն ինչպէս սահմանադրական արդարադատության արդյունավետ իրականացման կարելու էրաշխիք է, այնպէս էլ անձի խախտված իրավունքների պաշտպանությունը սահմանադրական դատարանում ապահովելու կարելու միջոց:

Պետք է նշել, որ ՏՏ-ում անհատական դիմումների նախնական ուսումնասիրման հարկապէս սկզբնական պրակտիկան (2006-2007թթ.) վկայում էր, որ անձինք (այսինքն՝

դիմողները եւ նրանց ներկայացուցիչները) մասամբ դժվարացել են կապարել առաջադրված հարցերը դիմումներում իրավաբանորեն հիմնավորելու վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի վերոհիշյալ պահանջը՝ ոչ բավարար տեղեկացված լինելու, մասնագիտական պատշաճ կարողությունների եւ սահմանադրական արդարադատության առանձնահատկություններին հասու չլինելու պատճառներով: Վիճակագրությունը փաստում է, որ 2006-2007թթ. Սահմանադրական դատարան ներկայացված թվով 709 դիմումներից քննության ընդունված անհատական դիմումների քանակը կազմել է 64, իսկ 2008թ. դրությամբ՝ 238 դիմումից՝ 18: Ընդհանուր գնահատմամբ, այդպիսի ցուցանիշները՝ սրացված եւ քննության ընդունված դիմումների հարաբերակցության առումով, համապատասխանում են սահմանադրական-արդարադատական միջին եվրոպական ցուցանիշներին, եւ գործնականում արդարացված են անհատական դիմումների ընդունելիության շրջանակների օրենսդրական սահմանափակումները, որոնք արդարադատության արդյունավետ իրականացման կարեւոր երաշխիք են:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի իրավակարգավորման առարկայի տեսանկյունից դիմումի ընդունելիության վերաբերյալ որոշում ընդունելիս հատուկ կարեւորություն է ներկայացնում՝ Սահմանադրական դատարան դիմողի իրավասուբյեկտության, ինչպես նաեւ դիմումում բարձրացված խնդրի ընդդատության հարցերի լուծումը: Եվ եթե հանրային իշխանության մարմինների, մասամբ էլ՝ իրավական հատուկ կարգավիճակ ունեցող անձանց դեպքերում իրավասուբյեկտության կամ դիմումի առարկայի վերաբերյալ տեսական ու գործնական բնույթի գնահատման խնդիրներ, որպես կանոն, չեն առաջանում, ապա անհատական դիմումների քննության (դրանց ընդունելիության) պրակտիկայում սահմանադրական դատարանը հաճախ այդ խնդիրների վերաբերյալ իր աշխատակարգային եւ դատական կազմերի որոշումներով արտահայտում (հստակեցնում) է իրավական դիրքորոշումներ՝ ապահովելու համար դիմող անձի ինչպես իրավասուբյեկտության, այնպես էլ դիմումի առարկայի վերաբերյալ սահմանադրաիրավական նորմերի միակերպ ընկալումն ու կիրառումը: Եվ, ի տարբերություն իրավանորմերի սահմանադրականության վերացական վերահսկողության («Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի հոդված 68), անհատական դիմումների դեպքում անձի կողմից վերոթվարկյալ խնդիրների լուծմամբ եւ Սահմանադրական դատարանում իր գործողությունների ու դրանց հնարավոր հետեւանքների հստակ գիտակցման, դատարանն անհիմն դիմումներով չձանրաբեռնելու, հետեւաբար՝ արդարադատական գործունեության ու ժամկետների խնայողության պահանջներով է պայմանավորված նաեւ դիմում ներկայացնելու օրենքով սեղմ ժամկետ (6 ամիս) եւ պետական փութք վճարելու պարտականություն նախատեսելը:

2. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այսինքն՝ ՏՏ-ում սահմանադրական արդարադատության իրականացումը պայմանավորված է սուբյեկտիվ նախաձեռնության դրսևորմամբ: Եթե նույնիսկ առկա է իրավական վեճ, հետեւաբար՝ վեճի կողմեր, կամ փաստին (փաստական հանգամանքներին) իրավական գնահատական տալու խնդիր՝ կապված, մի կողմից, անձի՝ իր իրավունքները պաշտպանելու, մյուս կողմից՝ պետության (հանրային իշխանության մարմինների) գործառույթներն իրականացնելու անհրաժեշտության հետ, ապա արդարադատություն իրականացվել չի կարող առանց համապատասխան դիմումի: Սահմանադրական արդարադատության պարագայում վերոշարադրյալ պայմաններն ունեն հետևյալ առանձնահատուկ դրսևորումները.

- պետք է առկա լինի դիմում՝ ներկայացված «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի պահանջներին համապատասխան,

- դիմողը պետք է օժտված լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավագործությամբ,

- իրավական վեճն իր բնույթով պետք է լինի սահմանադրական (հանրային-իրավական), որի դեպքում վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը պարտադիր պետությունն է (հանրային իշխանության մարմինը), իսկ վեճի հիմքում ընկած է անձի իրավունքների պաշտպանության նպատակով իրավանորմի սահմանադրականության որոշման, սահմանադրաիրավական նորմի մեկնաբանման եւ կիրառման հարց,

- վիճարկվող փաստը (փաստական հանգամանքը) ենթակա է սահմանադրաիրավական գնահատման, որին հետեւում է անձի սահմանադրական խախտված իրավունքների պաշտպանությունը (վերականգնումը), պետության (հանրային իշխանության մարմինների) սահմանադրական եւ դրանից բխող օրենսդրական ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական գործառույթների իրականացումը:

Այսպիսով, Սահմանադրության մեկնաբանվող հոդվածը նախատեսում է Սահմանադրական դատարանում գործի քննության պարտադիր նախապայման դիմումի առկայություն, որից հետեւում է, որ դատարանն իր նախաձեռնությամբ գործ քննել չի կարող: Սկզբունքային այսպիսի մոտեցումն ունի իր րեսական եւ գործնական հիմնավորումն ու կարելու է նշանակությունը՝ կապված սահմանադրական արդարադատության գործառույթի առանձնահատկության, այսինքն՝ ՆՇ իրավահամակարգում Սահմանադրության գերակայության եւ դրա անմիջական գործողության ապահովման հետը (*դեմո ՆՇ Սահմանադրության 92 եւ 93-րդ հոդվածների մեկնաբանությունը*): Սահմանադրական դատարանում իրավական վեճերը լուծվում են (փաստերը գնահատվում են) քաղաքական (պետական) իշխանության պարտադիր մասնակցությամբ, րրվում է այդ իշխանությունը ներկայացնող մարմինների գործունեության սահմանադրաիրավական գնահատականը: Ներելաբար, պետաիշխանական այդ գործունեության իրականացման առաջնահերթ նախապայմանը քաղաքական չեզոքությունն է (քաղաքական անկողմնակալությունը), որն անհրաժեշտ է նաեւ գործերի օբյեկտիվ, լրիվ քննությունն ապահովելու րեսանկյունից եւ անմիջականորեն բխում է իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սահմանադրական սկզբունքից: Սահմանադրական արդարադատությունը (ինչպես եւ արդարադատությունը՝ ընդհանրապես) պետության քաղաքական գործունեությունից րարանջատված գործառույթ է՝ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքին համապատասխան (*դեմո ՆՇ Սահմանադրության 5-րդ հոդվածի մեկնաբանությունը*): Դրանով է պայմանավորված Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ գործ քննելու եւ արդյունքում պետության քաղաքական գործունեության մեջ ներքաշվելու հնարավորության արգելքի սահմանադրաիրավական հիմնավորումը եւ ամրագրումը Սահմանադրության մեկնաբանվող նորմում:

ՆՈՂՎԱԾ 102

1. Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

2. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

3. Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմարիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

4. Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով՝ եզրակացություններ: Եզրակացությունները և 9-րդ կետով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5. Եթե սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

1. Որպես դատական մարմին Սահմանադրական դատարանն իրականացնում է արդարադատություն (սահմանադրական արդարադատություն), որի արդյունքում, ըստ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի, ընդունում է **որոշումներ և եզրակացություններ**: Այդ ակտերը ՏՏ իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած իրավական հեղեղանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները ենթակա են կատարման անհապաղ կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում՝ Նայաստանի Նանրապետության ողջ տարածքում:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի առաջին մասի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս անհրաժեշտ է, նախ՝ անդրադառնալ Սահմանադրական դատարանի «որոշումներ» և «եզրակացություններ» եզրույթների իրավական իմաստին:

Ինչպես և հանրային իշխանության ցանկացած իրավասու մարմնի, այնպես էլ Սահմանադրական դատարանի **որոշումն** իրենից ներկայացնում է ՏՏ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պարասխանարվություն, սահմանափակումներ կամ այլ կանոններ, այսինքն՝ **վարքագծի կանոններ**: «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 61 և 69-րդ հոդվածների համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատական կազմերը և դատարանն անհատական դիմումների

քննության, ինչպես նաև դադարանի գործունեության կազմակերպման հետ կապված հարցերով համապատասխանաբար կայացնում են որոշումներ եւ աշխատակարգային որոշումներ: Սակայն Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի համապետությունը Սահմանադրական դադարանի «որոշում» եզրույթի ներքո պետք է հասկանալ **գործով ըստ էության կայացված որոշումը**:

Սահմանադրական դադարանի որոշումներն **ունեն նորմատիվ բնույթ**, քանի որ ուղղված են իրավանորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարմանը: Մասնավորապես, իր որոշումներում բացահայտելով Սահմանադրության, օրենքի կամ այլ իրավական ակտի նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ Սահմանադրական դադարանն արտահայտում է իրավական դիրքորոշումներ եւ որոշում րվյալ նորմերի կամ իրավական ակտի իրավաբանական ուժի հարցը՝ Սահմանադրությանը հակասելու դեպքում ճանաչելով այն անվավեր: Դրանով պայմանավորված առաջանում է այդ ակտով (նորմերով) նախկինում կարգավորվող իրավահարաբերության հետագա կարգավորման, հետեւաբար հանրային իշխանության իրավասու համապատասխան մարմնի իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեության անհրաժեշտություն:

Այլ է Սահմանադրական դադարանի ընդունած **եզրակացության** իրավական բնույթը: Ինչպես որոշմանը, այնպես էլ եզրակացությանն անմիջականորեն հաջորդում են իրավական հետեւանքներ: Սակայն առաջինի դեպքում դրանք արտահայտված են բուն որոշմամբ, դրա եզրափակիչ մասում, որով սահմանվում են իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ եւ անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ: Մինչդեռ Սահմանադրական դադարանի եզրակացությամբ **ճանաչվում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի** (հանգամանքների) առկայությունը կամ բացակայությունը, արվում է դրանց ինչպես ընդհանուր իրավական, այնպես էլ սահմանադրաիրավական գնահատականը, որը հանրային իշխանության իրավասու մարմինների համար (ՏՏ Նախագահ, ՏՏ Ազգային ժողով, ՏՏ կառավարություն) Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով անհրաժեշտ է րվյալ հարցի վերաբերյալ (ՏՏ *Սահմանադրության 100-րդ հոդվածի 5-8-րդ կետերը*) որոշում կայացնելու համար (տես ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի մեկնաբանությունը):

Սահմանադրական դադարանի որոշումների իրավաբանական բնույթն առավել լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ՏՏ իրավահամակարգում այդ ակտերի տեղի եւ դերի իմաստավորման տեսանկյունից:

«Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի համաձայն ՏՏ սահմանադրական դադարանի որոշումները ՏՏ իրավական ակտերի ստորադասության համակարգում դասված են Սահմանադրությունից եւ «Սահմանադրական դադարանի մասին» ՏՏ օրենքից հետո: Այդպիսով որոշվում է նաև այդ ակտի իրավաբանական ուժը: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն օրենքները չպետք է հակասեն ՏՏ սահմանադրական դադարանի որոշումներին: Նման բնորոշումներ են պարունակում վերոհիշյալ օրենքի նաև 12, 13, 13.1, 14, 15, 16, 17, 18, 19, 20-րդ հոդվածները՝ ՏՏ օրենսդրության այլ ակտերի սահմանադրական դադարանի որոշումներին չհակասելու վերաբերյալ:

Սահմանադրական դադարանի որոշումները եւ եզրակացությունները որպես դադարանի վերջնական դատական ակտեր ընդունվում են **Տայաստանի Տանրապետության անունից** (տես նաև ՏՏ Սահմանադրության 91-րդ հոդվածի մեկնաբանությունը), հետեւաբար, ինչպես եւ ցանկացած այլ դադարանի ակտ, այդպիսով արտա-

հայրում են ժողովրդի (հասարակության), պետության հավաքական կամքը, որի կապարումը (որպես իրավական ակտ) երաշխավորված է օրենքով: Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են ՀՀ բոլոր պետական և փեդական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Որպես իրավական ակտ՝ Սահմանադրական դատարանի որոշումների կապարումը պետք է ապահովվի նաև պետական հարկադրանքի ուժով: Այդ նպատակով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածը նախատեսել է օրենքով սահմանված պարասխանարվություն դատարանի որոշումը չկատարելու, ոչ պարզաճ կատարելու կամ կատարմանն արգելք հանդիսանալու դեպքերում: Այդ նորմատիվ դրույթը ենթադրում է իր հետագա զարգացումը ՀՀ օրենսդրության (վարչական, քաղաքացիական և քրեական) համապատասխան ակտերում:

ՀՀ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի առաջին մասի համարեքսքում փեսական և գործնական կարեւորություն է ներկայացնում Սահմանադրական դատարանի որոշումների փեդի և դերի հարակեցման խնդիրը **դատական ակտերի համակարգում**: ՀՀ դատարանները (ընդհանուր իրավասության և վարչական) իրենց լիազորությունների շրջանակներում քաղաքացիական, քրեական և վարչական գործերով ըստ էության կայացնում են համապատասխանաբար վճիռներ, դատավճիռներ և որոշումներ: Սահմանադրական դատարանի որոշումների և դատական վերոհիշյալ ակտերի (այսուհետ՝ դատական ակտեր) բնույթի, բովանդակության և դրանց իրավաբանական ուժի համեմատական վերլուծությունը հանգեցնում է հետևության, որ.

- քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր, սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք համապարտադիր բնույթ ունեն, այդ թվում՝ դատական համակարգի մյուս մարմինների համար, հետևաբար, այդ որոշումները, դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները ենթակա են կատարման նաև բոլոր դատարանների կողմից (իրավական դիրքորոշումների էության և իրավակարգավորիչ նշանակության մասին *տե՛ս, օր., ՄԴՌ-833 որոշման 9-րդ կետը*),

- իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ որոշում կայացնելը ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է (տե՛ս նաև ՀՀ Սահմանադրության 92 և 93-րդ հոդվածների մեկնաբանությունները),

- իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ որոշում կայացնելիս Սահմանադրական դատարանը գնահատում է նաև ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, այդ թվում՝ արդարադատական,

- Սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում,

- իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետեւանքներ (նոր հանգամանքներ), որոնք հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն,

- Սահմանադրական դատարանն իր որոշումներով մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը,

- իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումներին անմիջականորեն հաջորդում է հանրային իշխանու-

թյան իրավասու մարմնի իրավաստեղծ գործունեությունը (այդ թվում՝ օրենսդրական)՝ հասարակական փոխադրության հետագա իրավակարգավորման նպատակով: Մինչդեռ իրավական ակտի՝ օրենքին հակասելու վերաբերյալ (հանրային-իրավական վեճերով) ՏՏ վարչական դատարանի որոշմանը մեկ ամսվա ընթացքում դեռ պետք է հաջորդի փոխադրական ակտն ընդունած իրավաստեղծ մարմնի որոշումը՝ այն անվավեր ճանաչելու մասին:

Սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացություններն ընդունվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով: Բացի դրանից, դատարանի որոշումների եւ եզրակացությունների ընդունման ընթացակարգային մանրամասներ են նախատեսված Սահմանադրական դատարանի կանոնակարգում: Որոշումների եւ եզրակացությունների ընդունման ժամկետները կախված են Սահմանադրական դատարանում քննվող գործերի առանձնահատկություններից եւ հաշվարկվում են դատարանում համապատասխան **դիմումի մուտքագրման պահից**:

Սահմանադրական դատարանի որոշումների եւ եզրակացությունների ընդունման օրենքով նախատեսված կարգի շրջանակներում է սահմանվում այդ ակտերը կազմելու, քննարկելու, ընդունելու եւ հրապարակելու (նաեւ՝ հրատարակելու) ընթացակարգը: Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքին համապատասխան ՏՏ սահմանադրական դատարանը գործով որոշում կամ եզրակացություն ընդունում է դատարանի **դռնփակ խորհրդակցությունում**, որին կարող են ներկա գրնվել միայն Սահմանադրական դատարանի անդամները: Խորհրդակցությունում դատարանի անդամն իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը քննարկվող հարցերի, ինչպես նաեւ շարադրելու իր դիրքորոշումը գործի լուծման վերաբերյալ: Խորհրդակցությունում ելույթների թիվը եւ Կրթությունը չեն սահմանափակվում: Սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ անդամների անվանական հարցման միջոցով: Նախագահողը քվեարկում է վերջում: Սահմանադրական դատարանի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալու կամ հրաժարվելու քվեարկությունից:

Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գործերով որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանի անդամը կարող է ներկայացնել հարուկ կարծիք՝ որոշման ինչպես եզրափակիչ, այնպես էլ պարճառաբանական մասի վերաբերյալ, որը դատարանի որոշման հետ հրապարակվում է Սահմանադրական դատարանի տեղեկագրում: Քվեարկության անվանական արդյունքները հրապարակման ենթակա չեն:

Որպես իրավական ակտեր (պաշտոնական փաստաթղթեր) սահմանադրական դատարանի որոշումը եւ եզրակացությունը պետք է համապատասխանեն իրավական (օրենսդրական) տեխնիկայի կանոններին, շարադրված լինեն որոշակի, պարզ եւ մարչելի՝ ապահովելու համար դրանց միակերպ ընկալումն անձանց եւ իրավակիրառող սուբյեկտների համար (*այդ պահանջների սահմանադրաիրավական ընկալումը տես ՄԴՌ-630, ՄԴՌ-720, ՄԴՌ-723, ՄԴՌ-780 որոշումներում*):

Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացություններն ունեն որոշակի **կառուցվածք**, որի նպատակը դրանցով հարաբերությունների իրավական կարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաեւ դրանցից բխող սուբյեկտիվ վարքագծի կանոնների պահպանման հստակություն ապահովելն է: Այդ ակտերը պարունակում են.

- **նախաբան**, որում նշվում են որոշման կամ եզրակացության անվանումը, ընդուն-

ման նպատակներն ու պատճառները (հիմքերը, առիթը) և նորմատիվ դրույթներ չեն պարունակում,

• **նկարագրական-պատճառաբանական մաս**, որում շարադրվում են դատաբանության առիթ հանդիսացած դիմումի համառոտ բովանդակությունը, փաստական և իրավական հանգամանքները, որոնք հետագոյովել են սահմանադրական դատարանի կողմից, Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՏՕ օրենքի այն հոդվածները, որոնցով ղեկավարվել է դատարանը որոշում կամ եզրակացություն ընդունելիս, ինչպես նաև վերջիններս հիմնավորող փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները: Սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ: Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում առանձնահատուկ նշանակություն ունեն դատարանի **իրավական դիրքորոշումները**, որոնք բովանդակում են դիմումի առարկայի (բարձրագլած հարցի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված եզրահանգումները սահմանադրական և օրենսդրական նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և դրանց համադրմամբ՝ վիճարկվող նորմի (ակտի) սահմանադրականության գնահատման վերաբերյալ: Իրավական դիրքորոշումներն են դատարանին հանգեցնում գործի լուծմանը: Միաժամանակ, այդ դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն իրավակիրառական պրակտիկայում առավել ամբողջական ընկալելու Սահմանադրությունը, Սահմանադրական դատարանում վիճարկվող խնդրի լուծման շարժառիթները և կիրառելու դատարանի որոշումները: Իրավական դիրքորոշումները նաև սկզբունքային նշանակություն ունեն Սահմանադրական դատարանի որոշումներից բխող իրավաստեղծ գործունեության համար՝ որպես սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր,⁸

• **եզրափակիչ մաս**, որում արվում է որոշման կամ եզրակացության ձեակերպումը, անհրաժեշտության դեպքում նշվում է նաև անվավեր ճանաչված իրավական ակտի կամ դրա դրույթների հետ փոխկապակցված այլ դրույթների անվավերության մասին: Եզրակացության դեպքում, եզրափակիչ մասում դատարանը հաստատված (դրական եզրակացություն) կամ չհաստատված է համարում (բացասական եզրակացություն) սահմանադրաիրավական նշանակություն ունեցող այս կամ այն փաստը (իրադարձությունը):

Եզրափակիչ մասում նշվում է որոշման կամ եզրակացության վերջնական լինելու, իսկ որոշման դեպքում նաև հրապարակման պահից ուժի մեջ մտնելու մասին, և եթե կիրառվում է Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի երրորդ մասում նախատեսված փարաժամկետման ինստիտուտը, ապա՝ Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին նշումը:

Որոշման և եզրակացության հիմքում չեն կարող դրվել գործի դատաբանության ընթացքում չհետագոյոված հանգամանքներ:

Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները հրապարակվում են նիստում և կցվում գործին:

⁸ Անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման, դրա իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած հնարավոր դերի, նորմատեղծ նշանակության խնդիրները դեռևս ՀՀ-ում օրենսդրական լիարժեք կարգավորման չեն ենթարկվել: Սահմանադրական դատարանն իր ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում (տես, օր., 2008թ. տարեկան հաղորդման «Ընդհանուր հետևություններ» բաժնի 2-րդ կետը) կարեւորել է իրավակիրառող սուբյեկտների կողմից Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր հաշվի առնելու հանգամանքը, որպես նաև սահմանադրական արդարադատական միջազգային պրակտիկայում հաստատված կանոն:

Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները հրապարակվում են ՏՏ պաշտոնական փոշտակագրում, ինչպես նաև Սահմանադրական դատարանի փոշտակագրում: Դրանք հասանելի են նաև համացանցում դատարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

2. Իրավական ցանկացած ակտ բնութագրվում է նաև դրանում ամրագրված (դրանից բխող) վարքագծի կանոնների կատարման իրավաբանորեն որոշված պայմանների, ինչպես նաև **պահի** (դրանք գործողության մեջ դնելու, սկզբնաժամկետի) հստակ սահմանմամբ, այսինքն՝ իրավաբանական ուժի մեջ մտնելու, կիրառման որոշակիությամբ, ինչպես նաև այդ կանոնների գործողության երաշխավորված փոշտակայունությամբ (կամ հարաբերական կայունությամբ): Այսինքն դրանք կոչված են գործելու անսահմանափակ ժամկետով, քանի դեռ սահմանված կարգով փոշտակված, լրացված կամ ուժը կորցրած չեն:

Որպես կանոն, իրավական ակտը ենթակա է կատարման, եթե այն **ընդունված է, հրապարակվել է իրավաբանական ուժի մեջ է մտել:** Դրանք որքան էլ իրար հաջորդող, փոշտակապակցված, այնքան էլ իրավաբանական ինքնուրույն նշանակություն ունեցող գործընթացներ են: Իրավաբանական ուժ չունեցող (չընդունված, չհրապարակված կամ իրավաբանական ուժը կորցրած) ակտերն իրավական հետեւանքներ, այսինքն՝ համապատասխան իրավատուրքեկտերի համար իրավունքներ եւ պարտականություններ չեն առաջացնում: Դա ընդհանուր եւ պարտադիր նախապայման է իրավական բոլոր ակտերի առնչությամբ: «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքով նախատեսված են իրավական ակտերի հրապարակման եւ ուժի մեջ մտնելու առանձնահատկություններ:

Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները, որպես իրավական ակտեր, իրավաբանական ուժ ստանում են նույնպես ընդունման եւ հրապարակման գործընթացների արդյունքում, սակայն մի առանձնահատկությամբ, որ, ինչպես հետեւում է Սահմանադրության մեկնաբանվող նորմի բովանդակությունից դրանք վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Բացի դրանից, դատարանի որոշումներն ու եզրակացությունները ենթակա չեն փոշտակությունների կամ լրացումների, գործում են անսահմանափակ ժամկետով: «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում դատարանի որոշումը կարող է վերանայվել (հոդված 68, մաս 14):

Վերոհիշյալ առանձնահատկությունները պայմանավորված են Սահմանադրական դատարանի ակտերով կարգավորվող հարաբերությունների սահմանադրաիրավական բովանդակությամբ, մասնավորապես, այդ ակտերի ուժի մեջ մտնելու պահը (ժամկետը), ինչպես նաև դրանցում ամրագրված նորմերի երաշխավորված անփոշտակիությունը (վերջնական լինելը, վերանայելի չլինելը) սահմանադրորեն նախատեսելը կարեւորվում է հետեւյալ հիմնավորումներով.

- Սահմանադրական դատարանի որոշումներով ու եզրակացություններով լուծվում են հանրային-իրավական կարեւորություն ունեցող այնպիսի գործեր, որոնք անմիջականորեն կապված են Սահմանադրության նորմերի կիրառման, իրավական, քաղաքական անվտանգության, հանրային իշխանության անընդարտության (հաջորդայնության), այդ իշխանության մարմինների սահմանադրական գործառնությունների անվերապահ կատարման հետ, հետեւաբար՝ այդ ակտերում ամրագրված նորմերը ենթակա են **անվիճելի** եւ **անհապաղ** կատարման,

- առաջնորդվելով ՏՏ Սահմանադրության հիմնարար սկզբունքներով՝ Սահմա-

նադրական դատարանն իր որոշումներով ու իր իրավասության շրջանակներում ապահովում է ինչպես անձանց (ֆիզիկական, իրավաբանական) խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը, այնպես էլ սահմանադրական կարգի հիմունքների **կայունությունը**, որը պարտավորեցնում է հանրային իշխանության իրավասու մարմիններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ կատարելու Սահմանադրական դատարանի որոշումների պահանջները, այդ թվում դատարաններին՝ **նոր հանգամանքների հիմքով** վերանայելու անձանց նկատմամբ կայացված դատական ակտերը,

• ՏՏ-ում վերոհիշյալ գործառույթների (սահմանադրական արդարադատության) իրականացման բացառիկ մենաշնորհը պարկանում է Սահմանադրական դատարանին (*տե՛ս ՏՏ Սահմանադրության 92 եւ 93-րդ հոդվածների մեկնաբանությունները*), հետեւաբար՝ դրանով է նաեւ պայմանավորված վերջինիս ակտերի վերջնական լիներու սահմանադրաիրավական հիմնավորումը:

3. Սահմանադրական դատարանի որոշումները հրապարակման պահից ուժի մեջ մտնելու, այսինքն՝ իրավաբանական ուժ ստանալու սահմանադրաիրավական ինստիտուտը Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում գործում է առանց բացառությունների, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանն ընդունում է որոշում, ապա առանց որեւէ նախապայմանի այն իրավաբանական ուժ է ստանում **հրապարակման պահից**, որը ենթադրում է.

- սահմանադրական վեճն ըստ էության լուծվել է դատաբնության արդյունքում,
- որոշումն անշրջելի է եւ վերջնական,
- ընդունված որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի որոշումների անհապաղ ուժի մեջ մտնելու սահմանադրաիրավական ինստիտուտը չպետք է շփոթել այդ որոշումներում ամրագրված նորմերի կիրառման **տարաժամկետման** ինստիտուտի հետ՝ չնայած դրանց օրգանական միասնությանը:

Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի երրորդ մասը նախատեսել է սահմանադրական դատարանի իրավաբանական ուժ ստացած որոշման նորմերի կիրառման հետաձգում այն դեպքերում, երբ Սահմանադրությանը չհամապատասխանող է ճանաչվել նորմատիվ ակտը կամ դրա մի մասը: Այդ դրույթը լրացուցիչ իրավակարգավորման է ենթարկվել «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասում, համաձայն որի, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին փոխյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, փոխյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ **հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը**: Ընդ որում, ինչպես սահմանում է վերոհիշյալ նորմը, մինչեւ ակտի իրավաբանական ուժը կորցնելն այն համարվում է Սահմանադրությանը համապատասխանող:

Տվյալ դեպքում խնդիրը հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտի (կամ դրա առանձին դրույթների) պայմանական եւ կարճաժամկետ գործելու մասին է՝ կապված այնպիսի բացառիկ հանգամանքների հետ, որպիսիք հիմք կընդունի Սահմա-

նադրական դարարանն իր որոշմամբ: Այդպիսիք են. **հանրության համար ծանր հեղեղները** եւ **իրավական անվտանգությունը**: Այլ կերպ, յուրաքանչյուր դեպքում սահմանադրական դարարանն է գնահատում հակասահմանադրական ճանաչված նորմափիլ ակտի՝ Սահմանադրությանը հակասող ճանաչելու արդյունքում իրավակարգավորման բնագավառում առաջացող հնարավոր հեղեղների բնույթն ու բովանդակությունը՝ համապարասխանաբար էլ որոշում փարաժամկետման ինստիտուտի կիրառման հարցը: Այսպես, Սահմանադրական դարարանն իր ՄԴՌ-630 որոշմամբ կիրառելով փարաժամկետման ինստիտուտը՝ գրել է, որ ՏՏ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 218-րդ հոդվածը, ՏՏ հողային օրենսգրքի 104, 106 եւ 108-րդ հոդվածները Սահմանադրությանը հակասող ճանաչվելու արդյունքում կառաջանա իրավակարգավորման բաց, հեղեղաբար հեղաձգել է այդ հոդվածների իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը: Կամ, իր ՄԴՌ-765 որոշմամբ դարարանը հակասահմանադրական ճանաչելով փաստաբանի հավաքարմագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 29.1-րդ հոդվածը եւ նույնպիսի հարաբերություններ կարգավորող ՏՏ քրեական դատարարության օրենսգրքի 404, 426.2, 426.5-րդ հոդվածների համապարասխան նորմերը՝ գրել է անհրաժեշտ հեղաձգել դրանց իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը՝ պայմանավորելով այն այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգության խաթարման հանգամանքով:

Սահմանադրական դարարանի որոշումների փարաժամկետման ինստիտուտը լայն կիրառում ունի միջազգային պրակտիկայում: Մասնավորապես, 1997թ. ընդունված Լեհաստանի Սահմանադրության 190-րդ հոդվածը ոչ միայն նախարեսում է նման ինստիտուտ, այլեւ հստակեցնում է դրա գործադրման ժամանակային սահմանափակումները:

Սահմանադրական դարարանի որոշումների հրապարակման, դրանց ուժի մեջ մտնելու, այդ որոշումներով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը հեղաձգելու վերաբերյալ վերը քննարկված խնդիրների հետ փոխկապակցված է նաեւ Սահմանադրական դարարանի **որոշումների վերանայման ինստիտուտը**: Այն, ինչպես նշվեց, իր կարգավորումն է ստացել «Սահմանադրական դարարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասով, համաձայն որի՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախարեսված գործերով, այն էլ՝ բացառիկ դեպքերում եւ սահմանված ընդհանուր կարգով ներկայացված դիմումի հիման վրա, ՏՏ սահմանադրական դարարանի որոշումները կարող են վերանայվել, եթե.

- փոփոխվել է Սահմանադրության՝ րվյալ գործով կիրառված դրույթը,

- ի հայտ է եկել րվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դարարանի այլ որոշում, եւ եթե րվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Սակայն, ինչպես հարկանշված է նույն օրենքի վերոհիշյալ հոդվածում, այդ կանոնը չի կարող վերաբերել իրավական այնպիսի ակտերին (կամ դրանց առանձին դրույթներին), որոնք ՏՏ սահմանադրական դարարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Ու թեեւ ՏՏ սահմանադրական դարարանի պրակտիկայում օբյեկտիվ պարզառներով դարարանի որոշման վերանայման ինստիտուտը դեռ չի կիրառվել, սակայն ակնհայտ է, որ նույնիսկ դարարանի նախկին որոշումների վերանայման ինստիտուտի առկայության դեպքում էլ խոսքը դրանք ոչ թե հայեցողաբար, այլ միանգամայն ծանրակշիռ հիմքերով վերանայելու մասին է: Այդպիսիք կարող են լինել

այն դեպքերը, երբ առկա է սահմանադրական փոփոխությամբ պայմանավորված իրավակարգավորման այլ սկզբունքներ ու բովանդակություն հաստատելու կամ Սահմանադրությանը չհակասող միջազգային իրավական պարավորություններով եւ պրակտիկայով, ինչպես նաեւ ՏՏ-ում ժողովրդավարական զարգացումներով պայմանավորված իրավահամակարգային նոր մոտեցումներ ամրագրելու անհրաժեշտությունը եւ այլն: Դրանով է նաեւ պայմանավորված վերոհիշյալ հիմքերով Սահմանադրական դատարանի որոշումը՝ դրա ընդունման պահից առնվազն 7 փարվա ժամկետի ավարտից հետո այն վերանայելու հնարավորություն նախատեսելը (օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մաս):

4. Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասի նորմարիվ պահանջներին համապատասխան, Սահմանադրության 100-րդ հոդվածի հիմքերով նախատեսված որոշ գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է որոշում, մյուսներով՝ եզրակացություն: Ինչո՞ւ է պայմանավորված այդ փարքերակումը:

ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՕ օրենքի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ Սահմանադրական դատարանը **որոշումներ** ընդունում է այնպիսի գործերով, որոնցով սահմանադրաիրավական լուծում պահանջող խնդրի **ըստ էության լուծման** լիազորությունը վերապահված է այդ մարմնին, մասնավորապես.

- նորմարիվ վերահսկողություն իրականացնելիս (վերացական եւ կոնկրետ), երբ որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Տանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, ինչպես նաեւ մինչեւ միջազգային պայմանագրերի վավերացումը՝ դրանցում ամրագրված պարավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը,

- ընտրական վեճեր լուծելիս, երբ որոշում է հանրաքվեների արդյունքների հետ կապված, ինչպես նաեւ Տանրապետության Նախագահի եւ պարզամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը,

- կուսակցության գործունեությունը կասեցնելիս կամ արգելելիս:

Սահմանադրական դատարանը **եզրակացություններ** ընդունում է այնպիսի գործերով, որոնցով **առկա փաստերի սահմանադրաիրավական գնահատական** փալու լիազորությունը վերապահված է Սահմանադրական դատարանին, սակայն արդյունքում սահմանադրաիրավական խնդրի ըստ էության լուծման լիազորությունը՝ այլ մարմիններին (ՏՏ Նախագահին, Ազգային ժողովին, կառավարությանը (*տե՛ս Սահմանադրության 57, 59 եւ 100-րդ հոդվածների մեկնաբանությունը*): Մասնավորապես.

- Տանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայությունը որոշելիս,

- Տանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման կարողությունը որոշելիս,

- սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաեւ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու հիմքերի առկայությունը որոշելիս,

- համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի առկայությունը որոշելիս:

Այսպիսով, կոնկրետ գործով Սահմանադրական դատարանի կողմից այս կամ այն ակտի (որոշման, եզրակացության) ընդունումը պայմանավորված է փոխյալ գործով դա-

փարանի սահմանադրական լիազորության բովանդակությամբ:

Սահմանադրական դատարանը կոլեգիալ մարմին է, որը ՀՀ Սահմանադրության 99-րդ հոդվածի համաձայն կազմված է ինն անդամից (*տե՛ս այդ հոդվածի մեկնաբանությունը*): Դրանից միարժեքորեն բխում է, որ այդ մարմնում որոշումները եւ եզրակացությունները քննվում եւ ընդունվում են **կոլեգիալ հիմունքներով**: Պատահական չէ սահմանադրական դատարանի անդամների կենտրոնականը, որը երաշխիք է լրիվ կազմով որոշում կամ եզրակացություն ընդունելիս դատարանում բացառելու ձայների հավասար բաշխումը, հեփտաբար՝ ապահովելու գործի լուծումը:

Այսպիսով, ըստ մեկնաբանվող նորմի՝ Սահմանադրական դատարանի որոշումներ եւ եզրակացություններ ընդունելու կարգում որպես ելակետ կարելու է դատարանի անդամների ընդհանուր թիվը, եւ հետո՝ այդ ակտերի օգտին դատարանի անդամների Կրկնված **ձայների նվազագույն հարաբերակցությունը**, որպիսիք ըստ իրենց իրավական բովանդակության սկզբունքային նշանակություն ունեն ինչպես այդ որոշումներին ու եզրակացություններին իրավաբանական ուժ հաղորդելու, այնպես էլ արդյունքում դրանք որպես սահմանադրական որակելու համար: Որոշման կամ եզրակացության օգտին քվեարկած անդամների թիվը, հեփտաբար՝ նաեւ այդ ակտերն իրավաբանորեն ընդունված համարելու հարցը որոշելիս սահմանադրական դատարանի անդամների ընդհանուր (եւ ոչ թե՛ դատարանի Կրկնված նիստին մասնակից անդամների) թիվը սահմանադրորեն որպես ելակետ ընդունելն ունի իր հիմնավորումները, մասնավորապես.

- Սահմանադրական դատարանը գործում է կոլեգիալ սկզբունքով,

- դատարանի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն,

- Սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի է (*տե՛ս Սահմանադրության 96-րդ հոդվածի մեկնաբանությունը*),

- դատարանի նիստերին մասնակցելը, որոշման կամ եզրակացության ընդունմանը (քվեարկությանը) մասնակցելը սահմանադրական դատարանի յուրաքանչյուր անդամի իրավունքն ու պարտականությունն է:

Սահմանադրական դատարանի որոշման կամ եզրակացության ընդունման սահմանադրաիրավական հաջորդ ելակետային պայմանն այդ ակտերի օգտին դատարանի անդամների Կրկնված ձայների նվազագույն հարաբերակցությունն է, որն ըստ մեկնաբանվող սահմանադրական նորմի պահանջների՝ մի շարք վերը հիշարկված դեպքերում կազմում է դատարանի անդամների **ընդհանուր թվի մեծամասնությունը**, նյութերում առնվազն **երկու երրորդը**: Մասնավորապես, Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված գործերով դատարանը որոշումներ ընդունում է անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (պարզ մեծամասնությամբ), իսկ նույն հոդվածի 5-9-րդ կետերով որոշում եւ եզրակացություններ՝ անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով (որակյալ մեծամասնությամբ): Սահմանադրական դատարանի ակտերի ընդունման այդպիսի կարգ նախատեսելը պայմանավորված է Սահմանադրության 100-րդ հոդվածի հիմքերով քննվող սահմանադրական այս կամ այն խնդրի եւ դրա լուծման սահմանադրական գործառնության առանձնահատկությամբ (բովանդակությամբ): Ինչպես վերը փաստվել է, ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունն ապահովելու իր գործառնությամբ Սահմանադրական դատարանն իրականացնում է երկու հիմնական ձեռով (միջոցով).

ա) սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդրին ըստ էության **լուծում փայլով**,

բ) սահմանադրաիրավական նշանակություն ունեցող փաստերին **գնահատական**

տալով:

Վերոհիշյալ հիմնավորմամբ էլ բացատրվում է այս կամ այն գործով որոշում կամ եզրակացություն ընդունելիս ՏՏ Սահմանադրությամբ դադարանի անդամների ընդհանուր թվի ձայների նվազագույն համապարասխան հարաբերակցություն նախատեսելը, սակայն մի բացառությամբ՝ կապված Սահմանադրության 100-րդ հոդվածի 9-րդ կետի հիմքով որոշում կայացնելու հետ (կուսակցության գործունեությունը կասեցնելը կամ արգելելը), որի դեպքում նախատեսված է դադարանի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն որակյալ մեծամասնություն: Այդպիսի փոփոխությունները մոտեցումը պայմանավորված է խնդրի իրավաբաղաքական եւ հասարակական առանձնահատուկ բովանդակությամբ ու նշանակությամբ, քանի որ օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կասեցնելը կամ արգելելն առնչվում է ոչ միայն ՏՏ քաղաքական հիմքի կայունության ապահովմանը կոչված սահմանադրաիրավական սկզբունքների, այլև ՏՏ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների անխախտելիությունը երաշխավորելու հետ: Անցումային հասարակությունների համար այդ խնդիրներն առավել մեծ կարեւորություն են ստանում:

ՏՏ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասի բովանդակության շրջանակներում փեսական եւ գործնական կարեւորություն է ներկայացնում նաեւ այնպիսի դեպքերի իրավակարգավորումը, երբ գործով որոշում կամ եզրակացություն ընդունելիս սահմանադրական դադարանի նիստին մասնակցում է դադարանի ոչ լրիվ կազմը կամ մասնակցում են զույգ թվով անդամներ (օր., 8, 6): «Սահմանադրական դադարանի մասին» ՏՏ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դադարանի նիստն իրավագործ է, եթե ապահովված է փյույակ գործով որոշում կայացնելու համար քվորումը: Նույն օրենքի 62-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե սահմանադրական դադարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետեւանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված (*տե՛ս ՏՏ սահմանադրական դադարանի ՄԴՌ-24 եւ ՄԴՌ-94 գործերով արձանագրությունները*):

Իրավակարգավորման առումով հստակ չեն այն դեպքերը, երբ սահմանադրական դադարանի նիստն իրավագործ է, սակայն փյույակ գործով որոշման կամ եզրակացության օգտին կամ դեմ քվեարկել են են դադարանի անդամների ընդհանուր թվի կեսից պակաս թվով անդամներ (օր., թվով 7 մասնակից անդամներից 4-ը՝ կողմ, 3-ը դեմ քվեարկելու դեպքում): Կարծում ենք, հրապարակ է «Սահմանադրական դադարանի մասին» ՏՏ օրենքում սահմանել որոշման կամ եզրակացության ընդունման ընթացակարգային այնպիսի կանոններ, որոնք կնախատեսեն քվեարկության արդյունքում սահմանադրական դադարանի անդամների ձայների նման հարաբերակցության պայմաններում գործի քննության հետաձգում՝ նպատակ ունենալով ապահովել գործի դադարաքննությանը դադարանի այնպիսի թվով անդամների հետագա մասնակցություն, որը կերաշխավորի որոշման կամ եզրակացության ընդունման համար դադարանի անդամների սահմանադրորեն որոշված ձայների անհրաժեշտ հարաբերակցություն կամ, կախված այս կամ այն գործի առանձնահատկություններից՝ քվեարկության արդյունքում որոշումը կամ եզրակացությունն օրենքով համարել չընդունված:

5. Սահմանադրության 100-րդ հոդվածի 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով ընդունելով եզրակացություններ՝ Սահմանադրական դադարանը, ինչպես նշվեց, ճանաչում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ

բացակայությունը, այսինքն՝ ընդունում է դրական կամ բացասական եզրակացություն, որը հանրային իշխանության իրավասու մարմինների համար (ՆՆ Նախագահ, ՆՆ Ազգային ժողով, ՆՆ կառավարություն) սահմանադրաիրավական հիմք է Կրկյալ հարցի վերաբերյալ (ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 5-8-րդ կետեր) որոշում կայացնելու համար: Սահմանադրական դատարանի եզրակացությունն այդպիսի փաստերի առկայության, դրանց իրավական բնույթի վերաբերյալ **պարտադիր է քննության** այդ մարմինների կողմից, իսկ Սահմանադրական դատարանի բացասական եզրակացության դեպքում (երբ առկա չեն դիմումում մատնանշված փաստերը կամ դրանց վերաբերյալ ներկայացված գնահատականները), **հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննարկումից** («Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 61-րդ հոդվածի 8-րդ մաս), մասնավորապես.

ա) Սահմանադրության 57-րդ հոդվածին համապատասխան Ազգային ժողովի քննարկումից հանվում է Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցը (*տե՛ս ՆՆ Սահմանադրության 57-րդ հոդվածի, 100-րդ հոդվածի 5-րդ կետի մեկնաբանությունները*), որի ընթացակարգային մանրամասները նախատեսված են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքում,

բ) Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին առաջարկով ՆՆ կառավարությունը Սահմանադրության 59-րդ հոդվածին համապատասխան չի կարող դիմել Ազգային ժողով (*տե՛ս ՆՆ Սահմանադրության 59-րդ հոդվածի, 100-րդ հոդվածի 6-րդ կետի մեկնաբանությունները*),

գ) Հանրապետության Նախագահի կողմից, ինչպես նաև ՆՆ Ազգային ժողովում չեն կարող քննարկվել սահմանադրական դատարանի՝ իրենց նշանակված անդամի լիազորությունները դադարեցնելու կամ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրան դատական կարգով վարչական պատասխանարվության ենթարկելու համաձայնություն փալու հարցեր (*տե՛ս ՆՆ Սահմանադրության 56-րդ հոդվածի 10-րդ կետի, 100-րդ հոդվածի 7-րդ կետի մեկնաբանությունները*),

դ) կառավարության կողմից չի կարող քննարկվել համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հարց (*տե՛ս ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 8-րդ կետի մեկնաբանությունը*):

ՆՈՒՎԱԾ 103

1. Տայասրանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 փարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ:

3. Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պարզամալորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

4. Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝
1) հարուցում է քրեական հետապնդում.

2) *հսկողություն է իրականացնում հեղափոխության եւ նահապետության օրինականության նկատմամբ.*

3) *դատարանում պաշտպանում է մեղադրանքը.*

4) *պեղծական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.*

5) *բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները եւ որոշումները*

6) *հսկողություն է իրականացնում պարիսխների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:*

5. *Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում օրենքի հիման վրա:*

1. ՏՃ դատախազությունն այնպիսի համակարգ է, որն օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններից անկախ իրականացնում է իրեն ներհատուկ գործառնություններ: Թեպետ մեկնաբանվող հոդվածը գրվելու է Սահմանադրության 6-րդ գլխում, որը նվիրված է դատական իշխանությանը, սակայն այդ հանգամանքը չի արտացոլում պեղծական իշխանության մարմինների համակարգում ՏՃ դատախազության իրական փուլն ու դերը:

Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան, հետեւաբար՝ դատախազությունը՝ դատական իշխանության մաս չի կազմում: Այն ինքնուրույն, միասնական համակարգ է, որն իրեն վերապահված սահմանադրական լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով՝ «Դատախազության մասին» 2007թ. փետրվարի 22-ին ընդունված ՏՃ օրենքով եւ այլ օրենքներով սահմանված կարգով⁹:

Սահմանադրության 103-րդ հոդվածի իմաստը թույլ է տալիս արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունն այն երկրներից է, որոնցում դատախազությունը սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող առանձին համակարգ է:

Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունից կարելի է դուրս բերել երեք առանձին, սակայն փոխկապված դրույթներ՝ 1/ դատախազությունը դատախազական մարմինների համակարգ է, 2/ դատախազությունը միասնական համակարգ է, 3/ դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, ղեկավարում է գլխավոր դատախազը:

1) **Հայաստանի Հանրապետության դատախազությունը դատախազական մարմինների համակարգ է:** Այսինքն՝ դատախազությունն ինչ-որ առանձին մեկ մարմին չէ, այլ՝ մարմինների համակարգ: ՏՃ դատախազության համակարգն են կազմում ՏՃ գլխավոր դատախազությունը, Երեւան քաղաքի դատախազությունը, Երեւան քա-

⁹ Արևմտավրոպական երկրներում դատախազությունը սովորաբար չի մտնում սահմանադրական ինստիտուտների համակարգի մեջ: Դատախազության կարգավիճակը կարգավորվում է նրա կազմակերպման մասին հատուկ օրենքով և քրեադատավարական օրենսդրությամբ: Բացի դրանից, ելնելով պետական մարմինների համակարգում դատախազության գրաված տեղից՝ կարելի է առանձնացնել չորս խումբ երկրներ, նախ՝ երկրներ, որտեղ դատախազությունը գտնվում է արդարադատության նախարարության կազմում, երկրորդ՝ երկրներ, որտեղ դատախազությունն ընդգրկված է դատական կորպուսի (մագիստրատուրայի) կազմում և դատարանների կից է, երրորդ՝ երկրներ, որտեղ դատախազությունն առանձնացված համակարգ է և ենթարկվում է խորհրդարանին, չորրորդ՝ երկրներ, որտեղ դատախազությունն ընդհանրապես գոյություն չունի (St u Конституционное (государственное) право зарубежных стран. Т.1-2. Общая часть. М., 1996, էջ. 647-650:

ղաքի համայնքների դարախազությունները, ՆՏ մարզերի դարախազությունները, զինվորական կենտրոնական դարախազությունը, կայսագործների զինվորական դարախազությունները:

2) Նայասարանի Նանրապետության դարախազությունը՝ որպես համակարգ, միասնական է, այլ ոչ թե ապակենտրոնացված: Դարախազության համակարգի միասնականությունը հստակորեն արտացոլվել է «Դարախազության մասին» ՆՏ օրենքում, որը սահմանում է դարախազության մարմինների նպատակների եւ խնդիրների միասնականությունը, ծառայողական ենթակայության վրա հիմնված (ՆՏ գլխավոր դարախազը վերադաս է բոլոր դարախազների նկատմամբ, ՆՏ գլխավոր դարախազի ցուցումները, կարգադրությունները պարտադիր են բոլոր դարախազների համար) դարախազության մարմինների անկախությունը, ՆՏ Սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված լիազորություններն իրականացնելիս դարախազության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործունեության միասնականությունը, դարախազներին ներկայացվող միասնական պահանջները, օրենքի խախտումների նկատմամբ դարախազական արձագանքման մեխանիզմների միասնականությունը:

3) Նայասարանի Նանրապետության դարախազությունը որպես միասնական համակարգ ղեկավարում է գլխավոր դարախազը: Նա կարարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջեւ, հաստատում է գլխավոր դարախազության եւ զինվորական դարախազության կառուցվածքը, սահմանում է գլխավոր դարախազության եւ զինվորական կենտրոնական դարախազության կառուցվածքային ստորաբաժանումների լիազորությունների շրջանակը, իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին եւ անհարական իրավական ակտեր, իսկ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ նորմատիվ իրավական ակտեր, ստեղծում է գլխավոր դարախազին առընթեր խորհուրդներ, սահմանում նրանց գործունեության կարգը, իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ («Դարախազության մասին» ՆՏ օրենք, հոդվ.10): Գլխավոր դարախազն իրավասու է իրականացնելու Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները Նայասարանի Նանրապետության ամբողջ տարածքում:

Գլխավոր դարախազը դարախազության վարությամբ գրավող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով «Սահմանադրական դարարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքով սահմանված կարգով դիմում է Սահմանադրական դարարան, Սահմանադրական դարարանում մասնակցում է գործի քննությանը կամ գործի քննությանը մասնակցելու համար նշանակում է ներկայացուցիչ:

2. Նկարի ունենալով ՆՏ գլխավոր դարախազի դերը եւ առանձնահատուկ լիազորությունները՝ Սահմանադրությունը նախատեսում է ՆՏ գլխավոր դարախազի նշանակման հարուկ կարգ՝ ՆՏ Նախագահի եւ Ազգային ժողովի մասնակցությամբ: Ընդ որում, եթե ՆՏ Նախագահին վերապահված է ՆՏ գլխավոր դարախազի թեկնածություն առաջարկելը, ապա Ազգային ժողովին՝ այդ թեկնածուին ՆՏ գլխավոր դարախազի պաշտոնում նշանակելը կամ Նախագահի առաջարկությունը մերժելը: ՆՏ գլխավոր դարախազի թեկնածության ընտրությունը ՆՏ Նախագահի բացառիկ իրավունքն է: Ի տարբերություն ՆՏ գլխավոր դարախազի տեղակալի պաշտոնին ներկայացվող պահանջների, «Դարախազության մասին» ՆՏ օրենքը ՆՏ գլխավոր դարախազի պաշտոնին ներկայացվող հարուկ պահանջներ չի նախատեսում (*տե՛ս ՆՏ Սահմանադրության 55-րդ*

հողվածի 9-րդ կետի մեկնաբանությունը):

Ազգային ժողովը ՆՏ գլխավոր դարախազին նշանակում է նիստին ներկա պարզամավորների ձայների մեծամասնությամբ՝ 6 քարի ժամկետով:

3. ՆՏ Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում, Նանրապետության Նախագահի առաջարկությամբ, Ազգային ժողովը պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դարախազին:

Մանրամասնելով վերոհիշյալ դրույթը՝ 2007թ. փետրվարի 22-ին ընդունված «Դարախազության մասին» ՆՏ օրենքը սահմանում է այն բոլոր հիմքերը, որոնց առկայության պայմաններում Նանրապետության Նախագահը կարող է գլխավոր դարախազին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնել Ազգային ժողովին: Մասնավորապես, վերոհիշյալ օրենքի 52-րդ հոդվածը սահմանում է, որ Նանրապետության Նախագահն իրավունք ունի ՆՏ գլխավոր դարախազին պաշտոնանկ անելու առաջարկությամբ դիմելու Ազգային ժողովին այն դեպքերում, երբ նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը փուլական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պարտականությունների կատարմանը, իր պարտականությունները չի կատարում պարզաճ, դրսևորել է դարախազության հեղինակությունը վարկաբեկող կամ ոչ վայել վարքագիծ, կամ առկա են լիազորությունների կատարման անհաղթահարելի այլ խոչընդոտներ:

Այսպիսով, «Դարախազության մասին» ՆՏ օրենքի 52-րդ հոդվածն սպառնիչ թվարկում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում ՆՏ Նախագահը կարող է գլխավոր դարախազին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնել Ազգային ժողովին:

Ուշագրավ է, որ ՆՏ գլխավոր դարախազին պաշտոնանկ անելու հարցն Ազգային ժողովը լուծում է ոչ թե նիստին մասնակից պարզամավորների ձայների պարզ մեծամասնությամբ, այլ պարզամավորների ընդհանուր թվի ձայների բացարձակ մեծամասնությամբ, մի բան, որը ՆՏ գլխավոր դարախազի իրավական պաշտպանության կարևոր գործոն է:

4. Դարախազության՝ որպես պետական միասնական համակարգի գործունեության բովանդակությունը նշելու եւ բացահայտելու համար իրավագիտության մեջ օգտագործվում են մի շարք կարեգործիաներ՝ «գործառույթ» («Ֆունկցիա»), «գործունեության հիմնական ուղղություն», «դարախազական գործունեության ճյուղ», «իրավասություն», «լիազորություն»: Ընդ որում, դարախազական հսկողության փեսության մեջ այդ հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Իրար հակասող փեսական փարբեր մոտեցումները, հիմնախնդրի բարդությունը եւ սահմանադրական ոչ հստակ դիրքորոշված կարգավորումն են պայմանավորել այն հանգամանքը, որ «Դարախազության մասին» ՆՏ օրենքն անփեսել է այդ հիմնախնդիրը: ՆՏ դարախազության գործառույթային կողմերը մարմաննշելու համար նշված օրենքն օգտագործում է միայն «դարախազության խնդիրներ» «դարախազության լիազորություններ» եզրույթները՝ հիմք ընդունելով Սահմանադրության 103-րդ հոդվածի 5-րդ մասում առկա «լիազորություն» եզրույթը, որից բխեցվում է, որ նույն հոդվածի 4-րդ մասում ամրագրված կետերը դարախազության լիազորություններն են: Նեփեսաբար, ե՛ս սահմանադիրը, ե՛ր օրենսդիրը դարախազության իրավական կարգավիճակը սահմանելիս որպես մեկնա-

կերպերը և պետությունները և իրավասության փոփոխության հիմնադրույթները: Իսկ այդ հիմնադրույթները թելադրում են դարախազության իրավական կարգավիճակի և իրավասության կարգավորումը փանել հետեյալ սխեմայով՝ նպատակներ, գործառնություններ, կառույցներ, գործունեության ձևեր ու մեթոդներ, լիազորություններ և այլն:

Ասվածը վկայում է, որ ե՛ր՝ ՏՏ Սահմանադրությունը, ե՛ր՝ «Դարախազության մասին» ՏՏ օրենքն ունեն վերանայման կարիք՝ այն իմաստով, որ առաջինում պետք է հստակ մատնանշվեն դարախազության համակարգի նպատակները և գործառնությունները, իսկ երկրորդում գործառնությունն ու իրավական կարգավիճակի այլ բաղադրարարները պետք է մանրամասնվեն՝ փրամաբանորեն հաջորդելով և շարունակելով իրար:

Հիմք ընդունելով ՏՏ Սահմանադրության և «Դարախազության մասին» ՏՏ օրենքի դրույթները, ինչպես նաև դարախազական հսկողության փոփոխության մեջ արժարժվող փոփոխությունները՝ կարող ենք ասել, որ Հայաստանի Հանրապետությունում դարախազությունը խառը փյալի, բազմագործառնությանի դարախազություն է, որը կարող է մի քանի՝ սահմանադրորեն ամրագրված գործառնություններ: ՏՏ դարախազության սահմանադրական գործառնություններն ամրագրված են Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասում, որոնք նա իրականացնում է միայն «օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»: ՏՏ դարախազության գործառնությունների իրականացման դեպքերը և կարգը սահմանված են, մասնավորապես, «Դարախազության մասին» օրենքով, ինչպես նաև այլ օրենսդրական ակտերով:

Նոդվածի 4-րդ մասում նշված լիազորությունները ՏՏ դարախազությունն իրականացնում է միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով: ՏՏ դարախազության լիազորությունների իրականացման դեպքերը և կարգը սահմանված են, մասնավորապես, «Դարախազության մասին» ՏՏ օրենքով, ինչպես նաև այլ օրենսդրական ակտերով:

Դարախազության կարևորագույն գործառնություններից է *քրեական հետապնդման հարուցումը*: «Դարախազության մասին» ՏՏ օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական հետապնդման հարուցումը դարախազի բացառիկ լիազորությունն է: Դա նշանակում է, որ պետական իշխանության ոչ մի այլ մարմին չի կարող որևէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել: Իսկ քրեական հետապնդման կարգն ու հիմքերը, ինչպես ամրագրված է նույն հոդվածում, սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական դատարանության օրենսգրքում:

Քրեական հետապնդման հարուցումը պետական իշխանական գործառնությո՛ւ է: ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցումը մեղադրանքի կողմի որոշումն է՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

Ներաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը՝ որպես դարախազության գործառնությո՛ւ, առավել բազմակողմանի է արտահայտում դարախազության գործունեության յուրահատկությունը և փոխադրյալ պետական մարմինների համակարգում: Այս գործառնությո՛ւ շնորհիվ ապահովվում են նախաքննության և հետաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունը:

Ներաքննությունը և նախաքննությունը համապատասխան լիազորություններով օժտված պետական մարմինների կողմից օրենքով նախատեսված սահմաններում և կարգով իրականացվող գործունեություն է կամ գործողությունների համակարգ, որոնք

ուղղված են հանցագործությունների հայտնաբերմանը, կանխմանը, բացահայտմանը, հանցագործությունները կատարած մեղավոր անձանց պարզելուն, վերջիններիս նկատմամբ պարիժ կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նպատակով, ինչպես նաև այդ կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների ամբողջությունը:

Նայաստրանի Նանրապետության քրեական դատարանության օրենսգրքի հոդված 56-ի համաձայն հետաքննության մարմիններն են՝

- ոստիկանությունը.

- գորամասերի, գորամիավորումների հրամանատարները եւ զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գորամասի փարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին, ռազմական ոստիկանությունը՝ օրենքով նրա իրավասությանը հանձնված գործերով.

- Նայաստրանի փրկարար ծառայության մարմինները՝ փրկարար ծառայության հետ կապված գործերով.

- հարկային մարմինները՝ հարկային հանցագործությունների գործերով.

- մաքսային մարմինները՝ մաքսանենգության եւ օրենքով նախատեսված դեպքերում, մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով.

- ազգային անվտանգության մարմինները՝ օրենքով նրանց իրավասությանը հանձնված գործերով.

- քրեակատարողական հիմնարկները՝ այդ հիմնարկների փարածքում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

- օդանավի հրամանատարը՝ օդանավում թռիչքի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ գործերով:

Նայաստրանի Նանրապետության քրեական դատարանության օրենսգրքի հոդված 189-ի համաձայն՝ նախաքննության մարմիններն են հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, հարկային եւ մաքսային մարմինների քննիչները:

Ներաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բովանդակությունը բացահայտված է «Դատախազության մասին» ՏՏ օրենքի 25-րդ հոդվածում: Ներաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով քրեական հետապնդում հարուցած դատախազը, բացառությամբ, երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը: Եթե քրեական հետապնդումը հարուցել է վերադաս դատախազը, ապա նա կարող է տվյալ քրեական գործով հսկողությունը հանձնարարել ստորադաս դատախազին:

Ներաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազն իրավասու չէ վերացնելու կամ փոփոխելու հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ակտերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Վերադաս դատախազը հսկողություն իրականացնող դատախազին կարող է ցուցումներ տալ, բայց միայն գրավոր: Նսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է կատարել վերադաս դատախազի ցուցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ցուցումը անհիմն ու անօրինական է: Նման դեպքերում հսկողություն իրականացնող դատախազը պարտավոր է հրաժարվել ցուցումը կատարելուց՝ անհապաղ գրավոր իրազեկելով ցուցում վրված վերադաս դատախազին, որն իրավունք ունի անձամբ ստանձնելու հսկողություն:

նը կամ դրա իրականացումը հանձնարարելու մեկ այլ դատախազի:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում ամրագրված են հեփաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի մի շարք այլ լիազորություններ, որոնք ուղղված են հսկողության արդյունավետության բարձրացմանը: Այսպես, հեփաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն օրենքով նախափեսված դեպքերում իրավունք ունի որոշում կայացնելու հեփաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու վերաբերյալ, սակայն չի կարող որոշում կայացնել նոր անձ նշանակելու մասին: Բացի դրանից, հսկողություն իրականացնող դատախազը կարող է դիմել հեփաքննություն կամ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմնին՝ հեփաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջոցառությամբ: Վերջինս ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, որը պարտավոր է այն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում սկսել ծառայողական քննությունը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը հեփաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին օժտել է ոչ միայն լիազորություններով, այլեւ նրա վրա դրել է որոշակի պարտականություններ: Հսկողություն իրականացնող դատախազը պարտասխանատու է հեփաքննության եւ նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության եւ արդյունավետության համար:

Հեփաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

ՀՀ դատախազության կարեւոր գործառնություններից է նաեւ *դատարանում մեղադրանքի պաշտպանությունը*: Այս գործառնության բովանդակությունը բացահայտված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում, իսկ մեղադրանքի պաշտպանության կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես կանոն, իրականացնում է տվյալ քրեական գործով հեփաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ, երբ օրենքով նախափեսված դեպքերում նրան փոխարինում է վերադաս դատախազը: Բացառիկ դեպքերում վերադաս դատախազն իրավունք ունի մեղադրանքը պաշտպանող դատախազի դատավարական լիազորությունների իրականացմանը ներգրավել նաեւ այլ մեղադրողներ:

Մեղադրանքը պաշտպանող դատախազի մասնակցությունը պարտադիր է առաջին արյանում եւ վերաքննիչ դատարանում գործի քննությանը, այդ թվում՝ նախնական լսումներին:

Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը որոշակի դեպքերում, որոնք նախափեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, պարտավոր է հրաժարվել մեղադրանքից: Այդ դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ:

Եթե մեղադրողն առաջին արյանի դատարանում գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խտրացման, քանի որ դատական քննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույ-

թում, դափախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դափարանին՝ արարքը վերաորակելու նպատակով դափարական նիստը հեփաճգելու վերաբերյալ: Դափախազի միջնորդությամբ դափարանը հեփաճգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հեփաճգվել ոչ ավելի, քան 1 ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական գործողությունները կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Դափարանում մեղադրանքի պաշտպանության ընթացքում դափախազին իրավունք է վերապահված նաեւ մինչեւ դափարանի՝ խորհրդակցական սենյակ անցնելը փոխել մեղադրանքը, այդ թվում՝ խստացման առումով, եթե դափարական քննության ընթացքում հեփազոտված ապացույցներն անհերքելիորեն վկայում են այն մասին, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է:

ՆՃ դափախագության սահմանադրական հաջորդ գործառույթը *պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն է դափարան*: Այս գործառույթի բովանդակությունը բացահայտված է «Դափախագության մասին» ՆՃ օրենքի 27-րդ հոդվածում: Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը ներառում է քաղաքացիական դատավարության կարգով՝ պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, վարչական դատավարության կարգով՝ պետության գույքային եւ ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, քրեական դատավարության կարգով՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հարուցման հայցի հարուցումը: Այսպեղից հեփետում է, որ «պետական շահ» հասկացությունը ներառում է պետության ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային շահերի պաշտպանությունը, մի բան, որը կարելու է նշանակություն ունի պետական շահերի պաշտպանության եղանակի ընտրության հարցում: Փաստորեն, առաջին արյանի ընդհանուր իրավասության դափարան դափախագը կարող է հայց հարուցել միայն պետության գույքային շահերի պաշտպանության, իսկ վարչական դափարան՝ ինչպես պետության գույքային, այնպես էլ ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակով: Իսկ քրեական դատավարության կարգով հայց հարուցելու համար անհրաժեշտ է, որ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառվի գույքային վնաս:

«Դափախագության մասին» ՆՃ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դափախագը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում հեփելյալ դեպքերում.

- իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրագեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դափախագի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո,

- պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ վերապահված չէ որեւէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի,

- դափախագին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը,

- հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս:

Պեղական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է նաև այլ երկրների դատարաններում կամ Նայաստանի Հանրապետության փարածքից դուրս փեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Նայաստանի Հանրապետության կառավարությունը լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության:

Եթե դատախազը գտնում է, որ առկա են բավարար հիմքեր պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու համար, ապա իրավունք ունի մինչև հայց հարուցելը նախագոյնացնելու պետության շահերին վնաս հասցրած անձին՝ վնասը կամովին հարուցելու մասին:

Պետության շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքներն ու պարտականություններն իրականացնելը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին, դիմողին կամ պատասխանողին:

Պեղական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերի առկայության դեպքում նյութեր նախապատրաստելու նպատակով դատախազն իրավունք ունի իր որոշմամբ՝

պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմիններում եւ պեղական ոչ առևտրային կազմակերպություններում ստուգումներ իրականացնելու, պահանջելու եւ ստանալու իրավական ակտեր, փաստաթղթեր եւ այլ փեղեկություններ,

պեղական եւ փեղական ինքնակառավարման մարմինների եւ պեղական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանցից պահանջելու եւ ստանալու բացառություններ:

Նշված լիազորությունները դատախազն իրականացնում է նաև այն դեպքերում, երբ պեղական շահերի խախտման փաստի մասին փեղեկավորության աղբյուրը Ներապետության Նախագահն է, ՎՎ կառավարությունը, Նայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը, Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը կամ Ազգային ժողովը՝ հարցապնդումների քննարկման արդյունքում ընդունված որոշմամբ:

«Դատախազության մասին» ՎՎ օրենքի 27-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ նշված լիազորությունները չպեղք է դուրս գան պեղական շահերի պաշտպանության հայցի շրջանակներից:

ՎՎ դատախազության մյուս գործառայող *դատարանների վճիռների, դատարանների եւ որոշումների բողոքարկումն է:* Այս գործառայողի բովանդակությունը բացահայտված է «Դատախազության մասին» ՎՎ օրենքի 28-րդ հոդվածում:

Գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտնած այն դատական ակտը, որն իր կարծիքով հիմնավոր չէ կամ ապօրինի է: Այսինքն՝ գործին մասնակցող դատախազն օրինական ուժի մեջ չմտնած դատական ակտերը պարտավոր է բողոքարկել երկու դեպքում՝

- երբ դատական ակտը հիմնավոր չէ,
- երբ դատական ակտն ապօրինի է:

Քրեական գործերով դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտնած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մատակցած մեղադրող դատախազը կամ վերադատ դատախազը:

Նույնը վերաբերում է նաև դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացված օրինական ուժի մեջ չմտնած դատական ակտերին:

Բողոքը պաշտպանում է բողոք բերած դատախազը, իսկ եթե բողոքը բերել է գլխավոր դատախազը կամ նրա փեղակալը, ապա բողոքը պաշտպանում է ինքը կամ

իր հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

Քրեական գործերով դատական ակտը քաղաքացիական հայցի մասով դատախազի կողմից կարող է բողոքարկվել, եթե այն վերաբերում է պետության գույքային շահերին:

Այս դրույթներից հետևում է, որ դատախազն անձնական պատասխանատվություն է կրում իր մասնակցած գործերով կայացված դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ժամանակին և որակով ստուգելու համար:

Դատախազի բերած բողոքները պետք է ներկայացվեն դատավարական օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, բողոքները շարադրվեն հիմնավոր, փաստարկված, գործի նյութերի օբյեկտիվ և համակողմանի վերլուծության հիման վրա: Բողոք բերելիս դատախազը պարտավոր է մանրագնին ստուգել և պարզել դատական ակտի դեմ բողոք բերելու հիմքերը՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները:

Օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազն ու նրա տեղակալները: Ընդ որում, քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող դատական ակտերը գլխավոր դատախազն ու նրա տեղակալները կարող են բողոքարկել՝ անկախ րվյալ գործի քննությանը դատախազության մասնակցությունից: Այսպես ինչ հետևում է, որ միայն գլխավոր դատախազը և նրա տեղակալներն իրավունք ունեն դատարանից պահանջելու օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերով գործերը:

Դատախազի կողմից բերված բողոքը կարող է հետ վերցնել բողոք բերած դատախազը կամ վերադաս դատախազը:

Դատախազը քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության կարգով քննվող գործերով դատավարական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ է և օգտվում է դատավարության մասնակիցներին վերապահված բոլոր, այդ թվում՝ գործի նյութերին անարգել ծանոթանալու, գործի նյութերի պարզնեն ստանալու իրավունքներից:

ՆՏ դատախազության վերջին գործառայությունը *պարտիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն հրականացնելն է*: Սահմանադրական այս գործառայություն իրականացվում է «Դատախազության մասին» ՆՏ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պարտիժ են համարվում քրեական օրենքով նախատեսված պարտավորությունները: Դրանք են՝ 1. րուզանքը, 2. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 3. հանրային աշխատանքները, 4. հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, 5. գույքի բռնագրավումը, 6. կալանքը, 7. կարգապահական գումարտակում պահելը, 8. ազատագրվումը որոշակի ժամկետով, 9. ցմահ ազատագրվումը:

«Դատախազության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերում նախատեսված դեպքերում ազատությունից զրկումը:

Ըստ «Դատախազության մասին» ՆՏ օրենքի 29-րդ հոդվածի՝ դատախազը հսկողություն է իրականացնում նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրման օրինականության նկատմամբ:

Սահմանադրական վերը նշված գործառայություն իրականացնելիս դատախազն ի-

րավունք ունի.

- ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք,

- ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների,

- ստուգելու պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին: Օրենսդրությանը հակասող ակտերի հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետեւանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնել,

- հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց,

- անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի փոզանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձն ազատությունից զրկվել է ազատությունից զրկելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել իր ակտը,

- պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացառություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին:

Սահմանադրական նշված գործառույթն իրականացնելիս դատախազը մասնակցում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետեւանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում:

5. Ինչպես նշվեց, Սահմանադրության 103-րդ հոդվածի 5-րդ մասի «լիազորություն» եզրույթը ճիշտ կլիներ փոխարինել «գործառույթ» եզրույթով: Դատախազության սահմանադրական գործառույթները սպառիչ թվարկված են, և դատախազությունը չի կարող գործունեություն ծավալել այդ գործառույթների շրջանակներից դուրս: Դատախազությունն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված գործառույթները՝ դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում իրականացնելով օրենքով իրեն վերապահված լիազորությունները, որոնք պետք է լինեն անհրաժեշտ և բավարար փվյալ գործառույթը պայամանավորող խնդիրը պատշաճ իրագործելու համար:

Գ Լ ՈՒ Խ 7

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԾԱՎԱՐՈՒՄԸ

ՆՈՂՎԱԾ 104

- 1. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:**
- 2. Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պարասխանաբովորությանը բնակիչների բարօրության նպաստելով Մահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:**

1. Տեղական ինքնակառավարումը հանրային իշխանության ճյուղերից մեկն է, այդ իշխանության փարածքային դրսեւորումը: Կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարումը հանրային իշխանությունների բաժանման ուղղահայաց դրսեւորումն է՝ որպես տեղական հանրության ազատության եւ իրավունքների երաշխիք: Դրա ակունքները բխում են ոչ թե քաղաքական, այլ քաղաքացիական հասարակությունից: Ուստի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները միակն են, որոնց կարող են մասնակցել նաեւ համայնքի այն բնակիչները, որոնք չեն քաղաքացիներ չեն:

Տեղական ինքնակառավարման կարեւորությունն արտացոլում է 1985թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որում նշված է, որ եթե պետությունում գոյություն չունի տեղական ինքնակառավարման համակարգ, վերջինս չի կարող համարվել ժողովրդավարական երկիր:

Տեղական ինքնակառավարումը համակարգ է, որում կան սուբյեկտներ, օբյեկտներ, հարաբերություններ սուբյեկտների միջեւ՝ կառավարման օբյեկտների առնչությամբ, այդ հարաբերությունների օբյեկտիվ եւ սուբյեկտիվ կողմերը, նորմատիվ ակտեր եւ անհատական բնույթի ակտեր: Մահմանադրության 104-րդ հոդվածում տեղական ինքնակառավարման սուբյեկտն անվանվել է համայնք, այսինքն՝ բնակչություն: Ելնելով նրանից, թե ինչ հարցեր է այն լուծում, կարելի է եզրակացնել՝ խոսքը վերաբերում է փոքր բնակավայրում (համայնքում), փոքր փարածքում ապրող բնակչությանը, «բնակչությանը»՝ որպես տեղական հանրության, որն ընդգրկում է բոլոր այն մարդկանց, ովքեր մշտապես կամ ժամանակավորապես բնակվում են այդ փարածքում:

2. Մահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է տեղական ինքնակառավարման համակարգի սահմանադրական հասկացությունը, որի հատկանիշային բաղադրաբաղրերն են.

1/ Մահմանադրությունը տեղական ինքնակառավարումը համարում է համայնքի՝ որպես վարչական միավորի, բնակչության իրավունքը: Մակայն իրավունքը միայն սուբյեկտիվ հնարավորություն է: Այն կենսագործելու համար շար կարեւոր է համայնքի իրական ներուժը՝ այդ հնարավորություն իրականության վերածելու համար: Ներքաբար, Մահմանադրությունն ամրագրում է տեղական ինքնակառավարման այնպիսի հատկություն, ինչպիսին է կարողությունը՝ որպես հնարավորություն իրականության վերածելու հատկություն: Այսպիսով, Մահմանադրությունը՝ հռչակելով ինքնակառավար-

րումը՝ միաժամանակ պետք է այն վերածի երաշխավորված հնարավորության, ներուժի, կարողության,

2/ տեղական ինքնակառավարումը համայնքն իրականացնում է սեփական պատասխանատվությամբ,

3/ տեղական ինքնակառավարումը կոչված է լուծելու տեղական նշանակության հարցերը, եւ դրա նպատակն ըստ Սահմանադրության՝ բնակիչների բարօրությունն է,

4/ տեղական ինքնակառավարումն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:

Սահմանելով *տեղական ինքնակառավարման սուբյեկտների կազմը*՝ մեկնաբանվող հոդվածն օգտագործում է «բնակիչներ» հասկացությունը: «Բնակչությունը՝ առաջնային սոցիալ-տարածքային հանրույթն է, որը հանդիսանում է առաջնային ինքնակառավարչական իրավունքների (տեղական ինքնակառավարման իրավունքների) սուբյեկտ»:¹ Տեղական հանրության նման հասկացությունը համապատասխանում է նաեւ 1985թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային:

Բնակիչներն ինքնուրույնաբար են լուծում տեղական նշանակության հարցերը: Դրանց ներքո հասկացվում են տեղական համայնքի կենսագործունեության անմիջակա-նորեն ապահովման բոլոր հարցերը: Սահմանադրությունը որոշակիացնում է տեղական ինքնակառավարմանը բնորոշ հարաբերությունների շրջանակը նախասահմանող մի շարք նորմեր, որոնք իրենց կոնկրետ իրացումն են գտնում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում:

Տեղական ինքնակառավարումը (որպես կառուցակարգ, նորմատիվ եւ այլ համակարգ) ապահովում է տեղական նշանակության հարցերի լուծումը: Տեղական ինքնակառավարման նորմատիվ հիմքը, իշխանության կազմակերպումը, կառավարչական գործունեությունը, ձեւավորվող տեղական պրակտիկան՝ այդ ամենը ծառայում են տեղական հիմնահարցերի պատշաճ կերպով լուծմանը: Նենց բնակչությանը, ամբողջությամբ վերցրած տեղական հանրությանն է պատկանում հանրության շահերը շոշափող հարցերի ինքնուրույնաբար լուծման իրավունքը: Առանձին քաղաքացիներն իրենց հարցերը լուծում են անհատապես՝ պետական մարմինների, հասարակական միավորումների միջոցով, տեղական ինքնակառավարման միջնորդության միջոցով:

Համայնքի բնակիչներն իրավունք ունեն՝ ընտրել եւ ընտրվել տեղական ինքնակառավարման մարմիններում. մասնակցել հանրաքվեի. անձամբ դիմել, ինչպես նաեւ անհատական եւ կոլեկտիվ դիմումներ ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմիններ. մասնակցել հանրաքվեի, անձամբ դիմել, ծանոթանալ տեղական ինքնակառավարման մարմինների այն փաստաթղթերին եւ նյութերին, որոնք անմիջականորեն առնչվում են քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին. մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքի սահմանմանը. կարծիք հայտնել *տեղական ինքնակառավարման փառաձեռքի սահմանների* փոփոխման կապակցությամբ:

Տեղական ինքնակառավարման **սոցիալական նշանակությունը**, դրա հիմնական գործառնությունը, ինչպես նշվեց, հասարակության եւ պետության մեջ համայնքի բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի առավել արդյունավետ լուծման ապահովումն է: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ճանաչվում է տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը վերը նշված հարցերը լուծելիս, որն էլ իր հերթին ապահովվում է համայնքային սեփականության առկայությամբ՝ որպես այդ ինքնուրույնության կարեւորագույն երաշխիք, ինչպես նաեւ տեղական նշանակության գործերը

կառավարելու՝ համայնքի բնակչության իրական կարողությամբ: Նայաստանի Նանրապետությունում ճանաչվում է երաշխավորվում է համայնքային սեփականության իրավունքը, որի ինքնուրույն կառավարումն ու փնտրումն իրականացնում է համայնքը (*տե՛ս նաև ՄՍԽՄ. 105 և 107-րդ հոդվածների մեկնաբանությունները*):

Մ քաղաքացիական օրենսգրքի 169-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային գույքի սեփականատիրոջ (փնտրիման, փիրապետման և օգտագործման) իրավունքը պատկանում է քաղաքային և գյուղական համայնքներին: Այդ իրավունքը համայնքի անունից իրականացնելու բացառիկ իրավագործությունը Սահմանադրությամբ է օրենքներով վերապահված է փեղական ինքնակառավարման մարմիններին: Ավելին, համայնքները՝ ի դեմս նրա բնակիչների, գրված են անմիջական կամահայրությունամբ իրենց սեփականությունը փնտրիմելուց՝ «Տեղական հանրաքվեի մասին» ՄՄ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի սեփականության օտարման հարցերը չեն կարող դրվել հանրաքվեի:

Տեղական ինքնակառավարման **էությունը** բացահայտվում է փեղական ինքնակառավարման ինքնուրույնության ոչ միայն ֆինանսատնտեսական, կազմակերպական և այլ երաշխիքների, այլև բնակչության՝ որպես համայնքային նշանակության հարցերի լուծման բեռն ստանձնած սուբյեկտի, պատասխանատվության մեջ:

Մեկնաբանվող հոդվածի «**համայնքի իրավունքն ու կարողությունն է**» արտահայտության մեջ «իրավունք» և «կարողություն» բառերի միաժամանակյա օգտագործումը պարահականություն չէ: Սահմանադիրն այստեղ ընդգծել է համապատասխանաբար փեղական ինքնակառավարում իրականացնող սուբյեկտի բացառիկությունն ու փաստացի հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ հանրային իշխանության որեւէ այլ սուբյեկտ, բան համայնքը, իրավասու չէ փեղական ինքնակառավարում իրականացնել: Միեւնույն ժամանակ հարկ է նկատել, որ փեղական ինքնակառավարումը նաև համայնքի սահմանադրական պարտականությունն է: Ի վերջո, որեւէ համայնք իրավասու չէ կամովին (կամ ինքնակամ) հրաժարվելու փեղական ինքնակառավարման իր իրավունքից:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հոդվածի քննարկվող մասում չի նշվում փեղական ինքնակառավարման «**ինքնուրույնության**» սկզբունքի մասին, այն դեպքում, երբ հոդվածով ամրագրված «**սեփական պատասխանատվության**» սկզբունքը, ըստ էության, «ինքնուրույնության» սկզբունքի փրամաբանական շարունակությունն է և վերջինիս հետ գրվում են անխզելի պարճառահեղտեանքային կապի մեջ:

Ակնհայտ է, որ որեւէ սուբյեկտ «անձնական» պատասխանատվության կարող է ենթարկվել միայն ինքնուրույն վարքագծի դրսեորման համար և որպես դրա հետեանք: Այսպես, համայնքին պարտիրակված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել միայն այն դեպքում, երբ պետության կողմից այդ լիազորությունների համար պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման սահմանադրական պահանջը կատարվել է (*մանրամասն տե՛ս ՄՍԽՄ. 106-րդ հոդվ. մեկնաբանությունը*):

«Ինքնուրույնության» սկզբունքի պարտադիր անհրաժեշտությունը է դրա անուղղակի առկայությունը ենթադրվում է նաև Սահմանադրության մի շարք այլ հոդվածների բովանդակությունից, ինչպիսիք են՝ 2-րդ և 11.1-րդ հոդվածները, իսկ 7-րդ գլխի մի շարք դրույթներով սահմանվում են փեղական ինքնակառավարման կազմակերպական, փրաճքային, իրավական, ֆինանսատնտեսական ինքնուրույնության հիմունքները:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ եթե Սահմանադրության 104-րդ հոդվածով փեղական ինքնակառավարման սուբյեկտ է ճանաչվում համայնքը, ապա «Տեղական ինքնակառավարման մասին» ՄՄ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ այդպիսի

սուբյեկտ է ճանաչվում «ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինը»։ Այսպես, «Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ է օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը պնդելու՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ է սույն օրենքով երաշխավորված իրավունքը և համայնքի կարողությունն է»։ Ինչպես պետում ենք, ի տարբերություն Սահմանադրության մեկնաբանվող հոդվածի, օրենքի վերջը բերված սահմանման մեջ օրենսդիրը չի մոռացել «ինքնուրույնության» սկզբունքը։

Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, օրենսդրական սահմանման մեջ մեթոդաբանական ոչ ճիշտ մոտեցում է թույլ տրվել, որի հետևանքով սրացվում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն են տեղական ինքնակառավարման իրավունքի կրողը, և որ դրանք են գործում ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ։ Մինչդեռ իրականում տեղական ինքնակառավարման իրավունքի կրողը համայնքն է, և միայն նա է իրավասու գործելու ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ինչպես արդարացիորեն նշվում է Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մասում։

Մեկնաբանվող հոդվածի սահմանումը թեև հակիրճ ոճով է անորոշ, այնուամենայնիվ, նշում է տեղական ինքնակառավարման թե՛ նպատակը (բնակիչների բարօրությունը), թե՛ դրա իրավական սահմանները (Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան) և թե՛ խնդիրները (տեղական նշանակության հարցեր)։

«**Բնակիչների բարօրությունը**» տեղական ինքնակառավարման բուն նպատակն է։ Այս նպատակի սահմանադրական սահմանումն ուղղակիորեն ցույց է տրվիս, որ տեղական ինքնակառավարումը ոչ թե սոսկ կառավարում է, այլ դրա գոյության և գործառնության միակ արդարացումը և հիմնական կողմնորոշիչը։ Ավելին, այդ նպատակի հասցեատիրոջ հստակեցումը պատահական չէ։ Եթե պետական իշխանության իրականացման արդյունքների «շահառուն» ժողովուրդն է և այն կազմող անհատները, ապա տեղական ինքնակառավարման «շահառուն» արվյալ համայնքն է՝ որպես մարդկանց՝ ըստ բնակության վայրի ընդհանրության ստեղծված կազմակերպական միավոր։ Ճիշտ է, համայնքի բնակիչները եւս ժողովրդի մասն են կազմում, սակայն ընդհանուրի և դրա մասերի շահերը երբեմն չեն համընկնում կամ նույնիսկ հակասում են։ Այս առումով տեղական ինքնակառավարման կոնկրետ հասցեատիրոջ հստակեցումը միանգամայն արդարացված է։

«**Տեղական նշանակության հարցեր**» հասկացությունը որոշում է տեղական ինքնակառավարման գործունեության ոլորտը։ Տեղական նշանակության հարցերը բնակչության կենսագործունեության ապահովման այն հարցերն են, որոնք, թեև ոչ սպառիչ ու ամբողջական, բայցե թվարկված են ՆՏ Սահմանադրությամբ (*տե՛ս 105 և 106-րդ հոդվածների մեկնաբանությունները*)։ Առավել մանրամասն դրանք ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքով։ Բոլոր դեպքերում, մեր հանրապետությունում հաստատված է տեղական ինքնակառավարման լիազորությունների *ultra vires* (լատ. թարգմ.՝ լիազորություններից դուրս) սկզբունքը, այսինքն՝ համայնքն իրավասու է ինքնուրույն լուծել տեղական նշանակության ցանկացած հարց, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են պետական մարմիններին։ Այդ մասին ուղղակիորեն նշվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքով։ Վերջինիս 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է ընդհանուր իրավասության հիմնարար սկզբունքը՝ «ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող ցանկացած գործու-

ներության իրականացման իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»: Այդ սկզբունքն իր «մարմնավորումն է» ստացել հիշյալ օրենքի այլ դրույթներում (օրինակ՝ 10-րդ հոդվածում):

ՆՈՂ-ՎԱԾ 104.1

1. Նամայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է:

2. Նամայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք եւ գույքային այլ իրավունքներ:

1. Մեկնաբանվող հոդվածի առաջին մասը պայխ է համայնքի հասկացության սահմանումը՝ դրանով իսկ կանխորոշելով Կրեդակաւան ինքնակառավարման Կարաձքային կազմակերպման շրջանակները: Ընդ որում, եթե 1995թ. խմբագրությամբ ՏՏ Սահմանադրությունը (հհ. 104 եւ 108) հստակ նշում էր համայնքների Կրեսակները (քաղաքային, գյուղական եւ Երեւան քաղաքում՝ թաղային համայնքներ), որոնցից էլ կազմված էին մարզերը, ապա ներկայում համայնքների դասակարգումը կատարվում է միայն «Վարչատարածքային բաժանման մասին» ՏՏ օրենքով: Ինչեւէ, փաստ է, որ ներկա խմբագրությամբ ՏՏ Սահմանադրության քննարկվող նորմը գոնե չի բացառում այլ Կրեսակի համայնքի ստեղծման օրենսդրական հնարավորությունը:

«Վարչատարածքային բաժանման մասին» ՏՏ օրենքով (4-րդ հոդված) Կրվում է բնակավայրի հասկացության սահմանումը. «Բնակավայրերը մշտական բնակչություն ունեցող, կառուցապարված, Կարաձքային ամբողջականություն կազմող եւ այլ բնակավայրերից Կարաձքային, ԿրԿրեսակաւան կամ ԿԿԿրմակաւան առումով ԿարանջաԿրված Կարաձքային միավորներ են...»: Նամայնքների գերակշռող մեծամասնությունը կազմված է մեկ բնակավայրից, սակայն կան նաեւ որոշ համայնքներ, որոնք միաժամանակ ընդգրկում են երկու կամ ավելի բնակավայրեր, օրինակ՝ Արագածոտնի մարզկենտրոնը Աշտարակ քաղաքն է, որի վարչական սահմաններն ընդգրկում են Աշտարակ քաղաքի եւ Մուղնի գյուղի Կարաձքները: Կամ նույն մարզի ԱրԿաշաՎաւան գյուղական համայնքն ընդգրկում է ԱրԿաշաՎաւան, Լուսաղբյուր եւ ՆիգաԿրան գյուղական բնակավայրերը:

Քննարկվող նորմի ԿԿրգաբանման համար անհրաժեշտ է ԿԿրգել նաեւ «բնակչության» հասկացությունը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Նամայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է ԿրՎԿալ համայնքում», այսինքն՝ ցանկացած ֆիզիկական անձ, անկախ նրա՝ ՏՏ քաղաքացիության փաստից: Ընդ որում, օրարերկրացիներին Կրեղական ինքնակառավարմանը մասնակցելու հնարավորություն ընձեռվեց ՏՏ Սահմանադրության (Կրնն ՏՏ Սահմ. 30-րդ հոդվ. մեկնաբանությունը) հիման վրա ՏՏ ընԿրակաւան օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասը նախ համայնքը ճանաչում է իբրեւ իրավաբանական անձ: Առանց համապատասխան իրավական եւ նյութաֆինանսական երաշխիքների՝ ինքնակառավարումն անիմաստ է: Որպեսզի համայնքները կարողանան լուծել համայնքային հարցերը, պետք է ունենան համապատասխան լիազորություններ եւ նյութական միջոցներ: Այդ նպատակով Սահմանադրությունն ամրագրում է համայնքի ինք-

նակառավարման մի շարք երաշխիքներ, որոնցից մեկն էլ իրավաբանական անձի կարգավիճակն է: Սա նշանակում է, որ համայնքն ունի իրավաբանական անձանց համար ՏՏ Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները եւ կրում է օրենսդրությամբ սահմանված պարասխանաբարձություն:

Միաժամանակ հարկ է նշել, որ իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ նախատեսված պարասխանաբարձության որոշ տեսակներ կիառելի չեն համայնքի նկատմամբ՝ ելնելով նրա հանրային-իշխանական բնույթից (օրինակ՝ համայնքը չի կարող սնանկ ճանաչվել, լուծարվել, փոխել իր կազմակերպական-իրավական ձեւը, վերակազմավորվել եւ այլն): Երկրորդ՝ համայնքն ունի սեփականության իրավունք եւ այլ գույքային իրավունքներ: Ներեւաբար, համայնքը որպէս սեփականություն ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պարասխանաբարձ է այդ գույքով: Այն կարող է իր անունից ձեռք բերել եւ իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպէս հայցվոր կամ պարասխանող: Երրորդ՝ միեւնոյն ժամանակ համայնքը հանրային իշխանության ինքնուրույն օղակ է՝ իրավունքի հատուկ սուբյեկտ, որը որոշակի առանձնահատկություններ է ենթադրում նրա իրավաբանական պարասխանաբարձության տեսակետից: Այսպէս, ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային սեփականության ներքո գրանցվող հողի եւ այլ բնական պաշարների վրա բռնագանձում արարածէլ թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը կանխորոշող նորմերի զգալի մասը կիրառելի չէ համայնքների նկատմամբ: Դրանք իրավաբանական անձանց ծագմանը, վերակազմավորմանը, դադարմանը, հիմնադիր փաստաթղթերին, գրանցմանը, տեսակներին, պարասխանաբարձությանը վերաբերող եւ այլ հարցեր կարգավորող նորմերն են:

ՆՈՂՎԱԾ 105

1. Համայնքի սեփականությունը կառավարելու եւ տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու եւ համայնքի պահանջունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպէս սեփական լիազորություններ: Համայնքի սեփական լիազորությունների մի մասն օրենքով կարող է սահմանվել որպէս պարտադիր:

2. Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավէտ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պարտիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

1. Մեկնաբանվող հոդվածով սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հիմնական շրջանակը, տրվում են այդ լիազորությունների առավել ընդհանուր բնութագիրն ու դասակարգումը եւ դրանք իրականացնող սուբյեկտները:

Մեկնաբանվող հոդվածից բխում է, որ համայնքի բոլոր հնարավոր լիազորությունները, որոնք անհրաժեշտ են համայնքային նշանակության հարցերը լուծելու եւ համայնքի պահանջունքների բավարարման համար՝ Սահմանադրությունը ճանաչում է որպէս համայնքի սեփական լիազորություններ: Լիազորությունների երկրորդ խումբը կազմում

են պարվիրակված լիազորությունները: Դրանք պետական մարմիններին բնորոշ են նրանց պարկանող լիազորություններ են, որոնք օրենքով կարող են փոխանցվել րեղական ինքնակառավարման մարմիններին՝ այդ լիազորություններն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով: Սեփական լիազորությունները, իրենց հերթին, Մահմանադրությունը դասակարգում է երկու խմբի՝ պարտադիր և կամավոր /կամ հայեցողական/:

Ընդ որում, նշվում է նաև, որ սեփական լիազորությունների «մի մասն օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր», ինչից կարելի է ենթադրել, որ՝ ա) պարտադիր լիազորություններն սպառիչ են թվարկված, քանի որ օրենքով հստակ պետք է նշվեն, բ) սեփական լիազորությունների մյուս մասը պարտադիր չէ (այսինքն՝ կամավոր է) և գ) կամավոր լիազորություններն օրենքով սպառիչ չեն թվարկվում կամ կարող են ընդհանրապես չսահմանվել օրենքով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեկնաբանվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերում լիազորություններն իրականացնող սուբյեկտների ակնհայտ անհամապատասխանություն կա: Հոդվածի 1-ին մասում որպես սեփական լիազորություններն իրականացնող նշվում է համայնքը, իսկ 2-րդ մասում՝ պետական իշխանության մարմինների պարվիրակված լիազորություններն իրականացնող են ճանաչվում րեղական ինքնակառավարման մարմինները: Կարծում ենք, քննարկվող հոդվածում համայնքի հիշատակումը լուրջ քննադատության չի դիմանում: Համայնքն իր սեփականության րնօրինման և կառավարման, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջումներների բավարարմանն ուղղված այլ լիազորությունների իրականացման համար հատուկ լիազորման կարիք չունի, քանի որ դա համայնքի սահմանադրական իրավունքն է (*դե՛ս նաև ՎՄահմ. 104 հոդվ. մեկնաբ.*): Նման եզրակացության համար հիմք են հանդիսանում նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՎՍ օրենքի 10-րդ (ՏԻՄ-երի լիազորությունների ընդհանուր բնութագիրը) և 33-45-րդ հոդվածները (համայնքի ղեկավարի լիազորություններն ըստ գործունեության բնագավառների): Փաստորեն, մեկնաբանվող հոդվածն ամբողջությամբ վերաբերում է րեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին:

Մինչդեռ հոդվածի բառացի մեկնաբանության դեպքում կարացվի, որ միայն համայնքն է իրավասու իրականացնելու 1-ին մասում նշված սեփական լիազորությունները, իսկ ՏԻՄ-երն իրավասու են իրականացնելու միայն 2-րդ մասում նշված պարվիրակված լիազորություններ: Ուստի ենթադրում ենք, որ նշված լիազորություններն անհրաժեշտ է վերագրել ոչ թե համայնքին, այլ րեղական ինքնակառավարման մարմիններին:

Միեւնույն ժամանակ, վերը նշված հարցերի լուծումը վերապահելով ՏԻՄ-երին՝ համայնքը չի գրկվում դրանք անմիջականորեն լուծելու իր սահմանադրական իրավունքից (*դե՛ս ՎՄահմ. 2-րդ և 107-րդ հոդվ. մեկնաբ.*):

Ինչ վերաբերում է այդ լիազորությունների բովանդակությանը և դրանց շրջանակներին, ապա ակնհայտ է, որ մեկնաբանվող հոդվածով նույնիսկ փորձ չի արվում սպառիչ թվարկել դրանք: Այսպես, հոդվածի 1-ին մասը ոչ թե րեղական ինքնակառավարման մարմինների կոնկրետ լիազորություններն է սահմանում, այլ ավելի շուտ կանխորոշում է դրանց առավել էական, հիմնական ուղղությունները: Նախ նշվում է համայնքային սեփականության կառավարման և րնօրինման լիազորության մասին: Ընդ որում, ենթադրվում է, որ «կառավարելու» բառն այսպեղ օգտագործվում է դրա նեղ՝ «համայնքային սեփականության օպերատիվ կառավարման» իմաստով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՎՍ օրենքի մի շարք դրույթների համադրությունից պարզվում է, որ համայն-

քային սեփականության օպերատիվ կառավարման լիազորությունները վերապահված են համայնքի ղեկավարին (32-րդ հոդվ. 12-13-րդ մասեր), իսկ փնտրման լիազորությունները՝ համայնքի ավագանուն (16-րդ հոդվ. 20-րդ մաս):

Մեկնաբանվող հոդվածում ՏԻՄ-երի լիազորությունները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ սեփական եւ պետության կողմից պարվիրակված լիազորություններ: Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասում խուսափելով սեփական լիազորությունների կոնկրետ թվարկումից (դրանց շրջանակն սկզբունքորեն հնարավոր չէ սպառիչ թվարկել)՝ միեւնույն ժամանակ սահմանադիրը փայլի է դրանց սահմանները որոշելու հստակ չափորոշիչները՝ դրանք պետք է «ուղղված լինեն համայնքային նշանակության հարցեր լուծելուն եւ համայնքի պահանջմունքների բավարարմանը»: Ներելաբար, այս չափորոշիչներին չհամապատասխանող մյուս լիազորությունները սեփական լիազորություններ չեն եւ ՏԻՄ-երի կողմից կարող են իրականացվել միայն օրենքով պարվիրակվելու դեպքում: Լիազորությունների այսպիսի դասակարգումը գալիս է դեռեւս 2002թ. ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքից, որի 10-րդ հոդվածի համաձայն. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական եւ պետության կողմից պարվիրակված: Սեփական լիազորությունները բաժանվում են պարտադիր եւ կամավոր լիազորությունների»: Ընդ որում, ինչպես ՆՃ Սահմանադրության, այնպես էլ օրենքի պահանջն է, որ պարտադիր լիազորությունները սահմանվեն բացառապես օրենքով:

Ինչ վերաբերվում է ՏԻՄ-երի կամավոր լիազորություններին, ապա, ինչպես փենում ենք, Սահմանադրությամբ դրանց որեւէ անդրադարձ չկա, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքով սահմանվում է հետեւյալը. «Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հարկացումներին համապատասխան եւ ավագանու սահմանած կարգով: Սույն օրենքում թվարկված կամավոր լիազորությունները սպառիչ չեն: Այլ օրենքներով փողական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն»:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական իշխանության մարմինների լիազորությունները ՏԻՄ-երին փոխանցելու հիմնական նպատակը վերջիններիս կողմից դրանց «առավել արդյունավետ իրականացումն է»: Սակայն հարկանշական է, որ ոչ Սահմանադրությամբ եւ ոչ էլ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքով չեն նշվում այդ լիազորությունները պարվիրակելու արդյունավետության որոշման չափանիշները: Այդուհանդերձ, ենթադրվում է, որ լիազորությունների պարվիրակման հարցը լուծելիս հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ՝ դրանց ծավալն ու բնույթը, համայնքի մակարդակով դրանց լուծման օպերատիվությունն ու արդյունավետությունը, հասցեականությունը, ծախսերի կրճարումը եւ այլն:

ՆՈՂՎԱԾ 105.1

Նամայնքի վարչական սահմաններում գտնվող հողը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պարկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

Մեկնաբանվող հողվածը համայնքի համար երաշխավորում է երկու կարեւոր հնարավորություն-կարողություն: **Առաջին՝** համայնքի վարչական սահմանն է, այսինքն՝ յուրաքանչյուր համայնք պետք է ունենա վարչական սահման: **Երկրորդ՝** Հիմնական օրենքը երաշխավորում է հողի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը:

Սահմանադրությունը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողը կամ հողային ֆոնդը բաժանում է հետևյալ մասերի՝

ա/ համայնքին սեփականության իրավունքով պարկանող հողեր,

բ/ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պարկանող հողեր /տրամաբանորեն ենթադրվում է սեփականության իրավունքով/,

գ/ պետական կարիքների համար անհրաժեշտ հողեր: Հողերի վերջին տեսակը նշելու համար օգտագործված «պետական կարիքների համար անհրաժեշտ հողեր» ձեւակերպումն իրավաբանորեն խոցելի ու անհասկանալի ձեւակերպում է: Ինչ են նկատելի ունեցել Սահմանադրության տրեքստի հեղինակները՝ մնում է կռահել: Սակայն հողերի մյուս մասերի կարգավիճակի հետ անալոգիայի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ խոսքը վերաբերում է պետական սեփականություն համարվող հողերին: Այլ բան ենթադրել՝ իրավական տրամաբանության տեսակետից անհնարին է:

Հայաստանի Հանրապետությունը 1000 բնակավայր ունի, որոնք միավորված են 914 համայնքներում, որից 48-ը՝ քաղաք եւ 866-ը՝ գյուղ: Դժվար չէ նկատել, որ բնակավայրերի մեջ գյուղական համայնքների տեսակարար կշիռը մեծ է: Ավելին, քաղաքային շար համայնքներ ընդգրկում են նաև գյուղական բնակավայրեր: Այսպիսով, մեկնաբանվող հողվածի համատեքստում կարող ենք նշել, որ համայնքների վարչական սահմաններում գտնվող նախկինում ամբողջովին պետական սեփականության հողերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը հսկայական նշանակություն ունի համայնքային տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության, զարգացման համար: Այս տեսակետից քննարկվող հողվածի ամրագրումը ՀՀ Սահմանադրության մեջ (2005թ. սահմանադրական բարեփոխումներով) միանգամայն տրամաբանական է եւ արդարացված: Սակայն տեղին է նշել, որ այս հարցն իր պարզաձև իրավական կարգավորումն ստացել է դեռևս 2002թ. ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (47-րդ հոդված), ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքով (56-րդ հոդված: Սկզբնապես նախատեսվում էր 2 տարվա, իսկ այնուհետև՝ 03.03.2004թ. թիվ ՆՕ-43-Ն օրենքով կարարված փոփոխություններով ՀՀ հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո, 4 տարվա ընթացքում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվում են համայնքներին):

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության քննարկվող հողվածով նոր՝ սահմանադրական, մակարդակով ամրագրվեցին արդեն իսկ գործող օրենսդրական նորմերը՝ դրանով

իսկ լրացուցիչ իրավական, փնտրական երաշխիքներ ստեղծելով համայնքների համար:

ՆՈԴՎԱԾ 106

- 1. Համայնքներն իրենց բյուջեն ձեւավորում են ինքնուրույն:**
- 2. Համայնքների եկամուտների աղբյուրները սահմանվում են օրենքով:**
- 3. Օրենքով սահմանվում են համայնքների ֆինանսավորման այնպիսի աղբյուրներ, որոնք ապահովում են նրանց լիազորությունների իրականացումը:**
- 4. Համայնքներին պարտիրակված լիազորությունները ենթակա են պեղական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:**
- 5. Համայնքները սահմանում են տեղական հարկեր եւ տուրքեր՝ օրենքով նախատեսված սահմաններում: Համայնքներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կարող են սահմանել վճարներ:**

1. Համաձայն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ազգային փնտրական քաղաքականության շրջանակներում իրավունք ունեն փիրապետելու բավարար սելիական ֆինանսական միջոցների, որոնք նրանք կարող են ազատորեն փնտրիել իրենց լիազորություններն իրականացնելիս¹:

Տեղական նշանակության հարցերի լուծման գործընթացում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունն ապահովող կարեւորագույն ընդհանուր երաշխիք է տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ ամրագրված ֆինանսատնտրական հիմքը: Ըստ այդմ՝ օրենքը որպես համայնքի պարտադիր, անկապտելի հարկանիշ է ամրագրում տեղական բյուջեն:

Այսպիսով՝ Սահմանադրությունը 106-րդ հոդվածի 1-ին մասում սահմանում է երկու կարեւոր դրույթ՝

ա/ համայնքներն ունեն իրենց բյուջեն:

Համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձեւավորման եւ ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն է:

Բյուջեի միջոցով ստեղծվում են տեղական ինքնակառավարման համակարգի դրամական ֆոնդերը, որոնք ապահովում են նրա կողմից իր խնդիրների կատարումը, հետեւաբար այն տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման ֆինանսական հիմքն է, որը շար կարեւոր երաշխիք է տեղական ինքնակառավարման համակարգի համար:

բ/ համայնքներն իրենց բյուջեն ձեւավորում են ինքնուրույն:

Համայնքների՝ իրենց բյուջեի ձեւավորման ինքնուրույնության սահմանադրական սկզբունքը պետք է մեկնաբանել Սահմանադրության 5-րդ հոդվածի, 104-րդ հոդվածի 2-

¹ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (Ստրասբուրգ, 1985թ. հոկտեմբերի 15) 9-րդ հոդվ. 1-ին մաս:

րդ մասի, 105-րդ հոդվածի, 107-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ համակարգային կապի փեսակերից՝ այն իմաստով, որ այդ ինքնուրույնությունը դրսևորվում է Սահմանադրության եւ օրենքների միջոցով կամ սահմանած կարգով: Նամայնքների բյուջեները մտնում են ՀՀ բյուջեային համակարգի մեջ՝ ձեւավորելով դրա երկրորդ մակարդակը²: Բյուջեային համակարգի հիմքում դրված կարեւորագույն սկզբունքներից է բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, որը, մասնավորապես, նշանակում է համայնքների բյուջեների մուտքերի՝ օրենսդրությամբ նախատեսվող սեփական աղբյուրների առկայություն, փողական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն որոշելու համայնքների բյուջեների միջոցների ծախսման ուղղությունները, համայնքների բյուջեների դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաեւ ինքնուրույն իրականացնելու բյուջեային գործընթացը:

2. Նամայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձեւավորման եւ ծախսման մեկ փարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի³ եւ համայնքի՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը⁴: Բյուջեի սովորաբար ընդունված կառուցվածքից ելնելով՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է համայնքի եւ նրա բյուջեային համակարգի համար կարեւոր երաշխիք՝ համայնքների եկամուտների աղբյուրները սահմանվում են օրենքով: Այդ դրույթն ունի երկակի նշանակություն. **առաջին**՝ համայնքին երաշխավորել օրենքով սահմանված կայուն եկամտի աղբյուրներ, **երկրորդ**՝ կանոնակարգել համայնքային մարմինների իրավունքները եկամուտների սահմանման ոլորտում՝ կամայականություն եւ սահմանազանցում թույլ չտալու համար:

Նամայնքի բյուջեն ձեւավորվում է համայնքների բյուջեներին՝ օրենքով եւ իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝

1. *հարկային եկամուտներ* (հողի հարկ եւ գույքահարկ՝ համայնքի վարչական փարածքում գրվող հողի եւ գույքի համար, եկամտահարկից, շահութահարկից, բնապահպանական վճարներից մասհանումներ, որոնց փոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր փարվա պետական բյուջեի մասին օրենքով, ինչպես նաեւ հողի հարկի եւ գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող փոյժեր եւ փուզանքներ):

2. *փորքեր* (պետական փորքեր, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու եւ վերականգնելու կապակցությամբ վկայականներ փախու համար, նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ փախու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր եւ դիմումներ կազմելու, փաստաթղթերը պատճենահանելու եւ դրանցից քաղվածքներ փախու համար, ինչպես նաեւ փողական փորքեր):

² «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1997թ. հունիսի 24-ին) 3-րդ հոդ. 1-ին մաս:

³ Ծրագիրը մշակում եւ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2002թ. մայիսի 7-ին) 53-րդ հոդվ. 1-ին մաս:

⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվ. 1-ին մաս:

3. այլ եկամտուրներ (համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական փարածքում գրավվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապարման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ. համայնքի սեփականություն համարվող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից գոյացած եկամուտներ. վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կիրառած սանկցիաներից առաջացած եկամուտներ, համայնքի սեփականություն համարվող կազմակերպությունների փրամադրության փակ մնացած շահույթից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումներ, տեղական վճարներ եւ այլն)։

4. *ոչ ֆինանսական ակտիվների օտարումից սրացվող միջոցներ* (համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների, հողերի եւ ոչ նյութական ակտիվների օտարումից, այդ թվում՝ համայնքի սեփականությունը հանդիսացող լուծարված կազմակերպությունների մնացորդային գույքի օտարումից սրացվող միջոցները, համայնքի սեփականություն համարվող պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից սրացվող միջոցները)։

5. *պաշտոնական դրամաշնորհների ձեռով սրացվող հարկացումներ*, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով փրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից փրամադրվող այլ դոտացիաներ եւ ծախսերի ֆինանսավորման նպատակային հարկացումներ (սուբվենցիաներ), այլ աղբյուրներից սրացվող պաշտոնական դրամաշնորհներ։

6. *համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ* (վարկերի եւ փոխարվությունների ձեռով ներգրավված միջոցներ, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտավորումների տեղաբաշխումից սրացված միջոցներ եւ այլն)⁵։

3. 106-րդ հոդվածի 3-րդ մասը իր բնույթով երաշխիք է 106-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված իրավունքների համար, ինչպես նաև ընդհանրապես տեղական ինքնակառավարման համակարգի ու դրա ֆինանսական հիմքերի համար։ Սահմանադրությունը՝ կոնկրետացնելով 106-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, պահանջում է, որ օրենսդիրը համայնքի ֆինանսավորման աղբյուրները սահմանելիս ելնի ոչ թե ձեռական մոտեցումից, այլ իրարեսական հաշվարկներից, որպեսզի իր սահմանած աղբյուրները համայնքին հնարավորություն փան ձեւավորելու հավասարակշռված, համայնքի ինքնակառավարման առաքելությունը, լիազորությունների պատշաճ կատարումը երաշխավորող բյուջե։

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում ամրագրված է, որ ֆինանսապես առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի ներդրում կամ հավասարազոր միջոցառումներ՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման հնարավոր աղբյուրների անհամաչափ բաշխման հետեւանքների, ինչպես նաև այս մարմիններին վերապահված ծախսերի ճշգրտմանը։ Այսպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ազատությունը՝ իրենց իրավասության շրջանակնե-

⁵ Մանրամասն տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվ., «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 281, 282-րդ հոդվածներ։

րում (9-րդ հոդվ. 5-րդ մաս)⁶: Այս առումով համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով ՏՏ պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքով⁷, համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար, անհատույց եւ անվերադարձ կարգով փոխառվող դրամական միջոցներ՝ *Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ*: Ընդ որում, համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հարկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը⁸: Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով փոխառվող փողերում փոխհատուցման գումարները⁹ հաշվարկվում է՝ հիմք ընդունելով փոխառված փողերի արժեքը երկրորդ բյուջեարային փուլում¹⁰: Տեղական ինքնակառավարման մարմիններին դոտացիաները հարկացվում են ՏՏ ֆինանսների նախարարության համապատասխան փողերից գանձապետական բաժանմունքների՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով:

Պետական բյուջեի ծախսերում կարող են նաեւ նախատեսվել համայնքների բյուջեներին հարկացվող *այլ դոտացիաներ*¹¹՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որեւէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ կապ չունեցող, անհատույց եւ անվերադարձ կարգով փոխառվող դրամական միջոցներ, ինչպես նաեւ *սուբվենցիաներ*¹²՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց եւ անվերադարձ

⁶ Ֆինանսական բյուջեի համայնքներին ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից է («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվ. 6-րդ կետ):

⁷ Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջեւ առկա տարբերության նվազեցումն է («Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1998թ. նոյեմբերի 24-ին) 3-րդ հոդվ.):

⁸ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվ. 1-ին եւ 2-րդ մասեր, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվ.:

⁹ Ազգային ժողովի ընդունած օրենքներով՝ համայնքների եկամուտների նվազեցումը եւ ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվ. 2-րդ մաս, 71 հոդվ. 2-րդ մաս): Տե՛ս նաեւ «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքը (ընդ. 2006թ. դեկտեմբերի 5-ին):

¹⁰ ՀՀ պետական բյուջեի եւ համայնքների բյուջեները կազմում են ՀՀ համախմբված բյուջեն («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվ.):

¹¹ Տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների եւ համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների կամ լրացուցիչ ծախսերի՝ պետության կողմից փոխհատուցվող գումարների հաշվարկման համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվառվող երկտեսային տվյալները, ինչպես նաեւ օրենսդրությամբ պահանջվող այլ նյութեր («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվ. 4.1-րդ մաս):

տրվող դրամական միջոցներ: ՏՏ կառավարությունն իրավասու է համայնքից հեղափոխական պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները¹²:

Համայնքին սուբվենցիաներ տրամադրվում են օրենքով կամ ՏՏ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում՝ ՏՏ կառավարության սահմանած կարգով կնքված պայմանագրերի հիման վրա¹³: Սուբվենցիայի տրամադրման մասին պայմանագրում, մասնավորապես, նշվում են սուբվենցիայի տրամադրման նպատակը, նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման ժամանակահատվածը (տեսողությունը), այդ ընթացքում պետության կողմից վերահսկվող չափանիշները և ակնկալվող արդյունքները, տրամադրվող սուբվենցիայի գումարի չափը, ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՏՏ պետական բյուջե վերադարձման պահանջը. համայնքի կողմից սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում այդ համայնքի նկատմամբ պետության կողմից կիրառվող սանկցիաները (ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից և սուբվենցիայի միջոցների հերազա հատկացման հնարավոր դադարեցում), ինչպես նաև այլ դրույթներ, որոնք կնպաստեն սուբվենցիայի տրամադրման նպատակի իրականացմանը և այդ ուղղությամբ սուբվենցիայի գումարների արդյունավետ օգտագործմանը:

Համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու որոշմամբ, բյուջեի ծախսերը կատարելու նպատակով կարող է ստանալ *բյուջետային վարկեր*¹⁴, որոնք վերադարձնելիության, ժամկետայնության, արժեքավորման և վճարովիության սկզբունքներով պետական բյուջեից համայնքներին և Երևան քաղաքի բյուջեին դրամական տեսքով տրվող միջոցներն են, ինչպես նաև *փոխարկություններ*, որոնք վերադարձնելիության, արժեքավորման և ժամկետայնության սկզբունքներով, առանց վճարովիության սկզբունքի պետական բյուջեից և համայնքների բյուջեներից¹⁵ համայնքներին, ինչպես նաև Երևան քաղաքի բյուջեին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են¹⁶: Համայնքներին բյուջետային փոխարկությունները տրվում են վեց ամսից ոչ ավելի ժամկետով և նշված փոխառուների կողմից ենթակա են վերադարձման նույն բյուջետային տարում: Ըստ այդմ համայնքը նոր փոխարկություն կարող է ստանալ նախկինում ստացված փոխարկության գծով պարտքն ամբողջությամբ մարելուց հետո:

ՏՏ պետական բյուջեից փոխարկությունը համայնքին է տրամադրվում օրենքով նրան վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման համար՝ համայն-

¹² «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվ. 4-րդ մաս:

¹³ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշումը:

¹⁴ ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրումն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացմամբ՝ ՀՀ կառավարության կողմից, եթե օրենքով այլ բան սահմանված չէ (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մարտի 9-ի N 168 որոշումը):

¹⁵ Այլ համայնքի բյուջեից փոխարկություն ստանալու համար պահանջվում է նաև փոխարկություն տրամադրող համայնքի ավագանու համաձայնությունը:

¹⁶ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվ. 1-ին և 2-րդ մասեր, 30 հոդվ. 1-ին մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվ. 1-ին մաս:

քի բյուջեի վարչական մասում¹⁷ նախարեսված ծախսերի ֆինանսավորումն ապահովելու նպատակով, բյուջեի վարչական մասում միջոցների ժամանակավոր անբավարարության դեպքում: Նամայնքին փոխարվություն փրամադրելիս ՄՖ ֆինանսների նախարարության ու համայնքի ղեկավարի միջև ստորագրվում է համապատասխան պայմանագիր, որում պետք է նախատեսվի, որ փոխարվության միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում փոխարվության գումարը ենթակա է վաղաժամկետ մարման: Փոխարվության միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄՖ ֆինանսների նախարարությունը¹⁸:

Նամայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, համայնքի սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար կարող է վարկ ստանալու պայմանագիր կնքել կամ թողարկել համայնքային արժեթղթեր՝ օրենքով սահմանված կարգով: Վարկային պայմանագիրը կարող է կնքվել այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջեի պարտքի մարման ծրագրով նախատեսված փրակական գումարը մայր գումարի եւ փոկոսավճարների հանրագումարը, չի գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան փրակա Ֆոնդային մասի եկամուտների 20 փոկոսը: Նամայնքը նոր վարկ կարող է վերցնել նախորդ վարկային պարտքն ամբողջությամբ մարելուց հետո: Տվյալ վարկային միջոցները պարտադիր ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս: Վարկային պայմանագրի գրավ կարող են լինել միայն համայնքի բյուջեի եկամուտները եւ ՄՖ կառավարության երաշխիքները: Նամայնքի բյուջեի միջոցների հաշվին վարկեր եւ փոխարվություններ չեն փրամադրվում (բացառությամբ այլ համայնքների բյուջեներին օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարվությունների փրամադրման դեպքերի) եւ արժեթղթեր չեն գնվում (բացառությամբ համայնքի կողմից ստեղծվող կամ ստեղծված բաժնեփրակական ընկերությունների բաժնեփոստերի գնման դեպքերի)¹⁹:

Վարկառուի կողմից վարկի միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում վարկի չմարված գումարը եւ մինչեւ վերջինիս մարման՝ վարկային պայմանագրով սահմանված վերջնական ժամկետը լրանալը հաշվարկվելիք փոկոսները ենթակա են վաղաժամկետ մարման: Վարկառուն իրավունք ունի վարկային պայմանագրով սահմանված ժամկետից շուրջ մարելու վարկի ամբողջ գումարը կամ դրա մի մասը: Վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄՖ ֆինանսների նախարարությունը²⁰:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում ամրագրված է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ռեսուրսները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց վերապահված լիազորություն-

¹⁷ Նամայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների եւ դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է երկու բաղկացուցիչ մասերի՝ համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե) եւ համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

¹⁸ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տեղական ինքնակառավարման մարմիններին փոխարվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մարտի 9-ի N 164 որոշումը:

¹⁹ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվ. 2-4-րդ մասեր, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվ. 2-րդ եւ 3-րդ մասեր: Երեւան քաղաքի բյուջեի հետ կապված տեւս «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ընդ. 2008թ. դեկտեմբերի 26-ին) 84-րդ հոդվ.:

²⁰ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մարտի 9-ի N 168 որոշումը:

ներին (9-րդ հոդվ. 2-րդ մաս): Նամանման դրույթներ են բովանդակվում «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքում, որում որպես տեղական ինքնակառավարման սկզբունք ամրագրված է համայնքներին օրենքով վերապահված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը (9-րդ հոդվ. 3-րդ կետ): Ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագոյարտումն անհնարին է առանց նրանց իշխանական լիազորություններով օժտելու: Այս առումով տեղական ինքնակառավարման մարմինները տեղական նշանակության հարցերի լուծման համար օժտված են սեփական իշխանական լիազորություններով: Սրա հետ մեկտեղ, պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը կարող է օրենքով փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պարվիրակված լիազորություններ, որոնք իրականացվում են օրենքով կամ ՆՃ կառավարության սահմանած կարգով՝ առաջնահերթությամբ: Տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պարվիրակման դեպքում նրանք հնարավորինս ազատ պետք է լինեն դրանց իրականացումը տեղական պայմաններին հարմարեցնելու հարցում²¹:

4. Տեղական ինքնակառավարման ՆՃ օրենսդրությամբ նախատեսված սկզբունքներից է պետական մարմինների լիազորությունների փոխանցումը համայնքներին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում՝ օրենքով դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պարտադիր ապահովմամբ²²: ՆՃ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված է համայնքներին պարվիրակված լիազորությունների պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման պահանջը²³: Ըստ այդմ՝ համայնքների բյուջեների ձեւավորման օրենքներով ամրագրված աղբյուրներից են համայնքների բյուջեներից՝ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պարվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից փրամադրվող հատկացումները: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համայնքների բյուջեների նախագծերը կազմելիս ՆՃ կառավարության կամ ֆինանսների նախարարության կողմից բյուջեբային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդարկական բնույթ: Բացառություն են տեղական ինքնակառավարման մարմինների պարվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքների բյուջեներին փրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերը²⁴:

5. Նամայնքները, բացի օրենքով սահմանված եկամտի աղբյուրներից /106-րդ հոդվ. 2-րդ մաս/, Սահմանադրության նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն կարող են

²¹ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4-րդ հոդվ. 5-րդ մաս:

²² «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվ. 4-րդ կետ:

²³ Պետության պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվ. 5-րդ մաս): Համանման նորմեր են բովանդակվում «Հայաստանի Հանրապետության բյուջեետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 283-րդ հոդվ. 1-ին մասում:

²⁴ «Հայաստանի Հանրապետության բյուջեետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվ. 3-րդ մաս:

սահմանել տեղական հարկեր եւ փոքրեր, որոնց սահմանները նախատեսվում են օրենքով:

Համաձայն ՏՏ Սահմանադրության՝ համայնքները սահմանում են *տեղական հարկերի օրենքով նախատեսված սահմաններում*:

Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական հարկերի եւ փոքրերի հաշվին, որոնց դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանելու օրենքով նախատեսված սահմաններում²⁵: Ըստ այդմ՝ առաջնահերթորեն պարզաբանում է պահանջում այնպիսի հասկացություն, ինչպիսին է «տեղական հարկը», որի սահմանումը ՏՏ որեւէ իրավական ակտում փրված չէ²⁶: Ինչպես պետական, այնպես էլ տեղական հարկերը պետության միասնական հարկային համակարգի²⁷ անքակտելի մասն են, եւ նպատակահարմար է դրանք օրենքով հստակ սահմանազատելը, ինչպես մի շարք պետություններում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում սահմանված են դաշնային, փարածաշրջանային եւ տեղական հարկերը (հողի հարկ եւ ֆիզիկական անձանցից գանձվող գույքահարկ):

Իշխանության արդյունավետ ապակենտրոնացումը, որի նպատակը, առաջին հերթին, պետական կառավարման կենտրոնական եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ լիազորությունների, ռեսուրսների եւ պատասխանատվության հստակ եւ հավասարակշռված բաշխումն է, կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից կարևորագույններից է ֆինանսաբյուջեփայլի ապակենտրոնացումը: Այստեղ ծագում է տեղական հարկերի սահմանման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ծավալի խնդիրը: Այս առումով փարածաշրջանային հարկերի սահմանման վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը: Ըստ այդմ՝ ՌԴ սուբյեկտի կողմից հարկի սահմանումը նշանակում է նրա իրավունքն ինքնուրույն որոշելու՝ իր փարածքում սահմանել, թե չսահմանել համապատասխան հարկը, քանզի փարածաշրջանային հարկերի սպառիչ ցանկը ծնում է հարկի սահմանման միայն իրավունք, այլ ոչ պարտականություն: Տարածաշրջանային հարկի սահմանումը նշանակում է նաեւ ընդհանուր իրավական դրույթների որոշակիացում, այդ թվում հարկման օբյեկտների եւ սուբյեկտների, հարկերի վճարման կարգի եւ ժամկետների, հարկային արտոնությունների փրամադրման կանոնների մանրակրկիտ սահմանում եւ այլն:

Դաշնային օրենսդիրը ՌԴ Սահմանադրությանը համապատասխան սահմանում է դաշնային հարկեր՝ ինքնուրույն որոշելով ոչ միայն դրանց ցանկը, այլեւ հարկային պարտավորությունների բոլոր փարերը: ՌԴ սուբյեկտների եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «հարկերի սահմանում» եզրույթն ունի իրավաբանական այլ իմաստ: ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմինների կողմից հարկերի սահմանումը պետք է կատարվի համաձայն ՌԴ Սահմանադրության, որը գործում է անմիջականորեն, եւ դաշնային օրենքում բովանդակվող հարկման ընդհանուր սկզբունքներին

²⁵ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 9-րդ հոդվ. 3-րդ մաս:

²⁶ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում (ընդ. 1997թ. ապրիլի 14-ին) տրված է միայն հարկի սահմանումը (3-րդ հոդվ.): Այս առումով՝ նպատակահարմար է օրենքով հարկը սահմանել որպես Հայաստանի Հանրապետության պետական եւ համայնքային գործունեության ֆինանսական ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր եւ անհատույց վճար, որը վճարվում է ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների կողմից՝ օրենքով սահմանված կարգով, չափերով եւ ժամկետներում:

²⁷ Նույն տեղում, հոդվ. 5:

համապատասխան: Ընդ որում, ՌԴ սուբյեկտների՝ հարկեր սահմանելու իրավունքը միշտ ածանցյալ բնույթի է: ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմիններին ՌԴ Սահմանադրությամբ երաշխավորված հարկերի սահմանման իրավունքի սահմանադրական իմաստի վերհանումը հնարավոր է միայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ քաղաքացու հիմնարար իրավունքները, ինչպես նաեւ րնտեսական փարածքի միասնության սահմանադրական սկզբունքը հաշվի առնելով: Ելնելով նշված սահմանադրական արժեքների միջեւ հավասարակշռության հասնելու անհրաժեշտությունից հարկային քաղաքականությունը ձգտում է հարկային գանձույթների միասնականացմանը: Այս նպատակին է ծառայում հարկման այնպիսի ընդհանուր սկզբունքը, ինչպիսին է փարածաշրջանային հարկերի՝ իր բնույթով սպառիչ ցանկը, որոնք կարող են սահմանվել ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմինների կողմից, եւ դրանից բխող լրացուցիչ հարկեր սահմանելու, հարկերի դրույթաչափերը բարձրացնելու սահմանափակումները²⁸:

ՌԴ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումը վերաբերում է բոլոր հարկերին, այդ թվում՝ տեղական: Մասնավորապես այն դրույթը, որ «հարկերի սահմանում» հասկացության իմաստը որոշելը հնարավոր է միայն հաշվի առնելով Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ քաղաքացու հիմնարար իրավունքները, ինչպես նաեւ րնտեսական փարածքի միասնության սահմանադրական սկզբունքը, փարածվում է նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկերի սահմանման վրա: Այստեղից հետեւում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու չեն սահմանելու դաշնային օրենքով չնախատեսված լրացուցիչ հարկեր: Սահմանադրությամբ ամրագրված՝ «տեղական հարկերի սահմանում» հասկացության իմաստի որեւէ այլ ընկալում կհակասեր ՌԴ Սահմանադրության իրական բովանդակությանը²⁹:

Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների³⁰ տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են *քաղաքապետ* ՀՀ օրենքներով (Սահմ. 83.5-րդ հոդվ. 2-րդ կետ):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում, նշված օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, իրականացնում է պետության *պարտիքակաճ* այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են *գույքահարկի* ու *հողի հարկի* գանձման կազմակերպումը, տեղական տուրքերի եւ վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային եւ

²⁸ Постановление Конституционного Суда РФ от 21 марта 1997г. N 5-П "По делу о проверке конституционности положений абзаца второго пункта 2 статьи 18 и статьи 20 Закона Российской Федерации от 27 декабря 1991г. "Об основах налоговой системы в Российской Федерации"" (օրենքն ուժը կորցրել է):

²⁹ Определение Конституционного Суда РФ от 5 февраля 1998г. N 22-О "Об отказе к принятию к рассмотрению запросов Ленинского районного суда города Оренбурга и Центрального районного суда города Кемерово о проверке конституционности статьи 21 Закона Российской Федерации "Об основах налоговой системы в Российской Федерации".

³⁰ ՀՀ սահմանադրական դատարանը՝ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության նաեւ 45-րդ հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա արձանագրել է, որ Սահմանադրության 45-րդ հոդվածում մատնանշված պարտադիր վճարները կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում եւ վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում եւ նախատեսված են պետական կամ համայնքային քլուջէ մուտքագրվելու համար: Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշումը:

պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման կազմակերպումը, ինչպես նաև հարկերը եւ օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ, օրենքով սահմանված կարգով, համապատասխան միջոցների կիրառումը (34-րդ հոդվ. 2-րդ մաս):

Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններն իրավասու են սահմանելու փողակազմի կազմակերպության կազմակերպություններ³¹: Այս կապակցությամբ ուշադրության են արժանի «Գույքահարկի մասին» ՏՃ օրենքի (ընդ. 2002թ. դեկտեմբերի 26-ին) 15-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ ՏՃ կառավարության սահմանած կարգով³² համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ: Արտոնության գումարը չի կարող գերազանցել փյույակ փարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 փոկոսը: Արտոնությունների գումարի դիմաց ՏՃ պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն փրամադրվում:

ՏՃ կառավարությունը 2003 թվականի փետրվարի 13-ին ընդունել է որոշում «Գույքահարկի մասին» եւ «Տեղի հարկի մասին» ՏՃ օրենքների կիրառումն ապահովող միջոցառումների մասին (N 192-Ն): 2003 թվականի մայիսի 29-ին ՏՃ կառավարությունն ընդունել է որոշում ՏՃ փողակազմի ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի եւ հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների կազմակերպման մասին (N 750-Ն)³³:

Համայնքները սահմանում են նաև փողակազմի փողակազմի *օրենքով նախատեսված սահմաններում*: Տեղական փողակազմի փողակազմի ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է³⁴: Տեղական փողակազմի դրույքաչափերը, «Տեղական փողակազմի եւ վճարների մասին» ՏՃ օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի փողակազմի բյուջեի հաստատվելուց առաջ³⁵: Տեղական փողակազմի դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագիծն ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը, որն այս լիազորությունն իրականացնում է որպես *պարտադիր* լիազորություն³⁶:

Անհրաժեշտ է փողակազմի փողակազմի սահմանազարել *փողակազմի վճարը*, որը փողակազմի ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված լիազորությունների ի-

³¹ Օրինակ՝ համաձայն ՌԳ հարկային օրենսգրքի՝ մուցիցիպալ կազմավորումների ներկայացուցչական մարմինների կողմից սույն օրենսգրքով նախատեսված կարգով են սահմաններում հարկերի եւ տուրքերի վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել հարկային արտոնություններ, դրանց կիրառման հիմքերը եւ կարգը (12-րդ հոդվ. 4-րդ կետ):

³² Համայնքի ավագանու կողմից գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մայիսի 19-ի N 300 որոշումը:

³³ Որոշմամբ հաստատվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի եւ հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների ընդունման կազմակերպման, գույքահարկի եւ հողի հարկի գծով հարկային մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկությունների փոխանակման եւ ֆիզիկական անձանց գույքահարկի եւ հողի հարկի ծանուցագրերի ու անդորրագրերի տպագրության, հատկացման, հաշվառման եւ պահպանման կարգերը:

³⁴ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի (ընդ. 1997թ. դեկտեմբերի 26-ին) 2-րդ հոդվ.: Տեղական տուրքերի տեսակները սահմանված են նշված օրենքի 7-րդ հոդվածում:

³⁵ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվ. 1-ին մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվ. 1-ին մասի 18-րդ կետ:

³⁶ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվ. 1-ին մասի 2-րդ կետ:

րականացմամբ պայմանավորված գործողությունների համար օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է³⁷: Վերջինիս դրույքաչափը եւս համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին փոխադրվող գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

Համայնքի փարաձբում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի եւ վճարների միասնական դրույքաչափեր: Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի եւ վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել³⁸:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ կարող է սահմանել տեղական տուրքի եւ (կամ) տեղական վճարի արտոնություններ՝ տեղական տուրք կամ վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը³⁹:

Համայնքներն իրենց կողմից *մատուցվող ծառայությունների դիմաց* կարող են սահմանել *վճարներ*: Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության, բազմաբնակարան շենքերի սպասարկման եւ այլ ծառայությունների իրականացման համար համայնքն օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ, որոնց չափը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ⁴⁰: Եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքի բյուջեփային հիմնարկները, ապա գանձված գումարն ուղղվում է համայնքի բյուջե:

Այդ ծառայությունների մատուցումն առեւտրային կազմակերպություններն իրականացնում են մրցութային կարգով, որին մասնակցում է համայնքային այդ ոլորտում ծառայություն մատուցող առեւտրային կազմակերպությունը: Այդ դեպքում մրցույթի պայմաններից մեկը համայնքի առաջարկված սպասարկման վճարի առավելագույն չափն է:

Համայնքի սեփականություն համարվող առեւտրային կազմակերպության կողմից մրցույթը շահելու դեպքում ծառայությունների իրականացման համար վճարները գանձում է փոխադրվող կազմակերպությունը, իսկ եթե մրցույթի հաղթող է ճանաչվում համայնքի սեփականություն չհամարվող այլ կազմակերպություն, ապա հաղթող կազմակերպության հետ համայնքը կնքում է համապատասխան պայմանագիր⁴¹:

³⁷ Նույն տեղում, 3-րդ հոդվ.: Տեղական վճարների տեսակները սահմանված են վերը նշված օրենքի 8-րդ հոդվածում:

³⁸ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվ. 2-րդ եւ 3-րդ մասեր, 11 հոդվ. 2-րդ եւ 3-րդ մասեր:

³⁹ Նույն տեղում, 13-րդ հոդվ.:

⁴⁰ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվ. 1-ին մասի 19-րդ կետ, 34-րդ հոդվ. 1-ին մասի 3-րդ կետ, 60-րդ հոդվ. 1-ին եւ 2-րդ մասեր:

⁴¹ Նույն տեղում, 60-րդ հոդվ. 3-5-րդ մասեր:

ՆՈՂ-ՎԱԾ 107

1. Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով:

2. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական հարկեր, փուրքեր եւ վճարներ, ընդունում է համայնքի փարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր: Համայնքի ավագանու կողմից ընդունվող ակտերը չեն կարող հակասել օրենսդրությանը, դրանց հրատարակման եւ ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է օրենքով:

3. Համայնքի ղեկավարի լիազորությունները եւ դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով:

4. Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով:

1. Մեկնաբանվող հոդվածի առաջին մասը սահմանում է համայնքի կողմից իր ինքնակառավարման իրավունքի իրականացման եղանակներից մեկը՝ այն մարմինները, որոնց միջոցով իրականացվում է տեղական ինքնակառավարումը, ինչպես նաեւ այդ մարմինների լիազորությունների ժամկետը:

Տրված կանոնակարգումները համահունչ են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այդ իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից՝ ընտրված ազատ, փակ գաղտնի, հավասար, ուղղակի եւ համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են տնօրինել հաշվետու կամ գործադիր մարմիններին...»⁴²:

Խարտիայի հիշյալ հոդվածով ամրագրված են հետևյալ հիմնադրույթները.

- տեղական ինքնակառավարման իրականացումը, առավելապես՝ ՏԻՄ-երի միջոցով,
- տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում ընտրովի ներկայացուցչական մարմնի պարտադիր առկայությունը,
- տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի առջև գործադիր մարմնի հաշվետվությունը, պարտախանարվությունը եւ վերահսկողությունը,
- Սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված կարգով տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների անմիջական մասնակցության ապահովումը (բնակչության ընդհանուր ժողով, հանրաքվե եւ այլն):

Վերը նշված սկզբունքները պահպանվել են նաեւ մեր հանրապետությունում:

⁴² Ստրասբուրգ, 15.10.1985:

Մեկնաբանվող մասը սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացման մարմինները, սակայն ոչ տեղական ինքնակառավարման իրականացման եղանակներն ընդհանրապես: Սահմանադրության այդ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես տեղական ինքնակառավարման իրականացման այլ եղանակների բացառում: Ընթացիկ օրենսդրությունը կարող է սահմանել տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացման այլ եղանակներ եւս, ինչպիսին է տեղական հանրաքվեն, միջազգային պրակտիկայում հայտնի՝ համայնքի բնակիչների ժողովները, քաղաքացիական նախաձեռնությունները եւ այլն: Այս եղանակների հնարավորությունը սահմանված է նաեւ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ՝ «Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձեւի դիմելը, այնպեղ, որպեղ դա թույլատրվում է օրենքով»⁴³:

Այդ նույն պրամաբանության վրա է հիմնված ու զարգանում է ընթացիկ օրենսդրությունը: Ճիշտ է, ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են բնակիչների ժողովների ու տեղական ինքնակառավարման ակտերի ընդունման քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտները, սակայն տեղական հանրաքվեի ինստիտուտը սահմանված է, թեպետ, պետք է ասել, որ այն գործնականում գրեթե չի կիրառվում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի⁴⁴ 4-րդ հոդվածի 1 -ին մասը, բացի նրանից, որ սահմանում է համայնքի եւ ժողովրդավարական համակարգի փոխհարաբերությունը, համայնքի հասկացությունը, սահմանում է նաեւ, թե համայնքի բնակիչներն ինչ եղանակով են իրականացնում տեղական ինքնակառավարումը, եւ այսպեղ, միանգամայն հիմնավոր կերպով, ուղղակի ժողովրդավարության ինստիտուտն ավելի առաջ է շարադրված, քան մեկնաբանվող հոդվածում հիշատակվող տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը: Հիշատակված հոդվածի համաձայն՝ համայնքը հանրություն եւ վարչատարածքային միավոր է, որի սահմաններում համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում:

Ուղղակիորեն տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքը բացված է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում⁴⁵: Այս օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաեւ օրենքով նախատեսված հարցերը: Բացի համայնքի ավագանուց եւ ղեկավարից, տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն նաեւ այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք (հոդված 7, մաս 1):

Ի տարբերություն Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են ոչ թե 5, այլ 4 տարի ժամկետով: Մինչեւ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում էին 3 տարի ժամկետով: ՀՀ 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունն անցկացվեց միայն 1996 թվականի նոյեմբերի 10-ին: Սա թեւ առաջին եւ վերջին դեպքն էր, երբ ՀՀ բոլոր համայնքներում նույն օրն անցկացվեցին տեղական ինք-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ ՀՀ ՊՏ 2002/21 (196) 21.06.02թ.:

⁴⁵ ՀՀ ՊՏ 2002/11 (186) 01.04.02թ.:

նակառավարման մարմինների ընտրությունները: Ներագայում, քանի որ մեզանում գոյություն ունեն համայնքի ղեկավարի ու ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքեր, եւ դրանք գործնականում կիրառվում են, բոլոր համայնքներում չէ որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեկ օրում: Որոշ համայնքներում տարբեր ժամանակներում են ընտրվում համայնքի ղեկավարը եւ ավագանին, ինչը, մի կողմից, խոչընդոտ է քաղաքական ուժերի համար տեղական մակարդակում քաղաքական ծրագիր ներկայացնելու եւ այս մակարդակում ժամանակի որոշակի հատվածում ուժերը փորձարկելու համար, մյուս կողմից՝ խոչընդոտ է տեղական ինքնակառավարման երկու մարմինների ներդաշնակ աշխատանքի կազմակերպման համար:

Ինչ վերաբերում է 4-ամյա ժամկետին, ապա այս դեպքում եւս պետք է արձանագրել, որ դա միջազգային չափորոշիչների համաձայն այն ողջամիտ ժամկետների շրջանակում է, որը, մի կողմից, այնքան կարճ չէ, որ բացառի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հիմնարար բնույթի, տեղական ժամանակ պահանջող քայլեր կատարելու հնարավորությունը, մյուս կողմից՝ այնքան երկար չէ, որ խզվածություն առաջացնի փվյալ համայնքի բնակիչների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը՝ ինչպես մեկնաբանվող հոդվածի, այնպես էլ ՆՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կանոնակարգումների համաձայն սահմանվում է բացառապես օրենքով: ՆՏ օրենսդրության մեջ մինչև 1998 թվականը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման կարգը սահմանված է եղել 1996 թվականի մայիսի 14-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՏ օրենքով⁴⁶, իսկ 1998 թվականի փետրվարի 5-ից այն սահմանված է ՆՏ ընտրական օրենսգրքով⁴⁷:

Նախկանչական է, որ մինչև 2005թ. սահմանադրական բարեփոխումները 105-րդ հոդվածով սահմանվում էր նաեւ ավագանու անդամների նվազագույն եւ առավելագույն թվաքանակը՝ 5-15 անդամ: Ներկայումս, ինչպես տեսնում ենք, ՆՏ Սահմանադրությունն ավագանու անդամների թվաքանակը չի սահմանում, ինչը նշանակում է, որ այն օրենքով կարող է փոփոխվել: Այդ թվաքանակը սահմանող միակ իրավական ակտը ՆՏ ընտրական օրենսգրքն է, որով 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո 2 անգամ փոփոխվել է ավագանու անդամների եւ նրանց բաշխման հիմքը՝ բնակչության թվաքանակը: Ավելին, կարծում ենք, ավագանու անդամների թվի հստակ ամրագրումից սահմանադիրը միտումնավոր է հրաժարվել, որպեսզի հետագայում օրենքով անհրաժեշտ թվաքանակ սահմանվի Երեսնի ավագանու համար: Այսպես, «Երեսնի քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 26.12.2008թ. ՆՏ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Երեսնի ավագանին կազմված է 65 անդամից:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում սահմանադրական փոփոխություններով ամրագրվել են մի շարք հիմնադրույթներ, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում «իշխանությունների բաժանման» համապետքստում ապահովում են համայնքի ավագանու առաջատար դիրքը:

Մեկնաբանվող մասի բովանդակությունից ակնհայտ է, որ համայնքի ավագանին

⁴⁶ ՀՀԱԺՏ 1996/11, ՀՀ 11.96/110:

⁴⁷ ՀՀՊՏ 1999/2 (68) 18.02.99թ.:

համայնքի առանցքային նշանակության հարցերը լուծող մարմինն է, որպեսզի համայնքի ղեկավարը հաշվեգրու է պարասխանագրու է դրա առջև: Ավելին, թվարկված լիազորությունները համայնքի ավագանու բացառիկ իրավասության մեջ են մտնում: Սա նշանակում է, որ նույնիսկ համայնքի բնակչությունը չի կարող տեղական հանրաքվեով «անձամբ» իրականացնել այդ լիազորություն, հանրաքվեով հաստատել կամ փոփոխել տեղական բյուջեն, տեղական հարկերը, փուրքերը եւ պարտադիր այլ վճարները, չի կարող օտարել համայնքային սեփականությունը եւ այլն (*տե՛ս 107-րդ հոդվ. 4-րդ մասի մեկնաբանությունը*): Ինչ խոսք, քննարկվող նորմում բառացի չի նշվում, որ այդ լիազորությունները համայնքի ավագանու բացառիկ իրավասության մեջ են մտնում, սակայն ՆՏ Սահմանադրության այլ նորմերի եւ ընթացիկ օրենսդրության վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ՝

ա) թվարկված լիազորությունները սպառիչ չեն եւ սահմանվում են նաեւ օրենսդրությամբ,

բ) 107-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված լիազորությունները չեն կարող վերապահվել որեւէ այլ սուբյեկտի, եւ ինչպես արդեն վերը նշվեց՝ անգամ համայնքին: Դրա մասին է վկայում նաեւ այն, որ քննարկվող դրույթում «տեղական հարկեր, փուրքեր եւ վճարներ սահմանելու» իրավասությունը վերապահվում է համայնքի ավագանուն: Նշենք, որ այս դրույթն ակնհայտորեն հակասում է ՆՏ Սահմանադրության նախորդ՝ 106-րդ հոդվածի վերջին մասին, որի համաձայն՝ այդ իրավասությունը վերապահվում է համայնքին: Ինչ խոսք, համայնքը եւս տեսականորեն կարող է անմիջական կամահայտության միջոցով (տեղական հանրաքվեի) լուծել այս հարցերը: Սակայն «Տեղական հանրաքվեի մասին» 2002թ. փետրվարի 6-ի ՆՏ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով քննարկվող լիազորությունները հենց այն հարցերից են, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի: Այլ կերպ ասած, թեեւ սահմանադիրը 105-րդ մասի 1-ին մասով եւ 106-րդ հոդվածի 4-րդ մասով «համայնքային սեփականության փոփոխման», «տեղական հարկեր, փուրքեր եւ վճարներ սահմանելը», ինչպես նաեւ «համայնքի բյուջեի հաստատումը եւ բյուջեի կատարման վերահսկողությունը» սահմանում են որպես համայնքի իրավունք, սակայն դրանց իրականացման բացառիկ իրավասությունը վերապահում են համայնքի ավագանուն: Կարծում ենք, դա միանգամայն փրամաբանական է եւ արդարացի: ՆՏ Սահմանադրության 107-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված բոլոր լիազորություններն իրականացվում են փոխառված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի շրջանակներում, որոնք հաստատվում են համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանու կողմից նրանց նախընտրական ծրագրերին եւ խոստումներին համապատասխան: Մինչդեռ քննարկվող հարցերը տեղական հանրաքվեով լուծելու դեպքում, մի կողմից, գերակշռող կլինի փոխառված հարցի նկատմամբ համայնքի բնակչության հուզական, զգայական ընկալումը եւ վերաբերմունքը, մյուս կողմից՝ բնակչությունն ի վիճակի չի լինի ամբողջությամբ ընկալել մասնագիտական համապատասխան գիտելիքներ եւ հմտություններ պահանջող իրավական ակտերը, ինչպիսիք են համայնքի բյուջեի նախագիծը, բյուջեի կատարման հաշվետվությունը, տեղական հարկերը, փուրքերը, վճարները եւ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարները: Ստորեւ անդրադառնանք քննարկվող մասի յուրաքանչյուր դրույթին առանձին-առանձին:

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով փոփոխում է համայնքի սեփականությունը: Ինչպես հայտնի է, **փոփոխման իրավազորությունը** սեփականատիրոջ կողմից, օրենքով նախատեսված շրջանակներում, գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու միջոցով գույ-

քի իրավական եւ փաստացի ճակատագիրը որոշելու իրավունքն է:

Այս իրավագործությունն է, որ սեփականատիրոջը հնարավորություն է տալիս իր գույքը վաճառել, նվիրել, գրավ դնել եւ այլն (ավելի մանրամասն տես՝ ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի մեկնաբանությունը): Սակայն իրականում համայնքի ավագանին սեփականության իրավունքի կրող չի կարող հանդիսանալ, քանի որ հանդես է գալիս համայնքի անունից⁴⁸: ՏՏ Սահմանադրության 104.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք եւ գույքային այլ իրավունքներ»: Ներքին գործերի ներքո պետք է հասկանալ, որ համայնքի ավագանին՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին ներկայացնում է տվյալ համայնքին եւ համայնքի անունից եւ նրա փոխարեն իրականացնում սեփականատիրոջ իրավագործությունը, որոնք կարգավորվում են քաղաքացիաիրավական օրենսդրությամբ (տես նաեւ ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի մեկնաբանությունները): «Տեղական ինքնակառավարման մասին» 2002թ. մայիսի 7-ի ՏՏ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին «համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների եւ օտարման գների չափերը եւ պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների ղեկավարում՝ մեկնարկային գները»: Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-13-րդ կետերի համաձայն. «համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ ... 12) համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանված պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող գույքը, 13) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին»:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը: Այս դրությունը սկզբունքորեն արտացոլված են բյուջեփայլի գործընթացի հիմնական փուլերը՝ 1) բյուջեի նախագծի պատրաստում, 2) բյուջեի նախագծի քննարկում եւ հաստատում, 3) բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն եւ 4) կատարման հաշվետվության հաստատում: Նշվում են նաեւ բյուջեփայլի գործընթացի մասնակիցները (համայնքի ավագանին եւ համայնքի ղեկավարը), եւ կատարված է նրանց «դերերի» բաշխումը: Ճիշտ է, բյուջեփայլի գործընթացի վերջը նշված փուլերից 1-ինը եւ 4-րդն ուղղակիորեն չեն նշվում ՏՏ Սահմանադրության 107-րդ հոդվածի 2-րդ մասում, սակայն քննարկվող դրույթի տրամաբանությունից պարզ է, որ համայնքի ավագանին «չի կազմում», այլ «հաստատում» եւ «վերահսկում է»: Քանի որ ՏՏ Սահմանադրության 107-րդ հոդվածի 1-ին մասում հստակ է սպառիչ նշվում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններ են միայն համայնքի ավագանին եւ համայնքի ղեկավարը, ապա տրամաբանորեն համայնքի բյուջեի նախագծի կազմման, բյուջեի կատարման եւ կատարման մասին հաշվետվություն ներկայացնելու լիազորությունները վերապահվում են համայնքի ղեկավարին:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում իրավունք ունեն տիրապետելու բավարար սեփական ֆինանսական միջոցների, որոնք նրանք կարող են ազատորեն տնօրինել իրենց լիազորություններն իրականացնելիս⁴⁹:

⁴⁸ Տես ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդված:

⁴⁹ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (Ստրասբուրգ, 1985թ. հոկտեմբերի 15) 9-րդ հոդվ. 1-ին մաս:

Յուրաքանչյուր քաղաքի համայնքի բյուջեն հաստատվում է համայնքի ավագանին: Ավագանին համայնքի բյուջեում փոփոխություններ է կատարում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատվում է ավագանին: Համայնքի բյուջեն բաղկացած է վարչական եւ ֆոնդային մասերից: Համայնքի բյուջեն իրականացվում է օրենքով սահմանված կարգով⁵⁰:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկման է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման համայնքներին փրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Համայնքի ղեկավարը համայնքի ավագանու ներկայացնում է բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին: Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախադեմում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչեւ մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծում համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելու համար: Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ եւ ներկայացնում իր դիրքորոշումը բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը՝ համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով, քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում՝ նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ: Եթե ավագանին մինչեւ փարվա սկիզբը համայնքի բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ փարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ փարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

ՀՀ ֆինանսների նախարարությունը եւ մարզպետարանները մեթոդական եւ խորհրդավորական օգնություն են ցույց տալիս համայնքի բյուջեի նախագծի մշակման նախապարաստման ընթացքում, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով վերահսկում են բյուջեփայլին գործընթացը⁵¹: Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական փայլու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ավագանու անդամների թվի ձայների կեսից ավելիով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով: Հակառակ որոշում կայացնելու դեպքում՝ համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով: Եթե դիմումն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կառավարությունը նման որոշում չի կայացնում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

⁵⁰ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվ. 1-ին մաս:

⁵¹ Համայնքների բյուջեներ կազմելու և ներկայացնելու կարգը սահմանվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Նամայնքի ղեկավարը բյուջեի հիման վրա ճշտում է իր աշխատակազմի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և բյուջեային հիմնարկների խնդիրները, հաստատում է դրանց դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանները: Նամայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, ապահովում է բյուջեի կատարումը, պարտադիր կարգով ստորագրում է բոլոր ֆինանսական փաստաթղթերը և անձնական պատասխանատվություն է կրում ֆինանսական գործառնությունները ճշգրիտ և օրենքին համապատասխան կատարելու համար:

Նամայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, որն իրավագործ է ստուգելու ցանկացած բյուջեային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ: Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքի բյուջեից:

Նամայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ ՆՏ բյուջեային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն: Նամայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման փարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու բյուջեային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Նամայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման փարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերստուգիչ մարմինը համայնքի ավագանուն ներկայացնում է իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները: Նամայնքի ավագանու նիստում համայնքի ղեկավարը պատասխանում է ավագանու անդամների հարցերին և տալիս է անհրաժեշտ բացատրություններ: Նամայնքի ավագանին բյուջեի կատարման փարեկան հաշվետվության վերաբերյալ կարող է անցկացնել նաև անկախ աուդիտ, իսկ իրավախախտումներ հայտնաբերելու դեպքում՝ դիմել համապատասխան իրավասու մարմիններ: Նամայնքի ավագանին քննարկումն ավարտելուց հետո որոշում է կայացնում բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: Նամայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման փարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով: Նամայնքի բյուջեի կատարման փարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում՝ համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն չի ներկայացվում կամ կառավարությունը ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունն օրենքով սահմանված կարգով սրանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման փարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված: Նամայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունվելու դեպքում համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման փարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Նամայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով սահմանում է տեղական հարկեր, տուրքեր և վճարներ: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն. «2. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն սահմանադրությամբ կամ օրենքով իրենց վերապահված լիազորություններին: 3. Տեղական

ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական հարկերի եւ փոքրերի հաշվին, որոնց դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն որոշելու օրենքով նախատեսված սահմաններում»⁵²: Խարտիայի հիշյալ դրույթներն ուղղակիորեն պարտավորեցնում են պետությանը սահմանել համայնքի եկամուտների մշտական եւ երաշխավորված աղբյուրներ: Պետությունն այս պարտականությունն իրականացրել է ՏՏ Սահմանադրության 106-րդ եւ 107-րդ հոդվածներով տեղական հարկերի, փոքրերի, վճարների եւ համայնքի ծառայությունների դիմաց վճարներ սահմանելու իրավունքի ամրագրման միջոցով:

Ներաբրքիք է այն փաստը, որ եթե ՏՏ Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ համայնքները տեղական հարկերն ու փոքրերը սահմանում են «օրենքով նախատեսված սահմաններում», ապա 107-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «օրենքով սահմանված կարգով»: Իրականում համայնքն իրավասու չէ սահմանելու տեղական պարտադիր գանձույթի տեսակ, քանի որ ՏՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Բացառապես ՏՏ օրենքներով են սահմանվում ... 2) ... ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, փոքրերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը» (*տե՛ս նաև 83.5-րդ հոդվածի մեկնաբանությունները*): Գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական փոքրերի եւ վճարների տեսակները եւ նվազագույն ու առավելագույն դրույքաչափերը սահմանվում են «Տեղական փոքրերի եւ վճարների մասին» ՏՏ օրենքով, իսկ կարգը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով⁵³: Վերջինիս 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, կազմում է «տեղական փոքրերի եւ վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը եւ ներկայացնում համայնքի ավագանուն», իսկ համայնքի ավագանին նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ «սահմանում է օրենքով սահմանված տեղական փոքրերի եւ վճարների դրույքաչափերը»:

Նշենք նաեւ, որ գործող օրենսդրությամբ «տեղական հարկ» չի նախատեսվում: Ինչ վերաբերում է տեղական փոքրերին եւ վճարներին, ապա դրանց տեսակները, դրույքաչափերը եւ վճարման կարգը սահմանվում են «Տեղական փոքրերի եւ վճարների մասին» ՏՏ օրենքով: Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Տեղական փոքր տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Սույն օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղական փոքր կարող է գանձվել պարբերաբար»: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է»⁵⁴: Ինչ վերաբերում է ՏՏ Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ մասում նշված՝ «ծառայությունների դիմաց սահմանվող վճարներին», ապա դրանք չեն նույնացվում վերը հիշատակված «տեղական վճարների» հետ: Դրա մասին է վկայում

⁵² Տե՛ս Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքէջը. <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/122.htm> հայերեն պաշտոնական քարտեզային շի համապատասխանում բնագրին:

⁵³ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետը եւ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլուխը:

⁵⁴ Տե՛ս «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» 26.12.1997թ. ՀՕ-185 ՀՀ օրենքը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՆՇ օրենքը, որի 60-րդ հոդվածի 1-ին նախադասության համաձայն. «Նամայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մարտցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության, բազմաբնակարան շենքերի սպասարկման եւ այլ ծառայությունների իրականացման համար համայնքն օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ» (տե՛ս ՆՇ Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը):

Նամայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է համայնքի փարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր: Նամայնքի ավագանու կողմից ընդունվող ակտերը չեն կարող հակասել օրենսդրությանը, դրանց հրապարակման եւ ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է օրենքով: Սահմանադրոհն ամրագրվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի փարածքում «պարտադիր կատարման ենթակա» իրավական ակտեր ընդունելու իրավունքը, որը, ինչպես հայտնի է, բացառապես հանրային իշխանության սուբյեկտին բնորոշ հատկանիշ է: Սա նաեւ նշանակում է, որ այդ իրավական ակտերի կատարումն ապահովվում է պետական հարկադրանքի ուժով:

Մյուս կարեւոր առանձնահատկությունը բացահայտվում է մեկնաբանվող մասի եւ ՆՇ Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթների համադրության արդյունքում: Այսպես, ՆՇ Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով»: Մինչդեռ ՆՇ Սահմանադրության մեկնաբանվող հոդվածով ընդամենը սահմանվում է՝ «Նամայնքի ավագանու կողմից ընդունվող ակտերը չեն կարող հակասել օրենսդրությանը...»: Այլ կերպ ասած, ավագանու իրավական ակտերի համար ՆՇ Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը՝ «դրանց իրականացումն ապահովելու նպատակը», կամ որ նույնն է՝ ենթաօրենսդրական բնույթը, պարտադիր պայման չի դիտարկվում: Ընդ որում, այսպիսի «առանձնահատուկ մոտեցումը» սահմանադրական բացթողում չէ եւ միանգամայն համահունչ է եւ՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով, եւ՝ ՆՇ Սահմանադրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման հայեցակարգային մոտեցումներին: Այսպես, Խարտիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, գործողությունների լիակատար ազատություն ունեն իրականացնելու իրենց նախաձեռնությունները՝ ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից եւ վերապահված չէ իշխանության այլ մարմնի իրավասությանը»: Իսկ ՆՇ Սահմանադրությամբ (տե՛ս նաեւ 104 եւ 105-րդ հ.հ. մեկնաբանությունները) եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՇ օրենքով (9-րդ հոդվ. 1-ին մաս) ամրագրված է «ընդհանուր իրավասության» սկզբունքը: Նման մոտեցումը հաստատող մեկ այլ սահմանադրական հիմք ենք գտնում նաեւ ՆՇ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում. «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով» (տե՛ս 42-րդ հոդվածի մեկնաբանությունները): «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՇ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ եւ ուղերձներ: Մույն օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ»:

3.Նամայնքի ղեկավարի լիազորությունները եւ դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: Մեկնաբանվող դրույթի իմաստը լիովին ըմբռնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Սահմանադրության 104 եւ 105-րդ հոդվածներին եւ դրանց մեկնաբանությանը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նախաբանի (վերջին նախադասություն) եւ 3-րդ հոդվածի 1-ին մասի⁵⁵ բովանդակությունից հետեւում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են կատարելու համայնքային շահերից բխող ցանկացած լիազորություն, որն ուղղակիորեն արգելված չէ օրենքով կամ չի վերապահվում հանրային իշխանության այլ սուբյեկտի: Այս տեսակետից մեկնաբանվող դրույթից պետք է եզրակացնել, որ համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակը եւ դրանց իրականացման կարգը սահմանափակված են օրենքով սահմանված շրջանակներում: Սակայն համայնքի ավագանու համար նման սահմանափակում չի նախատեսվում: Այսինքն՝ ընդհանուր իրավասության սկզբունքի իրացման հնարավորությունը թողնված է բացառապես համայնքի ավագանուն: Սահմանադրական այս մոտեցումը, կարծում ենք, արդարացված է, քանի որ, ինչպես հաճախ նշվում է տեսական աղբյուրներում⁵⁶, տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը իշխանությունների բաժանման յուրօրինակ «միկրոնոդելն» է համայնքում՝ ներկայացուցչական մարմնի գերակայությամբ: «Նամաշխարհային փորձը վկայում է, որ տեղական ինքնակառավարման համակարգում առավել նպատակահարմար է ոչ թե ապահովել իշխանությունների հավասարակշռությունը, այլ՝ իշխանություններից մեկի առաջնությունը մյուս իշխանության կողմից սահմանափակումների եւ զսպումների պայմաններում: Տեղական մակարդակով իշխանությունների բաժանումը ներառում է անհամապատասխանություն մունիցիպալ իշխանության հետ: Տեղերում իշխանությունը միակն է ու միասնական, բայց արտահայտվում է իշխանության եւ կառավարման մարմինների փոքր գործառնություններում»⁵⁷: Իսկապես, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի գործառնությունը տեղական հանրության կամքի արտահայտումն է, նրան համապարտադիր բնույթ փայլը եւ նրա անունից իշխանություն իրականացնելը: Մինչդեռ տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների գործառնություն է կառավարչական, կազմակերպական գործունեությունը՝ ուղղված համայնքի բնակչության կողմից անմիջականորեն կամ նրա ներկայացուցչական մարմնի միջոցով ընդունված իրավական ակտերի իրականացմանը: Սա միանգամայն բնական եւ հանրաճանաչ մոտեցում է: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ շեշտվում է, որ տեղական հանրության տեղական ինքնակառավար-

⁵⁵ Տե՛ս Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքէջը. <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/122.htm> (հայերեն պաշտոնական բարգձմությունը չի համապատասխանում բնագրին). նախաբան. «Սույն Խարտիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները ... Հաստատելով, որ դա ենթադրում է այնպիսի տեղական իշխանությունների առկայությունը, որոնք օժտված են ժողովրդավարական ճանապարհով ստեղծված եւ որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող մարմիններով եւ որոնք իրենց լիազորությունների լիարժեք իրագործման համար օժտված են լայն ինքնավարությամբ, դրանց իրականացման կարգերով եւ եղանակներով, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսներով, որոնց միջոցով լուծվում են այդ լիազորությունները, համաձայնության եկան հետևյալի մասին.», իսկ Խարտիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են լուծելու «...հանրային գործերի գծով մասը՝ գործելով օրենքի շրջանակներում»:

⁵⁶ **Кряжков В.**, Местное самоуправление: правовое регулирование и структуры; Советское государство и право, 1992, № 1, էջ 30; **Мирошниченко Е.** Шаги к самоуправлению, Народный депутат, 1992, № 17, էջ 61-62; **Барабашев Г. В.**, «Совет и мэра в «упряжке» самоуправления, Народный депутат, 1991, № 11., էջ 38:

⁵⁷ Տե՛ս Муниципальное право. Под. общ. ред. Ю. А. Дмитриева, М., Изд. «ЭКМО, 2005:

ման իրավունքը «**իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից**, որոնք կազմված են ազատ, գաղտնի, ուղղակի, հավասար եւ ընդհանուր քվեարկությամբ ընտրված անդամներից: **Խորհուրդները կամ ժողովները կարող են իրենց ենթակա եւ հաշվետու գործադիր մարմիններ ունենալ**»: Նշենք, որ տեսական այս հայեցակարգն արտացոլվել է նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՃ օրենքում, որի 7-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերում՝ համապատասխանաբար, համայնքի ավագանին նշվում է որպես տեղական ինքնակառավարման «ներկայացուցչական մարմին», իսկ համայնքի ղեկավարը՝ «գործադիր մարմին»:

Վերոգրյալն ակներեւ ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման համակարգում տրամաբանական չէր լինի «գործադիր մարմին» սեփական լիազորությունները սահմանելու, որոշելու իրավունքի վերապահումը, ինչը չի կարելի ասել համայնքի ավագանու՝ ներկայացուցչական մարմնի համար: «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՃ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն. «Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով... 5) որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցները համայնքի ղեկավարի ներկայացմամբ», իսկ 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն. «Սույն օրենքում թվարկված կամավոր լիազորությունները սպառիչ չեն: Այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: **Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն**»:

4. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ. «Տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից՝ ընտրված ազատ, փակ գաղտնի, հավասար, ուղղակի եւ համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են **տնօրինել հաշվետու կամ գործադիր մարմինների: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելն այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով»:**

Թեեւ տեղական ինքնակառավարման ձեւավորված համակարգը Խարտիային համապատասխանեցնելու նպատակով «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքն ընդունվել է 2002թ. փետրվարի 6-ին (ՏՕ-304), սակայն ժողովրդաիշխանության անմիջական իրականացման այս ձեւը ՏՃ Սահմանադրությամբ ամրագրվեց միայն 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Այդ բարեփոխումների արդյունքում ամրագրվեց նաեւ տեղական ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) հանրաքվեի մեկ դեպք (*տե՛ս ՏՃ Սահմանադրության 11.2-րդ եւ 110-րդ հոդվածների մեկնաբանությունները*):

Ինչպես հայտնի է, հանրաքվեն, այդ թվում՝ տեղական հանրաքվեն, ժողովրդաիշխանության անմիջական իրականացման հիմնարար ձեւերից մեկն է (*տե՛ս ՏՃ Սահմանադրության 2 եւ 30-րդ հոդվածների մեկնաբանությունները*): Սակայն, ի տարբերություն համապետական հանրաքվեի, տեղական հանրաքվեի մասնակցության սուբյեկտ են ոչ թե քաղաքացիները (*տե՛ս ՏՃ Սահմանադրության 113-րդ հոդվածի մեկնաբանությունները*), այլ՝ «համայնքի անդամները»: Այսինքն՝ տեղական հանրաքվեի միջոցով համայնքային նշանակության հարցերի լուծմանը մասնակցելու համար

քաղաքացիության ցեղ չի նախատեսվում: Նշենք, որ «**համայնքի անդամ**» եզրույթն օրենսդրության մեջ չի պարզաբանվում: Դրա փոխարեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ «Համայնքի բնակիչները» վերաբառությամբ 5-րդ հոդվածի առաջին նախադասությամբ սահմանվում է՝ «Համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է քաղաքացիության համայնքում»: ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Օրենքով կարող է սահմանվել հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ քաղաքացիության ինքնակառավարման մարմինների ընտրություններին և քաղաքացիության հանրաքվեներին մասնակցելու իրավունքը» (*տես 30-րդ հոդվածի մեկնաբանությունը*): Օգտվելով սահմանադրական այս նորմի ընձեռած հնարավորությունից՝ ՀՀ ընտրական օրենսգրքում և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում կարարվեցին փոփոխություններ: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասերի համաձայն քաղաքացիության ինքնակառավարման մարմինների ընտրություններին և քաղաքացիության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունի միայն «համապատասխան համայնքում առնվազն մեկ փարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող յուրաքանչյուր ք**»⁵⁸:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածով ևս, ինչպես հարստացվում, որպես քաղաքացիության ինքնակառավարման հիմնական ձև և նշվում քաղաքացիության ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, սակայն չի բացառվում նաև համայնքի գործերի կառավարմանն ուղղակի մասնակցության ձևը՝ քաղաքացիության հանրաքվե: Միաժամանակ, ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրությունը համայնքում ժողովրդաիշխանության որևէ այլ ձև չի նախատեսում, ինչպես մի շարք երկրներում հայտնի հերթական ինստիտուտը, համայնքի բնակչության ընդհանուր ժողովը, հարցումը, համաժողովրդական քննարկումները, հրապարակային լսումները, ընտրողների պարվիրանները և այլն⁵⁹ :

«**Համայնքային նշանակության հարցերը**» ոչ ՀՀ Սահմանադրության քննարկվող դրույթում և ոչ էլ այլ նորմերով սպառիչ չեն թվարկվում: Այդ իսկ պարզաբանվում է քաղաքացիության մեջ և պարզաբանվում է թյուր կարծիք է սրբաբանել, թե համայնքի անդամները քաղաքացիության նշանակության ցանկացած հարց կարող են լուծել որպես այդ իշխանության կրողներ: Որոշ իմաստով այս քաղաքացիության է նպաստում նաև ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի վերջին դրույթը՝ «Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով»: Առաջին հայացքից քաղաքացիության է սրբաբանվում, որ օրենքով պետք է կարգավորվի միայն քաղաքացիության հանրաքվեի անցկացման կարգը, քանի որ նույն պարբերության «համայնքային նշանակության հարցեր» արտահայտությունը համընդգրկում է և կարծես թե ներառում է քաղաքացիության նշանակության ցանկացած հարց: Սակայն այս արտահայտության նման արտահայտության ընկալումն ուղղակի հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի, ինչպես նաև 107-րդ հոդվածի 1-ին մասի հետ:

Անդրադառնալով «համայնքային նշանակության հարցեր» արտահայտության իրավավիճակի մասին, այնքանով, որքանով այն առնչվում է քաղաքացիության հանրաքվեին ենթակա հարցերի շրջանակին, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.12.2007թ.

⁵⁸ Տես «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ-1Ն, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2006թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-244-Ն ՀՀ օրենքները:

⁵⁹ Տես **Авакян С. А.** Конституционное право России. Том 1, էջեր 414-429, **Чиркин В. Е.**, Русская Конституция и публичная власть народа. /Государство и право, 2008, № 12, էջ 25; **Маклаков В. В.** Конституционное право зарубежных стран (Общая часть), էջ 563; **Енгибарян Р. В.** Конституционное развитие в современном мире (Основные тенденции). М., 2007, էջ 351:

ՄԴՈ-721 որոշմամբ հարցին վերջնական լուծում է տվել: Հիմք ընդունելով ՏՏ Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մասի, 105-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 107-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունը՝ ՏՏ սահմանադրական դատարանը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Սահմանադրության վերոհիշյալ հոդվածների և «Տեղական հանրաքվեի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքների համապատասխան նորմերից հետևում է, որ տեղական հանրաքվեի կարող են դրվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը ենթակա հարցեր՝ այն բացառություններով, որոնք նախատեսված են «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի վիճարկվող նորմերում: Ընդ որում, եթե օրենքի այդ հոդվածի 2-րդ կետի «գ», «է» և «ը» ենթակետերով նախատեսված հարցերը դուրս են տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք իրավասության շրջանակներից, ապա «բ» ենթակետից բխող մարդու իրավունքների և ազատությունների ապահովման երաշխիքների հնարավոր փոփոխությունը համաժողովրդական քննարկման (հանրաքվեի) խնդիր է: Ուստի դրանով է նաև պայմանավորված տեղական հանրաքվեի դրվող հարցերի՝ օրենքով նախատեսված թույլատրելի շրջանակը:

Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել նաև այնպիսի հարցեր, որոնց լուծումը Սահմանադրությամբ է օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց կողմից ձեռավորվող մասնագիտացված մարմինների **բացառիկ** իրավասությանը (ՏՏ Սահմանադրության 107 հոդվածի 2-րդ մաս), ինչն արտացոլված է նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա», «դ», «ե» և «զ» ենթակետերում: Այլ կերպ, այդպիսի հարցերի լուծման իրավունքը համայնքի բնակիչների կողմից՝ ՏՏ Սահմանադրության և օրենքի հիման վրա պարզվիրակված է ընտրությամբ ձեռավորվող տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ վերջիններիս պարզվիրակված լիազորությունների կրկնօրինակումը (փոփոխությունը) տեղական հանրաքվե նախաձեռնելու միջոցով՝ իրավաչափ չէ և չի բխում Սահմանադրության վերոհիշյալ նորմերից»:

Համայնքային (տեղական) նշանակության հարցերի, հավասարապես՝ նաև տեղական հանրաքվեի դրվող հարցերի, առարկայական շրջանակը սահմանադրորեն չկանխորոշելու, և տեղական հանրաքվեների, դրանց կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման օրենսդրական պարտադիր կանոնակարգումը՝ որպես սահմանադրական սկզբունք հաստատագրելու պայմաններում (ՏՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 7-րդ կետ), տեղական հանրաքվեի դրվող հարցերի **սահմանափակումն** իրավաչափ է և բխում է ինչպես ՏՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերից, այնպես էլ ՏՏ-ում սահմանադրական կարգի հաստատագրված այն սկզբունքից, համաձայն որի հանրաքվեն, ազատ ընտրությունները և ընտրովի մարմինների միջոցով տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձևեր են (ՏՏ Սահմանադրության 2-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ լինելով ժողովրդաիշխանության իրականացման (տեղական բնակչության կամքի արտահայտման) սահմանադրորեն որոշված ինքնուրույն ձեռնարքվեն չի կարող փոխարինել այդպիսի իշխանության այլ ձևերին այնպես, ինչպես վերջիններս՝ հանրաքվեին: Տեղական հանրաքվեն և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտման (ինքնակառավարման իրավունքի իրականացման) բարձրագույն ձևեր են և անփոխարինելի՝ լուծվող խնդիրների շրջանակներով, իրավական կար-

գավորմամբ: Եթե առաջինի դեպքում քվեարկության են դրվում համայնքային նշանակության կարևոր հարցեր, ապա երկրորդի դեպքում կազմավորվում են փեղական ինքնակառավարման մարմիններ (համայնքի ղեկավար եւ ավագանի), որոնց միջոցով (համայնքի անդամների անուղղակի մասնակցությամբ), օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) նույնպես լուծվում են համայնքային (փեղական) նշանակության հարցեր: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերի բովանդակությունից միանշանակ հետևում է, որ փեղական հանրաքվեն համայնքի անդամների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցելու ձև է⁶⁰:

ՆՈՂՎԱԾ 108

Երեւանը համայնք է: Երեւան քաղաքում փեղական ինքնակառավարման եւ փեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երեւանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ Երեւանը միակ վարչապարածքային միավորն է, որը հիշատակվում է: Առաջին պարագայում Երեւանը հիշատակվում է Սահմանադրության 13-րդ հոդվածում՝ որպես մայրաքաղաք, իսկ երկրորդ հիշատակումը մեկնաբանվող հոդվածում է:

Մեկնաբանվող հոդվածում Երեւանի հետ կապված հարաբերությունների կարգավորումն առավելապես պայմանավորված է հենց նրա՝ որպես մայրաքաղաք սահմանելով: Երեւանի՝ մայրաքաղաք լինելու հանգամանքով է առաջին հերթին պայմանավորված սահմանադրի կողմից այս վարչական միավորում փեղական ինքնակառավարման եւ փեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման առանձնահատկությունները նախատեսելու հանգամանքը⁶¹:

Երեւան քաղաքը 1995 թվականին ընդունված Սահմանադրությամբ կորցրեց իր համայնքի կարգավիճակը: 1995 թվականի հուլիսի 5-ի խմբագրությամբ Սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն՝ Երեւանը քաղաքն ուներ մարզի կարգավիճակ, իսկ Երեւանի մակարդակով փեղական ինքնակառավարում չէր իրականացվում, այն իրականացվում էր 12 թաղային համայնքներում /թաղային համայնքներ գոյություն ունեին միայն Երեւանում/:

Այդ պայմաններում Երեւանի կառավարման համակարգի արդյունավետությունը, հաճախ եւ ոչ անհիմն, կասկածի փակ էր դրվում: Երեւան քաղաքը չունեւ բյուջե, բացակայում էին համաքաղաքային համայնքային ծրագրերի իրականացման հնարավորությունները, երբեմն առկա էր լիազորությունների կրկնություն, բախում, թաղային համայնքների լիազորությունների սահմանափակվածություն եւ այլն: Թերեւս, սրանք պատճառների միայն մի մասն էին, որոնք հիմք հանդիսացան Երեւանի մարզի կարգավիճակը փոխել համայնքի կարգավիճակի⁶²:

⁶⁰ Տես <http://www.concourt.am/armenian/decisions/common/2007/doc/sdv-721.doc>

⁶¹ Սահմանադրության 88.1-րդ հոդվածը սահմանադրական հիմք է հանդիսանում Երեւան քաղաքում տարածքային կառավարման առանձնահատկությունները եւ օրենքով սահմանելու համար:

⁶² Սահմանադրության 11.1-րդ հոդվածը նախատեսում է այս երկու վարչատարածքային միավորները:

Որպես համայնք այն գտնվում է Սահմանադրության 104.1-րդ հոդվածի՝ բնակավայրերի բնակչության հանրություն, իրավաբանական անձ եւ այլն սահմանման ներքո:

Դառնալով համայնք՝ Երեւանն ինքնաբերաբար դառնում է վայր, որտեղ իրականացվում է տեղական ինքնակառավարում, որը ՀՀ Սահմանադրական կարգի հիմունքներից մեկն է՝ իբրեւ պետական իշխանության կազմակերպման եւ իրականացման հիմնարար սկզբունք:

ՀՀ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը սահմանում է որպես համայնքի իրավունքն ու կարողությունը՝ սեփական պարասխանավորությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը: Ուստի մեկնաբանվող հոդվածում օգտագործվող «տեղական ինքնակառավարման առանձնահատկություններ» բառակապակցությունը պետք է հասկանալ որպես այնպիսի հատկանիշներ, որոնք կլինեն յուրօրինակ, մյուսներից տարբերվող, բացառիկ: Այսինքն՝ այս հասկացությունը սահմանադրական հիմք է օրենսդրի համար տեղական ինքնակառավարմանը վերաբերող կոնկրետ իրավահարաբերությունները կարգավորելիս սահմանել սովորական, ընդհանուր կանոնակարգումներից տարբերվող կարգավորումներ: Այդ առանձնահատկությունները կարող են վերաբերել տեղական հարցերի ծավալին, դրանց լուծման իրավասությանների բաշխմանը, լուծման ընթացակարգերին, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններին եւ այլն: Մեկնաբանվող հոդվածը միաժամանակ սահմանում է այն ակտը, որով կարող են այդ առանձնահատկությունները սահմանվել, այն է՝ օրենքը⁶³:

Մեկնաբանվող հոդվածը սահմանադրական հիմք է նաեւ Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների /Երեւանի քաղաքապետ եւ Երեւանի ավագանի/ ձեւավորման, այլ համայնքներում վերջիններիս ձեւավորման կարգից տարբերվող կարգ սահմանելու համար: Ձեւավորման առանձնահատկությունը բովանդակային առումով կարող է ներառել.

ա/ ընտրական համակարգը.

բ/ ընտրության ձեւը.

գ/ ավագանու անդամների թիվը.

դ/ մանդատների բաշխման կարգը եւ այլն:

Մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից բխում է նաեւ, որ այդ առանձնահատկությունները կարող են սահմանվել բացառապես օրենքով:

Հոդվածի վերջին նախադասությունը սահմանում է Երեւանի քաղաքապետի հնարավոր ընտրության ձեւը՝ ուղղակի կամ անուղղակի: Այսինքն՝ սահմանադիրն օրենսդրի հայեցողությանն է վերապահել Երեւանի քաղաքապետի ընտրության պարագայում այս երկու ձևերի միջեւ ընտրություն կատարելը: Հիմնավոր չեն այն պնդումները, որ եթե Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ուղղակի ընտրությունների միջոցով, ապա Երեւանի քաղաքապետը չի կարող ընտրվել այլ եղանակով: Թեպետ միջազգային պրակտիկային հայտնի են Սահմանադրության տարբեր հոդվածներին տարբեր իրավաբանական ուժով օժտելու դեպքերը, մասամբ այն գոյություն ունի նաեւ Հայաստանի Հանրապետությունում⁶⁴: Սակայն նման /միգուցե թվացյալ/ հակասությունների պարագայում գործում է ընդհանուր եւ հարույկ նորմերի հակասության դեպքում տրվող լուծու-

⁶³ Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկություններն առավելապես սահմանված են Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքով. ՀՕ-5-Ն ՀՀՊՏ 2009/3 (669), 16.01.09:

⁶⁴ Տե՛ս 1-2 եւ 114-րդ հոդվածների մեկնաբանությունները:

մը, այն է՝ գործում է հափուկ նորմը: Մեկնաբանվող հոդվածում ամրագրված դրույթը՝ Երեւանի քաղաքապետի և վերաբերող մասով, հափուկ է 4-րդ հոդվածում բոլոր քաղաքական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար սահմանված եղանակին⁶⁵:

Սահմանադրության 4-րդ հոդվածն ունի սկզբունքի նշանակություն, եւ եթե հեղինակը հոդվածը մեկնաբանում է ընդհանուր եւ հափուկ նորմի հարաբերակցության փեսանկյունից, ապա ասենք, որ փեսության մեջ սկզբունքի եւ հափուկ նորմի հարաբերակցությունում սկզբունքն ունի առաջնային եւ որոշիչ նշանակություն: Նախուկ նորմը չի կարող խախտել սկզբունքը:

ՆՈՂՎԱԾ 108.1

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացվում է իրավական հսկողություն: Տամայնքին պարտավորված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու մեխանիզմները փարբեր երկրներում փարբեր են եւ փոխկապակցված են այն հարցի հետ, թե փվյալ պետությունն ինչ դեր է հափկացնում քաղական ինքնակառավարմանը եւ դրա իրականացման ինչպիսի սկզբունքներ է որդեգրում:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարբիան, որի 8-րդ հոդվածը կարգավորում է քաղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական հսկողության հարցերը, սահմանում է, որ ցանկացած վարչական հսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախարեսված ձեերով եւ դեպքերում: Նողվածի 2-րդ մասի համաձայն՝ ցանկացած վարչական հսկողություն պետք է ձառայի միայն օրինականությանը եւ Սահմանադրության սկզբունքներին հետետելու ապահովմանը: Այնուհանդերձ, վարչական հսկողությունը կարող է ներառել նաեւ վերադաս մարմինների՝ քաղական ինքնակառավարման մարմիններին պարտավորված լիազորությունների կարարման հսկողությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական հսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության ասփիճանը համաչափ լինի այն ձահերին, որոնք նպարակ ունի պաշարպանել այդ միջամտությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքի 7.1-րդ գլուխը նվիրված է քաղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ վարչական

⁶⁵ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5.4-րդ կետի համաձայն՝ Երեւանի ավագանու անդամների ընտրությունները կազմակերպվում եւ անցկացվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով, իսկ Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ավագանու ընտրությունների արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված քաղաքապետ: Եթե այդ կուսակցության ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը չի համապատասխանում քաղաքապետին առաջադրվող պահանջներին՝ հրաժարվում է, կամ ավագանու ընտրությունների արդյունքով որեւէ կուսակցություն չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա քաղաքապետն ընտրվում է գաղտնի քվեարկության միջոցով:

հսկողությանը: 77¹-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական հսկողությունը փարածվում է համայնքի ղեկավարի սեփական եւ պետության պարվիրակած լիազորությունների եւ համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Համայնքի ղեկավարի սեփական եւ համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունն ստուգելով (իրավական հսկողություն):

Համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի կողմից իրականացվող բյուջեփայտի կամ ֆինանսարկարեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն «Բյուջեփայտի համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով: Մույն օրենքի 5-րդ գլուխը կարգավորում է ՀՀ համայնքային բյուջեների ձեւավորման կարգը, սկզբունքները, կախարումը, կախարման վերահսկողությունը եւ այլն: Համաձայն 34-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեի կախարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին՝ իր անդամների եւ (կամ) ատոդիպորական մասնագիպացված կազմակերպության միջոցով, Ազգային ժողովը եւ կառավարությունը՝ պետական բյուջեից համայնքին փրված նպատակային հատկացումների օգրագործման, ինչպես նաեւ պետական բյուջեից եւ օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգրագործման եւ դրանց մարման ծրագրի նկատմամբ իր կողմից սահմանված կարգով, պետական կառավարման լիազորված մարմնի միջոցով՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում:

Համայնքի ղեկավարի՝ պետության պարվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանվում է այդ լիազորությունների իրականացման օրինականությունը, արդյունավետությունն ու միասնականությունն ստուգելու նպատակով (մասնագիպական հսկողություն):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77²-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ իրավական եւ մասնագիպական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, իսկ Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետը, որոնք իրականացնում են իրավական ու մասնագիպական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական եւ պետության պարվիրակած լիազորությունների եւ համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ:

Մարզպետը եւ Երեւանի քաղաքապետը իրավական եւ մասնագիպական հսկողությունն իրականացնում են իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած ամենամյա աշխարանքային ծրագրին համապատասխան: ՀՀ կառավարության «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական հսկողության բարձրագույն մարմին ճանաչելու մասին» 20.04.2006թ. թիվ 534-Ն որոշմամբ իրավական հսկողության բարձրագույն մարմին է սահմանվել ՀՀ փարածքային կառավարման նախարարությունը: Առանձին դեպքերում մարզպետը ՀՀ փարածքային կառավարման նախարարության գրավոր համաձայնությամբ կարող է իրականացնել ամենամյա աշխարանքային ծրագրում չընդգրկված միջոցառումներ: Մարզպետի, ՀՀ փարածքային կառավարման նախարարության, ինչպես նաեւ մասնագիպական հսկողության բարձրագույն մարմինների կողմից կիրառվող բոլոր միջամտող միջոցառումները պետք է լինեն գրավոր ու հիմնավորված եւ սահմանված բացառապես օրենքով:

Մասնագիպական հսկողության բարձրագույն մարմինն այն պետական մարմինն է, որի իրավասության մեջ է մտնում այդ լիազորությունը: Մարզպետը, ինչպես նաեւ մասնագիպական հսկողության բարձրագույն մարմինները՝ որպես մասնագիպական հսկողություն իրականացնող մարմին, իրավունք ունեն համայնքի ղեկավարին գրավոր

ցուցումներ փալու պետության պարվիրակաձ լիագորությունների իրականացման ձեւի եւ բովանդակության վերաբերյալ: Այդ կարող է փրվել ինչպէս առանձին համայնքի ղեկավարին, այնպէս է բոլոր համայնքների ղեկավարներին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77²-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Իրավական հսկողության բարձրագույն մարմինը համայնքում կարող է իրականացնել իրավական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական եւ պետության պարվիրակաձ լիագորությունների եւ համայնքի ավագանու լիագորությունների իրականացման նկատմամբ»: 77²-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված է՝ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները համայնքում պարվիրակաձ լիագորությունների նկատմամբ մասնագիտական եւ իրավական հսկողություն կարող են իրականացնել բացառիկ դեպքերում՝ բարձրագույն իրավական հսկողություն իրականացնող մարմնի գրավոր համաձայնությամբ, նրա կամ մարզպետի պահանջով:

Չնայած օրենքի 77²-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական եւ մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինների ցանկում նշված չեն իրավական հսկողության եւ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները, սակայն 77²-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ փարաձքային կառավարման նախարարությունը եւ 8-րդ մասով՝ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինը միաձամանակ սահմանվում են որպէս իրավական եւ մասնագիտական հսկողություն իրականացնող մարմիններ: Նույնը վերաբերում է 77²-րդ հոդվածի 9-րդ մասին, որի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների նորմափիլ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմին սահմանվել է արդարադատության նախարարությունը: Ուստի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77²-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ իրավական հսկողության եւ մասնագիտական հսկողության մարմիններն են՝ մարզպետը, իրավական հսկողության բարձրագույն մարմինը՝ ՀՀ փարաձքային կառավարման նախարարությունը եւ օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77³-րդ հոդվածի համաձայն՝ մարզպետը, իրավական հսկողության բարձրագույն մարմինը եւ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները պարափալոր են տեղական ինքնակառավարման մարմնի պահանջով խորհրդատւություն մատուցել նրանց իրենց սեփական եւ պետության պարվիրակաձ լիագորությունների իրականացման հարցերով: Իրավական եւ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները պարափալոր են տեղական ինքնակառավարման մարմնի պահանջով սեփական եւ պետության պարվիրակաձ լիագորությունների հետ կապված փալ պաշտոնական պարզաբանումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մարզպետը, իրավական հսկողության բարձրագույն մարմինը, օրենքով նախատեսված դեպքերում՝ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմիններն իրավասու են ձանթանատու տեղական ինքնակառավարման մարմինների հսկողության ոլորտին առնչվող փաստաթղթերին: Նրանք կարող են այցելել տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքին պարվանող բոլոր հաստատությունները, ստուգել նրանց գործողությունների եւ անգործության իրավաչափությունը, ինչպէս նաեւ պահանջել դրանց հետ կապված փաստաթղթեր: Իրավական հսկողության բարձրագույն մարմինը եւ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինն օրենքով նախատեսված դեպքերում համայնքի ղեկավարի սեփական եւ պետության պարվիրակաձ լիագորությունների եւ համայնքի ավագանու լիագորություններ

րի իրականացման օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնում են սույն օրենքով եւ «Նայասարանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Նայասարանի Նանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նամայնքի ավագանու՝ օրենսդրությանը հակասող որոշումները փոփոխելու համար մարզպետը համայնքի ղեկավարին առաջարկում է այդ հարցով եռօրյա ժամկետում հրավիրել ավագանու արտահերթ նիստ: Մարզպետի պահանջով հրավիրվող նիստում որոշումը չփոփոխելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում մարզպետը իրավունք ունի որոշումը բողոքարկելու դատարկան կարգով:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մարզպետն իրավունք ունի նրանց առաջարկելու իր սահմանած ժամկետում վերացնել խախտումները: Իր սահմանած խելամիտ ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում մարզպետն իրավունք ունի դիմելու դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ համայնքին պարտավորեցնելու՝ համապատասխան գործողություն կատարելու համար:

Մարզպետի, իրավական հսկողության բարձրագույն մարմնի, մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների գործողությունը կամ անգործությունը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող են բողոքարկվել դատարանում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՏՕ օրենքով որևէ կերպ կարգավորված չեն համայնքի անդամների առջև տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետու լինելու մեխանիզմները: Օրենքում բացակայում են համայնքի անդամների՝ այս իրավունքի իրագործման հիմքերը: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականության հսկողության եւ պետական լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության՝ օրենքով սահմանված կարգն այսօր կարող է վրանգի տակ դնել տեղական ինքնակառավարման ինքնուրույնության գաղափարը:

Այլ ճանապարհով է գնացել Ռուսաստանի Դաշնությունը: ՌԴ Սահմանադրության 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունը վերահսկում է միայն տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով պարտավորված առանձին պետական լիազորությունների իրականացումը: Վերահսկողությունն արտահայտվում է ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքներով սահմանված պարտավորությունների կատարման, այնպես էլ պարտավորված առանձին պետական լիազորությունների իրականացման մեջ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՌԴ օրենքով սահմանված է նաև վերահսկողության իրավունք եւ մեխանիզմներ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով պարտավորված առանձին պետական լիազորությունների իրականացման նպատակով հարկացված ֆինանսական միջոցների եւ նյութական ռեսուրսների նկատմամբ: Նույնիսկ այս պարագայում, երբ խոսքը վերաբերում է օրենքով պարտավորված առանձին պետական լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով վերահսկողությանը, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 2000թ. նոյեմբերի 30-ի թիվ 15-Պ որոշմամբ հաստատել է, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ պետական հսկողությունը, դրա իրականացման ձևերը, մեխանիզմները, կարգը չեն կարող խախտել տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը եւ հակասել իշխանությունների փոխադարձության սկզբունքին: Այս որոշմամբ դատարանը հակասահմանադրական համարեց Ռուսաստանի որոշ մարզերի կանոնադրությունների այն դրույթները, որոնցով սահմանված էր պետական հսկողության հնարավորությունը ոչ միայն տեղա-

կան ինքնակառավարման մարմիններին օրենքով պարզապես անվավերացված առանձին պետական լիազորությունների իրականացման նկատմամբ, այլևս տեղական ինքնակառավարման մարմինների այլ գործունեության նկատմամբ:

ՆՈՂՎԱԾ 109

Կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Մեկնաբանվող հոդվածը⁶⁶ 1995թ. ՄՍՍՍ հանրապետության փոփոխության օրենքով փոփոխված և փոփոխված է եղել երկու մասից, այն է՝

«Մարզպետի ներկայացմամբ կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու դեպքում կառավարության որոշմամբ երեսնօրյա ժամկետում անցկացվում է արտահերթ ընտրություն: Մինչև համայնքի նորընտրված ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը վարչապետը նշանակում է քաղաքային, իսկ մարզպետը՝ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար»:

2005թ. սահմանադրական փոփոխությունների հետևանքով հոդվածի երկրորդ մասը հանվել է, իսկ առաջին մասում ավելացվել է «սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա» բառակապակցությունը և հանվել «մարզպետի ներկայացմամբ» բառերը: Սույն փոփոխությունը համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով պաշտոնանկ անելու նոր մեխանիզմ է ձեռավորում, միաժամանակ ամրագրում է համայնքի ղեկավարի պաշտպանվածության ևս մի երաշխիք. այն է՝ **կառավարությունը նրան կարող է պաշտոնանկ անել միայն սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա:**

Միջազգային սահմանադրական պրակտիկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրների սահմանադրություններում առկա են տեղական ինքնակառավարման մարմինների՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող նորմեր: Իհարկե, ՄՍՍՍ հանրապետամբ և օրենքներով ևս տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն դատական պաշտպանության իրավունք, սակայն Հայաստանի Հանրապետությունում ռեալ իրականությունն այնպիսին է, որ շատ հաճախ տեղական ինքնակառավարման մարմինները փորձեր պատճառներով չեն կարող օգտվել իրենց այդ իրավունքից, ուստի այդ մտահոգությունից ելնելով էլ ՄՍՍՍ հանրապետությունում ամրագրվել է համայնքի ղեկավարի լրացուցիչ պաշտպանության այդ երաշխիքը, ըստ որի՝ կառավարությունն օրենքով նախատեսված դեպքերում **սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա** կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին: Դա իմպերատիվ նորմ է, որը թղթակցում է ՄՍՍՍ հանրապետության 100-րդ հոդվածի 8-րդ կետում ամրագրված դրույթի հետ, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է ՄՍՍՍ հանրապետամբ, 2002թ. մայիսի 7-ին ընդունված՝ «Տե-

⁶⁶ Սույն հոդվածի մեկնաբանմանը մասնակցել է ՄԳ աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը:

ղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և դրա փոփոխություններով, այլ օրենքներով և իրավական ակտերով: Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՏՕ-5-Ն օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքի ավագանին՝ ... որոշում է կայացնում առաջարկություն ներկայացնել մարզպետին, իսկ Երեւանում՝ Երեւանի քաղաքապետին, համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու վերաբերյալ: 2008թ. դեկտեմբերի 26-ի՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն ներկայումս Երեւանում թաղային համայնքները փոխարինված են վարչական շրջաններով, որոնց ղեկավարներին նշանակում և ազատում է քաղաքապետը:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկությունը կարող է արվել համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի գրավոր նախաձեռնությամբ: Այդ առաջարկությունը համայնքի ավագանին կարող է անել համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Սահմանադրությունը, օրենքները և ավագանու որոշումները խախտելու կամ համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի սրացված եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարելու կամ պետության պարտվիրակած լիազորություններն անբավարար կատարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին հակասող մի շարք որոշումները, կամ առկա է համայնքի ղեկավարի կողմից ավագանու որոշումներ պարբերաբար խախտելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը:

Արձանագրությունը մարզպետի համար հիմք է իր կողմից համայնքի ղեկավարի անվստահության գործընթացը նախաձեռնելու համար: Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունն ընդունվում է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի ձայների կեսից ավելիով: Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին՝ դրան կցելով համայնքի ղեկավարի կարծիքը: Վերջինս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին համայնքից սրացած փաստաթղթերը եռօրյա ժամկետում ներկայացնում է կառավարություն՝ կցելով իր կարծիքը:

Միաժամանակ, նույն օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել կառավարության կողմից նաև մարզպետի ներկայացմամբ՝ նույն, վերը նշված հիմքերով: Մարզպետը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու որոշման նախագիծն իր հիմնավորումներով կառավարություն ներկայացնելուց առաջ ուղարկում է համայնքի ղեկավարին, որը, ստանալով որոշման նախագիծը, երկշաբաթյա ժամկետում գումարում է համայնքի ավագանու արտահերթ նիստ: Համայնքի ավագանին իր նիստում քննարկում է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին մարզպետի հիմնավորումները և, լսելով վերջինիս, ընդունում է համապատասխան հիմնավորումներով որոշում: Համայնքի ավագանու որոշումը, որին կցվում է համայնքի ղեկավարի կարծիքը, եռօրյա ժամկետում ուղարկվում է պետական լիազորված մարմին և մարզպետին, իսկ վերջինս պետական լիազորված մարմնի միջոցով կառավարություն է ներկայացնում իր հիմնավորումներով որոշման նախագիծը՝ կցելով համայնքի ղեկավարի կարծիքը և համայնքի ավագանու որոշումը: Կառավարությունը սահմանված կարգով քննարկում է համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ մարզպետի առաջարկությունը:

Վերոնշյալ օրենքի 73-րդ հոդվածով (որը փոփոխության է ենթարկվել 2008թ. դեկտեմբերի 26-ի ՌՕ-8-Ն օրենքով) սահմանված է, որ համայնքի ավագանու կամ համապարասխան մարզպետի՝ օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի պաշտոնանկության նախաձեռնությունը ՏՏ կառավարությունը մեկամսյա ժամկետում քննարկում է: **որոշում է ընդունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն ստանալու նպատակով ՏՏ սահմանադրական դատարան դիմելու** կամ համայնքի ղեկավարի պաշտոնանկության նախաձեռնությունը մերժելու վերաբերյալ: **ՏՏ սահմանադրական դատարանի՝ համայնքի ղեկավարի պաշտոնանկության հիմքերի մասին եզրակացությունն ստանալուց հետո** ՏՏ կառավարությունը մեկամսյա ժամկետում քննարկում է: **որոշում է ընդունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու** կամ պաշտոնանկության նախաձեռնությունը մերժելու վերաբերյալ:

Այսպեղ պարզ չէ, թե որ դեպքում որ որոշումն է ընդունվում: Պետք է հստակեցնել: Արդյոք կառավարությունը կարող է դրական եզրակացության առկայությունից հետո պաշտոնանկ չանել ղեկավարին: Չնայած Սահմանադրության փոքսրից կարծես թե այդպես է, սակայն կարծում ենք, որ դա ճիշտ չէ:

Միաժամանակ, անհասկանալի է նույն 73-րդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ **պաշտոնանկ անելու կառավարության որոշումը համայնքի ղեկավարը կամ ավագանին կարող են բողոքարկել դատարան՝ կառավարության որոշումն ստանալուց հետո՝ փաստօրյա ժամկետում:** Սրացվում է, որ ՏՏ սահմանադրական դատարանի եզրակացության դեպքում **համայնքի ղեկավարը կամ ավագանին կարող են պաշտոնանկության վերաբերյալ կառավարության որոշումը բողոքարկել դատարան,** ինչն անփրամաբանական է:

2008թ. դեկտեմբերի 26-ի՝ «Երևան քաղաքում փողական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով նույն մեխանիզմն է նախատեսված նաև քաղաքապետին պաշտոնանկ անելու դեպքում:

Այսպես, օրենքի 12-րդ հոդվածի համաձայն.

«Երևան քաղաքի ավագանին՝ ...

3) սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում քաղաքապետին անվարահություն հայտնելու վերաբերյալ»:

Օրենքի 40-րդ հոդվածը նախատեսում է քաղաքապետին պաշտոնանկ անելու գործընթացը: Նամաձայն նշված հոդվածի՝ ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կարող է ներկայացնել քաղաքապետին անվարահություն հայտնելու որոշման նախագիծ:

Քաղաքապետին անվարահություն է հայտնվում, եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

ՏՈՂՎԱԾ 110

1. Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունում է կառավարության առաջարկով: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից:

2. Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով:

3. Օրենքով սահմանված կարգով կարող են սրեղծվել միջհամայնքային միավորումներ:

1. Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ համայնքների միավորումը կամ բաժանումը կատարվում է հանրության շահերից ելնելով, որի ներքո հասկանում ենք համայնքային նշանակության կարեւոր հարցերի լուծումը, ծախսերի նվազեցումը եւ այլն: Այսինքն՝ «հանրության շահ» բառակապակցությունը ենթարկվում է լայն մեկնաբանության:

Համայնքները կարող են միավորվել միմյանց հետեւյալ հիմքերով՝

- համայնքների կամավոր նախաձեռնությամբ՝ ավագանիների՝ այդ մասին ընդունած որոշումների հիման վրա,

- ելնելով հասարակության շահերից՝ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ,

- եթե տեղական ընտրությունների արդյունքներում համայնքում երկու անգամ անընդմեջ չի ձեւավորվում տեղական ինքնակառավարման մարմիններից մեկը:

Համայնքների խոշորացումն իրականացվում է նախապես փվյալ համայնքների բնակչության հետ խորհրդակցելով կամ տեղական հանրաքվե անցկացնելով:

«Հայաստանի Հանրապետության վարչապարաձքային բաժանման մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածը սահմանում է, որ վարչապարաձքային միավորներ են հանդիսանում մարզերն ու համայնքները:

Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր:

Նույն օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության համայնքների փոփոխումը, նոր համայնքների սրեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ սույն օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելու միջոցով:

Միավորվող համայնքները պետք է ունենան ընդհանուր սահման: Համայնքների սահմանների նկարագրությունը եւ սահմանների նկարագրության փոփոխությունները կառավարության առաջարկությամբ սահմանվում են վերը նշված օրենքով:

Նորաստեղծ համայնքի անվանումը կատարվում է «Հայաստանի Հանրապետու-

թյան վարչապարաձքային բաժանման մասին» ՆՆ օրենքով՝ հաշվի առնելով ավագանու կարծիքը:

Նորաստեղծ համայնքը միավորված համայնքների իրավահաջորդն է, իսկ համայնքի փարածքն ու սեփականությունը համապատասխանում են միավորված համայնքների փարածքին եւ սեփականությանը:

Սահմանադրության այս հոդվածը նախատեսում է, որ կառավարությունը մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը նշանակում է փեդական հանրաքվեներ, որոնք իրավական հիմք են հանդիսանում համայնքների միավորման կամ առանձնացման հարցում: «Տեղական հանրաքվեների մասին» ՆՆ օրենքի հոդված 7-ի մաս 1-ը նախատեսում է, որ. «Վամայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով Նայաստեղծի Նանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ համապատասխան համայնքներում նշանակում է փեդական հանրաքվեներ»:

Վերը նշված օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ փեդական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով փեդական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաեւ օրենքով նախատեսված հարցերը:

Տեղական հանրաքվեի անցկացումը կրում է խորհրդարկական բնույթ, եւ դրա արդյունքները չեն առաջացնում որեւէ իրավական հետեւանք, քանի որ, անկախ փեդական հանրաքվեի արդյունքներից՝ համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել:

2. Մեկնաբանվող հոդվածի 2-րդ դրույթն ամրագրում է, որ համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաեւ նոր ձեւավորված համայնքներում փեդական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները պետք է սահմանվեն օրենքով: Մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքն ուղղակիորեն չի սահմանում համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները եւ կարգը: Ըստ Տեղական ինքնակառավարման ելրոպական խարտիայի 2-րդ հոդվածի՝ համայնքների ձեւավորման սկզբունքները պետք է արտացոլված լինեն պետությունների ներքին օրենսդրություններում, ուստի հարցի լայն մեկնաբանությունից բխում է, որ համայնքների միավորումը եւ բաժանումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված սկզբունքների հիման վրա: ՆՆ օրենքը չի սահմանում նաեւ նոր ձեւավորված համայնքներում փեդական ինքնակառավարման մարմինների ընտրության կոնկրետ ժամկետները, սակայն ենթադրվում է, որ ինդիքը կարգավորվում է ՆՆ ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածով:

3. Սահմանադրության 110-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից ելնելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ:

Սահմանադրության այս դրույթն արտացոլված է 1985թ. Տեղական ինքնակառավարման ելրոպական խարտիայում, որի 10-րդ հոդվածով նախատեսվում է, որ փեդական ինքնակառավարման մարմինները կարող են ստեղծել միջհամայնքային ընկերակցություններ (ասոցացիաներ) համընդհանուր խնդիրներ լուծելու համար⁶⁷:

Միջհամայնքային միավորումների ստեղծումն ամրագրվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՆ օրենքով եւ իրականացվում համայնքների, Ազգային ժողովի

⁶⁷ Տեղական ինքնակառավարման ելրոպական խարտիա, վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001թ.:

կամ կառավարության նախաձեռնությամբ:

Միջհամայնքային միավորման սրեղծումը չի ենթադրում համայնքների միավորում, համայնքները կարող են միավորվել միմիայն օրենքով սահմանված կարգով՝ «ՏՏ վարչապարաձքային բաժանման մասին» ՏՏ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով:

Միջհամայնքային միավորումների ձեւավորման եւ համայնքների խոշորացման հիմքեր են հանդիսանում բնակչության շահերը, համայնքային խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակը:

Օրենսդրի այս մտրեցումը թվում է արդարացված եւ փրամաբանական՝ հաշվի առնելով, որ միջհամայնքային միավորումներ սրեղծելու որոշումը հիմնվում է համայնքների կամահայրություն, կամավորության եւ խնդիրները համարել լուծելու ցանկության վրա, եւ այն, որ միջհամայնքային միավորումների գործունեության կայացած փորձ եւ պրակտիկա Տայասսրանում դեռեւս չկա եւ դրա օրենսդրական մանրակրկիտ կարգավորումը պէրք է դիտվեր ավելորդ եւ ոչ նպատակային, քանի որ այն կարող է խոչընդոտել միջհամայնքային միավորումների սրեղծման եւ զարգացման բնականոն ընթացքը:

Օրենսդիրը «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով կանոնարգում է հետեւյալը.

1. համայնքներն իրավունք ունեն սրեղծելու միջհամայնքային միավորումներ համայնքների որոշակի խնդիրներ լուծելու եւ ծախսերը նվազեցնելու նպատակով.

2. միջհամայնքային միավորումներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ⁶⁸: Սա նշանակում է, որ միջհամայնքային միավորման գույքն առանձնացված է դրա կազմի մեջ մտնող համայնքների սեփականություն հանդիսացող գույքից, չնայած որ միջհամայնքային միավորման գույքն առաջանում է միավորմանը մասնակից համայնքների գույքային մասնակցությունից.

3. միջհամայնքային միավորում կազմելու վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, որոնք ստորագրվում են համայնքների ղեկավարների կողմից եւ ենթակա են հաստատման համայնքի ավագանու կողմից⁶⁹.

4. միջհամայնքային միավորման կառավարման մարմինն է միավորման խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարները.

5. միջհամայնքային միավորումն իր կազմից ընտրում է միավորման նախագահ.

6. միջհամայնքային միավորման խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է րվյալ խորհրդի անդամների կեսից ավելին.

7. միջհամայնքային միավորների որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի սուբյեկտ է եւ վարչապարաձքային միավոր:

Միջհամայնքային միավորումն ունի բյուջե, իրականացնում է համայնքներին վերապահված եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով միջհամայնքային միավորմանը փոխանցված լիազորությունները: Դեռեւս որեւէ օրենքով հստակեցված չեն միջհամայնքային միավորումների իրավասությունների շրջանակները: Տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացումը (ինչպես պարտադիր, այնպես էլ պատվիրակված) վերապահել

⁶⁸ Հոդված 78. Միջհամայնքային միավորումներն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ:

⁶⁹ Հոդված 79. Միջհամայնքային միավորումներն ստեղծվում են համայնքների ղեկավարների կնքած եւ համայնքների ավագանիների հաստատած պայմանագրերի հիման վրա:

միջհամայնքային միավորումներին: Միջհամայնքային միավորման կազմի մեջ մտնող համայնքներն ինքնուրույն են սահմանում այն խնդիրները, որոնց շրջանակներում նրանք նախատեսում են իրենց համագործակցությունը:

Միջհամայնքային միավորումներին վերը նշված օրենքով կարող են փոխանցվել նաև այլ լիազորություններ: Որպես իրավաբանական անձ՝ միջհամայնքային միավորումն ունի Նայասարանի Նանրապետության կամ միջհամայնքային միավորման գինանշանի պարկերով ու իր անվանումով կնիք:

Միջհամայնքային միավորումը հաստատվում է միջհամայնքային միավորման աշխատակազմի կառուցվածքը եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքով սահմանված կարգով ինքնուրույն կազմավորում է այն: Միջհամայնքային միավորումների գործունեության կարգը սահմանվում է վերը նշված օրենքով:

Միջհամայնքային միավորումներում չեն ընդգրկվում 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքները: Այդ համայնքները «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքով փեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորություններն իրականացնում են ինքնուրույն եւ ամբողջ ծավալով:

Գ Լ ՈՒ Խ 8

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՆԱՆՐԱՔՎԵՆ

ՆՈՂՎԱԾ 111

1. Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Տանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ:

2. Տանրաքվեն նշանակում է Տանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Տամապարասխան որոշումը Ազգային ժողովն ընդունում է պարզամայրների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Տանրապետության Նախագահը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն սրանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, կարող է այն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում:

4. Ազգային ժողովի կողմից պարզամայրների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը Տանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

5. Եթե նախաձեռնությամբ հանդես է գալիս Տանրապետության Նախագահը, ապա Ազգային ժողովը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն սրանալուց հետո՝ եռամսյա ժամկետում, նախագիծը հանրաքվեի դնելու հարցը ներկայացնում է քվեարկության: Եթե Ազգային ժողովի պարզամայրների ընդհանուր թվի մեծամասնությունը կողմ է քվեարկում նախագիծին, ապա վերջինս համարվում է ընդունված, եւ այն Տանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում իր սահմանած ժամկետում:

1. Պայմանավորված առանցքային նշանակություն ունեցող այն փաստարկով, որ Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է եւ օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, ի դեմս հանրաքվեի ինստիտուտի, Սահմանադրության ընդունման եւ փոփոխման համար սահմանված է ժողովրդաիշխանության իրականացման այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն է տալիս մասնակցելու այդ գործընթացին ընտրական իրավունքով օժտված յուրաքանչյուր քաղաքացու:

Տանրաքվեն՝ ազատ ընտրությունների հետ մեկտեղ, համարվում են ժողովրդի իշխանության անմիջական դրսեւորման եւ արքահայրման բարձրագույն ձեւեր /*տե՛ս Սահմանադրության 2-րդ հոդվ. մեկնաբանությունը*: Սահմանադրության 111-րդ հոդվածը կոնկրետացնում է հանրաքվեի փարապետակներից մեկի՝ սահմանադրական հանրաքվեի հետ կապված հարաբերությունների սահմանադրական կարգավորումը:

Սահմանադրությունների ընդունման և փոփոխման ինստիտուցիոնալ պարամետրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտասահմանյան երկրների երկարատև գործնական փորձը հարստացվել է սահմանադրությունների ընդունման և փոփոխման փորձերով՝ եղանակներով, որոնք առանձնանում են ինչպես ընդհանուր, այնպես էլ ակնհայտ առանձնահատուկ գծերով:

Ի տարբերություն, այսպես կոչված, շնորհիվ սահմանադրությունների, սահմանադրությունների ընդունման և փոփոխման առավել ժողովրդավարական եղանակներ են հանդիսանում դրանց ընդունումը Սահմանադիր ժողովի կամ խորհրդարանի կողմից: Ժողովրդավարության անհամեմատ նախընտրելի եղանակ է համարվում դրանց ընդունումը և փոփոխումը հանրաքվեի միջոցով:

Սահմանադրությունների ընդունումը Սահմանադիր ժողովի կողմից՝ իրականացվում է երկու եղանակով. ա) Սահմանադիր ժողովը միաժամանակ մշակում է ընդունում է Սահմանադրությունը, Կոնստիտուցիոնալ դեպարտամենտ, ըստ էության, կարարելով խորհրդարանի դեր: Մասնավորապես, այդ եղանակով են ընդունվել ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրությունը (Ֆիլադելֆիայում՝ Ազգային կոնվենտի կողմից), Ֆրանսիայի 1848թ. Սահմանադրությունը՝ Ֆրանսիայի Սահմանադիր ժողովի կողմից և այլն, բ) Սահմանադիր ժողովը միայն մշակում է սահմանադրության նախագիծը, որը, որպես կանոն, ընդունվում է հանրաքվեի միջոցով: Երկրորդ եղանակն առավել փորձարկված է: Ի դեպ, այս եղանակին են սկսել նախապարվություն փայ նաեւ այն երկրները, որոնց սահմանադրությունները նախկինում ընդունվել են առաջին եղանակով. այսպես, Ֆրանսիայի արդեն 1958թ. Սահմանադրությունն ընդունվել է երկրորդ եղանակով:

Կոնկրետ մեր երկրում և ԱԳՆ երկրներում նախապարվությունը տրվել է հանրաքվեի միջոցով սահմանադրությունների ընդունմանը: Ընդ որում, սահմանադրությունների նախագծերի մշակումն իրականացվել է կառավարության, խորհրդարանի կամ երկրի նախագահի կողմից ձեռավորված հանձնաժողովների կողմից:

Խորհրդարանի կողմից սահմանադրությունների ընդունման պրակտիկան լայն փորձում ուներ նախկին Խորհրդային միությունում և միութենական հանրապետություններում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման և փոփոխման միակ եղանակը, համաձայն Սահմանադրության 111-րդ հոդվածի, համարվում է հանրաքվեն: Հիշյալ հոդվածով, մասնավորապես, ամրագրված են հետևյալ հիմնադրույթները՝

ա) Սահմանադրությունն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու միակ եղանակը հանրաքվեն է,

բ) հանրաքվե կարող են նախաձեռնել Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը:

Հանրաքվեի միջոցով Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություն կատարելու ինստիտուցիոնալ միջազգային պրակտիկայում ունի թե՛ գիտական և թե՛ գործնական մեծ արժեք ներկայացնող դրսևորումներ: Նախ՝ բազմաթիվ երկրներում հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք վերապահված է ինչպես խորհրդարանին ու երկրի Նախագահին, այնպես էլ՝ կառավարությանը և, ինչպես նշվեց, որոշակի թվով քաղաքացիների (քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվե անցկացնելու ինստիտուցիոնալ): Քաղաքացիական նախաձեռնության կարգով նախագիծ կարող է ընդունվել միայն այն քաղաքացիներից, որոնք ապահովել են Սահմանադրությանը կամ օրենքով սահմանված նվազագույն քվորան, որը խիստ փոփոխվող ցուցա-

նիշ է: Այսպես, Լապովիայի «Ժողովրդական քվեարկության եւ օրենսդրական նախաձեռնության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով կարող է նախագիծ ներկայացնել Լապովիայի առնվազն 10.000 քաղաքացի: Շվեյցարիայի օրենսդրությամբ այդ իրավունքը վերապահված է առնվազն 100.000 քաղաքացու, Լիբիայում՝ առնվազն 300.000 քաղաքացու, Սլովակիայում՝ 350.000 քաղաքացու, Իսրայիլայում՝ 500.000 քաղաքացու, Նոր Զելանդիայում՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 10 տոկոսին եւ այլն:

Գերակշռող է այն մտպեցումը, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե ով է նախաձեռնել Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություն կատարելու առնչությամբ հանրաքվե, այն նշանակում է քվյալ երկրի Նախագահը:

Բոլոր այն դեպքերը, որոնց պարագայում արգելվում է Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություն կատարելու առնչությամբ հանրաքվե նշանակել, նախատեսված են Սահմանադրությամբ կամ համապատասխան օրենքներով: Դրանց ցանկը եւս միասնական չէ, թեպետ կարելի է առանձնացնել որոշ ընդհանուր հիմքեր: Այսպես, որպես կանոն, նշված բնույթի հանրաքվե չի կարող նշանակվել երկրի Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում (այսինքն՝ վերջինիս փոխարինող պաշտոնատար անձն օժտված չէ այդ եւ նմանաբնույթ որոշ լիազորություններով): Առանձին երկրներում հանրաքվե չի կարող նշանակվել նաեւ մի շարք այլ դեպքերում: Օրինակ՝ Սլովակիայում արգելվում է հանրաքվե անցկացնել Ազգային խորհրդի ընտրություններից 90 օր առաջ ընկած ժամանակահատվածում: Միաժամանակ, այդ երկրի «Նանրաքվեի մասին» օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվե կարող է նշանակվել Ազգային խորհրդի ընտրության օրը: Դանիայի Սահմանադրության համաձայն՝ որոշ հարցադրումներով արգելվում է միաժամանակ հանրաքվե նշանակել երկու իրարամերժ նախագծերով եւ այլն:

ՆՏ Սահմանադրության 111-րդ հոդվածի դրույթների գործնական կիրառումն ապահովվում է ինչպես Սահմանադրության մի շարք հոդվածներով, որոնք համակարգված ամրագրում են այդ ինստիտուտին առնչվող հիմնադրույթները, այնպես էլ մի շարք օրենսդրական ակտերով, որոնցից, թերեւս, էական նշանակություն ունեն Ազգային ժողովի կողմից 2001թ. սեպտեմբերի 12-ին ընդունված՝ «Նանրաքվեի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքը եւ 2002թ. փետրվարի 20-ին ընդունված՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքը:

2. Ինչպես նշվեց, Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեի նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Նանրապետության Նախագահը եւ Ազգային ժողովը: Այս դրույթից բխում է, որ հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու միջնորդությամբ մյուս պետական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են սահմանված կարգով դիմել բացառապես Նանրապետության Նախագահին կամ Ազգային ժողովին: Մի շարք երկրների սահմանադրություններում ամրագրված է ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը, երբ ընտրողների որոշակի նվազագույն թվին քրվում է հնարավորություն նախաձեռնելու Սահմանադրության ընդունման կամ փոփոխության նախագծի ներկայացում օրենսդիր մարմին:

Սահմանադրության 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի նշանակման բացառիկ լիազորությունը պարկանում է Նանրապետության Նախագահին: Սակայն հանրաքվեի նշանակումը Նախագահը կատարում է Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Եթե նախաձեռնության հեղինակը Նանրապետության

Նախագահն է, ապա նա պարտավոր է հանրաքվեի նշանակման համար դիմել Ազգային ժողովին՝ համաձայնություն ստանալու համար: Իսկ եթե նախաձեռնության հեղինակը Ազգային ժողովն է, ապա նա արդեն իր որոշմամբ Նանրապետության Նախագահին առաջարկում է նշանակել սահմանադրական հանրաքվե: Սահմանադրության 111-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստից բխում է, որ երկու դեպքում էլ Ազգային ժողովը համապատասխան որոշումները /սահմանադրական հանրաքվե առաջարկելու մասին կամ սահմանադրական հանրաքվեին համաձայնություն փալու մասին/ ընդունում է պարզամակորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հանրաքվե նշանակել Նանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտրի Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը: Ի դեպ, հիշյալ դրույթից զատ, «Նանրաքվեի մասին» Հայաստանի Նանրապետության օրենքի 5-րդ հոդվածը նախատեսում է հանրաքվեի անցկացումն արգելող այլ հիմքեր՝ ա) Հայաստանի Նանրապետության բնակչության ավելի քան մեկ երրորդն ընդգրկող փարածքում արտակարգ կամ ռազմական դրություն է հայտարարվել էր բ) Հայաստանի Նանրապետությունում արտակարգ դրությունը վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում: Այս երկու հիմքերը կարող են իրավաչափ համարվել, քանի որ բխում են Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներից:

Նանրաքվեների անցկացման կարգը, ըստ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 7-րդ կետի, կարող է սահմանվել միայն օրենքով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի այս հարաբերությունների կարգավորմանը նվիրված օրենսդրական նորմերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) առաջին խմբին դասվում են այն նորմերը, որոնք պարզապես կրկնում են Սահմանադրության 111-րդ հոդվածի դրույթները էր բ) երկրորդ խմբին դասվող նորմերը ներառում են Սահմանադրությունից բխող նորմեր: Օրինակ՝ Սահմանադրության դրույթները բառացիորեն կրկնում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Նանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 3-րդ մասը. «Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու ... հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ առաջարկ անելու կամ համաձայնություն փալու մասին Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են պարզամակորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Նույն օրենքի 75-րդ հոդվածով ամրագրված են Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագծերին ներկայացվող պահանջները, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ, սակայն բխում են դրանից:

Այսպես, ըստ այդ հոդվածի՝ նշված նախագծերը ներառում են. ա) Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու հիմնավորումը, բ) Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը, գ) Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ առաջարկ անելու կամ համաձայնություն փալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ նախագծին կցվում է փեղեկանք, որտեղ ներկայացվում է Սահմանադրության կամ օրենքի փոփոխող նախագիծը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Նանրապետության օրենքը սահմանում է նաև այն պահանջները, որոնք ներկայացվում են Նանրապետության Նախագահի նախաձեռնությանը, մասնավորապես, վերջինս պետք է ներառի՝ նշված օրենքի 75-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը էր որպես հիմնական զեկուցող հանդես

եկող՝ Հանրապետության Նախագահի լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը (օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մաս): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը համարվում է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված, եթե այն նշված օրենքի պահանջներին համապատասխան պաշտոնապես ներկայացվել է Ազգային ժողովի նախագահին: Նշված նախագծերի առնչությամբ եզրակացություններ են ներկայացնում ինչպես Հանրապետության կառավարությունը (30-օրյա ժամկետում), այնպես էլ գլխադասային հանձնաժողովը (40-օրյա ժամկետում):

Ըստ վերը նշված օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է 3 ընթերցմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի առաջարկությամբ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցով հանրաքվե նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը՝ համապատասխան նախագծի հետ մեկտեղ, դրա ընդունումից հետո՝ 7-օրյա ժամկետում, ուղարկում է Հանրապետության Նախագահին:

Նշված օրենքի հաջորդ՝ 78-րդ հոդվածով սահմանված է Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին Հանրապետության Նախագահի նախաձեռնության քննարկման կարգը: Նշված հոդվածում Սահմանադրությունից բխող լրացուցիչ նորմն այն է, որ Հանրապետության Նախագահի ներկայացուցիչը լիազորվում է եզրափակիչ փուլում փոփոխության ենթարկել քննարկված նախագիծը եւ առաջարկել. «ա) Ազգային ժողովի որոշմամբ համաձայնություն տալ նշանակել հանրաքվե՝ Հանրապետության Նախագահի համար ընդունելի առաջարկների հիման վրա փոփոխված նախագիծն ընդունելու հարցով, բ) քննարկված նախագիծը Հանրապետության Նախագահի համար ընդունելի առաջարկներին համապատասխան վերջնական րեսքի բերելու նպատակով քննարկումը քվեարկության փուլում հեղափոխել մինչև հաջորդ ջրօրյա նիստերի սկիզբը, որը համարվում է ընդունված առանց քվեարկության»:

Սահմանադրությունից բխող կարևոր նորմեր է բովանդակում նաև «Հանրաքվեի մասին» Նայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ հանրաքվեի հանձնաժողովների համակարգի, դրանց կազմավորման, լիազորությունների, աշխատանքների կազմակերպման, գործունեության սկզբունքների, որոշումների, գործողությունների եւ անգործության բողոքարկման կարգի, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները կազմելու կարգի, հանրաքվեի ֆինանսավորման, հանրաքվեի նախապարաստվելիս քարոզչության, դիտորդական առաքելության իրավունքների, հանրաքվեի քվեարկության կարգի, հանրաքվեի արդյունքների ամփոփման, ինչպես նաև պարասխանավորության վերաբերյալ:

3. Սահմանադրության 111-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը Հանրապետության Նախագահն ստանալուց հետո՝ 21-օրյա ժամկետում կարող է առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Եթե վերադարձված նախագիծն ընդունվում է Ազգային ժողովի պարզամակորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով, ապա այն Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում: Նման ընթացակարգը պայմանավորված է քաղաքական հավասարակշռության ու

կայունության պահպանման նկատառումներով և երաշխիք է Սահմանադրության կայունության համար: Վերջինս երկրում սահմանադրականության հաստատման կարևոր նախադրյալներից է: Բացառիկ կարևոր է, որ սահմանադրական փոփոխությունների ընթացակարգային դժվարությունները, մի կողմից, չխոչընդոտեն սահմանադրական զարգացումներին, մյուս կողմից՝ չհաթարեն սահմանադրական կայունությունը:

Վերևում արդեն անդրադարձանք հանրաքվեն արգելելու վերաբերյալ «Նանրաքվեի մասին» Տայասրանի Նանրապետության օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված լրացուցիչ հիմքերի իրավաչափությանը: Նշված հոդվածով սահմանված է նաև մեկ այլ արգելք՝ դա այն է, որ հանրաքվեի արդյունքների պաշտոնական հրապարակման պահից սկսած՝ մեկ տարվա ընթացքում, միևնույն հարցի կամ միևնույն բովանդակությունն ունեցող հարցի վերաբերյալ չի կարելի անցկացնել կրկնակի հանրաքվե: Կարծում ենք, այս սահմանափակումը համահունչ է Սահմանադրության 43-րդ հոդվածով ամրագրված հիմնադրություններին, քանզի այն որեւէ կերպ, թերևս, չի առնչվում ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կնախման, հանրության առողջության ու բարոյակալության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարզի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտության խնդրի հետ:

Սահմանադրությանը չի համապատասխանում, թերևս, նույն օրենքի նաև 7-րդ հոդվածի 7-րդ մասը, ըստ որի՝ հանրաքվեն պետք է անցկացվի հանրաքվե անցկացնելու մասին Նանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ շուր, քան 45 և ոչ ուշ, քան 60 օր հետո: Նշված մասի խմբագրությունն այնպիսին է, որ հիշյալ նորմը կարող է հավասարապես վերաբերել ինչպես Նանրապետության Նախագահի, այնպես էլ Ազգային ժողովի նախաձեռնությամբ ներկայացված նախագծին: Ընդ որում, երկու դեպքում էլ հիշյալ նորմը խիստ վիճարկելի է, քանի որ Սահմանադրության 111-րդ հոդվածը բացառապես Ազգային ժողովին ու Նանրապետության Նախագահին է վերապահել նախագիծը հանրաքվե դնելու ժամկետը: Տվյալ դեպքում, կարծես, օրենքը սուկ կարգավորում է Նանրապետության Նախագահի հրամանագիրը հրապարակելուց հետո հանրաքվե անցկացնելու նվազագույն ու առավելագույն ժամկետները, սակայն ակնհայտ է, որ այդ ժամկետը ես մտնում է «նախագիծը հանրաքվեի դնելու ժամկետ» հասկացության մեջ: Նույն փաստարկներով Սահմանադրության հետ համապատասխանության խնդիրներ ունի նաև նշված հոդվածի հաջորդ՝ 8-րդ մասը, որում սահմանված է, որ հանրաքվեի դրվող նախագիծը հրապարակվում է «Տայասրանի Նանրապետության պաշտոնական տեղեկագրում», պետական մարմինների հիմնած գանգվածային լրատվության միջոցներով հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ: Տվյալ դեպքում դարձյալ սահմանափակվում է Ազգային ժողովի և Նանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունը: Տվյալ դեպքում անտեսվել է նաև, որ պետական մարմինն իրավասու է հիմնել գանգվածային լրատվության միջոց:

4. Նամենապական վերլուծությունը վկայում է այն մասին, որ Սահմանադրության նախկին խմբագրությամբ Սահմանադրության ընդունման և փոփոխման համար հանրաքվեի վերաբերյալ 111-րդ հոդվածն էական չի տարբերվում ներկա խմբագրությունից, պարզապես փորձ է արվել հնարավորինս հստակեցնել հարկապես Նանրապետության Նախագահի նախաձեռնությամբ հանրաքվե նշանակելու ընթացակարգը, ինչպես նաև այդ հարաբերություններում Ազգային ժողովի լիազորությունները և նրա կողմից ընդուն-

վող իրավական ակտերը:

Այդ իսկ նկատառումով, նախ, հստակեցվել է, որ հանրաքվե նշանակելու վերաբերյալ համաձայնություն փախու կամ առաջարկություն ներկայացնելու համար Ազգային ժողովն ընդունում է որոշում՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Նախկին խմբագրությամբ պարզապես ամրագրված էր առաջարկություն ներկայացնելու կամ համաձայնություն փախու լիազորությունը: Հաջորդ նորույթն այն է, որ Սահմանադրության 111-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահի՝ նախաձեռնությամբ հանդես գալու դեպքում Ազգային ժողովը նախագիծն ստանալուց հետո այն քվեարկության է դնում եռամսյա ժամկետում: Բացի դրանից, նախկին խմբագրությամբ հստակ ամրագրված չէր, որ իր նախաձեռնությամբ հանրաքվեի դրվող նախագիծն Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում Տայասրանի Հանրապետության Նախագահն ինչ ժամկետում կարող է այն հանրաքվեի դնել: Գործող խմբագրությամբ սահմանված է, որ նախագիծը կարող է հանրաքվեի դրվել Հանրապետության Նախագահի կողմից սահմանված ժամկետում:

Այսուհանդերձ, հանրաքվե առաջարկող երկու սուբյեկտների միջև Հանրապետության Նախագահին փրված է լուրջ առավելություն: Այսպես, ՀՀ Ազգային ժողովը կարող է Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու առաջարկով հանդես գալ, եթե համապատասխան նախագիծն ընդունված է Ազգային ժողովի որոշմամբ՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (այսինքն՝ առնվազն 66 ձայն): Նշենք, որ Սահմանադրության 71-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պարզամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Ընդհանուր կարգի համաձայն՝ օրենքը կամ Ազգային ժողովի որոշումն ընդունված է համարվում, եթե քվեարկությանը մասնակցել է առնվազն 66 պարզամավոր եւ առնվազն 34 կողմ է եղել: Սակայն Ազգային ժողովից գրեթե 2 անգամ ավելի պարզամավորների կողմ ձայներ են պահանջվում, որպեսզի Սահմանադրության իր նախագիծը (կամ դրանում փոփոխությունների կատարումը) ընդունվի եւ որպես առաջարկ ներկայացվի Հանրապետության Նախագահին:

Նույնիսկ Ազգային ժողովի մեծամասնության ձայներ սրացած նախագիծը ենթակա է Հանրապետության Նախագահի արգելանքին (վերոյին): Մասնավորապես, վերոնշյալ նախագիծը ստանալուց հետո՝ 21-օրյա ժամկետում, Հանրապետության Նախագահը կարող է այն չընդունել եւ իր առարկություններով ու առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հանրապետության Նախագահի արգելանքն Ազգային ժողովը կարող է հաղթահարել եւ պարտադրել իր նախագիծը հանրաքվեի դնել իր իսկ կողմից սահմանված ժամկետում՝ միայն Ազգային ժողովի պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով (ոչ պակաս, քան 78 ձայնով) ընդունված որոշմամբ (հոդվ. 111, մաս 4): Դա այն դեպքում, երբ Սահմանադրության 72-րդ հոդվածով հաստատված ընդհանուր կարգի համաձայն՝ օրենքների նկատմամբ Հանրապետության Նախագահի վերոն Ազգային ժողովը կարող է հաղթահարել վերստին ընդունելով Հանրապետության Նախագահի կողմից վերադարձված օրենքը՝ պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (այսինքն՝ առնվազն 66 ձայնով):

Նման ընթացակարգը, թերեւս, պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Նախագահի անմիջական պարտականությունն է համարում

նաև Սահմանադրության պահպանմանը հեղինակելը (հոդվ. 49), որը մեծապես պայմանավորված է սահմանադրական կայունության երաշխավորմամբ և Սահմանադրության փոփոխությունները քաղաքական նպատակահարմարությանը չծառայեցնելու երաշխիքներով:

5. Սահմանադրության 111-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է հստակ կարգ, համաձայն որի՝ Ազգային ժողովը պարտավոր է Նանրապետության Նախագահի նախաձեռնած՝ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում, քննարկել և քվեարկել: Ընդ որում, նախագահական նախագիծը համարվում է ընդունված և այն դրվում է հանրաքվեի Նանրապետության Նախագահի սահմանած ժամկետում, եթե Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը կողմ է քվեարկել:

Տեսակետներ են արտահայտվում, որ եռամսյա ժամկետն այդպիսի բարդ և բախտորոշ նշանակություն ունեցող նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրության նախագծի քննարկման և քվեարկության համար բավականին կարճ է: Փաստարկն այն է, որ իշխանության թեև երաշխավորված հավասարակշռություն ապահովելու համար առավել հիմնավոր կլինեի ժողովրդի անմիջական մանդատն ունեցող մարմինների «համաձայնությունների» սահմանադրական «կշիռը» հավասարեցնելը: Մասնավորապես, Ազգային ժողովի կողմից Սահմանադրության նախագիծը նպատակահարմար էր ընդունված համարել, եթե Ազգային ժողովը Նանրապետության Նախագահի կողմից վերադարձված Սահմանադրության իր նախագիծը վերստին ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ինչպես նշվեց, հանրաքվեի նշանակման և անցկացման, նախագծի համաժողովրդական քննարկման ժամկետները կարգավորված են հանրաքվեի մասին օրենքով: Մասնավորապես, Նանրապետության Նախագահն իր նախաձեռնած հանրաքվեն նշանակում է 7-օրյա ժամկետում՝ Ազգային ժողովի համաձայնությունն ստանալուց հետո, և 21-օրյա ժամկետում՝ Ազգային ժողովի նախագիծն ստանալուց հետո (եթե չունի առարկություններ և առաջարկություններ):

ՆՈՒՎԱԾ 112

1. Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով՝ Սահմանադրության 111-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով:

1. Սահմանադրության այս հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հանրաքվեի միջոցով հնարավոր է ընդունել նաև օրենքներ, ընդ որում՝ Սահմանադրության վերոնշյալ 111-րդ հոդվածով սահմանված բարդ ընթացակարգով: Սակայն այս դեպքում այլ են օրենքի՝ հանրաքվեի դնելու առաջարկով հանդես եկող լիազորված սուբյեկտները: Մասնավորապես, այդ իրավունքով օժտված են Ազգային ժողովը և կառավարությունը (բայց ոչ Նանրապետության Նախագահը):

Սակայն այդ փաստը (օրենքները հանրաքվեի դնելու առաջարկություն ներկա-

յացնելու իրավունքի բացակայությունը) ամենեւին չի նշանակում, որ այս հարցում Հանրապետության Նախագահի քաղաքական դիրքերը թույլ են եւ նա գրկված է որոշիչ դերակատարությունից:

Նախ՝ բոլոր դեպքերում օրենքների առնչությամբ հանրաքվեն նշանակողը միայն ինքն է՝ Հանրապետության Նախագահը:

Երկրորդ՝ Ազգային ժողովի կողմից առաջարկված օրենքները հանրաքվեի դնելու վերաբերյալ Հանրապետության Նախագահին ունի նույն հզոր վերահսկողական լիազորությունները, ինչ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագծի նկատմամբ (*դե՛ս 111-րդ հոդվածի մեկնաբանությունը*):

Եվ երրորդ՝ սահմանադրական նորմերով նախատեսված է նաեւ կառավարության լիազորությունը հանդես գալու օրենքները հանրաքվեի դնելու առաջարկով: Սա փրամաբանական է, քանզի հենց կառավարությունն է (Ազգային ժողովի հետ) օրենսդրական նախաձեռնության հիմնական սուբյեկտը՝ ըստ Սահմանադրության 75-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:

Սակայն, եթե կառավարությունն ընթացիկ օրենքների ընդունման դեպքում համապատասխան նախագիծը ներկայացնում է Ազգային ժողովի քննարկմանը, Սահմանադրության 112-րդ հոդվածից հստակ չի բխում՝ արդյոք կառավարությունն օրենքները հանրաքվեի դնելու առաջարկությունն Ազգային ժողովի միջոցով է կատարում, թե՛ կարող է այդ հարցով ուղղակի դիմել Հանրապետության Նախագահին՝ շրջանցելով երկրի քաղաքական ներկայացուցչական օրենսդիր մարմնի կամբը:

Հնարավոր է նաեւ փարբերակ, երբ կառավարությանը չի հաջողվել որեւէ ընթացիկ օրենք (չստ կարելու իր ծրագրերն իրականացնելու համար) անցկացնել իր նախաձեռնությամբ, եւ այդ հարցի լուծումը կառավարությունը փորձի փրկել նույն օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու առաջարկության միջոցով:

Ինչ խոսք, պետական իշխանության կենտրոնական գործադիր մարմնի ցանկությունը՝ որեւէ հարցի (հատկապես վիճելի Ազգային ժողովի քննարկումից) վերջնական լուծումն անմիջականորեն իշխանության փրոջ եւ կրողի՝ ժողովրդի դատին ներկայացնելն ամենեւին չի կարելի համարել հակաժողովրդավարական քայլ, սակայն փրամաբանական կլինեւ այդ դեպքերում Սահմանադրությամբ հստակ սահմանել նաեւ Ազգային ժողովի դերակատարությունն այդ կարելու ընթացակարգում:

Այդ հարցը լուծված է օրենքով: Մասնավորապես, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է, որ Ազգային ժողովն օրենքի նախագծին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով համաձայնություն փալուց հետո, նախագիծն ուղարկում է Հանրապետության Նախագահին՝ հանրաքվեի դնելու համար: Հանրապետության Նախագահն Ազգային ժողովի համաձայնությանն արժանացած օրենքի նախագիծն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, կարող է նախագիծն իր առարկություններով եւ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Ազգային ժողովի կողմից պարզամտորեն ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված օրենքի նախագիծը Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

Այն դեպքերում, երբ կառավարությունն է առաջարկում օրենքները դնել հանրաքվեի, ապա այդ օրենքի նախագիծն սկզբում ուղարկվում է Հանրապետության Նախագահին, որը կառավարության առաջարկած օրենքի նախագիծն ստանալուց հետո՝ ետօրյա ժամկետում, նախագիծը ներկայացնում է Ազգային ժողով՝ հանրաքվեի դնելու համար Ազգային ժողովի համաձայնությունն ստանալու նպատակով: Ազգային ժողովը «Ազգա-

յին ժողովի կանոնակարգ»՝ ՏՏ օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի ներկայացրած նախագիծը հանրաքվեի դնելու համար համաձայնություն փալու վերաբերյալ:

Հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի համաձայնությունն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Հանրաքվեն պետք է անցկացվի հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ շուր, քան 45, եւ ոչ ուշ, քան 60 օր հետո:

Համաժողովրդական քննարկումներ կազմակերպելու նպատակով հանրաքվեի դրվող օրենքի նախագիծը, ինչպես եւ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը, հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», պետական մարմինների հիմնածանցվածային լրատվության միջոցներով՝ ի իրազեկումն բոլորի, սակայն ի տարբերություն Սահմանադրության նախագծի, հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ:

Ցավոք, գործող Սահմանադրությունում բացակայում է անմիջական ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը, երբ որոշակի թվով քաղաքացիների առաջարկությամբ պարտադիր ձեռով հանրաքվե են դրվում օրենքների նախագծեր: Այդ կարևոր, ըստ էության ժողովրդավարական իրավական ինստիտուտը գործում էր մինչև 1995թ. ՏՏ Սահմանադրության ընդունումը:

Նշենք, որ 26.12.2008թ. «Հանրաքվեի մասին» ՏՏ օրենքում մի կարևոր լրացում է կատարվել՝ ավելացվել է 8.1-րդ հոդվածը՝ «Պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալը եւ հանրաքվե նշանակելն ու անցկացնելը» վերնագրով: Համաձայն այդ հոդվածի պահանջների՝ սահմանվել է, որ կառավարությունն ունի նաեւ պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք: Այս դեպքերում հանրաքվե նշանակվում է կառավարության որոշմամբ, որտեղ նշվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է բացահայտել հասարակական կարծիքը: Հաշվի առնելով արտաքին քաղաքականության, ռազմական եւ ազգային անվտանգության ոլորտներում Հանրապետության Նախագահի սահմանադրական լիազորությունները՝ օրենքը նախատեսում է, որ պետության արտաքին քաղաքականությանը, ռազմական եւ ազգային անվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու համար հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը եւ հանրաքվեի դրվող հարցերը նախապես քննարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ: Հանրային իրազեկումն ապահովելու նպատակով հանրաքվե նախաձեռնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 21 օր առաջ հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»: Նույն ժամկետում որոշման տեքստը հանձնվում է զանգվածային լրատվության միջոցներին: Հանրաքվե անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պաշտոնական հրապարակման օրվանից ոչ շուր, քան 30, եւ ոչ ուշ, քան 40 օր հետո:

Այսպիսով կարելի է նշել, որ վերոնշյալ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներմուծվել է ժողովրդական հարցման՝ խորհրդարավական, ոչ իմպերատիվ բնույթ կրող հանրաքվեի ինստիտուտը, որի նշանակողը եւ նախաձեռնողը միայն ՏՏ կառավարությունն է:

Ուշագրավ է, որ այս հարցում Ազգային ժողովին որևէ դերակատարություն նշված օրենքով նախատեսված չէ, ինչպես նաև Ազգային ժողովը գրկված է նմանաբանի՝ իր կարծիքով պետական կյանքի կարեւորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու եւ հանրաքվե նշանակելու եւ անցկացնելու լիազորությունից:

2. Սահմանադրության 112-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ հանրաքվեով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Սահմանադրության այս իմպերատիվ պահանջը փրամաբանական է եւ բխում է «ժողովրդին է պատկանում իշխանությունը» սահմանադրական հիմնարար սկզբունքից (տե՛ս Սահմանադրության 2-րդ հոդվածի մեկնաբանությունը): Ազգային ժողովը որպես օրենսդիր մարմին չի կարող վերացնել կամ փոփոխել ժողովրդի՝ հիմնադիր իշխանության փիրոջ, կամքով ընդունված օրենքները, քանզի հանդիսանում է Սահմանադրությամբ նախատեսված այն պետական մարմիններից մեկը, որի միջոցով ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունը:

Այս նորմը գործում էր նաև 1995թ. Սահմանադրության մեջ: Նորանկախ Հայաստանի Հանրապետության պարմության մեջ առայժմ չեն եղել հանրաքվեի միջոցով օրենքների ընդունման դեպքեր:

ՆՈՂ-ՎԱԾ 113

Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

Սահմանադրության այս դրույթը միակն է 8-րդ գլխում, որ փոփոխվել է 2005թ. հանրաքվեի արդյունքում, եւ այդ փոփոխությունը պետք է էական դիրել:

Աշխարհի շար երկրներում Սահմանադրությամբ ամրագրված է հանրաքվեի քվորումը՝ քվեարկող քաղաքացիների այն նվազագույն սահմանը, որի առկայության դեպքում հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված:

ՆՏ Սահմանադրությամբ երկու անհրաժեշտ պայման է սահմանված հանրաքվեի դրված նախագծի (լինի այն Սահմանադրության, դրանում փոփոխություններ կատարելու, թե օրենքների) ընդունման համար.

ա) կողմ պետք է քվեարկի հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին,

բ) կողմ քվեարկողների քանակը չպետք է պակաս լինի ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվի մեկ քառորդից:

Նախկին Սահմանադրությամբ վերջին պայմանն ավելի խիստ էր (մեկ երրորդն էր պահանջվում):

Տեղին է նշել, որ 2003թ. մայիսին Սահմանադրության հանրաքվեն ձախողվեց եւ հանրաքվեի դրված սահմանադրական փոփոխությունների նախագիծը (որը, մեր կարծիքով, շար ավելի ժողովրդավարական բովանդակություն ուներ) համարվեց չընդունված, որովհետեւ չապահովվեց հանրաքվեի ընդունման համար պահանջվող քվորումի 2-րդ պահանջը (կողմ էին քվեարկել ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդից պակասը):

Սահմանադրության փոփոխություններով սահմանված նոր, նվազեցված քվորումը՝ հանրաքվեի դրված նախագծի ընդունման համար, որոշ մասնագետներ համարում են չարդարացված, քանզի կարող է լրջորեն վրանգել հանրաքվեի լեգիտիմությունը: Իսկապես, այսօր հանրաքվեի դրված ցանկացած նախագիծ, այդ թվում՝ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին, որոնք կարող են պատմական կարեւորագույն նշանակություն ունենալ ժողովրդի և պետության ճակատագրի համար, փաստորեն կարող է ընդունված համարվել, եթե քվեարկությանը մասնակցել են ընտրական ցուցակներում ընդգրկված 50% + 1 քաղաքացիներ, և կողմ են քվեարկել 25% + 1 քաղաքացիներ:

Մյուս կողմից, սահմանադրական հանրաքվեները, որպես կանոն, սահմանադրական ճգնաժամերից դուրս գալու ժամանակակից ժողովրդավարական միջոց են հանդիսանում, և այդ եղանակով պետք է իրական արդյունք ակնկալվի, որը հնարավորություն է տալիս ժողովրդի կամքի արտահայտմամբ արագորեն հաղթահարել ճգնաժամը: Այդ կարեւոր հանգամանքով է պայմանավորված արտասահմանյան շար երկրներում ոչ բարձր քվորումի ամրագրումը:

ՆՈՂՎԱԾ 114

Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:

ՆՏ Սահմանադրության 114-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Սահմանադրության նշված հոդվածների հսկող պաշտպանությունը պայմանավորված է դրանցով սահմանված դրույթների նշանակությամբ, կարգավորվող հարաբերությունների բովանդակությամբ և կարեւորությամբ:

Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Նայաստանի Նանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Սահմանադրական նշված նորմն ամրագրում է պետության սահմանադրական բնութագիրը, կառավարման ձեւը և սահմանում է այն հատկանիշները, որոնց վրա կառուցված են Սահմանադրության, հետեւաբար՝ նաև պետության ամբողջ հիմքը, բնույթը, էությունն ու բովանդակությունը: Պետության հիմնարար այդ հատկանիշներն իրենց հետագա ամրագրումն են ստանում Սահմանադրության այլ դրույթներով, իսկ ավելի հստակ՝ սահմանադրական մյուս դրույթները կոչված են ապահովելու, իրագործելու և երաշխավորելու դրանք: Նշված հոդվածում առաջին հերթին ամրագրված են պետության հիմնական հատկանիշները, որոնց արդյունքում վերջինիս համար ծագում է քաղաքացիական հասարակության բնականոն առաջընթացն ապահովելու, Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված պետական իշխանության շրջանակներով խստորեն սահմանափակվելու պարտավորությունը: Նշված հատկանիշների բնույթով է պայմանավորված երկրում ժողովրդավարական քաղաքական ռեժիմի ձեւավորումը, մարդու և քաղաքացու երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանումը, պետական կառույցների կողմից կամայականությունների բացառումը և նմանաբնույթ այլ հիմնադրույթների ձեւավորումը: Սահմանադրության առաջին հոդվածում թվարկված պայմանները հանդիսանում են սահմանադրական մյուս ինստիտուտների հիմնաքարը, կանխորոշում

են դրանց հիմնական բովանդակությունը եւ զարգացման ուղղությունները: Նշված պայմանների էական նշանակությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ ուղղակիորեն ամրագրում են այն սկզբունքները, որոնք, չնայած իրենց ամրագրումն ստանում են Սահմանադրության հեղափոխական դրույթներում, այնուամենայնիվ, առավել հավաքական եւ ամբողջական են ներկայացվում հենց այս հոդվածում, եւ սահմանադրական մյուս դրույթները կոչված են երաշխավորելու եւ գործնականում ապահովելու սահմանադրական սկզբունքների իրագործումը: Այս սկզբունքներով է պայմանավորված նաեւ Սահմանադրության եւ պետության գործունեության ուղղվածությունը, քանի որ նշված սկզբունքները հանդիսանում են այն նպատակները, որոնց իրագործմանն է ուղղված պետության գործունեությունն ամբողջությամբ (*մտերայնասուն տեսն 1-ին հոդվածի մեկնաբանությունները*):

Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանելով իշխանության պարկանելությունը՝ միաժամանակ փաստորեն լրացնում եւ առավել մանրամասնում է Սահմանադրության 1-ին հոդվածում նշված՝ պետության ժողովրդավարական հանդիսանալու փաստը: Նայաստանի Նանրապետությունում իշխանությունը պարկանում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սահմանադրական նշված դրույթը սահմանում է ժողովրդավարության իրականացման ձևերն ու սկզբունքները՝ դրանով իսկ կանխորոշելով եւ երաշխավորելով պետության ժողովրդավարական քաղաքական ռեժիմը: Միաժամանակ, նույն հոդվածը սահմանելով, որ իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է, ի սկզբանե երաշխավորում է երկրի ժողովրդահիշխանությունը:

Սահմանադրության 1-ին եւ 2-րդ հոդվածները հանդիսանալով պետության սահմանադրական կարգի հիմնաքարերը՝ կարիք ունեն հարուկ երաշխավորման, հաշվի առնելով, որ դրանք լրացնում են միմյանց եւ իրենց ամբողջության մեջ են սահմանում Սահմանադրության եւ պետության բնութագիրն ու նպատակաուղղվածությունը, իսկ դրանցից յուրաքանչյուրի որեւէ կերպ փոփոխումն ուղղակիորեն կառաջացնի Սահմանադրության, բնականաբար՝ նաեւ պետության բովանդակության փոփոխում:

Սահմանադրության 114-րդ հոդվածն, ըստ էության չի կարգավորում որեւէ հարուկ ինքնուրույն իրավահարաբերություն, այլ կոչված է ապահովելու Սահմանադրության 1-ին եւ 2-րդ հոդվածների կայունությունը՝ հանդիսանալով դրանց անփոփոխելիության միակ եւ բացառիկ երաշխիքը: Սակայն միայն 1-ին եւ 2-րդ հոդվածների թվարկումը նշված հոդվածում՝ չէր կարող բավարար չափով երաշխավորել դրանց անփոփոխելիությունը, քանի որ 114-րդ հոդվածում կատարվող փոփոխությունները կարող են հանգեցնել նաեւ Սահմանադրության հարուկ պաշտպանվող դրույթներն այդ հոդվածից հանելուն, ինչն էլ իր հերթին վրանգի վրակ կարող էր դնել դրանց անփոփոխելիությունը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ Սահմանադրության 114-րդ հոդվածը միաժամանակ սահմանում է, որ Սահմանադրության 114-րդ հոդվածը նույնպես փոփոխման ենթակա չէ: Կրկնակի երաշխավորման եղանակն առավելագույնս ապահովում է Սահմանադրության հարուկ պաշտպանվող հոդվածների կայունությունը, ինչն էլ իր հերթին երաշխավորում է այդ հոդվածներով սահմանված արժեքների անփոփոխելիությունը:

Այսպեղ կարեւոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է փոխյալ Սահմանադրության շրջանակներում փոփոխություններ կատարելու անհնարի-

նությանը: Այսինքն՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներն ունեն սկզբունքային և ելակետային նշանակություն Սահմանադրության և պետության կառուցակարգը և գործունեության ուղղվածությունը սահմանելու և ապահովելու տեսանկյունից, և դրանք անփոփոխելի են, հետևաբար՝ Սահմանադրության նշված հոդվածները կարող են փոփոխվել բացառապես նոր Սահմանադրություն ընդունելու արդյունքում: Տակառակ մեկնաբանության դեպքում կմերժվեր ժողովրդաիշխանության սկզբունքը: Այսպիսով՝ Սահմանադրության 114-րդ հոդվածը պետք է դիտարկել հրամայական պահանջ՝ ուղղված սահմանադրական փոփոխությունների նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտներին, որոնց արգելվում է նախաձեռնել թվարկված հոդվածների փոփոխություն:

Գ Լ ՈՒ Խ 9

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՆՈՒՎԱԾ 115

Նայասարանի Նանրապեպրության Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին և գլխավոր դատախազին վերաբերող դրույթների, 63-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի, 74.1-րդ հոդվածի առաջին մասի, 83.4-րդ հոդվածի, 85-րդ հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի, 86-րդ հոդվածի, 88.1-րդ հոդվածի առաջին մասի, 101-րդ հոդվածի 6-րդ կետի, 107-րդ հոդվածի առաջին մասում նշված ժամկետի, ուժի մեջ են մտնում «Նայասարանի Նանրապեպրության պաշտոնական տեղեկագրում» հրատարակվելու հաջորդ օրվանից:

Սահմանադրությունը կուռ, միասնական, քաղաքական-իրավական փաստաթուղթ է, որի յուրաքանչյուր հարված օրգանապես կապված է մյուս բոլորի հետ ու այդ միասնական համակարգի շրջանակներում կարարում է իր գործառույթները: Անվիճելի է, որ Սահմանադրության կառուցվածքային վերլուծությունը՝ միահյուսված փրամաբանական վերլուծության փարբերով, մեծապես նպաստում է սահմանադրի կամքի, նպատակի բացահայտմանը (պարզաբանմանը)՝ ապահովելու համար սահմանադրական նորմերի գերակայությունը և անմիջական գործողությունը:

Սահմանադրությունների եզրափակիչ (անցումային) դրույթները սովորաբար ամփոփվում են հարույ՝ ավարական բաժնում կամ գլխում: Սահմանադրական իրավունքի գիտության մեջ Սահմանադրության ուժի մեջ մտնելու կարգը և ժամկետներն ամրագրող սահմանադրական նորմերն ընդունված է անվանել անցումային դրույթներ: Վերջիններս կոչված են ապահովելու անցման շրջանում պետական իշխանության հաջորդայնությունը, շարունակականությունը, հարընթաց բնույթը, ինչպես նաև պետական իշխանության մարմինների անընդմեջ ու բնականոն գործունեությունը:

Անցումային դրույթները նպատակ են հետապնդում երաշխավորել սահուն անցումը Սահմանադրության նոր դրույթների իրացմանը, այլ խոսքով՝ ապահովելու սահմանադրականությունը՝ իրավական համակարգի և իրավունքի բոլոր սուբյեկտների գործողությունների համապատասխանությունը Սահմանադրությանը կամ դրա փոփոխություններին: Տեղին է նկատել, որ սահմանադրականությունն իրավունքի գերակայության սկզբունքի իրացման անխախտ պայման է:

Սահմանադրության անցումային դրույթները կարող են նախատեսել նախորդ Տիմնական օրենքի առանձին նորմերի ժամանակավոր կիրառման հնարավորությունը, պետական իշխանության գործող մարմինների լիազորությունների պահպանումը մինչև դրանց ընդրության (նշանակման) սահմանված ժամկետների ավարտը, ինչպես նաև նոր Սահմանադրության կամ դրա փոփոխությունների առանձին դրույթների՝ գործողությունից ժամանակավոր հանման դեպքերը: Նաճախ սահմանվում է այն ժամկետը, որի

ընթացքում պետք է կազմավորվեն Սահմանադրությամբ հիմնադրվող պետական մարմինները կամ ընդունվեն նախապետված համապատասխան օրենքները: Որպես կանոն, ամրագրվում է, որ այն օրենքները եւ այլ իրավական ակտերը, որոնք ընդունվել են մինչեւ նոր Սահմանադրության ուժի մեջ մտնելը, ենթակա են կիրառման միայն այնքանով, որքանով չեն հակասում Տիմնական օրենքի դրույթներին:

Սահմանադրությունների ավարտական հատվածի դրույթների մեծ մասն ունենում է ժամանակավոր բնույթ, քանզի վերջնական իրացումից հետո դրանք կորցնում են իրենց կարգավորիչ նշանակությունը եւ դերակատարությունը:

Այսպիսով, Սահմանադրության անցումային դրույթները կազմում են Տիմնական օրենքի անբաժանելի ու անքակտելի մասը, անչափ կարեւոր են նախեստառաջ բոլոր իրավակիրառողների, հատկապես դատարանների համար, քանի որ կանխորոշում են այս կամ այն սահմանադրական նորմի կիրառման ժամկետը:

Նշված դրույթներն ամբողջովին կարելի է վերագրել նաեւ ՏՏ Սահմանադրության (փոփոխություններով) մեկնաբանվող 9-րդ գլխում ամրագրված սահմանադրական նորմերին, դրանց առաքելությանը, սահմանադրաիրավական բովանդակությանը:

Նշված գլուխը, փարաբնույթ խնդիրների լուծմանը միտված իր ուղղվածությամբ հանդերձ, վերջին հաշվով, կոչված է երաշխավորելու անցման շրջանում Սահմանադրության անմիջական (ուղղակի) գործողության, իրավունքի աղբյուրների համակարգում Տիմնական օրենքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահ իրագործումը:

ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 9-րդ գլուխը բովանդակում է գլխավորապես երկու փեսակի նորմատիվ դրույթներ՝ եզրափակիչ և անցումային: Նմանօրինակ միավորումն առավել շեշտադրում է դրանց անխզելի կապը, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է րվյալ գլխի խնդիրներով եւ հետապնդվող նպատակներով: Բացի դրանից, սույն գլխում ամփոփված սահմանադրական նորմերի վերլուծությունը վկայում է, որ ՏՏ Սահմանադրության փոփոխություններն աներկբա ենթադրում են ՏՏ իրավական համակարգի շուրտփույթ, կշռադարված եւ ներդաշնակ բարենորոգումներ, ընդամին՝ այդ ընթացքում չխաթարելով պետության իրավական անվտանգությունը, գործող իրավակարգում չստեղծելով քառասային իրավիճակ:

Տարկ է նկատել նաեւ, որ եզրափակիչ դրույթները պահպանում են իրենց իրավաբանական ուժը Սահմանադրության գործողության ողջ ընթացքում, իսկ անցումայիններն ունեն ժամանակավոր կարգավորիչ բնույթ: Եթե եզրափակիչ դրույթների դերակատարությունը ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելու կարգի եւ ժամկետի սահմանումն է ու, հետեւաբար՝ ՏՏ Սահմանադրության (նախկին խմբագրությամբ) գործողության դադարումը, ապա անցումային դրույթների առաքելությունը հանգում է նրան, որպեսզի ապահովվի անցման շրջանում պետական իշխանության հարընթաց եւ անխաթար գործունեությունը: Այսպետ ամրագրված են այն առանձին սահմանադրական նորմերի գործողության մեջ մտնելու ժամկետները, որոնք չեն կարող իրացվել անմիջապես, ինչպես նաեւ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո ձեռնարկվելիք միջոցառումները եւ համապատասխան գործողությունները:

Այսպիսով, ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 9-րդ գլխում զետեղված երկու փեսակի նորմատիվ դրույթներն էապես սահմանազարկում են ինչպես իրենց նշանակությամբ եւ սրանով պայմանավորված՝ բովանդակությամբ, այնպես էլ իրենց գործողության ժամկետներով:

ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 115-րդ հոդվածի հիմնական առաքե-

լությունը ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելու հստակ ժամկետի սահմանում է, այն ըստ էության ունի եզրափակիչ բնույթ եւ, հետեւաբար՝ պահպանելու է իր իրավաբանական ուժը Սահմանադրության գործողության ողջ ընթացքում:

ՏՏ Սահմանադրության փոփոխությունների մեկնաբանվող 115-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ նույն հոդվածում սպառիչ թվարկված որոշակի սահմանադրական նորմերի, ուժի մեջ են մտնում «Տայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրատարակվելու հաջորդ օրվանից: Կարելի է մտնանշել, որ ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ընդունման պահի եւ ուժի մեջ մտնելու պահի պարզորոշ ու հստակ սահմանազարման ունի էական իրավական եւ գործնական նշանակություն՝ սրանից բխող բոլոր իրավական հետեւանքներով հանդերձ:

Ընդհանրապես նորմատիվ իրավական ակտերի գործողության սահմանների ճշգրիտ որոշումն անհրաժեշտ է նախեստաջ իրավունքի նորմերի անսխալ, անվրեպ կիրառման համար: Վերջին պարագան ունի հստակապես սկզբունքային կարևորություն բոլոր իրավակիրառողների համար:

Տայաստանի Հանրապետության Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ: Իսկ ՏՏ Սահմանադրության 113-րդ հոդվածն ամրագրում է, որ հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

ՏՏ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծն ընդունվել է 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով: Ուրեմն, ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ընդունման օրը (պահը) համարվում է 2005թ. նոյեմբերի 27-ը:

Քննարկվող հոդվածի բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելն ուղղակի պայմանավորվում է դրանց սահմանված կարգով հրատարակմամբ:

Իրավունքի ընդհանուր տեսությունից հայտնի է, որ «ուժի մեջ մտնել» հասկացությունը նշանակում է Սահմանադրության, օրենքի, որեւէ այլ նորմատիվ կամ իրավակիրառ ակտի գործողության սկզբի պահը: Իսկ իրավունքի գործողությունը դրա իրավաբանական ուժի դրսևորման բոլոր ձևերի համակցությունն է՝ ուժի մեջ մտնելու պահից մինչև դրա ուժը կորցնելու պահը ժամանակահատվածով:

Իրավական պետությունում Սահմանադրության, օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու անվերապահ, պարտադիր նախապայման է սահմանված կարգով դրանց պաշտոնական հրատարակումը: Օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հանրային իրազեկման առավել տարածված, մարչելի ու արդյունավետ ձևը հանդիսանում է դրանց հրատարակումը, ինչն ուժի մեջ մտնելու պարտադիր պայման է:

Պաշտոնական է համարվում իրավական ակտերի հրատարակումը դրա համար հարկապես նախարեսված (առանձնացված) հրատարակություններում: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի՝ Տայաստանի Հանրապետությունում այդպիսի հրատարակություն է համարվում «ՏՏ պաշտոնական տեղեկագիրը»: Նույն հոդվածի 3-րդ մասին համապարասխան՝ սույն հոդվածով նախարեսված իրավական ակտերի պաշտոնական հրատարակման օրը համարվում է

դրանց ամբողջական փեքսպը «Նայասփանի Նանրապետության պաշտոնական փեղեկագրում» առաջին անգամ հրատարակման (լույսընծայման) օրը:

Նիշարակված օրենքի 47-րդ հոդվածը սահմանում է, որ ՏՏ Սահմանադրությունը կամ դրա փոփոխությունները հրատարակվում եւ ուժի մեջ են մտնում ՏՏ Սահմանադրությանը եւ «Նանրաքվեի մասին» ՏՏ օրենքով սահմանված կարգով:

2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ամբողջական փեքսպն առաջին անգամ հրատարակվել է «ՏՏ պաշտոնական փեղեկագրի» հատուկ թողարկման մեջ՝ 2005թ. դեկտեմբերի 5-ին, իսկ ՏՏ Սահմանադրության 115-րդ հոդվածի համաձայն՝ ՏՏ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ են մտել 2005թ. դեկտեմբերի 6-ին: Այսպետից հետեւում է, որ այդ օրը ՏՏ Սահմանադրության փոփոխությունների գործողության մեջ դրվելու սկզբի պահն է:

ՆՈՂՎԱԾ 116

Սահմանադրության փոփոխությունների 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին եւ գլխավոր դատախազին վերաբերող դրույթները, 74.1-րդ հոդվածի առաջին մասը, 83.4-րդ հոդվածով սահմանված դրույթը, 86-րդ հոդվածը, 88.1-րդ հոդվածի առաջին մասն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից:

63-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթը կիրառվում է Ազգային ժողովի հաջորդ գումարումների համար:

85-րդ հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1-ից:

101-րդ հոդվածի 6-րդ կետն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հուլիսի 1-ից:

107-րդ հոդվածի առաջին մասում նշված ժամկետն ուժի մեջ է մտնում Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո ընտրված փեղական ինքնակառավարման մարմինների համար:

Մեկնաբանվող հոդվածում սահմանված սահմանադրական նորմերը բացառապես անցումային բնույթի են եւ նախատեսում են ՏՏ Սահմանադրության փոփոխությունների առանձին դրույթների ուժի մեջ մտնելու կոնկրետ ժամկետներ:

Սույն հոդվածում սպառիչ թվարկված այդ դրույթները Նայասփանի Նանրապետությունում իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում հղացված եւ ՏՏ Սահմանադրության փոփոխություններում իրենց իրավաբանական ամրագրումն սպացած նորամուծություններ են, որոնց ուժի մեջ մտնելու կապակցությամբ, ինչպես նշվեց, ՏՏ Սահմանադրության 115-րդ հոդվածում կատարվել էր ուղղակի վերապահում՝ բացառություններ սահմանելու եղանակով: Ակնհայտ է, որ նշված սահմանադրական նոր դրույթները՝ պայմանավորված գանազան պատճառներով, չէին կարող գործադրվել 2005թ. դեկտեմբերի 6-ից՝ ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահից:

Վերլուծական փեսանկյունից բնութագրական է այն, որ ՏՏ Սահմանադրության

փոփոխությունների 116-րդ հոդվածում նախադրված է սահմանադրական նորույթ պարունակող նորմերի ուժի մեջ մտնելու ժամկետների հետաձգումը, կարծում ենք, գերազանցապես թելադրված էր քննարկվող նորմերի բովանդակային որոշակի առանձնահատկություններով, նպատակներով, որոշ սահմանադրական մարմինների իրավական կարգավիճակի եւ լիազորությունների ժամկետների, ինչպես նաեւ կոնկրետ պաշտոնատար անձանց նշանակման եւ ազատման կարգի փոփոխություններով, անցման փուլում այդ նորմերի սահուն գործադրման նպատակով իրապես անհրաժեշտ ժամանակի հանգամանքով եւ այլն: Ուստի նպատակահարմար էր դիտվել եւ սահմանվել էին նշված նորմերի ուժի մեջ մտնելու փարապետակ ժամկետներ:

Քննարկվող 116-րդ հոդվածի սահմանադրաիրավական բնույթագրի պարզաբանման առումով հարկանշական է, որ ինչպես սույն, այնպես էլ ՏՄ Սահմանադրության փոփոխությունների հաջորդ՝ 117-րդ հոդվածներում, որոշակի սահմանադրական նորմերի ուժի մեջ մտնելու կամ անմիջական կիրառման պարագան սահմանադիրն ուղղակի կապակցել էր ՏՄ Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվա հետ՝ իբրեւ նախապայման, ինչն ինքնին իրավաբանական կարեւորություն եւ իմաստային նկատելի ծանրաբեռնվածություն ունի:

Ընդհանրապես պառլամենտի առաջին նստաշրջանը կրում է յուրօրինակ «սահմանադիր» բնույթ այնքանով, որքանով սկսվում է նորընտրյալ պառլամենտի լիազորությունների ժամկետը, պարզամավորները երդվում են (եթե այդպիսի արարողակարգ սահմանված է), ձեւավորվում են պառլամենտի ղեկավար մարմինները, կազմավորվում է նոր կառավարություն, ներկայացվում է կառավարության նոր ծրագիր եւ այլն:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններն անցկացվել են 2007թ. մայիսի 12-ին՝ ՏՄ Սահմանադրության 68-րդ հոդվածում նախադրված ժամկետում: ՏՄ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամփոփել էր ՏՄ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2007թ. մայիսի 12-ի ընտրությունների արդյունքները եւ իր՝ 2007թ. մայիսի 19-ի թիվ 149-Ա որոշմամբ իրավաչափ էր ճանաչել թվով 90 ՏՄ ԱԺ պարզամավորների ընտրության փաստը: Սույն որոշումը ՏՄ սահմանադրական դատարանի 2007թ. հունիսի 10-ի թիվ ՍԴՌ-703 որոշմամբ թողնվել էր ուժի մեջ:

Համաձայն ՏՄ Սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նորընտրյալ Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պարզամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը: Մասնանշված սահմանադրական նորմի ուժով ՏՄ նորընտրյալ Ազգային ժողովի IV գումարման առաջին նստաշրջանը բացվել է 2007թ. հունիսի 7-ին:

Նկատի ունենալով, որ ստորեւ նշված իրավանորմերը, որոնց ուժի մեջ մտնելու ժամկետներին է նվիրված ՏՄ Սահմանադրության փոփոխությունների 116-րդ հոդվածը, վերլուծվել են ՏՄ Սահմանադրության համապատասխան հոդվածները մեկնաբանելիս, ուստի, բնականաբար, վերանում է դրանց առավել մանրամասն անդրադառնալու կարիքը:

ՏՄ Սահմանադրության փոփոխությունների 116-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ ՏՄ Ազգային ժողովի հաջորդ (տվյալ դեպքում IV-րդ) գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից՝ 2007թ. հունիսի 7-ից, ուժի մեջ են մտնում Սահմանադրության փոփոխությունների՝

ա) 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին եւ գլխավոր դատախազին վերաբերող դրույթները:

Տարկ է արձանագրել, որ ՏՏ ԱԺ նախկին վերահսկիչ պալատին ՏՏ Սահմանադրության 83.4-րդ հոդվածին համապատասխան փոփոխություններ է սկզբունքորեն նոր սահմանադրաիրավական կարգավիճակ: ՏՏ վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջեարային միջոցների եւ պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Վերահսկիչ պալատի գործունեության կարգը եւ իրավասությունը սահմանվում են օրենքով: Նամապատասխան փոփոխություն է կրել նաեւ ՏՏ վերահսկիչ պալատի նախագահի նշանակման կարգը: Այժմ ՏՏ վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Նանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց փարի ժամկետով:

Եթե համաձայն 1995թ. ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետի՝ Նանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում եւ ազատում էր ՏՏ գլխավոր դատախազին, ապա ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 55-րդ հոդվածի 9-րդ կետին եւ 103-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան գլխավոր դատախազին Նանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է ՏՏ Ազգային ժողովը՝ վեց փարի ժամկետով (տե՛ս նաեւ ՏՏ Սահմանադրության 117-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետերը):

բ) 74.1-րդ հոդվածի առաջին մասը:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում էապես ձեւափոխվել են նաեւ Նանրապետության Նախագահի կողմից ՏՏ Ազգային ժողովի արձակման կարգը եւ դեպքերը: Մինչ այս փոփոխությունը, Նանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, կարող էր արձակել Ազգային ժողովը եւ նշանակել արտահերթ ընտրություն (ՏՏ 1995թ. Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետ եւ ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 117-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետը):

ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 74.1-րդ հոդվածը (որը, ի դեպ, սահմանադրական նորույթ է) սահմանում է, որ Նանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի փայլա կառավարության ծրագրին:

Եթե փվյալ սահմանադրական նորմի ուժի մեջ մտնելու ժամկետի հեփաձգումը համակարգային իմաստով փոխկապակցվի ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 117-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետի հետ, ապա պարզորոշ է, որ մինչեւ Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը պահպանվելու էր Նանրապետության Նախագահի 1995թ. ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված լիազորությունը՝ ՏՏ Ազգային ժողովն արձակելու եւ արտահերթ ընտրություն նշանակելու մասով: Այլ խոսքով, Նանրապետության Նախագահի՝ ՏՏ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված լիազորությունը կիրառվելու էր նորընփր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրվանից:

Սույն նորմի փարաժամկետման պարձառններին անդրադարձ կկատարվի ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 117-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետը մեկնաբանելիս:

գ) 83.4-րդ հոդվածով սահմանված դրույթը:

Նշված դրույթն ամրագրում է ՏՏ վերահսկիչ պալատի նոր՝ նախկինից արմատապես փարբերվող, սահմանադրաիրավական կարգավիճակը, ինչի մասին խոսվեց վերեւում (տե՛ս նաեւ ՏՏ Սահմանադրության փոփոխությունների 117-րդ հոդվածի մեկնաբանությունների 8-րդ կետը):

դ) 86-րդ հոդվածը:

Տվյալ հոդվածով փոփոխվել է ՀՀ կառավարության նիստերի հրավիրման եւ վարման, ինչպես նաեւ Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ կառավարության որոշումների վավերացման կարգը (ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 5-րդ կետը)։

ե) 88.1-րդ հոդվածի 1-ին մասը.

Սույն նորմը նախատեսում է ՀՀ մարզպետների նշանակման եւ ազատման կարգը եւ սահմանում է այն եզակի դեպքը, երբ ՀՀ կառավարության՝ մարզպետներ նշանակելու եւ ազատելու մասին որոշումները վավերացվում են Հանրապետության Նախագահի կողմից:

Մեկնաբանվող հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների նոր ժամկետի (5 տարի) մասին դրույթը կիրառվելու է ՀՀ ԱԺ հաջորդ գումարումների համար, րվյալ դեպքում՝ սկսած ՀՀ ԱԺ IV-րդ գումարումից:

ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 101-րդ հոդվածի 6-րդ կետն ուժի մեջ էր մտնելու 2006թ. հուլիսի 1-ից: Սահմանադրական նորույթ հանդիսացող նշված դրույթն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, կարող է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

Մտրանանշված նորմի գործողության փարաժամկետումը բացատրվում է օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ նախապարտադրական աշխատանքներ իրականացնելու համար հարկավոր ժամանակ հարկացնելու անհրաժեշտությամբ:

Ի տարբերություն 1995թ. Սահմանադրության 105-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 3 տարվա ժամկետի, համաձայն ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 107-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը սահմանվեց 4 տարի: Սույն նորմը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 116-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան ուժի մեջ էր մտնելու Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների համար:

ՀՈԴՎԱԾ 117

Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Ազգային ժողովը երկու փարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին.

2) Ազգային ժողովը մեկ փարվա ընթացքում օրենքով սահմանում է հայաստանի Հանրապետության օրենքագր: Մինչ այդ գործում է մինչեւ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը գործող օրենքագրը.

3) Սահմանադրությամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են համապատասխան օրենքներով սահմանված ծավալով.

4) մինչեւ Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջա-

նի բացման օրը Տանրապետության Նախագահը կարող է՝

ա) Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն,

բ) ազարել վարչապետին.

5) մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նարաշրջանի բացման օրը կառավարության նիստերը հրավիրում և վարում է Տանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Կառավարության որոշումներն արդրագրում է վարչապետը, վավերացնում՝ Տանրապետության Նախագահը.

6) մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում Տանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին.

7) կենտրոնական բանկի նախագահը պաշտոնավարում է մինչև գործող օրենքով սահմանված ժամկետի ավարտը.

8) վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նարաշրջանի բացման օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում: Մինչ այդ վերահսկիչ պալատը շարունակում է մինչև Մահանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը սահմանված լիազորությունների իրականացումը.

9) գլխավոր դատախազը շարունակում է պաշտոնավարել ոչ ավելի, քան հինգ ամիս Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նարաշրջանի բացման օրվանից հետո՝ մինչև Մահանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված կարգով գլխավոր դատախազի նշանակումը.

10) արդարադատության խորհրդի գործող դատավոր և իրավաբան-գիտնական անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Ազգային ժողովը երեք ամսվա ընթացքում ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներին.

11) 83.2-րդ հոդվածով նախատեսված անկախ մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև «Տեռուարտեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Տանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր փեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի և Տանրապետության Նախագահի կողմից.

12) Երեւան քաղաքում փեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապարասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու փարվա ընթացքում: Մինչ այդ Երեւան քաղաքում փեղական ինքնակառավարումը և փարածքային կառավարումը իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով.

13) սահմանադրական դատարանի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց 70 փարին լրանալը:

Վերլուծվող հոդվածում ամփոփված սահմանադրական նորմերը եւս, ինչպես նախորդում, անցումային են՝ ունեն ժամանակավոր կարգավորիչ նշանակություն, կոչված են լուծելու ՏՏ Սահմանադրության փոփոխությունների առանձին դրույթների գործադրման հետ կապված փարաբնույթ խնդիրներ:

Սույն հոդվածի իրավական կարգավորման առարկան կազմում են ՏՏ գործող օրենքների՝ Սահմանադրության փոփոխություններին համապատասխանեցման ապահովման գործընթացի, նախկին սահմանադրական որոշ ինստիտուտները նորերով փոխարինելու, առանձին պաշտոնապար անձանց պաշտոնավարության կամ պաշտոնի նշանակման, Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման համար հարկավոր համապատասխան ժամկետների սահմանումը եւ այլն:

1) Քննարկվող հոդվածն ամրագրում է, որ ՏՏ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո (06.12.05թ.)՝ Ազգային ժողովը երկու փարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին:

Ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինան անառարկելիորեն ընդունում է, որ Սահմանադրությունն իրավունքի աղբյուրների համակարգում ունի անվերապահ գերակա, առանցքային դիրք, հանդիսանում է պետության իրավաստեղծ եւ իրավակիրառ գործունեության ուղղորդող կենտրոնը, օժտված է համակարգաստեղծ բնույթով եւ դերակատարությամբ: Ուստի փրամաբանական է եւ իրավական տեսանկյունից անխուսափելի Սահմանադրության փոփոխությունների արդյունքում գործող օրենսդրության (առաջին հերթին՝ օրենքների) սահմանադրական նոր նորմերին համապատասխանեցման հրամայականը՝ երաշխավորելու համար ողջ իրավական համակարգի սահմանադրականությունը՝ իբրեւ իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի կարեւորագույն նախապայման: Ոչ մի օրենք, առավել եւս որեւէ այլ նորմարիվ իրավական ակտ չի կարող ճշգրտել կամ լրացնել Սահմանադրությունը, ավելին՝ հակասել վերջինին:

Ելակետ ընդունելով վերը մատնանշված իրավա-աշխարհայացքային համընդհանուր ճանաչում սրացած չափանիշները, սահմանադիրը պարտավորեցրել է ՏՏ Ազգային ժողովին երկու փարվա ընթացքում ՏՏ գործող օրենքները ներդաշնակել ՏՏ Սահմանադրության փոփոխություններին: Դյուրին է կռահել, որ խոսքը կարող է վերաբերել ինչպես գործող օրենքներում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելուն, այնպես էլ որակապես նոր օրենքների ընդունմանը, որոնք կարող են նախատեսել որոշակի իրավահարաբերությունների կարգավորման նոր եղանակներ, կառուցակարգեր, Սահմանադրությանը համապատասխան նոր ինստիտուտների ձեւավորում եւ գործադրում:

Նկատի ունենալով Սահմանադրությանը համահունչ նոր իրավական համակարգի ձեւավորման գործընթացի փարաբնույթ պարճառներով պայմանավորված դժվարությունները (հաճախ սուբյեկտիվ), դանդաղ ընթացքը, կարելի է ենթադրել, որ գործող օրենքները Սահմանադրությանը համապատասխանեցնելու նախատեսված սահմանադրական ժամկետը կարող է գործել ավելի երկարատեւ ժամանակահատվածում: Սակայն անհերքելի է, որ նվազ գործընթացը պահանջում է լրջմիտ, ծանրակշիռ եւ գիտականորեն հիմնավորված համառ ջանքեր, պետական իշխանության բոլոր ճյուղերի համակարգված եւ փոխհամաձայնեցված համատեղ գործողություններ, իրավաբան-գիտնականների ակտիվ մասնակցություն: Այստեղ, թերեւս, ամենանշանակալին եւ հրապարակ ժամանակի գործոնն է:

Կարծում ենք, որ այս առումով ուսանելի ու ուշադրության արժանի է Ռումինիայի փորձը: Ռումինական Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխան ստեղծված է Ռումինիայի պառլամենտի մասնագիտացված խորհրդակցական մարմին՝ Օրենսդրական խորհուրդ, որն օրենսդրության համակարգման նպատակով փալիս է եզրակացություններ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մասին, վարում է Ռումինիայի օրենսդրության պաշտոնական հաշվառումը:

Օրենսդրական խորհրդի ստեղծումը, գործունեության կազմակերպումը և կարգը սահմանվում են օրգանական օրենքով: Ռումինիայի Սահմանադրության 150-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նշված Խորհուրդը մեկ փարվա ընթացքում պարտավոր էր վերլուծել գործող օրենսդրության համապատասխանությունը Սահմանադրությանը և պառլամենտին, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ նաև կառավարությանը, պետք է ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

ՆՏ սահմանադրական դատարանը վերջին երկու փաթիլների իր փարեկան հաղորդումներում արձանագրել է, որ ՆՏ Սահմանադրությանը հակասող մեծաթիվ օրենսդրական նորմերի առկայությունը հետեւանք է նաև այն բանի, որ Սահմանադրության 117-րդ հոդվածի այդ պահանջը՝ գործող օրենսդրությունը սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու առումով, համակարգված ու հետեւողական չի իրականացվում:

2) ՆՏ Սահմանադրության փոփոխությունների 117-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված նորմը նվիրված է ՆՏ օրհներգին: ՆՏ Սահմանադրության 13-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրել է, որ ՆՏ օրհներգը սահմանվում է օրենքով: Հաշվի առնելով, որ մեկ փարվա ընթացքում եւ հետագայում, ՆՏ օրհներգը դեռևս օրենքով սահմանված չէ, ուստի քննարկվող սահմանադրական դրույթին համապատասխան գործում է ՆՏ 1995թ. Սահմանադրությամբ նախատեսված օրհներգը՝ «Մեր Հայրենիքը»:

3) Նախատեսված է նաև, որ Սահմանադրությամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են համապատասխան օրենքներով սահմանված ծավալով: Հարկ է արձանագրել, որ հիմնական սոցիալական իրավունքներն անօտարելի են և պարկանում են յուրաքանչյուրին ի ծնէ: Պետությունը իրապես կարող է համարվել սոցիալական միայն այն դեպքում, երբ նա ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է սոցիալական իրավունքներն իբրև այդպիսիք՝ իրավական հավասարության և արդարության սկզբունքների հիման վրա: Այս առումով անչափ կարևոր է սահմանադրաիրավական պարզաճ պաշտպանության ենթակա սոցիալական իրավունքների շրջանակի սահմանումը:

Սահմանադրական սկզբունքները և նորմերը, որոնք կազմում են սոցիալական իրավունքների կարգավորման հիմքը, ենթադրում են, որ այս ոլորտի օրենսդրությունը պետք է բնութագրվի բանական կայունության, իրավական կանխարեսելիության և որոշակիության, արդարության հատկանիշներով, կամայական փոփոխությունների բացակայությամբ, սոցիալական պաշտպանության ձեռք բերված մակարդակի պահպանմամբ ու հարուցի քաղաքացիների վստահությունը: Սոցիալական պետության սկզբունքը սոցիալական ոլորտում իրավական քաղաքականության սահմանադրական չափանիշ է:

Սոցիալական ոլորտում պետությունն ստանձնելով որոշակի հանրային-իրավական պարտավորություններ՝ չի կարող կամայականորեն հրաժարվել դրանց կատարման պարտականությունից: Հակառակը կնշանակի արդարության, իրավական և սոցիալական պետության սկզբունքների խախտում: Սրանից բխում է, որ իրավական

կարգավորման ցանկացած փոփոխության դեպքում պետությունը պարտավորված է պահպանել (երաշխավորել) քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության արդեն իսկ սահմանված մակարդակը, սոցիալական պաշտպանվածության՝ համապարասխան օրենքներով ամրագրված երաշխիքները: Սոցիալական պաշտպանության մակարդակի իջեցումը կամ նվազեցումը չի համապարասխանում սոցիալական պետության և արդարության հրամայականների պահանջներին: Պետության Ֆինանսական հիմնախնդիրներն անթույլատրելի է լուծել սոցիալական իրավունքների սահմանադրական երաշխիքների հաշվին:

Ելնելով վերը նշված հիմնադրույթներից՝ մեկնաբանվող կետում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իսպառ բացառվում է համապարասխան ՏՏ օրենքներով սահմանված սոցիալական իրավունքների նվազեցումը կամ սահմանափակումը, քանի որ դրանք, առանց բացառության, գործելու են այդ օրենքներով սահմանված ողջ ծավալով: Ընդ որում, սույն դրույթը համակարգային առումով (իմաստով) ուղղակի փոխկապակցված է ՏՏ Սահմանադրության 48-րդ հոդվածում նախատեսված փնտրեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներին, մասնավորապես, պետության պարտավորությամբ՝ իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

4) Որպես անցումային դրույթ նախատեսված է նաև, որ մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը Նանրապետության Նախագահը կարող է՝

ա) Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն,

բ) ազատել վարչապետին:

5) մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը կառավարության նիստերը հրավիրում և վարում է Նանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում՝ Նանրապետության Նախագահը:

Նշված նորմերի իրավակարգավորիչ նշանակությունը միավորված էր նրան, որ նպատակ հետապնդելով ապահովելու պետական իշխանության բնականոն գործունեությունն ու անխափան աշխարհանքը, ՏՏ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո ՏՏ Սահմանադրությանը համապարասխան ՏՏ Ազգային ժողովի հերթական ընտրությունների անցկացման և նոր խորհրդարանի ձևավորման անխուսափելիությունը, սահմանադիրը նպատակահարմար էր համարել մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը (07.06.07թ.) դեռևս պահպանել Նանրապետության Նախագահի՝ 1995թ. ՏՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև 86-րդ հոդվածով նախատեսված նախկին սահմանադրական լիազորությունները՝ ՏՏ Ազգային ժողովն արձակելու և արտահերթ ընտրություն նշանակելու, ՏՏ վարչապետին ազատելու, կառավարության նիստերը հրավիրելու, վարելու ու կառավարության որոշումները վավերացնելու մասով:

6) Նախատեսված է նաև, որ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանում օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում Նանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին:

ՆՏ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետը սահմանում է Նանրապետության Նախագահի լիազորությունը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վրանգի դեպքում, խորհրդակցելով ԱԺ նախագահի եւ վարչապետի հետ, հայտարարել արտակարգ դրություն, իրականացնել իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմել ժողովրդին: Նախատեսված է նաեւ, որ արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով:

Խնդրո առարկա 6-րդ կետից բխում է, որ մինչեւ արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով Նանրապետության Նախագահը գործում է այդ կետով նախատեսված իր լիազորությունների շրջանակում: Մյուս կողմից՝ նման վիճակը հավերժ ձգվել չի կարող, քանի որ կխախտվի Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջը՝ միայն օրենքով իրավունքների սահմանափակման առնչությամբ: Տրամաբանականն այն է, որ այս խնդիրը նույնպես իր լուծումը պետք է ստանա Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված երկու փարվա ժամկետում: Սակայն արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանող համապատասխան օրենք դեռեւս ընդունված չէ:

7) Սահմանադրության փոփոխությունների արդյունքում ՆՏ Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 83.3-րդ հոդվածով, որը սահմանում է ՆՏ կենտրոնական բանկի սահմանադրաիրավական կարգավիճակը, հիմնական խնդիրներն ու գործառույթները, կենտրոնական բանկի նախագահի նշանակման կարգը, պաշտոնավարության ժամկետը եւ այլն:

Ելնելով այն հանգամանքից, որ մինչ Սահմանադրության փոփոխությունները ՆՏ կենտրոնական բանկի նախագահի պաշտոնավարման ժամկետն օրենքով սահմանված էր յոթ փարի եւ նկատի ունենալով այդ պահին ՆՏ կենտրոնական բանկի գործող նախագահի գործունեության անընդմեջության ապահովման անհրաժեշտությունը, նախատեսվեց, որ նա պաշտոնավարում է մինչեւ գործող օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

8) Նաշվի առնելով ՆՏ Սահմանադրության 83.4-րդ հոդվածով ամրագրված ՆՏ վերահսկիչ պալատի նոր սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները, ըստ էության՝ սկզբունքորեն նոր պետական մարմնի կազմավորման փաստը, համապատասխան օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, կազմակերպական-փոխնիկական բնույթի խնդիրներ լուծելու, վերահսկիչ պալատի նախագահի թեկնածության առաջադրման եւ նշանակման համար որոշակի ժամանակ հարկացնելու անհրաժեշտությունը, սահմանվեց, որ վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում: Մինչ այդ վերահսկիչ պալատը շարունակելու էր գործել իր նախկին՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում:

9) Սահմանադրության անցումային դրույթներում նախատեսվում է, որ գլխավոր դատախազը շարունակում է պաշտոնավարել ոչ ավելի, քան հինգ ամիս Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ մինչեւ Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված կարգով գլխավոր դատախազի նշանակումը: Նշված կետով թույլատրվեց, որ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահին գործող ՆՏ գլխավոր դատախազը շարունակում է պաշտոնավարել ոչ ավելի, քան հինգ ամիս ԱԺ հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ մինչեւ ՆՏ Սահմանադրության սահմանված կարգով նոր գլխավոր դատախազի նշանակումը:

10) Սահմանադրական բարեփոխումների արդյունքում էական փոփոխություններ

կապարվեցին արդարադատության խորհրդի կազմավորման ու գործունեության կարգում: Սահուն անցումը նոր համակարգին երաշխավորելու համար նախապեսվեց, որ Արդարադատության խորհրդի գործող դատավոր եւ իրավաբան-գիտնական անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Ազգային ժողովը երեք ամսվա ընթացքում ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներին:

1995թ. ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին Հանրապետության Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող փասնաբան անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան-գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ, իսկ արդարադատության նախարարը եւ գլխավոր դատախազն՝ այդ խորհրդի փոխնախագահներն էին: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն արդարադատության խորհրդի կազմի մեջ ներկայումս մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ:

Վերոգրյալից բխում է, որ արդարադատության խորհրդի կազմում կապարված են էական փոփոխություններ եւ այն կազմված է դատավորներից ու իրավաբան-գիտնականներից, որոնք քննարկվող նորմի ուժով շարունակելու էին պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Հասկանալի պատճառներով տվյալ խորհրդի երեք դատախազ անդամների պաշտոնավարությունը դադարեցվեց: ՀՀ Ազգային ժողովը ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ երեք ամսվա ընթացքում պետք է ընտրեր արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներին:

11) ՀՀ գործող Սահմանադրությունը լրացված է 83.2-րդ հոդվածով, համաձայն որի՝ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը՝ վեց տարի ժամկետով, ընտրվում է ԱԺ կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ այդ մարմինը հանդիսանում է հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, որի անդամները, ըստ վերլուծվող 11-րդ կետի՝ շարունակելու էին պաշտոնավարել մինչեւ վերոհիշյալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նույն կետում նշված դեպքերում թափուր տեղերը լրացվելու էին հաջորդաբար Ազգային ժողովի եւ Հանրապետության Նախագահի կողմից:

12) Համաձայն ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի՝ Երեւանը համայնք է: Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման կարգի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունվել է «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 26-ին: Ըստ քննարկվող կետի՝ Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվելու էին վերը նշված օրենքի ընդունումից հետո՝ ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում:

Անհրաժեշտ է նկատվում, որ մինչ վերոհիշյալ օրենքի ընդունումը Երեւան

քաղաքում փեղական ինքնակառավարումը եւ փարաձքային կառավարումը իրականացվում էին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի եւ «Երեւան քաղաքում պեփական կառավարման մասին» Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի հրամանագրով սահմանված կարգով: Սույն հրամանագիրն ուժը կորցրել է 2009թ. հունիսի 9-ին:

Երեւան քաղաքում ավագանու ընտրությունները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով կայացել են 2009թ. մայիսի 31-ին եւ արդյունքում կազմավորվել են Երեւանի փեղական ինքնակառավարման մարմինները՝ Երեւանի ավագանին եւ քաղաքապետը:

13) Սահմանադրության անցումային դրույթներում նախատեսվեց, որ սահմանադրական դատարանի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց 70 փարին լրանալը, քանի որ նրանց նշանակման ժամանակ գործել էր նման փարիքային սահմանափակում: Այսինքն՝ սույն կետի առկայությունը պայմանավորվեց այն հանգամանքով, որ համաձայն 1995թ. ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում էր մինչեւ 70 փարին լրանալը: ՀՀ գործող Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսվեց, որ դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչեւ 65 փարին լրանալը:

ՆԱԳԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՔՕ** - Նայաստանի Նանրապետության քրեական օրենսգիրք
- ՔԴՕ** - Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
- Քադ. օր.** - Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրք
- Քադ. դատ. օր.** - Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ԴՕ** - Նայաստանի Նանրապետության դատական օրենսգիրք
- ՆՆ աշխ. օր.** - Նայաստանի Նանրապետության աշխատանքային օրենսգիրք
- ՆՆ ընդ. օր.** - Նայաստանի Նանրապետության ընդհանուր օրենսգիրք
- ՄԱԿ** - Միավորված ազգերի կազմակերպություն
- ՄԻԵԴ** - Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
- ՄԻԵԴ** - Մարդու իրավունքների եվրոպական դատարան
- ԵՄ** - Եվրոպական Միություն
- ԵԽ** - Եվրոպայի խորհուրդ
- ՆՆ** - Նայաստանի Նանրապետություն
- ՌԴ** - Ռուսաստանի Դաշնություն
- ԱԺ** - Նայաստանի Նանրապետության Ազգային ժողով
- ՍԴ** - Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարան
- ՄԻՊ** - մարդու իրավունքների պաշտպան
- ՔՔԻՄԴ** - Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրք

Commentaries to the Constitution of the Republic of Armenia

Edited by G. Harutyunyan, A. Vagharshyan

Yerevan, "Iravunk" publishing house, 2010

The scientific-practical commentaries to the RA Constitution has been prepared by 68 lawyers - scientists and practitioners contributed significantly to the sphere of jurisprudence, legislative activities and law implementation practice. This is the first succeeded attempt of such collective effort, quite essential from the perspective of fostering the development of legal culture and legal thinking in the country.

The constitutional legal essence and content of the fundamental values, goals and principles of the RA Constitution, the essence and juridical significance of constitutional regulation of the public relations are revealed in the commentaries. The authors present the doctrinal commentaries to the constitutional provisions within the comprehensive analysis of issues of their evolutionary development, legislative realization and practical materialization by considering the Constitution as a vivid reality and revealing the fundamental trends of establishment of constitutional democracy in the country.

The commentaries integrate the contemporary achievements of the Armenian constitutionalism; make constitutional fundamental values, principles and norms accessible to the wide strata of society.

Комментарий к Конституции Республики Армения

Под общей редакцией Г. Арутюняна, А. Вагаршяна

Ереван: изд. "Иравунк", 2010

Научно-практический комментарий к Конституции РА подготовлен 68 высококвалифицированными юристами – учеными и практиками, которые внесли весомый вклад в область правоведения, законотворческой деятельности и правоприменительной практики Армении. Это первый, очень важный и успешный опыт подобной коллективной работы с точки зрения придания нового стимула правовой культуре и правовому мышлению в стране.

В Комментарии раскрываются конституционно-правовой характер и содержание фундаментальных ценностей, целей и принципов Конституции РА, сущность конституционного регулирования общественных отношений и их правоведческое значение. Авторы представляют доктринальное толкование конституционных положений в комплексном анализе проблем их эволюционного развития, законодательной реализации и практического проявления, рассматривая Конституцию как живущую реальность, раскрывая основные тенденции становления конституционной демократии в стране.

Комментарии придают целостность современному развитию армянского конституционализма, представляют конституционные фундаментальные ценности, принципы и нормы широким слоям общества на доступном для них языке.

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նրապարակչության գլխ. խմբագիր՝	Ռ. Ավերիսյան
Խմբագիր՝	Վ. Բարաքայան
Սրբագրությունը՝	Ա. Կարապետյանի
Նամակարգչային շարվածքը՝	Է. Գետրգյանի
Նամակարգչային ձեւավորումը՝	Լ. Նովսեփյանի
Շապիկի ձեւավորումը՝	Վ. Աբրահամյանի

«Իրավունք» հրապարակչություն
Նանձնված է տպագրության 28.04.2010թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 68 տպագր. մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 2200:



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» տպարանում:

Ք. Երևան, Թումանյան 15

Նեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am

www.asoghik.am